Է. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

ՅՕԴՒՄԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՏՊԱԳՐՈՒԱԾ «ԴԼՒՕՇԱՊ» ՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՏԱՏՈՒԹԻՒՆ

Է. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

ՅՕԴԻԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ
ՏՊԱԳՐԻԱԾ «ԴՐՕՇԱԿ»ՈՒՄ

INSTITUT FÜR ARMENISCHE FRAGEN e.V.
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ
INSTITUTE FOR ARMENIAN STUDIES

Marsstrasse 14 b. 80335 München

ՎԿԱՅԱԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԷԴՈՒԱՐԴ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ՝ ԷԴԻԿԸ 10
ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ ՄԿԶԲՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ 14
ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՐԱ ՇՈՒՐՋ ՍՏԵՂԾՒԱԾ ՄԹՆՈԼՈՐՏԸ 22
ԱՐԺԷՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՉԵՒԸ 33
ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ 43
ԿՐԿԻՆ ՓԱՅՏԷ ՉԻՈՒ ՎՐԱՅ 50
ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ 60
ԱԶԳԱՅԻՆ ՆԿԱՐԱԳՐԻ ԵՒ ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉԱՁԵՒԻ ԿԱՊԻ ՄԱՍԻՆ 68
ՄԷԿ ԺՈՂՈՎՈՒՐԴ՝ ԵՐԵՔ ՈՒ ԿԷՍ ՍՓԻՒՌՔ 72
ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ 81
Ի՞ՆՉ ԱՐԺԵՆՔ ՄԵՆՔ ԵՒ Ի՞ՆՉ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԱՆԵԼ 89
ԿԱՐՈ՞Ղ Է ԱՐԴԵՕՔ ՀԵՐՈՍՈՒԹԻՒՆԸ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼԻՆԵԼ 103
ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱՅ 110
ԻՄ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ 119
ՄՏՔԻ ԵՒ ԳՈՐԾԻ ՊԱՌԱԿՏԻԱԾՈՒԹԻՒՆԸ 128
ԱՆՋՆԱՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԵՒ ԱԶԳԱՊԱՀՊԱՆՈՒՄԸ 133
Ո՞Վ ՊԻՏԻ ԽՕՍԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՆՈՒՆԻՑ 138
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՎՐԱՅ 144
Ո՞ՒՄ ՀԵՏ 149
ՄԵՆՔ ԵՒ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ 152
ՆԿԱՐԱԳՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ 159
ՕՏԱՐՆԵՐԸ ԵՒ ՄԵՆՔ 165
ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ 169
ՆՊԱՏԱԿԻ ԵՒ ՄԻՋՈՑԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ 173
ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՆՑԵԱԼԸ ԵՒ ՆԵՐԿԱՆ 177
ԶԱՆԳԱԾՆԵՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ 182
ՄԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՅՍՏԱԿԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ 188
ՄԻ ՔԱՆԻ ԱՅԼ ԿԷՏԵՐ 193
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՍՈՒՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ 206
ԻՆՉՊԷ՛Ս ՍԱՀՄԱՆԵԼ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ 211
ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՅԹՆԵՐԸ 215
Ո՞Վ Է ՏԷՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ 225
ԻՍԿ ՅԵՏՈ՞Յ 230
ԶԱՆԳԱԾԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆԸ, ՍՓԻՒՌՔԸ ԵՒ ՇՓՈՒՄՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ 238
ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ 246
ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ 253
ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ 259
ԳԵՐՄԱՆԱԿԱՆ Մ ԱՄՈՒԼԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ 270

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓԻՒՌՔՈՒՄ 278
ՍՓԻՒՌՔԸ ԵՒ ՍՓԻՒՌՔԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ 284
ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ 289
ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՒ ԱԻՍՏՐԻԱՅԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ 299
ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿՐՕՆԸ 302
ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ 307
ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ 312
ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ 320
ԸՆՏԱՆԻՔ ԵՒ ԱԶԳ 326
ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿՐՕՆԸ 332
ԱՆՁ – ԱԶԳ - ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆ 338
ՄԻ ՔԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ 352
ՊԵՏԱԿԱՆ ԵՒ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ
ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ 363
ԱՀԱԲԵԿՉՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԷՍ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑ 371
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ 374
ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ 379
ՏԱՐԻՆ ԳՆԱՑ՝ ՀԱՐՑԵՐԸ ՄՆԱՑԻՆ 388
ՄԱՐՔՍԱԿԱՆ ԴՐՈՅԹՆԵՐԻՑ՝ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻՆ 401
ԻՆՉՊԷ՛Ս ՍԱՀՄԱՆԵԼ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ 410
ԴԱՒԱՆԱՆՔՆԵՐԻ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԻՒՆԸ 414
ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ 421
ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՅԹՆԵՐԸ 431
ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՄԻՈՒԹԻՒՆՈՒՄ 441
ԵՐԿՐԱՇԱՐԺԸ ԵՒ ԱՐՑԱԽԻ ՀԱՐՑԸ 445
ՄԵԿ ՏԱՐԻ ԱՆՑ 450
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ, ԳՈՐԲԱՉԵԻԸ ԵՒ ՂԱՐԱԲԱՂԸ 458
ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ 469
ԱՐՑԱԽ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՇԻԱՐԿԻ ՓՈՐՁ 476
ԵԹԷ ՈՒԶՈՒՄ ԵՆՔ ԼԻՆԵԼ 484
ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ 501
ՓՐԿՈՒԹԵԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՈՐՈՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ 510
ՂԱՐԱԲԱՂԻ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ 517
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՆԵԼԻՔ ՈՒՆԻ՞ ԱՐԴԵՕՔ 524
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՆԵԼԻՔ ՈՒՆԻ՞ ԱՐԴԵՕՔ 532
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՆԵԼԻՔ ՈՒՆԻ՞ ԱՐԴԵՕՔ 540
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՆԱՄԱՇ ՈՒՂՈՒ ՎՐԱՅ 546
ՌՈՒՍԵՐԷՆ ԼԵՋՈՒՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 550
ՀԱՅԵՐԻ ԵՒ ՎՐԱՅԻՆԵՐԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ Լ. ԲՐԵԺՆԵԻՆ 557
ՁԱՅՆ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ 563
ՄԵՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԱՅԼԱԽՈՀԱԿԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ 568
ԱՅԼԱԽՈՀՈՒԹԻՒՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ 573
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ Խ. ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ 577
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ 579

Կ. ԴԵՄԻՐՃԵԱՆԻ ԲԱՑԱՅԱՅՏ ՀԱԿԱԳՈՐԲԱՉԵԻԵԱՆ ԴԻՐՔԸ 589
ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 593
ԴԱՐՁԵԱԼ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՄԱՍԻՆ 600
ՆՐԱ՞ՆՑ, ԹԷ՞ ՄԵՋ ԵՆՔ ՕԳՆՈՒՄ 603
ՆՐԱՆՔ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԵՆ, ԻՍԿ ՄԵՆՔ ՉԵՆՔ ՈՒԶՈՒՄ 608
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ 623
ՏԵՂԻ ՉՈՒՆԵՑԱԾ ՄՏԵՐՄԻԿ ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆ 633
Ո՞Վ ԵՒ ԻՆՉՈ՞Ւ ՊԱՐՏԻԵՑ 644
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ 651
ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ 651
ԵՍ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՄՈԼԻ ԿՈՂՄՆԱԿԻՑ ԵՄ 660
ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՒ ՄԵՆՔ 664
ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ Ա.Պ.Հ.Ն 677
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ 686
ԱՋԱՏ ՇՈՒԿԱՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ 696
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 705
ԱՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ, ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՈԼԺԵՆԻՑԻՆԸ ԵՒ ՄԵՐ ԴԱՏԸ 711
ՊԱՅՔԱՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ 729
ՄԵՐ ՀԱԿԱՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ, ՄԵՐ ԴԱՏԸ ԵՒ ՄԵՐ ԱՊԱԳԱՆ 733
ՀԱՅ ԴԱՏԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԱԻՍՏՐԻԱՅԻ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 748
ՀԱՅ ԴԱՏԸ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐ 751
ՀԱՅ ԴԱՏԻ ՄՕՏԱԿԱՅ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 756
ԱՐԴԱՐ ԱՀԱԲԵԿՉՈՒԹԻՒՆ 761
ՔԱՐՈԶՉՈՒԹԻՒՆԻՑ ԴԷՊԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ 767
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ ԹԵՍԱ ՀՈՖՄԱՆԸ 771
ՀԱՅՐԵՆԻՔ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՄԵՐ ԻՐԱՒՈՒՆՔԸ 776
ԹՈՒՐՔԱՀՊԱՏԱԿՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՊԱՍՏԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ
ՍԵՄԻՆԱՐԸ ԱՐԵՒՄՏ. ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ 783
«ՀԱՅՐԵՆԻՔ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՄԵՐ ԻՐԱՒՈՒՆՔԸ» ՅՕԴԻԱԾԻ
ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ 788
ՄԵՐ ԴԱՏԸ ԱՅՍՕՐ 795
ՀԱՅ ԴԱՏԻ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՆԵՐԿԱՅ ՀԱՆԳՐՒԱՆԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ
ԽՆԴԻՐԸ 801
Ռ.Գ. ՍԱՀԱԿԵԱՆԻ ԱՐԺԷՔԱՒՈՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ 809
ՀԱՅ ԴԱՏԸ ԵՒ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ 812
ՓԱՆԹՈՒՐՔԻԶՄԸ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԻՒՆԸ 823
ՔԱՆՁԻ ԲՈԼՈՐ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ՏԱՆՈՒՄ ԵՆ ԴԷՊԻ
Հ.Յ.ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ 830
ՀԱԿԱԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀՈԳԵԿԱՆ ԱՅԼԱՍԵՐԻԱՑՈՒԹԻՒՆ Է 837
Հ.Յ.ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՄԱՆ
ՓՈՐՁԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿՐԿԻՆ ԱՆՑԱՆ ԱՊԱՐԴԻՒՆ 843
ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԱՑՈՒՄԸ 849
ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՏԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՆՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԻՒՆՆԵՐ 854
ԱՌԱՆՑ ՅԱՐՄԱՐԻԵԼՈՒ ԵՒ ԲԱՌԵՐԸ ԾԱՄԾՄԵԼՈՒ 857
ԴԱՐՁԵԱԼ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻՆ ՄԱՍԻՆ 862
ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՐԿՐՈՒՄ 865

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 881
ԴԱՒԱՆԱՆՔՆԵՐԻ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԻՒՆԸ 898
ԲԱՑԱՅԱՅՏՈՒՄ ԵՆՔ ԴԱՒԱՃԱՆՆԵՐԻՆ ԲԱՑԱՅԱՅՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ 905
ԵՐԷԿ, ԱՅՍՕՐ, ՎԱՂԸ 911
ԱՅԼԵՒՍ ՉԵՆՔ ԼՌԵԼՈՒ 919
ՈՉ ՄԻԱՅՆ ՀՈԳՈՎ 923
ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՒ Հ.Յ.ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՈՒՐՋ 928
ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՅԱՐՄԱՐԻԵԼՈՒ ՃԱՀԻՃԸ 946
ԵԹԷ ԻՆՉ ՀՐԱՊԱՐԱԿ ԹՈՂՆԷԻՆ … 955
ՆՈՐ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ՇՇՈՒԿՆԵՐԻ ՇՈՒՐՋ 967
ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԵՐ ԱՇԽԱՐՀԸ 975
ԸՆԿԵՐՎԱՐ ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆԻ ՃԱՄԲՈՎ 983
Ի՞ՆՉ Կ'ԱՆԷՐ ԸՆԿԵՐ ՀՐԱՅՐԸ 990
ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 998
Հ.Յ.ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ 1008
ՍՈՒՎԵՐԵՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1015
ԹԵՐԹԵԼՈՎ «ԳՈՒԼԱԿ ԱՐՇԻՊԵԼԱԳ»Ի ԷՋԵՐԸ 1027
ԻՆՔՆԱՀԱՏԱՐԱԿՉՈՒԹի՞ՒՆ, ԹԷ ԱԶԳԱՅԻՆ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊ 1103
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿՐԿԻՆ ՓԱԿո՞Ւմ Է ԻՐ ԴՌՆԵՐԸ 1140
ԱԲԽԱԶՆԵՐԸ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՎՐԱՍՏԱՆԸ 1149
ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ Խ. ՄԻՈՒԹԵԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ 1154
ԲՆՈՒԹԵԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ Խ. ՄԻՈՒԹԵԱՆ ՄԷՋ 1157
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԸՍՏ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՁԻՆԵՐԻ 1161
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆՈՒՄ 1165
Խ. ՄԻՈՒԹԵԱՆ ԵՒ ՉԵԽՈՍԼՈՎԱՔԻՈՅ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՈԽՑԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1169
ԱՆՁԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԷՋ 1171
ԲՈԼՇԵՒԻԿՆԵՐԻ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԱՆՑԵԱԼԻՑ 1174
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ 1183
ԱՅՆՏԵՂ ԷԼ ԿԱՐԵԼԻ Է ԿԱՐՕԻՔ ՅԱՅՏՆԵԼ 1188
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՆԽԱԽՏ ՄԻՈՒԹԻՒՆԸ 1190
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԵԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՐԷՆՔԸ 1205
ԳԷՈՐԳ ՂԱՐԻԲՋԱՆԵԱՆԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ 1210
ՍԱՌԸ ՔԱՄԻ՝ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆԻՑ 1213
ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ԳՈՐԲԱՉԵՒԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹԻՒՆԸ 1216
ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆՈՒՄ 1224
Ի՛ՆՉ Է ԿԱՏԱՐՈՒՄ Խ. ՄԻՈՒԹԻՒՆՈՒՄ 1228
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՌՈՒՑԻԱԾՔԻ ՄԱՍԻՆ 1242
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՀԱԲԵԿՉՈՒԹԻՒՆ 1249
ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆ՝ ՋՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆԻ ԵՒ ԷԴԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ՄԻՋԵԻ 1256
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐ 1293

ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՀԱՄԱՐ… 1307
ԻՆՉ ԿԱՐԵԼԻ ՉԷ ԵՒ ՊԷՏՔ ՉԷ ԱՍԵԼ 1314
ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԼՌԵԼ ՄԱՄՆԱԳԷՏՆԵՐԸ 1323
ՈՐՏԵ՞Ղ ԵՆՔ ՄԵՆՔ 1329
ԱՋԱՏՈՒԹԵԱՆ ՊԱՐՏԱԴՐԱԾ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ, ՎԱԽԸ ԵՒ ՋՂՋԱՆՔԸ 1344
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ 1355
ԳԻՏԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ 1362
ՀԱՅՐԵՐԻ ԵՒ ՈՐԴԻՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԱՅՍՏԵՂ ԵՒ ԱՅՆՏԵՂ 1370
ԳԻՏՈՒԹի՞ՒՆ Է ԱՐԴԵՕՔ ՄԱՐՔՍԻՋՄԸ 1385
ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊՆ Է ՈՐՈՇՈՒՄ ՆՊԱՏԱԿԸ 1411
ՄԿՋԲՈՒՆՔԸ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԻ 1419
ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ԱՋԴԱԿՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՒՄԸ՝ ՋՆՋՈՒՄ Է ՄԱՐՔՍԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ 1424
ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՀԱՏԸ 1431
ԻՆՉՈ՞Վ ԻՆՉ ՉԻ ՀԱՄՈՋՈՒՄ ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆԸ 1441
ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԱՆԱՉԱՌ ԱՉՔԵՐՈՎ 1457
ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ 1515
ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ 1533
ՍԵՓԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԻ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ 1541
ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ՀԱԻԱՏՔԸ ԵՒ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ 1549
ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ԱԼԻՔԻ ԿԱՏԱՐԻՆ 1558
ԸՆԿԵՐՎԱՐ ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆԻ ՃԱՄԲՈՎ 1571
Ի՞ՆՉ Է ԿԱՏԱՐԻՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ 1578
ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ 1583
ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԻ ՉԷ՞ ԱՐԴԵՕՔ ՉԻՆԱՍՏԱՆԸ 1589
ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻԶՄԻ ԿԱՐՕԵՑԵԱԼ ՈՒԺԸ 1599
ԻՏԱԼԻՈՅ ՀԱՄԱՅՆԱՎԱՐ ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԻԻԴՋԷՆ 1610
ԻՄՊԱՆԻՈՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ՝ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ 1613
ՄԱՐՔՍԻԶՄԸ ԱՓՐԻԿԵԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՆ ՄԷՋ 1615
ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՐԱՒԱՆՑ ՅԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ 1618
ԵՒՐՈՊԱՅի՞ ԵՆ ԱՐԴԵՕՔ ԹՈՒՐՔԵՐԸ 1625
ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ՆԵՐԿԱՆ 1658
ՉԵՋ ԱՅՆՔԱՆ ՄԻ՛ ՄԱՇԷՔ ՈՐ ԱՂԲԱՆՈՑ ՆԵՏԻԷՔ 1663

ԷԴՈՒԱՐԴ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ՝ ԷԴԻԿԸ

Էդիկը...

Շատերն այս անունով զինքը ճանչցան. այս անունով զինքը կոչեցին: Էդիկը. պարզապէս Էդիկը: Առանց ազգանունի. առանց իր գիտական տիտղոսները յիշելու: Մինչ այս տիտղոսներն ինքնին բաւարար պիտի ըլլային, որ եւ է մէկուն անունին կցւելով, իրեն ապահովելու մեծ վարկ եւ պատիւ:

Բայց Էդիկն այսպիսին էր, անսեթեւեթ ու անմիջական. դիմացինին զարմացնելն ու իր խօսակիցին վերէն վար նայիլը խորթ էին իր նկարագրին: Թէեւ գիտնական մըն էր, դոկտոր, փրոֆեսոր ու համալսարանի դասախօս, սակայն այս ամէն տիտղոսներուն պէտք չունէր որպէսզի իր աձն արժեւորուեր. որովհետեւ ընկերներու միջեւ այս ձեւակերպութիւնները չեն յարգուիր ու ամէնքն իրենց անունով միայն զիրար կը կոչեն: Իսկ ինքը հաւասարապէս ընկեր էր անուսում շարքային հայուն թէ բազմավաստակ մտաւորականին: Բաւ էր որ ազգին անկեղծօրէն նուիրուածներ ըլլային. մաս կազմէին հայ ժողովուրդի ճակատագրին: Ու հայ ժողովուրդին ճակատագրին մաս կազմելն իր սեւեռուն մտահոգութիւնն էր. իր ներաշխարհէն ժայթքող պահանջը. իր բազմամեայ մտորումներու եզրայանգումը:

Իսկ ինքը լիովին մաս կը կազմէր այս ճակատագրին, անոր նուիրաբերած ըլլալով իր կեանքին ամենաբեղուն ու ամենահասուն տարիները, ընտանիք, ասպարէզ ու փայլուն ապագայ մը իսկ զոհելու գինով: Որովհետեւ ինքը Քրիստափորներու ցեղէն էր, հարազատ ժառանգն անոնց հանճարին ու նուիրաբերումին:

* * *

Այսօր պարապ մը կայ հայ կեանքին մէջ . դատարկ տեղ մը որ չէ լեցւած: Իր տեղն էր, Էդիկին ձգած պարապ տեղն է, որովհետեւ եթէ ճիշդ է որ աշխարհիս վրայ ոչ ոք անհրաժեշտ է, այլ ամէնքս ալ օգտակար ենք. նոյնքան ալ ճիշդ է որ յատուկ տեսակի ու որակի մարդոց սով մը կայ հայութեան մէջ: Իսկ Էդիկը այդ յատուկ տեսակի մարդոցմէն էր ու այս պատճառաւ է որ իր պակասն այսօր զգալի է, ու դեռ երկար ատեն պիտի զգացուի...

Էդիկը զարդն էր, փնտռուած բանախօսը ազգային ու քաղաքական ձեռնակներու, Ամերիկեան ցամաքամասերէն մինչեւ Միջին Արեւելք, Եւրոպա ու յետոյ նաեւ Հայաստան: Ինքն էր որ իր հռետորական շունչով,

կուռ տրամաբանութեամբ, հանդիսականները ուղղակի կը հմայէր ու մագնիսացած ներկաներուն բուռն ծափերը կը խլէր:

Շատերն Էդիկին ճանչցան իր հմայիչ խօսքէն, հռետորի իր բոցաշունչ ելոյթներէն, քաղաքական խնդիրները վերլուծելու իր բացառիկ կարողութենէն, հարցեր դնելու եւ անոնց լուծումներ գտնելու իր խուզարկու մտքէն: Ու դեռ աւելին՝ իր անձնական կեանքին օրինակով ցոյց տւած զոհաբերութեան, հայրենասիրութեան ոգիէն: Անսակարկ նուիրաբերումը, իր պարագային, հռետորական մարզանք մը կամ սալոնային պերճանք մը չէր, այլ միս ու ոսկոր դարձած պողպատեայ հաւատք մը:

Շատեր, ուրեմն, զինքը ճանչցան. ու երբ զինքը հասկցան՝ գնահատեցին ու սիրեցին:

Տակաւին ինքն էր որ բազմաթիւ ազգային ձեռնակներու առթիւ թէ՛ ռազմավարութիւնը գծող զօրավարը կ'ըլլար եւ թէ՛ ալ սեւ գործը տանող՝ պարզ զինուորը:

Էդիկը միեւնոյն ատեն եւ՛ միտք էր, եւ՛ սիրտ էր եւ թէ ալ բազուկ մը որ պարագային համեմատ կը վերածւէր աշխատող ձեռքի կամ հարւածող բռունցքի:

Ահաւասիկ այսպիսին էր Էդիկը. այս ամէնն էր Էդիկը՝ դոկտոր-փրոֆեսոր Էդուարդ Յովհաննիսեանը:

* * *

Իսկ այժմ որ իր մահէն արդէն քանի մը տարի անցած է ու իր տեղը դատարկ մնացած՝ մարդս կը տարուի ինքն իրեն հարց տալու թէ ինչ մնացած է իրմէ, ու՞ր է իր թողած ժառանգութիւնը, որովհետեւ իրեն պէս եզակի անձնաւորութիւն մը չի կրնար հետք ձգած չըլլալ այս աշխարհիս վրայ: Ու՞ր է ուրեմն իր սրտին, մտքին ու բազուկին ժառանգը որուն կարօտն ունինք որովհետեւ անկէ զուրկ ենք այլեւս:

Սակայն կը թւի միայն թէ զրկւած ըլլանք. վասնզի իրականութեան մէջ Էդիկն այնպիսիներէն էր որ բացակայ եղած ատենն իսկ ներկայ են:

Արդարեւ իր սիրտն այսօր կը հանգչի այն բազմաթիւ հայորդիներուն մէջ որոնց ունեցած ծարաւն, ի խնդիր Հայ Դատի, ինքը լիաբուռն յագեցուց ճանապարհ մը ցոյց տալով:Իսկ իր բազուկը նոյն բազուկն է որ ունեցած են Վարդան Մամիկոնեանը, Խրիմեան Հայրիկը, Քտիստափոր Միքայէլեանն ու անհամար շարքն այն հռչակաւոր կամ անանուն հերոսներուն որ անցեալին Արեւմտահայաստանի կամ, մեր օրերուն, Արցախի մէջ իրենց կեանքը մատաղ ըրին յանուն Սուրբ Գործին: Երկաթէ էր այդ բազուկը եւ Էդիկն ուզեց զայն ջրդեղել:

* * *

Էդիկը միայն ճարտասան բանախօս մը կամ հայութեան նուիրուած զինուոր ու զօրավար մը չէր, այլ նաեւ, ու գերազանցապէս, ներհուն մտաւորական մը ու բեղուն գրիչ մը որ տասնամեակներով հայ մամուլին յանձնած է արժէքաւոր վերլուծումներ ազգային ու քաղաքական հարցերու մասին: Յատկապէս «Դրօշակ»-ը հարուստ շտեմարան մըն է իր գրած յօդուածներուն, այնքան որ, մօտ երեսնամեակ մը, Էդուարդ Յովհաննիսեանն եղած է այս պարբերաթերթին ամենաբեղուն աշխատակիցներէն մին: Ու նաեւ ամէնէն շատ կարդացած յօդուածագիրներէն ալ մին:

Ու ահաւասիկ որ իր մահուան հնգամեակին առթիւ իր ամենամօտիկ աշխատակիցները, իր ընկերները, իրենց սրտին պարտքը համարեցին «Դրօշակ»-ի երեսնամեայ համարներու մէջ ցրուած իր յօդուածներն ի մի բերելու եւ զանոնք ամփոփելու մէկ հատորի մէջ: Ասիկա ոչ միայն մեր հանգուցեալ մեծանուն ընկերոջ սրտին փափաքն էր որ յետ մահու կ'իրագործենք իր բաղձանքն իրագործելու եւ իր յիշատակը յարգելու համար, այլեւ ծառայութիւն մըն է որ կը մատուցանենք այն բոլոր հայորդիներուն որոնք «մաս կազմելով հայ ժողովուրդի ճակատագրին» ծարաւն ունին զիրենք առաջնորդող մտքի մը: Իսկ ներկայ հատորին մէջ ամփոփուած յօդուածները, թէեւ շատ անգամ առնչուած են օրւան կապուած յատուկ դէպքի մը կամ իրադրութեան մը, սակայն միեւնոյն ատեն աւելի ընդհանուր, եւ ժամանակին չկապուած արժէք մըն ալ ունին, որ կու գայ հեղինակին այն բացառիկ յատկութենէն որու շնորհիւ գիտեր անմիջապէս հարցի մը էութեան հասնիլ եւ, առանց տարւելու արտաքին խաբուսիկ երեւոյթներէ, ուղղակի թափանցել բարդ խնդիրներու իսկութեան եւ պարզ ձեւով ամէնուն հասկնալի դարձնել: Ահաւասիկ որ «Դրօշակ»-ի մէջ հրատարակած իր յօդուածները պարագայական գրութիւններէ աւելի, տեսակ մը օրինակներ, ուղեցոյցներ են քաղաքական հարցերը վերլուծելու եւ անոնց լուծում մը գտնելու համար եւ իրենց զննող ու բացայայտող բնոյթով շատ պիտանի գործիք մըն են նաեւ այն ապագայ սերունդներուն համար որ պիտի զինուորագրուին հայ ժողովուրդին ծառայելու նպատակին:

Իր ջերմ փափաքն էր որ այս յօդուածները հատորի մը մէջ ամփոփուէին: Կարծես կը նախազգար իր կանխահաս մահը եւ կ'ուզէր ժամ առաջ իր հարուստ մտքին բերքը ժառանգ ձգել գալիքներուն: Եւ ահա մենք, որ բախտն ու հպարտութիւնն ունինք իր մտերիմներն ու գործակիցներն եղած ըլլալու, մեր սրտին պարտքը համարեցինք իր փափաքն իրագործել

այս հատորը լոյս ընծայելով: Ասոր մէջ ամփոփուած են «Դրօշակ»-ի մէջ տպուած իր բոլոր յօդուածները:

Դիւրութեան համար յօդուածները խմբած ենք ըստ իրենց պարունակութեան, իսկ վերջաւորութեան բոլորին ցանկը կայ:

Այս հատորը լոյս կը տեսնէ Էդուարդ Յովհաննիսեանի վաղաժամ մահուան հինգերորդ տարելիցին առթիւ: Իր ընկերներուն յետ մահու նուէրն է անզուգական Էդիկին: Իսկ այս հատորն ուշադրութեամբ կարդացողը՝ եթէ ընթերցումն աւարտելէ յետոյ պահ մը միայն խորհրդածէ անոր հեղինակին մասին՝միայն պիտի ափսոսայ թէ ինչու այսպիսի ունակութիւններով օժտուած հայորդի մը ժամանակէն առաջ մեզմէ հեռացաւ:

Իսկ զինքը ճանչցողները իր վաղաժամ մահուան համար աւաղելով՝ հպարտութիւնը պիտի զգան զինքը տեսած ու լսած ըլլալու. իրեն հետեւած ըլլալով՝ իրենց կեանքին իմաստ մը տուած ըլլալու:

Այս հատորն իր հոգիին ու մտքին կտակն է. իր բացակայութեան առթած պակասը քիչ մը լեցնելու համար:

Հայկական Հարցերի Հաստատութեան
Նախագահութիւն

Միւնխեն -Երեւան 2009

ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

Դոկտ. Է. Յովհաննիսեան

Այս յօդուածը գրում եմ մի վէճի տպաւորութեան տակ, որը ունեցայ ազգի հոգսերով ապրող (յամենայն դէպս՝ այդպէս ներկայացաւ) մի երիտասարդի հետ: Ես պնդում էի, որ ազգային միասնութիւնը կարող է ստեղծուել միայն նպատակային հողի վրայ: Այսինքն սկզբից պէտք է ձեւակերպւի նպատակը, յետոյ՝ այդ նպատակի շուրջ պէտք է ստեղծւի միասնութիւնը:

Իմ երիտասարդ հակառակորդը առաջարկում էր ճիշտ հակառակը: Նա ուզում էր, որ մենք առայժմ նպատակից չխօսենք, քանզի դա առաջացնում է տարակարծութիւններ: Սկզբից ստեղծենք միասնութիւն ոչ նպատակային հողի վրայ, օրինակ՝ ցուցահանդէսներ, մարմնամարզութիւն, հայկական ճաշկերոյթներ և այլն, իսկ երբ այդ միասնութիւնը կը ստեղծւի, ելնելով միասնութեան աստիճանից՝ նո՛ր կատարենք փորձեր ձեւակերպելու քաղաքական նպատակը:

Մի խօսքով մենք վիճում էինք այն մասին, թէ ո՛րն է առաջնակարգ՝ նպատակը և նրանից բխող միասնութի՛ւնը, թէ՞ միասնութիւնը և նրանից բխող նպատակը: Մենք չկարողացանք (ինչպէս բոլոր հայկական վէճերում) իրար համոզել և, որպէս եզրափակում, իմ հակառակորդը իմաստունի համոզաւծութեամբ ասաց, որ մեր վէճը նմանւում է հաւի և ձւի առաջնութեան խնդրին, որը չեն կարողացել լուծել աշխարհի փիլիսոփաները:

Չգիտեմ ի՞նչ կ'ասեն աշխարհի փիլիսոփաները, բայց ինձ համար այդ հարցը վաղուց լուծւած է: Ինձ պարզապէս զարմանք է պատճառում այն հանգամանքը, որ իրօք շատերը դասում են հաւի և ձւի խնդիրը անլուծելի խնդիրների շարքին: Սկզբից եղել է հաւը: Ինչո՞ւ: Որովհետեւ բնութեան կամ Աստծու կամքով ստեղծւած ներդաշնակ տիեզերքի վերջնական մասնիկներից մէկն է: Նա ձեւակերպւել է որպէս անհրաժեշտ մի էութիւն և օժտւել է տարբեր յատկութիւններով: Օրինակ, տեսնելու յատկութիւններով, որը կատարւում է աչքի միջոցով, լսելու յատկութիւնով, որը կատարւում է ականջի միջոցով, թռչելու յատկութիւնով՝ թեւերի միջոցով, կերը մարսելու յատկութիւնով՝ ստամոքսի միջոցով և բազմանալու յատկութիւնով՝ ձւի միջոցով: Եւ որքան անմիտ կը լինէր հարցնել,- ի՞նչն է առաջ եղել՝ հա՞ւը, թէ՞ հաւի աչքը,- այնքան էլ անմիտ է հաւի և ձւի խնդիրը:

Իսկ նրանց համար, ովքեր հաւատում են արարչագործութեանը, առաւել եւս պարզ է, որ սկզբից եղել է հաւը, իսկ յետոյ ձուն, քանզի որպէս մտաղրութիւն սկզբից ստեղծւում է իրը, իսկ յետոյ միայն նրան պահպանելու միջոցները: Բայց շարունակեմ:

Ինձ թւում է, թէ բոլորի համար պարզ է, որ միասնութիւնը կարող է իրականանալ միայն ընդհանուր նպատակի առկայութեան դէպքում, յամենայնդէպս, մենք այդպիսի միասնութեան պակաս ենք զգում: Իսկ որ մենք միասնական ենք «Արարատ»ի կամ Տիգրան Պետրոսեանի յաղթանակի հարցում, դա կասկածից վեր է: Մեր վէճը վերջին հաշւով յանգեց այն հարցին, թէ ո՞վ և ի՞նչպէս պէտք է ընդունի ազգի ճակատագրին վերաբերւող վարչական որոշումները: Այս հարցի վրայ ես ուզում եմ կանգ առնել մի քիչ մանրամասնօրէն:

Մեզանից ամէն մէկը գիտակցում է, թէ ինչ մեծ տեղ է գրաւում մեր կեանքում որոշում ընդունելը: Որոշում ընդունելու հետ կապւած է մարդու և հասարակութեան գիտակից գործունէութիւնը: Այն դէպքում, երբ գործունէութիւնը անմիջականօրէն կապւած է միջավայրի հետ և պարտադրւում է նրա կողմից, այս կամ այն վարքագիծը մենք ընտրում ենք ինքնաբերաբար, փաստօրէն առանց ընտրութիւն կատարելու, քանզի միակն է ճանապարհը: Սակայն երբ գոյութիւն ունեն մէկից աւելի ճանապարհներ, երբ կայ ընտրութեան համար ազատութիւն, մենք դիմում ենք որոշում ընդունելուն, որպէս վարքագիծը ձեւակերպելու միակ միջոցի:

20րդ դարի կէսերին վարչական որոշումները սկսեցին անմիջականօրէն կապւել իշխանութեան հետ, իսկ այսպէս կոչւած **բիհեւիորիզմ**ը որպէս գիտութիւն քաղաքական վարքագծի մասին, պարզապէս նոյնացնում էր իշխանութիւնը վարչական որոշումների հետ: Օրինակ՝ ամերիկացի հասարակագէտներ Սայմոնը, Մնայդերը, Լասսւելը և շատ ուրիշներ պնդում են, որ իշխանութիւնը որոշումներ ընդունելու ոյժ և ընդունակութիւն է:

Այս միտումը պարզ է և անվիճելի այն դէպքում, երբ որոշումներ ընդունող մարմինը օրինականացած է պետականօրէն, այսինքն նրա բոլոր որոշումները պետական մեքենայի միջոցով պարտադրւում են նոյնիսկ նրանց, ովքեր համաձայն չեն այդ որոշումների հետ: Բայց այդ պարտադրող մեքենայի բացակայութեան դէպքում որոշումների իրականացման հարցը չափազանց բարդանում է: Այնուամենայնիւ իւրաքանչիւր որոշում ընդունող մարմին պէտք է օժտւած լինի հետեւեալ երեք հիմնական յատկութիւններով,- մտահասութիւն, հեղինակութիւն և իրազեկութիւն:

Մտահասութիւնը որոշելու համար հազիւ թէ հնարաւոր լինի ձեւակերպել ընդհանուր չափանիշներ: Մտահասութիւնը հիմնւում է քաղաքական փորձի, գիտելիքների, վերլուծութիւններ կատարելու ընդունակութիւնների վրայ, այ-

սինքն այն ամենի վրայ, ինչը կարելի է անուանել ղեկավարելու տաղանդ: Ազատ ընտրութիւնների միջոցով որոշ չափով յաջողւում է որոշումներ ընդունող մարմինը կազմել տւեալ ազգի մտահաս անձերից, բայց հեղինակութեան հարցը շատ աւելի կարեւոր է:

Հեղինակութիւնը փաստօրէն փոխարինում է իշխանութիւնը: Եւ ուրեմն նախքան որոշումներ ընդունելը, պէտք է որոշում ընդունող մարմինը յստակ որոշի իր հեղինակութեան կամ իշխանութեան սահմանները, քանզի միայն այդ սահմանները ի նկատի ունենալով կարելի է խուսափել օդից կախւած որոշումներից: Լինի դա կուսակցական ղեկավարութիւն թէ ակումբի վարչութիւն, միեւնոյն է, նա պարտաւոր է պարբերաբար ճշտել իր իշխանութեան ԻՐԱԿԱՆ սահմանները:

Բայց պէտք է ասել, որ հեղինակութեան հարցը միակողմանի չէ: Նա կախւած է ոչ միայն որոշում ընդունող մարմնի արժանիքներից, այլեւ ժողովրդի ցանկութիւնից՝ ունենալ հեղինակաւոր մարմին, իշխանութիւն: Նապոլէոն դառնալու համար բաւական չէ ունենալ Նապոլէոնի յատկութիւններով օժտւած մի անձ, պէտք է ունենալ նաեւ ֆրանսական ժողովուրդ, որը պէտք եղած պահին ՍՏԵՂԾՈՒՄ է Նապոլէոններ: Իմ կարծիքով ազգային մարմինների հեղինակութիւնը բարձրացնելու գործում այնքան կարեւոր չեն մարմնի սեփական ճիգերը (որոշ դէպքերում դա կարող է նոյնիսկ բացասական ազդեցութիւն ունենալ) որքան որ ժողովրդի ազգային և պետական ինքնագիտակցութիւնը, որը կամաւոր ենթարկւածութիւնը դարձնում է ներքին պահանջ, անհրաժեշտութիւն:

Բացի մտահաւութիւնից և հեղինակութիւնից, ղեկավար մարմինը պէտք է լինի իրազեկ, այսինքն նրա որոշումները պէտք է հիմնւած լինեն համապատասխան տեղեկութիւնների վրայ: Այստեղ էլ կարող են առաջանալ բարդութիւններ: Տեղեկութիւնների քանակը պէտք է համապատասխանի ընդունւած որոշմանը: Եթէ որոշումը ընդունւում է պակաս տւեալների հիման վրայ, ապա այդպիսի որոշումները մենք անւանում ենք չհիմնաւորւած: Եթէ մենք ունենք բաւարար չափով տեղեկութիւններ, բայց որոշում չենք ընդունում, սպասելով նորանոր տեղեկութիւնների, ապա մենք պէտք է մեղադրւենք անբանութեան և անիմաստ քաշքշուկների մէջ:

Սակայն ի՞նչպէս որոշել տեղեկութիւնների բաւարար լինելը: Այս հարցի վերաբերեալ կան տարբեր առաջարկներ, սակայն իմ կարծիքով բոլորն էլ կրում են զուտ տեսական բնոյթ: Այդ առաջարկների վերլուծութեան համար պահանջւում է մասնագիտական մօտեցում, որը դուրս է այս յօդւածի սահմաններից: Այնուամենայնիւ մի ընդհանուր օրինաչափութիւն կարելի է նշել, հիմնաւորւած որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ է ունենալ տեղե-

կութիւնների այնպիսի քանակ, որը հնարաւոր կը դարձնի մտային փորձը, այսինքն կը բացայայտի այնքան անորոշութիւն, որ հնարաւոր դարձնի մտային գուշակումները տեսանելի տարածութեան վրայ։

Բոլոր այս յատկութիւններով օժտուած ղեկավար մարմինը ի վիճակի է ստեղծել հանրային միասնութիւն։ Այսպիսի միասնութիւնը արհեստական միասնութիւն է։ Նա ստեղծւում է նպատակային հողի վրայ և այդպիսի միասնութեան մէջ, ինչ խօսք, որ առաջնակարգը նպատակն է։ Եւ քանզի դա այդպէս է, շատ մեծ նշանակութիւն ունի, թէ հեղինակութեան ինչպիսի սահմաններում է գործում որոշում ընդունող մարմինը։ Ուզում եմ այստեղ օգտւել **ուտոպիստ** Սեն-Սիմոնի քարաւանի և հասարակութեան համեմատութիւնից։

Պետական կառոյցի տարբեր ձեւերը,- ասում էր նա,- կարելի է համեմատել քարաւանի ուղղութիւնը ընտրելու հետ։ Քարաւանը կարող է դիմել իր ուղեկցին ասելով՝ տար մեզ այնտեղ, որտեղ լաւ է։ Այս դեպքում ե՛ւ միջոցների, ե՛ւ նպատակի ընտրութիւնը յանձնւում է ղեկավարին։

Ղեկավարը դառնում է միահիշխան, իսկ քարաւանի միասնութիւնը հիմնւում է լաւ տեղ գնալու ցանկութեան վրայ։ Այն րոպէից, ինչ նպատակ ձեւակերպելու իրաւունքը տրւում է առաջնորդին, նա դառնում է գլխաւորը, իսկ քարաւանը երկրորդական։

Սակայն հնարաւոր է, որ քարաւանը դիմի իր ուղեկցին մի այլ կերպ, օրինակ, ասելով՝ ուղեկցիր մեզ դէպի Երուսաղէմ։ Այդ դէպքում ղեկավարի ձեռքից խլւում է նպատակ ձեւակերպելու իրաւունքը և թողնւում է նրան միայն լաւագոյն ճանապարհի ընտրութիւնը։ Այս դէպքում միասնութիւնը, այսինքն ինքը քարաւանը ստեղծւել է Երուսաղէմ գնալու նպատակի հիման վրայ և ղեկավարն էլ ընտրւել է այդ նոյն նպատակով։ Նա այլեւս առաջնորդ չէ, այլ միայն ուղեվար։

Եւ վերջապէս քարաւանը կարող է ժողով հրաւիրել և ձայների մեծամասնութեամբ որոշել՝ ուր գնալ։ Երուսաղէ՞մ, Մեկկա՞, թէ՞ Մոսկւա։ Այս դէպքում, դեռ նպատակը չձեւակերպւած մարդիկ ստեղծել են քարաւանը։ Բայց ինչո՞ւ, ո՞րն է նրանց աննպատակային միասնութեան հիմքը։ Այդ հիմքը պէտք է գոյութիւն ունենայ, հակառակ դէպքում՝ նրանք չէին հաւաքւի միասին ժողով անելու և քւէարկելու։ Այդ հիմքը բնական միասնութիւնն է, որը կարող է լինել ընտանեկան, ցեղային, ազգային կամ ուրիշ տեսակի, որտեղ բնական միասնութիւնը իսկապէս նպատակից առաջնակարգ է։ Աւելի ճիշտ այն նպատակից, որը ձեւակերպւում է մեր կողմից, իսկ բնութեան նպատակների իմաստով նպատակը այստեղ էլ առաջնակարգ է։ Միայն այդ նպատակների մասին մենք գրեթէ ոչինչ չգիտենք։

Եւ ուրեմն այդ բնական միասնութիւնը ստեղծւում է ոչ թէ մեր կողմից, այլ մեզանից անկախ նպատակների և ուժերի ազդեցութեան տակ: Բայց այդ մեզանից անկախ ստեղծւած միասնութիւնը մենք ի վիճակի ենք քանդել կա՛մ բռնի ուժի և կամ էլ մեր անտարբերութեան միջոցով: Եւ հակառակը, մենք կարող ենք արուեստի, գրականութեան, լեզւի, կրօնի և այլ հոգեկան արժէքների հիման վրայ աւելի ամրապնդել այդ բնական միասնութիւնը:

Այդ տեսակի միասնութեան համար պայքարը կոչւում է ազգապահպանում, քանզի պահպանելով մեր հայութիւնը, մենք պահպանում ենք այն բնական միասնութիւնը, որ կոչւում է ԱԶԳ: Եւ մենք դա անում ենք որպէս ինքնանըպատակ, առանց որեւէ քաղաքական կամ ուրիշ նպատակների:

Շատերի մօտ յաճախ հարց է առաջանում. ո՞ւմն է պէտք ազգապահպանումը, եթէ բացակայում է քաղաքական նպատակը, այսինքն յոյսը, որ երբեւիցէ մենք կը լինենք «միացեալ և անկախ»: Շատերը համարում են, որ Սփիւռքը այս վիճակում, միեւնոյն է, շատ երկար չի կարող դիմանալ և ուրեմն ինչ իմաստ ունի երկարացնել նրա տանջալի հոգեւարքը: (Ես էլ, ճիշտն ասած, երկար ժամանակ այդպէս էի մտածում): Բացի դրանից, կան մարդիկ, որոնք ազգապահպանման աւելորդութիւնը փորձում են հիմնաւորել այն փիլիսոփայական գաղափարով, որ պատմական զարգացումը ընդհանրապէս տանում է դէպի ազգերի վերացումը և ուրեմն բոլոր ճիգերը դիմադրելու պատմութեանը ուժերի անիմաստ վատնում է:

Բոլոր այս կարծիքները պարզապէս տգիտութիւն են, որոնք հիմնւում են այն թերամիտ գաղափարի վրայ, որ իբր թէ պատմութիւնը տանում է մարդկութիւնը կատարեալ վիճակից դէպի կատարելութիւնը և որ պատմական փուլերի մէջ ամենակարեւորը վերջին եզրափակիչ փուլն է, իսկ մնացած միջանկեալները ինքնուրոյն արժէք չունեցող միջոցներ են այս կամ այն ձեւի «Աստծու արքայութեան» հասնելու համար: Չեմ կարող համաձայնւել այն գաղափարի հետ, թէ ի վերջոյ ազգերը կը վերանան, բայց եթէ դա այդպէս է, նոյնիսկ այդ դէպքում մենք ոչ մի բարոյական իրաւունք չունենք դադարեցնելու ազգապահպանման պայքարը, քանզի այդ պայքարը բխում է ազգութեան բնականութիւնից:

Նրանց համար, ովքեր հակառակ կարծիքին են, ունեմ մի խորհուրդ,- Գնացէք տուն և սպանեցէք ձեր երեխաներին, քոյրերին և մայրերին: Չէ՞ որ նրանցից ոչ մէկը չի ապրի 90 տարեկանից աւելի: Եւ եթէ միեւնոյն է, նրանք պէտք է մահանան համապատասխան տարիքում, էլ ինչո՞ւ երկարացնել նրանց միջանկեալ՝ կեանք կոչւող փուլը, նրանց հոգեւարքը: Սպանելով ձեր մերձաւորներին, դուք կարող էք սպանել նաեւ ձեզ: Գնացէք և կատարէք իմ խորհուրդը, իսկ եթէ ընդունակ չէք, ապա մի՛ տուէք նոյն խորհուրդը ամբողջ ազգին:

Այսպիսով մենք ունենք բնական միասնութիւն, որի մէջ պարունակւած է ինքնապահպանումը որպէս ինքնանպատակ և արհեստական կամ քաղաքական միասնութիւն, որը հիմնւած է քաղաքական նպատակի վրայ և որը օժտւած է վարչական որոշումներ ընդունող մարմնով: Երբ մենք խօսում ենք միասնութեան անհրաժեշտութեան մասին, մենք, ի հարկէ, նկատի ունենք երկրորդ տեսակի միասնութիւնը, որովհետեւ նրանցից է կախւած մեր ազգի քաղաքական դատի լուծումը: Իսկ ինչ մնում է ազգապահպանմանը, ապա եկեղեցիներ ու դպրոցներ կարելի է առանձին-առանձին էլ կառուցել (լաւ կը լինէր միասին, բայց առանձինն էլ մեծ վնասներ չի բերում):

Այն, ինչ կոչւում է քաղաքական միասնութիւն, չի կարող ստեղծւել առանց ընդհանուր քաղաքական նպատակի և ընդհանուր ղեկավար մարմնի: Հնարաւո՞ր է արդեօք այդպիսի միասնութիւն և այդպիսի միասնական մարմին Սփիւռքում: Տեսականօրէն, ի հա՛րկէ: Դրա համար գոյութիւն ունի երեք ճանապարհ:

Առաջինը կայանում է նրանում, որ գոյութիւն ունեցող կուսակցութիւններից մէկը պարզապէս կլանում է մնացածներին: Դա կարող է տեղի ունենալ այն դէպքում, երբ կլանողի առաւելութիւնները և հեղինակութիւնը կլանւողների համեմատութեամբ ակնյայտ են և ընդունւում են վերջինների կողմից: Եթէ մեր միասնութիւնը մինչեւ այսօր չի գնացել այդ ճանապարհով, ապա դա եղել է ոչ թէ նրա համար, որ մենք չենք ունեցել կլանողի յատկութիւններով օժտւած կուսակցութիւն, այլ պարզապէս նրա համար որ այն միւսները կլանւելու ոչ մի ցանկութիւն չեն ունեցել, գերադասելով ինքնուրոյնութիւնը միասնութեանը:

Երկրորդ ճանապարհը, դա միասնութիւնն է մի ուրիշ, համազգային միութեան մէջ: Այդ դէպքում ամէն մի կուսակցութիւն կարող է պահպանել իր գաղափարները, ծրագիրները և կուսակցական դիրքերը, բայց միութեան մէջ գործել յօգուտ միութեան նպատակների, ճիշտ այնպէս, ինչպէս, գործում են տարբեր կուսակցութիւններ քաղաքակիրթ տարբեր երկրներում: Սա անկասկած միասնութեան լաւագոյն ձեւերից մէկն է, բայց հէնց այդ ձեւը բոլորովին անհնարին է հայ աշխարհում: Ինչո՞ւ: Որովհետեւ կուսակցութիւնների տարակարծութիւնները վերաբերւում են հէնց այն գլխաւոր նպատակին, որի շուրջ պէտք է ստեղծւէր միասնութիւնը:

Այսինքն գոյութիւն չունի այն համազգային նպատակը, որի հիման վրայ հնարաւոր լինի կուսակցութիւններից ստեղծել միութիւն: Դա հնարաւոր կը լինէր միայն այն դէպքում, եթէ բոլոր կուսակցութիւնները և կազմակերպութիւնները ընդունէին գլխաւոր նպատակը և բաժանւէին միայն ճանապարհների և միջոցների հարցում: Օրինակ, եթէ բոլորը ընդունէին պարզ և բնական «Միացեալ, Անկախ, Ազատ Հայաստան» նպատակը, ընդունէին որպէս վերջ-

նանպատակ, գոնէ որպէս ուտոպի, առասպել, ճիշտ այնպէս, ինչպէս կոմունիստները ընդունում են կոմունիստական հասարակարգ հասկացութիւնը, և վիճէին միջոցների պակասի, տարբեր ուղղութիւնների, չարդարացած զոհերի կամ այդ կարգի բաների մասին, միութիւն դեռ կարելի էր ստեղծել։

Բայց երբ այդ նպատակը մերժում է նոյնիսկ որպէս գաղափար, դա արդէն անմտութեան այնպիսի մի գագաթնակէտ է, որտեղ չի կարող ստեղծել ոչ քաղաքական միասնութիւն և ոչ էլ ոչ այնքան արդար համագործակցութիւնը, որտեղ մէկը դրամ է տալիս, իսկ միւսը արիւն (թէպէտ ես անձամբ այդպիսի համագործակցութեանն էլ համաձայն եմ։ Թող գտնւեն դրամ տուողները, արիւն տուողների բանակը պատրաստ սպասում է)։

Եւ վերջապէս վերջին ճանապարհը նոր կազմակերպութեան ստեղծման, ես կ՚ասէի, նոր ուղիի, այլ ոչ կուսակցութեան ստեղծման ճանապարհն է։ Բայց մեզ համար այդ երկրորդ ճանապարհն էլ փակ է։ Նոր կազմակերպութեան ծնունդի համար մենք չունենք ազատ դաշտ։ Մեր ազգի ԲՈԼՈՐ այս կամ այն չափով գործունեայ մարդիկ արդէն ընդգրկւած են տարբեր կազմակերպութիւններում։ Իսկ այն մնացածը, որ ընդգրկւած չէ, հազիւ թէ ընդունակ լինի ստեղծելու նոր, այն էլ բոլորին կլանող կազմակերպութիւն։ Եւ ուրեմն նորը պէտք է ստեղծւի հների հաշւին, իսկ դա նշանակում է հներից կազմել մէկ միութիւն, որի մասին ես արդէն յայտնեցի իմ կարծիքը։

Այսպիսով ես լաւատես չեմ կազմակերպչական իմաստով միասնութիւն ստեղծելու հարցում։ Բայց համարում եմ, որ տարբեր խնդիրների շուրջ հնարաւոր է ստեղծել միասնական շարժումներ։ Դրա համար անհրաժեշտ է ստեղծել հայ դատի վերաբերեալ համազգային արժէք ունեցող գաղափարներ, ոչ որպէս վարչական որոշումներ, այլ որպէս հիմնաւորւած խորհուրդներ, երաշխաւորութիւններ։ Օրինակ՝ կարելի է զարգացնել անհատական պայքարի գաղափարը, այս կամ այն հարցի շուրջը բողոքի ցոյցերի կազմակերպչական հարցերը, օտարի հետ ամուսնանալու, մեծ քանակով երեխաներ ունենալու, հայկական վարժարաններ յաճախելու, հայրենիքից դուրս գալու և ուրիշ նման հարցեր, որոնք պէտք է հիմք ծառայեն մի ինչ որ գաղափարական ընդհանուր ազգային դոկտրինի՝ միտումի։

Եթէ բոլոր նման հարցերը մշակւեն և հիմնաւորւած ձեւով առաջարկւեն մեր ժողովրդին, ով գիտէ, գուցէ անկախ նրանից, թէ ով է ասում այդ ազգային արժէքները, դառնան ազգային վարքագծի աղբիւր։ Գուցէ այդպիսով ստեղծւի մի տեսակ ոչ կազմակերպչական, բայց միասնութիւն։ Գրում եմ այս տողերը և ինքս ինձ վրդովւում։ Ինչո՞ւ մեր ազգը չի կարող իր միասնութիւնը դնել առողջ հիմքերի վրայ։ Ինչո՞ւ պէտք է ստեղծւեն կամ առաջարկւեն արհեստական ձեւեր, ինչո՞ւ պէտք է ազգային ոգին յարմարւի ազգային կացութեանը։ Մի՞թէ

հնարաւոր չէ, որ բարձր ազգային ինքնագիտակցութիւնը դէն շպրտի բոլոր տարակարծութիւնները և միասնական հարուածներով խուճապի մատնի թուրքը: Բայց փաստը մնում է փաստ՝ միասնութիւն չկայ և մօտ ժամանակներում չի էլ լինի: Ուրեմն ամէն մէկը թող յոյսը դնի միայն իր վրայ:

Եւ վերջինը,- միասնութեան հող գտնելու համար համարում եմ, որ անհրաժեշտ է հաւաքել համահայկական համագումար, որտեղ հնարաւոր կը լինի արտայայտել և առողջ քննադատութեան ենթարկել բոլոր կարծիքները և առաջարկութիւնները: Համոզուած եմ, որ գոնէ համագումարի ժամանակ, որոշ կուսակցութիւնների ներկայացուցիչներ ստիպուած կը լինեն հրաժարուելու այն լկտի ոճից և վիճելու ձեւերից, որոնցով նրանք լցնում են իրենց մամուլի էջերը և որի համար կարող են կանչել քրէական պատասխանատուութեան:

1974

ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՐԱ ՇՈՒՐՋ ՍՏԵՂԾՒԱԾ ՄԹՆՈԼՈՐՏԸ

Է. Յովհաննիսեան

Քաղաքական կուսակցութիւնները իրենց քաղաքական յայտարարութիւնները անում են այն պահին, երբ ժողովուրդը ճգնաժամ է ապրում և երբ անհրաժեշտ են քաղաքական գնահատանքներ՝ ստեղծուած ճգնաժամային կացութեան վերաբերեալ։ Եթէ ճգնաժամը համազգային է, ազգային շահերից ելնելով, տարբեր կուսակցութիւններ, մէկ կողմ դնելով իրենց գաղափարախօսական և կուսակցական տարակարծութիւնները ի յայտ են գալիս ընդհանուր շահերից բխող մէկ յայտարարութեամբ, որի հետ չի կարող հաշւի չնստել ժողովուրդը, քանզի յայտարարութիւն անողները քաղաքական փորձ ունեցող կազմակերպութիւններն են։ Անշուշտ ժողովուրդի մէջ գտնւում են նաեւ այնպիսի անձեր և խմբաւորումներ, որոնք համաձայն չեն այս կամ այն յայտարարութեան հետ, ինչը նշանակում է, որ իրենք պատկանում են այլ կուսակցութեան կամ այլ գաղափարի և պատրաստ չեն միանալու ստեղծուած կացութեան նկատմամբ այլ կուսակցութիւնների գնահատականին։ Ո՞վ պէտք է այս դէպքում լինի դատաւորը։ Հաւանաբար՝ տրամաբանութիւնը, քաղաքական փորձը և մեծամասնութիւնը։ Հէնց այս տեսանկիւնից էլ անհրաժեշտ եմ համարում վերլուծութեան ենթարկել այն կացութիւնը, որը ծնեց Սփիւռքի երեք կուսակցութիւնների յայտարարութիւնը և որը անուղղակիօրէն արդէն հրապարակաւ արտայայտւել էր ազգային ճակատի կազմութեամբ մտահոգւած և ազգային պատասխանատուութիւն ունեցող Հայաստանի մտաւորականութեան կողմից։

Գորբաչեւի իշխանութեան գլուխ անցնելուց յետոյ Խորհրդային Միութեան հասարակական կեանքում տեղի ունեցաւ իսկական յեղաշրջում, որի առանձնայատկութիւնը կայանում է նրանում, որ այդ յեղաշրջումը կատարւեց վերեւից։ Բոլոր յեղաշրջումների ազատութեան սահմանները որոշւում են յեղաշրջողների կողմից։ Պատմական փորձը ցոյց է տալիս, որ նոյնիսկ ներքեւից կատարւած յեղաշրջումների հասարակական ազատութիւնների սահմանները ի վերջոյ որոշում են վերեւից և, որպէս օրէնք, Ռոբեսպիէրները, Հիտլերները, Ստալինները և Կրոմուելները, իշխանութեան գլուխ անցնելուց յետոյ պետական նկատառումներով, սահմանափակում են այն ազատութիւնները, որոնց սիրոյն ժողովուրդը ապստամբում և արիւն է թափում։ Առաւել եւս պէտք է հաշւի նստել ազատութեան այն սահմանների հետ, որոնք հաստատւում են վերեւից եկող յեղաշրջումների կողմից։

Եւ հէնց սա առաջին իրողութիւնն է: Խորհրդային Միութեան յեղաշրջումը այս կամ այն նկատառումով կատարուեց Գորբաչովի կողմից և նա իր նպատակների համաձայն սահմանեց ազատութիւնների դաշտը: Կարելի է անշուշտ չհամաձայնուել այդ ազատութիւնների հետ և փորձել լայնացնել տրուած ազատութիւնների դաշտը, բայց դա արդէն կը լինի յեղաշրջում ներքեւից, որին պէտք է պատրաստուել նախ շատ աւելի լուրջ, ապա միայն այն բանից յետոյ, երբ սպառւի տրուած ազատութիւնների դաշտը և երբ այդ դաշտի սահմանները կը սկսեն ճնշել ժողովուրդների ազատասիրական ձգտումներին: Մի խօսքով նոր բաժակ կարելի է պահանջել, երբ հինը արդէն լցւած է: Իսկ Խորհրդային ժողովուրդներին տրուած բաժակը դեռեւս շատ հեռու է լցւած լինելուց և այնտեղ ազատութեան գինի լցնելու դեռ շատ տեղ կայ, և դեռ շատ երկար մենք կարող ենք առանց հարբելու խմել այդ գինին:

Շատերը համարում են, որ Գորբաչեւը ոչինչ չարեց, որ Խորհրդային Միութիւնում ոչինչ չի փոխւել եւ չի կարող փոխւել, քանի որ բոլոր կոմունիստները աւազակներ են, իսկ ռուս ժողովուրդը ունի ստրուկի նկարագիր: Չեմ ուզում պատասխանել այդ դատարկաբաններին, ուզում եմ միայն յիշեցնել, թէ ինչպէս հերթականօրէն նրանց բերանը փակեց Գորբաչեւի քաղաքականութիւնը:

Սկիզբից արեւմուտքում ապրող մի շարք յայտնի այլախոհներ նամակ գրեցին խորհրդային թերթերին, թէ մենք չենք հաւատում հրապարակայնութեան քաղաքականութեանը: Եթէ իսկապէս հրապարակայնութիւն կայ, ապա հրատարակէք մեր նամակը: Հրատարակեցին: Յետոյ ասւեց, եթէ Շարանսկուն դուրս թողնէք՝ կը հաւատանք: Թողեցին: Եթէ Սախարովին աքսորից ազատէք… Ազատեցին: Եթէ Աֆղանիստանից դուրս գաք… դուրս եկան: Եթէ պայմանագիր ստորագրէք… ստորագրեցին: Եթէ պատմութիւնը վերանայէք… վերանայում են: Եթէ քաղբանտարկեալներին ազատէք… ազատեցին: Եթէ թաթարներին թողնէք Ղրիմ վերադառնալ… թողեցին: Եթէ ազգային դրօշները թողնէք… թողեցին: Եթէ, եթէ, եթէ… հիմի էլ ասում են եթէ Բեռլինի պատը քանդէք, եթէ երկրում բազմակուսակցական դրութիւն ստեղծէք, եթէ հանրապետութիւններին անկախութիւն տաք, եթէ Լենինին դատապարտէք… մինչեւ ե՞րբ, որքա՞ն կարելի է նոր բաժակներ պահանջել, երբ մենք առաջին բաժակը չենք խմել:

Հէնց այս առաջին բաժակը խմելու տրամադրութեամբ էլ սկսւեցին Ղարաբաղի իրադարձութիւնները: Իրադարձութիւնների գրեթէ բոլոր մանրամասնութիւնները յայտնի են, ուստի նրանց վրայ կանգ չեմ ուզում առնել: Միայն որպէս ընդհանուր գնահատական պիտի նշեմ, որ երկար ժամանակ շարժումը մնաց Գորբաչեւեան նոր քաղաքականութեան սահմաններում, կրում էր համազգային բնոյթ, իսկ մեր ժողովուրդի կազմակերպւածութիւնը, իմաստու-

թիւնը և քաղաքական հասունութիւնը պարզապէս հիացմունք էին առաջացնում: Հոգ չէ, որ յուլիսի 18ին Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհուրդը մեծ հարուած հասցրեց մեր յոյսերին, ու սպասումներին: Այդ հարուածը չպէտք է դուրս բերի մեզ հաւասարակշռութիւնից և չպէտք է խլի մեզանից մեր քաղաքական իմաստութիւնը: Ընդհակառակը՝ մենք պէտք է կատարենք պատահածի աւելի խոր վերլուծութիւնը և, եթէ պէտք է դիմել ժամանակաւոր նահանջի ու որոնել նոր ճանապարհներ և դաշնակիցներ: Գուցէ մենք հարուած կերանք, որովհետեւ՝ ինչպէս միշտ՝ շտապեցինք: Գուցէ Գորբաչեւի վերափոխութիւնների և հրապարակայնութեան քաղաքականութեան հակառակորդները դեռեւս շատ հզօր են և գուցէ Թուրքիան ճնշում է գործադրում խորհրդային իշխանութեան վրայ: Միայն այս բոլոր հարցերի վերլուծումը ցոյց կը տայ հետագայ քայլերի ուղղութիւնը:

Պէտք է ասել, որ հարուածից յետոյ էլ կացութիւնը այդքան ողբերգական չէր, որ մենք մեզ կորցնէինք:

Մենք բոլորս ականատես էինք, թէ ինչպէս Գերագոյն Խորհրդի նիստի ժամանակ Գորբաչեւը շատ կոպիտ ձեւով ընդհատում էր Հայաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչներին, և պահանջում էր նրանցից փոխզիջողական առաջարկութիւն: Եթէ մէկ կողմ դնենք նրա արտայայտելու կոպիտ ձեւը, կարելի էր նկատել, որ նա չէր ցանկանում որեւէ կողմի յաղթանակը, այլ՝ երկուսից էլ զիջումներ էր պահանջում: Դիմելով Ադրբեջանի Գերագոյն Խորհրդի նախագահութեան նախագահ Թաթլիեւին, Գորբաչեւը ասաց. ինչո՞ւմն էք դուք տեսնում փոխզիջումը: Հայերը ձեզ չեն հաւատում, չեն հաւատում այն երաշխիքներին, որոնք այսօր գոյութիւն ունեն: Ուրեմն եկէք պայմանաւորւենք երաշխիքներ ուժեղացնելու մասին:

Իսկ Ակադեմիայի միջազգային սոցիալիստական համակարգի տնտեսագիտութեան դիրեկտոր Եւգէնի Համբարձումովը հաղորդեց լրագրողներին, որ Գերագոյն Խորհուրդի Ազգութիւնների խորհուրդը մշակում է Ղարաբաղի հարցը լուծելու առաջարկութիւնները: Արդէն գործում են 5 ենթայանձնախմբեր,- ասաց նա,- որոնցից մէկը մշակում է Լեռնային Ղարաբաղը ինքնավար հանրապետութիւն դարձնելու խնդիրը: Համբարձումովը յոյս յայտնեց, որ Ղարաբաղը այդ դրութիւնը կը ստանայ և իրենից աւելացրեց, որ ինք անձամբ համաձայն է նման որոշման հետ: Բացի դրանից՝ ստեղծուեցին տարբեր յանձնախմբեր, որոնք տեղի վրայ սկսեցին ուսումնասիրել հարցը:

Իսկ վերջերս Երեւանի **«Կոմունիստ»** թերթը հրատարակեց Խորհրդային Միութեան Գրողների Միութեան անդամ Վերմիշայի **«Իրական հաւասարութիւն»** վերնագիրը կրող յօդուածը, որտեղ հեղինակը յայտնում է հետեւեալ տեսակէտը. «**Անհրաժեշտ է Խորհրդային Միութեան սահմանադրութիւնը լրացնել**

մէկ յօդուածով, որը բոլոր ինքնավար ազգային միաւորներին տայ գոյութիւն ունեցող կացութիւնը փոխելու իրաւունքը, մասնաւորապէս կենտրոնական իշխանութիւններին անմիջականօրէն ենթարկուելու իրաւունքը: Ինքնավար միաւորների նկատմամբ գոյութիւն ունեցող կացութիւնը խտրականութիւն է, քանզի նրանք ազգային միաւորներ են: Նրանք ոչ միայն չունեն Խորհրդային Միութենից դուրս գալու իրաւունքը, այլ մէկ հանրապետութիւնից միւսը տեղափոխելու կամ կենտրոնական իշխանութիւններին ենթարկուելու իրաւունքը: Այս աւատապետական կախուածութիւնը ոչ մի կերպ չի համապատասխանում օրինական հասարակակարգին: Այս անարդարութիւնը նոր Սահմանադրութեան մէջ պէտք է շտկուի»:

Սրան կարելի է աւելացնել, որ եթէ նախկինում Սումգայթի դէպքերի մեղքը բարդւում էր երկու կողմերի վրայ և նրանք կոչւում էին «**հայ-աղրբեջանական բախումներ**», ապա կամաց-կամաց նրանք պաշտօնապէս կոչւեցին ջարդեր և յստակ դարձաւ, թէ ո՞վ է ջարդարարը: Կարելի է բերել շատ ուրիշ օրինակներ, որոնք գալիս են ապացուցելու, թէ կացութիւնը այնքան յուսահատիչ չէր, որպէսզի Հայաստանի ցուցարարների ներկայացուցիչները «**Պրաւդա**»ի թղթակիցներին անէին հետեւեալ յայտարարութիւնները.

Վ. ՍԱՐԱԴԵՂԵԱՆ – 26 փետրուարի մեր գլխաւոր սխալը գործադուլներին վերջ տալն էր: Իշխանութիւնների հետ պէտք է խօսել ուժերի դիրքերից, մենք ոչ թէ լացող, այլ պայքարող ազգ ենք:

Ա. ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ – Անհրաժեշտ են հայկական զինուած ջոկատներ:

Մ. ԳՐԻԳՈՐԵԱՆ – Տիկնայք և պարոնայք, մենք կրկին անդունդի եզրին ենք և մեր երկրից այլեւս թող չլսուի «ընկեր» բառը: Հայաստանը չի կարող ղեկավարուել Մոսկւայի հովանաւորիչների կողմից, նրանք թշնամու կողմից են: Վաղուց յայտնի է, որ Մոսկւայի շահերը հակասում են մեր շահերին: Ուրեմն պէտք է ուղղակի պատերազմ յայտարարել: Եւ այն պետութիւնը, որին մենք դիմել ենք օգնութեան խնդրանքով, իրաւունք ունի միջամտելու մեր ներքին գործերին:

Ա. ՍԱՆՈՒՉԱՐԵԱՆ – Նրանք ովքեր մեր դէմ բանակ ուղարկեցին, պէտք է իմանան, որ հայ ժողովուրդը այդ բանակը նկատելու է որպէս գաղութային զօրքեր:

Սրա վրայ կարելի է աւելացնել անկախութեան կոչերը, որոնք սկսեցին բորբոքել հայ երիտասարդների զգացմունքները:

Ահաւասիկ այս վտանգաւոր կացութեան մէջ, հայ ժողովուրդի ճակատագրով մտահոգւած բոլոր մարդիկ ու կազմակերպութիւններ փորձեցին Ղարաբաղի շարժումը վերադարձնել տրամաբանական սահմանների մէջ և իրենց ելոյթներով ու յայտարարութիւններով ջանացին քաղաքական հասունութիւն քարոզել: Սիլվա Կապուտիկեանը, Վիկտոր Համբարձումեանը, Էդւարդ Ջըր-

բաշեանը և ուրիշներ այդ բանը արեցին հեռուստատեսութեամբ, իսկ Սփիւռքի քաղաքական կուսակցութիւնները իրենց համատեղ յայտարարութեամբ:

Ես համարում եմ, որ սա երջանկութեան պահն է, երբ Հայաստանի մտաւորականութիւնը և Սփիւռքի տարբեր կուսակցութիւնները, մէկ կողմ դնելով իրենց վէճերն ու տարակարծութիւնները, ազգային պատասխանատուութեան բարձր զգացմունքով տէր են կանգնում իրենց ժողովրդին: Բայց թէ՛ Հայաստանում և թէ Հայաստանից դուրս կային մարդիկ, որոնք չհասկացան այդ պահի խորհուրդը և սկսեցին դաւաճանների ու քաղաքական տգէտների պիտակներ փակցնել նրանց վրայ, ովքեր փորձում էին ելք գտնել՝ ստեղծած բարդ կացութիւնից: Անշուշտ արտաքնապէս ամենահեշտ և ամենապարզ երեւացող ելքը ըմբոստութեան շարունակումն է, որը կարող է ընթանալ, օրինակ, այսպիսի միամիտ տրամաբանութեամբ. **«Ուրեմն դուք չտուեցիք մեզ Ղարաբաղը, լա՛ւ, այդ դէպքում մենք հանրաքւէ ենք պահանջում Հայաստանը Խորհրդային Միութեան կազմից դուրս բերելու համար»**: Իսկ յետոյ, բնականաբար, գալու է հետեւեալ տրամաբանութիւնը. **«դուք չթողեցիք մեզ հանրաքւէ անցկացնել, լաւ, այդ դէպքում մենք ապստամբութեան ենք ձեռնարկում և խնդրում ենք Միացեալ Նահանգներից մեզ զէնք ուղարկել»**:

Դէպքերի նման զարգացումը վտանգաւոր չէ այն իմաստով, որ 60 տարի մէկ հատ իսկ ժանգոտ դանակ ձեռքում չպահած ժողովուրդը կարող է ապստամբել, յոյսը դնելով ամերիկացիների վրայ, որոնց հոգը չի հայերն էլ, Հայկական խնդիրն էլ: Մեր ժողովուրդը բաւականին խելացի է՝ այդպիսի արկածախնդրութեան չգնալու համար, և այստեղից՝ ինչպէս ասացի՝ վտանգ չկայ. վտանգը ուրիշ տեղից է գալիս:

Մի քանի տասնեակ արկածախնդիրների յայտարարութիւններին կարող են հաւատալ և այդ յայտարարութիւնները կարող են պատրւակ դարձնել՝ Ղարաբաղի ամբողջ շարժումը ոտնակոխելու համար: Դժբախտաբար՝ այս իրողութիւնը չհասկացան նոյնիսկ նրանք, որոնցից շատ աւելի սպասելիքներ կային: Ես նկատի ունեմ Պարոյր Հայրիկեանին, որը իմ կարծիքով կարող էր աւելի իմաստուն գտնւել:

Վերջերս նա մի հարցազրոյց ունեցաւ «**Ազատութիւն Ռատիոկայան**»ի հետ, որտեղ սկիզբից պատմեց Շեւարտնաձէի հետ ունեցած իր հանդիպման մասին, ապա՝ անդրադարձաւ Ղարաբաղի խնդրին:

Մէկ կողմ թողնենք այն հանգամանքը, որ Խորհրդային Միութեան արտաքին գործերի նախարարը իր վրայ լաւ տպաւորութիւն չի թողել՝ որպէս պետականօրէն մտածող անձնաւորութիւն, որի մասին նա ասաց. «**Խօսակցութիւնը տեւեց քառասուն րոպէ և ես նրա ամէն անտրամաբանական առարկութեանը պատասխանում էի նոր հարցումով և ինքը իմ վրայ, որպէս պետական**

մտածող, լաւ տպաւորութիւն չթողեց: Եթէ չլինէին իրեն շրջապատող մարդիկ, որոնք ողջ մթնոլորտը յագեցնում էին իր նկատմամբ պատկառանքով, կարելի էր մտածել, թէ զրուցում ես փողոցում հանդիպած մի մեծահասակ մարդու հետ»:

Տպաւորութիւնը տպաւորութիւն է և այս մասին վիճելը աւելորդ է: Սակայն Հայրիկեանի կողմից Շեւարտնաձէի պատասխաններին տրուած գնահատականի մէջ կայ մի նրբութիւն, որը կապ ունի քննարկուող նիւթի հետ: Հայրիկեանը ասաց հետեւեալը. «**Ղարաբաղի մասին խօսելիս Շեւարտնաձէն նշեց, որ խորհրդային իշխանութիւնները այն մտահոգութիւնը ունեն, որ եթէ Ղարաբաղի հարցին ընթացք տուէր, այսինքն՝ հարցը լուծուէր դրականօրէն, ապա նման հարցեր կը ծագէին նաեւ այլ վայրերում և այս հարցում ակնյայտ էր Շեւարտնաձէի բացասական դիրքորոշումը, որովհետեւ ինքը վկայակոչեց Աբխազներին, հարաւային Օսեթիայի բնակիչներին, որոնք նոյնպէս կարող էին այդ հարցը բարձրացնել: Ինքը հանդէս եկաւ որպէս – եթէ կարելի է այսպէս ասել – վրացական կայսերապաշտութեան ներկայացուցիչ և, ըստ երեւոյթին, իր այդ տագնապը, որպէս վրացի կայսերապաշտի տագնապ, ինչ որ բացասական ազդեցութիւն է թողել Ղարաբաղի հարցի քննարկման ընթացքում: Ինքը ինձ ուզում էր համոզել, որ իբր իրենք գտել են միակ ընդունելի տարբերակը, մի այնպիսի տարբերակ, որը ապահովի խաղաղ համակեցութիւնը, բայց արդարութիւնը իրենց ամէնեւին էլ չի հետաքրքրում»**:

Այո, սիրելի Պարոյր, արդարութիւնը քաղաքական գործիչներին երբեք չի հետաքրքրել: Իսկ նրանց, ում այդ բանը շատ է հետաքրքրում, նրանք թողնում են քաղաքական բեմը և անցնում են բարոյական արժէքները պաշտպանելու բնագաւառը: Այս սկզբունքը կիրառւում է ոչ միայն կայսերապաշտ Խորհրդային Միութիւնում, այլեւ՝ ամէնուր: Նոյնիսկ ամենաժողովրդական երկրներում Բարոյական և Քաղաքական բնագաւառներ իրարից խիստ տարբերւում են:

Հրեայ բարոյական գործիչները աղմուկ են բարձրացնում, երբ Խորհրդային Միութիւնում ցրում են ցոյցերը, իսկ հրեայ քաղաքական գործիչները Յորդանանի Արեւմտեան Ափում ցուցարար երեխաների վրայ կրակ բացելու հրահանգ են տալիս: Եւրոպայի բարոյական գործիչները դատապարտում են հայերի ցեղասպանութիւնը և սպառնում են արգիլել Թուրքիայի մուտքը Եւրոպական Շուկայ, իսկ քաղաքական գործիչները այդ ոճրագործ երկրին միլիառների օգնութիւն են ցուցաբերում: Ամերիկացի բարոյական գործիչները աղմկում են ուրիշ երկրի ներքին գործերին միջամտելու դէմ, իսկ նրանց քաղաքական գործակիցները ծպտուն չհանեցին, երբ թրքական զօրքերը ներխուժեցին Կիպրոս: Այսպէս եղել է ու հաւանաբար լինելու է միշտ: Բայց սա չի նշանակում, որ բարոյական բնագաւառի գործիչները անելիք չունեն:

Նրանց գործունէութիւնը շատ օգտակար է՝ հասարակական կարծիք ստեղծելու հարցում, որը բարոյական ճնշում է գործադրում այս կամ այն քաղաքական գործիչի վրայ։ Սակայն աշխարհի բոլոր երկրներում դիւանագէտները ոչ թէ ընտրւում են ժողովուրդի կողմից, այլ՝ նշանակւում են կառավարութեան դիրքերից։ Եւ դա արւում է այն պարզ պատճառով, որ ընտրելու դէպքում՝ դիւանագէտը չափից աւելին պէտք է յարմարւէր բարոյական չափանիշների հետ, իսկ նրանից պահանջւում է սառն դատողութիւն՝ պետական շահերը պաշտպանելու գործում։ Ուրեմն՝ ինչո՞ւ զարմանալ, որ հէնց այդ դիրքերից էլ Շեւարտնաձէն խօսել է Պարոյր Հայրիկեանի հետ։ Իսկ ինչ վերաբերում է նրա վրացական կայսերապաշտութեանը, կամ՝ Վրաստանի պետական շահերով մտահոգւածութեանը, միթէ՞ դա զարմանալի է։ Եթէ մենք վրացիներ լինէինք, միթէ՞ պիտի դատապարտէինք նրա մօտեցումը – ոչ թէ բարոյական, այլ քաղաքական իմաստով։ Եթէ Շեւարտնաձէն դիւանագիտօրէն խօսել է աբխազների կամ օսեթների մասին, միթէ՞ պարզ չէ, որ նրան ամէնից շատ մտահոգութիւն է պատճառել Ախալքալաքի հարցը։ Եւ, վերջապէս, միթէ՞ մենք հայերս միշտ չենք երազել այն մասին, որ մեր Միկոյեանները, Բաղրամեանները ու Բաբաջանեանները հէնց այդպիսին լինէին։ Այսինքն, միութենական շահերը պաշտպանելիս ոչ միայն մոռացութեան չմատնէին հայկական շահերը, այլեւ հայկական շահերը ներկայացնէին որպէս համամիութենական շահեր։

Այս առընչութեամբ հետաքրքրական է Հայրիկեանի նաեւ այն յայտարարութիւնը, որ այժմ Հայաստանում կան հարիւր հազարաւոր անկախականներ, այսինքն՝ Հայաստանի անկախութեան կողմնակիցներ։ Եթէ այդ անկախականները բարոյական բնագաւառի անկախականներ են, այսինքն՝ հասկանում են անկախութեան արժէքը, ապա դա մեր ժողովուրդի ողբերգութիւնը պէտք է համարել։ Հիմա՞ հասկացանք անկախութեան արժէքը։ Հազարամեակների ընթացքում անկախութեան համար պայքար մղող ժողովուրդը սպասում էր Գորբաչեւի՞ն, որ պիտի ընդամէնը հարիւր հազարաւոր հայեր հասկանային, թէ որքան լաւ բան է անկախութիւնը։ Եթէ այդպէս է, ամէն ինչ թողնենք և նախ բացատրենք մեր ժողովուրդին, որ անկախութիւնը իսկապէս բոլոր ժողովուրդների համար լիարժէք ազգային կեանքով ապրելու միակ ձեւն է։ Իսկ եթէ այս հարիւր հազարաւոր անկախականները (ես անձամբ դրան չեմ հաւատում) քաղաքական անկախականներ են, այսինքն՝ անկախութեան համար պայքարը պատրաստ են այսօր օրակարգի հարց և քաղաքական նպատակ դարձնել, սա էլ մէկ ուրիշ ողբերգութիւն է, որովհետեւ խօսում է քաղաքական փորձի բացակայութեան մասին։

Բայց Հայրիկեանը այլ կարծիք ունի: «**Ազատութիւն Ռատիոկայան**»ի լրագրողին նա ասաց հետեւեալը,- «**Անկախութեան գաղափարը համարել հեռաւոր մի նպատակ, դա աւելի քան արտառոց է: Որեւէ մէկին արգիլել խօսել հանրաքուէի մասին, կամ հանրաքուէի պահանջը** (խօսքը Խորհրդային Միութեան կազմի միջից դուրս գալու հանրաքուէի մասին է – Է.Յ.) **համարել ծայրայեղութիւն, սա արդէն պարզապէս քաղաքական անգրագիտութեան վկայութիւն է: Անկախութեան պահանջը համարում են վտանգաւոր, մինչդեռ անկախութիւնը ամենաբնական բանն է, երբ դու ինքդ ես քո հարցերը լուծում**»:

Կարծում եմ որ այժմ պիտի հասկանալի դառնայ, թէ ինչու Հայրիկեանը խիստ քննադատեց՝ թէ՛ «Ղարաբաղ» կոմիտէն և թէ երեք կուսակցութիւնների յայտարարութիւնը՝ գործադուլներին վերջ տալու մասին: Բայց նախ մէջբերեմ նրա այս երկու քննադատութիւնները: «**Ազատութիւն Ռատիոկայան**»ի լրագրողին նա ասաց հետեւեալը. «**Այսօր «Ղարաբաղ» կոմիտէն գործադուլը դադրեցնելու մասին որոշում կայացնելով և խօսելով հայ ազգի շահերից, լրիւ մոռացութեան է մատնում այն հանգամանքը, որ գործադուլը սկսւել էր Ղարաբաղի նեցուկ կանգնելու համար: Ո՞ւր մնաց այդ տրամաբանութիւնը: Արդեօ՞ք նրանք հետաքրքրւեցին, թէ ինչպիսին է դրութիւնը: Դադարեցնելով գործադուլը այն պահին, երբ Ղարաբաղում գործադուլը շարունակւում է, իրենք փաստօրէն իրաւունք տւեցին Մոսկւային բոլոր պատժիչ ուժերը տեղափոխել Ղարաբաղ: Շարժումը փոքր չափերի մէջ լինելու բերումով,- Մոսկւան ուզեց յաջողացնել իր բռնի գործողութիւնները: Իմ կարծիքով, սա դաւաճանութիւն է Ղարաբաղի նկատմամբ. դաւաճանութիւն՝ այն պատճառով, որ վեր էին կացել Ղարաբաղին օգնելու համար և մեծ-մեծ խօսում էին, թէ պիտի շարունակեն մինչեւ վերջ, և յետոյ այսպէս հեռացան… Եթէ չլինէին իմ անձնական ծանօթութիւնները «Ղարաբաղ» կոմիտէի մի քանի անդամների հետ, ես ամենայն վճռակամութեամբ կը յայտարարէի, որ դա դարձել է դաւաճանների կոմիտէ: Բայց քանի որ նրանց շարքում մարդիկ կան, որոնց շատ մօտիկից ճանաչում եմ և գիտեմ, որ իրենք կարող են պատասխանատուութեան ծանրութեան տակ նոյնիսկ սխալներ թոյլ տալ, այդպէս խիստ չեմ արտայայտւում**»:

Իսկ երեք կուսակցութիւնների կոչի մասին Հայրիկեանը արտայայտւեց այսպէս.

«**Ճիշտ կը լինէր ասել, որ այդ կոչը հայ երեք կուսակցութիւնների ղեկավարների կողմից է, այնպէս որ ես ծանօթ լինելով կուսակցութեան տարբեր խաւերի մարդկանց հետ, գիտեմ որ կարող են տարակարծութիւններ լինել մի քանի ղեկավարների և նոյնիսկ զանգւածի միջեւ: Երեք կուսակցութիւնների Հայաստանին ուղղած կոչը ցոյց է տալիս Սփիւռքի զգուշաւորութիւնը: Այդ զգուշաւորութիւնը հասկանալի է եղեռն ապրած մի ժողովուրդի, մանաւանդ կուսակցու-**

թիւնների համար, որոնք քաղաքական կեանք են ղեկավարում: Նրանք պէտք է որ զգուշաւորութիւն ցուցաբերեն և Հայաստանին Սփիւռքից ուղղուած կոչից յաւելեալ բան չէր կարելի սպասել: Բայց գործադուլը ծայրայեղութիւն կոչել, դա քաղաքական անգրագիտութիւն է, ով էլ որ դա արած լինի»:

Հայրիկեանի այս գնահատականների առընչութեամբ ուզում եմ նշել հետեւեալը: Նրա այն տրամադրութիւնը, թէ կուսակցութիւնների կոչը միայն ղեկավարների կոչն է, քանի նա հանդիպել է այնպիսի կուսակցականների և նոյնիսկ ղեկավարների հետ, որոնք տեսակէտը չեն բաժանում, պարզապէս շփոթութիւն է: Եթէ նա հանդիպել է այնպիսի կուսակցութիւնների հետ, որոնք ոչ միայն համաձայն չեն իրենց ղեկավարների հետ, այլեւ՝ իրենց այդ անհամաձայնութեան մասին հրապարակաւ յայտարարութիւններն են անում, ապա նրանք կուսակցականներ չեն և վաղ թէ ուշ կը վռնդուեն կուսակցութիւնից, որովհետեւ կուսակցական ղեկավարները ղեկավարւում են իրենց ընդհանուր ժողովների որոշումներով, որոնք ամէն մի կուսակցականի համար սրբութիւն պէտք է լինեն: Ժողովրդավարական սկզբունքներով ղեկավարւող կուսակցութիւնների համար՝ հրապարակային այլախոհութիւնը կարգապահական յանցագործութիւն է: Այս մասին շատ յստակ կերպով ասւած է, առնուազն, մեր կուսակցութեան կանոնագրութեան մէջ և եթէ Հայրիկեանը իսկապէս հանդիպել է այլախոհ կուսակցականների, ես ցաւում եմ իմ ընկերների անկարգապահութեան համար:

Բայց վերադառնանք գործադուլներին: Կասկածից վեր է, որ գործադուլը պայքարելու միջոց է: Գործադուլը շատ հասկանալի և արդարանալի միջոց է, այնքան ատեն որ դա կը ծառայի խորհրդային իշխանութիւններին ցոյց տալու, թէ Ղարաբաղի հարցը համահայկական հարց է, թէ Ղարաբաղը Հայաստանին կցելու պահանջը համազգային պահանջ է, թէ չկայ Հայաստանում ոչ մէկ բանւոր, ոչ մէկ կոմունիստ և ոչ մէկ մտաւորական, որը այլակարծիք լինի այդ հարցում: Իսկ դրա համա գործադուլը պէտք է հակակշռւած լինի և կրի համազգային բնոյթ: Բոլոր դպրոցները, բարձրագոյն ուսումնական հաստատութիւնները, գործարանները և հիմնարկութիւնները պէտք է միաժամանակ գործադուլի դիմեն՝ որոշ ժամանակի մը համար, և դրանով ցոյց տան Մոսկւային, թէ Ղարաբաղի հարցում աշխարհի հայութիւնը միասնական է: Եւ այս միտքը շատ յստակօրէն արտայայտւած է երեք կուսակցութիւնների կոչում: Այն տեսակէտը, թէ մեր ի՞նչ գործն է Հայաստանի ժողովրդի ներքին հարցերին միջամտելը և նրա վրայ բռնութիւն գործադրելը, անիմաստ դատարկաբանութիւն է, քանզի մենք Սփիւռքի կուսակցութիւն չենք, այլ՝ Սփիւռքում գործող, համահայկական կուսակցութիւն, որը չի կարող հեռու մնալ այն ամէնից, ինչը կատարւում է մեր Հայրենիքում:

Սակայն Հայրիկեանի գնահատականների մէջ կայ մի միտք, որը քաղաքականապէս շատ հասուն է և եթէ նա զարգացնէր այդ միտքը, գուցէ հէնց ինքը յանգէր շատ կարեւոր և առողջ եզրակացութիւնների: Լրագրողի այն հարցումին, թէ ի՞նչ է Հայրիկեանը մտածում «Ղարաբաղ» կոմիտէի ղեկավար Լեւոն Տէր Պետրոսեանի այն յայտարարութեան մասին, թէ Խորհրդային Միութեան ղեկավարութեան մէջ տեղի ունեցած փոփոխութիւնները դրականօրէն են ընդունել Հայաստանում, նա պատասխանեց. «**Եթէ Լեւոն Տէր Պետրոսեանը արտայայտւել է յօգուտ այդ վերջին փոփոխութիւնների՝ այն իմաստով, որ դա պէտք է օգնի Ղարաբաղի հարցի լուծմանը, չգիտեմ, երեւի իրեն մի փոքր աւելի բան է յայտնի քան ինձ**»: Դժբախտաբար, Հայրիկեանի մտքով չի անցնում, որ կուսակցութիւններին էլ մի քիչ աւելի բան է յայտնի, քան իրեն: Ես կարող եմ վստահեցնել իրեն, որ այն պահին, երբ նա Փարիզի Խորհրդային դեսպանատան միջոցով՝ երկրպագուներով ու լրագրողներով շրջապատւած՝ ջանում էր բանտի իր կօշիկները ուղարկել Խորհրդային Միութեան թանգարանը, Ղարաբաղի հարցի շուրջ տեղի էին ունենում մի քիչ աւելի լուրջ իրադարձութիւններ, որոնց մասին ինքը տեղեակ չէր:

Կարծում եմ, որ չափից աւելի քննադատեցի Հայրիկեանին, բայց դա արեցի ոչ թէ իրեն վիրաւորելու համար, այլ յիշեցնելու համար, որ կտրուկ և վերջնական գնահատականներ տալուց առաջ՝ ինքը կարող էր մի քիչ սպասել: Բայց միւս կողմից Պարոյր Հայրիկեանին կարելի է հասկանալ, ազատ արտայայտւելու և գործելու իրաւունք ստանալու համար նա շատ է սպասել ու տառապել:

Այնուամենայնիւ 100 տարւայ պատմութիւն ունեցող քաղաքական կուսակցութիւնների կոչը քաղաքական անգրագիտութիւն անւանելը, առնուազն, փոքր ինչ անհամեստ է:

Այժմ մի քանի խօսք մեր ընդհանուր վերաբերմունքի մասին Խորհրդային Միութիւնում տեղի ունեցող փոփոխութիւնների վերաբերեալ: Կարող է այնպիսի տպաւորութիւն ստեղծւել, որ Գորբաչեւի գալուստից յետոյ մենք դարձել ենք խորհրդայնասէր և այլեւս չպէտք է քննադատենք խորհրդային վարչակարգը: Ոմանք ինձ արդէն մեղադրանք են նետում, թէ ի՞նչ է փոխւեցիր, խորհրդայնասէր դարձար: Ո՛չ, ես չփոխւեցի, նրանք փոխւեցին ու սկսեցին քննադատել այն, ինչը մենք միշտ քննադատել ենք: Ուրեմն, եթէ մենք համակրանք ունենք Գորբաչեւի քաղաքականութեան նկատմամբ, ապա դա վարչակարգի նկատմամբ մեր համակրանքի արտայայտութիւնը չէ, այլ այդ վարչակարգի բոլոր նախորդ թերութիւնները ու ոճիրները քննադատելու նկատմամբ մեր համակրանքի արտայայտութիւնն է: Եւ այս իմաստով մենք երբեք չպէտք է նահանջենք և սուր քննադատութեան պէտք է ենթարկենք վարչակարգի բո-

լոր այն կողմերը, որոնք վնաս են հասցնում մեր ժողովրդին։ Դրա հետ միասին, մենք պէտք է մեր դրական դիրքորոշումը յայտնենք բոլոր այն նոր միջոցառումների նկատմամբ, որոնք օգուտ են բերում մեր ժողովրդին։ Այսօր արդէն պարզ դարձաւ, որ հրապարակայնութիւնը առանց վերափոխութիւնների ոչ մէկ արժէք չունի։ Հրապարակաւ որեւէ թերութեան մասին խօսելը կարեւոր է, բայց շատ աւելի կարեւոր է այդ թերութիւնը շտկելը։ Ահա թէ ինչու, մենք չպէտք է վար դնենք մեր քննադատական զէնքը, այն յոյսով՝ թէ Գորբաչեւը արդէն այնպէս շտկեց վարչակարգը, որը այլեւս քննադատութեան ենթակայ չէ։ Գուցէ Գորբաչեւի վերափոխութիւնները այնքան հեռուն տանեն, որ երկրի ներսում ստեղծուեն իշխանութիւնների կողմից ճանաչուած առողջ ընդդիմադիր ուժեր։ Այդ դէպքում, իսկապէս որ մեզ ուրիշ բան չի մնայ, բացի հայրենիք վերադառնալ։

1988

ԱՐԺԷՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՉԵՒԸ

Է. Յովհաննիսեան

Համամարդկային արժէքների մէջ կան այնպիսիները, որոնց մենք բացարձակ ենք կոչում։ Այդ արժէքների բացարձակութիւնը պայմանաւորուած է բովանդակութեամբ։ Արժէքի բովանդակութիւնն է, որ նրան դասում է բացարձակ կամ յարաբերական արժէքների շարքին։ Ընկերվարական գաղափարախօսութիւնը բացարձակ արժէք է, քանի որ նրա բովանդակութիւնը հասարակական արդարութիւնն է։ Ազատութիւնը բացարձակ արժէք է, քանզի նրա բովանդակութիւնը մարդու զարգացման լաւագոյն պայմանի ստեղծումն է։ Ժողովրդավարութիւնը բացարձակ արժէք է, քանզի նա բռնութիւնից խուսափելու միակ միջոցն է։

Սակայն բացարձակ այս արժէքների բովանդակութիւնը կարող է ի յայտ գալ տարբեր ձեւերի տակ, որոնք որպէս օրէնք բացարձակ արժէքները դարձնում են յարաբերական, իսկ երբեմն էլ արժէքը դարձնում են հակարժէք, կամ բացասական արժէք։ Երբ բացարձակ արժէք ժողովրդավարութիւնը իշխանութեան գլուխ է բերում Հիտլերին, երբ ընկերվարութիւնը վեր է ածում ստալինեան վարչակարգի, երբ ազատութիւնից օգտւում են ոճրագործներն ու խուլիգանները, մեր մտքում կասկած է առաջանում, թէ արդեօք ազատութիւնը կամ ժողովրդավարութիւնը բացարձակ արժէքնե՞ր են։ Բայց այդ կասկածը ոչ մէկ հիմք չունի, քանզի ինչպէս ասացի՝ արժէքի բացարձակութիւնը որոշւում է բովանդակութեամբ, բայց ոչ ձեւով, որը ոչ մէկ բան կարող է փոխել բովանդակութեան մէջ։ Բովանդակութիւնը առաջնակարգ է, իսկ ձեւը երկրորդական։ Բովանդակութիւնը կարող է ծնել տարբեր ձեւեր, բայց ձեւը բովանդակութիւն՝ երբեք։ Այստեղ կարելի էր խորանալ ձեւի և բովանդակութեան փիլիսոփայութեան մէջ, որը ի վերջոյ յանգում է այն եզրակացութեան, որ ամէն մի բովանդակութիւն ունի իր արտայայտման յատուկ ձեւը, բայց այդ մասին չէ խօսքս։ Ես միայն ուզեցի ասել, որ չի կարելի բովանդակութեան գնահատականը տալ ձեւի ճամբով ու չի կարելի ղեկավարուել բովանդակութիւնից կտրուած ձեւով։

Այս ակնոցով էլ ուզում եմ դիտել բոլոր այն երեւոյթները, որոնք վերջին տարիների ընթացքում անսպասելիօրէն թափւեցին մեր ժողովրդի գլխին և, ինչու չէ, ցնցում ու շփոթ առաջացրին մեր հոգիներում։ Ազդեցին այդ երեւոյթները նաեւ մեր կազմակերպական կառոյցների վրայ՝ Արեւելքից Արեւմուտք, Հայաստանից Սփիւռք։ Գորբաչեւը ազատութիւն տւեց սեփական ժողովրդին և Արեւելեան Եւրոպայի երկրներին և մենք ոգեւորւեցինք նրա այդ քայլից, որովհետեւ ազատութիւնը բացարձակ արժէք է։ Ղարաբաղցիները ոտքի ելան և

նրանց կողքին կանգնեց ամբողջ հայ ժողովուրդը, որովհետեւ ազգային ինքնորոշումը բացարձակ արժէք է: Հայաստանում ստեղծուեցին տարբեր անկախ խմբեր ու կազմակերպութիւններ քանզի ժողովրդավարութիւնը բացարձակ արժէք է: Հայաստանում ստեղծուեց համազգային միակամութիւն և մենք երջանկութիւն ապրեցինք, քանզի ազգային միասնութիւնը բացարձակ արժէք է: Հայաստանում ճանաչուեց Եռագոյնը և Մայիս 28ը և մենք ուրախութեան պահ ապրեցինք, որովհետեւ մեր գանձարանների մէջ էինք պահել այդ բացարձակ արժէքները: Ահաւասիկ, այս բացարձակ արժէքների բովանդակութեամբ էր պայմանաւորուած մեր ընդհանուր վերաբերմունքը տեղի ունեցող երեւոյթների նկատմամբ և առաջին քաղաքական դիրքորոշումները ու քայլերը այս ուղղութեամբ: Սակայն բովանդակութիւնից բխող մեր վերաբերմունքը սկսուեց ճշտուել, երբ հրապարակ իջան այն ձեւերը, որոնք կոչուած էին միս ու արիւն տալու բացարձակ արժէքների բովանդակութիւններին: Եւ քանի որ մենք դեռեւս գտնուում ենք այդ ճշտումները կատարելու ճամբու վրայ, անհրաժեշտ է անաչառ գնահատականներ տալ ձեւերին, երբեք կասկածի տակ չառնելով բովանդակութիւնները:

Տեսնենք թէ ի՞նչ ձեւ ստացաւ գորբաչեւեան ազատութիւնը: Այդ ազատութիւնը յստակ նպատակների ծառայող ազատութիւն էր: Վերեւից իջեցուած ազատութիւն, որը պէտք է ծառայէր՝ Խորհրդային Միութիւնը տնտեսական, քաղաքական և հասարակական ճգնաժամից հանելու նպատակին: Դրանով իսկ այդ ազատութիւնը չէր, որ տալու էր մարդուն և ազգերին ազատ նախաձեռնութիւններ՝ սեփական ճակատագրերը կերտելու հարցում, որոնք ի վերջոյ կարող էին տանել երկիրը դէպի ժողովրդավարութիւն և ազատութիւն: Եթէ այնուամենայնիւ ժողովուրդների ու անհատների նախաձեռնութիւնները դուրս եկան նախատեսուած սահմաններից, ապա դա Գորբաչեւի համար էլ անսպասելի էր: Պատահական չէ, որ շփոթուած Գորբաչեւը մամլոյ ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ կոպիտ ձեւով յարձակուեց նրանց վրայ, յայտարարելով՝ թէ խորհրդային մամուլը լուցկի է վառում մի երկրում, որը սուզուած է նաւթի ճահճում: Մի խօսքով, Գորբաչեւը խլում էր լրագրողներից լուցկի վառելու ազատութիւնը, վախենալով պայթիւնից, մինչդեռ հէնց պայթիւնն էր անհրաժեշտ՝ երկիրը արմատապէս վերափոխելու համար: Եւ, ուրեմն, գորբաչեւեան ազատութեան ձեւը երկրի ներսում պայթիւն ու արմատական վերափոխութիւն չէր նախատեսում և պիտի ծառայէր թեթեւ նորոգութիւններ կատարելու գործին: Բայց երկրից դուրս գտնուող մամուլը, Գորբաչեւին չէր ենթարկւում և նա ամէնուր վառում էր լուցկին, որը և առաջացրեց մեզ բոլորիս համար շշմեցուցիչ պայթիւնը: Խորհրդային Միութիւնը դուրս եկաւ Աֆղանիստանից, Հունգարիան ու Լեհաստանը հրաժարուեցին կոմունիս-

տական իշխանութիւններից, Չեխոսլովակիան ու Բուլղարիան կանգնեցին այդ նոյն ճանապարհի վրայ, քանդուեց Բեռլինի պատը և տեղի ունեցան շատ ուրիշ շշմեցուցիչ իրադարձութիւններ: Գորբաչեւը չհամարձակուեց դիմադրել այս բոլորին, քանզի նրան անհրաժեշտ էր ձեռք բերել Արեւմուտքի վստահութիւնը և այդ ճամբով օգնութիւն հայթայթել սեփական ժողովրդին կերակրելու համար: Իսկ այդ ժողովուրդը, յատկապէս ազգային փոքրամասնութիւնները ապրում էին «ոչ միայն հացիւ» սկզբունքով ու պահանջում էին այլ ազատութիւններ: Գորբաչեւեան ազատութիւնների ձեւը նրանց պահանջներին բաւարարութիւն չէր տալիս: Պատմութեան չգրւած էջերը լրացնելու և պատմական նենգափոխումներից հրաժարուելու բացարձակ արժէքը նոյնպէս ստացաւ անընդունելի ձեւ, քանզի այնքան կիսատ-պռատ էր, որ չէր համապատասխանում արժէքի բովանդակութեանը: Եթէ Հայաստանում պէտք է ճանաչէին «Եռագոյնը» և «Մայիս 28», ապա ոչ նրա համար, որ թանգարաններում աւելանան եւս մի քանի նմոյշներ, այլ որովհետեւ այդ արժէքները հայ ժողովրդի ազգային ազատագրական հերոսական պայքարի արդիւնքներն էին: Այդ արժէքները Աւարայրի ճակատամարտի նման խորհուրդ ունէին ու անկարելի էր վերականգնել այդ արժէքները առանց Հ.Յ.Դաշնակցութեան, ինչպէս անկարելի է խօսել Աւարայրի ճակատամարտի մասին առանց Վարդան Մամիկոնեանի ու նրա քաջերի: Մինչդեռ Հայաստանի պատմաբաններն ու պաշտօնական քարոզչութիւնը յամառօրէն շարունակում են յօդւածներ ու աշխատութիւններ գրել ազգային-ազատագրական պայքարի հերոսների մասին, առանց նշելու, որ Աղբիւր Սերոբները ծնուեցին Դաշնակցութեան ծոցից ու ստեղծեցին դաշնակցական ֆեդայու կերպարը: Եթէ այս մասին պիտի չխօսուի, եթէ պատմութեան չգրւած էջերը պիտի շարունակուեն լցուել կիսատ-պռատ կերպով, ապա ի՞նչն է փոխուել: Չէ՞ որ առանց Դաշնակցութեան, Սարդարապատի հերոսամարտը արդէն վաղուց ճանաչում էր գտել Հայաստանում, բայց հէնց այնքանով թերի էր, որ բացակայում էր ճակատամարտի գլխաւոր դերակատարը: Ես անձամբ համոզւած եմ, որ Դաշնակցութիւնը Եռագոյնի ու Մայիս 28ի հետ վերականգնւած կը լինէր, եթէ նա այսօր գործող կուսակցութիւն չլինէր: Վրացիները, աղրբեջանցիները, լիտւացիները և շատ ուրիշներ ազատօրէն վերականգնում ու վարկաբեկում են իրենց անցեալի յեղափոխական կազմակերպութիւնները, որովհետեւ նրանք այսօր գոյութիւն չունեն և արդէն դարձել են թանգարանային արժէքներ: Իսկ Դաշնակցութիւնը կենդանի ու մարտունակ կուսակցութիւն է, ուստի նրա վերարժեւորումը կարող է փոխել քաղաքական ուժերի դասաւորութիւնը հայ ժողովրդի ժամանակակից կեանքում: Սա նշանակում է, որ պատմութեան սպիտակ բծերի վերացման բացարձակ արժէքը այսօր էլ քաղաքական ձեւ է ընդունել, ինչը, անշուշտ, դատապարտելի է: Հրա-

պարակայնութիւն բացարձակ արժէքն էլ անընդունելի ձեւ է ստացել: Արցախի հարցում, օրինակ, մենք ոչ միայն չենք տեսնում հրապարակայնութիւն, այլեւ ճիշտ հակառակը՝ լռութիւն և խնդրի լուծման միտումնաւոր ձգձգում:

Բոլորովին այլ ձեւ ընդունեց Արցախի հարցում անկախութիւն բացարձակ արժէքը: Արցախի անկախութեան ձեւը որոշ ցնցումներից անցնելուց յետոյ դարձաւ բաւականին յստակ և ամբողջութեամբ համապատասխանող անկախութեան արժէքի բովանդակութեանը: Այս տարւայ օգոստոս ամսւայ կէսերից սկսեալ Արցախի խնդիրը մտաւ նոր փուլի մէջ, որը սկզբունքօրէն տարբերւում է բոլոր նախորդ փուլերից, որտեղ հայկական կողմը խնդրողի դերումն էր, իսկ Ադրբեջանը խնդրանքը կտրականապէս մերժողի դերում: Կենտրոնական իշխանութիւնները փորձում էին կատարել հաշտարարի, բայց ոչ դատաւորի դեր: Ընդ որում, այդ հաշտարարի դերը նրանք կատարում էին շատ վատ, որովհետեւ Յատուկ Ղեկավարման Կոմիտէն փաստօրէն անցել էր Ադրբեջանի կողմը: Եւ ահա, անելանելի կացութեան մէջ, Արցախում տեղի ունեցաւ մի իրադարձութիւն, որը ամբողջովին փոխեց տիրող կացութիւնը:

Օգոստոսի 16ին Ստեփանակերտում գումարւեց բնակչութեան իրաւասու ներկայացուցիչների համագումարը, որին մասնակցեցին Արցախի կուսակցական, արհմիութենական և կոմերիտական, ինչպէս նաեւ տարբեր ձեռնարկութիւնների ու հաստատութիւնների ղեկավարները: Համագումարի աշխատանքներին մասնակցեցին նաև յատուկ ղեկավարման կոմիտէի անդամներ զօրավար Ս. Կուպրէեւը և Վ. Թովմասեանը, ինչպէս նաեւ շրջանի պարէտ զօրավար Վ. Սաֆոնովը: Ադրբեջանցիները հրաւիրւեցին Համագումարին, բայց չեկան: Համագումարը ընդունեց մի բանաձեւ, որը հաստատում էր, որ յատուկ ղեկավարման կոմիտէն խլեց ինքնավար մարզից նրա առանց այն էլ չնչին իրաւունքները և չկարողացաւ լուծել ոչ մէկ խնդիր, ինչ որ կոչւած էր լուծելու: Համագումարը նշեց, որ Սահմանադրութիւնը, որը Գերագոյն Խորհրդին յատուկ ղեկավարում մտցնելու իրաւունք է տալիս, չի նախատեսում տեղական խորհուրդների գործունէութեան կասեցում, իսկ Կոմունիստական կուսակցութեան Կանոնադրութիւնը չի տալիս Մարզկոմի վերացման իրաւունք: Համագումարը յայտարարեց, որ հրաժարւում է ճանաչել Արցախը որպէս Ադրբեջանի կազմում գտնւող ինքնավար մարզ և հռչակում է Արցախը «Միութենական Անկախ Տարածութիւն»: Համագումարը ընտրեց Ազգային Խորհուրդ, որը բաղկացած է 78 անդամներից և ժողովրդի անունից այդ խորհրդին յանձնւեց մարզի ամբողջ իշխանութիւնը: Ազգային Խորհրդի նախագահ ընտրւեց Խորհրդային Միութեան ժողովրդական երեսփոխան, Մարտունի շրջանի շրջկոմի քարտուղար Վաչագան Գրիգորեանը: Տեղակալներ, Յատուկ Ղեկավարման Կոմիտէի անդամ Վլադիմիր Թովմասեանը և Ստեփանակերտի շրջկոմի առաջին

քարտուղար Վալերի Աղջանեանը: Համագումարը աշխատաւորներին կոչ արեց, որ նրանք վերջ տան գործադուլներին և աշխատաւորները ենթարկուեցին իրենց կողմից ընտրուած իշխանութեան կոչին:

Անկախութեան այս ձեւը ամբողջովին համապատասխանում է այդ արժէքի բովանդակութեանը: Արցախցիները փաստօրէն հրաժարուեցին ենթարկուել թէ՛ Յատուկ Ղեկավարման Կոմիտէին և թէ Ադրբեջանին: Նրանք սեփական ուժերով կանգնեցին իրենց անկախութիւնը պաշտպանելու ճանապարհին և մինչեւ այսօր հերոսաբար շարունակում են իրենց պայքարը: Բնականաբար արցախցիների դաշնակիցները պէտք է օգնէին նրանց այդ պայքարում, իսկ հակառակորդները պէտք է ջանային ճնշել նրանց անկախութիւնը: Արցախի անկախութեան փաստի առջեւ կանգնած ադրբեջանցիները և Ադրբեջանը փաստօրէն պատերազմ յայտարարեցին Անկախ Արցախի դէմ: Ադրբեջանի Գերագոյն Խորհուրդը անմիջապէս անօրինական համարեց Արցախի Համագումարը և հրաժարուեց ճանաչել Արցախի Ազգային Խորհրդին: Մայիսի 14ին Բաքւում ստեղծուեց Ադրբեջանի ժողովրդական ճակատը, որի նախաձեռնող կենտրոնի կազմի մէջ մտան գրողներ Մահմեդ Արազը, Սաբիր Ռուստամխանլին, Իւսուֆ Սամեդօղլին և Իսմայիլ Շիխլին: Առաջին օրից իսկ նրանք յայտարարեցին, որ սահմանների փոփոխութիւնը անկարելի է և եթէ Արցախը շարունակի մնալ անկախ, ապա Ադրբեջանը կը հռչակի իր անկախութիւնը Խորհրդային Միութիւնից (երանի թէ): Կամաց-կամաց Ադրբեջանի Ժողովրդական Ճակատը դարձաւ հանրապետութեան տէրն ու տիրականը: Պաշտօնական իշխանութիւնները անմիջապէս ճանաչեցին այդ կազմակերպութիւնը, որի անունով էլ կատարեցին իրենց յարձակումները անկախ Արցախի դէմ. մաքուր մնալով, Մոսկուայի առջեւ: Ժողովրդական Ճակատը կազմակերպեց Հայաստանի ու Արցախի պաշարումը, կարծես թէ իրեն էին ենթարկւում երթեւեկութեան, անվտանգութեան և ներքին գործերի նախարարութիւնները:

Սեպտեմբեր 30ին Երեւանի «Կոմունիստ» թերթը նշեց, որ Ադրբեջանի Ժողովրդական Ճակատի գրգռումներն ու յարձակումները կատարւում են Ադրբեջանի, կուսակցական ղեկավարութեան թելադրանքով, բայց մենք հայերս ամուր կանգնած ենք մեր դիրքերի վրայ ու չենք շեղւի մեր ճանապարհից:

Արցախցիները իսկապէս որ ամուր կանգնած էին իրենց դիրքերի վրայ ու չէին շեղւում ընտրած ճանապարհից: Մարզում չկար վառելանիւթ ու սընընդամթերք. բերքը մնացել էր դաշտերում, իսկ հաւաքածը նեխում էր գնացքներում, սկսւել էր համաճարակը, զինւած ադրբեջանցիները գողանում էին անասուններն ու սպանում հայ հովիւներին, բայց արցախցիները չէին նահանջում և կազմակերպում էին ինքնապաշտպանութեան խմբեր ու արիաբար կռւում իրենց անկախութիւնը պաշտպանելու համար: Նրանք դիմեցին նոյ-

նիսկ դիւանագիտական քայլերի: Արցախի Ազգային Խորհուրդը դիմեց ՄԱԿի անվըտանգութեան Խորհրդին, աջակցութիւն խնդրելով Արցախի հայ բնակչութեան անվտանգութիւնը պաշտպանելու համար: Ազգային Խորհուրդը դիմեց նաեւ Հայաստանի ներքին գործերի նախարարութեանը, համապատասխան ուժեր Արցախ ուղարկելու խնդրանքով: «Խորհրդային Ղարաբաղ» թերթը հրատարակեց Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհրդին ուղղուած մի բաց նամակ, որտեղ նշում էր, որ Արցախի ադրբեջանականացման փորձերը շարունակւում են, բայց այդ ճանապարհով հարցը երբեք պիտի չլուծւի: Իսկ պատերազմը շարունակւում էր:

Ադրբեջանցիները պատանդ վերցրեցին Խորհրդային Միութեան երեք զօրավարների. այդ թւում նաեւ ներքին գործոց նախարարութեան զօրքերի հրամանատար Շատալինին և նրանց ազատ արձակեցին միայն այն բանից յետոյ, երբ բաւարարւեցին առեւանգողների պահանջները: Սեպտեմբերի 2ին Աղդամից Արցախի վրայ յարձակւում գործեցին 800 զինւած ադրբեջանցիներ, սակայն յետ մղւեցին ինքնապաշտպանութեան ջոկատների կողմից: Սեպտեմբեր 7ին 36 աւտոմեքենաներ 150 զինւորների և ոստիկանութեան պաշտպանութեան տակ Գորիսից ապրանքներ էին տեղափոխում Ստեփանակերտ, սակայն ադրբեջանցիները յետ վերադարձրին աւտոմեքենաները ու զինւորները չդիմադրեցին: Այս կացութիւնը չէր կարող չմտահոգել կենտրոնական իշխանութիւններին և նրանք որոշեցին, որ ճգնաժամից դուրս գալու միակ ելքը արցախցիների անկախութեան ճնշումն է: Նոյեմբերի 19ին Ստեփանակերտից հաղորդեցին, որ բանակը սկսել է զինաթափել Արցախի հայ բնակչութեանը: Իսկ Շուշիում շինարարութեան աշխատանքներ կատարելու պատրւակով բնակութիւն են հաստատել Ուզբեկիստանից փախած 500 թուրք-մեսխեր: Այսպիսով՝ արցախցիների հակառակորդները գործում էին ամբողջ ճակատով. տեսնենք թէ ի՞նչ էին անում նրանց բարեկամները, երբ այդ մի բուռ քաջերը ազգային-ազատագրական պայքարի օրերը յիշեցնող կռիւներ էին մղում: Սակաւաթիւ են Արցախի հերոսների բարեկամները: Հայաստանի ու Սփիւռքի հայութիւնից բացի նրանք ուրիշ դաշնակիցներ չունեն: Լռել են, ե՛ւ մարդու իրաւունքների պաշտպանները, ե՛ւ ազգութիւնների ինքնորոշման իրաւունքի ջատագովները, ե՛ւ Միացեալ Ազգերի Կազմակերպութիւնը և ազատագրական շարժումները պաշտպանող պետութիւնները, չնայած նրան, որ նրանց դռները կատաղօրէն բախում է սփիւռքահայութիւնը: Ուրեմն մնացինք մենք, որ այս ճակատագրական օրերին պէտք է ղեկավարւէինք միասնութեան բացարձակ արժէքով: Դեռեւս դժւար է գնահատական տալը թէ ո՞վ ինչ արեց այս օրերին, որովհետեւ արաձները յայտնի չեն և գուցէ դեռեւս երկար ժամանակ

մամուլի նիւթ չդառնան: Բայց այն, ինչ հրապարակի վրայ է, կարելի է գնահատել:

Այս օրերին Հայաստանում կատարուեցին ազգային միասնութիւն ստեղծելու փորձեր: Անշուշտ, ճգնաժամային պահերին միասնութիւնը պայքարի ամենակարեւոր գործօնն է: Բայց տեսնենք թէ ի՛նչ ձեւ ստացաւ այդ միասնութիւնը և արդեօք նա ստեղծուել էր Արցախի ի խնդիր միասնական պայքա՞ր մղելու համար: Այն, ինչ այսօր կոչւում է «Հայոց Համազգային Շարժում» ոչ թէ իրական միասնութիւն է, այլ միասնութեան անհրաժեշտութեան գիտակցութիւն, որը նոյնպէս քիչ բան չէ:

Միանգամայն ճիշտ էր Ռաֆայէլ Ղազարեանը, երբ Նոյեմբերի 8ին «Կոմունիստ» թերթում նշեց, որ «**ՀՀՇ-ի համագումարը նշանաւոր պատմական իրողութիւն է հայ ժողովրդի պատմութեան մէջ, քանզի տասնամեակների ընթացքում առաջին անգամը լինելով, մենք կարողացանք հաւաքուել և ազատօրէն խօսել մեր խնդիրների մասին**»: Համագումարի նպատակն էլ Ռ. Ղազարեանը ձեւակերպում է ճիշտ ձեւով, նշելով, որ «**Համագումարի հիմնական նպատակը այն է, որ շարժմանը տրուի դէպի ժողովրդավարական ապագայ տանող ծրագիր, նպատակ ունենալով այդ ծրագրի շուրջ միաւորել բոլոր առաջադիմական, հայրենասիրական ուժերը, որոնք պայքարում են հանրապետութեան ինքնիշխանութեան և Արցախի ինքնավարութեան իրաւունքը ճանաչելու համար**»: Եթէ նպատակը ազատօրէն խօսելու և ապագայ ժողովրդավարութեանը պատրաստուելու մէջ էր, ապա համագումարը, հաւանաբար, իր նպատակին հասաւ:

Շատ աւելի դժւար է համաձայնուել իմ լաւ բարեկամ Յակոբ Կարապենցի հետ, որը համագումարից յետոյ յայտարարեց, որ «**Սփիւռքի բազմաթիւ գործիչների նպատակը միշտ էլ եղել է բոլոր հայերի միացումը, անկախ նրանց կուսակցական պատկանելիութիւնից և քաղաքական դիրքորոշումներից: ՀՀՇ-ի կողմից առաջ քաշած ծրագիրը հէնց այն հողն է (պլատֆորմը), որի վրայ հնարաւոր է միասնութիւնը**»:

Կարծում եմ, որ միասնութեան այդ հողը, դժբախտաբար, դեռեւս բացակայում է:

Տեսնենք թէ ինչո՞ւ:

Ազգային միասնութիւնը կարող է ստեղծուել միայն յստակ ձեւակերպուած նպատակների շուրջ, յստակ ռազմավարութեամբ ու մարտավարութեամբ և միջոցների ու կարողութիւնների յստակ հաշւարկով: Բոլոր այն միասնութիւնները, որոնք ստեղծւում են վերացական կամ շատ ընդհանուր նպատակների շուրջ, իրականում ոչ թէ քաղաքական միասնութիւններ են, այլ բարոյական յայտարարութիւններ: Նրանք մնում են բովանդակութիւն, առանց իրական ձե-

ւերի, դրա համար էլ ընդունւում և ողջունւում են բոլորի կողմից: Փորձենք այսօր, օրինակ, Սփիւռքում հրապարակ իջեցնել հետեւեալ կոչը. «**Եկէք միանանք՝ հայ ժողովրդի իրաւունքները միասնաբար պաշտպանելու և մեր ազգային խնդիրները լուծելու համար**»: Վստահ եմ, որ ոչ մէկ հայ նման կոչի դէմ չի առարկի և հանրաքւէի ժամանակ կոչը կ'ընդունւի միաձայնութեամբ: Բայց արդեօք հանրաքւէից յետոյ մենք կարո՞ղ ենք ասել, որ միասնութիւնը ստեղծւած է, քանզի բոլորը համաձայն են այդ գաղափարի հետ: Անշուշտ՝ ո՛չ, որովհետեւ տարակարծութիւնները սկսւում են ճիշտ այն պահին, երբ մենք ջանում ենք ձեւակերպել «**Հայ ժողովրդի շահեր**», «**Ազգային խնդիրներ**», «**Պայքարի միջոցներ**», «**Դաշնակիցներ**», «**Հակառակորդներ**» վերացական հասկացութիւնները: Ասել՝ որ մենք միանում ենք ազատութեան համար պայքարելու համար, նշանակում է ոչինչ չասել, եթէ չենք որոշել, թէ խօսքը Խորհրդային Միութիւնից դո՞ւրս գալու, դասակարգային պայքարի՞, ցեղասպանութիւնը ճանաչել տալո՞ւ, թէ՞ Թուրքիայից մեր բռնագրաււած հողերը վերադարձնելու մասին է: Մենք տեսանք, թէ ինչպէս ամբողջ հայութիւնը միացաւ երկրաշարժի օրերին: Միացաւ առանց համազումարների ու բանակցութիւնների, որովհետեւ խնդիրը յստակ էր ու նպատակը պարզ: Այստեղ էլ եղան տարակարծութիւններ, որոնք սակայն շատ շուտ հարթւեցին, որովհետեւ լուծման անհրաժեշտութիւնը հասկանալի էր բոլորի համար:

Խնդիրներն ու միջոցները յստակացնելու անհրաժեշտութիւնից էլ բխում է միասնութեան երկրորդ անհրաժեշտ գործօնը: Իրական միասնութիւնը կարող է ստեղծւել միայն իրական պատգամաւորական սկզբունքների հիման վրայ, որի հաշիւը պիտի յենւի գոյութիւն ունեցող ուժերի իրական գնահատականի վրայ: Եթէ իսկապէս գործ ենք ուզում անել, ի՞նչպէս կարող ենք չկատարել մեր ուժերի գնահատականը, ի՞նչպէս կարող ենք առանց այդ գնահատականի կատարել պարտականութիւնների բաշխում և աշխատանքի բաժանում: Երբ միասնութիւնը ստեղծւում է ոչ թէ միասնաբար մէկ նպատակի ծառայելու համար, այլ արեւմտեան ժողովրդավարական սկզբունքներով պառլամենտ ստեղծելու համար, այդ միասնութիւնը կա՛մ արագ կերպով դառնում է մի նոր կուսակցութիւն և կամ էլ շարժման մէջ հաստատւում է մեծամասնութիւն կազմողի իշխանութիւնը: Որպէս օրէնք, փոքրամասնութիւնները լաւագոյն դէպքում անջատւում են շարժումից, իսկ վատագոյն դէպքում հակադրւում են նրան: Այնուամենայնիւ խաղաղ պայմաններում, պառլամենտական միասնութիւնը կարող է շատ օգտակար լինել, եթէ կազմւած է պատգամաւորական սկզբունքներով: Բայց մեր պայմանները խաղաղ չեն: Մենք պատերազմի մէջ ենք, իսկ պատերազմական վիճակում նոյնիսկ Եւրոպայի շատ ժողովրդավարական երկրներ ստիպւած են լինում հրաժարւել ազատ բեմերից,

յօգուտ զինուորական կարգապահութեան, և կենտրոնացնում երկրի բոլոր ուժերը պատերազմի վրայ: Ահա թէ ինչու ՀՀՇի ծաւալուն ծրագիրը մի տեսակ դուրս է բերում մեր ժողովրդին Արցախի համար մղտղ ազգային-ազատագրական պայքարի սահմաններից: Բայց մենք այդպիսի շռայլութեան համար յաւելեալ միջոցներ չունենք: Ասելով՝ մենք, ես ի նկատի ունեմ նրանց, ովքեր պատրաստ են պայքարելու յեղափոխական միջոցներով: Հակառակ ՀՀՇի՝ Ադրբեջանի Ժողովրդական Ճակատը իր բոլոր ուժերը կենտրոնացրել է Արցախի խնդրի վրայ, չնայած նրան, որ ուրիշ յայտարարութիւններ էլ է անում: ՀՀՇի միասնութիւնը պատգամաւորական իմաստով էլ տկար էր, քանզի կուսակցութիւնների ու կազմակերպութիւնների միջեւ ոչ մէկ տարբերութիւն չէր դնում, բացի, անշուշտ նախկին «Ղարաբաղ Կոմիտէ»ից, որը համագումարի կազմակերպիչն էր և գլխաւոր դերակատարը: Համագումարի համար ոչ մէկ տարբերութիւն չկար հնչակեանի, ռամկավարի, դաշնակցականի և այլ կազմակերպութիւնների միջեւ: Նրանք բոլորը Սփիւռքի հաւասար կազմակերպութիւններ էին, որոնց հրաւիրել էին, ոչ թէ գործի մէջ ընդգրկելու, այլ համագումարին ժողովրդավարական տեսք տալու համար: Իր սեփական դերը շարժման մէջ Ղարաբաղ Կոմիտէն լաւ գիտէր, բայց չուզեց կամ չհասկացաւ Դաշնակցութեան դերը այդ շարժման մէջ: Եթէ այդ շարժումը արտասահմանում անելիք չունի, ապա նա չի կարող կոչւել ո՛չ քաղաքական և ոչ էլ համազգային: Իսկ եթէ անելիք ունի, այդ ի՞նչպէս պիտի անի իր անելիքները առանց Դաշնակցութեան: Խորհրդային Հայաստանի իշխանութիւնները արդէն շարժման մէջ են դրել Սփիւռքի հակադաշնակցական ուժերը և կարծես թէ ամէն ինչ ուզում են վերադարձնել նախկինին: Եթէ կառավարութեան այս դիրքորոշումն էլ այսօրւայ պայմաններում անհասկանալի է, առաւել անհասկանալի է նաեւ ՀՀՇի դիրքորոշումը: Չեմ ուզում անուններ տալ, բայց կարելի է թւարկել հին ու նոր հակադաշնակցականներ, որոնք կրկին գործի վրայ են ու հէնց նրանց վրայ են յենւում Հայաստանի ղեկավարները Սփիւռքում կատարւող աշխատանքներում: Այնպիսի տպաւորութիւն է ստեղծւում, որ ՀՀՇն դառնում է պաշտօնական կառավարութեան մրցակիցը, ինչը, անշուշտ ամբողջովին փոխում է «Հայոց Համազգային Շարժման» պատկերը: Ես կարծում էի, որ ՀՀՇն ընդհակառակը պէտք է խուսափի իշխանութիւնից, որպէսզի Ադրբեջանի Ժողովրդական **Ճակատի պէս կարողանայ անել այն, ինչ ի վիճակի չէ անելու պաշտօնական իշխանութիւնը: Եթէ նման ոչ-կառավարական ուժ գոյութիւն չունենայ, ապա մենք դաւաճանած կը լինենք արցախցիներին: Իսկ ես համոզւած եմ, որ մեր այսօրւայ միակ անելիքը Արցախի անկախութեան համար պայքարն է, իսկ մնացածը կ'անեն պաշտօնական իշխանութիւնները, տարբեր հասարակական կազմակերպութիւնների օգնութեամբ: Ու պիտի ասեմ, որ**

նրանք այդ գործերը մեզանից էլ լաւ կ’անեն, եթէ մշտական հասարակական հսկողութեան տակ լինեն: Եթէ մենք յեղափոխականներ ենք, մեր միասնութիւնը պէտք է ստեղծի յեղափոխական հողի վրայ: Իսկ այսօրւայ յեղափոխութիւնը՝ Արցախի անկախութեան պաշտպանութիւնն է: Այս մօտեցումը վերաբերւում է նաեւ Սփիւռքին և առաջին հերթին Հ.Յ.Դաշնակցութեանը, որի համար Արցախի հարցը այսօր առաջնահերթ կարեւորութիւն ունի:

1989

ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Է. Յովհաննիսեան

Հայ քաղաքական կուսակցութիւնների գործունէութեան մասին մեր նորագոյն պատմութեան մէջ գրւած են բազմաթիւ աշխատութիւններ, որոնցից և ոչ մէկը, սակայն, չի կարող համարւել անկողմնակալ, քանզի այդ աշխատութիւնները արտասահմանում գրւել են կա՛մ կուսակցական ղեկավարների և կամ էլ նրանց համակիրների կողմից: Իսկ Խորհրդային Հայաստանում, յայտնի պատճառներով, անաչառ պատմաբաններ երբեք չեն եղել: Բայց ահա այդ «պատճառները» մեղմացան և հրապարակ իջան պատմաբաններ, որոնք ջանացին որոշ անաչառութիւն ցուցաբերել կուսակցութիւնների գործունէութեան գնահատականներում: Անշո՛ւշտ, նրանց թիւը դեռեւս քիչ է, նրանց անաչառութիւնն էլ անշո՛ւշտ յարաբերական է և, անշուշտ նրանք դեռեւս յետ են մնում ուրիշ ազգերից և հէնց ռուսներից: Բայց վերջապէս ծնւել է անաչառութեան ձգտումը և, եթէ այսպէս շարունակւի, այդ ձգտումը կը տայ համապատասխան պտուղներ: Անաչառութեան այս ձգտումը ունեցող պատմաբանների շարքին ես դասում եմ նաեւ Մերի Քոչարին, որը 1988 թւականին Երեւանում հրապարակեց «**Հայ-թուրքական հասարակա-քաղաքական յարաբերութիւնները և Հայկական Հարցը**» վերնագիրը կրող աշխատութիւնը, որի մասին Սփիւռքի հայ ընթերցողը տեղեակ է, հաւանաբար, հայրենի մամուլից արտատպւած Ստեփան Պօղոսեանի գրախօսականից:

Այս աշխատութիւնը ունի հետեւեալ մեծագոյն արժանիքները.

Աշխատութիւնը գրւած է ռուսերէնով, ուստի մատչելի է 2 միլիոն ռուսախօս հայերի և 38 միլիոն խորհրդային քաղաքացիների համար:

Հեղինակը օգտւում է դաշնակցական գրականութիւնից և չի խուսափում Դաշնակցութեան գործունէութեան դրական գնահատականից, ինչպէս նաեւ չի խուսափում Ռուսաստանի դիւանագիտութեան նկատմամբ քննադատական մօտեցումից:

Աշխատութեան մէջ շատ յստակ կերպով ցոյց է տրւած, որ Հայկական Ցեղասպանութեան յանցանքը ամբողջովին ընկնում է թուրքական կողմի վրայ, որ այդ ցեղասպանութիւնը տեղի էր ունենալու՝ անկախ հայերի բռնած դիրքից: Քոչարը իր աշխատութեամբ գիտականօրէն հերքում է այն տեսակէտը, որը երբեմն-երբեմն հրապարակ է իջնում այս կամ այն կուսակցութիւնը վարկաբեկելու համար: Այդ տեսակէտը պնդում է, թէ եթէ մեր կուսակցութիւնները այսպէս կամ այնպէս վարւէին, եթէ չապստամբէին, եթէ Ռուսաստանի դէմ

չկուէին, եթէ կրօնափոխ լինէին, եթէ Սահմանադրութեամբ բաւարարուէին, եթէ, եթէ, եթէ… ապա ցեղասպանութեան չէինք ենթարկուի։ Քոչարը շատ համոզիչ կերպով ցոյց է տալիս, որ եթէներ չկային։ Հայերի ջարդը բխում էր Թուրքիայի քաղաքականութիւնից և թուրքերի նկարագրից։ Թերեւս կար մէկ հատ «եթէ». եթէ հայերը մահմեդականութիւն ընդունէին և թուրք դառնային։ Բայց դա էլ միայն կը յետաձգէր ջարդը, քանզի մենք այսօր տեսնում ենք, թէ ինչպէս են ջարդւում մահմեդական քրդերը ժամանակակից «քաղաքակիրթ» Թուրքիայում։

Մերի Քոչարի աշխատութիւնը կարող էր լաւ նւէր լինել մեր ժողովրդին՝ Հ.Յ.Դաշնակցութեան 100 ամեակի առթիւ, եթէ չլինէին այն ցաւալի տուրքերը, որոնք հեղինակը վճարել է չգիտես ում՝ ներկայ իշխանութիւնների՞ն, քարացած յիշողութե՞նը, թէ՞ դեռեւս պատմութիւնը իրենց ձեռքում պահող հին պատմաբաններին։ Բայց այդ մասին յետոյ։ Այժմ ուզում եմ շնորհաւորել ուսանողական տարիների իմ լաւ բարեկամ Մերի Քոչարին՝ օգտակար աշխատութեան համար, որով նա ապացուցեց, որ հօր՝ Հրաչեայ Քոչարի արժանի զաւակն է, որը Խրուշչեւեան ժամանակաշրջանում կանգնած էր այն ժամանակւայ վերափոխիչների առաջին շարքերում և անձնազոհ կերպով պաշտպանում էր հայ ազգային արժէքները։

Յայտնի չէ, թէ ե՞րբ Քոչարի աշխատութիւնը Հայրենիքում կամ Սփիւռքում կը թարգմանւի հայերէնի. ուստի՝ մի քանի խօսք ասենք աշխատութեան բովանդակութեան մասին։

Արդէն նախաբանում հեղինակը նշում է, որ պատմական անաչառութիւնը պահանջում է գտնել հետեւեալ հարցերի պատասխանները։

1.- Ունէ՞ր արդեօք արեւմտահայութեան ազգային-ազատագրական պայքարը միասնական ղեկավարութիւն, թէ՞ այդ շարժումները ղեկավարւում էին իրարից անջատւած տարբեր կուսակցութիւնների կողմից։ Կամ՝ գուցէ՞ իրաւացի են նրանք, ովքեր պնդում են, թէ այդ շարժումը ընդհանրապէս ղեկավարութիւն չունէր։

2.- Առաջին հարցից բխում է երկրորդը, արդեօք հայ ազգային-ազատագրական շարժումը ունէ՞ր մի միասնական գաղափարախօսութիւն և եթէ այո՛, ո՞վ էր մշակել այն։ Գուցէ՞ շարժումը ղեկավարւում էր տարբեր գաղափարախօսութիւններով։

3.- Ինչպիսի գնահատական պէտք է տալ ազգային-ազատագրական պայքարի ղեկավարութեանը և գաղափարախօսութեանը՝ առաջադիմակա՞ն, թէ՞ պահպանողական։

4.- Հասարակական զարգացման ո՞ր օրէնքի համաձայն, ճնշուած ժողովրդի պայքարը աւատապետական կարգերի դէմ և նրա ազատագրական գաղափարախօսութիւնը կարելի է համարել պահպանողական:

5.- Ի՞նչ գնահատական կարելի է տալ հայ քաղաքական կուսակցութիւնների դաշինքներին, որ նրանք կնքեցին տարբեր կազմակերպութիւնների հետ:

6.- Եթէ Երիտասարդ Թուրքերը դատապարտուեցին պատմութեան կողմից, ինչո՞ւ ենք մենք դատապարտում հայ քաղաքական և հասարակական կազմակերպութիւններին:

7.- Եթէ ազգային-ազատագրական պայքարի շրջանում Դաշնակցութիւնը գնահատւում է որպէս յետադիմական կուսակցութիւն, հապա ինչո՞ւ Հնչակեան և Արմենական կուսակցութիւններին մենք տալիս ենք դրական գնահատական: Չէ՞ որ ազգային-ազատագրական փուլում նրանց մէջ տարբերութիւն չկար: Եւ ինչպէ՞ս կարելի է քննադատել Դաշնակցութեանը, յենւելով Հնչակեան կուսակցութեան գործիչների կողմից ժամանակին տրուած գնահատականների վրայ:

8.- Հայ ժողովրդի նկատմամբ որդեգրած դիրքորոշումներում կա՞ր արդեօք տարբերութիւն Աբդուլ Համիդի, երիտթուրքերի և քեմալականների միջեւ:

9.- Ունի՞ արդեօք հայ պատմութիւնը միասնական մօտեցում կամ ըմբռնում՝ հակադրւելու համար ցեղասպանութեան և ազատագրական պայքարի նենգափոխւած պատմութեանը:

10.- Ճի՞շտ ճանապարհով ընթացաւ արեւմտահայութեան ազգային-ազատագրական պայքարը: Կա՞ր արդեօք որեւէ յոյս, որ այդ պայքարի ճամբով կարելի էր փրկել ժողովրդին, թէ՞ հէնց սկզբից այդ պայքարը դատապարտւած էր ձախողութեան ու պարտութեան:

Առաջ քաշելով այս հարցերը նախաբանում, Մերի Քոչարը ճամբայ է ընկնում դիւանագիտութեան ու ազգային հոգեբանութիւնների անտառները, որոնելու համար իր հարցերի պատասխանները: Տեսնենք թէ նա ի՞նչ դուրս բերեց այդ անտառներից:

Նախ և առաջ հեղինակը պարզեց, որ արեւմտահայութեան ազգային-ազատագրական պայքարը ոչ միայն ընդհանուր ղեկավարութիւն չունէր, այլեւ ամէնասկզբից մղւում էր տարբեր ուղղութիւններով: Տարբեր էր, օրինակ, Դաշնակցութիւն ու Հնչակեան կուսակցութիւնների վերաբերմունքը 1907 թւի Փարիզի Խորհրդաժողովի և ընդհանրապէս երիտթուրքերի նկատմամբ, ինչպէս տարբեր էին այդ կուսակցութիւնների վերաբերմունքները Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական շարժումների նկատմամբ: Մերի Քոչարը յանգում է այն եզրակացութեան, որ 1907 թւականին ընկերվարական ծրագիր ընդունելով հանդերձ, Դաշնակցութիւնը չդարձաւ «**Գիտական Սոցիալիզմի**» կողմնա-

կից, այլ մնաց մանր-բուրժուական կուսակցութիւն: Ըստ Քոչարի, Դաշնակցութեան նոր ծրագիրը չէր փոխում կուսակցութեան դասակարգային էութիւնը: «**Դաշնակցութեան գաղափարախօսութեան վրայ մեծ ազդեցութիւն է ունեցել սոցիալիստ-յեղափոխականների գաղափարախօսութիւնը,**- գրում է Քոչարը,- **և հէնց այդ դիրքերից էլ Դաշնակցութիւնը քննադատում էր Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական կուսակցութիւնը**»: Ինչ վերաբերւում է Հնչակեան կուսակցութեանը, ապա նրան Մերի Քոչարը համարում է «**իսկական սոցիալիստական կուսակցութիւն, որը ծնուած օրից իրեն մարքսիստական կուսակցութիւն յայտարարեց**»: Այսպիսով, Քոչարը յանգում է այն եզրակացութեան, որ հայ ազգային-ազատագրական շարժումը չունէր ո՛չ միասնական ղեկավարութիւն և ոչ էլ միասնական գաղափարախօսութիւն: Այնուամենայնիւ, հեղինակը ազգային-ազատագրական պայքարի ղեկավարներին և գաղափարախօսութիւններին տալիս է դրական գնահատական, արդարացիօրէն նրանց համարելով առաջադիմական: Նա այն տեսակէտն է յայտնում, որ ճնշուած ժողովրդի պայքարը և նրա ազատագրական գաղափարախօսութիւնը ոչ մէկ հասարակական օրէնքի համաձայն չի կարող պահպանողական նկատուել: Որ խորհրդային պատմաբանների համար Հնչակեան կուսակցութիւնը միշտ էլ առաջադիմական է համարուել, նորութիւն չի, բայց որ Մերի Քոչարը այժմ Դաշնակցութիւնը նոյնպէս առաջադիմական կուսակցութիւն է համարում, ուրախալի և հետաքրքրական նորութիւն է: Անդրադառնալով մեր հակառակորդներին, Մերի Քոչարը Հայկական Հարցի իմաստով ոչ մէկ տարբերութիւն չի դնում Աբդուլ Համիդի, երիտթուրքերի և քեմալականների միջեւ, որոնցից և ոչ մէկը մտադիր չէր ազատութիւն կամ անկախութիւն տալու հայերին: Բայց Հնչակեան և Դաշնակցութիւն կուսակցութիւնների գնահատականը տալիս՝ Քոչարը նշում է հետեւեալը.

Երբ «**Հիւսանդ**» Թուրքիայի պայմաններում տեղի էր ունենում պայքար՝ աւատապետական կարգերի դէմ և բուրժուական հասարակարգ հաստատելու համար, Դաշնակցութիւնը շատ ճիշտ վարուեց երբ միացաւ հակահամիդեան ուժերի հետ: Որքան էլ որ երիտթուրքերը կտրուած էին ժողովրդից և հակառակ էին ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարներին, այնուամենայնիւ նրանց ծրագրերը և Սահմանադրութիւնը հարուած էին հասցնում հին Թուրքիային և ստեղծում էին պայմաններ բուրժուական Թուրքիա ստեղծելու համար: Օսմանեան Կայսրութեան մէջ ճիշտ էին այն կուսակցութիւնները, որոնք ընդհանուր ճակատ կազմեցին երիտթուրքերի հետ: Այս իմաստով ճիշտ քաղաքականութիւն էր վարում Դաշնակցութիւնը և սխալ էին հնչակեանները, որոնք հրաժարուեցին այդ ճակատի մէջ մտնելուց: Սակայն, յեղափոխութիւնից յետոյ, ըստ Քոչարի, կացութիւնը փոխուեց: Երիտթուրքերը անցան իշխանու-

թեան գլուխ և ցոյց տուեցին, որ մտադիր չեն զիջումներ կատարելու ազգային փոքրամասնութիւններին: Այստեղ Դաշնակցութիւնը պէտք չէ խզէր իր կապերը երիտթուրքերի հետ և զինէր ժողովուրդը՝ ինքնապաշտպանութեան համար: Ըստ Քոչարի, Դաշնակցութիւնը կոպիտ սխալ կատարեց, երբ նոյն պայմաններում շարունակում էր խօսել ժողովուրդների եղբայրութեան մասին և, երիտթուրքերի ճնշումների տակ, կոչեր էր անում ժողովրդին՝ զէնքերը յանձնելու մասին: Դաշնակցութեան այդ դիրքորոշումը Քոչարը համարում է դաւաճանութեան համազօր: Իբր թէ այս նոյն պայմաններում, Հնչակեան կուսակցութիւնը վարեց աւելի ճիշտ քաղաքականութիւն, երբ միացաւ հակաիթթիհատական ուժերի հետ, որոնք ղեկավարւում էին Իթիլաւ կուսակցութեան կողմից:

Չնայած նրան, որ Մերի Քոչարը տարբեր գնահատականներ է տալիս հայ ազգային կուսակցութիւնների գործունէութեանը, այնուամենայնիւ նա համարում է, որ երիտթուրքերին դատապարտեց պատմութիւնը, ուստի՝ չեն կարող դատապարտուել հայ ազգային կուսակցութիւնները, որոնք միշտ էլ պայքարել են երիտթուրքերի դէմ, իսկ համագործակցութեան պահերին էլ կա՛մ համագործակցել են ստիպւած և կամ էլ դիւանագիտական նկատառումներով: Հետաքրքրական է, որ Քոչարը Աբդուլ Համիդի և երիտթուրքերի հետ մէկ մակարդակի վրայ է դնում նաեւ Քեմալին, որը Լենինի լաւ «բարեկամն» էր և ժամանակակից Թուրքիայի հիմնադիրը: Քոչարի գնահատականներից կարելի է ենթադրել, որ եթէ նա շարունակէր իր ուսումնասիրութիւնը ու հասնէր մեր օրերին, ապա այսօրւայ Ադրբեջանի ղեկավարներն էլ կը դասւէին նոյն մակարդակի վրայ՝ Նարիմանովից մինչեւ Բաղիրով, Բաղիրովից մինչեւ Ալիեւ և Ալիեւից մինչեւ Վեզիրով: Եւ, վերջապէս Մերի Քոչարը կանգնած է այն առողջ տեսակէտի վրայ, որ չի կարելի օգտագործել հնչակեան հեղինակի գնահատականները Դաշնակցութիւնը արժեւորելու համար, ինչպէս նաեւ չի կարելի հնչակեանների գնահատականներում յենւել դաշնակցական մամուլի վրայ: Եւ հէնց խուսափելով նման մօտեցումներից, Քոչարին յաջողւում է այս կամ այն երեւոյթների վերաբերեալ տալ սեփական գնահատականները: Անպայման չէ, որ մենք համաձայն լինենք նրա բոլոր գնահատականների հետ, բայց անաչառ լինելու փորձն իսկ հերոսութիւն կարելի է նկատել:

Առնւազն ինձ համար մի քիչ անպատասխան մնաց Քոչարի այն հարցը, թէ ունի՞ արդեօք հայ պատմագրութիւնը միասնական մօտեցում՝ հակադրւելու համար մեր պատմութիւնը նենգափոխողներին: Կարծում եմ, որ Քոչարի պատասխանը այս հարցումին բացասական է, բայց պատասխանը յստակ չէ, ինչպէս նաեւ յստակ չէ այն հարցի պատասխանը, թէ որքանո՞վ ճիշտ էր արեւմտահայութեան ազգային-ազատագրական պայքարը: Եթէ այս հարցումների

պատասխանները այնքան էլ յստակ չեն, ապա դա նրանից է, որ Քոչարը իր աշխատութեան մէջ որդեգրել է որոշակի սկզբունքներ, որոնցով էլ ղեկավարւել է իր ուսումնասիրութեան ժամանակ: Ես անձամբ չեմ հաւատում, որ որեւէ պատմաբան կարող է իսկապէս անաչառ լինել, այնքան անաչառ, որ մէկ կողմ դնի սեփական աշխարհայեացքը և զգացմունքները ու, պատմութիւնը գրելիս, ղեկավարւի միայն ու միայն տրամաբանութեամբ: Սպինոզան համարում էր, որ ճշմարտութիւն ձեռք բերելու միակ աղբիւրը տրամաբանութիւնն է, իսկ Պասկալի համար այդ աղբիւրը հաւատքն էր: Կարծում եմ, որ պատմական ճշմարտութիւնների նկատմամբ երկուսն էլ սխալւում էին, քանզի պատմական իրադարձութիւնները կատարւում են թէ՛ առարկայական և թէ ենթակայական գործօնների ազդեցութեան տակ: Առաւել եւս չի կարող ամբողջովին ազատ լինել պատմաբանը մի երկրում, որտեղ գոյութիւն ունեն պարտադիր հասարակական արժէքներ, նոյնիսկ հրապարակայնութեան պայմաններում: Հաւանաբար, Մերի Քոչարն էլ տուրք տալով Խորհրդային Միութիւնում ընդունւած արժէքներին և յարմարւելով հրապարակայնութեան յատուկ պայմաններին, որոշ չափով կաշկանդել է սեփական ընկալումները և իր ուսումնասիրութեան համար որդեգրել է հետեւեալ սկզբունքները:

1.- Սփիւռքահայ կուսակցութիւնների գործունէութիւնը պէտք է լուսաբանւի ոչ թէ ստալինեան ժամանակաշրջանի բթամիտ թելադրանքներով, այլ միջազգային օրէնքների համաձայն, առանց կուսակցական գնահատականների:

2.- Այնուամենայնիւ՝ Մերի Քոչարի համար «**Գիտական Ընկերվարութիւնը**» կամ մարքսիզմը աւելի ընդունելի և ճիշտ գաղափարախօսութիւն է, քան որեւէ ուրիշ ընկերվարական գաղափարախօսութիւն:

3.- Այդ իսկ պատճառով, Հնչակեան կուսակցութիւնը աւելի համակրելի է, քան Դաշնակցութիւնը:

4.- Անհրաժեշտ է Դաշնակցութեանը հանել այն ատելութեան մթնոլորտից, որը նրա շուրջ ստեղծել է խորհրդային պաշտօնական պատմագրութիւնը, բայց ոչ այնքան, որ նա ամբողջովին արդարացւի կամ հերոսացւի:

5.- Դաշնակցութիւնը արդարացնելու հարցում լաւ է մեղմութիւն և զսպուածութիւն ցուցաբերել, քանզի այդ կուսակցութիւնը՝ ի տարբերութիւն ուրիշ կուսակցութիւնների՝ այսօր էլ կենդանի ու գործօն կուսակցութիւն է և, նրա անցեալը արդարացնելով, ինքնաբերաբար կ'արդարացւի նաեւ ներկան, ինչը Խորհրդային իշխանութիւնների համար այնքան էլ ցանկալի չէ: Մանաւանդ՝ երբ հաշւի առնւի աղրբեջանցիների հնարաւոր վայնասունը Դաշնակցութեանը արդարացնելու առիթով:

Այս սկզբունքներից ելնելով, Մերի Քոչարը օգտւում է դաշնակցական գրականութիւնից, ազատօրէն մէջբերումներ է կատարում այն հեղինակներից, ո-

րոնց անունը յիշատակելու համար ժամանակին կարելի էր բանտարկւել կամ նոյնիսկ գնդակահարւել: Բայց դրա հետ միասին, Քոչարը մէջբերում է դաշնակցական հեղինակների այն արտայայտութիւնները, որոնք ապացուցում են իր տեսակէտը և վերջին հաշւով կրում են ինքնաքննադատական բնոյթ: Դրական գնահատական տալով Դաշնակցութեան համագործակցութեանը երիտթուրքերի հետ, նա ոչ միայն «դաւաճան» չի անւանում Հնչակեան կուսակցութեանը, որը հրաժարւեց այդ համագործակցութիւնից, այլ և չի նշում, որ նրանք այդ պահին սխալւեցին: Մինչդեռ դատապարտելով Դաշնակցութեանը հետագայ քայլերի համար, Քոչարը օգտագործում է բաւականին վիրաւորական արտայայտութիւններ: Ու կրկին պիտի ուզէի, որ Քոչարը շարունակած լինէր իր ուսումնասիրութիւնը առնւազն մինչեւ Փետրւարեան Ապստամբութիւն, որտեղ Դաշնակցութիւնը վարւեց ճիշտ Քոչարի ուզածի պէս: Տեսնելով, որ բոլշեւիկները ճիշտ երիտթուրքերի պէս խաբեցին հայ ժողովրդին, Դաշնակցութիւնը ոչ միայն զինեց ժողովրդին ինքնապաշտպանութիւն կազմակերպելու նպատակով, այլ իր ձեռքը վերցրեց Հայրենիքի ու ժողովրդի փրկութեան հարցը ու տապալեց բոլշեւիկեան իշխանութիւնը: Եթէ երիտթուրքերի պարագային՝ Քոչարը Դաշնակցութեան քաղաքական վարքագիծը դաւաճանութեան համազօր է համարում և հերոսացնում է հնչակեաններին, ապա 21 թւականի իրադարձութիւնների մէջ դաւաճաններ պէտք է նկատւեն հայ կոմունիստները և հերոսներ դաշնակցականները: Բայց Քոչարը Փետրւարեան Ապստամբութեանը չի հասնում, ուստի՝ չվերագրենք նրան այն, ինչ ինքը չի գրել:

Մերի Քոչարի աշխատութիւնը ես, անձամբ ընկալեցի որպէս հայ պատմագրութեան մէջ փոփոխութիւններ կատարելու նշան: Եւ այդ նշանը տեսնելով, մենք էլ պէտք է պատրաստւենք նոր կացութեանը, որը մեզանից շատ աւելի մեծ լրջութիւն ու խորութիւն է պահանջում, քան մենք ունէինք նախկինում պատմական իրադարձութիւնների վերլուծութեան բնագաւառում: Նախկինում շատ հեշտ էր պատասխանել, պատասխանելն իսկ վիրաւորական էր: Բայց հիմա, երբ մեր պատմական անցեալը և ներկան լուրջ վերլուծութիւնների ու քննարկումների առարկայ է դարձել, մենք պիտի պատրաստ լինենք բարձրացնելու խորհրդային պատմաբանների կողմից նետւած ձեռնոցը, ոչ թէ կռւելու, այլ ճշմարտութիւնը պարզելու և գալիք սերունդներին փոխանցելու համար:

1989

ԿՐԿԻՆ ՓԱՅՏԷ ՁԻՈՒ ՎՐԱՅ

Է. Յովհաննիսեան

Աւելի քան տարի մըն է, որ հայրենի լեզուաբան Ռ. Իշխանեան հրապարակը կ՚աղմկէ՝ «թրքական գործօն»ը իբրեւ թէ շահագործողներուն դէմ խաչակրութեան մը ձեռնարկելով: Յատկապէս հայրենի իրականութեան մէջ՝ նման ելոյթները յաճախ շփոթի տեղիք կու տան, մանաւանդ երբ անպատասխան կը ձգուին անոնք:

Ստորեւ՝ հրատարակութեան կը յանձնենք երկու յօդուածներ, որոնք կ՚անդրադառնան Իշխանեանի թեզերուն: Ընկ. Է. Յովհաննիսեանի յօդուածը լոյս տեսած է Հայաստանի մեր պաշտօնակից «Ազատամարտ**»ի մէջ: Իսկ ընկ. Ն. Պէրպէրեանի յօդուածը ուղարկած էր Գերագոյն Խորհուրդի պաշտօնաթերթ «**Հայաստանի Հանրապետութիւն**» օրաթերթին՝ հրատարակութեան առաջադրանքով: Բայց ցարդ լոյս չէ տեսած:**

Չգիտես ինչու, մեր ժողովրդի համար ամենաճգնաժամային պահերին, երբ հրապարակ են իջնում հարցեր, որոնց պատասխաններից է կախուած ժողովրդի ամբողջ ճակատագիրը, Ռաֆայէլ Իշխանեանը թամբում է իր փայտէ ձին և իրատեսութեան նշանաբանի տակ կերակրում է մեզ մանկապարտէզային ճշմարտութիւններով: Պարզ չէ միայն այն, թե արդեօ՞ք այդ գործով նա զբաղւում է իր սեփական կամքով: Չէինք զարմանայ, եթէ պարզուէր, որ նրան այդ ձիու վրայ են նստեցնում շահագրգռած որոշ ուժեր, իսկ նա էլ սիրով կատարում է այդ ուժերի հասարակական պատուէրը:

Գուցէ իմ այս կոպիտ խօսքերը վայել չեն հրապարակախօսին, նամանաւանդ մեր «ժողովրդավարական» ժամանակներում, բայց ստիպւած եմ քաղաքավարութիւնը մէկ կողմ նետել, քանզի խօսքը ոչ թէ երկու հայ մտաւորականների բանավէճի, ոչ թէ տարբեր տեսակէտներ քննարկելու, այլ մեր ժողովրդի մօտակայ 15-20 տարիների քաղաքական ռազմավարութեան մասին է: Այստեղ քաղաքավարութեան ու բառեր ծամծմելու տեղը չէ:

«**Թուրքական գործօնը**» վերնագիրը կրող յօդուածում, որի բովանդակութեան հետ, անկասկած, ծանօթ է մեր ընթերցողը, Ռաֆայէլ Իշխանեանը «**առաջնորդուելով ոչ թէ զգացմունքներով, այլ բովանդակութեամբ**», նախ առաջարկում է օրինակ վերցնել հրեաներից, որոնք, չնայած գերմանացիների կողմից գործադրւած ցեղասպանութեանը, լաւ յարաբերութիւնների մէջ են նրանց հետ և Իսրայէլում ընդունում են արտաքին գործերի նախարար Գենշերին:

Ռաֆայէլ Իշխանեանի այս առաջարկութիւնը կարելի է համեմատել մի այսպիսի պատմութեան հետ: 5 տարեկան Վարդանիկը չի կարողանում զետ-

նից պոկել իր ծանր խաղալիքը, իսկ ընկեր Մարգօն կշտամբում է նրան, «**ինչ-պէ՞ս չես կարողանում բարձրացնել այդ խաղալիքը, երբ Վլասովը աւելի քան երկու հարիւր կիլօ է բարձրացնում**»: Վարդանիկը ընկ. Մարգոյին տալիս է շատ պարզ պատասխան. «**Ես Վլասովը չեմ, այլ Վարդանիկը**»: Ռաֆայէլ Իշխանեանը չի կարողանում յանգել այն պարզ պատասխանին, հաւանաբար չհասկանալով, որ մենք հրեաներ չենք: Ստիպւած եմ տալու այդ բացատրութիւնը:

Համաշխարհային քաղաքական ռինգում հրեաներին կարելի է համեմատել մահաբեր հարւած ունեցող Մուհամեդ Ալիի հետ: Նրանք Նիւրեմբերգի դատավարութիւնից սկսեալ կարողացան մարդկութեանը ընդունել տալ հրէութեան դէմ գործադրւած ցեղասպանութեան իրողութիւնը, և այդ մեղքի համար մարդկութիւնը նրանց մինչեւ այսօր տուրք է վճարում: Իսկ գերմանացիները ահա արդէն 5րդ տասնամեակն է, ինչ ծնկաչոք ներողութիւն են խնդրում հրեաներից ու միլիարդներ վճարում են նրանց, չնայած նրան, որ արդէն վաղուց գոյութիւն չունի ցեղասպանութիւն գործած սերունդը և կառավարութիւնը: Գերմանիայում և ամբողջ աշխարհում արգելւած են նոյնիսկ այն դասական թատերգութիւնները, որտեղ հակահրէական տրամադրութիւններ կան և կամ էլ արգելեցին Աւստրիայի նախագահ, ՄԱԿի նախկին գլխաւոր քարտուղար Կուրտ Վալդհայմի մուտքը Միացեալ Նահանգներ, չնայած նրան, որ Վալդհայմի այսպէս կոչւած մեղքը ապացուցել նրանց չյաջողւեց: Եւրոպայի կենտրոնից և աշխարհի տարբեր ծայրերից հրեաները առեւանգում են ուզած մարդուն, տանում Իսրայէլ և այնտեղ նրանց վրայ կազմակերպում դատավարութիւններ: Այո, Գենշերը գնաց Իսրայէլ, նրանց պատերազմից տուժելու համար դրական օգնութիւն ցուցաբերելու և ցեղասպանութեան զոհերի յիշատակը յարգելու համար: Բայց երբ Իսրայէլ մեկնեց Գերմանիայի կանանչների կուսակցութեան ղեկավարը և համարձակւեց այնտեղ ասել, որ պաղեստինցիների իրաւունքներն էլ պէտք է պաշտպանուեն, հրէական ճնշումների հետեւանքով կանանչների կուսակցութեան ղեկավարութիւնը ստիպւած եղաւ հրաժարական տալու:

Հրեաների այս յաջողութիւններին միայն նախանձել կարելի է:

Բայց մենք կարող էինք դառնալ այդ նոյն հրեաները Ռուսաստանում: Եւ արդէն դարձել էինք, միայն այն տարբերութեամբ, որ անհրաժեշտ բարձունքների հասնելուց յետոյ, երբեք չծառայեցինք սեփական ժողովրդին:

Եկէք մի պահ վերադառնանք այն ժամանակներին, երբ Մոսկւայում գործում էին Միկոյեանը, Բաղրամեանը, Կոստանդովը, Պետրոսեանը և շատ ուրիշներ, այդ թւում 10 ծովակալներ, տասնեակ զօրավարներ, բաժնի վարիչներ, ինստիտուտի դիրեկտորներ, երաժիշտներ, գրողներ ու հասարակական գոր-

ծիչներ: Նրանց դիրքերը աւելի պակաս չէին, քան հրեաների դիրքերը Միացեալ Նահանգներում: Բայց նրանցից և ոչ մէկը հայութեանը ծառայելու քաջութիւնը չունեցաւ: Հայրենիքը գերեզմանատուն պատկերացնելով, նրանք երազում էին թաղուել Հայաստանում, որովհետեւ մենք մարդ թաղելու մասնագէտներ ենք:

Մինչդեռ այն ժամանակ, պաշտպանութեան նախարարութեան կողմից ներկայացւած մէկ գրութեամբ, որի մէջ ասւած լինէր, թէ երկրի պաշտպանութեան տեսանկիւնից անհրաժեշտ է, որ Նախիջեւանն ու Ղարաբաղը Հայաստանին կցւեն, այդ հարցը կարող էր լուծւել և կամ, առնւազն, արգելք դրւէր հայաթափումի քաղաքականութեան դիմաց: Եւ հիմա Ռաֆայէլ Իշխանեանը Ռուսաստանի և Թուրքիայի միջեւ ընտրութիւն կատարելով ուզում է Հայաստանն ու մեր ժողովուրդը նետել Թուրքիայի, Ադրբեջանի, Վրաստանի քաղաքական ոլորտը ի հաշիւ Ռուսաստանից կտրւելու և նրա հետ թշնամանալու:

Քանի որ մանկապարտէզումն ենք, ստիպւած եմ դիմելու մէկ ուրիշ օրինակի: Հակաիրաքեան ուժերը, որոնց մէջ էր նաեւ Թուրքիան, Սադդամ Հոսէյնին տապալելու համար՝ Իրաքի ժողովրդներին կոչ արեցին ապստամբել: Քրդերը ապստամբեցին: Երբ Իրաքի օդանաւերը փորձում էին ռմբակոծել քրդերի դիրքերը, ամերիկեան հակաօդային ուժերը կործանում էին այդ օդանաւերը: Քրդերի ինքնավարութեան խնդիրը դառնում էր օրակարգի հարց: Բայց ահա քրդերի վաղեմի «**բարեկամ**» Էօզալը մեկնեց Միացեալ Նահանգներ և կտրականապէս մերժեց քրդերի ինքնավարութիւնը և ամերիկացիները լքեցին իրենց իսկ կոչերով ոտքի հանւած քրդերին: Նրանց դիրքերը ռմբակոծւեցին, միլիոնաւոր փախստականներ կուտակւեցին Իրանի ու Թուրքիայի սահմաններին վրայ և 1.5 միլիոն քրդեր սարերով բռնեցին գաղթի ճամբան: Քաղցած ու արիւնաքամ եղած այս ժողովրդին աշխարհի անտարբեր աչքերի առջեւ ոչնչացնում էին օդից: Եւ այս սպանդի գլխաւոր պատասխանատուութիւնը ընկնում է Թուրքիայի վրայ: Բրիտանական «**Ինդեփենտենդ**» թերթը Ապրիլի 4ին նշեց, որ Միացեալ Ազգերի Կազմակերպութիւնը լքեց քրդերին: «**Ամէն մի երեխայի կարելի է բացատրել**,- գրում է թերթը,- **թէ ինչո՛ւ բրիտանական զինուորները ուղարկւեցին Քուէյթը ազատագրելու, բայց ոչ մի երեխայի չի կարելի բացատրել, թէ ինչո՛ւ քրդերին ոտքի հանելով, մենք ոչինչ չենք անում նրանց պաշտպանելու համար**»: Նոյն օրը «**Ուաշինկթըն Փոստ**» թերթը ամերիկացիներին անւանեց դաւաճան, որովհետեւ նրանք որոշեցին չխառնւել Իրաքի ներքին գործերին, իսկ «Նիւ Եորք Թայմզ» թերթի մեկնաբան Էյբլ Ռոզենթալը գրեց, որ այս դաւաճանութիւնը հեշտ չի մոռացւի: Նա գրեց, որ ամերիկեան դիւանագէտները ժողովրդավարութիւնը և մարդու իրաւունքների պաշտպանութիւնը իրենց քաղաքականութեան նպատակները չեն դարձրել: Բայց Ռոզենթալը սխալւում

է, այս ցեղասպանութիւնն էլ կը մոռացւի և ամերիկեան դիւանագէտները իրենց քաղաքականութեան մէջ երբեք հաշւի չեն նստի ոչ մարդու իրաւունքների և ոչ էլ ժողովրդավարութեան հետ: Քրդերի հարցը արդէն վերածւեց մարդասիրական օգնութիւն ցուցաբերելու ճառերի, որոնց գինը մենք, հայերս շատ լաւ գիտենք: Երբ կ'անցնեն տարիներ ու քրդերը կը սկսեն փաստաթղթեր հաւաքել այսօրւայ ողբերգութեան մասին, շատ պարզ կը դառնայ, դա Թուրքիան էր, որ այս անգամ էլ Ապրիլ ամսին մի նոր ցեղասպանութիւն սկսեց:

Հիմա ասացէք, խնդրեմ, Ռաֆայէլ Իշխանեան, այդ ինչո՞ւ պիտի Թուրքիան համաձայնւի Հայաստանի անկախութեան հետ: Միայն այդ բանի համար, որ մենք խոստանում ենք մոռացութեան մատնել ցեղասպանութիւնը և հրաժարւել հողային պահանջների՞ց: Մի՞թէ Թուրքիան չի հասկանում, որ այդ դուք և ձեզ նմաններն են փայտէ ձի նստած դիւանագիտութիւն խաղում գայլերով լի անտառում: Իսկ հայ ժողովուրդը, հայորդիք, երբեք չեն մոռանալու այդքան չարիք: Ինչո՞ւ պէտք է Թուրքիան համաձայնւի անկախ Հայաստանի գոյութեան հետ, եթէ չհամաձայնւեց քրդական ինքնավարութեան հետ հարեւան երկրում: Ինչո՞ւ պիտի նա ուզի, որ իր կողքին մի նոր Իսրայէլ ստեղծւի: Այդ մտքի հետ նա երբեք չի համաձայնւի, որովհետեւ նրա խորհրդատուները Ռաֆայէլ Իշխանեաններ չեն: Նա քաղցր խօսքերով կարող է միայն մեր աչքերին փոշի փչել,- ինչպէս արաւ երիտթուրքերի օրօք,- յետոյ՝ յարմար մոմենտին, անմիջապէս մեզ կուլ տալու համար: Այո՛, մենք էլ կը խօսէինք Թուրքիայի հետ և Էօզալին Հայաստան կը հրաւիրէինք, եթէ մենք այնքան ուժեղ լինէինք որ Թուրքիան մեզանից ներողութիւն խնդրէր, մեր վնասները հատուցէր ու այն ամէնը անէր, ինչ արեց Գերմանիան հրեաների նկատմամբ: Բայց Թուրքիան ոչ միայն չի ճանաչում հայերի ցեղասպանութիւնը, այլ բացատրում է, որ հայերն են ջարդել թուրքերին և եթէ մենք այսօր լռենք, ապա մի քանի տարուց յետոյ մարդիկ այդպէս էլ կ'ասեն:

Դժւար է պատկերացնել որ Ռաֆայէլ Իշխանեանը այս ամէնը չի հասկանում, դժւար է ենթադրել, որ նա չի տեսնում, որ հայ ժողովրդի միակ ուժը նրա մտային կարողութիւնների մէջ է, որի ճամբով էլ մենք կարող ենք ձեռք բերել մարտնչելու կարողութիւններ: Դժւար է հաւատալ, որ Ռաֆայէլ Իշխանեանը չի պատկերացնում, որ այսօրւայ փոքր պետութիւնները գոյատեւում են ուրիշի ուժը սեփական ուժի վերածելու եղանակով ու ժամանակ շահելու մարտավարութեամբ: Եւ բոլորովին անկարելի է պատկերացնել, որ նա կարող է մեզ առաջարկել՝ օգտագործել այդ նպատակի համար Թուրքիայի, Ադրբեջանի և կամ էլ Վրաստանի ուժը: Մի՞թէ պարզ չէ, որ ո՛չ Թուրքիան, ո՛չ Ադրբեջանը և ո՛չ էլ Վրաստանը մեր անկախութեան մէջ շահագրգռած չեն: Իսկ եթէ պարզ է,

էլ ինչո՞ւ է Իշխանեանը գրել իր յօդուածը: Այստեղ մէկ կասկած կայ, որի մասին պիտի անկեղծօրէն արտայայտուեմ:

Թուրքիայի և Իսրայէլի քաղաքական փոխյարաբերութիւնները բաւականին սերտ են: Նշենք միայն, որ Թուրքիան Իսրայէլի հետ դիւանագիտական կապեր ունեցող միակ մահմեդական երկիրն է, եթէ չհաշուենք Եգիպտոսը, որի պարագան ուրիշ է: Հէնց այս պատճառով, տարիներ առաջ, բարեկամ Թուրքիայի խնդրանքով Իսրայէլը արգելեց Հայկական Ցեղասպանութեան մասին մի ֆիլմի նկարահանումը: Բացի դրանից, հրեաները տարբեր նկատառումներով երբեք չեն ուզում խօսել և աղմուկ բարձրացնել Հայկական Ցեղասպանութեան շուրջ: Բայց նրանք երբեք առիթը բաց չեն թողել սեփական ցեղասպանութեան մասին խօսելու այն երկրներում, որտեղ գոյութիւն ունեն հակահրէական տրամադրութիւններ:

Հայաստանում երբեք չեն եղել ո՛չ կազմակերպւած հրէական համայնք և ո՛չ էլ հակահրէական տրամադրութիւններ: Ընդհակառակը, գոյութիւն է ունեցել մեծ յարգանք հրեաների նկատմամբ: Այս իմաստով Հայաստանը նրանց չէր հետաքրքրում, որովհետեւ ինչպէս ասում են, նա արդէն նրանց բնական դաշնակիցն էր նկատւում: Բայց ահա, մի քանի տարի առաջ «**Հասարակական Գիտութիւնների Բանբեր**»ը հրատարակեց պատմական գիտութիւնների դոկտոր Վահան Բայբուրդեանի գրախօսականը Ինջիկեանի «**Օսմանեան Կայսրութեան բուրժուազիան**» գրքի մասին, որտեղ արտայայտւած էր հետեւեալ միտքը: Օսմանեան կայսրութեան մէջ գոյութիւն ունէին հակասութիւններ հայկական և հրէական բուրժուազիայի միջեւ, քանի որ հրեաները կապւած էին քաղաքական սիոնիզմի հետ և օգնում էին երիտթուրքերին՝ հայերին ու յոյներին Թուրքիայից վտարելու գործում: Այդ գործը երիտթուրքերը իրականացրին ցեղասպանութեան ճամբով: Բայբուրդեանը բողոքում էր, որ Ինջիկեանը այդ հարցը իր գրքում չի լուսաբանել: Բացի դրանից, «**Գրական Թերթ**»ում Պերճ Զէյթունցեանը հրատարակեց Ջոն Կիրակոսեանի «**Երիտթուրքերը պատմութեան դատաստանին առաջ**» գրքի գրախօսականը, որտեղ զարմանք էր յայտնւում այն առիթով, որ սիոնիստները և երիտթուրքերը սերտ համագործակցութեան մէջ են եղել: Եւ ահա, կամաց-կամաց Հայաստանում ստեղծուեցին որոշ հակահրէական տրամադրութիւններ, որոնք չափազանց վտանգաւոր է համարում և որոնց դէմ անհրաժեշտ է գտնում պայքարել:

Գուցէ այս պայքարի համար է Իշխանեանը հրատարակել իր յօդուածը, որտեղ նախ նկարագրւում են հրեաների տառապանքները, որոնց ինքը ականատես է եղել, ապա մի անգնահատելի նւէր է յանձնւում հրեաներին, նրանց զոհերի թիւը սկզբից հասցնելով 6.5 միլիոնի, ապա հասցնելով մօտաւորապէս 7 միլիոնի, յետոյ էլ օգտագործելով 7 միլիոն թիւը: Եթէ խօսքը հայերի ցեղասպա-

նութեան մասին լինէր, Ռաֆայէլ Իշխանեանը, հաւանաբար թուղթը և մատիտը ձեռքին ճշգրիտ հաշուարկներ կը կատարէր, որ, ամա՛ն, մէկ հոգի աւելի չարձանագրւի: Իսկ ուրիշներին միանգամից մէկ միլիոն է նւիրում: Եթէ սա էր յօդւածի գլխաւոր նպատակը, այդ բանը կարելի էր անել, առանց հայերի ճակատագրի հետ խաղալու: Այդ դէպքում նրա յօդւածը նոյնիսկ օգտակար կարելի է համարել, որովհետեւ մեր ժողովրդի հոգեբանութիւնից անհրաժեշտ է արմատախիլ անել թէ՛ հակառուսական և թէ՛ հակահրէական տրամադրութիւնները: Իսկ եթէ յօդւածը գրւել է Հայաստանի ներկայ ղեկավարների քաղաքական գիծը պաշտպանելու համար, բոլորովին աւելորդ էին ծիծաղելի համեմատութիւնները հրեաների հետ, որովհետեւ մեր միամիտ ժողովուրդը կարող է իսկապէս հաւատալ, որ մենք էլ կարող ենք այսօր անել այն, ինչ անում են հրեաները: Բայց իջնենք երկնքից Հայաստան և տեսնենք, թէ հրեաներին նմանւելուց բացի էլ ինչ է առաջարկում մեզ հմուտ դիւանագէտ Ռաֆայէլ Իշխանեանը:

Դաշնակցական մամուլի հետ մանրամասնօրէն ծանօթանալուց յետոյ, նա յանկարծ պարզում է, որ Դաշնակցութիւնը 1920 թւականից սկսեալ մինչեւ մեր օրերը քարոզում ու պայքարում է Թուրքիայի, Ադրբեջանի և պանթուրանիզմի դէմ և դրա հետ միասին անվերջ արծարծում էր Ցեղասպանութեան ճանաչման հարցը: Գուցէ նրանից է որ Իշխանեանը թրքական թերթերը չի ուսումնասիրել, բայց նա բոլորովին չի զարմանում, որ Թուրքիան էլ Աբդուլ Համիդից սկսեալ, Երիտթուրքերով, Քեմալով ու Էօզալով վերջացրած, նոյնպէս չի փոխում իր քաղաքականութիւնը հայերի նկատմամբ: Դաշնակցութեան քաղաքական մտայնութիւնը Իշխանեանին զարմանք է պատճառում, որովհետեւ նրա կարծիքով Դաշնակցութեան նպատակը ոչ թէ հակաթրքութիւնն էր, այլ Հայաստանի անկախութեան վերականգնումը: Եւ իբր թէ, Դաշնակցութիւնը շեղւել է իր գլխաւոր նպատակից՝ ժողովրդի համակրանքը շահելու համար՝ բոլորի սրտի մօտ հողային պահանջները և Ցեղասպանութիւնը դատապարտելու հարցերը արծարծելու ճամբով:

Այստեղ պիտի կանգ առնեմ ու ասեմ, որ մեր ազգային կեանքում վերջին 100 տարիների ընթացքում Դաշնակցութիւնը այն կուսակցութիւնն էր, որը իր ամբողջ ուժերով, գերմարդկային զոհաբերութիւններով պայքարեց ու պահպանեց ոչ միայն հայ ժողովրդի ազգային արժէքները, այլեւ նրա քաղաքական միտքը: Անկասկած, գալու է ժամանակը, երբ քաղաքականութեան մէջ փորձ ձեռք բերած մեր ժողովուրդը բազմակողմանի քննութեան նիւթ կը դարձնի Հ.Յ.Դաշնակցութեան քաղաքականութիւնը անցեալում և ներկայում, միաժամանակ իր գնահատումները կատարելով, թէ ինչո՛ւ այս կամ այն դէպքում Դաշնակցութիւնը այսպէս կամ այնպէս վարւեց: Այդ իմաստով ու կանխահաս

կերպով թող չխօսեն նրանք, ովքեր Ղարաբաղը ազատագրելու գեղեցիկ լոզունգներով հայ ժողովրդին ոտքի հանեցին և ապա լքեցին իրենց եղբայրներին, որոնք իրենց հերոսական կեցուածքներով գերազանցեցին Մուսա Լերան, Սասունի և Զեյթունի ապստամբութիւնները։ Լքեցին արցախցիներին, նրանց արիւնը լցնելով Գորբաչովի և Էօզալի ջրաղացին։

Չպիտի անդրադառնամ Ռաֆայէլ Իշխանեանի ամէն մի արտայայտութեանը, այլ պիտի թւարկեմ քաղաքականութեան այն հիմնական սկզբունքները, որոնք ջնջում են Ռաֆայէլ Իշխանեանի բոլոր առաջարկութիւններն ու գնահատականները։

Որեւէ քաղաքական հարց, նամանաւանդ նրանցից ամէնաբարդը՝ անկախութեան հարցը, լուծելու համար անհրաժեշտ է քաղաքական նպատակի քարոզչութիւն, նպատակին հասնելու ուժ և ձեռք բերւած նպատակը պաշտպանելու կարողութիւն։ Եթէ մեր նպատակը Հայաստանի անկախութիւնն է, ապա նրա քարոզչական փուլը, պարունակում է թէ՛ հողային պահանջները, թէ՛ ցեղասպանութիւնը, համաթուրանականութիւնը, պատմական իրաւունքները և թէ՛ մեր նկատմամբ գործւած ու անպատիժ մնացած անարդարութիւնները։ Այս ամէնը պէտք է Հայկական Հարցի շուրջ ստեղծեն այնպիսի բարոյական մթնոլորտ, որ հարկ եղած դէպքում, մեր դատը պաշտպանողները կարողանան բարոյապէս արդարացնել իրենց դրոյթներն ու քայլերը։ Անշուշտ, քարոզչական փուլը ոչ մէկ քաղաքական հարց չի լուծում, բայց երբ պայքարի ճամբով հարցը հասնում է քննարկման, ապա մեզ պաշտպանելը ամօթ չի նկատւում։ Այդպէս, հրեաները Իսրայէլի ստեղծման բարդ քաղաքական հարցի քարոզչական փուլում խօսում էին իրենց պատմական իրաւունքների մասին, աշխարհի տարբեր ծայրերում հալածւելու և պետութիւն ունենալու անհրաժեշտութեան մասին։

Հայաստանի անկախութեան քարոզչական այս փուլումն էր, որ Դաշնակցութիւնը ջանք չխնայեց Հայ Դատը քարոզելու համար։ Հէնց այդ ճիգերին զուգադիպեցին հայ մարտիկների հարւածները ուղղւած թուրք դիւանագէտների դէմ։ Սա էր նրանց քաղաքական նպատակը, այլ ոչ թէ վրէժի զգացմունքը, ինչպէս պատկերացնում է Իշխանեանը։ Հայ մարտիկները իրենց այդ պարտականութիւնը կատարեցին փայլուն կերպով։ Խօսքս, անշուշտ, իսկական հայ յեղափոխականների մասին է, այլ ոչ թէ միջազգային ահաբեկչութեան կառքին լծւած տարրերի, որոնք վարկաբեկելով հայ յեղափոխական շարժումը Օրլիի օդանաւակայանում ֆրանսացիներ էին սպանում՝ Հայաստանը ազատագրելու պատրւակի տակ։ Իշխանեանը իր յօդւածում հարց է տալիս.- «**Ասացէք խնդրեմ, դրանից ի՞նչ շահեց մեր փոքրիկ Հայաստանը ու հայ ազգը։ Խօս-**

քը կտուր չգցել, ուղղակի պատասխանէք հարցիս՝ դրանից ի՞նչ շահեց Հայաստանը»:

Պատասխանեմ՝ առանց խօսքը կտուր գցելու: Հայկական Հարցը դուրս եկաւ հայկական ակումբներից ու դարձաւ միջազգային մամուլի և միջազգային ատեանների քննարկման հարց: Քի՞չ է սա, պարոն Իշխանեան: Հայ մարդը վերականգնեց իր պատիւը, իսկ հայ երիտասարդը վերադարձաւ իր յեղափոխական արմատներին: Մինչ այդ Հայկական Հարցը և մասնաւորապէս Հայկական Ցեղասպանութեան խնդիրը սկսել էին գոյութիւն ունենալ միայն մեզ համար: Իսկ դրանից յետոյ օտարները գրեցին այնպիսի աշխատութիւններ մեր մասին, արխիւներից հանեցին այնպիսի փաստաթղթեր, որոնց գոյութեան մասին մենք անգամ չգիտէինք: Այս ամէնը, ինչպէս ասացի, ունէր զուտ քարոզչական նշանակութիւն և այդ քարոզչութիւնը շատ բան տուեց Հայաստանին ու մեր ազգին: Եթէ Իշխանեանի համար այս բացատրութիւնը բաւարար չէ, ես կարող եմ, հրեաների օրինակին հետեւելու նրա խորհրդով, հէնց իրեն հարցնել.- ի՞նչ օգուտ տուեցին փոքրիկ Իսրայէլին և հրեայ ժողովրդին Մենահիմ Բեգինի ահաբեկչական արարքները: Նա՝ որ ռումբեր պայթեցնելով հիւրանոցներում՝ դարձաւ Իսրայէլի վարչապետը:

Կարելի է նաեւ հարցնել, թէ ինչ վնաս են հասցնում մեզ Զիա Բունիաթովի և Ալիեւների պատմական ցավոտուքները և ինչ օգուտ են բերում մեզ մեր պատմաբանների գիտական հակազդեցութիւնները: Եթէ կարծում ենք, որ Արցախի պատմական պատկանելիութիւնը Հայաստանի որեւէ նշանակութիւն ունի Արցախը Հայաստանին կցելու համար, ապա չարաչար սխալւում ենք: Ո՛չ բարոյական և ոչ էլ պատմական իրաւունքները քաղաքականութեան մէջ ոչ մէկ դեր չեն կատարում: Բայց այդ աշխատութիւնները անհրաժեշտ են, նրանք կարող են գնահատելի քարոզչական արժէք ունենալ, և որոնք մէկ օր անկասկած կը վերածւեն քաղաքական արժէքի:

Ոչ մէկը այնքան միամիտ չէր, որ ենթադրէր, թէ դիւանագէտներ հարւածելով կարելի է Հայ Դատը լուծել: Բայց բոլորի համար պարզ էր, թէ որքան մեծ քարոզչական նշանակութիւն ունէին այդ հարւածները: Եւ սպասումները արդարացւեցին:

Քաղաքական քարոզչութիւնը քաղաքականութեան մէջ կատարում է այն նոյն դերը, որը առեւտրում կատարում է ազդակը՝ ռեկլամը: Մասնագէտները հաշւել են, որ ազդակի վրայ ծախսւած հազար դոլարը հինգ հազար դոլարի շահ է սերում, եթէ վաճառելու բան ունես: Բայց ռեկլամը ոչ մէկ արժէք չունի, եթէ վաճառելու ապրանք չունես: Իսկ քաղաքականութեան մէջ վաճառելու ապրանքն էլ, ապրանք գնելու դրամն էլ ուժն է: Նշանակութիւն չունի, թէ ինչպիսի բովանդակութիւն ունի այդ ուժը: Նա կարող է լինել միջուկային զէնք,

դրամ, մամուլ, գիտութիւն, աշխարհագրական դիրք և այլն։ Եթէ մենք այսօր այդ ուժը չունենք, որեւէ քաղաքական խաղի մէջ մտնելը անիմաստ է։ Որ կողմի վրայ էլ որ խաղանք, միեւնոյնն է պարտուելու ենք, ուրեմն աւելի լաւ է ոչինչ չանենք, բացի ուժեր կուտակելուց, որի համար պէտք է ժամանակ շահենք։ Այս փուլում թրքական կողմը մեզ տալիք չունի, որովհետեւ առնելիք էլ չունի։ Դա մեզ է թւում, որ մեր հողային պահանջները նրան մեծ մտահոգութիւն են պատճառում և որ բաւական է մենք հրաժարւենք այդ պահանջներից, ուրախութիւնից ցնցւած Թուրքիան այլեւս մեզ ոչ մէկ հարցում չի խանգարի։ Թուրքիան շատ լաւ գիտի, որ մեր հողային պահանջները առայժմ կրում են քարոզչական բնոյթ։ Բայց նա շատ լաւ գիտի նաեւ, որ բաւական է մենք ուժ ձեռք բերենք և մեր բարոյական պահանջները անմիջապէս քաղաքական կը դառնան։ Ուրեմն ինչո՞ւ պիտի Թուրքիան թոյլ տայ, որ մենք ուժեղանանք։ Իսկ եթէ թոյլ պիտի չտայ, ի՞նչ անելիքներ մենք ունենք նրա ոլորտում, այն էլ ռուսներից կտրւելու գնով։ Ինչպէ՞ս մենք պէտք է նրա ոլորտում պաշտպանենք մեր անկախութիւնը, եթէ նոյնիսկ այդ անկախութիւնը շատ արագ կերպով իրականութիւն դառնայ։ Մեր բոլոր հարեւանները մեր հակառակորդներն են։ Չեմ ուզում այս հարցը վերլուծութեան ենթարկել, բայց խորը վերլուծութիւնների կարիք էլ չկայ։ Ադրբեջանը և Թուրքիան միասին կը բաժանեն Հայաստանը իրենց մէջ և աշխարհը լռութեամբ կը դիտի, թէ ինչպէս յօշոտւեց «անկախ» Հայաստանը։ Միակ երկիրը, որ թշնամի չպէտք է նկատւի, դա Իրանն է, որը իր 15 միլիոն ադրբեջանցիների ձեռքը կրակն է ընկել և երբեք թոյլ չի տայ, որ իր սահմանների մօտ ստեղծւի ադրբեջանական պետութիւն։ Դրա համար է, յարգելի Իշխանեան, որ Դաշնակցութիւնը Պարսկաստանի հողային պահանջ չունի։ Այսօր մեզ համար պէտք է յստակ լինի, որ մենք առանց նախապատրաստական աշխատանքների չենք կարող ձեռք բերել անկախութիւն, չենք կարող պաշտպանել այդ անկախութիւնը և չենք կարող միջազգային ասպարէզում համակիրներ շահել մեր անկախութեան համար։ Միացեալ Նահանգները և Արեւմուտքը Խորհրդային Միութեան քայքայման կողմնակիցներ չեն և նա չի քայքայւելու՝ անկախ այն բանից, թէ Հայաստանը կը ստորագրի կամ ոչ միութենական պայմանագիրը։ Մենք դեռ չենք անցել ո՛չ մեր անկախութեան քարոզչական փուլին, ո՛չ համապատասխան ուժ ձեռք բերելուն և ո՛չ էլ ինքնապաշտպանութիւնը ապահովելու փուլին։ Մինչեւ անկախութիւն ձեռք բերելը մենք պէտք է կտրենք այս երկար ճանապարհը, ինչը Հ.Յ.Դաշնակցութիւնը ձեւակերպել է իր հանգրւանային ռազմավարութեան մէջ։ Իսկ եթէ Ռաֆայէլ Իշխանեանը համարում է, որ այդ ճանապարհը մենք պէտք է անցնենք Թուրքիայի, Ադրբեջանի և Վրաստանի հետ ձեռք-ձեռքի տւած, լաւ կը լինի, որ նա իջնի իր փայտէ ձիուց և զբաղւի «ժամանակակից հայերէնի մակբայներ»ով և

կամ էլ «Բակունցի լեզւական արուեստ»ով, նամանաւանդ, որ եկող տարւայ - Մարտի 9ին տօնւելու է Իշխանեանի 70ամեակը և թող այդ առիթով արտասանւեն միայն ջերմ խօսքեր։ Իսկ եթէ նա լեզւաբանութեան փոխարէն շարունակի զբաղւել քաղաքական հարցերով, որոնցից գաղափար չունի, ջերմ խօսքերի փոխարէն նա ստիպւած կը լինի լսել նաեւ որոշ դառն ճշմարտութիւններ, որոնցից ամենակարեւորը այն իմաստութիւնն է, ըստ որում ամէն մարդ, եթէ ուզում է ծառայել իր ազգին, պէտք է զբաղւի իրեն վերաբերող գործերով։

1991

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Դոկտ. Է. Յովհաննիսեան

Ստորեւ կը ներկայացնենք ազգային բարոյականութեան մասին ապրումով, տառապանքով գրուած այս յօդուածը, որուն հեղինակին համար ազգը ամէն ինչ է, հիմնական այն արժէքն է, որուն համար պատրաստ է եղած զոհաբերելու ամէն ինչ և զոհաբերած է ամէն ինչ:

Այս օրերուն, երբ ամէն կողմէ կը բարձրանայ ազգային գիտակցութեան, ազգային իրաւունքներու պահանջատիրութեան ալիքը, միաժամանակ ամէն կողմ միջոցներ ձեռք կ'առնուին, բացայայտ կամ ծածուկ ձեւերով, ներելի կամ աններելի միջոցներով, ազգային ձգտումները սանձահարելու, զանոնք իրենց սաղմին մէջ խեղդելու կամ անոնց ազատ արտայայտութիւնը արգիլելու համար, մինչեւ իսկ ազատ կոչուած աշխարհներու մէջ, սեփական ուժերուն վրայ յենելու ազգային քաղաքականութեան մը պահանջը, ներկայացուած այնպիսի տրամաբանութեամբ ու մօտեցումով, որ մեր աշխատակիցինն է, ներկայացուած՝ իր պայմանները ապրող ու սեփական ազգի ճակատագրով տառապող գիտնականի մը կողմէ, կրկնակի արժէք ունի:

ԽՄԲ.

Ազգ, որի բոլոր անդամները կրթւած են, կրօնապաշտ, քաղաքավարի, ազնիւ աշխատանքով ապահովում են իրենց կուշտ և բարեկարգ ապրուստը, չեն շահագործում միմեանց, ենթարկւում են իշխող օրէնքներին, օգտւում են աշխատանքի, մտքի, խղճի, խօսքի ազատութիւնից, առողջ են եւ այս բոլորի շնորհիւ՝ միանգամայն գոհ են իրենց հանգիստ եւ երջանիկ կեանքից: Արդեօ՞ք բաւական է այս ամէնը, որպէսզի այդպիսի մի ազգ իսկապէս քաղաքակիրթ համարւի եւ ծանր կացութիւն առաջացնող արտաքին հարւածներից լինի ապահովւած:

Կտրականապէս ո՛չ, որովհետեւ քաղաքակիրթ լինելու համար բաւական չէ լինել կուշտ, ազնիւ, քաղաքավարի և հաւատացեալ, դրա հետ միասին պէտք է լինել ազգասէր: Ուրիշ խօսքով, պէտք է ամբողջ սրտով սիրել ազգը, համարել իրեն ազգի անբաժանելի մասնիկ, ունենալ պարտքի զգացմունք դէպի ազգը և միայն այնտեղ որոնել իր անձի հասարակական էութիւնը: Դասակարգ, միութիւններ, կուսակցութիւն, մարդկութիւն՝ այս ամէնը ոչ մի համեմատութեան մէջ չի կարող մտնել ազգի հետ, որտեղ մարդը գտնում է իր հասարակական Եսը:

Ազգային ինքնագիտակցութիւնը մի այնպիսի վերաբերմունք է դէպի ազգը, որի շնորհիւ,

1. Մարդը հպարտ է՝ պատկանելիութեամբը իր ազգին։
2. Ջերմօրէն սիրում է ժողովուրդը և նրա աւանդոյթները։
3. Լաւ ճանաչում է ազգային նկարագրի հիմնական գծերը։
4. Ծանօթ է ազգի պատմական անցեալի հետ և լաւ պատկերացնում է նրա ներկայ վիճակը։
5. Պատկերացնում է ազգի ապագայ զարգացման ուղիները։
6. Փիլիսոփայօրէն գիտակցում է իր ազգային զգացմունքի բարոյականութիւնը և համամարդկային էութիւնը։

Բոլոր այս հարցերի զարգացումը կազմում է ազգային գիտելիքների հիմքը։ Այս յօդւածում մենք ուզում ենք կանգ առնել միայն վերջին կէտի վրայ, քանզի համարում ենք այն չափազանց կարեւոր։ Կարեւորութիւնը պայմանաւորւած է նրանով, որ վերջին ժամանակներս ապազգային գաղափարները և քաղաքականութիւնը սկսել են իրենց սպիտակ ազգաձուլման եղեռնը։ Հայ ժողովրդի համար այս եղեռնի վտանգը կարող է դառնալ օրհասական։

Այն փաստը, որ բնութեան ներդաշնակ միասնականութիւնը պահպանւում է յաւերժ, խօսում է նրա մասին, որ զարգացումը ընդհանրապէս տեղի է ունենում ոչ միայն հակասութիւնների պայքարի շնորհիւ, այլ շնորհիւ նաեւ մի ուրիշ սկզբունքի։ Այդ սկզբունքը ներդաշնակութիւնն է, համաձայնութիւնը, խաղաղութիւնը. ոչինչ չի ծնւում եւ ոչինչ չի ոչնչանում առանց այդ սկզբունքի մասնակցութեան, սկզբունք, որը դրսեւորւում է բնութեան հաւասարակշռութեան միջոցով։

Այդ սկզբունքը գուշակել էր դեռեւս Հերակլիտը իր յայտնի «Նետի եւ քնարի» տեսութեան մէջ։ Այդ սկզբունքը մարքսիստների մօտ յարգանք չի վայելում, քանզի դրանով դժւար է բացատրել դասակարգային պայքարը, դա տանում է դէպի սէր եւ խաղաղութիւն։ Զարմանալի չէ, որ այդ սկզբունքը Հերակլիտի մօտ մարքսիստները չնկատեցին։ Բայց չնկատեց այն նաեւ Հեգելը եւ նոյնիսկ Լասսալը։ Մինչդեռ արդէն Պղատոնի մօտ մենք գտնում ենք այդ սկզբունքի իրականացումը քաղաքական ասպարէզում։ Տիեզերային ներդաշնակութիւնը բացարձակ ճշմարտութիւն է, դրանով իսկ՝ անկախ է մարդու կամքից։

Ինչպիսի՞ տեղ է գրաւում այդ ներդաշնակութեան մէջ ազգը, որպէս բնական **կատեգորիա**։ Արդեօք մարդկութեան բազմազգ կառուցւածքը ընդհանուր ներդաշնակութեան մի կարեւոր մասնիկը չէ՞։ Եւ արդեօ՞ք ազգապահպանման գործը չունի՞ բնութեան հաւասարակշռութիւնը պահպանելու կարեւորութիւն։

Նախ եւ առաջ հարկաւոր է պարզել, թէ հանդիսանո՞ւմ է արդեօք ազգը իւրօրինակ իրականութիւն, կենցաղի յատուկ բնագաւառ։

Դարերից ի վեր, փիլիսոփայութեան մէջ փոփոխական յաջողութեամբ պայքարում են երկու ուղղութիւն, այսպէս կոչւած **սինգուլիարիզմը** եւ **ունիվերսալիզմը**։ **Ունիվերսալիզմ**ի շարքին են դասւում Պղատոնի և Արիստոտելի մտածողութիւնը։ Ըստ Պղատոնի, հասարակութիւնը նմանւում է մարդուն, որը ունի իր ներքին ներդաշնակութիւնը և հաւասարակշռութեան առանձնայատուկ օրինաչափութիւնները։ Արիստոտելի տեսակէտով՝ ոչ թէ հասարակութիւնն է առաջանում մարդուց, այլ, ընդհակառակը, մարդը առաջանում է հասարակութիւնից։ Մարդը հասարակութիւնից դուրս անհնարին է, ճիշտ այնպէս, ինչպէս որ կենդանի ձեռքը՝ առանց մարմնի, որին պատականում է։

Սակայն, արդէն **անտիկ** դարաշրջանում յղանում է հակառակ մտածողութիւնը՝ **սինգուլիարիզմը**։ Այդ տեսութիւնը ամփոփ ձեւով արտայայտւած է Էպիկուրի և իր աշակերտների ուսմունքում։ Նրանց համար հասարակութիւնը ոչ այլ ինչ է, քան մարդկանց կամաւոր պայմանագրի արդիւնք։ Այս երկու ուղղութիւններն էլ կառուցւում են **անձ** և **հասարակութիւն** հասկացողութիւնների հակադրութեան վրայ։ Սակայն խնդիրը կը ստանար աւելի պարզ տեսք, եթէ **ազգ** հասկացողութիւնը այդ երկու հասկացողութիւնների միջեւ համարւէր։

Յիրաւի, ազգային ընդհանրութիւնը ստեղծւում է ոչ պայմանագրով եւ ոչ էլ կանոնադրութիւնով։

Ազգը և իր հոգեբանութիւնը ծնունդ են առնում ինքնաբուխ, որպէս բնական երեւոյթ։ Ի՞նչպէս կարելի է, օրինակ, պայմանաւորւել ընդհանուր լեզւի մասին։ Չէ՞ որ այդ պայմանաւորւածութեան համար արդէն պահանջւում է ունենալ ընդհանուր լեզու։ Կամ ո՞վ կարող է պայմանաւորւել սովորոյթների, ճաշակների, կրքերի, դիմագծերի մասին։ Մարդիկ չեն ընդունւում ազգի մէջ, նրանք ծնւում են արդէն պատկանած ազգի մէջ, ժառանգելով նրա ամբողջ պատմական անցեալը։

Ազգը կարելի է տարբեր ձեւի դաստիարակել, ստիպել ենթարկւելու այս կամ այն կարգերին, բայց միայն այն սահմաններում, որտեղ ազգը չի կորցնում իր էութիւնը։ Բռնակալութիւնը, ծայրայեղ դէպքում, կարող է առաջացնել ազգի համար մահ, բայց ոչ կեանք՝ նոր պայմաններում։ Այսպիսով, ազգը ներկայացնում է իրենից մի իրականութիւն, որը անմիջականօրէն կապւած է բնութեան սկզբնապատճառի հետ, դրանով իսկ հանդիսանալով բնական ներդաշնակութեան մասնիկ։ Իսկ ազգերը իրենք, կամաւոր հիմունքների վրայ, կազմում են աւելի մեծ հասարակական համախմբւածութիւններ։ Հետեւաբար, հասարակութեան մէջ զուգահեռաբար գործում են վերը նշւած երկու սկզբունքները՝ թէ՛ **սինգուլիարիզմը** և թէ **ունիվերսալիզմը**։ Սակայն կարող է առաջանալ կասկած,

թէ արդեօ՞ք ազգային բազմազանութիւնը, ազգային ներդաշնակութիւնը չի ներկայացնում իրենից ժամանակաւոր անհրաժեշտութիւն մարդկութեան զարգացման ճանապարհին: Արդեօք չի՞ վերանայ ապագայում մարդկութեան ազգային կառուցւածքը և, եթէ դա այդպէս է, որքանո՞վ է իմաստաւորւած այսօր ազգային պայքարը: Այս հարցերը կարող են առաջանալ միայն բաւականին տարածւած, բայց սխալ այն տեսակէտի շնորհիւ, որը պատմական զարգացման մէջ տեսնում է մի ինչ որ վերջնական նպատակ:

Փիլիսոփայութեան այդ ուղղութիւնը պատմական զարգացումը դիտում է իբրեւ միայն նպատակին հասնելու մի միջոց, այլ ոչ թէ ինքը իր մէջ արժէք ունեցող մի ընթացք: Այդ տեսակի պատմութեան փիլիսոփայութիւնը հիմնւում է «յառաջադիմութիւն» հասկացողութեան վրայ: Նա համարում է, որ մարդկութիւնը միշտ գտնւում է յառաջընթացքի մէջ և շարժւում դէպի իդէալական կատարելագործութիւն: Իսկ բոլոր պատմական դարաշրջանները այլ բան չեն, քան մէկը միւսին յաջորդող փուլեր այդ ճանապարհին: Սրանում է կայանում այն առաջին կանոնաւոր պատմական փիլիսոփայութեան իմաստը, որը հռչակեց գերմանացի Հերդերը: Այդ գաղափարի զարգացումը բաւական ահաւոր չափերի հասցրեց Հեգելը, իսկ նրանից էլ ընդօրինակեց Մարքսը:

Մարքսը պատմական բոլոր դարաշրջանները գնահատում է արտադրութեան լարւածութեան տեսանկիւնից. ստրկական տնտեսութիւնը արտադրում է աւելի լաւ, քան նախնադարեան ժամանակաշրջանը, հետեւաբար նա աւելի յառաջադէմ է:

Այդ տեսակէտից աւատապետութիւնը (**ֆէոդալիզմ**) աւելի յառաջադէմ է, իսկ նրանից էլ աւելին՝ **կապիտալիստ**ականը: Եւ ամենակատարելագործւածը կոմունիստական հասարակարգն է, որտեղ աշխատաւորը աշխատում է իր համար և ոչ թէ **կապիտալիստ**ի:

Այստեղից առաջ է գալիս զարգացմանը նպաստող մի թեզ. արտադրիր ինչքան կարող ես շատ, մնացածը կը ստացւի ինքնըստինքեան: Այս տեսակէտը քարոզող փիլիսոփաների հիմնական սխալը կայանում է նրանում, որ նրանք պատմութիւնը դիտում են որպէս մի ժամանակաւոր ընթացք՝ մինչեւ եզրափակիչ կատարելութեան հասնելը: Այդ լոյսի տակ պատմութիւնը վեր է ածւում մի անմիտ, անվերջ փոփոխութիւնների շարքի: Մինչդեռ պատմութեան բուն փիլիսոփայութիւնը կրում է այլ բնոյթ: Պատմութիւնը արտայայտում է մարդկութեան հոգեկան միասնականութիւնը: Ճիշտ այնպէս, ինչպէս որ մարդու կենսագրութիւնը ոչ թէ նրա կեանքի ճանապարհին է դէպի կատարելագործւած ծերութիւնը, այլ նրա անձի ընկալումն է, անձի էութեան բացայայտումը, պատանեկութիւնից դէպի ծերութիւն տանող ճանապարհի վրայ: Այն, ինչ որ տւեց մարդկութեանը հին յունական մշակոյթը, մի՞թէ կարելի է բացատրել

պարզապէս ստրկատիրական հասարակարգով, որի մէջ ապրում էր այդ ժողովուրդը։ Ոչ. այդ ժողովրդի առանձնայատուկ տաղանդը, նրա հոգեկան հարստութիւնը ապահովեց նրան մարդկութեան պատմութեան մէջ այնպիսի մի տեղ, որպիսին մինչեւ հիմա էլ չունեցան այլ ժողովուրդներ, իրենց արտադրական ուժերի թէկուզ և աւելի բարձր զարգացում ունենալով հանդերձ։ Մի՞թէ կարելի է յոյների պատմական այդ փուլը անտեսել, համարելով այն ժամանակաւոր **էտապ** իր պատմական ճանապարհին։ Իսկ գուցէ հէնց այդ փուլը նրա ամենակատարեալ և կարեւոր շրջա՞նն էր։ Մարդկութեան զարգացման բոլոր դարաշրջաններն էլ ինքնին անհրաժեշտ և կարեւոր են։ Եթէ ճանապարհը տանում է բնական ներդաշնակութեանը և եթէ այդ ներդաշնակութիւնը տիեզերքի զարգացման վերջն է, ապա արդարացած է ամբողջ ճանապարհը, նրա բոլոր փուլերը, թէ՛ ոչ-կատարեալ սկիզբը և թէ կատարեալ վերջը։ Այդ իսկ պատճառով անբարոյական պէտք է համարել բոլոր այն ձգտումները, որոնք փորձում են, որքան հնարաւոր է արագ, անցնել «ժամանակաւոր» բազմազգային ներդաշնակութեան փուլը։ Այդ ձգտումները անբարոյական են և նողկալի, անկախ նրանից, թէ որի՞ միջոցով են կատարւում, սպիտակ եղեռնի՞, թէ՞ ազգաձուլման միջոցով։

Երկու դէպքում էլ տիեզերական ճարտարապետութիւնից դուրս կ'ընկնի մի օղակ և կը տանի իր հետ գեղեցկութեան այն ձեւը, որը բնորոշ էր միայն ու միայն իրեն։ Ոչ մի կասկած չկայ նրանում, որ մարդկութեան զարգացումը ոչնչացնում է ազգային պատնէշները, վերացնում է ազգային սահմանափակութիւնը և առաջացնում ազգերի տնտեսական մերձեցում մէկ մշակոյթի սահմաններում։ Մարդկութեան զարգացումը պահանջում է ազգերի համագործակցութիւն։ Բայց մի՞թէ համագործակցութիւնը նշանակում է միաձուլում։ Միաձուլման գաղափարախօսութեան նմուշ կարող է ծառայել, լի ներքին հակասութիւններով, մարքսիստական ուսմունքը։ Այդ գաղափարախօսութիւնը ազգը, որպէս ինքնուրոյնութիւն, հերքող **ինտերնացիոնալիզմն** է։

Ըստ իր էութեան, մարքսիզմը ձգտում է **պրոլետար**ական **ինտերնացիոնալիզմի**, այլ ոչ թէ ազգերի համագործակցութեանը։ Ազգերի միութեան գաղափարը բոլշեւիկները արհեստականօրէն կցեցին մարքսիզմին, որից դա ոչ մի կերպ չի հետեւում։ Կոմունիստները վերջին հաշւով ուզում են անձազրկել բոլոր ժողովուրդներին, խլել նրանցից իրենց ուրոյնութիւնը։ Բայց հիանալի կերպով հասկանալով ազգային ձգտումների ուժը, նրանք քաշեցին ազգերը «եղբայրական ընտանիքի» թակարդը, որպէսզի հետագայում բոլորին խուզեն մի ընդհանուր **ինտերնացիոնալ** սանրւածքով։ Եւ պատահական չէ, որ վերջին ժամանակներս Խորհրդային Միութիւնում բաւականին գործօն փորձեր են կատարւում բազմազգ խորհրդային հասարակութեան համար օրինականաց-

նելու «խորհրդային ժողովուրդ» հասկացողութիւնը: Բայց համագործակցութիւնը ամենեւին չի նշանակում փոխադարձ ձուլում: Իսկական **ինտերնացիոնալիզմը** հնարաւոր է միայն ազգերի համատեղ աշխատանքի շնորհիւ, առանց ժխտելու նրանց ինքնուրոյնութիւնը, առանց թուլացնելու ազգային գիտակցութիւնը: Ժամանակակից ռուս գրող Վլադիմիր Սոլոուխինը իր «Խոտ» վերնագրով գրքում գրում է այսպիսի մի բան. «**Կարող է դուր գալ այս համարձակ գաղափարը՝ վարել բոլոր դաշտերը և ցանել այնտեղ մէկ կուլտուրական խոտ, և կը սկսւի տասնեակ ու հարիւրաւոր խոտերի տարբեր տեսակների ոչնչացումը, որոնք տալիս են հողին, աշխարհին և, ի հարկէ, մեզ՝ մարդկանց, ինչ որ թանկարժէք բան, ուրիշների տւածից տարբեր: Եւ կը խախտւի բնութեան բնական հաւասարակշռութիւնը և կը սնանկանայ այն, իսկ մենք էլ նրա հետ: Էլ չխօսենք ոչ պակաս նշանակութիւն ունեցող բանի մասին, ինչպիսին է մեզ շրջապատող բնութեան գեղեցկութեան կորուստը**»:

Սոլոուխինի այս յուզիչ մտահոգութիւնը խոտերի նկատմամբ վատ չէր լինի փոխանցել նրանց, որոնց մէջ նոյնպէս յղացւել է մի համարձակ գաղափար՝ վարել բազմազգ մարդկային դաշտը և լցնել ամբողջը մէկ **կուլտուր**ական ազգով:

Վատ չէր լինի յիշեցնել Խորհրդային Միութեան ղեկավարներին, որ ապագայ (ըստ իրենց հաւատքի) համաշխարհային կոմունիստական հասարակարգում միջազգային լեզւի յատկանութիւն կ'ունենայ երեւի չինարէնը և ռուսները կ'ազգաձուլւեն ճիշտ այնպէս, ինչպէս որ փորձում են վարւել ուրիշ ազգերի նկատմամբ:

Ազգաձուլումը յանցագործութիւն է մարդկութեան նկատմամբ, իսկ ազգապահպանումը համամարդկային խնդիր է: Այդուհանդերձ, դժբախտաբար, պատմական իրականութիւնը ցոյց է տալիս, որ ազգերը ստիպւած են ինքնուրոյնօրէն լուծել իրենց ազգային խնդիրները: Դժբախտաբար, յաճախ, անտարբեր մարդկութեան աչքերի առջեւ, բռնութեան և ոչնչացման են ենթարկւում ազգեր, որոնք միամտօրէն կարծում են, թէ պայքարը կարելի է փոխարինել արդար պահանջներով: Ազգային պահանջների արդարութիւնը երբեք չի կարող հիմք ծառայել նրանց բաւարարման համար: Երբ Պարսկաստանում անգլիական նաւթային ընկերութիւնները ցանկացան առեւտուր սկսել երիտասարդ խորհրդային իշխանութեան հետ, առաջացան բարոյական կարգի առարկութիւններ, թէ կարելի՞ է արդեօք առեւտուր անել բոլշեւիկների հետ: Լոնդոնը պատասխանեց Լ. Ջորջի թեւաւոր խօսքերով, թէ «առեւտուր կարելի է անել նոյնիսկ մարդակերների հետ»: Երիտասարդ, խորհրդային իշխանութիւնը իր քաղաքականութեան մէջ նոյնպէս չէր ղեկավարւում բարոյական չափանիշներով: Մոսկովեան ճառերից մէկում Լենինը ասում էր. «**Կնքելով խա-**

ղաղութեան պայմանագիրը, մենք դաւաճանում ենք Էստլանդիայի բանւորներին, Ուկրաինայի պրոլետարիատին և ուրիշներին: Բայց մի՞թէ եթէ զոհւում են մեր ընկերները՝ մենք էլ պէտք է զոհւենք նրանց հետ: Եթէ մեր ընկերները շրջապատւած են թշնամու ուժերով և ի վիճակի չեն դիմադրելու, մի՞թէ մենք պէտք է պայքարենք: Ոչ և նորից ոչ»:

Այդ ճառի մասին **պրոլետար**ական գրող Մաքսիմ Գորկին ասաց, որ դա ոչ թէ բանւոր դասակարգի քաղաքականութիւն է, այլ հին ռուսական Սուզդալեան քաղաքականութիւն: Գորկուն, որպէս գրողի, կարելի է ներել իր քաղաքական միամտութիւնը: Աւելի զարմանալի է Կաուցկու արտայայտութիւնը բոլշեւիկների քաղաքականութեան վերաբերեալ: Նա գրում է. «Կրեմլի արկածախնդիրները միաժամանակ ցանկանում են թէ՛ ստանալ **կապիտալիստ**ական փոխառութիւնը և թէ իրագործել համաշխարհային յեղափոխութիւնը: Փոխառութիւնը նրանք փորձում են ստանալ իրենց մսխւած դիւանագէտների՝ Ռակովսկիների և Կրասինների միջոցով, իսկ համաշխարհային յեղափոխութիւնը նրանց համար իրագործում են թուրքեստանցիները, որոնք չունեն ո՛չ գիտելիքներ և ոչ էլ խիղճ»:

Այս օրինակները գալիս են ապացուցելու, որ բոլոր ազգերը իրենց արդար ազգային պահանջները, դժբախտաբար, պէտք է ուղեկցեն սեփական պայքարով: Ազգասիրութիւնը, լինելով բարոյականութեան չափանիշ, չի կարող սահմանափակւել կրաւորական զգացմունքներով: Ազգասիրութիւնը գիտակցւած **ակտիւ** գործունէութիւն է: Այդ գործունէութիւնը հայ ժողովրդի համար պէտք է ուղղւած լինի միակ վերջնական նպատակի՝ ստեղծել ազգային պետականութիւն: Ոչ մի հայ բարոյական իրաւունք չունի խուսափելու այդ աշխատանքից: «Դէպի ազգային պետականութիւն» ձգտումի ձեւակերպումը, որպէս **կոնկրետ** ազգային վարքագիծ, կազմում է ազգային քաղաքականութիւնը:

Ազգային քաղաքականութիւնը պէտք է հիմնւի ազգային ուժերի վրայ, որոնց ուսումնասիրութիւնը պէտք է նախորդի քաղաքականութեան մշակմանը: Ազգային ուժերը ունեն բարոյական և **տեխնիկ**ական բնոյթ: Մեր դէպի Հայրենիքը, զոհաբերութիւն, պատրաստակամութիւն, հաւատարմութիւն ազգին, լեզու, ընտանեկան կացութիւնը, բնածին ընդունակութիւնները, աշխատասիրութիւնը, կարգապահութիւնը, ազգային հպարտութիւնը, աշխարհագրական վիճակը, թիւը, աճը, կրթութիւնը, տնտեսական վիճակը, միասնականութիւնը և շատ ուրիշ ազգային յատկանիշներ որոշում են ազգային քաղաքական ուժերի հզօրութիւնը:

Այս բաղկացուցիչ մասերի մանրակրկիտ ուսումնասիրութիւնը, բարձր գիտական մակարդակով, անյետաձգելի անհրաժեշտութիւն է: Այդ իսկ պատճառով, մեր ժողովուրդը պէտք է գտնի հնարաւորութիւն միասնական ուժերով

ստեղծելու հայ ազգային քաղաքագիտութեան **ինստիտուտ** (հաստատութիւն)։ Այդ **ինստիտուտը** խորը ուսումնասիրութիւնից յետոյ կարող է առաջարկել ազգային մի ընդհանուր **դոկտրին** (ուսմունք), մտածւած մինչեւ վերջ, մինչեւ ազգային պետականութեան ստեղծումը մեր պապենական հողերի վրայ։

1973

ԱԶԳԱՅԻՆ ՆԿԱՐԱԳՐԻ ԵՒ ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉԱՁԵՒԻ ԿԱՊԻ ՄԱՍԻՆ

Դոկտ. Է. Յովհաննիսեան

Ստեղծել կամ ամրապնդել ազգային պետականութիւնը՝ բոլոր ազգերի քաղաքական հիմնական ձգտումն է: Բոլոր ազգային շարժումների վերջին նպատակը ազգային ինքնավարութիւնն է, քանզի պետականութիւնը ազգային կազմակերպւածութեան միակ ձեւն է, որը ապահովում է ազգի յարատեւումը:

Բայց ո՞ր վարչաձեւը պէտք է տւեալ ազգի համար համարել լաւագոյնը: Միապետութի՞ւն, հանրապետութի՞ւն, համայնավարութի՞ւն կամ գուցէ ֆաշի՞զմ:

Այդ հարցի միակ ճիշտ պատասխանը հետեւեալն է,- Ամէն մի ազգ պէտք է ընտրի այնպիսի վարչակարգ, որը լաւագոյն ձեւով է համապատասխանում իր ազգային նկարագրին, առանց որեւէ կուսակցական աւանդոյթների և մանաւանդ առանց կուրօրէն ընդօրինակումի ուրիշ ժողովուրդների փորձը:

Իշխանութեան գլուխ միշտ պէտք է գան ազգի լաւագոյն ներկայացուցիչները, որոնք իրենց բնաւորութեամբ և ձգտումներով արտայայտում են ազգի էութիւնը, իսկ վարքագիծը հիմնւում է քաղաքական մտայնութեան վրայ: Ազգային նկարագրի միջոցով կարելի է որոշել, թէ որքանով տւեալ ազգը ունի քաղաքական մտայնութիւն:

«Ով աւելի մօտիկից կը ծանօթանայ յոյն մարդու հետ,- ասում էր Էնգելսը (շատ տարօրինակ է նրանից լսել այդպիսի խոստովանութիւն), - նա արագ կը համոզւի, թէ որքան զարգացած է այդ ժողովրդի մէջ քաղաքական իմաստը, որքա՛ն հաստատ է պտտւում նրա միտքը այդ կենտրոնի շուրջ»:

Պարզ է, որ այդ իմաստը արդիւնք չէր տնտեսական կեանքի, որը ստրկատիրական էր, այլ արդիւնք էր հելլենների բնաւորութեան առանձնայատուկ տաղանդի:

Մարդկութեան զարգացման պատմութեան համար ոչ պակաս նշանակութիւն ունէր, և շարունակում է ունենալ, ռուս ժողովրդի միապետական ոգին: Անձի պաշտամունքի բոլոր այն այլանդակ հետևանքները, որը այժմ վերագրւում են Ստալինին, հաւասարապէս պէտք է վերագրել նաև ռուս ժողովրդի բնաւորութեանը: Այդ ժողովուրդը Ստալինի կարիքը զգում էր և նա՛ նրան առաջ քաշեց: Ժողովրդին դուր չեկաւ խրուշչովեան ազատականացումը և նա նրանից հրաժարւեց: Ռուս ժողովրդի սրտին մօտ է միապետականութիւնը, բայց, ի հարկէ, իսկական միապետականութիւն, որը խղճի իշխանութիւն է:

Բայց դեռ Պղատոնը հասկացաւ, որ իդէալական միապետ անհնարին է գտնել: Ուստի իշխանութեան գլուխ միշտ կ'անցնեն Կրոմուելներ, Ստալիններ, Հիտլերներ: Քաղաքական ազատութիւնների ոչնչացումը Ռուսաստանում, որը կատարուեց բոլշեւիկների կողմից, ռուս ժողովուրդը, որպէս օրէնքապաշտ ժողովուրդ (բայց ոչ կարգապահ), չհամարեց այնքան մեծ դժբախտութիւն, ինչպէս շատերը մտածում են և ինչպէս փորձում են ներկայացնել արտասահմանի ռուսական շրջանակները: Ռուս ժողովրդի միապետական ոգու և բնաւորութեան շնորհիւ է, որ այդ ժողովուրդը զուրկ չէ մինչեւ այժմ էլ ռուս մեծապետական ձգտումներից: Տիրել աշխարհին՝ ռուսական հոգեբանութեան հիւանդութիւնն է: Այդ ժողովուրդը իր ամբողջ պատմական ճանապարհին, ինչպէս նաև բոլոր ժողովուրդները, հաստատ պահեց իր ազգային բնաւորութեան հիմնական գծերը: Ռուս ժողովրդի բնաւորութեան այդ առանձնայատկութիւնը նկատել էր դեռ Կարլ Մարքսը.

«Ռուսաստանի քաղաքականութեան մէջ,- գրում էր նա,- կայ մի գիծ, որը ամենից աւելի է աչքի ընկնում. ոչ միայն նպատակները, այլեւ նոյնիսկ նպատակին հասնելու ձեւերը միանման են աւանդաբար… Աւելի քան 800 տարի սրանից առաջ Սվեատոսլաւը՝ այն ժամանակւայ հեթանոս Ռուսաստանի մեծ իշխանը յայտարարեց իր ենթականերին, որ ոչ միայն Բուլղարիան, այլեւ յունական կայսրութիւնը Եւրոպայում՝ Բոհեմիայի և Հունգարիայի հետ պէտք է ենթարկւեն Ռուսաստանին: Սվեատոսլաւը զաւթեց Սիլեստրիան և սպառնում էր Կոնստանդնուպոլսին 987 թւականին, ճիշտ այնպէս, ինչպէս Նիկոլայը 1829 թւին»: Յետոյ Մարքսը աւելացնում է. «Որքան ծիծաղելի պէտք է թւար այն միտքը, թէ ֆրանսիական քաղաքականութիւնը հետեւում է Ռիշելիէոյի կամ Մեծն Կարոլոսի ժառանգութեանը»:

Խեղճ Մարքս, այն ժամանակ նա դեռ չգիտէր, թէ այդ ժողովուրդը որքան ծիծաղելի վիճակի մէջ կը դնի հետագայում հէնց իրե՛ն՝ պահպանելով անսասան այն ուսմունքները, որոնք ինքը հռչակել էր 120 տարի առաջ: Նա դեռ չգիտէր, թէ ինչ անէծք կը թափւի իր գլխին այն ամենի համար, ինչ ռուս ժողովուրդը արեց սեփական հայրենիքի հետ…

Ազգային նկարագիրը, ազգային բնաւորութիւնը չի կարելի սպառել միայն նրա մէկ կողմը նկարագրելով: Ազգի դէմքը կազմւում է բոլոր դիմագծերի միասնական տպաւորութեամբ, այլ ոչ թէ մէկ գծով՝ այս կամ այն վարչակարգի ցանկութեամբ: Կարելի՞ է արդեօք բացայայտել անձի էութիւնը, ելնելով նրանից, թէ ինչպէս է նա հայթայթում ապրուստի միջոցներ: Միթէ՞ կարելի է հասկանալ Քրիստոսի անձը, ելնելով նրանից, որ նա ատաղձագործ էր, Եակով Բեմէինը՝ նրա կօշկակարութիւնից, Պղատոնինը՝ նրա ստրկատիրութիւնից, Կոմիտասինը՝ նրա հոգեւորականութիւնից, իսկ Էնգելսինը՝ նրա **կապիտա-**

լիստ լինելուց: Ազգի միասնական կերպարը կարելի է որոշել ազգի վարքագծից:

Հայ ժողովուրդը, ունենալով վառ կերպով արտայայտուած անհատականութիւն, պատկանում է անիշխանական (**անարխիստ**ական) բնաւորութիւն ունեցող ժողովուրդների շարքին: Շատերը համարում են, որ ժողովրդի անիշխանական բնաւորութիւնը հասցնում է անկարգապահութեան, քաոսի, բայց դա այդպէս չէ: Պետականութիւն ստեղծելու համար, անիշխանական բնաւորութիւնը իսկապէս բացասական կարող է դառնալ, քանզի անիշխանութիւնը հէնց նշանակում է անպետականութիւն: Սակայն կարգապահութեան իմաստով, բնաւորութեան այդ գիծը բարձրագոյն օրինապաշտութեան արտայայտութիւն է: Մի ժողովուրդ, որը օժտուած է դասական անիշխանական բնաւորութեամբ, այնքան կարգապահ է, որ պետութեան կարիքը անգամ չի զգում:

Հասարակութիւնը ծնունդ է առել մեր կարիքներից, իսկ պետութիւնը մեր պակասութիւններից: Հայի համար բարձրագոյն օրէնքը՝ արդարութիւնն է: Ըստ Պրուդոնի, արդարութիւնը մարդկանց արժանապատուութեան փոխադարձ պահպանումն է, ինչպիսի գին էլ պահանջւի դրա համար: Նա հասարակական կեանքի հակասութիւնների կարգաւորիչը և այն առանցքն է, որի շուրջը պտտւում է քաղաքական աշխարհը:

Պետական միտքը հիմնւում է արդարութեան վրայ նոյնիսկ այն ժամանակ, երբ գործում է նրա դէմ: Այն ամէնը, ինչ գիտի մեր իմաստութիւնը արդարութեան մասին, պարունակւում է Աւետարանի խորհրդի մէջ. «Մի արա մերձաւորիդ այն, ինչ որ չես ցանկանում որ ուրիշները քեզ անեն»:

Եւ եթէ մեր ժողովրդի անիշխանական բնաւորութիւնը երբեմն արտայայտւում է ծայրայեղ, անընդունելի ձեւով, դա միայն նրանից է, որ ազգը կորցրել է խղճի կրօնական իմաստը: Իրաւունքը ինքնըստինքեան կրօնական հասկացողութիւն է: Երկրային օրէնքների արհամարհանքը քրիստոնէական հասկացողութիւն է: Յիսուսը չէր հերքում օրէնքը, բայց դրանում չէր որոնում բարոյականութեան աղբիւրը: Այդ աղբիւրը տեղադրւած էր մարդու մէջ, և արտաքին իրաւաբանական օրէնքները նրան չէին հասնում: Տոլստոյի, ինչպէս նաև անիշխանութեան բոլոր գաղափարախօսների անիշխանութիւնը անմիջականօրէն հիմնւում էր Նոր Կտակարանի վրայ: «Մի դատապարտէք և չէք լինի դատապարտւած»: Քրիստոնէական Աստուծոյ թագաւորութիւնը ունի այն առանձնայատկութիւնը, որ նա մեր մէջ է:

Մարդկութեան կեանքը կատարելագործելու համար պէտք չէ կառուցել նոր պետութիւններ, նոր օրէնսդրութիւններ, նոր հասարակարգեր: Պէտք է սկսել մարդու անձի կատարելագործութիւնից: Քրիստոնէութիւնը այդ հարցը դրեց այնքան վճռականօրէն, որ գերազանցեց է՛ւ Սոկրատին, է՛ւ Զենոնին, է՛ւ

Էպիկուրին, որոնք այս կամ այն չափով տուրք էին տալիս նաեւ հակառակ տեսակէտին։ Քրիստոնէութիւնը քաղաքականութեանը վերաբերւում էր սառը անտարբերութեամբ. «Տէ՛ք կեսարինը կեսարին, իսկ Աստծուն՝ Աստուծոյ»։

Քրիստոնէութիւնը դեռ պէտք է երկար ճանապարհ անցնէր, մինչեւ որ յանգէր Հռոմի կայսրութիւնը արդարացնելուն։ Սակայն, դրանից յետոյ էլ քրիստոնէութիւնը միշտ մնաց անսպառ աղբիւր Գուդունիի, Պրուդոնի, Բակունինի, Կրոպոտկինի և անիշխանութեան ուրիշ գաղափարախօսների համար։ Դրա համար՝ համարելով հայ ժողովրդի բնաւորութիւնը անիշխանական, աւելի ճիշտ կը լինէր անւանել այն՝ քրիստոնէական։ Պատահական չէ, որ հէնց հայերը առաջինն էին, որ հռչակեցին քրիստոնէութիւնը պետական կրօն։

Խորհրդային Հայաստանի պայմաններում, հայը սովորել է շրջանցել բոլոր օրէնքները։ Նա շրջանցում է օրէնսդրութիւնը, քրէական մարմինները, դատախազութիւնը, վարչական օրգանները, կուսակցութիւնը և մնացած բոլոր մարմինները, որոնք կոչուած են հսկել օրինականութիւնը։ Խորհրդային հայը այսօր կարող է գնել **դիպլոմ**, գրանցել ուզած քաղաքում, ազատուել զինւորական ծառայութիւնից և նոյնիսկ ձեռք բերել տեղեկանք՝ թէ ինք ան**նորմալ** է։ Թւում է, թէ այդ պայմաններում պէտք է որ երևան գար մի սարսափելի քաոս։ Սակայն այդպէս չէ։ Հանրապետական կարգապահութիւնը ոչ միայն յետ չի մնում ուրիշներից, այլ նոյնիսկ շատ հարցերում շատ աւելի բարձր է։ Եւ դրա միակ պատճառը այն է, որ ազգի ընդհանուր վարքագիծը որոշւում է բարոյական սկզբունքներով և ոչ թէ խորհրդային օրէնսդրութեամբ։

Մնում է միայն զարմանալ, թէ ի՞նչպէս այդպիսի իւրայատուկ բնաւորութիւն ունեցող մի ժողովուրդ կարող էր տարուել համայնավարական գաղափարներով և ազգային շահերը զոհել յանուն դասակարգային պայքարի կամ որեւէ ուրիշ կուսակցական շահերի։ Եւ նոյնիսկ հիմա, երբ բոլոր յեղափոխական փոթորիկները հանդարտուած են և մենք պարզ տեսնում ենք Հայրենիքի յօշոտուած դիակը, դարձեալ կան մարդիկ, որ, կտրուած ազգից, համայնավարութիւն են քարոզում, բոլորովին հաշւի չառնելով ազգի իւրայատուկ և գեղեցիկ նկարագիրը։

1973

ՄԷԿ ԺՈՂՈՎՈՒՐԴ՝ ԵՐԵՔ ՈՒ ԿԷՍ ՍՓԻՒՌՔ

Դոկտ. Է. Յովհաննիսեան

Հրատարակելով մեր աշխատակից դոկտ. Է. Յովհաննիսեանի տոյն յօդուածը, ինչպէս ասկէ առաջ, ուրիշ առիթներով, նաև ներկայիս կը ներկայացնենք քաղաքական մտածողութիւններ, որոնք անպայման չեն պատկանիր Հ.Յ. Դաշնակցութեան, որուն օրգանն է «Ազդակ Շաբաթօրեակ»: Տեղ կու տանք մեր քաղաքական մտածողութենէ տարբեր մօտեցումներու, համոզուած՝ թէ հարցերու բազմակողմանի քննութիւն մը միշտ կրնայ օգտակար ըլլալ հանրային, հասարակական քաղաքական մտածողութեան զարգացումին ու հիմնաւորուած համոզումներ առաջացնելուն:

Կը բաժնենք արտայայտուած մտքերուն մեծ մասը: Հեղինակին հետ մենք եւս կը տառապինք երբ հարցը զգացումներուն կու գայ, եւ մենք եւս կը ձգտինք միշտ միա՛յն քաղաքական պաղարիւն մտածողութեամբ առաջնորդուիլ: Սակայն չենք կրնար չընդգծել այստեղ, թէ կարգ մը առաջարկներ, կամ հաստատումներ չեն բխիր միայն պաղ քաղաքական դատումներէ և իրականութեանց առարկայական ընդունումէն, այլ, անխուսափելիօրէն, կը պարունակեն նաև ցանկութեանց բաժին մը:

Եւ դեռ կը մնայ ցանկալիին ու կարելիին տարբերութեանց հարցը, որ նոյնպէս քննելի պէտք է ըլլայ, մասնաւորաբար, օրինակի համար կը յիշատակենք միայն, Թուրքիոյ մէջ ապրող հայութեան Թուրքիայէն ամբողջովին արտագաղթելու հարցը:

Յամենայն դէպս դոկտ. Է. Յովհաննիսեանի մտածումները կը համարենք չափազանց շահեկան, մանաւանդ որ ինք շատ աւելի մօտէն ծանօթ է եղած առաջին Սփիւռքին, ու նոյնիսկ շատ մօտն է եղած կէս Սփիւռքին:

ԽՄԲ.

Հայ ժողովրդի դաժան պատմական ճակատագիրը, հարստացրեց նրա բառապաշարը մի նոր տխուր հնչող բառով՝ ՍՓԻՒՌՔ: Երանի թէ այդ հարստութեանը չարժանանայինք, բայց ինչ արած, արժանացանք:

Սփիւռքը այսօր մեր ժողովրդի համար քաղաքական իրականութիւն է: Այդ իսկ պատճառով Սփիւռքի անելիքները կարեւորագոյն տեղ են գրաւում հայ ազգային քաղաքականութեան մէջ: Արդեօ՞ք Սփիւռքը այնպիսի մի հաւաքական միասնականութիւն է, որի մասին կարելի է ասել, թէ նա ունի մէկ ընդհա-

նուր անելիք, լուծելու մէկ ընդհանուր խնդիր: Արդեօ՞ք նրա տարբեր հատուածները չպէտք է լուծեն տարբեր խնդիրներ: Կամ գուցէ Սփիւռքի հանդէպ հատուածների գաղափարն անգամ անընդունելի է: Այս հարցերի պատասխաններին վերաբերեալ է, որ ուզում եմ յայտնած լինեմ իմ անձնական կարծիքը: Սփիւռքի բոլոր այն հատուածաբաժանումները, որոնք կապուած են աշխարհագրական դիրքի, տնտեսական վիճակի կամ երկրորդ լեզուի ընդհանրութեան հետ՝ անընդունելի են: Ո՛չ գերմանախօս, կամ անգլիախօս հայութիւն հասկացողութիւնը, ո՛չ հայ **բուրժուա** կամ **պրոլետարիատ** հասկացողութիւնը, ոչ էլ Եւրոպայի կամ Ասիայի հայ հասկացողութիւնը չեն կարող աղբիւր ծառայել ընդհանուր ազգային քաղաքական **դոկտրին** մշակելու համար: Ընդհակառակն, քաղաքական գիծն է, որը կախուած է քաղաքական պայմաններից, որ պէտք է Սփիւռքը հատուածների բաժանելու աղբիւր ծառայի: Ելնելով այս տեսակէտից՝ Սփիւռքը այսօր կարելի է բաժանել երեք ու կէս հատուածի:

Առաջինը՝ Ներքին Սփիւռք, կամ ամբողջ այն հայութիւնը, որ ապրում է Խորհրդային Միութեան մէջ, Խորհրդային Հայաստանից դուրս:

Երկրորդը՝ Արտաքին Սփիւռք, այսինքն Խորհրդային Միութիւնից դուրս տարբեր երկրներում ապրող հայութիւնը:

Երրորդը՝ Թուրքական Սփիւռք, այսինքն Պոլսում և Թուրքայի ուրիշ քաղաքներում կենտրոնացած հայութիւնը:

Եւ վերջապէս կէս Սփիւռք, այսինքն կիսով չափի համապատասխանող Սփիւռք հասկացողութեանը, ես համարում եմ Ղարաբաղի և Խորհրդային Միութեան ուրիշ հայապատկան հողերի վրայ ապրող հայութիւնը: Այն հանգամանքը, որ նրանք ապրում են մեր պապենական հողերի վրայ բացառում է նրանց Սփիւռք համարելուց. սակայն այն փաստը, որ նրանք գտնւում են օտար իշխանաւորների ղեկավարութեան տակ, գալիս է ապացուցելու, որ նրանք էլ պանդուխտ են:

Այսպիսով, մէկ ժողովուրդ՝ երեք ու կէս Սփիւռք:

Ինչո՞ւմն է կայանում այդ ամէն մի հատուածի ազգային և քաղաքական վարքագծի ընդհանրութիւնը:

Առաջին հատուածի խնդիրը ամենապարզն է: Նա պէտք է ամբողջովին տեղափոխուի Խորհրդային Հայաստան: Դա պէտք է արւի որովհետեւ.

1.- Դա ազգաձուլումից խուսափելու առաջին միջոցն է: Հայաստանից դուրս հայկական դպրոցների վերացնելը և այն ապազգայնական քաղաքականութիւնը, որ տարւում է Խորհրդային Միութիւնում, անհնարին են դարձնում այդ Սփիւռքում որեւէ ազգապահպանման գործ ձեռնարկել: Օտար միջավայրում, առաջին իսկ սերունդը բոլորովին չի տիրապետում հայերէնին և լրիւ ռուսացած է:

2.- Օտար միջավայրում հայը կորցնում է իր ազգային նկարագրի հիմնական գծերից մէկը, բարձր անհատականութիւնը: Ձեռք է բերում բաւականին տհաճ յարմարուողականութիւն, որը վայել չէ մեր հերոսական անցեալին և վնասակար է գալիք յեղափոխական ապագայի համար: Ներքին Սփիւռքում հայը համակերպւել է երկրորդականութեան հետ: Նա գիտի, որ իր հիմնական պաշտօնը տեղակալի պաշտօնն է, որի ուսերի վրայ են սովորաբար ընկնում հիմնական աշխատանքները: Եթէ այնուամենայնիւ նրան յաջողւում է դառնալ առաջին դէմք, ապա դա այն բանի շնորհիւ է, որ նա մի քանի անգամ աւելի ընդունակ է մրցակիցներից և ստիպւած է շատ աւելի ջանքեր գործադրել:

3.- Օգտւելով համայնավարական **տերմին**աբանութիւնից, կարելի է ասել, որ ներքին սփիւռքահայութեան կողմից ստեղծւած յաւելեալ արժէքը ոչնչով չի աւելացնում ազգային հարստութիւնները: Մէկ միլիոնից աւելի հայութիւնը, Հայաստանից դուրս ստեղծում է ահաւոր յաւելեալ արտադրանք, բայց այդ գումարներից չի կառուցւում ոչ մի դպրոց, ոչ մի թատրոն, չի հրատարակւում ոչ մի թերթ և չի ստեղծւում ոչ մի ազգային արժանիք: Սակայն նոյն այդ հայերը, օգտւում են ազգային սնունդից, որի ստեղծումը ընկած է հայրենիքի փխրուն ուսերի վրայ:

Էլ չխօսենք այն մասին, որ այդ հայութիւնը բացի յաւելեալ արժէքից ուղղակի ստեղծում է հիմնական արժէքներ:

4.- Ներքին Սփիւռքից հայերի վերադարձը հայրենիք, Խորհրդային Հայաստանը կը դարձնի Անդրկովկասի ամենամարդաբնակ հանրապետութիւնը: Այդ հանգամանքը կ'աւելացնի հանրապետական բիւջէն, կը բարձրացնի գիտութեան, տնտեսութեան, մարմնակրթութեան և այլ բնագաւառների մակարդակը: Բացի դրանից ներգաղթը կը նպաստի հայապատկան հողերի միացմանը հայրենիքին: Դժբախտաբար մեր ժողովրդի մէջ տարածւած է այնպիսի մի մտայնութիւն, թէ իբր գտնւելով Մոսկւայում կամ Կիեւում հայրենիքի համար կարելի է լինել աւելի օգտակար, քան ապրելով հայրենիքում: Սխալ է այդ կարծիքը: Դրանով միայն արդարանում են նրանք, ովքեր պարզապէս չունեն այն պարտքի զգացմունքը, որով օժտւած էին Թամանեանը, Սարեանը, Սպենդիարեանը, Իսահակեանը և շատ ուրիշ ազգի բախտով տառապող մտաւորականներ: Բացառութիւն կարող են կազմել միայն նրանք, ովքեր Հայաստանից դուրս գրաւում են շատ բարձ պաշտօններ և այդ բարձր դիրքերից իսկապէս կարող են օգտակար լինել հայրենիքին:

Սակայն Միկոյեանի, Բաղրամեանի, Սիսակեանի, Իսակովի և շատ ուրիշների փորձը ցոյց է տալիս, որ նրանց հետ ազգը չի կարող կապել իր յոյսերը: Իսկ յաճախ, մեծապաշտօն հայերը իրենց դիրքերում լինում են նոյնիսկ աւելի վնասակար քան օտարները: Վախենալով, որ նրանց կը մեղադրեն ազգայնա-

կանութեան մէջ նրանք ոչ միայն չեն օգնում հայրենիքին, այլ նոյնիսկ խանգարում են նրան ազգային շահերը Մոսկւայում պաշտպանելիս: Պատմութիւնը դեռ կը հանի իր վճիռը նրանց բոլորի նկատմամբ: Իսկ այսօր վճիռը պէտք է հանի ազգը:

Այսպիսով ներքին Սփիւռքի հիմնական ազգային վարքագիծը պէտք է լինի ներգաղթը դէպի հայրենիք: Ինչ մնում է քաղաքական վարքագծին, դա խորհրդային իշխանութեան փառաբանումն է և բոլոր պետական առաջադրանքների անվերապահօրէն կատարումը: Ազատ քաղաքական ասպարէզ Խորհրդային Միութեան մէջ չկայ և հայը չէ, որ այն պէտք է ստեղծի:

Երկրորդ հատուածը՝ Արտաքին Սփիւռքը, ունի բազմաթիւ խնդիրներ: Սակայն գլխաւորը այն է, որ ունենալով քաղաքականութիւն վարելու համար ազատ պայմաններ, նա պէտք է մշակի, գլխաւորի և իրագործի հայ ազգային քաղաքականութիւնը: Ես ունեցել եմ առիթ **«Ազդակ Շաբաթօրեակ»**ին յանձնելու «Քաղաքականութեան կառուցւածքի մասին» անունը կրող մի յօդուած, որի մէջ յայտնել եմ իմ կարծիքը, թէ ինչպիսի փուլերից է բաղկացած ընդհանրապէս քաղաքականութիւնը:

Քաղաքագիտական ուսումնասիրութիւններ, միասնականութիւն, դիւանագիտութիւն, ազգապահպանում, գործօն մարտական գործունէութիւն,- այս բոլոր քաղաքական հարցերի շուրջ խօսւել և խօսւում է այնքան շատ (դժբախտաբար աւելի շատ քան պէտք է), որ հազիւ թէ ինձ յաջողւի ձեւակերպել մի վերջնական քաղաքական **դոկտրին**, որի համար չունեմ ձեռքիս տակ համապատասխան տւեալներ, ո՛չ քաղաքական փորձ և ոչ էլ անհամեստութիւն: Սակայն որոշ հարցերի շուրջ ուզում եմ արտայայտւել: Արտաքին Սփիւռքի քաղաքական գործունէութիւնը պէտք է ծառայի մէկ նպատակի, ԱՋԱՏԱԳՐԵԼ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ԲՌՆԱԳՐԱԻՒԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՂԵՐԸ: Այդ հատուածը պէտք է ձեռնպահ լինի բոլոր այն գործողութիւններից, որոնք ուղղւած են Խորհրդային Միութեան դէմ: Դա ի հարկէ չի բացառում գաղափարական վէճերը, որը տարբեր կուսակցութիւններ, իրենց կուսակցական դիրքերից կարող են վարել:

Խօսքը սոսկ գործունէութեան մասին է: Շատերին կարող է թւալ, թէ լարել ամբողջ ուժերը Թուրքիայի դէմ և ստեղծել մեր պապենական հողերի վրայ մի հայկական օջախ, երկրորդ Հայաստան, կը նշանակէ հրաժարւել գլխաւոր նպատակից՝ միասնական հայրենիքի գաղափարից: Սակայն իմ կարծիքով դա այդպէս չէ, քանի որ պատմական փորձը ցոյց է տալիս, որ շատ յաճախ քաղաքական ենթանպատակները, հակասում են գլխաւոր նպատակին, բայց այդ հակասութիւնները, այնքան ժամանակաւոր են, որքան ժամանակաւոր են

իրենք՝ քաղաքական նպատակները: Այդ մասին ես աւելի մանրամասնօրէն խօսել եմ իմ վերը նշած յօդուածում:

Երկրորդ հարցը, որը նոյնպէս վէճերի առարկայ է դարձած, դա ներգաղթի հարցն է: Ոմանք յամառում են, որ Խորհրդային Հայաստանը համայն հայութեան հայրենիքն է և Արտաքին Սփիւռքի հայութիւնը պէտք է որոնի ճամբաներ՝ դէպի այդ հայրենիքը: Համամիտ չեմ այդ կարծիքին: Եթէ Խորհրդային Հայաստանը ի վիճակի է ընդունել իր զաւակներին, ապա նա թող անի դա Ներքին Սփիւռքի համար, որոնց պէտք չէ ո՛չ ծայրից ռուսերէն սովորել, ո՛չ խորհրդային պայմաններին յարմարուել, եւ ոչ էլ մեկնելու արտօնագրեր ստանալ: Պարզապէս նրանց պէտք է գնել օդանաւի, կամ գնացքի տոմս: Որ Ներքին Սփիւռքից գոյութիւն ունի ձգտում դէպի հայրենիք , ցոյց է տալիս Երեւանի, այսպէս կոչուած, բնակարանային շուկայի ուսումնասիրութիւնը: Այդ շուկայում, Աղրբեջանի և Վրաստանի հայութիւնը Թիֆլիսի կամ Բաքւի կենտրոնում երեք սենեակից բաղկացած բնակարանները, առաջարկում են փոխանակել Երեւանի ծայրամասերում գտնուող մէկ սենեականոց բնակարանների հետ:

Համամիտ չեմ ներգաղթին նաեւ ա՛յն պատճառով, որ եթէ Արտաքին Սփիւռքը դատարկւի, ապա ո՞վ պէտք է զբաղւի ազգի քաղաքական դատով: Չէ՞ որ նա միա՛կն է, որ այդ հնարաւորութիւնը ունի: Ո՞ւմ անունով պէտք է թուրքերից պահանջենք մեր հողերը: Ո՞վ պէտք է ստեղծի թուրքերի համար այն բարոյական և այլ ճնշումները, որից խուսափելու համար նա ստիպւած լինի հրաւիրելու մեզ կլոր սեղանի շուրջը:

Ի հարկէ եթէ խօսքը գնում է այն հայերի մասին, որոնք ոչ մի կերպ չեն ցանկանում մասնակցել ազգային գործերին, նրանց համար աւելի լաւ է մեկնել Հայաստան և իրենց աշխատանքով մասնակցել ազգային կեանքին: Բայց այդպիսին հայ Սփիւռքում չպէտք է լինի: Ամէն մի սփիւռքահայ իրեն եկեղեցու, կամ ակումբի անդամավճարով արդէն իսկ մասնակցում է ազգային կեանքին, նրան չի կարելի կտրել այդ կեանքից:

Կամ վերցնենք այն հանգամանքը, որ որոշ բարեգործական ընկերութիւններ նւիրատուութիւններ են կատարում Խորհրդային Հայաստանին: Յուզմունք պատճառող այդ երեւոյթը, համարում եմ յանցագործութիւն: Ամէն մի **դոլար** կամ **ֆրանկ** Սփիւռքում աւելի անհրաժեշտ են, աւելի մեծ ազգային ծառայութիւն կարող են կատարել, քան Հայաստանում, որտեղ մեր հայրենակիցները չեն կարողանում իւրացնել Ռուսաստանի կողմից տրւած գումարները: Այն ահաւոր գումարները և մարդկանց բանակը, որը անհրաժեշտ են Հայ Դատի համար, ինչպէ՞ս կարելի է ջլատել և առանց որեւէ քաղաքական հաշւարկի ուղարկել Հայաստան: Հայ Դատը պահանջում է հետազօտական, հետախուզական, տնտեսական, բարոյական, դիւանագիտական, ռազմական, տեղեկատը-

ւական, հրատարակչական և շատ ուրիշ աշխատանքներ։ Ո՞վ պէտք է անի այդ ամէնը։ Խորհրդային Հայաստա՞նը, Մոսկւա՞ն, կամ գուցէ ՄԱ՞Կը։ Դա պէտք է անի միայն հայ ժողովուրդը և այն էլ Արտաքին Սփիւռքում։

Այդ պատճառով ես ոչ միայն կտրականապէս դէմ եմ ներգաղթին, այլ նոյնիսկ համարում եմ, որ վատ չէր լինի Հայաստանից Սփիւռք տեղափոխուէին մի քանի տասնեակ ազգին նւիրւած երիտասարդներ, ազգային գործունէութեանը մասնակցելու համար։ Այսպիսով Արտաքին Սփիւռքը պէտք է վարի գործօն ազգային քաղաքականութիւն և ձեռք քաշի ներգաղթի գաղափարից, որպէս ամենակարեւոր ճակատի վնասակար թուլացում։

Նրանք, ովքեր Սփիւռքի երիտասարդութեանը ներշնչում են հայրենիք գաղթելու վեհ գաղափարը, թող դրա փոխարէն քաղաքական հաշւարկ կատարեն, որպէսզի չկրկնւի պատմութիւնը։

Մէկ անգամ, առանց հաշւարկի հայրենիք արդէն ուղարկւեցին հայերը։ Այդ նրանք էին, որ գնացքի կայանում համբուրում էին հայոց հողը, իսկ մի քանի ամիս յետոյ այդ նոյն կայանից քշւում էին Սիբիրի ճամբարները։ Այդ նրանք էին, որ խուսափելով ճամբարներից, ձգտելով աւելի լաւ կենցաղային պայմանների, բնակութիւն հաստատեցին Սուխումում, Բաթումում և նոյնիսկ Կրասնադարում։ Այդ նրանք են, որ մինչեւ այսօր համարւում են անվստահելի տարր և կրում են «Ախպար» վիրաւորական մականունը։ Չեմ ուզում քննադատել անցեալը և ի հարկէ չեմ ուզում ասել, որ այսօրւայ Հայաստանը նոյնն է, ինչ այն ժամանակ էր։ Հիմա մեր հայրենիքը սքանչելի է, գիտեմ, տեսել եմ, յիշելիս արտասւում եմ, բայց զգացմունքների մասին չէ խօսքը, այլ սառը քաղաքական հաշւարկի։

Այսօր արտաքին սփիւռքահայութիւնը Հայաստանում անելիք չունի, ամբողջ նրա անելիքը այստեղ է, Հայաստանից դուրս, յանուն Հայաստանի և միայն ու միայն ուղղւած Թուրքիայի դէմ։

1925 թւականին, Մայիսի 28ի կապակցութեամբ, Նիկոլ Աղբալեանը գրում էր.

«Անիկա ճիշտ է, որ Սասունցի Դաւթի նման 40 գազ խոր հորի մէջ է, և մեծ ջաղացքար մը դրւած է հորի բերանին, բայց անոր հետ է «թուր կայծակին» և իր թեւին «խաչ պատարագին»։ Բայց երբ մենք միանանք անկախութեան գաղափարի շուրջը, երբ մեր ձայնը դառնայ նոյնքան հզօր, որքան հզօր էր Չէնով Օհանինը, այն ժամանակ ան, հայ ժողովուրդը, Սասունցի Դաւթի պէս հորին մէջէն կը լսէ մեր ձայնը, կը յիշէ Տիրամօր անունը ու խաչ պատարագին… Եւ դուրս կու գայ հորէն, իր թշնամուն հարւածելու համար վերջապէս…»։

Ես ուզում եմ մի քիչ ձեւափոխել այս համեմատութիւնը։ Ի հարկէ ճիշտ է, որ Ձէնով Օհանի ձայնը Արտաքին Սփիւռքի ձայնն է, ճիշտ է, որ «Դաւիթը» 40 գազ հորի մէջ է, և մեծ ջաղացքարի մասի էլ ի հարկէ ճիշտ է։

Ճիշտ է, որ նրա հետ է խաչ պատարագին, բայց ինչքան լաւ կը լինէր, որ նրա հետ չլինէր «թուր կայծակին», որպէսզի չգայթակղուէր, և ինչքան լաւ կը լինէր, որ Ձէնով Օհանը նրան չգայթակղէր։ Եւ ի հարկէ շատ լաւ կը լինէր, որ Ձէնով Օհանի հզօր ձայնը հետեւեալն ասէր.

«Ջրաղացի քարին հարուածող շատ կայ, դու մի խառնուիր, դա քո գործը չէ։ Դիմացիր, շուտով հողմերը կը մաշեն քարը և դու դուրս կը գաս քո հորից։ Բայց որպէսզի դուրս գաս առողջ և ամենակարեւորը, հայ մնացած, այդ քո հորում մրջիւնի նման աշխատիր, կուտակիր, ամրապնդիր մկաններդ։ Ես, մինչ այդ, թշնամուց կ՚ազատագրեմ մեր հողերը։ Բայց մեր տնտեսական յոյսը դու ես, մեր արտերը ցանողն էլ, վարողն էլ դու ես, ուրեմն չդաւաճանես, պատրաստուիր, յոյսդ մի կորցրու, անպայման կը հանդիպենք։ Ջրաղացի քարի մասին մի մտածիր, դրա մասին մտածում է ամբողջ աշխարհը և առաջի հերթին ինքը ռուս ժողովուրդը»։

Այսպէս կ՚ուզէի, որ ինչէր Ձէնով Օհանի ձայնը։

Բայց անցնենք երրորդ հատուածին՝ Թրքական Սփիւռքին։

Այդ Սփիւռքը թէպէտ արտաքին Սփիւռքի մաս է կազմում, սակայն գտնւում է առանձնայատուկ պայմաններում. այդ իսկ պատճառով նրա խնդիրը տարբերւում է մնացածից։ Այդ հատուածի հիմնական և անյետաձգելի խնդիրն է դուրս գալ Թուրքիայի սահմաններից, չափսոսալով ո՛չ եկեղեցիները, ո՛չ դպրոցները և ո՛չ էլ որեւէ ուրիշ ազգային արժանիք։ Թող ափսոսան նրանք, ովքեր կառուցել չգիտեն. մենք նորը կը կառուցենք, հայրենիքում, աւելի շքեղը կը կառուցենք։ Այդ հատուածը պարտաւոր է դուրս գալ Թուրքիայից, որովհետեւ.

1.- Նա իր աշխատանքով ստեղծում է բարիքներ, մեր գլխաւոր թշնամու համար, նրա հողի վրայ։

2.- Նա գտնւում է այնպիսի պայմաններում, որ ոչ մի ազգային շարժման, կամ որեւէ ազգօգուտ գործի մասնակից չի կարող լինել։

3.- Այդ Սփիւռքի հայութիւնը Թուրքիայի մէջ պատանդ է հանդիսանում։ Առաջացնելով նոր եղեռնի սարսափ, Թուրքիան պէտք է փորձի միշտ թուլացնել մեր ազգային պայքարը։

4.- Այդ Սփիւռքի ներկայութիւնը Թուրքիայում, վերջինի համար ստեղծում է բարոյական քաղաքական **կապիտալ**, այսինքն տալիս է նրան հնարաւորութիւն աշխարհի առջեւ, իրեն վայել աղւէսութեամբ յայտարարելու, թէ հայերը ինչ լաւ են իրենց զգում թուրքերի կողքին, և որքա՜ն մտերիմ յարաբերութիւն-

ներ են ստեղծած «բարեկամ» ժողովուրդների միջեւ: Եւ նրանք ի հարկէ կ'աւելացնեն, որ պատմական անցեալում տեղի ունեցած խռովութիւնների համար միակ մեղաւորները հայերն էին: Իսկ հայը Թուրքիայում ստիպած կը լինի լռել և գուցէ նոյնիսկ յայտարարել, թէ թուրքը ճիշտ է ասում:

Այսպիսով, այդ հատուածը, ոչ միայն հնարաւորութիւն չունի օգնելու ազգին, այլ նաեւ տալիս է մեր թշնամուն որոշ առաւելութիւններ: Ուստի այդ հատուածը, որպէս հայկական գաղութ պէտք է վերանայ: Այդ հարցում նրանց պէտք է օգնութիւն ցոյց տայ ամբողջ ազգը: Խորհրդային Հայաստանը կարող է նոյնպէս օգնել այդ հարցում: Ինչպէս յայտնի է Հայաստանին թոյլատրւում է ամէն տարի 1000-1500 հայ Սփիւռքից տեղափոխի հայրենիք, թող այդ բոլորն էլ լինեն Թուրքիայից:

Վերջապէս խօսենք մեր կէս Սփիւռքի մասին:

Այդ հատուածի հայութիւնը ապրում է մեր պատմական հողերի վրայ և իր ներկայութիւնով միշտ յիշեցնում է, թէ ումն է պատկանում հողը: Այդ հատուածը տէրն է այն հողի, որի վրայ ապրում է, թէպէտ նրա իշխանութիւնը պաշտօնապէս չի արձանագրւած: Մեր կէս Սփիւռքի հայութիւնը հսկում է և պահպանում է այդ հողը, մաքրութեան մէջ է պահում նրան՝ ապագայ պետութեան համար: Եւ ուրեմն, ոչ մի առիթով նրանք չպէտք է թողնեն անտէր պապերի և գալիք սերունդների հայրենիքը:

Դա դժւար է անել, գուցէ շատ դժւար, երբ Հայաստանը մի քանի ժամւայ ճանապարհի վրայ է, սակայն ուրիշ ելք չկայ, պէտք է դիմանալ: Այդ դժւարութիւնը ի հարկէ կարող է թեթեւացնել հայրնիքը, իր մայրական, հոգատար վերաբերմունքով դէպի Ղարաբաղի հայութիւնը: Նրա զաւակները պէտք է առաջին հերթին ընդունւեն Երեւանի ԲՈՒՀերը, նրա հայկական դպրոցները առաջին հերթին պէտք է ապահովւեն դասագրքերով ու ուսուցիչներով, Հայաստանի լաւագոյն թատրոնները և նուագախմբերը առաջին հերթին պէտք է այնտեղ տան իրենց համերգները և վերջապէս Հայաստանի ամբողջ ժողովուրդը իր վերաբերմունքով պէտք է արտայայտի իր յարգանքը դէպի այդ Սփիւռքի հայութեանը: Այսպիսով մեր կէս Սփիւռքի ազգային վարքագիծը ունի հետեւեալ նշանաբանը. ՍԵՐՏ ԿԱՊԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԵՏ, ԲԱՅՑ ՈՉ ՄԻ ՔԱՅԼ ԴԷՊԻ ՀԱՅՐԵՆԻՔ: Քաղաքական գիծը, նոյն խորհրդային իշխանութեան փառաբանումն է, սակայն շատ աւելի մեծ ջանասիրութեամբ, քան այդ անում է միջավայրը, այսինքն աղրբեջանցիները: Հայրենիքի հետ միանալու գործում առաջին անհրաժեշտ պայմանը դէպի խորհրդային իշխանութիւնը հաւատարմութեան ցուցաբերումն է և նրա կողմից վստահութեան ձեռք բերումն է:

Մէկ ժողովուրդ՝ երեք ու կէս Սփիւռք:

Երեք ու կէս Սփիւռք՝ տասնեակ խնդիրներ:

Տասնեակ խնդիրներ՝ քանի՞ ղեկավար մարմին։
Մէկ ղեկավար մարմին՝ ո՞րն է դա։

1973

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

(Հր. Խալաթեանի նամակին անդրադառնալու կարգով)

Դոկտ. Է. Յովհաննիսեան

Գրեթէ բոլոր մասնագիտութիւնների ներկայացուցիչները, ջանում են ապացուցել իրենց բնագաւառի առաւելութիւնները, մնացած մասնագիտութիւնների նկատմամբ: Սակայն հասարակագէտները, առաւելապէս, տառապում են այդ ծայրայեղական հիւանդութեամբ, հասարակագիտութիւնը համարելով հասարակական խնդիրները կարգաւորելու միակ միջոցը:

Բացայայտել հասարակագիտութեան տեղը հասարակական կեանքում, մեզ հայերիս, չափազանց կարեւոր է: Ինչո՞ւ: Որովհետեւ մեր նւազ ուժերը, մենք շռայլելու ոչ մի իրաւունք չունենք, մենք պարտաւոր ենք մեր ազգային եռանդը ծախսել միայն ու միայն այն ուղղութեամբ, որտեղից սպասում ենք շօշափելի աջակցութիւն ազգային հարցի լուծման գործում: Գիտութիւնը պատկանում է իմացութեան թանկարժէք միջոցներին, այդ իսկ պատճառով իմ մէջ հաստատւել է մի համոզմունք, որ գուցէ մի քիչ տարօրինակ թւայ, կամ յամենայն դէպս ոչ վայել՝ գիտութեամբ զբաղող մարդու: Ես կարծում եմ, որ մենք հայերս, պէտք չէ զբաղւենք գիտութեան այն բնագաւառներով, որոնք ազգային երանգաւորում չունեն, որոնք կը զարգանան և զարգանում են, անկախ նրանից, թէ զբաղո՞ւմ է հայը, թէ ոչ, այդ գիտութեամբ: Բայց կան իմացութեան բնագաւառներ, որոնք զուտ հայկական են, և եթէ մենք այսօր չզբաղւենք այդ գիտութիւններով ու բնագաւառներով, ոչ մէկ ուրիշը չի զբաղւի դրանով, մեր փոխարէն:

Օրինակ, ի՞նչ կարող է տալ ազգին, աւելի ճիշտ Հայ Դատին, մէկ փայլուն Շեքսպիրագէտ, մէկ նոր աստղաբաշխ կամ մէկ նոր **մաթեմատիկոս**: Անժխտելի է, որ այդ նոր անունները կը բերեն ազգին նոր փառք, բայց ի՞նչ արժէք ունի այդ փառքը քաղաքականութեան մէջ, դժւարանում եմ գնահատել: Իմ կարծիքով մեր ազգը մի տեսակ քաղաքական մտածելակերպ է դարձրել, իր պահանջների մէջ հիմնւել արդարութեան և իր արժանիքների վրայ: Ազգի մի որոշակի մասը ջանում է ապացուցել համայն աշխարհին, թէ որքա՛ն մենք խելացի ենք, տաղանդաւոր, աշխատասէր, թէ ինչպիսի՛ ականաւոր գիտնականներ ենք ունեցել և ունենք. իսկ միւս մասը աշխատում է ապացուցել, թէ որքան անարդար վարւեցին մեզ հետ և մեր շատ ու շատ արդար պահանջները ջանում են հասցնել աշխարհի ղեկավարող շատ ու շատ հեղինակաւոր կազմակեր-

պութիւնների ծանօթութեան: Բայց ես համոզուած եմ, որ աշխարհի ծանօթութիւնը մեր տաղանդին կամ աշխատասիրութեան հետ, մեզ ոչինչ չի տայ: Այդպիսի ծանօթութիւնը դարեր շարունակ ոչինչ չէր տալիս հրեաներին, ոչինչ չտուեց յոյներին ու եգիպտացիներին: Եւ, հակառակը, բազմաթիւ ժողովուրդներ պետականութեան և ազատութեան արժանացան ամենեւին էլ օժտուած չլինելով մտաւորական և մշակութային արժանիքներով:

Մարդկութեանը հարկաւոր չէ ցոյց տալ գեղեցկութիւն և շնորհք, նրան հարկաւոր է ցոյց տալ ոյժ և վճռական տրամադրութիւն: Միայն այդ դէպքում աշխարհի շատ ու շատ հեղինակաւոր կազմակերպութիւններ, մեր շատ ու շատ եռանդուն պայքարից յետոյ, իրենք ստիպւած կը լինեն հրաւիրելու մեզ կլոր սեղանի շուրջը խորհրդակցելու: Մեր վիճակում խաղաղութիւնը պէտք է յարգել իբրեւ նոր պայքարի միջոց. ապա ուրեմն կարճատեւ խաղաղութիւնը աւելի գերադասելի է, քան երկարատեւը:

Մեր կարեկցանքը չէ, որ պիտի փրկի ազգը, այլ քաղաքական գիտելիքները, անձնազոհութիւնները և արիութիւնը: Ուրեմն բոլոր գիտութիւնները չեն, որ կարող են օգտակար լինել ազգային քաղաքականութեան ասպարէզում: Ազգային փառքը, որով մենք այսօր այդքան հրճւում ենք, հազիւ թէ կարողանայ լուրջ օգնական դառնալ մեր դատում: Կրկնում եմ, ասածս գուցէ տարօրինակ թւայ եւ պարզապէս տրամաբանութիւնից զուրկ, սակայն ի՞նչ արած, այնպէս է ստացւել, որ իմ տրամաբանութեան յենակէտը և միակ աղբիւրը ազգային ճակատագիրն է, իսկ այդ դիրքերից պատրաստ եմ ապացուցել, որ չեմ սխալւում:

Այսօր հայը օգտւում է ե՛ւ ինքնաթիռից, ե՛ւ **աւտոմեքենա**ներից, եւ ելեկտրականութիւնից եւ շատ ուրիշ քաղաքակրթութեան միջոցներից, որը ինքը չի ստեղծել, այլ ստացել է դարաշրջանից: Եւ հակառակը, այն փաստը, թէ գարեջուրը, կամ գունաւոր հեռուստատեսութիւնը ինքն է ստեղծել, ամենեւին էլ չաւելացրեց, ո՛չ հայի գարեջուրը եւ ոչ էլ գունաւոր հեռուստատեսութիւնը, որի մասին մինչ այսօր երազում է Երեւանը: Այն, ինչ դարին է պատկանում, հայ ժողովուրդը կը ստանայ բոլոր ժողովուրդների հետ միասին, անկախ նրանից թէ ինչպիսի մասնակցութիւն է ինքն ունեցել այդ գործում: Սակայն, եթէ մենք չզարգացնենք ազգային տնտեսութիւնը, գրականութիւնը, արւեստը, կրթութիւնը, շինարարութիւնը եւ շատ ուրիշ ազգային բնագաւառներ, մեր փոխարէն այդ չի անի ո՛չ ֆրանսացին, ո՛չ գերմանացին եւ ոչ էլ ռուսը: Եւ եթէ այսօր հայ ժողովրդի խորը յարգանքին արժանացել են աշխարհահռչակ գիտնականներ Վիկտոր Համբարձումեանը, կամ Սերգէյ Մերգելեանը, դա ոչ թէ նրանց **մաթեմատիկ**ական կամ աստղաբաշխական փայլուն արդիւնքների համար է, որոնց նկատմամբ հայութիւնը (բայց ոչ գիտութիւնը) բաւականին

անտարբեր է, այլ նրանց եռանդուն պետական եւ հասարակական աշխատանքի համար է, ազգային ասպարէզում, դժւարին պայմաններում նրանց թափած ջանքերի համար է։

Այսպէսով առաջին հարցը, որը անհրաժեշտ է պարզել, դա հետեւեալն է.- պատկանո՞ւմ է արդեօք հասարակագիտութիւնը ազգային գիտութիւններին, ունի՞ արդեօք հայ ժողովուրդը, իր դատով հանդերձ, սպասելիքներ այդ կողմից։

Հասարակագիտութիւնը ուսումնասիրում է հասարակական օրինաչափութիւնները, այսինքն բացատրում է տարբեր հասարակական երեւոյթների առաջացման պատճառները եւ նրանց փոխադարձ կապերը։ Հասարակագիտութիւնը պարունակում է իր մէջ երկու ուղղութիւն. տեսական հասարակագիտութիւն եւ, այսպէս կոչւած, **կոնկրէտ**, կամ գործնական հասարակագիտութիւն։ Տեսական հասարակագիտութիւնը հիմնւելով պատմութեան փիլիսոփայութեան վրայ, ուսումնասիրում է տարբեր հասարակական խմբաւորումների ծագման եւ զարգացման օրինաչափութիւնները։ Տեսական հասարակագիտութիւնը փիլիսոփայութեան մաս է կազմում եւ որոնում է մարդկութեան զարգացման ապագայ ուղիները։ Այստեղից մենք սպասելիք չունենք, քանզի դարերից ի վեր, թէ՛ ազգային նպատակը, թէ նրա ուղիները, գտել են յստակ ձեւակերպում. նպատակը ազգային պետականութիւնն է, իսկ ուղիները՝ այդ պետականութեանը տանող ուղիներն են։

Մեզ համար միացեալ անկախ Հայաստան հասկացողութիւնը դարձել է անժխտելի ճշմարտութիւն, եւ ես կ'ասէի, որ այդ գաղափարը հասել է կենցաղային տրամաբանութեան մակարդակի։ Այսինքն, այժմ ոչ թէ կարելի է քննարկել այդ գաղափարի ճշմարտութիւնը, նրանով թէ ո՞վ է ընդունում այն, այլ կարելի է քննարկել մարդու ով լինելը, նրանով թէ որքանո՞վ է նա ընդունում այդ գաղափարը։

Գուցէ կար ժամանակ, երբ գիտութեան քարոզիչները ասում էին մօտաւորապէս այսպէս.- երկուսին գումարած երկուս հաւասար է չորսի, որովհետեւ այդպէս է ասում Բիւթագորասը։ Բայց եթէ այսօրւայ դպրոցականին ասես, որ Բիւթագորասը համարում էր երկուսին գումարած երկուս հաւասար է հինգի, նա առանց երկար մտածելու կը պատասխանի, որ Բիւթագորասը տրամաբանութիւնից զուրկ էր։ Կարծում եմ, որ մենք էլ չունենք աւելորդ միջոցներ, տրամաբանութիւնից զուրկ մարդկանց, երկուսին գումարած երկուսի ճշմարտութիւնը բացատրելու համար։ Տեսական հասարակագիտութիւնը, թէպէտ եւ ունի որոշ ազգային երանգաւորում, ըստ իր էութեան հայական չէ եւ նրանով զբաղւելու անհրաժեշտութիւնը մենք չունենք։

Գործնական հասարակագիտութիւնը, անջատուեց փիլիսոփայութիւնից, երբ նրան յաջողուեց «պատճառ արդիւնք» կապերի նկարագրութեան համար օգտագործել **մաթեմատիկ**ական լեզու, այսինքն քանակական միջոցներ։Գործնական հասարակագիտութիւնը ուսումնասիրում է մասնաւոր հասարակական երեւոյթներ, եւ սահմանափակ մարդկային հատուածներ, ինչպիսիք են ընտանիքը, քաղաքը, գործարանը, ազգը, դասակարգը, եւ այլն։

Գործնական հասարակագիտութիւնը, իբրեւ անհրաժեշտութիւն, ի յայտ եկաւ վերջին տասնամեակների ընթացքում, երբ տարբեր բնագաւառներում ղեկավարելու համար, որոշումները սկսեցին կրել խմբակային բնոյթ։

Յայտնի է, որ կայացնել որոշում, նշանակում է որոշ ազատութեան սահմաններում կատարել ընտրութիւն։ Այդ ընտրութիւնները հիմնւում են երեք հիմնական սկզբունքների վրայ. աւանդոյթներ, առողջ տրամաբանութիւն եւ գիտութիւն։ Քանզի աւանդական որոշումները հիմնւում են աւանդոյթների վրայ, նրանք յաճախ աչքաթող են անում իրականութիւնից բխող տրամաբանութիւնը։ Աւանդական որոշումները ահաւոր չափերի էին հասել Արեւմուտքում եւ հիմնականն էին մինչեւ վերածնունդի դարաշրջանը։ **Բուդիզմ**ը, օրինակ, արգելք էր հանդիսանում առեւտուրի զարգացմանը, իսկ Չինաստանում վարչական պաշտօն գրաւելու համար անհրաժեշտ էր լինել բանաստեղծ։ Վերածնունդը և լուսաւորականութիւնը առաջ քաշեցին, այսպէս կոչւած առողջ տրամաբանութեան թեզը, որ պէտք է հիմք ծառայէր տարբեր որոշումների համար։ Սակայն առողջ տրամաբանութիւնը նոյնպէս ունէր թերութիւններ, քանզի հիմնւում էր մակերեսային փաստերի վրայ, այսինքն այն փաստերի վրայ, որոնք երեւում էին ոչ-զինւած աչքով։

Քսաներորդ դարը զինեց մարդու տեսողութիւնը, եւ այդ զէնքը գիտութիւնն էր։ Որոշումները սկսեցին կրել գիտական բնոյթ։ Հասարակական ասպարէզում տեսողութիւնը ուժեղացնող հեռադիտակը, գործնական հասարակագիտութիւնն էր։ Այդ պատճառով էլ որոշումները սկսեցին կրել խմբակային բնոյթ։

Հետաքրքրական է ամերիկացի տնտեսագէտ Դժ. Գոլբրէյսի կարծիքը։ Նա համարում է, որ պատմական զարգացման ընթացքում արտադրական ցանքերի նշանակութիւնը ենթարկւել է փոփոխութիւնների։ Մի ժամանակ արտադրութեան համար ամենամեծ դերը պատկանում էր հողին, քանի որ նա ամենապակասորդայինն էր։ Եւ այդ ժամանակ հասարակութեան մէջ գլխաւոր տեղը գրաւում էր հողատէրը։ Կամաց-կամաց պակասորդային դարձաւ դրամը, եւ հողատէրը իր գլխաւոր տեղը զիջեց դրամատէրին։ Հիմա ամենապակասորդայինը եւ ամենակարեւորը գիտելիքներն են, - ասում է Գոլբրէյսը,- իշխանութիւնը անցնում է գիտահետազօտական հաստատութիւններին։ Նրա

կարծիքով, այժմ բոլոր որոշումները կայացնում են գիտական խմբաւորումները, իսկ պաշտօնական ղեկավարները միայն ձեւականօրէն հաստատում են նրանց որոշումները։ Գոլբրէյսը յիշեցնում է, որ Լոս-Ալամոսում, միջուկային ռումբը ստեղծելու ժամանակ, զօր. Գրովմը, որ նախագծի պաշտօնական ղեկավարն էր, բայց փաստօրէն ի վիճակի չէր որեւէ փոփոխութիւն մտցնելու Ֆերմիի եւ ուրիշ մասնագէտների որոշման մէջ։ Գործնական հասարակագիտութիւնը ուսումնասիրում է քաղաքական կեանքի հոգեբանութիւնը, իշխանութեանը ենթարկւելու աղբիւրները, եւ ընդհանրապէս մարդու հասարակական վարքագծի աղբիւրները։

Գերմանացի հասարակագէտ եւ փիլիսոփայ Մակս Վեբերը ուսումնասիրելով քաղաքական կեանքը, յանգել է այն եզրակացութեան, թէ մարդիկ ենթարկւում են իշխանութեանը, ելնելով կա՛մ սովորոյթներից, կա՛մ անձնական շահից, կամ գիտակցաբար, ընդունելով եւ յարգելով իշխանաւորների բարոյականութիւնը։ Ո՞րը այս լծակներից կարելի է օգտագործել ազգային իշխանութիւն ստեղծելու համար։ Այս հարցի պատասխանը կարող է տալ միայն հասարակագիտութիւնը, ազգային հոգեբանութիւնը ուսումնասիրելուց յետոյ։

Պէ՞տք է արդեօք հայ ժողովրդին, յատկապէս Սփիւռքին, գործնական հասարակագիտութիւն, տեսողութիւնը աւելացնող հեռադիտակ, գիտական զէնք։ Կարծում եմ, որ անշուշտ։

Սփիւռքը հայ ժողովրդի այն հատւածն է, որ պէտք է վերցնի լրիւ իր վրայ ազգային դատի քաղաքական կողմը, թողնելով տնտեսականը Խորհրդային Հայաստանին։ Իսկ քաղաքական գործունէութիւնը պահանջում է իմանալ, թէ ինչպիսի՞ քաղաքական,բարոյական և տնտեսական ուժեր ունի այսօր ազգը, ովքե՞ր են և ի՞նչ են իրենցից ներկայացնում մեր թշնամիները, որո՞նք են մեր այսօրւայ և վաղւայ դաշնակիցները, որո՞նք են մեր մօտակայ քաղաքական նպատակները, ո՞վ և ինչպէ՞ս պէտք է առաջնորդի ազգը դէպի այդ նպատակները, ո՞ւմ հետ պիտի համագործակցենք այդ ճանապարհի վրայ, ի՞նչ զոհաբերութիւնների է պատրաստ ազգը յանուն հայրենիքի։ Այս բոլոր և շատ ուրիշ նման հարցերի պատասխանները անհնարին է ստանալ առանց խորը գիտական ուսումնասիրութիւնների, առանց յատուկ, այսպէս կոչւած «ուղեղների միաւորման», առանց քաղաքական հաշւարկների և վերլուծութիւնների, առանց գիտական նախիմացութեան և հասարակագիտական ուսումնասիրութիւնների։ Մենք պէտք է յստակ իմանանք ազգի քանակական, սեռական և տարիքային կազմը, նրա պայքարելու պատրաստակամութիւնը, նրա պահանջները, կամքը, տաղանդը, կազմակերպւածութիւնը, և այլն։

Ազգային շարժումը ղեկավարելու համար անհրաժեշտ է ունենալ ղեկավարների կողմից ճանաչւած մի գիտական մարմին, որտեղ կը կուտակւեն բո-

լոր ազգային ցանքերը և միջավայրի մասին տւեալները։ Քաղաքական ղեկավարները իրենց գործունէութեան ընթացքում պէտք է դիմեն (որքան յաճախ, այնքան լաւ) այդ մարմնին, բոլոր տեսակի հարցերի վերաբերեալ։ Խօսքը ի հարկէ վերաբերւում է երեւոյթների քանակական տւեալների մասին, այլ ոչ քաղաքական խորհուրդների և որոշումների, որոնց պատասխանատւութիւնը լրիւ պատկանում է քաղաքական կուսակցութիւններին։ Եթէ այդպիսի մի մարմին չստեղծւի, ապա ազգային քաղաքական գործունէութիւնը կարող է մեծ դժւարութիւնների հանդիպել։ Այսօրւայ մեր միակ ազդու զէնքը՝ գիտական մօտեցումն է։ Պէտք է զինւենք, որպէսզի չկրկնւի պատմութիւնը։ Երբ տասնեակ տարիներ առաջ, հայ յեղափոխականները առաջարկում էին ժողովուրդին մի քանի ոչխար ծախել և դրա փոխարէնը զէնք ձեռք բերել, ազգի զգալի մասը գերադասեց ոչխարների թիւը չպակասեցնել և ինքը ոչխարի պէս մորթւեց։

Ես հաւատացեալ եմ, բայց միեւնոյն ժամանակ գտնում եմ, որ այն ահագին գումարներից, որոնք ծախսւում են եկեղեցիների կառուցման վրայ, կարելի է շքեղութեան հաշւին մի որոշակի գումար յատկացնել քաղաքական գիտելիքների զարգացման համար, որպէսզի եկեղեցական այդ հօտը պաշտպանւած լինի նոր սպանդից։ Միթէ՞ դա չէ Աստծոյ կամքը։ Ո՞ւմ համար ենք նորից զուգւում, ո՞ր գայլի համար ենք նորից ճարպակալւում։

Գիտեմ, ունեցել ենք, ունենք Տիգրան Մեծ, կրօն, Աւարայր, Մաշտոց, մշակոյթ, Անի, Աղթամար, Զւարթնոց, գիտութիւն։ Բայց իմ կարծիքով չենք ունեցել բաւարար չափով ազգային գաղափարախօսութիւն, քաղաքագիտութիւն, ազգային մտաւորական ընտրանի։ Այս բոլորը անհրաժեշտ է ստեղծել և գուցէ կարելի է սկսել այդ հասարակագիտական հաստատութիւնից։

Չեմ բաժանում Հր. Խալաթեանի կարծիքը այն մասին, թէ հասարակագիտական ուսումնասիրութիւնները կարելի է յանձնարարել օտար մասնագէտների։ Դէմ եմ այդ տեսակէտին, հիմնւելով հետեւեալ դրոյթների վրայ։

Առաջին, հասարակագիտական ուսումնասիրութիւնները անհրաժեշտ են մեր ազգին անընդհատ, այլ ոչ մէկ-երկու անգամ։ Ուստի անհրաժեշտ է մտածել սեփական հասարակագիտական հաստատութեան մասին։ Այն մեծ գումարները, որ կը պահանջեն մեզանից օտար մասնագէտները, լրիւ բաւարար են այդ գործը սեփական ուժերով սկսելու համար։ Այս իմ ասածը վերացական կարծիք չէ, այլ հիմնւում է նախնական հաշւարկների վրայ։

Երկրորդը՝ հասարակագիտական ուսումնասիրութիւնները ունեն **մեթոտ**աբանական մի նրբութիւն, որ նոյնիսկ մասնագէտները յաճախ աչքաթող են անում։ Այդ նրբութիւնը կայանում է նրանում, որ կիրառական հասարակագիտութիւնը, ուսումնասիրւող երեւոյթի, նախօրօք ընտրւած պատճառների ազ-

դեցութիւնն է որոշում: Նա գրեթէ ի վիճակի չէ բացայայտել նոր անյայտ պատճառներ: Այդ տեսակէտից նա իսկապէս նման է հեռադիտակի, որ միայն մօտեցնում է հեռուում գտնուող առարկաները: Պատահական չէ, որ հասարակագիտական թերթիկներում հարցերը օժտուած են նախօրօք կազմած պատասխաններով, իսկ ուսումնասիրողներին մնում է միայն ընդգծել իրեն համապատասխանողը: Ճիշտ է պատասխանների շարքում կայ մի ազատ տող, որտեղ նշուած է «այլ պատասխաններ»: Բայց փորձը, ցոյց է տուել, որ այդ տողը հազուադէպ է լրացւում: Այսպէսով ուսումնասիրող հասարակագէտը, մինչեւ ուսումնասիրութեան ցանկը կազմելը, պէտք է ծանօթանայ տւեալ հատուածի ընդհանուր մակարդակի հետ, նրա սովորոյթների և նոյնիսկ պատմական անցեալի հետ, որպէսզի կարողանայ իր կազմած հարցերով ընդգրկել հարցի բուն էութիւնը: Հազիւ թէ օտար մասնագէտները կարողանան ճիշտ ըմբռնել հայ ժողովրդի կենցաղային հարցերի բուն նշանակութիւնը:

Որպէսզի պարզ լինի միտքս, ուզում եմ բերել մի ծիծաղելի օրինակ:

Սրանից մի քանի տարի առաջ, մէկ ռուս գիտնական իր խմբի հետ ուսումնասիրում էր Երեւանի խանութների սննդամթերքների սպառման ընթացքը: Կազմւել էին հարցաթերթիկներ, կատարւում էին հարցազրոյցներ: Շատ հետաքրքրական եզրակացութիւնների շարքին կար և մէկ, ուսումնասիրողների համար անհասկանալի երեւոյթ: Պարզւում էր, որ Շաբաթ օրւայ վերջին ժամերին օղու վաճառքը սովորականից ութը անգամ աւելանում էր: Այդ երեւոյթը հասարակագէտները փորձում էին վերագրել այն բանին, թէ իբր Շաբաթ օրերը հայերը իրենց հանգիստը անց են կացնում արբեցողութեան մէջ: Հասարակագէտներին դա այնքան էլ չէր զարմացնի, քանի որ Ռուսաստանում հէնց այդպէս էլ ընդունւած է: Բայց նրանք այնուամենայնիւ զարմանում էին, քանզի չէին տեսնում փողոցներում հարբած մարդիկ և չէին հասկանում, թէ ո՞ւր են կորչում այդ օղիները: Պատասխանը եկաւ շատ անսպասելի կողմից: Երբ գիտնականները խանութում կատարում էին իրենց հերթական հարցազրոյցը, խանութի գործակատարներից մէկը ասաց. «Ախպէր ջան հարցաթերթիկդ հարկաւոր չէ, արի ես քեզ բացատրեմ»: Եւ բացատրեց: Պարզւեց, որ օղու սպառումը կապւած է խաշի արարողութեան հետ: Կիրակի օրը, առաւօտեան շատ շուտ, տղամարդիկ հրաւիրւում են իրենց բարեկամների կամ ծանօթների մօտ խաշ ուտելու: Յարգելով հիւրասիրողի չարչարանքները, հրաւիրւողները պարտաղիր կարգով իրենց հետ բերում են մէկ շիշ օղի: Եւ քանի որ վաղ առաւօտեան խանութները դեռ փակ են, մարդիկ օղու գնումները կատարում եմ Շաբաթ երեկոյեան: Այդպէս մէկ կիսագրագէտ գործակատար գիտնականից աւելի գիտուն գտնւեց: Եւ այդ իմացութեան աղբիւրը, նրա ազգային պատկա-

նելիութիւնն էր։ Չգիտեմ, որքանով բերածս օրինակը համոզեցուցիչ էր, սակայն կարծում եմ, որ միտքս պարզեցի։

Երրորդը, օտար հասարակագէտը հանդիսանում է պատւէր կատարողի դերում, և բացառւած չէ, որ նա, ինչպէս բոլոր պատւէր կատարողները, կը փորձի սիրաշահել և գոհացնել պատւիրատուին, ի հաշիւ գիտական ճշմարտութեանը։

Այսպէսով իմ խորը համոզմունքն է, որ հայ ազգային հասարակագիտութեամբ կարող է զբաղւել միայն հայը։ Եթէ այդպիսի մի հաստատութեան սկիզբը դրւի, գուցէ Խորհրդային Հայաստանն էլ ցանկանայ օգնել Սփիւռքին, նուիրելով օրինակ մէկ «Նայիրի» տեսակի հաշւիչ մեքենայ կամ ուղարկելով Սփիւռք այդ բնագաւառի գիտնականներին մասնագիտական դասախօսութիւններ կարդալու համար։ Սակայն եթէ այդ տեղի էլ չունենայ, համոզւած եմ, որ դրա համար Սփիւռքի ուժերն էլ բաւ են։

1973

Ի՞ՆՉ ԱՐԺԵՆՔ ՄԵՆՔ ԵՒ Ի՞ՆՉ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԱՆԵԼ

Դոկտ. Է. Յովհաննիսեան

Հրատարակութեան կու տանք մեր աշխատակից տոքթ. Էդուարդ Յովհաննիսեանի սոյն յօդուածը, ուր ան իրեն յատուկ մօտեցումով ու ապրումով կը քննէ Սփիւռքի մամուլին մէջ արծարծուած հարցերէն այս մէկը՝ ի՞նչ կ'արժենք մենք և ի՞նչ կրնանք ընել: Արտայայտուած միտքերը բնականաբար յօդուածագրի անձնական տեսակէտներն են: Կու տանք յօդուածը շատ փոքր յապաւումներով: Քննելի շատ հարցեր կան այնտեղ. վիճելի պնդումներ երբեմն, մտքերու աշխարհին համար խորհրդածութեան բաւականին նիւթ՝ անկասկած: Կարելի է չբաժանել որոշ մտածումներ, կարելի է որոշ հարցերու մէջ հակառակ տեսակէտ արտայայտել - և լաւ կ'ըլլայ, որ արտայայտուողներ երեւան գան ու իրենց մտածումները ձեւաւորեն պէտք եղած բծախնդրութեամբ,- կարելի չէ սակայն չընդունիլ յօդուածագրին մտածումներուն սեփական ընդվզումներուն ու տառապանքներուն ծնունդ ըլլալը:

Հայ ժողովուրդի կեանքը պէտք է դուրս գայ խաղաղ, ինքնագոհ նաւարկումի թմրեցնող ու կորստաբեր ընթացքէն: Միայն այն ժողովուրդները, որոնք ի վիճակի են հարցականներ դնելու ու քննելու զանոնք, պատասխաններ գտնելու ու վաղուան համար նոր ճանապարհներ որոնելու, ի վիճակի են դիմանալու կեանքի ճնշումին ու սեփական պատմութիւնը կերտելու:

Հայութիւնը, Հայաստանի մէջ ըլլայ ան թէ Սփիւռքի, միայն այդ ճանապարհի վրայ կանգնելով է, որ պիտի յաջողի ամբարած ուժ և սեփական ճակատագիրը կառուցող ազդակ դառնալ:

ԽՄԲ.

Արժէքը կամ գինը համեմատութեան արդիւնք է, այսինքն տարբեր երեւոյթների համընկնելու չափանիշը: Արժէքաւորել կամ գնահատել նշանակում է համեմատել արժէքաւորման ենթակայ առարկան մէկ ուրիշի հետ, որը ընդունուած է որպէս **էտալոն**՝ ստուգանմուշ: Չի կարելի գնահատել ոչ առարկայի քաշը, ոչ երկարութիւնը և ոչ էլ կարծրութիւնը առանց համապատասխան ստուգաչափերի: Եւ երբեմն ոչ մի ազգ, անկախ միջավայրից, չի կարող ինքը իր մէջ

ունենալ արժէք, յամենայն դէպս, ոչ մի կերպ չի կարող արտայայտել այդ արժէքը։

Պարսիկները և հրեաները մարգարէական բնազդով գուշակեցին աշխարհի զարգացման մէջ չորս **էոն**՝ դարաշրջան, որոնցից ամէն մէկում իշխում են համապատասխան նկարագրի տէր ազգեր։ **Էոն**ներից մէկը ներդաշնակութեան դարաշրջանն է, որտեղ գործում և իշխում են համաչափ խառնուածք ունեցող ժողովուրդները։ Միւսը հերոսական դարաշրջանն է, որտեղ գործում են հերոսական ազգերը։ Երրորդը ճգնաւորականն է, իր մենակեցութիւնով։ Եւ չորրորդը՝ փրկչականը, որտեղ իշխում են մեսիական նկարագիր ունեցող ազգերը։

Բոլոր այս ազգային խառնուածքները տարբերւում են մէկը միւսից աշխարհի նկատմամբ դրսեւորած իրենց վերաբերմունքով։ Ներդաշնակ խառնուածքի տէր մարդը ընկալում է տիեզերքը որպէս ներքին ներդաշնակութեամբ ոգեշնչած մի ամբողջութիւն, որը ենթակայ չէ մարդու ղեկավարութեանը։ Նա կարող է առաջացնել միայն հայեցողութեան մէջ սուզելու ցանկութիւն։ Այստեղ գոյութիւն չունեն զարգացման, առաջընթացի գաղափարները, այստեղ ամէն ինչ անշարժ է և մարդը լուծուած է բնութեան մէջ։ Աշխարհը հասած է իր նպատակին։ Այդպէս էին ընկալում աշխարհը Հոմերոսի յոյները, Կունգ-Տցէի չինացիները և մենք՝ միջնադարեան հայերս։

Հերոսական մարդը աշխարհը ընկալում է որպէս քաոս, որը նա պէտք է կարգաւորի իր կազմակերպչական ուժով։ Այստեղ ամէն ինչ շարժման մէջ է։ Աշխարհը ստանում է մարդու կողմից ձեւակերպուած նպատակներ և մարդիկ պայքարում են բնութեան դէմ, ցանկանալով վերափոխել այն ը՛ստ իրենց ցանկութիւնների։ Այդպիսին էր **անտիկ** Հռոմը, ռոմանական և գերմանական ժողովուրդները, այժմեան Եւրոպան, Ամերիկան և բոլշեւիզմը։

Ճգնաւորի խառնուածք ունեցող մարդը աշխարհում տեսնում է միայն չարիք, անարդարութիւն և փախչում է աշխարհից, պարփակւելով ինքը իր մէջ կամ մեկնելով անապատ։ Այդպէս էին օրինակ **նէոպլատոնիզմ**ի յոյները կամ հնդիկները։

Եւ, վերջապէս, փրկչական բնաւորութիւնով օժտուած մարդը համարում է, որ ինքը կոչուած է աշխարհում ստեղծել բարձրագոյն ներդաշնակութիւնը, «Աստծու Արքայութիւնը», որը նա կրում է իր սրտում։ Նա ուզում է վերականգնել միջավայրի ներդաշնակութիւնը, որը նա առայժմ գտնում է միայն իր ներսում։ Այդպիսին էին Եւրոպայի միջնադարեան քրիստոնեաները և, ըստ շատերի կարծիքի, ռուսները՝ իրենց յեղափոխութեան սկզբնական շրջանում։

Այս չորս տեսակի խառնուածքները կարելի է յաջորդաբար բնորոշել իբրեւ համաձայնութիւն աշխարհի հետ, իշխանութիւն աշխարհի վրայ, փախուստ աշխարհից և աշխարհի սրբացում:

Ներդաշնակ մարդը ապրում է աշխարհում, կազմելով բնութեան հետ միասնական ամբողջութիւն: Ճգնաւորը փախչում է աշխարհից, իսկ հերոսը և փրկիչը պայքարում են աշխարհի դէմ: Սակայն եթէ առաջինը մղում է այդ պայքարը իր իշխանութիւնը հաստատելու համար, երկրորդը պայքարում է յանուն այն առաջադրանքի, որը ինքը ստացել է իր Աստծուց:

Ներդաշնակ մարդը համարում է պատմութիւնը աւարտուած և նպատակը իրագործուած: Ճգնաւորը չի հաւատում, որ այդ նպատակը հնարաւոր է իրագործել: Հերոսը և փրկիչը փորձում են վերափոխել իրենց գաղափարներին չհամապատասխանող աշխարհը: Ներդաշնակ և փրկչական խառնուածքի մարդկանց պատկերացումները աշխարհի վերաբերեալ համընկնում են, միայն այն տարբերութեամբ, որ առաջինը իր պատկերացումները տեսնում է իրագործուած, իսկ երկրորդը համարում է դա որպէս ապագայ նպատակ: Ճգնաւորը դատապարտուած է սեփական կամքով, իսկ հերոսը՝ դատապարտուած է պատմութեան կողմից:

Հերոսական խառնուածք ունեցող մարդը, որին, ի նկատի ունենալով Պրոմեթէոսի ապստամբութիւնը աստուածների դէմ, անւանում են նաեւ պրոմեթէական, ձգտելով իշխանութեանը՝ աւելի ու աւելի է հեռանում Աստծուց և հէնց դրանում է նրա ողբերգութիւնը: Հերոսական մարդը առաջինն էր, որ համարձակւեց, ելնելով մարդկային տեսակէտներից, նոր ձեւով կառուցել տիեզերքը: Նա վերագրեց մարդուն այնպիսի իրաւունքներ, որոնք նախկինում պատկանում էին միայն Աստծուն:

Ճշգրիտ գիտութիւնները յանգեցին մի անսպասելի եզրակացութեան, որ աշխարհը, ո՛րքան շատ պառակտում է նրան մեր ուղեղը, այնքան աւելի ու աւելի բարդանում է: Ամէն մի նոր լուծուած խնդիր առաջացնում է հազարաւոր ուրիշ չլուծուած խնդիրներ, անվերջ աւելացնելով չլուծուածների թիւը:

1937 թւականին բնագէտ (ֆիզիկոս) Դէ-Բրոյլը գրում էր. **«Ամէն անգամ, երբ մարդու հանճարը, մեծագոյն լարւածութեան գնով, կարդում է բնութեան գրքի մի էջը, անմիջապէս պարզւում է, թէ որքան աւելի դժւար է կարդալ յաջորդը»:** Բնական օրինաչափութիւնները, որոնց միջոցով նախկինում թւում էր թէ յաջողւում է ղեկավարել, այժմ հրաժարւում են ծառայելուց:

Ոչ այնքան վաղուց բժշկութիւնը պարծենում էր նրանով, որ պակասեցրել է վարակիչ հիւանդութիւնների քանակը: Սակայն այսօր կասկածից վեր է, որ այդ հիւանդութիւնների պակասութեան հետ միասին աւելացել են սրտի, ջղերի, քաղցկեղի և հոգեկան հիւանդութիւնները: Է՛լ չխօսենք այն մասին, որ գի-

տական և արդիւնաբերական զարգացումը դարձրել է պատերազմի սպառնալիքը մարդկութեան գոյութեան վտանգ: Ներդաշնակ **էտն**ից անցնելով հերոսականը, մարդը կրկնեց Աստուածաշնչի մեղսագործութիւնը:

Որպէսզի նմանուի Աստծուն, նա զոհաբերեց երկրային դրախտը և, ի վերջոյ, կրկին դարձաւ աշխատանքի ստրուկ: Հերոսական մարդը զգում է, որ գնում է դէպի կործանում, ուստի փախչում է մենակութիւնից, նետուելով հարբեցողութեան, այլասերուածութեան կամ այլ հաճոյքների մէջ: Նա սուզւում է աշխատանքի մէջ, միայն թէ չմնայ մենակ իր մտքերի հետ, միայն թէ չզգայ պատասխանատուութիւն: Նա ոչ միայն ստրուկ է, այլեւ ցանկանում է ստրուկ լինել: Նա երախտապարտ է իշխանաւորներին, որոնք ազատութեան հետ միասին խլում են իրենից սեփական որոշում հանելու տանջանքները: Եւ հէնց այդ նոր ձեւի փախուստը աշխարհից մօտեցնում է նրան ճգնաւորին:

Այսպիսով աշխարհի պատմութեան հակաբնական **էտն**ները կերտում են ճգնաւորի և հերոսական խառնուածք ունեցող ազգերը, իսկ բնական ճանապարհի վրայ պատմութեան լուծը քաշում են ներդաշնակ և փրկչական խառնուածք ունեցող ժողովուրդները: Ընդ որում, բնական պայմաններում, ներդաշնակ խառնուածքի տէր մարդը, ներքին հոգեկան յեղաշրջման շնորհիւ, կարող է ձեռք բերել փրկչական նկարագիր: Իսկ հերոսական մարդու ճանապարհը տանում է դէպի ճգնաւորութիւն:

Հայ ժողովուրդը միշտ օժտուած է եղել ներդաշնակ նկարագրով: Այդ մասին վկայում են մեր պատմութիւնը, մեր եկեղեցին, մեր արուեստը: Գրիգոր Լուսաւորչի եկեղեցին ժխտում է հոգեբռնութիւնը: Ներդաշնակութիւն է արտայայտում հայ հոգեւորականի կերպարը, որտեղ բարութիւնը և համերաշխութիւնը, իմաստութեան հետ միասին, պատկերուած են նրա դէմքին: Որքա՛ն նա տարբերւում է խիստ դէմքով եւրոպական քրիստոնեայից, որը ստեղծեց դաւանաքննութիւն, խաչակիրների արշաւ և այլն:

Ներդաշնակութեան փայլուն ապացոյց են մեր մանրանկարչութիւնը, Կոմիտասի շարականները, Նարեկացու ստեղծագործութիւնը, Հռիփսիմէն, Գառնին, Զւարթնոցը, Գայանէն և այլն: Այս մասին կարելի էր գրել հատորներ, կատարել մանրակրկիտ վերլուծութիւններ, սակայն հայ ազգի ներդաշնակ նկարագիրը այնքան պարզ երեւում է, որ ես ինձ թոյլ եմ տալիս առանց մի որեւէ ուսումնասիրութեան պնդել, որ մենք հայերս ունենք (յամենայն դէպս, ունէի՛նք անցեալում) ներդաշնակ նկարագիր:

Յայտնի է, որ ժողովրդի նկարագրի վրայ մեծ ազդեցութիւն է թողնում երկրապատկերը: Անծայրածիր տարածութիւնների վրայ ապրող մարդիկ աւելի են զգում իրենց ոչնչութիւնը և ձգտում են միասնութեան: Որքա՛ն մեծ նշանակութիւն ունէին մարդկութեան կրօնական ճակատագրում Չինաստանի և

Ռուսաստանի տափաստանները, Հնդկաստանի դաշտավայրերը, Արաբիայի և Սիրիայի անապատները։

Բոլորովին ուրիշ նկարագիր է ստեղծում լեռնաշխարհը։ Ի տարբերութիւն անսահման դաշտերի, այստեղ ամէն մի գագաթ, ամէն մի քար, ամէն մի առու ունի իր անունը, հողի ամէն մի կտոր ունի իր առանձնայատկութիւնները և գաղտնիքները, ամէն մի կածան տարբերւում է մնացած բոլոր կածաններից։ Այդպիսի երկրապատկերը զարգացնում է մարդու մէջ ինքնուրոյնութիւն, բարձր անհատականութիւն։ Այդ պայմաններում մարդիկ, օրինակ ասում են, թէ կլոր քարի տեղը միայն Սեդոն գիտի կամ առանց Կարոյի պարզ լճի ճանապարհը ոչ ոք չի կարող գտնել։

Առաջանում են իմ քարը, իմ ծառը, իմ լիճը, հասկացողութիւնները։ Այսինքն ելնելով իր ներդաշնակ նկարագրից՝ հայը մերւեց բնութեան հետ, բայց չձուլւեց հնդիկի նման, այլ պահպանեց և զարգացրեց իր անհատականութիւնը։ Այդ յատկութիւնը թոյլ տւեց նրան խուսափելու արհեստական կենտրոնացումից, սակայն առաջացրեց միաժամանակ պառակտման վտանգը։ Այդ նոյնը վերաբերւում է թէ՛ Էլլադային և թէ՛ Շւեցարիային։

Եւ քանզի հայ ժողովրդի ներդաշնակ նկարագիրը արտայայտում էր ազգի ամբողջ էութիւնը, նա չփոխւեց ոչ արաբական, ոչ պարսկական և ոչ էլ թուրքական լծի տակ։ Սակայն բոլոր այդ արշաւները չէին կարող հետք չթողնել հայի ազգային նկարագրի վրայ։ Ինչպէս երկար ժամանակ պետականութիւնից զրկւած բոլոր ժողովուրդները, հայերը նոյնպէս ձեռք բերեցին իրաւունքի արժէքազրկութեան յատկութիւն։ Երկար ժամանակ տառապելով անարդարութեան հարւածների տակ, մենք կորցրինք հաւատքը դէպի իրաւունքի բարոյական և հասարակական արժէքը։

Եթէ իրաւունքով ապահովւած մարդիկ կարողանում են պահպանել իրենց արժանապատւութիւնը, ապա իրաւունքից զրկւածները ստիպւած են դիմելու անարգ միջոցների, ինչպիսիք են խորամանկութիւնը, գողութիւնը, քծնումը, կաշառքը, յարմարւողականութիւնը և այլն։ Քաղաքացիական իրաւունքների բացակայութիւնը վերացնում է ինքնասիրութիւնը և պատասխանատւութեան զգացմունքի իմաստը։ Պարտքի զգացմունքը կարող է գոյութիւն ունենալ միայն ու միայն այնտեղ, որտեղ կայ իրաւունքի պաշտպանութիւն։ Ստրուկները պարտաւոր են աշխատել, բայց աշխատելով ոչ մի պարտք չեն կատարում։ Նրանք չունեն ոչ մի տեսակի առաջադրանք, որը կարող էր բարձրացնել մարդու արժանապատւութիւնը։

Թուրք վայրենիների լծի տակ, հայը ձեռք բերեց որոշ ստորացուցիչ յատկութիւններ, բայց երբեք չկորցրեց իր ներդաշնակ խառնւածքը։ Նա, ով երկար

տանջւել է, յաճախ տանջում է ուրիշներին, քանզի դրանով նա իբր թէ թեթեւացնում է իր տանջանքները։ Երբեք այդպիսին չեղաւ հայը։

Նա մնաց հաւատարիմ իր նկարագրին և նոյնիսկ անսպասելի ձեռք բերեց մի նոր դրական յատկութիւն։ Իրաւունքի թերագնահատումը մտաւորականութեան համար ճանապարհ բացեց դէպի այն գաղափարը, որ իրաւական ըմբռնումները ամենեւին էլ բարձրագոյն արդարութիւն չեն։ Որ իրաւական օրէնքներից աւելի բարձր է կանգնած համամարդկային ներդաշնակութիւնը, բարին, սէրը, արդարութիւնը, գեղեցկութիւնը, որ միայն բոլոր այդ գաղափարներով կարելի է երկրի վրայ ստեղծել «Աստծու Արքայութիւն»։

Այդ պարզ քրիստոնէական գաղափարը, որը մինչեւ այսօր հանդիպում է կատաղի դիմադրութեան, մենք ընդունեցինք հեշտութեամբ։ Եւ դա հասկանալի էր, քանզի մեր ներդաշնակ նկարագիրը պատրաստ էր վերափոխւելու փրկչականի։ Մենք քրիստոնեայ էինք Քրիստոսի ծնունդից շատ աւելի շուտ։

Եւ յանկարծ 19րդ դարի վերջում ամէն ինչ խառնւեց։ Հայ ժողովուրդը, պատրաստ այրւելու փրկչական պատերազմի ճակատներում, չկարողացաւ ճանաչել, որ եւրոպական յեղափոխութիւնները ամենեւին էլ փրկչական **Էոն**ի ազդանշանները չեն, այլ ընդամէնը պրոմետէոսական **Էոն**ի վերջին ճիգերը։ Յատկապէս խաբուսիկ էր բոլշեւիկեան շարժումը։ Արտաքինով նա այնքան նման էր փրկչական արշաւի, որ շատ միամիտ ժողովուրդներ և առաջին հերթին փրկչական նկարագիր ունեցող ռուս ժողովուրդը նետուեցին նրա դաժան գիրկը։

Մասամբ նետուեց ե՛ւ հայ ժողովուրդը։ Շահումեանները, Միասնիկեաններ-ը և Խանջեանները գնացին բանւոր դասակարգի անունից փրկելու մարդկութիւնը։ Միւս ծայրում ստեղծւեցին ազգը փրկող կուսակցութիւններ, որոնք արիւթեամբ սուզւեցին պատերազմական և դիւանագիտական ջրհեղեղի մէջ։ Երբ ամէն ինչ հանդարտւեց և պարզւեց, որ սա դեռ փրկչական **Էոն**ը չէր, որ սա հերոսական **Էոն**ի վերջին արտայայտութիւններից մէկն էր, արդէն ուշ էր՝ մենք տեսանք մեր հայրենիքի քայքայւած դիակը։

Այդ հերոսական քաոսի միջից հայ ժողովուրդը դուրս եկաւ անտանելի մի նոր բեռով, որը ոչ մի կերպ չի կպչում իր ներդաշնակ և փրկչական նկարագրին։ Այդ բեռը ընկերվարական, համայնավարական, ժողովրդավարական, կուսակցական և նման ուրիշ անմտութիւններն են։ Մի ժողովուրդ, որ իր դարաւոր պատմութեան ընթացքում, հայեացքը երկնքին ուղղած, ճշմարտութիւնն էր որոնում, մի ժողովուրդ, որ դարեր շարունակ, ձեռքերը Աստծուն պարզած, օրհնելով կամքը Տիրոջ, մորթւում էր հաւատքը սրտում, այսօր յանկարծ հայեացքը ուղղել է գետնին և ուզում է լուծել իր նկարագրին օտար հարցեր, ինչպիսիք են դասակարգերի, շահագործողների և շահագործւողների, յա-

ւելեալ արժէքների, արհմիութիւնների, ապահովագրութիւնների արհեստական հարցերը և հասարական բարդոյթները (**կոմպլեկս**)։

Այդ բեռը այսօր կրում է նոյնիսկ այն կուսակցութիւնը՝ Հ.Յ.Դ., որի հետ են կապւած հայ ժողովրդի բոլոր յոյսերը և որը, իմ կարծիքով, ոչ մի իրաւունք չունի կրելու այդ բեռը։ Թող ների՛ն ինձ, իմ կողմից շատ յարգւած, Հ.Յ. Դաշնակցութիւնը, բայց ես առանց մի տեսակ ամօթի և նոյնիսկ վրդովմունքի չեմ կարողանում տեսնել ինչպէս լուրջ մարդիկ տօնակատարութիւնների ժամանակ լսում կամ երգում են «Մշակ, բանւոր»։ Ի՞նչ բանւոր, ի՞նչ մշակ, ի՞նչ ընկերվարութիւն, ի՞նչ **ինտերնացիոնալ**, ի՞նչ ենք կորցրել, ինչի՞ մասին ենք երգում։ Այդ մասին թող երգեն այն կողմում, որտեղ, ըստ սահմանադրութեան, բանւորը և մշակը եկել են իշխանութեան գլուխ և քանդում են երկիրը։ Այդ մասին երգող շատ կայ, Դաշնակցութեան համար դա աններելի շռայլութիւն է։

Ուրիշ կուսակցութիւնները իրենց փտած բովանդակութիւնը քողարկում են պլպլացող ձեւերով, իսկ Դաշնակցութիւնը իր առողջ ազգային բովանդակութիւնը, կարծես թէ դիտաւորեալ, ինչ-ինչ պատճառներով թագցնում է անառողջ ձեւի մէջ։ Ի՞նչ է, վախենո՞ւմ էք պղծել հիմնադիրների յիշատակը։ Բայց դուք էլ հօ բոլշեւիկները չէք, որ Լենինի այցելած պէտքարանը վերածէք թանգարանի կամ Մարքսի կիսավարտիկի կոճակը՝ մասունքի։ Ես կարծում եմ, որ հէնց երեք հիմնադիրների յիշատակը պահանջում է, որ Հ.Յ. Դաշնակցութիւնը, ստեղծւած պայմաններում, դէն նետի բոլոր ոչ-ազգային աւելորդութիւնները և առաջնորդի ազգը դէպի հայրենիք։

Յեղափոխական փոթորիկներից հայ ժողովուրդը դուրս եկաւ իր ազգային նկարագիրը աղքատացնելով եւս մէկ յատկութիւնով։ Եթէ իր ներդաշնակ դարաշրջանում նա ասում էր իմ սարը, իմ ծառը, իմ քարը, նա երբեք չէր մոռանում, որ թէ՛ ծառը, թէ՛ քարը և թէ՛ սարը, պատկանելով բնութեանը, կազմում են այն ամբողջութիւնը, որը սնում և ոգեշնչում է ազգը և որի գրկում, որի հետ մերւած ապրում է ազգը, որ հէնց այդ բնութիւնն է իմաստաւորում ազգի կեանքը և անձի անհատականութիւնը։

Բայց այսօր հայը ասում է իմ թերթը, իմ ակումբը, իմ կուսակցութիւնը, մոռանալով, որ այդ ամէնը, պատկանելով ազգին, նոյնպէս պէտք է կազմեն իրեն սնող ու իրեն իմաստաւորող ամբողջութիւն։ Երբ ներդաշնակ խառնւածք ունեցող մարդը կորցնում է բնութեան հետ իր կապը, ստեղծւում է այնպիսի մի կացութիւն, որում բնութիւնը սկսում է այնտեղից, որտեղ վերջանում են մարդու իրաւունքը և հնարաւորութիւնները։ Այսինքն իրական բնութիւնը, տւեալ դէպքում ազգը, փոխարինւում է արհեստական բնութիւնով, որը պայմանաւորւած է մարդու ազատ գործելու հնարաւորութիւններով։ Այդ ազատութեան դաշտը, պետականութիւնից զուրկ մարդու համար, բաւականին փոքր է։ Նա

սահմանափակւած է իրաւական, կենցաղային, զգացողական պատնէշներով, որոնց հանդիպելով հայը համարում է, որ հանդիպեց բնութեան հետ։

Եւ քանզի ներդաշնակ է նրա խառնուածքը, այդ պատի մօտ նա սկսում է իր մերւելու աշխատանքը, այն ջանասիրութեամբ, որով նա ժամանակին մշակում էր հողը, անտառը, ժայռը, այսինքն իրական բնութիւնը։ Նա չի կարողանում կամ չի ուզում հայեացքը պատից այն կողմը նետել և տեսնել, որ իրական բնութիւնը պատի միւս կողմն է, պատից շատ հեռու։

Եւ, ուրեմն, եթէ մենք ի վիճակի չենք պատից այն կողմ թռչելու, գոնէ պատի տակ չափից աւելի ջանք չգործադրենք յիշելով, որ դա հակասում է մեր ներդաշնակ նկարագրին։ Չափից աւելի ջանալը,գերաշխատասիրութիւնը հակաբնական ճանապարհի վրայ շատ վնասներ է հասցրել և շարունակում է հասցնել մեր ժողովրդին։ Ստալինեան արիւնոտ դարաշրջանում, երբ Խորհրդային Հայաստանի պատժիչ մարմինները ստանում էին հրահանգ բացայայտել, ասենք, հազար ժողովրդի թշնամի, հանրապետութեան ղեկավարութիւնը ջանում էր գերակատարել առաջադրանքը և բացայայտում էր երկու հազար թշնամի։ Հոգը չէր, որ այդ գերակատարումը դնում էր Բակունցների և Չարենցների հաշւին։ Չէ՞ որ բնութիւնը սկսւում էր ոչ թէ Չարենցներից, այլ Ստալինի կամքից։

Երբ խորհրդային կառավարութիւնը կոչ է անում «է՛լ աւելի ամրապնդել ժողովուրդների բարեկամութիւնը», Հայաստանի ջանասէր կառավարութիւնը անմիջապէս աւելացնում է աղրբեջանական դպրոցների քանակը, մամուլը, ստեղծում է այնպիսի պայմաններ, որ աղրբեջանցին Հայաստանում իրեն զգում է աւելի լաւ, քան տանը։ Հոգը չէ, որ մեր Զանգեզուրը քառասուն տոկոսով աղրբեջանացած է և որ հայը Աղրբեջանում հալածւում է։

Երբ խորհրդային կառավարութիւնը Հայաստանին անում է առաջադրանք խոպան հողերը մշակելու համար Ղազախստան ուղարկել, օրինակ երկու հազար երիտասարդ, ջանասէր Կոմերիտ միութիւնը ուղարկում է, եղբայրական օգնութիւն ցուցաբերելու համար, հինգ հազար երիտասարդ։ Հոգը չէ, որ նրանցից մեծ մասը, ամուսնանալով ռուսների հետ, այլեւս չի վերադառնում հայրենիք։

Երբ նոյն այդ կառավարութիւնը պահանջում է ուժեղացնել այսպէս կոչւած գաղափարական պայքարը, ջանասէր պատմաբանները և քարոզչական մարմինները կաշւից դուրս են գալիս Դաշնակցութիւնը ստորացնելու համար։ Հոգը չէ, որ ջնջւում են ազգային պատմութեան լաւագոյն էջերը։

Այս հակաբնական գերջանասիրութեան հետ մենք բախւեցինք նաեւ սփիւռքում։ Մենք ասացինք, որ Հայ Դատը մեզ տանջալի յուզմունք է պատճառում և որ առանց արցունքի չենք կարողանում յետադարձ հայեացք ուղղել

մեր պատմութեանը, մեզ պատասխանեցին, թէ կեղծ հայրենասիրութիւն և կատարեալ դերասանութիւն է դա։

Մենք ասացինք, որ անհրաժեշտ է կազմակերպել հայ քաղաքագիտական հիմնարկ (**ինստիտուտ**) և որ մենք փորձում ենք այդ ստեղծել, մեզ պատասխանեցին, որ մենք ամերիկեան լրտեսական սպասարկութեան հայկական բաժինն ենք։

Մենք ասացինք, որ Խորհրդային Հայաստանի դէմ ոչ մի պայքար չունենք և ուզում ենք բոլոր ուժերը ուղղել Թուրքիայի դէմ, բայց մեզ պատասխանեցին, որ թշնամու կողմը անցած դաւաճաններ ենք։

Մենք ասացինք, որ այսօր խորհրդային հայը չպէտք է անի ոչինչ, ինչ հակասում է ռուսական պետական շահին, բայց մեզ ասացին, թէ հայրենադաւաներ ենք։

Մենք ասացինք, որ ազգային պայքարը պահանջում էր հրաժարուել ընտանիքից, մեզ պատասխանեցին, թէ ընտանիքը լքած անբարոյականներ ենք։

Մենք տարածեցինք Գերմանիայի մէջ հասարակագիտական հարցաթերթիկներ, բայց չստացանք ոչ մէկ պատասխան։

Մենք ասացինք, թէ միացեալ ազգային ճակատում անհրաժեշտ է նաեւ հայ ազգային համայնավար կուսակցութիւնը, մեր ջանասէր հայերից մէկը, թարգմանելով իմ յօդուածի մի մասը, ներկայացրեց Միացեալ Նահանգների կառավարութեան ներկայացուցիչներին և ասաց որ ես կոմունիզմ եմ քարոզում։

Միայն Դաշնակցութիւնն էր, որ հաւատարիմ իր ազգային աւանդոյթներին, հանդիպեց, խօսեց, վիճեց, կասկածեց, հասկացաւ, հասկացրեց, յարգեց, ճշտեց, բացատրեց։

Մնացած բոլոր արձագանգողներին չեմ կարող համարել այնքան բարոյալքած, գտնուղ այնքան ստոր մակարդակի վրայ, որտեղ մարդը ոչ միայն ինքը ընդունակ չէ զոհաբերութիւնների, այլեւ չի հաւատում նոյնիսկ, որ մէկ ուրիշը դրան ընդունակ է։ Եւ քանզի չեմ հաւատում դրան, համոզուած եմ՝ պատճառը՝ գերջանասիրութիւնն է։ Համոզմունքս ամրապնդուեց, երբ առիթ ունեցայ երես առ երես խօսելու ռամկավարի, հնչակեանի և նոյնիսկ համայնավարի հետ (յայտնի պատճառներով չեմ ուզում տալ նրանց անունները)։

Խօսակցութեան ժամանակ մենք լրիւ հասկանում էինք իրար, իսկ հնչակեան իմ զրուցակիցը յանկարծ ասաց,- «Ինչքա՜ն լաւ կը լինէր, եթէ դուք հանդիպէիք մերոնց հետ»։ Սակայն անմիջապէս յիշելով իրականութիւնը, աւելացրեց,- «Բայց ոչ, դուք «փախել» էք Խորհրդային Միութիւնից և ձեզ հետ ոչ ոք չի խօսի»։ Ի միջի այլոց, «փախչել» բառը օգտագործւում է պաշտօնական նաեւ Խորհրդային Միութիւնում, թէպէտ յայտնի է, որ մարդիկ փախչում են բանտից

կամ թշնամուց: Մնացած դէպքերում դա կոչւում է երկիրը թողնել: Բայց սա միայն ի միջի այլոց:

Այսպէս, ուրեմն, ես համոզւեցի, որ բոլոր հայերը պահպանել են իրենց ներդաշնակ նկարագիրը և միայն ոմանք չափից աւելի նեղացրել են իրենց բնական ազատութեան սահմանները: Այդ երեւոյթի հետ ես քաջ ծանօթ էի Խորհրդային Հայաստանում: Այնտեղ ես գիտէի, որ ամբիոններից ճառող ամենապոռոտախօսները նեղ շրջանակներում հակասովետական **անեկտոդ**ների ամենասրամիտ պատմիչներն էին: Ես գիտէի, որ ցերեկը ճրագով Հայաստանում համոզւած կոմունիստ չես գտնի: Գիտէի, որ ամբողջ պաշտօնական մամուլը «կեղծ-կեղծ սովետասիրութիւն և կատարեալ դերասանութիւն է»: Գիտէի և հասկանում էի այդ դերասաններին:

Բայց այստե՞ղ: Ինչո՞ւ այդ նոյնը այստեղ: Ո՞վ ստիպեց ներդաշնակ նկարագիր ունեցող հային քաղաքական ազատ պայմաններում թատրոնի բեմի վերածել ազգային ճակատը: Ո՞րն է պատճառը, որ հայը արհեստականօրէն նեղացնում է իր ազատութեան սահմանները: Ի՞նչ է ստանում նա իր համաչափ հոգին կաշկանդելու փոխարէն:

Նորից պատճառը մեր նկարագիրն է: Եթէ անցեալում մենք ինքնահաստատւում էինք բնութեան գրկում և եթէ արդարութիւնը պահանջում է, որ այսօր մենք ինքնահաստատւենք ազգի գրկում, ապա դժբախտաբար շատերը, ինքնահաստատումը կտրելով բնական հողից, դարձրին այն ինքնանպատակ: Նրանք տրամաբանեցին մօտաւորապէս այսպէս: Թող կաշկանդւի իմ հոգին, բայց ես կուսակցութիւն ղեկավարեմ: Թող տապալւի միասնութիւնը, բայց ես ինքնուրոյն կուսակցութիւն եմ: Թող զրպարտի իմ մամուլը, բայց ես ինքնուրոյն թերթ եմ: Թող չայցելեն իմ ակումբը, բայց ես շքեղ ակումբի հիմնադիր եմ: Թող, թող, թող, բայց՝ Ես, Ես, Ես…

Իսկ գիտե՞ն արդեօք այդ **ես**երը, թէ ինչքան վնաս են հասցնում ազգին:

Այսօր Խորհրդային Միութիւնում ակադեմիկոս Լեւիչը (հրեայ) բողոքում է, թէ իր որդուն զօրակոչեցին բանակ, հաշւի չառնելով նրա հիւանդութիւնը: Եւ անմիջապէս հրեաները գործի են դնում միջազգային մամուլը, որը վայնասուն է բարձրացնում. «Խորհրդային Միութիւնում խախտւում են մարդու իրաւունքները»:

Դերասան Պանովին խորհրդային կառավարութիւնը մերժել է Իսրայէլ մեկնել և նորի՛ց միջազգային վայնասուն. «Խախտւում է օրէնսդրութիւնը»: Եւ խորհրդային իշխանութիւնը ստիպւած է հաշւի նստելու հրեաների հետ:

Իսկ հիմա ես մէջբերեմ անգլիական «**Դէյլի Թելեգրաֆ**» թերթի մի հաղորդակցութիւնը, որի հետ շատերը երեւի ծանօթ են: Թերթը գրում է. «Երեւանում Նոյեմբերի 19ին սկսւել էր երեսնամեայ Բագրատ Շահվերդեանի և քառասնա-

մեայ Արարատ Թովմասեանի գործի վերաբերեալ դատավարութիւնը։ Երկու ամբաստանեալները մեղադրուել էին Հայկական ԽՍՀի քրէական օրէնսգրքի այն յօդուածով, որը համապատասխանում է ՌՍՖԽՀի քրէական օրէնսգրքի 64րդ յօդուածին, այսինքն՝ հայրենիքի դաւաճանութեան մէջ։ Նրանց ներկայացուել է մեղադրանք այն բանում, որոնցում պարունակւած են եղել Հայաստանի անկախութեանը հասնելու կոչեր»։

Միաժամանակ թերթը հաղորդում է, որ այդ միեւնոյն ամբաստանութեամբ Երեւանի բանտում են գտնւում եւս տասներեք հոգի։ Դատավարութիւնը տեղի է ունեցել դռնփակ։ Բոլոր նրանք, ովքեր փորձել էին ներս մտնել նիստերի դահլիճը, ձերբակալւել էին։

Ի՞նչ պատասխանեցինք մենք այս անարդարութեանը։ Ես չեմ բաժանում անջատողական շարժումները. աւելի՛ն, դա համարում եմ, ներկայ պայմաններում, քաղաքական ցնորք, սակայն ի՞նչ կապ ունի այդ գաղափարը հայրենիքի դաւաճանութեան հետ։ Չէ՞ որ, ըստ սահմանադրութեան, ամէն մի հանրապետութիւն Խորհրդային Միութեան կազմից դուրս գալու իրաւունք ունի և ուրեմն ամէն մի մարդ իրաւունք ունի տարածել այդ գաղափարը։

Ինչո՞ւ Խորհրդային Հայաստանով հրճւող սփիւռքի կազմակերպութիւնները չեն ասում, օրինակ, Հայաստանի սիրւած կառավարութեանը. «Ընկերներ, եղբայրներ, մենք խոնարհւում ենք ձեր արդիւնաբերական **պլան**ների կատարման առջեւ, մենք հիացած ենք ձեր յուշարձաններով, խոնարհւում ենք ազգը դէպի Աստծու Արքայութիւնը տանող Վազգէն Բալջեանի առջեւ, փառք Կոմունիստական կուսակցութեանը, բայց, ընկերնե՛ր, մի քիչ գոնէ յարգէք ձեր երկրի սահմանադրութիւնը»։

Գուցէ հէնց ձեր պրոսովետական ձայնը օգնի այն երիտասարդներին, որոնց մեղքը այն է, որ նրանք միամտօրէն, հաւատացին, թէ խորհրդային մարդն էլ ունի քաղաքացիական իրաւունքներ։ Բայց գիտեմ՝ չէք խօսի, քանզի յայտնի է ձեր նշանաբանը. թող կորչեն երիտասարդները, թող կորչի արդարութիւնը, բայց մենք չենք զիջի մեր ՅԱՐՄԱՐ սովեստասիրական դիրքերը։ Դա խօսում է այն մասին, որ մեր ներդաշնակ նկարագիրը մի քանի շեշտով ծածկւել է օտարներից եկող բնագծերով, որոնք առաջացնում են անհամերաշխութիւն, դաւաճանութիւն, նախանձ, եսամոլութիւն և այլն։

Խեղճ Վասակ, ազգը գամեց նրան անարգանքի սիւնին, շատ աւելի քիչ յանցանքների համար, քան այն, ինչ կատարւում է այսօր։ Բայց յուսահատւելու առիթ չկայ, քանզի այդ բոլորը մի քանի բարակ արտաքին շերտաւորումներ են, որոնք հաւկիթի կեղեւի նման կը կլպւեն և դէն կը նետւեն, մերկացնելով կեանք բերող սպիտակուցը, այսինքն դէպի փրկութիւնը տանող մեր փրկչական նկարագիրը։

Ուրեմն ո՞վ ենք մենք և ի՞նչ արժենք։

Հայկ նահապետի որդիներս, Մեծն Տիգրանի Հայաստանի լայնարձակ տարածութիւններով, ոգեշնչուած Գրիգոր Լուսաւորչով, երգուած Նարեկացիով, յաւերժացուած Խորէնացիով ու Մաշտոցով, հերոսական Աւարայրի միջով, թուրքի կողմից հալածուած և արիւնաքամ եղած, հասցրինք մենք մեր ներդաշնակ նկարագիրը մինչեւ Սարդարաբադ, իսկ այնտեղից էլ Եռագոյնի տակ եկանք անկախութեանը։ Այդ երկար ճանապարհի վրայ մեր միակ արժէքը, գանձը, զէնքը մեր նկարագի՛րն էր, մեր հաւատքը։

Եւ, եթէ տուժում էինք, ապա տուժում էինք **Էն**ից, եթէ պարտւում էինք, ապա պարտւում էինք դարից, որին չէր համապատասխանում մեր նկարագիրը։ Սակայն տուժելով, ընկնելով, պարտւելով, միշտ բարձրանում էինք կրկին, քանզի մեզ հետ էր միշտ Աստծոյ կողմից շնորհուած մեր ներդաշնակ նկարագիրը։

Առաջին համաշխարհային պատերազմի փոթորիկներից դուրս եկանք մենք դէպի փրկչական նկարագիրը տանող ճանապարհի վրայ կանգնած։ Սակայն միջազգային քաղաքական քամիները, հզօր քամիները կամաց-կամաց սկսեցին ծածկել մեր նկարագիրը սառոյցի շերտով։ Մենք սկսեցինք կորցնել մեր Էութիւնը, որը այնքան դժւարութիւններով հասցրել էինք մինչեւ ներկան։ Եւ քանզի դեռ լրիւ սառուցապատուած չենք, պէտք է կոտրել մեզ շրջապատող սառոյցի շերտը և լոյս աշխարհ հանել մեր ազգային նկարագիրը։

Ուրեմն ի՞նչ կարող ենք անել։ Վերադառնանք մենք մեզ։ Հնարաւո՞ր է դա։

Այո՛, ազգը ունի այդ փորձը։ Խորենացին մաքրեց մեր պատմութիւնը, Լուսաւորիչը՝ մեր ոգին, Կոմիտասը՝ մեր երաժշտութիւնը, իսկ մենք էլ գալիք սերունդների համար պէտք է մաքրենք մեր նկարագիրը։ Կարծում եմ, որ դրա համար պահանջւում է յատուկ հաստատութիւն, որը, վերլուծելով մեր պատմութիւնը, երաժշտութիւնը, ճարտարարւեստը, կենցաղը, կը բացայայտի մեր ազգային հոգեբանութիւնը և հայելու նման կը դնի ազգի առջեւ ասելով. «Ահա սա ես դու, սա է քո տեղը մարդկութեան բազմազգ ընտանիքի մէջ։ Թռչի՛ր, եթէ արծիւ ես, սողա՛, եթէ սողուն ես, փախի՛ր, եթէ ճգնաւոր ես, փրկի՛ր, եթէ փրկիչ ես, նահատակի՛ր, եթէ ընտրեալ ես»։

Նկարագրի մաքրումը համարում եմ շատ կարեւոր, քանզի ամէն ինչ խօսում է այն մասին, որ մօտենում է փրկչական **Էն**ը։ Ոչ մի ուրիշ դարաշրջան, ոչ մի ուրիշ մշակոյթ, այսօրւայ նման չի ձգտել բաւականութիւնների և նիւթական երջանկութեանը։ Ոչ մի ուրիշ դարաշրջան այդքան չի ատել և թերագնահատել հոգու փրկութիւնը, ինչպէս դա արւում է այսօր։ Եւ երբեք դեռ չի եղել այնպիսի քաղաքակրթութիւն, որ այսօրւայ չափ դժբախտացնի և աղքատացնի մարդուն։

Իր նպատակին հասնելու համար, այժմեան մարդը բնական կարգը փոխարինեց մի նոր արհեստական համակարգով, որը անուանեց քաղաքակրթութիւն: Երբ նա սկսում էր այդ գործը, նա վստահ էր իր ուժերի վրայ և մոռացել էր, որ իրաւունք չունի այն, ինչի նպատակը անյայտ էր: Նա համոզւած էր, որ կերտում է իրեն աւելի համապատասխանող աշխարհ, նա ուղղում էր Աստծու «սխալները»: Սակայն, որքան զարգանում էր մեքենայացումը, այնքան նսեմանում էր մշակոյթը և աղքատանում հոգեկան աշխարհը:

Եւ յանկարծ, այն արհեստական աշխարհը, որը ստեղծել էր մարդը և որին ուզում էր իշխել, ձեռք բերեց ինքնուրոյնութիւն, անջատուեց մարդուց և սկսեց ճնշել ու ստրկացնել նրան շա՛տ աւելի դաժանօրէն, քան այդ անում էր նախկին ու բանական աշխարհը: Տնտեսութեան մէջ մարդուց կտրուեց արտադրութիւնը և դուրս եկաւ նրա դէմ, որպէս ինքնուրոյն ուժ: Եթէ **անտիկ** դարաշրջանում մարդիկ աշխատում էին, որպէսզի ստեղծեն արտադրանք, ապա այսօր արտադրութիւնը աշխատեցնում է մարդուն, ինքը իրեն պահպանելու համար:

Մարքսիստները օրինակացրին այդ ստրկութիւնը, արտադրական յարաբերութիւնները յայտարարելով ինքնուրոյն և իշխող ուժ: Այդ նոյնը կատարւում է քաղաքական և պետական բնագաւառում: Եթէ նախկինում բանակ էր կազմւում պատերազմ վարելու համար, ապա այսօր պատերազմ է վարւում, որովհետեւ գոյութիւն ունի բանակ: Մարդը իր կամքով ստեղծեց պետականութիւն, որպէսզի ապահովի իր ազատութիւնը, սակայն այսօր պետութիւնը խլում է մարդու ազատութիւնը ինքը իրեն պահպանելու համար: Ամբողջ այդ արհեստական աշխարհը ճնշեց մարդուն այնպէս, որ նրան կրկին վերադարձաւ իր նախնադարեան անհանգստութիւնը:

Յոգնած արհեստական աշխարհից, նրա հոգին արդէն նորից ձգտում է բնութեան գիրկը: Եւ ուրեմն մօտենում է փրկչական **էտն**ը, որտեղ ներդաշնակ և փրկչական նկարագիր ունեցող ազգերը կրկին կ'ապրեն իրենց վերածնունդը: Այդ մասին վկայում է նաեւ մարդկութեան շատախօսութիւնը:

Խօսքը անորոշութիւնը դարձնում է հասկանալի: Խօսքը կախարդում և քողարկում է ճշմարտութիւնը: Խօսքի շնորհիւ, մարդուն յաջողւում է քողարկել իր մտքերը: Խօսքը իշխելու միջոց է: Հերոսական **էտն**ի մշակոյթը լի է դատարկաբանութիւնով: Հռոմէական քաղաքակրթութիւնը, Կիկերոնի շատախօսութիւնով, հերոսական դարաշրջանի փայլուն օրինակն է: Լուռ քաղաքակրթութիւնը անվերջութեանը ձգտող ժողովուրդների ծնունդն է:

Այժմեան քաղաքակրթութիւնը ամենապոռոտախօսն է և աղմկոտը: Այդ աղմուկի տակ նա քողարկում է իր դատարկութիւնը: Մինչդեռ բնութեան գրկում կերտւած մշակոյթը լուռ արտայայտում է բնական գեղեցկութիւնը, նա

շատախօսելու կարիքը չունի, նրա գեղեցկութիւնը բնական է, նա միայն արտացոլում է, խօսքը կարող է միայն խանգարել տեսնելու իրական արժէքները։

Եւ, եթէ մենք՝ հայերս չենք ուզում բոլոր պրոմետէոսական ազգերի հետ միասին կործանուել գալիք էոնում, պարտաւոր ենք վերականգնել մեր փրկչական նկարագիրը, մեր խաղաղ, անաղմուկ արուեստը։

Սա՛ ենք մենք և սա կարող ենք անել։

Մնացածը՝ միասնութիւնը, թուրքից հող առնելը, իրաւունքների վերականգնումը, ազգապահպանումը, միացեալ-անկախը կը գան ինքնաբերաբար։

1974

ԿԱՐՈ՞Ղ Է ԱՐԴԵՕՔ ՀԵՐՈՍՈՒԹԻՒՆԸ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼԻՆԵԼ

Դոկտ. Է. Յովհաննիսեան

Մեր աշխատակիցի սոյն խորագրով պատրաստած ու մեզի ղրկած յօդուածը փաստօրէն կը պարունակէր երկու տարբեր մասեր, թէեւ անշուշտ, հասկանալի պատճառներով, իրարու հետ կապակցուող մասեր: Նկատի ունենալով իր արծարծած հիմնական հարցի շահեկանութիւնը, փափագեցանք ընթերցողի ուշադրութիւնը կենդրոնացած պահել համազգային հերոսութեան մասին մեր աշխատակիցի արտայայտած մտածումներուն վրայ, ուստի յօդուածէն անջատեցինք և տարբեր թիւով մը պիտի տանք Սոլժենիցինի տեսակէտներուն վերաբերմամբ ռուս գրագէտ Լէյտինի կատարած քննադատութեանց առթիւ դրկտ. Է. Յովհաննիսեանի վերլուծումներն ու յայտնած տեսակէտները:

Յառաջագունէ ըսենք, թէ մեր աշխատակիցի արտայայտած մտքերուն մէջ մաս մը, մասնաւորաբար Հայաստանէն արտագաղթի հարցին հետ կապ ունեցող մասը, մենք չենք բաժներ և այդ մասին պիտի արտայայտուինք իր այս յօդուածի կողքին իսկ: Կը ներկայացնենք սակայն մեր աշխատակիցի մտածումները, ոչ միայն կարելիութիւնը ընծայելու համար իրեն իր մտածումները ազատօրէն արտայայտելու, այլ նաեւ մղելու համար մեր ընթերցողները մտածելու այդ հարցերու կապակցութեամբ և յստակացնելու համար սեփական մտածողութիւնը, հարցերը քննելով զանազան և հակադիր դիրքերէ:

ԽՄԲ.

Վերջին ժամանակներս ազգերի, պետութիւնների կամ մարդկութեան փրկութեան առաջարկները այնքան են շատացել, որ անհնարին է դարձել հետեւել և վերլուծել այդ առաջարկները: Առաւել եւս շատ են Ռուսաստանը բռնապետութիւնից փրկելու առաջարկները: Դժբախտաբար այդ առաջարկների մէջ կան այնպիսի ծրագրեր, որոնք պահանջում են համազգային հերոսութիւն: Իմ կարծիքով, բոլոր այն գաղափարախօսութիւնները, ծրագրերն ու նպատակները, որոնք հիմնւում են հերոսների վրայ, այսինքն որոնք ամբողջ ազգից կամ երկրից պահանջում են հերոսութիւն, ոչ մէկ արժէք չունեն և չեն կարող իրականանալ:

Չի կարելի ամբողջ ազգից պահանջել հերոսութիւն: Ազգերը ոչ միայն դրան ընդունակ չեն, այլեւ դա նոյնիսկ վնասակար է նրանց համար: Ի՞նչ արժէք ունեն այն ծրագիրները, որոնք նպատակին հասնելու ճանապարհի վրայ ամբողջ ազգը վեր են ածում հերոսների, այսինքն անձնազոհ մարդկանց, որոնք

հրաժարւել են ընտանիքից, գեղեցկութիւնից, հաճոյքից և վերջապէս կեանքից, յանուն ազգի։ Եթէ կեանքից հերոսաբար հրաժարւել է ամբողջ ազգը, եթէ նա դադարել է սիրել, երգել, բազմանալ, առաջադիմել, էլ նպատակս ո՞րն է։

Բայց թողնենք նպատակայարմարութեան հարցը, դիմենք հնարաւորութեանը։

Յիւրիխում, վերջին մամուլի ասուլիսի ժամանակ Ալեքսանդր Սոլժենիցինը նորից և նորից կրկնեց իր անիշխանական թեզը՝ «ապրել առանց ստի», որպէս միակ հնարաւորութիւն ազատելու բոլշեւիզմից։ Բաւական է չծափահարել,- ասում է նա,- և կը փլւի վարչակարգը։ Ինչ խօսք, որ Սոլժենիցինի առաջարկը ունի շատ խորը արմատներ։ Նա փաստօրէն հիմնւում է այն կրօնական գաղափարի վրայ, որ անկատար էակներից անհնարին է կառուցել կատարեալ հասարակարգ և, ուրեմն, առաջին հերթին, պէտք է կատարելագործել մարդուն։ Չքննադատենք ուրիշի սխալները,- ասում է նա,- դիմենք մենք մեզ և չծափահարենք, եթէ այդ ծափահարութիւնը կեղծաւորութիւն է։

Բայց արդեօք հեշտ է չծափահարել այն երկրում, որտեղ ծափահարութիւնը տալիս է պաշտօն, աշխատավարձ, որտեղ կեղծաւորութիւնը զգալիօրէն բարելաւում է քո կեցութիւնը, որտեղ անկեղծութիւնը տանում է դէպի ճամբար կամ գժանոց։ Ի՞նչպէս կարելի է այս պայմաններում առաջարկել չծափահարել, մի՞թէ սա հերոսութիւն չէ։ Հետեւելով այս տրամաբանութեանը, կարելի է ասել, որ շատ հեշտ է բուժւել հարբեցողութիւնից կամ հաշիշամոլութիւնից. դրա համար բաւական է ՄԻԱՅՆ չծխել կամ չխմել։ Բայց հէնց դա է ամենադժւարը և բուժման ամբողջ նպատակը։ Ուրիշ խօսքով՝ Սոլժենիցինի «առանց ստի ապրելը» հասարակական **նպատակ է, այլ ոչ միջոց**։ Իսկ որդեգրել դեռ չհասած նպատակը, դա արդէն հերոսութիւն է, որին բոլորը չեն ընդունակ։

Ես շօշափեցի այս նիւթը, որովհետեւ հայ ընկերային կեանքն էլ լի է հերոսութիւն պահանջող գաղափարներով ու առաջարկներով։ Դիմեմ դրանցից մէկին։ Խորհրդային Հայաստանից արտագաղթելու հարցում բոլոր կազմակերպութիւնները, քաղաքական կուսակցութիւնները, Հայաստանի կառավարութիւնը, Կոմունիստական կուսակցութիւնը ու ԿԳԲէն (զարմանալի միասնութիւն) համակարծիք են, որ անհրաժեշտ է գործադրել բոլոր ուժերը, որպէսզի այդ աղէտի դէմը առնւի։ Ինչ խօսք, որ արտագաղթը, ինքն ըստ ինքեան, որպէս գաղափար անընդունելի է։ Սակայն տեսնենք, թէ ինչ արժի մեր բոլորիս դէմ լինելը։

Նախ և առաջ ճշտենք, որ Հայաստանից դուրս գալու հնարաւորութիւն ունեցողներից պահանջել մնալ այնտեղ՝ նշանակում է պահանջել նրանցից հերոսութիւն։ Արւեստագէտը ուզում է տեսնել Յունաստանը, փիլիսոփան, բացի մարքս-լենինեան դատարկաբանութիւնից, ուզում է ծանօթանալ ժամանակա-

կից փիլիսոփաների աշխատութիւնների հետ, գրականագէտները ուզում են կարդալ Սոլժենիցինին, բանւորները ուզում են ունենալ աւտոմեքենայ, գիտնականները ուզում են ազատ արտայայտուել, հասարակ մարդիկ ուզում են առանց գողութեան չմեռնել սովից, աղջիկները ուզում են մարդավարի հագնուել… Իսկ մենք նրանց ասում ենք, ոչ, յանուն ազգային իդէալների, դուք պէտք է մնաք տեղներումդ, այսինքն հայրենիքում: Հերոսութիւն չէ՞ սա, արդեօք:

Իսկ նա, Հայաստանից այն դուրս եկողը ամենեւին էլ հերոս չէ, և անկեղծօրէն խոստովանում է: Նա հասարակ մարդ է և ուզում է մարդավարի ապրել: Բոլորի համար նոյն մարդը առանց գողութեան իր ապրուստը կարող է լաւացնել 4-5, իսկ որոշ դէպքերում էլ 10 անգամ: Իսկ մենք նրան ասում ենք, ոչ, դու մի լաւացրու քո ապրուստը, յանուն քո ազգի ապագային, մնայ այնտեղ և զոհաբերիր: Իսկ նա հերոս չէ, նա խեղճը չգիտէ էլ, որ այդքան մեծ է տարբերութիւնը, որ բանւորի կէս ամսւայ աշխատավարձով կարելի է աւտոմեքենայ գնել, որ գործազրկութեան նպաստը իր աշխատավարձից մի քանի անգամ աւելին է, որ հնարաւոր է ճամբորդել ամբողջ Եւրոպայով, առանց որեւէ արտօնագրի, այսքանը նա չգիտի, այս մասին նրան, շատ են խաբել, նա միայն երազում է գոնէ երկու անգամ բարելաւել իր ապրուստը:

Եւ ի՞նչ իրաւունքով ենք մենք նրան արգելում դա անել: Ո՞վ է մեզանից յանուն ազգի երկու անգամ պակասեցնում իր ապրուստը: Ո՞վ է մեզանից իր եկամուտի կէսը տալիս ազգային գործերին (ակումբ, եկեղեցի, կուսակցութիւն): Ո՞վ է մեզանից այդքան զոհաբերում: Ու չմոռանանք այն հանգամանքը, որ մեզ համար ապրուստի երկու անգամ պակասեցումը նշանակում է միայն չորս մատանիի փոխարէն ունենալ երկուսը և «Մերսեդեսի» փոխարէն ունենալ «Սիմկա»: Իսկ նրանց համար դա նշանակում է տարիներով **մանդարինի** համը չտեսած երեխային կերակրել:

Էլ ի՞նչ իրաւունքով ենք մենք նրանցից հերոսութիւն պահանջում, եթէ ինքներս այդպիսին չենք: Գուցէ է՛ւ կան մեր մէջ մարդիկ, որոնց ազգային զոհաբերութիւնները համեմատելի են Հայաստանից դուրս չեկողների հետ, բայց կասկածից վեր է, որ այդպիսիները արդէն վաղուց գրանցւած են ազգային ցուցակներում: Իսկ նրանք, կրկնում եմ, հերոսներ չեն: Հերոսները կառքին լծւած ձիերն են և ոչ թէ կառքում նստած ուղեւորները: Ճանապարհորդութեան ամբողջ իմաստը կը կորչէր, եթէ ուղեւորներին իջեցնէին կառքից և լծէին ձիերի հետ միասին: Ուղեւորների պարտականութիւնն է միայն խնամել և կերակրել ձիերին, մնացածը ձիերի գործն է:

Այդ իմաստով էլ տեղափոխութիւնները չպէտք է մեծ սարսափ առաջացնեն: ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՐՏԱԳԱՂԹԻՑ ԵՐԲԵՔ ՉԻ ԴԱՏԱՐԿԻԻ: Ներքին Սփիւռքը

կազմ-պատրաստ սպասում է դուրս եկողների տեղը գրաւելու համար: Իսկ, եթէ, օրինակ, Միւնխենի այն 4-5 հոգուն, որոնց ուսերի վրայ է ծանրաբեռնուած գաղութի ամբողջ ազգային կեանքը, միանային Աբովեանով թրեւ եկող մի 10-15 հոգի, դրանից ընդհանուր գործը միայն կը շահէր:

Ի հարկէ, ամէն ինչ կախուած է հարցի դրուածքից: Եթէ Սփիւռքի միակ անելիքը ազգապահպանումն է, ապա շատ բնական է Հայաստանից դուրս եկողներին ասել. «Ո՞ւր էք գալիս, մենք հազիւ մեզ ենք կարողանում պահպանել, ձեզ ի՞նչպէս պէտք է պահպանենք»: Բայց եթէ Սփիւռքը ճակատ է, ուրեմն մենք գրկաբաց պէտք է բացագանչենք. «Եկէք, եղբայրներ, մեր բանակը պակասել է, եկէք ու գրաւէ՛ք զոհուածների տեղերը»: Բայց ամենակարեւորը այն է, որ ուզենք թէ չուզենք, դուրս եկողը դուրս կը գայ: Այսօր աշխարհի մեզանից շատ աւելի հզօր ուժեր գտնւում են արտագաղթի ճակատի հակառակ կողմում: Խորհրդային Միութիւնից քաղաքացիների ազատ դուրս գալու համար պայքարում են աշխարհի գրեթէ բոլոր երկրների առաջադէմ մտաւորականութիւնը, Միացեալ Նահանգների, Անգլիայի և շատ ուրիշ երկրների կառավարութիւնները, աշխարհի ամբողջ հրէութիւնը, ռուս տարագրութիւնը, երկրի ներսի այլախոհները և այլն, և այլն:

Այդ իմաստով սխալ պէտք է համարել, երբ դուրս եկողներին մենք նայում ենք արհամարհանքով, կպցնելով նրանց վրայ դաւաճանի կնիքը և դրանով ստեղծում ենք մի նոր համայնք. «Խորհրդային Միութիւնից դուրս եկած հայեր»: Մինչեւ այսօր, դժբախտաբար, դեռ զգացնել է տալիս իրեն արեւմտահայի և արեւելահայի խնդիրը, միայն այն էր պակասում, որ հիմա էլ մի երրորդ տեսակի հայ ստեղծի: Նրանց, ովքեր կը շտապեն եզրակացնել, թէ ես ինձ եմ փորձում արդարացնել, պատասխանում եմ.- Այս ամէնը ինձ չի վերաբերւում, որովհետեւ արտասահմանում ես չեմ լաւացրել իմ ապրուստս և ոչ էլ լքել եմ հայկական շրջանակների կողմից: Արտագաղթի հարցը ես բարձրացրի միայն որպէս օրինակ այնպիսի մի գաղափարի, որը համազգային հերոսութիւն է պահանջում:

Բայց միւս կողմից մենք տեսնում ենք, որ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՈՎ ՕԺՏԻԱԾ ազգերը յաճախ պատերազմական կամ այլ ճգնաժամային պահերին դիմում են համազգային հերոսութեան և կարողանում են լաւ արդիւնքների հասնել այդ ուղղութեամբ: Ի՞նչպէս է նրանց դա յաջողւում: Գաղտնիքը նրանումն է, որ նրանց համազգային հերոսութիւնը լինում է ոչ թէ կամաւոր, այլ զէնքով ու հասարակական կարծիքով պարտադրուած: Յայտնի է, որ պետութեան անհրաժեշտութիւնը ծնւել է մեր թերութիւններից և այդ թերութիւններ ու անկատարութիւնն է, որ պարտադրական կարգով ուղղւում է իշխանութեան կողմից: Պետութիւնը վախկոտներին դարձնում է քաջ, ժլատներին՝

առատաձեռն, անբարոյականներին՝ բարոյական, աշխատաւորին զինւոր և քաղքենիին՝ հերոս։

Ինչ խօսք, որ այս պարտադրւած հերոսութիւնը ունի այլ հոգեբանական արժէք, բայց պետական գործունէութեան արդիւնքների իմաստով ոչ մի տարբերութիւն չկայ նրանում՝ կամաւո՞ր է զոհաբերւել գումարը, թէ նրանից դա խլւել է պարտադիր տուրքի կարգով։ Կասկածից վեր է, որ այս երկրորդ «պետական հերոսութեան» ուղին սկզբունքօրէն տարբերւում է Սոլժենիցինի և բոլոր անիշխանականների ուղղութիւնից։ Եթէ անիշխանականները համարում են, որ անկատար մարդկանցից անհնարին է ստեղծել կատարեալ համակարգ և ուրեմն անհրաժեշտ է կատարելագործել մարդու էութիւնը, ապա պետութեան կողմնակիցները համարում են, որ համապատասխան վարչակարգը ի վիճակի է փոխհատուցանել մարդու ոչ-կատարեալ լինելը։

Պէտք է ասել, որ վերջին ժամանակներս տեխնիկական գիտութիւնների ասպարէզում, յատկապէս հաշւիչ սարքաւորումների բնագաւառում, մեծ զարգացում է ստացել անյուսալի մասերից յուսալի համակարգեր ստեղծելու տեսութիւնը։ Առանց խորանալու այդ տեսութեան մաթեմատիկական և տեխնիկական նրբութիւնների մէջ, որոշ ընդհանուր գծեր կարելի է նշել։ Անյուսալի մասերը բնութագրւում են նրանով, որ այս կամ այն յաճախականութեամբ նրանք հրաժարւում են կատարել իրենց համար նախատեսւած գործողութիւնները։ Օրինակ, լոյս մարելու կոճակը,եթէ անյուսալի է, ապա նա կարող է 10-20 փորձի ժամանակ 2-3 անգամ լոյսը չմարել։ Այդպիսի կոճակի մասին ասում են, որ նրան լոյս մարելու հաւանականութիւնը մէկից ցածր է։ Սակայն մի քանի այդպիսի անյուսալի կոճակներից կարելի է ստեղծել այնպիսի ելեկտրական շղթայ, որը մէկի մօտ հաւանականութեամբ կ'ապահովի լոյսի մարումը, այսինքն անյուսալի մասերից կը ստեղծւի լոյս մարելու յուսալի յարմարանք։ Այդպիսի համակարգը չի կարելի համարել դրսից ղեկավարւող։ Այստեղ բռնութիւն չկայ, համակարգը ինքն է իրեն ղեկավարում։ Համակարգում օգտագործւող ամէն մի կոճակ մնացել է իր անկատար վիճակում, բայց կառուցւածքի շնորհիւ, ամբողջ համակարգը դարձել է կատարեալ։ Պետականութիւնից զրկւած ազգերը, իմ կարծիքով պէտք է ընտրեն այս ուղղութիւնը, հէնց նրա համար, որ բացակայում է վախկոտներին հերոս դարձնող պետութիւնը, և նրա համար, որ շատ քիչ են հերոսները, որպէսզի նրանց հաշւով գաղափարներ ստեղծւեն ու նրանց միջոցով գաղափարներ իրականանան։

Ինչ խօսք, որ այս ուղղութիւնը բարդ է։ Նա պահանջում է առաջին հերթին Սփիւռքի հոգեբանական ու տնտեսական խորը ուսումնասիրութիւնները, նա պահանջում է ղեկավարներից եռանդ, կարգապահութիւն և անձնազոհութիւն, նա պահանջում է բռնութիւն, նա պահանջում է սերտ կապերի մէջ

մտնել հայրենիքում ապրող հայերի հետ, պահանջում է բռնութիւն (եթէ յուսալիութեան հաւանականութիւնը իջել է մինչեւ զրօ)։ Այո, բարդ է այս ուղղութիւնը, բայց, իմ կարծիքով, միակն է։ Մի խօսքով՝ ամբողջ հայ աշխարհում անհրաժեշտ է ստեղծել մի այնպիսի ցանց, որի շնորհիւ, նոյնիսկ ոչ-կատարեալ անձերից կազմւած համայնքները ազգային խնդիրների լուծման իմաստով գործեն կատարեալ համակարգերի նման։

Հերոսներ պահանջող ու միայն հերոսների վրայ հիմնւող գաղափարները պարտադրում են հերոսական անջատում իրենց գաղափարները չընդունող հասարակութիւնից։ Բայց եթէ հայ հերոսները անջատւեն ոչ-հերոս հայերից, այսինքն ժողովրդից, որը հերոս լինել ամենեւին էլ պարտաւոր չէ, ապա կը կորչի ազգային շարժման ամբողջ իմաստը։ Եւ, ուրեմն, այս ճանապարհը փակ է մեզ համար։ Փակ է նաեւ պարտադրական համազգային հերոսութեան ճանապարհը, քանի որ մենք զրկւած ենք պետականութիւնից, իսկ այն միւս խրտւիլակային մասը զուրկ է իսկական իշխանութիւնից։ Ուրեմն մնում է միակ ճանապարհը որը ես անւանեցի անկատար մասերից կատարեալ համայնքի ստեղծում։ Ի՞նչպէս կարելի է դա իրագործել։

Ես կարծում եմ, որ դրա համար գոյութիւն ունի միայն մէկ միջոց, ՎԵՐԱԿԱՌՈՒՑԻԵԼ ՈՒԽՏԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՈՎ։ Արդէն լսում եմ վրդովւած ձայներ, «Այդ էր պակաս, որ դու մեզ խելք սովորեցնէիր»։ Բայց ներողամիտ եղէք, կուսակցական ընթերցողներ, ոչ ոքի ոչինչ չեմ սովորեցնում, դրա համար չունեմ ոչ ձեր փորձը, ոչ ձեր գիտելիքները և ոչ էլ այդքան անհամեստ եմ. պարզապէս արտայայտում եմ իմ կարծիքը, օգտւելով իմ ազատ արտայայտւելու իրաւունքից, որից զուրկ էի երկար տարիներ։

Պատմական փորձը ցոյց է տալիս, որ մեր վիճակում ուխտերը շատ աւելի մեծ արդիւնքների են հասել, քան կուսակցութիւնները։ Կարելի է յիշատակել ճիզւիտների ուխտը, մասոնական կարգը, ասպետական ուխտերը և հէնց մեր Դաշնակցութիւնը, որ սկզբնական շրջանում, երկար ժամանակ, գործում էր որպէս ուխտ։ Ինչո՞վ է տարբերւում ուխտը կուսակցութիւնից։ Նրանով, որ կուսակցութիւնը արտաքին աշխարհում որդեգրում է որեւէ համամարդկային գաղափար (կոմունիզմ, ֆաշիզմ, ընկերվարութիւն, միապետութիւն և այլն), իսկ ներսում զբաղւում է ազգային կեցութեան բոլոր հարցերով (տնտեսութիւն, կրթութիւն, մշակոյթ, քաղաքականութիւն և այլն)։ Եւ քանզի բազմակողմանի և համազգային են կուսակցութեան խնդիրները, նրա միակ նպատակը պէտք է լինի իշխանութեան գլուխ անցնելը։ Աշխարհի բոլոր կուսակցութիւնները ունեն այդ նպատակը։ Եթէ իշխանութեան գլուխ անցնելու խնդիր չկայ, ապա կուսակցութիւնը, որպէս կուսակցութիւն, կորցնում է իր իմաստը։

Իսկ ուխտը ասպետների, մեր դէպքում ազգային ասպետների միութիւն է: Նրա անդամները բոլորովին զուրկ են անձնական կեանքից, նրանք անձ չունեն, նրանք անդամավճարներ չեն մուծում, նրանք ամբողջովին պատկանում են ազգին: Այդ ասպետները, ցրւած բոլոր հայ գաղութներով, իրենց անձնական զոհաբերութեամբ, բարձր որակով ու նւիրւածութեամբ, մոմի նման այրւելով լուսաւորում են շրջապատը: Այդ լոյսի տակ, լոյս չարձակող, ոչ-կատարեալ մասնիկներն էլ լոյս են արտացոլում:

Ինձ, ի հարկէ, կարող են առարկել, թէ այս նոյն պարտականութիւնները կարելի է նաեւ կուսակցականին ՊԱՐՏԱԴՐԵԼ: Ամենախիստ կուսակցական կարգապահութիւնը ի վիճակի չէ և իրաւունք էլ չունի իր անդամի կեանքը պահանջելու: Ճիշտ է, կուսակցութիւնը կարող է իր անդամից մի քիչ աւելին պահանջել, քան հասարակ մարդուց, բայց ի վերջոյ ամէն մի կուսակցական օժտւած է իր անձի ազատութեան իրաւունքով:

Էլ չխօսենք այն ժողովրդավարական կուսակցութիւնների մասին, որոնց անդամների ազատութիւնը գրեթէ բացարձակ է: Մի տարեց դաշնակցական ինձ պատմեց հետեւեալ յատկանշական պատմութիւնը: Մէկ անգամ կուսակցութեան համար դրամ հաւաքելիս, մի կուսակցական պահանջւած 100 տոլարի փոխարէն տւել է միայն 30ը: Երբ նրան ամօթանք են տւել, նա պատասխանել է. «Ընկեր ջան, ես էլ 30 տոլարի դաշնակցական եմ»: Եւ դրա մէջ մեծ ճշմարտութիւն կայ:

Կուսակցականը ազատ է կամ գրեթէ ազատ է իր զոհաբերութիւնների հարցում: Այդպիսին չէ ուխտի ասպետը: Ուխտը կնքելուց յետոյ, նա չունի ոչ մի ազատութիւն, նրա ամբողջ կեանքը պատկանում է ազգին, նրան ոչ ոք չի պարտադրում, նա կամաւոր է ընտրել այդ անազատութիւնը, որը վերջին հաշւով բարձրագոյն ազատութիւն է:

Կարո՞ղ է արդեօք մեր ազգը ստեղծել այդ ասպետների ցանցը: Եթէ ինձ պատասխանեն, որ հէնց այդպիսին է մեր Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, ուրեմն մտահոգւելու կարիք չկայ, ուրեմն կուսակցութիւնը ուխտ է, և միայն աւանդութեանը տուրք տալով շարունակում է կոչւել կուսակցութիւն:

1975

ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱՅ

Է. Յովհաննիսեան

Լիբիայի մայրաքաղաք Տրիպոլիում վերջերս աւարտուեց մահմեդական երկրների արտաքին գործոց նախարարների խորհրդաժողովը։ Մասնակիցների կողմից ընդունւած բանաձեւում ընդգծւում է խորհրդաժողովին մասնակցող երկրների վճռականութիւնը՝ աջակցելու Պաղեստինեան պետութիւն ստեղծելուն։ 38 մահմեդական երկրներ գնդապետ Կադաֆիի ղեկավարութեամբ քննարկում էին միջազգային քաղաքական խնդիրներ։ Չի կարելի ասել, որ նրանք մի ինչ որ նոր խօսք ասեցին քաղաքական ասպարէզում, բայց կարեւորը դա չէ, կարեւորը այն է, թէ ինչ սկզբունքով էին հաւաքւել խորհրդաժողովի մասնակիցները։ Մասնակիցների ընդհանուր հողը Իսլամն էր, այսինքն բարոյական սկզբունքները և հոգեկան միասնութիւնը, որ գոյութիւն ունի այդ երկրների քաղաքացիների միջեւ։ Ճիշտ է, այդ սկզբունքները ո՛չ միշտ և ո՛չ ամբողջովին են կատարում իրենց դերը մահմեդական պետութիւնների քաղաքական փոխյարաբերութիւնների մէջ, բայց այնուամենայնիւ խորհրդաժողովի մասնակիցները փորձում էին ընդգծել իրենց մահմեդական միասնութիւնը։ Բաւական է ասել, որ գնդապետ Կադաֆին իր ելոյթում յայտարարեց, որ Եգիպտոսը և Սուդանը, հրաժարւելով ուղարկել իրենց ներկայացուցիչներին, փաստօրէն շեղւել են Իսլամի ճանապարհից։

Այսպիսով, Իսլամը փորձում են դարձնել միասնական քաղաքականութիւն վարելու միջոց։ Այս նոյն փորձերը, բայց այլ հողի վրայ կատարում է միջազգային կոմունիստական շարժումը, տարբեր երկրների համար կոմունիստական գաղափարախօսութիւնը դարձնելով քաղաքական միասնութեան միջոց։

Ու չնայած նրան, որ ոչ կրօնական և ոչ էլ գաղափարախօսական միասնութիւնը չի կարող մեծ ազդեցութիւն թողնել քաղաքականութեան վրայ, որ խարսխւած է ազգային կամ պետական միասնութեան վրայ, այնուամենայնիւ ազգային քաղաքականութիւն վարելու անհրաժեշտ պայմաններից մէկն էլ ներքին կրօնական և գաղափարական միասնութիւնն է։

Այստեղ կրօն և գաղափարախօսութիւն բառերը ես օգտագործում եմ այն լայն իմաստով, որ ընդգրկում է քաղաքական նպատակի, պայքարելու միջոցների, բարոյական և ընկերային սկզբունքների միասնութիւնը։

Անշուշտ, ոչ մի ազգ իր ներքին կեանքում չի կարող այս լայն իմաստով ունենալ բացարձակ միասնութիւն։ Տարբեր են մարդիկ, տարբեր են նրանց գա-

դափարները, զգացմունքները ու բարոյական սկզբունքները, ուստի անխուսափելի են տարակարծութիւնները քաղաքական հողի վրայ։ Սակայն, գոնէ համաձայնւենք նրանում, որ որքան մեծ լինեն տարակարծութիւնները, այնքան անվնիթար կը լինի մեր ապագան։ Ու քանզի կան տարակարծութիւններ, որոնք բարեբախտաբար կարծես թէ գտնւում են դէպի նւազումը տանող ճանապարհի վրայ, լաւ կը լինի խօսել այդ մասին բարձրաձայն և անընդհատ։

Կարծում եմ, որ բոլոր նրանք, ովքեր մտահոգւած են հայ ժողովրդի ճակատագրով և կարդում են սփիւռքահայ մամուլը, գոհունակութեամբ նշեցին երկու հիմնական փոփոխութիւն մեր ազգային ներքին կեանքում։

Առաջինը՝ մերձեցում քաղաքական նպատակների ոլորտում և երկրորդը՝ որոշ քայլեր Անթիլիասի և Էջմիածնի հաշտութեան ուղղութեամբ։

Ինչպէս յայտնի է, անցեալում քաղաքական նպատակների շուրջ տեղի ունեցող սուր վէճերը անմիջականօրէն կապւած էին Խորհրդային Հայաստանի կացութեան և դրսեւորում էին նրա վարչակարգի նկատմամբ բռնած դիրքով։ Այսօր, արդէն, քաղաքական նպատակների տեսադաշտում Խորհրդային Հայաստանը բացակայում է և յստակօրէն ձեւակերպւել է միակ ու գլխաւոր հակառակորդը՝ ցեղասպան թուրքի ժառանգորդը։ Պէտք է ասել, որ այս թշնամու նկատմամբ ոչ մի ժամանակ տարակարծութիւններ չեն եղել, բայց նրան միակը դարձնելը, պայմաններ ստեղծեց Սփիւռքում որոշ միասնութիւն ստեղծելու համար։ Զարմանալ կարելի է միայն, թէ ինչու այս բանը, այսինքն պայքարի սուրը դէպի Թուրքիան ուղղելու իրողութիւնը չեն ուզում հասկանալ նրանք, ովքեր քաղաքական կուրութիւնից թէ այլ պատճառներից դրդւած, ոչ միայն չեն օգտագործում ստեղծւած կացութիւնը, այլ շարունակում են քարկոծել Դաշնակցութիւնը, կարծես թէ ցանկանալով խանգարել Սփիւռքի միասնութեան ճիգերը։

Անթիլիասում Աթոռակից-կաթողիկոսի ընտրութիւնների ժամանակ ի յայտ եկաւ նաեւ Անթիլիասի և Էջմիածնի միջեւ հաշտութիւն հաստատելու ցանկութիւնը։ Անշուշտ սա էլ ազգային միասնութեանը նպաստող մի քայլ էր։ Բայց հէնց այստեղ է, որ պէտք է ցաւով նշենք, որ գաղափարական, այսինքն նպատակային և կրօնական միասնութիւնը, դեռ քաղաքական միասնութիւն չէ։ Այս վերջինը պահանջում է նաեւ պայքարը և պայքարի միջոցները ճանաչելու միասնութիւնը։ Այս հարցում մենք դեռ շատ հեռու ենք միասնութիւնից։

Իմ առաջ, Իստամբուլում հրատարակւող քաղաքական, հասարակական **«Մարմարա»** օրաթերթն է։ Առաջին էջում կարդում ենք Թորգոմ Ստեփանեանի **«Ինչո՞ւ անպատճառ հայերը»** յօդւածի թարգմանութիւնը, զոր հեղինակը թուրքերէնով հրատարակել է **«Ճումհուրիէթ»**ի մէջ։ Այս յօդւածից պարզւում է, որ «Մենք դարերով եղբօր պէս, և քովքովի ապրել ենք թուրքերու հետ։ Մեր

բարքերը, երգերը, կերուխումը, խաղերը և ապրելակերպը ու դեռ ուրիշ շատ մը բաներ նոյնացած են իրարու։ Այնքան իրարու շաղախուած ենք, որ կարծես թէ միաձոյլ հաւաքականութիւն մըն ենք»։ Եւ որովհետեւ այսքան եղբայրական են մեր յարաբերութիւնները, յօդուածի հեղինակը զարմանում է, թէ ինչո՞ւ անպատճառ հայերը պէտք է սպանած լինեն թուրք դեսպաններին։ Բացի զարմանքից, հեղինակը յայտնում է նաեւ վստահութիւն, որ «հայ հաւաքականութիւնը անգամ մըն ալ պիտի չգայ եօթանասուն տարի առաջ սարքուած խաղերուն և անոնց հետեւանքներուն»։

Անշուշտ կարելի էր ուշադրութիւն չդարձնել այսպիսի յայտարարութիւնների վրայ, ի նկատի ունենալով, որ այս ձայները դուրս են գալիս Թուրքիայի ներսից։ Կարելի էր ներել բոլոր նման յօդուածների հեղինակներին, ինչպէս մենք ներում ենք խորհրդային հային նրա ձեւական կոմունիստասիրութեան և սովետասիրութեան համար։ Բայց դժբախտաբար այսպիսի ձայներ բարձրանում են ոչ միայն Թուրքիայի ներսից և թուրքական անձնագրեր ունեցող անձերից, այլ նոյնիսկ Եւրոպայի կենտրոնից և եւրոպական քաղաքացիներից։ Եւ յետոյ, ինչո՞ւ ներել նրանց, ովքեր ոչ թէ Թուրքիայի հայապատկան հողերի վրայ են, այլ Իստամբուլում։ Ի՞նչ են կորցրել նրանք այնտեղ։ Շատ ցաւալի է, որ նրանց բարքերը, երգերը և կերուխումը նոյնացած են թուրքերի հետ։ Ցաւալի է, որ նրանք այնքան են թուրքացել, որ տարբերութիւն չեն տեսնում Կոմիտասի և **«բայաթի»**ների մէջ։

Սակայն ես համարում եմ, որ այդպէս չէ, որ չի կարող հայ մարդը թուրքանալ իր բարքերով ու նկարագրով։ Ուրեմն, **«Մարմարա»**յի և ամբողջ թուրքահայ գաղութի թուրքասիրութիւնը կեղծ է, յարմարւողականութիւն է և ինքնախաբէութիւն։ Ոչ թուրքն է հաւատում նրանց անկեղծութեանը և ոչ էլ իրենք։ Ուրեմն ինչո՞ւ սեփական կամքով զրկւել ազատ ու անկեղծ արտայայտւելու իրաւունքից։ Բայց չշեղւեմ։

Ինչպէս արդէն ասացի, քաղաքական միասնութիւնը, բացի նպատակային միասնութիւնից պահանջում է նաեւ պայքարելու անհրաժեշտութիւնը և պայքարի միջոցները ընդունելու միասնութիւն։ Բայց այդ հարցում առաջանում են հետեւեալ տարակարծութիւնները։

1.- Եթէ որեւէ ձեւի պայքար սկսւի Թուրքիոյ դէմ, չի՞ վտանգի դա արդեօք Սփիւռքի համեմատաբար խաղաղ ու հանգիստ կեանքը։

2.- Այդքան կարեւո՞ր են արդեօք մեզ համար ինքնավարութիւնը և մեր ազգային արժանապատւութիւնը, որ ոտնակոխւեցին 1915 թւին, որ մենք համաձայնւենք յանուն դրա վտանգելու մեր հանգստութիւնը։

3.- Արդեօք անհրաժե՞շտ է մեզ ինքնավարութիւնը որպէս գոյատեւման պայման, թէ նրա համար մղւող պայքարը ոչ այլ ինչ է, եթէ ոչ վրիժառութիւն։

4.- Անիմաստ չէ՞ արդեօք որեւէ պայքարը մի հզօր պետութեան դէմ աշխարհով մէկ ցրւած ու քաղքենիացած (չամաչենք այս բառից) մի ժողովուրդի կողմից:

5.- Հրաժարւելով Խորհրդային Հայաստանի անկախութեան համար պայքարելուց, արդեօք չե՞նք հրաժարւում մենք միացեալ ու անկախ Հայաստանի գաղափարից:

6.- Չի՞ սպառնում արդեօք հայ ժողովրդին միջազգային ատելութիւն և ոճրագործի համբաւ, եթէ նա իր պայքարում ճնշամիջոցներ օգտագործի թշնամու դէմ:

Այս և նման հարցերի շուրջ խմորւում են նոր տարակարծութիւններ, որոնք սպառնում են առաջացնել Սփիւռքում նոր պառակտում, այս անգամ արդէն ոչ թէ կրօնական ու գաղափարական, այլ բուն քաղաքական հողի վրայ, այսինքն՝ ազգային քաղաքականութիւն վարելու հողի վրայ:

Բոլոր այս հարցերի վերաբերեալ ես կը յայտնեմ իմ կարծիքը, յուսալով, որ ուրիշներն էլ կ'արտայայտւեն, որովհետեւ հարցերի ու տարակարծութիւնների բարձրաձայն քննարկման հիման վրայ միայն կարելի է խուսափել պառակտումից ու վտանգաւոր թշնամութիւնից:

Սկսեմ նրանից, որ իմ կարծիքով, այո՝ Թուրքիոյ դէմ որեւէ պայքար սկսելուն պէս խանգարւելու է Սփիւռքի համեմատաբար խաղաղ ու հանգիստ կեանքը: Մենք հիանալի գիտենք մեր ոճրագործ թշնամուն, որ թէ՛ Կիպրոսում և թէ աշխարհի տարբեր ծայրերում իր վարքագծով ապացուցում է, որ մնացել է նոյնը: Անմտութիւն կը լինէր սպասել, որ թշնամին կրաւորական լինի մեր պայքարի հանդէպ: Սակայն պարզ է նաեւ մի ուրիշ բան՝ հակառակորդի ճնշումը չի կարող լինել համազգային, այսինքն ցեղասպանութիւն կամ նման մի բան (բացի թուրքահայ հատւածից) բացառւած է, քանի որ այսօր ողբերգական իրերի բերումով մեր ժողովուրդի տարբեր հատւածները գտնւում են «իրենց» երկրների պետական պաշտպանութեան տակ: Ենթադրել, որ հակառակորդը կարող է ճեղքել այդ պատնէշը և օրինակ, ֆրանսական, անգլիական, կամ ամերիկեան կառավարութիւնների գլխի վրայով հարւածել մեզ, նոյնպէս անմտութիւն կը լինէր: Բայց առանձին զոհեր, անշուշտ կը լինեն, դրան մենք պէտք է պատրաստ լինենք: Իսկ այդ ո՞ր պայքարն է, որ առանց զոհերի է լինում:

Իսկ ո՞րքան կարեւոր է մեզ համար պայքարի նպատակը, որ մենք պատրաստ լինենք անհանգստութիւնների ու առանձին զոհերի: Եթէ մենք որպէս պայքարի նպատակ ընդունենք ինքնավարութիւնը, ապա ինքնավարութեան առաւելութիւնների և ազգային գոյատեւման միակ միջոցի մասին գրւած է այնքան շատ, որ քննարկել այդ հարցը այստեղ աւելորդութիւն կը լինէր: Բա-

ւական է նշել, որ ինքնավարութեան են ձգտել բոլոր ժողովուրդները, բոլոր ժամանակներում և կենդանի են մնացել միայն նրանք, ովքեր չեն կորցրել իրենց անկախութեան ձգտումը։

Սակայն հիմնաւորել այսօրւայ պայքարը այդ, առայժմ հեռու գտնւող, բարոյական, այլ ոչ քաղաքական նպատակով, մի քիչ դժւար է։ Այդ նպատակի համար պայքարի ճամբուն կանգնելու համար անհրաժեշտ է ունենալ յատուկ հասարակական հեռատեսութիւն, որով անշուշտ մեզանից ոչ բոլորն են օժտւած։

Այդպիսի մարդկանց համար յօդւած էլ պէտք չի գրել, նրանք իրենց ներըմբռնումով զգում են պայքարի անհրաժեշտութիւնը։ Խօսքը աւելի պարզ մարդկանց մասին է, որոնց համար հեռաւոր ապագան այդքան մեծ նշանակութիւն չունի։ Նրանք ցանկանում են տեսնել և հասկանալ պայքարի աւելի մօտակայ արդիւնքները, նրանք ուզում են գործել տեսանելի դաշտում։ Այստեղ է, որ մենք չպէտք է կոմունիստների նման մեր ամէն մի քայլը բացատրենք կոմունիզմ կառուցելով։ Անհրաժեշտ է ցոյց տալ, թէ ինչով է զների բարձրացումը կամ հանրապետական զօրքերի վերացումը նպաստում կոմունիզմի կառուցմանը։ Այսինքն անհրաժեշտ է ցոյց տալ, որ այսօրւայ պայքարը վերջնական նպատակին հասնելու համար անհրաժեշտ է, թէպէտեւ չի կարող նա անմիջականօրէն իրականացնել այդ նպատակը։ Իմ կարծիքով մեր այսօրւայ պայքարը ունի հետեւեալ հիմնական նպատակները։

Առաջինը՝ ստեղծել պայմաններ սերունդից սերունդ փոխանցելու համար անկախ հայրենիքի գաղափարը և ցեղասպանութիւնից բխող անարդարութեան հատուցման զգացմունքը։ Այս գաղափարները վառ պահելու համար անհրաժեշտ է պայքարել և պայքարել անընդհատ։ Խաղաղ պայմաններում, միայն քարոզչութեամբ, այն էլ մեր «չկարդացող» ժողովրդի համար, անկարելի է ցեղասպանութեան անարդարութեան և անկախ հայրենիքի գաղափարները համազգային դարձնել, ներծծել նրանով ամէն մի հայի ներքին աշխարհը և միացնել այն ամէն մի հայի անվիճելի բարոյական պահանջ։ Ես այդպէս եմ մտածում, որովհետեւ մարդկութեան պատմութիւնը վկայում է, որ միայն սեփական զոհաբերութիւնների վրայ են խարսխւում բոլոր հաւատքները։ Եթէ չխաչէր Յիսուսը, քրիստոնէութիւն չէր լինի։ Իսկ մեր պայքարում հաւատքի ուժն է, որ պէտք է դառնայ գլխաւոր շարժիչը։

Երկրորդը՝ առաջինից բխող և առաջինի հետ անմիջականօրէն կապւած ազգի քաղաքականացումն է, որի վրայ մանրամասնօրէն կանգ է առել Բ. Փափազեանը **«Ազդակ Շաբաթօրեակ – Դրօշակ»**ի Յունիս 12ի առաջնորդողում։ Սրան կարելի է աւելացնել ազգի ներքին յեղափոխականացումը, որին նոյն-

պէս նւիրւած են **«Ազդակ Շաբաթօրեակ – Դրօշակ»**ի մի շարք խմբագրականներն ու առաջնորդողները։

Երրորդը՝ թշնամու շարքերում տագնապի ու անհանգստութեան առաջացում՝ ոչ թէ Հայ Դատը լուծելու ուղղութեամբ, այլ այն ուղղութեամբ, որ մենք կանք, որ ցեղասպանութիւնը մոռացւած չէ, և որ մենք վճռականօրէն, ԸՆԴՄԻՇՏ, չենք հրաժարւելու մեր պայքարից։ Այս առիթով հետաքրքրական է Հիտլերեան յանցագործներ որոնող Վիզենտալի տեսակէտը։ «Ես չեմ ուզում,- ասաց նա,- որ հրեաների մասին ասեն, թէ նրանք պատերազմից յետոյ ոչնչացնում էին ծերացած գերմանացիներին, բայց ես չեմ ուզում, որ ասեն, թէ գերմանացիները 6 միլիոն հրեայ ոչնչացրեցին և աշխարհը կուլ տուեց այդ յանցանքը։ Եթէ աշխարհը լուռ մնար մեր նկատմամբ գործադրւած ոճիրների հանդէպ, դա կը նշանակէր, որ այլեւս հրեայ ազգ գոյութիւն չունի»։ Մենք էլ կարող ենք ասել, որ եթէ աշխարհը կուլ տայ քսաներորդ դարի ցեղասպանութիւնը, ուրեմն հայ ազգ այլեւս գոյութիւն չունի։

Չորրորդ՝ ստեղծել մեր դատին նպաստող միջազգային հասարակական կարծիք և մեր վճռականութեամբ ստեղծել բարենպաստ պայմաններ դաշնակիցներ որոնելու համար։ Սրանք են մեր պայքարի մօտակայ նպատակները, այլ ոչ թէ վրէժ, կամ Անկախ Հայաստանի պահանջը։

Այս կէտերը անհրաժեշտ է ընդգծել, որպէսզի պարզ լինի, որ անիմաստ չէ պայքարը որքան էլ որ հզօր լինի թշնամին, քանզի նպատակը, ոչ թէ հզօր թշնամու տապալումն է, այլ նրա և բոլորի ուշադրութիւնը մեր և մեր Դատի վրայ դարձնելն է։ Իսկ այդ իմաստով պայքարի բոլոր ձեւերը օգտակար են։

Պէտք է նշել, որ որպէս պայքարի միջոցներ՝ բողոքի ցոյցերը, ահաբեկումները և այլ տեսակի ճնշամիջոցներ այսօր դարձել են քաղաքական իրականութիւն։ Պայքարի այս ձեւերը վերածնունդ ապրեցին այն պարզ պատճառով, որ չափազանց հզօրացել են այսօր պետութիւնները և չափազանց բարդացել են միջ-պետական յարաբերութիւնները, որպէսզի նրանց դէմ կարելի լինի օգտագործել դասական պատերազմական կամ ապստամբական միջոցներ։ Մեր աչքերի առաջ իրենք իրենց «քաղաքի ֆեդայիններ» անւանող մարտական խմբերը այնպիսի պայքար են ծաւալել, որ այժմ օր չի անցնում առանց ռումբեր պայթելու, ինքնաթիռներ առեւանգելու և քաղաքական սպանութիւնների։

Ես չեմ ուզում քննարկել հարցի բարոյական կողմը։ Չեմ կարծում, որ այդպիսի պայքարը լինի աւելի անբարոյական, քան այսպէս կոչւած «օրինական» պատերազմը, որի ժամանակ մէկ կողմի օդաչուները ռմբակոծում են միւս կողմի քաղաքները, սպանելով հարիւրաւոր անմեղ երեխաներ ու կանայք։ Չեմ կարծում, որ զինւորական ծառայութեան կոչւած օդաչուն, որը իր լաւ ռմբակոծումի համար պարգեւատրւում է շքանշանով, աւելի արժանի լինի

յարգանքի, քան այն երիտասարդը, որ սեփական կամքով, սեփական կեանքը վտանգելով կանգնում է քաղաքական ահաբեկութեան ճանապարհի վրայ։

Բայց, կրկնում եմ, այս բարոյական և իրաւական հարցը ես չեմ ուզում այստեղ քննարկել։ Ես ուզում եմ միայն նշել, որ բարեբախտաբար, թէ դժբախտաբար ճնշամիջոցները տալիս են շօշափելի արդիւնքներ։ Պայքարի այս ձեւի շնորհիւ Բասկերին ինքնավարութիւն խոստացուեց։ Օրակարգի վրայ է Իրլանտացիների հարցը։ Պաղեստինցիների ներկայացուցիչը մուտք գործեց ՄԱԿ և նրանց հարցը գրեթէ լուծուելու վրայ է։ Մեզանից գրեթէ ոչ ոք չգիտէր Մոլուկկների գոյութեան մասին, բայց այսօր մէկ դպրոց և մէկ գնացք առեւանգելու գնով ամբողջ աշխարհը ծանօթացաւ նրանց դատի հետ։ Չեմ կարող չնշել նաեւ մեր պարագան։ Մի քանի տարի առաջ մենք ահագին գումարներ էինք վճարում միջազգային մամուլի գործակալութիւններին երկու տող բան գրելու համար Հայ Դատի վերաբերեալ։ Երեք տարի առաջ մենք 10.000 մարք վճարեցինք Լոմայեր անունով մի մարդու ցեղասպանութեան վերաբերեալ մի երկու խօսք գրելու համար գերմանական թերթերից մէկում։ Եւ այդ 10.000 մարքի դիմաց թերթերում գրուեց ընդամէնը 20 տող, այն էլ ոչ թէ ցեղասպանութիւնից, այլ «դէսից-դէնից»։

Ինքս անձամբ, մարդասիրական և կրօնական զգացմունքներից ելնելով քաղաքական սպանութիւնների դէմ եմ։ Բայց չեմ կարող չնշել, որ վերջին ահաբեկութիւններից յետոյ, աւստրիական, իտալական, գերմանական, ամերիկեան և այլ երկրների մամուլի էջերը լեցուն էին ցեղասպանութեանը վերաբերուող նիւթերով։ Եւ, ուրեմն, նրանց, ովքեր կանգնել են ահաբեկութիւնների ճանապարհի վրայ պէտք է դիտել ոչ միայն որպէս համբերութեան բաժակը լցուած վրիժառուների, այլ հակառակորդի վրայ լուրջ բարոյական ճնշումներ գործադրող և քարոզչական աշխատանք կատարող խմբերի։

Արեւմուտքի քաղաքական գործիչներից մէկը, ընդգծելով քաղաքական ահաբեկութիւնների շօշափելի արդիւնքները, ասաց հետեւեալը։ **«Ես գիտեմ, թէ ինչպէս կարելի է ահաբեկութիւնների առաջն առնել։ Դրա համար պէտք է ահաբեկութիւնների մասին ոչինչ չգրել մամուլում։ Առանց հասարակական աղմուկի ահաբեկութիւնը ոչ մի արդիւնք չի տայ և ինքնըստինքեան կ'անյայտանայ։ Բայց բարեբախտաբար, թէ դժբախտաբար ազատ երկրներում անկարելի է սանձել մամուլը»։** Այստեղից պարզ երեւում է, որ քանի գոյութիւն ունի ազատ մամուլը բոլոր ժողովուրդների բոլոր ձեւերի պայքարները ապարդիւն չեն կարող անցնել։ Միակ վտանգը այն է, որ չի՞ կարող արդեօք մեր պայքարը, մանաւանդ եթէ ահաբեկութիւնը դառնայ մնայուն միջոց, հակառակ արդիւնքներ տալ, այսինքն մեր Դատի և մեր ժողովրդի հանդէպ միջազգային համակրանքը վերա-

ծել ատելութեան։ Այս վտանգից վախենում են շատերը, ուստի քննարկենք նաեւ այս հարցը։

Պէտք է ասել, որ ահաբեկութիւնը որպէս պայքարի միջոց, քաղաքական ու պատմական իրականութիւն դառնալուն պէս նմանւեց պատերազմների, որոնք, ինչպէս յայտնի է, լինում են արդար և անարդար։ Մենք բոլորս արդարացնում ենք բոլոր ազատագրական շարժումները և պաշտպանողական պատերազմները և ոչ ոքի մտքով չի անցնում դատապարտել, օրինակ, ռուսներին, որ Ստալինգրադի տակ սպանում էին գերմանացիներին, կամ հայերին, որ Սարդարաբադում ոչնչացնում էին թուրքական բանակը։ Եւ եթէ արդար պատերազմները համակրանք են առաջացնում, ապա ինչո՞ւ չենթադրել, որ արդար ահաբեկութիւններն էլ կարող են համակրելի լինել։ Չէ՞ որ ոչ ոք չդատապարտեց հրեաներին, երբ նրանք առեւանգեցին ցեղասպան Ադոլֆ Էխմանին և դատելուց յետոյ գնդակահարեցին։ Չդատապարտուեցին այդ նոյն հրեաները և ա՛յն ժամանակ, երբ խախտելով բոլոր միջազգային օրէնքները յարձակուեցին Ուգանդայի օդանաւակայանի վրայ և փրկեցին առեւանգուած օդանաւը։ Ուրեմն, եթէ համակրանքի հարցը զուտ արդարութեան հարց է, ապա պէտք է անել այնպէս, որ մեր Դատի արդարութիւնը բոլորի համար յստակ լինի ու պարզ։

Բացի դրանից, պայքարը ամենեւին էլ չպէտք է նւազեցնի գիտական ու մշակութային այն գործունէութիւնը, որը շրջապատի համակրանքն է առաջացնում դէպի մեր ժողովուրդը։ Այս պարագան շատ կարեւոր է։ Մեր գիտական ու մշակութային գործունէութիւնը պէտք է ուղղուած լինի դէպի դուրս, այսինքն դէպի օտար հանդիսատեսը։ Իսկ դա պահանջում է շատ աւելի մեծ ճիգեր ու շատ աւելի մեծ պատասխանատուութիւն, քան երբ մենք զբաղուած ենք ինքներս մեզ գոհացնելով։ Եթէ Սփիւռքում որեւէ բան է արւում մշակութային ուղղութեամբ, ապա դա պէտք է վայել լինի և հայ ժողովրդին, և ծախսուած դրամներին, և ժամանակակից քաղաքակրթութեան մակարդակին։ Իսկ երբ կատարւում են գործեր, որոնք չունեն Երեւանի գործարանների ինքնագործ խմբակների մակարդակը, եթէ ակումբներում օտարներին մենք մեր խորովածներով ու չիքուֆթաներով պէտք է զարմացնենք, ապա այդ գործունէութիւնը մեր հեղինակութեան համար շատ աւելի վտանգաւոր է, քան ահաբեկութիւնը։

Մի խօսքով, եթէ ճիշտ է **«Մարմարա»**յի գրածը, ապա պէտք է ամէն ինչ անել, որպէսզի «մեր բարքերը, երգերը, կերուխումը, խաղերը և ապրելակերպը» նոյնացած չլինեն «եղբայր» թուրքի հետ, որ այդ ամէնը զուտ հայկական լինի։ Որովհետեւ միայն այդ դէպքում օտարները մեր մասին կ՚ասեն այն գեղեցիկ խօսքերը, որ բազմիցս ասել են։

Եւ վերջապէս, այն մասին, թէ արդեօք, հանելով քաղաքական տեսադաշտից Խորհրդային Հայաստանի անկախութեան հարցը, մենք չե՞նք հրաժարւում Միացեալ ու Անկախ Հայաստանի գաղափարից։

Երբ հաւատաքննութեան ղեկավար ու կազմակերպիչ Տորկվեմադային հարցրին, թէ ինչո՞ւ է նա այրում հրեաներին՝ խարոյկի վրայ, նա պատասխանեց՝ «յանուն Յիսուսի և Աւետարանի։ Հոգ չէր, որ Աւետարանում Յիսուսի իսկ բերանով ասւած էր՝ «մի սպանիր»։ Երբ Ռոբեսպիերին հարցին, թէ ինչո՞ւ նա վերականգնեց գլխատման պատիժը, նա պատասխանեց՝ «յանուն ազատութեան»։ Եթէ այսօր մենք հարցնենք իշխանութեան գլուխ եկած կոմունիստներին, թէ ինչո՞ւ են նրանք այդքան ուժեղացնում իրենց պետութիւնները, նրանք կը պատասխանեն՝ «յանուն կոմունիզմի»։ Հոգ չէ, որ կոմունիստական հասարակարգում պետութիւնը վերանալու է։ Այս բոլոր պատասխանները կեղծ չեն։ Այս պատասխաններում հակասութիւններ չկան։ Այստեղ պարունակւում է այն մեծ ճշմարտութիւնը, որ գլխաւոր նպատակից բխող ենթանպատակները կարող են ուղիղ հակառակ լինել գլխաւոր նպատակին։ Պայքարի որոշ փուլերում կարող է պահանջւի ա՛յն, ինչը հետագայում սկզբունքօրէն պէտք է վերանայ։ Ապագան այնքան անտեսանելի է, որ մենք չենք կարող այսօրւայ պայքարում ղեկավարւել վերջնական նպատակով։ Ո՞վ գիտէ, գուցէ ժամանակի ընթացքին Խորհրդային Միութիւնը այնքան ժողովրդավար դառնայ, իսկ Խորհրդային Հայաստանը այնքան ինքնավար, որ միացեալ Հայաստանի հարցը լուծւի ոչ թէ Հայաստանի միութիւնից դուրս գալու, այլ դրսինը ներս տանելու ուղղութեամբ։ Այսօր այդ մասին մենք ոչինչ չգիտենք, բայց գիտենք, որ ապագայ Հայաստանը պիտի միացեա՛լ ու անկա՛խ լինի։ Այս գաղափարից չի հրաժարւի և ոչ մի սերունդ։ Բայց միացնելու համար Հայաստանի երկու կէսերը պէտք է նախևառաջ այդ կէսերը ունենանք մեր տրամադրութեան տակ։ Էլ ինչո՞ւ զարմանալ, որ ազգային բոլոր ճիգերը այսօր ուղղւում են երկրորդ կէսը ձեռք բերելու, կամ աւելի ճիշտ՝ ստեղծելու գործին։

Այս վեհ գործի շուրջ էլ պէտք է միասնութիւնը ստեղծւի։

1977

ԻՄ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Դոկտ. Է. Յովհաննիսեան

Փիլիսոփայութեան պատմութեանը յայտնի է, որ Սպինոզայից սկսեալ, փիլիսոփաները ամէն գնով ուզում էին փիլիսոփայութիւնը գիտութիւն դարձնել: Նրանք ցանկանում էին իրենց շէնքը գիտութեան նման կառուցել ամո՛ւր, քարէ հիմքերի վրայ: Սակայն երկար ժամանակ դա չէր յաջողւում: Նոյնիսկ Կանտը և Հեգէլը չէին փորձում արդարացնել գիտութիւնը և տրամաբանութիւնը: Նրանք հասկանում էին, որ չի կարելի բարձրացնել գիտութեան իրաւունքների և սահմանների հարցը: Նրանք միայն ուզում էին հեղինակազրկել ինքնակամ **մետաֆիզիկան**, ապացուցելով, որ նա իր շէնքը կառուցում է ոչ թէ ամուր քարի, այլ փխրուն աւազի վրայ:

Իսկ սեփական համոզումների համար Հեգէլը և Կանտը աղբիւրներ չէին որոնում: Նրանց բոլորովին չէր հետաքրքրում, թէ որտեղից եկաւ իրենց սեփական համոզաւածութիւնը: Կարեւորը այն է, որ այդ համոզաւածութիւնը կար: Աւելին, նրանք համարում էին, որ միայն այն համոզաւածութիւնն է ամուր, որի մասին ոչ ոք չի կարող ասել, թէ որտեղից նա եկաւ: Որովհետեւ, նրանք համարում էին, որ եթէ մենք սկսենք քրքրել համոզաւածութեան աղբիւրը և գտնենք նրանք՝ ապա ո՞վ կարող է վստահեցնել մեզ, թէ չէր թուլանայ մեր համոզաւածութիւնը: Նորագոյն փիլիսոփայութիւնը և հասարակագիտութիւնը զարգացան այն համոզաւածութեամբ, որ գիտութեան և **մետաֆիկա**յի բախումը ամէնուր աւարտուելու է գիտութեան փայլուն յաղթանակով:

Դեկարտից և Սպինոզայից յետոյ ոչ մի ճանաչուած փիլիսոփայ, ոչ մի մտաւորական, ոչ մի հասարակ մարդ այլ կերպ չէր մտածում:

Սպինոզան իր վարկածներով և փիլիսոփայութեան համար անսովոր հաշուարկներով փիլիսոփայութիւնը դարձրեց գիտութիւն: Սպինոզան առաջինն էր, որ իր վրայ վերցրեց փիլիսոփայութեան մաթեմատիկացումը: Նա առաջինն էր, որ խոստացաւ փիլիսոփայական բառարանից դուրս շպրտել մարդու զգացմունքներին վերաբերուող բոլոր բառերը: **«Չարն ու բարին, գեղեցիկն ու տգեղը, լաւն ու վատը, առաստաձեռնութիւնն ու կծծիութիւնը՝ այս ամէնը**,- ասում է Սպինոզան,- **չեն պատկանում ճշմարտութիւն որոնելու միջոցներին: Մարդը անսահման շղթայի օղակներից մէկն է և նրա զգացմունքները չեն կարող դառնալ ուսումնասիրութեան առարկայ փիլիսոփայութեան համար»:**

Փաստօրէն Սպինոզան հրաժարւեց է՛ւ Աստծուց է՛ւ **մետաֆիզիկա**յից ու ճշմարտութեան ետեւից գնաց այնտեղ, որտեղ մաթեմատիկոսները լուծում

էին իրենց խնդիրները: Բայց այնտեղ երկու անգամ երկու՝ չորս էր և այդ պատասխանը զուրկ էր ազատութիւնից, այդ պատասխանը միակն էր: Եւ եթէ փիլիսոփաներն էլ պահանջում էին իրենց ճշմարտութիւնների համար այդպիսի յատկութիւն, ապա նրանք պէտք է դուրս նետէին փիլիսոփայութիւնից այն ամէնը, ինչ որ չէր ենթարկւում մաթեմատիկական օրինաչափութիւնների: Եւ Սպինոզան դուրս է նետում փիլիսոփայութիւնից թէ՛ մարդու զգացմունքները և թէ Աստծոյ կամքը: Մարդիկ և Աստուած դառնում են տիեզերական օրինաչափութիւններին ենթարկւող օղակներ:

Ոչ Կանտը, ոչ Հեգէլը, ոչ Լայփնիցը, ոչ Շելինգը, ոչ Մարքսը և ոչ էլ ժամանակակից փիլիսոփաներից որեւէ մէկը իրենց մէջ ուժ չգտան՝ դուրս գալու համար Սպինոզայի կողմից գծած շրջանակից: Սպինոզան հետագայում քննադատուեց տարբեր կողմերից, բայց ոչ ոք չհամարձակւեց վերանայել նրա հիմնական դրոյթը՝ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԵՏԵՒՅ ՄԵՆՔ ՊԷՏՔ Է ԳՆԱՆՔ ԱՅՆ ԴԱՏԱՒՈՐԻ ՄՕՏ, ՈՒՄԻՑ ԻՄԱՑԱՆՔ, ՈՐ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ ԵՐԿՈՒ ՉՈՐՍ Է:

Բոլորը հաւատում են, որ ուրիշ աւելի արդար դատաւոր գոյութիւն չունի և հաւատում են, որ Սպինոզան, իսկապէս, բոլոր ճշմարտութիւնները գտնում էր հէնց այդ դատաւորի մօտ: Հաւատալով Սպինոզային, մարդիկ բոլոր ճշմարտութիւնները սկսեցին որոնել այն անաչառ դատաւորի մօտ, որ հռչակել էր երկու անգամ երկուսի ճշմարտութիւնը: Երբ այդ դատաւորին դիմեցին երաժիշտները ու նկարիչները, նրանք իրենց հարցումներին ստացան շշմեցուցիչ պատասխաններ: Նրանք իմացան, որ ձայները և գոյները բնորոշւում են ալիքների երկարութեամբ, նրանք իմացան ներդաշնակութեան օրինաչափութիւնները և պարզեցին, որ երաժշտութիւնը կարելի է գրանցել ժապաւէնների ու ձայնապնակների վրայ և որ նոյնիսկ հաշւիչ մեքենաները կարող են երաժշտութիւն գրել:

Սակայն մէ՛կ հարցի պատասխանը այդպէս էլ չկարողացաւ տալ Սպինոզայի դատաւորը՝ թէ ինչո՞ւ են ոմանք արտասւում երաժշտութիւն լսելիս:

Չպատասխանեց գիտնական դատաւորը նաեւ այն հարցին, թէ ինչո՞ւ ոչ բոլորին է շնորհւած Բեթհովէնի կամ Կոմիտասի տաղանդը:

Բայց մարդիկ չզայրացան Սպինոզայի դատաւորի վրայ, շատ մեծ էր նրա հեղինակութիւնը, ու նրանք կրկին ու կրկին դիմեցին այդ դատաւորին արտասւելու գաղտնիքը պարզելու համար: Ու կրկին մարդիկ դուրս բերեցին գիտուն դատաւորի մօտից ահագին գիտելիքներ: Նրանք իմացան, թէ ինչպէս է երաժշտութիւնից տատանւում մարդու թմբկաթաղանթը, թէ որտեղ և ինչպէս է առաջանում արցունք կոչւող հեղուկը:

Սակայն ինչո՞վ են տարբերւում սոխից և յուզմունքից առաջացած արցունքները, նրանք չիմացան երբեք:

Չիմացան նրա համար, որ զգացողական աշխարհի վերլուծութիւնը գիտութեան գործը չէ։

ՍՊԻՆՈԶԱՅԻ ԴԱՏԱԻՈՐԸ ՈՉ ԲՈԼՈՐ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ է։ Կայ ճշմարտութիւնների մի ամբողջ բազմութիւն, որոնց մասին գիտութիւնը ոչինչ չի կարող ասել։ Եւ եթէ գիտութեանը այսօր դիմում են իբրեւ բոլոր ճշմարտութիւնների դատաւորի, ապա դա արւում է այն պարզ պատճառով, որ Սպինոզան դուրս նետեց գիտութիւնից այն ամէնը, ինչը գիտութեան կարողութիւններից դուրս էր։

Գիտութեան կարողութիւններից դուրս է գտնւում նաեւ ազգ հասկացութեան բացատրութիւնը։

Երբ մենք ազգային գիտակցութեան բացատրութեան ետեւից գնացինք Սպինոզայի դատաւորի մօտ, ապա այնտեղից երաժիշտների նման մենք դուրս բերեցինք ահագին ճշմարտութիւններ։ Մենք պարզեցինք, որ ազգերը ունեցել են ընդհանուր տարածութիւններ, լեզու, մշակոյթ։ Մենք իմացանք, որ ազգերը առաջացել են տարբեր ցեղերի խառնուրդից, որ, օրինակ, Ուրարտուում հայասները խառնւելով արմէններին, ծնունդ են տւել հայ ազգին։ Իմացանք նաեւ այն, որ Տիգրան Մեծն մեծ քանակով հրեաներ է բնակեցրել Վանայ լճի ափին, որոնք հետագայում ձուլւել են վանեցիների հետ։ Իմացանք, որ Բագրատունիները ունեն հրէական ծագում, իսկ Մամիկոնեանները՝ չինական։ Իմացանք, որ Արշակունիները նոյնքան հայ են, որքան պարթեւ։ Եւ շատ ու շատ պատմական փաստեր արձանագրեցինք։ Բայց Սպինոզայի դատաւորից ստացած տեղեկութիւնները չօգնեցին հասկանալու համար, թէ ինչո՞ւ ենք մենք պատռում մեր կոկորդները, երբ դիտում ենք «Արարատ» ֆուտբոլային խմբի խաղը և ինչու խորհրդային ռեժիմի տակ մեծացած սերունդը ազգովին փողոց թափւեց ու բացականչեց՝ «Հողերը»։ Սպինոզայի դատաւորը ինձ չասաց, թէ ինչո՞ւ եմ ես հպարտ իմ ազգային պատկանելիութեամբ, թէ ինչո՞ւ եմ ջերմօրէն սիրում ազգս և ինչո՞ւ մեզանից ոմանք պատրաստ են զոհաբերելու և զոհւելու, ու զոհւում են յանուն ազգի։

Ինչպէ՞ս կարող է գիտութիւնը բացատրել, որ ինձ համար ազգը միակ մարդկային միութիւնն է, որին իմ պատկանելիութիւնը ես ԶԳՈՒՄ եմ և ոչ թէ գիտակցում։ Դասակարգը, մարդկութիւնը, պետութիւնը, կուսակցութիւնը՝ այս ամէնը ես ընկալում եմ տրամաբանութեամբ։ Իսկ իմ ժողովրդիս ցաւը ես ընկալում եմ անմիջականօրէն, ամբողջ էութեամբ։ Գիտականօրէն ինչպէ՞ս հիմնաւորել, որ ես ոչ միայն նշում եմ ազգային բազմազանութեան գոյութիւնը, այլեւ ուրախանում եմ այդ բազմազանութեամբ։ Ի՞նչ կարող է գիտութիւնը ասել այն մայրերի մասին, որոնք ձորն էին նետում իրենց երեխաներին, թուրքի

ձեռքը չընկնելու համար: Կենսաբանական ո՞ր օրէնքով կարելի է բացատրել այս հերոսութիւնը:

Այստեղ կարելի էր վերջակէտ դնել և տալ մի ամփոփում: Մարդու ազգային պատկանելիութիւնը այնքան բնական է, որքան են նրա բոլոր այն յատկութիւնները, որոնցով նա օժտուած է ի սկզբանէ: Բացատրել, գնահատել ու սահմանել ազգ հասկացութիւնը այնքան անմիտ է, որքան անմիտ կը լինէր բացատրել մարդու ձեռքերի, ոտքերի, տեսողութեան կամ շնչառութեան անհրաժեշտութիւնը:

Բայց դժբախտաբար, մենք ստիպւած ենք մխրճւելու այս բացատրութիւնների մէջ, որովհետեւ մարդկութիւնը գնաց խաբեբայ Սպինոզայի ետեւից և այսօր մեր երիտասարդութիւնը ինձ ասում է, թէ «ճառեր չենք ուզում լսել, քո զգացմունքները քեզ պահիր, տրամաբանիր և գիտական փաստերի հիման վրայ ապացուցիր մեզ, որ ազգային գաղափարը իսկապէս մեծ տեղ է գրաւում և պիտի գրաւի ապագայում հասարակական կեանքում, որ ազգային ինքնավարութիւնը ընկերային արդարութեան մաս է կազմում»: Ինձ ասում են, որ ես տրամաբանեմ, իսկ ես ուզում եմ գոռալ՝ «Ախր ի՞նչ տրամաբանեմ, ի՞նչ պատմական փաստեր էք ուզում: Գուցէ՞ ե՛ւ վերանալու են ազգերը, յետոյ ի՞նչ: Փորձեցէք դուք տրամաբանել, թէ ինչո՞ւ էք սիրում ձե՛ր, այլ ոչ իմ մայրիկին, ձե՛ր, այլ ոչ իմ որդուն: Մի՞թէ այնքան միամիտ էք, որ կարծում էք, թէ ձեր մայրն է ամենաբարին և ձեր քոյրն է ամենագեղեցիկը: Կամ գուցէ դուք կարծում էք, որ ձեր մերձաւորներն երբեք չեն մահանալու: Ինչո՞ւ չսպանել նրանց, չէ՞ որ նրանք 100 տարուց աւելին միեւնոյն է չեն ապրելու»:

Այսպէս պէտք է խօսել ազգի մասին, որովհետեւ ազգային զգացմունքը զգացմունք է և ոչ թէ տրամաբանութիւն:

Բայց այսպէս կարելի էր խօսել միայն նրանց հետ, ովքեր չեն խաբւած Սպինոզայի կողմից, և եթէ այսօր ճշմարտութիւնների համար լինէին մի քանի դատաւորներ, կամ ինչպէս հին Յունաստանում՝ մի քանի աստւածներ:

Բայց այսօր Սպինոզայի դատաւորը մենիշխան է և մեր տրամաբանող երիտասարդութիւնը ուզում է ճշմարտութիւնը անպայման նրա ձեռքերից ստանալ:

Քաջ գիտակցելով, որ այդ ձեռքերի մէջ չկայ այն ինչը, զոր այսօր ուզում է ստանալ հայ երիտասարդը, այնուամենայնիւ ստիպւած ենք գնալու Սպինոզայի դատաւորի մօտ, որպէսզի եթէ ոչ ձեռքերից, ապա գոնէ նրա հոգեպահուստից կորզենք մեզ հետաքրքրող ճշմարտութիւնը:

Այդ դատաւորի մօտ մենք նախ և առաջ պէտք է պարզենք, թէ արդեօք մեր ազգային պատկանելիութիւնը այնքան բնական է և այնքան անհրաժեշտ, որքան մեր տեսողութիւնն է, շնչառութիւնը և այլ յատկութիւնները. թէ՞ կոյր աղի-

քի նման գուցէ բնական, բայց բոլորովին աւելորդ է նա։ Այսինքն, զրկւելով ազգութիւնից և ազգային զգացմունքից, կորցնում ենք մենք մեզ կամ հասարակութեանը օգտակար որեւէ մի բան։ Այս հարցը պարզելու համար ստիպւած ենք խորանալու ազգ հասկացութեան էութեան մէջ։

Ազգը պատմական, այլ ոչ թէ հասարակագիտական հասկացութիւն է։ Նա ծնունդ է առել պատմական իւրայատուկ պայմանների բերումով, որոնց մասին այսօր ոչ ոք ոչինչ չի կարող ասել։ Հասարակագիտական չափանիշներով ազգի ծագման գաղտնիքը բացատրելու բոլոր փորձերը անցել են ապարդիւն։ Ազգի գոյութիւնը չի սպառւում ոչ ցեղային, ոչ լեզւային, ոչ կրօնական, ոչ տարածութեան և ոչ էլ պետական միասնութեամբ. չնայած նրան, որ բոլոր այս գործօնները կարեւոր նշանակութիւն ունեն ազգային կեցութեան համար։ Իմ կարծիքով ճշմարտութեանը ամենամօտ են կանգնած նրանք, ովքեր համարում են, որ ազգը պատմական ճակատագրի միասնութիւն է։ Բայց հէնց պատմական ճակատագիրն էլ գիտութեան սահմաններից դուրս գտնւող **իռացիոնալ** գաղտնիք է։ Այս իմաստով ազգային գիտակցութիւնը սուզւած է պատմական ճշմարտութիւնների խորքերը և անմիջականօրէն կապւած է կեանքի արմատների հետ։ Ազգը բոլոր սերունդների գումարը չէ, այլ ինքնուրոյն գոյութիւն է, զոր յաղթահարում է ժամանակը։ Ազգային ոգին միակ բանն է ինքնին, որ պայքարում է անցեալը խժռող ներկայի և ապագայի դէմ, այսինքն իմաստաւորում է առաջընթացը, օժտելով նրան յիշողութեամբ։ Ազգային գիտակցութիւնը պահպանողական է ոչ թէ նրա համար, որ ստեղծագործութեան դէմ է, այլ նրա համար, որ պահպանելով անցեալի հետ իր կապերը, նա պահպանում է կեանքի բնական ընթացքը։ Ազգ հասկացութիւնը ընդգրկում է ոչ միայն մարդկային սերունդները, այլ նաեւ եկեղեցիները, եկեղեցիների քարերը, ամրոցները, գրքերը, խաչքարերը, մանրանկարները, երաժշտութիւնը ու հին ձեռագրերը։ Եւ ազգային ոգին ճանաչելու համար ,ազգային կամեցողութիւնը ըմբռնելու համար անհրաժեշտ է լսել այդ երաժշտութիւնը, կարդալ այդ ձեռագրերը։

Ֆրանսերէնում **nation** և **peuple** բառերը բոլորովին տարբեր բաներ են նշանակում։ Հայերէնում ազգ և ժողովուրդ բառերը գրեթէ նոյն իմաստն են ստացել և դրա համար էլ յաճախ ազգին վերագրւում են միայն ու միայն ժողովրդին բնորոշ յատկութիւններ։

Ժողովուրդը քանակական հասկացութիւն է, ուստի նրա նկատմամբ օգտագործւում են քանակական միջոցներ, օրինակ, ժողովրդավարութիւն, ձայների մեծամասնութիւն, հասարակական կարծիք, դասակարգերի բաժանում, և այլն։

Ազգը որակական հասկացութիւն է, և նրա նկատմամբ քանակական մօտեցումը անընդունելի է: Ազգը բաղկացած է ազգային ոգով օժտուած անձերից, այլ ոչ թէ դասակարգերից: Ազգի կամքը որոշւում է ազգի ծոցում ծնուած հանճարների և ազգային ընտրանու կողմից, այլ ոչ թէ ձայների մեծամասնութեամբ որոշուած հասարակական կարծիքով: Ազգային կամեցութեանը իրենց ձայներն են միացնում ոչ միայն կենդանի մարդիկ, այլեւ մեռածները, ոչ միայն անցեալը, այլեւ հանելուկային ապագան: Անցեալի հետ կապը կտրած մարդը նմանւում է յիշողութիւնը կորցրած մարդու, որ սեփական տունն անգամ չի կարողանում գտնել: Ազգային զգացմունքներից զրկւած մարդկութիւնն էլ հետզհետէ կորցնելու է անցեալի հետ իր կապը և բարոյական իմաստով ամբողջովին դառնալու է անօգնական:

Այսպիսով ազգային ոգին հանդիսանում է մեր անցեալի պահապանը և դրանով իսկ յաւերժացնում է կեանքը:

Պետութիւնը ազգային կեցութեան անհրաժեշտ պայմանը չէ: Բայց ամէն մի ազգ ձգտում է ստեղծել պետութիւն և ամրապնդել այն: Ազգային պետականութեան կորուստը այլանդակում է ազգային հոգեբանութիւնը և երբեմն, որպէս բողոք, առաջացնում է **ինտերնացիոնալիզմ**: Այդպէս պատահեց հրեաներին, որոնք հազարամեակներ պետականութիւնից զրկւած, դարձել էին «մոլորակաքաղաքացիութեան» կողմնակիցներ: Եւ միայն սիոնիզմի ծնունդից յետոյ պարզ դարձաւ, որ նրանց մոլորակաքաղաքացիութիւնը ազգայնականութիւնից բխող ցաւ էր:

Կասկածից վեր է, որ պետութիւնը պէտք է ունենայ ազգային բնոյթ: Ոչ մի բազմազգ պետութիւն չի կարող առողջ հիմքերի վրայ դրւել ու գոյատեւել: Բոլոր կայսրութիւնները վաղ թէ ուշ քայքայւել են, միայն ու միայն այն պատճառով, որ ամէն մի ազգ ձգտել է սեփական ազգային ինքնավարութեան և այդ ձգտումը թուլացնում է ուժեղ ազգերի նւաճողական ախորակները: 19րդ դարի ազգային շարժումները, որոնց համակրանքով էին վերաբերւում ժողովրդավարականները, ընկերվարականները և այլ յեղափոխականներ, փոքր ազգերի ինքնավարութեան համար մղւող պայքարներն էին:

Այդ պայքարների մէջ մարմնաւորւում էր մեկուսացման տանող պատմական **տենդենց**ը: Սակայն դրա հետ միասին տեղի էր ունենում հակառակ շարժումը՝ կայսերական միաւորումների ստեղծման շարժումը: Այս երկու պատմական իրականութիւնները իրարու հակադրւելով մոլորակի վրայ ստեղծում էին որոշ հաւասարակշռութիւն: Այստեղից էլ բացայայտւում է ազգի գոյութեան անհրաժեշտութեան երկրորդ կողմը:

Ազգային ոգին ու ազգը դիմադրում և արգելք են հանդիսանում բոլոր տեսակի կայսրութիւնների համար, որոնք այսպէս թէ այնպէս ճնշում են մարդու

բնական ազատութիւնները։ Եթէ **ինտերնացիոնալիզմ**ը և մոլորակաքաղաքացիութիւնը շատ հեշտութեամբ վեր են ածւում կայսերապաշտպութեան, ապա ազգայնականութիւնը սկզբունքօրէն դէմ է կայսրութիւնների և հանդիսանում է բոլոր կայսրութիւնների տապալման աղբիւր։

Բացի դրանից, ազգը մարդկային հասարակարգի ներդաշնակութեան աղբիւրն է։ Ազգային բազմազանութիւնը ստեղծել է որպէս աշխարհակառոյցի անհրաժեշտութիւն, որպէս հասարակարգի շինութեան աղիւսներ։ Առանց ազգ կոչւող շինանիւթի անկարելի է հասարակական շէնքի կառոյցը, որովհետեւ ազգային յատկութիւններից է կազմւում համամարդկային ընտանիքի բազմակողմանիութիւնը։

Ժամանակակից ղեկավարման տեսութիւնը յայտնաբերել է, որ լաւագոյն ղեկավարումը իրականանում է ապակենտրոնացւած սկզբունքի հիման վրայ։ Պարզւել է նաեւ այն, որ ապակենտրոնացման մարզերը պէտք է ունենան այսպէս ասած ղեկավարելի չափեր, որ չափազանց մեծ համակարգերը անղեկավարելի են դառնում։ Ինչո՞ւ չենթադրել, որ բնութիւնը ստեղծել է ազգութիւնները որպէս ղեկավարելի չափեր ունեցող հատւածներ։ Այս ենթադրութեան մասին վկայում է նաեւ այն փաստը, որ քանակով մեծ ազգութիւնները իրենց նկարագրով շատ են տարբերւում փոքր ազգերի նկարագրերից։ Քանակութեամբ մեծ ազգերը, օրինակ, չինացիները, ռուսերը, ժամանակակից թաթարները ու մոնղոլները ունեն շատ աւելի ղեկավարելի նկարագիր, քան դէպի անիշխանականութիւնը հակում ունեցող փոքր ազգերը։ Այսինքն քանակով մեծ ազգերը բաղկացած են աւելի ղեկավարելի անձերից։ Նոյն բանը մենք նկատում ենք կենդանական աշխարհում։ Առիւծները հօտեր չունեն։ Բնութիւնը կարծես թէ յատուկ, դիտաւորեալ աւելացնում ու պակասեցնում է ազգերի քանակութիւնը, նայած նրանց ղեկավարւելի լինելու յատկութիւններին։

Պատահական չէ նաեւ այն, որ լեռնաշխարհներում ապրող ազգերը իրենց նկարագրով խիստ տարբերւում են դաշտավայրի ժողովուրդներից։ Այսինքն բնութիւնը հաշւի է առել ե՛ւ տեղը, ե՛ւ ցեղը, ե՛ւ քանակը և շատ ուրիշ բաներ էլ, երբ մարմնաւորել է որեւէ ազգի մէջ ազգային բազմազանութեան գաղափարը։

Իսկ եթէ այդպէս է, ուրեմն ազգը կը լինի, այսինքն կը համապատասխանի իր նշանակութեանը և կը կատարի իր վրայ դրւած բնական առաքելութիւնը, միայն իր հողի վրայ, իր քանակական սահմաններում և իր իւրայատուկ հոգեկան մթնոլորտում։

Այսպիսով, եթէ մենք փորձենք Սպինոզայի դատաւորի հոգեպահուստից հանել ազգի մասին որեւէ տեղեկութիւններ, ապա չենք կարող ստանալ աւելին, քան հետեւեալն է։

Ազգերի ծագման մասին մենք չունենք ոչ մի ստոյգ տեղեկութիւն։ Կարելի է միայն ենթադրել, որ նրանք ծնունդ են առել, որպէս հասարակական կեանքի **մոլեկուլ**ներ, որոնց փոխյարաբերութիւններով է պայմանաւորուած հասարակութեան գոյութիւնը։ Այդ փոխյարաբերութիւններով է պայմանաւորուած մարդկութեան յիշողութիւնը, մարդկութեան շարժումը դէպի հասարակական ներդաշնակութիւն, մարդկութեան կապը բնութեան և հոգեկան աշխարհի հետ։

Ազգերը ծնունդ են առել որպէս բնական անհրաժեշտութիւն և մենք չէ, որ պէտք է քննութեան առնենք նրանց օգտակարութեան հարցը։ Եթէ Կոմիտասի երաժշտութեան գնահատականը տրւէր նրա համերգներին վաճառուած տոմսակներով, եթէ մեր մայրերի և որդիների նկատմամբ մեր վերաբերմունքը որոշուէր նրանց լաւ կամ վատ լինելով, եթէ մեր ինքնապաշտպանութիւնը կապւէր մեր օգտակար լինելու հետ, ապա չէր լինի ո՛չ արւեստ, ո՛չ սէր և ոչ էլ կեանք։

Շատ խղճուկ է տրամաբանութիւնը բնութիւնը սկզբունքօրէն վերակառուցելու համար։ Ես անմտութիւն եմ համարում այսօրւայ նիւթապաշտ մարդու հարցը՝ թէ «ի՞նչ է տալիս ինձ իմ ազգային պատկանելիութիւնը»։ Նիւթական իմաստով գուցէ և ոչինչ։ Բայց ազգային պատկանելիութիւնը տալիս է մեզ աւանդական յիշողութիւն, տառապանք անցեալում կատարւած ոճիրների համար, զոհաբերութեան պատրաստակամութիւն, սէր մերձաւորի հանդէպ, այսինքն այն ամէնը, ինչից կազմւած է կեանքը։

Ի՞նչ արժէք ունի մարդը, որ պատերազմի ժամանակ չգիտի թէ ո՞ւմ կողմին կռւի և պայուսակը առած փախչում է չէզոք երկիր։ Ինչի՞ է նման մարդը, որի համար միեւնոյն է թէ ո՞վ կը յաղթի, որեւէ մրցումի ժամանակ։ Ո՞ւմն է պէտք մարդը, որ ոչ տառապել, ոչ էլ զոհաբերել գիտէ։

Եթէ այսօր մեր նիւթապաշտ աշխարհում ոտնձգութիւններ կան ազգային գիտակցութեան նկատմամբ, ապա դա նրա համար է, որ ապազգային են այսօրւայ հասարակական արժէքները։ Հարստութիւնը, արտադրութիւնը, գիտութիւնը, ժողովրդավարութիւնը, ընկերվարութիւնը, մարդու իրաւունքները, յարմարաւէտ կեանքը՝ այս ամէնը կարծես թէ խարսխւած են ապազգային հողի վրայ։ Բայց միշտ չէ, որ այդպէս է եղել։ Կար ժամանակ, որ մարդու հասարակական արժէքը որոշւում էր նրա ֆիզիկական ուժով և անձնական քաջութեամբ։ Կար ժամանակ, որ ոչ թէ հարստութիւնն ու գործունէութիւնն էին հասարակութեան շարժիչ ուժը, այլ Սոկրատէսները ու Պղատոնները։ Դարաշրջանից դարաշրջան, մէկը միւսին փոխարինելով հասարակական բարձրագոյն հեղինակութիւն էին վայելում քուրմերը, մարզիկները, բանաստեղծները, գիտնականները, հոգեւորականները, աշխատաւորները, ազնւականները, մո-

գերը, գործատէրերը և այլն, և այլն։ Այսինքն եղել են ժամանակներ, երբ հոգեկան արժէքները իշխել են նիւթական արժէքների վրայ և ո՞վ գիտէ, գուցէ՞ այդ ժամանակները կրկին վերադառնան։ Այդ դէպքում ազգային պատկանելիութիւնը կը դառնայ հիմնական արժէք, որովհետեւ հոգեկան աշխարհը ապազգային չի կարող լինել, ինչպէս չեն կարող լինել ապազգային արուեստը, կրօնը, սէրը, լեզուն, բարոյականութիւնը, ընտանիքը։

Այս հաստատութիւնները ապազգայնացնելու փորձերը կործանել են նրանց։ Եթէ այսօր Շեկսպիրի Ջուլիետայի սիրով հիանում է աշխարհը, ապա դա ոչ թէ նրա համար է, որ նրա սէրը համամարդկային է, այլ նրա համար, որ մեր Անուշների մասին գրեթէ ոչ ոք չգիտէ։

Հոգեկան աշխարհը չի կարող ապազգային լինել, այն պարզ պատճառով, որ ազգային ոգին տիեզերական ոգու մասնիկն է կազմում։ Այդ ոգին յաւերժ է, մենք չէ որ պիտի որոշենք նրա գոյութեան հարցը։ Բայց յարմարւել նրան, մարմնաւորել այն, այսինքն միս ու արիւն տալ նրան, մեր պարտականութիւնն է։

Կասկածից վեր է, որ Սպինոզայի դատաւորի հոգեպահուստից հանած այս տեսակէտը բոլորովին չի համոզի **մատերիալիստ**ական մտածելակերպ ունեցող մարդուն, որի համար կեցութիւնն է որոշում թէ՛ գիտակցութիւնը և թէ զգացմունքները։ Եւ հէնց դրա համար էր, որ ես չէի ուզում գնայի այդ նիւթապաշտ ու գիտուն դատաւորի մօտ։ Բայց գնացի, որովհետեւ գիտէի հոգեպահուստի գոյութեան մասին։ Այդ հոգեպահուստի մասին ես մանրամասնօրէն պատմել եմ Հայկական Հարցերի Հաստատութեան մի աշխատութեան մէջ, որը այս տարի լոյս է տեսնելու «Դոստոյեւսկին, Տոլստոյը և Պարոյր Սեւակը» վերնագրի տակ։

Այսօր մեր ազգի ներսում ծաւալել **իդէալիստ**ների և **մատերիալիստ**ների բանավէճ՝ անմտութիւն կը լինէր։ Հակառակը՝ անհրաժեշտ է անել ամէն ինչ, որպէսզի Հայ Դատի համար մղւող պայքարում տեղ գտնեն և կողք-կողքի պայքարեն թէ՛ **իդէալիստ**ները և թէ **մատերիալիստ**ները։ Այսօր Պղատոնի և Արիստոտելի հակասութիւնները թշնամութիւն չեն նկատւում, որովհետեւ նրանք կողք-կողքի կերտում էին ապագայ փիլիսոփայութիւնը։ Եկէք մենք էլ յարգանքով վերաբերւենք նրանց, ովքեր շարժւում են դէպի ապագան ո՛չ թէ մուրճ ու մանգաղով, ո՛չ թէ մոլորակաքաղաքացիութեան ճանապարհով, այլ ազգային ուխտի ճանապարհով, այսինքն Մամիկոնեանի թրով ու Լուսաւորչի խաչով։

1977

ՄՏՔԻ ԵՒ ԳՈՐԾԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԻՒՆԸ

Է. Յովհաննիսեան

Այս տարի լրացաւ ամենահետաքրքիր և գուցէ ամենախոշոր ռուս փիլիսոփաներից մէկի՝ Նիկոլայ Ֆեդորովի ծննդեան 150ամեակը: Բայց այս առթիւ չէ, որ այս յօդուածում ուզում եմ փոքր ինչ անդրադառնալ նրա փիլիսոփայութեանը:

Ես յիշեցի նրան, կարդալով «**Դրօշակ**» շաբաթաթերթի Յունիս 11ի և Մայիս 21ի խմբագրականները, որոնցից մէկը խորագրւած էր «**Խօսքը և գործը**», իսկ միւսը՝ «**Տագնապային էութիւնը**»:

Սակայն նախքան Ֆեդորովի փիլիսոփայութիւնը այս խմբագրականների հետ կապելը, ուզում եմ օգտւել առիթից և մեր ընթերցողներին մի փոքր ծանօթացնել այդ ռուս փիլիսոփայի հետ:

«Ռուսներից ռուսը» անւանեց նրան Բերդիաեւը և աւելացրեց, որ Ֆեդորովի միջոցով կարելի է հասկանալ ռուսական մտածելակերպի առանձնայատկութիւնը և ռուսական որոնումների էութիւնը: Լեւ Տոլստոյը ասում էր, որ այդ մարդու հետ նոյն ժամանակաշրջանում ապրելը պարծանք է: «Իմ սուրբ ուսուցիչը», ասում էր նրա մասին ամենախոշոր ռուս պատմաբան Վլադիմիր Սոլովեւը: «Ես ամբողջովին նրա հետ եմ», ասում էր Դոստոեւսկին: Նման արձագանգներով լեցուն են Ֆեդորովի մասին գրւած յօդւածները: Սակայն այն մարդկանց արձագանգների մէջ, ովքեր անձամբ ճանաչում էին Ֆեդորովին, աչքի է ընկնում ոչ միայն նրա գաղափարների բարձր գնահատականը, այլեւ յարգանքը նրա անձի նկատմամբ:

1854-68 թւականներին Ֆեդորովը գաւառական դպրոցի ուսուցիչ էր: 1868 թւականին նա տեղափոխւում է Մոսկւա, ուր ամբողջովին նուիրւում է իր սիրած գրադարանային գործին: Պատմում են, որ գրադարանից օգտւող մասնագէտները իրենց պատւիրած գրքերի մէջ անսպասելիօրէն գտնում էին նոր և շատ աւելի իրենց նիւթին վերաբերւող գրքեր և ուսումնասիրութիւններ: Յաճախ իր սեփական, աւելի քան համեստ միջոցներից Ֆեդորովը գնում էր գրքեր, որոնք պատւիրում էին գրադարանի յաճախորդները բայց որոնք գրադարանում չկային:

Նա կարծես թէ զզւում էր դրամից և ամբողջ իր ունեցածը տալիս էր կարիքաւորներին ու խնդրողներին: Ապրում էր աղքատութեան չափ համեստ պայմաններում, քնում էր առանց բարձի և ներքնակի, զամբիւղի վրայ: Այս ինքնահրաժարականը կեանքի բարիքներից անմիջականօրէն կապւած է նրա

փիլիսոփայութեան հետ: Նրա ամենագլխաւոր փիլիսոփայական աշխատութիւնը կրում է հետեւեալ երկար խորագիրը. «Եղբայրութեան կամ բարեկամութեան հարցը, ոչ-եղբայրական, ոչ-բարեկամական, այսինքն աշխարհի ոչ-խաղաղ վիճակի պատճառների և բարեկամութիւնը վերականգնելու ճանապարհների մասին»:

Այս աշխատութեան մէջ մտքի գլխաւոր թելը, որը երբեք չի կորչում տեսադաշտից և որը երաժշտական մեղեդիի նման միշտ ներկայ է նրա փիլիսոփայական համադաշնակութեան մէջ, հետեւեալն է.

«Մտքի և գործի պառակտուածութիւնը ծնեց մնացած բոլոր պառակտուածութիւնները, այդ թւում նաեւ հարուստների և աղքատների թշնամութիւնը»: Նրա հիմնական թեզը այն էր, որ գիտելիքները առանց գործի չեն կարող լուծել եղբայրութեան հարցը, դրա համար անհրաժեշտ է գիտելիքների վրայ հիմնւած գործ: Ֆեդորովը մարդկութեան ներքին բախումների պատճառը կապում է գիտնականների խաւ ստեղծելու հետ: Նա գտնում է, որ հէնց այն պահին, երբ ստեղծուեցին մասնագիտացւած մտաւորականները, որոնք միայն գաղափարներ են հռչակում, բայց համապատասխան ձեւով չեն գործում, որոնց համար մտածելը և մտային կառոյցները մասնագիտութիւն են, հէնց այդ պահին էլ ստեղծուեցին բոլոր չարիքները:

Գրեթէ այս նոյն միտքը արտայայտւած է վերը նշւած խմբագրականների մէջ. այդ տեսանկիւնից եթէ դիտենք մեր ազգային կեանքի տարբեր ոլորտները, ցաւով պէտք է խոստովանենք, որ ամէն մի քայլափոխի հանդիպում ենք ազգապահպանման մասին ճառեր կարդացող դասախօսների, որոնց երեխաները ոչ մէկ բառ գիտեն հայերէն, աբեղաներ ու վարդապետներ, որոնք լրբերի անկողիններից են գալիս եկեղեցի պատարագ մատուցելու, ընկերվարականներ, որոնք ըստ էութեան բուրժուաներ են, բուրժուաներ, որոնք կոմունիստների լաւագոյն բարեկամներն են և այլն, և այլն:

Բայց կայ Ֆեդորովի ուսմունքի մէջ նաև մէկ ուրիշ կէտ, որը ճիշտ է և մեզ համար չափազանց օգտակար: Այդ կէտը այն է, որ Ֆեդորովը խօսքի և գործի պառակտուածութիւնը տագնապային կացութիւնների պատճառ համարելով՝ վերագրում է այդ պատճառին ոչ միայն որակական, այլ նաև քանակական նշանակութիւն: Նա խօսում է պառակտուածութեան քանակական կողմի մասին, գտնելով որ շատ և քիչ պառակտուածութիւնները առաջացնում են մեծ ու փոքր տագնապներ: Այսինքն արժէքաւորման ոլորտում գործի և խօսքի միջեւ տարբերութիւնը որոշում է երեւոյթի բարոյական կողմը, արժէքը, նշանակութիւնը, գնահատականը:

Եթէ մենք համաձայնւենք այս թեզի հետ (իսկ ես անձամբ համաձայն եմ), ապա շարունակելով «**Դրօշակ**»ի «**Տագնապային էութիւնը**» խմբագրականի միտ-

քը, պէտք է նշել, որ մէկ կողմի «ժողովրդավարների» և միւս կողմի «ընկերվարների» ներքին պառակտուածութիւնը, խօսքի և գործի իմաստով, հաւասար չէ: Ճիշտ է, որ ընկերվարութիւնը և ժողովրդավարութիւնը գաղափարայնօրէն, այսինքն խօսքի իմաստով ներդաշնակ ըմբռնումներ են, և գործնականօրէն էլ պէտք է այդպէս լինեն, բայց եկէք համաձայնուենք, որ Արեւմուտքը՝ Միացեալ Նահանգների առաջնորդութեամբ շատ աւելի է համապատասխանում ժողովրդավարութեան կամ ազատութեան գաղափարին, քան Արեւելքը՝ Խորհրդային Միութեան գլխաւորութեամբ՝ ընկերվարութեանը կամ համայնավարութեանը:

Բայց սա էլ դեռ ամենագլխաւորը չէ:

Աւելի կարեւոր է պառակտուածութեան ձգտումը, խօսքի և գործի շեղման ուղղութիւնը: Պակասո՞ւմ, թէ՞ աւելանում է շեղումը: Այն երեւոյթը կամ տագնապալից կացութիւնը, որտեղ գործի և խօսքի պառակտուածութիւնը աւելանում է, վերջնական կործանման է ենթակայ, որովհետեւ իրը, երեւոյթը և ընդհանրապէս ամէն բան ոգու և մարմնի , գաղափարի և իրականութեան, մտքի և գործի միասնութիւններն են: Առանձին-առանձին նրանցից ոչ մէկը կարող է գոյատեւել:

Եւ, ի հարկէ, աւելի ճիշտ է Ֆեդորովի նման օգտագործել մտքի և գործի, այլ ոչ թէ խօսքի պառակտուածութիւն հասկացութիւնը, որովհետեւ միտքը աւելի անկեղծ է: Միտքը կապւած է սեփական ապրումների հետ, իսկ խօսքը մեծ մասամբ ուրիշների համար է: Պէտք է ասել, որ մարդը ներըմբռնման միջոցով ընկալում է մտքի և գործի նախնական միասնութիւնը և ինքնաբերաբար ձգտում է այդ միասնութեանը: Կարելի է բերել բազմաթիւ օրինակներ, երբ մարդիկ յանցանք գործելիս նախապէս մանրամասնօրէն կառուցում են յանցանքի արդարացումը, այսինքն գործին համապատասխանեցնելով միտքը:

Ալեքսանդր Սոլժենիցինը «**Գուլագ Արշիպելագը**» գրքում շատ լաւ ցոյց է տալիս, թէ ինչպէս երկնագոյն ուսադիրներով մարդիկ, որոնք տանջում և սպանում էին անմեղ մարդկանց, իրենց անմարդկային գործունէութեան համար միշտ գտնում էին որեւէ արդարացում: Ոչ մի մարդ, խենթերից բացի, չի ասի որ ինքը ընտրել է չարը: Իր չարութիւնը գաղափարախօսութեան միջոցով նա պէտք է արդարացնի, այսինքն վերածի բարութեան: Այստեղ մտքի և գործի պառակտուածութիւնը վերանում է միտքը գործին յարմարեցնելու ճանապարհով:

Սակայն գոյութիւն ունի նաեւ պառակտուածութիւնը վերացնելու հակառակ ճանապարհը: Մարդիկ յաճախ սկզբից ընտրում են գաղափարախօսութիւնը, իսկ յետոյ իրենց գործունէութիւնը յարմարեցնում են այդ ընտրած գաղափարին: Բայց այնտեղ, որտեղ մտքի և գործի պառակտուածութիւնը բացակայում է,

այնտեղ ոչ գործը արդարացնող գաղափարախօսութիւն է հարկաւոր և ոչ էլ գաղափարախօսութիւնը արդարացնող գործ: Այնտեղ կայ միայն մէկ, բայց ամենակարեւոր բանը՝ մտքի և գործի ամբողջութիւնը: Նրանք, ովքեր աղքատին հաց են տալիս, օգնում են թոյլերին և գնում են ազգի համար մեռնելու, իրենց այդ գործերը արդարացնելու ոչ մի պահանջ չունեն:

Բայց նրանք, ովքեր չեն անում այդ ամէնը, անպայման ուզում են իրենց չանելը արդարացնել որեւէ սկզբունքով կամ գաղափարախօսութեամբ:

Վաթսուն տարի առաջ Թուրքահայաստանի կամ Ռուսահայաստանի դաշտերում ու լեռներում պայքարող հայ հերոսները գաղափարախօսութեան կարիք ունէին, որովհետեւ նրանցից իւրաքանչիւրը գործի և մտքի ամբողջութիւն էր: Այսօր էլ մենք ունենք այդպիսի ամբողջական անձեր, որոնց համար մտքի և գործի պառակտուածութիւն գոյութիւն չունի, սակայն մեր օրերում թէ՛ Հայաստանի և թէ՛ Սփիւռքի համար աւելի յատկանշական է մտքի և գործի պառակտուածութեան գոյութիւնը:

Վերջերս ես եղայ Միլանում, որտեղ կազմակերպւել էր Սփիւռքի մշակութային մի համաժողով: Մասնակիցները հիմնականում ֆրանսախօս և բաւականին պատրաստուած հայ երիտասարդներ էին: Բայց մենք դժբախտաբար իրար չէինք հասկանում: Եւ հարցը անշուշտ լեզւական դժւարութեան մէջ չէր: Նրանք բոլորն էլ գիտէին հայերէն և ես կարողանում էի նրանց հետ շփւել: Բայց մենք իրար չէինք հասկանում այն պարզ պատճառով, որ տարբեր ճանապարհներով էինք փորձում ներքին պառակտուածութեան հարցը: Նրանք իրենց հայ չէին զգում, նրանք շատ աւելի ֆրանսացի էին, քան հայ: Դրա համար էլ իրենց հայ լինելը, իրենց հայկական գործունէութիւնը նրանք փորձում էին կապել միջազգային իրաւունքների, ընկերվարութեան, արդարութեան և այլ հասարակական ու տրամաբանական երեւոյթների հետ: Այսինքն նրանք փորձում էին իրենց հայ լինելու գաղափարախօսութիւնը ստեղծել:

Նրանք փորձում էին արդարացնել իրենց հայութիւնը գաղափարախօսութեամբ: Իսկ ինձ համար իմ հայ լինելը իմ ամենակարեւոր և գլխաւոր յատկութիւնն է, որը ոչ մի բացատրութեան և արդարացման կարիք չունի: Դրա համար էլ մեր վէճերի ժամանակ ես փորձում էի, սկիզբ և բարոյական արժէք ընդունելով մեր հայ լինելը, գտնել մեր ազգային գործունէութեան ուղիները: Այսինքն ես փորձում էի վերացնել պառակտուածութիւնը՝ գործը մօտեցնելով մտքին, իսկ նրանք այդ պառակտուածութիւնը փորձում էին վերացնել միտքը մօտեցնելով գործին: Եւ հէնց այս տարբերութիւնն էր, որ մեր մէջ առաջացնում էր փոխադարձ անհասկացողութիւն:

Նոյնիսկ Լուդվիկ Բազիլը, որը խօսում էր զուտ հայ երաժշտութեան մասին և որը շատ լաւ պատրաստուած զեկուցման մէջ նշեց, թէ ինչպէս եւրոպական

արուեստը ճնշել է հայ արուեստը և որ ժամանակն է եկել այդ ազդեցութեան տակից դուրս գալու, արժանացաւ «**նացիոնալիստ**» և «**շովինիստ**» ածականներին։ Եւ դա բոլորովին զարմանալի չէ, որովհետեւ սէրը չի կարելի բացատրել տրամաբանութեամբ, նրա մասին կարելի է խօսել միայն զգացմունքներով, իսկ զգացմունքները, մտքի և գործի պառակտուածութեան պատճառով, արդէն վաղուց դուրս են մնացել բացատրութիւններ տալու ասպարէզից։ Նշանակո՞ւմ է սա արդեօք, որ մենք այլեւս չպէտք է զբաղւենք միտքը գործին յարմարեցնելու հարցով, կենտրոնացնելով ամբողջ ուշադրութիւնը հակառակ ուղղութեանը։

Ոչ, ես կարծում եմ, ճի՛շտ հակառակը։ Մենք պէտք է կարողանանք որդեգրել, մշակել և, ո՞վ գիտէ, գուցէ ստեղծել այնպիսի տեսութիւններ ու գաղափարախօսութիւններ, որոնք համամարդկային ու միջազգային բնոյթ կրելով հանդերձ, ոչ միայն արդարացնեն, այլ նաեւ մղեն մեր երիտասարդութիւնը ազգանպաստ գործունէութեան։ Շատ պիտի ուզէի, որ նման գաղափարախօսութիւնների կարիքը չլինէր, որ հայանպաստ գործունէութիւնը բխէր մեր էութիւնից, այլ ոչ թէ բարոյապէս պարտադրւէր դրսից, բայց ի՞նչ անել՝ եթէ այս է իրականութիւնը։

Մնում է անել այն, ինչը առաջարկում էր Ֆեդորովը, այսինքն հետեւեալը.

«Եթէ մանկատներում մեծացած երեխաները այլեւս չեն սիրում իրենց ծնողներին, ապա մենք պարտաւոր ենք բացատրել նրանց, որ տարեցներին ընդհանրապէս պէտք է յարգել, որ դա աշխարհի օրէնքն է և որ երեխաներն էլ ժամանակին ծերանալու են»։ Եւ ո՞վ գիտէ, գուցէ ընկերվարութիւնը միջոցներից մէկն է այսպիսի բացատրութիւնների համար։

1978

ԱՆՁՆԱՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԵՒ ԱԶԳԱՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Է. Յովհաննիսեան

Եթէ կենդանական աշխարհի, առաւել եւս՝ մարդու գործունէութեան համար, **ապրել** հասկացութիւնից բացի պահանջւէր տալ որեւէ այլ սահմանում, ես կ՚ասէի, որ մարդը իր ամբողջ կեանքի ընթացքում **ինքնահաստատւում** է։

Մենք ինքնահաստատւում ենք, երբ սնւում ենք, սիրում ենք, երաժշտութիւն ենք լսում, գրում ենք, յեղափոխութիւն ենք անում, փառքի ենք ձգտում, զոհաբերութիւն ենք անում և նոյնիսկ այն ժամանակ, երբ գիտակցաբար մահն ենք ընդունում։ Ինքնահաստատումը, որը նշանակալից է դարձնում մեր ինքնութիւնը, որի շնորհիւ մենք տարբերւում ենք մեզ ուրիշներից, կեանքի ներքին նպատակներից մէկն է և գուցէ ամենակարեւորը։

Ի՞նչպէս է կատարւում այդ ինքնահաստատումը, ո՞րն է նրա հոգեբանական և կենսաբանական մեքենականութիւնը։ Այս հարցերի պատասխանը շատ կարեւոր է, որովհետեւ ինքնահաստատումը, որը փաստօրէն կարելի էր կոչել անձնապահպանում, անմիջականօրէն կապւած է մեր ազգային կեանքի, մանաւանդ ազգապահպանման հետ։

Թւում է, թէ ազգապահպանումը ուղիղ հակառակն է անձնապահպանման, այսինքն այնտեղ, որտեղ յաջող է ընթանում անձնապահպանումը, տուժում է ազգապահպանումը։ Մի խօսքով՝ թւում է, թէ ուժեղօրէն ինքնահաստատւած անձերից բաղկացած ազգը ինքնահաստատւած չէ և ենթակայ է քայքայման՝ արտաքին հարւածների տակ։ Թւում է, թէ ուժեղ անձերից բաղկացած ազգը թոյլ է։

Այս տեսակէտը, իմ կարծիքով, սխալ է կամ, աւելի ճիշտ, մակերեսային։ Հէնց դրա համար էլ անհրաժեշտ է վերլուծել հարցի տարբեր կողմերը։

Սկսենք սահմանումներից։ Եթէ որեւէ անձի, ազգի կամ հաւաքականութեան ինքնահաստատումը սեփական ուրոյնութեան ընդգծումն է, ապա պարզ է, որ ինքնահաստատումը տեղի է ունենում համապատասխան միջավայրում։ Այստեղից բխում է առաջին սահմանումը.- Ինքնահաստատման համար անհրաժեշտ է ինքնահաստատման դաշտ։

Եթէ ինքնահաստատումը իսկապէս ինքնահաստատում է, նշանակում է, որ թէ՛ դաշտի և թէ դաշտում սեփական դիրքի գնահատականը տրւում է անձի, այլ ոչ թէ ուրիշների կողմից։

Եւ, վերջապէս ինքնահաստատման ընթացքը դաշտի բազմազանութեան ամբողջացումն է, այսինքն անձը միայն այն դաշտում կարող է հաստատուել, որի բազմազանութիւնը իր համար ընկալելի է:

Մենք չենք կարող հաստատուել տիեզերքում, եթէ ոչ մի տեղեկութիւն չունենք տիեզերքի բազմազանութեան մասին: Գուցէ այդ տեղեկութեան պակասն էր, որ ստեղծեց **Աստուած** ամբողջութեան անհրաժեշտութիւնը:

Այսպիսով, ինքնահաստատումը պահանջում է դաշտ, որի բազմազանութիւնը մենք ի վիճակի ենք ընկալելու սեփական միջոցներով: Այստեղից պարզ է, որ չի կարող տեղի ունենալ ինքնահաստատում կամ անձնապահպանում, եթէ մենք ընտրել ենք մեզ համար անընկալելի դաշտ, այսինքն երբ ընկալելու սեփական միջոցների համեմատութեամբ, բազմազանութեան իմաստով, դաշտը շատ մեծ է:

Այս եզրակացութիւնը շատ կարեւոր է նրա համար, որ ցոյց է տալիս մեզ, թէ ինչպէս կարող են ազգապահպանման բոլոր ջանքերը ապարդիւն անցնել, եթէ դաշտը սխալ է ընտրուած: Մեծ դաշտը ջնջում է անձը կամ, եթէ աւելի զգոյշ լինենք, ձեւափոխում է անձը:

Նիւ-Եորքում ապրող մարդը երբեք չի կարող ունենալ այնպիսի նկարագիր, ինչպիսին կ'ունենար այդ նոյն անձը ուրիշ քաղաքում: Այն, որ միջավայրը կամ դաշտը ջնջում է անհատականութեան որոշ առանձնայատկութիւնները, ընդ որում՝ ջնջում է օրինաչափօրէն, յայտնի է: Համապատասխան միջավայրերում մարդիկ կարող են կորցնել լեզուն, աւանդոյթները, արտաքին և ներքին նկարագիրը և նոյնիսկ դիմագծերը:

Եւ, եթէ մարդու ինքնահաստատման դաշտը սխալ է ընտրուած, ոչ մի ճիգ և գերճիգ չի օգնի, միջավայրը կը տանի իր հետ մարդու որոշ յատկութիւնները, ինչպէս ջուրը տանում է իր հետ աւազը, և կ'աւելացնի նոր յատկութիւններ, ինչպէս արեւը սեւացնում է մարդու մորթը:

Իսկ եթէ դա այդպէս է, ուրեմն, դաշտ ընտրելու հարցը դառնում է կարեւորագոյն հարցերից մէկը: Ո՞ր դաշտում մենք պէտք է հաստատենք մեր անձը: Ի՞նչպէս անենք, որ իսկապէս հաստատուենք, այլ ոչ թէ ընկնենք անձը ջնջող ջրաղացի քարերի տակ:

Բնութիւնը մարդու համար ստեղծել է այն բնական դաշտը, որի մէջ նա կարող է հաստատել իր անձը: Այդ դաշտը ազգն է: Իսկապէս, միայն ազգային դաշտում մարդը կարող է լիովին հաստատուել, այսինքն արտայայտել իր անհատականութեան բոլոր երեսները: Օրինակ, Գերմանիայում կամ Ամերիկայում ապրող հայը երբեք չի կարող դառնալ Գերմանիայի կամ Միացեալ Նահանգների նախագահ: Եթէ անձը համակերպել է այդ մտքի հետ, ուրեմն, նա արդէն, որոշ իմաստով, ստրկացած անձնաւորութիւն է: Նա ընդունել է իր ան-

ձի թերութիւնը և հաշտւել է իր երկրորդ կարգի քաղաքացի լինելու հետ: Բայց ինչո՞ւ այդպէս եղաւ:

Այդպէս եղաւ այն պարզ պատճառով, որ դաշտը սխալ էր ընտրւած: Եթէ անձը հրաժարւի իր ազգութիւնից և եթէ գերմանացին, օրինակ, ճանաչի նրան որպէս գերմանացի, գուցէ նրան յաջողւի թօթափել իր ստրկութիւնը, բայց այդ դէպքում անձը կը կորցնի իր մէկ ուրիշ յատկութիւնը:

Այս նոյն դատողութիւնը կարելի է կիրառել ազգապահպանման նկատմամբ: Եթէ ազգապահպանման դաշտը մեծ է, աւելի բազմազան է, քան ազգի ընկալումների կարողութիւնը, ապա ազգապահպանումը սկզբունքով անկարելի է:

Ուրեմն, չզարմանանք, որ Միացեալ Նահանգներում հայ ժողովուրդը աւելի արագ է կորցնում իր ազգային ինքնագիտակցութիւնը, քան, օրինակ, Մերձաւոր Արեւելքի դաշտում: Անձնա-և ազգապահպանման ընթացքը կարելի է համեմատել կերպարներ ստեղծելու ընթացքի հետ:

Այսպէս, մենք ունենք **դաշտ** կոչւող բազմութիւնը և այդ բազմութեան վրայ, բազմութեան մասնիկներից կամ տառերից ցանկանում ենք ստեղծել մեր ներքին աշխարհին բաւարարութիւն տւող մի կերպար: Այս ընթացքի էութիւնը կարելի է ըմբռնել տառերից բառ կազմելու օրինակի վրայ: Մեր ինքնահաստատման դաշտում մենք ունենք բազմաթիւ տառեր, որոնցից բառեր կազմելով՝ մենք ինքնահաստատւում ենք: Մեր ինքնահաստատման էութիւնը կայանում է հէնց նրանում, որ կարողանում ենք տառերի քաոսը վերածել «բառ» ամբողջութեան:

Մենք հռչակում ենք մեզ քաոսի կարգաւորիչ և դառնում ենք անտէր շրջապատի տէրը: Լինի դա արւեստ, հասարակական կեանք թէ գիտութիւն, մեր ինքնահաստատումը ամբողջական կերպարներ ստեղծելու ընթացք է, որի ժամանակ կամաց-կամաց հաստատւում է մեր իշխանութիւնը շրջապատի վրայ:

Բայց ո՞ր բնագաւառում: Սա արդէն կարեւոր չէ: Եթէ կրկին դիմենք տառերից բառ կազմելու օրինակին, ապա կարող ենք ասել, որ մեր ինքնահաստատման դաշտի տառերից կարելի է կազմել «ազգ», «դրամ», «իշխանութիւն», «ոյժ» բառերը, ինչպէս նաեւ «ստորութիւն», «դաժանութիւն», «խորամանկութիւն» և ուրիշ նման բառեր:

Բայց եկէք պատկերացնենք, որ ինքնահաստատման մասին երազող անձը, օրինակ՝ հայը ընտրել է կամ իրերի բերումով ընկել է մի այնպիսի դաշտ, որտեղ կան աշխարհի բոլոր տառերը, բացի հայերէնից: Նա փորձում է այս անծանօթ տառերից կազմել բառեր, բայց նրա բոլոր ճիգերը ապարդիւն են անցնում: Ի՞նչ անել:

Ինքնահաստատելու համար այստեղ կայ երկու ճանապարհ։ Առաջին, թողնել իր կարողութիւններին չհամապատասխանող դաշտը և ընտրել այնպիսի դաշտ, որտեղ հայերէն տառեր կան։ Երկրորդ ճանապարհ, սովորել մեծ դաշտի բոլոր տառերը, ապա սկսել ինքնահաստատման ընթացքը։

Այս երկրորդ ճանապարհի վրայ՝ քչերին է յաջողւում նպատակին հասնել։ Սրանք այն հանճարներն են, որ հանդէս են գալիս որպէս համաշխարհային դէմքեր, այսինքն միջազգային դաշտի իշխանաւորներ։ Սովորական մարդիկ այս ճանապարհի վրայ պարտւում են և, հրաժարւելով ինքնահաստատումից, համակերպւում են իրենց աննշան կեանքի հետ, լաւագոյն դէպքում՝ հաստատելով սեփական անձը սեփական ընտանիքի կամ էլ սեփական երազների մէջ։

Նրանք, ովքեր դիմում են առաջին ճանապարհին, այսինքն փոխում են ինքնահաստատման դաշտը, կարողանում են բաւարարել իրենց ներքին պահանջները և տեսնել սեփական անձի հասարակական նշանակութիւնը։ Հոգ չէ, եթէ նախագահ Քարտըրի փոխարէն նա միայն հայկական ակումբի նախագահ է կամ Լուվրի փոխարէն նրա նկարները ցուցադրւում են հայ մշակոյթի տանը։ Կարեւորը այն է, որ տառերը ծանօթ են և նա կարողանում է այդ տառերից բառեր կազմել։

Այս առաջին ճանապարհի վրայ կայ մէկ ուրիշ վտանգ։ Երբեմն հայկական տառերով դաշտում հաստատւելու կարողութիւնն էլ չունի անձը։ Այդ դէպքում նա արհեստականօրէն փոքրացնում է իր ինքնահաստատման դաշտը և այդ փոքր դաշտում նա իրեն զգում է այնպէս, ինչպէս կը զգար դպրոցական աշակերտների մէջ մի չյաջողած գիտնական։ Այս փոքր դաշտերի ընտրութիւնը յատկապէս բնորոշ է ամերիկահայութեանը, որ ստեղծել է պարսկաստանցիների, ռումինացիների, բալուցիների, հայաստանցիների և մի շարք այլ «ցիների» միութիւններ։

Ինչո՞ւ այս միութիւնների գոյութիւնը բացասական երեւոյթ պիտի նկատել։ Չէ՞ որ, ինչպէս մենք տեսանք, մարդիկ հաստատւում են իրենց կարողութիւններին համապատասխանող դաշտերում։

Նախ այն դաշտը, որտեղ նրանք հաստատւում են՝ արհեստական է։ Ո՞րն է, օրինակ, պարսկաստանցիների, ռումինացիների կամ պոլսահայերի ընդհանուր հողը։ Պարսկաստա՞նը, Ռումինիա՞ն, Պոլի՞սը։ Մէկ կողմից մենք ուզում ենք մաքրել մեր նկարագիրը, արւեստը, լեզուն և սովորոյթները օտար ազդեցութիւններից, միւս կողմից ստեղծում ենք միութիւններ հէնց այդ օտար ազդեցութեան հողի վրայ։

Դեռեւս կարելի է հասկանալ բալուցիներին, որոնց ընդհանրութեան հողը հայկական է, բայց երբեք չէի ուզի հասկանալ և արդարացնել, օրինակ, պոլսա-

հայերի միութիւնը։ Ես անձամբ կարծում եմ, որ այս միութիւնները շատ աւելի նման են հաշմանդամների, համրերի, կոյրերի, այսինքն պակասութիւններ ունեցողների միութիւնների, քան առողջ, բնական ազգային միութիւնների։

Նման միութիւնների երկրորդ և աւելի կարեւոր պակասութիւնը կայանում է նրանում, որ նրանք իրենց արհեստական դաշտերից չեն ստեղծում այն բնական դաշտը, որը անհրաժեշտ է ազգի ամբողջութեան մէջ հաստատուելու ձգտող մարդուն։ Այս արհեստական դաշտերը, ներդաշնակութեան մէջ մտնելու փոխարէն, հակադրւում են մէկը միւսին և ազգային միասնութիւնը վեր են ածում պառակտւածութեան։

Եթէ մեր ազգային մտածելակերպը այնքան սահմանափակ է, որ միայն արհեստական միութիւնների մէջ կարող ենք գտնել մեր սեփական տեղը, ապա ես ոչ ոքի չեմ կարող մեղադրել, բայց մէկ բան չեմ կարող չնշել։

Բոլոր այս միութիւնները միայն այն ժամանակ կարող են ազգային նշանակութիւն ունենալ, երբ այդ միութիւնների ներկայացուցիչներից կազմւի մի ընդհանուր միութիւն։ Այս միութիւնների միութեան գոյութիւնն է, որ որոշ չափով պիտի արդարացնի միութեան գոյութիւնը։ Եւ այն էլ ժամանակաւոր, այնքան ժամանակ, քանի դեռ հայ մարդու հոգեբանութիւնը գտնւում է Պարսկաստանի, Ռումինիայի կամ Պոլիսի ազդեցութեան տակ։

Արդ, անձնապահպանման լաւագոյն և գուցէ միակ դաշտը ազգն է, ուստի, հէնց մեր անձը հաստատելու համար, մենք պիտի պահպանենք այդ դաշտը։

Ես կարեւոր եմ համարում ընդգծել այս միտքը, որովհետեւ վերջերս Միացեալ Նահանգներում ինձ հարց տւեցին (նման հարցերը միշտ այնտեղ են ծնւում). «Շա՞տ բան կը կորցնի մարդկութիւնը, եթէ հայերը վերանան աշխարհի երեսից»։

Ոչ, մարդկութիւնը շատ բան չի կորցնի, բայց մենք կը կորցնենք, որովհետեւ ինքնահաստատւելու տեղ չենք ունենայ։ Եւ անշուշտ մի ինչ որ բան աշխարհին էլ կը կորցնի, յամենայն դէպս՝ այդ աշխարհը ձեռք կը բերի մարդկանց անհատականութիւնից զրկելու իրաւունքը, որը մեծ կորուստ է մեր առանց այն անբարոյական աշխարհի համար։

Եւ, ուրեմն, ազգապահպանումը անմիջականօրէն կապւած է անձնապահպանման հետ, թէպէտ միայն նրանով չի պայմանաւորւած։

Անձի ինքնահաստատման դաշտ լինելուց բացի, ազգը ունի նաեւ սեփական արժէք։

Բայց այս մասին ես արդէն բազմիցս արտայայտւել եմ։

1979

Ո՞Վ ՊԻՏԻ ԽՕՍԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՆՈՒՆԻՑ

Է. Յովհաննիսեան

Ռուս գրող Չեխովի պատմուածքներից մէկում նկարագրւում է մի մարդ, որը հարբած վիճակում ընկնում է սայլի անիւների տակ, բայց հիւանդանոցից դուրս գալուց յետոյ պարզապէս երջանկութիւն է ապրում, երբ տեղեկանում է, որ իր արկածին անդրադարձել էր տեղական թերթը: Նա որպէս մի թանկարժէք իր պահում է այդ թերթը և ամբողջ կեանքում պարծանքով ցոյց է տալիս ծանօթ ու անծանօթ մարդկանց ասելով. **«Իմ մասին թերթումն են գրել»**:

Երկար ժամանակ մօտաւորապէս այս վիճակումն էր գտնւում Սփիւռքը, որը հրճւում էր օտար մամուլում «հայ» բառը տեսնելիս: Եւ դա հասկանալի էր, որովհետեւ շատ քիչ էր խօսում արտասահմանեան մամուլը մեր մասին և մենք ուրախանում էինք անկախ այն բանից, թէ ո՛վ էր ընկել լրագրողների գրչի տակ՝ Ա. Միկոյեանը, Տիգրան Պետրոսեանը, Շարլ Ազնաւուրը թէ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Այս կացութիւնը դեռեւս շարունակւում է, թէպէտեւ հայերի նկատմամբ աւելի պերճախօս է դարձել արտասահմանեան մամուլը: Այժմ հայերի մասին խօսում են ձախերը և աջերը, կրօնաւորները և արուեստագէտները, խօսում ենք մենք «Հայոց Փարք» դարձած համագումարների ու գիտաժողովների բեմերից:

Հայկական խնդիրների մասին խօսում է Շարլ Ազնաւուրը, պրոֆեսոր Տատրեանը, «Լրաբեր»ը, «Նոր Մերունդ»ը և շատ ուրիշներ: Եւ հէնց այստեղ է, որ հարց է ծագում. ո՞վ է խօսում հայ ժողովրդի անունից: Ո՞ւմն է հայ ժողովուրդը վստահել իր կամքը արտայայտելու իրաւունքը: Ո՞ւմ հետ պիտի հաշւի նստեն, իսկ հարկ եղած դէպքում՝ բանակցեն օտար քաղաքական և հասարակական կազմակերպութիւնները:

Այս հարցի պատասխանը գտնել դժւար է, իսկ եթէ աւելի անկեղծ լինենք՝ անկարելի է, որովհետեւ հայ ժողովուրդը դեռեւս ոչ ոքի չի տւել իր անունից խօսելու իրաւունքը: Խօսքը, անշուշտ, Սփիւռքի մասին է, որովհետեւ Հայաստանի հայութիւնը այդ իրաւունքը կամայ թէ ակամայ յանձնել է Մոսկւային:

Ոմանց թւում է, թէ սփիւռքահայութեան անունից խօսելու իրաւունքը յանձնւած է Հայ Առաքելական Եկեղեցուն: Ոմանք էլ շատ կ'ուզէին, որ այդ այդպէս լինէր: Բայց, թող ներեն ինձ մեր հոգեւոր հայրերը, այդ երբեք այդպէս չէ և չի էլ կարող այդպէս լինել:

Հայ Եկեղեցին արդէն վաղուց վեր է ածւել մի տեսակ կուսակցութեան իր ձախ ու աջ թեւերով, իր ներքին «կուսակցական» կարգապահութեամբ, իր քաղաքական դիրքորոշմամբ և ներքին պայքարներով: Այդ այդպէս է և պէտք էլ չէ, որ մենք մեզ խաբենք: Եթէ միտքս պարզելու և ապացուցելու համար չեմ բերում օրինակներ, միայն նրա համար է, որ չեմ ուզում խայտառակել մեր եկեղեցին, որը ազգային հաստատութիւններից մէկն է:

Ես ուզում եմ միայն պնդել, որ կուսակցութեան վերածւած այդ ազգային հաստատութիւնը հայ ժողովրդի անունից խօսելու իրաւունքը չունի, որովհետեւ հայ ժողովուրդը նրան այդ իրաւունքը չի տւել, ինչպէս չի տւել նա այդ իրաւունքը մնացած բոլոր կուսակցութիւններին:

Եւ որովհետեւ չկայ հայ ժողովրդի անունից խօսող մարմին, ամէն խօսող համարում է, որ հէնց ինքն է հայ ժողովրդի խօսնակը: Մէկը հայ ժողովրդի անունից պայքարում է միջազգային **իմպերիալիզմ**ի դէմ և ռումբեր է պայթեցնում Իսրայելի օդանաւային ընկերութեան մէջ, միւսը պայքարում է հայ ժողովրդի իրաւունքների համար և թուրք դեսպաններ սպանում, իսկ երրորդը հայ ժողովրդի անունից Մոսկւայի մետրոյում (ինչպէս գրւեց ժամանակին) ռումբ է պայթեցնում:

Մէկը ցեղասպանութեան ամբողջ մեղքը բարդում է քրդերի վրայ, իսկ միւսը թուրքերի դէմ դաշինք է կնքում քրդերի հետ: Եւ բոլոր այս ու նման գործերը կատարւում են հայ ժողովրդի անունից, առանց հայ ժողովրդի ցանկութիւնը հարցնելու:

Կար ժամանակ, որ հայկական գործերը դուրս չէին գալիս մեր ներքին շրջանակներից և անիշխանութիւնը մեծ վնասներ չէր հասցնում հայկական գործին, որովհետեւ այդ «գործն» էլ զուտ ներքին գործ էր: Բայց այժմ հետաքրքրասէր լրագրողները, բարեկամ և թշնամի, բաւականին մեծ հետաքրքրութիւն են ցուցաբերում հայկական գործերի նկատմամբ: Նոր լուրեր հաղորդելու համար, նրանք պատրաստ են «տեղից ելած հայի» խօսքերը թերթին յանձնել:

Ուստի մենք էլ զգոյշ պիտի լինենք մեր արտայայտութիւններում, խօսելով առնւազն այն բաների մասին, որոնց «խելքներս հասնում է»: Սա անձնական պատասխանատուութեան հարց է, որը սակայն ոչ մի կերպ չի լուծի սփիւռքահայութեան մեր խօսնակի հարցը: Բայց այս անձնական պատասխանատուութեան ոլորտումն էլ մենք շատ անկազմակերպ ենք:

Նա, ով այսօրւայ հայ ահաբեկիչների շարժումը նկատում է սխալ գործ, շտապում է օտարների մօտ ստեղծել այն կարծիքը, թէ սա հայերի գործը չէ: Անողները անում են հէնց այն հասարակական կարծիքը ստեղծելու համար, թէ հայերը չեն մոռացել ցեղասպանութիւնը ու իրենց Դատի լուծման ճանապար-

հին պատրաստ են նոյնիսկ վճռական ծայրայեղութեան, իսկ մեր հայրենակիցների մէկ մասը պարզապէս չէզոքացնում է նրանց պայքարի արդիւնքը յայտարարելով, թէ սա հայերը չեն: Այս ուղղութեամբ առանձնապէս արտայայտուեց նաեւ հայ ժողովրդի լաւ բարեկամ գերմանուհի Թեզա Հոֆմանը, որը մեծ աշխատանք է տանում Հայ Դատի քարոզչութեան ուղղութեամբ և որի շնորհիւ Դաշնակցային Գերմանիայում հրատարակուեցին մի շարք հայանպաստ աշխատութիւններ: Թեզա Հոֆմանը, օրինակ, պնդում է, որ թուրք դիւանագէտների սպանութիւնները կապ ունեն թուրք ձախակողմեան և աջակողմեան ուժերի պայքարի հետ և ոչ մի կապ չունեն հայերի հետ: Որոշ կարծիքներ է նա յայտնում նաեւ հայերի դէմ ուղղուած իսրայելաթուրքական համագործակցութեան վերաբերեալ:

Ես չեմ ուզում այժմ քննադատել Թեզա Հոֆմանի յօդուածները և նրա գաղափարները: Ուզում եմ միայն ասել, որ հայերին և ցեղասպանութեանը վերաբերող ոչ բոլոր յօդուածներն են, որ բարենպաստ են մեր Դատի լուծմանը: Կարելի է արդարանալ ասելով.- Ի՞նչ անենք, ազատ կոչուող աշխարհումն ենք ապրում և ամէն մարդ ազատ է իր տեսակէտները յայտնելու մէջ: Բայց այդ ազատութիւնը չպէտք է պատճառ դառնայ, որ ամէն մարդ իր սեփական կարծիքը հայ ժողովրդի կարծիքի տեղ վաճառի:

Ի՞նչ անել ուրեմն: Ո՞ւմ վստահել հայ ժողովրդի կամ, աւելի ճիշտ, սփիւռքահայութեան անունից խօսելու իրաւունքը: Ո՞ւմ դարձնել սփիւռքահայութեան խօսնակ:

Մէկ բան գոնէ պարզ է, որ այդ խօսնակի դերը չի կարող իր վրայ վերցնել ոչ Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը, ոչ Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէն և ոչ էլ Հայ Եկեղեցու ներկայացուցիչները: Բոլոր այս հաստատութիւնները նախ անկախ չեն և երկրորդ էլ ժողովրդի կողմից ընտրուած չեն, ուստի նրանց խօսքը կարող է կրել միայն ձեւական բնոյթ: Սփիւռքահայութեան խօսնակ-կազմակերպութիւնը պէտք է լինի բոլորովին անկախ օտարներից և ամբողջովին կախուած հայ ժողովրդից:

Համեմատաբար ազատ վարչակարգեր ունեցող երկրներում խօսնակի հարցը լուծւում է ժողովրդավարական սկզբունքների համաձայն: Չնայած նրան, որ այս ուղղութեամբ Սփիւռքում որոշ ջանքեր թափւում են, ես անձամբ համոզուած եմ, որ Սփիւռքում ընտրական ճանապարհով համասփիւռքեան մարմին ստեղծելու ժամանակը, դեռեւս չի եկել: Անշուշտ նման մարմինը կարեւոր է, սակայն այն ստեղծելու հողը դեռեւս պատրաստ չէ:

Իսկ եթէ մենք հրաժարւենք քւէների միջոցով ստեղծւած «հեղինակութիւններից», ապա պիտի դիմենք «բնական հեղինակութիւնների» ճանապարհին, այսինքն նրանց, ովքեր իրենց գործերով և վարքագծով ձեռք են բերել ժողովր-

դի յարգանքը։ Օրինակ, Խորհրդային Միութիւնում ակադեմիկոս Սախարովին ոչ ոք չի ընտրել այլախոհութեան ղեկավար, սակայն բոլոր այլախոհների և նոյնիսկ սովորական ժողովրդի համար Սախարովը արդարութեան տիպար է և վայելում է մեծ հեղինակութիւն։

Եթէ մենք հետեւենք այս ճանապարհին, ապա ստիպւած պիտի լինենք ուսումնասիրել այն հարցը, թէ ի՞նչ ճանապարհով է ձեռք բերւում բնական հեղինակութիւնը։

Ի միջի այլոց, հեղինակապետութեան ջատագով Ալեքսանդր Սոլժենիցինը ապագայ Ռուսաստանի համար «բնական հեղինակութիւնների» իշխանութիւնը համարում է ղեկավարելու միակ ձեւը և մեծագոյն յանցանք է համարում կուսակցութիւնների գոյութիւնը, որոնք իրենց ներքին պայքարներով պառակտում են ազգը։ Ես սա ասում եմ ոչ թէ նրա համար, որ ես էլ հեղինակապետութեան կողմնակից եմ, այլ յիշեցնելու համար որ հեղինակաիշխանութիւնը նոր գաղափար չէ։

Սակայն, ի՞նչ չափանիշներով պէտք է որոշւի և ձեռք բերւի բնական հեղինակութիւնը։ Հաւանաբար, ըստ ծառայութիւնների։ Այստեղ մենք մտնում ենք բնական արժէքների խճճւած ոլորտը, որտեղից բոլորին բաւարարող եզրակացութիւն դուրս բերելը չափազանց դժւար է։ «Ես երեք գիրք եմ հրատարակել հայութեան վերաբերեալ», ասում է մէկը։ «Ես եկեղեցի եմ կառուցել» ասում է միւսը։ «Ես իմ տղաներին պատերազմի դաշտ եմ ուղարկել», ասում է երրորդը։ Չորրորդը նշում է իր յեղափոխական անցեալը, հինգերորդը մէկ ուրիշ բան և բոլորն էլ գտնում են, որ հէնց իրենց ծառայութիւնն է ամենաարժէքաւորը։

Բայց բնական հեղինակութեան առանձնայատկութիւնը նրանումն է, որ այդ հեղինակութիւնը ձեռք է բերւում ինքն ըստինքեան, առանց քարոզների և ընտրական պայքարի։ Եւ, ուրեմն, սփիւռքահայութեան անունից խօսելու յաւակնութիւն ունեցող ամէն կազմակերպութիւն ներքին և արտաքին փոխյարաբերութիւններում պէտք է ձգտի ձեռք բերել համաժողովրդական հեղինակութիւն՝ իր անկախութեամբ, իր զոհաբերութեամբ, իր անկեղծ ծառայութեամբ, իր քաղաքական հասունութեամբ և իր անդամների վարքագծի համակրելիութեամբ։

Ամէն մի կազմակերպութիւն պէտք է մի տեսակ պատրաստւի ապագայ ընտրութիւնների, որովհետեւ այն վճռական պահին, երբ ժողովուրդը իր կամքը արտայայտելու իրաւունքը վստահի որեւէ կազմակերպութեան, այդ կազմակերպութիւնը պիտի վայելի անկախ, անձնազոհ և ժողովրդի ծառայի հեղինակութիւն։

Ես անձամբ կ՚ուզէի, որ այդ կազմակերպութիւնը լինէր իմ կուսակցութիւնը, որը շատ աւելի մեծ յարգանքի է արժանի, քան յարգւում է։ Բայց եթէ ես

այժմ սկսէի այդ արժէքների թւարկումը, ապա պիտի նմանուէի ընտրական պայքարի դուրս եկած մէկի: Այս բանը չեմ ուզում անել:

Ընդհակառակն, ուզում եմ քննադատել մեր կուսակցական կեանքի մէկ երեսը, որը, ըստ երեւոյթին, վերջին տարիներին է ծագել և ըստ ինձ թերութիւն պիտի նկատուի: Ես ի նկատի ունեմ այն, ինչը կարելի էր անուանել «սուսիկ-փուսիկ մնալու բարդոյթ»: Չգիտեմ, թէ որտեղից է գալիս այս բարդոյթը, բայց վերջին ժամանակներս նկատւում է, որ կուսակցութիւնը մի տեսակ հեռու է մնում սփիւռքահայութեան հասարակական կեանքից կամ, աւելի ճիշտ, մասնակցելով այդ կեանքին, չի շեշտում իր դաշնակցական պատկանելիութիւնը:

Աւելորդ համեստութիւն եմ համարում սա, որովհետեւ ժողովուրդը պէտք է իմանայ, թէ ո՞ւմ ջանքերով են կատարւում այս կամ այն հայանպաստ գործերը: Այս բարդոյթի մէջ է մտնում նաեւ մեր որոշ խմբերի բոլորովին անհասկանալի գաղտնիացումը: Չգիտես ինչու, Եւրոպայի կենտրոնում, ազատ գործելու ամբողջովին ազատ պայմաններում, որոշ խմբեր ցանկանում են գաղտնի մնալ: Ինչո՞ւ, հարցնում եմ նրանց, սպասելով պատասխանի, թէ այս կամ այն կառավարութիւնը կարող է հալածել իրենց:

Բայց, ոչ, պատասխանը բոլորովին այլ բնոյթ է կրում: Պարզւում է, որ գաղտնիացումը հայ ժողովրդից է: «Եթէ մեր գաղութում իմանան, որ դաշնակցական ենք,- ասում են ինձ,- ապա վատ աչքով պիտի նայեն մեզ և պիտի խանգարեն մեզ»: Ինչո՞ւ, մեր ո՞ր մեղքի համար: Նրա՞ համար, որ Դաշնակցութիւնը գերմարդկային ճիգերով զինեց Լիբանանի տղաներին ու ինքնապաշտպանութի՞ւն կազմակերպեց: Նրա՞ համար, որ Հայ Դատի յանձնախմբերի ճիգերով կրկին միջազգային հարց է դարձնում Հայկական Հարցը, թէ՞ նրա համար, որ կէս դարուց աւելի է, որ իր զաւակների մէջ պահում է ըմբոստ ազգային ոգի՝ մեր ապագայի միակ պատւանդանը:

Աշխարհի բոլոր կուսակցութիւնները երազում են դուրս գալ ընդյատակից, մտնել ժողովրդի մէջ և ազատօրէն քարոզել սեփական գաղափարները: Այդ ինչո՞ւ Հ.Յ.Դաշնակցութիւնը պէտք է բացառութիւն կազմի: Եւ եթէ մենք հեռու մնանք ժողովրդից, ի՞նչպէս կարող ենք ձեռք բերել անհրաժեշտ հեղինակութիւնը: Դաշնակցային Գերմանիայում, օրինակ, ստեղծել է այնպիսի նախանձելի վիճակ, որտեղ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Գերմանիոյ մասնաճիւղը, Հայկական Հարցերի Հաստատութիւնը և Բաւարիոյ Հայրենակցական Միութիւնը անկեղծօրէն գործակցում են տեղական բնոյթ կրող ներքին և արտաքին հարցերում:

Ճիշտ է, այդ համագործակցութեանը չի մասնակցում «Հայ Առաքելական Եկեղեցի» կուսակցութիւնը, բայց հոգ չէ, նա էլ խելքի կը գայ: Եւ հէնց այստեղ, այս համագործակցութեան ոլորտումն է, որ ամէն մի կազմակերպութիւն ցոյց

է տալիս իր ժողովրդին ծառայելու անկեղծութիւնը և ձեռք է բերում համապատասխան հեղինակութիւն։ Եւ եթէ այստեղ տեղի ունենայ մի ինչ որ համազերմանական մարմնի ընտրութիւն, կասկած չկայ՝ ժողովուրդը չի սխալւի, որովհետեւ նա գիտէ, թէ ով ինչ արժէ։ Նա գիտէ, թէ ով կարող է կատարել մշակութային նախարարի դեր, ով աւելի հմուտ է քաղաքական գործերում և ով կարող է կազմակերպել կրթական գործը։

Մի խօսքով, այն կազմակերպութիւնը, որը յաւակնութիւն ունի խօսելու սփիւռքահայութեան անունից, պիտի լինի ամենաանկախը և պիտի վայելի ամենաանկեղծ ծառայի հեղինակութիւն։ Իսկ այս յատկութիւնները ձեռք բերելու համար մանրակրկիտ աշխատանք է պահանջւում։

1980

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՎՐԱՅ

Է. Յովհաննիսեան

«Նրան կարելի է հասկանալ»,- ասաց «Ազատութիւն» ռադիոկայանի թղթակից Կիրիլ Հենկինը, երբ իսպանական «Պետրոնոր» ընկերութեան ղեկավար Ալֆոնսո Օսորիոն մերժեց իր հետ հարցազրոյց ունենալու իր խնդրանքը։

Իսպանիայի աջակողմեան կուսակցութեան հիմնադիր Օսորիոն վերջերս իրապէս հրաժարուեց հանդիպել «Ազատութիւն» ռադիոկայանի ներկայացուցչի հետ, որովհետեւ նրա ընկերութիւնը առեւտուր է անում Խորհրդային Միութեան հետ և հակախորհրդային ուղղութիւն ունեցող այս կուսակցութեան ղեկավարը չի ցանկանում զրկուել Խ. Միութեան հետ առեւտրից եկած եկամուտից։

«Իսպանիա-Իսրայելեան բարեկամութեան ընկերութեան» հիմնադիր Մաքս Մազինը նոյնպէս հրաժարուեց խօսել «Ազատութիւն» ռադիոկայանի ներկայացուցչի հետ։ Պարզուեց, որ նա էլ է առեւտուր վարում Մոսկուայի հետ։

Մադրիդի **«Դաիրիո-46»** թերթը հրատարակեց մի յօդուած բասկ ահաբեկիչների և Չեկայի կապերի մասին։ Իսկ **«Ինֆորմասիոնես»** թերթում մէջբերուած էր Մոսկուայի խորհրդային պաշտօնեաներից մէկի խօսքը, որը նա ասել էր իսպանացի մի կարեւոր անձի. «Եթէ դուք ՆԱՏՕ-ի մէջ չմտնէք և թոյլ տաք մեզ, որ մենք ձեր միջոցով թափանցենք Լատին Ամերիկա, մենք ձեզ չենք անհանգստացնի Բասկերի երկրում»։

Այս յօդուածին «**Իզվեստիա**» թերթի պատասխանը եղաւ հետեւեալը. «Ոչ ոք չի հաւատայ նման բանի, որովհետեւ նման առաջարկը հակասում է Խ. Միութեան քաղաքական սկզբունքներին»։ Անշուշտ քաղաքական սկզբունքները յայտնի են։ Նրանք բնորոշ են ոչ միայն Խ. Միութեան, այլ նաեւ ամբողջ քաղաքական աշխարհի համար։

Ամերիկացիները, օրինակ, սեփական քաղաքական շահերից ելնելով՝ «դաւաճանեցին» իրենց վաղեմի բարեկամ փոքր Չինաստանին (Թայւան)։ Եգիպտոսը «դաւաճանեց» Արաբական աշխարհին։ Պարսկաստանի շահը ժամանակին դաւաճանեց Իրաքի քրդերին։ Լենին-Աթաթուրք դաշինքի օրօք Խ. Միութիւնը դաւաճանեց հայերին։ Բայց բոլոր այս դաւաճանութիւնները զարմանալի չեն, որովհետեւ սա քաղաքականութիւն է, որտեղ դիւանագէտների

սառը դատողութիւնները իշխում են արդարութեան և խղճի զգացմունքների վրայ։

Խ. Միութիւնը և Մ. Նահանգները կարողանում են ամէն ինչ օգտագործել իրենց քաղաքական նպատակների համար։ Իրաւապաշտպանական շարժումները, հրեաների և հայերի արտագաղթը, ազգային շարժումները, Հայկական Սփիւռքի հայրենասիրութիւնը, զբօսաշրջիկութիւնը, ռղիմպիական խաղերը, միջազգային գիտաժողովները, այս ամէնը ներծծուած է քաղաքականութեամբ և երբեմն մենք ինքներս էլ չենք պատկերացնում, թէ մեզանից անկախ՝ որքան գործոնօրէն ենք օգտագործւում քաղաքական գործիչների կողմից։

Եւ ահա այս բարոյականութիւնից զուրկ ոլորտը (օրից-օր աւելի խորը) մտնում է մեր ժողովուրդը և նրանից պահանջւում է քաղաքական իմաստութիւն ու անբարոյականութիւն՝ չսխալւելու և չխաբւելու համար։ Անշուշտ այս խորամանկութիւնը և դիւանագիտական հմտութիւնը պահանջւում է ղեկավարներից, այլ ոչ թէ ժողովրդից։ Այնուամենայնիւ, ժողովուրդն էլ պէտք է որոշ հասկացողութիւն ցուցաբերի այս կամ այն երեւոյթի նկատմամբ, քաղաքական իրադարձութիւններում որոնելով ազգային շահը և իմաստը։

Կոյր պէտք է լինել, չտեսնելու համար, որ սփիւռքահայ կեանքում տեղի են ունենում լուրջ փոփոխութիւններ՝ պայքարի միջոցների, քաղաքական ուժերի վերադասաւորման, ճակատների և գաղութների կշիռների ոլորտում։ Այս նոր քամիների, եթէ չասենք՝ փոթորիկների մէջ նշմարւում է որոշ շփոթւածութիւն, որոշ անհասկացողութիւն, որոնց պատճառներից մէկը մեր քաղաքական միամտութիւնն է, միւսը «կողմերի» հարցն է, որը, ըստ իս, ամենեւին էլ քաղաքական բնոյթ չի կրում։

Երբ մեծ պետութիւնները այնքան ուժեղացան, որ լրջօրէն սկսեցին իրարից վախենալ, իսկ մեր ժողովուրդը քաղաքականապէս այնքան առաջադիմեց, որ ըմբռնեց այդ իրողութիւնը, ապա պարզ դարձաւ, որ կողմ բռնելով Հայ Դատ չի լուծւի։ Ուստի մեղմացան, եթէ չասենք՝ ընդհանրապէս վերացան տարբեր կողմերի վրայ կատարւող յարձակումները ու սփիւռքահայութեան առջեւ մնաց միայն մէկ թշնամի՝ թուրքը։

Աւելին, հայ ժողովրդի շահերից ելնելով, քաղաքական կազմակերպութիւնները փորձեցին ապացուցել մեծերին, որ մեր Դատի լուծումը երկու կողմերին էլ հաւասարաչափ օգտակար է։

Ու այստեղ տեղի ունեցաւ մի զարմանալի բան։ Անմիջապէս ասեմ, որ սա իմ անձնական տեսակէտն է, որին ես յանգել եմ զուտ անձնական դիտարկումով։

Երբ Հ.Յ.Դաշնակցութեան քաղաքական վարքագծի մէջ նկատւեց լարւածութեան թուլացում խորհրդային ճակատի վրայ, այդ նոյն ուղղութեամբ

սկսեց ուժեղանալ լարւածութիւնը հակադաշնակցական թեւում: Ես չեմ ուզում այստեղ ճշտել կազմակերպութիւնների և անձերի անուններ, բայց անձամբ հանդիպեցի մարդկանց, որոնք փոխանակ որոշ չարախնդութեամբ ասելու, թէ վերջապէս դուք էլ խելքի եկաք, դէ, եկէք միասին վարենք այդ ճիշտ քաղաքականութիւնը, նրանք սկսեցին լարուել Խ. Միութեան դէմ ասելով, թէ ի՞նչպէս կարող ենք ամերիկացիների կողքին չլինել:

Վաթսուն տարի կանգնած էին Խ. Միութեան կողքին, ներում էին Ստալինին Բակունցի ու Չարենցի գնդակահարութիւնը, իսկ այժմ, երբ խորհրդային վարչակարգում իսկապէս որ մեղմացում է նկատւում, երբ նրա հետ սկսել են լուրջ հաշւի նստել աշխարհի ամենահզօր պետութիւնները, այս թեւը սկսում է ինչ որ անհանգստութիւն ցուցաբերել:

Ինչո՞ւ, ի՞նչ պատահեց: Պատահածը, իմ կարծիքով, շատ պարզ է: Սփիւռքում կային և կան այնպիսի տարրեր, որոնց քաղաքական դիրքորոշումը կամ, աւելի ճիշտ, այս կամ այն պետութեան «սիրութիւնը» որոշւում է ոչ թէ հայ ժողովրդի շահերով, այլ ուրիշ կազմակերպութիւններին հակադրուելու մեկնակէտով: Մի խօսքով, եթէ իրենց հակառակորդը բռնում է խորհրդայինների նկատմամբ մեղմացման ուղին, իրենք ամերիկասէրներ են դառնում և հակառակը: Եւ այս երեւոյթի նկատմամբ ժողովուրդը շատ զգոյշ պիտի լինի, որ միամտօրէն չընկնի անձնական բախումների ցանցը:

Չեմ կարող այստեղ չբերել մի օրինակ: Խորհրդային Հայաստանից դուրս եկած հայերից իմացայ, որ Հայաստանում տարածւել ու ձեռքից ձեռք էր անցնում Վարանդ Փափազեանի **«Դրօշակ»**ում հրատարակւած յօդւածը իմ «Ազգային քաղաքականութեան փիլիսոփայութիւնը» գրքոյկի վերաբերեալ: Վարանդ Փափազեանը իմ ընկերն է և իմ լաւագոյն բարեկամներից մէկը, ուստի ես շատ ուրախ եմ, որ նրա յօդւածը այդքան լայն տարածում է գտել Հայաստանում:

Բայց որքա՜ն միամիտ էին պատմողների բացատրութիւնները: **«Դրօշակ»**ի այդ համարը, ասում էին նրանք, մեր լաւ ընկերներից մէկը կարողացաւ հանել փակ արխիւից և մենք տարածեցինք: Սակայն ի՞նչպէս պատահեց, որ հէնց այդ համարը դուրս եկաւ գաղտնի արխիւից: Կասկածից վեր է, որ **«Դրօշակ»**ի այդ համարը ԿԳԲի ձեռքով է դուրս եկել լոյս աշխարհ, տարածելու համար այն կարծիքը, թէ ահաւասիկ Յովհաննիսեանին նոյնիսկ Դաշնակցութիւնն է քննադատում:

Իսկ մենք միամտօրէն տարածում ենք **«Դրօշակ»**ի այդ համարը, մի ինչ որ տեղ նոյնիսկ կարծելով, թէ ընդյատակեայ հերոսական գործ ենք անում, իսկ իրականում կատարում ենք այն, ինչը հէնց ԿԳԲն ուզում և ԿԳԲն էլ ծրագրել է:

Եւ, ի հարկէ, «Դրօշակ»ի այն համարը, որտեղ ես պատասխանում եմ Վարանդ Փափազեանին, այլեւս փակ արխիւից դուրս չբերուեց։

Այս օրինակը ես բերեցի ցոյց տալու համար միայն այն, թէ որքան հեշտութեամբ մենք կարող ենք խաղալիկ դառնալ ուրիշների ձեռքում։ Մենք կարող ենք վարել ներքին ու արտաքին գործօն քաղաքականութիւն, մեզ կարող է թւալ, թէ մենք ինքնուրոյն ենք այդ քաղաքականութեան մէջ, բայց իրականում մեր քաղաքական վարքագիծը ծրագրուած լինի ուրիշ տեղ և մենք այդ ուրիշ տեղի ձեռքի խաղալիկները լինենք։

Ի՞նչպէս խուսափել նման կացութիւնից։ Ըստ երեւոյթին՝ քաղաքական քարոզչութեամբ։ Մէկ օրինակ եւս։ Ութ տարի առաջ ես պարզապէս զարմանում էի, թէ ինչու արտասահմանում, անկախ կրթութիւնից ու զարգացումից, հայերը շատ աւելի տեղեակ են միջազգային քաղաքական անցուդարձերից, քան մենք՝ խորհրդային քաղաքացիներս։ Այսօր ես արդէն գիտեմ, որ դրա պատճառը արտասահմանի տեղեկատւական լայն քարոզչութիւնն է։ Արտասահմանում քաղաքական մեկնաբանները բոլոր քաղաքական իրադարձութիւնները ծամում և թերթերի, ռադիոների և պատկերասփիւռի միջոցով ունկնդիրների բերանն են դնում։ Ընդ որում, արտասահմանցին ի վիճակի է բոլոր կողմերի մեկնաբանութիւնները լսել և սեփական կարծիք ու եզրակացութիւն ունենալ։

Սակայն այս նոյն բանը նա չի գտնում հայ կեանքում, հայ մամուլում։ Հէնց դա էլ ստեղծում է այն կացութիւնը, որ միջազգային քաղաքական ասպարէզում բաւականին բանիմաց սփիւռքահայը շատ անտեղեակ ու միամիտ է հայկական քաղաքական խնդիրների մէջ։

«Հայե՞ր են արդեօք թուրք դեսպաններին սպանող ահաբեկիչները», «ո՞վ է խանգարում Էջմիածնի և Անթիլիասի մերձեցմանը», «ինչո՞ւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Նիւ-Եորք չժամանեց», «ինչո՞ւ Եպիսկոպոս Աշճեանի կողմից ղեկավարուած զբօսաշրջիկների խմբի ամերիկացիները Հայաստան չհասան», «ի՞նչ տարբերութիւն կայ Հայ Դատ հասկացութեան ձեւակերպման մէջ տարբեր կուսակցութիւնների մօտ», «ի՞նչ է Յունաստանի կառավարութեան դիրքը Հայ Դատի վերաբերեալ», «ի՞նչ է նշանակում հայերի չէզոքութիւնը Լիբանանում» և այլն, և այլն։

Բոլոր այս հարցերի պատասխանը սփիւռքահայը պէտք է գտնի հայկական մամուլում, որովհետեւ ուրիշ տեղ նա նման հարցերի պատասխան չի կարող գտնել։ Իսկ եթէ չգտնի, ուրեմն կը մնայ միամտութեան այն մակարդակի վրայ, որտեղից հեշտութեամբ կարելի է անցնել ուրիշի ձեռքում խաղալիկ դառնալու ոլորտը։ Ուստի հայկական հարցերի վերաբերեալ քաղաքական երեւոյթների և իրադարձութիւնների տարբեր տեսանկիւններից կատարուած

խորը վերլուծութիւնները մեր ժողովուրդը քաղաքական միամտութիւնից հանելու միակ պայմանն է: Եթէ սրանց աւելացնենք նաեւ այն, որ այս վերլուծութիւններին սպասում է նաեւ Հայաստանի ժողովուրդը, ապա պարզ կը դառնայ, թէ որքան կարեւոր է սփիւռքահայ մամուլի անաչառ քաղաքականացումը:

1980

Ո՞ՒՄ ՀԵՏ

Է. Յովհաննիսեան

Հայ Դատի լուծման ուղղութեամբ տարուող աշխատանքների ճանապարհը անկարելի է անցնել առանց դաշնակիցների, ինչպէս նաեւ անխուսափելի են թշնամիները, այսինքն մեր թշնամու դաշնակիցները: Այս թշնամիները ու դաշնակիցները ունեն տարբեր գոյներ, տարբեր շահեր և տարբեր կարողութիւններ:

Ինչպէ՞ս կատարել ընտրութիւնը: Ո՞ւմ հետ քայլել:

Այստեղ դժւար է խօսել ընդհանուր մօտեցումների մասին, որոնք տարբեր կարող են լինել, սակայն սկզբունքների մասին խօսել կարելի է: Ժամանակին Լենինը հռչակել էր հետեւեալ սկզբունքը. «Ով մեզ հետ չի՝ մեր թշնամին է»: Անշուշտ, այս սկզբունքը մեզ համար անընդունելի է, որովհետեւ շատ պետութիւններ, ազգեր ու կուսակցութիւններ մեզ հետ չեն, բայց չեն կարող մեր թշնամիները նկատուել, որովհետեւ մեր դէմ էլ չեն:

Այսօր գրեթէ ամբողջ աշխարհը մեր Դատի լուծման իմաստով մեզ հետ չի, բայց մենք ունենք միայն մէկ թշնամի և շատ մեծ տհաճութիւն պիտի լինէր մեր կողմից այս մէկի փոխարէն ըմբոստանալ ամբողջ աշխարհի դէմ: Ես սա նշում եմ, որովհետեւ նման կարծիքներ էլ եմ լսել: Ասում են, թէ աշխարհին է մեղաւոր, միջազգային կայսերապաշտութիւնը, ուստի պիտի պայքարենք այս բոլորի դէմ: Եւ սա ոչ միայն խօսակցութիւններ են, այլ որոշ ծայրայեղականներ նոյնիսկ քայլեր են կատարում այս ուղղութեամբ:

Հրաժարւելով Լենինի թեզից, կարելի էր առաջարկել մի քիչ աւելի մեղմ, կամ աւելի խելքի մօտիկ բան. Օրինակ, սա. «Ով մեր թշնամու հետ է՝ մեր դէմ է»: Բայց կարծում եմ, որ սա էլ անընդունելի է, որովհետեւ մեր թշնամին կարող է բազմաթիւ բարեկամներ ունենալ, որոնք բարեկամացել են նրա հետ ոչ թէ մեր դէմ պայքարելու համար, այլ սեփական շահերից ելնելով:

Երեւի ամենաճիշտ սկզբունքը կը լինէր հետեւեալը. «Ով մեր թշնամու դէմ է՝ մեզ հետ է»: Անշուշտ, սա էլ չի կարող բացարձակ սկզբունք ճանաչւել, որովհետեւ կարող է, որ մեր թշնամու թշնամիները չցանկանան մեզ հետ համագործակցել: Բայց այնուամենայնիւ, եթէ այս կամ այն պատճառով բացայայտ համագործակցութիւնը նրանց հետ անկարելի է, ապա միեւնոյն է, մի ինչ որ տեղ, նրանք «տակից» կ՚օգնեն մեզ:

Եթէ մենք ընդունենք «մեր թշնամու թշնամին մեր բարեկամն է» թեզը, ապա այդ տեսակ բարեկամութիւնը իրականութիւն դարձնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել թշնամութեան և բարեկամութեան հողերը։

Բարեկամութիւնը և թշնամութիւնը կարող են խարսխուել գաղափարական, ազգային, տնտեսական կամ մշակութային հողի վրայ և ամէն անգամ պէտք է կարողանանք ճիշտ գնահատել այն վնասը, որ գալու է հնարաւոր թշնամուց և այն օգուտը, որը կարող ենք ձեռք բերել այդ թշնամու թշնամուց։

Թւում է, թէ այս տարրական ճշմարտութիւնների մասին խօսելը աւելորդ է, բայց, ըստ երեւոյթին, խօսել պէտք է։

Ենթադրենք, որ Սփիւռքի հայ գաղութներից մէկը կանգնի հետեւեալ ընտրութեան առջեւ. գաղութի դաշնակցական երիտասարդութիւնը ուզենայ տեղացի ձախակողմեան երիտասարդութեան հետ որոշ աշխատանք տանել Հայ Դատի քարոզչութեան ուղղութեամբ։ Սա բնական ցանկութիւն է և տեղացի երիտասարդների հետ այս ուղղութեամբ համագործակցելու հնարաւորութիւն ստեղծելն իսկ պիտի յաջողութիւն համարել։

Սակայն կարող է այնպէս պատահել, որ այս տեղացի ձախակողմեան երիտասարդութիւնը երկրի կառավարութեան նկատմամբ գտնւում է ընդդիմադիր դիրքում։ Սա նշանակում է, որ մեր երիտասարդներն էլ, համագործակցելով նրանց հետ, մի ինչ որ տեղ ընդդիմադիր դիրք են բռնելու կառավարութեան նկատմամբ։ Ու այնպէս կարող է պատահել, որ տւեալ երկրի կառավարութիւնը համակրանքով է վերաբերւում իր երկրում ապրող հայերին և նոյնիսկ հակակրանք ունի թուրքերի նկատմամբ։

Ի՞նչ անել։

Միանալ ձախակողմեան երիտասարդութեան, նշանակում է որոշ իմաստով վրդովեցնել մեզ համակիր կառավարութեանը։ Չմիանալ՝ նշանակում է հրաժարւել Հայ Դատի ուղղութեամբ կատարւող մէկ քայլից սեփական ընկերվարական սկզբունքներից։ Կարծում եմ, որ այստեղ հարցը պէտք է լուծւի վերը նշւած սկզբունքի համաձայն, այսինքն՝ «Մեզ հետ է նա, ով մեր թշնամու թշնամին է»։

Եթէ Հայ Դատին աւելի մեծ օգուտ է տալիս երիտասարդների կողմից բարձրացւած աղմուկը, ապա մենք պիտի ընտրենք այդ։ Եթէ Հայ Դատին աւելի նպաստաւոր կարող են լինել կառավարութեան պաշտօնեաների պաշտօնական յայտարարութիւնները, ապա մենք կառավարութեան հետ ենք։ Երբ մի գաղութի ղեկավարութիւնը, նման պարագայի կառավարութեան հետ լինելը կ'որդեգրի որպէս կեցւածք, նշանակում է թէ դա է համարում Հայ Դատի համար աւելի օգտակար։ Եթէ դա այդպէս է, կարծում եմ, որ որոշումը ճիշտ է։ Բայց եթէ նման որոշումը տրւում է ոչ թէ Հայ Դատի շահերից ելնելով, այլ

պարզապէս երկրի իշխանութեան հետ չբախուելու և հայերի կեցութիւնը չվտանգելու համար, ապա ես սխալ կը համարէի նման որոշումը, որովհետեւ առանց Հայ Դատի, Սփիւռքի մնացած բոլոր խնդիրները ոչ մի արժէք ունեն և հէնց Սփիւռքի գոյութիւնն իսկ, հայկական իմաստով, Հայ Դատով է իմաստաւորւում: Սա է պատճառը, որ մենք շատ զգոյշ պիտի լինենք բարեկամ ու թշնամի ընտրելիս և երիտասարդների նախաձեռութիւնը հսկելիս:

1980

ՄԵՆՔ ԵԻ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Վահրամ Վահրամեան

Երեւի ամէն մի սերունդ գերագնահատում է իր դարաշրջանի պատմական նշանակութիւնը կարծելով, թէ հէնց իրեն է վիճակւել ապրել պատմութեան շրջադարձային պահը։ Բայց իրականում այն շրջադարձային պահերը, որոնք փոխում են մարդկային կեանքի սկզբունքները, պատահում են 500 տարին մէկ անգամ։

Սակայն մի ինչ որ սերունդ, այնուամենայնիւ, ապրում է այդ ճակատագրական պահերը, ինչպիսիք էին, օրինակ, հին աշխարհի անկումը կամ էլ միջնադարից նոր ժամանակներին անցնելու պահը։ Այդ պահերի առանձնայատկութիւնը կայանում է նրանում, որ պարզւում է բոլոր հին ուղիների աւարտը։ Հին ուղիները հոգեկան, կազմակերպչական, տնտեսական և այլ բնագաւառներում տանում են դէպի փակուղի կամ էլ անկում։ Եւ այդ ճգնաժամային պահերին ապրող սերունդն է, որ որոշում է նոր ուղիները, որոնցով էլ որոշւում է պատմութեան նկարագիրը մի քանի դարերի ընթացքում։

Գուցէ ես էլ գերագնահատում եմ մեր դարաշրջանի կարեւորութիւնը, բայց ինձ թւում է, որ մենք ապրում ենք այնպիսի դարաշրջան, որտեղ վերանայւում են հին ուղիները։ Այս պահը որոշ շփոթաձոթութիւն է մտցնում գրեթէ բոլոր բնագաւառներում։ Տնտեսավարութիւնը, արուեստը, կրօնը, քաղաքականութիւնը, ազգային զգացմունքները բախւում են անլուծելի թւացող խնդիրների հետ և ստեղծւում է մի պահ, երբ հին ձայները թուլանում են, իսկ նորերը, եղանակ ստեղծելու համար, դեռեւս չեն ամրապնդւած։

Սակայն կայ մի ձայն, որը ոչ թուլանում է և ոչ էլ կասկածում է մարդու ապագայի վերաբերեալ։ Նա գիտէ, թէ ի՞նչպէս և ո՞ւր է գնում մարդկութիւնը։ Այդ ձայնը ընկերվարութեան ձայնն է։ Այժմ ընկերվարութիւնը բաժանւել է տարբեր ուղղութիւնների և նրանցից ամէն մէկը միայն իրեն է համարում իսկական ընկերվարական։ Եւրոպայում, Հարաւային Ամերիկայում, Ասիայում, Աֆրիկայում և այլուր ընկերվարական գաղափարները գրաւում են երիտասարդութեանը, ընկերվարութեան հետ հաշւի են նստում քաղաքական գործիչները, ընկերվարութիւնը պայքարում է իշխանութեան գլուխ անցնելու համար, իսկ մի շարք երկրներ էլ ղեկավարւում են կառավարութիւններով, որոնք իրենց ընկերվարական են հռչակել։

Արդեօք ընկերվարութիւնը չէ՞ այն նկարագիրը, որը պիտի ընդունի մարդկութիւնը մօտակայ հարիւրամեակի ընթացքում և արդեօք ընկերվարութիւնը ընդունելուց կամ մերժելուց չի՞ կախուած մարդկութեան նոր ուղին։

Մեզ՝ հայերիս համար այս շատ կարեւոր է, որովհետեւ մեր հայրենիքը այն երկիրն է, որը պնդում է, թէ արդէն իրականացրել է ընկերվարական վարչակարգի կառոյցը, մեր Սփիւռքի գլխաւոր կուսակցութեան վարդապետութիւնը ընկերվարութիւնն է, իսկ մնացածներն էլ, խելամիտ քարոզիչների ջանքերով, հայաստանասիրութիւնը վեր են ածել վարչակարգասիրութեան, այսինքն ընկերվարութեան համակիրներ են դարձել։ Ուրիշ խօսքով, այս թէ այն ձեւի տակ ընկերվարութիւնը հայի անբաժանելի մասնիկն է դարձել՝ պարտադրաբար հայրենիքում, կամաւոր կարգով՝ Դաշնակցութեան համար և հոգեբանական գործօնների բերումով՝ Սփիւռքի մնացած մասի համար։

Անշուշտ տարբեր է այս երեք հատուածների վերաբերմունքը ընկերվարութեան նկատմամբ և հէնց դրա համար էլ անհրաժեշտ է ոչ թէ տեսականօրէն, այլ գործնապէս մօտենալ տիրող կացութեանը։

Ժամանակակից ընկերվարութեան յատկանշական կողմը այն է, որ նա չի հակադրւում դրամատիրութեան, նախ որովհետեւ դրամատիրութիւնը իրականացած է, իսկ ընկերվարութիւնը՝ ոչ, և բացի դրանից՝ ընկերվարութիւնը գաղափարախօսութիւն է, իսկ դրամատիրութիւնը տնտեսվարութիւն։ Չի կարելի տեսութիւնը համեմատել իրականութեան և չի կարելի աշխարհահայեացքը համեմատել տնտեսվարութեան հետ։

Գաղափարախօսութիւնը կեանքի մօտեցման ձեւ է, որը պարունակում է իր մէջ արժէքների գնահատականը, նպատակներին հասնելու միջոցները և այն ամէնը, ինչ կապւած է մարդու և բնութեան փոխյարաբերութիւնների հետ։ Տնտեսութիւնը, արւեստը, գիտութիւնը, պատմութիւնը, կրօնը, այս ամէնը չեն վրիպում ընկերվարութեան աչքից և բոլոր այս բնագաւառներում նա հաստատում է իր սեփական իշխանութիւնը։

Այդպէս չէ դրամատիրութիւնը, որը ոչ մի կապ չունի արւեստի կամ կրօնի հետ։ Նա ինքը քաղքենի ժողովրդավարութեան արդիւնք է և որպէս տնտեսվարութիւն վայելում է քաղքենի ազատութիւնը, ինչպէս օգտւում են այդ ազատութիւնից մնացած բոլոր բնագաւառները՝ պատմութիւնից մինչեւ կրօն։

Ուստի սխալ պիտի համարւեն բոլոր այն փորձերը, որոնք նպատակ ունեն համեմատելու իրականացած դրամատիրութիւնը տեսական ընկերվարութեան հետ։ Իրականութիւնը անհրաժեշտ է համեմատել իրականութեան հետ և միայն այդ ճանապարհի վրայ մենք կարող ենք պարզել, թէ ինչ է իրենից ներկայացնում մեր հայրենիքի այսպէս կոչւած ընկերվարութիւնը։

Մարքսը և Էնգելսը «Կոմունիստական Մանիֆեստում գրում են. «Երբ բանուրի շահագործումը գործատէրի կողմից աւարտւում է և բանուրը վերջապէս առձեռն ստանում է իր աշխատավարձը, նրա վրայ յարձակւում են քաղքենիութեան մնացած մասերը՝ տան տէրը, խանութպանը, վաշխառուն և ուրիշներ»:

Մենք էլ տեսնենք, թէ ո՛վ է շահագործում հայ աշխատաւորին իր ընկերվարական հայրենիքում: Առաջին շահագործումը ռուսական կայսրութիւնն է, որը իր կայսերական շահերից ելնելով ստեղծում է հրթիռներ, հարկ եղած դէպքում՝ ներխուժում է Չեխոսլովակիա, Հունգարիա կամ Աֆղանստան, Լեհաստանը ձեռքից բաց չթողնելու համար՝ ահագին տուրքեր է վճարում նրանց, իսկ Կուբան պահելու համար՝ օրական մէկ միլիոն դոլար է վճարում Ֆիդել Կաստրոյին: Արտասահմանցիների աչքերին փոշի փչելու համար՝ շքեղ զետնուղիներ է կառուցում Մոսկւայում և խաւիար լցնում արտասահմանեան զբօսաշրջիկների առջեւ:

Այս բոլորի հետ կապւած ծախսերը ընկնում են Խ. Միութեան աշխատաւորի, այդ թւում նաեւ հայ բանուրի ուսերին: Սակայն, եթէ ռուս բանուրը, գո՛նէ հոգեբանօրէն, շատ չի ընկճւում գտնելով որ իր երկիրն է հզօրանում, հայ մարդուն հարկաւոր չեն ոչ արբանեակները, ոչ Կուբան և ոչ էլ Կրեմլի շքեղ ընդունելութիւնները:

Երկրորդ հզօր շահագործողը երկրի պետական վարչամեքենան է, որը ինքը իրեն պահելու համար տուրքերի ձեւով խլում է աշխատաւորից նրա աշխատավարձի այն մասը, որը Մարքսը «յաւելեալ արժէք» էր անւանում: Եւ եթէ համեմատենք իշխանաւորների ու բարձրաստիճան զինւորականների ապրելակերպը սովորական մարդկանց ապրելակերպի հետ, ապա պարզ կը դառնայ, որ պետական դրամատիրութիւնը է՛լ աւելի սարսափելիօրէն է շահագործում աշխատաւորին:

Բայց շահագործումը այստեղ չի վերջանում: Երբ կայսրութեան և սեփական պետութեան կողմից շահագործւած բանուրը ի վերջոյ ստանում է իր 100-150 ռուբլին, նրա վրայ է յարձակւում ամբողջ հասարակարգը: Սկզբից նա վճարում է պաշտօնական տուրքերը,- բնակարանը, լոյսը, ջուրը, կարմիր խաչը, արհեստակցական միութիւնը, կուսակցութիւնը, կոմունիստական երիտասարդական միութիւնը, Կարմիր բանակի աջակցութեան ընկերութիւնը և շատ ուրիշ ընկերութիւններ խլում են բանուրից իրենց բաժինը:

Յետոյ սկսւում են անպաշտօն վճարումները: Խանութում նրան թերակշռում է գործակատարը, **աւտոբուս**ում ու հանրակառքում նրան չեն վերաբերւում դրամի մանր մնացորդը, նա պէտք է կաշառք վճարի որեւէ տեղեկանք ստանալիս, պէտք է կաշառի բժշկին, ոստիկանութեան, դատաւորին,

դատախազին, տնային կառավարչին, պէտք է «փափախ» վճարի կոնեակ ճարելու, բնակարան ստանալու, գրանցելու, բնակարանը փոխելու, օդանաւի կամ կինոյի տոմս գտնելու համար և ընդհանրապէս փողոցում քայլելու ու շնչելու համար։

Էլ չխօսենք այն մեծ վճարումների մասին, որոնք կապւած են համալսարան ընդունւելու, բանակից ազատւելու կամ էլ գերեզմանատանը թաղւելու տեղ ճարելու հետ։

Սակայն հրաշքների ժամանակաշրջանը անցել է և խեղճ աշխատաւորը ի վիճակի չէ վճարելու բոլոր այս տուրքերը։ Եթէ նրան չի յաջողւում կանգնել գողութեան ու կեղծիքների ճանապարհի վրայ, ապա նա պարզապէս խեղդւում է իր անելանելի վիճակում։ Սուտ է և շատ վտանգաւոր սուտ այն, որ տարածում են Հայաստանի հետ զբօսաշրջիկի աչքով ծանօթացած մարդիկ, թէ բոլորն էլ մի տեսակ յարմարւել են հասարակարգին և կարողանում են այս կամ այն չափով օգտւել նրանից։

Հայաստանում կան շատ ընտանիքներ, որոնք ամիսը մէկ անգամ են մսով ճաշ ուտում և որոնց երեխաները դեռեւս ելակ չեն կերել, որովհետեւ այն չորս ռուբլի արժէ։ Սրանց մենք չենք տեսնում, սրանց մեզ ցոյց չեն տալիս, բայց սրանք մեր Հայրենիքի մեծամասնութիւնն են կազմում։ Սրանք իսկական աշխատաւորներն են, որոնք գործում են Ձգախէժի գործարանում, **պոլիվինիլացետատի** գործարանախմբում կամ էլ ալումինիումի գործարանում։ Սրանք գործում են Քաջարանի թունաւորող հանքերում կամ էլ Ալլահվերդու պղնձի արդիւնաբերութեան մէջ։ Սրանք շահագործողների ու կեղեքիչների հարւածների տակ հազիւ են շնչում։

Իսկ մենք անցնում ենք Երեւանի տուֆաքար փողոցներով և հիանում. «Այս որքան գեղեցիկ է մեր հայրենիքը»։ Եւ չկայ և ոչ մէկը, որ հարցնի, թէ այս ինչի՞ հաշւին է այսքան գեղեցիկ մեր հայրենիքը։ Հին եգիպտացիներն էլ այսօր մեզ հիացմունք պատճառող բուրգեր էին կառուցում, բայց ամէն մի բուրգ իր քաշի չափ արիւն է խմել։

Մենք հիանում ենք Էջմիածնով ու փառաբանում նրանց, ովքեր այդքան գեղեցիկ պալատներ են կառուցել։ Արտասահմանում մենք յուզմունքից մարում ենք, երբ մեր 300 հայ ունեցող գաղութները այցելում են մեր կրօնական ղեկավարները կամ էլ մեզ ծառայելու համար ուղարկում են վարդապետներ ու եպիսկոպոսներ։ Եւ չկայ և ոչ մէկը, որ հարցնի, թէ քանի՞ վարդապետ է ուղարկւել Ղարաբաղ, Զանգեզուր կամ Ռոստով։

Եթէ մենք հարցնէինք այդ մասին, ապա կը պարզւէր, որ կէս միլիոն բնակիչ ունեցող Զանգեզուրում ու Ղարաբաղում մէկ սարկաւագ անգամ չկայ երեխաներին կնքելու կամ մեռելներին թաղելու համար։ Եւ ոչ մի անգամ այդ վայրե-

րը, մեր Ղարաբաղը, չեն այցելել մեր բարձրաստիճան կրօնական ղեկավարները։

Սա է մեր հայրենիքի վիճակը։ Կարող են ասել, թէ այսպէս գրելով ես հակախորհրդային ընթացք եմ բռնել։ Ես մեծ յանցանք չեմ համարում այդ, բայց հակախորհրդայնութիւնս չէ, որ խօսում է տւեալ դէպքում։

Ես պարզապէս ուզում եմ Սփիւռքին մէկ առաջարկ անել. «Եկէք ապրենք հայաստանցիների նման»։ Գոնէ մի քանի տարի ապրենք։ Եթէ ճիշտ են այն տւեալները, թէ Սփիւռքում ապրում է 1,5 միլիոն հայ, այսինքն մօտաւորապէս կէս միլիոն ընտանիք, ապա ապրելով հայաստանցիների նման, մենք կարող ենք հրաշքներ գործել։

Յիրաւի, ապրել հայաստանցու նման՝ նշանակում է ամսական ընտանիքի վրայ ծախսել Դաշնակցային Գերմանիայում 500 մարք, Միացեալ Նահանգներում՝ 200 դոլար և համապատասխանօրէն մնացած երկրներում։ Եթէ Սփիւռքը գոնէ մէկ տարի ապրի հայաստանցի աշխատաւորի պէս, ապա այդ մէկ տարում միջին թւով կը խնայի 5 միլիարդ դոլար։ Իսկ տասը տարում՝ 50 միլիարդ դոլար, ընդ որում բոլորի կուտակած հարստութիւնը իրենց կը մնայ։

Թէ ինչեր կարելի է անել այս գումարներով, դուք ինքներդ պատկերացրէք։ Բաւական է ասել, թէ Թուրքիայի տնտեսական կործանիչ ճգնաժամի բուն պատճառը նրա արտաքին պարտքն է, որը կազմում է ընդամէնը 15 միլիարդ դոլար։ Այսպիսով, միայն Հայաստանի մեր եղբայրների ապրուստի մակարդակին իջնելու հաշւին կարելի է երկրորդ Կիլիկիա ստեղծել, կարելի է Ղարաբաղը Հայաստանին կցելու լուրջ աշխատանք տանել, կարելի է այնպիսի մշակոյթ ու գիտութիւն կերտել, որ այս անգամ հայաստանցիները գան Սփիւռք ու բերանները բացած ասեն. «Վայ, որքա՛ն գեղեցիկ է մեր Սփիւռքը»։

Ինչո՞ւ այդպէս չանել...

Բայց չենք արել ու չենք անի, որովհետեւ մարդ ենք և կամաւոր զոհաբերութիւններ կատարելու ընդունակ չենք, գո՛նէ ազգովին։ Ուրեմն եկէք յարգենք այն հայաստանցի աշխատաւորին, որի ստրկութեան գնով է կերտւում մեր հայրենիքը, որը ատամները կճրտացնելով է լսում մեր գովեստները և տեսնում մեր նւիրատւութիւնները ու մտքում ասում. «Էշ են այս սփիւռքահայերը»։

Ի՞նչպէս պիտի մենք հոգեկան կամուրջ ստեղծենք հայաստանցու հետ։ Առայժմ այդ հոգեկամուրջը ստեղծւած է Սփիւռքի և Խ. Հայաստանի քաղքենիութեան հետ, բայց ոչ ժողովրդի։ Մենք վերադառնում ենք Հայաստանից ու ասում, թէ որքան լաւն է այդ քաղքենիութիւնը, մեր ղեկավարները, գիտնականները ու կրօնական հայրերը։ Աստւած վկայ, եթէ ինձ էլ հանդիպած լինէիք, պիտի ասէիք, որ ես էլ լաւ մարդ եմ, բայց, ինչ օգուտ, եթէ ես նման յօդւած եմ գրում։

Սակայն ինչ օգուտ, որ Հայաստանի քաղքենիութիւնը լաւն է, եթէ Զանգեզուրում և Ղարաբաղում սարկաւագ չկայ, եթէ Ռուսաստանում և Ադրբեջանում մէկ հատիկ հայկական դպրոց չկայ, եթէ Ղարաբաղը օրէցօր թուրքանում է և մեր գեղեցիկ Հայաստանից արտագաղթը սկսել է մրցել հրեաների արտագաղթի հետ: Էլ ինչո՞վ են այդ մարդիկ լաւը: Խօսքերո՞վ: Բայց մի՞թէ Սփիւռքը խօսողների պակաս ունի:

Ինչ վերաբերում է այն կուսակցութեանը, որը կամաւոր կերպով որդեգրել է ընկերվարական սկզբունքները, ապա նա, եթէ իրար չխաբենք, Սփիւռքի միակ իրական ուժն է և հէնց դրա համար էլ նրա ուսերի վրայ են ընկած մի շարք շատ ծանր պարտականութիւններ: Իմ կարծիքով՝ այդ կուսակցութիւնը, այսինքն՝ Հ.Յ.Դաշնակցութիւնը կանգնած է մի դժւարին ընտրութեան առջեւ: Մէկ կողմից նա Սփիւռքի միակ կազմակերպւած ուժն է, միւս կողմից՝ այդ ուժը (այստեղ էլ չխաբենք մեզ) շատ քիչ է Հայ Դատի և Սփիւռքի առջեւ կանգնած խնդիրները լուծելու համար:

Ուրեմն, նախ և առաջ, Հ.Յ.Դաշնակցութիւնը պէտք է աւելացնի, տասնապատկի կամ գուցէ հարիւրապատկի իր ուժը և դրանով իսկ աւելացնի Սփիւռքի կարողութիւնները:

Բայց ինչպէ՞ս:

Այստեղ է, որ կուսակցութիւնը պէտք է կատարի, իմ կարծիքով, ճակատագրական մի ընտրութիւն: Կուսակցութիւնը կարող է որոշ զիջումներ կատարել կուսակցական սկզբունքներից, վերածւելով մի տեսակ կառավարութեան և ծաւալելով մի տեսակ պետական գործունէութիւն: Ըստ երեւոյթին, դրա համար նա ստիպւած կը լինի ստեղծել տնտեսական մշտական եկամուտի աղբիւր, վճարովի գործիչների լայն ցանց, պետական հաստատութիւնների նմանուող գրասենեակներ և այլն:

Այստեղ կարելի է թւարկել միջոցառումների մի ամբողջ շարան, որոնց իրականացման շնորհիւ կուսակցութիւնը անկասկած գզալիօրէն կ'աւելացնի իր և Սփիւռքի կարողութիւնները: Սակայն կասկածից վեր է նաեւ այն, որ այդ դէպքում կուսակցութիւնը, ամրապնդւելով որպէս պետական մարմին, շատ պիտի թուլանայ որպէս կուսակցութիւն, այն էլ որպէս ընկերվարական կուսակցութիւն, որովհետեւ պետական գործունէութիւնը պիտի պահանջի բոլորի հետ բոլո՛ր տեսակի գործակցութիւններ:

Եթէ այս ճանապարհը անընդունելի ճանաչւի կուսակցութեան կողմից, որը շատ բնական մի բան է, ապա կը մնայ երկրորդ, զուտ կուսակցական ճանապարհը: Այն է՝ ընկերվարութիւնը դարձնել ոչ թէ ճառաբանութիւն ու մտավարժութիւն, այլ կուսակցական շարքերի համար իրականութիւն: Սա էլ բարոյական ու նիւթական ուժի մեծ աղբիւր կարող է դառնալ: Եթէ կուսակցու-

թիւնը ամբողջապէս և ամէն մի կուսակցական անհատապէս հրաժարւի քաղքենի մշակոյթի կողմից ստեղծւած արժէքներից, եթէ սահմանուի ամէն մի կուսակցականի ապրելակերպը, եթէ բոլորի ունեցւածքը բաշխւի կուսակցականների միջեւ ընկերվարական սկզբունքների համաձայն, ապա կուսակցութիւնը նախ անխոցելի կը դառնայ եւ ինքը իր համար կը պարզի, թէ նկարագրով ո՛րքանով ընկերվարական են իր անդամները։

Ինձ ասում են, թէ անկարելի է ընկերվարաբար ապրել դրամատիրական շրջապատում։ Բայց դա նախ սուտ է, որովհետեւ յայտնի են հարիւրաւոր աղանդներ ու ուխտեր, որ հէնց այդպէս էլ ապրում են և յետոյ ի՞նչ է նշանակում անկարելի է. մի՞թէ մենք յեղափոխականներ չենք։ Եւ եթէ մենք այսօր այդ բանը չենք կարողանում անել, հապա ի՞նչպէս պիտի անենք մեր ապագայ անկախ Հայաստանում։

Այս ընտրութիւնը կուսակցութիւնը պիտի կատարի։ Եթէ մարդկութիւնը գալիք հարիւրամեակի ընթացքում ընկերվարութիւնը պիտի որդեգրի և այդ սկզբունքների հիման վրայ պիտի լուծւեն քաղաքական և հասարակական բոլոր խնդիրները, ապա, մէկ կողմ դնելով մարդկութիւնը, նախ մենք ունենանք ընկերվարօրէն ապրող մի հատւած։ Եթէ վաղը պէտք լինի Արեւմտեան Հայաստան վերադառնալ և սկզբնական շրջանում վրանների տակ ապրել, ապա հէնց այդ ընկերվարօրէն ապրող տարրն է, որ պիտի նետւի Արարատի միւս կողմը և բնակավայրեր ստեղծի։

Մի խօսքով, մենք ապրում ենք այնպիսի ժամանակաշրջանում, երբ յստակօրէն պէտք է որոշւեն մեր քայլելիք ուղիները։ Սա վերաբերւում է բոլոր բնագաւառներին՝ քաղաքականութիւնից մինչեւ արւեստ։ Եւ ամենակարեւորը այն է, որ ոչ մի հայկական կազմակերպութիւն այսօր չի կարող համարւել զուտ սփիւռքեան կամ էլ զուտ հայաստանեան։

Թէ՛ Հ.Յ.Դաշնակցութիւնը և թէ Հայաստանի Կոմունիստական կուսակցութիւնը ըստ էութեան համահայկական կազմակերպութիւններ են։ Կարող են տարբեր լինել այս երկու կազմակերպութիւնների գծած ուղիները, բայց սրանցից ամէն մէկը պէտք է հաշւի առնէ թէ՛ Հայաստանը և թէ Սփիւռքները։

Եթէ Հայաստանը փորձում է իր «մշակութային» կոմիտէների միջոցով ցոյց տալ, թէ շատ մտահոգւած է Սփիւռքով, ապա դա մեզ չի կարող խաբել, սա Մոսկւայի, այլ ոչ թէ Հայաստանի քաղաքականութիւնն է։ Հակառակ դէպքում՝ հասկանալի չէ, թէ ինչո՞ւ է Հայաստանը շատ աւելի շահագրգռւած Վիեննայի, Միւնիխի կամ Անգլիայի գաղութներով, քան Ղարաբաղով և Մոսկւայի հայերով։

1980

ՆԿԱՐԱԳՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Է. Յովհաննիսեան

Օ՛, Երեւանը առասպելական քաղաք է, խանութներում ոչինչ չկայ, բայց ժողովուրդը ամէն ինչ ունի: Սա մի անհասկանալի հրաշք է: Հայերը այնքան են յարմարուել վարչակարգին, որ անկախութեան կորուստի հետ ուրիշ ոչ մէկ բան չեն կորցրել:

(Հերթական զբօսաշրջիկի հասարակագիտական վերլուծութիւնից)

Խորհրդային Միութիւնում արգելւած գրականութեան ծաւալուն ցուցակի մէջ կայ նաեւ Եաշինի «**Լծակներ**» ստեղծագործութիւնը, որը հրատարակւեց խռուշչովեան ազատութիւնների ժամանակ: Նրա բովանդակութիւնը հետեւեալն է.

Գիւղացիները հաւաքւում են համայնական տնտեսութեան ժողովի: Ժողովը սկսւելու է 15-20 րոպէ յետոյ և այս 15-20 րոպէում գիւղացիները իսկական գիւղացիներ են: Նրանք խօսում են բերքից, դժւարութիւններից, դպրոցի ծռւած տանիքից, հարեւան գիւղում տեղի ունեցած հարսանիքից և տէրտէրից, որը Աստծուն չի հաւատում:

Բայց հնչում է նախագահի զանգը և այս բնականոն մարդիկ անբնականոնանում են: Մենք տեսնում ենք, որ նրանք ժողովի ժամանակ բոլորովին ուրիշ մարդիկ են: Սրանք այլեւս գիւղացիներ չեն, սրանք բոլորը, ինչպէս նաեւ նախագահը, լծակներ են, որոնք շարժում են մի ինչ որ անհասկանալի մեքենայ, որը շարժում են բոլորովին անհասկանալի ուղղութեամբ: Սրանք մարդիկ չեն, սրանք մեքենայի մասեր են:

Եւ հեղինակը զարմանք է յայտնում, թէ ո՞վ և ի՞նչպէս այսքան այլանդակեց պարզ ռուս գիւղացուն: Ու հասկանալի է, որ նրանք, որոնց ուսերի վրայ է ընկնում միամիտ ռուս գիւղացու «վերադաստիարակման» մեղքը, արգելեցին Եաշինի գիրքը:

Ես յիշեցի այս մասին, երբ Երեւանից վերադարձած հերթական մասնագէտը պատմում էր Հայաստանում տիրող համազգային ճարպկութեան մասին և պնդում էր, թէ կորցնելու բան չունենք: Յարմարւել ենք, ճարպկացել ենք, կողքից ու տակից ճարում ենք, գողանում ենք և, օ՛, երջանկութիւն, ապրում ենք, առանց որեւէ բան կորցնելու:

Ապրո՛ւմ ենք, այո՛, և վատ էլ չենք ապրում, բայց կորցնում ենք ամենաարժէքաւոր բանը՝ ՄԵՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ: Այս կորուստը շատ աւելի անվերադարձ է և շատ աւելի վտանգաւոր, քան այն ամէնը, ինչ կորցրեցինք մինչեւ այսօր:

Այսօր հասարակագէտները, պատմաբանները և քաղաքագէտները աշխատութիւններ են գրում ու վերլուծութիւններ կատարում, թէ ինչու հրեաներին հալածել են ամէնուր և բոլոր ժամանակներում: Ես անձամբ կարծում եմ, որ ամէն ինչ նրանց նկարագրից է բխում: Հազարամեակների ընթացքում ճարպկանալով ու խորամանկանալով, խաբելով ու շահագործելով, նրանք ձեռք բերեցին մի յատկութիւն, որի շնորհիւ կարողացան ստանալ աւելին, քան արժանի էին:

Եւ հէնց այս անարդարութիւնն է որ ամէնուր առաջացնում է ատելութիւն նրանց նկատմամբ: Երբեք չէի ուզի, որ հայ ժողովուրդը ձեռք բերէր ատելութիւն առաջացնող նկարագիր: Միացեալ և Անկախ Հայաստանում պիտի ապրի հայի նկարագիր ունեցող հայը, այլ ոչ թէ պայքարի ճամբին այլասերւած, ազգային արժէքներից հրաժարւած, ազգային ոգին ու հաւատքը կորցրած, խորամանկացած ու ճարպկացած «լծակը»:

Չեմ կարծում, որ ազգ կարող է համարւել այն ժողովուրդը, որի քաղաքական գործիչները, փիլիսոփաները, ուսուցիչները, հոգեւորականները, գիտնականները, արուեստագէտները ստիպւած են ստել: Ստել ամբիոններից, ստել գրքերում, ստել կենցաղում, ստել ամէն օր, ամէն տեղ, ստել՝ ապրելու համար:

Նման պայմաններում ի՞նչպէս կարող է հայը պահպանել իր նկարագիրը: Իսկ պէ՞տք է այդ արդեօք: Ա՞յդքան լաւն է մեր նկարագիրը: Եւ ո՞րն է մեր նկարագիրը:

Այս հարցերի պատասխանը չափազանց կարեւոր է ոչ միայն ուրիշներին ցոյց տալու համար, թէ որքան լաւն ենք մենք և որքան անարդարացիօրէն մեզ ջարդեցին, այլ հէնց մեր ազգային ինքնագիտակցութեան համար:

Դեռեւս ոչ ոք հայ ժողովրդի պատմութիւնը չի գրել հայի նկարագրի տեսանկիւնից ու վերլուծութեան չի ենթարկել այն հարցը, թէ ի՞նչ դեր է կատարել հայ ժողովրդի նկարագիրը այս կամ այն ճակատագրական պահին, այս կամ այն պատմական իրադարձութեան մէջ:

Կարծում եմ որ մենք միշտ կը սխալւենք, եթէ տարբեր երեւոյթներ բացատրելիս փորձենք օգտագործել միայն պատմական առարկայական պայմանները, առանց հաշւի նստելու ժողովուրդի նկարագրի հետ: Որքա՛ն սխալ պիտի լինէր Աւարայրի ճակատամարտը բացատրել քաղաքական պայմաններով և զինւորական կամ դիւանագիտական չափանիշներով: Պատահական չէ որ նման վերլուծութիւններ կատարողները «առարկայօրէն» փորձում են արդարացնել Վասակին:

Բայց ո՞վ է դատաւորը այնտեղ, որտեղ մարդը կամ ազգը գործում է իր ներքին մղումների համաձայն: Առանց հաշւի առնելու ազգային նկարագրերը՝ անկարելի է բացատրել ոչ Ռուսաստանի յեղափոխութիւնը, որը տեղի ունեցաւ հակառակ Մարքսի բոլոր գուշակումների, ոչ Պարսկաստանի յեղափոխութիւնը և ոչ էլ այն, ինչ այսօր կատարւում է Լեհաստանում:

Սակայն միայն եղածը բացատրելու համար չէ, որ անհրաժեշտ է մեր նկարագրի ուսումնասիրութիւնը: Այդ նկարագրի հետ մենք պիտի հաշւի նստենք նաեւ մեր ապագայ ծրագրերը կազմելիս: Արդեօ՞ք համապատասխանում են այդ ծրագրերը մեր ժողովրդի էութեանը: Սա է հարցերի հարցը: Եթէ չեն համապատասխանում, ապա մեզ չեն օգնի ոչ հերոսները, ոչ դրամը և ոչ էլ գիտութիւնը:

Անհաւատ եպիսկոպոսը կարող է երեխայ կնքել ու պատարագ մատուցել, բայց անհաւատ մարդուն դարձի բերել՝ երբեք: Եւ անհաւատ եպիսկոպոսներից կազմւած եկեղեցին, որքան էլ որ շքեղ լինի նրա շէնքը և որքան էլ գեղեցիկ ձայնով մատուցւի պատարագը, եկեղեցի չէ, այլ թատրոն, որը ոչ ոքի պէտք չէ: Եւ եթէ ընկերվարութեան մասին գեղեցիկ ճառեր արտասանող ու գեղեցիկ տողեր գրողները չունեն ընկերվարականի նկարագիր, ոչ մէկ արժէք ունի նրանց «տրամաբանական ընկերվարութիւնը»: Անկարելի է ընկերվարական վարչակարգ ստեղծել ոչ-ընկերվարական նկարագիր ունեցող մարդկանցից:

Եւ պիտի հաշիւ տանք մենք մեզ, որ մեր նկարագիրը մեր պատմութիւնն է, որը դարերի խորքից տանում է մեզ դէպի ապագան: Եթէ այդ ճանապարհի վրայ մենք կորցնենք մեր նկարագիրը, մենք կը կորցնենք անցեալի հետ մեր կապը ու շատ անորոշ կը դառնայ ապագան, քանզի մենք մեզ կը կորցնենք: Ահա թէ ինչու մենք պարտաւոր ենք մեզ ճանաչել:

Այստեղ կարելի է վերջացնել, առաջարկելով հասարակագէտներին, պատմաբաններին ու արւեստագէտներին ուսումնասիրել հայ ժողովրդի նկարագիրը: Բայց քանի որ խօսում եմ այս հարցի մասին, նշեմ իմ անձնական կարծիքը մեր նկարագրի վերաբերեալ:

Ես կարծում եմ, որ մեր նկարագրի մէջ կայ երկու հիմնական գիծ, որոնք մեզ հետ են եղել մեր երկարատեւ պատմութեան ընթացքին և որոնք մեծ դեր են կատարել այս կամ այն պատմական իրադարձութեան մէջ:

Այս երկու գծերից մէկը՝ ինքնապահպանման ուժեղ բնազդն է և յամառութիւնը: Միւսը՝ անհիշխանութիւնն է, այսինքն անտարբերութիւնը օրէնքի նկատմամբ և երկրպագութիւնը արդարութեան սեփական չափանիշներին, արդարութեան ներքին զգացմունքի առջեւ: Օրէնքի և խղճի միջեւ ընտրութիւն կատարելիս, ի տարբերութիւն եւրոպացու, հայը ընտրել է խիղճը:

Հայի ինքնապահպանման յամառութիւնը, որը գալիս է Աւարայրից, մինչեւ այսօր շշմեցնում է օտարներին: Նրանք չեն կարողանում հասկանալ, թէ ինչպէս 100-150 հոգի, իսկ երբեմն էլ 10-20 հոգի աշխարհի ամենաքաղաքակիրթ վայրում ցրտահար եղած կենդանիների նման իրար են կպչում ակումբներում ու եկեղեցիներում, իրենց հայութիւնը պահպանելու միակ նպատակով:

Աշխարհի ոչ մէկ քրիստոնեայ եկեղեցի մարդ չի այցելում, եթէ Աստծոյ հաւատք չունի: Իսկ մեր ժողովուրդը, որի 90 տոկոսը շատ հեռու է հաւատքից, կանոնաւոր այցելում է եկեղեցի և գրեթէ երկու ժամ ոտքի կեցած պատարագ է լսում, կատարելով իր ազգային պարտականութիւնը: Մեր ժամանակներում, երբ հաւատացեալ եպիսկոպոսներին ու արքեպիսկոպոսներին մանրադիտակով պիտի որոնել, եկեղեցիներում ժամերով պատարագ լսող մեր ժողովուրդը իսկապէս որ հերոս պիտի նկատւի:

Մեր հին պատմութեան մէջ կայ յամառութեան մէկ ուրիշ օրինակ, որի մասին քիչ է խօսւում: Սա Տիգրան Մեծի ժամանակներից Տուշպայում բնակւած հրեաների ձուլման օրինակն է: Հայերը աշխարհի առաջին և դեռեւս միակ ժողովուրդն են, որ կարողացել են հրեաներին ազգաձուլել: Ուրիշ ոչ մէկը չի կարողացել դաւանափոխել հրեաներին:

Ճիշտ է, մենք էլ ունենք Լեհաստանի վատ օրինակը, սակայն այս բանի մեղքը ամբողջովին ընկնում է Էջմիածնի վրայ, որը պատճառ դարձաւ Լեհաստանի հայերի կաթոլիկ դառնալուն: Մեր նորագոյն պատմութեան շրջանում մեր ինքնապահպանման յամառութիւնը ի յայտ է գալիս թէ՛ ցեղասպանութեան պահին, թէ՛ Սարդարապատում, թէ՛ պետական կառոյցի օրերին, թէ՛ փետրուարեան ապստամբութեան ժամանակ և թէ Խորհրդային Հայաստանի պատմութեան ընթացքին:

Զարմանալ կարելի է, թէ ինչպիսի յամառութեամբ հայ ժողովուրդը ստալինեան զարհուրելի օրերին դիմադրեց ու չընդունեց դիակներ հրկիզելու կարգը: Նա թաղեց իր մեռելներին հողի մէջ, պահելով աւանդական եօթնօրհնէքը, քառասունքը, հոգեճաշը և այլն: Այս կարգին ենթարկւեցին նոյնիսկ կառավարութեան անդամները և Կենտկոմի քարտուղարները: Չկայ Խ. Միութիւնում մէկ ուրիշ հանրապետութիւն, որը այդքան ներծծւած լինի ազգային ոգով:

Այս իմաստով Հայաստանին զիջում են նոյնիսկ մահմեդական հանրապետութիւնները, որոնց պահպանողականութիւնը յայտնի է: Հայաստան այցելած օտարները նշում են, որ սա բոլորովին ուրիշ երկիր է: Երբեմն մեզ մեղադրում են, թէ մեր պահպանողականութիւնը յետամնացութիւն է առաջացնում և խանգարում է մեզ քայլել արդի ժամանակների հետ:

Կարծում եմ, որ նման մեղադրանքները ուշադրութեան արժանի չեն, որովհետեւ այս հարցում գնահատական տւողը պատմութիւնն է: Այսօր Ռուսաս-

տանի մեծագոյն գրող Ալեքսանդր Սոլժենիցինը անիծում է այն պահը, երբ Պետրոս Առաջին կայսրը արդիականացման անունով սափրեց ռուս կալուածատէրի մօրուսը և եւրոպականացրեց ռուսին: Դրանից յետոյ միայն հնարաւոր դարձաւ բոլշեւիկեան յեղափոխութիւնը Ռուսաստանում: Այնպէս որ դեռեւս վիճելի է, թէ ենթակա՞յ է արդեօք ազգային նկարագիրը արդիականացման:

Մեր անիշխանութիւնն էլ կարեւոր դեր է կատարել մեր ճակատագրում: Գրեթէ միշտ ուրիշի օրէնքի տակ գտնուող մեր ժողովուրդը մշակել է արդարութեան սեփական չափանիշներ և կամաւոր կարգով ենթարկուել է գրաւոր օրէնքին:

Հայերի վերաբերմունքը օրէնքի նկատմամբ յիշեցնում է Աւետարանի… «տուէք կայսրինը՝ կայսեր և Աստծունն՝ Աստծոյ» դրոյթը: Կարծես թէ հետեւելով այս պատգամին՝ հայը ամէն տեղ վճարում է իր օրինական տուրքը, բայց նրա ոչ-ձեւական վարքագծի միակ մղիչ ուժը սեփական խիղճն է: Պատահական չէ, որ հայ կաշառակերին, հայ պոռնիկին և հայ աւազակին «խղճով սրիկայ» են անւանում:

Մի ռուս մարդ, որը երեք տարի Երեւանում գործարանի տնօրէնի պաշտօն էր վարում, մի առիթով բողոքում էր ինձ.- «Այս ինչ զարմանալի ժողովուրդ էք դուք: Գործարանիս դռնապանից ես պահանջում եմ որ գործարան մտնող բոլոր աշխատողների անձնագրերը ստուգի, իսկ նա ինձ պատասխանում է, թէ «ես բոլորին էլ ճանաչում եմ, էլ ինչո՞ւ ստուգեմ»: Ոչ, պիտի ստուգես,- բարկանում եմ ես,- իմն էլ պիտի ստուգես, որովհետեւ օրէնք է: Իսկ նա ինձ պատասխանում է,- «Շատ յիմար օրէնք է, դու գործարանի տնօրէնն ես, սա էլ իմ հարեւան Սեդրն է, էլ ես ձեր ի՞նչը ստուգեմ»:

Ճիշտն ասած՝ ես էլ չէի հասկանում, թէ ինչու պիտի պահակը ստուգէր նրանց փաստաթղթերը, որոնց շատ լաւ էր ճանաչում: Ու երբ այժմ տեսայ գերմանացիների ցնորքի հասնող օրինապաշտութիւնը, ինչ մեղքս թաքցնեմ, շատ աւելի սիրեցի մեր հայ պահակներին, ոստիկաններին և նոյնիսկ ԿԳԲի աշխատողներին, որոնց համար օրէնքը այդքան մեծ տեղ չի գրաւում որոշումներ կայացնելու համար:

Կ՚ասեն թէ անիշխանականութիւն է քարոզում և ուզում է արդարացնել հայերի անկարգապահութիւնը: Ոչ, այդ անել չեմ ուզում, պարզապէս այդպէս եմ տեսնում մեր ժողովուրդը, իսկ գնահատականը թող պատմութիւնը տայ: Գուցէ պարզւի որ հէնց այս անիշխանական նկարագրի բերումով է, որ մենք կենդանի ենք մինչեւ այսօր:

Իսկ ինչո՞ւ անպայման յարմարւել եւրոպացուն, եթէ եւրոպացու նկարագիր չունենք: Եւ ի՞նչ մեծ պարծանք կայ եւրոպացի լինելու մէջ: Ապա փորձէք իտա-

լացուն կամ յոյնին մեղադրել նրանում, թէ բարձր են խօսում և խօսելիս ձեռքի շարժումների օգնութեան են դիմում: Արգելէք նրանց այդպէս արտայայտուել պատճառաբանելով, թէ Անգլիայում, օրինակ, նման ձեւը ընդունւած չէ և որպէս դաստիարակութեան պակաս է նկատւում:

Կարծում եմ որ ոչ յոյնը և ոչ էլ իտալացին ուշադրութիւն չի դարձնի մեր դիտողութեանը և կը խօսի այնպէս, ինչպէս խօսել են նրա պապերը: Իսկ եթէ ոմանք էլ ամօթխած ենթարկւեն անգլիացու պահանջին, ապա, վստահ եղէք, նրանք այլեւս չեն կարող արտայայտուել այն, ինչը կարելի էր արտայայտել միայն իւրայատուկ ձեւով:

Նկարագրի կորուստը մեծ կորուստ է, գուցէ ամենակարեւոր կորուստը: Եւ մենք շատ զգոյշ պիտի լինենք բոլոր «վերադաստիարակման» փորձերի նկատմամբ, որոնք արւում են արդիականացման կամ առաջադիմութեան անունից:

1981

ՕՏԱՐՆԵՐԸ ԵՒ ՄԵՆՔ

Է. Յովհաննիսեան

Հիւանդութի՞ւն է, թէ՞ նեղմտութիւն, չգիտեմ, բայց օտարները ինձ համար գոյութիւն ունեն այնքանով, որքանով նրանք կարող են նպաստել Հայ Դատի լուծմանը: Սրանից դուրս՝ նրանց գործունէութիւնը ինձ չի հետաքրքրում:

Հռչակաւոր դերասանները, գիտնականները, կրօնական գործիչները, արբանեակներ թողարկողները, ահաբեկիչները, պատարագիչները, երգիչները, սրանք բոլորը, եթէ զբաղւած են իրենց սեփական գործերով ու մեր ճակատագրով չեն հետաքրքրւում, ինձ համար ոչ մէկ արժէք ունեն, որովհետեւ ինձ ի՞նչ, թէ մարդիկ լուսին են թռչում և կրկէսների առաստաղների տակ հոլի նման պտտւում են, եթէ իմ ժողովրդիս գոյութիւնն է վտանգւած:

Թէ ինչու մեր գոյութիւնը անմիջականօրէն կապւած է Հայ Դատի լուծման հետ, սա առանձին հարց է և ես այդ մասին չեմ խօսելու: Ես ուզում եմ փորձել վերլուծութեան ենթարկել այն հարցը, թէ ի՞նչպէս կարելի է ծաւալել հայութեան բարեկամների ու հայ իրաւունքների պաշտպանների շրջանակը:

Կարծում եմ որ մենք նախ մեծ յոյսեր չպէտք է կապենք այն պարզ և ուղիղ ճանապարհի հետ, որը, որքան էլ տրամաբանական է ու ճիշտ, այնքան էլ միամիտ ու անիրականանալի է: Այդ ճանապարհը արդարութեան ձայնով համակիրներ որոնելու ճանապարհն է:

Մենք դիմում ենք մարդկանց ասելով, թէ մեզ անարդարացիօրէն ջարդել են, անարդարացիօրէն մեզանից խլել են մեր հայրենիքը, ուստի դուք պարտաւոր էք գալու ու մեզ պաշտպանելու: Բայց ո՞վ ասաց, որ մարդկանց մտքում արդարութիւնը այնքան մեծ տեղ է գրաւում, որ նրանք անարդարութիւն տեսնելու պէս պիտի նետւեն ճակատ:

Ամէն մի մարդ ապրում է սեփական արժէքներով և ունի արժէքների-սեփական ցուցակ, որտեղ ըստ կարեւորութեան բաշխւած են այնպիսի արժէքներ, ինչպիսիք են հարստութիւն, իշխանութիւն, փառք, արդարութիւն, արւեստ, ազգ, Աստւած, դասակարգ, սէր և այլն:

Տարբեր տեղեր է գրաւում մարդկանց արժէքների ցուցակներում **արդարութիւն** արժէքը: Ոմանց ցուցակում այդ արժէքը ընդհանրապէս բացակայում է: Ոմանց համար սա յարաբերական հասկացութիւն է, իսկ ոմանք էլ արդարութեան զգացմունքը միամտութիւն են համարում: Ոմանց համար արդարութիւնը որոշւում է գոյութիւն ունեցող օրէնքներով, իսկ ոմանց համար խղճի հարց է:

Կան, անշուշտ, նաեւ այնպիսիները, որոնց համար արդարութիւնը կեանքի առաջնակարգ ու գլխաւոր շարժիչ ուժն է: Բայց այս վերջիններս այնքան քիչ են, որ նրանց հետ կապել Հայ Դատի լուծումը՝ նշանակում է ոչինչ չանել:

Պատկերաւոր ասած, մենք դուրս ենք գալիս փողոց և տեսնում շտապող մարդկանց, որոնք մտահոգւած են իրենց անձնական խնդիրներով: Նրանցից մէկը աշխատանքից է ուշանում, միւսի երեխան է հիւանդ, երրորդի մայրն է մահացել, իսկ չորրորդը վաղը ամուսնանում է: Իսկ մենք կանգնել ենք մարդկային տառապանքների այս անտառում և փորձում ենք Հայ Դատի համար մարդ որսալ: Ի՞նչպէս: Ի՞նչ զէնքով:

Արդարութեան զէնքը այս անտառում չի կրակում: Թէ ի՞նչպէս ես ասեմ այս կնոջը, որի երեխան մանկապարտէզում իր մատն է կտրել, թէ արի մեզ պաշտպանիր, որովհետեւ ի՞նչ արժէք ունի երեխայի մատը մէկ ու կէս միլիոն կոտորւածների համեմատութեամբ: Ի՞նչպէս ես ասեմ այն փողոցի մէջտեղում համբուրւող երիտասարդներին, թէ մի համբուրւէք, որովհետեւ 7 տասնամեակ առաջ ձեզ նման համբուրւողներին մորթում էին հէնց համբուրւելու պահին:

Ես փորձում եմ այս ամէնը բացատրել փողոցում շտապող օտարներին, իսկ նրանք չեն ուզում լսել ու լսելիս էլ չեն ուզում հասկանալ: Եւ սա զարմանալի չէ: Մենք էլ գրեթէ նրանց նման ենք վարւում, երբ մեզ իրենց ցաւերն են պատմում վիեթնամցիները կամ ասորիները:

Ուրեմն ի՞նչ անել: Պատասխանը գալիս է այնտեղից, որտեղից բոլորովին չենք սպասում: Միւնխենի գարեջրատներից մէկում, երբ օտարների հետ վարում եմ հերթական զրոյցը Հայ Դատին վերաբերւող խնդիրների շուրջ, մի ճարպիկ ու գործունեայ երիտասարդ ասաց.

- Մի շարունակէք, հասկացայ, ասէք թէ ո՛րտեղ է պէտք ցոյց կատարել:

- Թուրքական դեսպանատան առջեւ,- առանց մտածելու պատասխանում եմ ես:

- Շատ թանկ պիտի նստի ձեր վրայ այդ ցոյցը,- առարկում է գործունեայ երիտասարդը,- 100 հոգու տոմսերը մինչեւ Բոննն և վերադարձը, սա մօտաւորապէս 10.000 մարք է, եթէ 20ական մարք էլ ցուցարարներին վճարէք, կը դառնայ 12.000 մարք: Եթէ ունէք այս դրամը, մենք պատրաստ ենք: Այս գարեջրատան կէսը (այնտեղ հազարից աւելի մարդ կար) ուզած պահին Բոննն կը մեկնի: Իսկ այստեղ՝ Միւնխենում հիւպատոսարանի առջեւ 2000ով կարող ենք պայմանաւորւել: Եթէ տուգանքի վճարումն էլ ձեր վրայ կը վերցնէք, ապա պատուհաններն էլ կարող ենք կոտրել: Ինձ կարող էք գտնել այստեղ ամէն օր առաւօտեան ժամը 10ին:

Գործունեայ երիտասարդը հեռացաւ, իսկ ես ընկայ մտորումների մէջ: 2000ով ցոյց, պատուհանների կոտրելն էլ թող լինի 2000: Ուրեմն 4000ով աղմըկալից ցոյց, այն էլ «օտարների» կողմից: Լաւ է, շատ լաւ է: Մենք 15-20 հազար ենք վճարում մի գիրք հրատարակելու համար, իսկ այդ գիրքը 5-6 համակիր էլ չի շահում: Այս նոյն դրամով 1000 «համակիր» կարելի է ձեռք բերել:

Ինձ կ'առարկեն, թէ տարբերութիւնը հէնց այն չակերտների մէջ է, որոնց մէջ ես վերցրել համակիր բառը: Ինձ կ'ասեն, թէ գրքի ու քարոզչութեան միջոցով ձեռք բերուած համակիրը արդարութիւն որոնող, իսկական, առանց չակերտների համակիր է, իսկ այս գնուածները վաղը մեր դէմ ցոյց կը կազմակերպեն և մեր հաստատութեան պատուհանները կը կոտրեն, եթէ դրա համար վճարողներ լինեն: Վճարողներ էլ կա՛ն, այս հօ գիտենք:

Բայց հէնց նրանումն է բանը, որ ես չեմ հաւատում առանց չակերտների համակիրների գոյութեան: Բոլոր համակիրներ կոչւածները, իրենց արժէքների ցուցակի համաձայն, Հայ Դատի մէջ սեփական պահանջների բաւարարութիւն են որոնում:

Շատ լաւ կը լինէր, որ այդ պահանջները ինքն ըստինքեան բարոյական լինէին, բայց մենք չենք կարող մերժել նաեւ այն օտարներին, որոնք Հայ Դատով զբաղւում են փառքի, դրամի կամ այլ պահանջներ բաւարարելու համար: Եթէ մենք սրանցից հրաժարւենք ու թողնենք միայն անչակերտ բարեկամներին, ապա վախենում եմ որ մենակ մնանք:

Ես սա անհրաժեշտ եմ համարում նշել, որովհետեւ վերջերս, երբ Միւնխէնի համաեւրոպական համագումարում «Հայ ժողովրդի իրաւունքների պաշտպանութեան կոմիտէ» ընտրուեց, մենք մեր մէջ սկսեցինք վիճել, թէ արդեօք արժէ՞ր հրաւիրել այս մէկին կամ այն մէկին, հաշւի առնելով, թէ ինչ պատճառներով է նա մտել կոմիտէի կազմի մէջ:

Մէկը թոշակի է անցել և ուրիշ զբաղմունք չունի, միւսը ուզում է հայերի ցեղասպանութիւնը հրապարակ հանելով փոքր ինչ թեթեւացնել գերմանացիների ոճիրները հրեաների դէմ, երրորդը Հայկական Հարցի վրայ ցանկանում է գիտական աստիճան ստանալ և այլն:

Եւ, ի հարկէ, ոչ ոք մեր գեղեցիկ աչքերի համար չի զբաղուի մեր հարցով: Բոլորն էլ մի ինչ որ բանում շահագրգռուած են: Բոլորն էլ չակերտաւոր են: Եւ շատ էլ լաւ է, որ այդպէս է, որ շահագրգռուած են: Եթէ չեն, մենք պիտի շահագրգռենք՝ վճարելով, նրանց մասին յօդւածներ գրելով, նրանց գրքերը հրատարակելով, նրանց յոբելեանները տօնելով և նրանց յոբելեաններին գեղեցիկ ճառեր արտասանելով:

Եթէ այս ամէնը կարող ենք անել, ապա կ'ունենանք մեր Դատը պաշտպանող անձեր ու կոմիտէներ, իսկ եթէ յոյսներս դնենք առանց չակերտի բարեկամների վրայ, մեր բանը բուրդ է։

Բայց այս նոյն մօտեցումը, անշուշտ, հայերին չի վերաբերւում։ Հայ Դատին ծառայող հայը պէտք է առանց չակերտների լինի։ Կարելի է, ի հարկէ, Հայ Դատի գրասենեակներում ունենալ վճարովի քարտուղարներ ու գործիչներ, բայց սրանք դեռեւս Հայ Դատի զինուորները չեն, որովհետեւ սրանց համար Հայ Դատը դառնում է եկամուտի աղբիւր ու աշխատակիցը ոչ այնքան Հայ Դատին է ծառայում, որքան որ իրեն պաշտօնի նշանակող մարմնին։

Աւելին, ես կարծում եմ, որ Հայ Դատի գրասենեակներում վճարովի պաշտօնները աւելի լաւ է յանձնարարել օտարներին, որոնք կատարում են իրենց յանձնարարուած գործը առանց պատւամոլութեան և չեն յայտնում սեփական կարծիքները այնտեղ, որտեղ իրենցից դա չեն հարցնում։

Սա չի նշանակում, որ մենք պիտի հրաժարւենք հայ մասնագէտներից, բայց նրանց հետ միասին պէտք է լինեն նաեւ նրանք, ում շահագրգռելու կարիք չկայ, ում վճարում են այնպէս, ինչպէս սովորաբար վճարում են զինուրներին՝ կռւելու, այլ ոչ թէ կեանքից հաճոյք ստանալու համար։

1981

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Է. Յովհաննիսեան

Երբ մարդիկ և ազգեր ստեղծում են միութիւններ, ընկերութիւններ և կուսակցութիւններ, նախքան նախաձեռնարկ լինելը պատասխանում են ամենակարեւոր հարցին.- **Միանանք, որ ի՞նչ անենք**: Եւ պատասխանելով այս հարցին, մարդիկ միանում են շէնք, ակումբ, բանակ կամ պետութիւն կառուցելու համար:

Այս միութիւնները կարելի է անւանել նպատակային, այսինքն որոշակի նպատակի համար ստեղծւած: Նպատակային միութեան շարքին է պատկանում նաեւ քաղաքական միութիւնը, որը ունի որոշակի քաղաքական նպատակ: Սա նշանակում է, որ քաղաքական միութիւնը կամ բարեկամութիւնը կրում է զուտ տրամաբանական բնոյթ: Նա խարսխւած է պատճառ և սպասւելիք հետեւանք կապի և մարդկային այն յարաբերութիւնների վրայ, որոնք զուրկ են զգացական չափանիշներից:

Եթէ մենք, օրինակ, Հայ Դատը լուծելու համար միանանք ռուսներին կամ չիներին, ապա ոչ մենք և ոչ էլ նրանք այդ չեն անի արդարութեան չափանիշներից ելնելով, այլ պարզապէս նրա համար, որ մեր և նրանց տրամաբանութիւնը թելադրում է, որ մի ինչ որ տեղ մեր քաղաքական շահերը համընկնում են:

Եւ եթէ սխալւենք այդ հարցում, ոչ ոքի չմեղադրելու արիութիւնը պիտի ունենանք, որովհետեւ անյաջողութեան միակ մեղաւորը մենք ենք, որ սխալւեցինք մեր քաղաքական հաշւարկներում:

Բոլորովին այլ բնոյթ է կրում գաղափարական միասնութիւնը: Այստեղ տրամաբանութիւն շատ քիչ կայ: Այստեղ կայ նոյն ճակատագրի, նոյն արժէքների, նոյն աշխարհահայեացքի, նոյն ձեւի մտածող մարդկանց միասնութիւն: Նման միութիւնների նպատակը շատ աւելի հոգեկան բնոյթ է կրում, քան տրամաբանական:

Եւ հէնց այդ պատճառով էլ նման միութիւնների նպատակը երբեմն վերացական է թւում, իսկ երբեմն էլ այնքան հեռու, որ անկարելի է այն շօշափել և նրա համար որոշակի պայքար մղել: Ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն, արդարութիւն, բոլոր այս հասկացութիւնները կարող են փարոս ծառայել որեւէ շարժման համար, բայց ոչ որոշակի համագործակցութեան աղբիւր:

Եթէ, օրինակ, դիմենք աշխարհի ընկերվարականներին կամ համայնավարներին, ապա նրանց գաղափարական միասնութեան մէջ ոչ մէկ կասկած չի կարող լինել, սակայն պատմութիւնը ցոյց է տալիս, որ բոլոր երկրների բանտրութեան միասնութեան գեղեցիկ գաղափարը այդպէս էլ դուրս չեկաւ «Մանիֆեստ»ի էջերից ու կեանք չմտաւ։

Ընդհակառակն, քաղաքական և ազգային հողի վրայ աշխարհի տարբեր երկրների բանւորները կատաղի պայքար մղեցին իրար դէմ, պաշտպանելով մէկը Ստալինին, միւսը՝ Հիտլերին, երրորդն էլ Ռուզվելտին։ Եւ պատահական չէ, որ այսօրւայ բոլոր, բացարձակապէս բոլոր դաշնակցային կառոյց ունեցող պետութիւններում ժողովուրդների այսպէս կոչւած գաղափարական բարեկամութիւնը զէնքի ուժով է ապահովւում։

Խորհրդային Միութեան մէջ ապրող բոլոր ժողովուրդները, Եուկոսլաւիայի ալբանացիները և սլովակները, Սպանիայի բասերը, Անգլիայի հիւսիսային իրլանդացիները, Թուրքիայի և Արաբական աշխարհի քրդերը, Քանադայի ֆրանսիացիները և շատ ուրիշներ մոռացութեան են մատնել իրենց դասակարգային խնդիրները և բանւորութիւնը, ձեռք-ձեռքի տւած ազգային քաղքենիութեան հետ, կատաղի պայքար է մղում ազգային շահերի համար։

Նրանք ստեղծում են քաղաքական միասնութիւններ, միաժամանակ քայքայելով գաղափարական միասնութիւնները։ Այս ընթացքը նախ և առաջ խօսւում է այն մասին, որ իսկական, այլ ոչ վերացական համագործակցութիւնը ստեղծւում է քաղաքական հողի վրայ, այսինքն որոշակի նպատակի հասնելու հողի վրայ։ Քաղաքական համագործակցութիւնը նոյն ճանապարհը նոյն նպատակի համար անցնելու համագործակցութիւն է, բայց ոչ վիճակների նոյնութիւն։

Աշխարհի բոլոր զբօսաշրջիկները նոյն վիճակի մէջ են և ունեն նոյն վերացական նպատակները։ Նրանք դուրս են եկել իրենց երկրներից՝ նոր երկրներ տեսնելու համար։ Բայց նրանք բոլորը ունեն տարբեր ճանապարհներ, որովհետեւ տարբեր են նրանց իրական նպատակները։ Աշխարհի բոլոր աղքատները և իրաւազրկւածները գտնւում են նոյն վիճակում՝ նրանք ապրուստ և իրաւունք են որոնում։ Սակայն տարբեր են նրանց ճանապարհները, որովհետեւ տարբեր աղբիւրներից պէտք է ստանան իրենց բաւարարութիւնը։

Ինչպիսի՞ համագործակցութիւն կարելի է ստեղծել, օրինակ, Բելգիայի ֆլամանների և պաղեստինցիների միջեւ, ի՞նչպէս կարող են իրար օգնել հայերը և Իրաքի քրդերը։ Կարելի է, անշուշտ, դրա համար գտնել վերացական նպատակ, օրինակ՝ աշխարհակալութեան (**իմպերիալիզմ**) տապալումը, բայց այս վերացական նպատակի մէջ ոչ մէկ շօշափելի բան չկայ, ուստի անկարելի է որոշակի համագործակցութիւն ստեղծել այս հողի վրայ։

Բայց ի՞նչպէս է պատահում, որ ոմանց համար տեսանելի և ընդունելի են միայն քաղաքական ճանապարհները, իսկ ոմանք էլ տեսնում են միայն գաղափարական ճանապարհները, օրինակ, աշխարհի բոլոր իրաւազրկուած ազգերի յեղափոխական միասնութեան ճանապարհը, որը պիտի տապալի միջազգային աշխարհակալութիւնը (**իմպերիալիզմ**) և վերջապէս ստեղծի արդար հասարակարգեր։ Կարծում եմ, որ սա զուտ անհատական տեսողութեան հարց է։

Վերջերս Մ. Նահանգներում հանդիպեցի մի խումբ հայ երիտասարդների, որոնք չեն թագցնում, որ իրենց ամբողջ էութեամբ ուզում էին տապալել միջազգային աշխարհակալութիւնը։ Ես էլ դրան դէմ չեմ, բայց այդ խնդիրը հայկական խնդիր չեմ համարում։ Երիտասարդների հետ մենք խօսում էինք տարբեր լեզուներով և տարբեր բաների մասին։

Նրանց համար ազգը մի բնական կառոյց էր, որի նկատմամբ իրենք չունէին սեփական վերաբերմունք, զգացական վերաբերմունք։ Նրանց համար պարզ էր, որ բոլոր ազգերի իրաւունքները պէտք է պաշտպանել, այդ թւում նաեւ՝ հայերինը։ Բոլոր ազգերը ապրելու իրաւունք ունեն, այդ թւում նաեւ՝ հայերը։ Բոլորը ինքնորոշման և անկախ ապրելու իրաւունքը ունեն, այդ թւում նաեւ՝ հայերը։

Նման մօտեցումը, անշուշտ ճիշտ է, սակայն նման մօտեցման ժամանակ ոչ մէկ տարբերութիւն կայ թուրքի, հայի կամ վիեթնամցու միջեւ, որովհետեւ բացակայում է սեփական զգացմունքը։ Իմ զրուցակիցները խօսում էին բոլոր ճնշուած ազգերի մասին, առանց տարբերութիւն դնելու նրանց միջեւ։ Կրկնում եմ, որ այդ ճիշտ է, բայց անբնական։

Նրանց պարագային այդ նոյնիսկ հասկանալի է, որովհետեւ նրանք հայերէն էլ խօսել չգիտէին։ Իսկ ես խօսում էի իմ զգացմունքներից ելնելով, որոնք ձեւակերպել են հայ լեզուի, Կոմիտասի և Չարենցի հետ ծանօթանալու հիման վրայ։ Իմ վերաբերմունքը հայ ազգի նկատմամբ յատուկ է և այդպէս էլ պէտք է լինի, իսկ նրանց համար դա ցեղապաշտութիւն (**ֆաշիզմ**) էր։

Ես պարզապէս չեմ հասկանում, թէ ինչպէս կարելի է կազմակերպել ազգային պայքար՝ առանց ազգային զգացմունքներ ունեցող մարդկանց։ Շատ հեշտ է ճնշուած ազգերի միասնութեան պայքարի կոչեր անել, բայց երբ կոչերից յետոյ սկսում ես գործի անցնել, պարզւում է, օրինակ, որ բասկերը բոլորովին անտարբեր են ցեղասպանութիւնը դատապարտող օրէնքի նկատմամբ, իսկ քրդերը ընդհանրապէս չեն ուզում խօսել այդ մասին, որովհետեւ հէնց իրենք էլ մեզ մորթել են։

Խ. Միութիւնում էլ շատ հեշտ է կոչեր անել բոլոր ճնշուած ազգերի միասնութեան և ռուսների դէմ պայքարելու մասին։ Բայց երբ սկսում ես աւելի որոշա-

կիօրէն խօսել համագործակցութեան մասին, պարզւում է, որ ոչ վրացիները և ոչ էլ աղրբեջանցիները չեն ցանկանում վերադարձնել մեզ մեր հողերը և այս իմաստով մեզ ճնշող ռուսը գուցէ շատ աւելի լաւն է, քան մեզ հետ միասին ճնշւող վրացին ու աղրբեջանցին։

Եուկոսլաւիայի մէջ սերբերի կողմից ճնշւող ալբանացին ուզում է դուրս գալ համեմատաբար ազատ երկրից և մտնել շատ աւելի ամբողջատիրական Ալբանիայի կազմի մէջ։ Չինաստանում իրաւազրկւած ոյդորները ձգտում են մտնել Խ. Միութեան կազմի մէջ, իսկ Միջին Ասիայի ժողովուրդները երազում են դուրս պրծնել Խ. Միութիւնից։ Խորհրդային Աղրբեջանը երազում է միանալ Թուրքիային, իսկ քրդերը ուզում են ազատւել թուրքերից։

Էլ ի՞նչպէս կարելի է այս խայտաբղէտ իրական նպատակներ ունեցող ազգերը միացնել վերացական նպատակների համար մղւող պայքարի մէջ։ Ո՞ւմ դէմ պայքարել։ Աշխարհակալութե՞ան դէմ։ Բայց մի՞թէ աշխարհակալութեան տապալումով կը լուծւեն այս խնդիրները։ Շատ խնդիրներ գուցէ և լուծւեն, բայց ոչ ազգային խնդիրները։

Սա ամենեւին էլ չի նշանակում, որ աշխարհակալութեան դէմ մղւող պայքարը արժէք չունի։ Սա միայն նշանակում է, որ այդ պայքարը հայկական պայքար չէ։ Եւ սա չի էլ նշանակում, որ մենք պիտի հրաժարւենք գաղափարական դաշնակիցներ որոնելուց և մեր կոչերով չպիտի պաշտպան կանգնենք բոլոր ճնշւած ազգերին։

Մենք միայն պիտի յիշենք, որ այդ կոչերը և հրապարակային ելոյթները ունեն միայն բարոյական, այլ ոչ թէ քաղաքական նշանակութիւն և նրանք օգտակար են հասարակական, բայց ոչ պետական գործունէութեան մէջ։

Եւ չպիտի զարմանանք, որ մեր գաղափարական դաշնակիցներն էլ մեր նկատմամբ այս նոյն վերաբերմունքը ցուցաբերեն։

1981

ՆՊԱՏԱԿԻ ԵՒ ՄԻՋՈՑԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Է. Յովհաննիսեան

1975 թականին «Հայ Յեղասպանութեան Արդարութեան Մարտիկներ»ի կողմից՝ սկզբից Աւստրիայում և մի քանի ժամ յետոյ Փարիզում թրքական դեսպանների ահաբեկումով Հայ Դատի համար մղւող պայքարը մտաւ նոր փուլի մէջ։

Տարիներ շարունակ խաղաղ միջոցներով Հայ Դատի համար մղւող պայքարը մեծ արդիւնք չտւեց արտաքին աշխարհին մեր Դատը ներկայացնելու համար, բայց այդ խաղաղ պայքարը ապարդիւն չանցաւ ներքին դաստիարակչական ասպարէզում և հէնց այդ դաստիարակութիւնն էր, որ ծնեց ազգային մտածելակերպ ունեցող մեր այն երիտասարդներին, որոնք հրաժարւեցին անբաւարար խաղաղ միջոցներից ու ընտրեցին այլ ճանապարհ։

Այդ ըմբոստ երիտասարդները առանց աղմուկ բարձրացնելու, առանց իրենց հերոսացնելու, առանց մամուլի ասուլիսների ու հարցազրոյցների, իրենց յեղափոխական նախորդների նման համեստօրէն կանգնեցին այդ նոր ճանապարհի վրայ ու լուռ, առանց պոռալ-կանչելու, զոհւեցին, երբ հարկ եղաւ զոհւել։

Կարճ ժամանակամիջոցում պարզւեց, որ ընտրւած ճանապարհը ճիշտ է, քանզի արդիւնքները եղան ակնառու, յատկապէս քարոզչական տեսակէտից։

Մինչեւ այդ բերանը ջուր առած տեղեկատւական միջոցները՝ մամուլը, ձայնասփիւռը, պատկերասփիւռը յանկարծ լեզու առան ու խօսեցին Հայկական Հարցի մասին այնպէս, ինչպէս չէին խօսել Լօզանի խորհրդաժողովից յետոյ։ Ոգեւորւեց նաեւ մեր ժողովուրդը։ Աշխարհի տարբեր ծայրերում ամենահամեստ, ամենակրաւորական ու ամենավախկոտ տարրերը, նոյնիսկ տատիկները ու պապիկները ժպտացին, ներքուստ համաձայնութիւնը տալով նոր շարժմանը։ Իրենց լուռ համաձայնութիւնը տւեցին նոյնիսկ մեր հոգեւորականները (իսկականների մասին է խօսքը) ու ամենահալածւած տարրը՝ պոլսահայերի մի մասը Սփիւռքում։ Հայութիւնը սկսեց ապրել նոր կեանքով։

Բայց երբ ցրւեց առաջին ոգեւորութեան մշուշը և ահաբեկչութիւնը իր բոլոր հետեւանքներով դարձաւ հայ կեանքի իրականութիւն, ծագեցին բազմաթիւ հարցեր։ Մինչեւ ե՞րբ։ Ի՞նչ ենք սպասում ահաբեկչութիւնից։ Ո՞ւմ դէմ։ Ի՞նչ պատասխան ենք սպասում հակառակորդից։ Արդեօ՞ք կը դիմանանք հակահարւածներին։ Արդեօ՞ք կ՚ունենանք դաշնակիցներ նման պայքարում։ Ի՞նչ կ՚ասի

Խ. Միութիւնը։ Ի՞նչ աչքով կը նայի մեզ Եւրոպան։ Ի՞նչ վիճակի մէջ կարող են ընկնել մեր հայ գաղութները։ Բոլոր այս և նման հարցերի պատասխանը մեզ անհրաժեշտ է իմանալ աւելի առաջ, քան այդ պատասխանները կը տայ կեանքը, երբ գուցէ արդէն ուշ լինի։

Բոլոր այս հարցերի պատասխանները ինքնաբերաբար կը տրուեն, եթէ մենք յստակօրէն ճշտենք ահաբեկչական պայքարի վերջնական նպատակը։

Իմ կարծիքով՝ ահաբեկչական պայքարը **քարոզչական պայքար է**, որը նպատակ ունի **ոչ թէ լուծելու, այլ հրապարակ հանելու** Հայ Դատը։ Եթէ որեւէ ժամանակ Հայ Դատը պիտի լուծւի, ապա նա պիտի լուծւի որպէս երկարատեւ ու ծանր բանակցութիւնների արդիւնք։ Եթէ նոյնիսկ ամբողջ աշխարհը բռնկւի պատերազմներով ու յեղափոխութիւններով, միեւնոյն է՝ Հայ Դատը լուծւելու է յեղափոխութիւնների ու պատերազմների աւարտից յետոյ, բանակցութիւնների միջոցով, որին անխուսափելիօրէն մասնակցելու են կենդանի մնացած թուրքերը, ռուսները և արեւմտեան պետութիւնները։

Մտածել, որ ահաբեկչութեան միջոցով կարելի է այնպիսի վիճակի մատնել Թուրքիան և մնացած աշխարհակալ պետութիւնները, որ նրանք սարսափահար եղած կը ցանկանան արագօրէն լուծել Հայ Դատը, միամտութիւն կը լինէր։ Այսօր հիւսիսային իրլանդացիները գրեթէ համաժողովրդային ահաբեկչութեան են դիմել և բանտերում հացադուլից մէկը միւսի յետեւից մահանում են «Իրլանդական հանրապետական բանակ»ի անդամները, իսկ Մեծն Բրիտանիայի քաղաքակիրթ վարչապետուհին չի ցանկանում այդ բանակի անդամներին նոյնիսկ իբրեւ քաղաքական բանտարկեալ ճանաչել։ Բասկերը տարեկան 100-150 մարդ են ահաբեկում, իրենց սեփական հողումն են, բայց նրանց քաղաքական հարցի լուծման ծայրը դեռեւս չի երեւում։

Կարելի է դիմել նոյնիսկ ոչ քաղաքական օրինակների։ Եւրոպայում տարեկան ինքնաշարժների վթարից մահանում են հարիւր հազարաւոր մարդիկ, բայց մեզանից ոչ մէկը չի հրաժարւում ինքնաշարժից այն պատճառաբանութեամբ, թէ ինքնաշարժով երթեւեկելը վտանգաւոր է։ Էլ ի՞նչպէս կարող ենք մտածել թէ երկու-երեք մարդ ահաբեկելով պիտի ստիպենք թուրքին մեր Դատը լուծի։ Աւելին, թուրքերը անգամ ի վիճակի չեն լուծելու մեր հարցը, առանց Խ. Միութեան և Միացեալ Նահանգների հետ պայմանաւորւելու։

Մի խօսքով, եթէ ահաբեկչութիւնը մեր քաղաքական խնդրի լուծման վերջնական միջոց համարենք, ապա մենք պէտք է պայքարենք ամբողջ աշխարհի դէմ, որը, անկարելիութիւնից բացի, մի քիչ ծիծաղելի է։ Իսկ եթէ մենք գտնւում ենք մեր պայքարի **քարոզչական** փուլում, ապա մեր պայքարը ունի յստակ բովանդակութիւն և յստակ նպատակ, որոնք են. ստեղծել Թուրքիայի համար

այնպիսի **բարոյական** անտանելի մթնոլորտ, որ նա **մտածի** մեզ հետ խօսելու մասին։

Այն պահին, երբ նա բացայայտօրէն կամ գաղտնաբար որոշ քայլեր կը սկսի մեզ հետ բանակցելու ուղղութեամբ, ահաբեկչութիւնը պիտի համարի, որ հասել է իր նպատակին և որ Հայ Դատի ուղղութեամբ տարուող աշխատանքները քարոզչական փուլից անցել է քաղաքական փուլը։ Ահաբեկչութիւնը կարող է վերսկսւել միայն այն դէպքում, երբ բանակցութիւնները ապարդիւն անցնեն։

Սա նշանակում է, որ միայն այն ահաբեկչութիւնը կարող է արդար և Հայ Դատին նպաստաւոր ճանաչւել, որը նախ ղեկավարելի է, յետոյ ուղղած է միայն ու միայն թրքական թիրախների դէմ։ Բոլոր այն հարուածները, որոնք հայ ահաբեկչական կազմակերպութիւնների անուան տակ հասցւում են ոչ-թրքական թիրախներին, մեծ վնաս են հասցնում Հայ Դատին, որովհետեւ կրկնապատկում ու եռապատկում են Թուրքիայի դաշնակիցներին, լարում են հայութեան դէմ միջազգային հասարակական կարծիքը, հեշտացնում են ահաբեկչութեան դէմ մղող պայքարը, տալիս են Թուրքիային բարոյական մեծ առաւելութիւն և գրեթէ անկարելի են դարձնում իրաւապաշտպանական կազմակերպութիւնների աշխատանքները, որոնք հրաժարւում են հայկական խնդիրներով զբաղւելուց, նոյնացնելով մեր պայքարը միջազգային ահաբեկչական շարժումների հետ։

Որքա՜ն մեծ ուրախութիւն է պատճառում Թուրքիային այն կազմակերպութիւնը, որը Իտալիայի կամ Զւիցերիայի օդանաւային ընկերութիւնների շէնքերի առջեւ ռումբեր է պայթեցնում։

Այդ կազմակերպութիւնները, ըստ իրենց ասածի, պայքարում են միջազգային աշխարհակալութեան դէմ։ Եւ ես դրան բոլորովին հակառակ չեմ։ Բայց պէտք չէ այդ անել Հայ Դատի և հայ ժողովրդի անունից, որովհետեւ սրանք բոլորովին այլ խնդիրներ են։ Մի՞թէ մենք ոչ մէկ դաս չքաղեցինք անցեալից և չհասկացանք, որ միջազգային պայքարները աւարտւում են այն պահին, երբ պայքարողներից գլխաւորը հասնում է իր սեփական նպատակներին։

Պայքարը այնքան ժամանակ է կրում միջազգային բնոյթ, քանի դեռ «մեծին» անհրաժեշտ են փոքրերը։ Երբ «մեծը» հասնում է իր ազգային կամ քաղաքական նպատակին, նա կա՛մ լքում է իր վաղեմի փոքր դաշնակիցներին և կամ էլ ոչնչացնում է նրանց, որպէսզի նրանք, չյիշեցնեն ժամանակին տրուած խոստումների մասին։

Այդպէս պատահեց Ռուսաստանում, Կուբայում, Անգոլայում, Չինաստանում, Գերմանիայում և այդպէս կը լինի միշտ և ամէնուր, քանի դեռ մարդը կատարեալ չէ։ Կասկածից վեր է, որ երբ պաղեստինցիները հասնեն իրենց քաղաքական նպատակներին, նրանք կը լքեն միջազգային ազատագրական

շարժումները, ինչ որ շատ բնական ու հասկանալի կը լինէր, անշուշտ: Միեթէ ժամանակին, Բրեստ-Լիտովսկում, նոյնինքն Լենինը և Տրոցկին չթքեցի՞ն միջազգային բանւորական շարժումների վրայ: Նրանք փաստօրէն դաւաճանեցին Գերմանիայի բանւորութեան, որը պատրաստ էր շարունակելու համաշխարհային յեղափոխութեան գործը, և սկսեցին իրենց սեփական տան կառոյցը:

Միջազգային շարժումները, աշխարհակալութեան դէմ մղող պայքարը, ազատագրական շարժումները, ընկերվարական կարգերի հաստատման համար մղող պայքարները յաճախ են քննարկւում Հայ Դատի լուծման առընչութեամբ, բայց ես համոզւած չեմ, որ մենք այսօր յստակօրէն կարող ենք որոշել - Հայ Դատի պայքարի տեղը բոլոր այդ շարժումների մէջ:

Ի՞նչ չափով կարող են նրանք մեզ օգտակար լինել, ի՞նչ չափով վնասակար: Որտե՞ղ պիտի սկսւի և որտե՞ղ վերջանայ մեր համագործակցութիւնը: Որտեղի՞ց կարող ենք մենք ստանալ բարոյական, իսկ որտեղի՞ց գործնական աջակցութիւն: Բոլոր այս հարցերի պատասխանները կան Հ.Յ.Դաշնակցութեան ծրագրի մէջ, բայց այդ պատասխանները շատ ընդհանուր են, իսկ կեանքը մանրամասնութիւններ է պահանջում:

Այդ մանրամասնութիւնների մէջ մտնելու համար, անհրաժեշտ եմ համարում փոքր ինչ վերլուծութեան ենթարկել աշխարհում տիրող բարոյական կացութիւնը և հասարակական սկզբունքները, քանի որ մեր պայքարը բարոյական պայքար է, որը ընթանում է որոշակի կացութիւն ունեցող հասարակական միջավայրում:

Այդ միջավայրը ունի պատմութիւն, նկարագիր և ձգտումներ:

Կը քննենք առանձին-առանձին:

1981

ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՆՑԵԱԼԸ ԵՒ ՆԵՐԿԱՆ

Է. Յովհաննիսեան

Բոլոր վարչակարգերը ստեղծում են մարդիկ՝ մարդկանց համար: Նոյնիսկ ամենաիշխանամոլ քաղաքական գործիչները, որոնք միայն իշխանութիւն ձեռք բերելու համար են պայքարում, անում են այդ ժողովրդի անունից և ժողովրդի համար:

Ըստ երեւոյթին, այս կամ այն վարչակարգի գնահատականի միակ չափանիշը այն է, թէ որքանով վարչակարգը բաւարարում է հասարակական պահանջներին կամ հասարակութիւնը կազմող մարդկանց պահանջներին:

Բայց այստեղ, պահանջների բնագաւառում, այնպիսի քաոս ու բազմապիսութիւն է տիրում, որ ոչ մէկ իրական վարչակարգ ի վիճակի չէ բաւարարելու բոլորի պահանջները, մանաւանդ որ մէկ պահանջը բաւարարելուց յետոյ՝ ծնունդ է առնում միւսը: Ոմանց պահանջները կրում են զուտ հոգեկան բնոյթ, ոմանց նիւթական, ոմանց երկուսն էլ, իսկ ոմանց էլ այնքան անբնական են, որ դժուար է անել նրանց դասակարգումը:

Եւ որովհետեւ բոլորի պահանջները բաւարարելու խնդիրը գործնականում անլուծելի է, մարդիկ դիմում են պահանջների բարոյականացման ճանապարհին, դասակարգելով նրանց որպէս կարեւոր ու երկրորդական, բնական և հակաբնական: Սակայն օրինականացնելով պահանջների մէկ մասի կարեւորութիւնը և միւս մասի երկրորդականութիւնը, մենք փաստօրէն բռնանում ենք նրա՛ դէմ, ում պահանջները թողնւել են երկրորդական դասի մէջ:

Զուտ մեքենական մօտեցումը թելադրում է մեզ, պահանջների բաւարարման խնդիրը լուծելու համար, երկու ճանապարհ: Ճանապարհներից մէկը սա է,- Նոյն պահանջները ունեցող մարդկանց հաւաքել մէկտեղ ու ստեղծել նրանց համար միայն իրենց համապատասխան յատուկ վարչակարգ: Երկրորդ ճանապարհը թելադրում է փոխել ու վերադաստիարակել մարդուն այնպէս, որ նա ունենայ «ցանկալի» պահանջներ, այսինքն համապատասխանի հասարակական վարչակարգերի շինարարների ցանկութիւններին:

Գուցէ առաջին ճանապարհը շատ դժուար էր, դրա համար էլ մարդկութիւնը, որպէս օրէնք, ընտրեց երկրորդ ճանապարհը: Բոլոր յեղափոխութիւնները, քրիստոնէութիւնը ներառեալ, գնացին մարդը վերափոխելու ճանապարհով: Հրով ու սրով, կառափնատներով, գազի խուցերով, վառարաններով, կենտրո-

նացման ճամբարներով սկսւեց և տեղ-տեղ մինչեւ այսօր էլ շարունակւում է մարդ վերափոխելու ընթացքը:

Այդ ծանր աշխատանքը յատկապէս բուռն կերպով ընթացաւ Ֆրանսիայում, որտեղ Ռոբեսպիերը, Սեն Ժիւստը, Մարան, Բաբէօֆը և Բուոնարոտին փորձում էին իրականացնել Հելվեցիուսի, Կոնդորսէի և Ռուսոյի գաղափարները, այսինքն փորձում էին ստեղծել կատարեալ կարգ կատարեալ մարդու համար: Բայց ո՞րտեղից վերցնել կատարեալ մարդ:

«Ամէն մարդու անհրաժեշտ է դարձնել ներդաշնակ ամբողջութեան անբաժանելի մասնիկ, **պարտադրելով** (ընդգծումները իմն են.- Է.Յ.) նրան ազատութիւնը»,- պատասխանում է Ռուսոն: «Մենք ուզում ենք հաստատել այնպիսի կարգ,- գոռում է Ռոբեսպիերը,- որի ժամանակ բոլոր դաժան և ստոր կրքերը **զսպելու** են, իսկ բոլոր բարի և լաւ ձգտումները ստանալու են օրէնքի հովանաւորութիւնը»:

Ուրիշ խօսքով՝ մարդը պէտք է փրկւէր ոչ թէ որպէս անհատականութիւն, այլ որպէս հասարակութեան անդամ: Այդպիսի մարդը հասարակականօրէն կատարեալ էր, որովհետեւ նրա անձնական դատողութիւնները համընկնում էին հասարակական դատողութիւնների հետ, իսկ նրա անձնական ձգտումները՝ հասարակական ձգտումների հետ:

Բայց այդպիսի մարդ ստեղծել չյաջողւեց և Ռոբեսպիերը, իր կողմնակիցների հետ, կառափնատի տակ նոյնպէս վերադաստիարակման զոհ դարձաւ: Բայց մարդկանց վերափոխելու փորձերը չվերջացան: Շուտով քաղաքական բեմ բարձրացաւ ամենախոշոր վերադաստիարակիչը, բանւորների առաջնորդ Մարքսը և հաղորդեց նրանց. «Դուք պիտի անցնէք 15, 20 կամ էլ 50 տարի միջազգային և քաղաքացիական պատերազմների միջով, ոչ միայն փոխելու համար ներկայ փոխյարաբերութիւնները, այլ նաեւ ձեզ **փոխելու** համար և - քաղաքական իշխանութեան տիրանալու պատրաստւելու համար»:

Իսկ առաջին բանւորական յեղափոխութեան առաջնորդ Լենինը յայտարարեց, որդեգրելով բոլոր նախորդների գաղափարները մարդ փոխելու վերաբերեալ. «Բանւորութեան մենատիրութեան տակ մենք պէտք է **վերադաստիարակենք** միլիոնաւոր գիւղացիների և մանր-սեփականատէրերի, հարիւր հազարաւոր ծառայողների և քաղքենի մտաւորականների, **ենթարկել** բոլորին բանւորական պետութեանը և բանւորական ղեկավարութեան, յաղթահարելու նրանց քաղքենի սովորութիւններն ու աւանդոյթները, երկարատեւ պայքարով **վերադաստիարակել** հէնց նրանց բանւորներին»:

Լենինի հաւատարիմ աշակերտ Ստալինը, վերադաստիարակման ճանապարհի վրայ, ոչնչացրեց Ռուսաստանի 15 միլիոն գիւղացիների և մի քանի միլիոն քաղքենի մտաւորականների, ի միջի այլոց նաեւ բազմահազար հայ

գիտղացիների և մտաւորականների։ Բակունցները, Չարենցները, Ղամբարեանները և շատ ուրիշներ վերադաստիարակման զոհեր դարձան։

Բայց, զարմանալի բան, ոչինչ չօգնեց, այսօր էլ մեր ժողովուրդը ծնում է մարդկանց, որոնք ոչնչով չեն տարբերւում գնդակահարւածներից ու բանտերում խեղդւածներից։ Գրեթէ նոյն ճանապարհը ընտրեց ժամանակին կրօնը, որը իր հաւատքը պարտադրելու համար կախեց, վառեց ու այսօր էլ Իրանում շարունակում է իր վերադաստիարակման ընթացքը։

Եւ միայն ամերիկեան յեղափոխութիւնը, որը հետագայում դարձաւ ազատ կոչւող աշխարհի գաղափարական հիմքը, չգնաց այդ ճանապարհով։ Ամերիկեան ազատագրական յեղափոխութիւնը ամենասկզբից հրաժարւեց մարդ վերադաստիարակելու սկզբունքից և հռչակեց անհատական ազատութեան սկզբունքը։

Այդ սկզբունքի համաձայն, մարդուն չի կարելի օգտագործել որպէս որոշ նպատակի հասնելու միջոց, որովհետեւ նա ինքնըստինքեան արժէք է ներկայացնում։ Նրա ինքնաբացայայտումը մարդկային կեանքի գլխաւոր նպատակն է և այն հասարակակարգը, որը չի նպաստում այդ նպատակին հասնելուն, յետամնաց է, անարդար և անբարոյական։

Ամերիկեան յեղափոխութեան գաղափարաբանութեան համաձայն, հասարակակարգը լաւ կը գործի և մարդիկ աւելի երջանիկ կը լինեն, եթէ ելակէտ ընդունւի, որ մարդը արժանապատւութիւն ունի, որի դէմ չի կարելի ոտնձգութիւններ կատարել։ Եւ հէնց մարդու արժանապատւութեան այս սկզբունքն էր, որ դարձաւ ազատ կոչւող աշխարհի իմաստասիրական յենակէտը։ Ամերիկեան յեղափոխութիւնը ճանաչում էր անհատական պահանջների բազմազանութիւնը և ձգտում էր ստեղծել այնպիսի վարչակարգ, որտեղ տարբերութիւնները ոչ միայն ճանաչւէին, այլեւ **խրախուսւէին**։

Ամերիկայի Միացեալ Նահանգների բոլոր հիմնադիրները հաստատում և ճանաչում էին այդ սկզբունքը, սակայն նրա ամենամոլի կողմնակիցը և պաշտպանը Ջեյմս Մեդիսոնն էր, որը հակասող պահանջների խնդիրը լուծելու համար տեսնում էր երկու ճանապարհ, մէկը պատճառների վերացումն էր, միւսը՝ արդիւնքների կարգաւորումը։

«Պատճառների վերացումը կարելի է նոյնպէս կատարել երկու ճանապարհով,- գրում էր նա 1788 թւականի «10րդ դաշնակցային յուշագրում»,- նախ բոլոր քաղաքացիներին ներշնչել նոյն ճաշակները, կրքերը և պահանջները կամ էլ ոչնչացնել տւեալ պահանջը առաջանալու ազատութիւնը»։

Առաջին պահանջը Մեդիսոնը համարում էր անիրականանալի, որովհետեւ ցանկութիւնների թագնւած պատճառները մարդու էութիւնն են կազմում, իսկ բուժման երկրորդ ճանապարհը հիւանդութիւնից աւելի սարսափելի է։

Մի խօսքով, Մեղիսոնը գտնում էր, որ պատճառների վերացումը այսպէս թէ այնպէս կապւած է բռնութեան հետ, ուստի միակ ելքը նա տեսնում էր արդիւնքների դէմ պայքար մղելու մէջ, այսինքն սահմանադրական հաւասարակշռւած կարգեր ստեղծելու մէջ, որտեղ ապահովւած լինի անձի և փոքրամասնութիւնների պաշտպանութիւնը։

Անշուշտ, նման մօտեցումը իրեն շատ աւելի արդարացրեց և շատ աւելի մեծ յարգանքի է արժանի, քան բոլոր այն մօտեցումները, որոնք հիմնւած էին վերադաստիարակութեան վրայ, սակայն այս մօտեցումն էլ կատարեալ չէր։

Նախ մարդը այնքան բարի չէ, որ նրան կարելի լինի շատ ազատութիւն վստահել։ Նա յաճախ օգտագործում է իր ազատութիւնը ոչ-բարի նպատակների համար։ Յետոյ մարդու վերադաստիարակումից հրաժարւելու սկզբունքը միայն արտաքուստ էր այդպէս, որովհետեւ ամերիկեան յեղափոխութիւնը հրաժարւել էր միայն բռնի վերադաստիարակումից, իսկ իրականում նախաձեռնութեան ազատութիւնը ծնեց բոլորովին նոր տեսակի մարդու՝ արդիւնաբերական, դրամատիրական մարդուն, որի համար բոլոր չափանիշները կենտրոնանում էին անձնական, նիւթական շահի վրայ։

Բացի դրանից, ամերիկեան յեղափոխութիւնը, որ բոլոր տարբերութիւնները խրախուսելու յաւակնութիւն ունէր, փաստօրէն իր տնտեսական հսկայական մեքենայի մէջ աղում է այն ամէնը, որ չի համապատասխանում արդիւնաբերական մարդու յատուկ կացութեանը։ Անշուշտ, ազգային, կրօնական, մշակութային և գաղափարական տարբերութիւնները պաշտպանւում են սահմանադրութեամբ, սակայն անկարելի է, օրինակ, Միացեալ Նահանգներում հային հայ պահել երկար ժամանակ։

Եւ պատահական չէ, որ Մերձաւոր Արեւելքի դժւարին պայմաններից արտագաղթը դէպի Միացեալ Նահանգներ դատապարտւում է։ Մեզ ասուն են, թէ ո՞վ է մեղաւոր, չէ՞ որ ազգաձուլումը ստիպողական չէ։ Այո, դա այդպէս է, բայց մեղաւոր, այնուամենայնիւ, կա՛յ։

Մեղաւորը այն է, որ Միացեալ Նահանգներում, ինչպէս նաեւ Արեւմտեան Եւրոպայում, խախտւած է Մեղիսոնի հիմնական սկզբունքը. **տարբերութիւնները ոչ միայն ճանաչւում են, այլ նաեւ խրախուսւում են**։

Եւ տեսնելով այս ամէնը, մտածում ես, գուցէ իզուր մենք այդքան արագօրէն հրաժարւեցինք առաջին ճանապարհից, այսինքն նոյն նկարագիրը ունեցող մարդկանց մէկտեղ հաւաքելու ճանապարհից։

Այստեղից էլ ծագում է ազգային գաղափարախօսութիւնը, որը գալիս է հիմնաւորելու մեր անհատական զգացմունքները։ Մենք սկսում ենք գիտակցել, որ միայն մեր ազգային նկարագրին համապատասխան արտայայտւել և

լաւագոյն ձեւով օգտակար լինել մարդկութեանը: Այս գիտակցութիւնն էլ **արդարացնում** է Հայ Դատի համար մղտող պայքարը:

Սակայն միջավայրի բնութագիրը սրանով չի վերջանում: Միջավայրին բնորոշ է նաեւ մէկ ուրիշ շատ կարեւոր երեւոյթ, որը կարելի է անւանել «**ամբոխի առաջադիմութիւն**»: Այս նոյն երեւոյթը, կէս դար առաջ, Սպանիայի լաւագոյն մտաւորականներից մէկը՝ Խոսէ Օրտեգա Գասետը բնորոշում էր իբրեւ «**զանգւածների ապստամբութիւն**»:

Կարեւոր եմ համարում ընդհանուր գծերով անդրադառնալ այս երեւոյթին:

1981

ԶԱՆԳԱԾՆԵՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

Է. Յովհաննիսեան

Ներկայ գրութիւնը հեղինակի յօդուածաշարքի երրորդ և վերջին մասն է, ուր ան, բնականաբար, կը բանաձեւէ իր անձնական կարծիքները ամենայն սրտցաւութեամբ:

Ուրախ պիտի ըլլանք, եթէ ուրիշ մտաւորական գրիչներ ալ, այս կամ այլ նման հարցերու մասին, նոյն բացատրութեամբ պարզեն իրենց սեփական տեսակէտները, առ ի լուսաբանութիւն հայ հանրային կարծիքի:

Այն պատմական երեւոյթը, որը Խոսէ Օտեգա Գասետը անւանում էր «զանգւածների ապստամբութիւն», շատ աւելի հեշտ է նկարագրել, քան վերլուծութեան ենթարկել, որովհետեւ վերլուծութիւնը սեփական մօտեցում է պահանջում, իսկ ես այդ մօտեցումը չունեմ: Նկարագրենք այդ երեւոյթը ճիշտ այնպէս, ինչպէս կէս դար առաջ արեց Գասետը:

«Այսօր մեր քաղաքները լեցուն են մարդկանցով,- գրում է նա,- տները՝ բնակիչներով, հիւրանոցները՝ հիւրերով, գնացքները՝ ուղեւորներով, սրճարանները՝ յաճախորդներով, այգիները՝ սիրահարւածներով, թանգարանները՝ զբօսաշրջիկներով, յայտնի բժիշկների ընդունարանները՝ հիւանդներով, թատրոնները՝ հանդիսատեսով, հանգստեան տները՝ հանգստացողներով: Այն, ինչ շատ հեշտ էր նախկինում, այսինքն տեղ գտնելը, այսօր խնդրոյ առարկայ է:

«Մենք տեսնում ենք, որ ամբոխը գրաւել և օգտւում է քաղաքակրթութեան բոլոր բարիքներից ու տարածութիւններից: Զանգւածները տեսանելի են դարձել և մենք տեսնում ենք, թէ ինչպէս գրաւել են այն տեղերը, որոնք նախկինում գրաւում էին միայն ընտրեալները: Ժողովուրդը բեմ է բարձրացել և խաղում է գլխաւոր դերակատարների դերերը: Այլեւս հերոսները չկան, կան միայն երգչախմբեր»:

Անշուշտ այս երեւոյթը, ժողովրդավարութեան ու ընկերվարութեան տեսանկիւնից, դրական երեւոյթ է և ցոյց է տալիս, որ տեղի է ունենում զանգւածների առաջադիմութիւն, որ սկսւել է մշակոյթների, սեռերի, դասակարգերի հաւասարեցման ընթացքը և որ ընդհանուր առմամբ բարձրանում է դարաշրջանի մակարդակը:

Բայց այս երեւոյթը բերեց իր հետ նաեւ բացասական կողմեր: Բանը նրանում է, որ զանգւածների բեմ բարձրանալը տեղի ունեցաւ ոչ թէ արժանիքների, այլ իրաւունքների համար: Երբ զանգւածները լցւեցին թանգարանները և

համերգների սրահները, այդ կատարուեց ոչ միայն նրա համար ու նրա հաշւին, որ զարգացաւ մարդկանց գեղարուեստական ճաշակը, այլեւ մեծ մասամբ նրա համար, որ նրանք այդ սրահները մտնելու **իրաւունք** ստացան։

Ինչպէս վկայում են շատ ամերիկացի հասարակագէտներ, մասնաւորապէս Ռասելը, Ալենը և ուրիշներ, ժամանակակից մարդը արուեստի բնագաւառում չափազանց տկար է, որովհետեւ, ասում են նրանք, կարեւոր չէ թէ քանի՞ միլիոն մարդ է այցելում ցուցահանդէսներ, կարեւորը այն է, թէ քանիսն են տեսնում գեղարուեստական ստեղծագործութեան էութիւնը։ Կարեւոր չէ, թէ ի՞նչ է մեր աչքերի առջեւ, կարեւոր է, թէ արդեօք մենք կարողացե՞լ ենք թափանցել մեր աչքերի առջեւ տեղի ունեցող երեւոյթի իմաստի մէջ։

Երբ զանգւածը իրաւունք ստացաւ խօսելու, քննադատելու և վերջին հաշւով որոշելու ստեղծագործութեան յաջողութիւնը և արժէքը, նկարիչները, գրողները և երաժիշտները սկսեցին յարմարուել զանգւածին ու հրաժարուեցին գրել ու նկարել այն, ինչ իրենց կարծիքով «ժողովուրդը չի հասկանայ»։ Նախկինում այդպէս չէր, որովհետեւ նկարիչը գիտէր, որ նկարում է ոչ թէ ժողովրդի, այլ իր նման մասնագէտների համար։ Այժմ արուեստագէտի յարմարուողականութիւնը փոքր ինչ զցեց արուեստի որակը։

Սակայն այդ երեւոյթը մեծ մտահոգութիւն չէր պատճառում, քանի դեռ գտնւում էր արուեստի բնագաւառում։ Եւ, բացի դրանից, արուեստի ժողովրդականացումը այնքան կարեւոր է, որ կարելի էր այն կատարել արուեստի որակի հաշւին։

Սակայն, երբ այս նոյն մթնոլորտը ստեղծուեց ազգային և քաղաքական գործունէութեան ասպարէզում, մտահոգութիւնը և վտանգը շատ աւելի շօշափելի դարձան։ Եթէ նախկինում քաղաքական գործունէութիւնը, այսինքն ազգերի ու ժողովուրդների ճակատագիրը գտնւում էր յատուկ կրթութիւն, փորձ, կարողութիւն ու պատասխանատուութիւն ունեցող մարդկանց ձեռքում, ապա «զանգւածների ապստամբութիւնը» խլեց այդ մարդկանցից ու կազմակերպութիւններից ղեկավարելու և ազգային ճակատագիրը որոշելու մենաշնորհը և յանձնեց այն զանգւածին։

Հրապարակ բարձրացան բազմաթիւ անձեր, կազմակերպութիւններ, միութիւններ, համագումարներ, նախաձեռնողներ, խմբեր, կարծիքներ ու տեսակէտներ, որոնք անշուշտ **իրաւունք** ունէին **խօսելու**, բայց ոչ **գործելու**, որովհետեւ նրանցից շատերը իրենց գիտելիքների, փորձի, ազնւութեան ու պատասխանատուութեան իմաստով բացարձակ տկար էին։

Զանգւածների թափանցումը հասարակական կեանքի մէջ յատկապէս ծանր նստեց պետութիւններից զուրկ ազգերի և ժողովուրդների վրայ, որոնք զանգւածներից իրենց հաստատութիւնները պաշտպանելու ոչ մէկ միջոց չու-

նէին։ Եւ ահա եկեղեցական վարչութիւնների, ակումբների, միութիւնների ու այլ կազմակերպութիւնների մէջ մտան մարդիկ, որոնց ազնուութիւնը ազգի նկատմամբ շատ կասկածելի էր։

Բայց ի՞նչ արած, ձայների մեծամասնութիւնը տալիս է ոչ միայն խօսելու, այլեւ գործելու իրաւունք։ Հոգ չէ, թէ երբեմն ձայների այդ մեծամասնութիւնը ստեղծւում է նարդի խաղալու, օղի խմելու կամ էլ համայնավարութիւնը գովելու հողի վրայ։

Ազատութիւնը ազատութիւն է և նոր յեղափոխականները և գաղափարախօսները իջան հրապարակ։ Ստեղծւեց այն նոյն կացութիւնը, որը դրանից առաջ ստեղծւել էր արւեստի բնագաւառում։ Կառավարութիւններ, կազմակերպութիւններ, գաղափարախօսներ, քաղաքական ու փիլիսոփայական աշխատութիւնների հեղինակներ սկսեցին յարմարւել փողոց դուրս եկած յեղափոխականներին ու ցուցարարներին, որոնք երբեմն տգէտ էին, երբեմն կաշառւած, իսկ երբեմն էլ պարզապէս երեխաներ։

Զանգւածների ճնշման տակ ամերիկացիները դուրս եկան Վիեթնամից, իսկ խեղճ վիեթնամցիները նաւակներով ծովը թափւեցին, փախչելով իշխանութեան գլուխ անցած դաժան համայնավարներից։

Զանգւածների ճնշման տակ յանկարծ ընկերվարականներ դարձան ցմփոր **բուրժուան**երը, իսկ մեզանից շատերը, յարմարւելով զանգւածների «խաղաղ» մնալու ցանկութեանը, գրեթէ վերջ տւեցին «Փետրւար 18» տօնելուն, իսկ «Մայիս 28»ը այնպէս են տօնում, որ հասկանալի չէ, թէ սա Սարդարաբադի՞ ճակատամարտն է, թէ՞ անկախ Հայաստանի ստեղծումը։

Մի խօսքով՝ ազգային կեանքի մէջ փոխւեց ղեկավարներ ու զանգւածների փոխյարաբերութիւնը։

Եւ ահա այս մթնոլորտում մենք պէտք է մղենք Հայ Դատի պայքարը, առանց յարմարւելու և ճշմարտութիւնները թագցնելու։

ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մեր խնդիրների մէջ կայ մէկը, որը շատ կարեւոր է և որի մասին պէտք է խօսել առանց գաղափարական որեւէ կաշկանդումի։ Այս խնդիրը դրամատիրութեան և աշխարհակալութեան դէմ մղւող պայքարն է, որը վերջերս չափից աւելի շեշտակի նոյնացւում է Հայ Դատի համար մղւող պայքարի հետ։

Ես անձամբ չեմ կասկածում, որ Հայ Դատի լուծման վերջին փուլերում դրամատիրութիւնը և աշխարհակալութիւնը կարող են բացասական դեր կատարել մեր հարցը լուծելու մէջ, բացասական դեր կարող է կատարել նաեւ Խորհրդային Միութիւնը։ Համոզւած եմ նաեւ նրանում, որ երբ աշխարհը բռնկ-

ւի ընկերվարական յեղափոխութիւններով, ընկերվարական շարժումները օգտակար պիտի լինեն Հայ Դատի լուծման համար։

Սակայն ես համոզուած եմ նաեւ նրանում, որ մեր պայքարի այսօրուայ փուլում մենք չենք կարող ղեկավարուել այն հեռաւոր փարոսներով, որոնք այսօր կարող են միայն բարոյական նշանակութիւն ունենալ և ոչ մէկ գործնական օգտակարութիւն չեն բերում մեր պայքարին։ Գործնական մօտեցումը ցոյց է տալիս, որ Հայ Դատի քարոզչութեան փուլում դրամատիրութեան և աշխարհակալութեան ժողովրդավարութիւնը շատ աւելի նպաստաւոր է մեզ համար, քան ընկերվարական կոչուող երկրների տեղեկատւական միջոցների անազատութիւնը։

Պատմութեանը դեռեւս յայտնի չէ որեւէ վարչակարգ, որը ստեղծած լինի աշխարհակալութիւնը և դրամատիրութիւնը տապալելու հետեւանքով և ունենայ տեղեկատւական միջոցների ազատութիւն։ Նման երկրներում անկարելի է Հայ Դատի ուղղութեամբ աշխատանքներ տանել խաղաղ և ոչ էլ ոչ-խաղաղ միջոցներով։

Եթէ մեզ այսօր յաջողուել է փոքր ինչ առաջ տանել Հայ Դատի քարոզչական աշխատանքները, ապա այդ արւել է միայն ու միայն դրամատէրների ժողովրդավարական կարգերից օգտուելով։ Մենք այնքան ենք սովորել տեղեկատւական միջոցների ազատութեանը, որ այլեւս չենք նկատում այդ առաւելութիւնը։ Ճիշտ այնպէս, ինչպէս ջուր խմելիս և օդ շնչելիս ոչ ոքի շնորհակալութիւն չենք յայտնում, նոյնպէս էլ չենք ուզում ճանաչել, որ գրքեր հրատարակելը, համագումարներ անցկացնելը և ընդհանրապէս Հայ Դատի համար աշխատելը հնարաւոր է միայն դրամատիրական ազատութիւնների պայմաններում։

Գիտեմ, որ իմ այս խօսքերս (եթէ յօդուածը հրատարակւի) մեծ վրդովմունք պիտի առաջացնի «անկեղծ ընկերվարական» երիտասարդների մէջ. բայց ես չեմ ուզում յարմարւել. թո՛ղ ինձ ցոյց տան աշխարհում որեւէ երկիր, որը դրամատիրական չլինի և որտեղ կարելի է զբաղւել Հայ Դատով։

Դժբախտաբար, շատ քիչ են մարդիկ մտածում այն մասին, որ այն, ինչից իրենք օգտւում են որպէս սովորական բաներից, ստեղծած է տաղանդաւոր մարդկանց ջանքերով, և աւելի քիչ են մտածում այն մասին, որ եթէ այսօր չշարունակւեն այդ ջանքերը, ամբողջովին կարող է փլւել սովորական դարձած շէնքը։ Եւ մենք երբեմն սկսում ենք քանդել սովորական շէնքը, առանց իմանալու, թէ ի՞նչ ենք կառուցելու փոխարէնը։

Այսօր մի կարգ մարտիկներ Ժընեւի փողոցներում և այլուր պայքարում են աշխարհակալութեան դէմ։ Լաւ են անում, թող պայքարեն, այդ իրենց գործն է, բայց ինչո՞ւ այդ անել հայ ժողովրդի անունից, այն էլ Հայ Դատի լուծման

պատրւակով: Մի՞թէ հայ ժողովուրդը բոլոր պարերը պարել է և մնացել է միայն աշխարհակալութեան դէմ պայքարը:

Ոչ մէկ օգուտ կարող է տալ Հայ Դատին աշխարհակալների օդանաւային ընկերութիւնների շէնքերի առջեւ ռումբերի պայթեցումները: Ի՞նչ պատասխանենք մենք զւիցերիացուն կամ իտալացուն, երբ նա հարցնում է, թէ ինչո՞ւ էք մեզ սպանում: Ասե՞նք, թէ Հայ Դատի լուծման համար ենք ձեզ սպանում, թէ՞ ասենք, որ աշխարհակալութիւնն ենք տապալում:

Եթէ, օրինակ, Պաղեստինի Ազատագրութեան Կազմակերպութիւնը և մանաւանդ նրա յետեւում կանգնած հզօր պետութիւնը, իսկապէս ուզում են օգնել հայ ժողովրդին, դրա համար նրանք ունեն շատ աւելի մեծ հնարաւորութիւններ, քան, ասենք, հայերին մասնակից դարձնելը Արեւմուտքում խառնակութիւններ ստեղծելու վտանգաւոր գործին: Մի՞թէ բաւական չէ, որ հայ ժողովուրդը պայքարում է իր գլխաւոր թշնամի՝ աշխարհակալ Թուրքիայի դէմ:

Հայ ժողովուրդը ունի միակ մէկ քաղաքական խնդիր, այն է՝ **Հայ Դատը**, որի լուծման ճանապարհին կանգնած է Թուրքիան: Ուստի մեր բոլոր ջանքերը, թէ՛ խաղաղ և թէ՛ մարտական, պէտք է գործադրւեն այդ ուղղութեամբ: Եւ մեր քաղաքական բարեկամներն էլ պէտք է հասկանան, որ մեր բարեկամութիւնը և համագործակցութիւնը կարող է զարգանալ միայն այդ ուղղութեամբ: Եւ մեր բարեկամների հետ էլ մենք կարող ենք գործնական բարեկամութիւն անել հէնց այս սահմաններում:

Բոլորովին այլ հարց է բարոյական պաշտպանութիւնը: Անշուշտ, մեր համակրանքը բասկերի, պաղեստինցիների և բոլոր ազատագրական պայքար մղող ժողովուրդների կողմն է, բայց այդ չի նշանակում, որ մենք կարող ենք, օրինակ, իրլանդացիների նկատմամբ մեր համակրանքը արտայայտելու համար, որեւէ երկրում սպանել Անգլիայի դեսպանին: Նման համագործակցութիւն կարող է ստեղծւել, բայց քաղաքական, այլ ոչ թէ գաղափարական հողի վրայ:

Ես անձամբ վնասակար եմ համարում, երբ որոշ խմբաւորումներ ահաբեկչութեան թիրախ են դարձնում բոլոր այն պետութիւնները, որոնք այսպէս թէ այնպէս Թուրքիայի դաշնակիցներն են, որովհետեւ դրանով, ինչպէս ասացի, մեր դէմ են լարում աշխարհի հասարակական կարծիքը և ի զուր են վտանգում հայ գաղութները այդ երկրներում:

Բացի դրանից, յատկապէս երկու տարբեր աղբիւրներից սնւող և երկու տարբեր նպատակներ ունեցող հայ նոր մարտական խմբաւորումներ կիրառում են բոլորովին տարբեր ռազմավարութիւն, որի հետեւանքով անխուսափելիօրէն, գէթ մասամբ, եթէ ոչ՝ լիովին, խանգարելու են իրար հէնց գործունէութեան ժամանակ:

Աւելի՛ն. սկզբնական շրջանում կարելի էր ուշադրութիւն չդարձնել այն փաստի վրայ, որ մէկ խմբաւորում իրեն է վերագրում միւսի արածը, բայց երբ պարզուեց նրանց տարբերութիւնը, ստեղծուեց մի կացութիւն, որ շփոթութեան մէջ է գցում թէ՛ օտարներին և թէ մեզ՝ հայերիս։

Դժբախտաբար, ես չեմ պատկերացնում, թէ ինչպէս կարելի է շտկել ստեղծուած իրադրութիւնը, բայց կացութիւնը փափուկ է և խնդրին պէտք է մօտենալ ամենայն պատասխանատուութեամբ։

Վերջին հաշւով Հայ Դատի պայքարը հայ ժողովրդի պայքարն է։ Նրա համակրանքից, օգնութիւնից ու ցանկութիւնից է կախուած պայքարի ուղղութիւնը և ընթացքը։ Ուրեմն հայ ժողովուրդը պէտք է տեղեակ լինի կատարուածին, նրան պէտք է հնարաւորութիւն տրւի ընտրութիւն կատարելու։

Այսօր նա այդ հնարաւորութիւնը չունի, որովհետեւ նա լսում է միայն մի խմբաւորման ձայնը, մինչ միւս խմբաւորումը լուռ է և գրեթէ չի խօսում։

Կարծում եմ, որ լաւ կը լինէր, եթէ միւս խմբաւորումը եւս իր տեսակէտները մեր ժողովրդին յայտնելու ձեւը գտնէր։

Իսկ շատ աւելի լաւ կը լինէր, որ մեր բոլոր զինուրները կռւէին յանուն ազգի, այլ ոչ թէ յանուն ինքնահաստատման՝ օտար շարժումների մէջ։

1981

ՄԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՅՍՏԱԿԱՅՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

Է. Յովհաննիսեան

Միւնխենի Հայկական Հարցերի Հաստատութեան քաղաքական շփումների առաջին իսկ քայլերը ցոյց տուեցին մեր քաղաքական պահանջների յստակեցման անհրաժեշտութիւնը: Տարբեր քաղաքական ու հասարակական կազմակերպութիւնների դռները ծեծելիս, թուրք և եւրոպացի դիւանագէտների հետ հանդիպելիս, մեզ անվերջ ուղղում էին նոյն հարցումները. Ի՞նչ էք ուզում, ո՞րն է ձեր վերջնական նպատակը: Միայն ցեղասպանութեան դատապարտո՞ւմն է, թէ՞ հողային պահանջներ էլ ունէք: Եթէ հողային պահանջ ունէք, ապա ի՞նչ սահմաններում: Ուզո՞ւմ էք Արեւմտեան Հայաստանը կցել Խ. Հայաստանին: Իսկ Հայաստանի անկախութիւնը ձեզ չի՞ հետաքրքրում:

Բոլոր այս հարցումների համար մենք գտնում էինք պատասխաններ, բայց չեմ կարծում, որ նրանք շատ համոզեցուցիչ լինէին, քանզի մենք ինքներս համոզուած չէինք մեր պատասխաններում: Այս վիճակը բնական է ու հասկանալի բոլոր այն միջանկեալ ժամանակաշրջանների համար, երբ մի ժողովուրդ յեղափոխական քարոզչութիւնից անցնում է յեղափոխական գործի և իրական արդիւնք է սպասում իր գործունէութիւնից:

Եթէ յեղափոխական քարոզչութեան ժամանակաշրջանում կարելի էր խօսել ազատութեան, անկախութեան, մարդկային և ազգային իրաւունքների և այլ բարոյական սկզբունքների մասին, եթէ կարելի էր վկայակոչել Սեւրի Դաշնագիրը, և նշանաւոր քաղաքական գործիչների հայանպաստ յայտարարութիւնները, ապա այն պահից, երբ մեր դիմաց կանգնում է իրական թշնամի, որի դէմ մենք պայքարում ենք մեր իրական կարողութիւնների սահմաններում, անհրաժեշտ է այլ սկզբունքների վրայ ձեւակերպել մեր իրական պահանջները:

Եթէ մենք այդ նոր քաղաքական սկզբունքները չորդեգրենք, ապա այդ միայն կը նշանակի, որ մեր պահանջները դեռեւս դուրս չեն եկել բարոյական պայքարի ասպարէզից, որտեղ կարելի է պահանջել այն ամէնը, ինչ մեզ արդար է թւում միջազգային օրէնքների և բարոյականութեան տեսանկիւնից: Քաղաքական ասպարէզ մտնելու համար, անհրաժեշտ են պահանջների ձեւակերպումներ բոլորովին այլ չափանիշներով:

Բաւական է վերյիշել այն քաղաքական ճանապարհը, որը անցաւ հայ ժողովուրդը Փարիզի Խորհրդաժողովից (20 Հոկտեմբեր 1921 թ.) մինչեւ Լօզան, որպէսզի պարզ դառնայ, թէ ինչպէս են փոխւում իրական քաղաքական պահանջները իրականութեան ազդեցութեան տակ: Այդ ճանապարհի վրայ, մէկ տարուայ ընթացքում, մեր պահանջները Միացեալ, Անկախ Հայաստանից ի-ջան մինչեւ Ազգային Օջախի պահանջ, իսկ Խորհրդաժողովի վերջում Ազգա-յին Օջախի գաղափարը հասաւ կայսրութեան որեւէ անկիւնի մէջ հայերին կենտրոնացնելու մտքին: Եւ այդ խղճուկ պահանջն էլ բաւարարութիւն չգտաւ, որովհետեւ Թուրքիան, ստեղծած քաղաքական կացութիւնը օգտագործելով, յամառօրէն հրաժարւեց որեւէ զիջում կատարել հայերին:

Եւ ինչո՞ւ պիտի զիջէր, եթէ նրան քաջ յայտնի էր, որ բոլոր մեծ պետութիւն-ները անհրաժեշտ էին համարում բոլոր տեսակի զիջումների գնով հաշտու-թիւն կնքել Թուրքիայի հետ: Եւ Լօզանի Խորհրդաժողովը իր օրակարգից հա-նեց Հայկական Հարցը:

Այն ժամանակւայ բարոյական մթնոլորտի մասին Ա. Խատիսեանը տալիս է հետեւեալ պատկերը.

«Ամբողջ քաղաքակիրթ աշխարհը ոտքի ելաւ պահանջելու համար Լօզա-նի Խորհրդաժողովից՝ բաւարարութիւն տալ հայկական բաղձանքներին: Եւ ի-րաւունք ունէր Լորտ Քըրզընը Խորհրդաժողովի մէջ դիմելու թուրքերին ասե-լով. «Ամբողջ քաղաքակիրթ աշխարհը մեզ է նայում և սպասում է, որ դուք բա-ւարարութիւն տաք հայերին»: Սակայն Իսմէթ փաշան պատասխանեց. «Քա-ղաքակիրթ աշխարհը աւելի շատ ձեզ է նայում, որովհետեւ դուք էք, որ ան-վերջ խոստումներ էք տւել հայերին, իսկ մենք որեւէ խոստում չենք տւել»:

Ի՞նչով բացատրել պատերազմում պարտւած թուրքերի այս լկտիութիւնը: Միայն նրանով, որ թուրքերը լաւ էին հասկացել ստեղծւած կացութիւնը և ու-ժերի դասաւորութիւնը: Այդ կացութեան մէջ բացակայում էր Թուրքիային որե-ւէ բան պարտադրելու ուժը, իսկ քաղաքակիրթ աշխարհի բարոյական յայտա-րարութիւնները ոչ մէկ դեր չէին խաղում քաղաքականութեան մէջ՝ ոչ անցեա-լում և ոչ էլ այսօր: Մեր աչքի առջեւ, հակառակ ՄԱԿի որոշումների, հակառակ Հելսինկեան համաձայնութիւնների, հակառակ Լեհաստանի ժողովրդի ցան-կութեան, հակառակ մեծ պետութիւնների կոչերի, աշխարհում կատարւում են այնպիսի անօրինականութիւններ, որ ստիպում են մեզ մտածելու, թէ աշխար-հում ոչինչ չի փոխւել, ուստի մենք այսօր էլ մեր քաղաքական պահանջների մէջ պէտք է ղեկավարւենք քաղաքական ուժերի իրական դասաւորութեամբ:

Որեւէ քաղաքական պահանջ կարող է բաւարարւել միայն այն դէպքում, երբ նրան, ում ներկայացւած է այդ պահանջը, պարտադրող կայ կամ էլ երբ նրան այդ բանը ձեռնատու է: Իսկ եթէ խօսենք մի քիչ աւելի ընդհանուր ձեւով,

կարելի է բաւարաւել միայն վերջին սահմանումով, այսինքն՝ քաղաքական պահանջը բաւարարւում է, եթէ բաւարարողին այդ ձեռնտու է: Եթէ մեզ որեւէ բան պարտադրւում է և մենք ենթարկւում ենք այդ պարտադրանքին, այդ նշանակում է, որ մենք ընտրում ենք չարիքներից փոքրագոյնը, այսինքն՝ հակառակ դէպքում վնասը աւելի մեծ կը լինէր:

Այժմ տեսնենք, թէ ի՞նչը կարող է ստիպել Թուրքիայի կառավարութեանը բաւարարութիւն տալ մեր պահանջներին: Առայժմ մեր հարցի լուծման մէջ միակ շահագրգռուած ուժը մենք ինքներս ենք և ուրիշ ոչ մէկը, ուստի Թուրքիան, եթէ մտադրած լինի զիջումներ կատարել մեր օգտին, նա այդ կ'անի հէնց այն չափով, որ մենք նրան անհանգստացնում ենք: Շա՞տ է այդ արդեօք, կարո՞ղ է շատ աւելի շատ դառնալ առանց իրական դաշնակիցների: Իսկ եթէ ոչ, ինչո՞վ կարող ենք մենք շահագրգռել հաւանական դաշնակիցներին: Արդեօք այսօրւայ մեր պահանջների մէջ կա՞յ ոեւէ մէկի համար հետաքրքիր գաղափար:

Բոլոր այս հարցումների պատասխանը մենք պէտք է կարողանանք տալ, նախքան իրական քաղաքական ասպարէզ դուրս գալը: Եւ այս առիթով ուզում եմ պատմել մէկ հանդիպման մասին, որը տեղի ունեցաւ Հոկտեմբերի 10ին, Բոննում:

Հայ Ժողովրդի Իրաւունքների Պաշտպանութեան Եւրոպական Կոմիտէի անդամ դոկտոր Ֆլաշաւէրը դիմեց Դաշնակցային Գերմանիայի թուրքական դեսպանատուն, խնդրելով հանդիպում դեսպանի հետ՝ Հայկական Հարցի վերաբերեալ: Դեսպան Ալեւ Քիլիջը ընդունեց նրան և 2,5 ժամ տեւող զրոյց ունեցաւ նրա հետ: Այդ զրոյցը բաւականին ուշագրաւ է ոչ միայն այն տեսանկիւնից, որ կարող է դառնալ մեր հակառակորդի հետ շփումների սկիզբ, այլ նաեւ այն իմաստով, որ ցոյց է տալիս թէ ինչպէս պէտք է պատրաստւել նման հանդիպումներին:

Ֆլաշաւէրը ներկայացել է որպէս Պաշտպան Կոմիտէի անդամ և խօսել է հայ ժողովրդի հայրենիք ունենալու իրաւունքի մասին: Դեսպանը, որը Ֆլաշաւէրի վկայութեամբ, շատ սիրալիր, կրթւած և Հայկական Հարցի տեղեակ մի անձնաւորութիւն էր, յիշեցրել է նրան, որ Անգարայի դէպքից յետոյ՝ հայ ահաբեկիչը դատավարութեան ժամանակ յայտարարել է, թէ իրենց կազմակերպութիւնը պահանջում է Թուրքիայից Վանը, Մուշը, Տրապիզոնը, Բիթլիսը, Էրզրումը և մի շարք այլ վայրեր, որոնք այժմ ամբողջովին բնակւած են թուրքերով:

«Ձեր Կոմիտէն,- հարցրել է դեսպանը,- հայերի այդ հողային պահանջնե՞րն է պաշտպանելու»:

Շփոթած Ֆլաշաւէրը անմիջապէս խօսքը փոխել է և յայտարարել, որ Կոմիտէի նպատակը ցեղասպանութեան դատապարտումն է: Դեսպանը հարցրել է նրանից, թէ արդեօք հայ ժողովուրդը Կոմիտէին ներկայացրել է իր յստակ պահանջները: Մեծ լարւածութեամբ սկսւած այս խօսակցութիւնը ի վերջոյ մեղմացել է և, ըստ Ֆլաշաւէրի, վեր է ածւել անկեղծ խօսակցութեան, որի ժամանակ դեսպանը յայտնել է հետեւեալ տեսակէտը.

-«Մենք գիտենք, որ չափից աւելի ու անտեղի հայի արիւն է թափւել, որ հայերը Առաջին Համաշխարհային պատերազմի ամենամեծ զոհերն են, որ նրանք մինչեւ այսօր իրենց հայրենիքը վերադառնալու հասկանալի կարօտը ունեն: Գիտենք նաեւ այն, որ հայերը մեզ ատում են: Բայց քաղաքականօրէն մենք չենք կարող ճանաչել ցեղասպանութիւնը, առաւել եւս՝ խօսել նրանց հողային պահանջների շուրջ:

«Մենք ասում ենք, որ օսմանեան կառավարութեան կողմից ծրագրւած ցեղասպանութիւն չի եղել, դուք ասում էք՝ եղել է: Սա գիտական վէճի նման մի բան է դառնում: Դուք պիտի ներկայացնէք ձեր փաստաթղթերը, իսկ մենք կը ներկայացնենք մեր տեսակէտը ապացուցող փաստաթղթեր: Հաւատացէք, որ մենք էլ շատ փաստաթղթեր ունենք:

«Աւելին, կարող ենք ապացուցել, որ ձեր փաստաթղթերի մէջ կան կեղծ փաստաթղթեր, օրինակ՝ Թալէաթի հրամանը, Հիտլերի խօսքերը, որը երբեք նման խօսքեր չի ասել և ընդհանրապէս հայերի մասին գաղափար չի ունեցել…»:

Այստեղ Ֆլաշաւէրը ընդհատել է դեսպանին ասելով, թէ «մենք պատրաստ ենք այս հարցում համագործակցել: Տուէք մեր Կոմիտէին ձեր մասնագէտներից մէկին և մենք միասնաբար ուսումնասիրենք ձեր և եւրոպական արխիւները»:

Դեսպանի պատասխանը, իմ կարծիքով, շատ հետաքրքրական է և, ես կ'ասէի, կարեւոր:

-«Նախ մենք չենք կարող ձեզ հետ համագործակցել,- ասել է նա,- որովհետեւ ձեր յայտարարութեան մէջ դուք խօսում էք ցեղասպանութեան մասին որպէս մի անհերքելի փաստ: Դուք ոչ թէ իրականութիւն էք ուզում պարզել, այլ արդէն հաստատում էք ցեղասպանութեան եղելութիւնը, իսկ այդ ձեւով մենք չենք ընդունում ցեղասպանութիւնը: Բացի դրանից, ո՞ւմն են պէտք նման պատմական ապացոյցները:

«Համաձայն եմ, որ այդ կարեւոր է պատմութեան, բայց ոչ թէ մեզ համար: Ենթադրենք թէ ձեզ յաջողւի ապացուցել, որ ցեղասպանութիւն եղել է: Կարծո՞ւմ էք, թէ այդ կարող է հիմք ծառայել քաղաքական զիջումներ կատարելու համար: Որպէս հոգեբան և պատմաբան, դուք լաւ պիտի իմանաք թէ ինչպէս են այսօր լուծւում քաղաքական խնդիրները: Մենք այն երկիրը չենք, որի հետ

կարելի լինի խօսել ուժի դիրքերից, բայց խօսել կարելի է և մենք ձեզ հետ պէտք է գտնենք խօսելու հնարաւորութիւնը»։

Ֆլաշաւէրը յիշեցրել է, որ գերմանացիները ճանաչեցին Հիտլերի ոճիրները և հատուցում էլ վճարեցին։ Դեսպանը ասել է, որ խօսքը բոլորովին տարբեր քաղաքականութիւնների մասին է և որ այդ ամէնը պատահեց միայն այն բանի բերումով, որ Հիտլերը պարտուեց, հակառակ դէպքում՝ գերմանացիները այսօր չէին խօսի ցեղասպանութեան մասին։

Ֆլաշաւէրը առաջարկել է, որ Պաշտպան Կոմիտէի լիագումար նիստից յետոյ երեք հոգուց բաղկացած մի պատւիրակութիւն ընդունւի դեսպանի կողմից։ Այդ պատւիրակութեան կազմի մէջ Ֆլաշաւէրը առաջարկել է Կոմիտէի երկու անդամների և ՀՀՀի ղեկավարին, այսինքն՝ ինձ։ Դեսպանը ընդունել է այդ առաջարկը։ Եւ ահա այս տարւայ վերջին այդ հանդիպումը տեղի է ունենալու։

Անշուշտ այդ հանդիպումը պաշտօնական բնոյթ չի կրելու. ոչ ես լիազօրութիւն ունեմ խօսելու հայ ժողովրդի անունից և ոչ էլ դեսպանն է խօսելու իր կառավարութեան անունից։ Բայց մեր խօսակցութիւնը գուցէ նախապատրաստի աւելի պաշտօնական հանդիպում, ուստի մեր պատւիրակութիւնը պէտք է նախ յստակ և յետոյ իրական պահանջներ առաջ քաշի։

Կարծում եմ, որ նման հանդիպումներ աշխարհի տարբեր ծայրերում կարող են շատ լինել։ Եւ չնայած նրան, որ բոլոր այդ հանդիպումները առայժմ կրելու են անպաշտօն բնոյթ, լաւ կը լինէր, որ բոլորս նոյն բանը ասէինք և լաւ կը լինէր, որ թուրքերին այլեւս առիթ չտայինք ասելու այն, ինչ ասացին նրանք մեզ Ալեքսանդրապոլում, երբ մենք թուրքերին ներկայացրինք մեր պահանջները։

Այն ժամանակ Կարաբեքիր փաշան յուզւած բացագանչեց. «Ձեր սահմանները մեզ ուղղակի ապշեցուցին։ Եւ դուք, նստած Ալեքսանդրապոլ, պարտութիւն կրելուց յետոյ կը պահանջէք Մուշ և Վան։ Ի՞նչ կը լինէր՝ եթէ դուք նստած լինէիք Վանում։ Ի՞նչ կը մնար Թուրքիայից։ Հաւատացէք, որ ձեր պայմանները մենք պէտք է ծածկէինք մեր սպաներից և զինուրներից, ապա թէ ոչ նրանք ցրիւ պիտի տային ձեր պատւիրակութիւնը։ Քննութեան առնել ձեր այս պայմանները անկարելի է։ Մտածեցէք»։

Պէտք է մտածել, այո՛, ի՞նչ ասել և ի՞նչպէս ասել։

1982

ՄԻ ՔԱՆԻ ԱՅԼ ԿԷՏԵՐ

(«ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՆԽԱՓՏ ՄԻՈՒԹԻՒՆԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ՅՕԴՒԱԾԻ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ)

Է. Յովհաննիսեան

Ա.

Չեմ կարող ասել, որ վերի խորագրով իմ յօդուածի վերաբերեալ արձագանգները այնքան շատ էին և այնքան էական, որ անհրաժեշտ էր պատասխանել նրանց: Այսուհանդերձ, մի քանի դիտողութիւնների պատասխանելուց բացի, պարզապէս ուզում եմ նշել մի քանի այլ մանրամասնութիւններ, որոնք բացակայում էին իմ յօդուածում:

Նախ արձագանգների մասին:

Իմ յօդուածին արուած ծաւալուն արձագանգների մէջ գտնւում էին ոչ թէ քննարկւող հարցին, այլ իմ անձին վերաբերող տարբեր դիտողութիւններ, ինչպէս, օրինակ, «զրպարտիչ», «այլասերուած» «ընտանիք լքած», «հայրենադաւ», «օտար տէրերի ծառայ» և այլն: Սրանց, անշուշտ, չեմ պատասխանում: Սրանց հեղինակներին ներում եմ, որովհետեւ՝ նախ իմ ժողովուրդն է, ումի՞ց նեղանամ, երկրորդ, եթէ մենք միայն նրանց սիրենք ովքեր մեզ են սիրում, էլ ի՞նչ արժէ մեր սէրը:

Փորձեմ պատասխանել աւելի լուրջ դիտողութիւնների:

Իմ յօդուածի մէջ արտայայտուած տեսակէտների դէմ շատ առարկութիւններ չեղան, բացի բարերար Ալեք Մանուկեանի նւիրատուութեան վերաբերող տողերին, որոնք ամբողջ յօդուածի մի չնչին մասն էին կազմում: Այդ տողերի նկատմամբ հետաքրքրութիւնն էլ, հաւանաբար, կարելի է վերագրել Էջմիածնի պաշտօնական պատասխանին, որը յղուած էր **«Ասպարէզ»**ի խմբագրութեանը: Բացի այս հարցին վերաբերող դիտողութիւնից, իմ քննադատները ինձ քննադատեցին հետեւեալ բաների համար.

1.- Առաջարկում եմ պայքարել մայր Հայրենիքի դէմ, որը կարող է վտանգել այնտեղ ապրող հայերի կեանքը:

2.- Հայաստանի և հայ ժողովրդի ապահովութիւնը խորհրդային իշխանութեան գոյութեամբ է պայմանաւորուած:

3.- Իմ հրապարակային արտայայտութիւնները չեն համապատասխանում Հ.Յ.Դաշնակցութեան քաղաքական և գաղափարախօսական գծին և այդ իմաստով նրանք այլախոհական են:

Նախքան այս մեղադրանքներին անդրադառնալը, ես ուզում եմ նշել, որ այս և նման հարցերին պատասխանելը անհրաժեշտ է, քանզի ինքնաճանաչումը, ազգային ինքնագիտակցութիւնը ազգային գործունէութեան անհրաժեշտ նախապայմանն է: Առանց ինքնաճանաչման ամէն մի քայլ կա՛մ պատահական է լինում կամ էլ ուրիշի կամքով թելադրւած և ուրիշի շահին ծառայող: Ինքնաճանաչման բացակայութեան դէպքում՝ աւելի լաւ է, որ ոչ մէկ քայլ չկատարւի, քան կատարուեն այնպիսի քայլեր, որոնք չեն համապատասխանում մեր իրական վիճակին:

Ահա թէ ինչու, ես փորձում եմ Սփիւռքի պատկերացումները Խորհրդային Հայաստանի նկատմամբ դուրս բերել մակերեսային ու զգացական մօտեցումների շրջանակից: Եթէ ճանաչելով ենք այս կամ այն վերաբերմունքը դրսեւորում Հայրենիքի նկատմամբ, ապա ես ասելիք չէի ունենայ: Բայց եթէ մեր վերաբերմունքը ոչ թէ քաղաքական մօտեցման, այլ տգիտութեան նշան է, ինչպէ՞ս կարող է լռել մէկը, որը այդ երկիրը ճանաչում է նրա բոլոր լոյս ու մութ ծալքերով:

Բերեմ միայն մէկ օրինակ.- Դաշնակցային Գերմանիայում վերջերս յայտնւեց մի նոր հայրենասէր՝ Ժիլբեր Մոմջեան, որը յաճախ զբօսաշրջիկներ է տանում Հայաստան և որի գործունէութիւնից շատ գոհ են Հայաստանի ղեկավարները: Այս Մոմջեանը Հայաստանից իր տպաւորութիւնները տալու առիթով, որոնք ձեռք են բերւել Երեւանի ճոխ սեղանների վրայ, հրապարակով նշում է, թէ Հայաստանում բանւորները աւելի լաւ վիճակի մէջ են, քան Դաշնակցային Գերմանիայում:

Եթէ պարոն Մոմջեանը ծանօթ լինէր Հայաստանի հայ բանւորի իրական վիճակի հետ, բայց արտասահմանում ինչ-ինչ քարոզչական նպատակներով հակառակն ասէր, ես ձայն չէի հանի: Բայց այս դժբախտը իրական վիճակի հետ ծանօթ չէ և չի պատկերացնում, որ Դաշնակցային Գերմանիայի բանւորի **գործազրկութեան ամսական նպաստը հաւասար է Հայաստանի բանւորի տարեկան աշխատավարձին**: Որ այդ գործազրկութեան նպաստը Հայաստանի ակադեմիկոսի աշխատավարձից բարձր է: Ես ինձ յանցաւոր կը համարէի, եթէ այդ մասին չպատմէի: Ահա թէ ինչու եմ պատմում՝ սիրուց, այլ ոչ թէ ատելութիւնից:

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՃՇՏՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռի «ճշտումից» պարզւեց առնւազն երկու իրողութիւն.

Առաջին՝ բարերար Ալեք Մանուկեանն Էջմիածնի Հայ Եկեղեցական Արւեստի թանգարանը չի կառուցել, ինչպէս այդ մասին յայտարարեցին Սփիւռ-

քի և Հայաստանի թերթերը, այլ պարզապէս օգնել է Հայաստանի շինարարներին մարմարով, ներքին կահաւորումով և ելեկտրական սարքաւորումներով։

Այս ամէնը, անշուշտ, շատ գնահատելի է, սակայն թանգարանի հիմնական ծախսերը կատարուել են Հայաստանի բիւտճէի հաշւին, այսինքն հիմնական շինութիւնների, արտադրական միջոցների և բանւորական ուժի, ինչպէս նաեւ՝ նախագծային աշխատանքների հաշւին։ Ո՞վ է իրապէս այդ ծախսերը կատարել։ Եթէ բարերարն է, ապա ի՞նչ ճանապարհով է դոլարը ռուբլի դարձել։ Իսկ եթէ Հայաստանի կառավարութիւնն է՝ սեփական բիւտջէի հաշւին, ապա իմ բոլոր ասածներս մնում են ուժի մէջ, միայն այն տարբերութեամբ, որ թանգարանը կառուցւել է ո՛չ թէ Ալեք Մանուկեանի, այլ Հայաստանի կառավարութեան կողմից, որը ոչ մէկ տարի չի կարողանում կատարել իր շինարարական ծրագիրը։

Երկրորդ՝ Խ. Միութեան Սահմանադրութեան 73րդ յօդւածի 10րդ կէտի համաձայն՝ խորհրդային բոլոր հանրապետութիւնների արտաքին առեւտուրը և արտաքին տնտեսական գործունէութեան միւս տեսակները կատարւում են խորհրդային կենտրոնական, այլ ոչ թէ հանրապետական իշխանութեանց կողմից, ուստի բացառւած է, որ Հայաստանի իշխանութիւնները կարողանային որեւէ ապրանք գնել արտասահմանում ինքնուրոյն կարգով։ Այս երկու իրողութիւններից բխում են հետեւեալ երկու հարցերը.

1.- Այդ ինչպէ՞ս պատահեց, որ Մոսկուան, առանց որեւէ սեփական շահի, թոյլ տւեց, որ Հայաստանը իր բիւտջէի հաշւին կրօնական պատմական թանգարան կառուցի, երբ Հայաստանում չեն կառուցւում արտադրական և բնակելի շէնքերը։ Հաւանաբար Մոսկուան որոշել է հաշւի նստել հայ ժողովրդի կրօնական զգացմունքների՞ հետ։

2.- Ինչո՞ւ Հայաստանի սքանչելի մարմարը թողած, խորհրդային առեւտրական կազմակերպութիւնները մարմարը գնում են Իտալիայում, իսկ լուսաւորութեան սարքաւորումները Ֆինլանդիայում։

Այս երկու հարցերի պատասխանը ես գիտեմ, սակայն նախ չեմ ուզում նոր յօդւածների ու «ճշտումների» առիթ տալ և յետոյ թող ամէն հայ ինքը փորձի գտնել այս հարցերի պատասխանը, ինչպէս նաեւ այն հարցի պատասխանը, թէ ինչո՞ւ խորհրդային իշխանութիւնները այնքան մտահոգւեցին իմ յօդւածով, որ Էջմիածնի միջոցով հարկ տեսան պաշտօնական պատասխան և հաշւետւութիւն տալ մի ինչ որ «այլասերւած հայրենադաւի»։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԷՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ես երբեք չեմ առաջարկել և հիմա էլ չեմ առաջարկում **պայքարել** Հայաստանի դէմ, որովհետեւ նման առաջարկութիւնը այնքան մեծ յիմարութիւն է,

որ միայն կատարեալ յիմարը կարող է իմ յօդուածներից նման եզրակացութեան գալ։ Սակայն ես միշտ գտել եմ և հիմա էլ գտնում եմ, որ հայկական հարցերի վերաբերեալ խորհրդային իշխանութեանց նկատմամբ Սփիւռքը պէտք է **ընդդիմադիր** դիրք բռնի։ Պայքարի և ընդդիմադրութեան միջեւ տարբերութիւնը այնքան մեծ է, որքան որ մեծ է տարբերութիւնը ատելութեան և սիրոյ միջեւ։

Պայքարը միշտ աւարտւում է կողմերից մէկի պարտութեամբ, քանզի պայքարի մէջ մտած կողմերից իւրաքանչիւրը ցանկանում է ոչնչացնել հակառակորդին։ Իսկ ընդդիմադրութիւնը աւարտ չունի, նա յաւերժ է, որքան որ յաւերժ է նրան ծնող համակարգը։ Ընդդիմադրութիւնը ղեկավարման միջոց է, հասարակութիւնը առողջացնելու և ղեկավարների սանձարձակութիւնը սահմանափակելու անհրաժեշտ պայման։

Կողմերը կարող են փոխել իրենց դիրքերը իշխանութեան վրայ, բայց ընդդիմադրութիւնը միշտ պէտք է մնայ։ Պարտւած կողմը անմիջապէս գրաւում է թափուր մնացած ընդդիմադրութեան աթոռը, եթէ ուզում է, որ շարունակւի առողջ ղեկավարութիւնը։

Ցաւում եմ, որ Արեւմուտքում ծնւած ու դաստիարակւած մարդիկ այս տարրական ճշմարտութիւնը չեն հասկանում, այսինքն չեն հասկանում պայքարի և ընդդիմադրութեան տարբերութիւնը։

Շատ հետաքրքրական է, որ «Հայկական սովետական հանրագիտարան»ի 4րդ հատորում **ընդդիմադրութիւն** բառը բացակայում է։ Խեղճ Հայաստան, այնքան առանց ընդդիմադրութեան մնաց, որ բառն էլ մոռացաւ։ Բայց բարեբախտաբար, այդ նոյն հատորում, 10րդ էջի վրայ, կայ գոնէ ընդդիմախօս բառը, որը գրեթէ նոյն նշանակութիւնը ունի։ Այդ բառի բացատրութեան մէջ գրւած է.

«Առարկող, ընդդիմախօսող անձ՝ սովորաբար զեկուցողին, ինչպէս նաեւ բանավէճի միւս մասնակիցներին։ ՍՍՀՄում գիտութիւնների թեկնածուի գիտական աստիճան յարուցելու աւարտաճառի պաշտպանութեան ժամանակ նշանակւում է երկուսից ոչ պակաս, իսկ դոկտորական աւարտաճառինը՝ երեքից ոչ պակաս պաշտօնական ընդդիմախօս։ Ոչ պաշտօնական ընդդիմախօսների թիւը աւարտաճառի պաշտպանութեան ժամանակ չի սահմանափակւում»։

Ես էլ հենց այս ընդդիմախօսութեան մասին եմ խօսում։ Այդ ի՞նչպէս կարելի է հանդուրժել, որ մի փոքր գիտական խնդիր քննարկելու և մի գիտական կոչում տալու համար անհրաժեշտ են առնւազն երեք պաշտօնական և անսահման անպաշտօն ընդդիմախօսներ, իսկ ազգի ճակատագիրը որոշող խնդիրները քննարկելիս և ազգային կառավարութիւն նշանակելիս ընդդի-

մադրութիւնը և ընդդիմախօսութիւնը ոչ միայն պարտադիր չեն, այլեւ ընդդիմադիրներն ու ընդդիմախօսները նոյնիսկ դաւաճաններ են համարւում։

Հայկական Հարցերի վերաբերեալ խորհրդային իշխանութեանց նկատմամբ ընդդիմադրութիւնը բացարձակօրէն անհրաժեշտ է, որովհետեւ Հայաստանի ղեկավարութիւնը նշանակւում է անկախ ժողովրդի կամքից, ուստի ժողովրդի հետ հաշւի նստելու ոչ մէկ պատճառ չունի։

Դիմենք մէկ օրինակի.- Նոյեմբեր 4ին Խորհրդային Հայաստանի մամուլը հաղորդեց, թէ Հայաստանի ներքին գործերի նախարար Եւգենի Բադալովի փոխարէն նշանակւել է Հայկազ Շահինեանը։ Թէ ինչո՞ւ, այս մասին, անշուշտ Հայաստանի թերթերը ոչինչ գրեցին։ Սակայն այդ մասին շատ վստահելի աղբիւրներից տեղեկութիւններ հասան արտասահման։ Ահաւասիկ այդ տեղեկութիւնները.

1974 թւականին Հայաստանի մի շարք ղեկավարներ, ինչ-ինչ պատճառներով, շահագրգռւած էին օրւայ ներքին գործերի նախարար Դարբինեանին (որին ժողովուրդը սիրում էր, որովհետեւ Սարդարաբադի յուշարձանը կանգնեցնելու ժամանակ նա այդ շրջանի համայնավար շրջանային կոմիտէի առաջին քարտուղարն էր և որոշ չափով նրան էր վերագրւում յուշարձանի կանգնման նախաձեռնութիւնը) պաշտօնազրկելու մէջ։ Այդ ժամանակ Հայկազ Շահինեանը Վլադիմիր Դարբինեանի տեղակալն էր։

Դարբինեանի դէմ արշաւը յանձնարարւեց հանրապետական դատախազ Օսիպեանին, որը խոստացաւ Շահինեանին ներքին գործերի նախարարի պաշտօն, եթէ յաջողւի պաշտօնազրկել Դարբինեանին։ Շահինեանը նետւեց հակադարբինեան արշաւի մէջ և 1974 թ. Դեկտեմբեր ամսին Դարբինեանը պաշտօնազրկւեց։

Սակայն Շահինեանը այն ժամանակ նախարարի պաշտօնը չկարողացաւ գրաւել, որովհետեւ այդ նշանակման դէմ էր ամբողջ նախարարութիւնը և նրա վրայ 200 էջնոց մի բողոքագիր ուղարկւեց Մոսկւա։ Շահինեանը ոչ միայն հրաժարւեց նախարարի պաշտօն գրաւելուց, այլեւ ստիպւած եղաւ ընդհանրապէս դուրս գալ ներքին գործերի նախարարութիւնից։ Օսիպեանը նրան տարաւ դատախազութիւն և նշանակեց դատախազի տեղակալի պաշտօնին։

Այսպիսի անկումից յետոյ Խ. Միութիւնում, սովորաբար, այլեւս չեն բարձրանում։ Բայց, ինչպէս տեսնում ենք, Մոսկւայի իշխանութիւնների փոխւելու հետ միասին Շահինեանը նշանակւում է ներքին գործերի նախարար։ Ինչո՞ւ։ Շատ պարզ է։ Անդրոպովի վարչութիւնը որոշել է վերջ տալ երկրում տիրող այլախոհական մթնոլորտին և բոլոր կարեւոր պաշտօններին նշանակում է Պետական Անվտանգութեան սպասարկութեան մէջ կոփւած անձնաւորութիւնների, իսկ Շահինեանը հէնց այդպիսին է։ Ժամանակին նա եղել է Պետա-

կան Անվտանգութեան սպասարկութեան անձնակազմերի բաժնի վարիչ, ապա Անվտանգութեան Կոմիտէի նախագահի տեղակալ։

Ստալինեան ժամանակների հոտ է գալիս։ Եթէ Անդրոպովի վարչակարգը երկար կեանք ունենայ, ապա կարելի է սպասել, որ Կարէն Դեմիրճեանն էլ ստիպւած կը լինի իր տեղը զիջելու, օրինակ, Հայաստանի վարչապետ Ֆադէյ - Սարգսեանին, որը անվտանգութեան ուժերի զօրավար է։

Բոլոր այս եղած և հնարաւոր փոփոխութիւնների մէջ ի՞նչ դեր է կատարում հայ ժողովուրդը։ Ոչ մէկ դեր։ Ուրեմն ինչո՞ւ պիտի Շահինեանները, Դեմիրճեանները և Սարգսեանները հաշւի նստեն մեր ժողովրդի կամքի հետ։ Սակայն եթէ գոյութիւն ունենայ ընդդիմադրութիւն, ընդդիմախօսութիւն, նրանք, գէթ որոշ չափով, ստիպւած կը լինեն հաշւի նստելու այդ ձայնի հետ։ Մոսկըւան Հայաստանի ղեկավարներին կը յայտնի իր դժգոհութիւնը, եթէ նրանք չկարողանան լռեցնել արտասահմանի հայերի ձայնը։

Եւ նոյնիսկ իրենք՝ Հայաստանի ղեկավարները կարող են օգտագործել այդ ձայնը Մոսկւայից որոշ զիջումներ «պոկելու» համար, ինչպէս արտասահմանի հայերի հաշւին «պոկել» են որոշ առաւելութիւններ Հայաստանեայց եկեղեցու համար։ Եւ ժողովուրդն էլ իրեն աւելի վստահ կը զգայ, եթէ համոզւի, որ կայ իր ազգային շահերը պաշտպանող մի ուժ։

Կարո՞ղ է արդեօք նման ընդդիմադրութիւնը վտանգել Հայաստանի ժողովրդի կացութիւնը։ Երբեք։ Նախ մեր առջեւ է ուկրաինացիների, մերձբալթեան հանրապետութիւնների և աղրբեջանցիների փորձը, որոնք արտասահմանում ունեն շատ ուժեղ հակախորհրդային տարագրութիւն, որոնք ոչ թէ ընդդիմախօսում են, այլ պարզապէս պայքարում են խորհրդային իշխանութեան դէմ։

Եւ ուկրաինացիների, լատվիացիների կամ էստոնացիների վիճակը դրանից ոչ միայն չի վատանում, այլեւ, ընդհակառակն, լաւանում է։ Ուկրաինացիներին տւեցին Ղրիմը, իսկ մերձբալթեան հանրապետութիւններում կաթողիկէներին թոյլ են տալիս, որ անմիջական կապերի մէջ մտնեն Հռոմի Պապի հետ։

Հայաստանում ապրող հայերի վիճակը, ընդհակառակն, շատ կը վատանայ, եթէ արտասահմանում ընդդիմադրութիւնը բացակայի։ Դրա համար կան առնւազն երկու պատճառներ։ Մէկը այն է, որ առանց ընդդիմադրութեան ազգը կարծես թէ անտէր լինի, իսկ միւսը, որը շատ աւելի վտանգաւոր է, կայանում է հետեւեալում.

Տեսնելով որ խորհրդային ղեկավարներին ոչ ոք չի քննադատում, որ բոլորը, թէ՛ ներսում և թէ դրսում, նրանց առջեւ որպէս թագաւորների խոնարհւում են՝ «հարազատ առաջնորդներ» կոչելով, նրանց քննադատելու գործը իրենց

վրայ կը վերցնեն հէնց Հայաստանի երիտասարդութիւնը և մտաւորականութիւնը։ Այ, սա արդէն, իսկապէս որ վտանգաւոր է։ Որեւէ հակախորհրդային տրամադրութիւն կամ, առաւել եւս, շարժում Հայաստանի ներսում կարող է ողբերգութեամբ աւարտուել։ Ղրիմի թաթարների ճակատագիրը մեզ օրինակ։ Բայց եթէ մենք այստեղից չխօսենք, եթէ լուռ մնանք բոլոր հակահայկական ելոյթների նկատմամբ, այդ բանը կ՚անեն Պարոյր Հայրիկեանները, Ռոբերտ Նազարեանները և Ստեփան Զատիկեանները սեփական կեանքի հաշւին։

Զարմանալի անբնական կացութեան մէջ է մեր ժողովուրդը։ Հայաստանում արագ թափով տարածւում են ամերիկասիրական և հակաընկերվարական տրամադրութիւններ, իսկ Սփիւռքում տարածւում է խորհրդայնասիրութիւն և հակաամերիկեան կեցւածք։ Իսկ եթէ մենք քաղաքական մտածելակերպ ու քաղաքական փորձ ունենայինք, արժէքների դասաւորութիւնը պիտի լինէր ճիշտ հակառակը, որովհետեւ այդ դէպքում միայն թէ՛ Սփիւռքը և թէ Հայրենիքը ապահով վիճակում կը լինէին։

Արդ, իմ առաջարկս ընդդիմախօսութիւն է, այլ ոչ թէ պայքար։ Եւ այդ ընդդիմախօսութեան պարտականութիւնը Սփիւռքը պիտի վերցնի իր վրայ, այլ ոչ թէ Հայաստանի ժողովուրդը, որը Հայ Դատի ուղղութեամբ ուրիշ բան ունի անելու։

Բ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆԸ

Հայաստանը և հայ ժողովուրդը կարող են իրենց այս կամ այն ձեւով ապահով լինելու մասին խօսել, եթէ այդ ապահովութիւնը իրենցից կախուած լինի։ Իսկ այսօր ոչ Հայաստանը և ոչ էլ հայ ժողովուրդը **հայկական տէր չունի**։ Սա նշանակում է, որ եթէ 65 տարի հայ ժողովուրդը չի ջարդուել ու զոհեր չի տուել, պարզապէս **պատահականութիւն** է, այլ ոչ թէ ապահով լինելու օրինաչափութիւն։ Բացի դրանից, ո՞վ ասաց, որ հայ ժողովուրդը զոհեր չի տուել ու չի ջարդուել։

1934-37 թւականներին հայերը բոլորից շատ զոհուեցին։ Պատերազմի ժամանակ հայերը տոկոսային յարաբերութեամբ ամենից շատ զոհ տուեցին։ Յիշենք օրին Երեւանում տարածւած «Կերչ՝ հայերին վերջ» ասացւածքը։ 1949 թւականին բոլորից շատ հայերը աքսորուեցին։ Իսկ եթէ պատերազմը սկսուէր, Աստւած մի արասցէ, ոչ թէ Եւրոպայից, այլ, օրինակ, թուրքական սահմանից, մենք նորից պիտի ցեղասպանութեան ենթարկուէինք։ Բայց մեծ պետութիւնների հաշւարկով պատերազմը սկսւեց Եւրոպայից և մեր փոխարէն ջարդուեցին լեհերը և ուկրաինացիները։ Ո՞վ նրանց պաշտպանեց։ Չէ՞ որ պատերազմից

առաջ ուկրաինացիներն էլ իրենց խորհրդային բանակի պաշտպանութեան տակ էին զգում։

Եւ, ընդհանրապէս, ինչպէ՞ս կարելի է խօսել ապահովութեան մասին, երբ դու տէրը չես քո ճակատագրի։ Պաղեստինցիներն էլ շատ ապահով էին իրենց զգում Մոսկւայի թեւերի տակ։ Բայց մենք տեսնում ենք, թէ ինչպէս լքում է իր բարեկամներին այդ Մոսկւան, երբ իր շահը ուրիշ բան է պահանջում։ Փոքր Չինաստանն էլ (Ֆորմոզա-Թայւան) իրեն շատ ապահով էր զգում Միացեալ Նահանգների թեւերի տակ այնքան ժամանակ, քանի դեռ ամերիկացիները հակադրւած էին մեծ Չինաստանին։ Հապա ինչո՞ւ Մ. Նահանգները լքեցին իրենց հաւատարիմ բարեկամին։ Շատ պարզ է, որովհետեւ բոլոր օտար տէրերը այնքանով են տիրութիւն անում, որքանով որ այդ տիրութիւնը համընկնում է սեփական շահերի հետ։

Ուրեմն, ի՞նչպէս մենք կարող ենք մեզ ապահով զգալ, եթէ մենք չենք մեր ճակատագրի տէրը։ Ճիշտ է, 65 տարի մեր հողի վրայ պատերազմ չի եղել, բայց մի՞թէ դա մեր տէրերի շնորհին է։ Փաստ է, օրինակ, որ Երկրորդ Համաշխարհային պատերազմի ժամանակ խորհրդա-թուրքական սահմանում ռուսական մէկ հատիկ հրասայլ չկար և Հայաստանի սահմանը գրեթէ բաց էր։ Ամբողջ զօրքերը տեղափոխւած էին Խ. Միութեան եւրոպական մասը։ Եւ եթէ Ստալինգրադում խորհրդային զօրքերը պարտութիւն կրէին, թուրքերը առանց մէկ փամփուշտ արձակելու ապահով մտնելու էին Հայաստան։

Կարելի է ենթադրել, որ այս հաշւով անտէր են խորհրդային բոլոր հանրապետութիւնները, ուրեմն, ինչո՞ւ խօսել միայն Հայաստանի մասին առանձին։ Բայց դա այդպէս չէ։ Մեր հարեւան վրացիները տէր ունեն, որն է իրենց ազգային մտաւորականութիւնը։ Երբ վտանգւում են, օրինակ, վրաց ազգային շահերը, մէկ գիշերւայ մէջ հաւաքւում են 30-40 ակադեմիկոսների ու դերասանների ստորագրութիւններ հակազգային որեւէ որոշման դէմ։ Այդ մենք նրանց ենք պարտական, որ նոր Սահմանադրութեան մէջ վերականգնւեց ազգային լեզուն պետական լեզու ճանաչելու կէտը։

Ադրբեջանցիներին բացայայտ տիրութիւն է անում Թուրքիան և ամբողջ մահմեդական աշխարհը։ Իրենք՝ թուրքերը գտնւում են թուրք զինւորականութեան պաշտպանութեան տակ, որոնք ամէն անգամ գալիս են իշխանութեան գլուխ, երբ զգում են, որ ժողովրդավարական ազատութիւնները կարող են վտանգել թուրքերի ազգային ու պետական շահերը։

Մենք էլ ժամանակին ունէինք տէր։ Նոյնիսկ գերութեան մեր վերջին վեց դարերին՝ մեր Եկեղեցին էր, որ մեզ տիրութիւն էր անում։ Ազգային ազատագրական շարժումների ծնունդի հետ միասին ազգին տիրութիւն անելու պար-

տականութիւնը իր վրայ վերցրին հայ յեղափոխականները, յանձինս Հ.Յ.Դաշնակցութեան, որը իր տիրութիւնը հասցրեց մինչեւ անկախ Հայաստան։

Սակայն Հայաստանի խորհրդայնացումից յետոյ, ի տարբերութիւն վրացիների, հայ բոլշեւիկները ոչ միայն չվերցրին Դաշնակցութեան ձեռքից ազգային արժէքների պաշտպանութեան ջահը, այլեւ պապից պապական **«ինտերնացիոնալիստ»**ներ դառնալով, ոչնչացրին ամէն մի հայ արժէք՝ եկեղեցի, Րաֆֆի, Չարենց, Բակունց, Վարդան Մամիկոնեան և այլն։ Եւ այսօրւայ վիճակով եւս հայ ժողովուրդը տէր չունի։ Եկեղեցին և Հայաստանի ղեկավարութիւնը այնպիսի խղճուկ վիճակում են, որ մէկը պէտք է, որ նրանց տիրութիւն անի։ Եկեղեցին իր տէրը գտել է, դա արտասահմանի հայութիւնն է, իսկ կառավարութիւնը Մոսկւայի բացարձակ ստրուկն է։

Տեսնենք թէ այս վիճակում որքանով է ապահով մեր ժողովուրդը խաղաղ պայմաններում և որքանով ապահոված կը լինի նա, եթէ, Աստւած չանի, պատերազմ ծագի։

Խ. Հայաստանի հողային տարածութիւնը անվերապահօրէն տնօրինւում և օգտագործւում է խորհրդա-ռուսական վարչակարգի կողմից ռազմական, քաղաքական և տնտեսական նկատառումներով, մինչդեռ հայ ժողովուրդը հնարաւորութիւն չունի պարզ տեղեկութիւններ անգամ ստանալու այդ տնօրինումի նպատակների և մանաւանդ հնարաւոր հետեւանքների մասին։ Ինքնուրոյն ազգային տնօրինութիւնից զրկւած են Խ. Հայաստանի տնտեսական, կրթական, գիտական, մշակութային և այլ կենսական բնագաւառները։ Խ. Հայաստանի մէջ վերջին 30 տարիներին գոյութիւն ունի բնակչութեան ներքին և արտաքին հոսք. այսպէս.

ա) Հայաստանի որոշ շրջաններից, մասնաւորապէս Ադրբեջանի և Թուրքիոյ սահմանից՝ Սիսիան, Գորիս, Ղափան, Մեղրի, Ազիզբեկով, Ամասիա շրջաններից հայ բնակչութիւնը տեղափոխւում է քաղաքներ և այդ շրջաններում բնակչութեան կէսից աւելին արդէն ադրբեջանցիներ են։

բ) Խ. Հայաստանի քաղաքները գալիս են հայեր Խ. Միութեան տարբեր քաղաքներից, մասնաւորապէս Լէռնային և Դաշտային Ղարաբաղից, Գանձակից, Ախալքալաքից և Կովկասի այլ վայրերից մօտաւորապէս 10,000 հայ տարեկան։ Իսկ արտասահմանից ներգաղթող հայերի թիւը վերջին տարիների ընթացքում իջել է զրոյի։

գ) Խ. Հայաստանից վերջին 30 տարիներին տեղի ունեցաւ արտագաղթ, որը առանձնապէս աւելացաւ վերջին 15 տարիներին հետեւեալ ուղղութիւններով.

- Մշտական բնակութեան համար դէպի արտաքին Սփիւռք՝ մօտաւորապէս 1000 հոգի տարեկան։

- Մշտական բնակութիւն հաստատելու համար Ռուսաստանում և Խ. Միութեան այլ վայրերում՝ մօտաւորապէս 30,000 մարդ տարեկան։

- Եղանակային արտագաղթ, 4-5 ամսով աշխատելու և վերադառնալու նպատակով՝ 40-50 հազար մարդ տարեկան։ Սրանց 10-15 տոկոսը այլեւս չի վերադառնում, մնալով Խորհրդային Սփիւռքում, որը ընդհանրապէս զրկւած է ազգային կեանք վարելու նւազագոյն հնարաւորութիւնից։ Նրանք ի վիճակի չեն ստանալու նոյնիսկ **«Հայրենիքի ձայն»** թերթը, որը արտասահմանի համար է։

Օրինակ՝ Ադրբեջանի մայրաքաղաք Բաքւում ապրում են 300,000 հայեր, բայց նրանք չունեն ոչ մէկ հայկական դպրոց։ Վերջին դպրոցը փակւեց 15 տարի առաջ։ Արդէն 40 տարի է, ինչ Բաքւի հայերը չունեն ոչ մէկ մշակութային, մարզական կամ էլ ակմբային միաւոր։

Այս կացութիւնը տիրում է նաեւ Բաթումում, որտեղ ապրում են 15-18 հազար հայեր, Արմաւիրում՝ 50-60 հազար, Կրասնոդարում՝ 80-100 հազար, Ռոստովում՝ 80-100 հազար, Մոսկւայում՝ 150-200 հազար, Խարկովում՝ 10-15 հազար, Օրջոնիկիձէում՝ 25-30 հազար, Տաշկենտում՝ 25-30 հազար, Սամարղանդում՝ 10-15 հազար, Աշխաբադում՝ 20-25 հազար և ընդհանրապէս ամբողջ Խորհրդային Սփիւռքում, որտեղ ապրում են շուրջ 2 միլիոն հայեր։

Արտագաղթի այս հոսքը անընդհատ փոփոխութիւն է մտցնում Կովկասի և մասնաւորապէս Լեռնային և Դաշտային Ղարաբաղների, Նախիջեւանի և Ախալքալաքի ազգագրական վիճակի մէջ։ Հայութեան տոկոսային յարաբերութիւնը պակասում է այդ շրջաններում։ Այժմ զրոյի է հասցւած արտաքին Սփիւռք արտագաղթելու հոսքը, սակայն այդ եղել է ոչ թէ մեր, այլ Մոսկւայի ցանկութեամբ և եթէ վաղը Մոսկւան կրկին բացի Խ. Միութեան դռները, հոսքը կը շարունակւի, որովհետեւ արտագաղթի հազարաւոր դիմումներ են կուտակւել Անվտանգութեան Մարմնի համապատասխան բաժնում։

Խ. Հայաստանի քաղաքային և գիւղական բնակչութիւնը զգալի արագութեամբ թեքւում է դէպի արեւմտեան մշակոյթը, մասնաւորապէս ձեռք է բերում ռուսական հոգեբանութիւն։ Նկատւում է ազգային և մարդկային արժէքների արժեզրկում և կորուստ։ Տեղի է ունենում ազգային նկարագրի և ազգային գիտակցութեան այլասերում։ Այս ընթացքի դէմ Հայաստանի ազգային տարրերի դիմադրութիւնը այնքան թոյլ է, որ կարելի է ասել, թէ այդ դիմադրութիւնը ընդհանրապէս բացակայում է։

Խ. Հայաստանի կշիռը Խ. Միութեան մէջ կախւած է ոչ թէ Խ. Միութեան Սահմանադրութիւնից, այլ հետեւեալ հանգամանքներից.

ա) Միջազգային կացութիւնից և Մոսկւայի կողմից որդեգրւած արտաքին ու ներքին քաղաքականութիւնից։

բ) Հայաստանի քաղաքական և տնտեսական արժէքներից իր հարեւաններին համեմատութեամբ: Հայ ժողովրդի դիրքից, հնարաւորութիւններից և ազդեցութիւններից միջազգային կեանքի վրայ, մանաւանդ այն մարզերի մէջ, որոնք Մոսկւայի համար ցաւոտ են:

Այս իմաստով Խ. Հայաստանի գործնական ու քաղաքական կշիռը շատ աւելի ցածր է, քան կարող էր լինել:

Խ. Հայաստանի ղեկավարութիւնը Մոսկւայի առջեւ քաղաքական որեւէ նախաձեռնութիւն ցուցաբերելու ոչ միջոց և ոչ էլ տրամադրութիւն ունի: Այս ղեկավարութիւնը այժմ երկու բան է օգտագործում Մոսկւայի առջեւ՝ միայն ու միայն իր դիրքերը պաշտպանելու համար: Առաջինը կաշառքն է, որը տրւում է Մոսկւայի պաշտօնեաներին տարբեր ձեւերի տակ, և յատուկ ծառայութիւնները, որոնք կատարւում են կենտրոնական իշխանութեան միջին օղակների համար:

Այս միջոցները կարող էին օգտակար լինել նաեւ ազգային բնագաւառում, ինչպէս անում են մի շարք այլ հանրապետութիւններ: Սակայն, դժբախտաբար, այդ միջոցները օգտագործւում են որոշակի խմբերի կողմից իրենց ապօրինի եկամուտները քօղարկելու համար: Այս հանգամանքը արագացնում է Խ. Հայաստանի քաղաքական լճացումը և հասարակական կեանքի նեխումը:

Երկրորդ միջոցը Սփիւռքի գոյութեան օգտագործումն է: Խ. Հայաստանի ղեկավարութիւնը Հայկական Սփիւռքը ներկայացնում է որպէս մի բարդութիւն, որը, ի տարբերութիւն ուրիշ հանրապետութիւնների, յաւելեալ դժւարութիւններ է առաջացնում և իրենից յաւելեալ ճիգեր է պահանջում: Այս ճանապարհը օգտակար էր և 1960ական թւականներին Սփիւռքի գոյութեան փաստը օգտագործւեց Մոսկւայից որոշ զիջումներ ձեռք բերելու համար ազգային իմաստով: Սակայն այժմ այդ ընթացքը սկսել է և որպէս մեծագոյն յաղթանակ Մոսկւային զեկուցւում է թէ Սփիւռքը ամբողջովին խորհրդային ղեկավարների գրպանումն է:

Այս կացութիւնը, որը որոշ իմաստով համապատասխանում է իրականութեանը, շատ լաւ ձեւով օգտագործւում է Մոսկւայի կողմից, բայց ոչ թէ հայերի հետ քաղաքական առեւտուր վարելու ճանապարհով, այլ Սփիւռքը Խ. Հայաստանի մի տեսակ շարունակութիւն ճանաչելով և նրանից օգտւելով:

Խ. Հայաստանը ռազմականացած երկիր է: Որպէս Խ. Միութեան սահմանային շրջան, նրա ռազմականացւածութիւնը շատ բնական է: Սակայն գոյութիւն ունի մէկ այլ փաստ, որը ազգային պետական հեռանկարի իմաստով կարող է ճակատագրական նշանակութիւն ունենալ: Դա այն է, որ Խ. Հայաստանի տարածութեան վրայ Արարատեան դաշտավայրի մօտ տեղաւորւած են միջուկային հրթիռներ: Սրանք միջին ու հեռաւոր շառաւիղի հրթիռներ են, ո-

րոնց մասին այսօր խօսում է ամբողջ աշխարհը ամերիկա-խորհրդային բանակցութիւնների առիթով:

Այս վէճերի ու կռիւների մէջ յիշատակւում է Եւրոպան, բայց Հայաստանի մասին խօսող չկայ: Այսպիսով սակայն Հայաստանը, մեր ապահով Հայաստանը դարձել է պատասխան հարւածի թիրախ: Պատերազմի դէպքում հրթիռա-միջուկային առաջին հարւածը կարող է ուտել Հայաստանը և այլեւս ոչ մէկ պատահականութիւն չի փրկի հայերին: Խ. Միութեան զինւած ուժերի ռազմավարութեան մէջ Հայաստանը հանդիսանում է Միութեան կենսական և կարեւոր շրջաններից հեռու գտնւող գօտի, որի համար նախատեսւած է առաջին հարւած ստանալու «մեծ պատիւը»: Կարմիր բանակի համար Հայաստանը պարզապէս ռազմական առաջին գօտու լեռնային մի ծայրամաս է, որի վրայ պատերազմի ժամանակ պարզապէս խաչ է քաշւելու:

Եւ այստեղ հարց է ծագում: Ինչո՞ւ այդպէս չի մտածւում, օրինակ, Վրաստանի տարածութեան մասին, էլ չխօսենք Ադրբեջանի, Լենինգրադի և մերձբալթեան հանրապետութիւնների մասին, որոնք միջին շառաւիղի հրթիռների համար շատ աւելի յարմար վայրեր են: Բանը նրանումն է, որ Անդրկովկասի ռազմական ուժերի հրամանատարութիւնը և սպայակոյտի ղեկավարութիւնը գտնւում են Թիֆլիսում: Չնայած, որ այդ հրամանատարութիւնը ուղղակիօրէն Մոսկւային է ենթարկւում, բայց կուսակցական և այլ գծով նրանք սերտ կապերի մէջ են Վրաստանի ղեկավարութեան հետ:

Բացի դրանից, վրացի բարձրաստիճան սպաներ կարեւոր դիրքեր են բռնել այդ հրամանատարութեան մէջ և նրանք կատարում են իրենց դերը Վրաստանի ազգային շահերը պաշտպանելու գործում: Իսկ մենք, որ ժամանակին Մոսկւայում ունէինք Միկոյեաններ, Բաբաջանեաններ և Բաղրամեաններ, ոչինչ չարեցինք նրանց հեղինակութիւնը հայ ժողովրդի շահերի համար օգտագործելու ուղղութեամբ: Ահաւասիկ, սա է մեր ապահով վիճակը և սրա համար է, որ մենք ուրախութեան սեղաններից վեր չենք կենում:

Մտահոգւելու բան չկայ,- ասում են մեզ,- կեանքը երջանիկ է և Կարմիր բանակի հսկողութեան տակ է: Բայց, ներեցէք, մի՞թէ Մեծ Եղեռնից առաջ ուտելխմելու իմաստով շատ վատն էր կացութիւնը Թուրքիայում, յատկապէս մերձծովեան շրջաններում: Հայերի դաշտերը լեցուն էին անասունով, պահեստները գինով ու **ղաւուրմա**յով, քսակներն էլ՝ ոսկով: Այն ժամանակ էլ հային տեսնողը նախանձում էր, որովհետեւ չգիտէր, որ այդ խեղճ հայը ոչնչով պաշտպանւած չէ: Ուրեմն այսօր էլ, սեղանների կոնեակները հաշւելու փոխարէն, եկէք տեսնենք, թէ արդեօք իրապէս պաշտպանւա՞ծ են հայը և նրա ազգային արժէքները այսօրւայ թէ վաղւայ հաշւին: Բայց այդ բանը տեսնելու համար

Հայաստանը ճանաչել է պէտք, իսկ այդ բանը, կարծէք, ոչ ոքի չի հետաքրքրում, դէ արի ու լռի։

ԻՄ «ԱՅԼԱԽՈՀՈՒԹԻՒՆԸ»

Այս հարցում պատասխանս շատ կարճ է։ Իմ յօդուածներում և հրապարակային ելոյթներում չկայ ոչ մէկ շեղում Հ.Յ.Դաշնակցութեան 22րդ Ընդհանուր Ժողովի որոշումներից։ Իմ առաջարկած ընդդիմադրութիւնը բխում է 22րդ Ընդհանուր Ժողովի հետեւեալ որոշումից.

«Դաշնակցութիւնը զօրավիգ կը կանգնի Հայաստանի ժողովրդին և յարատեւ պայքար կը տանի ամոր հողային, քաղաքական, ընկերային և մարդկային իրաւունքներու լրիւ իրականացման պահանջով։ Առանց վտանգելու հայրենաբնակ ժողովուրդի շահերը և առ այդ՝ հետու մնալով վարչակարգին դէմ ՈՒՂՂԱԿԻ (ընդգծումները իմն են) պայքար մղելու ռազմավարութենէն, ան տրամադրելի բոլոր միջոցներով ԿԸ ՀԱԿԱԶԴԷ այն բոլոր երեւոյթներուն ու քայլերուն, որոնք նպաստաւոր չեն Հայաստանի ժողովուրդին և համահայկական գերագոյն շահերուն։ Սակայն խորհրդային վարչակարգին դէմ ուղղակի պայքար չմղելու որոշումը պէտք չէ հասկցուի իբրեւ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ և գաղափարա-քաղաքական ԸՆԴՀԻՄԱՆԻՐ կեցուածքի տկարացում՝ խորհրդային կարգերու կամ Խ. Հայաստանի իրականութեան բացասական երեւոյթներուն ու իրադարձութիւններուն նկատմամբ»։

Իսկ ընկերվարութեան վերաբերեալ իմ քննադատութիւնները բխում են 22րդ Ընդհանուր Ժողովի հետեւեալ որոշումից.

«Մերժելի է յատկապէս Հ.Յ.Դ. Ծրագրով սահմանուած դաշնակցական ընկերվարութեան աղաւաղման կամ զայն այս կամ այն քարացած վարդապետութեան կապելու ամէն ձեւի փորձ»։

1983

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՍՈՒՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Է. Յովհաննիսեան

Ճիշտ այնպէս, ինչպէս մարդիկ ու կենդանիները ունեն իրենց հասունութեան ժամանակաշրջանը, ճիշտ այդպէս էլ ազգերը հասունանալու համար պիտի անցնեն որոշ պատմական ժամանակաշրջան, որը որոշւում է ոչ թէ այդ ժամանակի տեւողութեամբ, այլ նաեւ բովանդակութեամբ: Ճիշտ են եւրոպացիները, երբ, այն դիտողութեանը, թէ դուք ծառերի վրայ էիք, երբ մենք քաղաքակրթութիւն ունէինք, պատասխանում են, որ մենք վաղուց ծառերից իջել ենք, իսկ դուք կրկին ծառերն էք բարձրացել:

Մարդիկ հասունացած են համարւում, երբ ի վիճակի են ընտանիք կազմելու և այդ ընտանիքի գոյութիւն ապահովելու: Իսկ ազգը հասունացած է համարւում, երբ ի վիճակի է ինքնիշխան պետականութիւն ստեղծելու և ապահովելու այդ պետականութեան գոյութիւնը: Շատ ժողովուրդներ անհետացան աշխարհի երեսից, որովհետեւ չունեցան այդ հասունութիւնը: Ուրիշներին էլ թւաց թէ իրենք հասունացել են անկախութեան համար, բայց անկախութիւնը ձեռք բերելուց յետոյ պարզւեց, որ հասունացած չէին ու նրանք մնացին կախւած իրենց հին տէրերից:

Ինքնիշխանութեան համար հասունութիւնը տարածւում է առնուազն չորս բնագաւառների վրայ: Հոգեբանական, քաղաքական, յեղափոխական և տնտեսական:

Հոգեբանական հասունութիւնը մեզ տալիս է այն գիտակցութիւնը, որ իմ անձի, իմ ընտանիքի և իմ ազգի գոյութեան համար անհրաժեշտ է ենթարկւել աւելի բարձր կանգնած ու աւելի կարեւոր մի կազմակերպութեան կարգադրութիւններին, անկախ նրանից՝ համաձա՞յն եմ ես նրանց հետ թէ ոչ: Հոգեբանական հասունութիւնից ծնւում է պետական մտածելակերպը, որը արդարացնում է մեր ազատութեան կամաւոր սահմանափակումը: Առանց այս հոգեբանական հասունութեան՝ ոչ ոք կարող է անդամ դառնալ ոեւէ պետութեան, ոեւէ կուսակցութեան, ոեւէ շարժման կամ ընտանիքի:

Նրանք, ովքեր ասում են թէ պատրաստ են ծառայելու ազգին, բայց անհատական, այլ ոչ կուսակցական ճամբով, թող ոչ մեզ, ոչ էլ իրենց խաբեն: Այդ ազատասէր մարդիկ թող գնան «Հայդ Պարկերում» թիթեռնիկների պէս այնքան թռչտան՝ մինչեւ որ գան հոգեբանական հասունութեան: Իսկ եթէ չեն գայ, թող գրկեն իրենց ազատութիւնը ու նստեն իրենց տներում, նրանք ոչ մէկ օգուտ

կարող են բերել մեր ժողովրդին։ Քաղաքական հասունութիւնը տալիս է մեզ այնպիսի քաղաքականութիւն մշակելու ու վարելու հնարաւորութիւն, որը

ա) բխում է մեր ժողովրդի կենսական պահանջներից

բ) կառուցւում ու կիրառւում է այն հաշւով, որ հնարաւոր նուազագոյն ժամանակաշրջանում և նուազագոյն ներդրումներով տայ առաւելագոյն արդիւնքը

գ) նախատեսում է ամէն տեսակի անակնկալներ և անբարենպաստ պայմաններում դուրս է բերում ազգը նուազագոյն կորուստներով, իսկ բարենպաստ պայմաններում՝ առաւելագոյն օգուտներով։

Յեղափոխական հասունութիւնը թոյլ է տալիս մեզ նախ ձեռք բերել անկախութիւն, ապա պաշտպանել այդ անկախութիւնը։ Իսկ տնտեսական հասունութիւնը թոյլ է տալիս սնել ժողովուրդը և ապահովել նրա տնտեսական անկախութիւնը։

Եթէ ես որեւէ տեղ նշել եմ, որ մեր ժողովուրդը պատրաստ չէ անկախութեան, ապա սխալ եմ ասել։ Հաւանաբար միտքս պարզելու համար աւելի խիստ եմ մօտեցել հարցին։ Եւ ցանկացել եմ ասել, որ մենք շատ վատ ենք պատրաստւում մեր անկախութեանը և, եթէ այսօր անկախութիւն ձեռք բերելու համար ստեղծուեն պայմաններ, կարող է այնպէս պատահել, որ մենք մեծ կորուստներով դուրս գանք այդ ցնցումից։ Տեսնենք թէ ինչու։

Այն, ինչ ես անւանում եմ հոգեբանական հասունութիւն կամ պետական մտածելակերպ, ամբողջ հայ իրականութեան մէջ գոյութիւն ունի միայն Հ. Յ. Դաշնակցութեան շարքերում։ Ոչ մէկ ուրիշ տեղ, ներառեալ Հայաստանում, կամաւոր ենթարկւելու հոգեբանութիւն գոյութիւն չունի։ Խօսքը կամաւոր ենթարկւածութեան, այլ ոչ թէ բռնի ուժով ենթարկւելու մասին է։ Այն ենթարկւածութիւնը, որը գոյութիւն ունի Խորհրդային Հայաստանի պետական և կուսակցական շրջանակներում, հիմնւած է ոչ թէ պետական, այլ վախի հոգեբանութեան վրայ։ Ստրուկներն էլ առանց որեւէ հասարակական ինքնագիտակցութեան ենթարկւում էին իրենց տէրերին։ Նրանք, ովքեր յաղթահարել են վախի հոգեբանութիւնը, ձախից ու աջից այնպէս են խախտում խորհրդային օրէնքները, այնպէս են ընդդիմանում վերին մարմինների կարգադրութիւններին, որ քայքայելու աստիճանի ցնցում է խորհրդային վարչակարգը։

Ո՛չ այս անիշխանութիւնը և ոչ էլ վախից ենթարկւելը կապ ունեն հոգեբանական հասունութեան հետ։ Բոլոր այն բնագաւառներում, օրինակ, որտեղ կարելի էր հայկական խնդիրների վերաբերեալ պետական մօտեցում ցուցաբերել, առանց պետական ճնշումների, չի արւում։ Մեփական զաւակներին հայկական դպրոց ուղարկելու, Ղարաբաղից և Ախալքալակից եկած ուսանողների նկատմամբ յատուկ վերաբերմունք ցուցաբերելու, Բաքւից, Թիֆլիսից և Կրասնոդարից Հայաստան ձգտող հայերի գրանցումը հեշտացնելու, Մոս-

կըւայի մեծ պաշտօններ գրաւող հայերին սիրաշահելու, հայ զինակոչիկներին Հայաստանում կամ Անդրկովկասում պահելու և շատ ուրիշ հարցերում կարելի էր պետական մօտեցում ցուցաբերել, առանց ռուսերին վրդովեցնելու, բայց չի արւում։

Բոլոր այս հարցերը պէտք է լուծւէին ապագայ անկախ Հայաստանի շահերից ելնելով, բայց չի արւում՝ հոգեբանական հասունութեան պակասի բերումով։ Իսկ հայրենասիրութիւնը, ինչպէս ճիշտ նկատեց մէկ առիթով Սիլվա Կապուտիկեանը, սահմանափակւում է բաժակաճառերի ու հայրենասիրական երգեր երգելու ոլորտով։

Մեր քաղաքական հասունութեան մասին, որը կապ ունի քաղաքական դաշնակիցներ որոնելու, սեփական ուժերը ճանաչելու, դրանք տնտեսելու և ըստ դրանց նպատակներ ձեւակերպելու, քաղաքական օրինաչափութիւնները հասկանալու և քաղաքականութիւնը բարոյականութիւնից տարբերելու հետ, ես արդէն բազմիցս խօսել եմ, ուստի չեմ կրկնի։ Կ'ասեմ միայն մէկ բան. եթէ մենք քաղաքական հասունութիւն ունենայինք և նախօրօք պատրաստւէինք Ստալինի մահւանը, Ղարաբաղը այսօր մերը կը լինէր։ Բայց մենք Ստալինի մահւան մասին մտածել անգամ չէինք փորձում, կարծես թէ անմահ լինէր։ Այսօր էլ մենք մտածել անգամ չենք ուզում, որ խորհրդային իշխանութիւնը ի վերջոյ կարող է տապալւել մի օր՝ ներքին թէ արտաքին այլազան պատճառներով։ Վերջին հաշւով վարչակարգերը փոփոխական են։

Խրուշչովը Ղարաբաղը Հայաստանին կցելու որոշ նշաններ ցուցաբերեց, բայց համապատասխան քաղաքական հասունութիւնը չունեցանք և փոխանակ Ղարաբաղի Հայաստանին կցումը Մոսկւային ներկայացնելու որպէս Խ. Միութեան շահերին համապատասխան մի քայլ (որ հէնց այդպէս է), մենք սկսեցինք խօսել հայ ժողովրդի զգացմունքներից, Լենինի ու Նարիմանովի խոստումներից և մեր պատմական իրաւունքից, որոնք ոչ մէկ նշանակութիւն կարող էին ունենալ քաղաքական այդ հարցում։ Մի խօսքով, մենք, ինչպէս միշտ, խօսում էինք բարոյական սկզբունքներից ելնելով, որոնք քաղաքականութեան մէջ երրորդական տեղ են գրաւում։

Իսկ աղրբէջանի ղեկավար Ախունդովը գայլ դիւանագէտի նման հասկացնում էր Խրուշչովին մօտաւորապէս հետեւեալը. «Ոչ մէկ նշանակութիւն ունի, թէ ո՞ր խորհրդային հանրապետութեան մէջ կը լինի Ղարաբաղը։ Բոլորս էլ հաւասար ենք, բայց Հայաստանում սկսել են գլուխ բարձրացնել ազգայնականները, որոնք սնւում են արտասահմանից, մեր ոխերիմ թշնամիների կողմից։ Ղարաբաղի կցումը Հայաստանին կարող է նրանց հաշւին որպէս յաղթանակ արձանագրւել։ Սա վատ ազդեցութիւն կարող է թողնել նաեւ ուրիշ հանրապետութիւնների վրայ։ Առանց այն էլ Վրաստանում արդէն գլուխ են բարձ-

րացրել աբխազները։ Ադրբեջանի համար ոչ մէկ նշանակութիւն ունի Ղարաբաղը, նոյնիսկ լաւ կը լինէր մեզանից տանել այդ աւելորդ գլխացաւանքը և, եթէ ուզում էք, տուէք մեր հարեւան եղբայրներին, բայց Խ. Միութեան պետական շահերը կը տուժեն»։

Եւ Խրուշչովը, բնականաբար, Խ. Միութեան պետական շահերը գերադասեց հայ ժողովրդի զգացմունքներից ու պատմական իրաւունքներից։ Եթէ այդ գործօնների հետ Խրուշչովը հաշւի նստէր, վաղն էլ հայերը, իրենց զգացմունքներից ու պատմական իրաւունքներից ելնելով, կ՚ուզենային դուրս գալ Խ. Միութեան կազմից։

Բաւական էր այն ժամանակ կենդանի Միկոյեանի միջոցով, որի շնորհիւ Խրուշչովը եկել էր իշխանութեան գլուխ, Բաբաջանեանի ու Բաղրամեանի օգնութեամբ, որոնք կարեւորագոյն տեղեր էին գրաւում պաշտպանութեան նախարարութեան մէջ, Խրուշչովին հասկացնէին, որ Խ. Միութեան պաշտպանութեան շահերը պահանջում են, որ Ղարաբաղը և արտասահմանի հետ սահման ունեցող Նախիջեւանը մահմեդականներից անցնի հաւատարիմ հայերի ձեռքը, Ղարաբաղը կարող էր այսօր Հայաստանի մէջ լինել։ Հէնց այդ նկատառումներով էլ Ղրիմը խլեց թաթարներից և կցեց Ուկրաինային։

Մեր յեղափոխական հասունութիւնը կապ ունի այն բանի հետ, թէ կա՞յ արդեօք այն ուժը, որը ճգնաժամային պահին կարողանայ իր ձեռքը վերցնել երկրի իշխանութիւնը և հայ ժողովուրդի ճակատագիրը։ Կա՞յ արդեօք այն ուժը, որ ճգնաժամին զէնքով ու խելքով պաշտպանի հայկական շահերը։ Ոչ, այդ ուժը չկայ։

Ենթադրենք, թէ յաջորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, որը կարող է սկսւել վաղը, Խ. Միութիւնը ռազմական պարտութիւն է կրել և դրա հետեւանքով կորցրել է իր ազդեցութիւնը Անդրկովկասի վրայ։ Իսկ Թուրքիան յաղթողների շարքումն է։ Կամ ենթադրենք, թէ Խ. Միութիւնում յեղաշրջում է տեղի ունեցել և իշխանութեան գլուխ են անցել խորհրդային վարչակարգին ընդդիմադիր ուժեր։ Եւ կամ էլ ենթադրենք, որ Խ. Միութիւնը յաղթական է դուրս եկել պատերազմից և իր ազդեցութիւնը տարածել է Մերձաւոր Արեւելքի, Թուրքիոյ և այլ երկրների վրայ։ Ի՞նչ պէտք է անենք մենք։ Ո՞վ կարող է պատասխանել այս հարցին։

Ես համոզուած եմ, որ մենք նոյնիսկ չգիտենք, թէ ովքեր են Ռուսաստանի այն ընդդիմադիր ուժերը, որոնք կարող են գալ իշխանութեան գլուխ։ Բայց միայն այս խոշոր ռազմավարական խնդիրների մասին չէ խօսքը։ Մենք շատ հեռու ենք աւելի փոքր խնդիրներից։ Ո՞վ կարող է, օրինակ, ասել թէ ինչպէս պէտք է մենք հարկ եղած դէպքում պաշտպանենք Ղարաբաղի հայութիւնը։ Հայաստանի հայութիւնը ոչ մէկ կապ չունի Ղարաբաղի հետ։

1965 թւականին, երբ Երեւանում տեղի ունեցաւ Մեծ Եղեռնի ցոյցը, լուրը անմիջապէս հասաւ Զանգեզուր և այնտեղի ադրբեջանցիները, որոնք գրեթէ բոլորն էլ զէնք ունեն, անմիջապէս բարձրացան սարերը և բռնեցին նախօրօք պատրաստած դիրքեր պաշտպանուելու համար: Իսկ մենք այնքան անպատրաստ ենք նման բախումների, որ ճգնաժամային պահին մեր սեփական երկրի մէջ կը ջարդուենք մահմեդականների կողմից, իսկ մինչեւ որ խելքի գանք, նրանց օգնութեան կը հասնեն թուրքերը և ադրբեջանցիները:

Այստեղ կարելի էր շատ խօսել թէ ինչ պէտք է մենք անէինք մեր յեղափոխական հասունութեան համար, բայց նախ այս հարցը լուրջ ուսումնասիրութեան կարօտ է և յետոյ մամուլի համար չէ: Միայն մէկ բան կարող եմ ասել, որ եթէ մեր Հայաստանի հայրենասէր երիտասարդները այդ հարցերով զբաղուէին դասական այլախոհութեան փոխարէն, շատ աւելի լաւ կը լինէր:

Եւ, վերջապէս, տնտեսական հասունութիւն նշանակում է, որ Հանրապետութեան ամբողջ տնտեսութիւնը պէտք է կարելիութեան սահմաններում կառուցի ապագայ անկախ Հայաստանի շահերից ելնելով: Հանրապետութեան ամբողջ արդիւնաբերութիւնը պիտի լինի այնպէս, որ անկախութիւն ձեռք բերելուց յետոյ այդ արդիւնաբերութեան արտադրանքը կարճ ժամանակում կարողանայ դուրս գալ միջազգային շուկայ: Բայց Հայաստանի այսօրուայ արդիւնաբերութիւնը յարմարեցւած է ռուսական շուկային, որը ամէն ինչ կլանում է և բառիս բուն իմաստով շուկայ չի կարող կոչւել: Անկախութիւն ձեռք բերելուց յետոյ Հայաստանում, բացի հաշւիչ մեքենաների արդիւնաբերութիւնից և ճշգրիտ գործիքների արտադրութիւնից, ամէն ինչ սկսւելու է նորից:

Ինձ կարող են ասել, որ բոլոր հանրապետութիւնները այս նոյն վիճակի մէջ են: Բայց դա մեր տգիտութիւնից բխող դիտողութիւն է: Վրաստանը և Ադրբեջանը այդպէս չեն ոչ մէկ հարցում: Սկսած նրանից, որ ոչ մէկ վրացի ռուսական դպրոց չի յաճախում և վերջացրած նրանով, որ Վրաստանը բոլոր օրինական և անօրինական միջոցներով խուսափում է քիմիական արդիւնաբերութիւնից, ապացուցում են մեզ, որ վրացիների պետական մտածելակերպը մեզնից անհամեմատ բարձր է:

Եթէ մեր նպատակը իսկապէս Միացեալ, Անկախ ու Ազատ Հայաստան է, մենք պէտք է անենք այն ամէնը, ինչից ծնւում է ինքնիշխանութեան հասունութիւնը:

1984

ԻՆՉՊԷ՛Ս ՍԱՀՄԱՆԵԼ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Է. Յովհաննիսեան

Ազգային-ազատագրական շարժումներին որեւէ սահմանում տալու համար, պէտք է նախ ճշտել, թէ ո՞ր ազգի մասին է խօսքը և ի՞նչից է ուզում ազատուել այդ ազգը:

Ամէն մի ազգ ունի իր սեփական կարողութիւնները որեւէ բանից ազատուելու համար, ուստի ազգային-ազատագրական պայքարները տարբերւում են մէկը միւսից: Անկախութեան ձեռք բերումը ոչ միակ և ոչ էլ ամենակարեւոր նպատակն է: Գուցէ վերջնանպատակի իմաստով, պետական անկախութեան ձեռք բերումը առայժմ ամենացանկալի նպատակն է, բայց մեր արագ զարգացող աշխարհում կարող է պետական անկախութիւնը ազգի ապրելու ու առողջ զարգանալու համար միակ ձեւը չլինի:

Ուստի՝ ազգային-ազատագրական շարժում հասկացութիւնը կարելի է սահմանել որպէս **«ազգի ապրելու և դարաշրջանի հետ միասին որպէս ազգ զարգանալու համար պայմանների ստեղծման պայքար»**: Կամ՝ այդ պայմաններին խանգարող խոչընդոտներից ազատուելու պայքար:

Եթէ ընդունենք այս սահմանումը, ապա պարզ կը դառնայ, որ ազգային-ազատագրական շարժման բովանդակութիւնը (նպատակը, մարտավարութիւնը և ռազմավարութիւնը) անմիջականօրէն բխում են տւեալ ազգի ներկայ կացութիւնից: Անշուշտ, ներկայ կացութիւնը պարունակում է իր մէջ անցեալը, բայց ոչ ինքնաբերաբար: Անհրաժեշտ է պարզել, թէ արդեօ՞ք տւեալ ազգը սեփականացրել է իր անցեալը և այդ անցեալը իր վճռական դերն է կատարում ազգի այսօրւայ վարքագծում: Ասորիները, օրինակ, ունեն պետական կեանքով ապրելու հարուստ անցեալ, բայց այսօր նրանք երազում են իրենց գիր-գրականութիւնը ստեղծելու մասին և ահա արդէն 20 տարի է, ինչ չեն կարողանում մի թերթ հրատարակել: Եւ հէնց թերթ հրատարակելու այս խնդիրը նրանց ազգային-ազատագրական պայքարի գլխաւոր նպատակներից է: Բայց եթէ նրանց հարցնենք, թէ ինչո՞ւ են նրանք ծաւալել այդ գործը, նրանք կը պատասխանեն, որ անկախ պետականութիւն են ուզում ստեղծել: Իսկ քրտերի համար Թուրքիայում, Իրաքում և կամ էլ Պարսկաստանում մէկ հատիկ քրտական դպրոցի բացումը ազգային-ազատագրական պայքարի փայլուն էջերից մէկը կը նկատւէր: Ազգային-ազատագրական պայքարի բովանդակութիւնը որոշւում է ազգի ներկայ կացութեամբ: Խնդիրը լայնօրէն մեկնաբանելու դէպքում

կարելի է նշմարել ազգային կացութիւնների 4 մակարդակներ, որոնք պայմանաւորուած են 4 նպատակներով։

1.- Ազգային ինքնագիտակցութեան ձեռքբերում։

2.- Ազգահաւաք, կամ՝ միասնական ազգային կեանքով ապրելու պայմանների ստեղծում։

3.- Ազգային անկախ պետականութեան ձեռքբերում։

4.- Ազգային պետութեան ներսում արդար հասարակական կեանքի ստեղծում։

Այս բոլոր մակարդակների վրայ գտնուող նպատակների համար մղուող պայքարները՝ ազգային-ազատագրական պայքարներ են։ Բայց մեզ հետաքրքրում է մեր ժողովուրդը, ուստի փորձենք որոշել նրա մակարդակները և նպատակները։ Ազգային ինքնագիտակցութեան ձեռքբերման մակարդակը շատերին թւում է նւաճւած։ Բայց դա այդպէս չէ։ Մեր մտաւորականութիւնը, Սփիւռքում թէ Հայրենիքում, իսկապէս որ լաւ գիտէ իր ժողովրդի պատմութիւնը, մշակոյթը և ունի հայ մնալու ցանկութիւնը։ Բայց դրա հետ միասին, թէ՛ Սփիւռքում և թէ Հայրենիքում ողբերգական չափերի է հասել օտարացումը՝ խառը ամուսնութիւնների, օտար մշակոյթների, լեզւի կորստի և շատ ուրիշ գործօնների ազդեցութեան տակ։ Խորհրդային Միութիւնում ապրող հայերի գրեթէ կէսը ամբողջովին օտարացած է և նոյն կացութիւնն է տիրում Սփիւռքում։ Այս օտարացածներին դարձի բերելու կամ գոնէ օտարացման ընթացքի առաջն առնելու պայքարը իսկական ազգային-ազատագրական պայքար է, որը շատ աւելի յեղափոխականացւածութիւն է պահանջում, քան, օրինակ, մարտական գործողութիւնները։

Ազգահաւաքի կամ միասնական ազգային կեանքով ապրելու պայմաններ ստեղծելու մակարդակի վրայ մենք գրեթէ ոչինչ չենք անում, բացի այն, որ մեր ուժերի սահմաններում փորձում ենք արգելել արտագաղթը Լիբանանից ու Պարսկաստանից։ Բայց արտագաղթի առաջն առնելու համար մեր ուժերը տկար են և մեզանից անկախ արտագաղթողների հոսքը օրէց-օր աւելանում է։ Երբ յեղափոխական կուսակցութիւնը տեսնում է, որ իրենից անկախ տեղի է ունենում մի անցանկալի ընթացք, որը կարող է վճռական դեր կատարել ազգի ապագայի համար, նա պարտաւոր է կանգնել այդ ընթացքի գլխին և նրան ուղղութիւն տալ։ Եւ սա, անշուշտ, ազգային-ազատագրական պայքար է։ Կիլիկիայի փորձը ունեցող ազգը ինչո՞ւ պիտի վախենայ նոր ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ազգային օջախ ստեղծելուց։ Միասնական ազգային կեանքով որեւէ հողի վրայ ապրելու հարցը շատ աւելի կարեւոր է ազգապահպանման և ազգային գիտակցութեան համար, քան անտանելի ճնշումների տակ ապրելու ազգային հերոսութիւնը։

Ինչ վերաբերում է անկախ հայրենիք ձեռք բերելու և այդ հայրենիքում արդար հասարակական կեանք ստեղծելու մակարդակին, ապա այսօր այդ մակարդակների վրայ մենք անելիք չունենք։ Այդ մակարդակների վրայ բարձրանալու համար անհրաժեշտ է լուծել առաջին երկու մակարդակներից բխող խնդիրները, որոնք հէնց մեր այսօրուայ ազգային ազատագրական պայքարներն են։

ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՈ՞Ղ Է ՆՊԱՍՏԱՒՈՐ ԼԻՆԵԼ ՀԱՅ ԴԱՏԻՆ. Ի՞ՆՉ ՁԵՒՈՎ

Գործակցութիւնը ոչ միայն կարող է նպաստաւոր լինել Հայ Դատին, այլեւ՝ առանց գործակցութեան Հայ Դատի ոչ մէկ խնդիրը չի կարող լուծուել։ Հարցը միայն նրանումն է, թէ ո՞ւմ հետ և ինչպէ՞ս գործակցել։ Այս հարցերի պատասխանները կապ ունեն գործակցութեան նպատակների հետ։ Հայ Դատի լուծման ճամբին կան բազմաթիւ խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ են տարբեր համագործակցութիւններ։ Եւ հէնց սա էլ համագործակցութեան առաջին ու կարեւոր կէտն է։ Դաշնակիցը չի կարող լինել ոչ միակը և ոչ էլ մշտականը։ Նրանք փոխւում են կացութիւնների փոփոխութեան հետ։ Այնուամենայնիւ, նպատակների էութեան հետ միասին, դաշնակիցներն էլ կարող են բաժանուել երկու խմբերի՝ բարոյական և քաղաքական։ Բարոյական ասպարէզում, այսինքն բարոյական նպատակների հասնելու գործակցութիւններում դաշնակիցները աւելի մնայուն են և նրանց ընտրութիւնը յենւում է գաղափարախօսական սկզբունքների վրայ։ Չի կարող որեւէ ընկերվարական կուսակցութիւն գործակցել որեւէ աջակողմեան կուսակցութեան հետ՝ բարոյական նպատակների ոլորտում։ Օրինակ Դաշնակցային Գերմանիայի աջակողմեան ուժերը ջանում են դուրս վռնդել իրենց երկրից թուրք աշխատաւորներին։ Մենք կարող ենք ներքուստ ուրախանալ նրանց այդ մտադրութեան վրայ, բայց չենք կարող միանալ նրանց ու հրապարակայնօրէն համագործակցել նրանց հետ։ Բայց քաղաքական նպատակների հասնելու հարցում գաղափարախօսութիւնը ոչ մէկ նշանակութիւն չի կարող ունենալ։ Ուրեմն տեսնենք, թէ Հայ Դատի նպատակներից որոնք են դասւում բարոյական և որոնք քաղաքական նպատակների շարքին։ Առաջին հայեացքից թւում է թէ Հայ Դատի մեր այսօրուայ բոլոր խնդիրներն էլ կրում են բարոյական բնոյթ, ուստի մեր համագործակիցները կարող են լինել միայն մեր գաղափարակիցները։ Սակայն իրականում բարոյական բնոյթ են կրում միայն ընդհանուր հաստատումները, ինչպէս, օրինակ, բոլոր ազգերի ինքնորոշման իրաւունքով, ազատ հայրենիք ու սեփական մշակոյթ ունենալու պահանջը, ցեղասպանութեան և

այլ յանցագործութիւնների դատապարտումը: Այստեղ մենք կարող ենք գործակցել մեր նման ժողովուրդների ու մեր նման կազմակերպութիւնների հետ:

Ինչպէ՞ս համագործակցել: Նրանք կը մասնակցեն մեր ցոյցերին, մենք նրանց: Կը հրատարակենք համատեղ աշխատութիւններ, թերթեր, թռուցիկներ, կը կազմենք բարեկամութեան ընկերութիւններ – կոմիտէներ ու կը գումարենք համատեղ համագումարներ: Սակայն այս գործունէութիւնը կարող է ծաւալուել միայն ամենաընդհանուր գաղափարների հողի վրայ, որտեղ չեն նշւում պետութիւններ ու ազգեր: Այս համագործակցութեան հողը այնքան ընդհանուր է, որ նմանւում է մի ինչ որ միջազգային շարժման, այլ ոչ թէ Հայ Դատի պայքարի: Այս շարժումների մէջ են իրենց գլուխները խոթում ոչ միայն ազնիւ մարդիկ, այլ նաեւ տարբեր վարձկաններ: Բաւական է, սակայն, փոքր ինչ շեղուել ընդհանուր խնդիրներից դէպի Հայ Դատ և բոլոր բարոյական խնդիրները քաղաքական գունաւորում են ստանում: Եթէ խօսքը ոչ թէ հայրենիք ունենալու և ցեղասպանութիւնը դատապարտելու մասին է, այլ Հայկական Ցեղասպանութեան և հայ ժողովրդի հայրենիքի մասին, ապա անմիջապէս խաղի մէջ է մտնում Թուրքիան և նրա յետեւում կանգնած Միացեալ Նահանգները: Եթէ խօսքը պաղեստինցիների մասին է, ապա մէջտեղ է գալիս Իսրայէլը: Եթէ խօսքը Ղարաբաղի մասին է, ապա հրապարակ է իջնում Խորհրդային Միութիւնը: Ու մենք տեսնում ենք, որ թէ՛ Ցեղասպանութիւնը, թէ՛ ազգային ու մարդկային իրաւունքները դառնում են զուտ քաղաքական հարցեր, որոնց լուծման համար բոլոր տեսակի համագործակցութիւնները ընդունելի են: Ինչպէ՞ս համագործակցել: Առեւտրականի նման: Որքան կարելի է շատ առնել և որքան կարելի է քիչ տալ: Ու չտալ այնքան, որ կորչի մեր դէմքը ու անկախութիւնը:

1988

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՅԹՆԵՐԸ

Էդուարդ Յովհաննիսեան

Խօսքը ոչ թէ ազգային գաղափարախօսութեան, այլ ազգային գաղափարի մասին է, որը տարբերւում է գաղափարախօսութիւնից իր հիմնական դրոյթներով։ Գաղափարախօսութիւնը ունի կիրառական նշանակութիւն, մինչդեռ գաղափարը կրում է աւելի ընդհանուր բնոյթ։ Ազգային գաղափարախօսութիւնը մշակւում է ազգային գաղափարի հիման վրայ և իր շուրջ ստեղծում է համախոհների միութիւններ, կուսակցութիւններ կամ այլ տեսակի կազմակերպութիւններ։

Ազգային գաղափարախօսութիւնը ազգային գաղափարի քաղաքականացումն է, ուստի ազգային գաղափարից կարող են ծնւել տարբեր գաղափարախօսական կազմակերպութիւններ, ինչպէս Աւետարանից ծնւեցին տարբեր եկեղեցիներ, իսկ արդարութեան գաղափարից տարբեր ընկերվարական շարժումներ։

Հայ ազգային գաղափարը հայ ազգի գոյատեւման սկզբունքների և զարգացման ճանապարհների հիմնաւորումն է։ Նա ձեւակերպում է ազգի գլխաւոր նպատակը և այդ նպատակին հասնելու ճանապարհները, որոնց իրականացման առաքելութիւնը ընկնում է ազգային գաղափարը ճանաչող քաղաքական կազմակերպութիւնների վրայ։ Նրանք է, որ պիտի մշակեն գլխաւոր նպատակին հասնելու ռազմավարութիւնը՝ դարձնելով այն հայ պետականութեան քաղաքականութիւն։

Ու քանի որ խօսքը հայ ազգի գոյութեան ու զարգացման ճանապարհների մասին է, Հայ Ազգային Գաղափարը պէտք է ընդգրկի մարդկային գործունէութեան բոլոր բնագաւառները, կամ՝ աւելի ճիշտ, որոշի այդ բնագաւառներում հայ ազգի տեղը։

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ

Ազգային փիլիսոփայութեան բնագաւառում գոյութիւն ունի երեք հարց, որոնց պատասխանելուց յետոյ միայն կարելի է ձեւակերպել Հայ Ազգային Գաղափարի փիլիսոփայական դրոյթը։

Առաջինը՝ ազգային բազմազանութեան բնական լինելու հարցն է։ Երկրորդը՝ նրա օգտակարութեան հարցը։ Իսկ երրորդը՝ ազգային ինքնագիտակցութեան, կամ՝ ազգալուծման դէմ պայքարելու կամքի գոյութեան հարցը։

Առաջին հարցի շուրջ գոյութիւն ունեն երկու իրար հակասող և իրար բացառող գաղափարներ, որոնցից մէկը պնդում է, թէ ազգային բազմազանութիւնը ստեղծուել է մեր կարիքների հիման վրայ՝ բնական դժւարութիւններին յարմարուելու անհրաժեշտութեան բերումով: Սակայն այսօր, երբ այդ դժւարութիւնները պակասել են, կամ՝ վերացել, ազգայնականութիւնը նոյնիսկ խանգարիչ հանգամանք է հանդիսանում արդիւնաբերական հասարակարգ ստեղծելու համար: Այդ հասարակարգը ստեղծելու համար պէտք է ընտրել աշխարհաքաղաքացիութեան ճանապարհը:

Միւս գաղափարը պնդում է, որ ազգային բազմազանութիւնը բնական արժէք է, որ նա ստեղծուել է ճիշտ այնպէս, ինչպէս որ ստեղծուել է ինքը՝ բնութիւնը, իր ամբողջ բազմատեսակ էութեամբ: Այս իմաստով ազգը հիմնական արժէք է, քանզի մասնակից է երկրի ներդաշնակութեան և հանդիսանում է երկրագնդի հաւասարակշռութիւնը պահպանող լծակներից մէկը:

Մենք արդէն համոզուել ենք, որ բնութիւնը խիստ պատժում է մեզ, երբ մենք խախտում ենք բնութեան հաւասարակշռութիւնը և մենք շտապ կարգով փորձում ենք վերականգնել մեր կողմից խախտուած հաւասարակշռութիւնը, բայց հաւանաբար արդէն ուշ է:

Այժմ բնութեան պաշտպանները փրկում են կենդանիներին, դաշտերը ու ծովերը, բայց ազգերի փրկութեան հերթը դեռեւս չի հասել: Ընդհակառակը, աշխարհաքաղաքացիների ճնշումների տակ և ամերիկացիների ղեկավարութեամբ, ազգայնականութիւնը հռչակւել է յանցագործութեան պէս մի բան և մարդկութեան զարգացմանը խանգարող հանգամանք:

Հայ Ազգային Գաղափարը թելադրում է մեզ, որ ազգը բնական համակարգերից մէկն է և եթէ նա արհեստականօրէն, այս կամ այն ճանապարհով, վերանայ, ապա բնութիւնը ներկայ հասարակական կազմակերպւածութիւնից մի քայլ յետ կը գնայ դէպի մշակոյթից զուրկ նախնական քաոս, քանզի ապազգային մշակոյթ չի կարող գոյութիւն ունենալ:

Ազգը պատմական դարաշրջանի երեւոյթ չէ: Ազգը հաւաքական անհատականութիւն է, որը ունի իր դէմքը, նկարագիրը, ձգտումները և ապրելու կամքը: Ազգը այսօր ապրող սերունդ չէ, բոլոր սերունդների գումարը չէ: Ազգի մէջ բոլոր նախորդ սերունդները ապրում են ոչ պակաս իրաւունքով, քան ապրում է ներկայ սերունդը: Ազգը ոչ մէկ ուրիշ համակարգի մաս չի կազմում: Ազգը արժէք է ինքը իր մէջ: Ազգը միշտ էլ ձգտում է անմահութեան: Նա երբեք չի կարող համակերպւել անցեալի վրայ ապագայի բացարձակ յաղթանակի հետ: Ահա թէ ինչու ազգային կեցութեան և ազգային գիտակցութեան մէջ նկատւում է պահպանողականութիւն, որը ոչ թէ յետամնացութեան, այլ ապրելու կամքի ապացոյցն է:

Այսպիսով, Հայ Ազգային Գաղափարի փիլիսոփայական դրոյթը այն է, որ ազգը հիմնական արժէք է, որ նրա գոյութիւնը անհրաժեշտ է մարդկութեանը, որ նրա պահպանումը ամէն մի հայի սրբազան պարտականութիւնն է և որ նրա դէմ ուղղած բոլոր ոտնձգութիւնները մարդկութեան դէմ ուղղած յանցագործութիւններ են։

ԿՐՕՆ

Աշխարհը ճանաչելու համար բնութիւնը տուել է մարդուն երեք միջոց՝ զգացմունքներ, տրամաբանութիւն և ներըմբռնում։ Սակայն այս երեք միջոցները յաճախ մնում են հակասութիւնների մէջ, քանզի նրանք խօսում են տարբեր բաների մասին, իսկ մենք յամառօրէն ուզում ենք ստանալ նոյն պատասխանները այս երեք աղբիւրներից։ Աշխարհը ճանաչելու ճանապարհին մեր զգացմունքները ծնեցին արուեստն ու գրականութիւնը, տրամաբանութիւնը ծնեց գիտութիւնը, իսկ ներըմբռնումը՝ հաւատքը։ Եւ, անշուշտ, տարբեր են արուեստի, գիտութեան ու կրօնի պատասխանները այս կամ այն երեւոյթի նկատմամբ։

Այժմ մեզ հետաքրքրում է ազգ հասկացութեան կրօնական ըմբռնումը։ Չնայած բոլոր տեսակի գիտական որոնումների՝ մարդկութիւնը առայժմ չի կարողացել գտնի կեանքի գլխաւոր բանալին և հազիւ թէ տեսանելի ժամանակաշրջանում յաջողի գտնել այդ բանալին, որը բացելու է ծագումնաբանութեան գլխաւոր գաղտնիքը։ Ի՞նչպէս երկրագնդի վրայ, մեռած աշխարհում, ծնուեց առաջին կենդանի բջիջը, որից էլ ստեղծուեց կեանքը։ Եւ քանի որ մենք ոչինչ չգիտենք այդ գլխաւոր գաղտնիքի մասին, մենք դիմում ենք մեր ներըմբռնմանը, որը ասում է մեզ, որ ամէն ինչ մեր մէջ է։ Եթէ մեր ներըմբռնումը տալիս է մեզ Աստծոյ պատկերացում, ապա՝ այդ Աստուածը մեր մէջ է։ Եթէ մենք պայքարում ենք արդարութեան համար, ապա՝ այդ արդարութիւնը մեր մէջ է։ Եթէ մենք ունենք սիրոյ ապրումներ, ապա՝ այդ ապրումները մեր մէջ են։ Իսկ սա նշանակում է, որ ճշմարիտ է այն Աստուածը, որը ծնուել է մեր միջից, մեր պատկերացումների և մեր ըմբռնումների հիման վրայ։

Այս մօտեցումը կարող է անաստուածեան (աթէիստական) թւալ, քանի որ նրա համաձայն ոչ թէ Աստուած է մեզ ծնել, այլ մենք Աստծուն։

Սակայն իրականում խօսքը այն գերբնական ուժի մասին չէ, որը ստեղծեց տիեզերքը, այլ՝ այդ ուժը նկարագրող ձեւերի մասին է։ Այդ ուժի գոյութեան ճանաչումը արդէն իսկ հաւատք է, սակայն դեռեւս ոչ կրօն։ Իսկ մենք խօսում ենք կրօնի, այսինքն՝ հաւատքի բովանդակութեան մասին, որը ինչպէս ասացինք ծնուել է մեր միջից, մեր նկարագրի և ըմբռնումների համաձայն։

Այս իմաստով, կրօնը ազգային արժէք է և որպէս այդպիսին նա պէտք է պահպանւի, ինչպէս պահպանւում են մեր էութիւնը կազմող բոլոր ազգային արժէքները: Միւս կողմից, եթէ մենք հաւատում ենք, որ գոյութիւն ունեն բնութիւնը ստեղծող ուժեր, ուրեմն պիտի հաւատանք, որ բնութեան հետ միասին, որպէս նրա անբաժանելի մաս, ստեղծւել է ազգային բազմազանութիւնը: Այսինքն՝ ազգային բազմազանութիւնը և ազգը Աստծոյ մտաղրութիւնների մէջ էին, իսկ ազգայնականութիւնը իրականացւած այդ մտահոգութիւնը պահպանելու միջոցն է: Այս իմաստով ազգը կրօնական արժէք է:

Այսպիսով, Ազգային Գաղափարի կրօնական դրոյթը կարելի է ձեւակերպել այսպէս.

- Ազգը կրօնական արժէք է, իսկ կրօնը ազգային արժէք:

Այս դրոյթը մեզ թոյլ կը տայ ազատւել այն ճնշումներից, որոնք ժողովրդավարութեան անունով դատապարտում են ազգայնականներին՝ այլ կրօնների նկատմամբ վերապահութիւն ունենալու մէջ:

Ոչ մէկը մեզանից հակառակ է կրօնների ազատութեանը, սակայն մահմեդականութիւն կամ բուդայականութիւն ընդունած հայը մեղմ ասած լիակատար հայ չէ, որովհետեւ նա հրաժարւել է իր հայկական ներքին աշխարհից:

Ամէն մարդ ազատ է հրաժարւելու իր ազգութիւնից, ինչպէս ազատ է հրաժարւելու իր ընտանիքից, հայրենիքից, քաղաքակրթութիւնից և մարդկութիւնից: Այդ բանում նրան ոչ մէկը չի կարող մեղադրել, բայց դատապարտել կարող է ընտանիքը, հայրենիքը, ազգը, քաղաքակրթութիւնը և մարդկութիւնը:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Ժամանակակից ժողովրդավարական աշխարհայեացքը ստեղծւեց 18րդ դարում, երեք դար տեւող փոփոխութիւնների հիման վրայ: Սակայն այդ դարերի ընթացքում կային երկու գաղափարներ, որոնք մնացին անփոփոխ:

Առաջինը այն էր, որ մարդը ի սկզբանէ բարի է: Իսկ երկրորդը, որ առաջադիմութիւնը և մարդու կատարեալ դառնալու իրողութիւնը անխուսափելի են:

Սակայն երկու այս սկզբունքները պատմութեան ընթացքում չարդարացան, ուստի ժողովրդավարութիւնը զրկւեց տրամաբանական հիմնաւորումներից: Ժողովրդավարութիւնը որեւէ գիտական հիմքեր չունի և որպէս գաղափարախօսութիւն տրւել է մարդկութեանը շատ աւելի հաւատքի, քան հասարակական անհրաժեշտութեան կարգով: Սա նշանակում է, որ կան անձեր ու հաւաքականութիւններ, որոնք շահագործւում են ժողովրդավարական կոչւող գաղափարախօսութեան կողմից, քանզի ունեն սեփական շահեր, իսկ ժողովրդավարութիւնը չի կարող բաւարարել բոլորի պահանջները:

Ժողովրդավարութիւնը ո՛չ բոլորի, ո՛չ մեծամասնութեան և ոչ էլ առաջադէմ մարդկանց գաղափարախօսութիւնն է: Ժողովրդավարութիւնը արդարութեան հաւատքն է և այդ իմաստով ունի ոչ-պակաս կրօնական բովանդակութիւն, քան Աստծոյ հաւատքն է:

Կարելի է միանգամայն հասկանալ մարդկանց այն ըմբռնումը, որ արդարութիւնը մեզանից դուրս գտնուող մի արժէք է, որին կարելի է յարմարուել ու ենթարկուել, բայց որը անկարելի է ստեղծել սեփական կամքով: Իսկ երբ մեզ չի յաջողւում կերտել արդարութիւն, բոլոր հաւատքների նման ժողովրդավարութիւնն էլ յայտարարւում է, թէ ինքը լաւն է ու կատարեալ, բայց մարդիկ վատն են ու անկատար և չեն հասկանում ժողովրդավարութեան իմաստը: Այսինքն՝ այն մարդիկ, որոնք չեն հասկանում ժողովրդավարութեան իմաստը, անկատար են, իսկ այն պետութիւնները, որոնք չեն կիրառում ժողովրդավարութիւնը, արժանի են պատժի: Ու հասարակութիւնը սկսում է կատարեալ մարդ ու կատարեալ հասարակարգ ստեղծելու արշաւը:

Ժողովրդավարութեան պատմութիւնը լեցուն է մարդ դաստիարակելու աբիւնալից օրինակներով: Մարդ փոխելու արշաւը յատուկ թափ առաւ Եւրոպայում, մանաւա՛նդ Ֆրանսիայում, որտեղ Ռոբեսպիերը, Սէն Ժիւստը, Բաբէօֆը և Բլանարոտին ջանում էին իրականացնել մարդը վերափոխելու Ռուսոյի, Հելւեցիուսի, Կոնդորսէի և ուրիշների ծրագրերը: Բայց ինչպէ՞ս փոխել մարդուն:

«Մենք ուզում ենք հաստատել այնպիսի կարգեր,- բացագանչում է Ռոբեսպիերը,- որի ժամանակ բոլոր ստոր ու դաժան կրքերը սանձւեն, իսկ բոլոր բարի և ազնիւ ցանկութիւնները պաշտպանւեն օրէնքի կողմից»:

Իսկ երբ Եւրոպայից մարդ փոխելու գաղափարները թափանցեցին Ռուսաստան, այնտեղ արդէն այդ սկզբունքը ստացաւ մարքսիստական բնոյթ:

«Դուք ստիպւած կը լինէք անցնելու 15, 20 և նոյնիսկ 50 տարի տեւող քաղաքացիական պատերազմներից, ոչ միայն փոխելու համար գոյութիւն ունեցող փոխ-յարաբերութիւնները, այլեւ՝ փոխելու համար ձեզ, ինչը անհրաժեշտ է **քաղաքական իշխանութիւնը վերցնելու համար**»,- յայտարարեց Մարքսը բանւոր դասակարգին:

Իսկ Լենինը հռչակեց.- «Պրոլետարիատի դիկտատուրայի տակ մենք ստիպւած կը լինենք վերադաստիարակել միլիոնաւոր գիւղացիներ և մանրսեփականատէրեր, հարիւր հազարաւոր քաղքենի մտաւորականներ՝ ենթարկելով նրանց պրոլետարական ղեկավարութեան: Անհրաժեշտ է յաղթահարել նրանց քաղքենիական սովորութիւնները և աւանդութիւնները, երկարատեւ պայքարի միջոցով վերադաստիարակել բանւոր դասակարգը»:

Յետոյ՝ մարդ վերափոխողների շարքերը անցան Ստալինը և Հիտլերը, որոնք արդէն չէին վերափոխում, այլ պարզապէս ոչնչացնում էին չդաստիարակուածներին։

Հաւանաբար անհրաժեշտ է պատասխանել այն հարցին, թէ ի՛նչ կապ ունեն մարդկութեան պատմութեան այս հրէշները արդարութեան կամ ժողովրդավարութեան հետ։

Սկզբունքի իմաստով կապը անյայտ է։ Բոլոր այն արդարութիւնները, որոնք ստեղծւում են մարդկանց կողմից, առանց հաշւի առնելու առարկայական արդարութիւնը և բարձրագոյն դատաւորին, վաղ թէ ուշ վեր են ածւում բռնութեան։ Ու չհանգստացնենք մենք մեզ, որ այդ բռնութեան դաժան օրերը անցել են։

Մեր օրերին մենք տեսնում ենք, որ շատ ժողովրդավարական երկրներ ահաբեկիչներին Նոբէլեան մրցանակ են շնորհում, ռմբակոծում են իրենց հարեւան երկրները, Եւրոպայի քաղաքներից առեւանգում են մարդկանց ու իրենց երկրներում դատում։

Ժողովրդավարութիւնը պաշտպանելու համար Ռուսաստանի նախագահը ռմբակոծում է սեփական խորհրդարանը, իսկ Հայաստանի նախագահը արգելում է մի ամբողջ կուսակցութիւն ու բանտերը նետում նրա անդամներին։

Եւ այս ամէնը կը շարունակւի այնքան ժամանակ, քանի դեռ արդարութեան հաւատք ժողովրդավարութիւնը չի գտել իր հիմնական սկզբունքները, որոնցից էլ պիտի բխեն բոլոր օրէնքները։

Բոլոր փորձերը՝ գտնելու մեզանից անկախ գոյութիւն ունեցող արդարութեան սկզբունքները, մինչեւ այսօր անցել են ապարդիւն։ Անշուշտ կան որոշ ընդհանուր մօտեցումներ, որոնք կարելի էր համարել սկզբունք, բայց նրանք յստակութիւնից այնքան զուրկ են, որ լաւագոյն դէպքում կարող են բարոյական սկզբունքներ նկատւել։

Օրինակ՝ գոյութիւն ունի այն գիտակցութիւնը, որ մարդուն չի կարելի աշխատեցնել անասունի նման, քանզի նա ունի արժանապատւութիւն։ Այսօր մենք ընդունում ենք, որ մարդու ազատութեան դաշտը սահմանափակւում է մէկ ուրիշ մարդու ազատութեան դաշտով։ Այսինքն՝ ես պիտի ձեռք բերեմ բարիքներ այնպէս, որ չխանգարեմ շահերը մէկ ուրիշի։ Այս գեղեցիկ մօտեցումը կարող էր սկզբունք դառնալ, եթէ լինէր ոչ այդքան վերացական։ Բանը նրանում է, որ մրցակցութեան վրայ յենւած մեր աշխարհը և առաջին հերթին ազատ շուկան զբաղւած են միայն ու միայն նրանով, որ ուժեղները ճնշում են թոյլերին և հարստանում են նրա հաշւին։ Ու շատ պարզ է, որ առանց ընկերվարական վերահսկողութիւնների ազատ շուկան դառնում է վայրենիներով լի

անտառ, որտեղ գործում է ուժեղի օրէնքը: Առանց արդարութեան վերահսկողութեան, ազատութիւնը կարող է լցւել կեղծ բովանդակութեամբ:

Պարզելու համար, թէ ո՛ր ժողովրդավարութիւնն է ընդունելի ազգայնականի համար, դիմենք հետեւեալ պարզ օրինակին: Եթէ որեւէ հասարակական վայրում ծխելը արգիլւած է, ապա՝ կարելի է ասել, որ ծխողները հալածւում են չծխողների կողմից: Սակայն այդ հալածանքը արդարացւած է այն ապացուցւած ճշմարտութեամբ, որ ծխելը բոլորին վնաս է: Եթէ այդ հալածանքը արդարացւէր նրանով, որ ծխողները փոքրամասնութիւն են կազմում, ապա դա անընդունելի արդարացում կը լինէր, որովհետեւ մէկ ուրիշ վայրում ծխողները կարող են մեծամասնութիւն կազմել: Աւելի՛ն, եթէ ծխելու վնասը ապացուցւած չէ, ապա՝ ծխողների նկատմամբ հալածանքը է՛լ աւելի արդարացւած չէ: Իսկ մեր աշխարհի արգելքները և թոյլտւութիւնները մեծ մասամբ ապացուցւած չեն և պարտադրւած են մարդկութեանը իշխող հաւաքականութիւնների կողմից: Ահա թէ ինչու Հայ Ազգային Գաղափարը թելադրում է հայ մարդուն հետեւեալ ժողովրդավարական դրոյթը:

Համամարդկային արժէքների դաշտում մարդը ազատ է իր ընտրութիւնների մէջ, միշտ այնքանով, որքանով որ նրա ազատութիւնը չի սահմանափակում ազգի ինքնապահպանման ազատութիւնը ու չի հակասում արդարութեանը: Իսկ ճգնաժամային պահերին այդ ազատութիւնը է՛լ աւելի է սահմանափակւում՝ ազգի ազատութեան դաշտը ծաւալելու հաշւին:

Այս վերջին դիտողութիւնը կապ ունի այն իրողութեան հետ, որ ժողովրդավարութիւնը իր բոլոր առաւելութիւնները կարողանում է իրականացնել միայն պարզ եղանակի ժամանակ, երբ երկինքը ամպոտ չէ, իսկ երկրում տիրում է խաղաղութիւն: Իսկ այն խառնաշփոթ ժամանակներում, երբ երկինքը ամպոտ է, իսկ երկիրը անհանգիստ է, անհրաժեշտ է լինում սահմանափակել ազատութիւնները՝ կարգապահութիւնը խստացնելու համար:

ՊԵՏՈՒԹԻՒՆ

Հասարակական առաջադիմութիւնը բխում է անհատի պահանջներից: Սակայն դա չի նշանակում, որ անհատի պահանջների մէջ բացակայում է հաւաքականութեանը ծառայելու զգացմունքը: Երեխայի յարգանքը ծնողի նկատմամբ, հայրենասիրութիւնը, դասակարգային զգացմունքները, զինւորի պարծանքը՝ իր հերոսական բանակով, նոյն բակի տղաների, գործարանի աշխատողների, քաղաքի բնակիչների փոխ-կապւածութիւնները խօսում են այն մասին, որ հասարակական զգացմունքների ոլորտում գոյութիւն ունեն երկու իրար հակասող տրամադրութիւններ, որոնցից մէկը բացարձակ համայնապաշտութիւնն է, միւսը՝ բացարձակ անհատապաշտութիւնը:

Համայնապաշտների համար հասարակական կեանքը ոչ թէ բարձրագոյն նպատակին հասնելու միջոց է, այլ՝ հէնց ինքը՝ նպատակը։ Նրանց համար հասարակական կեանքը մարդու գոյութեան իմաստն է։ Այդ փիլիսոփայութեան կառկառուն ներկայացուցիչը Ֆոյերբախն էր, որին պատկանում է հետեւեալ միտքը,- «մարդու էութիւնը պարունակւում է միայն փոխադարձ շփումների և անհատների միասնութեան մէջ։ Մենակութիւնը սահմանափակւածութիւն է և կաշկանդւածութիւն, իսկ հաւաքականութիւնը ազատութիւն և յաւերժութիւն»։

Անհատապաշտների համար անձը բացարձակ արժէք է և արտաքին ազդեցութիւնների որեւէ կարիք չունի։ Նա նոյնիսկ կարիք չունի փրկւելու տառապանքից, ճնշող ապագայից ու մահից։ Նիցշէն, որը համարւում է այս ուղղութեան վառ ներկայացուցիչը, առաջ քաշեց գերմարդու գաղափարը, որը չի խոնարհւում, բայց յաղթահարում է տառապանքները, մահը և համաշխարհային քաոսը։

Հասկանալի է, որ այս երկու ծայրայեղ տեսակէտներից ոչ մէկը չի կարող ճանաչւել որպէս առաջադիմութեան շարժիչ ուժ, որ այդ ուժը պէտք է որոնել անհատականութեան և համայնապաշտութեան ներդաշնակութեան մէջ։ Այդ ներդաշնակութիւնը ստեղծելու ջանքերից էլ ծնւում առաւ պետութիւն, որը որոշ չափով բաւարարում է թէ՛ անձի և թէ հաւաքականութեան պահանջները։ Եթէ այդ պահանջների մէջ ստեղծւում է ներդաշնակութիւն, կամ՝ առնւազն հաւասարակշռութիւն, պետութիւնը և նրա վարչակարգը մօտենում են կատարեալ լինելուն։ Հակառակ դէպքում, երբ գերադասւում է համայնքային բացարձակութեան սկզբունքը, պետութիւնը դառնում է ամբողջատիրական։ Իսկ երբ գերադասւում է անհատականութեան բացարձակութեան սկզբունքը, պետութեան ներսում ստեղծւում է քաոս։

Սակայն պետութիւնը ինքնըստինքեան ունի որոշ յատկութիւններ, որոնք իրենց կնիքն են դնում այդ հաստատութեան վրայ։ Նախևառաջ նշենք, որ պետութիւնը մարդկային հանրութեան քաղաքական միաւորն է, որը ստեղծւում է որոշակի տարածութեան վրայ մի գերագոյն իշխանութեան ներքոյ։ Սա նշանակում է, որ պետութիւնը ստեղծելու համար անհրաժեշտ է ունենալ հողային տարածութիւն, մարդիկ, որոնք ղեկավարւելու պահանջ ունեն, և այդ ղեկավարութիւնը իրականացնող պետական իշխանութիւն։

Երբ պետութեան բնակչութիւնը հիմնականում կազմւած է ծագումով, լեզւով ու մշակոյթով համասեռ մարդկանցից, մենք գործ ունենք ազգային պետութեան հետ։

Բայց կան նաեւ բազմազգ պետութիւններ։ Դա կարելի է հասկանալ երկու իմաստով, կա՛մ այդ ազգերի համակեցութիւնը իրերի բնական դասաւորման

հետեւանք է և կարգաւորւած է իրաւականօրէն ու դրանից ոչ մի ազգ չի տուժում, կամ էլ ազգերը միաւորւած են բռնի ուժով կայսերապետութեան մէջ։

Այսօրւայ աշխարհում տիրում է պետական սկզբունքը և մարդկութեան կազմակերպւածութիւնը ներկայացւած է ինքնիշխան և ինքնավար պետական միաւորներով։

Համաշխարհային մակարդակով իրաւական մարմինը առաջին հերթին պետութիւնն է, որի նկատմամբ Հայ Ազգային Գաղափարը ունի հետեւեալ մօտեցումը։

Հայ ազգի պահպանումը և բարգաւաճումը կարող են իրականանալ համահայկական ազգային պետութիւն ստեղծելու ճամբով։ Այդ պետութիւնը պէտք է ստեղծւի հայապատկան հողերի վրայ։ Հայապատկան կարող են կոչւել միայն այն հողերը, որոնց վրայ կա՛մ ապրում է հայ ժողովուրդը և կամ էլ որոնց վրայից բռնի ուժով նրան արտաքսել են։ Սակայն նոյնիսկ այդ վերջին դէպքում հողի հայապատկանութիւնը կրում է զուտ իրաւաբանական բնոյթ և այդ պատմական իրաւունքը իրականացնելու համար անհրաժեշտ է նախ և առաջ այդ հողերը վերաբնակեցնել հայերով։ Որեւէ այլ տարածութեան վրայ, Կիլիկիայի օրինակով, հայկական պետութիւն ստեղծելու տարբերակը բացառւած չէ, եթէ այդ հողերի վրայ ապրում են հայեր, որոնք տեւալ տարածութեան վրայ մեծամասնութիւն են կազմում։

Այսպիսով, Հայ Ազգային Գաղափարի պետական դրոյթը թելադրում է հայապատկան հողերի վրայ համահայկական ազգային պետութեան ստեղծում, որի համար անհրաժեշտ է հողահաւաք, ազգահաւաք և ազգային իշխանութեան ընտրութիւն։

ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Տնտեսագէտների ճնշող մեծամասնութիւնը համարում է, որ տնտեսվարութիւնը ազգայնականութեան հետ ոչ մէկ կապ չունի և որ ազգային եկամուտ և ազգային տնտեսութիւն հասկացութիւնները վերաբերում են ամբողջ պետութեանը, անկախ նրանից, թէ ինչպիսի՛ ազգութիւններ են ապրում այդ պետութեան մէջ։

Տնտեսագէտները համարում են, որ, ընդհակառակը, ազգայնականութիւնը խանգարում է տնտեսական զարգացման, քանզի տնտեսութիւնը ենթարկում է ազգային շահերին։ Նրանց կարծիքով մարդկութիւնը գնում է դէպի արդիւնաբերական հասարակութեան ստեղծմանը, որի համար անհրաժեշտ են աշխարհաքաղաքացիներ և ապազգային մտածելակերպ։

Այս մօտեցման մէջ շատ բան ընդունելի է, բայց անընդունելի է այն պնդումը, որ եկամուտ բերող ձեռնարկութիւնը մարդկութեան համար բարիք է, անկախ նրանից, ո՛ւմ է ծառայում ձեռնարկութեան արտադրանքը:

Երբ ֆրանսացիները Իրաքին վաճառեցին եկամտաբեր ատոմային էլեկտրակայաններ, Իսրայէլը ռմբակոծեց այդ կայանները, քանզի նրանց եկամուտը ձեռնտու չէր Իսրայէլին:

Բայց այս հարցում շատ աւելի կարեւոր է այն հանգամանքը, որ տնտեսութեան արդիւնաւէտութիւնը սերտօրէն կապւած է այնպիսի ազգային չափանիշների հետ, ինչպիսիք են տւեալ երկրի աշխարհագրական դիրքը, ընդերքի հարստութիւնը, տնտեսվարութեան ձեւերը, աշխատաւոր ուժի առկայութիւնը և, ամենակարեւորը, ազգային նկարագիրը և նրա ընդունակութիւնները:

Այս ամէնը պէտք է հաշւի առնել տնտեսական զարգացման ուղիները որոնելիս:

Հայ ժողովուրդը ապրում է փոքր տարածութեան վրայ, բնական հարստութիւններից շատ բան չունի, ծով չունի: Դրա հետ միասին հայ աշխատաւորը ստեղծագործ և ընդունակ է նուրբ աշխատանքների, նորագոյն արդիւնաբերական միջոցներին տիրապետելու և աշխատասէր է:

Հայ Ազգային Գաղափարի տեսանկիւնից՝ Հայաստանի ազգային եկամուտը պէտք է ձեռք բերւի փոքր տարածութիւններ, քիչ էներգետիկական միջոցներ և որակեալ աշխատաւորներ պահանջող ձեռնարկութիւններից:

Այս դրոյթը պէտք է դառնայ մեր տնտեսագէտների և ժողովրդի սեփականութիւնը, քանզի մինչեւ այսօր մենք կիրառում ենք այն, ինչ մեզ առաջարկում են: Իսկ առաջարկողները մտածում են իրենց, բայց ոչ մեր շահերի մասին:

1998

Ո՞Վ Է ՏԷՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ

(ՇԻԷԴԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՈՒՄ)

Է. Յովհաննիսեան

Մեր աշխատակից Է. Յովհաննիսեանի այս յօդուածը կը տպենք մտաւորականի իր մտորումներու կարկինը բանալու համար բոլոր անոնց, որոնք կ'ուզէին, իրենց կարգին այս ուղղութեամբ վերլուծութիւնները կատարել՝ համաձայնելով կամ հակառակ արտայայտելով Է. Յովհաննիսեանի մտածումներուն:

Շէդիայի Հ.Յ.Դաշնակցութեան մարմնի հրաւէրով գտնուեցի Ստոկհոլմում և Ուբսալայում և պարզապէս շշմեցի, թէ որքան արագ այդ գաղութում ստեղծուեց դաշնակցականամիտ շրջանակ, որը կարողացաւ շատ կարճ ժամանակաշրջանում տարածել իր ազդեցութիւնը Շէդիայի հայկական գաղութի վրայ: Չէզոքներ, հակառակորդներ և ուղղակի թշնամիներ ներկայ գտնուեցին իմ ելոյթներին, բայց ստիպւած եղան ենթարկուելու այն կարգին, որը սահմանել էին կազմակերպիչ մեր ընկերները: Տեսայ երիտասարդներ, որոնք Ստոկհոլմ էին բերել Լիբանանի և Պարսկաստանի յեղափոխական ոգին. 4 նորագիրների կնքահայր եղայ և ընդհանրապէս դաշնակցական արժէքների իմաստով այս նոր գաղութում այնպիսի արժէքների մթնոլորտ էր տիրում, կարծես թէ մեր հին գաղութներից մէկում լինէի: Մերինները չունէին սրահ, հաւաքատեղի, գրասենեակ և եռագոյնը ու մնացած պաստառները պահում էին աւտոմեքենաներում և հասցնում հերթական վարձովի սրահ, հերթական միջոցառման համար: Սակայն ոգեւորւածութիւնը այնքան մեծ էր, որ կասկած չէր թողնում, այս գաղութը կ'ապրի մեր արժէքներով ու սերունդ կը դաստիարակի մեր պայքարի ու մեր հայրենիքի համար: Սովորութիւն չունենք անուններ տալու ու պիտի չնշեմ նրանց անունները, որոնց ջանքերով Շէդիայում ստեղծւեց այս մթնոլորտը:

Իմ պարտքս համարեցի մի երկու խօսքով ընթերցողին փոխանցել Շէդիայից ստացւած իմ տպաւորութիւններս: Բայց յօդւածիս բուն նպատակը ուրիշ է: Ուբսալայում դասախօսութիւնից յետոյ ինձ մօտեցաւ Սփիւռքի հետ Հայաստանի կապի կոմիտէի ներկայացուցիչը և տւեց մի հարց, որին մանրամասնօրէն պատասխանելու հնարաւորութիւնը չստեղծւեց, ուստի ուզում եմ պատասխանել այդ հարցին հրապարակայնօրէն: Հարցը վերաբերում էր իմ դասախօսութեան մէջ արտայայտւած հետեւեալ մտքին.-

«Բոլոր ժողովուրդները տէր ունեն, որոնք ազգի և ազգային արժէքների պահապաններն են: Սրանք ոտքի են ելնում ամէն անգամ, երբ համոզւում են, որ տարբեր ուժեր, գաղափարներ ու մշակոյթներ ինչ-ինչ լոզունգների տակ, կործանում են ազգը՝ նրա էութիւնը ոտնահարելու կամ փոխելու ճամբով: Որոշ ժողովուրդների համար ազգի տիրոջ դերը կատարում են զինուորականները (Թուրքիա), ոմանց տէրը՝ ազնւականութիւնն է (Ռուսաստան), ոմանց համար էլ տիրոջ դեր է կատարում եկեղեցին (Իտալիա): Հայ ժողովուրդը իր երկարատեւ պատմութեան ընթացքում ունեցել է երեք տէր՝ ազնւականութիւնը, եկեղեցին և Հ.Յ.Դաշնակցութիւնը, որը ազգի վերջին տէրն էր: 70 տարւայ ընթացքում ազգը անտէր մնաց, որովհետեւ ազգին տէրութիւն անելու համար կոմունիստները ձեւի մէջ միջազգայնականներ էին, իսկ բովանդակութեամբ ապազգային»:

Եւ ահա այս առիթով ինձ հարց տրւեց.-

«Եթէ մեր պատմութեան ընթացքում հայ ժողովրդի տէրերը փոխուել են, եթէ տէրերը ընդհանրապէս փոփոխութեան ենթակայ են, ինչո՞ւ, չենթադրել, որ Հայաստանի նոր իշխանութիւնները մեր ժողովրդի հէնց նոր տէրերն են: Ո՞վ է վերջին հաշւով դատաւորը՝ այս կամ այն խմբին տէր հռչակելու հարցում: Միթէ ժողովուրդը չէ՞ տէր ընտրելու միակատեանը»:

Չափազանց կարեւոր եմ համարում այս հարցի պատասխանը մեր օրերի համար, երբ ազգը փոթորկւած ովկիանոսում մնացել է առանց նաւապետի ու նաւաստիների և նրանց դերը կատարում են ոչ թէ ազգի իսկական տէրերը, այլ նրանք՝ ովքեր ղեկը ու թիակները իրենց ձեռքը վերցնելու ճարպկութիւնը ունեն:

Ազգի իսկական տէրը երբեք չի ընտրւել ժողովրդի կողմից և չէր էլ կարող ընտրւել, քանզի ընտրութիւն արարողութիւնը ունի ընդամէնը 150 տարւայ պատմութիւն, մինչդեռ ընտանիքները, ցեղերը, ազգերը ու պետութիւնները ղեկավարւել են տէրերի կողմից հազարամեակների ընթացքում: Այդ տէրերը ծնւել են ազգի հետ և ազգի մէջ, որպէս ազգի ինքնապաշտպանութեան բնազդի արտայայտիչներ: Ճիշտ այնպէս, ինչպէս մարդը իր ամբողջ կեանքի ընթացքում, բնազդաբար խուսափում է վտանգաւոր բախումներից, կռւում է ճակատագրական պահերին, յարմարւում է ստեղծւած կացութիւններին, դիմադրում է հիւանդութիւններին ու գայթակղութիւններին, այսպէս էլ ազգը իր պատմական ճանապարհը անցնում է ազգային բնազդի ղեկավարութեամբ, որի արտայայտիչներն էլ ազգի տէրերն են կոչւում: Այսօրւայ չափանիշներով, հաւանաբար Վասակը կը դասւէր փայլուն դիւանագէտների շարքին ու հէնց նա տէր կը ճանաչւէր: Բայց իսկական տէրը Վարդանն էր, որ բնազդով հասկացաւ, որ Զրադաշտական կրօնի ընդունումով կը վերանայ ամբողջ ազգը: Հին յոյները շատ շուտ հասկացան, որ մաքուր ժողովրդավարութիւնը բացի

քաոսից, ուրիշ ոչինչ կարող է տալ ժողովրդին: Նրանք հասկացել էին, որ ժողովրդին չի կարելի վստահել ազգի ճակատագիրը, ինչպէս չի կարելի վստահել երեխաներին ընտանիքի ճակատագիրը: Միակ ատեանը, որին կարելի է վստահել ընտանիքի, ցեղի, ազգի ճակատագրերը, դա այդ խմբերի բնական տէրերն են, որոնք չեն ընտրւում, այլ ստեղծւում են ինքնըստինքեան: Ոչ մէկը չէր ընտրել ակադեմիկոս Սախարովին բարոյական արժէքների դատաւոր, բայց ամբողջ աշխարհը նրան հէնց այդպիսին էր համարում:

Ժողովրդի նկատմամբ վստահութիւնը նոր ժամանակների դրոյթ է, որ դեռեւս ոչ մէկ տեղ իրեն չի արդարացրել: Եթէ աշխարհի տարբեր ծայրերում, նամանաւանդ Արեւմտեան Եւրոպայում գոյութիւն ունեն համեմատաբար հաւասարակշռւած ժողովրդավարական վարչակարգեր, ապա դա նրանից է, որ ժողովրդավարական ճամբով ընտրւած կառավարութիւնները ու նախագահները միայն թատրոնային բնոյթ են կրում, նրանք գալիս են ապացուցելու ժողովուրդներին թէ մենք ձեր կողմից ենք ընտրւել, ուստի անելու ենք այն, ինչ դուք էք ուզում: Բայց իրականում, թատրոնային այդ իշխանաւորները կատարում են իրական տէրերի թելադրանքները: Իսկ ով հրաժարւում է կատարել այդ թելադրանքները, տարբեր ճանապարհներով հեռանում է ասպարէզից: Իսկ այնտեղ, որտեղ իսկական տէրերը բացակայում են, քաոսը ստեղծւում է ժողովրդավարութեան առաջին զանգերի հետ միասին: Ժողովրդին թւում է, թէ ընտրովի տէրերը կատարում են ժողովրդի կամքը: Բայց սեփական կամքով ոչ մէկ ժողովուրդ չի մտնում պատերազմի մէջ, չի մտնում տնտեսական ճգնաժամերի մէջ, չի փախչում սեփական երկրից և խուսափում է բոլոր տեսակի հասարակական ցնցումներից: Բայց մենք տեսնում ենք, թէ ինչպէս ամենաժողովրդավարական երկրների իշխանութիւնները, առանց սեփական ժողովրդի կամքը հարցնելու, նետում են նրանց տարբեր ցնցումների մէջ: Եւ այդ նետողները պատմութեան թազնւած զսպանակներն են, որոնց ոչ մէկը չի ընտրել:

Ահաւասիկ այստեղ է, որ ամէն մի ժողովրդի բնական տէրը իր առողջ բնազդով, պէտք է կարողանայ դուրս բերել իր ժողովրդի նաւակը սխալ հոսանքներից և ցոյց տալ նրան ճիշտ ուղղութիւնը:

Սակայն ի՞նչ չափանիշներով պէտք է կարողանայ ժողովուրդը տարբերել իսկական տէրերին շինծու տէրերից: Եթէ այդ իսկական տէրը ընտրովի չէ, ինչպէ՞ս պիտի նա գտնի իր տիրոջը: Յայտնի է, որ շինծու տէրերը ամէնուր աղմուկ են բարձրացնում և գեղեցիկ ճառեր արտասանում: Եկեղեցական գեղեցիկ երգեցողութեամբ փոխարինում են Աստծոյ հաւատքը: Այնուամենայնիւ շլացնող այս մթնոլորտում, աչք ունեցողը կը տեսնի իսկական տիրոջը: Նրա առաջին և ամենակարեւոր յատկութիւնը այն է, որ նա բացի զուտ հայկական խնդիրներից ուրիշ ոչ մէկ հարցով չի զբաղւում: Բոլոր համամարդկային գա-

ղափարները, շարժումները և ձգտումները նրա համար միայն հայ ժողովրդին ծառայելու միջոցներ են։ Ազգի բնական տէրը զբաղուած է միայն այն հարցերով, որոնցով ուրիշները երբեք չեն զբաղուի։ Եթէ նա իր զաւակին հայկական դպրոց չուղարկի, ուրիշները այդ բանը հայի փոխարէն չեն անի։ Եթէ նա բնութեան պաշտպանութեան միջազգային ընկերութիւնների հետ համագործակցում է, ապա միայն Հայաստանի բնութիւնը մաքրելու նպատակով է դա անում, եթէ ընկերվարական գաղափարախօսութիւն է որդեգրել, ապա ոչ թէ միջազգային պրոլետարիատը փրկելու, այլ անկախ Հայաստանում արդար հասարակարգ ստեղծելու համար։ Միջազգային խնդիրները ազգի իրական տիրոջը չեն հետաքրքրում ու նա չի մղի իր ժողովուրդը այդ խնդիրները լուծելու ճակատը, որովհետեւ բնազդով զգում է, որ այդ խնդիրները կը լուծուեն առանց մեր մասնակցութեան։ Ազգի իսկական տէրերը, որպէս օրէնք, դաւաճանում են համամարդկային արժէքներին, եթէ նրանք օգուտ չեն բերում հայ ժողովրդին։ Այդպէս, օրինակ վարուեց մեր եկեղեցին, երբ սկսեց տիրութիւն անել ազգին։ Նա չմասնակցեց տիեզերական ժողովների կրօնական վէճերին, չզբաղուեց աստուածաբանութեան նրբութիւններով, չմասնակցեց խաչակիրների արշաւներին, խաղաղութեան շարժումներին, չուղարկեց յետամնաց երկրներ մարդասիրական ջոկատներ ու մայրապետներ, որովհետեւ նրա գործունէութեան դաշտը դարձաւ Աւարայրը ու հայկական դպրոցը, իսկ նրա զինուորներն էին ժողովրդի իսկական տէրեր Սահակ Պարթեւը, Մաշտոցը, Կոմիտասը, Խրիմեան Հայրիկը, որոնք նոյնքան աշխարհական էին, որքան հոգեւորական։ Որպէս հաւատացեալ՝ ես բողոքում եմ Հայաստանեայց Եկեղեցու դէմ, որ նա հեռացաւ իր բուն պարտականութիւններից, բայց որպէս հայ ես խոնարհւում եմ մեր եկեղեցու առջեւ, որ տիրութիւն արեց ազգին։

Այս յատկութեամբ պէտք է օժտուած լինեն բոլոր տէրերը։ Այսօրւայ այսպէս կոչուած ժողովրդավարական շարժումները իրականում ոչ ժողովրդավարական են և ոչ էլ հայկական։ Ելցինի ու Գորբաչովի փոխյարաբերութիւնների վրայ մենք ոչինչ ունենք աւելացնելու, բայց այդ փոխյարաբերութիւններից և նրանց նկատմամբ մեր դիրքորոշումներից շատ բան կարող է կորցնել կամ ձեռք բերել Հայաստանը։ Եթէ գոյութիւն ունեն Ռուսաստանը քայքայող ուժեր, մենք չենք կարող ինքնաբերաբար կանգնել քայքայողների կողմը, քանզի կայսրութիւն տապալողները, կայսրութիւնը պահպանողներից աւելի առաջադէմ են։ Բրեժնեւեան ժամանակ մահմեդական երկրներում այլախոհներ գոյութիւն չունէին, նրանք շատ լաւ գիտակցում էին, որ այլախոհական շարժումները դրսից եկած և իրենց հետ կապ չունեցող շարժումներ են։ Իսկ հայ քաղբանտարկեալներով լեցուն էին բանտերը։ Բայց ահա վրայ հասաւ Գորբաչովեան ժամանակաշրջանը, այսինքն այլախոհների ժամը։ Ի՞նչ ձեռք բերե-

ցին Հայաստանի համար մեր Պարոյր Հայրիկեանները։ Իսկ մահմեդականները հասկացան, որ հիմա կարելի է ոտքի ելնել, որովհետեւ եկել է սեփական խնդիրները լուծելու ժամը։

Իսկ մենք վերացական փաստաթղթեր ստորագրելով փաստօրէն թողեցինք Արցախը անպաշտպան։ Բայց եթէ մենք հայերս Արցախ չպաշտպանենք, հապա ո՞վ պիտի դա անի։ Գուցէ Թուրքիան, որը արդէն ճանաչեց Ադրբեջանի անկախութիւնը գոյութիւն ունեցող սահմանների մէջ, այսինքն Ղարաբաղը ներառեալ։ Եթէ մենք մոռացութեան մատնենք Հայկական Ցեղասպանութիւնը, մի՞թէ պարզ չէ, որ աշխարհում այլեւս ոչ մէկը այդ հարցով չի զբաղուելու։ Ահաւասիկ, հէնց այս չափանիշներով է, որ մենք պէտք է գտնենք մեր իսկական տէրերին։

Տիրոջ երկրորդ չափանիշը նրա տալու և առնելու փոխյարաբերութեան մէջ է։ Իսկական տէրը տալիս է նիւթականը և ֆիզիկականը՝ հոգեկանը գնելու համար։ Մինչդեռ բոլոր շինծու տէրերը ֆիզիկական ու նիւթական հաճոյքներ են գնում՝ հոգեկան արժէքները վաճառելու գնով։ Իսկական տիրոջ համար, բացի իր ժողովրդի երջանկութիւնը տեսնելուց, ուրիշ հաճոյք չկայ։ Նա իր կեանքը ամբողջովին նւիրում է ժողովրդին, ամբողջութեամբ մերւում է նրա հետ, տառապում և ուրախանում է նրա հետ։ Ազգի իսկական տէրը ոչ միայն իր ժողովրդի ճակատագրի կերտողն է, այլեւ այդ ճակատագրի մասնիկը։ Ահա թէ ինչու չի կարող ժողովրդին տիրութիւն անել անազնիւ մարդը, երբեք չի վստահի նրան ժողովուրդը։ Չի կարող տէրը ուրիշ ազդեցութիւնների տակ լինելու կասկածներ տալ։

Ժողովուրդների կեանքում բոլոր արմատական փոփոխութիւնները կատարում են անձնական և ազնիւ մարդիկ։ Առաջին քրիստոնեաները, առաջին օրէնսդիրները, առաջին յեղափոխականները և շերիֆները՝ որոնք բոլորը ազնիւ մարդիկ էին և հէնց այդ ազնւութեան ուժով էր, որ կարողացան յաղթահարել հեթանոսութիւնը, անարդարութիւնը, անիշխանութիւնը։ Ահա թէ ինչո՛ւ առաջին վերափոխիչներից նախևառաջ ազնւութիւն է պահանջւում։ Ես կարծում եմ, որ իմ թւարկած բոլոր յատկութիւններով օժտւած է Հ.Յ.Դաշնակցութիւնը։ Գուցէ շատերը այս բանը տեսնելու համար աչք չունեն։ Բայց շուտով աչք չունեցողն էլ կը տեսնի, թէ ով է իսկական տէրը՝ այսինքն իսկական Ծառան մեր ժողովրդի։

1991

ԻՍԿ ՅԵՏՈ՞Ց

Է. Յովհաննիսեան

Քարոզարշաւի փուլն աւարտուեց: Աւարտուեցին ամբոխավարութիւնները, համերգները, կեղծ ու ճիշտ խոստումները, տարբեր ձեւերի կաշառքների մատուցումները, հեռուստատեսութեամբ տգէտների ու խելօքների ելոյթները և շատ ու շատ ուրիշ աղմկոտ և նոյնքան իմաստուն ու անիմաստ միջոցառումները, որից յետոյ մեր ժողովուրդը գնաց ընտրութիւնների՝ յայտնելու համար իր կամքը:

Բայց երբ ցրուեց այս փուլում տեղի ունեցած պատերազմի ծուխը, պարզուեց, որ ոչինչ չի փոխուել ու չէր կարող փոխուել, քանզի ո՛չ փոփոխութիւնների նպատակն էր սահմանուած և ոչ էլ փոփոխութիւններ իրականացնողներն էին յայտնի: Անհատներն ու կազմակերպութիւններն ունէին միայն մէկ նպատակ՝ ընտրուել Ազգային Ժողովի պատգամաւոր:

Ի՞նչ անելու համար:

Դա պարզ չէր ո՛չ պատգամաւորների մեծ մասի և ոչ էլ նրանց ներկայացնող կազմակերպութիւններին: Հազիւ թէ կարելի է նպատակ համարել այն յայտարարութիւնները, թէ մեզ անհրաժեշտ է զարգացնել երկրի տնտեսութիւնը, գիտութիւնը, առողջապահութիւնը, աջակցութիւն ցուցաբերել թոշակառուներին, ազգային մշակոյթին, վերացնել աղքատութիւնը, ամրապնդել բանակը և այլն: Բոլոր այս պնդումները դուրս չեն գալիս այն հանրայայտ միտումի սահմաններից, թէ մարդը որպէս մարդ ապրելու համար պէտք է նիւթական և հոգեկան սնունդ ստանալու և պաշտպանուելու հնարաւորութիւն ունենայ: Պարզ չէ, թէ որքանո՛վ քարոզարշաւի այս կարգախօսներն ազդեցին մեր ժողովրդի որոշման վրայ, թէ որքանո՛վ այդ որոշումը տարբեր ճանապարհներով պարտադրուեց մեր ժողովրդին, թէ որքանո՛վ այդ որոշումը իսկապէս մեր ժողովրդի որոշումն էր, բայց դա այսօր արդէն կարեւոր չէ: Հրդեհների փուլն աւարտուեց, ծուխը ցրուեց, ու տեսնենք, թէ ի՛նչ մնաց հրդեհից յետոյ, ո՞ր շէնքերն այրուեցին, որո՞նք դիմացան և որո՞նց ընդհանրապէս հրդեհը չհասաւ:

Նախ՝ վերադառնանք նախընտրական շրջանին ու տեսնենք, թէ ինչպիսի քաղաքական ուժեր էին այն ժամանակ իջել հրապարակ:

Դիտելով այն բոլոր կազմակերպութիւնները, շարժումները, միութիւնները, որոնք հանդէս էին գալիս որպէս քաղաքական ուժեր, կարելի է ասել, որ Հայաստանում ո՛չ այն ժամանակ և ոչ էլ այսօր բառիս բուն իմաստով քաղաքա-

կան ուժ գոյութիւն չունի: Քաղաքական ուժ իրեն կարող է համարել միայն այն քաղաքական միաւորը, որը ճգնաժամային պահերին կարող է վերցնել իր ձեռքը իշխանութիւնը և կազմակերպել երկրի բոլոր բնագաւառների գործունէութիւնը՝ տնտեսութիւնից մինչեւ առողջապահութիւն, պաշտպանութիւնից մինչեւ կրթութիւն: Դեռեւս դպրոցական դասագրքերից մեզ յայտնի էր, որ Ռուսաստանի յեղափոխութիւնից յետոյ, երբ Ռուսաստանի քաղաքական գործիչները յայտարարում էին, թէ չկայ Ռուսաստանում մի կուսակցութիւն, որը կարողանայ իր ձեռքը վերցնել իշխանութիւնը, Լենինը տեղից բացագանչում է.- «Կա՛յ այդպիսի կուսակցութիւն»: Այսօր Հայաստանում այդպիսի բացագանչող չկայ: Ուրեմն ի՞նչ ընտրութիւն կատարեց ժողովուրդը, ինչի՞ց և ի՞նչ ընտրեց:

Հայաստանում բացակայում էին քաղաքական ուժերը, բայց կային բաւականին յստակ քաղաքական մտայնութիւններ: Առնուազն երեքը ուշադրութեան արժանի են:

1.- Խորհրդային-կոմունիստական մտայնութիւն.

2.- Արեւմտասիրական մտայնութիւն.

3.- Ազգային մտայնութիւն:

Առաջինն իր ամբողջ էութեամբ անհետաքրքիր էր, քանզի նրա ուժը խորհրդային իշխանութեան մէջ էր: Առանց խորհրդային իշխանութեան, անկարելի է, որ այդ քաղաքական մտայնութիւնը կարողանայ որեւէ դրական գործ կատարել Հայաստանում:

Իսկ խորհրդային իշխանութեան վերականգնումը հայկական գործ չէ: Ո՛չ մենք ենք ստեղծել խորհրդային իշխանութիւնը և ոչ էլ մենք ենք այն տապալել, ուստի մեր գործը չէ այդ իշխանութիւնը վերականգնելու առաքելութիւնը: Եւ այս մտայնութեան կողմնակիցները նախընտրական քարոզարշաւում չէին էլ խոստանում վերականգնել խորհրդային իշխանութիւնը: Բայց արի ու տես, որ նրանք ազգային խորհրդարանում ստացան ընտրողների ձայների բարձր տոկոսը:

Երկրորդ մտայնութիւնը, այսինքն՝ արեւմտասիրութիւնը, ազգային տեսանկիւնից նոյնպէս անհետաքրքիր է, քանզի նա մեր երկիրը տանում էր դէպի ամերիկանացում: Փաթաթում էր մեր ժողովրդի վզին ազատ շուկայ, որը չէր համապատասխանում ո՛չ մեր աւանդոյթներին, ո՛չ մեր ազգային նկարագրին և ոչ էլ մեր տնտեսվարական փորձին և արդիւնաբերական կառոյցին: Ինքը՝ Արեւմուտքը, այնքանով էր շահագրգռած արդիւնաբերական հասարակարգ ստեղծելու մէջ, որ ազգային արժէքները և շահերը վնասակար էր համարում նոր հասարակարգ և նոր աշխարհ կառուցելու համար:

Եւ, վերջապէս, երրորդ քաղաքական մտայնութիւնը ազգային մտայնութիւնն էր, որի կենտրոնում կանգնած էր Հ.Յ.Դ.ն և որի գլխաւոր խնդիրը ազգային արժէքների և շահերի պաշտպանութիւնն էր:

Ընտրապայքարին մասնակցող 21 կուսակցութիւններ և դաշինքներ ի վերջոյ կազմակերպչական և գաղափարախօսական իմաստով համախմբւած էին այս երեք քաղաքական մտայնութիւնների շուրջ:

Այժմ ընտրութիւններն աւարտւած են: Շատերը համոզւած էին, որ խորհրդարանական ընտրութիւններից յետոյ ամէն ինչ կը դրւի իր տեղը, և մեր հասարակութեան մէջ, եթէ նոյնիսկ հաւասարակշռութիւն ու ներդաշնակութիւն չստեղծւի, ապա գոնէ կը ստեղծւի որոշակիութիւն: Բայց ընտրութիւններն աւարտւեցին, իսկ սպասւող որոշակիութիւնը չստեղծւեց:

Ըստ երեւոյթին, այդ որոշակիութիւնը չի էլ ստեղծւի, որովհետեւ որոշակիութիւն ստեղծելու գործադիր մարմինը բացակայում է, և ոչ բոլորն են շահագրգռւած որոշակիութեան մէջ: Միայն մեր յոգնած ու կռացած ժողովուրդն է շահագրգռւած որոշակիութեան մէջ, բայց ժողովրդի կարիքների հետ ոչ մէկը հաշւի չի նստում: Այնուամենայնիւ, մենք պէտք է պարզենք, թէ ինչպիսի, որոշակիութիւն է անհրաժեշտ ժողովրդին և ո՞ւմ պարտականութիւնների մէջ է մտնում այդ որոշակիութեան ստեղծումը:

Ժողովուրդն իրեն ինքնահաստատւած կը զգայ, եթէ նրա համար պարզեն իր վարքագծի սահմանները հետեւեալ բնագաւառներում.

ա.- Իրաւունքի,

բ.- Բարոյականութեան, հասարակական և ազգային արժէքների,

գ.- Աշխատանքի օրէնքի,

դ.- Տնտեսվարութեան,

ե.- Հայրենիքի պաշտպանութեան:

Իրաւունքի բնագաւառի որոշակիութիւնը պէտք է գծի քաղաքացու պաշտպանւածութեան սահմանները իշխանութիւններից և ներշնչի քաղաքացուն, որ բացի օրէնքից ուրիշ որեւէ ատեան (ծանօթութիւն, կաշառք, նախարարների ու նախագահների կարգադրութիւններ) չեն կարող ուղղում մտցնել օրէնքի մէջ և կամ էլ որոշում ընդունել հակառակ օրէնքի: Բնական է, որ օրինականութեան ճանապարհին կանգնած հասարակութիւնը դեռեւս երկար ժամանակ օրէնքի կողքին կ'ունենայ նաեւ հասարակական վարքագծի որոշման համար նաեւ այլ գործօններ: Բայց այս բնագաւառում որոշակիութիւն պէտք է: Ամէն մի քաղաքացի պէտք է շատ յստակ իմանայ, թէ ինչի՛ դէմ ինքը անկարող է պայքարել խաղաղ միջոցներով:

Բարոյականութեան և հասարակական արժէքների բնագաւառում որոշակիութիւնը կապ ունի հայկական ազգային նկարագրի, պատմական աւան-

դոյթների և մարդկային փոխ-յարաբերութիւնների հետ, որոնք պէտք է սանձեն արեւմտեան ազատութիւնները, որոնք մարդկութեանը տանում են չարի ու բարու միջեւ սահմանը ջնջող հակաբնական ճանապարհով: Մէկ բան է, որ չարիք գործողը դա անում է ամաչելով և իր չարութիւնը մարդկանցից թաքցնելով, բայց բոլորովին այլ բան է, երբ չարիքը օրինականացւում է պետութեան կողմից և այլեւս յանցագործութիւն չի համարւում: Բայց իրաւունքն ունի բնական ծագում, այսինքն՝ ծնւում է իրաւունքի ենթակայի հետ միասին, այլ ոչ թէ շնորհւում է պետութեան կողմից: Իրաւունքի հեղինակը ոչ թէ իշխանութիւններն են, այլ՝ բնութիւնը: Ոչ մէկին տրւած չէ հակաբնական որեւէ երեւոյթի օրինականացումը:

Աշխատանքի իրաւունքը և օրէնքը պէտք է վստահութիւն ներշնչի աշխատաւորին, որ նա կարող է բաւարարել իր ընտանիքի կարիքները և նրա ծերութիւնն ապահովւած է թոշակի ճամբով:

Որոշակիութիւնը տնտեսվարութեան բնագաւառում պէտք է յստակօրէն որոշի պետական և մասնաւոր սեփականութեան, ազատ և ազգային շուկաների փոխ-յարաբերութիւնը:

Որոշակիութիւնը հայրենիքի պաշտպանութեան բնագաւառում պէտք է ներշնչի քաղաքացիներին այն համոզւածութիւնը, որ իրեն պատկանող հողը և հայրենիքը երբեք չի փոխի իր պատկանելութիւնը, և որ բնական ու քաղաքական կողմնորոշումը ապահովում են երկրի անվտանգութիւնը:

Տեսնենք, թէ ո՞վ կարող է Հայաստանում ստեղծել անհրաժեշտ հաւասարակշռութիւնը և որոշակիութիւնը:

Մի բան շատ յստակ է, Հ.Յ.Դ.ն նախընտրական արշաւն անց էր կացնում կուսակցութեանը բնորոշ մի նշանաբանի տակ, որի համաձայն Հ.Յ.Դ.-ի համար յեղափոխութիւնը սկսւում է իշխանութիւնը ձեռք բերելուց յետոյ, մինչդեռ շատ ուրիշ կուսակցութիւնների համար յեղափոխութիւնն աւարտւում է, երբ իշխանութիւնն անցնում է նրանց ձեռքը: Բայց Հ.Յ.Դ. չունէր յեղափոխական փոփոխութիւններ կատարելու համար անհրաժեշտ իշխանութիւն, իսկ օրէնսդիր մարմնում չունէր այն ազդեցութիւնը, որպէսզի կարողանար օրէնքների ճամբով երկիրն ու ժողովուրդը դուրս բերել ճահճից:

Խորհրդարանական ընտրութիւններից յետոյ պարզւեց, որ Հ.Յ.Դաշնակցութիւնը չստացաւ այն պետական լծակները, որոնց միջոցով հնարաւոր էր կատարել պատմական փոփոխութիւններ Հայաստանի պետական կեանքում՝ դուրս բերելու համար հայ ժողովրդին և Հայաստանը տնտեսական, քաղաքական, բարոյական ճգնաժամից: Սա նշանակում է, որ առայժմ Դաշնակցութիւնը ի վիճակի է քարոզել նման փոփոխութիւններ կատարելու անհրաժեշտու-

թիւնը՝ օգտագործելով դրա համար բոլոր հնարաւոր քարոզչական միջոցները, համապատասխան հասարակական կարծիք ստեղծելու համար։

Միւս կողմից՝ Հայաստանի ազգային կեանքում կան հարցեր, որոնց լուծումը եթէ Հ.Յ.Դաշնակցութիւնն իր ձեռքը չվերցնի, ապա ոչ մէկը այդ հարցերը չի լուծի։

Տեսնենք, թէ որո՛նք են զուտ դաշնակցական բնագաւառները, այսինքն՝ նրանք, որտեղ եթէ մենք չկատարենք վճռական քայլեր, ուրիշ ոչ մէկը այդ քայլերը չի կատարի։

1.- **Հայ Դատ**. Սկզբունքների ճշտում և փաստաթղթերի պատրաստում։

2.- **Արհմիութենական շարժում, շարժման կազմակերպում**. Աշխատաւորների իրաւունքների պաշտպանութեան, ինչպէս նաեւ պայքարի միջոցների սկզբունքների մշակում։

3.- **Կաշառակերութեան և անօրինականութեան դէմ պայքար**. Քանի որ այս հարցով ի պաշտօնէ պէտք է զբաղուի ներքին գործերի նախարարութիւնը և դատախազութիւնը, պէտք է ջանալ ազդեցիկ դիրքեր գրաւել այդ հաստատութիւններում և կամ էլ ինքնուրոյնաբար կատարել խախտումների բացայայտումներ ու այդ բացայայտումները ժողովրդի սեփականութիւնը դարձնել։

4.- **Ազգային գաղափարախօսութեան մշակում, կրթութեան և մշակոյթի ազգայնականացում և ազգային արժէքների սահմանում ու պաշտպանում**։

5.- **Սփիւռքի հետ աշխատանքներ՝ «Մէկ ազգ, մէկ Հայրենիք» կարգախօսն իրականացնելու համար**։

Մի երկու խօսքով ասենք, թէ ի՞նչ կարելի է անել և արդէն արւում է նշւած բնագաւառներում, որոնք մենք համարեցինք զուտ դաշնակցական անելիքներ։

Անշուշտ, Հայ Դատն էլ և բոլոր մնացած բնագաւառներն էլ ունեն համահայկական բնոյթ, սակայն այս բնագաւառներում անելիքները կապ ունեն մեր գաղափարախօսութեան ու Ծրագրի հետ և հազիւ թէ ուրիշների կողմից արւեն, քանզի այդ աշխատանքները ո՛չ փառք, ո՛չ պաշտօն և ոչ էլ նիւթական բարիքներ չեն բերում։ Այդ աշխատանքները կատարւում են ազգին ծառայելու կարգով և այդ ծառայութեան արդիւնքները հրապարակ կ'իջնեն այն ժամանակ, երբ աշխատանքներ նախաձեռնողները այլեւս չեն լինի, բայց կը լինի կուսակցութիւնը, որն այդ աշխատանքների նախաձեռնողը կը հանդիսանայ և բոլոր յաջողութիւնները արդարացիօրէն կը վերագրւի Հ. Յ. Դաշնակցութեանը։

Հայ Դատի բնագաւառում անհրաժեշտ է.

ա.- Պատրաստել Ցեղասպանութիւնը դատապարտելու և Ցեղասպանութեան վնասների հատուցման իրաւաբանական հողը։

բ.- Արեւմտեան Հայաստան վերադառնալու մեր իրաւունքի արծարծման ռազմավարութեանը և այդ իրաւունքի իրականացման ճանապարհների որոնումը։

գ.- Ճշտել Հայապատկան հողերի Հայաստանին կցելու մարտավարութիւնը։

դ.- «Մէկ ազգ, մէկ Հայրենիք» կարգախօսի իրականացման ճանապարհների մշակումը։

Արհմիութենական շարժման կազմակերպում՝ անկախ արհմիութիւններ ստեղծելու ճանապարհով։

Արդարութեան և օրինապաշտութեան բնագաւառում անհրաժեշտ է թափանցել օրինապահ մարմինների մէջ, կազմակերպել հասարակական վերահսկողութիւն այդ բնագաւառում և սեփական օրինակով անվերապահօրէն ենթարկուել գոյութիւն ունեցող օրէնքին և ջանալ այն փոխել, եթէ օրէնքն անարդար նկատւի։

Տարբեր բնագաւառների ազգայնականացման հարցում սահմանել ազգային շահերի դաշտը և պաշտպանել այդ շահերը տնտեսվարութիւնից մինչեւ մշակոյթ, արդիւնաբերութիւնից մինչեւ կրօն։

Այս աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ է կուսակցութեան ներսում ստեղծել համապատասխան յանձնախմբեր, որոնք կը մշակեն գործունէութեան ռազմավարութիւնները և մէկ կողմից պաշտօնական խողովակներով կը հաղորդուի այդ մասին իշխանութիւններին, միւս կողմից՝ մշակւած տեսակէտները կը դարձւեն ժողովրդի սեփականութիւնը, որն իր հերթին ճնշումներ կարող է գործադրել իշխանութիւնների վրայ։

Այսպիսով, այն հարցին, որը ձեւակերպւած է այս գրութեան վերնագրում՝ «Իսկ յետո՞յ», կարելի է պատասխանել այսպէ՛ս.

Յետոյ մենք պիտի ընտրենք այն բնագաւառները, որոնց մէջ կան հարցեր, որոնք եթէ Հ.Յ.Դաշնակցութիւնը չլուծի, ուրիշ ոչ մէկը չի լուծի և կամ էլ կը լուծի ի վնաս հայ ժողովրդի։ Յետոյ Դաշնակցութիւնը պիտի ստեղծի կառավարութեանը դիմելու յստակ և վստահելի խողովակներ։ Յետոյ նա պէտք է ստեղծի հասարակական կազմակերպութիւններ և հայ ժողովրդի իրաւունքները պաշտպանող իրաւապաշտպան կազմակերպութիւններ։

Եւ, վերջապէս, Ընկերվար Միջազգայնականի ճամբով իրականացնել հայկական ազգային շահերի պաշտպանութեան միջազգայնականացումը։

Այս ընդհանուր դիտողութիւններից յետոյ հարկ է մի քիչ աւելի մանրամասնօրէն կանգ առնել Հայաստանի տնտեսութիւնը զարգացնելու ուղիների վրայ և որպէս օրինակ անդրադառնալ Բրիտանիայի փորձին, որ համարւում է խորհրդարանականութեան հայրենիքը։ Այս համեմատութիւնը կարեւոր ենք

համարում, քանզի մեր երկրի ղեկավարները և նոյնիսկ մտաւորականները ծայրայեղ տեսակէտների տէր մարդիկ են։ Կա՛մ սանձարձակ, ազատ շուկայ և կամ էլ տնտեսվարութեան վրայ բացարձակ պետական վերահսկողութեան հաստատում։

Մեծն Բրիտանիայում տնտեսութեան վրայ պետական վերահսկողութիւն հաստատելու առաջին փորձը կատարւեց Առաջին Աշխարհամարտի տարիներին, երբ բաւականին թուլացած էին Բրիտանիայի ֆինանսատնտեսական դիրքերը, վատացել էր աշխատաւորների վիճակը, աւելացել էր արհմիութիւնների ազդեցութիւնը և այդ հիման վրայ աշխուժացել էր Աշխատաւորական Կուսակցութիւնը, որը առաջին անգամը լինելով՝ մտաւ կառավարական դաշնավարութեան մէջ, իսկ 1924 թւականին առաջին անգամ ինքնուրոյնաբար կազմեց կառավարութիւն։

Աշխատաւորականների ազդեցութեան տակ Բրիտանիայում աւելացաւ կառավարութեան ազդեցութիւնը տնտեսութեան վրայ։ 1917 թւականին պետականացւեց քարածխի ամբողջ արդիւնաբերութիւնը, ինչպէս նաեւ նաւագընացութիւնը։

Երկրորդ Աշխարհամարտից յետոյ Բրիտանիան կրկին տնտեսական, ֆինանսական և քաղաքական ճգնաժամի մէջ էր, իսկ 1945 թւականից մինչեւ 1951 թւականը իշխանութիւնը կրկին Աշխատաւորականների ձեռքումն էր։ 1945 թւականին օրէնք ընդունւեց Անգլիայի Դրամատան պետականացման մասին, և երկրի պատմութեան մէջ առաջին անգամ ստեղծւեց պետական դրամատուն։ 1946 թւականին կրկին պետականացւեց քարածխի արդիւնաբերութիւնը, որն ընդգրկւեց 800 ընկերութիւններ։ Պետականացւեց գազի արդիւնաբերութիւնը, պողպատաձուլական արդիւնաբերութեան մէկ մասը, ելեկտրակայանները, ներքին երթեւեկութիւնը, քաղաքացիական օդանաւագնացութիւնը, ռադիօ-հեռուստատեսային կապը։

Բայց այս ամէնից, Բրիտանիայի կառավարութիւնն օգտագործում էր այլ միջոցներ տնտեսվարութեան վրայ ազդելու համար։ Օրինակ՝ պետութիւնը պատւէրներ էր տալիս ռազմական արդիւնաբերութեանը։ 1968 թւականին, երբ իշխանութեան գլուխ էին անցել պահպանողականները, պետական ազդեցութեան ընթացքը շարունակւեց։ Օրինակ, ընդունւեց մի որոշում, որի համաձայն պետութիւնը պէտք է աջակցութիւն ցուցաբերէր այն մասնաճիւղերին, որոնք չեն կարողանում իրենց պահել, բայց անհրաժեշտ են երկրին։

Կամաց-կամաց, երբ Բրիտանիայի տնտեսական վիճակը լաւացաւ, պահպանողական իշխանութիւնը սկսեց ապապետականացման ընթացքը։ 1979 թւականին բրիտանական տնտեսութեան արտադրանքի միայն 10 տոկոսն էր կազմում պետական արդիւնաբերութեան արտադրանքը։ 1984-1987 թւական-

ներին պետական արդիւնաբերութեան մէկ երրորդը (այդ թւում նաեւ գազի արդիւնաբերութիւնը) յանձնուեց մասնաւոր սեփականութեան մարզին: 1987 թականին մասնաւոր ընկերութիւններին վաճառուեցին նաւթարդիւնաբերութեան բաժնեթղթերը: Յետոյ՝ պողպատաձուլական գործարանները, երկաթգիծը և այլն:

Ներկայումս պետական միջամտութիւնը վերաբերում է աշխատանքի և դրամի փոխ-յարաբերութեան կարգաւորմանը: Եթէ մենք փորձենք դասեր քաղել Բրիտանիայի օրինակից, ապա կը յանգենք հետեւեալ եզրակացութեանը:

1.- Տնտեսութեան բնագաւառում պետական միջամտութեան հարցը պայմանաւորւած չէ Սահմանադրութեամբ և վարչակարգով, այլ կարող է իրականացւել Ազգային Ժողովի, այսինքն՝ օրէնսդիր մարմնի ճամբով:

2.- Տնտեսական ու քաղաքական ճգնաժամերի տարիներին պետական միջամտութեան անհրաժեշտութիւնն աւելանում է և կարող է նոյնիսկ հասնել բացարձակ պետականացման:

3.- Պետական միջամտութիւնը իրականացնելու համար անհրաժեշտ է ընկերվարական և բանւորական շարժումների աջակցութիւնը:

4.- Այն դերը, որ Մեծն Բրիտանիայում կատարում է Աշխատաւորական Կուսակցութիւնը, Հայաստանում կարող է կատարել Հ.Յ.Դաշնակցութիւնը:

1999

ԶԱՆԳԱԾԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆԸ, ՍՓԻՒՌՔԸ ԵՒ ՇՓՈՒՄՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

Է. Յովհաննիսեան

Այն օրից, ինչ Սպինոզան հռչակեց, թէ բոլոր ճշմարտութիւնների ետեւից պէտք է գնալ այնտեղ, որտեղից մենք իմացանք, որ երկու անգամ երկու չորս է, բոլոր երկրներում հասարակական երեւոյթների մասին գիտութիւն ստեղծելու փորձեր կատարուեցին: Բոլորը որոնում էին մի ինչ որ ընդհանուր օրինաչափութիւն, որի միջոցով բացատրելի ու գուշակելի դառնային հասարակական երեւոյթները:

Օգիւստ Կոնտը առաջինն էր, որ օգտագործեց հասարակագիտութիւն բառը և իբր թէ յայտնաբերեց հասարակական զարգացման երեք անխուսափելի փուլերի օրէնքը: Աւելի ուշ Հերբերտ Սպենսերը հռչակեց իր յայտնի զարգացման օրէնքը, որին իբր թէ ենթարկւում էին հոգեբանական, տիեզերական, կենսաբանական և հասարակական բոլոր երեւոյթները: Անցեալ դարի 40ական թւականները նոյնպէս դարձան ընդհանուր հասարակական օրինաչափութիւնների հաստատման ժամանակաշրջան, որտեղ հիմնական շեշտը դրւում էր տնտեսական սկզբունքի վրայ և որի արդիւնքը դարձան, յատկապէս Ֆրանսայում, ընկերվարական և համայնավարական տեսութիւնները:

Գերմանիայում կար այնպիսի ժամանակաշրջան, որ Հեգելի փիլիսոփայութիւնը ճանաչւում էր միակ իրական փիլիսոփայութիւն: Պատահական չէ, որ Մարքսը ինքը խոստովանեց, թէ իր տեսութիւնը միայն Հեգելեան **դիալեկտիկայի** տնտեսականացումն է:

Մարքսից ուղիղ 100 տարի յետոյ, մէկ ուրիշ հրեայ, այս անգամ ամերիկացի՝ Նորբերտ Վիները, հռչակեց **«Կիբերնետիկա»** կոչւող գիտութիւնը, որի օրինաչափութիւնները իբր թէ հաւասարաչափ պիտանի և օգտագործելի էին և՛ արտադրական, և՛ կենսաբանական, և՛ հասարակական համակարգերի նկատմամբ:

Սակայն բոլոր այս փորձերը կրում էին զուտ տեսական բնոյթ և նրանցից ոչ մէկը չկարողացաւ դառնալ **կոնկրէտ** հարցեր լուծելու համար հիմք: Այսինքն այդ օրինաչափութիւններից և ոչ մէկը գիտական կոչւելու իրաւունքը չստացաւ: Ո՛չ Կոնտի զարգացման երեք փուլերը, ո՛չ Հեգելի «բացասման բացասման» օրէնքը, ո՛չ Մարքսի մէկը միւսին յաջորդող 5 կացութաձեւերի օրինաչա-

փութիւնը և ոչ էլ Վիների յետադարձ կապի օրինաչափութիւնը չէին կարող օգտագործել **կոնկրէտ** հասարակական խնդիրներ լուծելիս։

Եւ դա հասկանալի էր։

Մեր օրերին ոչ մի գիւտարար նոր օդանաւ ստեղծելիս չի օգտւի, օրինակ, մոլորակների փոխադարձ ձգողական ուժերի օրէնքներից, այլ կ'ուսումնասիրի **կոնկրէտ** նիւթերի յատկութիւնները և նրանց մշակելու հնարաւորութիւնները։ Այսինքն կ'օգտւի ոչ թէ ընդհանուր, այլ մասնաւոր օրինաչափութիւններից։ **Տեխնիկ**ական ասպարէզում շատ պարզ այս հարցը, դժբախտաբար, կորցնում է իր պարզութիւնը, երբ բնական գիտութիւնների ասպարէզից մենք տեղափոխւում ենք հասարակական ասպարէզը։ Այստեղ արդէն, անկախ նրանից թէ ո՞ր հասարակական խմբի մասին է խօսքը՝ Հայկական Սփիւռքի, Միացեալ Նահանգների հնդիկների, ֆրանսական ժողովուրդի, թէ՞ Կիպրոսի յոյների, մեզ առաջարկում են ընդհանուր ընկերային չափանիշներ, որոնք նոյն չափ անպիտանի են տւեալ հասարակական միաւորման խնդիրները լուծելու համար, որքան անպիտանի է ինքնաշարժ ստեղծողի համար Այնշտայնի յարաբերականութեան տեսութիւնը։ Աւելին, հասարակական ոչ մի օրինաչափութիւն չի հասել, և սկզբունքօրէն չի էլ կարող հասնել, բնական օրինաչափութիւնների ճշգրտութեանը. և այդ իմաստով, հասարակական օրինաչափութիւնները միայն մեծ վերապահումներով կարող են կոչւել գիտական, իսկ հասարակագիտութիւնը՝ գիտութիւն։

Եւ, ուրեմն, հասարակական երեւոյթները ուսումնասիրելիս էլ աւելի պէտք է նմանւել այն գիտնականներին, որոնք ժամանակ չկորցնելով տիեզերական օրինաչափութիւնների վրայ, մանրամասնօրէն ուսումնասիրում են այն նիւթերի յատկութիւնները, որոնց միջոցով պէտք է իրականացւի իրենց գաղափարը։

Մեզ համար այդ հասարակական նիւթը Սփիւռքն է, իսկ գաղափարը՝ հայապատկան հողերի վերադարձը։ Ու քանի որ Սփիւռքը իւրայատուկ զանգւած է, անհրաժեշտ է նախ և առաջ պարզել, թէ ունի՞ արդեօք այս զանգւածը այն, ինչը կոչւում է զանգւածային ոգի, կամ զանգւածային հոգեբանութիւն։

Այս կապակցութեամբ ես օգտակար համարեցի փոքր ինչ կանգ առնել «զանգւածային հոգեբանութիւն» հասկացութեան վրայ, որի մասին տարբեր հեղինակներ յայտնել են տարբեր կարծիքներ։

Սկսեմ **«Զանգւածային հոգեբանութիւնը»** գրքի հեղինակ Լէ Բոնից, որը իր գրքում ասում է հետեւեալը. **«Հոգեբանական զանգւածում ամենատարօրինակը հետեւեալն է. ինչպիսին էլ որ լինեն նրան կազմող անձերը, որքան էլ միանման կամ տարբեր լինեն նրանց ապրելակերպը, զբաղմունքները և կրթական**

մակարդակները, միայն զանգած դառնալու փաստի հիման վրայ, նրանք ձեռք են բերում զանգւածային ոգի, որի հետեւանքով նրանք բոլորովին այլ կերպ են մտածում, զգում և վարւում, քան եթէ նրանցից ամէն մէկը մտածէր, զգար և վարւէր առանձին: Կան գաղափարներ և զգացմունքներ, որոնք արտայայտւում և գործի են վերածւում միայն զանգւածային միաւորութիւն ունեցող մարդկանց մօտ: Հոգեբանական զանգւածը առանձին մասնիկներից բաղկացած մի բարձրակարգ էակ է, որը ունի նոր յատկութիւններ, ճիշտ այնպէս, ինչպէս բջիջներից բաղկացած կենդանի մարմինը ունի բոլորովին այլ յատկութիւններ, քան նրան կազմող բջիջը»:

Պէտք է ասել, որ Լէ Բոնը խուսափում է պատասխանել այն հարցին, թէ ինչն է կապում անձերին, նրանց զանգւած դարձնելով: Նա միայն ընդգծում և քննարկում է այն հարցը, թէ ինչու և ինչպէս է փոխւում մարդը զանգւածի ներսում: Այդ փոփոխութեան համար հեղինակը տեսնում է երեք պատճառ:

Ըստ Լէ Բոնի, առաջինը կայանում է նրանում, որ զանգւածի ներսում անձը ամբողջ զանգւածային հոգօրութիւնը վերագրում է իրեն: Իրեն հզօր զգալով, նա հնարաւորութիւն է ստանում բաւարարութիւն տալու իր այն զգացմունքներին, որոնց ստիպւած էր սանձելու մենակ եղած ժամանակ: Բացի դրանից, իր ցանկութիւնները սանձելու առիթները պակասում են, որովհետեւ զանգւածի ներսում նա գրեթէ ամբողջովին կորցնում է անձնական պատասխանատուութեան զգացմունքը: Երկրորդ պատճառը՝ համակւածութիւնն է: Համակւածութիւնը,- ըստ Լէ Բոնի,- հեշտ նկատելի, բայց անբացատրելի բան է: Համայնքի ներսում վարակիչ է ամէն մի զգացմունք, ամէն մի շարժում և այն էլ այն աստիճանի, որ մարդը կրկնելով ուրիշներին, ընտրում է իր էութեանը բոլորովին հակառակ վարքագիծ:

Եւ, վերջապէս, երրորդ պատճառը՝ ներշնչումն է: Լէ Բոնը համարում է, որ ամբոխը հիպնոզացնում է անձին և նրա մէջ չափից աւելին զարգանում է ներշնչելու յատկութիւնը:

Շարունակելով իր ուսումնասիրութիւնները զանգւածային հոգեբանութեան ասպարէզում, Լէ Բոնը յանգում է այն եզրակացութեան, որ զանգւածները բարոյականութեան իմաստով երբեմն լինում են աւելի բարձր, քան նրա առանձին անդամները և որ միայն մարդկանց հաւաքականութիւնն է ընդունակ բարձր հաւատարմութեան և անշահախնդրութեան: **«Անձնական շահը**,- ասում է նա,- **մեկուսացած մարդու գործունէութեան միակ դրդապատճառն է, իսկ զանգւածի համար նա գրեթէ բացակայում է»**:

Ուրիշ հեղինակներ, մասնաւորապէս մարքսիստները, ընդհանրապէս ժխտում են մարդու ոչ հասարակական էութիւնը, կապելով նրա գոյութիւնը միայն ու միայն զանգւածի, կամ դասակարգի հետ: Բայց միւս կողմից, փաստը

մնում է փաստ, որ բոլոր մեծ մտային որոշումները, յայտնագործութիւնները և խնդիրների լուծումը կատարւում են առանձին անձերի կողմից մեկուսացած աշխատանքի շնորհիւ: Դրա հետ միասին մեզ յայտնի է, որ զանգւածները նոյնպէս ընդունակ են հանճարեղ հոգեկան ստեղծագործութիւնների, ինչպիսիք են լեզուն, ժողովրդական արւեստը և ժողովրդական իմաստութիւնը:

Այստեղ կարծես թէ ծագում է հակասութիւն, բայց իրականում, ըստ երեւոյթին, հակասութիւն չկայ: Պէտք է ենթադրել, որ զանգւած հասկացութիւնը տարբեր հեղինակներ օգտագործել են տարբեր իմաստով: Լէ Բոնը, Զիգելեն և ուրիշներ ի նկատի ունէին ժամանակաւոր զանգւածները, որոնք ստեղծւում են մի ինչ որ նպատակի հասնելու համար: Անշուշտ, այս հեղինակների աշխատութիւնների վրայ մեծ ազդեցութիւն էին թողել ֆրանսական յեղափոխութեան օրերին կազմւող յեղափոխական զանգւածները: Բայց կան նաեւ հաստատուն զանգւածներ, որոնցից ամենակարեւորն ազգն է, որոնց նկատմամբ միայն մասամբ կարելի է օգտագործել Լէ Բոնի կամ մարքսիստների տեսակէտները:

Կեմբրիջի խոշոր հասարակագէտ Մակ Դագալը, խմբերին նւիրւած իր աշխատութեան մէջ, փորձում է լուծել այս հակասութիւնը կազմակերպչական հողի վրայ: **«Ամենապարզ դէպքում**,- ասում է նա,- **մարդկային խումբը զուրկ է որեւէ կազմակերպչական սկզբունքից»**, և այդպիսի խումբը նա անւանում է ամբոխ: Ամբոխը զանգւած դարձնելու համար անհրաժեշտ են մէկը միւսի վրայ ազդելու պայմաններ, որոնք հնարաւոր են միայն այն դէպքում, երբ զանգւածի առանձին անդամները ունեն որեւէ ընդհանրութիւն: Ամբոխը նմանւում է անդաստիարակ երեխայի, որը բացի սեփական հզօրութեան զգացմունքից ոչինչ չունի՝ ո՛չ ինքնագիտակցութիւն, ոչ պատասխանատւութեան զգացմունք և ոչ էլ բարոյականութիւն: Ըստ Մակ Դագալի, այսպիսի ամբոխը կարգաւորւած զանգւած դարձնելու համար անհրաժեշտ են հետեւեալ 5 պայմանները:

Առաջին՝ զանգւածի որոշ աստիճանի հաստատուն լինելը: Այս հաստատուն լինելը կարող է լինի նիւթական և ձեւական: Առաջին դէպքում զանգւածի անդամները մնում են զանգւածի ներսում երկար ժամանակ: Երկրորդ դէպքում զանգւածի ներսում ստեղծւում են որոշ պաշտօններ, որոնց վրայ նշանակւում են մէկը միւսին փոխարինող անձեր:

Երկրորդ՝ զանգւածի ամէն մի անդամ պէտք է որոշակի պատկերացում ունենայ զանգւածի Էութեան, նրա խնդիրների, նւաճումների և պահանջների մասին, որպէսզի նրա մօտ զանգւածի հետ յարաբերւելու զգացմունք առաջանայ:

Երրորդ՝ զանգւածը պէտք է յարաբերութիւնների մէջ մտնի և նոյնիսկ մրցի ուրիշ զանգւածների հետ, որպէսզի տեղի ունենայ զանգւածի ինքնահաստատումը:

Չորրորդ՝ զանգւածը պէտք է ունենայ աւանդութիւններ, սովորութիւններ և օրէնքներ, մանաւանդ այնպիսիները, որոնք վերաբերւում են զանգւածի անդամների փոխյարաբերութիւններին։

Հինգերորդ՝ զանգւածի ներսում պէտք է գոյութիւն ունենայ աշխատանքի բաժանում։

Բոլորովին այլ տեսանկիւնից է ուսումնասիրում զանգւածային հոգեբանութիւնը Ֆրոյդը։ Նա ուսումնասիրում է երկու այնպիսի զանգւածներ, որոնցից մէկը ունի առաջնորդ, իսկ միւսում առաջնորդը բացակայում է։ Այսպիսի զանգւածների միջեւ գոյութիւն ունեցող տարբերութիւնների վրայ ուրիշ հեղինակներ շատ քիչ ուշադրութիւն են դարձրել։ Ֆրոյդը որպէս նշւած զանգւածների վառ օրինակներ ուսումնասիրում է հաւատացեալներին միացնող եկեղեցին և զէնքի ծառայողներին միացնող բանակը։

Թէ՛ եկեղեցին և թէ բանակը արհեստական զանգւածներ են, այսինքն այնպիսիք, որոնք առանց արտաքին ազդեցութիւնների լուծարքի կ'ենթարկւէին։ Որքան էլ որ տարբեր լինեն եկեղեցին ու բանակը, երկուսն էլ խարսխւած են այն գաղափարի վրայ, որ գոյութիւն ունի բարձրագոյն իշխանաւորը՝ Աստւած կրօնաւորների և գլխաւոր հրամանատարը զօրքի համար, որոնք հաւասար սիրով, առանց խտրականութեան սիրում են զանգւածի բոլոր անդամներին։ Եթէ այս գաղափարը վերանայ, ապա երկու զանգւածներն էլ լուծարքի կ'ենթարկւեն։ Ֆրոյդը համարում է, որ ազգասիրութիւնը, հայրենասիրութիւնը և նման զգացմունքները բոլորովին պարտադիր չեն բանակի ամրութեան համար, որ Մակեդոնացու, Կեսարի, Նապոլէոնի և շատ ուրիշ հզօր բանակների փորձը ապացուցում է դա։ Նրա կարծիքով զանգւածի ամրութիւնը անմիջականօրէն պայմանաւորւած է զանգւածի անդամների փոխադարձ կապերի և հրամանատարի հետ ունեցած կապերի ամրութեամբ։ Բայց միաժամանակ նա համարում է, որ հրամանատարի հետ կապը կտրւելուց յետոյ, որպէս օրէնք, կտրւում են նաեւ փոխադարձ կապերը։ Այդ պահին զանգւածը քայքայւում է և եթէ խօսքը բանակի մասին է, ապա նա խուճապի է մատնւում։ Խուճապի պահին ամէն մի անձ սկսում է մտածել միայն իր մասին այն պարզ պատճառով, որ փոխադարձ կապերը կտրւած են։

Այստեղ Ֆրոյդի հիմնական թեզը կայանում է նրանում, որ ոչ թէ արտաքին վտանգն է խզում զանգւածի ներսի փոխադարձ կապերը, այլ հակառակը՝ կապերի ինչ-ինչ պատճառներով խզւելուց յետոյ, ուժեղանում իսկ երբեմն էլ ծագում է արտաքին վտանգը, որովհետեւ կապերից զրկւած և մենակ մնացած անձը աւելի անպաշտպան է դառնում։ Այսինքն զանգւածը քայքայող խուճապային վիճակը ի յայտ է գալիս որպէս փոխադարձ կապերի թուլացման արտայայտութիւն։

Ապացուցելու համար, որ կրօնական զանգւածները նոյնպէս կարող են քայքայւել, եթէ վերանան Աստծոյ հետ կապերը, որովհետեւ դրա հետ միասին վերանում են փոխադարձ կապերը, Ֆրոյդը օրինակ է բերում մի անգլիական կաթոլիկի կողմից գրւած «Երբ դեռ մութ էր» վէպը։

Վէպում նկարագրւած է, թէ ինչպէս մի խումբ զեղծարարներ իբր թէ Երուսաղէմում գտնում են մի գերեզման, որտեղ Յովսէփ Արիմաւիացու խոստովանութեամբ թաղւած է եղել Յիսուսը։ Իբր թէ խաչւելուց յետոյ նրա դիակը գողացել էր Յովսէփը և թաղել այդ գերեզմանում։ Դրանով վերջ էր տրւում Յիսուսի յարութիւն առնելու առասպելին և նրա Աստծոյ որդի լինելուն։ Այդ յայտնագործութիւնը ամբողջովին քայքայում է կրօնական զանգւածը և սպառնում է վերջ տալ ամբողջ եւրոպական քաղաքակրթութեանը։ Եւ միայն պարզելուց յետոյ, որ գերեզման գտնողները զեղծարարներ էին, ամէն ինչ վերականգնւում է։

Այստեղից Ֆրոյդը գալիս է այն եզրակացութեան, որ զանգւածները կարող են գոյատեւել նաեւ առանց առաջնորդների, եթէ առաջնորդներին փոխարինեն բոլորի համար ընդունելի գաղափարները։

Այս տեսակէտներին կարելի էր աւելացնել նաեւ խորհրդային հասարակագէտների կարծիքը, որոնցից ամենանշանաւորը՝ Շլեպենտոխը գրում է հետեւեալը. **«Հասարակագիտութիւնը կուսակցական գիտութիւն է և նա հասարակական երեւոյթները ուսումնասիրելիս պահանջում է դասակարգային մօտեցում: Մարքսիստ հասարակագէտները գլխաւոր ուշադրութիւնը կենտրոնացնում են այն հաւաքականութիւնների վրայ, որոնք կոչւում են դասակարգեր: Իր հերթին դասակարգը բաղկացած է հասարակական խմբերից, որոնց հիմնական յատկանիշը ներքին կազմակերպւածութիւնն է: Հասարակական խումբը, որպէս օրէնք, մեծ նշանակութիւն է տալիս այն ամէնին, ինչը նպաստում է նրա միասնութիւնը** (կարեւոր միտք է)**: Օրինակ, կրծքանշանները ինքնըստինքեան մեծ նշանակութիւն չունեն, սակայն նոյնիսկ խմբին վերապահութեամբ մօտեցող մարդիկ ձգտում են ձեռք բերել խմբի կրծքանշանը: Բացի դրանից խմբերը իրենց անդամների միասնութեան համար օգտագործում են հանդիպումներ, կազմակերպում են հրատարակութիւններ և դասախօսութիւններ: Այդ հարցում մեծ դեր կարող է կատարել խմբի ղեկավարը: Եթէ նա ունի հեղինակութիւն, ապա նրա ազդեցութիւնը խմբի միասնութեան վրայ մեծ է»:**

Այսպիսով մենք տեսնում ենք, որ գրեթէ բոլոր հասարակագէտները զանգւածային հոգեբանութիւնը, մտածելակերպը, գործունէութիւնը և ընդհանրապէս միասնական հասարակական զանգւած կամ խումբ կոչւելու իրաւունքը կապում են մի շարք բաների գոյութեան հետ, որոնցից գլխաւորներն են, առաջնորդի կամ գաղափարի առկայութիւնը, կազմակերպւածութիւնը, ընդհանուր նպատակը և զանգւածի անդամների փոխադարձ կապերը։

Այժմ մի պահ կանգ առնենք ու փորձենք պարզել, թէ արդեօք Սփիւռքը օժտուա՞ծ է զանգւածի յատկութիւններով։ Ունի՞ արդեօք նա զանգւածային հոգեբանութիւն։ Զանգւա՞ծ է, թէ ամբոխ Սփիւռքը։ Արդեօք Սփիւռքի ամէն մի անդամ Սփիւռքի ներսում և Սփիւռքով պայմանաւորւած իրեն աւելի հզո՞ր է զգում։ Թէ՞ Սփիւռքը մեզ համար մի ծանր բեռ է, որ մենք ժառանգել ենք նախորդ սերունդներից և մենք միայն աւանդական կարգով ենք վճարում մեր տուրքերը, ջանալով որքան կարելի է շուտ ազատւել այդ բեռից։ Գիտի՞ արդեօք ամէն մի Սփիւռքի անդամ Սփիւռքի գլխաւոր նպատակների մասին և զգո՞ւմ է արդեօք նա իրեն այդ զանգւածի անբաժանելի մասնիկ։ Այս և նման հարցերի պատասխանները հազիւ թէ հնարաւոր լինի գտնել ամբողջ Սփիւռքի համար։ Կարելի է վերյիշել Լիբանանի դէպքերը, երբ Սփիւռքի այդ հատւածի մարդիկ իսկապէս որ զգացին իրենց հաւաքական ուժը։ Կարելի է բերել նաեւ բազմաթիւ օրինակներ, երբ երեւակայելի արտաքին վտանգը պառակտել ու խուճապի է մատնել ակումբներ ու ամբողջ գաղութներ։ Այս ամէնը ճիշտ է։ Բայց բոլոր այս երեւոյթների վերլուծութիւնը այնքան բարդ է, որ հազիւ թէ այսօր դա հնարաւոր լինի։

Սակայն մէկ բանը իմ կարծիքով պարզ է։ ՍՓԻՒՌՔԻ ՆԵՐՔԻՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԵՐԸ ԿԱ՛Մ ՇԱՏ ԹՈՒՅԼ ԵՆ ԵՒ ԿԱՄ ԷԼ ԼՐԻՒ ԲԱՅԱԿԱՅՈՒՄ ԵՆ։ Սփիւռքի մտաւորականները ոչ միայն չեն ճանաչում իրար, այլ նոյնիսկ չեն էլ լսել մէկը միւսի մասին։ Այսինքն Սփիւռքում բացակայում է զանգւածային հոգեբանութեան գլխաւոր գործօնը՝ անդամների փոխադարձ կապերը։ Առանց այդ կապերի, առանց ներքին շփումների անկարելի է դառնում միասնական գործունէութիւնը։ Բայց ինչպիսի՞ն կարող են և պէտք է լինեն այդ կապերը։ Այստեղ ուզում եմ յիշեցնել Շոպենհաւէրի յայտնի օրինակը մրսող ոզնիների մասին։ Ձմրան մի ցուրտ օր ոզնիները հաւաքւել են կողք-կողքի ցրտից փրկւելու համար։ Բայց շուտով նրանցից իւրաքանչիւրը զգաց հարեւանի սուր ասեղները և նրանք բաժանւեցին։ Սակայն ցուրտը կրկին ստիպեց նրանց հաւաքւել և կրկին ասեղները ստիպեցին բաժանւել։ Այս բանը տեղի ունեցաւ այնքան անգամ մինչեւ որ ոզնիները գտան համապատասխան տարածութիւն, որի ժամանակ է՛ւ ցուրտն էր տանելի է՛ւ ասեղներն էլ շատ խիստ չէին ծակում։

Մենք էլ կարող ենք մօտենալ իրար այնպէս, որ շատ ցուրտ չլինի Սփիւռքում և ոչ էլ կուսակցական ասեղները շատ խիստ ծակեն։ Իսկ դրա համար անհրաժեշտ են հանդիպումներ, մէկը միւսին յաջորդող **կոնֆերանս**ներ, **սեմինար**ներ, երգատօներ, մարզական հանդիպումներ և այլն, և այլն։

Թէ որքանով օգտակար են ու անհրաժեշտ մեր ներքին շփումները, ինձ համար պարզ դարձաւ, երբ ես իմ մի քանի ընկերների հետ (ինչ մեղքս թաքցնեմ՝ դողը սրտումս) գնացի Բարեգործարանի յոբելեանին մասնակցելու։ Այստեղ

ներկայ էին ոչ միայն նրանք, ովքեր իրենց մամուլի էջերում շան լափն էին լցնում իմ գլխին, այլեւ ինքը Համազասպեանը: Բայց մենք գնացինք, որովհետեւ լաւ հասկանում էինք շփումների անհրաժեշտութիւնը: Եւ ի՞նչ: Ամէն ինչ կարգին էր, բացի նրանից, որ նիստերից մէկի ժամանակ մեզ խնդրեցին դուրս գալ սրահից: Դա էլ ոչինչ, դուրս եկանք առանց վիրաւորուելու, հասկացանք, որ մի քիչ շատ էինք մօտեցել և ասեղները սկսել էին ծակել: Բայց մնացածը շատ օգտակար էր: Ինձ մօտենում էին անծանօթ մարդիկ և ասում, որ կարդացել են իմ յօդուածները, որ որոշ բաների հետ համաձայն չեն, բայց որոշ մտքեր ընդունելի են: Մենք վիճում էինք, փոխանակում կարծիքներ, բայց ամենակարեւորը այն էր, որ շփւում էինք և շփւելուց յետոյ բաժանւում որպէս բարեկամներ: Յիշում եմ, որ մեր շատ յայտնի կրօնական գործիչներից մէկը (դիտաւորեալ չեմ ուզում տալ նրա անունը) ինձ հետ ծանօթանալուն պէս բացականչեց. «Օ, դուք շատ վտանգաւոր մարդ էք»: Իսկ բաժանւելիս վերցրեց իր հետ իմ յօդւածներից մէկը և խնդրեց, որ ես իրեն ուղարկեմ իմ «Գիտութիւնը և կրօնը» յօդւածը:

Սա շփումների անհրաժեշտութեան միայն փոքր օրինակներ են: Շատ աւելի կարեւոր են այնպիսի շփումները, որոնց շնորհիւ ստեղծւում է զանգւածային հոգեբանութիւն: Այդպիսի շփումները նախ և առաջ պէտք է սկսւեն մտաւորականներից: Իմ կարծիքով Սփիւռքի հայ մտաւորականութիւնը կարող էր ստեղծել Սփիւռքի գիտական խորհրդի նման մի ինչ որ մարմին, որը թէեւ չէր ունենայ իշխանութիւն, բայց կարող էր հանդէս գալ խորհրդատուի դերում: Իմ կարծիքով, ամերիկահայութեան նախաձեռնութիւնը այդ ուղղութեամբ գնահատելի է: Ես նկատի ունեմ **«Արմինիրն Էսամբլի»**ի գործունէութիւնը: Սակայն ինչ-ինչ պատճառներով նա չի դառնում համասփիւռքեան հաստատութիւն: Այդպիսի համասփիւռքեան հաստատութիւն կարելի էր կազմել քաղաքական իմաստով լրիւ չէզոք հողի վրայ: Կարելի էր, օրինակ, առաջին հանդիպումը կազմակերպել քննարկելու համար Սփիւռքում մարդահամար անցկացնելու հնարաւորութիւնը: Այս կապակցութեամբ Միւնխենի նորաստեղծ «Հայկական Հարցերի հաստատութիւնը» մտադրել է կազմակերպել մի շարք **կոնֆերանս**ներ և **սեմինար**ներ: Թէ ո՛րքանով կը յաջողւեն այդ հանդիպումները՝ ցոյց կը տայ ժամանակը: Եթէ չյաջողւեն, դժբախտաբար ստիպւած կը լինենք եզրակացնելու, որ ոչ միայն քաղաքական հողի վրայ են խարսխւած մեր տարակարծութիւնները, այլ պարզ հասարակագիտական տեղեկութիւնների շուրջ համախմբւելիս էլ փշերը փոխադարձաբար ծակծկում են:

1977

ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

(ՎԻԵՆՆԱՅԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԵՒ ԻՍԿԵՆԴԷՐ ՕՀՐԻԻ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ)

Է. Յովհաննիսեան

Այս երկու գրութիւնները ինձ հասան գրեթէ միաժամանակ։ Մէկը ուղղուած էր Վիեննայի Ուսանողական և Երիտասարդական Միութեանը և Վիեննայի Եկեղեցական Վարչութեան կողմից նամակը ստորագրել էին Վարչութեան ատենապետը, փոխ ատենապետը և ատենադպիրը։ Միւսը՝ Իսկենդէր Օհրիի կոչն էր, որը հեղինակը ուղղել էր արտասահմանի հայերին։ Այս երկու գրութիւնները՝ թուրք մտաւորականի և Հայ Առաքելական Եկեղեցւոյ ներկայացուցիչների անմիջականօրէն վերաբերում են ինձ և նրանք այնքան նման են, որ որոշեցի նրանց տալ մէկ պատասխան։

Վիեննայի Եկեղեցական Վարչութեան գրութիւնը վերաբերում է ինձ, որովհետեւ երկու քաղաքական բնոյթ կրող դասախօսութիւնները, որոնց մասին խօսւած է գրութեան մէջ, ես եմ կարդացել։ Իսկ Իսկենդէր Օհրիի կոչը ուղղուած է արտասահմանի հայերին, այսինքն այդ թւում՝ նաեւ ինձ։ Այս երկու գրութիւնների միտքը յստակ է,- Հայ երիտասարդները չպէտք է զբաղւեն քաղաքականութեամբ։ Օհրիի մտահոգութիւնը պարզ է՝ մեր քաղաքական գործունէութիւնը ուղղուած է նրա պետութեան դէմ և, որպէս թուրք քաղաքացի, նա բնականաբար արտայայտում է հետեւեալը միտքը.

-«Արտասահմանի հայերը պէտք է այլեւս ճշմարտութիւնները տեսնեն, ուրիշների խաղերին և ռազմավարութեանց գործիք չդառնան։ Այս երկրում ապրող մեր հայրենակիցներն էլ պէտք է որ խանգարեն այդ խաղերը և դրանք արգելելու համար իրենց ամբողջ կարելին գործ դնեն և այս առթիւ՝ արտասահմանի իրենց ցեղակիցներին էլ զգուշացնեն։ Պէտք է դաս քաղել անցեալի դէպքերից ու փորձառութիւններից և ձեռք ձեռքի տալ՝ այդ սմսեղուկ և արիւնոտ խաղը խանգարելու, արգելելու համար»։

Իսկենդէր Օհրի, դուք կարող էք հանգիստ քնել. Վիեննայի Հայ Առաքելական Եկեղեցու Վարչութիւնը քաղել է անցեալի դէպքերի դասերը և խանգարում է երիտասարդներին քաղաքական դասախօսութիւններ կազմակերպել, որոնցից մէկը նւիրւած էր Հայ Դատին, իսկ միւսը՝ հայ պետականութեանը։

Նման դասախօսութիւնների արգելման որոշումը Եկեղեցական Վարչութիւնը ձեւակերպում է այսպէս, «Ի սէր մեր համայնքի խաղաղութեան և միաս-

նականութեան, կրկին ձեր ուշադրութեան կը յանձնենք, որ եկեղեցւոյ սրահին մէջ քաղաքական բնոյթ կրող ձեռնարկներ կամ բանախօսութիւններ պէտք չէ կազմակերպուին»:

Սրան տրւում է նաեւ այսպիսի մի բացատրութիւն, «Մեր Ս. Հռիփսիմէ եկեղեցին համայնքի և երիտասարդութեան ընկերային և մշակութային հաւաքոյթներուն ու ձեռնարկներուն համար միայն սարքւած կեդրոն մըն է»: Ինչպիսի՛ համեմատութիւն: Թուրք ոչ պաշտօնական դիւանագէտի և Եկեղեցական Վարչութեան ձգտումները համընկնո՛ւմ են:

Էլ ինչո՞ւ էք մտահոգւում, յարգելի պարոն Իսկենդէր: Դուք առաջարկում էք մոռանալ անցեալը և ձեռք ձեռքի տալ մշակութային հողի վրայ, իսկ մեր Եկեղեցական Վարչութիւնը յայտարարում է, թէ իր սրահում կարելի է երգել, պարել և **դոլմա** ուտել, բայց Աստւած չանի յիշատակել, թէ մեր Դատը դեռեւս լուծւած չէ:

Վիեննայի երիտասարդները, որ շատ վրդովւած էին Եկեղեցական Վարչութեան նամակով, ինձ ասացին, որ նամակի տակ ստորագրողները հայերէն կարդալ և գրել չգիտէին և նրանց նամակը գրողը ուրիշ անձնաւորութիւն է: Շատ ափսոս, որովհետեւ եթէ ստորագրողները հայերէն կարդալ իմանային, ապա տեղեակ կը լինէին, որ մեր Հայ Առաքելական Եկեղեցին, Աւարայրից մինչեւ Սարդարաբադ, Ղեւոնդ Երէցից մինչեւ Խրիմեան Հայրիկ և Գարեգին Յովսէփեանց, կանգնած է եղել իր ժողովրդի կողքին լուսաւորութեան, դիւանագիտութեան և պատերազմների դաշտերում:

Եւ ինչո՞ւ դիմել անցեալին: Ահաւասիկ մեր ներկան: Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Առաջինը, հարցազրոյց ունենալով Հ.Յ.Դաշնակցութեան Ֆրանսայի օրգան «**Ազատամարտ**» շաբաթաթերթի հետ, նշեց որ Հայաստանի ժողովուրդը հայկական հողերի մտահոգութիւններով կ՚ապրի: Ամէն մարդ, քաղաքացին և մինչեւ հեռաւոր գիւղի բնակիչը, կը հաւատայ մեր Դատին արդարութեանը: Ես կը կարծեմ, որ մեր Դատը միայն մէկ ձեւով կրնայ լուծւիլ, երբ մեծ պետութիւններէն մէկը հարց դարձնէ: Ես չեմ կարծեր, որ ահաբեկչական աշխատանքները օգուտ կրնան բերել, կրնան և ժխտական արդիւնք ունենալ: Մեր Դատը պէտք է հետապնդւի այլապէս,- անդուլ քարոզչական աշխատանքով և յարաբերութեամբ: Մեր ուժերը պէտք է զսպանակենք, մեծ պետութիւնները պէտք է համոզենք»:

Որքա՛ն գեղեցիկ են հնչում Ամենայն Հայոց Կաթողիկոսի բերանում «մեր Դատը», «մեր ուժերը» բառերը: Լսո՞ւմ էք, Վիեննայի Եկեղեցական Վարչութիւն, ձեզ է խօսում Հայ Առաքելական Եկեղեցու Նորին Սուրբ Օծութիւն Կաթողիկոսը: Լսեցի՞ք, «մեր Դատը», ասում է նա, իսկ դուք դուրս էք անում ձեր սրահից նրանց, ովքեր «մեր Դատի» մասին դասախօսութիւն էին կազմակեր-

պել: Քնա՞ծ էք, ի՞նչ է, մի՞թէ չէք տեսնում, որ մեր ժողովուրդը այլեւս կրօնական համայնք չէ, այլ քաղաքական ազգ է:

Երիտասարդների մասին չէ մտահոգութիւնս, նրանք սրահ կը գտնեն: Մեր եկեղեցու մասին է մտահոգութիւնս, որովհետեւ այնպէս կարող է ստացւել, որ երիտասարդութիւնը սրահի հետ մէկտեղ եկեղեցի էլ գտնի: Մանաւանդ ձեր քաղաքում, որտեղ կան քաղաքականութիւնից չխուսափող Մխիթարեաննե-րը: Լաւ մտածէք, թէ ո՞ւր էք տանում Հայ Եկեղեցին, երբ դուրս էք անում ձեր սրահներից երիտասարդութիւնը, առաջարկելով նրանց՝ միայն երգ ու պար: Ինչի՞ վրայ ուրախանան այդ երիտասարդները: Նրա՞ վրայ, որ առանց անձ-նագրի, անտէր ու անտիրական թափւած են աշխարհի մայրաքաղաքներում:

Վիեննայի Եկեղեցական Վարչութեանդ ուրիշ ասելիք չունեմ: Յուսով եմ, որ ձեզ համար իմ նամակս կարդացող կը գտնւի:

Ինձ համար աւելի մեծ ուշադրութեան է արժանի Իսկենդէր Օհրիի կոչը, ո-րին պատասխանում եմ այն յոյսով, որ «**Մարմարա**» թերթը, որը այդքան սի-րով հրատարակել է նրա կոչը, կը թարգմանի և իրեն կը յանձնի նաեւ իմ այս գրութիւնը:

Այն փաստը, որ իրար ճանաչելու պատիւը չունեցող երկու մարդ, հայ և թուրք, կարող են գտնէ լրագրի միջոցով իրար հետ խօսել, մեծ առաջադիմու-թիւն պէտք է նկատւի վաղեմի հարեւան և բարեկամ ժողովուրդների փոխյա-րաբերութիւններում: Անկեղծ պիտի լինեմ, որովհետեւ խօսում եմ ոչ թէ որպէս դիւանագէտ, այլ որպէս մի սովորական հայ մարդ:

Յարգելի պարոն Օհրի, ձեր կոչը դուք սկսում էք նրանից, որ պնդում էք, թէ ինչ որ թշնամիներ, վերջին տարիների ընթացքում, «ձգտում են խաթարել բա-րեկամութիւնը ձեր և հայ հայրենակիցներու միջեւ»: Խոստացայ անկեղծ լինել, ուստի յիշեցնեմ, որ հայերի և թուրքերի բարեկամութիւնը խախտել է ոչ թէ մի քանի տարի առաջ, այլ շատ աւելի վաղուց, դեռեւս 1880ական թւականներին, սուլթան Աբդուլ Համիդի օրօք: Դուք ճիշտ էք նկատում, որ պատմութեան ըն-թացքում միշտ բարեկամական են եղել հայ-թրքական յարաբերութիւնները, բայց ճիշտ է նաեւ այն, որ այդ յարաբերութիւնները ժամանակին սրւել են և մինչեւ այսօր էլ սրւած են մնում:

Դուք իւրայատուկ ձեւով էք բացատրում այդ սրւածութեան աղբիւրը: Կը ներէք ինձ, բայց ձեր բացատրութիւնը ոչնչով չի տարբերւում նացիների բա-ցատրութիւններից այն մասին, թէ ինչո՞ւ նրանք կոտորեցին հրեաներին: Սա-կայն դա ձեր գործն է, ի՛նչպէս ուզում էք՝ բացատրէք, դուք կարող էք ֆաշիստ կամ կոմունիստ լինել, դա մեզ չի վերաբերում: Կարեւոր չէ, թէ ինչպէս էք դուք բացատրում եղածը: Բայց եղածը եղե՞լ է,- սա է կարեւորը:

Ձեր կոչի բացատրական մասում դուք մի շատ հետաքրքրական միտք էք արտայայտում ասելով, թէ «թուրք ժողովրդի հակազդեցութիւնն էլ խիստ եղաւ այս նոր դիրքորոշման հանդէպ»։ Մէկ և կէս միլիոն զոհերի համար մի քիչ փափուկ բառ է «խիստ» բառը, բայց ոչինչ, սա էլ առաջադիմութիւն է։

Յետոյ դուք առաջարկում էք մոռանալ անցեալի ցաւերը և դառնութիւնները, որոնք բախտն ու ճակատագիրն էին օսմանեան պետութեան և նրա ժողովուրդների։ Սա էլ հասկանալի է և սա էլ առաջադիմական պիտի համարել։ Սակայն դուք մի քիչ յետոյ կտրականապէս ժխտում էք ցեղասպանութեան փաստը։ Ադանայի ջարդերը բացատրում էք հայերի դաւաճանութեամբ և ասում էք այն, ինչ տասնամեակներ շարունակ ասում էր թրքական պատմագրութիւնը, խեղաթիւրելով պատմութիւնը։

Բայց պատմական վէճի համար չէ, որ գրում եմ այս նամակը։ Ձեր կոչին ես պարզապէս պատասխանում եմ մէկ ուրիշ կոչով,- «Եկէք՝ խօսենք», սա է իմ կոչը։ Անշուշտ, ձեզ համար հեշտ է ասել՝ գործիք մի դարձէք օտարների շահերին, որովհետեւ այժմ դուք փաստօրէն Հայկական հարցի գոյութիւնը չէք ճանաչում և, ինչո՞ւ իրար խաբենք, հայ ժողովուրդն էլ համարում էք քրիստոնէութիւն ընդունած թուրքեր։ Ձեր երկրում հայ մանուկներին արգելւած է իրենց պատմութիւնը ուսումնասիրել։ Նրանց մերժում էք պետական և զինուորական բարձր պաշտօններ գրաւել։

Մի խօսքով՝ այն իրաւունքները, որ Գերմանիայի թուրք աշխատաւորները պահանջում են գերմանական կառավարութիւնից, այդ իրաւունքները չունեն Թուրքիայի հայկական ծագում ունեցող քաղաքացիները՝ իրենց իսկ հայրենիքի՛ մէջ։ Բայց չշեղւեմ նիւթից «Եկէք՝ խօսենք»։ Գուցէ մեր ուզածը այնքան քիչ է և այնքան արդարացի, որ դուք, առանց որեւէ առարկութեան, բաւարարէք մեր ուզածը։

Եւ, իսկապէս, մեր ուզածը շատ քիչ է։ Ինչպէս կռահեցիք իմ գրութեան առաջին մասից, Վիեննայի Եկեղեցական Վարչութիւնը ընդհանրապէս ոչինչ չի ուզում, եթէ չհաշւենք համայնքի խաղաղութիւնը։ Բայց նոյնիսկ այս շատ համեստ պահանջներով գաղութը իր պարտքն է համարում նշել Ապրիլ 24ը, որը որպէս ցեղասպանութեան օր է ընդունւած։ Եւ, ուրեմն, մեր ուզածը իսկապէս որ շատ քիչ բան է։ Մենք ուզում ենք միայն, որ ներկայ Թուրքիայի կառավարութիւնը ճանաչի Օսմանեան կայսրութեան յանցանքները, ինչպէս ճանաչում է այժմեան գերմանական կառավարութիւնը Հիտլերի յանցանքները։

Անշուշտ ես չեմ կարող խօսել մեր ժողովրդի անունից, ես միայն իմ անձական կարծիքն եմ յայտնում, բայց որոշ չափով ծանօթ լինելով Արտասահմանի հայութեան մտայնութեան, կարող եմ ասել, որ, եթէ դուք խօսէք մեզ հետ, մենք

միայն մէկ հարց կը տանք ձեզ, եղե՞լ է ցեղասպանութիւն: Կարծում եմ, որ դուք բացասական պատասխան պիտի տաք այս հարցին:

Էլ ինչո՞ւ էք զարմանում, որ մենք ջանում ենք ապացուցել, որ ցեղասպանութիւն եղել է: Դուք հօ գիտէք, որ եղե՛լ է: Եթէ ցեղասպանութիւն չի եղե՛լ, ապա ինչո՞ւ ձեր մշտական դաշնակից Գերմանիայի դատարանը ազատ արձակեց Թալէաթ փաշային պատուհասող ահաբեկչին: Այս մասին պէտք է խօսւի, այս հարցերի շուրջ պէտք է գտնւի մի ընդհանուր լեզու: Բայց դուք չէք խօսում մեզ հետ: Դուք այնպիսի արհամարհական դիրք էք բռնել մեր և մեր հարցի նկատմամբ, որ միայն ծայրայեղ լարւածութիւն կարող է առաջացնել մեր ժողովուրդների միջեւ:

Հասկանալի է, որ մենք դեռեւս չենք կարող խօսել պաշտօնական և պետական մակարդակի վրայ, բայց ինչո՞ւ մենք չենք խօսում հասարակական հողի վրայ: Ինչո՞ւ չստեղծել պայմաններ, որ մեր և ձեր երիտասարդութիւնը խօսի այս մասին, քննարկի այս հարցերը՝ մամուլով, ժողովներում, կուսակցական համագումարներում և այլն:

Ոչ, դուք այդ չէք ուզում, դուք գերադասում էք լռել: Էլ ինչո՞ւ զարմանալ, որ Արտասահմանի և Հայաստանի յուսահատւած հայերը բողոքի ցոյցեր են կազմակերպում թուրքական դեսպանատների առջեւ, հակաթուրք գրքեր են հրատարակում, իսկ որոշ ծայրայեղական երիտասարդներ էլ ահաբեկչութեան են դիմում: Որպէս քրիստոնեայ և ընտանիքի հայր, ես չեմ կարող արդարացնել ծայրայեղականների քայլերը, բայց այստեղ էլ անկեղծ լինեմ, ես չեմ էլ կարող նրանց դատապարտել, որովհետեւ ձեզ երկխօսութեան (dialogue) հրաւիրելու համար նրանք ուրիշ հնարաւորութիւն չեն տեսնում: Եթէ նրանք իսկապէս հայեր են, ապա նրանց հասկանալ, այլ ոչ թէ արդարացնել, կարելի է:

Կէս դար շարունակ նրանք փորձեցին խաղաղ ցոյցերով գրաւել ձեր և աշխարհի ուշադրութիւնը Հայկական հարցի նկատմամբ: Բայց թէ՛ դուք և թէ ամբողջ աշխարհը անտարբեր գտնւեցիք մեր ցաւերի նկատմամբ: Իսկ անտարբերութեամբ ցաւ չի բուժւում: Դուք կարող էք գրել, թէ մեր «բարեկամութիւնը խզողը թուրքերը չեղան, իրենց դէմ կատարւածներուն հակազդեցին միայն». եթէ դուք դիմէիք միայն ձեր երկրի հայերին, որոնք, կրօնական համայնքի վերածւած, ծանօթ չեն պատմութեան, այդ դեռ իբրեւ ճշմարտութիւն կարելի էր կլլեցնել: Բայց դուք դիմում էք մեզ՝ Արտասահմանի հայերին, որոնք բացի «**Մարմարա**» և «**Մէդեան**» թերթերից, ուրիշ գրականութիւն էլ են կարդում:

Ինչո՞ւ էք մեզ միամիտների տեղ դնում: Եթէ այս մակարդակով պիտի խօսենք, լաւ է ընդհանրապէս չխօսենք: Եւ ես երբեք չէի անդրադառնայ ձեր կոչին, եթէ չտեսնէի նրա մէջ առողջ տրամաբանութիւն ցոլացնող հատւածներ: Այ, օրինակ, այս մէկը. «Գերմանիոյ մէջ, Հիտլերի օրով, վեց միլիոն անմեղ

հրեաներ բնաջնջուեցին։ Արդէն այսօր գերման պետութիւնն էլ ասում է, թէ այդ Հիտլերի ժամանակաշրջանին պատահած է և ներկայ Գերմանիան դրա համար պատասխանու չէ»։

Շատ ճիշտ է։ Եւ եթէ դուք էլ մեզ հետ խօսէիք, ապա կը տեսնէիք, որ մենք էլ հէնց այդ ենք ուզում։ Այսինքն՝ ուզում ենք, որ դուք ընդունէք ցեղասպանութեան փաստը, բայց ձեզանից դէն գցէք պատասխանատուութիւնը ասելով, թէ Օսմանեան կայսրութեան ժամանակաշրջանում կատարուեց, թէ Հանրապետական Թուրքիան դատապարտում է եղածը, դատապարտումից բխող բոլոր հետեւանքներով։

Կարծում եմ, որ մէկ բանում էլ դուք ճիշտ էք։ Դուք մտահոգութիւն էք յայտնում, որ հայերը ձեր թշնամիների շահերի գործիքը կը դառնան։ Այո, այդ շատ հնարաւոր է։ Ժամանակակից քաղաքականացած աշխարհում, փոքր կամ մեծ ազգեր, այս կամ այն ուժերի կողմից, քաշւում են քաղաքական պայքարի ոլորտը և երբեմն ծառայում են ուրիշի շահերին կարծելով, թէ ծառայում են սեփական ժողովրդին։ Սա լինում է և բազմիցս եղել է պատմութեան մէջ։

Այստեղ ուզում եմ ձեր մասին գնահատանք արձանագրել,- Դուք երբեք չէք ծառայել ուրիշին։ Ընդհակառակն, միշտ ուրիշներին էք ծառայեցրել ձեր շահերին։ Այդպէս եղաւ, երբ քրդերին լարեցիք մեր դէմ, այդպէս եղաւ Առաջին և Երկրորդ Համաշխարհային պատերազմներին, այդպէս է նաեւ այսօր, երբ մի քանի լարերի վրայ խաղալով՝ դուք կարողանում էք ամենամեծ պետութիւնները ծառայեցնել ձեր շահերին։ Լաւ էք անում, ես, որպէս հայ, նախանձում եմ ձեզ, բարի՛ նախանձով։

Բայց մի կարծէք, որ բոլորը ունեն ձեր դիւանագիտական խորամանկութիւնը. և կարող են գտնուել նաեւ այնպիսիները, որոնք միամտօրէն խաղալիկ դառնան ձեր թշնամիների ձեռքում։ Ինչո՞ւ հող ստեղծել կամ ասպարէզը բաց թողնել նման բանի համար։ Աւելի լաւ չէ՞ր լինի, որ մենք մեր փոխյարաբերութիւնները պարզէինք առանց միջնորդի, երես առ երես։ Չէ՞ որ այսօրւայ միջնորդներն էլ իրենց երկրի շահերն են պաշտպանում։

Մի խօսքով, ես կարծում եմ, որ մեզ անհրաժեշտ է խօսել, գուցէ սկզբում հասարակական բանավէճի մակարդակի վրայ։ Ինչ մեղքս թագցնեմ. չեմ կարծում, որ դուք համաձայնւէք երկխօսութեան, որովհետեւ դեռեւս մեզ դրան արժանի չէք համարում։ Չեմ իսկ կարծում, որ իմ այս գրութիւնս կը հրատարակի «**Մարմարա**» թերթը, որը կարող է բանավէճի սկիզբ նկատւել։ Բայց կարծում եմ, որ ձեզ կը հասնի իմ գրութիւնը և դուք առիթ կ’ունենաք ծանօթանալու, թէ ինչպէս է մտածում մի հայ մարդ։ Դուք կարող էք մէկ կողմ նետել իմ գրութիւնը, բայց միեւնոյն է, վաղ թէ ուշ մեր ժողովուրդները նստելու են կլոր սեղանի շուրջ և խօսելու են որպէս հաւասար հաւասարի հետ։

Քանի դեռ մենք չենք նստել այդ սեղանի շուրջ, մեր թշնամութեան կրակի վրայ նաւթ լցնողներ միշտ էլ կը գտնուեն։ Եւ սրա պատասխանատուութիւնն էլ, բոլոր պայմանների մէջ և ամենից աւելի, ձե՛ր ուսերին է ծանրանում, որովհետեւ դուք ազգային և միջազգային մակարդակի վրայ պատասխանատո՛ւ պետութիւն էք։

Որքան էլ որ Վիեննայի Եկեղեցական Վարչութեան նման վարչութիւններ փորձեն խուսափել քաղաքականութիւնից, միեւնոյն է, հայ երիտասարդութիւնը գնալու է քաղաքականացման ճամբով և մենք պէտք է կարողանանք այնպէս անել, որ ծայրայեղական շարժումներ չստեղծուեն և որպէսզի նրանց շարժումները չվերածուեն անիշխանութեան։

Այս պարտքի զգացմունքով է, որ կրկնում եմ իմ կոչը.

«ԵԿԷՔ՝ ԽՕԵՆՔ»։

1979

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Է. Յովհաննիսեան

Հայկական Հարցերի Հաստատութեան կողմից կազմւած այս տեսութիւնը ընդգրկում է Դաշնակցային Գերմանիայի, Զւիցերիայի և Աւստրիայի մամուլում (գերմաներէն) հրատարակւած յօդւածները, 1979 թի Դեկտեմբերից մինչև 1980 թի Դեկտեմբերը: Տեսութիւնը հաշւի է առել միայն այս երկրներում լոյս տեսնող թերթերը, բայց ոչ գրքերը և ամսագրերը:

Յարմար նկատւեց հայերին վերաբերող յօդւածները, ծաւալի իմաստով, բաժանելի երեք խմբերի՝ փոքր յօդւածներ, որոնք պարունակում են 50-200 բառ, միջին ծաւալի յօդւածներ, որոնք ունեն 200-1000 բառ և մեծ յօդւածներ, որոնք պարունակում են 1000ից աւելի բառ:

1980 թականին գերմանական մամուլում (այստեղ և հետագայում **գերմանական մամուլը** օգտագործւում է վերը նշւած երեք երկրներում հրատարակւող մամուլի համար) հրատարակւել էր 162 յօդւած, այդ թւում՝ 80 փոքր յօդւածներ, 54 միջին ծաւալի և 28 մեծ յօդւած: Այդ 162 յօդւածներից 21 վերաբերում էր հայկական մշակոյթին ու եկեղեցական կեանքին, իսկ 141ը հիմնականում հրատարակւել էին ահաբեկչութիւնների առիթով և վերաբերում էին քաղաքականութեան, պատմութեան և մեր Դատին:

Հայ արւեստի և եկեղեցական կեանքի մասին 21 յօդւածներից 16ը վերաբերում էին կամ, աւելի ճիշտ, այսպէս թէ այնպէս կապւած էին Խորհրդային Հայաստանի հետ և միայն 5ը սփիւռքահայ մշակութային կեանքին: Քաղաքական յօդւածներից 12ը վերաբերում էին Խորհրդային Հայաստանին. կա՛մ նշում էին հայերի արտագաղթը Հայաստանից և կամ էլ վերաբերում էին Հայաստանի այլախոհներին: Մնացած 129 պատմա-քաղաքական յօդւածները վերաբերում էին ցեղասպանութեան և դրա հետ կապւած սփիւռքահայութեան գործունէութեան:

Նախքան որոշ մանրամասնութիւնների անցնելը, համեմատական կարգով նշենք, որ 1980 թականին գերմանական մամուլում հրատարակւել է հայերին վերաբերող 200,000 բառ: Այս նոյն մամուլը 1973 թականին հրատարակւել էր 15,000 բառ, այսինքն 14 անգամ աւելի պակաս: Ընդ որում 1973 թականին հրատարակւած յօդւածների ճնշող մեծամասնութիւնը վերաբերում էր Հայաստանի այլախոհներին և ոչ մէկ բառով յիշատակւում էին հայթուրքական փոխյարաբերութիւնները:

Գրեթէ բոլոր թերթերը նշեցին, որ հայերի ցեղասպանութիւնը 20րդ դարի առաջին ցեղասպանութիւնն էր, որ Ապրիլի 24ին հայերը նշեցին ցեղասպանութեան 65 ամեակը և որ հայերի այս բոլոր գործողութիւնները բարոյապէս թուլացնում են Թուրքիայի միջազգային դիրքը: Նշեցին նաեւ, որ թուրք երիտասարդները հայերի արարքների դէմ հացադուլներ յայտարարեցին տարբեր վայրերում և սպառնացին պատասխան հարուածների անցնելու:

Բաւականին շատ գրւեց հայ-քրդական համատեղ գործունէութեան յայտարարութեան մասին: Այս յայտարարութեան թերթերը շատ աւելի մեծ տեղ տւեցին և շատ աւելի լուրջի առան, քան նա արժանի էր:

Բաւական տեղ յատկացւեց հայերի արտագաղթին և բոլոր թերթերը զարմանք էին յայտնում այն մասին, թէ ինչո՞ւ Խ. Միութիւնը այսքան հեշտութեամբ դուրս է թողնում հայերին: Միայն մէկ թերթ տւել էր այդ հարցի պատասխանը ասելով, թէ Հայաստանից դուրս եկած հայերը չեն աւելացնում արտասահմանի հակախորհրդային հզօրութիւնը: Եթէ հայերը քաղաքականութեամբ են զբաղւում, ապա այդ քաղաքականութիւնը ուղղւած է լինում ոչ թէ Խ. Միութեան, այլ Թուրքիայի դէմ: Բացի դրանից, Խ. Միութիւնը Հայաստանից դուրս եկողների հետ արտասահման է ուղարկում իր ուզած մարդկանց:

Մշակութային ասպարէզում նշւեցին Քետի Բերբերեանի, Տիգրան Ժամկոչեանի և Լուիզա Պոզաբալեանի համերգները, ինչպէս նաեւ Սունդուկեանի անւան թատերախումբի այցելութիւնը Արեւելեան Բերլին: Գրախօսականներ գրւեցին Քրիստոֆըր Ուտկկերի գրքի վերաբերեալ, ինչպէս նաեւ «**Հորէն**» և «**Պոգրոմ**» հանդէսների կողմից, որոնց համարներից ոմանք նւիրւած էին հայութեանը: Նշւեցին մի քանի հայկական ցուցահանդէսներ, որոնցից մէկն էլ ապացուցում էր, թէ Եւրոպայի առաջին սրճարանները կազմակերպել են հայերը:

Դաշնակցային Գերմանիայում լոյս տեսաւ «Չորս Աւետարաններ» գիրքը, որի մէջ տեղ գտաւ հայկական մանրանկարներից մէկը և այդ մասին նշւեց մամուլում:

Խ. Հայաստանի վերաբերող նիւթերից ուշադրութեան արժանի է մի յօդւած հայ-ադրբեջանական փոխյարաբերութիւնների մասին, որտեղ նշւած է Ղարաբաղի խնդիրը: Կար նաեւ մեր տեսակէտից մի անհեթեթ յօդւած, որը վերաբերում էր հայերի հնարաւոր ահաբեկչութեանը Մոսկւայի Ողիմպիական խաղերի ժամանակ: Յօդւածում ասւած էր, որ Մոսկւայի իշխանութիւնները իբր թէ վախենում են հայ ահաբեկիչներից, որոնք արդէն ռումբեր են պայթեցրել Մոսկւայի **մետրո**յում և իբր թէ կարող են նոյն բանը անել Ողիմպիական խաղերի ժամանակ:

Հաղորդուեց նոյնպէս, որ յոյների վկայութեամբ հայերը եղել են առաջիններըը, որ դահուկ են օգտագործել և որ Հայաստանի այրող արեւի ճառագայթներըը օգտագործւում են արեգակնային ելեկտրակայաններ կառուցելու համար։

Հայերը յիշատակւեցին նաեւ երկու յօդւածներում, որոնցից մէկը նւիրւած էր Հռոմի Պապին։ Այնտեղ գրւած էր, որ Հռոմի պապը լուռ է հայերի հալածանքների վերաբերեալ, ինչպէս նա լուռ էր 1915 թւականին, երբ տեղի էր ունենում ցեղասպանութիւնը։ Միւս յօդւածը վերաբերում էր Խ. Միութիւնում ապրող քրիստոնեայ ազգերին, նշում նրանց կրօնական անազատութիւնները, նաեւ Հայաստանում։

Վիւրցբուրգի «**Դոյչէ Թագես Փոստ**» թերթը հրատարակեց դոկտոր Ֆրանց Հանսրիգլերի «Հայերը» վերնագիրը կրող յօդւածը, որտեղ հեղինակը մասնաւորապէս նշում է, թէ հայերը իրենց արիւնալից ցեղասպանութիւնից 65 տարի անց կրկին ստիպեցին աշխարհը խօսել իրենց մասին։ Հայերի նկատմամբ մեծ համակրանքով գրւած այս յօդւածում հեղինակը գրում է, որ 20րդ դարի առաջին ցեղասպանութիւնը ամուր կերպով նստած է հայ ազգի գիտակցութեան մէջ։ Նաեւ այն, որ այսօր էլ Թուրքիայում ապրող հայերը ենթարկւում են հալածանքների։

Անդրադառնալով սփիւռքահայ կեանքին, դոկտոր Հանսրիգլերը այն կարծիքն է յայտնում, թէ որքան էլ մեծ լինեն հայերի կողմից թափւած ջանքերը ազգապահպանման ուղղութեամբ, միեւնոյն է, նրանց անխուսափելիօրէն սպասում է ազգաձուլման վտանգը։ Յօդւածի վերջում հեղինակը գրում է, որ ինչպէս անցեալում, այնպէս էլ ներկայումս հայերը պայքարում են իրենց իրաւունքների համար, իրենց յետեւում չունենալով աշխարհի մեծ պետութիւններից և ոչ մէկին։

Բերլինի «**Ֆոլկսբլատ**» թերթում հրատարակւեց Թեզա Հոֆմանի յօդւածը, որի անունը արդէն յայտնի է մեր ընթերցողներին «**Պոզդում**» հանդէսից։ Նրա յօդւածի վերնագիրն է «Հալածւած, վտարւած և ոչնչացւած հայերը»։ Իր յօդւածում հեղինակը յատուկ ուշադրութեան առարկայ է անում այսօր Թուրքիայում ապրող հայերի կացութիւնը։ Վաւերական փաստաթղթերի հիման վրայ հեղինակը ցոյց է տալիս, թէ ինչպիսի հալածանքների է ենթարկւել Թուրքիայի քրիստոնեայ բնակչութիւնը 1844-1922 թւականներին ընկած ժամանակաշրջանում։

Յօդւածի վերջում Հոֆմանը ընդգծում է Թուրքիայում հալածւող ժողովուրդներին օգնութիւն ցուցաբերելու մեծ պատասխանատւութիւնը, որը կրում է նաեւ Դաշնակցային Գերմանիան։ Նա ասում է, թէ չպէտք է մոռացութեան մատնել այն փաստը, որ Վիլհելմեան Գերմանիայի նախաձեռնութեամբ թուրքերը կազմակերպեցին 20րդ դարի առաջին ցեղասպանութիւնը։

Զւիցերիայի «**Նոյէ Յուրիեր Յայտունգ**» թերթը հրատարակեց «Հայերը Լիբանանում» վերնագիրը կրող ծաւալուն յօդուածը, որտեղ մանրամասնօրէն անդրադարձաւ լիբանանահայ կեանքին, պատմեց Այնճարի ու Անթիլիասի և հայերի քաղաքական չէզոքութեան մասին՝ Լիբանանի քաղաքացիական պատերազմի ժամանակ։

Զւիցերիական «**Դի Վելթվոխէ**» շաբաթաթերթի յօդուածը ընդգրկում է Հայ Դատին վերաբերող մի շարք հարցեր։ Այս յօդուածը խորագրուած է «Այլեւս ո՞վ է յիշում այդ ցեղասպանութիւնը»։ Յօդուածի հեղինակն է Էրւին Գառւան։

Նախ յօդուածը ըստ ամենայնի ընդարձակ է և առատ նիւթեր է պարունակում, բազմատեսակ տեղեկութիւններ տալով օտար ընթերցողներին՝ հայ ժողովրդի նորագոյն պատմութեան ամենից ողբերգական իրադարձութիւնների վերաբերեալ։

Յօդուածի սկզբում նա դիրք է ճշտում այս կամ այն վայրում հայկական ահաբեկչական գաղտնի խմբերի անունով կատարուած գործողութիւնների նկատմամբ։ Այդ գործողութիւնները կատարւում են նաեւ Զւիցերիայում, խօսեցնել տալով աշխարհասփիւռ հայութեան մասին։ Քանի որ,- ասում է յօդուածագիրը,- Նիւ Եորքում տեղի ունեցող ամէնամեայ լուռ քայլարշաւները անհետեւանք են մնում, հայերն ստիպւած են աւելի ազդու միջոցներով յիշեցնել հարիւր հազարաւոր զոհերի ու աքսորականների ողբերգական ճակատագրի մասին։

Այնուհետեւ յօդուածագիրը լայն տեղեկութիւններ է հաղորդում Արեւմտեան Հայաստանի 19րդ դարավերջի ու 20րդ դարասկզբի դէպքերի մասին։ Այդ տեղեկութիւնները, բնականաբար, նախատեսւած են օտարների համար և հայ ընթերցողները նոր բան չեն գտնի դրանցում։ Բայց իւրաքանչիւր հայի համար հաճելի է տեղեկանալ, թէ արդարութեան ձայնը ինչպէս է արտայայտւում օտար ազատ մամուլում։

Յօդուածում, ասւում է, թէ Բազելի համալսարանական գրադարանում գտնւում է մի մեքենագիր ձեռագիր, «Խիստ գաղտնի» մակագրութեամբ, թէեւ անթուակիր, բայց հաւանաբար գրւել է 1916 թւականին, դոկտոր Մարտին Նիպագէ ստորագրութեամբ և հետեւեալ վերնագրով. «Մի խօսք գերմանական ժողովրդի ներկայացուցիչներին – մի գերմանացի աւագ ուսուցչի տպաւորութիւնները Թուրքիայից»։

Նիպագէն այն ժամանակ եղել է Հալեպի գերմանական դպրոցի աւագ ուսուցիչ։ Նա պատմում է, թէ ինչպէս էին կազմակերպւած հայկական ջարդերը։ Պատմում է նաեւ Բէյրութից Հալեպ տանող ճանապարհին իր տեսած սարսափելի տեսարանների մասին։

Սակայն, գրում է շաբաթաթերթի յօդւածագիրը, իր ժամանակ ոչ դոկտոր Նիպագէի և ոչ էլ ուրիշ գերմանացիների վկայութիւններն ու կոչերը արձագանգ գտան եւրոպական որեւէ թերթում: Քանի որ պատերազմ էր, Թուրքիան Գերմանիայի դաշնակից էր և աւելի առաջ զանազան աչքի ընկնող անձինք իրենց թրքասիրական քարոզչութեամբ շատ աննպաստ տպաւորութիւն էին ստեղծել ու դժւարացրել իրականութեան ըմբռնումը: Յիշում է կոմս Ֆոն Մոլտկէի և Բիսմարկի անունները, նաեւ Թուրքիայում տեղաւորելու գծով կատարւած փորձերը:

Խօսւում է միաժամանակ միջազգային դիւանագիտութեան վերաբերմունքի մասին՝ փոքր ժողովուրդների ճակատագրի նկատմամբ, խօսւում է Արեւմտեան Հայաստանում կատարւած հայկական կոտորածների հանգամանքների ու Եւրոպայում թողած արձագանգների վերաբերեալ: Մէջբերւում են անգլիացի յայտնի պատմաբան Արնոլդ Թոյնբիի տեսակէտները, որոնք շեշտում են հայերի և թուրքերի քաղաքակրթական տարբեր մակարդակները, ուստի և թրքական յարձակողականութեան իրական աղբիւրները:

Այդ կապակցութեամբ մի ընդհանուր ակնարկ է նետւում հայոց պատմութեան հանգուցային ժամանակաշրջանների վրայ, սկզբից մինչեւ մեր օրերը, նաեւ՝ Խորհ. Հայաստանի և Սփիւռքի: Այնուհետեւ մէկ առ մէկ ներկայացւում են Օսմանեան կայսրութեան սահմաններում և Արեւմտեան Հայաստանում հայերի նկատմամբ գործադրւած բռնութիւնների յաջորդական փուլերը: Շեշտւում են 1895-96 թւականների կոտորածները, երբ զոհւեցին մօտ 300 հազար հայեր, աւերակ դարձան հայկական հաստատութիւններ ու կողոպտւեցին անհամար ստացւածքներ թէ՛ նահանգներում և թէ մայրաքաղաքում, արիւնարբու սուլթան Աբդուլ Համիդի օրօք:

1908 թւականին Օսմանեան կայսրութեան մէջ տեղի ունեցաւ յեղաշրջում, որի հետեւանքով գահընկէց եղաւ Աբդուլ Համիդը և իշխանութեան գլուխ անցան Երիտասարդ Թուրքերը: Այդ ժամանակ ազգային փոքրամասնութիւնները, այդ թւում ե՛ւ հայերը կարծում էին, թէ սուլթանական բռնակալութիւններից յետոյ կարելի է քիչ թէ շատ տանելի իշխանութիւն տեսնել: Մինչդեռ Երիտասարդ Թուրքերը նոյնքան ու աւելի յետադիմական ուղեգիծ իւրացրին, մանաւանդ ազգային փոքրամասնութիւնների նկատմամբ: Այդ պատճառով 1909 թւականին Կիլիկիայի Ադանա քաղաքում կազմակերպւեցին հայկական կոտորածներ, որոնց զոհ գնացին մօտ քսան հազար հայեր, մի ողբերգութիւն, որը կրկնւեց այնտեղ վեց տարի յետոյ, է՛լ աւելի ծանր հետեւանքներով:

Եւ այսպէս, արիւնարբու սուլթան Աբդուլ Համիդի գործը շարունակեցին այսպէս կոչւած Երիտասարդ Թուրքերը, հայութիւնը բնաջնջելու գնով Հայկական Հարցը օրակարգից հանելու նպատակով: Ըստ յօդւածագրի, 1909

թւականի Ադանայի ջարդերը հետագայ ցեղասպանութեան նախաքայլն էին կազմում: Այնուհետեւ պատմում է 1915 թւականի ցեղասպանութեան նախապատրաստութեան ու անցկացման հանգամանքների վերաբերեալ, մէջբերում է տխրահռչակ դահճապետ Թալէաթ փաշայի տխրահռչակ հեռագիրը Հալեպի նահանգապետին ուղղուած, որի մէջ յանձնարարւում էր ամենայն անողոքութեամբ գործադրել հայերի ջարդը: Յիշւում է նաեւ քրդերի խաղացած տխուր դերը այդ դաժան հաշւեյարդարի ընթացքում, յօգուտ թրքական իշխանութեան և ընդդէմ հայերի:

1915 թւի Օգոստոսի 31ին Թալէաթ փաշան գերմանական դեսպանին արդէն հարկ էր համարում յայտնել, թէ «Հայկական Հարց այլեւս գոյութիւն չունի»: Եւ Արեւմտեան Հայաստանից, Կիլիկայից և Միջագետքից եկած լուրերը առհասարակ չէին հրապարակւում գերմանական և այլ թերթերում: Կառավարութիւնները շատ բանի էին տեղեակ, բայց հասարակութիւնը անտեղեակ էր լիովին:

Ցիւրիխի «**Դի Վելթվոխէ**» շաբաթաթերթի Դեկտեմբեր 19ի համարում տպւած Էրւին Դառւայի յօդւածի վերջին պարբերութիւնը. «Ջոհերի թիւը երբեք հնարաւոր չեղաւ ճշտել, բայց դրանք մէկ միլիոնից աւելի էին: Ոճրագործութեան ժամանակաշրջանը՝ երեք-չորս ամիս»: Ապա մէջբերւում են Ադոլֆ Հիտլերի 1939 թւի Օգոստոսին արտասանած դաժան սա խօսքերը. «Եթէ մենք ուզում ենք մեր Մեծն Գերմանիան հիմնել, ապա պէտք է բնաջնջենք սլաւոնական ժողովուրդներին: Այսօր այլեւս ո՞վ է յիշում Թուրքիայում բնաջնջւած հայերի անունը»: Հեղինակն իր կողմից աւելացնում է. «Այս անգամ նա իրաւունք ունէր»: Քանի որ ցեղասպանութիւնը անպատիժ թողնելը մէկ ուրիշ ցեղասպանութիւն ծնեց տարիներ յետոյ՝ հէնց Եւրոպայի սրտում:

1981

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Է. Յովհաննիսեան

Անցեալ տարւայ Փետրուարի 1ին «**Ազդակ Շաբաթօրեակ**»ը այս նոյն խորագրի տակ հրատարակեց Միւնխենի Հայկական Հարցերի Հաստատութեան կողմից կազմւած տեսութիւնը հայերին վերաբերող յօդւածների մասին։

Այդ տեսութիւնը վերաբերում էր Դաշնակցային Գերմանիայի, Զուիցերիայի և Աւստրիայի մամուլին։ Այս տեսութիւնը վերաբերում է միայն Դաշնակցային Գերմանիային, որովհետեւ **հայերին վերաբերող յօդւածների թիւը գերմանախօս մամուլում այնքան է շատացել, որ բոլոր այդ յօդւածների ուսումնասիրութիւնը ՀՀՀի ուժերից վեր է**։

Այնուամենայնիւ, նախորդ տարւայ հետ համեմատելու համար, մենք ցուցաբերեցինք նոյն մօտեցումը, այսինքն ուսումնասիրութիւնը կատարեցինք 1980 թւականի Դեկտեմբեր ամսից մինչեւ 1981 թւականի Դեկտեմբերը։ Նախորդ տարւայ նման յօդւածները ծաւալի իմաստով, բաժանւեցին երեք խմբի՝ փոքր յօդւածներ, որոնք պարունակում են 50-200 բառ, միջին ծաւալի յօդւածներ, որոնք ունեն 200-1000 բառ, և մեծ յօդւածներ, որոնք պարունակում են 1000ից աւելի բառ։

1981 թւականին Դաշնակցային Գերմանիայում հրատարակւել է 644 յօդւած (անցեալ տարի 162՝ Զւիցերիայի և Աւստրիայի հետ միասին), այդ թւում՝ 423 փոքր յօդւածներ (անցեալ տարի՝ 80), 153 միջին ծաւալի (անցեալ տարի՝ 54), 68 մեծ յօդւածներ (անցեալ տարի՝ 28)։ Աւելացնենք նաեւ այն, որ 1981 թւականի մեծ յօդւածները շատ աւելի մեծ են, քան նախորդ տարւայ մեծ յօդւածները։ Եթէ 1980 թւականի մեծ յօդւածները միջին հաշւով պարունակում էին 1400 բառ, ապա 1981 թւականի մեծ յօդւածները միջին հաշւով ունէին 2000 բառ։

Բացի այս պարզ համեմատութիւնից, կատարւել է նաեւ յօդւածների այսպէս կոչւած «քարոզչական գործօնի» ուսումնասիրութիւնը, որը դեռեւս լրիւ չէ, բայց որը, այնուամենայնիւ, որոշ պատկերացում է տալիս հայերին վերաբերող յօդւածների քարոզչական ուժի մասին։ Այստեղ չենք ուզում մտնել վիճակագրական տեսութեան մանրամասնութիւնների մէջ. նշենք միայն, որ ամէն մի յօդւած ունի իր քարոզչական ուժի չափանիշը, որը կազմւում է մի շարք գործօններից, ինչպէս, օրինակ, ի՞նչ կշիռ ունեցող թերթի մէջ է հրատարակւած յօդւածը, թերթի ո՞ր էջի վրայ է, հայանպա՞ստ է թէ ոչ, ի՞նչ կշիռ ունի հեղինակը, որքանո՞վ անաչառ է յօդւածը և այլն։

Բոլոր այս չափանիշների համաձայն վերլուծութիւնները ցոյց տուեցին, որ 1981 թուականին Դաշնակցային Գերմանիայի մամուլը 8,5 անգամ աւելի ուժեղ քարոզչութիւն է արել Հայ Դատի մասին, քան 1980 թուականին: Ընդ որում, համեմատական այդ գործօնը կարող էր հասնել 14,6ի, եթէ Հայ Դատին չվերաբերող որոշ արարքներ չաւելացնէին, յատկապէս զւիցերական մամուլից արտատպած, հայերի համար անբարենպաստ յօդուածները:

Հրատարակուած յօդուածների մօտաւորապէս 20 տոկոսը վերաբերում է հայ մշակոյթին: 30 տոկոսը՝ ահաբեկչութիւններին և նրանց հետ կապուած փաստերին, ենթադրութիւններին ու եզրակացութիւններին: Իսկ յօդուածների 50 տոկոսը վերաբերում է Հայ Դատին:

Հայ մշակութային կեանքին և Խորհրդային Հայաստանին վերաբերող յօդուածների մէջ կարելի է նշել հետեւեալները.

Արեւելագերմանական մամուլից արտատպուած մի յօդուածում մանրամասնօրէն նկարագրւում էր Արփա-Մեւանի խնդիրը և այդ առիթով թուարկւում էին այն նուաճումները, որոնք Խորհրդային Հայաստանը ձեռք է բերել Հոկտեմբերեան Յեղափոխութիւնից յետոյ:

Մէկ ուրիշ յօդուածում, որը վերնագրուած է՝ «Հայաստանի Միջնադարի արուեստը», ներկայացւում է Ստեփան Մնացականեանի և Նոննա Ստեփանեանի խմբագրութեամբ լոյս տեսած աշխատութիւնը: Հայաստանի միջնադարեան արուեստին վերաբերող այդ աշխատութիւնը լոյս է տեսել Արեւմտեան Գերմանիայում գերմաներէնով:

26 թերթեր գրեցին Հայաստանից եկած «Ակունք» խմբի ելոյթների մասին, որոնք կազմակերպել էր «Արեւմտեան Գերմանիա-Խորհրդային Միութիւն» մշակութային կապի ընկերութիւնը: Լուրջ թերթերի գնահատականը շատ բարձր չէր: Նրանք նշեցին, որ խմբի յաջողութիւնը պայմանաւորուած էր միայն ու միայն հայ հանդիսատեսով, որը ծափահարում էր ոչ այնքան արուեստին, որքան հայրենիքից եկած մարդկանց: Եթէ դահլիճում հայեր չլինէին, ապա գերմանացիների համար ներկայացուած արուեստը ոչ մէկ հետաքրքրութիւն չէր ներկայացնում: Թերթերը շատ աւելի մեծ գովեստով գրեցին Վիսբադենում կազմակերպուած գեղարուեստական ցուցահանդէսի մասին, որտեղ ցուցադրուած նկարները, ըստ շատերի, հեռու էին «**սոցիալիստ**ական **ռեալիզմ**ի ուղղութիւնից»:

Հետաքրքիր յօդուած էր գրուած մի հայ արքեպիսկոպոսի մասին, որը 900 տարի առաջ թաղուել է Գերմանիայի Փասաու քաղաքում: Այդ արքեպիսկոպոսը, որին կոչում են Գրեգորիուսի, հալածանքների բերումով՝ Բիւզանդիոնից փախչում է Գերմանիա և ապաստան է գտնում Փասաու քաղաքում: Նա մահանում է 1093 թուականի Սեպտեմբերի 23ին, երբ տեղի է ունեցել արեւի խա-

ւարում: Կրօնական օրէնքների համաձայն՝ արեւի խաւարման օրը մահացած հայ արքեպիսկոպոսը դասւել է սրբերի շարքին: Այս առիթով Փասաու քաղաքում պատարագ մատուցւեց և դասախօսութիւն կարդացւեց Հայ Եկեղեցու պատմութեան վերաբերեալ:

Մի քանի յօդւածներ հրատարակւեցին Երեւանի Մատենադարանի մասին: Մէկ ուրիշ յօդւած ամբողջովին նւիրւած էր Խորհրդային Հայաստանի արդիւնաբերութեանը: Մի քանի թերթեր հրատարակեցին լայն տեղեկութիւններ պրոֆ. Բուդէի դասախօսութեան մասին, որը եղել էր Վանում և այդ առիթով մի շարք համալսարաններում դասախօսութիւններ էր կարդացել հայ ճարտարապետութեան մասին:

Մի շարք յօդւածներ հրատարակւեցին Վիլյամ Սարոյեանի մասին: Շատ թերթեր անդրադարձան Ամենայն Հայոց Կաթողիկոսի Դաշնակցային Գերմանիա այցելելու խնդրին:

Ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ հայ մշակութային կեանքին վերաբերող յօդւածները այսպէս թէ այնպէս կապւած են Խորհրդային Հայաստանի հետ: Նրանց մեծ մասը արտատպւած է Արեւելեան Գերմանիայի մամուլից կամ էլ Խորհրդային Հայաստան այցելած զբօսաշրջիկների տպաւորութիւններն են: Այդ յօդւածների ընդհանուր գիծը այն է, որ հայ արւեստի հետ միասին գովաբանւում է նաեւ Խորհրդային Հայաստանի վարչակարգը, որը Դաշնակցային Գերմանիայի ընթերցողին այնքան էլ վստահութիւն չի ներշնչում:

Հայ Դատին վերաբերող յօժւածների մէջ նշենք հետեւեալները.

«Հայկական Հարցը 1981 թւականին» յօդւածում, որը պարունակում է նաեւ ցեղասպանութեան տեսարանների նկարներ, Թեսսա Հոֆմանը նախ մէջբերում է Թալէաթի յայտնի հեռագիրը՝ հայերին ամբողջութեամբ բնաջնջելու վերաբերեալ, ապա Հիտլերի յայտարարութիւնը: Յօդւածը սկսւում է Թալէաթի սպանութեան պատմութեամբ, ապա մանրամասնօրէն տրւում է Հայկական - Հարցի պատմութիւնը՝ Հանրապետութիւնը, Սեւրի դաշնագիրը, Լօզանի խորհրդաժողովը: Յօդւածում նշւում է նաեւ 1965 թւականին Երեւանում տեղի ունեցած ցոյցը:

Յետոյ նշւում են ազգապահպանման դժւարութիւնները Սփիւռքում և այն տեսակէտն է յայտնւում, որ ցեղասպանութեան ենթարկւածների երրորդ սերունդը իր ձայնը լսելի դարձնելու համար դիմում է ահաբեկչութեան: Հեղինակը յիշատակում է «Հայաստանի Ազատագրման Գաղտնի Բանակ» և «Հայ Ցեղասպանութեան Արդարադատութեան Մարտիկներ» կազմակերպութիւնները, տալով սա բացատրութիւնը. «Արդարադատութեան Մարտիկները» զբաղւում են միայն երիտասարդ թուրքերի յանցագործութիւններով, իսկ «Գաղտնի Բանակը» ձախակողմեան և միջազգայնօրէն տրամադրւած կազմակերպու-

թիւն է, որը իր պայքարը համարում է միակ միջոցը՝ հայրենիք ձեռք բերելու համար։

Հեղինակը նշում է, որ չնայած որոշ աղմուկին, որը կարողացան բարձրացնել հայ ահաբեկիչները Հայկական Հարցի շուրջ, այնուամենայնիւ, Թուրքիայում հայերին ճնշամիջոցների ենթարկելու քաղաքականութիւնը մնացել է անփոփոխ։ Յօդւածում տրւում են օրինակներ այդ ճնշամիջոցների և տարբեր ձերբակալութիւնների։

Ռուդոլֆ Գրիմմը «Մեռեալ լռութեան մատնւած մի ցեղասպանութիւն» խորագրով յօդւածը սկսում է այն պնդումով, որ Թուրքիայի դեսպանները վտանգով լի կեանք են ապրում։ Ապա թւարկւում են ահաբեկչական արարքները և նշւում է, որ բոլոր այդ քայլերը նպատակ ունեն Հայկական Հարցի վրայ հանրային ուշադրութիւնը հրաւիրելու։ Հայկական Հարցը հեղինակի կողմից ձեւակերպւում է որպէս հայկական հողերը վերադարձնելու խնդիր։ Նա պատմում է հայերին բնաջնջելու ծրագրի մասին և նշում է, որ թուրքերը հերքում են այդ իրողութիւնը։

Նա տալիս է Թուրքիայի պաշտօնական բացատրութիւնը՝ թէ Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին հայերի ունեցած համակրանքը ռուսների նկատմամբ ստիպեց Թուրքիայի կառավարիչներին նրանց արտաքսել իրենց երկրից։ Այս ամէնից յետոյ գալիս է պատմական մասը, որը սկսւում է Գրիգոր Լուսաւորչից ու հասնում է 19րդ դարին։ Նշւում է Հայ Ազատագրական Շարժման ծագումը, Սեւրի դաշնագիրը, Լօզանը, խորհրդայնացումը։ Վերջում հեղինակը այն կարծիքն է յայտնում, որ հայերը, պաղեստինցիների օրինակով, ուզում են ահաբեկչութեան միջոցով լուծել իրենց քաղաքական դատը։

«Հայ ահաբեկիչները յիշեցնում են ցեղասպանութեան մասին» յօդւածում Եոհան Էշլիմեանը մանրամասնօրէն կանգ է առնում հայ ժողովրդի պատմութեան վրայ՝ ներառեալ Կիլիկիայի շրջանը։ Նշում է, որ Օսմանեան կայսրութեան մէջ հայերը միշտ էլ եղել են երկրորդ կարգի քաղաքացի։ Յետոյ պատմում է Ցեղասպանութեան, Հանրապետութեան, Սեւրի դաշնագրի և բոլոր այն դէպքերի ու իրադարձութիւնների մասին, որոնք տեղի ունեցան մի նոր պատմութեան մէջ։ Այս բոլորը շարադրւած են ճիշտ և հայանպաստ ոճով։

«Հայերը և Զւիցերիան» վերնագիրը կրող յօդւածում նոյն հեղինակը, այսինքն Եոհան Էշլիմանը, նշելով հայ ահաբեկչութեան փաստը, ցաւ է յայտնում այդ առիթով, որովհետեւ, ասում է նա, հայերի նկատմամբ զւիցերիացիները միշտ էլ բարի են գտնւել։ Դրա հետ միասին հեղինակը շատ տպաւորիչ ձեւով պատմում է 1915 թւի ցեղասպանութեան մասին և այն տեսակէտն է յայտնում, որ հայ ժողովուրդը մեծ պետութիւնների քաղաքական խաղերի զոհ դարձաւ։

Հեղինակը նշում է Հայաստանի Հանրապետութեան ստեղծման փաստը, Մեւրի դաշնագիրը, քեմալական շարժման ծագումը և Հայաստանի խորհըրդայնացումը: Բացի դրանից, հեղինակը կանգ է առնում ծանօթ 30րդ պարբերութեան խնդրի վրայ և նշում է, որ Թուրքիայի կողմից գործադրւած ճնշումների հետեւանքով ՄԱԿը մոռացութեան մատնեց այդ խնդիրը:

Դաշնակցային Գերմանիայի «ԴՊԱ» տեղեկատւական գործակալութիւնը մի շարք թերթերում հրատարակեց հետեւեալ վերնագիրը կրող մի հաղորդագրութիւն.-

«Հայերի արմատական խմբերը ցանկանում են ահաբեկչութեան միջոցով սեփական պետութիւն ձեռք բերել»: Հաղորդագրութեան մէջ թւարկւում են բոլոր ահաբեկչական գործողութիւնները, ապա նշւում է հայերի ներկայ վիճակը Թուրքիայում, որտեղ նրանք ենթարկւում են հալածանքների:

«Հայերը սեփական պետութիւն են ուզում» յօդւածում Ռուդոլֆ Գրիմմը կրկին անդրադառնում է Հայկական Խնդրին, ներկայացնելով Հայկական Հարցի պատմութիւնը և տալով խնդրի վերաբերեալ թէ՛ հայկական և թէ թուրքական տեսակէտները: Յօդւածի վերջում այն կարծիքն է յայտնւում, որ Լիբանանի և Իրանի հայ երիտասարդները, տեսնելով իրենց երկրներում ստեղծւած կացութիւնները, է՛լ աւելի են հասկանում սեփական պետութեան անհրաժեշտութիւնը:

Այս նոյն հեղինակին պատկանում է նաեւ մէկ ուրիշ յօդւած, որը վերնագրւած է այսպէս. **«Յեղասպանութեան և երկիր գողանալու իրողութեան յիշեցում»**: Այստեղ հեղինակը մանրամասնօրէն նկարագրում է Երիտթուրքերի քաղաքականութիւնը, ջարդերը, որից յետոյ նկարագրում է Եւրոպայի վերաբերմունքը Հայկական Հարցի նկատմամբ: Խօսելով երկու հայ ահաբեկչական կազմակերպութիւնների մասին, հեղինակը նշում է, որ «Հայ Գաղտնի Բանակ» կոչւող կազմակերպութիւնը հակաամերիկեան մարքսիստական կազմակերպութիւն է: Հեղինակի կարծիքով՝ այդ կազմակերպութիւնը հայ ժողովրդի մեծամասնութեան համակրանքը չի վայելում, այլ հայերի համար աւելի համակրելի են նրանք, որ իրենց պայքարը կենտրոնացրել են միայն թուրքերի դէմ:

«ԴՊԱ» գործակալութիւնը մէկ ուրիշ հաղորդագրութեան մէջ համառօտակի տալիս է «Հայկական Հարցի» բացատրութիւնը և պատմութիւնը, նշելով, որ հայերի ազգային ինքնագիտակցութիւնը 19րդ դարի սկզբին վերելք ապրեց և դա մտահոգեց Օսմանեան կայսրութեան ղեկավարներին: Յետոյ մէջբերումներ է կատարում Ֆրանց Վերֆելից, Լեպսիուսից ու վերջում այն տեսակէտն է յայտնում, որ բոլոր հայ ահաբեկչական կազմակերպութիւնները նոյն կենտրո-

նից են սնւում և տարբեր անունների տակ նոյն կազմակերպութիւնն են ներկայացնում։

«Ասիայի խաչմերուկի ժողովուրդը» վերնագիրը կրող յօդւածում, որը ստորագրած է Ա.Հ., տրւում է հայերի հնադարեան պատմութիւնը, ապա հասնում է այն պահին, երբ հայերը ազգային փոքրամասնութիւն են դառնում Օսմանեան կայսրութեան, ինչպէս նաեւ Ռուսաստանի մէջ։ Սեփական պետութիւն ունենալու ձգտումը մղում է հայերին ազգային ազատագրական պայքարի։ Յետոյ յիշում է ցեղասպանութեան փաստը, Հանրապետութիւնը, Սեւրի դաշնագիրը, Լօզանը։ Յօդւածի վերջում տրւում են ընդհանուր տեղեկութիւններ այսօրւայ կացութեան վերաբերեալ։

Պատմւում է թէ՛ Խորհրդային Հայաստանի և թէ Սփիւռքի մասին։ Նրա կարծիքով, երիտասարդ հայերը կարծում են, որ իրենք էլ Իսրայէլի օրինակով կարող են սեփական պետութիւն ձեռք բերել և դրա համար էլ դիմել են ահաբեկչութեան։ Ահաբեկիչների կենտրոնը գտնւում է Բէյրութում,- ասում է հեղինակը։

«Երկու միլիոն մորթած հայեր» յօդւածում Հելերը անդրադառնում է Իւ Թերնոնի գրքին և շատ հայանպաստօրէն խօսում է Հայ Դատի մասին։ Նա նշում է, որ Հայկական Հարցի անլոյծ մնալը մարդկութեան ամենաամօթալի արարքն է։

«Մահափորձեր ու սպանութիւններ յանուն Հայաստանի» յօդւածի հեղինակը հաւանաբար նոյն Ռուդոլֆ Գրիմմն է, որը այս անգամ յօդւածը ստորագրել է Ռ.Գ.։ Պէտք է ասել, որ այս հեղինակի յօդւածները շատ քիչ են տարբերւում իրարից։ Տարբեր վերնագրերի տակ տարբեր թերթերում նա հրատարակում է յօդւածներ, որտեղ տալիս է ցեղասպանութեան պատմութիւնը, հայերի հայրենիք ձեռք բերելու ցանկութիւնը և վերջին տարիներում տեղի ունեցած ահաբեկչութիւնները, որոնք ըստ հեղինակի, արւում են միջազգային հասարակութեան ուշադրութիւնը Հայկական Հարցի վրայ կենտրոնացնելու նպատակով։

«Մէկ ցեղասպանութեան պատմութիւն» վերնագրի տակ Վոլֆ Ալբերդը անդրադառնում է Իւ Թերնոնի գրքին և այդ առիթով յիշատակում է չլուծւած Հայկական Հարցը։

«Դաշնակցային Գերմանիա-Խորհրդային Միութիւն» բարեկամութեան ընկերութեան սահմանների մէջ գործում է նաեւ հայերի հետ բարեկամութեան միութիւնը, որի անունից Ֆրանց Պրոյսէն հրատարակեց **«Տառապանքներով լի պատմութիւնը»** վերնագիրը կրող յօդւածը։ Յօդւածում տրւում է ցեղասպանութեան պատմութիւնը և այն կարծիքն է յայտնւում, որ հանրութեանը անհրաժեշտ է աւելի շատ տեղեկութիւններ տալ հայերի մասին։ Հեղինակը նշում է,

որ հայ ահաբեկչական շարժումները վկայում են, որ Հայկական Հարցը գոյութիւն ունի։

«Թուրքերի դէմ ուշացած ահաբեկչութիւնը» յօդւածում Բիւկերը, որը թերթի խմբագրութեան անդամ է, նշում է, որ հայերը չեն մոռանում ցեղասպանութիւնը։ Յօդւածը գրւեց Փարիզում թուրքական մշակութային շէնքի գրաւման առիթով։ Որտեղի՞ց է հայերի այս ատելութիւնը թուրքերի նկատմամբ,- հարցնում է հեղինակը և որպէս պատասխան տալիս է ցեղասպանութեան պատմութիւնը։ Դրա հետ միասին հեղինակը այն համոզումն է յայտնում, որ ահաբեկչութիւնը չի կարող որեւէ փոփոխութիւն մտցնել հայերի տարագիր կեանքի մէջ։ Յօդւածի վերջում հեղինակը նշում է, որ Խորհրդային Միութեան քաղաքագէտները կարողանում են լաւագոյն ձեւով օգտագործել հայերի ողբերգութիւնը իրենց օգտին և շահել հայերի հաւատարմութիւնը, հանդէս գալով որպէս ցեղասպանութիւնը պաշտօնապէս դատապարտող մի պետութիւն։ Հեղինակը նշում է նաեւ այն, որ Խորհրդային Հայաստանին թոյլատրւում է իր հանրապետութեան զինանշանի վրայ պատկերել այժմ Թուրքիային պատկանող Արարատ լեռը։

Բէյրութից ստացւած թղթակցութեան մէջ Ռայնարտը գրում է, որ թուրքական դիւանագէտները ապրում են վախի ու սարսափի մէջ, որ հայերը 1915 թւականի վրէժն են լուծում և որ նրանք արդէն սպանել են 17 դիւանագէտների։ Երկար ժամանակ,- գրում է հեղինակը,- թուրքերը չէին ուզում խօսել հայերի մասին, սակայն այժմ նրանք ստիպւած են խօսելու։ Հեղինակը նշում է նաեւ այն, որ վատացել են Ֆրանսիայի և Թուրքիայի փոխյարաբերութիւնները, ուրովհետեւ թուրքերը մեղադրում են ֆրանսացիներին իրենց դիւանագէտներին վատ պաշտպանելու մէջ։

Յօդւածի վերջում հեղինակը նշում է, որ հայերը անկախ հանրապետութիւն են ուզում։ Այս բովանդակութեամբ այս նոյն հեղինակը մի շարք յօդւածներ է գրել տարբեր թերթերում։

Մակմանուսի ստորագրութեամբ հրատարակւեց մի յօդւած, որտեղ նշւում է, որ «Գաղտնի Բանակը» ամենաերիտասարդ ահաբեկչական կազմակերպութիւնն է, որը կազմակերպել է 15 դիւանագէտների սպանութիւն։ Նրանց մասին ոչինչ յայտնի չէ,- գրում է հեղինակը,- բացի նրանից, որ սա մարքսիստական կազմակերպութիւն է։ Ըստ հեղինակի, նրանք պահանջում են Թուրքիայի 5 հայկական նահանգները։ Այս հաստատումից յետոյ, հեղինակը տալիս է հայոց պատմութիւնը և ցեղասպանութեան նկարագրութիւնը։ Պատմում է նաեւ բոլշեւիկների մասին, որոնք իրականացրին Հայաստանի խորհրդայնացումը։

Յօդուածի վերջում հեղինակը յայտարարում է,- Հ.Յ.Դաշնակցութիւնը, վախենալով, որ ինքը կարող է կորցնել իր հեղինակութիւնը և երիտասարդութիւնը, որոշեց կազմել սեփական ահաբեկչական կազմակերպութիւն «Հայ Յեղասպանութեան Արդարադատութեան Մարտիկներ» անուն տակ: Հեղինակը նշում է, որ «Գաղտնի Բանակ» կոչուող կազմակերպութեան մի շարք ահաբեկչութիւններ հաւանութիւն չեն գտնում հայ ժողովրդի մէջ:

«Գաղտնի Բանակը»,- գրում է հեղինակը,- ուզում է խլել հայկական հողերը Թուրքիայից և կցել այդ հողերը Խորհրդային Հայաստանին: Այս երկու ահաբեկչական կազմակերպութիւնները մրցակցութեան մէջ են մտել,- ասում է հեղինակը,- և երբեմն մէկը միւսի արածները իրեն է վերագրում:

Կլաուս Պետր Կիւնը **«Հայերի ահաբեկչութիւնը ծաւալւում է»** յօդուածում նշում է, որ հայերը անկախութիւն են ուզում: Ժամկոչեանի դատավարութեան առիթով յիշատակւում է Թալէաթի սպանութիւնը, որտեղ դատաւորը ժողովուրդների իրաւունքների մասնագէտ էր: Հեղինակը պատմում է նաեւ այն մասին, որ հայերի ցեղասպանութեան մէջ մեղք ունէին նաեւ գերմանացիները: Նկարագրելով ցեղասպանութիւնը, հեղինակը մէջ է բերում գերմանական հիւպատոս Հոլշտայնի հեռագիրը, որտեղ ասւած է, որ ամէն օր գետը լեցուն է լինում հայերի դիակներով: Վերջում հեղինակը նշում է, որ Սփիւռքի հայերը այսօր էլ մեղադրւում են ՆԱՏՕ-ին Թուրքիային պաշտպանելու համար. որովհետեւ հէնց ՆԱՏՕյի երկրների պատճառով է, որ միջազգային ատեաններում չի քննարկւում Հայկական Հարցը:

«ԴՊԱ» տեղեկատւական գործակալութիւնը հրատարակեց մի հաղորդագրութիւն, որտեղ նշում է, որ Հայկական Հարցը սկսել է անհանգստացնել թուրքերին և Թուրքիան վաղ թէ ուշ ստիպւած կը լինի պատռել Հայկական Հարցի շուրջ ստեղծւած լռութիւնը:

Թեսսա Հոֆմանը այցելել է Հայաստան և Վրաստան ու իր տպաւորութիւնների մասին հրատարակել է մի յօդւած, որտեղ անդրադառնում է նաեւ հայ ժողովրդի պատմութեանը ու ցեղասպանութեանը:

Դիրկ Բուշենի յօդւածը, **«Ռումբեր օտարների դէմ»** խորագրով, սկսւում է նրանից, որ հեղինակը իր մտահոգութիւնն է յայտնում, թէ մարդիկ սկսել են վախենալ հայերից, որոնք 1975 թւականից սկսեալ մարդ են սպանում ու ռումբեր պայթեցնում: 2000 տարի է, ինչ հայերը երազում են անկախութեան մասին,- գրում է հեղինակը,- սակայն պարսիկները, թուրքերը, ռուսները, արաբները միշտ էլ խլել են նրանց ազատութիւնը: Յետոյ նշում է Սեւրի դաշնագիրը և Լօզանը:

Անդրադառնալով հայ ժողովրդի այժմէական պայքարին, հեղինակը յիշատակում է ահաբեկչութիւնները, յանձինս Ժամկոչեանին և Խորհրդային Միու-

թեան այլախոհներին, յանձինս Պարոյր Հայրիկեանին։ Հեղինակը մէջ է բերում Հայրիկեանի խօսքերը դատավարութեան ժամանակ, որտեղ նա ասում է, որ ամբողջ Հայաստանը լալիս ու տնքում է ազատութեան բացակայութիւնից։ Յօդւածում կան բազմաթիւ պատմական տւեալներ և նշւում է, որ ցեղասպանութիւնը իրականացւեց քրդերի ձեռքով։

Հայ Դատին վերաբերող յօդւածների շարքին կարելի է դասել նաեւ Ֆլոթաուի յօդւածը, որը վերաբերում է Թուրքիայի յոյն և հայ փոքրամասնութիւններին և որտեղ հեղինակը բերում է վիճակագրական տւեալներ, որտեղից պարզ երեւում է հայ համայնքի նւազումը Թուրքիայում 1923 թւականից սկսեալ։ Հեղինակը նշում է, որ չնայած Պոլսոյ հայոց Պատրիարքի յայտարարութիւններին թէ Թուրքիայի հայ համայնքը լաւ վիճակի մէջ է և չեն խախտւում նրա ազգային ու մարդկային իրաւունքները, իրականում այդպէս չէ և Պատրիարքը ստիպւած է նման յայտարարութիւններ անելու։

Գալով զուտ ահաբեկչութիւններին վերաբերող յօդւածներին, ապա նրանք պարզ հաղորդագրութիւններ են կատարւած դէպքերի մասին, որոնց մէջ, որպէս օրէնք, նշւում են նախորդ ահաբեկչութիւնները, արւում են ենթադրութիւններ ու տարբեր մեկնաբանութիւններ։ Նման յօդւածները հրատարակւում են գրեթէ բոլոր թերթերում։ Օրինակ՝ Ֆրանսիայի թուրքական դեսպանատան մշակութային բաժնի գրաւման մասին հաղորդեցին 87 թերթեր։ Նոյնը գրւեց Կոպենհագենում տեղի ունեցած դէպքի մասին, ընդ որում թերթերը նշեցին, որ ահաբեկիչները յայտարարեցին, թէ իրենք կապ չունեն «Գաղտնի Բանակի» հետ և որ իրենց թիրախները միայն թուրք դիւանագէտներն են։ Ահաբեկչութեան փաստին վերաբերող յօդւածներում արտայայտւեցին հետեւեալ մտքերը.

1.- Զւիցերիայի հասարակութիւնը մեծ զայրոյթ է ապրում Ժընեւում տեղի ունեցած դէպքերի համար։

2.- Հայերը սպառնում են ոչ միայն թուրքերին, այլ նաեւ Արեւմտեան Եւրոպայի երկրներին, մասնաւորապէս ֆրանսիացիներին ու զւիցերիացիներին, որոնք ապրում են նորանոր ահաբեկչութիւնների սպառնալիքի տակ։

3.- Թուրքերը չեն կարող շատ երկար լռել և շուտով, հաւանաբար, սկսելու են պայքարել հայերի դէմ։

4.- Հայերը, Լիբանանում գտնւող ահաբեկչութեան կենտրոններից ղեկավարւելով, ծաւալում են իրենց ահաբեկչական գործունէութիւնը։

5.- Հայկական ահաբեկչական շարժումը ամբողջովին կապւած է և սնւում է Պաղեստինեան կազմակերպութիւններից, յատկապէս Հաբաշի թեւից։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

1981 թւականին Դաշնակցային Գերմանիայի մամուլում հրատարակուած յօդուածների վերլուծութիւնը թոյլ է տալիս յանգելու հետեւեալ եզրակացութիւններին.

ա) Հայ Դատի ամբողջ պատմութիւնը, բոլոր մանրամասնութիւններով, յայտնի է Դաշնակցային Գերմանիայի լրագրողներին ու պատմաբաններին և նրանք ճշմարտօրէն, առանց խեղաթիւրումների և հէնց մեր ուզած ձեւով առաջին իսկ յարմար առիթով հրապարակում են այդ տեղեկութիւնները մամուլում:

Սա նշանակում է, որ Հայ Դատի ուղղութեամբ տարւող աշխատանքների մէջ պէտք է գերակշռի ոչ թէ փաստերը մամուլին յանձնելու առիթներ ստեղծելու աշխատանքը: Այդ գործը չի կարող սահմանափակւել ահաբեկչական արարքների տւած առիթներով: Նման առիթների օգտագործումը, անշուշտ, արդիւնաբեր միջոցներից մէկն է, սակայն միակը չէ:

բ) Հայ Դատի քարոզչութեան մակարդակը Դաշնակցային Գերմանիայում ամբողջովին բաւարարում է մեր պահանջներին: Այժմ դժւար է գտնել Գերմանիայում որեւէ թերթ կարդացող մարդ, որը տեղեակ չլինի Հայ Դատից և հայկական ցեղասպանութիւնից: Սրանից աւելին չի էլ պահանջւում հասարակական քարոզչութեան բնագաւառում: Շատ տկար է սակայն, աւելի ճիշտ՝ ամբողջովին բացակայում է պետական քարոզչութիւնը, այսինքն որեւէ տեսակի և որեւէ մակարդակի վրայ արւած պաշտօնական յայտարարութիւնը Հայ Դատի վերաբերեալ:

Սա նշանակում է, որ Հայ Դատի ուղղութեամբ տարւելիք աշխատանքների մէջ կենտրոնական տեղը պէտք է գրաւեն պետական և պաշտօնական մարմինների հետ շփումներ հաստատելու նախաձեռնութիւնները, այսինքն պէտք է մշակուեն քարոզչութեան ամենակարեւոր փուլի՝ պետական ու պաշտօնական փուլի ճանապարհները:

գ) Դաշնակցային Գերմանիայի մամուլում հրատարակւած յօդուածներում չկար և ոչ մէկը , որ Հայ Դատի հարցում բռնէր թուրքական կողմը և, օրինակ, հերքէր ցեղասպանութեան փաստը կամ մերժէր հայերի հայրենիք ձեռք բերելու իրաւունքը:

Նման յօդուածներով լեցուն են Դաշնակցային Գերմանիայի և Աւստրիայի թուրքալեզու թերթերը, սակայն այդ յօդուածներից ոչ մէկը, ինչպէս նաեւ թուրքի գրչի պատկանող որեւէ յօդուած, չարտատպւեց գերմանախօս մամուլում: Այս բանը, անշուշտ, չի կարելի բացատրել գերմանացիների համակրանքով դէպի հայերը, որովհետեւ Գերմանիայի հայութիւնը շատ սակաւաթիւ է և ոչ մէկ

կերպ չի արտայայտում իրեն՝ գերմանացիների համակրանքը վայելելու համար։

Այս երեւոյթի բացատրութիւնը, հաւանաբար, պէտք է որոնել թուրքերի նկատմամբ եղած հակակրանքի մէջ։ Իսկ այդ հակակրանքի կենտրոնները գտնուում են աջակողմեան կազմակերպութիւնների մէջ։

1982

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ Մ ԱՄՈՒԼԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Է. Յովհաննիսեան

Միւնխենի Հայկական Հարցերի Հաստատութիւնը կազմեց 1982 թականին գերմանական մամուլում հայերին վերաբերեալ յօդւածների տեսութիւնը:

Ինչպէս նախկինում, այս անգամ էլ այդ յօդւածները բաժանւած են երեք խմբերի, որոնք են՝ փոքր յօդւածներ մինչեւ 200 բառ, միջին ծաւալի յօդւածներ՝ 200-1000 բառ և մեծ յօդւածներ 1000ից աւելի բառ: Բացի այս զուտ քանակական գնահատականից, բոլոր յօդւածների համար մշակւել է այսպէս կոչւած քարոզչութեան գործակից, որը կապ ունի այն բանի հետ, թէ ինչ կշիռ ունեցող թերթի մէջ է հրատարակւած յօդւածը, որ էջի վրայ, ինչ կշիռ ունի հեղինակը, որքանով յօդւածը հայանպաստ է և որքանով նա անաչառ է ու համապատասխանում է պատմական ճշմարտութիւններին:

Համեմատելու համար 1982 թականի յօդւածները նախորդ տարիների հետ, կազմւել է մի աղիւսակ, որը ինքնին հասկանալի է և բացատրութիւնների կարիք չունի:

	Մեծ	Միջին	Փոքր	Ընդամ.	Քարոզչ. գործակից
1980	28	54	80	162	4.5
1981	68	153	423	644	38.2
1982	71	234	508	813	46.4

Անցնենք յօդւածների համառօտ բովանդակութեանը:

Յունուարի 6ին **«Ջուտ Դոյչէ Ցայտունգ»** թերթը հրատարակեց «Վրէժի ձայնը լսւեց Սանթա Բարբարայից» յօդւածը: Յօդւածագիրը պատմում է «Հայկական Հարցի» պատմութիւնը և յայտնում է իր անձնական կարծիքը այն մասին, թէ Աթաթուրքը լաւ հասկացաւ, որ Օսմանեան կայսրութեան անկումից յետոյ Թուրքիան աշխարհի հետ խաղաղութիւնը ապահովելու և երկիրը ցեղային իմաստով թուրքացնելու գնով: Այս իմաստով հայերը և յոյները խոչընդոտ էին հանդիսանում նրա համար:

Հեղինակը մէջբերում է Իւ Թերնոնի, Ռիչարդ Յովհաննիսեանի և Շոուի տեսակէտները, առանց որեւէ մեկնաբանութեան: Անդրադառնալով Ռուսաստանի, յետոյ էլ Խորհրդային Միութեան դիրքորոշմանը Հայկական Հարցում, յօդւածի հեղինակը պնդում է, որ Ռուսաստանը, թէ՛ ցարական և թէ խորհրդային, միշտ էլ օգտագործել է հայերին Թուրքիայի ներսում անկայունութիւն ստեղծե-

լու նպատակով: Նա աւելացնում է որ Թուրքիայում երբեք լուրջ գիտական քննութեան չի ենթարկուել հայկական ցեղասպանութիւնը և Թուրքիայի կառավարութիւնը չի ճանաչում նման հարցի գոյութիւնը:

Յունուարի 14ին **«Ֆրանկֆուրտեր Ալգեմայնէ Ցայտունգ»** թերթը հրատարակեց «Եարուզելսկին և ուրիշները» յօդուածը, որը նուիրուած էր գերմանա-լեհական յարաբերութիւններին: Հեղինակը նշում է, որ զինուորական վարչակարգերը Լեհաստանում և Թուրքիայում տարբեր բնոյթ են կրում և, ըստ հեղինակի, Լեհաստանի զինուրական վարչակարգը աւելի վտանգաւոր է: Սակայն այս առիթով հեղինակը նշում է, որ այնուամենայնիւ, չի կարելի մոռացութեան մատնել հայերի ցեղասպանութիւնը, որը տեղի ունեցաւ 1915 թւականին և որը չի ցանկանում ճանաչել Թուրքիայի կառավարութիւնը: Այս յօդուածը ուղղուած էր կարծես թէ Թուրքիայի կառավարութեանը, որին ասւում էր, որ ձեր զինուրական վարչակարգը Լեհաստանից շատ աւելի լաւն է, բայց ինչո՞ւ էք դուք ձեզ վարկաբեկում, հրաժարուելով ճանաչել հայերի ցեղասպանութիւնը:

Փետրուարի 5ին **«Երերբախեր Նախրիխտէն»** թերթը, ուրիշ 5 թերթերի հետ միասին, հրատարակեց Փարիզի թղթակից Հանս Կլայնի յօդուածը, որը վերաբերւում էր Մաքս Քիլինճեանի դատավարութեան և որը վերնագրուած էր «Երկու տարի ազատազրկումից յետոյ»: Յօդուածում տրւում էր դատավարութեան ամբողջ ընթացքը մանրամասնութիւններով և գրւած էր շատ հայանպաստ դիրքերից:

Դաշնակցային Գերմանիայի 6 թերթեր հրատարակեցին «Ժառանգւած դառնութիւն» յօդուածը, որտեղ Խորհրդային Հայաստան այցելած հեղինակը նշում է, թէ Խորհրդային Հայաստանի ղեկավարութիւնը խիստ կերպով քննադատում է թուրք դիւանագէտների դէմ ուղղուած ահաբեկչութիւնը: Սակայն,- ասւած է յօդուածում,- ժողովուրդը համակրանքով է վերաբերւում այդ գործողութիւններին: Հեղինակը պատմում է Հայաստանի Նախարարների Խորհուրդի նախագահի տեղակալ Սւետլովայի հանդիպման մասին արտասահմանեան լրագրողների հետ: Այդ հանդիպման ժամանակ Սւետլովան դատապարտելով հանդերձ հայկական ահաբեկչութիւնը, աւելացրել է. «Չէ՞ որ դուք լաւ գիտէք, որ հայերը թուրքերին սիրելու ոչ մէկ առիթ չունեն»:

Աւելի քան 20 թերթեր անդրադարձան Լոս Անջելըսի թուրքական գլխաւոր հիւպատոսի մահապատժի հարցին և այս առիթով տարբեր տեսանկիւններից քննարկեցին հայերի ցեղասպանութիւնը և հայկական ահաբեկչութիւնը: Հարցը քննարկւեց երկու տեսանկիւնից՝ մէկը ահաբեկչութեան փաստն էր, որը խիստ դատապարտւեց, միւսը ահաբեկչութեան դրդապատճառներն էին, որի վերաբերեալ գրեթէ բոլոր հեղինակները որոշ հասկացողութիւն ցուցաբերե-

ցին: Յօդւածներում մէջբերւում էր թուրք դեսպանի այն յայտարարութիւնը, թէ իբր 1915 թւականի ցեղասպանութեան վերաբերեալ հայերը խաբւած են:

Փետրուարի 6ին **«Ֆրանկֆուրտեր Ռունդշաու»** թերթը հրատարակեց Գէորգ Հեռիլերի «Ամբողջ հարիւրամեակի երկայնքով մէկ արեան հետք» յօդւածը, որը սկսւում է Լոս Անջելըսի դէպքով, ապա՝ հեղինակը յիշատակում է նաեւ նախորդ դէպքերը: Նա նշում է, որ արեւմտեան գաղտնի սպասարկութիւնները «Գաղտնի Բանակ» կազմակերպութիւնը դասում են մարքսիստական և Մոսկուասէր կազմակերպութիւնների շարքին: Հեղինակը այն համոզւածութիւնն է յայտնում, որ «Գաղտնի Բանակը» օգնութիւն է ստանում Խորհրդային Միութիւնից: Իբր թէ այդ օգնութիւնը պայմանաւորւած է նրանով, որ Գաղտնի Բանակի նպատակը Արեւմտեան Հայաստանը Խորհրդային Միութեան կցելն է: Յօդւածում տրւում է հայ ժողովրդի համառօտ պատմութիւնը, որտեղ նշւում է ցեղասպանութեան փաստը և այն տեսակէտն է յայտնւում, որ այդ ցեղասպանութիւնը հայերի ռուսասիրութեան արդիւնքն էր: Ապա տրւում է Սեւրի դաշնագրի, Հայաստանի Հանրապետութեան և Հայաստանի խորհրդայնացման պատմութիւնը: Յատկապէս նշւում է, որ Թուրքիայում ապրող հայերը երբեք հաւասար իրաւունքներ չեն ունեցել մահմեդականների հետ: Այս իմաստով,- ասում է հեղինակը,- Խորհրդային Միութիւնում ապրող հայերը ունեն շատ աւելի մեծ ազատութիւններ և ազգային իրաւունքներ: Անդրադառնալով Սփիւռքին, հեղինակը նշում է, որ հայ ահաբեկիչները իրենց յոյսերը կապում են Լիբանանի, որտեղ ի վիճակի են զինւելու և մարզւելու: Յօդւածագիրը նշում է նաեւ այն, որ Թուրքիայի զինւորական կառավարութիւնը հայկական ահաբեկչութիւնը իր համար չափազանց վտանգաւոր է համարում, որովհետեւ այն մտահոգութիւնը ունի, թէ հայերը կարող են վատ օրինակ ծառայել նաեւ ուրիշ ազգերի, օրինակ, Թուրքիայում ապրող քրդերի համար: Այս առիթով հեղինակը պատմում է այն դաժան ճնշամիջոցների մասին, որոնք օգտագործում են Թուրքիայի իշխանութիւնները քրդերի նկատմամբ:

Փետրուարի 12ին **«Ֆրանկֆուրտեր Ռունդշաու»** թերթը հրատարակեց Ժիրայր Քոչարեանի յօդւածը, որտեղ քննադատւում է նախորդ յօդւածը այն բանի համար, որ հեղինակը հայ ժողովրդի ազատագրական պայքարը ներկայացնում է որպէս Մոսկւայի քաղաքական խաղերի արդիւնք: Քոչարեան իր յօդւածը աւարտում է այն պնդումով, որ ԱՍԱԼԱն, ինչպէս նաեւ ուրիշ ընդյատակեայ հայկական կազմակերպութիւններ մաս են կազմում միայն հայ ժողովրդի ինքնագիտակցութեան նոր վերելքի:

«Ֆրանկֆուրտեր Ռունդշաու» թերթը Փետրուարի 13ին հրատարակեց Նաում Օռլանդի «Հայկական Հարցը» յօդւածը, որը նուիրւած էր Իւ Թերնոնի «Թաբու Արմենիան» գրքին: Հեղինակը իր յօդւածը սկսում է մեր օրերին կա-

տարւող ցեղասպանութիւններից, նշելով Բիաֆրան, Կամպուչիան, Վիեթնամը և Լիբանանը: Նա գրում է, որ այսօր ցեղասպանութիւն բառը օգտագործւում է միայն հրեաների ցեղասպանութեան առիթով, սակայն մեր դարի առաջին ցեղասպանութիւնը 1915 թւին տեղի ունեցած հայերի ցեղասպանութիւնն է: Անդրադառնալով Թերնոնի գրքին, հեղինակը յատուկ ընդգծում է, որ այդ գիրքը յատկապէս հետաքրքիր պէտք է լինի գերմանացի ընթերցողի համար, որովհետեւ գրքում խօսւում է հայերի ցեղասպանութեան մէջ կայսերական Գերմանիոյ ունեցած դերի և պատասխանատւութեան մասին: Հեղինակը պնդում է, որ հակառակ ընդունւած տեսակէտի, թէ թուրքերը իրենց քաղաքականութիւնը վարում էին գերմանացիների հետ ամէն մի քայլ համաձայնեցնելով, իրականում Ջեմալ-Էնվէր-Թալէաթ եռեակը չափից աւելի ինքնակամ է եղել: Հեղինակը նշում է նաեւ, որ Թերնոնը իր գրքի մէջ թուրքերին ատելու կոչ չի անում, այլ իրաւացիօրէն պահանջում է որպէսզի Թուրքիան ի վերջոյ ճանաչի իր նախորդների գործած չարիքները, առանց որի անկարելի պիտի լինի վերացնել հայ-թուրք բարեկամութիւնը խանգարող խոչընդոտները:

«Ֆրանկֆուրտեր Ալգեմայնէ» թերթը Փետրւարի 16ին հրատարակեց Բոխումի Համալսարանի պրոֆ. Պապալեկասի յօդւածը, որտեղ հեղինակը, անդրադառնալով Հայկական Հարցին, նշում է որ ժամանակակից զինւորական վարչակարգերի համեմատութիւնը կատարելիս, որպէս չափանիշ պէտք է ընդունել տւեալ երկրի յարձակողական քաղաքականութիւնը, քանզի զինւորական վարչակարգերի վտանգը ռազմատենչութեան մէջ է: Այս առիթով հեղինակը նշում է, որ այսօր Թուրքիան միակ զինւորական պետութիւնն է, որը իր զօրքերը պահում է ուրիշ երկրում և որը Յունաստանի նկատմամբ յարձակողական քաղաքականութիւն է վարում:

«Լիւդէնշայդեր Նախրիխտեն» թերթը Փետրւարի 24ին հրատարակեց «Հայերը պայքարում են մի երազի նմանւող նպատակի համար»: Յօդւածում յիշատակւում է, որ հայ ահաբեկիչները Լիբանանում լրագրողներին յայտարարեցին, թէ պայքարում են անկախ Հայաստանի համար, որը պէտք է ստեղծուի Թուրքիայի սահմաններում: Այս նպատակը հեղինակը համարում է անիրականանալի:

«Լեվերկուզներ Անցայգեր» թերթը Մարտի 15ին հրատարակեց մի յօդւած, որը վերաբերւում է Դաշնակցային Գերմանիայի պատկերասփիւռով հաղորդւած **«Եղբայրական Շաբաթ»** հաղորդմանը: Այդ հաղորդմանը մասնակցեց նաեւ մի հայ ուսուցչուհի՝ Անի Նշանեանը, որը ասաց, որ հայերը այժմ չունեն ո՛չ անկախ հայրենիք և ոչ էլ ազգային իշխանութիւն, ուստի իրենց ազգային գիտակցութիւնը պահպանելու համար նրանք ընտրել են լեզուն պահպանելու ճանապարհը: Երեք ուրիշ թերթեր էլ արտատպեցին այդ յօդւածը:

«Դիւսբուրգեր շտաղթանցայգեր» թերթը Ապրիլի 28ին հրատարակեց «Հայկական նոր դիմադրութեան շարժում» կազմակերպութեան մասին յօդուածը, որ ռումբ պայթեցրեց Դիւսբուրգի թուրքական գրասենեակներից մէկում: Դիւսբուրգում ապրող թուրքերը սկզբից կարծեցին, որ սա այն աջակողմեան կազմակերպութեանց գործն է, որոնք ցանկանում են վտարել թուրքերին Գերմանիայից: Սակայն, տեղեկանալով որ սա հայերի գործն է, նրանք արեցին հետեւեալ յայտարարութիւնը. «Մեզ եւրոպացիները բարբարոսներ են համարում, իսկ հիմա թող տեսնեն, որ հայերը մարդկութեան դէմ ոճիրներ են գործում»:

«Դեռ Թագեսշպիգել» թերթը Ապրիլի 30ին հրատարակեց Հորստ Յիմերմանի «Պայքարի դաշտը արտասահմանեան ծայրայեղականների համար» յօդուածը, որտեղ հեղինակը պատմում է Դաշնակցային Գերմանիայում գործող ծայրայեղական կազմակերպութիւնների մասին և այս առիթով նշում է, որ հայերը, որոնք իրենց ծայրայեղական քայլերի համար ընտրել էին Ֆրանսիան, այժմ տեղափոխւում են Դաշնակցային Գերմանիա:

«Զալցբուրգեր Նախրիխտեն» թերթը Մայիսի 6ին հաղորդեց, որ Անկարայում յայտնաբերւել են անօրինական կարգով երկիր մտցած զէնքեր, որոնք վերագրւում են հայերին և որի առիթով ձերբակալւած են աւելի քան 800 հոգի:

Շուեցարական **«Վելտուխէ»** թերթը Յունիսի 3ին հրատարակեց «Պատասխան Երեւանից» յօդուածը, որը նուիրւած էր Խորհրդային Հայաստանին: Յօդուածում ասւած էր, որ հայ ժողովրդին վիճակւել է դառն ճակատագիր, որովհետեւ նա խաղալիք է դարձել մեծ պետութիւնների ձեռքում: Ապա ասւած է, որ հայերը կամաւոր կարգով ընտրել են խորհրդային իշխանութիւնը և ձեռք են բերել ազգային կեանք վարելու ինքնուրոյնութիւն: Յօդուածի հեղինակը մանրամասնօրէն և հայասիրական դիրքերից պատմում է Մեծ Եղեռնի մասին, յատուկ ընդգծելով, որ Խորհրդային իշխանութիւնը թոյլ է տալիս թուրքերի դէմ ուղղւած գործունէութիւնը, չնայած նրան, որ այդ գործունէութիւնը բարձրացնում է ժողովուրդի ինքնագիտակցութիւնը:

Շուեցարական **«Բազլեր Յայտունգ»** թերթը Յունւարի մէկին հրատարակեց Ֆլոտաուի «Աշխարհագրութիւնը նրանց ճակատագիրը եղաւ. քրդերը և հայերը Թուրքիայում» յօդուածը: Յօդուածում ասւած է, որ Աթաթուրքից ի վեր Թուրքիայում բնակւող քրդերը և հայերը կարող են նորմալ կեանք վարել միայն այն դէպքում, երբ իրենց թուրք համարեն: Թուրքերը ոչ մի կերպ չեն ցանկանում ճանաչել Եղեռնը և այն իրաւունքները, որոնք նախատեսւած էին քրդերի և հայերի համար Սեւրի դաշնագրով:

«Ռեուտլեր Գեներալ Անցայգէ» թերթը Յունիս 4ին «Աշխարհով մէկ տարածւած հայկական ահաբեկչութիւնը» յօդուածում նշեց, որ «Արդարադատութեան

Մարտիկներ» կազմակերպութեան յարձակումները լուրջ մտահոգութիւն են պատճառում Թուրքիայում: Թրքական որոշ թերթեր, ինչպէս նաեւ նոր Սահմանադրութեան յանձնաժողովը պնդեցին, որպէսզի այդ ահաբեկչութեան դէմ հակաահաբեկչական միջոցների դիմի: Յօդւածում նշւած է, որ թրքական դիւանագէտների դէմ ուղղւած յարձակումները վկայում են, որ հայ ահաբեկիչները ի վիճակի են մտնելու աշխարհի որեւէ երկիր և այնտեղ գործել: Նոյն այս յօդւածը տպւել է մի շարք ուրիշ թերթերում:

Յունիսի 19ին **«Նոյէ Ցիւրխեր Ցայտունգ»** թերթը հրատարակեց «Հայերը քրիստոնեայ մի ազգի ողբերգական ճակատագիր» յօդւածը, որտեղ մանրամասնօրէն նկարագրւում է հայերի ճակատագիրը՝ ցեղասպանութիւնից մինչեւ խորհրդայնացում: Յօդւածը գրւած է շատ ջերմ հայասիրական դիրքերից:

Յունիսի 22ին **«Շտուտգարտեր Նախրիխտեն»** թերթում հրատարակւեց «Ուշացած վրէժ» յօդւածը, որի հեղինակն է Բետտինա Վէյսմանը: Նա գրում է, որ դժբախտաբար, 1894-96 թւականների և 1915 թւի անմարդկային վարմունքը հայերի նկատմամբ չի ջնջւել միայն ահաբեկիչների յիշողութիւնից: Ընդհանուր եզրակացութիւնը այն է, որ Եղեռնը եղել է, որ այդ Եղեռնը սարսափելի է եղել, բայց մարդկութիւնը մոռացել է այդ մասին և այսօր արդէն ուշ է խօսելը:

Յուլիսի 7ին **«Բազլեր Ցայտունգ»** թերթում զետեղւեց «Հայերը և նրանց պատմութիւնը» յօդւածը: Հեղինակը Հարթմուտ Ֆէհնդրիխն է: Նա նշում է, որ ամբողջ աշխարհի պատմութեան մէջ այսօրւայ տեսադաշտի համար հայերին ոչ մէկ տեղ չի յատկացւել: Սակայն, վերջին տասնամեակի ընթացքում հայերը մեզ կարողացան ներկայացնել իրենց պատմութիւնը: Եւ ոչ միայն թրքական դիւանագէտների վրայ արձակւած փամփուշտներով: Վերջին ժամանակներս բաւականաչափ աւելացել են հայերի պատմութեանը վերաբերող աշխատութիւնները: Որպէս օրինակ, նա խօսում է Իւ Թերնոնի գրքի մասին գրախօսականի կարգով:

«Նոյէ Ցիւրխեր Ցայտունգ» թերթը Յուլիս 9ին հրատարակեց «Օտար լինել, նշանակում է զոհ դառնալ» յօդւածը, որը նուիրւած է Վերֆելի «Մուսա Լերան 40 օրերը» գրքին, որտեղից եզրակացւում է, որ թոյլերը և օտարները պատմութեան մշտական զոհերն են:

Յուլիս 10ին **«Նոյէ Ցիւրխեր Ցայտունգ»** թերթը հրատարակեց Իստամբուլից ստացւած մի հաղորդագրութիւն, որը վերնագրւած էր՝ «Թուրքերը և հայերը»: Յօդւածի հեղինակը, որը թուրք է, բողոքում է գերմանական թերթի խմբագրութեան դէմ, որը իբր թէ համակրում է հայ ահաբեկիչներին, Հասկանալով, որ այդ մեղադրանքը շատ լուրջ է թերթի խմբագրութեան համար, հեղինակը՝ Զէքի Կուներալփը աւելացնում է. «Մի՞թէ միայն հայասէր կամ հակաթուրք լինելը ինքնաբերաբար պատմութեան խեղաթիւրում չէ»: Հեղինակը մէջբերում է

Անգլիայի արտաքին գործերի նախարարական արխիւից վերցրած մի փաստաթուղթ, որում ոմն Բրիդստոն գրում է. «Ես համոզուած եմ, որ հայերը թուրքերից պակաս մարդասպաններ չեն և դաշնակցականների կողմից կառավարուող հարեւան երկիրը ոչ մէկ վստահութիւն չի ներկայացնում»:

Դաշնակցային Գերմանիայի բազմաթիւ թերթեր հրատարակեցին գերմանական զբօսաշրջիկների ղեկավար Բրաունի ձերբակալութեան, ապա՝ ազատ արձակման խնդրի մասին: Բրաունը իր զբօսաշրջիկներին պատմել էր, որ Աղթամարը հայկական տաճար է և որ հայերին 1915 թւականին ենթարկեցին ցեղասպանութեան:

Քաղաքական բնոյթ կրող այս յօդուածներից բացի գերմանախօս մամուլը վերջին հաշւով 40-50 թերթերում անդրադառնում է հայկական խնդրին որեւէ ահաբեկչութեան արարքի առիթով: Օգոստոս ամսին 124 թերթեր անդրադարձան Անկարայի օդակայանում տեղի ունեցած դէպքին և այս առիթով հրապարակեց թուրք ղեկավարների յայտարարութիւնը Հայկական Հարցի վերաբերեալ: Իսկ Ապրիլի 26ին 60 թերթեր հրատարակեցին Ապրիլ 24ի առիթով տարբեր երկրներում կատարուած ցոյցերի մասին տեղեկութիւններ:

Մշակութային բնոյթ կրող յօդուածներից կարելի է նշել հետեւեալները. Աւստրիական **«Ֆուրխէ»** թերթը Յունուարի 13ին Վիեննայի Մխիթարեան միաբանութեան նախաձեռնութեամբ հրատարակուած «Աւետարանական Քոդէկս-697» աշխատութեանը նուիրեց մի գրախօսական:

Յունուարի 23ին **«Նոյէ Պրեսէ»** և 12 ուրիշ թերթեր հրատարակեցին Հայր Յակոբ Քիլինճեանի յօդուածը Փասաւոյում հայ արքեպիսկոպոս Գրիգորեանի գերեզմանը գտնելու վերաբերեալ:

Յունուարի 23ին **«Բադ Զախսաէր Նախրիխտեն»** թերթը և 9 ուրիշ թերթեր հրատարակեցին ՏԱՍՍ գործակալութեան հաղորդագրութիւնը, որի համաձայն 1981 թւականին շուրջ 3000 հայ զբօսաշրջիկներ այցելել են Խորհրդային Հայաստան: Այդ զբօսաշրջիկներից ոմանց թոյլ է տրուել ապրել իրենց հարազատների տներում:

Փետրուարի 16ին Բոխումի տեղական թերթը հաղորդեց Վեստֆալիայի եկեղեցական խորհրդի օգնութեամբ Կիպրոսում նոր հայկական եկեղեցի կառուցելու մասին, որի համար Անթիլիասից ստացել են պարգեւներ ու նուէրներ: Թրքական զօրքերի Կիպրոս ներխուժումից յետոյ, հայկական եկեղեցին մնաց թրքական կողմում: Նոր եկեղեցի կառուցելու համար անհրաժեշտ էր կէս միլիոն գերմանական մարք, որի կէսը յատկացրեց Վեստֆալիայի եկեղեցական խորհուրդը:

Նոյն օրը 16 թերթեր գրեցին, որ Խորհրդային Հայաստանում ապրում են 100 տարեկանից աւելի բարձր տարիք ունեցող 625 մարդ: Պատմւում է այդ մարդկանց մասին:

Մարտի 17ին գերմանական թերթերը հրատարակեցին ՏԱՍՍ գործակալութեան հաղորդագրութիւնը, որի համաձայն Խորհրդային Հայաստանում մեծ հեղինակութիւն ունի գերամանական դասական գրականութիւնը: Իսկ այդ օրերին Երեւանում հայերէնի էր թարգմանւել Գէօթէի «Վերտերի տագնապները» ստեղծագործութիւնը: Թւարկւում էին նաեւ գերմանական այլ հեղինակների թարգմանութիւններ:

Ապրիլի 6ին **«Բեռլներ Շտադտ-Անցայգեր»** թերթը գրեց Բեռլինում հայկական եկեղեցական խորհրդի նախաձեռնութեամբ կազմակերպւած համերգի մասին: Փարիզից հրաւիրւած երաժիշտները մեծ յաջողութեամբ ներկայացրել էին հին հայկական եկեղեցական երաժշտութիւնը: Այս առիթով յօդւածում կան նաեւ տեղեկութիւններ Բեռլինում ապրող հայերի մասին, որոնք հիմնականում պոլսահայեր են:

Ապրիլի 15ին, **«Զարցբուրգեր Նախրիխտա»** թերթը «Հայերի մշակութային համերաշխութիւնը» յօդւածում, որը գրւել էր Երեւանից ստացւած մի թղթակցութեան հիման վրայ, պատմւում էր այն մասին, թէ ինչպէս Սփիւռքում ապրող հայերը բազմաթիւ կարեւոր փասթաթղթեր ու նիւթեր են ուղարկում Խ. Հայաստանի Մատենադարանին: Եզրակացութիւնը այն էր, որ Սփիւռքի և Հայաստանի հայերը մեծ խնամքով են վերաբերւում իրենց մշակութային ժառանգութեանը: Այս առիթով նկարագրւում է Մատենադարանի հարստութիւնը:

Ապրիլի 17ին Դիւսելդորֆի թերթերը հրատարակեցին «Երևանը Հռոմից 40 տարով աւելի մեծ է» յօդւածը, որտեղ Անդրկովկաս այցելած հեղինակը պատմում է Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի մասին:

Մայիսի 11ին **«Նոյէ Ցիւրխեր Ցայտունգ»** թերթը գրեց Դիւսելդորֆում գերմաներէնով «Հայկական հեքիաթներ» գրքի հրատարակութեան մասին:

Ապրիլի 3ին Շպանդաուի **«Ֆոլքսբլատ»** թերթը պատմեց «Խորհրդային Արւեստ» ցուցահանդէսի մասին, որտեղ մեծ յաջողութիւն է ունեցել հայ նկարիչ Ալբերտ Պապիկեանը:

1983

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓԻՒՌՔՈՒՄ

Է. Յովհաննիսեան

Գիտութիւնը, որպէս մարդկային գործունէութեան բնագաւառ, ինքն ըստ ինքեան ունի բազմաթիւ կողմեր, որոնցից առնւազն հետեւեալները աչքի են ընկնում, առանց խորը վերլուծութիւնների։

1.- Գիտութիւնը առաջադիմութեան նշան է։ Եթէ որեւէ շարժում, ուսումնասիրութիւն, հաստատում կամ եզրակացութիւն հիմնւած չէ գիտութեան վրայ, նա համարւում է ոչ թէ մասնագէտների, ոչ թէ լուրջ մարդկանց, այլ սիրողների գործ։

Ամէն մի անձ, կազմակերպութիւն և շարժում, իր հեղինակութիւնը բարձրացնելու համար, նետւում է գիտութեան դրօշի տակ։ Գիտութեան այս կողմը կարելի է անւանել քարոզչական, որովհետեւ այս կամ այն հաստատումին նա հեղինակութիւն է տալիս։

2.- Գիտութիւնը օգնում է բազմաթիւ ճանապարհներից ընտրել լաւագոյնը։ Նա թոյլ է տալիս որոնումներ կատարել իրական հողի վրայ, ուստի գիտութեան այս կողմը զուտ կիրառական նշանակութիւն ունի։ Նրա օգնութեամբ մենք երկնքից իջնում ենք գետին և գործում ենք գործող օրինաչափութիւնների և մեր իրական ուժերի սահմաններում։

3.- Գիտութիւնը օգնում է տեսնել այն, ինչը առանց գիտութեան չէր երեւում։ Գիտութեան այս կողմը ակնոցի նման մի բան է, որը թոյլ է տալիս թափանցել երեւոյթների խորքերը կամ, աւելի ճիշտ, տեսնել աւելի լաւ, քան մենք տեսնում էինք առանց ակնոցի։

Կարելի էր թւարկել գիտութեան հասարակական նշանակութեան շատ ուրիշ կողմեր, բայց այսքանն էլ բաւական է Սփիւռքի ազգային կեանքում գիտութեան տեղը որոշելու համար։

Առաջին կէտը, այսինքն գիտութեան պիտակի տակ հեղինակութիւն ձեռք բերելու ձգտումը ունեն բոլորը և դա հասկանալի է, քանզի մեր այսօրւայ աշխարհում ճշմարտութեան միակ աղբիւրը և միակ դատաւորը գիտութիւնն է։ Այսօր հաւատքի ուժը, ներըմբռնումը, երազը, տարբեր գուշակումները և բոլոր ոչ գիտական եզրակացութիւնները տգիտութեան նշաններ են և ծիծաղել ու զարմանալ կարելի է, թէ ինչպէս են մեր հոգեւորականները փորձում Աւետարանում նկարագրւած երեւոյթները բացատրել գիտութեամբ։

Պակաս ծիծաղելի չեն այն հասարակագէտները, որոնք Ստալինի վայրէնութիւնները կամ Հիտլերի վարքագիծը փորձում են բացատրել հասարակա-

կան օրինաչափութիւններով։ Ես կարող էի այստեղ մէջբերել բազմաթիւ նախաբաններ, ծրագրեր, աշխատութիւններ ու յօդուածներ, որտեղ հեղինակները իրենց ամենապարզ և հէնց դրանով մեծ արժէք ներկայացնող մտքերը դիտաւորեալ խճճում են, նրանց գիտական տեսք տալու համար։

Բայց այդ մէջբերումները չեմ կատարում, խուսափելու համար աւելորդ գրգռումներից Սփիւռքի առանց այն էլ լարւած մթնոլորտում։ Ուզում եմ միայն նշել, որ մեր պայմաններում գիտութեան այս յատկութիւնը, այսինքն որեւէ գործին հեղինակութիւն տալու յատկութիւնը, ոչ մէկ արժէք չունի։ Նա կարող է արժէք ունենալ այնտեղ, որտեղ կան գիտութեան համար վճարողներ։ Իսկ Սփիւռքում գիտութեան համար, որպէս այդպիսին, չեն վճարում, քանզի Սփիւռքում գիտութիւնը արդիւնքներ ստանալու միջոց է, այստեղ վճարում են գիտութեան միջոցով ստացւած արդիւնքների համար։

Գտնւում են, անշուշտ, նւիրատուներ, որոնք սկզբնական աղմուկով տարւած և գիտութեան հովանաւորողի համբաւ ձեռք բերելու համար կատարում են որոշ վճարումներ, սակայն արդէն յաջորդ տարում, արդիւնքները չտեսնելով, նրանք էլ կամաց-կամաց հրաժարւում են իրենց նւիրատւութիւններից։ Սա նշանակում է, որ Սփիւռքի որեւէ գիտական հաստատութիւն պէտք է իր գործունէութիւնը սկսի ոչ թէ գիտական աղմուկից, այլ արդիւնքներ ստանալուց յետոյ և ըստ ստացւած արդիւնքների էլ ծաւալուի։ Այս սկզբունքը արհամարհողները շատ արագ վատնել են աղմուկի հաշւին ձեռք բերած դրամները և սնանկացել են առանց որեւէ արդիւնքի հասնելու։

Անուններ չեմ ուզում տալ, բայց գիտեմ շատերին, որ արժանացել են այդ ճակատագրին։ Ի տարբերութիւն նրանց, կարող եմ նշել Արմէն Հախնազարեանին, որը առանց մեծ աղմուկ հանելու, իսկապէս որ գիտական գործ է առնում և արդէն ստացել է արդիւնքներ, որոնք այսօր մեծ արժէք են ներկայացնում։

Գիտութեան երկրորդ կողմը կապ ունի ղեկավարման հետ և, հաւանաբար, մեզ համար բաւականին կարեւոր կողմ է։ Մենք պարտաւոր ենք օգտագործել գիտութեան այս կողմը, որ թոյլ է տալիս ՏԵՍԱՆԵԼԻ ճանապարհներից ընտրել լաւագոյնը։ Սակայն ճանապարհ ընտրելը դեռեւս ղեկավարել չէ։ Ճանապարհը ընտրելուց յետոյ, պիտի կարողանաս տանել այդ ճանապարհով ժողովուրդը։

Ղեկավարման այս բուն փուլում գիտութիւնը ոչ մէկ օգուտ կարող է բերել։ Ոչ մէկ գիտական հաստատութիւն ի վիճակի չէ ասել ժողովրդին, թէ մենք գիտականօրէն հաշւել ենք, որ դուք այս ճանապարհով պիտի գնաք, ուրեմն՝ գնացէք, որովհետեւ գիտութիւնն է հրամայում։ Այս հրամանին կարող է են-

թարկւել միայն գիտնականների այն չնչին մասը, որը գիտութեան նկատմամբ կրօնական հաւատք ունի։

Իսկ ժողովրդին այս կամ այն ճանապարհով տանելու համար այլ գործօններ են հարկաւոր։ Այդ գործօններից այսօր մնացել է միայն կազմակերպչական գործօնը։ Որեւէ կազմակերպութիւն, եթէ կազմակերպութիւն է, այլ ոչ թէ ակումբ, կարող է իր անդամներին թելադրել այս կամ այն ճանապարհը։ Բայց կազմակերպութիւններից դուրս՝ մնացած մարդիկ անղեկավարելի են, որովհետեւ Սփիւռքում չկայ ոչ բանակ, ոչ ոստիկանութիւն, ոչ դատարան և ոչ էլ այլ պարտադրող մարմին։

Ուրեմն միակ ղեկավարելի դաշտը կազմակերպչական դաշտն է և, ինչու համեստութիւն անել, Հ.Յ.Դաշնակցութիւնն է։ Ուրեմն գիտութեան օգտագործումը մեր պայմաններում կարող է ունենալ միայն հետեւեալ ճանապարհը։

Գիտական հաստատութիւնը իր ուսումնասիրութեան արդիւնքները յանձնում է որեւէ կազմակերպութեան (իսկ առանց աւելորդ համեստութեան՝ Հ.Յ.Դաշնակցութեանը), որը իր իշխանութեան սահմաններում կիրառում է այդ արդիւնքները, եթէ համաձայն է նրանց հետ։

Այն բանի վառ օրինակը, որ գիտութիւնը օգտագործելու ուրիշ ճանապարհ չկայ, Խորհրդային Հայաստանն է։ Այնտեղի իշխանութիւնը ղեկավարելու դաշտ չունի։ Երկրի որեւէ բնագաւառում նա փոփոխութիւններ կատարելու որեւէ հնարաւորութիւն չունի։ Հէնց դրա համար էլ հարիւրաւոր գիտական աշխատութիւններ փոշոտւում են դարակներում։

Հասարակագէտները, օրինակ, պարզում են, որ այսինչ գործարանից բանտրների հոսունութիւնը բացատրւում է ցածր աշխատավարձով, իսկ հանրապետութիւնից արտասահման գաղթողները այդ քայլին են դիմում, քաղաքական ազատութիւնների պակասից կամ էլ տնտեսական պայմաններից։ Բայց ի՞նչ կարող է անել Հայաստանի իշխանութիւնը, եթէ նա ի վիճակի չէ ոչ աշխատավարձը բարձրացնել, ոչ քաղաքական ազատութիւնները աւելացնել և ոչ էլ տնտեսական վիճակը բարելաւել։

Ուրեմն, ո՞ւմն են պէտք այդ թանկարժէք ուսումնասիրութիւնները։ Փառք Աստծոյ, Հայաստանում դեռեւս վճարում են գիտութեան համար որպէս գիտութիւն և մեր երիտասարդները նախ գիտական փորձ են ձեռք բերում և յետոյ գիտական կոչումների են արժանանում, որը տալիս է նրանց աշխատավարձի խիստ բարձրացում։ Բայց Սփիւռքում նման շռայլութիւն չկայ և չի էլ կարող լինել։

Ուստի, Սփիւռքի պայմաններում շատ աւելի բնական կը լինէր, որ որեւէ կուսակցութիւն գիտական հաստատութեանը պատւիրէր որեւէ ուսումնասիրութիւն և դրա համար վճարէր։ Կասկածից վեր է, որ այդ հաստատութիւնը

պէտք է լինէր անաչառ և առանց որեւէ քաղաքական գունաւորման։ Ես պնդում եմ, որ ՆՄԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ԱՅՍՕՐ ՍՓԻՒՌՔՈՒՄ ՉԻ ԿԱՐՈՂ ՍՏԵՂԾԻԵԼ, որովհետեւ Սփիւռքը չունի համապատասխան կառոյց և մակարդակ։

Սփիւռքում բացակայում է համահայկական համայնք և համահայկական շահեր, ուստի չի կարող ծնուել համահայկական կենտրոն։ Սփիւռքում սովորական մարդահամար անցկացնելն անգամ անկարելի է, որովհետեւ Էջմիածինը իր հաւատացեալների թիւը չի տրամադրի որեւէ հաստատութեան, եթէ նրա գոյնը Էջմիածնին դուր չգայ։ Անթիլիասի Կաթողիկոսի ընդունելութիւնը Միացեալ Նահանգներում դրա վառ օրինակն է։

Իսկ եթէ գիտական հաստատութիւնը պիտի կուսակցական հաստատութիւն լինի, սա արդէն բոլորովին ուրիշ հարց է և ամէն մի կուսակցութիւն այս գործը իր կարողութիւնների և ՊԱՀԱՆՋՆԵՐԻ համաձայն կատարում է։ Այստեղ միայն կարելի է նշել, որ այդ գործերը կուսակցութիւնների ներսում չպէտք է կատարուեն շռայլութեամբ։ Բայց մենք երբեմն այդ շռայլութիւնները կատարում ենք առնուազն հետեւեալ պատճառով։

Մենք ուզում ենք մեր սեփական ուժերով անել այն, ինչ որ արդէն ուրիշների կողմից արուած է։ Միտքս պարզելու համար՝ դիմեմ օրինակին։ Երբ ստեղծուեց Միւնխենի Հայկական Հարցերի Հաստատութիւնը, մենք մեր առջեւ խնդիր դրեցինք հաւաքել գերմանական մամուլում հրատարակուող բոլոր այն յօդուածները, որոնք վերաբերում են հայերին։

Մենք սկսեցինք սեփական ուժերով կտրտել թերթերից մեզ վերաբերող յօդուածները։ Սեփական ուժերը, անշուշտ, չբաւարարեցին և մենք դիմեցինք տարբեր քաղաքներում ապրող մեր համակիրներին։ Բայց ոչ-բոլոր քաղաքներում կային հայեր, այն էլ մեզ համակիր։ Ստիպուած եղանք կապուել օտարների հետ։ Յետոյ տեսանք, որ քարտուղարի պէտք ունենք, յետոյ առաջ եկաւ հեռատիպի (telex) անհրաժեշտութիւնը։

Մի խօսքով՝ մենք աճում ու ծաւալւում էինք միայն մէկ խնդիր լուծելու համար։ Եւ ես չգիտեմ, թէ ո՞ւր կը հասնէր մեր ծաւալումը, եթէ մենք ժամանակին խելքի չգայինք ու չդիմէինք ուրիշ՝ արդէն վաղուց այդ գործերով զբաղող կազմակերպութեան։ Այս գործի մէջ մեծ փորձ ունեցող մի կազմակերպութիւն այժմ կատարում է մեր պատուէրը և ամէն շաբաթ մեզ է ուղարկում կազմած պատրաստ բոլոր հայերին վերաբերող յօդուածները, որի համար մենք վճարում ենք մօտաւորապէս 200 գերմանական մարք ամսական։ Այս գումարով մենք երբեք սեփական ուժերով ի վիճակի չէինք լինի կազմակերպելու այս աշխատանքը։

Վերջապէս, գիտութեան երրորդ կողմի մասին, որը մենք օգտագործում ենք տեսնելու համար այն, ինչը սովորական աչքերով չի երեւում: Այսինքն՝ խօսքը ոչ թէ տեսանելի ճանապարհներից լաւագոյնի ընտրութեան մասին է, այլ նոր ճանապարհներ գտնելու մասին: Սա արդէն բուն և դասական գիտութիւնն է, որը մեր հարցերի նկատմամբ ամենամեծ ծառայութիւնը կարող է կատարել:

Այս արդէն մեր գործն է, որովհետեւ ոչ ոք, բացի մեզանից, այս հարցով չի զբաղւի, նոյնիսկ եթէ օտարները այս բանի համար լաւ վճարուեն: Նրանք պարզապէս ի վիճակի չեն լինի նման հարցեր ուսումնասիրել, որովհետեւ պէտք է մասնագէտ լինել և հայ մասնագէտ:

Այստեղ նախ և առաջ անհրաժեշտ է գիտական ինքնաճանաչում: Արեւստ, ազգային նկարագիր, ազգային հոգեբանութիւն, զանգւածային հակումներ, հասարակական կարծիքի ուսումնասիրութիւն, տնտեսական վիճակի ուսումնասիրութիւն և այլն, այս ամէնը կարող են նոր ճանապարհներ բանալ մեր ազգային խնդիրների լուծման համար: Այս ուսումնասիրութիւններն են, որ պէտք է թոյլ տան մեզ տեսնելու ԻՐԱԿԱՆ Հայաստանը, ԻՐԱԿԱՆ Սփիւռքը, ԻՐԱԿԱՆ Պարսկաստանը, Թուրքիան, Ամերիկան:

Սփիւռքի մասին շատ բան չեմ կարող ասել, բայց պնդում եմ, որ իրական Հայաստանը ոչ ոք չի ճանաչում, ներառեալ Հայաստանի ղեկավարներին, գրողներին ու գիտնականներին: Եւ այստեղ զարմանալու բան չկայ, որովհետեւ ի՞նչպէս կարելի է ճանաչել մի բան, առանց այդ բանը ուսումնասիրելու: Ո՞վ կարող է ինձ ցոյց տալ մէկ աշխատութիւն, ուսումնասիրութիւն կամ ուղղակի մէկ յօդւած, որտեղից կարելի լինի իմանալ, թէ քանի՛ քաղաքական և քանի՛ քրէական բանտարկեալներ կան Հայաստանում, թէ քանի՛ զինւոր են ծառայում Չինաստանի սահմանագծի վրայ և քանիսն են զոհւել Աֆղանստանում:

Աւելի՛ն. Հայաստանի ղեկավարներից քանիսն են կարողանում գրել հայերէնով և քանիսը հայերէն խօսել: Քանի՛ հայ ամէն տարի չի վերադառնում խոպան հողերից և քանի՛ հոգի 1,5 միլիոն Խորհրդային Սփիւռքում խօսում են հայերէն: Քանի՞ հոգի այդ Սփիւռքից ցանկանում են Հայաստան վերադառնալ և քանի՞սը՝ դուրս գալ Հայաստանից: Քանի՞ հոգի բաժանւում են ամէն տարի, քանի՛ հոգի մահանում են ինքնաշարժի վթարներից և քանի՛ հոգի են սպանւում դանակահարութիւններից: Կա՞ն արդեօք Հայաստանում բարոյական խաթարման երեւոյթներ: Կա՞յ արդեօք Հայաստանում անգործութիւն:

Ցոյց տուէք ինձ մի աշխատութիւն, որտեղից պարզ լինի, որ Հայաստանի գիւղացին անձնագիր չունի և իր սեփական երկրի մէջ ազատ տեղափոխւելու ազատութիւն չունի: Այստեղ կարելի է մէկը միւսի յետեւից շարել հարիւրաւոր հարցեր, որոնց պատասխանը ոչ ոք գիտէ: Իսկ Սփիւռքի մասին խօսելն էլ ա-

ւելորդ է։ Ես համոզւած եմ, որ Սփիւռքահայութեան ճշգրիտ թիւն անգամ յայտնի չէ։

Այ, հէնց բոլոր այս հարցերի ուսումնասիրութիւնն է, որ անտեսանելին տեսանելի է դարձնում։ Եւ հէնց այս ուղղութեամբ է, որ մեր ժողովուրդը պէտք է թափի իր բոլոր ջանքերը։ Այս տւեալները չկան, ոչ մէկ տեղ չկան։ Իսկ արդէն գոյութիւն ունեցող տւեալների հաւաքի վրայ շատ ժամանակ ծախսել պէտք չէ, որովհետեւ եթէ նրանք որեւէ տեղ կան, ապա, հարկ եղած դէպքում, կը հանւեն իրենց տեղերից։

Տասնամեակներ շարունակ մենք ուզում էինք տարբեր արխիւներից ցեղասպանութեանը վերաբերող տւեալներ երեւան հանել ու կոխել մարդկութեան աչքը։ Բայց մարդկութիւնը անտարբեր էր։ Իսկ երբ հնչեցին յեղափոխական առաջին կրակոցները, լրագրողները իրենք սկսեցին քրքրել արխիւները և առանց մեր օգնութեան գտան ամէն ինչ։ Նրանք լաւ գիտէին, թէ որտեղ են թագնւած ցեղասպանութեան տւեալները, նրանց միայն պէտք էր հետաքրքրել։ Իսկ սա ամենեւին էլ գիտական գործ չէ։

Ուրեմն, եթէ ինձ հարցնեն, թէ ինչպէս պիտի լինի Սփիւռքի գիտութիւնը, ես կ՚ասէի.- Մեր հայկական գիտութիւնը պիտի լինի անաղմուկ, կուսակցական և ինքնաճանաչման ճամբով նոր կարելիութիւններ ստեղծող։

1984

ՍՓԻՒՌՔԸ ԵՒ ՍՓԻՒՌՔԻ ՀԵՐՈՄՆԵՐԸ

Է. Յովհաննիսեան

Հայկական Սփիւռքը յաւերժ չէ, չի կարող լինել և ցանկալի չէ, որ լինի: Բայց նա հայութեան այն հատուածն է, որի գոյութիւնը հնարաւոր է դարձնում հայ ժողովրդի քաղաքական պայքարը: Առանց Սփիւռքի անկարելի պիտի լինէր ծաւալել հայ ժողովրդի իրաւունքների պաշտպանութեան շարժումը, քանզի խորհրդային Հայաստանը այդ աշխատանքները տանելու ոչ հնարաւորութիւնը և ոչ էլ ցանկութիւնը ունի: Խօսքը պաշտօնական իշխանութիւնների մասին է, անշուշտ:

Սրանով էլ, հաւանաբար, սահմանափակւում է Սփիւռքի իրական նշանակութիւնը, որը ինք իր մէջ ոչ մէկ արժէք է ներկայացնում ու չի էլ կարող ներկայացնել: Սփիւռքը յաւերժացնելու և մնայուն միաւոր դարձնելու բոլոր ջանքերը նախ ապարդիւն են անցնելու և յետոյ լինելու են միջոցների զուր վատնում: Մեր պատմական դառն փորձը ցոյց տուեց, որ մեր ամենալաւ կազմակերպւած գաղութները ի վերջոյ քայքայւում են օտար քաղաքական ուժերի և հասարակական շարժումների հարւածների տակ: Որքան էլ որ ուժեղ լինեն ազգապահպանման մեր ջանքերը, նրանք ի վիճակի չեն յաղթահարելու հետեւեալ երկու իրողութիւններից բխող խոչընդոտները.

1.- Հայկական Սփիւռքը ո՛չ կամաւոր գաղթօջախ է և ոչ էլ քաղաքական տարագրութիւն:

2.- Հերոսութիւնը չի կարող գործել ազգովին:

Հայկական Սփիւռքը իր այսօրւայ վիճակով գոյացաւ որպէս ցեղասպանութեան արդիւնք: Սա նշանակում է, որ Հայկական Սփիւռքը կամաւոր կերպով ստեղծւած միաւոր չէ, նա գոյացել է որպէս մեր ժողովրդին բռնի ուժով տեղահանելու հետեւանք: Այս ճանապարհով ստեղծւած Սփիւռքը միշտ կրում է իր մէջ այն ողբերգութիւնը, որի հետեւանքով ինքը Սփիւռք է դարձել: Այդ ողբերգութիւնը փոխանցւում է սերնդից սերունդ և դառնում է մի տեսակ սփիւռքեան գաղափարախօսութիւն: Նման Սփիւռքը միշտ կրում է իր մէջ Հայրենիքի կարօտը, որից նա զրկւեց ոչ իր մեղքով: Պատահական չէ, որ անկախ Հայաստանի վարչակարգից, սփիւռքահայութիւնը իր ամբողջ էութեամբ ձգտում է այդ հայրենիքին: Նման Սփիւռքը իր հասարակական վարքագիծը կապում է հայրենիքի կարօտի և հայրենիք վերադառնալու ցանկութեան հետ:

Կամաւոր արտագաղթի միջոցով ստեղծւած գաղութները չունեն այդ կարօտը, որովհետեւ նրա անդամները սեփական կամքով են դուրս եկել Հայաս-

տանից: Այստեղից էլ ծագում է անհասկացողութիւնը հին և նոր տարագրութիւնների միջեւ: Կամաւոր կերպով ստեղծուած գաղութները անմիջապէս մերւում են միջավայրի հետ, հայութեանը թողնելով միայն մշակութային բնագաւառը և հայութեանը տալով միայն ազատ ժամանակը: Այս գաղութները կարող են գոյատեւել յաւերժ, բայց հազիւ թէ նրանց կարելի է հայկական գաղութներ անւանել: Աւելի շուտ սրանք կը լինեն հայ մշակոյթը սիրող ֆրանսական, անգլիական, գերմանական կամ էլ ամերիկեան ընկերութիւններ, որոնց անդամները կը լինեն հայ ծագում ունեցող ֆրանսացիներ, անգլիացներ ու ամերիկացիներ: Կամաց-կամաց այդ ընկերութիւններին կը միանան նաեւ ոչ հայեր, է՛լ աւելի հաստատելով այդ ընկերութիւնների զուտ մշակութային բնոյթը:

Որքան էլ որ ջանան հայ բարեգործական միութիւնները և ակումբները նման Սփիւռքին հայկական բովանդակութիւն տալ, ոչինչ չի ստացւի, որովհետեւ ոչ մէկ ազգ, ոչ մէկ պետութիւն և համայնք չի կարող գոյատեւել առանց քաղաքական գործունէութեան: Իրական ինքնապահպանումը կատարւում է ոչ թէ մշակոյթի, այլ քաղաքականութեան միջոցով: Ոչ քրդերը, ոչ պաղեստինցիները և ոչ հրեաները մշակոյթ ունեն, բայց իրենց քաղաքականութեամբ կարողանում են պահպանել իրենց ազգութիւնը: Քաղաքական Սփիւռքը բոլորովին այլ բնոյթ է կրում: Նրա միակ երազը և գործունէութիւնը հայրենիք ստեղծելու կամ հայրենիք վերադառնալու մէջ է:

Այս տեսակի Սփիւռքը ունի ինքնապահպանման ուժեղ բնազդ և նա չի մերւում շրջապատի հետ, որը միշտ օտար միջավայր է նկատւում նրա կողմից: Նա ստեղծում է սեփական դպրոցներ, եկեղեցիներ, ակումբներ ու կուսակցութիւններ և յամառօրէն դիմադրում է բնական ազգաձուլման ընթացքին: Եւ հէնց այստեղ են սկսւում նման Սփիւռքի դժւարութիւնները ու ներքին հակասութիւնները:

Շրջապատը՝ լինի դա ֆրանսիական, ռուսական թէ գերմանական, տեսնելով հայերի ինքնապահպանման յամառութիւնը, է՛լ աւելի մեծ ջանքեր է գործադրում նրանց տեղացի, այսինքն տւեալ երկրի հաւատարիմ քաղաքացի դարձնելու կամ պարզապէս իր մէջ ձուլելու համար: Այս պայքարի մէջ ո՛չ հայութիւնը և ոչ էլ որեւէ ուրիշ ազգ կարող է դիմադրել, որովհետեւ հակառակորդը մեր դէմ օգտագործում է պետական միջոցներ, իսկ մենք միայն սեփական, որոնք կազմւում են մեր անդամավճարներից ու նւիրատւութիւններից: Հակառակորդը օգտագործում է մեր դէմ պետական օրէնքը, իսկ մենք միայն բարոյական սկզբունքները, որոնց ուժը մեր օրերին այնքան է թուլացել, որ նրան այլեւս զէնք պէտք չէ համարել:

Այս պայմաններում միայն հերոսութիւնը կարող է փրկել մեզ: Ոմանք ասում են, թէ հերոսները յոգնել են: Դատարկ խօսքեր են սրանք: Հերոսները եր-

բեք չեն յոգնում, որովհետեւ նրանք հերոսներ են: Յոգնած հերոսը ոչ միայն այլեւս հերոս չէ, այլեւ առաջ էլ միայն հերոսի դեր էր խաղում: Հերոսները անկողնում չեն մեռնում, նրանց գերեզմանատունը պատերազմի դաշտն է: Եւ անպայման չէ, որ այդ դաշտը լինի զինեալ բախումների դաշտ: Դա կարող է լինել դպրոց, գրադարան, եկեղեցի:

Հերոսի առանձնայատկութիւնը այն է, որ նա որեւէ բնագաւառ իր կեանքից աւելի բարձր է գնահատում և այդ բանին տալիս է իր ամբողջ կեանքը: Իր ընտրած բնագաւառի համար մեռնելը հերոսի համար երջանկութիւն է: Հերոսութիւնը ոչ թէ արուեստական մի վարքագիծ է, այլ նկարագիր ու ներքին պահանջ: Ես համարում եմ, որ հերոսներին պէտք էլ չէ մեծարել ու գովաբանել, որովհետեւ նրանք անում են այն, ինչը իրենց համար հաճելի է, նրանք ուրիշ կերպ չեն կարող վարուել: Նրանց համար կեանքի բոլոր հաճոյքները պարզապէս գոյութիւն չունեն:

Եթէ մենք, այնուամենայնիւ, մեծարում ենք հերոսներին, ապա դա անում ենք ոչ թէ հերոսների, այլ մնացածների համար, նոր հերոսներ դաստիարակելու և հերոսութիւնը որպէս արժէք գնահատելու համար: Այս իմաստով հարկ է նշել Խորհրդային Հայաստանի ամօթալի լռութիւնը Լիզբոնի դէպքի վերաբերեալ:

Յուլիս 27ին Հայաստանի թերթերը հաղորդում էին սովորական լուրեր: Նրանք գրում էին Կուբայի յեղափոխութեան, ընկերվարական մրցութիւնների, կոլտնտեսութիւնների, Լենինի համեստութեան, գրողների միութեան, բերքահաւաքի և բնութեան՝ պաշտպանութեան գիտական մօտեցումների մասին: Նրանք դեռ չգիտէին, որ այդ օրը գրւելու է մեր նորագոյն պատմութեան ամենափայլուն էջը: Այդ օրը մեր ժողովրդի լաւագոյն զաւակները ցոյց տուեցին ամբողջ աշխարհին, որ հայ ժողովուրդը շփացած, քաղքենիացած ու պճնանքներով լի մեր ժամանակակից աշխարհում ի վիճակի է նոր «Վարդանանց», նոր «Մայիս 28» ու նոր «Փետրւար 18» կերտող հերոսներ ծնել:

Այդ օրը կեանքին վերջին հրաժեշտ տալով, մեր տղաները երգեցին վերջին երգը, կատարեցին վերջին աղօթքը, գրեցին վերջին նամակը և մեկնեցին Լիզբոն մարտիրոսանալու հայ ժողովրդի դատը լուծելու ճանապարհի վրայ: Եւ ցնցւեց աշխարհը՝ տեսնելով այս հերոսների մոխրացած դիակները: Աշխարհը ցնցւեց երկրորդ անգամ, երբ հերոսների ծնողներն ու քոյրերը յայտարարեցին թէ պարծենում են իրենց զաւակներով ու եղբայրներով: Շփոթութեան մէջ ընկաւ թշնամին հասկանալով, որ նման մարտիկները տասնապատկում են հայերի ուժը:

Ցնցւում, յուզւում ու շփոթւում էին մարդիկ աշխարհի տարբեր ծայրերում հայ հերոսների այս արարքով, բայց Հայաստանի մամուլը լուռ էր: Մեր տղա-

ները իրենց կեանքի գնով հայ ժողովրդի ճակատագիրն են կերտում, իսկ Հայաստանը ձկան նման բերանը ջուր առած լուռ է: «Վարդանանցը» առանց Եղիշէի Վարդանանց չէր լինի: Ուրեմն հայ գրողները պէտք է Լիզբոնը Լիզբոն դարձնեն: Եթէ Հայաստանի լրագրողները և գրողները լեզու չունենային, կը ներէինք նրանց: Բայց նրանք լեզու ունեն և ամբողջ Օգոստոս ամիսը գրեցին հարւածային հերթափոխի, Կոմունիստական կուսակցութեան պատիւ ու խիղճ Լենինի, հնգամեակի վստահ քայլերի, խոտահունձի և մարքսիզմ-լենինիզմին տիրապետելու անհրաժեշտութեան մասին (ամո՛թ մեզ, հայ մտաւորականութիւն):

Սա էլ հետաքրքիր է թէ ինչու չգրեցին: Եթէ Հայաստանից եկողները ասեն, թէ Մոսկւան արգելեց, չհաւատաք, սուտ են ասում: Ամէն մի թերթի խմբագիր ազատ է որեւէ յօդւած գրելու մէջ: Բայց ամէն մի թերթի խմբագիր գերադասում է կապիկի պէս կրկնել Մոսկւայի թերթերում գրւած տեղեկութիւնները, որովհետեւ սեփական թղթակիցներ արտասահմանում չունի և սփիւռքահայութեան մասին տեղեկութիւններ ստանալու աղբիւր չունի: Իսկ Մոսկւայի տեղեկատւական գործակալութիւնները հայկական յեղափոխական շարժումների մասին ոչինչ չեն հաղորդում: Հայաստանի թերթերն էլ լռում են:

Հարց է ծագում. Սփիւռքի հետ կապեր հաստատող կազմակերպութիւնները ինչո՞վ են զբաղւած, եթէ Սփիւռքի ամենակարեւոր իրադարձութիւնների մասին տեղեկութիւնները Հայաստանի մամուլին չեն հասնում: Ոչինչ չէր ասի Մոսկւան, եթէ Սփիւռքի յեղափոխական շարժումները քննարկւէին և, օրինակ, սուր քննադատւէին ու դատապարտւէին: Բայց Մոսկւայից չեն վախենում Հայաստանի ղեկավարները, այլ սեփական ժողովրդից: Նման հարցերի քննարկումը պիտի էլ աւելի բարձրացնէր Հայաստանի ժողովրդի ազգային ինքնագիտակցութիւնը և, հաւանաբար, այնտեղ էլ սկսւէին նման շարժումներ: Ա՛յ, սրանից են վախենում ձկների պէս բերանները ջուր առած Հայաստանի քարոզչական մարմինները: Բայց շարունակենք:

Ամէն մի ժողովուրդ ունի իր հերոսները, բայց ոչ մի ժողովուրդ չի կարող ազգովին հերոսանալ: Չի կարելի պահանջել ամբողջ հայ ժողովրդից հերոսութիւն: Մենք կենդանի ժողովուրդ ենք, ուստի պիտի ունենաք ընտանիքին նւիրւած սովորական հայեր, պիտի ունենանք կեանք սիրող երիտասարդներ: Պէտք է երգենք, պարենք ու խմենք և պիտի ունենանք ամբողջովին ապաքաղաքականացած երաժիշտներ, նկարիչներ ու հոգեւորականներ: Մենք պիտի ունենանք ծաղիկների ու թիթեռնիկների մասին ոտանաւորներ գրող բանաստեղծներ: Եթէ մենք այս բոլորից պահանջենք, որ նրանք թողնեն իրենց ընտանիքները, երգն ու խնջոյքը և միայն հայկական խնդիրներով զբաղւեն, ապա ի՞նչ կը մնայ մեր ազգից:

Ուրեմն դժւարութիւնը ոչ թէ նրանումն է, որ հերոսները յոգնել են, այլ նրանում, որ ոչ մէկ ազգ չի կարող և իրաւունք չունի ամբողջ ազգից հերոսութիւն պահանջել: Ահա թէ ինչու մեր գոյութեան պայքարը անցնելու է ապարդիւն, եթէ մեզ չյաջողուի ձեռք բերել կա՛մ հայրենիք, կա՛մ որեւէ բնակավայր, որտեղ հայերէնով խօսելը, երգելը, ֆուտբոլ խաղալը և գրելը ոչ թէ հերոսութիւն լինի, այլ սովորական ու բնական ընթացք: Միթէ՞ ֆրանսիացու համար ֆրանսերէնով խօսելը հերոսութիւն է:

Ահա թէ ինչու Հայկական Սփիւռքի հերոսները ունեն միայն մէկ պարտականութիւն. ՊԱՅՔԱՐԵԼ ԱՆԿԱԽ ՀԱՅՐԵՆԻՔ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ: Ինչ վերաբերում է Սփիւռքի ոչ-հերոսներին, ապա նրանք իրենց նիւթական և բարոյական աջակցութեամբ, կարելիութիւնների սահմաններում, առանց հերոսութեան, կարող են օգնել հերոսներին: Այդպէս են վարւում բոլոր առողջ ազգերը, այդպէս պէտք է վարւենք նաեւ մենք:

Այստեղ կարող են լինել որոշ առարկութիւններ Խորհրդային Հայաստանի նկատմամբ, այն իմաստով, որ Հայրենիքը արդէն գոյութիւն ունի, ուստի Սփիւռքը պէտք է համախմբւի նրա շուրջ: Բայց, դժբախտաբար, այդպէս չէ: Խորհրդային Հայաստանում միայն հերոս ծնողներն են իրենց երեխաներին ուղարկում հայկական դպրոց, իսկ ոչ-հերոսների երեխաները սովորում են ռուսական դպրոցներում: Հայաստանի գրեթէ բոլոր ղեկավարների և մտաւորականների երեխաները սովորում են ռուսական դպրոցներում: Իսկ ռուսական դպրոցներից դուրս չեն գալիս հայ գրողներ, բանաստեղծներ և ղերասաններ: Այսինքն Խորհրդային Հայաստանն էլ այն հայրենիքը չէ, որտեղ մեր ժողովուրդը առանց հերոսութեան կարողանայ հայավարի ապրել:

1984

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Միւնխենի Հայկական Հարցերի Հաստատութիւնը կազմեց գերմանական մամուլում 86 թականին հրատարակուած հայերին վերաբերեալ յօդուածների ժողովածուն։

Ինչպէս նախորդ տարիներին, այնպէս էլ 86 թականին յօդուածների դասաւորումը կատարւել է երեք խմբերով, որոնք են՝ փոքր, միջին և մեծ ծաւալի յօդուածներ։ Բացի այս զուտ քանակական գնահատականից, բոլոր յօդուածների համար մշակւեց այսպէս կոչուած քարոզչութեան գործակից, որը կապ ունի թերթի և յօդուածագրի հեղինակութեան, ինչպէս նաեւ յօդուածի հայանպաստութեան հետ։

86 թականի գերմանական մամուլում հրատարակւեց 791 յօդուած, այդ թւում՝ 215 փոքր, 142 միջին և 434 մեծ։ Նախորդ տարիների հետ համեմատութիւնը հեշտացնելու համար, կազմւեց հետեւեալ աղիւսակը։

	Մեծ	Միջին	Փոքր	Ընդամէնը	Քարոզչ. գործ
1980	28	54	80	162	4.5
1981	68	153	423	644	38.2
1982	71	234	508	813	46.4
1983	342	824	1098	2264	49.8
1984	384	1210	1337	2931	50.6
1985	368	513	47	928	49.4
1986	434	142	215	791	47.3

Յօդուածների համառօտ բովանդակութիւնը ներկայացնում ենք ամսէ-ամիս։

ՅՈՒՆԻԱՐ

Շուեցարական **«Նոյէ Ցիւրիխեր ցայտունգ»** թերթը հրատարակեց **«Ողբերգական պատմութիւն ունեցող ազգը»** վերնագիրը կրող լայնածաւալ յօդուածը, որը անդրադարձաւ մեր պատմութեանը, Խորհրդային Հայաստանի ներկայ կացութեանը և հայութեան ընդհանուր վիճակին։ Հեղինակը եղել էր Հայաստանում և զրոյցներ վարել տարբեր մարդկանց հետ։ Նա մէջբերումներ է կատարում զրուցակիցների պատասխաններից։ Յօդուածը հայանպաստ է և անաչառ դիրքերից նկարագրում է մեր պատմութիւնը և ցեղասպանութեան ողբերգութիւնը։

Այս նոյն ամսում հրատարակւեցին մի քանի յօդուածներ Հայաստան այցելած զբօսաշրջիկների տպաւորութիւնների մասին։ Բոլորն էլ հիացմունք են

յայտնում Հայաստանից ու հայ ժողովրդից: Բացի դրանից 4 գերմանական թերթեր գրեցին, որ Գլիւկշտատ քաղաքում Աուգուստին տպարանը 108 լեզուներով կատարում է տպագրութիւններ, այդ թւում նաեւ հայերէնով:

10 թերթերում տպւեցին տեղեկութիւններ մի շարք ռումբերի պայթումների մասին, որոնք պատահեցան Փարիզում և որոնք իբր թէ իրականացւել էին ԱՍԱԼԱի և Աբու Նիդալի համագործակցութեամբ:

ՓԵՏՐՒԱՐ

Հրատարակւեց ԱՄՆի Պետական Դեպարտամենտի հաշւետուութիւնը՝ մարդու իրաւունքների պաշտպանութեան հարցով ու նշւեց, որ Խորհրդային Միութիւնում խախտւում են գերմանացիների, հայերի և հրեաների արտագաղթելու իրաւունքները:

Մէկ ուրիշ թերթ հրատարակեց Անատոլի Շչարանսկու յայտարարութիւնը, որը նա արեց մամլոյ ասուլիսում Խորհրդային Միութիւնից դուրս գալուց յետոյ: Նա ասաց, որ խորհրդային բանտերում հրեաները մեծամասնութիւն չեն կազմում, կան բազմաթիւ վրացի ու հայ քաղբանտարկեալներ: Նա պատմեց հայկական խնդիրների ու հայկական ազգայնականների մասին: Սակայն այդ պատմութիւնը այնքան էլ անաչառ չէր: Շչարանսկին ամէն ինչ ներկայացնում էր շեշտւած հակախորհրդային դիրքերից:

ՄԱՐՏ

ՄԱԿի «**Իւնեսկօ**» կազմակերպութիւնը հրատարակեց մի հաշւետուութիւն, որի համաձայն ինքը իր վրայ է վերցրել Սիրիայի սահմանի մօտ Թուրքիայի տարածութեան վրայ քրիստոնէական մի համալիրի վերականգնումը և պահպանումը: Այդ վայրում 20 մետր խորութեան վրայ գետնի տակ յայտնաբերւել են խուցեր, որտեղ թուրքերի հալածանքներից թագնւել են 15 հազար քրիստոնեաներ: Յօդւածի մէջ նշւում է, որ 1401 թւականին աւելի քան 4000 հայերի ողջ-ողջ թաղել են՝ թրքական բանակին արի դիմադրութիւն ցուցաբերելու համար:

«Դի Վելտ» թերթը Սիրիայի և Թուրքիայի բարեկամութեանը նւիրւած մի յօդւածում նշում է, որ չնայած այդ բարեկամութեանը, Դամասկոսը շարունակելու է օգնել պաղեստինցիների ճամբարներում մարզւող քուրդ և հայ ահաբեկիչներին, որոնց Սիրիան օգտագործում է իր շահերի համար:

Բազմաթիւ թերթեր մեծ կարեւորութեամբ նշեցին, որ Ֆրանսիայում նախարարի պաշտօն գրաւեց ազգութեամբ հայ Էդուարդ Բալադուրը:

Մէկ յօդւած հրատարակւեց այն մասին, որ Բուլղարիան ճանաչում է հայերին, որպէս ազգային փոքրամասնութիւն, բայց չի ճանաչում թրքական փոքրամասնութեան գոյութիւնը:

ԱՊՐԻԼ

Բրեմենի օրաթերթը Ապրիլի 1ին հրատարակեց **«Թուրքիան թելադրում է հայերի մասին ճշմարտութիւնը»** վերնագիրը կրող յօդուածը, որտեղ հայանպաստ դիրքերից պատմում է Թուրքիայի կառավարութեան հակահայ արշաւի մասին: Թերթը նշում է, որ Արեւմտեան Գերմանիայում ապրող 10.000 հայերի բողոքի ցոյցերը և հանդիսութիւնները Ցեղասպանութեան առիթով միշտ էլ լուրջ դիմադրութիւնների են հանդիպում: Անկարայի դիւանագէտները նման դէպքերում անմիջապէս յայտնւում են Արեւմտեան Գերմանիայում և տեղի վրայ կազմակերպում են հակա-արշաւներ՝ ամենաբարձր պետական մակարդակի վրայ:

Միւնխենի **«Զիւդ Դոյչէ Ցայտունգ»** թերթը գրեց Ցեղասպանութեանը նւիրւած ցուցահանդէսի մասին, որը կազմակերպել էր ՀՀՀն:

Դաշնակցային Գերմանիայի մամուլը անդրադարձաւ մի շարք ցուցահանդէսների, որոնք կազմակերպւել էին Խ. Հայաստանի արւեստագէտների կողմից և որոնք տեղի ունեցան Դաշնակցային Գերմանիայի տարբեր քաղաքներում: Այս առիթով թերթերը գրեցին Խ. Հայաստանի մշակոյթի մասին:

Բերլինում և Հայդելբերգում ռումբի պայթումների մասին մի շարք հաղորդումների մէջ նշւեց նաեւ ԱՍԱԼԱի անունը, որպէս մասնակից:

Ապրիլի 18ին հրատարակւեց լայնածաւալ մի յօդուած, որը վերնագրւած էր այսպէս,- **«Հայերը՝ ժողովուրդ առանց պետականութեան»:** Լուսանկարներով օժտւած այս յօդուածում ներկայացւած էր մեր պատմութիւնը՝ հին դարերից մինչեւ մեր օրերը: Անաչառօրէն նշւում էր Ցեղասպանութիւնը, Խորհրդային Հայաստանի և յատկապէս Էջմիածնի կացութիւնը:

Ապրիլի երկրորդ կէսերին հրատարակւեցին մի շարք յօդուածներ Ռալֆ Ջորդանոյի վաւերական կինոնկարի մասին, որը ցուցադրւեց Դաշնակցային Գերմանիայի հեռուստատեսութեամբ: Կինոնկարը նւիրւած էր Հայկական Ցեղասպանութիւնը ապացուցող փաստաթղթերին: Այս նիւթի շուրջ արտայատւեցին 108 տարբեր հեղինակներ, որոնք անխտիր կերպով այն միտքն էին զարգացնում, թէ Թուրքիայի համար Հայկական Հարց այլեւս գոյութիւն չունի, իսկ Ջորդանոյի փաստաթղթերը ցոյց են տալիս, որ պատմութեան այդ էջը դեռեւս փակւած չէ:

Տարբեր թերթեր հրատարակեցին Հայաստան այցելած մի արեւմտագերմանացու տպաւորութիւնները: Հեղինակը ջերմօրէն նկարագրում է Հայաստանի տեսարժան վայրերը և հայ ժողովրդի հիւրընկալութիւնը: Նա կոչ է առնում գերմանացիներին անպայման այցելեն այդ սքանչելի երկիրը:

Ջորդանոյի կինոնկարի մասին գրւեցին եւս երեք յօդուածներ, այս անգամ թրքասիրական դիրքերից: Յօդուածների հեղինակները նշում էին, որ Ջորդանո-

յի կինոնկարը վիրաւորում է թուրք ժողովրդի զգացմունքները և որ Թուրքիայում արդարացիօրէն ուժեղանում է զայրոյթը գերմանացիների դէմ: Հեղինակներից մէկը նշում էր, որ այս կինոնկարի առիթով վատացել են գերման և թրքական յարաբերութիւնները:

Մի քանի յօդուածներ գրւեցին Խորհրդային Հայաստանի մանուկների ցուցահանդէսի մասին, որը տեղի ունեցաւ Արեւմտեան Բերլինում:

ՄԱՅԻՍ

Մայիսի մէկին Դարտմուտի **«Էմնստի ինտերնեշընըլ»** միջազգային կազմակերպութեան մասնաճիւղը նախաձեռնեց Պարոյր Հայրիկեանի օգտին ստորագրութիւններ հաւաքելու արշաւը: Այս առիթով մամուլը նշեց, թէ Խորհրդային Միութեան բանտերում և հոգեբուժարաններում կան բազմաթիւ հայեր, և թէ Հայրիկեանը ստեղծեց Միացեալ Ազգային Կուսակցութիւն՝ Հայաստանը Խորհրդային Միութիւնից անջատելու համար: Յօդուածում կան մանրամասնութիւններ Հայրիկեանի և նրա կուսակցութեան մասին:

3 Մայիսին Արեւմտեան Բերլինում հրատարակւեց մի լայնածաւալ յօդուած, որի հեղինակը թերթի կողմից ուղարկւել էր Հայաստան: Յօդուածը սկսւում էր Հայկի ու Բելի պատմութիւնից ու տանում էր մինչեւ ռուս-հայկական յարաբերութիւնները: Յօդուածագիրը անաչառօրէն պատմում էր Ռուսաստանի քաղաքական խաղերի մասին, իբր թէ Հայաստանը ազատագրելու համար, որի հետեւանքը եղաւ Ցեղասպանութիւնը: Հեղինակը պատմում է նաեւ Հայաստանի ներկայ կացութեան մասին՝ ղրական դիրքերից:

3 Մայիսին Օսնաբրուկի զբօսաշրջիկների մի խումբ գտնւել է Հայաստանում և զարմանքով համոզւել է, որ Հայաստանում ժողովուրդը ոչ մէկ տեղեկութիւն չունի Չերնոբիլի աղէտի մասին:

Արեւմտեան Բերլինում տեղի ունեցաւ **«Հայաստանը այսօր»** նշանաբանը կրող մշակութային միջոցառումը, որը կազմակերպւել էր Աւետարանական Եկեղեցու կողմից: Հայաստանից հրաւիրւել էին տարբեր պարախմբեր ու երգչախմբեր և այլ մշակութային գործիչներ: Նպատակը՝ աշխարհի խաղաղութիւնը պաշտպանելու հարցերի քննարկումն էր: Այդ օրերի միջոցառումներին անդրադարձան 12 արեւմտագերմանական թերթեր: Հանդիսութիւններից մէկի ժամանակ քննարկւեց Չերնոբիլի ատոմային կայանի հարցը, որի ժամանակ Հայաստանի պատւիրակութեան նախագահ Ղարիբջանեանը ասաց, թէ ատոմային էներգիայի միայն 10 տոկոսը օգտագործւում է խաղաղ նպատակների համար, մնացածը ծառայում է ռազմական նպատակների: Ահա թէ ինչու,- ասաց Ղարիբջանեանը,- անհրաժեշտ է ընդառաջել Գորբաչեւի առաջարկութիւններին՝ Եւրոպայից միջուկային հրթիռները դուրս բերելու հարցում:

Մայիս ամսին հինգ թերթեր հրատարակեցին կարճ տեղեկութիւններ՝ Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժի մասին։

15 թերթեր հրատարակեցին համառօտ մի տեղեկութիւն այն մասին, որ Բէյրութի արեւմտեան շրջանում գտնուեցին երկու սպանուած հայերի դիակներ։ Թերթերը գրեցին, որ մոլեռանդ մահմեդականները ջանում են դուրս մղել հայերին այդ շրջանից։

ՅՈՒՆԻՍ

Յունիսի 1ին Շուեցարիայի **«Նոյէ Ցիւրիխեր Ցայտունգ»** թերթը հրատարակեց մի յօդուած, որտեղ պատմեց՝ հայերի ծանր վիճակի մասին Լիբանանում։ Թերթը գրեց, որ այդ կացութիւնը ստեղծուեց քրիստոնեայ և մահմեդական արաբների զինեալ բախման հետեւանքով։ Թերթը նշեց նաեւ, որ ԱՍԱԼԱ կազմակերպութիւնը սպառնում է Բէյրութի արեւմտեան շրջանում ապրող հայերին։

Յունիսի 3ին արեւմտագերմանական **«Զիւդ Դոյչէ Ցայտունգ»** թերթը հաղորդեց, որ Բրեմենում հրատարակել են երեք գրքոյկներ Հայկական Ցեղասպանութեան վերաբերեալ։ Այդ հաղորդագրութեան մէջ կային մէջբերումներ մեր պատմութիւնից։

Յունիսի 3ին արեւմտագերմանական **«Դի Վելտ»** թերթը հրատարակեց մի յօդուած, որտեղ գրեց որ Ֆրանսիան շահագրգռուած է Թուրքիայի շուկան օգտագործելու մէջ։ Այս առիթով թերթը նշում էր, որ չնայած դրան՝ Ֆրանսիան պաշտպանում է հայերին, մասնաւորապէս Միթերանը և Դեֆերը։ Բացի դրանից թերթը նշեց, որ հայերի պատճառով ժամանակին սրուեցին ֆրանս և թուրքական յարաբերութիւնները։ Ըստ թերթի, այժմ Շիրակի կառավարութիւնը լաւացնում է իր յարաբերութիւնները Թուրքիայի հետ։

Յունիսի 14ին **«Դի Վելտ»** թերթը հրատարակեց **«Դէպի Հայաստան»** կոչը, որտեղ հրաւիրում էր զբօսաշրջիկներին Կովկաս։ Այս առիթով լայն տեղեկութիւններ տրուեցին Հայաստանի և Վրաստանի, այդ թւում նաեւ Ցեղասպանութեան մասին։

ՅՈՒԼԻՍ

Բազմաթիւ թերթեր նշեցին Ռոբերտ Էմմիյեանի յաջողութիւնը Մոսկուայի մրցումներում և բոլորը շեշտեցին, որ նա ազգութեամբ հայ է։

Յուլիսի 14ին 5 թերթեր նշեցին, որ Հայաստանում 100 տարւայ ընթացքում առաջին անգամը լինելով 43 աստիճան տաքութիւն էր տիրում Ցելսիուսի աղիւսակով։

Մոսկուայում եղած ժամանակ Միթերանը ներկայացրել էր Գորբաչեւին Ֆրանսիա մեկնելու ցանկութիւն ունեցող խորհրդային քաղաքացիների ցու-

ցակը, որոնց մէջ կար նաեւ մի հայ ընտանիքի անունը: Թերթերը գրեցին, որ այդ հայը հրաւիրուեց Ֆրանսիական դեսպանատուն, երբ այնտեղ տեղի ունեցաւ պաշտօնական ընդունելութիւն: Այս մասին գրող 5 թերթերը նշեցին, որ Միթերանը ցանկութիւն է յայտնել՝ մեկնել Երեւան, առաջարկւած Թբիլիսիի փոխարէն:

ՕԳՈՍՏՈՍ

Օգոստոսի 6ին, 11 տարբեր թերթերում տպւեց Փարիզից ԱՍԱԼԱի անդամ երեք **հայերին օրէնքի ուժով Բէյրութ արտաքսելու վերաբերեալ** կարճ հաղորդագրութիւնը: 1981 թին Փարիզում թրքական հիւպատոսութիւնը զաւթելու կապակցութեամբ չորս հայերը դատապարտուեցին եօթը տարիների բանտարկութեան: Մէկը դրանից բանտում կախւեց: Ժամկէտից շուտ, Յուլիսին, երեք այդ հայերը ազատ արձակւեցին և դատարանի որոշմամբ, որպէս Լիբանանի քաղաքացիներ, պարտաւորւեցին վերադառնալ Բէյրութ. հայերը, սակայն, հրաժարւեցին՝ պնդելով որ Բէյրութում իրենց կեանքը վտանգւած է:

Օգոստոսի 16ին զետեղւեց Արեւմտեան Բերլինում լոյս տեսնող, արեւելագերմանական կոմունիստական DIE WAHRHEIT թերթում Վազգէն Ա. Կաթողիկոսի հետ ունեցած մեծածաւալ հարցազրոյցը: **«Էջմիածինը, խաղաղութիւնը և խորհրդային խաղաղասէր քաղաքականութիւնը»** - այդպիսի բնոյթի է հարցազրոյցը:

Օգոստոսի 20ին, **GIESSEN** քաղաքում, Թուրքիայում մարդու իրաւունքները խախտւելու դէմ բողոքի նշանաբանով, նախատեսւել էր «Մշակութային ցուցահանդէս»: «Քուրդիստանի ազգային ազատագրութեան ճակատ» կազմակերպութիւնը կարճ ժամանակով Giessenի քաղաքագլխի գրասենեակը «զաւթեց» բողոքելով, որ ըստ նախաձեռնութեան այդ ցուցահանդէսում ոչինչ չէ նշւել հայերի և քուրտերի դէմ ճնշամիջոցների մասին:

Օգոստոսի 21ին հինգ թերթերում տպւեց արեւմտագերմանական հեռուստատեսութեան 2րդ ծրագրով Անդրկովկասեան երեք հանրապետութիւններին նւիրւած 45 րոպէանոց հաղորդման հասցէին խիստ քննադատական նամակը: Նամակի հեղինակը, անունը յայտնի չէ, պահանջեց աւելի անաչառ մօտեցում (յատկապէս այդ հանրապետութիւնների Մոսկւայից իբր թէ շատ հեռու գտնւելու պատճառով իր տեսակի անկախ գոյութիւնը հիմնաւորելու հարցում):

Օգոստոսի 24ին **«Դի Վարհայթ»** թերթում Սեւանի խնդրին նւիրւած յօդւածում նշւել է Սեւանի լուրջ վիճակը:

ՍԵՊՏԵՄԲԵՐ

«Փարիզում Մետրոյում վերջին վայրկեանին յաջողուեց վնասազերծել տեղատուած ռումբը»ը՝ «Արաբական և Մերձաւոր Արեւելքի ձերբակալուածների հետ համերաշխութեան կոմիտէ» անունով կազմակերպութեան կողմից նախաձեռնուած: Այդ կազմակերպութիւնը պահանջում է ազատ արձակել երկու լիբանանցիների (արաբներ) և մէկ հայի (ԱՍԱԼԱ): Այդ իրադարձութեանը նուիրուած ինը միեւնոյն նիւթերը զետեղուեցին Սեպտեմբերի ընթացքում:

«Հայկական հարցը լուծուած չէ»: Այս վերնագրով զետեղուեց մէկ յօդուած: Գէորգ Ապոչեանը՝ Կաարստ քաղաքում 1971 թւականից բնակւող «Հայկական Կոնգրէսի» ղեկավարութեան անդամը, ինչպէս նշում է յօդուածի հեղինակը, համոզուած է որ խաղաղ ճանապարհով հնարաւոր կը լինի հայկական չլուծուած հարցը լուծել: Արդէն 18 տարիներ գերմանական հպատակութիւն ունեցող այդ անձնաւորութեան օրինակով ներկայացրել է Գառնուզեանի «կազմակերպութեան» գործունէութիւնը:

Յօդուած՝ Քէօլնում կայացած Ամերիկայի գեղարուեստական ցուցահանդէսին մասին: Այդ շարքին՝ Արչիլ Գորկիի գործերի ցուցադրումը: Մէկ բառ, որ նա հայ է:

Ճամբորդական նոթեր՝ Անդրկովկասեան երեք հանրապետութիւնների մասին: Մի երկու խօսք Երևանի, մեր պատմութեան մասին:

ՀՈԿՏԵՄԲԵՐ

Հայերը պահանջում և կոչ են անում Բէյրութում պատանդ վերցուած ֆրանսացիին սպանել, եթէ Փարիզում ազատ չարձակուեն ձերբակալուած արաբները և մէկ հայը: Ֆրանսիայում ահաբեկչական կազմակերպութիւնների այդ ծաւալուած պայքարի վերաբերեալ, նոյն թւում, ԱՍԱԼԱի անունի նշումով հրապարակուեցին Հոկտեմբեր 6ին՝ 12 յօդուածներ, Հոկտեմբեր 7ին՝ 33 յօդուածներ, Հոկտեմբեր 8ին՝ 28 յօդուածներ:

Հինգ հաղորդագրութիւններ՝ Քուէյթի օդանաւի Երեւանի Օդանաւակայանում պարտադիր էջք կատարելու մասին (Դամասկոսից Թեհրան ճանապարհին): Պարտադիր էջքի մանրամասնութիւնները չնշուեցին:

Սիրիան հաստատեց Ֆրանսիայի հետ ահաբեկչութեան դէմ պայքարում իր գործակցութիւնը: Այդ մասին մէկ հաղորդագրութեան մէջ, ֆրանսիական մամուլին վկայակոչելով, նշուել է որ Սիրիայի աջակցութեամբ, Բէյրութում ձերբակալուել է այն հայը, որը ֆրանսիական զինուորական կցորդին Բէյրութում սպանել է:

Իւրի Օռլովին ազատ արձակելու և Արեւմուտք մեկնելու մասին հաղորդագրութիւն, Հայաստանի Գ.Ա.ում աշխատելու փաստի վկայակոչումով:

Մէկ նիւթ՝ Նանսէնին նուիրուած: **«Խաղաղութեան գծով նոբելեան մրցանակակիրը մեծ նպաստ բերեց հայերին (1924 թ.), փախստականներին օգնութիւն ցուցաբերելու գործում, ինչպէս նաեւ ուրիշ «ԴԺԲԱԽՏ ժողովուրդներին»:**

Մէկ նիւթ՝ Արեւելեան Անատոլիայով ճամբորդութեան մասին: «Պատմութեան և մշակոյթի հարուստ այդ շրջագայութեան ընթացքում կարելի է հանդիպել իրապէս հետաքրքրաշարժ պատմական յուշարձանների՝ «Հայաստանի, Սելճուկների, Խաչակիրների արշաւանքների և այլնի պատմական հետքերով»:

Միևնիևնում **«Ազգային Գերմանական»** թերթում (խիստ աջակողմեան) զետեղուել է ընթերցողի մի նամակ: Հեղինակը, անդրադառնալով նոյն այդ թերթում Եղեռնին նուիրուած մի նիւթի, հարկ է համարել ընդգծելու որ հայերի ճակատագիրը շատ աւելի ծանր հետեւանքների է ենթարկուել նաեւ այն պատճառով, որ Թուրքիան մինչեւ օրս գերմանացիների պէս չի խոստովանել իր մեղքը և Եղեռնի զոհերի գերեզմանա-յուշարձանի առջեւ ծնկաչոք ծաղիկներ չի դրել:

Գերմանիայում Հայաստանին նուիրուած «հարուստ պատկերազարդ» գիրքի լոյս ընծայման մասին մէկ ծանօթագրութիւն: 178 գմ. արժէքով այդ գիրքը կրում է **«Հայերը՝ Եւրոպայի և Արեւելքի միջեւ կամուրջը»** անունը: (Նոյն յօդուածը գրուած էր նաեւ Նոյեմբերին՝ չորս թերթերում):

ՆՈՅԵՄԲԵՐ

Երեք կարճ հաղորդագրութիւններ՝ Օթթաւայի թրքական դեսպանատունը զաւթելու և այդ ընթացքում պահակներից մէկին սպաննելու մէջ մեղադրանքով երեք հայերի ցկեանս դատապարտելու մասին:

«Հոկտեմբերեան Յեղափոխութեան տօներից առաջ, Մոսկւայի 8,5 միլիոնի հասնող բնակիչները կը կարողանան շուկայում իրենց սրտի ուզածը ձեռք բերել»: Սակայն Մոսկուացիները գիտակցում են, որ «հինգ օրերին» նախատեսուած այդ ցուցադրական նւէրը առօրիայ չի դառնայ: Այս յօդուածի վերեւ տեղ է գտել Երեւանի շուկայի լուսանկարը, որի տակ գրուել է **Մոսկւայում նման բան չես տեսնի**: Նոյն այդ նիւթը զետեղուել է եօթը թերթերում:

«HESSENում Հայկական մշակոյթի օրերը» միջոցառմանը նուիրուած (Սարեանի Յուցահանդէսը Տարմեշտադթում, Կոմիտասի քառեակի ելոյթները և Հայաստանից մշակութային պատուիրակութեան անդամների և ղեկավարների հանդիպումները և ելոյթները) նիւթերը զետեղուեցին 36 թերթերում:

Նոյեմբերի 8ին, լիբանանցի մէկ հայ ընտանիքին ապաստան ստանալու դիմումին մերժելու մասին, լայնածաւալ մէկ նիւթ (տխուր վիճակի մասին ցաւով գրուած նիւթ է):

DIE ZEIT (HAMBURG) թերթը զետեղեց լայնածաւալ մի նիւթ, իր ընթերցողներին հաղորդելով որ «գերմանական պատմաբանների շրջանակներում բանավէճ է բռնկւել, թէ արդեօ՞ք նացիական յանցագործութիւնները պատմութեան մէջ առաջին անգամն են եղել. կարծիքներ են յայտնւած, որ նախ եղել են ուրիշ դէպքեր, ընդորում որոշ պատմաբաններ այդ յանցագործութիւնները չարդարացնելով պնդում են, որ գուլագից, բոլշեւիզմից երկիւղելով է որ Օսւենցիումներ են կազմակերպւել: Բնականաբար, որոշ պատմաբաններ էլ վկայակոչում են նաեւ մեր Եղեռնը:

Օ. Մանդելշտամի կենսագրութեանը և այդ կապակցութեամբ նրա Հայաստան կատարած ճամբորդութեան մասին «Օրագրերի» վկայակոչումով մէկ նիւթ:

Դեկտեմբեր ամսին հայերի վերաբերեալ յօդւածներ չհրատարակւեցին:

ՈՐՈՇ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Չնայած նրան, որ յօդւածների թիւը 85 թւականի համեմատութեամբ պակասել է, մեծ յօդւածների թիւը աւելացել է և այդ յօդւածները լուրջ ուսումնասիրութիւնների արդիւնքներ են: Յատկանշական է, որ յօդւածների մեծ մասը գրւել են առանց հայերի մասնակցութեան, լրագրողների ու հրապարակախօսների սեփական նախաձեռնութեամբ, ինչը խօսում է այն մասին, որ հայերը և Հայկական Հարցը մտել են միջազգային մամուլի հետաքրքրութիւնների ոլորտը:

Քարոզչական գործակցի նւազման պատճառները երկուսն են.

1.- ԱՍԱԼԱի գործունէութեան և անպատասխանատու յայտարարութիւնների հետ կապւած բոլոր յօդւածները հակակրանք են առաջացնում Հայկական Խնդրի շուրջ, այսինքն քարոզչութեան իմաստով ունեն բացասական նշանակութիւն:

2.- Թուրքիայի կողմից ծաւալւած ուժեղ հակահայկական արշաւը տալիս է իր արդիւնքները և մամուլի էջերում երեւում են թրքանպաստ յօդւածներ: Կարելի է սպասել, որ 87 թւականին քարոզչութեան գործակիցը էլ աւելի նուազի, որովհետեւ թուրքերի արշաւը բաւականին բարձր մակարդակի վրայ շարունակւում է:

86 թւականին հրատարակւած յօդւածների միւս առանձնայատկութիւնը այն է, որ Խորհրդային Հայաստանի հետ կապւած նիւթերի թիւը զգալիօրէն աւելացել է: Ճիշտ է, նրանք զուտ մշակութային բնոյթ են կրում, բայց այդ առիթով թերթերը պատմում են հայ ժողովրդի պատմութեան և ներկայ խնդիրների մասին: Բացի դրանից, Հայաստան այցելած զբօսաշրջիկները ահագին տե-

ղեկութիւններ են բերում այնտեղից և լայնածաւալ յօդուածներով անդրադառնում են մեր խնդիրներին։

Ընդհանուր եզրակացութիւնը այն է, որ հայ ժողովուրդը մամուլի համար դարձել է յայտնի մի ժողովուրդ, որի մշակոյթի, եկեղեցու ու քաղաքական խնդիրների մասին մամուլը խօսում է ճիշտ այնպէս, ինչպէս խօսում է քաղաքական ու հասարակական բեմ վաղուց բարձրացած ուրիշ ազգերի ու ժողովուրդների մասին։ Բաւական է նշել, որ 86 թւականին գերմանախօս մամուլը հայերի մասին խօսեց աւելի շատ, քան օրինակ քրդերի, պաղեստինցիների, նիգարակուացիների, կիպրացիների ուկրայինացիների, իրլանտացիների, բասկերի և մի շարք այլ ազգերի մասին, որոնց խնդիրները վաղուց ի վեր արծարծւում են միջազգային ատեաններում։ Ինչ վերաբերւում է 87 թւականին, ապա արդէն այսօր պարզ է, որ Եւրոպական Պառլամենտի որոշումը զգալիօրէն աւելացնելու է յօդուածների ընդհանուր քանակը, սակայն ինչպէս ասացինք քարոզչութեան գործակիցը կարող է նւազել, որովհետեւ այդ որոշման դէմ արդէն արւում են պաշտօնական յայտարարութիւններ և մամուլը, բնականաբար, կ՚արձագանգի նրանց։

Հայկական Հարցերի Հաստատութիւն
1987 (Միւնխեն)

ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՒ ԱԽՏՐԻԱՅԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

Է. Յովհաննիսեան

Պատմական փորձը ցոյց է տալիս, որ ներքնապէս ազատ մարդը ապրում է ազատ մարդու նման նոյնիսկ ամէնից անազատ պայմաններում։ Արտաքին բռնութիւնները չեն ազդում նրա վրայ, եթէ նա կարողանում է իր վարքագիծը կապել իր ներքին, այլ ոչ թէ արտաքին աշխարհի հետ։ Հոգ չէ, որ վարչկարգը նրան թոյլ չի տալիս կատարելու այս կամ այն քայլը, կարեւորը այն է, որ նա չի կատարում ոչ մէկ քայլ, որը իր տեսանկիւնից սխալ է։

Չարենցը, օրինակ, ամբողջատիրական պայմաններում չկարողացաւ գրել այն, ինչ ինքը ցանկանում էր, բայց ապրեց ազատ մարդու պէս, որովհետեւ ոչ մէկ տող գրեց Ստալինի մասին։

Ներքին ազատութիւնը շատ աւելի կարեւոր է, քան արտաքինը, որովհետեւ ներքնապէս ազատ մարդը, միայն կարող է կերտել արտաքին ազատութիւն։

Ճիշտ այս փոխյարաբերութեան մէջ էլ գտնւում են ներքին ու արտաքին միասնականութիւնները։ Ոչ մէկ արժէք ունի կազմակերպչական, այսինքն արտաքին միասնութիւնը, եթէ բացակայում է միասնականութեան ներքին ձգտումը ու ներքին պահանջը։ Եւ այն էլ ճիշտ է, որ կազմակերպչական միասնութիւն կարող են ստեղծել միասնականութիւնը ներքնապէս ապրած մարդիկ։ Ահա թէ ինչու ծիծաղելի են նրանք, ովքեր առանց միասնականութեան ներքին ապրումների, կազմակերպչական միասնութեան կոչեն են անում և նոյնիսկ կազմակերպութիւններ ու միութիւններ են ստեղծում՝ ինքնագլուխ կերպով նրանց համահայկական անւանելով։ Շատ աւելի հասկանալի են նրանք, ովքեր միասնականութեան ներքին ապրում չունենալով, յամառօրէն հրաժարւում են կազմակերպչական միասնութիւնից։

Սա նշանակում է, որ հայ ժողովրդի տարբեր կազմակերպութիւնների ու զանգւածների միասնութիւնը ստեղծելու համար, նախ անհրաժեշտ է ստեղծել միասնականութեան անհրաժեշտութեան ներքին ապրումը։ Արդեօք նման ապրում գոյութիւն չունի՞ մեր ժողովրդի մէջ։ Փորձը ցոյց է տալիս, որ ոչ։ Այս ակումբը ես չեմ մտնի, այս եկեղեցում չեմ աղօթի, այս միջոցառմանը չեմ մասնակցի, որովհետեւ սրանք «մերը» չեն տրամաբանութիւնը իշխում է թէ՛ Հայաստանում և թէ Սփիւռքում, ինչը հասկանալի է կազմակերպչական ու քաղաքական տեսանկիւնից, բայց բոլորովին անհասկանալի է ներքին ապրումների իմաստով։

Վերջերս Նիւ-Եորքում ներկայ գտնուեցի այսպիսի մի տխուր տեսարանի: Ապրիլ 24ի ոգեկոչման օրը սրահներից մէկում վաճառւում էր «Արմինիոն Գենոցիդ» գիրքը: Մի հայ մարդ մօտեցաւ սեղանին և, ուշադիր ուսումնասիրելուց յետոյ, որոշեց գնել գիրքը: Դրամը վճարելուց յետոյ նա հարցրեց,- «Ո՞վ է կազմել այս ժողովածուն»: Միւնխենի Հայկական Հարցերի Հաստատութիւնը՝ Էդուարդ Յովհաննիսեանի ղեկավարութեամբ,- եղաւ պատասխանը: Մարդը գիրքը նետեց սեղանին, յետ վերցրեց իր դրամը և ասաց,- «Այդ մարդուն հետ ես գործ չեմ ուզեր ունենալ»: Այդ մարդու հետ իսկապէս որ կարելի էր գործ չունենալ, բայց գիրքը ի՞նչ մեղք ունէր: Այս տրամաբանութեամբ, ամենափայլուն ու գեղեցիկ նպատակներն իսկ չեն կարող միասնութեան համար հիմք ծառայել:

Ուրեմն, նախքան նպատակային հիմքեր ստեղծելը, անհրաժեշտ է հոգեկան հիմքերի ստեղծումը: Բայց ինչպէ՞ս: Հաւանաբար շեշտը պէտք է դրւի մեր ազգային պատկանելիութեան վրայ: Բոլորս հայ ենք, ուստի բոլորս իրաւունք ունենք խօսելու և գործելու հայ ժողովրդի ազգային խնդիրը լուծելու ուղղութեամբ և պարտականութիւն ունենք մաս կազմելու մեր ժողովրդի ճակատագրի: Սա չի նշանակում, որ չկան լաւ ու վատ հայեր, որ չկան գործօն ու ոչ-գործօն հայ կազմակերպութիւններ, որ չկան մեր մէջ նւիրւածներ ու ծախւածներ: Սա միայն նշանակում է, որ մենք բոլորին պիտի լսենք, բոլորի գրքերը կարդանք, բոլոր ծրագրերի ու նպատակների հետ ծանօթանանք և դրանից յետոյ միայն յանգենք համապատասխան եզրակացութիւնների ու տանք համապատասխան գնահատականներ: Այս լսելու ու կարդալու առիթները ստեղծողները կարող են դառնալ կազմակերպչական միասնականութեան ճարտարապետները:

Ճիշտ այդ ճանապարհն է բռնել Աւստրիոյ Հայ գաղութի եկեղեցական վարչութիւնը: Մօտաւորապէս երկու հազար հայերից բաղկացած այս գաղութը կարող է օրինակ ծառայել ամբողջ Սփիւռքի համար, որովհետեւ առանց որեւէ խտրականութեան այս գաղութի ղեկավարութիւնը իր մօտ է հրաւիրում բոլոր կողմերի դասախօսների և անխտիր կերպով կատարում է բոլոր հայկական տօները: Լայնատարած Սփիւռքում հազիւ թէ գտնուի մէկ ուրիշ հայ գաղութ, որի էջմիածնական թեմի եկեղեցական սրահում ելոյթներ ունենան թէ՛ Խորհրդային Հայաստանի ղեկավարները և թէ Հ.Յ.Դ. ներկայացուցիչները, որտեղ ծածանւեն թէ՛ եռագոյնը և թէ Խորհրդային Հայաստանի դրօշը, որտեղ նշւի թէ՛ Մայիս 28 և թէ Նոյեմբեր 29:

Այս իմաստով Վիեննայի երիտասարդութիւնը գտնւում է երանելի պայմաններում, որովհետեւ նա ստացել է բոլոր կողմերին լսելու հնարաւորութիւնը և այժմ ի վիճակ է կատարելու այս կամ այն կողմին յարելու ընտրութիւնը:

Կողմերի գոյութիւնը բնական է։ Անբնականը՝ կողմ ընտրելու հնարաւորութեան բացակայութիւնն է, երբ մարդ ծնւում է արդէն կողմի պատկանող՝ աւանդական թշնամութեամբ միւս կողմի հանդէպ։ Աւստրիայում ստեղծւած մթնոլորտը բացայայտում է նաեւ այն, որ կողմերը այդքան էլ շատ չեն, որքան որ թւում էր։ Որ կան խմբեր ու խմբակներ, նոյնիսկ առանձին անձեր, որոնք իրենց «կողմ» են համարում, բայց ոչինչ ունեն ասելու իրենց «կողմի» նպատակների ու գործունէութեան մասին։ Վիեննայի երիտասարդութիւնը այժմ ակտիւօրէն մասնակցում է ՀՀՀի կողմից կազմակերպւած սեմինարներին, ինչպէս նաեւ այլ բանակումների։ Մեր կուսակցութեան համար այս մթնոլորտը ողջունելի է, քանզի երիտասարդները ստացել են լսելու, տեսնելու ու մեր հետ շփւելու հնարաւորութիւնը, իսկ մենք՝ աւելի քան որեւէ մէկը, ցոյց տալու ու պատմելու բան ունենք։

Վիեննայում ստեղծւած մթնոլորտը, որի համար գաղութը պարտական է եկեղեցական վարչութեանը, յատկապէս նրա նախագահ Ա. Աստւածատրեանին, ինչպէս նաեւ համայնքի հոգեւոր առաջնորդ եպիսկոպոս Գրիգորեանին, նպաստում է միասնութեան պայմաններ ստեղծելուն։ Այս մթնոլորտի արդիւնքն էր, որ Աւստրիայի եկեղեցական վարչութեան նախաձեռնութեամբ Վիեննայում կազմակերպւեց Հայ Դատի մամուլի ասուլիս, որին հրաւիրւեցին ՀՀՀի և Պաշտպան Կոմիտէի ներկայացուցիչները և որին ներկայ գտնւեց եպիսկոպոս Գրիգորեանը։

Բայց զարմանալին այն է, որ կան այս մթնոլորտի հակառակորդներ։ Նրանք ջանում են վերադարձնել գաղութը աւանդական միակողմանիութեան և իրենց այդ վնասակար ձգտումը հայրենասիրութիւն են անւանում։ Յուսանք, որ դրսից սնւող այս ուժերը յաջողութիւն չունենան և գաղութի իսկական հայրենասիրական ուժերը կարողանան շարունակել իրենց օրինակելի ընթացքը։ Գուցէ Վիեննայի հայ գաղութին վիճակւած է սկիզբ դնել Սփիւռքում այն հրապարակայնութեան, որը սկսել է Գորբաչեւը Խորհրդային Միութիւնում, որը սակայն մուտք չի գործում Սփիւռք և Հայաստանումն էլ շատ դանդաղ է ընթանում։

1987

ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿՐՕՆԸ

Դոկտ. Է. Յովհաննիսեան

Համամարդկային բարոյականութեան յենարաններից – որոնք հետեւողականօրէն ջնջուեցին Խորհրդային Միութեան ժողովուրդների կենցաղից – ոչ մէկը թերեւս չկրեց այն ահաւոր տոյժը, որը վիճակւած էր կրօնական մտածելակերպին։ Մասնաւոր սեփականութեան վերացումը տնտեսութեան մէջ, գաղափարական ազատութեան կաշկանդումը հասարակական կեանքում, քաղաքական երանգները՝ արւեստում, գիտական մտածելակերպի **պլան**աւորումը,- այս բոլոր պարտադրանքներին հայաստանեան հայը, ասենք, յարմարւեց միայն արտաքուստ, ընդունեց որպէս քաղաքական անխուսափելի անհրաժեշտութիւն։ Կասկած չկայ նրանում, որ այս բոլորը արագօրէն կը վերանան, երբ դրա համար Հայաստանում ստեղծւեն համապատասխան նպաստաւոր ազատ պայմաններ, երբ պետական օրէնքներով իսկապէս կ’ապահովւի անձի ազատութիւնը։ Ա՛յլ է կրօնական աշխարհահայեացքի վիճակը։

Պետական հովանաւորութիւն վայելող **աթէիզմ**ը իր ճանկերով ամուր սեղմել է այսպէս ասած սովետական մարդու հոգին։ Հոգու այդ կաշկանդումը առաւել եւս ծանր կորուստ է հայի՛ համար։ Մեր դարաւոր պատմական անցեալում, ազգային ամենավեհ գաղափարները, մարդկանց ամենահերոսական արարքները սերտօրէն կապւած են եղել հայ ազգայնացած եկեղեցու դաւանած ուսմունքի հետ։ Կրօնը դարեր շարունակ ուղեցոյցի նման լուսաւորում էր մեր ազգի ճանապարհը, ճիշտ կողմնորոշելով նրան՝ Բարին և Չարը ընտրելիս։

Խորհրդային պետականութեան սկզբնական շրջանում իշխանաւորները փորձում էին կրօնը արմատախիլ անել սրի ու հրի միջոցով։ Քանդւում էին եկեղեցիները, հետապնդւում հոգեւորականները, ոչնչացւում սուրբ գրքերը, դպրոցներում և համալսարաններում արգելւում էր կրօնական ուսուցումը։

Այժմ կրօնի դէմ պայքար ընդունել է աւելի մեղմ, սակայն միաժամանակ աւելի վտանգաւոր ձեւեր։ Հիմա հիմնական շեշտը դրւում է կրօնը ժխտելու տեսական հարցերի վրայ, փորձ է արւում տրամաբանօրէն ապացուցել Աստծու գաղափարի անմտութիւնը և նոյնիսկ վնասակարութիւնը։ Բոլոր այդ տեսական յօրինւածների համար աղբիւր է ծառայում մի այնպիսի անհիմն տեսակէտ, թէ իբր գիտութիւնը և կրօնը արմատապէս անհամատեղելի են, թէ իբր նրանք հակասում են իրար և այդ հակասութիւնը լուծւում է ամէնուր յօգուտ գիտութեան։

Այդ գաղափարը, որը մարդկանց ներշնչում է դպրոցական նստարանից սկսած, յաճախ թուում է բաւականին համոզիչ, քանզի վստահութիւնը դէպի գիտութիւնը ակնյայտ է, քանզի այն ամրապնդւում է գիտական հզօր նւաճումներով: Ինչպէս Խորհրդային Միութեան միւս բոլոր ազգերի, այնպէս էլ հայ ազգի մէջ առաջացել է մի մտայնութիւն, թէ իբր զարգացած մարդը առհասարակ չի կարող լինել հաւատացեալ: Հայ միջին մտաւորականի համար կրօնը ընդհանրապէս յետադիմութեան ու յետամնացութեան նշան է: Նա անկեղծօրէն հաւատացած է, թէ կրօնը ինչ որ մէկի կողմից շահախնդրօրէն ստեղծւած բան է: Դա, իմ համոզումով, բացայայտ տգիտութիւն է և թերամտութիւն: Կրօնը ոչ ոք չի ստեղծել գիտակցաբար, այլ նա ծնունդ է առել ինքնաբուխ կերպով՝ որպէս չարը բարուց տարբերելու ներքին ձգտում, որպէս իրաւունքի ու բարոյականութեան ճանաչում:

Կարելի՞ է արդեօք հաւատացեալներին իսկապէս համարել ոչ-զարգացած մարդիկ, եթէ այսպէս ասած «յետամնացների» խմբին են պատկանում մտքի այնպիսի մեծութիւններ, ինչպիսիք էին Պղատոնը, Կեպլերը, Դարւինը, Պաստէօրը, Պիրոգովը, Կոմիտասը, Նարեկացին և շատ ուրիշ ականաւոր մտաւորականներ, արւեստագէտներ ու գիտնականներ: Աւելին, իրականում մեծ գիտնականները երբեք չե՛ն եղել **աթէիստ**: Կարո՞ղ էր արդեօք հաւատացեալ Պաստէօրը, այժմեան մանրէաբանութեան հայրը, նոյնիսկ ենթադրել, որ իր ուսմունքը որեւէ տեղ ոեւէ մէկի կողմից կ՚օգտագործւի **աթէիստ**ական **պրոպագանդա**յի համար:

Կոպեռնիկոսը աստղագիտութիւնը համարում էր Աստծուն ճանաչելու ճանապարհ: Իսկ Կեպլերը, ուսումնասիրելով երկինքը, բացականչում էր. «Գոհունա՛կ եմ քեզնից, Աստուա՛ծ, որ ինձ շնորհեցիր մեծագոյն երջանկութիւն՝ ճանաչելու քո ստեղծագործութիւնը»: Նեւտոնը, որը յայտնաբերեց տիեզերքում շարժւող մարմինների օրինաչափութիւնները, զբաղւում էր նաեւ աստւածաբանութեամբ և իր աշխատութիւնների մէջ գրում էր. «Ամէն ինչ ենթարկւած է Բարձրագոյն Էակի ծրագրին: Այդ Էակը կառավարում է տիեզերքը, ոչ ինչպէս աշխարհի ոգի, այլ ինչպէս տէրը և իշխանը ամենի: Այդ Բարձրագոյն Էակը յաւերժ է և գերկատարելագործւած»:

Այսպիսի օրինակները կարելի է շարունակել, բայց այսքանն էլ բաւական է մեր մէջ զարմանք առաջացնելու համար, թէ ինչպէ՛ս կարող էին մեծանուն գիտնականները համատեղել կրօնը և գիտութիւնը: Գիտութեան և կրօնի անհամատեղելիութեան հարցը առաջանում է այն սխալ պատկերացումից, թէ երկուսն էլ ուսումնասիրում են աշխարհակառուցւածքի միեւնոյն խնդիրները, ընդ որում գիտութիւնը ապացուցում է, իսկ կրօնը պահանջում է կոյր հաւատ: Մինչդեռ իրականութեան մէջ գիտութիւնը և կրօնը խօսում են տարբեր բանե-

րի մասին, այդ իսկ պատճառով՝ նրանց միջեւ չի կարող առաջանալ ոչ մի հակասութիւն: Գիտութիւնը ուսումնասիրում է տեսանելի աշխարհը, իսկ կրօնը՝ այդ աշխարհի յարաբերակցութիւնը անսահման շրջապատին: Կրօնը ուսումնասիրում է այն հարցը, թէ ինչպէ՛ս է աշխարհը առընչւում սկզբնապատճառին, թէ նա ի՛նչ տեղ է գրաւում տիեզերական ներդաշնակութեան մէջ: Հաւատքի բացակայութիւնը նշանակում է հաւատալ, թէ գիտութեան սահմաններից դուրս ոչինչ գոյութիւն չունի՛, թէ գիտութիւնը ունի բացարձակ զօրութի՛ւն և նրա կարողութիւնը տարածւում է ամբողջ աշխարհակառոյցի վրայ: Դա պարզապէս կամայ-ակամայ կռապաշտութիւն է գիտութեան առջեւ:

Գիտութեան կողմից ուսումնասիրւող առարկայից դուրս գոյութիւն ունի ուժերի մի անվերջ բազմութիւն, որոնք ոչ մի կերպ չեն կարող ուսումնասիրւել գիտութեան կողմից, քանզի սկզբունքօրէն անճանաչելի են: Եւ դրանում չի կարելի մեղադրել գիտութեանը: Կարելի՞ է արդեօք մեղադրել ճարտարապետին նրանում, որ շէնքը կառուցելիս նա հաշւի է առնում միայն յայտնի բնական ուժերը և աչքաթող է անում անակնկալ ռմբակոծումները կամ անսպասելի երկրաշարժերը: Այդ ուժերի մասին նա ուղղակի չգիտի և չի էլ կարող իմանալ, քանի որ նրանք դուրս են իր ճարտարապետական գիտելիքներից:

Պոզիտիւիստ Իւմը համարում էր, որ եթէ արեւը հազարամեակներ շարունակ առաւօտեան ծագում է, դա դեռ չի նշանակում, թէ նա կը ծագի նաեւ վաղը: Եւ եթէ յանկարծ վաղը չծագի՝ արդեօք մենք իրաւունք չունե՞նք դա վերագրելու հրաշքի: Չէ՞ որ դա կը կատարւի մեզ անյայտ ուժերի միջամտութեամբ: Այդ ուժերը ի յայտ կը գան միայն իրենց արդիւնքով, այլ ոչ թէ էութեամբ:

Մենք արդէն վաղուց սովորել ենք կենդանիների մօտ առաջացնել պայմանական **ռեֆլեքս**ներ տարբեր գրգռիչների նկատմամբ, բայց երբեք մեզ չի յաջողւի նրանց մօտ առաջացնել **ռենտգեն**եան ճառագայթներից խուսափելու սովորութիւն, որովհետեւ նրանք այդ ճառագայթները չեն զգում: Բայց այդ ճառագայթներից առաջացած արդիւնքը՝ քաղցկեղային հիւանդութիւնը կենդանին կը զգայ բաւականին ու սուր կերպով: Այդպէս էլ՝ մարդու համար է՛ւս միշտ կը մնայ անճանաչելի մի անսահման ոլորտ: Ճանաչել այդ ոլորտի գոյութիւնը, այսինքն ճանաչել մեզանից աւելի հզօր մի ինչ որ բանի գոյութիւն՝ դա արդէն կրօնական մտածելակերպի սկիզբն է: Ճանաչել, որ այդ զօրութիւնը մեզանից կարեւոր է՝ նշանակում է ընդունել կրօնական բարոյականութիւնը:

Թէ՛ գիտութիւնը և թէ կրօնը ընդունում են, որ աշխարհը ունի յատուկ խորհրդաւորութիւն, որ այն անճանաչելի է սկզբունքօրէն: Միայն թէ կրօնի համար անհրաժեշտ է անմիջական կրօնական փորձ, աւելի սուր «աչքեր», մարդկային կատարելագործութիւն: Այստեղ «մասնագէտ» դառնալը շատ ա-

ւելի դժւար է, այդ իսկ պատճառով մեծ կարեւորութիւն է ստանում ուրիշ «վարպետ»ների հեղինակութիւնը։

Գիտութիւնը նոյնպէս լի է սահմանափակումներով։ Հետաքրքրական է Նեւտոնի արտայայտութիւնը իր մասին։ «Չգիտեմ,- գրում էր նա,- թէ ինչպիսի գնահատական կը տան ինձ գալիք սերունդները, բայց ինքս ինձ թւում եմ մի փոքրիկ երեխայ, որը անծայրածիր ովկիանոսի ափերին հաւաքում է ալիքների միջոցով դուրս նետուած խխունջներ, իսկ ովկիանոսն ինքը իր խոր գաղտնիքներով մնում է ինձ համար առաջւայ նման անհասանելի»։

Այսպիսով, կրօնը հաստատում է մարդու կապը անվերջ գոյութեան հետ, որին նա իրեն զգում է մասնակից և որից նա դուրս է բերում իր գործունէութեան համար ղեկավարող սկզբունքներ։ Եւ քանի որ այդ սկզբունքը հիմնուած է անճանաչելի բազմազանութեան վրայ, միայն մարգարէների միջոցո՛վ կարող է այն ճանապարհ բացել դէպի հասարակական կապեր ունեցող մարդը։

Արուեստագէտները, բարոյական ու քաղաքակրթական արժէքներ ստեղծողները, հանճարները կարող են ամենեւին էլ չունենալ բառիս բուն իմաստով կրօնական փորձ։ Ստեղծագործական ընթացքը տարբերւում է Աստւածն ընկալելու աղօթքային ձեւից։ Ստեղծագործողները, սովորաբար, խօսում են ոչ թէ Աստծու Խորհուրդի մասին, այլ անորոշ ձեւով՝ ոգեշնչման, մուսայի և ուրիշ հոգեկան աղբիւրների մասին։

Զարգացնել իր մէջ կրօնական մտածելակերպը՝ նշանակում է ճանաչել գեղեցիկը, բարին, կատարելութիւնը։ Հոգեկան այդ յատկութիւնները չեն աւելանայ գիտական ձեռքբերումներից։ Հոմերոսը, Պղատոնը և Դեմոկրիտը երբեք չէին էլ լսել արբանեակների կամ քիմիայի մասին, իսկ աստղագիտութեան մասին նրանք գիտէին անհամեմատ աւելի քիչ, քան այդ մասին գիտի ժամանակակից դպրոցականը։ Բայց նրանք ունէին հարուստ, զարգացած հոգիներ, որով կողմնորոշւում էին մարդկային բարդ յարաբերութիւնների մէջ։ Կրօնը պահանջում է հոգեկան կատարելագործութիւն, հոգեկան ուժերի զարգացում, որը նպաստում է անձի անհատականութեան զարգացմանը աւելի, քան որեւէ ուրիշ հանգամանք։

Գթասիրութիւն, կարեկցութիւն, արդարութիւն,- ա՛յս է կրօնի պահանջը։ Կրօնասէր մարդը ձգտում է միայն ընդհանուր բարիքին։ Նրան չեն դրդում ո՛չ անձնական շահը, ո՛չ կիրքը, ո՛չ փառասիրութիւնը. նրան անծանօթ է մրցութիւնը։ Իր նուաճածի համեմատութիւնը ուրիշի նուաճումի հետ՝ նրան չի մտահոգում։ Նրան մտահոգում է միայն համեմատութիւնը այն բանի հետ, ինչ որ ընդհանրապէս պէտք է նուաճւէր։ Նա իրեն պարտաւոր է զգում ձգտելու համընդհանուր բարիքին, այդ բարիքը նրա միակ նպատակն է, և եթէ այն իրա-

գործել է ուրիշների կողմից՝ նա իրեն յուսախաբուած չի զգում, քանզի բոլորին նա նայում է իբրեւ գործակիցների և ոչ ոքի՝ որպէս ախոյեանի։

Այսօր ոչ մի գրագէտ-պատմաբան չի ժխտում, որ բոլոր մեծագոյն արժէքները աշխարհում տարածել են կրօնների միջոցով։ Առանց կրօնի, կարելի է ասել, գոյութիւն չունի ոչ մի մշակոյթ։ Այդ հասկանում էին նոյնիսկ այնպիսի ոչհաւատացեալներ, ինչպիսիք էին, ասենք, Մաքիաւելին և Շպենգլերը։ Հասկանում էր դա է՛ւ կոմունիստական իւրայատուկ կրօնի հեղինակ Մարքսը։

Միայն մակերեսային խղճուկ մտածելակերպը կարող է ենթադրել, թէ կրօնական զգացմունքը հնարաւոր է փոխարինել ուղեղի **դեկրետ**ներով։ Կոմունիստների **աթէիստ**ական կրօնը ունի իր յատուկ մարգարէները, վանահայրերը, ունի սեփական սրբապատկերներ, դամբարաններ, մասունքներ, սուրբ գիրք, խնամքով կազմակերպւած **ինկուիզիցիա**՝ հաւատաքննութիւն և յարութիւն։

Վերջինս ունի հանրայայտ ձեւակերպում. «Լենինը ապրում էր, Լենինը կ՚ապրի» կամ՝ «Լենինը այսօր էլ աւելի կենդանի է, քան բոլոր ապրողները»։ Իսկապէս՝ նա այնքա՛ն կենդանի է, որ արժանացաւ նոր կուսակցական տոմսի։ Այդ կրօնը ունի նաեւ իր ընտրեալ ժողովուրդը՝ բանւոր դասակարգը և իր **մեսիա**նական՝ փրկչական իդէալը՝ **ինտերնացիոնալիստ**ական **կոմունիզմ**ը։ Եւ միայն մի բան չի ընդունում այդ կրօնը, այն, որ տեսանելի աշխարհից բացի գոյութիւն ունի է՛ւ անտեսանելին։

Այդ կրօնը **ֆետիշ**ացնում է նիւթապաշտութիւնը և դրանում թաքնւում գիտութեան ստւերի տակ, վերջինիս օժտելով անսահման հնարաւորութիւններով։ **Աթէիստ**ական կրօնը լեցուն է ներքին հակասութիւններով։ Իսկապէս, կարծես թէ արդարանում են Դոստոեւսկու երբեմնի ասած խօսքերը, թէ «խոռվարարները չեն կարողանում տանել իրենց ազատութիւնը և փնտռում են, թէ ո՛ւմ առաջ կարելի է խոնարհւել։ Բայց այդ կռապաշտութիւնը մարդկանց դարձնում է սողուններ»։

Այսպիսով, մենք յանգեցինք այն եզրակացութեան, որ գիտութիւնը ոչ մի առումով չի հակասում կրօնին, այլ, ընդհակառակն, ուղղակի լրացնում է նրան։

1973

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Դոկտ. Է. Յովհաննիսեան

Մեր ժողովուրդը, իր դարաւոր պատմական անցեալում, յաճախ, միայն սրտի կանչով, առանց քաղաքական հաշւարկի, միացել և աջակցել է այս կամ այն շարժումների, վատնելով իր խղճուկ ազգային միջոցները ուրիշի նպատակների համար։

Չափից շատ արիւն թափւեց պատմական այդ երկար ճանապարհի վրայ։ Սակայն ազգը երբեք համոզւած չէր, որ հատուցման ժամին այդ արիւնը կը գնահատւի ըստ արժանւոյն, որ այդ արիւնը կը թափւի պատմական բախտը կերտող ջրաղացի վրայ։

Այժմ ստեղծւել է մի այնպիսի իրադրութիւն, որը նոր առատ արիւն թափելու վտանգ է բերում իր հետ։ Խօսքը այսպէս կոչւած ժողովրդավարութեան մասին է, որ նւաճեց Եւրոպան և սկսել է իր արշաւը դէպի Ասիա։ Այդ, սկզբունքօրէն արդար շարժման մէջ ներգրաււում են այս կամ այն ազգերը։ Սակայն չի կարելի զօրագրւել ժողովրդավարականների բանակին, առանց հաշւի առնելու քաղաքական իրականութիւնը, միայն արդարութիւնը պրպտող, ոգու կանչով։

Ժողովրդավարական գաղափարները, այժմ սկսել են ներխուժել Խորհրդային Միութիւն։ Մեր ազգին կարող է թւալ, թէ Խորհրդային Միութեան ժողովրդականացումը, իշխանութեան **տոտալիտար** (ամբողջատիրական) ձեւի վերացումը, կը լուծի միաժամանակ նաեւ ազգային հարցը։ Եւ ինչպէս միշտ, սրտի կանչով, այդ ժողովրդավարականների հետ մենք կը նետւենք ճակատ, անհմաստ ծախսելով մեր ազգային եռանդը։ Ինչ կը ստանանք մենք դրա փոխարէն, շատ կարեւոր է, ուստի կանգ առնենք այդ հարցի վրայ փոքր ինչ մանրամասնօրէն։

Խորհրդային Միութեան ժողովրդավարականացման հարցը յուզում է ամբողջ աշխարհը։ Սակայն, առաւել կարեւոր է այն մարդկանց դիրքորոշումը, ում ձեռքերով կարող է կատարւել այդ դեմոկրատացումը. այսինքն՝ ռուս ժողովրդի։

Այդ ժողովրդի գլխաւոր քաղաքական ուժերը, թէ՛ երկրի ներսում և թէ՛ արտասահմանում, միշտ եղել են զարմանալի համերաշխ գլխաւոր հարցում. «Ժողովրդավարականութե՞ն, թէ՞ կայսրութեան»։ Բոլոր այդ ռուս ժողովրդավարականները այսպէս թէ այնպէս ուզում են պահպանել կայսրութիւնը, բայց քծնում են ազատութեանը, հասկանալով այն բաւականին նեղ իմաստով։

Նրանց համար Ռուսաստանը սկսւում է Կովկասից և Խրիմից և վերջանում է Կամչատկայով: Այս ժողովրդավարականների մտքով անգամ չի անցնում, որ «Մայր Ռուսաստանը» կարող է տրոհւի ինքնուրոյն ազգային պետութիւններին: Դիմենք օրինակների:

Փարիզում լոյս տեսնող **«Ռուսկայա Միսլ»** թերթի համարներից մէկում Ս. Ժաբան «Նրա իսկական անունը» վերնագրով յօդւածում գրում է.

«Հիմա այնտեղ, Ռուսաստանում, տօնում են չորս խորհրդային հանրապետութիւնների մեր հայերնիքի նախկին շրջանների միացման յիսնամեակը: Սակայն ո՞վ էր նրանց բաժանել: Նրանք անջատւեցին Ռուսաստանից, խոյս տալով բոլշեւիզմից, այլ ոչ թէ ցանկանալով ինքնուրոյնութիւն: Ռուսաստանի ժողովուրդները, ունենալով ընդհանուր պատմական ճակատագիր, միաձուլւած ընդհանուր մեծ մշակոյթով, ընդհանուր ուրախութիւններով, ընդհանուր ողբանքներով, կը գտնեն մեծ վերածնունդի ընդհանուր ճանապարհ»: Այդ ճանապարհները երեւի իսկապէս գտնւեն, սակայն հազիւ թէ նրանք լինեն ընդհանուր:

Կարմիր բանակի ռազմագերիներից կազմւած «Ռուսական ազատագրական շարժում» կազմակերպութիւնը իր համագումարի զեկուցումներից մէկում, յանձինս Վ.Ֆ.Մալիշկինի ճառում, ասում էր. «Մենք համարում ենք, որ ազգերի ազատութիւնը ապագայ Ռուսաստանում պէտք է իրականացւի. մեր դիրքորոշումը այդ հարցում, ինչպէս ասաց զօրավար Վլասովը, կարելի է համառօտակի ձեւակերպել հետեւեալ կերպ. ազգային ազատութիւն, ընդհուպ մինչեւ ինքնորոշում և Ռուսաստանից անջատում: Բայց նշանակո՞ւմ է դա արդեօք, որ այդ հարցը մենք պէտք է լուծենք հէնց հիմա: Ոչ: Դա կարող է թուլացնել շարժումը: Դա պէտք է լուծւի հետագայում, ամենագլխաւոր խնդիրը լուծելուց յետոյ՝ բոլշեւիզմի և Ստալինի իշխանութիւնը տապալելուց յետոյ»:

Չոպէ կոչւող կազմակերպութեան քաղաքական ծրագրային դիմումում ասւած է.- «Մեր ժամանակներում, ազգային պետականութիւնը կորցրել է իր իմաստը, այդ հասկացողութիւնը կարելի է համարել իր դարը ապրած: Ազգային սահմանները պատնէշ են դարձել ժողովուրդների տնտեսական զարգացման համար: Մինչ այդ, երբ ազատւած ժողովուրդը հնարաւորութիւն կը ստանայ ինքը տնօրինել իր ճակատագիրը, մեր կազմակերպութիւնը կտրականապէս հերքում է բոլոր փորձերը նախօրօք կանխորոշել Ռուսաստանի ապագան, և պայքարի ընթացքում, ընդհանուր պայքարը կոմունիզմի դէմ փոխարինել ոչ-ռուս ժողովուրդների պայքարով ռուսների դէմ, և հակառակը»:

Ո՞ր երրորդ անգամն է, որ մեզ կանչում են միացեալ պայքարի խոստանալով հետագայում լուծել մեր խնդիրները: Մենք գնացինք Երիտ. Թուրքերի հետ Աբդուլ Համիդին գահից գցելու, գցեցինք: Մենք գնացինք կոմունիստների հետ

ցարիզմը տապալելու, տապալեցինք: Մենք գնացինք ֆրանսիական բանակի հետ Կիլիկիան ազատագրելու, ազատագրեցինք: Մենք գնացինք ռուսների և ամերիկացիների հետ ֆաշիզմը տապալելու, տապալեցինք: Եւ շատ ուրիշների հետ մենք գնացինք, բայց ամէն անգամ, երբ պայքարը վերջանում էր, մենք դարձեալ տեսնում էինք միայն մեր արիւնաքամ եղած Հայրենիքը, որ օգնութիւն էր աղերսում:

Բայց շարունակենք օրինակները.

Վ. Նիկոլայեւի ապագայ Ռուսաստանի կառավարութեան քաղաքական ծրագրում ասւած է.

«Նախկին հանրապետութիւններում, դիրեկտորիան նշանակում է գեներալ-դիրեկտորների, իսկ բանակը պահպանում է այնտեղ կարգը: Գեներալ-դիրեկտորներին կից կը ստեղծուեն տեղական խորհուրդներ»:

Սակայն, ամէնից ահաւոր **ռասիստ**ական մտքերը կարելի է գտնել Ալեքսանդր Ռայտի «Ռուսական ինքնապահպանման քաղաքականութիւնը» անունը կրող գրքոյկում: Կարելի էր ուշադրութիւն չդարձնել այդ **ռասիստ**ի գաղափարների վրայ, բայց մենք չենք կարող անցնել դրա կողքից, որովհետեւ հրատարակչութիւնը իր նախաբանում նշում է, որ այդ գիրքը պէտք է դառնայ՝ ամէն մի ռուս հայրենասէրի համար, քաղաքական դասագիրք, ամէնօրեայ վարքագծի ուղեցոյց: Այդ ուղեցոյցում կարելի է գտնել այսպիսի քաղաքական «գոհարներ».

«Արդեօք ի՞նչ պէտք է շահի Ռուսաստանը, եթէ փոխարինի այսօրւայ խորհրդային կարգը ժողովրդավարական **ռեժիմ**ով: Ի հարկէ այդ **ռեժիմ**ը բերում է իր հետ ազատութիւն **դիկտատուրա**յի փոխարէն, այդ մասին մեզ ասում են ամէն օր և դա ճիշտ է: Բայց քանի ուշ չէ, պէտք չէ՞ արդեօք ռուսներին հետաքրքրքրի, թէ ինչ գին կը վճարի ռուսական պետականութիւնը և ազգը այն բարիքների համար, որը բերում է իր հետ ազատութիւնը: Խորհրդային Միութեան այսօրւայ դեմոկրատացումը մեզ ռուսներիս բոլորովին ձեռնտու չի, և քանի որ մենք **ինտերնացիոնալիս**ներ չենք, ուրախանալու ոչ մի առիթ չկայ: Պէտք չէ նմանւել Էս-Էռներին, **Կադետ**ներին, որոնք պայքարում էին ցարիզմի «ոստիկանական վարչաձեւի» դէմ և ուրախանում էին ամէն մի **լիբերալացում**ի, ամէն մի ճեղքի այն ժամանակւայ պետական **ապարատ**ում: Պէտք է վերջապէս հասկանալ, որ այսպէս կոչւած հակակոմունիստական պայքարը, ամենեւին էլ մեր պայքարը չէ: Դեմոկրատացումը Ռուսաստանին կը թողնի միայն Մոսկւան բանջարանոցներով, այսինքն բուն Ռուսաստանը»:

Ահա և յստակ պատասխան «Ժողովրդավարականութիւն թէ կայսրութիւն» հարցումին:

Գրեթէ նոյն մտայնութիւնը ունեն ռուս «դեմոկրատները» երկրի ներսում:

Ս. Զորինի և Ն. Ալեկսէեւի «Ժամանակը չի սպասում» գրքոյկում առաջարկում են Ռուսաստանի վերածնունդի, այսպէս կոչուած լենինկրատեան ծրագիր: Այդ ծրագրում շօշափուած են բոլոր հարցերը, է՛ւ տնտեսական, է՛ւ շինարարական, է՛ւ քաղաքական, է՛ւ հասարակական, ընտրութիւններ, գիւղատնտեսութիւն, մամուլի ազատութիւն և միայն ազգային հարցի համար ծրագրում տեղ չի գտնուել: Ալեկսէևների եւ Զորինների համար այդպիսի հարց գոյութիւն չունի: Ոչ մի խօսք չկայ այդ մասին նաեւ այսպէս կոչուած նոր Սոցիալ-Դեմոկրատների ծրագրում, որոնք առաջարկում են ստեղծել նոր կուսակցութիւն, Խորհրդային Միութիւնը փրկելու «վարչական **պետկապիտալիզմ**ից»: Նրանց ծրագրում խօսք անգամ չկայ ազգութիւնների վերաբերեալ, չնայած նրան, որ ծրագրում տեղ է գտնուել նոյնիսկ այնպիսի հարցերի համար, ինչպիսին է միջավայրի մաքրութեան համար պայքարը:

Խորհրդային Միութեան դեմոկրատացման ամենախոշոր կողմնակիցը, անկասկած, Ա. Սոլժենիցինն է: Նրա խօսքին, ազգային հարցի վերաբերեալ, սպասում էին շատերը: Սպասում էին, որովհետեւ նրա բարին և չարը գաղափարների խորը ըմբռնումը, յոյս էր ներշնչում, որ նա պիտի խօսի այն փայլուն գեղարուեստական ոճով, որին այսօր գուցէ ընդունակ է միայն Սոլժենիցինը: Եւ նա խօսեց: Իր Նոբելեան դասախօսութեան մէջ, 1970 թւականին, Սոլժենիցինը ասում էր.

«Վեջրին ժամանակներս նորոյթ է դառել խօսել ազգերի համահարթութեան մասին, նրանց անյայտանալու մասին այժմեան քաղաքակրթութեան կաթսայի մէջ: Ես համաձայն չեմ դրա հետ, բայց այդ հարցի քննարկումը առանձին խնդիր է, այստեղ տեղին կը լինի ասել միայն հետեւեալը.- Ազգերի անյայտացումը մեզ կը սնանկացնի ոչ պակաս, քան եթէ բոլոր մարդիկ ունենային միեւնոյն բնաւորութիւն և դէմք: Ազգութիւնները, մարդկութեան հարստութիւնն են, նրա ամփոփւած անձերը, ամենափոքրը նրանցից ունի իր յատուկ գոյները, պարունակում է Աստուծոյ նպատակի առանձնայատուկ երանգը»:

Սակայն, այս յոյս ներշնչող յայտարարութիւնից յետոյ, լոյս տեսաւ Սոլժենիցինի «Օգոստոս 14»ը, որտեղ հեղինակը պարզ ցոյց տւեց իր համակրանքը դէպի ռուսական մեծապետականութիւնը: Հազիւ թէ կարելի է սպասել նրանից, որ Ռուսաստանի բաժանումը առանձին, ինքնուրոյն պետութիւնների, կարող է նրան դուր գալ, ինչպէս կարելի էր սպասել իսկական դեմոկրատից: Էլ ո՞ւմ վրայ, նրանից յետոյ կարող է ազգը յոյս դնել իր ինքնուրոյնութեան հարցում: Եթէ Սոլժենիցիները, Ալեկսէեւները և Նիկոլայեւները կառչել են կայսրութիւնից, թող նրանք գոհ լինեն բանտերի և գժանոցների լայն ցանցով, որոնք նորից բացել են իրենց դռները «դեմոկրատների» համար:

Նրանք արժանի են թէ՛ ճամբարներին, թէ՛ իրենց նախորդող Ստոլիպինին, որ անպատկառօրէն յայտարարեց, թէ ռուսական պետական շահերին չի համապատասխանում ոչ-ռուս ազգութիւնների մշակոյթի զարգացումը։ Ուրեմն հայ ժողովուրդը ոչինչ պէտք չէ սպասի այդ դեմոկրատական շարժումից և ոչ մի զինւոր պէտք չէ տայ նրանց բանակին։ Դա ի հարկէ չի նշանակում, որ հայ ժողովուրդը դեմոկրատացման կարիքը չունի։ Դա միայն նշանակում է, որ եթէ պատմութեան անիւը Խորհրդային Միութեանը կը ցանկանայ տալ ազատութիւն, թող դա կատարւի ուրիշների զոհողութեան գնով, առանց հայերի մասնակցութեամբ։ Նրանց համար, ով կը մեղադրի մեզ գործադուլաբեկութեան մէջ, մենք ունենք մի պատասխան – մենք, հայերս քաղաքական ազգ ենք։

1973

ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Դոկտ. Է. Յովհաննիսեան

Վերջին ժամանակներս խորհրդային մամուլը մեծ ուշադրութիւն է դարձնում ազգային քաղաքականութեանը։ Փորձ է արւում օրինականացնել խորհրդային ժողովուրդ հասկացողութիւնը, տնտեսական շրջանների ստեղծումով նպաստել ազգաձուլման ընթացքին և շատ ուրիշ ապազգային միջոցառումների է դիմւում։

Ապազգային քաղաքականութեան տեսական հիմքը կազմում է այսպէս կոչւած միջազգայնականութիւնը, որ իբր թէ ուղղւած է ազգայնականութեան դէմ, հակասում է նրան եւ նրա համեմատութեամբ հանդիսանում է աւելի առաջադէմ գաղափարախօսութիւն։ Այս յօդւածում ես կը փորձեմ ցոյց տալ, թէ իրականում ի՛նչպիսի յարաբերակցութեան մէջ են գտնւում այդ երկու գաղափարները։

Դարերից ի վեր, ազգային հարցի վերաբերեալ մարդկութեանը ծանօթ է երկու պատմական ուղղութիւն, երկու **տենդենց**՝ միտում, ձգտում։ Առաջինը ազգային ինքնագիտակցութեան արթնացում, ազգային ինքնուրոյն կեանքի ձգտում, ազգային ազատագրական շարժումների առաջացում. երկրորդը՝ ազգային պատնէշների վերացում, ազգերի համագործակցութիւն, տնտեսական, մշակութային և քաղաքական ասպարէզներում։

Երկու այդ ուղղութիւններն էլ պատմական օրինաչափութիւնների արդիւնք են։ Առաջին ուղղութիւնը իր վերջին նպատակը տեսնում է անկախ ազգային պետականութեան մէջ և կոչւում է ազգայնականութիւն, իսկ երկրորդը նպատակ ունի ստեղծել համաշխարհային ազգային ներդաշնակութիւն, ազգերի համագործակցութիւն և կոչւում է միջազգայնականութիւն։ Սակայն այդ **տենդենց**ները չեն ծագել միաժամանակ։ Առաջինը ունի աւելի հին պատմութիւն, իսկ երկրորդը՝ միջազգայնականութիւնը, բնորոշ է մարդկութեան աւելի հասուն ժամանակաշրջանին, երբ ազգերի համագործակցութիւնը անհրաժեշտութիւն էր դարձել մարդկութեան զարգացման համար։ Պատմական անհրաժեշտութիւնից ծնունդ առած միջազգային համագործակցութեան գաղափարը հասարակութեան ստորադասական կառուցւածքի մէջ գտնւում էր աւելի բարձր աստիճանի վրայ, քան ազգայնականութիւնը։ Այդ երկու գաղափարների կապը ճիշտ այնպիսինն է, ինչպիսին է ընդհանուրի և մասնաւորի կապը։ Ընդհանուրի և մասնաւորի յարաբերակցութեան հարցը կարեւոր տեղ է գրաւում փիլիսոփայութեան մէջ։ Այդ երկու հասկացողութիւնների փոխադարձ

կապը ենթարկւում է մի ընդհանուր օրինաչափութեան, որի ձեւակերպումը հետեւեալն է. ընդհանուրը իր մէջ պարունակում է աւելին, քան մասնաւորները գումարը: Այդ օրէնքի համաձայն, առանձին հատւածներից կազմւած համակարգը ձեռք է բերում նոր լրացուցիչ յատկութիւններ և հէնց այդ պատճառով դաւում է ստորադասական կառուցւածքում աւելի բարձր աստիճանի վրայ: Այդ օրինաչափութեան հիման վրայ է, որ յաջողւում է պարզ համակարգերը բարդացնելով, վերադասաւորելով ստանալ նորանոր յատկութիւններ, նոր համակարգեր և նոյնիսկ նոր կենսաբանական տեսակներ: Աղիւսներից կառուցւում են տներ, տներից քաղաքներ ու գիւղեր, քաղաքներից ու գիւղերից պետութիւններ և այլն: Մարդկանցից կազմւում են ընտանիքներ, ընտանիքներից ցեղեր, ցեղերից ազգեր, ազգերից մարդկութիւն, և գուցէ, հետագայում էլ՝ մարդկութիւններից այսպէս ասած՝ «տիեզերաէակութիւն»:

Այդ նոյն ստորադասական կազմակերպւածութիւնը կարելի է նկատել **մեզոն**ներից մինչեւ **մոլեկուլ**ները տանող ճանապարհի վրայ, կամ մոլորակներից մինչեւ **գալակտիկա**ները տանող ճանապարհների վրայ:

Բոլոր այս պարզ օրինակների մէջ յամենայն դէպս, երկու հանգամանք պէտք է գրաւի մեր ուշադրութիւնը: Առաջին հանգամանքը կայանում է նրանում, որ ամէն մի յաջորդ, աւելի բարդ համակարգ չի ոչնչացնում նախորդի ուրոյնութիւնը, այլ ընդհակառակն, հիմնւում է նրա վրայ և կառուցւում է նրանով: Շէնքի պատերում աղիւսները մնում են աղիւս, իսկ քաղաքներում՝ շէնքերը շէնքեր: Ազգի ներսում ընտանիքները մնում են ընտանիք, իսկ ընտանիքի անդամները անհատ մարդիկ:

Երկրորդ հանգամանքը, որի վրայ պէտք է ուշադրութիւն դարձնել, դա այն է, որ բարդ համակարգի բոլոր բաղկացուցիչ մասերը հաւասարաչափ անհրաժեշտ են: Ի հարկէ, նայած համակարգի հիմնական նպատակին, կարող են լինել գլխաւոր և երկրորդական նշանակութիւն ունեցող մասեր, բայց բոլորն էլ անհրաժեշտ են: Ընդ որում մասերի գլխաւորութիւնը յաճախ փոխւում է, երբ փոխւում է համակարգի նպատակը: Եթէ նորից դիմենք մեր շէնքի օրինակին, ապա կախւած այն բանից, թէ ինչ նպատակով է կառուցւած այն, գլխաւոր կարող են համարւել շէնքի ամրութիւնը, շքեղութիւնը, լուսաւորութիւնը, բնակելի տարածութիւնը, և այլն: Բայց բոլոր դէպքերում, թէ՛ ապակին և թէ՛ աղիւսը, թէ՛ փայտը և թէ՛ մնացած շինանիւթերը, հաւասարաչափ անհրաժեշտ են: Այսպիսով բարդ համակարգը, որպէս աւելի պարզ համակարգերի ընդհանրացում, միայն այն դէպքում կարող է դիտւել աւելի բարձր մակարդակ ունեցող հասկացողութիւն, երբ իսկապէս ընդհանրացնում է հատւածների առանձին յատկութիւնները: Ուրիշ խօսքով, մասնաւորը մտնում է ընդհանուրի մէջ՝ իր բոլոր յատկութիւններով, առանց խախտելու իր ուրոյնութիւնը: Հակառակը ուղղակի

անհնարին է: Եթէ հատուածները ընդհանուրի ընդգրկման պահին կորցնեն իրենց յատկութիւնները, ընդհանուրը չի ստանայ ոչ մի նոր որակ և ուրեմն, չի կարող համարուել աւելի բարձր աստիճանի վրայ գտնուող **կատեգորիա**:

Սպիտակ լոյսը ամփոփում է լուսապատկերի եօթ գոյները և դրանով է, որ ստանում է նոր որակ: Անասունների խմբաւորուածութիւնը կարելի է հօտ համարել այնքան ժամանակ, որքան դեռ նա բաղկացած է կենդանի անասուններից: Երբ այդ հօտը մշակւի սպանդանոցում, կը կորցնի իր հօտային յատկութիւնները և պարզապէս կը դառնայ միս, որի յատկութիւնները չեն փոխուի, եթէ մորթած անասունների թիւը աւելացւի կամ պակասեցւի: Այդպէս էլ ազգային ասպարէզում: Իսկական միջազգայնականութիւնը ազգերից կառուցում է մի նոր համակարգ, ճիշտ այնպէս, ինչպէս որ աղիւսներից կառուցւում է շէնքը: Եւ քանի որ իսկական միջազգայնականութիւնը ոչ միայն չի ոչնչացնում ազգային ուրոյնութիւնը, այլ և հիմնւում է նրա վրայ, այդ նոր միջազգային համակարգը ստանում է նոր յատկութիւններ ու երանգաւորումներ: Ազգային ասպարէզում պահպանւում է նաեւ երկրորդ հանգամանքը, որի վրայ մի քիչ առաջ ես հրաւիրեցի ընթերցողի ուշադրութիւնը, այսինքն՝ բոլոր մասնաւորութիւնների անհրաժեշտութիւնը: Յիրաւի, միջազգային կառուցւածքի մէջ բոլոր ազգերը հաւասարաչափ անհրաժեշտ են, բոլորը կատարում են միա՛յն իրենց բնորոշ յատուկ պարտականութիւնները: Ի հարկէ, այս ազգային համագործակցութեան մէջ էլ կարող է առաջ գալ գլխաւորների և երկրորդականների հարցը: Եւ այստեղ էլ գլխաւոր նպատակից կախւած գլխաւորները և երկրորդականները կարող են տեղերը փոխել: Այն պահին, երբ մարդկութեան գլխաւոր խնդիրը տնտեսական զարգացումն է, գլխաւոր կարող են դիտւել աշխատասէր և ճարպիկ ազգերը: Եթէ պատկերացնենք, որ մեր մոլորակին պատերազմ են յայտարարել ուրիշ մոլորակներ, ապա այդ պահին երեւի գլխաւոր կը համարւեն ռազմատենչ ազգերը, իսկ կուշտ և խաղաղ ժամանակ պէտք է որ գլխաւոր համարւեն արւեստասէր ժողովուրդները: Գուցէ այդպիսի մի ժամանակաշրջանում **նեգր**երը Ամերիկայում դառնան ամենագլխաւոր ազգը:

Այսպիսով մենք բացայայտեցինք ազգայնականութեան և միջազգայնականութեան կապի մէջ երեք օրինաչափութիւն:

Առաջինը՝ միջազգային համակարգը, որպէս աւելի ընդհանուր, պարունակում է իր մէջ աւելին, քան ազգայինը:

Երկրորդը՝ միջազգային համակարգը կառուցւում է ազգերից, առանց խախտելու նրանց ինքնուրոյնութիւնը:

Երրորդը՝ միջազգային համակարգի արդիւնաւէտ գործունէութեան համար բոլոր ազգերը հաւասարաչափ անհրաժեշտ են:

Այս վերջին երկու օրինաչափութիւնները յաճախ խախտւում են և դրա պատճառով խախտւում է նաեւ առաջին օրինաչափութիւնը։

Երկրորդ օրինաչափութեան դէմ արշաւ յայտարարողներից ամենահզորը մարքսիստական գաղափարախօսութիւնն է։

Կոմունիստական գաղափարախօսութեան առաջին իսկ պաշտօնական փաստաթուղթը՝ «Կոմունիստական մանիֆեստը» աչքի էր ընկնում մի տարօրինակ գաղափարական նորամուծութեամբ։ «Մանիֆեստը» լրիւ հրաժարւել էր ներդաշնակութեան գաղափարից, փոխարինելով այն հակասութիւնների անհրաժեշտ պայքարով։ Եւ քանի որ, ներդաշնակութիւնը, որպէս **կատեգորիա**, վերացած էր մարքսիստների կողմից, հակասութիւնների պայքարի վերջը՝ խաղաղութիւնը, նրանք տեսնում էին հակասութիւն առաջացնող երկու կողմերի ոչնչացման մէջ։ Դասակարգային պայքարը,- յայտարարեցին մարքսիստները,- կ՚աւարտւի մի այնպիսի հասարակութեան ստեղծումով, որտեղ դասակարգերը լրիւ վերացած կը լինեն։ Շահագործւող ազգերը ազատագրական պայքարները, որոնք փաստօրէն ազգային հակասութիւնների պայքարներ են, կ՚աւարտուեն այդ նոյն հասարակարգի մէջ, որտեղ ազգերը վերացած կը լինեն։

Ընտանիքը դիտելով որպէս մասնաւոր սեփականութիւն կուտակող մի հասարակական բջիջ և նպատակ ունենալով վերացնել մասնաւոր սեփականութիւնը՝ մարքսիստները որոշեցին ուղղակի ոչնչացնել այդ հասարակական, դարաւոր պատմութիւն ունեցող բջիջը, և յայտարարեցին, որ ապագայ հասարակարգում ընտանիքը վերացած կը լինի վերջնականապէս։

Բայց քանի որ այդ յայտարարութիւնը ունէր բաւականին անբարոյական երանգաւորում, նրանք ընտանիք բառի առջեւ աւելացրին «**բուրժուական**» բառը և սկսեցին քարոզել «բուրժուական ընտանիքի» վերացումը։ Դրա փոխարէն մարքսիստները հռչակեցին **կոմունիստ**ական ընտանիքի գաղափարը, որտեղ բացակայում է մասնաւոր սեփականութիւնը և նոյնիսկ բացակայում են երեխաները, որոնք դաստիարակւում են պետական հաստատութիւններում։ Այդ տիպի ընտանիքները իբր թէ կառուցւում են միայն սիրոյ հիման վրայ։ Իմ կարծիքով, այդպիսի ընտանիքի էութիւնը շատ աւելի անբարոյական է, քանի որ ընտանիքի հասարակական նշանակութիւնը շատ աւելի մեծ է, քան մարդու սեռական պահանջները բաւարարելը։ Սակայն վերադառնանք **մարքսիստ**ների միջազգայնականութեանը։

Ազգերը բուրժուական դարաշրջանի անխուսափելի արտադրանք են,- յայտարարեցին մարքսիստները,- նրանք պէտք է վերանան ապագայում, իսկ նրանց ներդաշնակութիւնը պէտք է փոխարինի **պրոլետարական ինտերնացիոնալիզմ**ով։

«Մենք կողմնակից ենք,- ասում է Լենինը,- **այն պայքարին, որ ուղղված է բոլոր տեսակի ազգային ճնշումների դեմ, բայց մենք դեմ ենք բոլոր տեսակի ազգային զարգացումներին և ազգային մշակոյթին ընդհանրապես»**: Իր «Բանւորների այլասերումը նուրբ ազգայնականութեամբ» անունը կրող յօդւածում, Լենինը գրում է,- **«Գիտակից բանւորները գործադրում են մեծ ճիգեր, որպէսզի դիմադրեն բոլոր տեսակի ազգայնականութիւններին, թէ՛ կոպիտ սեւ հարիւրակային տեսակին և թէ՛ ազգերի հաւասարութիւն քարոզող նուրբ տեսակին, որը քայքայում է բանւորական կազմակերպութիւնները, բաժանելով նրանց ըստ ազգային պատկանելութեան»:**

Տարածելով ազգերի ոչնչացման գաղափարը, նրանց միաձուլումը մի ընդհանուր համաշխարհային ժողովրդի մէջ, փաստօրէն ոչնչացնում էին այն աղիւսները, որի միջոցով պէտք է կառուցէր այդ նոր, այսպէս կոչւած, միջազգային ժողովուրդը: Եւ թէպէտ անմտութիւն էր շէնքի կառոյցը առանց աղիւսների, շատերը չէին բողոքում, քանի որ դա գտնւում էր անտեսանելի ապագայում և, ամենակարեւորը՝ վերաբերում էր բոլորին հաւասարաչափ: Թւում էր, թէ ոչ ոք չի տուժելու, բոլորը հաւասարաչափ կորցնելու են իրենց ազգային ուրոյնութիւնը և բոլորը ձեռք են բերելու մի ընդհանուր համադրւած մշակոյթ:

Սակայն Խորհրդային Միութիւնը, առաջին **կոմունիզմ** կառուցող պետութիւնը, շատ շուտ հասկացաւ, որ առանց աղիւսների շէնք չի կառուցւի, և որոշեց ստեղծել այդ նոր կառուցւող շէնքի համար յատուկ տիպի աղիւսներ՝ ձեւով միջազգայնական, բովանդակութեամբ ռուսական:

Մարքսիստական կիսամիամիտ համամարդկային ազգաձուլումը փոխարինւեց վտանգաւոր և դաժան ռուսականացումով:

Շուտով թերթերը պարծանքով սկսեցին յայտարարել, որ այս կամ այն ազգի ներկայացուցիչները պահանջում են աւելացնել ռուսական դպրոցների քանակը ի հաշիւ ազգայինների, որ տասը միլիոն ոչ-ռուսներ յայտարարել են, թէ իրենց մայրենի լեզուն ռուսերէնն է, որ 12 միլիոն ոչ-ռուսներ արձանագրւել են որպէս ռուս, իսկ շատ ազգութիւններ վերացել են իսպառ:

Խորհրդային իշխանութիւնը պարծենում էր այդ արդիւնքներով, քանի որ այդ ռուսականացման արդիւնքները մատուցւում էին որպէս միջազգայնականութիւն:

Բայց որտե՞ղ էր մնացել միջազգայնականութիւնը: Ի՞նչով էին մասնակցում այդ միջազգային, այսինքն ռուսական մշակոյթին վերացած կամ վերացման ենթակայ ազգերը: Միթէ, օրինակ, օգտակար և արդար չէ՞ր լինի, որ ռուսները, փաթաթելով շատ ժողովուրդների վզին ռուսական այբուբենը, իրենք նոյնպէս օգտւէին ուրիշների բարիքներից: Օրինակ, ասենք, նրանք կարող էին հայերից վերցնել մի քանի տառեր իրենց տառապաշարը հարստացնելու համար: Դա

կ՚օգնէր նրանց՝ խուսափելու Հեգելը, Գեգել դարձնելուց, կամ Քրիստոսը Խրիստոս, որը ստիպած են հիմա անելու։

Բայց ո՛չ, այդ ճանապարհով չգնաց միջազգայնականութիւնը։ Վերանում են ազգեր իրենց Ք-ի և Թ-ի հետ միասին, իսկ ռուսերէնը՝ **«Մյազկիյ»** և **«տուեր-դի»** նշաններով, **բալալայկա**ներով ու **վորոնեժսկի չաստուշկա**ներով մնում է անսասան։ Այդ է արդիւնքը «միջազգայնականութեան», որը ընդհանուրը կառուցելիս ոչնչացնում է մասնաւորը, այսինքն այն աղբիւրները, որոնցից պէտք է կառուցէր։

Չի՛ կարելի **սիմֆոնիա** ստեղծելու համար ոչնչացնել երաժշտական գործիքների տարբերութիւնը, չի՛ կարելի ընտանիքի վէճերը վերացնելու համար ոչնչացնել ընտանիքի անդամներին։ Ոչ-պակաս վտանգաւոր հետեւանքներ է առաջացնում ընդհանուրի և մասնաւորի յարաբերակցութեան երկրորդ օրինաչափութեան խախտումը, որ ինչպէս ասացինք, կայանում է նրանում, որ ընդհանուրի մէջ բոլոր մասնաւորութիւնները հաւասարաչափ անհրաժեշտ են։ Այդ օրինաչափութեան խախտումը առաջացնում է **ռասիզմ**՝ ցեղապաշտութիւն։

Ցեղապաշտութիւնը, որպէս գաղափարախօսութիւն, հիմնւում է հետեւեալ թեզերի վրայ։ Առաջինը՝ մարդկութեան բազմազգային կառուցւածքը, ազգային բազմազանութիւնը բնական է և յաւերժ։

Երկրորդը՝ բոլոր ազգերին բնորոշ է այս կամ այն որակի մակարդակը, այսինքն կան որակեալ և անորակ ազգեր։

Երրորդը՝ այսպէս ասած որակեալ ազգերը, բնութեան կողմից շնորհւած, իրաւունք ունեն ճնշելու և նոյնիսկ ոչնչացնելու անորակ համարւող ազգութիւնները, ժողովուրդները, ցեղերը։

Առաջին թեզը՝ բացարձակ ճշմարտութիւն է և դժւար է նրա հետ չհամաձայնւել։ Առարկութիւն չի առաջացնում այն տարածւած արտայայտութիւնը, թէ՝ Աստուծոյ կողմից ստեղծւած ազգերի բազմազանութիւնը և տարբերութիւնները մենք չէ, որ պէտք է շտկենք։

Սակայն, արդէն երկրորդ թեզը իր մէջ պարունակում է բնական օրինաչափութիւնների լուրջ խախտումներ։ Յիրաւի, մի՞թէ տարբերութիւնը միշտ կապւած է լաւ և վատ հասկացողութիւնների հետ։ Մի՞թէ կարելի է ասել, օրինակ, որ աթոռը աւելի լաւն է, քան վառարանը։ Այդպիսի արտայայտութիւնը պարզապէս անմտութիւն է։ Սակայն այդ անմտութիւնը կարելի է իմաստաւորել, եթէ ասւի, որ աթոռը նստելու համար աւելի լաւ է քան վառարանը, իսկ կերակուր եփելու համար՝ վառարանը աւելի լաւ է, քան աթոռը։ Նոյնիսկ չի կարելի ասել, որ **աւտոմեքենան** աւելի լաւ է, քան ձին, քանի որ Հայաստանի լեռներում ձին անփոխարինելի է։ Եթէ վերցնենք աւելի բնական օրինակ՝ կեն-

դանիների ու յատկապէս շների ցեղերը, այստեղ նոյնպէս չի կարելի տալ որակաւորում, թէպէտ ընդունւած է այդ ասպարէզում խօսել ազնւական ցեղերի մասին։ Ոչ ոք սահմանապահների ծառայութեան համար, օրինակ, չի օգտագործում ազնւական **«տաքսա»** կամ **«բոլոնկա»** ցեղի շներին, իսկ մեր հովիւների այսպէս կոչւած գամփռներին, այդ «անազնւական» շներին չեն կարող փոխարինել նոյնիսկ անգլիական **դոգ**երը։ Այդպէս էլ, թէեւ համեմատութիւնը մի քիչ կոպիտ է, ազգերի տարբերութիւնը չի կարող հիմք ծառայել նրանց որակաւորելու համար, առանց նշելու նպատակային ելակէտը։ Բայց հէնց այդպէս վարւեցին ցեղապաշտ ֆաշիզմի գաղափարախօսները, յայտարարելով իրենց ազգը բացարձակ որակեալ, արիական ցեղը՝ ամենաբարձրագոյնը։

Երրորդ թեզը խախտում է գլխաւորի և անհրաժեշտի յարաբերակցութեան օրինաչափութիւնը։ Ես արդէն ասացի, որ տարբեր պայմաններում գլխաւոր կարող է դիտւել մէկ ազգ, բայց անհրաժեշտ՝ բոլորը։

Ֆաշիզմի գաղափարախօսները գտան, որ միայն գլխաւորն է անհրաժեշտ, իսկ մնացածը, վերացման ենթակայ աւելորդութիւններ են։

Թէ ինչպիսի հետեւանքների հասցրեց այդ տեսակէտը՝ յայտնի է պատմութեանը։ Միլիոնաւոր, այսպէս կոչւած, «ոչ-անհրաժեշտ» հրեաներ, լեհեր, ռուսներ և այլ ազգերի ներկայացուցիչներ սպանւեցին կամ այրւեցին վառարաններում։ Եւ այդ ամէնը կատարւեց այն պատճառով, որ արհամարհւում էր ազգային ներդաշնակութիւնը, ամէն մի ազգի կարեւորութիւնը այդ միջազգային ներդաշնակութեան մէջ։ Գլխաւորի և անհրաժեշտի յարաբերակցութիւնը ճիշտ այնպիսին է, ինչպէս որեւէ հիմնարկի աշխատակիցների յարաբերակցութիւնը։ Օրինակ, յայտնի է, որ թատրոնում գլխաւոր մասնագիտութիւնը դերակատարն է։ Բայց յայտնի է նաեւ, որ թատրոնում աշխատում են բանւորներ, դռնապաններ, տոմս վաճառողներ և այլն։ Թէ ինչ կը կատարւի, եթէ դերասանները, որպէս գլխաւոր մասնագէտներ, որոշեն արհամարհել միւս աշխատողներին, մենք տեսնում ենք Օ. Հենրիի յայտնի պատմւածքներից մէկում, որտեղ մէկ ելեկտրագործ իր անհրաժեշտութիւնը ապացուցելու համար, ներկայացման ժամանակ հանգցնում է թատրոնի բոլոր լոյսերը։ Իսկ եթէ վերցնենք գործարանը, բանւորները՝ որպէս մասնագիտութիւն՝ այնտեղ կը լինի գլխաւորը, սակայն դա երբեք չի տալիս բանւորներին իրաւունք արհամարհելու, օրինակ, հաշւապահութիւնը, կամ մատակարարման բաժինը։

Այսպիսով, ազգայնականութիւնը չի հակասում իսկական միջազգայնականութեանը։ Հակասութիւնները առաջանում են այնտեղ, որտեղ խախտւում են այդ երկու հասկացողութեան միջեւ գոյութիւն ունեցող բնական կապերը։ Թէ՛ ցեղապաշտութիւնը և թէ արհեստական ազգաձուլումը՝ ոչ մի կապ չունեն ազգայնականութեան և միջազգայնականութեան հետ։ Ազգայնականութիւնը

հերքելու բոլոր փորձերը՝ հիմնուելով ցեղապաշտութեան այլանդակութիւններ-ի վրայ, կամ հերքել միջազգայնականութիւնը՝ հիմնուելով ազգաձուլման տհաճ երեւոյթների վրայ, անհիմն են։

Ազգայնականութիւնը ազգերի ինքնապահպանման բնական ձգտումն է, ազգային քաղաքականութիւնը այդ ձգտումների իրագործումն է։ Բոլոր ազգային շարժումների հիմքում դրւած է նրանց բարոյական ցանկութիւնը՝ ունենալ ազատ, անկախ ազգային պետականութիւն։ Միջազգայնականութիւնը ազգերի համագործակցութեան բնական ձգտումն է։ Միջազգայնականութիւնը չի կարող հաշւի չառնել բոլոր ազգերի շահերը։ Ազգերի ներդաշնակութեան հարցում պէտք է տարբերել ազգերի հաւասարութիւնը և ազգերի ներկայացուցիչների, վերնախաւի հաւասարութիւնը։ Խորհրդային Միութեան բոլոր հանրապետութիւնների իշխանաւորները գտնւում են գրեթէ հաւասար պայմաններում։ Չի կարելի, օրինակ, ասել, որ ազգերի վարիչները որեւէ հարցում իրենց ճնշւած են զգում։ Սակայն այդպէս չէ ժողովուրդների վիճակը։ Նորվեկիացի յայտնի հասարակական գործիչ փրոֆեսոր Ռաֆտոն երկու ամիս Խորհրդային Միութիւնում մնալուց և յետ վերադառնալուց յետոյ, գրում էր. **«Խորհրդային Միութիւնը ես այցելել եմ շատ անգամ, բայց միշտ բերանս փակ եմ պահել, որովհետեւ եթէ խօսէի՝ ինձ կը մերժէին յաջորդ անգամ վիզա տալ։ Բայց հիմա, նրանից յետոյ, ինչ ես տեսայ և լսեցի, ուղղակի չեմ կարող լռել։ Ազգային փոքրամասնութիւնների վիճակը վերջին ժամանակներիս չափազանց վատացել է։ Մոսկւայի իշխանաւորները հետեւողականօրէն իրագործում են ազգային մշակոյթների վերջին մնացորդների ոչնչացման քաղաքականութիւնը. ճնշում են վրացիների, ուկրաինացիների, հայերի, գերմանացիների հասարակական ուրոյնութիւնը»**։

Այսպիսով, այդ ապազգային քաղաքականութիւնը վերաբերւում է ոչ թէ ազգերի ներկայացուցիչներին, այլ հէնց իրենց, ազգերին։ Այդպիսի քաղաքականութեան մէջ միջազգայնականութեան նշոյլ անգամ չկայ։ Սրանք են ազգայնականութեան և միջազգայնականութեան ընդհանուր օրինաչափութիւնները։

1973

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ

(ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԱՀԱՅԵԱՑՔ)

Է. Յովհաննիսեան

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնէ մեր աշխատակիցին՝ Էդ. Յովհաննիսեանի մէկ երկասիրութիւնը, «Ազգային քաղաքականութեան փիլիսոփայութիւնը» ընդհանուր խորագրով, ուր կ'աշխատի, Հ. Յ. Դաշնակցութեան ընկերվարական աշխարհահայեցողութեան իր ուրոյն մեկնաբանութեան զուգահեռ, բանաձեւել ու հիմնաւորել նաեւ իր սեփական ըմբռնումներն ու տեսական համակարգը, ընդհանրապէս ազգ երեւոյթի էութեան ու դերի մասին:

Նկատի ունենալով հարցին այժմէական բնոյթը, օգտակար նկատեցինք մեր ընթերցողներուն, յատկապէս մեր երիտասարդ մտաւորականութեան առանձին ուշադրութեան յանձնել Էդ. Յովհաննիսեանի շահեկան այս երկասիրութեան յատկանշական քանի մը հատուածները գտնէ, այն յոյսով, որ նիւթով հետաքրքիր մտաւորական ընկերներ ու բարեկամներ իրենց հերթին կ'անդրադառնան հարցին, առիթ տալով, թեր ու դէմ կարծիքներու արտայայտութեան ճամբով, աւելի հրապարակային քննութեան ու առաւել պարզաբանման:

Բնականաբար, ընթերցողներուն յանձնարարուող այս և հետագայ հատուածները կը ցոլացնեն միայն հեղինակին կարծիքներն ու տեսակէտները և իբրեւ այդպիսին միայն պէտք է քննութեան առնուին:

Ներկայ հատուածը երկասիրութեան նախաբանն է, ինչպէս ցոյց կու տայ արդէն իր «Երկու խօսք» խորագիրը:

ԽՄԲ.

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Մարդկային հասարակութիւնը միշտ բախտում է զանազան հասարակական խնդիրների հետ, որոնք յաճախ լարւածութիւն են առաջացնում ոչ միայն պետութիւնների ներսում, այլեւ միջպետական յարաբերութիւններում:

Լարւածութեան բազմաթիւ աղբիւրների մէջ ազգային հարցը գրաւում է ամենայն առաջնակարգ դիրքը: Ազգային խնդիրը մեր դարաշրջանի կարեւորագոյն խնդիրն է և ոչ մի քաղաքական ուղղութիւն չի կարող շրջանցել այդ խնդիրը: Լինի դա Խորհրդային Միութիւնը, Քանատան թէ Եթովպիան, միեւնոյն է, ազգային հարցը քաղաքական շարժումների հիմնական դրդապատճառն է:

Աշխարհում գոյութիւն ունեն 892 ազգութիւն, իսկ պետութիւնների թիւը վեց անգամ աւելի պակաս է: Ազգային խնդիրների լուծումը պահանջում է աշխարհահայեացքային մօտեցում: Ազգային քաղաքականութիւնը ունի իր փի-

լիսոփայութիւնը, առանց որի երբեմն դժւար է լինում պատասխանել, թէ ինչո՞ւ է այդքան կարեւոր ազգային հարցի լուծումը։

Վաղուց կարծւում էր, թէ փիլիսոփայութիւնը պէտք չէ առընչւի քաղաքականութեան հետ, թէ քաղաքականութիւնը և փիլիսոփայութիւնը ոչ մի ընդհանուր բան չունեն։ Փիլիսոփայութիւնը միայն դիտում է, իսկ քաղաքականութիւնը՝ վերափոխում։ Փիլիսոփայութիւնը զբաղւում է աշխարհակառոյցի ընդհանուր օրինաչափութիւնների որոնումներով. նա հիմնւած է ճշմարտութիւն գտնելու և իմաստութիւն սիրելու ձգտման վրայ, նա խարսխւում է կարծիքների բախման վրայ և պահանջում է փիլիսոփաներից ազնւութիւն։

Բոլորովին այլ է քաղաքականութիւնը, որը զբաղւած է զուտ մարդկային հարցերով։ Նրա բնագաւառը մարդկային հասարակարգն է, որը վարելու համար քաղաքականութիւնը օգտագործում է իշխանութիւնը, իրաւունքը, շահերը, բռնութիւնը և այլ զուտ մարդկային միջոցներ։

Այս երկու բնագաւառների, այսինքն փիլիսոփայութեան և քաղաքականութեան բաժանման օգտակարութիւնը ակնյայտ է։ Ճշմարտութեան որոնումը պէտք է ազատ լինի որեւէ գնայուն վարչակարգի ազդեցութիւնից։ Իսկ հասարակական կարգի հաստատումը անմիջականօրէն բխում է հասարակական պահանջներից, եթէ այն չի պարփակւում վերացական **սխեմա**ների (sche´ma) մէջ և չի փորձում այսօրւայ խնդիրների լուծումը դարձնել տիեզերական օրինաչափութիւն։ Երբ փիլիսոփայութիւնը ընկնում է քաղաքականութեան իշխանութեան տակ, ապա թուլանում է նրա ճանաչողութեան ուժը։

Երբ հռչակաւոր գաղափարապաշտ (ide´aliste) Պղատոնը նկարագրում է իր անթերի հասարակակարգը, որը ղեկավարւում է փիլիսոփաների կողմից, հազիւ թէ նա պատկերացնում էր մեր օրերին միս ու արիւն ստացած գաղափարախօսական բռնապետութիւնները։ Թւում է, թէ այս ամէնը ճիշտ է, թւում է, թէ քաղաքականութիւնը պէտք չէ խառնւի փիլիսոփայութեան գործերին և փիլիսոփայութիւնը պէտք չէ թելադրի իր կամքը քաղաքականութեանը։ Քաղաքականութիւնը նպատակին հասնելու արւեստ է և ի՛նչ նշանակութիւն ունի, թէ ի՛նչ է այդ նպատակը։

Բայց կեանքը շատ աւելի բարդ է և նա ցոյց է տալիս, որ անկարելի է քաղաքականութիւնը ամբողջովին անջատել փիլիսոփայութիւնից։ Այս անկարելիութեան վառ օրինակն է Ֆրանսիական Յեղափոխութիւնը, որը կատարւեց յանուն լուսաւորականների գաղափարների և այդ գաղափարների դրօշի տակ։ Այստեղ առաջին անգամ քաղաքականութիւնը դարձաւ համընդհանուր, թափանցելով կեանքի բոլոր ոլորտները, որովհետեւ այդ քաղաքականութիւնը ոգեշնչւած էր գաղափարախօսութեամբ։

Գաղափարախօսութեամբ է՛լ աւելի ոգեշնչած էր Ռուսաստանի Հոկտեմբերեան Յեղափոխութիւնը, որը արւում էր ոչ այնքան աշխարհը հասկանալու, որքան այն վերափոխելու համար: Այդպիսին էր նաեւ ֆաշիզմի քաղաքականութիւնը: Կամաց-կամաց պարզւեց, որ գաղափարախօսութիւնից զրկւած քաղաքականութիւնը վեր է ածւում անսկզբունք, ինքն իր մէջ արժեւորւած քաղաքականութեան:

Փիլիսոփայութեան թափանցումը քաղաքականութեան մէջ այսօր դարձել է մեր դարաշրջանի ամենայատկանշական գիծը: Եւ դա հասկանալի է, որովհետեւ եթէ քաղաքականութեան նպատակը աւելի արդար ու աւելի ազատ հասարակակարգի հաստատումն է, ապա նա չի կարող գործը գլուխ բերել առանց փիլիսոփայութեան ծառայութիւնների: Քաղաքականութեան մէջ ինքնըստինքեան չարիք չկայ: Մարդկութիւնը չի կարող ապրել առանց քաղաքականութեան:

Չարիքը անբարոյական քաղաքականութեան մէջ է, որը խարսխւում է հակամարդկային, հակաբնական և, ամենակարեւորը, կեղծ սկզբունքների վրայ: Քաղաքականութիւնը մարդկային մշակոյթի տարատեսակ պէտք է համարել, իսկ մշակոյթը, ինչպէս յայտնի է, հոգեկան ստեղծագործութիւն է: Ամէն մի հասարակակարգ անխզելի կապերով կապւած է հասարակակարգի հիմքում ընկած բարոյական և հոգեկան արժէքների հետ: Իսկ արժէքների էութիւնը ուսումնասիրւում է փիլիսոփայութեան կողմից:

Եթէ մենք արժեւորում ենք ազատութիւնը, ապա դա չի նշանակում, որ ազատութեան կողմնակիցները պէտք է փորձեն ազատւել գաղափարախօսութիւնից: Հասարակական բարոյականութիւնը պէտք է գաղափարաբանօրէն հիմնաւորւած լինի, եթէ չի ցանկանում օդից կախւած մնալ:

Բոլոր մարդիկ, այդ թւում նաեւ քաղաքականութեամբ զբաղւողները, պէտք է իմանան, թէ որտեղ են նրանց տարակարծութիւնները և որտեղ նրանք համերաշխ են: Բոլոր մարդիկ կողմնորոշւելու մի ինչ որ սկզբունքի կարիք ունեն: Ազգային քաղաքականութիւն վարողների համար այդ սկզբունքները միշտ էլ եղել են վիճելի և ոչ միշտ յստակ:

Եթէ այդ սկզբունքը եղել է զուտ կրօնական, որի վառ օրինակ կարելի է համարել հրեաների ազգային շարժումը՝ իրենց Աստծու կողմից ընտրեալ ազգ լինելու գաղափարի հետ, ապա վարւող ազգային քաղաքականութիւնը անխուսափելիօրէն բախւել է ընկերային պահանջների հետ: Օրինակ՝ Իսրայէլի պետական քաղաքականութիւնը, որի համաձայն արգելւած են խառն ամուսնութիւնները, անկասկած պէտք է առաջացնի և առաջացնում է ընդդիմադրութիւն այդ քաղաքականութեան դէմ:

Եթէ ազգային քաղաքականութեան համար իբրեւ սկզբունք ընտրւում է ընկերային արդարութիւնը, որի համաձայն ազգային արդարութիւնը մաս է կազմում ընդհանուր ընկերային արդարութեան, ապա այդ քաղաքական գործիչները ստիպւած են լինում որդեգրել այն աշխարհահայեացքը, որի վրայ խարսխւած է ընդհանուր արդարութեան գաղափարը, օրինակ՝ ընկերվարութիւնը: Այդ դէպքում մենք ստիպւած ենք ընդունելու զուտ նիւթապաշտական (mate´rialiste) գաղափարախօսութիւն և մեզանից աննկախ պնդել, թէ ազգերը նիւթական հողի վրայ ստեղծւած ժամանակաւոր միասնութիւններ են:

Եթէ քաղաքականութիւնը գնայ Հիտլերի ճանապարհով, որը ազգի ընտրեալ լինելը կապում էր ոչ թէ Աստծու, այլ մարդու կենսաբանական էութեան հետ, ապա ցեղապաշտութիւնը և այսպէս կոչւած ոչ-արժանի ազգերի ճնշումը և նոյնիսկ ոչնչացումը անխուսափելի կը դառնայ:

Աշխարհահայեացքի իմաստով այսօր աշխարհը բաժանւած է երկու խոշոր կողմերի՝ գաղափարապաշտների (ide´aliste) և նիւթապաշտների (mate´rialiste): Բոլոր միջանկեալ փիլիսոփայութիւնները կա՛մ մոռացութեան են մատնւած և կամ դիտաւորեալ ճնշւում են:

Մինչդեռ ընկերային կեանքի բարդութիւնը և բազմազանութիւնը պահանջում է, որ քաղաքականութեան մէջ, որպէս կողմնորոշման սկզբունք, ընդունւեն այն միջանկեալ փիլիսոփայութիւնները, որոնք պարունակում են իրենց մէջ և՛ նիւթապաշտութիւնը (mate´rialisme), և՛ գաղափարապաշտութիւնը (ide´alisme), և՛ կրօնական, և նոյնիսկ ցեղային սկզբունքները:

Դա չի նշանակում, սակայն, որ բոլոր այս սկզբունքները մտնելու են քաղաքականութեան մէջ ինքնուրոյն կարգով և ամէն մէկը նրանցից ունենալու է իր սեփական ոլորտը: Հակառակը, ոչ թէ սկզբունքների ինքնուրոյնութիւնը, այլ շաղկապւածութիւնը կարող է ճանաչւել որպէս միասնական սկզբունք:

Պէտք է ասել, որ հայ ազգային քաղաքականութիւն վարող Հ.Յ.Դաշնակցութեան համար, փիլիսոփայական աշխարհահայեացքը միշտ էլ կարեւոր խնդիրներից մէկն է եղել և պարունակել է իր մէջ թէ՛ նիւթապաշտական և թէ գաղափարապաշտական սկզբունքները: Ահա թէ ինչ էր գրում դոկտոր Ե. Ֆրանգեանը այն աշխատութեան մէջ, որը հեղինակը համարում էր «Հ.Յ.Դաշնակցութեան փիլիսոփայական աշխարհահայեացքի փորձ»:

«Մատերիալիզմը և իդէալիզմը չեն բաւարարում որոնող և քննադատող մտքին: Իդէալիզմի և մատերիալիզմի ամենագլխաւոր թերութիւնը կայանում է նրանում, որ փիլիսոփայական-իմացաբանական հարցերի քննութեանը և լուծմանը մօտենում են ոչ թէ իմացա-քննադատական, այլ աւանդամոլ և բնազանցական տեսակէտներով»: Յանգելով այս կարծիքին, Ֆրանգեանը ընտրում

է համադրական մօտեցումը, որում տեղ են գտնում ե՛ւ գաղափարապաշտութիւնը, ե՛ւ նիւթապաշտութիւնը։

Անշուշտ այս մօտեցումը, որը հեղինակը անուանում է համադրական **մոնիզմ (monisme)**, շատ աւելի ընդունելի է, քան գաղափարապաշտական կամ նիւթապաշտական մոնիզմները։ Սակայն, մեր կարծիքով, դոկտոր Ֆրանգեանի համադրական մօտեցումը տուրք է տալիս նիւթապաշտութեան, չնայած նրան, որ երկու կողմերը հաւասար գնահատելու նրա փորձերը անկեղծ են։ Զգտելով մոնիզմի, Ֆրանգեանը փաստօրէն ոչ թէ հաշտեցնում, այլ միաձուլում է նիւթապաշտութիւնը և գաղափարապաշտութիւնը. դրանով իսկ կամայ թէ ակամայ նիւթապաշտութիւնը ձեռք է բերում որոշ առաւելութիւններ։

Գաղափարապաշտութեան և նիւթապաշտութեան հաշտեցման փորձերը նոր չեն։ Հնարաւոր չափով այդ փորձերին մենք անդրադառնում ենք այս աշխատութեան մէջ։ Բայց, մեր կարծիքով, ազգային հողի վրայ այդ հաշտութեամբ ոչ-շատերն են զբաղւել։ Ուստի ե՛ւ մենք կատարում ենք այդ փորձը, քաջ գիտակցելով, որ մեր աշխատութիւնը կարող է լաւագոյն դէպքում հետագայ ուսումնասիրութիւնների համար կմախք ծառայել։

Մեր մօտեցումը համակարգային մօտեցում է։ Այս մօտեցման առանձնայատկութիւնը կայանում է նրանում, որ մենք սկզբունքօրէն սահմանափակւած ենք համարում մարդու ճանաչողութեան կարելիութիւնները, ուստի չենք փորձում պատասխան տալ բոլոր աշխարհակառուցային հարցերին։ Մենք գտնում ենք, որ դիտում ենք տիեզերքը մի փոքր պատուհանից և պատմում ենք այն, ինչը տեսնում ենք այդ պատուհանից, չաւելացնելով մեր տեսածին ոչ մի աւելորդ ենթադրութիւն։

Այդ պատուհանից նայել են բոլորը, բայց խոշոր փիլիսոփաները իրենց իրաւունք են տւել խօսել չտեսածի մասին, իրենց ենթադրութիւնների մասին։ Ոմանք յօրինել են նիւթապաշտական սկզբունք, ոմանք էլ գաղափարապաշտական։ Բայց բոլորն էլ յօրինել են այդ սկզբունքները և հէնց դրա համար էլ նրանց յօրինածը ոչ թէ գիտութիւն է եղել, այլ հաւատք։ Իսկ եթէ հաւատք է, ապա ինչո՞վ է նա տարբերւում կրօնից։

Մենք չփորձեցինք նոր յօրինում, այլ պատմել այն, ինչը տեսանք գիտելիքների պատուհանից, աւելի ճիշտ՝ ճեղքից։

Սովորաբար փիլիսոփայութեանը վերագրում են երեք հիմնական բաժին.

ա.- **օնտոլոգիա (ontologie)**՝ կեցաբանութիւն.

բ.- **գնէոսէոլոգիա (gnoseologie)**՝ իմացաբանութիւն և

գ.- **ակսիոլոգիա (axiologie)**՝ արժէքաբանութիւն։

Չշեղւեցինք այս դասակարգումից նաեւ մենք ու շարադրեցինք մեր նիւթը այս երեք գլուխների մէջ։

Այն, ինչը մենք առաջարկում ենք մեր ժողովրդի ուշադրութեանը, դժւար էր վերնագրել։ Եթէ վերնագիրը պէտք է արտայայտէր հեղինակի զգացմունքները, ապա այս աշխատութիւնը պէտք է կոչւէր «Իմ ազգային խիղճը»։ Որպէսզի վերնագիրը համապատասխանէր բովանդակութեանը, նա պէտք է կոչւէր «Ազգայնականութեան հիմնաւորման փորձ»։ Իսկ մեր կողմից ընտրւած վերնագիրը արտայայտում է այն, թէ ինչպէս կ’ուզէր տեսնել իր աշխատութիւնը հեղինակը։

Մեր կարծիքով՝ ազգային քաղաքականութեան փիլիսոփայութիւնը այսօր կա՛մ բացակայում է և կամ շաղկապւում է այլ հասարակական շարժումների հետ, կորցնելով սեփական դէմքը։ Այդ դէմքը կրկին քաղաքական բեմ բարձրացնելու նպատակով է, որ մենք նախաձեռնեցինք այս աշխատութիւնը։

1978

ԸՆՏԱՆԻՔ ԵՒ ԱԶԳ

Է. Յովհաննիսեան

Ինչպէս գրած էինք նախապէս, առանձին հատորով լոյս պիտի տեսնէ Է. Յովհաննիսեանի «Ազգային քաղաքականութեան փիլիսոփայութիւնը» խորագրով երկասիրութիւնը, որմէ հատուածներ պիտի հրատարակենք պարբերաբար։

Ստորեւ կու տանք «Կեցցաբանութիւն» գլուխին վերջին մասը, «Ընտանիք և Ազգ» պարագայական վերնագրով։

ԽՄԲ.

Դիտելով հասարակական կեցութիւնը որպէս ընդհանուր մի ամբողջութիւն, դժւար է լինում յստակօրէն որոշել այդ կեցութեան մէջ ընտանիքի և ազգի տեղը։ Ինքնուրո՞յն ամբողջութիւններ են սրանք, թէ՞ ոչ։ Կարծես թէ այս դժւարութիւնից խուսափելու համար, Լեւիցկին մի հիանալի միտք է արտայայտում, բայց, դժբախտաբար, չի զարգացնում այն։ Նա ասում է.

«Քանի դեռ ամէն մի մարդ ապրում է հասարակութեան մէջ և մշտապէս շփւում է ուրիշ անձերի, խմբերի և կազմակերպութիւնների հետ, ապա բնական գայթակղութիւն է ստեղծւում՝ հասարակական կեցութիւնը դարձնել ամենակուլ։ Բայց հասարակութեան հասկացութեան նման ծայրայեղ ծաւալումը կուրութեան նշան է, որը երբեք օգուտ չի բերի հասարակութեանը։ Եթէ մարդկային կեանքի ամէն մի երեւոյթ ունի իր հասարակական կողմը, ապա դա չի նշանակում, որ մարդկային կեանքը սպառւում է հասարակայնութեամբ»։

Մի քանի անգամ կարող ենք գիծ քաշել այս մտքի տակ։ Եթէ կէտերի գումարով չի բացատրւում գիծը և, եթէ, այնուամենայնիւ, կէտերից է բաղկացած սա, ապա դա չի նշանակում, որ գծով է սպառւում կէտը։ Գծով կարելի է բացատրել կէտը, բայց սպառել՝ ոչ, որովհետեւ մի ուրիշ տեղ այդ նոյն կէտը շրջանագծով է բացատրւում։

Բայց եթէ այդպէս է, ի՞նչպէս տարբերել հիմնական, բնական ամբողջութիւնները արւեստական մարդկային տրամաբանութեան կողմից ստեղծւած ամբողջութիւններից։ Չէ՞ որ ընդունելով օրգանական ամբողջականութիւնների աշխարհահայեացքը, մենք պէտք է կարողանանք նաեւ տարբերել այն ամբողջութիւնները, որոնց ստորադասական շղթայի վրայ խարսխւած է աշխարհակառոյցը։ Այս ուղղութեամբ **սոլիդարիստ**ները շատ քիչ բան արեցին սահ-

մանափակելով իրենց հինգ ամբողջութիւններով, որոնք փաստօրէն յանձնելուեցին տրամաբանութեան դատին։ Այսինքն ներըմբռնման միջոցով աշխարհ եկած այդ ամբողջութիւնները կրկին պառակտուեցին տրամաբանութեան կողմից և կրկին կորցրին իրենց ամբողջական ոգին։

Ի տարբերութիւն դրան, մեր համակարգային մօտեցումը ոչ մի տեղ չի փորձում ընդհատել աշխարհակառոյցի համակարգային շղթան։ Եթէ մենք սկզբում, որպէս օրինակ, նկարագրեցինք վառարանի ջերմաստիճանը կարգաւորելու համակարգը, ապա դա արեցինք միայն նպատակասլացութեան գաղափարը բացատրելու համար, այլ ոչ թէ ենթադրելով, թէ բնական համակարգերն էլ գործում են յետադարձ կապի սկզբունքով։

Բայց նպատակասլացութեան մեխանիզմը մեզ չի էլ հետաքրքրում, մենք ուզում ենք նրանից օգտուել միայն համակարգերի ստորադասական կարգը բացատրելու համար։ Ազատ և կաշկանդուած համակարգերի գոյութիւնն էլ պայմանական է, որովհետեւ միեւնոյն համակարգը աւելի բարձր կանգնած համակարգի նկատմամբ կաշկանդուած է, միեւնոյն ժամանակ նպատակային ասպարէզում կաշկանդելով աւելի ցածր կանգնած համակարգը։

Մեր աշխարհահայեացքի համաձայն, բնութեան էութիւնը կազմող համակարգերը, մտնելով աշխարհակառոյցի ստորադասական շղթայի մէջ, շուռ տուած բուրգի նման շերտ առ շերտ կազմում են տիեզերական ամբողջութիւնը։

Բայց մեզ համար անյայտ են թէ՛ բուրգի ծայրը և թէ բուրգի հիմքը. երկուսն էլ կորչում են վերին և ստորին անվերջութիւններում։

Կարելի է ենթադրել, որ բուրգի ծայրում, արարչագործութեան ժամանակներում, եղել է մէկ սկզբնական համակարգ։ Եթէ նոյնիսկ այդպէս է, ապա առաջինը՝ այդ սկզբնական համակարգը եղել է առաջնակարգ ոչ թէ ժամանակի, այլ բուրգի շերտերի իմաստով, և եղել է նոյնքան անսպառ, որքան որ անսպառ է բուրգի հակառակ, լայն կողմը։ Այսինքն՝ ոչ մի ժամանակ բուրգը չի եղել միայն ծայր, բուրգը միշտ էլ ամբողջութիւն է եղել։

Բայց ինչո՞ւ ենթադրութիւններ անել այն բաների մասին, որոնք չեն ընկնում ոչ մեր տրամաբանութեան և ոչ էլ մեր ներըմբռնման տեսադաշտի մէջ։ Բաւական է նշել, որ աշխարհակառոյցի համակարգային միասնութիւնը կառուցւում է մօտաւորապէս այնպէս, ինչպէս կառուցւում են բոլոր յայտնի ստորադասական շինութիւնները։

Համակարգերի մի որոշակի բազմութիւնից կազմւում է մէկ աւելի բարձր կանգնած համակարգ։ Կազմւում է ոչ որպէս գումար, այլ որպէս նոր գաղափարի իրականացում։ Այդ նոր համակարգից նոյն ձեւով կազմւում է աւելի բարձրը և այլն։ Այսպիսի կառոյցը քաջ ծանօթ է մեզ բոլոր բնագաւառներում։

Աղիւսներից պատ, պատերից՝ շէնք, շէնքերից՝ քաղաք, կէտերից՝ գիծ, գծերից՝ եռանկիւն, բջիջից՝ օրգաններ, օրգաններից՝ մարդ, մարդկանցից՝ ընտանիք, ընտանիքներից՝ ազգ, ազգերից՝ մարդկութիւն։

Այս ստորադասական շղթայի վերեւի և ներքեւի համակարգերը շաղկապւած են մէկը միւսին նպատակային կապերով։ Այսինքն՝ վերեւի համակարգը ձեւակերպում և ճշտդում է ներքեւի համակարգի նպատակը։ Այսինքն՝ ներքեւի համակարգը, ինքը յարմարւելով վերեւի համակարգին, ստիպում է՝ իրեն յարմարւել ներքեւի համակարգը։ Այսպիսով, միջանկեալ օղակների միջոցով, ամէն մի համակարգ յարմարւում է իրեն համար յաճախ բոլորովին անհասկանալի շատ բարձր կանգնած նպատակի, ճիշտ այնպէս, ինչպէս մեղուն չի հասկանում, թէ ինչպէս է ինքը մեղւաբուծական տնտեսութիւնների միջոցով ծառայում մարդկութեան։

Մեզ կ՚ասեն սակայն, որ, եթէ այդքան որոշակի են համակարգերի փոխադարձ կապակցութիւնները, էլ ինչո՞վ պէտք է զբաղւի փիլիսոփայութիւնը և արդեօք չի՞ նշանակում որ մեր կողմից կառուցւած շէնքը պարզապէս մի յստակ գործող մեքենայ է։ Այո, այս հարցը օրինական կը լինէր, եթէ կապակցութիւն և կապ բառի տակ մենք հասկանայինք **դետերմին**ացւած, այսինքն որոշւած պատճառային կապեր, իսկ համակարգերի տակ՝ մեզ յայտնի ամբողջութիւններ։ Բայց դա այդպէս չէ։

Այն կապերը և կապակցութիւնները, որոնցով ներքեւի և վերեւի համակարգերը մտնում են փոխադարձ յարաբերութիւնների մէջ, ոչ թէ պատճառային են, այլ **ստռխաստիկ**, այսինքն վիճակագրական, հաւանական։ Ոչ թէ Ա.ի ազդեցութեան տակ Բ.ն ենթարկւում է որոշակի փոփոխութեան, այլ հաւանական է, որ ենթարկւի փոփոխութեան, այն էլ ոչ թէ մի յստակ ուղղութեամբ և յստակ չափով, այլ հաւանական ուղղութեամբ և հաւանական չափով։

Այսպիսի հաւանական կապակցութիւնները ապահովում են համակարգերի որոշ ազատութիւնը։ Վերեւից եկող ազդանշանը գործում է ոչ որպէս պատճառային ազդեցութիւն։ Նա այս կամ այն հաւանականութեամբ նպատակային ասպարէզում առաջացնում է հետեւանք, բայց ոչ թէ պատճառային, այլ տեղեկատւական։ Այսինքն եկող ազդանշանը գործում է ոչ որպէս ուժ, այլ որպէս տեղեկութիւն։

Մենք, անշուշտ, չենք ուզում ասել, որ աշխարհակառոյցի համակարգերի ստորադասական փոխազդեցութիւնը ճիշտ այնպէս է, ինչպէս են ժամանակակից «պատահական աւտոմատների» մեխանիզմները։ Բայց չենք էլ ուզում ասել, որ սկզբունքը շատ հեռու է նրանցից։

Մենք, օրինակ, պատահական չենք համարում այն հանգամանքը, որ այսօրւայ «ռուլետ» կոչւող խաղի աւտոմատը, յայտնագործել է հռչակաւոր Պաս-

կալը, որի մասին մենք դեռ խօսելու ենք։ Հակառակ Սպինոզայի, որը գիտութեան մէջ ուզում էր տեսնել միայն յստակ պատճառային կապեր և դուրս էր նետում գիտութիւնից այն ամէնը, ինչը չէր ենթարկւում պատճառային կապերի, Պասկալը, որը երազում էր հրաժարւել տրամաբանութիւնից, ստեղծում է հաւանականութեան սարքը, որը տրամաբանութիւն չունի, որի ելքը ամբողջովին պատահական է և ոչ մի կերպ նախօրօք չի կարելի գուշակել։

Այստեղ գիտութիւնը, իր բոլոր կարողութիւններով հանդերձ, նահանջում է։ Ճիշտ է, հետագայում եղան բազմաթիւ փորձեր մաթեմատիկայացնելու հաւանական երեւոյթների ընթացքը, բայց մէկ բան մնաց յստակ՝ իսկական պատահական աւտոմատները անգուշակելի են։ Այստեղ մենք օգտագործում ենք «իսկական» բառը, չօգտագործելու համար «հաւանականութիւնների հաւասարաչափ բաշխում ունեցող երեւոյթներ» մաթեմատիկական տերմինը։

Մեր համակարգերի փոխազդեցութիւններին հաւանական կապերի բնոյթ վերագրելով, դրանով իսկ մենք լայնացնում ենք նաեւ «կաշկանդւած համակարգ» հասկացութիւնը, որովհետեւ հաւանական ընթացքները ունեն այն զարմանալի յատկութիւնը, որի վրայ է խարսխւում աշխարհի կայսրութիւնը։

Մեզ յայտնի է, օրինակ, որ ամէն մի ընտանիք-համակարգի համար տղայ թէ աղջիկ ծնւելը պատահականութիւն է, բայց այդ պատահականութիւններով օժտւած համակարգերից կազմւած ազգ-համակարգի համար սեռային վերարտադրութեան հարցում ոչ միայն պատահականութիւն չկայ, այլ յստակօրէն կարգաւորւում է արական և իգական սեռերի յարաբերակցութիւնը։

Այստեղ է ի յայտ գալիս այն մեծ իրողութիւնը, որ ամբողջութիւնը բաղկացուցիչ մասերի գումար չէ. ազգը՝ ընտանիքների և մարդկանց գումար չէ։ Մի խօսքով, եթէ խորհրդանշական (միայն խորհրդանշական) ձեւով աշխարհակառոյցը համեմատենք մեխանիկական համակարգի հետ, ապա նա կը նմանւի ոչ թէ պատճառային, այլ պատահական համակարգի, որի մէջ ընթացող երեւոյթները, տարբեր հաւանականութիւններ ունենալու շնորհիւ, ստեղծում են զանգւածային նպատակասլացութիւններ աշխարհակառոյցի տարբեր մակարդակների վրայ։

Անշուշտ համակարգերի տեղեկատւական փոխադարձ կապերը ստեղծում են համակարգերի վերափոխումների համար համապատասխան պայմաններ։ Եւ ամէն մի համակարգ, մշտապէս գտնւում է փոփոխութիւնների մէջ իր ներքին և արտաքին կապակցութիւնների իմաստով, բայց նրա կերպարը, ոգին, այսինքն նրա աշխարհակառուցային նշանակութիւնը փոփոխութիւնների չի ենթարկւում։

Այս հարցի մէջ չենք ուզում շատ խորանալ, որովհետեւ գտնում ենք, որ այս հարցով պէտք է զբաղւեն համապատասխան գիտութիւնները։ Դա նրանց

գործն է՝ բաժան-բաժան անել համակարգերը, մտնել նրանց մէջ և ուսումնասիրել համակարգերի ներքին և արտաքին կապերը։

Մեր կարծիքով, համակարգերի փոխազդեցութեան հարցում կայ շատ աւելի կարեւոր հարց։ Այդ հարցը համակարգ ընտրելու համակարգը ճանաչելու, համակարգը սահմանելու հարցն է։ Ո՞ր ամբողջութիւնը կարող է մեր իմաստով համակարգ համարուել։ Այսինքն ո՞ր ամբողջութիւնն է հանդիսանում՝ աշխարհակառոյցի բնական օղակ, իսկ ո՞րը՝ արհեստական միասնութիւն։ Այս հարցը չափազանց կարեւոր է, որովհետեւ եթէ փիլիսոփայութեան գործը աշխարհակառոյցն է, ապա նա առաջին հերթին պէտք է կարողանայ տարբերել բնական և արուեստական ամբողջութիւնները։

Մենք արդէն նշեցինք մի քանի յատկութիւններ, որոնցով օժտուած են բնական համակարգերը։ Ամբողջականութիւն, յիշողութիւն, նպատակասլացութիւն, ղեկավարելիութիւն, զանգուածային հոգեբանութիւն և այլն։ Սակայն, եթէ մենք փորձենք տրամաբանական չափանիշներով բնական համակարգ-ամբողջութիւնից անջատել յատկութիւնների մի բազմութիւն և այդ բազմութեան միջոցով սահմանել համակարգը, ապա մենք կը կատարենք այն նոյն սխալը, որը կատարում են բոլոր նրանք, ովքեր բաղկացուցիչ մասերի գումարով փորձում են բացատրել ամբողջութիւնը։

Հրաժարուելով այդ ճանապարհից, մենք ուզում ենք նաեւ ցոյց տալ, որ բնութեան մէջ կարող են լինել ոչ-բնական, արուեստական ամբողջութիւններ, որոնք ստեղծւում են մեր տրամաբանութեան և տկար զգացմունքների կողմից, այլ ոչ թէ ներըմբռնման ամբողջական ընկալումով։

Ենթադրենք, որ մի կոյր մարդ միայն շօշափելու միջոցով յայտնաբերում է տարածութեան մէջ տաքութիւն արձակող իրեր։ Ընդհանրացնելու համար հիմք դարձնելով տաքութիւն արձակելու յատկութիւնը, նա ամբողջութիւն է համարում տաքութիւն արձակող իրերի բազմութիւնը։ Բայց եթէ նա կոյր չլինէր, նա կը տեսնէր, որ մի իրը արեւից տաքացած մի երկաթի կտոր է, միւսը կերակուր եփելու համակարգ, երրորդը երկաթ ձուլելու հնոց-վառարան և այլն։ Այսինքն ամէն մէկը նրանցից առանձին համակարգ էր և նրանց միասնութիւնը երբեք նոր, աւելի բարձր համակարգ չի ստեղծում։

Նոյնը կարելի է նկատել հասարակական կեցութեան ասպարէզում։ Վերցնելով ամէն մի ընտանիքից մէկական երեխայ, երբեք չի կարելի ստեղծել «երեխաների» մի նոր համակարգ։ Կամ ընտանիք-համակարգի անդամներից կազմւած բանակ, դասակարգ, կուսակցութիւն համակարգերը երբեք չի կարելի բնական համարել։ Համակարգի բնական կամ անբնական լինելը կարող է որոշուել միայն ամբողջական ըմբռնումով, այսինքն նրա ամբողջական տիեզերական կապերով։

Բայց, ինչպէս մենք արդէն նշեցինք, ամբողջական կերպարը ըմբռնելու համար ոչ թէ տրամաբանութիւն է պէտք, այլ ներըմբռնում։ Բնական համակարգերի կերպարային ուսումնասիրութեամբ պէտք է զբաղւի ոչ թէ գիտութիւնը, այլ իմացաբանական մի առարկայ, որը կարելի էր կոչել, օրինակ, «ամբողջաբանութիւն»։ Եթէ այդպիսի մի ուղղութիւն զարգանար և իր սեփական միջոցները մշակէր, ապա արուեստագիտութեան կողքին մենք կունենայինք գեղեցկութիւն, մեխանիկայի կողքին՝ շարժում, կենսաբանութեան կողքին՝ կեանք, աստղագիտութեան կողքին՝ տիեզերք ամբողջութիւնների պատկերները։

Բայց քանի որ գոյութիւն չունի ամբողջաբանութիւն իմացութիւնը, բացի Բերգսոնի ընդհանուր յայտարարութիւններից, ամէն մարդ, իր հետաքրքրութիւնների և ներքին պահանջի համաձայն, պէտք է փորձի ուսումնասիրել այն համակարգը, որը իր ընկալման համաձայն թւում է բնական ամբողջութիւն։

Մեզ համար՝ ամենապարզ տեսանելի, ներքին ապրումների ամենահզօր աղբիւր, բնական համակարգ լինելու ամենաբացայայտ օրինակը՝ ազգ-համակարգն է, ուստի այդ համակարգի ամբողջական ընկալումով, այսինքն «ազգըմբռնումով» էլ մենք զբաղւելու ենք հետագայում։

1978

ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿՐՕՆԸ

Է. Յովհաննիսեան

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնէ Է. Յովհաննիսեանի «Ազգային քաղաքականութեան փիլիսոփայութիւնը» հատորը, որմէ երկու հատուածներ հրատարակեցինք նախապէս։

Ստորեւ կու տանք «Իմացաբանութիւն» գլուխին «Գիտութիւնը և կրօնը» բաժինը։

ԽՄԲ.

Սովորաբար, գիտութեան և կրօնի հաշտարարները, ապացուցելու համար, որ կրօնը յետամնացութեան չափանիշ չէ, դիմում են մի շարք մեծ գիտնականների հաւատացեալ լինելու փաստին։ Այդ օրինակները գրեթէ ոչինչ չապացուցելով, այնուամենայնիւ որոշ մտահոգութիւն են առաջացնում ծայրայեղ անաստուածեանների մօտ, ստիպելով նրանց մտածել գիտութեան և կրօնի հաշտութեան ուղղութեամբ։ Մենք էլ սկսենք այդ օրինակներից։

Հաւատացեալների թւին են պատկանում մտքի այնպիսի մեծութիւններ, ինչպիսիք էին Պղատոնը, Կեպլերը, Պաստէօրը, Պասկալը, Պլանկը, Նեւտոնը, Դարուինը, Պաւլովը, Պիրոգովը, Ցիալկովսկին և շատ ուրիշ մեծ գիտնականներ։

Աւելին, շատերը գտնում են, որ իսկական մեծ գիտնականները երբեք չեն կարող համոզուած անաստուածեաններ լինել։ Կոպերնիկոսը աստղագիտութիւնը նկատում էր աստուածաճանաչման ճանապարհ, իսկ Կեպլերը, ուսումնասիրելով երկինքը, բացագանչում էր. «Գոհունակ եմ քեզանից, Աստուած, որ ինձ շնորհեցիր մեծագոյն երջանկութիւն՝ ճանաչելու քո ստեղծագործութիւնը»։ Նեւտոնը իր աշխատութիւններից մէկում գրում էր. «Ամէն ինչ ենթարկուած է բարձրագոյն էակի ծրագրին։ Այդ էակը կառավարում է տիեզերքը, ոչ թէ ինչպէս աշխարհի ոգի, այլ ինչպէս տէրը և տիրականը ամէնի։ Այդ բարձրագոյն էակը յաւերժ է և գերկատարելագործւած»։

Այսպիսի օրինակները և արտայայտութիւնները կարելի է շարունակել, բայց, կրկնում ենք, սրանք ոչինչ չեն ապացուցում, ինչպէս ոչինչ չեն ապացուցում շատ մեծ գիտնականների ուռաները մարքսիզմի հասցէին։ Ուստի դիմենք աւելի համոզիչ ապացոյցների։

Գիտութեան և կրօնի անհամատեղութեան խնդիրը առաջանում է այն պատկերացումից, թէ երկուսն էլ ուսումնասիրում են աշխարհակառոյցի

միեւնոյն հարցերը, ընդորում գիտութիւնը ապացուցում է, այսինքն օգտւում է տրամաբանութիւնից, իսկ կրօնը պահանջում է կոյր հաւատք։ Այս պատկերացումին եթէ աւելացնենք իմացաբանական որեւէ մոնիզմ, ապա պարզ կը դառնայ գիտութեան և կրօնի միջեւ հաշտութիւն կնքելու անկարելիութիւնը։

Յիրաւի, եթէ ճիշտ է Պասկալի իմացաբանութիւնը, այսինքն այն, որ ճանաչողութեան միակ աղբիւրը հաւատքն է, ապա գիտութիւնը մարդկանց խաբող մի դաժան աւելորդաբանութիւն է։ Եթէ ճիշտ է Սպինոզան, այսինքն այն, որ ճանաչողութեան միակ սկզբունքը տրամաբանութիւնն է, ապա կրօնը մարդկանց թիւրիմացութեան մէջ գցող մի աւելորդաբանութիւն է։

Ինչպէ՞ս կարող են մոնիստական իմացաբանութեան մէջ հաշտւել այս երկու ուսմունքները։

Կրօնի և գիտութեան առաջին հաշտարարները հրաժարւեցին առաջին թեզից, այսինքն նրանից, որ գիտութիւնը և կրօնը ուսումնասիրում են աշխարհակառոյցի միեւնոյն խնդիրները։ Նրանք յայտարարեցին, որ գիտութիւնը և կրօնը խօսում են տարբեր բաների մասին, այդ իսկ պատճառով՝ նրանց միջեւ չի կարող առաջանալ ոչ մի հակասութիւն։ Այս տեսակէտի կողմնակիցներից վերջինը՝ ռուս փիլիսոփայ պրոֆեսոր Ֆրանկը համարում է, որ գիտութիւնը ուսումնասիրում է աշխարհը, իսկ կրօնը ճանաչում է Աստծուն։ Գիտութիւնը ուսումնասիրում է տեսանելի աշխարհը, իսկ կրօնը աշխարհի առընչութիւնը սկզբնապատճառի հետ։

Սակայն այս արտայայտութիւնները շատ ընդհանուր են։ Սկզբնական թեզը՝ գիտութեան և կրօնի տարբեր առարկաների մասին սրամիտ է և ընդունելի, սակայն մեր կարծիքով այդ տեսակէտի կողմնակիցները, յատկապէս Ֆրանկը չկարողացաւ յստակօրէն բաժանել գիտութեան և կրօնի կողմից ուսումնասիրւող հարցերը։

Չէ՞ որ կրօնական ուսմունքը փոփոխութեան է ենթարկում մարդկանց պատկերացումները կեանքի մասին և նոյնը անում է նաեւ գիտութիւնը։ Ի՞նչպէս կարող ենք պնդել, թէ գիտութիւնը և կրօնը ուսումնասիրում են տարբեր բաներ և ընդհանուր հարցեր չունեն։

Այս հարցումին պատասխանելիս, Ֆրանկը աւելի է մօտենում իրականութեան։ Նա ասում է, որ գիտութիւնը և կրօնը մասամբ ուսումնասիրում են նոյն բանը՝ աշխարհը և կեանքը, բայց ուսումնասիրում են այդ բանի տարբեր կողմերը, դրա համար էլ մենք իրաւունք ենք ստանում պնդելու, թէ գիտութիւնը և կրօնը ուսումնասիրում են տարբեր բաներ։

Այս միտքը հասկանալու համար, կարող ենք դիմել որոշ գիտութիւնների յարաբերակցութեան հարցին։ Կարելի՞ է, օրինակ, ասել որ երկրաչափութիւնը հակասում է բնագիտութեանը (ֆիզիկա, physique)։ Հարցումը շատ տարօրի-

նակ պէտք է թւայ և նրա պատասխանը պէտք է որ բացասական լինի: Բայց չէ՞ որ երկրաչափութիւնը ուսումնասիրում է կէտեր, գծեր և եռանկիւններ, որոնք գոյութիւն չունեն բնագէտի (ֆիզիկոսի) համար, քանի որ այդ կէտերն ու եռանկիւնները զուրկ են քաշից, ելեկտրական դիմադրութիւնից և այլ նիւթական յատկութիւններից:

Ի՞նչ կը պատահէր, եթէ բնագէտը (ֆիզիկոս) ոտքը գետնին դոփելով ասէր, թէ երկրաչափութիւնը ամբողջովին սուտ է, որովհետեւ նրա կողմից ուսումնասիրւող առարկաները վերացականութիւններ են: Ըստ երեւոյթին, բնագէտը (ֆիզիկոս) սխալ կը լինէր, որովհետեւ բոլոր ֆիզիկական մեծութիւնների մէջ ներկայ են վերացական ձեւերը և նրանց ուսումնասիրութիւնը անհրաժեշտ է:

Բայց կրօնի և գիտութեան ամէնէն ուժեղ բախումը տեղի է ունենում այսպէս կոչւած հրաշքների ասպարէզում, որտեղ գիտութիւնը չի ցանկանում ընդունել բնական օրինաչափութիւններից դուրս գտնւող որեւէ երեւոյթ: Անշուշտ, կրօնը կարող է գոյութիւն ունենալ նաեւ առանց հրաշքների և ժամանակակից մարդը որոնում է այնպիսի կրօն, որը մաքրւած լինի հրաշքներից: Բայց պէտք է խոստովանել, որ իսկական խոր հաւատքը, վերջին հաշւով, կապւած է հրաշքի գոյութեան հետ: Չէ՞ որ ամէն մի աղօթք հրաշք գործելու խնդրանք է, այսինքն խնդրանք, որ կեանքին միջամտեն մի ինչ որ արտասովոր ուժեր: Բայց մի՞թէ արտասովոր ուժերի գոյութիւնը հակասում է գիտութեանը:

Մենք, օրինակ, գիտենք, որ բոլոր քաշ ունեցող մարմինները ձգողական ուժի ազդեցութեան տակ ընկնում են գետին: Բայց մենք գիտենք, որ ահագին քաշ ունեցող օդանաւը վայր չի ընկնում: Հակասո՞ւմ է սա արդեօք ձգողական ուժի օրինաչափութեանը: Հրաշք չէ՞ սա արդեօք նրանց համար, ովքեր, բացի ձգողական ուժի օրէնքից, ուրիշ ոչ մի օրէնք չգիտեն:

Լուծումը շատ պարզ է, ուրիշ օրինաչափութիւնների եւ ուրիշ ուժերի շնորհիւ, մեզ յաջողւեց խախտել իրերի գետին ընկնելու սովորական ընթացքը: Բայց ո՞ւր է Աստւած, այս ամէնը գիտութիւն է: Եթէ որոշ երեւոյթներ մեզ համար հրաշք են թւում, ապա դա գալիս է մեր տգիտութիւնից, նրանից, որ մենք դեռ ոչինչ չգիտենք որոշ ուժերի եւ օրինաչափութիւնների մասին:

Հէնց այս «դեռ»ի մէջ է ամբողջ գաղտնիքը: Դե՞ռ, թէ՞ ընդմիշտ: Մի՞թէ բնութեան մէջ չկան այնպիսի ուժեր և օրինաչափութիւններ, որոնք մեզ համար սկզբունքով անճանաչելի են, այսինքն ոչ թէ «դեռ», այլ ընդմիշտ: Չհաւատալ դրան նշանակում է չափազանց անհամեստ լինել, որը անգիտութեան է մօտենում:

Անվերջ տիեզերքի բազմազանութիւնը տասնեակ հարիւրաւոր անգամ աւելին է, քան մարդու տրամաբանական և ներըմբռնողական կարողութիւննե-

րը: Բաւական է ասել, որ տիեզերքի ամէն մի աստղ մէկ մոլորակային համակարգութեան կենտրոն է, բաւական է յիշեցնել, որ կան աստղեր, որոնցից լոյսը մեզ է հասնում միլիոն տարիներից յետոյ, այսինքն շատ հաւանական է, որ արդէն մէկ միլիոն տարի առաջ այդ աստղը հանգչել է, իսկ մեր անկատար տեսողութիւնը շարունակում է ընկալել աստղը որպէս իրականութիւն:

Ի՞նչպէս կարող ենք մենք պնդել, որ վաղ թէ ուշ մենք ի սպառ ճանաչելու ենք տիեզերքը, այսինքն բացատրելու ենք բոլոր հրաշքները: Մի՞թէ հնարաւոր է, օրինակ, կենդանիներին այնպէս վարժեցնել, որ նրանք թւաբանական խնդիրներ լուծեն: Մի՞թէ կարելի է ենթադրել, որ մենք, խղճուկ էակներս, որ ի վիճակի չենք լուծելու մեր փոքրիկ երկրագնդի խնդիրները, տիեզերքի ամենագիտուն իշխաններն ենք:

Մի քիչ խորանալով այս հարցերի մէջ և մի քիչ օգտւելով ժամանակակից գիտութեան արդիւնքներից, կարելի է համոզւել, որ գիտութեան կողմից ուսումնասիրւող առարկայից դուրս, գոյութիւն ունի ուժերի մի ամբողջ բազմութիւն, որոնք ոչ մի կերպ չեն կարող ուսումնասիրւել գիտութեան կողմից: Այսինքն կան օրինաչափութիւններ, որոնց ուսումնասիրութիւնը գիտութեան կարողութիւններից դուրս է:

Եւ դրանում չի կարելի մեղադրել գիտութիւնը: Կարելի՞ է արդեօք մեղադրել ճարտարապետին նրանում, որ շէնք կառուցելիս նա հաշւի չի առել անակընկալ ռմբակոծումներից կամ անսպասելի երկրաշարժներից պաշտպանութիւններ: Այս ուժերի մասին նա պարզապէս ոչինչ չգիտէր և չէր էլ կարող իմանալ, քանի որ այդ ուժերը չէին մտնում ճարտարապետական գիտելիքների մէջ:

Հիւմը գտնում էր, որ եթէ արեգակը հազարամեակներ շարունակ առաւօտեան ծագում է, այդ չի նշանակում, որ նա կը ծագի վաղը: Եւ եթէ յանկարծ նա վաղը իսկապէս չծագի, արդեօք մենք իրաւունք չունե՞նք դա վերագրելու հրաշքի: Չէ՞ որ դա կատարւեց մեզ անյայտ ուժերի միջամտութեամբ: Այդ ուժերը ի յայտ կը գան միայն իրենց արդիւնքով, այլ ոչ թէ էութեամբ:

Մենք արդէն վաղուց սովորել ենք կենդանիների մօտ պայմանական **ռեֆլեկս**ներ առաջացնել՝ տարբեր գրգռիչների նկատմամբ, բայց երբեք չի յաջողւի **ռեֆլեկս**ներ առաջացնել, օրինակ, ռենտգենեան ճառագայթների նկատմամբ, որովհետեւ նրանք այդ ճառագայթները չեն զգում: Բայց այդ ճառագայթներից առաջացած արդիւնքը՝ քաղցկեղային հիւանդութիւնը կենդանին կը զգայ բաւականին սուր կերպով:

Մեզ համար էլ միշտ կը մնայ անճանաչելիութեան մի անվերջ ոլորտ: Ճանաչել այդ ոլորտի գոյութիւնը, այսինքն ճանաչել մեզանից հզօր մի ինչ որ օրի-

նաչափութեան կամ պատահականութեան գոյութիւն՝ դա արդէն իսկ կրօնական մտածելակերպի սկիզբն է:

Թէ՛ գիտութիւնը և թէ կրօնը ընդունում են, որ աշխարհը ունի յատուկ խորհրդաւորութիւն, որ նա անճանաչելի է սկզբունքօրէն: Միայն թէ կրօնի համար անհրաժեշտ է անմիջական կրօնական փորձ, աւելի «սուր» աչքեր, մարդկային կատարելագործւածութիւն: Այստեղ «մասնագէտ» դառնալը շատ աւելի դժւար է, դրա համար էլ մեծ կարեւորութիւն են ստանում ուրիշ «վկաները», այսինքն մարգարէների հեղինակութիւնը:

Գիտութիւնը նոյնպէս լի է սահմանափակումներով: Հետաքրքրական է Նեւտոնի արտայայտութիւնը իր մասին: «Չգիտեմ,- գրում է նա,- թէ ինչպիսի գնահատական կը տան ինձ գալիք սերունդները, բայց ինքս ինձ թւում եմ մի փոքրիկ երեխայ, որը անծայրածիր ովկիանոսի ափերին հաւաքում է ալիքների միջոցով դուրս նետւած խխունջներ, իսկ ովիանոսն ինքն իր խոր գաղտնիքներով մնում է ինձ համար առաջւայ նման անհասկանալի»:

Այսպիսով, գիտութեան և կրօնի նախաբերգսոնեան հաշտարարների ամբողջ ջանքերը ուղղւած էին այն թեզը ապացուցելու, թէ կրօնը և գիտութիւնը ուսումնասիրում են աշխարհակառոյցի տարբեր ոլորտները:

Բայց ի՞նչպէս են ուսումնասիրում, ի՞նչ միջոցներ են օգտագործում: Այս մասին մեր հաշտարարները խօսում են բաւականին աղօտ կերպով: Լաւագոյն դէպքում նրանք ասում են, որ գիտութիւնը տրամաբանութիւն է պահանջում, իսկ կրօնը՝ հաւատք: Անշուշտ կարելի էր զարգացնել այս միտքը և հաշտեցնել Պասկալին Սպինոզայի հետ, ստեղծելով երկարմատեան իմացաբանութիւն, այսինքն հռչակել, թէ ճշմարտութեան աղբիւրներն են թէ՛ տրամաբանութիւնը և թէ հաւատքը:

Ճիշտ է, այս երկարմատեան իմացաբանութիւնը կը ծնէր բազմաթիւ անպատասխան մնացող հարցեր հաւատքի սկզբունքների մասին, բայց կ'ազատէր մեզ աշխարհակառոյցը պառակտելու անհրաժեշտութիւնից: Այս դժւարութիւնից մեզ ազատեց Բերգսոնը: Նա չբաժանեց աշխարհը, նա բաժանեց ճանաչելու մեր միջոցները: Թէ՛ տրամաբանութիւնը և թէ ներըմբռնումը ուսումնասիրում են նոյն ամբողջութիւնները: Միայն թէ տրամաբանութիւնը դիտում է ամբողջութիւնը որպէս բաղկացուցիչ մասերի գումար, իսկ ներըմբռնումը ընկալում է ամբողջութեան ոգին: Ահա՛ ելքը:

Թէ՛ կրօնը և թէ գիտութիւնը ուսումնասիրում են աշխարհակառոյցը, բայց գիտութիւնը դիտում է աշխարհը որպէս բաղկացուցիչ մասերի գումար, իսկ կրօնը ընկալում է աշխարհի ոգին: Տրամաբանութիւնը և ներըմբռնումը կողքկողքի գործում են համակարգերի ստորադասական բոլոր աստիճանների

վրայ, իսկ կրօնը միայն վերջին աստիճանի վրայ, այսինքն այնտեղ, որտեղ տիեզերքը դիտւում է որպէս բարձրագոյն համակարգ։

Պատահական չէ, որ բառիս բուն իմաստով կրօնական փորձից զուրկ արուեստագէտները, ներըմբռնողական սուր «աչքեր» ունենալու շնորհիւ դիմում են կրօնական թեմաների։ Բերգսոնի երկարմատեան իմացաբանութիւնը լոյս է սփռում նաեւ այն զարմանալի հարցի վրայ, թէ ինչո՞ւ ոմանք ցուցաբերում են գիտնականի ընդունակութիւններ, իսկ ոմանք էլ արուեստագէտի կամ նոյնիսկ մարգարէի։

1978

ԱՆՁ – ԱԶԳ - ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆ

Է. Յովհաննիսեան

Է. Յովհաննիսեանի «Ազգային քաղաքականութեան փիլիսոփայութիւնը» աշխատասիրութիւնը մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնէ առանձին հատորով, ինչպէս գրած ենք նախապէս։

Ստորեւ կու տանք վերջին գլուխը՝ որ ունի «Անձ-ազգ-մարդկութիւն» խորագիրը։

ԽՄԲ.

Մեր համակարգային մօտեցման համաձայն, անձը իր ամբողջ կեանքում ձգտում է իրականացնել իր յիշողութիւնը և այդ իմաստով նրա վարքագիծը կրում է պարտադրական բնոյթ։ Բացի նրանից, որ մարդը ցանկանում է և կարող է անել, նա օժտուած է նաեւ խղճի ձայնով, որը պարտադրում է անել այս կամ այն բանը և այդ ձայնը մարդը ընդունում է որպէս աւելի բարձր համակարգից եկող ձայն։

Հէնց այս բնական կաշկանդուածութիւնն է, որ հիմք է ծառայում իրաւունքի և իշխանութեան համար։ Իրաւունքը միայն բարոյականութեան արտայայտութիւնն է։ Որքան աւելի շատ համապատասխանի իրաւունքը բարոյականութեանը կամ բնական պարտադրականութեանը, այնքան աւելի շատ հեղինակութիւն կը վայելի իրաւունքը։ Այս իմաստով բարոյականութիւնը, բնական կաշկանդուածութիւնը և վարքագծի սահմանափակուածութիւնը իրաւունքից առաջնակարգ են. իրաւունքը միայն բարոյականութեան արհեստական արտայայտութիւն է։

Դրա համար էլ բարոյականութեան էութեան վերլուծութիւնը իրաւունքից աւելի կարեւոր է, քանի որ վերջինս միայն բարոյականութեան կանոնաւորումն է և այդ կանոնների արձանագրութիւնը։ Բարոյականութեան հարցում ամենակարեւորը բարոյական գնահատականի հարցն է։

Բարոյական գնահատականի առարկան ոչ թէ վարմունքն է, ոչ թէ վարմունքից բխող հնարաւոր հետեւանքներն են, այլ նախ վարմունքի շարժառիթը։ Մենք բարի ենք համարում այն վարմունքը, որը կատարւում է բարի շարժառիթով։ Այստեղ մենք պատրաստ ենք ամբողջովին համաձայնել Կանտի հետ, որը ասում էր, որ աշխարհում ոչ մի բան, առանց վերապահութիւնների, չի կարող կոչւել բարի։ Եթէ մենք բարոյականութեան գնահատականը տանք ելնելով արդիւնքներից, ապա բարոյական գնահատականը անխուսափելիօ-

րէն կը վերածւի շահաւէտութեան գնահատականի։ Եթէ մենք ասում ենք, որ «չկայ չարիք առանց բարիքի»,ապա դա չի նշանակում, որ մենք արժէքաւորում ենք չարիքը այն բարիքի համար, որ նա իր մէջ պարունակում է։

Դանթէն ասում էր, թէ «բարի մտադրութիւններով է պատած դժոխք տանող ճանապարհը»։ Բայց մտադրութիւնը դեռ շարժառիթ չէ։ Մտադրութիւնը կարող է շարժառիթ դառնալ, բայց կարող է նաեւ այդպէս էլ մնալ որպէս չիրականացած բարի մտադրութիւն։ Մտադրութիւնը կարելի է արտայայտել «ես կը ցանկանայի» նշանաբանով, իսկ շարժառիթը արտայայտւում է «ես ցանկանում եմ» բառերով։

Բարոյական չի կարող համարւել այն վարքագիծը, որի շարժառիթն է ապագայ անձնական հաճոյքը, օգուտը, վնասից կամ պատժից խուսափելը, ինքնահաստատումը, գովեստների արժանանալը և այլն։

Բարոյական վարքագծի միակ շարժառիթը կարող է լինել միայն ուրիշներին բարօրութիւն տալու անկեղծ ձգտումը։ Այստեղ մենք չենք խօսում այն մասին, թէ ինչ ենք հասկանում «բարօրութիւն» և «ուրիշներ» բառերի տակ։ Այստեղ մենք խօսում ենք միայն անկեղծ ձգտումների մասին։ Այդ անկեղծ ձգտումները արտայայտւում են խղճի միջոցով։ Խղճի ձայնը մեր շարժառիթների միակ դատաւորն է։ Ճիշտ է, խիղճը, ինքնստինքեան, բարոյական վարքագիծ չի ստեղծում։ Նա միայն ձեւակերպում է և ուղղում մեր ուշադրութիւնը արժէքների ստորադասականութեան վրայ, բայց ոչ բոլորը և ոչ միշտ լսում են այդ ձայնը։

Խղճի հիմնական յատկանիշը՝ նրա անշահախնդրութիւնն է։ Խիղճը ոչ մի շահ չի հետապնդում, նա մեր վարմունքների լուռ դատաւորն է։ Այդ դատաւորից չի կարելի թագցնել ոչ մի գիտակցւած կամ անգիտակցական շարժառիթ։ Խիղճը տեսնում է աշխարհակառոյցի ամբողջ դաշտը և միջնորդի դեր է կատարում անձի ու բացարձակ արժէքների միջեւ։

Միշտ չէ, որ խօսում է խղճի ձայնը, բայց ինքը խիղճը անխնայօրէն արձանագրում է մեր բոլոր գործերը և նրանց շարժառիթները։ Դրա համար էլ մենք միշտ գիտենք մեր բարոյական անկատարութիւնը, չնայած նրան, որ միշտ թագցնում ենք ուրիշներից մեր այդ գիտելիքը։

Խիղճը ոչ թէ «ես»ի անունից է խօսում, այլ «ես»ին դիմելով։ Մեր «ես»ը ոչ թէ ստեղծում է խղճի ձայնը, այլ ընկալում է նրան։ Խիղճը ամբողջովին անկախ է մեր գիտակից կամքից, նա կարծես թէ պատկանում է աւելի բարձր կանգնած համակարգի։ Մենք կարող ենք խեղդել խղճի ձայնը, բայց փոխել նրան՝ երբեք։

Խիղճը դատապարտում է մեզ ոչ թէ մեր վարմունքների, ոչ թէ վարմունքից առաջացած արդիւնքների, այլ շարժառիթների համար։

Բարու և չարի մասին մեր խիղճը շատ աւելի բան գիտի, քան մեր գիտակցութիւնը: Բայց եթէ անձնական շահը, անձնական հաճոյքը, և յաջողութիւնը չեն կարող բարոյական համարուել, ապա ի՞նչ կարելի է ասել զանգւածային շահի մասին: Ի՞նչ է թելադրում մեզ մեր խիղճը այս ուղղութեամբ: Կարծես թէ խղճի ձայնը ասում է, որ եթէ վարմունքը կատարւում է ոչ թէ անձնական, այլ զանգւածի շահերից ելնելով, օրինակ՝ ազգի, ապա այդպիսի վարմունքը բարոյական է: Կասկածից վեր է, որ ընդհանուր բարօրութիւնը անձնական բարօրութիւնից աւելի բարձր է:

Հաւատարմութիւնը ընտանիքին, ազգին, դասակարգին, կուսակցութեանը, մարդկութեանը բոլոր ժամանակներում գնահատւել և գնահատւում է: Սակայն այստեղ կան որոշ չլուծւած հարցեր:

Նախ ընդհանուր զանգւածային բարօրութիւն հասկացութիւնը բաւական անորոշ է: Անորոշ է նաեւ զանգւածին նւիրւած լինելու աստիճանը: Եթէ նւիրւածութիւնը բացարձակ է, ապա այդպիսի նւիրւածութիւնը անխուսափելիօրէն առաջացնում է զանգւածային եսասիրութիւն, որից բխում է թշնամութիւն՝ ուրիշ ընտանիքի, ուրիշ ազգի, ուրիշ դասակարգի նկատմամբ: Այդ թշնամութիւնը հակասում է այն համակարգային ներդաշնակութեանը, որի մասին մենք խօսեցինք նախորդ բաժիններում:

Այս իմաստով անձի և ազգի յարաբերակցութեան մէջ չեն կարող լինել ծայրայեղութիւններ: Այն անձը, որը իր ամբողջ վարքագիծը կառուցում է սեփական հաճոյքի և ինքնապահպանութեան պահանջների վրայ, չի կարող համարւել աշխարհակառուցային կարգին համապատասխանող անձ, այսինքն իսկական իմաստով անձ, իր յիշողութեանը համապատասխանող, իր գոյութիւնը արդարացնող և իր դերը կատարող անձ:

Բայց այն անձը, որը ամբողջովին գտնւում է զանգւածի իշխանութեան և ազդեցութեան տակ, որը իր սեփական շահերը նոյնացնում է զանգւածի շահերի հետ, որը ապրում է միայն «մենք»ով և բոլորովին հրաժարւել է «ես»ից, նոյնպէս չի կարող իսկական անձ համարւել, որովհետեւ եթէ առաջին դէպքում նա ամբողջովին կաշկանդւած էր սեփական ենթագիտակցութեամբ, ապա երկրորդ դէպքում նրան ամբողջովին կաշկանդում է զանգւածը՝ ընտանիքը, ազգը, կուսակցութիւնը:

Իսկ անձի առանձնայատկութիւններից մէկն էլ նրա ազատութիւնն է, այն ազատութիւնը, որը մենք ապրում ենք մեր ինքնագիտակցութեան մէջ: Աւելին, արժէքների հետ կարող է յարաբերւել միայն ազատ ընտրութեամբ օժտւած էակը: Սիրել ճշմարտութիւնը՝ ճշմարտութեան համար, բարին՝ բարու համար կարող է միայն կաշկանդւածութիւնից զերծ մարդը:

Այստեղ կարծես թէ հակասութիւն է առաջանում պարտադիր վարքագծի և ազատութեան միջեւ: Բայց տարբերութիւնը կայ բացասական և դրական ազատութիւնների միջեւ:

Բացասական ազատութիւնը այն ազատութիւնն է, որի նշանաբանն է. «Ամէն ինչ կարելի է»: Այսպիսի ազատութիւնը զուրկ է բարոյականութիւնից, որովհետեւ արդարացնում է մարդու բոլոր վարքագծերը: Դրական ազատութիւնը՝ սահմանափակ ազատութիւնն է, նրա սահմանները որոշած են բնական պարտադրանքով և արժէքների դաշտով: Այսպիսի ազատութեան սահմանների մասին վիճել են միշտ և այդ վէճի գոյութիւնն իսկ առիթ է դարձել բարոյականութիւնը ոչ առարկայական համարելու համար:

Բարոյականութեան յարաբերական բնոյթ կրելու տարածուած կարծիքը հիմնւում է տարբեր ժողովուրդների բարոյական սահմանադրութիւնների տարբերութեան վրայ: Բայց մշակոյթների տարբերութիւնը խօսում է միայն մարդկանց և ազգերի հոգեբանական և նկարագրային տարբերութիւնների մասին: Այստեղ մենք պէտք է արձանագրենք մի փաստ, որը շատերին կարող է անընդունելի թւալ:

Ճանաչելով արժէքների առարկայականութիւնը, մենք ինքնաբերաբար ճանաչում ենք նաեւ բարոյական վարքագծի առարկայականութիւնը: Իսկ դա նշանակում է, որ գոյութիւն ունի բարոյականութեան այնպիսի մի ատեան, որի դիրքերից դատապարտելի են ոչ միայն առանձին անձեր և խմբեր, այլ նաեւ ամբողջ ազգեր, պետութիւններ և նոյնիսկ մարդկութիւնը:

Կան ազգային մեղքեր, որոնց համար պատասխանատու է ազգի ամէն մի անդամ և նրան չի փրկում սովորական դարձած արդարանալու ձեւը, թէ ես ինչ մեղք ունեմ, ես դեռ ծնւած էլ չէի մեղք գործելու ժամանակ, ես ոչինչ չգիտէի և այլն: Ազգային մեղքը բոլորինն է, ինչպէս բոլորինն են բոլոր մնացած ազգային ժառանգութիւնները: Եթէ ես ինձ իրաւունք եմ վերապահում պարծենալ իմ հռչակաւոր նախնիներով, ապա պէտք չէ զարմանամ, եթէ ստիպւած լինեմ պատասխանել նրանց մեղքերի համար:

Անշուշտ, ոչ բոլոր անձերը և ոչ բոլոր ազգերն են հասունացած բարոյական արժէքները գիտակցելու համար: Շատերը պարզապէս կոյր են լինում բարձրագոյն արժէքների նկատմամբ: Յայտնի է, օրինակ, որ մինչեւ այսօր գոյութիւն ունեն հնդկական ցեղեր, որտեղ բարձրագոյն փառքին արժանանում են նրանք, ովքեր շատ են հաւաքել իրենց ձեռքով սպանւածների գանկամաշկերը:

Այստեղ, անշուշտ, նկատի է առնւած խիզախութեան արժէքը և հազիւ թէ ռեւէ մէկը հերքի, որ խիզախութիւնը արժէք է, բայց այդ արժէքը նահանջում է աւելի բարձր արժէքների առջեւ, ինչպիսիք են, օրինակ, սէրը, գթասիրութիւնը,

արդարութիւնը և այլն: Եւ, ուրեմն, մենք կարող ենք ասել, որ հնդիկների այդ ցեղը (նրանցից շատ հեռու չեն գնացել թուրքերը) դեռ չի հասունացել բարձրագոյն արժէքներ հասկանալու համար:

Սակայն բարոյական կուրութեամբ կարելի է բացատրել միայն շատ կոպիտ անբարոյականութիւնները, այսինքն առարկայական բարոյականութիւնից շատ կոպիտ շեղումները: Աւելի նուրբ շեղումները առարկայական բարոյականութիւնից, որոնք իբր թէ ապացուցում են բարոյականութեան ենթակայականութիւնը, կապ ունեն տրամաբանութեան և կամքի միջեւ գոյութիւն ունեցող հակասութեան հետ: «Տեսնում եմ լաւը, բայց հետեւում եմ վատին»,- ասում էին հռոմէացիները: Գիտակցւած կամքի և անգիտակից ձգտումների միջեւ գոյութիւն ունեցող հակասութիւնը ամենեւին էլ չի հաստատում արժէքների ենթակայականութիւնը: Այդ հակասութիւնը ապացուցում է միայն, որ մարդը ընդունակ է յարաբերական արժէքները բարձրացնել բացարձակ արժէքների մակարդակի վրայ: Արժէքների ստորադասականութիւնը ձեւականօրէն կարող է խախտւել երկու ուղղութեամբ: Արժէքի մի մասը դիտւում է որպէս ամբողջական արժէք և ածանցեալ արժէքը դիտւում է որպէս հիմնական արժէք: Օրինակ, Ֆրոյդը սեռական ցանկութիւններով սպառնում էր սէր արժէքը, իսկ Շոպենհաւէրը խղճահարութեամբ սպառնում էր քրիստոնէական սէր արժէքը:

Երկրորդ շեղումը, այսինքն ածանցեալ և հիմնական արժէքները շփոթելը բնորոշ է հասարակական կեանքի համար: Օրինակ, տնտեսվարութեան ամբողջ իմաստը կայանում է մարդու տնտեսական պահանջների բաւարարման մէջ: Բայց մեր արդիւնաբերական դարաշրջանում արդիւնաբերութեան և տնտեսավարութեան պաշտամունքը փաստօրէն դարձել է ինքնանպատակ և այդ ինքնանպատակի զոհ է դառնում ինքը՝ մարդը:

Խնայողութիւնը՝ սեփական պահանջները ապագայում բաւարարելու միջոց է: Բայց երբ խնայողութիւնը դառնում է ինքնարժէք, ստեղծւում է այն անտանելի կծծի մարդու կերպարը, որը հիանալի նկարագրւած է գրեթէ բոլոր ժողովուրդների գրականութեան մէջ և որոնց, դժբախտաբար, մենք յաճախ հանդիպում ենք կեանքում: Այս նոյնը վերաբերում է բոլոր արհեստական ամբողջութիւններին: Կուսակցութիւնը, օրինակ, ստեղծւում է որոշ նպատակի համար, սակայն երբ նա դառնում է ինքնանպատակ, տեղի է ունենում արժէքների խախտում:

Բայց եթէ վերցնենք բնական ամբողջութիւնները, բնական համակարգերը՝ անձը, ընտանիքը, ազգը, մարդկութիւնը,- այս ամէնը ինքնարժէքներ են: Նոյնիսկ եսասիրութիւնը բնական է: Եւ եթէ մենք երբեմն դատապարտում ենք եսասիրութիւնը, ապա ոչ թէ նրա համար, որ մարդը եսասէր է, այլ նրա համար,

որ այդ եսը, կտրելով աւելի բարձր համակարգից, դարձել է ոչ-բնական, աշխարհից կտրուած «ես»: Այդպիսի եսը սիրոյ արժանի չէ, այդ եսը համակարգ չէ, այլ այն ձեռքն է, որը կտրուած մարմնից փաստօրէն դիակ է դարձել:

Բայց կայ առարկայական արժէքների կարգի խախտման նաեւ մէկ ուրիշ աղբիւր: Այդ աղբիւրը չարամտութիւնն է կամ չար կամքը: Չար կամքի փիլիսոփայութիւնը կապուած է հոգեբանական յատուկ ուսումնասիրութիւնների հետ և մեր աշխատութեան սահմաններից դուրս է: Մենք միայն ցանկանում ենք նշել, որ չար կամքի տէր մարդը կամ ազգը տեսնում է արժէքների ցանկը, բայց դիտաւորեալ ընտրում է չարը:

Այսպիսով մենք կանգնում ենք այն տեսակէտի վրայ, որ ոչ մարդու, ոչ ազգի և ոչ էլ մարդկութեան կամքը չի կարող ստեղծել կամ քայքայել արժէքները: Բայց միւս կողմից արժէքները ըստ ինքեան ընդունակ չեն ազդելու մարդու կամ հասարակութեան կամքի վրայ: Արժէքները պարտադրելու ուժ չունեն, նրանք միայն «կոչ» են անում: Փաստօրէն այդ «կոչերից» խղճի հսկողութեան տակ կազմւում է կամքը:

Բայց, վերջին հաշւով, ամէն մի անձի վարքագիծը կապուած է նրա արժէքների սեփական աղիւսակի հետ, որը այս կամ այն չափով շեղւում է արժէքների առարկայական աղիւսակից: Այս առարկայական աղիւսակում կարեւորագոյն տեղ է գրաւում զանգուածային բարոյականութիւնը: Մենք ասացինք, որ անհատական շահի, անհատական յաջողութեան բարոյականութիւնը վաղուց արդէն վարկաբեկուած է փիլիսոփայութեան մէջ: Բայց այստեղ պիտի ասենք, որ զանգուածային շահի բարոյականութիւնը մինչեւ այսօր մեծ հեղինակութիւն է վայելում փիլիսոփայութեան այսպէս կոչուած «զանգուածային եւդեմոնիզմ» (Eudemonisme) ուղղութեան մէջ:

Այս ուսմունքի համաձայն, վարմունքը բարոյական է համարւում միայն այն դէպքում, երբ նա կատարւում է ոչ թէ յանուն անձնական, այլ զանգուածային շահերի: Կասկածից վեր է, որ մեր բարոյագիտական ըմբռնման հիմնաքարերից մէկն էլ այն է, որ զանգուածի բարօրութիւնը աւելի բարձր արժէք է, քան անձնական բարօրութիւնը: Հաւատարմութիւնը ընտանիքի, ազգի, կուսակցութեանը, ինչպէս ասացինք, միշտ էլ գնահատւել է: Սակայն կարո՞ղ է արդեօք զանգուածային շահը կամ բարօրութիւնը համարւել բարոյականութեան սկզբունք:

Ընդհանուր բարօրութիւն հասկացութիւնը չափազանց առաձգական է: Եթէ զանգուածը, օրինակ, դասակարգ է և դասակարգային շահերը դառնում են վարքագծի միակ աղբիւրը, ապա թէ՛ բուրժուան, թէ՛ բանւոր դասակարգը և թէ գիւղացիութիւնը, իրենց դասակարգերը պաշտպանելու համար, ունեն հաւասար բարոյական իրաւունքներ: Բայց մենք գիտենք, որ կատարելով իրենց բա-

րոյական իրաւունքները, նրանք առաջացնում են քաղաքացիական պառակտում, քաղաքացիական պատերազմ, որը մեծագոյն անբարոյականութիւն պէտք է նկատուի ազգ զանգւածի նկատմամբ՝ հէնց նոյն զանգւածային բարոյականութեան դիրքերից:

Եթէ մենք բացարձակեցնենք մեր ընտանեկան, կուսակցական կամ ազգային հաւատարմութիւնը, ապա անխուսափելիօրէն մենք կը յանգենք զանգւածային եսասիրութեան, որը, իր հերթին, առաջացնում է երկու բարոյականութիւն. դրական՝ սեփական դասակարգի կամ ընտանիքի նկատմամբ և բացասական՝ ուրիշ զանգւածների հանդէպ: Այն, ինչը չի թոյլատրւում սեփական զանգւածի նկատմամբ, թոյլատրւում է ուրիշի նկատմամբ: Այս բարոյականութիւնը, վերջին հաշւով, արդարացնում է բռնութիւնը:

Հիտլերի և Ստալինի վարչակարգերը դրա վառ օրինակներն են: Կուսակցական, ազգային, ընտանեկան եսասիրութիւնը ոչնչով չի տարբերւում ու չի զիջում անձնական եսասիրութեանը և բարոյական իմաստով չունի ոչ մի առաւելութիւն:

Բայց ինչո՞ւ, այս դէպքում, բարոյականութեան փիլիսոփայութիւնը, այնուամենայնիւ, ամուր կառչած է զանգւածային շահերից: Պատասխանը կարող ենք գտնել մեր համակարգային աշխարհահայեացքի մէջ:

Նախ և առաջ նշենք, որ ոչ բոլոր զանգւածներն են, որոնց հանդէպ հաւատարմութիւնը կարող է բարոյական նկատւել: Չի կարելի, օրինակ, աւազակախումբ կազմել և հաւատարմութիւնը այդ խմբի հանդէպ բարոյական համարել: Եթէ գոյութիւն ունեն, այսպէս ասած, «բարոյական» կամ «անբարոյական» խմբեր, ապա մենք պէտք է կարողանանք պատասխանել այն հարցումին, թէ ի՞նչ չափանիշներով է ընտրւում բարոյական զանգւածը: Բայց այս հարցումին մենք արդէն պատասխանել ենք:

Մենք ասացինք, որ արժէքների ստորադասական կառուցւածքը համընկնում է աշխարհի համակարգային կառուցւածքի հետ: Իսկ դա նշանակում է, որ «բարոյական» են բոլոր բնական համակարգերը: Բնական ամբողջութիւններին հաւատարիմ լինելն է, որ հիմք է ծառայում բարոյական վարքագծի համար: Եւ հէնց նրա համար, որ բնական համակարգերը պարունակում են իրենց մէջ ուրիշ համակարգերի նպատակները, որպէս ընդհանուր նպատակի արտայայտութիւն, հէնց դրա համար հաւատարմութիւնը բնական համակարգի հանդէպ ինքնաբերաբար բացառում է զանգւածային բացարձակ եսասիրութիւնը կամ ատելութիւնը դէպի ուրիշ համակարգեր:

Իսկական ազգասիրութիւնը, մարդասիրութիւնը, ընտանեսիրութիւնը բացառում է ցեղասպանութիւնը, մարդատեացութիւնը և այլն: Մեր ազգ-սիրոյ մէջ արդէն իսկ ներկայ է ազգասիրութիւնը ընդհանրապէս, որովհետեւ ար-

ժէքների ցանկում յատուկ տեղ է գրաւում ազգային ներդաշնակութիւնը։ Այդ յատուկ գնահատականով էլ պայմանաւորւած է մեր ես-համակարգի հետ։

Այժմ տեսնենք, թէ ինչպիսի առանձնայատկութիւններ ունի ազգ-համակարգը։ Ազգ-համակարգը այնպիսի մի բարդ նիւթա-հոգեկան ամբողջութիւն է, որին անդրադառնալու համար, նախ պէտք է ասել, թէ ինչ չէ ազգը, այսինքն անջատել ազգ-համակարգը այն յատկութիւններից, որոնք արհեստականօրէն վերագրւել են նրան։

Այստեղ մենք նկատի ունենք զուտ մատերիալիստական մօտեցման կողմնակիցներին, որոնք, մեր կարծիքով, երբեք չհասկացան ազգային ամբողջութեան էութիւնը և ընդհանրապէս շատ քիչ բան արեցին ազգային խնդիրները լուծելու ուղղութեամբ։ Նրանք պատրաստ են օգտապաշտական նկատառումներով ճանաչել պետութիւնը, բայց նրանք անկարող գտնուեցին ազգային էութեան գաղտնիքների մէջ թափանցելու։

Մեր դարի սկզբին ընկերվարական շարժումների գաղափարախօսները ճանաչեցին շահագործւող ազգերի իրաւունքները և այդպիսի ազգերի նկատմամբ պատրաստ եղան ծայրայեղ ազգայնականներ դառնալու, առաջ քաշելով ազգերի ինքնորոշման իրաւունքը։ Բայց հէնց դա էլ ապացուցում է, որ մատերիալիստները կարողացան տեսնել ազգ-համակարգի միայն արտաքին շերտը, չկարողանալով թափանցել նրա էութեան մէջ։

Ռուսաստանում, օրինակ, յեղաշրջում կատարողները պատրաստ էին ճանաչել հայերի, լեհերի կամ վրացիների ազգային իրաւունքները, բայց ոչ մի ժամանակ նրանք չկարողացան հասկանալ և պաշտպանել ռուս ժողովրդի իրաւունքները։ Այսօր էլ մեզանից շատերը պատրաստ են ճանաչելու պաղեստինցիների, բասկերի, հայերի, իրլանդացիների, բայց ոչ հրեաների, սպանացիների, թուրքերի կամ անգլիացիների իրաւունքները։

Եւ սա տեղի է ունենում այն բանի համար, որ մեզ հետաքրքրում է հասարակական արդարութեան հարցը, շահագործելու ու շահագործւելու խնդիրը, բայց ոչ թէ ազգային կեցութեան խնդիրը, այսինքն ոչ թէ հասարակական, այլ կեցաբանական, աշխարհակառուցային արդարութիւնը։ Մենք յաճախ հռչակում ենք ազգային ինքնորոշման թեզը, բոլորովին ազգութիւններով չհետաքրքրւելով։

Աշխարհի քաղաքական գործիչները օգտագործում են ազգային ինքնորոշման հարցը որպէս իրենց քաղաքական նպատակներին հասնելու միջոց, այլ ոչ որպէս ազգային ներդաշնակութիւն ստեղծելու աղբիւր։ Եւ դէռ հարց է, թէ արդեօք ազգային ինքնորոշման իրաւունքի միջոցով հնարաւո՞ր է ստեղծել այնպիսի ազգային ներդաշնակութիւն, որը համապատասխաներ աշխարհակառոյցի պահանջներին, այսինքն արժէքների ստորադասականութեանը։

Ազգային ինքնորոշման իրաւունքը, որպէս վերացական գաղափար, հակապատմական մի գաղափար է: Ազգութիւնը չի կարող անջատուել պատմական միջավայրից, որովհետեւ ամէն մի ազգ- համակարգ համապատասխան տեղ է գրաւում պատմական ստորադասական կեցութեան մէջ: Ամէն մի ազգ իր գոյութեան տարբեր շրջաններում օժտուած է տարբեր իրաւունքներով: Եւ այդ իրաւունքները չեն կարող հաւասարեցուել:

Չի կարելի նոյն չափանիշներով մօտենալ հայի, ռուսի կամ աֆրիկեան սեւամորթի ինքնորոշման իրաւունքին, եթէ նրանք կանգնած են առարկայական ստորադասականութեան տարբեր աստիճանների վրայ: Ամէն մի ազգ իր կեանքի ընթացքում ունենում է ծաղկման և անկման շրջաններ, ուժերի գերլարուածութեան և թուլացման շրջաններ և տարբեր են նրա իրաւունքները այդ ժամանակաշրջաններում: ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱԻՈՒՆՔԻ ՀԱՐՑԸ ԻՐԱԻԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՑԱԿԱՆ ՀԱՐՑ ՉԷ, ԱՅԼ ԱՇԽԱՐՀԱԿԱՌՈՒՑԱՅԻՆ ՀԱՐՑ Է, ՀՈԳԵ-ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑ Է, ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑ Է:

Ազգութիւնների պատմական անհաւասարութիւնը բնական է և բնական է դրանից բխող ազգային ներդաշնակութեան ստորադասականութիւնը: Եթէ մենք հրաժարւենք գիտական մօտեցումից, որը պառակտում է ազգը հասարակագիտական տարրերի, և փորձենք ներըմբռնման միջոցով ընկալել ազգամբողջութիւնը, ապա կը տեսնենք, որ ազգի կեցութիւնը չի որոշւում և չի սպառւում ոչ ցեղով, ոչ լեզուով, ոչ կրօնով, ոչ տարածութեամբ և ոչ էլ պետական գերիշխանութեամբ, թէպէտ բոլոր այս ցուցանիշները կարեւոր են ազգային կեցութեան համար:

Մեր կարծիքով ճշմարտութեանը ամենամօտ են կանգնած նրանք, ովքեր ասում են, որ ազգը պատմական ճակատագրի միասնութիւն է: Չէ՞ որ մենք ճիշտ այդպէս սահմանեցինք համակարգը ընդհանրապէս: Պատմական ճակատագրի միասնութեան գիտակցութիւնը՝ ազգային գիտակցութիւնն է: Բայց հէնց այդ պատմական ճակատագրի միասնութիւնն էլ կազմում է կեցաբանութեան իռացիոնալ (irrationnel) գաղտնիքը:

Այս կէտում ազգային գիտակցութիւնը սուզւած է պատմական ճշմարտութեան և կեանքի խորքերը, որտեղից տրամաբանութիւնը դուրս է բերում միայն մակերեսային ճշմարտութիւններ: Հրեայ ժողովուրդը հազարամեակներ զգում էր իր ազգի ճակատագրական միասնութիւնը, չնայած նրան, որ կորցրել էր ազգային կեցութեան բոլոր յատկութիւնները՝ պետականութիւնը, տարածութիւնը, լեզուն, մշակոյթը և նոյնիսկ կրօնը:

Պատմական ճակատագրի միասնութեան գաղտնիքը կարող են գիտակցել նաեւ խառը ամուսնութիւններից սերւած անձերը: Ընդհանրապէս պատմական ազգերի կենսաբանական հիմքում բացակայում է զտարիւնութիւնը:

Պատմական ազգի ծնունդը արդէն իսկ ցեղերի բարդ խաչաձեւում է: Ցեղը համակարգային ստորադասականութեան մէջ գրաւում է այն աստիճանը, որը կենսաբանական է, բայց ոչ պատմական: Բայց ցեղի միջոցով ստեղծուած ազգամբողջութիւնը չի սպառում ցեղային էութեամբ:

Կասկածից վեր է, որ գերմանական, սեմական, արիական, դեղին կամ սեւամորթ ցեղերը իրենց առանձնայատկութիւններն են մտցնում ազգ-համակարգի մէջ, բայց այս վերջինը երբեք չի սպառում սեմական կամ արիական էութեամբ: Հրեայ կամ հայ պատմական ազգի ստեղծումը արդէն իսկ ցեղերի և արիունների խառնման արդիւնք է: Հրէական ազգի մէջ խառնուած են սեմական և ոչ-սեմական տարրեր, ինչպէս հայ ազգի մէջ կան հայասներ, արմէններ և այլ ուրարտական տարրեր: Եւ պարզ պէտք է լինի, որ հրեայ կամ հայ պատմական ազգերը կանգնած են աւելի բարձր ստորադասական աստիճանի վրայ, քան կանգնած էին սեմականները կամ արմէնները:

Բայց զարգացման ճանապարհի վրայ ազգ-համակարգը որպէս յիշողութիւն միշտ էլ եղել է զարգացման փարոսը ու նպատակը: Պատմական ազգի ծնունդը մի պայքար է, որը մղւում է սկզբնական քաոսի դէմ, այն մթութեան դէմ, որից ծնւում և անջատւում է կերպարը: Պատմական ազգերի ծնունդը անդէմ բնութեան կերպարանաւորումն է: Սա պատմական անհատականութիւնների ծնունդն է, այն անհատականութիւնների, որոնց շնորհիւ միապաղաղ բնութիւնից կեանք է ծնւում, ճիշտ այնպէս, ինչպէս միապաղաղ մարմարից արձան է կերտւում:

Կասկածից վեր է, որ մարդաբանական, ցեղապաշտային պատմութեան փիլիսոփայութիւնը (Գոբին, Չեմբերլեն և ուրիշներ) միակողմանի է և սխալ, բայց, այնուամենայնիւ, նա պարունակում է իր մէջ ճշմարտութեան մի ինչ որ մասնիկ, որը ամբողջովին բացակայում է վերացական հասարակագիտական պատմութեան փիլիսոփայութեան մէջ:

Հասարակագիտական փիլիսոփայութիւնը անտեսում է ցեղը, արիունը և ընդհանրապէս կենսաբանական էութիւնը, չնայած նրան, որ աշխարհի բոլոր հասարակագէտները փորձում են քայլել մատերիալիստական ճանապարհով: Այն անհատականութիւնները, որոնց շնորհիւ ստեղծւել և գրանցւել է պատմութիւնը, չեն կարող ոչնչանալ հասարակագիտական գործօնների ազդեցութեան տակ: Թէ՛ այսպէս կոչւած արեան ձայնը, թէ՛ ցեղային բնազդը երբեք չեն կորչում ազգերի պատմական ճակատագրից:

Այո, ազգերը պատմական ամբողջութիւններ են, բայց որպէս այդպիսին նրանք կային արդէն բնութեան մտաղրութիւնների մէջ:

Ազգը տիեզերական համակարգերից մէկն է և նրա ոչնչացումը մի քայլ յետ կը տաներ բնութիւնը դէպի նախնական քաոսը: Ազգը այս կամ այն պատմա-

կան դարաշրջանի երեւոյթ չէ, ազգը միստիկական անձնաւորութիւն է, պատմական noumene (իրն ինքնին), այլ ոչ թէ phenomene (երեւոյթ)։ Ազգը այսօր ապրող սերունդը չէ, բոլոր սերունդների գումարը չէ։ Ազգի մէջ բոլոր նախորդ սերունդները ապրում են ոչ-պակաս իրաւունքներով, քան ապրում է ներկայ սերունդը։ Ազգը ոչ մի բանի մաս չէ, ազգը ինքը իր մէջ արժէք ունեցող, ի սկզբանէ եկող համակարգ է։ Ազգը ունի կեցաբանական միջուկ և ազգային կեցութիւնը յաղթահարում է ժամանակը։ Ազգային ոգին դիմադրում է ներկայի և ապագայի այն ուժերին, որոնք խժռում են անցեալը։

Ազգը միշտ էլ ձգտում է անմահութեան, նա երբեք չի կարող համակերպւել անցեալի վրայ ապագայի բացարձակ յաղթանակի հետ։ Ահա թէ ինչու ազգային կեցութեան և ազգային գիտակցութեան մէջ նկատւում է պահպանողականութիւն և կրօնական խորութիւն։

Բոլոր փորձերը՝ կտրել ազգը պահպանողականութիւնից և կրօնական ըմբռնումներից՝ չափազանց վտանգաւոր են, որովհետեւ ուղղւած են Էութեան դէմ։ Իսկական ազգային գիտակցութիւնը այն խորասոյզ գիտակցութիւնն է, որը հաստատում է ոչ թէ ամէն ինչ ոչնչացնող պատմական ընթացքի ուժը, այլ ամէն մի կենդանութիւն պահպանող և վերածնող ուժը։ Ազգային գիտակցութիւնը պահպանողական է ոչ թէ նրա համար, որ ստեղծագործութեան թշնամի է, այլ նրա համար, որ պահպանում է իսկական կեանքը՝ ապագայի ոչնչացումից։ Այդ գիտակցութիւնը ճանաչում է մեր մայրերին ու պապերին, մեր նախնիներին, մեր թագաւորներին, մեր նահատակներին, գալիք սերունդներին, ճիշտ այնպէս կենդանի, ինչպէս կենդանի ենք այսօր մենք։

Ազգային կեանքը՝ անխզելի կապ է անցեալի հետ, նա պարունակում է իր մէջ անցեալի բոլոր աւանդոյթները։ Յեղափոխական միջազգայնականութիւնը ուղղւած է միայն ապագային և ոչ մի սահման չունի իր յաւակնութիւնների համար։ Նա ոչնչացնում է անցեալը և չի ճանաչում ոչ գերեզմանաքարերը, ոչ եկեղեցիները և ոչ էլ աւանդոյթները։ Միջազգայնականութիւնը սպառնում է բոլոր ժողովուրդներին և այդ սպառնալիքի դէմ միակ պայքարողը ազգային գիտակցութիւնն է, որը առողջ բնազդի ուժով ոչ միայն դիմադրում է մահ բերող միջազգայնականութեանը, այլեւ ձգտում է իր պատմական դերը կատարելուն։

Միջազգայնականութիւնը մարդկութեան ամբողջականութիւնը, մարդկութեան համակարգային կեցութիւնը փոխարինում է վերացական կեցութեամբ։ Այդ խաբուսիկ փոխարինումը տեղի ունեցաւ սոցիալիստական միջազգայնականութիւնից շատ աւելի առաջ։ Մասոնականութիւնը, ազատական «կոսմոպոլիտիզմը», մարդասիրական պացիֆիզմը,- սրանք բոլորը կոնկրետ մարդ-

կութեան կոնկրետ կեցութիւնը փոխարինեցին վերացական համամարդկութեամբ։

Բայց մեր ստորադասական համակարգային մօտեցման համաձայն, մարդկութեան ամբողջականութիւնը պարունակում է իր մէջ մարդկային կեցութեան բոլոր աստիճանները։ Այդ ամբողջութեան մէջ ոչինչ չի ոչնչանում, այլ հակառակ, զարգացման հետ միասին աւելի ու աւելի է արտայայտւում։ Աւելի ու աւելի վառ են դառնում համակարգային առանձնայատկութիւնները։

Եթէ որեւէ շարժում ոչնչացնում է համակարգերից որեւէ մէկը, ապա այդ շարժումը, գոնէ, առաջադիմութիւն և զարգացում կոչելու իրաւունք չունի։ Միջազգայնականութեան մէջ ազգը և մարդկութիւնը իրար բացառում են և ի վերջոյ չի մնում ոչ ազգը և ոչ էլ մարդկութիւնը, որովհետեւ չի մնում անհատականութիւնը։

Կոնկրետ մարդու փոխարէն բեմ է բարձրանում վերացական մարդը, կոնկրետ մարդկութեան փոխարէն՝ վերացական մարդկութիւնը։ Մարդը, մարդկութիւնը, ազգը և բոլոր տեսակի հասարակական համակարգերը մատերիալիստների համար տնտեսական կատեգորիաներ են։ Բայց հէնց նրանումն է մատերիալիստների սխալը, որ մարդկային յարաբերութիւնները, բացի տնտեսական յարաբերութիւններից, ունեն կապակցութիւններ, որոնք կրում են ոչ նիւթական և ոչ էլ տնտեսական բնոյթ։ Սէրը, եղբայրութիւնը, խղճմտանքը, զոհաբերութիւնները, փոխօգնութիւնը և շատ ուրիշ բաներ՝ նիւթական չեն։ Եւ բոլոր այսպիսի յարաբերութիւնները անկարելի են առանց համակարգային առանձնայատկութիւնների։

Մի խօսքով, միջազգայնականութիւնը իր բովանդակութեամբ քրիստոնէութեան ծաղրանկարն է։ Ազգ և ժողովուրդ համակարգերի տարբերութիւնը կրում է համակարգային բնոյթ։ Ժողովուրդը արհեստական ամբողջութիւն է։ Նրա հանդէպ կարելի է օգտագործել քանակական և դասակարգային չափանիշներ։ Ազգի վերաբերեալ այդ մօտեցումը սխալ է, որովհետեւ, բնական ամբողջութիւն լինելով հանդերձ, նրա անբաժանելի մասն են կազմում ե՛ւ բանւորը, ե՛ւ խելագարը։

Ազգային պատկանելութիւնը ժողովրդավարութեամբ չի որոշւում։ Մեր ազնըւական նախնիները շատ աւելի հայ էին, քան այսօրւայ ժողովրդի ներկայացուցիչները։ Ազնւական Տոլստոյը կամ Պուշկինը շատ աւելի ռուս էին, քան այսօրւայ ռուս գիւղացին։ Ազգի էութիւնը ամենավառ կերպով արտայայտում է հանճարը։ Հանճարը միշտ էլ ժողովրդական է։ Ազգային ոգին արտայայտւում է ընտրեալ աձնաւորութիւնների միջոցով։

Ոչ մի տեսակ իրապաշտ ժողովրդավարութիւն իր քանակական չափանիշներով ոչ մի ժամանակ չի կարող արտայայտել ազգային ոգին։ Եւ ազգային

կամքն էլ չի որոշւում մեծամասնութեամբ: ՆԱ ԲՈԼՈՐԻ ԿԱՄՔԻ ԳՈՒՄԱՐԸ ՉԷ:

Ազգի կամքի մէջ խօսում են ոչ միայն ապրողները, այլեւ մեռածները, խօսում է անցեալը և հանելուկային ապագան: Ազգի մաս են կազմում ոչ միայն մարդկային սերունդները, այլեւ խաչքարերը, եկեղեցիները, մանրանկարները, հին ձեռագրերը, գրքերը, երգերը և այլն: Եւ ազգային կամքը հասկանալու համար, պէտք է կարդալ այդ գրքերը, լսել այդ երգերը, տեսնել այդ նկարները, աղօթել այդ եկեղեցիներում: Եւ եթէ այդ ձայները լսում է մի խումբ միայն, մի կուսակցութիւն միայն, նոյնիսկ մի մարդ միայն, ապա հէնց նա է ազգի կամքը արտայայտողը, այլ ոչ թէ տեսողութիւնից ու լսողութիւնից զուրկ մեծամասնութիւնը:

Բոլոր տեսակի յեղափոխականները ձգտում են խլացնել անցեալից եկող ձայները և միայն ազգային յեղափոխականներն են վերականգնում անցեալը: Նրանք իրենց յեղափոխութիւնը կառուցում են այդ անցեալի վրայ: Ազգային սկզբունքը որակական, այլ ոչ թէ քանակական սկզբունք է: Պետութիւնը ազգային կեցութեան անհրաժեշտ պայմանը չէ: Սակայն ամէն ազգ ձգտում է ստեղծել և ամրապնդել իր ազգային պետականութիւնը: Սա ազգի առողջ բնազդն է: Ազգային պետականութեան կորուստը մեծ վնասներ է հասցնում ազգին: Բայց ազգայնականութիւնը պետականութեան ձգտում չէ:

Ազգայնականութիւնը ներքին համակարգային ամբողջութեան ըմբռնումն է, իսկ պետականութեան ձգտումը ամբողջութիւնը ամրապնդելու ներըմբռնումն է: Ուստի իսկական ազգայնականը երբեք հարց չի դնում, թէ որքանով է տւեալ պետականութիւնը կամ, աւելի ճիշտ, վարչակարգը հասարակական կեցութեան իմաստով՝ արդար: Ազգայնական մարդու առողջ բնազդը նախ և առաջ պետութիւն է պահանջում, որպէս ազգ ամբողջութեան գոյատեւման պայման:

Այստեղ, վարչակարգերի և պետութիւնների ոլորտում, մենք դուրս ենք գալիս ազգային համակարգերի սահմաններից և բախւում ենք մարդկութիւն-համակարգի հետ: Սակայն մարդկութիւն-համակարգի մասին մենք որոշ չափով արդէն խօսեցինք և չենք ուզում ասել աւելին, որովհետեւ ստիպւած կը լինէինք վերլուծութեան ենթարկել տարբեր «վարութիւն»ները, իսկ դա դուրս է մնում մեր համակարգային մօտեցման սահմաններից:

«Վարութիւն»ները վերաբերւում են համակարգերի արտաքին շերտերին, որոնց մասին մենք արդէն ասացինք, որ նրանք պէտք է կազմակերպւեն այնպէս, որ լաւագոյն ձեւով համապատասխանեն համակարգի ներքին միասնութեանը: Այդ կազմակերպւածութիւնը արտաքնապէս պէտք է միացնի այն, ինչը ներքնապէս արդէն միացած է:

Համայնավարութի՞ւնն է այդ «վարութիւն»ը թէ ընկերվարութիւնը, կրօնապետութի՞ւնը թէ ամբողջատիրութիւնը՝ նշանակութիւն չունի։ Նա արդար կը համարւի, եթէ համապատասխանի համակարգի ներքին էութեանը։

1978

ՄԻ ՔԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

(ՎԱՐԱՆԴ ՓԱՓԱԶԵԱՆԻ ՅՕԴՒԱԾԻ ԱՌԻԹՈՎ)

Է. Յովհաննիսեան

Ապրիլի 29ի «Դրօշակ»ում (Ժ. տարի, թիւ 14, էջ 211) հրատարակուած **«Է. Յովհաննիսեանի Ազգայնականութիւնը»** յօդուածին պատասխանում եմ ուշացումով, որովհետեւ մտածում էի, թէ գուցէ ուրիշ արտայայտուղներ էլ լինեն։ Կարծես թէ նոր արտայայտուղներ չկան, ուստի կը պատասխանեմ Փափազեանին։

Նախ և առաջ նշեմ, որ Փափազեանի յօդուածը ինձ մեծ ուրախութիւն պատճառեց։ Մէկ անգամ եւս համոզուեցի, որ կարդացող ունենք և որ գրել պէտք է։ Յօդուածի «ներկայացում» բաժնում յօդուածագիրը շատ ճիշտ ըմբռնել է այն, ինչ ես ուզել եմ ասել, և այն, ինչ ես ասել եմ իմ գրքում։

Այո, ես ցանկացել եմ արժէքաւորել ազգը և հիմնաւորել ազգայնականութիւնը։ Գրքի* «Կեցաբանութիւն», «Իմացաբանութիւն» և «Արժէքաբանութիւն» գլուխները ես փորձել եմ ծառայեցնել հէնց այդ նպատակին։ Ինչո՞ւ եմ ես այդ արել։ Արդեօք կա՞ր և կա՞յ դրա անհրաժեշտութիւնը։

Եթէ հարցին մօտենանք սկզբունքօրէն, ապա պիտի խոստովանենք, որ դրա անհրաժեշտութիւնը չկայ։ Մի՞թէ անհրաժեշտ է փիլիսոփայական աշխատութիւններ գրել այն մասին, թէ որքանով օգտակար են մարդու համար կերակուրը, ջուրը և օդը։ Մի՞թէ գիրք կարդալով է, որ մարդը պիտի հասկանայ շնչելու, ուտելու և խմելու անհրաժեշտութիւնը։ Կամ տգէտ ու փիլիսոփայութիւնից անտեղեակ մարդը մի՞թէ հրաժարւելու է շնչելուց և ուտելուց։ Էլ ինչո՞ւ ենթադրել, որ փիլիսոփայական դատողութիւնների միջոցով կարելի է ազգայնականութիւն առաջացնել։

Նման բան ես չեմ ենթադրել։ Ես գիտեմ, որ ազգայնականութիւնը ոչ մի կապ չունի տրամաբանութեան հետ, ինչպէս կապ չունի տրամաբանութեան հետ սէրը, գեղեցիկի զգացմունքը, խղճմտանքը, նախանձը և այլն։

Բայց ես գիտեմ նաեւ այն, որ խմելու, շնչելու և ուտելու անհրաժեշտութեան մասին գրքեր չգրելով հանդերձ, հատորներ են գրւում այն մասին, թէ ինչպէս շնչել, ինչ ուտել ու խմել՝ առողջութիւնը լաւ վիճակում պահելու համար։ Սա

*«Ազգային քաղաքականութեան փիլիսոփայութիւնը», Է. Յովհաննիսեան, «Ազդակ Շաբաթօրեակ-Դրօշակ»ի մատենաշար թիւ 8, 1979, Պէյրութ։

արդէն գիտութիւն է, որը գալիս է բնական անհրաժեշտութեանը աջակցութիւն ցուցաբերելու:

Հէնց այդ տեսանկիւնից էլ ես գտնում եմ, որ ազգայնականութեան հիմնադրումը անհրաժեշտ է, որովհետեւ նրանք, որ գալիս են հասարակութեանը խմել, ուտել ու շնչել սովորեցնելու, պիտի հաշւի առնեն ու պատրաստեն նաեւ ազգային սննդամթերքները, որովհետեւ նրանք եւս անհրաժեշտ են հասարակութեանը օդի, ջրի և կերակուրի նման:

Այսօր արդէն պարզ է, որ Ռուսաստանի սպիտակա**գուարդիա**կանների շարժումը չէր ուզում լսել ազգային փոքրամասնութիւնների ձայները: Իսկ Լենինը նստած ու կանգնած խօսում էր ազգային ինքնորոշման մասին:

Ես այս մասը կրկնում եմ, ոչ թէ նրա համար, որ ուզում եմ ասել, թէ այս մասում ինձ սխալ է հասկացել Վարանդ Փափազեանը, այլ նրա համար, որ հէնց ուզում եմ շեշտել, թէ որքան ճիշտ է հասկացել նա իմ գլխաւոր նպատակը: Այն մասին, թէ որքանով է ինձ յաջողուել հասնել իմ նպատակին, Փափազեանը խօսում է իր յօդւածի «Գնահատանք» մասում, որին անդրադառնալու համար է, որ գրում եմ իմ այս յօդւածը:

Բայց, նախքան իմ պատասխանին անցնելը, ուզում եմ Վարանդ Փափազեանին անել մի ընկերական դիտողութիւն: Ինձ թւում է, որ նրա որոշ եզրակացութիւնները, յատկապէս իմ կրօնական մտածելակերպի նկատմամբ, բխում են ոչ թէ վերլուծութեան ենթարկւող գրքից, այլ իմ նախորդ մի շարք յօդւածներից: Բայց հոգ չէ՝ այն յօդւածներն էլ ես եմ գրել: Փորձեմ պատասխանել Փափազեանի կողմից առաջ քաշւած հարցերին այն հերթականութեամբ, ինչպէս որ ինքն է շարադրել:

Համակա՞րգ է արդեօք մարդկութիւնը:

Համակարգ հասկացութիւնը ես օգտագործում եմ տիեզերակառոյցի աղիւսների իմաստով և այս իմաստով այդ աղիւսները չեն ծնւում ու քայքայւում պատմութեան ընթացքում, այլ յաւերժ են ու միայն որոշ ձեւափոխումներ են ապրում: Համակարգերը ոչ թէ պատմական, այլ նախասկզբնական **կատեգորիա**ներ են: Ուստի բացառւում է այն միտքը, թէ երբ ուրիշ մոլորակներից երկրագունդ գան այլ էակներ, ապա նրանցից եկող վտանգի տակ մարդկութիւնը համակարգ կը դառնայ: Նա երբեք չի կարող համակարգ դառնալ, եթէ այսօր համակարգ չէ:

Մարդկութիւնը համակարգ ճանաչելու համար, մենք պէտք է կարողանանք «տեսնել» մարդկանց ներքին կապակցութիւնները, մարդկանց ընդհանուր նպատակները և այլն: Այս բոլորը, անշուշտ, տեսնելը դժւար է, որովհետեւ իր ներքին ղեկավարելիութիւնը արտայայտելու առթիւ մարդկութիւնը դեռեւս չի ունեցել: Բայց մենք այդ ներքին միասնութեան կամ ամբողջականու-

թեան գոյութեան մասին կարող ենք ենթադրել թէկուզ այն փաստից, որ կենսաբանօրէն բոլոր մարդիկ համատեղելի են, այսինքն կարող են կենսունակ ժառանգութիւն տալ որեւէ զոյգի միջոցով: Արտաքին նմանութիւնը, կենցաղային և հոգեբանական նմանութիւնը, ձգտումները, նպատակների, եսերի նմանութիւնները գալիս են վկայելու, որ մարդկութիւնը ինչ որ ներքին կապերով միացած ամբողջութիւն է:

Ո՞ւմ նկատմամբ է նա ինքնահաստատւում, ո՞ւմ հանդէպ է նա արտայայտում իր ուրոյնութիւնը: Շրջապատող բնութե՞ան, շների՞, ծառերի՞, ձկների՞, թռչունների՞: Ինչո՞ւմն է կայանում նրա նպատակասլացութիւնը:

Բացի ինքնապահպանումից ու ինքնահաստատումից, առայժմ ոչինչ չենք կարող ասել, որովհետեւ որպէս համակարգ, նրա նպատակը ձեւակերպւում է իրենից բարձր կանգնած համակարգի կողմից: Ո՞րն է այդ աւելի բարձր կանգնած համակարգը:

Մի վախեցէք, չեմ օգտագործի շատերի համար այդքան անտանելի ու անընդունելի «Աստուած» բառը:

Հետեւելով Սպինոզային, կ'օգտագործեմ «բնութիւն» կամ «բնական ամբողջութիւն» բառը: Իսկապէս բացակայում է մարդկութիւն ամբողջութիւնը ՄԵՐ յիշողութեան մէջ, բայց նա չէր էլ կարող այնտեղ լինել, քանզի դրա համար տկար է ՄԵՐ յիշողութիւնը: Բայց երբ ես խօսում եմ յիշողութեան մասին, ես ի նկատի ունեմ բնութեան հաւաքական յիշողութիւնը, որի շնորհիւ բոյսի սերմից բոյս է ծնւում, կենդանուց՝ կենդանի և մարդուց՝ մարդ: Եւ այդ յիշողութիւնը այնքան յստակ է, որ հազարամեակների ընթացքում բնութիւնը երբեք չի կորցրել իր այդ յիշողութիւնը և երբեք սխալմամբ բոյսից մարդ չի ծնել: Իսկ եթէ երբեմն էլ սխալւել է ձիուց ու էշից ջորի ծնելով, ապա զրկել է ջորուն ժառանգութիւն տալուց, որպէսզի իր այդ սխալը չշարունակւի:

«Այստեղ Յովհաննիսեան-արւեստագէտն է խօսում»,- կ'ասի Փափազեանը, բայց, ի՛նչ արած, այն, ինչի մասին մենք խօսում ենք, ուրիշ լեզու չունի: Կարելի է փորձել մարդկութեան համակարգ լինելը ապացուցանել նաեւ ընկերվարական տրամաբանութիւնից, օրինակ, այսպէս.

Ի՞նչ իրաւունքով ենք մենք դասակարգային հակասութիւնների թեզը տարածում ամբողջ մարդկութեան վրայ: Մենք տեսնում ենք միայն մեզ շրջապատող դրամատիրական հասարակարգերի շահագործողներին ու շահագործւողներին, բայց դասակարգային պայքարի ենք կանչում բոլորին: Ի՞նչ տրամաբանութեամբ: Թերեւս ճապոն դրամատէրները չեն շահագործում իրենց բանւորներին: Ոչ,- ասում ենք մենք,- այնտեղ, որտեղ կայ մասնաւոր սեփականութիւն, որտեղ կայ արտադրութիւն, բանւոր ու գործատէր, այնտեղ կայ շահագործում ու յաւելեալ արժէքների իւրացում:

Այսպիսով մենք լռելեայն ընդունում ենք, որ մարդկութիւնը իր ներքին օրինաչափութիւններով միասնական ու ամբողջական է: Հակառակ դէպքում, մենք չէինք կարող համամարդկային համարել ընկերվարական սկզբունքները: Եթէ մենք ընկերվարութիւնը ընտրում ենք որպէս որեւէ համակարգի արտաքին վարման ձեւ, ապա մենք պէտք է ընդունենք, որ այդ համակարգը համակարգ է, այսինքն ունի նաեւ ներքին վարում, որի մասին ես խօսելու եմ մի քիչ աւելի ուշ: Իսկ եթէ մենք ճանաչենք ներքին վարման գոյութիւնը, դրանով իսկ մենք կը ճանաչենք մարդկութեան համակարգ լինելը:

Բայց տեսնենք, թէ ինչո՞ւ է Փափազեանը կարծում, որ ուրիշ մոլորակներից եկած այլ «մարդկութիւնները» կարող են երկրագնդի մարդկութիւնը համակարգ դարձնել:

Որովհետեւ, ինչպէս բոլոր գիտականօրէն մտածող մարդիկ, նա էլ համակարգ է համարում միայն այն հաւաքականութիւնը, որը ղեկավարւում է արտաքնապէս: Իսկապէս, եթէ ուրիշ մոլորակներից մեզ սպառնալիք գայ, ապա մենք՝ երկրագնդի վրայ ապրողներս կը միանանք և կը ստեղծենք մի ընդհանուր պետութիւն: Մի խօսքով՝ մենք կը ստեղծենք մեզ ղեկավարող մարմին, որը անշուշտ կը լինի արտաքին ղեկավարութիւն:

Արտաքին ղեկավարութեամբ օժտւած են բոլոր արհեստական համակարգերը: Իսկ մենք խօսում ենք բնական համակարգերի մասին, որոնք ունեն ներքին ղեկավարութիւն: Այդ ղեկավարութեան հեղինակը բնութիւնն է, դրա համար էլ նման համակարգերը բնական են կոչւում: Ճիշտն ասած ինձ համար դեռեւս պարզ չէ, կարո՞ղ է արդեօք երկարատեւ արտաքին ղեկավարութիւնը առաջացնել ներքին ղեկավարութիւն: Այսինքն կարո՞ղ է որոշ պայմաններում արհեստական համակարգը բնական դառնալ:

Ես անձամբ կարծում եմ, որ ոչ, բայց թէ ինչու եմ այդպէս կածում, բացատրել չեմ կարող: Բայց որովհետեւ այդպէս եմ կարծում, գտնում եմ, որ բաւականին լաւ արտաքին ղեկավարութիւն ունեցող ամերիկացիները երբեք ձեռք չեն բերի ներքին ղեկավարութիւն, այսինքն համակարգային իմաստով երբեք ազգ չեն դառնայ:

Այժմ անցնեմ ազգի ներքին ձայնին կամ նրա ներքին ղեկավարելիութեանը:

Պատկերացնենք, որ մի անձնաւորութիւն իր կամքը փորձելու կամ ուրիշներին ցոյց տալու համար հացադուլ է յայտարարել կամ ձեռքը կրակի մէջ է դրել: Նրա ներքին ղեկավարութիւնը կամ կենսաբանական էութիւնը ձգտում է հանել ձեռքը կրակից կամ սնունդ հասցնել ստամոքսին, բայց արտաքին ղեկավարութիւնը՝ կա՛մքը անում է ճիշտ հակառակը: Այս պայմաններում, երբ ներքին և արտաքին ղեկավարութիւնները գտնւում են ծայրայեղ հակասութիւնների մէջ, համակարգը երկար չի դիմանայ: Կա՛մ մարդը կը կործանւի և

կամ էլ կը կոտրւի կամքը, այսինքն կը քայքայւի ներքին ղեկավարութեանը հակասող արտաքին ղեկավարութիւնը։

Դրա համար անհրաժեշտ է արտաքին և ներքին ղեկավարութիւնների ներդաշնակութիւնը։ Տւեալ դէպքում արտաքին ղեկավարութիւնն էլ պիտի օգնի ներքին ջանքերին՝ ձեռքը կրակից դուրս բերելու կամ ստամոքսին սնունդ հասցնելու ուղղութեամբ։ Իսկ դրա համար արտաքին ղեկավարութեան ճարտարապետները պէտք է լսեն ներքին ղեկավարութեան ձայնը, ինչպէս բժիշկը լսում է մարդու սրտի կամ թոքերի ձայնը։ Եւ ինչպէս որ լաւ բժիշկի կարծիքը ունի աւելի մեծ կշիռ, քան բժշկական կրթութիւնից զուրկ մեծամասնութեան կարծիքը, այնպէս էլ մի մարդ կամ մի խումբ մարդիկ կարող են ազգի ներքին էութիւնը ճանաչելու իմաստով լինել աւելի հեղինակաւոր, քան «տեսողութիւնից ու լսողութիւնից զուրկ մեծամասնութիւնը»։

Ի՞նչպէս կարող է մի ամբողջ կուսակցութիւն նոյն գնահատականով ներըմբռնել ազգը։ Շատ պարզ։ Կուսակցութիւնը միանման մտածողների միութիւն է և սովորաբար նոյն կուսակցութեան անդամներ են դառնում նոյն հասարակական ներըմբռնում ունեցող մարդիկ։ Ինչո՞ւ մենք չենք զարմանում, որ մի ամբողջ կուսակցութիւն ընդունում է ընկերվարութիւնը որպէս արտաքին ղեկավարման սկզբունք։ Չէ՞ որ սա միակ ղեկավարելու ձեւը չէ։ Բայց նրանք, որ ուրիշ սկզբունքների կողմնակից են, մտնում են ուրիշ կուսակցութիւնների մէջ։

Այժմ անցնենք ներքին բարոյական ատեանին։

Իմ կարծիքով՝ Վարանդ Փափազեանը չի ուզում ճանաչել բարոյականութեան ատեանի գոյութիւնը, որովհետեւ նրա համար, եթէ այդ ատեանը Միացեալ Ազգերի Կազմակերպութիւնը չէ, ապա մի վերացական բան է, որի կամքը ոչ մի կերպ չի արտայայտւում։

Այո, իմ ասած ատեանը ՄԱԿը չէ։ Աստւած էլ չէ, այլ այն ներքին չափանիշն է, որով մենք ինքներս գնահատում ենք մեր գործերը։ Մենք հիանալի գիտենք, թէ ե՛րբ ենք չար և երբ բարի։ Որտեղի՞ց մենք այդ գիտենք։ Ըստ երեւոյթին՝ այնտեղի՛ց, որտեղից որ արեւածաղիկը գիտէ, թէ որքան օգտակար է գլուխը դէպի արեւի կողմը թեքելը, իսկ նորածին երեխան գիտէ, թէ ինչպէս կարող է մօր կրծքից կաթ հանել։

Եւ արդարութեան կողմից տրւող պատիժն էլ այդքան ծիծաղելի ու վերացական չէ, ամենակարեւորը՝ նա կրաւորականութիւն առաջացնող երեւոյթ չէ։ Նախ արդարութեան ատեանը առարկայօրէն արտայայտւում է որպէս բնական հաւասարակշռութիւնը պահպանող մի հզօրագոյն ուժ։ Այդ ուժը անխըղճօրէն հարւածում է նրանց, որ փորձում են խախտել բնութեան ներքին ներդաշնակութիւնը։

Այսօր մեզ՝ մարդկանց հարուածում է ապականուած բնութիւնը, իսկ շուտով, ըստ երեւոյթին, սկսելու է հարուածել տիեզերքը: Անգլիացիներին և ամերիկացիներին հարուածում են ժամանակին նրանց կողմից ստրկացած սեւամորթների ժառանգորդները: Ալքոլիք ու հաշիշամոլ ծնողներին հարուածում են իրենցից սերուած և իրենց պատճառով ապուշացած երեխաները: Արտադրող ուժերի և արտադրական փոխյարաբերութիւնների ներդաշնակութիւնը խախտող դրամատէրներին հարուածում են շահագործուած բանւորներն ու գիւղացիները:

Մի խօսքով, բնութեան ներքին հաւասարակշռութեան հետ խաղացողների մատը այրւում է ճիշտ այնպէս, ինչպէս այրւում է լուցկու հետ խաղացող երեխայի մատը: Բայց մատ այրելով չի սահմանափակւում արդարութեան ատեանը: Նրա հարուածների տակ կործանւում են պետութիւններ ու ազգեր, փլւում են ազգային ներդաշնակութիւնը խախտող կայսրութիւններ: Այս ատեանի ձեռքումն է գտնւում աշխարհի հզօրագոյն ուժը՝ բնութեան ուժը: Եւ, անշուշտ, այս ուժը իր կործանիչ յատկութեամբ հարուածելու է նաեւ ոճրագործ թուրքին:

Ամերիկեան գրականագէտ Ուիլեըմ Չենինգը մէկ առիթով ասել է, թէ «մի ազգի համար չկայ աւելի մեծ դժբախտութիւն, քան բարգաւաճումը՝ չարագործութեան հաշւին»: Նման մի ուժի գոյութիւնը նշանակո՞ւմ է արդեօք կրաւորականութեան ճանաչում: Եւ հարցը այստեղ կրկին տանում է դէպի ներքին ու արտաքին փոխյարաբերութիւնները: Այն, ինչի մասին ես քիչ վերը խօսում էի, վերաբերում էր համակարգերի ներքին մղումներին, ներքին ղեկավարութեանը:

Այս ներքին օրինաչափութիւնները կ'իրականացնէին իրենց նպատակները, եթէ չլինէին արտաքին, բնութեան կողմից չնախատեսւած, խանգարող հանգամանքները: Անշուշտ, բնութիւնը իր օրինաչափութիւնները կ'իրականացնի նաեւ այն դէպքում, երբ մարդը բոլորովին չմասնակցի բնութեան զարգացման ընթացքին: Չէ՞ որ բոլոր բնական փոփոխութիւնները տիեզերքում մինչեւ մարդու ծնունդը կատարւել և այժմ էլ կատարւում են առանց մարդու մասնակցութեան: Եւ կը շարունակեն կատարւել նոյնիսկ այն դէպքում, եթէ մարդը ձեռքերը ծալած նստի և միայն դիտի: Բայց թէ որքանով այդ տիեզերական ընթացքների նրբութիւնները մարդը կը կարողանայ օգտագործել իր համակարգային շահերի համար՝ սա՛ է հարցը:

Ներքին օրինաչափութիւնների համաձայն, ծնւում, մեծանում և 80-90 տարեկան հասակում վախճանւում է մարդը: Բայց մէկ գնդակով կամ երեխային կաթից ու սնունդից զրկելով, այսինքն արտաքին ղեկավարութեան միջոցով, կարելի է ցանկացած ժամանակ կտրել մարդու կեանքի թելը: Ուստի, երեխայի զարգացման ներքին օրինաչափութիւնը իրականացնելու համար, անհրա-

ժեշտ է համապատասխան արտաքին ղեկավարութիւն (կեանքի համար անհրաժեշտ պայմանների ստեղծում)։ Այս արտաքին ղեկավարութիւնը կազմակերպելու համար է, որ մենք դատապարտում ու հրաժարւում ենք կրաւորականութիւնից։

Ի միջի այլոց, այս նոյն տրամաբանութիւնը մենք վաղուց օգտագործում ենք ընկերվարական տեսութիւնների մէջ։ Մենք ասում ենք, որ պատմական օրինաչափութիւնների համաձայն՝ ստրկատիրական հասարակարգը անխուսափելիօրէն փոխւում է աւատատիրութեան, աւատատիրութիւնը՝ դրամատիրութեան, դրամատիրութիւնը՝ ընկերվարութեան։ «Էլ ի՞նչ ցաւ ունենք,- պիտի մտածէինք մենք,- եթէ ընկերվարութիւնը այդքան անխուսափելի է, եթէ նա, միեւնոյն է, գալու է անիծեալ դրամատիրութիւնը փոխարինելու համար, ուրեմն սպասենք այդ գեղեցիկ ժամանակաշրջանին»։

Բայց բանը նրանումն է, որ ընկերվարութեան գալուստը ներքին օրինաչափութիւն է։ Այդ օրինաչափութիւնը իրականացնելու համար՝ բանւոր դասակարգը դեռեւս շատ արիւն ունի թափելու։ Իսկ եթէ մենք սխալւել ենք և ընկերվարութեան գալուստը ներքին օրինաչափութիւն չէ, ուրեմն ապարդիւն են անցնելու բոլոր ընկերվարութիւն կառուցելու փորձերը, զուր է թափւելու բանւոր դասակարգի արիւնը։

Այժմ տեսնենք, թէ ի՞նչ է ասում «արւեստագէտ Փափազեանը»։ Ահաւասիկ.

«Երբ իմ զաւակս ինձի հարցուց, թէ ո՞վ պիտի պատժէ թուրքը, ես երեւի պէտք է որ պատասխանէի՝ «բարոյականութիւնը, և եթէ հարցնէր՝ «ե՞րբ», պէտք է որ ըսէի,- «Այդ մէկը համակարգային խորհուրդ է, անմեկնելի»։ Ես պատասխանեցի,- «Մենք պիտի պատժենք»,- երբ հարցուց,- «Ի՞նչպէս», ըսի, - «Վերադառնալով մեր Հայրենիքը»։ Արդեօք սխա՞լ ներըմբռնեցի հայասպանութեան էութիւնը և հայ ազգին նպատակը»։

Ոչ, սխալ չըմբռնեցիք, բայց ըմբռնեցիք որպէս արւեստագէտ, այլ ոչ որպէս փիլիսոփայ։ Միտքս պարզելու համար, դիմեմ մէկ ուրիշ օրինակի։

Ենթադրենք, թէ մի սիրահարւած երիտասարդ իր սիրոյ առարկային պատմում է իր զգացմունքների մասին, համեմատելով նրան վարդի հետ և համապատասխան բանաստեղծութիւններ կարդալով նրա համար։ Զմայլւած աղջիկը շնջում է,- «Բայց ի՞նչպէս և ինչի՞ համար դու ինձ սիրեցիր»։ Բայց հերթական բանաստեղծութիւնը լսելու փոխարէն, նա շմած լսում է սիրահարւած երիտասարդի հետեւեալ բառերը,- «Ես սիրեցի քեզ, որպէսզի քեզ հետ անկողին մտնեմ, որպէսզի երեխայ ունենանք և դրանով իսկ կատարենք մեր կենսաբանական պարտականութիւնը մեր ազգի և մարդկութեան առջեւ»։

Երիտասարդի այս սառը դատողութիւնը լսելուց յետոյ, գուցէ աղջիկը վռնտի տղային։ Որպէս արւեստագէտ՝ նա ճիշտ էլ կ՚անի, բայց որպէս փիլիսո-

փայ՝ նա ստիպւած պիտի լինի ընդունել, որ երիտասարդը ճիշտ էր: Բնութիւնը սիրոյ զեղեցիկ զգացմունքը տւել է մեզ հէնց բազմանալու համար, իսկ ծննդաբերութիւնը դժւարացրել է ցաւերով բազմանալը սահմանափակելու համար:

Այնպէս որ շատ չէր սխալւի Փափազեանը, եթէ իր զաւակին ասէր, թէ բարոյականութիւնը կը պատժի թուրքը և որ մենք պատրաստ ենք զոհաբերութիւնների, աւելի բարձր համակարգի թելադրանքով: Ուրիշ բան, որ զաւակի հետ այս լեզւով խօսելը յիմարութիւն է, բայց մենք հօ կարող ենք այս լեզւով խօսել: Եւ առարկայական բարոյականութեան հարցն էլ այդքան վերացական հասկացութիւն չէ:

Վերադառնանք «մենք պիտի պատժենք թուրքը» պատասխանին: Ի՞նչ իրաւունքով,- ընկեր Փափազեան: Այն նոյն պահին, երբ դուք պատասխաններ էիք տալիս ձեր զաւակին, Իստանբուլում մի մայր իր զաւակին ասում էր, թէ «մենք պիտի պատժենք հայը, որը անարդարացիօրէն սպանեց մեր հօրը»: Եթէ բացառենք բարոյականութեան ատեանի գոյութիւնը, ո՞վ կարող է մեզ ասել, որ ճիշտը մենք ենք, այլ ոչ թուրքը: Գուցէ ժամանակին հայերը իսկապէս սպառնում էին թուրքերի գոյութեանը:

Եւ հէնց դուք իմ առաջ այս նոյն հարցն էք դնում: Ահաւասիկ. «Ազգային կեանքի ո՞ր շրջանին մէջ կ'ապրէին հայ և թուրք ազգերը 1915էն 1920: … Ո՞վ աւելի բարձր էր երկու ազգերուն այդ «աններդաշնակ» գուպարի ընթացքին»: Իսկապէս՝ ո՞վ: Ի՞նչպէս կարելի է պատասխանել այս հարցին, եթէ չլինի առարկայական բարոյականութեան չափանիշը, որը կարող է միայն ու միայն աշխարհակառոյցից բխել, ինչպէս մարդու կենսաբանական կառոյցից բխում է, որ հաշիշը չարիք է, իսկ մեղրը՝ բարիք:

Իսկ եթէ հասարակական կեցութեան չարը և բարին կապւեն հասարակական ներդաշնակութեան հետ, ապա պարզ կը դառնայ, որ ազգային գերլարւածութիւնը ինքն ըստ ինքեան դեռեւս ոչ մի գնահատական չունի: Գնահատականը տալիս է լարւածութեան ուղղութիւնը: Եթէ տարբեր լարւածութիւն ունեցող խմբերի պայքարը կրէր դասակարգային բնոյթ, ապա մենք հարց չէինք տայ, թէ ո՞ր կողմն էր արդարացի:

1905 թւի Ռուսաստանի գերլարւած քաղքենիութիւնը խեղդեց ռուս լարւած բանւորութիւնը և գիւղացիութիւնը: Ո՞վ էր արդարացի: Անշո՛ւշտ՝ բանւորները: 1917 թւին գերլարւած բանւորները արեան մէջ խեղդեցին ռուս քաղքենիութիւնը: Ո՞վ էր արդարացի: Անշուշտ՝ բանւորները: Սա է մեզ թելադրում ընկերվարական բարոյականութիւնը: «Բարոյական է այն ամէնը, ինչ նպաստում է բանւոր դասակարգի շահերին»,- ասում էր Լենինը: Ուրեմն չզարմանանք, որ գերլարւածութիւնը կարող է թէ՛ արդար և թէ անարդար լինել:

Փափազեանը մեղադրում է ինձ նրանում, որ ես իմ գրքի մէջ որեւէ տեղ չեմ յիշատակել **հայրենիքը**, որպէս ազգ-ամբողջութեան բաղադրիչ մասնիկ: Բայց ես չեմ յիշատակել ազգ-համակարգի նաեւ շատ ուրիշ մասերը, հէնց նրա համար, որ չեմ ցանկացել բաժան-բաժան անել ամբողջութիւնը:

Ես ասում եմ, որ ազգը ճակատագրի միասնութիւն է: Անշուշտ ճակատագրի մէջ հայրենիքը մեծ տեղ է գրաւում և մեծ դեր է կատարել: Անշուշտ մեր ազգային յիշողութեան մէջ, ուրիշ բաների հետ մէկտեղ, կայ նաեւ հայրենիքը: Օրինակ, հրէական յիշողութեան մէջ հայրենիքից պակաս դեր չի կատարում Սողոմոնի տաճարը, որի պատերից մէկը՝ «լացի պատը» նրանց համար ուխտավայր է դարձել:

Բայց եթէ Փափազեանը խօսում է **հայրենիք** հասկացութեան մասին, որպէս արտաքին ղեկավարութեան միջոցի, ապա սա բոլորովին ուրիշ հարց է: Այստեղ հայրենիքը ազգի անհրաժեշտ մասն է, նրա գլխաւոր սիւներից մէկը: Բայց արտաքին ղեկավարութեան մասին ես ընդհանրապէս չեմ խօսել իմ գրքում, բացի մէկ նախադասութիւնից, որտեղ ասում եմ, որ արտաքին ղեկավարութիւնը պէտք է համապատասխանի ներքին ղեկավարութեանը:

Այս իմաստով, իսկապէս որ աւելորդ է հարց տալ, թէ ո՞ւր է Լեհաստանի հայութիւնը, ինչպէս աւելորդ է հարցնել, թէ ո՞ւր է Նախիջեւանի հայութիւնը:

Փափազեանը շատ ճիշտ է նկատում, որ եթէ ես սկսէի վերլուծել այն հարցը, թէ ինչո՞ւ տւեալ հաւաքականութիւնը իր հողին է կառչում, ապա պիտի շեղւէի իմ բուն նպատակից:

Այս ներքին և արտաքին ղեկավարութիւնների փոխյարաբերութիւնների մէջ կայ մի շատ կարեւոր կէտ, որի հետ կարծում եմ, որ չպիտի համաձայնւի Փափազեանը: Առարկելով աշխարհի 862 ազգութիւնների գոյութեան թեզին (այս թիւը ես վերցրել եմ ամերիկեան վիճակագրական հիմնարկի պաշտօնական հաշւետւութիւնից), Փափազեանը գրում է.

«Մենք այս թիւին դէմ կ'առարկենք, որովհետեւ կը կարծենք, թէ այն ազգը, որ իր էութեան և լինելութեան մէջ չունի հայրենիքի գաղափարը, ազգ չէ, այլ ազգային կազմաւորման ճամբուն վրայ եղող մշակութային հաւաքականութիւն»:

Այո, լինելութեան, այսինքն արտաքին ղեկավարութեան ոլորտում ազգը կարող է գտնւել և միշտ գտնւում է իր կազմաւորման ու զարգացման ճանապարհի վրայ: Ճանապարհի տարբեր կէտերում մենք կարող ենք տալ նրան տարբեր անուններ՝ մշակութային հաւաքականութիւն, կրօնական համայնք, ցեղ, ազգ և այլն, բայց ինչպէս ես փորձել եմ ցոյց տալ իմ գրքում, ներքին իմաստով, որպէս բնութեան մտաղրութիւն, որպէս բնական համակարգ, որպէս տիեզերակառոյցի աղիւս, ազգը միշտ էլ ազգ է: Նա ազգ էր դեռեւս այն ժամա-

նակ, երբ ազգային ինքնագիտակցութիւն էլ չունէր: Նորածին երեխան մարդ է, չնայած նրան, որ նա միայն արտաքինով է տարբերւում շան թուլայից: Աւելին, նա մարդ էր նաեւ այն ժամանակ, երբ դեռեւս սաղմնային վիճակում գտնւում էր մօր արգանդում:

Հասարակագէտները կարող են վայնասուն բարձրացնել, թէ ինչպէս կարելի է սաղմը, որ ոչ խօսել գիտի, ո՛չ մտածել, որը ո՛չ դասակարգային պատկանելիութիւն ունի, ոչ աշխարհ ընկալելու ընդունակութիւն, մարդ անուանել: Բայց նա, այնուամենայնիւ, մարդ է, ոչ հասարակական իմաստով, այլ տիեզերակառոյցի իմաստով: Այդպէս էլ ազգը:

Կարծում եմ, որ այստեղ էլ իմ և Փափազեանի տարակարծութիւնները վերաբերւում են ներքին և արտաքին ղեկավարութիւնների փոխյարաբերութեանը: Ես լրիւ հասկանում եմ Փափազեանի մտահոգութիւնը այն մասին, թէ ո՞վ պէտք է ճշտի ներքին և արտաքին ղեկավարութիւնների համապատասխանութեան հարցը: Այս առիթով նա փոքր ինչ հեգնանքով ասում է, թէ մեզ մնում է դիմել «լուսաւորեալ անհատին»: Իսկ ինչո՞ւ չէ: Եթէ մենք ընդունենք, որ ներըմբռնումը շրջապատը ճանաչելու միջոցներից մէկն է, ապա ինչո՞ւ զարմանալ, որ մեր մէջ կան «լուսաւորած», այսինքն լաւ ներըմբռնում ունեցող կամ լաւ բնազդով օժտուած մարդիկ:

Աւելի ճիշտ՝ ասենք այսպէս. մարդիկ արուեստագէտների նման ունենում են ներըմբռնելու տարբեր ընդունակութիւններ և նրանք, որ այս իմաստով աւելի զարգացած են, աւելի մեծ վստահութեան են արժանի: Ինչո՞ւ արուեստի մէջ մենք ազատօրէն խօսում ենք լսողութիւնից ու գեղարուեստական ընդունակութիւններից զուրկ մարդկանց մասին և վստահում ենք նրանց, որ այդ ընդունակութիւններով օժտուած են:

Իսկ գիտութեան մէջ՝ մի՞թէ այդպէս չէ: Կոպիտ ասած՝ բոլորը տեսնում էին, որ ծառից խնձորը վայր է ընկնում, բայց միայն Նեւտոնն էր, որ այդ փաստից մի ամբողջ տեսութիւն ստեղծեց, աւելի ճիշտ՝ մի ամբողջ օրինաչափութիւն ՏԵՍԱԻ: Բոլորը իմացան Մայքըլսընի լոյսի հետ կատարած փորձի արդիւնքի մասին, բայց միայն Այնշտայնն էր, որ **տեսաւ** աշխարհի յարաբերականութիւնը: Մի խօսքով, «լուսաւորեալ անհատները» կան և անհրաժեշտ են բոլոր բնագաւառներում:

Այստեղ ես ուզում եմ պատասխանել Փափազեանի, կարծեմ, վերջին առարկութեանը: Իր յօդուածի «գնահատանք» բաժնի սկզբում, Փափազեանը անում է այսպիսի մի դիտողութիւն. «Վերացած վիճակի մէջ, աշխարհը իր ամբողջութեան մէջ դիտող միտքը յանկարծ «կը լուսաւորուի» ճշմարիտով, այս ալ ենթակայական վիճակն է: Երրորդ ձեւ չկայ: Է. Յովհաննիսեան կ՚ըսէ, թէ առայժմ չկայ…»:

Ուզում եմ պարզել, թէ ինչ նկատի ունէի ես այդ «առայժմ»ով։ Ինձ թւում է, որ մարդկութիւնը ժամանակին կրկին կը վերականգնի իր վստահութիւնը սեփական զգացմունքների նկատմամբ և շատ լրջօրէն կը զբաղուի զգացողական աշխարհաճանաչման հարցով։ Հնարաւոր է, որ այս ուղղութեամբ ստեղծուեն «գիտական» նոր ուղղութիւններ, որոնց կարելի է անուանել, օրինակ, ամբողջագիտութիւն կամ կերպար-գիտութիւն։ Այս «գիտութիւնները» զբաղուելու են ամբողջութիւնների ամբողջական ուսումնասիրութիւններով, ոչ որպէս առանձին մասերի գումար։

Պէտք է ասել, որ նման մօտեցումը արդէն իսկ օգտագործում են լեզուաբանները։ Ինչպէս յայտնի է, օտար լեզու դասաւանդելու դասական ձեւը այբուբենից տանում է դէպի բառերը և քերականութիւնից դէպի նախադասութիւնները։ Սակայն բոլորի համար միշտ էլ պարզ էր, որ երեխաները օտարների հետ բակում խաղալու ինչ որ ուրիշ ճանապարհով են շատ շուտ, առանց քերականութեան, խօսել սովորում։ Նրանց միանգամից ընկալում են լեզուի կերպարը՝ նախադասութիւնները։ Եւ այժմ մասնաւորապէս Բերլիցի դպրոցը հէնց այդ ուղղութեամբ է տանում իր ուսուցման գործը։

Սա է որ ես ի նկատի ունեմ, երբ ասում եմ, որ գուցէ ժամանակին ոչ միայն լեզուն, այլեւ մեզ շրջապատող բոլոր երեւոյթներն ու համակարգերը մենք ճանաչենք մի ինչ որ ամբողջական ընկալման միջոցով և այդ ուղղութեամբ ստեղծենք տեսութիւններ։

Մնաց որ այն հարցի մասին, թէ արդեօք համակարգային աշխարհահայեացքը համապատասխանո՞ւմ է Հ.Յ.Դաշնակցութեան աշխարհահայեացքին և էութեանը, կարող եմ ասել միայն հետեւեալը.

Ինձ համար Հ.Յ.Դաշնակցութիւն կուսակցութիւնը այն կուսակցութիւնն է, որը ծնւած օրից ի վեր տանում է հայ ժողովուրդը դէպի Ազատ, Անկախ ու Ամբողջական Հայաստան։ Այս շարժումը, որպէս արտաքին ղեկավարութիւն, ամբողջովին համապատասխանում է ազգ-համակարգի ներքին էութեանը, քանզի համակարգի ամբողջութիւնը, իր մակարդակի վրայ՝ ազատութիւնն ու անկախութիւնը արտայայտում են համակարգի ուրոյնութիւնն ու միասնութիւնը, որ բնական համակարգի որոշիչ յատկութիւններն են։

Բայց կարծում եմ, որ իմ այս բացատրութիւնն էլ աւելորդ է, որովհետեւ ես Դաշնակցութեանն էլ մօտենում եմ ներըմբռնման տեսանկիւնից, այսինքն որպէս ամբողջութիւն, առանց հաշիւ տալու, թէ նրա ո՞ր մասն է ընկերվարական, ո՞րը ազգայնական, ո՞րը քրիստոնէական և ո՞րը ռամկավարական։

Եւ, Աստւած վկայ, ես խոնարհւում եմ այդ ամբողջութեան առջեւ։

1979

ՊԵՏԱԿԱՆ ԵՒ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ

Է. Յովհաննիսեան

Հայ ժողովրդի դէպի ինքնիշխան պետականութիւն տանող ճանապարհի վրայ կարելի է սահմանել գործունէութեան առնւազն երեք բնագաւառ, ազգապահպանում, Հայ Դատ և ապագայ պետական կեանքի նախապատրաստելու աշխատանքներ:

Երեք այս բնագաւառները վերաբերում են ամբողջ հայ աշխարհին՝ Հայրենիքից մինչեւ Սփիւռք: Ազգապահպանման անհրաժեշտութիւնը սրւում է Արեւելքից Եւրոպա և Եւրոպայից Ամերիկա տանող ուղու վրայ և է՛լ աւելի օրհասական է դառնում Խորհրդային Միութիւնում՝ Հայրենիքից դուրս գտնւող վայրերում, որտեղ հայկական դպրոցները և ընդհանրապէս հայ կեանքը գրեթէ բացակայում են:

Ինչ վերաբերում է քաղաքական ու քարոզչական բնոյթ կրող Հայ Դատի ուղղութեամբ տարւող աշխատանքներին, տարբեր կողմերով ու տարբեր ձեւեր ընդունելով, նոյնպէս հաւասարաչափ վերաբերում են թէ՛ Սփիւռքին և թէ Հայրենիքին:

Ազգապահպանման և Հայ Դատի մասին խօսւել է ու խօսւում է շատ: Սա չի նշանակում, որ այս ուղղութեամբ ամէն ինչ պարզ է և խօսելը աւելորդ է, բայց այս անգամ ես ուզում եմ խօսել երրորդ ուղղութեան, այսինքն պետական կեանքին նախապատրաստելու մասին, որի մասին վերջերս սկսել են խօսել շատերը և որը առաջ է քաշում մի նոր հարց մեր հասարակական կեանքում, կուսակցական և պետական գործունէութեան փոխյարաբերութեան հարցը:

Սակայն նախքան այս փոխյարաբերութեան հարցին անդրադառնալը, տեսնենք, թէ ի՞նչ է նշանակում մեր պայմաններում պետական գործունէութիւն:

Այն պահին, երբ քաղաքական պայմանների և Հայ Դատի ուղղութեամբ տարւող աշխատանքների բերումով կ'առաջանան ինքնիշխան հայ պետականութիւն ստեղծելու պայմանները, մեր անցած դժւարին ճանապարհի այս վերջին փուլում մենք կը կանգնենք ամենակարեւոր խնդրի առջեւ, թէ արդեօ՞ք (և որքանո՞վ) մենք պատրաստ ենք ինքնիշխան պետական կեանքի: Արդեօք պատրա՞ստ է նման կեանքի մեր գաղափարախօսութիւնը, աշխարհագրական դիրքը, մշակոյթը, քաղաքական գործիչները և այլն:

Գաղութատիրական շրջանի աւարտը, երբ Ափրիկէում, Ամերիկայում և Ասիայում սունկի պէս բուսում էին «անկախ» պետութիւններ, ցոյց տուեց, որ ոչ բոլորը պատրաստ գտնուեցին ինքնուրոյնութեան և ոչ բոլորը կարողացան ստանալ իսկական ինքնավարութիւն: Եւ ինչո՞ւ դիմել ուրիշների օրինակին: Մի՞թէ մենք, ծով արեան գնով ձեռք բերած Անկախ Հանրապետութեան պահին, պատրաստ էինք պետական կեանքի:

Մեր խորհրդարանում տեղի ունեցած ուժասպառ անող անվերջ վէճերը, Պօղոս Նուբար փաշայի բռնած դիրքը, մէկը միւսին յաջորդող կառավարութիւնները և վարչապետները, մի՞թէ այս ամէնը չի խօսում այն մասին, որ մենք այնքան էլ պատրաստ չէինք պետական կեանք վարելու: Կամ Դաշնակցութեանը յաջորդող բոլշեւիկեան կառավարութիւնը մի՞թէ նոյն անպատրաստ վիճակում չէր: Եւ մի՞թէ դա չէր պատճառը, որ պետական կեանքին աւելի պատրաստ վրացիները և աղրբեջանցիները պարզապէս խլեցին մեզանից այն, ինչը երբեք իրենց չէր պատկանում:

Սակայն, մեր Անկախ Հանրապետութեան հերոսական ժամանակաշրջանը քննադատելու համար չէ, որ գրում եմ այս տողերը: Պարզապէս ուզում եմ ասել, որ մենք, Հայ Դատի վերջնական լուծման հաւատքով ապրողներս, որ համոզուած ենք որ գալու է նոր հանրապետութեան նոր ժամանակաշրջան, պիտի պատրաստ լինենք դիմաւորելու այդ պահը: Տեսնենք, թէ որքա՛ն ենք մենք դրան պատրաստ:

Սկզբից դիմենք մեր կեանքում մեծ դեր կատարող գաղափարական բնագաւառներին՝ ընկերվարութեանը և եկեղեցուն: Արդեօք պատրա՞ստ են եկեղեցին և ընկերվարութիւնը պետական կեանքի: Իմ կարծիքո՛վ՝ ոչ մէկը և ոչ էլ միւսը նման կեանքի պատրաստ չեն:

Դարերի ընթացքում մեր ժողովուրդը, համապատասխան պայմանների բերումով, դուրս մղեց եկեղեցուց նրա բուն էութիւնը՝ հաւատքը, վերածելով նրան մի ազգային հաստատութեան, որը դարձաւ աւանդոյթների, մշակոյթի, լուսաւորութեան և նոյնիսկ քաղաքականութիւն վարելու կենտրոն: Այժմ թէ՛ Սփիւռքում և թէ Հայաստանում, երբ ստեղծել են բազմաթիւ հաստատութիւններ ու կազմակերպութիւններ, որոնք զբաղւում են քաղաքական, տնտեսական ու մշակութային հարցերով, Հայ Եկեղեցին, փաստօրէն, դարձել է մի տեսակ թանգարան կամ անցեալի յուշարձան:

Պէ՞տք է արդեօք նման եկեղեցի ապագայ ինքնավար Հայաստանում: Կարծում եմ որ ոչ, նման եկեղեցին, լաւագոյն դէպքում, կը կատարի իր դերը մեր հասարակական կեանքում հէնց թանգարանային ասպարէզում: Սակայն կարո՞ղ ենք մենք զրկել մեր ժողովուրդը հաւատքից, թողնել նրան առանց եկեղեցու: Այսինքն կարո՞ղ ենք մենք նմանուել բոլշեւիկներին, որոնք անաստուածեան

ոգեւորութեան մէջ քանդեցին կամ գոմի վերածեցին հայ եկեղեցիները: Բայց եկեղեցին քանդելն անգամ այնքան վնաս չի հասցնի ժողովրդին, որքան հաւատքի նւաստացումը:

Վերջերս հանդիպեցի մեր կրօնական անւանի ղեկավարներից մէկի հետ: Զրոյցի ժամանակ, մէկ առիթով, երբ ես յիշեցրի նրան, որ Յիսուսը պատուիրել է մեզ թողնել 99 ոչխարը և գնալ մէկ կորած ոչխարի յետեւից, նա ժպտալով պատասխանեց. «Այդ ի՞նչ անզգուշութիւն է ասել Յիսուսը»: Մեկնաբանութիւնները աւելորդ են: Նման եկեղեցի հայ ժողովրդին պէտք չէ:

Այսօր աշխարհի բազմաթիւ համալսարաններում և կրօնական հաստատութիւններում աստւածաբանները զարգացրել են կրօնական փիլիսոփայութիւնը և հասցրել են այն այնպիսի մակարդակի, որ հասկանալի է դառնում նոյնիսկ խոշորագոյն գիտնականների համար: Ի՞նչ է արել մեր եկեղեցին այս ուղղութեամբ: Եթէ մեր եկեղեցին ու կրօնը չապրի այս զարգացումը, ապագայ պետական կեանքում նա տեղ չի գտնի, ինչպէս տեղ չի գտնում միայն Սփիւռքի վրայ յենւող Հայաստանեայց Եկեղեցին:

Ուստի, հէնց այս ուղղութեամբ էլ, թողնելով ակումբները, դպրոցները և առաւել եւս՝ քաղաքականութիւնը՝ համապատասխան մարմիններին,եկեղեցին պէտք է վերադառնայ սեփական բարոյական արժէքներին:

Պատրաստ չէ պետական կեանքի նաեւ ՄԵՐ ընկերվարութիւնը: Գուցէ այս «մեր» ընկերվարութիւն հասկացողութիւնը մի քիչ տարօրինակ թւայ նրանց, ովքեր ընկերվարութիւնը համարում են ընդհանուր մի տեսութիւն և ոչ մի տարբերութիւն չեն տեսնում ընկերվարական վարչակարգերի միջեւ (Զուիցերիա, Հարաւսլաւիա, Խորհրդային Միութիւն): Բայց հէնց այդ տարբերութիւններ չտեսնելը խօսում է այն մասին, որ մեր ընկերվարութիւնը պետական կեանքի պատրաստ չէ: Վիեթնամի և Հարաւսլաւիայի ընկերվարութիւնները, օրինակ, ոչ մի ընդհանուր բան չունեն, սակայն տարբերութիւնը ոչ թէ գաղափարախօսութեան, այլ գաղափարի պետականացման մէջ է:

Մեզ՝ հայերիս համար ընկերվարութեան պետականացումը առաւել եւս կարեւոր է, որովհետեւ այժմ մեր հայրենիքում տիրում է իրեն ընկերվարական կոչող վարչակարգ, որից աշխատաւորները այնքան էլ գոհ չեն: Ի՞նչ տարբերութիւն կայ մեր և նրանց ընկերվարութիւնների միջեւ: Ի՞նչ է մեր վերաբերմունքը բազմակուսակցութեան, կոլտնտեսութիւնների, արհմիութիւնների, մասնաւոր սեփականութեան և շատ ուրիշ պետական հարցերի նկատմամբ: Ապագայ պետական կեանքը անհրաժեշտ է դարձնում բոլոր այս հարցերի վերլուծութիւնը: Պատրաստւել ապագայ պետականութեան՝ նշանակում է ունենալ բոլոր այս հարցերի պատասխանը:

Սակայն գաղափարական այս հարցերից էլ աւելի կարեւոր են տնտեսական, զինւորական ու քաղաքական հարցերը: Արդեօ՞ք համապատասխանում է Խորհրդային Հայաստանի տնտեսական զարգացումը ապագայ ինքնավար Հայաստանի շահերին: Կարո՞ղ է արդեօք Երևանի կառչունկը ապագայում մրցել, օրինակ, Դիւպոնի կառչունկի հետ և ո՞ր շուկայում նա պէտք է վաճառի այդ կառչունկը: Ապագայ Հայաստանին պէ՞տք է հիւլէական ելեկտրակայանը, ալումինիումի գործարանը կամ այլ արտադրամաս: Համապատասխանո՞ւմ են ապագայ Հայաստանի շահերին այն գիտական ուղղութիւնները, որոնք որդեգրել է Հայաստանի Գիտութիւնների Կաճառը: Կարո՞ղ են Հայաստանի նախագծային հիմնարկները ապագայում վաճառել իրենց ապրանքը: Ո՞վ է այս ամէնը հաշւել ու ծրագրել:

Նման հարցերի լուծման համար անհրաժեշտ է պետական մօտեցում: Այս նոյն պետական մօտեցումը անհրաժեշտ է աշխարհագրական, զինւորական, գիւղատնտեսական հարցերում: Եթէ ստեղծւի այն ճգնաժամային պահը, երբ Հայաստանը և նրա հարեւանները պիտի անկախութիւն ստանան, արդեօք պատրա՞ստ ենք մենք պաշտպանութեան գործ կազմակերպել Հայաստանի պայմաններին ծանօթ զինւորականների միջոցով:

Կամ վերցնենք մէկ ուրիշ, շատ ցաւոտ հարց,- արեւմտահայերէն և արեւելահայերէն լեզուների հարցը: Որքանո՞վ ճիշտ կը լինի, որ ապագայ Հայաստանում լինի երկու պետական լեզու: Եւ դա առաջացնի առանց այն էլ գոյութիւն ունեցող պառակտում արեւելահայերի և արեւմտահայերի միջեւ և որքանո՞վ այս երկլեզուանիութիւնը կը համապատասխանի միացեալ Հայաստանի գաղափարին: Իսկ եթէ գոյութիւն ունի այս պառակտման վտանգը, արդեօք ճիշտ չէ՞ր լինի, որ մենք այսօրւանից պատրաստւէինք միալեզու պետականութեան:

Բոլոր այս հարցերը պահանջում են պետական մօտեցում և պետական բնոյթ կրող հաստատութիւններ: Եւ այդպիսի առաջարկներ կան: Սակայն նման առաջարկներ բերողներին, գոնէ այսօր, կարելի է բաժանել երկու խմբի՝ նրանց, ովքեր ուզում են կուսակցութիւնը վերածել պետութեան, և նրանց, ովքեր պետական գործունէութիւնը նկատում են գերկուսակցական մի գործ:

Իմ կարծիքով, երկուսն էլ սխալւում են: Կուսակցութիւնը չի կարող վերածւել պետութեան, որովհետեւ կուսակցութիւնը, մանաւանդ յեղափոխական կուսակցութիւնը, համախոհների միութիւն է, որոնց միասնութիւնը կրում է գաղափարական բնոյթ, որոնք պարտաւոր են բոլոր հարցերի նկատմամբ անզիջելի դիրք բռնել, երբ հարցը վերաբերում է սկզբունքին: Չի կարող համայնավարը գործարքի մէջ մտնել քաղքենիի հետ, չի կարող յեղափոխական կու-

սակցութիւնը հրաժարուել իր յեղափոխական գործելակերպից, դիմելով, օրինակ, մարդկանց կաշառելու ճանապարհին։

Բոլորովին այլ բնոյթ է կրում պետական գործունէութիւնը, որի միակ բարոյական սկզբունքը պետական շահն է։ Այս շահին ծառայելու ճանապարհի վրայ պետական գործիչը հաշւի չի նստում այլ սկզբունքների հետ։ Նա կարող է կեղծել, խաբել, կաշառել, դաշինք կնքել թշնամու հետ, կարող է սեփական շահերի համար ոտնակոխ անել ուրիշի շահերը և այլն, և այլն։ Բոլոր պետութիւնների պատմութիւնը, այդ թւում նաեւ մեր կարճատեւ պետութեան պատմութիւնը, լեցուն է նման օրինակներով։

Դրա համար էլ, պետութեան վերածւած որեւէ կուսակցութիւն, կորցնելով իր գաղափարական և բարոյական սկզբունքները, այլեւս կուսակցութիւն չէ և այլեւս նա չի կարող ժողովրդի որոշ դասակարգի բարոյական դէմքը նկատւել։ Ուստի Հ.Յ.Դաշնակցութիւնը չի կարող պետական մարմին դառնալ։

Բայց դա չի նշանակում, որ Սփիւռքում կարելի է պետական գործունէութիւն ծաւալել առանց կուսակցութիւնների, այսպէս կոչւած գերկուսակցական մարմիններում։ Կասկածից վեր է, որ բոլոր նման փորձերը անցնելու են ապարդիւն, այն պարզ պատճառով, որ առանց կուսակցութիւնների մասնակցութեան կառավարական մարմինը վեր է ածւելու մի նոր կուսակցութեան, որովհետեւ ոչ մի կուսակցութեան չպատկանող անձերից բաղկացած այդ կառավարական մարմինը ստեղծելու է իր ներքին կանոնադրութիւնը, անգլիական ակումբից տարբերւելու համար։

Միայն այն դէպքում կառավարական մարմինը կարող է յաջողութիւն ունենալ, երբ մարմնի ամէն մի անդամի յետեւում կանգնած լինի ժողովրդի որոշ հատւածը ներկայացնող մի կազմակերպութիւն։ Եւ նման մարմնի համաժողովրդականութիւնը պայմանաւորւած կը լինի հէնց նրանով, որ մարմնի բոլոր անդամները կ'ընտրւեն պատգամաւորական յատուկ ժողովներում։ Այդպէս է եղել միշտ և ամէնուր, այդպէս են վարւում բոլոր պետութիւններն ու կառավարութիւնները, եթէ իրենք իրենց ժողովրդավարականներ են համարում։

Այս հանրայայտ ճշմարտութիւնը ես ստիպւած եմ նշել, որովհետեւ վերջերս, այսպէս կոչւած չէզոքացնելը, ուրիշ խօսքով՝ ոչ ոքի չներկայացնողները, փորձում են խախտել դարերից եկող այս կարգը։ Առանց կուսակցութիւնների, նրանք փորձում են կառավարական մարմիններ կազմելու ժողովներ գումարել, արդարանալով, թէ կուսակցութիւնները չեն ցանկանում մասնակցել նման ժողովների։

Ըստ երեւոյթին, կուսակցութիւնները դեռեւս պատրաստ չեն նման կառավարութիւն կազմելու։ Եթէ այդպէս է, ուրեմն նախաձեռնութիւնն էլ վտանգաւոր է, եթէ չասենք ծիծաղելի։ Բայց ինչո՞ւ կուսակցութիւնները ձեռնպահ են

մնում կառավարական մարմիններ կազմելու անհրաժեշտ գործից: Ես կարծում եմ, որ դրա համար գոյութիւն ունի հետեւեալ և գուցէ միակ պատճառը:

Սփիւռքահայ կառավարական մարմին ստեղծել նշանակում է անկազմակերպ Սփիւռքը կազմակերպել: Նշանակում է տարակարծութիւններով լի կուսակցութիւնները և կազմակերպութիւնները միասնութեան բերել: Այս մասին երազել է մեր ժողովուրդը միշտ: Ուստի գաղափարը նոր չէ: Բայց այս գաղափարը իրականացնելու դժւարին գործը կատարելու համար, ի՞նչ նոր միջոց են բերել իրենց հետ մեր նոր «առաջնորդ»ները: Իրենց ա՞նձը, որ ղեկավարելու աւելի մեծ ընդունակութիւններով է օժտւած, գիտական մեթոդների կիրառման անհրաժեշտութի՞ւնը, ճանճի հարւածների նմանւող ահաբեկչութիւնները՞ը, թէ՞ աւելի հզօր հարւածներին ճարպկօրէն տէր կանգնելը:

Ի՞նչպէս պէտք է կազմակերպւի և պետական կեանքի վերածւի Սփիւռքի կեանքը, եթէ մենք չունենք ամենակարեւորը պետական կեանքի համար,- ժողովրդին համապատասխան վարքագիծ պարտադրելու ուժը: Եթէ այդ ուժը քիչ թէ շատ կայ Սփիւռքում, այն էլ կուսակցական ոլորտումն է: Եթէ մարդկանց մենք ուզում ենք գործի դնել հայրենասիրական զգացմունքների կամ Աստծուն ծառայելու ցանկութեան վրայ ազդելով, ապա կա՛մ ուշացել ենք և կամ էլ պէտք է 100 տարի սպասենք: Ոչ հայրենասիրութիւնը և ոչ էլ հաւատքը մեր ժողովրդի համար նորութիւններ չեն և ուրեմն ի՞նչպէս են ուզում մեր նոր «առաջնորդ»ները այս հին միջոցներով կատարել այն, ինչ չի յաջողւել կատարել տասնամեակներ ու հարիւրամեակներ շարունակ:

Միայն մէկ բան կարելի է ենթադրել, որ նորերը ստեղծում են նոր կուսակցութիւն, կազմակերպութիւն կամ ուխտ: Սա արդէն հասկանալի է, միայն թէ այդ դէպքում աւելի լաւ չի՞ լինի անկեղծօրէն յայտարարել այդ մասին և ներկայացնել նոր կազմակերպութեան նոր ծրագիրը: Ո՞վ գիտէ, գուցէ նրանց շարքերը անցնեն նրանք, ովքեր եղած կուսակցութիւնների մէջ չեն կարողանում գտնել իրենց ազգային զգացմունքների բաւարարութիւնը:

Մէկ բան էլ այստեղ ուզում եմ աւելացնել գիտական ուղիներով տարւածների համար: Գիտութիւնը օգտակար կարող է լինել միայն այն դէպքում, երբ պարզ երեւում են երեւոյթների պատճառները: Այդ դէպքում պատճառահետեւանքային կապերի ուսումնասիրութեան միջոցով կարելի է որոշ չափով կռահել հասարակական երեւոյթի հետեւանքները: Սակայն մեր ժամանակներում քաղաքական և հասարակական բոլոր լուրջ երեւոյթները տեղի են ունենում այնպիսի պայմաններում, որ բացի դաւադրութիւն կազմակերպողից, ոչ ոք կարող է գուշակել ապագան:

Որքան էլ հզօր հիմնարկներ ունենային հայերը, միեւնոյն է, նրանք չէին կարող կռահել Իրանում տեղի ունեցած յեղաշրջումը և պատրաստւել նրան:

Այստեղ սխալեցին նոյնիսկ հրեաները, որոնք աչք ու ականջ ունեն ամէնուր։ Ես անձամբ շատ չեմ հաւատում գիտական վերլուծութիւններին, որպէսզի նման հաստատութիւնների նշանակութիւնը բարձրացնեմ հայ ժողովրդի լինել կամ չլինելու հարցի մակարդակի վրայ։ Կարծում եմ, որ այսօր շատ աւելի կարեւոր է, թէ քանի՞ զինւոր կը գտնւի Սփիւռքում լիբանահայութիւնը պաշտպանելու գործի համար և քանի՞ ուսուցիչ պատրաստ է Լիբանան մեկնել՝ այնտեղից փախած ուսուցիչների տեղը բռնելու համար։

Ինձ կ'ասեն, թէ սա էլ գիտական հաշւարկ է պահանջում։ Ոչ, չխաբենք մեզ։ Այս մէկը շատ հեշտ է հաշւել։ Սրա համար պէտք է կոչ անել և Բէյրութի օդանաւակայանում մի աշակերտ դնել, որ եկողներին հաշւի։ Բայց սա իմ անձնական կարծիքն է և հաշւողները թող հաշւեն, Սեւակի հաշւիչ մեքենաների նման։

Սփիւռքում կառավարական գործունէութիւն ծաւալելու միակ ճանապարհը կուսակցութիւնների և կազմակերպութիւնների պատգամաւորական ժողովն է, որին անհրաժեշտ է լուրջ պատրաստուել, իսկ քանի դեռ պատրաստ չենք, աւելի լաւ է ոչինչ չանել։

Սակայն եթէ Սփիւռքի պետական մարմնի ստեղծման խնդիրը դեռեւս մեծ հարցականի տակ է, ապա Խորհրդային Հայաստանում գոյութիւն ունեցող կառավարութիւնը եթէ ոչ լրիւ, ապա մասամբ կարող է տանել այն նախապատրաստական աշխատանքները, որոնք վերաբերում են ապագայ Հայաստանի պետական կեանքին։ Ներքին Սփիւռքի ներգաղթը, գիտական ու արդիւնաբերական ուղղութիւնների զարգացումը, ներքին հողերի ամբողջացումը և շատ ուրիշ հարցեր կարելի է լուծել Հայաստանի կառավարութեան ջանքերով, պետական մօտեցում ցուցաբերելու գնով, որը պահանջում է զգուշութիւն, համարձակութիւն և իմաստութիւն։ Որոշ առաւելութիւններ Հայաստանի կառավարութիւնը կարող է ձեռք բերել նաեւ Սփիւռքի հաշւին, որի համար անհրաժեշտ է Սփիւռքի նկատմամբ ցուցաբերել պետական, այլ ոչ կուսակցական մօտեցում։

Այսպիսով, կուսակցական և պետական մարմինների փոխյարաբերութեան հարցը հայ կեանքում դառնում է կարեւորագոյն հարցերից մէկը, որի լուծումից, որոշ իմաստով, կախւած է մեր քաղաքական ապագան։ Եթէ ինձ հարցնէին, թէ ի՛նչպէս պիտի լինի այդ փոխյարաբերութիւնը, ապա ես կը պատասխանէի այսպէս.

Կուսակցութիւններից և կազմակերպութիւններից կազմւած պատգամաւորական մարմինը կարող է դառնալ սահմանադրական պետական մարմին։ Սակայն այդ մարմնի որոշումները ոչ մի նշանակութիւն չեն ունենայ մեր ժողովրդի համար այնքան ժամանակ, քանի դեռ բացակայում է գործադիր մար-

մինը, որի համար պետական մարմինը, բացի բարոյական կոչերից, չի կարող ունենալ ոչ մի ուժ: Գործադիր մարմինները պէտք է լինեն կուսակցութիւնները, որոնք այդ ուժը ունեն: Իսկ առանց այդ ուժի՝ այդպէս կոչուած պետութեան որոշումները կը մնան օդից կախուած զեղեցիկ յայտարարութիւններ:

Մէկ վերջին դիտողութիւն: Ես էլ մի քանի տարի առաջ կարծում էի, որ Սփիւռքը կազմակերպուած չէ, որովհետեւ կազմակերպիչների կարիք ունի: Սակայն համոզուեցի, որ ոչ թէ կազմակերպչի պակասից է, որ Սփիւռքը կազմակերպուած չէ, այլ կազմակերպուելու ոգու և ինքնակազմակերպուելու պարտականութիւնը զգալու պակասից է: Կամ եթէ խօսենք այլ լեզուով, ոչ թէ հովիւի և եկեղեցու, այլ հաւատքի պէտք ունենք, ոչ թէ ճարտարապետի և շինարարի, այլ աղիւսների պէտք ունենք:

Եղած աղիւսները և կազմակերպուելու ոգին ունեցողները արդէն կազմակերպուել են կուսակցական կազմերի ներսում: Նոր շէնք կարելի է կառուցել միայն հին շէնքերը քանդելով և այդ շէնքերի աղիւսները օգտագործելով:

Եթէ դա են ուզում անել նորերը, ապա դա ազգային յանցագործութիւն պիտի նկատւի: Իսկ եթէ նրանք իրենց նոր շէնքը ուզում են կառուցել հին շէնքերից ընկած կոտրուած ու փշրուած քարերից, ապա նման շէնքը չի դիմանայ մեր դէմ ուղղուած հզօր քամիներին:

Արդ, մտածենք, յետոյ կտրենք:

1979

ԱՀԱԲԵԿՉՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԷՍ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑ

(ՄԱՄԼՈՑ ՄԻ ԱՍՈՒԼԻՍԻ ԱՌԻԹՈՎ)

Է. Յովհաննիսեան

Շատերը փորձել են ուսումնասիրել ու հասկանալ ահաբեկչութեան հոգեբանական, քաղաքական և հասարակական բնոյթը: Նման փորձերից մէկն էլ կատարուեց վերջերս, երբ Նիւ Եորքի մէջ կազմակերպուեց մամուլի ասուլիս, որին մասնակցեցին չորս ամերիկացի գիտնականներ, որոնք համարւում են ահաբեկչութեան երեւոյթի մասնագէտներ:

Սրանցից մէկը Ռէյ Կլայնն էր, որը Միացեալ Նահանգների կենտրոնական հետախուզութեան վարչութեան տնօրէնի նախկին տեղակալն էր: Այժմ նա Ջորջթաունի համալսարանի Միջազգային Ռազմավարական Հետազօտութիւնների Կենտրոնի վարիչն է: Միւս գիտնականը Մաքսուէլ Ֆինգերն է: Նախկինում նա ՄԱԿի պատգամաւոր էր, իսկ այժմ դասաւանդում է Նիւ Եորքի համալսարանում: Մամուլի ասուլիսին մասնակցող երրորդ գիտնականը Լորենս Ֆրիդմանն էր, որ Չիկագոյի հասարակական ախտաբանութեան հիմնարկի տնօրէնն է: Իսկ չորրորդը այս բնագաւառի ամենախոշոր մասնագէտն էր, Ջոն Ալեքսանդրը՝ Միջազգային Ահաբեկչութեան Ուսումնասիրութեան հաստատութեան տնօրէնը:

Մամուլի ասուլիսի ժամանակ Կլայնը այն կարծիքը յայտնեց, որ Խորհրդային Միութիւնը ոչ միայն աջակցութիւն է ցուցաբերում միջազգային ահաբեկչութեանը, այլեւ ահաբեկչութիւնը դարձրել է իր արտաքին քաղաքականութեան միջոց: Խ. Միութեան յետեւից գալիս են Կուբան, Չեխոսլովակիան, Արեւելեան Գերմանիան, Հիւսիսային Կորէան, Հարաւային Եմենը և այլն: «Այս երկրները,- ասաց Կլայնը,- ահաբեկչութիւնը դարձրել են միջազգային բախումներ ստեղծելու աղբիւր: Ահաբեկչութեան միջոցով, առանց որեւէ վտանգի, նրանք կարողանում են փոխել աշխարհի ուժերի յարաբերակցութիւնը իրենց օգտին»:

Կլայնը նշեց նաեւ, որ ահաբեկչութիւնը ցածր մակարդակի վրայ վարւող պատերազմ է: Նա առաջարկեց, որ ամերիկեան կառավարութիւնը գտնի ճանապարհները, որ ահաբեկչութիւնը այլեւս Խ. Միութեանը օգուտ չբերի:

Մաքսուէլ Ֆինգերը առաջարկեց, որ Մ. Նահանգները ՄԱԿում ուրիշ երկրների հետ միասին նախապատրաստեն մի փաստաթուղթ, որի համաձայն բոլոր կառավարութիւնները ինքնաբերաբար և անմիջապէս խզեն իրենց դիւանագիտական կապերը այն երկրների հետ, որոնք Իրանի օրինակին հետեւե-

լով արտասահմանեան դիւանագէտներին պատանդ կը վերցնեն։ Ֆրիդմանը նախազգուշացրեց, որ ահաբեկիչների վրայ մեծ ուշադրութիւն չպէտք է դարձուի, որովհետեւ նրանք փառասէր են և ուզում են միջազգային համբաւ ձեռք բերել։

Եւ վերջապէս Ալեքսանդրը այն կարծիքը յայտնեց, որ ահաբեկչութիւնը կարող է իր գոյութիւնը շարունակել և ուժեղանալ, որովհետեւ դեռեւս գոյութիւն ունեն գաղափարական և քաղաքական բռնութիւնները։ Նրա կարծիքով 80ական թուականներին սպասւում է ահաբեկչութիւնների նոր ալիք։ Յետոյ մամուլի ասուլիսի մասնակիցները սկսեցին խօսել ահաբեկչութեան դէմ պայքարելու միջոցների մասին։

Չնայած նրան, որ մամուլի մասնակիցները ահաբեկչութեան երեւոյթի խոշոր մասնագէտներ են համարւում, իմ կարծիքով նրանք չկարողացան դուրս գալ քաղաքական շրջանակից և չկարողացան պատասխանել գլխաւոր այն հարցին, թէ ո՞րտեղից է ծնւում ահաբեկչութիւնը և ո՞րն է նրա բարոյական դէմքը։

Ենթադրենք որ Խ. Միութիւնը ահաբեկչութիւնը դարձրել է իր քաղաքական նպատակներին հասնելու ՄԻՋՈՑ։ Յետոյ ի՞նչ։ Ո՞վ ասաց, որ պայքարի այդ միջոցը դատապարտելի է որպէս միջոց, անկախ նրանից, թէ ինչ նպատակների է նա ծառայում։ Ո՞վ ասաց, որ այդ միջոցը աւելի վատն է, քան մնացած բոլոր միջոցները։ Ո՞վ ասաց, որ այսպէս կոչւած ՕՐԻՆԱԿԱՆ պատերազմների ժամանակ հակառակորդի քաղաքները ռմբակոծելը հարիւրաւոր խաղաղ բնակիչների ու երեխաների սպանելը աւելի ԸՆԴՈՒՆԵԼԻ է, քան ահաբեկչութիւնը։

Կան, անշուշտ, պատերազմի ու պայքարի միջոցներ, որոնք դատապարտւած են ու արգելւած որպէս այդպիսին։ Օրինակ՝ թունաւոր գազերի, կամ մանրէաբանական զէնքերի օգտագործումը արգելւած է որպէս միջոց։ Սա նշանակում է որ նման զէնքի գործադրումը դատապարտւելու է անկախ նրանից, թէ ո՞վ է և ի՞նչ նպատակների համար է օգտագործում այն։

Բայց կան պատերազմի ու պայքարի միջոցներ, որոնց բարոյականութիւնը, այսինքն թոյլատրելի լինելը կախւած է պայքարի նպատակի բարոյականութեամբ։ Հէնց իրենք՝ ամերիկացիները, որոնք այժմ փորձում են դատապարտել ահաբեկչութիւնը որպէս միջոց, Սալւադորում պայքարող ձախակողմեան ուժերին անւանում են ահաբեկիչներ և դատապարտում են նրանց գործունէութիւնը, իսկ Աֆղանստանի ապստամբ ուժերին ոչ միայն ահաբեկիչներ չեն համարում, այլեւ զէնք են տալիս նրանց։ Սա նշանակում է, որ այս կամ այն ահաբեկչական գործողութիւնը պէտք է դիտւի ոչ թէ զուտ միջոց լինելու տեսանկիւնից, այլ այն տեսանկիւնից, թէ ի՞նչ նպատակի համար է գործադրւում այն։

Ես անձամբ կարծում եմ, որ եթէ գոյութիւն ունեն արդար ու անարդար պատերազմներ, ապա գոյութիւն ունեն նաեւ արդար ու անարդար ահաբեկչութիւններ։ Եթէ ահաբեկչութիւնը արդար է, ապա նրան վերջ տալու միակ ճանապարհը այն է, որ միջազգային հասարակական կազմակերպութիւնները իրենց ձեռքը վերցնեն աշխարհի անարդար քաղաքական լուծումների հասարակական դատապարտութիւնը։ Այդ դէպքում ահաբեկիչները անելիք չեն ունենայ, որովհետեւ նրանց գործունէութեան միակ նպատակը՝ հասարակութեան ուշադրութիւնը իրենց խնդիրների վրայ գրաւելն է։

Այստեղ կարելի է համաձայնուել Ալեքսանդրի հետ այն մասին, որ 80ական թուականներին ահաբեկչութիւնը մեծ թափ է ստանալու, որովհետեւ դեռեւս գոյութիւն ունեն գաղափարական և քաղաքական բռնութիւններ։

Իսկ եթէ ահաբեկչութեան գնահատականը փորձենք որոշել պատերազմ վարելու բարոյականութեան տեսանկիւնից, ապա պէտք է խոստովանենք, որ նա շատ աւելի արդար է, քան «օրինական» պատերազմը, որովհետեւ, ի տարբերութիւն սովորական պատերազմի, այստեղ զինուորները ԿԱՄԱՒՈՐ կարգով են դաշտ դուրս գալիս, նրանց ոչ ոք բռնի ուժով պատերազմի դաշտ չի տանում։

Բացի դրանից, ահաբեկիչները (խօսքը արդար ահաբեկիչների մասին է), որպէս օրէնք, ահաբեկում են նրանց, ումից որոշ չափով կախուած է իրենց խնդիրների լուծումը։ Լինում են, անշուշտ, նաեւ պատահական զոհեր, բայց շատ աւելի քիչ, քան սովորական պատերազմների ժամանակ, որտեղ ոչ միայն խաղաղ բնակիչները, այլեւ զինուորները յաճախ չգիտեն, թէ ինչո՞ւ են մեռնում, ինչպէս, օրինակ ռուս տղաները՝ Աֆղանստանում, կուբացիները՝ Աֆրիկայում, ժամանակին ամերիկացիները՝ Վիետնամում և, ըստ երեւոյթին, մօտ ապագայում… Սալւադորում։

Արդ, ահաբեկչութիւնը աւելի լուրջ ուսումնասիրութիւն ու վերլուծութիւն է պահանջում, քան այդ այսօր արւում է։

1981

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ

Է. Յովհաննիսեան

Եթէ պահանջւէր ամենաընդհանուր ձեւով դասակարգել որեւէ քաղաքական դատ լուծելու աշխատանքները, ապա, հաւանաբար, կարելի էր թւարկել հետեւեալ կէտերը.

1.- Նպատակի բարոյականացում և բարոյական դաշնակիցների որոնում.

2.- Սեփական ուժերի քաղաքականացում և յեղափոխականացում.

3.- Նպատակի քաղաքականացում և քաղաքական դաշնակիցների որոնում.

4.- Թշնամու վրայ բարոյական, քաղաքական և յեղափոխական ճնշումի գործադրում։

Այս աշխատանքներից իւրաքանչիւրը պահանջում է յատուկ մօտեցում, որովհետեւ, մէկ նպատակի ծառայելով հանդերձ, սրանք բոլորը պատկանում են գործունէութեան տարբեր բնագաւառների և երբեմն թւում են հակասական։ Քննարկենք այս բնագաւառները Հայ Դատի առընչութեամբ։ Սկսենք Հայ Դատի բարոյականացման և բարոյական բարեկամների որոնման փուլից։

Քաղաքական գործունէութեան մէջ կայ աւանդոյթ դարձած մի երեւոյթ, որը հաւանաբար կրօնական արմատներ ունի, քանզի կապւած է չարի ու բարու փոխյարաբերութեան հետ։ Այդ երեւոյթը կայանում է նրանում, որ բոլոր, նոյնիսկ ամենադաժան ու անարդար քաղաքական քայլերի նկատմամբ կատարւում է նրանց բարոյապէս արդարացնելու փորձ։ Եթէ մի պետութիւն գրաւում է մէկ ուրիշի երկիրը, ապա այդ այնպէս է ներկայացւում, որ գրաւողը գրաււածին ազատագրում է։ Ստալինը 50 միլիոն մարդկանց ոչնչացումը արդարացնում էր ընկերվարական դաստիարակութեան անհրաժեշտութեամբ, իսկ Հիտլերը հրեաներին ոչնչացնում էր մարդկութիւնը չարիքից փրկելու համար։

Չկայ ոչ մէկ քաղաքական, պետական և հասարակական գործիչ, որ իր քաղաքական, պետական և հասարակական գործունէութիւնը արդար չհամարի։ Դժւար է ասել, թէ ինչո՞ւ են քաղաքական ու պետական գործիչները փորձում ձեռք բերել արդարի համբաւ։ Չէ՞ որ նրանց գործունէութիւնը, որպէս օրէնք, յենւում է ուժի վրայ և ժողովրդի համակրանքի կարիքը չունի։ Հաւանաբար ուրիշներին դուր գալու մարդկանց բնազդը տարածւում է նաեւ քաղաքական գործիչների վրայ։

Սակայն եթէ ամբողջատիրական երկրների ուժի վրայ յենուած քաղաքականութեան բարոյականացումը կրում է զուտ ձեւական և հոգեբանական բնոյթ, ապա ժողովրդավարական կարգեր ունեցող երկրներում քաղաքական քայլերի բարոյականացումը ունի հիմնական նշանակութիւն, որովհետեւ քաղաքական գործիչի քաղաքական ճակատագիրը կախուած է ընտրողների քւէներից։

Այսպիսով, նայած թէ ում ձեռքումն է գտնւում որեւէ դատի լուծման ղեկը, որոշւում են նրա ճանապարհները և նրա բարոյականացումը կարող է ունենալ այս կամ այն նշանակութիւնը։ Սակայն բարոյականացման անհրաժեշտութիւնը առաջնակարգ է դառնում բոլոր այն դատերի համար, որոնց ղեկը ոչ մէկ պետութեան ձեռքում չի գտնւում։ Այդ դատերին է պատկանում մեր Դատը, որի բարոյականացումը առնւազն երեք հետեւեալ պատճառներով կարեւոր է.

1.- Մեր Դատը միայն իր բարոյականութեամբ, այսինքն արդար դատերի շարքին պատկանելով կարող է միջազգային շարժումների և հասարակական կազմակերպութիւնների պաշտպանութիւնը գտնել։

2.- Այն պետութիւնը, որը սեփական քաղաքական շահերից ելնելով պաշտպանելու է Հայ Դատը, պիտի կարողանայ սեփական ժողովրդի առջեւ արդարացնել իր այդ քայլը։

3.- Մեր թշնամու երկրի ներսում բարեկամներ շահելու համար անհրաժեշտ է մեր պահանջների արդար լինելը։

Մեր Դատի բարոյականացման փուլում մեր բարոյական դաշնակիցներն են պաղեստինցիները, քիւրդերը, նիկարագուացիները և բոլոր այն ժողովուրդները, որոնք արդար ազգային ազատագրական պայքար են մղում։ Մեր հակառակորդներն են բոլոր շահագործող ու կեղեքող երկրները և առաջին հերթին Միացեալ Նահանգները և Խորհրդային Միութիւնը։ Մեր գաղափարական դաշնակիցն է ընկերվարութիւնը և ժողովրդավարութիւնը, իսկ թշնամին է աշխարհակալութիւնը և համայնավարութիւնը։ Մեր իրաւաբանական դաշնակիցներն են մարդու և ազգերի իրաւունքների պաշտպանութեան միջազգային օրէնքները և համաձայնութիւնները։ Այս բնագաւառում մենք մասնակցում ենք թէ՛ մեր և թէ ուրիշ ազգերի իրաւունքների պաշտպանութեան ցոյցերին, բողոքագրերին ու պահանջներին։ Այս բնագաւառում մեզ համար օգտակար են մեր Դատը արդարացնող բոլոր յայտարարութիւնները, անկախ նրանից թէ ո՞վ է յայտարարողը։ Այս բնագաւառում մենք ունենք միայն մէկ խնդիր. ներկայացնել աշխարհին մեր Դատը և նրա արդարութեան հիման վրայ շահել բարեկամներ։

Բոլորովին այլ մթնոլորտ է տիրում մեր Դատի քաղաքականացման և քաղաքական դաշնակիցներ որոնելու բնագաւառում։ Այստեղ բարեկամներ

գտնելու չափանիշները բոլորովին այլ բնոյթ են կրում: Մեր հնարաւոր քաղաքական «բարեկամներին» գրեթէ չի հետաքրքրում մեր Դատի արդարութիւնը: Այդ բանը նրանց համար, ինչպէս ասացի, միայն սեփական ժողովրդի աչքին արդարանալու համար է: Նրանց համար կարեւորը այն է, թէ որքանով մեր շարժումը, առաւել եւս՝ մեր Դատի լուծումը համընկնում է իրենց պետական շահերին: Դրա համար էլ կարող է այնպէս պատահել, որ բարոյական բնագաւառի մեր դաշնակիցը, օրինակ՝ Յունաստանը կամ Խորհրդային Միութիւնը, մատը մատին չխփի մեր Դատի օգտին քաղաքական բնագաւառում:

Եւ շատ հաւանական է, որ բարոյական մարզի մեր ռեւէ թշնամի քաղաքական բնագաւառում մեր դաշնակիցը դառնայ: Սա շատ բնական բան է և այստեղ ոչ մէկ հակասութիւն չկայ: Անշուշտ, նախքան քաղաքական դաշնակից որոնելը պէտք է քաղաքականացւի ինքը նպատակը, այսինքն պէտք է տրւեն Հայ Դատից բխող այնպիսի քաղաքական ձեւակերպումներ, որոնք քաղաքականապէս ընդունելի լինեն: Օրինակ՝ պաղեստինցիները բարոյական բնագաւառում խօսում էին Իսրայէլը ոչնչացնելու մասին և չէին ճանաչում նրա գոյութիւն ունենալու իրաւունքը: Սակայն բոլորի համար պարզ էր, որ քաղաքական բնագաւառում նրանք բոլորովին այլ պահանջներ են ներկայացնելու: Եւ ահա, Պաղեստինեան Ազգային Խորհրդի նախագահը յայտարարեց, որ իրենց կազմակերպութիւնը ոչ մէկ պետութիւն ոչնչացնելու մտադրութիւն չունի:

Ներկայ քաղաքական պայմաններում, հաւանաբար, մեր Դատի քաղաքականացման ամենաառաջին և, իմ կարծիքով, ամենակարեւոր քայլը քաղաքական կողմնորոշման խնդրի լուծումն է: Այսինքն՝ անհրաժեշտ է պարզել արեւմտեա՞ն թէ արեւելեա՛ն հարց է Հայկական Հարցը: Անկասկած, այստեղ պահանջւում է լուրջ ու պատասխանատու ուսումնասիրութիւն, բայց մի քանի պարզ դատողութիւնների հիման վրայ էլ կարելի է յանգել առաջին եզրակացութիւնների:

Եթէ Արեւմուտք-Արեւելք բաժանումը կատարենք այնպէս, որ Արեւելք համարւի Խորհրդային Միութիւնը իր արբանեակներով, իսկ Արեւմուտք՝ Միացեալ Նահանգները իր դաշնակիցներով, ապա առնւազն մէկ բան պարզ է դառնում: Եթէ Արեւելքը շահագրգռւած լինի մեր հարցը լուծելու մէջ, ապա նա այդ կարող է անել միայն պատերազմի միջոցով: Իսկ եթէ Արեւմուտքը շահագրգռւի մեր խնդրով, ապա նա ի վիճակի է այդ հարցը լուծելու քաղաքական միջոցներով:

Ես դէռ չեմ խօսում այն մասին, թէ ինչո՞ւ պէտք է այս կամ այն կողմը շահագրգռւի մեր Դատով, ես միայն պնդում եմ, որ Խորհրդային Միութիւնը առանց պատերազմի ի վիճակի չէ Թուրքիայից մէկ թիզ հող վերցնելու: Եւ խօսքը ոչ թէ սովորական, այլ երրորդ համաշխարհային պատերազմի մասին է, ո-

րովիետեւ, ի տարբերութիւն Աֆղանստանի, Լեհաստանի և Չեխոսլովակիայի, Թուրքիան չի մտնում Խորհրդային Միութեան ազդեցութեան գօտու մէջ: Կարծում եմ, որ ամենամիամիտ մարդն էլ հասկանում է, որ հայերի համար Խորհրդային Միութիւնը երրորդ համաշխարհային պատերազմ չի սկսի: Իսկ եթէ որեւէ ժամանակ, սեփական քաղաքական շահերից ելնելով, նա ոտնձգութիւններ ունենայ Թուրքիայի հողերի վրայ, ապա նա կ'օգտագործի թուրք կոմունիստներին ու քիւրդերին:

Այսինքն ամենապարզ տրամաբանութիւնը թելադրում է մեզ, որ Արեւելքից մենք ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՍՊԱՐԷԶՈՒՄ սպասելիք չունենք: Այդ կողմից շատ բան կարելի է սպասել բարոյական ասպարէզում և պէտք է ասել, որ սպասելիքները որոշ չափով արդարացւում են: Խորհրդային Հայաստանի գրողների, գիտնականների, քաղաքական գործիչների յայտարարութիւնները, Հայաստանի զինանշանի վրայի Արարատը, Եղեռնի յուշարձանը, Ջոն Կիրակոսեանի, Ներսիսեանի և շատ ուրիշ հեղինակների կողմից գրւած աշխատութիւնները, այս ամէնը Հայ Դատի բարոյականացման ուղղութեամբ կատարւած անգնահատելի աշխատանքներ են:

Բայց սրանով էլ վերջանում է նրանց նշանակութիւնը: Մեզ համար պէտք է պարզ լինի, որ այս ամէնը քաղաքական աջակցութեան նշաններ չեն: Իսկ ամենակարեւորը այն է, որ Սփիւռքի վարքագծով չի որոշւում Խորհրդային Միութեան վերաբերմունքը Հայ Դատի նկատմամբ: Եթէ ամբողջ Սփիւռքը մէկ մարդու նման կանգնի Խորհրդային Միութեան կողքին և հաւատարիմ ծառայի նրան, միեւնոյն է, Խորհրդային Միութիւնը Հայ Դատի լուծման ուղղութեամբ ոչ մէկ քաղաքական քայլ չի կատարելու:

Ինչո՞ւ այս բանը կարեւոր է պարզել: Նայած այն բանին թէ մեր դատը արեւելեա՞ն թէ արեւմտեան կողմնորոշում ունի, լրջօրէն փոխւում է նրա քաղաքական բովանդակութիւնը: Եթէ հարցը պէտք է լուծւէր պատերազմի միջոցով, ապա քաղաքական պահանջները պէտք է լինեն չափից աւելին համեստ: Տեսնենք, թէ արդեօք բարոյական մարզի մէջ հակառակորդ ամերիկեան աշխարհակալութիւնը կարո՞ղ է մեր դաշնակիցը դառնալ քաղաքական ասպարէզում:

Այս հարցին պատասխանելու համար քաղաքական հաշւարկ է հարկաւոր, որը կատարւած չէ, բայց ընդհանուր հնարաւորութիւնը պարզելու համար կարելի է դիմել Մերձաւոր Արեւելքի օրինակին: Բարոյական մարզում ամբողջ Արաբական աշխարհի համար ամերիկեան աշխարհակալութիւնը առաջին թշնամին էր: Սակայն, երբ Սադաթը հասկացաւ, որ Մերձաւոր Արեւելքի հարցը ոչ թէ արեւելեան, այլ արեւմտեան հարց է, նա, հակառակ բարոյա-

կան մարզում գործող արժէքների, կարողացաւ առանց մէկ կաթիլ արիւն թափելու վերադարձնել Սինայի անապատը։

Ուզենք թէ չուզենք, մենք պէտք է գիտակցենք, որ Միացեալ Նահանգների և նրա եւրոպական դաշնակիցների համար որեւէ ձեւով Հայկական Դատի լուծումը մօտեցնելու գործը շատ աւելի հեշտ է, քան Խորհրդային Միութեան համար։ Բոլորովին այլ հարց է, թէ ինչո՞ւ պէտք է նրանք ուզեն այդ բանը անել, բայց եթէ ուզեն, նրանք կարող են մօտեցնել մեր հարցի լուծումը։ Եւ այստեղ մենք չպէտք է ներքին վէճերի մէջ մտնենք այն իմաստով, թէ քաղաքական ասպարէզում մենք համագործակցում ենք մեր բարոյական թշնամիների հետ կամ բարոյական ասպարէզում մենք պայքարում ենք մեր քաղաքական դաշնակիցների դէմ։

Այս ամէնը մէկ նպատակի ծառայելու գործունէութիւն է և մեր քաղաքականացած ժողովուրդը բոլորին էլ պէտք է յաջողութիւն ցանկանայ և օգնի։ Ինչ վերաբերում է թշնամու վրայ ճնշում գործադրելու խնդրին, ապա այդ այստեղ խօսելու հարց չէ։ Մեր քաղաքականացման մասին էլ խօսել չեմ ուզում, որովհետեւ այդ ոչ այլ ինչ է, եթէ ոչ բարոյական և քաղաքական արժէքների տարբերութիւնը ըմբռնելու հասունութիւն։

1983

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Է. Յովհաննիսեան

Ընդհանրապէս ընկերվարական մտքին և յատկապէս Դաշնակցութեան ընկերվարական աշխարհահայեացքին արժեւորումը կատարող յօդուածաշարքի մը կը ձեռնարկէ ընկ. Է. Յովհաննիսեան այս թիւէն սկսեալ։

Տեսակէտներու փոխանակման կարգով կը ներկայացնենք յօդուածաշարքը, յուսալով որ հեղինակին մտածումները և արծարծած հարցերը արձագանգ պիտի գտնեն և ծառայեն բազմակողմանի ու բազմաձայն քննարկումի։

Գաղափարներու բիւրեղացման սատարող նման հանդիպումի մը իբրեւ ներածական՝ խմբագրութիւնս ընթերցողի ուշադրութեան կը յանձնէ հետեւեալ հարցադրումները.-

Ա.- Դաշնակցութեան ծրագրային վերլուծումին հետ ի՞նչ աղերս ունի մեր ընկերոջ մօտեցումը, երբ իրարմէ կը զատէ մէկ կողմէ «բնական» և միւս կողմէ «գիտական» ու «քաղաքական» ընկերվարութիւնները, զանոնք մինչեւ իսկ իրարու հակադրելով։

Բ.- Ընկերվարական շարժումին բարոյական արժէքը ընդգծելու տրամաբանութենէն անդին կրնա՞յ անցնիլ հետեւողական այն շեշտադրումը, թէ Արդարութեան գաղափարախօսութիւնն է ընկերվարութիւնը։ Այլ առումով՝ ընկերվարութեան իտէալը կարելի՞ է գիջողականութեամբ մը նուազեցնել և հաւասարեցնել ընկերային արդարութեան պահանջին հետ։ Ամբողջովին նոր հասարակարգ մը պատկերացնող ընկերվարութենէն ի՞նչ կը մնայ այդ պարագային։

Գ.- Ինչո՞ւ «գիտական ընկերվարութիւն»ը կը նկատուի գլխաւոր աղբիւրը խորհրդային դրութեան հետ գաղափարական մեր տարակարծութեան և հակադրութեան։ Մեր ընկերը փաստօրէն խորհրդային կարգերուն կը վերապահէ «գիտական ընկերվարութիւն»ը ներկայացնելու «մենաշնորհը». երբ նոյնինքն համայնավար շարժումներ այսօր կը մերժեն լենինեան դպրոցին աշակերտելու նման պարտադրանք։

Դ.- Ընկերվարական աշխարհը յուզող գլխաւոր տագնապը չի՞ խտացներ մեր ընկերը, երբ դիտել կու տայ որ «եթէ մենք մարքսական չենք, դա դեռեւս չի նշանակում որ մենք ամբողջովին մերժում ենք Մարքսի ուսմունքը»։ Յատկապէս Դաշնակցութիւնը կը մերժէ ընկերվարութիւնը այս կամ այն «դպրոց»ի դրօշով պայմանաւորելու սպանդամոլութիւնը՝ գաղափարական իր կենսունակութեան և անկախութեան նախապայման նկատելով դրական ամէն ներդրում հաշւի առնելու և արժեւորելու ազատախոհութիւնը։

Ե.- Դաշնակցութիւնը միշտ ալ շեշտած է ապրող գործին գաղափարական հաւատքին և յեղափոխական նուիրման կարեւորութիւնը: Աւելին, շարունակ քննադատած է միայն խօսքով և տեսական մարզանքներով տարուելու ունակութիւնը: Բայց ծրագրային հարցերու շուրջ մշակուած մեր ամբողջ գրականութիւնը վկայ, որ Դաշնակցութիւնը ոչ մէկ ատեն անտեսած է գաղափարական իր տեսութիւնը զարգացնելու, խորացնելու և այժմէականացնելու անհրաժեշտութիւնը, և լծուած է այդ աշխատանքին՝ ամէն անգամ որ առիթը ունեցած է: Առ այդ, ընկ. Է. Յ. ի՞նչ հարց կը լուծէ, երբ իրարու կը հակադրէ ընկերվարական հաւատքը և ընկերվարական տեսութիւնը:

Ժամանակակից հասարակական կեանքը ամէն քայլափոխում համոզում է մեզ, որ գոյութիւն ունի բնական ընկերվարութիւն, որը տարբերւում է գիտական և քաղաքական ընկերվարութիւններից նախ իր կարեւորութեամբ, ապա իր յստակութեամբ: Բնական ընկերվարութիւնը տարբերւում է բոլոր մնացած ընկերվարութիւններից ինքնուրոյնութեամբ, և դեռ նրանով, որ կախւած չէ ոչ աշխարհագրական դիրքից, ոչ ազգային նկարագրից, ոչ տնտեսական վիճակից և ոչ էլ քաղաքական կացութիւնից: Հաւանաբար կարելի էր խօսել ընկերվարական գաղափարախօսութեան տարբեր կողմերի մասին, եթէ այդ կողմերը չլինէին այդքան տարբեր, որ ստիպէին մեզ որակել նրանց որպէս տարբեր ընկերվարութիւններ: Նման բաժանումը օգտակար է մեզ համար նաեւ այն պատճառով, որ կարող է օգնել էլ աւելի յստակեցնել դաշնակցական ընկերվարութեան տեղը մեր ժողովրդի հասարակական և քաղաքական կեանքում:

Ներկայումս, երբ մարդկութիւնը բախւել է բարոյական, տնտեսական ու քաղաքական չլուծւած տարբեր հարցերի հետ և փորձում է գաղափարախօսական ճանապարհով լուծել այդ խնդիրները, մենք կարող ենք հաստատել, որ միայն ընկերվարական գաղափարախօսութիւնն է, որ չի տատանւում, չի նահանջում և խուճապի չի մատնւում ստեղծւած կացութիւնների դիմաց, այլ՝ առաջւայ պէս համարձակօրէն, առաջւայ համոզւածութեամբ գուշակում է մարդկութեան ապագան և պայքարում է այդ ապագայի համար: Ընկերվարական գաղափարախօսութեան այդ ինքնավստահութիւնը հիմք ունի, քանզի մարդկութեան մեծ մասը Եւրոպայում, Աֆրիկայում, Ասիայում, Հարաւային Ամերիկայում արդէն կանգնել են այդ ճանապարհի վրայ: Աշխարհի երիտասարդութեան մեծ մասը գտնւում է ընկերվարական գաղափարախօսութեան ազդեցութեան տակ, իսկ աշխարհի քաղաքական գործիչների և կառավարութիւնների մեծ մասը, տուրք տալով իրենց ընտրողների ցանկութիւններին, ընտրապայքարի ժամանակ խոստանում են ընկերվարական արդարութիւններ: Խոշորագոյն փիլիսոփաները խոնարհւում են ընկերվարական սկզբունք-

ների առջեւ և նրանցից ոչ մէկը չի համարձակւում դատապարտել այդ սկզբունքները, կամ շրջանցել նրանց։

Որտեղի՞ց է գալիս ընկերվարութեան այս ուժը և բոլորի կողմից ընդունւող այս միջազգայնականութիւնը։ Ի տարբերութիւն ուրիշ գաղափարախօսութիւնների, ընկերվարութեան կողմնակիցները արտայայտում են այնպիսի տարբեր տեսակէտներ, որ միայն զարմանալ կարելի է, թէ ինչպէ՞ս այս բոլորը կարող են համարւել մէկ գաղափարախօսութեան կողմնակիցներ։ Միայն մի քանի մէջբերումներ.-

«Երբ տապալւեց ճորտատիրութիւնը և լոյս աշխարհ եկաւ «ազատ» դրամատիրական հասարակարգը, անմիջապէս պարզւեց, որ այդ ազատութիւնը ոչ այլ ինչ է, քան աշխատաւորների հալածման ու շահագործման նոր համակարգ։ Որպէս այդ հալածանքների դէմ ուղղւած բողոք, անմիջապէս սկսեցին ծնւում առնել տարբեր ընկերվարական տեսութիւններ» (Լենին)։

«Աֆրիկեան հասարակարգերը միշտ ապրել են բնական ընկերվարութեան սահմաններում, որը կարելի է անւանել բնազդական» (աֆրիկեան ընկերվարութեան գաղափարախօս Դուդու Տիամ)։

«Ընկերվարութիւնը մահմեդական կրօնի մաս է կազմում և անմիջականօրէն կապւած է ժողովրդի նկարագրի հետ այն ժամանակներից սկսեալ, երբ այդ ժողովուրդը քոչւոր հեթանոս էր» (արաբական ընկերվարութեան գաղափարախօս Էլ-Աֆղանի)։

Սրանց կարելի էր աւելացնել Ֆրանսիայի ընկերվարականների, եւրոհամայնավարների, վիեթնամեան բանւորական շարժումների, եւրոպական ընկերվար-ժողովրդավարների և նոյնիսկ տարբեր երկրների ազգային ընկերվարականների արտայայտութիւնները, և պարզ կը դառնար, որ ընկերվարութեան ուժը ոչ նրա ձեւերի մէջ է, որոնք արմատապէս տարբերւում են մէկը միւսից, այլ այն բնական և սկզբունքային արժէքների մէջ, որոնք նա պաշտպանում է և որոնց ձգտում է։

Այդ արժէքների մէջ կարեւորագոյնը և գուցէ միակը ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆն է։ Եւ բոլորովին կարեւոր չէ, թէ խօսքը ո՞ր արդարութեան մասին է՝ տնտեսակա՞ն, ազգայի՞ն, թէ բարոյական։ Կարեւոր չէ նաեւ այն, թէ ի՞նչն է համարւում արդարութիւն՝ հաւասարութի՞ւնը, թէ ըստ կարողութիւնների վարձատրութիւնը։ Կարեւորը այն է, որ բոլոր ընկերվարականները արդարութիւն են որոնում։ Եւ եթէ տարբեր ընկերվարութիւններ տարբեր արդարութիւններ են որոնում, դա նրանից է, որ սահմանել արդարութիւն հասկացութիւնը նոյնքան դժւար է, որքան դժւար է որոշել կեցութեան և գիտակցութեան իրական փոխյարաբերութեան ոլորտը։

Եթէ շատ չխորանանք արդարութեան փիլիսոփայութեան մէջ, բայց նրա հանդէպ ցուցաբերենք ամբողջական մօտեցում, ապա արդարութեան հասկացութեան մէջ մենք կը գտնենք առարկայական և ենթակայական կողմեր։

Եթէ մենք ասենք, որ այսինչ քայլը, որոշումը կամ վարչակարգը մեզ արդար է թւում, մենք արդէն իսկ նշում ենք մեր գնահատականի ենթակայականութիւնը։ Բացառւած չէ, որ ուրիշներին այդ որոշումը կամ վարչակարգը անարդար թւայ։ Բայց մէկ բանը յստակ է. եթէ մենք որեւէ որոշում կամ վարչակարգ արդար ենք համարում, մենք նրան տալիս ենք դրական գնահատական և ոչ մէկը չի պնդի, որ արդարութիւնը վատ բան է։ Սա նշանակում է, որ արդարութիւնը պատկանում է այն բացարձակ արժէքներին, որոնք առարկայական բնոյթ ունեն և չեն կարող որոշւել ձայների մեծամասնութեամբ։

Առարկայական արժէքները ժխտողների համար միակ անվիճելի արժէքը ենթակայական ցանկութիւնների բաւարարութիւնն է։ Այսինքն անձի համար իրերի և երեւոյթների արժէքաւորման միակ աղբիւրը սեփական ցանկութիւնների բաւարարութիւնն է՝ լինի դա մարմնական թէ հոգեկան ասպարէզներում։ Այդ բաւարարութիւնը կոչւում է երջանկութիւն, որին ձգտում են բոլորը։ Այս մօտեցման համաձայն, մարդու բարոյական վարքագիծը զուտ եսասիրական է։ Եթէ մենք կատարում ենք բարի գործեր, օգնում ենք ուրիշներին, կատարում ենք զոհաբերութիւններ և ցուցաբերում գթասրտութիւն, ապա դա անում ենք միայն նրա համար, որ դրանից հաճոյք ենք ստանում։ Այս մօտեցումը անընդունելի է այն պարզ պատճառով, որ նա չի բացատրում իմացեալ մահը և մեզանից աւելի կարեւոր արժէքների գոյութիւնը։ Առանց առարկայական արդարութեան, որը մենք ընկալում ենք մեր ներըմբռնման միջոցով, անկարելի կը լինէր բացատրել խիղճ հասկացութիւնը, որը վերջին հաշւով արդարութեան միակ դատաւորն է։ Արդարութիւնը մարդու էութեան արտայայտութիւններից մէկն է։ Սխալ են այն տեսակէտները, թէ արդարութիւնը կապւած է օրէնքի հետ։ Օրէնքները ստեղծւել են որպէս արդարութեան ձգտումների արտայայտութիւն։ Արդարութիւնը եղել է օրէնքից առաջ։ Արիստոտէլը առաջինն էր, որ խօսեց հաւասարութեան և բաշխման արդարութիւնների մասին, բայց նա ոչինչ չասաց բնութեան հարստութիւնների հաւասար բաշխման և կամ էլ արտադրական միջոցների նկատմամբ հաւասարութիւն հաստատելու մասին։ Այդ մասին խօսեց ընկերվարութիւնը։

Ընկերվարութիւնը արդարութեան գաղափարախօսութիւնն է և որպէս այդպիսին նա ունի մի քանի առանձնայատկութիւններ, որոնք շատ աւելի կարեւոր են, քան բոլոր այն տեսութիւնները, որոնք կառուցւում են մասնաւոր ընկերային հարցերի շուրջ և փոփոխական են, չնայած նրան, որ գիտութիւն կոչւելու յաւակնութիւնը ունեն։

Արդարութեան գաղափարախօսութիւնից բխող առանձնայատկութիւնները հետեւեալներն են.-

1) Արդարութիւնը պատկանում է այն ճշմարտութիւններին, որոնց մարդը որոնել է իր պատմութեան ամբողջ ընթացքում: Բայց արդարութեան առանձնայատկութիւնը այն է, որ այդ ճշմարտութեան ձեռքբերումը մարդու համար քիչ է: Նա ուզում է աւելին, նա ուզում է որ իր արդարութիւնը բոլորի կողմից ընդունւի, բոլորի համար արդարութիւն լինի: Հակառակ դէպքում այդ արդարութիւնը կը կրի մասնաւոր բնոյթ, և չի կարող իսկական արդարութիւն կոչւել: Սա նշանակում է, որ արդարութիւնը գաղափարախօսական արժէք է, այսինքն նա արժէքաւորւում է գաղափարախօսութեամբ: Նա տարբերւում է կրօնական յայտնութիւնից, որը զուտ անհատական է և կարող է փրկել մէկ հաւատացեալի, բայց ոչ մարդկութիւնը, որի համար քարոզ է հարկաւոր: Բայց արդարութիւնը պարունակում է իր մէջ առարկայական և ենթակայական գործօններ, ուստի նրան արտայայտող աշխարհայեացքը և գաղափարախօսութիւնը կարող են լինել միայն համադրական սկզբունքներով կառուցւած:

2) Արդարութեան հասկացութիւնը ծնւում ու գործում է միայն այնտեղ, որտեղ կան առնւազն երկու հոգի: Մէկ մարդու ոչ ձգտումները և ոչ վարքագիծը չեն կարող գնահատւել արդարութեան չափանիշներով, եթէ նրա այդ ձգտումները և քայլերը չեն առընչւում մէկ ուրիշի ձգտումների և քայլերի հետ: Արդարութիւնը ընկերային կեանքի յատկութիւն է: Արդարութեան միջոցով կարգաւորւում են մարդկային փոխյարաբերութիւնները և ստեղծւում է մարդկային ներդաշնակութիւնը: Սա նշանակում է, որ արդարութիւնը ընկերային արժէք է և տարբերւում է բոլոր այն արժէքներից, որոնք մարդու անհատական երջանկութեանը տալիս են ամենաբարձր գնահատականը:

Ամէն մարդ ունի երջանկութիւն ձեռք բերելու իրաւունքը՝ հարստութիւն, պաշտօն ու փառք ձեռք ձգելու ազատութիւնը: Արդար թւացող այս պնդումը, որը մտել է որոշ երկիրների սահմանադրութիւնների մէջ, իրականում այնքան էլ արդար չէ, և փաստօրէն կը մնայ դատարկաբանութիւն, այնքան ժամանակ, քանի դեռ երջանկութիւն ձեռք բերելու միջոցները և առարկաները սահմանափակ են: Այս պայմաններում, ուժեղները միշտ էլ ձեռք կը բերեն աւելի շատ քան թոյլերը, այսինքն կը կերտեն իրենց երջանկութիւնը ուրիշի հաշւին: Սա նշանակում է, որ անհատական երջանկութիւնը փառաբանող և այդ երջանկութեան նպաստող բոլոր տեսութիւնները ուժեղների, այլ ոչ թէ հասարակութեան բոլոր անդամների արդարութեան ուսմունքներն են: Ընկերվարութիւնը ուժեղների երջանկութիւնը սահմանափակելու և ամբողջ ընկերութեան երջանկութիւն տալու ձգտումն է:

3) Ընկերային արդարութիւնը չի կարող ստեղծուել ինքնըստինքեան, քանզի մարդկային հասարակարգում չի գործում բնական հաւասարակշռութեան օրէնքը: Տարբեր գիտնականների շարքին, առաջին հերթին Դարւինը հռչակեց գոյութեան պայքարի թեզը և յայտարարեց, թէ կենդանական աշխարհում գործում է ուժեղի օրէնքը: Ամբողջովին սխալ են այդ տեսութիւնները: Կենդանական աշխարհում ոչ մէկ կենդանի չի օգտագործում իր ուժը ուրիշ կենդանիների նկատմամբ առաւելութիւններ ստանալու համար: Ոչ մի կենդանի չի սպանում ուրիշ կենդանու, եթէ քաղցած չէ: Ընդհանրապէս կենդանական աշխարհում ուժի հասկացութիւնը օգտագործելի չէ:

Բնութեան հաւասարակշռութիւնը պահպանւում է այն յատուկ օրինաչափութիւնների միջոցով, որոնց սահմաններից դուրս չի գալիս ոչ մէկ կենդանի: Բայց մարդկային հասարակարգում այդ օրէնքները չեն գործում և մարդիկ կարողանում են օգտագործել իրենց ուժը առաւելութիւններ ձեռք բերելու համար: Սա նշանակում է, որ ընկերային արդարութիւնը կարող է ձեռք բերուել միայն յեղափոխական ճամբով, այսինքն ուժեղների կամքին հակառակ: Պայման չէ, որ յեղափոխութիւնը զինեալ պայքար լինի: Կարելի է այլ ճանապարհով սահմանափակել ուժեղների սանձարձակութիւնը: Օրինակ՝ պետական տուրքերի միջոցով:

4) Արդարութիւնը՝ որպէս մարդու ընկերային ինքնագիտակցութեան չափանիշ և որպէս ներդաշնակութեան զգացմունքի արտայայտութիւն, վերաբերւում է բոլոր հաւաքականութիւններին, որոնց մէջ առաջնակարգ տեղ է գրաւում ազգը: Ազգի նկատմամբ գործադրւող անարդարութիւնը մենք ընկալում ենք որպէս սեփական ցաւ, ազգի կողմից կատարւած սխալների համար մենք ամաչում ենք, իսկ յաջողութիւններով ուրախանում: Սա նշանակում է, որ արդարութիւնը, որքան էլ համամարդկային թւայ, ունի ազգային էութիւն, որովհետեւ ազգային ներդաշնակութիւնը և ազգը բնական արժէքներ են: Դատարկ խօսքեր են ազգերի ժամանակաւոր գոյութեան տեսութիւնները: Նրանք կը լինեն այնքան ժամանակ, քանի դեռ նրանց չեն ոչնչացրել բռնի ուժով: Եւ, ուրեմն, ազգապահպանումը ընկերվարական սահմաններում է գտնւում:

Այսպիսով, ընկերվարութիւնը ընկերային, այդ թւում նաեւ ազգային արդարութեան գաղափարախօսութիւնն է, որը յենւում է համադրական աշխարհայեացքի վրայ և իր նպատակները իրականացնում է յեղափոխական ճամբով:

Սրանք են արդարութեան գաղափարախօսութեան առանձնայատկութիւնները և հէնց սրանք են բնական ընկերվարութեան հիմնական սկզբունքները:

Մաքուր ընկերվարութիւնը հէնց այստեղ էլ պէտք է կանգնի, համարելով մնացած բոլոր տնտեսական ու քաղաքական ծրագրերը՝ ընկերվարութիւնը ի-

րականացնելու տեղական փորձեր, որոնք կարող են լինել յաջող կամ անյաջող: Հաւանաբար Հ.Յ.Դաշնակցութիւնը այն հազւագիւտ ընկերվարական կուսակցութիւններից է, որը չի շեղուել այս սկզբունքներից և որդեգրել է այն մաքուր ընկերվարութիւնը, որը կապ չունի տնտեսական և քաղաքական մանրամասնութիւնների հետ: Այդ մանրամասնութիւնները կապ ունեն տւեալ ժողովրդի աշխարհագրական դիրքի, նկարագրի, պատմական փորձի, արդիւնաբերական զարգացման և շատ ուրիշ բաների հետ: Այդ մանրամասնութիւնները կը մշակւեն, երբ դրա համար ստեղծւեն համապատասխան պայմաններ:

Շատ իմաստուն գտնւեց Ռուբէնը, երբ նշեց որ **«Դաշնակցութեան ուժը հայութեան բնազդի մէջ է: Նա չունի տեսաբանական մեծ գրականութիւն ծրագրերի ու նախագծերի շուրջ, բայց ունի մի քանի նախադասութիւններից կազմւած նպատակներ, որոնց սեփականութիւնը իրենից աւելի հայութեանն է»:** Կասկածից վեր է, որ Հ.Յ.Դաշնակցութեան ընկերվարութիւնը հայ ժողովրդի արդարութեան զգացմունքի արտայայտութիւնն է և այս իսկական ընկերվարութեան դիրքերից մենք ոչ մէկ տարակարծութիւններ չունենք և չենք կարող ունենալ Հայաստանում ապրող մեր հայրենակիցների հետ: Այդ տարակարծութիւնները և նոյնիսկ թշնամութիւնը սկսւում են այնտեղ, որտեղ բնական ընկերվարութիւնը վեր է ածւում այսպէս կոչւած գիտական ընկերվարութեան, որը ոչ թէ ընկերվարութեան ձեւերից մէկն է, այլ նոր բովանդակութիւն:

Գիտական կոչւող ընկերվարութիւնը այլեւս ոչ թէ արդարութեան գաղափարախօսութիւնն է, այլ վարչակարգի մի այնպիսի ձեւ, որը ծնել է սեփական արժէքներ ընկերային կեանքի բոլոր բնագաւառներում և այդ արժէքները բոլոր բնագաւառներում շատ հեռու են արդարութիւնից: Իբր թէ Մարքսը և Էնգելսը բոլոր նախորդ երեւակայական ընկերվարութիւնները վեր ածեցին գիտութեան և այդ գիտութեան հիման վրայ կառուցւած ընկերվարութիւնները իբր թէ ամենաարդար վարչակարգերն են:

Նախ՝ ճի՞շտ է արդեօք ընկերվարական գիտութիւն ստեղծելու փորձը: Կարո՞ղ է արդեօք գիտութիւն կոչւել այն տեսութիւնը, որ ջանում է կարգաւորել բազմակողմանի ու սահման չունեցող մարդկային փոխյարաբերութիւնները: Ապա՝ կարելի՞ է արդեօք Ռուսաստանում գործադրւող սկզբունքները կիրառել Ճապոնիայում կամ Եթովպիայում: Իսկ եթէ ոչ, ուրեմն այն ինչ ընկերվարական գիտութիւն է կոչւում, ոչ այլ ինչ է, եթէ ոչ տնտեսական ընկերվարութեան կիրառման փորձ:

Այս իմաստով խորհրդային փորձը ոչ առաջինն է, ոչ լաւագոյնը և ոչ էլ վերջինը: Ընկերվարութիւնը դեռ իր վերջին խօսքը չի ասել, բայց արդէն շատ բան է ասել ու իրականացրել:

Մենք զարմանալիօրէն ընկերվարական ենք կոչում միայն այն հասարակարգերը, որտեղ ընկերվարական կուսակցութիւնները անցել են իշխանութեան գլուխ, վերացրել են մասնաւոր սեփականութիւնը և իրենք իրենց ընկերվարական հռչակել: Մինչդեռ բնական ընկերվարութեան համար կարեւորը արդարութիւնն է, այլ ոչ թէ վարչակարգի ձեւը: Ազատութիւնը ու հաւասարութիւնը, այլ ոչ թէ այդ մասին ճառերը ու խմբագրականները:

Մենք երբեմն չենք ուզում նկատել ընկերվարական սկզբունքների իրականացումը դրամատիրական երկրներում, վախենալով որ այդ սկզբունքների կիրառման պատիւը վերագրւի դրամատիրական կառավարութեանը և վարչակարգին: Բայց այս մօտեցումը ամբողջովին սխալ է, որովհետեւ սեփական կամքով չէ, որ դրամատիրական երկրների օրէնսդրական մարմինները զիջումներ են կատարում ընկերվարական սկզբունքներին: Աշխատաւորները իրենց գործադուլներով, բողոքի ցոյցերով և պայքարի այլ միջոցներով են ստիպել այդ կառավարութիւններին բաւարարութիւն տալ իրենց պահանջներին: Եւ, անշուշտ, այդ զիջումները ընկերվարական սկզբունքների յաղթանակն են: Եթէ Դաշնակցային Գերմանիայում, Ֆրանսիայում, Շուեդիայում կամ Անգլիայում բանւորները անգործութեան նպաստ են ստանում, իսկ հարուստները իրենց եկամուտից ահագին տուրքեր են վճարում, եթէ այդ երկրներում կանայք իսկական հաւասարութիւն են ձեռք բերել և գոյութիւն ունեն մի շարք այլ ընկերային արդարութիւններ, ապա դրանք միայն ու միայն ընկերվարական սկզբունքների յաղթանակն են և այդ յաղթանակը ձեռք է բերւել յեղափոխական ճամբով: Աշխատաւորները հասել են դրան սեփական զոհերի, այլ ոչ թէ կառավարութիւնների մարդասիրութեան գնով:

Ուրեմն, արդարութեան գաղափարախօսութեան սկզբունքներից ելնելով, մենք այսօր կարող ենք պնդել, որ Ֆրանսիան, Դաշնակցային Գերմանիան, Բելգիան, Իտալիան և այլ եւրոպական երկրներ շատ աւելի ընկերվարական են, քան Լեհաստանը, Խ. Միութիւնը, Նիկարագուան և Եթովպիան, որտեղ շատ աւելի շեշտուած են պետական դրամատիրութեան սկզբունքները և շատ աւելի պակաս արդարութիւն կայ: Սա չի նշանակում, անշուշտ, որ մենք կանգնած ենք արեւմտաեւրոպական երկրների կառավարութիւնների կողքին: Դա միայն նշանակում է, որ այդ երկրների աշխատաւորները աւելի բարձր ընկերվարական հասունութիւն ունեն, քան նրանք, ովքեր ամբողջովին իրաւազրկւած պայմաններում միայն երազել կարող են ընկերվարական արդարութիւնների մասին:

Այստեղից էլ բխում են մի քանի կարեւոր հետեւութիւններ.-

Եթէ որեւէ վարչաձեւ չի կարողացել կամ չի ցանկացել գտնել այն տնտեսական ու հասարակական վարման ձեւը, որը ապահովի ընկերվարական ար-

դարութիւնը, ապա մեղաւորը ոչ թէ ընկերվարութիւնն է, այլ տւեալ վարչաձեւի կերտողները։

Կարելի է վիճել արդարութեան բովանդակութեան, բայց երբեք նրա գոյութեան և օգտակարութեան մասին։ Եթէ մեզ դեռեւս չի յաջողւում հասնել ընկերային արդարութիւններին, դա միայն նշանակում է, որ մարդկութիւնը մի ինչ որ բանում պատրաստ չէ դրան։ Ուստի պէտք է պատրաստւել, ոչ թէ արհեստականօրէն արագացնել դէպքերը և բռնի ուժով կիրառել ընկերվարական սկզբունքները։

Մարդկութեան ապագան ընկերվարութեանն է, բայց պայմանով որ մեզանից ամէն մէկը իր անձնական կեանքում ղեկավարւի ընկերվարական արժէքներով։

Իսկական և մաքուր ընկերվարականի համար անընդունելի է որեւէ պիտակ՝ մարքսականութիւն, լենինականութիւն, եւրոհամայնավարութիւն, քրիստոնեայ ընկերվարութիւն, աֆրիկեան ընկերվարութիւն, մահմեդական ընկերվարութիւն։ Այս ամէնը ընկերվարական արդարութեան կիրառման փորձեր են, որոնք կապ ունեն որոշակի պայմանների հետ և որոնք մեզ համար կարող են նշանակութիւն ունենալ միայն հայրենիք ձեռք բերելուց յետոյ։

Բայց եթէ մենք մարքսական չենք, դա դեռեւս չի նշանակում, որ մենք ամբողջովին մերժում ենք Մարքսի ուսմունքը։ Եւ եթէ այսօրւայ «Կանաչ» կուսակցութիւնները իրենց ընկերվարականներ չեն համարում, դա դեռեւս չի նշանակում, որ մենք չենք կարող օգտւել նրանց սկզբունքներից ու փորձից։ Մեզ համար ամէն ինչ ընդունելի է, ինչը ծառայում է ընկերային արդարութեանը, այսինքն՝ ընկերվարական սկզբունքներին։

Այն հարցին՝ թէ ինչո՞վ կարող է ղեկավարւել հայ ընկերվարականը, եթէ բացակայում է մանրամասնօրէն մշակւած ընկերվարական տեսութիւնը, հաւանաբար կարելի է պատասխանել. ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ՀԱՒԱՏՔՈՎ, այսինքն՝ ազգային այն բնազդով, որի մասին խօսում էր Ռուբէնը և որը շատ աւելի կարեւոր է, քան տրամաբանական ընկերվարութիւնը։

Ճիշտ այնպէս, ինչպէս առանց հաւատքի եկեղեցին դատարկութիւն է, եթէ նոյնիսկ նա լեցուն է Աւետարանը անգիր արած մարդկանցով ու գեղեցիկ ձայնով պատարագ մատուցողներով, ճիշտ այդպէս էլ գիտական ընկերվարութիւնը դատարկաբանութիւն է, եթէ չկան արդարութեան հաւատացող և արդարութեամբ ղեկավարւող մարդիկ, որովհետեւ ընկերվարութիւնը արդարութեան գաղափարախօսութիւնն է։

1986

ՏԱՐԻՆ ԳՆԱՑ՝ ՀԱՐՑԵՐԸ ՄՆԱՑԻՆ

Է. Յովհաննիսեան

Ծանօթ. Ամբողջութեամբ հրատարակութեան տուինք ընկ. Էտիկ Յովհաննիսեանի սոյն յօդուածը, որ ընդհանրական հարցեր կը շօշափէ՝ սեփական փորձառութեան պրիսմակի ընդմէջէն: Ընթերցողը պէտք է հասկնայ, անշուշտ, որ յատկապէս վերջին մասին մէջ իր արտայայտած գաղափարները, որոնք նաեւ… խոստովանութեան մը ձեւը կ'առնեն, ունին զուտ անձնական բնոյթ: Հարցերը սեղանի վրայ են. կը մնայ, որ ուրիշներ ալ արտայայտուին և կարծիքները բիւրեղանան՝ եթէ հնարաւոր է ատիկա…

ՀՈՐԻԶՈՆ

Մի քանի ամիս առաջ ինձ հրաւիրեցին ակադեմիկոս Սախարովի անուան ինստիտուտ՝ ազգային հարցերի շուրջ մի շարք դասախօսութիւններ կարդալու համար: Միջազգային այս հաստատութեան լսողները տարբեր երկրներից եկած երիտասարդներ էին, որոնք հետաքրքրւում եւ մասնագիտանում էին Խորհրդային Միութեան վերաբերւող հարցերում: Այնտեղ կային իտալացիներ, հոլանդացիներ, ռուսեր, անգլիացիներ եւ շատ ուրիշ ազգերի ներկայացուցիչներ: Հայեր չկային:

Իմ դասախօսութիւնների ժամանակ ինձ ուղղեցին բազմաթիւ հարցեր, որոնց պատասխանները կարեւոր եմ համարում նաեւ մեր երիտասարդութեան համար: Աւելին, վերջերս Խորհրդային Միութիւնից դուրս եկան մարդիկ, որոնք այնտեղ եղել էին այլախոհ, մասնակցել էին ընդդիմադիր ազգային շարժումներին ու դրա համար հալածւել էին իշխանութիւնների կողմից: Նրանք էլ դիմեցին ինձ բազմաթիւ հարցերով, չհասկանալով եւ նոյնիսկ դատապարտելով Հ.Յ.Դաշնակցութիւն կուսակցութիւնը, որի մասին պատկերացումները կազմել էին Խորհրդային Հայաստանում:

Նոյնիսկ նրանց համար, ովքեր ծնւել ու մեծացել են Սփիւռքում, ովքեր բնական ճանապարհով մտել են Դաշնակցութեան շարքերը, կան բազմաթիւ հարցեր, որոնք մեկնաբանութեան կարօտ են:

Ահա թէ ինչու ես փորձեցի ի մի բերել ինձ ուղղւած հարցերի պատասխանները, որոնք կարող են մեզ համար հետաքրքրութիւն ներկայացնել: Վստահ եմ, որ իմ պատասխանները կարող են ոմանց չգոհացնել, ուստի հրաւիրում եմ նրանց բանավէճի:

ՀԱՐՑՈՒՄ.- Ես կարդացել եմ ձեր բոլոր յօդւածները (հարց տւողը ռուս է եւ խօսքը վերաբերւում է ռուսերէնով գրւած յօդւածներին) **եւ կարող եմ ասել, որ այն շեշտւած հակախորհրդային գիծը, որը կար ձեր առաջին յօդւածներում, կամաց-կամաց թուլանում է, իսկ վերջին յօդւածներից մէկում եւ ձեր այսօրւայ դասախօսութեան մէջ դուք պարզապէս յայտարարեցիք, որ հակախորհրդային պայքարը՝ դա հայկական պայքար չէ: Ինչո՞վ բացատրել ձեր սկզբունքների եւ մօտեցումների մէջ տեղի ունեցած փոփոխութիւնը:**

ՊԱՏԱՍԽԱՆ.- Ձեզ հետ միանգամայն համաձայն եմ ու չեմ ժխտի, որ իմ մօտեցումների գնահատականների եւ նոյնիսկ աշխարհայեացքի մէջ այս 13 տարւայ ընթացքում տեղի ունեցան, չէին կարող չունենալ, լուրջ փոփոխութիւններ՝ առնւազն երկու պատճառներով: Առաջինը եւ կարեւորը այն է, որ ես անցայ Հ.Յ.Դաշնակցութիւն կուսակցութեան շարքերը եւ ազատ հրապարակախօսի անկաշկանդւածութիւնը փոխարինեցի կուսակցական կարգապահութեամբ: Երկրորդ պատճառը այն էր, որ ես համոզւեցի նրանում, որ իրական հակախորհրդային ուժը կարող էր լինել ռուս ժողովուրդը, որը այսօր այդ ուղղութեամբ ոչ մէկ քայլ չի կատարում: Ինչ վերաբերւում է ամերիկացիների, եւրոպացիների եւ հրեաների կարծեցեալ հակախորհրդայնութեանը, ապա նա իր տակ ոչ մէկ քաղաքական հող չունի, շինծու աղմուկ է՝ Խորհրդային Միութեան վրայ որոշ բարոյական ճնշում գործադրելու համար: Հրեաները բարձրաձայն անիծում են Խորհրդային Միութեանը, բայց «տակից» երազում են վերականգնել իրենց դիւանագիտական կապերը այդ «անիծեալ» երկրի հետ: Ամերիկացիները երբեք չեն ցանկանայ կործանել ամէն ինչ կլանող ռուսական շուկան, որը կարող է վտանգաւոր դառնալ ամերիկացիների համար, եթէ Ռուսաստանը ժողովրդավարական երկիր դառնայ: Նոյն ամերիկացիները աղմկում են կոմունիզմի դէմ, բայց բարեկամութիւն են հաստատում աշխարհի ամենամեծ ու ամենավտանգաւոր կոմունիստ Չինաստանի հետ: Ու այնպէս է լինում, որ ոչ մէկը լրջօրէն չի ցանկանում պայքարել խորհրդային վարչակարգի դէմ, իսկ մենք հայերս անպոչ գրալի պէս պիտի խրւենք այդ դժւարին գործին մէջ, կարծես թէ մեզ բոլորից շատ է պէտք խորհրդային վարչակարգի տապալումը: Ծիծաղելի պիտի լինէր մեր այդ անլուրջ քայլը: Ահա թէ ինչու ես պնդում եմ, որ հակախորհրդային պայքարը մեր՝ հայկական պայքար չէ:

Հ.- Մի՞թէ Հ.Յ.Դաշնակցութիւնը հակախորհրդային կազմակերպութիւն չէ: Եթէ չէ, հապա ինչո՞ւ է նա տարբերւում ուրիշ խորհրդայնասէր հայ կամ ոչ-հայ կազմակերպութիւններից: Եւ յետոյ, ինչպէ՞ս կարող էք դուք ասել, որ խորհրդային վարչակարգի դէմ ոչ մէկը չի պայքարում: Մի՞թէ իրաւապաշտպանական շարժումները եւ հէնց ձեր Հայաստանում ծաւալւած շարժումները ուղղւած չեն

խորհրդային վարչակարգի դէմ: Եւ ինչպէ՞ս էք դուք վերաբերւում այդ շարժումներին:

Պ.- Հ.Յ.Դաշնակցութիւնը հակախորհրդային կազմակերպութիւն չէ: Նրան հակախորհրդային կազմակերպութիւն են անւանում միայն Խորհրդային Միութիւնում եւ Սփիւռքի կոմունիստական ու ծայրայեղ ձախակողմեան շրջանակներում, ու լաւ էլ չեմ հասկանում թէ ինչո՞ւ: Հաւանաբար, Հայաստանը մի ինչ որ բանում շահում է, երբ Մոսկւային զեկուցում է, թէ արտասահմանում կայ մի կատաղի հակախորհրդային կազմակերպութիւն, որը ջանում է յեղաշրջել հայաստանցիների մտքերը, զարգացնել նրանց մէջ բուրժուական ազգայնականութիւնը եւ որի դէմ Հայաստանի համապատասխան մարմինները ստիպւած են մշտական պայքար մղելու: Եթէ այս բացարձակ սուտը շահ է բերում Հայաստանին, թող ասեն, հոգ չէ, բայց գոնէ իրենք թող չհաւատան սեփական ստին:

Ես պնդում եմ, որ Հ.Յ.Դաշնակցութիւնը հակախորհրդային կազմակերպութիւն չէ: Աւելին: Հակա-որեւէ-բան կուսակցութիւն ընդհանրապէս չի կարող գոյութիւն ունենալ: Կուսակցութիւնները ստեղծւում են ոչ թէ բացասական, այլ դրական արժէքների վրայ եւ Հ.Յ.Դաշնակցութիւնը այդ դրական արժէքը ձեւակերպել է որպէս Միացեալ Անկախ ու Ազատ Հայաստանի ստեղծում: Եթէ այդ Հայաստանը ստեղծելու ճանապարհին Հ.Յ.Դաշնակցութիւնը պայքարի այս կամ այն պետութեան, վարչակարգի կամ շարժման դէմ, դա կը լինի ոչ թէ հակաթուրք, հակաչին կամ հակախորհրդային պայքար, այլ Անկախ Հայաստան ստեղծելու պայքար: Լինում են, անշուշտ, նաեւ զուտ բացասական կամ հակա-որեւէ-բան կուսակցութիւններ, բայց նրանք որպէս օրէնք երկար չեն ապրում:

Ոչ մէկ յեղափոխական եւ յեղափոխութիւն չի կարող իր առջեւ նպատակ դնել՝ տապալել այս կամ այն վարչակարգը, առանց որեւէ նոր բան փոխարէնը ստեղծելու: Իսկ եթէ առաջարկելու բան ունի, ուրեմն նա պայքարում է իր այդ առաջարկութեան համար, այսինքն դրական արժէքի համար: Ու, այնուամենայնիւ, երբեմն-երբեմն հրապարակ են իջնում այնպիսի կազմակերպութիւններ, որոնք նպատակ ունեն քայքայելու եղածը, փոխարէնը ոչինչ առաջարկելով: Այդպէս ստեղծւում են հակադաշնակցական, հակաիմպերիալիստական, հակակրօնական, հակախորհրդային, հակա-ամերիկեան եւ հակամարդկային կազմակերպութիւններ, որոնք պայքարում են ոչ թէ որեւէ բան ստեղծելու, այլ եղածը քանդելու համար: Սրանք երկար կեանք չեն կարող ունենալ եւ սրանց մասին խօսելը աւելորդ է: Ուրեմն ինչո՞վ է Դաշնակցութիւնը տարբերւում ուրիշ խորհրդայնասիրական կազմակերպութիւններից: Ես կարծում եմ,

որ խորհրդային վարչակարգի նկատմամբ մեր ժողովուրդը կարող է ունենալ 4 տեսակի մօտեցում։

1) Վարչակարգը սքանչելի է համամարդկային տեսանկիւնից եւ շատ օգտակար է մեր ժողովրդի համար։

2) Վարչակարգը համամարդկային տեսանկիւնից անտանելի է, բայց մեր ժողովրդի համար կարող է որոշ իմաստով օգտակար լինել։

3) Վարչակարգը վատն է եւ այնպիսի վնաս է հասցնում մեր ժողովրդին, որ նրա դէմ պայքարը ինքնապաշտպանութեան պայքար է։ Չպայքարել՝ նշանակում է մեռնել, ուստի՝ «Մահ կամ Ազատութիւն»։

4) Վարչակարգը վատն է, բայց քաղաքական հաշւարկները ցոյց են տալիս, որ նրա դէմ պայքարը մեր ժողովրդին ոչինչ չի տալիս, ուստի նրան յարմարւելու ճամբով, անհրաժեշտ է ձեռք բերել այն ինչ հնարաւոր է։

Այս 4 մօտեցումներից մէկի ընտրութեամբ է որոշւում տւեալ կուսակցութեան կամ կազմակերպութեան Էութիւնը։

Առաջին մօտեցումը բնորոշ է արտասահմանի հայ կոմունիստների եւ Խորհրդային Միութեան անվտանգութեան մարմիններին ծառայող կազմակերպութիւնների համար։

Երկրորդ մօտեցման կողմնակիցները բաւականին մեծ բանակ են կազմում թէ՛ Սփիւռքում եւ թէ Հայրենիքում։ Այդ բանակին են պատկանում ռամկավարները, հնչակեանները, Բարեգործականը եւ Էջմիածնի եկեղեցին։ Սրանք բոլորը հասկանում են, չեն կարող չհասկանալ, որ վարչակարգը վարչակարգ չէ, բայց գովաբանում ու ծառայում են այդ վարչակարգին, համարելով որ այդ վարչակարգը ի վերջոյ Հայաստանում մետրոներ ու մարզադաշտեր է կառուցում։ Որ այդ հատւածը հէնց այդպէս էլ մտածում է, վկայում է այն փաստը, որ այս խորհրդայնասէր բանակի ոչ մէկ զինւոր չի ցանկանում փոխել իր ապրած նեխած կապիտալիստական վարչակարգը խորհրդային դրախտավայրի հետ։ Նրանց համար Հայաստանը կա՛մ գերեզմանատուն է (Արամ Խաչատրեան, Վիլիամ Սարոյեան եւ ուրիշներ) եւ կամ էլ զբօսաշրջիկութեան վայր։ Պէտք է ասել, որ այս նոյն վերաբերմունքը ունի վարչակարգի նկատմամբ նաեւ Հայաստանի կառավարութիւնը, որը իր խաղը աւելի նուրբ ձեւով է խաղում։ Բաւական է լսել այն անեկդոտները, որոնք պատմւում են կառավարական ամենաբարձր մակարդակի վրայ, որպէսզի պարզ լինի իշխանութեան իրական վերաբերմունքը վարչակարգի նկատմամբ։

Երրորդ մօտեցումը բնորոշ է Հայաստանի այլախոհութեան համար, որը փոքրաթիւ է, բայց ունի յեղափոխական վճռականութիւն։

Վերջապէս, 4րդ մօտեցումը – երկրորդի որոշ կէտերի հետ միասին – կազմում է Հ.Յ.Դաշնակցութեան մօտեցումը, որը ձեւակերպւած է մօտաւորապէս

հետեւեալ կերպ. այնքան ժամանակ քանի դեռ խորհրդային վարչակարգը, կամ ամերիկեան իմպերիալիզմը չեն դիպչում հայ ժողովրդի ազգային շահերին, Հ.Յ.Դաշնակցութիւնը գործնականում չէզոք դիրք է բռնում նրանց նկատմամբ, սահմանափակւելով ընդհանուր բարոյական գնահատականներով։ Եւ միայն այն դէպքում, երբ այդ վարչակարգերը ոտնահարում են հայ ժողովրդի արդար իրաւունքները, Դաշնակցութիւնը պայքարում է նրանց դէմ, աւելի ճիշտ պաշտպանւում է նրանցից։ Սա նշանակում է, որ Դաշնակցութեան չէզոքութիւնը խորհրդային վարչակարգի նկատմամբ կրում է ոչ թէ խորհրդայնասիրական, այլ քաղաքական բնոյթ։ Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, քանզի Դաշնակցութիւնը վարչակարգ սիրողների ակումբ չէ, այլ քաղաքական կուսակցութիւն։

Հ.- Ես բոլշեւիզմի թշնամի եմ, ես տառապել եմ բոլշեւիզմից, իմ տղան այսօր էլ բանտումն է, ինչպէ՞ս կարող եմ ես չպայքարել բոլշեւիզմի դէմ, ինչպէ՞ս կարող էք դուք պնդել, թէ բոլշեւիզմի դէմ պայքարը հայկական պայքար չէ։ Ձեր յօդուածներից մէկում դուք գրում էք, որ մարդու իրաւունքների պաշտպանութիւնն էլ հայկական պայքար չէ եւ մեր կողմից ստեղծւած «Հելսինկեան խումբն» էլ հայկական գործ չէ։ Հապա էլ ո՞րն է հայկական գործը։ Մի՞թէ հակաթուրք պայքարից մենք աւելի շատ սպասելիքներ ունենք, մի՞թէ Թուրքիայից մէկ թիզ հող առնելը նոյնքան վերացական նպատակ չէ, որքան որ վերացական էք դուք համարում խորհրդային վարչակարգի տապալումը։ (Հարց տւողը Հայաստանի Հելսինկեան խմբի հիմնադիր Շահէն Յարութիւնեանն է)։

Պ.- Երբ ես ասում եմ, որ բոլշեւիզմի կամ խորհրդային վարչակարգի դէմ պայքարը հայկական պայքար չէ, ես ամենեւին էլ չեմ ուզում ասել, որ հայ մարդը չի կարող պայքարել բոլշեւիզմի, խորհրդային վարչակարգի կամ իմպերիալիզմի դէմ։ Նա կարող է այդ բանը անել, միայն թէ այն գիտակցութեամբ, որ ոչ թէ հայկական ազգային շահերն է պաշտպանում, այլ միջազգային ու համամարդկային արժէքներ ու մասնակցում է այնպիսի շարժումների, որոնց յաղթանակ աւարտից յետոյ իսկ հայ ժողովրդի կորուստների ու ձեռքբերումների հարցը մնալու է անպատասխան։

Ես անձամբ շատ ուրախ կը լինեմ եթէ միջազգային մարդասիրական եւ իրաւապաշտպանական շարժումներում յայտնւեն ականաւոր հայեր։ Պիտի պարծենամ, եթէ գտնւեն հայ բժիշկներ, որոնք մեկնեն Աֆղանստան եւ պատերազմի դաշտում օգնութիւն ցուցաբերեն վիրաւորւածներին։ Կ'ուզէի տեսնել մեր հոգեւորականներին Եթովպիայում, որտեղ Էջմիածնի օգնութեամբ նրանք սպասարկում են սովամահ վիճակում գտնւող բնակչութեանը։ Կը պարծենամ նրանցով, ինչպէս պարծենում եմ Վիլիամ Սարոյեանով, Շարլ Ազնաւուրով, Լուսին Ամարայով, Մարիէտտա Շահինեանով եւ շատ ուրիշներով, որոնք

համաշխարհային հռչակ են ձեռք բերել ոչ-հայկական հողի վրայ եւ ոչ-հայկական արժէքներին ծառայելով:

Սակայն նրանց գործն ու գործունէութիւնը երբեք հայկական չեմ համարի: Դուք, օրինակ, ձեր առաջին հարցազրոյցներից մէկում նշում էք, որ բանտում շարունակում էիք ձեր պայքարը եւ երբ խորհրդային զօրքերը մտան Աֆղանստան, դուք բողոքի նամակ գրեցիք այդ առիթով: Անշուշտ, մարդկային տեսանկիւնից միայն հիացում կարող է պատճառել ձեր այդ արիւթիւնը, ինչպէս նաեւ Երեւանի հրապարակում Լենինի պատկերի հրկիզումը, որը կատարեցին Ռազմիկ Մարկոսեանը եւ Ազատ Արշակեանը:

Բայց այս առիթով ես եմ ուզում ձեզ հարց տալ: Եթէ խորհրդային զօրքերը մտնէին ոչ թէ Աֆղանստան, այլ Թուրքիա, դուք նո՞յնպէս պիտի բողոքի նամակ գրէիք: Եթէ ձեր քաղաքական դիրքորոշումը արդարութեան եւ հակախորհրդային հողի վրայ է կառուցւում, հաւատում եմ, որ կը բողոքէիք: Իսկ ես չէի բողոքի այնքան ժամանակ, քանի դեռ յայտնի չէին ներխուժման արդիւնքները: Շատ կ'ուրախանայի, եթէ այդ ներխուժման արդիւնքով Արեւմտեան Հայաստանի հողերը կցւէին Խորհրդային Հայաստանին: Բայց կը բողոքէի, եթէ պարզւէր որ այդ ներխուժման արդիւնքով հայապատկան հողերը կցւում են, օրինակ, Վրաստանին: Այսինքն ինձ համար Խորհրդային Միութեան զօրքերի ներխուժումը որեւէ երկիր ոչինչ չի նշանակում, եթէ հայկական շահերին չի կպնում:

Ինձ համար լաւն ու վատը, չարը եւ բարին որոշւում են հայկական շահերով: Սա է մեր մօտեցման առանձնայատկութիւնը եւ այս տեսանկիւնից է, որ ես մարդու իրաւունքների պաշտպանութիւնը, բոլշեւիզմի դէմ պայքարը համարում եմ ոչ թէ հայկական, այլ միջազգային խնդիր: Սա չի նշանակում, որ այդ շարժումները երբեք չեն կարող դառնալ հայկական շարժումներ: Եթէ, օրինակ, Աստւած չանի, վերադառնան ստալինեան ժամանակները եւ Մոսկըլան առանց որեւէ պատճառի սկսի կրկին գլխատել մեր ազգը՝ բանտերը նետելով այսօրւայ Չարենցներին, Բակունցներին, Բորեաններին, ու Ղամբարեաններին, անշուշտ նրանց պաշտպանութիւնը կը դառնայ մեր գործը, որովհետեւ նման յարձակումը ոչ թէ անհատների, այլ հայ ժողովրդի դէմ ուղղած կը լինի:

Դուք կարող էք ասել, որ այսօր էլ բանտերում տառապում ու մեռնում են հայորդիները, որոնց ոչ մէկ հայ կազմակերպութիւն չի պաշտպանում: Բայց սա բոլորովին ուրիշ հարց է: Մեր երիտասարդները բանտերումն են յայտնւել իրենց այլախոհութեան համար եւ միջազգային արդարութիւնը պաշտպանելու համար: Եւ պէտք է ասել, որ միջազգային իրաւապաշտպանական կազմակերպութիւնները ակտիւօրէն նրանց պաշտպանում են: Մենք էլ կարող ենք

խոնարհել նրանց համարձակութեան առջեւ, բայց Սփիւռքին, որտեղ հայ երիտասարդները պայթում են ռումբերի վրայ եւ գիտակցաբար կանգնում են մահուան, իսկ իրականում անմահութեան ճանապարհի վրայ, արիութիւնը շատ չի զարմացնում: Շատ աւելի կարեւոր է պարզել, թէ որքանո՞վ ճիշտ ուղղութեամբ է գործադրւում այդ արիութիւնը: Եւ այստեղ ես պիտի փորձեմ պատասխանել ձեր հարցումի վերջին մասին, թէ արդեօք հակաթուրք պայքարը նոյնքան անյոյս չէ՞, որքան որ անյոյս է հակախորհրդային պայքարը:

Կասկածից վեր է, որ Թուրքիայից մէկ թիզ հող խլելը նոյնքան անկարելի է, որքան որ ներկայ պայմաններում խորհրդային վարչակարգի տապալումն է: Սակայն հակաթուրք ճակատին գերադասութիւն տալու համար կան առնուազն հետեւեալ պատճառները:

1) Սփիւռքը ծնւել է որպէս Հայկական Ցեղասպանութեան արդիւնք, իսկ ամեն մի տարագրութիւն իր յիշողութեան մէջ ամուր կերպով պահում է այն աղէտը, որի բերումով ինքը ստիպւած եղաւ դուրս գալ, կամ վռնտւել հայրենիքից: Հայկական Սփիւռքի քաղաքական մտածելակերպը եւ քաղաքական յիշողութիւնը պտտում է ցեղասպանութեան շուրջ եւ Դաշնակցութիւնը չէ, որ պէտք է այդ անարդարութիւնը առանց հատուցում ստանալու հանի մեր ժողովրդի յիշողութիւնից:

2) Այս ճակատում նախքան թուրքերին որեւէ պահանջ ներկայացնելը, անհրաժեշտ է կազմակերպել ցեղասպանութեան միջազգային ճանաչում, որի ուղղութեամբ տարւող աշխատանքները ոչ միայն իրական հող ունեն, այլեւ արդէն իսկ տւել են եւ դեռ պիտի տան շօշափելի արդիւնքներ:

3) Հակաթուրք ճակատում մղւած պայքարը ՄԵՐ պայքարն է, այն իմաստով, որ եթէ այդ պայքարը մենք չմղենք, ուրիշ ոչ մէկը այդ բանը մեր փոխարէն չի անելու: Մարդկութիւնը շատ արագ եւ շատ մեծ հաճոյքով մոռացութեան կը մատնի հայերի ցեղասպանութիւնը, որովհետեւ մարդիկ ու ժողովուրդներ այսօր հանգիստ ապրելու համար արագ-արագ թաղում են երէկ սպանւած իրենց բարեկամներին: Մինչդեռ հակախորհրդային ճակատում միշտ էլ կան ու կը լինեն ուժեր, որոնք անկախ մեզանից ու շատ աւելի հզօր կերպով կը պայքարեն խորհրդային վարչակարգի դէմ:

4) Չնայած այն խօսակցութիւններին, թէ այսօր-վաղը խորհրդային վարչակարգը քայքայւելու է, այդ վարչակարգը շատ աւելի կայուն է, քան Թուրքիան, որին վերջնական քայքայումից փրկում են միայն ու միայն զինւորականները: Խորհրդային վարչակարգի տապալման կամ գոյատեւման հարցը լուծում է միայն ու միայն ռուս ժողովուրդը, որը առայժմ լուռ է: Բոլոր արտաքին ուժերը նախ չեն ցանկանում եւ յետոյ ոչինչ կարող են անել խորհրդային վարչակարգի դէմ՝ առանց ռուս ժողովրդի ցանկութեան:

5) Հակաթուրք ճակատում ժամանակը թշնամու կողմն է եւ ամէն տարի հեռացնում է մեզ մեր նպատակներից եւ թուլացնում է մեր պահանջների արդիականութիւնը: Եթէ սրան աւելացնենք այն դրամները ու ճիգերը, որոնք գործադրւում են թուրքերի կողմից՝ մեզ մեղաւոր եւ նոյնիսկ ցեղասպան յայտարարելու համար, պարզ կը դառնայ որ այս ճակատում դադարի ժամանակ չկայ, որ պէտք է շտապել: Մինչդեռ խորհրդային ճակատում ժամանակը թշնամու կողմը չէ: Մենք կարող էինք այդ ժամանակը օգտագործել ապագայ անկախ Հայաստանի տնտեսական ու մշակութային կմախքը ստեղծելու համար: Եւ պէտք է ասել, որ այդ գործը մասամբ Խ. Հայաստանում կատարւում է: Եւ եթէ միայն մասամբ է կատարւում, ապա մեղքը ոչ այնքան վարչակարգինն է, որքան որ Հայաստանի ղեկավարներինը: Մի խօսքով, հակախորհրդային ճակատում մեր բացակայութիւնը հայ ժողովրդին մեծ վնաս չի հասցնում: Գուցէ մեր ներկայութիւնը այնտեղ մեզ աւելի մեծ վնաս հասցնէր:

Հ.- Ուրեմն դուք ուզում էք հաշտեցնել հայ ժողովրդին խորհրդային վարչակարգի հետ, յայտարարելով այդ իշխանութիւնը՝ հարազատ մեր ժողովրդին, եւ բոլոր ազգային խնդիրները լուծել, յարմարւելով այդ իշխանութեան:

Պ.- Ոչ, ամենեւին էլ ոչ: Որեւէ վարչակարգի դէմ չպայքարել, դեռեւս չի նշանակում հաշտւել նրա հետ, կամ առաւել եւս՝ հարազատ համարել նրան: Եթէ մենք այսօր չենք պայքարում Հարաւ-աֆրիկեան հանրապետութեան դէմ, դա չի նշանակում, որ մենք համաձայն ենք նրա ցեղապաշտական քաղաքականութեան հետ: Սա միայն նշանակում է, որ դա մեր գործը չէ: Հ.Յ.Դաշնակցութիւնը երբեք չի կարող հարազատ համարել խորհրդային վարչակարգը եւ այդ մասին բազմիցս պաշտօնապէս յայտարարել է: Մենք ձգտում ենք այնպիսի ազատ հայրենիքի, որտեղ ժողովուրդը ի վիճակի լինի սեփական կամքով ընտրելու այս կամ այն վարչակարգը: Եւ եթէ ԱՅՌ Հայաստանում հայ ժողովուրդը խորհրդային վարչակարգ ընտրի, թող լինի նրա կամքը: Բայց այսօր վարչակարգին յարմարւելով, իսկապէս որ կարելի է որոշ նպատակների հասնել: Եւ ահա այստեղ բացւում է մի անծայրածիր դաշտ հերոսների, այլախոհների, հայրենասէրների եւ, ինչու չէ, յեղափոխականների համար:

Միտքս պարզեմ մի քանի օրինակների վրայ: Արեւմուտքում ազգայնական եւ այլախոհական շրջանակներում շատ են աղմկում ռուսականացման քաղաքականութեան մասին եւ դա ճիշտ է: Աւելանում են ռուսական դպրոցները, ազգալուծման հաշւին նւազում է ազգութիւնների թիւը, հանրապետութիւններից դուրս ազգը պահելու ոչ մէկ հնարաւորութիւն գոյութիւն չունի եւ այլն: Սակայն տեսնենք, թէ ո՞ւմ մեղքով:

Սահմանափակւենք Հայաստանով, քանզի ուրիշները մեզ չեն հետաքրքրում: Ռուսները, կամ աւելի ճիշտ Մոսկւայի կենտրոնական իշխանութիւնը

հայերի առջեւ պահանջ է ներկայացնում, որ նրանք պարտաւոր են լաւ տիրապետել ռուսերէնի: Այս պահանջը շատ օրինական է եւ շատ անհրաժեշտ հէնց հայերի համար, որովհետեւ միայն հայերէնով կարելի է ապրել միայն Հայաստանում, այն էլ աշխատելով հանրապետական հաստատութիւններում, որոնք Հայաստանի ձեռնարկութիւնների ու վարչութիւնների 10 տոկոսն էլ չեն կազմում: Բայց ռուսերէնին տիրապետելու Մոսկւայի արդար պահանջը կարելի է բաւարարել տարբեր ճանապարհներով: Եւ այդ ճանապարհների ընտրութիւնը ընկնում է Հայաստանի ղեկավարութեան վրայ, որը, դժբախտաբար, ընտրել է ամենահեշտ, բայց ամենադաւաճան ճանապարհը՝ նա աւելացնում է ռուսական դպրոցների քանակը եւ սեփական երեխաներին ուղարկում է ռուսական դպրոցներ: Վարչակա՞րգն է սրանում մեղաւոր: Եթէ Հայաստանի կրթական մարմինները ու նախարարութիւնները ի վիճակի չեն մեր երեխաներին հայկական դպրոցներում ընդամէնը երկու լեզու սովորեցնել, թող գնան Լիբանան ու Պարսկաստան եւ փորձի փոխանակման կարգով սովորեն, թէ ինչպէս դա կարելի է անել:

Մի՞թէ Հայաստանի ղեկավարութիւնը չի հասկանում, որ ռուսական դպրոցում ռուսերէն լեզւի հետ միասին հայ երիտասարդները հայկական մշակոյթի հաշւին ձեռք են բերում ռուսական մշակոյթի հարազատութիւն եւ փաստօրէն ռուս են դառնում: Ես այդ զոհերից մէկն եմ: Ես կարող եմ ժամերով կարդալ ռուս բանաստեղծների բանաստեղծութիւնները, վերլուծութեան ենթարկել Դոստոյեւսկու, Տոլստոյի, Չեխովի աշխատութիւնները, բայց գրեթէ ոչինչ գիտեմ հայ գրականութեան մասին: Եւ ես մեղաւոր չեմ, այս ամէնը ինձ տւել է ռուսական դպրոցը: Սա այն ազգային անփութութիւնն է, որը շարունակւում է այսօր եւ որի դէմ բոլոր բողոքներն ու պայքարները մեր սրտից կը խօսէին:

Պատկերացնենք, օրինակ, որ Ռազմիկը ոչ թէ Երեւանի հրապարակում Լենինի պատկերն է հրկիզում, այլ Հայաստանի այն ղեկավարներին է խայտառակում, որոնց զաւակները ռուսական դպրոցներ են այցելում: Պատկերացնենք նաեւ, որ այդ ղեկավարների անունները արտասահման է ուղարկւում եւ հրատարակւում է Սփիւռքի թերթերում: Անշուշտ, սա էլ է այլախոհութիւն եւ ըմբոստութիւն, սրա համար էլ կը պատժւեն մեր երիտասարդները, բայց նրանք իրենց կեանքի գնով կը ստեղծեն Հայաստանում այնպիսի մթնոլորտ ու հասարակական կարծիք, որ Հայաստանի ղեկավարը, մտաւորականը ու պարզ բանւորը կ'ամաչի իր երեխային ռուսական դպրոց ուղարկել: Ու այդ դէպքում հայկական դպրոցների որակն էլ կը բարձրանայ: Ահաւասիկ մի գործ, որը ուղղւած չէ խորհրդային իշխանութեան դէմ, որը արիութիւն, անձնազոհութիւն է պահանջում, բայց զուտ հայկական գործ է: Իսկ Լենինի պատկերը թող կախւած մնայ հրապարակում, ժամանակը կը գայ՝ կ'իջեցնենք:

Կամ վերցնենք մէկ ուրիշ բնագաւառ: Խորհրդային Միութիւնում Հայաստանից դուրս ապրում են գրեթէ 2 միլիոն հայեր, որոնք հայ մնալու ոչ մէկ հնարաւորութիւն չունեն: Այս զանգւածը վերահայացնելու միակ ճանապարհը՝ նրանց Հայաստան բերելն է: Ո՞վ, բացի Հայաստանի ղեկավարներից, կարող է այդ ներգաղթը կազմակերպել: Եթէ մի խումբ երիտասարդներ ուսումնասիրեն այս հարցը, կազմեն Հայաստան ներգաղթելու ցանկութիւն ունեցողների ցանկը, ապա թռուցիկների ու այլ միջոցների օգնութեամբ խայտառակեն այն անձնաւորութիւններին, որոնք, նստած քաղխորհուրդներում ու ոստիկանատներում, չեն գրանցում մեր այդ խորհրդային տարագիրներին, գերադասելով կաշառք վճարողներին: Պատկերացնենք մի պահ, որ Հայաստանի այլախոհները ոչ թէ ՄԱԿի միջնորդութեամբ հանրաքւէ են ուզում կազմակերպել Հայաստանում՝ Խորհրդային Միութեան կազմից դուրս գալու առիթով, այլ խորհրդային սփիւռքում հանրաքւէ են կազմակերպում՝ Հայաստան վերադառնալու ցանկութիւնը պարզելու համար: Նման գործը ոչ միայն մեր սրտից կը խօսէր, այլ ամէն տեսակի աջակցութիւն կ'ունենար:

Ու կարելի է թւարկել հազարաւոր աշխատանքներ, որոնք պիտի արւեն Հայաստանում, բայց չեն արւում: Եւ այդ չարւող աշխատանքները քննադատելու ու նրանց համար պայքարելու գործը՝ մեր գործն է: Եւ ինչո՞ւ միայն Հայաստանում: Վերջին փորձը ցոյց տւեց, որ Սփիւռքում եւս տեղին արւած քննադատութիւնը ապարդիւն չի անցնում: Երբ Խորհրդային Միութեան ներկայացուցիչը ՄԱԿում ղէմ քւարկեց Հայկական Ցեղասպանութիւնը դատապարտելու բանաձեւին, Սփիւռքում բարձրացած բողոքի ալիքը ստիպեց խորհրդային իշխանութիւններին բացատրութիւն տալ եւ, ինչու չէ, արդարանալ այդ քայլի համար: Բողոքի ալիքը հակախորհրդային բնոյթ չէր կրում, նա հայ ժողովրդի իրաւունքները պաշտպանելու ալիքն էր եւ բարձրացած էր հէնց մեր կողմից:

Հ.- Այն ինչ դուք այսօր քարոզում էք Սփիւռքում, ձեռք էիք բերել Հայաստանո՞ւմ, թէ ձեւակերպւեց Սփիւռքում՝ Հ.Յ.Դաշնակցութեան ազդեցութեան տակ: Եթէ դուք այդպէս էիք մտածում արդէն Հայաստանում, հապա ինչո՞ւ դուրս եկաք: Իսկ եթէ Սփիւռքում ձեռք բերեցիք այդ մտածելակերպը, հապա ինչո՞ւմն էք մեղադրում Հայաստանի երիտասարդութիւնը, որոնք ձեր փորձը չունեն եւ Սփիւռքի քաղաքական ուժերի դասաւորութեան մասին գաղափար չունեն, նրանք տարրական քաղաքական գիտելիքներ ձեռք բերելու հնարաւորութիւնը չունեն ու զբաղւած են ինքնագործունէութեամբ: Փորձե՞լ էք դուք արդեօք կապ ստեղծել Հայաստանի երիտասարդութեան ու մտաւորականութեան հետ, ստեղծելու համար անհրաժեշտ հոգեկամուրջը, որը պիտի օգնի համընդհանուր նպատակներին ծառայելու փոխհասկացութեան ստեղծմանը:

Պ.- Կարծում եմ, որ այս հարցը ամենակարեւոր, ամենաչլուծւած եւ ամենադժւար լուծւող հարցն է: Բայց պատասխանեմ ըստ հերթականութեան: Այն, ինչ այժմ ես ասում եմ, որպէս մտածելակերպ ծնւեց Հայաստանում: Այդպէս էինք մտածում մենք՝ մի քանի գաղափարակիցներ Հայաստանում եւ գործում էինք այդ ուղղութեամբ: Ոչ մէկը մեզ այլախոհ չէր համարում, բանտերը չէր նետում ու չէր դատապարտում: Ընդհակառակը, մեզ, յատկապէս ինձ գովաբանում էին մամուլով ու հեռուստատեսութեամբ Սիլվա Կապուտիկեանը, Վարդգէս Պետրոսեանը, Սերօ Խանզադեանը, կուսակցական ղեկավարները ու շատ ուրիշներ: Մինչդեռ մեր արածը շատ աւելի ազգայնական բնոյթ էր կրում, քան որեւէ այլ միջազգային այլախոհական շարժում: Տեսնելով, օրինակ, որ Զանգեզուրը վտանգի տակ է, մենք որոշեցինք զարգացնել այդ շրջանում այնպիսի արդիւնաբերութիւն ու գիտութիւն, որտեղ ի վիճակի լինէին աշխատելու միայն հայեր եւ որոնք հայերի Զանգեզուր տեղափոխւելու առիթ ընծայէին: Եւ եթէ այսօր Ղափանում գործում է հաշւիչ մեքենաների գործարանը եւ Գիտութիւնների Ակադեմիայի մասնաճիւղը, դա մեր խմբի նախաձեռնութեան շնորհիւ է: Կարող էք համարել սա անհամեստութիւն, բայց այդ մասին գիտէ ամբողջ Հայաստանը, այդ թւում նաեւ նրանք, ովքեր այսօր թեթեւամիտ ու կեղծ յօդւածներ են գրում մեր մասին:

Ուրեմն՝ մենք այդպէս էինք մտածում դեռեւս Հայաստանից դուրս գալուց առաջ: Ինչո՞ւ այդ դէպքում դուրս եկանք: Այս հարցի կարճ պատասխանը շատ յստակ է՝ ՍԽԱԼԻԵՑԻՆՔ: Բայց եթէ վերլուծութեան ենթարկենք այն հոգեբանական եւ հասարակական մթնոլորտը, որի մէջ ապրում էինք, այդ մեծ սխալի համար կարելի է գտնել արդարացնող հանգամանքներ:

Նախ ամբողջովին բացակայում էր Սփիւռքի հետ կապը, որի բարոյական եւ նիւթական օժանդակութիւնը չափից աւելի անհրաժեշտ էր: Նրանք, ովքեր ազատօրէն Սփիւռքից մտնում էին Հայաստան ու յիմարութիւններ էին դուրս տալիս Հայաստանի երջանկութեան մասին, զգւանք էին առաջացնում հայրենասիրական շրջանակներում եւ լուռ արհամարհանք ու ծաղրանք՝ ղեկավար շրջանակներում: Այդ կացութիւնը չի փոխւել մինչեւ այսօր:

Պատկերացնենք մի խումբ հայրենասէրներ, որոնք ապրում են աշխատավարձով, ունեն ընտանիքներ ու պիտի իրենց հաշւին այցելեն Սեւ ծովի ափին գտնւող հայկական գիւղերը, Ղարաբաղը, Բագուն, Թիֆլիսը՝ այնտեղի հայերի կացութեան ու տրամադրութիւնների հետ ծանօթանալու համար: Դրա հետ միասին նրանք պէտք է բնակուեն Զանգեզուրում ու առաջ տանեն այնտեղի հետ կապւած խնդիրները: Այս դժւարութիւններին աւելանում էր նաեւ այն, որ մեր արածը արտաքնապէս ազգայնական գործ չէր, ուստի չէր քաշում մեր

կողմը «իսկական» հայրենասէրներին, որոնք երազում էին խորհրդային վարչակարգը տապալելու եւ Հայաստանը ազատագրելու մասին։

Մէկ անգամ իմ աշխատակիցներից մէկը կազմակերպեց իմ հանդիպումը Հայաստանի այլախոհներից մէկի հետ։ Մենք երկար խօսեցինք, բայց իրար չհասկացանք։ Ես փորձում էի բացատրել նրան այն, ինչ հիմա եմ ասում, իսկ նա ինձ համարում էր խորհրդայնասէր ու խորհրդային իշխանութեանը ծախուած մի անձնաւորութիւն, որովհետեւ իսկական համոզուած այլախոհի համար անընդունելի էր անտանելի վարչակարգի հետ մեր համագործակցութիւնը։ Նրա համար անընդունելի էր կոմունիստական կուսակցութեան անդամ դառնալը, որը անհրաժեշտ էր լուրջ դիրք գրաւելու համար։ Այս բանը չհասկացան ոչ միայն Հայաստանի այլախոհները, այլեւ ամերիկացիները, որոնք մեղադրում էին Ռ. Յակոբեանին կոմունիստասիրութեան մէջ այն պատճառաբանութեամբ, որ նա կուսակցութեան անդամ էր դարձել Խորհրդային Միութիւնից փախչելուց մի քանի տարի առաջ։ Եւ, իսկապէս, ինչո՞վ է տարբերւում իմ ասածը կուսակցական ղեկավարների պաշտօնական ճառերից, որոնք նոյնպէս առաջարկում են անձնազոհ ու լաւ աշխատել յանուն մեր հանրապետութեան ու մեր ժողովրդի։ Իրականում տարբերութիւնը շատ մեծ է, բայց հասկանալու համար այդ տարբերութիւնը անհրաժեշտ էին վերլուծութիւններ, հրապարակային բանավէճեր, ելոյթներ ու յօդուածներ, որոնք անկարելի էին Հայաստանում։ Ու նորից մենք սեւեռում էինք մեր աչքերը դէպի փրկարար Սփիւռքը։

Մէկ դժւարութիւն եւս։ Շատ շուտ պարզուեց, որ Հայաստանի ղեկավարութեան մէջ գրաւել այնպիսի դիրք, որտեղից հնարաւոր է իրականացնել մեծ ծրագրերը, չափից աւելի դժւար է։ Այդ պաշտօնները գրաւելու համար անհրաժեշտ էին յատուկ յատկութիւններ եւ յատուկ նկարագիր, հայրենասիրութիւնը միայն խանգարիչ հանգամանք էր։ Երեւի մինչեւ վերջերս Հայաստանի Գերագոյն Խորհրդի նախագահութեան քարտուղար Մաննիկ Բախչինեանը լաւ է յիշում, թէ ինչպէս էի ես ուզում իր միջոցով թափանցել Կենտկոմ եւ ինչպէս էր նա իր կուսակցական բնազդով զգում, որ Կենտկոմի համար ես օտար մարդ եմ, չնայած նրան, որ ճանաչում էր ինձ ու յարգում էր իմ գիտական կոչումները։ Մի խօսքով, մեզ համար պարզ դարձաւ, որ մեր դիրքերից մենք շատ բան չենք կարող անել։

Այս ամէնը դարձան մեր սխալի պատճառները։ Բայց, ինչպէս միշտ պնդում էր կինս, իմ սխալները միշտ էլ անուղղելի են։

Ինչ վերաբերւում է Սփիւռքին, ապա այստեղ մենք համոզուեցինք, որ Հ.Յ.Դաշնակցութիւնը ճիշտ այդպէս էլ մտածում է, եւ միակ բանը, որից մենք էլ

դժգոհ ենք այն է, որ Հայրենիքի հետ գործնական կապեր ստեղծելու ուղղութեամբ շատ քիչ բան է արւում։

Այս ճանապարհի վրայ կանգնած է մի մեծ դժւարութիւն։ Բանը նրանումն է, որ հայանպաստ գործունէութիւնը Հայաստանի ներսում կարող է ծաւալել մտաւորականութիւնը կամ քիչ թէ շատ դիրքերի հասած հայեր։ Սակայն նրանց հետ կապ հաստատելով, Դաշնակցութիւնը պիտի վտանգի նրանց դիրքերը եւ անկարելի դարձնի նրանց գործունէութիւնը։ Իսկ ընդյատակեայ կապերի համար, անհրաժեշտ է համապատասխան պատրաստակամութիւն, փորձ, համարձակութիւն, զոհաբերութիւն, որոնց շատ քչերն են պատրաստ։ Բոլոր այս յատկութիւնները ունեն Հայաստանի այլախոհները, բայց նրանք էլ գործելու համար անհրաժեշտ իշխանութիւնը չունեն։ Միւս կողմից Հայաստանի մտաւորականութիւնը շփւում է խորհրդայնասէր թեւի հետ, որին սակայն չի վստահում, տեսնելով նրանց հայրենասիրութեան մակերեսայնութիւնը, որը ֆուտբոլասիրութիւնից շատ հեռու չի գնացել։ Բաւական է ասել, որ արտասահմանում հայ մտաւորականները Սփիւռքի խորհրդայնասիրական թեւից աւելի շատ են վախենում, քան սեփական երկրի անվտանգութեան մարմիններից։

Իսկ մինչեւ իսկական առողջ կապեր գոյութիւն չունենան Սփիւռքի ու Հայրենիքի միջեւ ինքնագործունէութիւնը, այդ թւում նաեւ հակախորհրդայնութիւնը, Հայաստանում անխուսափելի են։

1986

ՄԱՐՔՍԱԿԱՆ ԴՐՈՑԹՆԵՐԻՑ՝ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻՆ

Է. Յովհաննիսեան

Մենք յաճախ պնդում ենք, թէ մարքսականներ չենք, ոչ էլ հակամարքսականներ, և թէ մեր ընկերվարութիւնը իւրայատուկ ընկերվարութիւն է: Բայց շատ աւելի յաճախ, մեր ընկերվարութեան սկզբունքները պաշտպանելիս ու շարադրելիս, օգտւում ենք զուտ մարքսական դրոյթներից ու մարքսականութիւնից: Այս անբնական կացութիւնը արդարացնելու համար, մենք պաշտօնապէս յայտարարում ենք թէ մարքսական չենք, բայց մարքսական դրոյթներից ոչ բոլորն են մեզ համար խորթ: Հաւանաբար այս ընդհանուր յայտարարութեան վրայ էլ աւարտւում է մեր թշնամութիւնը կամ սիրաբանութիւնը մարքսականութեան հետ: Յամենայնդէպս մեզ ոչ մէկ տեղ չյաջողուեց գտնել որեւէ ուսումնասիրութիւն, որտեղից պարզ դառնար, թէ մարքսականութիւնից ի՞նչն է մեզ համար ընդունելի և ինչը ոչ: Դրա համար էլ փորձում ենք ցոյց տալ, թէ մարքսական ո՞ր սկզբունքները մեզ համար ընդունելի չեն:

1.- Հակադրութիւնների՝ պայքարի և միասնութեան դիալեկտիկական սկզբունքը:

Այս սկզբունքը մարքսական են անւանում միայն նրանք, ովքեր չեն ուզում ճանաչել Մարքսից առաջ գոյութիւն ունեցող փիլիսոփայութիւնը: Մինչդեռ փիլիսոփայական մտքի զարգացումը միշտ էլ յենւել է հակադրութիւնների երկխօսութեան վրայ, որի ընթացքում հակադրւած կողմերը գտնում էին մի ընդհանուր եզր և հէնց այս իմաստով էլ հակադրութիւնների պայքարը դառնում էր զարգացման աղբիւր: Անաքսիմանդրից Հերակլիտէսի միջոցով մինչեւ Սոկրատ, Պղատոն, Արիստոտէլ ու Պլոտին՝ ընդունւում էր տարբերութիւնների ու հակադրութիւնների միասնութիւնը: Նրանք էլ ստեղծեցին դիալեկտիկա բառը, որի միջոցով ջանում էին գտնել վերջին սինթեզը, տարբերութիւնների վերջին համադրութիւնը: Հակադրութիւնների պայքարը աւարտում է հակասութեան լուծումով, այսինքն՝ հակադրութիւնների հաշտութեամբ:

Այս սկզբունքը մեզ համար ամբողջովին և միանգամայն ընդունելի է, բայց այն, ինչ կատարեց այս սկզբունքի հետ Մարքսը, մեզ համար ընդունելի չի կարող լինել, որովհետեւ նա աղաւաղեց ու նենգափոխեց այդ սկզբունքը, զրկելով նրան դիալեկտիկական բովանդակութիւնից: Տեսնենք թէ ինչու:

Նախ և առաջ պարզենք, թէ ինչպէ՞ս կարող է ներքին հակադրութիւնների և նրանց պայքարի գոյութիւնը զարգացման աղբիւր դառնալ: Օրինակ, կենդանի մարմնի տարբեր մասերի ներդաշնակութեան խախտումը, նրանց միջեւ հա-

կասութիւնների ծագումը մարմնին տանում է դէպի մահ: Վերականգնել մարդու առողջութիւնը, նշանակում է վերականգնել ներդաշնակութիւն և վերացնել հակասութիւնը: Եթէ հակադրութիւնները պէտք է ի վերջոյ իրար ոչնչացնեն, ապա կը վերանայ նրանցից բաղկացած ամբողջութիւնը: Ամբողջութիւնը պահպանելու համար, բացի հակադրութիւնների պայքարից, պէտք է գոյութիւն ունենայ նաեւ հակադրութիւնների ներդաշնակութեան սկզբունքը, որով պէտք է աւարտւի որեւէ պայքար: Առանց խաղաղութեան՝ պայքարը անիմաստ է, քանզի պայքարը ինքնըստինքեան ոչինչ չի ծնում: Պայքարը այնքանով է անհրաժեշտ ու ցանկալի, որքանով որ ցանկալի է պայքարի միջոցով ձեռք բերւած ներդաշնակ խաղաղութիւնը: Եւ հէնց այդ նոր խաղաղ վիճակն է, որ առաջադիմութիւն է համարւում: Հերակլիտէսը բազմիցս նշել է հակադրութիւնների ներդաշնակութեան անհրաժեշտութիւնը և նրանցից յետոյ նոյն բանը կրկնել է Հեգելը, նշելով որ հակասութիւնը լուծւում է, հակասութեան վրայ չի կարելի կանգ առնել, հակասութիւնը ինքնըստինքեան անտանելի է: Հակասութիւնների լուծման մէջ է դիալեկտիկայի էութիւնը:

Զարմանալի չէ, որ Մարքսը և մարքսականները չցանկացան նկատել Հերակլիտէսի և Հեգելի այդ սկզբունքը: Բայց որ այդ բանը չտեսաւ Լասսալը, որը Հերակլիտէսին նւիրել է երկու հատորանոց մի աշխատութիւն, զարմանալի է: Այդ սկզբունքից էլ բխում են նրա եզրակացութիւնները հասարակական կեանքի բոլոր բնագաւառներում մղտղ պայքարների վերաբերեալ: Այդ պայքարների վերջաւորութիւնը՝ մահն է: Դասակարգային պայքարները աւարտւում են դասակարգերի վերացումով, ընտանիքի ներքին հակասութիւնները աւարտւում են ընտանիքի վերացումով, ազգային փոխ-յարաբերութիւններում գոյութիւն ունեցող հակասութիւնները վերացնում են ազգերը և նոյնիսկ պետութեան ներսում գոյութիւն ունեցող հակասութիւնները աւարտւում են պետութեան ոչնչացումով: Եթէ այս միտքը շարունակենք, ապա ընտանիքի, դասակարգերի, պետութեան ու ազգութիւնների վերացումից յետոյ, մարդկութիւնն էլ պիտի վերանայ, որովհետեւ նա էլ անկասկած կ'ունենայ իր ներքին հակասութիւնները: Մինչդեռ դասակարգերը չեն կարող վերանալ այն պարզ պատճառով, որ նրանք ստեղծւել են որպէս աշխատանքի բաժանման սկզբունք, ինչպէս ազգերը, ընտանիքը, պետութիւնը ստեղծւել են հասարակական կեանքի պահանջներից, այլ ոչ որպէս շահագործման հաստատութիւններ: Այս անբնական եզրակացութիւնը հակադրութիւնների պայքարի վախճանական աւարտի մասին մեզ համար անընդունելի է: Հակադրութիւնների պայքարի գոյութեան հետ միասին մենք պէտք է ընդունենք նաեւ հակադրութիւնների ներդաշնակութեան ու համերաշխութեան սկզբունքը, որը ամենեւին էլ չի նշանակում շահագործողի ու շահագործւողի համերաշխութիւն, այլ նշանա-

կում է շահագործման ոչնչացում, որի համար պէտք չէ ոչնչացնել դասակարգերը: Իսկական ընկերվարական յեղափոխութիւնը ձգտում է հակադրութիւնների համերաշխութեան՝ հակասութիւնը վերացնելու ճամբով:

Մարդկութեան պատմութիւնը դասակարգերի պայքարի պատմութիւնն է ասում են մարքսիստները և ճիշտ են ասում: Բայց նրանց այս թեզը անմտութիւն է դառնում, երբ մենք չենք ընդունում դասակարգերի համերաշխութեան թեզը՝ այդ ճամբով հասնելու համար դասակարգերի վերացման: Դասակարգային պայքարները մինչեւ այսօր ոչ թէ վերացրել են դասակարգերը, այլ նրանց միջեւ փոխ-զիջումներ ստեղծել: Եւ հէնց այդ փոխ-զիջումների ճամբով էլ վերացել են ստրկատիրական ու ճորտատիրական վարչակարգերը, վերացել են գաղութատիրութիւնները և ահագին թափ է ստացել արհմիութենական շարժումը: Սա նշանակում է, որ միայն շահագործման վերացումը կարող է լինել մեր ընկերվարութեան սկզբունքը: Դասակարգերի գոյութիւնը պայմանաւորւած է արտադրութեան պահանջներով: Բայց շահագործումը յենւում է արտադրութեան կազմակերպչական սկզբունքների վրայ, որոնք կարող են փոխւել ընկերվարական յեղափոխութիւնների ճամբով: Առանց դասակարգերի համերաշխութեան սկզբունքի ճանաչման՝ պիտի անհասկանալի ու դատապարտելի լինէին այսօրւայ բանւորական և արհմիութենական շարժումները: Երբ բանւորները գործադուլների ճամբով պայքարում են գործատէրերի դէմ, որպէս օրէնք, այդ պայքարները աւարտւում են փոխ-զիջումներով՝ աշխատավարձի բարձրացման կամ աշխատանքային ժամի պակսեցման վերաբերեալ: Այսպիսով, մեզ համար ընդունելի է հակադրութիւնների պայքարի և միասնութեան սկզբունքը այն ձեւի մէջ, որը ընդունւած է դասական փիլիսոփայութեան մէջ: Բայց երբեք չի կարող ընդունելի լինել այդ սկզբունքը մարքսեան տարբերակը, որը տանում է դէպի մահ: Այս հարցը մանրամասնօրէն ուսումնասիրել է դոկտոր Շաֆարեւիչը, որի «Սոցիալիզմ» աշխատութիւնը հրատարակւեց արտասահմանում (հեղինակը այժմ գտնւում է Խորհրդային Միութիւնում):

2.- Գիտակցութի՞ւնն է որոշում կեցութեամբ, թէ՞ կեցութիւնն է որոշում գիտակցութեամբ:

Մարքսականութեան պատասխանը այս հարցին յստակ է. Կեցութիւնը որոշում է գիտակցութիւնը: Այսինքն՝ բնութիւնը, նիւթական աշխարհը, տնտեսական կեցութիւնը առաջնակարգ են և նրանցով է որոշւում մարդու գիտակցութիւնը, ամբողջ հոգեկան կեանքը: Պատասխանելու համար այն հարցին, թէ որքանով մեզ համար ընդունելի է այս սկզբունքը, նախ տեսնենք թէ ի՞նչ է այդ մասին ասում մեր փորձը և առողջ տրամաբանութիւնը: Ամէն քայլափոխում մենք տեսնում ենք, թէ ինչպիսի սերտ կապւածութեան մէջ է մարդկանց նիւ-

թական կեանքը նրանց գաղափարների, հոգեկան արժէքների, կազմակերպութիւնների գործունէութեան և ընդհանրապէս մարդկանց կամքի հետ: Բայց միաժամանակ մենք տեսնում ենք, թէ որքանով մարդկանց գաղափարները, հոգեկան արժէքները, արուեստը, գրականութիւնը և մարդու ամբողջ հոգեկան կեանքը կապւած է հասարակարգի նիւթական և տնտեսական պայմանների հետ:

Տեսնելով այս երկկողմանի կապը, մենք չենք կարող ընդունել ոչ նիւթապաշտների «**կեցութիւնն է որոշում գիտակցութիւնը**» թեզը և ոչ էլ գաղափարապաշտների «գիտակցութիւնն է որոշում կեցութիւնը» թեզը: Հապա ի՞նչ անել: Դիալեկտիկան միջին ճանապարհ չունի՝ կամ մէկը, կամ միւսը:

Չկա՞յ արդեօք այս երկու թեզերի հաշտեցման ճանապարհ: Հաւանաբար կարելի էր բնութեան առաջնակարգ լինելու թեզը ընդունել ծագումնաբանական իմաստով, այսինքն կարելի էր ասել, որ սկիզբից ծնւել է բնութիւնը, յետոյ գիտակցութիւնը: Սկզբից բնութիւնը ծնել է գիտակցութիւն, ապա գիտակցութիւնը սկսել է փոխել բնութիւնը: Բայց այս «սկզբից» և «յետոյ» հասկացութիւնները չեն կարող կտրւել իրարից, որովհետեւ նիւթական գործօնները միշտ էլ ազդում են գիտակցութեան ձեւաւորման վրայ, ինչպէս գիտակցութիւնը միշտ ձեւակերպում է բնութիւնը փոխելու ծրագրեր ու իրականացնում է այդ ծրագրերը: Եթէ այս հարցում կան անհասկանալի տեղեր ու շփոթութիւններ, ապա միայն այն պատճառով, որ Մարքսի աշակերտները, հաւանաբար իրենց ուսուցչին արդարացնելու համար, մոռացութեան են մատնել Մարքսի իրական թեզը, որը վերաբերւում էր ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՑՈՒԹԵԱՆԸ:

Ըստ Մարքսի՝ հասարակական կեցութիւնն է որոշում գիտակցութիւնը: Բայց հասարակական կեցութիւնը արդէն իսկ գիտակից կեցութիւն է, որովհետեւ նա գիտակից մարդկանց կեցութիւն է: Այս մարդիկ գտնւում են տնտեսական և մշակութային փոխ-յարաբերութիւնների մէջ, ունեն նպատակներ ու շահեր և այդ շահերի բախումներ: Այս ամէնը արդէն իսկ գիտակցութիւն է և գիտակից գործունէութիւն: Այստեղ կ՚արժէ յիշել խօսքերը Ռոժէ Գարոդիի, որը «Ընկերվարութեան կտրուկ շրջադարձը» աշխատութեան մէջ գրում էր,- «**Մենք չենք կարծում, որ միայն պատմական էնտրոպիայի ազդեցութեան տակ աշխարհը անխուսափելիօրէն կը զգայ հաւասարակշռութեան, որ Միացեալ Նահանգների վարչակարգը ընկերվարականանալու է որոշակի օրինաչափութիւնների ազդեցութեան տակ, որ այդ նոյն օրինաչափութիւններ ժողովրդավարեցնելու են Խորհրդային Միութեան վարչակարգը: Մենք չենք հաւատում ո՛չ արտաքրական ուժերի առաջնութեանը և ոչ էլ ապագայի ինքնաբերաբար գալուստին, որի պատմութիւնը իբր թէ արդէն գրւած է և որտեղ իբր թէ մարդու նախաձեռնութեան ու մասնակցութեան համար այլեւս տեղ չկայ: Հնարաւոր ա-**

պագան ունի բազմաթիւ տարբերակներ: Մեզանից ամէն մէկը անձնական պատասխանատութիւն է կրում նրանց իրականացման համար»:

Անշուշտ, Գարոդին միանգամայն ճիշտ է: Հասարակական այս կամ այն գիտակից գործունէութիւնն է, որ փոփոխութեան է ենթարկում հասարակական կեցութիւնը:

Սա նշանակում է, որ կեցութեան ու գիտակցութեան փոխ-յարաբերութիւնը ոչ թէ գիտակից մարդու և անգիտակից իրի, ոչ թէ ընկալող ենթակայի և ընկալւող առարկայի փոխ-յարաբերութիւն է, այլ մարդկանց նպատակասլաց համագործակցութիւնն է, որը մէկ կողմից ուղղած է հասարակարգի նիւթական, միւս կողմից հոգեկան պահանջների բաւարարմանը: Այս երկրորդի մէջ են մտնում գիտութիւնը, արուեստը, քաղաքականութիւնը, բարոյականութիւնը և ուրիշ ոչ նիւթական պահանջներ: Սակայն, թէ՛ նիւթական և թէ հոգեկան պահանջների բաւարարումը պատկանում են հասարակական կեանքին և երկու այս պահանջների բաւարարման դաշտում գիտակցութիւնն է որոշում կեցութիւնը: Այս փոխ-յարաբերութիւնը էլ աւելի յստակ է արտադրութեան բնագաւառում, որտեղ գիտական և տեխնիկական զարգացումը որոշում է աշխատանքի արտադրողականութիւնը: Ուրեմն՝ ինչպէ՞ս ընդունել և ինչպէ՞ս հասկանալ «որոշում է գիտակցութիւնը» սկզբունքը: Միայն մէկ ձեւի տակ, որ նիւթական բարիքները անհրաժեշտ են ապրելու համար:

Նիւթական բարիքները միայն ու միայն գոյատեւելու միջոցներ են և այդ իմաստով առաջնակարգ են ու անհրաժեշտ բարձրագոյն հոգեկան ստեղծագործութեան համար: Այս առաջնակարգութեան մէջ չէին կասկածում ոչ գաղափարապաշտ Պղատոնը իր կոմունիզմում, ոչ գաղափարապաշտ Ֆիխտէնն իր սոցիալիզմում: Բայց այդ առաջնակարգութիւնը ոչինչ չի ասում արժէքների մասին, որովհետեւ արդիւնաբերութիւնը արտադրում է միջոցներ, բայց ոչ նպատակներ: Հաւանաբար, հարցի պատասխանը կարելի է գտնել լատինական ասացուածքում. Esse oportet ut vivas, sed non viere ut edos (պէտք է ուտել ապրելու համար, բայց ոչ ապրել ուտելու համար): Այն նոյն մօտեցումը մենք պէտք է ունենանք նաեւ «**հիմք և վերնակառոյց**» մարքսական համեմատութեան նկատմամբ, որտեղ Մարքսը երկրորդական նշանակութիւն է տալիս վերնակառոյցին, այսինքն մշակութային այն արժէքներին, որոնք ստեղծւում են տնտեսական հիմքի վրայ: Մինչդեռ վերնակառոյցը հէնց այն կարեւոր շէնքն է, որի մէջ պիտի ապրեն մարդիկ և որի համար կառուցւում է տնտեսական հիմքը: Ճիշտ այնպէս, ինչպէս նկարչի համար անհրաժեշտ է վրձին, իսկ գրողի համար գրիչ, այնպէս էլ հասարակական կեանքի համար անհրաժեշտ են տարբեր ապրանքներ: Բայց ոչ մէկը կարող է ասել, որ գրականութեան մէջ ամենակարեւոր դերը կատարում է գրիչը: Ուրեմն տնտեսական կեցութեան և

հասարակական գիտակցութեան փոխ-յարաբերութեան մէջ կեցութեան առաջնակարգութիւնը մեզ համար կարող է ընդունելի լինել միջոցի, բայց ոչ նպատակի իմաստով։ Այսինքն՝ նիւթական կեանքի այդ առաջնակարգութիւնը մենք չենք կարող տեղափոխել արժէքների դաշտը, ինչպէս դա անում է Մարքսը։

3.- Արտադրողական ուժեր, արտադրական յարաբերութիւններ, շահագործում։

Արտադրողական ուժերի և արտադրական յարաբերութիւնների փոխադարձ կապը Մարքսի համար այն կարեւորագոյն գործօնն է, որի շնորհիւ փոխւում են կացութաձեւերը և որոշւում է հասարակական կեանքի ամբողջ էութիւնը, այդ թւում նաեւ շահագործման չափը։ Տեսնենք թէ ի՞նչ են իրենցից ներկայացնում այս երկու հասկացութիւնները, որ այդքան որոշակի դեր են կատարում հասարակական կեանքում։ Արտադրողական ուժերը բաղկացած են արտադրութեան համար անհրաժեշտ գործիքներից (նախկինում մուրճ ու մանգաղ, ներկայումս հաշւիչ մեքենաներ ու ինքնավար հաստոցներ) և այդ գործիքները օգտագործող աշխատաւորներից։ Իսկ արտադրական յարաբերութիւնները՝ արտադրութեանը մասնակցող խմբերի փոխ-յարաբերութիւնն է, այսինքն տւեալ վարչակարգի իրաւական օրէնքը։ Արտադրական ուժերի զարգացումը ցոյց է տալիս հասարակարգի գիտա-տեխնիկական զարգացումը, իսկ արտադրական յարաբերութիւնները ցոյց են տալիս տւեալ վարչակարգի իրաւական զարգացումը, որը վերաբերւում է ազատութեանը, ժողովրդավարութեանը, մարդու իրաւունքների պաշտպանութեանը, շահագործմանը և այլն։

Այս երկու զարգացումները սերտօրէն կապւած են մէկը միւսի հետ և ճիշտ է Մարքսը, երբ ասում է թէ արտադրողական ուժերի զարգացումը պէտք է համապատասխանի արտադրական յարաբերութիւններին, հակառակ դէպքում պէտք է փոխւեն հնացած արտադրական յարաբերութիւնները։ Սակայն, Մարքսը սահմանափակւում է արտադրողական միջոցների պատկանելութեամբ և յայտարարում է թէ նա, ում ձեռքումն են գտնւում արտադրողական միջոցները, կարողանում է իւրացնել յաւելեալ արժէքը և դրանով իսկ շահագործել աշխատաւորին։ «Կապիտալ»ի առաջին հատորում (Համբուրգ. 1922 թ. Էջ 558) Մարքսը գրում է,- «**Դրամատիրութիւնը և արդիւնաբերութիւնը չէին կարող գոյատեւել, եթէ չլինէին իշխանութեան ու իւրացման բնազդները։ Յաւելեալ արժէքի կորզումը, որը կազմում է դրամատիրութեան էութիւնը, իշխանութեան և իւրացման յատուկ ձեւերն են։ Ընդորում հարստանալու բնազդը դրամատիրական հասարակարգում յենւում է ոչ թէ անհատական ագահութեան ու կծիկութեան վրայ, այլ բխում է հասարակական հոգեբանութիւնից**»։

Բայց արդեօ՞ք յաւելեալ արժէքի իւրացումը բնորոշ է միայն դրամատիրական հասարակարգին: Կարո՞ղ է արդեօք որեւէ հասարակարգ և որեւէ արտադրութիւն գոյատեւել առանց յաւելեալ արժէքի իւրացման: Եթէ բանւորից յաւելեալ արժէք չկորզւի, հապա ի՞նչ միջոցներով պէտք է զարգանան հասարակական կեանքի բոլոր այն բնագաւառները, որոնք նիւթական բարիքներ չեն արտադրում առողջապահութիւնը, կրթութիւնը, արուեստը, քաղաքականութիւնը, բանակը, առեւտուրը, սպասարկումը, երթեւեկութիւնը և այն ամէնը, ինչի համար և ինչով մարդը ապրում է:

Առանց յաւելեալ արժէքի չի կարող ապրել ոչ մէկ հասարակարգ և այս բանը քաջ գիտակցում էր ոչ միայն Մարքսը, այլեւ ամէն մի դպրոցական: Յաւելեալ արժէքի նկատմամբ Մարքսի ունեցած վերաբերմունքը բոլորովին ուրիշ բանի համար էր: Մարքսի կարծիքով, յաւելեալ արժէք իւրացնելու իրաւունքը գտնւում է նրա ձեռքում, ում ձեռքումն են գտնւում արտադրողական միջոցները: Արտադրողական միջոցների տէրերին այդ իրաւունքից զրկելու համար անհրաժեշտ է խլել նրանցից արտադրողական միջոցները, այսինքն վերացնել այդ միջոցների վրայ տարածւող մասնաւոր սեփականութեան իրաւունքը: Բայց ո՞ւմ յանձնել այդ միջոցները: Պետութեանը: Սա միայն նշանակում է, որ յաւելեալ արժէք իւրացնելու իրաւունքը յանձնւում է պետութեանը: Գուցէ սա վատ գաղափար չէ, եթէ պարզւի որ պետութիւնը ընտրւում է ժողովրդի կողմից և յաւելեալ արժէքների նկատմամբ ցուցաբերում է աւելի մեծ արդարութիւն և աւելի խղճով է վատնում այդ յաւելեալ միջոցները:

Ինքնըստինքեան յաւելեալ արժէքի գոյութիւնը դեռեւս շահագործում չի նշանակում: Շահագործումը որոշւում է նրանով, թէ ո՞վ ստացաւ և ինչպէ՞ս ծախսեց այդ յաւելեալ դրամը: Արտադրական միջոցների պետականացումը դեռեւս ոչինչ չի նշանակում, քանի դեռ պարզ չէ, թէ ո՞ւր են գնում բանւորից կորզած դրամները: Եթէ, օրինակ, Խորհրդային Միութիւնում, որտեղ մասնաւոր սեփականութիւն գոյութիւն չունի, կառավարութեանը հասնող յաւելեալ արժէքները ծախսւէին հիւանդանոցների, հանգստեան տների և հասարակութեանը պիտանի այլ շինութիւնների վրայ, ո՞վ կարող էր ասել, թէ խորհրդային բանւորները շահագործւում են: Բայց այսօր խորհրդային բանւորները ասում են, որ երանի թէ յաւելեալ արժէքներ խլելու իրաւունքը մնար սեփականատիրոջ ձեռքում, որը շահագործելիս, ղեկավարւում էր սեփական շահերով ու ագահութեամբ, մինչդեռ ամբողջատիրական վարչակարգերի պետական ագահութիւնը անհամեմատ աւելի դժւար տանելի է: Խորհրդային աշխատաւորից գանձած յաւելեալ արժէքից խորհրդային կառավարութիւնը, Կուբային օրական վճարում է երկու միլիոն դոլար, ահագին զօրք է պահում Եւրոպայում ու Աֆղանստանում, կերակրում է տարբեր կոմունիստական կուսակցութիւններ

ու կազմակերպութիւններ, աներեւակայելի ծախսեր է կատարում սեփական իշխանութիւնը պաշտպանելու համար և այլն: Արդեօ՞ք պէտք է այս ամէնը խորհրդային աշխատաւորին: Իսկ եթէ այս ամէնը արւում է առանց նրա ցանկութիւնը հարցնելու, արդեօ՞ք դա շահագործում չէ:

Մի փոքր օրինակ այս առիթով: Վերջերս Երեւանից եկած մի զբօսաշրջիկ պատմեց, որ Գորբաչեւի պայքարը անօրինական ճանապարհով դրամ վաստակողների դէմ ստեղծել է երկրում վախի, մատնութիւնների ու անվստահութեան մթնոլորտ: Ոստիկանը մտնում է բակ, որտեղ մի ընտանիք խորոված է պատրաստում ու հարցնում է, որտեղի՞ց և ի՞նչ դրամով է՞ք գնել միսը: Պարզ է, որ նման հարցումից յետոյ խորովածը կոկորդիդ է կանգնում, բայց խորհրդային աշխատաւորներից և ոչ մէկը իրաւունք չունի հարցնելու կառավարութիւնից, թէ որտեղից նա վճարեց Կուբայի տուրքը և ինչո՞վ է պահում Աֆղանստանում գտնւող զօրքերը: Իսկ այս հարցերի պատասխանը շատ յստակ է, բանւորներից կորզած յաւելեալ արժէքներով են վճարւել բոլոր այս և նման ծախսերը:

Սա նշանակում է, որ Մարքսի թեզը այն մասին, թէ յաւելեալ արժէքի գոյութիւնը ինքնըստինքեան շահագործում է նշանակում, մեզ համար անընդունելի է: Առանց յաւելեալ արժէքի չի կարող ապրել ու առաջադիմել ոչ մէկ ազգ: Ազգային եկամուտի այն մասը, որը ծախսւում է ազգային արժէքները պահպանելու ու զարգացնելու համար, հէնց յաւելեալ արժէքն է: Ուստի Մարքսի յաւելեալ արժէքի վերացման թեզը մենք պէտք է փոխարինենք՝ յաւելեալ արժէքը ժողովուրդի հսկողութեան տակ դնելու թեզով: Իսկ դա կարող է իրականանալ միայն ազատ ու անկախ հայրենիքում: Ահա թէ ինչու ազատ ու անկախ հայրենիքի ստեղծումը մեզ համար ոչ այլ ինչ է, եթէ ոչ հայ ժողովուրդի ընկերվարական ձգտումների իրականացման գլխաւոր պայմանը:

«Դրօշակ»ի թիւ 6-7 համարում, Արա Խանջեան, առարկելով իմ այն մտքին թէ մասնաւոր գործարանը և ճաշարանը նոյնպէս կարող են գործել ընկերվարական արդարութեան սկզբունքի համաձայն, գրում է,- «**Այս վերջին հաստատումը սխալ է, որովհետեւ կարելի չէ ունենալ սեփական գործարան, աշխատացնել գործաւորներ և զանոնք չշահագործել**»: Մարքսական տեսանկիւնից ճիշտ է Ա. Խանջեանը: Գործարանում թէ ճաշարանում գործատէրը պէտք է իւրացնի գործաւորի աշխատանքի մէկ մասը, ուստի շահագործի նրան, ըստ Մարքսի: Բայց եկէք այս խնդրին մօտենանք ոչ մարքսեան դիրքերից: Ենթադրենք, որ մի ընկեր ճաշարան կամ գործարան է բացել, որտեղ գործաւորներ կան, բայց բոլորն էլ մեր համակիրներն են: Գործարանի կամ ճաշարանի ամբողջ եկամուտը մեր ընկերը յանձնում է Հայ Դատին: Գործաւորները ոչ միայն համաձայն են այդ կարգի հետ, այլ հսկողութիւն են հաստատում, որ դրամնե-

րը իսկապէս յանձնուեն Հայ Դատին։ Կարո՞ղ են այս գործատրները իրենց շահագործած համարել։ Ո՛չ, երբեք, որովհետեւ շահագործումը ոչ թէ յաւելեալ արժէքի իւրացման, այլ այդ իւրացրած դրամը ծախսելու մէջ է։ Ի միջի այլոց, հէնց այս ձեւով էր վարւում Էնգելսը, որը իր գործարանի եկամուտի մեծ մասը տալիս էր Մարքսին և վերջինս Էնգելսին երբեք չէր մեղադրում շահագործման մէջ։

Այդպէս են վարւում այսօր Իտալիայի, Ֆրանսիայի և այլ երկրների կոմունիստները, որոնք ունեն կապիտալիստական սկզբունքներով գործող ձեռնարկութիւններ, որոնց եկամուտը սակայն անցնում է կուսակցութեանը։ Պէտք է ասել, որ հէնց այդ ուղղութեամբ էլ զարգանում է այսօր ընկերվարական միտքը Եւրոպայում։ Արդէն շատ ընկերվարական կուսակցութիւններ յանգել են այն եզրակացութեան, որ սեփականատիրոջ պէտք չէ ոչնչացնել, պարզապէս պէտք է սահմանափակել նրա իրաւունքները և տուրքերի միջոցով յետ վերադարձնել այն յաւելեալ արժէքները, որոնք նրանք իւրացրել են աշխատաւորներից։ Այս ուղղութիւնը թերեւս վերջնական ձեւաւորում չի գտել, բայց հաւանական առողջ լուծումներից մէկը լինելու խոստում է տալիս։

1986

ԻՆՉՊԻ՞ՍՍԱՀՄԱՆԵԼ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Է. Յովհաննիսեան

Ազգային-ազատագրական շարժումներին որեւէ սահմանում տալու համար, պէտք է նախ ճշտել, թէ ո՞ր ազգի մասին է խօսքը և ինչի՞ց է ուզում ազատուել այդ ազգը։

Ամէն մի ազգ ունի իր սեփական կարողութիւնները որեւէ բանից ազատուելու համար, ուստի ազգային-ազատագրական պայքարները տարբերւում են մէկը միւսից։ Անկախութեան ձեռք բերումը ոչ միակ և ոչ էլ ամենակարեւոր նպատակն է։ Գուցէ վերջնանպատակի իմաստով, պետական անկախութեան ձեռք բերումը առայժմ ամենացանկալի նպատակն է, բայց մեր արագ զարգացող աշխարհում կարող է պետական անկախութիւնը ազգի ապրելու ու առողջ զարգանալու համար միակ ձեւը չլինի։

Ուստի՝ ազգային-ազատագրական շարժում հասկացողութիւնը կարելի է սահմանել որպէս **«ազգի ապրելու և դարաշրջանի հետ միասին որպէս ազգ զարգանալու համար պայմանների ստեղծման պայքար»։** Կամ այդ պայմաններին խանգարող խոչընդոտներից ազատուելու պայքար։

Եթէ ընդունենք այս սահմանումը, ապա պարզ կը դառնայ, որ ազգային-ազատագրական շարժման բովանդակութիւնը (նպատակը, մարտավարութիւնը և ռազմավարութիւնը) անմիջականօրէն բխում են տւեալ ազգի ներկայ կացութիւնից։ Անշուշտ, ներկայ կացութիւնը պարունակում է իր մէջ անցեալը, բայց ոչ ինքնաբերաբար։ Անհրաժեշտ է պարզել, թէ արդեօ՞ք տւեալ ազգը սեփականացրել է իր անցեալը և այդ անցեալը իր վճռական դերն է կատարում ազգի այսօրւայ վարքագծում։ Ասորիները, օրինակ, ունեն պետական կեանքով ապրելու հարուստ անցեալ, բայց այսօր նրանք երազում են իրենց գիր-գրականութիւնը ստեղծելու մասին և ահա 20 տարի է, ինչ չեն կարողանում մի թերթ հրատարակել։ Եւ հէնց թերթ հրատարակելու այս խնդիրը նրանց ազգային-ազատագրական պայքարի գլխաւոր նպատակներից է։ Բայց եթէ նրանց հարցնենք, թէ ինչո՞ւ են նրանք ծաւալել այդ գործը, նրանք կը պատասխանեն, որ անկախ պետականութիւն են ուզում ստեղծել։ Իսկ քրտերի համար Թուրքիայում, Իրաքում և կամ էլ Պարսկաստանում մէկ հատիկ քրտական դպրոցի բացումը ազգային-ազատագրական պայքարի փայլուն էջերից մէկը կը նկատւէր։ Ազգային-ազատագրական պայքարի բովանդակութիւնը որոշւում է ազգի ներկայ կացութեամբ։ Խնդիրը լայնօրէն մեկնաբանելու դէպքում կարելի

է նշմարել ազգային կացութիւնների 4 մակարդակներ, որոնք պայմանաւորուած են 4 նպատակներով։

1.- Ազգային ինքնագիտակցութեան ձեռքբերում։

2.- Ազգահաւաք, կամ միասնական ազգային կեանքով ապրելու պայմանների ստեղծում։

3.- Ազգային անկախ պետականութեան ձեռքբերում։

4.- Ազգային պետութեան ներսում արդար հասարակական կեանքի ստեղծում։

Այս բոլոր մակարդակների վրայ գտնուող նպատակների համար մղող պայքարները՝ ազգային-ազատագրական պայքարներ են։ Բայց մեզ հետաքրքրում է մեր ժողովուրդը, ուստի փորձենք որոշել նրա մակարդակները և նպատակները։ Ազգային ինքնագիտակցութեան ձեռքբերման մակարդակը շատերին թւում է նւաճւած։ Բայց դա այդպէս չէ։ Մեր մտաւորականութիւնը, Սփիւռքում թէ Հայրենիքում, իսկապէս որ լաւ գիտէ իր ժողովրդի պատմութիւնը, մշակոյթը և ունի հայ մնալու ցանկութիւնը։ Բայց դրա հետ միասին, թէ՛ Սփիւռքում և թէ Հայրենիքում ողբերգական չափերի է հասել օտարացումը՝ խառը ամուսնութիւնների, օտար մշակոյթների, լեզւի կորստի և շատ ուրիշ գործօնների ազդեցութեան տակ։ Խորհրդային Միութիւնում ապրող հայերի գրեթէ կէսը ամբողջովին օտարացած է և նոյն կացութիւնն է տիրում Սփիւռքում։ Այս օտարացածներին դարձի բերելու կամ գոնէ օտարացման ընթացքի առաջն առնելու պայքարը իսկական ազգային-ազատագրական պայքար է, որը շատ աւելի յեղափոխականացւածութիւն է պահանջում, քան, օրինակ, մարտական գործողութիւնները։

Ազգահաւաքի կամ միասնական ազգային կեանքով ապրելու պայմաններ ստեղծելու մակարդակի վրայ մենք գրեթէ ոչինչ չենք անում, բացի այն, որ մեր ուժերի սահմաններում փորձում ենք արգելել արտագաղթը Լիբանանից ու Պարսկաստանից։ Բայց արտագաղթի առաջն առնելու համար մեր ուժերը տկար են և մեզանից անկախ արտագաղթողների հոսքը օրէց-օր աւելանում է։ Երբ յեղափոխական կուսակցութիւնը տեսնում է, որ իրենից անկախ տեղի է ունենում մի անցանկալի ընթացք, որը կարող է վճռական դեր կատարել ազգի ապագայի համար, նա պարտաւոր է կանգնել այդ ընթացքի գլխին և նրան ուղղութիւն տալ։ Եւ սա, անշուշտ ազգային-ազատագրական պայքար է։ Կիլիկիայի փորձը ունեցող ազգը ինչո՞ւ պիտի վախենայ նոր ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ազգային օջախ ստեղծելուց։ Միասնական ազգային կեանքով որեւէ հողի վրայ ապրելու հարցը շատ աւելի կարեւոր է ազգապահպանման և ազգային գիտակցութեան համար, քան անտանելի ճնշումների տակ ապրելու ազգային հերոսութիւնը։

Ինչ վերաբերում է անկախ հայրենիք ձեռք բերելու և այդ հայրենիքում արդար հասարակական կեանք ստեղծելու մակարդակին, ապա այսօր այդ մակարդակների վրայ մենք անելիք չունենք: Այդ մակարդակների վրայ բարձրանալու համար անհրաժեշտ է լուծել առաջին երկու մակարդակներից բխող խնդիրները, որոնք հէնց մեր այսօրուայ ազգային-ազատագրական պայքարներն են:

ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՈ՞Ղ Է ՆՊԱՍՏԱՒՈՐ ԼԻՆԵԼ ՀԱՅ ԴԱՏԻՆ. Ի՞ՆՉ ՁԵՒՈՎ

Գործակցութիւնը ոչ միայն կարող է նպաստաւոր լինել Հայ Դատին, այլեւ՝ առանց գործակցութեան Հայ Դատի ոչ մէկ խնդիրը չի կարող լուծուել: Հարցը միայն նրանումն է, թէ ո՞ւմ հետ և ինչպէ՞ս գործակցել: Այս հարցերի պատասխանները կապ ունեն գործակցութեան նպատակների հետ: Հայ Դատի լուծման ճամբին կան բազմաթիւ խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ են տարբեր համագործակցութիւններ: Եւ հէնց սա էլ համագործակցութեան առաջին ու կարեւոր կէտն է: Դաշնակիցը չի կարող լինել ոչ միակը և ոչ էլ մշտականը: Նրանք փոխւում են կացութիւնների փոփոխութեան հետ: Այնուամենայնիւ, նպատակների էութեան հետ միասին, դաշնակիցներն էլ կարող են բաժանուել երկու խմբերի՝ բարոյական և քաղաքական: Բարոյական ասպարէզում, այսինքն բարոյական նպատակների հասնելու գործակցութիւններում դաշնակիցները աւելի մնայուն են և նրանց ընտրութիւնը յենւում է գաղափարախօսական սկզբունքների վրայ: Չի կարող որեւէ ընկերվարական կուսակցութիւն գործակցել որեւէ աջակողմեան կուսակցութեան հետ՝ բարոյական նպատակների պորտում: Օրինակ Դաշնակցային Գերմանիայի աջակողմեան ուժերը ջանում են դուրս վռնդել իրենց երկրից թուրք աշխատաւորներին: Մենք կարող ենք ներքուստ ուրախանալ նրանց այդ մտադրութեան վրայ, բայց չենք կարող միանալ նրանց ու հրապարակայնօրէն համագործակցել նրանց հետ: Բայց քաղաքական նպատակների հասնելու հարցում գաղափարախօսութիւնը ոչ մէկ նշանակութիւն չի կարող ունենալ: Ուրեմն տեսնենք, թէ Հայ Դատի նպատակներից որոնք են դասւում բարոյական և որոնք քաղաքական նպատակների շարքին: Առաջին հայեացքից թւում է թէ Հայ Դատի մեր այսօրուայ բոլոր խնդիրներն էլ կրում են բարոյական բնոյթ, ուստի մեր համագործակիցները կարող են լինել միայն մեր գաղափարակիցները: Սակայն իրականում բարոյական բնոյթ են կրում միայն ընդհանուր հաստատումները, ինչպէս, օրինակ, բոլոր ազգերի ինքնորոշման իրաւունքը, ազատ հայրենիք ու սեփական մշակոյթ ունենալու պահանջը, ցեղասպանութեան և

այլ յանցագործութիւնների դատապարտումը: Այստեղ մենք կարող ենք գործակցել մեր նման ժողովուրդների ու մեր նման կազմակերպութիւնների հետ:

Ինչպէ՞ս համագործակցել: Նրանք կը մասնակցեն մեր ցոյցերին, մենք նրանց: Կը հրատարակենք համատեղ աշխատութիւններ, թերթեր, թռուցիկներ, կը կազմենք բարեկամութեան ընկերութիւններ – կոմիտէներ ու կը գումարենք համատեղ համագումարներ: Սակայն այս գործունէութիւնը կարող է ծաւալուել միայն ամենաընդհանուր գաղափարների հողի վրայ, որտեղ չեն նշւում պետութիւններ ու ազգեր: Այս համագործակցութեան հողը այնքան ընդհանուր է, որ նմանւում է մի ինչ որ միջազգային շարժման, այլ ոչ թէ Հայ Դատի պայքարի: Այս շարժումների մէջ են իրենց գլուխները խոթում ոչ միայն ազնիւ մարդիկ, այլ նաեւ տարբեր վարձկաններ: Բաւական է, սակայն, փոքր ինչ շեղուել ընդհանուր խնդիրներից դէպի Հայ Դատ և բոլոր բարոյական խնդիրները քաղաքական գունաւորում են ստանում: Եթէ խօսքը ոչ թէ հայրենիք ունենալու և ցեղասպանութիւնը դատապարտելու մասին է, այլ Հայկական Ցեղասպանութեան և հայ ժողովրդի հայրենիքի մասին է, ապա անմիջապէս խաղի մէջ է մտնում Թուրքիան և նրա յետեւում կանգնած Միացեալ Նահանգները: Եթէ խօսքը պաղեստինցիների մասին է, ապա մէջտեղ է գալիս Իսրայէլը: Եթէ խօսքը Ղարաբաղի մասին է, ապա հրապարակ է իջնում Խորհրդային Միութիւնը: Ու մենք տեսնում ենք, որ թէ՛ Ցեղասպանութիւնը, թէ՛ ազգային ու մարդկային իրաւունքները դառնում են զուտ քաղաքական հարցեր, որոնց լուծման համար բոլոր տեսակի համագործակցութիւնները ընդունելի են: Ինչպէ՞ս համագործակցել: Առեւտրականի նման: Որքան կարելի է շատ առնել և որքան կարելի է քիչ տալ: Ու չտալ այնքան, որ կորչի մեր դէմքը ու անկախութիւնը:

1988

ԴԱՒԱՆԱՆՔՆԵՐԻ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Է. Յովհաննիսեան

Գաղափարների, դաւանանքների, ազգերի, պետութիւնների, կազմակերպութիւնների ու առանձին մարդկանց բարեկամութիւնը կամ թշնամութիւնը պայմանաւորուած է իրենցից աւելի կարեւոր արժէքների գոյութեամբ, որոնց կարելի է հասնել միայն հակադրուած կողմերի ներդաշնակութեան ճամբով: Այս մասին ես բազմիցս խօսել եմ մի շարք յօդուածներում, մասնաւորապէս «**Գիտութի՞ւն է արդեօք մարքսիզմը**» յօդուածաշարքում, որը հրատարակւեց «Ազդակ Շաբաթօրեակ-Դրօշակ»ի 42-45 համարներում, 1974 թւականին: Սակայն համարեցի, որ անհրաժեշտ է կրկին անդրադառնալ այս հարցին, առնուազն երկու հետեւեալ պատճառներով:

1.- Խորհրդային Միութիւնում և յատկապէս Հայաստանում ստեղծւած կացութիւնը անմիջականօրէն կապ ունի հակադրութիւնների պայքարի փիլիսոփայութեան հետ, որի Մարքսի կողմից սխալ լուծումը մարքսիստներին դարձրեց հասարակական ներդաշնակութիւնը քայքայող և ժողովրդավարութիւնը մերժող ուժ: Մարքսիստական այս ժառանգութիւնը ծանր բեռի նման այնպիսի ճնշում է գործադրում մեր բոլորի հոգեբանութեան վրայ, որ մենք երբեմն մոռանում ենք, թէ որքան ենք նմանւում կոմունիստներին:

2.- Լենինի կամ Մարքսի արձան քանդելը մարքսիզմի և կոմունիզմի դէմ պայքարելու լաւագոյն ձեւը չէ: Նախքան յուշարձան քանդելը անհրաժեշտ է մի երկու տող գրել, թէ որոնք են մարքսիզմի ու լենինիզմի սխալները և ինչ հարւածներ նրանք հասցրին հայ ժողովրդին: Յուշարձանը կարելի էր չքանդել, այլ վրան, օրինակ, գրել. «**Բռնութեան ու դաժանութեան տարիների խորհրդանիշ**»: Բայց այսքանն էլ գրելու համար, անհրաժեշտ էր ցոյց տալ, որ այդ տարիները Լենինի կամ Մարքսի մեղքով իսկապէս որ բռնութեան ու դաժանութեան տարիներ էին:

Այս տարւայ Մարտի 29ին «**Գոլոս Արմենիի**» թերթը հրատարակեց պատմական գիտութիւնների դոկտոր Ռուբէն Սահակեանի «**Չափանիշը անաչառութիւնն է**» յօդուածը, որտեղ հեղինակը գրում է. «**Եթէ մինչեւ վերջ անկեղծ լինենք, ապա Հայաստանի նորագոյն պատմութիւնը կարելի է գրել միայն այն բանից յետոյ, երբ ամբողջովին կը բացւեն Լենինի, Տրոցկու, Ստալինի, Չիչերինի, Կարախանի անձնական արխիւները, ինչպէս նաեւ Քաղբիւրոյի ու Կոմինտերնի արձանագրութիւնները, և երբ խորհրդային պատմաբանները արտասահ-**

մանեան արխիւները մանրամասնօրէն ուսումնասիրելու հնարաւորութիւն կը ստանան»:

Եթէ այդ ուսումնասիրութիւնները դեռեւս չեն կատարուած և եթէ նորագոյն պատմութիւնը դեռեւս չի գրուած, ինչո՞ւ շտապել արձաններ հանելու կամ կանգնեցնելու գործում: Առաւել եւս պէտք չէր շտապել այն պայմաններում, երբ Հայաստանի պառլամենտը մերժում է չեղեալ համարել Լենինի և Աթաթիւրքի յայտնի պայմանագիրը: Եթէ այս յանցանքը ներւում է Լենինին, հապա էլ ի՞նչ է արել այդ «խեղճ» մարդը հայ ժողովրդին: Չէ՞ որ Արեւմտեան Հայաստանին վերաբերւող «Դեկրետն» էլ գրւել է Լենինի թելադրանքով:

* * *

Այսքանը նախաբան համարելով, անցնեմ Մարքսի այն գլխաւոր սխալին, որի հետեւանքով ցնցուեցին ու ստրկացան բոլոր այն հասարակարգերը, ուր մուտք գործեց մարքսիզմը: Այդ երկրները շարունակում են ցնցւել նոյնիսկ այն ժամանակ, երբ մարքսիզմը և կոմունիզմը տապալւեցին:

Անակսիմանդրից Հեռակլիտի միջոցով մինչեւ Սոկրատէս, Արիստոտել ու Պղատոն, նրանցից էլ Հեգելին ու Մարքսին հասաւ դիալեկտիկական այն հիմնական սկզբունքը, որի համաձայն հակադրութիւնների պայքարը զարգացման աղբիւրն է: Այս սկզբունքը ճանաչում են աշխարհի բոլոր դպրոցների փիլիսոփաները, այդ թւում նաեւ Մարքսը: Սակայն, վերջինս կամ չկարողացաւ հասկանալ և կամ էլ քաղաքական նկատառումներով չուզեց ճանաչել այն տարրական ճշմարտութիւնը, որ հակադրութիւնների պայքարը զարգացման աղբիւր կարող է դառնալ միայն այն դէպքում, երբ այդ պայքարը աւարտւում է հաշտութեամբ, համերաշխութեամբ, ներդաշնակութեամբ:

Հակադրութիւնները ամբողջութեան ներքին մասնիկներն են, որոնց միասնութիւնից էլ կախւած է ամբողջութիւնը: Եթէ այդ մասնիկները իրենց պայքարի ընթացքում ոչնչացնեն մէկը միւսին, կ'ոչնչանայ ինքը՝ ամբողջութիւնը:

Մարքսին նման ելքը ոչ միայն չի սթափեցնում, ոչ միայն չի ստիպում հրաժարւել անհեթեթութիւններից, այլ նա դիտաւորեալ հակադրութիւնների ոչընչացման ճամբով ոչնչացնում է իր առջեւ կանգնած բոլոր ամբողջութիւնները:

Տեսնելով դասակարգային հակադրութիւնները, նա վերացնում է դասակարգերը: Տեսնելով տարակարծութիւններ ընտանիքի անդամների միջեւ, նա ոչնչացնում է ընտանիքը: Ազգային հակասութիւնները վերացնում են ազգերը, պետական հակասութիւնները՝ պետութիւնը: Կոմունիզմ կոչւող հասարակարգը դառնում է դասակարգերից, ազգութիւններից, ընտանիքից ու պետութիւնից զուրկ մի անհամ ու անհոտ կեցութիւն, որը ոչ թէ կենդանի մարդկանց, այլ ռոբոտների համար է:

Անշուշտ, այս դատարկ և որեւէ բովանդակութիւնից զուրկ հասարակարգը կարող էր ստեղծուել միայն Մարքսի գլխում, բայց երբեք իրականութեան մէջ: Այս իմաստով կարելի էր ուշադրութիւն չդարձնել մարքսիստական այս ցնդաբանութիւնների վրայ, եթէ նրանք արմատապէս չփոխէին հասարակական արժէքների բուն իմաստը, եթէ նրանք չստեղծէին բոլորովին նոր, ծայր աստիճան վտանգաւոր մարդկային հոգեբանութիւն, որից մենք բոլորս տառապում ենք մինչեւ օրս:

Յիրաւի, եթէ գոյութիւն չունեն ներդաշնակութիւնը, համերաշխութիւնը, համագործակցութիւնը, աշխատանքի բաժանումը, ապա հակադրութիւնների բնական պայքարը աւարտուելու է կա՛մ երկու կողմերի և կամ էլ կողմերից մէկի ոչնչացումով: Այս գիտակցութեամբ մղւող պայքարը կարող է միայն կատաղի ու քայքայիչ լինել, քանզի նրա միակ նպատակը՝ հակառակորդին ոչընչացնելն է: Ոչ թէ «թեզից» ու «անտիթեզից» «սինթեզի» ստեղծումը, այլ թեզի կամ հակաթեզի ոչնչացումը, որից յետոյ զարգացում չի կարող տեղի ունենալ: Աւելին՝ թեզի ոչնչացումից յետոյ պիտի վերանայ նաեւ հակաթեզը, քանզի նրա գոյութիւնը պայմանաւորուած է առաջինով:

Մինչդեռ դիալեկտիկայի էութիւնը սինթեզի մէջ է, երբ հակադրուած կողմերից ստեղծւում է մի նոր կացութիւն, որին ներդաշնակօրէն մասնակցում են բոլոր կողմերը:

Մարքսիզմը պնդում է, որ պատմութիւնը դասակարգերի պայքարի պատմութիւնն է: Սակայն այս նոյն յաջողութեամբ կարելի է պնդել, որ պատմութիւնը դասակարգերի ներդաշնակութեան և համագործակցութեան պատմութիւնն է, մէկ բան՝ որ կտրականապէս մերժում է Մարքսը: Մարքսիզմը պնդում է, որ կեցութիւնն է որոշում գիտակցութիւնը: Սակայն նոյն յաջողութեամբ կարելի է ասել, որ կեցութիւնը որոշւում է գիտակցութեամբ, քանզի գիտութիւնը, իրաւունքը, մշակոյթը, հոգեբանութիւնը, հաւատքը մեծ ազդեցութիւն ունեն կեցութեան վրայ և յաճախ հէնց գիտակցութիւնն է որոշում կեցութիւնը:

Մարքսը բացառում է կոմունիստական կուսակցութեան հաշտութիւնը որեւէ այլ կուսակցութեան հետ, մինչդեռ տարբեր կուսակցութիւնների համագործակցութեան ճամբով է ստեղծւում ժողովրդավարական կառավարութիւնը:

Մարքսը չի գտնում համագործակցութեան եզր բուրժուազիայի և պրոլետարիատի միջեւ, մինչդեռ դրամատիրական երկրներում հէնց այդ համագործակցութիւնն է ստեղծւում՝ ամէն մի գործադուլից կամ արհմիութիւնների պահանջից յետոյ: Զարգացած երկրներում բանւորները պահանջում են աշխատավարձի բարձրացում և կամ էլ աշխատանքային պայմանների լաւացում, բայց երբեք գործատէրերի հետ համագործակցելու անհրաժեշտութիւնը: Առա-

ւել եւս բանւորների ոչնչացման մասին չեն մտածում գործատէրերը, այլ փորձում են բաւարարել նրանց պահանջները, որտեղից էլ ծնւում է ներդաշնակութիւնը:

Համագործակցութեան այս ոգին էր, որ մարքսիզմը արմատախիլ արեց մարդկանց հոգեբանութիւնից և այսօր մարքսիզմի ազդեցութեան տակ ընկած մարդիկ՝ իրենց կրօնական, դասակարգային, կուսակցական և նոյնիսկ զուտ մարդկային պայքարներում հետապնդում են միայն մէկ նպատակ՝ հակառակորդի ոչնչացումը:

Այս սկզբունքի համաձայն էր, որ բոլոր այն երկրներում, ուր մուտք գործեց մարքսիզմը, ոչնչացան մտաւորականներ, եկեղեցիներ, հոգեւորականներ, մշակոյթներ, ազգեր, կուսակցութիւններ և նոյնիսկ պատմական աւանդոյթներ: Մինչդեռ այս ամէնի միջեւ համերաշխութիւնը կը ստեղծէր այն սինթեզը, ինչով նորմալ պայմաններում պիտի աւարտուէր հակադրութիւնների պայքարով պայմանաւորուած զարգացման ընթացքը: Այն, որ այդ բանը հնարաւոր է, ապացուցեցին ոչ-կոմունիստական երկրների զարգացման ընթացքները: Սակայն մենք՝ հայերս, նոյնպէս ունենք դրա փայլուն օրինակը:

* * *

Հայ Կաթոլիկները, յանձինս Մխիթարեան միաբանութեան, ցոյց տուեցին, որ կարելի էր առանց թշնամանալու Հայ Առաքելական դաւանանքի հետ, ստեղծել ներդաշնակութիւն երկու տարբեր դաւանանքների միջեւ: Նրանց հակադրութիւնը Առաքելական եկեղեցու հետ ոչ միայն չի քայքայում հայ քրիստոնէական հաւատքը, այլ էլ աւելի է հարստացնում այդ ամբողջութիւնը: Հայ Կաթոլիկների համերաշխութիւնը Առաքելական եկեղեցու հետ զարգացման նոր աղբիւր է դառնում հայ մարդու կրօնական մտածելակերպի համար:

Իմ պարտքս եմ համարում այս հարցի յատուկ կերպով նշումը, քանզի վերջերս Հայաստանի Գերագոյն Խորհրդի նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի պատւին տրուած ճաշկերոյթի ժամանակ Վենետիկում, ես փորձեցի այն միտքը յայտնել, որ հայ կաթոլիկները պէտք է մնան իրենց համերաշխութեան դիրքերի վրայ, քանզի այդ դիրքերում նրանք անգնահատելի աջակցութիւն են ցուցաբերում հայ ժողովրդի մշակոյթի և կրօնական մտքի զարգացմանը: Եւ շատ մեծ կորուստ կը լինէր մեզ համար, եթէ նրանք այդ դիրքերից անցնեն մարքսիստական հակադրութեան, այսինքն՝ աշխատեն հայ ժողովրդին կաթոլիկ դարձնելու ուղղութեամբ: Հաւանաբար ես չկարողացայ ճիշտ արտայայտել իմ միտքը, որովհետեւ ինձ հասան որոշ դժգոհութիւններ: Ահա թէ ինչու ուզում եմ աւելի յստակացնել միտքս:

Ես արդէն ասացի, որ համերաշխութիւնը պայմանաւորւած է աւելի կարեւոր արժէքների գոյութեամբ, որը Մխիթար Սեբաստացու համար հայ ժողովրդի հոգեւոր, մշակութային, կրօնական ու գիտական զարգացումն էր: Այդ նպատակին հասնելու համար, ամէնաւին էլ անհրաժեշտ չէր հայ ժողովրդին դնել Հռոմի Պապի իշխանութեան տակ և Մխիթարեան միաբանութիւնը երբեք նման փորձ չկատարեց: Նա ծառայեց հայ ժողովրդին իր սեփական դիրքերից և, այդ ծառայութեան ճանապարհին տւեց Ալիշաններ ու Զարբհանալեաններ, հրատարակեց բազմաթիւ գիտական աշխատութիւններ, բառարաններ, հանրագիտարաններ, կառուցեց դպրոցներ ու վարժարաններ, ջանք չխնայեց հայ ժողովրդին եւրոպական մշակոյթի հետ ծանօթացնելու, ինչպէս նաեւ հայ մշակոյթը եւրոպացիներին ներկայացնելու դժւարին գործի մէջ: Հայ ժողովուրդ կոչւող պատմական, կրօնական և մշակութային ամբողջութիւնը, զգալիօրէն կը դատարկւէր, եթէ նրա բովանդակութիւնից դուրս գային կաթոլիկները, որոնք այսօր էլ շարունակում են իրենց շնորհակալ ծառայութիւնը հայ ժողովրդին՝ առանց նրա դաւանանքը փոխելու ոտնձգութիւնների և առանց շեշտելու երկու եկեղեցիների դաւանական հակադրւածութիւնները: Կարելի է ասել, որ այս ոլորտում Մխիթարեան միաբանութիւնը կանգնած է շատ ճիշտ դիալեկտիկական դիրքերի վրայ, այսինքն համերաշխութիւնը ճանաչող և ներդաշնակութեան ձգտող դիրքերի վրայ: Շատ աւելի անհամերաշխ դիրքերի վրայ է կանգնած Էջմիածնի Աթոռը, որը հայ ժողովրդի կրօնական «սինթեզի» մէջ բացառում է ուրիշ դաւանանքների գոյութիւնը: Դժբախտաբար, այս հոգեբանութիւնը տիրում է Հայաստանում մարդկային գործունէութեան բոլոր բնագաւառներում: Սա նշանակում է, որ մարքսիստական հոգեբանութիւնը այնքան է մեր մէջ ամրապնդւել, որ կոմունիստների պէս են վարւում նոյնիսկ նրանք, ովքեր իրենց կոմունիզմի կատաղի հակառակորդներ են հռչակում: Բաւական է նշել, որ կոմունիստների հետ բոլոր տեսակի համագործակցութիւնները մերժողները ոչ միայն կոմունիստների են նմանւում, այլ կոմունիստներից շատ աւելի վատ են, քանզի «սինթեզից» իրենց հրաժարականը ձեւակերպում են որպէս հակակոմունիստական պայքար և դրանով կարողանում են խաբել միամիտներին:

* * *

Հաւանաբար այս մարդկանց կարելի է հասկանալ, քանզի հակառակորդին ոչնչացնելու անհրաժեշտութիւնը ծնում է բացասական արժէքների հոգեբանութիւն, ինչը բնորոշ է բոլոր նիւթապաշտ գաղափարախօսութիւնների և առաջին հերթին, մարքսիզմի համար: Ի՞նչ է նշանակում «Ով **մեզ հետ չի, նա մեր դէմ է**» թեզը, եթէ ոչ հակառակորդին վերջնականապէս ոչնչացնելու ձգտում:

Եթէ առաջին նիւթապաշտ յեղափոխականները, նամանաւանդ Ռուսաստանում, դեռեւս պահպանել էին իրենց մէջ մարդասիրութիւնը և սէրը դէպի մարդկութիւնը, ապա Մարքսի գաղափարների ազդեցութեան տակ, մարդկութեան նկատմամբ սէրը վերածւեց ատելութեան՝ կենդանի մարդու նկատմամբ: Յանուն մարդկութեան, յեղափոխականները սպանում էին մարդուն:

Մարքսը վերջնականապէս հրաժարւեց արդարութիւն, սէր, մարդասիրութիւն դրական արժէքներից և մնաց հաւատարիմ աթէիստական նիւթապաշտութեանը: Թւում էր՝ թէ Մարքսը հաշւի է նստում բարոյականութեան հետ, քանզի առաջ էր քաշել բանւորների շահագործման վերջ տալու թեզը: Սակայն իրականում շահագործման թեզը նրան անհրաժեշտ էր միայն ատելութիւն սերմանելու համար, որովհետեւ նա երբեք չխօսեց այն մասին, որ շահագործումը վիրաւորում է անհատի արժանապատւութիւնը, որ ոտնահարւում են նրա իրաւունքները, որ շահագործւած լինելը բանւորին հոգեկան, այլ ոչ թէ միայն նիւթական տառապանք է պատճառում: Փիլիսոփայութեան մէջ շահագործումը հէնց այս իմաստով է օգտագործւում, այսինքն այն իմաստով, որ մարդը դառնում է որեւէ բանի միջոց, բայց ոչ ինքնուրոյն արժէք: Իսկ Մարքսը չի ուզում զբաղւել մարդով ու նրա հոգեկան տագնապներով, շահագործմանը նա տալիս է զուտ տնտեսական սահմանում, որպէս յաւելեալ արժէքի խլում, ինչը Մարքսի հերթական անհեթեթութիւնն է, որովհետեւ յաւելեալ արժէքի խլումը անհրաժեշտ է կապիտալի կուտակման համար, առանց որի գոյութիւն չունեն ո՛չ արտադրական միջոցները և ոչ էլ արտադրութիւնը:

Անհատին գնահատելու գաղափարը ունի զուտ քրիստոնէական ծագում և յենւում է մարդասիրութեան բարոյականութեան վրայ: Իսկ Մարքսին պէտք էր ատելութեան բարոյականութիւնը: Դրական արժէքները Մարքսի համար վտանգաւոր էին, որովհետեւ նրանք կարող էին ստեղծել սրբութիւններ, սէր ու հաւատք, որոնց դէմ անկարելի էր պայքարել նիւթապաշտական կոչերով: Մարքսին անհրաժեշտ էր բացասական արժէք և նա գտաւ այդ արժէքը շահագործման մէջ: Այս իմաստով Մարքսը չի զիջում Գէօթէի Մեփիստոփելին, որը բացասական արժէքներ գտնելու վարպետ էր և իր գլխաւոր նպատակը տեսնում էր Չարը գտնելու մէջ:

Ինչո՞ւ էր Մարքսը կառչել իր նիւթապաշտութիւնից: Միթէ պարզ չէ՞ր, որ բացի նիւթական արժէքներից աշխարհում գոյութիւն ունեն նաեւ հոգեկան արժէքներ: Բանը նրանումն էր որ աթէիստական նիւթապաշտութիւնը տալիս է իշխանութեան գլուխ անցնելու համար բոլոր տեսակի միջոցներ օգտագործելու ազատութիւնը: Աթէիստական նիւթապաշտութիւնը թոյլ է տալիս գործել՝ առանց հաշւի նստելու չարի և բարու հետ: Իսկ դա արդէն մեծ առաւելութիւն է տալիս յեղափոխականին և քաղաքական գործիչին:

Մարդասիրութիւնը, համագործակցութիւնը, արդարութիւնը, համերաշխութիւնը, հաւատքը թուլացնում էին դասակարգային պայքարը ու նրանք տեղ չգտան մարքսիզմի մէջ։ Բայց մենք տեսանք, թէ ինչպիսի վարչակարգեր ստեղծեցին մարդասիրութիւնից զուրկ այդ յեղափոխականները։

Եւ եթէ մենք այսօր ուզում ենք շտկել նրանց սխալները ու դատապարտել նրանց յանցանքները, նախ և առաջ անհրաժեշտ է հրաժարուել Մարքսիզմի ծանր ժառանգութիւնից, ընդունելով այն պարզ ճշմարտութիւնը, որ ամբողջութիւն կազմող բոլոր տարրերի հակադրութիւնը պէտք է տանի դէպի ներդաշնակութիւն ու համագործակցութիւն։ Այդ դէպքում միայն մարդ ու ազգ ամբողջութիւնները կը պահպանեն իրենց բուն Էութիւնը։ Հակառակորդին ոչնչացնելու, ինչպէս նաեւ յանուն հայութեան հային ոչնչացնելու բոլոր փորձերը տանում են դէպի անբարոյական վարչակարգ, որից մենք բոլորս տառապում ենք ահա արդէն 7 տասնամեակ։ Ահա թէ ինչու Հայաստանում գործող բոլոր կուսակցութիւնները ու կազմակերպութիւնները, այդ թւում նաեւ կոմունիստները, պէտք է իրենց կուսակցական ու գաղափարական պայքարները մղեն ներդաշնակութիւն ու համագործակցութիւն ստեղծելու նպատակով։ Սա վերաբերւում է բոլորիս, բայց առաջին հերթին ՀՀՇ-ին։

1991

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ

Է. Յովհաննիսեան

«Դրօշակ»ի Մայիս 16-29 համարում հրատարակուեց Սիրակ Յովհաննիսեանի **«Բարոյական յաղթանակների յաւերժական ժամանակավրէպութիւնը»** յօդուածը, որը այնքան հետաքրքրական և կարեւոր գտայ, որ յօդուածի վերնագիրը համարեցի չհամապատասխանող նրա խոր բովանդակութեանը։

Գուցէ գրական իմաստով գեղեցիկ է հնչում այդ վերնագիրը, բայց նա արտայայտում է յօդուածի միայն մէկ միտքը, այն է, որ պէտք չէ տարուել բարոյական յաղթանակներով, որովհետեւ նրանք միշտ էլ կրում են ժամանակաւոր բնոյթ։ Մինչդեռ յօդուածի աղը ազգային գաղափարախօսութեան անհրաժեշտութիւնն է, առանց որի բարոյական յաղթանակները ժամանակավրէպ են։ Եթէ այդ գաղափարախօսութիւնը մշակւած է ու դարձած է ազգի սեփականութիւնը, ապա բոլոր բարոյական յաղթանակները օգնում են շարժել ազգի պատմական անիւը, ճիշտ այն ուղղութեամբ, որը թելադրում է ազգային գաղափարախօսութիւնը։

Գիտական աշխատութիւնների քննարկման ժամանակ, երբ ընդդիմախօսը նշում է, որ աշխատութեան վերնագիրը չի համապատասխանում աշխատութեան բովանդակութեանը, այդ նշումը որպէս օրէնք ընկալւում է որպէս բացասական դիտողութիւն, քանզի ենթադրւում է, որ հեղինակը վերնագրում ասել է աւելի շատ, քան կարելի է գտնել աշխատութեան մէջ։

Իսկ իմ նշումը թող ընկալւի որպէս դրական դիտողութիւն, որովհետեւ հեղինակը վերնագրում ասել է շատ աւելի քիչ, քան իր յօդուածում։ Ազգային գաղափարախօսութիւնը այսօր իսկապէս այն միակ փարոսն է, որը կարող է ցոյց տալ ամբողջ ազգի քաղաքական, հասարակական և մշակութային ճանապարհը, այսինքն բոլոր կուսակցութիւնների, հասարակական և պետական կազմակերպութիւնների գործունէութեան ուղեգիծը։ Այս իմաստով Սիրակ Յովհաննիսեանի յօդուածը կարող է դիտւել որպէս այդ գաղափարախօսութեան լաւ նախաբան և չեմ կարծում, որ ինքը՝ հեղինակը ուզում էր աւելին տեսնել իր յօդուածում։ Ու չեմ կարծում նաեւ, որ իմ այս յօդուածը նախաբանից շատ աւելին լինի։ Այնուամենայնիւ, ես կը փորձեմ ասել աւելին, առնւազն այն դրոյթների շուրջ, որոնք պէտք է կազմեն ազգային գաղափարախօսութեան բովանդակութիւնը։

Բոլորիս համար պարզ է, որ խօսքը հայ ազգային գաղափարախօսութեան, այլ ոչ թէ ազգայնական աշխարհայեացքի մասին է, որը միշտ էլ որոշակի տեղ է գրաւում մարդկութեան զարգացման պատմութեան մէջ:

Կասկածից վեր է, որ հայ ազգային գաղափարախօսութիւնը չի կարող ամբողջովին անկախ լինել ազգայնականութեան փիլիսոփայութիւնից, սակայն միայն այն մասով, որ հաստատում է ազգային բազմազանութեան բնական անհրաժեշտութիւնը:

Աւելի՛ն, ճիշտ այնքանով, որքանով որ մենք կը կարողանանք ապացուցել մեզ և ուրիշներին մեր գոյութեան անհրաժեշտութիւնը, ճիշտ այդքանով էլ մեր ազգային գաղափարախօսութիւնը իմաստաւորուած կը լինի: Աւստրիացիները կամ գերմանախօս շւեցարացիները կարող են իրենց գերմանացի չհամարել և որոնել զարգացման սեփական ճանապարհներ, բայց այդ ճանապարհները կ'ունենան զուտ քաղաքական, բայց ո՛չ ազգային գաղափարախօսութեան բնոյթ: Այս մասին խօսելու առիթը ես ունեցել եմ **«Ազգային քաղաքականութեան փիլիսոփայութիւնը»** գրքոյկի մէջ ու այստեղ չեմ կրկնի:

Այստեղ կ'ուզեմ նշել, որ հայ ազգային գաղափարախօսութեան մէջ պիտի տեղ գտնեն մի շարք հարցերի պատասխաններ, որոնց մասին էլ պիտի խօսեմ:

Նախնառաջ, ո՞րն է ազգային ամբողջութեան սկզբունքը: Ինչպէ՞ս որոշել հասարակական ամբողջութիւնների գոյութեան փաստը: Մեզ անհրաժեշտ է պարզել, թէ արդեօք աշխարհով մէկ ցրուած հայութիւնը կազմո՞ւմ է մէկ ամբողջութիւն, մէկ ազգային համակարգ, որը կարող է դիտուել որպէս ղեկավարելի հատուած: Եւ եթէ հայութիւնը այսօր ղեկավարելի ամբողջութիւն չէ, արդեօք դա ղեկավար մարմնի պակասութիւնի՞ց է, թէ՞ բացակայում են այն ներքին կապերը և փոխ-ազդեցութիւնները, որոնք կարգաւորում են քաոսը ու ցրուած տարրերից համակարգ են ստեղծում:

Եթէ հայ ժողովուրդը չունի ընդհանուր նպատակ, նա չի կարող ունենալ նաեւ համակարգերին յատուկ նպատակասլացութիւն, որից էլ բխում է պաշտպանելու բնազդը: Ի՞նչը պաշտպանել, ինչո՞ւ պաշտպանել, եթէ յարձակւողը մեզ համար այնքան հաճելի է, որ մենք պատրաստ ենք նրա արժէքների համար զոհելու մեր կեանքը: Ու չկայ մէկը, որ ասի՝ «ժողովրդավարութիւնից, խաւիար խմռելուց ու «Մերսեդես» քշելուց բացի կան աւելի կարեւոր բաներ»: Եթէ աւելի կարեւոր բաներ չկան, ուրեմն հայութիւնն էլ գոյութիւն չունի որպէս ամբողջութիւն, որպէս համակարգ, որպէս ուրոյն նպատակներ ունեցող մարդկային հատուած:

Այս վիճակում բոլորը վերցնում են ազգից՝ նրան ոչինչ չտալով, այսինքն՝ դիտում են ազգը որպէս մի դաշտ, որտեղ բաւարարւում են նրանց քմահա-

ճոյքները: Կթում են ազգը, նաեւ նրանք, ովքեր մեծ նուիրատուութիւններ են կատարում հայրենիքին, որովհետեւ նուիրատուութեան փառքը ու նրա հետ կապւած ծափահարութիւնները ստանալուց յետոյ, նուիրատուներին այլեւս չի հետաքրքրում, թէ արդեօք իրենց նուէրը տեղ հասա՞ւ ու ծառայե՞ց արդեօք այն «կարեւորին», որը իրենցից շատ աւելի կարեւոր է:

Այդ աւելի կարեւորի գոյութեան ճանաչումն է, որ մարդու կենդանական բնազդի վրայ աւելացնում է զուտ մարդկային հասարակական ինքնագիտակցութիւն և այդ ինքնագիտակցութիւնն է, որ ստեղծում է հասարակական համակարգեր, որոնց մէջ ազգը միակ բնական ամբողջութիւնն է: Համակարգային յատկութիւնների մէջ կայ մէկը, որը գուցէ ամենակարեւորն է: Համակարգի ամբողջութիւնը չի որոշւում բաղկացուցիչ մասերի պարզ գումարով, այլ մի նոր յատկութիւն է, որը բացակայում է պարզ մասերի պարզ գումարի մէջ: Եւ եթէ հայութիւնը հայերից բաղկացած պարզ գումար է, ապա զուր են ճիգերը այդ գումարի մէջ գտնել բոլորին միացնող մի սկզբունք: Ժամանակը ոչ թէ վայրկեանների գումար է, այլ անցեալի, ներկայի և ապագայի միասնութիւն:

Համակարգը ունի նպատակասլացութիւն, ինչը նշանակում է, որ նրա հերթական դիրքը որոշւում է ոչ միայն յետեւում կանգնած պատճառով, այլ առջեւում կանգնած նպատակով: Համակարգի պատճառային կապերը ենթարկւում են նպատակի թելադրանքներին, որը համակարգի բաղկացուցիչ մասերի նպատակների գումարը չէ, այլ նրանց միջոցով ստեղծւած մի նոր համակարգային թելադրանք: Ազգ համակարգը ոչ բացատրւում է և ոչ էլ սպառւում մարդկանց գումարով: Նա ունի սեփական կերպար և հոգի, որոնց միջոցով էլ ստեղծւում է նրա միասնութիւնը և որոշւում է նրա տեղը մարդկութեան մէջ:

Ազգային գաղափարախօսութիւնը, հաշւի առնելով ազգի նիւթական և հոգեկան էութիւնը, որոշում է այդ տեղը և ձեւակերպում է այն թելադրանքները, որոնք վերածւելով ազգային նպատակների, ազգը դարձնում են նպատակասլաց ամբողջութիւն:

Հասարակական այդ ամբողջութիւնները ստեղծում են մշակոյթ, ապա զարգանում են սեփական ձեռքերով ստեղծւած մշակոյթի ազդեցութեան տակ: Ազգային մշակոյթը միասնութիւնն է այն գաղափարների և արժէքների, որով ազգը ղեկավարւում է իր ամէնօրեայ նիւթական և հոգեկան կեանքում: Սակայն ուրիշ ժողովրդի կողմից ստեղծւած մշակոյթը չի կարող որեւէ ժողովրդի համար ղեկավարման աղբիւր ծառայել, եթէ այդ ուրիշների մշակոյթը չի բխում ազգի էութիւնից: Այս իմաստով լաւ ու վատ մշակոյթներ չկան, կան միայն ազգի էութեանը համապատասխանող կամ չհամապատասխանող մշակոյթներ:

Շատերին թւում է, թէ գոյութիւն ունի մշակոյթները գնահատող կամ դասակարգող գիտութիւն, սակայն իրականում մինչեւ այսօր նման գիտութիւն գոյութիւն չունի և այս ուղղութեամբ կատարւում են առաջին քայլերը։

Այնուամենայնիւ այսօր մենք կարող ենք նշել այն հիմնական տարբերութիւնները, որոնք գոյութիւն ունեն տիրապետող արեւմտեան և պարտւած արեւելեան մշակոյթների միջեւ։

Արեւելեան մշակոյթը տիեզերքը դիտում է որպէս ներքին ներդաշնակութեամբ ոգեշնչւած մի ամբողջութիւն, որի ղեկավարման մէջ մարդը անելիք չունի։ Մարդը միայն համեստ դիտորդ է, աշխարհի օրինաչափութիւններին ենթակւող և յարմարւող մի էակ։ Այդպիսին էին հին յոյները և գոթական ժամանակւայ քրիստոնեաները, որոնք իրենց հայեացքը սեւեռել էին դէպի երկինք։

Արեւմտեան մշակոյթը աշխարհի մէջ տեսնում էր քաոս, որը ինքը պէտք է կարգաւորի իր ստեղծագործական ուժով։ Արեւմտեան մշակոյթը պարտադրում էր աշխարհին իր կամքը և իր նպատակները՝ համոզւած լինելով, որ անհրաժեշտ է վերափոխել աշխարհը և իր ծրագրերը այս ուղղութեամբ շատ աւելի տրամաբանական են և մարդկութեան համար աւելի ընդունելի, քան «յիմար» բնութեան կողմից դրւած օրէնքները։ Այդպիսին էին հռոմէացիները մեր թւականների սկզբին։ Յոյնը բնութիւնը և բնական օրինաչափութիւնները զգում էր, իսկ հռոմէացին այդ օրինաչափութիւնները ստեղծում էր։ Յոյնը ճշմարտութիւնը որոնում էր, իսկ հռոմէացին ստեղծում։ Ահա թէ ինչո՛ւ հռոմէացիները - ի տարբերութիւն յոյների – փիլիսոփայութիւն չստեղծեցին, նրանք իրաւաբաններ էին նոյնիսկ այն ժամանակ, երբ զբաղւում էին փիլիսոփայութեամբ։

Այսօր արեւմտեան գիտնականները ջանում են իրենց մշակոյթը կոչել յունահռոմէական, քանզի նրանք չեն ուզում հրաժարւել յունական փայլուն քաղաքակրթութիւնից և ուզում են թագցնել արեւելեան մշակոյթը բարբարոսաբար ոչնչացնելու իրենց մեղքը։ Մինչդեռ 13րդ դարի սկզբին սկսւեց արեւելեան մշակոյթի ոչնչացումը, որը մեր օրերին հասել է իր աւարտին։ Հաւանաբար այդ ողբերգութեան ճիչն էր, որ սրանից տասը տարի առաջ արձակեց Ա. Սոլժենիցինը՝ ասելով, թէ անհրաժեշտ է կանգնեցնել առաջադիմութիւնը։ Նրան ծաղրի ենթարկեցին արեւմտեան մշակոյթի ջատագովները, որոնց համար աշխարհի վերափոխութիւնը իրենց մշակոյթի հիմքն է և այդ վերափոխութիւնը նրանց մօտ առաջադիմութիւն է կոչւում։

Անշուշտ, այսօրւայ տեսանկիւնից, արեւմտեան մշակոյթը իշխելու իրաւունք ունէր, քանզի նա էր կատարել աշխարհագրական նւաճումները, զարգացրել գիտութիւնը, հաստատել իրաւական կարգը և ստեղծել այսօրւայ քա-

ղաքակրթութիւնը: Սակայն ո՛չ մէկը այսօր չի ուզում տեսնել, որ արեւմտեան մշակոյթի հարուածների տակ արեւելեան քաղաքակրթութիւն այդպէս էլ չստեղծուեց ու այլեւս դժւար թէ ստեղծւի, որովհետեւ արեւմտեան մշակոյթը ներդաշնակ մարդուն դարձրեց աշխարհը վերափոխող հերոս:

Արեւմտեան մշակոյթը պարզապէս չորացրեց արեւելեան մշակոյթի արմատները և նա պտուղ չտուեց: Արեւելեան մշակոյթը կատարեալ հասարակարգ կառուցելու համար կատարելագործում էր մարդը՝ ունենալով այն համոզմունքը, որ միայն լաւ աղիւսներից կարելի է կառուցել լաւ շէնք: Արեւմտեան մշակոյթը գնաց բոլորովին այլ ճանապարհով, նա ուշադրութիւն չդարձրեց մարդու կատարելագործութեան վրայ և յանգեց այն եզրակացութեան, որ կատարեալ հասարակարգ կարելի է կառուցել նաեւ վատ մարդկանցից, եթէ կատարելագործւած է ղեկավարման կարգը:

Արեւմտեան մշակոյթը զէնքի ուժով պարտադրեց բոլորին ընդունել իր սկզբունքները, սակայն ողբերգութիւնը կայանում էր նրանում, որ այդ մշակոյթը պարտադրւեց նաեւ նրանց, ում աշխարհահայեացքը, հոգեկան արժէքները և պատմական անցեալը մերժում էր այդ մշակոյթի սկզբունքները: Այդ ազգերից ոմանք ստիպւած եղան ընդունելու արեւմտեան մշակոյթը ու դարձան կապիկներ, ոմանք էլ յամառեցին ու դասւեցին յետամնաց ազգերի շարքին: Արդէն մեր օրերին մենք տեսանք, որ Քեմալ Աթաթուրքը չկարողացաւ եւրոպականացնել թուրք ժողովուրդը: Բայց գտնւեցին ազգեր, որոնք ոչ միայն ընդունեցին արեւմտեան մշակոյթը, այլեւ սկսեցին պարծենալ կապիկի իրենց վիճակով՝ համարելով, որ արեւմտեան մշակոյթը դուրս բերեց իրենց յետամնաց արեւելեան մշակոյթի թակարդից:

Հայ ժողովուրդը արեւելեան ժողովուրդ է: Նա արեւելեան մշակոյթը ստեղծողներից և այդ մշակոյթով ապրող ժողովուրդներից մէկն է, ո՛չ պակաս, քան յոյները:

Մեր պատմական անցեալը ամբողջովին ընթացել է արեւելեան մշակոյթի թելադրանքի տակ: Մեր հոգեկան աշխարհը ձեւաւորւել է բնութեան ներդաշնակութեան ճանաչման հիման վրայ և մեր վարքագծի մէջ խիղճը միշտ օրէնքից աւելի կարեւոր տեղ է գրաւել: Արդարութիւնը մեզ համար ներքին ապրում է եղել, բայց ո՛չ իրաւաբանական թելադրանք: Ընտանիքի ու ազգի նկատմամբ մենք ունեցել ենք ոչ թէ նիւթական, այլ հոգեկան պարտաւորութիւն: Մենք միշտ պատրաստ ենք եղել զոհւելու, բնական ներդաշնակութիւնը երբեք չենք խախտել: Մեր նկարագիրը արեւելեան մարդու նկարագիր է, որը իրեն համարում է բնութեան անբաժանելի մասնիկը: Մենք կապիկ չդարձանք նոյնիսկ դաժան խորհրդային իշխանութեան օրերին: Մենք ծափահարում էինք մեր ղեկավարներին, բայց շարունակում էինք մնալ արեւելեան մարդ ընտանի-

քում, հարսանիքների ու թաղումների ժամանակ, ընկերային մթնոլորտում, աշխատանքի վայրում և ղեկավարներին ծաղրելու հարցում, որոնց դեռեւս մի քանի ժամ առաջ ծափահարում էինք։ Մեր ընկերուհիներին մենք սիրում էինք ոչ թէ կոմերիտական սիրով, ոչ թէ Շեքսպիրի շինծու ողբերգութիւնների, հերոսների պէս, այլ արեւելեան գեղեցիկ ու մաքուր սիրով։

Մեզանից ուզում էին խլել մեր արեւելեան էութիւնը, բայց ոչ մէկին այդ բանը չյաջողուեց։ Եւ միայն մեր օրերին Հայաստանի ղեկավարները այս ուղղութեամբ հասան աներեւակայելի յաջողութեան։

Ահա թէ ինչո՛ւ, արեւելեան մշակոյթին պատկանելու մեր պատիւը պահպանելու մէջ եմ ես տեսնում մեր ազգային առաքելութիւնը, որը ազգային գաղափարախօսութեան յենակէտը պէտք է դառնայ։ Ինչպէս ասացինք, արեւելեան քաղաքակրթութիւն այսօր գոյութիւն չունի և կամ էլ այնպէս է քարկոծւում (եթէ չասենք ռմբակոծւում), որ մօտ ժամանակներումս նրա հետքն անգամ չի երեւալու։ Շուտով 50-60 տարեկան մեր կանայք կարճ անդրավարտիկներ հագած նետւելու են (արդէն նետւել են) Եւրոպայի և Ամերիկայի քաղաքները միասեռականների ակումբները լուսանկարելու համար։ Մեր մայրերին մենք ուղարկելու ենք ծերանոցներ, իսկ թոռնիկներին՝ գիշերօթիկներ։ Բոլորս ազատ շուկայում դառնալու ենք առեւտրականներ ու Կոմիտասի փոխարէն լսելու ենք արեւմտեան երգիչների ճչոցները ու ենթարկելու ենք Աւետարանը գիտական վերլուծութիւնների։

Հէնց այս ամէնից խուսափելու համար է, որ մենք պարտաւոր ենք վերադառնալու մեր արեւելեան ինքնութեանը, սկզբից մեզ, ապա ուրիշներին փրկելու համար։ Իսկ եթէ յաջողի՝ ամբողջ արեւելեան քաղաքակրթութիւն ստեղծելու համար։

Գիտեմ, որ շատերը պիտի հեգնանքով ընդունեն իմ այս մտածումները՝ համարելով, որ կա՛մ խենթացել եմ և կամ էլ կատակ եմ անում։ Նրանք, ովքեր չեն ճանաչում մեր ժողովուրդը, պիտի ասեն, թէ ինչպէ՞ս աշխարհով ցրւած մեր մի «բուռ» ժողովուրդը իր վրայ պիտի վերցնի նման համամարդկային նշանակութիւն ունեցող առաքելութիւն։ Բայց մեր աչքերի առաջ ուրիշ մի բուռ ժողովուրդ մեծ յաջողութեամբ կատարում է ճիշտ հակառակ առաքելութիւնը և իր այդ գործունէութեան մէջ արդէն վաղուց գտել է հզօր դաշնակիցների ու իր յետեւից է քաշում Հայաստանի ազգային ողնաշարից զուրկ ղեկավարութիւնը։ Մենք էլ մեր առաքելութեան համար կարող ենք գտնել բաւականին հզօր դաշնակիցներ, օրինակ՝ Չինաստանը, Հնդկաստանը, Արաբական աշխարհը, Իրանը, Ռուսաստանը և ուրիշներ։ Սակայն առայժմ խօսքը մեզ փրկելու մասին է, այսինքն ազգային համակարգ ստեղծելու մասին է։

Ինչպէ՞ս և որտե՞ղ պիտի ստեղծւի այդ համակարգը։

Այնքան ժամանակ, քանի դեռ խօսքը ոչ թէ համակարգը սնելու և շարժելու մասին է, այլ նրան ստեղծելու մասին, քանի դեռ խօսքը ազգային ամբողջութեան կառոյցի մասին չէ, այլ այն մշակոյթի, որի շուրջ պէտք է ստեղծուի միասնութիւնը՝ առայժմ նրա տեղի մասին խօսելու ժամանակը չէ: Մշակութային այս ամբողջութիւնը պէտք է ստեղծուի բոլոր հայերից, անկախ նրանց ապրելու վայրից: Սակայն այդ մշակութային հաւաքականութիւնը պէտք է ունենայ իր կենտրոնը, որը բարենպաստ պայմաններում կարող է լինել Հայաստանում: Ամէն մի հայ իր ապրած երկրում պէտք է գիտակցի և զգայ, որ ինքը պատկանում է յատուկ առաքելութեամբ օժտուած մի համակարգի, սակայն չպէտք է ամէնուր ու ամէն օր շեփորի իր այդ պատկանելիութեան մասին, որովհետեւ ոչ մէկ համայնք չի ընդունում իր մէջ օտար համակարգի գոյութիւնը և աւազակախմբի մէջ պարկեշտ մարդը նոյն չափի անընդունելի է, որքան որ պարկեշտների մէջ աւազակը:

Իսկ փոքրամասնութիւնների իրաւունքների պաշտպանութեան օրէնքը կապիկների կողմից ստեղծուած օրէնք է, որը ոչ մէկ տեղ չի պաշտպանում, կամ պաշտպանում է այնքանով, որքանով որ փոքրամասնութիւնը չի հակասում մեծամասնութեան շահերին:

Սա նշանակում է, որ հայկական համակարգը ամէնուր պէտք է հաւատարմութիւն ցուցաբերի այն երկրի նկատմամբ, որտեղ ապրում է և որքան կարող է պէտք է լաւացնի իր դիրքերը այդ երկրում: Մենք պիտի կարողանանք բոլոր երկրներում հասնել ամենաբարձր դիրքերի և այդ դիրքերից պաշտպանել հայութեան շահերը: Միակ բացառութիւնը մեր հայրենիքն է, որտեղ իշխանութիւնները ունեն յատուկ անելիքներ և եթէ նրանք չեն կատարում իրենց ազգային պարտականութիւնները, ապա նրանց նկատմամբ հաւատարմութիւնը ոչ մի կերպ արդարացնել չի կարելի:

Նրանք, օրինակ, պէտք է պետականացնեն արեւելեան մշակոյթը ու դնեն արեւելեան քաղաքականութեան հիմքը: Նրանք պէտք է լինեն հայկական պահանջատիրութեան պաշտպանները և պէտք է լինեն հայ ժողովրդի խօսնակները միջազգային ատեաններում, իսկ Հայաստանը պէտք է դառնայ ամբողջ հայութեան փրկավայրը, եթէ նրան սպառնայ որեւէ վտանգ: Հայաստանը մշակութային համակարգի մէջ ունենալու է իր տեղը, բայց չի կարող նկատել այդ համայնքի տէրն ու տիրականը: Կասկածից վեր է, որ մեր արեւելեան ժողովուրդ լինելու փաստը վերաբերում է նաեւ արեւմտահայութեանը, որը արեւելահայերից գուցէ աւելի շատ արեւելահայ է:

Ի՞նչ դեր ունեն կատարելու կուսակցութիւնները և այլ կազմակերպութիւնները՝ ազգային ամբողջութիւնը ստեղծելու, ապա նրա շարժիչ ուժը դառնալու գործում:

Այս հարցում ինձ նախ և առաջ հետաքրքրում է Հ.Յ.Դաշնակցութիւնը, որը առաջինն էր, որ փորձեց ձեւակերպել հայութեան համազգային նպատակը և նրա շուրջ համախմբել հայութիւնը։ Միացեալ, Անկախ ու Ազատ Հայաստանի թեզը, լայն մեկնաբանութեամբ, ազգային ամբողջութիւն ստեղծելու փորձերից էր և եթէ Դաշնակցութիւնը քաղաքական իր մտածումները չկարողացաւ լիովին համազգայնացնել, ապա միայն այն պատճառով, որ Միացեալ Հայաստան ստեղծելու նպատակի վրայ դրուել էր կուսակցական կնիք, ինչը անընդունելի էր դարձնում այդ նպատակը հակադաշնակցական տարրերի համար։

Կար ժամանակ, որ մեր պարզ հարցումին, թէ միթէ՞ ձեզ համար անընդունելի է Միացեալ ու Անկախ Հայաստանի ստեղծումը, մեզ պատասխանում էին, թէ «աղիկա դաշնակցականների նպատակն է»։ Այդպէս եղել է ու պիտի լինի։ Որքան էլ որ ընդհանուր լինի առաջարկւած գաղափարը, միեւնոյն է, եթէ նա առաջարկւած լինի ազգի միայն մէկ հատւածի կողմից, նրա արժէքը միշտ էլ պիտի կասկածի տակ առնւի ու միշտ պիտի նկատւի հատւածային շահերին ծառայող առաջարկութիւն։

Տասնամեակներ շարունակ դաշնակցական արժէքներ էին համարւում անկախութիւնը և նրա հետ կապւած բոլոր խորհրդանշները։ Միայն այսօր, նրանք՝ ովքեր մեզ էին վերագրում այդ ազգային արժէքները, սթափւեցին ու հասկացան, որ մեծ պատիւ են տալիս մեզ, երբ համարում են մեզ համազգային նպատակների հեղինակներ։ Ու սկսւեց հակառակ ընթացքը, այդ արժէքները Դաշնակցութիւնից խլելու և համազգայնացնելու ընթացքը։ Այդ ընթացքի դէմ մենք՝ բողոք չունենք, ընդհակառակը՝ ուրախութեամբ նշում ենք, որ կարողացանք պահել այն, ինչը անհրաժեշտ էր մեր ժողովրդի ու մեր ապագայ հայրենիքի համար։

Սակայն այս ընթացքը ցոյց տւեց, որ նոյնիսկ ամենահամազգային նպատակը կարող է ազգի կողմից ոտնահարւել, եթէ նրա հեղինակութիւնը վերագրւում է միայն մէկ հատւածի։ Նոյնիսկ Ցեղասպանութիւնը դատապարտելու համազգային խնդիրը ժամանակին վերագրւում էր Դաշնակցութեանը և սխալ էլ չէր, որովհետեւ այս պարտականութիւնը իր վրայ էր վերցրել Դաշնակցութիւնը և իրականացնում էր Հայ Դատի իր յանձնաժողովների ճամբով։ Միայն մեծ ջանքերից յետոյ Դաշնակցութեանը յաջողւեց համոզել միւսներին՝ միանալ այդ գործին, որովհետեւ դա ամբողջ հայութեան նպատակն է։

Բայց նրանք միացան այդ գործին, երբ երեւաց յաջողութեան ծայրը և երբ Հայաստանը 1965 թւականին միացաւ այդ շարժմանը։ Այսինքն՝ այդ շարժմանը միացան մարդիկ ու կազմակերպութիւններ ոչ այնքան համազգային զգացմունքներից մղւած, այլ դուրս չմնալու համար այն համազգային ոգեւորութիւնից, որը տիրում էր մեր ժողովրդի մէջ, երբ Դաշնակցութեան ջանքերով Ցե-

ղասպանութիւնը դատապարտելու հարցը սկսւեց քննարկւել միջազգային ատեաններում: Եւ ճիշտ այդ ճանապարհով էր, որ Մոսկւայի Հայ Դատի Գրասենեակի ջանքերով Ռուսաստանի Պետական Դումայի որոշումը Հայաստանի իշխանութիւնները անւանեցին Հայաստանի դիւանագէտների փայլուն յաղթանակ: Այսինքն դա իրը գործն էր այն դիւանագէտների, որոնք սեփական երկրում չեն կարողանում անցկացնել նման որոշում և անում են ամէն ինչ Ցեղասպանութեան հարցում զիջումներ կատարելու ուղղութեամբ:

Հայաստանի իշխանութիւնները պարզապէս չէին կարող իրենց դուրս դնել այս համազգային ուրախութիւնից, որով ապրում էր հայ ժողովուրդը այդ օրերին: Եթէ ճար ունենային՝ նրանք կը յայտարարէին, որ Յունաստանի խորհրդարանի որոշումն էլ իրենց դիւանագէտների գործն էր:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ որեւէ հատւածի կողմից առաջ քաշւած համազգային նպատակը միայն այն դէպքում է ընդունւում ամբողջ ազգի կողմից, երբ նպատակը այնքան մեծ է ու այնքան արժէքաւոր, որ այդ նպատակը հատւածին թողնելը պատիւ է բերում միայն նրան:

Համազգային նպատակը դուրս է գալիս հատւածի սահմաններից նաեւ այն դէպքում, երբ արդէն հարթւած են լինում նպատակին հասնելու ճանապարհները: Այդ դէպքում բոլորը սկսում են հպարտութեամբ քայլել այդ ճանապարհով, կարծես թէ իրենք են ստեղծել այդ ճանապարհները: Իսկ մեզ՝ դաշնակցականներիս աւելի բան պէտք չէ: Թող քայլի մեր ժողովուրդը ճիշտ ճանապարհով՝ նոյնիսկ մոռանալով, որ նպատակն է՛լ, ճանապարհն է՛լ ստեղծւել է միայն մէկ հատւածի կողմից:

Ես համոզւած եմ, որ եթէ մեզ յաջողւի ստեղծել հայ ժողովրդին արեւելեան մշակոյթին վերադարձնելու շարժում և այս շարժման շուրջ հայկական համակարգ, ապա ոչ մէկը արեւելեան մշակոյթը դաշնակցականապատկան չի համարի և այդ մշակոյթի պաշտպանութեան պատիւը Դաշնակցութեանը չի վերագրի:

Իսկ երբ շարժումը կը տայ իր առաջին պտուղները, գուցէ Հ.Հ.Շ.ն էլ յայտարարի, որ ամենասկզբից իրենց շարժումը հէնց այդ նպատակը ունէր և միայն թիւրիմացութեան բերումով նրանք ընկան արեւմտեան մշակոյթի ճանկերը:

Ահաւասիկ այս նրբութիւնները հաշւի առնելով՝ մենք պէտք է կարողանանք մեր քաղաքական և հասարակական մտածումները մատուցել ոչ թէ կուսակցական, այլ համազգային ձեւի տակ: Խօսքը իսկապէս ձեւի մասին է, քանզի այդ մտածումների բովանդակութիւնը միշտ էլ համազգային է եղել:

Եթէ Միացեալ, Ազատ ու Անկախ Հայաստանի գաղափարը մատուցւէր այլ ձեւի տակ, օրինակ՝ Միացեալը ոչ որպէս որոշակի պետութիւն, այլ որպէս միացեալ հայութիւն՝ ամբողջական համակարգ ստեղծելու իմաստով, եթէ ա-

զատութիւնը մեկնաբանուէր որպէս սեփական մշակոյթով առաջնորդուելու ազատութեան, իսկ անկախութիւնը որպէս սեփական ճակատագիրը անկախօրէն կերտելու իրաւունքի իմաստով, ապա հայութեան գոյատեւելու աշխարհագրական սահմաններից բացի ամէն ինչ աւած կը լինէր։

Ինչ վերաբերում է այդ սահմաններին, ապա նրանց որոշելու մէջ պատմական իրաւունքները ոչ մէկ նշանակութիւն չեն կարող ունենալ, ուստի այդ մասին խօսելը պէտք էլ չէ։ Դեռեւս պարզ չէ, թէ ինչ է իրենից ներկայացնում հայ ազգային համակարգը, ուստի պարզ չէ՝ ինչպիսի՛ սահմաններում նա կարող է գոյատեւել։ Եթէ Հայաստանը պիտի շարունակի ղեկավարուել Արեւմտեան մշակոյթով, եթէ նա պէտք է հրաժարուի ազգային գաղափարախօսութիւնից և համարի, որ հայ ժողովրդի միակ նպատակը կոմունիզմի դէմ պայքարն է, դրամատիրական վարչակարգի ստեղծումն է և ազատ շուկայ նետուելն է, ապա Հայաստանը ինքը դուրս կը մնայ հայկական համակարգից, որովհետեւ նրա քաղաքացիները դուրս կը փախչեն երկրից ու կը հաստատուեն այնտեղ, որտեղ արդէն վաղուց գոյութիւն ունի դրամատիրական վարչակարգ, ազատ շուկայ, իսկ բոլշեւիկներ ընդհանրապէս գոյութիւն չեն ունեցել։

Այս պայմաններում Դաշնակցութիւնը ունի միայն մէկ կարեւոր պարտականութիւն, նա պէտք է իր վրայ վերցնի հայ հաւաքականութեան պաշտպանութիւնը։ Պաշտպանել ո՛չ միայն հային, ո՛չ միայն հայկական համայնքը, այլ հայկական ամբողջական համակարգը։ Իսկ եթէ այդ համակարգը այդպէս էլ չստեղծուի, նա ստիպուած կը լինի միայնակ կրելու իր ուսերի վրայ ամբողջականութիւն ստեղծելու ծանրութիւնը, ջանալով կամաց-կամաց տեղափոխել այդ ծանրութիւնը ամբողջ ազգի ուսերի վրայ։

Բարեբախտաբար, Հ.Յ.Դաշնակցութեան Հայաստանի կազմակերպութեան քաղաքական ուղեգիծը ցոյց է տալիս, որ Հայաստանի մեր ընկերները քաջ գիտակցում են ազգային գաղափարախօսութեան ստեղծման անհրաժեշտութիւնը և պատրաստ են ուրիշների հետ միասին պաշտպանել ազգային արժէքները, մինչեւ որ ազգային գաղափարախօսութիւնը յստակ սահմանի բոլորին, այդ թւում նաեւ Հ.Հ.իշխանութիւնների անելիքները։

Հայ ազգային գաղափարախօսութիւնից էլ կը բխեն հայ ազգային քաղաքականութիւնը, Հայ Դատի լուծման ճանապարհները և հայկական հաւաքականութեան ստեղծումը ու նրա քաղաքականացումը։

1996

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՅԹՆԵՐԸ

Էդուարդ Յովհաննիսեան

Խօսքը ոչ թէ ազգային գաղափարախօսութեան, այլ ազգային գաղափարի մասին է, որը տարբերւում է գաղափարախօսութիւնից իր հիմնական դրոյթներով: Գաղափարախօսութիւնը ունի կիրառական նշանակութիւն, մինչդեռ գաղափարը կրում է աւելի ընդհանուր բնոյթ: Ազգային գաղափարախօսութիւնը մշակւում է ազգային գաղափարի հիման վրայ և իր շուրջ ստեղծում է համախոհների միութիւններ, կուսակցութիւններ կամ այլ տեսակի կազմակերպութիւններ:

Ազգային գաղափարախօսութիւնը ազգային գաղափարի քաղաքականացումն է, ուստի ազգային գաղափարից կարող են ծնւել տարբեր գաղափարախօսական կազմակերպութիւններ, ինչպէս Աւետարանից ծնւեցին տարբեր եկեղեցիներ, իսկ արդարութեան գաղափարից տարբեր ընկերվարական շարժումներ:

Հայ ազգային գաղափարը հայ ազգի գոյատեւման սկզբունքների և զարգացման ճանապարհների հիմնաւորումն է: Նա ձեւակերպում է ազգի գլխաւոր նպատակը և այդ նպատակին հասնելու ճանապարհները, որոնց իրականացման առաքելութիւնը ընկնում է ազգային գաղափարը ճանաչող քաղաքական կազմակերպութիւնների վրայ: Նրանք է, որ պիտի մշակեն գլխաւոր նպատակին հասնելու ռազմավարութիւնը՝ դարձնելով այն հայ պետականութեան քաղաքականութիւն:

Ու քանի որ խօսքը հայ ազգի գոյութեան ու զարգացման ճանապարհների մասին է, Հայ Ազգային Գաղափարը պէտք է ընդգրկի մարդկային գործունէութեան բոլոր բնագաւառները, կամ՝ աւելի ճիշտ, որոշի այդ բնագաւառներում հայ ազգի տեղը:

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ

Ազգային փիլիսոփայութեան բնագաւառում գոյութիւն ունի երեք հարց, որոնց պատասխանելուց յետոյ միայն կարելի է ձեւակերպել Հայ Ազգային Գաղափարի փիլիսոփայական դրոյթը:

Առաջինը՝ ազգային բազմազանութեան բնական լինելու հարցն է: Երկրորդը՝ նրա օգտակարութեան հարցը: Իսկ երրորդը՝ ազգային ինքնագիտակցութեան, կամ՝ ազգալուծման դէմ պայքարելու կամքի գոյութեան հարցը:

Առաջին հարցի շուրջ գոյութիւն ունեն երկու իրար հակասող և իրար բացառող գաղափարներ, որոնցից մէկը պնդում է, թէ ազգային բազմազանութիւնը ստեղծուել է մեր կարիքների հիման վրայ՝ բնական դժւարութիւններին յարմարուելու անհրաժեշտութեան բերումով: Սակայն այսօր, երբ այդ դժւարութիւնները պակասել են, կամ՝ վերացել, ազգայնականութիւնը նոյնիսկ խանգարիչ հանգամանք է հանդիսանում արդիւնաբերական հասարակարգ ստեղծելու համար: Այդ հասարակարգը ստեղծելու համար պէտք է ընտրել աշխարհաքաղաքացիութեան ճանապարհը:

Միւս գաղափարը պնդում է, որ ազգային բազմազանութիւնը բնական արժէք է, որ նա ստեղծուել է ճիշտ այնպէս, ինչպէս ստեղծուել է ինքը՝ բնութիւնը, իր ամբողջ բազմատեսակ էութեամբ: Այս իմաստով ազգը հիմնական արժէք է, քանզի մասնակից է երկրի ներդաշնակութեան և հանդիսանում է երկրագնդի հաւասարակշռութիւնը պահպանող լծակներից մէկը:

Մենք արդէն համոզուել ենք, որ բնութիւնը խիստ պատժում է մեզ, երբ մենք խախտում ենք բնութեան հաւասարակշռութիւնը և մենք շտապ կարգով փորձում ենք վերականգնել մեր կողմից խախտուած հաւասարակշռութիւնը, բայց հաւանաբար արդէն ուշ է:

Այժմ բնութեան պաշտպանները փրկում են կենդանիներին, դաշտերը ու ծովերը, բայց ազգերի փրկութեան հերթը դեռեւս չի հասել: Ընդհակառակը, աշխարհաքաղաքացիների ճնշումների տակ և ամերիկացիների ղեկավարութեամբ, ազգայնականութիւնը հռչակուել է յանցագործութեան պէս մի բան և մարդկութեան զարգացումը խանգարող հանգամանք:

Հայ Ազգային Գաղափարը թելադրում է մեզ, որ ազգը բնական համակարգերից մէկն է և եթէ նա արհեստականօրէն, այս կամ այն ճանապարհով, վերանայ, ապա բնութիւնը ներկայ հասարակական կազմակերպւածութիւնից մի քայլ յետ կը գնայ դէպի մշակոյթից զուրկ նախնական քաոս, քանզի ապազգային մշակոյթ չի կարող գոյութիւն ունենալ:

Ազգը պատմական դարաշրջանի երեւոյթ չէ: Ազգը հաւաքական անհատականութիւն է, որը ունի իր դէմքը, նկարագիրը, ձգտումները և ապրելու կամքը: Ազգը այսօր ապրող սերունդը չէ, բոլոր սերունդների գումարը չէ: Ազգի մէջ բոլոր նախորդ սերունդները ապրում են ոչ պակաս իրաւունքով, քան ապրում է ներկայ սերունդը: Ազգը ոչ մէկ ուրիշ համակարգի մաս չի կազմում: Ազգը արժէք է ինքը իր մէջ: Ազգը միշտ էլ ձգտում է անմահութեան: Նա երբեք չի կարող համակերպւել անցեալի վրայ ապագայի բացարձակ յաղթանակի հետ: Ահա թէ ինչո՛ւ ազգային կեցութեան և ազգային գիտակցութեան մէջ նկատւում է պահպանողականութիւն, որը ոչ թէ յետամնացութեան, այլ ապրելու կամքի ապացոյցն է:

Այսպիսով, Հայ Ազգային Գաղափարի փիլիսոփայական դրոյթը այն է, որ ազգը հիմնական արժէք է, որ նրա գոյութիւնը անհրաժեշտ է մարդկութեանը, որ նրա պահպանումը ամէն մի հայի սրբազան պարտականութիւնն է և որ նրա դէմ ուղղած բոլոր ոտնձգութիւնները մարդկութեան դէմ ուղղած յանցագործութիւններ են։

ԿՐՕՆ

Աշխարհը ճանաչելու համար բնութիւնը տուել է մարդուն երեք միջոց՝ զգացմունքներ, տրամաբանութիւն և ներըմբռնում։ Սակայն այս երեք միջոցները յաճախ մնում են հակասութիւնների մէջ, քանզի նրանք խօսում են տարբեր բաների մասին, իսկ մենք յամառօրէն ուզում ենք ստանալ նոյն պատասխանները այս երեք աղբիւրներից։ Աշխարհը ճանաչելու ճանապարհին մեր զգացմունքները ծնեցին արուեստն ու գրականութիւնը, տրամաբանութիւնը ծնեց գիտութիւնը, իսկ ներըմբռնումը՝ հաւատքը։ Եւ, անշուշտ, տարբեր են արուեստի, գիտութեան ու կրօնի պատասխանները այս կամ այն երեւոյթի նկատմամբ։

Այժմ մեզ հետաքրքրում է ազգ հասկացութեան կրօնական ըմբռնումը։ Չընայած բոլոր տեսակի գիտական որոնումների՝ մարդկութիւնը առայժմ չի կարողացել գտնի կեանքի գլխաւոր բանալին և հազիւ թէ տեսանելի ժամանակաշրջանում յաջողի գտնել այդ բանալին, որը բացելու է ծագումնաբանութեան գլխաւոր գաղտնիքը։ Ինչպէ՞ս երկրագնդի վրայ, մեռած աշխարհում, ծնուեց առաջին կենդանի բջիջը, որից էլ ստեղծուեց կեանքը։ Եւ քանի որ մենք ոչինչ չգիտենք այդ գլխաւոր գաղտնիքի մասին, մենք դիմում ենք մեր ներըմբռնմանը, որը ասում է մեզ, որ ամէն ինչ մեր մէջ է։ Եթէ մեր ներըմբռնումը տալիս է մեզ Աստծոյ պատկերացում, ապա՝ այդ Աստուածը մեր մէջ է։ Եթէ մենք պայքարում ենք արդարութեան համար, ապա՝ այդ արդարութիւնը մեր մէջ է։ Եթէ մենք ունենք սիրոյ ապրումներ, ապա՝ այդ ապրումները մեր մէջ են։ Իսկ սա նշանակում է, որ ճշմարիտ է այն Աստուածը, որը ծնուել է մեր միջից, մեր պատկերացումների և մեր ըմբռնումների հիման վրայ։

Այս մօտեցումը կարող է անաստուածեան (աթէիստական) թւալ, քանի որ նրա համաձայն ոչ թէ Աստուած է մեզ ծնել, այլ մենք Աստծուն։

Սակայն իրականում խօսքը այն գերբնական ուժի մասին չէ, որը ստեղծեց տիեզերքը, այլ՝ այդ ուժը նկարագրող ձեւերի մասին է։ Այդ ուժի գոյութեան ճանաչումը արդէն իսկ հաւատք է, սակայն դեռեւս ոչ կրօն։ Իսկ մենք խօսում ենք կրօնի, այսինքն՝ հաւատքի բովանդակութեան մասին, որը ինչպէս ասացինք ծնուել է մեր միջից, մեր նկարագրի և ըմբռնումների համաձայն։

Այս իմաստով, կրօնը ազգային արժէք է և որպէս այդպիսին նա պէտք է պահպանւի, ինչպէս պահպանւում են մեր էութիւնը կազմող բոլոր ազգային արժէքները: Միւս կողմից, եթէ մենք հաւատում ենք, որ գոյութիւն ունեն բնութիւնը ստեղծող ուժեր, ուրեմն պիտի հաւատանք, որ բնութեան հետ միասին, որպէս նրա անբաժանելի մաս, ստեղծւել է ազգային բազմազանութիւնը: Այսինքն՝ ազգային բազմազանութիւնը և ազգը Աստծոյ մտաղրութիւնների մէջ էին, իսկ ազգայնականութիւնը իրականացւած այդ մտահոգութիւնը պահպանելու միջոցն է: Այս իմաստով ազգը կրօնական արժէք է:

Այսպիսով, Ազգային Գաղափարի կրօնական դրոյթը կարելի է ձեւակերպել այսպէս.

Ազգը կրօնական արժէք է, իսկ կրօնը ազգային արժէք:

Այս դրոյթը մեզ թոյլ կը տայ ազատւել այն ճնշումներից, որոնք ժողովրդավարութեան անունով դատապարտում են ազգայնականներին՝ այլ կրօնների նկատմամբ վերապահութիւն ունենալու մէջ:

Ոչ մէկը մեզանից հակառակ է կրօնների ազատութեանը, սակայն մահմեդականութիւն կամ բուդայականութիւն ընդունած հայը մեղմ ասած լիակատար հայ չէ, որովհետեւ նա հրաժարւել է իր հայկական ներքին աշխարհից:

Ամէն մարդ ազատ է հրաժարւելու իր ազգութիւնից, ինչպէս ազատ է հրաժարւելու իր ընտանիքից, հայրենիքից, քաղաքակրթութիւնից և մարդկութիւնից: Այդ բանում նրան ոչ մէկը չի կարող մեղադրել, բայց դատապարտել կարող է ընտանիքը, հայրենիքը, ազգը, քաղաքակրթութիւնը և մարդկութիւնը:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Ժամանակակից ժողովրդավարական աշխարհահայեացքը ստեղծւեց 18րդ դարում, երեք դար տեւող փոփոխութիւնների հիման վրայ: Սակայն այդ դարերի ընթացքում կային երկու գաղափարներ, որոնք մնացին անփոփոխ:

Առաջինը այն էր, որ մարդը ի սկզբանէ բարի է: Իսկ երկրորդը, որ առաջադիմութիւնը և մարդու կատարեալ դառնալու իրողութիւնը անխուսափելի են:

Սակայն երկու այս սկզբունքները պատմութեան ընթացքում չարդարացան, ուստի ժողովրդավարութիւնը զրկւեց տրամաբանական հիմնաւորումներից: Ժողովրդավարութիւնը որեւէ գիտական հիմքեր չունի և որպէս գաղափարախօսութիւն տրւել է մարդկութեանը շատ աւելի հաւատքի, քան հասարակական անհրաժեշտութեան կարգով: Սա նշանակում է, որ կան անձեր ու հաւաքականութիւններ, որոնք շահագործւում են ժողովրդավարական կոչւող գաղափարախօսութեան կողմից, քանզի ունեն սեփական շահեր, իսկ ժողովրդավարութիւնը չի կարող բաւարարել բոլորի պահանջները:

Ժողովրդավարութիւնը ո՛չ բոլորի, ո՛չ մեծամասնութեան և ոչ էլ առաջադէմ մարդկանց գաղափարախօսութիւնն է: Ժողովրդավարութիւնը արդարութեան հաւատքն է և այդ իմաստով ունի ոչ-պակաս կրօնական բովանդակութիւն, քան Աստծոյ հաւատքն է:

Կարելի է միանգամայն հասկանալ մարդկանց այն ըմբռնումը, որ արդարութիւնը մեզանից դուրս գտնուող մի արժէք է, որին կարելի է յարմարուել ու ենթարկուել, բայց որը անկարելի է ստեղծել սեփական կամքով: Իսկ երբ մեզ չի յաջողւում կերտել արդարութիւն, բոլոր հաւատքների նման ժողովրդավարութիւնն էլ յայտարարւում է, թէ ինքը լաւն է ու կատարեալ, բայց մարդիկ վատն են ու անկատար և չեն հասկանում ժողովրդավարութեան իմաստը: Այսինքն՝ այն մարդիկ, որոնք չեն հասկանում ժողովրդավարութեան իմաստը, անկատար են, իսկ այն պետութիւնները, որոնք չեն կիրառում ժողովրդավարութիւնը, արժանի են պատժի: Ու հասարակութիւնը սկսում է կատարեալ մարդ ու կատարեալ հասարակարգ ստեղծելու արշաւը:

Ժողովրդավարութեան պատմութիւնը լեցուն է մարդ դաստիարակելու աբիւնալից օրինակներով: Մարդ փոխելու արշաւը յատուկ թափ առաւ Եւրոպայում, մանաւա՛նդ Ֆրանսիայում, որտեղ Ռոբեսպիերը, Սէն Ժիւստը, Բաբէօֆը և Բլանարոտին ջանում էին իրականացնել մարդը վերափոխելու Ռուսոյի, Հելւեցիուսի, Կոնդորսէի և ուրիշների ծրագրերը: Բայց ինչպէ՞ս փոխել մարդուն:

«Մենք ուզում ենք հաստատել այնպիսի կարգեր,- բացագանչում է Ռոբեսպիերը,- որի ժամանակ բոլոր ստոր ու դաժան կրքերը սանձւեն, իսկ բոլոր բարի և ազնիւ ցանկութիւնները պաշտպանւեն օրէնքի կողմից»:

Իսկ երբ Եւրոպայից մարդ փոխելու գաղափարները թափանցեցին Ռուսաստան, այնտեղ արդէն այդ սկզբունքը ստացաւ մարքսիստական բնոյթ:

«Դուք ստիպւած կը լինէք անցնելու 15, 20 և նոյնիսկ 50 տարի տեւող քաղաքացիական պատերազմներից, ոչ միայն փոխելու համար գոյութիւն ունեցող փոխ-յարաբերութիւնները, այլեւ՝ փոխելու համար ձեզ, ինչը անհրաժեշտ է **քաղաքական իշխանութիւնը վերցնելու համար**»,- յայտարարեց Մարքսը բանւոր դասակարգին:

Իսկ Լենինը հռչակեց,- «Պրոլետարիատի դիկտատուրայի տակ մենք ստիպւած կը լինենք վերադաստիարակել միլիոնաւոր գիւղացիներ և մանրսեփականատէրներ, հարիւր հազարաւոր քաղքենի մտաւորականներ՝ ենթարկելով նրանց պրոլետարական ղեկավարութեան: Անհրաժեշտ է յաղթահարել նրանց քաղքենիական սովորութիւնները և աւանդութիւնները, երկարատեւ պայքարի միջոցով վերադաստիարակել բանւոր դասակարգը»:

Յետոյ՝ մարդ վերափոխողների շարքերը անցան Ստալինը և Հիտլերը, որոնք արդէն չէին վերափոխում, այլ պարզապէս ոչնչացնում էին չդաստիարակուածներին։

Հաւանաբար անհրաժեշտ է պատասխանել այն հարցին, թէ ի՛նչ կապ ունեն մարդկութեան պատմութեան այս հրէշները արդարութեան կամ ժողովրդավարութեան հետ։

Սկզբունքի իմաստով կապը անյայտ է։ Բոլոր այն արդարութիւնները, որոնք ստեղծւում են մարդկանց կողմից, առանց հաշւի առնելու առարկայական արդարութիւնը և բարձրագոյն դատաւորին, վաղ թէ ուշ վեր են ածւում բռնութեան։ Ու չհանգստացնենք մենք մեզ, որ այդ բռնութեան դաժան օրերը անցել են։

Մեր օրերին մենք տեսնում ենք, որ շատ ժողովրդավարական երկիրներ ահաբեկիչներին Նոբէլեան մրցանակ են շնորհում, ռմբակոծում են իրենց հարեւան երկրները, Եւրոպայի քաղաքներից առեւանգում են մարդկանց ու իրենց երկրներում դատում։

Ժողովրդավարութիւնը պաշտպանելու համար Ռուսաստանի նախագահը ռմբակոծում է սեփական խորհրդարանը, իսկ Հայաստանի նախագահը արգելում է մի ամբողջ կուսակցութիւն ու բանտերը նետում նրա անդամներին։

Եւ այս ամէնը կը շարունակւի այնքան ժամանակ, քանի դեռ արդարութեան հաւատք ժողովրդավարութիւնը չի գտել իր հիմնական սկզբունքները, որոնցից էլ պիտի բխեն բոլոր օրէնքները։

Բոլոր փորձերը՝ գտնելու մեզանից անկախ գոյութիւն ունեցող արդարութեան սկզբունքները, մինչեւ այսօր անցել են ապարդիւն։ Անշուշտ կան որոշ ընդհանուր մօտեցումներ, որոնք կարելի էր համարել սկզբունք, բայց նրանք յստակութիւնից այնքան զուրկ են, որ լաւագոյն դէպքում կարող են բարոյական սկզբունքներ նկատւել։

Օրինակ՝ գոյութիւն ունի այն գիտակցութիւնը, որ մարդուն չի կարելի աշխատեցնել անասունի նման քանզի նա ունի արժանապատւութիւն։ Այսօր մենք ընդունում ենք, որ մարդու ազատութեան դաշտը սահմանափակւում է մէկ ուրիշ մարդու ազատութեան դաշտով։ Այսինքն՝ ես պիտի ձեռք բերեմ բարիքներ այնպէս, որ չխանգարեմ շահերը մէկ ուրիշի։ Այս գեղեցիկ մօտեցումը կարող էր սկզբունք դառնալ, եթէ լինէր ոչ այդքան վերացական։ Բանը նրանում է, որ մրցակցութեան վրայ յենւած մեր աշխարհը և առաջին հերթին ազատ շուկան զբաղւած են միայն ու միայն նրանով, որ ուժեղները ճնշում են թոյլերին և հարստանում են նրա հաշւին։ Ու շատ պարզ է, որ առանց ընկերվարական վերահսկողութիւնների ազատ շուկան դառնում է վայրենիներով լի

անտառ, որտեղ գործում է ուժեղի օրէնքը: Առանց արդարութեան վերահսկողութեան, ազատութիւնը կարող է լցւել կեղծ բովանդակութեամբ:

Պարզելու համար, թէ ո՛ր ժողովրդավարութիւնն է ընդունելի ազգայնականի համար, դիմենք հետեւեալ պարզ օրինակին: Եթէ որեւէ հասարակական վայրում ծխելը արգելւած է, ապա՝ կարելի է ասել, որ ծխողները հալածւում են չծխողների կողմից: Սակայն այդ հալածանքը արդարացւած է այն ապացուցւած ճշմարտութեամբ, որ ծխելը բոլորին վնաս է: Եթէ այդ հալածանքը արդարացւէր նրանով, որ ծխողները փոքրամասնութիւն են կազմում, ապա դա անընդունելի արդարացում կը լինէր, որովհետեւ մէկ ուրիշ վայրում ծխողները կարող են մեծամասնութիւն կազմել: Աւելի՛ն, եթէ ծխելու վնասը ապացուցւած չէ, ապա՝ ծխողների նկատմամբ հալածանքը է՛լ աւելի արդարացւած չէ: Իսկ մեր աշխարհի արգելքները և թոյլտւութիւնները մեծ մասամբ ապացուցւած չեն և պարտադրւած են մարդկութեանը իշխող հաւաքականութիւնների կողմից: Ահա թէ ինչու Հայ Ազգային Գաղափարը թելադրում է հայ մարդուն հետեւեալ ժողովրդավարական դրոյթը:

Համամարդկային արժէքների դաշտում մարդը ազատ է իր ընտրութիւնների մէջ, միշտ այնքանով, որքանով որ նրա ազատութիւնը չի սահմանափակում ազգի ինքնապահպանման ազատութիւնը ու չի հակասում արդարութեանը: Իսկ ճգնաժամային պահերին այդ ազատութիւնը է՛լ աւելի է սահմանափակւում՝ ազգի ազատութեան դաշտը ծաւալելու հաշւին:

Այս վերջին դիտողութիւնը կապ ունի այն իրողութեան հետ, որ ժողովրդավարութիւնը իր բոլոր առաւելութիւնները կարողանում է իրականացնել միայն պարզ եղանակի ժամանակ,երբ երկինքը ամպոտ չէ, իսկ երկրում տիրում է խաղաղութիւն: Իսկ այն խառնաշփոթ ժամանակներում, երբ երկինքը ամպոտ է, իսկ երկիրը անհանգիստ է, անհրաժեշտ է լինում սահմանափակել ազատութիւնները՝ կարգապահութիւնը խստացնելու համար:

ՊԵՏՈՒԹԻՒՆ

Հասարակական առաջդիմութիւնը բխում է անհատի պահանջներից: Սակայն դա չի նշանակում, որ անհատի պահանջների մէջ բացակայում է հաւաքականութեանը ծառայելու զգացմունքը: Երեխայի յարգանքը ծնողի նկատմամբ, հայրենասիրութիւնը, դասակարգային զգացմունքները, զինւորի պարծանքը՝ իր հերոսական բանակով, նոյն բակի տղաների, գործարանի աշխատողների, քաղաքի բնակիչների փոխ-կապւածութիւնները խօսում են այն մասին, որ հասարակական զգացմունքների ոլորտում գոյութիւն ունեն երկու իրար հակասող տրամադրութիւններ, որոնցից մէկը բացարձակ համայնապաշտութիւնն է, միւսը՝ բացարձակ անհատապաշտութիւնը:

Համայնապաշտների համար հասարակական կեանքը ոչ թէ բարձրագոյն նպատակին հասնելու միջոց է, այլ՝ հէնց ինքը՝ նպատակը։ Նրանց համար հասարակական կեանքը մարդու գոյութեան իմաստն է։ Այդ փիլիսոփայութեան կառկառուն ներկայացուցիչը Ֆոյբերբախն էր, որին պատկանում է հետեւեալ միտքը,- «մարդու էութիւնը պարունակւում է միայն փոխադարձ շփումների և անհատների միասնութեան մէջ։ Մենակութիւնը սահմանափակւածութիւն է և կաշկանդւածութիւն, իսկ հաւաքականութիւնը ազատութիւն և յաւերժութիւն»։

Անհատապաշտների համար անձը բացարձակ արժէք է և արտաքին ազդեցութիւնների որեւէ կարիք չունի։ Նա նոյնիսկ կարիք չունի փրկւելու տառապանքից, ճնշող ապագայից ու մահից։ Նիցշէն, որը համարւում է այս ուղղութեան վառ նեկայացուցիչը, առաջ քաշեց գերմարդու գաղափարը, որը չի խոնարհւում, բայց յաղթահարում է տառապանքները, մահը և համաշխարհային քաոսը։

Հասկանալի է, որ այս երկու ծայրայեղ տեսակէտներից ոչ մէկը չի կարող ճանաչւել որպէս առաջադիմութեան շարժիչ ուժ, որ այդ ուժը պէտք է որոնել անհատականութեան և համայնապաշտութեան ներդաշնակութեան մէջ։ Այդ ներդաշնակութիւնը ստեղծելու ջանքերից էլ ծնունդ առաւ պետութիւն, որը որոշ չափով բաւարարում է թէ՛ անձի և թէ հաւաքականութեան պահանջները։ Եթէ այդ պահանջների մէջ ստեղծւում է ներդաշնակութիւն, կամ՝ առնւազն հաւասարակշռութիւն, պետութիւնը և նրա վարչակարգը մօտենում են կատարեալ լինելուն։ Հակառակ դէպքում, երբ գերադասւում է համայնքային բացարձակութեան սկզբունքը, պետութիւնը դառնում է ամբողջատիրական։ Իսկ երբ գերադասւում է անհատականութեան բացարձակութեան սկզբունքը պետութեան ներսում ստեղծւում է քաոս։

Սակայն պետութիւնը ինքնըստինքեան ունի որոշ յատկութիւններ, որոնք իրենց կնիքն են դնում այդ հաստատութեան վրայ։ Նախեւառաջ նշենք, որ պետութիւնը մարդկային հանրութեան քաղաքական միաւորն է, որը ստեղծւում է որոշակի տարածութեան վրայ մի գերագոյն իշխանութեան ներքոյ։ Սա նշանակում է, որ պետութիւն ստեղծելու համար անհրաժեշտ է ունենալ հողային տարածութիւն, մարդիկ, որոնք ղեկավարւելու պահանջ ունեն, և այդ ղեկավարութիւնը իրականացնող պետական իշխանութիւն։

Երբ պետութեան բնակչութիւնը հիմնականում կազմւած է ծագումով, լեզւով ու մշակոյթով համասեռ մարդկանցից, մենք գործ ունենք ազգային պետութեան հետ։

Բայց կան նաեւ բազմազգ պետութիւններ։ Դա կարելի է հասկանալ երկու իմաստով. կա՛մ այդ ազգերի համակեցութիւնը իրերի բնական դասաւորման

հետեւանք է և կարգաւորւած է իրաւականօրէն ու դրանից ոչ մի ազգ չի տուժում, կամ էլ ազգերը միաւորւած են բռնի ուժով կայսերապետութեան մէջ։

Այսօրւայ աշխարհում տիրում է պետական սկզբունքը և մարդկութեան կազմակերպւածութիւնը ներկայացւած է ինքնիշխան և ինքնավար պետական միաւորներով։

Համաշխարհային մակարդակով իրաւական մարմինը առաջին հերթին պետութիւնն է, որի նկատմամբ Հայ Ազգային Գաղափարը ունի հետեւեալ մօտեցումը։

Հայ ազգի պահպանումը և բարգաւաճումը կարող են իրականանալ համահայկական ազգային պետութիւն ստեղծելու ճամբով։ Այդ պետութիւնը պէտք է ստեղծւի հայապատկան հողերի վրայ։ Հայապատկան կարող են կոչւել միայն այն հողերը, որոց վրայ կա՛մ ապրում է հայ ժողովուրդը և կամ էլ որոնց վրայից բռնի ուժով նրան արտաքսել են։ Սակայն նոյնիսկ այդ վերջին դէպքում հողի հայապատկանութիւնը կրում է զուտ իրաւաբանական բնոյթ և այդ պատմական իրաւունքը իրականացնելու համար անհրաժեշտ է նախևառաջ այդ հողերը վերաբնակեցնել հայերով։ Որեւէ այլ տարածութեան վրայ, Կիլիկիայի օրինակով, հայկական պետութիւն ստեղծելու տարբերակը բացառւած չէ, եթէ այդ հողերի վրայ ապրում են հայեր, որոնք տւեալ տարածութեան վրայ մեծամասնութիւն են կազմում։

Այսպիսով, Հայ Ազգային Գաղափարի պետական դրոյթը թելադրում է հայապատկան հողերի վրայ համահայկական ազգային պետութեան ստեղծում, որի համար անհրաժեշտ է հողահաւաք, ազգահաւաք և ազգային իշխանութեան ընտրութիւն։

ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Տնտեսագէտների ճնշող մեծամասնութիւնը համարում է, որ տնտեսվարութիւնը ազգայնականութեան հետ ոչ մէկ կապ չունի և որ ազգային եկամուտ և ազգային տնտեսութիւն հասկացութիւնները վերաբերում են ամբողջ պետութեանը, անկախ նրանից, թէ ինչպիսի՛ ազգութիւններ են ապրում այդ պետութեան մէջ։

Տնտեսագէտները համարում են, որ, ընդհակառակը, ազգայնականութիւնը խանգարում է տնտեսական զարգացման, քանզի տնտեսութիւնը ենթարկում է ազգային շահերին։ Նրանց կարծիքով մարդկութիւնը գնում է դէպի արդիւնաբերական հասարակութեան ստեղծմանը, որի համար անհրաժեշտ են աշխարհաքաղաքացիներ և ապազգային մտածելակերպ։

Այս մօտեցման մէջ շատ բան ընդունելի է, բայց անընդունելի է այն պնդումը, որ եկամուտ բերող ձեռնարկութիւնը մարդկութեան համար բարիք է, անկախ նրանից, ո՛ւմ է ծառայում ձեռնարկութեան արտադրանքը:

Երբ ֆրանսացիները Իրաքին վաճառեցին եկամտաբեր ատոմային էլեկտրակայաններ, Իսրայէլը ռմբակոծեց այդ կայանները, քանզի նրանց եկամուտը ձեռնատու չէր Իսրայէլին:

Բայց այս հարցում շատ աւելի կարեւոր է այն հանգամանքը, որ տնտեսութեան արդիւնաւէտութիւնը սերտօրէն կապւած է այնպիսի ազգային չափանիշների հետ, ինչպիսիք են տւեալ երկրի աշխարհագրական դիրքը, ընդերքի հարստութիւնը, տնտեսվարութեան ձեւերը, աշխատաւոր ուժի առկայութիւնը և, ամենակարեւորը, ազգային նկարագիրը և նրա ընդունակութիւնները:

Այս ամէնը պէտք է հաշւի առնել տնտեսական զարգացման ուղիները որոնելիս:

Հայ ժողովուրդը ապրում է փոքր տարածութեան վրայ, բնական հարստութիւններից շատ բան չունի, ծով չունի: Դրա հետ միասին հայ աշխատաւորը ստեղծագործ և ընդունակ է նուրբ աշխատանքների, նորագոյն արդիւնաբերական միջոցներին տիրապետելու և աշխատասէր է:

Հայ Ազգային Գաղափարի տեսանկիւնից՝ Հայաստանի ազգային եկամուտը պէտք է ձեռք բերւի փոքր տարածութիւններ, քիչ էներգետիկական միջոցներ և որակեալ աշխատաւորներ պահանջող ձեռնարկութիւններից:

Այս դրոյթը պէտք է դառնայ մեր տնտեսագէտների և ժողովրդի սեփականութիւնը, քանզի մինչեւ այսօր մենք կիրառում ենք այն, ինչ մեզ առաջարկում են: Իսկ առաջարկողները մտածում են իրենց, բայց ոչ մեր շահերի մասին:

1998

ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆՈՒՄ

Է. Յովհաննիսեան

Միխայիլ Գորբաչեւի հրապարակայնութեան քաղաքականութիւնը կամաց-կամաց սկսում է ընդգրկել այնպիսի բնագաւառներ, որոնք նախկինում անձեռնմխելի էին թւում:

Վերջերս, օրինակ, Խորհրդային Միութեան պատմական արխիւների դիրեկտոր Աֆանասեւը, որը համարւում է Գորբաչեւի կարեւոր խորհրդատուներից մէկը և պատմական իրադարձութիւնների վերագնահատման նախաձեռնողը, Դանիայի «Ինֆորմաշոն» թերթի հետ ունեցած հարցազրոյցում ասաց, թէ մօտ ժամանակներումս վարկափրկման են ենթարկւելու Տրոցկին, Բուխարինը, Զինովիեւը և ուրիշներ, որոնք մինչեւ այսօր ժողովրդի թշնամիներ էին համարւում: Նա բարձր գնահատական տւեց Բուխարինին ու նշեց, որ Բուխարինը լրացնում էր Լենինին:

Աֆանասեւը արեց մի անսովոր, եթէ չասենք շշմեցուցիչ յայտարարութիւն: Նա ասաց, որ Լենինը դաստիարակւել էր Հեգելի փիլիսոփայութեան վրայ և բաւականին թոյլ էր հասարակագիտական հարցերում: Այդ հարցում Լենինին լրացնում էր Բուխարինը, որը շատ աւելի հմուտ հասարակագէտ էր: Առաջին անգամն է, որ մեզ ասում են, թէ Լենինն էլ պակասութիւններ ունէր:

Հրապարակայնութիւնը այժմ թափանցել է տնտեսութեան, մշակոյթի, պատմութեան և հասարակական կեանքի տարբեր բնագաւառները, սակայն կար մէկ բնագաւառ, որի նկատմամբ հրապարակայնութիւնը բաւականին զգոյշ էր: Այդ բնագաւառը ազգային քաղաքականութեան բնագաւառն էր: Բայց ահա հրապարակայնութիւնը սկսեց մտնել նաեւ այդ բնագաւառը:

Ղրիմի թաթարների խնդրի քննարկումից, Ղասախստանի դէպքերից, Բելոռուսիայի մտաւորականութեան բողոքներից յետոյ խորհրդային տեղեկատըւական միջոցները իրենց ուշադրութիւնը կենտրոնացրեցին ազգային խնդիրների վրայ: Օգոստոսի 12ին Խորհրդային Միութեան կենտրոնական հեռուստատեսութիւնը հաղորդեց Ազգային Հարցին նւիրւած մի ծրագիր, որին մասնակցեցին խորհրդային գրողներ, գիտնականներ, լրագրողներ և հասարակական գործիչներ: Նրանց թւում կային ռուսներ, աղրբէջանցիներ, ուկրայինացիներ, վրացիներ, ղազախներ և ուրիշ ազգերի ներկայացուցիչներ, բայց հայեր չկային:

Իսկ Օգոստոսի 14ին «**Պրաւդա**» հրատարակեց փիլիսոփայական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Բաղրամովի «**Ազգային հարցը և հասարակագիտութիւնը**» վերնագիրը կրող յօդուածը, որտեղ հեղինակը արտայայտում է մի քիչ անսովոր մտքեր: Այս երկու, ինչպէս նաեւ այլ նիւթերի վերլուծութիւնը ցոյց է տալիս երկու բան: Նախ՝ խորհրդային իշխանութիւնը ընդունում է, որ Ազգային Հարցի լուծումը Խորհրդային Միութիւնում անբաւարար է. ապա՝ պարզւում է, որ այդ կարեւորագոյն հարցի քննարկմանը պատրաստ չեն ոչ փիլիսոփաները, ոչ քաղաքական գործիչները և ոչ էլ ժողովուրդը:

Բաղրամովը նախ նշում է, որ Ազգային Խնդրին վերաբերւող տեսութիւնը ամբողջովին կտրուած է իրական կեանքից և վարդագոյն ակնոցով է նայում ազգային փոխյարաբերութիւններին: Միջազգայնականութիւնը,- ասում է նա,- յաճախ ներկայացւում է որպէս ամէն ինչի միացում, որի հետեւանքով ազգութիւնների հաւասարութիւնը դառնում է անշարժ մի բան, որը հաշւի չի առնում ազգերի ու հանրապետութիւնների անխուսափելի տարբերութիւնը: Այնպիսի տպաւորութիւն է ստեղծւում, որ կարծես թէ ազգերը ինքնըստինքեան շարժւում են դէպի մեծ եղբայրութիւն, ընդհուպ մինչեւ ազգերի վերացում: Բաղրամովը նշում է նաեւ այն, որ ազգային լեզուների նկատմամբ գոյութիւն ունի անթոյլատրելի անուշադրութիւն: Եւ, վերջապէս, հեղինակը պնդում է որ սոցիալիզմը վերացնում է ազգութիւնների փոխադարձ ատելութիւնը, բայց ազգային խնդիրները շարունակում են մնալ, առաւել եւս բազմազգ պետութիւնում:

Բաղրամովի յօդուածից դժւար է կռահել, թէ ի՞նչ ուղղութեամբ կը զարգանայ նոր ազգային քաղաքականութիւնը Խորհրդային Միութիւնում, բայց մէկ բանը պարզ է՝ այս բնագաւառում էլ պատրաստւում են վերափոխութիւններ:

Ինչ վերաբերւում է Ազգային Հարցի համաժողովրդական քննարկմանը, որը տեղի ունեցաւ կենտրոնական հեռուստատեսութեամբ, ապա այստեղ ոչ մէկ նոր բան չասւեց, բայց ոչ որովհետեւ ասելիք չկար, այլ որովհետեւ ելոյթ ունեցողները գտնւում էին նախկին գաղափարների ու հասկացութիւնների ազդեցութեան տակ: Ադրբէջանի ներկայացուցիչը, օրինակ, խօսելով միջազգայնականութեան մասին նշում է, թէ «**մենք արդէն պատանեկութիւնից չգիտէինք, թէ ինչ է ռուսը, ղազախը կամ ուկրայինացին, մենք բոլորս մէկ էինք**»: Բայց այս մօտեցումը միջազգայնականութիւն չի կարելի համարել: Միջազգայնականութիւնը ոչ միայն չի բացառում ազգերի գոյութիւնը, այլեւ պայմանաւորւած է նրանց գոյութեամբ: Մենք գիտենք, թէ ո՞վ է ռուսը, հայը կամ վրացին, բայց դրանով հանդերձ, համագործակցում ենք մի ինչ որ ընդհանուր նպատակի համար: Սա է իսկական միջազգայնականութիւնը: Մէկ ուրիշ մտաւորական միջազգայնականութիւնը տեսնում է նրանում, որ Խորհրդային Միութեան ժողովուրդները ձեռք-ձեռքի տւած կատարեցին իրենց միջազգային պարտքը,

երբ ազատագրեցին նացիականներից Արեւելեան Եւրոպան: Բայց սա յաղթողի միջազգայնականութիւն է: Եթէ Երկրորդ Աշխարհամարտը շահէր Հիտլերը, այսօր գերմանացիները կ՚ասէին, որ բաւարիացիները, պրուսիացիները և աւստրիացիները ձեռք-ձեռքի տւած կատարեցին իրենց միջազգայնական պարտքը, երբ ազատեցին Խորհրդային Միութեան ժողովուրդները կոմունիզմից: Իրականում ո՛չ մէկը և ոչ էլ միւսը միջազգայնականութիւններ չեն: Այլ եթէ ռուսները, գերմանացիները, բաւարիացիները ու հայերը դուրս գային իրենց խրամատներից ու գրկախառնւելով բացագանչէին՝ կորչեն Ստալինը ու Հիտլերը, դա կը լինէր իսկական միջազգայնականութիւն: Բայց այդպէս չեղաւ ու չի եղել երբեք, որովհետեւ ազգային զգացմունքները աւելի ուժեղ են, քան միջազգայնականութեան տրամաբանութիւնը:

Այնուամենայնիւ, Ազգային Հարցի քննարկման ժամանակ արտայայտւեցին ուշադրութեան արժանի մտքեր: Սերգէյ Օբրազցովը, օրինակ, ասաց որ «**ազգային փոխյարաբերութիւնները երկրում սրւեցին մեր մեղքով: Գաղափարները մենք դարձրեցինք լոզունգներ, իսկ լոզունգները՝ կնիք: Նըրանք, այսինքն գաղափարները, ոչ մէկ նշանակութիւն չունեն: Եթէ ամէն մի շէնքի վրայ գրւած է, թէ ժողովուրդը ու կուսակցութիւնը միասնական են, ապա այդ լոզունգը այլեւս ոչ մէկ նշանակութիւն չունի**»:

Գէորգի Բակլանովը ասաց, որ խորհրդային մամուլը չի հրատարակում վիճակագրական տեղեկութիւններ ժողովուրդների ու հանրապետութիւնների մասին և մենք չգիտենք, թէ ո՛ր ժողովուրդն է ապրում ուրիշի հաշւին, իսկ որը՝ ուրիշին կերակրում: Սոցիալիստական սկզբունքի համաձայն ամէն մի հանրապետութիւն պէտք է ստանայ իր տւածի համեմատութեամբ:

Վերադառնալով Բաղրամովի յօդւածին, նշենք որ նա անջատում է ժողովուրդ և ազգ հասկացողութիւնները, որպէս մէկը միւսին յաջորդող գոյավիճակներ: Այսինքն՝ ժողովուրդը կարծես թէ գտնւում է զարգացման աւելի ցածր մակարդակի վրայ: Դասակարգային սկզբունքից բխող այս մօտեցումը, անշուշտ, ճիշտ է, սակայն ունի այն թերութիւնը, որ հաշւի չի առնում արտաքին գործօնները: Ցեղից դէպի ազգ տանող ճանապարհի վրայ՝ արտադրական փոխյարաբերութիւնները և մշակութային զարգացումը, անշո՛ւշտ, որոշակի կամ գուցէ վճռական դեր են կատարում ժողովուրդը ազգ դարձնելու հարցում, սակայն նրանք բաւարար չեն: Ինքնավարութիւնը, ուրիշների կողմից ճանաչւած լինելը, մեծ շարժումներին մասնակցելը երբեմն այս հարցում շատ աւելի կարեւոր են, քան ազգի ներքին զարգացումը և սեփական ինքնագիտակցութիւնը: Թուրքիայում, օրինակ, ոչ կիրգիզները, ոչ ուզբեկները, ոչ լազերը, ոչ քրդերը և ոչ էլ վրացիները որպէս ազգ ճանաչւած չեն: Սակայն այդ ժողովուրդներից մեծ մասը Թուրքիայից դուրս ճանաչւած է որպէս ազգ և ունի ազգ

լինելու բոլոր չափանիշները: Այդ ժողովուրդները Ռուսաստանի յեղափոխությունից առաջ և յեղափոխութիւնից յետոյ գտնւում էին այն նոյն վիճակում, ինչպէս այսօր Թուրքիայում: Սակայն Լենինը, վախենալով թուրքեառանցիներ կոչւող ժողովրդից, արհեստականօրէն բաժանեց նրանց մասերի և ամէն մի մասը ազգ ճանաչեց: Այսպիսով, ներքնապէս ոչ մէկ փոփոխութիւն չկրած այս ժողովուրդները, կամ նոյնիսկ ցեղերը Լենինի կամքով ազգ դարձան: Կան նաեւ հակառակ օրինակներ, երբ ներքնապէս վաղուց ազգ դարձած ժողովուրդներ, որեւէ մէկի կամքով կամ պատմական ճակատագրի բերումով, վերանում են աշխարհի երեսից: Այդպէս Ստալինի կամքով վերացան կարաչայները:

Ուրեմն ազգ դառնալը և ազգային կեանքով ապրելը կախւած է ոչ միայն ազգի հասունութիւնից ու ապրելու կամքից, այլեւ այդ կեանքով ապրելու պայմաններից: Ճշմարտութիւն կայ, անշուշտ, այն պնդումի մէջ, թէ ազգը ինքը իր ուժերի վրայ պէտք է յոյս դնի և իր ուժերով ձեռք բերի անկախութիւն կամ ինքնավարութիւն: Սակայն միշտ չէ, որ լոզունգային պնդումը համընկնում է քաղաքական իրականութեան հետ: Եթէ Խորհրդային Միութեան նոր ղեկավարութիւնը իսկապէս որ ուզում է վերափոխութիւններ կատարել իր լճացած ազգային քաղաքականութեան բնագաւառում, նա պէտք է ճամբաներ որոնի՝ ազգային կեանքով ապրելու հնարաւորութիւնները աւելացնելու համար՝ տնտեսական, մշակութային և քաղաքական ոլորտներում: Իսկ ազգի ղեկավարները, մտաւորականութիւնը և ժողովուրդը իրենց հասունութիւնը պէտք է դրսեւորեն, այդ հնարաւորութիւնները լաւագոյն ձեւով օգտագործելու մէջ:

1988

ԵՐԿՐԱՇԱՐԺԸ ԵՒ ԱՐՑԱԽԻ ՀԱՐՑԸ

Է. Յովհաննիսեան

Ի՞նչ կապ ունեն այս երկու հարցերը,- պիտի ասի ընթերցողը: Շատ մեծ կապ ունեն,- պիտի պատասխանեմ ես: Այն կապն ունեն, որ երկուսն էլ հայ ժողովուրդի համար կենսական նշանակութիւն ունեն, երկուսն էլ նախորդ, այժմ Գորբաչեւի կողմից քննադատւող վարչաձեւի սխալների արդիւնք են. երկուսն էլ մեր ժողովուրդի հոգեկան վիճակը տակնուվրայ անող երեւոյթներ են. և երկուսն էլ պահանջում են կենտրոնական իշխանութիւններից և հէնց Միխայէլ Գորբաչեւից՝ կատարել արդար դատաւորի, այլ ոչ թէ հաշտարար միջնորդի դեր:

Այն դժւարին կացութեան մէջ, որը ստեղծւեց Հայաստանում սկզբից Արցախի խնդրի լուծման բացակայութիւնից, ապա Ադրբեջանում տեղի ունեցած ջարդերից, հասկանալի պիտի լինի, որ հայ ժողովուրդը թէ՛ երկրի ներսում և թէ արտասահմանում որոշակի, գուցէ ոչ-ամբողջովին գիտակցւած, անհամբերութեամբ էր սպասում երկրի ղեկավար Գորբաչեւի գալստին, կապելով այդ այցելութեան հետ որոշ յոյսեր: Եւ ինչո՞ւ զարմանալ ամէն ինչ կորցրած ժողովրդի յոյսերի վրայ. չէ՞ որ վերջին հաշւով այդ այսօրւայ առաջնորդի ձեռքումն է գտնւում՝ Հայաստանը աղէտալի վիճակից դուրս բերելու բոլոր վճռական միջոցների ղեկը: Գոնէ այդպէս են մտածում շատերը: Բայց արդեո՞ք դա այդպէս է:

Եւ ահա Գորբաչեւը Հայաստանումն է: Նա Հայաստան եկաւ, ընդհատելով իր կարեւոր այցը Միացեալ Նահանգներում: Եկաւ Հայաստանին օգնութիւն ցուցաբերելու աշխատանքները անձամբ ղեկավարելու համար: Խորհրդային Միութեան ղեկավարը իսկապէս որ չէր կարող այցելել Միացեալ Նահանգների թանգարանը, ինչպէս նախատեսւած էր, երբ Հայաստանում տասնեակ հազարաւոր մարդիկ մնացել էին փլատակներում և կէս միլիոն մարդ անտուն:

Գորբաչեւը երեւաց Հայաստանում, խօսեց, կազմակերպեց, խոստացաւ, պախարակեց, ձերբակալեց ու վերադարձաւ Մոսկւա, Հայաստանի հեռուստատեսութեամբ հարցազրոյց ունենալուց յետոյ: Ի՞նչ էր սպասում Գորբաչեւից հայ ժողովուրդը և ի՞նչ գտաւ նրա պատասխանների մէջ: Նա սպասում էր դարմանում իր վէրքերի ու ցաւերի, որոնք առաջացել էին երկրաշարժից, Արցախից և ապագայի անորոշութիւնից: Այդ դարմանումը նա ոչ միայն չստացաւ, այլ վէրքերը էլ աւելի բորբոքւեցին, ցաւերը սաստկացան, իսկ ապագան էլ

աւելի անորոշ դարձաւ, եթէ չասենք որ է՛լ աւելի վատթարացաւ։ Տեսնենք թէ ինչո՞ւ։

Նախ Գորբաչեւը նշեց, որ աղէտը իսկապէս մեծ է ու անտանելի, և որ ինքը որպէս մարդ խորն ապրումներ ունի այս ողբերգութեան առիթով։ Ապա՝ նա նշեց, որ ամբողջ երկիրը իր օգնութիւնն է ցուցաբերում Հայաստանին և խոստացաւ, որ երկու տարւայ մէջ քանդուած քաղաքները վերականգնելու են։ Այն որ աղէտը մեծ է մենք բոլորս արդէն գիտէինք միջազգային մամուլից։ Սակայն երկու բան Գորբաչեւի յայտարարութեան առաջին մասում բացակայում էր։ Խօսելով ողբերգական կացութիւնից դուրս գալու մասին, նա չնշեց, որ աղէտը ունեցաւ անտանելի հետեւանքներ, նաեւ այն պատճառով, որ շէնքերը սխալ էին կառուցւած, որ հաշւի չէին առնւած երկրաշարժային գօտու յատուկ պայմանները, դրա համար էլ լուցկու տուփի նման քանդւում էին բարձրայարկ շէնքերը։ Զարմանալիօրէն չխօսեց Գորբաչեւը նաեւ արտասահմանեան օգնութեան մասին։ Մենք, որ ամէն օր հեռուստատեսութեամբ տեսնում ենք Երեւան մեկնող օդանաւները, որոնք իրենց հետ են տանում բժիշկներ, դեղօրայք և փրկիչ խմբեր, շատ զարմացանք որ նրանց հասցէին ոչ մէկ շնորհակալական խօսք չասւեց։ Գորբաչեւի պատասխանների մէջ զգացւում էր նահանջը դէպի այն ժամանակները, երբ չէր կարելի քննադատել խորհրդային շինարարներին՝ որոնք աշխարհի ամենալաւ շինարարներն են, և չէր կարելի գովել անիծեալ կապիտալիստական աշխարհը՝ որը ամենադաժանն է։

Բայց ամենակարեւորը Արցախի վերաբերեալ նրա տւած բացատրութիւններն էին։ Գորբաչեւը իր զարմանքը յայտնեց և անբարոյականութիւն անւանեց այն փաստը, որ երկրաշարժի աղէտի պայմաններում մարդիկ Արցախի հարցն են բարձրացնում և ուզում են պարզել անպաշտօն կազմակերպութիւնների հետ, երկխօսութիւն սկսելու հեռանկարները։ Զարմանալ՝ անշուշտ կարելի է, բայց միայն հայ ժողովրդի վճռական կամքի վրայ, որը նոյնիսկ սարսափելի աղէտի պայմաններում շարունակում է պայքարը իր արդար պահանջների և իրաւունքների համար։

Ինչպէս յայտնի է ազգային ազատագրական պայքարներում, ազգերը մասնակցում են իրենց Աստւածներով ու հոգեկան կարողութիւններով, մանաւանդ այն պայքարներում՝ որոնք մղւում են ոչ թէ զինւորների ու զէնքի, այլ հրապարակայնութեան ու ժողովրդավարութեան սկզբունքների ուժով։ Հէնց այդպիսին է հայ-ադրբեջանական բախումը։ Այս պայքարում մահմետական կողմը Հայաստանի երկրաշարժը համարում է Արցախի հետ կապւած իրադարձութիւնների շարունակութիւն։ Ադրբեջանում մեծից փոքր, Մոլլայից մինչեւ ակադեմիկոս համարում են, որ Հայաստանի երկրաշարժը Ալլահի պատիժն էր, որ թափւեց «գեւուր» հայերի գլխին և նրանք անամօթաբար տօնա-

կան սեղանների շուրջ են հաւաքւում այն օրերին, երբ Հայաստանում սուգ է: Աւելին, Ադրբեջանի փախստականների հոսքը շարունակւում է նաեւ այսօր, երբ Հայաստանում կէս միլիոն մարդ անտուն է մնացել: Ադրբեջանի հայերը գերադասում են գալ այդ աղէտալի վիճակում, գտնւող իրենց հայրենիքը, բայց չմնալ թշնամու երկրում, որտեղ նրանց շարունակում են հալածել:

Եւ այս պայմաններում Խորհրդային Մամուլը լկտիաբար յայտարարում է որ Ադրբեջանը առաջինն էր, որ օգնութիւն ցուցաբերեց Հայաստանին:

Բայց վերադառնանք Աստւածների պատերազմին: Անշուշտ, խօսքը այն յիմարութեան մասին չէ, թէ Ալլահը պատժեց հայերին, իսկ Յիսուսը պարտութիւն կրեց: Խօսքը այն ուրախութեան մասին է, որ ադրբեջանցիները ապրեցին և առանց ամօթի արտայայտեցին Հայաստանի երկրաշարժի առիթով: Սա նշանակում է, որ հայ-ադրբեջանական բախման մէջ կողմերը մասնակցում են իրենց հոգեկան արժէքներով: Եթէ այդպէս է, ինչո՞ւ զարմանալ, որ հայ ժողովուրդն էլ երկրաշարժի աղէտից չի կորցնում իրեն և շարունակում է պայքարել իր արդար պահանջների համար: Մի՞թէ պատերազմի ժամանակ ռմբակոծւած քաղաքների տեսարանը խլում է զինւորներից պայքարը շարունակելու կամքը:

Եթէ Գորբաչեւը մի քիչ աւելի լաւ ճանաչէր մեր ժողովրդի ոգին, չէր զարմանայ որ նա իրեն չի կորցրել և փլատակներից «Ղարաբաղ» է տնքում: Շատ աւելի զարմանալին Արցախի խնդրի շուրջ տիրող սառնասրտութիւնն է, որը մնում է այդպիսին՝ նոյնիսկ երկրաշարժի աղէտի օրերին: 18րդ դարում տիրում էր այն տեսակէտը, որ բնական աղէտները պատժում են մարդկանց նրանց յանցանքների համար: Վոլտէրը Լիզբոնի երկրաշարժին նւիրւած մի աշխատութեան մէջ հերքեց այս տեսակէտը և սկիզբը դրեց գթասիրութեանը, որի համաձայն բնական աղէտներից տառապեալները ոչ թէ պատժւածներ, այլ օգնութեան ու մխիթարութեան կարիք ունեցողներ են: Խորհրդային իշխանութեան ամբողջ պատմութեան ընթացքում բարեգործութիւնը ու գթասիրութիւնը երբեք ճանաչւած չի եղել: Բայց Գորբաչեւը առաջին անգամ լինելով իր վերափոխութիւնների սահմաններում ճանաչեց մարդկային յարաբերութիւնների մէջ այս կարեւոր գործօնը: Մի՞թէ չէր կարող նա համոզել ադրբեջանցիներին կատարել այն քայլը, որը կարող էր իսկապէս ստեղծել ժողովուրդների բարեկամութիւն և մխիթարել հայ ժողովուրդին: Չէ՞ին կարող ադրբեջանցիները, օրինակ, յայտարարել որ այս պայմաններում, իրենք մոռացութեան են մատնում բոլոր վէճերը և յայտարարում են իրենց տառապեալ եղբայր հայերին, որ Ղարաբաղը այլեւս պատկանում է հայերին:

Գիտենք, որ քաղաքականութեան մէջ ո՛չ արդարութիւնը և ոչ էլ զգացմունքները ոչ մէկ դեր չեն կատարում, բայց այստեղ Գորբաչեւը և ռուս ժողո-

վուրդը պիտի հանդէս գային ոչ թէ քաղաքական գործիչի, այլ դատաւորի դերում, որտեղ արդարութիւնը, օրէնքը և մեղմացուցիչ պայմանները միակ դերն են կատարում:

Կարո՞ղ էր հայ ժողովուրդը իր դժբախտութեան մէջ սպասել նման մօտեցման: Անշուշտ կարող էր, բայց եղաւ ճիշտ հակառակը:

Զարմանք յայտնելով հայերի վճռականութիւնից, Գորբաչեւը այն յայտարարութիւնն է անում, թէ հայ աշխատաւորին Ղարաբաղի հարցը չի հետաքրքրում, որ այդ հարցը մէջտեղ են հանել ինչ որ կաշառակերներ ու «ցեխաւիկներ», իրենց դիրքերը ամրապնդելու համար: Նրանց իբր թէ հետաքրքրում է քաոսը, որի պայմաններում նրանք կարող են իրենց մութ գործերը կատարել: Սա վիրաւորական է հայ ժողովրդի համար, քանզի նա բազմիցս ապացուցեց, որ Արցախի հարցում նրա կամքը համազգային բնոյթ է կրում և այդ կամքը ձեւաւորւում է ոչ թէ «ցեխաւիկների» ու արկածախնդիրների, այլ հայ գրողների, ակադեմիկոսների, բանւորների, Հայաստանի ու Ղարաբաղի ղեկավարների կողմից:

Էլ աւելի վիրաւորական էին Գորբաչեւի մատնանշումները Արցախին նիւթական օգնութեան հասնելու հարցում: 500 միլիոն ենք յատկացրել մենք փոքրիկ մարզին,- ասում է նա,- մարզի կեանքը բարելաւելու համար: Գուցէ մարքսիստական գաղափարախօսութեան սկզբունքների համաձայն նա շարունակում է կարծել, որ գիտակցութիւնը կենցաղով է պայմանաւորւած, բայց հայ ժողովուրդը լաւ գիտէ, որ իր ազգային գիտակցութիւնը ոչ մէկ կապ չունի կենցաղի հետ, նա գալիս է դարերից և վերածւում ոչ թէ կենցաղային, այլ հոգեկան արժէքի:

Խուսափեց Գորբաչեւը նաեւ պատմական ճշմարտութիւնների գնահատականներից: Յիրաւի, երկրում ահա արդէն մէկ տարի է, ինչ Հայաստանի և Ադրբեջանի գիտութիւնների Ակադեմիաները տարբեր բաներ են ասում Արցախի պատկանելիութեան մասին, իսկ Խորհրդային Միութեան գիտութիւնների Ակադեմիան իր վճռական խօսքը չի ասում այս հարցում: Այժմ Գորբաչեւը ապացուցեց որ սա ղեկավարութեան ցանկութիւնն է՝ դատաւորից հաշտարար դառնալը: Ահա թէ ի՞նչ ասաց նա.-

«Գիտնականներից մէկը ապացուցում է, որ Ղարաբաղում հայ ժողովրդի արմատներն են: Միւսը ոչ պակաս յաջողութեամբ ապացուցում է, որ այնտեղ ադրբեջանցիների արմատներն են: Եւ բոլորն էլ յենւում են պատմական փաստաթղթերի վրայ: Ի՞նչի մասին է այս ամէնը խօսում: Ես այդ գիտնականներին ասում եմ, որ այս երկու ժողովուրդները միշտ էլ այստեղ ապրել են և նրանք ամէն ինչով իրարու շաղկապւած են»: Եթէ այդպէս պէտք է լուծւեն պատմական

ճշմարտութիւնները, էլ ի՞նչ հրապարակայնութիւն, ի՞նչ վերափոխութիւն։ Ամէն ինչ վերադառնում է իր պտոյտների վրայ։

Զարմանում է Գորբաչեւը նաեւ հայերի այն մտահոգութեան վրայ, թէ հայ որբերին դուրս են բերում Հայաստանից։ Բայց այստեղ էլ զարմանալու բան չկայ։ Աշխաբադի և Թաշկենտի երկրաշարժներից յետոյ, այս երկու քաղաքները գրեթէ ամբողջովին ռուսականացան։ Այժմ Ռիժկովը յայտարարում է, որ տարբեր հանրապետութիւններից մարդիկ իրենց ընտանիքներով հաստատուելու են Հայաստանում՝ քանդուած քաղաքները վերականգնելու համար։ Իսկ վերականգնելուց յետոյ ո՞վ պիտի նրանց ստիպի վերադառնալ իրենց տները։ Մի՞թէ պարզ չէ, որ նրանք մնալու են Հայաստանում, ինչպէս մնացին Թաշկենտում և Աշխաբադում։

Ատոմային կայանը վերաջպէս փակեցին։ Այս մէկը լաւ լուր էր, բայց պիտի՞ երկրաշարժ լինէր, որ այդ հարցը լուծուէր։

Եւ պիտի դեռեւս շատ արիւն թափւի, որ Արցախի հարցը լուծւի։ Արիւն կարծես թէ թափւելու է, քանի Երկուշբաթի օրը՝ 12 Դեկտեմբերին ՏԱՍՍ գործակալութիւնը հաղորդեց Գորբաչեւի այն յայտարարութիւնը, թէ Ադրբեջանի հայ փախստականները խանգարում են փրկչական աշխատանքներին, ուստի պէտք է վերադառնան իրենց նախկին վայրերը։ Իսկ ո՛վ դրան կը հակառակի, Խորհրդային իշխանութիւնները նրանց նկատմամբ ուժ կը գործադրեն։ Ո՞ւր վերադառնան այդ դժբախտները, եթէ նրանց տները արդէն գրաւել են ադրբեջանցիները։

Այս ամէնը խօսում է այն մասին, որ Գորբաչեւը չի կարողանում լուծել Արցախի հարցը։ Ոմանք համարում են, որ չի ուզում, բայց ես անձամբ կարծում եմ, որ չի կարողանում։

Մնում է, որ մեր ժողովուրդը իր հետագայ քայլերը կատարելիս հաշւի առնի Գորբաչեւի անկարողութիւնը։

1988

ՄԷԿ ՏԱՐԻ ԱՆՑ

Է. Յովհաննիսեան

Չգիտեմ, ինքնաճանաչման պակաս ունենք, թէ պարզապէս չափից աւելի զգացական ենք, բայց գիտեմ թէ ամէն անգամ, երբ մեր ազգային նկարագրից բխող հերոսութիւն ենք կատարում, ինքներս մեր վրայ շշմում ենք և զարմացած մէկս միւսին շնորհաւորում, թէ այս ինչ հրաշք պատահեց։ Յետոյ անցնում են տարիներ, տասնամեակներ ու դարեր և այդ շշմեցուցիչ օրերը կանգնում են Վարդանանցների, Սարդարապատների, Փետրուարեան ապստամբութիւնների ու Լիզբոնների շարքին, որտեղ նրանց վրայ մենք արդէն չենք զարմանում, քանզի այդ շարքում նրանք իրենց տեղումն են և մեր ամբողջ նախորդ պատմութեան օրինական ծնունդը։

Մէկ տար անցաւ Արցախի խռովութիւններից, որը մի քանի օրւայ ընթացքում վերածուեց Համահայկական ընդվզումի։ Զարմանքի ու հպարտութեան ժամանակը անցաւ, այժմ անհրաժեշտ է խօսել օրւայ խորհուրդի ու դասերի մասին։

Արցախի խնդիրը ծագեց ո՛չ այսօր և ոչ էլ երէկ։ Հայ ժողովրդի և յատկապէս Արցախցիների համար նա գոյութիւն ունէր 1923 թւականից և արցախցիները իրենց պահանջները ներկայացրել են թէ՛ Ստալինի, թէ՛ Խրուշչեւի և թէ Բրեժնեւի ժամանակ։ Եւ եթէ Գորբաչեւի ժամանակ այդ պահանջատիրութիւնը դարձաւ բուռն ու համազգային, ապա ոչ թէ նրա համար, որ այս սերունդը գտնուեց աւելի համարձակ, կազմակերպւած ու յեղափոխականացւած, այլ որովհետեւ Գորբաչեւի ժամանակաշրջանը բողոքելու համար տալիս էր շատ աւելի հնարաւորութիւններ, քան բոլոր նախորդ ժամանակաշրջանները։ Եւ սա հէնց այն կարեւոր իրողութիւնն է, որ մենք պէտք է ըմբռնենք, որպէսզի հետագայ քայլեր կատարելուն նախապատրաստւենք ոչ թէ մեր ըմբոստութիւնը ու արիութիւնը աւելացնելով (դրա պակաս չունենք), այլ մեր քաղաքական տրամաբանութիւնը զարգացնելով և ստեղծւած իրականութիւններին ճիշտ գնահատական տալով։

Տեսնենք, թէ ո՞րն է այն իրականութիւնը, որը հնարաւոր դարձրեց Արցախի համար ծաւալւած բուռն արշաւը։ Նախ և առաջ այդ իրականութիւնը չստեղծուեց մեր կողմից, մեզ շնորհուեց այդ իրականութիւնը Գորբաչեւի վարչակարգի կողմից, որը Խորհրդային Միութիւնը տնտեսական, քաղաքական և հասարակական ճահիճից հանելու համար որոշեց ծաւալել ազատութիւնների գոյութիւն ունեցող սահմանները։ Այդ ծաւալւած սահմանների մէջ էլ ընկաւ

Արցախի խնդիրը, ինչպէս նաեւ շատ ուրիշ խնդիրներ։ Թաթարները, ուկրաինացիները, մերձբալթեան հանրապետութիւնները, ռուս ազգայնականները և շատ ուրիշներ հրապարակ իջան իրենց խնդիրներով, որոնք մեծ շփոթ առաջացրին երկրում, սակայն նրանցից և ոչ մէկը այնքան դժւար լուծելի չէր, որքան որ Արցախի խնդիրը, չնայած նրան, որ հակախորհրդային իմաստով նա ամէնաանմեղն էր։

Գոյութիւն ունի մի հետաքրքիր օրինաչափութիւն՝ ազատութիւնների սահմանների և քաղաքական լուծումների հնարաւորութիւնների միջեւ։ Որքան շատ են ազատութիւնները, այնքան դժւար են լուծւում քաղաքական և հասարակական խնդիրները, Արցախի հարցը Ստալինը կարող էր լուծել մէկ վայրկեանում։ Եթէ նա ասէր, օրինակ, Բերիային.- **«Լաւ չէ՞ր լինի Լաւրենտի, որ Արցախը Հայաստանին միացւէր»**։ Եւ հարցը լուծւած կը լինէր։ Յաջորդ օրը բոլոր թերթերը կը հրատարակէին Խորհրդային Միութեան և Ադրբեջանի Գերագոյն Խորհուրդների համապատասխան որոշումները, իսկ Ադրբեջանի Գերագոյն Խորհրդի զարմացած անդամները թերթերից կ՚իմանային, որ գիշերը երբ իրենք քնած էին իրենց խորհուրդի նիստն է տեղի ունեցել։ Խրուշչեւը այնքան հեշտութեամբ չէր կարող լուծել խնդիրը, բայց նա էլ Քաղբիւրոյի նիստի ժամանակ հեշտութեամբ կարող էր համոզել Քաղբիւրոյի անդամներին, որ Արցախի միացումը Հայաստանին բխում է Ադրբեջանի աշխատաւորների շահերից և այդ աշխատաւորները կը խնդրէին խորհրդային կառավարութիւնից վերամիաւորել Արցախը Հայաստանի հետ։

Գորբաչեւը գտնւում էր շատ աւելի դժւարին կացութեան մէջ։ Այն ազատութիւնները, որոնք նա տւել էր ժողովրդին, հաւասարաչափ վերաբերում էին թէ՛ հայերին և թէ ադրբեջանցիներին։ Իսկ Արցախի հարցը ոչ թէ ռուս-հայկական, այլ հայ-ադրբեջանական հարց էր։ Արցախը Հայաստանին միացնելու հայերի յամառ կամքին ադրբեջանցիները հակադարձում էին Արցախը հայերին չտալու իրենց ոչ-պակաս յամառ կամքով։ Ընդ որում՝ ազգային նկարագիրների համաձայն, հայերը բռնել էին խաղաղ ժողովրդավարական ուղին, իսկ ադրբեջանցիները՝ իրենց աւանդական ջարդերի ճամբան։

Բացի դրանից՝ Գորբաչեւի ականջին շշնջում էին Միջին Արեւելքով զբաղւող նրա թրքասէր խորհրդատուները, թէ Արցախը Հայաստանին կցելով մենք լրջօրէն կարող ենք վատացնել մեր յարաբերութիւնները Թուրքիայի և ամբողջ մահմետական աշխարհի հետ։ Դրա հետ միասին, պահպանողական թեւը յամառօրէն ապացուցում էր, որ Արցախի հարցի դրական լուծումը նախընթաց կը դառնայ հարիւրաւոր այլ հարցերի համար, որոնց տակից Գորբաչեւի վարչակարգը դուրս չի գայ։ Հէնց ինքը Շեւարտնաձէն, որը ամէնեւին էլ պահպանողական թեւին չի պատկանում, այդպէս էր մտածում։

Ուրեմն՝ նժարներից մէկի վրայ գտնւում էին մեծ վտանգ ներկայացնող աղրբեջանցիները, որոնք ազգովին բռնել էին ջարդի ճամբան, արտաքին գործերի նախարարութեան Միջին Արեւելքի մասնագէտները և ամբողջ հակագորբաչեւեան թեւը, որը համարում էր, որ ժողովուրդի ճնշման տակ որեւէ քայլ կատարելը թուլութեան և կուսակցական դիրքերից նահանջելու նշան է: Այս նոյն նժարի վրայ էր գտնւում նաեւ Սահմանադրութեան այն կէտը, որի համաձայն հանրապետութիւնների միջեւ գոյութիւն ունեցող սահմանների փոփոխութիւնները կարող են կատարւել միայն երկու կողմերի համաձայնութեամբ. նժարներից միւսի վրայ գտնւում էր ոտքի ելած, բայց խաղաղօրէն Արցախը պահանջող հայ ժողովուրդը, Արդարութիւնը, հատ ու կենտ ռուս մտաւորականներ (որոնք Քրիստոնէութեան և արդարութեան սիրոյն բռնել էին հայերի կողմը) և Սփիւռքը, որի հետ որոշ չափով պէտք է հաշւի նստէր խորհրդային իշխանութիւնը, մանաւա՛նդ ստեղծւած պայմաններում, երբ տնտեսական կապեր էին որոնւում արտասահմանում: Եւ, վերջապէս, այս նոյն նժարի վրայ էր գտնւում ազգերի ինքնորոշման սահմանադրական իրաւունքը: Տեսնենք թէ ի՞նչ կարող էր այս պայմաններում անել Գորբաչեւը, որ չարեց և ի՞նչ արեց, որ չպիտի անէր:

Ենթադրենք, որ երկու նժարների վրայ գտնւող արժէքների համեմատութիւնը և քաղաքական վերլուծութիւնը յանգեցում էր Արցախը Հայաստանին միացնելու գաղափարին: Ի՞նչպէս պիտի դա Գորբաչեւը կատարէր: Եթէ նա բռնի ուժով պիտի ստիպէր աղրբեջանցիներին ենթարկւել Քաղբիւրոյի կարգադրութեանը, ապա դա կը նշանակէր, որ նա վերադառնում է այն ժամանակներին, երբ լուրջ քաղաքական հարցերը լուծւում էին կոճակ սեղմելով: Բայց Գորբաչեւը հէնց այդ կարգից էր հրաժարւում, ուստի չէր կարող դիմել այն միջոցներին, որոնք ինքը խիստ քննադատում էր: Աւելին, այս հարցում նա չէր կարող մեծամասնութիւն հաւաքել Քաղբիւրոյում, որտեղ Գրոմիկոն, Շերպիցկին, Լիկաչեւը պարզ հակահայկական դիրքերի վրայ էին, Շեւարտնաձէն և Եակովլեւը չէզոք դիրքերի վրայ, իսկ բանակը և ԿԳԲ-ն ուզում էին որքան կարելի է արագ, կարգ ու կանոն հաստատել Անդրկովկասում: Իսկ սրանից էլ աւելի կարեւորը այն էր, որ նժարներից մէկը՝ հայկական կողմը քաղաքական հաշւարկների իմաստով ամէնեւին էլ առաւելութիւն չունի: Միակ բանը, որ կայ հայկական նժարի վրայ, դա արդարութիւնն է, կամ՝ աւելի ճիշտը, պատմական անարդարութիւնների շտկումը, որի անհրաժեշտութիւնը հռչակել էր Գորբաչեւը: Ինչ մնում է ինքնորոշման իրաւունքին, ապա նա ջնջւում էր սահմանները փոխելու կարգին վերաբերւող յօդւածով: (Պէտք է ասել, որ Սահմանադրութեան մէջ գոյութիւն ունեցող այս հակասութիւնը պաշտօնապէս ճանաչւեց խորհրդային իրաւաբանների կողմից: Սակայն ճանաչելը քիչ է, անի-

րաժեշտ է Սահմանադրութիւնը փոխել, որը ինչպէս գիտենք ունի իր կարգը)։ Մնացած հարցերում, ինչպէս ասացինք, մեր կամքին հակադրւել էր ադրբեջանցիների կամքը։

Իսկ վերափոխութիւնների հակառակորդներին չէզոքացնելու, այսինքն՝ նրանց ճնշումների դիմաց Հայաստանի ղեկավարութեան գործաչեւասիրական տրամադրութիւնները առաջ քաշելու իմաստութիւնը չունեցանք։ Հայաստանի ղեկավարութիւնը, Կարէն Դեմիրճեանի ղեկավարութեամբ, առաջին իսկ օրից միացաւ հակագործբաչեւեան թեւին և նոյնիսկ յայտարարեց, որ Հայաստանը վերափոխութիւնների կարիք չունի, քանզի վերափոխութիւնները ինքը – Գործաչեւից 10 տարի առաջ – արդէն սկսել էր Հայաստանում։ Հայաստանի մամուլը վերափոխութիւններ ու ժողովրդավարութիւն բառերն օգտագործում էր միայն բացասական իմաստով, իսկ անեկտոտների մակարդակի վրայ, բոլորը ծաղրում էին Դոն Քիշոտ Գործաչեւին, որը ուզում է քայքայել Ստալինեան կուսակցութիւնը։ Ուրեմն ինչո՞ւ պիտի Գործաչեւը կանգնէր հայերի կողմը, եթէ իր նոր քաղաքականութիւնը դրանից միայն պիտի տուժէր։ Այս պայմաններում Գործաչեւը կարող էր ընդունել միակ տրամաբանական թեզը. **«Արցախի խնդիրը պէտք է լուծւի փոխզիջման սկզբունքների համաձայն և յաղթողներ չպէտք է լինեն»**։ Այս ռազմավարական նպատակին հասնելու համար ինչպիսի՞ մարտավարական սխալներ կատարեց Գործաչեւի վարչակարգը, անշուշտ կարեւոր է, սակայն հիմնական նշանակութիւն չունի։ Երեւանի օդանաւակայանի դէպքերը, Սումգայթի ջարդերի նկատմամբ սկզբնական անտարբերութիւնը, կենտրոնական մամուլի վիրաւորական յօդւածները, ադրբեջանցիների և հայերի նոյն չափանիշներով գնահատելը և շատ ուրիշ արարքներ կարելի է վերագրել մարտավարական սխալների, սակայն ինքնաքննադատութեան կարգով ասենք, որ մենք էլ միշտ չէր, որ ճիշտ քայլեր էինք կատարում։ Այնուամենայնիւ, ռազմավարական նպատակը իրականացւեց։ Եթէ Արցախը Հայաստանին կցելու դժւարին խնդիրը բաղկացած էր երկու փուլից, Արցախի դուրս բերումը Ադրբեջանի իշխանութեան տակից, յետոյ նրա կցումը Հայաստանին, ապա կարող են ասել, որ առաջին փուլը ձեւականօրէն իրականացած է և մնում է, որ Արցախի դուրս բերումը Ադրբեջանի իշխանութեան տակից կրի ոչ թէ ձեւական, այլ իրաւական բնոյթ։ Իսկ դա արդէն մեզանից է կախւած։

Ուրեմն՝ ընդհանուր եզրակացութիւնը այն է, որ Գործաչեւը Արցախի խնդրի լուծման առաջին փուլում սրանից աւելի չէր կարող անել։

Այժմ տեսնենք, թէ ի՞նչ նա արեց, որ չպիտի անէր։ Խօսքը այն մարտավարական սխալների մասին չէ, որոնք կատարւեցին, բայց որոնք կարելի է վե-

րագրել անվտանգութեան, շփոթութեան և անսովոր պայմաններում արագ որոշումներ կայացնելու անհրաժեշտութեան։

Խօսքը «Ղարաբաղ» կոմիտէի անդամներին ձերբակալութեան ռազմավարական սխալի մասին է։ Բաւական է նշել, որ Ակադեմիկոս Սախարովը արտասահմանում և հէնց երկրի ներսում յայտարարեց, որ «Ղարաբաղ» կոմիտէի անդամների բանտարկութիւնը ջնջեց այն ամէնը, ինչ Գորբաչեւը արել էր դրանից առաջ։ «Ղարաբաղ» կոմիտէի բանտարկութիւնը այնքան մեծ հարուած էր Գորբաչեւի հեղինակութեան համար, որ դժւար է պատկերացնել, թէ ի՞նչ նա ձեռք բերեց այդ կորուստի դիմաց։ Եւ եթէ «Ղարաբաղ» կոմիտէի անդամները չձերբակալէին, գուցէ Վոլսկու յանձնախմբի ստեղծումը Արցախի ղեկավարման համար, մեծ ուրախութիւն պատճառէր հայերին, անշուշտ եթէ մենք երկրաշարժից յետոյ դեռեւս ուրախանալու յատկութիւնը չենք կորցրել։ «Ղարաբաղ» կոմիտէի դէմ հալածանքները այնքան անհասկանալի են, որ պատճառների մասին կան մի շարք ենթադրութիւններ, որոնք պիտի փորձեմ թղուարկել։

1.- Ադրբեջանում 2500 հոգի պաշտօնազրկւել են և շատերն էլ ձերբակալւել։ Հաւասարակշռութիւնը պահելու համար ձերբակալւեցին Կոմիտէի անդամները։

2.- «Ղարաբաղ» կոմիտէն ժողովրդի մէջ այնպիսի հեղինակութիւն էր վայելում, որ նրա հետ չէին կարող մրցել պաշտօնական իշխանութիւնները։

3.- Գորբաչեւը նրանց ազատ է արձակելու, սակայն օրինական դատավարութիւնից յետոյ, երբ դատարանը կը գտնի, որ նրանք անմեղ են։ Այդ դէպքում արտասահմանը և խորհրդային մարդիկ կրկին կը ծափահարեն Գորբաչեւին, այս անգամ արդարադատութեան մէջ վերափոխումներ կատարելու համար։

4.- «Ղարաբաղ» կոմիտէի դէմ այս քայլը խոստացւել էր ադրբեջանցիներին, որպէս վճարման գին՝ վերջին որոշումը կայացնելու համար։

5.- Իշխանութիւններին քաւութեան նոխազ էր պէտք։

6.- «Ղարաբաղ» կոմիտէն դուրս էր եկել զուտ «Ղարաբաղ»ի խնդրի սահմաններից և սկսել էր բացայայտել իշխանութեան վրայ գտնւող մարդկանց յանցանքները։

Բոլոր այս պատճառները ոչ մէկ լուրջ արժէք ունեն։ Թւարկւած այդ պատճառներից ոչ մէկի համար չ'արժէր ամբողջ աշխարհով խայտառակւել և առիթ տալ, որ կասկածի տակ դրւի մարդու իրաւունքների խորհրդաժողովը, որը Խորհրդային Միութեան իշխանութիւնները երազում են գումարել Մոսկըւայում 1991 թւականին։ Ո՛չ մէկ պատճառ կար, որ «Ղարաբաղ» կոմիտէի անդամների ձերբակալութեան բերումով Հայաստանի կենտկոմի առաջին քարտուղար Յարութիւնեանը պարզապէս յիմար վիճակի մէջ ընկնէր Ջեսի

Ջէկսոնի առջեւ: «Ղարաբաղ» կոմիտէի անդամների ձերբակալութեան միակ խելքի մօտ, բայց սարսափելի ու ստալինեան գազանութիւնները յիշեցնող, պատճառը կարող է լինել այն, որ «Ղարաբաղ» կոմիտէն խոստացել էր գայլին, այսինքն՝ ադրբեջանցիներին, ճիշտ այնպէս՝ ինչպէս հայերը պահանջեցին, որ Սումգայթի ջարդարարների դատավարութիւնները տեղափոխուեն Մոսկուա: Օրինակ, անհասկանալի է, թէ ինչո՞ւ Իզոր Մուրադեանը, որը «Ղարաբաղ» կոմիտէի նախկին անդամն էր և ապա սկսեց զբաղուել Ադրբեջանում ապրող հայերի ճակատագրով, Դեկտեմբերի 15ին ձերբակալուեց Երեւանում, որից յետոյ ուղարկուեց Ադրբեջանի բանտը: Ներքին նախարարութիւնը ոչինչ չասաց, երբ «Բագւի Բանւոր» թերթը պարզապէս ստեց, թէ Իզոր Մուրադեանը ձերբակալուել է Ադրբեջանում: Եւ այդ ստի հեղինակը հէնց ռուս դատախազ Իլիւխինն էր: Այդ միջոցին Ադրբեջանի բանտերից լուրեր են հասնում, որ այնտեղ անտանելի տանջամիջոցների են ենթարկւում հայ քաղբանտարկեալները, որոնց ծեծում են, ստիպում են մէզ խմել և բռնաբարում են: Քաղբանտարկեալ Աղաջանեանը, օրինակ, խնդրել է որ իրեն սպանեն, բայց բանտի ղեկավարները ասել են, որ նա և բոլոր հայերը պէտք է մահանան տանջանքներից: Այս մասին բազմաթիւ նամակներ են գնում Մոսկուա և հէնց Գորբաչեւին, սակայն, տարօրինակ կարգով կացութիւնը չի շտկւում:

Մի խօսքով՝ Գորբաչեւը չպէտք է այդպէս վարուէր «Ղարաբաղ» կոմիտէի հետ, բայց՝ վարուեց: Ղարաբաղի դասերը այսօր մեզ անհրաժեշտ են ապագայ քայլերի համար: Այդ քայլերի մէջ, հաւանաբար, ամենակարեւորները նրանք են, որոնք պէտք է մեր նժարի արժէքները աւելացնեն՝ Գորբաչեւի քաղաքականութեան և ռուս ժողովրդի համակրանքը շահելու տեսանկիւնից: Արդէն լսում եմ այն վայնասունը, որը պիտի բարձրացնեն ոմանք իմ այս արտայայտութեան վրայ: Բայց մանկապարտէզում չենք և կռիւ-կռիւ չենք խաղում, քաղաքական դաշտում ենք ու ժողովրդի ճակատագրի հետ ենք խաղում: Մեր պահանջատիրութիւնը կարող է օգտակար լինել միայն այն դէպքում, երբ մենք մնանք մեզ տրւած սահմաններում այնքան ժամանակ, քանի դեռ չեն սպառւած այդ սահմաններում գործելու հնարաւորութիւնները:

Վերցնենք, օրինակ, Ադրբեջանից Հայաստան փախած հարիւր հազարաւոր հայերի հարցը: Խաղաղ պայմաններում մենք կազմում էինք ահագին գումարներ ու ջանքեր՝ Խորհրդային սփիւռքից հայերին Հայաստան վերադարձնելու ծրագիրներ գործադրելու համար: Այժմ իրենք իրենց ոտով Հայաստան են եկել, իսկ մենք նրանց չենք կարողանում Հայրենիքում տեղաւորել: Կենտրոնական իշխանութիւնները կոչեր են անում, որպէսզի փախստականները իրենց տները վերադառնան, և երբ հայերը չեն ենթարկւում, նրանց այդ քայլը

բնականաբար նկատւում է որպէս կառավարական կոչերի հակառակութիւն, այսինքն՝ մի տեսակ այլախոհութիւն: Բայց ինչո՞ւ են կենտրոնական իշխանութիւնները պնդում փախստականների վերադարձի վրայ: Նախ՝ որովհետեւ Հայաստանի ղեկավարութիւնը բողոքում է, թէ մարդկանց չի կարողանում տեղաւորել, իսկ ադրբեջանցիները հասկացել են, որ առանց հայերի՝ իրենց տնտեսութիւնն էլ, առողջապահութիւնն էլ, սպասարկումն էլ լրջօրէն տուժելու է: Մոսկայի համար ոչ մէկ նշանակութիւն չունի, թէ ո՞վ որտեղ է ապրում, նա լուռ կը մնայ, եթէ մենք էլ լուռ կերպով մեր փախստականներին տեղաւորենք Հայրենիքում: Այս գործի համար մենք Սփիւռքում ահագին գումարներ կարող ենք հաւաքել, հաշւի առնելով դոլարի և ռուբլու իրական արժէքների համեմատութիւնը:

Կամ էլ եկէք տեսնենք, թէ նախքան Արցախը Հայաստանին կցելը, այս նոր կացութեան մէջ կա՞ն անելիքներ, Եթէ մեզ յաջողւի Արցախի այս նոր ղեկավարութեան պայմաններում ամբողջովին հայացնել Արցախը, կրթութեան, մշակոյթի և Հայաստանի հետ կապեր հաստատելու բնագաւառներում, միթէ դա բաւական չէ յառաջիկայ 5-10 տարիների համար: Կարո՞ղ ենք արդեօք այդ բանը անել, սա ուրիշ հարց է, բայց շատ աւելի կարեւոր հարց, քան եթէ մենք, օրինակ, շարունակենք պահանջել Արցախի կցումը Հայաստանին: Վերջին հաշւով մեզ համար կարեւորը Արցախի հայապահպանումն է, իսկ սահմանների հարցը կարող է նշանակութիւն ունենալ միայն այն պահին, երբ կը ստեղծւեն անկախ Հայաստան ստեղծելու պայմաններ: Բայց այդ ժամանակ էլ գոյութիւն ունեցող սահմանները շատ մեծ նշանակութիւն չեն ունենում: Այդ ժամանակ գլխաւոր դերակատարը մեր ուժն է դառնում: Ուրեմն աւելի լաւ է այսօր ուժեղանալու մասին, մտածենք, եթէ առանց սահմանային հարցերի լուծման՝ ուժեղանալը հնարաւոր է: Եթէ ճակատագրական պահերին նախորդ սահմանները որեւէ նշանակութիւն ունենային, ապա այսօր առնւազն Կարսը, Արարատը, Ղարաբաղը և Նախիջեւանը մերը կը լինէին: Բայց, դժբախտաբար, նոր սահմաններ գծելու պահերին, բոլորովին ուրիշ գործօններ են ի յայտ գալիս և դրանց է, որ մենք պէտք է նախապատրաստւենք: Եթէ այդ նախապատրաստման ընթացքում անհրաժեշտ է **«Վեցցէ՛ Գորբաչեւ»** գոռալ՝ գոռանք, եթէ պէտք է նրան հարւածել՝ հարւածենք: Սակայն գովելու կամ հարւածելու որոշումը տալու համար մի քիչ աւելի լուրջ մօտեցում ցուցաբերենք, քան այն թեթեւամիտ քայլերն են, որ մենք երբեմն կատարում ենք մեր զգացմունքներից ու արդարասիրութիւնից ելնելով, և կամ էլ ուրիշի ազդեցութեան տակ ընկնելով:

Ղարաբաղի իրադարձութիւններից մենք պարտաւոր ենք աւելի քաղաքականացած դուրս գալ, որովհետեւ ժողովուրդը իր Սարդարապատի ճակատամարտը շահեց, մնում է որ քաղաքական գործիչները սկսեն Մայիս 28ը կերտել։

1989

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ, ԳՈՐԾԱՉԵԻՔ ԵՒ ՂԱՐԱԲԱՂԸ

Է. Յովհաննիսեան

Մեր կեանքում մենք յաճախ բախւում ենք այնպիսի հակասութիւնների հետ, որոնք մեզ թւում են մի անգամ ընդմիշտ որոշւած ու հասկանալի, սակայն երբ մենք փորձում ենք այս հակասութիւնները օգտագործել որեւէ բանավէճի և կամ էլ սովորական զրոյցի ընթացքին՝ պարզւում է, որ մեր զրուցակիցները այդ նոյն հասկացութիւնների տակ բոլորովին ուրիշ բան են հասկանում և զրոյցը արդիւնք չի տալիս: Այդպիսին են արդարութիւն, սէր, բարոյականութիւն և շատ ուրիշ նման հասկացութիւններ:

Այդպիսին է նաեւ ազգայնականութիւնը:

Այստեղ տեղը չէ խորանալու ազգայնականութեան փիլիսոփայութեան մէջ: Բաւական է նշել, որ այդ հասկացութիւնը երբեմն օգտագործւում է դրական, իսկ երբեմն էլ բացասական նշանակութեամբ: Սակայն ազգային զգացմունքները միշտ էլ դրական է, քանզի ազգապահպանման միակ միջոցն է: Առանց այդ զգացմունքի, տրամաբանական կառոյցներով ու բարեգործական մօտեցումներով ազգապահպանումը բացառւած է: Ազգի կենդանութիւնը պայմանաւորւած է ազգային զգացմունքների գոյութեամբ, որի կորուստը ազգի համար մահ է նշանակում:

Այստեղ մեր առաջ ցցւում է մի հարց. իսկ ինչո՞ւ մենք պէտք է պահպանենք մեր ազգը, ինչո՞ւ գերմարդկային ճիգերով, մեր կեանքի զգալի մասը այս նպատակին յատկացնելով, մենք պիտի ջանանք պահել այն, ինչը որոշ պայմաններում պարզապէս անկարելի է պահել: Հաւանաբար այս հարցին ոչ մէկը չի կարող տալ յստակ պատասխան, ինչպէս գոյութիւն չունի այն հարցի յստակ պատասխանը, թէ ինչո՞ւ մենք պէտք է պահպանենք մարդու կեանքը, եթէ նոյնիսկ նա անբուժելի հիւանդ է, եթէ նա նոյնիսկ անազնիւ է, չար ու անտանելի:

Կարծում եմ, որ պատասխանը պէտք է որոնել աշխարհակառոյցի սկզբունքներում: Մարդիկ աշխարհի ներդաշնակութեան մասնիկներն են, նրանք ստեղծւած են բնութեան կողմից և միայն բնութիւնը գիտի, թէ ի՞նչի համար է ստեղծել մեզ: Իսկ մեզ տրւած է ապրելու կամք, և այդ կամքի արտայայտութիւնն էլ՝ ազգայնութիւնն է:

Չնայած նրան, որ ազգայնականութիւնը ինքնըստինքեան պահպանողական է և յենւում է աւանդութիւնների վրայ, որոնցից շատերը հնացած են, այնուամենայնիւ՝ պահպանել ազգը դեռեւս չի նշանակում պահել նրան այն նոյն վիճակում, որում նա է ներկայումս: Նման պահպանումը մահւան հաւասար

մի բան է, որովհետեւ անկարելի է մնալ տեղում կամ առաւել եւս լողալ հոսանքի հակառակ ուղղութեամբ. այն սրընթաց և բուռն գետում՝ որը մեր կեանքն է: Այդ բուռն գետում՝ որտեղ բախւում են սերունդները և գաղափարները, ազգութիւնները անցնում են իրենց զարգացման փուլերը՝ մշակութային ընդհանրութիւնից ազգային գիտակցութեան, գիտակցութիւնից դէպի կազմակերպութիւն, պայքար, անկախութիւն, սեփական ազդեցութեան ծաւալում և նոյնիսկ բարոյական, քաղաքական, տնտեսական և կամ էլ մշակութային համաշխարհային տիրապետութիւն:

Դժւար է որոշել ազգային ձգտումների սահմանները: Ամէն ինչ կախւած է տւեալ ազգի կարողութիւններից ու վիճակից, ուստի տարբեր ազգերի համար տարբեր է: Ասորիների համար ազգային հարցը թերթ ստեղծելու մէջ է, պաղեստինցիները ուզում են պետութիւն ստեղծել, քրդերը անկախութիւն են ուզում, գերմանացիները ուզում են վերամիաւորել երկու Գերմանիաները:

Ազգային հարցերը ծագում են այնտեղ, որտեղ ապրում են ազգեր և որտեղ կան չլուծւած ազգային հարցեր: Տեսնենք, թէ այդ ո՞ր ազգային հարցերն են, որ լուծւած չեն Խորհրդային Միութիւնում: Անշուշտ կարելի էր ասել, որ Խորհրդային Միութեան բոլոր ժողովուրդները անկախութիւն են ուզում, բայց այդ անկախութիւնը նրանց չի տրւում, ուրեմն ազգային հարցի լուծումը Խորհրդային Միութեան կազմից հանրապետութիւնների դուրս գալու մէջ է: Սակայն այս մօտեցումը միամիտ է և լուրջ քննարկման առարկայ չի կարող դառնալ: Եթէ պաղեստինցները այսօր չունեն պետութիւն, իսկ քրդերը անկախութիւն, եթէ գերմանացիները չեն քանդում Բերլինի պատը, իսկ հայերի ցեղասպանութիւնը մնում է չդատապարտւած, ուրեմն կան ուժեր, որոնք շահագրգռւած չեն և խանգարում են այդ խնդիրների լուծումը: Եւ մենք ստիպւած ենք հաշւի նստելու այդ ուժերի հետ: Յամենայնդէպս, մենք չենք կարող պահանջել նրանցից այն, ինչը տալուց յետոյ, իրենք պիտի կործանւեն: Ուրեմն մենք պէտք է խօսենք այն խնդիրների մասին, որոնք Խորհրդային Միութիւնում լուծւած չեն, բայց կարող էին լուծւել, առանց վտանգելու Միութեան պետական շահերը: Այս խնդիրներից դուրս բոլոր մնացած խնդիրները մերը չեն, որովհետեւ կապ ունեն կայսրութեան տապալման հետ, որի ուժը մենք չունենք: Խնդիրներ՝ որոնք կարող էին լուծւել առանց վնաս հասցնելու Խորհրդային Միութեան պետական շահերին, շատ կան, բայց նրանց կարելի է դասել երեք խմբերի:

1.- Հոգեբանական խնդիրներ:

2.- Տնտեսական խնդիրներ:

3.- Քաղաքական խնդիրներ:

Հոգեբանական խնդիրների շարքին կարելի է դասել բոլոր այն խնդիրները, որոնք լուծւած չեն բարձրագոյն համամարդկային սկզբունքների համաձայն, և

որոնք յստակ չեն տրամաբանական ոլորտներում, բայց շատ յստակ են մեր զգացմունքների մէջ։ Այստեղ թերութիւնը կայանում է նրանում, որ տարբեր պատմական փորձ ունեցող և զարգացման տարբեր փուլերում գտնուող ազգերի նկատմամբ կիրառւում են նոյն մօտեցումները։ Իսկ անհաւասարների հաւասարեցումը միշտ էլ ընկալւում է որպէս անարդարութիւն։ Պատմական նենգափոխութիւնները, սահմանների որոշումը, արհամարհական վերաբերմունքը ազգային փոքրամասնութիւնների նկատմամբ և այն՝ որ մէկ հանրապետութեան ակադեմիկոսները գտնւում են միւս հանրապետութեան ուսանողների մակարդակի վրայ, և այն՝ որ արդիւնաբերական ձեռնարկութիւնները բաշխւում են երկրով մէկ, առանց հաշւի առնելու տւեալ ժողովրդի բնական պայմանները, և վերջապէս այն՝ որ սահմանափակւած են ազգի ստեղծագործական ճիգերը, հոգեբանական անբաւարարութիւն են ստեղծում ազգային ինքնագիտակցութեան մէջ։

Տնտեսական խնդիրների լուծւած չլինելը կայանում է նրանում, որ ազգային կառավարութիւնները իշխանութիւն չունեն սեփական տնտեսութեան վրայ, որովհետեւ արդիւնաբերական ձեռնարկութիւնների մեծ մասը ենթարկւում է Միութենական նախարարութիւններին և ազգի կենսամակարդակի վրայ ոչ մէկ ազդեցութիւն չի թողնում։

Բայց ամէնից չլուծւած խնդիրը՝ քաղաքական խնդիրն է։ Խորհրդային Միութիւնում ապրող ազգութիւնները գտնւում են այնպիսի վիճակում, որ օրէց-օր կորցնում են պետութիւն ստեղծելու և պետական կեանքով ապրելու իրենց կարողութիւնները։ Եթէ այսօր հրաշքով Խորհրդային Միութիւնը քայքայւի, շատ քիչ ազգեր ի վիճակի կը լինեն ստեղծելու և պաշտպանելու իրենց ազգային պետութիւնները։ Այդ ազգերը չունեն իրենց ազգային շահերը պաշտպանող ազգային բանակ, ազգային դիւանագէտներ և շատերի համար յստակ էլ չի, թէ որոնք են ազգային շահերը։ Մինչդեռ բոլոր ազգերի զօրավարները, դիւանագէտները, պետական գործիչներն ու զինւորները պաշտպանում և ամրապնդում են ռուսական պետական շահերը և ռուս ժողովուրդը օրէց-օր ամրապնդում ու զարգացնում է իր պետական մտածելակերպը։ Եւ հէնց սա այն գլխաւոր անհաւասարութիւնն է, որ գոյութիւն ունի ռուս և ոչ-ռուս ժողովուրդների միջեւ։

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԽՆԴԻՐԸ

Արցախի խնդիրը այն բնորոշ խնդիրն է, որը լուծւած չէ հոգեբանական, տնտեսական և քաղաքական տեսանկիւններից։ Հայ ժողովուրդի համար Արցախը միշտ էլ եղել է հայապատկան և ղարաբաղցին միշտ էլ ունեցել է հայ ազգային ինքնագիտակցութիւն։ Սակայն այդ գիտակցութիւնը աղրբեջանցի-

ների կողմից մշտապէս ենթարկուել է հալածանքների, նրանցից պատմութիւնը խլելու և ազգային արժէքները ոչնչացնելու ճամբով: Տնտեսութեան բնագաւառում միտումնաւոր կարգով զսպւել է արդիւնաբերութեան զարգացումը, որի հետեւանքով հայ երիտասարդութիւնը ստիպւած է եղել լքել հայրենիքը: Քաղաքական իմաստով Լեռնային Ղարաբաղը ենթարկուել է Բագւի իշխանութիւններին և միտումնաւոր կարգով կտրւել են բոլոր կապերը Մայր Հայաստանի հետ: Այս ամէնը յայտնի է և այս ամէնի մասին բազմիցս բողոքել են ղարաբաղցիները:

Յայտնի են նրանց նամակները Խրուշչեւին, Բրեժնեւին և Գորբաչեւին: Նամակները միշտ էլ մնացել են անպատասխան: Խորհրդային ղեկավարներից Գորբաչեւը եղաւ առաջինը, որ Հայաստանին միանալու ղարաբաղցիների պահանջին պատասխանեց: Կենտկոմի բերանով նա յայտարարեց, որ հայերի պահանջը չի համապատասխանում Հայաստանի և Ադրբեջանի աշխատաւորների շահերին: Դժւար է ասել, որքանով այդ որոշումը տրւած է Գորբաչեւի կողմից, բայց հէնց այդ որոշումն էր, որ պատճառ դարձաւ հետագայ բուռն դէպքերի համար:

Մարտի 23ին Անդրէ Գրոմիկոյի նախագահութեամբ տեղի ունեցաւ Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նիստը, որը որոշեց Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանի կազմի մէջ: Այդ որոշման նախորդող բուռն իրադարձութիւնները թոյլ չէին տալիս պարզել ուժերի դասաւորութիւնը Ղարաբաղի հարցում, սակայն հետագայ դէպքերը որոշ չափով թոյլ տւեցին այդ բանը պարզել:

Ամենաշշմեցուցիչ փաստը այն է, որ ինչպէս հաղորդւեց ՏԱՍՍ գործակալութեան կողմից, Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նիստում ելոյթ ունեցաւ Միխայէլ Գորբաչեւը, սակայն նրա ելոյթը ոչ մէկ տեղ չհրատարակւեց: Այն տպաւորութիւնն է ստեղծւում, որ Ղարաբաղի կացութիւնը անփոփոխ պահելու որոշումը տրւել է հակառակ Գորբաչեւի ցանկութեան, այսինքն՝ Գորբաչեւը չկարողացաւ կատարել Սիլվա Կապուտիկեանին և Զօրի Բալայեանին տւած իր խոստումը՝ Ղարաբաղի Հարցը արդարացիօրէն լուծելու մասին:

Տեսնենք թէ ի՛նչ ուժեր բախւեցին Գերագոյն Խորհուրդի նիստում: Վճռական ցոյցերի, բողոքների և Ղարաբաղի տեղական իշխանութիւնների պաշտօնական որոշումների ազդեցութեան տակ ընդհանուր մթնոլորտը դասաւորւում էր հայերի օգտին: Կարելի է ասել, որ երկրի բոլոր ազատամիտ ուժերը յանգում էին այն եզրակացութեան, որ ղարաբաղցիների պահանջը արդարացի է և որ Ղարաբաղի անջատումը Հայաստանից, Ստալինի յանցագործութիւններից մէկն էր: Ստալինի՝ որի յանցանքները բացայայտօրէն դատապար-

տում են վերափոխութիւնների կողմնակիցները։ Ուստի՝ Ղարաբաղի հարցի դրական լուծումը վերափոխութեան քաղաքականութեան քննութիւններից մէկն է։ Երեւան և Ստեփանակերտ ժամանած կենտկոմի ներկայացուցիչների վրայ շշմեցուցիչ տպաւորութիւն թողեց այն միասնականութիւնը, որը աշխարհի բոլոր հայերը ցուցաբերում էին Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիաւորելու հարցում։ Հայերի պահանջներին իրենց ձայնը միացրեցին ժողովրդավարութեան ջատագովները և Մարտի 21ին ակադեմիկոս Սախարովը Գորբաչեւին յղեց մի նամակ, որտեղ խնդրում էր բաւարարել ղարաբաղցիների պահանջը։ Ղարաբաղը Հայաստանից բաժանող շերտում ապրող քրդերը նոյնպէս յայտնեցին Հայաստանի միանալու իրենց ցանկութիւնը։

Այս պայմաններում Ղարաբաղի կցումը Հայաստանին կարող էր իրականութիւն դառնալ և Խորհրդային ղեկավարները կարող էին դա ձեւակերպել՝ որպէս ժողովուրդների բարեկամութեան հերթական վկայութիւն։

Եւ ահա հրապարակ իջան հարցի դրական լուծման և գուցէ ամենակարեւոր հակառակորդները՝ Ադրբեջանի ազգայնականները, որոնք Հայդար Ալիեւի շնորհիւ գտնւում էին Ադրբեջանի բոլոր ղեկավար պաշտօնների վրայ։ Ընդրանք պէտք է շտապ կարգով ապացուցէին, որ հայերի պահանջների բաւարարումը շատ աւելի լուրջ հետեւանքների կարող է յանգել, քան խաղաղ զանգւածային ցոյցերն էին։ Սումգայթում, Կիրովաբատում, Բագւում, Ստեփանակերտում, Ասկերանում ու Եւլախում սկսւեցին արիւնալից ջարդերը։

Այժմ, երբ խորհրդային մամուլը սկսել է աւելի լայն տեղեկութիւններ տալ անցած դէպքերի մասին և երբ Արեւմուտք կը հասնեն կինոժապաւէններ այդ դէպքերի մասին, մենք իմանում ենք որ ջարդերի վայրերում ոստիկանութիւնը չէր միջամտում, որ հայ ոստիկանները զինաթափւել էին, որ Աղդամում սպանւած երկու ադրբեջանցիների լուրը – որի մասին հաղորդեց Բագուի Ռատիոն և որից իբր թէ սկսեցին արիւնալից դէպքերը – սուտ էր, որ այդ երկուսը սպանւել էին պահակների կողմից, երբ փորձում էին յարձակւել զէնքերի պահեստի վրայ, որ Սումգայթի դէպքերի ամբողջ պատասխանատուութիւնը ընկնում է քաղկոմի առաջին քարտուղար Դ.Մ. Մուսլիմզադէի վրայ, որ զօրքերը Սումգայթ մտան հէնց այն պատճառով, որ ոստիկանութիւնը անգործութեան էր մատնւած, որ Ասկերանում ադրբեջանցիներին ջարդերից առաջ նախազգուշացրել էին և նրանք նախօրօք դուրս էին եկել քաղաքից և այլն։

Միաժամանակ ջարդարարներին միացան Ադրբեջանի գիտնականները՝ Զիա Բունիաթովի ղեկավարութեամբ, որոնք ոչ պակաս վայրագութեամբ ջարդում էին պատմութիւնը։ Թոյլատրելի և անթոյլատրելի միջոցներով նրանք ջանում էին ապացուցել, որ ղարաբաղցիները քրիստոնէութիւնը ընդունած աղւաններն են, իսկ աղւանները ադրբեջանցիների նախնիներն են, որ

Գանձասարը կառուցել են ոչ թէ հայերը, այլ աղուանցի ադրբեջանցիները, որ հայերի հայկական ձեռագրերը դա աղուաներէնից թարգմանուած պատճէններ են և որ բնագրերը հայերի կողմից ոչնչացուած են։

Ադրբեջանական ազգայնականութեան այսքան բուռն արտայայտութիւնը չվրիպեց հակագորբաչեւեան ուժերի ուշադրութիւնից, իսկ ոմանց կարծիքով հէնց նրանց կողմից էլ հրահրուած էր։ Յամենայնդէպս՝ Գորբաչեւի կողմից Քաղբիւրոյից վտարուած Ալիեւի մասնակցութիւնը այս հարցում կասկածից վեր է։

Եւ, ահա՛, հրապարակում երեւաց Ղարաբաղի հարցի ղրական լուծման երկրորդ թշնամին հակագորբաչեւեան թեւը։ Նրանց համար Ղարաբաղի հարցը ինքնըստինքեան ոչ մի հետաքրքրութիւն չէր ներկայացնում, նրանք պարզապէս ուզենում էին ապացուցել, որ հրապարակայնութիւնը և ժողովրդավարութիւնը վտանգաւոր են Խորհրդային Միութեան համար։ Նրանց մէջ էր անշուշտ նաեւ Հայաստանի ղեկավարութիւնը՝ Կ. Դեմիրճեանի ղեկավարութեամբ։

Յայտնի է, որ երբ Գորբաչեւը գտնւում էր Հարաւսլաւիայում, Խորհրդային Միութեան պահպանողական ուժերը բուռն գործունէութիւն ծաւալեցին Գորբաչեւի վերափոխութիւնների դէմ։ Իսկ Ղարաբաղի հարցում նրանք ուղղակի հակագորբաչեւեան արշաւի ձեռնարկեցին։ Հարաւսլաւիայում Գորբաչեւը յայտարարեց, որ Լեռնային Ղարաբաղի շուրջ տեղի ունեցող ցոյցերը չեն կրում ո՛չ հակասոցիալիստական և ոչ էլ հակախորհրդային բնոյթ, որ խնդիրը մշակութային և ցեղային բնոյթ է կրում։

Կարծես թէ դիտաւորեալ կերպով, Մարտի 21ին «Պրաւդա»ն հրատարակում էր «Զգացմունքները և տրամաբանութիւնը» խորագրեալ յօդուածը, որտեղ հայերի պահանջը անւանում էր հակախորհրդային և հակասոցիալիստական իսկ ցուցարարներին անւանում էր «փողոցային ժողովրդավարներ»։ Կարծես հրաման ստացած, խորհրդային մամուլը մէկը միւսի յետեւից սկսում էր ձաբռտել, թէ իբր Լեռնային Ղարաբաղի դէպքերը կազմակերպւել են արտասահմանեան հակախորհրդային կենտրոնների ու ռատիոձայների կողմից։

Հաւանաբար այս կարծիքը տարածողները այնքան էին լարել իրենց ուժերը, որ կարողացան ազդել նաեւ Իշխան Մարտիրոսեանի վրայ, որը «Կամք» թերթում գրեց, թէ «ազատութիւն» ռատիոկայանի հայկական խմբագրութիւնը իրեն վատ էր պահում Ղարաբաղի դէպքերի օրերին։ Խորհրդային Հայաստանի ղեկավարները կարծես թէ ղրան էին սպասում։ Գորբաչեւեան վերափոխութիւններին վերաբերւող հազարաւոր յօդւածների նկատմամբ լուռ մնալուց յետոյ, նրանք յանկարծ ոգեւորւեցին «Պրաւդա»յի յօդւածից և սկսեցին արգիլել հասարակական Կոմիտէները, սպառնացին հայ մտաւորականութեան և կա-

տարեցին ձերբակալութիւններ: Ադրբեջանի ղեկավարները նոյն մօտեցումը ցուցաբերեցին Ղարաբաղի ցուցարարների նկատմամբ, որոնք երկար ժամանակ դիմադրեցին, բայց ի վերջոյ ստիպւած եղան նահանջելու: Այդպիսով, հակադեմոկրատական ուժերը Գերագոյն Խորհրդի նիստին եկան յաղթական դիրքերից և նրանց յաջողուեց Ղարաբաղի կացութիւնը թողնել անփոփոխ , իսկ դրական լուծման կողմնակիցներին յայտարարել հակայեղափոխականներ:

Սակայն Ղարաբաղի հարցում պահպանողականների յաղթանակը վերջնական չէ և շարունակում է մնալ գորբաչեւեան և հակագորբաչեւեան ուժերի պայքարի կռուախնձորներից մէկը:

Ապրիլի 21ին «**Կոմսոմոլսկայա Պրաւդա**» թերթը հրատարակեց «**Շրջադարձ, որը չէր եղել**» վերնագիրը կրող յօդուածը, որտեղ Մարտի 13ից մինչեւ Ապրիլի 5ը ընկած ժամանակաշրջանը անւանում էր «լճացման երեք շաբաթ»: Սա այն ժամանակաշրջանն էր, երբ հակագորբաչեւեան ուժերը անցել էին յարձակողականի, և «**Սովետսկայա Ռոսիա**» թերթը հրատարակել էր Անդրէեւայի «**Չեմ կարող զիջել սկզբունքներս**» յօդուածը. այս յօդուածը ուղղւած էր Գորբաչեւի դէմ և այն տեսակէտն էր յայտնում, որ վերափոխումները և ժողովրդավարութիւնը տապալում են Սոցիալիզմը, որ Ստալինին դատապարտելը սխալ է և այլն:

Հետագայում «**Պրաւդա**»ն այդ յօդուածը անւանեց «վերափոխումների հակառակորդների Մանիֆեստ»: Պատահական չէ, որ հէնց այդ նոյն «**Սովետսկայա Ռոսիա**» թերթը Մարտի 26ին գրեց,- «**գրգռիչ ձայների թնդիւնը հայերէն և ադրբեջաներէն լեզուներով լցրել էին եթերը Արարատի վրայ: Գտնւում են համակիրներ նաեւ մեր Անդրկովկասում և ոչ միայն անպատասխանատու տարրեր տարբեր Կոմիտէներից, այլեւ, դժբախտաբար, նաեւ տեղացի լրագրողներ, որոնք ծառայաբար մեկնաբանում են դէպքերը յօգուտ Արեւմուտքի**»:

Բայց Գորբաչեւը կարողացաւ զսպել իր հակառակորդների ձայները: «**Սովետսկայա Ռոսիա**» թերթը զղջաց, ներողութիւն խնդրեց հակագորբաչեւեան ուժերի Մանիֆեստի համար: Ապա՝ իր մօտ կանչեց Հայաստանի և Ադրբեջանի առաջին քարտուղարներին: Ինչի մասին էր նրանց խօսակցութիւնը, յայտնի չէ: Հաւանաբար Գորբաչեւը փորձում էր նրանց ժողովրդավարութեան դաս տալ, սակայն հետագայ դէպքերը ցոյց տւեցին, որ այդ բանը Գորբաչեւին չյաջողուեց: Բագիրովը և Դեմիրճեանը յամառօրէն շարունակեցին իրենց պահպանողական քաղաքականութիւնը: Բայց Կենտրոնական Մամուլում զգացւեց որոշ մեղմացում Ղարաբաղի հարցում:

Ապրիլի 3ին «**Մոսկովսկիէ Նովստի**» թերթը հրատարակեց Ակադեմիկոս Սախարովի «**Հանգստութեան և իմաստութեան համար**» վերնագիրը կրող

յօդուածը, որտեղ յայտնի իրաւապաշտպան ակադեմիկոսը գրում է,- «**Մարտի 24ին հրատարակուեց Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհրդի նախագահութեան որոշումը Լեռնային Ղարաբաղի մասին: Սակայն այդ որոշման մէջ բացակայում է Լեռնային Ղարաբաղի ժողովրդական Խորհրդի վերաբերմունքը խնդրի նկատմամբ: Ես յոյսով եմ, որ սա Գերագոյն Խորհրդի և նրա նախագահութեան վերջին խօսքը չէ: Ես կարծում եմ, որ անհրաժեշտ է ըստ Սահմանադրութեան քննարկել Լեռնային Ղարաբաղի ժողովրդական Խորհրդի որոշումը՝ Հայաստանի և Ադրբեջանի Գերագոյն Խորհուրդներում: Տարակարծութիւնների դէպքում վերջնական որոշումը պէտք է կայացնի Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհուրդը**»:

«**Նովոյէ Վրեմիա**» հանդէսը իր 14րդ համարում հրատարակեց «**Սահմանների օրէնքը և օրէնքի սահմանը**» յօդուածը, որտեղ իրաւաբանական գիտութիւնների թեկնածու Մուկսինովը, մեկնաբանելով Ղարաբաղի իրադարձութիւնները, տալիս է հետեւեալ բացատրութիւնը,- «**Պէտք է ասել, որ սահմանային փոփոխութիւնները Խորհրդային Հանրապետութիւնների միջեւ եղել են և կարող են լինել նաև հետագայում: Աւելին եղել են այնպիսի փոփոխութիւններ, որոնք վերաբերւել են ոչ միայն հանրապետութեան, այլեւ պետական սահմաններին: Օրինակ՝ 1954 թւականին փոփոխութեան ենթարկուեց Խորհրդա-Իրանեան սահմանը և Ադրբեջանի և Թուրքմենիստանի Գերագոյն Խորհուրդները տուեցին իրենց համաձայնութիւնները՝ տարածական զիջումներ կատարելու համար**»:

Ապրիլի 2ին «**Պրաւդա**»ն հրատարակեց մի յօդուած, որտեղ ասւած էր,- «**Կենտրոնական և տեղական թերթերում հրատարակւած մի շարք միակողմանի յօդուածներ միայն գրգռում առաջացրին և խաղացին զգացմունքների վրայ: Անհրաժեշտ էր հասկանալ, թէ ի՞նչ է կատարւում, յետոյ միայն գնահատականներ տալ**»:

Ապրիլի 26ին Կենտրոնական հեռուստատեսութիւնը ցուցադրեց Ղարաբաղի դէպքերին վերաբերւող մի կինոնկար, որ առնւազն հակահայկական չէր: Մի խօսքով կենտրոնական մամուլը Ղարաբաղի հարցում սպասողական դիրք բռնեց և հասկացնել տւեց, որ որոշումը դեռեւս վերջնական չի և ամէն ինչ կախւած է երկրի ընդհանուր կացութիւնից: Սակայն դա կենտրոնական մամուլն էր: Հայաստանում ամէն ինչ փոխւեց դէպի վատը: Հասարակական Կոմիտէները ցրւեցին, Պարոյր Հայրիկեանը ձերբակալւեց, մտաւորականութիւնը լռեց: Բանը նրան հասաւ, որ երբ ուսանողները հարցրին Կ. Դեմիրճեանին, թէ ինչո՞ւ է բանտարկւած Հայրիկեանը, Դեմիրճեանը հրապարակայնօրէն պատասխանեց «**նրան պէտք է գնդակահարել**»:

Սակայն հանգստութիւնը արտաքին էր, ներսից Հայաստանը եռում էր: Այսօր մենք ունենք Սիլվա Կապուտիկեանի նամակը ռուս մտաւորականներին, մենք գիտենք Հայաստանի Կինոստուդիայի բողոքի մասին, որը հրաժարուեց Բագուի կինովառատօնին մասնակցութիւնից. մենք գիտենք զանգւածային բողոքների և փաստօրէն Մայիս Մէկեան շքերթին վերջ տալու մասին, գիտենք Պարոյր Հայրիկեանին պաշտպանող ցոյցերի մասին և Համալսարանի բողոքների մասին՝ «**Հայրենիքի Ձայն**» թերթի դէմ, որը շինծու տեղեկութիւններ էր հաղորդել, թէ իբր համալսարանի ընդհանուր ժողովը դատապարտել է Հայրիկեանի գործունէութիւնը:

Բոլոր այդ երեւոյթները ցոյց են տալիս, որ Հայաստանի բնակչութեան զսպւածութիւնը բնական չէ, որ ժողովուրդին զսպողներ կան: Կարէն Դեմիրճեանի հրաժարեցումն ու փոխարինումը աղաղակող ապացոյցն են եռեւեփող կացութեան: Հարցի վճռումը անշուշտ պիտի գայ կուսակցական յատուկ խորհրդաժողովից՝ Յունիսի 28ին: Հէնց այդ նոյն խորհրդաժողովի ժամանակ էլ պարզ կը դառնայ Լեռնային Ղարաբաղի հարցը: Ոչ որովհետեւ այդ խորհրդաժողովում որոշւելու է երկրի ժողովրդավարացման հարցը: Եթէ ժողովրդավարները յաղթեն, ապա՝ Ղարաբաղի հարցն էլ դրական լուծում կը ստանայ:

Այսօր պահպանողականների և գորբաչեւեան թեւի միջեւ պայքարը հասել է գագաթնակէտին: Ժողովուրդը, վախենալով, որ Կենտկոմը կարող է նախքան խորհրդաժողովը պաշտօնազրկել Գորբաչեւին, նամակներ է յղում «**Պրաւդա**»յին, որ եթէ Կենտկոմը պաշտօնազրկի Գորբաչեւին անհրաժեշտ է երկրում կազմակերպել հանրաքւէ, քանզի Գորբաչեւը երկրի ղեկավարն է: Եւ այս նամակները հրատարակւում են խորհրդային մամուլում: Մնում է սպասել խորհրդաժողովին:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

1905 թւականի Դեկտեմբերի 12ին Ֆինլանդիայի Թոմերֆոս քաղաքում հաւաքւեցին Ռուսաստանի սոցեալ-դեմոկրատական կուսակցութեան 4րդ համագումարի պատգամաւորները: Համագումարը քննարկելու էր կուսակցութեան մարտավարութիւնը՝ արդէն սկսւած յեղափոխութեան մէջ: Սակայն պատգամաւորներից ոմանք ճանապարհին ձերբակալւել էին, ոմանք էլ երկաթուղու աշխատաւորների գործադուլի բերումով տեղ չէին հասել: Համագումարը բացելու համար պակասում էր պատգամաւորների անհրաժեշտ թիւը և, համագումարի փոխարէն, պատգամաւորները կազմակերպեցին խորհրդաժողով: Խորհրդաժողովի աշխատանքները տւեցին լաւ արդիւնք և հետագայում համագումարի կողմից հաստատւեց խորհրդաժողովներ անցկացնելու

կարգը: Խորհրդաժողովները անց են կացւում համագումարներից առաջ, երբ կուսակցութեան մէջ գոյութիւն ունեն տարակարծութիւններ: Կուսակցական խորհրդաժողովների վիճակագրութիւնը հետեւեալն է:

Առաջինը՝ 1905 թւականին, Թամերֆորս. քննարկւեց կուսակցութեան մարտավարութեան և բոլշեւիկների ու մենշեւիկների միասնութեան հարցը:

Երկրորդ՝ 1906 թւականին, Թամերֆորս: 2րդ Պետական դումայի ընտրութիւնների հարցը:

Երրորդ՝ 1907 թւականին, Կոտկա: 3րդ Պետական դումայի ընտրութիւններ:

Չորրորդ՝ 1907 թւականին, Հելսինգֆորս: Սոցեալ-դեմոկրատական ֆրակցիայի մարտավարութիւնը:

Հինգերորդ՝ 1908 թւականին, Փարիզ: Լեհ և հրեայ սոցեալ-դեմոկրատական կուսակցութիւնների հարցը:

Վեցերորդ՝ 1912, Պրակա: 15 հարցերի քննարկում:

Եօթներորդ՝ 1917, Պետրոգրադ: Լենինի ապրիլեան թեզերի քննարկումը:

Ութերորդ՝ 1919, Մոսկւա: Միջազգային հարցերի քննարկում:

Իններորդ՝ 1920, Մոսկւա: Լեհաստանի կացութիւնը:

Տասներորդ՝ 1921, Մոսկւա:Կոլտնտեսութիւնների և Կոմինտեռնների 3րդ համագումարի հարցը:

Տասնմէկերորդ՝ 1921, Մոսկւա: Տնտեսական հարցեր: Առաջին խորհրդաժողովն է, որին Լենինը ներկայ չէր:

Տասներկրորդ՝ 1922, Մոսկւա: Տնտեսական հարցեր և հակախորհրդային հոսանքների հարցը:

Տասներեքերորդ՝ 1924, Մոսկւա: Միջազգային հարցեր:

Տասնչորրորդ՝ 1925, Մոսկւա: Մէկ երկրում սոցիալիզմ կառուցելու հարցը:

Տասնհինգերորդ՝ 1926, Մոսկւա: Պայքար՝ Տրոցկիզմի դէմ:

Տասնվեցերորդ՝ 1929, Մոսկւա: Առաջին հնգամեակի հաստատման հարցը:

Տասնեօթներորդ՝ 1923 Մոսկւա: Երկրորդ հնգամեակի հարցը:

1934 թւականին կուսակցութեան 17րդ համագումարը որոշեց վերացնել խորհրդաժողովների կարգը, յաջորդ 18րդ համագումարը, որ տեղի ունեցաւ 1939 թւականին, վերականգնեց խորհրդաժողովների կարգը:

1941 թւականի Փետրուար ամսին գումարւեց վերջին 18րդ խորհրդաժողովը, որը քննարկեց զուտ տնտեսական հարցեր:

1952 թւականին, երբ տեղի ունեցաւ 19րդ համագումարը, խորհրդաժողովների կարգը կրկին ջնջւեց կուսակցութեան կանոնագրութիւնից:

1966 թւականին 23րդ համագումարը վերականգնեց խորհրդաժողովներ անցկացնելու կարգը, սակայն այդ խորհրդաժողովները այդպէս էլ չգումարւեցին:

Այս տարի տեղի է ունենալու 19րդ խորհրդաժողովը, որի պատգամաւորները ընտրուելու են գաղտնի քւէարկութեամբ, 3780 կուսակցականներից մէկ պատգամաւոր։ Խորհրդաժողովի ընդհանուր մասնակիցների թիւը կազմելու է մօտաւորապէս 5000 հոգի։ Խորհրդաժողովը իրաւունք ունի հիմնական փոփոխութիւններ կատարել Կենտկոմի կազմի մէջ։ Եթէ Գորբաչեւը կարողանայ յաղթական դուրս գալ այս խորհրդաժողովից, Խորհրդային Միութիւնում կարող են տեղի ունենալ լուրջ փոփոխութիւններ։ Իսկ Հայաստանը վերջապէս կ'ազատւի իր պահպանողական ղեկավարութիւնից և դուրս կը գայ այն անտանելի լճացումից, որը տիրում է մեր հայրենիքում, բոլոր բնագաւառներում։

1989

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ

Է. Յովհաննիսեան

Անկախութեան քաղաքականութիւնը – այսինքն՝ բոլոր այն գործողութիւնները, որոնք տանում են դէպի անկախութիւն – այսօր շատ աւելի կարեւոր է, քան որեւէ ժամանակ 1918 թւականից յետոյ, քանզի եօթը տասնամեակների ընթացքում անկախութեան գաղափարը, առաջին անգամ լինելով, բարոյական բնագաւառից տեղափոխւում է քաղաքական բնագաւառ ու պահանջում է մեզանից ոչ թէ ճառային, այլ լուրջ մօտեցում: Ափսո՛ս որ այդպէս է: Ափսո՛ս, որ մենք յիշում ենք անկախութեան մասին միայն այն պահերին, երբ ձեռք ենք բերում եղած կացութեան անբաւարար լինելու մասին խօսելու իրաւունքը: Կարծես թէ անկախութիւնը ոչ թէ բացարձակ արժէք է, այլ միայն անբաւարար կացութիւնից դուրս գալու միջոց: Եւ կարծես թէ անկախութեան ուղղութեամբ ոչինչ չէր կարելի անել, օրինակ, Բրեժնեւի ժամանակ: Բայց հաւանաբար մենք քաղաքական հեռուստատեսութեան պակաս ունենք, որը գալիս է մեր բարձր անհատականութիւնից: Այդ անհատականութեանը գոհունակութիւն են տալիս վառ և անմիջական արդիւնք տւող գործողութիւնները և մենք պատրաստ ենք զոհւելու, ինքնահիրկիզւելու և յեղաշրջումներ կատարելու ոչ այնքան ազգին ծառայելու, որքան որ ինքնահաստատւելու դրդումով: Ի՞նչ կարող ենք անել, եթէ այդպիսին ենք: Միայն մէկ բան՝ գիտակցել, որ ժողովրդի ճակատագիրը դարձրել են իրենց ինքնահաստատման դաշտը:

Եկէք սկսենք նրանից, ովքեր այսօր համարձակօրէն քննադատում են խորհրդային իշխանութիւնը և այդ իշխանութեան ամբողջ խայտառակ պատմութիւնը: Սրանց մէջ կան այնպիսիները, որոնք չգիտէին այդ խայտառակութիւնների մասին, իսկ այժմ իմացան, վրդովեցին ու քննադատեցին: Սա հիմնականում երկրի ներսում ապրող ռուսերին է վերաբերում, որոնցից շատերը իսկապէս որ չգիտէին, թէ որքան ամօթալի պատմութիւն ունի իրենց երկիրը: Հայերի մէջ այդպիսիներ չկան, ո՛չ երկրի ներսում և ոչ էլ արտասահմանում: Քննադատողների մէջ կան այնպիսիները, որոնք շատ լաւ գիտէին, թէ որքան կեղտոտ է խորհրդային իշխանութիւնը, բայց չէին քննադատում, որովհետեւ քննադատելու ազատութիւնը չունէին: Եւ, վերջապէս, կան քննադատողներ, որովհետեւ այսօր պէտք է քննադատել, այդպիսի հրաման է արձակւած և երէկւայ գովաբանողները այսօր առանց ամաչելու կանգնել են քննադատողների շարքին, իսկ նրանք՝ ովքեր սրանից 50 տարի առաջ էին ասում այն, ինչ այ-

սօր ասում են խորհրդային թերթերը, շարունակում են մնալ դաւաճանների շարքում, շնորհակալութիւն ստանալու փոխարէն։

Եթէ այս վերջին դասը, որը հրամանով քննադատում է և հրամանով գովաբանում, հրամանով ճանաչում և հրամանով հրաժարւում, հաշւի չառնենք (հաշւի առնել ամօթ կը լինէր), ապա մնացած քննադատները յիշեցնում են ֆուտբոլասէրներին։ Բայց ֆուտբոլասէր լինելը հեշտ է, ֆուտբոլ խաղալը դժւար։ Ճիշտ այնպէս, ինչպէս տասնեակ հազարաւոր ֆուտբոլասէրներ կոկորդները պատռելով մարզադաշտում քննադատում են այս կամ այն խաղացողին, ճիշտ այնպէս էլ թուղթ ու ժամանակ չխնայելով շատերը քննադատում են խորհրդային իշխանութեան անցեալն ու ներկան։ Այդ քննադատութիւնը որեւէ առարկութիւն չի առաջացնում։ Բայց ճիշտ այնպէս, ինչպէս տասնեակ հազարաւոր ֆուտբոլասէրների մէջ հազիւ թէ գտնուի մէկը, որ դաշտ եկած խաղացողներից աւելի լաւ խաղայ (եթէ խաղացողը, անշուշտ, Արարատ է, այլ ոչ թէ մեր բակի դպրոցական թիմը), ճիշտ այնպէս էլ բաւականին անօգնական են դառնում վարչակարգի քննադատողները և յեղափոխութիւն սիրողները, երբ նրանց քաղաքական դաշտ ես կանչում խաղալու։

Յիրաւի, քննադատելով ռուսներին և խորհրդային վարչակարգին, նրանք բոլոր չարիքներից ազատւելու համար առաջարկում են ձեռք բերել անկախութիւն։ Կարող է շատերին այս առաջարկութիւնը թւայ շշմեցուցիչ գիւտ, բայց դա նոյնն է, եթէ ֆութբոլի դաշտում լուրջ դէմքով բացատրես խաղացողներին, թէ յաղթելու համար անհրաժեշտ է հակառակորդի դարպասը որքան կարելի է շատ գնդակներ ուղարկել, իսկ սեփական դարպասը թողնել անխոցելի։ Բայց մենք գիտենք, որ մարզիչները իրենց խաղացողներին դա չեն քարոզում, այլ այն՝ թէ ինչպէս խոցել հակառակորդի դարպասը և թողնել անխոցելի սեփականը։ Քաղաքական գործիչն էլ պէտք է ոչ թէ անկախութեան առաւելութիւններից խօսի, այլ անկախութիւն ձեռք բերելու միջոցներից ու ճանապարհներից։

Տեսնենք թէ ի՞նչ է տւել մեզ այս հարցում մարդկութեան պատմութիւնը։ Այդ պատմութիւնը ուսուցանում է, որ անկախութիւն ձեռք բերելու համար մինչեւ այսօր եղել են երեք ճանապարհներ։

Առաջինը ամենապարզն է, բայց ամենադժւարը, դա զինեալ ապստամբութիւնն է։ Այս ճանապարհը մեզ համար չէ։ Նա՝ ում այս առիթով բացատրութիւններ են պէտք, պատկանում է դպրոցական թիմին, ուստի առանց որեւէ բացատրութիւնների կարող է փայտէ թրերով և անագէ զինւորներով պայքարել Հայաստանի անկախութեան համար։ Ա՛յդ թիմերից շատ կան թէ՛ Հայրենիքում և թէ արտասահմանում։ Սրանց ոչինչ բացատրել պէտք չէ, որովհետեւ սրանք աշխարհի ամենահիմաստուն մարդիկն են, չէ՞ որ երեխայ են։

Երկրորդ ճանապարհը՝ կամաց-կամաց անկախութիւն ձեռք բերելու ճանապարհն է, երբ տարբեր բնագաւառներում ձեռք բերուած ինքնուրոյնութիւնը՝ ի վերջոյ գաղութատէրին կանգնեցնում է փաստի առջեւ: Պարզւում է, որ իրական անկախութիւնը արդէն վաղուց գոյութիւն ունի և մնում է միայն այդ անկախութիւնը իրաւաբանօրէն ձեւակերպել: Այս հարցում հանրաքւէն կարող է կատարել իր դերը: Այդպէս անկախացան Աւստրալիան, Կանատան և շատ ուրիշներ: Հաւանաբար այս ճանապարհով կարող են գնալ խորհրդային հանրապետութիւնները և հէնց այդ ճանապարհի վրայ է, օրինակ, Լիտուան:

Վերջապէս կայ նաեւ երրորդ ճանապարհը, որը աւելի շուտ պատկանում է գաղութատէրին: Նա հասկանում է երկու բան. առաջինը՝ որ գաղութը իր վրայ ծանր է նստում և երկրորդը՝ որ իրենից պոկւած գաղութը ուրիշի ձեռքը չի ընկնի, այլ կարող է ինքնուրոյն գոյատեւել: Յիրաւի, ինչո՞ւ, պէտք է ռուսը ազատ արձակի, օրինակ, Մոլդաւիային, եթէ համոզւած է որ նա վաղը միանալու է Ռումանիային: Ինչպէս պիտի հրաժարւի Հայաստանից, եթէ համոզւած է, որ վաղը նա ընկնելու է Թուրքիայի ձեռքը: Սա արդէն ոչ թէ անկախութիւն տալ է, այլ սեփական պետութիւնը բաժան-բաժան անել է, որին չի գնայ անգամ աշխարհի ամէնաժողովրդավարական երկիրը: Ահա թէ ինչու անկախութեան պայքարը այսօր անկախութեան պատրաստւելու մէջ է: Անկախութիւն ձեռք են բերում միայն անկախութեանը պատրաստ ժողովուրդները:

Ուրեմն ո՞րն է անկախութեան քաղաքականութիւնը մեր օրերին և մեր ժողովուրդի համար: Հասարակական կեանքի բոլոր բնագաւառներում անկախութեան ծաւալում: Տնտեսութիւնը, մշակոյթը, արտասահմանի հետ կապերի հաստատումը, զինւորական ծառայութիւնը, խորհրդային Սփիւռքի հետ շփումները՝ այս ամէնը պէտք է կրեն զուտ հայկական բնոյթ, այսինքն բխեն հայկական շահերից: Ո՞վ և ինչպէ՞ս պէտք է այս ամէնը անի: Նա՝ ով կարող է գործել առանց աւելորդ աղմուկի և առանց սեփական փառասիրութեանը, բաւարարութիւն տալու ակնկալութեան, որովհետեւ այդ աշխատանքները փեթակ կառուցելու մեղւի, այլ ոչ թէ գեղեցիկ թիթեռնիկի աշխատանքն են: Այդ աշխատանքը պէտք է տարւի ազգային պատասխանատուութեամբ և ամենակարեւորը, ոչ թէ հակառակորդներին ատելու, այլ սեփական ժողովուրդը սիրելու սկզբունքով: Այս վերջինն էլ շատ կարեւոր է, որովհետեւ մենք ատում ենք թուրքին, ատում ենք ռուսին, ատում ենք վարչակարգը, ատում ենք բոլորին, բայց պահանջում ենք, որ բոլորը մեզ սիրեն, իսկ դա կարող է տեղի ունենալ միայն այն դէպքում, երբ մենք մեզ սիրենք ու պայքարենք ոչ թէ ուրիշների դէմ, այլ մեզ համար:

Վերցնենք, օրինակ, Արցախի Հարցը:

Համազգային այս շարժումը իր յեղափոխական վերելքով և ողբերգական հետեւանքներով ի վերջոյ նպատակ ունէր և ունի Արցախի միացումը Հայաստանին: Կասկած չկայ, որ դա կը լինէր պատմական արդարութեան վերականգնում, հողահաւաք ու ազգահաւաք և բարենպաստ պայմանների ստեղծում՝ ապագայ անկախ Հայաստան ստեղծելու համար: Սակայն, իմ կարծիքով, Արցախի խնդրի լուծման մէջ կարեւորը դա չէ: Յիրաւի, ենթադրենք, որ Արցախի և Հայաստանի միջեւ սահմանը ջնջուել է և Արցախը կցուել է Հայաստանին: Մի՞թէ դա կարող է նշանակութիւն ունենալ այն պահին, երբ քաղաքական ցնցումների բերումով կը ստեղծուեն Խորհրդային Միութեան կազմից դուրս գալու և անկախութիւն ձեռք բերելու պայմաններ: Մի՞թէ Սեւրի դաշնագրով նախատեսուած սահմանները որեւէ նշանակութիւն ունեցան ապագայ Հայաստանի սահմանների համար, կամ մի՞թէ Ռուսաստանին պատկանող Կարսը ու Իգդիրը չյանձնուեցին թուրքին, իսկ Նախիջեւանը ու Ղարաբաղը՝ Ադրբեջանին: Այդ ճակատագրական պահերին սահմանները որոշւում են սեփական ու դաշնակիցների ուժով, բայց երբեք գոյութիւն ունեցող սահմաններով և կամ էլ պատմական իրաւունքներով: Ուրեմն՝ անկախութեան համար շատ աւելի կարեւոր է, որ ճակատագրական պահին պայքարողների թիւը լինի բաւարար քան ինչ որ ձեւական սահմանների գոյութիւնը:

Այս իմաստով է կարեւոր Արցախի կցումը Հայաստանին, այսինքն՝ այն իմաստով, որ Արցախի հայութիւնը իր տնտեսական և հոգեկան սնունդը ստանայ Մայր Հայրենիքից և միշտ պատրաստ լինի պայքարելու Հայրենիքի անկախութեան համար: Բայց այս իմաստով մի՞թէ միայն Արցախի Հայութիւնը Հայրենիքից սնւելու կարիք ունի: Գրեթէ 1,5 միլիոն հայութիւն, Խորհրդային Միութեան տարբեր ծայրերում, արցախցիներից աւելի ծանր վիճակումն են: Եւ ահա առաջ է գալիս հայերի Հայաստանի հետ կապելու կարեւորագոյն խնդիրը, որը կարելի է նման առաջարկութիւն պաշտօնապէս ներկայացնել Սահմանադրական Յանձնաժողովին: Առաջարկութեան էութիւնը կարող է լինել հետեւեալը.- Խորհրդային Միութիւնում ապրող բոլոր հայերը համարւում են Հայաստանի քաղաքացիներ, հայ գիտնականները պատկանում են Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիային, հայ կոմունիստները, որտեղ էլ որ ապրեն, Հայ Կոմունիստական կուսակցութեան անդամներն են, Հայաստանի կրթութեան նախարարութիւնը կարող է որեւէ վայրում իր պիւտճէի հաշւին հայկական դպրոց բացել, իսկ մշակոյթի նախարարութիւնը՝ հայկական թատրոն: Մի խօսքով՝Խորհրդային Միութիւնում ապրող հայը սեփական կամքով կարող է ամբողջովին պատկանել Հայաստանին, ճիշտ այնպէս՝ ինչպէս Գերմանիային է պատկանում Ֆրանսիայում ապրող՝ գերմանացին: Անշուշտ, այս դրութիւնից կամաւոր կերպով կարող է հրաժարւել ամէն մի հայ և դառնալ

ռուս կամ վրացի, ինչպէս երբեմն ֆրանսացի են դառնում գերմանացիները կամ ռուսները։ Եթէ Խորհրդային Սահմանադրութիւնը նախատեսի նման կարգ, ապա ինքնաբերաբար կը լուծուեն ոչ միայն Արցախի, այլ շատ ուրիշ ազգային հարցեր։ Գուցէ այն ժամանակ ջնջուեն Նախիջեւանի և Ղարաբաղի, Ախալքալաքի և բոլոր ինքնավար միաւորների սահմանները և Անդրկովկասի հայերը ենթարկուեն Հայաստանին, ադրբեջանցիները՝ Ադրբեջանին, իսկ վրացիները՝ Վրաստանին։

Չգիտեմ, թէ որքանով նման ելքը հնարաւոր է և ընդունելի, բայց խօսքս այդ մասին չէ։ Ես պարզապէս ուզում եմ ասել, որ Անկախութիւն ձեռք բերելու համար անհրաժեշտ են ներքին անկախութիւն ձեռք բերած հայեր, որոնք իրենց ազգային սնունդը ստանում են Հայրենիքից և իրենց հերթին սնում են Հայրենիքը։ Այս ճանապարհով է, որ մենք պէտք է մշակենք անկախութեան մեր քաղաքականութիւնը, բայց միաժամանակ այդ քաղաքականութիւնը պէտք է լինի անկախ, ինչը նշանակում է, որ նա չպէտք է յարմարւի ոեւէ ուրիշի։ Այն՝ որ մեր քաղաքականութիւնը, հասարակական վարքագիծը և գաղափարախօսական կողմնորոշումները չպէտք է պարտադրուեն կամ գնուեն դրսից, հասկանալի է բոլորիս համար։ Որ այդ ամէնը պէտք է բխի մեր ազգային շահերից ու հիմնւի մեր ազգային արժէքների ու կարողութիւնների վրայ, նոյնպէս հասկանալի է, թէեւ յաճախ չի իրականացւում։ Բայց այն, որ մեր քաղաքականութիւնը չպէտք է յարմարուի ուրիշների քաղաքականութեանը, ո՛չ բոլորի համար է հասկանալի և մենք մեր ազգային կեանքի ներսում տեսնում ենք այդ սկզբունքի վտանգաւոր խախտումներ։

Ի՞նչ է նշանակում չյարմարւի ուրիշներին։ Դա նախևառաջ նշանակում է հրաժարւել այն կեղծ սկզբունքից, թէ անբարոյական ու բռնատիրական կայսրութիւնների փլուզումը ինքնըստինքեան բարոյականութիւն ու ազատութիւն է բերում նաեւ մեզ և կամ էլ՝ քայքայւած երկրում վերափոխութիւնները ինքնըստինքեան վերափոխութիւններ են բերում նաեւ մեզ։ Այս նոյնը վերաբերում է նաեւ դրական արժէքներին։ Այսինքն պէտք է հրաժարւել այն մտքից, որ եթէ աշխարհում կամ մեր երկրում ստեղծւեն լաւ վարչակարգեր, մեր վարչակարգն էլ ինքնըստինքեան կը լաւանայ։ Եթէ մենք չհրաժարւենք այս սկզբունքներից, ապա՝ կը նետւենք աշխարհում ընկերվարութիւն կառուցելու կամ համայնավարութիւն տապալելու, կայսրութիւններ քանդելու ու մարդու իրաւունքներ պաշտպանելու ճակատները, որտեղ պիտի գտնենք դաշնակիցներ և անխուսափելիօրէն յարմարեցնենք մեր քաղաքականութիւնը ընդհանուր նպատակի, որը իրականում ոչ մէկ հայկական խնդրի մէջ չի պարունակւում և ոչ մէկ հայկական խնդիր չի լուծւելու, նոյնիսկ եթէ ընդհանուր շարժումը հասնի իր նպատակին։

Ո՛չ Աբդուլ Համիտի, ո՛չ նացիզմի տապալումը հայ ժողովրդին ոչ միայն բան չտուեցին, այլեւ խլեցին մեզանից այն ամէնը, ինչ մենք ունէինք: Մինչդեռ հազիւ թէ գտնւի մէկ ուրիշ ազգ, որը այդքան եռանդուն կերպով մասնակցեց այդ տապալումներին: Իսկ այն, որ այսօր աշխարհում ստեղծւել են իրենց ժողովրդավարական կոչող բազմաթիւ երկրներ, որոնք սեփական ժողովուրդների համար իսկապէս որ ահագին ազատութիւններ են բերել, մեզ նոյնպէս ոչինչ չտուեց, որովհետեւ նրանցից և ոչ մէկը չի համարձակւում դատապարտել Հայկական Ցեղասպանութիւնը և, արդարութեան սկզբունքներից ելնելով, որեւէ ճնշամիջոց գործադրել Թուրքիայի վրայ: Ուրեմն մեզ ի՛նչ, թէ աշխարհում տեղի են ունենում դրական փոփոխութիւններ, եթէ նրանք ոչինչ են տալիս մեզ՝ հայերիս:

Բոլոր միասնական ճակատները, ինտերնացիոնալները, իրաւապաշտպան միութիւնները ու խմբերը մեզ համար դատարկ շարժումներ են, եթէ մենք չենք կարողանում նրանց օգտագործել մեր օգտին: Իսկ մենք չենք կարողանում ու չենք կարողանալու, որովհետեւ մեր ազգային նկարագրի համաձայն, և այդ շարժումների մէջ բարձրանում ենք ղեկավար դիրքերի վրայ, ապա՝ պապից պապական դարձած ընդհանուր շարժման շահերը սեփական ժողովրդի շահերից աւելի բարձր ենք դասում: Այդպիսին էին ժամանակին Շահումեանները, այդպիսին են այսօր Պարոյր Հայրիկեանները: Նրանք չէին կարող ու չեն կարող ծառայել հայ ժողովրդին, որովհետեւ ջանում են այդ ծառայութիւնը կատարել (գոնէ այդպէս են ասում) ընդհանուրից դէպի մասնաւոր տանող ճամբով, մինչդեռ իսկական յեղափոխութիւնը մասնաւոր յեղափոխութիւնների ամփոփումն է, նրանց գումարից ստեղծւած ամբողջութիւնը: Տարբեր ազգութիւնների համագործակցութիւնն է հէնց այդ ամբողջութիւնը ստեղծելու մէջ, բայց ոչ հակառակը: Մի խօսքով՝ լաւ շէնք կամ ընդհանուր տուն կառուցելու համար անհրաժեշտ են ամուր ու լաւ աղիւսներ ունենալ: Իսկ միջազգայնականները սկիզբից խախուտ աղիւսներից կառուցում են մի շէնք, որը վերջապէս քանդւում է, երբ նրա բնակիչները փորձում են շէնքի ներսում իրենց համար առանձին բնակարաններ կառուցել:

Եւ, վերջապէս, ինչպէս կարող ենք մենք մտածել մի ինչ որ միասնական տան մասին, երբ մեր ներսում միասնութիւնը բացակայում է: Միանանք ուրիշների հետ մեր ո՞ր հատւածով: Ահա թէ ինչու ուրիշների հետ միանալուց առաջ, մենք պէտք է կառուցենք մեր սեփական տունը, որը պէտք է լինի այնքան ամուր, որ չփլչի միջազգային ուժեղ քամիների ու փոթորիկների հարւածների տակ: Բայց արի ու տե՛ս, որ այդ տունը մենք չենք կարողանում կառուցել: Կարծես թէ Հայաստանում Եռագոյնը ճանաչելուց յետոյ, միասնութեան համար ստեղծւեցին որոշ պայմաններ: Բայց այդ պայմանները օգտագործելու

հասունութիւնը կարծես թէ չունենք։ Նրանք, ովքեր Եռագոյնը չէին ճանաչում չեկան ճանաչողների մօտ, և չասացին՝ թէ մենք սխալւում էինք։ Նրանք մեզ ասացին, որ մենք անօրինական կարգով խլել էինք այդ դրօշը մնացածներից։ **Իսկ Երեւանից եկած մի մտաւորական ինձ ասաց, թէ առաջ ինքը պարծանքով կրծքիս կրում էի այդ դրօշը, բայց երբ խորհրդային իշխանութիւնները ճանաչեցին այն, ես հանեցի իմ կրծքից այդ դրօշը, որովհետեւ նա այլեւս արժէքազրկւեց։**

Այս մօտեցումներից յետոյ էլ ի՞նչ միասնութիւն և ազգային ճակատ, ամէն ինչ մնաց իր տեղում։ Պայքարողները շարունակում են պայքարել, իսկ ընդդիմադիրները դիմադրել, որովհետեւ պայքարողների համար գլխաւորը՝ նպատակն է, իսկ ընդդիմադիրների համար նպատակ ընդհանրապէս գոյութիւն չունի, ընդդիմադրութիւնը ինքնարժէք է, ինքնահաստատման միջոց։

Մէկ դիտողութիւն եւս։ Երբ ես այս մտքերը վերջերս արտայայտեցի հրապարակայնօրէն Մոնտրէալում, «**Պայքար**» թերթը գրեց մի քննադատական յօդուած և պահանջեց ինձանից, որ ես ներողութիւն խնդրեմ իմ արտայայտութիւնների համար։ Ճիշտն ասած ես պատրաստ էի այդ ներողութիւնը խնդրելու ոչ թէ արտայայտւած մտքերիս, այլ որոշ կոպիտ արտայայտութիւններիս համար։ Սակայն յուլիս մէկին Երեւանի հեռուստատեսութեամբ ելոյթ ունեցաւ Զօրի Բալայեանը և հրապարակայնօրէն ներողութիւն խնդրեց ինձանից, որ ժամանակին ինձ վիրաւորել է, իր յօդւածներով։ Նա ասաց, որ 17 տարի ես գրել եմ այն, ինչ որ իրենք այսօր են գրում, ուստի պէտք է ինձ շնորհակալութիւն յայտնել և Հայրենիք հրաւիրել։ Այդ ներողութեանը ես սպասել էի 17 տարի։ Հետեւաբար Բալայեանի ելոյթը իմ մէջ ամրապնդեց այն համոզումը, որ իմ կոպիտ արտայայտութիւնների համար ներողութիւն պահանջելուց առաջ, «**Պայքար**»ը ի՛նք ներողութիւն պէտք է խնդրի տասնամեակների իր ուրացումների համար։

1989

ԱՐՑԱԽ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՇԻՒԱՐԿԻ ՓՈՐՁ

Է. Յովհաննիսեան

Արուեստագէտները ունեն մի սկզբունք, որը հաւանաբար արդարացի է, բայց ոչ միշտ իրականանալի: Այդ սկզբունքի համաձայն՝ արուեստը չպէտք է իջնի ժողովրդի մակարդակին, այլ պիտի ջանայ բարձրացնել ժողովուրդը արուեստի բարձրունքներին: Միշտ չէ, որ յաջողւում է այդ նպատակին հասնել: Փորձենք, օրինակ, մտնել ժամանակակից «մոդեռն» երաժշտութեան համերգի սրահը և ճչացող, իրենից դուրս եկող, սուլող ու տեղի վրայ պարող հանդիսատեսին քարոզել, թէ իրենք սխալ են հասկանում արուեստի իմաստը և թէ իսկական արուեստը Բեթհովէնն ու Մոցարտն են ու անհրաժեշտ է վերադառնալ նրանց: Այդ քարոզչին դուրս կ՚անեն սրահից և նա ստիպւած կը լինի առանձնանալու իր արուեստանոցում՝ գրելու համար այն երաժշտութիւնը, որը պիտի բարձրացնի հանդիսատեսին Բեթհովէնի մակարդակին:

Քաղաքական գործիչը առանձնանալու և դասական դիւանագիտութեան կանոններով գործելու հնարաւորութիւնը չունի: Նա պարտաւոր է միշտ ժողովրդի հետ լինել, ժողովրդի պահանջներին ու կարիքներին ծառայել, հակառակ դէպքում նրանից երես կը դարձնի ժողովուրդը ու դուրս կը նետի քաղաքական ասպարէզից՝ վարկաբեկելու, ահաբեկելու և կամ էլ չընտրելու ճամբով: Ուրեմն՝ ի՞նչ է մնում քաղաքական գործիչին, եթէ նոյնիսկ այդ զգացմունքները իշխում են տրամաբանութեան վրայ: Բայց եթէ այդպէս է, ուրեմն անհիմն են բոլոր այն մեղադրանքները, որ լսւում են մեր ժողովրդի տարբեր խաւերի մէջ, թէ մենք երբեք դիւանագէտներ չենք ունեցել, թէ մեր քաղաքական ճակատագիրը որոշել են ոչ թէ քաղաքական գործիչները, այլ բանաստեղծները ու կղերականները, թէ մենք արիաբար կռւել ենք պատերազմի դաշտերում, բայց միշտ պարտւել ենք դիւանագիտական ճակատներում: Կռւել ենք ու դիւանագիտութիւն ենք վարել մեր ժողովրդի կարողութիւնների սահմաններում և աշխարհի ամենափայլուն դիւանագէտները ոչ մի բան չէին կարող փոխել մեր ճակատագրում, եթէ ժողովուրդը մնար նոյնը: Պատահական չէ, որ դիւանագէտները չեն ընտրւում ժողովրդի կողմից, այլ նշանակւում են իշխանութիւնների կողմից, որպէսզի նրանք չյարմարւեն ժողովրդին, որի ձայներով պիտի ընտրւէին:

Այս հիմնական սկզբունքը խախտւած է հայկական կեանքում, քանզի ստեղծւած պայմաններում թէ՛ իշխանութիւնները, թէ՛ դիւանագէտները և թէ

գիտնականներն ու գրողները ստիպւած են յարմարւելու ժողովրդի հետ, եթէ չեն ուզում դուրս նետւել հայ հասարակական կեանքից։

Քաղաքականութեան մէջ գոյութիւն ունի նաեւ մէկ ուրիշ սկզբունք։ Քաղաքականութիւնն ու դիւանագիտութիւնը յենւում են դրական արժէքների վրայ, որոնք են ժողովրդի քաղաքական շահերը, բայց երբեք նրա զգացմունքների բաւարարութիւնը։ Ո՛չ սէրը և ոչ էլ ատելութիւնը՝ ռուսների, թուրքերի, խորհուրդների, Գորբաչեւի կամ Ռայիսա Գորբաչեւայի նկատմամբ չեն կարող դառնալ քաղաքականութիւն վարելու աղբիւրներ։ «**Թուրքերը ռուսներից լաւ են, ուրեմն պէտք է փոխել մեր քաղաքական դիրքորոշումը», «Ռայիսա Գորբաչեւան մահմեդական ծագում ունի, ուստի ազդում է Գորբաչեւի վրայ Արցախի հարցում», «Կոմունիստները տապալեցին մեր անկախութիւնը, ուստի նրանց հետ համագործակցելը դաւաճանութիւն է», «Միացեալ նահանգները ազգերի ու մարդկանց իրաւունքների պաշտպաններն են, ուստի մեզ էլ կը պաշտպանեն Արցախի հարցում», «Արցախը պատմականօրէն պատկանում է մեզ, ուրեմն թողնել այդ մարզը Ադրբեջանի կազմի մէջ անբարոյականութիւն է**»։ Բոլոր նման յայտարարութիւնները, նոյնիսկ եթէ նրանք ճիշտ են, ոչ մի կապ չունեն քաղաքականութեան հետ, որը ո՛չ բարոյականութիւն է ճանաչում, ո՛չ պատմական իրաւունքներ և ոչ էլ համակրանք կամ հակակրանք որեւէ ժողովրդի նկատմամբ։

Կայ քաղաքականութեան մէջ նաեւ մէկ ուրիշ սկզբունք, որը կապ ունի իշխանութեան և ընդդիմադրութեան փոխյարաբերութեան հետ։ Երբեմն ընդդիմադիր ուժերի դիրքը քաղաքական արժէքներ հրապարակ իջեցնելու համար աւելի նպաստաւոր է, քան իշխանութիւնների դիրքը, որոնք ի պաշտօնէ ունեն որոշ սահմանափակումներ։ Պատահական չէ, որ Սփիւռքում Հ.Յ.Դաշնակցութիւնը իր ձայները որպէս օրէնք տալիս է ընդդիմադիր կուսակցութիւնների թեկնածուներին, քանզի նրանք են, որ նախընտրական պայքարի ժամանակ առատ խոստումներ են տալիս Հայկական Հարցի լուծման վերաբերեալ։ Թէ՛ մենք և թէ նրանք քաջ գիտակցում ենք, որ եթէ թեկնածուն ընտրւի՝ ոչ մէկ բան չի անելու կառավարական դիրքերից, բայց այն հայանպաստ մթնոլորտը, որ ստեղծւում է նախընտրական պայքարի ժամանակ, հէնց այն բարոյական արժէքն է, որը յարմար պահին կարող է քաղաքական արժէք դառնալ։

Այսքանը նախաբան համարելով, ճամբայ ենք ընկնում՝ Արցախի հարցում քաղաքական հաշւարկի փորձ կատարելու մտադրութեամբ։

Թէ ինչպէ՞ս ստեղծւեց Արցախի հարցը և այն լարւած կացութիւնը, որը մինչեւ այսօր ցնցում է ամբողջ հայ ժողովրդին, մեզ բոլորիս քաջ յայտնի է։ Այնուամենայնիւ՝ եկէք պարզենք որոշ սկզբունքային հարցեր, որոնք անհրաժեշտ են հետագայ եզրակացութիւնների համար։ Նախևառաջ եկէք ձեւակերպենք

Արցախը Հայաստանին կցելու բուն նպատակը: Արցախի վերամիաւորումը Հայաստանի հետ անհրաժեշտ է մեզ՝ ապագայ Միացեալ ու Անկախ Հայաստան ստեղծելո՞ւ, թէ՞ Արցախի հայութեանը բնաջնջումից փրկելու և նրանց համար հայավարի ապրելու պայմաններ ստեղծելու համար: Հայերիս համար պատասխանը՝ յստակ է. նախ՝ երկո՛ւսն էլ և, յետոյ, այս երկու նպատակները իրարից դժւար է անջատել:

Բայց ո՞ր նպատակը մենք պէտք է ներկայացնենք քաղաքական աշխարհին:

Բացի դրանից, եթէ օրերից մի օր, քաղաքական պայմանների բերումով, Հայաստանի անկախութիւնը օրակարգի հարց դառնայ, ապա Խորհրդային Միութեան համար ճգնաժամային այդ պահին անկախութիւն ձեռք բերող ժողովուրդների պետական սահմանները կ՚որոշուեն ոչ թէ գոյութիւն ունեցող սահմաններով, այլ քաղաքական ուժերի դասաւորութեամբ, միջազգային ընդհանուր կացութեամբ և, ի հարկէ, մեր սեփական ուժերով ու մեր նկատմամբ ուրիշների վստահութեամբ: Եթէ նախկին սահմանները որեւէ նշանակութիւն ունենային նոր սահմաններ գծելու հարցում, ապա մենք այսօր պիտի ունենայինք Սեւրի դաշնագրով նախատեսւած սահմանները, որոնք ճանաչել էին հէնց թուրքերի կողմից: Բայց մենք տեսանք, թէ ի՛նչ մնաց այդ սահմաններից Լօզանում և ինչ դիրք բռնեցին մեր նկատմամբ հէնց մեր դաշնակիցները: Հակառակ դրան, Կիպրոսում ապրող թուրքերը չունէին ո՛չ սահմաններ և ո՛չ էլ հանրապետութիւն, բայց քաղաքական ուժերի դասաւորման բերումով, այսօր էլ թրքական զօրքերի ներխուժման բերումով, նրանք կազմելով կղզու բնակչութեան 20 տոկոսը, գրաւել են Կիպրոսի մէկ երրորդ մասը, այն էլ ամենալաւ հողերը և հռչակել թուրքական հանրապետութիւն: Եւ ոչ մէկ ժողովրդավար երկիր, Միացեալ Ազգերի Կազմակերպութիւն ու Եւրոպական պառլամենտ մատը մատին չխփեցին՝ այդ անարդարութեանը վերջ տալու համար:

Ուրեմն մեր ապագայ սահմաններն էլ կ՚որոշուեն ոչ թէ այսօրւայ սահմաններով, այլ շատ ուրիշ գործօններով և առաջին հերթին մեր քաղաքական կարողութիւններով: Ահա թէ ինչո՛ւ, այսօր, Արցախի վերամիաւորումը Հայաստանի հետ մենք պէտք է հիմնաւորենք արցախցիների ազգային իրաւունքները պաշտպանելու նպատակով:

Այժմ Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհրդի որոշումը կայացած է և մենք դժգոհ ենք այդ որոշումից, որովհետեւ չենք հաւատում աղրբեջանցիներին: Ի՞նչ կարելի է անել ստեղծւած պայմաններում: Ամենաբնական եզրակացութիւնը այն է, որ մենք պէտք է ստիպենք կենտրոնական իշխանութիւններին, որպէսզի նրանք վերանայեն իրենց որոշումը: Բայց ի՞նչպէս, հաւանաբար կենտրոնական իշխանութիւնների վրայ պէտք է ճնշումներ գործադրւեն, ո-

րոնք սկզբունքօրէն կարող են լինել բարոյական, տնտեսական և մարտական։ Բարոյական ճնշումները ոչ մէկ արդիւնք չեն տալիս նոյնիսկ ամենաժողովրդավարական երկրներում, այսինքն՝ այնտեղ, որտեղ երկրի ղեկավարները ընտրւում են ժողովրդի ձայներով և հասարակական կարծիքի ճնշման տակ։ Իսկ Խորհրդային Միութիւնում բարոյական ճնշումները կարող էին որոշ արդիւնքների հասցնել, եթէ կրէին համաժողովրդական բնոյթ։ Եթէ, օրինակ, խորհրդային բոլոր ժողովուրդները և առաջին հերթին ռուս ժողովուրդը ոտքի ելնէր ու Արցախի անկախութիւնը պահանջէր։ Բայց այդ բանը տեղի չունեցաւ, իսկ հայկական բողոքի ցոյցերին աղրբեջանցիները պատասխանում են նոյնպէս ցոյցերով և մեր բարոյական ճնշումը չեզոքացնում է նրանց ճնշումով։ Որոշ ազդեցութիւն կարող էին ունենալ հայկական ցոյցերը, եթէ արտասահմանի ժողովրդավարական պետութիւնները յստակօրէն կանգնէին մեր կողքին և դատապարտէին խորհրդային իշխանութիւնների որոշումը։ Սակայն Միացեալ Նահանգների պետական քարտուղար Բէյկերը Նոյեմբերի 30ին յայտարարեց, որ Միացեալ Նահանգները կ'առարկէին, եթէ խորհրդային իշխանութիւնները ուժ գործադրէին խաղաղ ցուցարարների դէմ, բայց չեն դատապարտի ուժի գործադրումը ազգամիջեան բախումներին վերջ տալու հարցում։ Նա ասաց, որ հայերի ու աղրբեջանցիների բախմանը վերջ տալու հարցում ուժի գործադրումը արդարացւած կը լինի։ Հասկանալի է, որ տնտեսական ճնշումն էլ ոչ մէկ նշանակութիւն չի կարող ունենալ, և հնարաւոր գործադուլները ի վերջոյ նոյնպէս կրելու են բարոյական, բայց ոչ տնտեսական ճնշումի բնոյթ։ Ինչ վերաբերում է մարտական գործողութիւններին, ապա եթէ նրանք պէտք է ուղղւած լինեն կենտրոնական իշխանութիւնների դէմ, լուրջ քննարկման առարկայ չեն կարող դառնալ։ Անշուշտ, խօսքը ինքնապաշտպանութեան մասին չէ, որը անհրաժեշտ է, բայց որը ուղղւած է ոչ թէ բանակի, այլ մեզ վրայ յարձակւող աղրբեջանցիների դէմ։ Ուրեմն մնում է միայն մէկ ճանապարհ՝ կատարւած փաստի առջեւ կանգնեցնելու ճանապարհը։

Այդ ճանապարհից փայլուն կերպով օգտւեցին արցախցիները, երբ իրենց յայտարարեցին անկախ միութենական տարածութիւն և ընտրեցին սեփական Ազգային Խորհուրդ։ Անշուշտ, նրա իշխանութիւնը չտարածւեց ու չէր կարող տարածւել Արցախի աղրբեջանական բնակչութեան վրայ, բայց Արցախը Խորհրդային Իշխանութիւններին կանգնեցրեց Աղրբեջանից անկախ լինելու փաստի առջեւ։ Պաշարումը եղաւ այդ քայլի պատասխանը։ Արցախը կարողացաւ և մինչեւ այսօր կարողանում է դիմադրել բոլոր ճնշումներին։ Բայց ահա վրայ հասաւ ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի վերջին որոշումը, որը տակնուվրայ արեց ամբողջ կացութիւնը։

Այստեղից էլ սկսւում է քաղաքական հաշւարկը, որը պէտք է պատասխանի առնւազն հետեւեալ հարցերին։

1.- Կա՞յ հնարաւորութիւն և միջոց ստիպելու համար Գերագոյն Խորհրդին՝ վերանայելու իր որոշումը։

2.- Եթէ նման միջոցները բացակայում են և մնում է միայն կատարւած փաստի առջեւ կանգնելու ճանապարհը, ե՞րբ և ի՞նչ ձեւի տակ պէտք է դիմել այդ վերջին քայլին։

3.- Ո՞վ պէտք է նախաձեռնի այդ քայլը։

4.- Ինչպիսի՞ պատասխան-քայլերի կարող է դիմել հակառակորդը։

5.- Ի՞նչ դեր ունեն կատարելու Հայաստանի պաշտօնական իշխանութիւնները, խորհրդային և արտախորհրդային Սփիւռքի հայութիւնը և յատկապէս Հ.Յ.Դաշնակցութիւնը։

Փորձենք պատասխանել այս հարցերին։

Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհուրդը սկզբունքով այլեւս Արցախի հարցը չի քննարկի, քանզի նրա վերջին որոշումը կայացւեց Սումգայթից, տասնեակ ուրիշ արիւնալի դէպքերից, պաշարումից, զինեալ բախումներից, զօրավարներ պատանդ վերցնելուց, բողոքի ցոյցերից, հացադուլներից, գործադուլներից և Արցախը անկախ յայտարարելուց յետոյ։ Իշխանութիւնների վրայ դրանից աւելի մեծ ճնշում գործող մթնոլորտ այլեւս անկարելի է ստեղծել։ Այն էլ այն պայմաններում, երբ ամբողջ երկիրը խարխափում է տնտեսական ճահճի մէջ, իսկ Արեւելեան Եւրոպայում քանդւում են Բեռլինի պատերը, բացւում են սահմանները և մէկը միւսի յետեւից կոմունիստները զիջում են իրենց դիրքերը։ Այս պայմաններում Արցախի հարցով նորից զբաղւելը խորհրդային իշխանութիւնների համար մեծ շռայլութիւն կը լինէր։ Իսկ ստեղծել այնպիսի անելանելի կացութիւն, որ իշխանութիւնները, այնուամենայնիւ, ստիպւած լինեն կրկին վերադառնալու այդ հարցին, գրեթէ անկարելի է։ Եթէ նոյնիսկ հրաշքով նման պայմաններ ստեղծւէին, խորհրդային իշխանութիւնները զէնքի ուժով անմիջապէս կը շտկէին ստեղծւած կացութիւնը։

Այդ ի՞նչ հզօր ճնշում պիտի մենք գործադրենք Գորբաչեւի վարչութեան վրայ, որ նրա համար Արցախի քաղաքական կշեռքի հայկական նժարը ադրբեջանական նժարից աւելի ծանր կշռի։ Ադրբեջանական նժարի վրայ է Թուրքիայի հզօր դիւանագիտական և այլ տեսակի ճնշումը, նախընթացի առջեւ սարսափը, ադրբեջանցիների վայրագութիւնները, հակագորբաչեւեան թեւի ճնշումը, երկրի Սահմանադրութիւնը, Արտաքին Գործերի նախարարութեան և զինւորականների ճնշումը։ Իսկ հայկական նժարի վրայ կան միայն բարձր բարոյական արժէքներ, ինչպիսիք են՝ արդարութիւնը, պատմական իրա-

տունքները, ինքնորոշման իրաւունքը, ժողովրդի կամքը և այլն։ Սրանք, սակայն քաղաքականութեան մէջ ոչ մէկ նշանակութիւն չունեն։

Այնուամենայնիւ, «**Սովետսկայա Ռոսսիա**» թերթը, յենւելով Հայաստանի Կենտկոմի առաջին քարտուղար Յարութիւնեանից և Գերագոյն Խորհրդի երեսփոխան Հենրիկ Պօղոսեանից ստացւած տեղեկութիւնների վրայ, հաղորդում է որ Գերագոյն Խորհրդի երկրորդ նստաշրջանի աւարտից յետոյ տեղի է ունենալու յատուկ նստաշրջան, որը նւիրւած է լինելու Արցախի հարցին։ Սա նշանակում է որ այն բարոյական և այլ տեսակի ճնշումները, որոնք գործադրւում են Արցախի բախմանը՝ մասնակցող կողմերի կողմից, դեռեւս մտահոգութիւն է պատճառում խորհրդային իշխանութիւններին և նրանք պատրաստ են եւս մէկ անգամ անդրադառնալու այս հարցին։ Դժւար է այդ նիստից որեւէ դրական արդիւնքի սպասել, հաւանաբար այդ նիստում կը կատարւեն սպառնալիքներ, բայց փաստը մնում է փաստ, հարցը կրկին քննարկւելու է։ Գուցէ սա նշանակում է, որ կատարւած փաստի առջեւ կանգնելու ճանապարհը ներկայ պայմաններում ամենաճիշտ ճանապարհն է։ Այստեղ միայն կարելի է կասկածել մէկ բանի մէջ, ինչո՞ւ այդքան արագ մենք դիմեցինք այդ ճանապարհին։ Ամենալուրջ ու փորձւած պետութիւնների արտաքին գործերի նախարարութիւնները, որեւէ որոշում կամ առաջարկութիւն ստանալիս, յայտարարում են թէ իրենք ուսումնասիրում են որոշումը։ Եւ իսկապէս շաբաթներով ուսումնասիրում են, խորհրդակցում դաշնակիցների, զինւորականների, տնտեսագէտների հետ, որից յետոյ միայն կայացնում են իրենց ոչ վերջնական որոշումը։

Իսկ մենք, գրեթէ նոյն օրը կայացրինք մեր որոշումը։ Մինչդեռ ուսումնասիրելու բան շատ կար։ Մենք պէտք է ուսումնասիրէինք ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի որոշման ամէն մի կէտը ու տեսնէինք, թէ ինչպէս կարող են օգտագործել նրանք մեր նպատակների համար։ Նշենք միայն, որ եթէ բոլոր այդ կէտերը իրականացւէին, ապա Արցախի հայութեան պահանջները բաւարարւած կը լինէին։ Չէ՞ որ առայժմ մենք նրանց ճակատագրի մասին ենք մտածում, բայց ոչ սահմանների փոփոխութեան։

Ուրիշ բան, որ մենք չենք հաւատում աղրբեջանցիներին, և մեր իրական բողոքը նրանց դէմ է, այլ ոչ թէ Գերագոյն Խորհրդի։ Եթէ մենք մի քիչ էլ սպասէինք, ապա շատ շուտ աղրբեջանցիները կը հակադրւէին Գերագոյն Խորհըրդի որոշմանը և մենք քաղաքական առաւելութիւն կը ստանայինք այս արտակարգ նիստի ժամանակ։ Մենք կը լինէինք Գերագոյն Խորհրդի որոշումից օգտւողները, իսկ նրանք հակառակորդները։ Եւ այն սպառնալիքները, որ ենթադրաբար պիտի տեղի ունենան արտակարգ նիստում՝ կը լինէին աղրբեջանցիների, բայց ոչ մեր հասցէին։

Ադրբեջանի ժողովրդական ճակատը արդէն պատրաստ էր Ադրբեջանի անկախութեան պահանջ ներկայացնելու միամիտ քայլին (երանի թէ անէր), բայց Թուրքիայից եկող իմաստուն խորհուրդները զսպեցին նրան և Ադրբեջանը ոչ միայն ողջունեց Գերագոյն Խորհրդի որոշումը, այլեւ ստեղծեց յատուկ յանձնաժողով՝ Արցախի հարցով զբաղուելու համար: Այժմ նրանք կանգնած են Գերագոյն Խորհրդի կողքին, իսկ մենք հակառակ կողմը: Հայաստանի Գերագոյն Խորհրդի որոշումը այնքան արագ կայացուեց, որ Հ.Յ.Դաշնակցութիւնն էլ իր հերթին ստիպւած եղաւ արագ կարգով ողջունել Միացեալ Հայաստան ստեղծելու որոշումը, որովհետեւ չէր կարող չկանգնել իր ժողովրդի կողքին և որովհետեւ Միացեալ Հայաստանի գաղափարը անբաժանելի մասն է այն տեսլականին, որի համար ծնւել է Հ.Յ.Դաշնակցութիւնը և որի համար պայքարել է իր ամբողջ պատմութեան ընթացքում: Սակայն եթէ ուշադիր ուսումնասիրենք Դաշնակցութեան յայտարարութիւնը այս որոշման նկատմամբ, ապա կը տեսնենք, որ նա չի բացառում կենտրոնական իշխանութիւնների ու ադրբեջանցիների դիմադրութիւնը: Ուրեմն՝ որոշման ողջունումը կրում է սկզբունքային, բայց ոչ քաղաքական բնոյթ: Քաղաքական բնոյթ կրող յայտարարութիւնը կարող է կառուցւել միայն այն բանից յետոյ, երբ պարզ կը դառնայ, թէ կարո՛ղ ենք մենք դիմադրել հնարաւոր ճնշումներին:

Իսկ եթէ որոշումը սկզբունքային բնոյթ էր կրում, լա՞ւ չէր լինի, որ այդ յայտարարութիւնը արւէր, օրինակ ՀՀՇի, այլ ոչ թէ պաշտօնական մարմինների կողմից: Եթէ միեւնոյն է, յայտարարութիւնը մնալու է թղթի վրայ և մենք որոշումը իրականացնելու ուժը չպիտի ունենանք, ինչո՞ւ զուր տեղը պաշտօնական իշխանութիւններին դնել այլախոհական վիճակի մէջ: Եթէ ներկայ իշխանութիւնները պաշտօնազրկւեն և նրանց տեղը գրաւի, օրինակ ՀՀՇի ղեկավարութիւնը, մի՞թէ այս վերջիններս աւելի բան պիտի կարողանան անել: Եթէ այո՛, ապա խօսելու տեղ չունեմ:

Ադրբեջանցիները հիանալի դասաւորել են իրենց ուժերը: Ժողովրդական ճակատը գործում է որպէս կառավարութիւն, իսկ պաշտօնական կառավարութիւնը՝ գառնուկի կերպարանք ընդունելով՝ զեկուցում է Մոսկւային, թէ ինքն ի՛նչ կարող է անել, եթէ ժողովուրդը «ճակատի» հետ է: Իսկ հրապարակայնութեան պայմաններում, ինչպէ՞ս կարելի է ճնշում գործադրել ժողովրդի վրայ: Իսկ մենք ստիպում ենք, որ մեր կառավարութիւնը կանգնի տապալելու վտանգի առջեւ, ինչպէս ժամանակին տապալեց Զարուբեանը և, փոխարէնը, Քոչինեանը եկաւ:

Ինչպիսի՞ հարւածների կարելի է սպասել: Կարծում եմ, որ ադրբեջանցիներին կը միանան խորհրդային զօրքերը: Եթէ նախկինում նրանք չէզոքի և հաշտարարի դեր էին կատարում, ապա ներկայումս նրանք կը բռնեն ադրբեջան-

ցիների կողմը, որոնք իրենց հերթին ձեւականօրէն բռնել են Գերագոյն Խորհըրդի որոշման կողմը։ Ի՞նչպէս պէտք է դիմադրենք այդ հարւածներին։ Միայն միասնական ուժերով։ Դիմադրութեան ռազմավարութիւնը չի կարող մշակւել առանց Սփիւռքի, առաւել եւս առանց Հ.Յ.Դաշնակցութեան։ Իմ այս գրութիւնը մտածումներ են, քաղաքական հաշւարկի փորձ, բայց ոչ մարտավարութիւն, որը մշակելու համար անհրաժեշտ են շատ ուրիշ տւեալներ, քան մենք ունենք մեր ձեռքի տակ։

1990

ԵԹԷ ՈՒԶՈՒՄ ԵՆՔ ԼԻՆԵԼ

Է. Յովհաննիսեան

Ասում են, թէ ճշմարտութիւնը ձեռք է բերւում տառապանքների ճամբով: Գուցէ դա իսկապէս այդպէս է, բայց հաւանաբար տառապանքը ճշմարտութիւն գտնելու անհրաժեշտ, սակայն ոչ բաւարար պայմանն է: Տառապանքը միայն ստեղծում է ճշմարտութիւն ձեռք բերելու ձգտում, իսկ որոնողը և գտնողը մարդիկ են ու ժողովուրդներ: Մենք արդէն շատ ենք տառապել՝ ճշմարտութիւնը վերջապէս գտնելու և նրանով ղեկավարուելու համար: Եթէ ուզում ենք **«լինել»**, ապա նախքան **«ժամանակակից աշխարհ»** կոչւող ովկիանոսը նետուելը, մենք պէտք է լողալ սովորենք ու ստորերկրեայ հոսանքները ճանաչենք, որպէսզի չկործանուենք առաջին իսկ փոթորիկի հարուածներից: Առայժմ համաշխարհային ովկիանոսը տաշեղի պէս նետում է մեզ մէկ կողմից միւսը և առայժմ առագաստ բարձրացնող չկայ:

Մենք չենք կասկածում, որ ի վերջոյ առագաստ բարձրացնողը, կամ բարձրացնողների մէջ գլխաւոր դերակատարը Հ.Յ.Դաշնակցութիւնն է լինելու, սակայն հայկական մեր նաւակում գտնւում ենք բոլորս, ուստի նաւաստիներին օգնելու համար մենք բոլորս պիտի ըմբռնենք այն ճշմարտութիւնները, որոնցով արդէն վաղուց ղեկավարւում են ուրիշ ժողովուրդներ:

Մենք ապրում ենք այս աշխարհում, Ռուսաստանի կազմի մէջ, շրջապատուած հակառակորդներով ու մրցակիցներով, Հայաստան կոչւող երկրում, որը ունի իր պատմութիւնը և պատմութեան փիլիսոփայութիւնը, որտեղից էլ մենք ժառանգել ենք մեր ազգային նկարագիրը, աւանդութիւնները և հաւատքը:

Մենք ուզում ենք պահպանել մեր ազգային արժէքները, պաշտպանուել մեզ ոչնչացնելու ոտնձգութիւններից, իսկ հարկ եղած դէպքում՝ անցնել յարձակման ու պարտադրել մեր կամքը հակառակորդներին: Այս նպատակին հասնելու համար, մենք պէտք է կողմնորոշուենք աշխարհում, այսինքն՝ պարզենք նրա ընդհանուր ուղղութիւնը: Մենք պէտք է մեզ էլ լաւ ճանաչենք, որպէսզի մեզանից աւելի մեծ քար չվերցնենք, ինչը չխփելու նշան է:

Եթէ մենք ուզում ենք մշակել մեր անելիքների ծրագիրը, նախևառաջ անհրաժեշտ է գտնել այն սիւները, որոնց վրայ պէտք է պառկի մեր ազգային դաւանանքը: Եթէ այդ սիւները յաւերժ էլ չեն, ապա գոնէ չեն էլ ծռւում ու քայքայւում տարբեր քաղաքական քամիների ազդեցութեան տակ: Եթէ մեզ յաջողւի ստեղծել այդպիսի մի վարդապետութիւն, ապա ժողովուրդը կարող է ղեկավարուել նրանով, մինչեւ քաղաքական և հասարակական նպատակներին

հասնելը: Այդ նպատակների ձեւակերպման մասին չէ խօսքը, քանզի նրանք արդէն վաղուց ձեւակերպւած են մեր ժողովրդի և յատկապէս Հ.Յ.Դաշնակցութեան կողմից:

Փորձենք գտնել այն սիւները, որոնց վրայ պէտք է կառուցւի մեր ռազմավարութիւնը:

ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ

Առաջին սիւնը կամ սկզբունքը՝ անկախութեան և ազատութեան փոխյարաբերութիւնն է, որի մասին ոչ միայն շատ քիչ ենք խօսում, այլեւ յաճախ շփոթում ենք այս երկու հասկացութիւնները: Այն, որ ազատութիւնը և անկախութիւնը տարբեր բաներ են, Հ.Յ.Դաշնակցութիւնը արձանագրել է Հայ Դատի վերջնանպատակ կազմող «Ազատ, Անկախ, Միացեալ Հայաստան» բանաձեւի մէջ: Եթէ Հայաստանը պէտք է լինի թէ՛ ազատ և թէ՛ անկախ, ապա ինքնաբերաբար մենք ընդունում ենք, որ Հայաստանը կարող է լինել անկախ, բայց ոչ ազատ և կամ էլ ազատ, բայց ոչ անկախ:

Չնայած նրան, որ այս տրամաբանութիւնը շատ յստակ է, Հայաստանում յաճախ կարելի է լսել այսպիսի արտայայտութիւններ. **«Մենք անկախութիւն ենք պահանջում, որովհետեւ ուզում ենք ազատ լինել»**: Մինչդեռ, ինչպէս ասացինք, անկախութիւնը և ազատութիւնը տարբեր բաներ են:

Միացեալ Ազգերի Կազմակերպութեան մէջ մտնում են 162 անկախ պետութիւններ, բայց նրանցից միայն 28ն են ազատ: Ափրիկեան մայրցամաքում կան 55 անկախ պետութիւններ, բայց նրանցից միայն մէկը՝ Բոսվանիան ազատ է: Եւ հակառակը, Քանադայի Քիւբեկը, կամ Հիւսիսային Իրլանդիան անկախ չեն, բայց ազատ են:

Բայց եկէք պարզենք, թէ ազատութեան և անկախութեան փոխյարաբերութեան մէջ ո՞րն է առաջնակարգը: Այսինքն փորձենք պարզել՝ ազատութի՞ւնն է ստեղծում անկախութիւնը, թէ՞ անկախութիւնը ազատութիւն ձեռք բերելու անհրաժեշտ պայմանն է: Հաւանաբար, այստեղ, կարելի էր ցուցաբերել այն նոյն համադրական մօտեցումը, որը մենք ունենք կեցութեան և գիտակցութեան փոխ-յարաբերութեան մէջ: Այսինքն՝ գիտակցութիւնը որոշւում է կեցութեամբ, իսկ կեցութիւնը՝ գիտակցութեամբ: Մեր խնդիրն էլ կարելի էր լուծել այս ճանապարհով, ընդունելով՝ որ անկախութիւնը ստեղծում է ազատութիւն ձեռք բերելու պայմաններ, իսկ ազատութիւնը նպաստում է անկախութեան ձեռք բերմանը: Այս եզրակացութիւնը, անշուշտ, ճիշտ է, բայց ազատութիւնը իր բնական սահմաններում բացարձակ արժէք է, մինչդեռ անկախութիւնը ազատութիւն ձեռք բերելու միջոց է: Եթէ մեր ազգային ու մարդկային նպատակներին կարելի է հասնել ուրիշ ճանապարհով, ապա ժամանակաւոր կամ նոյ-

նիսկ ընդմիշտ կարելի է հրաժարուել անկախութիւնից: Բայց հաշւի առնելով, որ պատմութեան ընթացքում ոչ մէկ ազգ իր նպատակներին չի հասել առանց անկախութիւն ձեռք բերելու, մենք ոչ միայն չենք հրաժարւում անկախութիւնից, այլ դարձրել ենք այն մեր նպատակներից մէկը: Բայց դրա հետ միասին մենք չպէտք է մոռանանք, որ կարեւորը, առաջնակարգը ազատութիւնն է, այսինքն՝ այնպիսի պայմանների ստեղծում, որտեղ երեւանցին, արցախցին, Մոսկւայի հայը՝ ամբողջ ազգը կարողանայ ապրել իր ազատ կամքով, որտեղ պաշտպանւած լինեն նրա ազգային իրաւունքները: Այս մօտեցումը մենք պէտք է ունենանք մեր բոլոր քաղաքական հարցերի լուծման ժամանակ: Եթէ մենք պիտի ընտրենք, թէ ո՞ւմ իշխանութեան տակ պէտք է, օրինակ, ապրեն արցախցիները՝ Բաքւի՞, Մոսկւայի՞, թէ՞ Երեւանի, կամ գուցէ ամբողջովին անկախ, դա պէտք է որոշւի այն սկզբունքից, թէ որտեղ նրանք աւելի ազատ կը լինեն: Նոյն վերաբերմունքը մենք պէտք է ունենանք ամբողջ Հայաստանի վերաբերեալ, ո՞րտեղ նա աւելի ազատ կը լինի, Ռուսաստանո՞ւմ, թէ Ռուսաստանից դուրս: Սփիւռքից հայութիւնը Հայաստա՞ն տեղափոխել, թէ՞ թողնել որ նա առայժմ մնայ սփիւռքի աւելի ազատ պայմաններում:

Այստեղ կայ նաեւ մէկ ուրիշ հարց: Քանակով փոքր ժողովուրդների համար, որոնք ի վիճակի չեն միջազգային կացութիւններ ստեղծելու, անկախութեան ճանապարհը անցնում է ազատութեան միջով: Միայն ազատ ժողովուրդները կարող են անկախութիւն ձեռք բերել, ուստի մեր ճանապարհը պիտի լինի ազատութիւնից դէպի անկախութիւն: Ներքին ազատութիւնից զուրկ ժողովուրդներին ուրիշները կարող են անկախութիւն շնորհել, բայց այդ ազատութիւնը հարկ եղած դէպքում նրանցից կը խլւի: Մինչդեռ ազատ կամքով, ազատ ժողովրդի կողմից ձեռք բերւած անկախութիւնը յաւերժ է: Ահա թէ ինչու, հանգրւանային մեր մօտեցման մէջ, մենք պէտք է սկզբից Հայաստանին ազատութիւն տանք, ապա մտածենք անկախութեան մասին: Մինչդեռ Հայաստանում այսօր տեղի է ունենում ճիշտ հակառակը՝ մարդիկ տարւել են անկախութեամբ, առանց ազատութիւն ձեռք բերելու: Աւելին, Հայաստանի Համազգային Շարժումը փետրւարի 10ին անկախութեան ձգտող բոլոր հանրապետութիւններին կոչ արեց, համատեղ պայքար սկսել Խորհրդային Միութեան Կոմկուսի դէմ: Այսինքն՝ մենք հայերս առանց սեփական ազատութիւն ձեռք բերելու արդէն ընդհանուր ճակատ ենք կազմում բոլոր ժողովուրդների ազատութեան համար: Դէ՛, ինչո՞ւ չէ, մենք միշտ առաջինն ենք, այստեղ էլ առաջինը լինենք:

ԱՇԽԱՐՀԸ

Երկրորդ սիւնը՝ աշխարհում մեզանից անկախ տեղի ունեցող ընթացքների հետ քայլ պահելն է: Այդ ընթացքները ճանաչելու և նրանց հետ հաշւի նստելու

համար՝ մենք ունենք առնւազն երեք բնագաւառ։ Աշխարհը, Ռուսաստանը և մեր անմիջական հարեւանները։ Ինչ վերաբերւում է աշխարհին, ապա այսօր արդէն շատ յստակ է, որ նա զարգանում է այն մշակոյթի ազդեցութեան տակ, որը երբեմն կոչւում է արեւմտեան, երբեմն՝ եւրոպական, երբեմն էլ՝ քրիստոնէական։ Բոլոր այս սահմանումները ընդունելի են, քանզի այդ մշակոյթը յենւում է յունական ժողովրդավարութեան, հռոմէական իրաւունքի և քրիստոնէական հաւատքի ու բարոյականութեան վրայ։ Այդ մշակոյթի առանձնայատկութիւնների մասին խօսելիս անհրաժեշտ է նշել գլխաւորը, որը կայանում է նրանում, որ ոչ մէկ ուրիշ մշակոյթ այնպիսի զարգացում չտուեց բնական գիտութիւններին, ինչպէս եւրոպական մշակոյթը և այսօրւայ գիտութիւնը կրում է իր վրայ այդ մշակոյթի կնիքը։ Գիտութիւնը միայն այս մշակոյթի մէջ էլ կարող էր զարգանալ, որովհետեւ այստեղ սուր հակադրւածութիւն կար իրականի և երեւակայականի միջեւ, այս և այն աշխարհի միջեւ։ Այս հակադրւածութիւնը դարձաւ գիտութեան զարգացման աղբիւր։ Նա ե՛ւ փիլիսոփայութիւն էր ու մեքենաշինութիւն, ե՛ւ աշխատաւորի շահագործումն էր ու մարդու իրաւունքների պաշտպանութիւն, ե՛ւ Աստծոյ հաւատք էր ու հասարակական բարոյականութիւն։ Եւրոպական մշակոյթը առաջինն էր, որ խօսեց այս աշխարհում երջանկութիւն ձեռք բերելու մասին և հէնց դրանում էլ կայանում էր նրա երկրորդ առանձնայատկութիւնը։ Եւրոպական մշակոյթը միակն էր, որ ճանաչեց մարդու արժանապատւութիւնը և այն, որ մարդու հետ չի կարելի վարուել այնպէս, ինչպէս վարւում են անասունների հետ։ Արեւմտեան մշակոյթը ճանաչում է օրէնքը և ներշնչում է մարդուն զսպւածութիւն։ Նա սահմանափակում է զգացմունքների իշխանութիւնը բոլոր բնագաւառներում։ Ծնունդ, ամուսնութիւն, մահ՝ բոլոր այս իրադարձութիւնների հետ կապւած արարողութիւնները զուսպ են, տրամաբանական ու շատ են տարբերւում այն աղմկոտ ու ցուցամոլական սովորութիւններից, որոնք, դժբախտաբար, Արեւելքից անցել են նաեւ մեր ժողովրդին։ Կասկածից վեր է, որ այս մշակոյթը աշխարհի շարժիչ ուժն է։ Ահա արդէն աւելի քան երկու դար է, ինչ առաջընթաց են ապրում միայն այն ժողովուրդները, որոնք որդեգրել են հէնց այս մշակոյթը։ Օդանաւեր, հաշւիչ մեքենաներ, բժշկութիւն, տնտեսական բարգաւաճում, հասարակական արդարութեան տեսութիւններ, արւեստ, գրականութիւն և այն ամէնը, ինչով այսօր առաջնորդւում է մարդկութիւնը, ստեղծել է այս մշակոյթի շնորհիւ։

Սա ամենեւին էլ չի նշանակում, որ այս մշակոյթի կողմից ստեղծւածը միշտ էլ գնահատելի էր։ Ո՛չ, Եւրոպական մշակոյթը ծնեց նաեւ արիւնալից պատերազմներ, ցեղասպանութիւն էլ, սով ու բռնութիւն, ատոմային ռումբեր, այս ամէնը, անշուշտ, եղել է ու շարունակւում է լինել, բայց այս մշակոյթը մարդկու-

թեան զարգացման շարժիչ ուժն է: Նա, ով չհասկանայ այս մեծ ճշմարտութիւնը ու չենթարկւի եւրոպական մշակոյթի օրէնքներին, դատապարտւած է կործանման, ինչպէս այսօր կործանւում են շատ ազգեր և կամ էլ քայլում են դէպի կործանում: Իսկ նրանք, ովքեր ժամանակին հասկացան այդ ճշմարտութիւնը, այսօր փոքրաթիւ լինելով հանդերձ տիրել են ամբողջ աշխարհը: Չինաստանը անգամ չի կարող երազել այն բարձրունքների մասին, որոնց եւրոպական մշակոյթի ազդեցութեան տակ հասան քանակով շատ փոքրաթիւ ազգեր:

Մենք՝ հայերս, որ յոյների ու հռոմէացիների հետ միասին եղել ենք այս մշակոյթի ստեղծողներից, այսօր այնքան ենք հեռացել մեր մշակոյթից, որ պարզապէս ուրիշ ազգ ենք դարձել և կորցրել ենք առաջընթացի բոլոր հնարաւորութիւնները: Յոյսներս դնելով մեր բնածին տաղանդի վրայ, մենք հրաժարւել ենք եւրոպական մշակոյթի ամենակարեւոր սկզբունքից՝ աշխատասիրութիւնից: Այն աշխատասիրութիւնից, որը եւրոպացու համար դարձաւ արեւելեան ճարպկութեան փոխարինողը, իսկ օրէնքին ենթարկւելու ազնւութիւնը փոխարինեց խաբեբայութիւնը:

Ցաւով պիտի նշեմ, որ մեր ժողովուրդը բոլորովին պատրաստ չէ ժողովրդավարութեան, որտեղ պարտւողը ձեռք է պարզում ու շնորհաւորում յաղթողին, այլ ոչ թէ հարեւաններով ու բարեկամներով ջանում է վնասել նրան, ընդհուպ մինչեւ սպանութիւն: Չունենք մենք յարգանք նաեւ օրէնքի նկատմամբ: Եթէ եւրոպական երկրներում ապրող հայերը ենթարկւում են օրէնքին, ապա ոչ թէ օրինապաշտութիւնից, այլ պատժւելու վախից:

Այս պայմաններում ինչպէ՞ս կարող ենք մենք դիմագրաւել Արեւմտեան մշակոյթի հզօր հոսանքներին, որոնք կործանում են իրենց ճանապարհին կանգնած բոլոր անպաշտպան ազգերին: Ինչպէ՞ս կարելի է առանց օրէնքի ու հաւատքի, առանց չարը բարուց տարբերելու, առանց ժողովրդավարական սկզբունքների որեւէ քայլ կատարել այնտեղ, որտեղ այդ սկզբունքները ճիշտ ուղղութիւն գտնելու միջոցներն են: Եթէ մենք կորցրել ենք այդ փարոսները, ապա պէտք է ամէն ինչ թողնենք ու վերադառնանք մեր ակունքներին, այսինքն՝ վերստին մեզ գտնենք: Ճիշտ այնպէս, ինչպէս Կոմիտասը մաքրեց մեր երաժշտութիւնը օտար ազդեցութիւններից, այնպէս էլ մենք պէտք է մաքրենք մեր նկարագիրը արեւելեան ազդեցութիւնից:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Չեմ ուզում ասել, որ դատարկ բան է այն պնդումը, թէ չկան մնայուն թշնամիներ ու բարեկամներ, ուզում են միայն ասել, որ այդ պնդումը վերաբերւում է ոչ թէ բնական, այլ ձեռք բերովի բարեկամներին, ոչ թէ արմատական, այլ պատահական բարեկամներին ու թշնամիներին: Այդպիսի բարեկամներ ու

թշնամիներ ունեն ոչ միայն ազգերն ու պետութիւնները, այլեւ սովորական մարդիկ: Այո՛, մեր դպրոցական ընկերները մշտական չեն, ինչպէս մշտական չեն հարեւան բակի ֆուտբոլի խմբի հակառակորդները: Բայց մշտական են մեր ծնողները, քոյրերն ու եղբայրները, որոնք մեր բնական բարեկամներն են, եթէ նոյնիսկ նրանք մեզ իրենց նկարագրով դուր չեն գալիս: Մեր ազգակցական, այսինքն բնական կապերը նրանց հետ, նրանց մեր մնայուն բարեկամներն են դարձնում: Ու մշտական են մեր այն հակառակորդները, որոնք մեզ հետ բաժանելու բան ունեն, որոնք տալիք ունեն, բայց չեն տալիս:

Տարբեր ազգերի աշխարհագրական դիրքից, մշակոյթների նմանութիւնից, կրօնական միասնութիւնից, տնտեսական կապերից, պատմական ճակատագրերից, այսինքն բնական պայմաններից ծնւում են բնական բարեկամներ, որոնց բարեկամութիւնը յենւում է ոչ թէ զգացմունքների, այլ ազգային շահերի վրայ: Եւ քանի որ այդ բարեկամութիւնը ծնւում է բնական հողի վրայ, նա դառնում է մնայուն և շարունակւում է այնքան ժամանակ, քանի դեռ մնայուն են մնում այդ բնական պայմանները: Այս իմաստով Ռուսաստանը մեր բնական բարեկամներից է, անկախ նրանից՝ թէ ո՞ւմ ձեռքումն է գտնւում մեր այդ մեծ հարեւանի իշխանութիւնը: Անկախ Գորբաչեւից ու Ելցինից, անկախ կոմունիստներից ու ֆաշիստներից, Ռուսաստանը մնում է մեզ համար այն երկիրը, որի հետ տնտեսական, քաղաքական և, ինչու չէ, ռազմական գործակցութիւն պիտի ունենայ մեր երկիրը, մանաւանդ որ Ռուսաստանը իր մշակոյթով մեզ շատ աւելի մօտ է, քան մեր մնացեալ հարեւանները: Ու քանի որ մեր բնական բարեկամներից է այդ երկիրը, տեսնենք թէ ի՞նչ է այնտեղ կատարւում:

Միջազգային մամուլը շատ է գրում Ռուսաստանում տիրող կացութեան մասին, բայց մեր կարծիքով անաչառ չէ այդ մամուլը, որը գտնւում է հակառուսաստանեան ուժերի ձեռքում:

Իրականում, եթէ մտնենք Խորհրդային Միութիւնում տիրող քաոսի մէջ, ապա կը տեսնենք, որ այնտեղ այսօր գործում են հետեւեալ ուժերը:

1.- Ռուս ժողովրդավարականներ, որոնք կայսրութիւնը պահպանելու ձգտում չունեն, սակայն նրանք չեն էլ աշխատում կայսրութիւնը քայքայելու ուղղութեամբ: Արդարացիօրէն այդ հարցի լուծումը նրանք կապում են երկրում ժողովրդավարութիւն ստեղծելու հետ:

2.- Ռուս ազգայնականներ, որոնք շեշտուած հակահրեաներ են և համարում են, որ Ռուսաստանի գլխին եկած բոլոր չարիքները՝ յեղափոխութիւնից մինչեւ Գորբաչեւ, կատարւել են հրեաների նախաձեռնութեամբ: Սրանք ջանում են վերականգնել ռուս ազգային արժէքները և ամէն գնով պահպանել միութիւնը:

3.- Ապազգայնացած աջակողմեան տարրեր, որոնք կայսրութեան պահպանման կողմնակիցներ են, բայց աւելի շատ սեփական իշխանութեան: Սրանք են՝ կոմունիստները, ԿԳԲն, բանակի ներկայացուցիչները:

4.- Ոչ-ռուս ազգայնականներ, որոնց խնդիրները տարբեր են, բայց ի վերջոյ բոլորն էլ ձգտում են անկախութեան կամ ինքնավարութեան:

5.- Ուժեր, որոնք ցանկանում են քայքայել կայսրութիւնը ոչ թէ այնտեղ ապրող ժողովուրդներին ազատութիւն տալու, այլ հէնց կայսրութիւնը տապալելու համար: Միութեան քայքայումը նրանց համար ինքնանպատակ է:

Սկզբնական շրջանում Գորբաչեւը կարողանում էր ճարպկօրէն խուսավարել այդ ուժերի մէջ, սակայն շուտով պարզուեց, որ այդ խուսավարումը ոչ մէկ արդիւնք չի տալիս: Ազգամիջեան բախումները վերածուեցին արիւնալից պատերազմների, տնտեսութիւնը այնպէս քայքայուեց, որ երկիրը կանգնեց սովի շեմին: Արեւմուտքը սկսեց կորցնել իր հաւատքը խորհրդային ղեկավարների նկատմամբ և գերադասեց օգնել Խորհրդային Միութեանը որպէս թոյլ զարգացած երկրի՝ մուրացկանութիւն տալու, բայց ոչ կապիտալ ներդրումներ կատարելու կարգով: Այս պայմանների մէջ ներքին ուժերի մէջ սկսուեց վերադասաւորում:

Կայսրութեան քայքայման կողմնակիցները ժողովրդավարականների և ռոմանտիկ ազգային շարժումների հետ կազմեցին լռելեայն համաձայնութիւն և այդ ուժերի ղեկավար դարձաւ Ելցինը: Ի պատասխան դրան, ռուս ազգայնականները, կոմունիստները, զինուորականները, անվտանգութեան մարմինները իրենց կողմը քաշեցին Գորբաչեւին և, ինչպէս յայտարարեց Ելցինը, նախագահական ղեկավարման գեղեցիկ խօսքի տակ, փաստօրէն վերականգնեցին մենիշխանութիւնը: Մեզ համար կարեւոր չէ, թէ արդեօք Գորբաչեւը հէնց սկզբի՞ց այդպիսին էր, թէ՞ յետոյ այդպիսին դարձաւ, կարեւորը այն է, որ այս թեւը անհամեմատ աւելի ուժեղ է և նրա վերջնական յաղթանակի մասին կասկածներ չպէտք է լինեն: Նրանց յաղթանակը պայմանաւորուած է առնւազն երկու հանգամանքով: Առաջին՝ այն, որ Խորհրդային Միութեան ոչ մէկ ժողովուրդ – նեռարեալ ռուսները ու մերձ-բալտեան ժողովուրդները – ո՛չ անկախութեան և ոչ էլ ժողովրդավարութեան պատրաստ են: Ումանց աշխարհագրական դիրքը, ումանց տնտեսական վիճակը, քաղաքական աւանդութիւնները, էթնիկական կազմը և շատ ուրիշ պատճառներ անկարելի են դարձնում անկախութեան ձեռք բերումը այսօր: Այս կացութեան մէջ անկախութեան ուղղութեամբ կատարուող որեւէ քայլ առաջացնում է քաոս, որից տառապում են մարդիկ ու սկսում են երազել կարծր ձեռքի մասին, որի ժամանակ գոնէ ջուր և էլեկտրականութիւն կար: Դատարկ փորին ո՞ւմն է պէտք խօսքի ազատութիւնը,- ասում են ռուս աշխատաւորները,- ու միանում աջակողմեան թեւին: Աջակողմեան-

ների յաջողութեան երկրորդ պատճառը այն է, որ Միացեալ Նահանգները շահագրգռած է Խորհրդային Միութիւնը պահպանելու մէջ: Այսօր ամերիկացիների ներկայութիւնը Եւրոպայում պայմանաւորուած է Խորհրդային Միութեան գոյութեամբ, որին զսպելու համար եւրոպացիները համակերպում են Միացեալ Նահանգների ներկայութեանը: Իսկ եթէ Խորհրդային Միութիւնը քայքայւի, ապա ամերիկացիներից, մեղմ ասած, կը խնդրեն թողնել Եւրոպան: Այդ դէպքում վերամիաւորուած Գերմանիան կը դառնայ Եւրոպայի տէրն ու տիրականը: Տնտեսապէս գերհզօր Գերմանիան չի կարող մնալ գեր-թոյլ քաղաքական դիրքերի վրայ:

Այդ վտանգը արդէն այսօր զգում են եւրոպացիները: Փետրուարի 11ին Գերմանիայի արտաքին գործերի նախարար Գենշերը յայտարարեց, որ Գերմանիան ձգտում է դառնալ ՄԱԿի Անվտանգութեան Խորհրդի մնայուն անդամ: Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Դիւման անմիջապէս յայտարարեց, որ ինքը կը մերժի ընդունել բոլոր տեսակի նման առաջարկութիւնները: Նա ասաց, որ ՄԱԿը ծնուեց Երկրորդ Համաշխարհային պատերազմից և եթէ Ֆրանսիան և Մեծն Բրիտանիան այնտեղ տեղ են գրաւում, ապա այն պատճառով, որ նրանք յաղթողների շարքումն էին: Չնայած նրան,- ասաց Դիւման,- որ Գերմանիան և Իտալիան այսօր ժողովրդավարական երկրներ են, դա ամենեւին էլ բաւարար չէ՝ վերանայելու համար այն տարիների իրականութիւնները:

Միւս կողմից, երբ Իսրայէլի ազդեցութեան տակ ամերիկացիները որդեգրել են Իրաքը ոչնչացնելու և Մերձաւոր Արեւելքից Խորհրդային Միութեան ազդեցութիւնը ամբողջովին վերացնելու քաղաքականութիւնը, այս անգամ արդէն Գերմանիան է անհանգստութիւն ցուցաբերում և արտգործնախարար Գենշերը յայտարարեց, որ Խորհրդային Միութիւնը չպէտք է վտարւի Մերձաւոր Արեւելքից, քանզի առանց նրա՝ այնտեղ անկարելի է խաղաղութիւն հաստատել:

Մի խօսքով, Խորհրդային Միութիւնը պէտք է ամերիկացիներին և Արեւմուտքին, նախ՝ Գերմանիայի և Ճապոնիայի նոր ոտնձգութիւնները զսպելու համար, ապա՝ աշխարհի ռազմական հաւասարակշռութիւնը պահպանելու համար: Այս դերը նա կարող է կատարել միայն հզօր գեր-պետութեան դերում, այլ ոչ թէ քայքայւած և հարիւրաւոր «Լիբանանների» վերածւած:

Այժմ տեսնենք, թէ ինչո՞ւ 1990 թւականի Դեկտեմբերի 20ին Շեւարտնաձէն տուեց իր հրաժարականը: Այդ ժամանակ մեր հայկական նաւակը գտնւում էր փոթորկւած ովկիանոսում, բայց մենք այդ փոթորիկը չէինք նկատում և շարունակում էինք ձեւացնել, թէ նաւարկում ենք:

Հայաստանի ղեկավարութիւնը չէր տեսնում փոթորիկը այն ժամանակ ու չի տեսնում այսօր, իսկ նրանք ովքեր տեսնում են՝ մերժւած են Հայաստանի իշխանութիւնների կողմից: Փոթորիկը սկսւեց 1990 թւականի կէսերին, երբ Ռուսաստանի վարչապետ Սիլաեւը առաջարկեց, որ «500 ՕՐ» կոչւող տնտեսական ծրագիրը դառնայ Ռուսաստանի զարգացման ծրագիրը:

Յայտնի է, որ այդ ծրագիրը իրական շուկայական տնտեսավարութեան ծրագիր էր: Այդ ծրագրի հետ կենտրոնը չէր կարող համաձայնւել, որովհետեւ այդ դէպքում կենտրոնը և նոյնինքն նրա նախագահը փաստօրէն կորցնելու էին իրենց իշխանութիւնը, իսկ հանրապետութիւնները տնտեսական իմաստով լրիւ անկախ էին դառնալու: Այդ դէպքում Խորհրդային Միութեան նախագահը դառնալու էր Ռուսաստանի նախագահի հպատակը: Բացի դրանից, իրենց նշանակութիւնը պիտի կորցնէին զինւորականները, որոնք 9 հզօր նախարարութիւնների ճամբով դարձել էին երկրի իրական տէրերը: Գորբաչեւի գրեթէ ամբողջ շրջապատը բաղկացած էր ռազմա-արդիւնաբերական համալիրի ներկայացուցիչներից: Այսպիսո՛վ, ո՛չ նախագահին և ոչ էլ զինւորականներին «500 ՕՐ» ծրագիրը ձեռք չէր տալիս: Ահաւասիկ այդ ծրագրի տապալման ժամանակագրութիւնը.-

1990 թւականի յուլիս ամսին Գորբաչեւը անսպասելիօրէն Ելցինի հետ դաշինք է կնքում՝ երկրի տնտեսական զարգացման վրայ համատեղ աշխատանք տանելու մասին: Օգոստոս ամսին Գորբաչեւը և Ելցինը մեկնում են արձակուրդի: Ամսւայ աւարտին, Գորբաչեւը ընդհատում է իր արձակուրդը և վերադառնում է Մոսկւա, որտեղ 7 ժամ անց է կացնում «500 ՕՐ» ծրագիրը մշակող - Շատալինի **թիմի**ի հետ: Սեպտեմբեր ամսին «500 ՕՐ» ծրագիրը ենթարկւում է խիստ քննադատութեան և ստեղծւում է «Սոյուզ» աջակողմեան պլատֆորմը, որը պահանջում է նախագահից՝ վերականգնել երկրի կարգն ու կանոնը: Նոյեմբեր 16-17 առաջարկւում է, որ երկրում մտցւի նախագահական կառավարում: Կարծր ծրագրի իրականացմանը խանգարեց Գորբաչեւի մեկնումը Իսպանիա և Փարիզ: Բայց վերադառնալուն պէս՝ Գորբաչեւը իր առաջին նախագահական հրամանով պետական ռադիոյի և հեռուստատեսութեան ղեկավար նշանակեց Լեւնիդ Կրավչենկոյին, որը դրանից մի քանի օր առաջ յայտարարել էր, թէ տեղեկատւական միջոցները անցել են ընդդիմութեան ձեռքը, ինչը նշանակում է, որ նրանց ձեռքն է անցել երկրի իշխանութիւնը:

Դեկտեմբերի 1ին, նախագահի հերթական հրամանով, բանակին յանձնարարւում է իրականացնել զինակոչը: Նոյն օրը ներքին գործերի նախարար Բակատինը պաշտօնազրկւում է՝ **«չափից աւելի ժողովրդավարական լինելու»** մեղադրանքով: Աջակողմեան Պուգոն նշանակւում է նրա տեղը, իսկ Աֆղանստանի **«հերոս»** զօրավար Գրոմովը նրա առաջին տեղակալը: Նոյն Դեկտեմբե-

րի 1ին «Սոյուզ» պատգամաւորական խումբը առաջարկում է **«անհանգիստ հանրապետութիւններում»** մտցնել ուղղակի նախագահական ղեկավարում: Մի քանի օր անց **«սեւ գնդապետ»** Ալսնիսը յայտարարեց, որ եթէ սահմանադրութիւնը խանգարում է կարգ ու կանոնին, պէտք է մէկ կողմ դնել սահմանադրութիւնը և եթէ անհրաժեշտ է ձերբակալել Լիտւայի նախագահ Լանսբերգիսին, անհրաժեշտ է դա էլ անել: Դեկտեմբերի 22ին Գորբաչեւը վերջնագիր ներկայացրեց Մոլդովային՝ 10 օրւայ ընթացքում կացութիւնը շտկելու մասին: Դեկտեմբերի 29ին, նախագահի հրահանգով, մեծ քաղաքների փողոցները անցան ոստիկանութեան և զինուորների հսկողութեան տակ: Յունուարի 7ին նախագահը վերջնագիր ներկայացրեց Վրաստանին: Վրաստանը դիմադրում է, բայց դա այլեւս ոչ մէկ նշանակութիւն չունի՝ մեքենան սկսել է աշխատել:

Յունուարի 8ին պաշտպանութեան նախարար Եազովը հրամայում է 7 հանրապետութիւններ ափահանման զօրքեր ուղարկել, սակայն սկզբից՝ մերձբալտեան հանրապետութիւններ: Յունուարի 10ին Գորբաչեւը մեղադրում է Լիտւային՝ բուրժուական կարգեր վերականգնելու մէջ և առաջարկում է հրաժարւել բոլոր հակասահմանադրական որոշումներից: Այդ առաջարկութիւնից անմիջապէս յետոյ Լիտւայում յայտնւեց ռուսներից բաղկացած **«Ազգային փրկութեան կոմիտէ»**, որը յայտարարեց, որ իր վրայ է վերցնում Լիտւայի իշխանութիւնը: Աւելի ուշ՝ այս նոյն կոմիտէներից ստեղծւեցին Լատւիայում և Էստոնիայում: Դեկտեմբերի 12-13ին տեղի են ունենում Վիլնիւսի արիւնալից դէպքերը: Ինչպէս տեսնում ենք, այս ամէնը նախօրօք ծրագրւած էր: Ծրագրւած չէր միայն Ելցինի վարքագիծը, որը նոյն գիշեր մեկնեց Տալին և հսկայական աշխատանք տարաւ՝ քաղաքացիական պատերազմի առաջն առնելու համար: Ծրագրւած չէին զանգւածային բողոքները, որոնք տեղի ունեցան երկրի ներսում և արտասահմանում: Ծրագրւած չէին արեւմտեան կառավարութիւնների մտահոգութիւնները, որոնք արտայայտւեցին այս բռնութիւնների վերաբերեալ: Գուցէ դրանից էր, որ խորհրդային բանակի գործողութիւնները մերձ-բալտեան հանրապետութիւններում շատ էլ վճռական չէին: Նրանք յամենայնդէպս պաշտպանութեան տակ չառան Լիտւայի ինքնակոչ **«Ազգային փրկութեան կոմիտէն»**, և հետագայում **«սեւ գնդապետը»** խոստովանեց, որ Մոսկւան իրենց դաւաճանեց:

Սակայն աջակողմեանների դժւարութիւնները ժամանակաւոր էին, որովհետեւ փետրւարի 20ին պարզւեց ուժերի դասաւորութեան իրական պատկերը: Յայտնի է, որ Փետրւարի 19ին Ելցինը հանդէս եկաւ հեռուստատեսութեամբ, մեղադրեց Գորբաչեւին բռնակալութեան մէջ, պահանջեց նրա հրաժարականը և քննադատեց նոր վարչապետին: Յաջորդ օրը Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհուրդը յատուկ որոշում ընդունեց Ելցինի ելոյթը

դատապարտելու մասին և այդ որոշման կողմ քւէարկեցին 292 պատգամաւորներ, դէմ էին 29 և 27-ը մնացին ձեռնպահ: Նոյն օրը՝ վարչապետ Պաւլովը յայտարարեց, որ նախագահին կից կառավարութիւնը պէտք է իրաւունք ունենայ ընդունել որոշումներ, որոնք պարտադիր լինեն բոլոր մարմինների, բոլոր կազմակերպութիւնների, պաշտօնեաների և քաղաքացիների համար՝ Խորհրդային Միութեան ամբողջ տարածութեան վրայ:

Ընդհանուր եզրակացութիւնը յստակ է, Ռուսաստանը չի քայքայւելու: Միութիւնը պահպանւելու է, անկախ նրանից որ կը մասնակցե՞ն թէ ոչ Հայաստանը և ուրիշ հանրապետութիւններ հանրաքւէին: Բոլոր հանրապետութիւնները, ներառեալ մերձ-բալտեան, կը մնան միութեան կազմի մէջ, բայց ոմանք պատւով ու կամաւոր կարգով, իսկ ոմանք էլ հրասայլերի պարտադրանքով: Ճիշտ է՝ կան մարդիկ, որ հրասայլերի տակ նետւելն են պատիւ համարում, բայց մենք չենք կարող այդպէս մտածել, որովհետեւ ո՛չ թատրոնում ենք և ոչ էլ մանկապարտէզում, մենք քաղաքական ոլորտում ենք, որտեղ լուծւում է մեր ժողովրդի ճակատագիրը և որտեղ փորձառու դիւանագէտները ամենեւին էլ թատրոն խաղալու մտադրութիւն չունեն:

Ռուսաստանի միութիւնը չի քայքայւելու, Ելցինը պարտւելու է, իսկ Արեւմուտքը պաշտպանելու է Խորհրդային Միութեան ամբողջականութիւնը: Այստեղից էլ մենք պէտք է ելնենք, մեր բնական դաշնակից Ռուսաստանի հետ մեր յարաբերութիւնները կառուցելու հարցում: Ադրբեջանի Գերագոյն Խորհրդի նախագահ Էլմիրա Կաֆարովան, օրինակ, փետրւարի 7ին Բաքւում յայտարարեց, որ Ադրբեջանը Միութեան պահպանման կողմնակից է և որ Ադրբեջանի աշխատաւորները քաջ գիտակցում են, որ իրենք չեն կարող խզել գոյութիւն ունեցող կապերը ուրիշ հանրապետութիւնների հետ և չեն կարող գոյատեւել միայնակ: Կաֆարովան ասաց, որ Ադրբեջանը մասնակցելու է հանրաքւէին և մնալու է Միութեան կազմի մէջ: Բայց դրա համար,- աւելացրեց նա,- կայ մէկ աննշան պայման՝ Լեռնային Ղարաբաղը պէտք է մնայ Ադրբեջանի կազմի մէջ: Նա ասաց, որ որեւէ ոտնձգութիւն Ադրբեջանի տարածական ամբողջութեան վրայ չպէտք է լինի և Արցախի Հարցը պէտք է քննարկւի Գերագոյն Խորհրդում, քանզի դա Ադրբեջանի ներքին հարցն է:

Հիմա եկէք մենք մեզ դնենք Գորբաչեւի, կամ այն մարմնի տեղը, որը պէտք է լուծի հայ-ադրբեջանական բախումը: Ո՞ւմ կողմը մեզանից իւրաքանչիւրը կը լինէր, Ադրբեջանի՞, որը Միութիւնից դուրս չի գալիս ու մասնակցում է հանրաքւէին, թէ՞ Հայաստանի, որի նախագահը կողմնորոշւել է ի նպաստ Գորբաչեւի ընդդիմադիրներին: Այդ մենք է, որ մեր բնական բարեկամի բարեկամութեան հողը պէտք է պատրաստենք, որովհետեւ մենք է, որ նրա բարեկամութեան կարիքը ունենք:

ՎՐԱՍՏԱՆ

Մեր միւս հարեւան Վրաստանը, չնայած պատմական ճակատագրի որոշ նմանութեան, չնայած կրօնական ընդհանրութեան, այսօր մեր վստահելի դաշնակիցը չի կարող լինել: Դժբախտաբար այդպէս է: Դժբախտաբար, որովհետեւ եթէ նա այդ ցանկութիւնը ունենար, եթէ գիտակցէր մեր անկեղծ բարեկամութեան օգտակարութիւնը, նա կարող էր մնայուն դաշնակից դառնալ ու դրանով իսկ ամբողջովին կը փոխուէր Անդրկովկասի քաղաքական պատկերը: Սակայն, այսօր, ո՛չ նրանք և ոչ էլ մենք այդ անկեղծ բարեկամութեանը պատրաստ չենք: Նրանց ռուսատեացութիւնը, Ջաւախքի խնդիրը և օսեթների խնդրով Ադրբեջանի հետ նրանց միասնութիւնը, սեփական կայսերապաշտ դիրքը՝ ազգային փոքրամասնութիւնների նկատմամբ և շատ ուրիշ առարկայական ու ենթակայական պայմաններ անկարելի են դարձնում մեր անկեղծ բարեկամութիւնը: Ամենակարեւորը այն է, որ նրանց ժողովրդավարական կոչւող շարժումները ամենեւին էլ այդպիսին չէին և երբ նրանք անցան իշխանութեան գլուխ պարզուեց, որ նրանց կամայականութիւնները և բռնութիւնները ոչնչով չէին տարբերւում նախորդ կոմունիստական իշխանութիւնների բռնութիւններից: Ահա թէ ի՛նչ է հաղորդում Թբիլիսիից լրագրող Նինօ Ախմետելին: Սա լրագրողի ծածկանունն է, իսկական անունը նա թագցնում է Վրաստանի իշխանութիւններից:

«Հաւանաբար, այս ամէնը առայժմ ահաբեկչութիւն անւանել չի կարելի, բայց փաստը մնում է փաստ՝ Թբիլիսիում ազատ լրագրողներին և կենտրոնական մամուլի թղթակիցներին աւելի դժւար է աշխատել, քան կոմունիստների օրօք: Իր ազատամտութեան համար արդէն փակուեց *«Մոլոգեժ Գրուզիի»* թերթը, փակուեց այնքան հիմնովին, որ երբ խմբագրութեան նախկին կազմը որոշեց նոր թերթ հրատարակել, որի որոշումը կայացուեց Նախարարների Խորհրդում, ոչ մէկ հրատարակչութիւն չհամաձայնուեց այդ թերթը հրատարակել: Չնայած նրան, որ հրատարակչութիւնները յենւում են թղթի կամ աշխատաւորների պակասի վրայ, ակնյայտ է, որ հրատարակութիւնները խիստ կարգադրութիւններ են ստացել այս մասին Պառլամենտի ամենաբարձր պաշտօնեաներից: Սա արդէն այլախոհների վրայ ճնշում գործադրելու բացայայտ արարքն է:

«Ինչ վերաբերւում է լրագրողներին, ապա այստեղ կացութիւնը շատ աւելի բարդ է: Ազատ լրագրողներից մէկը պատմեց, որ արտաքուստ իր կացութիւնը կարգին է: Նա կարողանում է ազատօրէն հանդիպել պաշտօնական անձերի հետ, ուղարկել իր թղթակցութիւնները ցանկացած թերթերի, բայց երբ նրա աւար քննադատական յօդւածները լոյս են տեսնում որեւէ թերթում, նրա հետ պատահում են տարօրինակ դէպքեր: Նրա դուստրին օրը ցերեկով ծեծում են փողոցում,

յիշեցնելով հօր կողմից արւած քննադատութիւնները: Հեռախօսը անընդհատ զանգում է և նրան սովորական հայհոյանքներից բացի սպառնում են՝ *«կտրել գլուխը»* կամ *«հանել աչքերը»*: Ոչ պակաս ճնշումների են ենթարկւում պաշտօնական թղթակիցները: Մասնաւորապէս ՏԱՍՍի թղթակիցը Վրրաստանում պատմեց, որ իր բնակարանը շրջապատեցին մի խումբ մարդիկ, որոնք իբր թէ վրդովւած նրա գրութիւններով, սպառնում են լրագրողին սպանել: Նա ստիպւած եղաւ փախչել ծխնելոյզից: Էլ աւելի վատ վիճակում է գտնւում *«Մոսկովսկիյ Նովոստի»* հանդէսի թղթակիցը, որին սպառնում են զինւած խմբեր: «Չեմ կարծում,- ասաց նա,- որ ժամանակներումս մեզ կը սկսեն սպանել, բայց մեր կեանքերի ապահովագրութեան ժամանակը եկել է: Վերջերս Թբիլիսիում տեղի ունեցաւ նախագահ Զւիադ Գամսախուրդիայի մամուլի ասուլիսը, որին չէին հրաւիրւած կենտրոնական թերթերի լրագրողները, չէին հրաւիրւած նաև ազատ լրագրողները: Մամուլի ասուլիսի ժամանակ նախագահ Գամսախուրդիան ասաց, որ կենտրոնական թերթերի լրագրողներին անհրաժեշտ է յայտարարել անցանկալի անձեր և վտարել Վրաստանից: Կենտրոնական թերթերից ներկայ էր միայն *«Պրաւդա»*ի թղթակից Գէորգի Լէբանիձէն, որը այնպէս էր գովաբանում նախագահ Գամսախուրդիային, որ ներկաներին նրա ելոյթը յիշեցնում էր Ստալինի ժամանակները»:

Ժողովրդավարութեան այս պակասից բացի, որից վերջին հաշւով տուժում է վրաց ժողովուրդը, Վրաստանի իշխանութիւնները կատաղի կերպով ոտնահարում են ազգային փոքրամասնութիւնների, այդ թւում նաեւ հայերի իրաւունքները: Վրաստանի մշակոյթը մաքրւում է այսպէս ասած օտար ազդեցութիւններից և Թբիլիսիում, օպերայում ու թատրոններում, կարելի է ցուցադրել միայն վրացական բեմադրութիւններ: Մամուլը, հեռուստատեսութիւնը, գրականութիւնը ամբողջովին գտնւում են իշխանութիւնների վերահսկողութեան տակ:

Մի խօսքով՝ այսօր Վրաստանում տիրում է այնպիսի կացութիւն, որ մեր այդ հարեւանների հետ քաղաքական հողի վրայ բարեկամութիւնը դառնում է անկարելի: Վրաստանի ներկայ ղեկավարները ինքնահաւանօրէն և ինքնավստահօրէն մերժում են որեւէ փոխզիջումներ կատարել, թէ՛ ռուսների և թէ սեփական ժողովուրդների փոխյարաբերութիւններում: Այս յամառութիւնը, հաւանաբար, կ'աւարտւի հրասայլերի ներխուժումով և մեծ վնաս կը հասցնի վրաց ժողովրդին, բայց դա արդէն իրենց գործն է: Մենք նախ և առաջ մեզ պէտք է փրկենք հրասայլերից:

ԱԴՐԲԵՋԱՆ

Ի՞նչ է ներկայացնում իրենից Ադրբեջանը, մենք շատ լաւ էինք պատկերացնում անցեալում և լաւ ենք պատկերացնում ներկայումս։ Իրենք իրենց թուրք համարող և այդ մասին բազմիցս հրապարակայնօրէն յայտարարութիւններ արած ադրբեջանցիները մեր բնական հակառակորդներ են, որոնք մեզ այնքան շատ տալիք ունեն, որ դեռեւս երկար ժամանակ անկարելի է անգամ նրանց հետ բարեկամութիւն անելու մասին խօսելը։ Սա չի նշանակում, անշուշտ, որ նրանք պէտք է արհամարհուեն մեր կողմից և տեղ չգտնեն մեր քաղաքական հաշւարկների մէջ։ Ճիշտ հակառակը, ազգեր ու պետութիւններ իրենց քաղաքականութիւնը և դիւանագիտութիւնը մշակում ու կիրառում են հէնց հակառակորդների ու թշնամիների նկատմամբ, քանզի բարեկամների դիրքորոշումը ի վերջոյ բարեկամական է։ Այս իմաստով՝ մենք ուշի-ուշով պէտք է հետեւենք, թէ ի՞նչ է կատարւում Ադրբեջանում։ Մեր այս վտանգաւոր հարեւանը մեծ ճարպկութեամբ կարողացաւ ազգային ուժերը բաժանել երկու մասի, որոնցից մէկը այսպէս կոչւած «Ադրբեջանի Ժողովրդավարական Ճակատն» է, որը հանդէս է գալիս ժողովրդավարութեան և առաջադիմութեան դիրքերից, իսկ միւս թեւը պահպանողականներն են, որոնց անունից հանդէս է գալիս Կոմունիստական կուսակցութիւնը։ Անհրաժեշտութեան դէպքում հրապարակ է իջնում «Ժողովրդական Ճակատը» իր շինծու ժողովրդավարական լոզունգներով, բայց իրական իշխանութիւնը գտնւում է կոմունիստների ձեռքում, որոնք գաղափարախօսական իմաստով, անշուշտ, կոմունիստներ չեն, բայց նրանք շատ լաւ հասկացել են, թէ ի՞նչ այսօր պէտք է Մոսկւային։ Ոչ մէկ հարցում այդ իշխանութիւնը Մոսկւային չի առարկում և դրա համար էլ համապատասխան տուրք է ստանում կենտրոնից։ Բայց երբ կենտրոնը հակաադրբեջանական տրամադրութիւններ է ցոյց տալիս, անմիջապէս հրապարակ է իջնում «Ժողովրդական Ճակատ»ը և բողոքում Մոսկւայի դէմ նրա հակաժողովրդավարական կեցւածքի համար։ Երբ յունւարի 23ին **«Մմենա»** թերթը **«Կովկասեան Վարկածը»** վերնագրով հրատարակեց մի շատ հայանպաստ յօդւած, «Ժողովրդական Ճակատը» ոչ մէկ բառով չառարկեց այդ յօդւածին, քանզի ժողովրդավարական սկզբունքների իմաստով առարկելու տեղ չկար։ Այստեղ՝ խօսքը Ադրբեջանի Գերագոյն Խորհրդինն էր և նա փետրւարի 15ին որոշում ընդունեց, որ Լեռնային Ղարաբաղին վերաբերւող բոլոր հարցերը պատկանում են միայն ու միայն Ադրբեջանի իշխանութիւններին։ Որոշման մէջ ասւած էր, որ Ադրբեջանը մերժում է նախագահական կառավարումը և Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհրդի որեւէ միջամտութիւնը Ադրբեջանի ներքին գործերին։ Բայց այդ դէպքում ինչպէ՞ս վարւել խորհրդային բանակի հետ, որը գտնւում է Ստեփանակերտում և Շահումեա-

նի շրջանում հէնց Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհրդի որոշմամբ: Այստեղ արդէն հերթը հասնում է «Ժողովրդական Ճակատին», որը ժողովրդավարական սկզբունքներից ելնելով աղաղակում է, թէ խորհրդային զօրքերը պէտք է դուրս գան բոլոր ինքնիշխան հանրապետութիւններից, այդ թւում նաեւ Ադրբեջանից: Երանի թէ Հայաստանում էլ լինէին ելցինական, գորբաչեւասիրական, անկախասիրական խմբեր որոնք կախւած Մոսկւայում տեղի ունեցող ընթացքներից, տիրութիւն անէին ժողովրդին: Բայց այդ դէպքում, կլոր սեղանի տակ իրար ձեռք-ձեռքի տւած լինէին: Իսկ երբ այդ խմբերը ոչ միայն իրար ձեռք չեն տալիս սեղանի տակում, այլ սեղանի շուրջ իրար վրայ կրակում են, մերժելով դաշնավարութեան բոլոր սկզբունքները, ասելիք պարզապէս չի մնում:

Այնուամենայնիւ, ի՞նչ կարող ենք անել ստեղծւած կացութեան մէջ: Նախ և առաջ պէտք է համոզել ամբողջ աշխարհին և առաջին հերթին ռուսներին ու ադրբեջանցիներին, որ բռնի ուժով ոչ մէկ կողմի օգտին հարցը չի կարող լուծւել: Եթէ մենք համոզւած ենք, որ ժողովուրդը կը մեռնի, բայց չի հրաժարւի Արցախից, ապա՝ դրանում անհրաժեշտ է համոզեցնել նաեւ բախմանը մասնակցող բոլոր կողմերին, եթէ մենք իսկապէս դրանում համոզւած ենք և զըտնում ենք մեր մէջ այդ ուժը, ուստի պէտք է համոզւած լինենք, որ ադրբեջանցիներն էլ ոչ մէկ ճնշումի տակ Արցախը հայերիս չեն զիջի: Սա նշանակում է, որ հարցը լուծելու համար անհրաժեշտ են փոխ-զիջումներ, որոնք ընդունելի լինեն նախ երկու կողմերի համար և որոնց իրականացումը ապահովի երրորդ կողմը, տւեալ դէպքում երկրի կենտրոնական իշխանութիւնը: Խօսակցութիւնները այն մասին, թէ այլեւս երրորդ ուժ գոյութիւն չունի և որ մենք ինքներս կարող ենք առանց ռուսների լուծել մեր խնդիրները, նախ դատարկ խօսքեր են, ապա՝ շատ ձեռնտու են ադրբեջանցիներին, որոնք երազում են ռուսներին խաղից հանելու մասին, որոնց տեղը անմիջապէս կը գրաւի Թուրքիան՝ մեզ ծանօթ բոլոր հետեւանքներով: Ընդհակառակը, ով կարողանայ իր իմաստութեամբ իր կողմը քաշել այդ երրորդ ուժը, ով կարողանայ ապացուցել նրան, որ գործում է ի շահ Ռուսաստանի, նա կը շահի վէճը: Եթէ մենք պէտք է բացառենք երրորդ ուժի գոյութիւնը հայ-ադրբեջանական բախման մէջ, եթէ այդ ուժը մեր կողմը քաշելու խնդիր չունենանք, ապա քաղաքականութիւն վարելու դաշտ էլ չի մնայ: Մեզ կը մնայ կռւել, ինչպէս կռւեցինք Աւարայրում, Սարդարապատում կամ Փետրւարեան ապստամբութեան օրերին: Կռւել ազգովին և հարկ եղած դէպքում նահատակւել ազգովին, բայց չենք կարծում, որ սա լաւագոյն ելքն է, թէպէտեւ բնորոշ մեր ժողովրդի համար: Նախքան այս վերջին քայլին դիմելը, հաւանաբար կարելի է կատարել աւելի մեղմ քայլեր, որոնք սակայն կարող են աւելի արդիւնաբեր լինել:

Եթէ մենք համոզւենք, որ փոխ-զիջումները անհրաժեշտ են, ապա եկէք պարզենք, թէ ինչո՞ւ արցախցիները ոտքի ելան և ինչո՞ւ էին բողոքագրեր յղում խորհրդային իշխանութիւններին Գորբաչեւից շատ աւելի առաջ: Միթէ նրանք ոտքի ելան Հայ Դատի վերջնանպատակ Միացեալ Հայաստանի համար պայքարելո՞ւ միտումով: Անշո՛ւշտ, դրա ժամանակն էլ կը գայ: Բայց այս անգամ արցախցիները ոտքի ելան, որովհետեւ Ադրբեջանի կազմի մէջ ոտնահարւում էին նրանց իրաւունքները: Ոչ թէ Միացեալ Հայաստան էին նրանք որոնում, այլ սեփական իրաւունքների պաշտպանութիւնը: Ուրիշ բան, որ այդ հարցի լուծման ելքը նրանք տեսնում էին Հայաստանի հետ վերամիաւորւելու մէջ, բայց սա նշանակում է, որ Արցախի դէպքում Միացեալ Հայաստանը արցախցիների իրաւունքների պաշտպանութեան միակ միջոցն էր: Այս բանը ապացուցելու վրայ պէտք է դրուի մեր պահանջատիրութեան ամբողջ շեշտը: Ոչ թէ պատմական իրաւունքները, ոչ թէ Միացեալ Հայաստան ստեղծելու գաղափարը, ոչ թէ ազգը վերամիաւորելու ձգտումը, ոչ թէ Ստալինի սխալների ուղղումը, այլ արցախցիների մարդկային և ազգային իրաւունքների պաշտպանութիւնն է մեզ համար Արցախի խնդրի գլխաւոր նպատակը: Եթէ մօտեցումը այդպիսին պիտի լինի, մենք պարտաւոր ենք դիմելու ադրբեջանցիներին և պահանջելու նրանցից արցախցիների իրաւունքների պաշտպանութիւնը, քանզի հակառակ դէպքում արցախցիները ստիպւած կը լինեն որոնելու Ադրբեջանի կազմից դուրս գալու ճանապարհներ: Եթէ ադրբեջանցիները ճանաչեն, որ այս նրանք նախկինում և այսօր ոտնահարել ու ոտնահարում են Արցախի հայերի իրաւունքները, բայց դրա համար ներողութիւն են խնդրում և խոստանում են անվերապահօրէն վերականգնել նրանց բոլոր ազգային իրաւունքները, ապա դա կը լինի նրանց զիջումը: Ինչ վերաբերւում է մեր զիջումներին, ապա նրանք կարող են տեղի ունենալ միայն այն դէպքում, երբ վերականգնւած կը լինի Արցախի տեղական իշխանութիւնը, որի հետ էլ պէտք է բանակցել զիջումների մասին: Այսինքն, մենք սկզբունքօրէն չենք բացառում ո՛չ հնարաւոր զիջումները և ո՛չ էլ բանակցութիւնները: Բայց ո՞ւմ հետ և ինչի՞ մասին բանակցել, եթէ Արցախը այսօր չունի մի պաշտօնական մարմին, որը օժտւած լինի արցախցիների անունից բանակցելու իրաւունքով: Ուրեմն՝ զիջումներ կատարելու և ընդհանրապէս քաղաքական բանակցութիւններ վարելու միակ պայմանը Արցախի սեփական խորհուրդների վերականգնումն է: Խօսքը այն մասին չէ, որ ադրբեջանցիները կամ մենք արդէն յանգել ենք այն եզրակացութեան, որ պատրաստ ենք հաշտութեան, այլ այդ հաշտութեան պայմանները ճիշտ դիւանագիտական ձեւի տակ ներկայացնելու մասին է: Ադրբեջանցիները կարող են յայտարարել, որ իրենք զիջումների պատրաստ

են: Բայց շատ պարզ է, որ ադրբեջանցիները իրենց խոստումը չեն կատարի և այդ դէպքում մեր բոլոր բողոքները արդար կը նկատուեն, մէկ բան՝ որ երբեք տեղի չի ունենայ, եթէ մեր պահանջները ներկայացուեն միայն անջատողական բնոյթով:

Ի հարկէ, այս մօտեցումը միակը չէ, նա պարզապէս տարբերակներից մէկն է: Հայաստանում գործող կազմակերպութիւնները և յատկապէս կառավարութիւնը կարող են մշակել քաղաքականութեան սեփական տարբերակը, ելնելով հայ ժողովրդի գերագոյն շահերից, սակայն կարծես թէ այս մասին ոչ մէկը չի մտածում, որովհետեւ Ստեփանակերտում և Երեւանում փետրուարի 20ին կրկին տեղի ունեցան զանգւածային ցոյցեր, որոնց ժամանակ ցուցարարները պահանջում էին մէկ կողմից Հայաստանի հետ վերամիաւորում, իսկ միւս կողմից Արցախի տեղական իշխանութիւնների վերականգնումը: Պահանջների այս հակասական մթնոլորտը՝ Խորհրդային Միութեան համար բաւականին ճգնաժամային պահին՝ խօսում է այն մասին, որ հայ ժողովրդի ճակատագրով զբաղւում են բոլորը ու զբաղւում են այնպէս, ինչպէս իրենք են ուզում: Հրապարակ են իջել մարդիկ, որոնք իրենց կեանքում ո՛չ քաղաքականութեամբ են զբաղւել և ոչ էլ այդ մասին գրքեր են կարդացել: Իսկ Հայաստանի կառավարութիւնը զարմանալիօրէն գերադասում է դիմել այնպիսի «խորհրդատուների» օգնութեան, որոնք ունեն շեշտուած հակադաշնակցական տրամադրութիւններ: Կարծես թէ նրանց հակադաշնակցական լինելը աւելի կարեւոր է, քան քաղաքական ու բարոյական կարողութիւնները:

Գիտեմ, ընկերներս պիտի ասեն, որ նորից ինձ չզսպեցի, նորից կոպիտ եմ, նորից անկիրթի պէս եմ ինձ պահում, բայց ի՞նչ ասեմ, այո կոպիտ եմ, այո անկիրթ եմ, այո անզուսպ եմ, երբ մեր երկիրը ու մեր ժողովուրդը կանգնած են կործանման եզրին: Եթէ ուզում ենք լինե՛լ, պէտք է ազգի ղեկավարման ղեկը յանձնենք նրանց, ովքեր ոչ միայն կրթւած են ու պարկեշտ, այլ ովքեր մեր հայրենիքին են ծառայում ու բնազդով զգում են հայութեան սպառնացող վտանգները: Ինչպէ՞ս գտնենք սրանց: Թողէք ժողովրդին, նա կը գտնի թէ ո՞ւմ կարելի է վստահել ազգի ճակատագիրը:

1991

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ

Է. Յովհաննիսեան

Ճիշտ այն պահին, երբ Հայաստանում հակակոմունիստական հիստերիան հասել էր իր գագաթնակէտին, երբ կոմունիստների հետ ոչ միայն համագործակցութիւնը, այլեւ որոշ հարցերում նոյն տեսակէտ ունենալը յանցագործութիւն ու դաւաճանութիւն էր նկատւում, երբ մեր սէրը, ատելութիւնը, ազգակցական ու բարեկամական կապերը, աթոռամոլութիւնը ազգային քաղաքականութիւն վարելու կարեւոր գործօններ էին դարձել, կոմունիստ Այազ Մութալիբովը մեկնեց Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսի և ջերմ հանդիպում ունեցաւ թունդ հակակոմունիստ Զիհադ Գամսախուրդիայի հետ: Միամիտների ու բարոյական սկզբունքներին հաւատացողների համար այդ հանդիպումը անսպասելի էր ու անհասկանալի, մինչդեռ Վրաստանի ու Ադրբեջանի դաշինքը շատ հասկանալի ու բնական իրադարձութիւն էր:

Առաջին անգամը լինելով Վրաստանի և Ադրբեջանի հանրապետութիւնները պայմանագիր էին կնքում պետական մակարդակի վրայ, առանց Մոսկըւայի միջամտութեան, դեսպաններ փոխանակելով ու պայմանաւորւելով, որ ճանաչում են մէկը միւսի տարածական անձեռնմխելիութիւնը և ինքնիշխանութիւնը: Բացի դրանից՝ կողմերը պայմանաւորւեցին, որ բոլոր վիճելի հարցերը լուծւելու են բանակցութիւնների ճամբով և առեւտուր են վարելու բարենպաստ պայմաններով:

Մութալիբովը այս պայմանագիրը անւանեց պատմական, իսկ Գամսախուրդիան յայտարարեց, որ քաղաքակիրթ աշխարհին Անդրկովկասից միայն պատերազմական լուրեր էին հասնում, այժմ նրանց թող հասնեն լուրեր նաեւ խաղաղութեան մասին: Գամսախուրդիան այնպէս էր խօսում, կարծես թէ Վրաստանի և Ադրբեջանի դաշինքը վերջ տւեց բախումներին Արցախում և Օսետիայում և այլեւս պատերազմական լուրեր չեն հասնելու Եւրոպա:

Այս իրադարձութիւնը,- ասաց Գամսախուրդիան,- կը բարձրացնի Անդրկովկասեան հանրապետութիւնների հեղինակութիւնը:

Եւ, ահա մենք ականատես ենք, թէ ինչպէս Վրաստանը և Ադրբեջանը դաշինք կնքեցին, խախտելով բոլոր բարոյական և իրաւական չափանիշները: Այդ պայմանագիրը կնքւեց, քանզի երկու կողմերն էլ շահագրգռւած էին նրա մէջ, ուստի երկուսն էլ հեշտութեամբ յաղթահարեցին իրենց խանգարող բոլոր բարոյական ու իրական խոչընդոտները:

Գամսախուրդիան, որը կոմունիստների դէմ շանթ էր ժայթքում, յանկարծ գրկախառնուեց այն կոմունիստի հետ, որը բացի կոմունիստ լինելուց՝ հալածում է Ադրբեջանում ապրող անգլիացիներին, որոնք իրենց վրացի են համարում։

Իսկ Մութալիբովը համաձայնուեց Վրաստանի հետ բարենպաստ պայմաններով առեւտուր վարել, չնայած նրան, որ 9 հանրապետութիւնների պայմանագրի համաձայն , միութենական պայմանագիրը չստորագրող հանրապետութիւնները զրկւում են բարենպաստ պայմաններով առեւտուր վարելու իրաւունքից։

Այդ դաշինքի մէջ կատարւած խախտումները շատ են, բայց ո՛չ Վրաստանի և ոչ էլ Ադրբեջանի համար նրանք նշանակութիւն չունեցան։ Դաշինքի իրական նպատակները շատ յստակ են.-

1.- Երկու հանրապետութիւններն էլ ունեն ներքին ազգային խնդիրներ և մէկը միւսին վստահեցնում է, որ Անդրկովկասում սահմանային փոփոխութիւններ պիտի տեղի չունենան։

2.- Մութալիբովը նախագահական ընտրութիւններից առաջ ցանկանում է ցոյց տալ իր ժողովրդին, որ հարկ եղած դէպքում պատրաստ է դիմելու քայլերի, որոնք Կենտրոնի համար շատ էլ հաճելի չեն։

3.- Գամսախուրդիան ուզում է ձեռք բերել Անդրկովկասում հաշտարարի և առաջնորդի համբաւ։

4.- Երկու կողմերն էլ ուզում են ապացուցել, որ հայերը Անդրկովկասում ասելիք չունեն։

5.- Այս դաշինքը հաճելի է Թուրքիայի համար, որը իր վրայ է վերցրել այս երկու հանրապետութիւնների հովանաւորութիւնը։ Վրացիները Բաթումի ճամբով արդէն ազատօրէն մտնում են Թուրքիա։

Ինչպէս մենք տեսնում ենք, բանակցութիւնները փոխւում են և դաշինքները կնքւում՝ առանց հաշւի առնելու բարոյական ու իրաւական սկզբունքները, քանզի բանակցութիւնները ունեն սեփական փիլիսոփայութիւն և օրինաչափութիւններ։

Գամսախուրդիան արդէն նախատեսել է՝ կազմակերպել Թիֆլիսում Անդրկովկասի երեք հանրապետութիւնների ղեկավարների հանդիպումը։ Իսկ Հայաստանի ղեկավարութիւնը Ադրբեջանին առաջարկում է բանակցութիւններ՝ Արցախի խնդրով։ Եթէ այս բանակցութիւնները պիտի տեղի ունենան, ապա մեր կողմից նրանք պէտք է վարւեն բանակցութիւններին բնորոշ յատուկ տրամաբանութեամբ, որի մէջ կարելի է նկատել հետեւեալ սկզբունքները։

1.- Ուժեղի և թոյլի միջեւ երբեք բանակցութիւններ տեղի չեն ունենում, քանզի ուժեղը առանց որեւէ բանակցութիւնների պարտադրում է թոյլին իր կամքը:

2.- Եթէ ուժեղը բանակցութիւններ է առաջարկում թոյլին, ուրեմն նա այնքան ուժեղ չէ, որ կարողանայ թոյլին ամբողջովին կլանել, իսկ թոյլն էլ այնքան թոյլ չէ, որ բոլոր հարցերում ենթարկւի ուժեղին:

3.- Եթէ թոյլը ուժեղին բանակցութիւններ է առաջարկում, դա նշանակում է, որ արդէն պարտւած է և ջանում է փրկել եղածը, յոյսը դնելով ուժեղի մեծահոգութեան վրայ:

4.- Անկախ կողմերի թոյլ կամ ուժեղ լինելուց, նրանք կարող են բանակցել ու դաշինք կնքել մէկ երրորդ ուժի դէմ, որը երկուսին էլ անհանգստութիւն է պատճառում:

5.- Բանակցութիւնները որպէս օրէնք ընթանում են կողմերի գրաւած դիրքերի շուրջ, ուստի բանակցութիւններից առաջ ամէն մի կողմ ջանում է լաւ դիրքեր գրաւել: Վատի դիրքերից բանակցութիւններ վարելը անիմաստ է:

6.- Բանակցութիւններ սկսելուց առաջ կողմերը պէտք է յստակ պատկերացնեն, թէ որոնք են իրենց առաւելագոյն ու նւազագոյն պահանջները, և որն է նահանջի վերջին սահմանը, որից յետոյ կարգախօս է դառնում «**Մահ կամ Ազատութիւն**» սկզբունքը: Բացի դրանից՝ կողմերը պէտք է յստակ պատկերացնեն, թէ ի՞նչ քայլերի պիտի դիմեն, եթէ բանակցութիւնները անցնեն ապարդիւն:

7.- Բանակցութիւնների արդիւնքները չպէտք է հակասեն բանակցող կողմերից աւելի ուժեղ կողմին, որը կարող է չեղեալ համարել բանակցութիւնների արդիւնքները կամ խանգարել նրա իրականացմանը:

8.- Բանակցող կողմերը պէտք է ունենան յստակ ապացոյցներ, որ իրենք իսկապէս ներկայացնում են նրանց, ում անունից վարում են բանակցութիւններ և որ իրենք իսկապէս ի վիճակի են իրականացնել բանակցութեան արդիւնքների բոլոր կէտերը: Այսինքն՝ բանակցող կողմերը պէտք է կարողանան տալ փոխադարձ երաշխիքներ:

9.- Բանակցութիւնները ոչ մէկ իմաստ չունեն, եթէ կողմերը կիսելու բան չունեն և բախւել են միայն ուրիշների թելադրանքով:

10.- Նախքան բանակցութիւններ սկսելը, անհրաժեշտ է ուսումնասիրել հակառակորդի իրական մտադրութիւնները ու կարողութիւնները ինչպէս նաեւ սեփական ուժերը:

Ահաւասիկ, այս սկզբունքներից ելնելով, մենք յանգում ենք այն եզրակացութեան, որ թոյլ Հայաստանի և ուժեղ Ռուսաստանի վերջին տարիների փոխյարաբերութիւններում բանակցութիւններ վարելու իմաստով լինում էին

բարենպաստ և անբարենպաստ պայմաններ, բայց մենք ոչինչ կարողացանք ձեռք բերել բարենպաստ պայմաններում և չափից աւելին կորցրեցինք անբարենպաստ պայմաններում:

Ինչ վերաբերում է Ադրբեջանի հետ փոխյարաբերութիւններին, ապա այս բնագաւառում մեր յաղթանակը կամ պարտութիւնը ամբողջովին պայմանաւորուած էր Մոսկւայի հետ մեր յարաբերութիւններով և ինքնուրոյն նշանակութիւն չունէր: Եթէ մենք կարողանայինք, հայ-ադրբեջանական բախման մէջ, Մոսկւան պահել չէզոք դիրքերի վրայ, կասկածից վեր է, որ յաղթանակը մերը կը լինէր:

Յիրաւի, 1988 թւականի փետրուարի 25ին պաշտօնազրկուեց Արցախի մարզկոմի առաջին քարտուղար Գեւորկովը: Նոյն օրը Ամենայն Հայոց Կաթողիկոսը Գորբաչովին յղեց մի հեռագիր, խնդրելով նրանից արցախցիների պահանջի բաւարարում և յայտնելով, որ արտասահմանից նոյն խնդրանքով դիմել են հազարաւոր հայեր: Ցուցարարների թիւը հասել էր մէկ միլիոնի: Հայաստանում գտնուող Կոմկուսի կենտկոմի քարտուղարներ Լուկիանովը և Դոլգիխը կարդացին Գորբաչովի ուղերձը Հայաստանի և Ադրբեջանի բնակչութեանը: Փետրուար 26ին Գորբաչովը ընդունեց Սիլվա Կապուտիկեանին և Զօրի Բալայեանին ու սկսուեց Արցախի խնդրի քաղաքականացումը, որը պահանջում էր մեզանից՝ ղեկավարուել այն 10 սկզբունքներով, որոնք ես վերը նշեցի:

Այդ ժամանակ մենք պէտք է ելնէինք այն իրողութիւնից, որ Գորբաչովի թիմը այնքան ուժեղ չէ, որ մեզ բռնի ուժով ճնշի, բայց այնքան էլ թոյլ չի, որ հայերը կարողանան նրա գլխին նստել: Ուրեմն՝ մեզ անհրաժեշտ էր ձեւակերպել մեր առաւելագոյն ու նւազագոյն պահանջները, որոնցից առաջինը՝ Արցախը Հայաստանին միացնելն էր, իսկ երկրորդը՝ արցախի հայութեան ազգային իրաւունքների՝ պաշտպանութիւնը: Անմիջապէս նշենք, որ նուազագոյն պահանջներին Գորբաչովը բաւարարութիւն տուեց, խոստանալով՝

1.- Կազմակերպել Լեռնային Ղարաբաղում ռադիօ և հեռուստատեսային հաղորդումներ հայերէն լեզուով:

2.- Ղարաբաղի մշակութային և կրթական հաստատութիւնները ենթարկել Հայաստանի համապատասխան նախարարութիւններին:

3.- Վերականգնել Ադրբեջանի տարածութեան վրայ քանդուած տաճարները և պատմական յուշարձանները:

Այսքանից բացի, Գորբաչովը խոստովանեց, որ մամուլը սխալւում էր, երբ զանգւածային ժողովրդական ցոյցերի կազմակերպիչներին անւանում էր ծայրայեղականներ: Եթէ մեր պատգամաւորները Գորբաչովի մօտ մեկնած լինէին առաւելագոյն և նւազագոյն պահանջներ ներկայացնելու մտադրութեամբ, ապա նրանք Երեւան կը վերադառնային ոչ շատ երջանիկ, քանզի բաւարաւած

չէր նրանց առաւելագոյն պահանջը, բայց ոչ էլ շատ տխուր, քանզի նւազագոյն պահանջը բաւարարւած էր: Բայց մենք նւազագոյն պահանջ չունէինք և, բացի «միացումից», ուրիշ բանի մասին ո՛չ խօսել էինք ուզում և ոչ էլ լսել: Օպերայի հրապարակի աղմուկը կուրացրել ու խլացրել էր մեզ և եթէ մենք անհամբերութեամբ սպասում էինք կոմկուսի Կենտկոմի մարտի 26ի լիագումար նիստին, ապա միայն մէկ սպասումով՝ կենտկոմը Արցախը պիտի կցէր Հայաստանին: Ուրիշ որեւէ ելքի հետ մենք համաձայն չէինք և, ամենակարեւորը, չգիտէինք, թէ ի՞նչ պիտի անեն աղրբեջանցիները, նման որոշման առաջն առնելու համար: Ու փետրուարի 28ին տեղի ունեցաւ Սումգայթը:

Ջուտ մարդկային ողբերգութիւնից բացի Սումգայթի իրադարձութիւնները ցոյց տւեցին, որ Գորբաչովը ունի շատ ուժեղ ընդդիմադրութիւն, որը եթէ նոյնիսկ չի կազմակերպել Սումգայթի ցեղասպանութիւնը, ապա շատ լաւ օգտագործում է այն, Գորբաչովի երեսին նետելու համար. «Սա՞ է քո ժողովրդավարութիւնը, սա՞ էիր ուզում»:

Դժբախտաբար, այդ ընդդիմադիր ուժերի մէջ էր նաեւ Կարէն Դեմիրճեանը: Դժբախտաբար՝ որովհետեւ այն ժամանակւայ կացութիւնը այնպիսին էր, որ Գորբաչովը մոմի ճրագը ձեռքին համախոհներ էր որոնում իր կոմունիստ ընկերների մէջ ու չէր գտնում: Այդ ժամանակ ամէն մի բարձրաստիճան կուսակցականի, նամանաւանդ Հանրապետութեան Կոմկուսի առաջին քարտուղարի մակարդակի վրայ, պաշտպանութիւնը, Գորբաչովի համար մեծ նւէր կը լինէր: Այդ բանը չհասկացաւ Կ. Դեմիրճեանը, ինչը շատ լաւ հասկացաւ վրացի Շեւարդնաձէն ու դարձաւ երկրի արտաքին գործերի նախարարը: Մինչդեռ Դեմիրճեանի կարողութիւնները՝ Գորբաչովի թիմի մէջ բարձր պաշտօն գրաւելու համար, շատ աւելի մեծ էին:

Կարելի է հասկանալ կարծր քաղաքականութեան կողմնակից Դեմիրճեանին, որը չէր հաւատում, որ այսպէս կոչւած ժողովրդավարութիւնը կարող է երկար տեւել: Այդ բանին շատերը չէին հաւատում: Նրանք Դեմիրճեանի պէս սպասում էին Գորբաչովի անկմանը՝ աւելի բարձր պաշտօնի վրայ ցատկելու համար: Բայց հէնց սա էլ ազգային դաւաճանութիւն էր, որովհետեւ ստեղծւած ճգնաժամային պահին ամէն մի ղեկավար պէտք է մոռանայ սեփական «ԵՍ»ը և գործի ի շահ ժողովրդի: Նա ոչ միայն այդ բանը չարեց, այլեւ յենւելով իր բազմաթիւ կողմնակիցների վրայ՝ յամառօրէն մնաց իշխանութեան վրայ, Հայաստանը դարձնելով մի տեսակ այլախոհ հանրապետութիւն:

Մարտի 23ին տեղի ունեցաւ Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհրդի նիստը, որը նախագահում էր Ա. Գրոմիկոն և որտեղ ելոյթ ունեցաւ Գորբաչովը: Հինգ կէտից բաղկացած որոշման մէջ ասւած էր, որ Խորհրդային Սահմանադրութեամբ որոշւած սահմանները փոփոխութեան ենթակայ չեն:

Այսքանը բաւական էր, որ Հայաստանում սկսւէր իրարանցում, որի ժամանակ բոլորը աղաղակում էին, բայց ոչ մէկը չէր ուզում մտածել այն ուղղութեամբ, թէ ինչո՞ւ Գերագոյն Խորհուրդը ընդունեց նման որոշում և ի՞նչ կարելի է անել առանց սահմանները փոփոխութեան ենթարկելու։

Այս կացութեան մէջ Գորբաչովը ի վերջոյ համարձակւեց պաշտօնազրկել Կ. Դեմիրճեանին և Կ. Բաղիրովին։ Նրանց տեղերը գրաւեցին Ս. Յարութիւնեանը և Ա. Վեզիրովը։ Ստեղծւեց նոր քաղաքական կացութիւն և անհրաժեշտ էին նոր մօտեցումներ։ Արդէն պարզ էր, որ բազմաթիւ պատճառներով Արցախի միացումը Հայաստանին անկարելի է։ Այդ մասին ամէն քայլափոխում յայտարարում էր Գորբաչովը, պահանջելով փոխ-զիջում և այնպիսի ելք, որի մէջ յաղթողներ չլինեն։ Այս կացութեան մէջ յաղթական դուրս կը գար այն կողմը, ով առաջինը համաձայնւէր փոխ-զիջման թեզի հետ։ Այս թեզը կարող էր առաջ քաշել Ս. Յարութիւնեանը և, հաւանաբար, Վեզիրովի հետ միասին, նրանք նման մի խոստում տւել էին Գորբաչովին։ Սակայն մեր մնայուն ցուցարարները այնպիսի մի վիրաւորական արշաւ սկսեցին Յարութիւնեանի դէմ, որ նա շփոթութեան մէջ ստիպւած եղաւ նահանջել քաղաքական վարքագծից դէպի ամբոխավարութիւն, որից յետոյ Կենտկոմի շէնքի վրայից հանւեցին վարտիկները և Յարութիւնեանին այլեւս տիկին չէին կոչում։

Յունիսի 7ին, հանդէս գալով Երեւանի ցուցարարների առջեւ, Յարութիւնեանը խոստացաւ, որ յունիսի 15ին Հայաստանի Գերագոյն Խորհուրդը որոշում է ընդունելու Արցախը Հայաստանին միացնելու մասին։ Հաւանաբար Վեզիրովին ապշեցրեց Յարութիւնեանի այս «դաւաճանութիւնը» և Ադրբեջանի Գերագոյն Խորհրդի նիստը տեղափոխեց յունիսի 17ին, սպասելով հայերի որոշմանը։

Հայաստանի Գերագոյն Խորհուրդը կայացրեց Յարութիւնեանի խոստացած որոշումը, իսկ Ադրբեջանը մերժեց ճանաչել այդ որոշումը։

Այս երկու որոշումներից յետոյ, կացութիւնը նորից փոխւեց։ Ղարաբաղի Հարցի շուրջ տեղի ունեցած բախումը այլախոհական և ժողովրդի ինքնագործունէութեան մակարդակից անցաւ կառավարական մակարդակի վրայ, որտեղ հնարաւոր էին երկու հիմնական քաղաքական ուղղութիւններ։ Առաջինը՝ չէզոք վիճակում պահել Մոսկւան և մէն-մենակ պայքարել Ադրբեջանի դէմ։ Երկրորդը՝ քաշել Մոսկւային մեր կողմը։ Սակայն հակագորբաչեւեան և հակառուսական տրամադրութիւնները այնքան էին արմատացել Հայաստանում, որ Մոսկւան մեր կողմը քաշելու բոլոր ճիգերը նկատւում էին որպէս դաւաճանութիւն։

Ինչ վերաբերւում է Ադրբեջանի դէմ մէն-մենակ պայքարելու ծրագրին, ապա պէտք է ասել, որ հայ ժողովուրդը շատ արագ կարողացաւ պատրաստուել ինքնապաշտպանութեան և փաստօրէն պահեց Արցախը անկախ վիճակում այնքան ժամանակ, քանի դեռ Մոսկւան չէզոք էր, այն էլ ոչ թէ մեր ճիգերով, այլ սեփական քաղաքական հաշւարկներով: Եւ պէտք է ասել, որ այդ չէզոքութիւնը ոչ թէ ձեւական էր, այլ իրական: Որպէս փոխ-զիջողական ծրագրի իրականացում՝ Մոսկւան ստեղծեց Արցախի ղեկավարման յատուկ Կոմիտէ: Այդ բանը տեղի ունեցաւ 1989 թւականի յունւար ամսին, իսկ մինչ այդ ձերբակալուեցին «Ղարաբաղ Կոմիտէ»ի անդամները: Գուցէ այդ ձերբակալութիւններն էլ կապ ունէին Կոմիտէի ստեղծման հետ: Հաւանաբար, Մոսկւան ուզում էր չէզոքացնել աղմկողներին: 7 կէտից բաղկացած այս որոշումը և Կոմիտէի նախագահի պաշտօնին Արկադի Վոլսկու նշանակումը կարելի էր նկատել հայ ժողովրդի մեծագոյն յաղթանակ, որը ստեղծել էր մեր հետագայ քայլերի համար աներեւակայելի բարենպաստ պայմաններ: Բայց այս կացութիւնն էլ մենք չկարողացանք վերլուծութեան ենթարկել ու կրկին հրապարակ իջանք «Միացում» կարգախօսով:

Բայց ահա ազատ արձակւեցին «Ղարաբաղ Կոմիտէ»ի անդամները և, Հ.Հ.Շ. դարձած, անցան իշխանութեան գլուխ: Կրկին ստեղծւեց նոր կացութիւն, որի առանձնայատկութիւնը այն էր, որ Մոսկւայի չէզոքութիւնը պահելու համար անհրաժեշտ էին յատուկ ճիգեր, քանզի իշխանութիւնը անցել էր հակակոմունիստների ձեռքը: Բայց Հայաստանի նոր ղեկավարները բռնեցին ճիշտ հակառակ ուղին: Նրանք ամէն ինչ արեցին՝ Մոսկւան Ադրբեջանի գիրկը նետելու համար, որից յետոյ հայերը ստիպւած եղան դիմադրելու ոչ միայն ադրբեջանցիներին, այլեւ խորհրդային բանակին:

Այժմ, երբ մենք պարտւած ենք, Հայաստանի պառլամենտում լսւում են ձայներ՝ Ադրբեջանի հետ բանակցութիւններ վարելու օգտին: Բայց բանակցութիւնների փիլիսոփայութիւնը շատ յստակ է՝ նա միայն պահանջում է, որ պարտւողը ձեռքը վեր բարձրացնի ու ընդունի յաղթողի վերջնագիրը: Իսկ այդ վերջնագիրը մեզ քաջ յայտնի է, Արցախը պէտք է Նախիջեւան դառնայ: Իսկ պարտւեցինք մենք, որովհետեւ Հայաստանի նոր ղեկավարութիւնը, ինչպէս նաեւ ամբոխը չկարողացան հրաժարւել «Ազատութիւն», «Անկախութիւն», «Ինքնորոշում» բարոյական սկզբունքներից՝ յօգուտ քաղաքական մօտեցումների:

Եւ կացութիւնը, ըստ երեւոյթին, այսօր էլ չի փոխւել:

Յունիսի 12ին Գերագոյն Խորհրդի նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի կինը՝ Լիւդմիլա Տէր Պետրոսեանը «**Զնամեա Իւնոստի**» հանդէսի հետ ունեցաւ

մի հարցազրոյց, որը բաւականին մտահոգիչ է: Ի հարկէ, նախագահի կինը դեռեւս նախագահը չէ, բայց ընտանիքում վարած խօսակցութիւնները յաճախ դառնում են համոզմունք և, հաւանաբար, Լիւդմիլա Տէր Պետրոսեանի տեսակէտները և մտածումները ձեւակերպւել են հէնց այդ խօսակցութիւնների ժամանակ և շատ էլ հեռու չեն նրա ամուսնու մտածումներից: Տիկին Տէր Պետրոսեանը համարում է, որ Արցախում տեղի ունեցող իրադարձութիւնները «կազմակերպւած գրգռումներ» են: Գրեթէ այս նոյն տեսակէտը արտայայտեց Լեւոն Տէր Պետրոսեանը, Փարիզում, յայտարարելով՝ որ ադրբեջանցիները մեղք չունեն, ամէն ինչ կազմակերպել է Գորբաչովը: Բայց չէ՞ որ ճիշտ նոյն կարծիքը յայտնում է խորհրդային մամուլը, միայն այն տարբերութեամբ, որ նրա համար գրգռողները հայ ծայրայեղականների են: Այսինքն՝ իշխանութիւնների և ադրբեջանցիների համար Արցախի ճգնաժամը ստեղծեց «Ղարաբաղ Կոմիտէ»ն, իսկ Լիւդմիլայի համար՝ Միխայիլ Գորբաչովի թիմը: Իսկ ամենակարեւորը այն է, որ տիկին Տէր Պետրոսեանի համար շատ հաճելի էր, որ հայերին պաշտպանում էին Կիեւում, Լվովում, Մոսկւայում, Լենինգրադում և Թբիլիսիում: Նա չափով դատապարտում է Մերձ-բալտեան հանրապետութիւններին, որոնք քիչ ուշադրութիւն են դարձնում կայսրութեան մէջ ծագած ժողովրդավարական շարժումներին, քանզի միայն միասնական ուժերով կարելի է դուրս պրծնել կայսրութիւնից: Եւ դրանից յետոյ տիկին Տէր Պետրոսեանը բոլորին ազատութիւն է ցանկանում:

Բոլոր նման խօսակցութիւնները ոչ այլ ինչ են, եթէ ոչ այլախոհական ճառեր: Արցախի Հարցում ոչ մէկ գրգռող չկայ: Այդ շարժումը սկսեցին արցախցիները սեփական կամքով ու սկսեցին ոչ թէ այսօր, այլ դեռեւս Խրուշչովի ժամանակ, երբ ո՛չ Գորբաչով կար և ոչ էլ «Արցախ Կոմիտէ»: Արցախցիներին չպաշտպանեցին ո՛չ Կիեւում, ո՛չ Մոսկւայում, ո՛չ Լենինգրադում և ոչ էլ Թբիլիսիում, որովհետեւ պաշտպանութիւն չի կարելի համարել մի 10-15 հոգու հայանպաստ յայտարարութիւնները: Իսկ լուրջ քաղաքական ուժերը մեզ չպաշտպանեցին մեր իսկ մեղքով: Փառք Աստծոյ, որ մեզ դեռեւս չեն քաշել վերացական ընդհանուր պայքարների մէջ, որոնցից ոչ մէկը կապ ունի հայկական խնդիրների հետ: Վա՛յ մեզ, եթէ Լիւդմիլա Տէր Պետրոսեանի ամուսինն էլ այդպէս է մտածում և ուզում է Հայաստանը մասնակից դարձնել համամիութենական ժողովրդավարական շարժումների: Պատմական փորձը ցոյց է տալիս, որ ժողովրդավարութիւնը ազգային հարցեր չի լուծում: Ո՛չ ժողովրդավարական Անգլիան, ո՛չ ժողովրդավարական Իսպանիան, ո՛չ ժողովրդավարական Իսրայէլը չեն լուծում Հիւսիսային իրլանդացիների, բասկերի ու պաղեստինցիների ազգային հարցերը: Չեն լուծի նաեւ մեր հարցերը, եթէ նոյնիսկ Ռուսաստանը դառնայ աշխարհի ամենաժողովրդավարական երկիրը: Հայ ժողովըր-

դին ժողովրդավարութիւնը անհրաժեշտ է իր ներքին հարցերը լուծելու համար, սակայն այս ներքին ժողովրդավարութիւն հաստատելու հարցում Հայաստանի ղեկավարութիւնը չի շտապում։

Ինչ մնում է Լիւդմիլա Տէր Պետրոսեանի բոլորին ազատութիւն շնորհելու ցանկութեանը, ապա սա էլ գեղեցիկ ճառ է և ուրիշ ոչինչ։ Հաւատում եմ, որ իմ վաղեմի բարեկամ Լիւդմիլան ազատութիւն է ցանկանում բոլորին, այդ թւում նաեւ պաղեստինցիներին, բայց Լիւդմիլայի ցանկութիւնը ոչ մէկ նշանակութիւն ունի քաղաքական գործիչ Շամիրի համար, որը իր պետութեան շահերից ելնելով այդ ազատութիւնը չի տալիս պաղեստինցիներին։ Այդ ինչո՞ւ պիտի վրացիները, ուկրայնացիները և ուրիշ ազգեր, իրենց ազգային խնդիրները թողած, մտնեն ինչ որ ընդհանուր պայքարների մէջ, որոնցից և ո՛չ մէկը, ո՛չ մէկ ժամանակ, ո՛չ մէկ ազգային հարց չի լուծել։ Ժամանակն է, որ հայ ժողովուրդը, նամանաւանդ նրա ղեկավարները և նրանց ընտանիքի անդամները, կարողանան տարբերել զուտ հայկական խնդիրները՝ համամարդկային խնդիրներից։ Ու ժամանակն է, որ հայ ժողովրդի ազգային ու պետական խնդիրներով զբաղւեն քաղաքական ու պետական գործիչները, թողնելով համամարդկային խնդիրները եկեղեցուն, բարեգործական ընկերութիւններին և իրաւապաշտպան հասարակական կազմակերպութիւններին։ Թէ չէ, էլ ինչո՞ւ մեղադրել բոլշեւիկներին, որոնք պայքարում էին միջազգային պրոլետարիատի շահերի համար, բայց կործանում էին Հայաստանը։ Ոչ մէկը այսօր կարող է մեղադրել Շահումեանին, Միասնիկեանին կամ Տէր Գաբրիէլեանին, թէ նրանք անկեղծ էին համամարդկային արժէքներին ծառայելու իրենց զգացմունքներում։ Դաւաճանութիւնը այդտեղ չէր, դաւաճանութիւնը միջազգայինը ազգայինի վրայ կառուցելու սկզբունքից հրաժարւելու մէջ էր։

1991

ՓՐԿՈՒԹԵԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՈՐՈՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

Է. Յովհաննիսեան

Պատմական փորձը, ինչպէս նաեւ այսօր տեղի ունեցող իրադարձութիւնները գալիս են ապացուցելու այն բացարձակ ճշմարտութիւնը, որ յեղափոխականները և յեղափոխութիւնները ծնում են ազատութիւն, իսկ ազատութիւնը ծնում է անկախութիւն: Իսկ երբ յեղափոխութիւնը անազատ երկիրը անկախ է դարձնում, ապա այդ անկախութիւնը կա՛մ երկար չի տեւում, և կամ էլ այդ երկրում երբեք ազատութիւն չի ստեղծւում: Անկախութիւնը միայն իշխանաւորներին է տալիս ազատութիւն, մինչդեռ ազատութիւնը ամբողջ ժողովըրդինն է:

Ո՛չ Հայաստանը և ոչ էլ Արցախը այն քաղաքական միաւորները չէին, որ սեփական ուժերով կարողանային կերտել սեփական ճակատագիրը, առանց հաշւի նստելու նախկին Խորհրդային Միութիւնում տեղի ունեցող իրադարձութիւնների հետ: Եւ պէտք է ասել, որ Հայաստանը միայն վերջին ամիսներում, այսինքն Անկախ Պետութիւնների Ընկերակցութեան ստեղծումից յետոյ սկսեց հաշւի նստել Ռուսաստանի հետ: Իսկ մինչ այդ կարծես թէ դիտաւորեալ լարում էր Ռուսաստանին հայերի դէմ՝ նրան ատեալ «երրորդ ուժ» նկատելով: Սկզբից Կ. Դեմիրճեանը, ապա ժողովուրդը իր մտաւորականութեամբ հանդերձ, յետոյ Հայաստանի նոր ղեկավարութիւնը բռնեցին այնպիսի հակազորբաչովեան դիրք, որը ոչ մի կերպ չէր համապատասխանում ամենատարրական քաղաքական սկզբունքներին և եթէ մենք այսօր դեռեւս շնչում ենք (Աստւած շնչել համարի), ապա միայն այն պատճառով, որ Ելցինի իշխանութեան գլուխ անցնելուց յետոյ, Հայաստանը հրաժարւեց իր հակառուսական և հակամիութենական դիրքերից ու մտաւ Անկախ Պետութիւնների Ընկերակցութեան մէջ, հրաժարւելով սեփական բանակ ստեղծելու գաղափարից: Այսօր Հայաստանի ղեկավարութիւնը հրապարակաւ յայտարարում է, որ ինքը հետեւողական էր իր քաղաքականութեան մէջ, սակայն իրականում Հայաստանի ղեկավարները, փառք Աստծոյ, փոխեցին իրենց նախորդ քաղաքական դիրքորոշումը, որտեղ անկախութիւնը նրանց համար աւելի կարեւոր էր, քան ազատութիւնը:

Մնում է միայն ցաւով նշել, որ եթէ նման շրջադարձ պիտի ունենար, ինչո՞ւ այդ բանը տեղի չունեցաւ այն ժամանակ, երբ Գորբաչովը միութենական պայմանագիրը ստորագրելու կոչեր էր անում, իսկ Հայաստանը, հակառակ Ադրբեջանի, կտրականապէս հրաժարւում էր այդ պայմանագիրը ստորագրելուց, որի հետեւանքով խորհրդային բանակը անցաւ ադրբեջանցիների կողմը և նրբանք միասնական ուժերով դատարկեցին Արցախի հայկական գիւղերը:

Այս մասին ես խօսում եմ ոչ թէ որեւէ մէկին դատապարտելու ու նեղացնելու նպատակով, այլ ապագայի նկատմամբ աւելի իմաստուն գտնուելու նկատառումով։

Նա, ով ուշադիր կարդում է Ռուսաստանի մամուլը, չի կարող չնկատել, որ նախկին Միութեան քայքայման հակառակորդները օրէց-օր ամրապնդւում են, իսկ Ելցինը օրէց-օր կորցնում է իր հեղինակութիւնը։ Ոչ միայն զինուորականները, ոչ միայն ռուս ժողովուրդը, ոչ միայն նախկին կոմունիստները ու ԿԳԲի գործակալները, այլ հէնց ժողովրդավարականները ու բարեփոխիչները այսօր խօսում են միութեան վերականգնման մասին։ Իսկ քանի դեռ նախկին Խորհրդային Միութեան սահմանները հսկւում են նախկին Խորհրդային զօրքերի կողմից, Միութիւնը քայքայւած չի կարելի համարել։

Ռուսաստանի ժողովրդական երեսփոխան, Ռուսաստանի քրիստոնեայ-դեմոկրատական շարժման քաղաքական խորհրդի նախագահ Վիկտոր Ակսիւշիցը յունւարի 21ին «**Պրաւդա**» թերթում հրատարակեց մի յօդւած, որը վերնագրւած էր այսպէս,- «**Մենք բոլորս խաբւած ենք**»։ Իր յօդւածում հեղինակը նշում է, որ Անկախ Պետութիւնների Ընկերակցութիւնը ոչ թէ միացնում, այլ վերջնականապէս բաժանում է ժողովուրդներին։ «**Եթէ Ռուսաստանի ղեկավարութիւնը**,- գրում է Ակսիւշիցը,- **չվերանայի իր պետական և ազգային քաղաքականութիւնը, ապա ժողովուրդը կ'ապստամբի և Ելցինը ստիպւած կը լինի դիմել բռնութեան, որից յետոյ նա կը կորցնի իշխանութիւնը։ Մենք Ելցինի հետ էինք, երբ նա տապալում էր կոմունիստական վարչակարգը, բայց մենք երբեք նրա հետ չենք լինի, եթէ նա տապալի ռուսական պետականութիւնը**»։ Քննադատեց Ակսիւշիցը նաեւ Ելցինի ժողովրդավարութիւնը։ «**Այսօր ժողովրդավարութիւնը**,- գրում է նա,- **մէնիշխանութեան տակ է։ Ժողովրդավարական է համարւում միայն այն տեսակէտը, որը արտայայտում է իշխանաւորը։ Իսկ ընդդիմադրութեան տեսակէտը, առանց որի անկարելի է ժողովրդավարութիւնը, յայտարարւում է հակաժողովրդավարական։ Ռուսաստանի մամուլը մեզ չի հրատարակում, անւանելով մեզ կայսերապաշտներ, ցեղապաշտներ և ֆաշիստներ**»։

Իսկ յունւարի 14ին «**Կոմսոմոլսկայա Պրաւդա**» թերթը հրատարակեց իր հարցազրոյցը փիլիսոփայական գիտութիւնների դոկտոր Ալեքսանդր Ցիպկոյի հետ, որը նշեց, որ ռուս ժողովուրդը հիւանդ է, քանզի այլեւս չի հասկանում պետութեան արժէքը։ Նկարագրելով նախկին Խորհրդային Միութիւնում ստեղծւած կացութիւնը՝ Ցիպկոն, որը ազգութեամբ ուկրաինացի է, ասում է,- «**Մի՞թէ պարզ չէր, որ Խորհրդային Միութեան քայքայումը կը ստեղծի պայմաններ նաեւ Ռուսաստանի քայքայման համար։ Մի՞թէ պարզ չէր, որ Խորհրդային Միութեան քայքայումը այսօրւայ արհեստական սահմաններով, մեծ ճգնաժամ է առաջացնելու ռուսական սփիւռքում և Ռուսաստանը չի կարողանալու**

ընդունել միլիոնաւոր ռուս փախստականների Արեւմուտքից, Արեւելքից ու Հարաւից: Մի՞թէ պարզ չէր, որ երկրում ստեղծելու է զանգւածային դժգոհութիւն Ռուսաստանի ժողովրդավարականների նկատմամբ: Չեմ կարծում, որ մեր արմատական ժողովրդավարականները աւելի խելացի գտնուեցին, քան մեր զօրավարները, որոնց արհամարհում էին վերջին տարիների ընթացքում: Շառլատանները և ծաղրածուները դառնում են հայրենասէրներ և հայրենիքի փրկիչներ: Ազատութիւնից ցնորուած ժողովրդավարականները բռնութեան ճամբան են բացում: Ամէն ինչ առեղծւածային է: Ի՞նչ է Անկախ Պետութիւնների Ընկերակցութիւնը, եթէ ոչ առեղծւածք ու գիտակցութեան այլասերում: Եղաշրջումը՝ նոյնպէս առեղծւածք: «Օրինական ընտրուած» նախագահները՝ առեղծւածք: Իսկ Ռուսաստանը չի տապալուել, տապալուել է միայն կոմունիստական փորձը Ռուսաստանում»:

Ինչ վերաբերում է բարձրաստիճան զինուրականներին, ապա նրանք տարբեր առիթներով ու տարբեր տեղ նշում են, որ Ռուսաստանի այսօրւայ ղեկավարութիւնը կործանում է երկիրը: Ռուսաստանի փոխ-նախագահ Ռուցկոյի օգնական զօրավար Ստեռլինգովը, օրինակ, վերջերս նշեց որ «**Ռուսաստանի շահերի նկատմամբ արհամարհանքը հասցրեց մեզ նրան, որ Ռուսաստանը այժմ գտնւում է Բրեստի պայմանագրի սահմաններում, որը երկրի վզով փաթաթեցին բոլշեւիկները: Պետութեան ամբողջականութիւնը քայքայւած է, ռուս ժողովուրդը մնացել է անպաշտպան, բանակը քայքայւած է: Մենք պէտք է դուրս բերենք մեր հայրենիքը այս խայտառակութիւնից**»:

Նման տեսակէտներ արտայայտւում են շատերի կողմից, իսկ տնտեսական ճգնաժամը էլ աւելի լսելի է դարձնում նախկին Միութիւնը վերականգնելու կոչերը: Ժողովուրդը սկսել է հասկանալ, որ Գորբաչովի ճիգերը՝ ժողովրդին ազատութիւն տալու ուղղութեամբ, ամէնեւին էլ չէին ենթադրում երկրի քայքայումը և անկախութիւնների շքերթ: Կարելի էր շարժւել դասական ճանապարհով՝ ազատութիւնից դէպի անկախութիւն: Ու քանի որ նման տրամադրութիւնները բաւականին պարարտ հող են գտնում Ռուսաստանում մենք պէտք է պատրաստ լինենք ամէն տեսակի անակնկալների: Կարող է այնպէս պատահել, որ Ռուսաստանում իշխանութեան գլուխ անցնեն նոր ուժեր, որոնք Ելցինին թոշակի ուղարկեն և վերականգնեն նախկին Միութիւնը, կամ աւելի ճիշտ նոր տեսակի Միութիւն ստեղծեն: Ինչ պիտի անենք մենք այդ դէպքում: Նորի՞ց յամառօրէն պիտի պնդենք անջատման վրայ, թէ պիտի յարմարւենք նոր պայմաններին՝ մեր ժողովուրդը փրկելու համար:

Այս իմաստով արցախցիների քաղաքական բնազդը աւելի առողջ գտնուեց: Սկզբնական շրջանում նրանք պահանջում էին իրենց իրաւունքների պաշտպանութիւն, այսինքն ազատութիւն և իրենց արդարացի այդ պահանջը ներ-

կայացնում էին Գորբաչովի բարեփոխութիւնների սահմաններում: Եթէ նրանք ուզում էին վերամիաւորուել Հայաստանի հետ, ապա միայն Ադրբեջանի իշխանութեան տակից դուրս գալու, այլ ոչ թէ Հայաստանի սահմանները ծաւալելու համար: Գուցէ մեր բոլորի մեղքն է, որ այն ժամանակ չկարողացանք Ղարաբաղի Հարցը դարձնել ղարաբաղցիների իրաւունքների պաշտպանութեան շարժում: Մենք միասնաբար բացագանչում էինք «**Միացում**», բայց երբեք չէինք բացագանչում «**Ադրբեջանից անջատում**»: Այս ուղու վրայ էլ կորցրինք Վոլսկու Կոմիտէի տրուած հնարաւորութիւնները: Երբ արցախցիները համոզեցին, որ «**միացման**» համար բոլոր խաղաղ միջոցները սպառուած են, նրանց մնաց միայն դիմել ինքնապաշտպանութեան: Եւ հէնց այստեղ էլ պարզըւեց, որ նրանք կռւում են ոչ թէ Հայաստանին միանալու, այլ սեփական տները ու ժողովուրդը պաշտպանելու համար: Պէտք է ասել, որ մեր պատմութեան վերջին հարիւրամեակների ընթացքում, հաւանաբար Կիլիկիայի անկումից յետոյ, մեր ժողովրդի ոչ մէկ ապստամբութիւն չի տեւել այսքան երկար: Արդէն 4 տարի է, ինչ Արցախը փաստօրէն անկախ է Ադրբեջանից: Այդքան երկար չտեւեց նոյնիսկ Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնը: Թանկ գին են վճարում մեր եղբայրները Արցախում իրենց անկախութեան համար, բայց առայժմ ադրբեջանցիները մեր պատմական Հայաստանի այդ մասում ասելիք չունեն: Որքա՞ն երկար կարող է տեւել արցախցիների ազգային ազատագրական պայքարը, դա կախուած կը լինի մեր բոլորի ճիգերից:

Ստեղծուած կացութեան մէջ մենք ունենք փաստօրէն երկու հայկական պետական միաւորներ՝ Հայաստանի Հանրապետութիւնը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը: Առաջինը ճանաչուած է տասնեակ պետութիւնների կողմից և յատկապէս Ռուսաստանի կողմից, իսկ երկրորդը ոչ մէկի, նոյնիսկ Հայաստանի կողմից ճանաչուած չէ: Անմիջապէս նշենք, որ եթէ Ռուսաստանում տեղի ունենան մեզ համար անբարենպաստ իրադարձութիւններ և Ռուսաստանը, օրինակ, կրկին իր թաթը դնի Հայաստանի վրայ, Հայաստանին ճանաչած 70 երկրներից և ոչ մէկը Հայաստանին օգնելու համար զօրք չի ուղարկի և որպէս նրա պաշտպան չի հանդիսանայ: Լաւագոյն դէպքում այդ պետութիւնների իրաւապաշտպան կազմակերպութիւնները մի երկու խօսք կ'արտասանեն ինքնորոշման իրաւունքների մասին և կ'ընդունեն Հայաստանի որբերին ու փախստականներին: Եւ կարող է այնպէս պատահել, որ Ռուսաստանի զօրքերը մտնեն Ղարաբաղ՝ այնտեղի հայերին պաշտպանելու համար, եթէ օրինակ ադրբեջանցիները որոշ քայլեր կատարեն՝ հակառակ Ռուսաստանի շահերի: Սա նշանակում է, որ մեր բոլորիս քաղաքական քայլերը նախ պէտք է լինեն հասուն, ապա համադրուած:

Շատ հասկանալի է, օրինակ, որ Հայաստանը այլեւս չի կարող և չի դնում Արցախը Հայաստանին միացնելու հարցը: Հակառակ դէպքում նա կը դատւէր հողային պահանջներ ունեցող երկրների շարքին ու չէր կարող ճանաչել Հելսինկեան համաձայնութիւնները ստորագրած երկրների կողմից: Պէտք է ասել, որ Հայաստանի արտաքին գործերի նախարար Րաֆֆի Յովհաննիսեանը այդ գիծը շատ յստակ վարում է բոլոր միջազգային հանդիպումների ժամանակ: Սակայն, դա չի նշանակում որ Հայաստանը չի կարող ճանաչել Լեռնային Ղարաբաղի անկախութիւնը, քանի որ արցախցիք այդ անկախութիւնը հռչակել են սեփական իրաւունքները պաշտպանելու նկատառումներով, այլ ոչ թէ իշխանաւորների փառասիրութիւնը բաւարարելու համար: Ճիշտ այնպէս, ինչպէս Թուրքիան չի խօսում Կիպրոսի թրքական հանրապետութիւնը իրեն միացնելու մասին, բայց ճանաչում է այդ հանրապետութեան անկախութիւնը, Հայաստանն էլ կարող էր ճանաչել Լեռնային Ղարաբաղի ինքնիշխանութիւնը:

Այս կացութեան մէջ կայ նաեւ մէկ ուրիշ կարեւոր առանձնայատկութիւն: Հայաստանը արդէն ճանաչել է շատ պետութիւնների կողմից, ունի իր ներկայացուցիչները արտասահմանում և շուտով ունենալու է իր դեսպանները և հիւպատոսները: Սա նշանակում է, որ Հայաստանը պաշտօնական ճանապարհով կարող է արտասահմանում պաշտպանել իր տնտեսական և քաղաքական շահերը: Նա կարող է արտասահմանից ստանալ այդ օգնութիւնը՝ առանց ծանրաբեռնելու հայկական Սփիւռքը: Աւստրիայի Կարմիր Խաչի կամ ամերիկեան Կոնգրէսի օգնութեանը համեմատութեամբ՝ հայկական Սփիւռքի կարողութիւնները պարզապէս աննշան են, ուստի այս բնագաւառում Սփիւռքը կարող է միայն միջնորդի դեր կատարել՝ ուրիշ կառավարութիւններից ու ընկերութիւններից Հայաստանի համար միջոցներ հայթայթելու համար: Մինչդեռ մեր երկրորդ հանրապետութիւնը՝ Արցախը, ամբողջովին անպաշտպան է: Ոչ Կարմիր Խաչը և ոչ էլ կոնգրէսները նրան օգնութեան չեն հասնի, մինչեւ որ նա չճանաչուի միջազգային կազմակերպութիւնների կողմից առնըւազն որպէս աղէտի գօտի: Եւ Արցախին նիւթապէս ու բարոյապէս օգնելու դժւարին պարտականութիւնը ընկնում է Սփիւռքի ուսերի վրայ: Այս մեծ գործը ազգային ու քաղաքական բարձր ինքնագիտակցութիւն է պահանջում, ուժերի ծայրայեղ լարում, որովհետեւ սա է այսօր ՀԱՅ ԴԱՏԸ: Ճիշտ այն ոգեւորւածութեամբ ու նւիրումով, որով մենք լծւեցինք Հայ Դատի աշխատանքներին վերջին 20 տարիների ընթացքում, ճիշտ այդ նոյն ջանքերը մենք պէտք է գործադրենք Արցախի քաղաքական ու տնտեսական հարցերը լուծելու գործում:

Լաւ կը լինէր, որ այդ ջանքերը համազգային լինէին, չէ՞ որ Արցախը բոլորինս է, բայց ես այն կասկածը ունեմ, որ այդ ճիգերը միասնական չպիտի լինեն, քանզի Հայաստանի այսօրւայ կառավարութիւնը համազգային չէ: Այդ

կառավարութիւնը չկարողացաւ համախմբել ազգը ազգային արժէքների շուրջ, կատարել աշխատանքի բաժանում և ստեղծել համայն աշխարհի հայութեան միասնութիւնը: Հայկական Սփիւռքը ինչպէս կար բոլշեւիկների ժամանակ, այնպէս էլ մնաց պառակտուած: Պիտի ասեն, թէ ինչո՞ւ եմ ես նորից քննադատում հայրենիքի կառավարութիւնը: Շատ պարզ պատճառով, ես պատկանում եմ ընդդիմադիր կուսակցութեան եւ իմ ուղղակի պարտականութիւնների մէջ է մտնում կառավարութեան քննադատութիւնը: Նա, ով ինձ կը մեղադրի իմ քննադատութեան համար, ժողովրդավարութիւնից գաղափար անգամ չունի: Իսկ եթէ Հայաստանի կառավարութիւնը համահայկական լինէր նման յօդուած գրելու կարիքը անգամ չէր լինի: Հայաստանի կառավարութիւնը կ'ասէր մեզ, ես իրաւունք չունեմ Արցախի հարցերով զբաղւելու, բայց դուք զբաղւէք, իսկ ես էլ տակից կ'օգնեմ: Սակայն Հայաստանի կառավարութիւնը առնւազն Սփիւռքում այդպէս չի վարւում: Նա ստեղծել է իր ներկայացուցիչների ցանց, որոնք առանց բացառութեան բաղկացած են հակաղաշնակցական տարրերից, և երբեմն այնքան ապիկար են, որ ոչ թէ Հայ Դատով զբաղւելու, այլ մէկ թերթի հետ հարցազրոյց ունենալու կարողութիւնը չունեն:

Շատ մեծ մտահոգութիւն ունեմ, որ ստեղծւած պայմաններում Արցախին օգնելու պարտականութիւնը ընկնելու է Հ.Յ.Դաշնակցութեան ուսերի վրայ: Լաւ կը լինէր, որ Լեռնային Ղարաբաղի ղեկավարութիւնը, ի տարբերութիւն Հայաստանի, առանց խտրականութեան նշանակի իր ներկայացուցիչները արտասահմանում և նրանց պաշտօնական լիազօրութիւններ տայ իր հարցերով զբաղւելու համար: Հաւանաբար, այդ դէպքում, մենք կարող ենք դուրս գալ այն ամօթալի վիճակից, երբ տարբեր դրամահաւաքների ու միջոցառումների ժամանակ մարդիկ հետաքրքրւում են ոչ թէ այն հարցով, թէ ինչին է նւիրւած միջոցառումը, այլ ո՛վ է կազմակերպիչը:

Աւելին, վերջերս Աւստրիայում Հայաստանի արտաքին գործերի նախարար Րաֆֆի Յովհաննիսեանը Հայաստանի օգտին դրամահաւաքին նոր տեսք տւեց: Ըստ նրա պաշտօնական յայտարարութեան, Հայաստանի նախագահի կաճառի անդամ կը համարւի նա, ով Հայաստանին կը նւիրի մէկ միլիոն դոլար և աւելին: Բարերար կը համարւի, նա ով նւիրում է 100.000 դոլար: Հովանաւոր՝ 10.000 դոլար վճարողը: Բարեկամ՝ հազար դոլար վճարողը: Եւ համակիր 100 դոլար վճարողը: Չեմ ուզում քննադատել մեր նախարարին, որին անձամբ ճանաչում եմ և յարգում, սակայն չեմ կարող նաեւ անցնել այն փաստի կողքից, որ նման դրամահաւաքը բուրժւա-մասսոնական բնոյթ է կրում: Նախկինում էլ արտասահմանի հարուստ ռամկավարները շքանշաններ ու պարգեւներ էին ստանում Հայաստանի կառավարութիւնից ու եկեղեցուց՝ իրենց նւիրատուութիւնների համար: Յայտնի չէ միայն, թէ ո՞ւմ դիմեն արիւն ու կեանք

տուողները: Կա՞յ արդեօք նրանց համար էլ ցմահ նախագահական կաճառի մէջ մտնելու հնարաւորութիւնը: Կամ եթէ մէկը չի հարստացել միայն նրա համար, որ իր ամբողջ կեանքը, նւիրել է հայ ժողովրդին ծառայելուն, կարո՞ղ է նա էլ առանց 100 դոլարի համարւել Հայաստանի բարեկամ:

Բայց շարունակենք: Անպաշտպան մնացած Լեռնային Ղարաբաղը բարեբարների, զինւորականների և քաղաքական գործիչների պահանջ ունի և այդ պահանջը մենք պէտք է բաւարարենք մեր միասնական ճիգերով: Ղարաբաղը բոլորինս է ու չի կարող նա դառնալ որեւէ կուսակցութեան կամ շարժման մենաշնորհը: Մինչդեռ նման բան կարող է պատահել: Մենք բոլորս շատ լաւ յիշում ենք, թէ ինչպէս «Անկախութիւն» և «Եռագոյն» համազգային արժէքները դարձել էին դաշնակցական արժէքներ միայն այն պատճառով, որ այդ արժէքների պաշտպանը Հ.Յ.Դաշնակցութիւնն էր: Նոյնիսկ այսօր կան մարդիկ, որոնց մտքում արմատացել է այն գաղափարը, թէ Եռագոյնը Դաշնակցութեան դրօշն է: Դեռեւս մի քանի տարի առաջ, այն դրօշը, որը այսօր ծածանւում է Հայաստանի կառավարական շէնքի վրայ, խորհրդայնասիրական սրահներում կախելը արգելւած էր: Այնպէս չպատահի, որ Արցախի պաշտպանութիւնն էլ բաժանի Եռագոյնի ճակատագիրը: Այսինքն՝ մարդիկ ասեն, որ մենք չենք պաշտպանում Արցախը, քանզի դա դաշնակցական գործ է:

Արցախը Հայ Դատի լուծման փորձնաքարն է: Եթէ մենք միասնական ճիգերով չլուծենք այդ հարցը, թէ՛ Հայաստանի անկախութիւնը և թէ Դաշնակցութեան գոյութիւնը կը կորցնեն իրենց իմաստը: Չի կարող բարգաւաճել Հայաստանը իր այսօրւայ սահմաններում, երբ հարեւան հանրապետութիւնում խեղդւում են նրա եղբայրները: Եթէ մենք պէտք է դիմենք դիւանագիտական խորամանկութիւնների ու կատարենք որոշ զիջումներ, ապա նրանք չեն կարող լինել Արցախի հաշւին, կամ աւելի ճիշտ՝ արցախցիների ինքնապաշտպանութիւնը թուլացնելու հաշւին:

Ոչ մէկ զիջում չպէտք է ստեղծի Արցախը վերացնելու պայմաններ: Ադրբեջանցիները Արցախը վերացնելու ոչ մէկ առիթ չեն փախցնի, ուստի զիջումները կարող են վերաբերւել միայն Արցախի ինքնավարութեան ձեւին, բայց երբեք բովանդակութեանը: Արցախի խնդրի վրայ մենք պէտք է կենտրոնացնենք աշխարհի իրաւապաշտպան մարմինների ուշադրութիւնը: Մենք պէտք է կարողանանք արտասահմանցի օտար ազգի կամաւորներ ուղարկել Արցախ՝ տեղացիներին օգնութիւն ցուցաբերելու համար: Պատմութիւնը մեզ չի ների, եթէ մենք այսօր կորցնենք Արցախը:

1992

ՂԱՐԱԲԱՂԻ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

Է. Յովհաննիսեան

Ղարաբաղի խնդրի քաղաքական էութիւնը ըմբռնելու և այդ խնդիրը լուծելու ճանապարհները որոնելու համար՝ անհրաժեշտ են մի քանի սահմանումներ և ստեղծուած կացութեան գնահատական։

Նախևառաջ պէտք է պարզել, թէ արդեօք կողմերը պատրա՞ստ են փոխ-զիջումներ կատարելու և, եթէ պատրաստ են, ապա որո՞նք են զիջումների այն վերջին սահմանները, որոնցից այն կողմը նահանջը անընդունելի է։

Նախքան այդ սահմաններին հասնելը նշենք, որ Ղարաբաղում կռւում է ղարաբաղցին, կռւում է իր անկախութեան համար, ուստի՝ Ղարաբաղի խնդրին վերաբերող բոլոր քաղաքական բանակցութիւններին Ղարաբաղի ներկայացուցիչը պէտք է մասնակցի որպէս վերջնական որոշում տւող կողմ։ Եւ սա այն սահմաններից մէկն է, որից այն կողմ նահանջ չկայ։ Ոչ մէկը, բացի Ղարաբաղի օրինական իշխանութիւններից, չի կարող բանակցել և կամ էլ համաձայնութիւններ կնքել՝ առանց Ղարաբաղի համաձայնութեան։ Ճիշտ է, Ղարաբաղի հարցը համահայկական հարց է, սակայն տւեալ դէպքում հայ ժողովրդի շահերի պաշտպանութիւնը հէնց հայ ժողովրդի կողմից պէտք է յանձնըւի Ղարաբաղին։

Հասկանալի է, նաեւ, որ Ադրբեջանը չի համաձայնւի այս բանի հետ, այսինքն՝ չի ուզի տեսնել Ղարաբաղը որպէս ինքնուրոյն քաղաքականութիւն վարող միաւոր, քանզի նման բանի հետ համաձայնւելը արդէն իսկ կը նշանակէր Ղարաբաղի ինքնուրոյնութեան ճանաչում։ Ադրբեջանի միակ ձգտումը Ղարաբաղը Ադրբեջանի կազմի մէջ պահելն է և նա ոչ մի կերպ չի համաձայնւի Ղարաբաղի ինքնուրոյնութեան հետ։

Իսկ ղարաբաղցիների միակ ձգտումը ճիշտ հակառակն է։ Ամէն գնով նրանք ցանկանում են դուրս գալ Ադրբեջանի կազմի միջից։

Կողմերի այս ներհակ ձգտումների իրականացման մէջ՝ Ադրբեջանը կարելի է համարել պարտւած կողմ, քանզի արդէն 5րդ տարին է, ինչ Ղարաբաղը Ադրբեջանից անկախ է։ Աւելին, Լաչինի ազատագրումով՝ Ղարաբաղը փաստօրէն միացաւ Հայաստանին, յամենայնդէպս այնտեղից սնւելու հնարաւորութիւն ստանալու իմաստով։

Այս կացութիւնը կարող է տեւել այնքան երկար, որքան երկար կարող է դիմադրել հայկական կողմը։ Եւ եթէ զոհերը ու տառապանքները հաշւի չառնենք, կամ՝ աւելի ճիշտ, հաշւի առնենք, որ հակառակորդի կորուստները աւե-

լի մեծ են, ապա զուտ քաղաքական չափանիշներով՝ ստեղծուած կացութիւնը մեր օգտին է։

Սակայն, ինչպէ՞ս հաշուի չառնենք զոհերը ու տառապանքները, եթէ զոհուողները ու տառապողները հայեր են։ Եւ բացի դրանից, դեռեւս պարզ չէ, թէ որքա՞ն երկար արգելափակուած վիճակի մէջ հայ ժողովուրդը կարող է դիմադրել հզօր հակառակորդին։

Այսպէս թէ այնպէս մենք գտնուում ենք մի կացութեան մէջ, որտեղ ադրբեջանական կողմը ուզում է տեսնել Ղարաբաղը՝ առանց հայերի՝ Ադրբեջանի կազմի մէջ, իսկ հայկական կողմը ուզում է տեսնել Ղարաբաղը հայերով բնակուած ու անկախ՝ Ադրբեջանից։ Մեր, ինչպէս նաեւ Ադրբեջանի ցանկութիւնները կարելի է իրականացնել կա՛մ պատերազմի և կամ էլ փոխ-զիջումների ճամբով։ Պատերազմը անխուսափելի կը լինի, եթէ նահանջի կամ զիջումների վերջին սահմանների մէջ ընդհանուր գծեր չնշմարւեն։

Առայժմ եկէք մէկ կողմ դնենք այն հարցը, թէ ինչո՛ւմն է համոզուած հայկական կողմը և յատկապէս Հ.Յ.Դաշնակցութեանը համակիր հատուածը։

Ենթադրենք մէկ պահ, որ հայկական և ադրբեջանական կողմերը պատերազմից յոգնած ու համոզուած, որ պատերազմի ճամբով հարցը չի լուծւի՝ փոխզիջման ուղիներ են որոնում։ Բայց ենթադրել՝ որ ադրբեջանական կողմը իր զիջումների մէջ կարող է հասնել մի սահմանի, որտեղ համաձայնւի Ղարաբաղը Ադրբեջանի կազմից դուրս գալու որեւէ տարբերակի հետ, դա անկարելի է։ Ադրբեջանն ամէնուր պահանջում է և պիտի պահանջի, որ Ղարաբաղը Ադրբեջանի անբաժանելի մասը կազմի։

Իսկ ենթադրել՝ որ ղարաբաղցիները և հայ ժողովուրդը կարող են հրաժարւել ծով արեան գնով ձեռք բերուած անկախութիւնից, դա նոյնպէս անկարելի է։

Ուրեմն՝ ի՞նչ փոխ-զիջումների մասին կարող է լինել խօսքը և ինչի՞ մասին պէտք է բանակցեն բախման մէջ գտնուող կողմերը։

Հաւանաբար Ադրբեջանին ձեռք կը տայ համաձայնութեան միայն այն տարբերակը, որտեղ Ղարաբաղը ճանաչւի Ադրբեջանի իշխանութեան կամ հովանաւորութեան տակ գտնուող քաղաքական միաւոր, այն յոյսով՝ որ այդ հովանաւորութեան օգնութեամբ նա ի վերջոյ կը մաքրի Ղարաբաղը հայերից։

Մեզ, հաւանաբար, ձեռք կը տայ համաձայնութեան այն տարբերակը, որի շնորհիւ Ղարաբաղը ստանայ ԻՐԱԿԱՆ անկախութիւն Ադրբեջանից։

Այս երկու, այսինքն՝ ադրբեջանական և հայկական, ցանկութիւնների միջեւ կարելի է գտնել համաձայնութեան եզր, եթէ հաշուի առնենք, որ իրական անկախութիւնը դեռեւս իրաւական անկախութիւն չէ, իսկ իրաւական կախւածութիւնը դեռեւս իրական կախւածութիւն չէ։ Եթէ մենք ընդունենք այս թեզը,

ապա աղրբեջանական և հայկական կողմերի համաձայնութիւնը կարող է կրել հետեւեալ բնոյթը։

Ղարաբաղը ձեւականօրէն մնում է Աղրբեջանի կազմի մէջ կամ հովանաւորութեան տակ, բայց իրականում նա անկախ է լինում Աղրբեջանից։ ինչպէ՞ս կարելի է իրականացնել նման ծրագիր։

Նախ եկէք պարզենք, թէ ո՞վ պիտի լինի այս կամ այն համաձայնութեան պաշտպանը։ Կամ՝ որո՞նք են այն երաշխիքները, որ պէտք է իրականացնեն հայ-աղրբեջանական համաձայնութիւնները։ Հայկական կողմի համար ո՛չ Միացեալ Ազգերի Կազմակերպութեան, ո՛չ ամերիկեան կոնգրէսի, ո՛չ Ռուսաստանի, ո՛չ Եւրոպական Համայնքի և առաւել եւս ոչ էլ Թուրքիայի երաշխիքները ընդունելի չեն։ Ղարաբաղի անկախութեան համար միակ երաշխիքը կարող է լինել Ղարաբաղի օրինական իշխանութիւններին ենթարկւող Ղարաբաղի բանակը։ Բոլոր մնացած միջազգային կազմակերպութիւնները ու պետութիւնները կարող են վերահսկողների դեր կատարել, որպէսզի Ղարաբաղի հայկական բանակը չփորձի հակակշռել աւելի մեծ տարածութիւն, քան նախատեսւած է համաձայնութեամբ և որպէսզի Աղրբեջանը չխախտի համաձայնութեան պայմանները (Ղարաբաղը, օրինակ, աղրբեջանցիներով բնակեցնելով)։ Միջազգային դիտորդները կարող են վկայել, թէ ո՞վ առաջինը խախտեց համաձայնութեան պայմանները եւ այլն։ Այսինքն՝ միջազգային դիտորդների այս դերը, ինչպէս ամէնուր պէտք է կրի բարոյական բնոյթ, իսկ Ղարաբաղի քաղաքական շահերի, նրա իրական անկախութեան միակ պաշտպանը լինելու է Ղարաբաղի բանակը։

Հասկանալի է, որ այդ դէպքում Աղրբեջանին մենք առաջարկում ենք՝ նրա համար մի անընդունելի տարբերակ։ Փաստօրէն մենք նրան առաջարկում ենք, որ իր Սահմանադրութեան մէջ նա նախատեսի մի առանձայատուկ հանրապետութեան գոյութիւն, որը ունի սեփական կառավարութիւն և սեփական բանակ և որի Աղրբեջանին պատկանելը որոշւում է տուրքերի և մի շարք այլ բնագաւառների քաղաքականութեամբ։

Անշուշտ, Աղրբեջանը չի համաձայնւի Ղարաբաղի նման գոյավիճակի հետ, որովհետեւ նրան Ղարաբաղը պէտք է առանց հայերի, բայց առնուազն միջազգային քաղաքականութեան ոլորտում, նա չի կարող հանդէս գալ նման յայտարարութիւններով, մինչդեռ մենք կարող ենք արդարացնել մեր պահանջը նրանով, որ չենք հաւատում Աղրբեջանի խոստումներին, չենք հաւատում միջազգային դիտորդների կարողութիւններին, ուստի ուզում ենք ունենալ մեր իրական անկախութեան սեփական երաշխիքները։

Հայերի համար սա այն սահմաններից է, որից այն կողմ նահանջ չկայ, քանզի այդ սահմանից նահանջը կարող է վտանգել բովանդակ հայ ժողովրդի գո-

յութիւնը: Առանց Ղարաբաղի իրական անկախութեան, Հայաստանի անկախութիւնը անկարելի է:

Երբ մենք խօսում ենք Լեռնային Ղարաբաղի անկախութեան մասին, բնականաբար ի նկատի ունենք անկախութիւն Ադրբեջանից: Սա նշանակում է, որ բացառուած չէ այն տարբերակը, որ Ղարաբաղը, անկախանալով Ադրբեջանից՝ մտնի մէկ ուրիշ պետութեան, օրինակ՝ Ռուսաստանի կազմի մէջ: Եւ այս իմաստով ի յայտ է գալիս Ղարաբաղի հարցը լուծելու երրորդ տարբերակը, որի համար շուտով, հաւանաբար, ստեղծուեն համապատասխան պայմաններ: Մեծ ուշացումով և շատ դանդաղ քայլերով Ռուսաստանի պետական ու ազգային շահերի պաշտպանողները շարժւում են դէպի իշխանութիւն և ռուս մտաւորականութիւնը, քաղաքական գործիչների հետ միասին, սկսել են հասկանալ, որ ժողովրդավարութեան մասին դատարկ լոզունգների պաշտպանութեան տակ կանգնած են Ռուսաստանը վերջնականօրէն տապալելու նպատակ ունեցող հզօր ուժեր, որոնց համար ժողովրդավարութիւնը, ազգային ինքնորոշման իրաւունքը և անկախութիւնը ճիշտ այն դերն են կատարում, որը ժամանակին ցարական Ռուսաստանը քայքայելու նպատակի համար կատարեցին կոմունիստական լոզունգները հաւասարութեան ու ազատութեան մասին:

Այժմ՝ պետական մտածելակերպ ունեցող ռուսները ջանում են մի ինչ-որ ձեւով փրկել իրենց 1000ամեայ պետութիւնը և առաջին քայլերը այս ուղղութեամբ կատարուեցին Ռուսաստանի Գերագոյն Խորհրդի համագումարում, երբ համագումարը կոչ արեց բոլոր հանրապետութիւններին վերականգնել միութիւնը: Յաջորդ քայլը, հաւանաբար, լինելու է նոր միութեան մէջ վերադառնալու կոչը, որը այս անգամ ուղղուած է լինելու ոչ թէ նախկին միութենական հանրապետութիւններին, այլ բոլոր ինքնավար հանրապետութիւններին, մարզերին ու այլ միաւորներին:

Այս կոչին անմիջապէս կ'արձագանքեն գագաուզները, աբխազները, օսեթները, Դնեստրի հանրապետութիւնը և շատ ուրիշներ: Եւ եթէ նման կոչ Ռուսաստանը իսկապէս հռչակի, Լեռնային Ղարաբաղը պիտի լինի կոչին դրականօրէն արձագանքողների մէջ առաջինը:

Դժւար է հաւատալ, որ Հայաստանի ներկայ ղեկավարները կ'ունենան դրականօրէն այդ կոչին արձագանքելու իմաստութիւնը, բայց ինչպէս տեսնում ենք՝ կեանքը ամէն ինչ իր տեղն է դնում, թողնելով հրապարակի վրայ միայն իմաստութեան բացակայութեան անմեղ զոհերը: Այսօր արդէն «երրորդ ուժի բացառման» կողմնակիցները և թուրք-ամերիկեան իմպերիալիզմի փէշերը բռնած Հայաստանի ղեկավարները յայտարարութիւններ են անում Ռուսաստանի հետ սերտ կապեր հաստատելու մասին, նրանից օգնութիւն են

խնդրում և գիտակցում են, որ առանց ռուսների՝ կորած են։ Այն՝ ինչ մենք նրանց ասում էինք 5 տարի առաջ, նրանք միայն այսօր հասկացան։ Ոչինչ, թող սովորեն, պատմութիւնը լաւագոյն ուսուցիչն է, բայց ո՞ւմ վրայ գրանցենք հազարաւոր զոհերի մեղքը։ Սակայն թողնենք Հայաստանը, որը ունի սեփական խնդիրներ, սեփական ճանապարհ, որոնց մասին պէտք է խօսուի առանձին։ Կենտրոնանանք Լեռնային Ղարաբաղի ճանապարհի վրայ։

Ինչպէս ասացինք՝ Ղարաբաղի Հարցի լուծման համար գոյութիւն ունեն երեք տարբերակներ։ Առաջին տարբերակը ամենապարզն է ու հասկանալին։ Նա յենւում է այն համոզւածութեան վրայ, որ ղարաբաղցիները իրենց դաշնակիցների օգնութեամբ կարող են զէնքի ուժով պահպանել արդէն ձեռք բերւած անկախութիւնը Ադրբեջանից։ Մենք չենք կարող վիճել այն մասին, թէ որքանով այս համոզւածութիւնը յենւում է քաղաքական ու ռազմական վերլուծութիւնների վրայ, բայց եթէ նման համոզւածութիւն կայ, դժւար պիտի լինի այդ համոզմունքը ունեցող զինւորին հանել պատերազմի դաշտից։ Եթէ Հ.Յ.Դաշնակցութիւնը և հայ ժողովուրդը ունեն այս համոզւածութիւնը, ապա մեր անելիքները շատ պարզ են։ Ամրապնդել Ղարաբաղի բանակը, մշակել ինքնապաշտպանութեան ծրագրեր, դիւանագիտական քայլեր կատարել Ղարաբաղի անկախութիւնը ճանաչելու ուղղութեամբ, քարոզել ղարաբաղցիների պահանջների արդարութիւնը ու բարոյականութիւնը, ստիպել Հայաստանի իշխանութիւններին, որ ճանաչեն Ղարաբաղի անկախութիւնը, որոնել պետութիւններ ու հասարակական շարժումներ, որոնք շահագրգռւած են Ղարաբաղի անկախութեան մէջ։ Եւ այս ամէնը կատարել ծրագրւած ձեւով ու համազգային ճիգերով։

Եթէ այս տարբերակը ընդունւի որպէս ազգային ուղեգիծ, ազգային դոկտրինա կամ ազգային քաղաքականութիւն, ապա՝ բոլոր նրանք, ովքեր շեղւեն այս գծից, այդ թւում նաեւ Հայաստանի իշխանութիւնները, պէտք է նկատւեն ազգային շահերի պաշտպանութեան հակառակորդներ։ Ղարաբաղի հարցը, ինչպէս մի շարք ուրիշ հարցեր, օրինակ՝ Ցեղասպանութեան հարցը, կրում են համազգային բնոյթ և չի կարող Հայաստանի այժմու իշխանութիւնը իր վրայ վերցնել այդ հարցի լուծումը, քանզի նա դեռեւս չի կարողացել ապացուցել, որ հանդիսանում է ամենայն հայոց կառավարութիւն։

Եթէ մենք համոզւած չենք, որ պատերազմի դաշտում կարող ենք ձեռք բերել յաղթանակ, այսինքն լուծել Ղարաբաղի անկախութեան հարցը, ապա ստիպւած կը լինենք դիմելու երկրորդ տարբերակին, այսինքն՝ զիջել իրաւական անկախութիւնը, իրական անկախութիւն ձեռք բերելու համար։

Այս տարբերակում մեր անելիքները շատ աւելի բարդ են, որովհետեւ պէտք է ստեղծւի յատուկ տեսակի բանակ և արտասահմանում պէտք է տարւեն յա-

տուկ տեսակի դիւանագիտական աշխատանքներ: Անշուշտ, այդ աշխատանքներն էլ պէտք է կատարուեն համազգային ճիգերով:

Եւ, վերջապէս, երրորդ տարբերակը կայանում է Ադրբեջանի կազմից դուրս գալու և մէկ ուրիշ պետութեան միանալու մէջ: Այստեղ արդէն պէտք է կատարուեն զուտ քաղաքական աշխատանքներ, այն էլ պայմանով, որ լինի համապատասխան քաղաքական հող: Լինի դա Ռուսաստանը թէ՞ կովկասեան մի պետութիւն, նշանակութիւն չունի, այս պետութիւնները պէտք է շահագրգռուած լինեն Ղարաբաղի հովանաւորութիւնը իրենց վրայ վերցնելու մէջ: Եւ, ուրեմն, այս տարբերակը իրականացնելու համար անհրաժեշտ են ակտիւ դիւանագիտական արշաւներ Ղարաբաղի արտասահմանեան ներկայացուցիչների կողմից: Սակայն այդպիսի ներկայացուցիչներ՝ բացակայում են բոլորովին անհասկանալի պատճառներով: Ղարաբաղի Գերագոյն Խորհուրդը կարող էր ընտրել տարբեր երկրներում իր ներկայացուցիչներին, որոնք Ղարաբաղի կառավարութեան անունից կարող էին բանակցութիւններ վարել տարբեր ատեանների հետ: Դրա համար ամէնեւին էլ անհրաժեշտ չէ Ղարաբաղի պաշտօնական ճանաչումը այն պետութեան կողմից, որտեղ գործում է - Ղարաբաղի ներկայացուցիչը:

Գուցէ այսքանը բոլորիս համար պարզ է, սակայն ամենակարեւոր հարցը մնում է բաց: Ո՞վ պէտք է կատարի այս տարբերակներից մէկի ընտրութիւնը: Ո՞վ պէտք է համոզի հայ ժողովրդին, որ ամբողջ ազգը պէտք է գործի ա՛յդ տարբերակը իրականացնելու ուղղութեամբ, որ սա՛ է Ղարաբաղի հարցի լուծման ազգային դոկտրինը:

Այս հարցը կարող է լուծել միայն բոլոր քաղաքական ուժերից բաղկացած մի մարմին, որի կազմի մէջ կը մտնեն տարբեր կազմակերպութիւնների ներկայացուցիչները:

Միայն նման մարմինը կարող է որոշել Ղարաբաղի դիմադրելու կարողութիւնները: Դժբախտաբար, Հայաստանի կառավարութիւնը այդ մարմնի դերը չի կատարում և ոչ մէկը այսօր կարող է ասել, թէ ինչպէս պէտք է կազմակերպի Ղարաբաղի երկարատեւ ինքնապաշտպանութիւնը: Գուցէ դա է պատճառը, որ ոմանք էլ ընտրում են 4րդ տարբերակը, յայտարարելով, թէ «ո՞ւմն է պէտք Ղարաբաղը, եթէ նրա պատճառով մենք լոյս չունենք: Տուէք Ղարաբաղը Ադրբեջանին ու պրծնենք բոլոր ցաւերից»:

Այս տարբերակը ընտրողներին թերեւս հայ համարելը դժւար է, բայց այն էլ պիտի հաշւի առնենք, որ հայ ժողովուրդը ոչ միայն հայերից է բաղկացած: Խօսքը ոչ թէ արեան կամ ազգանունի մասին է, այլ հայկական արժէքները և հայ ազգը պահպանելու ձգտման մասին: Մենք պէտք է որոնենք նրանց, գտնենք ու ղեկավարման ղեկը տանք նրանց ձեռքը, որոնք շատ լաւ են գի-

տակցում՝ որ քաղաքականութիւնը և դիւանագիտութիւնը ոչ այլ ինչ են, եթէ ոչ ազգային բնազդի արտայայտութիւններ, իսկ ազգային ազատագրական պայքարը՝ յանուն հայրենիքի զոհաբերելու արիութիւն։

1993

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՆԵԼԻՔ ՈՒՆԻ՞ ԱՐԴԵՕՔ

Դոկտ. Է. Յովհաննիսեան

> Եւ Յիսուսը պատասխանեց ու ասաց. ամէն մի բոյս, որ իմ երկնային Հայրը չի տնկել, արմատախիլ կը լինի։ Թողէք նրանց՝ նրանք կոյրերի կոյր առաջնորդներ են, իսկ եթէ կոյրը առաջնորդում է կոյրին, ապա երկուսն էլ խորխորատը պիտի ընկնեն։
>
> ԱԻԵՏԱՐԱՆԻՑ

Մեր աշխատակցի՝ տոքթ. Էդուարդ Յովհաննիսեանի այս յօդուածը գրուած է յայտնապէս ներքին խոր ապրումներու, ներքին ցաւերու, կարելի է մինչեւ իսկ տառապանքի մղումով: Ապրումներ, որոնք երկար ատեն ճնշած են հեղինակի հոգին, որոնք արտայայտել ուզած է անկասկած վաղո՛ւց, եւ սակայն կարելիութիւնը չէ ունեցած զանոնք թուղթին փոխանցելու, ընթերցողներու կողմէ կարդացուելու կարելիութեամբ: Այդ իսկ պատճառով, հասանաբար, յօդուածը ժայթքում մըն է միտքն ու հոգին չարչարող ապրումներու ու մտածումներու:

Ընթերցողներէն ոմանք կրնան զայն համարել երազանք մը, մտքի պարզ յղացք մը միայն: Ուրիշներ կրնան չբաժնել արտայայտուած այս կամ այն միտքը: Պիտի պատահի նաեւ, որ ոմանք գտնեն, թէ քաղաքականօրէն չափէն աւելի իրապաշտ է իր մօտեցումը կամ անիրապաշտ: Կարելի է եւ անշուշտ օգտակար կրնայ ըլլալ այս յօդուածին մէջ արծարծուած հարցերը, արտայայտուած մտքերը քննել քիչ մը աւելի մօտէն, առարկելով երբեմն, հակաճառելով թերեւս՝ այլ պարագայի մը: Կարելի չէ սակայն, չզգալ, թէ հայութեան հառաչանքը մտահալածանքն է հեղինակին, որ շատ մօտէն ծանօթ է Խ. Հայաստանի ներկայ պայմաններուն, Խ. Հայաստանի հողին վրայ ապրող հայ ժողովուրդի զգացումներուն ու պահանջներուն, քանի որ ինք եղած է մէկը անոնցմէ. ու նաեւ մէկը անոնցմէ որ փաստօրէն երկար ատէն զրկուած է եղած հայ ժողովուրդի մօտիկ անցեալին վերաբերող պատմական իրողութեանց ծանօթութենէն եւ իր անձնական վճռակամութեամբ է որ ռուսական մշակոյթէն անցած է հայ մշակոյթին, ռուսերէնէն՝ հայերէնին, ռուսական վարժարանէն՝ հայկական վարժարանին, խորհրդային քաղաքացիի հանգամանքէն՝ հայ ազգի ճակատագրով մտահոգուող ու անոր պայծառացման համար ամէն ինչ զոհելու պատրաստ հայ մարդու հանգամանքին:

Մեր ընթերցողներու մասնաւոր ուշադրութեան կը յանձնենք այս յօդուածը, զոր լոյս պիտի ընծայենք երեք անգամով, իր տարբեր գլուխներուն տակ, եւ որոնց ամբողջական ընթերցումէն է՛տք միայն կարելի է իրապէս թափանցել հեղինակի ձգտումներուն եւ ապրումներուն:

ԽՄԲ.

Միացեալ Անկախ Հայաստան՝ հառաչում է ազգը:

Միացեալ Անկախ Հայաստան՝ պահանջում է արդարութիւնը:

Միացեալ Անկախ Հայաստան՝ ասում են քաղաքագէտները:

Միացեա Անկախ Հայաստան՝ երազում եւ ջանում են կերտել ազգային կուսակցութիւնները:

Բոլոր այս ձգտումների մէջ Խորհրդային Հայաստանը գրաւում է գլխաւոր եւ առանձնայատուկ տեղ: Գլխաւոր, քանզի անհնարին է պատկերացնել անկախ Հայաստանը, առանց Խորհրդային Հայաստանի: Առանձնայատուկ, քանզի առանձնայատուկ են նրա քաղաքական պայմանները եւ կացութիւնը:

Վաղուց անցել են այն ժամանակները, երբ փորձեր էին կատարւում ներքին ապստամբութեան միջոցով անջատել Հայաստանը Խորհրդային Միութիւնից: Անցան է՛ւ այն ժամանակները, երբ յոյսերը կապւում էին արտաքին, հակախորհրդային ուժերի հետ: Ներկայ պայմաններում, առողջ քաղաքական դատողութիւնը յանգեցրել է այն տեսակէտին, որ Հայաստանի Խորհրդային Միութեան մաս կազմելը քաղաքական իրականութիւն է եւ որ այդ գոյավիճակին համակերպւել ենք եւ հանդուրժում ենք: Եւ քանզի ստեղծւած կացութիւնը փոխելու ոչ մի հնարաւորութիւն չկայ, ազգի մեծ մասը թուլացնում է իր մկանները, համարելով որ Խորհրդային Հայաստանը ազգային ասպարէզում անելիք չունի:

Սկսած այն րոպէից, երբ ազգը կը համարի, որ այլեւս անելիք չունի, նա կործանւած է, որովհետեւ կոտրւած է նրա հոգին:

Սակայն յիրաւի, ի՞նչ կարելի է անել ստեղծւած պայմաններում, եթէ առանց Խորհրդ. Հայաստանի անհնարին է պատկերացնել միացեալ եւ անկախ Հայաստանը եւ միաժամանակ անհնարին է անջատել այդ Հայաստանը Խորհրդային Միութիւնից: Թւում է, թէ այդ պայմաններում ազգային գործունէութեան բոլոր ծրագրերը անմտութիւն պիտի լինեն: Ինչպիսի ծրագիր էլ որ մշակւի, նա կա՛մ ուղղւած պիտի լինի Խորհրդային Միութեան դէմ, որը քաղաքական ցնորք է, կա՛մ պէտք է ամրապնդի հանրապետութեան դիրքերը Միութեան մէջ, դրանով իսկ աւելի հեռացնի անկախ պետականութեան երազը: Իսկ ոչինչ չանել ազգային ասպարէզում նշանակում է թողնել ազգը ինքնահոսի, այսինքն նետել ուղիղ ազգալուծման երախը:

Եւ միայն մի դէպքում ազգային գործունէութիւնը կարող է լինել իմաստաւորուած, երբ գոյութիւն ունի յստակ համոզուածութիւն, որ ՎԱՂ ԹԷ ՈՒՇ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՓԼԻԻ: Առանց այդ համոզմունքի, բոլոր ազգային ճիգերը անմտութիւն են: Բռնապետական կայսրութիւնները գոյութիւն են ունեցել ոչ միայն նոր ժամանակներում, այլեւ նրանք եղել են է՛ւ շատ հին ժամանակներում: Բայց վերջին հաշւով բոլոր այդ վարչաձեւերը վախճանուել կամ տապալուել են: Մարդկութիւնը ի վերջոյ կը կանգնի երկու հնարաւորութիւնների առջեւ. կա՛մ նոր ահաւոր պատերազմ, կա՛մ խորհրդային **դիկտատուրա**յի վերացում: Այսօր ոչ ոք չգիտէ, թէ ե՛րբ եւ ի՛նչպէս կը վերանայ այդ բռնակալութիւնը: Բացառուած չեն պետական յեղաշրջումը, յեղափոխութիւնը, պատերազմը կամ բնական դանդաղ տնտեսական վախճանը: Յամենայն դէպս, նրա անկումը անխուսափելի է:

Խորհրդային իշխանութիւնը բնաւ այդքան հզօր չէ, ինչպէս ինքն իրեն ներկայացնում է: Բանակի եւ զէնքի հզօրութիւնը ամենեւին չի կարելի վերագրել վարչաձեւի հզօրութեանը: Մենք ականատես ենք, թէ ինչպէս են գահից ընկնում ամենահզօր իշխանաւորները եւ ինչպէս են այդ իշխանաւորները վախենում բոլոր տեսակի ազատութիւններից, որոնք կարող են մերկացնել իրենց գահի ներքին դատարկութիւնը: Մարդկութիւնը չի կարող հանդուրժել անբարոյական եւ վտանգաւոր վարչաձեւ իր քթի տակ: Կը գտնուեն հարիւրաւոր ճեղքեր, որտեղ կը խփուեն կործանիչ սեպեր:

Բոլորի համար պարզ է, թէ այժմեան տնտեսվարութեան պահանջները անհամատեղելի են այդ վարչաձեւի հետ: Վարչաձեւի հետ նոյնպէս անհամատեղելի են կայսրութեան ահաւոր աշխարհագրական չափերը: Դեռ Արիստոտելը իր ժամանակ նշում էր, որ պետութիւնը լաւագոյն ձեւով ղեկավարելու համար պէտք է ունենայ մատչելի չափեր: Նա համարում էր, որ Պելոպոնէսը չի դառնայ մէկ պետութիւն, եթէ նոյն իսկ նրան շրջապատեն մէկ ընդհանուր պատով:

Մարդու մտքի թռիչքը աւելի շատ բացայայտւում է բնութիւնը եւ **տեխնիկա**ն ուսումնասիրելիս, քան քաղաքականութեան մէջ: Այժմեան հրթիռները եւ հաշւիչ մեքենաները հրաշք կը թւային հին յոյներին, բայց նրանց փիլսոփայական մտքին մեզ գրեթէ ոչինչ չի յաջողւում աւելացնել: Եւ Արիստոտելի այդ միտքը, պետութեան չափերի մասին, հազարամեակներ առաջ նոյնքան ճիշտ էր, որքան որ է այսօր:

Այսօր գիտութիւնը ապացուցել է, որ մեծ համակարգի ղեկավարման համար անհրաժեշտ է ունենալ ղեկավարման մարմնի ապակենտրոնացած ստորադասական կառուցւածք:

Ճիշտ հակառակ այն կենտրոնացած կառուցւածքի, որը գոյութիւն ունի Խորհրդային Միութիւնում։

Այսպիսով, եթէ ազգը հաւատայ, որ խորհրդային կայսրութիւնը յաւերժ չէ, ապա կը գայ այն եզրակացութեան, որ Խորհրդային Հայաստանը ապագայ Հայրենիքի ստեղծման գործում անելիք շատ ունի։ Եւ այդ անելիքը կայանում է նրանում, որ, յարմարւելով խորհրդային վարչաձեւին, պատրաստւի այն գալիք պահին, երբ կայսրութիւնը կը տրոհւի։ Նախապատրաստւել այդ պահին չափազանց անհրաժեշտ է։

Յիրաւի, միթէ՞ կարելի է ենթադրել, որ կայսրութեան վախճանից յետոյ, Խորհրդային Միութեան բոլոր ազգութիւնները կը ստանան անկախ պետականութեան իրաւունք։ Մի՞թէ ասորիները, գնչուները, ինգուշները եւ շատ ուրիշներ կարող են արժանանալ այդ բախտին։ Ի հարկէ ոչ։

Պետականութիւն կը ստանան միայն նրանք, ովքեր արժանի կը լինեն դրան, ովքեր պատրաստ կը լինեն քաղաքականապէս, տնտեսապէս, բարոյապէս. ով կ'ունենայ համապատասխան աշխարհագրական դիրք, ազգաբնակչութիւն եւ այլն։

Մենք պիտի լինենք պատրաստ քաղաքական շուկայում ըստ մեր արժանիքների պետութիւն ձեռք բերելու։ Իսկ որպէսզի այդ սակարկութեան ժամանակ մեզ յաջողւի ձեռք բերել Միացեալ Անկախ Հայաստան, այսօր հայ ժողովրդի ամէն մի հատւած պէտք է կատարի իր ազգային պարտականութիւնները։

Ի՞նչ անելիք ունի Խորհրդային Հայաստանը, որո՞նք են նրա ազգային պարտականութիւնները։ Հէնց այդ մասին է, որ ուզում եմ խօսել։

Խորհրդային Հայաստանը հայ ժողովրդի միակ հատւածն է, որի հասարակական եւ քաղաքական կեանքը ղեկավարւում է մէկ վարչական մարմնի կողմից։ Այդ մարմինը չի կարելի բառի բուն իմաստով անւանել ազգային պետութիւն, սակայն նրա պարտականութիւնները եւ հնարավորութիւնները բաւականին մօտ են կառավարական պարտականութիւնների, գոնէ այն հարցում, որ որոշ սահմաններում այդ մարմինը ունի հնարաւորութիւն ազդելու ազգային ճակատագրի վրայ։ Այդ հանգամանքը պահանջում է յստակ որոշել կառավարութեան այն սահմանները, որի ներսում նա ունի հնարաւորութիւն՝ վարելու ազգային քաղաքականութիւն։

Եւ, բացի դրանից, անհրաժեշտ է որոշել այն սահմանները, որոնք դրւում են այդ պետական մարմնի կողմից ազգային ինքնագործունէութեան համար, այսինքն ժողովրդի համար։ Նշենք անմիջապէս, որ այդ երկու սահմանները ազգը պէտք է համարի անսասան, ընդունի որպէս քաղաքական իրականութիւն եւ ոչ մի դէպքում չփորձի լայնացնել որեւէ մէկը դրանցից։

Նա չպէտք է այդ փորձը կատարի նոյնիսկ այն դէպքում, երբ իրեն կը թւայ, թէ այդ սահմաններում բոլոր հնարաւորութիւնները սպառուած են։ Այս դիտողութիւնը ես անում եմ, ցուցաբերելով աւելորդ անզգուշութիւն, քանզի համոզուած եմ, որ այդ սահմանները պարունակում են իրենց մէջ անսպառ հնարաւորութիւններ ազգային գործունէութեան համար։ Բայց մինչեւ խօսելը այդ հնարաւորութիւնների մասին, ես ուզում եմ մի քանի խօսքով բնութագրել ազգի վիճակը Խորհրդային Հայաստանում։

ԱԶԳԻ ՎԻՃԱԿԸ ԽՍՀ-ՈՒՄ

Որպէսզի կարելի լինի լրիւ պատկերացում կազմել հայ ժողովրդի խորհրդային հատուածի մասին, նրա քաղաքական, տնտեսական և բարոյական ուժերի մասին, երեւի անհրաժեշտ կը լինի քննադատօրէն դիտարկել եւ վերլուծել աշխարհագրական դիրքը, սահմանները, բնակչութիւնը, ածը, կրթութիւնը, ազգային նկարագիրը եւ այն ամէնը, ինչը կազմում է ազգի էութիւնը։ Սակայն այդպիսի հետազօտութիւնները իմ ուժերից վեր են եւ անհնարին են այս յօդուածի սահմաններում։ Այնուամենայնիւ մի քանի հարցերի վրայ ես կը ցանկանայի կանգ առնել։

Խորհրդային իշխանութեան հաստատման սկզբնական շրջանում, ազգը, տարուած միջազգային գաղափարներով, կամաց-կամաց սկսեց մոռանալ իր ազգային էութիւնը։

Այն ժամանակ նա ոչ միայն չէր խուսափում իր ռուսականացումից, այլեւ գիտակցաբար ձգտում էր դրան, տեսնելով այդ ռուսականացման մէջ պրոլետարական միջազգայնականութեան գաղափարի իրականացումը։ Այդ ընթացքում, որը տեւեց մինչեւ 1965 թիւը, օժանդակում էին երեք հիմնական հանգամանքներ։

Առաջին՝ ժողովրդից խլել էին իր պատմութիւնը եւ կրօնը, այսինքն՝ հէնց այն, ինչը ազգային ինքնագիտակցութեան հիմքն էր կազմում։

Երկրորդ՝ ազգին ամէնուր ներշնչւում էր ազգային յետամնացութեան առասպելը, որի համաձայն Ռուսաստանի բոլոր ազգութիւնները, այդ թւում է՛ւ հայերը, խորհրդային իշխանութեան շնորհիւ դասեցին քաղաքակիրթ ազգերի շարքին։ Շատ ազգերի համար դա իսկապէս ճշմարտութիւն էր, սակայն ընդհանուր գնահատականի տակ ընկան է՛ւ այնպիսի ազգեր, յանձինս հայերի, որոնց դա ոչ մի կերպ չէր վերաբերւում։ Եւ այդ յօրինած տնտեսական եւ մշակութային յետամնացութեան տեսարանը յանկարծ աշխուժացաւ շինարարութիւններով, թատրոններով, դպրոցներով, բարձրագոյն հաստատութիւններով։ Շինարարական **պաթոս**ը մեծ տպաւորութիւն էր թողնում մարդկանց վրայ եւ թուլացնում էր ազգային մտայնութիւնը։ Նրանք, ովքեր չգայ-

թակղուեցին այդ խաբուսիկ աղմուկով եւ շարունակում էին մտածել ազգային չափանիշներով, բառի բուն իմաստով ոչնչացուեցին ստալինեան ճամբարներում:

Երրորդ՝ ստեղծուել էր մի այնպիսի կացութիւն, որտեղ ապահով հասարակական դիրք գրաւելու համար անհրաժեշտ էր ունենալ ռուսական կրթութիւն: Յարմարուելով այդ կացութեանը, մտաւորականութիւնը ստիպւած էր իր երեխաներին ուղարկել ռուսական դպրոցներ: Դրա շնորհիւ (այլ ոչ թէ որովհետեւ հայկական կրթութիւնը ցածր է ինքնըստինքեան) հայկական դպրոցները յետ մնացին ռուսականներից: Իսկ այդ ռուսական դպրոցների աշակերտները, որոնց իրենց մտաւորական ծնողները փաստօրէն կտրել էին ազգից, ուսումնասիրում էին դպրոցներում ռուսական պատմութիւնը, ռուսական թագաւորների կենսագրութիւնները, անգիր էին անում ռուսական առասպելներից երկար ու դժւար ընկալելի հատւածներ, գիտէին բերանացի Ֆետին, Տիւտչեւին, Ֆոնվիդինին, էլ չխօսենք Պուշկինի եւ Լերմոնտովի մասին. բայց ոչինչ չգիտէին Խորենացու, Նարեկացու, Րաֆֆու, Շանթի, Չարենցի եւ շատ ուրիշ հայերի մասին: Եւ ի հարկէ նրանք ոչինչ չգիտէին Աւարայրի, Սարդարապատի, Մայիս 28ի, Սեւրի կամ Լօզանի դաշնագրի մասին (այստեղ ես իմ պարտքն եմ համարում նշել, որ ինքս նոյնպէս պատկանում էի այդ դժբախտների թւին):

Ռուսական դպրոցներից դուրս եկած մտաւորականութիւնը ի վիճակի չէր զարգացնել հայ ազգային միտքը եւ այդ միտքը օրէց օր աղքատանում էր: Հայկական բեմը դադարեց փայլել իր վառ տաղանդներով, ազգը էլ չէր ծնում Վ. Փափազեաններ, Պ. Աղամեաններ, Ա. Ոսկանեաններ, Հ. Ներսիսեաններ, սնանկանում էր **պռէզիա**ն, իսկ մտաւորականութիւնը ներխուժեց Ռուսաստանի կենտրոնական քաղաքները եւ սկսեց իր հաւատարիմ ծառայութիւնը օտարներին:

Խրուշչեւեան **լիբերալիզացիան** արթնացրեց ազգը: 1965 թւականի Ապրիլ 24ը կարելի է համարել վերածնւած ազգայնականութեան առաջին համազգային արտայայտութիւնը: Այդ պատմական օրից ի վեր ազգը սկսեց հետաքրքրքրել իր պատմական անցեալով, հայկական դպրոցները սկսեցին հարըստանալ մտաւորականների երեխաներով, անսպասելի արագ բարձրացաւ **պռէզիայ**ի մակարդակը եւ նոյնիսկ պաշտօնական իշխանաւորները սկսեցին մտածել ազգային չափանիշներով: Սակայն **լիբերալիզացիա**ն բերեց իր հետ նաեւ որոշ հասարակական խառնաշփոթութիւն:

Ազատւելով ստալինեան բռնակալութիւնից, ժողովուրդը, որը պատրաստ չէր ազատութեանը, չկարողացաւ նպատակասլաց եւ լիովին օգտւել ստեղծւած կացութիւնից: Առաջ եկան արդարութեան չափանիշները, որոնք մինչ այդ թաքնւած էին հոգու խորքերում, եւ ազգի առաջադէմ կոչւած տարրը սկսեց

քննադատել այն ամէնը, ինչ իրեն թւում էր անարդար: Ազգային, հասարակական, կրօնական եւ մնացած բոլոր տեսակի դժգոհութիւնները խառնուեցին իրար հետ եւ ձեւակերպւեց մի ընդհանուր բողոք վարչաձեւի դէմ: Հասարակական կառուցւածքը ժողովուրդը ընդունեց որպէս մի օտար վարչաձեւ եւ բոլոր ասպարէզներում սկսւեցին պետական օրէնքների խախտումները: Այդ խախտումները ի յայտ էին գալիս այնտեղ, որտեղ ժողովուրդը դժգոհ էր կացութիւնից, ի վիճակի չէր փոխելու այդ կացութիւնը, բայց չենթարկւելու համար նրան ունէր համարձակութիւն:

Ընդհանուր դժգոհութիւնը, որը բաւականին վտանգաւոր է ազգի համար, տարբեր խմբերի մօտ տարբեր ձեւակերպում է գտնում: Այս կամ այլ զարգացած մտաւորականութիւնը ելքը տեսնում է վարչակարգի **լիբերալիզաց**ման մէջ: Այդ խումբը ունի հիմնականում ռուս**ֆիլ**ական երանգաւորում եւ ուշադիր հետեւում է «Սոլժենիցին-Սախարով» շարժմանը: Փառք Աստուծոյ, նա չունի համապատասխան վճռականութիւն եւ առայժմ հանդէս է գալիս դիտողի, աւելի ճիշտ՝ զգոյշ համակրողի դերում:

Միւս խումբը, որը գտնւում է իշխանութեան գլուխ, սրանք են կուսակցական եւ պետական **ապարատ**ի աշխատակիցները, անվտանգութեան կոմիտէի ցանցը եւ ուրիշ իշխանաւորներ, ելքը տեսնում են ստալինեան վարչաձեւին վերադառնալու մէջ: Նրանք երազում են հաւաքել ազգը մի կարգապահ սահմանների մէջ, որ ինքնըստինքեան դատապարտելի ցանկութիւն չէ, սակայն ջանում են այդ անել ամենատարրական ձեւով, այսինքն բռնակալութեան միջոցով: Այստեղ էլ, փառք Աստուծոյ, այդ երազների իրագործումը իրենցից կախւած չէ: Բայց դժբախտաբար նրանք, ումից այդ կախւած է, կարծես թէ նոյնպէս մտածում են ստալինիզմի վերականգնման ուղղութեամբ: Եւ դա զարմանալի չէ. ղեկավարման ամենահեշտ ձեւերից մէկը բռնապետութիւնն է, որի համար չի պահանջւում ոչ խելք եւ ոչ էլ բարոյական սահմանափակումներ, անհրաժեշտ է միայն անսահման իրաւունքների առկայութիւնը, ամրապնդւած անբարոյական պատժիչ մարմիններով:

Վերջապէս քաղաքականութիւնից եւ առողջ տրամաբանութիւնից հեռու կանգնած քաղաքացիների մի խումբ երազում է մասնաւոր սեփականութեան մասին: Նրանց մտորումների հիմնաքարը այն է, որ Արեւմուտքում մարդիկ ապրում են աւելի լաւ, քան Խորհրդային Միութիւնում, որ արտասահմանում կարելի է ազատ գնել **աւտոմեքենա**ներ եւ շատ ուրիշ գեղեցիկ ապրանքներ, իսկ Հայաստանում այդ ամէնը հայթայթելու համար անհրաժեշտ է դիմել անօրինական ճանապարհների:

Եւ երեւի ազգի մի 10-15 տոկոսը գոհ է իր վիճակով: Դրանք առեւտրի, արդարադատութեան, **միլիցիա**յի եւ մի քանի ուրիշ բնագաւառների աշխատող-

ներն են, որոնք առանց մեծ ճիգեր գործադրելու կարողանում են իւրացնել մեծ գումարներ։ Սրանք գոհ են, որովհետեւ յստակ գիտեն, որ ուրիշ ոչ մի հասարակարգ չի հանդուրժի իրենց կողմից կատարուած անբարոյականութիւնները։

Իսկական ազգային մտածելակերպ ունեցողների թիւը այնքան քիչ է, որ ես դժւարանում եմ առանձնացնել նրանց, որպէս հասարակական խմբաւորում։

Խօսքը իհարկէ ազգային զգացմունքների մասին չէ, որը, ինչպէս ասացի, վերածնունդ ապրեց եւ այժմ բաւականին տարածւած է։ Խօսքը ազգային ճակատագրով մտահոգւածների մասին է, որոնք գործում են այդ ուղղութեամբ, յուզւում եւ որոնում են նրա ապագան կերտելու ճանապարհներ։ Այդպիսիներին մատների վրայ կարելի է հաշւել։

Պարզ է, որ գաղափարների այս խառնաշփոթութեան պայմաններում դժւար է տարբերել ազգային դժգոհութիւնը ընդհանուր դժգոհութիւնից։ Եւ ի հարկէ պարզ է, որ այդ պայմաններում Խորհրդային Հայաստանը չի կարող համայն հայութեան կենտրոնը դառնալ։ Նա նոյնիսկ ի վիճակի չէ Խորհրդային Հայաստանից դուրս՝ հարեւան հանրապետութիւններում գտնւող հայկական դպրոցները ապահովել համապատասխան դասագրքերով։ Էլ չխօսենք արտասահմանեան դպրոցների մասին։ Ոչ մի հայկական թերթ արտասահմանում չունի սեփական թղթակից, Սփիւռքի կեանքը արտացոլելու համար։

1973

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՆԵԼԻՔ ՈՒՆԻ՞ ԱՐԴԵՕՔ

Դոկտ. Է. Յովհաննիսեան

Ներկայ յօդուածի առաջին մասով դոքթ. Էդուարդ Յովհաննիսեան կ'արծարծէր հայ ժողովրդին համար պատրաստուելու, պատրաստ ըլլալու անհրաժեշտութեան հարցը, այն օրուան համար, երբ պատմութեան բերումովն իսկ հայ ազգը պիտի գտնուի սեփական ճակատագիրը տնօրինելու, իր սեփական, միացեալ ու անկախ հայրենիքին մէջ իբրեւ անկախ ազգ ապրելու կարելիութեան առջեւ: Ապա կը ներկայացնէր յաջորդական այն հանգրուանները, որոնցմէ անցած էր Խ. Հայաստանի հայութիւնը եւ անոր նեկայ կացութիւնը, մօտեցման զանազան եղանակները: Յօդուածի այս երկրորդ մասով հեղինակը կը քննէ Խ. Հայաստանի կարելիութիւնները, միացեալ անկախ Հայաստանի վերականգնումի նպատակի իրականացման նպաստելու համար:

Գտնուելով այդ վիճակում, ինչպիսի՞ ներդրում կարող է անել Հայաստանը միացեալ անկախ պետականութիւնը վերականգնելու գործում: Որո՞նք են նրա դիրքերը ընդհանուր ճակատում: Քանի որ ազգային կեանքը Հայաստանում ունի տարբեր կողմեր, աւելի հեշտ է սկսել նրանից, թէ ինչ չպէտք է անի Խորհրդային Հայաստանը:

ՆԱ ՉՊԷՏՔ Է ԱՆԻ ՈՉ ՄԻ ԲԱՆ, ԻՆՉԸ ՀԱԿԱՍՈՒՄ Է ՌՈՒՍԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՇԱՀԻՆ:Ես դիտաւորեալ այդ շահը անւանում եմ ռուսական եւ ոչ խորհրդային, որովհետեւ վաղը այդ իշխանութեան գլուխը կարող է անցնել աւելի դաժան կառավարութիւն եւ աւելի ամուր կառչի կայսրութիւնից: Եւ այդ դէպքում Հայաստանը նոյնպէս պարտաւոր է չհակադրուել պետութեանը: Եւ քանի այդ պետութիւնը այսօր խորհրդային իշխանութիւնն է, ուրեմն՝ «կեցցէ խորհրդային իշխանութիւնը». եւ քանի որ նրա պաշտօնական գաղափարախօսութիւնը մարքսիզմ-լենինիզմն է, ուրեմն՝ մեր նշաբանն է «առաջ դէպի կոմունիզմ»: Հէնց այդ է ազգային կառավարութեան թոյլատրելի սահմանները եւ դուրս չպէտք է գալ այդ սահմաններից: Որքան հաւատարիմ ծառայի Հայաստանը Մոսկուային, այնքան շատ կարող է գործել նա ազգային ասպարէզում: Որքան խելացնոր լինի ծափահարութիւնների աղմուկը Մոսկուայի հասցէին, այնքան շատ ազատութիւն նա ձեռք կը բերի իր համար: Իսկ ծափահարել պէտք է անկեղծօրէն, համոզուած լինելով, որ ոչ ոք չի խաբւի կեղծիքից: Պէտք է ծափահարի ամբողջ ազգը, հաւատացած լինելով որ դա է միակ ճանապարհը դէպի ազգային պետականութիւնը: Այսպիսով առաջինը, ինչ պէտք է անի ազ-

գի խորհրդային հատուածը, դա այն է, որ բոլոր բնագաւառներում ԱՆԿԵՂԾ պէտք է ծառայի խորհրդային իշխանութեանը:

Այն բանից յետոյ, որ ես նախորդ էջերում ոչ երկմտօրէն արտայայտեցի իմ վերաբերմունքը հանդէպ խորհրդային հասարակարգին, այսպիսի առաջարկութիւնը ամենաքիչը կարող է թւալ տարօրինակ: Այդ առաջարկը արդարացնելու համար կարելի էր օգտւել ժամանակակից քաղաքական օրինակներից, բացայայտել քաղաքական իրականութիւն հասկացողութիւնը, դիմել Բրանտի կամ Նիքսընի յարմարւողական քաղաքականութեանը, բայց, ինչպէս ես ասացի, մարդկութեանը քիչ բան է յաջողւում աւելացնել հնադարեանների քաղաքական մտքին: Դիմենք նրանց:

Պետրոս առաքեալի ուղերձի մէջ Աւետարանի անտարբեր վերաբերմունքը դէպի հռոմէական կայսրութիւնը («տուէք կեսարինը կեսարին…») փոխարինւում է ենթարկւել պահանջով, առանց որեւէ բողոքի, բոլոր ձեւի իշխանութիւններին, յանձինս կեսարին, որպէս բարձրագոյն կառավարչի: Քրիստոնեաները պարտաւոր էին համբերատար վերաբերւել դաժան իշխանութեան բոլոր անարդարութիւններին եւ հետեւել Քրիստոսի օրինակին, որը խաչւեց ոչ մի մեղք չգործած: «Աստւածից վախեցէք, թագաւորին յարգէք», -այս էր դարձել քրիստոնեայի հասարակական եւ քաղաքական վարքագծի նշանաբանը: Այդ ուղղութեամբ աւելի հեռուն է գնում Պօղոս առաքեալը: Նա ոչ միայն հաստատեց բոլոր իշխանութիւնների աստւածային ծագումը եւ եզրակացրեց, որ իշխանութեան դէմ ըմբոստանալը Աստուծոյ կամքին հակառակ է, այլ ընդգծեց ենթարկւածութեան բարոյական կողմը: «Ենթարկւել ելնելով խղճից, այլ ոչ թէ վախից», -ասում էր նա:

Միթէ՞ Պօղոս եւ Պետրոս առաքեալները հրաժարւել էին Քրիստոսի անիշխանական ուսմունքից: Ամենեւին էլ ոչ: Առաքեալների ուսմունքի խոր իմաստը հասկանալի է դառնում «Ապոկալիպսիս» կոչւող աշխատութիւնից: Այդ գրքում հռոմէական կայսրութեան կերպարը ներկայացւած է մի սարսափելի հրէշի ձեւով, իսկ Հռոմի քաղաքական վարչաձեւը համեմատւում է Բաբելոնի անառակ կնոջ հետ: Հռոմէացիները իրենց կայսրութիւնը համարում էին յաւերժ, իսկ «Ապոկալիպսիս»ը գուշակում էր նրա անխուսափելի վախճանը: Կայսրութեան այդ անկումն ներկայացւում է, որպէս հատուցում, պատիժ այն Արդարութեան կողմից, որը Աստուծոյ կամքով իշխում է երկրի վրայ: «Ով գերի է վերցնում, ինքը գերի պիտի գնայ, ով թուր է բարձրացնում, թրից էլ կ'ընկնի»: Տանջալի եւ սարսափելի մահ է գուշակում Ապոկալիպսիսը հռոմէական քաղաքական եւ տնտեսական ամբողջ համակարգի համար: Սով, հրդեհներ, կախաղաններ, լաց ու կոծ մէկ օր պէտք է թափւեն այդ կայսրութեան վրայ, հաւատացնում է նա: Կայսրութեան այդ անխուսափելի վախճանի հաւատքի

լոյսի տակ, ենթարկւածութիւնը եւ ենթարկւածութեան բարոյականացումը, կարելի է գնահատել որպէս ժամանակաւոր յարմարւողականութիւն, յանուն ինքնապահպանութեան «Աստուծոյ արդար թագաւորութեան համար»:

Հէնց այդ չափանիշով մենք պէտք է վերաբերւենք խորհրդային իշխանութեանը անկեղծ ծառայելու առաջարկին: Սակայն Մոսկւային ծառայելու առաջարկը կարող է թւալ գռեհիկ եւ իր մէջ ոչ մի նորութիւն չպարունակող: Երկու լուրջ առարկութիւն կարող է առաջ գալ այդ կապակցութեամբ:

Առաջին, Հայաստանի կառավարութիւնը կարող է ասել, թէ մենք փաստօրէն այդպէս էլ վարւում ենք, քանզի ուրիշ ելք չունենք, որ մեր մոսկովեան կողմնորոշումը այնքան ստիպողական է, որ մեր անկեղծ ծառայութիւնը ինքնըստինքեան հասկանալի է:

Երկրորդ առարկութիւնը կապւած է այն կասկածների հետ, թէ արդեօք հնարաւո՞ր է թոյլատրւած սահմաններում ծաւալել ազգային գործունէութիւն: Արդեօ՞ք խորհրդային պայմանները լրիւ չեն բացառում ազգային գործունէութիւնը, այն էլ այնպիսինը, որ տանում է դէպի միացեալ անկախ Հայաստան:

Երկու այս առարկութիւնների լրջութիւնը միայն երեւութական է: Այդ առարկութիւններով պարզապէս քողարկւում են անպատասխանատու եւ անձնազով իշխանաւորները, որոնք թքում են ազգի ճակատագրին և օգտագործում են իրենց բարձր դիրքերը, անձնական ցանկութիւնները բաւարարելու համար:

Նրանք վախենում են կորցնել ժողովրդի յարգանքը եւ նեղ շրջանակներում խօսում են իրենց ազգային զգացմունքների մասին, բայց երբ նրանց առաջարկում ես գործել, նրանք անզօր բարձրացնում են ուսերը, որը նշանակում է մօտաւորապէս հետեւեալը. «Ես ի հարկէ պատրաստ եմ ծառայելու ազգիս, բայց դժբախտաբար ոինչ հնարաւոր չի անել, մենք ստիպւած ենք ծառայելու եւ յարմարւելու Մոսկւային»: Բայց հէնց դրանումն է հարցը. ԾԱՌԱՅԵ՞Լ ԹԷ ՔՇՆԵԼ, ՅԱՐՄԱՐԻԵ՞Լ ԹԷ ԼՈՒԾԻԵԼ: Ծառայել, որովհետեւ ստիպւած ես, որովհետեւ այդ ծառայութիւնը օգտակար է ազգի համար:

Ես կարծում եմ, որ Մոսկւայի եւ Երեւանի միջեւ պէտք է տեղի ունենայ մօտաւորապէս այսպիսի երկխօսութիւն (**դիալոգ**):

Երեւան.- Ես պատրաստ եմ ծառայելու քեզ, անկեղծ ու հաւատարիմ, այնքան ժամանակ, քանի դու կենդանի ես, ծառայել այնպէս, ինչպէս ժամանակին ծառայում էին քեզ կոզակները: Ես պատրաստ եմ քո կենդանի ժամանակ լինել քո պահապանը եւ բուժող բժիշկը, այն ժամին, երբ դու կը պառկես մահճի վրայ: Ես պատաստ եմ գովասանել քո հզօրութիւնը, նոյնիսկ արդարութիւնը եւ խոնարհւել քո գաղափարի առջեւ: Ես պատրաստ եմ անձնազոհ պայքարել քո բոլոր թշնամիների հետ, ես երդւում եմ, չեմ դաւաճանի, դու կարող ես

վստահել ինձ, իմ դարաւոր պատմութեան ընթացքին ես երբեք չեմ դաւաճանել իմ դաշնակիցներին։

Մոսկւա.- Ես քո հաւատարմութեան կարիքը ունեմ, քանզի գիտեմ, որ դուք բոլորդ այսօր ծառայում էք ինձ, որովհետեւ ստիպւած էք, որովհետեւ ես ուժեղ եմ։ Դուք բոլորդ լաւ գիտէք, որ եթէ հրաժարւէք ծառայութիւնից, ես կը ճխլեմ ձեզ իմ **տանկ**երով։ Վայ նրան ձեզանից, որ կ'ըմբոստանայ, դուք լաւ էք յիշում Չեխոսլովակիան, հէնց դրա համար էլ ծառայում էք։ Սակայն ես կ'ուզէի ունենալ քեզ նման փոքր, բայց անկեղծ բարեկամ։ Ոչինչ որ դու թոյլ ես, ես կ'ուժեղացնէի քեզ, եթէ համոզւած լինէի, որ յուսալի բարեկամ ես, որ ես կարող եմ քեզ վստահել այնպէս, ինչպէս ինքս ինձ։ Ի՞նչ ես կամենում ստանալ այն հաւատարմութեան փոխարէն, որը խոստանում ես։

Երեւան.- Միակ բանը, ինչ ես ուզում եմ քեզնից իմ հաւատարիմ ծառայութեան փոխարէն, դա այն է, որ օգնես ինձ կամ գոնէ չխանգարես ամրապընդուելու այնքան, որ ի վիճակի լինեմ քո մահից յետոյ ուրիշ գայլերից պաշտպանուելու։ Չէ՞ որ գայլը գառը ուտելու համար միշտ առիթ կը գտնի։ Դէ օգնիր ինձ, գառիս աւելի հզօր կենդանի դառնալ։ Չէ՞ որ ես խոստանում եմ, քանի դու կենդանի ես, ծառայել քեզ։ Մի՞թէ դու չես ուզում, որ քո ծառան լինի ոչ թէ օսլայած ազնուական շնիկ, այլ համարձակ եւ ուժեղ հովւի շուն։

Մոսկւա.- Բայց դու գուշակում ես իմ վախճանը եւ դրանով իսկ արդէն դաստւում ես իմ թշնամիների շարքին։ Եթէ դու հիմա դեռ չես ուզում իմ վախճանը, դա միայն այն պատճառով է, որ թոյլ ես, դու դեռ գառնուկ ես եւ շատ ես վախենում գայլերից։ Բաւական է ես հաւատամ եւ ուժեղացնեմ քեզ եւ դու կը ցանկանաս իմ մահը եւ յետեւիցս կը հասցնես մահացու հարւած։

Երեւան.- Դու հիանալի գիտես, որ երբեք չեմ կարող դառնալ այնքան ուժեղ, որ ի վիճակի լինեմ հասցնելու քեզ մահացու հարւած։

Իսկ թոյլ Տակոտիներից ես հրաժարւեցի, քանզի իմաստուն եմ, ես գիտեմ, որ նրանք անիմաստ են։ Իսկ ինչ մնում է իմ կարծիքին քո վախճանի վերաբերեալ, համարիր, որ ես սխալւում եմ, չէ՞ որ դրանից չի փոխւի խնդրի էութիւնը։ Քանի դու կենդանի ես, ես քո հաւատարիմ ծառան եմ։ Ուրեմն վարձատրիր ինձ, ինչպէս ընդունւած է վարձատրել հաւատարիմ ծառաներին։ Մի ձուլիր ինձ քո մէջ, մի խլիր իմ անհատականութիւնը։ Ի՞նչ կը ստանաս դու, եթէ քո բազմաթիւ ժողովուրդը իմ դժբախտ ժողովրդի հաշւին աւելանայ եւս մի քանի միլիոնով։ Բայց եթէ դու ունենաս մէկից աւելի ծառայ, ռուսականից տարբերւող նկարագրով, դու ձեռք կը բերես ահագին քաղաքական եւ բարոյական **կապիտալ**։ Յիշիր քո պատմութիւնը։ Չէ՞ որ դու հաւատում ես Մարքսին։ Յիշում ես ինչպէս է այդ քո հոգեւոր հայրը նկարագրում քո պատմական անցեալի ծանր օրերից մէկը։ Գուցէ մոռացել ես, ես կը յիշեցնեմ։

«Ոչ թէ բիրտ Նորմանդիան հերոսական դարաշրջանում, -գրում է նա, -այլ մոնղոլական ստրկութեան դաժան ճահճում ծնունդ առաւ Մոսկովիան եւ այսօրւայ Ռուսաստանը ոչ այլ ինչ է, եթէ ոչ վերափոխւած Մոսկովիան…

«Իւան Երրորդը Մոսկովիան ազատագրեց թաթարներից ոչ թէ վճռական եւ համարձակ հարւածի միջոցով, այլ քսան տարւայ համբերատար եւ մանրակրկիտ աշխատանքով այդ ուղղութեամբ: Այդ ազատագրումը աւելի յիշեցնում էր մի բնական երեւոյթ, քան մարդու ձեռքի աշխատանքը: Երբ թաթարական հրէշը հասել էր իր վերջին շնչին, Իւանը յայտնւեց մահացողի անկողնու մօտ որպէս վախճանը նախատեսող բժիշկ, այլ ոչ թէ որպէս վերջին հարւածը հասցնող զինւոր»: Ուրեմն. թոյլ տուր հետեւեմ ես էլ քո օրինակին:

Մոսկւա.- Բայց դու վատաբանում ես իմ գաղափարախօսութիւնը, իմ բարոյականութիւնը, դու չես հաւատում **պրոլետար**ական **ինտերնացիոնալ**իզմին, դասակարգային պայքարին, դու իմ գաղափարական թշնամին ես: Միայն այդ թշնամական դիրքերից կարելի է գուշակել իմ վաճխանը: Բայց ես հաւատում եմ իմ գաղափարախօսութեանը, մարքսիզմը հզօր է, որովհետեւ ճիշտ է, ես հաւատում եմ կոմունիզմի յաղթանակին, գիտեմ որ յաւերժ պէտք է ապրեմ եւ գիտեմ, որ իմ գաղափարախօսութիւնը կը նւաճի ամբողջ աշխարհը: Նա արդէն ներթափանցել է Աֆրիկա, Լատինական Ամերիկա, ինչպէ՞ս կարող ես դու, խղճուկ, կասկածել, որ արտադրական յարաբերութիւնները…

Երեւան.- Սպասիր, սպասիր, ի՞նչ իմաստ ունեն պոռոտախօսութիւնները բարեկամների միջեւ, չէ՞ որ դու ինքդ այդ բոլորին վաղուց չես հաւատում: Այդ ճառերը դու արտասանի թշնամիների միջավայրում, իսկ մենք արի խօսենք անկեղծօրէն: Դու չէիր հաւատում այդ գաղափարներին արդէն 1917ին: Ես յիշում եմ ինչպէս դու խուճապի մատնւեցիր, երբ անպատրաստ Ռուսաստանը Եւրոպայից, «Պետրոսի լուսամուտով», սկսեցին ներթափանցել դեմոկրատական գաղափարներ: Քաղաքական բեմ դուրս ելան մտաւորականներ, որոնք հիանալի ըմբռնել էին Արեւմուտքի ազատութեան բարիքները, բայց ոչինչ չէին հասկանում Ռուսաստանից եւ չէին ճանաչում ռուսական հոգեբանութիւնը: Նրանց առաջադիմական **պաթոս**ը դուր էր գալիս մարդկանց: Մեծամասնութեան այն ժամանակ թւում էր, թէ նրանց քարոզածը բացարձակ ճշմարտութիւն է: Հասարակութիւնը, առանց խորը մտածելու, գնում է ազատութիւն քարոզող առաջնորդների յետեւից: Այն ժամանակ դու շփոթեցիր, իմ բարեկամս, քանի որ ցնցւեց Ռուսաստանը, իսկ **ինտերնացիոնալ**ի շեփորները սպառնում էին ջնջել քո պետականութիւնը եւ գերեզմանել քո կայսրութեան փառքը: Յեղափոխութեան հրդեհի հրացոլքը ցրեց քո մեծութեան առասպելը: Բայց այդ նոյն հրացոլքը լուսաւորեց քո կենցաղի մութ անկիւնները, որտեղից դուրս եկան մինչ այդ քնած ազգային ուժերը: Եւ բարձրացաւ ազնւականութեան

պատկանող Լենինը, որը բանւորների հետ ոչ մի կապ չունէր եւ, «մենք բանւորներ ենք» կոչով, զաւթեց իշխանութիւնը, որպէսզի փրկի կայսրութիւնը եւ նա փրկեց այն: Արդէն այն ժամանակ դու հրաժարւել էիր մարքսիզմից: Բայց ես չեմ մեղադրում քեզ դրանում, քանզի դու շատ աւելի լաւն ես, քան քո գաղափարները: Մենք երջանիկ ենք որ դու հրաժարւել ես մարքսիստական ըմբռնումներից: Մարքսիզմը ուզում էր վերացնել ազգը, ընտանիքը, դասակարգերը, եկեղեցին, պետութիւնը, բայց դու չհետեւեցիր այդ անմտութիւններին, դու շատ շուտ հասկացար, որ այդ դասական, դարերի պատմութիւն ունեցող, հաստատութիւնները անհնարին է վերացնել: Դու պահպանեցիր ընտանիքը, ամրապնդեցիր պետութիւնդ, որոշ չափով հաշտուեցիր եկեղեցիների հետ, առայժմ չես վերացրել ազգութիւնները. պրոլետարիատի իշխանութիւնը, որը, համաձայն եմ քո հետ, թեթեւամտութիւն է, փոխարինեցիր կուսակցական **ապարատի** իշխանութիւնով, իսկ միջազգային յեղափոխութեան գաղափարը ծառայեցրիր ռուսական պետական շահերին: Եւ լաւ էլ արեցիր. առաջին հերթին ազգային շահը, եւ յետոյ նոր՝ միջազգայինը: Ես էլ եմ այդպէս մտածում, էլ ինչո՞ւ ես ինձ հետ խօսում մարքսիզմից: Ոչ, բարեկամս, շարունակիր ամրապնդել քո կայսրութիւնը, իսկ ես կ'օգնեմ քեզ, ինչպէս կարող եմ:

Մոսկւա.- Բայց դու չես հաւատում ինձ, դու համարում ես, որ Ռուսաստանը վաղ թէ ուշ կը վախճանի եւ այդ վախճանի մէջ ես որոնում քո ազատութիւնը եւ երջանկութիւնը:

Երեւան.- Օ, ոչ: Հնարաւոր չէ կորցնել հաւատքը դէպի Ռուսաստանը: Ռուսաստանը կարելի է չհասկանալ, բայց չհաւատալ նրան անհնարին է: Ի՞նչպէս կարելի է չխոնարհւել Պետրոս Մեծի, Սուվորովի, Պուշկինի, Դոստոեւսկու, Տոլստոյի, Չայկովսկու եւ շատ ուրիշների առջեւ: Ոչ, ես հաւատում եմ նրանց, բայց դու խեղդում ես այդ ամէնը: Եւ ինչո՞ւ ես դու այդ անում, չեմ հասկանում: Միթէ՞ միայն նրա համար, որ քո մեծութիւնդ ուզում ես տեսնել տարածական մեծութեան մէջ: Միթէ՞ աշխարհագրական մեծութիւնը կարելի է համեմատել այն հոգեկան մեծութեան հետ, որին գուցէ ընդունակ է միայն ռուս ժողովուրդը: Միթէ՞ Տոլստոյին, Բուլդակովին, Սոլժենիցինին, Դոստոեւսկուն կարելի է փոխարինել մի քանի հեկտար հողամասով: Կայսրութեան շահերից ելնելով, դու ճնշում ես բուն Ռուսաստանը: Եւ քանի որ ես համոզւած եմ, որ դա քեզ չի յաջողւի անել, ես հաւատացի քո վախճանին, քո, բայց ոչ Ռուսաստանի:

Մոսկւա.- Եթէ դու յարգում ես Ռուսաստանը եւ եթէ դու խոստանում ես, քանի ես կենդանի եմ, հաւատարիմ ծառայել ինձ, ես կարող եմ համաձայնւել որոշ զիջումներ անել: Ասա ինչի՞ց ես դու դժգոհ եւ ի՞նչ ես ուզում:

Երեւան.- Չեմ կարող հիմա քեզ յստակ ասել, թէ ինչ եմ ուզում: Չեմ կարող, որովհետեւ այդ ասելու համար անհրաժեշտ է կատարել խոր ուսումնասիրու-

թիւններ քաղաքական եւ տնտեսական ասպարէզներում: Այդպիսի ուսումնասիրութիւններ ես դեռ չեմ կատարել: Խնդրանքս կարող եմ միայն ընդհանուր ձեւով ներկայացնել: Հիմա ինձ համար ձմեռ է, իսկ ես սիրում եմ ամառը: Ես համոզուած եմ, որ ամառը կը գայ, բայց գիտեմ, որ նրա գալը ինձանից անկախ է: Ես մտադրուած չեմ իմ նուազ ազգային ուժերով հալեցնել ձիւնը կամ փորձել փոխել մոլորակների շարժման ընթացքը, որպէսզի արագացնեմ գարնան գալիքը: Ես շատ թոյլ եմ բնութեան հզօր ուժերի հետ պայքարելու համար: Բայց գիտեմ, որ գարունը կը գայ եւ «մեր երկրէն փախ կը տայ ձմեռ»ը: Միակ բանը, որ ես հիմա ուզում եմ, դա տաք վերարկու հագնելն է, որպէսզի մինչեւ գարուն գալը ցրտամահ չլինեմ: Եւ յետոյ ես ուզում եմ նախապատրաստել նաւակներ, ձկնորսական կարթեր ու լողազգեստներ, որպէսզի ամրանը կարողանամ լողալ, ձուկ բռնել եւ թիավարել: Իսկ հիմա, քանի ձմեռ է, ես անկեղծօրէն համաձայն եմ քեզ հետ խմել օղի, սարքել ձիւնամարդ եւ նստել քո սահնակը:

Մոսկւա.- Եթէ ուզածդ միայն այդ է եւ դու փոխարէնը համաձայն ես հաւատարիմ ծառայել, ես կը հագցնեմ քեզ տաք վերարկու եւ թոյլ կը տամ ձեռք բերես ամառային սարքաւորումներ: Որքան դու տաք հագնուած լինես, այնքան աւելի լաւ կարող ես ինձ ծառայել: Ուրիշների աչքին դու ինձ համար օտար ես, իսկ քո ձայնը ինձ հարկաւոր է հէնց որպէս օտարի ձայն: Իսկ դու չե՞ս վախենում, որ այն միւսները քեզ դաւաճան կը համարեն:

Երեւան.- Ոչ, չեմ վախենում: Ես նոյնիսկ պարծենում եմ դրանով: Ես երազում եմ դառնալ քաղաքական ազգ: Դու լաւ գիտես, որ քաղաքականութեան մէջ զգացմունքների համար տեղ չկայ: Իմ զգացումը եւ անմեղութիւնը իմ վրայ շատ թանկ նստեց եւ պատմութեան ընթացքին իմ ժողովուրդս ծով արիւն թափեց: Իմ որդիներիս մորթեցին, կանանց ու աղջիկներին առեւանգեցին, սպանեցին, այրեցին, ուզեցին ջնջել պատմութիւնից հայ բառը: Ես միշտ խաղալիք էի օտար քաղաքական գայլերի ձեռքում եւ դարեր շարունակ քարշ էի գալիս օտարների ճակատագրի յետեւից: Բնական է, հիմա ես ուզում եմ ինքս կերտել իմ ճակատագիրը: Եւ եթէ դրա համար պահանջւում է ծառայել քեզ՝ կը ծառայեմ: Եթէ պէտք է դաւաճանել մնացած 14ին՝ կը դաւաճանեմ: Եւ ոչ ոք չի համարձակւի մեղադրել ինձ դրանում, որովհետեւ ես քաղաքական ազգ եմ:

Եթէ այս երեւակայական երկխօսութիւնը տեղի ունենայ եւ երկու կողմերը հասնեն լուռ համաձայնութեան, Հայաստանում ազգային գործունէութեան համար կը բացւի լայն ասպարէզ: Սակայն ակնյայտ է, որ այս երկխօսութիւնը կարող է տեղի ունենալ միայն մի դէպքում. եթէ մոսկովեան կողմի ղեկավարութիւնը իրօք մտահոգւած է իր երկրի ճակատագրով, իր կեանքի միակ իմաստը տեսնում է հայրենիքի բարգաւաճման մէջ: Իսկ երեւակայական կողմի ղեկավարութիւնը տանջալի յուզմունք է ապրում իր ժողովրդի ողբերգա-

կան ճակատագրով եւ պատրաստ է ամբողջ կեանքը, առանց մնացորդի, առանց փառասիրութեան եւ անձնական շահի, նւիրել ազգին: Եթէ այդ ղեկավարութիւնը ընդունակ է տեսնել հեռուն, հաշւարկել եւ մի քանի սերունդների համար մշակել գործնական ծրագրեր:

Կասկածից վեր է, որ մոսկովեան իշխանութեան գլուխը կամաց-կամաց կ'անցնեն պետականօրէն մտածող մարդիկ, ինչ մնում է ազգային կառավարութեանը, ապա դժբախտաբար դեռ բաւականին մեծ տեղ է գրաւում աթոռակռիւը: Այնտեղ, գրեթէ բոլորին, իշխանութիւնը անհրաժեշտ է իշխելու համար: Հէնց այդ աթոռակռիւը պատճառ դարձաւ, որ Մոսկւան սկսեց ուղարկել Հայաստան իր ղեկավար ներկայացուցիչներին: Հանրապետութիւնը կորցրեց իր վստահութիւնը:

Դէ, ի՞նչպէս չգոռաս. լսէ՛ք, աթոռամոլնե՛ր, վերջացրէք ձեր մկնային քաշքըշուկները, մենք բոլորս մահկանացու ենք, շատերին մեզանից գուցէ մնացել է ընդամէնը 10 տարւայ կեանք, ի՞նչ ենք արել մենք ազգի համար, ի՞նչ կը մնայ մեզանից ազգի յիշողութեան մէջ: Ամէն մէկը մեզանից պատասխանատու է այն ամենի համար, ինչ կատարւում է մեր օրօք: Մեզանից եւ միայն մեզանից՝ մահկանացուներիցս կախւած է ազգի անմահութիւնը: Աստծուց վախեցէք, իշխանութիւնով գինովցածներ, ազգը կործանւում է եւ ոչ թէ թրքական սրից, այլ մեր անտարբերութիւնից: Շուտով մենք բոլորս կ'անյայտանանք երկրագնդի երեսից ընդմիշտ, բայց գալիք սերունդները դեռ շատ երկար ժամանակ կը պղծեն մեր գերեզմանները: Նրանք երբեք չեն ների մեզ՝ մեր անտարբերութիւնը: Թող չխլացնի ձեզ արտաքին աղմուկը. փակէք աչքներդ եւ կը տեսնէք, ծածկէք ականջներդ եւ կը լսէք:

Հազիւ թէ այս ճիչը շարժի մեր ղեկավարների կարծր ոգիները: Դրա համար բարոյակիրթ եւ ազնիւ երիտասարդութիւնը, որը մտահոգւած է իր ժողովրդի ճակատագրով, թոյլատրելի եւ անթոյլատրելի ճանապարհներով պէտք է ձգտի գրաւել կառավարական պաշտօններ բոլոր բնագաւառներում: Դա այդ երիտասարդութեան բարոյական պարտականութիւնն է:

1973

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՆԵԼԻՔ ՈՒՆԻ՞ ԱՐԴԵՕՔ

Դոկտ. Է. Յովհաննիսեան

Ներկայ յօդուածի նախորդ երկու գլուխներով տոքթ. Էդուարդ Յովհաննիսեան կ'արծարծէր հայ ժողովուրդի պատրաստուելու անհրաժեշտութեան, Խ. Հայաստանի մէջ ապրող հայութեան անցած հանգրուաններու, ինչպէս նաեւ Խ. Հայաստանի կարեւորութեանց հարցերը, երեքն ալ միշտ ազգային ազատ եւ անկախ գոյութեան մը հետ կապուած, եւ միշտ Ռուսաստանի հետ բարեկամական կապերու պահպանման վրայ հիմնուած:

Յօդուածի երրորդ եւ վերջին մասով ան կը ներկայացնէ Խ. Միութեան մաս կազմող այլ փոքր ազգերու փորձառութենէն առնուած պարագաներ, մատնանշելու համար, որ եթէ Խ. Հայաստանի վարիչները ունենան բաւարար նուիրում ազգային ղեկավարութիւն մը բերելու համար ներկայ Հայաստանին, անոնք կրնան, առանց Ռուսաստանի հետ դժարութիւններ ունենալու, առաւելագոյնը ձեռք բերել ի նպաստ Հայաստանին ու հայութեան:

ԽՄԲ.

Ի՞նչպէս կարող է բարոյական ազգային կառավարութիւնը նախապատրաստել ազգը, դա առանձին հարց է: Գուցէ մի ուրիշ անգամ ինձ յաջողի մանրամասնօրէն կանգ առնել այդ հարցի վրայ: Այստեղ կարող եմ միայն ասել, որ ներքին սփիւռքի ներգաղթի կազմակերպումը, ազգային աւանդոյթների և ոգու վերականգնումը, ազգային տնտեսութեան զարգացումը եւ շատ ուրիշ հարցեր ոչ մի կերպ չեն հակասում խորհրդային իշխանութեան պահանջներին, բայց բոլորն էլ պահանջում են յատուկ ազգային մօտեցում:

Վերցնենք, օրինակ, տնտեսական բնագաւառը: Ո՞ր քաղաքական կամ տնտեսական հաշւարկը ցոյց տուեց, որ ապագայ կամ ներկայ «մի բուռ» Հայաստանի համար անհրաժեշտ է զարգացնել քիմիական արդիւնաբերութիւն: Չեմ ուզում խորանալ այս հարցերի մէջ, քանզի նրանք պահանջում են յատուկ մասնագիտական վերլուծութիւններ: Ուզում եմ միայն ասել, որ այդպիսի վերլուծութիւնները անհրաժեշտ են եւ որ վերլուծութիւնների հիմնաքարը պէտք է լինի ապագայ անկախ Հայաստանը, այլ ոչ թէ ամէն ինչ կլանող ռուսական շուկան:

Այժմ անդրադառնանք ազգային ինքնագործունէութեան հարցերին։ Տեսնենք, թէ ինչպէս կարող է ազգը ազդել ազգային կառավարութեան ընտրութիւնների վրայ։ Շատերի մօտ ստեղծուել է այնպիսի տպաւորութիւն, թէ ժողովուրդը բոլորովին չի մասնակցում այդ ընտրութիւններին եւ որ այդ իշխանաւորները պարզապէս նշանակւում են։

Այդ կարծիքը սխալ է։ Այդ կարծիքը տարածում են իրենց իշխանաւորները, որպէսզի ամրապնդեն իրենց ժողովրդից անկախ լինելու կարծիքը։ Խօսքը ի հարկէ պաշտօնական ընտրութիւնների մասին չէ, որը իսկապէս վեր է ածւած կատակերգութեան։ Խօսքը ուրիշ բանի մասին է։ Կենտրոնական, այսինքն մոսկովեան իշխանութեան փոփոխութիւնները իսկապէս ժողովրդից անկախ են, այդ իշխանութիւնը կարգաւորւում է ինքն իր մէջ, իսկ ժողովուրդը միայն անտարբեր դիտողի դերումն է։ Իսկ հանրապետական կառավարութիւնը ինքնակարգաւորւող չէ, նա նշանակւում և հանւում է կենտրոնի կողմից, այսինքն արտաքին ուժի միջոցով։ Եթէ ազգը միաբերան պահանջի, ենթադրենք, մի խումբ մտաւորականների կամ յարգւած բանւորների անունից, հեռացնել այս կամ այն ղեկավարին, կենտրոնական կառավարութիւնը մի քանի օրւայ ընթացքում կը բաւարարի այդ խնդրանքը, յայտնի բանաձեւի հիման վրայ՝ «չապահովեց ղեկավարութիւնը»։ Ազգային կառավարութիւնը դա հիանալի գիտէ, բայց չգիտես ինչու չի վախենում դրանից։ Նա երեւի համարում է, որ ազգը երբեք չի կարող հանդէս գալ միասնական կարծիքով։

Ազգային կարգապահութեան դէպքում սակայն հնարաւոր է ստիպել իշխանաւորներին մի քիչ, այսպէս ասած, ձգւել։ Նրանք, այդ իշխանաւորները, ամէն րոպէ պէտք է համոզւած լինեն, որ ժողովրդի աչքը իրենց վրայ է։

Որ այս ամէնը հնարաւոր է, որ Խ. Միութեան պայմաններում կարելի է վարել ազգային քաղաքականութիւն, ասում է մերձբալթեան հանրապետութիւնների փորձը։ Ինչ խօսք, որ նրանց պատմական և քաղաքական պայմանները տարբերւում են մեր պայմաններից եւ ես բոլորովին մտադրւած չեմ կոչ անելու հետևել նրանց։ Մերձբալթեան հանրապետութիւնների հակառուսական եւ հակախորհրդային տրամադրութիւնները բաւականին ուժեղ են, որը ես չէի ցանկանայ մեզ հայերիս։ Սակայն, որպէս այն բանի օրինակ, թէ ինչպէս կարելի է կոմունիստական **դիկտատուրայի** պայմաններում, վարել ազգային քաղաքականութիւն, մերձբալթեան հանրապետութիւնների փորձը հետաքրքիր է նաև մեզ համար։

Այս կապակցութեամբ ուզում եմ մի քանի խօսք ասել այդ հանրապետութիւնների քաղաքական կացութեան մասին։

33 տարի է անցել այն օրւանից, ինչ Էստոնիան, Լատվիան եւ Լիտուան մտան Խ. Միութեան կազմի մէջ։ Սակայն մինչեւ այսօր այդ հանրապետու-

թիւններում նկատւում են ազգային ինքնուրոյն տրամադրութիւններ: Ինչպէս Խ. Միութեան բոլոր ժողովուրդները, այնպէս էլ մերձբալթեան հանրապետութիւնների ժողովուրդները՝ խորհրդային համակարգը ընդունում են որպէս փաստ, որպէս քաղաքական իրականութիւն:

Սակայն այդ հանրապետութիւններում ազգաձուլման քաղաքականութիւնը հանդիպում է յամառ դիմադրութեան ոչ միայն ժողովրդի կողմից, այլեւ տեղական կոմունիստական ղեկավարութեան կողմից: Սովորական խօսակցութիւնների ժամանակ էստոնացիները, լիտուանացիները և լատվիացիները յաճախ օգտագործում են «մենք» և «նրանք» դերանունները, այսինքն մենք՝ որպէս տեղական բնակչութիւն, եւ նրանք՝ ռուսները, որոնք նւաճել են բալթեան շրջանները թէ՛ ցարական իշխանութեան օրերին եւ թէ կոմունիստների ժամանակ, երկու հարիւր տարւայ ընթացքում:

Խորհրդային իշխանութեան կառուցւածքը երեք մերձբալթեան հանրապետութիւններում չի տարբերւում միւս հանրապետութիւններից: Սակայն այդ հանրապետութիւնների ղեկավարութիւնը համոզւած է, որ պէտք է հաշւի առնել տեղական պայմանները եւ թէ որոշ հարցերում թոյլատրելի են տարբերակներ: Նրանք համարում են, որ կրթութեան, տնտեսական, կրօնական, ազգային հարցերում բալթիկցիները պէտք է դիմադրեն Մոսկւային եւ վարւեն այնպէս, ինչպէս որ ձեռնտու է իրենց՝ բալթիկցիներին: Եւ պէտք է ասել, որ այդ հանրապետական ղեկավարներին որոշ չափով յաջողւում է պաշտպանել տեղական շահերը:

Օրինակ, ի տարբերութիւն բոլոր հանրապետութիւնների, որոնք ամէն տարի Մոսկւայից պահանջում են լրացուցիչ գումարներ արտադրութիւնը ընդլայնելու համար, մերձբալթեան հանրապետութիւնները սահմանափակւում են գոյութիւն ունեցող արտադրանքի որակի բարձրացման պահանջներով: Դա արւում է այն պատճառով, որ արտադրական հզօրութիւնների լայնացումը կապւած է նոր՝ ռուսական բանւորական ուժի հոսքի հետ, դէպի մերձբալթեան շրջանները:

Իշխանաւորները, ժողովրդի պահանջներից դրդւած, **կադր**երի տեղաբաշխման հարցում կարողանում են վարել ազգային քաղաքականութիւն: Օրինակ, Ռիգայի մետաղաձուլական գործարանի բանւորները սպառնում էին 1973 թւի ձմրանը յայտարարել գործադուլ, եթէ գործարանի ղեկավարութիւնը ռուս **ինժեներ**ի փոխարէն չբարձրացնի լատիշ **ինժեներ**ի պաշտօնը:

Լատվիական կառավարութեանը յաջողւեց Մոսկւայից ստանալ թոյլտւութիւն բարձրացնելու այդ **ինժեներ**ի պաշտօնը: Ժողովրդի ազատասիրական տրամադրութիւնները արտայայտութիւն գտան անցեալ տարւայ ինքնահրկիզման փաստում, որը կատարւեց Կաունասում, մի երիտասարդ կաթոլիկի

կողմից: Այդ արաքը առաջացրեց երկօրեայ ցոյց: Մի ուրիշ երիտասարդ եւ 60 տարեկան մի բանուոր, որպէս բողոքի նշան, ինքնասպանութիւն գործեցին:

Էստոնիայի մայրաքաղաք Տալինը քաղաքացիական իրաւունքների պաշտպանութեան կենտրոն է դարձել: Անվտանգութեան Կոմիտէի բոլոր ճիգերը՝ երեւան բերելու լաւ կազմակերպւած, դեմոկրատական շարժման անդամներին՝ անցնում են ապարդիւն: Այդ դեմոկրատների ազդեցութիւնը տարածւել է նոյնիսկ բալթիական նաւատորմի վրայ: Դեմոկրատական շարժման անդամներից մէկը՝ 33 տարեկան էստոնացի **ինժեները**ը ասում է. «Վաղ թէ ուշ, ճնշումը կ՛առաջացնի քաղաքական բախում, սակայն մենք յեղափոխութեան համար դեռ չենք հասունացել: Առայժմ մենք կարող ենք միայն պահպանել մեր ազգային էութիւնը»:

Մերձբալթեան ժողովուրդների ազգային ինքնագիտակցութեան մասին խօսում է նաեւ այն փաստը, որ ռուսական թատրոններում կամ դպրոցներում գրեթէ անհնարին է գտնել տեղական բնակչութիւն:

Մերձբալթեան հանրապետութիւններում, մանաւանդ Լիտւայում, բաւականին ուժեղ է նաեւ կրօնական շարժումը:

«Մեզ մօտ շատերը,- ասում էր մի երիտասարդ լիտւացի կաթոլիկ,-ընդունում են խորհրդային իշխանութիւնը որպէս փաստ, որպէս քաղաքական իրականութիւն: Գուցէ շատերին իշխանութիւնը դուր չի գալիս որպէս քաղաքական իրաւակարգ, գուցէ շատերին դուր չի գալիս այն փաստը, որ Լիտւան կառավարւում է ռուսների կողմից, սակայն յամենայն դէպս ներկայում փաստը փաստ է: Բայց եկեղեցու հարցը,- շարունակում է նա,- բոլորովին ուրիշ է: Լիտւացիները քրիստոնէութիւնը ընդունել են 500 տարի առաջ եւ մնում են քրիստոնեայ մինչեւ այսօր: Այս բնագաւառում ոչինչ չի կարող փոխւել, մենք շատ յամառ ենք, որպէսզի մեզ հնարաւոր լինի ստիպել: Եթե Մոսկւան փորձ կատարի մեզ ճնշել կրօնական հարցում, նա կարող է կանգնել քաղաքական իշխանութիւնը կորցնելու վտանգի առջեւ»:

Լիտւացու այս համարձակ արտայայտութիւնը ունի բաւականին խոր արմատներ: Լիտւայի եկեղեցի այցելողների մէկ երրորդը 35 տարեկանից բարձր չեն: Այս երիտասարդները, որոնք մեծացել են խորհրդային իշխանութեան օրօք եւ դպրոցական նստարանից գտնւել են **աթէիստական** քարոզչութեան ճնշման տակ, զարմանալիօրէն կարողացել են պահպանել իրենց կրօնական հայեացքները: Վերջին հինգ տարիների ընթացքում կաթոլիկների եւ իշխանաւորների միջեւ վէճը հիմնականում կայացել է նրանում, որ հաւատացեալները պահանջում էին տալ քահանաներին իրաւունք՝ երեխաներին եկեղեցական արարողութիւններին պատրաստելու համար: Միլիցիայի ներկայացուցիչները պնդում էին, որ այդպիսի ուսուցումը արգելւած է խորհրդային օրէնք-

ներով եւ որ այդ իրաւունքը ունեն միայն ծնողները:Սակայն եկեղեցականները յաղթեցին: Նրանց յաջողուեց ձեւակերպել այդ կրօնական ուսուցումը այնպէս, թէ իբր քահանաները ոչ թէ դասաւանդում են, այլ պարզապէս ստուգում են երեխաների ծնողների կողմից ստացած գիտելիքները: Ճիշտ է, այդ վէճերի ժամանակ երեք քահանայ բանտարկուեցին մէկական տարով, սակայն կառավարութիւնը ստիպուած էր անել որոշ զիջումներ:

Ընդհանրապէս պէտք է ասել, որ Լիտուայում ստեղծուել են այնպիսի պայմաններ, որ վերածնուած Կաթոլիկական եկեղեցին ստիպում է խորհրդային իշխանաւորներին հաշտութիւն կնքել եկեղեցու հետ, մի բան, որ նախկինում մտածել անգամ անհնարին էր:

Տեղական բնակչութիւնը այդ անսպասելի հաշտութիւնը բացատրում է հետեւեալ կերպ: «Մեր բարձր ազգային ինքնագիտակցութիւնը,- ասում են նրանք,- աւելի շատ է անհանգստացնում Կրեմլի իշխանաւորներին, քան մեր կրօնականութիւնը: Ուստի այդ իշխանաւորները աւելի անվտանգ համարեցին որոշ հաշտութիւն կնքել եկեղեցու հետ, քան այդ հողի վրայ առաջացնել ազգայնական շարժումներ: Օրինակ, Լիտուայում թոյլատրուած է ուխտաւորների երթը, հրատարակուած է լիտուերէնով Աւետարան, որոշ գումարներ են յատկացուել հին եկեղեցիների նորոգման համար, թոյլատրուած են տներում խմբակային աղօթքներ եւ Աւետարանի ընթերցում: Կաթոլիկները իրենց կողմից նոյնպէս համաձայնուել են անել որոշ զիջումներ: Նրանք խոստացել են առանց խիստ անհրաժեշտութեան կառավարութիւնը չդնել դժւար կացութեան մէջ, իրենց նամակներով, բողոքներով եւ ցոյցերով: Եւ ի հարկէ, թուլացնել իրենց կապերը դեմոկրատական շարժման կողմնակիցների հետ, որոնց հետ նախկինում համագործակցում էին:

Հաւատացեալները համարում են, որ այդ լուռ համաձայնութիւնը, վերջին հաշւով, կը հասցնի այնպիսի մի կացութեան, որ կարելի է նշանաբանել «ապրիր եւ ուրիշներն էլ թող ապրեն», որը գոյութիւն ունի հարեւան Լեհաստանում: Լիտուայի երիտասարդական թերթի խմբագիր Վիկելմաս Չագձեւիուսը եկեղեցու հետ հաշտութիւնը բացատրում է այսպէս: «Պայքարը կրօնի դէմ օգնում է միայն մեր թշնամիներին: Քրիստոնէութիւնը ինքնըստինքեան կը վերանայ, մենք այլեւս անհրաժեշտ չենք համարում պայքարել յանուն **աթէիզմի,** այդ պայքարը միայն համախմբում է կաթոլիկներին եւ ամրապնդում է նրանց եկեղեցին»:

Այսպիսի պաշտօնական յայտարարութիւնը, որը ոչ մի կերպ չի համընկնում կենտրոնական իշխանութեան պահանջների հետ, Լիտուայի ժողովրդի մեծ յաղթանակը կարելի է համարել: Ըստ պաշտօնական տուեալների, Լիտուայի 3 միլիոնանոց բնակչութեան 80 տոկոսը եկեղեցու ամրապնդման կողմ-

նակից է: Եւ եթէ այդ պայմաններում **աթէիստական** քարոզչութիւնը համարւում է աւելորդ, ապա կարելի է շնորհաւորել Լիտւայի ժողովրդին՝ այն մեծ յաղթանակի համար, որը նրան յաջողւեց շահել դժւարին պայմաններում:

Այս ամէնը գալիս է ապացուցելու այն միտքը, որ Խ. Միութեան պայմաններում եւս հնարաւոր է պաշտպանել ազգային շահերը, եթէ այդ արւի մտածւած, կազմակերպւած եւ միասնական ուժերով: Ազգային շահերի պաշտպանութիւնը կապւած չէ ոչ մի հակախորհրդային գործունէութեան հետ. այդ շահերը կարելի է պաշտպանել եւ՛ կուսակցական ու պետական դիրքերից:

Այսպիսով, «Ունի՞ անելիք Խորհրդային Հայաստանը» հարցին ես պատասխանում եմ, որ ունի, այն էլ շատ: Սակայն ես մանրամասնօրէն չկանգնեցի այդ հարցերի վրայ, չտւեցի յստակ պատասխան, թէ վերջին հաշւով ինչ պէտք է անի Հայաստանը: Կարծում եմ, որ հասկացողը կը հասկանայ: Շատերը կարող են մտածել, թէ այս երկար ձանձրալի յօդւածի հիմնական եզրակացութիւնը այն է, որ Խ. Հայաստանի անելիքը Խորհ. իշխանութեանը անկեղծ ծառայելն է: Եւ այդ կարող է շատերին զարմացնել, քանզի այդ մասին ամէն օր խօսում է խորհրդային ռադիոն, մամուլը, հեռուստատեսութիւնը եւ ամբողջ կուսակցական եւ պետական պրոպագանդան: Այո, դա այդպէս է, իմ ասածը ձեւով չի տարբերւում պաշտօնական պրոպագանդայի ասածից, բայց դրա համար էլ ստիպւած եղայ այսքան երկար խօսել, որ հնարաւոր լինի ընդհանուր աղմուկի միջից տարբերել իմ բարակ ձայնով ասածի բովանդակութիւնը:

Իսկ այն հանգամանքը, որ Խ. Հայաստանի ազգային ասպարէզի անելիքները գոնէ ձեւով համընկնում են խորհրդային իշխանութեան պահանջների հետ, ազգային երջանկութիւն պէտք է համարել: Զարգացման համար այդպիսի բարենպաստ պայմաններ մեր ազգը գուցէ չի ունեցել դարերից ի վեր: Պայմանների առանձնայատկութիւնը այն է, որ «գաղութատէրը» գաղութին իջեցնում է իւրացման համար որոշ գումարներ, իսկ գաղութը չի իւրացնում այն եւ վերադարձնում է «տիրոջը»: Յայտնի չէ, թէ որքան երկար կը տեւի այս կացութիւնը, պէտք է շտապել, պէտք է լիովին օգտագործել ստեղծւած հնարաւորութիւնները, որ հետագային նորից չասենք՝ ուշացանք, սխալւեցինք, չհասկացանք:

Սխալւելու տեղ այլեւս չունենք, ամէն մի սխալ կը լինի վերջինը:

1973

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՆԱՄԱՇ ՈՒՂՈՒ ՎՐԱՅ

Է. Յովհաննիսեան

Օգոստոսի 14ին Հայաստանի Կոմունիստական կուսակցութեան Կենտր. Կոմիտէի օրգան «Կոմունիստ» թերթը հրատարակեց 11րդ Կարմիր բանակի 60ամեակին նուիրուած մի յօդուած, որը խորագրուած էր այսպէս. «**Առասպելական, հերոսական**»: Յօդուածի հեղինակն է պատմական գիտութիւնների թեկնածու Թահիրեանը, որը իր յօդուածում առաջնորդւում է այն քաղաքական հնամաշ ուղիով, որը ահա արդէն վեց տասնամեակից ի վեր հետեւողականօրէն խեղաթիւրում է թէ՛ մեր պատմութիւնը եւ թէ մեր արուեստը:

Հեղինակը 11-րդ Կարմիր բանակի սխրագործութիւնների ճամբով ի վերջոյ հասնում է Հայաստան եւ այնտեղ մեղադրանքների մի տարափ է լցնում Դաշնակցութեան գլխին: Նոր բան չէ այս քաղաքական ուղին, բայց մինչեւ ե՛րբ Հայաստանի պատմաբաններն ու վարիչները այդքան հեռու են մնալու իրական քաղաքականութիւնից: Այն տպաւորութիւնն է ստեղծւում, որ աշխարհում տեղի ունեցող իրադարձութիւնները անցնում են նրանց կողքից, ոչ մի ազդեցութիւն չթողնելով նրանց վրայ: Հասկացանք, որ ժողովուրդը զրկուած է արտասահմանեան լուրեր ստանալու իրաւունքից, բայց հայ համայնավար վարիչներն էլ հօ տեղեակ են արտասահմանեան իրադարձութիւններից:

Ես չէի մեղադրի Հայաստանի ղեկավարներին, եթէ համոզուած չլինէի, որ նման ուղի բռնելու կարգադրութիւնը գալիս է Մոսկուայից: Սակայն համոզուած եմ, - եւ ժամանակին կ'ապացուցեմ, թէ ես ճիշտ եմ,- որ Մոսկուան շատ աւելի բարեացակամ վերաբերմունք է ցուցաբերում սփիւռքահայութեան բոլոր կուսակցութիւնների նկատմամբ, քան Հայաստանի որոշ ղեկավարներ, որոնց, չգիտես ինչո՞ւ, ձեռք է տալիս հնամաշ քաղաքականութիւնը: Գուցէ՞ սեփական նշանակութիւնը բարձրացնելու համար է դա արւում: Կամ գուցէ գործելակերպը Սփիւռքի «առաջադէմ» կազմակերպութիւնների կողմի՞ց է թելադրւում: Գուցէ Հայաստանի ղեկավարութիւնը թիւրիմացութեան մէ՞ջ են զցում նրանք, որոնց աչքի փուշն է Դաշնակցութիւնը:

Չգիտեմ, թէ ո՞րն է պատճառը, բայց գիտեմ, որ ինչպէս նշեց «**Ազդակ**» շաբաթօրեակը Կ. Դեմիրճեանի ելոյթի առիթով, «հակառակ թափւած բազմակողմանի ճիգերուն ու ռազմախաղերուն, փաստօրէն, քայլ մը իսկ առաջ գացած չէ, թիզ մը հող անգամ շահած չէ Կ. Դեմիրճեաններու քաղաքական-գաղափարական եւ քարոզչական պայքարը հայ կեանքի մէջ, հակառակ անոր հետեւողական, յարձակողական եւ անզիջում բնոյթին»:

Բայց ես հնամաշ քաղաքականութիւնը քննադատելու համար չէ, որ գրում եմ այս տողերը։ Պարզապէս ուզում եմ սփիւռքահայ ընթերցողին ծանօթացնել Թահիրեանի ռուսերէն գրւած պատմական գլուխ-գործոցի հետ։ Եթէ, այնուամենայնիւ, դրա հետ միասին իմ կարծիքն էլ եմ արտայայտում, ապա միայն նրա համար, որ չեմ կարող լռել։ Ահա թէ ինչ է գրում Թահիրեանը։

«Մայիսի ապստամբութիւնից յետոյ Դաշնակցութեան խմբապետները վերջնականապէս սանձարձակւեցին ու ամբողջովին դիմեցին անօրինականութիւնների։ Ապստամբութեան հերոսների հետ հաշւեյարդար տեսնելով, նրանք արիւնալից կարգեր հաստատեցին Հայաստանում։ Անտանելի կացութիւն բանւորների, գիւղացիութեան եւ մտաւորականութեան համար։ Օրէցօր աւելանում էր փախստականների թիւը։ Հայաստանի աշխատաւորները չէին կարող միայնակ պայքարել ներքին եւ արտաքին թշնամու դէմ։ Պահանջւում էր մեծ ռուս ժողովրդի օգնութիւնը։ Եւ այդ օգնութիւնը հասաւ։ 11րդ բանակի մի զօրախումբ, որը բաղկացած էր երեք հեծեալ գնդերից եւ 178րդ հետեւակազօր գնդից, առաջնորդւելով յատուկ հայկական գնդով։ 1920 թւի Նոյեմբերի 29-ին անցաւ Հայաստանի սահմանը։ Իր ազատարարներին աշխատաւոր ժողովուրդը դիմաւորեց աղ ու հացով, ուրախութեան արցունքներով ու չտեսնւած ցնծութեամբ։ Դաշնակցականները չկարողացան կազմակերպել էական դիմադրութիւն։ Կառավարական զօրքերը կամ անցան Կարմիր բանակի կողմը եւ կամ էլ ցրւեցին տները։ Առանց կռւի ազատագրւեց Իջեւանը։ Զօրքերի յետեւից քաղաք մտաւ հայ յեղկոմը (յեղափոխական կոմիտէ)։ Նոյն օրը նա հռչակեց պատմական յայտարարագիրը Հայաստանը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւն յայտարարելու մասին։ Օրջոնիկիձէի կարգադրութեամբ, Դեկտեմբերի 3-ին 11րդ բանակի զօրամասերը շարժւեցին առաջ եւ երկու օր յետոյ մտան մայրաքաղաք։ 1921 թւի փետրւար ամսին դաշնակցականները Հայաստանում կազմակերպեցին հակայեղափոխական խռովութիւն։ Ժողովրդի լայն զանգւածները ելան մահու պայքարի իրենց ոխերիմ թշնամի՝ Դաշնակցութեան դէմ։ Եւ կրկին հայ ժողովրդին օգնութեան հասան 11րդ բանակի փառապանծ զինւորները։ Ընդհանուր ճիգերով դաշնակցական արկածախնդիրները ջախջախւեցին։ Հանրապետութեան աշխատաւորութիւնը անցաւ խաղաղ շինարարութեան աշխատանքին»։

Այս պատմական խեղաթիւրման մասին այնքան է գրւել ու խօսւել, որ կրկնութիւնը աւելորդ պիտի լինէր։ Եւ խօսքը դրա մասին չէ։ Եթէ պէտք է ասել, որ ռուսները մեզ օգնեցին՝ ասենք։ Եթէ պէտք է գովաբանել 11րդ բանակը՝ գովաբանենք։ Եթէ պէտք չէ զարմանալ, թէ ինչպէս «դաշնակցական արկածախնդիրները» առանց ժողովրդի լայն զանգւածների եւ ռուսների ժողովրդական ապստամբութիւն կազմակերպեցին՝ չզարմանանք։ Եթէ պէտք է մոռա-

ցութեան մատնել «Դրօ-Լեգրան» պայմանագիրը՝ մատնենք։ Եթէ պէտք է ասել, որ 11րդ բանակին չկարողացաւ դիմադրել Դաշնակցութիւնը՝ այդ էլ ասենք։

Բայց մի՞թէ պարտաւոր է Հայաստանի պատմաբանը կամ ղեկավարը ամենաածանր ածականները օգտագործել Դաշնակցութեան նկատմամբ։ Կարճ ասած՝ չէք կարող լռել, մի՛ լռէք, բայց գոնէ բերաններդ այդքան մեծ մի բացէք։ Չէ՞ որ Դաշնակցութիւնը այսօր էլ սփիւռքահայ կեանքում ազդեցիկ (չասենք ամենից ազդեցիկ) քաղաքական կուսակցութիւններից մէկն է։ Մի՞թէ պարզ չէ, որ նրա հետ յարաբերութիւնները պէտք է կառուցել այսօրւայ պայմաններից, այլ ոչ թէ անցեալից ելնելով։

Որքա՛ն պիտի դատապարտէր պատմութիւնը, օրինակ, Սադաթին, եթէ Բեգինի «Լիկուդ» կուսակցութեան հետ նա իր յարաբերութիւնները հիմնաւորէր անցեալով։ Որքա՛ն ծիծաղելի պիտի լինէր Բեգինը, եթէ իր վերաբերմունքը գերմանացիների նկատմամբ կառուցէր ոչ թէ Դաշնակցային Գերմանիայի քաղաքականութեան, այլ Հիտլերի ռճրագործութիւնների վրայ։ Եւ որքա՛ն բթամիտ պիտի նկատուէին ռուսները, եթէ Չինաստանի հետ իրենց յարաբերութիւններում նրանք ղեկավարուէին Ստալինի եւ Մաոյի գծած ուղիով։

Բայց ո՞ւմ եմ ասում։ Ասողին լսող է պէտք։ Եւ որովհետեւ լսող չկայ, երեւի ասողներն էլ պիտի վերանայեն իրենց քաղաքական դիրքերը, գոնէ հասկացնելու համար, որ հէնց այնպէս, առանց համապատասխան պայմանաւորուածութեան, յեղափոխական կուսակցութիւնները իրենց պայքարից չեն հրաժարւում։ Որ քաղաքականութեան մէջ «սիրուն աչքերը» ոչ մի նշանակութիւն չունեն։

Վերջերս ամերիկեան ծերակուտականները խորհրդային ղեկավարների հետ հանդիպելիս ձեռքներին էին կապել յատուկ ապարանջաններ, որոնց վրայ արձանագրուած էր խորհրդային քաղաքական բանտարկեալ Շչարանսկու անունը։ Չգիտեմ, թէ որքանով գոհ կը մնար Մոսկուան, եթէ Խորհրդային Հայաստանի ղեկավարների հնամաշ քաղաքականութեան բերումով միւս անգամ ամերիկեան կամ զւիցերական խորհրդարանի անդամների ապարանջանների վրայ արձանագրուած լինի Պարոյր Հայրիկեանի անունը։ Կամ ի՞նչ կը շահեն հնամաշ քաղաքականութեան հեղինակները, եթէ Դաշնակցութիւնը իսկապէս լծւի Խորհրդային Միութեան թշնամիների կառքին եւ բազմաթիւ հակախորհրդային ցոյցերին ու բողոքներին միացնի նաեւ իր ձայնը։

Բայց Խորհրդային Հայաստանի վարիչները լաւ գիտեն, որ նրանք, ում իրենք տեղի-անտեղի քարկոծում են, երբեք չեն միացնի իրենց ձայնը Հայաստանի թշնամիներին, որովհետեւ նրանք քաղաքական սրբութիւններ ունեն։

Գիտեն, դրա համար էլ չեն վախենում իրենց անիմաստ ելոյթներից։ Գուցէ անհրաժեշտ է այս անգամ էլ օգնութեան կանչել ռուսների՞ն։

Կասկածից վեր է, որ եթէ ռուսները անդրադառնան , թէ արտասահմանից դուրս եկող հակախորհրդային ձայների մէկ պատճառն էլ իրեն ենթակայ ղեկավարների մեծաբերանութիւնն է, նրանք շատ արագ կը փակեն այդ քաղաքականութիւնից հեռու կանգնած տգէտների բերանները։ Բայց եթէ այդ բերանները չփակուեն էլ, ոչինչ չի փոխուի։

Ի՞նչ կարողացան նրանք անել ստալինեան մռայլ ժամանակաշրջանում, որ կարողանան անել այսօրւայ փոխկախեալ աշխարհում։

1979

ՌՈՒՍԵՐԷՆ ԼԵԶՈՒՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Է. Յովհաննիսեան

Գուցէ նրա համար, որ Խորհրդային Հայաստանը ստեղծուեց Ռուսահայաստանում, որտեղ մտաւորականութիւնը խօսում էր ռուսերէնով, իսկ գուցէ եւ նրա համար, որ Հոկտեմբերեան յեղափոխութեան լեզուն ռուսերէնն էր եւ բանւորական առաջին բանաստեղծ Մայակովսկին առաջարկում էր ռուսերէն սովորել միայն նրա համար, որ ռուսերէնով էր խօսում Լենինը, պատահեց այնպէս, որ Խորհրդային Հայաստանում ռուսերէն լեզւի կշիռը բարձրացաւ պետական մակարդակի:

Չնայած նրան, որ բուն ժողովուրդը, մանաւանդ Թուրքահայաստանից ներգաղթած զանգւածները ռուսերէն չգիտէին, այդ լեզուն դարձաւ մարդկանց զարգացած ու կրթւած լինելու չափանիշը:Շատ շուտով այդ լեզուն դարձաւ նաեւ դասակարգային պատկանելիութեան չափանիշ: Խորհրդային Հայաստանի ամբողջ ղեկավարութիւնը, առանց բացառութեան, իր երեխաներին ուղարկեց ռուսական դպրոցներ, թողնելով հայկական դպրոցները բանւորներին ու գիւղացիներին, կամ ինչպէս այն ժամանակ ասում էին, հասարակ մարդկանց երեխաներին:

Ես ապրում էի ջոջերի շէնքի մօտ եւ գիտէի, որ մեր նախարարների եւ կուսակցական ղեկավարների երեխաները սովորում էին ռուսական դպրոցներում: Չիթունիի, Դրաստամատ Սիմոնեանի, Չարչողլեանի, Կոստիկեանի, Միքայէլեանի եւ բոլորի, բոլորի, նոյնիսկ Պապեանի երեխաները սովորում էին Պուշկինի կամ Ջերժինսկու անւան ռուսական դպրոցներում: Եւ ինչո՞ւ զարմանալ, եթէ այնտեղ էր սովորում առաջին քարտուղար Արուտինովի Նամի անունով աղջիկը, իսկ ինք՝ քարտուղարը մէկ բառ չգիտէր հայերէն եւ, 40 տարի ապրելով Հայաստանում, այդպէս էր չսովորեց այն ժողովրդի լեզուն, որին պատկանում էր եւ որի վրայ դրւել էր իշխելու համար:

Չնայած նրան, որ Լենինը բազմիցս նշել էր, թէ խորհրդային խորհրդարանում ամէն մի պատգամաւոր խօսելու էր իր մայրենի լեզւով, Հայաստանի իշխանաւորները մայրենի լեզուն մոռացութեան մատնեցին: Հայաստանի խորհրդայնացման առաջին շրջանում ծնունդ առած այս երեւոյթը կարելի էր վերագրել յեղափոխական **պաթոս**ին եւ միջազգայնական գաղափարների ոգեւորութեան: Սակայն այդ ոգեւորութիւնից առաջ եկած երեւոյթները սկսեցին կրել վտանգաւոր բնոյթ: Նախ տեղի ունեցաւ հայախօս և ռուսախօս հայութեան պառակտումը, որը կրեց զուտ դասակարգային բնոյթ: Հայախօս հայու-

թիւնը նկատուեց որպէս յետամնաց տարր եւ այդ տարրը ըմբռնուեցաւ այսպէս կոչուած «առաջադէմների» դէմ: Սակայն հայախօսներին յետամնաց համարելու որոշ հիմքեր կային:

Ամենից առաջ, հայերէնի համեմատութեամբ, շատ աւելի հարուստ է ռուսերէնով գրուած մասնագիտական գրականութիւնը: Ծանօթանալ միջազգային մշակոյթի եւ գիտութեան հետ ռուսերէնի միջոցով շատ աւելի հեշտ էր: Բացի դրանից, ռուսերէն դպրոցների աշակերտները պատկանում էին այն ընտանիքներին, որոնք կրթութիւն տալու համար ունէին աւելի մեծ հնարաւորութիւններ: Եւ եղաւ այնպէս, որ հայախօս եւ ռուսախօս աշակերտների միջեւ տարբերութիւնը օրէցօր աւելանում էր: Բանը հասաւ այնտեղ, որ երբ ռուսախօս ընտանիքի երեխաները բարեկամանում էին հայախօս երեխաների հետ, ապա ռուսախօսի ծնողները մի տեսակ արդարանում էին հարեւանների մօտ, ասելով, թէ հայկական դպրոցից է, բայց լաւ տղայ է:

Յիշում եմ, մի օր մեր տուն եկաւ մի կոկիկ հագնուած բանւոր, որի հետ իմ հինգ տարեկան քոյրս խօսեց ռուսերէնով: Բանւորը, որ հօրս մօտ էր աշխատում եւ մեկնում էր Մոսկուա շքանշան ստանալու, ասաց քրոջս. «Դու ինչո՞ւ ես ինձ հետ ռուսերէն խօսում»: Քոյրս պատասխանեց. «Որովհետեւ փողկապ ես կապել»: Նրա կարծիքով փողկապ կապող եւ լաւ հագնուած մարդիկ հայերէն չգիտէին: Եւ սա դառն իրականութիւն էր:

Անշուշտ կային Աբեղեաններ, Ներսիսեաններ եւ Ղարիբեաններ, սակայն սրանք հրապարակում չէին երեւում, հրապարակը ուրիշների ձեռքում էր: Կրթւածութեան այս չափանիշը ողբերգական հետեւանքներ ունեցաւ մի քիչ աւելի ուշ: Երբ բեմից իջաւ Արուս Ոսկանեանի սերունդը եւ ծերացան Աւետիք Իսահակեաններն ու Վահրամ Փափազեանները, երբ Չեկայի (ԿԳԲ) ներքնայարկերում գնդակահարուեցին Չարենցներն ու Բակունցները, պարզուեց, որ նրանց փոխարինող չկայ, որովհետեւ Հրաչեայ Ներսիսեանի, Հրաչեայ Քոչարի զաւակները եւ Յովհաննէս Թումանեանի թոռները սովորում էին ռուսական դպրոցներում:

Իսկ ռուսական դպրոցներից չէր կարող դուրս գալ հայ բանաստեղծ ու դերասան: Ի միջի այլոց, պարզուեց, որ այնտեղից ռուս դերասաններ ու բանաստեղծներ էլ դուրս չեն կարող գալ: Եւ մեր ժողովուրդը տուեց շատ աւելի քիչ արուեստագէտներ ու գրողներ, քան կարող էր տալ եւ քան կարելի էր սպասել:

Այս նախնական ինքնաբուխ ռուսականացման ընթացքն էլ աւելի արագացաւ բնական պայմանների բերումով: Բանակը, նամակագրութիւնը, Մոսկըւայի եւ Լենինգրադի համալսարաններում սովորելու ցանկութիւնը, տարբեր ազգերի միջեւ յարաբերութիւններ ստեղծելու անհրաժեշտութիւնը եւ շատ ուրիշ մեծ ու փոքր հանգամանքներ բարձրացնում էին ռուսերէնի հեղինակու-

թիւնը եւ ստեղծում էին այնպիսի մի կացութիւն, որ առանց ռուսերէնի ապրելը անկարելի էր դառնում:

Այս գաղափարը որդեգրեցին քարոզչական մարմինները եւ հանրապետական համաժողովներում, ուսուցչական խորհրդակցահաւաքներում եւ այլուր առաջ տարան այն թեզը, թէ ռուսերէնը խորհրդային ժողովուրդների առաջին լեզուն է: Ճիշտ է, այդ լեզուն համեստօրէն կոչւում էր երկրորդ մայրենի լեզու, բայց բոլորի համար պարզ էր, որ սա առաջին «մայրենի» լեզուն է:

Թւում էր, թէ խորհրդային ժողովուրդները այնքան են նախապատրաստուած ռուսերէնի առաջնակարգութեանը, որ բոլոր հանրապետութիւններում ռուսերէնը պետական լեզու հռչակելու ժամանակը եկել է: Սակայն ժամանակը դեռեւս չէր եկել: Անդրկովկասի ժողովուրդների ազգային զօրոյթը անսպասելիօրէն իրեն իմացրեց եւ խորհրդային իշխանաւորները ստիպւած եղան նահանջել, վերականգնելով Սահմանադրութեան այն կէտը, որտեղ ասւած էր, որ հանրապետութեան պետական լեզուն՝ ազգային լեզուն է:

Պարզւեց, որ ոչ թէ ժամանակը չէր եկել, այլ խորհրդային իշխանաւորները փոքր ինչ ուշացել էին: Ռուսերէն լեզուն բոլոր հանրապետութիւններում պետական լեզու հռչակելու իրենց ցանկութիւնը նրանք կարող էին իրականացնել Ստալինի օրօք, **գեներալիսիմուսի** գրչի մէկ հարւածով: Դա դեռեւս հնարաւոր էր նաեւ խրուշչովեան դարաշրջանի սկզբնական ժամանակաշրջանում: Սակայն 60ական թւականներին արդէն ուշ էր:

Անդրկովկասում եւ մանաւանդ Հայաստանում ազգային ինքնագիտակցութիւնը այնպիսի վերելք էր ապրել, որ ժամանակին իրեն ճնշւած զգացած հայախօս երիտասարդութիւնը մօտենում էր պատահական անցորդներին եւ պարզապէս արգելում ռուսերէնով խօսելը: Լեզւի հեղինակութեան նժարը թեքւել էր հայերէնի կողմը: Մենք՝ ռուսախօսներս, ամաչում էինք մեր ռուսախօսութիւնից եւ մեր երեխաներին ուղարկում էինք հայկական դպրոց: Այս ընթացքը չէր կարող վրիպել խորհրդային իշխանաւորների աչքից եւ նրանք սկսեցին ռուսերէնի նոր արշաւ:

Խորհրդային Միութեան մի քանի քաղաքներում գումարւեցին լեզւաբանների, ուսուցիչների եւ լուսաւորութեան նախարարների համաժողովներ, որտեղ քննարկւեց ռուսերէնը է՛լ աւելի ուժգին դասաւանդելու հարցը: Եղան տարբեր առաջարկներ, տրւեցին տարբեր որոշումներ եւ մշակւեցին տարբեր բանաձեւումներ, ընդհուպ մինչեւ այն, որ ազգային դպրոցներում տարբեր մասնագիտական առարկաներ դասաւանդւեն ռուսերէնով: Բայց պէտք է ասել, որ այդ համաժողովներում ընդունւած որոշումների մասին ոչինչ չեն գրում խորհրդային թերթերը:

Բայց եկէք առարկայօրէն մօտենանք խնդրին։Այն թեզը, որի համաձայն խորհրդային քաղաքացին պարտաւոր է տիրապետել ռուսերէնին, որ առանց ռուսերէնի չի կարող ապրել լիարժէք կեանքով, ճիշտ է։ Եթէ Խորհրդային Միութիւնը ունի մէկ բանակ, մէկ պետական կառոյց եւ ազգամիջեան յարաբերութիւնների մէկ լեզու, ապա կասկածից վեր է, որ այդ լեզուն պիտի լինի ռուսերէնը։

Հօ հայերէնով չեն արձակելու հրամանները խորհրդային բանակում եւ 16 լեզու չի՛ սովորելու ամէն մի հանրապետութեան ղեկավար՝ ուրիշ հանրապետութիւնների ղեկավարների հետ խօսելու համար։ Անշուշտ, կարելի էր այնպէս փոխել Խ. Միութեան վարչական կարգը, որ այնքան էլ պարտադիր չլինէր ռուսերէնը, օրինակ՝ վերականգնել ազգային բանակները, ժողտնտխորհները եւ այլ ապակենտրոնացած հաստատութիւնները, սակայն նման պահանջը շատ աւելի լուրջ եւ արմատական պահանջ է, քան հանրապետութեան լեզուի խնդիրն է։ Ուստի, չդիմելով վարչական փոփոխութիւնների խնդրին, տեսնենք թէ ինչո՛ւմն է կայանում ռուսերէնի անհրաժեշտութիւնը։

Այսօր աշխարհի բոլոր ծայրերում ապրող մարդիկ գիտեն առնւազն երկու լեզու։ Այսօր Եւրոպայում շրջագայող որեւէ երկրի քաղաքացի, այդ թւում՝ նաեւ գերմանացին, սպանացին, ֆրանսացին կամ յոյնը, առանց անգլերէնի չի կարող օդանաւակայանում տոմսակ գնել կամ որեւէ տեղեկութիւն ստանալ։ Սա բնական է մեր փոխկապւած աշխարհի համար, ինչպէս բնական է ռուսերէնը Խորհրդային Միութեան համար եւ, ո՞վ գիտէ, գուցէ այդ լեզուն շուտով մտնի նաեւ միջազգային շրջանառութեան մէջ։ Այս իմաստով սովորել ռուսերէնը օգտակար է եւ իր մէջ ոչ մի վտանգ չի պարունակում։

Սակայն, երբ լեզուն արտայայտելու եւ փոխյարաբերութիւններ հաստատելու միջոցից վեր է ածւում հոգեկան աշխարհը փոփոխութեան ենթարկելու գործիքի, ռուսական մշակոյթը պարտադրելու միջոցի, ապա ռուսերէնի դասաւանդումը դառնում է ռուսականացման պարտադիր միջոց, որի կողքից չի կարելի անցնել։ Երբ ռուսերէնը դառնում է ոչ թէ լեզու, այլ մասնագիտութիւն, ապա ռուսերէնին նւիրւած համաժողովները սկսում են կրել այլ բնոյթ։ Այդ համաժողովները կրթութեան բնագաւառից տեղափոխւում են քաղաքական բնագաւառը։

Եթե որեւէ երկրում իշխանաւորները իրենց քաղաքացիներին ընտելացնեն մշակոյթի, կրօնի կամ գիտութեան հետ, ապա նրանց ոչ ոք չի մեղադրի, որովհետեւ զարգացած մարդը այս ամենից պէտք է գաղափար ունենայ։ Սակայն, եթէ իշխանաւորները իրենց բոլոր քաղաքացիներին փորձեն երաժիշտներ, քահանաներ կամ գիտնականներ դարձնել, ապա նման որոշումը յանցանք պիտի նկատուի, որովհետեւ երկրին, քահանաներից բացի, բանւորներ էլ են

հարկաւոր։ Բայց խորհրդային իշխանաւորները հէնց այս մասնագիտական ուղղութեամբ են ծաւալում ռուսերէն լեզուի դասաւանդումը։

Գրականութեամբ, ասացուածքներով ու արուեստով, առասպելներով, թանգարանների միջոցով, ռուսական «բիլին»ների ուսումնասիրութեամբ, նրանք ոչ թէ լեզուն, այլ ոգին են ռուսացնում։ Ռուսացում հասկացողութիւնը այժմ համարւում է քաղքենի ազգայնականների յօրինած հասկացողութիւն։ Սակայն դա այդպէս չէ, որովհետեւ ռուսացման ընթացքի բացասական կողմերի մասին բազմիցս խօսել է Լենինը եւ շատ ուրիշ հռչակաւոր կոմունիստներ։

1923 թականին, Բոլշեւիկեան կուսակցութեան 12-րդ Համագումարում, Լենինի առաջարկով կայացւեց հետեւեալ որոշումը.

«Բոլոր խօսակցութիւնները այն մասին, թէ ռուսական մշակոյթը աւելի բարձր է, քան յետամնաց ուկրայնացիների, աղրբեջանցիների, ուզբեկների, կիրգիզների եւ ուրիշների մշակոյթները, թէ ռուսական մշակոյթը անխուսափելիօրէն յաղթելու է մնացած մշակոյթներին, բոլոր նման խօսակցութիւնները ոչ այլ ինչ են, եթէ ոչ ռուս ազգի իշխանութիւնը հաստատելու փորձ»։

Նոյն համագումարում Ուկրայնայի պատգամաւոր Եակովլեւը, բողոքելով ռուսացման դէմ, ասում էր. **«Ես կարծում եմ, թէ մեր համագումարը պէտք է հաստատի, որ աւելի լաւ է 10 ռուս ղեկավարի սովորեցնել այն երկրի լեզուն, որտեղ նրանք գործում են, քան մէկ ուկրայնական գիւղացու ստիպել կոտրտել իր մայրենի լեզուն»։** Նոյնիսկ Ստալինը, որ իրեն ազգային խնդրի մասնագէտ էր համարում եւ ռուսացման կողմնակից էր, Կոմկուսի 10րդ համագումարում ստիպւած եղաւ յայտարարել. **«Պարզ է, որ Ուկրայնան, որտեղ ռուսական ազդեցութիւնը շատ մեծ է, ժամանակին կ'ուկրայնացուի, ինչպէս գերմանական Ռիգան այժմ ամբողջովին լատիշացած է»։** Այս առիթով աւելորդ չի լինի նշել, որ այդ լատիշացած քաղաքը այսօր ամբողջովին ռուսացած է։

Նման ռուսացման մէջ առկայ է այն վտանգը, որի մասին ասւած էր ցարական Ռուսաստանի Գիտութիւնների Կաճառի որոշումներից մէկի մէջ։ Տարբեր լեզուների սահմանափակումները վերացնելու որոշման առիթով Ռուսաստանի Կաճառը յայտարարում էր. **«Չի կարելի չընդունել այն, որ մայրենի լեզուի նկատմամբ արհամարհական վերաբերմունքը արհամարհական վերաբերմունք է առաջացնում հարազատ միջավայրի, ընտանիքի եւ հայրենիքի նկատմամբ, որը ամենաբացասական ազդեցութիւնն է թողնում մարդկանց բարոյական կերպարի վրայ»։**

Համաշխարհային մանկավարժական գիտական գրականութեան մէջ արդէն վաղուց ապացուցւած է, որ որեւէ մշակոյթ սկսւում է լեզուից։ Եւ եթէ ռուսերէնի դասաւանդումը ազգային հանրապետութիւններում պէտք է հասցուի այն մակարդակի, որ նա դառնայ մայրենի լեզուի պէս հարազատ, գուցէ եւ աւե-

լի հարազատ, ապա դա նշանակում է, որ մենք ոչ թէ լեզու ենք դասաւանդում, այլ մշակոյթ ու ոգի:

Սակայն ռուսացման աղբիւրները առանց այն էլ այնքան շատ են, որ այս վերջին քայլին դիմելու կարիքը բոլորովին չկար: Իսկ եթէ, այնուամենայնիւ, իշխանաւորները դիմում են այդ քայլին, նշանակում է, որ նպատակը քաղաքական է:

Յիրաւի, ազգային հանրապետութիւնների ամբողջ կեանքը ամբողջականօրէն կապւած է Մոսկւայի հետ: Կուսակցական, կոմերիտական, արհմիութենական, գիտական ու տնտեսական գործունէութիւնը կատարւում է ռուսերէնով: Բանակը, մասնագիտական գրականութիւնը եւ մշակոյթը ռուսացման հզօրագոյն աղբիւրներ են: Բայց սրանց վրայ աւելանում է պաշտօնական քարոզչութիւնը, որը մամուլի, գրականութեան եւ ռադիոհաղորդումների միջոցով ռուսերէնին տալիս է յատուկ, ես կ'ասէի՝ առասպելական տեղ:

Ահաւասիկ մի օրինակ «Պրաւդա» թերթից. «Շատ տարիներ առաջ ծերունի Միրհասանը հռչակաւոր յեղափոխական Նարիման Նարիմանովի մօտ բերեց իր սիրելի որդուն եւ ասաց.

«-Թանկագինս, մարդ դարձրու երեխային՝ ռուսերէն սովորեցրու, թող նա ուսուցիչ դառնայ: Կէս դար աշխատեց գիւղական դպրոցում Ֆարուկ Ախունդովը եւ սէր դաստիարակեց երեխաների մէջ յեղափոխութեան լեզուի նկատմամբ»:

Բոլորս սովորել ենք նման խօսքեր: Բայց սա անբնական երեւոյթ է: Այս առիթով կարող ենք յիշեցնել, որ Հոկտեմբերեան յեղափոխութեան պահին, հակառուս տրամադրութիւնները բացատրելու համար, Ստրուվէն ասում էր, թէ դրամատիրութիւնը խօսում է ռուսերէնով:

Վերցնենք մէկ ուրիշ օրինակ. «Դաղստանի Կումկուսի շրջանային կոմիտէի քարտուղար, պատմական գիտութիւնների դոկտոր Աբիլովը այսպէս է հիմնաւորում դպրոցները ռուսերէն լեզուի անցկացնելու առաջարկը. «**Երբ զինւորը կռւի է գնում, բոլոր զէնքերից ամենաասւրն է ընտրում: Ռուսերէնը գաղափարական զէնքերից ամենաասւրն է եւ որքան լաւ տիրապետեն այդ լեզւին ոչ-ռուս ժողովուրդները, այնքան աւելի լաւ կը կարողանան նրանք իրենց տնտեսութիւնը եւ մշակոյթը զարգացնել**»:

Անշուշտ նման արտայայտութիւնները մարքսիզմի հետ ոչ մի ընդհանուր բան չունեն եւ ռուսերէնի ուսուցման ընթացքը դարձնում են մեծապետական **շովինիզմի** արտայայտութիւն: Յիրաւի, եթե ռուսերէնը «մարդ դարձնելու» միջոց է, «գաղափարական զէնք է», «տնտեսութիւն եւ մշակոյթ զարգացնելու միջոց», ապա դա ոչ թէ լեզու է, այլ իշխանութեան պէս մի բան: Այսինքն դուրս է գալիս, որ մարդկանց ռուսերէն են սովորեցնում՝ նրանց վրայ իշխանութիւն

հաստատելու կամ, աւելի ճիշտ, նրանցից որոշ ազգային ազատութիւնները խլելու համար: Սա արդէն անթոյլատրելի է, որովհետեւ ուղիղ ճանապարհով տանում է դէպի ազգալուծում:

Եւ հէնց ինքը՝ ռուսերէնը սուր գաղափարական զէնք համարող Աբիլովը խոստովանում է այդ մասին: Պարծենալով Դաղստանում տարուող միջազգայնական դաստիարակութեամբ, նա գրում է. «**1896 թւականին Դաղստանում կար 80 ազգութիւն, իսկ 1959 թւականին մնացել էր միայն 11**»: Եւ ոչ թէ ամօթ, այլ պարծանք է զգում Աբիլովը 71 ազգութիւնները սպանելու համար, որոնք իրենց հետ տարան երգերը, լեզուները եւ այն ամէնը, որ հարստացնում էր մարդկութեան բազմազանութիւնը:

Եթէ այս նպատակով են խորհրդային իշխանաւորները այսքան մեծ ուշադրութիւն դարձնում ռուսերէնի վրայ, ապա մենք՝ հայերս պէտք է ուշադիր լինենք այս արշաւների նկատմամբ:

Գերցենը, որին Լենինը համարում էր Ռուսաստանի ժողովրդավարականների պատւի փրկիչ, մէկ առիթով գրել է. «**Մենք չենք հաւատում մեծ կայսրութիւնների ո՛չ ամրութեանը եւ ոչ բարեկեցութեանը: Հայրենիքը սիրելու համար մեզ այսքան հող պէտք չէ: Աշխարհագրական ծաւալումների ցանկութիւնը բնորոշ է ժողովուրդների աճման ժամանակաշրջանին: Իսկ եթէ մի ժողովուրդ երկար ժամանակ մնում է մանուկ վիճակում, ապա դա վկայում է այն մասին, որ տւեալ ժողովուրդը անընդունակ է զարգանալու: Չզարգացած ամէն մի բան նետւում է քանակի վրայ, տրամաբանութիւնից զուրկ ամէն մի բան յենւում է ուժի վրայ**»:

Գերցենի այս խօսքերը լիովին կարելի է վերագրել նաեւ ռուսացման ընթացքին, որը կատարւում է աշխարհագրական ծաւալումները ամրապնդելու համար, այսինքն՝ շարունակում է աշխարհագրական ծաւալումների քաղաքականութիւնը: Բայց խորհրդային ազգութիւններին ազգային գիտակցութիւնից զրկելու գործը պահանջում է չափազանց շատ պատմական կեղծիք, սուտ, անարդարութիւն մարքսիզմի նկատմամբ, բանւորական միջազգայնականութեան նկատմամբ եւ շատ ուրիշ բաների նկատմամբ:

Արդեօ՞ք այս կեղծիքների ծանրութեան տակ կը դիմանան գալիք սերունդները:

1979

ՀԱՅԵՐԻ ԵՒ ՎՐԱՑԻՆԵՐԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ Լ. ԲՐԵԺՆԵԻՆ

Է. Յովհաննիսեան

Տարիներ շարունակ ինձ հաւատացնում էին եւ այժմ էլ հաւատացնում են, որ ազգային ոգու, ազգային շահերը պաշտպանելու, պետական մտածելակերպ ունենալու եւ դիւանագիտութիւն վարելու իմաստով վրացիները հայերից շատ առաջ են եւ որ հայերը վրացիներից շատ բան ունեն սովորելու։

Չէի հաւատում, չէի ուզում հաւատալ, այժմ էլ չեմ հաւատում, որովհետեւ գլուխս չի մտնում, թէ ինչպէ՞ս կենցաղում բաւականին թեթեւամիտ, ուտողխմող, ինքնահաւան ու գլուխգովան վրացին կարող է մեզանից խելացի գտնել՝ ազգային ու քաղաքական հարցերում։

Բայց արի ու տես, որ յունական, արաբական, պարսկական, թուրքական եւ ռուսական տիրապետութիւնների ժամանակ՝ քաղաքական կացութեան յարմարուելու գործում վրացիները մեզանից աւելի ճարպիկ գտնուեցին և կարողացան պետականօրէն մօտենալ ազգային խնդիրներին։ Նոյնիսկ մեր օրերին, նրանք մեզանից շատ աւելի լաւ դիմացան խորհրդայնացմանը։

Շատ դժւար է, օրինակ, Թիֆլիսի ռուսական դպրոցներում աշակերտների մէջ գտնել վրաց մտաւորականութեան, Վրաստանի ղեկավարների կամ այսպէս կոչւած վրաց վերնախաւի երեխաներին։ Նրանք բոլորը սովորում են վրացական դպրոցներում։ Վրացու համար ռուսական դպրոց յաճախելը ամօթ է համարւում։

Մինչդեռ Երեւանում դժւար է հայկական դպրոցներում գտնել որեւէ գիտնականի, ղեկավարի եւ կամ գրողի երեխայի։ Նրանց մեծ մասը սովորում է ռուսական դպրոցներում։ Երեւանում ռուսական դպրոցում սովորելը պարծանք է համարւում։

Բայց չնայած դրան՝ ես չեմ ուզում հաւատալ, որ նրանք մեզանից ողջամիտ են։ Ես հաւատում եմ, որ մենք աւելի իմաստուն ենք։ Բայց, դժբախտաբար, իմ այս հաւատքի հիմքերը խախտւում են ամէն անգամ, երբ ես բախւում եմ իրականութեան հետ։

Ահա օրերս կրկին բախւեցի հաւատքս խախտող մի իրականութեան հետ։ Գրեթէ միեւնոյն ժամանակ Վրաստանից եւ Հայաստանից Մոսկւա Բրեժնեւին յղւեցին երկու տարբեր նամակներ։ Հայաստանից գրում էին սփիւռքահայութեան «ներկայացուցիչների ժողով»ի մասնակիցները, որոնք ազատ էին իրենց արտայայտութիւնների մէջ եւ կարող էին պաշտպանել հայ ժողովրդի շահերը։

Իսկ Վրաստանից գրում էին վրաց մտաւորականութեան ներկայացուցիչները, որոնց Սախարովի օրինակով սպառնում էր աքսորը։

Նախ հայերի մասին։

Երբ բարձրացաւ սփիւռքահայութեան «ներկայացուցիչների» համար կազմակերպւած թատրոնի վարագոյրը, «ներկայացուցիչները» անմիջապէս դարձան բեմադրութեան գլխաւոր դերակատարները եւ մէկը միւսին ընդմիջելով ու մէկը միւսից խօսքը խլելով, գովքը արեցին մեծ ռուս ժողովրդի, ազատաբեր Հոկտեմբերի եւ խորհրդային իշխանութեան։ Նրանց ոգեւորութիւնը այնքան մեծ էր, որ Մոսկւայի ռուս ներկայացուցիչը արդարացիօրէն համարեց, որ հարազատ մթնոլորտում է եւ մի պահ մոռանալով, որ դիմացը արտասահմանցի հայեր են, յայտարարեց, թէ ոչ միայն Հոկտեմբերն է ազատութիւն բերել հայ ժողովրդին, այլ նաեւ Հոկտեմբերի կողմից տապալւած ցարական իշխանութիւնն էլ հայ ժողովրդի մեծ բարեկամն էր։

Մթնոլորտը այնքան հարազատ էր, որ արտասահմանի քաղքենիութեան կարկառուն ներկայացուցիչ Կլորիկեանը ձեռքը գրպանը տարաւ եւ աշխարհի առաջին բանւորական երկրում, խորհրդային իշխանաւորների եւ հայ ժողովրդի առջեւ, թափահարեց իր «չեկը»՝ զարմացնելով ներկաներին իր հարստութեամբ։ Միայն երեւանցիները չզարմացան, որովհետեւ ամէն մի «բուֆետչիկ» Կլորիկեանից շատ աւելի դրամ ունի։

Մի խօսքով՝ բոլորը երջանիկ էին եւ «ներկայացուցիչները» ոչ մի պահանջ չունէին։ Ու չգտնւեց ոեւէ մէկը, որ պետականօրէն մտածէր ու հասկացնել տար ռուս ներկայացուցչին, թէ հայերի համակրանքը հէնց այնպէս չի տրւում, որ դրա համար վճարել է պէտք։ Ուրիշ տեղ, Մոսկւան միլիոններ է վճարում, արտասահմանում 20-30 համակիր գտնելու համար։ Իսկ այստեղ գրեթէ երկու միլիոնանոց Սփիւռքի «ներկայացուցիչները» իրենք են սեփական «չեկ»երը թափահարում։

«Ներկայացուցիչների» մէջ չգտնւեց եւ ոչ մէկը, որ պարտադիր գովեստներից յետոյ աւելացնէր, օրինակ, մի այսպիսի նախադասութիւն. «Եւ մենք համոզւած ենք, որ հայ ժողովրդի մեծ բարեկամ ռուս ժողովուրդը եւ մեր հարազատ խորհրդային իշխանութիւնը, ի վերջոյ, կը լուծեն դեռեւս չլուծւած Ղարաբաղի հարցը»։ Եթէ նման բան ասող լինէր, Աստւած վկայ, Հայաստանի ղեկավարներն էլ պիտի ուրախ լինէին, որովհետեւ իրենք այդ բանը ասել չեն կարող։

Ի՞նչ կը լինէր, եթէ ոեւէ մէկը նման մի բան ասէր, հասկացնել տալու համար, թէ մեր սէրը քաղաքական, այլ ոչ թէ գլուխը կորցրած սիրահարի սէր է։ Աստղին յաջորդ անգամ չէ՞ին հրաւիրի Հայաստան։ Է, թող չհրաւիրէին։ Բայց ոչ ոք ոչինչ չասաց, որովհետեւ բոլորը զբաղւած էին սեփական դիրքերը ամ-

րապնդելով։ Եւ երբ իջաւ գեղեցիկ կրկէսի վարագոյրը, հայ ժողովուրդը ոչինչ չստացաւ, բացի նրանից, որ Հայրենիքի անունից Համազասպեանը հասկացնել տւեց, թէ Սփիւռքի «յետադիմական»մամուլն էլ Խ. Միութեան թութակը պիտի դառնայ։

Գուցէ նաեւ պակասեցին մի քանի «չեկ»եր, որոնք կտրւեցին Սփիւռքի բերանից ու գնացին լրացնելու Կուբայի կամ Աֆղանստանի տրւելիք բիւդջեն։ Հէնց այս ոգով էլ ուրախ ու երջանիկ «ներկայացուցիչները» կազմեցին իրենց՝ Բրեժնեւին յղւած նամակը։

Խորհրդային իշխանութիւնը երկու ձայնից շատ է վախենում,- մէկը արտասահմանի, միւսը սեփական մտաւորականութեան ձայնն է։ Հայերի դէպքում այս վախը բացակայում է։ Սփիւռքը ոչ միայն լուռ է, այլեւ իշխանութեան գովքն է անում, իսկ մտաւորականների հատ ու կենտ ձայները այնքան թոյլ են, որ տեղ էլ չեն հասնում։

Բոլորովին այլ է կացութիւնը Վրաստանում։ Վրաստանը Սփիւռք չունի, ուստի արտասահմանեան ձայն էլ չունի։ Բայց Վրաստանը ունի ազգային մտաւորականութիւն, որը ամէն անգամ, երբ վտանգի տակ են դրւում ազգային արժէքները, բարձրացնում է իր ձայնը։ Այդ մտաւորականութիւնը գուցէ մերոնց զիջի տաղանդի ու գիտելիքների բնագաւառում, բայց նա շատ աւելի բարձր է ազգային ինքնագիտակցութեան ոլորտում։

Սրա ապացոյցներից մէկն էլ վրացիների հետեւեալ նամակն է, որը հրատարակւեց Փարիզի ռուսական թերթերից մէկում։ Թարգմանաբար ներկայացնում եմ այդ նամակը մեր ընթերցողներին։

> «Խորհրդային Միութեան Կոմունիստական կուսակցութեան գլխաւոր քարտուղար, Գերագոյն Խորհուրդի նախագահութեան նախագահ Լ. Բրեժնեւին
>
> Վրաստանի Կոմունիստական կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի առաջին քարտուղար Է. Շեարնաձէին.

Մենք՝ ներքոյ ստորագրեալներս անհրաժեշտ ենք համարում Ձեզ տեղեկացնել վրաց ժողովրդի սահմանադրական իրաւունքները խախտելու մասին։

1975 թւին ընդունւած «Բարձրագոյն որակաւորման յանձնաժողով»ի կանոնադրութիւնը,- պարբերութիւն 83,- ի տարբերութիւն նախորդի, պարտաւորեցնում է թեկնածուական ու դոկտորական **դիսերտացիա**ները հաստատման ներկայացնել բացառապէս ռուսերէն, ինչպէս և նախատեսւում է Բարձրագոյն

Ատեստացիոն Յանձնաժողով ռուսերէն ներկայացնել **դիսերտացիա**յին վերաբերող ոչ-ռուսերէն աշխատութիւնները: Բացի այդ, ոչ-ռուսերէն պաշտպանութեան ընթացքն ինքը թոյլատրւում է սոսկ Գիտական Խորհրդի անդամների ու ընդդիմախօսների համաձայնութեամբ: Եւ դրա հետեւանքով, վրացերէն լեզուն, որն ունի հնագոյն գիտական աւանդոյթներ ու գիտական հարուստ **տերմին**աբանութիւն, ձեւաւորւած դարերի ընթացքում, կորցրել է իրաւական ունակութիւնը գիտական կեանքի այնքան պատասխանատու ոլորտում, ինչ որ ըստ էութեան տանում է դէպի վրաց լեզուի արտաքսում գիտութիւնից:

Մենք գտնում ենք, որ յիշեալ կանոնադրութեան 83րդ պարբերութիւնը արգելակում է վրացական գիտական մտքի զարգացումը, վրացերէնի եւ ամբողջ վրացա-խորհրդային մշակոյթի զարգացումը, եւ հանդիսանում է ԽՍՀՄ ժողովուրդների ազգային իրաւահաւասարութեան սահմանադրութեամբ ամրապնդւած սկզբունքի խախտում:

Այդ կապակցութեամբ, տագնապ են յարուցում որոշ որոշումներ, որոնք ընդունւել են վերջերս: Օրինակ՝ ԽՍՀՄ բարձրագոյն եւ միջնակարգ մասնագիտական կրթութեան նախարարութեան 1978 թւի Դեկտեմբերի 6ի համար 1116 հրամանը: Այդ հրամանի կենսագործումը նշանակում է բարձրագոյն ու միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատութիւնների վրացական բաժիններում մտցնել յատուկ առարկաների դասաւանդում, վրացերէնի փոխարէն՝ ռուսերէնով, ինչպէս եւ փաստօրէն պարտաւորեցնում է **կուրս**ային, **դիպլոմ**ային աշխատութիւններն ու նախագծերը, արտադրական պրակտիկայի հաշւետւութիւնները գրել ոչ թէ վրացերէն, այլ ռուսերէն:

Փոխւել են նաեւ դպրոցական ծրագրերը: Ժամերի վերաբաշխման հետեւանքով՝ աւելացւել է ռուսաց լեզւի դասերի քանակը մայրենի լեզուի եւ այլ առարկաների հաշւին: Բացի այդ, վերջերս սկսւել է երկլեզուութիւն, մայրենի եւ ռուսաց լեզուներ մտցնելու քարոզչութիւն, ինչ որ վերջին հաշւով կը յանգեցնի լեզւի դերի ու նշանակութեան աստիճանաբար նսեմացման:

Բոլոր վերոյիշեալ միջոցառումները բնաւ չեն նպաստում ոչ վրաց ժողովրդի մշակոյթի զարգացմանը եւ ոչ էլ ռուսաց լեզւի ուսուցման բարելաւմանը, քանզի նման մեթոդներով արմատաւորւող կարգը կը հասցնի մայրենի եւ ռուսաց լեզուների թերի իւրացման, ինչ որ կ'իջեցնի ազգի մտաւոր ու ստեղծագործական կարողութիւնը: Ռուսաց լեզուի լիարժէք ու արդիւնաւէտ ուսումնասիրութիւնը հնարաւոր է միայն մայրենի լեզւի առաւելագոյն բազմակողմանի զարգացման պայմանով:

Յատկապէս պէտք է ուշադրութիւն դարձնել Վրաստանի պատմութիւնը միջնակարգ դպրոցներում անբաւարար դասաւանդելու վրայ: ԽՍՀՄ պատմութեանը յատկացւած դասաժամերի ընդհանուր թւից՝ Վրաստանի պատ-

մութեանը բաժին է ընկել միայն քառորդ մասը, ինչ որ լիովին անբաւարար է վրաց ժողովրդի բազմադարեան պատմութիւնը ուսումնասիրելու համար։

Ամբողջ ասւածը, ըստ էութեան, տանում է դէպի վրաց ժողովրդի ազգային իրաւունքների աստիճանական կորուստ, որոնք նւաճւել են ցարիզմի դէմ մղւած պայքարում, հակասում է լենինեան ազգային քաղաքականութեանը եւ հանդիսանում է վրաց ժողովրդի սահմանադրական գոյավիճակի խախտում։

Ուստի մենք անհրաժեշտ ենք համարում վերացնել Բարձրագոյն Ատեստացիոն Յանձնաժողովի 1975 թւականի կանոնադրութեան 83րդ պարբերութիւնը, ԽՍՀՄ բարձրագոյն եւ միջնակարգ մասնագիտական կրթութեան նախարարութեան 1978 թի Դեկտեմբերի 6ի համար 1116 հրամանը եւ վերահաստատել մայրենի լեզւի եւ այլ առարկաների վերացւած դասաժամերը միջնակարգ դպրոցում, աւելացնել դասաժամերը Վրաստանի պատմութիւնը ուսումնասիրելու համար, վերահաստատել տւեալ առարկան՝ իբրեւ ինքնուրոյն առարկայ, գնահատականը մտցնելով **ատեստատի** մէջ, ու Վրաստանի պատմութեան լրիւ դասընթացը մտցնել ԽՍՀՄ պատմութեան ծրագրում, Վրացական հանրապետութեան ԲՈՒՀ-երի ընդունելութեան քննութիւնների ժամանակ»։

* * *

Եւ սա, ինչպէս տեսնում ենք, ոչ Սերօ Խանզադեանի միայնակ ձայնն է, ոչ Կարապետեանի ինքնահրատարակչութիւնն է, ոչ էլ Պարոյր Հայրիկեանի ճիչն է. այլ այս նամակը ստորագրել են 365 հոգի, այդ թւում՝ 5 ակադեմիկոսներ, գրողներ, տարբեր մրցանակների դափնեկիրներ, մի խօսքով՝ Վրաստանի գրեթէ ամբողջ մտաւորականութիւնը։ Եւ չի կարող խորհրդային իշխանութիւնը հաշւի չնստել այս ձայների հետ ու չի կարող չոգեւորել Վրաստանի երիտասարդութեանը հայրերի այս քայլը։

Իսկ մենք «չեկ» թափահարելով ենք ոգեւորում մեր երիտասարդներին...

Մէկ ուրիշ նամակի մասին էլ պիտի պատմեմ։

419 ստորագրութեամբ Ամենայն Ռուսաց Հայրապետ Պիմենին Վրաստանից յղւեց հետեւեալ նամակը։.

«Ադրբեջանի Քախի, Բելականի եւ Զակատալի շրջաններում ապրում են 20.000 ուղղափառ վրացիներ եւ 8 հազար ուղղափառ ռուսներ։ Երեք այս շրջաններում անգործութեան են մատնւած 50 հին ուղղափառ եկեղեցիներ, այդ թւում՝ 5 Քախի շրջանում, որոնք լաւ վիճակի մէջ են եւ որտեղ ապրում են վրացիների մեծ մասը։ Այդ շրջանի ուղղափառ բնակչութիւնը արդէն վաղուց խնդրում է, որ մենք գոնէ մէկ եկեղեցի բացենք, սակայն մինչեւ այսօր այդ թոյլատրութիւնը չենք ստացել։

«Դրա փոխարէն 1965 թւականին ինչ որ մէկը գաղտնաբար պայթեցրեց եկեղեցիներից մէկը, իսկ այս տարւայ օգոստոս ամսին պայթեցւեց հնագոյն Մայր Աստւածածնի եկեղեցին։ Մինչդեռ այս նոյն երեք շրջաններում պաշտօնապէս գործում են մի քանի մզկիթ, որոնցից մի քանիսը բացւել են վերջին տարիների ընթացքում։

«Մի՞թե արդարացի է, որ մզկիթները գործում են, իսկ եկեղեցիները՝ ոչ։ Խնդրում ենք Ձեր օգնութիւնը Ադրբեջանի նշւած շրջաններում եկեղեցիներ բացելու հարցում»։

Չեմ ուզում հաւատալ, որ նրանց պետական մտածելակերպը մեզանից բարձր է, բայց ի՞նչ անել, եթէ սա է իրականութիւնը։

1981

ՁԱՅՆ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

Է. Յովհաննիսեան

1971 թւականին Երեւանի պատկերասփիւռից հանդէս եկաւ Հայաստանի ներքին գործերի նախարարութեան քրէական հետաքննութեան բաժնի պետ Սանասար Կուրղինեանը։ Նա խօսեց հանրապետութիւնում տեղի ունեցող յանցագործութիւնների վիճակագրութեան եւ պատճառների մասին, խօսեց քննիչ ու պատժիչ մարմինների աշխատանքի մասին, քննադատեց երեւանցիներին, որ նրանք չեն օգնում **միլիցիա**յին յանցագործներին բռնելու գործում, իսկ ելոյթի վերջում, խօսելով բարոյականութեան ու արդարութեան մասին, պարզապէս շշմեցրեց երեւանցիներին, երբ դիմեց Աւետարանին եւ յայտարարեց, թէ Նոր Կտակարանը մարդկութեան կողմից ստեղծուած լաւագոյն փաստաթղթերից մէկն է։

Խորհրդային Միութեան պայմաններում նման յայտարարութիւն չեն համարձակւում անել մեր կրօնական ղեկավարները, ուստի Կուրղինեանի յայտարարութիւնը մեծ համարձակութիւն էր, եթէ չասենք՝ հերոսութիւն։ Ու արդէն այն ժամանակ գոնէ ինձ համար պարզ էր, որ ազնիւ ու անկեղծ մարդը իր պաշտօնի վրայ երկար չի մնայ։

Այժմ Սանասար Կուրղինեանը բանտում է։ Սկզբից նրան պաշտօնազրկեցին, յետոյ էլ բանտ նետեցին։

Այժմ մեր տրամադրութեան տակ է Կուրղինեանի «**Գանգատը**», որը նա բանտից ուղարկել է «ՍՍՀՄ Գերագոյն Սովետի **ղեպուտատ**, Հայկական ՍՍՀ **Մինիստր**ների խորհրդի նախագահի առաջին տեղակալ ընկ. Ս.Մ. Կիրակոսեանին»։

Կուրղինեանի բողոքագիրը գրւած է 86 մեքենագրւած էջերի վրայ։ Այդ գրութիւնը գրել է անցեալ տարւայ Մայիս ամսին՝ 15 ամիս առանց դատի նախնական կալանքի տակ մնալուց յետոյ։ Այս փաստաթուղթը վերաբերւում է Հայաստանի կառավարական շրջանակների ներքին կեանքի ու իշխանութեան գլուխ անցնելու խոհանոցի մանրամասնութիւններին։

Բացի դրանից, բողոքագիրը լոյս է սփռում Հայաստանի արդարադատութեան մարմինների իսկական վիճակի վրայ, ինչպէս նաեւ մտածել է տալիս որոշ հասարակական երեւոյթների մասին։ Այս փաստաթուղթը ամէն մի հայի ուշադրութեան արժանի է, քանի որ խօսքը մեր Հայրենիքի մասին է։

Ամէն մի հայ պարտաւոր է լսել միայն «Հայրենիքի Ձայնը», այլ նաեւ հայրենիքից եկող բոլոր ձայները։ Լաւի հետ միասին սովորենք վատն էլ տեսնել։

Ժամանակին Կուրղինեանի գրութիւնը ամբողջովին կը յանձնուի մամուլին, որովհետեւ նա շօշափում է Հայաստանի հասարակական կեանքի այն կողմերը, որոնց մասին լուռ է թէ՛ Հայրենիքի եւ թէ Սփիւռքի մամուլը: Հայրենիքում ոչ ոք չի խօսում այդ մասին՝ Կուրղինեանի ճակատագրին չարժանանալու սարսափից:

Մինչ այդ ես ուզում եմ մէջ բերել միայն մի քանի հատուած Կուրղինեանի բողոքագրից, որոնք կրում են ընդհանուր բնոյթ եւ որոնք որոշ պատկերացում են տալիս Հայաստանում տիրող կացութեան մասին:

«Մեծարգոյ նախագահ, շուտով կը լրանայ 15-րդ ամիսն, ինչ առանց դատի ինձ պահում են Հայկական ՍՍՀ Պետական Անվտանգութեան Կոմիտէի բանտախցում՝ նախնական կալանքի տակ: Դեռեւս ինչքան կը պահեն, միայն Աբարչին է յայտնի: Օրէնքի եւ օրինականութեան «արթուն պահապանները», հանրապետութեան դատախազ Սուրիկ Օսիպեանի գլխաւորութեամբ, խափանման միջոց նախնական կալանքը դարձրել են պատժատեսակ»:

Այսպէս է սկսում իր բողոքագիրը Սանասար Կուրղինեանը եւ մանրամասնօրէն բացատրում է, թէ ինչու Հայաստանի դատախազ Օսիպեանը եւ Կոմունիստական կուսակցութեան Կենտկոմի բաժնի վարիչ Մ. Դաւթեանը ցանկացել են ազատուել Կուրղինեանից: Ըստ Կուրղինեանի նամակի, միութենական դատախազութեան ներկայացուցիչը, որը Մոսկուայից Կուրղինեանի գործով յատուկ Երեւան էր ժամանել, յայտնել է Կուրղինեանին, թէ իբր կուսակցութեան Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրճեանը սեփական նախաձեռնութեամբ արտահերթ բիւրօ է հրաւիրել, որտեղ որոշել է Կուրղինեանին հեռացնել կուսակցութեան շարքերից: Եւ իբր թէ ձերբակալութիւնն էլ կատարուել է Դեմիրճեանի ուղղակի ցուցմունքով:

Նման վերաբերմունքը իր նկատմամբ Կուրղինեանը բացատրում է նրանով, որ իր կողմից բացայայտուած մի շարք յանցանքներ, մանաւանդ, կաշառակերութեան բնագաւառում, անմիջականօրէն կատարուել են Մ. Դաւթեանի և Ս. Օսիպեանի ձեռքով:

Իր բողոքագրի 56-րդ էջում Կուրղինեանը գրում է.

«Ո՞րն է ահաւորը: Հայաստանը, լինելով ազգաբնակչութեամբ միատարր, որտեղ սոցիալական շփումները առաւել ամուր են պահպանւում, **միգրացիոն պրոցես**ի դանդաղ զարգանալու շնորհիւ, չեն խզւում **սոցիալ**ական կապերը, **թաբու**ի հիմքերը եւ այլն, յանցագործութեան վիճակը ծայրայեղ զարհուրելի է: Պարզ հաշւարկ կատարելու պայմաններում առաւել ցցուն կ'երեւայ այդ: Եթէ 3 միլիոն ազգաբնակիչներից հանենք մինչեւ 16 տարեկան անչափահասները (այդ տարիքից է հիմնականում սկսւում քրէական պատասխանատուութիւնը), կուսակցական, սովետական, պետական **ապարատ**ների, իրաւապաշտպան

մարմինների (**միլիցիա**, արդարադատութիւն, դատախազութիւն, **արբիտրաժ**, ժողովրդական վերահսկողութիւն), տեղական, հանրապետական եւ ՍՍՀՄ Գերագոյն Սովետի **դեպուտատ**ներին, գիտութեան դոկտորներին եւ այլն, ստացած թւերը միայն կարող են հոգեկան ծանր **տրամ** առաջացնել։ Եւ պատահական չէ, որ Հայաստանում ԱԻԵԼԻ ՇԱՏ ծանր յանցագործութիւն է կատարւում (սպանութիւն, ծանր մարմնական վնասներ եւ այլն), քան.... Ֆրանսիայում, Իսրայէլում եւ այլ պետութիւններում, որտեղ ԱՋԱՏ վաճառում են զէնք, բաց են խաղատների, զանազան որջերի դռները, ազատ **պրոպագանդ**ւում է սպանութիւնը, **բուրժուա**կան բարքերը եւ այլն։

«Կը կամենայի Ձեր ուշադրութեանը արժանացնել այն իրողութիւնը, որ Հայաստան երկրում իրաւաբանական մտքի կատարեալ սով է տիրում, չնայած մեր ունեցած բազմաթիւ ընդունակ եւ անգամ տաղանդաւոր **կադր**երի առկայութեանը, քրէական իրաւունքին, **կրիմինալիստիկ**ային»։

Իր նամակի մէկ ուրիշ հատւածում Կուրղինեանը գրում է.

«Ինձանից վրէժխնդիր լինելու ատելութիւնն այնպէս էր մթագնել հանրապետութեան դատախազ Օսիպեանի բանականութիւնը, որ իր հրամանով բազմաթիւ զեղծարարութիւնների համար մեր բաժանմունքի իրաւաբանի պաշտօնից հեռացած Ռուսլան Նետոսովին եւ նրա կնոջը՝ Էլմիրա Նետոսովային հրաւիրելով դատախազութիւն, հարցաքննութեան պատրւակի տակ նրանց տրամադրում է արձանագրութեան մաքուր **բլանկ**եր, իսկ վերջիններս 132 էջանոց ազատ **շառլատան**ութիւն են գրում, որում «պատռում են իմ դիմակը», իբրեւ Ադոլֆ Հիտլերի փոխանորդը Հայաստանում, իբրեւ ռազմատենչ-**հեգեմոնիստ** չինացի, որը անհամբեր սպասում է, թէ «**Եարաք**, ե՞րբ պէտք է Չինաստանը ջախջախի սովետներին, որպէսզի կարողանայ Հայաստանում բնակւող ռուսների ջարդ կազմակերպել։

«Սակայն չարիքը այդ չէ։ Փոյթ չէ, թէ իմ մասին ինչ են գրել կամ ինչո՞ւ են գրել։ Այդ թողնենք քննիչների եւ Նետոսովների իրաւասութեանը եւ հայեցողութեանը։ Չարիքը նրանումն է, որ ՎԱՅՐԵՆԻ ԲՆԱԶՆԵՐԻՆ ճամբայ տալու նպատակով, իրենց ցուցմունքներում ամուսինները ծաղր ու ծանակի են ենթարկել մեր ժողովուրդը յայտարարելով, թէ չնայած անցել է 65 տարի, բայց սուգն ու շիւանը չեն մոռացել, որ ամէն տարի նշում են Եղեռնը, որ Հայաստանում թագաւորում են ռուսատեաց բարքեր, համատարած **նացիոնալիզմ**, Հայաստանի երկու մտաւորականներից մէկին համարում են «թնդանօթաձիգ» կամ կրակող **նացիոնալիստ**, որ այսօր հանրապետութիւնում իբր չկայ մի հրատարակչութիւն, պարբերական ամսագիր կամ մէկ այլ տպագիր օրգան, որտեղ ցեղային թշնամանքը միւս ազգութիւնների նկատմամբ զգացնել չտայ։ Իրենց գարշահոտ յայտարարութիւնները **պրովոկատոր**ները եզրափակում են

«հայ ժողովրդին քրէական օրէնսգրքի 69 յօդւածով որպէս պետական յանցագործների դատի տալու» պահանջով։

«Կարեւոր եմ համարում փաստել այն իրողութիւնը, որ փետրուարի 27ին, Օսիպեանը իր թանկարժէք ժամանակից ուղիղ 3 ժամ տրամադրում է Ռ. Նետոսովին։ Օսիպեանի հետ ունեցած հանդիպումից յետոյ, Նետոսովը 15 էջանոց մեքենագիր մի նամակով դիմում է Զւերեւին, Հայաստանում գլուխ բարձրացրած նացիոնալիզմից եւ ցեղապաշտութիւնից ռուսներին փրկելու աղերսանքով։ Ազգի հասցէին կատարւած այդ նողկալի գրաւոր զրպարտութիւնները կազմում են մեղադրանքի 8րդ հատորի 138-152, 186-212, 213-250 թերթերը։

«Ես չգիտեմ, յարգելի փոխ նախագահ, թէ ի՞նչ ընդհանուր կապ կայ մեր նկատմամբ քննւող քրէական գործի եւ հայ ժողովրդի հասցէին կատարած հայհոյանքների միջեւ, որոնք վկայի ցուցմունքի անւան տակ կցւել են սոյն գործին։ Բանից պարզւում է, որ, ըստ Օսիպեանի եւ միւսների, կապ կայ եւ այն էլ ուղղակի կապ։

«Ազգային նկարագիր չունեցող, ազգային հպարտութիւնից ու արժանապատւութիւնից զուրկ Օսիպեանը քաղաքականապէս տհաս Զւերեւի թիկունքում կարծում է, թէ այլոց պիղծ շուրթերով հայհոյելով հանրապետութեանը, մեղադրելով նրա մտաւորականութիւնը **նացիոնալիզմի**, ռուսատեացութեան մէջ, որը սակայն ՀԱՅԻՑ այնքան հեռու է, ինչքան երկիրը երկնքից, կը հասնի այն բանին, որ Կուրղինեանին խստօրէն կը պատժեն, որպէս հասարակութեանը մեծ վտանգ ներկայացնողի»։

Իր նամակը Կուրղինեանը աւարտում է այսպէս.

«Յատկապէս Ձեզ դիմելու շարժառիթը հանդիսանում է այն, որ ես տարբեր շրջանակներից, հասարակութեան լայն խաւերից, յատկապէս մտաւորականներից բազմաթիւ փաստեր եմ լսել **Ձեր անաչառութեան, Ձեր գործունէութեան** թափի, շրջաններ շէնացնելու, լայնախոհ մտածելակերպի, հարցերի լուծման օպերատիւութեան, շիտակ եւ համարձակ խօսքի ու այլ բարեմասնութիւնների մասին։

«Սրանք քծնանքի խօսքեր չեն։ Ես դրանից շատ եմ հեռու... Դրանում ես անձամբ համոզւեցի, երբ 1978 թւականի յունւարին Հայաստանում անցկացւող համաշխարհային **կոնգրես**ի առընչութեամբ աւելի մօտիկից շփւեցի Ձեզ հետ։ Ձեզ եմ դիմում որպէս քննադատօրէն մտածող։ Եւ Ձեզ դիմելուս նպատակը ոչ թէ **ռոմանտիկ** մղումներն են, որպէսզի միջամտէք, որ ինձ կալանքից ազատեն կամ թէ քրէական հետապնդումը կարճեն, դատարանից ազատ արձակեն կամ այլ ակնկալներ...Ոչ, հազար անգամ ոչ։ Ես պրոֆեսիոնալ իրաւաբան եմ եւ գիտեմ, թէ դրան ո՛ր պայմանների միջոցով ու ինչպէս պէտք է հասնել։

«Ձեզ եմ դիմում որպէս ՍՍՀՄ Գերագոյն Սովետի **դեպուտատ**, **Մինիստր**-ների խորհրդի առաջին փոխ նախագահ, որպէսզի հանրապետութեան իրա-ւասու մարմինների հետ համատեղ Ձեր զօրեղ **ձեռքերով** բարձրացնէք այն վարագոյրը, որը տարիներ շարունակ ծածկում է հանրապետութեան **դատա-խազ Օսիպեանի** եւ **Կենտկոմի բաժնի վարիչ Մ. Դաւթեանի կեղտերը, նրանց չարաշահումները եւ օրինազանցութիւնները**։ Ձեզ եմ դիմում, որպէսզի Դուք դուրս նետէք չարիքը Ձեր միջավայրից»։

1981

ՄԵՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԱՅԼԱԽՈՀԱԿԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Է. Յովհաննիսեան

Անկարելի է առանց խորը յուզմունքի ու ցաւի կարդալ Պարոյր Հայրիկեանի, նրա ընկերների եւ առաւել եւս գնդակահարուած մեր հայրենակիցների ճակատագրերի պատմութիւնը: Անկարելի է չխոնարհուել նրանց ազնուութեան, արիութեան, յեղափոխական ոգու եւ զոհաբերութեան առջեւ: Չի կարելի չբաժանել նրանց երազը Անկախ Հայաստանի վերաբերեալ եւ չպաշտպանել նրանց դժւարին պայքարը այդ երազը իրականացնելու ճամբին: Եւ մենք յուզւում ենք, սրտի ցաւ ենք զգում, բաժանում ենք նրանց երազը, բայց չենք պաշտպանում: Ինչո՞ւ: Դրա համար կան որոշ պատճառներ, որոնց մասին պէտք է խօսել առանց զգացմունքների, սառը քաղաքական դատողութեամբ:

Շատ լաւ կը լինէր, որ մենք, բացի քաղաքական կուսակցութիւններից ու կազմակերպութիւններից, ունենայինք նաեւ բարոյական հաստատութիւններ, որոնք խօսէին ոչ թէ քաղաքական սառը, այլ արդարութեան ջերմ լեզուով: Բայց մենք այդպիսի հաստատութիւններ չունենք: Մեր եկեղեցին էլ, Բարեգործականն էլ, իրենց չէզոք յայտարարող ակումբներն էլ, միութիւններն էլ յստակ քաղաքական կողմնորոշում ունեն եւ, որպէս օրէնք, նրանք ոչ միայն խորհրդայնասէր են, այլեւ պարզապէս խորհրդային իշխանութեան շարունակութիւնն են արտասահմանում: Էլ ի՞նչպէս կարող են նրանք Պարոյր Հայրիկեան պաշտպանել: Ումի՞ց, սեփական հարազատ իշխանութիւնի՞ց:

Եթէ Սփիւռքի բարոյական կազմակերպութիւնները այդպէս են, էլ ինչո՞ւ զարմանալ, որ Հայաստանի քաղաքական բանտարկեալները անտէր են եւ արտասահմանում, նրանց օգտին պաշտպան կոմիտէներ չեն ստեղծւում եւ ամերիկեան **կոնգրեսմեն**ները նրանց մասին Անդրոպովին նամակներ չեն գրում: Ինչ վերաբերում է քաղաքական կուսակցութիւններին, ապա նրանցից երկուսը կանգնած են նոյն դիրքերի վրայ, արդէն քաղաքական նկատառումներով եւ նրանցից էլ Հայաստանի այլախոհները սպասելիք չունեն: Մնում է Հ.Յ. Դաշնակցութիւնը, որը ինչպէս ասում են Հայաստանից դուրս եկողները, մեծ հեղինակութիւն է վայելում Հայաստանի այլախոհների, եթէ չասենք ընդհանրապէս խորհրդողների մէջ: Եւ հէնց դրա համար էլ մեր վերաբերմունքի ճշտումը Հայաստանի այլախոհական շարժումների նկատմամբ պատասխանատու գործ է:

Մեր բացայայտ պաշտպանութիւնը կարող է է՛լ աւելի թափ տալ այդ շարժումներին եւ աւելի եւս գրգռել իշխանաւորներին, իսկ մեր կրաւորականու-

թիւնը այդ հարցում կարող է ազդել մեր հեղինակութեան վրայ։ Ուրեմն, եթէ մենք ուզում ենք, որ այդ շարժումները զարգանան եւ տարածւեն Հայաստանում, մենք պէտք է կազմակերպենք մեր պաշտպանութիւնը, ինչպէս այդ անում են ուրիշ ժողովուրդներ, առանձնապէս հրեաները։ Իսկ եթէ մենք այդ շարժումներին դէմ ենք, եթէ նրանք վնասակար ենք համարում, պէտք է բացատրենք, թէ ինչու, այլ ոչ թէ լռենք, շփոթութեան մէջ գցելով թէ հայաստանցիներին եւ թէ միջազգային հասարակական կարծիքը։

Նախ նշեմ, թէ ինչու եմ ես կարծում, որ այլախոհական շարժումները, լինի այդ մարդու իրաւունքների պաշտպանութիւն, թէ հանրաքւէ պահանջող կուսակցութիւն, բարոյական այլ ոչ թէ քաղաքական ոլորտի գործունէութիւն է։ Բանը նրանումն է, որ բարոյական ոլորտի տրամաբանութիւնը տանում է մեզ տեղական խնդիրներից դէպի վեր, այսպէս.

Հայկական Հարցը լուծւած չէ, որովհետեւ մէկ կողմից Թուրքիան գտնւում է միջազգային աշխարհակալութեան հովանաւորութեան տակ, միւս կողմից Հայաստանը անկախ չէ, որովհետեւ նրան իր ճանկերի մէջ է պահում արեւելաեւրոպական համայնավարութիւնը։ Այս ամէնը ճիշտ է։ Բայց եթէ այստեղից մենք եզրակացնենք, որ Հայկական Հարցի լուծման ճանապարհը տանում է համաշխարհային աշխարհակալութեան եւ միջազգային համայնավարութեան դէմ պայքարի միջով, ապա սա կը լինի զուտ բարոյական եզրակացութիւն, այսինքն բարոյական, այլ ոչ թէ քաղաքական արժէքների սահմանում։

Քաղաքական տրամաբանութիւնը ճիշտ հակառակն է։ Ոչ համաշխարհային աշխարհակալութիւնը եւ ոչ էլ միջազգային համայնավարութիւնը, առաւել եւս Խ. Միութեան վարչակարգը մենք չէ, որ պիտի տապալենք, ուստի մեր առանց այն էլ նուազ ուժերը մենք պէտք է օգտագործենք մեր սեփական խնդիրների լուծման համար։ Այն խնդիրների, որոնք եթէ մենք չլուծենք, ուրիշ ոչ մէկը չի լուծի։ Իսկ աշխարահակալութեան եւ համայնավարութեան դէմ պայքարող շատ կայ։ Այս տրամաբանութիւնը առաւել եւս անհրաժեշտ է Խ. Հայաստանում, որտեղ հասկանալի կերպով բոլոր ազգային դժգոհութիւնները ուղղւած են խորհրդային իշխանութեան դէմ։

Բայց եկէք հաշւի առնենք հետեւեալ իրողութիւնը։ Խ. Միութիւնում քաղաքական եւ հասարակական ասպարէզներում երբէք տեղի չեն ունեցել փոփոխութիւններ ներքեւից եկող ճնշումների հետեւանքով։ Լենինին փոխարինեց Ստալինը, Ստալինին՝ Խրուշչովը, Խրուշչովին՝ Բրեժնեւը, Բրեժնեւին՝ Անդրոպովը եւ սրանք բոլորը իրենց ցանկութեամբ իրենց քաղաքական հաշւարկների բերումով տւեցին ժողովրդին այս կամ այն ազատութիւնը, որոնցից այս կամ այն ժողովուրդը օգտւեց իր իմացած ձեւով։ Երեւանի Մեծ Եղեռնի կամ Սարդարապատի յուշարձանները կանգնեցին ոչ թէ ժողովրդի պահանջով, ոչ

թէ ցոյցի դուրս գալու բերումով, այլ կառավարութեան կողմից տրւած ազատութիւնների շնորհիւ: 1965 թւականի ցոյցն էլ հէնց այն սահմաններում էր, որ թոյլատրւած էին: Չարենցին եւ Բակունցին արդարացրին ոչ թէ ժողովրդին հաճոյք պատճառելու համար, այլ Խրուշչովին պէտք էր Ստալինի հեղինակութիւնը զցել: Եւ Սոլժենիցինն էլ ծնւեց այդ հոսանքի մէջ, իսկ դրանից առաջ հարիւրաւոր Սոլժենիցիններ անյայտացան Ստալինեան ճամբարներում:

Մի խօսքով, Խ. Միութեան ղեկավարութիւնը այս կամ այն հաշիւներից ելնելով թոյլ է տալիս ազատութեան ճեղքեր եւ այս կամ այն ժողովուրդը, այս կամ այն ձեւով լրացնում է այդ ճեղքերը Այլախոհական շարժումներն էլ այդ ճեղքերը լրացնելու ձեւերից մէկն են, բայց երբեք նրանք չեն կարող դիտւել որպէս այդ ճեղքերը լայնացնելու միջոց: Միակ ժողովուրդը, որը այնուամենայնիւ կարող է լայնացնել այդ ճեղքերը ներքեւից, այդ ռուս ժողովուրդն է, որը սակայն այս հարցում շատ կրաւորական դիրք է բռնել: Եւ նրա դիրքը մասամբ հասկանալի է:

Բանը նրանում է, որ ամբողջ այն աղմուկը, որը արտասահմանում հրեաների օգնութեամբ բարձրանում է այլախոհական եւ իրաւապաշտպանական շարժումների շուրջ, ռուսներին չի վերաբերում: Ընդհակառակն, Միացեալ Նահանգների նախագահի խորհրդատուներից շատերը, նոյն հրեաների ջանքերով, յայտարարում են, որ ռուսական ազգայնականութիւնը աւելի վտանգաւոր է, քան խորհրդային իշխանութիւնը: Բուն ռուսական բնոյթ կրող շարժումները Խ. Միութիւնում ոչ միայն պաշտպանութիւն չեն գտնում արտասահմանում, այլեւ նրանց պարզապէս ֆաշիստներ են անւանում: Սոլժենիցինին վերջերս կնքեցին ռուսական Խոմէյնի անունով եւ նրան հարւածում են ձախից եւ աջից: Ամերիկացիների եւ Արեւմտեան Եւրոպայի նման վերաբերմունքը ռուսների նկատմամբ ապացուցում է, որ Արեւմուտքը Խ. Միութեան վարչակարգը տապալել չի ցանկանում: Նրան ձեռք է տալիս հէնց այդ Ռուսաստանը, որովհետեւ ազատ Ռուսաստանը լուրջ մրցակից կարող էր դառնալ նրա համար: Իսկ յաւերժօրէն տնտեսական ու բարոյական ճգնաժամում գտնւող Ռուսաստանը միշտ էլ լաւ շուկայ է Արեւմուտքի համար:

Միայն քաղաքականօրէն շատ միամիտ, եթէ չասենք՝ տգէտ մարդը կարող է ենթադրել, որ Խ. Միութիւնում կարող է որեւէ փոփոխութիւն տեղի ունենալ առանց ռուսների մասնակցութեան, միայն հրեաների, հայերի կամ ուզբեկների միջոցով: Բայց Արեւմուտքը ոչ տգէտ է եւ ոչ էլ միամիտ: Ուրեմն միակ եզրակացութիւնը այն է, որ Արեւմուտքի համար խորհրդային վարչակարգի տապալումը անցանկալի է: Մենք չենք կարող նրանց մեղադրել դրանում, այդ իրենց գործն է եւ նրանց քաղաքական հաշւարկներից է բխում:

Իսկ եթէ այդ այդպէս է, ուրեմն այլախոհական շարժումները Խ. Միութիւնում այնքանով են հետաքրքրում Արեւմուտքին, որքանով որ նրանց միջոցով կարելի է միջամտել Խ. Միութեան ներքին գործերին, որոշ չափով նրան թուլացնելու համար: Բայց մենք այստեղ ի՞նչ շահ ունենք: Մէկ անգամ արդէն Հայկական Հարցը դարձել է Թուրքիայի ներքին գործերին միջամտելու պատըրուակ: Արդիւնքն էլ յայտնի է եւ չեմ կարծում, որ ոեւէ հայ ցանկանայ դրա կրկնութիւնը: Իսկ կրկնութիւն կարող է լինել, որովհետեւ այդ հարցում խորհրդային անվտանգութեան մարմինները թուրքերից աւելի բարի չեն, նրանց ձեռքերը 50 միլիոնի արիւնով է շաղախուած:

Հայ երիտասարդութիւնը այլախոհական շարժումների մէջ ամենագործօնն է եւ ամենաազնիւը: Նա չի կանգնում կէս ճանապարհին, այլ մեր ժողովրդի նկարագրի համաձայն գնում է մինչեւ վերջ: Նա զոհաբերւում է այնպիսի անկեղծութեամբ, որ կարծես թէ նրա արիւնը թափւում է Հայ Դատի լուծման անիւի վրայ: Բայց չի թափւում, որովհետեւ մենք ուրիշների կողմից ստեղծուած եւ ուրիշներին ձեռնտու շարժումների մէջ ենք մտնում:

Ուրիշները սահմանադրական իրաւունքներ են պաշտպանում Իսրայէլ մեկնելու համար, մենք էլ նրանց յետեւից նոյն բանն ենք անում: Նրանք կոմիտէներ են ստեղծում, իսկ մենք՝ անկախութիւն պահանջող կուսակցութիւն: Ուրիշները բողոքի ցոյցերի են դուրս գալիս, իսկ մենք ռումբեր ենք պայթեցնում... Մոսկւայի Մետրոյում (?): Ուրիշները ստեղծում են Հելսինկեան խմբեր, մենք էլ՝ նրանց յետեւից: Իսկ մենք մեզ հաշիւ տալի՞ս ենք, որ Հելսինկեան համաձայնութիւնները առկայ պետական սահմանները յաւերժացրին նաեւ Արեւմտեան Հայաստանի դիրքը Թուրքիայի մէջ:

Ես ոչինչ չէի ասի, եթէ բոլոր այդ շարժումները զուտ հայկական լինէին եւ նպատակ ունենային ազատութեան ճեղքերը լցնելու, բայց ոչ լայնացնելու, որ ռուսների գործն է: Անշուշտ, ճեղքերը լցնելու գործում անհրաժեշտ է որոշ ուղղութիւն մշակել եւ դա մենք պէտք է անենք, ոչ թէ որովհետեւ խելօք ենք, այլ որովհետեւ ազատ պայմաններում ենք ապրում: Ես այստեղ նպատակ չունեմ խօսելու այդ ուղղութիւնների մասին, միայն կարող եմ ասել, որ այսպէս կոչուած ազատութեան ճեղքերը լցնելու գործը Հայաստանում այնքան ցածր մակարդակի վրայ է բոլոր բնագաւառներում, որ ճեղք լայնացնելու ճիգերը պարզապէս շռայլութիւն են:

Բայց կարեւորը այդ չէ, կարեւորը այն է, որ այդ ՄԵՐ՝ ՀԱՅԵՐԻՍ ԳՈՐԾԸ ՉԷ: Առաւել եւս՝ այդ մեր գործը չէ ստեղծուած պայմաններում, երբ վարչակարգը քանդել չեն ցանկանում ոչ ամերիկացիները եւ ոչ էլ ռուսները: Այս պայմաններում բաց պայքարը հերոսական ինքնասպանութիւն է:

Այդ նշանակո՞ւմ է արդեօք, որ Հայաստանի ազգասէր եւ յեղափոխական տրամադրութիւններ ու ձգտումներ ունեցող երիտասարդութիւնը, մտաւորականութիւնը եւ աշխատաւորութիւնը անելիք չունի Միացեալ եւ Ազատ Հայրենիք կերտելու ոլորտում: Ոչ, չի նշանակում: Տնտեսական, գիտական, մշակութային, կրթական, կրօնական եւ այլ բնագաւառներում կարելի է բազմաթիւ աշխատանքներ կատարել, որոնք անհրաժեշտ են ապագայ անկախ Հայաստանին, բայց որոնք կարող են կատարուել ճեղքերը լցնելու կարգով:

Այստեղ էլ հալածանքները եւ բանտարկութիւնները անխուսափելի են, որովհետեւ թոյլատրուած ազատութիւններից օգտուելն էլ Խ. Միութիւնում յանցանք է: Բայց բանտ ընկնելուց յետոյ, գոնէ համոզուած լինենք, որ մեր երիտասարդը ՄԵՐ, այլ ոչ թէ ՈՒՐԻՇԻ գործի համար է զոհւում:Ո՞րն է այդ մեր գործը: Սա արդէն, վերաբերում է այն բնագաւառին, որի առաջին փուլը Սփիւռքի եւ Հայաստանի երիտասարդութեան ու մտաւորականութեան կապի ստեղծումն է, նրանց միջեւ երկխօսութեան ու բանավէճի (իրար հասկանալու համար) կազմակերպումն է: Մենք պիտի լսենք նրանց, այլ ոչ թէ «**Հայրենիքի ձայն**»ի ձայնը, եւ նրանք էլ պիտի լսեն մեր, այլ ոչ թէ «**Լրաբեր**»ի եւ պատահական զբօսաշրջիկների ձայնը:

1983

ԱՅԼԱԽՈՀՈՒԹԻՒՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Է. Յովհաննիսեան

Հայաստանի այլախոհութիւնը սկզբից ընդունեց ոչ թէ իրաւապաշտպանական, այլ քաղաքական շարժման բնոյթ: 1964 թականի վերջերին ընդյատակեայ մի քանի խմբեր պատրաստում էին զանգւածային ցոյց, որը տեղի ունեցաւ 1965 թականի Ապրիլի 24-ին եւ այնպիսի չափեր ընդունեց, որ իշխանութիւնները ստիպւած եղան ժամանակաւորապէս նահանջել: Ցոյցը տեղի ունեցաւ հայերի ցեղասպանութեան 50 ամեակի առիթով, որի մասին խօսելը Ստալինի ժամանակ արգելւած էր: Երեւանի փողոցները դուրս եկան աւելի քան 100.000 ցուցարարներ: Երթեւեկութիւնը, դպրոցները, բարձրագոյն ուսումնական հաստատութիւնները փակւեցին: Անկարգութիւններից խուսափելու համար խանութները եւ ճաշարանները փակեցին իրենց դռները: Ցուցարարները այնքան շատ էին եւ այնքան մարտականօրէն տրամադրւած, որ ոստիկանութիւնը չէր համարձակւում միջամտել: Ցոյցի նշանաբանն էլ ոչ թե համախորհրդային էր, այլ՝ հակաթուրք:

Բայց ահա ցուցարարները տարբեր փողոցներով լցւեցին կենտրոնական հրապարակը եւ այնտեղ անմիջապէս փոխւեց ցոյցի քաղաքական գոյնը: Մի երիտասարդ ուսանողուհի բարձրացաւ հրապարակի ամբիոնը եւ, ցոյց տալով Լենինի արձանը՝ բացագանչեց. «Ինչո՞ւ պէտք է մեր հրապարակում կանգնի մի մարդու արձան, որը խլեց Հայաստանի ազատութիւնը»: Մէկ ուրիշ երիտասարդ սկսեց պատմել Ղարաբաղի հայերի ծանր վիճակի մասին, իսկ երրորդը առաջարկեց շարժւել դէպի կառչուկի գործարան եւ ոտքի հանել բան-տորութիւնը:

Նման տեսարաններին անսովոր ոստիկանութիւնը շշմած նայում էր ցուցարարներին, իսկ երբ նրանցից մէկը բարձրախօսով պահանջեց որ ցուցարարները ցրւեն, մի երիտասարդ խլեց նրանից բարձրախօսը եւ առաջարկեց ներկաներին խօսել: Ցանկացողները շատ քիչ էին, բայց ոչ թէ նրա համար, որ վախենում էին, այլ պարզապէս որովհետեւ ոչ ոք չգիտէր, թէ ի՞նչ կարելի է ասել այս բորբոքւած ժողովրդին:

Հրապարակում կանգնած էի նաեւ ես, իմ ընկերների հետ, բայց մեզանից ոչ ոք չէր պատկերացնում ինչի մասին կարելի էր խօսել: Մի պահ ինձ թւաց, որ ես գիտեմ ինչ կարելի է ասել, բայց չհամարձակւեցի, որովհետեւ պիտի խօսէի ռուսերէն ու պիտի քարկոծւէի: Այնուամենայնիւ, ես հիմա զղջում եմ, որ այն ժամանակ չխօսեցի:

Յոյցը տեւեց ամբողջ օրը, իսկ երեկոյեան ցուցարարները շարժւեցին դէպի օպերայի շէնքը, որտեղ տեղի էր ունենում Հայաստանի կառավարութեան նիստը: Յուցարարներին հրշէջ խողովակների ջրով յետ քշեցին շէնքից, բայց թրջւած ու բորբոքւած ցուցարարները ներխուժեցին սրահ: Կառավարութիւնը փախաւ, իսկ Ամենայն Հայոց Կաթողիկոսը սկսեց հանգստացնել ներկաներին: Մի քանի ժամ Հայաստանում ոչ մի իշխանութիւն չկար:

Բայց ի՞նչ անել: Այս հարցի պատասխանը ոչ ոք չգիտէր: Ու հէնց այստեղ պարզ դարձաւ, որ անհրաժեշտ է կազմակերպութիւն, առանց որի բոլոր տարերային ցոյցերը միայն վնաս կարող էին հասցնել մեր ժողովրդին :

Յոյցի ղեկավարներին յաջողւեց խուսափել բանտարկութիւնից, որովհետեւ նրանք խելամտօրէն ցոյցի ժամանակ ամբիոններ չբարձրացան: Մէկ՝ տարի չանցած՝ այդ երիտասարդները ստեղծեցին Ազգային Միացեալ Կուսակցութիւնը: Նրա հիմնադիրներն էին նկարիչ Հայկազուն Խաչատրեանը եւ ուսանողներ Շահէն Յարութիւնեանը եւ Ստեփան Զատիկեանը: Նրանք սկսեցին հրատարակել «Փարոս» թերթը, «Յանուն Հայրենիքի» հանդէսը եւ տարբեր թռուցիկներ,որտեղ կոչեր էին արւում Հայաստանի անկախութեան վերաբերեալ:

1968 թւականին Ազգային Միացեալ Կուսակցութեան հիմնադիրներին ձերբակալեցին եւ կուսակցութեան ղեկավարը փաստօրէն դարձաւ 19 ամեայ Պարոյր Հայրիկեանը: Հայրիկեանը իր ընկերների հետ ուսումնասիրում էր հայ ժողովրդի ճակատագրին վերաբերւող նիւթեր եւ թռուցիկներ էր տարածում ռուսական ցեղապաշտութեան դէմ, ինչպէս նաեւ կոչեր էին անում Ղարաբաղը եւ Նախիջեւանը Հայաստանին կցելու մասին:

1969 թւականին Հայրիկեանը ձերբակալւեց եւ այն օրից միայն մէկ անգամ մի քանի ամսով ազատ արձակւեց: 1974 թւականին Հայրիկեանին երկրորդ անգամ կանգնեցրին դատարանի առջեւ եւ դատապարտեցին 7 տարի բանտարկութեան: Բայց ահա արդէն անցել է 10 տարի, իսկ նա դեռ բանտումն է: Հետեւաբար ճիշտ էր կռահել նա իր եւ իր նմանների ճակատագիրը, երբ իր վերջին խօսքում ասաց. «Ես շատ եմ սիրում կեանքը, շատ աւելի, քան կարելի է պատկերացնել, բայց քանի դեռ Հայաստանը անկախ չէ եւ քանի դեռ ողջ եմ, երեւի, իմ ապաստանը բանտը պիտի լինի: Ես փորձեցի, իսկական հայրենասէր մնալով, չմնալ ընդյատակում: Բայց կեանքը ուսուցանեց, որ իսկական հայրենասէրը այսօր կարող է գտնւել կա՛մ ընդյատակում, կա՛մ էլ բանտում ու աքսորում»:

Արդէն բանտում, որոշ քաղաքական փորձ ձեռք բերելուց եւ ուրիշ հանրապետութիւնների այլախոհների հետ շփւելուց յետոյ, Հայրիկեանը որոշեց վերանայել Ազգային Միացեալ Կուսակցութեան ռազմավարութիւնը եւ հակա-

խորհրդային ընդյատակեայ կազմակերպութիւնից դարձնել նրան իրավապաշտպանական կազմակերպութիւն: Այս կազմակերպութիւնը այժմ ուզում էր ձեռք բերել Հայաստանի անկախութիւնը հանրաքւէի եւ Խ. Միութիւնից սահմանադրական կարգով անջատելու միջոցով:

Այս հարցում Հայրիկեանին պաշտպանեց Ազատ Արշակեանը, որը ժամանակին օրը ցերեկով Ռազմիկ Զօհրաբեանի հետ Երեւանի հրապարակում այրեց Լենինի նկարը: Կուսակցութեան իրաւապաշտպանական դիրքորոշումը աւելի մեծ անհանգստութիւն պատճառեց Խ. Միութեան անվտանգութեան մարմիններին, որովհետեւ նրանք ամենաշատը վախենում են աղմուկից եւ բաց պայքարից: Հայաստանի ԿԳԲ-ն (Չեկա) առաջարկեց Հայրիկեանին համագործակցութիւն: Վիրաւորուած Հայրիկեանը, որպէս բողոքի ցոյց, այրեց իր բանտախուցը:

Սակայն իրաւապաշտպանական շարժումը սկսեց տարածւել Հայաստանում: 1977 թւականի Ապրիլի 24-ին Հայաստանում կազմւեց Հայկական Հելսինկեան խումբ: Նրա կազմի մէջ մտան 4 հոգի, որոնցից մէկը Ազգային Միացեալ Կուսակցութեան հիմնադիր Շահէն Յարութիւնեանն էր: Խմբի ղեկավար դարձաւ Յարութիւնեան Էդուարդը: Հայաստանի Հելսինկեան խումբը հրատարակեց իր յայտարարագիրը, որտեղ Հելսինկեան Խորհրդաժողովի նպատակներին աւելացան հետեւեալները.

«Ձգտել, որ Խորհրդային Հայաստանը մտնի Միացեալ Ազգերի Կազմակերպութեան մէջ, լուծելու համար աշխարահացրիւ հայերի ազգային խնդիրները, պայքարել, որ Ղարաբաղը եւ Նախիջեւանը կցւեն Խորհրդային Հայաստանին, պահանջել, որ Հայաստանում բոլոր բնագավառներում օգտագործւի հայ լեզուն»: Մի քանի ամիս անց՝ Հայաստանի Հելսինկեան խմբի բոլոր անդամները ձերբակալւեցին: Խումբը նոր անդամներ չունեցաւ եւ նրա գործունէութիւնը աւարտւեց:

* * *

Ի՞նչ վիճակում են Ախալքալակի հայերը եւ ի՞նչ քաղաքականութիւն է վարում նրանց նկատմամբ Վրաստանի կառավարութիւնը: Այնտեղ ապրող հայերը ունե՞ն արդեօք իրենց հայութիւնը պահպանելու հնարաւորութիւնը:

Ախալքալակում ապրող հայերի վիճակը ոչնչով չի տարբերւում Խորհրդային Սփիւռքի հայութեան ընդհանուր վիճակից: Իսկ այդ վիճակը հետեւեալն է.

Խորհրդային Սփիւռքը զրկւած է ազգային նւազագոյն ձգտում արտայայտելու որեւէ իրաւունքից եւ հնարաւորութիւնից: Նա չի կարող կազմակերպւած ազգային որեւէ կապ ունենալ Խորհրդային Հայաստանի հետ: Խորհրդային Հայաստանի թղթատարական ծառայութեանը արգելւեց «**Հայրենիքի**

Զայն» թերթին բաժանորդագրել խորհրդային Սփիւռքում ապրող ռեւէ հայի, որովհետեւ այդ թերթի մէջ լոյս տեսած յօդւածները եւ տեղեկութիւնները կարող են որոշ ազգային գիտակցութիւն առաջացնել այդ հայերի մէջ։

Խորհրդային Սփիւռքի մէջ հայերը գտնւում են խիստ ճնշման տակ եւ նրանց նկատմամբ նաեւ խտրականութիւն է գործադրւում որպէս քաղաքացիներ։ Օրինակ, այն հայերը, որոնք պահպանում են իրենց ազգանւան վերջաւորութեան «եան»ը եւ անձնագրերի մէջ նշում են, որ ազգութեամբ հայեր են, արժանանում են ստորադաս իրաւունքներով քաղաքացիների վերաբերմունքին։ Խորհրդային Սփիւռքի պայմանները այնպէս են, որ հայապահպանման մասին ոչ մի խօսք կարող է լինել։ Այս պայմանները ստեղծւում են խորհրդային վարչակարգի ընդհանուր մթնոլորտով։

Այդ մթնոլորտից շատ լաւ են օգտւում Վրաստանի եւ Ադրբեջանի ղեկավարները։ Նրանք ծրագրւած կերպով վարում են վրացացման եւ ադրբեջանացման քաղաքականութիւն, սակայն վրացիներին այդ բանը աւելի է յաջողւում, հաշւի առնելով ադրբեջանցիների մահմեդական լինելը։

Վրաստանում ամէն մի հայ իրեն երկրորդ կարգի քաղաքացի է զգում այնքան ժամանակ, քանի դեռ չի փոխել ազգանունը եւ իրեն վրացի չի յայտարարել։ Վրացացման չենթարկւող հայերին պարզապէս դուրս են մղում Վրաստանից։ Վիճակագրական տւեալներ արձանագրելու ժամանակ, յատուկ խմբեր կաշառում, համոզում եւ սպառնում են հայերին, նրանցից պահանջելով, որ վրացի արձանագրւեն։ Այդ քաղաքականութիւնը բխում է նաեւ նրանից, որ Վրաստանում վրացիները միայն բնակչութեան 40 տոկոսն են։ Վրաստանը փոքր կայսրութիւն է, որը իր իշխանութեան տակ է պահում հայերին, աբխազներին, օսետիններին եւ ուրիշներին։

Մի խօսքով, ոչ Վրաստանում, ոչ Ադրբեջանում, ոչ Ռուսաստանում եւ ոչ էլ որեւէ այլ հանրապետութիւնում կարելի է ապրել ազգային կեանքով եւ ազգապահպանման ուղղութեամբ՝ որեւէ քայլ կատարել։

Այս ուղղութեամբ բարձրացող դժգոհութեան ալիքն էլ խեղդւում է իր սաղմի մէջ։

1984

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ Խ. ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Խ. Միութիւնում ամէն մի հրատարակուած տող իր վրայ կրում է պետական կնիք, այսինքն գրւում է կառավարութեան պաշտօնական քաղաքականութեան համաձայն: Հրատարակուած աշխատութիւնների, առաւել եւս հանրագիտարանների մէջ այլախոհութիւն լինել չի կարող: Ուստի այդ պաշտօնական հրատարակութիւններից կարելի է բաւականին յստակ եզրակացութիւններ հանել որեւէ հարցի վերաբերող պաշտօնական քաղաքականութեան մասին:

Նկատի ունենալով պարզել խորհրդային իշխանութիւնների քաղաքականութիւնը Հայկական Հարցի վերաբերեալ, մենք դիմեցինք 1924 թականին հրատարակուած «**Խորհրդային Մեծ Հանրագիտարան**»ին, որը վերահրատարակւեց 1950 թականին, ապա 1970 թականին:

Այս երեք հանրագիտարանները կարելի է անւանել լենինեան եւ խրուշչովեան հանրագիտարաններ: Հայկական Հարցը միայն առաջին հանրագիտարանում ունեցել է յատուկ բաժին, ճիշտ՝ «Հայկական Հարց» անւան տակ եւ երկար տեղ է գրաւում պատմական անդրադարձների եւ մեկնաբանութիւնների առատութեան բերումով:

Սակայն երկրորդ եւ երրորդ հանրագիտարաններում յատուկ բաժին չի յատկացւել «Հայկական Հարց»ին: Առաջին հանրագիտարանի ծաւալուն բացատրութեան փոխարէն, երկրորդում կարելի է հանդիպել այդ Հարցի վերաբերեալ մի փոքր հատուածի «Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետութիւն» բաժնի պատմական մասում: Իսկ երրորդ հանրագիտարանի նոյն բաժնի նոյն մասում՝ Հայկական Հարցի վերաբերեալ հատուածը դեռ աւելի եւս ամփոփ գծերի մէջ է խտացւել:

Արժէ նոյնութեամբ արտատպել երկրորդ եւ երրորդ հանրագիտարանների այս հատուածները եւ նշումներ կատարել նրանց բովանդակութիւնից մեկնելով:

Երկրորդ հանրագիտարանի մէջ, Հայկական Հարցի մասին գրւել է.

«Միջազգային ասպարէզում երկարատեւ դիւանագիտական պայքարներից յետոյ (1912-1914), ռուսական դիւանագիտութեան ջանքերով 1914 թականի յունւարի 25ին թուրքական կառավարութիւնը ստիպւած եղաւ ստորագրել 6 արեւմտեան վիլայեթներում վերափոխումներ կատարելու համաձայնութիւնը: Սակայն այդ վերափոխութիւնները տեղի չունեցան»:

«1914 թականին սկսւած համաշխարհային կայսերապաշտական պատերազմը հայ ժողովրդին բերեց անթիւ աղէտներ: Թուրքիայի կառավարութիւնը

1915-16-ին, իր գերմանացի դաշնակիցների հովանաւորութեամբ ու մասնակցութեամբ իրականացրեց զանգւածային ջարդ եւ գրեթէ ամբողջովին բարբարոսաբար բնաջնջեց արեւմտեան վիլայեթների բնակչութիւնը։

«1915 թւի Ապրիլ ամսին Թուրքիայի կառավարութիւնը իր ռազմա-քաղաքական իշխանութիւններին յղեց մի գաղտնի շրջաբերական, որը առաջարկում էր առանց սեռի ու տարիքի խտրականութեան, ոչնչացնել եւ կամ էլ Արաբիայի անապատները աքսորել հայ բնակչութիւնը։

«Բնաջնջումից խուսափեցին միայն Վանի բնակիչները, որոնք կազմակերպեցին հերոսական ինքնապաշտպանութիւն։ 1915-16 թւականներին թուրքերը սպանեցին մինչեւ մէկ միլիոն հայեր եւ նոյն չափ էլ աքսորւեցին Արաբիայի անապատները, որտեղ նրանց մեծ մասը զոհւեց, իսկ միւս մասը ցրւեց աշխարհի տարբեր ծայրերը։ Աւելի քան 300 հազար հայեր փրկւեցին Ռուսաստանում»։

Երրորդ, այսինքն 1970 հանրագիտարանում գրւած է հետեւեալը.

«Առաջին Համաշխարհային պատերազմին (1914-1918) հայ ժողովուրդը ընկաւ ողբերգական կացութեան մէջ, 1915 թւի Ապրիլ ամսին, թուրքական կառավարութիւնը, որը ցեղասպանական քաղաքականութիւն էր վարում հայերի նկատմամբ, յատուկ հրամանով տեղական իշխանութիւններին կարգադրեց բնաջնջել հայերին։

«Հայերը մեծ զոհեր տւեցին։ 1915-1916 թւականներին Թուրքիայում ոչընչացւեցին աւելի քան 1,5 միլիոն հայեր եւ աւելի քան 600 հազար քշւեցին Միջագետքի անապատները, որտեղ մեծ մասը զոհւեց։ 300 հազար հայեր ապաստան գտան Ռուսաստանում։ Երկրից փախած հայերի մէկ մասը հաստատւեց Մերձաւոր Արեւելքում, Եւրոպայում եւ Ամերիկայում»։

Եթէ Հայկական Հարցին վերաբերող այս հանրագիտարանների մեկնաբանութիւնները համեմատենք Հայաստանի Հանրագիտարանում տրւած բացատրութիւնների հետ, ապա կարելի է յանգել հետեւեալ եզրակացութեանը.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՈԼՈՐՏԻՑ ԿԱՄԱՑ-ԿԱՄԱՑ ՏԵՂԱՓՈԽՒԵՑ ՀԱՅԱՍՏԱՆ, ՈՐՏԵՂ ԴԱՐՁԱՒ ԶՈՒՏ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐՑ։

Այժմ այդ Հարցով Հայաստանում զբաղւում են գրողները, պատմաբանները, արուեստագէտները, բայց ոչ քաղաքական գործիչները, որոնք Հայաստանում բացակայում են։ Հէնց դրա համար էլ հարցը տեղափոխւեց Հայաստան։

Հ.Հ.Հ.
1985

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Է. Յովհաննիսեան

Հայկական պետականութեան ամրապնդումը, որը Հ.Յ.Դ.ի քաղաքական ռազմավարութեան գլխաւոր նպատակներից մէկն է, կարող է իրականացւել երկու ճանապարհով, որոնցից մէկը սնւում է ներքին, իսկ միւսը արտաքին աղբիւրներից: Այսինքն առաջին ճանապարհի վրայ օգտագործւում են զուտ հայկական ուժերը ու կարողութիւնները, իսկ երկրորդ ճանապարհը անցնում է ուրիշ պետութիւնների ու կազմակերպութիւնների միջով:

Այս երկու ճանապարհները անմիջականօրէն կապւած են Հայաստանի կառավարութեան ներքին և արտաքին քաղաքականութիւնների հետ և այս ճանապարհների ընտրութեան հարցում ընդդիմութիւնը այնքանով կարող է մասնակից լինել, որքանով որ ի վիճակի լինի զսպել իշխանութիւնների սխալ քայլերը, կամ՝ աւելի ճիշտ՝ որքանով որ իշխանութիւնները հաշւի են նստում ընդդիմութեան հետ:

Այնուամենայնիւ, ընդդիմութիւնը և յատկապէս Հ.Յ.Դաշնակցութիւնը կարող են ունենալ նաեւ որոշ ինքնուրոյն նշանակութիւն առաջին ճանապարհի վրայ: Ընդդիմութիւնը կարող է տարբեր ֆոնդերի, կազմակերպութիւնների ու միջոցառումների ճամբով իր ներդրումը կատարել Հայաստանի պետականութիւնը ամրապնդելու գործում, շրջանցելով Հայաստանի կառավարութիւնը, որը կամ ի վիճակի չէ և կամ էլ չի ցանկանում անել: Բայց պէտք է ասել, որ այդ ճանապարհով, այն էլ Հայաստանի ներկայ քաղաքական մթնոլորտում, հազիւ թէ շատ բան հնարաւոր լինի անել: Եւ բացի դրանից, ներքին, զուտ հայկական կարողութիւնները, նոյնիսկ իշխանութիւնների բարենպաստ քաղաքական պայմաններում, շատ էլ մեծ չեն: Էլ չխօսենք այն մասին, որ քաղաքական պայմանները ոչ միայն բարենպաստ չեն, այլեւ՝ ճիշտ հակառակը, զգալիօրէն նւազեցնում են հայկական կարողութիւնները:

Շատ աւելի հզօր են արտաքին աղբիւրները, այսինքն այն ուժերը, որոնք սեփական շահերից ելնելով շահագրգռւած են Հայաստանի պետականութեան ամրապնդման մէջ: Սակայն այս բնագաւառում, այսինքն՝ երկրորդ ճանապարհի վրայ, ընդդիմութիւնը իր ընդդիմադիր դիրքերից ընդհանրապէս անելիք չունի, քանզի Հայաստանի արտաքին յարաբերութիւնների ղեկը ամբողջովին գտնւում է Հայաստանի կառավարութեան ձեռքում և Հայաստանի պետութեան ամրապնդման մէջ շահագրգռւած պետութիւնների որոնումը և

նըրանց հետ յարաբերութիւններ ճշտելը կազմում է Հայաստանի արտաքին քաղաքականութեան առանցքը:

Այստեղ ընդդիմադիր ուժերը կարող են երկու տեսակ մասնակցութիւն բերել Հայաստանի պետականութեան ամրապնդման գործում, նրանք կարող են դառնալ կա՛մ կառավարութեան գործակալը և կամ էլ նրա սուր քննադատը: Ժողովրդավարական երկիրների և հէնց մեր փորձը ցոյց տուեց, որ քննադատի ճանապարհը աւելի օգտակար է և աւելի է համապատասխանում ընդդիմադիր կազմակերպութեան առաքելութեանը:

Անցած տասնամեակի ընթացքում մենք բազմիցս քննադատել ենք իշխանութիւններին՝ նրանց այս կամ այն սխալի համար և այժմ պարծանքով կարող ենք ասել, որ մեր քննադատութիւնը տեղ է հասել և նրանք ուղղել են իրենց սխալները, անշուշտ առանց մեր անունը յիշատակելու: Ոմանք նոյնիսկ մեզ ասում էին, թէ «մի՛ քննադատէք, նրանց խելք մի սովորեցրէք, որովհետեւ ձեր անունը չտալով անում են ինչ դուք նրանց ասում էք»: Բայց մի՞թէ հէնց դա չէ մեր ուզածը: Եթէ կառավարութիւնը ճիշտ քայլեր է կատարում, ի՞նչ նշանակութիւն ունի, թէ որտեղի՞ց նա ձեռք բերեց այդ ճշմարտութիւնը: Երանի թէ Հայաստանի իշխանութիւնները միշտ մեր ճշմարտութիւնները որդեգրէին և իրենց անունով հրապարակ իջեցնէին:

Այս իմաստով հետաքրքրական է Ռուբէն Յակոբեանի մի յայտարարութիւնը, որը նա արեց Մոսկւայում, Ռուսաստան-Հայաստան փոխ-յարաբերութիւնների վերաբերեալ: Յակոբեանը հասկացնել տուեց, որ եթէ այդ յարաբերութիւնների մէջ որոշ սառնութիւն է արձանագրւում, ապա դրանում մեղք ունի նաեւ Հայաստանի կառավարութիւնը: Այս յայտարարութիւնը շատ կարեւոր է, քանզի Ռուսաստանը այն հզօր պետութիւններից մէկն է, որը Հայաստանի բնական դաշնակիցն է: Եթէ Հայաստանի արտաքին քաղաքականութիւնը այնպիսին լինի, որ Ռուսաստանը այլեւս շահագրգռուած չլինի Հայաստանի պետականութեան ամրապնդման մէջ, ապա դա մեծ կորուստ կը լինի Հայաստանի համար:

Տեսնենք, թէ ինչպիսի՛ փոխ-յարաբերութիւնների մէջ է Ռուսաստանը Անդրկովկասի երկրների և յատկապէս Հայաստանի հետ:

Այդ յարաբերութիւնների մասին աղմկում են թերթերը, խօսում են դիւանագէտները և նոյնիսկ որոշումներ են ընդունւում կառավարական և օրէնսդրական մարմինների մակարդակի վրայ: Սակայն այս քարոզչական աղմուկը թաքցնում է գործնական քայլերը ու մտահոգութիւնները, որոնց մասին չեն խօսում բացայայտօրէն և որոնց մասին գրում են միայն յատուկ շրջաբերականներում:

Ռուսաստանի և Անդրկովկասի փոխ-յարաբերութիւնների մասին նախ աղմկեց զօրավար Ռոխլինը, յայտարարելով, թէ Ռուսաստանը դուրս է բերում Անդրկովկասից իր զօրքերը, որովհետեւ այնտեղ զօրք պահելը Ռուսաստանին ձեռնատու չէ: Յետոյ Պետական Դուման յայտնեց նոյն կարծիքը, յետոյ աղմուկ բարձրացաւ Հայաստանին զէնք վաճառելու շուրջ: Հայաստանը հերքեց ու իր հերթին մեղադրեց Ադրբեջանին: Պաշտպանութեան նախարար Ռոդիոնովը հաստատեց, որ Հայաստանին զէնք տրւել է: Ալիեւը պահանջեց, որ Ռուսաստանը յետ վերցնի Հայաստանից իր զէնքերը, որոնք իբր թէ Գրաչովի կողմից տրւել է Հայաստանին առանց Ռուսաստանի կառավարութեան թոյլտուութեան: Ժիրինովսկին հաստատեց Հայաստանին զէնք տալու անհրաժեշտութիւնը: Այս ամէնը, սակայն քարոզչական աղմուկ է: Իրականութիւնը կարելի է գտնել Ռուսաստանի արտաքին գործերի նախարարութեան ներկայացուցիչ Ի. Սեւաստիանովի տեսակէտների մէջ, որոնք ասւել են հայ դիւանագէտներին, ապա նրանց կողմից փոխանցւել Հայաստանի արտաքին գործերի նախարար Ա. Արզումանեանին և նրա տեղակալ պր. Վ. Օսկանեանին:

Սեւաստիանովի պատասխանատւութեան ոլորտն ընդգրկում է Անդրկովկասի տարածքաշրջանային հիմնահարցերը, ինչպէս նաեւ Ռուսաստանի Դաշնութեան և Անդրկովկասի հանրապետութիւնների յարաբերութիւնները:

Հայ դիւանագէտների հետ զրուցելիս, Ադրբեջանի վերաբերեալ Սեւաստիանովը արտայայտեց հետեւեալ տեսակէտները:

Ռուսաստանի արտաքին գործոց նախարարութիւնում պատրաստւում է փաստաթղթերի ծրար՝ Ադրբեջանի հետ երկկողմանի յարաբերութիւններին նոր որակ հաղորդելու նպատակով: Պատրաստւում է Չերնոմիրդինի պաշտօնական այցը Ադրբեջան: Յատուկ աշխատանք է տարւում հարթելու Ադրբեջանի և Ռուսաստանի միջեւ գոյութիւն ունեցող տարակարծութիւնները Կասպից ծովի հետ կապւած տարբեր խնդիրների շուրջ: Ադրբեջանը ձգտում է միջազգային կազմակերպութիւնների ճամբով պաշտօնականացնել իր չհաշւարկւած սպառազինումը և Ռուսաստանը յատուկ ուշադրութեամբ է հետեւում այդ իրադարձութիւնների զարգացմանը: Ցանկալի է, որ Հայաստանում ճիշտ ըմբռնեն Ռուսաստանի և Ադրբեջանի մերձեցման միտումը, քանի որ Կովկասի կարեւորութիւնը թոյլ չի տալիս Ռուսաստանին սահմանափակւել միայն ճօճանակի տարբերակի կիրառմամբ Հայաստանի և Ադրբեջանի նկատմամբ:

Վրաստանի վերաբերեալ Սեւաստիանովը յայտնեց հետեւեալ կարծիքը.

-Վրաստանի մօտեցումները Ռուսաստանին, տարբեր հարցերում, շարունակում են մնալ խիստ բացասական: Վրաստանում նոյնիսկ անառողջ հետաքրքրութիւն է ցուցաբերւում ՆԱՏՕի ընդլայնման հետ առընչւող հարցե-

րում: Եթէ վրացական կողմը շարունակի պնդել, որ Ռուսաստանը դուրս բերի իր զօրքերը Վրաստանից, ապա ամենայն հաւանականութեամբ Ռուսաստանը կը բաւարարի վրացիների պահանջը, սակայն ոչ մի ստորաբաժանում դուրս չի բերւի Աղրբեջանից: Զօրքերը դուրս բերելուց յետոյ աբխազների և վրացիների միջեւ անխուսափելիօրէն կը վերսկսուի ռազմական գործողութիւնների նոր շրջան: Մոսկւայում պատրաստւում են տարբերակներ Վրաստանի հակառուսական ալիքը զսպելու համար, մասնաւորապէս նախատեսւում է, որպէս առաջին քայլ, Վրաստանի և Ռուսաստանի միջեւ սահմանել արտօնագրերի կարգ՝ բարդացնելով Ռուսաստանում բնակւող վրացիների մուտքը Վրաստան:

Մեւաստանովը նշեց նաեւ, որ պատրաստւում է նոր ծրար Հայաստանի հետ յարաբերութիւնների վերաբերեալ: Կարելի էր սպասել, որ այդ փաթեթը շատ աւելի բարեկամական պիտի լինի և պիտի ունենայ շատ աւելի հարուստ բովանդակութիւն, քանզի Հայաստանի և Ռուսաստանի բարեկամութիւնը շատ աւելի բնական է և շատ աւելի պայմանաւորւած ընդհանուր շահերով: Բայց այն, ինչ առայժմ յաջողւեց պարզել, մեծ ոգեւորութիւն չի առաջացնում:

Ռուսաստանի բարձրաստիճան դիւանագէտ Վ.Ս., որը խնդրեց չհրապարակել իր անունը, այն տեսակէտը յայտնեց, որ հայ-ռուսական յարաբերութիւնների ոլորտում նախատեսւում է.

1.- Հայաստանի Հանրապետութեան և Ռուսաստանի Դաշնութեան արտաքին գործերի նախարարութիւնների միջեւ փոխ-յարաբերութիւնների որակական բարելաւում:

2.- Պարբերաբար օգտագործել երկկողմանի քաղաքական խորհրդակցութիւնների աշխատակարգը:

3.- Համագործակցել Ռուսաստանի արտաքին գործերի նախարարութեան հետ համաեւրոպական քաղաքականութեան ոլորտում և, ընդհանրապէս, օգտակար կը լինէր, եթէ Հ.Հ. դեսպանատունը Ռուսաստանում իր գործունէութիւնը չսահմանափակէր միայն երկկողմանի յարաբերութիւնների բնագաւառով, այլ կարողանար զբաղւել աւելի ընդարձակ բնոյթ ունեցող խնդիրներով:

4.- Համապատասխանեցնել Մոսկւայում Հ.Հ. դեսպանութեան քաղաքական հարցերով պատասխանատու անձնակազմի աշխատանքների որակը երկու երկրների միջեւ գոյութիւն ունեցող յարաբերութիւնների մակարդակին:

5.- Հայաստանի արտաքին գործերի նախարարութիւնը և Հայաստանի դեսպանատունը Մոսկւայում կարող են օգտագործել Ռուսաստանի արտաքին գործերի նախարարութեան տեղեկատւական հնարաւորութիւնները:

6.- Ռուսաստանի արտաքին գործերի նախարարութիւնը, հայկական կողմի դիմումի համաձայն, կարող է պարբերաբար դիւանագէտներ գործուղել

Երեւան՝ արտաքին քաղաքականութեան երկուստեք հետաքրքրութիւն ներկայացնող ուղղութիւնների շուրջ խորհրդակցութիւններ անցկացնելու համար։

Այս առաջարկութիւնների բնոյթը այնպիսի տպաւորութիւն է ստեղծում, որ Ռուսաստանը և Հայաստանը պատրաստւում են կատարել իրենց առաջին քայլերը բարեկամութիւն հաստատելու ուղղութեամբ և ամենեւին էլ չի երեւում, որ այս երկու պետութիւնները ունեն միասնական շահեր և այդ շահերը պաշտպանելու միասնական ձգտում և ծրագիր։ Ինչո՞ւ այդ բնական բարեկամութիւնը, որը արդէն վաղուց պէտք է մանրամասնօրէն մշակւած լինէր, պիտի նոր սկսւի, այն էլ բաւականին մակերեսային ձեւով։ Ինչո՞ւ նախաձեռնութիւնը պիտի գայ Ռուսաստանի կողմից։ Մի՞թէ նրան մենք աւելի պէտք ենք, քան նա մեզ։

Այսօր արդէն պարզ է, որ Ռուսաստանի արտաքին քաղաքականութեան մէջ ամենաչլուծւած և Ռուսաստանին ամենամեծ մտահոգութեան պատճառող հարցը ՆԱՏՕի ծաւալման ծրագիրն է, որի հետ Ռուսաստանի ղեկավարութիւնը բոլոր մակարդակների վրայ կտրականապէս չի ուզում համաձայնւել։ Վերջերս **«Իզւեստիա»** թերթում (14 Մարտ) Ալեքսանդր Լեբեդը մանրամասնօրէն անդրադարձաւ այդ տրամադրութիւններին՝ նշելով, որ չի կարելի անցնել ինքնապաշտպանութեան սահմանները, որովհետեւ այդ դէպքում ինքնապաշտպանութիւնը դառնում է յարձակում։ «Սառը պատերազմը Արեւմուտքը շահեց,- գրում է Լեբեդը,- սակայն չի կարելի նսեմացնել պարտւող կողմը ու չի կարելի նրան ոչնչացնել»։ Դա կարող է նոր պատերազմի պատճառ դառնալ, առնւազն կարող է պատերազմ սկսելու ցանկութիւն առաջացնել։

Բացի դրանից, Լեբեդը արդարացիօրէն նշում է, որ ՆԱՏՕի ծաւալումը կարող է խախտել գոյութիւն ունեցող հաւասարակշռութիւնը և ջնջել մինչեւ այսօր կնքւած պայմանագրերի մեծ մասը։ Մանրամասնօրէն վերլուծութեան ենթարկելով ստեղծւած կացութիւնը, Լեբեդը այն տեսակէտն է յայտնում, որ Ռուսաստանը երբեք չի համաձայնւի ՆԱՏՕի ծաւալման ծրագրի հետ։ Դժւար է համաձայնւել Լեբեդի այս տեսակէտի հետ, որովհետեւ դեռեւս պարզ չէ, թէ Արեւմուտքը ի՞նչ կ՚առաջարկէ Ռուսաստանին՝ ՆԱՏՕի ծաւալման դիմաց, բայց մէկ բան պարզ է՝ Ռուսաստանը առայժմ կտրականապէս մերժում է ՆԱՏՕի ծաւալման ծրագիրը։

Տեսնենք, թէ այդ հարցում նոյնքան վճռակա՞ն է Ռուսաստանի «բարեկամ» Հայաստանի Հանրապետութիւնը։

Այս տարւայ սկզբին Հայաստանի դիւանագիտական ծառայութիւնները ստացան հետեւեալ շրջաբերականը.

ՅՈՒՇԱԳԻՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՆԱՏՕԻ ՄԻՋԵՒ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՈՒ ՆԱՏՕԻ ԳԼԽԱՒՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Խ. ՍՈԼԱՆԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՅՑԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

1989-1991 թթ. աշխարհում տեղի ունեցած քաղաքական փոփոխութիւնները սկիզբ դրեցին ՆԱՏՕի վերափոխմանը: Դաշինքը որդեգրեց նոր ռազմավարութիւն, որը նշանաւորեց աշխոյժ պաշտպանութիւնից և զսպման քաղաքականութիւնից անցումն Արեւելեան Եւրոպայի պետութիւնների հետ եկխօսութեանը և համագործակցութեանը:

Հիւսիս-Ատլանտեան Համագործակցութեան Խորհրդի (NACC/Հ.Ա.Հ.Խ.) ստեղծումը, որի շրջանակներում սկսեցին համագործակցել ՆԱՏՕի և նախկին - Վարշաւեան Դաշինքի անդամ-պետութիւնները, հանդիսացաւ Դաշինքի նոր քաղաքականութեան դրսեւորում: Հ.Ա.Հ.Խ.ն կոչւած էր լրացնելու Խ.Ա.Հ.Մ. փլուզումից յետոյ Արեւելեան Եւրոպայում առաջացած անվտանգութեան ապահովման բացը: Ներկայումս Հ.Ա.Հ.Խ.ի անդամ են 40 պետութիւն՝ այդ թւում ՆԱՏՕի 16 անդամ-պետութիւնները, ինչպէս նաեւ Ա.Պ.Հ. ու Արեւելեան Եւրոպայի երկրները (Հ.Հ. անդամակցում է 1992թ. Մարտի 10ից):

1994թ. յունուարին ՆԱՏՕն առաջարկեց «Գործընկերութիւն յանուն խաղաղութեան» (Partnership for Peace/PFP/Գ.Յ.Խ.) ծրագիրը, որ ուղղուած էր Արեւելեան Եւրոպայի երկրների, ինչպէս նաեւ նախկին Խ.Ա.Հ.Մ.ի հանրապետութիւնների հետ համագործակցութեան խորացմանը՝ ռազմական, քաղաքական, գիտական և այլ ոլորտներում, ընդգրկելով խաղաղարար գործողութիւնների նախապատրաստումը, ծրագրաւորումն ու իրագործումը:

1994թ. հոկտեմբերի 5ին Հայաստանի Հանրապետութիւնը միացել է ՆԱՏՕի Գ.Յ.Խ. ծրագրին՝ ստորագրելով «Գործունէութեան շրջանակները սահմանող փաստաթուղթը» (Framework Document): 1996թ. ապրիլի 9ին Հայաստանի Հանրապետութիւնը ՆԱՏՕի ղեկավարութեանը տրամադրեց իր «Ներկայացման փաստաթուղթը» (Presentation Document), որն արձանագրեց ՆԱՏՕի և Հ.Հ.ի միջեւ համագործակցութեան բնագաւառներն ու ծաւալները: Այդ առումով հետաքրքրական են ճանաչել ռազմաքաղաքական, գիտական, յատուկ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանութեան ոլորտները: Փաստաթուղթը հիմնարար նշանակութիւն ունի նաեւ եւրոպական կառոյցներում Հայաստանի մասնակցութիւնը համաչափելու համար: 1995թ. յունուարի 13ին Հայաստանի Հանրապետութեան և ՆԱՏՕի միջեւ ստորագրւել է «Անվտանգութեան պայմանա-

գիր» (Security Agreement): Այն սահմանում է Գ.Յ.Խ. ծրագրի շրջանակներում փակ փաստաթղթերի փոխանակման ընթացակարգերը և փոխադարձ պարտաւորութիւնները այդ բնագաւառում: ՆԱՏՕին ներկայացել են Հիւսիս-Ատլանտեան Խորհրդի (NAC) կողմից հաստատել է նաեւ Հ.Հ.ի և ՆԱՏՕի միջեւ 1996թ. համար «Անհատական գործընկերութեան ծրագիր» (IPP):

1995թ. կայացան ՆԱՏՕի բարձրաստիճան պատւիրակութիւնների այցերը Հայաստան՝ համապատասխանաբար ՆԱՏՕի միացեալ զինւած ուժերի գլխաւոր հրամանատարի առաջին տեղակալ զօրավար Ջ. Մակքենզիի և բրիգատային զօրավար Ա. Արենայի գլխաւորութեամբ: Պատւիրակները հանդիպումներ ունեցան Հ.Հ. Նախագահի, Վարչապետի, արտաքին գործոց և պաշտպանութեան նախարարների, Զինւած Ուժերի Գլխաւոր Շտաբի պետի հետ:

1996թ. ապրիլի 23ին Հայաստանի Հանրապետութեան պատւիրակութիւնը, Հ.Հ. Նախագահի ղեկավարութեամբ, այցելեց ՆԱՏՕի շտաբ-կայան: Հանդիպումներ կայացան ՆԱՏՕի գլխաւոր քարտուղար Խ. Սոլանայի և մի շարք պատասխանատու պաշտօնեաների հետ: Քննարկուեցին փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող հարցեր: Հ.Հ. Նախագահը հրաւիրեց պր. Խ. Սոլանային այցելելու Հայաստան:

1997թ. փետրուարի 12-13ին Հայաստան այցելեց ՆԱՏՕի պատւիրակութիւնը՝ կազմակերպութեան գլխաւոր քարտուղար Խ. Սոլանայի ղեկավարութեամբ: ՆԱՏՕի գլխաւոր քարտուղարը հանդիպումներ ունեցաւ Հ.Հ. Նախագահի, Ազգային Ժողովի նախագահի, Ա.Գ. և պաշտպանութեան նախարարների հետ, ինչպէս նաեւ ելոյթ ունեցաւ Հայաստանի ամերիկեան համալսարանում: Այցի վերջում կայացաւ Հ.Հ. Ա.Գ. նախարար պր. Ա. Արզումանեանի ու պր. Խ. Սոլանայի մամուլի համատեղ ասուլիս:

Բարեկամական մթնոլորտում կայացած հանդիպումների ընթացքում տեսակէտներ փոխանակուեցին նոր ռազմաքաղաքական պայմաններում երկկողմ յարաբերութիւնների զարգացման հեռանկարների, ինչպէս նաեւ տարածաշրջանային անվտանգութեան խնդիրների, այդ թւում նաեւ Լ.Ղ. հակամարտութեան վերաբերեալ:

Մասնաւորապէս նշուեց, որ Հայաստանը բարձր է գնահատում ՆԱՏՕի հետ ամրապնդող կապերը՝ դիտելով դրանք համաեւրոպական այլ կառոյցների (Ե.Ս., Ե.Ա.Հ.Կ., Եւրախորհուրդ) հետ յարաբերութիւնների համատեքստում: Այդ առումով կարեւորուեց Հայաստանի աճող մասնակցութիւնը Գ.Յ.Խ. ծրագրում: Ընդգծուեց, որ աւարտին է մօտենում 1997թ. համար Հ.Հ. Գործընկերութեան անհատական ծրագրի մշակումը: Այն ներառում է համագործակցութեան շուրջ 10 բնագաւառ, նախկին 4-ի փոխարէն: Հայաստանը դրականօրէն է գնահատում

համագործակցութեան քաղաքական և ռազմական ոլորտներն ընդգրկող Ատլանտեան Գործընկերութեան Խորհրդի (APC) ստեղծման գաղափարը:

Գլխաւոր քարտուղարն ընդգծեց ՆԱՏՕ-Հայաստան կայուն յարաբերութիւնների կարեւորութիւնը: Պր. Սոլանան շեշտեց նաեւ, որ ՆԱՏՕի ընդլայնումը նպատակ չունի մեկուսացնելու որեւէ պետութիւն: Նա յոյս յայտնեց, որ մինչեւ 1997թ. յուլիսին կայանալիք ՆԱՏՕի Մատրիտեան գագաթնաժողովը կը յաջողի համաձայնութեան գալ Ռուսաստանի հետ: Ի պատասխան նշուեց, որ Հայաստանի համար առաւել նպաստաւոր կը լինէր, եթէ ՆԱՏՕի ընդլայնումը զուգակցւէր անվտանգութեան այնպիսի համակարգի կերտմամբ, ուր հաշուի կ'առնուի Եւրօ-Ատլանտեան տարածաշրջանի բոլոր պետութիւնների շահերը: Հայաստանը պաշտպանում է երկու սկզբունք՝ 1) Իւրաքանչիւր երկիր իրաւունք ունի որոշելու իր անվտանգութեան ապահովման եղանակը, և 2) որեւէ երկրի անվտանգութեան ապահովումը չպէտք է լուծի մի այլ երկրի անվտանգութեան հաշւին: Դաշինքի անդամները հաւատում են, որ Ե.Ա.Հ.Կ. շրջանակներում մշակւող «21րդ դարի անվտանգութեան բնորդը» կը ստեղծի ապահովութեան պայմաններ ներգրաւած բոլոր պետութիւնների համար: Բանակցութիւններում արտայայտուեց այն միասնական կարծիքը, որ համաեւրոպական անվտանգութեան համակարգը պէտք է լինի ընդհանուր և զերծ որեւէ բաժանարար գծերից: Դա վերաբերւում է նաեւ Անդրկովկասեան տարածաշրջանին: Վերջինս անվտանգութեան տեսակէտից կարեւոր տեղ է զբաղեցնում ՆԱՏՕի քաղաքականութեան մէջ:

Հայկական կողմն այդ առումով շեշտադրեց Լեռնային Ղարաբաղի անվտանգութեան երաշխաւորման անհրաժեշտութիւնը: Արդիւնքում եկան համաձայնութեան, որ Լ.Ղ. խնդրի և տարածաշրջանի այլ հակասութիւնների խաղաղ կարգաւորումը կը նպաստի ներգրաւած կողմերի տնտեսական և ընկերային զարգացմանը, ինչպէս նաեւ տարածաշրջանում կայունութեան հաստատմանը, ինչն իր աւանդը կ'ունենայ համաեւրոպական անվտանգութեան համակարգի ստեղծման գործում:

Բանակցութիւնների ընթացքում քննարկուեց նաեւ Եւրոպայում Սովորական զինւած ուժերի (Ե.Ս.Զ.Ու./CFE Treaty) մասին պայմանագրին առընչւող խնդիրները: Զրուցակիցները համաձայնուեցին փոփոխւող պայմաններին Պայմանագրի յարմարեցման կարեւորութեան վերաբերեալ:

Անդրադառնալով հայ-թուրքական յարաբերութիւններին՝ հայկական կողմը մատնանշեց այն, որ լինելով ՆԱՏՕին սահմանակից երկիր, մեր պետութիւնը դեռեւս բնականոն յարաբերութիւններ չունի Թուրքիայի հետ: Վերջինիս անհանդուրժողական կեցւածքը բացասաբար է ազդում Հ.Ա.Հ.Խ./Գ.Հ.Խ. շրջանակ-

ներում Հայաստանի մասնակցութեան վրայ, ինչպէս նաեւ խոչընդոտում է տարածաշրջանում կայունութեան հաստատմանը:

Ամփոփելով Հայաստան կատարած իր այցը՝ պր. Սոլանան գնահատեց այն որպէս՝ շատ արդիւնաւէտ: Նա յայտնեց, որ տպաւորուած է տնտեսական բարեփոխումների ասպարէզում Հայաստանի նուաճումներով: Այցը հնարաւորութիւն տուեց Գլխաւոր քարտուղարին անմիջականօրէն ծանօթանալու Հայաստանի մօտեցումներին երկուստեք հետաքրքրութիւն ունեցող խնդիրների վերաբերեալ և աւելի լաւ պատկերացնել տարածաշրջանում առկայ իրավիճակը:

Այսպիսով՝ մենք տեսնում ենք, որ Ռուսաստանը Հայաստանի հաւատարմութեան հարցում մտահոգւելու պատճառներ ունի և ինչո՞ւ զարմանալ, որ նա տալիս է Հայաստանին ճիշտ այնքան, որքան որ ստանում է նրանից: Ռուսաստանի ամենագլխաւոր մտահոգութիւնը այն է, որ նա չունի այն համոզւածութիւնը, որ Հայաստանը իր դաշնակիցն է և անկարելի է, որ Հայաստանը որեւէ քաղաքական կամ տնտեսական հարցում հակառակի Ռուսաստանի դիրքորոշումներին: Այդպէս են վարւում շատ ազատ ու շատ անկախ Ֆրանսիան, Անգլիան, Բելգիան ու շատ ուրիշ երկրներ, որոնք Միացեալ Նահանգների և Եւրոպական համայնքի դաշնակիցներ են:

Նոյնիսկ Թուրքիան, որ Էրբականի ճամբով ջանում է ցոյց տալ, որ կարող է լքել Արեւմտեան տնտեսաքաղաքական դաշինքը, զուտ քարոզչական նպատակներ է հետապնդում և ոչ մէկը չի կասկածում, որ Թուրքիան կը մնայ հաւատարիմ իր աւանդական դաշնակիցներին, իսկ եթէ գտնւեն ուժեր, որոնք կը փորձեն դուրս բերել Թուրքիան իր մնայուն դաշնակիցների ազդեցութեան գօտուց, ապա երկրի ներսում կը գտնւեն ուժեր, որոնք միշտ կան և որոնք միշտ կը շտկեն կառավարութեան սխալները:

Դժբախտաբար, Հայաստանում հաւատարմութիւնը մնայուն ու բնական դաշնակիցների նկատմամբ դիտւում է որպէս ազատութեան կորուստ և առաջ է քաշւում այն հանրայայտ թեզը, թէ գոյութիւն չունեն մնայուն դաշնակիցներ, մնայունը միայն շահերն են: Սա ասւած է ոչ թէ Հայաստանի համար, որի շահերը անշուշտ մնայուն են, բայց նոյնքան մնայուն են նրա դաշնակիցները, որոնք դաշնակից են դարձել այդ մնայուն շահերից ելնելով:

Ռուսաստանը նոյնիսկ համոզւած չէ, որ Հայաստանում կան ազդեցիկ ուժեր, որոնք ճակատագրական պահերին լրջօրէն կը պայքարեն հակառուսական տրամադրութիւնների դէմ ու ի վիճակի կը լինեն խեղդելու այդ հակահայկական տրամադրութիւնները: Էլ ինչո՞ւ զարմանալ, որ Ռուսաստանը Անդրկովկասի հետ իր յարաբերութիւնների մէջ չի նկատում Հայաստանը իր

գլխաւոր ու հաւատարիմ դաշնակիցը և, օրինակ, Լիսաբոնում քւէարկում է Ադրբեջանի տարածական ամբողջութեան օգտին։

Տարօրինակ կերպով, մեր դիւանագիտական ծառայութիւնները այդ բանը չեն ներում Ռուսաստանին, բայց սիրով ներում են մնացած բոլոր արեւմտեան պետութիւններին։ Մինչդեռ յայտնի է, որ Ամերիկայի Միացեալ Նահանգները այնքանով Հայաստանի բարեկամը կը նկատուեն, որքանով որ այդ բարեկամութիւնը չի խանգարում ու չի հակասում Ադրբեջանի, ՆԱՏՕի, Թուրքիայի և նրա այլ դաշնակիցների շահերին։

Ինքը իրեն աշխարհի ժողովրդավարութեան պաշտպան հռչակող Մ. Նահանգների կառավարութիւնը մատը-մատին չխփեց Հայաստանի անօրինակ իշխանութիւններին քննադատելու և նրանց հետ բանակցութիւններից հրաժարւելու ուղղութեամբ։ Մինչդեռ յայտնի է, որ նրանց փոքր ինչ քննադատութիւնը մեծ շփոթի մէջ էր գցում Հայաստանի իշխանութիւններին։ Ահա թէ ինչո՛ւ այս պայմաններում Հայաստանի պետականութեան ամրապնդման հարցում անհրաժեշտ է երկրորդ ճանապարհի ընտրութիւնը, այսինքն՝ իշխանութիւններին խիստ քննադատելու ճանապարհը, որը անհրաժեշտ է նաեւ այն բանի համար, որ արտաքին աշխարհը հասկանայ, թէ Հայաստանում իշխանութիւնները միակ քաղաքական ուժը և ժողովրդի ձգտումների արտայայտիչները չեն։

1985

Կ. ԴԵՄԻՐՃԵԱՆԻ ԲԱՑԱՅԱՅՏ ՀԱԿԱԳՈՐԲԱՀԵԻԵԱՆ ԴԻՐՔԸ

Է. Յովհաննիսեան

Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրճեանի ստալինեան ժամանակներին վայել կարծր ղեկավարութեան կողմնակից եւ գորբաչեւեան քաղաքականութեան հակառակորդ լինելու մասին մինչեւ վերջին ժամանակներս կարելի էր կռահել անուղղակի աղբիւրներից, սակայն Կենտկոմի վերջին լիագումար նիստում արտասանած իր ելոյթում՝ Կարէն Դեմիրճեանը այդ մասին յայտարարեց բացայայտօրէն:

Գորբաչեւի քաղաքականութիւնը դեռեւս գտնւում է հասարակական մտածելակերպը փոխելու փուլի մէջ, առանց որի անկարելի է այդ քաղաքականութեան իրականացումը: Ժողովրդի մասնակցութիւնը երկրի հրատապ հարցերի լուծման մէջ, այսինքն՝ ժողովրդավարութիւնը, հրապարակայնութիւնը, անցեալ սխալների քննադատութիւնը, պատմական իրադարձութիւնների վերագնահատումը, կառավարութեան ու դատական մարմինների նկատմամբ վստահութեան վերականգնումը, ղեկավարներին կաշառքով սիրաշահելու սովորութեան վերացումը, արտասահմանի եւ արտասահմանցիների հետ ազատ շփւելու իրաւունքի վերականգնումը, հանրաքւէների անցկացումը եւ քաղաքակրթութեան այլ սկզբունքների վերահաստատումը՝ գորբաչեւեան քաղաքականութեան հիմնաքարերն են: Գորբաչեւը եւ նրա կողմնակիցները հասկացել են, որ առանց այս սկզբունքներին՝ անկարելի է երկիրը դուրս բերել տնտեսական, հասարակական ու քաղաքական լճացումից:

Բայց այս ամէնը պէտք է իրականացնեն համապատասխան մտածելակերպ ունեցող մարդիկ: Խորհրդային Միութեան նախկին ղեկավարների մտածելակերպը դժւար է փոխել, նախ որովհետեւ նրանք չեն անցել ժողովրդավարութեան դպրոցը եւ չեն պատկերացնում, որ ժողովրդի հետ պէտք է հաշւի նստել, ապա որովհետեւ չեն ցանկանում զրկւել իրենց բացարձակ իշխանութիւնից: Կացութիւնը շտկելու համար Գորբաչեւը ընտրեց երկու ճանապարհ: Առաջին հերթին նա պաշտօնազրկեց ամենայամառներին, իսկ նրանց դէմ, ումից չկարողացաւ ազատւել, լարեց ժողովրդին: Հայաստանում տեղի չունեցաւ ո՛չ առաջինը եւ ո՛չ էլ երկրորդը: Բայց այսօր արդէն պարզ է, որ երկրորդը տեղի չունեցաւ առաջինի պատճառով:Հայաստանի ղեկավարութիւնը շարունակեց փակ պահել բերանը եւ ժողովուրդը, հաւատարիմ խորհրդային աւանդութեանը, լռեց:

Ուրիշ ինչո՞վ կարելի է բացատրել այն, որ երբ Դեմիրճեանը իր ելոյթում քննադատեց Հայաստանի գրեթէ ամբողջ ղեկավարութիւնը, այդ թւում նաեւ իրեն, ոչ մէկը նրան չպատասխանեց: Լուռ մնաց նաեւ աշխարհահռչակ գիտնական ակադեմիկոս Համբարձումեանը, երբ Դեմիրճեանը քննադատեց Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիան:

Կամ՝ վերցնենք Դեմիրճեանի հետեւեալ արտայայտութիւնը. - « **Հետեւողական ու յարձակողական պայքար ծաւալելով բուրժուական գաղափարախօսութեան դէմ, անհրաժեշտ է այսուհետեւ էլ վճռական հակահարուած հասցնել Դաշնակցութեան պրոպագանդային, մարդկանց գիտակցութեան վրայ քայքայիչ ազդեցութիւն գործելու, նիհիլիզմի եւ ազգայնամոլութեան սերմեր ցանելու նրա փորձերին: Այստեղ զիջումներ չեն եղել եւ չպէտք է լինեն**»:

Դեմիրճեանի հակադաշնակցական դիրքը յայտնի է: Առաջին անգամ չէ, որ նա կասեցնում է Դաշնակցութեանը Հայաստանում «արդարացնելու» ժողովրդի ձգտումը: 1976 թւականին «Սովետական Գրականութիւն» հանդէսի 8-րդ համարում հրատարակւեց հանդէսի գլխաւոր խմբագիր Ստեփան Կուրտիկեանի յօդուածը հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի մասին, որտեղ հեղինակը առաջարկում էր վարկաբեկել Դաշնակցութիւնը, որը եթէ նոյնիսկ սխալներ է գործել, ապա ոչ թէ ժողովրդի թշնամի լինելու, այլ քաղաքական իմաստութեան պակասի բերումով: «**Մեր կարծիքով,** - գրում էր **Կուրտիկեանը,- գիտական չի կարելի համարել այն մօտեցումը, որի համաձայն Դաշնակցութիւն կուսակցութեան գործունէութիւնը հիմնադրման օրից, այսինքն 1890 թւականից մինչեւ օրս, գնահատւում է նոյն ձեւով: Նոյն չափանիշով գնահատել այդ կուսակցութեան բոլոր ղեկավարներին ու յեղափոխականներին, սխալ է**»:

Կենտկոմի լիագումար նիստում Կ. Դեմիրճեանը վերջ տւեց Կուրտիկեանի նախաձեռնութեանը, յայտարարելով, որ «Սովետական գրականութիւն» հանդէսը կոպիտ սխալներ է գործել: Իսկ Կ. Դալլաքեանը աւելացրեց, որ արդարացիօրէն հակահարուած ստացան նրանք, ովքեր փորձեցին վերանայել մեր ճիշտ դիրքորոշումները Դաշնակցութիւն կուսակցութեան նկատմամբ:

Այն ժամանակ մեզանից շատերը արդարացնում էին Դեմիրճեանին նրանով, թէ ստիպւած էր այդպէս վարւել, թէ սա Մոսկւայի թելադրանքն էր, իսկ ինքը որպէս հայ մարդ, այդպէս չի կարող մտածել: Բայց ահա անցաւ 10 տարի, փոխւեց երկիրը, բայց չփոխւեց Դեմիրճեանը: Չփոխւեց այնքան, որ յանդգնեց հակագործբաչեւեան դիրք բռնել: Այսօր Մոսկւան պահանջում է վերագնահատման ենթարկել Խորհրդային Միութեան ամբողջ պատմութիւնը, վերանայել Կոմունիստական կուսակցութեան պատմութիւնը, իսկ Դեմիրճեանը յայտարարում է, թէ «**հրապարակայնութեան իրաւդրութիւնը չի կարող իսօսա-**

վարժութիւնների ասպարէզ դառնալ առանձին պատմական իրադարձութիւնների, անցեալի գործիչների ճիշտ գնահատականների վերանայման անհրաժեշտութեան շուրջ»:

Բայց ո՞վ է որոշում ճիշտն ու սխալը: Եթէ խօսակցութիւնների փորձեր կան, ինչո՞ւ չլսել ժողովրդի ու պատմաբանների ձայնը:

Իր ելոյթում Կ. Դեմիրճեանը նշում է հետեւեալը.- «**Առանձին մարդիկ իրենց ելոյթներում, հրապարակներում կեղծ հայրենասիրութիւն են դրսեւորում, շահարկում ազգային զգացմունքները եւ պատշաճ հակահարուած չեն ստանում: Բանը հասնում է այնտեղ, որ օրը ցերեկով կոլեկտիվներում յայտնւում են ինքնակոչ դասախօսներ, զանազան նամակների տակ ստորագրութիւններ հաւաքողներ եւ տարածւում են կասկածելի գրութիւններ, իսկ աշխատաւորական կոլեկտիւների ղեկավարները, կուսակցական կազմակերպութիւնները անցնում են դրանց կողքով, չեն կասեցնում նմանօրինակ գործունէութիւնները, քաղաքական գնահատական չեն տալիս այդ փաստերին եւ պատասխանատուութիւն չեն կրում դրա համար**»:

Բայց ո՞վքեր են այդ մարդիկ: Եթէ նրանք ելոյթներ են ունենում, դասախօսութիւններ կարդում, նամակներ պատրաստում ու յօդուածներ գրում, ուրեմն սրանք հայ մտաւորականներ են, հայ ժողովրդի ներկայացուցիչները: Ինչո՞ւ նրանց չլսել, ինչո՞ւ պէտք է Դեմիրճեանը որոշի, թէ որն է կեղծ եւ որն է իսկական հայրենասիրութիւն: Եւ եթէ այդ մարդիկ հակահարուած չեն ստանում, եւ եթէ կոլեկտիւների ղեկավարները, կուսակցութեան կազմակերպութիւնները չեն կասեցնում նմանօրինակ գործունէութիւնները, գուցէ՞ նրանք են ճիշտ: Եթէ մարդիկ որոշ նամակների տակ ստորագրութիւններ են հաւաքում, ի՞նչ վատ բան են անում: Գուցէ դա այն նամակն էր, որ հայ մտաւորականները ուղղեցին Գորբաչեւին Հայաստանի բնութեան աղտոտման դէմ: Կամ գուցէ՞ նրանք Ղարաբաղը Հայաստանին կցելու ստորագրութիւններ էին հաւաքում, մի՞թէ վատ բան էին անում:

Ռուսաստանի կենտրոնական թերթերը հարիւրաւոր նմանօրինակ նամակներ են հրատարակում, իսկ մենք, ի՞նչ է, նրանցից պակա՞ս ենք: Ինչո՞ւ մենք մեր ժողովրդին չենք վստահում, ինչո՞ւ մեր մամուլը նրա տրամադրութեան տակ չենք դնում:

Այս մասին Կ. Դեմիրճեանը ունի մի հետաքրքրական արտայայտութիւն: Իր ելոյթում նա ասում է.-«**Տեղ են գտնում այնպիսի փաստեր, երբ մասսայական ինֆորմացիայի (զանգւածային տեղեկատուութեան) առանձին օրգաններ (մարմիններ) ձեռնամուխ են լինում այնպիսի պրոբլեմների քննարկման, որոնք ոչ մէկ առընչութիւն չունեն իրենց պրոֆիլի հետ**»: Դեմիրճեանը դիմում է «Ոզնի» հանդէսի օրինակին, որը հրատարակել է հայ ժողովրդի ծագման խնդրին

նվիրւած մի նիւթ, բայց որը իբր թէ չի համապատասխանում երգիծական հանդէսի «պրոֆիլին»։

Հաւանաբար Կ. Դեմիրճեանը ճիշտ է, նման յօդւած կարող էր հրատարակւել մի այլ հանդէսում։Բայց ի՞նչ անեն լուրջ գրողները, եթէ իրենց լուրջ յօդւածները ուրիշ հանդէսներ չեն վերցնում, եթէ նրանք Դեմիրճեանին դուր չեն գալիս։

Սակայն հարցը հանդէսի լուրջ եւ ոչ լուրջ լինելու մէջ չէ։ Պարզապէս «Ոզնի» հանդէսի գլխաւոր խմբագիր Ա. Սահակեանը այնքան լուրջ մարդ է, որ ճիշտ է հասկացել Գորբաչեւի թեզը ազատ մամուլի մասին եւ ընդառաջում է նրանց, ովքեր չեն ցանկանում լռել։

Միայն դրանով կարելի է բացատրել, որ յայտնի հրապարախօս Զօրի Բալայեանը իր «Հիմա էլ լռենք» խորհրդաստ յօդւածը հրատարակեց նոյն «Ոզնի» հանդէսի մէջ։ Կարծում եմ, որ երբ յօդւածը հրատարակւի մեր մամուլում, ինձ այլեւս ասելու բան չի մնայ։

1987

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Է. Յովհաննիսեան

Քաղաքական պայմանները աշխարհում փոխւում են միշտ, բայց առաւել արագ են փոխւում մեր օրերին: Նրանք, ովքեր չեն հասցնում յարմարւել նոր պայմաններին, չեն օգտւում նոր ստեղծւած հնարաւորութիւններից, ի վերջոյ դուրս են նետւում քաղաքական ասպարէզից: Պահպանողական դիրք բռնելու պատճառով մարդիկ, կազմակերպութիւններ, ժողովուրդներ ու պետութիւններ պարզապէս կործանւում են:

Մենք՝ հայերս, որ շատ խորացած չենք քաղաքականութեան նրբութիւնների մէջ, առաւել ջանքեր պիտի թափենք՝ ամէն մի նոր քաղաքական կացութեան մէջ գտնելու համար «ի՞նչ անել» հարցի պատասխանը: Այսօրւայ քաղաքական պայմանների գլխաւոր առանձնայատկութիւններից մէկը այն է, որ ստեղծւել է համազգային քաղաքական նպատակների ձեւակերպման եւ այդ նպատակներին համաժողովրդական ճիգերով հասնելու հնարաւորութիւնը:

Այս պայմանները նախ ստեղծել են գորբաչեւեան հրապարակայնութեան քաղաքականութեան, ապա՝ Սփիւռքում տարւող քաղաքական աշխատանքների իրական գնահատականի բերումով: Սփիւռքում տարւող քաղաքական աշխատանքները յստակ դարձրեցին, թէ ո՞վ է գերագոյն զոհաբերութիւնների գնով մղում Հայ Դատի համար պայքարը եւ ո՞վ է խանգարում այդ պայքարը: Իսկ գորբաչեւեան նոր քաղաքականութիւնը բացայայտեց եւ Հայաստանի պահպանողականներին ցոյց տւեց, որ ժողովուրդը միշտ էլ յարգանքով է վերաբերւել իր արժէքների հանդէպ, որոնց մէջ կարեւոր տեղ է գրաւում Հ.Յ. Դաշնակցութեան յեղափոխական անցեալը եւ ներկան:

Այլեւս անկարելի է Սփիւռքում 20-30 հոգով խմբեր կազմել եւ աղմկել, թէ իրենք են Հայ Դատի մարտիկները: Այս բանը հնարաւոր էր, երբ Հայ Դատը դուրս չէր եկել հայկական սահմաններից եւ Հայ Դատի տէրերը նրանք էին, ովքեր ամենաբարձր գոռացողն էին: Այժմ, երբ Հայ Դատը քննարկւում է միջազգային ատեաններում, բոռացողների թիւը չի պակասել, բայց նրանց վրայ այլեւս ուշադրութիւն դարձնող չկայ: Թէ՛ մեր հակառակորդները եւ թէ՛ մեր բարեկամները շատ լաւ գիտեն, թէ ո՞վ է Հայ Դատի բոլոր երեսների իրական տէրը: Այլեւս անկարելի է նաեւ Հայաստանում դատարկ ճառերի եւ պատմական նենգափոխութիւնների ճամբով ոտնահարել ազգային արժէքները եւ արհեստականօրէն կտրել Հայաստանի քաղաքական կապերը Սփիւռքի հետ:

Այսօր, երբ հարիւր հազարաւոր հայաստանցիներ փողոց են դուրս եկել Ղարաբաղը Հայաստանին կցելու պահանջով, չենք կարող մենք դուրս մնալ այդ շարժումներից:

Սակայն այս ամէնը միայն հնարաւորութիւններ են, որոնցից օգտուելու խնդիրը մենք ինքներս պիտի լուծենք: Այսօր Հայաստանից լսւող ձայները ոգեւորիչ են, անկեղծ, յուզիչ եւ չափից աւելի հետաքրքրական, բայց ոչ միշտ քաղաքականացած ու նպատակասլաց: Զգացւում է ազատութեան կարօտը, ազատ շնչելու ցանկութիւնը, ազատօրէն գործելու տենչը, արդարութեան հասնելու ձգտումը, բայց դեռեւս բացակայում են ընդհանուր ազգային նպատակների ձեւակերպումը եւ այդ նպատակներին հասնելու ճանապարհների որոնումը:

Այս պայմաններում նախ անհրաժեշտ է ձեւակերպել այն սկզբունքը, որով մենք պէտք է ղեկավարւենք այս կամ այն քաղաքական խնդիրները լուծելիս: Այդ գլխաւոր սկզբունքը չպէտք է խախտի ո՛չ Սփիւռքում եւ ոչ էլ Հայաստանում: Տեսնենք, թէ ո՞րն է այդ գլխաւոր սկզբունքը: Հայ ժողովուրդը չպէտք է զբաղուի ոչ մէկ քաղաքական հարցով, որի լուծումը հայ ժողովրդից կախւած չէ: Այսինքն՝ մենք չպէտք է մեր առջեւ դնենք այնպիսի խնդիրներ, որոնք լուծւելու են կամ ոչ, անկախ մեր մասնակցութիւնից: Եւ հակառակը՝ մեզ են պատկանում բոլոր այն խնդիրները, որոնք ուրիշների կողմից երբեք չեն լուծուի, եթէ մենք ինքներս այդ խնդիրներով չզբաղւենք: Այս սկզբունքը յաճախ եւ ամէնուր խախտւում է, ուստի կանգ առնենք նրա վրայ մանրամասնօրէն:

Ո՛չ ամերիկեան իմպերիալիզմի տապալումը եւ ոչ էլ համաշխարհային համայնավարութեան կառուցումը մեր ուղղակի խնդիրները չեն, ինչպէս նաեւ մերը չէ խորհրդային վարչակարգի դէմ պայքարը: Մենք չենք ստեղծել այդ իշխանութիւնը եւ մենք չէ, որ պիտի տապալենք այն: Այս առիթով ուզում եմ կանգ առնել Հայաստանի նախկին այլախոհների, իսկ այժմ անպաշտօն կազմակերպութիւնների ու հրատարակչութիւնների գործունէութեան վրայ:

Այդ շարժումների մէջ կան զուտ հայկական շարժումներ, որոնք ողջունելի են: Սրանց թւին կարելի է դասել Հայաստանի մթնոլորտի մաքրութեան համար պայքարող շարժումները, Ղարաբաղի հարցով զբաղւող խմբերը, հայ լեզւի մաքրութիւնը պաշտպանող շարժումները, ցեղասպանութիւնը դատապարտող պահանջները, Հայաստանի հայերի արտագաղթի առաջն առնելու եւ հարեւան հանրապետութիւններից ներգաղթ կազմակերպելու խնդիրները եւ այլն:

Սակայն կան նաեւ այնպիսի շարժումներ, որոնք իրենց բնոյթով հայկական չեն, թէեւ արտաքնապէս թւում են այդպիսին: Օրինակ, Հայաստանի անկախութեան, մարդու իրաւունքների պաշտպանութեան եւ կամ էլ Հայաստանի

բնակչութեան կենսամակարդակի բարձրացման հարցերը հայկական են, ըստ էութեան, բայց ո՛չ քաղաքական սեղանի վրայ: Չի կարող այնպէս պատահել, որ Հայաստանը դուրս գայ Խորհրդային Միութեան կազմից ու անկախութիւն ձեռք բերի, իսկ Վրաստանը, Ուկրայինան եւ մնացած հանրապետութիւնները մնան Խորհրդային Միութեան կազմի մէջ: Կա՛մ Խորհրդային Միութիւնում տեղի կ'ունենան այնպիսի իրադարձութիւններ, որ անկախութիւն ձեռք կը բերեն բոլորը եւ կամ էլ ոչ մէկը այդ անկախութիւնը ձեռք չի բերի: Սա նշանակում է, որ հայ ժողովրդի ճիգերը անկախութիւն ձեռք բերելու ուղղութեամբ բոլոր դէպքերում ապարդիւն են անցնելու, որովհետեւ այդ հարցի լուծումը իրենցից կախուած չէ:

Որքան էլ որ տարօրինակ թւայ այս պնդումը, բայց Հայաստանի անկախութեան հարցը ԱՅՍՕՐ հայկական քաղաքական խնդիր չէ եւ հայ ժողովուրդը ԱՅՍՕՐ չպէտք է զբաղւի Հայաստանը Խորհրդային Միութեան կազմից դուրս բերելու հարցով: Նոյնը վերաբերւում է մարդու իրաւունքների պաշտպանութեան կամ ժողովրդի կենսամակարդակի բարձրացման հարցերին: Չի կարող պատահել, որ Հայաստանում մարդու իրաւունքները չխախտուեն, որովհետեւ հայերը պայքարում են այդ իրաւունքների համար, իսկ Վրաստանում կամ Բելոռուսիայում խախտուեն, որովհետեւ նրանք չեն պայքարում այդ իրաւունքների համար:

Այս տեսանկիւնից էլ, ոչ թէ քննադատութեան, այլ եղբայրական խորհուրդի կարգով ուզում եմ ասել մեր նախկին եւ ներկայ այլախոհներին, որ նման հարցերի վրայ իրենց ջանքերը չվատնեն: Օրինակ, իմ կողմից շատ յարգւած Պարոյր Հայրիկեանը «Անկախութիւն» հանդէսի մէջ շեշտը դնում է ինքնավարութեան հասնելու միջոցների վրայ, մինչդեռ շատ աւելի ճիշտ կը լինէր խօսել ինքնավարութեանը պատրաստւելու մասին: Այս խնդիրը շատ աւելի բարդ է եւ կարեւոր, քան ինքնավարութեան արժէքի քարոզը: Երբ մենք ազգովին պատրաստ կը լինենք ինքնավարութեան՝ տնտեսապէս, քաղաքականօրէն, մշակութապէս, ինքնըստինքեան կը ծագի նաեւ անկախութիւն ձեռք բերելու ցանկութիւնը ու կը մնայ սպասել այդ ցանկութիւնը իրականացնելու յարմար պահին:

Այսօր հանրաքւէի ճամբով որոշել հայ ժողովրդի կամքը Խորհրդային Միութիւնից դուրս գալու մասին, նախ անկարելի է, ապա վտանգաւոր: Անկարելի է, որովհետեւ նման իրաւունք չի կարող ստանալ միայն հայ ժողովուրդը: Եթէ մեզ տրւի նման հանրաքւէ անցկացնելու իրաւունքը, ապա նոյն իրաւունքը պէտք է տրւի նաեւ մնացած ժողովուրդներին, իսկ դրան Խորհրդային Միութիւնը դեռեւս պատրաստ չէ եւ նման ծայրահեղական պահանջը կարող է միայն խանգարել Գորբաչեւի թեւին՝ երկրում դրական վերափոխութիւններ

կատարելու հարցում: Նշենք նաեւ այն, որ Խորհրդային Միութիւնից շատ աւելի ժողովրդավարական երկրներ այդ հարցը լուծելուն պատրաստ չեն: Բասկերը, իռլանդացիները, քեբէկցիները, կիպրացիները, պաղեստինցիները, քրդերը եւ շատ ուրիշ ժողովուրդներ կատաղի կռիւներ են մղում իրենց ինքնորոշման համար, բայց նրանց «ժողովրդավար» հակառակորդները այդ ինքնավարութիւնը չեն տալիս: Եւ եթէ ես ժողովրդավար բառը չակերտների մէջ դրեցի, ապա միայն այն պատճառով, որ ղեկավարեցի բառի բուն իմաստով, բայց Խորհրդային Միութեան համեմատութեամբ, նոյնիսկ գորբաչեւեան ժամանակաշրջանի համեմատութեամբ, չակերտները կարելի է վերցնել:

Բացի դրանից՝ հանրաքուէի անցկացումը կարող է նաեւ վտանգաւոր լինել: Եթէ մեր ժողովուրդը մեծամասնութեամբ քւէարկի Խորհրդային Միութիւնից անջատւելու օգտին, դա մեր ժողովրդին ոչինչ չի տայ, բացի նրանից, որ Մոսկըւայի ղեկավարութիւնը եւ հէնց ռուս ժողովուրդը կ'արձանագրի մեզ «սեւ ցուցակում», այստեղից բխող բոլոր վտանգաւոր հետեւանքներով: Հայաստան կ'ուղարկուեն ռուս ղեկավարներ, Ադրբեջանը կ'օգտուի դրանից «Ղարաբաղի հարցը» վերջնականապէս փակելու համար եւ ընդհանրապէս մենք կը դասուենք անվստահելի ազգերի շարքին: Եթէ քւէարկութեան արդիւնքները լինեն բացասական, այսինքն յօգուտ Խորհրդային Միութեան կազմի մէջ մնալուն, այս անգամ մեզ հետ կը թշնամանան մեր բոլոր հարեւանները եւ մնացած բոլոր հանրապետութիւնները, նկատելով մեզ ռուսների դուդուկը փչողներ:

Այս ամէնը մեզ պէտք չէ: Ներկայ պայմաններում ամէն ինչ պէտք է արւի լռութեան մէջ, առանց շեփորների եւ աւելորդ անգամ մեր վրայ ուշադրութիւն դարձնելու: Այս սկզբունքից բխում է նաեւ այն, որ մենք չպէտք է սերմանենք մեր ժողովուրդի մէջ հակառուս տրամադրութիւններ եւ չպէտք է հակադրւենք ռուսական պետական շահերին, այնքան ժամանակ՝ քանի դեռ նրանք չեն վտանգում հայ ժողովրդի կենսական շահերը: Անշուշտ, ամէն ինչ կարելի է կենսական շահ համարել եւ ամէն մի ճնշումի դէպքում ոտքի ելնել:

Սակայն կայ շատ պարզ չափանիշ զուտ հայկական շահերը ու արժէքները ուրիշ արժէքներից տարբերելու համար: Եթէ Հայաստանում հայը որպէս քաղաքացի իրաւազրկւած է, եթէ գտնւում է վատ տնտեսական վիճակում, եթէ եկեղեցին ու կրօնը արգելւած են, եթէ տեղի են ունենում պատմութեան նենգափոխութիւններ՝ արդեօ՞ք ռուս ժողովուրդը նոյն վիճակի մէջ չէ: Եթէ ռուս մարդը ու պատմութիւնը նոյն վիճակն մէջ են, ապա հայը անելիք չունի, քանզի նա հալածւում է ոչ որպէս հայ, այլ որպէս քաղաքացի: Եւ սա վերաբերւում է ոչ միայն Հայաստանին: Նոյն չափով Պարսկաստանում, Լիբանանում կամ Ուրուգւայում մենք չպէտք է հակադրւենք տեղի վարչակարգին, եթէ այդ վար-

չակարգը չի փակում հայկական դպրոցները ու եկեղեցիները եւ կամ էլ արգելում ազգային տօնակատարութիւնները։

Այս ամէնը շատ յստակօրէն նշած է Հ.Յ. Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովի որոշումներում, որտեղ կարելի է գտնել թէ Միացեալ, Անկախ Հայաստան ստեղծելու վերջնանպատակը, թէ մեծ պետութիւնների վերաբերեալ մեր կողմնորոշման սկզբունքները եւ թէ ազգային-ազատագրական շարժումների հետ մեր համագործակցութեան սահմանները։ Այս որոշումներով էլ ղեկավարւում է Հ. Յ. Դաշնակցութիւնը իր քաղաքական գործունէութեան մէջ, որը ոմանց դուր չի գալիս։ Երբեմն աջից Դաշնակցութեանը մեղադրում են հակախորհրդային պայքար չմղելու մէջ եւ Հայաստանից արտագաղթի նկատմամբ անհանդուրժողական դիրք բռնելու համար։

Այս քննադատները զարմանք են յայտնում, թէ ինչո՞ւ է Դաշնակցութիւնը կենտրոնացրել իր պայքարը հակաթուրք ճակատի վրայ եւ ոչինչ չի անում հակախորհրդային ճակատի վրայ։ Երբեմն էլ ձախից Դաշնակցութիւնը մեղադրում են հակախորհրդային պայքարի մէջ, թուրքերի հետ համագործակցելու եւ Հայաստանից հայերին դուրս քաշելու մէջ։ Այս վերջինների, այդ թւում նաեւ Հայաստանի որոշ ղեկավարների ու նրանց արտասահմանեան խամաճիկների պնդումները այնքան անհիմն են, դատարկ ու ծիծաղելի, որ պատասխանի արժանի չեն։

Իսկ աջակողմեանների «ինչո՞ւ»ների պատասխանը յստակ է։ Հ.Յ. Դաշնակցութեան գործունէութիւնը յենւում է այն ենթանպատակների վրայ, որոնք անմիջականօրէն բխում են Միացեալ, Ազատ ու Անկախ Հայաստան ստեղծելու գլխաւոր նպատակից։ Իսկ արտագաղթը կամ խորհրդային վարչակարգի դէմ պայքարը հակասում են այդ նպատակին։ Անկախ Հայաստանը կարող է ստեղծուել ազգահաւաքի, հողահաւաքի եւ ազգային ինքնագիտակցութեան հիման վրայ, որոնց համար խոչընդոտ է հանդիսանում բոլոր հայաշատ գաղութների քայքայումը։ Դաշնակցութիւնը դէմ է ոչ միայն Հայաստանից արտագաղթին, այլեւ արտագաղթին՝ Լիբանանից ու Պարսկաստանից, որտեղ պայմանները շատ աւելի ծանր են։

Դաշնակցութիւնը ոչ միայն հակախորհրդային, այլեւ հակաամերիկեան, հակաչինական եւ որեւէ ուրիշ հակապայքար չի մղում, քանզի ազգային կուսակցութեան համար պայքարի բոլոր ուղղութիւնները պէտք է որոշուեն դրական արժէքներով, այսինքն՝ պէտք է լինեն կողմ, բայց ոչ հակա։ Ոչ թէ որեւէ վարչակարգի կամ պետութեան դէմ պայքար, այլ այդ վարչակարգերից ու պետութիւններից մեր իրաւունքները պաշտպանելու պայքար։ Եթէ մեզ յաջողւի պաշտպանել մեր իրաւունքները ու ազգային արժէքները, մենք կարող ենք մեզ թոյլ տալ համամարդկային խնդիրներով զբաղւելու շռայլութիւնը։ Իսկ առայժմ

համամարդկային արժէքները մեզ համար կարող են ունենալ զուտ մարդասիրական նշանակութիւն։

Միւս կողմից՝ սա չի նշանակում, որ մենք չպէտք է համագործակցենք սոցիալիստների հետ՝ մեր ազգային հարցերը լուծելու ուղղութեամբ, ինչպէս չի նշանակում, որ չպէտք է օգտագործենք Սախարովներին՝ հայ ժողովրդի կենսական շահերը եւ իրաւունքները պաշտպանելու համար։ Դա միայն նշանակում է, որ մեր բոլոր համագործակցութիւնները պէտք է բխեն մեր շահերից եւ երբեք մեր ատելութիւնից կամ համակրանքից։ Ի՞նչ կարելի է անել այս ուղղութեամբ Հայաստանում։ Եթէ մենք երազում ենք անկախ Հայաստանի մասին, ապա՝ վստահաբար գիտակցում ենք, որ այդ Հայաստանը պէտք է ունենայ հող, ժողովուրդ, տնտեսութիւն, բանակ, դիւանագէտներ, մշակոյթ, գիտութիւն, կրօնական հաստատութիւններ, կրթական հաստատութիւններ եւ այլն։ Եթէ այս ամէնը չպատրաստւի այսօր, մենք երբեք չենք կարող ձեռք բերել ո՛չ անկախութիւն եւ ոչ էլ իրական ինքնավարութիւն։ Այստեղից էլ բխում են անելիքները։ Բոլոր շարժումները, որոնք կապ ունեն հողահաւաքի հետ, մեր սրբազան շարժումներն են։

Այստեղ շատ բան կայ անելու, սակայն այդ անելիքների մանրամասնութիւնների մասին խօսելը մէկ յօդւածի սահմաններում նախ անկարելի է, ապա՝ անօգուտ։ Նոյնը վերաբերւում է տնտեսութեանը, ազգահաւաքին, կրթութեանը եւ այլն։ Առանց հակադրւելու խորհրդային իշխանութեանը՝ Հայաստանում կարելի է զարգացնել այնպիսի արդիւնաբերական ճիւղեր, որոնք օգտակար լինեն Հայաստանին, երբ նա անկախ լինի։ Ինչպէս այսօր պարզւեց, քիմիական արդիւնաբերութիւնը Հայաստանի համար աղէտ էր։ Բայց ո՞վ էր այն ժամանակ մտածում ապագայի մասին։

Այսօր էլ շատ բան արւում է՝ առանց հաշւի առնելու ոչ միայն հեռաւոր, այլեւ մօտակայ ապագան։ Ինչո՞վ, օրինակ, բացատրել, որ Հայաստանի մտաւորականութեան մեծ մասը իր երեխաներին ռուսական դպրոց է ուղարկում։ Հաւանաբար ոչ միայն ինքնագիտակցութեան պակասով, այլ հիմնականում այդ քայլը դատապարտող հասարակական կարծիքի բացակայութեամբ։ Հայաստանում մարդիկ ամաչում են, որ դպրոց կամ բարձրագոյն հաստատութիւն չեն աւարտել, որ գիտութեան կոչումի չեն արժանացել, բայց երբեք չեն ամաչում, որ հայկական կրթութիւն չեն ստացել ու ղեկավարների մեծ մասը իրենց ելոյթները կա՛մ ռուսերէնով են կարդում եւ կամ էլ՝ այնպիսի հայերէնով, որ մարդու լացն է գալիս։

Կամ՝ վերցնենք ազգահաւաքի խնդիրը։ Մենք բողոքում ենք նրանից, որ դատարկւում է հայկական գիւղը, իսկ Անապայի եւ Ռուսաստանի այլ շրջաններում ապրում են հազարաւոր հայ գիւղացիներ, որոնք պատրաստ են տե-

ղափոխւելու Հայաստան, եթէ նրանց համար ստեղծւեն համապատասխան պայմաններ։ Ո՞վ է այդ ուղղութեամբ մտածում եւ ո՞վ է այս հարցով զբաղւելու։

Այս հարցերով զբաղւելը շատ աւելի դժւար է, քան ցուցական յեղափոխութեամբ, որը զգացմունքների պարտկում է եւ արդարութեան որոնում այնտեղ, որտեղ այդ արդարութիւնը չկայ։

1988

ԴԱՐՁԵԱԼ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՄԱՍԻՆ

Է. Յովհաննիսեան

Վերջերս գրեցի մի յօդուած, որտեղ փորձեցի ցոյց տալ, որ ազգային կեանքի համար ամենակարեւոր պայմանը հանդիսացող Անկախութիւնը, ձեռք է բերւում, երբ կան համապատասխան քաղաքական պայմաններ, որոնց բացակայութեան դէպքում անկախութեան համար պայքարը կարող է նոյնիսկ վնասակար լինել: Այսինքն՝ ես ուզեցի ասել, որ անկախութեան բացարձակ արժէքը, քաղաքական արժէք դարձնելու համար, անհրաժեշտ են համապատասխան պայմաններ:

Սակայն, ինձ ոմանք սխալ հասկացան եւ մեղադրեցին, թէ ես անկախութեան հակառակորդ եմ: Աւելին, ինձ ասացին որ այն, ինչ դարեր շարունակ ջանում են անել ուրիշները, խլել հայերից անկախութեան ձգտումը, այժմ անում եմ ես: Մեղադրանքը բաւականին ծանր է, ուստի ստիպւած եմ կրկին անդրադառնալ նախորդ յօդւածում բարձրացւած հարցերին:

Անկախութիւնը այն միակ վիճակն է, որի ներսում կենդանին, մարդը, ազգը կամ պետութիւնը կարող է գոյատեւել՝ սեփական արժէքներով եւ ձգտումներով ղեկավարւելով, այսինքն կարող է ապրել իր Էության համաձայն: Այս մասին վէճ չի կարող լինել եւ այս մասին մարդիկ չեն վիճել հազարամեակների ընթացքում, նոյնիսկ այն ժամանակ, երբ ստրկատիրութիւնը օրինականացւած էր ամենաքաղաքակիրթ երկրներում:

Աւելորդ եմ համարում անկախութեան առաւելութիւնների թւարկումը եւ անկախութեան հասկացութեան արժեւորումը կատարել, քանզի անկախութիւնը պատկանում է այն բացարձակ ու բնական հասարակական արժէքներին, որոնց դէմ չէին համարձակւում արտայայտւել նոյնիսկ աշխարհի ամենադաժան բռնակալները: Սակայն բոլոր բացարձակ արժէքների նման անկախութիւնն էլ ըմբռնելու եւ հարազատ գաղափար դարձնելու համար համապատասխան կրթութիւն է պահանջւում:

Ազնւութիւնը, արդարութիւնը, սէրը, զոհաբերութիւնը եւ մնացած բոլոր արժէքները կրթութիւն են պահանջում: Եւ եթէ մեր ժողովուրդը անկախութեան արժէքը ըմբռնելու կրթութիւնը չունի, փառք նրանց, ովքեր այդ կրթութիւնը տալիս են մեր ժողովրդին: Եթէ այժմ, կրկին խորհրդային ոստիկանութեան ձեռքը ընկած Պարոյր Հայրիկեանը, իր «Ազգային Ինքնավարութիւն» շարժման ճամբով փորձում է քարոզել անկախութեան գաղափարը Հայաստանում ապրող մեր ժողովրդին, որը գուցէ տասնամեակների հակառակ քա-

րոզների ազդեցութեան տակ կորցրել է անկախութեանը ձգտելու բնական բնազդը, ապա՝ Պարոյր Հայրիկեանի առջեւ կարելի է միայն խոնարհուել:

Բայց անկախութիւնը ոչ միայն բացարձակ հասարակական արժէք է, այլ նաեւ քաղաքական նպատակ՝ ազգային-ազատագրական բոլոր շարժումների համար: Իսկ քաղաքական նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է ունենալ քաղաքական միջոցներ, քաղաքական դաշնակիցներ, պայքարելու իրական ուժ եւ առնւազն յոյս, որ թափւած արիւնդ զուր չի անցնելու, որ այդ արիւնը թափւելու է մեր ժողովրդի քաղաքական ճակատագիրը շարժող անիւի վրայ:

Երբ բացակայում են այդ քաղաքական միջոցները, քաղաքական պայմանները եւ վերանշւած յոյսը, անկախութիւն գաղափարի քաղաքականուցումը, այսինքն՝ այդ նպատակի համար որեւէ շարժում կազմակերպելը, կարող է վնասակար լինել, առնւազն այն պարզ պատճառով, որ թափւած արիւնը ապարդիւն է անցնելու: Հայաստանի անկախութեան համար այսօր նպաստաւոր ոչ մէկ պայման գոյութիւն չունի, ուստի այս ուղղութեամբ կազմակերպւող բոլոր շարժումները օգտակար չեն կարող լինել: Միայն այսքանը ես ուզեցի ասել, որը արտասահմանցու համար այնքան պարզ է, որ այս մասին խօսելը աւելորդ պիտի լինէր:

Հայաստանի ներսում կան բազմաթիւ երիտասարդներ, որոնք ազնիւ են, ազգանւէր ու պատրաստ՝ զոհաբերութիւնների, եւ որոնք ուզում են նւիրել սեփական կեանքը հայ ժողովուրդին: Բայց «ինչ անել» հարցի պատասխանը չունեն: Նրանք հաւատում են, որ «ազատասէր» Եւրոպայում եւ Ամերիկայում կան բազմաթիւ միջազգային հաստատութիւններ, որոնք երազում են ժողովուրդների, այդ թւում նաեւ հայ ժողովրդի անկախութեան մասին: Որ սրանք մեր բնական դաշնակիցներն են: Որ նրանց օգնութեամբ Հայաստանում կարելի է կազմակերպել հանրաքւէներ եւ ազգային իրաւունքների պաշտպանութիւն: Նրանք չգիտեն, որ նման կազմակերպութիւններ չկան, որ ոչ մէկի հետ, դժբախտաբար, հայ ժողովուրդը յոյսեր չի կարող կապել: Հայ ժողովուրդը, ինչպէս նաեւ աշխարհի բոլոր ժողովուրդները կարող են միայն սեփական ուժերի վրայ յենւել, իսկ այսօր անկախութիւն ձեռք բերելը մեր ուժերից վեր է:

Արդ, եթե մենք վերոյիշեալ հարցերի մասին բարձրաձայն խօսենք, նշանակո՞ւմ է դա արդեօք, որ մենք հրաժարւում ենք անկախութեան գաղափարից:

Ոչ, չի նշանակում:

Դա միայն նշանակում է, որ անկախութեան համար պայքարը ունի տարբեր փուլեր եւ որ ամէն մի յաջորդ փուլը կարող է ձեւակերպւել ու լուծւել նախորդ հանգրւանը լուծելուց յետոյ:

Եւ եթէ Հայաստանի երիտասարդութիւնը եւ մտաւորականութիւնը ուզում են պատրաստուել անկախութեան, ապա Սփիւռքի համապատասխան ուժերի եւ համապատասխան ձգտումների հետ միասնաբար պէտք է կատարեն այդ նախապատրաստական աշխատանքները:

Անկախութիւնը բացարձակ արժէք է, բայց այդ արժէքին հասնելու համար պէտք է ազգովին նախապատրաստուել:

1988

ՆՐԱ՞ՆՑ, ԹԷ՞ ՄԵԶ ԵՆՔ ՕԳՆՈՒՄ

Է. Յովհաննիսեան

Քրիստոնէական անհատական փրկութեան գաղափարը, այսինքն՝ անհատապէս փրկուելու հնարաւորութիւնը այնքան խորն է թափանցել մեր նկարագրի մէջ, որ յաճախ մեր հասարակական վարքագիծը՝ մեր խիղճը հանգըստացնելու, մեր պարտքը կատարելու, մեզ արդարացնելու եւ ուրիշի աչքին լաւ մարդ երեւալու սկզբունքներից է բխում: Մենք զոհաբերում ենք՝ ո՛չ թէ ուրիշին, այլ մեզ օգնելու համար եւ զոհաբերող մարդու հեղինակութիւն վայելելու համար: Աթէիստը եկեղեցի է կառուցում՝ եկեղեցու վրայ իր մայրիկի անունը գրելու համար: Մեռնողն էլ երբեմն մեռնում է՝ պատմութեան մէջ մտնելու համար: Լաւ է այս ամէնը, հասկանալի ու բնական, բայց ոչ բաւարար: Եթէ օգնութիւնը աղքատին չի հասնում, չպիտի հանգստանայ խիղճը, որովհետեւ գթասիրութիւնը ոչ միայն տուողի, այլեւ առնողի երջանկութիւնն է, որովհետեւ եկեղեցի կառուցելը ոչ սեփական փառասիրութեանը բաւարարութիւն տալու, այլ Աստծուն ծառայելու համար է, որովհետեւ հերոսութիւնը ոչ թէ մեռնելու, այլ յաղթելու համար է:

Հայաստանի երկրաշարժը շարժեց նաեւ մեր ժողովրդի լաւագոյն զգացմունքները ու Սփիւռքահայութիւնը նետուեց օգնելու իր եղբայրներին Հայաստանում: Օգնելու այդ ոգեւորութիւնը այնքան մեծ էր ու համազգային, որ նման ապրում մեր ժողովուրդը չէր ունեցել Մեծ Եղեռնից ի վեր: Չար լեզուները խօսում էին, թէ տասնեակ հազարաւոր մարդիկ պիտի մեռնէին, որ մենք այս ոգեւորութիւնը ապրէինք, բայց նրանք հէնց չար լեզուներ էին, որովհետեւ համազգային ապրումների համար ցնցումները իսկապէս որ շատ աւելի ազդեցիկ են, քան հարիւրաւոր յօդուածներ, տրամաբանական վերլուծութիւններ ու ճառեր:

Բայց այս ցնցումներից առաջացած զոհաբերութեան ոգին յաճախ դառնում է մեր սեփական խիղճը հանգստացնելու ձգտում, որի յետեւում կորչում է այն մտահոգութիւնը, թէ մեր տւածը տեղ պիտի՞ հասնի: Երկրաշարժի առընչութեամբ նախ եկէք վերցնենք այն հիմնական տեւելները, որոնք ցոյց են տալիս աղէտի ծաւալը եւ օգնութեան հասնելու կարելիութիւնները: Խորհրդային իշխանութիւնները պաշտօնապէս յայտարարեցին, որ վերականգնման աշխատանքների համար անհրաժեշտ է 10 միլիարդ ռուբլի: Երկրորդ կարեւոր յայտարարութիւնը արեց Գորբաչեւը Երեւանում իր եղած ժամանակ: Նա ասաց, որ քանդուած քաղաքները եւ գիւղերը վերականգնելու համար պահանջւելու է երկու տարի: Այս երկու յայտարարութիւնները յունւարի 5-ին կրկնեց Խորհըր-

դային Միութեան Գերագոյն Խորհրդի նախագահի տեղակալ Բատալինը։ Հանդէս գալով կոմկուսի քաղբիւրոյի յանձնաժողովի նիստում, Բատալինը ասաց, որ վերականգնման աշխատանքների համար անհրաժեշտ է 100 միլիարդ ռուբլի եւ որ այդ աշխատանքները կատարելու համար պահանջւում է երկու տարի։ Նա աւելացրեց, որ այս աշխատանքները կատարելու համար Հայաստան են ուղարկւելու 150.000 բանւորներ։ Սա նշանակում է, որ երկու տարում խորհրդային շինարարները եւ այլ ձեռնարկութիւններ պէտք է իրացնեն 10 միլիարդ ռուբլի։ Ինչպէ՞ս։ Նախքան այս հարցին պատասխանելը մէջբերենք մի երկու տւեալ եւս։

Արտասահմանի 77 երկրներից եւ բարեգործական կազմակերպութիւններից Հայաստանին օգնութիւն ցուցաբերելու համար ստացւել է եւ դեռեւս պէտք է ստացւի 100 միլիոն դոլար, ինչը դոլարի ներկայ արժէքի համեմատութեամբ կազմում է 60 միլիոն ռուբլի։ 10 միլիարդ պահանջի դիմաց 60 միլիոնը շատ էլ մեծ գումար չէ։ Այդ 100 միլիոն դոլարի մէջ զուտ հայկական մասը ամենալաւատեսական հաշւարկների համաձայն կազմելու է 10 միլիոն դոլար, այսինքն՝ 6 միլիոն ռուբլի, որը աննշան մի գումար է, եթէ նա լցւի այն ծով ռուբլիների մէջ, որոնք յատկացւում են Հայաստանին։

Խորհրդային Միութեան ընդհանուր բիւջէն 89 թւականին կազմում է 500 միլիարդ ռուբլի, որից շինարարական աշխատանքների կապիտալ ներդրումների համար նախատեսւած է 7 միլիարդ ռուբլի։ Իսկ Հայաստանի ընդհանուր բիւջէն կազմում է ընդամէնը 2,5 միլիարդ ռուբլի։ Ո՛չ Խորհրդային Միութիւնը եւ ոչ էլ Հայաստանը իրենց շինարարական պլանները չեն կատարում։ Նրանք պարզապէս չեն կարողանում իւրացնել յատկացւած դրամները՝ շինանիւթերի, բանւորական ուժի, մեքենաների եւ այլ սարքաւորումների պակասի բերումով։ Այս պայմաններում բիւջէի աւելացումը ոչինչ չի կարող տալ, որովհետեւ այդ բիւջէն իւրացնելու պայմանները բացակայում են։ Միակ ելքը կարող է լինել այն, որ Խորհրդային Միութեան այլ հանրապետութիւններում չեն շինւի նախատեսւած շինութիւնները, որոնց փոխարէն շէնքեր կը կառուցւեն Հայաստանում։ Այս ելքին շատ դժւար է հաւատալ, որովհետեւ ամէն մի հանրապետութիւն պարտաւոր է կատարելու իր շինարարական պլանը։ Ոչ մէկ հանրապետութիւն չի համաձայնւի, որ իր շէնքերի փոխարէն այդ շէնքերը կառուցւեն Հայաստանում։

Եւ դժւարութիւնը ոչ միայն բիւջէի իւրացման մէջ է, որը անյաղթահարելի դժւարութիւն է, այլ հէնց բիւջէի պակասի մէջ։

Յունւարի 8ին Միխայիլ Գորբաչեւը հանդիպում ունեցաւ Խորհրդային մտաւորականների հետ, որի ժամանակ նա ասաց, որ Խորհրդային Միութիւ-

նը ունի պետական բիւջէի պակաս, որը թագցուում էր ժողովրդից: Բայց այդ պակասորդը այնքան սուր է,- ասաց Գորբաչեւը,- որ մենք, հաւանաբար, ստիպւած լինենք պակասեցնելու մեր ռազմական ծախսերը: Պետական բիւջէի պակասորդը,- ասաց Գորբաչեւը,- էլ աւելի նւազեց նաւթի գների անկումից, ալկոհոլային խմիչքներից ստացւած եկամուտի պակասից, Չեռնոբիլի եւ Հայաստանի երկրաշարժի աղէտներից եւ Աֆղանստանում պատերազմ վարելու ծախսերից: Խորհրդային Միութեան ռազմական ծախսերը արեւմտեան մասնագէտների տւեալների համաձայն կազմում են ընդհանուր բիւջէի 30 տոկոսը, այսինքն՝ 150 միլիարդ ռուբլի: Եթէ այդ ծախսերը լրջօրէն կրճատւեն, օրինակ 10 տոկոսով, ապա պետական բիւջէից կը խնայւի 15 միլիարդ ռուբլի, որը շատ էլ մեծ գումար չէ, մինչդեռ ռազմական բիւջէի կրճատման համար Գորբաչեւը սուր բախումներ ունեցաւ զինւորականների հետ եւ հէնց այդ պատճառով էլ հրաժարական տւեց սպայակոյտի գլխաւոր հրամանատար Ախրոմէեւը:

Այսպիսով, խորհրդային տնտեսութեան գլխաւոր թերութիւնը բիւջէ հայթայթելու եւ այդ բիւջէն իւրացնելու անկարողութեան մէջ է:

Այդ բանը հրապարակաւ բացատրեց մեզ Արցախի մարզկոմի քարտուղար Պօղոսեանը, որը ասաց, որ Արցախի բնակչութեանը գոհունակութիւն տալու համար Արցախի բիւջէն աներեւակայելի աւելացրեցին: Բայց մենք ի՞նչ անենք այդ դրամների հետ,- ասաց նա,- եթէ դրամները ծախսելու ոչ մէկ տեղ չունենք:

Այս նոյն կացութիւնը ստեղծւելու է Հայաստանի երկրաշարժի վերականգնման աշխատանքներում: Եթէ Խորհրդային Միութիւնը ի վիճակի չէր նախատեսւած կապիտալ ներդրումները իւրացնելու, ինչպե՞ս պէտք է իւրացնի յաւելեալ ներդրումները: Այս ամէնը խօսում է երկու կարեւոր բանի մասին:

Առաջինը՝ Սփիւռքահայութեան կողմից հաւաքւած դրամները սովորական ճամբով ռուբլի դարձնելը՝ կը նշանակի այդ դրամը փչացնել, որից յետոյ կը մնայ միայն մեր հոգեկան բաւարարութիւնը:

Երկրորդը՝ եթէ արտասահմանեան պետութիւնների ու հասարակական կազմակերպութիւնների դրամները սովորական ճանապարհով ռուբլիներ դառնան, Հայաստանը ոչ մէկ օգուտ չի ստանալու, իսկ այդ պետութիւններին կը մնան իրենց քաղաքական շահերը, որոնց համար էլ նրանք ծաւալեցին Հայաստանին օգնելու արշաւը:

Ինչ վերաբերւում է Արեւմուտքի պետական ու բարեգործական կազմակերպութիւններին, ապա նրանց մենք կարող ենք միայն խորհուրդ տալ, որ դրամի փոխարէն ապրանքներ փոխանցեն Հայաստան: Բայց մենք ինքներս պէտք է լրջօրէն քննարկենք հնարաւոր ելքերը:

Սկսենք ամենատարրական հնարաւորութիւնից: Դաշնակցային Գերմանիայում, օրինակ, պետական դրամատները օրինական կարգով մէկ գերմանական մարքի դիմաց վճարում են 10 ռուբլի: Ուրեմն 10 միլիոն դոլարը, որը սովորական ճանապարհով պիտի դառնար 6 միլիոն ռուբլի, այս ճանապարհով կը դառնայ 200 միլիոն ռուբլի: Եւ սա օրինական, այլ ոչ թէ սեւ ճանապարհ է: Միակ դժւարութիւնը այն է, որ գուցէ Խորհրդային Միութիւնը այդ ճամբով չընդունի ռուբլիները: Բայց այդ դէպքում մեզ համար պարզ կը դառնայ, որ ռուբլին ոչ մի արժէք ունի, եթէ Խորհրդային իշխանութիւնը գերադասում է 200 միլիոնի փոխարէն ստանալ 6 միլիոն ռուբլի, բայց վալիւտայի ճամբով եկած: Խորհրդային իշխանութիւնների համար ռուբլին իսկապէս ոչ մի նշանակութիւն չունի: Ուզած ժամանակ, նա տպում է ցանկացած քանակի ռուբլիներ: Այս մասին վերջերս գրեց «**Պրաւդա**» թերթը՝ «**Կանգնեցնել դրամ տպող մեքենաները**» վերնագիրը կրող յօդւածում: Եթէ այս ճամբով Խորհրդային Միութիւնը չընդունի Սփիւռքի դրամները, ապա կայ մէկ ուրիշ, շատ աւելի լաւ ճանապարհ: Այդ դրամներով անհրաժեշտ է ապրանքներ գնել ու Հայաստան ուղարկել: Թող վերականգնւող քաղաքներում շէնքերի պատերը կանգնեցնեն Խորհրդային շինարարները իրենց ռուբլիներով, իսկ մենք այստեղից մանկապարտէզների կահոյքը ու երեխաների խաղալիքները կ'ուղարկենք: Դպրոցի սարքավորումները, նստարանները ու հաշւիչ մեքենաները: Բնակելի շէնքերի դռների գեղեցիկ կողպէքները, լուսափորները եւ այլ ապրանքներ: Այսինքն՝ Հայաստան անհրաժեշտ է ուղարկել այն, ինչը անկարելի է գնել ռուբլիներով: Կայ օգնութեան նաեւ մէկ ուրիշ բնագաւառ, որը գուցէ աւելի կարեւոր է:

Խորհրդային Մինիստրների Խորհրդի նախագահի տեղակալ Բաստալինը յայտարարեց, որ 150000 բանւորներ բերւելու են Հայաստան՝ երկրաշարժի հետեւանքները վերացնելու աշխատանքներին օգնելու համար: Իսկ նախագահ Ռիժկովը ասաց, որ այդ բանւորները գալու են իրենց ընտանիքներով: Սա նշանակում է, որ աւելի քան կէս միլիոն օտար աշխատաւորներ լցւելու են Հայաստան, որը դառնալու է խոպան հողերի պէս մի բան, որտեղից եկուոր աշխատաւորները կարող են և չհեռանալ: Չեմ կարծում, որ Հայաստանից այդ աշխատաւորները ուզենան վերադառնալ տուն, մանաւանդ որ Խորհրդային Միութիւնում գործող օրէնքի համաձայն, շինարարները իրաւունք ունեն իրենց կողմից կառուցւած շէնքերում բնակարաններ ստանալ: Եւ այստեղ հարց է ծագում. ինչո՞ւ մենք չենք կարող կազմակերպել առնուազն 15000 աշխատաւորների ուղարկումը Սփիւռքից Հայաստան: Եթէ երկու տարի այնտեղ աշխատելուց յետոյ նրանք կ'որոշեն մնալ Հայաստանում, էլ աւելի լաւ: Իսկ եթէ վերադառնան, նոյնպէս վատ չէ, որովհետեւ երկու տարի հայրենիքում ապրելուց յետոյ նրանք 10 տարւայ լիցքաւորում կը ստանան՝ Սփիւռքում հայա-

վարի ապրելու համար: Սակայն այս խնդրի մէջ կայ նաեւ զուտ նիւթական կողմ, որը նոյնպէս բարենպաստ է Սփիւռքից Հայաստան բանւորներ ուղարկելու համար:

Խորհրդային բանւորի միջին աշխատավարձը կազմում է 200 ռուբլի: Հայաստան եկած բանւորներից իւրաքանչիւրը առձեռն 200 ռուբլուց աւելի չի ստանալու: Իսկ երկու հարիւր ռուբլին, ինչպէս արդէն ասացի, արտասահմանում կարելի է ձեռք բերել 10 դոլարով: Այսինքն Սփիւռքից Հայաստան գնացող բանւորները կարող են երկու տարի ձրիաբար գործել Հայաստանում, սեփական գրպանից վճարելով այդ 10 դոլարը եւ կամ էլ ստանալ Սփիւռքում գոյացած յատուկ ֆոնդից: Բոլոր այս հնարաւորութիւնները մենք պէտք է քննարկենք միասնաբար Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչների հետ, որոնցից պէտք է խնդրւի եւ, ինչու չէ, պահանջւի որ նրանք ազգային պատասխանատուութեամբ մօտենան այս հարցին, այլ ոչ թէ ճառեն, թէ ուղարկէք դրամը մեր կառավարութեանը, որը լաւագոյնս կը տնօրինի այն:

1989

ՆՐԱՆՔ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԵՆ, ԻՍԿ ՄԵՆՔ ՉԵՆՔ ՈՒԶՈՒՄ

Է. Յովհաննիսեան

Կար ժամանակ, որ Խորհրդային Միութիւնում տիրում էր մէկ մտայնութիւն եւ մէկ հոգեբանական մթնոլորտ, որը հետեւեալն էր. ռուսները իշխող ազգն են, իսկ մնացածները՝ ստրուկներ: Ուստի՝ երկրում կատարուող բոլոր յանցագործութիւնների ու դժբախտութիւնների մեղքը ընկնում է իշխող ռուս ազգի վրա, որը ընդունակ չէր երկիրը կառավարելու:

Այս տեսակէտը համապատասխանում էր ընդհանուր մթնոլորտին եւ մենք, ազգային փոքրամասնութիւնների ներկայացուցիչներս, շատ էլ ուղեղներս չէինք լարում այն ուղղութեամբ, թէ իրենք ռուսները անտանելի վիճակի մէջ են, որ կաշառակերութիւնը ու քաղաքացիական անբարոյականութիւնը շատ աւելի մեծ տեղ են գտնում տարբեր հանրապետութիւններում, քան բուն Ռուսաստանում, որ աղրբեջանցիները հալածում են հայերին ոչ թէ ռուսների թելադրանքով, այլ՝ սեփական շահերից ու նկարագրից ելնելով, որ ռուսների խռովութիւններն ու ցոյցերը ցրելու համար օգտագործւում էին ազգային փոքրամասնութիւններից բաղկացած զօրամասեր եւ որ ստեղծուած կացութեան մէջ մեղաւոր էին բոլորը, այլ ոչ միայն ռուսները:

Սակայն բոլոր մեղքերը ռուսների վրայ բարդելը այն ժամանակ յարմար էր, որովհետեւ նրանք իսկապէս ամբողջատիրական երկրի տէրերն էին համարւում, իսկ մենք մեզ ձեւացնում էինք ազատասէր ու ժողովրդավարութեան կարօտ, որոնց ճնշում են անիծեալ ռուսները:

Բայց ահա փոխուեցին ժամանակները ու պարզուեց, որ այդպէս էլ չէ: Պարզուեց, որ պատմական, բարոյական եւ մշակութային արժէքների ոտնահարման հարցում տեղի իշխանութիւններն ու մտաւորականները աւելի շատ մեղք ունեն, քան ռուսները: Պարզուեց նաեւ, որ ռուսների կամ աւելի ճիշտ կենտրոնական իշխանութիւնների թելադրանքները անվերապահօրէն կատարւում էին հանրապետութիւններում, երբ այդ թելադրանքները բացասական նշանակութիւն ունէին: Իսկ երբ նրանք դրական նշանակութիւն ունէին իրենց սեփական ժողովուրդների համար, ապա այդ թելադրանքները արհամարհում էին, քանզի նրանց համար ոչ մէկը չէր պատժւում: Ռուսների թելադրանքով չէր, որ մենք մեր երեխաներին ռուսական դպրոցներ ուղարկեցինք, ատոմային կայան կառուցեցինք ու Սեւանը կործանեցինք: Եւ հակառակ ռուսների թելադրանքի է, որ մեր ժամանակներում, վերափոխութիւնների փոխարէն Հայաս-

տանում լճացում է տիրում եւ այդ իմաստով Հայաստանը ամենավերջին տեղն է գրաւում ամբողջ միութեան մէջ։

Մէկ յօդուածի սահմաններում դժւար է կատարել նոր ժամանակներում տարբեր ժողովուրդների հասարակական վարքագծի համեմատութիւնը, որը, հաւանաբար, կարելի էր համարել քաղաքական ու ազգային ինքնագիտակցութեան մակարդակի չափանիշ, ուստի պէտք է սահմանափակուենք միայն հայկական վարքագծով։ Երբ գորբաչեւեան ժամանակաշրջանը խորհրդային ժողովուրդներին շնորհեց որոշ ազատութիւններ եւ ստեղծուեցին պայմաններ ազգային ինքնագործունէութեան համար, պարզուեց առնուազն հետեւեալը.

Ա.-Հայ ժողովուրդը չի կորցրել սեփական ճակատագրի համար ազգովին պայքարելու, զոհուելու ու յաղթելու կամքը եւ, իր այդ յատկութեան շնորհիւ, այսօր էլ ընդունակ է կերտելու Աւարայրներ, Սարդարապատներ ու փետրուարեան Ապստամբութիւններ։ Ղարաբաղի հետ կապւած իրադարձութիւնները դրա վառ ապացոյցներն էին։

Բ.- Հայ ժողովուրդը տէր չունի ու բացարձակ այս անտիրութեան մէջ կատարում է դէպի քաղաքականացում տանող առաջին քայլերը։ Նա իր ծոցից ծնում է առաջին անփորձ ղեկավարներին, որոնց՝ հէնց անփորձութեան բերումով՝ անմիջապէս կոխում են բանտերը։ Այսինքն՝ մենք սկսում ենք այն ընթացքը, որ մեր ժողովրդի պէս ժողովրդի համար վաղուց ի վեր պէտք է աւարտւած լինէր։

Արտասահմանում մեր ժողովուրդին տէր կանգնելու կարելիութիւնները չկային, քանզի ոմանք անտարբերութեան հասնող չէզոք դիրք էին բռնել Հայաստանի նկատմամբ, իսկ ոմանք էլ այնքան էին կուրացել խորհրդայնասիրութեան մէջ, որ պարզապէս ոչինչ չէին տեսնում։ Սրանք գալիս էին Հայաստան այնտեղի ղեկավարների եւ կամ էլ Անվտանգութեան Մարմնի աչքերով Հայաստանը տեսնելու, ապա այդ տեսածը արտասահմանում պատմելու համար։ Ոմանց էլ պարզապէս Հայաստան չէին թողնում։

Ի՞նչ տիրութիւն կարելի էր այս պայմաններում անել Հայաստանի համար, եթէ այնտեղի ամէն մի քայլ անսպասելի ու երբեմն շշմեցուցիչ նորութիւն էր Սփիւռքի համար։ Այդպիսի նորութիւններ էին թէ՛ 65 թւականի Եղեռնի ցոյցերը, թէ՛ «Անլռելի Զանգակատան» լոյս տեսնելը, թէ՛ Սարդարապատի ճակատամարտի յուշարձանը եւ թէ Ղարաբաղի վերջին ցոյցերը։

Սփիւռքը թերագնահատում էր Հայաստանի ժողովրդի կարողականութիւնը, իսկ Հայաստանը ծանօթ չէր Սփիւռքին։ Եւ սա մեր ու միա՛յն մեր մեղքն էր ու սրանում ո՛չ ռուսին, ո՛չ թուրքին մեղադրել պէտք չէ։

Բայց անցեալը անցեալ է եւ որքան էլ նա դառն լինի, անհրաժեշտ է տալ նրա անաչառ գնահատականը՝ ներկայում սխալներ չկատարելու համար։

Ժողովրդին տէր կանգնել, դա ամենեւին էլ չի նշանակում արտասահմանից ղեկավար ցուցմունքներ տալ ժողովրդին, ինչպէս շատերը կարծում են եւ ինչից արդարացիօրէն հրաժարւում: Այդպիսի տիրութիւն անելը ո՛չ հնարաւոր է եւ ոչ էլ կարող է ընդունելի լինել հայաստանցիների համար:

Իրական տիրութիւնը այն է, որ հայաստանցիները պէտք է արտասահմանում թիկունք ունենալու զգացմունքը ունենան: Նրանք պէտք է համոզւած լինեն, որ հարկ եղած դէպքում Սփիւռքի հայութիւնը կարող է Հայկական Հարցով դիմել ՄԱԿին, Եւրոպական Պառլամենտին, դրամական օգնութիւն ցուցաբերել, իսկ տեղացիները կարող են իշխանութիւններին սպառնալ Սփիւռքով:

Սակայն նման փոխ-յարաբերութիւնների համար նախ անհրաժեշտ է պարզել, թէ ում հետ խօսել: Ո՞վ կարող է համապատասխան թիկունք լինել Սփիւռքում եւ ո՞ւմ է պէտք այդ թիկունքը Հայաստանում:

Այս հարցը շատ դժւար է լուծւում բոլոր մակարդակների վրայ: Հայաստանի իշխանութիւնների հետ խօսելը ներկայ պայմաններում աւելորդութիւն է, քանզի այդ ղեկավարները ոչ միայն չեն ներկայացնում հայ ժողովրդին, այլ Պապից աւելի պապական դարձած այնքան պահպանողական են, որ ժողովրդի թշնամիներ դառնալու եզրին են մօտենում: Ժողովրդի ներկայացուցիչներն էլ պարզ չեն: Պարոյր Հայրիկեանը յայտարարում է, որ ինքն է այդ ներկայացուցիչը եւ որ իրեն ներկայացուցիչ է ընտրել ժողովուրդը: Զօրի Բալայեանը, հաւանաբար, նոյն յաւակնութիւնները ունի, Սիլվա Կապուտիկեանը կարծես թէ մի քիչ յոգնել է, «Ղարաբաղ Կոմիտէ»ի անդամները բանտերում են, ոմանք էլ սպասողական դիրք են բռնել: Այս պայմաններում, հաւանաբար, Սփիւռքը պէտք է սեփական նախաձեռնութեամբ գտնի «ի՞նչ անել» հարցի պատասխանը:

Գ.- Հայ ժողովրդի այսպէս կոչւած ղեկավարութիւնը եւ նոյնիսկ մտաւորականութիւնը գտնւեց շատ աւելի պահպանողական ու զգոյշ, եթէ չասենք վախկոտ, քան Ռուսները, որոնց մենք արհամարհանքով սոխեր էինք կոչում: Բայց արի ու տես, որ այդ սոխերը շատ աւելի բանիմաց, ազատատենչ ու համարձակ գտնւեցին, քան մենք: Եկէք մէկ կողմ դնելով Ղարաբաղի հարցը, տեսնենք, թէ ի՞նչ արեցին ռուսները եւ ուրիշները եւ ի՞նչ ենք անելու մենք: Ռուս մտաւորականութիւնը, քաղաքական գործիչները, իրաւաբանները, ազգայնականները, գիւղացիները, բանւորներն ու ծառայողները տարբեր բնագաւառներում վերափոխութիւններ կատարելու առաջարկութիւններով լցրել են կենտրոնական եւ տեղական մամուլի էջերը: Ո՛չ բոլոր առաջարկութիւններն են անցնում, ո՛չ բոլորն են հրատարակւում. որոշ առաջարկութիւններ էլ քննադատութեան են ենթարկւում, սակայն ռուսները, բելոռուսները, ուկրայինացի-

ները, թաթարները, մերձբալթեան հանրապետութիւնների ժողովուրդները, վրացիները եւ շատ ուրիշներ ապրում են այնպիսի բուռն հասարակական կեանքով, որ հէնց այդ ընթացքում էլ իրենք իրենց վերափոխում են։

Նշենք մի քանի առաջարկութիւններ, մտքեր ու իրականացուած գաղափարներ, որոնք լուրջ քննարկման ենթարկուեցին եւ շարունակում են քննարկուել կենտրոնական մամուլում։ Իսկ Հայաստանի մամուլը նոյնիսկ այդ յօդուածները չի արտատպում ու նրանց չի անդրադառնում, ինչը նշանակում է, որ Հայաստանը շարունակում է մնալ Դեմիրճեանի օրօք որդեգրած ընդդիմադիր դիրքերի վրայ՝ Մոսկուայի ներկայ իշխանութեան նկատմամբ։

Խորհրդային Մամուլը հրատարակեց մի շարք յօդուածներ, որոնց հեղինակները պահանջում են ջնջել կոլտնտեսութիւնները, ջնջել խորհրդային քաղաքացիների անձնագրերը եւ վերականգնել արտասահմանում ապրող բոլոր նախկին խորհրդային քաղաքացիների քաղաքացիութիւնը։ Աւելին, բազմաթիւ խմբեր պահանջեցին, որ նրանցից ներողութիւն խնդրի ու նրանց հայրենիք վերադարձի։ Խորհրդային մամուլում տպուեցին յօդուածներ, որտեղ ճանաչուեց, որ Կատինի անտառում մի քանի հազար ընտիր լեհ սպաներ գնդակահարուեցին ոչ թէ գերմանացիների, այլ ՉԵԿԱի կողմից։ Ռուսները պահանջեցին, որ վերանայուեն բոլոր իրաւաբանական օրէնքները։ Այդ օրէնքները ոչ միայն վերանայւում են, այլեւ պաշտօնապէս յայտարարուեց, որ ինքնաբերաբար վարկաբեկուած են համարւում բոլոր նրանք, ով պատժուել է այսպէս կոչուած «Եռեակի» կողմից։ Հաւատացեալները պահանջեցին, որ բոլոր եկեղեցիները վերադարձուեն իրենց։ Պահանջուեց ամբողջովին վերանայել Խորհրդային Միութեան եւ Կոմունիստական կուսակցութեան պատմութիւնները։

Հարիւրաւոր նման առաջարկութիւնների լոյսի տակ խորհրդային մամուլը արդէն հրատարակում է Ալեքսանդր Սոլժենիցինի աշխատութիւնները, այն էլ հոչակաւոր «Արշիպելագոս Գուլագ» ստեղծագործութիւնից հատուածներ, որտեղ հեղինակը պարզապէս ծաղրում է Լենինի ինքնահաւանութիւնը եւ նրան ոճրագործ է անւանում։ Խորհրդային Միութիւն հրաւիրուեց եւ գրողների միութեան մէջ վերականգնուեց Վլադիմիր Վոյնովիչը, որը իր ստեղծագործութիւնների մէջ համայնավարութիւնը պատկերում է որպէս ապուշներից բաղկացած մի հասարակարգ։ Կուբանի ուսանողները կազմակերպեցին Գորբաչեւի հրապարակային դատավարութիւնը, վերադառնալով 20-ական թւականների սովորութեանը, երբ բանւորներն ու մտաւորականները բաց դատավարութիւնների էին ենթարկում Լենինին, բացայայտելով նրա սխալները։ Այս անգամ էլ ուսանողների դաստիարակութեան արդիւնքը եղաւ այն, որ հասարակական դատարանը դատապարտեց Գորբաչեւին՝ կուսակցական եւ պետական ղեկավարների պաշտօնները համատեղելու համար։

Խորհրդային մամուլում հրատարակեցին ու հրատարակում են այնպիսի հակահրէական յօդուածներ, որոնք այսօր անկարելի են աշխարհի ամենաժողովրդավարական երկրներում: Սիբիրում ստեղծուեց Սիբիրի գրողների Անկախ Տեղեկատուական Գործակալութիւնը, որը անաչառ տեղեկութիւններ է հաղորդում Սիբիրի եւ Սիբիրի խնդիրների մասին: Մերձբալթեան Հանրապետութիւնները լուծեցին իրենց լեզուների, տնտեսական ինքնավարութեան, ազգային դրօշների խնդիրները, իսկ այժմ պայքարում են ազգային քաղաքացիութիւն մտցնելու եւ զինծառայութիւնը սեփական հանրապետութիւնում անցկացնելու համար: Հրատարակեցին 37 թւականին գնդակահարուած աստուածաբան Ֆլորենսկու նամակները, գրուեցին դրական յօդուածներ Հռոմի Պապի մասին, խորհրդային ղեկավարները հարցազրոյցներ ունեցան Ազատութիւն ռադիոկայանի հետ, առաջին անգամը լինելով հրատարկեց Խրուշչեւի գաղտնի զեկոյցը Կենտկոմի լիագումար նիստում: Վրաստանում կենտրոնական թերթերը նշեցին Մայիսի 26-ը, այսինքն՝ իրենց անկախութեան օրը: Խորհրդային զինուորական հրամանատարները խոստովանեցին, որ Աֆղանստան ներխուժելը մեծ սխալ էր: Վարկաբեկեցին բոլոր նրանք, ովքեր դատապարտել էին այսպէս կոչուած «եռեակի» կողմից:

Մոլդաւիայում Մինիստրների Խորհուրդը (ոչ թէ այլախոհները, այլ կառավարութիւնը) որոշում ընդունեց, որ իրենց այբուբենը ռուսերէնից փոխելու է լատիներէնի եւ բոլոր կուլակաթափ եղած անձնաւորութիւնները արտասահմանից ու Խորհրդային Միութեան տարբեր քաղաքներից հրաւիրում են հայրենիք: Ֆրանսիայում տեղի ունեցած Կանաչների կուսակցութիւնների համագումարին ներկայ գտնուեցին մերձբալթեան հանրապետութիւնների ներկայացուցիչները եւ բացայայտօրէն քննադատեցին խորհրդային իշխանութիւններին՝ իրենց երկրներում էկոլոգիական ճգնաժամեր ստեղծելու մէջ: Նրանք վերադարձան Խորհրդային Միութիւն ու ոչ միայն չձերբակալուեցին, այլեւ իրենց ելոյթները հրատարակեցին տեղական մամուլում:

Վրաստանում տեղի ունեցած իրադարձութիւնների ժամանակ 40 յառաջատար գրողներ հրաժարուեցին Կոմունիստական կուսակցութիւնից, յայտարարելով որ ամաչում են իրենց տոմսերից: Մի խօսքով՝ անցեալում կատարուած գրեթէ բոլոր սխալները խիստ քննադատուեցին ու դատապարտուեցին եւ կամ էլ դատապարտման ճամբու վրայ են:

Սակայն անցեալը վերանայելու եւ իսկական ազգային ու համամարդկային արժէքները վերականգնելու այս ակտիւ ընթացքը կարծես թէ Հայաստանին չի վերաբերւում, կարծես թէ մենք չունենք խեղդամահ արուած Կաթողիկոս եւ կամ էլ պատուհանից դուրս նետուած Սահակ Տէր Գաբրիէլեան: Կարծես թէ մենք ոչ ազգային ազատագրական պայքար ենք մղել, ոչ էլ անկախ Հայաս-

տան ենք ունեցել: Միթէ ռուսնե՞րը պիտի խօսեն այս մասին, կամ էլ միթէ ռուսնե՞րն են մեզ արգելում այդ մասին խօսել:

Եկէք մենք մեզ չխաբենք, այլ տեսնենք թէ ի՞նչ է կատարւում Հայաստանում:

Ղարաբաղեան ցոյցերի ժամանակ, հայ ժողովուրդը ծածանեց Եռագոյնը որպէս անկախութեան խորհրդանիշ, իսկ պրոֆեսոր Լ. Խուրշուդեանը Լենինի վրայ յենւելով, ապացուցեց, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը ոչ թէ բուրժուական, այլ մանրբուրժուական, այսինքն՝ աշխատաւորների կուսակցութիւն է, որը որդեգրել է ընկերվարական գաղափարախօսութիւնը եւ ժամանակին մեծ ժողովրդականութիւն էր վայելում Անդրկովկասում:

Թւում էր, թէ սա պատմական ճշմարտութիւնների վերականգնման խոստումնալից սկիզբ էր: Բայց ոչ, փետրուարի 18ին, այսինքն՝ Փետրուարեան Ասպստամբութեան տարեդարձին, Երևանի «Կոմունիստ» թերթը հրատարակեց Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի գիտական քարտուղար Ս. Աբրամեանի յօդուածը, որը կրում էր հետեւեալ վերնագիրը «**Խորհրդային Հայաստանը մնալու է անսասան**»:

Վերնագրից արդէն իսկ ստալինեան ժամանակների գարշահոտ է գալիս, որովհետեւ այդ վերնագիրը ուզում է հասկացնել տայ, թէ ինչ որ մէկը ոտնձգութիւններ ունի Հայաստանի խորհրդային մնալուն դէմ: Իր յօդուածում պատմական գիտութիւնների թեկնածու Աբրամեանը Հայաստանի խորհրդայնացման եւ Փետրուարեան Ապստամբութեան պատմութիւնը ներկայացնում է արդէն վաղուց յայտնի նենգափոխւած ձեւով, այսինքն՝ Հ.Յ.Դաշնակցութիւնը ներկայացնում է դաւաճանների ու թուրքերին ծախւածների դերում: Միայն մէկ նորութիւն կայ այդ նենգափոխւած պատմութեան մէջ: Առաջին անգամը լինելով յօդուածում յիշատակւում է Դեկտեմբերի 2ին Լեգրանի եւ Դրոյի միջեւ կնքւած համաձայնութիւնը: Բայց ինչպէս՞ է յիշատակւում: Պարզւում է, որ ռուսները արնահոսութիւնից խուսափելու համար կնքեցին այդ համաձայնութիւնը, իսկ հայ կոմունիստները համաձայն չէին: Իբր թէ Յեղկոմի անդամ Կասեանը պարզապէս զարմացել է, թէ ինչո՞ւ Դեկտեմբերի 2ին կնքւել է այդ համաձայնութիւնը, եթէ Նոյեմբերի 29ին Հայաստանը արդէն խորհրդայնացւած էր, իսկ դաշնակցական կառավարութիւնը տապալւած: Այսինքն՝ Հայաստանը ոչ թէ դաշնակցականների կամաւոր կամքով է խորհրդայնացել, այլ ապստամբութեան ճամբով, իսկ Դաշնակցութեան հետ ռուսները թիւրիմացաբար համաձայնութիւն են կնքել, որպէսզի աւելորդ արիւն չթափւի:

Այստեղ տեղը չէ պատասխանելու համար Ս. Աբրամեանի պատմական յայտնագործութիւններին. այդ մասին կայ համապատասխան գրականութիւն: Իմ զարմանքը ուրիշ տեղից է գալիս:

Ինչո՞ւ գրւեց այդ յօդւածը։ Ռուսների՞ թելադրանքով, թէ՞ սեփական նախաձեռնութեամբ։

Հաւանաբար յօդւածը գրւեց բոլոր այն «պատմաբանների» թելադրանքով, ովքեր պատմաբաններ են դարձել ու գիտական կոչումներ ստացել՝ հակադաշնակցական գրութիւնների ու ելոյթների համար։ Հէնց նրանք են, որ պատմական ճշմարտութիւնների վերականգնման գլխաւոր թշնամիներն են, որովհետեւ սեփական սխալներից հրաժարւելու քաջութիւնը չունեն։ Նրանք վախեցան, որ Խուրշուդեանի կողմից սկսւած նախաձեռնութիւնը կարող է կասկածի տակ դնել իրենց պատմաբան կոչւելու իրաւունքը ու վախեցան։ Բայց ազգային պատմութիւնը վերականգնելու անհրաժեշտութիւնը այնքան մեծ է ու այնքան կարեւոր, որ իսկական հայ պատմաբանը պիտի ուրախ լինէր, որ իրեն թոյլ է տրւել հրաժարւել այն կեղծիքներից ու ստերից, որոնք նախկինում պարտադրւում էին վարչակարգի կողմից։

Ո՛չ, մեր պատմաբանները չապրեցին այդ ուրախութիւնը ու քանի դեռ նրանք իշխանութեան վրայ են Հայաստանում ոչինչ չի փոխւի։ Հոգով տկար ու փոքր մարդիկ երբեք չեն փոխւում, ուստի՝ նրանց աթոռները պէտք է փոխել։

Ոգեւորւած Ս. Աբրամեանի յօդւածից՝ կենտրոնական զինւորական «**Կարմիր Աստղ**» թերթը Մարտի 10ին հրատարակեց փոխգնդապետ Ֆալիչեւի յօդւածը, որը պատմում էր Աբովեան քաղաքում տեղի ունեցած ցոյցի մասին։ Այնտեղ նշւած էր, որ անտեղեակ ցուցարարներից ոմանք կրում էին արիւնով ներկւած Եռագոյնը, որը «մեր գաղափարական թշնամիների դրօշն է»։ Իսկ մարտի 27ին «**Իզւեստիա**» թերթը պատմեց Երեւանի նստացոյցի մասին եւ ասաց, որ ցուցարարները ծածանում էին Դաշնակցութեան դրօշը, որի համար ձերբակալւեցին։ «**Իզւեստիա**»ն ի՞նչ գաղափար ունի Եռագոյնից, որ նման բան գրի։ Սա միայն Հայաստանի ու Սփիւռքի տգէտներն են, որ Եռագոյնը Դաշնակցութեան դրօշ են կոչում։ Հէնց այդ աղբիւրներից էլ սնւել են «**Իզւեստիա**»ն եւ «**Կարմիր Աստղ**»ը։

Բայց ինչպէ՞ս պատահեց, որ Կարէն Դեմիրճեանի ու Ֆադեյ Սարգսեանի պաշտօնազրկումներից յետոյ, Հայաստանում ոչինչ չփոխւեց։ Ինչո՞ւ Կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղարը ոչ միայն ոչինչ չի կարողանում անել, այլեւ՝ ժողովրդի մէջ «տիկին» կոչւելու արժանացաւ։ Այստեղ գնահատականներ տալը դժւար է։ Գուցէ նրան «տիկին» են կոչում մեղմ բնաւորութեան, այսինքն՝ Դեմիրճեանական բռունցքի բացակայութեան համար։ Եթէ այդպէս է, ուրեմն մեր ժողովուրդը ժողովրդավարութեան համար դեռեւս հասունացած չէ եւ շարունակում է երազել ուժեղ իշխանութեան մասին։ Բայց աւելի հաւանական է, որ Հայաստանի ներկայ իշխանութիւնը հեղինակութիւն չի վայելում այն պարզ պատճառով, որ ոչինչ չի անում։

Յիրաւի՛, ձերբակալւում են «Ղարաբաղ Կոմիտէի» անդամները, ժողովուրդը հրաժարւում է ընտրութիւններին մասնակցելուց, Ադրբեջանից փախած հայերին վերադարձնում են յետ, Հայաստանի պաշտօնեաները մի քանի անընշան բացառութիւններով մնում են իրենց պաշտօնների վրայ, չնայած որ հեռու են վերափոխւելու ձգտումներից, արտասահմանի օգնութիւնը Երկրաշարժի զոհերին չի հասնում, իսկ Սուրէն Յարութիւնեանը հաւանաբար դարձել է այդ բրեժնեւեան պահպանողական տարրերի գերին ու մէջտեղ չկայ: Նոր վարչապետը ու ԿԳԲի նախագահը հայերէն խօսել չգիտեն եւ, ընդհանրապէս, շատ պարզ երեւում է, որ Գորբաչեւը Հայաստանի մէջ իրեն կողմնակիցներ չի կարողանում գտնել, եթէ բոլորին դրսից է բերում:

Ահա թէ ինչո՛ւ ես համարում եմ, որ մենք վերափոխութիւններ չենք ուզում: Չեն ուզում նրանք, ովքեր ժողովրդի տէրերն են համարւում, իսկ ի՞նչ կարող է անել անտէր մնացած ժողովուրդը: Ապստամբե՞լ: Այո՛, բայց սեփական ղեկավարների, այլ ոչ թէ ռուսների ու վարչակարգի դէմ, որոնց մենք նախ չենք կարող փոխել, որոնց փոխելը մեզ համար վտանգաւոր է, ապա՝ նրանք գրեթէ մեղք չունեն, որ Հայաստանը ոչ մի կերպ չի ուզում դուրս գալ լճացումից:

Լիտւայի ժողովրդական պատգամաւորները Կանադայում պաշտօնապէս յայտարարեցին, որ իրենք ձգտում են Լիտւան տնտեսապէս ամբողջութեամբ կտրել Խորհրդային Միութիւնից, թողնելով Մոսկւային միայն արտաքին քաղաքականութիւն վարելու պարտականութիւնը: Խորհրդային քաղաքացիութիւնից զրկւած Մստիսլաւ Ռոստրոպովիչը, որի կինը՝ Գալինա Վիշնեւսկայան արտասահմանում հրատարակեց Խորհրդային Միութիւնը ցեխը կոխող մի գիրք, այսօր հրաւիրւում է Մոսկւա համերգներ տալու համար, իսկ Հայաստանի ղեկավարութիւնը չի կարողանում բանտերից ազատ արձակել իր հասարակական գործիչներին: Այստեղ էլ, հաւանաբար, ոչ թէ չի կարողանում, այլ չի ուզում: Չի ուզում, որովհետեւ նրանց հեղինակութիւնը ժողովրդի մէջ աւելի բարձր է:

Բայց վերափոխութիւնների հակառակորդների մէջ կան նաեւ միամիտներ, որոնք գուցէ ազնիւ սրտեր ունեն, բայց շատ հեռու են կանգնած քաղաքականութիւնից: Այնտեղ, որտեղ բացակայում են գիտելիքները, ծնունդ են առնում առասպելները: Սակայն այս հարցում չափն էլ չանցնենք, ոմանց ազնւութիւնն էլ կասկածելի է, քանզի նրանց ատելութիւնը իշխում է տրամաբանութեան վրայ, իսկ ատելութիւնը եւ սէրը անաչառութեան ամենադաժան թշնամիներն են: Երեխայութիւնն էլ աններելի է, քանզի 17 տարեկան չեն:

Խօսքը նրանց մասին է, որոնց ծայրահեղականներ են կոչում, որոնք իրականում սակայն, ոչ թէ ծայրայեղականներ են այլ հեռաւոր նպատակները այսօրւայ քաղաքական նպատակներ դարձնողներ: Ես խօսել եմ նրանց հետ ու

կարդացել նրանց գրութիւնները: Սրանց թւին են պատկանում ինքնահիրատարակչական «**Հայրենիք**» ամսագրի խմբագրութեան կողմից հրատարակւած «**Հայրենիք եւ Սփիւռք**» գրութեան կողմնակիցները եւ նրանց արտասահմանեան համակիրները, որոնց կարելի է «ցուցարարներ» անւանել, քանի որ նրանք բողոքի ցոյց կազմակերպելը ինքնանպատակ են համարում եւ այս քաղաքից այն քաղաք վազվզելով 20-30 հոգով ցոյցեր են կազմակերպում խորհրդային դեսպանատների առջեւ, կարծելով թէ քաղաքական գործունէութեամբ են զբաղւած եւ հայ ժողովրդի ճակատագրի խնդիրն են լուծում:

Եկել է ժամանակը դռները փակելու՝ այս մանկապարտէզային խաղերը կազմակերպողների առջեւ: Ժամանակին մենք ուշադրութիւն չդարձրեցինք մի շարք խմբակցութիւնների ծայրայեղութիւնների վրայ, իսկ նրանք դուրս եկան մանկապարտէզից եւ սկսեցին իրենց հակահայկական ոճրային խաղերը խաղալ դրսում ու այդ խաղերով ինքնահաստատուեցին: Այդ բանը նրանց յաջողուեց, որովհետեւ արտասահմանեան լրագրողներին շշմեցուցիչ լուրերն են հետաքրքրում՝ յիմար թէ սուտ, նշանակութիւն չունի, որքան անհաւատալի, այնքա՛ն լաւ: Յայտարարւում է, որ Օրլիի օդանաւակայանում ռումբ պայթեցնելով կարելի է ազատագրել Հայաստանը, որ Ֆրանսիայի նախագահ Միթերանը պիտի շուտով սպանւի հայ ահաբեկիչների կողմից եւ կամ էլ, որ Մոսկըւայի մետրոյի մէջ ռումբ պայթեցնելով կարելի է տապալել խորհրդային իշխանութիւնը՝ լրագրողները ականջները կախած գրում ու գրում են այդ «հերոսներ»ի մասին:

Եւ ոչ միայն լրագրողները: Բաւական է, որ մի խումբ անպատասխանատու հայեր կամ վրացիներ յայտարարեն, թէ սկսում են իրենց պայքարը Խորհրդային Միութիւնից անջատւելու համար եւ Սպիտակ Տունը կ՚ողջունի ազատասէր ժողովուրդների բնական ձգտումը, յետոյ՝ նախագահ Բուշը Գորբաչեւի հետ միասին կը ծիծաղեն երկու այս ազատասէր ժողովուրդների միամտութեան վրայ:

Ինչպէ՞ս կարելի է մնալ այս միամտութեան մթնոլորտում, երբ մենք տեսանք, որ ազատասէր Արեւմուտքը ոչինչ չարեց, երբ Բեռլինում, Հունգարիայում ու Չեխոսլովակիայում տեղի ունեցան իսկական ժողովրդական ապստամբութիւններ՝ այդ երկրների ղեկավարների մասնակցութեամբ: Ո՞ր հաշւարկից ելնելով պիտի Արեւմուտքը վրացիներին կամ հայերին օգնի: Կամ՝ գուցէ՝ մենք մեր սեփական ուժերի՞ վրայ ենք ուզում դնել մեր յոյսը: Որտե՞ղ են այդ ուժերը, եթէ Թբիլիսիում զինւորները օր-ցերեկով ճագարների նման բահերով ու մահակներով սպանում են անկախութիւն պահանջող «յեղափոխականներին»:

Բայց թող չստեղծւի այնպիսի տպաւորութիւն, թէ ես ցոյցերի, գործադուլներ ու ապստամբութիւնների դէմ եմ: Ե՛ւ ցոյցը, ե՛ւ գործադուլը, ե՛ւ զինեալ ապստամբութիւնը պայքարի միջոցներ են, մանաւանդ Հ.Յ. Դաշնակցութիւն կուսակցութեան համար եւ կարող են կիրառուել որեւէ ժամանակ, որեւէ քաղաքական նպատակի հասնելու համար: Սակայն պայքարի այս ձեւերից իւրաքանչիւրը ունի իր տեղը եւ ամենակարեւորը՝ նրանք բոլորն էլ պահանջում են լուրջ նախապատրաստական աշխատանք:

Գործադուլը, հացադուլը, բողոքի ցոյցը եւ բոլոր նման միջոցները օգտակար են երկու դէպքում: Առաջինը վերաբերւում է մոռացւած եւ անյայտ դատերը մէջտեղ հանելուն եւ հասարակութեան ուշադրութեանը ներկայացնելուն: Երկրորդը՝ անհրաժեշտ է բարոյական ճնշում գործելու համար այն կողմի վրայ, որը հրաժարւում է բաւարարելուց ցուցարարների պահանջը, կամ բարոյական աջակցութիւն ցուցաբերելու համար այն կողմին, որը պաշտպանում է ցուցարարների շահերը: Եթէ նման կողմեր չկան, մեր ցոյցերը եւ բողոքները անիմաստ են, եթէ չհաշւենք նրանց քարոզչական բնոյթը, թէ այսպիսի հարց էլ գոյութիւն ունի աշխարհում:

Եթէ կողմերը արդէն կան, ցոյցերը եւ բողոքները պէտք է համաձայնեցւեն մեր շահերը պաշտպանող կողմի հետ: Հակառակ դէպքում նրանք կարող են խանգարել կողմերի բանակցութիւններին: Նման կացութիւն ստեղծւեց վերջերս Լեհաստանում, երբ աշխատաւորների շահերը պաշտպանող «Համերաշխութիւն» արհմիութիւնը բանակցութիւններ էր վարում Լեհաստանի կառավարութեան հետ, իսկ ծայրայեղական խմբերը՝ դատապարտելով Լեխ Վալենսայի զիջումները ու կոմունիստների հետ բանակցելու փաստը՝ տարբեր քաղաքներում ցոյցեր ու գործադուլներ կազմակերպեցին: Կառավարութիւնը հրաժարւեց բանակցութիւնները շարունակելուց եւ ասաց Վալենսային. եթէ դու կացութեան տէրն ես, ապա վերջ տուր ցոյցերին: Վալենսան ստիպւած եղաւ շրջագայելու Լեհաստանով մէկ ու համոզելու աշխատաւորներին, որ հրաժարւեն գործադուլներից, քանզի խանգարում են բանակցութիւններին: Մեծ դժւարութեամբ նա կարողացաւ վերջ տալ այդ ցոյցերին, ապացուցելով, որ կացութեան տէրն է, ապա՝ յաջողութեամբ աւարտեց բանակցութիւնները: Բանակցութիւնների արդիւնքը եղաւ այն, որ Միացեալ Նահանգները վերանայեց իր ամբողջ քաղաքականութիւնը Լեհաստանի նկատմամբ, ինչը երբեք տեղի չէր ունենայ ամենազանգւածային ցոյցի բերումով: Բայց մեր պարագան բոլորովին ուրիշ է:

Արտասահմանում չկան ուժեր, որոնք պատրաստ են պաշտպանելու հայկական շահերը: Արտասահմանի բոլոր պետութիւնները իրենց վերաբերմունքը Գորբաչեւի նկատմամբ եւ իրենց փոխյարաբերութիւնները Խորհրդային

Միութեան հետ կառուցում են սեփական շահերից ելնելով եւ հաշւի չեն առնում նոյնիսկ հրեաների շահերը, էլ ո՞ւր մնաց հայերինը: Եթէ Խորհրդային Միութեան դեսպանատների առջեւ ոչ թէ հարիւր, այլ հազարաւոր մարդկանց ցոյցեր կազմակերպւեն, միեւնոյնն է, մենք չենք կարող ստիպել Արեւմուտքին՝ դիրք ճշտելու Գորբաչեւի նկատմամբ: Բայց մենք, անշուշտ, կարող ենք ցոյցեր կազմակերպել որոշակի պահանջների շուրջ: Այսինքն՝ նպատակ ունենալով ոչ թէ վարկաբեկել խորհրդային իշխանութիւնը կամ Գորբաչեւին, այլ պահանջել «Ղարաբաղ Կոմիտէ»ի անդամների ազատ արձակումը, էկոլոգիական խնդիրների լուծումը եւ այլ անարդարութիւնների շտկումը: Այս բողոքները կարող են լսել Արեւմուտքի կողմից եւ Գորբաչեւի հետ հանդիպման ժամանակ յիշատակւել:

Իսկ Հայաստանում ցոյցերը իրենց դերը կատարեցին: Նրանք ցոյց տւեցին, որ գոյութիւն ունի Ղարաբաղի հարց, որ այդ չլուծւած խնդիրը Ստալինի ոճրագործութիւններից մէկն է եւ որ այդ հարցի լուծումը պահանջում է ամբողջ հայ ազգը: Լուծումը, որ տրւեց այդ խնդրին, մեզ չի բաւարարում, բայց վերջին հաշւով լուծում է: Մնացածը կախւած է Հայաստանի ղեկավարութիւնից, որը դժբախտաբար բացակայում է վերափոխութիւնների բեմահարթակից:

«**Հայրենիք եւ Սփիւռք**» գրութեան մէջ Յակոբջան Թադէոսեանը մի տեսակ ծաղրանքով գրում է «**նոր տիպի Սովետ Միութեան Մասին**» եւ բողոքում է, թէ «**մեր ցաւը քիչ էր, դուք էլ մի կողմից**»: Ցաւը, անշուշտ, քիչ չէր, բայց Խորհրդային Միութիւնը իսկապէս նոր տիպի է դարձել, եւ եթէ այդ նորամուծութիւնը դեռեւս Հայաստան չի հասել, դա չի նշանակում, որ խորհրդային իշխանութեան նկատմամբ մեր ատելութեան մէջ ոչինչ չի փոխւել: Այսօր, նոր կացութեան մէջ նոր ճանապարհներ որոնելու հնարաւորութիւնները տասնապատկւել են: Այդ ճանապարհների մէջ յեղաշրջումը ու զինեալ պայքարն էլ չի բացառւում, բայց այդ լուրջ քայլերին պէտք է նախապատրաստւել շատ աւելի լուրջ, քան այն մանկապարտէզային յայտարարութիւններով, որ արւում են մեր ինքնակոչ «Նոր ֆեդայիների» կողմից: Լիտւացիները, օրինակ, անկախութիւն չեն պահանջում: Բայց նրանք պահանջում են, որ լիտւացիները զինւորական ծառայութիւնը անցկացնեն Լիտւայում: Ա՛յ, եթէ նրանք կարողանան ստանալ այդ իրաւունքը եւ Լիտւայի տարածութեան վրայ ունենան լիտւական բանակ, նրանց այլեւս մահակներով ու բահերով չեն սպանի ռուս զինւորները: Իսկ երեխաների նման փողոց թափելն ու անկախութիւն պահանջելը ոչ այլ ինչ է, եթէ ոչ արկածախնդրութիւն եւ հայ ժողովրդին անտեղի տեղը հարւածի տակ դնելու դաւաճանութիւն: Եւ այս արկածախնդիրները համարձակւում են մեղադրել Դաշնակցութեանը՝ լռութեան կամ սխալ խօսելու մէջ: Այսինքն՝ ի՞նչ էին սպասում մեր «նորօրեայ յեղափոխականները» Դաշնակցութիւնից: Որ

նա մաուզերը մէջքին կապած մտնէր Հայաստա՞ն ու կռէ՞ր ռուս բանակի դէմ, կամ յայտարարէր, որ շատ լաւ է անում ժողովուրդը, որ քարկոծում է ռուս զինուորներին, եւ կամ էլ Հայաստան զէնք ուղարկէ՞ր, կամ՝ փորձէր ահաբեկե՞լ Գորբաչեւին, երբ նա Արեւմուտքում է գտնւում, եւ կամ էլ ահաբեկէ՞ր խորհըրդային դիւանագէտներին: Վստահեցնում եմ «Հայրենիք» պարբերականի խմբագրութեանը, որ Հ.Յ. Դաշնակցութիւնը այս ամէնը կարող էր անել ու կ'անի հարկ եղած դէպքում, բայց չի անում, որովհետեւ երեխայ չէ, այլ 100 տարւայ փորձ ունեցող քաղաքական կուսակցութիւն:

Ուրեմն ի՞նչ կարելի է անել ներկայ պայմաններում:

Գորբաչեւի իշխանութեան գլուխ գալուց յետոյ հասարակական գործունէութեան դաշտը այնքան ծաւալւեց, որ ազատութիւններից յետ վարժւած Խորհրդային Միութեան ժողովուրդները ոչ միշտ եւ ոչ ամենուր կարողացան ճիշտ կողմնորոշւել ստեղծւած կացութեան մէջ եւ ճիշտ պատասխան գտնել «Ի՞նչ անել» չարաբաստիկ հարցին:

Իսկ դատաւորը ո՞վ է:

Տասնամեակներ շարունակ ստալինեան մռայլ գիշերից, Խրուշչեւի մոմի լոյսերի տակ որոշ ճշմարտութիւններ ճանաչելուց, բրեժնեւեան ճահիճի մէջ սուզւելուց յետոյ ինչպիսի՞ քաղաքական, ազգային ու հասարակական հասունութիւն կարելի էր սպասել մեր ժողովուրդից: Բայց փառք Աստուծոյ, մենք տեսանք, որ ո՛չ ստալինեան մաքրագործումները, ոչ էլ բրեժնեւեան համաժողովրդական անբարոյականութիւնը մեր ժողովրդից չէին խլել նրա ազգային բնազդը, որի վրայ հազարամեակների ընթացքում աշխատել են մեր եկեղեցին, մեր յեղափոխական ֆեդայիները եւ մեր պատմութիւնը:

Սակայն ինքնապաշտպանութեան բնազդը եղածը ձեռքից չտալու համար է: Իսկ եղածի վրայ մէկ քար աւելացնելու, որեւէ բան ձեռք բերելու եւ ոտնահարւած ազգային արժէքները վերականգնելու համար, բնազդը բաւարար չէ: Այստեղ անհրաժեշտ են յատուկ քաղաքական գիտելիքներ, իմաստութիւն ու արիութիւն՝ նպատակներ ձեւակերպելու եւ այդ նպատակներին հասնելու համար:

Յեղափոխական իրատեսութիւնը, հաւանաբար, այն միակ բանն է, որ պակասել ու պակասում է մեր ժողովրդին, երբ նա անսպասելիօրէն ընկնում է նոր քաղաքական կացութիւնների մէջ: Իսկ դա պատահում է յաճախ, քանի դեռ մենք այն ժողովուրդը չենք, որ սեփական ուժերով կարողանանք միջազգային նոր կացութիւններ ստեղծել, ապա՝ օգտւել այդ կացութիւններից:

Քաղաքական կացութիւնները մեզ պարտադրւում են ուրիշ ուժերի կողմից եւ մեզ մնում է միայն ճիշտ կողմնորոշումը:

Վերջին դարի ընթացքում մեզ գրեթէ երբեք չի յաջողուել մեր սեփական ջանքերով ստեղծել քաղաքական կացութիւններ, որտեղ մենք կարող էինք նախօրօք ծրագրել մեր անելիքները: Որպէս օրէնք, այդ կացութիւնները եկել են անսպասելիօրէն եւ մենք ստիպւած ենք եղել կողմնորոշւելու արդէն հոսանքի մէջ ընկած: Այդպէս էր Օսմանեան Կայսրութեան Սահմանադրութեան ժամանակ, առաջին Աշխարհամարտի նախօրեակին, Ռուսաստանի յեղափոխութեան օրերին, Կիլիկիայից ֆրանսիական զօրքերի դուրս բերման պահին եւ նոյնիսկ Սարդարապատի ճակատամարտի ու Հայաստանի Անկախ Հանրապետութիւն կերտելու օրերին:

Բոլոր այս պահերին մենք ղեկավարւում էինք կա՛մ մեր յեղափոխական ոգով եւ կամ էլ իրատեսութեան տրամաբանութեամբ: Սակայն առանձին-առանձին այս երկու մօտեցումները թերի են, քանի որ զուտ յեղափոխական մոտեցումը տանում է դէպի ծայրայեղութիւններ եւ անտեղի զոհաբերութիւններ, իսկ զուտ իրատեսութիւնը դէպի կրաւորականութիւն: Ահա թէ ինչու մեզ անհրաժեշտ է ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԻՐԱՏԵՍՈՒԹԻՒՆ, այսինքն՝ յեղափոխական գործելակերպ գոյութիւն ունեցող իրականութեան սահմաններում:

Եւ, ուրեմն, նախեւառաջ, անհրաժեշտ է ամբողջ պատասխանատուութեամբ գտնել գործունէութեան ճիշտ ուղին, այսինքն պատասխանել «Ի՞նչ անել» հարցին, հաշւի առնելով, որ այդ պատասխանից կախւած կը լինի մեր ժողովրդի քաղաքական ճակատագիրը: Բայց կրկին հարցնենք. ո՞վ է դատաւորը, ո՞վ կարող է պատասխանել այդ կարեւոր հարցին: Այս պայմաններում, երբ մենք չունենք ճանաչւած քաղաքական հեղինակութիւններ, երբ պաշտօնական ղեկավարութիւնը դեռեւս չի կարողանում դուրս գալ կաշառակերների ու պահպանողականների ճահճից, երբ պատասխաններ տալու «Ղարաբաղ Կոմիտէ»ի առաջին փորձերը կատաղի հակազդեցութիւն առաջացրեց նրանց դէմ, երբ արտասահմանում գտնւող քաղաքական կուսակցութիւնները կտրւած են Երկրից, միակ դատաւոր կարող է ճանաչել հայ ժողովուրդը իր բոլոր խաւերով, քաղաքական կուսակցութիւններով, հասարակական եւ բարեգործական կազմակերպութիւններով, գիտնականներով ու արուեստագէտներով:

Դժբախտաբար, այս բոլորի տեսակէտները քննարկելու ու համադրելու հնարաւորութիւն առայժմ բացակայում է, քանզի պաշտօնական մամուլի էջերը չեն տրամադրւում այդ նպատակի համար: Այս պայմաններում ամէն մի անհատ իրեն առաջնորդ է հռչակում, ամէն մի խմբակ հայ ժողովրդի անունից խօսելու իրաւունք է վերապահում եւ ամէն մի մտաւորական իր տեսակէտը միակ ճշմարիտն է համարում: Բայց թող ժողովուրդը ընտրի թէ՛ ճշմարտութիւնները եւ թէ առաջնորդներին:

Եթէ մենք այսօր չտեսնենք իրականութիւնը, կամ՝ նրան սխալ գնահատական տանք, եթէ մենք այսօր չկարողանանք օգտուել մեզ պարտադրուած կացութիւնից, ապա վաղը կարող է ուշ լինի: Ուրեմն, եկէք միասնաբար նախ քննարկենք մի քանի հրատապ հարցեր:

1. Ազգահաւաքը եւ հողահաւաքը այն կարեւորագոյն խնդիրներն են, որոնք պէտք է լուծուեն՝ մեր երկրի մէջ միասնական հայկական կեանքով ապրելու համար: Այս առիթով անհրաժեշտ է քննարկել հետեւեալ հարցը: Երբ Սումգայիթի ջարդերի եւ Ղարաբաղեան շարժման բերումով տասնեակ հազար հայեր Ադրբեջանից հայրենիք վերադարձան, ինչո՞ւ պէտք է մենք նրանց վերադարձնենք Ադրբեջան, որտեղից նրանք փախել են: Խաղաղ պայմաններում մենք պէտք է ահագին ջանքեր ու գումարներ ծախսէինք, այդ զանգւածները Ադրբեջանից հայրենիք վերադարձնելու համար: Այժմ, երբ իրենք իրենց ոտքով Հայաստան են եկել, մենք չենք կարողանում նրանց տեղաւորել հայրենիքում ու չենք պայքարում նրանց վերադարձի դէմ: Ամենապարզ հաշւարկը ցոյց է տալիս, որ Ադրբեջանը շատ պիտի տուժի հայ տարրից զրկուելուց յետոյ, իսկ Հայաստանից հեռացած ադրբեջանցիները ոչ մէկ կենսական արժէք չունէին Հայաստանի տնտեսութեան ու հասարակական կեանքի համար:

2. Ինչպէ՞ս կարելի է Սփիւռքի հայ քաղաքական եւ հասարակական կազմակերպութիւնները մասնակից դարձնել հայրենի առօրեայ կեանքին: Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապերի Կոմիտէն այդ հարցի պատասխանը չունի եւ, յաճախ, Սփիւռքի հետ գործելու համար ընտրում է այնպիսի ներկայացուցիչներ, որոնք ո՛չ Սփիւռքն են ներկայացնում եւ ոչ էլ որեւէ կազմակերպութիւն:

3. Ինչպէ՞ս կարելի է ազդել Խորհրդային Միութեան իշխանութիւնների վրայ, որ նրանք արտասահմանում պաշտպանեն Հայ Դատը, այսինքն՝ միջազգային ատեաններում դատապարտեն 1915 թւականի հայերի ցեղասպանութիւնը:

4. Ո՞վ, ինչպէ՞ս եւ ո՞ր կէտերում պէտք է վերանայի հայ ժողովրդի նենգափոխւած պատմութիւնը: Ի՞նչ գործիչներ, ի՞նչ կազմակերպութիւններ եւ ի՞նչ իրադարձութիւններ պէտք է ենթարկւեն վարկափրկման:

5.Ինչպէ՞ս կարելի է ստեղծել անհատի վրայ ճնշում գործադրող առողջ հասարակական կարծիք, որի հետ հաշւի նստելով, ծնողները իրենց երեխաներին չտանեն ռուսական դպրոցներ եւ կամ էլ սուտ մեղադրանքներ չներկայացնեն «Ղարաբաղ Կոմիտէ»ի հասցէին:

6. Ինչպէ՞ս կատարել Գորբաչեւի վերափոխութիւնների իրական վերլուծութիւնը՝ հայկական տեսանկիւնից: Ի՞նչ միջոցներով եւ ո՞ր սահմաններում կարելի է պահանջներ ներկայացնել կենտրոնական իշխանութիւններին: Ինչ-

պէ՞ս պէտք է գնահատել Ղարաբաղի վերաբերեալ կայացած որոշումը եւ որո՞նք են այս ուղղութեամբ կատարուելիք հետագայ քայլերը։

Եթէ մենք միասնական ջանքերով գտնենք այս հարցերի պատասխանները, ապա կարող ենք յուսալ, որ «Ժողովրդական ճակատի» մեքենան կառուցման ընթացքի մէջ է։ Եւ միայն այն ժամանակ, երբ այդ մեքենան ամբողջովին պատրաստ կը լինի, կարելի է մտածել վարորդի եւ անձնակազմի մասին։

1989

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

Է. Յովհաննիսեան

Այն, ինչ կատարուեց ու շարունակում է կատարուել Խորհրդային Միութիւնում, այլեւս ոչ մէկը չի կոչում ո՛չ յեղափոխութիւն, ո՛չ յեղաշրջում, ո՛չ ժողովրդավարութիւն եւ ոչ էլ բարեփոխութիւն: Որոշ չափով դեռեւս մնացել է հրապարակայնութիւնը, բայց կարծես թէ նա էլ յանձնում է իր դիրքերը եւ շուտով մենք կարող ենք կրկին սուզուել մռայլ ժամանակների մէջ, որտեղ երկրի նոր ղեկավարները կը վերադառնան հին սկզբունքներին:

Ինչո՞ւ այդպէս պատահեց: Ինչո՞ւ իրենց կրթուած ու զարգացած համարող այսօրւայ Խորհրդային ղեկավարները, որոնք եկան փոխարինելու լճացման ժամանակների բթամիտ ու կաշառակերութեան մէջ թաղուած հին ղեկավարներին, կամաց-կամաց ի սպառ հրաժարուեցին ժողովրդավարութիւնից:

Նախ՝ նշենք, որ նոր ղեկավարները ո՛չ իրենց բարոյական սկզբունքներով, ո՛չ կրթութեամբ, ո՛չ ևիրւածութեամբ, ո՛չ քաղաքական ու յեղափոխական փորձով չունեն որեւէ առաւելութիւն այն առաջին սոցիալ- դեմոկրատների, իսկ յետոյ էլ կոմունիստների, էլ չխօսենք բիւրեղ ապակու նման մաքուր դաշնակցականների համեմատութեամբ: Բայց մենք տեսանք, թէ ինչպէս Մարտովները, Տրոցկիները, Բուխարինները, Շահումեանները փոխարինուեցին Ստալիններով, Բերիաներով եւ Միկոեաններով: Ուրեմն՝ ինչո՞ւ զարմանալ, որ այս նոյն ընթացքի մէջ են նաեւ այսօրւայ ղեկավարները, որոնք ժողովրդավարութեան ալիքի վրայ անցան իշխանութեան գլուխ: Անշուշտ, զարմանալ պէտք չէ, բայց այդ պատմական փորձի ուսումնասիրութիւնը կատարել անհրաժեշտ է, քանզի այդ երեւոյթը բխում է ժողովրդավարութեան ողբերգութիւնից:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԵՐԿՈՒ ԵՐԵՄՆԵՐԸ

1930 թւականին Ֆրանսիայի ընկերվարական կուսակցութեան ղեկավար եւ կուսակցական պաշտօնաթերթի գլխաւոր խմբագիր Լէոն Բլիումը հրատարակեց իր համառօտ վերլուծութիւնը՝ «**Բոլշեւիզմը եւ ընկերվարութիւնը**» վերնագրի տակ, որտեղ ցոյց տւեց քաղաքական եւ ընկերային յեղափոխութիւնների տարբերութիւնը:

«**Քաղաքական յեղափոխութիւնները, - գրում է Բլիումը,- չեն փոխում իւրաքանչիւր քաղաքացու անձնական կեանքի հիմքը կազմող յարաբերութիւնները:**

Նրանք միայն ազգի մակերեսն են մաքրում, բայց որեւէ փոփոխութիւն չեն բերում ընկերութեան հիմքերի եւ խորքերի մէջ: Ընկերային յեղափոխութիւնները, ըստ իրենց էութեան եւ հակառակ քաղաքական յեղափոխութիւնների, միայն ըմբոստութեամբ չեն աւարտւում: Յեղափոխութիւնը կատարւում է ոչ թէ նրա համար, որ որեւէ յեղափոխական կուսակցութիւն տիրանայ իշխանութեան, այլ այն ժամանակ միայն, երբ կը փոխւի ընկերութեան էութիւնը: Յեղափոխութիւնը չի կարող աւարտուած համարուել, երբ այս փոփոխութիւնը տեղի չի ունեցել»:

Շարունակելով իր միտքը, Լէոն Բլիւմը այն տեսակէտն է յայտնում, որ առանց իշխանութեան տիրացման, չկայ յեղափոխութիւն, սակայն բոլշեւիկները իշխանութեան այս տիրացումը նկատում են յեղափոխութիւնն իսկ: Մինչդեռ իշխանութեան տիրացումը ոչ թէ յեղափոխութիւնն է, այլ միայն յեղափոխութիւն կատարելու հնարաւորութիւն:

Այս նոյն մօտեցումը մենք պէտք է ունենանք ժողովրդավարութեան նկատմամբ, որը ունի երկու երեսներ՝ քաղաքական եւ ընկերային: Քաղաքական ժողովրդավարութիւնը կայանում է այնպիսի պայմանների ստեղծման մէջ, որոնք ապահովում են ղեկավարների ժողովրդավարական ընտրութիւնը: Նման պայմաններ ստեղծելու համար երբեմն պահանջւում է երկարատեւ պայքար, որից յետոյ միայն բոնակալները համաձայնւում են երկրում ազատ ընտրութիւններ անցկացնել: Երբ այդ ընտրութիւնները տեղի են ունենում, քաղաքական ժողովրդավարութիւնը կարելի է աւարտած համարել: Սակայն, իրական ժողովրդավարութիւնը սկսւում է դրանից յետոյ:

Դրանից յետոյ է, որ նորընտիր ղեկավարները իրականացնում են ընկերային ժողովրդավարութիւնը, որի արդիւնքները իր կաշւի վրայ զգում է ժողովուրդը: Եւ ամէն մի անհատ: Եթե ընկերային ժողովրդավարութիւն տեղի չունենայ, քաղաքական ժողովրդավարութիւնը ոչ միայն ոչ մէկին պէտք չէ, այլեւ աւելի վտանգաւոր է, քան ժողովրդավարութեան պաշտօնական մերժումը: Բռնակալը՝ բռնակալ է եւ նրա իշխելու ձեւերին մարդիկ յարմարւում են, գիտակցելով՝ որ ապրում են անարդար հասարակարգում: Իսկ երբ մէկ կուսակցութիւն իր վրայ է վերցնում ժողովրդի անունից խօսելու իրաւունքը, բայց իրականում շարունակում է բռնութիւնը, ժողովրդին բողոքելու տեղ չի մնում, որովհետեւ բռնութիւնը կատարւում է ժողովրդի անունով: Մնում է սպասել յաջորդ ընտրութիւններին, բայց որպէս օրէնք այդ ընտրութիւնները կա՛մ ընդհանրապէս տեղի չեն ունենում եւ կամ էլ լինում են անազատ:

Այդպէս, ժողովրդավարական ճանապարհով իշխանութեան գլուխ անցան Լենինը, Ստալինը, Մուսոլինին, Հիտլերը եւ շատ ուրիշներ, որոնք մնացին քաղաքական ժողովրդավարութեան վրայ, այսինքն՝ ընտրուեցին ժողովրդավարութեան ճամբով, բայց շուտով սկսեցին հալածել իրենց ընտրողներին:

Տեսնենք թէ ի՞նչ է կատարւում այս իմաստով Անդրկովկասում: Նախեւառաջ նշենք, որ Խորհրդային Միութիւնում ընդհանրապէս, իսկ Անդրկովկասում յատկապէս, քաղաքական ժողովրդավարութիւնը յաղթանակ շահեց ոչ թէ այնտեղ ապրող ժողովուրդների ճնշման տակ, այլ շնորհւեց վերեւից Գորբաչեւի, այսինքն՝ կոմունիստների կողմից: Եթէ Հայաստանում, Վրաստանում ու Ադրբեջանում տեղի ունեցան ժողովրդավարական ընտրութիւններ, ապա դրա համար մենք պարտական ենք միայն ու միայն Գորբաչեւի թիմին, որը մեզ համար այդ հնարաւորութիւնը ստեղծեց: Սա նշանակում է, որ նրանք՝ ովքեր այդ ազատ ընտրութիւնների բերումով անցան իշխանութեան գլուխ, ոչ մէկ սեփական վաստակ չունեն քաղաքական ժողովրդավարութիւնը իրականացնելու մէջ: Ահա թէ ինչո՞ւ նրանց ընտրող ժողովուրդները ուշի-ուշով սպասում էին նրանց յաջորդ քայլերին, այսինքն՝ ընկերային ժողովրդավարութեանը: Ինչպիսի՞ն եղան այդ քայլերը:

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Ազգային շարժման նշանաբանի տակ Գամսախուրդիայի թիմը անցաւ իշխանութեան գլուխ եւ յայտարարեց, թէ ինքը ընտրւած է ժողովրդի կամքով, իսկ Գերագոյն Խորհուրդը՝ Ազգային Պառլամենտն է: Քաղաքական ժողովրդավարութիւնը աւարտւեց ու սկսւեց ընկերային ժողովրդավարութիւնը, որի ժամանակ հալածանքի ենթարկւեցին բոլոր ընդդիմադիր ուժերը. ազգային փոքրամասնութիւնները, իսկ հայերը եւ ադրբեջանցիները յայտարարւեցին Վրաստանի թշնամիներ: Վրաստանում տեղի ունեցան ձերբակալութիւններ եւ Գամսախուրդիայի կողմից արւեցին յայտարարութիւններ, որոնք ամերիկեան «**Բալտիմոր Սան**» թերթի կողմից գնահատւեցին որպէս ֆաշիստական: Վրաստանի Գերագոյն Խորհրդի նախագահ Զւիադ Գամսախուրդիան իր բոլոր հակառակորդներին անւանում է յանցագործներ, փակում է իրենց անցանկալի բոլոր տեղեկատւական միջոցները եւ անվերջ պնդում է, որ վրացիները ունեն յատուկ իրաւունքներ: «**Բալտիմոր Սան**»ը մէջբերում է Գամսախուրդիայի բառերը այն մասին, որ ազգային փոքրամասնութիւնների իրաւունքների պաշտպանութիւնը կարող է տեղի ունենալ միայն մեծ պետութիւններում, իսկ Վրաստանը ոչ Ֆրանսիա է եւ ոչ էլ Անգլիա, ուստի նման շռայլութիւն իրեն չի կարող թոյլ տալ: Մենք պէտք է փրկենք Վրաստանը,-բացագանչում է Գամսախուրդիան,-որին կարող են կուլ տալ հայերը, ռուսները եւ ադրբեջանցիները: Ըստ Գամսախուրդիայի՝ այս ժողովուրդներով արհեստականօրէն Կրեմլը բնակեցրել է Վրաստանը: Եթէ սրան աւելացնենք Գամսախուրդիայի յայտարարութիւնները այն մասին, որ անհրաժեշտ է արգելել խառը ամուս-

նութիւնները եւ Վրաստանից դուրս անել նրանց, ովքեր Վրաստանի անկախութեան դէմ են, պարզ կը դառնայ որ Վրաստանի ընկերային ժողովրդավարութիւնը ամբողջովին տապալուեց: Ի՞նչ է անում Վրաստանի մտաւորականութիւնը: Նա բաժանուել է երկու մասի: Ոմանք սարսափահար եղած լռում են, ոմանք էլ փառաբանում են Գամսախուրդիային ճիշտ այնպէս, ինչպէս ժամանակին նախորդ ղեկավարներին: Այն հատ ու կենդ մտաւորականները, որոնք դեռեւս համարձակւում են բողոքել, խիստ պատժւում են: Անյայտ պատճառներով, օրինակ, մահացաւ Գամսախուրդիայի գլխաւոր հակառակորդ, աշխարհահռչակ փիլիսոփայ Մարդաշուիլին: Ձերբակալուեցին «**Միխդրիոնի**» կազմակերպութեան ղեկավարները: Իսկ Մարտի 8ին Մոսկւա մեկնեցին Վրաստանի 6 գրողներ, որոնք յայտարարեցին, որ օսեթների դէմ վրացիները թշնամութիւն չունեն, բայց Խորհրդային բանակը եւ Կրեմլը զինում են օսեթներին, որպէսզի նրանց ձեռքերով խլեն Վրաստանի անկախութիւնը: Այս դատարկաբանութիւնները յայտնի են: Հայաստանում էլ գտնուեցին մարդիկ, որ լրջօրէն պնդում էին, թէ Հայաստանի երկրաշարժը կազմակերպել է Գորբաչեւը՝ հայերին Արցախի համար պատժելու նկատառումով:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մեր հայրենիքում նոյնպէս քաղաքական ժողովրդավարութիւնը ընկերային ժողովրդավարութիւն չծնեց: Ժողովրդի ընտրեալները հրաժարուեցին կոալիցիոն կառավարութեան սկզբունքներից եւ, գրեթէ բոլոր պաշտօնների վրայ, խցկեցին ՀՀՇի ներկայացուցիչներին ու չի կարելի ասել, որ նրանք լաւագոյն թեկնածուներն էին: Ապա՝ ընդունեցին օրէնքներ, որոնք եթէ չեն էլ բացառում բազմակուսակցութիւնը, ապա գրեթէ անկարելի են դարձնում դասական կուսակցութիւնների մասնակցութիւնը Հայաստանի հասարակական եւ քաղաքական կեանքում: Ընդ որում՝ Հայաստանի Գերագոյն Խորհրդի որոշումը կատակերգութեան պէս մի բան է, քանզի բացառում է նաեւ Կոմունիստական կուսակցութեան մասնակցութիւնը Հայաստանի քաղաքական կեանքում: Կարծես թէ այդ հարցը Հայաստանը կարող է ինքնուրոյն կարգով լուծել: Հանրաքւէի մասնակցութիւնից հրաժարուելն էլ հակաժողովրդավարական քայլ էր, որովհետեւ Հայաստանի Գերագոյն Խորհուրդը իրաւունք չունէր զրկելու իր ժողովուրդը միութենական հանրաքւէից, քանի դեռ Հայաստանը այդ պետութեան մաս է կազմում: Արտասահմանի հայերը արդէն իրենց կաշւի վրայ զգում են Հայաստանի այսպէս կոչւած անկախութեան հետեւանքները: Միւնխենի խորհրդային հիւպատոսարանը, օրինակ, Երեւան մեկնողներին ծաղրելով ասում է, թէ դուք անկախ պետութիւն էք, ինչո՞ւ էք մեզանից արտօնագիր

խնդրում, գնացէք ձեր երկրի հիւպատոսարանը: Իրականում Հայաստանը Միութեան մէջ է եւ դեռեւս երկար ժամանակ կը մնայ այնտեղ, անկախ նրանից, թէ ինչպիսին կը լինեն Սեպտեմբերի 21ի հանրաքւէի արդիւնքները: Բոլոր այն խաղերը ու որոշումները, որոնք իբր թէ բխում են մեր արդէն անկախ լինելուց ոչ այլ ինչ են, եթէ ոչ վտանգաւոր գրգռումներ, որոնք չեն համապատասխանում հայկական շահերին եւ գալիս են ոչ-հայկական շրջանակներից:

Եթէ Ադրբեջանը մնում է Միութեան մէջ, իսկ մենք դուրս ենք գալիս, չե՞նք կարծում, որ «մնացող» Ադրբեջանը «մնացո՞ղ» Նախիջեւանի հետ պիտի կապւի «դուրս եկող» Հայաստանի վրայով, օրինակ՝ Զանգեզուրով: Եւ ինչպե՞ս պիտի այդ դէպքում լուծւի Արցախի Հարցը: Բոլոր այս հարցերի պատասխանները գիտեն թէ՛ ժողովուրդը եւ թէ Սփիւռքի փորձառու կուսակցութիւնները, բայց Հայաստանում բացակայում է ընկերային ժողովրդավարութիւնը եւ նրանց լսող չկայ: Ի՞նչ են այս մասին մտածում հայ մտաւորականները: Դժբախտաբար, նրանք էլ հրապարակում չեն: Ահաւասիկ՝ Ազատ Եղիազարեանի կարծիքը այս մասին («**Հայաստան**», փետրուարի 12, 1991):

«**Վերջին երկու-երեք տարում ամենայն յստակութեամբ գծագրուեց մի երեւոյթ, որի արմատները շատ խորն են՝ մտաւորականութիւնը տիրողների համար ինքնուրոյն արժէք չի ներկայացնում: Երբ ուզում էին, պահանջում էին, որ մտաւորականութիւնը պաշտպանի այս կամ այն միջոցառումը: Բայց, երբ մտաւորականութիւնը հանդէս էր գալիս իբրեւ ինքնուրոյն ուժ, դռները նրա առջեւ փակւում էին: Հիմա էլ յայտարարում են, թէ մտաւորականութիւնը անցել է ընդյատակ եւ այլն: Այս դէպքում էլ ինքնուրոյնութիւնը դուր չի գալիս: Բոլորը անվերապահ հպատակութիւն են պահանջում, չցանկանալով ընդունել, որ մտաւորականութիւնը ինքնուրոյն ուժ կարող է ներկայացնել**»:

Անշուշտ, մտաւորականութիւնը ինքնուրոյն ուժ է, ինչպէս ինքնուրոյն ուժ են բոլոր կուսակցութիւնները, կազմակերպութիւնները, խմբերը ու անհատները: Ընկերային ժողովրդավարութիւնը բոլորին լսելու եւ բոլորի հետ հաշւի նստելու արւեստ է:

Սակայն, տեսնենք, թէ ինչո՞ւ նրանք, ում ժողովուրդը ընտրեց մեծ սպասելիքներով, այդ սպասելիքները չարդարացրին: Այստեղ, հաւանաբար, պէտք է կրկին վերադառնալ Լէոն Բլիւմին, որը մեղադրելով Բոլշեւիկներին ընկերային յեղափոխութիւնից հրաժարւելու մէջ, գրում է.-

«**Բոլշեւիկների առասպելական յիշատակները՝ ֆրանսիական յեղափոխութեան մասին, ազդեց նրանց մտքի եւ մանաւանդ երեւակայութեան վրայ: Նրանք չհասկացան այն իրողութիւնը, որ Փարիզի ժողովրդի յաղթական ըմբոստութիւնը իբրեւ նշանակէտ եւ իբրեւ արդիւնք ունէր միայն քաղաքական փոփոխութիւններ: Բայց ճիշտ այն բանի համար, որ նախնական պատրաստու-**

թիւնը կատարւած չէր, չյաջողուեց ո՛չ ընկերային փոփոխութիւն կատարել եւ ոչ էլ իշխանութիւնը պահել: Ընդհակառակը, իբրեւ հետեւանք, ստեղծուեցին յետադիմութիւն եւ ճնշումներ: Այս դասը պէտք է մտքի մէջ լաւ պահել: Բոլշեւիկները չհասկացան, որ ազգի ընկերային եւ տնտեսական կերպարանափոխութիւնը դանդաղ եւ դժւարին աշխատանքի արդիւնք միայն կարող է լինել: Մինչդեռ մենք, ընկերվարականներս, հաւատում ենք որ այս աշխատանքը պէտք է պատրաստի իշխանութիւնը ձեռք բերելուց առաջ: Աշխատաւորութիւնը միայն այն ժամանակ պէտք է ձեռք առնէ իշխանութիւնը, երբ այդ նախապատրաստական աշխատանքները բաւականին առաջացած կը լինեն»:

Այս նոյն բանը պատահեց Խորհրդային Միութեան գրեթե բոլոր հանրապետութիւններում: Պաշտօնական իշխանութիւններին հակադրւած տարրը կրում էր այլախոհական բնոյթ եւ կազմում էր այսպէս կոչւած «**սալոնային յեղափոխականների**» զանգւած, որը սրճարաններում եւ բնակարաններում քննադատում ու քննադատում էր երկրի իշխանութիւնները, լցւում էր նրանց նկատմամբ ատելութեամբ, բայց ոչ մէկ ծրագիր չէր մշակում Հայաստանը վերափոխելու մասին: Նրանց թւում էր, որ ամենակարեւոր հարցը՝ բոլշեւիկներից իշխանութիւնը խլելն է, իսկ յետոյ ժողովրդավարութիւնը ինքնըստինքեան կը ստեղծւի: Եւ քանի որ նրանք ծրագիր չունէին, վերափոխութեան ծրագիր կազմելու պատիւն էլ ընկաւ կոմունիստների վրայ եւ հէնց նրանք էին, որ Գորբաչեւի ղեկավարութեամբ սկսեցին արմատական վերափոխութիւնները: Այդ վերափոխութիւնները ոչ միայն փոխեցին Խորհրդային Միութեան, այլեւ աշխարհի քաղաքական դէմքը:

Այդպէս էր կենտրոնում, բայց ոչ հանրապետութիւններում: Ոմանք որոշեցին արմատապէս քանդել հինը, առանց նորը կառուցելու ծրագրի: Քանի-քանի անգամ պատմութեան ընթացքում պարզւեց, որ նման մօտեցումը մեծ վնասներ է հասցնում թէ՛ ժողովրդին եւ թէ հէնց վերափոխիչներին: Բայց ո՞վ է հաշւի նստողը պատմութեան հետ: Այնուամենայնիւ՝ հաշւի նստողներ կան:

ԱԴՐԲԵՋԱՆԸ

Ի տարբերութիւն Հայաստանի եւ Վրաստանի, Ադրբեջանը գտնւում էր շատ աւելի լաւ պայմաններում, քանզի չունէր անպատասխանատու այլախոհներ եւ քաղաքականութեան մէջ փորձառու Թուրքիան կանգնած էր նրա մէջքին: Շատ լաւ կողմնորոշւելով միջազգային քաղաքականութեան մէջ, լինելով ՆԱՏՕի անդամ, Թուրքիան փոխանցում էր Ադրբեջանին քաղաքական այն իրողութիւնները, որոնցով անհրաժեշտ էր ղեկավարւել ստեղծւած կացութեան մէջ: Եւ Ադրբեջանի ղեկավարները, միանգամայն վստահելով իրենց

մեծ եղբօրը, կատարում էին Թուրքիայից թելադրուած քայլերը: Ադրբեջանը Թուրքիայից իմացաւ երկու կարեւոր ճշմարտութիւններ:

Առաջինը՝ Արեւմուտքը եւ մասնաւորապէս Միացեալ Նահանգները Խորհրդային Միութեան քայքայման մէջ շահագրգռուած չեն եւ եթէ, այնուամենայնիւ, հակառակ տպաւորութիւն է ստեղծւում, ապա դա հրեաների ազդեցութեան հետեւանք է, որոնք իսկապէս ուզում են տեսնել Ռուսաստանը քայքայուած:

Երկրորդը՝ ռուս ժողովուրդը շահագրգռուած չէ Միութիւնը քայքայելու մէջ, ուստի ժողովրդավարական շարժումները երկրի ներսում կրում են ժամանակաւոր բնոյթ եւ Կոմունիստական կուսակցութիւնը հեշտութեամբ չի զիջի իր դիրքերը: Այդ կուսակցութեան վրայ 70 տարի աշխատել է Խորհրդային վարչակարգը եւ այդ կուսակցութեանն են պատկանում գիտնականները, զինուորականները, դիւանագէտները, արհմիութիւնները, ձեռնարկութեան եւ երկրի ղեկավարները: Սրանց երբեք արագ կարգով չեն կարող փոխարինել երկրի այլախոհները, որոնք ղեկավարելու ոչ մէկ փորձ չունեն:

Զինուած այս ճշմարտութիւններով, Ադրբեջանի կոմունիստները չզիջեցին իրենց դիրքերը, բայց մնացին իշխանութեան վրայ նոյն ժողովրդավարական ճամբով: Ադրբեջանի «Ժողովրդական ճակատ»ը մնաց ընդդիմադիր դիրքերի վրայ, սակայն չի կարելի ասել, որ ժողովրդավարութեան արտաքին նշանաբաններով Ադրբեջանի կոմունիստները յետ մնացին Հայաստանի եւ Վրաստանի «ժողովրդավարականներից»:

Նրանք էլ փոխեցին հանրապետութեան անունը, դրօշը, զինանշանը, ինչով այդքան պարծենում էին Վրաստանի ու Հայաստանի հակակոմունիստները, վերականգնեցին մուսաւաթականներին, ամբողջովին հրաժարուեցին ռուսական տառերից եւ անցան լատինական տառերի եւ թոյլ տուեցին, որ «ժողովրդական ճակատ»ի ղեկավարները կազմակերպեն բողոքի ցոյցեր կոմունիստների դէմ ու պառլամենտում հակակառավարական ճառեր արտասանեն: Բացի այսքանից, նշենք նաեւ այն դերասանութիւնը, որ Ադրբեջանի Գերագոյն Խորհրդի առաջին նիստը բաց արեց մահմեդական հոգեւորականը: Այսինքն՝ ժողովրդավարութեան թատերգութեան բնագաւառում Ադրբեջանի կոմունիստները շատ աւելի տաղանդաւոր դերասաններ գտնուեցին, քան Վրաստանի ու Հայաստանի ղեկավարութիւնը: Բայց ադրբեջանցիների ժողովրդավարութեանը մի քիչ խանգարում էին Սումգայթի ու Բաքուի ջարդերը, որոնց վրայ, սակայն, լուրջ ուշադրութիւն դարձնող չկար: Ոչ մէկը տրամադրուած չէր լուրջ ուշադրութիւն դարձնելու նաեւ Արցախի արգելափակման վրայ:

Ուրեմն՝ ադրբեջանցիներն էլ քաղաքական ժողովրդավարութիւնից այն կողմը չանցան, բայց նրանք քաղաքական բնագաւառում կարողացան կատարել ճիշտ քայլեր, ինչը ստեղծած կացութեան մէջ շատ աւելի կարեւոր էր, քան ազատութեան ու անկախութեան մասին ճառերը: Սակայն մէկ կողմ դնենք ուրիշի քայլերի գնահատականը, խօսենք մեր մասին, պարզելու համար թե ի՞նչ կարող ենք մենք անել ներկայ պայմաններում: «**Գոլոս Արմենի**» թերթը մարտի 5ին հրատարակեց մի հաշւետւութիւն Հայաստանի Գերագոյն Խորհրդի նստաշրջանի մասին, որտեղ արտայայտուեցին տարբեր կարծիքներ, տեղի ունեցան բուռն բանավէճեր անկախութեան խնդրի վերաբերեալ, արտասանուեցին զեղեցիկ ճառեր եւ, ի վերջոյ, ընդունուեցին որոշումներ՝ համամիութենական հանրաքւէից հրաժարուելու եւ սեփական հանրաքւէ անցկացնելու մասին:

Եւ բոլոր այս ելոյթները ու որոշումները արտասանւում ու կայացւում էին այնպիսի լրջութեամբ, կարծես թէ արդէն որոշուած էր ամենակարեւոր հարցը՝ կարո՞ղ է Հայաստանը կերտել սեփական ճակատագիրը, կարո՞ղ են Գերագոյն Խորհրդի որոշումները որեւէ նշանակութիւն ունենալ Հայաստանի ապագայի վրայ: Մինչդեռ շատ յստակ է, որ այսօր Հայաստանը սեփական ճակատագրի տէրը չէ, նա ստիպւած է հաշւի նստելու այն արմատական ընթացքների հետ, որոնք ծագել են Ռուսաստանում եւ տանում են երկիրը դէպի որոշակի կացութիւն, առանց հաշւի նստելու հայերի կամ վրացիների կամքի հետ: Ցատկել գնացքից կամ գնացք բարձրանալ՝ մենք ի վիճակի չենք: Մեզ դուրս կը նետեն գնացքից կամ գնացքի մէջ կը թողնեն, ոչ թէ մեր, այլ ուրիշների ցանկութեամբ: Մենք միայն կարող ենք յարմարւել գնացքի ընթացքին, որպէսզի գնացքի տակ չյայտնւենք, ինչպէս յայտնւել ենք յաճախ:

Եկէք միասնաբար գտնենք պատասխանը այն հարցի, թէ ի՞նչ կարող է պատահել մեզ հետ, եթէ բուռն վէճերի հետեւանքով Հայաստանի Պառլամենտի կողմից ընդունւած որոշումները հակասեն կենտրոնական իշխանութիւնների կամքին եւ նրանք որոշեն բռնի ուժով վերացնել այդ հակասութիւնները: Դիմադրելո՞ւ ենք մենք: Ունե՞նք դիմադրելու այդ ուժը: Եթէ ունենք, ասելիք չունեմ, խնդրում եմ միայն ինձ էլ ցոյց տուէք դիմադրութեան ուժերի տեղը, որովհետեւ ես էլ ուզում եմ մաս կազմել իմ ժողովրդի ճակատագրին: Իսկ եթէ դիմադրելու ուժը չունենք, հապա ո՞ւմն են պէտք մեզ անկախ համարելու եւ ազատութեան համար պայքարելու դերասանութիւնները:

Այս իմաստով, Սեպտեմբերի 21ի հայկական հանրաքւէի հարցումն էլ ոչ մէկ լուրջ քաղաքական բովանդակութիւն չունի, որովհետեւ ո՞ր հայն է, որ չի ուզի Հայաստանը տեսնել Միութիւնից դուրս անկախ ժողովրդավարական պետութիւն: Հարցնել այս մասին հայից՝ նշանակում է հարցնել քաղցած մար-

դուց, թէ արդեօք նա հաց կ'ուզի, կամ հարցնել մի կնոջից, թե արդեօք նա կ'ուզէր գեղեցիկ լինել:

Այս հարցերը իմաստաւորուած կը լինէին, եթէ քաղցած մարդուն յիշեցնէին, որ նա տառապում է ստամոքսի հիւանդութեամբ եւ հացը կարող է արագացնել նրա մահը, իսկ կինը՝ գեղեցկութիւն ձեռք բերելով՝ կարող է զրկուել իր խանդոտ ամուսնուց: Եթէ մենք իսկապէս ուզում ենք իմանալ Հայաստանի ցաւերով ապրող մարդկանց կարծիքը, ապա հանրաքուէի հարցը պէտք է մօտաւորապէս այսպէս ձեւակերպուէր. «**Համաձա՞յն էք դուք, որ Հայաստանը պատրաստ է անկախ ժողովրդավարական պետականութեան՝ Խորհրդային Միութիւնից դուրս.**

ա) տնտեսապէս,

բ) քաղաքականօրէն,

գ) աշխարհագրականօրէն,

դ) ինքնապաշտպանութեան իմաստով,

ե) հայապատկան հողերը վերամիաւորելու իմաստով»:

Այս հարցերի պատասխանը ստանալուց յետոյ միայն կարելի էր պարզել, թէ որքանով մեր ժողովուրդը իրեն պատրաստ է զգում անկախութեան:

Եւ հանրաքուէի կարիքն էլ չէր լինի, եթէ Հայաստանի ու արտասահմանի մասնագէտները վերլուծութեան ենթարկէին այն հարցը, թէ որքանով Հայաստանը պատրաստ է անկախութեան:

Իսկ ճառել, թէ «**անկախութեան ձգտում չունեցողը հոգեկան հիւանդ է**», «**եթէ ժողովուրդը անկախութիւն չի ուզում, նա դատապարտուած է ստրկութեան**» կարելի է հայկական ակումբներում ու սրճարաններում, բայց ոչ պետութեան Պառլամենտում: Աւարայրից մինչեւ Սարդարապատ, Մուսա Լեռից մինչեւ Արցախ ճամբայ անցած ժողովուրդը ճառերի պէտք չունի: Նա պատրաստ է զոհուելու իր հայրենիքի անկախութեան համար, միայն թէ նրան առաջնորդողները չպէտք է տանեն նրան ուրիշի ջրաղացի վրայ արիւն թափելու ճակատը: Նախքան որեւէ որոշում կայացնելը՝ անհրաժեշտ է պարզել Ելցին-Գորբաչեւ վէճի հնարաւոր ելքը, պարզել, թէ ո՞ւր է գնում Ռուսաստանը, ի՞նչ ծրագրեր ունի Խորհրդային Միութեան նկատմամբ Արեւմուտքը: Բոլոր այս հարցերին պատասխանելու համար մենք այսօր ունենք անհրաժեշտ ազատութիւնը: Եւ հէնց այդ մասին էլ խօսեցին պատգամաւորներ Խ. Յարութիւնեանը եւ Ա. Մանուկեանը: Բայց ժողովրդավարութեան ողբերգութիւնը կայանում է նրանում, որ ազատութիւնից առաջին հերթին օգտւում են ճարպիկները, բարձր ձայնով աղաղակողները եւ ժողովրդի արդարութեան զգացմունքների վրայ խորամանկօրէն խաղացողները:

Ոչինչ, այս փուլն էլ կ'անցնի եւ մեր ժողովուրդը իր առողջ բնազդով ու բաց աչքերով կտեսնի ճշմարտութիւնը եւ կ'անջատի ցորենը՝ մոլախոտից։

1991

ՏԵՂԻ ՉՈՒՆԵՑԱԾ ՍՏԵՐՄԻԿ ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆ

(Պատասխան՝ Ռաֆայէլ Իշխանեանի «Երկու գաղափարախօսութիւն՝ երկու կուսակցութիւն» խորագրեալ յօդուածին, որը լոյս տեսաւ «Հայաստանի Հանրապետութիւն» օրաթերթի 21 Յունիս 1991ի թուով)

Այո, «արեան կանչ» ասւածը գոյութիւն ունի ամէն մի անհատի մօտ, որովհետեւ նա օժտուած է կենսաբանօրէն եւ պատմականօրէն դրսեւորուած ժառանգական յիշողութեամբ, ժառանգականօրէն արտայայտուած մտածելակերպով ու վարքագծով:

Նևարդ Քոչար

Է. Յովհաննիսեան

Երբ ես դուրս եկայ Հայաստանից, քարհանքի Աբոն արդէն մահացել էր, Ղուկասեանի Տմբլին սպանել էին բանտում, Գնունիի Կուկուն հեռացել էր «լաւ տղերքից», իսկ Կոնղի Բուլոյի եւ Չիլացու Եազի մասին տեղեկութիւններ չունէի:

Երեւանի փողոցներից արդէն անյայտացել էին Դալուլէն եւ գիժ Արամը, եւ Երեւանը կորցրել էր իր դէմքը, ճիշտ այնպէս՝ ինչպէս Թիֆլիսը դադարեց Թիֆլիս լինելուց, երբ զրկւեց կինտոներից ու ֆայտոնչիներից:

Ճիշտ է, հրապարակ էին իջել նորերը՝ Ժնջիլ Վալոդը, Քոռ Կարոն եւ Թոփալ Տիկոն, բայց այս նոր սերունդը այն հնի համն ու հոտը չունէր: Նրանց առանձնայատկութիւնը այն էր, որ նրանք չէին ճանաչում ոչ մէկ հեղինակութիւն եւ զարմանալիօրէն կարողանում էին չարիքը բարձրացնել ճշմարտութեան աստիճանի: Աշխարհում չկար ոչ մէկ երկիր, որտեղ գողերը պարտադրած լինէին հասարակութեանը իրենց արժէքները: Իսկ Հայաստանը այդպիսին էր: Այնտեղ քաղաքի գողերին ճանաչում էին բոլորը, բայց մթնոլորտը այնպիսին էր, որ մենք՝ պատանիներս, հիանում էինք նրանցով ու երդւում գողերի արեւով:

Նրանցից ամէն մէկը մի փիլիսոփայ էր: Նա ունէր արդարութեան սեփական չափանիշները, ունէր անսահման ինքնավստահութիւն եւ ուրոյն դատողութիւններ՝ խորհրդային վարչակարգի մասին: Յետոյ, արտասահմանում, ես յաճախ յիշում էի նրանց ու փորձում նրանց ճամբով հասկանալ մեր ազգային որոշ նկարագրի կողմերը: Ես շատ էի ափսոսում, որ նրանք այլեւս չկան,

որովհետեւ նրանց փոխարինողները միջազգայնացւած էին եւ անտանելի կերպար ունէին։

Ու յանկարծ, օ՜ երջանկութիւն, Հայաստանի մտաւորականների մէջ գտնւում է մէկը, որը Աբոյի նման իմաստուն, Տմբլիի պէս համարձակ, Դալուլէի պէս շատախօս եւ այս բոլորի պէս ոչ մէկ հեղինակութիւն չճանաչող։ Այս մարդը Երեւանի փողոցներից դուրս եկած Դալուլէն էր, բայց հասցրել էր կրթւել ու գիտական կոչումներ ձեռք բերել, ինչը թոյլ էր տալիս նրան սեփական մտքերը ոչ թէ «բոշի սադրում», այլ մամուլում արտայայտելու հնարաւորութիւն։

Երբ կարդացի նրա յօդւածները, մեծագոյն ոգեւորութիւն ապրեցի, քանզի համոզւեցի, որ ոչ՝ մեր ժողովուրդը մեռած չէ, մեր ազգային նկարագիրը կորցրւած չէ, դեռեւս ապրում է ամէն ինչ մերժող հայ մարդը, որի համար Հայաստանը պտտւում է իր, իսկ երկրագունդը՝ Հայաստանի շուրջ։

Երբ յայտնաբերեցի, որ Կուկուների ու Բուլոների ժառանգորդը կենդանի է, իմ մէջ առաջացաւ նրա հետ մտերմիկ զրոյց վարելու բուռն ցանկութիւնը եւ ես նետւեցի «**Հայաստանի Հանրապետութիւն**» կոչւող «Սկւազնեչկը», որտեղ էլ գտայ այս Նոր Դալուլէին։ Ինձ տեսնելուն պէս նա բարկացած բացագանչեց.

«Ես ոչ մէկ տող չեմ գրել Ռուսաստանի հետ թշնամանալու վերաբերեալ, ճիշտ հակառակը՝ ամէն առիթով շեշտել եմ Ռուսաստանի բարեկամութիւնը շահելու մասին, ի՞նչ ես գլխիցդ դուրս աւել-պակաս բաներ գրում իմ մասին։

Ես շատ ուրախացայ, որ նա դիմեց ինձ՝ առանց քաղաքավարական ձեւականութիւնների, որովհետեւ ես էլ ուզում էի անկեղծօրէն խօսել իմ վաղեմի բարեկամի հետ, ու սկսւեց մեր մտերմիկ զրոյցը։

ԵՍ - Դալուլէ ջան, նախ գլուխս մի հարթուկի, ամբողջ Երեւանը գիտի քո ռուսատեացութեան մասին եւ ամէնեւին էլ պէտք չէ, որ դու քո տողերի մէջ գրես այդ մասին։ Կարդացողը հօ ապուշ չէ։ 70 տարի մեզ սովորեցրին հեղինակի մտքերը տողերի արանքում կարդալու արւեստին, հիմա դու ուզում ես տողերի մէջ թաքցնել քո ատելութիւնը։ Ի միջայլոց ես քեզ չեմ դատապարտում ռուսներին ատելու համար, դա քո գործն է. եթէ Տոլստոյը, Դոստոեւսկին, Սոլովեւը ու Սոլժենիցինը քեզ դուր չեն գալիս, ես ի՞նչ կարող եմ անել, բայց ի՞նչ պէտք է, որ դու այդ ատելութիւնը քաղաքական մակարդակի վրայ բարձրացնես ու գրգռես առանց այն էլ գրգռւած խելագարւած մեր ամբոխները։ Քո յօդւածները ռուսները չեն կարդում, քո յօդւածներով չէ, որ նրանք պիտի կողմնորոշւեն հայ ժողովրդի նկատմամբ, բայց քո յօդւածները ջուր են լցնում հայերի այն քաղաքական վարքագծի վրայ, որը ոչ միայն առաջացնում է ռուսների ատելութիւնը, այլեւ նրանց հարւածները։

ՆԱ - Այ մարդ, էս 20 տարւայ ընթացքում դու իսկական չոր-գլուխ ախպար դարձար: Ի՞նչ էս կպել ռուսների պոչից: Քեզ որ լսենք՝ առանց ԽՍՀՄի Հայաստան չկայ: Համաձայն եմ քեզ հետ, որ Մոսկւայի հետ չպէտք է թշնամանանք ու չպէտք է սրենք մեր յարաբերութիւնները նրանց հետ, որովհետեւ դրանից շահ չունենք: Բայց եւ չպէտք է յաւերժական ստրուկի վիճակում մնանք, յաւէտ կառչած Հիւսիսին, յաւէտ թշնամի մեր հարեւանների հետ:

ԵՍ – Հիմա ո՞վ է չոր գլուխ, Դալուլէ ջան: Որքան ես գիտեմ, Խորհրդային իշխանութեան հետ ծնւեցիր ու նրա օրօք մազերդ գրեթէ թափւեցին ու լսողութիւնդ գրեթէ կորցրիր, բայց այդպէս էլ չհասկացար, որ մենք 70 տարւայ ընթացքում Հիւսիսի ու Մոսկւայի ստրուկները չէինք: Մենք բոլորս՝ ռուս ժողովրդի հետ միասին՝ բոլշեւիզմի ստրուկներն էինք: Այո, սիրելիս, մենք բոլորս բոլշեւիզմի գերիներն էինք, բայց ռուսները քայլ առ քայլ դուրս են գալիս գերութիւնից, իսկ դու մեր ժողովուրդը մղում ես դէպի նոր գերութիւն, այս անգամ մեր դաժան հարեւանների ձեռքում: Մենք ռուսների հետ էինք, երբ Ռուսաստանը բոլշեւիկեան էր, իսկ երբ նա թօթափեց իր վրայից այդ բեռը՝ մենք ուզում ենք բաժանւել նրանից :

ՆԱ - Իսկ եթէ ռուսական զօրքերը հեռանան մեր երկրից, ինչպէս եղաւ 1917 թւականի վերջին եւ մենք «**ճարահատեալ**» (չակերտները մեր կողմից) անկախութիւն հռչակենք, ինչպէս եղաւ 1918-ի Մայիսին:

Այդ դէպքում մենք ոչինչ չենք շահի, շատ բան կը կորցնենք, եթէ նախքան այդ մեր յարաբերութիւնները ծայր աստիճան լարւած լինեն մեր հարեւաններդի հետ, մանաւանդ Թուրքիայի հետ:

ԵՍ - Դալուլէ ջան, դու այնպէս ես խօսում բարեկամների ու թշնամիների մասին, կարծես թէ նրանք թափւած են փողոցում եւ մեզ մնում է միայն ընտրութիւն կատարել, որից յետոյ բարեկամները թռչելու են մեր գիրկը, իսկ թշնամիները՝ դիմեն փախուստի: Այդպէս չէ, սիրելիս: Դու ինչպէ՞ս ես պատկերացնում բարեկամութիւնը հայատեաց Գամսախուրդիայի, Մութալիբովի եւ Էօզալի հետ: Ինչո՞վ պիտի խաբես նրանց: Գամսախուրդիան մի՞թէ չգիտի, որ աչքներս տնկել ենք Ախալքալակի վրայ: Կամ՝ գուցէ Էօզալը ու Մութալիբովը չգիտեն, որ մեր ժողովուրդը չի ներելու նրանց ու մոռացութեան չի մատնելու ոչ 15 թւի ցեղասպանութիւնը, ոչ Սումգայիթը, ոչ Բաքուն եւ ոչ էլ բռնագրաււած մեր հողերը: Պատասխանի իմ հարցին. ինչպէ՞ս պիտի գնենք նրանց բարեկամութիւնը, ի՞նչ եւ ինչո՞վ պիտի վճարենք այդ բարեկամութեան համար:

Եթէ յոյսդ միջազգային կարծիքի կամ բարոյականութեան վրայ ես դրել, ուրեմն ոչինչ չես հասկացել եւ լաւ կը լինի, որ գնաս շուկայում կանաչի ծախես: Յիշում ես, պատերազմի ժամանակ մեր սրամիտ գողերը կինօ «Մոսկւայի» վրայ գրել էին. «Մինչեւ ժամը 21ը վերարկուները ձերն են, իսկ 21ից յետոյ՝ մե-

րը»: Ու մարդիկ ժամը 21ից յետոյ իսկապէս որ փողոց դուրս չէին գալիս: Հիմա դու մեր հարեւաններին առաջարկում ես . «Տղաներ, մինչեւ մեր անկախութիւնը դուք մեզ մի խանգարէք, յետոյ մենք կ'ամրապնդենք ու նոր ձեր մայրիկը կը լացացնենք»: Եւ ուզում ես, որ երեւանցիների նման նրանք, նախքան մեր անկախութիւնը, փողոց դուրս չգան: Ի՞նչ է, նրանց էշի տեղ ես դրել: Եթէ մենք մեր հարեւաններին մեր քաշով ոսկի էլ տանք, նրանք չեն հրաժարւի մեզ կուլ տալուց եւ մէկ անգամ ընդմիշտ Հայկական Հարցը փակելու երազից: Բայց այդ ոսկին էլ չունենք: Միակ բանը, որ ունենք մեր հարեւաններին վճարելու համար, դա մեր արիւնն է, որը արդէն առատօրէն թափւում է Արցախում: Ես գիտեմ, որ դու քաղաքականութիւնից գաղափար չունես: Ոչ քաղաքական փորձ ունես եւ ոչ էլ այդ մասին գիրք ես կարդացել: Բայց գոնէ ամենասովորական առեւտրականի մակարդակի վրայ պատասխանիր ինձ, թէ ինչով պիտի գնենք մեր հարեւանների բարեկամութիւնը: Չէ՞ որ խօսքը քաղաքական, այլ ոչ թէ սովորական բարեկամութեան մասին է:

ՆԱ - Ես չգիտեմ, թէ ինչպէս կարելի է լաւացնել մեր յարաբերութիւնները մեր հարեւանների հետ: Իսկապէս չգիտեմ: Բայց կարծում եմ, որ այդ յարաբերութիւնները կարելի է առնւազն տանելի դարձնել, եթէ դուք, այսինքն նոր «դաշնակցականներդ» (չակերտները՝ մեր կողմից), հրաժարւէք ձեր հակաթուրք քարոզչութիւնից, մոռացութեան մատնէք ցեղասպանութիւնը եւ բռնագրաւած հողերը, այսինքն այն՝ ինչը դուք կոչում էք պահանջատիրութիւն: Դու եւ քո համակիրները պարզապէս ձգտում էք ամէն կերպ սրել մեր յարաբերութիւնները հարեւանների հետ:

ԵՍ - Դալուլէ ջան, ես գիտեմ, որ դու բազմակողմանի զարգացած մարդ ես. պատմաբան, գրականագէտ, քաղաքական գործիչ եւ շատ ուրիշ գիտելիքների տէր: Կարծում եմ, որ բոլոր հայերը այդպիսին են, նամանաւանդ մեր տաքսիի վարորդները, որոնք ամէն ինչից տեղեակ են, բայց թէ որքան խորն են նրանց գիտելիքները, միայն Աստւած գիտէ: Հօ քննութիւն չեն տալու խօսելու իրաւունք ձեռք բերելու համար: Բայց քո գիտելիքների մէջ կայ մի մեծ պակաս, դու ոչինչ չգիտես մեր կուսակցութեան մասին, ուստի այդ ուղղութեամբ գրիչդ զուր ես շարժում: Բայց քաղաքի տղայ ես, ինչու այս բնագաւառից հեռու մնաս: Արի մի երկու բան պատմեմ քեզ մեր մասին:

Բազմակուսակցութիւնը կամ կուսակցական յոգնակիութիւնը լաւ բան է միայն այն ժողովուրդների համար, որոնք ինքնիշխան պետութիւն ունեն եւ կամ էլ նման պետութիւն ստեղծելու նպատակ: Այդ դէպքում ստեղծւում են տարբեր կուսակցութիւններ՝ տարբեր ճանապարհներով ինքնիշխանութիւնը պահպանելու եւ կամ էլ այն ձեռք բերելու համար: Իսկ եթէ ազգը զուրկ է ինքնիշխանութիւնից ու հասարակական ազատութիւններից, ապա տարբեր կու-

սակցութիւնների գոյութիւնը շռայլութիւն պիտի նկատուի, քանզի նրանք վիճում են ոչ թէ տարբեր ճանապարհներով մէկ նպատակի հասնելու, այլ հէնց նպատակի շուրջ:

Այս տրամաբանութիւնից ելնելով էր, որ ծնուեց Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, որը սահմանեց հայ ժողովրդի գլխաւոր քաղաքական նպատակը ու տարաւ ժողովուրդը դէպի այդ նպատակ: Իր անդրանիկ հրովարտակի մէջ, որը հրատարակուեց 1890 թւականին, ասւած էր. «**Այսպիսի մի պատմական ճգնաժամի միջոցին առաջին հարցը, որ պէտք է զբաղեցնի ամէն մի հայրենասէրի, այդ՝ բոլոր յեղափոխական ուժերի միութեան եւ դաշնակցութեան հարցն է: Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը դիմում է բոլոր հայերին եւ հրաւիրում է կանգնել մի դրօշի տակ**»:

Ու կանգնեց հայ ժողովուրդը այդ դրօշի տակ, դարձնելով Դաշնակցութիւնը ուխտ, շարժում, գաղափար: 100 տարւայ ընթացքում Հ.Յ.Դաշնակցութիւնը ոչ մէկ շեղում չկատարեց իր կողմից գծւած ուղուց եւ այս, իմաստով կուսակցութեան ներսում ամէն մի սերունդ եղաւ իր նախորդների լիակատար ժառանգորդը:

Ի տարբերութիւն շատ ուրիշ կուսակցութիւնների, Հ.Յ.Դաշնակցութիւնը ոչ միայն անունով, այլեւ բովանդակութեամբ մնաց մէկ գաղափարախօսութեամբ օժտւած մէկ կուսակցութիւն:

Ու չնայած դրան, պատմութեան ընթացքում բազմիցս կատարուեցին Դաշնակցութիւնը «նորի» եւ «հնի», «իսկականի» եւ «կեղծի», «Համահայկականի» եւ «սփիւռքեանի» բաժանելու ապարդիւն փորձեր, որոնք անհրաժեշտ էին նրանց, ովքեր ուզում էին օգտւել Դաշնակցութեան հեղինակութիւնից ու փառքից, բայց չէին ցանկանում ճանաչել անձնազոհ կեանքով ապրող այսօրւայ Դաշնակցութիւնը: Նրանք լաւն էին, իսկ սրանք ուրիշ են,- ասում էին մեր հակառակորդները:

Դեռեւս խրուշչեւեան ժամանակաշրջանում, երբ Հայաստանում կանգնեցին Սարդարապատի կամ Անդրանիկի յուշարձանները, Հայաստանի իշխանութիւնները ջանացան կտրել նրանց Դաշնակցութիւնից: Յետոյ գրականութեան մէջ երեւացին հայ յեղափոխականների անունները, առանց նրանց կուսակցական պատկանելութիւնը նշելու: Ապա՝ Սփիւռքում որոշ աւազակախմբեր իրենց վերագրեցին Դաշնակցութեան թէ՛ անցեալ եւ թէ ներկայ յեղափոխական գործունէութիւնը, յայտարարելով թէ իրենք են իսկական դաշնակցականները: Նման խմբաւորում մեր օրերին ստեղծուեց նաեւ Հայաստանում, դժբախտաբար, ինչ-ինչ նկատառումներով, մեզ հետ զուգահեռ Հայաստանի իշխանութիւնների կողմից գրանցուեց նաեւ այդ ինքնակոչ դաշնակցական խմբակը:

Բայց Դաշնակցութեան արժէքները իւրացնելու ամենաձիծաղելի փորձը կատարեցին ռամկավարները։ «Մայիս 28» եւ «Եռագոյնը» ապադաշնակցականացնելու ճիգերի ժամանակ նրանք յայտարարեցին, որ իրենք միշտ էլ ճանաչել են Եռագոյնը եւ Մայիս 28ը, սակայն դաշնակցականները անօրինական կարգով խլել էին ժողովրդից ու ռամկավարներից այդ արժէքները։ Իսկ Հայաստանի նոր ղեկավարութիւնը արդարացիօրէն վերադարձրեց այդ արժէքները ժողովրդին։

Բոլոր այս փորձերը ոչ մէկ նշանակութիւն չէին ունենայ եւ ուշադրութեան արժանի չէին լինի, եթէ դու՝ Դալուլէ ջան, չկատարէիր այս հարցում Հայաստանի ղեկավարների հերթական պատուէրը։Անմիջապէս նշեմ, որ հասարակական պատուէր կատարելը անենեւին էլ չի նշանակում, որ Լեւոն Տէր Պետրոսեանը կամ նրա օգնականը հեռախօսով կամ նամակով պահանջել է քեզանից, որ փողոցներն ընկնես եւ քո դալուլէական երգերը երգես Դաշնակցութեան դէմ։ Ոչ, կան մարդիկ, որոնք լաւ քթի ծակ ունեն եւ հեռախօսի զանգի պէտք չունեն։ Նրանք շատ լաւ գիտեն, թէ իրենցից ինչ են սպասում իշխանութիւնները։ Ստալինն էլ ժամանակին չէր զանգահարում բանաստեղծներին, պատմաբաններին ու շինարարներին։ Առանց զանգի էլ նրանք գիտէին, որ Հայաստանի բոլոր շէնքերը կառուցել է Ստալինը, որ ամբողջ աշխարհի պատմութիւնը կերտել է Ստալինը եւ որ Ստալինից առաջ չէր եղել ոչ գարուն, ոչ սէր եւ ոչ էլ ծաղիկներ։ Դու էլ շատ լաւ գիտես, թէ ինչպէս կարելի է դուր գալ Հայաստանի վարիչներին եւ քո վրայ ես վերցրել պատմական նենգափոխութիւն կատարելու մի ծանր պարտականութիւն, առանց հասկանալու, որ այդ ծանրութեան տակից դեռեւս ոչ մէկը չի կարողացել դուրս գալ։ Դու ջանում ես ապացուցել, որ մենք այլեւս այն հին կուսակցութիւնը չենք, որ 100 տարի առաջ իր ձեռքը վերցրեց հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը։ Այսինքն դու միանում ես նրանց, ովքեր կ՚ուզէին Դաշնակցութեան հերոսական անցեալը խցկել թանգարան, որտեղից կարող էին օգտուել բոլորը, այդ թւում նաեւ դու եւ քո ընկերները։ Իսկ մեզ դուք կ՚ուզէիք դարձնել բոլորովին ուրիշ, այն էլ սփիւռքեան կուսակցութիւն։ Ինչո՞ւ ես դու ուզում ապացուցել այդ անհեթեթութիւնը։

ՆԱ - Բթամիտ ռուսի նման քո էշն ես առաջ քշում, մեղադրելով ինձ, թէ ես Դաշնակցութեան մասին ոչինչ չգիտեմ, իսկ ես քեզ պատմական օրինակներով կ՚ապացուցեմ, որ դուք այն «**հին Դաշնակցութեան**» (չակերտները մեր կողմից) հետ կապ չունէք։

«**Նոր Դաշնակցութիւնը**» (չակերտները մեր կողմից) առաջնային է համարում պահանջատիրութիւնը ու ցեղասպանութեան ճանաչումը, երկրորդային՝ անկախութիւնը։ Իսկ 1924 թւականին Դաշնակցութեան խոշորագոյն գաղա-

փարախօսներից մէկը՝ Վահան Նաւասարդեանը հակառակն էր գրում. «**Հայաստանի անկախութիւնը մարտնչող հայ ժողովրդի քաղաքական տեսակէտը պիտի դառնայ եւ այդ կէտից պիտի գործի այն լուսարձակը , դէպի ուր սեւեռելու են իրենց հայեացքները մեր ժողովրդի բոլոր հատուածները: Անկախութեան ուղով ու անկախութեան միջոցով է, որ պիտի ընթանայ հայ ժողովրդի հետագայ ազատագրական պայքարը: Շեղումներն ու թեքումներն այս գծից, եթէ ժամանակաւոր ռազմավարական պահանջի անհրաժեշտութիւնները չեն, այլ տեսական քաղաքականութեան արտայայտութիւններ, ապա այս դէպքում կորած պիտի համարել ամէն ինչ**»: Տեսնում ես, բարեկամ, պահանջատիրութիւնը ու ցեղասպանութեան ճանաչումը չեն համարւում առաջնակարգ, այլ միայն անկախութիւնը:

ԵՍ - Երջանիկ մարդ ես, նախ ինքդ քո տրամաբանութիւնից չես զզւում, յետոյ էլ չգիտես, որ ԿԳԲն քեզ ուղարկել է ինձ խենթացնելու համար: Արա, բա դու չես հասկանում, որ ի տարբերութիւն բոլշեւիզմի այն անհեթեթ սկզբունքի, որի համաձայն ղեկավարի արտասանած կամ գրած մտքերը ճշմարտութեան աղբիւր են հանդիսանում, Դաշնակցութիւնը այն առողջ կուսակցութիւնն է, որը իր ճշմարտութիւնը որոնում է Ընդհանուր Ժողովի որոշումների մէջ: Այդ դուք էք, որ ձեր գիտական ուսումնասիրութիւնների մէջ նշում էք. Մարքսը ասաց, Լենինը ասաց, Ժդանովը ասաց, ուրեմն՝ օրէնք է: Իսկ անընդհատ զարգացման մէջ գտնուող կուսակցութեան համար՝ Նաւասարդեանը ասաց, Ռոստոմը ասաց, Դարբինեանը գրեց՝ ոչինչ չի նշանակում, բացի այն, որ այդ թւականին Դաշնակցութեան ղեկավարներից մէկը այդպէս էր մտածում: Ամէն մի դաշնակցական այսօր ունի ազատութիւնը եւ համարձակութիւնը ասելու համար, թէ Դրոն կամ Ռուբէնը այս մի հարցում սխալւում էին: Բոլոր Ընդհանուր Ժողովներից առաջ Դաշնակցութեան ղեկավարները եւ դաշնակցական մտաւորականութիւնը արտայայտում էին իրենց տեսակէտները, բայց ժողովից յետոյ նրանցից եւ ոչ մէկը չի շեղել Ընդհանուր Ժողովի որոշումներից: Սա նշանակում է, որ Դաշնակցութեան քաղաքական վարքագիծը եւ պայքարի միջոցները վերլուծութեան ենթարկելու համար, անհրաժեշտ է դիմել ոչ միայն Դաշնակցութեան ղեկավարների այս կամ այն առիթով արտասանած ճառերին, այլեւ ու մանաւանդ ծրագրին ու Ընդհանուր Ժողովի որոշումներին: Իսկ բացի դրանից, մի՞թե դու չհասկացար, որ Նաւասարդեանը ինքը արդէն պատասխանում է քո հարցիդ, նշելով, ԵԹԷ ԹԵՔՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆՆԵՐ ՉԵՆ: Դէ, հասկացէք, վերջապէս, մենք անկախութիւնից չենք կարող հրաժարւել, դա մեր հիմնական նպատակն է, մենք կատարում ենք միայն ժամանակաւոր ռազմավարական թեքում:

ՆԱ - Այնուամենայնիւ, դուք դաւաճանում էք անկախութեան գաղափարին, երբ գերադասում էք մնալ Միութեան մէջ եւ սկզբից նրա օգնութեամբ ձեռք բերել հայապատկան հողերը, ապա միայն դիմել անկախութեան: Իսկ մենք ուզում ենք քայլ առ քայլ շարժւել դէպի հայկական ազգային պետականութեան վերականգնում՝ ի վերջոյ դուրս գալով ԽՍՀՄի կազմից որպէս անկախ Հայաստան եւ դրա համար ջանալ գոնէ տանելի յարաբերութիւններ ստեղծել հարեւանների, այդ թւում նաեւ Թուրքիայի հետ:

ԵՍ - Դէ լաւ, էլի համը հանեցիր: Ճիշտ մտքերն էլ այնպէս ես արտայայտում, որ մարդ գոռալ է ուզում: Քայլ առ քայլ ուզում էք տանել մեզ դէպի անկախութիւն: Շատ լաւ էք անում, արէք, մենք էլ ձեր յետեւից կը գանք: Բայց այդ դո՞ւք էք մեզ ասում: Մի՞թէ Դաշնակցութիւնը չէ, որ մշակել է այդ հանգրւանները: Այդ ի՞նչ շինծու քաղաքական տարբերակների մասին ես խօսում, երբ գործնականում կայ միայն մէկ տարբերակ: Շատ կը ներես, Դալուէէ ջան- բայց դու պարզապէս չես տեսնում խօսքի եւ գործի կուսակցութիւնների տարբերութիւնը: Խօսքի կուսակցութիւն Հ.Հ.Շ.ն եւ դու՝ որպէս նրա գաղափարախօսը, ցուցամոլութեան կարգով եւ ամբոխավարական տրամադրութիւններով՝ հռչակում էք Հայաստանի անկախութիւնը (այս հարցում կարծես թէ բոլոր խօսքի կուսակցութիւնները միացել են, քանզի լեզուն ոսկոր չունի), բայց քաջ գիտակցելով, որ ներկայ պայմաններում դա ցնորք է, 22ընջում էք Մոսկւայի ականջին, թէ կատակ ենք անում, մեզ լուրջի մի առ, մենք անկախութեան պատրաստ չենք ու դեռեւս պիտի պատրաստւենք այդ քայլին: Մենք այսպէս ենք խօսում Ազատութեան հրապարակի երիտասարդներին հանգստացնելու համար, իրականում մենք դեռ երկար ճանապարհ ունենք կտրելու անկախութեանը պատրաստւելու համար: Բայց իրականում չգիտէք, թէ ինչպէս պէտք է պատրաստւել այդ անկախութեանը:

Իսկ եթէ մենք ձեր տեղը լինէինք, կը վարւէինք ճիշտ հակառակ ձեւով: Բարձրաձայն մենք կը յայտարարէինք, որ մնում ենք Միութեան կազմի մէջ, իսկ ինքներս առանց աղմուկի կը պատրաստւէինք անկախութեան: Եւ մենք գիտենք, թէ ինչպէս պիտի դա արւի: Մութալիբովը նոյնպէս այդ բանը շատ լաւ գիտի եւ, մնալով Միութեան մէջ, շատ յստակ քայլեր է կատարում անկախութեանը նախապատրաստելու ուղղութեամբ: Եւ որովհետեւ դու շատ ես սիրում Վ. Նաւասարդեանին, այս առիթով քեզ ծանօթացնեմ նրա մի արտայայտութեան հետ: «**Դաշնակցութիւնը ԳՈՐԾԻՑ ծնւեց, ձեւաւորւեց գործի մէջ եւ եղաւ ու մնաց գերազանցապար ԳՈՐԾԻ կուսակցութիւն: Իր ինքնուրոյնութիւնն ու ազգային նկարագիրը ամենից առաջ արտայայտւեց այս կէտի մէջ: Ռուս յեղափոխական աշխարհը, որի հզօր կնիքը կայ Դաշնակցութեան վրայ, մոլեռանդ սիրահարը մնաց ԽՕՍՔԻ, մինչ Դաշնակցութիւնը՝ ԳՈՐԾԻ**»:

ՆԱ - Ձեր տեսակէտը կարելի էր քննարկել, եթէ նման ծրագրի իրականացման գոնէ մի փոքր յոյս լինէր: Ես զարմանում եմ, թէ որքան դուք միամիտ էք, որ չէք հասկանում հայ-մահմեդական քաղաքական ամէն տեսակ վէճերի դէպքում Մոսկւան պաշտպանել է, պաշտպանում է ու պիտի պաշտպանի մահմեդական կողմին:

ԵՍ- Լսի, դու այստեղ արդէն քեսա Վազգային էլ անցար: Նա գոնէ իմ ռուսերէնին վստահում էր եւ մէկ-մէկ խնդրում էր, որ թարգմանեմ Ռուսաստանի բանտերից բերած գողական երգերը: Ախր, բացի քեզանից, դու ոչ մէկ ուրիշի չես հաւատում: Եւ որտեղի՞ց է գալիս քո այդ ինքնահաւանութիւնը: Գուցէ՞ սա մեր ազգային նկարագիրն է: Գուցէ՞ մենք ընդհանրապէս զրկւել ենք հեղինակութիւն ճանաչելու յատկութիւնից: Հակառակ դէպքում՝ ինչո՞ւ բացատրել, որ դու համարձակւում ես «միամիտ» կոչել Հ.Յ. Դաշնակցութիւնը, որը ծնւած օրւանից մինչեւ այսօր քաղաքական իրադարձութիւնների կենտրոնումն է: Փոխանակ համեստօրէն ասելու, որ եթէ Դաշնակցութիւնն ասում է, ուրեմն մի բան գիտի, դու մեզ քաղաքական դասեր ես տալիս այն մասին, թէ քաղաքական վէճերում Մոսկւան բոլոր պայմաններում պաշտպանելու է մահմեդական կողմին:

Քո մտքով անգամ չի անցնում, որ քաղաքական վէճերում մահմեդական կողմ գոյութիւն չունի, որ մահմեդական քաղաքականութիւն աշխարհում չկայ: Մահմեդական Իրաքը կատաղի կռիւներ մղեց մահմեդական Իրանի դէմ: Մահմեդական Թուրքիան ռմբակոծեց մահմեդական Իրաքին: Մահմեդական Քուվէյթի վրայ յարձակւեց մահմեդական Իրաքը, եւ նրան պաշտպանեցին քրիստոնեաները եւ հրեաները: Իսկ մահմեդական Թուրքիան, մահմեդական Իրաքը եւ Մահմեդական Իրանը տարբեր առիթներով ջարդում են մահմեդական քրդերին: Մահմեդական քաղաքական միաւոր գոյութիւն չունի եւ եթէ երբեմն-երբեմն մահմեդական երկրները իրար պաշտպանում են, ապա դա կատարւում է զուտ բարոյական մակարդակի վրայ եւ քաղաքականութեան հետ ոչ մէկ կապ չունի: Ուրեմն, ինչո՞ւ պիտի Մոսկւան միշտ բռնի մահմեդականի կողմը: Ո՞ր քաղաքական տրամաբանութեամբ: Եւ, վերջապէս, ո՞ւր մնաց քո այն թեզը, թէ մնայուն բարեկամներ ու թշնամիներ չկան: Այդ ինչո՞ւ պէտք է Մոսկւայի համար մենք մնանք մնայուն թշնամի, իսկ մահմեդականները՝ մնայուն բարեկամ:

ՆԱ - Դու շատ պարզունակ մտածելակերպ ունես: Քեզ թւում է, որ եթէ մէկը ասում է, որ այսօր պէտք է յարաբերութիւններ հաստատել Հայաստանի հարեւանների հետ, դա նշանակում է, որ նա Հայաստանը թշնամացնում է Ռուսաստանի նկատմամբ: Եւ յետոյ, ինչո՞ւ ես դու կարծում, որ մենք չպիտի հակասենք Ռուսաստանի պետական շահերին: Ի՞նչ ունենք վերցնելու Ռուսաս-

տանից, ի՞նչ ենք այսքան ժամանակ վերցրել: Դուք պարզապէս ռուսասիրութեան հիւանդութեամբ էք տառապում:

ԵՍ –Խելքդ գլուխդ հաւաքի, Գամսախուրդիան ու Մութալիբովը արդէն պաշտօնական պայմանագիր են կնքել իրենց հանրապետութիւնների տարածութիւնների ինքնիշխանութիւնը պաշտպանելու մասին: Մե՞նք էլ մտնենք այդ պայմանագրի մէջ: Բայց նախ յստակեցնենք մեր ռուսասիրութեան հարցը: Հ.Յ. Դաշնակցութիւնը երբեք չի ունեցել ռուսասիրական տրամադրութիւններ, քանզի դրա համար երբեք չեն եղել համապատասխան քաղաքական պայմաններ: Ծնուած օրւանից մեր կուսակցութիւնը պայքարել է ցարական իշխանութեան դէմ, ապա բոլշեւիզմի դէմ, որի վառ ապացոյցը Փետրուարեան ապստամբութիւնն էր: Մէկ կարճ ժամանակաշրջան, երբ Ռուսաստանում իշխանութեան գլուխ էր անցել Ժամանակաւոր կառավարութիւնը, ստեղծուեց նրանց հետ համագործակցելու հնարաւորութիւն եւ, հէնց այդ ժամանակ էլ, Ժամանակաւոր կառավարութիւնը ճանաչեց Հայաստանի անկախութիւնը եւ առարկեց Կարսից ռուս զօրքերը դուրս բերելու առաջարկութեանը: Յետպատերազմեան տարիներին Դաշնակցութիւնը մասնակցեց սառը պատերազմին հակառուսական կողմում եւ միայն 1963 թւականին հրաժարուեց այդ պատերազմից, բայց երբեք չորդեգրեց ռուսասիրական ռազմավարութիւն, ինչով ակտիւօրէն զբաղուած էին նրանք, ովքեր այսօր Հ.Հ.Շ.ի լաւագոյն բարեկամներն են: Այսինքն՝ քո ակնարկը մեր ռուսասիրութեան մասին ոչ մէկ հիմք չունի: Բայց անծայրածիր Ռուսաստանը այն տնտեսական ու քաղաքական դաշտն է, որից մենք կարող ենք սնուել եւ որին մեր շահերի համար օգտագործել: Դու, որ «Երրորդ ուժի բացառման» տեսաբանն ես, ինչո՞ւ ես խուսափում Իսրայէլի հետ կապւած խնդիրների քննարկումից: Մի՞թէ քեզ համար պարզ չէ, որ Միացեալ Նահանգները Իսրայէլի համար դարձել է ոչ միայն երրորդ ուժ, այլ պարզապէս նրա քաղաքական ու տնտեսական թիկնապահը: Փոքրիկ Իսրայէլը հսկայ Միացեալ Նահանգներին օգտագործեց Իրաքը ջարդելու եւ Լիբիայի թագաւորական պալատը ռմբակոծելու համար:

Անշուշտ, մենք հրեաներ չենք, բայց եթէ ուզում ենք նրանց նմանուել, պէտք է ձեռքից բաց չթողնենք Ռուսաստանը, որտեղից կարող ենք օգնութիւն ստանալ ոչ թէ ողորմութեան, այլ պահանջողի կարգով: Եւ, վերջապէս, եթէ մենք խորհրդային իշխանութեան տարիներին տուժել ենք ամբողջատիրական ռուսներից, ինչո՞ւ դրա համար հատուցում չպահանջել ժողովրդավարական ռուսներից:

Վրաստանի եւ Ադրբեջանի պայմանագրի մէջ ասւած է, որ այս պայմանագրով Կովկասում նոր դարաշրջան է սկսւում, որտեղ ժողովուրդների փոխյարաբերութիւնները որոշուելու են միջազգային իրաւունքի եւ համամարդկա-

յին արժէքների հիման վրայ: Այս նոյն պայմանագրում ասւած է, որ հանրապետութիւնները պայմանաւորւում են բոլոր հարցերը լուծել խաղաղ ճանապարհով, առանց երրորդ կողմի միջամտութեան: Դալուլէ ջան, հիմա դու հասկացար, թէ ի՞նչ է կատարւում: Ադրբեջանը եւ Վրաստանը լուծում են Կովկասի հարցերը միջազգային իրաւունքի հիման վրայ, այսինքն՝ մոռացէք բոլոր սահմանային փոփոխութիւնները, եւ այդ հարցերը լուծւում են առանց ռուսների միջամտութեան, չնայած նրան, որ Ադրբեջանը Միութեան մաս է կազմում: Բայց ես կարծում եմ, որ մենք իրար չենք հասկանայ, շատ տարբեր են մեր մօտեցումները: Այնուամենայնիւ, ես յոյս ունեմ, որ դու ինձանից չնեղացար, որ արտայայտութիւններ ընտրելիս հաշւի չէստեցի քաղաքավարական տարրական կանոնների հետ: Բայց դու էլ շատ քաղաքավար չէիր, արի իրարից չնեղանանք: Բայց մէկ մտահոգութիւն, այնուամենայնիւ, սրտումս մնաց: Ոչ դու, Դալուլիկ ջան, եւ ոչ էլ քեզանից շատ աւելի խելօքները չեն կարող կտրել «**այսօրւայ**» եւ «**երէկւայ**» (չակերտները մեր կողմից) Դաշնակցութեան միջեւ կապը: Չեն կարող «**այսօրւայ**» Դաշնակցութիւնից խլել նրա փառապանծ անցեալը: Շատ աւելի հեշտ է ասել, որ մեր կուսակցութիւնը ընդհանրապէս հերոսական անցեալ չի ունեցել, ինչպէս անում էին բոլշեւիկները, որոնց համար Դաշնակցութիւնը միշտ էլ մնում էր հայ ժողովրդի թշնամի: Մտահոգութիւնս այն է, որ յաջորդ հասարակական պատւէրը հէնց դա է լինելու: Բայց ես խոստանում եմ, որ նման անհեթեթութեան այլեւս չես պատասխանի:

Դալուլէի պատասխանը չլսեցի, որովհետեւ արթնացայ ու անմիջապէս սուզւեցի օրւայ կարեւոր անելիքների ոլորտը: Բայց մեր մտերմիկ զրոյցը, այնուամենայնիւ, սրտիս վրայ թողեց մի հաճելի ապրում. Դալուլէն մեռած չէր, նա պարզապէս գիտնական էր դարձել ու Երեւանը ապրում էր իր տաքսու վարորդներով:

1991

Ո՞Վ ԵՒ ԻՆՉՈ՞Ւ ՊԱՐՏԻԵՑ

Է. Յովհաննիսեան

Հայաստանի նախագահական ընտրութիւնը շատ կարեւոր հասարակական երեւոյթ էր, որի վերջնական վերլուծութեան համար դեռեւս ժամանակ է հարկաւոր: Սակայն այսօր էլ կարելի է յանգել որոշ եզրակացութիւնների ու կատարել որոշ ամփոփումներ: Շատ պարզ է, որ մեր հակառակորդները կ'ասեն, թէ ոչ մէկ զարմանալի բան չկար ընտրութիւնների արդիւնքներում, որ Դաշնակցութիւնը Հայաստանում անելիք չունի, որ Հ.Հ.Շ.ն ապացուցեց, թէ ինքն է Հայաստանում տիրող կացութեան միակ տէրը: Բայց այս ամէնը կը մնան դատարկ խօսքեր այնքան ժամանակ, քանի դեռ պարզուած չեն Լեւոն Տէր Պետրոսեանի յաջողութեան բուն պատճառները: Կարող են ասել, թէ ո՞ր պատճառների մասին է խօսքը: Ժողովուրդը չի սխալւում եւ նոր նախագահը ընտրեց ժողովրդի կամքով. ուրեմն՝ մնացածների պարտութեան պատճառը այն է, որ ժողովուրդը նրանց հետ չի: Այսքանը ըստ ձեւի ճիշտ է, բայց երբ մենք փորձենք պարզել, թէ ինչո՞ւ ժողովուրդը մնացածներին, մասնաւորապէս մեր թեկնածուին չուզեց, կը պարզուի, որ ժողովուրդի անունից այդպիսի եզրակացութիւններ յաճախ են դրսեւորւել, որոնց էութիւնը, դժբախտաբար, պարզւում է միայն այն դէպքում, երբ այդպիսի եզրակացութիւններից բխած ողբերգութիւնը համազգային տարողութիւն է ստանում: Այդպէս պատահեց Իտալիայում եւ Գերմանիայում, երբ երկու այս քաղաքակիրթ ժողովուրդները սեփական կամքով ընտրեցին Մուսոլինիին եւ Հիտլերին: Այդպէս պատահեց Ռուսաստանում եւ Չինաստանում, երբ երկու այս հսկայ ժողովուրդները սեփական կամքով ընտրեցին կոմունիստական վարչակարգը: Շատ աւելի առաջ այսպէս պատահեց Անգլիայում, երբ ժողովուրդը Օլիւեր Կրոմուելին ընտրեց պառլամենտի անդամ: Բայց սկզբից եկէք պարզենք, թէ ո՞վ եւ ինչո՞ւ պարտուեց:

Նախ՝ փորձենք պատասխանել առաջին հարցին. այսինքն՝ ո՞վ պարտուեց: Եթէ Հայաստանի նախագահական ընտրութիւններում մենք պարտութիւն կրեցինք, ապա դա պէտք չէ վերագրել ընդհանրապէս Հ. Յ. Դաշնակցութեան: Եթէ Հայաստանի նախագահական ընտրութիւնները պարտութիւն համարենք, ապա դա դաշնակցական արժէքների եւ քաղաքականութեան պարտութիւնը չէր: Իսկ եթէ մի քիչ աւելի խորանանք խնդրի բուն էութեան մէջ, ապա այդ ընտրութիւնների ժամանակ ո՛չ պարտւող եւ ոչ էլ յաղթող կար:

Հայաստանի նախագահական ընտրութիւնները սովորական ընտրութիւններ չէին, որտեղ տարբեր թեկնածուներ ներկայացնում էին իրենց պլատֆորմ-

ները, այսինքն՝ սահմանադրութեամբ որոշուած մէկ նպատակի տանող տարբեր ճանապարհները: Հայաստանում ո՛չ Սահմանադրութիւն եւ ոչ էլ ընդհանուր քաղաքական նպատակ գոյութիւն չունեն, իսկ թեկնածուներից միայն Դաշնակցութեան թեկնածուն էր, որ ներկայացրել էր իր յստակ պլատֆորմը:

Հայաստանի նախագահական ընտրութիւնները փաստօրէն արժէքների ընտրութիւններ էին, որոնց մէջ կային թէ՛ բացարձակ արժէքներ եւ թէ հատուածապաշտական: Մեր յոգնած ժողովուրդը կանգնած էր ճակատագրական ընտրութեան առջեւ. տառապանքների գնով ծառայել ազգի՞ն, թէ՞ հանգստութեան՝ ազգային արժէքներից հրաժարուելու գնով: Մեր յոգնած ժողովուրդը ընտրեց երկրորդը: Մէկ միլիոն այն բազմութիւնը, որ մեր ժողովրդի պարծանքն էր կազմում, որը բռունցքները վեր բարձրացրած Երեւանի հրապարակներում ու փողոցներում «Ղարաբաղ» ու «Միացում» էր գոռում, ընտրութիւնների ժամանակ իր ձայները տուեց նրանց, ովքեր լքեցին Ղարաբաղը: Արդեօք պիտի համակերպե՞լ այս անհեթեթութեան...

Հ.Յ. Դաշնակցութիւնը կաշառակերութիւնից ու անօրինականութիւնից զզուած ժողովրդին արդարութիւն էր խոստանում, նշելով որ չի կարող դաշնակցական նախարարը կամ դատախազը կաշառք վերցնել, քանզի նա իր ամբողջ կեանքում վարժուած է եղել ազգին տալու, բայց ոչ վերցնելու, իսկ ժողովուրդը ծաղրեց այդ ամէնը, ասելով՝ որ ինչպէ՞ս կարելի է Հայաստանում կաշառք չվերցնել: Մենք ասում էինք մեր ժողովրդին, որ մեր ընկերվարութիւնը հասարակական արդարութեան գաղափարախօսութիւն է, ուստի մենք թոյլ չենք տայ, որ ամսական կէս միլիոն ռուբլի ստացող վաճառականը՝ ցեխը շպրտելով 200 ռուբլի ստացող ուսուցչի երեսին, իր «մերսեդեսով» սլանայ գիշերային զուարճանոցներ, իսկ մեր ժողովուրդը՝ սոցիալիզմից գաղափար չունենալով, բայց սոցիալիզմով զզուած, իր ձայները տուեց նէօ-կապիտալիստներին: Հաւատա՞նք այս հակասութեանը…

Քաջ գիտակցելով անկախութեան բուն արժէքը, որը ոչ թէ ինքնանպատակ է, ոչ թէ ղեկավարների փառամոլութեան զգացմունքի բաւարարում, այլ ժողովրդի բարգաւաճման միջոց է. մենք խոստացանք մեր ժողովրդին անկախութեան հասնել հանգրւանային ճամբով, բայց ժողովուրդը գերադասեց իր ձայները տալ անկախութեան մասին փողոցներում ու թերթերում աղմկողներին, որոնց համար փոթորիկը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ինքնահաստատուելու դաշտ: 100 տարւայ քաղաքական փորձից ելնելով մենք առաջարկում էինք մեր ժողովրդին զուսպ լինել Խորհրդային Միութիւնը քայքայող ուժերին յարելու մէջ, որովհետեւ այդ ուժերը նախ հայկական չեն, ապա ազգային ինքնապաշտպանութեան մեր խնդիրները չունեն: Բայց մեր ժողովուրդը որոշեց իր ձայները տալ ոչ թէ Հայաստանի անկախութեան, այլ միութիւնը քայքայողների

կողմնակիցներին: Մենք ուզեցինք հասկացնել մեր ժողովրդին, որ մեր հարեւանները եւ ոչ մէկը մեր անկախութեան մէջ շահագրգռած չէ. ուստի պէտք չէ շտապել Ռուսաստանից կտրուելու հարցում, բայց ժողովուրդը այլ կերպ էր մտածում: Եւ, վերջապէս, մենք ասացինք, որ անկախութիւնը արդէն գոյութիւն ունեցող կացութեան իրաւաբանական ձեւակերպում է, բայց ժողովուրդը ուզեց իրաւաբանօրէն ձեւակերպել այն, ինչը ոչ միայն այսօր գոյութիւն չունի, այլեւ չի երեւում հորիզոնի վրայ:

Մենք ասացինք, որ առանց Արցախի չկայ Հայաստանի անկախութիւն ու պաշտպանեցինք Արցախը, իսկ ըստ բեմադրուած ձեւակերպութեանց՝ ժողովուրդը ուզեց որքան կարելի է շուտ ազատուի այդ ցաւոտ հարցից, որի բերումով արգելափակուել է ու զրկուել հացից ու բենզինից: Ա՞յս է իրականութիւնը...

Եւ այստեղ հարց է ծագում. ժողովրդի անունից արուած նման բեմադրութիւնից դատելով՝ մենք ի՞նչ պիտի անենք: Վերանայենք մեր արժէքնե՞րը, թէ՞ փորձենք բարձրացնել ժողովրդին մեր արժէքների մակարդակի վրայ: Շատ պարզ է, որ անընդունելի է թէ՛ այն թեզը, թէ ժողովուրդը տգէտ է ու մեզ չհասկացաւ, ուստի մենք պէտք է հրաժարուենք նրանից, եւ թէ այն՝ որ մենք էինք տգէտ ու այժմ պէտք է ենթարկւենք մեր իմաստուն ժողովրդին:Իրականութիւնը այն է, որ մենք մեր ժողովրդին հետ խօսում ենք տարբեր լեզուներով, ղեկավարւում ենք տարբեր արժէքներով ու սկզբունքներով: Իսկ մենք պէտք է ժողովրդի հետ խօսենք նոյն լեզուով, բայց առանց դաւաճանելու մեր սկզբունքներին: Այսուհետեւ մենք շատ աւելի յստակ պէտք է ցոյց տանք մեր ժողովրդին, թէ ի՞նչ է տալիս ազգին Հ.Յ. Դաշնակցութիւնը եւ ի՞նչ դեռեւս պէտք է տայ:

* * *

Սակայն այսպէս կարելի էր աւարտել այս գրութիւնը, եթե չլինէին մի շարք երեւոյթներ, որոնց մէջ ամենացաւալին այն էր, թէ գործի անցան անցեալի յատուկ լծակները: 70 տարիների ընթացքում մեր ժողովուրդը ընտելացել էր ամբոխային տրամադրութեան հետ եւ միշտ առաջնորդ էր որոնում, իսկ երբեմն էլ սեփական կամքով ստեղծում էր այդ առաջնորդին: Նրա համար առաջնորդ էին գործարանի կամ դպրոցի դիրեկտորը, շրջկոմի քարտուղարը, տնային կառավարիչը, ոստիկանապետը, քաղխորհրդի նախագահը, բաղնիքի տնօրէնը, դատաւորը, դատախազը եւ, ի հարկէ, Կոմկուսի Կենտկոմի քարտուղարը, որը թագաւորի նման մի բան էր: Եւ ահա, մեր ժողովրդի այս հոգեբանութիւնը հասկանալով, Հ.Հ.Շ.ն , որի անդամները գրաւել են Հայաստանի բոլոր ղեկավար պաշտօնները, կարողացաւ իր առաջնորդական դիրքերից ազդել մեր ժողովրդի վրայ, որին սպառնալով, որին կարգադրելով, որին էլ խոստում-

ներ տալով: Այսպէ՛ս, նախագահական ընտրութիւնների նախօրեակին նախկին «թագաւոր» Կարէն Դեմիրճեանը նշանակւում էր ղեկավար պաշտօնի եւ մասամբ նորին...

Եւ մէկ երեւոյթի մասին էլ անհրաժեշտ է խօսել: Ռուսաստանի եւ Խորհըրդային Միութեան ղեկավարութիւնը շատ յստակ կերպով ցոյց տուեցին, որ իրենց թեկնածուն Լեւոն Տէր Պետրոսեանն է, որ իրենք նախընտրում են տեսնել նախագահի պաշտօնի վրայ հէնց այս անձնաւորութեանը: Թէ ինչո՞ւ էին նրանք այդպէս որոշել, սա ուրիշ հարց է, բայց նրանք բաւականին բացայայտօրէն հասկացնել տուեցին հայ ժողովրդին, որ եթէ Տէր Պետրոսեանը ընտրւի, ապա Ռուսաստանը եւ կենտրոնը կ՚օգնեն Հայաստանին՝ ճգնաժամից դուրս գալու հարցում: Հակառակ դէպքում ինչո՞վ բացատրել, որ Ելցինը եւ Նազարբայեւը Արցախի Հարցով իրենց ակտիւ գործողութիւնները ծաւալում են ճիշտ ընտրութիւններից առաջ եւ Ժելեզնովոդսկում կարեւոր փաստաթուղթ են ստորագրում դեռեւս չընտրւած Լեւոն Տէր Պետրոսեանի հետ: Իսկ Գորբաչեւը այս հարցում ընդհանրապէս անցաւ բոլոր չափերն ու սահմանները:Հոկտեմբերի 17-ին, այսինքն ընտրութիւնների յաջորդ օրը, երբ ընտրութիւնների արդիւնքները դեռեւս յայտնի չէին, Գորբաչեւը Մոսկւա էր հրաւիրում Մութալիբովին եւ Տէր Պետրոսեանին՝ Արցախի շուրջ բանակցութիւններ վարելու համար: Սա նշանակում է, որ Գորբաչեւը համոզւած էր Տէր Պետրոսեանի յաղթանակի մէջ, թէ չէ ո՞ւմ անունից պիտի խօսէր Լեւոն Տէր Պետրոսեանը ընտրւած նախագահներ Մութալիբովի եւ Գորբաչեւի հետ, եթէ օրինակ Հոկտեմբերի 18-ին պարզւէր, որ ընտրւել է Պարոյր Հայրիկեանը, կամ էլ Սօս Սարգսեանը: Անշուշտ, Ռուսաստանի և Միութենական ղեկավարութեան նման մօտեցումը չէր կարող իր ազդեցութիւնը չթողնել մեր ժողովրդի վրայ:

Եթէ այս կողմնակի գործօնները չլինէին, անկարելի էր, որ Հ.Հ.Շ.ի թեկնածուն ստանար ձայների աւելի քան 80 տոկոսը, իսկ մնացած թեկնածուները՝ 4-9 տոկոս: Նման ընտրութիւններ կարող էին տեղի ունենալ Բանգլադէշում եւ կամ էլ յետամնաց մի ափրիկեան երկրում: Բայց, չնայած քաղաքացիական գիտակցութեան պակասի, այնուամենայնիւ, մեր ժողովուրդը այդ աստիճանի դեռ չի հասել: Համեմատութեան կարգով դիմենք Լեհաստանի օրինակին: Լեհ ժողովուրդն էլ անհամբերութեամբ սպասում էր իր առաջին ազատ պառլամենտական ընտրութիւններին: Սակայն Հոկտեմբերի 27ին տեղի ունեցած ընտրութիւններին մասնակցեց ընտրողների միայն 40 տոկոսը: Մնացած 60 տոկոսը տարբեր պատճառներով հրաժարւեց ընտրութիւններից: Ոմանք ասացին, որ քաղաքականութեամբ չեն հետաքրքրւում, ոմանք այն տեսակէտը յայտնեցին, թէ ընտրութիւնները ոչ մէկ բան կարող են փոխել երկրի կացութեան մէջ, ոմանք էլ ասացին, որ չեն տեսնում որեւէ կուսակցութիւն, որին

կարելի լինի վստահել երկրի ղեկավարութիւնը: Ընտրութիւնների ընդհանուր արդիւնքը հետեւեալն էր: «Ժողովրդավարական Միութիւն» կուսակցութիւնը ստացաւ ձայների 13,5 տոկոսը: Ձախ Ժողովրդավարականների Միութիւն (նախկին կոմունիստներ) կուսակցութիւնը ստացաւ ձայների 12,9 տոկոսը: «Կաթոլիկների կուսակցութիւն» ստացաւ ձայների 9,5 տոկոսը եւ «Լեհաստանի Անկախ Ֆեդերացիա» կուսակցութիւնը ստացաւ ձայների 9 տոկոսը: Այս արդիւնքների կապակցութեամբ նախագահ Լեխ Վալենսան ասաց, որ այժմ ինքը համոզւեց, որ Լեհաստանը ամուր կերպով կանգնած է ժողովրդավարութեան սկզբունքների վրայ: Եւ նա իրաւացի էր, քանզի 60 տոկոս կազմող անտարբերները ընտրութիւններին ազնւօրէն չմասնակցեցին եւ նրանց ձայներից ոչ մէկը չկարողացաւ օգտւել: Չէզոքութիւնը սկզբունք է: Չի կարող չէզոք համարւել նա, ով ասում է, թէ ես անտարբեր եմ, ուստի ում ուզէք կը տամ իմ ձայնը: Իսկ նրանց ձայները, ովքեր մասնակցեցին ընտրութիւններին, գրեթէ հաւասարաչափ բաշխւեցին տարբեր կուսակցութիւնների միջեւ, ինչը խօսում է ընտրողների բարձր հասարակական գիտակցութեան մասին: Իսկ այն երկիրը, որտեղ մէկ կուսակցութիւն կամ անձ ստանում է ձայների 80-90 տոկոսը, ժողովրդավարութեան հասնելու համար դեռեւս երկար ճանապարհ ունի կտրելու: Այդ ժողովրդի մէջ դեռեւս նստած է փրկիչ-առաջնորդի գաղափարը:

* * *

Բայց ընտրութիւնները աւարտւած են եւ նոր նախագահը, որը ուզի թէ չուզի նաեւ մեր նախագահն է, արդէն սկսել է իր առաջին քաղաքական քայլերը: Տայ Աստւած, որ այդ քայլերը խաղաղութիւն ու երջանկութիւն բերեն մեր ժողովրդին, սակայն նորընտիր նախագահի քայլերի մէջ արդէն նկատւում են լուրջ թերութիւններ, որոնց մասին անհրաժեշտ է խօսել առանձին: Բայց առայժմ կարելի է թւարկել այդ վտանգաւոր թերութիւնները, որպէսզի, ո՞վ գիտէ, գուցէ նախագահը հաշւի առնի:

1. Ամբողջովին ջուրն են ընկնում Հայ Դատի ուղղութեամբ տարւած դժւարին աշխատանքների արդիւնքները, քանի որ արտերկրի Հայ Դատի գրասենեակները եւ Հայաստանի կառավարութիւնը խօսում են տարբեր լեզուներով՝ Հայկական Ցեղասպանութիւնը ճանաչել տալու խնդրի շուրջ: Իսկ պաշտօնական Թուրքիայի եւ Արեւմտեան պետութիւնների համար՝ անկախ Հայաստանի ժողովրդի կամքով ընտրւած իշխանութիւնների ձայնը շատ աւելի հաճելի է, քան հայ ժողովրդի պահանջատիրութիւնը արտայայտող Հայ Դատի գրասենեակների ձայնը: Մասնաւորապէս Միւնխենի Հայկական Հարցերի Հաստատութիւնը չի կարողանում որոշել՝ ցեղասպանութեան փաս-

տաթղթերի ժողովածուի 4րդ հատորը հրատարակե՞լ, թէ՞ ոչ։ Թուրքիան արդէն ամէնուր յայտարարում է, որ **Ցեղասպանութեան խնդիրը արհեստականօրէն ստեղծել են Դաշնակները, իսկ Հայաստանի օրինական կառավարութիւնը այս մասին չի ուզում խօսել եւ Թուրքիայի բարեկամութիւնն է որոնում**։

2. Առանց Հայաստանի՝ Արցախը չի կարող դիմադրել Ադրբեջանի կանոնաւոր բանակին, ուստի՝ հրաժարւել Արցախի պաշտպանութիւնից, նշանակում է արցախցիներին մատնել կործանման։ Նրանց կը մնայ կա՛մ ստրկանալ եւ կամ էլ սեփական երկիրը Աւարայրի դաշտի վերածել։ Մութալիբովը արդէն մի շատ ամուր ապտակ հասցրեց Գորբաչովին եւ Տէր Պետրոսեանին, երբ հրաժարւեց Մոսկւա մեկնելուց եւ յայտարարեց, որ Արցախը իր ներքին գործն է եւ ոչ մէկը, այդ թւում նաեւ Գորբաչովը, չի կարող միջամտել այդ հարցում։ Ապտակը կուլ տալուց յետոյ է, որ սկսւեցին հայ-ադրբեջանական բանակցութիւնները, որին ներկայ չեն արցախցիները։ Ուրեմն՝ ինչպէ՞ս պիտի արցախցիների յետեւում որոշեն նրանց ճակատագիրը։ Չի՞ նշանակում սա, արդեօք, որ եթէ կրակի դադարեցման պայմանագիր կնքւի, Մութալիբովը բռնի ուժով պիտի ոչնչացնի հայ ինքնապաշտպանութեան ջոկատները, որոնց բանակցութիւնների չեն հրաւիրել, ուստի չեն կարող նրանց փոխարէն որեւէ որոշում կայացնել։ Բոլորովին այլ կարող էր լինել կացութիւնը, եթէ Հայաստանի նախագահը աւելի իմաստուն քաղաքական դիրք բռնէր։

3. Հայաստանի տնտեսական վիճակը երբեք չի կարող լաւանալ, քանի դեռ Հայաստանը արգելափակւած վիճակում է։ Իսկ նա կը մնայ այդ վիճակում, քանի դեռ Հայաստանը հրաժարւում է ստորագրել քաղաքական պայմանագիրը։ Մեր հարեւանների ոչ մէկը Հայաստանի անկախութեան մէջ շահագրգռւած չէ, ուստի ոչ մէկ զիջում Հայաստանի կողմից չի կարող մեղմացնել մեր հարեւանների դիրքորոշումը այս հարցում։

Հայաստանի տնտեսութիւնը վերականգնելու մէջ միակ շահագրգռւած երկիրը Ռուսաստանն է, որը կարող էր մեզ օգնել, եթէ մենք համապատասխան դիրքորոշում ունենայինք։ Այն թէզը, թէ Հայաստանը ստորագրել է տնտեսական համայնք ստեղծելու պայմանագիրը, բայց չի՛ ստորագրելու քաղաքական համայնքի համաձայնութիւնը՝ դատարկ խօսք է, որովհետեւ այսօր տնտեսագիտութիւնից շատ հեռու կանգնած մարդիկ իսկ գիտեն, որ առանց քաղաքական միաւորման, տնտեսական միաւորումը առասպել է։

4. Հայաստանի ներկայ ղեկավարութիւնը ամբողջովին սխալ կողմնորոշում ունի այսպէս կոչւած նախկին Խորհրդային Միութեան ապագայի մասին, ենթադրելով՝ թէ միութիւնը իսկապէս, որ այլեւս գոյութիւն չունի եւ որ 150 միլիոն ռուս ժողովուրդը արդէն հաշտւել է այն մտքի հետ, որ հրեաները ժողովրդավարական լոզունգներով վերջնականօրէն քայքայել են կայսրութիւնը։

Մինչդեռ բաւական է մանրամասնօրէն ուսումնասիրել Ռուսաստանի մամուլը, հասկանալու համար, որ ռուս ժողովուրդը դեռեւս իր վերջին խօսքը չի ասել, որ նա դանդաղ է լծում, բայց արագ է քշում։

1991

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Է. Յովհաննիսեան

Ռուսաստանում տեղի ունեցող իրադարձութիւնները այսպէս թէ այնպէս ազդում են հայկական հարցերի լուծման վրայ եւ ոչ միայն Հայաստանի կառավարութեան ճամբով, այլեւ այն ընդհանուր մթնոլորտով, որը ստեղծւում է նախկին Խորհրդային Միութեան տարածքի վրայ, Ռուսաստանի ազդեցութեան տակ: Սակայն նախ տեսնենք, թէ ի՛նչ հայկական հարցեր կան, որոնց լուծումը կախւած է նաեւ Ռուսաստանից, այլ ոչ թէ միայն հայ ժողովրդից:

Գլխաւոր հարցը, անշուշտ, հայ ժողովրդի եւ Հայաստանի ազգային անկախութեան հարցն է, այսինքն ստեղծումը այնպիսի գոյավիճակի, որտեղ բոլոր հայկական հարցերը - հողահաւաքից մինչեւ ազգահաւաք եւ դպրոցից մինչեւ տնտեսավարութիւն - լուծւում են հայ ժողովրդի կողմից ընտրւած պետական իշխանութեամբ, որը պատկանում է բոլոր հայերին ու որի հովանաւորութեան տակ են գտնւում բոլոր հայերը, անկախ նրանից, թէ որտեղ են ապրում: Այս ձեւի ազգային անկախութիւնը որակական կատարելագործման հիմնական խնդրի առաջ է կանգնեցնում նախկին Խորհրդային Հայաստանի փոխարէն հռչակւած եւ միջազգային ճանաչումի արժանացած Հայաստանի այսօրւայ Հանրապետութիւնը, որը տարածութեան անկախութիւն է, այսինքն վերաբերում է միայն նրանց, ովքեր ապրում են այդ տարածութեան վրայ: Եթէ բոլոր հայերն էլ ապրէին Հայաստանում, նոյնիսկ այդ դէպքում ազգային անկախութեան հիմնական պայմանը չէր երաշխաւորւի միայն պետական անկախութեան հռչակումով, քանզի կարելի է ունենալ նաեւ անկախ պետութիւն, որտեղ բացակայում են ազգային ազատութիւնները եւ չկան համապատասխան պայմաններ ազգի բնական զարգացման համար:

Սա նշանակում է, որ եթէ այսօր գոյութիւն ունի չլուծւած Հայկական Հարց, դրա պատճառը նոյնինքն այդ հիմնական ազգային անկախութեան բացակայութիւնն է: Պետութիւնները կարող են ստեղծւել ու քանդւել, մանաւանդ, եթէ ստեղծւած են ուրիշի ձեռքով, իսկ ազգային անկախութիւնը մնայուն է , որովհետեւ ո՛չ միայն տարածական, այլեւ՝ հոգեկան ու տնտեսական միասնութիւն է:

Եւ հէնց այստեղ էլ հարց է ծագում. կարո՞ղ ենք մենք ձեռք բերել ազգային անկախութիւն՝ առանց հաշւի առնելու Ռուսաստանում տեղի ունեցող իրադարձութիւնները:

Ո՛չ, չենք կարող, որովհետեւ հայ ժողովրդի եւ Հայաստանի ազգային անկախութեան համար անհրաժեշտ է համապատասխան պայմանների ստեղծումը նաեւ Ռուսաստանում:

Ահա թէ ինչու անհրաժեշտ է ուշի-ուշով հետեւել ու գիտնալ, թէ ի՞նչ է կատարւում Ռուսաստանում:

Եթէ փորձենք հասկանալ Ռուսաստանի քաղաքական ուժերի դասաւորութիւնը՝ առանց տնտեսական եւ ընկերային ծրագրերի մանրամասնութիւնների, զուտ գաղափարախօսական մանրամասնութիւնների մէջ մտնելու, ապա նկատում ենք, որ հիմնական երկու հարցերի շուրջ սրւում է Ռուսաստանի քաղաքական ուժերի ներքին բաժանումը:

Առաջինը՝ Արեւմուտքի բացւելու եւ արեւմտեան պատկերացումով ժողովրդավարութիւն կիրարկելու հարցն է, որի նկատմամբ Ռուսաստանի քաղաքական ուժերը բաժանւում են երկու մեծ խմբերի, որոնցից մէկը համարում է, որ արեւմտեան ժողովրդավարութիւնը Ռուսաստանի համար չէ, կամ՝ աւելի ճիշտ Ռուսաստանի համար կործանիչ է, իսկ միւսը համարում է ճիշտ հակառակը, այսինքն՝ արեւմտեան ժողովրդավարութիւնը համարում է փրկարար Ռուսաստանի համար: Առաջին խմբին են պատկանում այսպէս կոչւած Եւրո-ասիացիները,կոմունիստները, Ազգային Փրկութեան Ճակատը, Քաղաքացիական Միութիւնը, գրողներ՝ Սոլժենիցինը, Սոլուխինը, Ռասպուտինը, Ժիրինովսկու կուսակցութիւնը եւ մի շարք այլ կազմակերպութիւններ, որոնց Ռուսաստանում դասում են աջերի շարքին: Երկրորդ խմբին են պատկանում բոլոր այն կազմակերպութիւնները, որոնց կոչում են ժողովրդավարականներ եւ բարեփոխիչներ:

Երկրորդը՝ նախկին Խորհրդային Միութեան տարածքին Ազգային հարցի լուծման ճանապարհն է, որի շուրջ վերոյիշեալ երկու խմբերը կանգնած են ուղիղ հակառակ դիրքերի վրայ, իրենց միջից առաջացնելով միջին ուղու կողմնակից երրորդ մի խումբ: Առաջին խումբը՝ այսպէս կոչւած ռուսական աջը համամիտ է ոչ ռուս ազգութիւններին ազգային ինքնավարութիւն տալու սկզբունքին, բայց հակառակ է նրանց պետական անկախութեան: Երկրորդ խումբը՝ այսպէս կոչւած բարեկարգչական դեմոկրատները ոչ-ռուսների պետական անկախութեան կողմնակից է եւ համարում է, որ Ռուսաստանը պէտք է որքան կարելի է շուտ ազատւի նախկին խորհրդային հանրապետութիւններից, որոնք շարունակում են խանգարել Ռուսաստանի զարգացմանը: Իսկ միջին ճանապարհի կողմնակիցները գտնում են, որ Ռուսաստանը ի վիճակի է շարունակելու նախկին խորհրդային տարածաշրջանի մէջ իր վճռական դերակատարութիւնը՝ ոչ-ռուսների ազգային անկախութեան իրաւունքը ճանչնալով հանդերձ:

Այս վերջին խմբի մէջ գլխաւոր դերը կատարում են եւրո-ասիացիները, որոնք որդեգրել են հետեւեալ սկզբունքը: Գոյութիւն ունի հսկայական եւրո-ասիական տարածութիւն, որտեղ Ռուսաստանը պէտք է կատարի տարբեր ժողովուրդների միաւորման դեր: Նրանք մերժում են տարբեր ժողովուրդների Ռուսաստանին ենթարկելու գաղափարը, սակայն համարում են, որ Ռուսաստանը այդ շրջանում լինելու է «քաղաքակիրթ ղեկավար»: Եւրո-ասիացիները ուզում են Խորհրդային Միութեան նախկին տարածութեան վրայ կառուցել ընդհանուր տուն՝ բոլորի համար: Եւրո-ասիացիները Ա.Պ.Հ.ն համարում են իրենց մտաղրութիւնների առաջին փուլը:

Պէտք է ասել, որ պետական անկախութիւն ձեռք բերած հանրապետութիւնները նոյնպէս սկսել են հասկանալ, որ առանց Ռուսաստանի հետ տնտեսական եւ զինուրական սերտ կապերի, նրանց պետական անկախութիւնը ոչ մէկ արժէք չունի, քանզի առանց այդ կապերի, պետական անկախութիւնը առասպել է: Աշխաբադի հանդիպումը ցոյց տուեց, որ եւրո-ասիացիների գաղափարները պարարտ հող են գտնում նախկին խորհրդային հանրապետութիւններում:

Ինչպէս յայտնի է, Աշխաբադում ստեղծուեց Ա.Պ.Հ.ի արտաքին գործերի նախարարների խորհուրդ եւ որոշուեց դիմել Մ.Ա.Կ.ին՝ Ա.Պ.Հ.ն այդ միջազգային կազմակերպութեան մէջ ընդունելու համար: Ա.Պ.Հ.ի պաշտպանութեան նախարարները ընդունեցին ընդհանուր պաշտպանութեան փաստաթուղթը, որի համաձայն պէտք է իրականացւի պաշտպանութեան պայմանագիրը: Ընդհանուր պաշտպանութեան գլխաւոր քարտուղար ընտրուեց Ռուսաստանի դիւանագէտ Գենատի Շաբաննիկովը:

Պաշտպանութեան նախարար Պաւել Կրաչովը բարձր գնահատական տուեց Աշխաբադի հանդիպման արդիւնքներին եւ յայտարարեց, որ բոլոր պետութիւնները, այդ թւում նաեւ Ուկրաինան, Ռուսաստանի հետ սերտ ռազմական կապերի կողմնակիցներ են:

Հանդիպումից զոհունակութիւն յայտնեց նաեւ Ադրբեջանի նախագահ Ալիեւը, որը ասաց, թէ պայմանագրի մէջ յաջողուեց արձանագրել Ա.Պ.Հ.ի երկրների բարեկամութեան կէտը, որտեղ ասւած է, որ Ա.Պ.Հ.ի անդամ պետութիւնների միջեւ բախումները անթոյլատրելի են, առաւել եւս մէկի յարձակումը միւսի վրայ:

Եթէ վերյիշենք, որ Անդրկովկասի հանրապետութիւնները մեծ դժւարութեամբ էին համաձայնւում մտնել Ա.Պ.Հ.ի կազմի մէջ, ապա այսօր կարելի է նշել, որ նրանք ստիպւած եղան մեղմացնել իրենց գոռոզութիւնը, ղեկավարւելով կեանքի թելադրանքներով: Ադրբեջանը, որը մասնակցեց Ա.Պ.Հ.ի ստեղծմանը 1991 թւականին, հետագայում հրաժարւեց համագործակցութիւ-

նից, մանաւանդ 1992 թւականի Մարտ ամսից: Վրաստանը ընդհանրապէս չմտաւ Ա.Պ.Հ.ի կազմի մէջ եւ միայն 1993 թւականի սեպտեմբեր ամսին որոշում կայացրեց Ա.Պ.Հ. մտնելու մասին: Հայաստանն էլ օրին փորձեց ձգձգել այդ հարցի լուծումը եւ հետեւանքը եղաւ Շահումեանի ողբերգութիւնը: Ուրեմն ի՞նչ պատահեց, որ բոլոր այս պետութիւնները որոշեցին կրկին հաւաքուել Ռուսաստանի շուրջ:

* * *

Պատասխանը գտնւում է Ռուսաստանի դեկտեմբերեան քւէարկութիւնների արդիւնքի մէջ: Բանը նրանումն է, որ ընտրութիւնների նախօրեակին Ռուսաստանում տիրող քաղաքական մթնոլորտը այնպիսին էր,որ ժողովրդավարական թեւը պիտի յաղթէր, այսինքն՝ պէտք է յաղթէին նրանք, ովքեր Ռուսաստանի ապագան կապում էին Արեւմուտքի հետ: Այս պայմաններում բոլոր նորաստեղծ պետութիւնները իրենց ճակատագիրը նոյնպէս կապում էին Արեւմուտքի հետ, չնայած նրան՝ որ արդէն պարզ էր դարձել, թե Արեւմուտքից սպասելիք չկայ:

Սակայն ժողովրդավարականները պարտուեցին: Նախ՝ որովհետեւ ժողովուրդը յոգնել էր նրանց անորոշ խոստումներից, իսկ ամենակարեւորը՝ Ռուսաստանում սկսել էր արթնանալ ազգային ինքնագիտակցութիւնը:

Ժողովրդավարականների պարտութեան մէջ մեղադրում են նախագահին, որը ցրեց պառլամենտը, ապա կրակ բացեց «Սպիտակ տան» վրայ: Մեղադրում են տեղեկատւական գործակալութիւններին, որոնք շատ տեղ տւեցին Ժիրինովսկուն: Մեղադրում են ժողովրդավարականներին, որոնք ոչինչ չխոստացան ժողովրդին: Մեղադրում են Սահմանադրութիւնը, որը ըստ էութեան ժողովրդավարական չէ եւ այլն:

Այս ամէնը գուցէ եւ ճիշտ է, բայց միայն մասամբ: Ժողովրդավարականների պարտութեան բուն պատճառը այն էր, որ նրանք բոլոր հայրենասիրական կազմակերպութիւններին ու անձերին դասում էին ահաբեկիչների ու ֆաշիստների շարքին: Եւ հէնց դա էր պատճառը, որ կոմունիստները, որոնց նկատմամբ գոյութիւն ունէր համաժողովրդական ատելութիւն, շատ հանգիստ մտան պառլամենտ եւ այժմ գործելու են մնացած կուսակցութիւնների հետ միասին: Ելցինը արդէն յայտարարեց, որ համագործակցելու է բոլոր կուսակցութիւնների հետ, ինչը անկարելի կը լինի, եթէ նա չբռնի կենտրոնի դիրք:

Սա նշանակում է, որ ընդհանուր մթնոլորտը Ռուսաստանում փոխւում է դէպի կենտրոն, այսինքն եւրո-ասիական գաղափարախօսութիւն:

Այսպէս կոչուած անկախ պետութիւններին ոչինչ չի մնում, բացի նոյն գաղափարախօսութեան որդեգրումից: Ըստ ընտրութիւնների արդիւնքների՝ կուսակցութիւնները պետական դումայում ստանում են հետեւեալ տեղերը.-

Լիբերալ – Ժողովրդավարական կուսակցութիւնը՝ 59 տեղ:

Վիբոր Ռոսիի՝ 40 տեղ:

Կոմունիստական կուսակցութիւնը՝ 32 տեղ:

Գիւղացիական կուսակցութիւնը՝ 21 տեղ:

Եաւլինսկի -Բոլդիրեւ-Եուկին՝ 20 տեղ:

Ռուսաստանի ժողովրդավարական կուսակցութիւն՝ 14 տեղ:

Ռուսաստանի կանայք՝ 21 տեղ:

Սա նշանակում է, որ հայրենասէրները՝ պետութիւնը ուժեղացնելու եւ Ռուսաստանի ազդեցութիւնը տարածելու կողմնակիցները պառլամենտում կը ստանան 112 տեղ, իսկ տատանուողները (Շախրայ, Կանայք) կ՚ունենան 39 տեղ:

Այս պայմաններում Ելցինը ունի երկու ելք: Առաջինը՝ հաշւի նստել ստեղծուած կացութեան հետ ու շարժւել դէպի կենտրոն: Երկրորդը՝ հայրենասիրական լոզունգների տակ արագացնել տնտեսական բարեփոխութիւնները:

Մամուլի ասուլիսի ժամանակ, Ելցինը դեռեւս տատանւում էր իր վերջնական դիրքորոշման հարցում: Մէկ կողմից նա յայտարարեց, որ Գայտարը մնում է կառավարութեան կազմի մէջ, միւս կողմից նա պատրաստակամութիւն յայտնեց գործակցելու իր իսկ կողմից ցրւած Կոմունիստական կուսակցութեան հետ: Ժիրինովսկու մասին խօսեց բաւականին զգուշօրէն: Արեւմուտքի հետ յարաբերութիւնների մասին խօսեց խիստ, ասելով որ Ռուսաստանը զիջումների չի գնայ: Բայց մէկ ուրիշ հարցի պատասխանեց, որ Ռուսաստանի արտաքին քաղաքականութիւնը չի փոխւելու:

Այնուամենայնիւ, Ելցինը ստիպւած կը լինի հաշւի նստելու պառլամենտի նոր կազմի հետ, եթէ արդէն չի որոշել դիմել երրորդ ճանապարհին՝ ուղղակի նախագահական ղեկավարում մտցնելու տարբերակին: Եթէ նա դիմի այդ քայլին՝ Ռուսաստանի ժողովուրդը մեծ դժգոհութիւն չի յայտնի, որովհետեւ արդէն վաղուց սպասում է ուժեղ ձեռքի՝ երկրի կարգն ու կանոնը վերականգնելու համար:

Սակայն եթէ նա նման մտադրութիւն ունենար, հազիւ թէ համարձակւէր ցրել Անվտանգութեան նախարարութիւնը, որի ճամբով միայն կարող էր ստեղծել ուժեղ իշխանութիւն:

Այսպէս թէ այնպէս, Ռուսաստանը կարող է շարժւել երեք ճանապարհներից մէկով.

Առաջինը՝ այսպէս կոչուած ժողովրդավարութեան ճանապարհն է, այսինքն՝ արեւմտեան սկզբունքների կիրառման ճանապարհը:

Երկրորդը՝ եւրո-ասիական ճանապարհն է, այսինքն՝ Ռուսաստանի վճռական դերակատարութիւնը նախկին խորհրդային ազդեցութեան գօտում:

Երրորդը՝ լրիւ աջակողմեան ճանապարհը, որը թէեւ չի վերականգնի Խորհրդային Միութիւնը, բայց ուրիշ անուան տակ կը վերականգնի միութիւնը, այսինքն՝ կը զրկի նորաստեղծ պետութիւնները պետական անկախութիւնից:

Առաջին եւ երրորդ ճանապարհները քիչ հաւանական են եւ եթէ պիտի իրականանան, ապա՝ միայն բռնութեան ճամբով:

Ամենահաւանականը միջին տարբերակն է, որը առնուազն մեզ՝ հայերիս համար ամենաընդունելին է, քանզի հնարաւորութիւն է տալիս ազգային անկախութեան ձեռքբերման, որը իմաստաւորում ու պայմանաւորում է պետական անկախութիւնը:

Սա չի նշանակում, անշո՛ւշտ, որ մենք պէտք է անպատրաստ լինենք նաեւ առաջին եւ երրորդ տարբերակներին: Սակայն պէտք է քաջ գիտակցենք, որ եթէ առաջին տարբերակում մեզ անկախութիւն են շնորհում, ապա ոչ թէ մեր գեղեցիկ աչքերի համար է դա արւում, այլ՝ որպէս ծանր բեռ մեզանից ազատուելու համար եւ արւում է դա Արեւմուտքի ճնշման տակ:

Նոյնը վերաբերում է երրորդ տարբերակին. եթէ Ռուսաստանը ուզում է իր մականի տակ հաւաքել նախկին խորհրդային հանրապետութիւններին, ապա ոչ թէ նրանց օգնելու համար, այլ՝ խզուած տնտեսական կապերը վերականգնելու համար, ինչից զգալիօրէն տուժում է Ռուսաստանը: Սակայն մէկ բան էլ, հաւանաբար մենք պէտք է հաշւի առնենք. Ռուսաստանը կարող է ստեղծել այլ կապեր ու վերականգնել իր տնտեսութիւնը, իսկ մեզ դրա համար կը պահանջի առնուազն կէս դար:

* * *

Բայց տեսնենք, թէ ի՞նչ են Ռուսաստանի մասին մտածում ռուս գիտնականները: Վերջերս Միացեալ Նահանգների եւ Կանադայի ինստիտուտը հրապարակեց Ռուսաստանի կացութեանը նւիրուած մի զեկոյց, որտեղ նշում էր հետեւեալը:

Համախառն արտադրանքը Ռուսաստանում 1991 թւականին կրճատուեց 9 տոկոսով, 1992 թւականին՝19 տոկոսով, իսկ 1993 թւականին՝ 13 տոկոսով: Արդիւնաբերական արտադրանքը կրճատուեց համապատասխանաբար 8, 19 եւ 15 տոկոսով: Որոշ անկախ հետազօտական կազմակերպութիւնների ուսումնասիրութիւնների համաձայն՝ տնտեսական անկումը Ռուսաստանում աւելի

խորն է եւ կազմում է 40-45 տոկոս երեք տարիների ընթացքում: Դրամի արժեզրկումը 1992 թականին աւելացաւ 26 անգամ, իսկ 1993 թականի վերջին 9 ամիսների ընթացքում աւելացաւ եւս 6 անգամ: Կապիտալ ներդրումները 1991 թականին կրճատուեցին 11 տոկոսով, 1992 թականին՝ 53 տոկոսով եւ 1993 թականին՝ 15 տոկոսով, այսինքն՝ երեք տարւայ ընթացքում պակասեց 3 անգամ:

Ռուսաստանում ռուսների կեանքի տեւողութիւնը կազմում է կանանց մօտ 74,6 տարի, իսկ տղամարդկանց մօտ՝ 64,5 տարի: Ռուսների կեանքի տեւողութիւնը, որոնք ապրում են այլ հանրապետութիւններում, աւելի բարձր է:

1992 թականին բնակչութեան 5-10 տոկոսի ձեռքերում էր գտնւում խնայւած դրամների 80 տոկոսը, իսկ 30 միլիոն ռուսաստանցիներ ունէին եկամուտ, որ կեանքի ապահովման անհրաժեշտ եկամտից պակաս էր: 7 միլիոն մարդ գտնւում էր կիսաքաղց վիճակում: 42 միլիոն մարդ աղքատութեան վիճակում էր:

Ռուսաստանը այժմ չունի բացայայտ թշնամիներ, ինչպիսիք էին Ա.Մ.Ն. եւ Ն.Ա.Տ.Օ.ն , բայց չունի նաեւ դաշնակիցներ, որոնց վրայ կարող է յենւել:

Մոսկւայից լսւում են ձայներ քաղաքակիրթ աշխարհի հետ համագործակցելու մասին, սակայն ինքը՝ այդ քաղաքակիրթ աշխարհը, դեռեւս չի ճշտել իր յարաբերութիւնները Ռուսաստանի հետ: Քաղաքակիրթ կոչւող աշխարհը շատ լաւ գիտի, թէ ինչպիսին պէտք է լինի Ռուսաստանը, բայց չգիտի, թէ ինչպիսին ինքը պէտք է լինի: Համագործակցութիւնը անկարելի է այնքան ժամանակ, քանի դեռ որոշւած չեն Ռուսաստանի ազգային շահերը: Այդ անորոշութիւնից տուժում են նաեւ նախկին խորհրդային հանրապետութիւնները եւ առաջին հերթին՝ Հայաստանը:

Արեւելեան Եւրոպան բնական տնտեսական եւ քաղաքական պատնէշ է Ռուսաստանի եւ եւրոպական երկրների միջեւ: Մերձ-բալթեան հանրապետութիւնները կտրում են Ռուսաստանը Լեհաստանից եւ Սկանդինաւեան երկրներից: Բելոռուսիան Ռուսաստանի նկատմամբ ունի բարեացակամ տրամադրութիւններ եւ կարող էր դառնալ միակ յուսալի օղակը Ռուսաստանի եւ Եւրոպայի միջեւ, սակայն Մոսկւայում այդ բանը դեռեւս չեն հասկանում, ինչը մէկ անգամ եւս խօսում է այն մասին, որ Մոսկւան ոչինչ չի անում իր ազգային շահերը սահմանելու եւ պաշտպանելու համար: Ուկրաինան դժւարացնում է Ռուսաստանի ելքը դէպի Միջերկրական ծով եւ հազիւ թէ ռուս-ուկրաինական յարաբերութիւնները լինեն բարեացակամ: Նոյնիսկ եթէ տնտեսական միութեան մէջ այս երկու պետութիւնները ունենան յաջողութիւն, քաղաքական յարաբերութիւններում լաւացման նշաններ չկան: Այս պայմաններում միջուկային զէնք ունեցող Ռուսաստանը հազիւ թէ կարողանայ վերականգնել

իր վաղեմի ազդեցութիւնը Եւրոպայի վրայ: Այդ բանը չեն ուզում նաեւ եւրոպացիները: Ռուսաստանի ազգային շահերը, օրինակ, պահանջում են ստեղծել սերտ կապեր Բելոռուսիայի եւ Ուկրաինայի հետ, իսկ Գերմանիան ուզում է ճիշտ հակառակը:

Ռուսաստանին ձեռնտու են Անդրկովկասի հետ սերտ կապերը, բայց դրանում շահագրգռած չէ Թուրքիան:

Ընդհանրապէս ռուսաստանցու համար նոր ստեղծուած պետութիւնները հոգեբանօրէն անընդունելի միաւորներ են:

Ոմանց համար դա տարածութիւնների կորուստ է, այլոց համար՝ Ռուսաստանի հեղինակութեան անկում, ոմանք էլ արդարացիօրէն համարում են, որ նորաստեղծ պետութիւնները քայքայեցին Ռուսաստանի տնտեսութիւնը: Հոգեբանական այս մթնոլորտում ոչ մէկը այլեւս չի զբաղւում Ռուսաստանի ազգային շահերով, այլ կատարւում են փորձեր՝ այս կամ այն ձեւով վերականգնելու կորուստը: Այս իմաստով դեռեւս պարզ չէ, թէ Ռուսաստանի համընդհանուր արեւմտասիրական քաղաքականութիւնը որքանով է նպաստում երկրում կատարւող բարեփոխութիւններին: Եւ արեւմտեան քաղաքականութիւնն էլ շատ յստակ չէ: Ոմանք համարում են, որ Ելցինի քաղաքականութիւնը բացարձակ պաշտպանելու տարբերակը Ռուսաստանի ներսում առաջացրել է հակակրանք Ելցինի նկատմամբ, որովհետեւ Արեւմուտքի արժէքները ոչ բոլորի համար են ընդունելի: Այնուամենայնիւ՝ Ռուսաստանի ղեկավարութիւնը ջանում է իրեն գեղեցկացնել արեւմուտքի առջեւ, ներկայացնելով իրեն աւելի քաղաքակիրթ, քան նա կարող է այսօր լինել: Աւելացնելով Արեւմուտքի սպասումները, Ռուսաստանը փաստօրէն խոստանում է այն, ինչը երբեք չի կարող իրականացնել:

Եւ դա, անշուշտ, նոր լարւածութիւն է մտցնում Ռուսաստանի եւ Արեւմուտքի յարաբերութիւնների մէջ: Այդ լարւածութիւնը ի վերջոյ ստիպելու է Ռուսաստանին վերադառնալ իր նախկին ազդեցութեան գօտին եւ վճռականօրէն վերջ տալ նախկին Խորհրդային Միութեան տարածութեան վրայ տեղի ունեցող բախումներին: Աշխաբադի հանդիպումը նման վերադարձի փորձերից մէկն էր:

«Նեզաւիսիմայա Գազետա» թերթը Դեկտեմբերի 25ին հրատարակեց մի յօդւած, որը վերաբերում էր Աշխաբադի հանդիպմանը՝ հայ-ադրբեջանական բախման տեսանկիւնից: Այնտեղ ասւած էր հետեւեալը.

Ա.Պ.Հ.ի ղեկավարների փակ նիստում, Դեկտեմբերի 24-ին, Ադրբեջանի ղեկավար Հայդար Ալիեւը խիստ դատապարտեց Հայաստանին ու պահանջեց, որ նա անմիջապէս դուրս բերի Ադրբեջանի տարածութիւնից իր զինեալ ջոկատները: Ա.Պ.Հ.ի ղեկավարներին Ալիեւը կոչ արեց, որ նրանք ստեղծեն յա-

տուկ յանձնաժողով՝ նիւթական վնասները պարզելու եւ հայկական զօրքերի գործողութիւններին գնահատական տալու համար։

Նա նշեց, որ եթէ Ա.Պ.Հ.ի ղեկավարների խորհուրդը չընդունի համապատասխան որոշում, ապա՝ բախմանը կը միջամտեն հարեւան պետութիւնները, մասնաւորապէս Պարսկաստանը, որի սահմաններին են հասել հայկական զօրքերը։ Ըստ երեւոյթին՝ Ալիեւի տաքարիւն ելոյթը համապատասխան ազդեցութիւն թողեց ներկաների վրայ եւ նրանք որոշեցին յանձնարարել մասնագէտներին՝ կոլեկտիւ պաշտպանութեան պայմանագրի իրականացման սկզբունքների մշակումը։ Սակայն այս հարցում կան տարակարծութիւններ։ Կոլեկտիւ պաշտպանութեան պայմանագիրը նախատեսում է Ա.Պ.Հ.ի երկրների պաշտպանութիւնը արտաքին վտանգից, իսկ Ադրբեջանը պնդում է, որ իրեն վտանգ չի սպառնում ո՛չ Թուրքիայից եւ ոչ էլ Պարսկաստանից, այլ՝ Ադրբեջանին սպառնում է միայն Հայաստանը, որից կոլեկտիւ պաշտպանութեան պայմանագիրը չի փրկում։

Սակայն ստեղծուած պայմաններում Հայաստանին չի սպառնում մեկուսացում, քանզի Ռուսաստանը չի ճանաչում Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ բախման գոյութիւնը, համարելով՝ որ բախումը Ադրբեջանի եւ Ղարաբաղի միջեւ է։ Բոլոր պաշտօնական ատեաններում, Ռուսաստանի ներկայացուցիչը առարկել է Հայաստանին զաւթիչ ճանաչելու առաջարկութեանը։ Ու չնայած նրան, որ Ա.Պ.Հ.ի երկրների մէջ մահմեդական պետութիւնները մեծամասնութիւն են կազմում, այսպէս կոչուած մահմեդական գործօնը Աշխաբադում ոչ մէկ դեր չխաղաց։ Աւելին, այս տարւայ յուլիսի 6-ին Իստամբոլում ընդունուած որոշումը -Հայաստանին տնտեսական օգնութիւնից զրկելու մասին- Ա.Պ.Հ.ի մահմեդական երկրների մեծ մասը շրջանցում է։ Թուրքմենստանը, օրինակ, նաւթ տուեց Հայաստանին։

Այժմ ամէն ինչ կախուած կը լինի նրանից, թէ որքանով Ալիեւին կը յաջողւի համոզել Մոսկուային՝ ճնշում գործադրել Հայաստանի վրայ։ Հաւանաբար Ալիեւին դա կը յաջողւի, եթէ նա համաձայնուի բախման վայրում ռուսական զօրքերի տեղադրման հետ։ Սակայն Ռուսաստանը երբեք ճնշում չի գործադրի Հայաստանի վրայ, եթէ Հայաստանի ղեկավարները կարողանան համոզել նրանց, որ նման ճնշումը հակասում է Ռուսաստանի ազգային շահերին։

1994

ԵՍ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՄՈԼԻ ԿՈՂՄՆԱԿԻՑ ԵՄ

Է. Յովհաննիսեան

Յաւտում եմ, որ այս յայտարարութիւնը պիտի անեմ ոչ միայն նրանց համար, ովքեր ջանում են Դաշնակցութեան վրայ այս կամ այն պիտակը փակցնել, այլեւ՝ իմ որոշ ընկերների համար։

Ինձ թւում էր, թէ ես իմ ամբողջ կեանքով ապացուցել եմ, որ ուղն ու ծուծով դաշնակցական եմ և այլեւս կարող եմ խուսափել զգուշօրէն արտայայտւելու անհրաժեշտութիւնից՝ եւս մէկ անգամ ապացուցելու համար իմ կուսակցական պատկանելիութիւնը և հաւատարմութիւնը մեր քաղաքական ծրագրին և որոշումներին։

Ես դաշնակցական եմ և «Միացեալ, Անկախ ու Ազատ Հայաստանը» իմ կեանքի երազն է, իսկ այդ գաղափարին ծառայելը՝ իմ կեանքի բովանդակութիւնը։ Եւ, ուրեմն, այլեւս չեմ ուզում կրկնել այն միտքը, որ ես Հայաստանի լիակատար անկախութեան մոլի կողմնակիցն եմ։ Ուզում եմ միայն պատասխանել այն հարցին, թէ ինչո՛ւ երբեմն իմ որոշ արտայայտութիւնները այնպիսի տպաւորութիւն են թողնում, թէ ինձ համար անկախութիւնը շատ էլ կարեւոր արժէք չէ։ Եթէ խօսքը միայն իմ մասին լինէր, կարելի էր ուշադրութիւն չդարձնել այդ մեղադրանքների վրայ, բայց մածունի մէջ մազ փնտռող մեր հակառակորդները կարծես առիթ են փնտռում Դաշնակցութիւնը որեւէ յանցանքի մէջ մեղադրելու համար և անմիջապէս հիստերիայի են մատնւում, երբ որեւէ դաշնակցական հրապարակօրէն և ամէն առիթով չի շեշտում իր հաւատարմութիւնը դաշնակցական արժէքների և գաղափարների նկատմամբ։ Կարծես թէ մեզանից աւելի դաշնակցական են։

Բայց ինչո՞ւ պիտի մենք պարտաւոր լինենք ամէնուր և ամէն առիթով կրկնել, թէ մենք չենք շեղւել մեր սկզբունքներից։

Զարմանալ կարելի է՝ ինչո՞ւ այդ նոյն հիստերիան չի բարձրանում, երբ մենք պաշտպանում ենք Ղարաբաղի անկախութեան գաղափարը։ Ինչո՞ւ մեզ չեն ասում, թէ հրաժարւել ենք Միացեալ Հայաստանի գաղափարից։ Ի՞նչ են մեզանից պահանջում մեր յարգելի քննադատները։ Դաշնակցութեան ծրագրին հաւատարիմ մնալու համար մի՞թէ մենք պարտաւոր ենք հրապարակայնօրէն յայտարարելու, թէ Ղարաբաղի անկախութեան կողմնակից ենք, բայց լաւ գիտցէք, որ դա ժամանակաւոր է, քանզի մենք՝ «Միացեալի» կողմնակից դաշնակցականներս, ի վերջոյ Ղարաբաղն էլ, Նախիջեւանն էլ, Արեւմտեան Հայաստանն էլ կցելու ենք Հայաստանին։

Կամ՝ ինչո՞ւ հիստերիա չի բարձրացւում, երբ մենք ջանում ենք ժողովրդավարութեան սկզբունքների համաձայն աւելացնել մեր ներկայութիւնը խորհրդարանում։ Թէ՞ մեղադրանքներից խուսափելու համար մենք պարտաւոր ենք յայտարարել, որ իբրեւ յեղափոխական կուսակցութիւն՝ հարկ եղած դէպքում ապստամբութեան էլ կարող ենք դիմել։

Կամ՝ գուցէ Վրաստանի հետ գազամուղի մասին բանակցութիւններ վարելիս մենք անմիջապէս պիտի յայտարարենք, որ ի վերջոյ Ջաւախքն էլ պիտի Հայաստանին կցւի։

Գուցէ քրտերի հետ բանակցելիս էլ մենք պէտք է նրանց յիշեցնենք Սեւրի դաշնագրով նախատեսւած սահմանների մասին։

Սա ի՞նչ երեխայական մօտեցում է։ Այս երեխայութիւնները հէնց ռուսների՞ գլխին պիտի կոտրենք։ Բոլորի հանդէպ պիտի նրբանկատ լինենք, իսկ ռուսների երեսին ամէն առիթով պիտի շպրտենք, թէ մենք ձեզանից ազատւելու օրե՞րն ենք հաշւում։ Ուրեմն ինչո՞ւ համաձայնեցինք ու ողջունեցինք Հայաստանում ռուսական ռազմական յենակէտեր ստեղծելու ծրագիրը։

Այս երեխայական մօտեցման մէջ կայ նաեւ մէկ ուրիշ կողմ։ Իսկ եթէ Ռուսաստանը, իր պետական շահերից ելնելով, որոշի որեւէ ձեւի տակ վերականգնել միութիւնը, կարո՞ղ է պատահել, որ մենք՝ հաւատարիմ մնալով մեր «Ազատութիւն կամ Մահ» նշանաբանին, զինեալ դիմադրութիւն ցուցաբերենք Ռուսաստանին։ Իսկ եթէ չդիմադրենք, մի՞թէ մեզ պիտի մեղադրեն դաշնակցական սկզբունքներից շեղւելու մէջ։

Ես կարծում եմ, որ բոլոր նման մեղադրանքները միտումնաւոր գրգռութիւններ են, իսկ մենք, դժբախտաբար, գրգռւում ենք։

Մինչդեռ իրականութիւնը այն է, որ մեր վերջնանպատակը ամենեւին էլ պարտադիր ներկայ չպիտի լինի մեր առօրեայ բանակցութիւններում, յայտարարութիւններում, քաղաքական վարքագծերում։ Մեր յայտարարութիւնները, միջանկեալ որոշումներն ու դաշինքները կապ ունեն գոյութիւն ունեցող պայմանների հետ, երբեմն պահանջւում են յայտարարութիւններ, որոնք կարող են ընկալւել որպէս շեղում կուսակցութեան քաղաքական գծից։ Եւ հէնց այս մօտեցման համար էր, որ Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովները որդեգրել են նպատակին հասնելու հանգրւանային ճանապարհը։

Ես կարծում եմ՝ ռուսների հետ բանակցելիս մենք պէտք է միայն շեշտենք, որ կողմնակից ենք Ռուսաստանի հետ սերտ կապեր հաստատելու գաղափարին, իսկ թէ ինչպիսի տեսք կը ստանան այդ կապերը, ցոյց կը տայ ժամանակը։ Այդ կապերը կարող են ունենալ Ա.Պ.Հ.ի, համադաշնակցութեան, գուցէ նոյնիսկ դաշնակցութեան տեսք։ Ինչո՞ւ այդ մասին հիմա խօսել։ Մենք անշուշտ անկախութեան կողմնակիցներ ենք, բայց բոլոր անկախութիւնները ունեն ի-

րենց սահմանները, և հէնց այդ սահմանները պէտք է որոշուեն բանակցութիւնների ընթացքում։ Իսկ նման բանակցութիւններ վարելիս մեզ համար պէտք է պարզենք, թէ անկախութեան ո՞ր սահմաններում մենք կարող ենք այնպէս զարգանալ, որ գնալով այդ սահմանները լայնանան և դրանց ներսում ազգը կարողանայ գոյատեւել։ Եթէ այդ սահմանները մենք սխալ որոշենք, այսինքն՝ ծաւալենք այնքան, որ հակասենք Ռուսաստանի շահերին, եղած անկախութիւնն էլ մեզանից կը խլեն։

Եթէ ես ասում եմ, որ նախքան մեր անկախութեան սահմանների մասին որոշում տալը անհրաժեշտ է մեր ներկայ կարողութիւնների համաձայն մշակել տնտեսական, ռազմական ու քաղաքական ծրագրեր, մի՞թէ ես հրաժարւում եմ անկախութիւնից։

Եթէ ես ասում եմ, որ անկախութեանը պէտք է պատրաստւել, իսկ դրա համար համապատասխան դաշտ է հարկաւոր, որը այսօր ղեռեւս զուտ հայկական չի կարող լինել, մի՞թէ ես կամայ-ակամայ հրաժարւում եմ այդ դաշտը հայկականացնելու գաղափարից։

Եթէ ես ասում եմ, որ Ռուսաստանում իշխանութեան գլուխ են անցնում նոր ուժեր, որոնք պիտի ցանկանան սեղմել մեր ազատութիւնները, ուստի նրանց հետ հաշւի պիտի նստել, մի՞թէ ես այդ ուժերի գալուստը ողջունում եմ։

Եւ, վերջապէս, եթէ քաղաքական և տնտեսական վերլուծութիւնները ցոյց են տալիս, որ միառժամանակ Ռուսաստանից «կախուածութիւնը» կարող է մեզ օգտակար լինել, մի՞թէ պարզ չէ, որ խօսքը ժամանակաւոր կախուածութեան մասին է։ Մի՞թէ պարզ չէ, որ այդ ժամանակը միայն մենք կարող ենք կրճատել՝ համապատասխան տնտեսութիւն, բանակ, գիտութիւն ստեղծելով և ազգահաւաքն ու հողահաւաքը կազմակերպելով։

Եթէ այս ամէնը մենք պիտի մոռանանք և զբաղւենք միայն մեր հակառակորդների բերանը փակելով, ոչնչի չենք կարող հասնել, առաւել եւս՝ իրական անկախութեան։ Մի՞թէ մեզ համար դեռ պարզ չէ, որ նրանց բերանը շատ մեծ է ու կեղտոտ, որպէսզի կարելի լինի փակել կամ մաքրել։ Մի՞թէ պարզ չէ, որ եթէ մենք վաղը սկսենք գովաբանել մեր իշխանութիւնները՝ անւանելով նրանց աշխարհի իմաստուններ, միեւնոյն է մեզ կը պատասխանեն, որ «այս դաւաճան դաշնակցականները ի վերջոյ խելքի եկան, բայց մենք նրանց չենք հաւատում ու նրանց հետ չենք համագործակցում»։

Երբեմն ինձ ասում են, թէ ես շատ հարցերում ճիշտ եմ, բայց պէտք չէ այդ ճշմարտութիւնները հրապարակւեն։ Գուցէ այդպէս է, եւ եթէ ես Մայիս 28ի օրը բեմից ճառ ասէի, ես հէնց այդպէս էլ կը վարւէի։ Բայց ես ստիպւած եմ որոշակի շրջանակների հետ որոշակի հարցեր լուծել, իսկ այդ շրջանակները իմ ճառերը լսելու համար չէ, որ հանդիպում են մեզ հետ։ Եթէ մենք լսէինք, թէ ինչ-

պիսի աղէտութիւնների, ստերի ու կեղծ խոստումների են դիմում թուրքերը ու ադրբեջանցիները, մեր մազերը բիզ-բիզ կը կանգնէին։ Բայց նրանց ոչ մէկը չի մեղադրում կուսակցական կամ ազգային սկզբունքներից շեղելու մէջ, ընդհակառակը՝ բոլորը նրանց խոշորագոյն դիւանագէտներ են համարում, իսկ մենք ստիպւած ենք մեր ժողովրդի և հէնց մեր ընկերների առջեւ արդարանալ, որ յանկարծ չասեն, թէ շեղուեցինք մեր սկզբունքներից։

Աւարտեմ այս գրութիւնս այնպէս, ինչպէս սկսեցի։ Ես դաշնակցական եմ, եւ՝ անկախ Հայաստանի մոլի կողմնակից։ Իմ բոլոր յայտարարութիւնները և քաղաքական քայլերը արւում են ի պաշտպանութիւն հէնց այդ նպատակի։ Այդ գաղափարը իրականացնելու համար անհրաժեշտ է անցնել մի շարք միջանկեալ փուլերով, որի համար նախևառաջ պէտք է խաղալիք չդառնալ խորամանկ գրգռիչների ձեռքում։ Սակայն եթէ խօսքը ոչ թէ գրգռիչների, այլ իմ ընկերների մասին է, ապա նրանց միայն մէկ բան կարող եմ ասել՝ իմ բոլոր քայլերի համար ես պատրաստ եմ հանգամանալի բացատրութիւններ տալ։

1994

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՒ ՄԵՆՔ

Է. Յովհաննիսեան

Ռուսաստանի մասին մենք պիտի խօսենք և խօսենք հանգամանօրէն, քանզի, ինչպէս բազմիցս նշել ենք, գտնւում ենք նրա ազդեցութեան ոլորտում և չենք կարող կերտել մեր պետականութիւնը՝ առանց հաշւի առնելու նրա շահերն ու այդ երկրում կատարւող իրադարձութիւնները: Մենք պարտաւոր ենք ճանաչել այդ երկիրը ոչ թէ վաճառականների ու աղջիկների, այլ՝ ռուս ժողովրդի և ռուս պետականութեան էութիւնն արտայայտող խաւի մակարդակով: Պէտք է ճանաչենք՝ նրա հետ հաշւի նստելու և ոչ թէ նրան խաբելու կամ նրա շահերը ուրիշների թելադրանքով ճարպկօրէն շրջանցելու նպատակով, մենք շատ թոյլ ենք և նման խաղերի անպատրաստ, ուստի այդպիսի խաղերը մեզ համար շատ վատ կարող են աւարտուել: Տեսնենք՝ թէ ի՞նչ է կատարւում Ռուսաստանում և ինչո՞վ կարող է աւարտուել Գորբաչեւի վերափոխութիւնների հերթական մեծ փորձը:

Վերջին 10 տարիների ընթացքում մեր գիտակցութեան մէջ մտցրեցին այսպէս կոչւած «սեւ դատարկութեան» գաղափարը, որն իբրեւ թէ համընկնում է Խորհրդային Միութեան գոյութեանը: Այսինքն՝ դատարկութիւնը գոյութիւն է ունեցել թէ՛ բուն Ռուսաստանում և թէ Խորհրդային Միութեան կազմի մէջ մտնող ազգութիւնների պատմութիւններում: Այդ դատարկութիւնը խզեց պատմական ժամանակի ժառանգականութիւնը և անջրպետեց ներկան անցեալից: Նման հասարակական գիտակցութեան ծնունդը ամբողջովին ջնջեց խորհրդային մարդկանց երեք սերունդների ջանքերն ու նւաճումները՝ առաջ քաշելով այն շինծու թեզը, թէ խորհրդային ժամանակաշրջանում չի եղել ոչ մի դրական բան ո՛չ տնտեսական և ոչ էլ հասարակական բնագաւառներում: Այդ «սեւ դատարկութեան» ժամանակաշրջանը իբր ոչ մի պատմական արդիւնք չի ունեցել: Սակայն ճանաչելով սեփական անցեալը որպէս դատարկութիւն՝ հասարակութիւնը որդեգրեց պատմական մեղքի բարդոյթը և թոյլ տւեց, որ իր հետ վարւեն ինչպէս կը ցանկանան: Հասարակութեանը յանգեցրեցին այն եզրակացութեան, թէ անհրաժեշտ է կործանել ոչ միայն խորհրդային տիպի վարչակարգը, այլեւ այն ամէնը, ինչի հիմքերում ընկած է աւանդական ռուսական մշակոյթը, որն իբր հակասում է քաղաքակրթութեանը և խանգարում է երկրի արդիականացմանը:

Այս գաղափարը հեշտութեամբ և ուրախութեամբ ընդունւեց Հայաստանում նրանց կողմից, ովքեր ծանօթ չէին Դոստոեւսկուն, Տոլստոյին կամ Սոլո-

վիովին և որոնց պատկերացումները Ռուսաստանի մասին ամփոփւում էին փողոց մաքրողների, աղջիկների կամ շրջկոմի հրահանգիչների մակարդակի վրայ: Մինչդեռ ակնյայտ է, որ աշխարհի զարգացման մէջ, որպէս այդ զարգացման արդիւնք, Արեւելքի և Արեւմուտքի քաղաքակրթութիւններին զուգահեռ ստեղծուեց առանձնայատուկ ռուսական քաղաքակրթութիւն, որի ազդեցութիւնը շատ մեծ էր նաեւ խորհրդային ժամանակաշրջանում, և հէնց այդ ազդեցութեան շնորհիւ այդ ժամանակաշրջանը դատարկութիւն չէր, այլ՝ լուրջ ուսումնասիրութեան արժանի մի ժամանակաշրջան:

Չնայած Հայաստանի նախագահը հերքում է ազգային գաղափարախօսութեան գոյութիւնն ու անհրաժեշտութիւնը՝ Ռուսաստանը, զարմանալիօրէն նրա հետ հաշւի չնստելով, միշտ էլ ունեցել է ռուս ազգային գաղափարախօսութիւն, որն անցել է հետեւեալ փուլերով:

Առաջինը «Սրբազան Ռուսաստանի» փողն էր, որը ռուսական պետականութեանը վերագրում էր տիեզերական առաքելութիւն: Մոսկւան սուրբ քաղաք էր՝ երրորդ Հռոմը, ուր նստած էր աշխարհը փրկող միակ ուղղափառ թագաւորը: Այս իմաստով Ռուսաստանի պետականութիւնը ոչ թէ քաղաքացիների և տարբեր խաւերի հակասութիւնները կարգաւորող միաւոր էր, այլ համայն մարդկութեան ընդհանուր հարցերը լուծող իշխանութիւն: Ռուս մարդն ու Ռուսաստանի մտաւորականութիւնը ներշնչւած էին ընդհանուր գործին ծառայելու գաղափարով և պատրաստ էին հանդուրժել նոյնիսկ բռնապետութիւնը, քանզի այդ պետութիւնը ոչ թէ Ռուսաստանինն էր, այլ համայն մարդկութեանը և լուծում էր ոչ թէ ռուսական խնդիրներ, այլ՝ համամարդկային:

Սակայն այդ հարցերը լուծել չյաջողուեց, ընդհակառակը՝ պառակտեց քրիստոնէութիւնը և սկսեց կրել աշխարհիկ բնոյթ: Աշխարհի միակ ուղղափառ թագաւորը կրօնական վերափոխութիւնների դիմեց, «Սրբազան Ռուսաստանը» դարձաւ հակաքրիստոսի երկիր: Երրորդ Հռոմը վախճանուեց, -ասում էր ռուս հասարակական գիտակցութիւնը, - իսկ չորրորդն այլեւս չի լինելու: Ռուս ազգային գաղափարախօսութիւնը դարձաւ հակաքրիստոսի դէմ պայքարող խռովարարութիւն: Ռուս մարդը դարձաւ ապստամբ ոգի ունեցող խռովարար, որը ապստամբել էր դաւաճան կայսրութեան դէմ: Խռովարարը ռուս գրականութիւն մուտք գործեց որպէս դրական հերոս: Այսինքն՝ ռուս ազգային գաղափարախօսութեան մէջ ոչինչ չփոխուեց այն իմաստով, որ նա մնաց մարդկութեան փրկիչը, միայն թէ՝ առաջին փուլում նա փրկում էր մարդկութիւնը սեփական «Սրբազան Կայսրութեան» օգնութեամբ, իսկ երկրորդ փուլում ճանապարհից շեղւած այդ կայսրութեան դէմ պայքարելու միջոցով:

Այդ պայքարն աւարտուեց 1917 թւականի յեղափոխութեամբ, որից յետոյ ռուս ազգային գաղափարախօսութիւնը կրկին վերադարձաւ մարդկութիւնը

փրկելու առաքելութեանը: Սակայն այս անգամ արդէն ուրիշ էին սրբերը, ուրիշ էր կրօնը: Բայց նրանք ներկայ էին, և «Լենինը այսօր էլ բոլոր ապրողներից աւելի կենդանի է» գաղափարը ըստ էութեան ոչնչով չի տարբերւում «Յիսուս յարեաւ ի մեռելոց» հաւատամքից, իսկ քրիստոնէական դրախտը ոչնչով չէր տարբերւում կոմունիստական դրախտից: Եւ պէտք է ասել, որ ռուս ժողովուրդը անկեղծօրէն կատարեց իր մեծագոյն զոհաբերութիւնը յանուն այդ համամարդկային երեւակայական դրախտի: Այս իմաստով կոմունիստական կայսրութիւնն էլ սովորական կայսրութիւն չէր: Այդ կայսրութեան մէջ համաշխատաւորական գաղափարները ամենամեծ ճնշումը գործադրում էին հէնց իր՝ ռուս ժողովրդի վրայ: Սակայն մարդկութիւնը փրկելու այս փորձն էլ չյաջողուեց, և ռուս գաղափարախօսութիւնը կրկին գրաւեց ընդդիմադիր դիրքեր՝ քանդելու արդարութեան ճանապարհից շեղուած սեփական պետութիւնը: Այս անգամ, արդէն ռուս ժողովուրդը մարդկութիւնը կոմունիզմից փրկելու նպատակով քանդում էր սեփական պետութիւնը, բայց այն յոյսով, որ ի վերջոյ ստեղծելու է չորրորդ Հռոմը:

* * *

Աշխարհի բարոյական և քաղաքական ճակատագիրը տնօրինողներին ամէնեւին էլ ձեռք չի տալիս ռուս ժողովրդի ազգային գիտակցութեան վերելքը՝ ճիշտ այն պատճառով, որ ռուս ազգային գաղափարախօսութեան մէջ մարդկութիւնը փրկելու սկզբունքը դեռեւս շատ ուժեղ է: Ահա թէ ինչու նրանք ամէն ինչ անում են, որպէսզի Ռուսաստանի 70 տարուայ խորհրդային ժամանակաշրջանը ներկայացւի «սեւ դատարկութիւն», որովհետեւ անցեալից հրաժարուած ազգը ապագայ չունի: «Սեւ դատարկութեան» գաղափարի միջոցով մոռացութեան է մատնւում այդ տարիների արդիւնաբերական զարգացումը, պատերազմը, արւեստն ու գրականութիւնը: Այս ամէնը ներկայացւում են որպէս ամօթալի երեւոյթներ, իսկ այդ տարիների հերոսները սկսել են ամաչել իրենց շքանշաններից, կոչումներից և գրած աշխատութիւններից: Մի ամբողջ ժողովրդի ասում են՝ քո կեանքը սխալ էր, և ցոյց են տալիս, թէ ճիշտը ինչպիսին պէտք է լինէր: Ու տեսնում է ռուս ժողովուրդը, որ ճիշտը բարոյականութեան անկումն է, սեքս ֆիլմերի և փոփ երաժշտութեան տարածումը, միասեռականների իրաւունքների պաշտպանութիւնը, ազատ շուկայի միջոցով հարուստների և աղքատների միջեւ անանցանելի տարբերութեան առաջացումը և մարքսիզմի դէմ պայքարի պատրւակով սեփական ազգային արժէքների ոտնակոխումը:

Այս նոյն, բայց աւելի անհեռանկար վիճակում են գտնւում Ռուսական կայսրութեան մէջ ապրող բոլոր ժողովուրդները։ Նրանց վիճակը շատ աւելի անմխիթար է, քանզի ռուսները բացի խորհրդային ժամանակից ունեցել են նաեւ այլ ժամանակաշրջաններ, որոնցով կարող են լցնել այսպէս կոչւած «սեւ դատարկութիւնը»։ Իսկ ի՞նչ անեն այն ազգերը, որոնք բացի խորհրդային շրջանում ձեռք բերածից ուրիշ ոչինչ, նոյնիսկ գիր ու գրականութիւն չունէին։ Օգտագործել նրանց նկատմամբ «սեւ դատարկութիւն» հասկացութիւնը նշանակում է ընդհանրապէս ջնջել այդ ազգերի պատմութիւնը։

Մենք՝ հայերս անշուշտ, նրանց թւին չենք պատկանում, սակայն մեզանից էլ «սեւ դատարկութիւնը» շատ բան է խլում և չի կարելի հեշտութեամբ, ուրիշների քմահաճոյքով այդ ամէնից հրաժարուել։ Ճանաչել «սեւ դատարկութեան» գոյութիւնը, նշանակում է սեւ դատարկութիւն համարել Հայաստանի արդիւնաբերութիւնը, գիտութիւնը, արուեստը, Չարենցին, Պարոյր Սեւակին, Համօ Սահեանին, Հրանտ Մատթէոսեանին, Վիկտոր Համբարձումեանին և այն ամէնը, ինչով 70 տարի շարունակ պարծենում էր հայ ժողովուրդը։ Եթէ այս ամէնը «սեւ դատարկութիւն» է, ուրեմն մեր նորագոյն պատմութիւնից մեզ մնաց Կոմիտասը և Դաշնակցութիւնը, որոնք խորհրդային իշխանութեանը չծառայեցին, այսինքն «սեւ դատարկութեան» մէջ չմտան։ Եւ անշուշտ, սեւ դատարկութիւններ են նրանք, ովքեր այսօր իշխանութեան գլուխ են անցել, քանզի հէնց այդ դատարկութեան ծնունդներն են։ Այսինքն՝ մենք ստիպւած պիտի լինենք հրաժարուել մեր նորագոյն պատմութիւնից և այդ բացը լրացնենք նախորդ պատմութեամբ, իսկ Կիլիկիայի անկումից յետոյ այնտեղ շատ բան չկայ, եթէ չհաշուենք Ղարաբաղի մելիքների քաղաքական նախաձեռնութիւնները և հէնց ռուսներից օգնութիւն խնդրելը։ Հօ չենք կապելու մեզ Տիգրան Մեծի կամ Վարդան Մամիկոնեանի հետ։ Անշուշտ այդ ժամանակաշրջանները իրենց տեղն ունեն մեր պատմութեան մէջ, բայց իրական պատմութիւնը նրանցից մինչեւ մեր օրերը չի ընդհատւում ոչ մէկ դատարկութեամբ, որքան էլ ծանր օրերի միջով անցած լինի մեր ժողովուրդը։ Կարելի է միայն քննադատել մեր խորհրդային անցեալը, բայց ոչ ջնջել։ Եւ քննադատել կարելի է, որ վատ օգտագործեցինք այն հնարաւորութիւնները, որոնք այնուամենայնիւ տալիս էին մեզ խորհրդային իշխանութիւնները։

Բայց վերադառնանք Ռուսաստան, որտեղ տեղի են ունենում շատ լուրջ փոփոխութիւններ, սակայն այդ փոփոխութիւնները որոշ իմաստով վրիպում են մեր աչքից, քանզի փոխում են ղեկավարների վարքագիծը, բայց ոչ իրենց՝ ղեկավարներին։ Թւում է, թէ Ելցինն իր շրջապատով Ռուսաստանում շարունակում է իր քաղաքական գիծը, մինչդեռ Գորբաչեւին տապալող, Խորհրդային Միութիւնը լուծարող, Սպիտակ Տան վրայ կրակ բացող Ելցինի և այսօրւայ

Ելցինի միջեւ տարբերութիւնն այնքան մեծ է, որ փաստօրէն գործ ունենք երկու տարբեր մարդկանց հետ: Մենք սովոր ենք, որ յեղաշրջումների բերումով փոխւում են ղեկավարները, բայց Ռուսաստանը այդպիսին չէ. այնտեղ փոխւում է ինքը մարդը, որը և կատարում է յեղաշրջումը: Այդպէս եղաւ Լենինից Ստալին, Ստալինից Խրուշչով, Խրուշչովից Բրեժնեւ, Բրեժնեւից Գորբաչեւ, Գորբաչեւից Ելցին տանող ճանապարհին: Սրանք բոլորը նոյն վարչկարգի կողմնակիցներ էին, բայց փաստօրէն ստեղծել էին տարբեր վարչակարգեր: Միայն Ելցինն էր, որ որոշեց դիմել արմատական քայլերի և ոչնչացրեց վարչակարգը, Միութիւնն ու Կոմունիստական կուսակցութիւնը: Սակայն հասարակութեան ճնշման տակ ստիպւած եղաւ վերականգնել Կոմկուսը, արդէն Միութիւնը ճանապարհին է, իսկ վարչակարգի էութեան մասին սկսւել են բուռն վէճեր, տարբեր մակարդակներում: Այնուամենայնիւ Ելցինը արտասահմանի և սեփական ժողովրդի համար Միութիւնն ու կոմունիզմը քանդող և ժողովրդավարութիւն բերող անձնաւորութիւն է: Նա շարունակում է գործել նոյն կարգախօսներով, սակայն գործերն ու խօսքերը բոլորովին չեն համընկնում: Ինչո՞ւ: Որովհետեւ Ռուսաստանում ծագեց, ապա խորացաւ և դեռեւս շարունակւում է՝ ռուս պետականութեան ճգնաժամը:

Այն, ինչ կատարւեց անցեալ հոկտեմբերի 4ին, անկախ զգացական, բարոյական և առաւել եւս գաղափարախօսական գնահատականներից, էլ աւելի խորացրեց ռուս պետականութեան ճգնաժամը, որի ընթացքում երկրի ճակատագրին վերաբերող պատմական պատասխանատուութեան մոռացութեան մատնւած զգացմունքը դուրս եկաւ աղբակոյտերի տակից և բարձրաձայնօրէն յայտարարեց իր մասին: Ժողովրդի և պետութեան փրկութեան հարցը դարձաւ այնքան կարեւոր, որ ամենաժողովրդավար և ամենա-աշխարհաքաղաքացի գործիչներն ու կուսակցութիւնները ստիպւած եղան լծւել ոչ թէ հայրենիքը տապալողների, այլ հայրենիքը փրկողների կառքին: Ոմանց թւաց, թէ «Սպիտակ Տան» տապալման հետ կապւած իրադարձութիւնները ինքնըստինքեան կ'ամրապնդեն ռուսական պետականութիւնը: Սակայն իրականում այդպէս չէ: Իշխանութիւնները իրենց վարկաբեկեցին բացայայտ անիրաւական գործողութիւններով, և «Սպիտակ Տան» առջեւ թափւած արիւնը ռուս ժողովրդի վրայ աւելի ահաւոր տպաւորութիւն թողեց, քան համակենտրոնացման ճամբարների գոյութիւնը, նրանցում բանտարկւածների մեղքը թերեւս կասկածելի էր, բանտարկեալները թաքնւած էին ժողովրդի աչքից, իսկ այստեղ՝ Սպիտակ Տան հրապարակում, մարդկանց գնդակահարում էին միայն այն բանի համար, որ նրանք պաշտպանում էին իրենց ընտրած խորհրդարանը: Ինչ վերաբերում է Խորհրդարանին, ապա այն կատարեց իր պարտքը մին-

չեւ վերջ և կատարեց այն ամէնը, ինչի ընդունակ է նման հաստատութիւնը։ Ժողովրդի աչքում այն նոյնիսկ քաւեց իր մեղքը երկրի առջեւ։

Այս պայմաններում իշխանութեան ներսում գոյացաւ շատ վտանգաւոր հակադրութիւն այսպէս կոչւած ժողովրդավարների (ելցինականների) և ազատականների (գորբաչեւականների) միջեւ, որոնք մինչեւ հանրաքւէն միասին էին։ Ելցինի թիմը փաստօրէն քայքայւեց, իսկ թիմի անդամները լրջօրէն հակադրւեցին իրար։ Բուրբուլիսը, Գայդարը, Շախրայը, Չերնոմիրդինը, ներքին գործերի նախարարութիւնը, բանակը ունէին իրենց սեփական տեսակէտները և այլեւս մէկ թիմ չէին կազմում։ Ժամանակին նրանց միացրել էր վախը Գերագոյն Խորհրդի հանդէպ, իսկ այդ թշնամին արդէն տապալւած էր։ Այս ամէնի հետ երկրում ստեղծւեց նոր բուրժուազիա, որը սակայն ստեղծւել էր ոչ թէ իր արդար աշխատանքով, այլ՝ անազնիւ վաճառականութեամբ և չունէր իշխանութիւնը կենտրոնացնելու այն ձգտումը, որը բնորոշ է դասական բուրժուազիային։ Այսինքն՝ Ռուսաստանի պետականութեան բնական ճանապարհով վերականգնման մեծ յոյսեր չկային, և շուտով պարզ դարձաւ, որ Ռուսաստանի պետականութիւնը փրկելու համար անհրաժեշտ է յատուկ ճիգեր գործադրել, քանզի այդ քայքայման մէջ շահագրգռւած են թէ՛ արեւմուտքը և թէ արեւելքը։

Նախկինում Ռուսաստանին վերագրւում էր արեւելքը արեւմուտքի հետ հաշտեցնելու առաքելութիւնը, սակայն մեր օրերում պարզ դարձաւ, որ եթէ միայն այդ է ռուսաստանի քաղաքական նշանակութիւնն աշխարհում, ապա կարող է այնպէս լինել, որ Ռուսաստանն ընդհանրապէս դուրս գայ քաղաքական թատերաբեմից, ինչպէս դուրս են եկել բազմաթիւ քաղաքներ ու պետութիւններ, երբ կորսւել է նրանց աշխարհագրական դիրքի կարեւորութիւնը։ Սա պատկերաւոր համեմատութիւն չէ՝ իրականութիւն է, ինչը լուրջ մտահոգութիւն է պատճառում ռուսական պետականութեան կողմնակիցներին։

Բանն այն է, որ մօտ ժամանակներում նախկին Խորհրդային Միութեան ասիական տարածութիւնների ուժանիւթային պաշարները և ապրանքները կը շարժւեն դէպի արեւմուտք՝ շրջանցելով բուն Ռուսաստանը, ինչպէս նաեւ Ասիա կը մտնեն արեւմուտքի դրամական միջոցները՝ շրջանցելով Ռուսաստանը։ Դեռեւս 1992 թւականի Մայիսին Թուրքմենիայի նախագահը Սաֆարմուրադ Նիյազովը Ղազախստանի, Թուրքիայի, Իրանի, Պակիստանի և Միջին Ասիայի երկրների ղեկավարների հանդիպմանը առաջին անգամ յայտարարեց, թէ պէտք է վերականգնել Մետաքսի Մեծ ճանապարհը, որը կը դառնայ արեւմուտքը արեւելքին կապող կամուրջ։ Այսօր,- ասաց նա,- Թուրքմենիան Իրանի հետ կապւում է միայն մէկ ճանապարհ, իսկ Չինաստանի, Հնդկաստանի, Պակիստանի հետ հաղորդակցութեան ճանապարհներն աւելի անբարւոք

վիճակում են։ Իսկ եթէ մենք իրականացնենք Մետաքսի մեծ ճանապարհը վերականգնելու ծրագիրը, աշխարհի քարտէզի վրայ կը յայտնւի համա-ասիական ճանապարհ, որը կը կապի Իստամբուլը, Թեհրանը, Աշխաբադը, Տաշքենդը, Ալմա-Աթան, և կենտրոնական Ասիայի պետութիւնները ուղղակի ելք կը ստանան մէկ կողմից Մերձաւոր Արեւելք և Միջերկրական ծով, իսկ միւս կողմից՝ Չինաստան, Հարաւային Ասիա և Հեռաւոր Արեւելքի նաւահանգիստներ։

Հասկանալի է, թէ ինչ դեր կը մնայ կատարել Ռուսաստանին։ Իսկ Տաջիկստանում Էլեկտրական բարձր լարւածութեան գծեր կառուցելու ծրագիր կայ, որը պէտք է անցնի Տաջիկստան-Աֆղանստան-Պակիստան ճամբով։ Այդ գծով շատ հետաքրքրւած է Թուրքիան։ Լենինաբադի նաւթի և գազի պաշարներով հետաքրքրւած են Միացեալ Նահանգներ, որ ջանում է ստեղծել Կենտրոնական Ասիայի Միութիւն՝ 7 զարգացած արդիւնաբերական երկրների տնտեսութիւնը ապահովելու ուժանիւթային ապրանքներով։ Ինչ վերաբերում է յատուկ ռուսական քաղաքականութեանը, ապա նրա գոյութիւնը չի ուզում ճանաչել ո՛չ Արեւմուտքը և ոչ էլ Արեւելքը։ Այսօր փաստօրէն կատարւում է այն, ինչի մասին դեռեւս 18րդ դարի վերջում նախազգուշացնում էր Էմանուէլ Կանտը՝ գրելով, -«Երկրագնդի մեր մասում, որը ժամանակին, հաւանաբար, դառնայ օրէնսդիր մարմին բոլորի համար, կը սկսուի պետականութեան բարելաւման ընթացքը, իսկ ուրիշ ժողովուրդների պետութիւնների պատմութիւնները կարելի է միացնել այդ ընթացքին որպէս մի անցողիկ երեւոյթ»։

Այստեղ նորութիւնը միայն այն է, որ եթէ նախկինում Համաշխարհային օրէնսդիր մարմինը Եւրոպան էր՝ Համա-գերմանական բովանդակութեամբ, ապա Երկրորդ Համաշխարհային Պատերազմից յետոյ կենտրոնը տեղափոխւեց Միացեալ Նահանգներ, իսկ Արեւմուտք հասկացութիւնը նոյնացաւ անգլօ-սաքսոնական աւանդոյթի հետ։

Սա էլ պիտի չվրիպի մեր ուշադրութիւնից, քանզի Եւրոպայում ծագած աջակողմեան շարժումները կրում են հակա-ամերիկեան բնոյթ, և չի բացառւում այն տարբերակը, որ Եւրոպայի և Ամերիկայի միջեւ Արեւմուտքի կենտրոնը գրաւելու պայքար ծագի։ Եւրոպացիներն արդէն սկսել են պայքարել այսպէս կոչւած «Մոնդեալիզմի» դէմ և ցանկանում են այդ պայքարի մէջ ներգրաւել նաեւ Ռուսաստանը։ Ալեն դէ Բենուան, Ռոբերտ Ստոյքերը, Կլաուդիօ Մուտին, Ժան Տիրիարէն՝ Եւրոպայի աջակողմեան շարժումների ղեկավարները, բազմիցս դիմել են Ռուսաստանի ղեկավարներին համատեղ պայքարի առաջարկութեամբ։ Տիրիարէն ուղղակիօրէն առաջ է քաշում «Եւրոպան՝ Դուբլինից մինչեւ Վլադիվոստոկ» թեզը։ Սակայն այս աջակողմեան շարժումների կողքին, քաղաքական հրապարակ են իջել այսպէս կոչւած Եւրօասիացիները, որոնց խոշորագոյն ղեկավարներից մէկը՝ Հայդար Ջեմալը առաջ է քաշել գրե-

թէ նոյն թեզը, որտեղ Եւրոպան փոխարինուած է Ասիայով։ Նրա թեզն է՝ «Ասիան՝ Վյադիվոստոկից մինչեւ Դուբլին»։ Դժւար չէ կռահել, որ երկու դէպքերում էլ այդ նոր Եւրոպայի կամ Ասիայի մէջ Ռուսաստանի դերը բաւականին համեստ է։ Եւրասիան Եւրոպան է և Ասիան է, որտեղ Ռուսաստանը կատարում է որոշ դեր, սակայն Ռուսաստան չէ։ Տեսնենք, թէ ի՛նչ դեր է նախատեսւում Ռուսաստանի համար։ Գոյութիւն ունի մի տեսակէտ, որը զարմանալիօրէն տարածւում է թէ՛ ժողովրդավարական և թէ հայրենասիրական թեւերի կողմից, այն է՝ նախկին խորհրդային միջին-ասիական հանրապետութիւնները շարունակում են ձգտել դէպի Ռուսաստան, որն ինքը նրանց յետ մղեց իրենից։ Սակայն իրականում այդպէս չէ։

* * *

1991 թւականի դեկտեմբերի 18-20ը Ալմա-Աթայում տեղի ունեցաւ թուրք ժողովուրդների 3րդ խորհրդաժողովը, որին մասնակցեցին Ռուսաստանի թուրքախօս ժողովուրդների ներկայացուցիչները։ Ներկայ էին արտասահմանեան դիտորդներ, այդ թւում՝ նաեւ թուրք դիւանագէտներ, աշխարհի մի շարք իսլամական կենտրոնների ներկայացուցիչներ։ Խորհրդաժողովում քննարկուեց «Մեծ Թուրան» (Թուրքեստան) ստեղծելու գաղափարը, որի ստեղծման անհրաժեշտութիւնը շեշտեցին Ղազախստանը, Ադրբեջանը և Թաթարստանը։ Այդ նոր պետութեան կազմի մէջ, բացի Թուրքիայից և Միջին Ասիայի հանրապետութիւններից, մտնելու էին Ռուսաստանի հողերը՝ Ուրալը, Վոլգայի աւազանը, Հարաւային Սիբիրը, Եակուտիան և Կրասնոդարի մարզի մէկ մասը։ Ճիշտ է, ասիական հանրապետութիւնները ընդգծում էին Ռուսաստանի հետ տնտեսական միութիւն կազմելու և երբեմն-երբեմն նրա զինեալ ուժերից օգտւելու իրենց հետաքրքրութիւնը, ինչը այսօր կատարւում է Տաջիկստանում, սակայն նրանք բազմիցս և բաւականին անկեղծօրէն հասկացել են, որ քաղաքական միութեան մասին խօսք լինել չի կարող։ Թուրքմենիայի նախագահ Նիյազովը վերջերս «**Մոսկովսկայա Պրաւդա**» թերթի էջերում յայտարարեց՝ «Կրկի՞ն միութիւն։ Ոչ մի դէպքում»։ Իսկ Ասքար Աքայեւը յայտարարեց, որ Թուրքիան կրկին դարձել է մահմեդական աշխարհի փարոսը։ Այն փաստը, որ քաղաքական կողմնորոշումների մէջ փան-թուրանական զօտու արմատները, որոնում են Անկարայում կամ Վաշինգտոնում, բայց ոչ Մոսկւայում, հաստատւում է նաեւ մշակութային տեղաշարժերով։

Յատկանշական է Ղրղզստանի պառլամենտում պետական լեզւի մասին տեղի ունեցած բանավէճը։ Մի երկիր, որի տնտեսութիւնը գոյութիւն ունի միայն ու միայն Ռուսաստանի ներդրումների շնորհիւ, որի գործարաններն

աշխատացնում են ռուսները և ռուսախօս մասնագէտները, պաշտօնապէս հրաժարւում է ռուսերէնը ոչ միայն պետական լեզու, այլեւ՝ ընդհանրապէս որպէս ազգամիջեան փոխ-յարաբերութիւնների լեզու ճանաչելուց: Նոյնը վերաբերում է մնացած ասիական հանրապետութիւններին: Ամէնուր ծաւալել է քաղաքների ու գիւղերի անունները փոխելու արշաւը, նոյնիսկ եթէ այդ քաղաքը հիմնադրուել է ռուսների կողմից, և այնտեղ ապրում են ռուսներ, օրինակ՝ Երմակ կամ Ցելինոգրադ:

Ռուսաստանին դուրս են մղում նաեւ եթերից, որի տեղը գրաւում է Թուրքիան: Վերջինս արբանեակների միջոցով օրական երեք ժամ հաղորդումներ է վարում Միջին Ասիայի հանրապետութիւնների համար: Պատահական չէ Թուրքիայի նախագահ Սուլէյման Դեմիրելի յայտարարութիւնը, թէ «Միջին Ասիայում մենք Եւրոպայի սուրհանդակներն ենք: Մենք եւրոպացիներ ենք որ Ասիա ենք տանում եւրոպական արժէքներ»: Այսինքն՝ այստեղ Ռուսաստանի միջնորդութեան կարիքը չկայ, թուրքերն անմիջականօրէն լեզու են գտել եւրոպացիների հետ և նրանց սուրհանդակներն են դարձել: Այժմ ռուս մեծ մշակոյթը, դուրս է մղւելու Թուրքիայի մշակոյթի կողմից՝ եւրոպական արժէքներ բերելու պատրւակով: Ու քանզի Եւրոպան առաջնութիւնը տալիս է ոչ թէ Կոստանդնուպոլսին, այլ Իստամբուլին, Ռուսաստանի պատմութեան առնւազն 500 տարին եւս անցնում է «սեւ դատարկութեան» մէջ, իսկ քրիստոնէութեան համար կատարւած զոհաբերութիւնները դառնում են անտեղի տուրքեր, որ տրւեցին «ան-իդէալ» բիւզանդական մշակոյթը պահպանելու համար:

Աւելին, Գայդար Ջեմալը պաշտօնապէս յայտարարեց, որ Ռուսաստանին ուրիշ բան չի մնում, բացի իսլամութիւնը ընդունելուց, իսկ Ռուսաստանի Գերագոյն Խորհրդի կրօնական կոմիտէի նախագահի տեղակալ Մուրադ Զարգիշեւը յայտարարեց, որ Ռուսաստանում իսլամը և ուղղափառութիւնը հաւասար չեն, և այդ կացութիւնն այլեւս հանդուրժելի չէ: Եւ խօսքը ոչ թէ այդ երկու կրօնների իրաւաբանական անհաւասարութեան, այլ Ռուսաստանի պատմութիւնը վերանայելու մասին է՝ հերքելու համար ուղղափառ քրիստոնէութեան նշանակութիւնը Ռուսաստանի պատմութեան մէջ:

Արդէն այսօր Ռուսաստանին վերագրում են հակամահմեդական տրամադրութիւններ, որոնք իբր թէ սկսւել են Կոստանդնուպոլսի անկումից: Ռուսաստանում միշտ էլ իսլամի և ուղղափառութեան միջեւ լարւածութիւն գոյութիւն է ունեցել և բազմաթիւ ռուս-թուրքական պատերազմները, ապա ռուս-կովկասեան պատերազմը դրա ապացոյցներն են: Հակամահմեդականութիւնը յանցագործութիւն է յայտարարւում՝ չնայած ի տարբերութիւն Եւրոպայի խաչակիրների, ռուսներն իրենց խաչի տակ երբեք արշաւներ չեն կատարել մահմեդականների դէմ: Սաուդական Արաբիայի դեսպան Աբդել Ազիզ Մ. Հո-

ջան վերջերս յայտարարեց, որ «Խորհրդային Միութիւնը, իսկ հիմա էլ Ռուսաստանը աշխարհի այն հազուադէպ պետութիւններից է, որն արաբական երկրների հետ չի ունեցել ոչ մէկ բախում և պատերազմ»: Սակայն այս փաստերը ոչ մէկ նշանակութիւն ունեն, որովհետեւ Արեւելքն ու Արեւմուտքն այլեւս Ռուսաստանի կարիքը չեն զգում: Դրա հետ միասին կրճատւում է ռազմական արդիւնաբերութիւնը՝ Ռուսաստանին զրկելով իր բազմաթիւ թշնամիներից պաշտպանւելու կարողականութիւնից:

* * *

Ահա, այս պայմաններում անհրաժեշտ է որոշել ռուս-հայ յարաբերութիւնների եզրը, համագործակցութեան բնագաւառները ու խորութիւնը: Հարկ է անմիջապէս նշել, որ Ռուսաստանի հետ համագործակցութեան բնագաւառների ու խորութեան շուրջ 80 տոկոսը որոշում է ինքը՝ Ռուսաստանը, իսկ մեզ մնում է ճշտել այդ համագործակցութեան մօտ 20 տոկոսը, որն ունի զուտ հայկական բնոյթ և պիտի լինի այնպիսին, որ չտուժեն հայ ժողովրդի ազգային շահերը:

Ինչպէս տեսանք, Ռուսաստանին թուլացնելու և նոյնիսկ ոչնչացնելու գործում շահագրգռւածները շատ են, սակայն նրանց խնդիրն այժմ ահագին դժւարացել է: Խորհրդային Միութիւնը կարելի էր քանդել մարդու իրաւունքները պաշտպանելու և ժողովրդավարութիւն քարոզելու պատրւակով: Եւ այդ պատրւակը համընդհանուր էր: Բոլորը գիտէին և իրենց կաշուի վրայ զգում էին, որ Խորհրդային Միութիւնում մարդու իրաւունքները խախտւած են, ուստի անհրաժեշտ է պայքարել բռնապետութեան դէմ: Պայքարեցին բոլորը և առաջին հերթին՝ ռուսները: Ճիշտ է, պայքարի այդ հնարաւորութիւնն տրւեց՝ Խորհրդային Միութիւնը և կոմունիզմը տապալելու և ոչ թէ ազատութիւն ձեռք բերելու համար: Բայց վերջնական հաշւարկները թող կատարի պատմութիւնը: Կոմունիզմից և Խորհրդային Միութիւնից յոգնել էին բոլորը և տապալեցին, ինչպէս նախատեսւած էր:

Բայց Խորհրդային Միութիւն տապալողները դրանով չբաւարարւեցին՝ որոշելով տապալել նաեւ Ռուսաստանը: Այս հարցում մարդու իրաւունքները, ժողովրդավարութիւնը, ազատ շուկան այլեւս չէին կարող դառնալ միջոցները և Ռուսաստանի թշնամիները սկսեցին՝ դանդաղ, բայց հետեւողականօրէն հարւածել ռուս ժողովրդին՝ նրա կրօնին, նրա պատմական անցեալին, արւեստին ու աւանդոյթներին: Այդ մարտավարութիւնն անշուշտ սխալ էր, և ռուս ժողովուրդը զգաստացաւ: Այն 80 տոկոսը, որը ռուս-հայ յարաբերութիւնների մէջ տրւած է որոշելու ռուսներին, արդէն որոշւած է: Իմ կարծիքով, ռուս ժողո-

վուրդը որոշել է ինչ-որ ձեւով վերականգնել միութիւնը և միութեան ճամբով կրկին դառնալ աշխարհի խոշորագոյն պետութիւններից մէկը: Բացի մերձբալթեան հանրապետութիւններից, նախկին Խորհրդային Միութեան սահմանները պաշտպանւելու են մէկ հրամանատարութեան տակ գտնւող զօրքերով: Այդ սահմաններից ներս որեւէ արտասահմանեան զօրքերի ներկայութիւնն անկարելի է: Խորհրդային Միութիւնը քանդող երեք նախագահներից երկուսը (Ուկրաինա, Բելառուս) ժողովրդի կողմից արդէն պաշտօնազրկւած են: Հերթը հասել է երրորդին՝ Ռուսաստանի նախագահին: Տնտեսական համագործակցութեան հարցերը նոյնպէս լուծւած են: Բոլոր նախկին հանրապետութիւնները, ուզեն թէ չուզեն, կրկին գտնւելու են ընդհանուր տնտեսական գօտում՝ ընդհանուր շուկայով, առանց մաքսատների և աշխատավարձի ու տուրքի ընդհանուր քաղաքականութեան: Այսինքն՝ ուզենայ Հայաստանը, թէ ոչ, նրա տարածութեան վրայ կառուցւելու են ռազմական յենակէտներ և գործարաններ, որոնք ընդգրկւելու են ընդհանուր տնտեսութեան մէջ:

Չի ձեւակերպւած միայն այն 20 տոկոսը, որը պէտք է որոշի Հայաստանը: Օրինակ, դեռեւս պարզ չէ, թէ ի՛նչ գոյավիճակով է մտնելու Ղարաբաղը ապագայ միութեան մէջ: Պարզ չէ, թէ ընդհանուր հրամանատարութեան տակ գտնւող Հայաստանի զօրքերը լինելո՞ւ են զուտ հայկական, թէ՝ խառն: Իրաւունք պիտի ունենա՞յ Հայաստանի կառավարութիւնը, շրջանցելով կենտրոնական տնտեսական իշխանութիւնները, իր ապրանքը հանել արտասահմանեան շուկայ: Կարո՞ղ է Հայաստանի Սահմանադրութիւնը հակասել միութենական Սահմանադրութեանը: Այստեղ տեղը չի քննարկելու, թէ ի՛նչ հարցեր են մտնում այդ 20 տոկոսի մէջ, որը մենք ենք լուծելու: Բաւական է ասել, որ այդտեղ հարցեր շատ կան, և՝ կարեւոր հարցեր: Աւելին, հէնց այդ 20 տոկոսով է լուծւում հայ ժողովրդի ճակատագիրը, որովհետեւ մնացած 80 տոկոսը հայկական չէ: Այդ 80 տոկոսը գոյութիւն կ'ունենար նաեւ այն դէպքում, եթէ հրաշքով ֆրանսացիները կամ ամերիկացիները վերցնէին Հայաստանի հովանաւորութիւնը:

Բայց կարո՞ղ է արդեօք Հայաստանը ճիշտ կողմնորոշւել այդ 20 տոկոսի մէջ: Կարո՞ղ են նրա այսօրւայ ղեկավարները, յօգուտ հայ ժողովրդի, լուծել իրենց տրւած հնարաւորութիւնը: Ցաւօք, կարծում եմ՝ ոչ: Ո՛չ՝ հետեւեալ պատճառներով,-

1.- Ազատութեան և յատկապէս Ղարաբաղի ազատագրման ալիքը Հայաստանի իշխանութեան գլուխ նետեց մարդկանց, որոնք չունէին ո՛չ մասնագիտական և ո՛չ էլ բարոյական պատրաստակամութիւն հայ ժողովրդի ճակատագրի ղեկը իրենց ձեռքը վերցնելու: Նրանք չէին հասկանում ո՛չ ժողովրդավարութեան, ո՛չ շուկայական տնտեսվարութեան, ո՛չ դիւանագիտութեան, ո՛չ

Ռուսաստանի հետ բարեկամութեան և ոչ էլ ազգային անկախ պետականութեան սկզբունքները: Բոլոր այս հարցերը լուծուեցին առանց որեւէ ծրագրի, անգրագէտ մարդկանց քմահաճոյքով: Մեր նոր ղեկավարները չունէին նաեւ համապատասխան բարոյական պատրաստութիւն, ինչը կայանում է «Հայրենիքը վեր է ամէն ինչից» սկզբունքի մէջ: Իսկական յեղափոխութիւնը սկսւում է իշխանութիւնը վերցնելուց յետոյ, իսկ մեր ղեկավարները աւարտեցին յեղափոխութիւնը իշխանութիւնը վերցնելով և սկսեցին զբաղուել միայն սեփական իշխանութեան ամրապնդմամբ, սեփական գրպանները լցնելով և սեփական հաճոյքները բաւարարելով: Նրանք չկարողացան դառնալ Վարդաններ, որոնք յանուն ազգի պատրաստ էին զոհաբերել սեփական կեանքը:

2.- Հայաստանի և հայ ժողովրդի արտաքին յարաբերութիւններում կենտրոնական տեղ գրաւեցին ոչ թէ հայ ժողովրդին բնորոշող առանձնայատկութիւնները (աշխարհագրական դիրք, քրիստոնէութիւն, աշխատասիրութիւն, սփիւռքի գոյութիւն, պատմական աւանդոյթներ), այլ գաղափարախօսական սկզբունքները (ազատ շուկայ, ժողովրդավարութիւն, անկախութիւն, արեւմտասիրութիւն):

3.- Բացակայում են համահայկական ճիգերը: Հայ ժողովուրդը տւեալ դէպքում Հայաստանի բնակիչներով է ներկայանում, Ռուսաստանին և որեւէ երկրի, բայց ոչ բովանդակ հայ ժողովրդով: Քաղաքացիութեան օրէնքի բացակայութիւնը հայ ժողովրդին դարձնում է ոչ թէ քաղաքացիներ, այլ պարզ բնակիչներ: Եւ հէնց ինքը՝ Լեւոն Տէր-Պետրոսեանը ոչ թէ նախագահ է, այլ բնակիչների կողմից ընտրւած համայնքի ղեկավար: Այլեւս չեմ խօսում այն մասին, որ հայ ժողովրդի ամենանւիրւած ու զոհաբերութիւնների պատրաստ տարրը՝ Հ.Յ.Դաշնակցութեան անդամները մնայուն կերպով ճնշումների տակ են:

4.- Ազգային պատասխանատւութեան բացակայութիւնը և իշխանութեան համար մղւող պայքարը ազգին ծառայելու համար ժամանակ չեն թողնում և լցնում են հրապարակը փոխադարձ հայհոյանքներով՝ ստեղծելով արհեստական շուկայական կռիւ՝ այնքա՛ն վնասող հայ ժողովրդին, որ երբեմն թւում է, թէ ինչ-որ մէկը միտումնաւոր գրգռում է հայերին՝ նրանց կուրացնելու նպատակով, որպէսզի չտեսնեն, թէ ի՛նչ փոփոխութիւններ են տեղի ունենում աշխարհում ու Ռուսաստանում:

5.- Հայաստանը Ռուսաստանում ներկայացնող հաստատութիւնը ոչինչ չի անում այդ ուղղութեամբ, այսինքն՝ չի ներկայացնում հայկական շահերը և չի փոխանցում իր կառավարութեանը Ռուսաստանում տիրող կացութիւնը: Այս վերջինը նա կա՛մ չի հասկանում և կամ էլ ծուլանում է աշխատել: Ինձ կարող են ասել, թէ ո՞րտեղից գիտեմ Մոսկւայի դեսպանատան և Հայաստանի իշխանութիւնների փոխ-յարաբերութիւնները: Իմանում եմ արդիւնքներից և թերթե-

րում հրատարակւած կցկտուր հաղորդագրութիւններից: Բայց է՛լ աւելի իմանում են այն բանից, որ բազմաթիւ կարեւոր հարցերի վերաբերեալ Ռուսաստանի պաշտօնեաները դիմում են ոչ թէ Հայաստանի կառավարութեանը, այլ «Ռուս-Հայ Համագործակցութեան ֆոնդին»:

6.- Դժւար է ենթադրել, թէ Հայաստանի ղեկավարութիւնը Ռուսաստանի ղեկավարութեան նման կարող է արմատապէս փոխել իր քաղաքական կողմնորոշումը: Դժւար է, քանզի մեր այսօրւայ ղեկավարները հայ ժողովրդին սպառնացող վտանգը նախ չեն տեսնում, իսկ տեսնելով էլ վտանգ չեն համարում:

Հաւանաբար խօսքը ժողովրդինն է, որը հազիւ թէ կործանւի առանց դիմադրութեան:

1994

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ Ա.Պ.Հ.Ն

Է. Յովհաննիսեան

«Ռուս-հայկական համագործակցութիւն»
հիմնադրամի նախագահ

Հայաստանի փոխ-յարաբերութիւնները Ա.Պ.Հ.-ի հետ ոչ այլ ինչ են, եթէ ոչ յարաբերութիւններ Ռուսաստանի հետ, քանզի առանց Ռուսաստանի անիմաստ և անկարելի է նախկին խորհրդային հանրապետութիւնների ոչ միայն միութիւնը, այլ նոյնիսկ համագործակցութիւնը: Խորհրդային Միութիւնը ստեղծուած էր Ռուսաստանի հետ քաղաքական, տնտեսական և մշակութային կապերի հիման վրայ, և այդ կապերը այնքան սերտ էին, որ միութիւնը դարձել էր մէկ պետութիւն, որտեղ ապրում էին տարբեր ժողովուրդներ: Եւ որովհետեւ այդ պետութեան հիմքը Ռուսաստանն էր, նրա պատմական աւանդութիւնները որոշակիօրէն ազդեցին Խորհրդային Միութիւնում տիրող ընդհանուր կացութեան վրայ: Այստեղ, հաւանաբար, ճիշտ կը լինէր երկու խօսքով յիշեցնել Ռուսաստանի պատմական աւանդութիւնների մասին: Ռուսաստանին ազատականները միշտ կոչում էին Եւրոպայի ոստիկան այն իմաստով, որ նա անկեղծօրէն միշտ ջանացել է Եւրոպայում կարգ ու կանոն մտցնել:

1686ից Ռուսաստանը սկսում է իր Ղրիմեան արշաւները՝ փրկելու Եւրոպան թուրքերից: Պետրոս Առաջինը շարունակում է այդ արշաւները և գրաւում Ազովը: Պօղոս Առաջինը յեղափոխականներից պաշտպանում էր Եւրոպայի օրինական իշխանութիւններին: Նիկոլայ Առաջինը փրկեց Աւստրօ-Հունգարիան 1848 թւականի յեղափոխութիւնից, Նիկոլայ Երկրորդը ապարդիւն պայքար մղեց նոր յեղափոխականների դէմ և հէնց այդ պայքարում էլ կործանուեց: Կոմունիստական Ռուսաստանը պայքարեց մէկ կողմից ժողովրդավարութեան, միւս կողմից՝ Հիտլէրի դէմ: Այսինքն, Ռուսաստանի ամբողջ պատմութիւնը վկայում է, որ այդ երկիրը միշտ վճռական դեր է կատարել Եւրոպայում, ապա նաեւ ամբողջ աշխարհում տեղի ունեցող իրադարձութիւններին:

Եթէ Ռուսաստանը միշտ անհրաժեշտ է եղել Եւրոպայի հաւասարակշռութիւնը պահպանելու առումով, ապա շուտով նա աւելորդ դարձաւ հէնց այն պատճառով, որ որոշակի ուժեր ուզեցին քանդել ազգային պետութիւնների վրայ կառուցուած Եւրոպայի հաւասարակշռութիւնը: Աշխարհաքաղաքացիական սկզբունքներ որդեգրած այդ ուժերը ուզեցին ստեղծել նոր հաւասարակշռութիւն, որտեղ ազգային և պետական արժէքները փոխարինուեն զուտ նիւթա-

կան շահերով, որտեղ արժանապատւութիւնը, հայրենասիրութիւնը և ազգասիրութիւնը զիջեն նիւթապաշտութեանը։ Նման աշխարհ ստեղծելու համար անհրաժեշտ էր կործանել Խորհրդային Միութիւնը, Չինաստանը և մի շարք այլ պետութիւններ, որոնց հերթը կը հասնի, եթէ հնարաւոր լինի հաստատագրել Ռուսաստանի կործանումը։ Այդ կործանմանը եռանդուն մասնակցեց Հայաստանի ներկայիս ղեկավարութիւնը՝ կարծելով ոչ թէ Ռուսաստանն է կործանում, այլ իր երկիրն է փրկում։ Սակայն միութիւնը կործանել յաջողուեց, բայց սեփական երկիրը փրկել՝ ոչ։

Հայաստանի համար պարզ էր, որ ինքնուրոյն նա չի կարող վայելել իր անկախութիւնը և որ Ա.Պ.Հ.ի մէջ մտնելը անհրաժեշտ է։ Մտանք, բայց չապահովեցինք ո՛չ մեր անվտանգութիւնը, ո՛չ մեր տնտեսութիւնը, ո՛չ մեր անկախութիւնը, ո՛չ մեր հասարակական կեանքը, ո՛չ մեր ազգային արժէքները և ոչ էլ Ղարաբաղի վերամիաւորումը։ Միութեան քայքայման այս ծանր հետեւանքները բնորոշ էին գրեթէ բոլոր նախկին հանրապետութիւններին, եւ երբ այս տարւայ Ապրիլի 15ին Մոսկւայում տեղի ունեցաւ Ա.Պ.Հ.ի ներկայացուցիչների խորհրդաժողովը, որին մասնակցեցին պետութիւնների ու կառավարութիւնների ղեկավարները, ընդհանուր մթնոլորտը ամբողջովին փոխւած էր. կենտրոնախոյս տրամադրութիւնները փոխւել էին կենտրոնաձիգ տրամադրութիւնների, որոնց վառ ապացոյցը Ապրիլի 12ին ստորագրւած համաձայնութիւնն էր Բելոռուսի և Ռուսաստանի միջեւ։ Այդ համաձայնութեան մասին Ռուսաստանի Պետական Դումայի Ա.Պ.Հ.ի գծով կոմիտէի նախագահ Զատուլինը ասաց, որ այն նոր էջ բացեց նախկին խորհրդային հանրապետութիւնների փոխ-յարաբերութեանց մէջ։ Այդ էջը իսկապէս նոր էր։ Եթէ նախկինում Ա.Պ.Հ.ն ստեղծւեց հանրապետութիւնները քաղաքակիրթ ձեւով բաժանելու տրամադրութեամբ, ապա Բելոռուսի և Ռուսաստանի համաձայնութիւնը կնքւեց այդ հանրապետութիւնները քաղաքակիրթ ձեւով վերամիաւորելու համար։

Վերամիաւորման այս ձգտումների մասին վկայում էին նաեւ հրապարակ իջած այլ գաղափարներ, ինչպէս, օրինակ, համադաշնակցութիւն կամ Եւրոասիական միութիւն ստեղծելու գաղափարները։ Նոր մթնոլորտի վկայութիւն է նաեւ հետեւեալը, եթէ Ա.Պ.Հ.ն ստեղծելու սկզբնական պահին բոլորը ուզում էին անջատւել Ռուսաստանից, ապա 1994 թւականի կէսերին Ռուսաստանի քաղաքական միտքը քննարկում էր այն հարցը, թէ արդեօ՞ք Ռուսաստանին ձեռնտու է վերամիաւորւել բոլոր նախկին հանրապետութիւնների հետ, մանաւանդ եթէ խօսքը առայժմ տնտեսական վերամիաւորման մասին է։ Հանրապետութիւնների վերամիաւորման հարցում Ռուսաստանի շահագրգռւածութիւնը ոչ միայն և ոչ այնքան տնտեսական էր, որքան՝ քաղաքական։ Սակայն

այս հարցում դեռեւս մեծ յաջողութիւններ չկան։ Զատուլինը յայտարարեց, որ Ապրիլի 15ի խորհրդաժողովը որոշ հիասթափութիւն առաջացրեց Ռուսաստանում, որովհետեւ չյաջողուեց, օրինակ, ստեղծել պաշտպանութեան ընդհանուր դաշինք։ Դրա հետ մէկտեղ, նոյն Զատուլինը նշեց, որ Աբխազիայի և Վրաստանի, Ադրբեջանի և Ղարաբաղի բախումների նկատմամբ ընդունած որոշումները թոյլ են տալիս այդ բախումների հարցը լուծել ոչ թէ Մ.Ա.Կ.ի, Վաշինգտոնի կամ Ժընեւի միջոցով, այլ Ա.Պ.Հ.ի ճամբով, այսինքն՝ նախկին Խորհրդային Միութեան տարածութեան վրայ։ Սա նշանակում էր, որ Ռուսաստանը ուզում է նախկին Խորհրդային Միութեան տարածութիւնը պաշտպանել ընդհանուր հրամանատարութեան տակ գտնուող Ա.Պ.Հ.ի զօրքերով, իսկ ներքին բախումները լուծել միայն սեփական ուժերով, առանց արտաքին միջամտութեան։

Երբ այս ցանկութիւնը չիրականացաւ, և հայեացքը արեւմուտք սեւեռած հանրապետութիւնները, այդ թւում՝ նաեւ Հայաստանը, խոչընդոտ դարձան դրա առաջ, Ռուսաստանը որդեգրեց անկախութիւնները մեղմացնելու քաղաքականութիւնը։ Այսինքն, պետական Դումայի Ա.Պ.Հ.ով զբաղւող կոմիտէն յայտարարեց, որ պէտք չէ շեշտել նախկին հանրապետութիւնների անկախութիւնը, քանզի այդ անկախութիւնը դժւարացնում է տնտեսական շփումները։ Ապա թէ ինչ էր ասւած այդ յայտարարութեան մէջ,- «Եթէ մենք վաղը յայտարարենք, որ Ա.Պ.Հ. պետութիւնների փոխ-յարաբերութիւնները իրականացւելու են արտաքին գործոց նախարարութիւնների ճամբով, ապա գործը առաջ չի գնայ։ Անկարելի է սովորական հարցերը, ինչպէս, օրինակ, գնացքների վթարի, ապրանքների փոխանակման, մատակարարման, գազամուղների, էլեկտրականութեան հարցերը լուծել պետական դրօշներով զարդարւած սեղանների շուրջ, դիւանագէտների կողմից։ Բայց դրա հետ միասին, չի կարող Ռուսաստանը նոյն վերաբերմունքը ցուցաբերել բոլոր հանրապետութիւնների նկատմամբ։ Եթէ Ղազախստանում, օրինակ, հալածւում է ռուս համայնքը, ապա Ռուսաստանի վերաբերմունքը այդ հանրապետութեան նկատմամբ պէտք է հաշւի առնի Ղազախստանի քաղաքականութիւնը։ Եթէ Ուկրաինայում, արեւմուտքի ազդեցութեան տակ, սրում են Սեւ Ծովի նաւատորմի հարցը, ապա դա իր ազդեցութիւնը պէտք է թողնի Ռուսաստանի և Ուկրաինայի միջեւ անցկացւող տնտեսական բանակցութիւնների վրայ»։

Այսինքն, Ռուսաստանի և նախկին հանրապետութիւնների տնտեսական փոխ-յարաբերութիւններում քաղաքական գործօնը սկսում էր որոշակի ազդեցութիւն թողնել Ռուսաստանի քաղաքականութեան վրայ։ Եթէ նախկինում Ռուսաստանի քաղաքական գործիչները միաբերան կառչել էին ժողովրդավարական սկզբունքներից և յայտարարում էին, թէ բարեկամութիւն կ'անեն

միայն այն հանրապետութիւնների հետ, որոնք որդեգրել են ժողովրդավարական և մարդու իրաւունքների պաշտպանութեան սկզբունքները, ապա այսօր նրանք իրենց բարեկամութիւնը կապում են տեղերում ռուս բնակչութեան նկատմամբ ցուցաբերւող վերաբերմունքի հետ: Ռուսաստանի քաղաքականութեան մէջ այս փոփոխութիւնը շատ լուրջ է և արմատական: Այսօր Ռուսաստանը որոշել է պաշտպանել արտասահմանում գտնւող իր նախկին քաղաքացիներին ազգային պատկանելութեան սկզբունքով, վաղը կ'որոշի (արդէն որոշել է) պաշտպանել իր ընդհանուր շահերը արտասահմանում: Եւ, անշուշտ, Ռուսաստանի քաղաքականութեան մէջ տեղի ունեցած այդ փոփոխութիւնը նաեւ Հայաստանի ղեկավարութեանն է պարտադրում վերանայել իր քաղաքականութիւնը: Եթէ նախկինում Լեւոն Տեր-Պետրոսեանի խմբակազմը գոնէ ձեւականօրէն կառուցում էր իր քաղաքականութիւնը ժողովրդավարութիւնը պաշտպանելու սկզբունքով և այդ ճանապարհի վրայ մէկ Ցեղասպանութիւնը դատապարտելուց էր հրաժարւում, մէկ Թուրքիայի հետ իր յարաբերութիւններն էր փորձում լաւացնել, մէկ Ռուսաստանից էր հրաժարւում, մէկ էլ Ղարաբաղի հարցը լուծելու համար Արեւմուտքն էր հրաւիրում, ապա ներկայումս ստիպւած պիտի լինի Ռուսաստանի հետ հաշւի նստել:

Հազիւ թէ կարելի է համարել, որ Հայաստանի իշխանութիւնները այդ հաշիւը արել են, եթէ առանց Ռուսաստանի հետ պայմանաւորւելու՝ Մ. Նահանգների հետ զինւորական կցորդներ են փոխանակում: Կարծես թէ ամերիկացիներին տուրք տալու համար, ռուսական զինւորական յենակէտեր Հայաստանում ստեղծելու դիմաց, Հայաստանի կառավարութիւնը որոշ բարոյական և քաղաքական զիջումներ է կատարում Արեւմուտքին: Սակայն այդ զիջումները Ռուսաստանում մեծ աղմուկ և հակահայկական արշաւ առաջացրեցին: «Նեզաւիսիմայա Գազետա», «Իզվեստիա», «Նովայա Գազետա» և մի շարք այլ թերթեր գրեցին, թէ հայերը ահաբեկիչներ են, թէ նրանք Ղարաբաղի հարցում անզիջում են, խախտում են Մոսկւայի կարգապահութիւնը և այլն: Իսկ օգոստոսի 31ին Ադրբեջանի Գերագոյն Խորհրդի նախագահ Ռասուլ Գուլիեւը «Նեզաւիսիմայա Գազետա» թերթում գրեց մի յօդւած, որտեղ մեղադրեց Հայաստանը զաւթողականութեան մէջ և ասաց, թէ նա ոչ մէկ իրաւունք ունի Ղարաբաղի վրայ: Հասկանալի է՝ յօդւածը շատ հակահայկական էր, բայց որ այն հրատարակւեց առանց հակառակորդ կողմի տեսակէտը առնելու, նոյնպէս խօսում է հակահայկական ծրագրւած արշաւի մասին:

Եթէ նախկինում Ռուսաստանը իր տնտեսական հարցերը ջանում էր շտկել՝ նախկին հանրապետութիւններից համագործակցութիւն խնդրելով, ապա ներկայումս նա այդ բանը անում է պահանջելով, և այս հանգամանքն էլ պէտք է հաշւի առնի Հայաստանի կառավարութիւնը:

Եթէ նախկինում ժողովրդավարութիւնը արդարացնում էր հայերի զանգւածային փախուստը Հայաստանից դէպի Ռուսաստան, ապա ներկայումս ո՛չ ժողովրդավարութիւնը, ո՛չ հայ ժողովրդի ազգային շահերը չեն արդարացնում այդ փախուստը, որովհետեւ Ռուսաստանում հայերի նկատմամբ վերաբերմունքը անմիջականօրէն կապւած է Հայաստանի իշխանութիւնների քաղաքականութեան հետ, և քաղաքական ապաստան ստանալու ժողովրդավարական կանոնները այստեղ չեն գործում: Պէտք է լուծուեն երկու քաղաքացիութիւն ստանալու, դրամներ փոխանակելու, տուրքեր վճարելու, բանակում ծառայելու և մի շարք այլ հարցեր, որից յետոյ միայն Հայաստանից Ռուսաստան տեղափոխւած մարդիկ կարող են փախստական չնկատւել: Եթէ առաջ Ռուսաստանը նախկին հանրապետութիւնների հետ իր կապերը ստեղծում էր համագործակցութեան, համադաշնակցութեան կամ ընդհանուր տնտեսական գօտի ստեղծելու հիման վրայ, ապա այսօր նա այդ կապերը կառուցում է ամուր պետական հիմքերի, այսինքն՝ միութիւն, դաշնակցութիւն և նոյնիսկ կայսրութիւն ստեղծելու հիման վրայ:

Այս մէկն էլ պէտք է հաշւի առնի Հայաստանի ղեկավարութիւնը: Արդեօ՞ք հաշւի է առնում: Հազիւ թէ, եթէ մենք դիմենք Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման վերջին համաձայնութեան նախագծին: Այդ ծրագիրը Եւրոպայի Անվտանգութեան և Համագործակցութեան Խորհրդի, Անկախ Պետութիւնների Համագործակցութեան և Ռուսաստանի ծրագրերի համադրումն է: Նախ ինչո՞ւ պէտք է Ռուսաստանի ծրագիրը շտկւէր Ա.Պ.Հի և Ե.Ա.Հ.Խ.ի ծրագրերով, որոնք, վերջին հաշւով, թուրքասիրական են: Ռուսաստանը բաւականին յամառօրէն պնդում էր իր ծրագիրը և շատ ուրախ պիտի լինէր, եթէ Հայաստանը Ղարաբաղի հետ միասին նոյնպէս պնդէին այդ՝ Ռուսաստանի համար ստեղծելով Արեւմուտքի առջեւ իր յամառութիւնը արդարացնելու պատրւակ: Բացի դրանից, այս համադրւած ծրագիրը շատ մեծ բաներ հայ ժողովրդին չի խոստանում: Զօրքերը միմեանցից բաժանելուց յետոյ, ըստ պայմանագրի, միջանկեալ գօտի բերւելու են անվտանգութեան միջազգային ուժեր ու արտասահմանեան դիտորդներ: Ամէնեւին էլ պարզ չէ, թէ այդ ի՞նչ զօրքեր են: Գուցէ Թուրքիան էլ իր զինծառայողներին է ուղարկելու միջազգային ուժերի զգեստով: Ապա՝ կողմերը դուրս են բերելու իրենց զօրքերը: Որտեղի՞ց: Յետոյ վերադառնալու են փախստականները: Ո՞ւր: Եթէ, օրինակ, Շուշի, ապա պատերազմից առաջ այդ քաղաքի բնակչութեան 90 տոկոսը աղրբեջանցիներ էին: Ինչ վերաբերում է Ղարաբաղի կարգավիճակին, ապա այս հարցում համաձայնութեան նախագիծը ամենաանորոշն է: Իսկ եթէ կարգավիճակը դեռեւս յայտնի չէ, ինչպէ՞ս կարելի է դուրս գալ ազատագրեալ տարածութիւններից: Արեան գնով ձեռք բերւած այդ տարածքները ինչի՞ դիմաց պէտք է վերադարձւեն:

Ղարաբաղցիների ամբողջ պայքարը ապագայ կարգավիճակի համար է: Եթէ այդ կարգավիճակը որոշած չէ, ուրեմն աւարտուած չէ պատերազմը: Ուրեմն ինչպէ՞ս կարելի է նահանջել, երբ պատերազմը շարունակւում է, և նահանջը պարտադրում է ոչ թէ հակառակորդը, այլ այսպէս կոչւած չէզոք միջնորդները:

Շատ հասկանալի է միջնորդների ցաւը և պատերազմին վերջ տալու նրանց ցանկութիւնը, բայց ի՞նչ գնով: Նրանց համար միեւնոյն է, որովհետեւ նրանք արեւմտեան շահերի պաշտպաններ են: Միակ պետութիւնը, որն այս հարցում, այսինքն՝ պատերազմին վերջ տալու գնի հարցում, անտարբեր չէ, Ռուսաստանն է, որին սակայն կարողացան որոշ չափով չէզոքացնել: Այնուամենայնիւ, Ռուսաստանը դեռեւս իր խօսքը ասում է, և հետաքրքրական է նշել, որ սեպտեմբերի 1ին Ադրբեջանը իր դժգոհութիւնը յայտնեց Ե.Ա.Հ.Խ.ից, որը Ղարաբաղ միայն դիտորդներ մտցնելու կողմնակից է: Այսինքն՝ թուրքական զօրքերի մուտքը Անդրկովկաս կրկին յետաձգւում է անորոշ ժամանակով:

Սակայն վերադառնանք Ա.Պ.Հ. և տեսնենք, թէ ի՞նչ դեր է կատարում Ռուսաստանը այս արհեստական միութեան մէջ: Արդէն բոլորի համար պարզ դարձաւ, որ անցած ժամանակաշրջանում Ռուսաստանը չունէր տարածաշրջանային քաղաքականութեան ռազմավարութիւն: Երկու տարւայ ընթացքում պարզուեց, որ Արեւմուտքը թափանցելու Ռուսաստանի հնարաւորութիւնները սպառուած են: Ռուսաստանը չկարողացաւ մտնել միացեալ Եւրոպայի մէջ, ինչը անկասկած պիտի աւելացնի նրա դերը նախկին խորհրդային հանրապետութիւնների տարածքում: Հէնց այս տարածքում է, որ Ռուսաստանը վերահաստատելու է մեծ պետութիւն լինելու իր կոչումը: Դրա հետ մէկտեղ, Ռուսաստանը պէտք է պատրաստ լինի նախկին հանրապետութիւններին (մանաւանդ մահմեդական) որոշ սառնութեանը Ռուսաստանի հովանաւորութիւնը ճանաչելու մէջ: Եւ այս առիթով Ռուսաստանը հաւանաբար որոշ զսպւածութիւն է ցուցաբերելու Ա.Պ.Հ.ի պետութիւնների անկախութեան հետ կապւած յայտարարութիւնների ու քայլերի նկատմամբ:

Ռուսաստանը, հաւանաբար, հանրապետութիւններում կը գտնի այն ղեկավար ընտրանին, որը մէկ կողմից հասկանում է Ռուսաստանի օգնութեան անհրաժեշտութիւնը, միւս կողմից արդէն հասկացել է ինքնիշխանութեան առաւելութիւնները: Նրա քաղաքականութիւնը, ըստ երեւոյթին, ընդունելու է բարդ տեսք, որի համաձայն մէկ կողմից խրախուսւելու է հանրապետութիւնների ձեւական քաղաքական ինքնիշխանութիւնը, միւս կողմից, ազդելով տնտեսական լծակների վրայ, Ռուսաստանը իր շուրջն է հաւաքելու այդ հանրապետութիւնները՝ փաստօրէն ստեղծելով մէկ բազմազգ պետութիւն: Այդ բանը Հայաստանը զգաց իր մաշկի վրայ: Երբ Հայաստանին անհրաժեշտ էր

վարկ տալ, Ռուսաստանը պահանջեց Հայաստանի գործարարների մէկ մասը որպէս գրաւ։

Այստեղ Ռուսաստանի կացութիւնը որոշ չափով նմանւում է Միացեալ Նահանգների կացութեանը, որը 50 տարւայ ընթացքում ղեկավար դեր կատարեց և շարունակում է կատարել ամերիկեան պետութիւնների կազմակերպութեան մէջ։ Նմանութիւնն այս է. Միացեալ Նահանգները այդ կազմակերպութեան մէջ տնտեսական զարգացման իմաստով նոյնքան բարձր մակարդակի վրայ են, որքան Ռուսաստանը՝ նախկին հանրապետութիւնների տնտեսական զարգացումից։

Անհրաժեշտ է նշել, որ երբ մենք օգտագործում ենք «Ռուսաստան» հասկացութիւնը՝ քաղաքականութեան, ցանկութիւնների կամ կամքի իմաստով, ապա օգտագործում ենք կա՛մ պայմանական կարգով և կամ էլ նկատի առնելով Ռուսաստանի իշխանութիւնների միայն մէկ թեւը։ Իսկ այնտեղ գոյութիւն ունեն առնւազն հետեւեալ թեւերը. գործադիր իշխանութիւն, զինւորական իշխանութիւն, քաղաքական իշխանութիւն, դատական իշխանութիւն, բարոյական և գաղափարախօսական իշխանութիւն և գիտական իշխանութիւն։ Ցնցումներից զուրկ, հաւասարակշռած պետութեան մէջ բոլոր այս իշխանութիւնները պաշտպանում են պետական շահերը, ուստի իրար հակասում են միայն մանրուքներում և բոլորը միասին կոչւում են իշխանութիւն։ Մինչդեռ ցնցումների և անորոշութեան մէջ գտնւող պետութիւնում, ինչպիսին են թէ՛ Ռուսաստանը և թէ Հայաստանը, բոլոր այս իշխանութիւնները ինքնուրոյն են, և նրանցից իւրաքանչիւրի համար գոյութիւն ունի պետական շահերի սեփական հասկացութիւն, ինչը նրանց համագործակցութիւնը դարձնում է անկարելի։

Թէ՛ Ռուսաստանում և թէ Հայաստանում գործադիր ու օրէնսդիր մարմինների միջեւ աւանդական հակասութիւնը գոյութիւն չունի։ Այն, ինչը ներկայացւում է որպէս այդպիսի հակասութիւն, իրականում գործադիր, յանցագործ և ֆինանսական մարմինների հակասութիւն է, որն ի վերջոյ յանգեցնում է նրանց համագործակցութեանը։ Գործադիր մարմինների մէջ ամենամեծ ազդեցութիւնը ունեն նրանք, ովքեր զբաղւած են սեփականաշնորհմամբ և միջոցների բաշխումով։ Կարելի էր բնութագրել իշխանութեան բոլոր ճիւղերը նրանց շահերի և ձգտումների տեսանկիւնից, սակայն թէ՛ Ռուսաստանում և թէ Հայաստանում բոլոր իշխանութիւնները ունեն ընդհանուր մի նկարագիր, որ որդեգրել են դեռեւս խորհրդային իշխանութեան օրերից։ Այն ժամանակ իշխանութիւնները իշխում էին՝ առանց հաշւետուութիւն տալու ժողովրդին։ Նրանք իշխում էին վերցնելու, բայց ոչ տալու համար։ Նրանց պէտք չէր մասնագէտ լինել, նրանք ունէին իշխելու մասնագիտութիւնը, և ոչ մէկը չէր զարմանում,

երբ քիմիական արդիւնաբերութեան նախարարը դառնում էր հիւպատոս: Ինչո՞ւ զարմանալ ամենակարեւորը նա գիտէր, իշխելու համար պէտք է գրաւեներ, քարտուղարուհի, հաւատարիմ հաշւապահ և ենթակաների վրայ գոռալու յատկութիւն:

Այլախոհներ կոչւող մեր նոր ղեկավարները ո՛չ մասնագէտ էին և ոչ էլ տիրապետում էին իշխելու գիտութեանը, ուստի կատարեցին ու շարունակում են կատարել երեխայական սխալներ իրենց գործունէութեան մէջ: Նախորդ ղեկավարներից նրանք որդեգրեցին առանց ժողովրդի հսկողութեան գործելու մասնագիտութիւնը և կամաց-կամաց ձեռք են բերում ամբողջատիրական երկրի ղեկավարման գործելակերպը: Ուրեմն ի՞նչ կարելի է նրանցից սպասել պետական կամ ազգային շահերը պաշտպանելու բնագաւառում:

Ռուսաստանի տնտեսական իշխանութիւնը, օրինակ, միութիւնը վերահսկանգնելու կողմնակից է: Տեղեկատւական իշխանութիւնները դրան դէմ են: Յանցագործ շրջանակները մաքսատների գոյութեան դէմ են, իսկ զինւորականները կողմ են: Դատական իշխանութիւնները խստութիւնների կողմնակից են, իսկ իրաւապաշտպան մարմինները՝ հակառակը: Ու չնայած ամէն մի իշխանութիւն իր ձգտումները ներկայացնում է որպէս պետական շահերի պաշտպանութիւն, իրականում իւրաքանչիւրը պաշտպանում է սեփական շահերը:

Այս մթնոլորտում Ռուսաստանում պէտք է գտնել հայ ժողովրդի իրական բարեկամներին, որոնք Հայաստանի և հայ ժողովրդի հետ բարեկամութիւնը կապում են Ռուսաստանի պետական շահերի հետ: Այդպիսի ուժեր, անշուշտ, կան, սակայն նրանք չեն վստահում հանրապետութեան իշխանութիւններին, որոնք նոյնպէս զբաղւած են միմիայն սեփական շահերը պաշտպանելու զգւելի գործով: Այստեղ ամէն ինչ պարզ է, պարզ չէ միայն, թէ ինչո՞ւ Ռուսաստանի և Հայաստանի ժողովուրդները թոյլ են տալիս, որ իրենց հետ հաշւի չնստեն: Հաւանաբար, ռուս ժողովուրդը ի վերջոյ իր ձեռքը կը վերցնի սեփական ճակատագրի լուծման հարցը, իսկ հայ ժողովուրդը վճռական քայլեր հազիւ թէ կատարի մօտ ժամանակներում: Իմ կարծիքով, դրա պատճառները հետեւեալներն են.

1.- Ժողովուրդը չգիտի, թէ ի՞նչ է ուզում, և նրան այդ մասին ո՛չ մէկը ոչ մի բան չի ասում: Եթէ ժողովրդի ցանկութիւնը կերակուր ու տաքութիւն ունենալն է, ապա նրան շատ աւելի պիտի դուր գան Լեւոն Տեր-Պետրոսեանի խօսքերը (Կա՛մ հաց, կա՛մ Ղարաբաղ), քան ընդդիմադրութեան տեսակէտը՝ «ոչ միայն հացիւ»: Ժողովրդին ոչ մէկը չի ասում, թէ ի՞նչ անել՝ ե՛ւ հաց, ե՛ւ Ղարաբաղը ունենալու համար: Մեղքը նրանցն է, ովքեր գիտեն այդ հարցի պատասխանը, բայց ինչ-ինչ պատճառներով լռում են: Եթէ ոչ մէկը այդ հարցի պատասխանը

չգիտի, ուրեմն թող այսօրւայ իշխանաւորները շարունակեն երկրի թալանը, իսկ ժողովուրդը իր փրկութիւնը կը գտնի Հայաստանից դուրս։ Գուցէ մի քանի դար յետոյ գան մարդիկ, որոնք մեզանից աւելի համարձակ կը լինեն, ճակատագրական հարցի պատասխանը աւելի լաւ կը գտնեն ու կը վերադարձնեն իրենց ժողովուրդը Արարատի փէշերը կամ, ինչպէս այսօր են ասում, իրենց պատմական հայրենիքը։

2.- Ժողովուրդը թերահաւատ և կրաւորական է դարձել, որովհետեւ հասկացել է՝ հայ ժողովրդի ճակատագիրը երկար ժամանակ չի լուծւելու միայն հայ ժողովրդի ձեռքերով։ Առայժմ Հայաստանը, ինչպէս միշտ, մեծ պետութիւնների ձեռքում խաղալիկ է, և այս պայմաններում միայն ճիշտ քաղաքական կողմնորոշումը կարող է փրկել կացութիւնը։ Բայց նրան ոչ մէկը չի ասում, թէ ո՞ր կողմնորոշումն է ճիշտ և ինչո՞ւ չեն ասում, որովհետեւ հէնց մեր ժողովրդից են վախենում։ Վախենում են, որ մեղադրւեն ազգային սկզբունքներից շեղւելու մէջ։ Մինչդեռ այսօր, օրինակ, պարզ է, որ Ղարաբաղի փրկութիւնը Ռուսաստանի հետ ռազմաքաղաքական դաշինքի մէջ է։ Միայն այդ դէպքում Ռուսաստանը կը ճանաչի Ղարաբաղի անկախութիւնը։

3.- Ժողովուրդը չի ճանաչում իր հնարաւոր ղեկավարների էութիւնը, նրանց գործը, նրանց դաշնակիցներին, նրանց յետեւում կանգնած ուժերին, չգիտէ նրանց կազմակերպչական կարողութիւնները, և ամենակարեւորը՝ ծանօթ չէ նրանց ծրագրերին։

1994

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Է. Յովհաննիսեան

Հայկական պետականութեան ամրապնդումը, որը Հ.Յ.Դ.ի քաղաքական ռազմավարութեան գլխաւոր նպատակներից մէկն է, կարող է իրականացւել երկու ճանապարհով, որոնցից մէկը սնւում է ներքին, իսկ միւսը արտաքին աղբիւրներից: Այսինքն առաջին ճանապարհի վրայ օգտագործւում են զուտ հայկական ուժերը ու կարողութիւնները, իսկ երկրորդ ճանապարհը անցնում է ուրիշ պետութիւնների ու կազմակերպութիւնների միջով:

Այս երկու ճանապարհները անմիջականօրէն կապւած են Հայաստանի կառավարութեան ներքին և արտաքին քաղաքականութիւնների հետ և այս ճանապարհների ընտրութեան հարցում ընդդիմութիւնը այնքանով կարող է մասնակից լինել, որքանով որ ի վիճակի կը լինի զսպել իշխանութիւնների սխալ քայլերը, կամ՝ աւելի ճիշտ՝ որքանով որ իշխանութիւնները հաշւի են նստում ընդդիմադրութեան հետ:

Այնուամենայնիւ, ընդդիմութիւնը և յատկապէս Հ.Յ.Դաշնակցութիւնը կարող են ունենալ նաեւ որոշ ինքնուրոյն նշանակութիւն առաջին ճանապարհի վրայ: Ընդդիմութիւնը կարող է տարբեր ֆոնդերի, կազմակերպութիւնների ու միջոցառումների ճամբով իր ներդրումը կատարել Հայաստանի պետականութիւնը ամրապնդելու գործում, շրջանցելով Հայաստանի կառավարութիւնը, որը կամ ի վիճակի չէ և կամ էլ չի ցանկանում անել: Բայց պէտք է ասել, որ այդ ճանապարհով, այն էլ Հայաստանի ներկայ քաղաքական մթնոլորտում, հազիւ թէ շատ բան հնարաւոր լինի անել: Եւ բացի դրանից, ներքին, զուտ հայկական կարողութիւնները, նոյնիսկ իշխանութիւնների բարենպաստ քաղաքական պայմաններում, շատ էլ մեծ չեն: Էլ չխօսենք այն մասին, որ քաղաքական պայմանները ոչ միայն բարենպաստ չեն, այլեւ՝ ճիշտ հակառակը, զգալիօրէն նւազեցնում են հայկական կարողութիւնները:

Շատ աւելի հզօր են արտաքին աղբիւրները, այսինքն այն ուժերը, որոնք սեփական շահերից ելնելով շահագրգռւած են Հայաստանի պետականութեան ամրապնդման մէջ: Սակայն այս բնագաւառում, այսինքն՝ երկրորդ ճանապարհի վրայ, ընդդիմութիւնը իր ընդդիմադիր դիրքերից ընդհանրապէս անելիք չունի, քանզի Հայաստանի արտաքին յարաբերութիւնների ղեկը ամբողջովին գտնւում է Հայաստանի կառավարութեան ձեռքում և Հայաստանի պետութեան ամրապնդման մէջ շահագրգռւած պետութիւնների որոնումը և

նրանց հետ յարաբերութիւններ ճշտելը կազմում է Հայաստանի արտաքին քաղաքականութեան առանցքը:

Այստեղ ընդդիմադիր ուժերը կարող են երկու տեսակ մասնակցութիւն բերել Հայաստանի պետականութեան ամրապնդման գործում, նրանք կարող են դառնալ կա՛մ կառավարութեան գործակալը և կամ էլ նրա սուր քննադատը: Ժողովրդավարական երկրների և հէնց մեր փորձը ցոյց տուեց, որ քննադատի ճանապարհը աւելի օգտակար է և աւելի է համապատասխանում ընդդիմադիր կազմակերպութեան առաքելութեանը:

Անցած տասնամեակի ընթացքում մենք բազմիցս քննադատել ենք իշխանութիւններին՝ նրանց այս կամ այն սխալի համար և այժմ պարծանքով կարող ենք ասել, որ մեր քննադատութիւնը տեղ է հասել և նրանք ուղղել են իրենց սխալները, անշուշտ առանց մեր անունը յիշատակելու: Ոմանք նոյնիսկ մեզ ասում էին, թէ «մի՛ քննադատէք, նրանց խելք մի սովորեցրէք, որովհետեւ ձեր անունը չտալով անում են ինչ դուք նրանց ասում էք»: Բայց մի՞թէ հէնց դա չէ մեր ուզածը: Եթէ կառավարութիւնը ճիշտ քայլեր է կատարում, ի՞նչ նշանակութիւն ունի, թէ որտեղի՞ց նա ձեռք բերեց այդ ճշմարտութիւնը: Երանի թէ Հայաստանի իշխանութիւնները միշտ մեր ճշմարտութիւնները որդեգրէին և իրենց անունով հրապարակ իջեցնէին:

Այս իմաստով հետաքրքրական է Ռուբէն Յակոբեանի մի յայտարարութիւնը, որը նա արեց Մոսկւայում, Ռուսաստան-Հայաստան փոխ-յարաբերութիւնների վերաբերեալ: Յակոբեանը հասկացնել տուեց, որ եթէ այդ յարաբերութիւնների մէջ որոշ սառնութիւն է արձանագրում, ապա դրանում մեղք ունի նաեւ Հայաստանի կառավարութիւնը: Այս յայտարարութիւնը շատ կարեւոր է, քանզի Ռուսաստանը այն հզօր պետութիւններից մէկն է, որը Հայաստանի բնական դաշնակիցն է: Եթէ Հայաստանի արտաքին քաղաքականութիւնը այնպիսին լինի, որ Ռուսաստանը այլեւս շահագրգռուած չլինի Հայաստանի պետականութեան ամրապնդման մէջ, ապա դա մեծ կորուստ կը լինի Հայաստանի համար:

Տեսնենք, թէ ինչպիսի՛ փոխ-յարաբերութիւնների մէջ է Ռուսաստանը Անդրկովկասի երկիրների և յատկապէս Հայաստանի հետ:

Այդ յարաբերութիւնների մասին աղմկում են թերթերը, խօսում են դիւանագէտները և նոյնիսկ որոշումներ են ընդունում կառավարական և օրէնսդրական մարմինների մակարդակի վրայ: Սակայն այս քարոզչական աղմուկը թագցնում է գործնական քայլերը ու մտահոգութիւնները, որոնց մասին չեն խօսում բացայայտօրէն և որոնց մասին գրում են միայն յատուկ շրջաբերականներում:

Ռուսաստանի և Անդրկովկասի փոխ-յարաբերութիւնների մասին նախ աղմկեց զօրավար Ռոխլինը յայտարարելով, թէ Ռուսաստանը դուրս է բերում Անդրկովկասից իր զօրքերը, որովհետեւ այնտեղ զօրք պահելը Ռուսաստանին ձեռնատու չէ: Յետոյ Պետական Դուման յայտնեց նոյն կարծիքը, յետոյ աղմուկ բարձրացաւ Հայաստանին զէնք վաճառելու շուրջ: Հայաստանը հերքեց ու իր հերթին մեղադրեց Ադրբեջանին: Պաշտպանութեան նախարար Ռոդիոնովը հաստատեց, որ Հայաստանին զէնք է տրուել: Ալիեւը պահանջեց, որ Ռուսաստանը յետ վերցնի Հայաստանից իր զէնքերը, որոնք իբր թէ Գորբաչովի կողմից տրուել է Հայաստանին առանց Ռուսաստանի կառավարութեան թոյլտրութեան: Ժիրինովսկին հաստատեց Հայաստանին զէնք տալու անհրաժեշտութիւնը: Այս ամէնը, սակայն, քարոզչական աղմուկ է: Իրականութիւնը՝ կարելի է գտնել Ռուսաստանի արտաքին գործերի նախարարութեան ներկայացուցիչ Ի. Սեւաստիանովի տեսակէտների մէջ, որոնք ասել են հայ դիւանագէտներին, ապա նրանց կողմից փոխանցել Հայաստանի արտաքին գործերի նախարար Ա. Արզումանեանին և նրա տեղակալ պր. Վ. Օսկանեանին:

Սեւաստիանովի պատասխանատուութեան ոլորտն ընդգրկում է Անդրկովկասի տարածաշրջանային հիմնահարցերը, ինչպէս նաեւ Ռուսաստանի Դաշնութեան և Անդրկովկասի հանրապետութիւնների յարաբերութիւնները:

Հայ դիւանագէտների հետ զրուցելիս, Ադրբեջանի վերաբերեալ Սեւաստիանովը արտայայտեց հետեւեալ տեսակէտները:

Ռուսաստանի արտաքին գործոց նախարարութիւնում պատրաստւում է փաստաթղթերի ծրար՝ Ադրբեջանի հետ երկկողմանի յարաբերութիւններին նոր որակ հաղորդելու նպատակով: Պատրաստւում է Չերնոմիրդինի պաշտօնական այցը Ադրբեջան: Յատուկ աշխատանք է տարւում հարթելու Ադրբեջանի և Ռուսաստանի միջեւ գոյութիւն ունեցող տարակարծութիւնները Կասպից ծովի հետ կապւած տարբեր խնդիրների շուրջ: Ադրբեջանը ձգտում է միջազգային կազմակերպութիւնների ճամբով պաշտօնականացնել իր չհաշւարկւած սպառազինումը և Ռուսաստանը յատուկ ուշադրութեամբ է հետեւում այդ իրադարձութիւնների զարգացմանը: Ցանկալի է, որ Հայաստանում ճիշտ ըմբռնեն Ռուսաստանի և Ադրբեջանի մերձեցման միտումը, քանի որ Կովկասի կարեւորութիւնը թոյլ չի տալիս Ռուսաստանին սահմանափակւել միայն ճօճանակի տարբերակի կիրառմամբ Հայաստանի և Ադրբեջանի նկատմամբ:

Վրաստանի վերաբերեալ Սեւաստիանովը յայտնեց հետեւեալ կարծիքը.

-Վրաստանի մօտեցումները Ռուսաստանին, տարբեր հարցերում, շարունակում են մնալ խիստ բացասական: Վրաստանում նոյնիսկ անառողջ հետաքրքրութիւն է ցուցաբերւում ՆԱՏՕի ընդլայնման հետ առընչւող հարցե-

րում: Եթէ վրացական կողմը շարունակի պնդել, որ Ռուսաստանը դուրս բերի իր զօրքերը Վրաստանից, ապա ամենայն հաւանականութեամբ Ռուսաստանը կը բաւարարի վրացիների պահանջը, սակայն ոչ մի ստորաբաժանում դուրս չի բերւի Աղրբեջանից: Զօրքերը դուրս բերելուց յետոյ աբխազների և վրացիների միջեւ անխուսափելիօրէն կը վերսկսւի ռազմական գործողութիւնների նոր շրջան: Մոսկւայում պատրաստւում են տարբերակներ Վրաստանի հակառուսական ալիքը զսպելու համար, մասնաւորապէս նախատեսւում է, որպէս առաջին քայլ, Վրաստանի և Ռուսաստանի միջեւ սահմանել արտօնագրերի կարգ՝ բարդացնելով Ռուսաստանում բնակւող վրացիների մուտքը Վրաստան:

Սեւաստիանովը նշեց նաեւ, որ պատրաստւում է նոր ծրար Հայաստանի հետ յարաբերութիւնների վերաբերեալ: Կարելի էր սպասել, որ այդ փաթեթը շատ աւելի բարեկամական պիտի լինի և պիտի ունենայ շատ աւելի հարուստ բովանդակութիւն, քանզի Հայաստանի և Ռուսաստանի բարեկամութիւնը շատ աւելի բնական է և շատ աւելի պայմանաւորւած ընդհանուր շահերով: Բայց այն, ինչ առայժմ յաջողւեց պարզել, մեծ ոգեւորութիւն չի առաջացնում:

Ռուսաստանի բարձրաստիճան դիւանագէտ Վ.Ս., որը խնդրեց չհրապարակել իր անունը, այն տեսակէտը յայտնեց, որ հայ-ռուսական յարաբերութիւնների ոլորտում նախատեսւում է.

1.- Հայաստանի Հանրապետութեան և Ռուսաստանի Դաշնութեան արտաքին գործերի նախարարութիւնների միջեւ փոխ-յարաբերութիւնների որակական բարելաւում:

2.- Պարբերաբար օգտագործել երկկողմանի քաղաքական խորհրդակցութիւնների աշխատակարգը:

3.- Համագործակցել Ռուսաստանի արտաքին գործերի նախարարութեան հետ համաեւրոպական քաղաքականութեան ոլորտում և, ընդհանրապէս, օգտակար կը լինէր, եթէ Հ.Հ. դեսպանատունը Ռուսաստանում իր գործունէութիւնը չսահմանափակէր միայն երկկողմանի յարաբերութիւնների բնագաւառով, այլ կարողանար զբաղւել աւելի ընդարձակ բնոյթ ունեցող խնդիրներով:

4.- Համապատասխանեցնել Մոսկւայում Հ.Հ. դեսպանութեան քաղաքական հարցերով պատասխանատու անձնակազմի աշխատանքների որակը երկու երկրների միջեւ գոյութիւն ունեցող յարաբերութիւնների մակարդակին:

5.- Հայաստանի արտաքին գործերի նախարարութիւնը և Հայաստանի դեսպանատունը Մոսկւայում կարող են օգտագործել Ռուսաստանի արտաքին գործերի նախարարութեան տեղեկատւական հնարաւորութիւնները:

6.- Ռուսաստանի արտաքին գործերի նախարարութիւնը, հայկական կողմի դիմումի համաձայն, կարող է պարբերաբար դիւանագէտներ գործուղել

Երեւան՝ արտաքին քաղաքականութեան երկուստեք հետաքրքրութիւն ներկայացնող ուղղութիւնների շուրջ խորհրդակցութիւններ անցկացնելու համար:

Այս առաջարկութիւնների բնոյթը այնպիսի տպաւորութիւն է ստեղծում, որ Ռուսաստանը և Հայաստանը պատրաստւում են կատարել իրենց առաջին քայլերը բարեկամութիւն հաստատելու ուղղութեամբ և ամենեւին էլ չի երեւում, որ այս երկու պետութիւնները ունեն միասնական շահեր և այդ շահերը պաշտպանելու միասնական ձգտում և ծրագիր: Ինչո՞ւ այդ բնական բարեկամութիւնը, որը արդէն վաղուց պէտք է մանրամասնօրէն մշակւած լինէր, պիտի նոր սկսւի, այն էլ բաւականին մակերեսային ձեւով: Ինչո՞ւ նախաձեռնութիւնը պիտի գայ Ռուսաստանի կողմից: Մի՞թէ նրան մենք աւելի պէտք ենք, քան նա մեզ:

Այսօր արդէն պարզ է, որ Ռուսաստանի արտաքին քաղաքականութեան մէջ ամենաչլուծւած և Ռուսաստանին ամենամեծ մտահոգութիւն պատճառող հարցը ՆԱՏՕի ծաւալման ծրագիրն է, որի հետ Ռուսաստանի ղեկավարութիւնը բոլոր մակարդակների վրայ կտրականապէս չի ուզում համաձայնւել: Վերջերս «**Իզւեստիա**» թերթում (14 Մարտ) Ալեքսանդր Լեբեդը մանրամասնօրէն անդրադարձաւ այդ տրամադրութիւններին՝ նշելով, որ չի կարելի անցնել ինքնապաշտպանութեան սահմանները, որովհետեւ այդ դէպքում ինքնապաշտպանութիւնը դառնում է յարձակում: «Սառը Պատերազմը Արեւմուտքը շահեց,- գրում է Լեբեդը,- սակայն չի կարելի նսեմացնել պարտւող կողմը ու չի կարելի նրան ոչնչացնել»: Դա կարող է նոր պատերազմի պատճառ դառնալ, առնւազն կարող է պատերազմ սկսելու ցանկութիւն առաջացնել:

Բացի դրանից, Լեբեդը արդարացիօրէն նշում է, որ ՆԱՏՕի ծաւալումը կարող է խախտել գոյութիւն ունեցող հաւասարակշռութիւնը և ջնջել մինչեւ այսօր կնքւած պայմանագրերի մեծ մասը: Մանրամասնօրէն վերլուծութեան ենթարկելով ստեղծւած կացութիւնը, Լեբեդը այն տեսակէտն է յայտնում, որ Ռուսաստանը երբեք չի համաձայնի ՆԱՏՕի ծաւալման ծրագրի հետ: Դժւար է համաձայնւել Լեբեդի այս տեսակէտի հետ, որովհետեւ դեռեւս պարզ չէ, թէ Արեւմուտքը ի՞նչ կ'առաջարկէ Ռուսաստանին՝ ՆԱՏՕի ծաւալման դիմաց, բայց մէկ բան պարզ է՝ Ռուսաստանը առայժմ կտրականապէս մերժում է ՆԱՏՕի ծաւալման ծրագիրը:

Տեսնենք, թէ այդ հարցում նոյնքան վճռակա՞ն է Ռուսաստանի «բարեկամ» Հայաստանի Հանրապետութիւնը:

Այս տարւայ սկզբին Հայաստանի դիւանագիտական ծառայութիւնները ստացան հետեւեալ շրջաբերականը.

ՅՈՒՇԱԳԻՐ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՆԱՏՕԻ ՄԻՋԵՒ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՈՒ ՆԱՏՕԻ ԳԼԽԱՒՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Խ. ՍՈԼԱՆԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՅՑԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

1989-1991 թթ. աշխարհում տեղի ունեցած քաղաքական փոփոխութիւնները սկիզբ դրեցին ՆԱՏՕի վերափոխմանը: Դաշինքն որդեգրեց նոր ռազմավարութիւն, որը նշանաւորեց աշխոյժ պաշտպանութիւնից և զսպման քաղաքականութիւնից անցումն Արեւելեան Եւրոպայի պետութիւնների հետ երկխօսութեանը և համագործակցութեանը:

Հիւսիս-Ատլանտեան Համագործակցութեան Խորհրդի (NACC/Հ.Ա.Հ.Խ.) ստեղծումը, որի շրջանակներում սկսեցին համագործակցել ՆԱՏՕի և նախկին Վարշաւեան Դաշինքի անդամ-պետութիւնները, հանդիսացաւ Դաշինքի նոր քաղաքականութեան դրսեւորում: Հ.Ա.Հ.Խ.ն կոչուած էր լրացնելու Խ.Ս.Հ.Մ. փլուզումից յետոյ Արեւելեան Եւրոպայում առաջացած անվտանգութեան ապահովման բացը: Ներկայումս Հ.Ա.Հ.Խ.ի անդամ են 40 պետութիւն՝ այդ թւում ՆԱՏՕի 16 անդամ-պետութիւնները, ինչպէս նաեւ Ա.Պ.Հ. ու Արեւելեան Եւրոպայի երկրները (Հ.Հ. անդամակցում է 1992 թ. մարտի 10ից):

1994 թ. յունուարին ՆԱՏՕն առաջարկեց «Գործընկերութիւն Յանուն Խաղաղութեան» (Partnership for Peace/PFP/Գ.Յ.Խ.) ծրագիրը, որ ուղղուած էր Արեւելեան Եւրոպայի երկրների, ինչպէս նաեւ նախկին Խ.Ս.Հ.Մ.ի հանրապետութիւնների հետ համագործակցութեան խորացմանը՝ ռազմական, քաղաքական, գիտական և այլ ոլորտներում, ընդգրկելով խաղաղարար գործողութիւնների նախապատրաստումը, ծրագրաւորումն ու իրագործումը:

1994 թ. հոկտեմբերի 5ին Հայաստանի Հանրապետութիւնը միացել է ՆԱՏՕի Գ.Յ.Խ. ծրագրին՝ ստորագրելով «Գործունէութեան շրջանակները սահմանող փաստաթուղթը» (Framework Document): 1996 թ. ապրիլի 9ին Հայաստանի Հանրապետութիւնը ՆԱՏՕի ղեկավարութեանը տրամադրեց իր «Ներկայացման Փաստաթուղթը» (Presentation Document), որն արձանագրեց ՆԱՏՕի և Հ.Հ.ի միջեւ համագործակցութեան բնագաւառներն ու ծաւալները: Այդ առումով հեռանկարային են ճանաչել ռազմաքաղաքական, գիտական, յատուկ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանութեան ոլորտները: Փաստաթուղթը հիմնարար նշանակութիւն ունի նաեւ Եւրոպական կառոյցներում Հայաստանի մասնակցութիւնը համաչափելու համար: 1995 թ. յունուարի 13ին Հայաստանի Հանրապետութեան և ՆԱՏՕի միջեւ ստորագրուել է «Անվտանգութեան Պայմանագիր» (Security Agreement): Այն սահմանում է Գ.Յ.Խ. ծրագրի շրջանակներում փակ փաստաթղթերի փոխանակման ընթացակարգերը և փոխադարձ պարտաւորութիւնները այդ բնագաւառում:

ՆԱՏՕին ներկայացւել և Հիւսիս-Ատլանտեան Խորհրդի (NAC) կողմից հաստատւել է նաեւ Հ.Հ.ի և ՆԱՏՕի միջեւ 1996 թ. համար «Անհատական Գործընկերութեան Ծրագիր» (IPP):

1995 թ. կայացաւ ՆԱՏՕի բարձրաստիճան պատւիրակութիւնների այցերը Հայաստան՝ համապատասխանաբար ՆԱՏՕի Միացեալ Զինւած Ուժերի գլխաւոր հրամանատարի առաջին տեղակալ զօրավար Ջ. Մակքենզիի և բրիգատային զօրավար Ա. Արենայի գլխաւորութեամբ: Պատւիրակները հանդիպումներ ունեցան Հ.Հ. Նախագահի, Վարչապետի, արտաքին գործոց և պաշտպանութեան նախարարների, Զինւած Ուժերի Գլխաւոր Շտաբի պետի հետ:

1996 թ. Ապրիլի 23ին Հայաստանի Հանրապետութեան պատւիրակութիւնը, Հ.Հ. Նախագահի ղեկավարութեամբ, այցելեց ՆԱՏՕի շտաբ-կայան: Հանդիպումներ կայացան ՆԱՏՕի գլխաւոր քարտուղար Խ. Սոլանայի և մի շարք պատասխանատու պաշտօնեաների հետ: Քննարկւեցին փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող հարցեր: Հ.Հ. Նախագահը հրաւիրեց պր. Խ. Սոլանային այցելելու Հայաստան:

1997 թ. փետրւարի 12-13ին Հայաստան այցելեց ՆԱՏՕի պատւիրակութիւնը՝ կազմակերպութեան գլխաւոր քարտուղար Խ. Սոլանայի ղեկավարութեամբ: ՆԱՏՕի գլխաւոր քարտուղարը հանդիպումներ ունեցաւ Հ.Հ. Նախագահի, Ազգային Ժողովի նախագահի, Ա.Գ. և պաշտպանութեան նախարարների հետ, ինչպէս նաեւ ելոյթ ունեցաւ Հայաստանի Ամերիկեան Համալսարանում: Այցի վերջում կայացաւ Հ.Հ.Ա.Գ. նախարար պր. Ա. Արզումանեանի ու պր. Խ. Սոլանայի մամուլի համատեղ ասուլիս:

Բարեկամական մթնոլորտում կայացած հանդիպումների ընթացքում տեսակէտներ փոխանակւեցին նոր ռազմաքաղաքական պայմաններում երկկողմ յարաբերութիւնների զարգացման հեռանկարների, ինչպէս նաեւ տարածաշրջանային անվտանգութեան խնդիրների, այդ թւում նաեւ Լ.Ղ. հակամարտութեան վերաբերեալ:

Մասնաւորապէս նշւեց, որ Հայաստանը բարձր է գնահատում ՆԱՏՕի հետ ամրապնդւող կապերը՝ դիտելով դրանք համաեւրոպական այլ կառոյցների (Ե.Մ.,Ե.Ա.Հ.Կ., Եւրոխորհուրդ) հետ յարաբերութիւնների համատեքստում: Այդ առումով կարեւորւեց Հայաստանի աճող մասնակցութիւնը Գ.Յ.Խ. ծրագրում: Ընդգծւեց, որ աւարտին է մօտենում 1997 թ. համար Հ.Հ. Գործընկերութեան Անհատական Ծրագրի մշակումը: Այն ներառում է համագործակցութեան շուրջ 10 բնագաւառ, նախկին 4ի փոխարէն: Հայաստանը դրականօրէն է գնահատում համագործակցութեան քաղաքական և ռազմական ոլորտներն

ընդգրկող Ատլանտեան Գործընկերութեան Խորհրդի (APC) ստեղծման գաղափարը:

Գլխաւոր քարտուղարն ընդգծեց ՆԱՏՕ-Հայաստան կայուն յարաբերութիւնների կարեւորութիւնը: Պր. Սոլանան շեշտեց նաեւ, որ ՆԱՏՕի ընդլայնումը նպատակ չունի մեկուսացնելու որեւէ պետութիւն: Նա յոյս յայտնեց, որ մինչեւ 1997 թ. յուլիսին կայանալիք ՆԱՏՕի Մատրիտեան գագաթնաժողովը կը յաջողուի համաձայնութեան գալ Ռուսաստանի հետ: Ի պատասխան նշուեց, որ Հայաստանի համար առաւել նպաստաւոր կը լինէր, եթէ ՆԱՏՕի ընդլայնումը զուգակցուէր անվտանգութեան այնպիսի համակարգի կերտմամբ, ուր հաշւի կ'առնուի Եւրօ-Ատլանտեան տարածաշրջանի բոլոր պետութիւնների շահերը: Հայաստանը պաշտպանում է երկու սկզբունք՝ 1) Իւրաքանչիւր երկիր իրաւունք ունի որոշելու իր անվտանգութեան ապահովման եղանակը, և 2) որեւէ երկրի անվտանգութեան ապահովումը չպէտք է լուծւի մի այլ երկրի անվտանգութեան հաշւին: Դաշինքի անդամները հաւատում են, որ Ե.Ա.Հ.Կ. շրջանակներում մշակւող «21րդ դարի անվտանգութեան բնորդը» կը ստեղծի ապահովութեան պայմաններ ներգրաւած բոլոր պետութիւնների համար: Բանակցութիւններում արտայայտւեց այն միասնական կարծիքը, որ համաեւրոպական անվտանգութեան համակարգը պէտք է լինի ընդհանուր և զերծ որեւէ բաժանարար գծերից: Դա վերաբերւում է նաեւ Անդրկովկասեան տարածաշրջանին: Վերջինս անվտանգութեան տեսակէտից կարեւոր տեղ է զբաղեցնում ՆԱՏՕի քաղաքականութեան մէջ:

Հայկական կողմն այդ առումով շեշտադրեց Լեռնային Ղարաբաղի անվտանգութեան երաշխաւորման անհրաժեշտութիւնը: Արդիւնքում եկան համաձայնութեան, որ Լ.Ղ. խնդրի և տարածաշրջանի այլ հակասութիւնների խաղաղ կարգաւորումը կը նպաստի ներգրաւած կողմերի տնտեսական և ընկերային զարգացմանը, ինչպէս նաեւ տարածաշրջանում կայունութեան հաստատմանը, ինչն իր աւանդը կ'ունենայ համաեւրոպական անվտանգութեան համակարգի ստեղծման գործում:

Բանակցութիւնների ընթացքում քննարկւեց նաեւ Եւրոպայում Սովորական Զինւած Ուժերի (Ե.Ս.Զ.Ու./CEE Trcaty) մասին պայմանագրին առընչւող խնդիրները: Զրուցակիցները համաձայնւեցին փոփոխւող պայմաններին Պայմանագրի յարմարեցման կարեւորութեան վերաբերեալ:

Անդրադառնալով հայ-թուրքական յարաբերութիւններին՝ հայկական կողմը մատնանշեց այն, որ լինելով ՆԱՏՕին սահմանակից երկիր, մեր պետութիւնը դեռեւս բնականոն յարաբերութիւններ չունի Թուրքիայի հետ: Վերջինիս անհանդուրժողական կեցւածքը բացասաբար է ազդում Հ.Ա.Հ.Խ./Գ.Հ.Խ. շրջա-

նակներում Հայաստանի մասնակցութեան վրայ, ինչպէս նաեւ խոչընդոտում է տարածաշրջանում կայունութեան հաստատմանը։

Ամփոփելով Հայաստան կատարած իր այցը՝ պր. Սոլանան գնահատեց այն որպէս՝ շատ արդիւնաւէտ։ Նա յայտնեց, որ տպաւորուած է տնտեսական բարեփոխումների ասպարէզում Հայաստանի նուաճումներով։ Այցը հնարաւորութիւն տուեց Գլխաւոր քարտուղարին անմիջականօրէն ծանօթանալու Հայաստանի մօտեցումներին երկուստեք հետաքրքրութիւն ունեցող խնդիրների վերաբերեալ և աւելի լաւ պատկերացնել տարածաշրջանում առկայ իրավիճակը։

Այսպիսով՝ մենք տեսնում ենք, որ Ռուսաստանը Հայաստանի հաւատարմութեան հարցում մտահոգելու պատճառներ ունի և ինչո՞ւ զարմանալ, որ նա տալիս է Հայաստանին ճիշտ այնքան, որքան որ ստանում է նրանից։ Ռուսաստանի ամենագլխաւոր մտահոգութիւնը այն է, որ նա չունի այն համոզւածութիւնը, որ Հայաստանը իր դաշնակիցն է և անկարելի է, որ Հայաստանը որեւէ քաղաքական կամ տնտեսական հարցում հակառակի Ռուսաստանի դիրքորոշումներին։ Այդպէս են վարւում շատ ազատ ու շատ անկախ Ֆրանսիան, Անգլիան, Բելգիան ու շատ ուրիշ երկրներ, որոնք Միացեալ Նահանգների և Եւրոպական համայնքի դաշնակիցներ են։

Նոյնիսկ Թուրքիան, որ Էրբականի ճամբով ջանում է ցոյց տալ, որ կարող է լքել Արեւմտեան տնտեսա-քաղաքական դաշինքը, զուտ քարոզչական նպատակներ է հետապնդում և ոչ մէկը չի կասկածում, որ Թուրքիան կը մնայ հաւատարիմ իր աւանդական դաշնակիցներին, իսկ եթէ գտնուեն ուժեր, որոնք կը փորձեն դուրս բերել Թուրքիան իր մնայուն դաշնակիցների ազդեցութեան գօտուց, ապա երկրի ներսում կը գտնուեն ուժեր, որոնք միշտ կան և որոնք միշտ կը շտկեն կառավարութեան սխալները։

Դժբախտաբար, Հայաստանում հաւատարմութիւնը մնայուն ու բնական դաշնակիցների նկատմամբ դիտւում է որպէս ազատութեան կորուստ և առաջ է քաշւում այն հանրայայտ թեզը, թէ գոյութիւն չունեն մնայուն դաշնակիցներ, մնայունը միայն շահերն են։ Սա ասւած է ոչ թէ Հայաստանի համար, որի շահերը անշուշտ մնայուն են, բայց նոյնքան մնայուն են նրա դաշնակիցները, որոնք դաշնակից են դարձել այդ մնայուն շահերից ելնելով։

Ռուսաստանը նոյնիսկ համոզւած չէ, որ Հայաստանում կան ազդեցիկ ուժեր, որոնք ճակատագրական պահերին լրջօրէն կը պայքարեն հակառուսական տրամադրութիւնների դէմ ու ի վիճակի կը լինեն խեղդելու այդ հակահայկական տրամադրութիւնները։ Էլ ինչո՞ւ զարմանալ, որ Ռուսաստանը Անդրկովկասի հետ իր յարաբերութիւնների մէջ չի նկատում Հայաստանը իր

գլխաւոր ու հաւատարիմ դաշնակիցը և, օրինակ, Լիզբոնում քւէարկում է Ադրբեջանի տարածական ամբողջութեան օգտին։

Տարօրինակ կերպով, մեր դիւանագիտական ծառայութիւնները այդ բանը չեն ներում Ռուսաստանին, բայց սիրով ներում են մնացած բոլոր արեւմտեան պետութիւններին։ Մինչդեռ յայտնի է, որ Ամերիկայի Միացեալ Նահանգները այնքանով Հայաստանի բարեկամը կը նկատուեն, որքանով որ այդ բարեկամութիւնը չի խանգարում ու չի հակասում Ադրբեջանի, ՆԱՏՕի, Թուրքիայի և նրա այլ դաշնակիցների շահերին։

Ինքը իրեն աշխարհի ժողովրդավարութեան պաշտպան հռչակող Մ. Նահանգների կառավարութիւնը մատը-մատին չխփեց Հայաստանի անօրինակ իշխանութիւններին քննադատելու և նրանց հետ բանակցութիւններից հրաժարուելու ուղղութեամբ։ Մինչդեռ յայտնի է, որ նրանց փոքր ինչ քննադատութիւնը մեծ շփոթի մէջ էր գցում Հայաստանի իշխանութիւններին։ Ահա թէ ինչո՛ւ այս պայմաններում Հայաստանի պետականութեան ամրապնդման հարցում անհրաժեշտ է երկրորդ ճանապարհի ընտրութիւնը, այսինքն՝ իշխանութիւններին խիստ քննադատելու ճանապարհը, որը անհրաժեշտ է նաեւ այն բանի համար, որ արտաքին աշխարհը հասկանայ, թէ Հայաստանում իշխանութիւնները միակ քաղաքական ուժը և ժողովրդի ձգտումների արտայայտիչները չեն։

1994

ԱԶԱՏ ՇՈՒԿԱՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Է. Յովհաննիսեան

Ազատ շուկան դրամատիրական վարչակարգի ծնունդ է, տնտեսութեան ժողովրդավարական ղեկավարման սկզբունքը արտայայտողը և նախաձեռնութեան ազատութեան հիմնական երաշխիքը։

Եւ ահա ազատ շուկան մտաւ Հայաստան և գործեց աւերներ, քանզի Հայաստանում դրամատիրական վարչակարգ չէր ձեւաւորւել, ժողովրդավարութիւնը բացակայում էր, իսկ նախաձեռնութեան ազատութիւնից օգտուեցին և շարունակում են օգտուել աւազակախմբեր յիշեցնող տարբեր պետական և ոչ պետական խմբաւորումներ։

Ի՞նչ կարելի է անել այս պայմաններում փրկելու համար Հայաստանը և հայ ժողովուրդը։ Իսկ փրկել պէտք է, քանզի երեք հիմնական բնագաւառները՝ մշակոյթը, քաղաքականութիւնը և տնտեսվարութիւնը ազատ շուկայի պայմաններում ստիպւած են լինում (աւելի ճիշտ նրանց ստիպում են) ազգային շահերից ու նպատակներից հրաժարւել, ինչը կարող է կործանարար հետեւանքներ ունենալ Հայաստանի և հայ ժողովրդի համար։ Տեսնենք թէ ինչո՞ւ։

ՄՇԱԿՈՅԹ

Մշակոյթի ազատութեան սահմանների մասին, հաւանաբար, անկարելի է խօսել առանց պարզելու, թէ ինչպիսի՛ն է մշակոյթի կապը մարդու և ազգի բնածին էութեան հետ։ Անհատի հասարակական զգացմունքների մէջ ազգին պատկանելու գիտակցութիւնը և զգացմունքը կապ ունեն ինքնահաստատման ձգտման հետ։

Ես պատկանում եմ մի հզօր, տաղանդաւոր, հազարամեակների պատմութիւն ունեցող ազգի, ուստի այդ ազգի բոլոր պատմական յաջողութիւնները ես կարող եմ վերագրել ինձ։ Այսպիսով՝ անհատի համար ազգային պատկանելիութիւնը սեփական անձը մեծարելու միջոց է, եթէ մեծարելու առիթ կայ։ Նա փաստօրէն իրեն է վերագրում ազգի հաւաքական յաջողութիւնները և իրեն աւելի հզօր է զգում, եթէ պատկանում է հզօր ազգի։

Բոլորովին այլ է արժէքային ուղղւածութիւնը ազգից դէպի անհատ տանող ճանապարհի վրայ։ Ազգը չի համարում, որ ինքը իր անհատների պարզ գումարն է։ Ազգը արդարացիօրէն համարում է, որ ինքը կազմւած է ոչ միայն այսօր ապրող հայերից, այլ նաեւ բոլոր նախորդ և ապագայ սերունդներից և ոչ

թէ շնորհականութիւն է յայտնում իր առանձին տաղանդաւոր զաւակներից, այլ ասում է, որ նրանք յաջողութեան հասան, որովհետեւ հայ էին ու պիտի շնորհականութիւն յայտնեն ազգից, որ տուեց նրանց հայի բնածին տաղանդը։

Այսպիսով՝ անհատը օգտագործում է ազգի յաջողութիւնը իր օգտին, իսկ ազգը իր յաջողութիւնների աղբիւրը որոնում է ոչ թէ անհատի մէջ, այլ այնտեղ, որտեղ գործում է բնութեան օրէնքը։

Բայց մարդկային հասարակարգում բնութեան օրէնքները խախտուած են մարդու ազատութեամբ և փոփոխական արժէքների դաշտով։ Օրինակ՝ եսասիրութիւնը համարւում է բացասական յատկութիւն, մինչդեռ հաւաքական զգացմունքները՝ դրական։

Սակայն այս մօտեցումը պարունակում է իր մէջ կեղծիք, քանզի աւազակների և անբարոյականների հաւաքական զգացմունքները և կազմակերպուածութիւնը ոչ մի դրական բան իր մէջ չի պարունակում, ինչպէս ոչ մի վատ բան չկայ այն անհատականութեան մէջ, որը չի խանգարում մէկ ուրիշի անհատականութեանը։ Անհատական և հաւաքական ձգտումների փոխ-յարաբերութիւնների մէջ միակ դատաւորը, օրէնսդիր ու գործադիր մարմինը, ներդաշնակութեան միակ աղբիւրը մշակոյթն է։

Սակայն մշակոյթի ճամբով բնական ներդաշնակութեան վերադառնալու ձգտումը տապալուեց ազգայնականութեամբ, որը ծագեց Գերմանիայում, Նապոլէոնի արշաւանքից յետոյ։ Գերմանացիները պարտուեցին պատերազմում, սակայն մշակոյթի իմաստով նրանք իրենց ֆրանսիացիներից և շատ ուրիշ ազգերից բարձր էին դասում։

Աւելի՛ն, նրանք համարում էին, որ բարձր մշակոյթ ունեցող ազգը իրաւունք ունի ճնշելու ցածր մշակոյթ ունեցողին, իսկ դա արդէն շատ հեռու էր ներդաշնակութեան գաղափարից։

Ազգային վարքագիծը և երջանկութեան հասնելու նրա ձգտումը պայմանաւորուած են ներքին անփոփոխ և արտաքին փոփոխական պայմաններով։ Ազգի ներքին բնական էութիւնը անփոփոխ է այնքանով, որքանով անփոփոխ են ազգը ստեղծող բնութեան ուժերը և որքանով ազգը շարունակում է մնալ բնութեան ներդաշնակութեան անհրաժեշտութիւն։ Դրա հետ միասին ազգը ապրում է որոշակի պայմաններում, որոնք արտաքին են ազգի ներքին էութեան նկատմամբ, սակայն նրանց ազդեցութիւնը երբեմն այնքան հզօր է լինում, որ թափանցում է ազգի էութեան մէջ՝ նրան փոխելու մտադրութեամբ։

Արտաքին ուժերի այդ ոտնձգութիւնների առջեւ որպէս պատնէշ կանգնած է մշակոյթը, որը ոչ միայն ծնւել է ազգային էութիւնից, այլեւ հանդիսանում է նրա պաշտպանը։ Ոչ-ազգային էութիւնից ծնւած մշակոյթը չի կարող պաշտ-

պանել ազգը, քանզի օտար մշակոյթի ազդեցութեան տակ ազգը, փաստօրէն, կորցնում է իր էութիւնը, ինչը ազգային իմաստով նշանակում է մահ։

Ահա թէ ինչո՛ւ արտաքին և ներքին ազգային ուժերի և փոփոխութիւնների խնդիրը մեր ուսումնասիրութեան կարեւորագոյն խնդիրներից մէկն է։

Որտեղի՞ց են գալիս այն ուժերը, որոնք ջանում են ոչնչացնել ազգային էութիւնը և բնական ազգային բազմազանութեան կառոյցը։ Այդ ուժերը լինում են երեք տեսակի.

ա.- Նրանք, որոնք բխում են գոյութիւն ունեցող պայմաններից։

բ.- Նրանք, որոնք որոշակի գաղափարախօսական շահերին ծառայելով, ջանում են ոչնչացնել հարուստ ազգային ներդաշնակութիւնը, փոխարինելով այն շինծու տիեզերաքաղաքացիութեամբ, որի աղքատութիւնը պայմանաւորուած է հոգեկան արժէքները տրամաբանութեան հսկողութեան տակ դնելով։

Օրինակ՝ արդիւնաբերական համակարգի, միջազգային առեւտրի, համընդհանուր խաղաղութեան, գիտութեան զարգացման և շատ ուրիշ նպատակների հասնելու համար անհրաժեշտ է վերացնել ազգային սահմանները և ազգային ինքնագիտակցութիւնը։ Բայց եթէ մեր նպատակը ազգը պահպանելն է, մենք պէտք է դիմադրենք այդ արհեստական նպատակներին ծառայող ուժերին։

Ինչ վերաբերում է գաղափարախօսական ուժերին, որոնք միտումնաւոր կերպով ուզում են վերացնել ազգը և ընդհանրապէս բոլոր հաւաքական հեղինակութիւնները, ապա նրանց տրամաբանութիւնը շատ պարզ է. **բաժանի՛ր տիրելու համար** դասական թեզը նրանք փոխարինել են մէկ ուրիշ թեզով՝ **ոչխարացրո՛ւ ղեկավարելու համար**։ Ղեկավարել և հօտը ցանկացած ուղղութեամբ քշել կարելի է անհատականութիւնից զուրկ անասուններին։ Բայց մարդը անասուն չէ և ունի այն զգացմունքը, որ կայ իրենից աւելի կարեւոր արժէք (Աստուած, Հայրենիք, Ազգ, Ընտանիք, Պատիւ և այլն), որոնց համար մարդը պատրաստ է զոհւելու։ Այս մարդկանց անկարելի է գնել հացով կամ դոլարով, ուստի նրանք «անղեկավարելի» են։

Մեր աչքերի առջեւ կործանւում են կայսրութիւններ, կրօններ, ազգեր, մշակոյթներ, քաղաքակրթութիւններ, և այս ամէնը միտումնաւոր կերպով արւում է որոշակի ուժերի կողմից, որոնք ունեն աշխարհի տէրը դառնալու յաւակնութիւն։ Մեզ մնում է միայն պաշտպանւել։ Բայց ինչպէ՞ս։ Ունե՞նք, արդեօք, այս հարցում դաշնակիցներ։

Մեր դաշնակիցներն են մշակոյթն ու քաղաքականութիւնը։ Քաղաքականութեան մասին մենք կը խօսենք յաջորդ բաժնում, իսկ ինչ վերաբերում է մշակոյթին, ապա նա պէտք է ներշնչի հայ մարդուն, որ իր մեծութիւնը, արժանապատուութիւնը, բարգաւաճումը և առաջադիմութիւնը պայմանաւորուած է

ազգի մեծութեամբ ու արժանապատուութեամբ, որ ազգային զգացմունքների կորուստը դարձնում է մարդուն անտուն, անհայրենիք, անհամ ու հօտ մի կենդանի:

Սա նշանակում է, որ Հայաստանի մշակութային քաղաքականութիւնը պէտք է լինի պետական, պէտք է իրականանայ յստակ ազգային նպատակների շուրջ, կարողանայ խուսափել օտար ազդեցութիւններից և դրա հետ միասին մասնակցի ազատ շուկայի ազատ մրցակցութեանը: Մրցակցութեան այդ դաշտում ազգային մշակոյթի յաղթանակի երաշխիքը պէտք է լինի Հայաստանի կառավարութիւնը, յանձինս մշակոյթի նախարարութեան: Այսինքն, օտար մշակոյթի մրցակիցը լինելու է ոչ թէ Հայաստանի մշակութային հաստատութիւնը, այլ՝ հայկական պետականութիւնը:

Առաջին հայեացքից կարող է թւալ, որ նման մօտեցումը սահմանափակում է մշակոյթի ազատութիւնը, ուստի անընդունելի է ժողովրդավարական վարչակարգի համար: Սակայն ի՞նչ անել, եթէ ողջ աշխարհի ապազգային ուժերը թափւել են Հայաստան և քայքայում են մեր ժողովրդի ազգային արժէքները, ազգային նկարագիրը և ազգային էութիւնը: Նրանց դէմը կարող է առնել միայն Հայաստանի Հանրապետութեան մշակութային քաղաքականութեան հիմնական սկզբունքները: Այս հարցում մենք բոլորս էլ անելիք ունենք:

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Խօսել այն մասին, թէ ինչպիսի՛ քաղաքականութիւն է պէտք վարել ազգային արժէքները պաշտպանելու համար, աւելորդ է, քանզի քաղաքականութիւնը արդէն իսկ ազգային շահերը պաշտպանելու միջոց է: Այդուամենայնիւ, այդ մասին խօսելու անհրաժեշտութիւնը կայ, քանզի ազատ շուկայի պայմաններում քաղաքականութիւնը երբեմն պաշտպանում է ոչ թէ ազգային, այլ՝ զուտ տնտեսական, այն էլ ոչ թէ սեփական երկրի, այլ՝ օտար երկրների ու ընկերութիւնների շահերը:

Յայտնի է, որ Հայաստանը անդրկովկասեան երկիր է, որը գրեթէ ամբողջովին դուրս է եկել Ռուսաստանի ազդեցութեան գօտուց: Չնայած նրան, որ Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Իգոր Իւանովը յայտարարեց, թէ Ռուսաստանը եղել է ու միշտ կը մնայ անդրկովկասեան երկիր, իրականում Ռուսաստանը կորցրել է իր բոլոր բարեկամներին Անդրկովկասում, բացի Հայաստանից, որի ռուսաստանեան քաղաքական կողմնորոշումը այնքան յստակ չէ, որպէսզի Ռուսաստանը համարի, որ Անդրկովկասում ունի վստահելի ու հաւատարիմ մի դաշնակից:

Այս տարւայ նոյեմբերի 1ին Ռուսաստանի սահմանապահ զօրքերը դուրս են գալիս Վրաստանից: Ադրբեջանը ամբողջովին ընկած է Թուրքիայի ազդեցութեան տակ: ՆԱՏՕի ներկայացուցիչներն այցելեցին Կասպից Ծովի երկրների բոլոր մայրաքաղաքները և նախապատրաստեցին մի նոր դաշինքի ստեղծում, որը ամբողջովին կտրելու է Կովկասը Ռուսաստանից:

Այդ դաշինքի մէջ են մտնում Վրաստանը, Ադրբեջանը, Ուզբեկստանը, Ղրղզստանը և Թուրքմենիան: Վրաստանի բանակում, որում ընդգրկւած են 33 հազար զինծառայողներ, տեղի է ունենում արդիականացում՝ ՆԱՏՕի հսկողութեան տակ, իսկ Վրաստանի պաշտպանութեան նախարար Դաւիթ Թեւաձէն արեւմտեան տեսակի զէնքեր է գնում: Վրաստանի սպաները նախապատրաստւում են Միացեալ Նահանգներում և Գերմանիայում: Ադրբեջանը պայմանաւորւել է ՆԱՏՕի հրամանատարութեան հետ Թուրքիայի ռազմակէտերը Ադրբեջանում տեղակայելու մասին: Թուրքմենիան դադարեցրեց իր բանակցութիւնները Ռուսաստանի հետ և բանակցութիւններ սկսեց ՆԱՏՕի հետ: Ուզբեկստանի հարաւային մասում բանակը արդիականացւում է ամերիկեան ջանքերով, իսկ սպաները վերապատրաստւում են Ամերիկայի ռազմական ակադեմիաներում: Թուրքիան յաւակնութիւն ունի իշխանութիւն հաստատել Կասպից և Սեւ Ծովերի շրջաններում, իսկ Ադրբեջանը դառնում է Թուրքիայի շահերի պաշտպանը և միջնորդը նախկին խորհրդային տարածութիւնների վրայ: Ադրբեջանի նախագահ Ալիեւը սերտ կապերի մէջ է Միացեալ Նահանգների, Թուրքիայի և Իսրայէլի հետ, որոնք կանգնած են հակառուսաստանեան դիրքերի վրայ:

Վերջերս Ալիեւը առաջարկեց, որ ամերիկեան ռազմակէտը Թուրքիայի Ինջերլիկ քաղաքից տեղափոխւի Ադրբեջանի Ափշերոնի շրջան: Այդ ճանապարհով ՆԱՏՕն կարող է վերահսկողութիւն հաստատել Ադրբեջանի վրայ, ինչը թոյլ կը տայ նրան միջամտել Ադրբեջանի գործերին և չէզոքացնել Իրանի ազդեցութիւնը այդ շրջանում: Թուրքիան, Իսրայէլը և Միացեալ Նահանգները շահագրգռւած են Ափշերոնում ռազմական յենակէտ ստեղծելու մէջ:

Այս ամէնը և Կոսովոյում տեղի ունեցած իրադարձութիւնները ստիպում են Ռուսաստանին որոնել նոր դաշնակիցներ: Վերջերս տեղի ունեցան Ռուսաստանի և Չինաստանի մերձեցման փորձեր: Այդ մերձեցման գաղափարը յենւում է բազմաբեւեռային աշխարհ ստեղծելու գաղափարի վրայ, որը պէտք է փոխարինի միաբեւեռ (ամերիկեան) մեր աշխարհին: Այս սկզբունքը այժմ ընդունւում է նաեւ նախկինում բաւականին զուսպ Հնդկաստանը: Սա էր գլխաւոր պատճառը, որ Պեկինը լքեց իր դաշնակից Պակիստանին և այժմ ջանում է ռազմավարական դաշն կնքել Դելիի հետ: Ինչ վերաբերում է Հնդկաստանի և Ռուսաստանի փոխ-յարաբերութիւններին, ապա նրանք միայն արտաքին

քաղաքականութեամբ չեն սահմանափակւում: Մոսկւան և Դելին ստորագրել են համաձայնութիւն ռազմատնտեսական համագործակցութեան մասին: 2000-2001 թւականների ընթացքում Ռուսաստանը Հնդկաստանին փոխանցելու է 10 մլրդ դոլարի զէնք ու զինամթերք: Հաւանաբար այս նոր բեւեռի մէջ կը մտնեն նաեւ Իրանը, քրդերը, Բելոռուսը, արաբական աշխարհի հիմնական մասը և մի շարք այլ երկրներ և ազգեր:

Ահաւասիկ, այս պայմաններում Հայաստանի ղեկավարութիւնը պէտք է որոշի, թէ ո՞ր բեւեռի հետ համագործակցելով նա կարող է լաւագոյնս պաշտպանել հայ ժողովրդի ազգային շահերը: Սակայն, նախ և առաջ, անհրաժեշտ է պարզել, թէ որո՛նք են այդ շահերը:

Այստեղ կարելի է տալ ընդհանուր սահմանումներ բարգաւաճման, ազատութեան, երջանկութեան, արդարութեան, կենսամակարդակի բարձրացման, պաշտպանւած լինելու մասին, սակայն այս սահմանումները չեն լինի զուտ հայկական և հազիւ թէ կարողանան լոյս սփռել ազգային շահերը պաշտպանող քաղաքականութեան ընտրութեան վրայ: Ազգային շահերը պէտք է հաշւի առնեն ազգի ընդհանուր վիճակը, այդ վիճակից բխող խնդիրները լուծելու ճանապարհների ընտրութիւնը: Այս իմաստով, մեր ազգի ներկայ վիճակը թելադրում է, նախ և առաջ, ազգահաւաքի և հողահաւաքի ճամբով իրականացնել «Մէկ ազգ, Մէկ հայրենիք» կարգախօսը, այսինքն՝ ստեղծել Միացեալ, Ազատ ու Անկախ Հայաստան: Որքանով էլ այս վերջնանպատակը թւայ կուսակցական բնոյթ կրող, միեւնոյն է, նա համազգային է և մինչեւ օրս աւելի ընդունելի կարգախօս որեւէ մէկի կողմից առաջարկւած չէ: Այդ վերջնանպատակը մեր ժողովրդի դարաւոր երազն է եղել:

Ուրեմն՝ բոլոր այն վարչակարգերն ու քաղաքականութիւնները, որոնք չեն նպաստում այս վերջնանպատակին հասնելուն, ազգային շահերի պաշտպանութեան տեսանկիւնից մեզ համար պիտի անընդունելի լինեն:

Խօսքը, ի հարկէ, ոչ միայն վերջնանպատակի մասին է, որը ձեւականօրէն կարող են ճանաչել բոլորը, խօսքը բոլոր այն ենթանպատակների մասին է, որ մենք պիտի անցնենք հանգրւանային ճանապարհով: Օրինակ, եթէ քաղաքականութիւնը տարւում է ի վնաս Ղարաբաղի, եթէ չի ճանաչում Ջաւախքի հայերի ինքնորոշման իրաւունքը, եթէ թուրքերին ներւում է հայերի Ցեղասպանութիւնը, եթէ Թուրքիան դառնում է Անդրկովկասի քաղաքականութեան գլխաւոր դերակատարը, եթէ ազգային գաղափարախօսութիւնը յայտարարւում է կեղծ կատեգորիա, եթէ եւրոպական կամ ամերիկեան մշակոյթը խեղդում է Կոմիտասին ու Սայաթ-Նովային, եթէ Հայաստանի ամերիկանացումը աղաւաղում է հայ մարդու ազգային նկարագիրը, ապա այդ քաղաքականութիւնը չի կարող մեզ համար ընդունելի լինել:

Այժմ կարելի է ընտրութիւն կատարել բեւեռների միջեւ: Այսպէս կոչուած ամերիկեան բեւեռը իր հասարակական գաղափարախօսութեան մէջ չի ճանաչում ազգը և պաշտպանում է միայն մարդու իրաւունքները, այն էլ այնքան ձեւականօրէն, որ ամբողջովին քաղաքականացնում է իր այդ պաշտպանութիւնը: Այդ բեւեռի կողմից Թուրքիան համարւում է ՆԱՏՕի գլխաւոր ներկայացուցիչը Կովկասում: Ադրբեջանը Թուրքիայի գլխաւոր դաշնակիցն է: Այդ բեւեռում հայ ազգային շահերի պաշտպանութիւնը բացառւում է: Այդ շահերը կարելի է պաշտպանել միայն Չինաստան-Ռուսաստան-Հնդկաստան-Իրան-Արաբական Աշխարհի բեւեռում, որին շուտով կը միանան շատ ուրիշ երկրներ ու ազգեր, որոնք յոգնել են ազատ շուկայի սանձարձակութիւնից:

Պարտադրել Հայաստանի իշխանութիւններին համագործակցել այս բեւեռի հետ կարող է միայն այն քաղաքական ուժը, որն ինքը համոզւել և որդեգրել է այդ բեւեռի հետ համագործակցելու անհրաժեշտութիւնը:

ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Ազգային տնտեսութիւնը կոչւած է պաշտպանելու իր քաղաքացիների և երկրի տնտեսական շահերը: Միայն այն տնտեսական միջոցառումները կարող են կոչւել ազգային, որոնք նպաստում են երկրի քաղաքացիների կենսամակարդակի բարձրացմանը և երկիրը պաշտպանելու կարողութիւնների աւելացմանը:

Տուրքերի իջեցում, թոշակների բարձրացում, աշխատավարձի աւելացում, գների նւազում, սպասարկման բարելաւում և այլն: Եթէ այս ամէնը կապ ունի սեփական տնտեսութեան հետ, ապա այդ տնտեսութիւնը ազգային կոչւելու իրաւունք ունի:

Նոյնը վերաբերում է երկրի պաշտպանութեանը: Եթէ այս պաշտպանութիւնը յենւում է սեփական տնտեսութեան վրայ, ապա երկիրը ազատ է իր քաղաքական կողմնորոշումների մէջ: Հակառակ դէպքում նա կախւած կը մնայ իրեն պաշտպանող երկրներից:

Այսպիսով կարելի է յանգել այն եզրակացութեան, որ ազգային շահերը պաշտպանող տնտեսութիւնը պէտք է.

ա.- Համապատասխանի երկրի աշխարհագրական դիրքին և հնարաւոր շուկաների պահանջներին:

բ.- Ապահովի բնակչութեանը աշխատանքով:

գ.- Պաշտպանի աշխատաւորի տնտեսական և ընկերային շահերը:

դ.- Բաւարարի երկրի տնտեսական պահանջներին՝ շրջափակման, պատերազմի կամ այլ արտակարգ պայմանների ժամանակ:

է.- Կազմակերպի տնտեսվարութիւնը հասարակական արդարութեան սկզբունքների համաձայն։

զ.- Պետութեան օգնութեամբ զարգացնի ռազմավարական նշանակութիւն ունեցող մասնաճիւղերը, որոնք կարող են եկամտաբեր չլինել ու մերժուեն ազատ շուկայի կողմից, սակայն նպաստեն ազգային շահերի պաշտպանութեանը։

Այստեղ հարկ է նշել, որ ազատ շուկայի և ազգային շահերի պաշտպանութեան սկզբունքների մէջ գոյութիւն ունի հակասութիւն, որի կարգաւորիչի դերը պէտք է իր վրայ վերցնի Հայաստանի պետութիւնը։

Ազատ շուկայի սկզբունքը այն է, որ այնտեղ բոլոր վաճառողները ձգտում են վաճառել իրենց ապրանքը որքան հնարաւոր է թանկ գնով, իսկ գնորդները ձգտում են գնել ապրանքը որքան կարելի է էժան գնով։ Նրանց այս ցանկութիւնների բախումից էլ ծնւում է ազատ շուկայում ապրանքային գինը։

Ազգային շահերի պաշտպանութիւնը պահանջում է գնել այնպիսի ապրանքներ, կառուցել այնպիսի ճանապարհներ ու արտադրել այն, ինչը անհրաժեշտ է ազգին, եթէ նոյնիսկ այդ ամէնը կարելի է գնել ազատ շուկայում աւելի էժան գներով, եթէ կառուցէին ուրիշ գործարաններ և ճանապարհներ։

Կասկածից վեր է, որ գործատիրոջ համար գուցէ աւելի ձեռնտու կը լինի արտադրել ծամոն կամ օղի, բայց նրա հարստանալու բնական ձգտումը պէտք է սահմանափակւի պետական օրէնքով։ Սակայն ինչպէ՞ս։

Այս տարի Մոսկւայում ռուսերէն լեզւով լոյս տեսաւ Գ. Թոսունեանի և Ա. Վիկուլինի «Դրամը և իշխանութիւնը» վերնագիրը կրող աշխատութիւնը, որտեղ հեղինակները արտայայտում են ուշագրաւ մի միտք և ցոյց են տալիս, որ ժամանակակից աշխարհում, բացի օրէնսդիր, գործադիր և դատական իշխանութիւններից, ձեւաւորւել է մի նոր շատ հզօր իշխանութիւն՝ **դրամական իշխանութիւնը**։

Հեղինակները համոզիչ կերպով ապացուցում են, որ 20րդ դարի երկրորդ կէսերին դրամական իշխանութիւնը համեստ միջնորդից վերածւեց լուրջ իշխանութեան և իր վրայ վերցրեց հասարակական կեանքի ղեկավարման և վերահսկողութեան պարտականութիւնը։ Այդ իշխանութիւնը ձեւակերպեց նաեւ իր յատուկ մարմինը, որը Ազգային Կենտրոնական Դրամատունն է։ Այսինքն՝ կառավարութեան, Ազգային Ժողովի և Գերագոյն Դատարանի կողքին կանգնեց նրանցից ոչ-պակաս իշխանութիւն ունեցող դրամատունը։

Այդ իշխանութիւնն է կատարում դրամների տեղաբաշխումը, բաժանում է վարկերը, ապահովում է ազգային դրամի կայունութիւնը և կատարում է բոլոր տնտեսական հաշւարկները։ Դրամատունը ունի պետական կառավարման պարտականութիւններ։ Բանը նրանում է, որ ազատ շուկայի պայմաններում

բազմաթիւ գործատէրեր արտայայտում են իրենց կամքը, որի հետ պէտք է հաշւի նստի Կենտրոնական Դրամատունը՝ վարկային և դրամական քաղաքականութիւնը մշակելու ժամանակ։

Պէտք է ասել, որ դրամի ճանապարհով, ղեկավարումը աւելի արդիւնաւէտ է, քան հրամանների ճամբով կազմակերպւած ղեկավարումը։ Այնուամենայնիւ, դրամական ղեկավարութիւնը յենւում է առարկայական տնտեսական օրէնքների վրայ, որտեղ բացակայում են ազգային շահերը, ուստի եթէ կառավարութիւնը ուզում է պաշտպանել ազգային շահերը, նա պէտք է համապատասխան հրահանգներ տայ ազգային Կենտրոնական Դրամատանը այս կամ այն տնտեսական միջոցառմանը կարեւորութիւն տալու մասին։ Եւ այդ կարեւորութիւնը բխելու է ոչ թէ տնտեսական օրէնքներից, այլ՝ ազգային շահերից։

Լաւագոյն ելքը կը լինէր այն, որ Ազգային Ժողովը՝ որպէս օրէնսդիր մարմին, օրէնք ընդունէր ազգային շահերի պաշտպանութեան անհրաժեշտութեան մասին և նշէր, թէ որո՛նք են ազգային շահերը տնտեսվարութեան, քաղաքականութեան և մշակոյթի բնագաւառներում։ Եթէ նման օրէնք ընդունւի, ապա նրան պարտաւոր կը լինեն ենթարկւել թէ՛ կառավարութիւնը և թէ Կենտրոնական Դրամատունը։

1999

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Է. Յովհաննիսեան

Այն, ինչ ժողովրդավարութիւն անուան տակ տասը տարի առաջ մտաւ Հայաստան, ճիշտ այնքանով ժողովրդավարական վարչակարգ էր, որքանով ընկերվարական վարչակարգ էր այն, ինչ Հայաստան մտաւ 80 տարի առաջ։

Մեր ժողովուրդը այս երկու վարչակարգերի մասին որեւէ պատկերացում չունէր, և ընկերվարութիւն Խորհրդային իշխանութեան ձեւի տակ պարտադրուեց Ռուսաստանի կողմից, իսկ ժողովրդավարութիւնը անիշխանութեան ձեւի տակ պարտադրուեց Արեւմուտքի կողմից։

80 տարի առաջ գիւղացիական Հայաստանը, աներեւակայելի տառապանքների գնով, կարողացաւ յարմարուել այն վարչակարգին, որը ընկերվարութեան ծաղրանք կարելի էր համարել։

Իսկ ժողովրդավարութեան ծաղրանք անիշխանութեանը մեր ժողովուրդը չի յարմարուել մինչեւ այսօր և հազիւ թէ կարողանայ յարմարուել՝ պահպանելով իր ազգային արժէքները։

Ժամանակակից ժողովրդավարութեան մասին շատ բան չի ասւում Հայաստանում, բացի այն, որ բոլորը, մանաւանդ երկրի ղեկավարութեան հետ կապ ունեցողները, ամէն առիթով պնդում են, որ իրենք ժողովրդավարներ են՝ արդարացնելով ժողովրդավարութեան հետ որեւէ կապ չունեցող իրենց քայլերը։

Մինչդեռ ժողովրդավարութիւնը զարգացաւ տարբեր ուղղութիւններով և ծնեց իր փիլիսոփայական սկզբունքը, որը կարելի է ձեւակերպել այսպէս.

Հակառակ միջնադարեան սկզբունքի, որը հասարակութիւնը բաժանում էր դասակարգերի, ազգերի, անձերի, կրօնների և այլ հասարակական միաւորների, ժողովրդավարութիւնը հռչակում է մարդկանց հաւասարութիւնը և մարդու կեանքը համարում է հասարակական բարձրագոյն արժէքը։ Այդ հասարակութիւնը բնական է և երկնային, քանզի տեսակների հասարակութիւն է։ Մինչդեռ երկրի վրայ այդ տեսակները հաւասար չեն։ Կան ուժեղ և թոյլ, խելացի և անխելք, առողջ և հիւանդ մարդիկ։ Ուստի՝ ժողովրդավարութիւնը ջանում է, իրաւաբանական օրէնքների ճամբով, հաւասարեցնել անհաւասար մարդկանց։

Մէկ կողմ դնենք այն փաստը, որ օրէնքի ճամբով անկարելի է հաւասարեցնել անհաւասարներին, մէկ կողմ դնենք նաեւ այն, որ անհաւասարներին հաւասարեցնելու ձգտումը անարդար պիտի նկատուի, պարզապէս փորձենք պարզել, թէ ո՞ր հասարակական արժէքն է համապատասխանում ժողովրդավարական գաղափարախօսութեանը։

Հաւանաբար կարեւորագոյն արժէքը ազատութիւնն է, որը տրամաբանօրէն բխում է հաւասարութիւն հասկացութիւնից, քանզի այն ենթադրում է ազատութեան հաւասար աստիճան բոլորի համար:

Այդ ազատութեան սահմանափակումը կարող է տեղի ունենալ ազատութեան նոյն աստիճանի ոլորտում մէկ այլ անհատի նկատմամբ: Այստեղից էլ բխում են ժողովրդավարութեան հասարակական վարքագծի կանոնները, որոնք ի վերջոյ թելադրում են, որ հասարակութեան մէջ կարելի է ապրել միայն այն դէպքում, եթէ փոխադարձաբար յարգւում է ամէն մի անհատի ազատութիւնը:

Այդ փոխադարձ յարգանքը պէտք է կարգաւորւի օրէնքներով և որոշումներով, ինչը նշանակում է, որ ժողովրդավարական երկրի գործադիր, օրէնսդիր և դատական մարմինները, իրարից անկախ, պէտք է ստեղծեն մի մթնոլորտ, որտեղ հնարաւոր լինի իրականացնել քաղաքացիների փոխադարձ յարգանքը և նրանց ազատութիւնների պաշտպանութիւնը:

Այդ մթնոլորտը Հայաստանում չի ստեղծւած ու չի ստեղծւի այնքան ժամանակ, քանի դեռ իշխանութիւններն իրենց իշխանութիւնը ձեռք են բերում ոչ ժողովրդի կամքով. այսինքն՝ ի խախտումն ժողովրդավարութեան գլխաւոր սկզբունքի:

Բանը նրանում է, որ աշխարհի բոլոր իշխանութիւնները ունեն նիւթական և բարոյական շահեր: Իշխանութիւնը ինքնըստինքեան իշխանաւորին հաճոյք է պատճառում, որովհետեւ նրա կամքին ենթարկւում են ուրիշ անձնաւորութիւններ, և հաստատւում է նրա առաջնակարգութիւնը: Բացի դրանից, իշխանութիւնը հնարաւորութիւն է ստեղծում նիւթական բարիքներ ձեռք բերելու համար:

Եթէ իշխանութեան համար հնարաւոր է ձեռք բերել այս երկու բարոյական և նիւթական առաւելութիւնները, առանց ծառայելու ժողովրդին, բոլորն էլ ճիշտ այդպէս կը վարւեն:

Սակայն այդ երկու առաւելութիւնը ձեռք բերելու հնարաւորութիւնը սահմանափակւում է ժողովրդին ծառայելու անհրաժեշտութեամբ: Եւ ժողովրդավարական երկրներում իշխանաւորները փորձում են ամէն ինչ անել՝ դուր գալու համար ժողովրդին և նրա քւէներով ընտրւել յաջորդ անգամ:

Սա նշանակում է հետեւեալը, ուզո՞ւմ ես ընտրւել և ունենալ բարոյական ու նիւթական առաւելութիւններ, ուրեմն՝ ծառայիր ժողովրդիդ և հասարակութեանը:

Հայաստանում իշխանութիւնը չի ծառայում ժողովրդին և հասարակութեանը, քանզի իշխանութեան գլուխ է անցնում առանց ժողովրդի կամքի:

Մինչեւ այսօր ընկերվարութեան և ժողովրդավարութեան միջեւ գոյութիւն ունի տարակարծութիւն, որը մեզ համար կարեւոր է, քանզի նախորդ վարչակարգը իրեն ընկերվարական էր կոչում, բայց այդպիսին չէր, իսկ ներկայ վարչակարգը իրեն ժողովրդավարական է կոչում, բայց ժողովրդավարական չէ:

Ուրեմն տեսնենք, թէ ի՞նչ տարակարծութիւն գոյութիւն ունի իրական ժողովրդավարութեան և իրաւ ընկերվարութեան միջեւ:

Ըստ Էութեան, հաւաքական ազատութեան գաղափարի, ինչպիսին է ընկերվարութիւնը, և քաղաքական ազատութեան միջեւ, ինչպիսին է ժողովրդավարութիւնը, բախում գոյութիւն չունի: Բախումը գալիս է երկկողմանի անկատարութիւնից: Մէկ կողմից որոշ ընկերվարական տեսութիւնների մէջ կայ թիւրիմացութիւն և շփոթ, միւս կողմից՝ կան լուրջ սխալներ ժողովրդավարութեան տեսաբանների աշխատութիւնների մէջ: Երկու կողմից էլ, մէկը միւսի դէմ, հնչում են արդար և անարդար մեղադրանքներ:

Անհատական ազատութիւնների տեսաբանները անարդար են, երբ պնդում են, որ ընկերվարութիւնը հասարակական հաւասարութեան հարցում ճնշում է անհատի ազատութիւնը:

Ճիշտ է, որ ընկերվարութիւնը կարգաւորում է աշխատանքը ոչ միայն անհատի ազատութեան, այլ նաեւ նրա տնտեսական բարգաւաճումը ապահովելու համար: Ճիշտ է, որ ընկերվարութիւնը այդ խնդիրը լուծում է սեփականութիւնը համայնացնելու ճամբով: Բայց մի՞թէ ժողովրդավարական երկրներում գոյութիւն ունեցող զինւորական ծառայութեան օրէնքը ժխտում է ժողովրդավարութիւնը:

Ժողովրդավարութիւնը, որպէս պետական իշխանութեան համակարգերից մէկը, չի կարող գոյատեւել առանց պետական բռնութեան: Ուրեմն՝ ինչո՛ւ այդ բռնութիւնը պէտք է սահմանափակւի անհատական ազատութիւնների պաշտպանութեամբ:

Այսինքն՝ ինչո՞ւ հռչակել պետութեան ստիպողականութիւնը բոլոր բնագաւառներում, բացի մարդու ազատութիւնների ոլորտից:

Ժողովրդավարութիւնը ոչ միայն չի հակասում անհատական ազատութիւնների պաշտպանութեանը, այլ նա՛եւ միայն նա է ստեղծում այդ պաշտպանութեան համար անհրաժեշտ պայմաններ, որովհետեւ ինչպէս ասել է Կանտը, հասարակութեան մէջ ստիպողականութիւնը անհրաժեշտ է՝ ապահովելու համար շատ անձերի ազատութիւնը՝ ընդհանուր օրէնքի համաձայն:

Ուրիշ խօսքով՝ քաղաքացիների ազատութիւնը իր երաշխիքն է գտնում համերաշխութեան մէջ:

Ընկերվարութիւնը առաջարկում է համերաշխութեան իր ձեւը, որը համարում է հասարակական համերաշխութեան լաւագոյն ձեւը:

Սակայն անհատական ազատութիւնները ծայրայեղութեան հասցուած՝ առաջացնում են անիշխանութիւն, որը ոչ միայն ժխտում է ստիպողականութիւնը, այլ նաեւ համերաշխութիւնը։

Այդ անիշխանութիւնը, որը ստեղծուել է Հայաստանում, չի կարող արտայայտել ո՛չ անհատի ազատութիւնը և ոչ էլ անհատականութեան իդէալը։

Ընկերվարութիւնը հակադրում է ազատականութեանը իր սկզբունքը, որի համաձայն չի կարող հասարակութեան մէջ իրականացուել անհատի կատարեալ ազատութիւնը, եթէ հասարակութեան մէջ բացակայում է հաւասարութիւնը։

Չի կարելի անհատի համար պահանջել գեր-ազատութիւն՝ համերաշխութեան և համագործակցութեան հաշւին։

Հայաստանում այդ գեր-ազատութիւնը վայելում են մի խումբ մարդիկ, որոնց ամենեւին էլ չի հետաքրքրում ազգի ճակատագիրը, ինչը խօսում է ազգային համերաշխութեան բացարձակ բացակայութեան մասին։

Ժողովրդավարութիւնը իր հերթին կարող է մեղադրանք ներկայացնել որոշ ընկերվարական տեսութիւնների, որոնք մերժում էին ժողովրդավարութիւնը՝ որպէս դրամատիրական և քաղքենիական իշխանութեան միջոց։ Ընկերվարականներից ոմանք համարում էին, որ ժողովրդավարութիւնը ի վիճակի չէ վերացնելու շահագործումը և այդ ծայրայեղ ընկերվարականների մտահոգութիւնները այսօր արդարացւում են Հայաստանում։ Մինչդեռ, Արեւմտեան Եւրոպայի ընկերվար-ժողովրդավարական վարչակարգերը կարողացան ստեղծել ամուր համերաշխութիւն ժողովրդավարական և ընկերվարական սկզբունքների միջեւ։

Սակայն ընկերվարութեան գլխաւոր մեղքը՝ ժողովրդավարականների առջեւ՝ դա բանւոր դասակարգի թելադրանքն է (պրոլետարիատի կամ աշխատաւոր զանգւածների դիկտատուրան)։

Սակայն քննարկելով այս մեղադրանքը՝ յանգում ենք այն եզրակացութեան, որ եթէ աշխատաւոր զանգւածը կազմում է ազգի կամ պետութեան մեծամասնութիւնը, ապա՝ ժողովրդավարական սկզբունքների համաձայն, իրաւունքով կարող է թելադրել իր կամքը։ Իսկ եթէ փոքրամասնութիւն է, նա կարող է օգտւել փոքրամասնութիւնների իրաւունքներից, ինչպէս, օրինակ, կրօնական, արդիւնաբերական, կուսակցական, ազնւական և կամ էլ զինւորական փոքրամասնութիւնները։

Ընկերվարականներից շատերը համարել են, որ հնարաւոր է ձեռք բերել ժողովրդավարութիւն՝ յեղափոխական փոքրամասնութեան ուժերով։ Հաւանաբար Հայաստանում տիրող կացութեան մէջ սա միակ իրական ճանապարհն է։

Աշխատաւոր զանգւածը այլեւս Հայաստանում մեծամասնութիւն չի կազմում: Աշխատաւորներին պաշտպանող անկախ արհմիութիւնն այժմ կա՛մ գոյութիւն չունի և կամ էլ կատարում է առաջին անվստահ քայլերը, աշխատաւորները չունեն երկրի տէրը լինելու ինքնագիտակցութիւնը, գործատէրերը կա՛մ երկրի իշխանաւորներն են և կամ էլ նրանց շուրջ դառնող աւազակախմբերը:

Թւում է, թէ այս պայմաններում անպաշտպան աշխատաւորի հետ կարելի է անել ամէն ինչ: Եւ, իսկապէս, նրանց հետ վարւում են այնպէս, ինչպէս վարւում էին նախկինում ստրուկների հետ:

Սակայն Հայաստանում ստեղծւեց Անկախ Արհմիութիւն, որի առաջին իսկ քայլերը ցոյց տւեցին, թէ աշխատաւորները կարող են պաշտպանել իրենց շահերը և մտահոգութիւն պատճառել գործատէրերին:

Ապրիլի 12ին Երեւանի «Շտապ օգնութեան» առողջապահական միաւորի աշխատաւորները, աւելի քան 100 աշխատակիցներ, հաւաքւել էին իրենց սրահում, պահանջելով աշխատավարձի վճարում, որը չէին ստացել 6 ամսւայ ընթացքում: Հրաւիրւել էին «Շտապ օգնութեան» ղեկավարութիւնը, առողջապահութեան նախարարը, քաղաքապետարանի ներկայացուցիչները, Ազգային Ժողովի պատգամաւորներ և կուսակցութիւնների ներկայացուցիչներ: Աշխատաւորները յայտարարեցին, որ եթէ մի քանի օրւայ ընթացքում նրանք չստանան իրենց աշխատավարձը, ապա կը դիմեն գործադուլի:

Սկզբնական շրջանում իշխանաւորները շատ ինքնավստահ էին և նոյնիսկ յայտարարում էին՝ գործադուլ յայտարարէք, բոլորիդ աշխատանքից կը հեռացնենք և նորերին կը նշանակենք: Սակայն աշխատաւորները յամառեցին, և իշխանաւորները կորցրին իրենց ինքնավստահութիւնը և սկզբից խոստացան վճարել մէկ ամսւայ աշխատավարձ, ապա խնդրեցին, որ աշխատաւորները հրաժարւեն գործադուլ յայտարարելու մտքից: Բանը նրանում է, որ «Շտապ օգնութիւն»ը պետական հիմնարկ է, այսինքն՝ գործատէրը պետութիւնն է: Սակայն Արհմիութեան ներկայացուցիչը կոչ արեց, որ գարձադուլը յայտարարւի, և իշխանութիւնների ներկայացուցիչները աղմկող դահլիճից պարզապէս դուրս փախան:

Այս դէպքը ցոյց տւեց, որ աշխատաւորների այս դասական պայքարը իր ուժը չի կորցրել, և մէկ կէտում գործադուլ յայտարարողներին կարող են միանալ ուրիշները, և իշխանութիւնների դէմ բողոքը կարող է վերածւել համաժողովրդական շարժման:

Այս շարժումը ստեղծելու, աշխատաւորների աշխատանքային ինքնագիտակցութիւնը բարձրացնելու, աշխատաւորներին կազմակերպելու և նրանց իրաւունքները պաշտպանելու հարցում Հ.Յ.Դաշնակցութիւնը անելիք շատ

ունի։ Աւելի՛ն, եթէ Դաշնակցութիւնը իր վրայ չվերցնի աշխատաւորներին պաշտպանելու առաքելութիւնը, ուրիշ ոչ մէկը այդ բանը չի անի։

Եւ, վերջապէս, նշենք, որ ժողովրդավարութեան փիլիսոփայութիւնը նախատեսում է բաւականին սահմանափակ խնդիրների լուծում, քանզի նա անկարող է լուծել անհատի շահերից դուրս գտնուող խնդիրները։ Համարելով անհատին հասարակական գործունէութեան միակ նպատակը՝ ժողովրդավարութիւնը փաստօրէն չի զբաղւում ազգերի, խմբերի հաւաքական շահերով։ Հաւաքական շահերը և իրաւունքները ժողովրդավարութիւնը պաշտպանում է ճիշտ այնքանով, որքանով հաւաքական իրաւունքներն ազդում են մարդու իրաւունքների վրայ։ Մասնաւորապէս նա պաշտպանում է ոչ թէ ազգի իրաւունքները, այլ՝ տւեալ ազգին պատականելու մարդու իրաւունքները։ Ճիշտ այդ պատճառով էլ Հայաստանում բացարձակ անպաշտպան են մնացել տարբեր հաւաքականութիւնների իրաւունքները, ինչը իր հերթին աւելացնում է երկրում տիրող քաոսը։ Այդ քաոսը այնքան արմատական է, որ այսօր դեռեւս անկարելի է ասել, թէ, արդեօք, ժողովրդավարութիւնը և ազատ շուկան շահեցի՞ն մրցութիւնը կոլեկտիւ տնտեսվարութեան հետ։ Գուցէ մարդը աւելի ազատ է վերացական ազատութեան իմաստով, բայց ո՞ւմ է պէտք այդ ազատութիւնը, եթէ նա աշխատանք չունի և պաշտպանւած չեն նրա ազգային շահերը։

Այստեղ ի յայտ է գալիս մէկ ուրիշ թւացեալ հակասութիւն՝ ժողովրդավարութեան և ազգայնականութեան միջեւ։ Բայց այդ թւացող հակասութեան ելքը մենք պէտք է որոնենք այնտեղ, որտեղ գտանք աշխատանքի և ազատութեան հակասութեան բանալին։ Եթէ տւեալ ազգը իր երկրում մեծամասնութիւն է կազմում, ապա ժողովրդավարական, այսինքն՝ մեծամասնութեան սկզբունքի համաձայն, կարող է թելադրել երկրին իր կամքը։ Եթէ նա փոքրամասնութիւն է կազմում, ուրեմն իր իրաւունքները պէտք է պաշտպանի փոքրամասնութիւններին պաշտպանելու օրէնքներով։

Հայաստանում հայ ազգը մեծամասնութիւն է կազմում, ուստի՝ նրա ազգային կամքը կարող է պարտադրւել ամբողջ երկրին, ինչը նշանակում է, որ Հայաստանը պէտք է դառնայ ազգային պետութիւն։

2000

ԱՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ, ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՈԼԺԵՆԻՑԻՆԸ ԵՒ ՄԵՐ ԴԱՏԸ

Դոկտ. Է. Յովհաննիսեան

Վերջին ժամանակներս մարդկութեան քաղաքական կեանքի ասպարէզում հանդէս եկաւ մի երեւոյթ, որը կապւած է Ալեքսանդր Սոլժենիցինի անուան հետ և որը կարելի է որակել որպէս Սոլժենիցինի կոչ կամ Սոլժենիցինի առաջարկ։

Այդ առաջարկի էութիւնը կայանում է նրանում, որ, ըստ Սոլժենիցինի, մարդկութեան պայքարը չարիքի դէմ կրում է անհատական բնոյթ, այլ ոչ թէ կազմակերպչական։ Այդ հիման վրայ նա ժխտում է գաղափարախօսութիւնը ընդպանրապէս համարելով որ նա՝ գաղափարախօսութիւնը արդարացնում է բոլոր տեսակի չարագործութիւնները։ Համեմատելով Շեքսպիրեան չարագործ հերոսներին խորհրդային չարագործների հետ, նա գալիս է այն եզրակացութեան, որ խորհրդայինները աւելի դաժան և սարսափելի էին, որովհետեւ օժտւած էին գաղափարախօսութիւնով։

Սոլժենիցինը գրեթէ բոլոր իր աշխատութիւններում և **«Գուլագ Արշիպելագ»**ում յատկապէս անդրադառնում է անձնական պայքարին։ Նոյնիսկ նկարագրելով ստալինեան ժամանակաշրջանի բանտարկութիւնները, նա համարում է, որ ամէն մի բանտարկւող պէտք է պայքարէր կացնով, դանակով, փայտով, բայց պէտք է դիմադրէր։ Նա համարում է, որ բանտարկեալը պէտք է գոռար, երբ նրան տանում էին փողոցներով, պէտք է տանը կառուցէր **բարիկադ**ներ և այլն։

Խաղաղ պայմաններում, Սոլժենիցինը նոյնպէս դիմում է անձնական միջոցների, նա առաջարկում է ապրել առանց սուտի։ Իբր այդ միջոցը կը մերկացնի չարիքը և նա կը կանգնի մարդկութեան առջեւ ամբողջ իր թերութիւններով։ Սոլժենիցինին ուղղւած իմ բաց նամակում ես անդրադարձել եմ այս հարցերին, մի քիչ յետոյ ես կը մէջբերեմ այդ նամակը, իսկ հիմա ես ուզում եմ կանգ առնել այդ առաջարկի կամ երեւոյթի երեք կողմերի վրայ։

Առաջինը՝ առաջարկի բարոյական և իրաւաբանական կողմն է։

Երկրորդը՝ առաջարկի հոգեբանական արմատներն են։

Երրորդը՝ առաջարկի արդիւնաւէտութիւնը և այն տեղը, որը նա կարող է գրաւել ընդհանուր ազգային պայքարի մէջ։

Երեւոյթը ինքնըստինքեան նոր չէ, ոչ համաշխարհային պատմութեան և ոչ էլ հայ քաղաքական կեանքի մէջ։ Երեւոյթի գաղափարական հիմքը կազմում է այսպէս կոչւած **անարխիզմ**ը՝ անիշխանութիւնը, որը, բարեբախտաբար բա-

ւարար չափով մշակւած է փիլիսոփայական գրականութեան մէջ։ Սակայն, կարծում եմ, որ հայ ընթերցողին (յատկապէս խորհրդային հային) այդ տեսութիւնը կա՛մ շատ քիչ է ծանօթ, կա՛մ էլ մատուցւել է բաւականին աղաւաղւած ձեւով։

Այդ իսկ պատճառով, ուզում եմ կանգ առնել անիշխանութեան գաղափարի վրայ մի քիչ աւելի մանրամասն քան պահանջում է այս յօդւածը։ Չեմ կարծում, որ իմ շարադրումից **անարխիզմը** տուժի, քանզի անձամբ որոշ հակակրանքով եմ վերաբերւում այդ գաղափարին։ Կարծում եմ, որ ես էլ չպէտք է տուժեմ իմ այս խոստովանութեան համար, քանզի յայտնի է, որ առաջին և ամենափայլուն **անարխիստը** Յիսուս Քրիստոսն էր։

Չնայած նրան, որ անիշխանութեան վերաբերեալ լոյս են տեսել բազմաթիւ աշխատութիւններ, նրա մասին գոյութիւն ունեն տարակարծութիւններ։ Ոմանք անիշխանութեան մէջ տեսնում են պատմական օրինաչափութիւն և բարձրագոյն արդարութիւն, իսկ ոմանք համարում են, որ անիշխանութիւնը արդարութեան նշոյլ անգամ չի պարունակում իր մէջ և կոչւած է միայն աւերածութեան։ Այս տարակարծութիւնների զոհ չդառնալու միակ միջոցը այն է, որ ուղղակի դիմենք **անարխիզմի** հեղինակներին։

ՎԻԼՀԵԼՄ ԳՈԴՒԻՆ (1756 - 1836)

Իր ուսմունքը իրաւունքի, սեփականութեան և պետականութեան մասին Գոդւինը **անարխիզմ** չի անւանում, սակայն այդ խօսքից այնքան էլ չի վախենում։ Նա ասում է, որ անիշխանութիւնը չարիք է, բայց իշխանութիւնը, որպէս բռնութիւն, աւելի սարսափելի է։ Ըստ Գոդւինի, բարձրագոյն օրէնքը՝ համընդհանուր բարօրութիւնն է։ Այդ համընդհանուր բարօրութիւնը կապւած է մեր հոգեկան վիճակի հետ և կը մնայ անփոփոխ այնքան ժամանակ, որքան որ մարդը կը մնայ մարդ։

Հասարակայնութիւնը, ասում է Գոդւինը, ոչ այլ ինչ է, եթէ ոչ միջոց մէկ անհատին լաւագոյն ձեւով օգտագործելու համընդհանուր բարիքի համար։ Հոգեկան բարձրագոյն կատարելիութիւնը կայանում է նրանում, որ ուրիշների կատարած բարօրութիւնը մեզ երջանկացնում է ճիշտ այնպէս, ինչպէս կ'երջանկացնէր մեզ մեր կատարած բարօրութիւնը։ Համընդհանուր բարօրութեան տեսանկիւնից, Գոդւինը ժխտում է բոլոր տեսակի իրաւունքները։

Իրաւունքը այնպիսի մի հաստատութիւն է,- ասում է նա,- որի հետեւանքները կարող են կործանել մարդուն։ Եթէ սկիզբ է դրւել օրէնքների ստեղծմանը, ապա նրանք կը ստեղծւեն անվերջ։ Մարդկանց գործունէութիւնը և վարքագիծը այնքան բազմազան են, որ ամէն մի նոր դէպքի համար պէտք է սահմանել

մի նոր օրէնք, քանզի հին ցուցակում այդ դէպքի մասին ոչինչ ասւած չէր: Այն գիրքը, որի մէջ իրաւունքը արձանագրում է իր օրէնքները, օրէցօր հաստանում է և աշխարհը շատ փոքր է, որպէսզի տեղաւորի իր մէջ ապագայ մարդկութեան բոլոր օրէնքները: Իրաւական օրէնքների ահագին քանակը գալիս է ասելու, որ նրանք բոլորը կասկածելի են:

Եւ, բացի դրանից, օրէնքը ընդհանրապէս կրում է մարգարէական բնոյթ, այսինքն նա փորձում է գուշակել մարդու հնարաւոր արարքները և նախօրօք դատապարտում է նրանց: Իսկապէս մենք կատարեալ չենք,- ասում է Գոդւինը,- մենք նախանձոտ ենք, փառքի և արտաքին փայլի ստրուկներ: Սակայն ինչպիսին էլ լինի մարդկային կրքերից բխող չարիքը, ոչ մի խիստ օրէնք չի կարող հանդիսանալ չարիքի դէմ պայքարի միջոց: Այնքան ժամանակ, որքան որ անհատը գտնւում է օրէնքի ցանցում, նրա հոգեկան ուժերը և բանականութիւնը քնած են:

Ի՞նչպէս կարելի է չընդունել ոչ մի օրէնք և բոլոր արարքների համար միայն ինքը իրեն անել հաշւետւութիւն: Ոչ մի մարդասպան դեռ չի հրաժարւել իր մտադրութիւնից, նահանջելով օրէնքի առաջ:

Գոդւինը ժխտում է նաեւ պետութիւնը, համարելով որ համընդհանուր բարօրութիւնը պահանջում է փոխարինել պետական կացութիւնը մարդկանց մտերիմ հանրակացութիւնով, իրենց անձնական օրէնքների հիման վրայ: Այդպիսի անիշխանական հանրակացութիւնում ոչ մի ձեւի խոստումներ չեն կարող մարդկանց համար միասնութեան հիմք ծառայել, քանզի բարի գործերը ես պէտք է կատարեմ առանց խոստումների, իսկ չար գործի համար խոստումն էլ չի կարող ինձ պարտադրել:

Մարդկանց կարող են միացնել միայն փոխադարձ խորհրդակցութիւնները, մտորումները հասարակական օգտակարութեան վերաբերեալ: Համընդհանուր արդարութիւնը և ընդհանուր շահը մարդկանց աւելի են համախմբում, քան մամուլը, կառավարութիւնը և բռնութիւնը: Հանրութիւնները, ըստ Գոդւինի, պէտք է լինեն փոքրաթիւ և հնարաւորին չափով քիչ շփւեն մէկը միւսի հետ: Մարդկային միութիւնները, եթէ հիմնւեն բանականութեան վրայ, ծաւալւելու, իրենց շրջանակը մեծացնելու ցանկութիւնը չի առաջանայ:

Բոլոր այն չարիքները, որոնք կապւած են իշխանութեան հետ, աւելի են խորանում, եթէ ծաւալւում է պետութիւնը: Եւ, ընդհակառակն, չարիքները պակասում են, եթէ փոքրանում են իշխանութեան սահմանները թէ՛ քանակական և թէ աշխարհագրական տեսակէտից: Փառամոլութիւնը, որը ահաւոր վտանգ է առաջին դէպքում, այսինքն մեծ պետութեան դէպքում, գրեթէ բացակայում է փոքր համայնքներում: Սեփական մարզը մեծացնելու ցանկութիւնը,

հարեւան պետութիւնների և ժողովուրդների նւաճումը, բռնի ուժով իշխանութեան ծաւալումը, հիմնւած են նախապաշարումների և սխալների վրայ։

Ուժը երջանկութիւն չէ։ Խաղաղ բարեկամութիւնը աւելի ցանկալի է քան իշխանութիւնը, որից բոլորը սարսափում են և որին երկրպագում են։ Նոյն համայնքի մարդիկ պէտք է որքան հնարաւոր է շատ շփւեն իրար հետ, բայց համայնքները իրար հետ՝ ո՛չ։ Այդ դէպքում աւելորդ կը լինի բոլոր այն նուրբ պետական և դիւանագիտական գործունէութիւնը, որով մինչեւ այսօր զբաղւում են, գուցէ, մարդկութեան ամենակարող անձնաւորութիւնները։

Ժխտելով իրաւունքը, Գոդւինը ժխտում է նաեւ սեփականութիւնը։ Նրա կարծիքով, հարստութիւնների բաշխման օրէնքը հակասում է համընդհանուր բարօրութեանը։ Երբ մարդը կուտակում է հարստութիւն, աւելի քան ինքը կարող է օգտագործել, աւելի քան իր գոյութիւնից բխող պահանջն է, նա կորցնում է հոգեկան ասպարէզում որակ, իսկ մտաւոր ասպարէզում մտքի սրութիւնը։ Իր աւելցուկ հարստութիւնով նա չի կարող գնել ոչինչ, արտաքին փայլից և ուրիշների նախանձից բացի, կամ խղճուկ բաւականութիւն՝ վերադարձնել աղքատին հարստութեան մի մասը, որպէս ողորմութիւն։

Սեփականութեան անհաւասարութիւնը արգելք է հանդիսանում բարոյական կատարելութեան։ Հարուստի մօտ նա առաջացնում է սնապարծութիւն, իսկ աղքատը յարմարւում է ստրկութեան հետ, որի հետեւանքով նրա մէջ զարգանում է դաժանութիւն։

Եւ, վերջապէս, Գոդւինը համարում է, որ այդպիսի անիշխանական հասարակարգ հնարաւոր կը լինի ստեղծել յեղաշրջման միջոցով։ Սակայն,- ըստ Գոդւինի,- այդ յեղաշրջումը պէտք է հիմնւած լինի մէկը միւսին համոզելու վրայ։ Ամէն մի անձ, հասկանալով անիշխանականութեան ճշմարտութիւնը, պէտք է համոզի նրանում ուրիշներին։ Որպէսզի ամրապնդի իր այդ յեղաշրջման թեզը, նա բերում է հետեւեալ օրինակը.

Ինչո՞ւ հասարակութեան բոլոր խաւերը նոյն տեսակ գնահատական տւեցին Ամերիկայի և Ֆրանսիայի յեղափոխութիւններին, իսկ Կարլոս առաջինի դէմ ապստամբութիւնը բաժանեց մեր ժողովուրդը երկու կուսակցութիւնների։ Որովհետեւ վերջինը կատարւել էր 17րդ դարում, իսկ առաջինը 18րդ դարում, երբ փիլիսոփայութիւնը արդէն լուծել էր պետականութեան որոշ խնդիրներ և բացայայտել էր որոշ ճշմարտութիւններ և երբ Ռուսոյի, Մոնտեսկիէոյի, Սիդնէյի և Լոկի ազդեցութեան տակ մտաւորականութիւնը հասկացել էր, որ բռնութիւնը չարիք է։

Պրուդոնը իր ուսմունքը անւանում է **Անարխիզմ**:

Ըստ Պրուդոնի, մարդկութեան բարձրագոյն օրէնքը արդարութիւնն է:

Արդարութիւնը զգացմունքներով ըմբռնած մարդու արժանապատւութեան փոխադարձ պահպանումն է: Որտեղ և ում հանդէպ որ վտանգւած լինի նրա արժանապատւութիւնը, անհրաժեշտ է կանգնել նրան պաշտպան, անկախ նրանից, թէ ինչ գին է պահանջւում վճարել դրա համար:

«Ես պէտք է յարգեմ իմ մերձաւորին,- գրում է Պրուդոնը,- ճիշտ այնպէս, ինչպէս յարգում եմ ինձ, քանզի այդ ինձ թելադրում է իմ խիղճը: Ինչո՞ւ ուրիշի հանդէպ ես պէտք է ցուցաբերեմ իմ յարգանքը. նրա հարստութեա՞ն համար, նրա ուժի կամ տաղանդի՞ համար: Ոչ, այս բոլորը արտաքին են և ես պէտք չէ մարդու մէջ յարգեմ այն:

«Կամ գուցէ՞ ես պէտք է յարգեմ նրան, որովհետեւ նա է ինձ յարգում: Ոչ, արդարութիւնը աւելի բարձր է, քան այդ շուկայական հիմքը: Ես յարգում եմ մերձաւորի մէջ ոչ թէ այն, ինչ տւել է նրան բնութիւնը, կամ ա՛յն, ինչ նա ձեռք է բերել բախտի բերումով, ոչ թէ որովհետեւ սպասում եմ նրանից հատուցում, այլ նրա մարդկային յատկութիւնները:

«Արդարութիւնը միաժամանակ ե՛ւ իրականութիւն է, ե՛ւ գաղափար՝ իտէա: Արդարութիւնը ամենաբարձր հոգեկան ուժն է, որի շնորհիւ մենք դառնում ենք հասարակական էակներ: Սակայն նա միայն ուժ չէ, այլեւ գաղափար է, յարաբերակցութիւն, հաւասարում: Որպէս ուժ նա ընդունակ է զարգանալու և այդ զարգացման մէջ է կայանում մարդկութեան դաստիարակութիւնը: Որպէս գաղափար, նա չի պարունակում իր մէջ ոչ մի փոփոխութիւն և ոչ մի հակասութիւն, նա անփոփոխ է ինչպէս, բոլոր օրէնքները և բոլոր օրէնքների պէս՝ մատչելի բոլորի համար: Արդարութեան յատկութիւնը այնպիսին է, որ նա ներշնչում է հաւատք, որը ոչ մի տեսութիւն չի կարող հերքել և մերժել»:

Պրուդոնը չի ժխտում իրաւունքը, սակայն յանուն արդարութեան նա հրաժարւում է պետական օրէնքներից: «Պետութիւնը,- ասում է նա,- հրապարակում է այնքան օրէնքներ, որքան որ գոյութիւն ունեն հասարակական շահեր: Բայց քանի որ այդ շահերի թիւը հասնում է ահաւոր չափերի, ապա օրէնսդրական մեքենան պէտք է անվերջ աշխատի: Կարկուտի նման ժողովրդի գլխին թափւում են օրէնքներ և հրամաններ: Քաղաքական հողը շուտով ծածկւած կը լինի թղթի շերտերով, որը հետագայում երկրաբանները կ'անւանեն թղթային **ֆորմացիա**յի կացութաձեւ:

«Սակայն ի՞նչ արժէք ունեն օրէնքները այն մարդու համար, որ ինքնուրոյն մտածում է և պատասխանատու է ինքն իր առջեւ: Ի՞նչ արժէք ունեն օրէնքնե-

րը այն մարդու համար, որը ուզում է ազատ լինել և որը զգում է, որ ընդունակ է լինել այդպիսին»:

«Ես պատրաստ եմ,- շարունակում է Պրուդոնը,- մտնել բանակցութիւննե-րի մէջ, բայց չեմ ուզում ունենալ և ճանաչել ոչ մի օրէնք»: Ըստ Պրուդոնի, ընդունելի է միայն մի իրաւունք, այն է՝ պայմանագրերը պէտք է կատարուեն:

«Որպէսզի ես լինեմ ազատ,- ասում է նա,- և կատարեմ միայն իմ սեփական օրէնքները, հասարակութիւնը պէտք է կառուցւի պայմանագրի վրայ: Պայմա-նագրի գաղափարը բոլոր տեսակի քաղաքականութիւնների հիմք պէտք է ծա-ռայի»: Եւ քանի որ Պրուդոնը ճանաչում է միայն պայմանագրերը կատարելու իրաւունքը, նա ժխտում է պետութիւնը, որը իշխում է նաեւ նրանց վրայ, որոնք չեն կնքել պետութեան հետ ե՛ւ ոչ մի պայմանագիր: Նա համարում է, որ մարդ-կանց ղեկավարումը մարդկանց միջոցով՝ ստրկութիւն է:

«Ոչ մի կուսակցութիւն, ոչ մի հեղինակութիւն, ոչ մի իշխանութիւն, միայն քաղաքացիների բացարձակ ազատութիւն, սա է ամբողջ իմ հասարական և քաղաքական դաւանանքը»,- ասում է Պրուդոնը: Նա հերքում է սեփականու-թիւնը և համարում է, որ պետութիւնը վերանալուց յետոյ մարդիկ կը հա-մախմբուեն համայնքներում, որոնք հիմնուած կը լինեն պայմանագրերի վրայ և կը կոչուեն **անարխիա**: Գոդւինի նման, Պրուդոնը համարում է, որ արդարու-թիւնը պահանջում է ուղեղների յեղաշրջում: Ոչինչ պէտք չի անել, միայն հա-մոզել մարդկանց, որ անիշխանութիւնը բարձրագոյն արդարութիւն է:

ՄԱԿՍ ՇՏԻՐՆԵՐ (1806 - 1856)

Ըստ Շտիրների, բարձրագոյն օրէնքը անձնական բարեկեցութիւնն է: «Իմ վերաբերմունքը դէպի աշխարհը հետեւեալն է,- ասում է նա,- ես չեմ անում ոչինչ յանուն Աստծու, չեմ անում ոչինչ յանուն մարդու, ես ամէն ինչ անում եմ իմ անձի համար: Այնտեղ, որտեղ աշխարհը կանգնում է իմ ճանապարհին, ես ոչնչացնում եմ նրան, որպէսզի գոհացնեմ ինձ: Դու ինձ համար ոչ այլ ինչ ես, եթէ ոչ ուտեստեղէն, ճիշտ այնպէս, ինչպէս ես քեզ համար: Ես էլ սիրում եմ մարդկանց, բայց ես սիրում եմ նրանց ինձ համար, որովհետեւ սէրը դարձնում է ինձ երջանիկ, որովհետեւ դա ինձ դուր է գալիս և որովհետեւ սէրը բնական է»:

Անձնական բարեկեցութեան տեսանկիւնից, Շտիրները ժխտում է իրա-ւունքը, պետութիւնը և սեփականութիւնը: «Ես պետականութեան թշնամի եմ,- ասում է նա,- համընդհանուր բարօրութիւնը կարող է լինել բարձր, իսկ իմը՝ ոչ, պետութիւնը կարող է փայլել, իսկ ես ստիպւած կը լինեմ քաղցած մնալու:

Բոլոր սեփականութիւնների վրայ ես ունեմ իրաւունք: Եթէ ուժ ունենամ, ես ձեռք կը բերեմ բոլորը: Ուրեմն իմը չէ միայն ա՛յն, ինչ իմ ուժերից վեր է»:

ՄԻԽԱՅԻԼ ԲԱԿՈՒՆԻՆ (1814 - 1876)

«Բարձրագոյն օրէնքը,- ըստ Բակունինի,- մարդկութեան զարգացումն է ոչ կատարեալ կեցւածքից դէպի կատարեալը:

«Զարգացումը ինքնըստինքեան նշանակում է մեկնակէտի ժխտում: Պատմութիւնը ժխտում է մարդու կենդանական սկզբունքը և զարգացնում է նրա մէջ մարդկայինը: Մեր ետեւում կանգնած է մեր կենդանական կացութիւնը, իսկ առաջում՝ մարդկայինը:

«Ազատութիւնը և երջանկութիւնը պատմութեան վերջումն են: Պատմութիւնը կ'աւարտուի մի այնպիսի հասարակարգով, որտեղ չի լինի պետութիւն, իրաւունք և սեփականութիւն: Բոլոր այդ հաստատութիւնները անհրաժեշտ են միայն զարգացման ցածր աստիճանի վրայ»:

Շատ հարցերում Բակունինը յարում է մարքսիստական գաղափարախօսութեանը, թէպէտ ինքը իր մասին ասում է. «Ես կոմունիստ չեմ, այլ **կոլեկտիւիստ եմ**»:

Բակունինը համարում է, որ պատմութեանը պէտք է օգնել, որ արագացնի իր ընթացքը յեղաշրջումով: Յեղաշրջումի տակ Բակունինը հասկանում էր զգացմունքների պայթում, որի շնորհիւ կ'ոչնչանայ այն ամէնը, որ այսօր կոչւում է կարգ ու կանոն: Որպէսզի յեղաշրջումը յաջողութեամբ աւարտուի, նա պէտք է ուղղուած լինի ոչ թէ մարդկանց, այլ հաստատութիւնների դէմ. առաջին հերթին՝ պետութեան:

ԻՇԽԱՆ ՊԵՈՏՐ ԿՐՈՊՈՏԿԻՆ (1842 - 1905)

Բարձրագոյն օրէնքը, ըստ Կրոպոտկինի, մարդկութեան զարգացումն է նւազ երջանկութիւնից դէպի աւելի երջանիկ կեանքը: «Իսկական կարգապահութիւնը,- ասում է Կրոպոտկինը,- ուժերի հաւասարակշռութիւնն է: Հասարակութիւնը էակների համախմբւածութիւն է, որոնք ջանում են բաւարարել ամէն մէկի պահանջը և միասնական ուժերով ապահովել ամբողջ համայնքի բարեկեցութիւնը»:

Կրոպոտկինը ժխտում է իրաւունքը, պետութիւնը և մասնաւոր սեփականութիւնը: «Օրէնքը,- ասում է նա,- չի կարող յաւակնութիւն ունենալ յարգանք վայելելու: Օրէնքը արհեստական խառնուրդ է հասարակութեանը օգտակար սովորոյթների (որոնք կը կատարւէին նաեւ առանց օրէնքի) այն սովորութիւն-

ների հետ, որոնք օգտակար են միայն իշխանաւորներին և վնասակար են մեծամասնութեան համար: Բոլոր օրէնքները, որոնք ուղղուած են յանցագործութիւնների դէմ, բոլորովին աւելորդ են, քանզի չեն պակասեցնում յանցագործութիւնների թիւը: Ես համոզուած եմ,- ասում է Կրոպոտկինը,- որ, եթէ յայտարարուէր, թէ մարդասպանութիւնը արգելուած չէ, սպանութիւնների թիւը դրանից երբեք չի աւելանայ: Ընդհակառակն, գուցէ նոյնիսկ պակասի, որովհետեւ այժմեան բանտերը դաստիարակում են նորանոր մարդասպաններ»:

Ինչպէս Բակունինը, Կրոպոտկինը եւս համարում էր, որ ապագայ անիշխանական հասարակութիւնը պէտք է ստեղծւի յեղաշրջումի միջոցով:

ԲԵՆԻԱՄԻՆ ՏՈՒԿԵՌ (1854 – 1920)

Ըստ Տուկեռի, բարձրագոյն օրէնքը անձնական շահն է, որից բխում է հաւասար ազատութեան օրէնքը բոլորի համար:

«Ի՞նչ է նշանակում անձնական շահ,- ասում է Տուկեռը: Իմ շահը այն ամէնն է, որ ինձ ձեռնտու է: Նա ընդգրկում է ոչ միայն ստոր, այլեւ բարձրագոյն եսասիրութիւնը: Մեր բնական պահանջների միակ չափանիշը ուժն է: Ամէն մարդ և ամէն խմբաւորում, լինի դա չինական ընդյատակեայ միութիւն թէ Միացեալ Նահանգների **Կոնգրես**ը, լինի դա Նապոլէոն թէ Ռոմանով, թէ ուղղակի մի ինչ որ մարդ, իրաւունք ունի սպանելու, ստրկացնելու և ամբողջ աշխարհին տիրելու, եթէ նա ունի դրա համար համապատասխան ուժ:

«Հասարակութիւնը իրաւունք ունի ճնշելու անձին և անձը իրաւունք ունի ճնշելու հասարակութեանը այն չափով, ինչ չափով որ ուժեղ է ամէն մի կողմը»:

Այստեղից Տուկեռը եզրակացնում է, որ, իրենց ուժերը արտայայտելու համար, ամէն մէկը պէտք է ունենայ ազատութեան համար հաւասար իրաւունքներ: Եթէ գործի հաւասար ազատութեան իրաւունքը, ամէն մի անձի իշխանութիւնը կը պարփակւի տրամաբանական սահմանների ներսում:

Տուկեռը հերքում է պետութիւնը, համարելով որ բոլոր ձեւի իշխանութիւնները չարիք են և այդ չարիքը չի պակասում նրանից, որ իշխողները մեծամասնութիւն են կազմում:

Տուկեռը սակայն չի ժխտում սեփականութիւնը, համարելով որ դա պատկանում է անձի շահերին և անձեռնմխելի է:

Բարձրագոյն օրէնքը, ըստ Տոլստոյի, սէրն է, որից բխում է չարին չդիմադրելու օրէնքը: Տոլստոյի **անարխիզմ**ը հիմնուած է քրիստոնէութեան վրայ և փաստօրէն Յիսուսի քարոզած անիշխանութիւնն է:

Սակայն Տոլստոյը մերժում է եկեղեցին որպէս հաստատութիւն և, բացի դրանից, ժխտում է Յիսուսի աստուածային սկզբունքը, համարելով նրան միայն մարդ: Նա փորձում է պահպանել քրիստոնէութեան բարոյականութիւնը և գաղափարը, բայց փոխարինելով հաւատքը բանականութեամբ: Թէ հաւատքներից ո՞ր մէկը պէտք է համարել ճշմարտութիւն, կարող է որոշել միայն բանականութիւնը, մտածում էր Տոլստոյը: Նա ասում էր. «Եթէ բուդդայականը ծանօթանայ մահմեդականութեան հետ և շարունակի դաւանել Բուդդային, նրան անկասկած պէտք է համարել բուդդայական ոչ թէ հաւատքով, այլ տրամաբանութեամբ»:

Հիմնուելով Յիսուսի ուսմունքի վրայ, Տոլստոյը փորձում է նոր իմաստ տալ սէր հասկացողութեանը: «Եթէ մարդը ասում է որ սիրում է իր կնոջը, երեխային կամ ընկերոջը,- գրում է Տոլստոյը,- նա դրանով միայն ասում է, որ իր կեանքում կնոջ, երեխայի կամ ընկերոջ ներկայութիւնը աւելացնում է իր անձնական երջանկութիւնը: Յիսուսի քարոզած սէրը սակայն իր մէջ չի պարունակում անձնական շահ, ընդհակառակն, նա զոհաբերում է անձը, հրաժարւում է անձից, յանուն մերձաւորի, յանուն մարդկութեան: Նա ստեղծում է այնպիսի մի հոգեկան վիճակ, որ ուզում ես սիրել բոլորին, ե՛ւ մերձաւորիդ, ե՛ւ ծնողներիդ, ե՛ւ եղբայրներիդ, ե՛ւ թշնամիներիդ, ե՛ւ չարը, ե՛ւ բարին, ե՛ւ շանը, ե՛ւ ծառը, ե՛ւ խոտը, ուզում ես միայն մի բան, որ բոլորը երջանիկ լինեն, իսկ ամենաշատը ուզում ես ինքդ անես այնպէս, որ բոլորը գոհ լինեն և պատրաստ ես դրա համար տալ քո կեանքը: Եւ հէնց այդ սէրն է, որ մարդու վարքագծի հիմքը պէտք է ծառայի»:

Տոլստոյը համարում է, որ ոչ մի օրէնք չի կարող փոխարինել քրիստոնէական հինգ պատուիրանները:

Առաջինը՝ բոլորի հետ եղիր խաղաղութեան մէջ, իսկ եթէ խախտած է այն, ապա գործադրիր բոլոր ճիգերդ, որպէսզի վերականգնես այն:

Երկրորդ՝ տղամա՛րդ վերցրու մէկ կին, և կի՛ն՝ մէ՛կ տղամարդ, ու մի հրաժարուէք մէկդ միւսից, ոչ մի առիթով:

Երրորդ՝ մի տուր ոչ մի խոստում:

Չորրորդ՝ կուլ տուր վիրաւորանքներդ և չարութեան դիմաց մի արա չարութիւն:

Հինգերորդ՝ ժողովրդական շահերից դրդուած, մի խախտիր բարեկամութիւնդ ե՛ւ ոչ մէկի հետ։

Պետականութեան մասին Տոլստոյը արտայայտւել է այսպէս. «Ես չեմ կարող ապացուցել պետութեան ոչ անհրաժեշտութիւնը և ոչ էլ վնասը։ Միայն գիտեմ, որ մէկ կողմից ինձ այլեւս պետութիւն հարկաւոր չէ, իսկ միւս կողմից ես ի վիճակի եմ կատարելու այն գործերը, որոնք անհրաժեշտ են պետութեան գոյութեան համար»։

* * *

Այսպիսով, բոլոր այն անիշխանական տեսութիւնների հիմքում դրւած է արդարութեան մի որեւէ գաղափար, որը ինձ համար վարքագծի աղբիւր է հանդիսանում։ Սակայն ո՛չ բոլոր հեղինակներն են յստակ ընդգծում, որ այդ արդարութիւնը մարդուց անկախ է և գտնւում է նրանից դուրս, ուստի մեր պարտականութիւնն է ճանաչել այն և նրան ծառայելը դարձնել մեր գլխաւոր նպատակը։

Հակառակ պարագայում, երբ անձը արդարութիւնը դարձնում է իր սեփականութիւնը, երբ նա համարում է, որ ինքը կարող է ձեւակերպել արդարութեան չափանիշները, ի յայտ է գալիս մի վտանգաւոր կացութիւն, որտեղ արդար կարող են ճանաչել ե՛ւ աւազակները, ե՛ւ Հիտլերները, ե՛ւ Ստալինները և նոյնի՛սկ Թալէաթները, որոնք իրենք իրենց համար ստեղծել էին արդարութեան օրէնքները։

Եւ ահա քաղաքական ասպարէզում յայտնւում է մի նոր փայլուն անձնաւորութիւն, Ալեքսանդր Սոլժենիցինը, որը ոչ միայն զարգացնում է անիշխանական տեսութիւնը, այլեւ արիւաբար անձամբ կիրառում է այդ տեսութիւնը։ Ինչ խօսք, որ Սոլժենիցինի մտորումները հիմնականում ուղղւած են խորհրդային վարչակարգի դէմ, սակայն նրա տեսակէտները ունեն նաեւ համամարդկային նշանակութիւն։ Այժմ ես ուզում եմ մէջբերել իմ նամակը, որը ուղղել եմ Սոլժենիցինին և որտեղ արտայայտել եմ իմ կարծիքը որոշ հարցերի վերաբերեալ։ Նամակս մէջբերում եմ թարգմանաբար ռուսերէնից և մի փոքր կրճատումներով։

«Թանկագին Ալեքսանդր Իսաեւիչ,

«Չեմ ուզում սկսել ձեր արիութեան և քաղաքացիութեան հանդէպ իմ հիացմունքը արտայայտելուց։ Դրանից երեւի դուք կշտացած էք մինչեւ կոկորդ և այն մարդն էլ չէք, որ դրա կարիքը զգաք։ Անմիջապէս անցնեմ նամակիս էութեանը։ Այսօր դուք Ռուսաստանի ազատութեան խորհրդանիշն էք, այդ պատ-

ճառով ձեր ամէն մի խօսքին ուշի ուշով հետեւում են Ռուսաստանի բոլոր ազատասէրները։ Վերջերս, այդ ազատասէրների շարքին դասւում են Ռուսաստանի բոլոր ժողովուրդների ներկայացուցիչները։ Դասւում եմ նրանց շարքին և ես։ Մէկ տարի առաջ, ես դուրս եկայ Խորհրդային Միութիւնից (փախայ), աւելի ճիշտ՝ Խորհրդային Հայաստանից։

Մասնագիտութեամբ **կիբերնետիկոս** եմ, **տեխնիկական** գիտութիւնների դոկտոր, Կոմունիստական կուսակցութեան նախկին անդամ, Քաղաքական Խորհրդի նախկին **դեպուտատ**, Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի գիտական հիմնարկներից մէկի նախկին ղեկավար։ Ես դիմում եմ ձեզ երկու հարցով և մէկ պնդումով։ Ես պնդում եմ, որ դուք անիշխանական էք, ընդ որում՝ ինձ յայտնի անիշխանականներից ամենափայլունը, քանզի դուք ոչ միայն տեսաբան էք, այլեւ տեսութեան անձնազոհ կիրառողը։

«Դժբախտաբար շատերի համար, իսկ Խորհրդային Միութիւնում բոլորի համար, անիշխանական բառը հնչում է որպէս վիրաւորանք։ Համոզւած եմ, որ դուք ինձ այդպէս չէք հասկանայ։ Սակայն առաջին հերթին ես ուզում եմ ապացուցել իմ պնդումը։ Փորձեմ այդ անել, համեմատելով ձեր ուսմունքը (մի ամաչէք այս բարձր խօսքից, շատերը նրանցից, ում վերագրում են ուսմունք հասկացութիւնը, շատ աւելի քիչ են դրան արժանի, քան դուք) ուրիշ յայտնի անիշխանականների ուսմունքի հետ։ … (Ես բաց եմ թողնում այն հատւածը, որտեղ բերւած են անիշխանականների ուսմունքները)։

«Գողւինը բարութիւնը վերագրում էր այնպիսի մարդկանց, որոնք դեռ մարդ են համարւում։ Դուք գիտական խստութեամբ գծում էք չարագործութեան սահմանները, որից յետոյ բացառում է վերադարձը մարդկութեան ընտանիքի մէջ։ Պրուդոնը ժխտում է կուսակցութիւնները և իշխանութիւնը։ Դուք ժխտում էք գաղափարախօսութիւնը և ուսադիրների իշխանութիւնը։ Բոլոր անիշխանականները առաջարկում են կատարելագործել անձը։ Դուք առաջարկում էք «ապրել առանց ստի»։ Այդ միջոցը (ես ձեզ հետ միանգամայն համաձայն եմ) կը մերկացնի անարդար վարչակարգը և նա կը կանգնի մարդկութեան առաջ, բացելով իր սարսափելի դէմքը։

«Այ հիմա ես ուզում եմ ձեւակերպել իմ առաջին հարցը։

«Չէ՞ք կարծում դուք արդեօք, որ առանց ստի ապրելը միայն ազնիւ մարդու ինքնահաստատման միջոց է, սեփական արդարութիւնով ինքնագոհունակութեան միջոց, պարտքի կատարում Աստծու և մարդկութեան առջեւ և, եթէ կը ցանկանաք, Աստծու արդարութեան մէջ տեղ գրաւելու դիմում։ Թէ՞ դուք կարծում էք, որ այդ միջոցով հնարաւոր է վերակառուցել աշխարհը, դարձնել այն աւելի արդար և մարդուն յարմար, վերացնել չարիքը և վերականգնել հասարակական ներդաշնակութիւնը։

«Ինչո՞ւ էք դուք համարում, որ, մերկացնելով անարդար վարչակարգը, մենք կարող ենք ստիպել նրան դառնալ աւելի արդար: Իսկ եթէ այդ վարչակարգը պոռնի՞կ է, որը կարող է անամօթաբար և շատ հանգիստ վազվզել փողոցներով լրիւ մերկ վիճակում: Գուցէ այդ դէպքում անհրաժեշտ է նաեւ ոստիկանութիւն, որը կ'արգիլէ մերկացած դուրս գալ փողոց: Կամ գուցէ անհրաժեշտ է բռնաբարել այդ մերկացածին, որ ծնւի մի ինչ որ նոր բան, թէկուզ և պոռնիկ մօրից: Բայց ո՞վ կարող է անել այդ ամէնը, եթէ դուք ժխտում էք գաղափարախօսութիւնը ընդհանրապէս (թէպէտ ես կարծում եմ, որ ձեզ չյաջողուեց խուսափել գաղափարախօսութիւնից, չէ՞ որ անիշխանութիւնն էլ գաղափարախօսութիւն է):

«Բայց ինձ անհանգստացնում է եւս մէկ բան: Արդեօ՞ք կը մերկանայ վարչակարգը, եթէ մարդիկ հրաժարւեն ստից: Արդեօ՞ք այդքան շատ են ստախօսները: Իսկ ի՞նչ անել, եթէ մարդիկ ժողովների և տօնակատարութիւնների ժամանակ չեն ստում: Ի՞նչ անել, եթէ խաբւած, կուրացած, տհաս, նրանք անկեղծօրէն տանում են առաջնորդների նկարները և անկեղծ արցունքներ են թափում Լենինի դամբարանում, եթէ անկեղծօրէն բացագանչում են «ՈՒՌՈՒԱ» և բարձրացնում են ձեռքերը քւէարկելիս: Ի՞նչ անել այդ դէպքում: Չէ՞ որ այդ դէպքում սրանք էլ ապրում են առանց ստի: Չէ՞ որ դուք էլ մի ժամանակ ԱՆԿԵՂՏՕՐԷՆ ստիպում էիք գերմանացուն կրել ճամպրուկը (այս դէպքի մասին պատմում է Սոլժենիցինը «**Արշիպելագ**»ում և ես դրա մասին գրել եմ **«Թերթելով Գուլագ Արշիպելագ»**ի էջերը յօդւածում. Է.Յ.):

«Բայց դուք վերածնւեցիք: Վերածնւեցիք ինքնուրոյն, եթէ չհաշւենք Աստծու օգնութիւնը: Շատե՞րն են արդեօք դրան ընդունակ: Խնդրում եմ, խուսափէք այն հիւանդութիւնից, որը կոչւում է «հանճարի հիւանդութիւն»: Այդ հիւանդութիւններով յաճախ տառապում են մեծ գիտնականները: Նա առաջանում է շատ աննկատ կերպով: Մեծ գիտնականը, սուզւած մեծ խնդիրների մէջ, ժամանակը խնայելու համար գցում է իր օգնականներից մէկին մի խնդիր, թէ բարի եղէք, Պետր Իւանովիչ, լուծել ինձ համար այս խնդիրը մինչեւ Ուրբաթ օրը: Ինքը գիտնականը կը լուծէր այդ խնդիրը մէկ ժամւայ ընթացքում: Իսկ խեղճ Պետր Իւանովիչը չի լուծի և մէկ տարում: Իսկ եթէ լուծի, ապա իսկոյն կը ներկայացնի գիտական կոչումի, քանզի շատ դժւար էր նրա համար այդ խնդիրը:

«Ձեզ էլ էժան չնստեց ձեր վերածնունդը: Սակայն հիմա, վերածնւած, ընդունակ արիութեան և զոհաբերութիւնների, օժտւած մեծ գրողի տաղանդով, մի պահանջէք ձեր ժողովրդից աւելին, քան ընդունակ է տալու: Այսինքն պահանջէք, բայց սովորեցնելուց յետոյ: Իսկ եթէ ձեզ յաջողւի սովորեցնել մեզ լինել միշտ արդար, առանց գաղափարախօսութեան և կազմակերպութիւնների, եթէ դուք

կը սովորեցնէք մեզ ոչ միայն մերկացնել, այլեւ շարունակել գործը, այն ժամանակ մարդկութիւնը իսկապէս կը խոնարհի ձեր առջեւ։

«Իմ երկրորդ հարցը վերաբերւում է ազգային խնդիրներին։ Յաճախ չէ, որ Դուք արտայայտւում էք այդ հարցի վերաբերեալ։ Սակայն երկու անգամ, յամենայն դէպս, Դուք անդրադարձաք այդ հարցին։ Ձեր Նոբելեան մրցանակի ճառում և խորհրդային առաջնորդներին ուղղուած ձեր նամակում։ Բայց որպէս Ռուսաստանի ազատութեան խորհրդանիշ, որպէս աշխարհի քաղաքացի, որպէս արդարութեան և մարդու իրաւունքների պաշտպան, Դուք պարտաւոր էք ասելու աւելին։ Այստեղից էլ առաջացաւ իմ երկրորդ հարցը,- Համարո՞ւմ էք Դուք, որ ապագայ Ռուսաստանից, արդարեւ, պէտք է անջատւեն այն հանրապետութիւնները, որոնք երազում են պետական, տնտեսական և մշակութային ինքնուրոյնութեան մասին։

«Ես կարծում եմ, որ այդ հարցը այսօր ունի շատ աւելի մեծ նշանակութիւն, քան շատերը կարծում են։ Ինչո՞ւ նրանում, ինչ այսօր կոչւում է այլախոհութիւն և դեմոկրատական շարժում, չեն մասնակցում հանրապետութիւնները։ Ինչո՞ւ ազգերը կա՛մ լռում են, կա՛մ խօսում են ուրիշ բաների մասին։ Յամենայն դէպս, ոչ նրա համար, որ պակասում է արիութիւնը և ոչ էլ նրա համար, որ հասունացած չեն ազատութեան գաղափարը ընկալելու համար։

«Այստեղ ես կարող եմ խօսել միայն իմ ժողովրդի մասին։ Եթէ վերադառնանք ձեր չարը մերկացնելու գաղափարին, ապա հաւատացէք ինձ, Հայաստանում վարչակարգը արդէն վաղուց կանգնած է լրիւ մերկ։ Բոլորը (ես կշռում եմ իմ խօսքերը), բոլորը, առանց բացառութիւնների, սկսած հանրապետութեան Կենտկոմի աշխատողներից և վերջացրած վերջին բանւորով, հասկանում և տեսնում են վարչակարգի աղտոտութիւնը։ Տեսնում են նոյնիսկ նրանք, ովքեր օգտւում են այդ արատներից։ Այնուամենայնիւ, Հայաստանի այլախոհները (պատկերացրէք, կան է՛ւ այդպիսիները և նոյնիսկ շատ։ Իսկ չգիտենք մենք նրանց մասին միայն այն պատճառով, որ նրանց նետում են բանտերը, առանց աղմուկի, և չկան արտասահմանցիներ, որ նրանց համար բարեխօսեն), ելնելով պատմական դառը փորձից, շատ զգոյշ են հետեւում այն դէպքերին, որոնք կապւած են Սախարովի և Ձեր անւան հետ։

«Այդ հարցում նրանք միայն օտար դիտողների դերումն են։ Ինչո՞ւ։ Բանը նրանումն է, որ իմ ժողովուրդը մօտակայ անցեալում, ղեկավարւելով արդարութեան չափանիշներից, յաճախ նետում էր իրեն ազատութեան համար մղող պայքարի կրակների մէջ, ո՛չ միայն սեփական նպատակների համար։ Մենք գնացինք Երիտթուրքերի հետ՝ Աբդուլ Համիդին գահից գցելու և գցեցինք։ Ֆրանսացիների հետ մենք գնացինք ազատագրելու Կիլիկիան և ազատագրեցինք։ Ռուս սոցիալ-դեմոկրատների հետ մենք գնացինք ցարը տապալելու և

տապալեցինք: Եղբայրական ընտանիքում մենք գնացինք Հիտլերին ջախջախելու և ջախջախեցինք, իսկ հայկական Թամանեան զօրամասը հասաւ մինչեւ Բերլին: Բայց ամէն անգամ, երբ ցրտում էր յեղափոխական կամ պատերազմական մշուշը, մենք տեսնում էինք մեր կիսամեռ ժողովուրդը և հայրենիքը:

«Իմ ժողովուրդը յոգնել է: Բայց ոչ թէ յոգնել է պայքարից, այլ կասկածելի միացեալ պայքարներից, որտեղ զոյութիւն չունի համոզւածութիւն, որ թափւած արիւնը հաշւեյարդարի պահին կը թափւի ՄԵՐ պատմական ջրաղացի քարի վրայ:

«Եւ Հայաստանի այլախոհները, քաղաքական վերլուծութիւններից և տաք վէճերից յետոյ, ի վերջոյ մշակեցին իրենց համար ուղեգիծ,- Մենք չենք ստեղծել բռնակալ վարչակարգը և մենք չէ, որ այն պէտք է դեմոկրատացնենք: Ինչո՞վ կը վերջանայ դեմոկրատական շարժումը և ի՞նչ է նա մեզ խոստանում, մենք չգիտենք: Բայց գիտենք, որ ամենից շատ կը տուժեն սկզբից այն մասնակիցները, որ ամենաթոյլն են և ամենա**ակտիւ**ը, այսինքն մենք՝ հայերս: Եթէ ամբողջ Հայաստանն իսկ բարձրանայ վարչակարգի դէմ, միեւնոյն է, նրա գլխից մի մազ անգամ չի ընկնի:

«Եւ, ընդհակառակն, եթէ մենք բոլորս պաշտպան կանգնենք վարչակարգին, նա դրանից ոչ կը լաւանայ և ոչ էլ կը հզօրանայ: Ուրեմն լինենք անտարբեր նրա հանդէպ, տալով Կեսարինը Կեսարին, իսկ Աստծունը՝ Աստծուն: Բայց մենք համոզւած ենք, որ շուտ կամ ուշ վարչակարգը կը կործանւի և մեր խնդիրն է լուռ պատրաստւել այդ պահին, որպէսզի յետոյ, դիւանագիտական սակարկութիւնների ժամանակ, քաղաքական շուկայում կարենանք առնել որքան կարելի է մեծ կտոր: Ահա և ամբողջ ուղեգիծը: Համաձայնւէք ինձ հետ, բաւական ստոր ուղեգիծ է, բայց քաղաքականօրէն ճիշտ (երեւի այնպէս է դասաւորւել, որ քաղաքականութեան մէջ ստորութիւնը անհրաժեշտ է):

«Դժւար է այսօր հային, բազմադարեան քրիստոնէական աւանդոյթներով, բարձր մշակոյթով և շռայլ սրտով, յարմարւել այդ մաքիաւելիզմին: Դժւար է մեզ բոլորիս: Որքա՛ն կը ցանկանայինք ապրել առանց ստի: Բայց, ի՛նչ արած, եթէ պատմութիւնը սովորեցրել է մեզ ստել:

«Իսկ որքա՛ն լաւ կը լինէր, եթէ այսօրուա՛յ դեմոկրատները պարզ յայտարարէին, որ նրանք դէմ են կայսրութեանը, որ նրանք կողմնակից են մայր Ռուսաստանի բաժանմանը: Որ բոլոր այդ հանրապետութիւնները և **տոցիալիս-տ**ական երկրները խանգարում են իրենց, ռուսներին, արտայայտել իրենց իսկական մեծութիւնը: Որ այդ մեծութիւնը Ռուսաստանի տարածութիւններով չի որոշւում, այլ ժողովրդի հոգեկան հարստութիւններով:

«Եւ, ելնելով արդարութիւնից և հէնց ռուս ժողովրդի շահերից, անհրաժեշտ է այն մնացածներին ազատ արձակել, պարզապէս դուրս անել, այլ ոչ թէ խօսել

կասկածելի ինքնորոշման իրաւունքների մասին։ Իսկ եթէ շատ ենք ուզում խօսել իրաւունքների մասին, ապա խօսենք ամէն մի պետութեան իրաւունքի մասին, կրկին խնդրելու որ Ռուսաստանը ընդունի նրան իր կազմի մէջ։ Եւ եթէ մեզ շատ դժւար կը լինի, կը խնդրենք, մի կասկածէք։

«Այ այդպիսի դեմոկրատների հետ մենք կրկին կը նետւենք կրակի մէջ։ Եւ ամէն մի հանրապետութիւն կը ծնէր իր Սախարովին (Ձեզ՝ մի քիչ դժւար է, չափազանց մեծ է Ձեր տաղանդը)։ Գուցէ այդ ժամանակ իսկապէս Ռուսաստանում հալչէր սառոյցը և վառւէր ազատութեան կրակը։ Ահա թէ ինչու ես համարում եմ Ձեր պատասխանը իմ երկրորդ հարցին չափազանց կարեւոր։ Գուցէ ձեր պատասխանից է կախւած, թէ կարո՞ղ է դեմոկրատական շարժումը ընդգրկել Ռուսաստանի մի ամբողջ կէսը։ Ես վերջացրի։

«Ես հասկանում եմ, որ դուք չափազանց զբաղւած մարդ էք և ամենեւին էլ չեմ ուզում, որ Դուք պատասխանէք իմ հարցումներին։ Միայն խնդրում եմ, որեւէ ժամանակ, որեւէ յօդւածում կամ գրքում անդրադառնաք այս հարցերին այն խորութեամբ և գեղարւեստական տաղանդով, որին այսօր գուցէ ընդունակ էք միայն Դուք։ Խնդրում եմ ներէք, որ ես չկարողացայ մնալ անկողմնակալ հարցնողի դերում, այլ փաստօրէն արտայայտեցի իմ տեսակէտը։ Հիմա Դուք գիտէք, թէ ինչպիսի պտասխաններ ես կ'ուզէի ձեզանից ստանալ։ Բայց ուրիշ շատ մարդիկ էլ կ'ուզէին ստանալ ձեզանից ոչ այն պատասխանները, որ Դուք տալիս էք։ Դուք մնացիք հաւատարիմ ազնիւ ձեր խղճին՝ հզօր խորհրդային իշխանաւորների առջեւ, համոզւած եմ կը մնաք ազնիւ և այս դէպքում»։

Ես մէջբերեցի այս նամակը, որովհետեւ այստեղ ես արտայայտել եմ իմ որոշ կարծիքները Սոլժենիցինի անիշխանութեան վերաբերեալ։ Սակայն շարունակեմ։ Այսպիսով անիշխանութեան անբարոյական կողմը, այսինքն անհատական պայքարի բարոյականութիւնը որոշւում է նպատակի արդարութիւնով։ Ուստի, եթէ Հայ Դատը արդար է ըստ էութեան, այսինքն արդար է ոչ միայն հայկական իմաստով, այլ նաեւ համամարդկային տեսանկիւնից, ապա մեր անձնական պայքարի բարոյական կողմը կարելի է համարել ապահովւած։

Սակայն ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ մենք ապրում ենք ոչ անիշխանական մթնոլորտում, անհրաժեշտ է մի քանի խօսք ասել նաեւ առաջարկի իրաւական կողմի մասին։ Քանզի խօսւում է անձի գործունէութեան մասին, նրա իրաւական կողմը պէտք է որոնել միջազգային մասնաւոր իրաւունքի փաստաթղթերի մէջ։ Այդ իրաւունքի համար տարբեր երկրներ հիմք են ընդունել տարբեր տեսութիւններ։ Ամենատարածւածներից մէկը իտալացի քաղաքական գործիչ Մանչինիի այսպէս կոչւած ազգային տեսութիւնն է։

Այդ տեսութեան համաձայն, միջազգային մասնաւոր իրաւունքի հիմքը ճանաչւում է ազգութիւնը: Ըստ Մանչինիի, անհատը սեփական պետութեան ներսում ունի անձի անձեռնմխելի ազատութիւն: Իր պետութիւնից դուրս՝ անձը պահպանում է իր այդ ազատութիւնը և իրաւունք ունի այդ տեսանկիւնից հակադրուելու այն պետութեան հետ, որի ներսում նա գործում է: Ամէն մի մարդ իրաւունք ունի պահանջելու, որ արտասահմանում պահպանուեն իր ազգային իրաւունքները: Մանչինին համարում է, որ ամէն մի իրաւական դէմք իրաւունք ունի գործելու արտասահմանում համաձայն իր ազգային օրէնքների: Սակայն ազգութեան մէջ նա դնում էր մի քիչ աւելի լայն իմաստ:

Իրաւական դէմքի ազգութիւնը որոշելու համար առաջ քաշուեցին երեք չափանիշներ: Առաջինը՝ ազգութեան պատկանելիութիւնը որոշւում է իր կառավարութեան վայրով: Երկրորդը՝ ծննդավայրով: Երրորդը՝ տնտեսական ղեկավարութեան վայրով: Սակայն Առաջին Համաշխարհային պատերազմից յետոյ, պարզուեց, որ բոլոր այդ չափանիշները թերի են և բոլորը փոխարինուեցին քաղաքացիութիւնով: Այնուամենայնիւ, բոլորն էլ համաձայնուեցին, որ քաղաքացիութիւնը կրում է ձեւական բնոյթ, քանզի սահմանափակում է քաղաքացիութիւն չունեցողների իրաւունքները և լուծում ազգային աւանդոյթներն ու օրէնքները պետական օրէնքների մէջ: Մինչեւ այսօր քաղաքացիութիւնից զուրկ մարդկանց միջազգային մասնաւոր իրաւունքի հարցը լուծուած չէ:

Այսպիսով առաջ է գալիս հայ անհատի վերաբերեալ պարզ լուծում. զրկուած պաշտօնական կառավարութիւնից, դուրս վռնտուած իր սեփական հողից, ցանկանալով վերականգնել իր պետականութիւնը, նա իրաւունք ունի արտասահմանում գործելու համաձայն իր ազգային օրէնքների: Նրա անձի ազատութիւնը տալիս է նրան իրաւունք՝ յայտարարելու պատերազմ ցանկացած պետութեան դէմ և օգտագործելու այդ պատերազմում բոլոր միջազգային օրէնքներով թոյլատրելի միջոցները: Աւելին, հայ անհատը պատերազմ յայտարարելու կարիքը չունի, քանզի այն վաղուց յայտարարուած է: Պատերազմը չի վերջացել, որովհետեւ չի իրականացել ոչ Սեւրի դաշնագիրը, ոչ «Լենինեան դեկրետը» և ոչ էլ մի որեւէ պայմանագիր, որի տակ կայ հայի ստորագրութիւնը Արեւմտահայաստանի վերաբերեալ: Իսկ եթէ մեզ համար պատերազմական դրութիւն է, ապա հայ անհատը իրաւունք ունի ընտրել ցանկացած ճակատը և պայքարի ցանկացած միջոցը:

Այսպիսով, վերլուծելով Սոլժենիցինի կոչը բարոյական և իրաւական տեսակէտից, ես եզրակացնում եմ, որ ամէն մի հայ անհատ իրաւունք ունի անձնական պայքարի դուրս գալու թուրքական կառավարութեան դէմ:

Այժմ անդրադառնանք առաջարկի հոգեբանական արմատներին: Այստեղ ես կը խօսեմ շատ կարճ: Հայ անհատը օժտուած է բարձր բարոյականութիւնով:

Սա մեր ժողովրդի նկարագիրն է, որը գալիս է դարերի խորքերից։ Դատապարտել նրան այդ յատկութեան համար՝ ես ոչ միայն չեմ համարձակւում, այլեւ չեմ էլ համարում ճիշտ։ Չէ՞ որ հէնց այդ բարձր անհատականութեան շնորհիւ է, որ նրան յաջողւել է շատ ու շատ բնագաւառներում համաշխարհային չափանիշներով գրաւել առաջնակարգ դիրքեր։

Ի հարկէ, ճիշտ է և այն, որ բնաւորութեան այդ գիծը յաճախ խանգարւել է նրան հաւաքական գործունէութեան ասպարէզում յաջողւելու համար։ Սակայն եթէ իսկապէս ազգի մի մասը ունի այդպիսի նկարագիր, պէտք է ջանալ այդ օգտագործել և ոչ թէ հրաժարւել նրանցից որպէս պայքարի համար անօգտակար մարդկանցից։

Պէտք է այդ բարձր անհատականութիւն ունեցողներին ցոյց տալ մի այնպիսի ճակատ, որտեղ նրանք լրիւ կը գտնեն իրենց։ Արդիւնաբերութեան մէջ վաղուց արդէն օգտագործւում է բանւորների դասակարգումը ըստ, այսպէս կոչւած, հոգեբանական տեղամասերի։ Օրինակ՝ ապացուցած է, որ ուժեղ նեարդային համակարգ ունեցողները պարզապէս անընդունակ են գործելու արագահոս գծի վրայ։ Եւ գործարանների ղեկավարները, այդպիսի բանւորների ջղերը թուլացնելու կամ աշխատանքից ազատելու փոխարէն, ուղարկում են նրանց անհատական հաստոցների վրայ աշխատելու։ Եւ եթէ կան ազգին նւիրւած հայեր, որոնք ի վիճակի չեն կատարելու դժւար, մանրակրկիտ ազգային աշխատանք, նրանց պէտք է ուղարկել այլ ինքնահաստատման լայն ասպարէզ, որտեղ ամէն մի անձ է՛ւ զինւոր է, է՛ւ զօրավար։

Ամէն մի պայքար ունի իր նպատակը և, ուրեմն, պէտք է ունենայ իր նպատակը նաեւ անձնական պայքարը։ Նշենք նաեւ այն, որ անձնական պայքարը կարող է լինել տարբեր ձեւերի՝ «առանց ստի» ապրելուց սկսած, յանցագործների և դաւաճանների պատուհասումով վերջացած. խաղաղ ցոյցից սկսած՝ ինքնահրկիզումով վերջացրած։

Անմիջապէս յիշեմ, որ վրէժը չի կարող լինել նպատակ և չեմ էլ կարծում որ որեւէ մէկը վրէժի իրականացումը համարի արդարութեան վերականգնում։ Միայն չար և անբարոյական մարդը կարող է բաւարարւել վրէժով։ Իմ կարծիքով՝ մեր գլխաւոր նպատակը տարակարծութիւններ չի առաջացնում, դա հայապատկան հողերի վերադարձն է իր օրինական տիրոջը։ Եւ եթէ այդպիսի արդարութեան վերականգնումը հրաշքով հնարաւոր լինէր իրականացնել առանց մէկ կաթիլ արիւն թափելու, ես անձամբ ինձ երջանիկ կը համարէի։ Ընդհանուր պայքարը ուղղւած է թուրք պետականութեան դէմ, ուրեմն այդ նոյն ուղղութիւնը պէտք է ունենայ և անհատական պայքարը։ Հակաթուրք պայքարը յանուն մեր հողերի ազատագրութեանը, իմ կարծիքով, պարունակում է իր մէջ հակառակորդի վրայ գործադրւող երեք ձեւի ճնշում։

Առաջինը՝ բարոյական ճնշում, որը կարելի է ձեւակերպել այսպէս.- Ստեղծել այնպիսի կացութիւն, որ ուրիշ ազգերը վիրաւորական համարեն իրենց համար յարաբերուել թուրքերի հետ բոլոր բնագաւառներում: Այսօր հասարակական կարծիքը ստիպում է Միացեալ Նահանգների կառավարութեանը՝ չտալ Խորհրդային Միութեանը առեւտրական արտօնութիւններ, մինչեւ նա չվերացնի իր արգելքները երկրից դուրս գալուն վերաբերեալ: Բացի դրանից, անհրաժեշտ է, որ թուրքական առաջատար շրջանակները (եթէ այդպիսիները գտնուեն) գիտակցեն իրենց նախորդ սերնդի յանցանքին:

Երկրորդ՝ տնտեսական ճնշում, որը է՛լ աւելի պէտք է քայքայի հակառակորդի առանց այն էլ քայքայած տնտեսութիւնը:

Եւ երրորդը՝ մարտական ճնշում, որի նպատակն է ներթափանցել «Երկիր» և այնտեղ ծաւալել ֆիդայական շարժումներ, այս կամ այն դաշնակցի հետ: ՉԹԵՐԱԳՆԱՀԱՏԵԼՈՎ ԵՒ ՉԳԵՐԱԳՆԱՀԱՏԵԼՈՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ, ՊՆԴՈՒՄ ԵՄ, ՈՐ ՆԱ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ՄԻԱՅՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԻՆ, ԱՅՍԻՆՔՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻՆ:

Անհատական պայքարի կողմնակիցներից յաճախ կարելի է լսել, որ բարոյական պայքարը կարող է ստեղծել այնպիսի մի դրութիւն, որ մարդկութիւնը, ընդունելով իր սխալները, ստիպի աշխարհի իշխանաւորներին՝ վերականգնել արդարութիւնը և մեր՝ հայերիս դէպքում վերադարձնել տիրոջը բռնագրաւած հողերը և վճարել հասցրած վնասների հատուցումը: Այդ գաղափարը փաստօրէն անուղղակիօրէն պարունակւում է նաեւ Սոլժենիցինի «մերկացման» տեսութեան մէջ: Կը ներեն ինձ անիշխանականները, բայց այն մասին, թէ ի՞նչպէս են հողերը վերադարձւում տէրերին և հատուցումներ վճարւում, մենք գիտենք մի քիչ աւելի հեղինակաւոր աղբիւրներից, ինչպիսին են դիւանագիտութեան պատմութեան օրինակները, Լոյդ Ջորջի, Կերզոնի, Վիլսոնի, Գորչակովների, Չիչերինների և շատ ուրիշ դիւանագէտների կարծիքները:

Բոլոր այդ աղբիւրները գալիս են ապացուցելու, որ, բացի «դրութիւններ» ստեղծելուց, անհրաժեշտ է շատ ու շատ այլ հարցեր լուծել, շատ ու շատ մանրակրկիտ աշխատանքներ տանել, մինչեւ այն պահը, երբ թշնամին կը հրաւիրի մեզ բանակցութիւնների:

Այս պայմաններում, ի՞նչպէս կարելի է սահմանափակուել միայն անհատական պայքարով: Նա ով կը կանգնի անհատական պայքարի ճանապարհին, պէտք է գիտակցի որ գործում է ոչ որպէս փրկութեան շեփորը փչող մի հերոս, այլ որպէս մի համեստ զինուոր, որը մանրակրկիտ հաւաքական աշխատանքի համար ուժ չգտաւ իր մէջ և որոշեց իր սահմանափակ հնարաւորութիւնները ի սպաս դնել միայն բարոյական ճակատում:

1974

ՊԱՅՔԱՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

Է. Յովհաննիսեան

Միջազգային իրաւունքի փաստաթղթերում ասւած է, որ, համաձայն ազգերի ինքնորոշման իրաւունքի, ամէն մի ինքնորոշւող ազգ մտնում է միջազգային իրաւունքի պաշտպանութեան տակ ա՛յն րոպէից, որ նա կ՚արտայայտի իր ինքնորոշւելու կամքը։ Սակայն ոչ մի փաստաթղթում ասւած չէ թէ ի՞նչ է հասկանում միջազգային իրաւունքը՝ «կամք արտայայտել» ասելով։ Ի՞նչպէս և ո՞ւմ կողմից պէտք է արտայայտւի այդ կամքը։ Պահանջագրերո՞վ, եկեղեցական խնդրանքներո՞վ, թէ՞ զինւած ապստամբութեամբ։

Ինքնորոշման իրաւունքից անմիջականօրէն բխում է համապատասխան ազգային տարածութեան պահանջի իրաւունքը։ ՄԱԿի փաստաթղթերից մէկում, օրինակ, նշւած է, որ բոլոր այն փորձերը, որոնք ուղղւած են ազգային միասնութեան քայքայմանը և ազգային տարածութիւնների բաժանմանը, անհամատեղելի են ՄԱԿի սկզբունքների և նպատակների հետ։ Սակայն ոչ մի տեղ չի ասւած, թէ ի՞նչ է նշանակում համապատասխան տարածութիւն։ Ինչի՞ն համապատասխանող՝ քանակի՞ն, ոյժի՞ն, ներկայ վիճակի՞ն, թէ՞ պատմական իրաւունքներին։ Իրաւունքը վերաբերւում է միայն նրա՞նց, ովքեր գտնւում են իրենց պապենական հողերի վրայ, թէ՞ նաեւ նրանց, ովքեր դուրս են վռնտւած իրենց հայրենիքից։

Միջազգային իրաւունքի ոլորտում այսպիսի ձեւակերպումները, որտեղ օգտագործւում են բաւական մշուշոտ հասկացութիւններ, բազմաթիւ են։ Բոլոր այդ ձեւակերպումները գալիս են ապացուցելու, որ միջազգային իրաւունքները կրում են միայն բարոյական բնոյթ, իսկ այդ իրաւունքներից օգտւելու հարցը կապւած է նրանից, թէ որքանո՞վ վճռական և անհաշտ է իր պահանջների մէջ տւեալ ազգը։ Այդ հանգամանքը անխուսափելի է դարձնում պայքարը նոյնիսկ օրինական պահանջների համար։ Եւ որպէս օրէնք այդ պայքարը ընթանում է քաղաքական ոյժերի վերադասաւորումների բարդ պայմաններում։

Ի՞նչպէս կարելի է նախօրօք գնահատել այդ ոյժերը, նրանց դասաւորւածութեան նպաստաւորութիւնը։

Իմ խորը համոզմունքը կայանում է նրանում, որ պայքարը չսկսած միայն շատ մօտաւոր գնահատականներ կարելի է գուշակել։ Գուցէ Նապոլէոնին վերագրւի արկածախնդրութիւն, բայց հանրայայտ է նրա հետեւեալ կարծիքը. «Առաջին հերթին անհրաժեշտ է սկսել ճակատամարտը, մնացածը կը պար-

զըւի պայքարի ընթացքում»: Յիշեցնեմ, որ Լենինի խոստովանութեամբ՝ ինքը նոյնպէս 1917 թւականին ղեկավարւեց այդ սկզբունքով: Կասկածից վեր է, որ այդ սկզբունքի մէջ կան պարզ երեւացող թերութիւններ և ես ամենեւին էլ չեմ ուզում աստւածացնել նրան: Սակայն այդ սկզբունքը պարունակում է իր մէջ քաղաքական ոյժերի դասաւորւածութեան իմաստով հետեւեալ ճշմարտութիւնը.

Միայն պայքարի դուրս գալուց յետոյ մեր ոյժերը կը գնահատւեն միջազգային ասպարէզում, կը գտնւեն հովանաւորողներ, զինողներ, դաշնակիցներ և այլն: Այսինքն միայն պայքարի դուրս գալուց յետոյ է, որ մեր ոյժը դառնում է քաղաքական ոյժ, մտնում է քաղաքական ոլորտները և գրաւում է այնտեղ համապատասխան դիրք: Քաղաքական աշխարհին այսօր քնած ոյժերը և կարողութիւնները չեն հետաքրքրում: Օրինակ՝ ոչ ոք իր քաղաքական հաշիւների մէջ նկատի չի առնում 50 միլիոննոց ուկրաինական ժողովուրդը, որը երազում է դուրս գալ Խորհրդային Միութեան կազմից: Բայց մէկ միլիոն էլ չկազմող պաղեստինցիների համար, այսօր գտնւում են է՛ւ զէնք մատակարարողներ, է՛ւ դիւանագէտ պաշտպաններ, է՛ւ շատ ուրիշ տեսակի կողմնակիցներ: Եւ չնայած նրան, որ պաղեստինցիները իրենց ահաբեկութիւններով արժանացան աշխարհի պարսաւանքներին, քաղաքական ոլորտում այդ ժողովուրդը կամ, աւելի ճիշտ, նրա դատը գրաւում է կենտրոնական տեղերից մէկը:

Եւ, ո՞վ գիտէ, գուցէ եթէ մենք էլ Լօզան գնայինք այնպէս, ինչպէս նրանք են փորձում գնալ Ժընեւ, կարող է մեր ճակատագիրն էլ այլ լինէր: Փորձը ցոյց է տւել, որ պայքար սկսելուց յետոյ յայտնւել են այնպիսի կողմնակիցներ ու դաշնակիցներ, որոնց մասին մտածել անգամ չէին կարող պայքարողները խաղաղ պայմաններում: Աւելին, նրանց դասում էին թշնամիների շարքին: Օրինակ, շատ հաւանական է, որ, եթէ սփիւռքահայութիւնը պայքար ծաւալի Թուրքիոյ դէմ, Ռուսաստանը կարող է (եթէ լաւ հաշւի) որոշ օգնութիւն ցուցաբերել այդ պայքարում:

Խօսքս, ի հարկէ, ռուսական կառավարութեան մասին է, ոչ թէ Խորհրդային Հայաստանի, որը այդ հարցում ասելիք չունի, նա նոյնիսկ այդ հարցում միջնորդի դեր իսկ չի կարող կատարել վախենալով, թէ իրեն կը մեղադրեն ազգայնականութեան մէջ: Բայց սրանք, ի հարկէ, միայն ենթադրութիւններ են և արւեցին ոչ թէ որովհետեւ դրա համար կան որոշ քիմքեր, այլ պարզապէս որպէս օրինակ:

Բայց պայքարը անհրաժեշտ է, ոչ միայն արտաքին աշխարհին մեր քաղաքական ոյժը ցոյց տալու համար: Նա անհրաժեշտ է հէնց մեզ՝ մեր ոյժերը գնահատելու համար: Այս վերջինը, այսինքն՝ ինքնագնահատականը պետականութիւնով օժտւած ժողովուրդների համար մեծ դժւարութիւններ չի առաջաց-

նում: Բաւականին ճշգրիտ յաջողւում է հաշւարկի ենթարկել թէ՛ ռազմական, թէ՛ տնտեսական և թէ մարդկային կարողութիւնները: Մի փոքր դժւարութիւն է առաջացնում պայքարողների խիզախութեան և հոգեկան մակարդակի հաշւարկը: Բայց սա էլ որոշ պետութիւնների համար խնդիր չէ, քանզի պայքարողների յետեւից շարժում են յատուկ զօրամասեր, որոնք արգելում են նահանջը և դրանով քաջութիւն պարտադրում զինւորներին:

Սակայն պետականութիւնից զրկւած զանգւածների համար բոլոր այս հաշւարկները կատարել խաղաղ պայմաններում պարզապէս անհնարին է: Անհնարին է նոյնիսկ որոշել պայքարողների թիւը: Եթէ պետականութեան պայմաններում բնակչութեան որոշակի տոկոսը զօրակոչւում է, ապա պետութեան բացակայութեան դէպքում զօրակոչիկների կամաւոր լինելու հանգամանքը մեծ դժւարութիւններ է առաջացնում: Չէ՞ որ ոչ բոլոր ճառողները և պատրաստակամութիւն յայտնողները իսկապէս պատրաստ են զոհաբերութիւնների յանուն ազգի: Եւ ուրեմն միայն պայքարի մէջ կը պարզուի իսկական դէմքը, կ'անջատւի քարը փրփուրից:

Բայց սա, ի հարկէ, չի նշանակում, որ բոլոր դէպքերում պայքարի դուրս գալը արդարացւած է: Որոշ նախնական հաշւարկներ, այնուամենայնիւ, անհրաժեշտ են: Եւ առաջին հերթին անհրաժեշտ են համապատասխան գնահատականներ՝ այն ընդհանուր **տենդենց**ների, որոնք տիրում են քաղաքական ասպարէզում: Դրանցից գլխաւորը այսօր կարելի է համարել պատերազմելու միջոցների ահաւոր հզօրացումը: Պատերազմ վարելու միջոցների կործանարար ոյժը հասել է այնպիսի մակարդակի, որ մեծ պետութիւններից ոչ մէկը չի համարձակւի պատերազմ սկսել, նպատակ ունենալով է՛լ աւելի ծաւալել իր պետութեան սահմանները: Մի բան, որ նախկինում պատերազմների հիմնական նպատակն էր:

Այդ հանգամանքը ստեղծել է այնպիսի մի կացութիւն, որ գերպետութիւնները գործադրում են բոլոր ջանքերը, որպէսզի երկրագնդի տարբեր ծայրերում առաջացած խռովութիւնները չվերածւեն համաշխարհային պատերազմի, որտեղից հազիւ որեւէ մի կողմը յաղթող դուրս գայ: Ստեղծւել է կարծես թէ մեծ պետութիւնների լուռ պայմանաւորւածութիւն տեղական բախումները չծաւալելու վերաբերեալ: Շատերին թւում է, թէ մեծերի այդ պայմանաւորւածութիւնը փոքր ազգերի դժբախտութիւնն է: Թէ իբր մեծերը, ցանկութիւն չունենալով վերաբաժանելու աշխարհը, չեն հանդուրժի փոքրերի «գլուխ բարձացնելը», ճնշելով նրանց բոլոր, նոյնիսկ ամենաարդար պահանջները և խռովութիւնները:

Ես անձամբ հակառակ կարծիքին եմ: Ես կարծում եմ, որ հէնց այն հանգամանքը, որ մեծ կողմերը սարսափում են փոքրերի բախումներից, կը ստիպի

նրանց մասամբ բաւարարել փոքրերի պահանջները, ԵԹԷ ՊԱՐՁԻՒ, ՈՐ ԱՌԱՆՑ ԲԱՒԱՐԱՐԵԼՈՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՉԻ ՍՏԵՂԾՒԻ։ Օրինակ, եթէ մենք սկսենք երկարատեւ պայքար մեր բռնագրաւուած հողերի համար, ինչո՞վ կարող են մեզ զսպել կամ հաշտեցնել, բացի մեր պահանջները բաւարարելուց, նոր ցեղասպանութե՞ամբ, այն էլ աշխարհի բոլոր երկրներո՞ւմ։ Օգտագործելով մեր դէմ հիւլէական զէնք կամ ռազմանաւատո՞րմ, բայց մենք այդպիսի ճակատ չունենք։ Ես կարծում եմ, որ մեր պահանջներին բաւարարել թէ չբաւարարելը միայն մեր յամառութիւնից կախուած կը լինի։

Պարզ է, որ կը լինեն ահագին դժւարութիւններ, գուցէ անզուշակելի և աննկարագրելի դժւարութիւններ։ Գուցէ խախտւի մեր հանգիստ կեանքը արտասահմանում, գուցէ մեզ դուրս անեն բոլոր երկրներից՝ որպէս անվստահելի տարրի, գուցէ հրեաների հետ բաժանենք ամբողջ աշխարհի ատելութիւնը։ Բայց միթէ՞ մենք հանգիստ կեանք ենք որոնում։ Եթէ հրեաների հանգիստը խախտւած չլինէր, միթէ՞ նրանք այսօր կ'արժանանային պետականութեան։ Եւ վերջապէս պայքարում են ոչ միայն յաղթելու, այլ նաեւ պատւով մեռնելու համար։ Եւ միայն մէկ ճշմարտութիւն կարող է ջնջել իմ այս բոլոր ասածներս. ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ՝ ՄԱԿԱՐԴԱԿ Է ՀԱՐԿԱՒՈՐ։ Իսկ այդ մակարդակին հասնելու համար՝ ջանքեր են պէտք։

1974

ՄԵՐ ՀԱԿԱՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ, ՄԵՐ ԴԱՏԸ ԵՒ ՄԵՐ ԱՊԱԳԱՆ

Է. Յովհաննիսեան

Հակառութիւններով լի կեանքի պայմաններուն մէջ, հայ ժողովուրդի, մասնաւորաբար Սփիւռքի հայութեան դիմաց ցցուող որոշ պարտաւորութեանց հարցը քննող այս յօդուածը կը ներկայացնենք մեր ընթերցողներուն, յարգելով մեր աշխատակիցի համոզումները ազատօրէն արտայայտելու իրաւունքը: Տարակարծիք ենք հեղինակին հետ՝ որոշ հարցերու կապակցութեամբ: Մեր ընթերցողներէն շատեր եւս հաւանաբար տարակարծիք պիտի ըլլան ու լաւ պիտի ըլլայ եթէ անոնք, իրենց տարբեր տեսակէտները յանձնեն թուղթին ու ղրկեն մեզի, որպէսզի մամուլի էջերէն քննութեան ենթարկուի արծարծուած հարցը՝ բազմակողմանի ձեւով:

Խմբագրական դիւրութեան համար ստիպուեցանք Դոկտ. Է. Յովհաննիսեանի յօդուածը բաժնել երկուքի, մինչ մեր մատնանշումները առաւելաբար կը վերաբերին երկրորդ բաժնին մէջ արտայայտուած որոշ մտածումներու: Այսպէս, օրինակի համար, կը կարծենք, թէ անոնք որոնք կը պնդեն թէ ազգային իրաւունքներու անխախտելի ճանաչումը ապահովելու ճամբան համամարդկային արդարութեան մը լրիւ հաստատումն է, վստահաբար նոյնքան համոզուած են, թէ իրենց տեսակէտը ուղիղ է, որքան հակառակին համոզումը ունեցողները, ուստի արժէ հարցը աւելի մանրամասն քննել, առանց տեւաբար կաշկանդուելու ցարդ գործադրուած սիստեմներու անյաջողութեամբ, կամ անոնց «անմարդկային» կողմերով:

Դարձեալ օրինակի համար, Դոկտ. Է. Յովհաննիսեանի կողմէ մէջբերուած եւ Լ. Շանթի կողմէ կատարուած այն մատնանշումը, թէ բնական անհաւասարութիւն մը գոյութիւն ունի մարդոց միջեւ, իրողութիւն մըն է անշուշտ, սակայն որքան մեծ ըլլայ այդ բնական անհաւասարութիւնը, այնքան մեծ պէտք է ըլլայ թիւը անոնց, որոնք կը պայքարին բնական անհաւասարութեանց արդիւնք եղող անարդարութեանց, ինչպէս նաեւ բնականին վրայ անբնական ձեւերով պատուաստուած այլ ձեւի անհաւասարութեանց եւ իրաւազրկումներու վերացման համար:

Հակասութիւններով լի է մեր կեանքը՝ անկասկած, սակայն միշտ չէ որ անհաշտելի են հակասական թուացող երեւոյթները: Արժէ այս մասին եւս անդրադառնալ:

ԽՄԲ.

Աշխարհի թերթերը նոյն օրը տուեցին երկու լուր: Խորհրդային միջմոլորակային «Վեներա-9» եւ «Վեներա-10» կայանները 450 աստիճանանոց միջավայրից հասցրին երկրագունդ հաղորդել Վեներա մոլորակի մակերեսի լուսանկարը: Եւ այժմ գիտնականները ապացուցեցին, որ ամերիկեան «Վայկինգ»ների միջոցով ստացուած տեղեկութիւնները Վեներայի մակերեսի մասին՝ ճիշդ էին:

Սա առաջին նորութիւնն էր: Այս նորութիւնը հաղորդող թերթերը հաղորդում էին նաեւ երկրորդ նորութիւնը:

Յայտնի գիտնական-մարդաբան Լորնա Բլէրը համոզուած է, որ 1961 թուին Նոր Գուինէայում անյայտ կորած Մայկլ Ռոկֆելլերը, որը Միացեալ Նահանգների փոխ-նախագահ Ռոկֆելլերի զաւակն էր, ՍՊԱՆՈՒԵԼ ՈՒ ԿԵՐՈՒԵԼ է Ասմատ մարդակեր ցեղի անդամների կողմից: Ինքը՝ Բլէրը այդ ժամանակ ապրում էր Ասմատ ցեղի մէջ եւ յիշում է, որ նրանցից երկուսը պատմեցին, թէ ինչպէս հարեւան գիւղում սպանուեց եւ խարոյկի վրայ խորովուեց երիտասարդ Ռոկֆելլերը:

Ահա երկու նորութիւն: Մեր աշխարհի ահաւոր հակասութիւնների երկու վկայութիւն: Անեզր տիեզերքից ամերիկեան եւ խորհրդային գերակատարելագործուած կայանները տեղեկութիւններ են ուղարկում երկրագունդ, հեռաւոր մոլորակներից, իսկ այդ երկրագնդի վրայ ՄԱԿում ներկայացուած պետութիւններից մէկում մարդակերները համալսարան աւարտած երիտասարդից խորոված են պատրաստում: Հիւլէական եւ քարէ դարը ապրում են կողք-կողքի: Այս ծայրայեղ հակասութիւնների արանքում ընկած տարածութիւնը լեցուն է այլ տեսակի մանր ու մեծ հակասութիւններով:

Մեր հակասական աշխարհում բախւում են անձի եւ ազգի իրաւունքները, համամարդկային եւ ազգային շահերը, իրաւունքը եւ բարոյականութիւնը, գիտութիւնը եւ կրօնը: Ու այս հակասութիւնների մէջ մենք, մի փոքր ժողովուրդ, ուզում ենք ոչ միայն պահպանել մեզ, այլ նաեւ լուծել մեր Դատը ու կերտել մեր ապագան, այսինքն մենք ուզում ենք կրկին ձեռք բերել մեր կորցրած քաղաքական եւ ազգային իրաւունքները:

Իսկ ամերիկեան «Ֆրիդըմ Հաուս» հետազօտական հաստատութիւնը իր հերթական հաշուետուութեան մէջ նշում է, որ 1976 թուականին այն մարդկանց թիւը, որոնց քաղաքացիական իրաւունքները մշտապէս ոտնահարւում են, աւելացել է 86 միլիոնով: Դա նշանակում է, որ մէկ տարուայ ընթացքում

հայ ժողովրդից գրեթէ 20 անգամ աւելի մեծ մարդկային մի զանգուած զրկուել է քաղաքացիական մարդկային իրաւունքներից:

1976 թուին ազատ համարուող երկրներում ապրում էր մարդկութեան միայն 19,6 տոկոսը: Սկսեալ 1952 թուականից, երբ «Ֆրիդըմ Հաուս» կազմակերպութիւնը հրատարակեց իր առաջին հաշուետուութիւնը, սա ամենացածր տոկոսն է: 1976 թուին Պորտուգալիան միակ երկիրն էր, որի բնակչութեան վիճակը քաղաքական եւ քաղաքացիական իրաւունքների իմաստով զգալիօրէն լաւացաւ: Այդ իմաստով Սալվադորը ազատ երկրների շարքից տեղափոխուեց կիսազատ երկրների շարքը, իսկ Արժանտինը, Պարագուայը, Ուրուգուայը եւ Մալագաշեան հանրապետութիւնը, որոնց «Ֆրիդըմ Հաուս»ը որակաւորում էր որպէս կիսազատ երկրներ, անցան անազատ երկրների շարքը:

Նոյն կազմակերպութեան տուեալների համաձայն անազատ երկրներում ապրում է մարդկութեան 44 տոկոսը, այսինքն մէկ միլիարդ 765 միլիոն մարդ: Այս մարդիկ ապրում են 68 երկրներում:

Կիսազատ 49 երկրներում ապրում է մարդկութեան 36.5 տոկոսը, այսինքն մէկ միլիարդ 465 միլիոն մարդ:1976 թուականին 42 երկրներում միայն 790 միլիոն մարդ ապրում էին ազատ պայմաններում:

Երկիրների եւ քաղաքացիների որակաւորումը ազատութեան չափանիշներով «Ֆրիդըմ Հաուս»ը կատարում է 24 տարբեր հարցերից բաղկացած հարցաթերթիկի հիման վրայ: Այդ հարցերը ընդգրկում են քաղաքական եւ քաղաքացիական իրաւունքների ամբողջ դրոյթը: Այդ աղիւսակից պարզւում է, որ 1976 թուին արեւմտաեւրոպական երկրներից ազատութեան իմաստով ամենաածանր պայմաններում գտնւում էր Բուլղարիայի բնակչութիւնը: Մի քիչ աւելի լաւ էր վիճակը Չեխոսլովակիայում եւ Գերմանիայում: Հունգարիայում եւ Ռումինիայում վիճակը է՛լ աւելի լաւ էր: Խորհրդային Միութիւնը ստացաւ շատ ցածր գնահատական, բայց կանգնած է Չինաստանից աւելի բարձր տեղում: Խոշոր յաղթանակ տարան Իսպանիան եւ Պորտուգալիան:

Բացառելով Ճապոնիան, Ասիայում նկատւում է օրինաչափութեան եւ ժողովրդավարութեան հեղինակութեան անկում: Թայլանդում մեծ հարուած հասցուեց ազատութեանը: Հնդկաչինը բռնապետութեան վառ օրինակն է:

Լատինական Ամերիկայում, ըստ «Ֆրիդըմ Հաուս»ի, միայն երեք երկիր են մնացել ազատ՝ Վենեզուելան, Կոլումբիան եւ Կոստա-Ռիկան:

Ոչ պակաս անմխիթար վիճակում է գտնւում ազգային իրաւունքների եւ ազատութիւնների պատկերը: Իսրայէլական «Մեր Երկիրը» թերթը իր այս տարուայ համարներից մէկում գրում էր. «Խաղաղ ովկիանոսի Նուարա փոքրիկ կղզին, որի բնակչութիւնը կազմում է ընդամէնը 4000 մարդ, մեր օրերին դարձաւ անկախ պետութիւն, իսկ Նայիրի երկիրը, այսինքն Հայաստանը, հին

եւ փայլուն քաղաքակրթութեան երկիրը շարունակում է մնալ իրաւազուրկ։ Աֆրիկեան ծայրագաւառներում ինքնիշխանութիւն է շնորհուած Լեսոտօ երկրամասին, իսկ 15րդ դարի հզօր պետութիւններից մէկը՝ Լիտվան ազատ չէ։ - Ճիշդ է, վերջերս Արեւմուտքում շատ են խօսում մարդու իրաւունքների մասին, բայց այդ խօսակցութիւնները վերաբերւում են անձերին, իսկ ի՞նչ անել ազգերի ու ժողովուրդների իրաւունքների հետ»։

Քրդերը, պաղեստինցիները, բասկերը, բիաֆրացիները, իրլանդացիները եւ շատ ու շատ ժողովուրդներ իրենց պայքարներով վկայում են, որ ազգերի իրաւունքների ասպարէզում կան չլուծուած խնդիրներ։ Ո՞վ եւ ի՞նչպէս պէտք է լուծի այդ խնդիրները։ Այս հարցերի պատասխանը մեզ՝ հայերիս համար չափազանց կարեւոր է, քանի որ մենք էլ միջազգային ծով հակասութիւնների մէջ ջանում ենք լուծել մեր խնդիրը։ Փորձենք բացայայտել այն գլխաւոր հակասութիւնների էութիւնը, որոնց շնորհիւ ի յայտ են գալիս մարդկութիւնը քայքայող գաղափարական տարակարծութիւնները, թշնամութիւնը, բռնութիւնը եւ այն ամէնը, ինչը այդքան հակասական ու անտանելի է դարձնում մեր աշխարհը։

Նախօրօք ասեմ, որ եթէ ես փորձում եմ թափանցել որոշ հակասութիւնների էութեան մէջ, ապա ոչ թէ նրա համար, որ ջանում եմ յաղթահարել այդ հակասութիւնները, այլ նրա համար, որ ուզում եմ յարմարուել նրանց։

Ես ուզում եմ դիտարկել երեք հիմնական հակասութիւններ, որ գոյութիւն ունեն բարոյականութեան եւ իրաւունքի միջեւ, մարդու եւ ազգի իրաւունքների միջեւ, համամարդկային եւ ազգային շահերի միջեւ։ Միայն այս հակասութիւնների էութիւնը բացայայտելով մենք կարող ենք ընտրել մեր սեփական վարքագիծը եւ առանց փարոսի կողմնորոշուել սառուցալեռներով լի ովկիանոսում։

Արդէն մի քանի տարի է, միջազգային ասպարէզում մարդու իրաւունքների պաշտպանութեան հարցը դարձել է քաղաքական փոխյարաբերութիւններում կենտրոնական հարցերից մէկը։ Մարդու իրաւունքների պաշտպանութեան դրօշը բարձրացրել են Խորհրդային Միութեան այլախոհները, այդ իրաւունքների համար պայքարում են Արեւմուտքի տարբեր հասարակական կազմակերպութիւններ, մարդու իրաւունքների հարցը քննարկւում է ՄԱԿի համապատասխան յանձնաժողովներում, իսկ վերջերս էլ Միացեալ Նահանգների նախագահ Ջիմի Կարտերը այնքան մեծ նշանակութիւն տուեց մարդու իրաւունքների համար մղուող պայքարին, որ լուրջ վտանգի առջեւ կանգնեց միջազգային լարուածութեան թուլացման հարցը, մասնաւորապէս սրեցին Միացեալ Նահանգների եւ Խորհրդային Միութեան յարաբերութիւնները։ Եւ որովհետեւ այդ հարցին տրուում է այդքան մեծ կարեւորութիւն, անհրաժեշտ է մանրամասնօրէն կանգ առնել այդ հարցի վրայ։

Նախ եւ առաջ պարզենք, թէ ինչ է նշանակում մարդու իրաւունքներ, ո՞ր իրաւունքների մասին է խօսքը: Ազատ բռնաբարելու ու սպաննելու իրաւունքի, ազատ կողոպտելու ու անպատիժ հայրենիքին դաւաճանելու իրաւունքի, ֆաշիստական կուսակցութիւն կազմելու իրաւունքի, Ռոկֆելլերի զաւակին ուտելու իրաւունքի կամ Իդի Ամինի մարդկանցով կոկորդիլոսներ կերակրելու իրաւունքի մասի՞ն է խօսքը, թէ ազատ արտայայտուելու, երկրից ազատ դուրս գալու, ազատ ընտրելու, աշխատանք ստանալու եւ այսպէս կոչուած ընդունելի իրաւունքների մասին է խօսքը: Անշուշտ, մարդու իրաւունքների համար պայքարողները ի նկատի ունեն «ընդունելի» իրաւունքները:

Բայց պէտք է ասել, որ նրանցից եւ ոչ մէկը չի խորացել այն հարցի մէջ, թէ որո՞նք են ընդունելի իրաւունքները եւ ո՞ւմ կողմից պէտք է ընդունուեն նրանք: Սակայն մէկ բան պարզ է, որ եթէ մարդկանց իրաւունքների մէջ կան ընդունելի եւ անընդունելիները, ապա դա նշանակում է, որ գոյութիւն ունի իրաւունքից աւելի բարձր կանգնած դատաւոր: Այդ դատաւորը պէտք է որոշի, որ մարդը իրաւունք չունի բռնաբարելու, բայց իրաւունք ունի սիրելիու, իրաւունք չունի սպաննելու, բայց իրաւունք ունի չընտրելու: Եթէ այդ դատաւորը գոյութիւն ունի, ապա այդ դատաւորի արդարութեամբ միայն պիտի պայմանաւորուած ու արդարացուած լինի մարդու իրաւունքների համար մղուող պայքարը: Այդ դատաւորը պէտք է գտնուի մարդկային իրաւունքների ոլորտից դուրս եւ պէտք է օժտուած լինի վերահսկելու իրաւունքով: Այդ դատաւորը՝ բարոյականութիւնն է: Իսկ դա նշանակում է, որ մարդու իրաւունքները պաշտպանելով, մենք ինքնըստինքեան ի նկատի ունենք այն իրաւունքները, որոնք բխում են բարոյական իրաւունքներից:

Միայն այդպիսի իրաւունքներն են արժանի պաշտպանութեան եւ միայն այդ իրաւունքների համար մղուող պայքարն է իմաստաւորուած: Բարոյականութեան եւ իրաւունքի այս յարաբերակցութիւնը պետականութիւնով օժտուած ժողովուրդների մօտ որոշ չափով գործում է սահմանադրութիւնների եւ օրինագիրքերի միջոցով: Ոչ ամբողջովին հասկանալի ճանապարհներով բարոյականութիւնը իր օրէնսդրական դերը կատարում է: Այսինքն նա իշխում է օրինագրքերի եւ սահմանադրութիւնների վրայ եւ նոյնիսկ ամենադաժան բռնակալը իր երկրի սահմանադրութեան մէջ չի գրի, օրինակ, որ կառավարութիւնը իրաւունք ունի մէկի ազատ արտայայտուելուն համար բանտարկել կամ սպանել նրան: Առաւել եւս չի գրի, որ իշխանութիւնը իրաւունք ունի ցեղասպանութեան ենթարկել իր երկրում ապրող փոքրամասնութիւնը:

Մի խօսքով, օրինագրքերը եւ սահմանադրութիւնները բարոյական են, նրանց եւ բարոյականութեան միջեւ հակասութիւնները որպէս օրէնք մեծ չեն: Բայց մենք գիտենք, որ շատ ու շատ բարոյական սահմանադրութիւններ ունե-

ցող երկրներում սպանում են, բանտարկում եւ ոտնահարում սահմանադրութեամբ նախատեսուած մարդու իրաւունքները: Ինչո՞ւ: Բանը նրանումն է, որ բարոյականութիւնը գրեթէ լիովին կատարելով իր օրէնսդրական դերը, չի կարողանում կատարել իր դատաւորի դերը: Դրա համար էլ մարդիկ իրենց վրայ են վերցնում սահմանադրական իրաւունքների համար մղուող պայքարը, համոզուած լինելով, որ սահմանադրական իրաւունքները բարոյական են:

Սակայն շեշտը դնելով սահմանադրական իրաւունքների վրայ, մենք բաւականին հեշտացնում ենք իշխանաւորների գործը: Վերջին հաշուով մի գեղեցիկ օր իշխանաւորները կարող են հանել սահմանադրութիւնից այն կէտը, որի համար պայքարում է ժողովուրդը եւ դրանով, այսպէս ասած, փակել ժողովրդի բերանը: Օրինակ, եթէ Խորհրդային Սահմանադրութիւնից հանեն այն յօդուածը, որտեղ ասուած է, թէ հանրապետութիւնները միութիւնից ազատ դուրս գալու իրաւունք ունեն, ապա Խորհրդային Միութեան բոլոր ազգային շարժումները պէտք է որ դադրէին: Բայց փորձը ցոյց է տալիս, որ այդպիսի դէպքերում, այսինքն անբարոյական սահմանադրութիւնների տակ ապրող ժողովուրդների պայքարները աւելի սուր են լինում: Եւ, ուրեմն, խնդիրը ոչ միայն սահմանադրութեան կէտերի կատարման, այլ սահմանադրութեան բարոյական էութեան մէջ է: Այսպիսով բարոյականութեան եւ իրաւունքի յարաբերութիւնը այնպիսին է, ինչպիսին է պարլամենտի եւ թագաւորի յարաբերակցութիւնը սահմանադրական մենատիրութիւններում:

Պէտք է ասել, որ Խրուշչովեան ժամանակաշրջանում Խորհրդային Միութիւնում կուսակցական եւ կոմերիտական ժողովները ստացել էին բարոյականութեան անունից խօսելու իրաւունքը եւ կատարում էին օրէնքից դուրս կանգնած դատաւորի դերը: Ես յիշում եմ, որ այն ժամանակ Մոսկուայում ուսանելիս մեր ընկերներից մէկը կատարել էր մի այնպիսի յանցանք, որի համար քրէական օրէնքների համաձայն նա պէտք է կանգնէր դատարանի առջեւ: Համալսարանի ղեկավարութիւնը դուրս արեց նրան համալսարանից եւ գործը յանձնեց դատարանին: Բայց կոմերիտականները, որոնք հիանալի գիտէին իրենց ընկերոջը եւ գիտէին, որ նա բարոյապէս, բայց ոչ իրաւապէս արդարացի է, միաբերան պահանջեցին վերանայել նրա գործը: Եւ կոմերիտականների առջեւ նահանջեց թէ՛ համալսարանի ղեկավարութիւնը եւ թէ դատարանը: Այսինքն բարոյականութեան առջեւ նահանջեց օրէնքը: Այն ժամանակաշրջանից կարող եմ բերել նաեւ հակառակ օրինակը: Մի երիտասարդ, 35 տարեկան հասակում, արդէն հասցրել էր 7 անգամ ամուսնանալ՛ բաժանուել: Տարբեր քաղաքներում նա ունէր լքուած ընտանիքներ: Բոլոր երեխաների «ալիմենտ» կոչուող տուրքերը նա վճարում էր. խորհրդային օրէնքների համաձայն ամուսնութիւնների թիւը սահմանափակուած չէ, այսինքն օրէնքի ի-

մաստով մեր երիտասարդը ոչ մի խախտում չունէր: Նա միայն օգտուել էր իր իրաւունքից: Սակայն երիտասարդի անբարոյական կեցուածքը չվրիպեց հասարակութեան աչքից եւ քաղաքի այսպէս կոչուած «ակտիւի ժողովը» որոշեց դուրս անել նրան իրենց քաղաքից: Եւ դուրս արեց այնպիսի մի փաստաթղթով, որ ոչ մի խոշոր քաղաքում նա այլեւս ապրելու իրաւունք չունէր: Այստեղ էլ իրաւունքը նահանջեց բարոյականութեան առջեւ: Անշուշտ, կոմերիտական ու կուսակցական ժողովներին այսպիսի իրաւունքներ տալը շատ աւելի մեծ վնասներ է բերում, քան օգուտ, որովհետեւ տոտալիտար երկրների կացութիւնը այնպիսին է, որ կուսակցական ժողովի դատելու իրաւունքը փոխանցւում է կուսակցութեան քարտուղարին, որի բարոյականութիւնը միշտ կասկածի տակ է, եւ նա դառնում է երկրի միակ տէրն ու տիրականը: Բայց այս օրինակները ես բերեցի բացատրելու համար իրաւունքի եւ բարոյականութեան ստորադասական կապը:

Որոշ երկրներում բարոյականութեան հսկիչ դերը կատարում է եկեղեցին: Օրինակ, Իտալիայում, Արեւմտեան Գերմանիայում եւ մի շարք այլ երկրներում իշխանաւորներին չի յաջողւում անցկացնել կանանց վիժումի իրաւունքը: Եկեղեցին դէմ է այդ օրէնքին եւ կառավարութիւնը ոչինչ չի կարողանում անել: Ես չեմ ուզում ասել լա՞ւ է դա թէ՞ վատ: Ես ուզում եմ միայն նշել, որ բարոյականութիւնը մի որեւէ հաստատութեան միջոցով պէտք է հսկի օրէնքին:

Անկախ նրանից՝ ունի՞ տուեալ ժողովուրդը պետականութիւն թէ՞ ոչ, իրաւունքի եւ բարոյականութեան այս երկու ներքին մարմինները անհրաժեշտ են:

Անկախ նրանից, թէ որ երկրում է ապրում հայը եւ ինչ քաղաքացիական իրաւունքներ է տալիս նրան տուեալ երկիրը, նա պէտք է միշտ գիտակցի, որ օժտուած է հայի իրաւունքներով եւ որ այդ իրաւունքները գտնւում են հայկական բարոյականութեան հսկողութեան տակ: Եթէ իր ապրած երկրում քաղաքացիական իրաւունքները աւելի շատ են, քան իրեն կարող է տալ հայ ժողովուրդը, ապա նա պէտք է ինքնասահմանափակուի իր ազգային իրաւունքների մէջ: Եթէ իր ապրած երկրի բարոյական սկզբունքները թոյլ են տալիս այն, ինչը արգելւում է ազգի կողմից, ապա նա պէտք է ենթարկուի ազգային բարոյականութեանը, գոնէ այնքան ժամանակ, քանի դեռ մենք զուրկ ենք սեփական հայրենիքից:

Օրինակ, Լիբանանի քաղաքացիական ազատութիւնները թոյլ են տալիս ամէն մի լիբանանցու ազատ կերպով դուրս գալ Լիբանանից: Բայց հայ մարդը չպէտք է օգտուի այդ ազատութիւնից, որովհետեւ նրա այդ քայլը դատապարտում է ազգային ղեկավարութիւնը: Նոյնը վերաբերւում է Խորհրդային Հայաստանի, մանաւանդ Ղարաբաղի հային, որը իրաւունք ունի տեղափոխուել

Ռուսաստան կամ որեւէ այլ հանրապետութիւն, բայց չպէտք է դա անի, ելնելով ազգային շահերից։

Սփիւռքի ամէն մի հայ իրաւունք ունի հրաժարուել հայկական ակումբին կամ եկեղեցուն տուրք վճարելուց, բայց նա չպէտք է օգտուի իր այդ իրաւունքից։ Հակառակը, Սփիւռքի ամէն մի ունեւոր մարդ իրաւունք ունի իր հայեցողութեամբ կառուցել որեւէ տեղ եկեղեցի, մարզադաշտ, ակում կամ դպրոց, բայց նա չպէտք է օգտուի իր այդ իրաւունքից, որովհետեւ գուցէ զուր է վատնում իր դրամը։ Նա պէտք է խորհրդակցի ազգային մարմինների հետ։

Ամէն մի սփիւռքահայ իրաւունք ունի հայկական ներքին վէճերը տեղափոխել օտար դատարանները, բայց նա չպէտք է դա անի, առանց դիմելու հայկական ատեաններին։ Ի հարկէ, հերոսութիւնը համազգային չի կարող լինել։ Յանուն ազգի չի կարելի պահանջել բոլոր մեր հայրենակիցներից այնպիսի զոհաբերութիւններ, որոնց սովորական մարդը պարզապէս անընդունակ է։ Բայց հենց դրա համար էլ պէտք է գոյութիւն ունենայ բարոյականութեան ատեանը, որը կը ների աղքատին տուրք չվճարելը եւ յատուկ դէպքերում կը թոյլատրի Լիբանանից Կանադա մեկնել։

Բոլորիս համար պարզ է, որ պետականութիւնից զուրկ ժողովուրդների համար իրաւունքներ սահմանող մարմինը պէտք է լինի միասնական, այսինքն լրիւ բոլոր ազգային քաղաքական կուսակցութիւններից բաղկացած մի ներկայացուցչական ժողով։ Պարզ է նաեւ այն, որ այդ մարմինը, բացի ժողովրդին խնդրելու ու համոզելու միջոցներից, պէտք է օժտուած լինի նաեւ հարկադրելու միջոցներով։ Ինչո՞ւ բոլոր պետութիւններում գոյութիւն ունեն քաղաքացիներին այս կամ այն վարքագիծը պարտադրելու միջոցներ, իսկ պետականութիւնից զուրկ ժողովուրդները պէտք է իրենց ազգային տուրքերը վճարեն միայն սեփական խղճի համեմատ, այսինքն նուիրատուութեան կարգով (այն էլ փորձիր թերթերում անունը չգրել…)։

Ազգը նուէրների կարիք չունի։

Ազգը մուրացկան չէ։

Ազգը ցեղասպանութեան ենթարկուածների, այսօր էլ մահացողների ու ժողովրդի ապագան կերտողների անունից պահանջում է։ Ես համարում եմ, որ ամէն մի հայ պէտք է վճարի իր ազգային տուրքը պարտադիր և կենտրոնացուած կարգով։

Անշուշտ, դրա համար անհրաժեշտ է կենտրոնական մարմին, կենտրոնական դրամատուն, պարտադրող միջոցներ և այն ամէնը, ինչը կարող էր փոխարինել մեր պետականութեան բացակայութիւնը։ Ինչ մնում է բարոյական վերահսկողութեանը, ապա այդ դերը կարող էր իր վրայ վերցնել մեր եկեղեցին, արմատապէս վերանայելով իր ծիսակրօնութիւնը։ Փաստօրէն մեր եկե-

ղեցին այսօր դարձել է աշխարհիկ մի հաստատութիւն, որը կարելի էր անուանել աւանդապահպանութեան թանգարան: Այնտեղ մենք կարող ենք գտնել միջնադարեան երաժշտութիւն, մանրանկարչութիւն, ամուսնութեան և կնունքի արարողութիւն, Կոմիտաս, Եկմալեան, Լուսինէ Զաքարեան, բայց ոչ Նարեկացի ու «Եղիցի լոյս»: Հաւատք մեր եկեղեցում այսօր չկայ: Երբ Էջմիածնից վերադառնում են Սփիւռքի «հաւատացեալները»ը, և բերանները բաց պատմում են Ամենայն Հայոց Կաթողիկոսի ազգօգուտ գործերի մասին, ապա նրանք նկարագրում են հիանալի շինութիւնները, երգչախմբերի կատարողականութեան բարձր որակը, թանգարանի նմուշները և այն ամէնը, ինչը ոչ մի կապ չունի իսկական հաւատքի հետ: Իսկ եթէ մենք հարցնենք մեր հոգեւոր հայերերին, թէ քանի՞ հոգու են նրանք կարողացել հաւատացեալ դարձնել, քանի՞ հոգի են ծունկի եկել նրանց առջեւ բացականչելով՝ «Մեղաւոր եմ, Տէր իմ, այլեւս չեմ գողանայ, այլեւս չեմ ստի, չեմ սպանի, չեմ հարբի, կը ծառայեմ ազգիս, կեանքս կը տամ արդարութեան համար»: Վախենում եմ, որ այդպիսի մէկ հոգի էլ չգտնւի նրանց ամբողջ կեանքում:

Միայն այն դէպքում, երբ մեր եկեղեցին ծիսակրօնութիւնից կը թեքւի դէպի բարոյա-կրօնական փիլիսոփայութիւնը, այսինքն ազգի աւանդապահից ազգի խիղճը կը դառնայ, միայն այդ դէպքում նա իրաւունք կ'ունենայ դառնալ աշխարհիկ ղեկավար մարմինների բարոյական հսկիչը:

Հասկանում եմ, որ շատ դժւար է իրականացնել ե՛ւ միասնական ղեկավարութիւնը, ե՛ւ մեր եկեղեցու շրջադարձը: Սակայն այս երկու մարմինները այնքան անհրաժեշտ են մեր ապագայի համար, որ Հայ Դատին ծառայողները պէտք է ամէն ինչ անեն այս մարմինները ստեղծելու ուղղութեամբ:

Մարդու իրաւունքների համար մղւող պայքարը բացայայտեց նաեւ այն հակասութիւնը, որ գոյութիւն ունի անձի և ազգի իրաւունքների միջեւ: Ազգի և անձի իրաւունքների յարաբերակցութիւնը ես ուզում եմ վերլուծել մեր ժողովրդի ներքին կեանքին վերաբերւող մի օրինակի վրայ: Մեր ընթերցողներին երեւի ծանօթ է Բագրատ Շահվերդեանի անունը, որը իր ազատ արտայայտւելու համար Խորհրդային Միութիւնում դատապարտւեց 5 տարով և այժմ գտնւում է պատժիչ ճամբարում: 1975 թւի Նոյեմբեր ամսին Բագրատ Շահվերդեանը բաց նամակ յղեց Հայաստանի գիտութիւնների ակադեմիայի նախագահ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումեանին, որտեղ մասնաւորապէս գրում էր հետեւեալը.

«Մենք չենք ծնւում պրո – կամ հակակոմունիստներ, մենք ծնւում ենք որպէս մարդ և մեր բնական մարդկային յատկութիւնները, որոնք քաղաքակրթութիւնը սահմանել է իրաւաբանական տերմինով **«Մարդու իրաւունքներ», հիմք է ծառայում խելամիտ հասարակարգի գոյութեան համար, որը ի վերջոյ ձգտում է իր**

բոլոր անդամների բարգաւաճմանը: Դուք ոչ միայն Հայաստանի գիտութիւնների ակադեմիայի նախագահն էք, դուք նաեւ դեպուտատ **էք: Ձեզ քաջ յայտնի է, որ Հայաստանում, ինչպէս և ամբո՛ղջ Խորհրդային Միութիւնում, մարդու իրաւունքները չեն պահպանւում: Կամ գուցէ՞ հարկ կայ յիշեցնելու 1965 թին Երեւանում տեղի ունեցած դէպքերը, 1965-74 թւականների դատավարութիւնները, և նրա մասին, որ ինձ դատարանով մեղադրեցին «վարկաբեկիչ փաստաթուղթ» պահելու մէջ, որն էր՝ «Մարդու իրաւունքների ընդհանուր դեկլարացիան»: Փորձե՞լ էք դուք, արդեօք, որեւէ ժամանակ, օգտուել ձեր դեպուտատական իրաւունքներից, ներկայ գտնուել փակ դատավարութիւնների: Ոչ: Օգնե՞լ էք դուք, արդեօք նիւթապէս որեւէ ժամանակ չափազանց կարիքաւոր հայ քաղբանտարկեալի ընտանիքի: Ոչ: Փորձե՞լ էք դուք պարզել ինժեներ Հայկ Սպանդարեանի մահուան պատճառը, որը մահացաւ ԿԳԲի բանտում»:**

Շարունակելով իր նամակը: Բագրատ Շահվերդեանը մեղադրում է Վիկտոր Համբարձումեանին նրանում, որ վերջինս ոչ միայն չի պայքարում մարդու իրաւունքների համար, այլ նոյնիսկ ստորագրում է ակադեմիկոս Սախարովին այդ պայքարի համար դատապարտող նամակը: Եթէ խօսքը վերաբերւէր ոչ թէ Վիկտոր Համբարձումեանին, որին անձամբ ճանաչում եմ, այլ մէկ ուրիշի, գուցէ ես ամբողջովին համաձայնւէի Բագրատ Շահվերդեանի հետ: Բայց խօսքը վերաբերւում է ակադեմիկոս Համբարձումեանին, որի շնորհիւ Հայաստանը դարձել է Խորհրդային Միութեան միակ հանրապետութիւնը, որտեղ գիտական կոչում ստանալու համար, բացի մասնագիտական առարկաներից, անհրաժեշտ է նաեւ քննութիւն յանձնել հայերէն լեզւից, որտեղ Ակադեմիայի ամբողջ գրագրութիւնը կատարւում է հայերէնով: Խօսքը այն ակադեմիկոսի մասին է, որի ազգօգուտ գործերի ցուցակը կը պահանջէր շատ աւելի մեծ տեղ, քան ես ունեմ իմ տրամադրութեան տակ: Եւ ահա մենք կանգնում ենք ընտրութեան առջեւ.- Մէկ կողմում գտնւում է ազգօգուտ գործեր կատարող ակադեմիկոսը, իսկ միւսում ազնիւ ու արի սիրտ ունեցող մի հայ երիտասարդ: Երիտասարդը պահանջում է ակադեմիկոսից՝ պայքարել մարդու իրաւունքների համար, իսկ մենք գիտենք, որ եթէ նա դա անի, ապա կը զրկւի ազգօգուտ գործեր կատարելու հնարաւորութիւնից:

Ո՞րն է կարեւորը: Ա՞զգը թէ անձը: Ազգի թէ անձի իրաւունքները:

Անշուշտ, առաջին հայեացքից թւում է, թէ երկուսն էլ կարեւոր են: Թէ՛ անձի և թէ ազգի իրաւունքների պաշտպանութիւնը հաւասարաչափ անհրաժեշտ է: Այո, ի հարկէ, երկուսն էլ կարեւոր են, բայց դժբախտաբար, այս երկու իրաւունքները հակասում են մէկը միւսին և կարեւորութիւն տալով մէկին մենք ստիպւած ենք զիջել միւսում: Եկէք յիշենք հին իմաստունների ասացւածքները, որոնք կարծում էին, որ ուժեղ կենդանիներից բաղկացած հօտը միշտ թոյլ է

լինում և հակառակը, որքան թոյլ է հօտի անդամը, այնքան ուժեղ է հօտը։ Այս հակասութիւնը, որ գոյութիւն ունի հօտի և հօտի անդամի միջեւ, տեղափոխելով մարդկային հասարակարգ մենք կը յանգենք այն եզրակացութեանը, որ որքան շատ են անհատի իրաւունքները, այնքան քիչ են ազգի իրաւունքները։ Եթէ այսօր Խորհրդային Միութիւնը աշխարհի հզօրագոյն պետութիւններից մէկն է, ապա դա ձեռք է բերւել խորհրդային մարդու իրաւազրկութեան հաշւին։ Եթէ Միացեալ Նահանգների պէս հզօր պետութիւնը, այնուամենայնիւ պարտութիւններ է կրում Վիետնամում կամ Անգոլայում, ապա դա նրա համար է, որ ամերիկացին օժտւած է մեծ քաղաքացիական իրաւունքներով։ Եւ իսկապէս, եթէ մենք իրաւունք ունենք հրաժարւելու մեր ազգային տուրքերից կամ զինւորական ծառայութիւններից, ապա ազգը իրաւունք չունի օգտագործելու մեզ և մեր դրամները ազգային նպատակների համար։

Եթէ հայ երիտասարդը հրաժարւում է զէնք վերցնելուց, ապա ազգը իրաւունք չունի նրան ուղարկելու հայրենիքը պաշտպանելու։ Ուրեմն ո՞րն է կարեւորը՝ ազգի իրաւունքը պահանջելու իմ զոհաբերութի՞ւնը, թէ իմ իրաւունքը՝ հրաժարւելու կռւելուց։ Կարծում եմ, որ ազգի իրաւունքը աւելի կարեւոր է։ Եւ եթէ մենք առաջնութիւն պէտք է տանք այս իրաւունքներից որեւէ մէկին, ուրեմն առաջնութիւնը ազգինն է։

Սակայն, նշանակո՞ւմ է դա արդեօք, որ առաջնութիւն տալով ազգային իրաւունքներին, մենք բոլորովին արհամարհում ենք մարդկային իրաւունքները։ Ի հարկ է՝ ո՛չ։

Երբ մենք ունենում ենք երկու կարեւոր գործօններ, սովորաբար հարցը դրւում է այսպէս. Կա՛մ տւեալ մարդկային իրաւունքների հետ միասին ապահովել **մաքսիմալ** ազգային իրաւունքները, և կամ էլ տւեալ ազգային իրաւունքների հետ միասին ապահովել **մաքսիմալ** մարդկային իրաւունքներ։ Եւրոպական երկրները ընտրել են երկրորդ ճանապարհը։ Եւ դա հասկանալի է։ Նրանց պետականութիւնը արդէն ապահովում է իրենց որոշակի ազգային իրաւունքները։

Մենք պէտք է ընտրենք առաջին ճանապարհը, քանի որ մեր տւեալ քաղաքացիական իրաւունքները պաշտպանւած են համապատասխան երկրների կողմից։

Եթէ բարոյականութեամբ օժտւած պետութիւնները սահմանափակում են իրենց ազգային իրաւունքները միջազգային ասպարէզում, մտահոգւելով իրենց քաղաքացիների իրաւունքների աւելացումով, ապա բարոյականութիւնից զուրկ պետութիւնները սահմանափակում են իրենց քաղաքացիների իրաւունքները, ձեռք բերելու համար ազգային իրաւունքներ։ Այս իմաստով մենք պէտք է անբարոյական դառնալու քաջութիւն ունենանք, որովհետեւ այ-

սօր մեր ազգային իրաւունքները հաւասար են զերոյի։ Մենք պարզապէս չկանք միջազգային ասպարէզում։ Մեզ անհրաժեշտ է, որքան հնարաւոր է, սահմանափակել մեր քաղաքացիական իրաւունքները, կամաւոր կերպով հրաժարուել մեզ շնորհուած նիւթական և այլ բարիքներից, որպէսզի մեր ձայնը լսելի դառնայ միջազգային ասպարէզում։

Ինչո՞ւ ճապոնացին կարող է Ճապոնիայի առատութեան պայմաններում ինքնասահմանափակել և ժուժկալ լինել, իսկ մենք հայերս անընդունակ ենք դրան։ Եթէ ընկերվարական ենք, եկէք ընկերվարութիւնը մեզանից սկսենք, այլ ոչ միջազգային **պրոլետարիատ**ից։ Ուրիշ խօսքով, ազգի և անձի իրաւունքների վէճը մենք լուծում ենք ազգային իրաւունքների օգտին։

Եւ, վերջապէս, երրորդ հակասութիւնը, որը գոյութիւն ունի համամարդկային և ազգային շահերի միջեւ, նոյնպէս ստիպում է մեզ ընտրութիւն կատարել համամարդկայինի և ազգայինի կարեւորութեան միջեւ։

Շատերին թւում է, որ եթէ անձի և ազգի իրաւունքների հարցում գլխաւոր տեղը գրաւեց ազգը, ապա ազգի և մարդկութեան հարցում էլ գլխաւոր տեղը պէտք է յատկացւի մարդկութեանը ,որի միայն մի մասն է կազմում ազգը և որի բոլոր հարցերը կը լուծուեն մարդկութեան հարցերի լուծման հետ միասին։ Այս տեսակէտի վրայ կանգնած մարդիկ ջանում են Հայ Դատը որակաւորել որպէս ընդհանուր համամարդկային Դատի մի մասնիկ, որը կը լուծւի համամարդկային արդարութեան հետ միասին։ Այստեղից առաջանում է բնական ցանկութիւն բոլոր կեղեքւած ժողովուրդների հետ միասին պայքարելու համամարդկային արդարութեան համար՝ լինի այդ արդարութիւնը ընկերվարութիւն, համայնավարութիւն թէ՛ այլ տեսակի արդարավարութիւն։

Ի՞նչ կարելի է ասել այս մասին։

Իմ խորը համոզմունքով այս տեսակէտը սխալ է։ Նախ և առաջ մարդկութիւն կոչւող միասնութիւնը **պրոլետարիատ** կամ **բուրժուազիա** կոչւող միասնութեան նման արհեստական է։ Մեզանից ոչ մէկը մարդկութեան իր պատկանելիութիւնը չի զգում, այդ պատկանելիութիւնը նա միայն գիտակցում է։ Դրա համար էլ, երբ մենք լսում ենք, որ Աֆրիկայում մարդիկ իրար են ուտում, մենք բոլորովին չենք ամաչում մարդկանց համար, որովհետեւ մենք մեզ չենք համարում այդ վայրենիների ընտանիքին պատկանող։ Բայց մենք ամօթից կը մեռնէինք, եթէ ասէին, որ Աֆրիկայում կամ Աւստրալիայում ապրող մի հայ՝ մարդ է կերել։ Մենք կարող ենք համակրել Բիաֆրայում կամ Իսպանիայում իր ազատութեան համար պայքարող ժողովուրդներին, բայց մեզանից ոչ մէկը իր զաւակին չի ուղարկի նրանց բանակը։ Էլ ինչո՞ւ ձեւացնել, թէ մենք իսկապէս այնքան ենք տառապում համամարդկային ցաւերով, այնքան ենք մտահոգւած ճապոնական կամ թուրքական բանւորների կենսամակարդակով,

այնքան ենք տանջւում Չիլիի կոմունիստների բանտարկութեան կապակցութեամբ, որ պատրաստ ենք հայկական գործերը թողնել ու նետւել մարդկութիւնը փրկելու ճակատները: Մենք պէտք է համոզւած լինենք, որ ուրիշներն էլ չեն թողնի իրենց ազգային խնդիրները և չեն նետւի հայութիւնը փրկելու:

Գոնէ մենք մեզ չխաբենք: Եթէ մենք մեր ինքնահաստատման համար ընտրել ենք համամարդկային ասպարէզը, ապա գոնէ մեր մեղքը օրինաչափութիւն չդարձնելու ազնւութիւնը ունենանք: Չփորձենք ապացուցել ուրիշներին, թէ միջազգային ճակատ ենք նետւել հայութիւնը փրկելու համար: Մեր պատմական դառը փորձը վկայում է, որ մեզ չփրկեցին ոչ իթթիհադականների, ոչ ռուսների, ոչ ընկերվարականների, ոչ ֆրանսիական լեգէոնի, ոչ համայնավարների և ոչ էլ որեւէ ուրիշի հետ մղւած միասնական պայքարները: Եւ դա հասկանալի է: Համամարդկային արդարութիւնը գեղեցիկ երազ է, որը անմիջապէս ցնդում է, երբ աւարտւում է այդ արդարութեան համար մղւող պայքարը: Համամարդկային շահերի մասին կարող են խօսել միայն նրանք, ովքեր կա՛մ դիտաւորեալ և կամ էլ կուրութեան պատճառով չեն ուզում տեսնել այն բնական և ընկերային տարբերութիւնները, որ գոյութիւն ունեն երկրագնդի վրայ:

Լեւոն Շանթը իր «Անհաւասարութիւնը ընկերային կեանքի մէջ» յօդւածում մանրամասնօրէն վերլուծում է այդ հակասութիւններ առաջացնող անհաւասարութիւնները: Յատկանշականը այն է, որ համարելով դիրքի անհաւասարութիւնը ամենահիմնականը, Շանթը վերագրում է դա բնութեանը, այսինքն համարում է դիրքի անհաւասարութիւնը բնական: Ես օգտակար եմ համարում, գոնէ վիճաբանութեան համար, մէջբերել Շանթից մէկ հատւած.

«Այդ դիրքի անհաւասարութեան առաջին աղբիւրը բնութիւնն է, անշուշտ. մէկը աւելի ուժեղ է ու կամքի տէր, ճարպիկ ու խելօք, կամ գրաւիչ ու լեզւանի, և կ'ազդէ միւսներուն վրայ, կը քաշէ իր ետեւէն, կ'ենթարկէ իր կամքին: Բաւական է քիչ մը ատեն ուշադրութեամբ դիտես երեխաներուն խաղը, որոնք պատահաբար իրարու են եկած, կէս ժամ չանցած արդէն մէկը կամ միւսը դարձած է ղեկավար, երբեմն և երկուքը: Անոնք են, որ կ'ընտրեն խաղցելիք խաղի տեսակը, խաղի ձեւերը, պայմանները, տեղերը, անոնք են որ կը դատեն ու կը վճռեն ծագած վէճերը: Մնացածները, ոմանք սիրով ու յօժար, երբեմն ոգեւորութեամբ, ոմանք մեքենաբար ու հոսանքէն տարւելով, անոնց պարզ հպատակներն են: Եւ եթէ այդ խումբը աւելի յաճախ գայ իրարու հետ խաղալու՝ այդ մէկ կամ երկու պարագլուխները կը դառնան խումբին մշտական ղեկավարն ու հոգին, առանց անոնց խաղը կարծես չի կազմակերպուիր, չի քալեր, թափ չ'ունենար: Բոլորովին նոյնն է կեանքի խաղին մէջ»:

Շանթի այս միտքը, որ դիրքի անհաւասարութիւնը բնական է, շատ արժէքաւոր է ոչ այնքան իր բովանդակութեան իմաստով, որքան հայ փիլիսոփա-

յական մտքի զարգացման պատմութեան իմաստով։ Երբ 20ական թուականներին ռուս փիլիսոփայ Բերդեայեւը զարգացնում էր իր անհաւասարութեան փիլիսոփայութիւնը, աշխարհի փիլիսոփաները շշմեցին և մինչեւ այսօր էլ շշմում են, թէ ի՞նչպէս կարողացաւ Բերդեայեւը այնպիսի մի ընկերվարական ժամանակաշրջանում, ինչպիսին էին 20ական թուականները, յաղթահարել տնտեսագիտութիւնը և վերագրել անհաւասարութիւնը Աստծուն և բնութեանը։ Իսկ ինձ համար միայն հիմա պարզւեց, որ Շանթը Բերդեայեւից 3 տարի առաջ զարգացրել է այն, ինչը հռչակաւոր փիլիսոփայ դարձրեց Բերդեայեւին։

Բայց զարմացնում է ինձ այս հարցում նաեւ մի ուրիշ բան։ Բերդեայեւի «Անհաւասարութեան փիլիսոփայութիւնը» այսօր դարձել է ռուս երիտասարդի սեղանի գիրքը։ Այդ գիրքը Խորհրդային Միութիւնում սեւ շուկայում վաճառւում է 100 ռուբլիով։ Կարդում է այդ գիրքը նաեւ Հայաստանի երիտասարդութիւնը։ (Շանթ, դժբախտաբար ձեռքները չի ընկնում)։ Իսկ մեր Սփիւռքի երիտասարդութիւնը ոչ միայն Շանթ չի կարդում, այլեւ Լենինով ու Մարքսով է տարւած։ Բայց ես շեղւեցի։

Բնական անհաւասարութիւնների հետ մէկտեղ կան նաեւ կենսաբնական տարբերութիւններ, ինչպիսիք են, օրինակ, կնոջ և տղամարդու միջեւ աշխատանքի բաժանումը։ Կան տարբերութիւններ սերունդների միջեւ, կրօնների մէջ, կրթութեան, տնտեսութեան, բնական հարստութիւնների և այլն, և այլն։ Համամարդկային արդարութիւնը պէտք է նշանակէր բոլոր խնդիրների լուծում՝ հայրերի և որդիների դարաւոր վէճը, կանանց և տղամարդկանց հաւասարութեան խնդիրը, դասակարգային խնդիրների լուծումը, կրօնական վէճերի լուծում, ազգային հարցերի լուծում և այլն, և այլն։ Որտե՞ղ կը մնար այս ծով խնդիրների մէջ Հայ Դատը։ Արդեօք կարո՞ղ ենք մենք այսօր մի որեւէ երկրի երիտասարդութեանը քաշել մեր կողմը և պահանջել նրանից, որ պայքարի մեր Դատի համար։ Կամ գուցէ թուրքական երիտասարդութիւնն է խոստանում մեզ լուծել մեր Դատը։ Եթէ այո՝ շատ լաւ, բայց եթէ ոչ, ինչո՞ւ մենք նրանց օգնենք։ Եւ վերջապէս, եթէ բոլոր այս ընկերային խնդիրները մեզ համար աւելի կարեւոր են, քան Հայ Դատը, ինչո՞ւ, օրինակ, չտեղափոխւել Շւեցարիա, որտեղ այդ խնդիրները գրեթէ ամբողջովին լուծւած են։ Կամ այդ դէպքում ինչո՞ւ դատապարտել նրանց, ովքեր Լիբանանից մեկնում են Կանադա կամ Հայաստանից Լիբանան։ Եթէ այնուամենայնիւ մենք դատապարտում ենք նրանց, ապա ունենանք նաեւ ազնւութիւնը յայտարարելու, որ մեզ համար ազգային շահերը վեր են բոլոր տեսակի համամարդկային շահերից։

Համամարդկային արդարութիւնը ոչ-իրականանալի ցնորք է, քանի դեռ մարդը այն է, ինչ որ է։ Ու այդ երեւակայական արքայութեան համար հայը իրաւունք չունի շռայլելու ոչ մէկ կաթիլ արիւն։ Պէտք է անել ամէն ինչ, որպէս-

զի հայ երիտասարդութիւնը թեքւի ընկերային արդարութեան ճանապարհից դէպի ազգային արդարութեան ճանապարհը, որովհետեւ համամարդկային և ազգային շահերի վէճը մենք պէտք է լուծենք յօգուտ ազգին։

Այսպիսով, մենք ընտրեցինք ազգային շահերը, ազգային իրաւունքը և ազգային բարոյականութիւնը որպէս աւելի բարձր կանգնած **կատեգորիա**ներ, քան համամարդկային շահերը, մարդու իրաւունքները և սահմանադրական իրաւունքները։ Եւ, ուրեմն, ես առաջարկում եմ դրանցով էլ ղեկավարւել մեր ազգային կեանքում, ստեղծելով համապատասխան մարմիններ և համապատասխան բարոյա-գաղափարախօսութիւն։ Իսկ ամենակարեւորը, անհրաժեշտ է փորձել հաւաքել համահայկական համագումար Խորհրդային Հայաստանի դիտորդներով միատեղ, քննարկելու համար հայկական խնդիրները։ Եթէ մենք այսօր այդ բանը չանենք, միեւնոյն է, կ՚անեն վաղը գալիք սերունդները, ուստի չդժւարացնենք նրանց աշխատանքը, որ մեզանից էլ շատ բան ունեն անելու։ Վերջացնելով կրկին դիմում եմ Շանթին.

«Ով ջարդուած է, բնականաբար, կը քաշուի մէջտեղէն, ով յոգնած է կը նստի, բայց ատով ոչինչ չի փոխուի։ Յետ քաշուողներուն տեղը կու գան նորերը, մէկ նստածի տեղը ոտքի կ՚ելլեն ուրիշները։ Եւ եթէ այսօր մենք բոլորս ալ քաշուինք ասպարէզէն, վաղը հրապարակ կու գայ նոր սերունդը հին դրօշակը բարձր պահած իր ձեռքին, որովհետեւ անիկա ալ ապրիլ պիտի ուզէ իր ազգային կեանքովը։ Վերջապէս պէտք է հասկանանք, որ ինքն իր տէրը ըլլալու և իր անկախութեան հասնելու պահանջը իմ ու քու հնարած խաղը չէ, ոչ մեզմով կը սկսի և ոչ ալ մեզմով կը վերջանայ»։

1977

ՀԱՅ ԴԱՏԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԱԻՍՏՐԻԱՅԻ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Է. Յովհաննիսեան

Այս տարւայ ապրիլի 1ին, Աւստրիայի Ինսբրուկ քաղաքում տեղի ունեցաւ «Դոկտոր Կառլ Ռեներ Ինստիտուտ»ի քաղաքական սեմինարը, որ նւիրւած էր Մերձաւոր Արեւելքի ճնշւած ազգային փոքրամասնութիւններին։

Այս Ինստիտուտը Աւստրիայի Ընկերվարական կուսակցութեան հիմնարկն է, որը նախապատրաստում է կուսակցութեան ծրագրի նախագիծը և մշակում է կուսակցութեան ներքին և արտաքին քաղաքականութեան ուղին։

Աւստրիայի Ընկերվարական կուսակցութեան ծրագրի փոփոխութեան կապակցութեամբ կազմակերպւել էր այս սեմինարը, որը պէտք է համապատասխան կէտեր մշակէր Մերձաւոր Արեւելքի ժողովուրդների քաղաքական ճակատագրի, աւելի ճիշտ Ընկերվարական կուսակցութեան այդ հարցում դիրքորոշման վերաբերեալ։

Սեմինարին հրաւիրւած էին Հայկական Հարցերի Հաստատութեան ներկայացուցիչները, Ինսբրուկի համալսարանի, Վիեննայի Քաղաքական Ինստիտուտի և մի շարք այլ հաստատութիւնների ներկայացուցիչներ։

Սեմինարի ընթացքում լսւեց երեք զեկուցում։ Իսկանդէր Համան պատմեց քրդական հարցի մասին, շեշտը դնելով Իրաքի քրդերի քաղաքական կացութեան վրայ։ Դոկտոր Յոհան Բունզլը կանգ առաւ պաղեստինեան հարցի վրայ։ Իսկ հայկական խնդիրների շուրջ խօսեց Համբարձում Գարասուն։

Հետաքրքրական է այս երիտասարդի ճակատագիրը։ Թուրքահպատակ լինելով, արդէն հինգ տարի է, ինչ ուսանում է Վիեննայում։ Տնտեսագիտութեան առընչւող նրա մասնագիտութիւնը որեւէ կապ չունի ոչ պատմութեան և ոչ էլ հասարակագիտութեան հետ։

Սակայն ազգային զգացմունքների արթնացումը ստիպեց նրան զործօն մասնակցութիւն բերել Հայ Դատի ուղղութեամբ տարւող աշխատանքներին, որի համար թուրքական կառավարութիւնը զրկեց նրան թուրքական հպատակութիւնից։ Գարասուն ստիպւած դիմեց Աւստրիայի կառավարութեանը և, առաջին անգամ լինելով Աւստրիայի կառավարութեան կողմից քաղաքական ապաստան տրւեց «դեմոկրատական» Թուրքիայի քաղաքացիներից մէկին։

«Սա է պատճառը,- ասաց Գարասուն,- որ ես այսօր կարող եմ ազատ խօսել Թուրքիայում տիրող անտանելի կացութեան մասին»։ Նրա զեկուցումը հետաքրքրական էր այն իմաստով, որ շեշտը դրւած էր ոչ թէ անցեալի, այլ ներ-

կայի վրայ: Անշուշտ նա խօսեց նաեւ ցեղասպանութեան մասին, սակայն աւելի մանրամասնօրէն նա կանգ առաւ այն անարդարութիւնների վրայ, որոնք անմիջականօրէն կապ ունէին Էջեւիտի և նրա այսպէս կոչւած ընկերվարական կուսակցութեան հետ:

Գարասուն պատմեց նաեւ այն մասին, թէ ինչպէս ինքը Յարութիւնեանից Գարասու է դարձել: Մի խօսքով, նրա զեկուցումը հիմնականում ընթացաւ այն թեզի շուրջ, թէ Թուրքիան մնացել է Եւրոպայի մեծ հիւանդը: Հայկական Հարցերի Հաստատութիւնը մտադրել է հրատարակել Գարասուի զեկուցումը՝ գերմաներէնով, անգլերէնով և թուրքերէնով, ուստի զեկուցման վրայ կանգ չեմ առնում մանրամասնօրէն:

Զեկուցումները լսելուց յետոյ, սեմինարը անցաւ բանավէճի, որը սկսելու համար Աւստրիայի Ընկերվարական կուսակցութեան ներկայացուցիչը բոլոր ներկայ գտնուողներին արաւ հետեւեալ հարցումը.

«Ի՞նչ կարող է անել Աւստրիայի Ընկերվարական կուսակցութիւնը և Բ. Ինտերնացիոնալը փոքրամասնութիւնների հարցերը լուծելու համար»:

Խօսք առնելով՝ ես ասացի հետեւեալը.

«Հայկական Հարցերի Հաստատութիւնը, ուսումնասիրելով հայկական Հարցի ներկայ կացութիւնը, յանգել է այն եզրակացութեան, որ այսօր աշխարհում գոյութիւն չունի որեւէ միջազգային կազմակերպութիւն, որը պաշտօնապէս զբաղւի կամ նոյնիսկ հետաքրքրւի Հայկական Հարցով: Դա նշանակում է, որ աշխարհի ընկերվարական կուսակցութիւնները, ճնշւածների ու շահագործւածների միակ պաշտպանների համբաւ ունեցողները, պէտք է որ այդ հարցը վերցնեն իրենց ձեռքը: Դրա համար էլ ես անում եմ հետեւեալ երկու առաջարկները.

«1.- Հայկական ընկերվարական կուսակցութիւնը՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը իր ստեղծման օրից (1890 թ.) պայքարել և պայքարում է հայ ժողովրդի մարդկային և ազգային իրաւունքների համար, սակայն ինչ-ինչ պատճառներով նա այսօր միջազգային ընկերվարական ընտանիքի անդամ չէ: Բազմաթիւ դիմումներ և նամակներ այս ուղղութեամբ ոչ մի արդիւնք չտւեցին: Դա նշանակում է, որ հայ ժողովուրդը զրկւած է իր խնդիրները ընկերվարական կազմակերպութիւններին հասցնելու հնարաւորութիւնից:

«Այս իմաստով՝ մեր և մեր նմանների նկատմամբ առաջին օգնութիւնը կը լինէր այն, որ Աւստրիայի Ընկերվարական կուսակցութիւնը, որը յայտնի է իր անաչառութեամբ և հետեւողականութեամբ, հարց յարուցէր բոլոր իսկական ընկերվարական կուսակցութիւնների մօտ՝ Դաշնակցութիւնը՝ Ընկերվարական Ինտերնացիոնալի մէջ ընդունելու մասին: Ինչ մնում է «իսկական» ընկեր-

վարական հասկացութեանը, ապա նրա հետ ես կապում եմ իմ երկրորդ առաջարկը։

«2.- Ընկերվարութիւնը շահագործւողների և շահագործողների բախումը լուծելու գաղափարախօսութիւն է, հասարակական անարդարութիւնները լուծելու միջոց։ Սակայն, եթէ այսօր մենք, Մարքսի և Լենինի շնորհիւ, հիանալի գիտենք շահագործւող և շահագործող դասակարգերի սահմանումը տնտեսական հողի վրայ, ապա մենք ոչինչ չգիտենք շահագործող և շահագործւող ազգերի մասին։ Մեզ շատերիս համար անսպասելիօրէն իրենց շահագործւած են համարում բոլոր տնտեսական ազատութիւններից օգտւող Բելգիայի ֆլամանները և Կանադայի Քեբեկի ֆրանսացիները։ Դրա համար էլ անհրաժեշտ է գտնել «շահագործւած ազգ» հասկացութեան սահմանումը և ընկերվարական ընտանիքի մէջ չառնել շահագործող ընկերվարականներին, օրինակ՝ Էջեւիտի կուսակցութիւնց»։

Մեմինարի ղեկավարութիւնը յարմար գտաւ այս հարցերի շուրջ բանավէճերը տեղափոխել աշխատանքային նեղ շրջանակներ, որի համար ստեղծուեցին երեք խումբ. Հայկական Հարցի խումբ, Պաղեստինեան Հարցի խումբ և Քրդական Հարցի խումբ։ Սակայն մինչեւ այդ խմբերի աշխատանքի անցնելը, սեմինարի ղեկավարութիւնը հասկացրեց, որ խմբերի որոշումները չեն կարող լինել շատ ընդարձակ, որովհետեւ խօսքը վերաբերում է Աւստրիայի Ընկերվարական կուսակցութեան նոր ծրագրի մէջ գրւելիք կէտերին։

Հայկական խմբում, բացի երեք աւստրիացիներից, մասնակցեցինք մենք բոլորս, այսինքն՝ ես, մեր Հաստատութեան իրաւաբան դոկտոր Միւնիխը, Ռաֆայէլ Յակոբեանը, Համբարձում Գարասուն և Թադէոս Կոչարեանը։ Խմբի աշխատանքները ընթացան բուռն վէճերի մէջ, բայց չափազանց ջերմ մթնոլորտում։ Ի վերջոյ, դոկտոր Միւնիխի ջանքերով, յաջողւեց Աւստրիայի Ընկերվարական կուսակցութեան նոր ծրագրի համար առաջարկել հետեւեալ կէտը.

«Աւստրիայի Ընկերվարական կուսակցութիւնը չի կարող պաշտպանել ոչ մի ռեժիմ, որը ազգալուծում է ազգային փոքրամասնութիւններ, ինչպէս, օրինակ Թուրքիան՝ հայերին և քրդերին»։

Այս ձեւակերպումը հաստատւեց սեմինարի լիագումար նիստում և որպէս առաջադրանք ուղարկւեց կուսակցութեան համագումարին։

Չգիտեմ, կ՚ընդունի՞ թէ ոչ այս առաջարկը, բայց որ կը քննարկուի, արդէն իսկ կարելի է յաջողութիւն համարել։ Բացի այս պաշտօնական մասից, ոչ պաշտօնական կարգով որոշւեց քրդերի և հայերի անունից նամակ յղել Ընկերվարական Ինտերնացիոնալին, բողոքելով Էջեւիտի կուսակցութեան Ինտերնացիոնալ մուտք գործելու դէմ։

1978

ՀԱՅ ԴԱՏԸ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐ

Է. Յովհաննիսեան

Աւստրիոյ Հայկական Միութիւնը հրաւիրեց ինձ Վիեննա, Ապրիլ 24ի առիթով, մի դասախօսութիւն տալու Հայ Դատի մասին: Հրաւիրողները յիշեցրին, որ մենք բազմիցս պնդել ենք, թէ Ապրիլ 24ը այլեւս ոչ թէ սգատօն է, այլ մեր քաղաքական պահաջների օր:

Ուստի խնդրում էին խօսել ոչ թէ ցեղասպանութեան փաստի մասին, այլ հայկական պահանջների մասին, մասնաւորապէս կանգ առնելով հետեւեալ հարցերի վրայ:

ա) Ի՞նչ է նշանակում «Հայ Դատ» և ինչո՞վ է նա տարբերւում «Հայկական Հարց» հասկացողութիւնից:

բ) Հայ Դատի համար մղող պայքարում կամ այդ ուղղութեամբ տարւող գործունէութեան մէջ ի՞նչ տեղ է յատկացւած Խորհրդային Հայաստանին: Նախատեսո՞ւմ է արդեօք որեւէ հակախորհրդային պայքար, օրինակ՝ մարդու կամ ազգերի պաշտպանութեան ուղղութեամբ:

գ) Ո՞րն է Հայ Դատի ուղղութեամբ տարւող աշխատանքների մօտաւոր նպատակը:

Բոլոր այս հարցերին ես պատասխանելու եմ Ապրիլ 24ին, Վիեննայում, սակայն մտածեցի, որ թերեւս իմ այս պատասխանները վիճելի լինեն և որոշեցի յանձնել այն մամուլին, քննարկման կարգով:

Նախ ես կարծում եմ, որ Հայ Դատը Հայկական Հարց չէ: Սովորաբար դատարանի քննարկման հարց է դառնում այն հարցը, որը կապւած է տւեալ երկրի օրէնքների խախտման հետ: Ուստի մենք **դատ** պիտի անւանենք այն, որ կապ ունի որեւէ օրէնքի խախտման հետ, անկախ նրանից՝ իրաւաբանական թէ բարոյական էութիւն ունեն խախտւած օրէնքները:

Այս իմաստով, Հայ Դատը կապւած է հայ ազգային իրաւունքների խախտման հետ և ձեւակերպւում է որպէս այդ իրաւունքների վերականգնման նպատակ: Նպատակի բովանդակութիւնը կարող է տարբեր լինել տարբեր կուսակցութիւնների և կազմակերպութիւնների ըմբռնմամբ, սակայն մէկ բան պարզ է. «Հայ Դատը» կարող է օրակարգի վրայ գալ միայն այնտեղ, որտեղ կան հայ ժողովրդի իրաւունքների խախտումներ: Թէ որքանո՞վ են խախտւած հայ ժողովրդի իրաւունքները՝ Հայ Դատի բովանդակութիւնն է: Ո՞ւմ կողմից են խախտւում այդ իրաւունքները՝ Հայ Դատի համար մղող պայքարի ուղղութիւնն է:

Բայց Հայ Դատը Հայկական Հարց չէ այնքան ժամանակ, որ նա մնում է իրաւախախտման ոլորտում և ճանաչւում է միայն տուժող կողմից: Հայ Դատը Հայկական Հարց կը դառնայ այն դէպքում, երբ ճանաչւում կը գտնի այսպէս կոչւած «աշխարհի տէր»երի կողմից, որոնք իրենց իսկ շահերից ելնելով կը գտնեն, որ այդ Դատը անհրաժեշտ է լուծել և երբ այդ մասին բանակցութիւններ կը վարւեն:

Աշխարհի այդ «տէրերը» կարող են լինել թէ՛ մեծ պետութիւնները և թէ հասարակութիւնը (միջազգային բանւորութիւնը, օրինակ):

Հայ Դատը 60 տարի առաջ, մինչեւ Լօզանի Խորհրդաժողովը, Հայկական Հարց էր, որովհետեւ այդ հարցով զբաղւած էին աշխարհի այն ժամանակւայ «տէր»երը, դիւանագէտները, խորհրդաժողովները և Ազգերի Լիգան:

Այժմ Հայկական Հարց գոյութիւն չունի և Հայերի ճակատագրով ոչ ոք չի զբաղւում և այդ հարցով ոչ ոք չի հետաքրքրւում: Է՛լ չխօսենք այն մասին, որ ո՛չ ոք չի փորձում լուծել այդ հարցը:

Ուստի մեր Դատը առայժմ գտնւում է իրաւախախտման ոլորտում և ճանաչւում է որպէս այժմէական միայն մեր կողմից: Եւ քանի մեր դատը առայժմ դուրս է մնացել այն ասպարէզից, որտեղ քննարկւում են միջազգային քաղաքական հարցերը եւ որտեղ տեղի են ունենում սակարկութիւններ սահմանների, վարչակարգերի, հոգատարութեան, պայմանագրերի և ՄԱԿի զօրքերի հսկողութեան շուրջ, մենք կարող ենք խօսել առայժմ միայն Հայ Դատի ընդհանուր գծերի մասին, այսինքն հայ ժողովրդի իրական, պատմական և բարոյական իրաւունքների խախտման մասին:

Ամէն ժողովուրդ իրաւունք ունի ամբողջական հայրենիքի, որը ազատ լինի ու անկախ և որը ազգահաւաք կատարելու հնարաւորութիւն ունենայ: Այս իրաւունքներով օժտւած են բոլոր ժողովուրդները, այդ թւում՝ նաեւ հայ ժողովուրդը: Հէնց սա էլ Հայ Դատի ձեւակերպման սկզբունքն է, այսինքն՝ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՏԵՂԾՈՒՄ, ՍՓԻՒՌՔԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ ԻՐ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀՈՂԵՐԻ ՎՐԱՅ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄ ԱԶԱՏ ՈՒ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ:

Սակայն, բարոյական այս նպատակը ի՞նչպէս քաղաքական նպատակի վերածել, ի՞նչպէս Հայ Դատը Հայկական Հարց դարձնել: Սա էլ Հայ Դատի ուղղութեամբ կատարւող աշխատանքների բովանդակութիւնն է, որի մասին պէտք է խօսեմ մի քիչ աւելի ուշ: Մինչեւ այդ ուզում եմ պատասխանել ամենակարեւոր հարցին, որը ծագում է ամէն անգամ, երբ խօսւում է ամբողջական կամ միացեալ Հայաստանի մասին: Այդ հարցը՝ Խորհրդային Հայաստանի կամ Խորհրդային Միութեան նկատմամբ բռնած դիրքն է:

ՀԱՅ ԴԱՏԸ, ԻՐ ՄԷՋ ՀԱԿԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՈՉ ՄԻ ՏԵՍԱԿ ՊԱՅՔԱՐ ՉԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ: Ես ընդգծում եմ այս նախադասութիւնը, որովհետեւ չնայած նրան, որ արդէն վաղուց Հայ Դատի համար պայքարող կազմակերպութիւնները կանգնած են այս դիրքերի վրայ, այնուամենայնիւ, շատերը շարունակում են Հայ Դատի ուղղութեամբ տարուող աշխատանքները հակախորհրդային համարել: Այս սխալը յաճախ կատարում են նաեւ Խորհրդային Հայաստանի որոշ ղեկավարներ:

Սրա համար, իմ կարծիքով, կան երկու հիմնական պատճառներ.

Առաջինը աւանդոյթն է: Իսկապէս, ժամանակին Հայ Դատը անմիջականօրէն կապած էր Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Միութեան կառավարութիւնների քաղաքականութեան հետ, ուստի արտասահմանեան հայութեան կողմից նրանց ներկայացուած պահանջները բնական էին: Նրանք չէին անում և չարեցին այն, ինչ կարող էին անել: Այն դարաշրջանի մասին, որը աւարտուեց Համաշխարհային Երկրորդ պատերազմից յետոյ, մօտաւորապէս 47 թուականներին, գրուած են բազմաթիւ էջեր և այստեղ այդ հարցը կրկին քննարկելու տեղը չէ:

Երկրորդը Հայ Դատի ձեւակերպման մէջ «ամբողջական» կամ «միացեալ» Հայաստան հասկացողութեան մէջ է: Այդ հասկացողութիւնը ստեղծում է այն տպաւորութիւնը, որ Հայ Դատի համար պայքարողները ուզում են անջատել Խորհրդային Հայաստանը Խորհրդային Միութիւնից և հէնց դրանով էլ հակադրւում են թէ՛ Խորհրդային Միութեան և թէ Խորհրդային Հայաստանի կառավարութիւններին: Սակայն դա այդպէս չէ:

Նախ «միացեալ» կամ «ամբողջական» ամենեւին էլ չի նշանակում Խորհրդային Հայաստանի անջատում: Նոյն չափով դա կարող է նշանակել Խորհրդային Հայաստանին Թուրքահայաստանի հողերի կցում: Եւ, յիրաւի, կը գտնուի՞ արդեօք այսօր աշխարհում որեւէ հայ, որը դէմ լինի Հայ Դատի նման լուծմանը, այսինքն Ղարսի կամ Արարատի Խորհրդային Հայաստանի կցմանը:

Ճիշտ է, ես հանդիպել եմ մի այդպիսի անձնաւորութեան, որը Միւնխենի հայկական ակումբում յայտարարեց, թէ, եթէ Թուրքահայաստանի հողերը կցւելու են Խորհրդային Հայաստանին, ապա լաւ է որ նրանք մնան Թուրքիային: Բայց մենք բնականոն մարդկանց մասին ենք խօսում, այլ ոչ թէ ատելութիւնից խենթացածների մասին: Մի խօսքով՝ «միացեալ» կամ «ամբողջական» հասկացողութիւններից համախորհրդայնութիւն ամենեւին էլ չի բխում:

Հայ Դատի համար ծաւալուած գործունէութեան մէջ հակախորհրդայնութիւն չի մտցնում նաեւ այսպէս կոչուած մարդու իրաւունքների պաշտպանութեան շարժումը, որի հետ Հայ Դատը ոչ մի կապ չունի: Անշուշտ, կարելի էր

ենթադրել, որ մարդու կամ, առաւել եւս, ազգային իրաւունքների պաշտպանութեան շարժումը պէտք է որ նպաստէր հայ ժողովրդի իրաւունքների պաշտպանութեան գործին:

Այդ շարժումը, որ այսօր հովանաւորւում է որոշ մեծ պետութիւնների կողմից, պէտք է որ մտահոգւէր հայ ժողովրդի ճակատագրով և «**Ամենստի ինտրնաշընըլ**» կազմակերպութիւնը պէտք է որ զբաղւէր ոչ միայն Պարոյր Հայրիկեանի, այլ նաեւ 50,000 իրաւազրկւած պոլսահայութեան հարցով, որոնց արգելւած է որեւէ պետական պաշտօնի անցնելը, նոյնիսկ փողոց մաքրողի:

Բայց մենք արդէն լաւ գիտենք, թէ ո՛վ և ի՛նչպէս է ստեղծում այն շարժումները, որոնց ցանցը, դժբախտաբար, երբեմն ընկնում են նաեւ մեր երիտասարդները: Այսօր Չինաստանում մարդու իրաւունքները խախտւում են շատ աւելի խիստ կերպով, քան Խորհրդային Միութիւնում: Կիպրոսում թուրքերը շարունակում են բռնաբարել յոյներին: Ուգանդայում մարաջախտ Իդի Ամինը մարդկանցով կոկորդիլոսներ է կերակրում: Պարսկաստանում զօրավարներ են զնդակահարում, բայց այս ամենի մասին զարմանալիօրէն լռում է իրաւապաշտպանական շարժումը:

Պատերազմի ժամանակ Ղրիմից, գերմանացիների հետ համագործակցելու մեղադրանքով, արտաքսւած Ղրիմի թաթարների հարցը իրաւապաշտպանների գործունէութեան կենտրոնումն էր: Սակայն, երբ Թուրքիայի պաշտօնական ներկայացուցչիները յայտարարում են, թէ 1915ին հայերը ջարդւեցին ռուսների հետ համագործակցելու համար, իրաւապաշտպանները լուռ են: Այդ պաշտպանները ունեն շատ յստակ և մի նպատակի տանող ուղղութիւն: Եւ ես, անշուշտ, չեմ քննադատում նրանց այդ ուղղութիւնը, ես միայն ուզում եմ ասել, որ այդ հասարակական և քաղաքական ուղղութիւնը ոչ մի կապ չունի Հայ Դատի հետ:

Քաղաքական այդ ուղղութիւնը նպաստում է հրէական դատին և ստեղծւել է հրեաների կողմից: Հակառակ դէպքում, ինչո՞ւ բացատրել այն փաստը, որ խորհրդային բանտում գտնւող ռուս այլախոհ ազգայնական Վլադիմիր Օսիպովը ոչ մի պաշտպանութիւն չի գտնում արտասահմանում իրաւապաշտպանների մօտ: Նոյնիսկ Սոլժենիցինը չկարողացաւ մի շարժում կազմակերպել նրա օգտին:

Մի խօսքով, արտասահմանում և Խորհրդային Միութեան մէջ ծաւալւած իրաւապաշտպանական շարժումը ոչնչով չի օգնում Հայ Դատին, ուստի Հայ Դատով զբաղւողները չպէտք է որեւէ ձեւով մասնկցեն այդ շարժմանը: Կրկնում եմ, խօսքս միայն Հայ Դատով զբաղւողների մասին է: Մնացածը, ազնիւ սիրտ ունեցող երիտասարդներ, արդարութիւն որոնող մարդիկ երեւի չեն կարող չմասնակցել նման շարժումներին: Միայն թէ այստեղ էլ զգոյշ պէտք է

լինել, որպէսզի ազնիւ սրտերի տէրերը փորձառու դիւանագէտների խաղերի զոհը չդառնան։

Այստեղ ուզում եմ յիշեցնել, որ ժամանակին Մ. Նահանգների նախագահ Ուիլսոն, որը շատ մտահոգւած էր ազգերի ինքնորոշման իրաւունքներով, Հայաստանի հոգատարութիւնը վերցնելու որոշում տալուց առաջ, այնտեղ ուղարկեց մի պատւիրակութիւն՝ զօրավար Գարբորտի ղեկավարութեամբ, որին յանձնարարեց.- «Մենք ուզում ենք, որ Դուք տեղի վրայ ուսումնասիրէք քաղաքական, զինւորական, աշխարհագրական, վարչական, տնտեսական և այլ պայմանները, որոնք կարող են իրական հետաքրքրութիւն ներկայացնել Ամերիկայի համար»։

Այն ժամանակ աշխարհի բոլոր ազնիւ սիրտ ունեցող երիտասարդները տարւել էին Ուիլսոնի ազգասիրութեամբ, ինչպէս այսօր տարւել են Կարտերի մարդասիրութեամբ։ Իսկ նախագահ Ուիլսոնի զօրավարները այդ ժամանակ Հայաստանում սովի, արեան և արտասուքների մէջ Ամերիկայի իրական շահերն էին որոնում։ ԵՒ ԼԱՒ ԷԻՆ ԱՆՈՒՄ։ Դիւանագէտները միշտ էլ իրենց երկրի շահերն են պաշտպանում, միայն թէ մենք չխաբւենք։

Այսպիսով, Հայ Դատը, ըստ իր էութեան, ոչ հակառուս է և ոչ էլ հակախորհրդային։ Հակառակ ձեւի մտածողները կա՛մ շփոթութեան մէջ են և կամ չեն կարողանում դուրս գալ քաղաքական անցեալի ճնշումից։

Արդեօ՞ք սա նշանակում է, որ Խորհրդային Հայաստանը Հայ Դատի ուղղութեամբ անելիք չունի։ Ոչ, չի նշանակում։ Խորհրդային Հայաստանը հողերի ամբողջացման և ազգահաւաքի գործում շատ բան ունի անելու։ Չէ՞ որ մեր հողերը ոչ միայն Թուրքիայումն են, այլ նաեւ Խորհրդային Ադրբեջանում։ Չէ՞ որ Սփիւռք կայ ոչ միայն արտասահմանում, այլ նաեւ Խորհրդային Միութիւնում։ Չէ՞ որ ապագայ ամբողջական Հայաստանի տնտեսութեան, գիտութեան և շատ ուրիշ բնագաւառների հիմքը Խորհրդային Հայաստանն է լինելու։

Բայց «մենք» չէ, որ պէտք է «նրանց» սովորեցնենք, թէ ինչ է պէտք անել այդ ուղղութեամբ։ Իրենք կը գտնեն Հայ Դատից բխող նպատակներին տանող բոլոր հնարաւոր ճանապարհները։ Միայն թէ Հայ Դատը դառնայ համահայկական գաղափար։

1979

ՀԱՅ ԴԱՏԻ ՄՕՏԱԿԱՅ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Է. Յովհաննիսեան

Որո՞նք են Հայ Դատի ուղղութեամբ տարուող աշխատանքների գլխաւոր նպատակները և գործելակերպը, որպէս երրորդ երեսը Հայ Դատի։

Փորձեմ պատասխանել այս դժուարին հարցումին։

Եթէ ինձանից պահանջէին ամենակարճ ձեւով ձեւակերպել Հայ Դատի մօտակայ նպատակը, ես կը պատասխանէի. «Համոզենք, որ մենք կանք»։ Նրանում, որ մենք կանք, մենք պէտք է համոզենք սկզբից մեզ, յետոյ մեր հնարաւոր բարեկամներին ու դաշնակիցներին, յետոյ էլ մեր թշնամուն։ Անշուշտ, շատ լաւ կը լինէր, որ մեր թշնամին ամենավերջինը իմանար մեր գոյութեան մասին։ Բայց հազիւ թէ դա հնարաւոր լինի մեր պայմաններում, ուստի պէտք է հաշուի առնենք որ մեր և մեր բարեկամների հետ միասին մեր թշնամին էլ իմանալու է, որ «մենք կանք»։

Անշուշտ, մեր գոյութիւնը ոչ ոքի համար նորութիւն չէ։ Այս մասին վկայում են մեր եկեղեցիները, մշակոյթը, դպրոցներն ու ակումբները։ Սակայն Հայ Դատի տեսանկիւնից, երբ մենք ասում ենք, թէ «մենք կանք», նշանակում է, որ մենք կանք որպէս քաղաքական ազգ։ Այսինքն նշանակում է, որ մենք ունենք գիտակցւած քաղաքական նպատակներ, այդ նպատակին հասնելու կամք և որ, մեզ քաղաքական ազգ համարելով, աշխարհի դիւանագէտները հաշուի են առնում մեզ իրենց քաղաքական հաշուարկներում։

Այսպիսի գոյութեան համար նախ և առաջ անհրաժեշտ է ապահովել ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԵՔԵՆԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ։ Հայ Դատի գաղափարը մենք պէտք է կարողանանք փոխանցել սերունդից սերունդ։ Հայ Դատը կարող է լուծւել միայն այն դէպքում, երբ տասնամեակներ, գուցէ և դարեր շարունակ ազգի բոլոր սերունդները քաղաքականացւած մնան, որովհետեւ մենք չգիտենք թէ ո՞ր սերնդին բախտ կը վիճակւի լուծել այդ հարցը։ Եւ, ահա, Հայ Դատի գաղափարը վառ պահելու նպատակը, սերնդից-սերունդ այն փոխանցելը Հայ Դատի մօտակայ նպատակներից մէկն է։

Ի՞նչպէս անել այդ։ Այստեղ բոլոր ճանապարհները օգտակար են, սակայն ամենագլխաւորը ազգային գործօն գործունէութիւնն է միջազգային ասպարէզում։ Դժբախտաբար, մարդը այնպէս է ստեղծւած, որ նա հոգեբանօրէն իրեն աւելի հաստատւած է զգում, երբ իր մասին օտարներն են գրում։ Ֆրանսիական կամ գերմանական մամուլում մի երկու խօսք հայերի մասին աւելի է մեզ ոգեւորում, քան հայի կողմից գրւած մի ամբողջ հատոր։ Եւ դա երեւի աշխար-

հի օրէնքն է, որը «Աւետարան»ում իսկ նշուեց՝ «մարգարէ չկայ հայրենիքում» գաղափարով: Մենք ինքնահաստատուում ենք ուրիշների մէջ, մեր ինքնագիտակցութեան գլխաւոր մասը կազմւած է նրանից, թէ ինչ են մեր մասին մտածում ու ասում ուրիշները:

Ուստի, բոլոր այն տեսակի գործերը, որոնք մեր Դատը ուրիշներին են հասցնում, նպաստում են մեր իսկ ինքնագիտակցութեանը և ժառանգականութեան մեքենայի աշխատանքին: Այստեղ օգտակար են նոյնիսկ ծայրայեղական միջոցները, իսկ եթէ մի քիչ աւելի անկեղծ լինենք, ապա կը նշենք, որ ծայրայեղական միջոցները հէնց միայն այս գործին են նպաստում: Բերեմ մի փոքրիկ օրինակ:

Այսօր Սպանիայի բասկերը ահաբեկչական գործունէութեան իմաստով գրաւում են աշխարհում առաջին տեղը: Մէկ տարւայ ընթացքում նրանք կատարել են աւելի քան 100 մահով աւարտւած ահաբեկչութիւններ: Բայց այս նոյն Սպանիայում մէկ տարւայ ընթացքում ինքնաշարժների, օդանաւերի և գնացքների վթարի հետեւանքով զոհւել են աւելի քան 10,000 մարդ, այսինքն ահաբեկչութեան զոհերից 100 անգամ աւելին:

Եւ ի՞նչ: Ո՞ր սպանացին է հաշւի նստել վթարների վիճակագրութեան հետ և հրաժարւել ինքնաշարժից կամ օդանաւից: Էլ ի՞նչպէս կարող են բասկերը կամ մէկ ուրիշ ազգ յոյս ունենալ, որ իր ահաբեկչական գործունէութեան հետեւանքով որեւէ պետութիւն կարող է փոխել իր քաղաքականութիւնը կամ հրաժարւել ինքնաշարժներից շատ աւելի դժւար հրաժարւելիք բանից՝ իշխանութիւնից: Սակայն, ինչպէս մենք տեսնում ենք, ծայրայեղականները շարունակում են իրենց գործունէութիւնը և որոշ իմաստով յաջողութիւնների են հասնում:

Նոյն բասկերը, օրինակ, որոշ ինքնավարութիւն ստացան, իսկ պաղեստինցիները պաղեստինեան դատը պաղեստինեան հարց դարձրեցին: Բայց հէնց սա է կարեւորը, որ բասկերին ու պաղեստինցիներին զիջեցին ոչ թէ նրա համար ,որ վախեցան նրանց ահաբեկչութիւններից, այլ նրա համար, որ հասկացան պաղեստինցիների ու բասկերի քաղաքական ազգ դառնալու իրողութիւնը: Դիւանագէտները հասկացան, որ նրանց ժառանգութեան մեքենան գործում է և վաղ թէ ուշ նրանք հասնելու են իրենց քաղաքական նպատակներին:

Մի խօսքով՝ մեր քաղաքական ազգայի՛ն ինքնագիտակցութիւնը ոչ միայն մեզ է անհրաժեշտ, այլ նաեւ մեր բարեկամներին ու թշնամիներին՝ մեզ հետ հաշւի նստելու համար:

Մեր մօտակայ նպատակներից երկրորդը քաղաքական հոտառութիւն ձեռք բերելու հարցն է: Այնքան ժամանակ, քանի դեռ մեր հասարակական գործունէութեան մէջ մեր զգացմունքները գերակշիռ դեր են կատարում, Հայ Դատը, որքան էլ որ նա գիտակցւած լինի, կը մնայ որպէս մի բարոյական նպատակ թէ՛

մեզ և թէ ամբողջ աշխարհի համար: Այս քաղաքական հոտառութեան ձեռքբերումը կապւած է մէկ ընդհանուր հայկական վարդապետութեան մշակման հետ, որը լինի համընդհանուր, բարոյապէս ընդունելի և այնքան հարազատ ու գիտակցւած, որ թոյլ տայ անմիջապէս կռահել, թէ արդեօք այս կամ այն շարժումը մեզ օգտակա՞ր է, թէ արդեօք նպաստո՞ւմ է նա մեր Դատին:

Այս հոտառութեամբ զարմանալիօրէն օժտւած են հրեաները: Չինական ընկերվարութեան հետ կապւած լինի որեւէ շարժում թէ Ուգանդայի ֆաշիզմի, ամերիկեան ժողովրդավարութեան թէ խորհրդային **սոցիալիզմի**, միեւնոյն է, նրանք անմիջապէս կարողանում են ճիշտ կողմնորոշւել, թէ օգտակա՞ր է այն իրենց՝ հրեաներին: Չգիտեմ, մէկ անտեսանելի կենտրոնի՞ց են գալիս այդ հրահանգները թէ պարզապէս նրանց քաղաքական բնազդն է, բայց փաստը մնում է փաստ,- նրանք օժտւած են այն քաղաքական բնազդով, որի մասին մենք առայժմ երազել անգամ չենք կարող:

Այն նոյն հրեաները, որոնք մինչեւ Պարսկաստանի դէպքերը ամէնուր քարկոծում էին խորհրդային տիպի բոլոր վարչակարգերը, անմիջապէս կռահեցին, որ Խումէյնուց եկած վտանգը իրենց համար աւելին է և սկսեցին պաշտպանել Պարսկաստանի ծայրայեղ ձախակողմեաններին, որոնք խոստանում են խորհրդային վարչակարգ հաստատել Պարսկաստանում:

Կարծում եմ, որ մենք շատ հեռու ենք նման հոտառութիւնից: 5 տարի առաջ **«Դրօշակ»** շաբաթօրեակում «Անելիք ունի՞ արդեօք Խորհրդային Հայաստանը» իմ յօդւածում ես նախազգուշացնում էի, որ Խորհրդային միութիւնում ծաւալւած մարդու իրաւունքների պաշտպանութեան շարժումը, շատ վտանգաւոր է հայ երիտասարդների համար, որոնք, ամենաազնիւները և ամենագործօնները լինելով, կը նետւեն այն ճակատը, որը գուցէ նրանց բարոյապէս մեծ պատիւ բերի, բայց ոչ մի օգուտ չբերի Հայ Դատին:

Բացի սրանից, ես այն կարծիքը ունէի, որ երբ խորհրդային իշխանութիւնը կը սկսի հարւածել այդ շարժման մասնակիցներին, ապա ամենահզօր հարւածը կը ստանան ամենաթոյլերը և ամենագործօնները, այսինքն հայերը:

Այդպէս էլ եղաւ: Այն շարժումը, որը ոչ մի կապ չունէր Հայ Դատի հետ, ահագին հրեաներ դուրս բերեց Խորհրդային Միութիւնից, Սախարովը դարձաւ Նոբելեան մրցանակի դափնեկիր, Բուկովսկին ընդունւեց նախագահ Կարտերի կողմից, Պլիուշչը դարձաւ Ֆրանսիայի հեղինակաւոր հասարակական գործիչներից մէկը, իսկ մեր ազնիւ տղաները տառապում են բանտերում, իսկ ոմանք էլ գնդակահարւեցին: Ինչո՞ւ, ինչ օգուտ բերեցին նրանք Հայ Դատին:

Ես կը լռէի, եթէ Զատիկեանը իր ռումբը թրքական դեսպանատան համար պատրաստած լինէր: Ես ոչինչ չէի ասի, եթէ Պարոյր Հայրիկեանը միայն ու միայն Ղարաբաղի հողերը պահանջէր: Բայց եթէ ճիշտ է ամբաստանութիւնը

խորհրդային դատարանի, ի՞նչ մեղք ունէր Մոսկւայի մետրոյի այն խեղճ բանւորը, որ հայկական ռումբի զոհը դարձաւ։ Ես չեմ ուզում շատ խորանալ այս նիւթի քննարկման մէջ, որովհետեւ Խորհրդային Միութիւնում տեղի ունեցած դատավարութիւնը այնքան գաղտնի էր, որ առայժմ ոչ մի բան պարզ չէ։

Սակայն ես այս դէպքերը յիշատակում եմ միայն նրա համար, որպէսզի պարզեմ քաղաքական հոտառութիւն հասկացութիւնը։ Առանց թերթերի, առանց հրահանգների, մեր ժողովուրդը պէտք է կարողանայ ճիշտ կողմնորոշւել քաղաքական անակնկալներով լի մեր աշխարհում։ Հէնց դրա համար էլ անհրաժեշտ է մէկ համընդհանուր գիծ, մէկ վարդապետութիւն՝ Հայ Դատի լուծման ուղղութեամբ։

Սա ամենեւին էլ չի նշանակում կազմակերպչական միասնութիւն, որը անհնարին է և որին ես անձամբ չեմ հաւատում։ Դա չի նշանակում նաեւ «Հայկական սիոնիզմի» ստեղծում, որի մասին խօսում են շատերը և ինչը ջանում են ստեղծել քաղաքականութիւնից շատ հեռու կանգնած բախտախնդիրներ։ Գոնէ ինձ համար արդէն պարզ է, որ այս նոր շարժում ստեղծողները ոչ թէ Հայ Դատով են մտահոգւած, այլ սեփական ինքնահաստատմամբ, որը ցանկանում են իրականացնել Հայ Դատի հողի վրայ։

Նոր շարժում ստեղծելը միշտ աւելի հեշտ ու պատւաւոր է թւում, քան հնին ծառայելը։ Սակայն պատմութիւնը կատակներ չի սիրում։ Նա առաջ է շարժւում իր սեփական օրէնքների համաձայն, անխղճօրէն ոտնակոխ անելով բոլոր պատահական, ժամանակաւոր ու արհեստական շարժումները։ Եւ սա էլ մեր կողմնորոշւելու հարցն է։ Մենք պէտք է սովորենք տարբերել հիմնականը և մշտականը՝ երկրորդականից ու ժամանակաւորից։

Երբ ես խօսում եմ Հայ Դատից բխող համընդհանուր վարդապետութեան մասին, ապա ես ի նկատի ունեմ որոշ դրոյթների մշակում, որոնք պարտադիր լինեն բոլոր հայերի համար։ Այս դրոյթները դեռ պէտք է մշակւեն, ուստի ես չեմ կարող հիմա թւարկել նրանք։ Սակայն, միտքս պարզելու համար, ուզում եմ դիմել մի քանի օրինակի։

Խորհրդային Հայաստանից որեւէ ընտանիքի արտասահման կամ Ռուսաստան դուրս գալը հակասում է Հայ Դատին, մասնաւորապէս նրա ազգահաւաք կատարելու թեզին։ Ուստի ամէն մի հայ պէտք է զգայ, որ կատարելով այդ քայլը՝ փաստօրէն դաւաճանում է Հայ Դատին։ Դա, անշուշտ, չի նշանակում, որ ոչ ոք չի դիմելու այդ քայլին։ Այդ քայլին կը դիմեն և կը դիմեն շատերը։ Եւ մենք ոչինչ չենք կարող անել, որովհետեւ հերոսութիւն ոչ ոքից պահանջել չի կարելի։ Բայց ամէն մի դուրս եկող պիտի իմանայ, որ վատ բան է անում։

Իսկ դա նշանակում է, որ նա իր դաւաճանական քայլի շուրջ չպէտք է ծաւալի մի ամբողջ շարժում, չպէտք է ստեղծի տեսութիւններ, որոնք արդարաց-

նում են իր քայլը, չպէտք է օգնութեան կանչի ՄԱԿը և միջազգային հասարակութիւնը, չպէտք է վատ օրինակ ծառայի ուրիշների համար։ Ես ինքս դուրս եկածներից եմ, բայց երբեք չեմ մոռանում, որ լաւ բան չեմ արել, երբեք չեմ փորձում դուրս բերել ընտանիքիս, յենւելով Հելսինկեան համաձայնութիւններում նախատեսւած ընտանիքների վերամիաւորման օրէնքի վրայ։ Ինձ ի՞նչ, թէ ինչ են Հելսինկիում որոշել հրեաները և ամերիկացիները։ Համապատասխանո՞ւմ է նրանց որոշումը Հայ Դատին. սա է կարեւորը։

Երբեմն մարդիկ դիմում են գողութեան, երբեմն լրբութեան, երբեմն բաժանւում են իրենց ամուսիններից, բայց միշտ էլ գողերը, լրբերը և բաժանւողները գիտեն, որ լաւ բան չեն անում։ Նրանք երբեք գողերին արդարացնելու գաղափարախօսութիւններ չեն ստեղծում, այլ ազնւօրէն խոստովանում են, որ այդ վատ ճանապարհին կանգնեցին պայմանների բերումով։

Հայաստանից դուրս եկողներն էլ պէտք է այդպէս վարւեն։ Հրեաները, օրինակ, Խորհրդային Միութիւնից դուրս գալուց յետոյ, մեծ մասամբ Իսրայէլ չեն գնում։ Սակայն նրանք երբեք չեն ստեղծում հրէական սփիւռքը յաւերժացնելու տեսութիւններ, ինչպէս, օրինակ, անում են «Եանց» ակումբի անդամները։

Կամ հակառակ օրինակը։ Ռուսաստանից Հայաստան վերադարձող ամէն մի հայ ընտանիք նպաստում է Հայ Դատին։ Եւ այն հայ պաշտօնեան, որը հրաժարւում է գրանցել այդ ընտանիքը Հայաստանում, վատ բան է անում։ Եթէ ի վիճակի չէ գրացելու, թող չանի, բայց թող չասի, թէ «այ մարդ, ո՞ւր ես գալիս, ի՞նչ ես այստեղ կորցրել, ափսոս չի՞ Ռուսաստանը» և այլն, և այլն։ Կամ թող չթագնւի օրէնքի յետեւում, արդարացնելու համար իր քայլը։ Ընդհակառակը, թող օրէնքը խախտելով գրանցի իր հայրենակցին Հայրենիքում։

Եւ, վերջապէս, մէկ ուրիշ օրինակ։ Եթէ ծնողը իր երեխային օտար դպրոց է ուղարկում, երեխայի ապագան, այսպէս ասած, աւելի լաւ ապահովելու համար, ապա թող գոնէ չստեղծի տեսութիւններ, թէ ռուսերէն կամ ֆրանսերէն ուսումը հայերէնից բարձր է։

Մի խօսքով, այն, ինչը ես անւանում եմ ազգային վարդապետութիւն, ազգային կեանքի չգրւած օրէնքներն են, որոնք վերաբերւում են բոլոր բնագաւառներին և առաջին հերթին քաղաքական բնագաւառին։ Այս վարդապետութեան, այս ազգային սկզբունքի հիման վրայ է, որ զարգանում է ազգի քաղաքական և հասարակական բնազդը։ Եւ հէնց այդ բնազդն է, որ պէտք է մեզ էլ թելադրի, թէ ՄԵՆՔ ԿԱՆՔ։

1979

ԱՐԴԱՐ ԱՀԱԲԵԿՉՈՒԹԻՒՆ

Է. Յովհաննիսեան

Այս գրութիւնը պատրաստուել է Հայկական Հարցերի Հաստատութեան կողմից որպէս Բերլինում, լոյս տեսնող Թալէաթի սպանութեան գրքի նախաբան։

Այս նախաբանը յօդուածի ձեւով լոյս է տեսել արտասահմանի ռուսական մամուլում։

Ահաբեկչութիւնը մուտք է գործել մեր կեանքում և դարձել է մեր հասարակական կեցութեան անբաժանելի մասնիկը։ Այսօր նա սպառնում է քանդել աշխարհի հասարակական կարգ ու կանոնի շէնքը և ցնցում է ժողովրդավարական վարչակարգերի հիմքերը։

Հէնց դրա համար էլ անհրաժեշտ է կատարել այս երեւոյթի լուրջ ուսումնասիրութիւնը և փորձել պատասխանել այն հարցին, թէ արդեօք ահաբեկչութիւնը կարո՞ղ է արդար լինել։

Միջազգային հասարակութիւնը կարծես թէ արդէն դրականօրէն է պատասխանել այդ հարցին, քանի հնարաւորութիւն է տուել ահաբեկիչներին խօսել ՄԱԿի ամբիոնից և նրանց հետ բանակցութիւններ են վարում ամենաբարձր պետական մակարդակի վրայ։ Եւ, այնուամենայնիւ, ահաբեկչութեան ճանաչումը որպէս պայքարի «թոյլատրելի» միջոց կրում է ոչ թէ իրաւական, այլ փաստը իրողապէս (de facto) ճանաչելու բնոյթ։ Դեռեւս ոչ ոք չի համարձակւում բարձրաձայն յայտարարել, թէ անարդար ահաբեկչութիւնների հետ գոյութիւն ունեն նաեւ արդար ահաբեկչութիւններ։

Քրիստոնէական բարոյականութիւնը դեռեւս պահում է մեզ իր սահմաններում և ստիպում է դատապարտել բոլոր առանց դատի տեղի ունեցած սպանութիւնները։ Արդեօ՞ք միշտ էր այդպէս։ Դիմենք պատմութեանը։

1921 թւականի Մարտի 15ին, Բերլինի Շարլոտենբուրգ հրապարկում, հայ ահաբեկիչ Սողոմոն Թեհրլիրեանը սպանեց Օսմանեան կայսրութեան նախկին վարչապետ Թալէաթ փաշային։ Ահաբեկիչը չփախաւ։ Նրա նպատակը միայն վրէժը չէր, նրան պէտք էր հրապարակային դատավարութիւն։ Դատավարութիւնը տեղի ունեցաւ Բերլինում։ Գերմանական դատարանը ազատ արձակեց ահաբեկչին, որովհետեւ Թալէաթ փաշան Օսմանեան կայսրութեան մէջ հայերի ցեղասպանութեան նախաձեռնողն ու կազմակերպիչն էր։ Այս ցեղասպանութիւնը տեղի ունեցաւ 1915 թւականին, որին զոհ դարձան մէկ ու կէս միլիոն հայեր։

Սա 20րդ դարի առաջին ցեղասպանութիւնն էր։

Պատմական փորձը կարեւոր է: Սա ճիշտ է: Բայց ճիշտ է նաեւ այն , որ, դիմելով պատմութեանը, մենք ընկնում ենք գայթակղելու վտանգի տակ: Միշտ գոյութիւն ունի այն վտանգը, որ մենք կարող ենք հանգստացնել մեզ նրանով, թէ նման բաներ արդէն եղել են: Մենք կարող ենք տարուել ներկայի և անցեալի նմանութիւններով և չնկատել ներկայի առաձնայատկութիւնները, որոնց ճանաչումը անհրաժեշտ է՝ չարիքի դէմ պայքարելու համար:

Բայց, չնայած այս վտանգին, պատմական փորձը օգտակար է: Իսկ այդ փորձը մեզ ասում է, որ ահաբեկչութեան գաղափարական հիմքը անիշխանութեան ուսմունքն է, որը պարունակում է իր մէջ առնւազն երկու բան,- արդարութիւն և յեղափոխականութիւն: Ժակոբինեանները Ֆրանսիայում, Սուն Եաթ-Սենը Չինաստանում, նարոդնիկները Ռուսաստանում, դաշնակցականները Հայաստանում, Խոսէ Մարտինը Կուբայում, բասկերը Իսպանիայում, հիւսիսային իրլանդացիները Անգլիայում, պաղեստինցիները Մերձաւոր Արեւելքում, «Կարմիր բրիգադ»ները Իտալիայում և շատ ուրիշներ իրենց քաղաքական գործունէութիւնը, այսպէս թէ այնպէս, կապում էին և կապում են արդարութեան և յեղափոխականութեան հետ:

Ինչ վերաբերում է յեղափոխականութեան, ապա նա բնորոշ է բոլոր յեղափոխական շարժումների համար, սակայն նա ինքնանպատակ է դառնում, եթէ չի ցանկանում հաշւի նստել հասարակական զարգացման առարկայական օրինաչափութիւնների հետ, եթէ վեր է ածւում սովորական խռովութեան: Բոլոր ժամանակների խռովարարները հաւատում էին, որ անմիջականօրէն գործելու կոչը մեծ ուժ ունի:

Եւ, իսկապէս, յաճախ եղել է այնպէս, որ արագ, առանց երկար մտածելու և անմիջական հարւածի կոչը աւելի մեծ ազդեցութիւն է ունեցել զանգւածների վրայ, քան մանրակրկիտ նախապատրաստական աշխատանքների հրաւէրը: Մարդիկ գերադասում են հարւածել այսօր, քան սպասել վաղւայ յարմար պահին: Ըստ երեւոյթին, այդպիսին է մարդու հոգեբանական կառոյցը: Ապագայի կազմակերպւած յեղափոխութեանը նա գերադասում է անկազմակերպ, բայց այսօրւայ հարւածը:

Յայտնի է, որ հոչակաւոր ռուս յեղափոքական Բակունինը ռուսական սանձարձակութեան մէջ էր տեսնում յեղափոխական գործունէութեան ամենաբնական ձեւը: Ռուսաստանի աւազակը,- ասում էր նա,- Ռուսաստանի միակ իսկական յեղափոխականն է: Առաջին Ինտերնացիոնալի դէմ պայքարող անիշխանականները գաղտնաբար կազմակերպեցին իրենց «ընկերվարական ժողովրդավարութեան միութիւն»ը յայտարարելով, որ «այս գաղտնի կազմակերպութեան մէջ ընդունւում են մարդիկ, որոնք ուժականութեան, մտքի,

գաղտնապահութեան և ազնուութեան հետ միասին ունեն նաեւ յեղափոխական կիրք, այսինքն ներսում սատանայ ունեն»:

Յեղափոխականութեամբ կոտրատւում էր նաեւ Տրոցկին, որի մասին ասում էին, թէ նա նմանւում է լիցքաւորւած մարմնի, որի հետ շփումը կայծ է առաջացնում: Այս միտքը Տրոցկին բազմիցս հաճոյքով կրկնել է: Իսկ իր անիշխանութիւններից մէկում Տրոցկին այսպէս է բացատրում Հոկտեմբերեան յեղափոխութեան գլխաւոր պատճառները.

«Մարդու օրգանիզմի ներքին ուժերը, նրա խորքում թագնւած բնազդը, գազաններից ժառանգած հոտառութիւնը, այս ամէնը վեր ելան, կոտրեցին հոգեբանական պատնէշները և պատմա-փիլիսոփայական ընդհանրացումների կողքին՝ կանգնեցին յեղափոխութեան կողմը»:

Ուրիշ խօսքով՝ յեղափոխութեանը յեղափոխականութիւն է պէտք և այդ յեղափոխականութիւնը կապւած է ոչ այնքան յեղափոխականի հասարակական իդէալների, որքան նրա ըմբոստ բնաւորութեան և խռովարար ոգու հետ: Ինչ մնում է հասարակական իդէալներին, ապա նրանք, որպէս օրէնք, յենւում են արժէքների վրայ: Ահաւասիկ Բակունինի իդէալը.

«Գիտութիւնը, արդիւնաբերութիւնը, գիտելիքները, հողը, բնութիւնը, տիեզերքը, այս ամէնը կուտակւած արժէքներ են և ի՞նչ իրաւունքով կարելի է այս հսկայական ամբողջութիւնից իւրացնել որեւէ բան և ասել, թէ սա իմն է, այլ ոչ թէ ձերը: Ամէն ինչ պատկանում է ամենքին»:

Սակայն այս գաղափարը չէր, որ Բակունինին յեղափոխական դարձրեց, և հասարակական արդարութեան չափանիշները չէին, որ Ռուսաստանի ընկերվար-յեղափոխականներին տարան դէպի ահաբեկչութիւն, այլ, ընդհակառակն, յեղափոխականութիւնն էր, որ ծնեց ահաբեկչութիւնը որպէս քաղաքական նպատակին հասնելու միջոց:

Եւ հէնց նրա համար, որ ահաբեկչութիւնը դարձել է պայքարի միջոց, այդ միջոցին ընդհանուր գնահատական տալուց առաջ, անհրաժեշտ է պարզել, թէ արդեօ՞ք պայքարի միջոցները կարող են լինել արդար և անարդար, ո՞ր նպատակը արդարացնում է բոլոր միջոցները: Պարզւում է, որ միջոցների դասակարգումը հնարաւոր է, եթէ խնդրի մէջ կարելի է մտցնել որոշ փոփոխութիւն: **Արդարութիւն** բառը պէտք է փոխարինել **թոյլատրելի** բառով: Այդ դէպքում կարելի է խօսել թոյլատրելի և անթոյլատրելի միջոցների մասին:

Ճիշտ այնպէս, ինչպէս բռնցքամարտիկին թոյլատրւում է հարւածել հակառակորդի ծնօտին, բայց արգիլւած է հարւածել գօտուց ցածր, այնպէս էլ «օրինական» պատերազմների ժամանակ կարելի է կրակել գնդացիրից, բայց արգիլւած է օգտագործել թունաւոր գազեր: Կարելի է ռմբակոծել քաղաքներ և սպանել առողջ մարդկանց, բայց արգիլւած է ռումբ նետել հիւանդանոցների

վրայ: Կարելի է կախաղան բարձրացնել սեփական քաղաքացիներին, բայց արգելւած է գնդակահարել սովորական ռազմագերիներին:

Մի խօսքով, պատերազմներում լինում են թոյլատրւած և անթոյլատրելի միջոցներ: Եւ հէնց իրենք՝ պատերազմները լինում են թոյլատրելի և անթոյլատրելի: Ճիշտ է, այս վերջին դէպքում մենք սովորաբար խօսում ենք արդար և անարդար պատերազմների մասին: Բայց թոյլատրելի և արդար հասկացողութիւնները տարբեր բաներ են: Արդարութիւնը, ի տարբերութիւն թոյլատրելիութեան, բարոյական, այլ ոչ թէ իրաւաբանական չափանիշ է: Որքան էլ որ կատարեալ լինի իրաւական վարչակարգը, միեւնոյն է, նա չի կարող նախատեսել պատիժներ բոլոր հնարաւոր անարդարութիւնների համար: Ուստի բոլոր, նոյնիսկ ամենաօրինական վարչակարգերում, խռովութիւնները հնարաւոր են, եթէ չասենք անխուսափելի:

Այս խռովութիւնները կարող են կրել այլախոհական, ահաբեկչական կամ ապստամբական ձեւեր, ուրեմն ամենակարեւորը այն է, թէ որքանով տւեալ խռովութիւնը արդար է: Գտնել նման մօտեցման բանալին, երեւի, աւելի կարեւոր է, քան այն ժողովրդավարական հասարակարգի ստեղծումը, որտեղ անձի ազատութիւնը արդարացնում է բոլոր տեսակի խռովութիւնները, ապստամբութիւնները և գաղափարախօսութիւնները, եթէ նրանք վայելում են մեծամասնութեան պաշտպանութիւնը:

Մենք հասկանում ենք, որ արդարութեան բանալին որոնելու ճանապարհին հեշտութեամբ կարելի է կանգնել ժողովրդավարական սկզբունքներից մասամբ հրաժարւելու վտանգաւոր ուղու վրայ: Բայց գուցէ մեր ժամանակներում, երբ ոմանք կրօնական, ոմանք էլ ազգային արդարութիւնների անունից աշխարհը քաոսի են վերածում, երբ ռումբեր են պայթում գնացքներում և շուկաներում, երբ օդանաւեր են առեւանգւում և պատանդներ վերցւում, գուցէ մեր այս տագնապալից ժամանակներում ժողովրդավարական սկզբունքների որոշ վերանայումը աւելի օգտակար է, քան այն լպրծուն գետինը, որտեղ ամէն ինչ թոյլատրւած է, որտեղ ամէն մարդ իրաւունք ունի ամէն ինչ ասել ու անել:

Եթէ մենք կարողանանք գտնել այս կամ այն հասարակական շարժման արդարութեան բանալին, ապա մենք կը կարողանանք ցոյց տալ, որ ահաբեկչութիւնը կարող է արդար լինել, ինչպէս անարդար կարող է լինել այլախոհութիւնը և նոյնիսկ ժողովրդական ապստամբութիւնը: Յայտնի է, որ առարկայական արդարութեան խնդիրը դժւար և դեռեւս չլուծւած խնդիր է: Այստեղ տեղը չէ արժէքաբանական ուսումնասիրութիւնների, բայց մէկ բան անհրաժեշտ է նշել,- Արժէքի ամբողջական ըմբռնումը մեզ յանգեցնում է այն բանին, որ արժէքը ունի առարկայական և ենթակայական էութիւն:

Եւ այնքան ժամանակ որ դեռ գոյութիւն ունի արժէքի ենթակայական էութիւնը, քանի դեռ տրամաբանութեան կողքին մեր զգացմունքներն էլ դատաւորի դեր են կատարում արժէքների դասակարգման գործում, խռովութիւնները տւեալ կարգերի և օրէնքների դէմ հնարաւոր են, եթէ չասենք անխուսափելի։ Ո՞վ կարող է սանձել մեր զգացմունքները։ Երեւի համապատասխան դաստիարակութի՞ւնը։ Կամ գուցէ կրօ՞նը։

Բայց բո՛ւն կրօնը, ոչ թէ այն օրէնքի վերածւած կրօնը, որը ասում է, թէ ինչ կարելի է ուտել Զատկին և ինչ չի կարելի ուտել հաղորդութիւնից առաջ, այլ այն ներքին զգացմունքը, որը ինքնասահմանափակում և զոհաբերութիւն է ծնում։ Միակ բանը, ինչ մենք կարող ենք այսօր անել, այն մթնոլորտի ստեղծումն է, որտեղ արդար խռովութիւնների հաւանականութիւնը աւելի մեծ է։

Եւ, եթէ ահաբեկչութիւնը խռովարարութիւն է, ապա առնւազն պէտք է զրկել ահաբեկչութիւնը ամենաանարդար պարունակութիւնից՝ անմեղ մարդկանց զոհ դառնալուց։ Շատ միամիտ պէտք է լինել ենթադրելու համար, թէ հնարաւոր է ընդհանրապէս ազատւել ահաբեկչութիւնից, որովհետեւ նրա տարածման համար գոյութիւն ունեն առնւազն հետեւեալ չորս պայմանները.

1.- Աշխարհում շատ անարդարութիւն և չլուծւած խնդիրներ կան։

2.- Նրանք, ումից կախւած է աշխարհի ճակատագիրը, արհեստականօրէն այնքան ուժեղ են, որ նրանց դէմ ուղղակի և անմիջական պայքարը բացառւած է։

3.- Նրանք, ումից կախւած է աշխարհի ճակատագիրը, կառավարութիւնները և իշխանաւորները, բարոյապէս այնքան թոյլ են և այնքան են կորցրել իրենց արիութիւնը, պատասխանատւութիւնը, այնքան են սիրել նրանք փափուկ ու շքեղ կեանքը, որ նրանց հնարաւոր է դարձել վախեցնել ու **շանտաժի** ենթարկել։

4.- Ահաբեկչութիւնը աներեւակայելիօրէն արդիւնաւէտ է քաղաքական խնդիրների քարոզչութեան գործում։

Այս վերջին հանգամանքը եւս կարեւոր է։ Դիմենք շօշափելի օրինակի.- Կէս դար շարունակ հայ ժողովուրդը խաղաղ միջոցներով փորձեց գրաւել մարդկութեան ուշադրութիւնը իր խնդիրների վրայ։ Բայց մամուլը լուռ էր, որովհետեւ նրա տէրերը չէին ցանկանում վատացնել Թուրքիայի հետ իրենց յարաբերութիւնները։ Հայերը ահագին գումարներ էին վճարում թերթերին երկու տողով ցեղասպանութիւնը յիշատակելու համար։ Մինչեւ այսօր դեռեւս չի յաջողւել մի ժապաւէն պատրաստել ցեղասպանութեան մասին։

Եւ ահա համբերութիւնը հատնեց և ինչ որ հայ երիտասարդներ սկսեցին կրակել։ Աստւած իմ, որքան աշխուժացան և որքան պերճախօս դարձան լրագրողները։ Յիշեցին ցեղասպանութիւնը, Սեւրի դաշնագիրը, Ուիլսոնեան

Հայաստանը, Ղարաբաղի խնդիրը և շատ ուրիշ բաներ: Հանդէսների ամբողջ համարներ նուիրուեցին Հայկական Հարցին: Թերթերը խօսեցին բանիմացօրէն և, ամենակարեւորը, անվճար, եթէ հաշուի չառնենք թուրքական դեսպանների արեան գինը: Ֆրանսիական, գերմանական, աւստրիական, սպանական, իտալական և շատ ուրիշ երկրների պատկերասփիւռները խօսեցին հայ ժողովրդի և նրա խնդիրների մասին:

Սա էլ դեռ քիչ է: Տեղի ունեցաւ հրաշք: Թուրքերը սկսեցին խօսել հայերի հետ: Թուրքիայի վարչապետը ընդունեց Կոստանդուպոլսի հայոց պատրիարքին, իսկ մի շարք թուրք մտաւորականներ կոչեր յղեցին արտասահմանի հայութեան: Նոյնիսկ Խորհրդային Միութիւնը ուրիշ աչքով սկսեց նայել հայերին:

Եւ մտածմունքի մէջ ընկաւ հայ ժողովուրդը: Գուցէ՞ սխալ է ապրել նա այս անցած կէս դարը, դպրոցներ ու եկեղեցիներ կառուցելով: Գուցէ՞ պէտք էր ընտրել այսօր պաղեստինեան ծանօթ ճանապարհը և շարունակել այն, ինչը սկսել էր Թեհլիրեանը Շարլոտենբուրգի հրապարակում: Գուցէ՞ պէտք չէր դուրս գալ վրաններից, պէտք չէր ոչինչ կառուցել, այլ պէտք էր միայն կրակել ու աղաղակել.- Վերադարձրէ՛ք մեզ մեր հայրենիքը: Մի՞թէ մենք այսքան կոպիտ սխալուեցինք: Մի՞թէ Ուիլհամ Սարոյեանների, Շարլ Ազնաւուրների և աղօթքների փոխարէն մեզ ահաբեկիչներ էին հարկաւոր:

Մտահոգւեց հայ ժողովուրդը, յանձինս իր երիտասարդ խենթերի, սկսեց կասկածել իր անցած ճանապարհի վրայ և շեղուել այդ ճանապարհից: Եւ, եթէ խաղաղ ճանապարհից դուրս է գալիս աշխարհի առաջին պետականօրէն քրիստոնէացած ժողովուրդը, իր երիտասարդ տարրերի ճամբով, ուրեմն կայ ահաբեկչութեան մէջ մի ինչ որ արդիւնաւէտ ու գրաւիչ բան, որը վտանգաւոր գայթակղութիւն է առաջացնում:

Եւ եթէ մեր տղաները չեն կարող դիմադրել այդ գայթակղութեանը, ապա գոնէ դիմեն միայն արդար ահաբեկումների, որի օրինակը նկարագրուած է այս գրքում: Եթէ կրակել է պէտք, ապա կրակել այնպէս, որ դատաւորը, եթէ չի կարող արդարացնել կրակողին, գոնէ ներքուստ նրա կողմը լինի:

1980

ՔԱՐՈԶՉՈՒԹԻՒՆԻՑ ԴԷՊԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Է. Յովհաննիսեան

Հայ Դատը միջազգային քաղաքականութեան առարկայ դարձնելու և համապատասխան քաղաքականութիւն վարելու մասին խօսելը գուցէ դեռեւս շուտ է: Բայց վաղ թէ ուշ այդ մասին պէտք է խօսուի, որովհետեւ առանց դրան մեր քաղաքական և բարոյական քարոզչութիւնը ազգային ուժերի զուր վատնում պէտք է նկատուի:

Կասկածից վեր է, որ վերջին տասնամեակում Հայ Դատով զբաղւող կազմակերպութիւնների ճիգերով, ես կ'ասէի՝ անձնազոհ ճիգերով, Հայ Դատը դուրս է եկել հայկական շրջանակներից և դարձել է օտարների համար «խօսակցութեան առարկայ»: Լա՞ւ է սա: Այո, շատ, շատ լաւ:

Բայց եկէք տեսնենք, թէ ովքե՞ր են այս «խօսող»ները և ինչի՛ համար են նրանք խօսում հայերի մասին: Մի խօսքով՝ եկէք տեսնենք, թէ հայկական շրջանակներից դուրս եկած Հայկական Դատը դէպի ո՞ր գնաց, ո՞ւմ ձեռքը ընկաւ:

Բերեմ երկու օրինակ:

Ցեղասպանութեան 65ամեակի առիթով, ցոյցի և հացադուլի իրաւունք չստանալու պատճառով, Միւնխենի հայութիւնը կազմակերպեց մի հանդէս, որին մասնակցեցին բազմաթիւ օտարներ: Հանդէսը կազմակերպել էին Միւնխենի Հայրենակցական Միութիւնը, Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան Գերմանիոյ մասնաճիւղը և Հայկական Հարցերի Հաստատութիւնը: Միասնութիւնը մեզ տւեց այն առաւելութիւնը, որ ամէն մի «կողմ» կարողացաւ հրաւիրել իր օտար բարեկամներին և սրահում կային աւելի քան 100 օտար մտաւորականներ:

Ճառեր, պաստառներ, թռուցիկներ, զրոյցներ, հարցազրոյցներ՝ այս ամէնը ունէր մեծ քարոզչական նշանակութիւն: Յամենայն դէպս, բոլոր ներկաները տուն վերադարձան իրենց հայագիտական շէնքի վրայ մէկ աղիւս եւս աւելացրած և հայերի նկատմամբ համակրանքի զգացմունքներով լի: Ճիշտ է, նրանց համակրանքը ուղիղ համեմատական էր մեր հիւրասիրութեանը, սակայն ի՞նչ նշանակութիւն ունի, թէ ինչ գնով է ձեռք բերւում համակրանքը:

Բայց ովքե՞ր էին մեր այս բարեկամները:

Հասարակ մարդիկ չէին: Գիտնականներ, փաստաբաններ, լրագրողներ, կրօնական գործիչներ, ուսուցիչներ, արուեստագէտներ և այլն: Ի՞նչ կարող են անել այս մարդիկ, այս գերման մտաւորականները Հայ Դատի լուծման հա-

մար։ Մենք ինքներս արդեօք գիտե՞նք, թէ ի՛նչ ենք ուզում, օրինակ, օրւայ բանախօս փաստաբան դոկտոր Հոթքեսքամից։

Առեւտրական և արդիւնաբերական ընկերութիւնները ահագին դրամներ են ծախսում իրենց ապրանքների գովազդների վրայ, որովհետեւ նրանք գիտեն, թէ ի՛նչ են ուզում, նրանք գնորդներ են որսում։ Արդեօք այս սրահում նստած կոկիկ հագնւած մտաւորականները մեր Դատի «գնորդ»նե՞րն են, որ մենք նրանց առջեւ կաշուից դուրս գալով Հայ Դատ ենք քարոզում։ Կարծում եմ, որ ոչ։ Նրանք, ովքեր մեր Դատի «գնորդ»ներն են, մեր սրահները չեն գալիս և մեր բողոքագրերն էլ չեն ընդունում։ Նրանք նոյնիսկ մեր ցոյցերն են արգելում։ Նրանց հետ այլ վայրերում պէտք է խօսել։ Գուցէ և խօսւում է, այս մասին չէ խօսքս։

Ուզում եմ միայն նշել, որ շատ չտարւենք սովորական քարոզչութեամբ, թէ մենք լաւն էինք, բայց մեզ մորթեցին, թէ ազնիւ էինք, բայց մեզ մեր երկրից վռնդեցին, թէ մենք տաղանդաւոր ենք, բայց մեզ հալածեցին։ Երեխաների նման ուրախանում ենք, երբ թերթում կամ պատկերասփիւռով մի երկու բառ են ասում հայերի մասին, կարծես թէ նրանց ասածը որեւէ դեր է կատարելու Հայ Դատի լուծման գործում։

Կարծում եմ, որ շատ աւելի կարեւոր է այն նպատակասլաց քարոզչութիւնը, թէ մեզ այնքան են սեղմել, որ վաղ թէ ուշ պայթելու ենք և որ առանց մեր հարցը լուծելու՝ շատ ուրիշ հարցեր չեն կարող լուծւել։

Մենք շատ լաւ գիտենք կամբոչցիների, բասկերի կամ պաղեստինցիների խնդիրները։ Բայց ի՞նչ օգուտ կարող են ստանալ մեզանից այդ ժողովուրդները։ Նոյնիսկ քաղցած կամբոչցիների օգտին կազմակերպւած դրամահաւաքին մենք չենք մասնակցում պատճառաբանելով, թէ մենք սեփական խնդիրներ ունենք։ Էլ ինչո՞ւ սպասել, որ նրանցից օգուտ պիտի ստանանք և ի՞նչպէս օտարները պաշտպան պիտի կանգնեն մեր դատին։

Դիմեմ մէկ ուրիշ օրինակի.- Ապրիլի 25-27 Դաշնակցային Գերմանիայի Բադ Մարիենբերգ քաղաքում տեղի ունեցաւ հայերի ցեղասպանութեանը նւիրւած մի գիտաժողով։ Ժողովի մասնակիցները մի քիչ աւելի բարձր պաշտօնեաներ էին։ Մարդու և ազգերի իրաւունքներով զբաղւող յայտնի անձնաւորութիւններ էին մասնակցում այդ ժողովին։ Պէտք է ասել, որ գիտաժողովը կազմակերպւել էր բարձր մակարդակի վրայ թէ՛ մասնակիցների և թէ կազմակերպչական իմաստով։ Սակայն այստեղ էլ Հայ Դատի «գնորդ»ներ չկային։ Աւելի ճիշտ՝ կային միայն հարցի գիտական կողմի «գնորդ»ները։ Նրանք «գնում» էին մեր դատը որպէս նիւթ իրենց գիտական աշխատութիւնների, դասախօսութիւնների և յօդւածների համար, այլ ոչ թէ հայ ժողովրդի ճակատագրական հարցերը լուծելու համար։

Իր բացման խօսքի մէջ նախագահ Լուդվիգ Մարտինը՝ Իրաւաբանների Միջազգային Ընկերակցութեան գերմանական բաժանմունքի նախագահութեան նախագահը և Գերմանիայի նախկին գլխաւոր դատախազը ասաց, որ գիտաժողովի նպատակը ոչ թէ որեւէ պետութեան դէմ ըմբոստանալն է կամ նրան վիրաւորելը, այլ պարզել, թէ ինչպէս անել, որ ցեղասպանութիւնները հետագայում չկրկնուեն։ Ո՛չ թէ Հայկական Հարցի լուծումն է, հայերի իրաւունքների պաշտպանութիւնն է, այլ ապագայում նման ոճիրներից խուսափելն է։

Անշուշտ սա էլ շատ կարեւոր է, սակայն Հայ Դատի քաղաքական կողմին չվերաբերող հարց է։ Այս նոյն գիտաժողովում մանրամասնութեամբ քննարկուեց այն հարցը, թէ ինչո՞ւ ազատ արձակուեց ահաբեկիչ Թեհլիրեանը։ Նրա՞ համար, որ գերմանական դատարանը արդար համարեց Թալէաթի սպանութիւնը, թէ՞ նրա համար, որ Թեհլիրեանը սպանութեան պահին ճանաչուեց խելացնոր վիճակում գտնուող մի անձնաւորութիւն։ Կրկնում եմ, նման հարցերի քննարկումը կարեւոր է և սովորական քարոզչութեան տեսանկիւնից օգտակար, սակայն քաղաքական իմաստով նման ժողովները մեծ օգուտ չեն բերում։

Ես կարծում եմ, որ Հայ Դատը դուրս է եկել զուտ հայկական շրջանակներից և քայլում է աշխարհի տարբեր սրահներով, սակայն դեռեւս չի մտել «քաղաքական խօսակցութիւնների» ոլորտը։ Եւ այժմ մեր սրբազան պարտականութիւնն է ցոյց տալ Հայ Դատի քաղաքական ճամբան։ Գուցէ դա նշանակում է, որ Հայ Դատը կրկին պիտի վերադառնայ զուտ հայկական միջավայր, քաղաքական միս ու արիւն ստանալու համար։ Որտե՞ղ պիտի կատարւի Հայ Դատի այս քաղաքականացումը։ Այստեղ ես միայն կարող եմ ասել, թէ որտեղ այս բանը երբեք չի կարող կատարւել։

Լոնդոնում կայ հռչակաւոր **«Հայտ-Փարքը»**, որտեղ մարդիկ ազատօրէն արտայայտում են իրենց կարծիքները, երբեմն լուրջ, երբեմն վիճելի, երբեմն էլ ցնորային։ Խօսքի ազատութեան իրականացումն է Լոնդոնի **«Հայտ Փարքը»** և անգլիացիները կարող են պարծենալ իրենց այդ **«Փարք»**ով։ Սակայն **«Հայտ-Փարք»**ում երբեք չի մշակւել Մեծն Բրիտանիայի քաղաքական ուղին և ոչ մի լուրջ քաղաքական գործիչ ելոյթներ չի ունեցել այդ **«Փարք»**ում։ Ազատօրէն արտայայտւելը դեռ չի նշանակում համոզել և իր յետեւից ժողովուրդ տանել։

Մենք էլ պէտք է խուսափենք հայկական **«Հայտ-Փարք»**երը հայ քաղաքական ուղիներ մշակելու հաստատութիւններ դարձնելուց։ Նման **«Հայտ-Փարք»**եր վերջերս սկսել են ստեղծւել Սփիւռքում։ **«Հայտ-Փարք»** կարելի է համարել **«Իքոմը»**, որը մշակութային ասպարէզում ազատ բեմ է դարձել և որտեղից կարելի է լսել տարբեր կարծիքներ հայ ժողովրդի և նրա մշակոյթի մասին։ **«Հայտ-Փարք»** պէտք է համարել նաեւ այսպէս կոչւած «Առաջին Հայկական Համագումարը», որի բեմից նոյնպէս խօսւեց ամէն ինչի մասին։

Խօսելը լաւ է, բայց եթէ խօսելով պիտի քաղաքականութիւն վարուի, ապա քաղաքականութիւն մշակելու լաւագոյն տեղը պիտի սրճարանները նկատուէին, որտեղ տիրում է խօսքի իսկական ազատութիւն։

Մի խօսքով՝ քաղաքականութիւն մշակելու համար բեմեր պէտք չեն։ Բեմերից պէտք է խօսւի ուրիշ տեղերում արդէն մշակւած քաղաքականութեան մասին։

1980

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ ԹԵՍԱ ՀՈՖՄԱՆԸ

Է. Յովհաննիսեան

Բոլոր ժողովուրդները երազում են օտար բարեկամներ ունենալու մասին, որովհետեւ բոլորն էլ ուզում են լաւ երեւալ օտարների աչքում և յետոյ օտարներին աւելի են հաւատում: Եթէ մենք բոլորս միաբերան գոռանք, որ աշխարհում Կոմիտասի նմանը չկայ, մեզ չեն հաւատայ, բայց եթէ մէկ ֆրանսացի կամ անգլիացի ասի նոյն բանը, նրան կը հաւատան: Դրա համար էլ ամէն մի ազգ փորձում է իր լաւ կողմերը օտարների բերանով ներկայացնել:

Պետականութեամբ և իշխանութեամբ օժտուած ազգերը հեշտութեամբ են գտնում օտար բարեկամներ, որովհետեւ կարողանում են լաւ վճարել իրենց բարեկամներին: Այս բարեկամները ընտրւում են պատւոյ քաղաքացիներ, գիտութեանց ակադեմիայի կամ գրողների միութեան անդամներ, ստանում են բարեկամ երկրները այցելելու հրաւէրներ, նրանց պատւին տրւում են ճաշկերոյթներ և ամէն մի նման միջոցառումից յետոյ, օտար բարեկամի ջերմութիւնը տւեալ ժողովրդի նկատմամբ աւելանում է:

Բոլորովին այլ է իրաւազրկւած ժողովուրդների պարագան: Նրանք դժւարութեամբ են գտնում օտար բարեկամներ, որովհետեւ նրանց բարեկամութեան դիմաց այդ ժողովուրդները կարող են առաջարկել միայն սեփական սիրտը, որը բարեկամութեան շուկայում այսօր շատ մեծ գին չունի: Սակայն նման ճանապարհով ձեռք բերւած բարեկամութիւնը անկեղծ է և գնահատելի:

Ժողովրդի բարեկամ դառնալու համար անհրաժեշտ է անկեղծօրէն սիրել այդ ժողովուրդը և ապրել նրա ցաւերը ու ուրախութիւնները՝ սեփական ցաւերի ու ուրախութիւնների նման: Հայ ժողովրդի այդպիսի անկեղծ բարեկամ դարձաւ Թեսա Հոֆմանը:

Սխալ պիտի լինէր տիկին Թեսա Հոֆմանին միայն հայ ժողովրդի բարեկամ համարելը: Նա բոլոր իրաւազրկւած ժողովուրդների բարեկամն է և պատահական չէ, որ նա անդամակցում է արդէն 10 տարուց ի վեր գոյութիւն ունեցող մի կազմակերպութեան, որը կոչւում է **«Վտանգւած ազգերի ընկերակցութիւն»**:

Այս ընկերութեան շրջանային կառուցւածքի բերումով հայ ժողովրդի իրաւունքների պաշտպանութեան պատիւը և ծանր բեռը բաժին ընկան Թեսա Հոֆմանին: Նրա ուսերի վրայ ընկաւ այն ժողովրդի դատի պաշտպանութեան պարտականութիւնը, որը 20րդ դարի առաջին ցեղասպանութեան զոհը դար-

ձաւ, որը տւեց 1,5 միլիոն զոհեր և որը, աշխարհացրիւ դարձած, այսօ՛ր էլ կրում է ցեղասպանութեան ծանր հետեւանքները։

Սակայն սխալ կը լինէր ասել, որ Թեսա Հոֆմանի բարեկամութիւնը հայ ժողովրդի հետ կրում է զուտ պատահական բնոյթ։ Հոֆմանը 7 տարի շարունակ Բերլինի Ժողովրդական Բարձրագոյն դպրոցում դասախօսութիւններ է կարդացել հայ արւեստի և գրականութեան մասին և արւեստի միջոցով նա կարողացել է ճանաչել հայ ժողովրդի ոգին ու ժողովրդի հետ ապրել է նրա ողբերգութիւնը։

Ճակատագիրը մտերմացրեց Հոֆմանին մեր հայրենակից Ժիրայր Քոչարեանի հետ, որը շուտով դարձաւ Հոֆմանի գլխաւոր խորհրդատուն և թարգմանիչը հայկական խնդիրների մէջ։ Թեսա Հոֆման և Ժիրայր Քոչարեան սկսում են իրենց իրաւապաշտպանական գործունէութիւնը վերոյիշեալ ընկերութեան սահմաններում։

«Վտանգւած ազգերի ընկերակցութիւնը» քաղաքականօրէն ամբողջովին անկախ կազմակերպութիւն է, աւելի ճիշտ՝ ոչ մի քաղաքական գունաւորում չունի։ Դրանով այս կազմակերպութիւնը լաւ իմաստով տարբերւում է բոլոր այն իրաւապաշտպանական կազմակերպութիւններից, որոնք իրենց վրայ կրում են քաղաքական կնիք և պաշտպանում են ոչ թէ մարդկանց ազատ արտայայտւելու և ապրելու իրաւունքը, այլ արտայայտւելու և ապրելու բովանդակութիւնը։

Նման կազմակերպութիւնները մեծ աղմուկ են բարձրացնում, երբ, օրինակ, Խորհրդային Միութեան զօրքերը ներխուժում են Աֆղանստան կամ Չեխոսլովակիա, բայց լռում են, երբ թուրքերը ներխուժում են Կիպրոս և դիմում են իրենց աւանդական վայրագութիւններին։ Երբ իրաւապաշտպանական կազմակերպութիւնը քաղաքական գունաւորում է ստանում, ապա նա կորցնում է իր իսկական դէմքը, որովհետեւ իրաւունքը, խիղճը և արդարութիւնը բացարձակ են, այլ ոչ թէ յարաբերական։

Պէտք է ասել, որ 10 տարւայ ընթացքում **«Վտանգւած ազգերի ընկերակցութիւնը»** իրեն դրսեւորել է որպէս բառիս բուն իմաստով իրաւապաշտպանական կազմակերպութիւն, որը պաշտպանում է տարբեր ժողովուրդների իրաւունքները, անկախ այն բանից, թէ ո՞ր քաղաքական խմբաւորմանն է դա ձեռնատու։ Այս իմաստով, կազմակերպութեան անունից գործող Հոֆմանի և Քոչարեանի գործունէութիւնը մեծ նպաստ է բերում մեր ժողովրդի կողմից մղւող պայքարին, որը Հայ Դատի ուղղութեամբ կատարւող աշխատանքների առաջին փուլում փորձում է լայն հասարակութեանը տեղեկացնել, որ

ա) Տեղի է ունեցել ցեղասպանութիւն և դրա հետեւանքով Արեւմտեան Հայաստանը բռնի ուժով ամբողջովին դատարկուել է բնիկներից, այսինքն հայերից:

բ) Հայ ժողովուրդը, յանձինս սփիւռքահայութեանը, պահպանել է իր ազգային ինքնագիտակցութիւնը և պատմական Հայաստան վերադառնալու իր կամքը:

գ) 20րդ դարի առաջին ցեղասպանութիւնը մինչեւ այսօր պաշտօնապէս դատապարտուած չէ՝ ոչ միջազգային կազմակերպութիւնների և ոչ էլ հասարակութեան կողմից:

դ) Այսօրւայ Թուրքիայում ապրող հայերը ազգային իմաստով հալածւում են և եւրոպական պետութիւնները պարտաւոր են ճանաչելու նրանց որպէս իրաւազրկուած հայեր, այլ ոչ թէ թուրքեր, կիրառելով նրանց նկատմամբ համապատասխան միջազգային օրէնքներ, քաղաքական ապաստան տալու հարցում:

Եւ հէնց այս նպատակների է ծառայում Հոֆմանի և Քոչարեանի գործունէութիւնը, որոնց ջանքերով Բերլինում լոյս տեսնող **«Պոզրում»** հանդէսի երկու համարները նւիրեցին հայերի ցեղասպանութեանը, հրատարակւեց Թալէաթի սպանութեան գիրքը և գրւեցին բազմաթիւ բողոքի նամակներ այս կամ այն առիթով: Թեսա Հոֆմանը մասնակցեց մի շարք միջազգային գիտաժողովների, որտեղ մանրամասնօրէն արծարծեց հայկական խնդիրները:

Հոֆմանի հայանպաստ գործունէութեան գլխաւոր արժէքը կայանում է նրանում, որ «Ընկերութեան» նպատակներից ելնելով՝ նա փորձում է հայ ժողովրդի իրաւունքների հարցը կապել միջազգային իրաւունքի հետ և հայ ժողովրդի նկատմամբ արդար վերաբերմունքի անհրաժեշտութիւնը բացատրել համընդհանուր արդարութեան սկզբունքներով:

Թեսա Հոֆմանի բերանում Հայկական հարցը ազգային ողբերգութիւն չէ, այլ միջազգային խնդիր է, որովհետեւ Հայկական Հարցի չլուծւած լինելը խախտում է համամարդկային օրէնքները: Հայկական հարցը ոչ թէ ազգային, այլ միջազգային հարց է:

Եւ մենք հայերս կ'ուզենայինք, որ մեր բարեկամները միշտ էլ մնային հէնց այդ գծի վրայ և չփորձէին իջնել երեւոյթների պատմական վերլուծութիւնների մակարդակի վրայ: Կան այնպիսի յանցանքներ, որոնք բացատրութիւններ և պատճառաբանութիւններ չեն պահանջում: Նրանք պէտք է ոչ թէ բացատրւեն, այլ առանց բացատրութիւնների դատապարտւեն: Նման յանցանքները մեղմացուցիչ հանգամանքներ չեն կարող ունենալ: Այս իմաստով Հայկական Հարցերի Հաստատութիւնը պիտի ուզէր, որ մեր բարեկամները, մասնաւորապէս Թեսա Հոֆմանը և **«Վտանգւած ազգերի ընկերակցութիւնը»** շարունակէին

իրենց եռանդուն գործունէութիւնը արժէքների աշխարհում, այլ ոչ թէ քաղաքական ոլորտում, որտեղ արդարութեան զգացմունքներից բացի՝ անհրաժեշտ է հաշւի նստել նաեւ այն բանի հետ, թէ ո՞ւմ է այս գործունէութիւնը ձեռնատու։

Այժմ մի քանի խօսքով մեր ընթերցողներին ծանօթացնենք Թեսա Հոֆմանի հետ։ Նա գերմանուհի է, ծնւել է 1949 թւականին Բրեմեն քաղաքի մօտակայքում։ Աւարտել է Բերլինի Եւրոպական հիմնարկի սլաւոնագիտական բաժանմունքը։ Վերապատրաստման կարգով եղել է Խորհրդային Միութիւնում, ուր այցելել է Երեւան և Թիֆլիս քաղաքները։ Վերապատրաստումը տեղի է ունեցել Լենինգրադ քաղաքում։ Մօտ օրերս Հոֆմանը պաշտպանելու է դոկտորական աւարտաճառ, որի նիւթն է՝ «Գիւղացիութիւնը 20րդ դարի ռուս գրականութեան մէջ»։ Ի դէպ,- նա ցանկանում էր իր դոկտորական թեզը կապել Հայկական Հարցի հետ, սակայն համապատասխան ղեկավար չգտաւ։

Թեսա Հոֆմանը գտնում է, որ Հայ Դատի ուղղութեամբ տարւող աշխատանքը աւելի կարեւոր է Դաշնակցային Գերմանիայում, որտեղ հայերին վերաբերող գրականութեան մեծ պակաս է զգացւում։ Հայկական Հարցերի Հաստատութիւնը բաժանում է Հոֆմանի այդ կարծիքը և խորին շնորհակալութիւն է յայտնում նրան այդ ուղղութեամբ նրա կողմից տարւող բեղմնաւոր աշխատանքի համար։ Երբ մենք խնդրեցինք Հոֆմանին մի քանի ծանօթութիւններ տալ իր և **«Վտանգւած ազգերի ընկերութեան»** մասին, նա ասաց հետեւեալը.

«Ընկերութիւնը գոյութիւն ունի 10 տարուց ի վեր։ Մենք հիմնականում զբաղւում ենք այն ժողովուրդներով, «որոնց մասին չեն խօսում»։ Այս վերնագրով մենք հրատարակել ենք մի գրքոյկ։ Մենք չենք զբաղւում հրեաներով կամ պաղեստինցիներով, որովհետեւ երկու կողմերն էլ այսօր ունեն իրենց պաշտպանները։ Հայ ժողովուրդը և նրա նկատմամբ գործադրւած ցեղասպանութիւնը մեզ համար հետաքրքրութիւն են ներկայացնում, որովհետեւ ոչ Արեւելքը և ոչ էլ Արեւմուտքը ոչինչ չեն ուզում անել այդ ժողովրդի օգտին։

«Այստեղ կարող են իրենց խօսքը ասել միայն մեր կազմակերպութեան նման չէզոք կազմակերպութիւնները։ Մենք է, որ պիտի խախտենք լռութեան քաղաքականութիւնը։ Հայերից բացի, մենք զբաղւում ենք նաեւ այլ ժողովուրդներով։ Մասնաւորապէս Մերձաւոր Արեւելքում մենք զբաղւում ենք ասորիներով, քրդերով, Կիպրոսի յոյներով, գնչուներով։ Բացի դրանից, զբաղւում ենք նաեւ հնդկական ցեղերով, Աւստրիայի, Հնդկաչինի և Ամերիկայի բնիկներով։

«Ես միայն անցեալ տարւայ աշնանից է, որ այս ընկերութեան անդամ եմ, սակայն իմ հայկական գործունէութիւնը սկսւեց 7 տարի առաջ, երբ Ժողովրդական Բարձրագոյն դպրոցում կարդում էի խորհրդային բազմալեզու գրականութեան մասին դասախօսութիւններ, այդ թւում՝ նաեւ հայ գրականու-

թեան մասին։ Այն ժամանակ ես ծանօթացայ Համօ Պետրոսեանի և Ժիրայր Քոչարեանի հետ, որոնք ինձ ծանօթացրին հայոց լեզւի հետ։

«Ուզում եմ յիշեցնել նաեւ այն, որ Բերլինի համալսարանում, ահա արդէն 100 տարուց ի վեր դասաւանդւում է հայոց լեզու։ Մեր համալսարանը այսօր Արեւմտեան Գերմանիայի միակ համալսարանն է, որտեղ դասաւանդւում է թէ՛ գրաբարը և թէ ժամանակակից հայ լեզուն։ Հայերի նկատմամբ հետաքրքրութիւնը ցուցաբերելը մեր քաղաքի աւանդութիւնն է և մենք պիտի շարունակենք Լեպսիուսի և Վեգների գործը»։

1980

ՀԱՅՐԵՆԻՔ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՄԵՐ ԻՐԱՒՈՒՆՔԸ

Է. Յովհաննիսեան

Մեր աշխատակից ընկերը, ինչպէս ընթերցողը պիտի նկատէ, իր այս յօդուածով կ'առաջադրէ Հայ Դատի հետապնդման մարտավարական գործելակերպ մը, այն յոյսով որ հայրենական մեր հողերու ազատագրման ի խնդիր մեր պայքարը Թուրքիոյ դէմ, իր առաջադրած եղանակով մղելու պարագային, կրնայ աւելի լայն ընդունելութիւն գտնել միջազգային իրաւունքի տեսանկիւնէն և քաղաքական ու դիւանագիտական շրջանակներու մէջ, միաժամանակ, գէթ սկզբունքային հողի վրայ, նեղ կացութեան մատնելով թուրք քաղաքական ղեկավարութիւնը:

Մօտեցման հետաքրքրական եղանակ մը ահա, զոր արժէ առանձինն ուսումնասիրութեան ու հրապարակային քննարկման առարկայ դարձնել և, իբրեւ այդպիսին, կը յանձնենք հայ մտաւորականութեան և ընդհանրապէս հայ մամուլի ուշադրութեան:

Մեր դարի սկզբին Պաղեստինում ապրում էր 50 հազար հրեայ և 550 հազար արաբ: Բայց դրսից եկան հրեաները և յայտարարեցին արաբներին, որ «այս երկիրը մերն է» ու ստեղծեցին իրենց հրէական պետութիւնը:

Ի՞նչ իրաւունքով:

Այս հարցումի պատասխանը մեզ՝ հայերիս համար էլ շատ կարեւոր է, որովհետեւ մենք էլ մի օր պիտի գնանք Արեւմտեան Հայաստան և ասենք այնտեղ ապրող քրդերին ու թուրքերին. «այս երկիրը մերն է»:

Ի՞նչ իրաւունքով հայ ժողովուրդը նման յայտարարութիւն պիտի անի: Կրօնակա՞ն իրաւունքով, պատմակա՞ն իրաւունքով, բարոյակա՞ն իրաւունքով, թէ՞ ուժի իրաւունքով:

Նախ քննարկենք այս բոլոր իրաւունքների հարցը հրեաների օրինակի վրայ, քանզի սա այն ազգն է, որը լաւագոյնս օգտագործեց իր բոլոր իրաւունքները:

Եթէ հրեաները 100 տարի առաջ ներխուժէին Իսրայէլ, կոտորէին այնտեղ ապրող ժողովուրդներին և ստեղծէին իրենց հրէական պետութիւնը, ինչպէս այն ժամանակ անում էին ուրիշները, ապա իրաւունքի հարց չէր ծագի, որովհետեւ այլեւս գոյութիւն չէին ունենայ նրանք, ովքեր պէտք է բարձրացնէին իրաւունքի հարցը: Գուցէ այսօր ստեղծուէին շարժանկարներ՝ հրեաների դաժանութեան մասին, ինչպէս ստեղծում են ժապաւէններ հնդիկների նկատմամբ

գործադրուած ամերիկեան դաժանութիւնների մասին, բայց իրաւունքի խնդիրը կը մոռացուէր ժապաւէնի աւարտից յետոյ։

Սակայն, եթէ նման բաները մենք մոռացութեան մատնենք և ուժի իրաւունքին իրաւաբանական ճանաչում տանք, ապա կարելի է արդարացնել նաեւ Հիտլերին, որը յայտարարում էր, թէ մարդկութեան ամբողջ պատմութիւնը գայլերի կռիւ է և ինքը, գոնէ, անկեղծ գայլերից է։

Պէտք է ասել, որ այսօր ուժի իրաւունքը կամաց-կամաց կորցնում է իր նշանակութիւնը և նոյնիսկ Մ. Նահանգների, Խ. Միութեան և Չինաստանի նման ուժեղագոյն պետութիւնները ստիպւած են լինում իրենց քաղաքական հարցերը լուծելիս դիմելու բարոյական չափանիշների։

Առաւել եւս մենք, մի փոքր ժողովուրդ, չենք կարող մեր ապագայի կերտումը կապել միայն ուժի իրաւունքների հետ, որովհետեւ դրանով իսկ մենք իրաւունք պիտի տանք աւելի ուժեղներին ուժ գործադրել մեր նկատմամբ։

Իսրայէլ մտնելու և այդ երկիրը տիրելու իրաւունքի հարցում հրեաները ունեն երեք պատասխան.- Կրօնական, պատմական և կենսական։ Նրանց կրօնական պատասխանը կայանում է նրանում, որ Իսրայէլը հրեաներին Աստծու կողմից ԽՈՍՏԱՑԻԱԾ երկիրն է։ Այդ խոստումը Մովսէսի միջոցով տրւել է հրեայ ժողովրդին և Աստծու այդ խոստումը արձանագրւած է Թանախ, Միշնէ և Թալմուդ կոչւող կրօնական գրքերում։ Եւ որովհետեւ Աստւած բարոյականութեան միակ աղբիւրն է, ինչպէս հետեւցնում են, ապա հրեաները բարոյական իրաւունք ունեն Իսրայէլը տիրելու։

Ի՞նչ կարելի է ասել այդ կրօնական իրաւունքի մասին։ Նախ այս իրաւունքը չի կարող համամարդկային ճանաչւել, քանզի նա սահմանափակւած է հաւատացեալներով և այն էլ հրեայ հաւատացեալներով։ Ո՞վ կարող է պարտադրել այս իրաւունքը մահմեդականին կամ քրիստոնեային։ Եւ, եթէ սուրբ գրքերը դառնան միջազգային օրէնքի աղբիւր, ապա վաղը Այաթոլլա Խոմէյնին կարող է պահանջել միջազգայնացնել, օրինակ, երեսի քող կրելու մահմեդական օրէնքը։

Այսօր Իսրայէլում կառավարութեան կրօնական թեւը պատրաստ է քաղաքական նկատառումներով զիջել «խոստացւած» երկրի 70 տոկոսը, որ խօսում է այն մասին, թէ կրօնական իրաւունքը ոչ մի ուժ չունի նոյնիսկ երկրի ներսում։ Մի խօսքով, հրեաները չէին կարող Իսրայէլ մտնել այս իրաւունքի ուժով։ Նման իրաւունք չունի ոչ մի ժողովուրդ, այդ թւում նաեւ հայ ժողովուրդը և խօսելն էլ այդ մասին աւելորդ եմ համարում։

Շատ աւելի մեծ ուշադրութեան է արժանի «պատմական իրաւունքը»։ Իսրայէլի անկախութեան յայտարարագրի մէջ ասւած է, որ «այդ պետութիւնը ստեղծւում է մեր բնական և պատմական իրաւունքի ուժով»։ Տեսնենք թէ ո՞րն

է այդ իրաւունքը և արդեօ՞ք հրեաները ունեն այդ իրաւունքը։ Հրեաների պատճառաբանութիւնը հետեւեալն է.

- Հրեայ ժողովուրդը ապրել է այդ երկրում 1850 տարի առաջ, որպէս ինքնիշխան ժողովուրդ։ Հաշւի չառած Բաբելոնի գերութիւնը, հրեաները ապրել են այդ երկրում 1300 տարի շարունակ։ Այս երկրի հետ հրեաները կապւած են հոգեկան կապերով, ուստի հրեաները այս երկրում ապրելու աւելի շատ իրաւունք ունեն, քան որեւէ ուրիշ ժողովուրդ։

Քննադատելով այս տեսակէտը, Իսրայէլի առողջամիտ հասարակագէտներից մէկը՝ Եհոշուա Հիլբոան անում է մի սրամիտ դիտողութիւն։ Նա գրում է. «Հրեայ ժողովուրդը Պաղեստինից դուրս գալուց մոռացաւ այս երկրում թողնել մի քանի պաստառներ, թէ «մենք՝ հրեաներս գնում ենք Իսրայէլից, բայց դեռ պիտի վերադառնանք, ուստի խնդրում ենք՝ ոչ ոք այստեղ բնակութիւն չհաստատի։ Այն ժամանակ բոլոր նոր եկւորները կը հասկանային, որ սա իրենց երկիրը չէ»։ Բայց, իսկապէս, ո՞ւմն է երկիրը. նրա՞նցը, ովքեր ժամանակին ապրել են այնտեղ, թէ՞ նրանցը, ովքեր հիմա են այնտեղ ապրում։

Երբ հրեայ իրաւաբան Մոշէ Շաբէթը միջազգային ատեաններում հարց բարձրացրեց՝ պատմական իրաւունքները օրինականացնելու մասին, նրան պատասխանեցին. «Պատկերացրէք, որ բոլոր ժողովուրդները սկսեն օգտագործել իրենց պատմական իրաւունքները։ Մի՞թէ պարզ չէ որ այդ դէպքում ամբողջ աշխարհի ժողովուրդները պէտք է տեղահանւէին և պէտք է նոր սահմաններ գծւէին»։

Հրէական յամառութեամբ, Մոշէ Շաբէթը առարկեց. «Բայց դուք լաւ գիտէք, որ հրեաներից բացի՝ այլեւս ոչ ոք չի փորձի օգտւել իր պատմական իրաւունքներից»։ «Ոչ» եղաւ պատասխանը, պատմական իրաւունք հասկացութիւնը քաոսի կը վերածէր աշխարհը։

Սակայն միայն սպասւելիք քաոսը չէ, որ խանգարում է պատմական իրաւունքի օրինականացմանը։ Կայ նաեւ արդարութեան հարց։ Արդեօք բոլո՞ր դէպքերումն է, որ պատմական իրաւունքի իրականացումը արդար պէտք է նկատւի։ Ենթադրենք, մեզ յաջողւել է ձեւակերպել մի այսպիսի միջազգային օրէնք. «Ամէն մի հայրենիքը կորցրած ժողովուրդ պահպանում է իր հայրենիք վերադառնալու և այն տիրելու իրաւունքը։ Այդ ժողովուրդը նախկին հայրենիքի վրայ ունի այժմ այնտեղ ապրող ժողովուրդից առնւազն ոչ պակաս իրաւունք»։

Միայն առաջին հայեացքից այս գաղափարը կարող է արդար նկատւել։ Իրականում այս դրոյթը արդար դարձնելու համար անհրաժեշտ է երկու յաւելում։ Առաջին այն, որ ժողովուրդը պէտք է կարողանայ ապացուցել, թէ ինք երկրի միակ տէրն է, այսինքն ինքը ժամանակին բռնի ուժով չի տիրացել այդ

երկրին, դուրս մղելով այնտեղից մէկ ուրիշ ժողովուրդ: Երկրորդ՝ տւեալ ժողովուրդը պէտք է կարողանայ ապացուցել, որ ինք բռնի ուժով է դուրս վռնդւել իր հայրենիքից, այլ ոչ թէ կամաւոր կարգով է դուրս եկել սեփական երկրից:

Այս երկու յաւելումների իմաստով հրեաները Իսրայէլի վրայ պատմական իրաւունք չունեն: Հրեայ ժողովուրդը տիրացել է Իսրայէլին զէնքի ուժով, դուրս վռնդելով այնտեղ դարեր շարունակ ապրող ոչ-հրեայ ժողովուրդը: Այս փաստը ճանաչում են իրենք՝ հրեաները, որովհետեւ այս փաստը արձանագրւած է հրեաների բոլոր պատմական և կրօնական գրքերում: Այն փաստը, որ այդ բանը տեղի է ունեցել 3300 տարի առաջ, ոչինչ չի փոխում, որովհետեւ պատմական իրադարձութիւնների իրաւական կողմը անժամանցելի է: Որեւէ ժողովուրդ չի կորցնում իր իրաւունքները այնքան ժամանակ, քանի դեռ գոյութիւն ունի որպէս ազգ:

Բացի դրանից, հրեայ ժողովուրդը հայերի նման բռնի ուժով դուրս չի արւել իր երկրից: Նա դուրս է եկել կամաւոր կարգով և միայն մեծ հալածանքներ կրելով օտարութեան մէջ որոշել է վերադառնալ իր հայրենիքը: Եւ այսօր էլ նրանցից շատերը, ճնշող մեծամասնութիւնը, կամաւոր կերպով չի ցանկանում հաստատւել Իսրայէլում: Սա նշանակում է, որ հրեաները Իսրայէլի վրայ պատմական իրաւունք չունէին, երբ մտան այդ երկիրը ու ասացին, թէ այս երկիրը մերն է:

Ի տարբերութիւն դրան, հայ ժողովուրդը օժտւած է Արեւմտեան Հայաստան մտնելու պատմական իրաւունքով: ՄԵՆՔ ԱՊՐԵԼ ԵՆՔ ԱՅԴ ԵՐԿՐՈՒՄ ՄԻՇՏ ԵԻ ՎՏԱՐԻԵԼ ԵՆՔ ԱՅԴ ԵՐԿՐԻՑ ԲՌՆԻ ՈՒԺՈՎ:

Սակայն, պատմական իրաւունքից բացի, գոյութիւն ունի նաեւ կենսական իրաւունքը, որը շատ աւելի կարեւոր է ու հասկանալի: Եթէ մենք դատաւորի դերում քննութեան առնենք մի անտուն մարդու վիճակը, որը մահից փրկւելու համար գրաւել է մէկ ուրիշ մարդու բնակարանի մի մասը, մի՞թէ մենք կը մեղադրենք նրան: Կարծում եմ, որ արդար դատաւորը կ'արդարացնի նրան, որովհետեւ ուրիշի բնակարանը նա գրաւել է մահից փրկւելու համար:

Անցեալ դարի կէսերից սկսեալ ազգային ինքնագիտակցութիւնը զարգացաւ այն ուղղութեամբ, որ ինքնիշխան պետութիւնները դարձան ազգերի գոյութեան կարեւոր պայմաններից մէկը: Բայց դեռեւս 19-րդ դարի վերջին շատ ժողովուրդներ, այդ թւում՝ նաեւ հայերը, ապրում էին իրենց երկրներում, սակայն ինքնավարութիւն չունէին և ինքնիշխանութեան ձեռք բերումը դարձել էր ժողովուրդների կենսական պահանջը, որից և ծնունդ առաւ կենսական իրաւունքի գաղափարը:

Պարզ դարձաւ, որ առանց հայրենիքի ապրող ժողովուրդները ոչ թէ ազգային փոքրամասնութիւններ են իրենց երկրներում, այլ ամէնուր օտար տարրեր

են: Այս բանը ապացուցւեց հայերի ցեղասպանութեամբ՝ Առաջին Համաշխարհային պատերազմի ժամանակ, հրեաների և գնչուների ցեղասպանութեամբ՝ Երկրորդ Համաշխարհային պատերազմի ժամանակ, Բիաֆրայի, Լիբանանի և մի շարք այլ երկրների ողբերգութեամբ՝ արդէն մեր օրերին:

Հրեաները հայրենիք չունէին և նոյնիսկ ամերիկացիները, Երկրորդ Համաշխարհային պատերազմի ժամանակ, չբացեցին իրենց երկրի դռները կոտորւող հրեաների առջեւ: Մէկ բան ժամանակակից պատմութիւնը, կարծես թէ դիտաւորեալ, մոռացութեան է մատնում: Սա Հիտլերի այսպէս կոչւած «Մադագասկարի ծրագիրն» է, որը նախատեսում էր աշխարհի հրեաներին կենտրոնացնել Մադագասկարում: Հիտլերը նախ ցանկանում էր «մաքրել» հրեաներից Եւրոպան: Եւ միայն շատ աւելի ուշ, երբ պարզւեց, որ ոչ ոք չի ցանկանում ընդունել հրեաներին, Հիտլերը մշակեց նրանց ոչնչացնելու ծրագիրը:

Այսինքն հրեաների ցեղասպանութեան մեղքն էլ ծանրանում է մարդկութեան ուսերի վրայ: Ու այդպէս կը լինի միշտ, քանի դեռ գոյութիւն ունեն առանց հայրենիքի ապրող ժողովուրդներ: Հայրենիքը ազգի կենսական անհրաժեշտութիւնն է:

Ասում են, թէ նրանք, ովքեր պարտութիւն են կրել պատերազմի դաշտում և այդ ճանապարհով են կորցրել իրենց հայրենիքը, կորցնում են հայրենիք ունենալու իրաւունքը: Սա բացարձակ անմտութիւն է: Նոյնիսկ գերմանացիները, որոնք սկսեցին Երկրորդ Համաշխարհային պատերազմը, չեն կորցրել ամբողջական հայրենիք ունենալու իրենց իրաւունքը: Առաւել եւս այդ իրաւունքը ունեն պաղեստինցիները, բասկերը, հայերը, աբխազները և ընդհանրապէս բոլոր ժողովուրդները: Անշուշտ այս իրաւունքը ունի նաեւ հրեայ ժողովուրդը և հէնց այդ միակ իրաւունքով էլ նա տիրացաւ Իսրայէլին:

Ինչ վերաբերում է մեզ՝ հայերիս, ապա հայրենիք ունենալու մեր կենսական իրաւունքը է՛լ աւելի ակնյայտ է, քանզի վերջին հաշւով հայը ամէնուր օտար է: Տարբեր երկրների վարչակարգերի բերումով մեզ քշեցին մեր բուն հայրենիքից, քշեցին Կիլիկիայից, քշեցին Եգիպտոսից, այսօր քշում են Լիբանանից, վաղը կը քշեն Պարսկաստանից: Եթէ սրան աւելացնենք Հայաստանից դուրս եկող հայերի ահագին հոսքը և հակառակ ուղղութեամբ հոսք կազմակերպելու անկարելիութիւնը, ապա պարզ կը դառնայ, որ ինքնիշխան պետականութեան անհրաժեշտութիւնը կենսական անհրաժեշտութիւն է:

Սակայն, եթէ փորձենք այս հարցում որոշ զիջումներ կատարել, այսինքն հաշւի առնելով ստեղծւած քաղաքական կացութիւնը՝ առայժմ հրաժարւենք ինքնիշխանութիւնից, ապա հայրենի հողի վրայ ապրելու մեր ձգտումը կը կազմի նահանջի այն վերջին կէտը, որից յետոյ նահանջել չի կարելի, որովհետեւ յետեւում ազգասպան մի անդունդ է:

Այսպէս, ուրեմն, մեր հայրենիք վերադառնալու իրաւունքը խարսխւած է մեր պատմական և կենսական իրաւունքների վրայ: Եւ հէնց սա էլ մենք պիտի դարձնենք մեր քաղաքական պահանջը:

Մէկ առիթով ես անդրադարձայ Հայ Դատից բխող քաղաքական ենթանըպատակներին և այն կարծիքը յայտնեցի, որ մեր քաղաքական բոլոր քայլերի առաջնակարգ նպատակը պիտի լինի ստիպել թուրքին մեզ հետ խօսել: Այժմ, եթէ մէկ քայլ էլ առաջ գնանք ու փորձենք որոշել, թէ ինչի մասին պիտի խօսենք թուրքի հետ, նրանից ի՞նչ պիտի պահանջենք, ես կ՚ասէի, որ պիտի խօսենք մեր հողերի վրայ վերադառնալու իրաւունքի մասին: Ոչ թէ այդ հողերը թուրքից խլելու և Խորհրդային Հայաստանին կցելու կամ նոր Հայաստան ստեղծելու վերացական ծրագիրների մասին, այլ ՄԵՐ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ:

Երբ մեզ բռնի ուժով դուրս արեցին մեր երկրից, մենք փաստօրէն թուրք քաղաքացիներ էինք, թէպէտեւ ապրում էինք ազգային կեանքով: Այժմ այդ երկրում ապրում են քրդերը, որոնք այն ժամանակ էլ էին ապրում մեր երկրում: Եւ անշուշտ քրդերն էլ այդ երկրում ապրելու իրաւունք ունեն: Ուստի այդ երկրի, այսինքն Արեւմտեան Հայաստանի քաղաքական ճակատագիրը չի կարող լուծւել առանց այդ երկրում այսօր ապրող բնակիչների: Իսկ Արեւմտահայաստանի ապագան միասնական ճիգերով լուծելու համար մենք պիտի հայրենիք վերադառնանք: Դրա համար մենք ունենք բոլոր իրաւունքները:

Բայց, ի հարկ է, թուրքը մեզ չի թոյլատրի վերադառնալ հայրենիք: Եթէ թողնի, ստիպւած պիտի լինի ճանաչելու թէ՛ ցեղասպանութիւնը և թէ այն, որ ժամանակին նա մեզ այնտեղից դուրս է արել: Իսկ դա կապւած է հատուցումների բարդ խնդրի հետ: Սակայն այս ամէնը քաղաքական բանակցութիւնների հարց է, որոնք այնքան հեռու են, որ դեռեւս այդ մասին խօսելը շուտ է: Ժամանակին կը պատրաստւի համապատասխան թղթածրար և համապատասխան բանակցութիւններ կը վարւեն: Այժմ ես խօսում եմ միայն մեր քաղաքական պահանջի մասին:

Հայրենիք վերադառնալու մեր պահանջը մարդկութիւնը կը հասկանայ, դրան չի կարող լուրջ առարկել նաեւ թուրքը, որովհետեւ ո՛չ միայն բարոյական կամ պատմական իրաւունքներն են մեր կողմը, այլեւ մեր պահանջը օրինական կը ճանաչւի նաեւ միջազգային իրաւունքների կողմից: Նման պահանջով հայ ժողովուրդը կարող է դիմել բոլոր միջազգային ատեաններին, ընդհուպ մինչեւ ՄԱԿ, կարող է կազմակերպել հայերի իրաւունքների պաշտպանութեան կոմիտէներ և այլն:

Դրանով նա կարող է արդարացնել իր բոլոր քաղաքական քայլերը, այդ թւում՝ նաեւ ահաբեկչութիւնը, որը իսկոյն հակակրանք է առաջացնում օտարների մօտ, երբ պարզւում է, որ հայերը 1915 թւի վրէժն են լուծում: Ես անձամբ

դէմ չեմ վրէժի, բայց դէմ եմ, որ վրէժը որպէս քաղաքականութիւն մատուցւի։ «Հայերը ի՞նչ են ուզում» հարցումի համար մենք բոլորս պիտի ունենաք մէկ պատասխան. «Ուզում ենք մեր հայրենիքը վերադառնալ»։ Ի՞նչ կարող է պատասխանել սրան թուրքը։

Այսօր աշխարհում տարբեր վտարանդի ժողովուրդներ ապաստան են գտնում ուրիշ երկրներում։ Պաղեստինցիները, կամպուչացիները, վիեթնամցիները, չինացիները, կուբացիները և շատ ուրիշներ իրաւունք են ստանում աշխարհի ժողովրդավար երկրներում ապրելու համար։ Նրանց հարցերով լրջօրէն զբաղւում է Միացեալ Ազգերի Կազմակերպութիւնը։ Ինչո՞ւ իրեն ժողովրդավար անւանող և ուրիշների կողմից որպէս այդպիսին ճանաչւող Թուրքիան պէտք է բացառութիւն կազմի և հրաժարւի ընդունելուց նրա՛նց, որոնց դուրս է արել սեփական երկրից։

Իսկ ինչո՞ւ հայերը պիտի համաձայնւեն մտնել այս թշնամի ազգի իշխանութեան տակ։ Բայց որտե՞ղ է այսօր աւելի լաւ։ Մի՞թէ հայերի կացութիւնը Իրանում կամ Լիբանանում այսօր աւելի լաւ է։ Մի՞թէ ամէն ինչ կլանող ու ազգութիւններին կուլ տւող Ամերիկան և Կանադան աւելի լաւ են։

Թուրքիայում գոնէ սեփական հողերի վրայ կը լինենք և գալիք սերունդները հնարաւորութիւն կ'ունենան հայրենիքի ներսում լուծելու իրենց քաղաքական խնդիրները։ Մենք այնքան ենք սիրահարւած Խորհրդային Հայաստանի վրայ, որ ներում ենք նրան շատ աններելի բաներ։ Ինչո՞ւ այս նոյն մօտեցումը չունենալ Թուրքիայի նկատմամբ։ Ընդ որում, եթէ մէկ կողմ թողնենք մեր անցեալի հետ կապւած ցաւերը ու զգացմունքները, ապա պիտի խոստովանենք, որ այսօրւայ Թուրքիան շատ աւելի ժողովրդավարական է, քան Խորհրդային Միութիւնը։

Որքան ուզում են թող չարախօսեն իմ հասցէին խորհրդակոյր իմ հայրենակիցները, բայց փաստը մնում է փաստ՝ ընտրութիւնների, երկրից ազատ դուրս գալու, կուսակցութիւններ կազմելու, թերթեր հրատարակելու, գործադուլներ ու ցոյցեր կազմակերպելու և շատ ուրիշ հարցերում Թուրքիայի վարչակարգը խորհրդային վարչակարգից աւելի տանելի է։ Եւ, ուրեմն, շատ էլ չպիտի սարսափենք Թուրքիա, այսինքն Արեւմտահայաստան վերադառնալու գաղափարից։

Սա մեր բարոյական, պատմական, կենսական և իրաւաբանական իրաւունքն է, որի հետ չի կարող հաշւի չնստել աշխարհի թէ՛ պաշտօնական և թէ հասարակական կարծիքը։ Իսկ թէ ո՞ր ուժերին և ինչո՞ւ պէտք է մեր վերադարձը ձեռնատու լինի, սա արդէն առանձին քաղաքական հարց է։

1980

ԹՈՒՐՔԱՀՊԱՏԱԿՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՊԱՍՏԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՍԵՄԻՆԱՐԸ ԱՐԵՒՄՏ. ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Է. Յովհաննիսեան

Այս տարւայ սեպտեմբերի 20ին և 21ին Արեւմտեան Գերմանիայի Միւլհայմ քաղաքում տեղի ունեցաւ մի սեմինար, որին հրաւիրւել էր նաեւ Միւնխենի Հայկական Հարցերի Հաստատութիւնը: Սեմինարի նիւթը ձեւակերպւած էր այսպէս. «Թուրքահպատակները քաղաքական ապաստան են որոնում Դաշնակցային Գերմանիայում»: Սեմինարը կազմակերպւել էր Ռայլանդ-Վեսաֆալենի Աւետարանական Ակադեմիայի կողմից:

Հայկական Հարցերի Հաստատութեան ներկայացուցիչն էր դոկտոր Համբարձում Յարութիւնեանը: Սեմինարին մասնակցեցին մօտ 60 հոգի, որոնցից երկուսը հայ էին (երկրորդը Միհրան Դաբաղն էր), 12ը թուրք, 5ը քուրդ և մնացածը գերմանացի: Ներկաների մէջ կային իրաւաբաններ, հասարակագէտներ, ուսուցիչներ, գիտական աշխատողներ և քաղաքապետարանի աշխատողներ: Սեմինարի ընթացքում լսւեցին հետեւեալ դասախօսութիւնները.

1. Քաղաքական կուսակցութիւնները Թուրքիայում:
2. Իսլամը Թուրքիայում:
3. Ազգային փոքրամասնութիւնները Թուրքիայում:
4. Թուրքիայի տնտեսական կացութիւնը:
5. Թուրք պետութիւնը և մարդկային իրաւունքները Եւրոպայի մէջ:
6. Հայերի արտագաղթը Թուրքիայից:

Այս ելոյթներից ես կանգ կ՚առնեմ միայն վերջին երկուսի վրայ, որովհետեւ մնացած ելոյթները տալիս էին Թուրքիայի քաղաքական և տնտեսական պատկերը, որը վերջին հաշւով քաջ յայտնի է մեր ընթերցողներին:

Անշուշտ, սեմինարի ամենանշանաւոր դասախօսը Վիեննայի Համալսարանի պրոֆ. Դոկտոր Ֆելիքս Էրմակորան էր, որի դասախօսութեան նիւթն էր՝ «Թուրք պետութիւնը և մարդկային իրաւունքները Եւրոպայի մէջ»:

Իր դասախօսութեան մէջ նա արեց մի շարք մատնանշումներ, որոնցից յիշատակենք մի քանիսը: Նախ և առաջ նա նշեց, որ հայերի դէմ գործադրւած ցեղասպանութիւնը 20րդ դարի առաջին ցեղասպանութիւնն է: Դրանում ոչ մի կասկած չկայ, յայտարարեց նա: Անդրադառնալով եւրոպական երկրներում ապաստան որոնող մարդկանց, նա ասաց, որ ներկայումս որեւէ երկրի մէջ տեղի ունեցող խախտումները մարդու իրաւունքների բնագաւառում, անմիջապէս անդրադառնում են Արեւմտեան Եւրոպայի երկրների վրայ, որովհե-

տեւ հէնց այստեղ են ապաստան որոնում այդ հալածուողները: Սա նշանակում է, որ Թուրքիայի մէջ կատարուող դէպքերը անուղղակիօրէն վերաբերւում են նաեւ եւրոպական պետութիւններին: Այս առիթով Էրմակորան նշեց, որ Թուրքիայի սահմանադրութիւնը, որը կազմւած է եւրոպական սահմանադրութիւնների հիման վրայ և պարունակում է իր մէջ մարդկային իրաւունքները պաշտպանելու կէտեր, պարզապէս թուղթ է, որը երբեք չի գործադրւում: Բացի դրանից, Թուրքիայի Սահմանադրութիւնը ոչ մի բան չի ասում ազգային ինքնորոշման իրաւունքի մասին:

Պրոֆեսոր Էրմակորան յիշեցրեց, որ Թուրքիան 1974 թւականին պաշտօնապէս յայտարարեց, որ Լօզանի դաշնագիրը դեռեւս ի զօրու է: Էրմակորան նշեց, որ թուրք պետութիւնը դիւանագիտական խաղերի միջոցով կարողացել է իրեն հեռու պահել ՄԱԿից և Եւրոպական պարլամենտից՝ մարդու իրաւունքների պաշտպանութեան հարցում: Ստեղծւել է այնպիսի կացութիւն, որտեղ ոչ ՄԱԿը և ոչ էլ Եւրոպական պարլամենտը փաստօրէն չեն հսկում Թուրքիայի ներսում կատարւող ընթացքները: Այս իմաստով, ի տարբերութիւն մարդկային իրաւունքները ոտնահարող ուրիշ պետութիւնների քաղաքացիների, թրքահպատակ քաղաքացիները զուրկ են Մարդկային Իրաւանց յանձնախմբերին դիմելու և եւրոպական երկրներից քաղաքական ապաստան խնդրելու իրաւունքից:

Էրմակորան ասաց, որ երեք հիմնական պատճառների բերումով անկարելի է դառնում թուրքահպատակին քաղաքական ապաստան տալը: Առաջինը դա վարչական ատենակալութիւնն է: Սովորաբար, ապաստան տւող երկիրը դիմում է թուրքական դեսպանատուն, հարցում անելով, թէ ինչպիսի՞ն է տւեալ փոքրամասնութեան կացութիւնը Թուրքիայում: Դեսպանատունը, անշուշտ, պատասխանում է, թէ լաւ է և օրինակ է բերում 1974 թւականի կառավարական յայտարարութիւնը: Ստանալով նման պատասխան, ապաստան տւող մարմինները մերժում են դիմողին: Սակայն սա միակ դժւարութիւնը չէ:

Ապաստան ստանալու ճանապարհին,- ասաց Էրբակորան,- կայ երկրորդ խոչընդոտը, որը մոլի իսլամների և ոչ-իսլամների փոխյարաբերութիւնն է: Նրանց միջեւ գոյութիւն ունեցող լարւած փոխյարաբերութիւնները թուրք կառավարութիւնը ի վիճակի չէ կարգադրելու և ներդաշնակութեան մէջ դնելու: Սակայն, թուրք կառավարութիւնը այդ ազգամիջեան լարւածութիւնը արտաքին աշխարհին ներկայացնում է ոչ որպէս վարչակարգի թերութիւն, այլ ի սկզբանէ գոյութիւն ունեցող և բոլոր վարչակարգերին բնորոշ ազգային հակասութիւն:

Եւ վերջապէս երրորդ դժւարութիւնը, ըստ Էրմակորայի, կայանում է նրանում, որ եւրոպական երկրների ոստիկանութեան համար համոզեցուցիչ չեն

թում Թուրքիայից եկած մարդկանց քաղաքական ապաստան խնդրելու պատճառաբանութիւնները։ Նրանց համար հիմք է ծառայում 1951 թականին Ժընեւում ընդունւած համաձայնութիւնը քաղաքական ապաստանների մասին, որը հիմնականում յարմարեցւած էր և վերաբերւում էր համայնավար երկրների քաղաքացիներին։ Եւրոպացիները կա՛մ չեն հասկանում և կամ էլ չեն ուզում հասկանալ, թէ ինչպէս կարող է «ազատ ու ժողովրդավար երկրի» քաղաքացին քաղաքական ապաստան խնդրել մէկ ուրիշ երկրում։ Էրմակորան նշեց, որ եւրոպական պետութիւնները պարտաւոր են մշակել և ընդունել նոր պայմանագիր, որը հաշւի առնի քաղաքական ապաստան որոնելու բոլոր դրդապատճառները։ Դրա հետ միասին Էրմակորան արդարացիօրէն նշեց, որ եթէ եւրոպական պետութիւնները թոյլատրեն զանգւածային ներգաղթ, ապա անհրաժեշտ պիտի լինի փոխել այդ պետութիւնների ազգային ու վարչական կառոյցը, որը իր հերթին կ՚առաջացնի լուրջ հասարակական խնդիրները։ Էրմակորան իր խօսքը աւարտեց այսպէս. «Դեռեւս թուրքահպատակները չեն դիմում Ստրասբուրգի Եւրոպական Խորհուրդին, մինչդեռ այս հնարաւորութիւնից օգտւում են շատ ուրիշ ազգեր։ Պէտք է, որ թուրքահպատակների էլ փորձեն։ Դրա արդիւնքը կախւած կը լինի փաստաբանի հմտութիւնից»։

Հայկական Հարցերի Հաստատութեան ներկայացուցիչ դոկտոր Յարութիւնեանը զեկուցեց հաստատութեան կողմից կատարւած հասարակագիտական աշխատանքի արդիւնքների մասին։ Աշխատանքը կատարւել էր 1979 թականին և վերաբերւում էր Թուրքիայից հայերի դուրս գալու խնդրի ուսումնասիրութեանը։

Զեկուցողը ցոյց տւեց, որ հարցումների ենթարկւած թուրքահպատակ հայերի 85 տոկոսը ցանկանում են ընդմիշտ դուրս գալ Թուրքիայից։ Նրանց 80 տոկոսը ազգային ճնշումներից է փախչում, 7 տոկոսը տնտեսական պատճառներով, իսկ մնացածը այլ պատճառներով։ Ուսումնասիրւածների 97 տոկոսը անմիջականօրէն զգում է իր իրաւունքների սահմանափակումները՝ թուրք բնակչութեան համեմատութեամբ։ Ընդորում տրւած պատասխաններից երեւում է, որ այդ սահմանափակումները գոյութիւն ունեն բոլոր բնագաւառներում՝ տնտեսական, կրօնական, պաշտօններ գրաւելու և այլն։ Հայկական Հարցերի Հաստատութեան ուսումնասիրութիւնը ցոյց է տւել, որ որոշ բնագաւառների մէջ հայը պարզապէս մուտք չունի, ինչպէս օրինակ պետական պաշտօնէութիւն, զինւորական հրամանատարութիւն և այլն։

Պարզւեց նաեւ, որ թուրք կառավարութիւնը, ինչպէս նաեւ թուրք ժողովուրդը հայութեանը նայում են որպէս անվստահելի տարրի, ուստի արգելւում են սեփական պատմութեան ուսումնասիրութիւնը և ազգային ինքնագիտակցու-

թեանը նպաստող բոլոր մնացած միջոցները։ Յարութիւնեանի ելոյթից յետոյ տեղի ունեցաւ վիճաբանութիւն։

Երիտասարդ դոկտոր Ֆարուկ Շին իր ելոյթում փորձեց ցոյց տալ, որ հայերի արտագաղթի բուն պատճառը, ոչ թէ քաղաքական է, այլ տնտեսական։ Նա ուզեց ասել, որ եթէ գոյութիւն ունեն հայերի նկատմամբ գործադրուող ճնշումներ, ապա դա ոչ թէ ազգային խտրականութեան բերումով է, այլ նրանից է, որ հայերի տնտեսական հզօրութիւնը մեծ է և ստեղծում է այդ հզօրութիւնը ճնշելու բնական ձգտումը։ Այս առիթով նա բերեց Պոլսոյ շուկայի մէջ կատարուած մի ուսումնասիրութեան արդիւնք, որից պարզւում է, թէ իբր Պոլսոյ շուկայի 73 տոկոսը հայերի ձեռքումն է։ Այս «գիտական» հետազօտութիւնից արտում էր մի անհեթեթ եզրակացութիւն, թէ ամբողջ երկրի մէջ հայերի տնտեսական ուժը հասնում է գրեթէ 40 տոկոսի։

Հայկական Հարցերի Հաստատութեան ներկայացուցիչը շատ պարզ թւաբանական հաշւարկներով ցոյց տուեց, որ Թուրքիայի մէջ հայ տնտեսական ուժը այնքան չնչին է, որ այդ մասի խօսելն անգամ ամօթ է։ Նա յիշեցրեց 1941-42 թւականների ունեւորութեան տուրքը և 1955ի փետրուար 6-7ի կողոպուտները, որոնցից յետոյ անկարելի էր, որ հայերը մի ինչ որ զգալի ազդեցութիւն ունենային Թուրքիայի տնտեսութեան մէջ։ Դոկտոր Յարութիւնեանը թուրքական աղբիւրից արեց մի մէջբերում, որտեղ խոստովանւած էր, որ 1942 թւականի ունեւորութեան տուրքը սահմանելու բուն նպատակը Թուրքիոյ փոքրամասնութիւնների տնտեսական ուժի կործանումն էր։ Ինչպէ՞ս կարող էր պատահել, որ անցած 40 տարւայ ընթացքում, մշտական տնտեսական ճգնաժամի մէջ գտնւող Թուրքիան չկործանէր այդ ուժը։

Թուրջան Քիւչիւքիւօղլին այն կարծիքը յայտնեց, որ արտասահմանի հայերը Թուրքիայից հայերի դուրս գալու քարոզն են անում և դրանով իսկ վտանգում այնտեղ ապրող 50.000 հայերի կեանքը, որոնք օտար երկրներում պիտի աւելի անտանելի պայմանների մէջ ընկնեն։ Յարութիւնեանը պատասխանեց, որ ժամանակակից աշխարհում, գոնէ Եւրոպայում աւելի անտանելի պայմաններ դժւար է պատկերացնել և իր զարմանքը յայտնեց, որ մի թուրք մարդ այդքան մտահոգւած է 50.000 հայերի ճակատագրով։ Զարմանալի է նաեւ այն, որ թուրքը չի ուզում, որ հայերը դուրս գան Թուրքիայից, որովհետեւ հայերից ազատւելը Թուրքիայի բոլոր կառավարութիւնների երազն է եղել։

Ներկաներից մէկը հարցրեց Յարութիւնեանին. «Մէկ կողմէ խօսում էք Թուրքահայաստանի մասին, միւս կողմից յիշատակում էք միայն Պոլսոյ 50.000 հայութիւնը։ Ո՞ւր են մնացածը, կարո՞ղ էք տալ ճշգրիտ տեւեալներ»։

Յարութիւնեանը պատմեց հայերի ցեղասպանութեան և Հայկական Հարցերի մասին։ Յետոյ նշեց, որ թուրքական վիճակագրութիւնը միշտ դիտաւորեալ ն-

ւազեցնում է Թուրքիայում ժամանակին ապրող հայերի թիւը։ Ցեղասպանութիւնից առաջ,- ասաց նա,-Թուրքիայում, ըստ Հայոց Պատրիարքարանի տուեալների, ապրում էին 2,6 միլիոն հայեր։ Սա պաշտօնական թիւ է։ Իսկ անդրադառնալով յետպատերազմեան ժամանակաշրջանին, Յարութիւնեանը յիշեցրեց, որ 1955-60 թուականներին Թուրքիայում ապրում էր 90.000 հայութիւն, որը բնական աճի բերումով, այսօր պիտի հասած լինէր 120.000ի։ ուրեմն այսօր Թուրքիայից կորել են մօտաւորապէս 70.000 հայ։ Սա, կա՛մ ճնշումների բերումով հայերը դուրս են եկել Թուրքիայից և կամ էլ վիճակագրական տուեալների նենգափոխում է։ Երկուսն էլ պատիւ չեն բերում թուրքական կառավարութեանը։

Ո՞ր աստիճանի Թուրքիայում ապրող հայերին թուրքացած կարելի է համարել,- հարցրեց մի գերմանուհի,- և ինչպէ՞ս է հայութեան ապահովութիւնը։

Թուրքացման աստիճանը դժւար է որոշել, յստակ չափանիշի բացակայութեան համար,- պատասխանեց Յարութիւնեանը,- բայց կարելի է ասել, որ չնայած ցեղասպանութեան, հակառակ բոլոր ճնշամիջոցների, հայը մնացել է հայ և իրեն երջանիկ է զգում իր հայութեամբ։ Նրանցից մէկն էլ ես եմ։ Կան անշուշտ նաեւ այնպիսիները, որ կեղծւած պատմութեան և քարոզչութեան ազդեցութեան տակ երբեմն հակահայ ընթացք են բռնում։ Բայց ո՞ր ժողովուրդը դաւաճաններ չունի։ Ինչ մեղքս թագցնեմ, մենք էլ նրանց հայ չենք համարում։ Ինչ վերաբերում է ապահովութեանը, ապա պէտք է ասել, որ Պոլսոյ մէջ ապահովութիւնը համեմատաբար շատ աւելի տանելի է, քան գաւառներում։

Քիւչիւքիւօղլին, փորձելով առարկել վիճակագրական տուեալների դէմ, հարցրեց. «Դուք քիչ առաջ յիշատակեցիք Հայ Պատրիարքարանը, ո՞ր պատրիարքարանը դուք ի նկատի ունէք, մի՞թէ Թուրքիայում երկու պատրիարքարան չկայ»։

Յարութիւնեանը պատասխանեց, որ թուրքահայերը ունեն մէկ պատրիարքարան, որը Հայ Առաքելական Եկեղեցւոյ պատրիարքարանն է։ Իսկ այն երկրորդը, որի մասին այստեղ յիշատակւեց, հայ կաթողիկէ եկեղեցին է, որը անմիջականօրէն ենթարկւում է Վատիկանին։

Վերջին հարցումը վերաբերւում էր Հայկական Հարցերի Հաստատութեանը։ Նոյն Քիւչիւքիւօղլին ուզեց իմանալ, թէ ի՞նչ է իրենից ներկայացնում Հայկական Հարցերի Հաստատութիւնը և ո՞վ է նրան ֆինանսաւորում։ Յարութիւնեանը պատասխանեց, որ սա գիտական հաստատութիւն է, որը ֆինանսաւորւում է հաստատութեան անդամների և համակիրների կողմից, որոնցից մէկն էլ ինքն է։

1980

«ՀԱՅՐԵՆԻՔ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՄԵՐ ԻՐԱՒՈՒՆՔԸ» ՅՕԴԻԱԾԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Է. Յովհաննիսեան

Ճիշտն ասած՝ ես չէի ուզում պատասխանել **«Ազատամարտ»**ում հրատարակւած Վ. Բրուտեանի յօդւածին, որովհետեւ նրա ոճի մէջ բացակայում էր այն իրար հասկանալու ցանկութիւնը և մէկ ցաւով տառապելու զգացմունքը, որը ամենասուր քննադատութիւնն իսկ օգտակար քննարկումի է վերածում և, ամենակարեւորը, չի վիրաւորում: Բայց պիտի պատասխանեմ, որովհետեւ, հակառակ դրան, **«Ազդակ»** օրաթերթում տպւած Կ. Յովհաննէսեանի յօդւածը գրւած է հէնց այն ընկերական ոճով, որը իրար հասկանալու, այլ ոչ թէ ինքնահաստատւելու համար է:

Կարծում եմ, որ իմ քննադատները լաւ չեն հասկացել, թէ ես ինչ էի ուզում ասել իմ յօդւածով: Եթէ ինձ հարցնէին, թէ ես ի՞նչ էի ուզում ասել, ես կը պատասխանէի. «Մեծ քար վերցնելը՝ չխփելու նշան է»: Եթէ ինձ հարցնէին, թէ ինչո՞ւ էի ես ուզում այդ ասել, ես կը պատասխանէի. «Որովհետեւ չեմ ուզում, որ լուրջ քաղաքական գործիչները և հասարակական կազմակերպութիւնները մեր վրայ ծիծաղեն»:

Երբ Հայկական Հարցերի Հաստատութիւնը փորձեց շփումներ կատարել Դաշնակցային Գերմանիայի տարբեր կազմակերպութիւնների և քաղաքական գործիչների հետ՝ նրանց մեր Դատի պաշտպան դարձնելու համար, ապա հանդիպեց մի կարեւոր խոչընդոտի: Սրանք բոլորը ուզում էին ստանալ մեզանից բոլոր հարցերի յստակ պատասխանները. նախ ի՞նչ են ուզում հայերը, այսինքն հայերի ո՞ր պահանջին նրանք պիտի մասնակցեն իրենց ստորագրութիւններով:

Ես չգիտեմ, թերեւս ֆրանսացիները աւելի քիչ պահանջկոտ են նման հարցերում, որովհետեւ այնտեղ սունկի պէս բուսնում են իրաւապաշտպանական կոմիտէներ և ընկերութիւններ, որոնց անդամ դերասանները և գիտնականները համապատասխան աղմուկ են բարձրացնում, պաշտպանելով կա՛մ խորհրդային այլախոհների, կա՛մ միասեռականների, կա՛մ հայերի և, ի հարկէ, առաջին հերթին՝ հրեաների իրաւունքները:

Բայց գերմանացիները, մինչեւ նամակ ստորագրելը կամ էլ կոմիտէ կազմելը, ուզում են մինչեւ վերջ պատկերացնել խնդիրը և հարցնում են մեզ.- ի՞նչ էք ուզում, ինչո՞ւ հայերը թուրքական դեսպաններ են սպանում և ցոյցեր կազմակերպում: Հէնց որ լսում են մեր պատասխանը, թէ Թուրքիայից հողեր ենք ու-

զում, այլեւս խօսակցութիւնը անկարելի է լինում շարունակել։ «Դուք լուրջ մարդիկ չէք»,- ասում են նրանք ու հեռանում։

Եւ, իսկապէս, օտար մարդը այսօր չի կարող Թուրքիայից հող պահանջել, աւելի ճիշտ՝ չի կարող լրջօրէն մտածել, թէ մեր կողմից բարձրացուած աղմուկը հողերը ձեռք բերելու համար է։ Ո՞ր իրեն յարգող կազմակերպութիւը կը միանայ մեզ այդ պահանջում։

Միջազգային «Ամնեստի» կազմակերպութեան ներկայացուցիչը ասաց մեզ, որ իրենք պատրաստ են ցոյց կազմակերպել հայերի իրաւունքների պաշտպանութեան օգտին, և մարդ ուղարկեցին մեզ մօտ, պաստառների վրայ գրւելիք լոզունգները համաձայնեցնելու համար։ Եւ ես՝ յիմարս, մշտապէս գլխումս հողերի պահանջը ունենալով, ասացի, թէ գրէք, որ մեր հողերն ենք պահանջում։

- Դուք, ի՞նչ է, ցնդել էք,- ասաց կազմակերպութեան ներկայացուցիչը։

- Ոչ, ոչ,- արագ-արագ սկսեցի ես նահանջել ու արդարանալ,- սա մեր վերջնական պահանջն է, իսկ այժմ մենք միայն ուզում ենք բողոքել Թուրքիայում հայերի նկատմամբ հալածանքների դէմ։

- Քրիստոնեաներին ընդհանրապէս և հայերին մանաւանդ,- ճշտեց «Ամնեստի»ի ներկայացուցիչը և ասաց, որ սա իսկապէս այն խնդիրն է, որի համար իրենց կազմակերպութիւնը կարող է ցոյց կազմակերպել։

Մէկ ուրիշ օրինակ։ Հայ Դատին վերաբերուող խորհրդաժողովներում ու հանդէսներում մարդիկ, սովորաբար, հայանպաստ ճառեր են ասում և հեռանում։ Մի երկու խօսք էլ մամուլն է գրում և դրանով մենք մեր քարոզչական գործը կատարած ենք համարում։ Բայց, մեր կարծիքով, բոլոր նման գործերը պէտք է աւարտուեն մի որեւէ բանաձեւով, որը ժողովականների անունից յղւի պաշտօնական մարմիններին։

Դրա համար էլ Հայկական Հարցերի Հաստատութիւնը որոշեց եկող տարւայ մարտ ամսին Միւնխենի մէջ կազմակերպել համաեւրոպական հասարակական դատավարութիւն, որը թուրքերին դատապարտելուց բացի՝ մի իրաւապաշտպանական փաստաթուղթ կազմի։ Եւ կրկին կանգնեցինք անյաղթահարելի դժւարութեան առջեւ։ Այն միջազգային իրաւունքի մասնագէտները և պատմաբանները, որոնք համաձայնեցին մասնակցել մեր դատավարութեանը, ոչ մի կերպ չեն ուզում ստորագրել մի փաստաթուղթ, որտեղ պաշտպանւում է Թուրքիայից հող պահանջելու հայերի իրաւունքը։

Հապա ի՞նչ անել,- Մեծ քարը ձեռքից գցել։ Մեր օտար բարեկամներին մենք ասացինք.- Պաշտպանեցէք մեր հայրենիք վերադառնալու իրաւունքը։ «Այո, այս մէկը կարող ենք անել»,- միաբերան պատասխանեցին նրանք, իսկ մի-

ջազգային իրաւունքի մասնագէտներից մէկն էլ ասաց, որ իր զեկուցումը հէնց այդ հարցին կը նւիրի։

Այստեղ տեղը չէ, որ ես ուրիշ օրինակներ բերեմ, բայց փաստը մնում է փաստ և օտարների հետ բարեկամութիւնը կարող է միայն բնական պահանջների հողի վրայ ստեղծւել։ Եւ, ուրեմն, դուրս է գալիս, որ մեր հողային պահանջների աղմուկը այն մեծ քարն է, որ մենք վերցրել ենք չխփելու համար։

Համոզւելով դրանում, մենք փորձեցինք մի քիչ փոքրացնել «քար»ը, որը թէ՛ խփել լինի, թէ՛ էլ օտարները «խելքի մօտ» համարեն։ Այն հարցի վերաբերեալ թէ որքան փոքրացնել «քար»ը, մենք խորհրդակցեցինք մի շարք մասնագէտների հետ, այդ թւում՝ պրոֆեսոր Ֆելիքս Էրմակորայի, պրոֆեսոր Շտատմիւլլերի, դոկտոր Ֆոն Գլազենապի, պրոֆեսոր Սիմայի, մի շարք եկեղեցական գործիչների, այդ թւում՝ նաեւ Պոլսոյ Պատրիարքի հետ։ Շարլ Ազնաւուրի հետ չխօսեցինք։

Եւ բոլոր այս բանակցութիւններից յետոյ, յանգեցինք այն եզրակացութեան, որ մեր քաղաքական պահանջին (սա դոկտոր Գլազենապի տեսակէտն էր) իրական տեսք տալու համար՝ անհրաժեշտ է սկսել նրանից, ինչով վերջացաւ Հայկական Հարցը։ Յայտնի է, որ Լօզանում մեր վերջին պահանջը, որը մնաց չբաւարարւած, հայրենիք վերադառնալու պահանջն էր։ Այ հէնց այս պահանջն է, որ մենք կարող ենք վեր հանել որպէս այն նւազագոյն պահանջը, որ կարող են հասկանալ մեր բարեկամները։

Անշուշտ կարելի էր է՛լ աւելի փոքրացնել «քար»ը, սահմանափակւելով միայն ցեղասպանութեան փաստի ճանաչումով։ Բայց չեմ կարծում, որ այս պահանջը հայրենիք վերադառնալու պահանջից աւելի թեթեւ նկատւի։ Ինչո՞ւ ենթադրել, որ ես չեմ հասկանում, թէ թուրքերը մեզ չեն թողնի հայրենիք վերադառնալ։ Անշուշտ ես հասկանում եմ, թէ դա որքան դժւար գործ է, բայց հասկանում եմ նաեւ այն, որ հող պահանջելը շատ աւելի դժւար գործ է։

Այսքանն էի ես ուզում ասել և եթէ շատ անհեթեթ բան եմ ասում, պատրաստ եմ ներողութիւն խնդրել իմ ընթերցողներից ու շարունակել պոռալ, կանչել, թէ մեր հողերն ենք ուզում և այլն։

Մէկ ուրիշ բան էլ պարզւեց այս որոնումների ընթացքում։ Որոշ կասկած առաջացաւ բոլոր այն աշխատանքների անհրաժեշտութեան վերաբերեալ, որոնք տարւում են օտարներին ցոյց տալու համար, թէ ինչ ոճիր է կատարւել հայերի նկատմամբ։ Ահազին ջանքերի գնով մեր խղճուկ արխիւներից մենք հանում ենք Լեփսիուսների, Թոյնբիների ու Մանդելշտամների վկայութիւնները մեր ջարդերի մասին ու դէմ տալիս օտարներին, թէ՝ գրէք այս մասին ու պաշտպանեցէք մեր իրաւունքները։

Բայց նրանք չեն գրում ու չեն պաշտպանում ոչ թէ որովհետեւ չգիտեն եղածի մասին, այլ որովհետեւ անհետաքրքիր ենք մենք նրանց համար մեր հողային պահանջներով: Երբ մի շարք ահաբեկչութիւններից յետոյ հայերը որոշ հետաքրքրութիւն առաջացրին օտարների մօտ, նրանք իրենց հարուստ արխիւներից հանեցին այնպիսի լուսանկարներ ու փաստաթղթեր, որոնց գոյութեան մասին մենք ինքներս տեղեակ չէինք:

Այստեղ մենք մի քիչ նմանւում ենք Խ. Միութիւնից դուրս եկած այլախոհներին, որոնք ջանում են ամերիկացիներին ու եւրոպացիներին ցոյց տալ, թէ որքան վատ է Խ. Միութիւնում, կարծես թէ այդ մասին արտասահմանում մարդիկ չգիտեն և իմանալուն պէս յարձակւելու են Խ. Միութեան վրայ՝ նրա ժողովուրդներին ազատութիւն բերելու համար: Զուր են այդ ջանքերը, որովհետեւ Եւրոպան և Ամերիկան ամէն ինչ գիտեն, միայն թէ շահ չունեն մեր գործերում:

Ինչ վերաբերում է Թուրքիայի և Խ. Միութեան վարչակարգերի համեմատութեանը, ապա այդ մասին ես խօսեցի ասելու համար միայն, որ այն առաջին հերոսների համար, որոնք պիտի բնակութիւն հաստատեն մեր հայրենիքում, Թուրքիայի վարչակարգը կենցաղային – այլ ոչ թէ ազգային – իմաստով տանելի է: Եթէ ես Թուրքիան ժողովրդավարական պետութիւն եմ անւանում, ապա ոչ թէ նրա համար, որ նա իսկապէս այդպիսին է, այլ որովհետեւ նրան որպէս այդպիսին են ճանաչում միջազգային ատեաններում: Եթէ Թուրքիայից ռեւէ մէկը Դաշնակցային Գերմանիայում, օրինակ, քաղաքական ապաստան է խնդրում, նրան մերժում են՝ հիմնաւորելով Թուրքիայի ժողովրդավարականութեամբ:

Բայց, դասելով Թուրքիան ժողովրդավարական պետութիւնների շարքին, նրան ժողովրդավարական էլ պահանջներ են ներկայացնում: Օրինակ, Դաշնակցային Գերմանիայի կաթողիկէ եկեղեցիների կազմակերպութիւնը քննեց Թուրքիայում ապրող քրիստոնեաների վիճակը և Եւրոպական Խորհրդարանին ներկայացրեց մի գրութիւն, որտեղ ասւած էր, որ նման երկիրը ժողովրդավարական չի կարող կոչւել:

Մի խօսքով, ես համարում եմ, որ Թուրքիայի վրայ դրւած ժողովրդավարականի կնիքը մեզ թոյլ է տալիս միջազգային ժողովներում ներկայացնել նրան համապատասխան պահանջներ: Սա էի ես ուզում ասել:

Իսկ ինչ վերաբերում է Թուրքիայի և Խ. Միութեան վարչակարգերի համեմատութեանը, ապա ես կրկնում եմ իմ պնդումը, որ Թուրքիայի վարչակարգը, զուտ վարչակարգի իմաստով, խորհրդային վարչակարգից շատ աւելի տանելի է: Ես երբեք չեմ իջեցնի հայ ժողովուրդը թուրք ժողովրդի մակարդակին, բայց չեմ էլ բարձրացնի Հայաստանի վարչակարգը Թուրքիայի վարչակարգի

մակարդակին: Հայաստանը ես զբօսաշրջիկի աչքով չեմ տեսել ու **«Հայրենիքի Ձայն»**ով չեմ դատում:

Հէնց դրա համար էլ գիտեմ, որ, չնայած խորհրդային անտանելի վարչակարգի, հայ ժողովուրդը մեծ յաջողութիւններ է ունեցել: Ու չնայած Թուրքիայի շատ աւելի տանելի վարչակարգի, թուրք ժողովուրդը ոչինչ չի կարողացել ստեղծել: Սա ես պնդում եմ պատասխանատուութեամբ և հարկ եղած դէպքում մէկիկ-մէկիկ կարող եմ ապացուցել: Միայն թէ չգիտեմ, թէ որքան օգտակար կը լինի վարչակարգերի նման համեմատութիւնը:

Կարող են ասել, որ իմ մօտեցումը ցեղապաշտական մօտեցում է, բայց դա սխալ կը լինի, որովհետեւ ազգային տաղանդը, աշխատասիրութիւնը և գեղարուեստական ճաշակը չի կարելի խլել ոչ մի ժողովրդից: Հէնց դրա հաշւին էլ այդքան գեղեցիկ է Հայաստանը, որը չի կարելի ասել աւելի հարուստ Ուզբեկստանի մասին, օրինակ:

Անշուշտ, ես շատ կ'ուզէի, որ Խ. Միութիւնը զբաղուէր Հայ Դատով և կցէր Արեւմտեան Հայաստանը Խորհրդային Հայաստանին: Ո՞ր հայը դա չէր նախընտրի ներկայ վիճակից: Բայց դա չի արւում և մօտ ժամանակներս չի էլ արւելու: Եթէ նոյնիսկ արւի էլ, հայերի համար չէ որ պիտի արւի: Կարող է այնպէս պատահել, որ մի օր Աֆղանստանի փոխարէն Խ. Միութեան զօրքերը Թուրքիա մտնեն: Բայց դա բոլորովին չի նշանակում, որ Սփիւռքը ձեռքերը ծալած պիտի նստի ու սպասի այդ երջանիկ օրին:

Եթէ ձեռքներս ծալած սպասենք, այդ օրին էլ ականատես կը լինենք, թէ ի՞նչպէս ստեղծուեց Քրդական Սոցիալիստական Հանրապետութիւն, որի ինքնավար մարզերից մէկն էլ կը լինի մեր Հայաստանը: Ղարաբաղը և Նախիջեւանը մեզ օրինակ: Իսկ եթէ անելիք ունենք, ապա մեր անելիքներից մէկն էլ այն է, որ այնպիսի քաղաքական գործելակերպ որդեգրենք, որով ամօթ չլինի դիմել, օրինակ, ՄԱԿին կամ Եւրոպական Խորհրդարանին, ինչպէս նաեւ թուրքական կառավարութեանը:

Վերջապէս, օգտակար եմ համարում անդրադառնալ իմ քննադատների այն տեսակէտին, թէ հայրենիք վերադառնալու մեր պահանջը նոյնքան վերացական է ու անհեթեթ, որքան մեր հողերի պահանջը: Ոչ, դա այդպէս չէ: Նախ հայրենիք վերադառնալու պահանջը զուտ սփիւռքեան պահանջ է, ուստի ոչ մի վտանգ Թուրքիայի համար չի ներկայացնում:

Եթէ Թուրքիայի դէմ ուղղած մեր ճնշամիջոցները յանգեցնեն այն բանին, որ Թուրքիան մեր վրայ ուշադրութիւն դարձնի (չեմ ասում՝ լուրջ հաշւի նստի կամ վախենայ մեզանից, այլ՝ պարզապէս ուշադրութիւն դարձնի), ապա թուրքական քաղաքագէտները անմիջապէս կը հաշւեն, որ հայերը ամենալաւագոյն դէպքում 15 տարւայ ընթացքում Արեւմտեան Հայաստան կը կարողանան

մտցնել մօտ 100.000 մարդ, որոնք 7 միլիոն քրդերի կողքին քաղաքական իմաստով պարզապէս ոչնչութիւն պիտի լինեն։ Այս Լիբանանի Պուրճ Համուտից մի քիչ մեծ հայկական գաղութը նոյնիսկ Թուրքիայի ներքին գործերին միջամտելու պատրւակ չի կարող լինել։ Հաշւի առնելով քրդերի և հայերի բնական աճի տարբերութիւնը, տոկոսային փոխյարաբերութիւնը աճելու է քրդերի օգտին։

Ոչ մի վտանգ չներկայացնելով Թուրքիայի համար, այս փոքրիկ հայկական գաղութը կարող է տալ նրան մեծ առաւելութիւններ։ Նախ «կը փակւի հայերի բերանը» և Թուրքիան աշխարհի հասարակական կարծիքի առջեւ ձեռք կը բերի ժողովրդավար պետութեան հեղինակութիւն։ Երկրորդ՝ Թուրքիայի առաջին հայ բնակիչները կը լինեն հէնց այն հայրենասէր ու «անհանգիստ» տարրերը, որոնք արտասահմանում աղմկում են։ Այդ տարրերը փաստօրէն կ'ընկնեն Թուրքիայի կառավարութեան հսկողութեան տակ։

Ապա, որպէս հմուտ տնտեսավարներ և ճարպիկ առեւտրականներ, հայերը կարող են զգալիօրէն աշխուժացնել Արեւմտեան Հայաստանի տնտեսապէս մեռած շրջանը։ Այդ շրջանը մուտք կը գործի հարուստ հայերի դրամը, որի կարիքը ունի Թուրքիան։ Այնպէս որ ես չեմ համարում հայրենիք վերադառնալու մեր պահանջը՝ անհեթեթութեան իմաստով՝ համազօր հողերի պահանջին։

Ուրիշ բան, որ ինձ կարող են ասել, թէ հայերը չեն ուզի նման պայմաններով Թուրքիայի իշխանութեան տակ մի հայկական գաղութ ստեղծել, որը մի ինչ որ տեղ նմանւելու է Պոլսոյ հայկական գաղութին, որը աւելի շուտ կրօնական համայնք պիտի նկատւի, այլ ոչ թէ ազգային փոքրամասնութիւն։ Եթէ այդպէս մտածենք, ուրեմն չենք ճանաչում մեր ազգը։

Ինձ մօտ Բէյրութից եկաւ Սեդա անունով մի աղջիկ (դժբախտաբար չեմ յիշում նրա ազգանունը) և ասաց, որ ինքը պատրաստ է իր մի քանի ընկերների և ընկերուհիների հետ գնալ Թուրքիա և այնտեղ բնակութիւն հաստատել։ Նոյնիսկ խնդրեց, որ գնալիս իրեն չմոռանամ։ Իսկ մի երիտասարդ Կանադայից, Արմէն Արմէնեան անունով, որը անկուսակցական է, ունի կին և երկու երեխայ, ասաց, որ գիտէ, թէ առաջին բնակիչները կոտորւելու են, բայց ինքը պատրաստ է ջարդւել, որովհետեւ իր մահը կը նպաստի Հայ Դատի լուծմանը։

Այսպիսի ժողովուրդի զաւակներ ենք մենք ու մեր կողմից ոչ մի դժւարութիւն ինձ անձամբ չի մտահոգում։ Ուրիշ բան, որ գլխաւոր դժւարութիւնը հակառակորդի յամառութիւնը յաղթահարելու մէջ է։ Բայց սա արդէն այն շօշափելի աշխատանքն է, որին ես սիրով կը լծւէի, եթէ իմ կուսակցութիւնս տար ինձ այդ իրաւունքը։

Ես համոզված եմ նրանում, որ քանի դեռ Արեւմտեան Հայաստանում հայ չկայ, Հայ Դատի ուղղութեամբ տարւող բոլոր խօսակցութիւնները, միջազգային քաղաքական ներկայ իրադրութեան մէջ՝ յատկապէս Մերձ. Արեւելքում, կարող են ունենալ միայն բարոյական նշանակութիւն։

1980

ՄԵՐ ԴԱՏԸ ԱՅՍՕՐ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ)

Է. Յովհաննիսեան

Այն, ինչ այսօր կոչւում է Հայ Դատ, ազգապահպանման և ընդհանրապէս Սփիւռքի գոյութեան իմաստն է կազմում: Միայն Հայ Դատով է իմաստաւորւում Սփիւռքի ազգային գործունէութիւնը և միայն Հայ Դատի լուծմամբ վերանալիք Սփիւռքն է, որ ընդունելի է:

Այն օրից, երբ Սփիւռքը կը հրաժարւի Հայ Դատից, այսինքն՝ Հայ Դատի համար պայքարելուց, նա կը դառնայ կրօնական համայնք կամ, լաւագոյն դէպքում, մշակութային միաւոր, որը վաղ թէ ուշ դատապարտւած է անհետանալու: Իսկ անհետանալով, նա կը տանի իր հետ այն վերջին ազատ հողը, որի վրայ դեռեւս կարելի է աճեցնել հայ ժողովրդի քաղաքական ճակատագրի սերմերը:

Այն, ինչ այսօր կոչւում է Հայ Դատ, հայ ժողովրդի քաղաքական ուղեգիծն է, ուստի ամէն մի հայ պարտաւոր է ճանաչելու այդ ուղին և ճշտելու իր վերաբերմունքը նրա նկատմամբ: Սա վերաբերւում է թէ՛ Սփիւռքում և թէ Հայրենիքում ապրող հային:

Արւեստագէտները կարծում են, որ իսկական արւեստը կարող է ծնւել այնտեղ, որտեղ կայ ստեղծագործողի, կատարողի և հանդիսատեսի ներդաշնակութիւնը: Եւ սա, անշուշտ, ճիշտ է: Որքան էլ կատարողը անհատականութիւն մտցնի ստեղծագործութեան մէջ, նա պէտք է սիրի և հասկանայ ստեղծագործողին, և որքան էլ անհատական լինեն լսողի ընկալումները, նա պէտք է հասկանայ և սիրի թէ՛ ստեղծագործողին և թէ կատարողին: Եթէ բացակայի այդ երեքի ներդաշնակութիւնը, արւեստ էլ չի լինի, որովհետեւ արուեստը առանձին մասերի չբաժանւող ամբողջութիւն է: Եւ հէնց սրա համար է, որ ամէն ինչ մասերի բաժանող և մաս-մաս ուսումնասիրող գիտութիւնը արւեստի մէջ գրեթէ անելիք չունի:

Այս նոյն կացութիւնը, որոշ առանձնայատկութիւններով, տիրում է նաեւ քաղաքականութեան մէջ: Իսկական քաղաքականութիւնը ծնւում է այնտեղ, որտեղ կայ քաղաքական նպատակ ձեւակերպողի, այդ նպատակի համար պայքարողի և ժողովրդի ներդաշնակութիւնը: Սա նշանակում է, որ քաղաքականութիւն վարելու համար՝ անհրաժեշտ է քաղաքական նպատակի յստակ ձեւակերպում, որը ընդունելի լինի քաղաքականացած ժողովրդի համար:

Տեսնենք թէ ինչպիսի՞ն է կացութիւնը մեր Դատի առընչութեամբ:

Նախ դիմենք մեր Դատի քաղաքական կողմին։

Աշխարհի բոլոր քաղաքական նպատակները բխում են մի ինչ որ բարոյական կամ հասարակական վախճանական նպատակից, որ քաղաքական պայքարի միայն վերջին փուլումն է դառնում քաղաքական նպատակ, իսկ մինչ այդ մնում է վախճանական նպատակի ուղղութիւնը ցոյց տուող փարոս։ Այդպիսի փարոսներ կարող են լինել պետութեան ստեղծում, երկու պետութիւնների վերամիաւորում, անկախութեան ձեռքբերում, համայնավարական կամ ընկերվարական վարչակարգերի կառուցում, կղերապետութեան ստեղծում և այլն։

Հայ ժողովրդի քաղաքական վախճանական նպատակը վաղուց ի վեր ձեւակերպւած է Հ.Յ.Դաշնակցութեան կողմից, որպէս Միացեալ, Անկախ և Ազատ Հայաստանի ստեղծում։ Չկայ և չի կարող լինել աշխարհում ոչ մէկ հայ, որը համաձայն չլինի այս ձեւակերպման հետ, այսինքն՝ չուզենայ որ երկրագնդի վրայ գոյութիւն ունենայ Միացեալ, Ազատ և Անկախ Հայաստան։ Որքան էլ հայ կազմակերպութիւններ, անձեր և պետութիւններ ճառեն այս գաղափարի դէմ, միեւնոյն է, նրանք կեղծում են, որովհետեւ միացեալ, անկախ ու ազատ պետութեան մէջ ապրելու ցանկութիւնը աշխարհի բոլոր ազգերի **բնական** ցանկութիւնն է։

Այս գաղափարին հակառակ կարող է լինել միայն անբնական ձգտումներով օժտւած «հաւատացեալ» համայնավարը, որի համար **«պրոլետարիատը** հայրենիք չունի», իսկ ազգութիւնները, ինչպէս նաեւ պետութիւնները վերանալու են ժամանակի ընթացքում արտադրական ուժերի և արտադրական փոխյարաբերութիւնների «օրէնքների» համաձայն։ Անշուշտ, նման աշխարհայեացք ունեցող մարդկանց համար Միացեալ, Անկախ և Ազատ Հայաստանի գաղափարը չի կարող փարոս դառնալ։

Բայց, բարեբախտաբար, այսօր **ոչ մէկ համոզւած համայնավար Հայաստանում չկայ**։ Իսկ այն մի քանի տասնեակ երիտասարդներն էլ, որ կան Սփիւռքում, նախ եղանակ չեն կարող ստեղծել և յետոյ տարիքի և կեանքի փորձ ձեռք բերելու հետ միասին՝ նրանք էլ հրաժարւում են իրենց երիտասարդական մոլորանքից։

Ես անձամբ ոչ մի կասկած չունեմ նրանում, որ հայ ժողովրդի վախճանական նպատակի շուրջ չի կարող լինել որեւէ տարակարծութիւն։ Ամէն մի հայ իր հոգու խորքում կրում է Ազատ և Անկախ Հայաստանի երազը։ Ուրեմն ինչո՞վ բացատրել, որ բոլորի համար այս հարազատ գաղափարի շուրջ հրապարակում կան տարակարծութիւններ ու բուռն պայքարներ։ Բացատրութիւնը շատ պարզ է։ Այս վախճանական նպատակը քաղաքական նպատակ չէ այ-

սօր, այլ միայն փարոս է, որին հասնելու համար անհրաժեշտ է յաղթահարել բազմաթիւ ենթանպատակներ, որոնց շուրջ էլ տեղի են ունենում բախումները։

Բայց եկէք փորձենք ձեւակերպել այն գլխաւոր քաղաքական նպատակը, որը կարող է այսօր դառնալ մեր քաղաքական գործունէութեան յենակէտը։ Եթէ Միացեալ, Անկախ և Ազատ Հայաստանի պահանջը այսօր դեռեւս քաղաքական հող չունի, եկէք, քայլ առ քայլ նահանջելով այդ նպատակից, հասնենք այսօրւայ խնդիրներին։ Այդ նահանջի ժամանակ կը պարզւի մօտաւորապէս հետեւեալը.

Միացեալ, Ազատ և Անկախ Հայաստան ստեղծելու համար անհրաժեշտ է միացնող մասերի գոյութիւնը։ Մէկը, այսինքն Արեւմտեան Հայաստանը՝ ընդհանրապէս գոյութիւն չունի, իսկ միւսը, այսինքն Արեւելեան Հայաստանը՝ ո՛չ ազատ է, ո՛չ անկախ և ոչ էլ ինք իր մէջ միացեալ (Ղարաբաղ, Նախիջեւան և այլն)։

Բնականաբար ծագում է երկու ենթանպատակներ ձեւակերպելու անհրաժեշտութիւն։ Ամբողջացնել Արեւելահայաստանի հողերը և պայքարել Արեւմտեան Հայաստանի վերատիրացման համար։ Շատ շուտ կը պարզւի, որ այս ենթանպատակներն էլ քաղաքական հող չունեն, ուստի պէտք է մէկ քայլ եւս նահանջել։ Ի՞նչպէս կարելի է Արեւմտեան Հայաստանին վերատիրանալ, եթէ այնտեղ հայ չկայ։ Նահանջում ենք։ Հայկական բնակավայրեր ստեղծել՝ մեր պապենական հողերի վրայ։ Բայց ո՞վ կը թողնի։ Նահանջում ենք։

Դիմենք միջազգային ատեաններին, որպէսզի մեզ հայրենիք վերադառնալու իրաւունք տան։ Բայց ի՞նչպէս մեր ցանկութիւնները յայտնենք քաղաքական աշխարհին, շահագրգռենք այդ աշխարհը մեր խնդիրներով, եթէ նրանք մեզ հետ խօսել չեն ուզում։ Նրանց համար մենք պարզապէս գոյութիւն չունենք, Եւ, իսկապէս, ովքե՞ր ենք մենք։ նահանջում ենք։ Ցոյց տանք, որ մենք կանք և ովքեր ենք մենք։ Սրանից այն կողմ նահանջի տեղ չկայ, որովհետեւ սրանից այն կողմ արդէն մենք չկանք։

Յիրաւի, եթէ մենք միայն մեր մէջ ենք ապրում, իսկ ուրիշների համար գոյութիւն չունենք, ուրեմն մեր կեանքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ արտաքին շփումներից և զարգացման հնարաւորութիւնից զուրկ մի գոյավիճակ։ Ու քանի այստեղից այն կողմ նահանջելը անկարելի է, այստեղ էլ ձեւակերպւում է մեր առաջին իրական քաղաքական նպատակը։ Ցոյց տալ քաղաքական աշխարհին, որ մենք կանք, որ պահանջներ ունենք, որոնց մասին իրենք պարտաւոր են մեզ հետ խօսելու։

Չափազանց կարեւոր եմ համարում նշել, որ քաղաքական ենթանպատակների ձեւակերպման ճանապարհը իրենց այս՝ նպատակից նպատակ նահանջելու ճանապարհին է **և ոչ մի դէպքում հակառակ ուղղութիւնը**։ Հակառակ ուղ-

ղութիւնը պիտի տանէր մեզ հետեւեալ ճանապարհով,- Միացեալ, Անկախ և Ազատ Հայաստան ստեղծելու ճանապարհին կանգնած են Թուրքիան և Խորհրդային Միութիւնը, ուրեմն… տապալենք Թուրքիան և Խ. Միութիւնը: Բայց Թուրքիան Հիւսիսային Ատլանտեանի Ուխտի, իսկ Խ. Միութիւնը՝ Վարշաւայի պայմանագրի անդամ են, ուրեմն… քայքայենք այս երկու կազմակերպութիւնները: Բայց Ատլանտեանի Ուխտը միջազգային աշխարհակալութեան, իսկ Վարշաւայի պայմանագիրը միջազգային համայնավար շարժման յենակէտերն են, ուրեմն… պայքարենք աշխարհակալութեան և համայնավարութեան դէմ:

Նման մօտեցումը երբեք չի կարող համարուել քաղաքական մօտեցում այն պարզ պատճառով, որ քաղաքականութիւնը հաշւարկ է պահանջում: Մենք պէտք է ի վիճակի լինենք տիրող կացութեան մէջ գնահատել մեր ուժերը, ինչպէս նաեւ մեր հակառակորդների և մեր հնարաւոր դաշնակիցների ուժերը: Մենք պէտք է կարողանանք գտնել նրանց, որոնց հետ մեր շահերը գոնէ ժամանակաւորապէս համընկնում են: Մենք պէտք է կարողանանք մեզանով շահագրգռել տարբեր քաղաքական կազմակերպութիւններ և այլն:

Այս ամէնի համար մենք պէտք է ունենանք **տեսանելի դաշտ**: Ու հէնց նրա համար էլ մենք նահանջում էինք նպատակից նպատակ, որովհետեւ մեծ դաշտում չենք կարողանում նշմարել մեր խնդիրների իրականացման ճանապարհը: Երբ մենք փորձում ենք շարժւել հակառակ ուղղութեամբ, ամէն մի նոր քայլ այնքան է ծաւալում դաշտը, այնքան նոր խնդիրներ առաջ քաշում, որ Հայկական Հարցը պարզապէս կորում է այդ դաշտում:

Կարելի է, անշուշտ, գեղեցիկ եզրակացութիւններ անել, թէ աշխարհակալութեան կամ համայնավարութեան տապալման հետ միասին կը լուծւի նաեւ Հայկական Հարցը: Բայց այդ նախ ամբողջովին սխալ է, իսկ յետոյ էլ ոչ այլ ինչ է, եթէ ոչ հետեւեալը - Հայ Դատի չլուծւած լինելը աշխարհում տիրող անարդարութեան արդիւնքն է, ուստի մեր Դատը կը լուծւի, երբ աշխարհում արդարութիւն հաստատւի: Ի՞նչպէս կարելի է նման թեզը դարձնել օրւայ աշխատանքի եւ քաղաքական գործունէութեան աղբիւր: Ի՞նչպէս կարելի է պայքարել համաշխարհային արդարութեան համար, երբ պարզ չեն արդարութեան չափանիշները և պարզ չէ, թէ արդեօ՞ք մարդկութիւնը ուզում է արդարութիւն: Իսկ արդարութեան այս հսկայ շէնքի ո՞ր ճեղքում պիտի որոնենք Հայ Դատը:

Կանգնել նման ճանապարհի վրայ՝ նշանակում է ճամբայ ընկնել -որեւէ այլ ոչ թէ հայկական– գործ անելու համար: Սա, անշուշտ, չի նշանակում, որ դրամատիրութիւնը տապալելու, համայնավարութիւն հաստատելու կամ որեւէ այլ վարչակարգ ստեղծելու պայքարը քաղաքական պայքար չէ: Նման պայքարներն էլ քաղաքական պայքարներ են, բայց նրանք էլ ենթանպատակներից

ենթանպատակ նահանջելով ձեւակերպել են իրենց սեփական քաղաքական նպատակները այսօրւայ համար։

Օրինակ՝ միջազգային աշխարհակալութեան դէմ պայքարողները այսօր ունեն աշխարհում քաոս ստեղծելու շատ յստակ խնդիրը։ Իտալիայի «Կարմիր Ջոկատ»ները վերջերս առեւանգեցին ամերիկեան մի զօրավարի և յայտարարեցին, թէ իրենք պայքար են յայտարարել Հիւսիսային Ատլանտեանի Ուխտի դէմ։ Կարո՞ղ է հայը մասնակցել նման շարժումների։ Անշուշտ, կարող է եթէ նրա նպատակը աշխարհակալութիւնը տապալելն է, բայց թող ազատի նա մեզ այն յիմար դատողութիւնից, թէ ինքը Հայ Դատի համար է պայքարում, որովհետեւ աշխարհակալութեան տապալման հետ Հայ Դատն էլ պիտի լուծւի։

Ո՛չ աշխարհակալութեան տապալումով և ոչ էլ միջազգային որեւէ շարժումով Հայ Դատ չի լուծւի, որովհետեւ ոչ մէկ միջազգային շարժման վախճանը յայտնի չէ։ Դեռեւս պատմութիւնը չունի գոնէ մէկ օրինակ, երբ որեւէ մեծ միջազգային շարժում, գաղափարախօսութեան վրայ հիմնւած կամ որեւէ բան տապալելու համար ճամբայ ելած, աւարտւի այնպէս, ինչպէս նախատեսել էին շարժման հեղինակները։ Ֆրանսիայում, Գերմանիայում, Ռուսաստանում և այսօրւայ Պարսկաստանում ծագած շարժումները դրա վառ ապացոյցներն են։

Միայն ազգային ազատագրական շարժումներն են, որ աւարտւում են անկախութեամբ, այսինքն՝ նրանով, ինչի համար որ սկսւել էին։ Այս իմաստով չափազանց կարեւոր է վերջնապէս ճշտել, թէ ո՞ր սկզբունքն է մեզ համար կարեւոր, մենք ուզում ենք լուծել Հայ Դատը ընկերվարութեան միջոցո՞վ, այսինքն՝ ընկերվարական շարժումների յաղթական աւարտի հե՞տ ենք կապում Հայ Դատի լուծումը, թէ՞ ուզում ենք լուծել Հայ Դատը, որպէսզի ընկերվարական Հայաստան կառուցելու հնարաւորութիւն ստանանք։

Բոլոր խօսակցութիւնները այն մասին, թէ այս երկու մօտեցումների միջեւ տարբերութիւնը մեծ չէ, կարող են օգտակար լինել ճառերի, բայց ոչ իրական քաղաքականութեան մէջ։ Ես անձամբ կարծում եմ, որ երկրորդ ճանապարհը միակ իրական և տրամաբանական ճանապարհն է։ Եթէ մենք շեղւենք այս ճանապարհից և որդեգրենք առաջին ճանապարհը, եթէ միջազգային ընկերվարական շարժումները նկատենք Հայ Դատի լուծման ճանապարհ, ապա ստիպւած պիտի լինենք խոստովանելու, որ հրաժարւում ենք Հայ Դատի լուծման քաղաքական ճանապարհից և նետւում ենք միջազգային աշխարհակալութիւնը տապալելու ճակատը այն յոյսով, որ յաղթանակից յետոյ Հայ Դատը ինքնըստինքեան կը լուծւի։

Ինչո՞ւ է կարեւոր այս հարցի յստակեցումը։ Ինչպէս ասացի, միակ քաղաքական նպատակը այսօր քաղաքական աշխարհին մեզ պարտադրելն է։ Այ-

սինքն՝ մենք ուզում ենք այդ աշխարհին յիշեցնել, որ մենք կանք և չլուծած քաղաքական խնդիրներ ունենք: Բայց որպէս ի՞նչ կանք: Որպէս «այսքան չարիք չմոռացած» և հայրենիք պահանջող ժողովո՞ւրդ, թէ՞ աշխարհում ընկերվարական վարչակարգեր հաստատելու համար պայքարող մի ազգ:

Ճառերում ու յօդուածներում մենք կարող ենք ասել, թէ այս երկու նպատակները անբաժանելի են: Եւ, իսկապէս անբաժանելի են գաղափարախօսական ոլորտում, բայց ոչ քաղաքականութեան մէջ, որտեղ մեր քաղաքական թշնամիները և հնարաւոր դաշնակիցները ընտրւում են քաղաքական, այլ ոչ թէ անպայման գաղափարախօսական շահերով: Ուրեմն՝ աշխարհին մենք պէտք է ցոյց տանք աւելի մեր քաղաքական, այլ ոչ թէ գաղափարախօսական էութիւնը:

Անշուշտ, շատ լաւ կը լինէր, որ մենք այնքան քաղաքականացած ժողովուրդ լինէինք, որ կարողանայինք մեր քաղաքական նպատակներին հասնելու համար ճկուն կերպով օգտագործել ո՛րտեղ պէտք է ընկերվարութիւնը, ո՛րտեղ պէտք է ազգայնականութիւնը, իսկ հարկ եղած դէպքումն էլ՝ համայնավարութիւնը:

Բայց, դժբախտաբար, մենք այդպիսի ժողովուրդ չենք:

1982

ՀԱՅ ԴԱՏԻ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՆԵՐԿԱՅ ՀԱՆԳՐՒԱՆԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԽՆԴԻՐԸ

Է. Յովհաննիսեան

Եթէ մենք ուզում ենք պարզել Հայ Դատի համար մղւող պայքարի ներկայ հանգրւանի առաջնահերթ խնդիրը, մենք պիտի նախ և առաջ կարողանանք սահմանել ներկայ հանգրւանը, կամ առնւազն այն սկզբունքները, որոնց միջոցով որոշւում են այս կամ այն հանգրւանները և նրանցից բխող առաջնահերթ խնդիրները։

Որեւէ վերջնանպատակի հասնելու որեւէ հանգրւան կամ ենթանպատակ թելադրւում է վերջնանպատակով, գոյութիւն ունեցող կացութեամբ և նպատակի համար պայքարողների կարողութեամբ։ Այս իմաստով ներկայ հանգրւանի առաջնահերթ խնդիրը սահմանելու համար անհրաժեշտ է վերլուծութեան ենթարկել գոյութիւն ունեցող կացութիւնը, մեր ուժերը և վերջնանպատակից բխող խնդիրները։ Այդ հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ են խորն քաղաքական և հասարակագիտական վերլուծութիւններ, որոնք դժբախտաբար բացակայում են, ուստի առայժմ կարելի է խօսել ոչ թէ խնդիրների լուծման, այլ՝ ձեւակերպումների մասին։

Նախ եւս մէկ անգամ շեշտենք, որ մեր վերջնանպատակը, կամ՝ Հայ Դատը ոչ թէ ցեղասպանութեան դատապարտումն է, այլ Միացեալ, Ազատ ու Անկախ Հայաստանի ստեղծումը, ուստի այդ նպատակի համար մղւող պայքարի այսօրւայ հանգրւանը պէտք է բխի հէնց այդ նպատակից։ Սա նշանակում է, որ այսօրւայ առաջնահերթ խնդիրները տարածւում են շատ աւելի լայն դաշտի վրայ, քան այն դաշտն է, որում մենք գործում ենք։ Այսօր գործունէութեան բոլոր դաշտերը մէկ կողմից սահմանափակւում են աշխարհի մեծ պետութիւնների կամ գլխաւոր ուժերի պատնէշներով, միւս կողմից գործողների կարողութիւններով։ Այս երկու հակադիր ուժերի մրցակցութիւնը ամէն մի գործողի – պետութիւն, ազգ, կուսակցութիւն, շարժում – համար ստեղծում է գործունէութեան սահմաններ, որոնցից այն կողմ անցնելը կա՛մ անկարելի է, և կամ էլ ինքնասպանութիւն է նշանակում։ Այսինքն՝ մեր գործունէութեան դաշտը որոշւում է մեր սեփական ուժերով։ Ուրեմն ձեւակերպել որեւէ հանգրւանի խնդիր, նշանակում է պարզել թէ արդեօք մենք նուաճե՞լ ենք մեզ տրւած դաշտը։ Եթէ դաշտը սպառւած է, ապա առաջ գնալու համար մենք պէտք է մեզ փոխենք, վերադասաւորենք մեր ուժերը և աւելի ուժեղանանք՝ նոր ուժերի համա-

ձայն նոր դաշտ ստեղծելու համար: Ահաւասիկ, այս տեսանկիւնից է, որ պիտի փորձենք նկարագրել տիրող կացութիւնը:

Հաշւի առնելով Հայ Դատի վերջնանպատակը, կարելի է նշմարել գործունէութեան երեք դաշտեր՝ միջազգային հասարակական, միջազգային քաղաքական, թուրքական և խորհրդային:

Միջազգային հասարակական դաշտը գրեթէ ամբողջովին նւաճւած է: Այստեղ այսօրւայ հանգրւանի կարեւորագոյն խնդիրը ցեղասպանութեան հարցը մէջտեղ հանելն էր, այդ հարցը միջազգային ատեաններում արծարծելն էր (անկախ արդիւնքից), այդ մասին մամուլում յօդւածներ գրելն էր, գրքեր հրատարակելն էր և Թուրքիային բարոյական անհանգստութիւն պատճառելն էր: Այս խնդիրը, մեր գնահատականով, լուծւած է աւելի փայլուն, քան կարելի էր սպասել, հաշւի առնելով ուժերը, որոնք մեզ շատ աւելի քիչ դաշտ էին բացում, քան մենք կարողացանք նւաճել հերոսական ճիգերով: Գուցէ կան այս դաշտում որոշ չլցւած ճեղքեր, որոնք մօտ ժամանակներս կը լցուեն, բայց հիմնականում այս հանգրւանի դաշտը սպառւած է: Գուցէ դեռ անհրաժեշտ է մի երկու գիրք կամ յօդւած հրատարակել, մի երկու ատեաններում ցեղասպանութեան հարցը արծարծել, բայց բարոյական քարոզչութեան գործակիցը այս բնագաւառում գտնւում է գրեթէ յագեցման սահմանի վրայ: **Մեր այսօրւայ ուժերով մենք այլեւս շատ բան չենք կարող աւելացնել եղածի վրայ:**

ՋԳԱԼԻՕՐԷՆ ԱԿՏԻՒԱՑԵԼ ԵՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԲՈԼՈՐ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Սակայն առջեւում միջազգային քաղաքական քարոզչութեան փուլն է, այսինքն՝ պաշտօնական կառավարական յայտարարութիւնները ի նպաստ մեր դատի: Այս հանգրւանի համար մեր ներկայ ուժերը մեզ համար ոչ մէկ դաշտ չեն բացում: Հայ Դատի ուղղութեամբ մեր առաջխաղացման մէջ մենք հանդիպել ենք մի պատի, որը գլխով կոտորելու համար աւելի ամուր գլուխ է պէտք, քան մենք ունենք, Այս հանգրւանը նւաճելու համար որակական փոփոխութիւններ են անհրաժեշտ: Այսօրւայ կացութեամբ մենք շատ քիչ բան կարող ենք անել քաղաքական բնագաւառում, ինչ էլ որ կարող էինք անել, արդէն արել ենք: Որքան էլ որ ցաւալի լինի այս ասելը կամ կարդալը, դա այդպէս է, քանզի այն միջազգային «Մաֆիան», ում ձեռքումն է գտնւում այսօրւայ աշխարհի քաղաքական ճակատագիրը, մեզ հաշւի առնելու ոչ մէկ պատճառ չունի: Այս նոյնը շատ աւելի շեշտւած կերպով վերաբերւում է թուրքական դաշտին, որտեղ մեր գլխաւոր խնդիրը Թուրքիային ցեղասպանութիւնը ճանաչել տալն է: Այս խնդիրն էլ մեր այսօրւայ ուժերից վեր է և, ուրեմն, ինքնըստին-

քեան առաջ է գալիս մեր ուժերի վերադասաւորման և ամրապնդման հարցը, որպէս ներկայ հանգրուանի առաջնահերթ խնդիր։

Պէտք է ասել, որ ներկայումս մենք շատ աւելի թուլացած վիճակում ենք, քան 10 տարի առաջ, երբ սկսեցինք նւաճել մեզ տրւած դաշտը։ Այսօր հոգեպէս ամուր, բայց մարմնապէս քայքայւած վիճակումն են մեր վաղեմի սիւները՝ Լիբանանը և Պարսկաստանը. հրապարակ է իջել խուժանը, որը օգտւելով անկայուն վիճակներից, քայքայիչ աշխատանք է տանում Սփիւռքի ներսում։

Գլուխ են բարձրացրել նաեւ նրանք, ովքեր կեանքում ոչնչի չհասած, որոշել են ինքնահաստատւել հայ ժողովրդի ճակատագրի վրայ։ Եւ ընդհանրապէս, զգալիօրէն ակտիւացել են հայ ժողովրդի թշնամիները։

Այս պայմաններում նոր դաշտեր բացւելու և նոր խնդիրներ լուծելու համար անհրաժեշտ է մեր կազմակերպութեան նիւթական, բարոյական, քաղաքական և կազմակերպչական ամրապնդումը։ Մենք այլեւս չենք կարող հայկական գործին նւիրել միայն մեր ազատ ժամանակը (որը արդէն իսկ մեծ զոհաբերութիւն է), այլ մնացած բոլոր զբաղմունքները պիտի լցնեն հայկական գործից ազատ ժամանակը։ Մենք այլեւս չենք կարող մեր անդամների անդամավճարների վրայ շարունակել մեր գործը, այլ պիտի ունենանք եկամուտի այլ աղբիւրներ։ Մեր արտաքին յարաբերութիւններում մենք չենք կարող յենւել պատահական ծանօթութիւնների ու պատահական բարեկամների վրայ, այլ ամէն մի բնագաւառում, ամէն մի խոշոր թերթում, ամէն մի երկրում պէտք է ունենանք մեր մարդիկ, որոնց գործունէութեան մանրամասնութիւնների մասին այստեղ չի որ պիտի խօսենք։ Եթէ մեզ չյաջողւի ստեղծել այս կացութիւնը, մեր բոլոր ճիգերը արդիւնք պիտի չտան։

Ուրեմն ներկայ հանգրւանի առանձնայատկութիւնները թելադրում են մեզ՝ նախքան որեւէ լուրջ գործունէութեան նախաձեռնումը, կատարել սեփական շարքերի կառուցում, ինչ գին էլ որ դրա համար պահանջւի։ Առանց լուրջ բանակի անկարելի է լուրջ պայքար մղել այն ուժերի դէմ, որոնք մեզանից շատ աւելի հզօր շարժումներ են տապալում։ Այս իմաստով, ուժական արարքների դանդաղեցմանը մենք տալիս ենք բարձր գնահատական, ոչ որովհետեւ դէմ ենք ուժական արարքներին, այլ որովհետեւ մինչեւ այժմ օգտագործւած ձեւերը իրենց սպառեցին։ Այն ինչ հնարաւոր էր անել արդէն արւեց ու արւեց շատ աւելի փայլուն ձեւով, քան կարելի էր սպասել։ Փառք այդ ճանապարհին զոհւողներին։ Նրանց անունները ժամանակին կը գրւեն Հայաստանի անկախութեան զինւորների դամբարանում, ինչպէս այսօր արդէն գրւել են մեր ժողովրդի սրտում։ Բայց ուժական այս ճանապարհը այլեւս ոչ մէկ բան կարող է շարժել մեր աշխարհում, որի քաղաքական ճակատագիրը գտնւում է ուրիշների ձեռքում։ Այս ուրիշների համար հազարաւոր ու միլիոնաւոր մարդկանց

կեանքերը ոչ մէկ արժէք չունեն։ Այս ուժերի դէմ ուրիշ ուժական գործողութիւններ են պէտք։

ՊԱՅՄԱ՞Ն Է ՈՐ ՄԵՐ ՎԵՐՋՆԱՆՊԱՏԱԿԸ ՄԵՐ ԲՈԼՈՐ ԶՐՈՒՅԱԿԻՑՆԵՐՆ ԷԼ ԻՄԱՆԱՆ

Մեր կարծիքով, Հայ Դատի աշխատանքների դէմ ցցւած դժւարութիւնները յաղթահարելու համար պէտք է մշակել երկար վազքի վրայ հաշւարկւած մի ծրագիր և, այդ ծրագրման ընթացքին, յենւել հետեւեալ հինգ սկզբունքների վրայ։

1.- **Թագցնել աշխարհից շարժման իրական կենտրոնը, իրական ծրագրերը**։ Իսկական ղեկավարների, իսկական ծրագրերի փոխարէն հրապարակ հանել շինծու ծրագրեր և շինծու ղեկավարներ, որոնց գործունէութիւնը ու յայտարարութիւնները միայն ու միայն հասարակական կարծիքի համար կը լինեն։

Կարո՞ղ ենք մենք այդպէս վարւել։ Ինչո՞ւ չէ։ Չեմ կարողանում հասկանալ թէ ինչո՞ւ ոչ։

Այս առիթով ուզում եմ բերել մէկ օրինակ։ Վերջերս շրջանիս մի խումբ ընկերներ հանդիպեցին կարեւոր մի անձնաւորութեան հետ, որը հայասիրութեան նշաններ էր ցոյց տալիս և մենք որոշեցինք քաշել նրան մեր կողմը։ «**Ի՞նչ է ձեր վերջնական նպատակը**» - հարցնում է նա։ «**Միայն ցեղասպանութեան դատապարտումը,- պատասխանում եմ ես,- հողային պահանջների մասին մենք վաղուց արդէն մոռացել ենք։ Լաւագոյն մեր ցանկութիւնը՝ մեր հայրենիք վերադառնալն է և ապրել այնտեղ, ինչպէս ապրել ենք դարեր շարունակ թուրքերի կողքին որպէս թուրք քաղաքացիներ**»։ Յետոյ աւելացնում եմ, որ թուրք ժողովուրդի դէմ մենք ոչինչ չունենք, որ վատը երիտթուրքերն էին ու ներկայ կառավարութիւնը, որը չի ցանկանում ճանաչել երիտթուրքերի յանցանքները։ Մեր զրուցակիցը կարծես թէ տրամադրւում է մեզ օգնել, բայց զրոյցի մէջ է մտնում իմ կուսակցական ընկերը և նախ հայերէնով ինձ դիտողութիւն է անում կուսակցական գծից իմ շեղւելու համար, ապա գերմաներէնով մեր զրուցակցին ասում է, թէ մեր վերջնանպատակը Միացեալ ու Անկախ Հայաստանն է, որ բոլոր թուրքերը սրիկաներ են և որ մենք երբեք չենք հաշտուի նրանց հետ, մինչեւ որ չստանանք Սեւրի դաշնագրով նախատեսւած Հայաստանը։ Խօսակցութիւնը անմիջապէս անցնում է արւեստին, գինիների տեսակներին, գեղեցիկ կանանց, բայց ոչ Հայկական Հարցին, որովհետեւ մեր զրուցակիցը լուրջ մարդ է և Թուրքիայից հողային պահանջների մասին խօսել չի ցանկանում։

Հարց է ծագում եթէ մեր ծրագրում ինչ որ բաներ են գրւած մեր վերջնանպատակների մասին, պայմա՞ն է որ այդ մասին բոլորն իմանան։

2.- **Կուսակցութիւնը պիտի լինի ամէն տեղ**: Սիոնականների մշակած այս սկզբունքի համաձայն, որը որդեգրեց նաեւ Լենինը, բոլշեւիկները և հրեաները մտնում էին բոլոր կազմակերպութիւնների, բոլոր խմբագրութիւնների, բոլոր արհմիութիւնների ու մասոնական լոժերի մէջ և ի վերջոյ իրենց ձեռքը վերցրեցին բոլոր այդ կազմակերպութիւնները:

Կարո՞ղ ենք մենք սա անել: Ո՛չ, չենք կարող, որովհետեւ գիտակցութեան այս մակարդակը չունենք: Եթէ մեր ընկերներից մէկը դառնայ, օրինակ, Շտրաուսի օգնականը, մենք կը պահանջենք նրանցից անմիջապէս թողնել այդ պաշտօնը, միջազգային իմպերիալիզմին չծառայելու համար:

3.- **Ուրիշների մէջ չլուծելու և ուրիշների հետ չմերւելու հոգեբանութիւնը**:

Նապոլիոնը եղաւ առաջինը, որ ցանկացաւ պարզել, թէ արդեօք հրեաները անկեղծօրէն ուզում են դառնալ ֆրանսացիներ և ապրել Ֆրանսիայի օրէնքներով, թէ՞ նրանք ունեն իրենց սեփական օրէնքները, որոնց ենթարկւում են գաղտնաբար: 1804 թւականին Հռոմի Պապը Նապոլիոնի գլխին թագ դրեց, իսկ 1806 թւականին նա Փարիզ հրաւիրեց Ֆրանսիայի հրեաների 112 նշանաւոր ներկայացուցիչներ և նրանցից պահանջեց պատասխանել մի շարք հարցերի, որոնց մէջ կային հետեւեալները: Թոյլատրո՞ւմ է հրէական օրէնքը խառն ամուսնութիւններ: Եղբայրնե՞ր են արդեօք ֆրանսացիները հրեաների համար, թէ օտարներ: Համարո՞ւմ են հրեաները Ֆրանսիան իրենց հայրենիքը, որի օրէնքները նրանց համար պարտադիր են: Տարբերութիւն կա՞յ ֆրանսացու և հրեայի միջեւ, երբ դրամական հաշիւներ պիտի լուծես նրանց հետ: Ինչպէս կարելի էր սպասել, հրեայ պատգամաւորները պաշտօնապէս յայտարարեցին, որ հրեայ ազգ այլեւս գոյութիւն չունի, որ իրենք իրենց համարում են ֆրանսացի և այլեւս չեն ցանկանում ապրել մեկուսացած գաղութում: Միակ առարկութիւնը այն էր, որ խառն ամուսնութիւնները ընդունելի են զուտ քաղաքացիական, բայց ոչ կրօնական օրէնքներով:

Հրեայ ժողովրդի ամբողջ հետագայ պատմութիւնը ցոյց տուեց, որ կեղծ էին հրեայ պատգամաւորների խոստումները և այսօր էլ, 20րդ դարի աւարտին խառն ամուսնութիւնները Իսրայէլում արգելւած են: Կարո՞ղ ենք մենք այսպէս: Կարծում եմ, որ ո՛չ: Հասարակական ազնւութիւնը մեր նկարագրի կարեւորագոյն կողմն է, որը երբեմն մեզ փրկել է, իսկ երբեմն էլ կործանել: Բայց դա մեր նկարագիրն է: Մեզ համար աւելի հարազատ են ընդհանուր քաղաքակրթութեան օրէնքները, քան մեր ներքին օրէնքները, որոնք փաստօրէն գոյութիւն չունեն:

4.- **Ռազմավարական –մարտավարական ճկունութիւն**: Պէտք չէ ունենալ աւանդական բարեկամներ կամ թշնամիներ: Հրեաները իրենց ամբողջ պատմութեան ընթացքում աներեւակայելի ճկունութեամբ փոխել են իրենց թշնա-

միներին ու բարեկամներին, և ոչ մէկի հետ երբեք անկեղծ չեն եղել: Պարսիկները, իսպանացիները, լեհերը, ռուսները, անգլիացիները, ամերիկացիները, ֆրանսացիները, կոմունիստները, սոցիալիստները, մասոնները, քրիստոնեաները՝ սրանք բոլորը եղել են իրենց շահերին ծառայող ժողովուրդներ, պետութիւններ ու կրօններ: 60 տարի առաջ նրանք տապալեցին ցարին ու Ռուսաստանում խորհրդային իշխանութիւն հաստատեցին, իսկ այսօր նոյն եռանդով փորձում են քայքայել խորհրդային իշխանութիւնը: Այն ժամանակ Ռուսաստանի խորհրդայնացումը ձեռնտու էր հրեաներին, իսկ այսօր՝ առայժմ ոչ: Նշաններ կան, որ կացութիւնը կարող է շուտ փոխուել: Կարո՞ղ ենք մենք այդպէս: Ո՛չ, որովհետեւ մեր բարեկամութիւնը և թշնամութիւնը անկեղծ է ու մէկ օրից միւսը չեն կարող տեղի ունենալ լուրջ փոփոխութիւններ այս բնագաւառում: Տարիներ են պէտք հոգեբանօրէն փոխելու համար մեր ժողովրդի վերաբերմունքը ռուսների, թուրքերի կամ ամերիկացիների վերաբերեալ, ինչպէս նաեւ ձախերի ու աջերի նկատմամբ:

5.- **Կենցաղային փոխօգնութիւն**: Ամէն երկրում հայերը պէտք է օգնեն միմիանց տնտեսական նախաձեռնութիւնների ասպարէզում: Օրինակ, տեղացիները պէտք է յայտնեն եկուորներին թէ ո՞ր խանութից նրանք կարող են էժան գնով ապրանքներ գնել, ո՞ր հիւրանոցից օգտուել և ո՞ր ճաշարանում պարտաւոր են ճաշել: Մենք տեսնում ենք, թէ մեր մօտ ինչպէ՞ս է սնանկանում ճաշարան ունեցող մեր ընկերը, բայց ճաշելու գնում ենք ուրիշ ճաշարան, որովհետեւ մեզ համար մեր անհատական ազատութիւնը աւելի կարեւոր է, քան ազգային պարտականութիւնները: Պէտք է անդրադառնալ որ կենցաղային փոխօգնութիւնը ազգային փոխկապակցութիւն ու միասնութիւն է ստեղծում:

ԵԹԷ ՈՒԶՈՒՄ ԵՆՔ ՈՒԺԵՂԱՆԱԼ ԳԱՅԼԵՐՈՎ ԼԻ ԱՅՍ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Ահաւասիկ այս հինգ սկզբունքները, որոնց միջոցով կարելի է ձեռք բերել աներեւակայելի կարողութիւններ: Այս սկզբունքներից և ոչ մէկը մեզ համար իր մաքուր տեսքով ընդունելի չէ: Բայց որոշ զիջումներով, փոփոխութիւններով ու հայացնելով, մենք էլ պիտի օգտուենք այս սկզբունքներից, եթէ ուզում ենք ուժեղանալ գայլերով լի այս աշխարհում:

Այժմ տեսնենք թէ ի՞նչ կացութիւն է տիրում խորհրդային դաշտում, որի մէջ մենք ընդհանրապէս չկանք: Այս դաշտում գործելու տեղ կայ, նոյնիսկ մեր այսօրւայ ուժերի համար: Ուզում եմ բերել մի շատ ուսանելի օրինակ: Խորհրդային Միութեան գրողների համագումարից 18 օր առաջ առիթ ունեցանք քննադատելու ռուսների վերաբերմունքը ազգային փոքրամասնութիւնների վերաբերեալ և ասացինք հետեւեալը.- «**Եթէ խորհրդային շարժանկարում ցոյց են**

տալիս հայ զինուորի, ապա նա, որպէս օրէնք, միամիտ ու յիմար մի անձնաւորութիւն է, որին դաստիարակում է փորձառու ռուս զինծառայողը և շարժանկարի վերջում նրան մարդ է դարձնում: Եթէ շարժանկարում ցոյց են տալիս հայ գիտնականի, որը Մոսկւա է ժամանել գիտական խորհրդաժողովի մասնակցելու համար, ապա նա անպայման հիւրանոցում կը սկսի խորոված պատրաստել ու կ'այրի հիւրանոցի գորգը, իսկ խելացի ռուս գիտնականները լուրջ դէմքերով կը բացատրեն նրան, որ հիւրանոցներում խորոված եփելը արգելած է: Եթէ նա սլաքավար է, ապա անպայման սլաքը սխալ ուղղութեամբ կը թեքի և միայն ճարպիկ ռուս սլաքավարը կը փրկի գնացքը կործանումից: Այդպէս էր միշտ և ազգային փոքրամասնութիւնները դրան սովոր են»:

Այն ժամանակ Սփիւռքի ու Հայրենիքի «առաջադէմ» տարրերը զայրացան մեր քննադատութեան համար: Բայց, ահա, 18 օր անց, համագումարի բեմից Վարդգէս Պետրոսեանը ասաց նոյն բանը: Ահա՛ւասիկ (մէջբերում եմ ռուսերէնից թարգմանաբար).-

«Առանց խորն գիտելիքների, գրողը բարոյական իրաւունք չունի կատարելու որեւէ գեղարուեստական ամփոփումներ, մասնաւորապէս որեւէ եղբայրական ժողովրդի ընդհանուր բնութագրի վերաբերեալ: Դժբախտաբար նման փորձեր կատարւում են, մասնաւորապէս կինոարուեստում: Եթէ կինոնկարում երեւում է Միջին Ասիայի կամ Անդրկովկասի ժողովուրդների ներկայացուցիչը, ապա նա, որպէս օրէնք, անմխիթար գաւառացի է, ռուսերէն խօսում է անտանելի բարբառով, գլխին էլ անպայման մորթու փափախ ունի և կամ էլ մի այլանդակ գլխարկ: Եւ մեծամասնութեամբ նա առեւտրի բնագաւառից է»:

Եթէ այս մասին Վարդգէս Պետրոսեանը ասում է այսօր, դա դեռեւս չի նշանակում, որ նա այդպէս չէր մտածում երէկ: Այսօր պարզապէս այս մասին հնարաւորութիւն եղաւ ասելու, որը չկար երէկ: Ուրեմն երէկ մենք պիտի ասէինք: Ու Վարդգէս Պետրոսեանը շատ պիտի ուրախանար, երբ «Դրօշակ»ում կարդար այն, ինչի մասին ինքը գիտէր, ինչից տառապում էր, բայց ասել չէր կարող: Հէնց դա էլ մեր գործունէութեան դաշտն է:

Կամ՝ վերցնենք, օրինակ, հայ մտաւորականների վերջին նամակը Հայաստանի Բնութեան աղտոտման մասին: Եթէ մենք ունենայինք Հայաստանի ազատամիտ մտաւորականութեան հետ այն կապը, որը անհրաժեշտ է հաստատել խնդիրների լուծմանը աջակցութիւն ցուցաբերելու համար, նախ ինչո՞ւ մենք պիտի սպասէինք, թէ երբ է Գորբաչեւը թոյլ տալու այդ մասին գրել:

12 տարի առաջ ես գրեցի այն ամէնի մասին, ինչ որ հիմա գրում են Հայաստանի մտաւորականները, բայց «առաջադէմները» շտապեցին հիստերիա բարձրացնել, թէ սուտ է խօսում այդ հայրենադաւը, իսկ մենք էլ կարդացինք ու անցանք, կարծես թէ այս ամէնը Հայ Դատին չի վերաբերւում:

Եւ, վերջապէս, քանի որ ես նշեցի Հայ Դատի համար պայքարողների շարքերը ամրապնդելու մասին, հարկ է անդրադառնալ նաեւ միասնականութեան խնդրին, որի բացակայութիւնը իբր թէ թուլացնում է մեզ, կամ խանգարում է մեր պայքարին։

Միասնութիւնը երբեք ոչ մէկին չի ուժեղացրել։ Միասնական համազգային պայքար ոչ մէկը և երբեք չի մղել։ Միասնութիւնը ինքնըստինքեան թուլացնող հանգամանք է, որովհետեւ ստեղծւում է փոխզիջումների հիման վրայ։ Բոլոր պայքարները, յեղափոխութիւնները, վճռական ճակատամարտերը կազմակերպւել ու իրականացւել են մէկ կուսակցութեան մէկ գաղափարի ու սկզբունքների շուրջ հաւաքւած ու մէկ հաւատքի պատկանող մարդկանց կողմից։ Աւելին, երբ այդ մէկ կազմակերպութեան մէջ նկատւել են տարակարծութիւններ, կազմակերպութիւնը դուրս է վռնդել այլախոհներին և շարունակել է պայքարը միայնակ։

Այդպէս է եղել բոլոր յեղափոխութիւններում։ Միասնականութիւնը, արտաքին ժողովրդավարութիւնը, փոքխզիջումները խաղաղ օրերի սկզբունքներ են, իսկպայքարի օրերին դրանք աւելորդ շռայլութիւններ են։ Պատերազմի ժամանակ նոյնիսկ ամենաժողովրդական պետութիւնները ձգտում են զինւորական կառավարութիւններ հաստատելու։ Ուրեմն խօսել և մանաւանդ ճիգեր գործադրել արհեստական միասնութիւն ստեղծելու ուղղութեամբ, դատարկ բաներ են։

Միասնութիւնը կարող է օգտակար լինել միայն այն դէպքում, երբ ստեղծւում է ոչ թէ բանակցութիւնների ու փոխզիջումների, այլ մէկ կազմակերպութեան շուրջ համախմբւելու ճանապարհով։ Անշուշտ, դրա համար անհրաժեշտ է համախմբւողների հոգեկան ու նպատակային միասնութիւնը և յետոյ այն կազմակերպութիւնը, որը յաւակնութիւնը ունի բոլորին միացնելու իր իշխանութեան տակ, պիտի ապացուցի ու դրան ընդունակ է։ Բայց շատ աւելի կարեւոր է, որ համախմբւողները ունենան համախմբւելու քաղաքական հասունութիւնը։ Մի շարք պատճառներով, որոնց վրայ չեմ ուզում կանգ առնել, մեր միասնութիւնը Սփիւռքի պայմաններում անկարելի է։ Իսկ նրանց, ով իսկապէս միասնութեան կարիք ունի, ուզում է միասնական պայքար մղել, կարող եմ ասել՝ միացէք այն միակ կազմակերպութեանը, որը այդ պայքարը (լաւ թէ վատ) մղում է։

1986

Ռ.Գ. ՍԱՀԱԿԵԱՆԻ ԱՐԺԷՔԱՒՈՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ

Է. Յովհաննիսեան

Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտը ռուսերէնով հրատարակեց «**Ֆրանսեւթրքական յարաբերութիւնները և Կիլիկիան, 1918-1923թթ**» արժէքաւոր աշխատութիւնը, որի հեղինակն է Ռուբէն Սահակեանը։

Հաւանաբար սա ռուսերէնով առաջին աշխատութիւնն է, որի մէջ չկան կատաղի ու դատարկ մեղադրանքներ Հ.Յ.Դաշնակցութեան հասցէին, իսկ եղած քննադատութիւններն էլ գտնւում են գիտական վերլուծութիւնների սահմաններում։

Հեղինակը նշում է, որ Առաջին Աշխարհամարտի տարիներին Թուրքիան և Ֆրանսիան հակառակորդներ էին և պատերազմի աւարտին ֆրանսիական զօրքերը գրաւեցին Կիլիկիան, ուր վերադարձան Սիրիայի անապատներից աքսորեալ հայերը։ Նրանք վերադարձան, վստահելով Ֆրանսիայի խոստումներին՝ հայերին պաշտպանելու մասին։ Բայց, ինչպէս ցոյց է տալիս հեղինակը, ֆրանսացիները խաբեցին հայերին, որովհետեւ Թուրքիայի հետ իրենց յարաբերութիւններում նրանք ղեկավարւում էին սեփական, այլ ոչ թէ հայկական շահերով։

Քննարկելով այս խնդիրը, հեղինակը համոզեցուցիչ կերպով ցոյց է տալիս, որ ո՛չ Ֆրանսիան և ոչ էլ որեւէ այլ արեւմտեան պետութիւն նպատակ չունէր ազատագրելու Թուրքիայում հալածւող քրիստոնեաներին, ինչի մասին նրանք բազմիցս յայտարարել էին։ Հեղինակը պատասխանում է այն հարցին, թէ ինչպէս պատահեց, որ 15-16 թւականներին ցեղասպանութեան ենթարկւած ժողովուրդը, որը Առաջին Աշխարհամարտի աւարտին գտնւում էր յաղթողների շարքում, կրկին ենթարկւեց ցեղասպանութեան՝ պարտւած Թուրքիայի կողմից և յաղթող դաշնակիցների անտարբեր աչքերի առջեւ։

Պատմական գրականութեան մէջ գոյութիւն չունի այն հարցի յստակ պատասխանը, թէ ինչո՞ւ քեմալական Թուրքիան, արհամարհելով յոյների ներխուժումը Արեւմտեան Անատոլիա, որոշեց զինեալ պայքար սկսել ֆրանսացիների դէմ Կիլիկիայում։

Այս հարցի պատասխանը տրւած է Սահակեանի աշխատութեան մէջ։

Հեղինակը պատասխանում է նաեւ այն հարցին, թէ ինչու ֆրանսացիները անսպասելիօրէն փախուստի դիմեցին, որի հետեւանքով կոտորւեցին աւելի

քան 12 հազար հայեր: Հեղինակը ցոյց է տալիս, որ Քեմալական շարժումը փաստօրէն սկսւեց Կիլիկիայից հետեւեալ պատճառներով:

1.- Այն ժամանակ քեմալականների պայքարը – լաւ զինւած յոյների ու անգլիացիների դէմ – չէր կարող աւարտւել յաջողութեամբ ու կարող էր ամբողջովին տապալել քեմալական շարժումը:

2.- Կիլիկիայում անգլիական զօրքերին փոխարինող ֆրանսիական զօրքերը անհամեմատ աւելի թոյլ էին և չէին կարող ուժեղ դիմադրութիւն ցուցաբերել քեմալականներին:

3.- Քեմալական շարժման ղեկավարներին քաջ յայտնի էր ֆրանսացիների շահագրգռւածութիւնը թրքական դրամական գործերում և ֆրանսեւանգլիական հակասութիւնները, որոնց վրայ կարելի էր խաղալ՝ Ֆրանսիային Թուրքիայի կողմը քաշելու համար:

4.- Էրզրումի և Սիվասի ժողովներում քեմալականները ընդունել էին ազգայնական մի ծրագիր, որի իրականացման համար անհրաժեշտ էր ժողովրդին ոգեւորող որեւէ յաղթանակ: Իսկ այդ ծրագրում Հայաստանի անկախութեան ու ինքնավարութեան գաղափարի տապալումը գրաւում էր կենտրոնական տեղը:

Սահակեանի գրքի ամբողջական վերլուծութիւնը իմաստ կ'ունենայ միայն այն դէպքում, երբ նա ռուսերէնից թարգմանւի որեւէ արեւմտեան լեզւի: Կարծում ենք և յոյսով ենք որ այդ գործը կարող են կատարել Սփիւռքի համապատասխան կազմակերպութիւնները և, ինչու չէ, հէնց Հայ Դատի յանձնախմբերը: Իսկ առայժմ ուզում ենք նշել գրքի մի քանի կարեւոր արժանիքները:

1.- Առաջին անգամը լինելով Խորհրդային Միութիւնում ռուսերէնով լոյս է տեսնում մի աշխատութիւն, որտեղ մանրամասնօրէն ներկայացւած են հայերի ջարդերը քեմալականների կողմից և ցոյց է տրւած քեմալական շարժման հակախորհրդային էութիւնը, ինչը ջնջում է Լենինի և Քեմալի անկեղծ բարեկամութեան դատարկ թեզը:

2.- Վերլուծութեան ենթարկելով հայ կուսակցութիւնների դիրքորոշումը, հեղինակը պատշաճ և զուսպ է իր արտայայտութիւններում, ինչը հաճելի նորութիւն է, որովհետեւ խորհրդային գիտնականները սովորաբար իրենց գիտական աշխատութիւններում հանդէս են գալիս ոչ թէ գիտնականի, այլ քաղաքական գործիչի դերում և, վերլուծութիւնների փոխարէն, ճառում են:

3.- Աշխատութեան մէջ կատարւած են բազմաթիւ կարեւոր մէջբերումներ այն փաստաթղթերից, որոնք գտնւում են խորհրդային արխիւներում և անհասանելի են Հայ Դատի յանձնախմբերի համար: Այժմ այդ մէջբերումները մենք կարող ենք օգտագործել Հայ Դատի աշխատանքներում և հայկական Ցեղասպանութեանը վերաբերւող աշխատութիւններում:

4.- Հեղինակը շատ յստակ կերպով ցոյց է տալիս, որ քաղաքական յարաբերութիւններում բարոյական չափանիշները ոչ մէկ դեր չեն կատարում, ինչը օգտակար է Սփիւռքի երիտասարդութեան համար, որը երբեմն այս հարցի շուրջ որոշ միամտութիւն է ցուցաբերում: Անշուշտ, հասկանալի պատճառներով, Սահակեանը այն կարծիքն է յայտնում, որ այդ անբարոյականութիւնը վերաբերւում է միայն Արեւմտեան դիւանագէտներին, որ խորհրդային դիւանագէտները անկեղծօրէն ուզում էին օգնել հայ ժողովրդին, բայց իրականում ոչինչ չի փոխւում և ընթերցողը շատ լաւ հասկանում է, որ աշխարհի բոլոր երկրների ու վարչակարգերի դիւանագէտները զբաղւած են սեփական երկրների ու վարչակարգերի շահերով:

5.- Աշխատութիւնը գրւած է ռուսերէնով, ուստի կարող է ընթերցւել Խորհրդային Միութեան ամբողջ տարածքում, այդ թւում Ադրբեջանում և այլ մահմեդական հանրապետութիւններում, իսկ ամենակարեւորը՝ գիրքը կարող են ընթերցել այն 2 միլիոն հայերը, որոնք միայն ռուսերէն լեզւին են տիրապետում:

1987

ՀԱՅ ԴԱՏԸ ԵՒ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Է. Յովհաննիսեան

Եթէ չհաշուենք Հայաստանում կոմունիզմ կառուցելու վերացական նպատակը, ապա կարելի է ասել, որ Հայաստանի խորհրդայնացումից յետոյ հայ ժողովուրդը չի ունեցել ո՛չ ազգային վարդապետութիւն, ո՛չ քաղաքական նպատակ և ոչ էլ որեւէ ազգային խնդիր լուծելու ռազմավարութիւն: Արդիւնաբերութիւնը, արուեստը, պատմութիւնը, կրթութիւնը զարգանում էին ինքնըստինքեան, առանց ազգային բովանդակութեան, քանզի բացակայում էր ազգային վարդապետութիւնը, որտեղից էլ պիտի բխէր հասարակական և քաղաքական գործունէութեան բովանդակութիւնը: Միակ քաղաքական նպատակը Հայ Դատն էր, որը Հ.Յ.Դաշնակցութիւնը «Եռագոյն»ի, «Մայիս 28»ի, «Փետրուարեան Ապստամբութեան» և այլ արժէքների հետ միասին պահում էր իր գանձարաններում և այդ արժէքների վրայ սերունդներ էր դաստիարակում: Երբ սկսեցին ցեղասպանութիւնը ճանաչել տալու գործնական աշխատանքները, որոնք անշուշտ բխում էին Հայ Դատից, ստեղծուեց այնպիսի կացութիւն, որ Հայ Դատը նոյնացուեց Ցեղասպանութիւնը դատապարտելու խնդրի հետ, չնայած նրան, որ Ցեղասպանութեան դատապարտումը Դատի միայն մէկ, այն էլ ոչ ամենակարեւոր փուլերից մէկն էր: Եթէ նա գլխաւորն էր դարձել մեզ համար, ապա միայն քաղաքական պայմանների բերումով: Այժմ կացութիւնը փոխուել է: Ստեղծուել է անկախ Հայաստան, անկախ Լեռնային Ղարաբաղ, որոնց խնդիրներով զբաղւում են Ռուսաստանը, Թուրքիան, Իրանը և շատ ուրիշներ: Հայաստանը դարձել է ՄԱԿի անդամ և պաշտօնապէս ճանաչուել է բազմաթիւ պետութիւնների կողմից: Այս պայմաններում անհրաժեշտ է կրկին խօսել Հայ Դատի ու հայ ազգային վարդապետութեան մասին, յստակացնելու համար մեր անելիքները:

Հայ Դատի սահմանումը, անկասկած, մնալու է անփոփոխ, քանզի Միացեալ, Անկախ և Ազատ Հայաստանի ստեղծումը հայ ժողովրդի այն դարաւոր երազն է, որը շարժիչ ուժ է դառնում բոլոր քաղաքական կուսակցութիւնների, կազմակերպութիւնների, կառավարութիւնների ու անհատների գործունէութեան համար: Հայ Դատը իր այս ձեւակերպման մէջ առայժմ ոչ թէ քաղաքական նպատակ է, որի համար կարելի է այսօր պայքարել և կամ էլ բերել բանակցութիւնների սեղանին, այլ վերջնանպատակի սահմանում, որը միայն համապատասխան քաղաքական պայմաններում կարող է դառնալ առօրեայ քաղաքական նպատակ: Այս իմաստով Հայ Դատի սահմանման մէջ կարելի էր

ոչ մէկ բան չփոխել, այնուամենայնիւ, հաւանաբար նպատակայարմար պիտի լինի մեր վերջնանպատակին տալ աւելի ճկուն սահմանում, որը աւելի քիչ պիտի կաշկանդէր մեզ և մեր հակառակորդներին, աւելի քիչ առիթ պիտի տար՝ նաւաճողականութեան մէջ մեզ մեղադրելու համար: Հաւանաբար, մեր ծրագրից կարելի էր հանել անկախ Հայաստանի սահմանների հարցը, նշելով, որ այդ սահմանները որոշուելու են հետագայում մեր հարեւանների հետ մեր փոխյարաբերութիւնները պարզելու ընթացքում: Սակայն, այս փոփոխութիւնն էլ շատ կարեւոր չէ, քանզի անկախ Հայաստանը, այս կամ այն սահմաններում մեր հարեւանների աչքի փուշը պիտի լինի և այդ Հայաստանը ստեղծելու է նրանց դիմադրութիւնը յաղթահարելու գնով: Շատ աւելի կարեւոր է Հայ Դատի հիմնական հանգրուանների սահմանումը: Մենք բազմիցս յայտարարել ենք, որ Հայ Դատը լուծելու է հանգրուանային ճանապարհով, սակայն երբեք չենք սահմանել այդ հանգրուանները ռազմավարական և կամ էլ մարտավարական իմաստով: Եւ դա հասկանալի է, քանզի ներկայ վիճակում մենք լաւագոյն դէպքում կարող ենք տեսնել յաջորդ հանգրուանը, որը իր հետ բերում է նոր հնարաւորութիւններ, որոնց մասին մենք այսօր ոչինչ չգիտենք: Սակայն Ազգային վարդապետութիւնից բխող մեծ հանգրուանները շատ պարզ երեւում են և այդ հանգրուանները, ազգային վարդապետութեան հետ միասին, պէտք է դառնան մեր ժողովրդի ազգային ինքնագիտակցութիւնը, որպէսզի ամէն մի նոր կառավարութիւն կամ կուսակցութիւն, ամբոխավարական տրամադրութիւնների ազդեցութեան տակ, կամ սեփական քմահաճոյքի բերումով և կամ էլ քաղաքական տգիտութեան պատճառով ամէն անգամ նորութիւններ չմտցնի ազգային վարդապետութեան մէջ, որը թէեւ սահմանուած չէ, բայց ապրում է մեր ժողովրդի առողջ ազգային բնազդի մէջ: Ինչի՞ մասին է խօսում մեր բնազդը ու քաղաքական փորձը ազգային վարդապետութիւնից բխող հանգրուանների իմաստով:

Այստեղ արդէն մենք կարող ենք ելակէտ դարձնել Հայ Դատի սահմանումը: Եթէ մեր վերջնանպատակը՝ Միացեալ, Ազատ ու Անկախ Հայաստանի ստեղծումն է, ապա շատ հասկանալի է, որ նման պետութիւն կարող է ստեղծել ու ապրել, եթէ նա ունենայ համապատասխան տնտեսական, ռազմական և քաղաքական կարողութիւններ: Այսինքն կարող է պաշտպանել, կերակրել և բարեկամներ ունենալ միջազգային քաղաքական ասպարէզում: Այստեղից էլ բխում է Հայ Դատի նախավերջին հանգրուանը, որն է՝ ռազմական, քաղաքական ու տնտեսական ուժի ձեռքբերում: Բայց այս ամէնը ձեռք բերելու համար անհրաժեշտ է շահագրգռուած երկիր, կամ երկրներ, որոնք սեփական շահերից ելնելով, շահագրգռուած լինեն մեր ուժեղացման մէջ:

Ո՞ւմ վրայ կարող է յենւել հայ ժողովուրդը Անկախ Պետականութեանը անհրաժեշտ յատկութիւնները ձեռք բերելու համար: Այստեղ տեսակէտները բաժանւում են: Ոմանք համարում են, որ քաղաքակրթութեան պաշտպան Արեւմուտքը կը դառնայ Հայաստանի պաշտպանը: Ոմանք էլ համարում են, որ այդ պաշտպանը կարող է լինել Ռուսաստանը: Սակայն, իրականում, Արեւմուտքը, յատկապէս Միացեալ Նահանգները, որոնց այսպէս կոչւած ժողովրդավարութիւնը և ապրանքների առատութիւնը շատ գրաւիչ են թւում հայաստանցիների համար, Հայաստանի ուժեղացման մէջ շահագրգռւածութիւն չունի և երբեք չի ունենալու, քանզի Կովկասը Միջին Ասիայի հետ նրանք արդէն ոչ միայն տեսականօրէն յանձնել են Թուրքիային, այլ այդ մասին բազմիցս բարձրաձայն յայտարարել են: Միացեալ Նահանգների նախագահ Բուշը Թուրքիային կոչում է «լաւ օրինակ Միջին Ասիայի համար»: ՆԱՏՕի գլխաւոր քարտուղար Վերները նշում է, որ «Անկարայի դերը անկարելի է թերագնահատել»: Նախկին Խորհրդային Միութեան բոլոր մահմեդական հանրապետութիւնների ղեկավարները արդէն եղել են Անկարայում, որտեղ ջերմ ընդունելութիւն են գտել: Իրենց հերթին Թուրքիայի ներկայացուցիչները յայտնւում են Բաքւում, Տաշկենտում, Աշխաբադում և այլ մահմեդական մայրաքաղաքներում: Ուզբեկիստանը, Կիրգիզիստանը, Ադրբեջանը և Թուրքմենիան Թուրքիային նկատում են որպէս Եւրոպա տանող պատուհան: Արեւմուտքը այնպիսի կանաչ ճանապարհ է բացում Թուրքիայի համար, որ ռուսները սկսել են լուրջ մտահոգւել պանթուրքիզմի վտանգից: Նախագահ Էօզալը արդէն ստեղծել է Սեւ Ծովի երկրների տնտեսական համագործակցութիւն, որի կազմի մէջ են մտնում Թուրքիան, Ռուսաստանը, Ուկրանիան, Հայաստանը, Ադրբեջանը, Մոլդովան, Վրաստանը, Բուլղարիան և Ռումանիան: Վերջերս Թուրքիայի մինիստրների խորհրդի նախկին անդամ Ինանը յայտարարեց, թէ «**մի քանի տարի առաջ Թուրքիան ճգնաժամի մէջ էր, որովհետեւ սառը պատերազմի աւարտից յետոյ չէր կարողանում գտնել իր տեղը աշխարհում: Բայց հիմա թուրք ազգը ձեռք բերեց ինքնավստահութիւն: Մենք կարող ենք մեր հայեացքները ուղղել բոլոր ուղղութիւններով**»: Մի խօսքով, Արեւմուտքի հետ յոյսեր կապելը անիմաստ է: Ո՛չ նրանց ժողովրդավարութիւնը, ո՛չ տնտեսական ու գիտական նւաճումները քաղաքականութեան մէջ դեր չեն կատարելու: Նրանց հետ Հայաստանը կարող է շփւել ու նրանցից սովորել, երբ արդէն այնպիսի երկիր դարձած լինի, որի հետ իրենք Արեւմտեան երկրները հաշւի նստեն:

Չինաստանը ուշադրութեան արժանի է և այդ հարցը պէտք է ուսումնասիրւի: Առայժմ կարելի է ասել, որ Թուրքիայի թափանցումը Միջին Ասիա բաւականին մեծ մտահոգութիւն է պատճառում Չինաստանին, քանզի Չինաստանում ապրող մահմեդական ույգուրների ազատագրական պայքարը

պաշտպանութեան տակ է առնւել Թուրքիայի կողմից: Չինաստանի հակաթուրքական տրամադրութիւնները արդէն օգտագործւում են Իրանի կողմից, որը օրէցօր ամրապնդում է իր կապերը Չինաստանի հետ և նոյնիսկ զէնք է գնում այդ երկրից: Իրանի մրցակցութիւնը Թուրքիայի հետ՝ Միջին Ասիայում և Անդրկովկասում իրենց ազդեցութիւնը տարածելու ոլորտում, նոյնպէս կարող է բարենպաստ պայմաններ ստեղծել մեզ համար, Իրանից օգտւելու տեսանկիւնից: Բայց, անշուշտ, ամենակարեւոր երկիրը մեզ համար շարունակում է մնալ Ռուսաստանը: Այս երկիրը, անկախ նրանից թէ ո՞վ է գտնւում իշխանութեան վրայ, մեր ուժեղացման մէջ շահագրգռած է: Ես չեմ ուզում այս հարցը վերլուծութեան ենթարկել, ինչը բազմիցս արւել է թէ՛ մեր և թէ մեր նախորդների կողմից, այլ ուզում եմ միայն եւս մէկ անգամ կրկնել, որ պետութիւն դառնալու և ուժեղանալու հարցում մենք պէտք է յենւենք Ռուսաստանի վրայ: Այստեղից էլ բխում է, վերեւից հաշւած, յաջորդ հանգրւանը. ԲՈԼՈՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ՎՐԱՅ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ ԵԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ ՀԱՍՏԱՏԵԼ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵԻ ՌՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ: Այն էլ պիտի հաշւի առնենք, որ այդ բարեկամութիւնը պիտի լինի անկեղծ, քանզի խաբել ռուսներին անկարելի է: Գրողները, արւեստագէտները, քաղաքական գործիչները, առեւտրականները, զինւարականները, գիտնականները ու արդիւնաբերութեան ղեկավարները, ամէն մէկը իր բնագաւառում, պէտք է գտնեն շփման և փոխադարձ շահերի եզրը: Իսկ երբ այդ բարեկամական փոխյարաբերութիւնները հաստատւած կը լինեն, կարելի է անցնել յաջորդ փուլին՝ որոշակի արդիւնաբերական զինւորական և քաղաքական ծրագրերի մշակման և իրականացման: Բայց ինչ մեղքս թագցնեմ, ես չեմ հաւատում, որ մենք ունենանք, օրինակ, Եգիպտոսի նախագահ Սադաթի արիութիւնը, որը դաւաճանելով ամբողջ արաբական աշխարհին, կնքեց Քեմպ-Դեւիդի համաձայնութիւնը և առանց մէկ փամփուշտ արձակելու վերադարձրեց ամբողջ Սինայի թերակղզին: Բայց ենթադրենք, որ մենք ունենք այդ արիութիւնը և մեր ժողովուրդն էլ ունի ղեկավարի զգացմունք և վստահում է նրա կողմից կատարած քայլերին: Իսկ այդ ղեկավարը տեսնում է, որ Միութիւնը վերականգնելու կողմնակիցների դիրքերը օրէցօր ամրապնդւում են:

Մարտի 10ին «**Սովետսկայա Ռոսիա**» - Խորհրդային Ռուսաստան – թերթը, «Արդարութիւն, Ժողովրդավարութիւն, Պետականութիւն, Հայրենասիրութիւն» նշանաբանի տակ հրատարակեց «**Միացեալ Ընդդիմադրութիւն**» ստեղծելու յայտարարագիրը, որտեղ ասւած էր - «Արհեստականօրէն խորացւող ճգնաժամը երկիրը կանգնեցրեց կործանման եզրին, որը համահաւասար է մեծ պատերազմում կրած պարտութեան: Քանդւում է մեր պատմական հայրենիք Ռուսաստանը – Խորհրդային Միութիւնը: Կտրւած են դարերի ընթաց-

քում ստեղծած տնտեսական, մշակութային, էթնիկական կապերը: Ցան ու ցրիւ են տրւած պետական կուտակումները: Դրամական բնագաւառում տիրում է քաոս: Նոյնիսկ համաշխարհային նշանակութիւն ունեցող գիտական կենտրոնները մնացել են առանց միջոցների: Տեղի է ունենում բանակի նպատակասլաց քայքայում: Վերացւել են քաղաքացիների բոլոր ընկերային նւաճումները, որոնք պաշտպանւում էին Սահմանադրութեամբ: Կողոպտիչ վերափոխութիւնները մէկ գիշերւայ մէջ 130 միլիոն ռուսաստանցիներին ենթարկում են հալածանքների ու ահաբեկչութեան: Այս ամէնի պատասխանատուութիւնը առաջին հերթին ընկնում է Ռուսաստանի ղեկավարութեան վրայ, որը կրկին ժողովրդի վրայ դնում է կասկածելի փորձեր: Հակաժողովրդական կառավարութիւնը Ռուսաստանի ազգային շահերը ամբողջովին յանձնեց միջազգային յետադիմական ուժերին, որոնք էլ Խորհրդային Միութեան քայքայման բեմադրիչներն են:

«Քննարկելով երկրում տիրող կացութիւնը, մենք՝ ձախ և աջ ընդդիմադրութեան ներկայացուցիչներս յանգեցինք այն եզրակացութեան, որ Հայրենիքը կարելի է փրկել միայն համատեղ ճիգերով՝ քաղաքացիական խաղաղութեան և ազգային վստահութեան հիման վրայ: Դրանից ելնելով, մենք որոշեցինք ստեղծել միացեալ ընդդիմադրութիւն հետեւեալ սկզբունքների հիման վրայ.-

«1.- Միացեալ և ամբողջական հայրենիքի ստեղծում՝ բոլոր այն ժողովուրդների և պետութիւնների հետ, ովքեր ցանկանում են պետական միութիւն ստեղծել Ռուսաստանի հետ:

«2.- Մեր պատմութեան բոլոր փուլերում ստեղծւած հոգեկան և մշակութային բոլոր աւանդութիւնների համատեղում: Փոխադարձ հանդուրժողականութիւն և ազգային հողի վրայ երկրի նոր պառակտումից խուսափում:

«3.- Ընկերային արդարութեան հասարակարգի ստեղծում, որտեղ ամէն մի աշխատաւոր վճարւում է ըստ աշխատանքի և որտեղ պետութեան պաշտպանութեան տակ են գտնւում բոլոր նրանք, ովքեր նման պաշտպանութեան կարիքն ունեն:

«4.- Բարի-դրացիական յարաբերութիւնների ստեղծում արտասահմանեան երկրների հետ: Չեղեալ պիտի համարւեն բոլոր այն միջ-կառավարական պայմանագրերը, որոնք հակասում են Ռուսաստանի շահերին և ոտնահարում են նրա քաղաքացիների ազատութիւնները և արժանապատւութիւնը, որտեղ էլ որ նրանք բնակւեն:

«5.- Հաւատարմութիւն Սահմանադրական միջոցներին՝ քաղաքական խնդիրներ լուծելիս»:

Այս յայտարարագիրը ստորագրել են 24 կազմակերպութիւններ, այդ թւում նաեւ կոմունիստական, սոցիալական և բանւորական կուսակցութիւններ:

Յայտարարագիրը աւարտւում է կոչով, որտեղ ասւած է, որ յայտարարագիրը բաց է բոլոր կուսակցութիւնների, կազմակերպութիւնների ու շարժումների համար, ովքեր բաժանում են նրա սկզբունքները: Շատ պարզ է, որ ի վերջոյ այս շարժումը իր շուրջ կը հաւաքի բոլոր նրանց, ովքեր հակառակ են միութեան քայքայմանը: Ի՞նչ դիրքորոշում պիտի ունենանք մենք այս շարժման նկատմամբ, որպէս կուսակցութիւն, և ի՞նչ դիրքորոշում պիտի ունենայ Միութիւնը պահպանելու նկատմամբ Հայաստանի ղեկավարութիւնը որպէս կառավարութիւն: Պատկերացնենք մի պահ, որ Միութեան պահպանման կողմնակիցները ի վերջոյ անցնելու են իշխանութեան գլուխ: Այդ դէպքում շատ հասկանալի է, որ արդէն այսօր Հայաստանում պէտք է լինի այնպիսի մի ուժ, որը բացայայտօրէն յայտարարի, որ ինքը Միութեան վերականգնման կողմնակից է:

Ենթադրենք, որ Հայաստանի կառավարութիւնը յայտարարում է, որ Անկախ Պետութիւնների Ընկերակցութեան գաղափարը չիրականացաւ, քաոսը աւելացաւ և Հայաստանը յանգեց այն եզրակացութեան, որ անհրաժեշտ է վերականգնել Միութիւնը և դրա համար Հայաստանը առաջարկում է Ռուսաստանին կազմել առայժմ հայ-ռուսական միութիւն, ապա հրաւիրել այդ միութեան մէջ բոլոր ցանկացողներին: Եթէ Հայաստանի կառավարութիւնը ունենայ այս քայլին դիմելու արիութիւնը, ապա Հայաստանի և նրա նախագահի անունը չի իջնի միջազգային մամուլի էջերից, իսկ ինքը՝ առաջարկութիւնը կը ստանայ հայկական նախաձեռնութիւն անունը: Ռուսաստանը և ռուս ժողովուրդը երախտապարտ կը լինեն Հայաստանին և հայ ժողովրդին ու կը յայտարարեն, որ նոր դաշնակցային պետութեան դռները բաց են բոլոր ցանկացողների համար, ինչպէս նշւած էր միացեալ ընդդիմադրութեան յայտարարագրում, և այդ դռներով նոր միութեան մէջ կ'անցնեն Հարաւային Օսեթիան, Լեռնային Ղարաբաղը, աբխազները և շատ ուրիշներ, որոնք հասկացել են, թէ որքան դժւար է դատարկ տեղում պետութիւն կառուցելը:

Դրա հետ միասին, բաւականին կը թուլանան Վրաստանը և Ադրբեջանը, որոնք, հաւանաբար, նոր միութեան մէջ չմտնեն: Գուցէ մեզ վախեցնի այն հանգամանքը, որ ռուսական կողմնորոշում ընդունելով մենք կարող ենք կորցնել Միացեալ Նահանգները և Արեւմտեան Եւրոպան: Բայց նախ եկել է ժամանակը Արեւմտեան Եւրոպան բաժանել Միացեալ Նահանգներից, ապա՝ ինչպէս գիտենք, Արեւմուտքի հետ մեծ յոյսեր պէտք չէ կապել: Իսկ ինչ մնում է ժողովրդավարութեան և ազատ շուկային, ապա Ռուսաստանն էլ ձգտում է այդ արժէքներին: Բայց, ինչպէս ասացի, դժւար է հաւատալ, որ Հայաստանի կառավարութիւնը նման շրջադարձ կատարի իր քաղաքականութեան մէջ: Ուրեմն, այդ գիծը, այսինքն Ռուսաստանի հետ նոր միութիւն կազմելու առա-

ջարկութիւնը պէտք է բխի մէկ ուրիշ կուսակցութիւնից, օրինակ, Հ.Յ.Դաշնակցութիւնից: Եթէ մենք կարողանանք բացատրել մեր ժողովրդին արեւմտեան ժողովրդավարութեան բուն արժէքը, եթէ մենք կարողանանք ռուսաստանեան մեր քաղաքական կողմնորոշումը դարձնել ազգային բնազդ, ապա մենք երբեք չենք կանգնի այն դժւարութիւնների առջեւ, որոնց առջեւ կանգնած ենք:

Չեմ կարծում, որ այդ բանը մեզ յաջողւի, որովհետեւ մեր ժողովուրդը ընդհանրապէս դժւարութեամբ է հրաժարւում ամբոխավարութիւնից: Բայց այս հարցում մեր դիրքերը պէտք է լինեն շատ յստակ, որպէսզի մենք որոշակի արդիւնքների հասնենք մեր ժողովրդի քաղաքականացման հարցում: Առանց դրա շատ դժւար պիտի լինի որեւէ քաղաքական յարաբերութիւններ մշակելը, առաւել եւս ռուսների հետ: Այժմ ոչ ռուսները մեզ և ոչ էլ մենք ռուսներին չենք հաւատում: Չենք հաւատում, քանզի ո՛չ նրանք և ոչ էլ մենք մեր յարաբերութիւնները չենք կառուցում քաղաքական հողի վրայ: Թէ՛ նրանք և թէ մենք չափից աւելին տարւել ենք բարոյական արժէքներով, մինչդեռ այդ վերջինները լուրջ քաղաքականութեան մէջ միայն իրականութիւնը քողարկելու դեր են կատարում: Աշխարհի բարոյական դիմագիծը, յայտնի ուժերի ազդեցութեան տակ, արդէն վաղուց փոխւել է, իսկ խորհրդային ժողովուրդները, յատկապէս հայերը և ռուսները այդ բանը յամառօրէն չեն ուզում հասկանալ:

Հազարամեակների ընթացքում ազգային ազատագրական պայքարները համարւում էին արդարութեան լաւագոյն արտայայտութիւնները և այդ պայքարների մասին գրւում էին վէպեր, բանաստեղծութիւններ, երաժշտութիւններ ու արտասանւում էին ճառեր՝ ամենանշանաւոր քաղաքական գործիչների բերանով: Հոգ չէ, որ այդ ճառերը չէին իրականացւում, կարեւորը այն էր, որ ազգային ազատագրական պայքարը բացարձակ արժէք էր: Վերջերս Հայաստանի նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանը արտայայտւեց հէնց նոյն ոճով, յայտարարելով, որ իր համար ազգային ինքնորոշման իրաւունքը բացարձակ արժէք է:

Մինչդեռ աշխարհը այսօր այդպիսին չէ: Մի բուռ հերոսներ Լեռնային Ղարաբաղում արիաբար մղում են ազգային ազատագրական պայքար, իսկ աշխարհի մամուլը ոչ մէկ տարբերութիւն չի դնում հայերի և աղրբեջանցիների միջեւ: Աւելին, ոմանք բացայայտօրէն պաշտպանում են դահիճներին, առանց հաշւի առնելու, որ 7 միլիոն աղրբեջանցիների դիմաց կանգնած են 150000 մարտիրոս հայեր: Ո՛չ գրողները և ոչ էլ լրագրողները այդ հանգամանքը հաշւի չեն առնում, ղեկավարւելով զուտ քաղաքական նկատառումներով: Եւ ինչու պիտի հաշւի առնեն, երբ իրենց աչքի առջեւ ամենաժողովրդավարական երկիրները, քաղաքական նկատառումներով ճնշում և ոչնչացնում են քրդերին, բասկերին, իրլանտացիներին, պաղեստինցիներին, իսկ Միացեալ Նահանգ-

ները իրենց ամբողջ ռազմական հզօրութեամբ յարձակւում են Իրաքի վրայ, որի համար Քուէյթը մեր Ղարաբաղն էր: Բոլոր այս ճնշողները, քանդողները և սպանողները հերոսներ են դարձել, իսկ ազգային ազատագրական պայքար մղողները – յանցագործներ:

Բարոյական արժէքների այս նոր մթնոլորտում, հայ ժողովուրդը շատ բան կը կորցնէր, եթէ շարունակի կառչել ոչ թէ քաղաքական, այլ բարոյական արժէքներից: Այս մասին ես բազմիցս գրել եմ, բայց վերադարձայ նոյն նիւթին, որովհետեւ այսօր այդ խնդիրը կրում է արդէն ոչ թէ տեսաբանական, այլ ճակատագրական բնոյթ: Այն, ինչ մենք համարում ենք քաղաքական պոռնիկութիւն, իրականում քաղաքական ճարպկութիւն է: Զարմանալի ճարպիկ են այս հարցում ադրբեջանցիները: Աւելի ճիշտ կը լինէր ասել, որ ոչ թէ ճարպիկ են, այլ անսահման հաւատք ունեն Թուրքիայի դիւանագիտութեան վրայ և անվերապահօրէն կատարում են նրանց թելադրանքները:

Մութալիբովը այցելեց Թուրքիա, որտեղից ստացաւ միութենական պայմանագիրը ստորագրելու հրահանգը: Նա կատարեց այդ հրահանգը և ռուսները անցան նրա կողմը:

Երբ Մութալիբովը այլեւս պէտք չէր Ադրբեջանին, Բաքւում ստեղծուեց նոր իշխանութիւն Եաղուբ Մամեդովի ղեկավարութեամբ, որը Մարտի 9ին յայտարարեց հետեւեալը. «**Անհրաժեշտ է դասեր քաղել վերջին տարիների փորձից և վերջնականօրէն պայքարել այն ուժերի դէմ, որոնք ուզում են պատակտում մտցնել Ռուսաստանի և Ադրբեջանի միջեւ: Մենք պիտի յարգենք մեր հանրապետութեան մէջ ապրող ռուսներին և մեր տարածութեան վրայ գտնուող բանակը**»: Ճիշտ այդ պահին մենք առեւանգեցինք ռուս սպաներին, որի ընթացքում սպանուեցին երկու զիւորներ:

Կարեւոր չէ, թէ դա ո՞վ արեց, կարեւորը փաստն է, որը բխում է մեր հակառուսական տրամադրութիւններից: Համոզուած եմ, որ եթէ Արթիկում կանգնած լինէին ամերիկեան կամ ֆրանսիական զօրքեր, ոչ մէկը նրանց նկատմամբ նման քայլի չէր դիմի: Ինչպէ՞ս կարելի է, չէ՞ որ արտասահմանցիներ են: Բայց այսօր ռուսները նոյնպէս արտասահմանցիներ են: Մենք նրանց արտասահմանցի դարձրեցինք, հիմա ի՞նչ ենք ուզում նրանցից: Ո՞ւմ կ'ուզեն, նրա կողմն էլ կ'անցնեն: Թէ՞ մենք այն յոյսը ունենք, որ կարող ենք ուժով պարտադրել, որ նրանք մեր կողմը անցնեն: Ուժով չենք կարող, բայց ճիշտ քաղաքական քայլերով՝ կարող ենք: Կամ, գուցէ մենք որոշել ենք, որ ռուսներից շահ չունենք և յոյսներս կապել ենք Արեւմուտքի հետ, այդ դէպքում քաղաքականացումը պէտք է սկսենք ոչ թէ ժողովրդից, այլ վերեւից: Ռուսաստանի, կամ աւելի ճիշտ Անկախ Պետականութիւնների Ընկերակցութեան բանակի վրայ յարձակումներից յետոյ – ադրբեջանցիները յարձակւում էին, որովհետեւ ռուսների ներ-

կայութիւնը Ղարաբաղում և Անդրկովկասում իրենց ձեռնտու չէր – Ռուսաստանի փոխ-նախագահ զօրավար Ռուցկոյը հանդէս եկաւ հետեւեալ յայտարարութեամբ.- «**Անհրաժեշտ է անմիջապէս Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի տարածութիւններից դուրս բերել Անդրկովկասի մենաշրջանի զօրքերը: Ադրբեջանը, Վրաստանը և Հայաստանը ինքնիշխան պետութիւններ են և թող իրենք իրենց հարցերը լուծեն: Բաւական է զինեալ ուժերը նրանց խաղալիքը դարձնել**»:

Փառք Աստծոյ, դրա դէմ բուռն առարկեց Վրաստանի նոր ղեկավար Շեւարդնաձէն և խնդրեց Ելցինից, որ նա չդիմի նման քայլի: Բայց պատկերացնենք, որ Ռուցկոյը իրականացնի իր սպառնալիքը, այսինքն դուրս բերի Անդրկովկասից Ռուսաստանի զօրքերը և Անդրկովկասում ստեղծւի 18 թւականի կացութիւնը: Սա նշանակում է, որ մենք կրկին կանգնելու ենք Սարդարապատի ճակատամարտը մղելու անհրաժեշտութեան առջեւ, ապա ականատես ենք լինելու Ռուսաստանի և Ադրբեջանի ղեկավարների ձեռք-ձեռքի տալուն, որտեղ Վրաստանը ինչպէս միշտ կանգնելու է հակահայկական դիրքերի վրայ և, վերջապէս, ընտրելով չարիքներից փոքրագոյնը, կրկին նետւելու ենք ռուսների գիրկը:

Գուցէ՞ այս ամէնը մենք այսօր տեսնենք ու խուսափենք աւելորդ զոհերից:

Ու փորձենք տեսնել նաեւ ուրիշ իրողութիւններ: «**Բրիտիշ Պետրոլիում**» ընկերութիւնը Ադրբեջանի հետ պայմանագիր է կնքել՝ Կասպից ծովում նաւթի պեղումներ կատարելու մասին: Գուցէ բրիտանացիներին դրա՞ համար է անհրաժեշտ Ղարաբաղի խաղաղութիւնը և գուցէ դրա՞ համար է Քառոլայն Կոկսը իրեն փամփուշտների տակ դնում Ղարաբաղում:

Տեսնել այս ամէնը, անշուշտ, չի նշանակում չօգտւել կացութիւնից: Եթէ բրիտանացիների և հայերի քաղաքական շահերը մի ինչ որ ժամանակի համար համընկնում են, պէտք է օգտւել բրիտանացիներից, քաջ գիտակցելով, սակայն, որ մեր գեղեցիկ աչքերի կամ մարդասիրութեան համար չի արւում դա:

Տեսնենք նաեւ այն, որ ռուս ժողովուրդը սկսել է կազմակերպւել ու ջանում է վերականգնել նախկին միութիւնը, որի քայքայումը հակասում է իր ազգային շահերին: Այս մասին նոյնիսկ Գորբաչովը բացայայտօրէն յայտարարեց Գերմանիայում: Նա նշեց, որ Ելցինի գլխաւոր սխալը՝ միութիւնը քանդելու մէջ էր: Անհրաժեշտ էր ստորագրել միութենական պայմանագիրը,- ասաց Գորբաչովը և ամէն մի հանրապետութիւն կ'ունենար այնքան ազատութիւն, որքան որ ունի, օրինակ, Բաւարիան, Գերմանիայի կազմի մէջ: Ես պէտք է շարունակեմ իմ ճիգերս այս ուղղութեամբ,- աւելացրեց նա: Իսկ Մարտի 17ին մենք տեսանք այդ ճիգերի արդիւնքները, երբ տասնեակ հազարաւոր մարդիկ Մոսկւայում և

այլ քաղաքներում դուրս էին եկել ցոյցի, պահանջելով միութեան վերականգնում:

Նախ եկէք խոստովանենք, որ միութեան քայքայումը առայժմ մեզ էլ ձեռընտու չէ: Միութեան քայքայումը դեռեւս մեր անկախութիւնը չէ: Ռուսաստանի և Օսմանեան կայսրութիւններն էլ քայքայուեցին, բայց մենք անկախութիւն չստացանք, մինչդեռ տասնեակ ժողովուրդներ այդ երկու կայսրութիւնների փլատակների վրայ ստեղծեցին իրենց անկախ պետութիւնները:

Այսօր մենք պաշտպանուած չենք ո՛չ դրսից և ոչ էլ ներսից և այս պայմաններում անկախութիւնից խօսելը անմտութիւն է: Նա այնքան ժամանակաւոր է, որքան որ ժամանակաւոր է մեզ անկախութիւն խաղալու թոյլատրութիւն տուողների կամքը: Այս պայմաններում, շատ աւելի լաւ կը լինէր, որ մեր արտաքին ու ներքին պաշտպանութեան հարցերը յանձնուէին մէկ ուրիշի, որպէսզի մենք կարողանայինք նախապատրաստուել մեր իրական անկախութեանը: Այս կացութիւնը կարող է ստեղծուել վերականգնած միութեան մէջ: Ուրեմն, ինչո՞ւ մենք չդառնանք միութիւնը վերականգնելու նախաձեռնողներից մէկը:

Գուցէ իմ այս առաջարկութիւնս ոչ հասկանալի լինի և ոչ էլ իրականանալի, սակայն գոնէ տեսնենք, որ այսօր դեռեւս հնարաւոր է միութեան վերականգնումը որեւէ սահմաններում, ուստի հաշուի առնենք նաեւ այդ տարբերակը:

Եթէ ռուսները որոշեն վերականգնել հազարամեայ պատմութիւն ունեցող իրենց պետութիւնը, հօ մեզ չեն հարցնելու: Մեզ այդ բանը պարզապէս կը պարտադրուի և Ռուսաստանը միշտ կը գտնի Հայաստանում ապազգայնացած տարրեր, որոնց էլ կը յանձնի իշխանութիւնը: Ուրեմն, ինչո՞ւ այսօրուանից չպատրաստել այն օրւայ ղեկավարներին, որոնք արդէն այսօր պէտք է շփումներ հաստատեն միութիւնը վերականգնելու կողմնակիցների հետ: Եթէ նրանք յաղթեն, մեր շփումները արդարացած կը լինեն, եթէ ոչ՝ կորցնելու ոչինչ ունենք:

Եւ ոչ միայն այս տարրերի հետ պիտի մենք ունենանք բարեկամական կապեր: Ռուսաստանի բոլոր ուժերը, որոնք կարող են ի վերջոյ իշխանութեան գլուխ անցնել, Հայաստանում պիտի ունենան իրենց բարեկամներին, ներառեալ կոմունիստների:

Ահաւասիկ եւս մէկ հանգրուան, որը կայանում է Ռուսաստանի տարբեր քաղաքական ուժերի հետ կապեր հաստատելու մէջ:

Պէտք է ասել, որ «**Պրօ Արեմնիան**» կարող էր մէկ դեր կատարել այս հարցում, սակայն նա ընտրել է որոշակի ուղղութիւն, և այսօրւայ մեր բարեկամները Ելցինա-այլախոհական թեւն են, որոնց պատկանում է նաեւ Հայաստանի կառավարութիւնը: այսինքն՝ իր մտայնութեամբ, «**Պրօ Արմենիան**» բազմա-

կողմանի չէ: Մինչդեռ նրա էջերում մենք ուզում ենք տեսնել ե՛ւ ձախին, ե՛ւ աջին, ե՛ւ բոլորին, ովքեր իրենց տեսանկիւններից կարող են պաշտպանել հայ ժողովրդի շահերը: Նրանց բոլորին պէտք է միացնի ոչ թէ գաղափարախօսութիւնը, այլ հայապաշտպանութիւնը:

Արեւմտեան և ռուսական կողմնորոշում որդեգրելու հարցը մեզ համար նոր չէ: Սակայն նոր չէ նաեւ այն փաստը, որ ո՛չ մէկ կողմից, ո՛չ մէկ անգամ մենք օգուտ չենք ստացել, ուստի բոլորից էլ հրաժարւենք և յոյսներս դնենք միայն մեր սեփական ուժերի վրայ: Այո, այս մէկը ճիշտ է, եթէ մենք սեփական ուժ ունենք: Իսկ եթէ չունենք, եթէ այդ ուժը նոր պիտի ձեռք բերենք, կողմնորոշումները անհրաժեշտ են և ռուսական կողմնորոշումը ոչ միայն ամենաճիշտն է, այլ միակը:

Այս ճշմարտութիւնը մեր ժողովրդին հասցնելը՝ ամենակարեւոր հանգրուանը պիտի դառնայ:

Եւ սա շատ աւելի դժւար հանգրուան է, քան յեղափոխականացումը, որը Հայաստանում շատ արագ տեղի ունեցաւ: Քաղաքականացման ընթացքն էլ, անշուշտ, տեղի է ունենում, բայց շատ աւելի դանդաղ, քան յեղափոխականացումը: Իսկ դա արդէն վտանգաւոր է, որովհետեւ, ինչպէս ասում էր ռուս փիլիսոփայ Լոսսկին, ապստամբութեան համար ոչ այնքան արիութիւն, որքան որ խելք է հարկաւոր:

1992

ՊԱՆԹՈՒՐՔԻԶՄԸ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Է. Յովհաննիսեան

Այս նիւթի շուրջ Դեկտեմբերի 9-11 Մոսկուայում տեղի ունեցաւ միջազգային խորհրդաժողով, որը կազմակերպւել էր Ռուսաստանի Ազգային Հանրապետական կուսակցութեան, Ռուս-Հայկական Համագործակցութեան Ֆոնտի, Լենինգրադի մանկավարժական ինստիտուտի և Յունաստանի հելլէնական Մշակոյթի Լիգայի կողմից:

Յատկանշական էր այն մթնոլորտը, որով շրջապատւած էր խորհրդաժողովը և որը առանձնայատուկ էր Ռուսաստանի համար, ուր հակաթուրք հասարակական կարծիք երբեք գոյութիւն չի ունեցել: Նոյնիսկ բազմաթիւ ռուս-թուրքական պատերազմների ժամանակ ռուս մտաւորականութիւնը և հասարակական կարծիքը կողմ են եղել թուրքերի, որը ներկայացւում էր որպէս Ռուսաստանի միջազգային քաղաքականութեան զոհ, համակրանքը դէպի Թուրքիա է՛լ աւելի ամրապնդւեց Առաջին Աշխարհամարտից յետոյ, երբ Քեմալ Աթաթիւրքը սկսեց իր քաղաքական խաղերը Լենինի հետ:

Ու չնայած խորհրդային իշխանութեան օրով Թուրքիան ՆԱՏՕի գործուն անդամներից մէկն էր, Խորհրդային Միութիւնը երբեք չէր շեշտում Թուրքիայի վտանգը և չէր ստեղծում իր երկրում հակաթուրք տրամադրութիւններ: Ընդհակառակը, մնայուն կերպով շեշտում էր, որ Թուրքիայի նկատմամբ հողային պահանջներ չունի, մոռացութեան էր մատնում հայերի ցեղասպանութիւնը և միջազգային ատեաններում կա՛մ պաշտպանում էր Թուրքիայի տեսակէտը և կամ էլ չէզոք դիրք էր բռնում այդ տեսակէտի նկատմամբ:

Միայն մէկ անգամ, Երկրորդ Աշխարհամարտից յետոյ, Ստալինը որոշեց օգտւել Հայկական Հարցից և ձեռք բերել Թուրքիայից որոշ հողային տարածութիւններ, սակայն Թուրքիան ամուր կառչեց Արեւմուտքից և Ստալինը ստիպւած եղաւ հրաժարւել իր մտադրութիւններից: Սակայն այդ միջադէպը ամենեւին էլ չփոխեց ընդհանուր մթնոլորտը և Ռուսաստանը շարունակեց իր սիրաբանութիւնները Թուրքիայի հետ: Խորհրդային Միութեան ներկայացուցիչը դէմ քւէարկեց Հայերի Ցեղասպանութիւնը դատապարտող Մ.Ա.Կ.ի արձանագրութեանը, իսկ 1983 թւականի Օգոստոսի 25ին Ա.Պ.Հ. գործակալութեան թղթակից Ուգոլկովը հրատարակեց մի թղթակցութիւն, ուր Քեմալ Աթաթուրքը որակւում էր որպէս տաղանդաւոր զօրավար և Լենինի մեծ բարեկամ: Յօդւածի մէջ նշւում էր, որ Թուրքիայի առաջին նախագահը պաշտօնապէս յայտարարել էր, թէ առանց Ռուսաստանի թուրք ժողովրդի ազգային ազատագ-

րական պայքարը չէր կարող աւարտուել յաջողութեամբ: Ապա Ուգոլկովը պատմական փաստերի վրայ ապացուցում էր, որ Քեմալական շարժումը առանց Ռուսաստանի իսկապէս չէր կարող յաջողութեամբ պսակուել: Կարծես թէ հայերին յստակ գրգռելու համար Ուգոլկովը նշում էր, որ Անկարայի ինքնահաստատման համար վճռական դեր կատարեց Մոսկուայի պայմանագիրը, որը կնքուեց 1921 թւականի Մարտի 16ին և որը առաջին անգամը լինելով կնքւած էր Մեծ Ռուսաստանի հետ հաւասար պայմաններում և, վերջապէս, իր յօդւածի մէջ Ուգոլկովը նշում էր, թէ քանիցս Խորհրդային Միութիւնը միջազգային ատեաններում պաշտպանել է Թուրքիայի շահերը: Ուգոլկովը նշում էր նաեւ այն փաստը, որ անգամ Ռուսաստանի տնտեսական նեղ պայմաններում նիւթական օժանդակութիւն է ցուցաբերուել Թուրքիային: Յօդւածի վերջում հեղինակը նշում էր, որ աշխարհում ամէն ինչ փոխւել է, բայց մնացել են անսասան ռուս-թուրք յարաբերութիւնները:

Այս տրամադրութիւնները բնորոշ էին ոչ միայն լրագրողներին և քաղաքական գործիչներին, այլեւ ռուս ժողովրդին:

Գորբաչովեան վերափոխութիւնների ժամանակը ոչինչ փոխեց գոյութիւն ունեցող մթնոլորտում: Թուրքիան ուզում էր իր ձեռքը վերցնել նախկին Խորհրդային Միութեան մահմեդական ժողովուրդների ճակատագիրը և այդ հարցում նրան ոչ մէկը չէր առարկում: Տարբեր հանրապետութիւններ փոխում էին իրենց տառերը և մշակոյթը՝ յարմարւելով Թուրքիային, և նրանց ոչ մէկը չէր խանգարում՝ համարելով թուրքասիրութիւնը ժողովրդավարութեան արտայայտութիւններից մէկը: Նոր Ռուսաստանի համար Թուրքիան արեւմտեան արժէքների քարոզիչն էր, որը այդ արժէքները բերում էր Ռուսաստան, մանաւանդ Ռուսաստանի մահմեդական հանրապետութիւններ: Այս առիթով ոչ մէկ բողոք չկար, արեւմուտքը Թուրքիայի ճամբով լուսաւորում էր յետամնաց Ռուսաստանը: Մանաւանդ ենթադրւում էր, թէ Միջին Ասիայի ժողովուրդների յետամնաց զանգւածները և մահմեդական արմատականները քաղաքակիրթ Թուրքիայի միջնորդութեամբ քաղաքակիրթ եւրոպական մշակոյթի ներդաշնակ մասնիկը կը դառնան: Ո՛չ Բաքւի, ո՛չ Սումգայթի ջարդերը սառը ջուր չէին լցնում թրքասէր ռուսների տաք գլուխների վրայ և նրանք շարունակում էին Ռուսաստանի աւանդական թուրքասիրական քաղաքականութիւնը:

Միակ երկիրը, որը պէտք է օգտւէր ազատութիւնից և հրապարակաւ դատապարտէր թուրքասիրութիւնը, ինչպէս նաեւ ահազանգէր Թուրքիայի վտանգի մասին, Հայաստանն էր, որը դժբախտաբար ինքը դարձաւ թրքասիրութեան ջատագովը՝ կարծելով, թէ ժողովրդավարութիւնը պահանջում է հին մեղքերի ներում, իսկ ներկայ և ապագայ մեղքերի անտեսում: Հայաստանը ոչ

միայն չդարձաւ հակաթուրք տրամադրութիւնների աղբիւր, այլ դարձաւ այդ տրամադրութիւնների մեղմացնողը: Մի խօսքով, գորբաչովեան և ելցինեան բարեփոխութիւնների քաղաքականութիւնը ոչ մէկ բան չփոխեց Ռուսաստանի թուրքասիրական տրամադրութիւններից:

Եւ, յանկարծ, հակաթուրքական իմաստով այս խաղաղ մթնոլորտում, ռումբի նման պայթեց **«Պանթուրքիզմը և Ռուսաստանի ազգային անվտանգութիւնը»** խորհրդաժողովը: Խորհրդաժողովի նշանաբանը, զեկուցումները, քննարկումները և ամբողջ էութիւնը այնքան հակաթուրքական են, որ շատերին զարմանք էր պատճառում, թէ ինչպէս նման ժողով կարելի է անցկացնել Ռուսաստանի մայրաքաղաքում, այն էլ՝ պետական, հասարակական գործիչների և խոշոր գիտնականների մասնակցութեամբ: Ինչո՞վ կարելի էր բացատրել այն փաստը, որ Ռուսաստանի Պետական Դումայի անդամներ, բարձրագոյն հաստատութիւնների ամբիոնի վարիչներ, բարձրաստիճան զինուորականներ, Յունաստանի, Սերբիայի, Իրանի ներկայացուցիչներ միաբերան պնդեցին, որ Թուրքիան մեծ վտանգ է ներկայացնում Ռուսաստանի պետական շահերի համար:

Այս հանգամանքը կարեւոր ենք համարում, քանզի Ռուսաստանում քաղաքական իրադարձութիւնների բերումով ստեղծուեց այնպիսի մի մթնոլորտ, որը անխուսափելիօրէն պէտք է ծնէր քաղաքական կողմնորոշումներ: Մթնոլորտը ստեղծուեց ինքնըստինքեան, բայց քաղաքական կողմնորոշումների համար անհրաժեշտ էին հեղինակներ, կամ՝ ինչպէս այսօր ընդունուած է ասել՝ «լոբիստներ»: Ռուս-Հայկական Համագործակցութեան Ֆոնդը եղաւ քաղաքական կողմնորոշումներ ձեւակերպելու աղբիւրը, և «Պանթուրքիզմի վտանգի» խորհրդաժողովը դարձաւ այդ ձեւակերպումների միջոցը: Սակայն, նախ խօսենք այն մթնոլորտի մասին, որը հնարաւոր դարձրեց խորհրդաժողովի անցկացումը:

1990 թականից սկսեալ Ռուսաստանի՝ պետական-քաղաքական մտածելակերպ ունեցող քաղաքական գործիչները հասկացան, որ վերջնականապէս քանդւում է Ռուսաստանի պետականութիւնը և քանդւում է մի շարք նպատակամէտ հարուածների տակ: Այդ հարուածները գալիս էին Արեւմուտքից և կրում էին տնտեսական, քաղաքական, բարոյական և մշակութային բնոյթ: Ռուսաստանի քաղաքական գործիչների հայրենասիրական թեւը փորձեց կազմակերպել և առաջն առնել սպառնացող վտանգների, բայց կազմակերպել չյաջողուեց, քանզի հայրենասէրների մօտ պակասում էր այն ընդհանուր քաղաքական հողը, որը կարող էր ծնել ընդհանուր հայրենասիրական շարժում: Այնուամենայնիւ, յաջողուեց բացայայտել Ռուսաստանի պետականութեանը սպառնացող վտանգները և քննարկել նրանց դէմ պայքարելու միջոցների հարցը: Քաղաքական գործիչները, գիտնականները, աշխատաւորները իրենց

վճռական ելոյթներով ու բողոքներով ստիպեցին Ռուսաստանի իշխանութիւններին կտրուկ փոխել իրենց քաղաքականութիւնը՝ ազգային և պետական արժէքները պաշտպանելու ուղղութեամբ, և նրանք փոխեցին՝ չնայած այն վայնասունին, որ բարձրացրեց այսպէս կոչուած ժողովրդավարական թեւը, որը նպաստում էր պետութեան քայքայմանը։

Ահաւասիկ այս մթնոլորտում անհրաժեշտ էր ցոյց տալ, որ Թուրքիան և պանթուրքիզմը Ռուսաստանի համար ներկայացնում են լուրջ վտանգ՝ քաղաքական, կրօնական, ազգագրական, զինուորական և մշակութային իմաստով։ Այսինքն, անհրաժեշտ էր ցոյց տալ, որ Ռուսաստանի պետականութեանը սպառնացող վտանգների մէջ Թուրքիան և պանթուրքիզմը կարեւոր տեղ են գրաւում։ Այս նպատակը կրում էր զուտ քաղաքական բնոյթ և այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ էր մեծ ջանքեր գործադրել, որոնցից ամենադժուարինը Հայաստանի կողմից դրւած խոչընդոտների շրջանցումն էր և զանգւածային տեղեկատւական գործակալութիւնների լռութեան ճեղքումը։ Հայաստանը կամ աւելի ճիշտ նրա իշխանութիւնները խանգարում էին հակաթուրքական գործունէութիւն ծաւալել Մոսկւայում, նախ որովհետեւ այդ գործունէութիւնը ծաւալողը Հ.Յ.Դաշնակցութիւնն էր, յետոյ՝ հակաթուրքական գործունէութիւնը նոյնացւում էր հակաամերիկեան գործունէութեան հետ, ինչը ցանկալի չէր Հայաստանի իշխանութիւնների համար։

Բանը այն էր, որ պանթուրքիստական գաղափարները Ռուսաստանում տարածւում էին այնպէս, կարծես թէ նրանք ոչ թէ վտանգ էին ներկայացնում Ռուսաստանի համար, այլ՝ առնւազն փրկելու էին Ռուսաստանը։ Արեւմուտքը և Արեւելքը, շրջանցելով Ռուսաստանը, ջանում էին մերձենալ, և եթէ այդ ծրագրերը իրականանային՝ Ռուսաստանը կը դառնար մեռնող երկիր ու կը մեռնէր, ինչպէս բոլոր այն քաղաքները, որոնք ժամանակին գտնւում էին աշխոյժ առեւտրական ճանապարհների վրայ, իսկ յետոյ դուրս մնացին այդ ճանապարհներից։ Արեւմուտքը և Արեւելքը արդէն մշակում էին ծրագրեր, որոնց համաձայն Միջին Ասիայից էներգետիկական միջոցները և հումքը տարւելու են Արեւմուտք, շրջանցելով Ռուսաստանի տարածքը։ Դեռեւս 1992 թւականին Ս. Նիյազովը Միջին Ասիայի, Ղազախստանի, Թուրքիայի, Իրանի և Պակիստանի ղեկավարների հանդիպմանը առաջարկեց վերականգնել Մետաքսի մեծ ճանապարհը, որը կապում է Արեւելքը Արեւմուտքի հետ։ Նա ասաց՝ այսօր Թուրքմենիան կապւում է Իրանի հետ միայն մէկ ճանապարհով, իսկ աւելի վատ է կացութիւնը Չինաստանի, Հնդկաստանի և Պակիստանի հետ կապերի բնագաւառում։ Մենք պէտք է ստեղծենք ուղղակի կապեր Իստամբուլի, Թեհրանի, Աշխաբատի, Տաշկենտի, Ալմա Աթայի և Կենտրոնական Ասիայի երկրների հետ։ Այս տրամադրութիւնների տակ թաքնւում էին պան-թուրքա-

կան գաղափարները, չնայած նրան, որ մատուցւում էին որպէս Եւրօ-Ասիական կամ նոր միութիւն ստեղծելու գաղափարներ…

Պանթուրքիզմի վտանգին նւիրւած խորհրդաժողովը եկաւ ապացուցելու, որ այդ գաղափարախօսութիւնը շարունակում է ծնել քաղաքական ուղղութիւններ, որոնց միակ նպատակը Ռուսաստանի պետականութեան քայքայումն է: Իր զեկուցումը Է. Յովհաննիսեանը նւիրեց պանթուրքիզմի հակառուս և հակահայ էութեանը և նշեց, որ պանթուրքիզմը իր առաջին լուրջ քայլերը կատարեց Հայկական Ցեղասպանութեան միջոցաւ, ապա 1921 թւականի Մարտի 16ի պայմանագրով, ուր Ռուսաստանը անհիմն զիջումներ կատարեց Թուրքիայի, իսկ մեր օրերին պանթուրքիզմի քաղաքականութիւնը իր վառ արտայայտութիւնը գտաւ Լեռնային Ղարաբաղի խնդրում: Է. Յովհաննիսեանը նշեց, որ Թուրքիան իր յարձակողական քաղաքականութեան մէջ Ռուսաստանի և Հայաստանի դէմ չունի ոչ մէկ պատմական, մշակութային և իրաւական հիմք, և Ռուսաստանը պէտք է մշակի այդ չարիքի դէմ իր յատուկ ռազմավարութիւնը, քանզի պանթուրքիզմը այսօր հզօր պաշտպանութիւն է գտնում Արեւմուտքում իշխող որոշ ուժերի կողմից և փաստօրէն դարձել է Ռուսաստանի և Միացեալ Նահանգների հակադրւածութեան գլխաւոր հանգոյցը:

Պանթուրքիզմի ճամբով Միացեալ Նահանգները և մի շարք եւրոպական պետութիւններ ջանում էին Ռուսաստան բերել հոգեկան բովանդակութիւնից զուրկ արեւմտեան արժէքները: Ոչ միայն սեփական փրկութեան, այլեւ մարդկութիւնը փրկելու համար Ռուսաստանը պէտք է պայքարի արեւմտեան այդ արշաւների դէմ:

Խորհրդաժողովի բոլոր մասնակիցները նշեցին պանթուրքիզմի վտանգի տարբեր կողմերը և փաստօրէն ստեղծեցին այնպիսի քաղաքական մթնոլորտ, ուր բացայայտօրէն կարելի է խօսել Թուրքիայից եկող վտանգի մասին, կարելի է կազմակերպել հակաթուրք արշաւներ և հրատարակել համապատասխան յօդւածներ: Այս մթնոլորտի ստեղծումը մեծ քաղաքական նւաճում կարելի է համարել: Բաւական է նշել, որ «ազատ» Արեւմուտքում այդ մթնոլորտը գոյութիւն չունի և հակաթուրք արշաւները, Թուրքիայի դեսպանների հսկողութեան տակ, փաստօրէն արգելւած են: Ռուսաստանում յաջողւեց ոչ միայն հանել այդ արգելքը, այլեւ կենտրոնական մամուլում հրատարակել հակաթուրք յօդւածներ ու վերլուծութիւններ: Բաւական է նշել, որ Դեկտեմբերի 22ին Մոսկւայի հեռուստատեսութեամբ պաշտօնապէս յայտարարւեց, որ Ռուսաստանը Անդրկովկասում ունի հակառակորդ Ադրբեջանը, անորոշ Վրաստանը և հաւատարիմ բարեկամ Հայաստանը:

Այս ընդհանուր քաղաքական յաղթանակից էլ բխում է մեր զուտ հայկական յաջողութիւնը, որը կայանում է նրանում, որ մեր քաղաքական խնդիրնե-

րը յաջողուեց ներկայացնել այն տարազով, որ նրանց չլուծւած լինելը կապ ունի պանթուրքիզմի ճնշումների հետ։

Եթէ անդրադառնանք խորհրդաժողովի որոշումներին և յայտարարութիւններին, ապա կը տեսնենք, որ Ղարաբաղի Հարցի արդար լուծումը պահանջելու, Հայոց Ցեղասպանութիւնը դատապարտելու կամ 1921 թւականի պայմանագիրը չեղեալ համարելու հարցերը անմիջականօրէն կապւում են պանթուրքիզմի հետ և որպէս այդպիսին տարածւում են Ռուսաստանի Պետական Դումայի և զինւորական շրջանակներում։

Վերջնական եզրակացութիւններից առաջ, նախ նշենք խորհրդաժողովի որոշումները.-

1.- Յայտարարութիւն՝ «Ցարգրադի (Կոստանդնուապոլիս) միութեան» միջազգային կազմակերպութիւն ստեղծելու մասին։ Յայտարարութեան մէջ ասւած է, որ Բիւզանդիոնի ժառանգորդ ժողովուրդները՝ ռուսները, սերբերը, հայերը, բուլղարները, յոյները, օսեթները պէտք է վերականգնեն իրենց վաղեմի հոգեկան կապերը և մշակեն միասնական ռազմավարութիւն պանթուրքիզմի դէմ։ Այս յայտարարութիւնը բաց է այլ ժողովուրդների կողմից ստորագրւելու համար։

2.- Յայտարարութիւն՝ ռուս ազգը փրկելու մասին, որտեղ նշւում է, որ մահմեդական տարրը թափանցում է Ռուսաստան, իսկ ռուսների աճը բացասական համեմատութիւն ունի։ Յայտարարութեան մէջ նշում են մի շարք միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են ռուսների նւազման առաջքն առնելու համար։

3.- Յայտարարութիւն՝ ի պաշտպանութիւն սերբ ժողովրդի պայքարի։ Յայտարարութեան մէջ նշւում է, որ նախկին Հարաւսլավիայում պէտք է ունենալ մէկ միասնական պետութիւն։ Յայտարարութեան մէջ ասւած է նաեւ, որ ալբանական անջատողականութիւնը և պանթուրքիզմը մեծ վտանգ են ներկայացնում պալքանների խաղաղութեան համար։

4.- Յայտարարութիւն՝ Հայերի Ցեղասպանութիւնը դատապարտելու և Մոսկւայի Պայմանագրի մասին։ Յայտարարութեան մէջ նշւում է, որ հայերի հանգրւանային երեք Ցեղասպանութիւնները՝ Աբդուլ Համիդ, Երիտթուրքեր, Քեմալ Աթաթիւրք, պանթուրքիզմի արտայայտութիւններ էին, որը պէտք է դատապարտւեն Ռուսաստանի Դումայի կողմից, պաշտօնական որոշումով։ Բացի դրանից, անհրաժեշտ է չեղեալ համարել Ռուսաստանի տարածութիւնները 1921 թւականին Թուրքիային յանձնելու պայմանագիրը։

5.- Յայտարարութիւն՝ Հարաւային Օսեթիան որպէս միջազգային իրաւունքի առարկայ ճանաչելու մասին։ Յայտարարութեան մէջ դատապարտւում է հալածանքի քաղաքականութիւնը օսեթների նկատմամբ, ինչպէս նաեւ դա-

տապարտւած է օսեթների բաժանումը երկու պետութիւնների, ինչը տեղի ունեցաւ Վրաստանի խորհրդայնացումից յետոյ։

6.- Արձանագրութիւն՝ Լեռնային Ղարաբաղի խաղաղարար ուժերի կազմի մասին։ Յայտարարութեան մէջ նշւում է, որ հայ ժողովրդի դարաւոր թշնամի Թուրքիան ներկայումս Ղարաբաղեան Հարցում բռնել է Ադրբեջանի կողմը, ուստի նրա զօրքերը չեն կարող մաս կազմել Ղարաբաղ մտնող խաղաղարար ուժերին։ Խորհրդաժողովը դիմում է Ռուսաստանի նախագահին, կառավարութեանը, Պետական Դումային և Ռուսաստանի դաշնակցային խորհրդին, խնդրելով նրանցից այս արձանագրութեան պաշտպանութիւն։

7.- Յայտարարութիւն՝ Լեռնային Ղարաբաղի անկախութիւնը պահանջելու մասին։ Յայտարարութեան մէջ ասւած է, որ Ռուսաստանի շահերի պաշտպանութիւնը անհրաժեշտ է դարձնում վերականգնումը պատմական արդարութեան։ Խորհրդաժողովը դիմում է Ռուսաստանի նախագահին, կառավարութեանը և Պետական Դումային առաջարկութեամբ՝ ճանաչել Լեռնային Ղարաբաղի անկախութիւնը։

Խորհրդաժողովի բոլոր որոշումները տարածւեցին Դումայում և այժմ աշխատանք է տարւում, որ նրանք դառնան քննարկման առարկայ։

Այժմ նշենք խորհրդաժողովի կարեւոր արդիւնքները.-

1.- Պանթուրքիզմը ճանաչւեց որպէս սպառնալիք Ռուսաստանի ազգային անվտանգութեանը և նշւեց այդ վտանգի դէմ պայքարի ռազմավարութիւն մշակելու անհրաժեշտութիւնը։

2.- Նշւեց հայ ժողովրդի դերը այդ պայքարում՝ ելնելով նրա աշխարհագրական դիրքից, ազգային նկարագրից և ռազմավարական շահերից։

3.- Հայկական բոլոր հրատապ հարցերի լուծումը կապւեց պանթուրքիզմի դէմ պայքարի հետ, ինչը նշանակում է, որ այդ հարցերի լուծումը Ռուսաստանը կարող է նկատել որպէս սեփական շահերի պաշտպանութիւն։

Խորհրդաժողովի միակ բացասական արդիւնքը եղաւ այն, որ պաշտօնական Հայաստանը խորհրդաժողովի կազմակերպիչների մէջ չէր և պաշտօնական պատւիրակութիւն չէր ուղարկել, ինչը նշանակում է, որ Ռուսաստանի և Հայաստանի պետական շահերի պաշտպանութեան բնագաւառում հայկական կողմից մասնակցում է ոչ թէ Հայաստանի կառավարական ներկայացուցչութիւնը, այլ ընդդիմադիր Հ.Յ.Դաշնակցութիւն կուսակցութիւնը, որը չի կարող խօսել Հայաստանի պետութեան անունից, ուստի չի կարող որոշումներ կայացնել։

1995

ՔԱՆԶԻ ԲՈԼՈՐ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ՏԱՆՈՒՄ ԵՆ ԴԷՊԻ Հ.Յ.ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Է. Յովհաննիսեան

«Ոչ թէ ինծի ամէն «Տէր, Տէր» ըսողը երկնքի արքայութիւնը պիտի մտնէ, այլ ով որ երկնաւոր Հօրս կամքը կը կատարէ»։

ՄԱՏԹԷՈՍ, Է, 21

Գիտակցաբար նոյնութեամբ կը հրատարակենք տոքթ. Է. Յովհաննիսեանի այս յօդուածը, ընդունելով հանդերձ որ մտածելակերպի եւ ոճային ու արտահայիտչական կարգ մը զուտ անհատական ձեւեր անյարիր են ընդհանրապէս դաշնակցական մամուլի մտածելակերպին ու ոգիին, պարզապէս յարգելու համար հեղինակի ազատ արտայայտութեան իր իրաւունքը։

Այժմեան քաղաքակրթութիւնը ստեղծել է բազմաթիւ սերունդների աշխատանքով։ Նա համագործակցութեան արդիւնք է, ինչպէս միեւնոյն, այնպէս էլ մէկը միւսին փոխարինող սերունդներին պատկանող մարդկանց։ Համագործակցութիւնը իր արտայայտութիւնն է գտնում կազմակերպւածութեան մէջ։ Կազմակերպւածութիւնը նպատակ ունի միասնական ուժերով վերացնել այն կացութիւնը կամ երեւոյթը, որը գնահատւում է ոչ բաւարար։ Կազմակերպւածութեան անհրաժեշտութիւնը առաջացնում է կազմակերպութեան պահանջ, որը ձեւակերպում է նպատակները, տալիս է նրանց գնահատական, տարածում և իրագործում է այն։

Ամէն մի կազմակերպութիւն ձգտում է այն նպատակին, որի համար ստեղծւել է։ Եւ այն նպատակը, որը ծնունդ է առնում ներկայ անբաւարար վիճակին գիտակցելու հիման վրայ, ոչ այլ ինչ է, եթէ ոչ մեծ ճշմարտութեան մի փոքր մասնիկ։

Կազմակերպութիւնը գնահատելու համար միակ ճշմարիտ աղբիւրը այն է, թէ որքանով է նա մօտեցել իր նպատակին։ Նպատակի տեսակէտից կազմակերպութիւնները կարելի է բաժանել երկու խմբի։ Նրանք, որ նպատակ ունեն լուծելու մարդու գոյութեան հետ կապւած բոլոր հարցերը, և նրանք, որ լուծում են մարդու կենցաղի միայն որոշ հարցեր։

Առաջին տեսակի կազմակերպութիւնը փաստօրէն պետութիւնն է, իսկ երկրորդին պատկանում են բազմաթիւ կուսակցութիւններ, միութիւններ և ընկերութիւններ, որոնք նպատակ ունեն լուծելու այս կամ այն հասարակական խնդիրները: Եթէ ազգը զրկւած է պետականութիւնից, ապա բազմաթիւ կազմակերպութիւնների մէջ գլխաւորը պէտք է համարել այն, որի նպատակն է պետականութիւն ստեղծելը: Այդպիսի մի կազմակերպութիւն պէտք է փոխարինի ազգային պետականութիւնը և զոնէ ազգի ներքին կեանքում ձեռք բերի բացարձակ իշխանութիւն:

Սահմանադրութիւնով և բանակով չամրապնդւած այդպիսի մի իշխանութիւն պէտք է ստեղծի ինքը ժողովուրդը: Այդպէս է եղել միշտ: Նոյնիսկ Կեսարները, Նապոլէոնները, Հիտլերները և Ստալինները ստեղծւեցին ժողովրդի ձեռքերով, երբ կացութիւնը պահանջեց այդ: Ես չեմ կարող համաձայնւել այն կարծիքի հետ, որ պատմութեանը յայտնի մեծանուն իշխանաւորներ իրենց կամքով և հանճարով բարձրացան իշխանութեան գլուխ: Ես համոզւած եմ, որ նրանց ստեղծեց ժողովուրդը, որովհետեւ ենթարկւելու կարիքը ունէր: Եւ ոչ միշտ այդ ընտրեալը լինում էր լաւագոյնը թեկնածուների մէջ, հասարակական կարծիքն էր և ժողովրդի ցանկութիւնն էր, որ բարձրացնում էր նրանց սրբի մակարդակին: Ժողովուրդը թագաւորի կարիք ունէր և իր ձեռքերով ստեղծում էր նրան:

Ես կարծում եմ, որ, ելնելով այսօրւայ վիճակից, հայ ժողովուրդն էլ կարիք ունի թագ դնելու որեւէ կազմակերպութեան վրայ և, դնելուց յետոյ, ինքը իր ձեռքով բարձրացնի այդ կազմակերպութիւնը պետութեան մակարդակի, այլեւս համարի նրան միակ իշխանը: Եւ եթէ քննադատի, ապա քննադատի որպէս կառավարութիւն, եթէ գանգատւի, ապա գանգատուի ինչպէս հօրից են գանգատւում, եթէ ապստամբի, ապա կառավարութիւնը առողջացնելու իմաստով, այլ ոչ լքելու և հեռանալու:

Սակայն որտե՞ղ պէտք է հայը որոնի իր համար իշխանութիւն: Այնտեղ, որտեղ գոյութիւն ունեն քաղաքական ազատութիւններ, որտեղ դեռ հնարաւոր է ունենալ ազատ, անկախ մամուլ, կազմակերպութիւններ, գիտական հաստատութիւններ և այլն: Այդ տեղը սփիւռքն է: Սակայն սփիւռքը միատարր չէ և չէր էլ կարող լինել այդպիսին: Նա կազմւած է տարբեր սերունդներից, որոնք տարբեր պատճառներով են յայտնւել սփիւռքում: Ոմանք սփիւռք դարձան թուրքական ցեղասպանութեան հետեւանքով, ոմանք խոյս տալով բոլշեւիզմից, ոմանք որոնելով տնտեսական բարիքներ, իսկ ոմանք էլ, առանց իրենց կամքի, որպէս ռազմագերիներ, որոնց վերադարձը հայրենիք նշանակում էր ընկնել ստալինեան արիւնախում աւազակների ձեռքը:

Սփիւռքի տարբեր կազմակերպութիւնների քաղաքական ժամացոյցը յաճախ կանգ է առնում այն ժամի վրայ, երբ տեղի է ունեցել սփիւռք առաջացնող ցնցումը։ Եւ քանի որ այդ ցնցումը ունեցել է տարբեր գունաւորումներ, տարբեր են և՛ ւ քաղաքական մտայնութիւնները։ Ու այդ բազմազան մտայնութիւնների մէջ, հայից պահանջւում է կատարել որեւէ կազմակերպութեան թագադրումը։

Իմ կարծիքով, այսօր միակ կազմակերպութիւնը, որը արժանի է այդպիսի թագադրման, Հ.Յ.Դաշնակցութիւնն է, հետեւեալ պատճառներով.

1.- Կազմակերպութիւնը ունի հերոսական պատմական անցեալ, որտեղ ցուցաբերել է իր անձնազոհ նւիրւածութիւնը հայ ժողովրդին, ձեռք է բերել յեղափոխական փորձ և ունի մեծ վաստակներ իր ժողովրդի հանդէպ։

2.- Այսօր այդ կուսակցութիւնը ամենակազմակերպւածն է։

3.- Կուսակցութիւնը անկախ է որեւէ ուրիշ կազմակերպութիւնից կամ պետութիւնից։ Նա գործում է ինքնուրոյն, ելնելով միայն ու միայն հայ ժողովրդի շահերից։

4.- Կուսակցութեան անդամները ունեն բարձր անձնական բարոյականութիւն, պատրաստակամութիւն և պատրաստականութիւն։

5.- Կուսակցութեան քաղաքական նպատակը Միացեալ Անկախ Հայաստանի կերտումն է, որից դուրս բոլոր նպատակները կիսատ-պռատ ու կեղծ, վտանգաւոր ու անմիտ յարմարւողականութիւն պէտք է համարել։

6.- Ազդեցութիւնով և քանակով Հ.Յ.Դաշնակցութիւնը ամենամեծն է։

7.- Միջազգային ասպարէզում եղած հայ կազմակերպութիւններից ամենաճանաչւածն է։

Կարելի էր թւել Դաշնակցութեան շատ ուրիշ առաւելութիւններ էլ, սակայն այսքանն էլ բաւ է, որ համոզւենք, թէ Դաշնակցութիւնը կարող է և պէտք է դառնայ հայ ժողովրդի ղեկավար մարմինը։

Ինչո՞ւ եմ ես խօսում եղած կազմակերպութիւնների մասին, նրանց միջից ընտրելու, այլ ոչ՝ մի նոր կազմակերպութիւն ստեղծելու մասին։ Որովհետեւ ուզում եմ խուսափել այն դատապարտելի հիւանդութիւնից, որով վարակւած է հայ մտաւորականութիւնը և որի անունը երեւի կարելի է դնել նորամուծութիւն։ Այդ հիւանդութիւնով տառապողները անկեղծ ծառայութեան փոխարէն ջանում են ստեղծել մի նոր կազմակերպութիւն, մի նոր ուղղութիւն իրենց անունով, իրենց ղեկավարութեան տակ, համարելով այդ նոր ուղղութիւնը հայ ժողովրդի փրկութեան միակ ճանապարհը։

Երբ այդպիսի հիւանդին չի յաջողւում իր ուղղութիւններով և կազմակերպութիւններով հասնել քաղաքական բարձունքների, կազմակերպութիւնները ցրւում են, իսկ կազմակերպիչները ընդհանրապէս թողնում են քաղաքական ասպարէզը, հիասթափւելով ժողովրդից, «որը իրենց չհասկացաւ»։ Այստեղ

նոր պարզւում է, որ հայ ժողովրդին ծառայելու մտահոգութիւնները չէին պատճառը նոր կազմակերպութիւն ստեղծելու, այլ ինքնահաստատման փորձը՝ ազգային կոչերով։

Չեմ կարող չյիշել Աւետարանից մի հատուած. «Ոչ ոք նոր զգեստէն կտոր մը պատռելով՝ հին զգեստին վրայ կը դնէ, վասնզի նորը կը պատռի և նորէն առնուած կտորը հինին չի յարմարիր։ Եւ ոչ ոք նոր գինին հին տիկերու մէջ կը լեցնէ, ապա թէ ոչ՝ նոր գինին կը պայթեցնէ հին տիկերը, ինք կը թափի և տիկերն այլ կը փճանան։ Այլ նոր գինին՝ նոր տիկերու մէջ լեցնելու է (և երկուքն ալ կը պահուին)։ Եւ ոչ ոք հին գինին խմելէ ետք՝ նորը կ'ուզէ, վասնզի կ'ըսէ, թէ հինը աւելի քաղցր է»։

Յիսուսի այս խօսքերի մէջ (ինչպէս է՛ւ ամբողջ Աւետարանի մէջ) պարունակւում է մեծագոյն ճշմարտութիւն։ Սակայն ո՞վ է ստեղծել այդ նոր գինին, այդ նոր գաղափարը, որի համար նոր տիկեր են պահանջւում։ Այդ ո՞վ խմեց հին գինին, և, չբաւարաւելով նրա քաղցրութիւնից, նորը պահանջեց։ Որտե՞ղ է այն նոր ազգային ուսմունքը կամ գաղափարը, որը նորութիւն է Դաշնակցութեան համար։

Այդպիսի ուղղութիւններ այսօր կա՛մ գոյութիւն չունեն, կա՛մ թելադրւած են հայութեանը դրսից, ուստի չեն կարող լինել հայկական. կամ էլ պատմական տհասութեան պատճառով հին գաղափարները մատուցւում են որպէս նոր, որոնց իրականացումը իբր թէ կապւած է նոր կազմակերպութեան հետ։

Այսինքն, եթէ խօսենք Աւետարանի լեզւով, կա՛մ հին գինին փորձում են լցնել նոր տիկերի մէջ (շռայլութիւն) և կամ հին գինու համը չտեսած՝ նորն են պահանջում (թերամտութիւն), կամ էլ գինու փոխարէն տիկերը լցնում են կեղտոտ ջրով (դաւաճանութիւն)։

Միակ նոր, այն էլ միայն որոշ չափով, կարելի է համարել Եանիկեանի առաջարկը, որի իմաստը վերջին հաշւով կայանում է նրանում, որ առաջարկւում է փոխարինել կազմակերպւած և համազգային պայքարը անձնական պայքարով։ Այդ առաջարկը ես համարում եմ բաւականին հետաքրքրական և ուշադրութեան արժանի և որի մասին ուզում եմ մօտ ժամանակներս արտայայտւել։ Սակայն այդ առաջարկը ոչ մի կազմակերպութիւն չի պահանջում և ուրեմն չի կարող հակադրւել Դաշնակցութեանը կամ որեւէ ուրիշ կազմակերպութեան։

Այսպիսով, թուլութիւն պէտք է համարել այն հանգամանքը, որ ամէն մի նոր հայ ազգային գործիչ, ամէն մի նոր մտաւորական, ձգտում է, առանց մի նոր գաղափարի, ստեղծել իր սեփական մամուլը, կազմակերպութիւնը, ակումբը և այլն։ Դժբախտաբար, եթէ հիմնադրողը ունի համապատասխան գումար, նրան շատ հեշտ յաջողւում է իրականացնել իր ծրագրերը։ Բայց չէ՞ որ

այդ նոյն գումարները շատ աւելի օգտակար ձեւով կը ծառայէին ազգին, եթէ աւելի ծրագրուած և նպատակասլաց ծախսէին, այսինքն տրէին կենտրոնական մարմնին, որը իր հայեցողութեամբ կը կատարէր այն վճարումները, որոնք ամենակարեւորն են նկատւում:

Եւ, վերջապէս, եթէ մեր թուլութիւններից մէկը մեր միասնականութեան բացակայութիւնն է համարւում, ուրեմն յանցագործութիւն պէտք է համարել նորանոր կազմակերպութիւնների ստեղծումը, հինները միացնելու փոխարէն: Եթէ ստեղծւում է նոր կազմակերպութիւն, ապա նա միայն այն դէպքում կարող է արդարացւած լինել, եթէ հանդէս է գալիս որպէս Հ.Յ.Դաշնակցութեանը աջակցող, միջնորդող, օգնող, խորհուրդ տւող և այլն: Այսինքն նոր կազմակերպութիւնը պէտք է վերցնի իր վրայ Դաշնակցութեան բեռը թեթեւացնելու գործը:

Բոլոր այդ կազմակերպութիւնները պէտք է համաձայնեցնեն իրենց ծրագիրը Հ.Յ.Դ.ի հետ, որը միակն է, որ ունի յաւակնութիւն դառնալու ազգի ղեկավար մարմինը: Դա պէտք է արւի ոչ միայն յանուն ընդհանուր ազգային շահերի, որը, ի հարկէ, գլխաւորն է, այլ նոյնիսկ նորաստեղծ կազմակերպութեան յաջողութեան համար, քանզի իմ խորը համոզմունքն է, որ Դաշնակցութիւնից դուրս, Դաշնակցութիւնից անկախ, ոչ մի հայ (իսկական հայ) կազմակերպութիւն յաջողութիւն չի կարող ունենալ: Եւ ես համարում եմ, որ այդ կացութիւնը ազգային երջանկութիւն պէտք է համարել:

Սակայն հէնց այդ կացութիւնն է, որ Հ.Յ.Դաշնակցութեան ուսերին բարդում է մեծ պարտականութիւններ: Լինելով միակ անկախ ազգային կուսակցութիւնը և ազգային ուժը, նա պէտք է իրօք սպառիչ պատասխաններ տայ բոլոր այն հարցերին, որոնք ազգային են ըստ էութեան, պէտք է կարողանայ բոլոր քաղաքական ուղղութիւնները դէպի ազատ հայրենիքը տանող մէկ ընդհանուր խողովակի մէջ լցնի իր բարձր բարոյականութիւնով, նա պէտք է վայելի ազգի յարգանքը և լինի այնպիսին, որի մասին ամէն մի հայ կարողանայ ասել. «Դու ես իմ միակ տէրը»:

Կասկած չկայ նրանում, որ Հ.Յ.Դաշնակցութիւնը հիմնականում օժտւած է այն յատկութիւններով, որ անհրաժեշտ են ազգային ոգին և միտքը ներկայացնելու համար: Օրինակ՝ կասկածից վեր է նրան անդամների բարոյական կերպարը:

Դեռ Խորհրդային Հայաստանում ինձ լաւ ծանօթ մաքսատան աշխատողները ասում էին բառացի հետեւեալը. «Էդ շան որդի դաշնակցականներից ոչինչ չենք կարողանում բռնել, նրանք այդ տեսակէտից շատ ազնիւ են, իրենց հետ ոչ մի վաճառքի ապրանք չեն բերում: Դրանք իսկապէս գալիս են հայրենիքը տեսնելու համար: Բայց, էս մեր կողմի ռամկավարներին, հնչակեաննե-

րին ու համայնավարներին թողնես, հէնց օդանաւակայանում շուկայ կը բացեն։ Դրանցից կիլոներով ապրանքներ ենք խլում, է՛լ ծամոն, է՛լ ոսկի, էլ խաչե՛ր, է՛լ գուլպանե՛ր, մի խօսքով՝ ամէն ինչ»։

Այդ մասին գիտէ նոյնիսկ կառավարութիւնը և հոգու խորքերում (շատ խորքերում, ուր ԿԳԲի ձեռքը չի հասնում) նրանք էլ համակրում են Դաշնակցութեանը, յամենայն դէպս, շատ աւելի, քան այն պրոսովետական կողմը, որը, թութակների թութակ դարձած, վաղուց կորցրել է իր քաղաքական դէմքը։

Սակայն Դաշնակցութիւնը պէտք է կարողանայ ապացուցել, որ նա ազգի ոչ միայն ձեւական, այլեւ իրական տէրն է, որ հայ ժողովրդի հետ խօսելիս կամ բանակցելիս պէտք է դիմել Դաշնակցութեանը, որը միակն է, որ իրաւունք ունի և կարող է խօսել հայ ժողովրդի անունից (յամենայն դէպս, Սփիւռքի անունից)։ Այս վերջին հանգամանքը շատ կարեւոր է։

Հայ ժողովուրդը, որքան էլ փոքրաթիւ լինի իր քանակով, որքան էլ մտահոգւած լինի իր դատով, որքան էլ ջլատւած լինի իր ազգային ուժերով, նա այնուամենայնիւ որոշ քաղաքական ուժ է իրենից ներկայացնում միջազգային ասպարէզում։ Հարկ եղած դէպքում նրա հետ չեն կարող հաշւի չնստել այս կամ այն պետութիւնները։ Այդ տեսակէտից, անհրաժեշտ է, որ բոլորի համար պարզ լինի ներքին ուժերի դասաւորութեան իրական պատկերը, և ում յետեւում ո՛վ է կանգնած։

Յաճախ կեղծ և աղմկոտ պրոպականդայի շնորհիւ յաջողւում է ստեղծել այնպիսի մի կարծիք, թէ իբր սփիւռքի քաղաքական իշխանաւորները կեղծ ձախակողմեան, Խորհրդային Միութեանը յարող կուսակցութիւններն են։ Մինչ իրականում այդպէս չէ։ Ի հարկէ, ով ծանօթ է պոռոտախօս խորհրդային քարոզչութեան հետ, չի կարող խաբւել այդ աղմուկով, սակայն դժբախտաբար խաբւողների թիւը չափից աւելին է և խաբւածների մէջ լինում են երբեմն շատ լուրջ մարդիկ և կառավարութիւններ։

Մի քանի ամիս առաջ Միւնխենի հրապարակներից մէկում ես ներկայ էի մայիսմէկեան տօնակատարութիւններին։ Հրապարակը լեփ-լեցուն էր։ Մի քանի վայրկեան ինձ թւաց թէ ես գտնւում եմ Մոսկւայում, քանզի հրապարակում կոմունիստական աղմուկը ամենահզօրն էր։ Կարմիր դրօշի վրայ ծածանւում էին Լենինի, Ստալինի, Մարքսի, Մաոյի պատկերները։ Մարդիկ երգում էին «Ինտերնացիոնալ», աղաղակում և կոմունիստական կոչ էին անում։ Եւ քանի որ մնացածները համեստ ու լուռ քայլում կամ լսում էին հռետորներին, այնպիսի տպաւորութիւն էր ստեղծւել, որ ամբողջ հրապարակը բաղկացած է կոմունիստներից։

Եւ երբ խաբւած ընկերներից մէկը զարմացած ասաց. «Սա ինչ ուժ է, Գերմանիան էլ շուտով կը դառնայ խորհրդային արբանեակ», ես առաջարկեցի.

«Արի հաշուենք»։ Եւ հաշուեցինք։ Պարզուեց, որ այդ ահագին աղմուկը բարձրաց-նողների թիւը 28 հոգի էր։ Ամբողջ բազմահազար հրապարակում 28 հոգի ի-րենց աղմուկով մթնոլորտ և հասարակական կարծիք էին ստեղծում։

Հ.Յ.Դաշնակցութիւնն էլ պէտք է կարողանայ խաբուածներին միշտ ասել. «Արի հաշուենք»։ Հ.Յ.Դաշնակցութիւնը, ժողովրդի վստահութիւնը ձեռք բերելու համար, պարտաւոր է ցոյց տալ, որ միասնութեան բոլոր ճիգերը խափանւում են այսպէս կոչւած ձախակողմեանների կողմից և որ այդ միասնութեան բա-ցակայութիւնը (եթէ հաշուենք) այդքան էլ մեծ ողբերգութիւն չէ, քանզի մեր դա-տի պայքարը հերոսների հերոսական պայքար է, իսկ կազմակերպւած հերոս-ներ այսօր ընդունակ է տալ միայն Հ.Յ.Դաշնակցութիւնը։

Այդ իսկ պատճառով, մենք բոլորս, չէզոքներ, ոչ-կուսակցականներ, ուրիշ կուսակցութիւնների ղեկավարները չեն կարողանում հասնել ձեւական միաս-նութեան (որը, ինչպէս ասացի, այդքան էլ կարեւոր չէ), ապա բոլոր այն հայե-րը, որոնք պատրաստ են պայքարի, որոնք այնքան ազնիւ են, որ չեն կարող ուրիշ կերպ ապրել, որոնց համար Հայ Դատի հետապնդումը կեանքի միակ նպատակն է և իմաստը, պարտաւոր են համախմբել մէկ կազմակերպու-թեան շուրջ, որին փնտրողը շատ հեշտ կարող է գտնել, քանզի բոլոր ճանա-պարհները տանում են դէպի Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն։

1973

ՀԱԿԱԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀՈԳԵԿԱՆ ԱՅԼԱՍԵՐՒԱԾՈՒԹԻՒՆ Է

Դոկտ. Է. Յովհաննիսեան

1951 թւականի աշնանը, Ստրազբուրգից 35 կիլոմետր հեռաւորութեան վրայ, Անդլօ կոչւող վայրում հաւաքւեց 13 հոգուց բաղկացած մի խումբ: Մէկ շաբաթւայ ընթացքում, 7 տարբեր երկրներից եկած 13 մտաւորականներ ազատ պայմաններում քննարկում էին մի հարց, որը նրանց առաջ դրել էր մշակոյթի ազատութեան պաշտպանութեան համաժողովը **(կոնգրեսը)**: Կալիֆորնիայից եկել էր բնագէտ **(ֆիզիկոս)** պրոֆ. Պաուլ Էպշտէյնը, Նիւ-Եորքից՝ փիլիսոփայ պրոֆ. Սիդնէյ Հուկը, Բոստոնից՝ քիմիագէտ Կարուինը, Փարիզից՝ Ֆրանսայի ամենափայլուն հասարակագէտ Ջորջ Քէյանէն և «Կոմունիզմի հասարակագիտութեան» հեղինակ Ժիւլ Մոներոն: Հաւաքոյթին ներկայ էր Ստալինի կենսագրութեան յայտնի հեղինակ Բորիս Սուվարինը: Ռուսական տարագրութիւնը ներկայացնում էր պատմաբան պրոֆ. Վէյլէն: Երկու հոգի եկել էին Իտալիայից: Լեհաստանը ներկայացնում էր բանաստեղծ Չեսլաւ Միլոշը, որը, մի քանի ամիս առաջ, թողնելով լեհական դեսպանատան կցորդի պաշտօնը, անցել էր արտասահման: Իսրայէլը ներկայացնում էր հրապարակագիր Մարգուլինը, իսկ նախագահում էր շւէյցարացի պրոֆ. Դենի Ռուժմոնը:

Մտաւորականների այդ ժողովը պէտք է պատասխանէր հետեւեալ հարցին.- Ինչո՞վ բացատրել այն հանգամանքը, որ նրբանկատ ու կրթւած եւրոպական մտաւորականութիւնը, որին չի կարելի մեղադրել ո՛չ տգիտութեան և ոչ էլ չարամտութեան մէջ, հակում ունի դէպի կոմունիզմը… Եւ ի՞նչպէս կարող են բարձր հոգեկան արժէքների տէր մարդիկ պայքարել այդ սարսափելի վարակի հետ:

Ես յիշեցի, որ կարդացել էի այս մասին, երբ, անվնաս դուրս գալով խորհրդային հակադաշնակցական քարոզների կարկուտի տակից, երես առ երես հանդիպեցի Դաշնակցութեան հետ, հանդիպեցի նաեւ սփիւռքի հակադաշնակցականների հետ: Ես նորից ու նորից հարց էի տալիս ինքս ինձ՝ որտեղի՞ց է ծնունդ առնում հակադաշնակցութիւնը և ի՞նչպէս կարելի է պայքարել այդ ազգային աղէտի դէմ: Այստեղ էլ յիշեցի վերը նկարագրւած հանդիպումը և յատկապէս Մարգուլինի ելոյթը, որը ասել էր մօտաւորապէս հետեւեալը.

- Կոմունիստական գաղափարների տարածելը բացատրելու համար, դուք կազմել էք երկար ցուցակներ, գտել էք տասնեակ տրամաբանական պատճառներ: Սակայն, ո՛րքան մեծ է պատճառների ցուցակը, ա՛յնքան աւելի քիչ հասկանալի է դառնում այն, ինչ դուք ուզում էք բացայայտել: Սխալ է այն տե-

սակէտը, թէ իբր տրամաբանութիւնը կարող է մարդկանց բերել կոմունիզմի գաղափարի և որ տրամաբանութեան միջոցով կարելի է նրանց ապացուցել, թէ չարաչար սխալւում են։

Կոմունիզմը հակասեմականութեան նման հիմնուած չէ բանականութեան վրայ։ Հակասեմականների մէջ էլ կային շատ զարգացած մարդիկ։ Մի գնացէք հակասեմականութեան դէմ պայքարելու միութիւնների ճանապարհով, որոնք գործում էին Գերմանիայում մինչեւ հիտլերական ժամանակաշրջանը և որոնք զբաղուած էին տրամաբանական բացատրութիւններով և քարոզներով։ Ատելութիւնը, ինչպէս է՛ւ սէրը, տրամաբանութիւնից հզօր է։

Եթէ դուք ուզում էք հասկանալ, թէ ինչո՞ւ մարդիկ, որոնք պարտաւոր են իմանալ ճշմարտութիւնը, հոգեկան ասպարէզի մարդիկ, գրողները, արուեստագէտները, գիտնականները, ձեր ընկերները կանգնում են մեր օրերի ամենամեծ գարշելիութեան պաշտպան, դուք կարող էք ստանալ միայն մէկ պատասխան՝ ՊԵՐՎԵՐՍԻԱ. այսինքն ձգտում դէպի գիտակցուած մեղսագործութիւն։ Հէնց ամէն ինչ հասկացող և ամէն ինչ տեսած մտաւորականութիւնն է, որ ձգտում է մտային նորանոր այլասերւածութիւնների։ Ճիշտ այնպէս, ինչպէս անհնարին է տրամաբանութեանը դիմելով բացատրել սեռային այլասերւածութիւնը, այնպէս էլ անհնարին է բացատրել դա հոգեկան բնագաւառում։

Կան երկու հիմնական պատճառներ։ Դրանցից մէկը դեմոկրատական հասարակարգի թուլութիւնն է, միւսը ուժերի ահաւոր կուտակումը բռնապետական Արեւելքում։ Ուժը միշտ քաշում է թոյլերին։ Թոյլ մարդիկ, որքան էլ որ կրթւած լինեն, միշտ կը նետուեն այն կողմը, որտեղ իրենց կարծիքով աւելի մեծ ուժ է կուտակւել։ Եւ ուրեմն ոչ ոք ոչինչ չի կարող բացատրել նրանց, այնքան ժամանակ, որքան չարի ուժը տկարացած չէ։

Տւէք անգրագէտներին կրթութիւն, հիւանդներին դեղորայք, բայց միեւնոյնն է,- թշնամուն յարող մարդիկ չեն ուզում ոչ ձեր լուսաւորութիւնը, ոչ էլ ձեր դեղորայքը։ Նրանք հիւանդ չեն, **պերվերսիա**ն հիւանդութիւն չէ, քանզի ոչ ոք չի կամենում տառապել թոքախտով կամ **սիֆիլիս**ով։ Իսկ **պերվերսիան**, լինի դա հոգեկան թէ սեռային, մարդիկ ընտրում են կամաւոր սկզբունքով։ Նա ցանկալի է, մարդիկ նրանից հաճոյք են ստանում ու բաւականութիւն։

Համոզւած էի, որ սրանից աւելի լաւ չէի կարող ասել հակադաշնակցութեան մասին, դրա համար էլ դիմեցի Մարգուլինին։ Այո, հակադաշնակցութիւնը ազգային այլասերւածութիւն է, որը հիմնւում է մի կողմից Դաշնակցութիւնը թուլացնող **դեմոկրատ**ական սկզբունքների վրայ, միւս կողմից հակառակորդի երեւութական ուժի վրայ։ Ընդորում հակառակորդի ուժը արհեստականօրէն չափազանցւում է, քանզի, չգիտես ինչո՞ւ, նրա հակառակորդների շարքին են դասւում է՛ւ ռուսները, է՛ւ կոմունիստները, է՛ւ թուրքերը։

Իմ կարծիքով, բացի թուրքից, Դաշնակցութիւնը ուրիշ ոչ մի թշնամի չունի, ուստի ով այսօր իրեն համարում է հակադաշնակցական, դրանով իսկ դառնում է թուրքոֆիլ՝ թուրքասէր: Ուրիշ ճակատ չկայ: Մնացած մանր-մունր գաղափարական տարակարծութիւնները չեն կարող հակադաշնակցութեան աղբիւր ծառայել, յամենայն դէպս, հայկական շրջանակների համար:

Բոլոր նրանք, ովքեր հակադաշնակցութիւն են որդեգրել, արել են դա կա՛մ հոգեկան գերյագեցւածութեան պատճառով (այլասերւածութիւն), կա՛մ կաշառւելով ուրիշների կողմից (դաւաճանութիւն), կա՛մ էլ ելնելով անձնական վիրաւորւածութիւնից (եսամոլութիւն): Ընտորում կաշառւած հակադաշնակցութիւնը պէտք է ընկալել լայն իմաստով: Բացի ուղղակի դրամով կաշառւածներից, գոյութիւն ունի կաշառւածների մի ահագին բանակ, որոնցից ոմանց խոստացւում է պաշտօն, ոմանց Երեւանում սովորելու ուղեգիր, ոմանց բարեկամներին բնակարան, ոմանց թերթերի ազատ վաճառքը Խորհրդային Միութիւնում կամ մի որեւէ ուրիշ խոստում:

Հակադաշնակցութիւնը չափազանց ուրախ է, որ գոյութիւն ունի Դաշնակցութիւն, քանզի Դաշնակցութիւնը իր գոյութիւնով ապահովում է հակադաշնակցութեան գոյութիւնը, որը ուրիշ ոչ մի կերպ չի կարող ապրել: Դաշնակցութիւնը հակադաշնակցութեան միակ սնունդն է, առանց որի հակադաշնակցական կուսակցութիւնները, կազմակերպութիւնները և անձնաւորութիւնները որպէս քաղաքական ուժ անմիջապէս ոտները կը ձգեն: Դրա համար է, որ հակադաշնակցութիւնը փայփայում ու գուրգուրում է Դաշնակցութիւնը, որպէսզի նա, Աստւած չանի, յանկարծ չփոխի իր դիրքերը և «անգործ» թողնի ամբողջ բարոյականութիւնից և տրամաբանութիւնից զուրկ, ինքն իր մէջ ապրող հակադաշնակցութիւնը:

Հակադաշնակցութիւնը վայնասուն կը բարձրացնի, եթէ մի օր պարզւի, որ որոշ հարցերում, ենթադրենք, Դաշնակցութիւնը վերանայել է իր տեսակէտները (որը շատ բնական է բոլոր լուրջ կուսակցութիւնների համար): Դաշնակցութիւնը դեռ չէր էլ վերանայել իր տեսակէտները, երբ վայնասունը արդէն բարձրացաւ: Ես ի նկատի ունեմ Դաշնակցութեան «շրջադարձ»ի մասին յօդւածը: Եթէ Դաշնակցութիւնը իրօք կատարում էր շրջադարձ, ինչո՞ւ քաղաքականօրէն մտածող հակադաշնակցութիւնը չփորձեց օգտւել այդ «շրջադարձից»: Ինչո՞ւ հակադաշնակցօրէն-այլ ոչ քաղաքականօրէն-մտածող հակադաշնակցութիւնը շտապեց յայտարարել, որ, եթէ Դաշնակցութիւնը գոռայ իսկ՝ «Կեցցէ Խորհրդային Հայաստանը», հակադաշնակցութիւնը կը պատասխանի. «Չենք ուզում ձեր կեցցէն»: Եթէ Դաշնակցութիւնը ասի իսկ. «Եկէք միասին կոմունիզմ կառուցենք», հակադաշնակցութիւնը կ'ասի. «Չենք ուզում ձեր օգնութիւնը», եթէ Դաշնակցութիւնը ասի իսկ, որ համակրում է Կրեմլին, նրանք

կ’ասեն. «Չենք հաւատում»: Այս ամէնը գալիս է ապացուցելու, որ հակադաշնակցութիւնը տրամաբանութիւնից զուրկ հոգեկան այլասերուածութիւն է:

Անղլոյի հանդիպումից մի քանի տարի յետոյ Արթուր Կեցլերը կրկին առաջ քաշեց «քաղաքական **նեւրոզ**ների» հարցը: Կեցլերը փորձ կատարեց Ֆրոյդի որոշ սկզբունքները տեղափոխել քաղաքական ասպարէզ: **Նեւրոզը** այնպիսի մի հոգեկան վիճակ է, երբ իրական հոգեկան ցնցումներին հակադրւում են պաշտպանութեան համար կեղծ միջոցներ, այսինքն չարդարացւած ինքնապաշտպանութիւն: Աշխարհում գոյութիւն չունեն բացարձակ առողջ կամ իրականութիւնը անսխալ ճանաչող մարդիկ: Սակայն **նեւրոտիկ**ները ոչ միայն սխալ են գնահատում իրականութիւնը և պաշտպանողական սխալ միջոցների են դիմում, այլեւ ի վիճակի չեն ինքնուրոյն, առանց արտաքին ազդեցութեան, դուրս գալու իրենց անբնական վիճակից: **Նեւրոզ**ով տառապողները նոյնիսկ վախենում են տեսնել ճշմարտութիւնը, քանզի եթէ յանկարծ սխալւած լինեն, ապա անգործութեան կը մատնւի ամբողջ պաշտպանութեան կառոյցը:

Այնտեղ, որտեղ վէրք չկայ, **նեւրոզ** գոյութիւն չունի: Ըստ Կեցլերի, Ստալինը և Հիտլերը անկասկած տառապում էին **նեւրոզ**ով: Սակայն այն ամբոխները, որ նրանք քաշեցին իրենց յետեւից, լրիւ առողջ մարդիկ էին, բայց բոլորն էլ տառապում էին **ՊԵՐՎԵՐՍԻԱ**յով, բոլորն էլ ուզում էին յանցանքի քաղցրութեան համը տեսնել: Այն, ինչ կատարւեց գերմանացիների հետ Հիտլերի ժամանակ կամ այն, ինչ կատարւում է միլիոնաւոր խորհրդային մարդկանց հետ, որոնք գովաբանում են իրենց ստրկացնող վարչաձեւը, չի կարելի բացատրել ո՛չ տրամաբանօրէն և ոչ էլ հոգեբանօրէն: Այլ միջոցներով անհնարին է բացատրել է՛ւ հակադաշնակցութիւնը:

Ես հանդիպել եմ հակադաշնակցականների, որոնք ոչ ծանօթ են Դաշնակցութեան պատմութեանը, ոչ բախւել են Դաշնակցութեան հետ և ոչ էլ տեսել են «կենդանի դաշնակցական»:

Ամբոխը չի կարելի պառկեցնել մահիճի վրայ և բուժել նրա հոգեբանութիւնը: Ամբոխային հոգեբանական հիւանդութիւնները գալիս են ու գնում, ենթարկւելով մեզ առայժմ անծանօթ օրինաչափութիւնների: Ամբոխային հոգեկան հիւանդութիւններից մէկը աննպատակ քաղաքական գործունէութիւնն է: Այդ հիւանդութեան մէջ Կեցլերը մեղադրում է բոլոր ձախակողմեաններին, այսպէս նկարագրելով նրանց գործունէութիւնը.

«Մի երիտասարդ սկսում է իր գործունէութիւնը որպէս ոգեւորւած կոմունիստ, շուտով հիասթափւում է և մտնում է 10 հոգուց բաղկացած տրոցկիստական կազմակերպութեան մէջ, շուտով պարզւում է, 10ից 6ը կազմել են գաղտնի ընդդիմադիր խումբ, նորից հիասթափւում է և հիմնում է մի թերթ, որը հակակոմունիստական է, հակաստալինական և հակա**կապիտալիստա**-

կան: Շուտով թերթը փակւում է, ընթերցողների բացակայութեան պատճառով: Դրանից յետոյ բացւում է նորը, որը արժանանում է նոյն ճակատագրին: Վերջապէս, յարմարւելով ընթերցողին, յաջողւում է հաստատել մի ամսագիր»:

Բոլոր այս գործողութիւնների մէջ գրեթէ չի երեւում նպատակը: Թւում է, թէ մարդիկ գործում են գործելու համար: Եւ հէնց այդ աննպատակ գործունէութիւնը հոգեկան այլասերւածութեան տարատեսակ է, քանզի բնական օրինաչափութիւնը՝ «գործել յանուն նպատակի»՝ փոխարինւած է անբնականով՝ «գործունէութիւնը ինքը նպատակ է»: Այս վերջինը լիովին կարելի է վերագրել հակադաշնակցութեանը:

Եւ այդպիսի այլասերւած քաղաքական մթնոլորտում, իմ կարծիքով, Դաշնակցութիւնը չպէտք է իջնի միջավայրի մակարդակի վրայ, չպէտք է կեղտոտի հայ ազգային գաղափարական մաքրութիւնը, կասկածելի կողմնակիցներ ձեռք բերելու համար: Չի կարելի միասնութեան գնով իսկ կորցնել քաղաքական ազնւութիւնը և ազգային մաքրութիւնը: Ինչ հողի վրայ էլ այսօր ստեղծւի միասնութիւնը, միեւնոյնն է, գլխաւոր թշնամու դէմ գործողը Հ.Յ.Դաշնակցութիւնն է, որը հոգեպէս այլասերւածների հետ համագործակցութեան կարիքը հազիւ թէ զգայ:

Իսկ բուժւածները, տրամաբանական և բարոյական հողի վրայ կանգնողները իրենք կը գան Դաշնակցութեան գիրկը, քանզի ուրիշ ճանապարհ չկայ: Թող նրանք, ովքեր իրենց հակադաշնակցական են համարում Աղիսի երաժշտութեան տակ, ուիսկիներով շրջապատւած, կամ Օկուդժաւայի երաժշտութեան տակ, ռուսական վոդկաներով շրջապատւած, լուծեն ազգային հարցերը: Թող նրանք, ովքեր հակադաշնակցական են և դրա համար կարողանում են Հայաստանում, Լենինեան հրապարակի վրայ ծամոններ և կանացի գուլպաներ վաճառել, շարունակեն իրենց շուկայական հայրենասիրութիւնը: Թող Խ. Միութեան հակադաշնակցականները, որ ջնջել են իրենց պատմութեան լաւագոյն էջերը, շարունակեն մուրալ Սփիւռքում արտասահմանեան շապիկներ և … կօշիկներ: Թող սողունները սողան, տգէտները հարստանան և հոգով աղքատները իշխեն:

Բայց հայ ժողովուրդը, հայ ժողովրդի ընտրանին, հայ ժողովրդի խիղճը կը գոռայ անդադար. ՄԻԱՅԵԱԼ, ԱՋԱՏ, ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆ: Եւ հէնց այդ է գրւած Հ.Յ.Դ. դրօշի վրայ: Ով չի կարողանում այդ գործում օգնել Դաշնակցութեանը, գոնէ չխանգարի: Եթէ ի վիճակի չեն Յիսուսի նման առաքեալների ոտները լալու, գոնէ Պիղատոսի նման լանան ձեռքերը: Եթէ աքաղաղը չկանչած ուրացել են ազգը, գոնէ չկանգնեն Յուդայի ճանապարհի վրայ:

Դպրոցական նստարանից մեր լսողութիւնը շոյում էր Մայակովսկու **ապրիլիզմը**. «Մենք ասում ենք Լենին՝ հասկանում ենք կուսակցութիւն, մենք ասում

ենք կուսակցութիւն՝ հասկանում ենք Լենին»։ Պատմութիւնը ճշտում է բոլոր անմտութիւնները, ճշտեց ե՛ւ այս մէկը։ Այժմ մենք ասում ենք Լենին՝ հասկանում ենք կուսակցութիւն, մենք ասում ենք կուսակցութիւն՝ հասկանում ենք Ստալին, մենք ասում ենք Ստալին՝ հասկանում ենք աւազակութիւն և ոճրագործութիւն։

Սակայն պատմութիւնը ոչինչ չկարողացաւ ճշտել և փոխել մի համեստ ճշմարտութեան վերաբերեալ։ Մենք ասում ենք Դաշնակցութիւն՝ հասկանում ենք հայ ժողովուրդ, մենք ասում ենք հայ ժողովուրդ՝ հասկանում ենք Դաշնակցութիւն։

1974

Հ.Յ.ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՐՁԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿՐԿԻՆ ԱՆՑԱՆ ԱՊԱՐԴԻՒՆ

Է. Յովհաննիսեան

Ինչպէս յայտնի է, խորհրդային պատմագրութեան մէջ գոյութիւն ունի մի բաց տեղ, որը ընդգրկում է 1890-1920 թւականները և որը վերաբերում է հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարին: Այդ բաց տեղը հատորների է արժանի, մինչ խորհրդային պատմաբանները լրացնում են մէկ-երկու պատմութիւնը նենգափոխող էջերով: Դաշնակցութեան այսպէս կոչուած մեղքերի համար ջնջւում է հայ ժողովրդի ամբողջ նախախորհրդային շրջանի պատմութիւնը: Իսկ այդ գրեթէ կէս դարւայ պատմութիւնը մեր ժողովրդի պատմութեան լաւագոյն էջերն են:

Այս իրողութիւնը միշտ էլ հասկանում էր Խորհրդային Հայաստանի հասարակայնութիւնը, որը, օգտւելով վարչակարգի խստութիւնների մի փոքր ինչ մեղմացումից, միշտ էլ փորձել է գոնէ մասամբ վերականգնել պատմական ճշմարտութիւնը: Այդ փորձերի շնորհիւ էր, որ կառուցեցին Սարդարաբադը, Եղեռնի Յուշարձանը, Անդրանիկի կիսանդրին, հրատարակւեցին մի շարք գրքեր, իսկ վերջերս էլ գրականութեան մէջ երեւացին Աղբիւր Սերոբի, Գէորգ Չաուշի, Արաբոյի, Մուրատի, Արմենակ Եկարեանի և ուրիշների անունները: Ճիշտ է, սրանց կուսակցական պատկանելիութեան մասին ոչինչ ասւած է, ինչպէս ասւած չէ, թէ ո՞վ էր ղեկավարում Սարդարաբադի ճակատամարտը, բայց այսքանն էլ քիչ չէր:

Ժողովրդի մէջ արդէն վաղուց «շշուկներ» էին գնում, թէ «վերեւներում» իբր մտածում են Դաշնակցութեան պատիւը մասամբ վերականգնելու մասին: Երեւի այդ շշուկները այնքան մեծ վստահութիւն էին ներշնչում, որ հայութիւնը լուռ սպասում էր Հայաստանի կառավարութեան կողմնորոշմանը:

Եւ ահա այս լռութեան մէջ բարձրացաւ մեծ յոյսեր ներշնչող մի գեղեցիկ ձայն: Այս տարւայ **«Սովետական Գրականութիւն»** ամսագիրը իր 8րդ համարում հրատարակեց ամսագրի գլխաւոր խմբագիր Ստեփան Կուրտիկեանի «Ազգային-Ազատագրական պայքարի տարեգրութիւնը» վերնագրով յօդւածը: Եթէ այս յօդւածը հրատարակւած լինէր ոչ թէ Հայաստանի Գրողների Միութեան օրգանում և յօդւածի հեղինակը լինէր ոչ թէ այդ օրգանի գլխաւոր խմբագիրը, կարելի էր մտածել, թէ սա Հայաստանի այլախոհներից մէկի յօդւածն է, այնքան համարձակ ու ճշմարիտ էին յօդւածում արտայայտւած մտքերը:

Ի հարկէ, այս յօդուածը չէր կարող վրիպել մեր ուշադրութիւնից։ Բայց անկեղծօրէն ասած, լաւ չէինք հասկանում, թէ ինչ է կատարւում։ Կարծիքները բաժանուեցին։ Ոմանք կարծիք էին յայտնում, թէ Հայաստանի Կենտկոմի առաջին քարտուղար Կարէն Դեմիրճեանը իշխանութեան գլուխ անցնելուց յետոյ, միջազգային **պրոլետարիատի** շահերից բացի, սկսել է մտահոգել նաեւ ազգային պատմութեամբ և տալ է իր համաձայնութիւնը պատմական որոշ ճշմարտութիւնների վերականգնման վերաբերեալ։ Միւսները ենթադրում էին, որ գլխաւոր խմբագիր Ստեփան Կուրտիկեանը ինքնագլուխ և համարձակօրէն, ես կ՚ասէի՝ հերոսաբար, արտայայտել է իր սեփական և իրեն համակրող մարդկանց կարծիքը, որի համար անխուսափելիօրէն խիստ կը պատժի։

Պարզուեց, որ այս երկրորդ տեսակէտը ճշմարտութեանը աւելի մօտ էր, որովհետեւ Հայաստանի Կոմկուսի Կենտրոնական Կոմիտէի **պլենումի** ժամանակ, Հոկտեմբերի 19ին **«Սովետական Գրականութեան»** վրայ ամպրոպ պայթեց։ Սակայն, մինչեւ այդ ամպրոպին անդրադառնալը, դիմենք Կուրտիկեանի այն յօդուածին, որը այնքան վրդովեցրեց Հայաստանի Կենտրոնական Կոմիտէն։

Կուրտիկեանի յօդուածը ակադեմիկոս Ծատուր Աղայեանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմութիւնից» մենագրութեան գրախօսականն է։ Առաջին իսկ տողերում հեղինակը արտայայտում է արդէն վաղուց մոռացութեան մատնուած հետեւեալ ուշագրաւ միտքը.

«Նախ և առաջ պէտք է նշել, որ մեր պատմաբաններից ոմանք, աւելի ճիշտ՝ քաղաքական որոշ գործիչներ, գիտականօրէն խորամուխ չլինելով ժամանակաշրջանի արեւմտահայ իրականութեան ու դրանից բխող ազգային, ազատագրական շարժման առանձնայատկութիւնների ողջ էութեան մէջ, պատմական կոնկրետ երեւոյթները պատճառաբանած մեկնաբանելու փոխարէն, դոգմատիկ մօտեցում էին ունենում։ Նրանք հաշւի չէին առնում օսմանեան մոլեգնող բռնակալութեան իւրայատկութիւնները և ազատագրական շարժումները համարում էին, ըստ էութեան, մնասակար շարժումներ ու դրանք հակադրելով սոցիալ-դասակարգային պայքարի, սխալ էին համարում ազգային-ազատագրական պայքարը, գիւղացիական-հայդուկային շարժումները։ Նրանք գտնում էին, որ միայն դասակարգային պայքարի միջոցով հնարաւոր է հասնել ազգային ազատագրութեան, անկախ պետականութեան նւաճումին»։

Իր տեսակէտը մարքսիստօրէն հիմնաւորելու և քաղաքական գործիչների վրայ իր յարձակումը արդարացնելու համար, Կուրտիկեանը դիմում է Մարքսի այն դրոյթին, որի համաձայն «քանի դեռ կենսունակ ժողովուրդը կաշկանդուած է օտարերկրեայ **զաւթիչ**ների կողմից, նա ըստ անհրաժեշտութեան իր բոլոր ուժերը, իր բոլոր ձգտումները, իր ամբողջ եռանդը ուղղում է արտաքին

թշնամու դէմ և, այսպիսով, քանի դեռ նրա ներքին կեանքը մնում է ջլատւած, նա ի վիճակի չէ պայքարելու **սոցիալ**ական ազատագրման համար»։

Այստեղ հիմնւելով Մարքսի խօսքերի վրայ, Կուրտիկեանը փաստօրէն պաշտպանում է ազգայնականների այն ճիշտ և միակ հնարաւոր կարծիքը, որի համաձայն ազգային-ազատագրական պայքարի ժամանակ բանւոր դասակարգը **բուրժուազիա**յի հետ կնքում է միասնական պայքարի դաշինք և միայն ազգային անկախութիւն ստանալուց յետոյ է լուծում իր ներքին դասակարգային խնդիրները։ Կուրտիկեանը ասում է աւելին։ Նա արդարացիօրէն նշում է, որ ազգային անկախութեան համար մղւող պայքարում **բուրժուազիա**յի դերը առաջադիմական է.

«Հասկանալի է,- գրում է նա,- **այդ ժամանակաշրջանում ազատագրական շարժումները, ըստ էութեան, բուրժուական էին և առաջադիմական, քանի որ դարաշրջանի ընդհանուր գիծը հէնց բուրժուազիայի առաջադիմութիւնն էր»**։

Ու գտնելով, որ թուրքական լծի տակ գտնւող հայ ժողովուրդը ոչ միայն չէր ուզում, այլեւ չէր էլ կարող մտնել դասակարգային պայքարի ոլորտը, որ այդ պայմաններում հայ ժողովրդի համար անընդունելի էր **պրոլետար**ական **ինտերնացիոնալիզմ**ի գաղափարը, Կուրտիկեանը արդարացիօրէն գտնում է, որ հայ ժողովուրդը արեց այն, ինչ որ պէտք էր և ինչ որ կարելի էր անել ստեղծւած պայմաններում,- նա կանգնեց ազգային-ազատագրական պայքարի ճանապարհի վրայ։

Յօդւածի հեղինակին հասկանալիօրէն վրդովեցնում է այն փաստը, որ այսօր յետին թւով դատապարտում են այդ պայքարի որոշ փուլերը և այդ պայքարը կազմակերպող որոշ գործիչների։ Ինչո՞ւ ուրիշ ժողովուրդները, օրինակ, բուլղարները կամ ռուսները, չեն դատապարտում իրենց պատմութեան համապատասխան փուլերը։ Այս հարցը մտահոգում է հեղինակին և նա այդ կապակցութեամբ գրում է.

«Բուլղարական ազգային-ազատագրական շարժման մէջ էլ թոյլ են տրւել սխալներ, եղել են տարբեր հոսանքներ։ Յեղափոխական Կոմիտէի հիմնադիր, մեծ հայդուկապետ Վասիլ Լեւսկու գործելակերպին հակադրւել է մի ուրիշ ականաւոր յեղափոխական՝ Քարաւելովը, որոշ տարակարծութիւններ է ունեցել 1876ի ապստամբութեան ղեկավարներից մէկը՝ Գէորգի Բենկովսկին։ Բայց ազատագրական շարժման մէջ նրանց կատարած դերը բուլղար պատմաբանները բոլորովին չեն թերագնահատել, երբէք չեն անտեսել»։

Նոյն այս տեսակէտը հեղինակը ունի նաեւ **նարոդնիկ**ների նկատմամբ, որոնց գիտական **սոցիալիզմ**ից հեռու լինելը ու **տակտիկ**ական սխալները քննադատելով հանդերձ, Լենինը միաժամանակ նշում էր նրանց առաջադի-

ման դերը ցարիզմի դէմ պայքարում՝ մինչեւ ռուսական մարքսիստների կազմակերպելը։

Կուրտիկեանը անկեղծօրէն ցանկանում է ցոյց տալ, որ Դաշնակցութեան դերը ազգային-ազատագրական պայքարում առաջադիմական էր, գոնէ մինչեւ հայ մարքսիստների բեմ բարձրանալը։ Նա փորձում է ցոյց տալ, որ եթէ Դաշնակցութիւնը ունեցել է որոշ թերութիւններ, ապա դա ոչ թէ նրա համար է, որ նրանք «ժողովրդի թշնամիներ» էին, այլ պարզապէս սխալների համար, քաղաքական հասունութեան պակասի համար, որը անխուսափելի էր դիւանագիտական գայլերով շրջապատւած կացութեան մէջ։ Հեղինակը մէջբերում է Դաշնակցութեանը ուղղւած Ստեփան Շահումեանի հետեւեալ խօսքերը.

«Դուք ունէք բարի ցանկութիւններ, բայց ձեր գործերը, ձեր ճանապարհը կորստաբեր են հայ ժողովրդի համար։ Ի հարկէ, դաշնակցականները մեղաւոր չեն, որ հայ ժողովրդի պատմական վիճակը այդքան անագորոյն է, ոչ մի կուսակցութիւն չի կարող դժոխքը դրախտ դարձնել»։

Ապացուցելու համար Դաշնակցութեան այս բարի ցանկութիւնները, Կուրտիկեանը առաջարկում է պատմականօրէն մօտենալ 90ական թւականներին տեղի ունեցած իրադարձութիւններին, այսինքն չանտեսել քաղաքական կուսակցութիւնների ղեկավար դերը։ Նա նշում է, որ, դժբախտաբար, 90ական թւականներից սկսեալ կուսակցութիւնների **կոնկրետ** գործունէութեանը տրւելիք քաղաքական գնահատականը վերանում է։

«Բայց չէ՞ որ բոլորին յայտնի է,- գրում է նա,- **այդ ազգային ազատագրական շարժումների ամենից ականաւոր դէմքերի՝ մեծ հայդուկների ո՞ր կուսակցութեան պատկանելը և ո՞ւմ կողմից ղեկավարւելը։ Հասկանալի է, որ Աղբիւր Սեբոբի, Անդրանիկի, Գէորգ Չաուշի, Արաբոյի, Մուրատի, Արմենակ Եկարեանի և ուրիշ շատերի գործունէութիւնը ղեկավարել է քաղաքական կազմակերպութիւնների կողմից։ Ուրիշ հարց է, թէ ի՞նչպէս է ղեկավարել, ինչպիսի՞ սխալներ է թոյլ տրւել։ Հարկաւոր է բացել բոլոր փակագծերը և պատմագիտական մեկնաբանում տալ ազգային-ազատագրական շարժման չլուծւած բոլոր խնդիրներին»։**

Սակայն ի՞նչպէս բացել այդ փակագծերը։ Այս հարցի պատասխանն է՛լ է տալիս Ստեփան Կուրտիկեանը։ Ահաւասիկ.

«Մեր կարծիքով, գիտականութիւնից զուրկ է Դաշնակցութեան կուսակցութեան գոյացման օրից՝ 90ական թւականներից մինչեւ մեր օրերը նրա գործունէութիւնը միագիծ ներկայացնելը, միագիծ գնահատելը, ազգային-ազատագրական շարժման նրա բոլոր ղեկավարներին մի ստանդարտ, **անփոփոխ բնութագիր տալը՝ հրաժարւելով երեւոյթներին ու մարդկանց գործունէութեանը պատմական մօտեցում ցոյց տալու մարքս-լենինեան միակ ճիշտ մեթոդից»։**

Ինչպէս տեսնում ենք, Կուրտիկեանը այստեղ պարզ առաջարկում է Դաշնակցութեան գործունէութեան գնահատականը բաժանել մասերի և որոշ փուլերում այդ գործունէութեանը տալ դրական գնահատական։ Անկասկած, Կուրտիկեանի մօտեցումը շատ ճիշտ է։ Օրինակ, Դաշնակցութեան գործունէութիւնը նախախորհրդային ժամանակաշրջանում, գոնէ մինչեւ փետրուարեան ապստամբութիւնը ստանար դրական գնահատական, մեր պատմաբանները հնարաւորութիւն կը ստանային լրացնելու խորհրդահայ պատմագրութեան բաց մնացած 40 տարւայ պատմութիւնը, որը, ինչպէս ասացինք, կազմում է մեր պատմութեան ամենահերոսական շրջաններից մէկը։ Կուրտիկեանի այս յուսաբեր առաջարկը փաստօրէն ներկայացուեց Հայաստանի իշխանաւորներին։ Եւ հայութիւնը, Սփիւռքից մինչեւ Հայրենիք, սպասում էր նրանց պատասխանին։ Ահա և նրանց պատասխանը.

Հայաստանի Կենտկոմի առաջին քարտուղար Կարէն Դեմիրճեանը իր ճառի մէջ ասաց հետեւեալը.

«Զեկուցման մէջ արդէն խօսւեց **«Սովետական Գրականութիւն»** ամսագրում թոյլ տրւած կոպիտ սխալների մասին։ Կարո՞ղ էր արդեօք դա տեղի ունենալ ստեղծագործական **կոլեկտիւ**ի բարձր գաղափարայնութեան, կուսակցական սկզբունքայնութեան, խստապահանջութեան մթնոլորտում։ Ի հարկէ՝ ոչ։ Չէ՞ որ յիշեալ յօդւածը նոյնիսկ չի քննարկւել ամսագրի խմբագրական **կոլեգիա**յում»։

Բայց այդ ո՞ր յօդւածի մասին է խօսքը։ Կենտկոմի քարտուղարը այս հարցին չի պատասխանում։ Դիմում ենք զեկուցող Կենտկոմի քարտուղար Դալլաքեանի ճառին։ Բայց նրա ճառումն էլ ոչինչ չենք գտնում **«Սովետական Գրականութիւն»**ում հրատարակւած յօդւածի մասին։ Ըստ երեւոյթին, ճառի այդ մասը թերթը չի հրատարակել։ Բայց այն, ինչը այնտեղ հրատարակւած է, բաւական է պարզելու համար, որ խօսքը Կուրտիկեանի յօդւածի մասին է։ Ահա թէ ինչ է ասել իր ճառում Կենտկոմի քարտուղար Դալլաքեանը.

«Երկու տարի առաջ լոյս տեսաւ Դարոյեանի «Այս հին աշխարհը» վէպը։ Հեղինակը նկարագրում է աշխատաւոր ժողովրդի բարդ պայքարը, սակայն որոշ տեղերում թոյլ է տալիս ոչ յստակ դիրքորոշում Դաշնակցութեան փետրուարեան ապստամբութեան հանդէպ։ Որոշ աշխատութիւններում ջնջւում են կուսակցական-դասակարգային կողմնորոշիչները պատմական երեւոյթների և անցեալի գնահատութեան հարցում։ Մեր ժողովուրդը երախտագիտութեամբ է վերաբերւում այն հերոսների յիշատակին, ովքեր զէնքը ձեռքին կռւել ու ընկել են օտար լծից ժողովրդի ազատագրութեան համար։ Բայց չի կարելի բացարձակացնել և գունազարդել այդպիսի գործիչների դերը, նրանց ներկայացնել կեղծ լոյսի տակ այն ժամանակ, երբ նրանք չէին կարող և իրա-

կանում չկարողացան դուրս գալ իրենց **սոցիալ**-դասակարգային պատմական սահմանափակութեան շրջանակներից։ Կորցնելով դասակարգային չափանիշները, սահելով փաստերի մակերեսով, որոշ հեղինակներ պարզում են գիտականօրէն սնանկ, մտացածին **սխեմա**ներ, որոնք խեղաթիւրում են այս կամ այն ժամանակաշրջանում **սոցիալ**ական յարաբերութիւնների, հասարակութեան հոգեւոր կեանքի զարգացման իրական պատկերը։ Միանգամայն տեղին և իրաւացիօրէն մերժւել էին առանձին ընկերների անհիմն փորձերը՝ վերանայելու գոյութիւն ունեցող մեր ճիշտ, սկզբունքային կուսակցական գնահատականները Դաշնակցութիւն կուսակցութեանը»։

Սա էր Հայաստանի ղեկավարների պատասխանը հայ պատմաբանների ու ժողովրդի հարցին։ Ունէ՞ր թէ չունէ՛ր հայ ժողովուրդը ազգային-ազատագրական պայքար, կա՞ր թէ չկա՛ր Հայաստանի անկախ Հանրապետութիւնը, և, ընդհանրապէս, ունէ՞ր թէ չունէ՛ր այս ժողովուրդը պատմութիւն 1890-1920 թւականների ժամանակամիջոցում։ Հայաստանի Կոմունիստական կուսակցութեան Կենտկոմը գտնում է, որ այդպիսի պատմութիւն չի եղել։ Եւ Կենտկոմը իր տեսակէտից ճիշտ է, որովհետեւ առանց Դաշնակցութեան այդպիսի պատմութիւն իսկապէս գոյութիւն չունի, իսկ Դաշնակցութեամբ դա դառնում է ոչ թէ դասակարգային, այլ ազգային-ազատագրական պայքար։

Իսկ դա, ինչպէս յայտնի է, մարքսիստների համար չէ, որոնք «Մանիֆեստ»ում հռչակեցին, թէ «մինչեւ այսօր գոյութիւն ունեցող հասարակութիւնների պատմութիւնը դասակարգերի պայքարների պատմութիւնն է»։

Ոչինչ, շատ քարտուղարներ դասակարգային երգեր երգելով եկան ու գնացին, ոչ մի հետք չթողնելով իրենց ժողովրդի քաղաքական ճակատագրում, իսկ Դաշնակցութիւնը մնաց և այսօր էլ, առանց դասակարգային խտրութեան, պաշտպանում է հայ ժողովրդին։ Այսօր էլ նոր Աղբիւր Սերոբները կերտում են իրենց ազգի քաղաքական ճակատագիրը։ Իսկ ինչ մնում է Խորհրդային Հայաստանին, ապա կարեւոր չէ որ այստեղ ամբողջ իշխանութիւնը գտնւում է քարտուղարների ձեռքում, կարեւոր է որ այնտեղ կան Աղբիւր Սերոբներին գնահատող Կուրտիկեաններ։

1976

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Է. Յովհաննիսեան

Բազմամարդ ու անվերջ շտապող բնակիչներով, շարժանկարի սրահների առջեւ կանգնած հերթերով, քայլերով նախաճաշող քաղաքացիներով Նիւ Եորքը ինչ որ բանով նմանւում է Մոսկւային։ Մոսկւայումն էլ մարդիկ նման են նիւ եորքցիներին, բայց մէ՛կ գլխաւոր տարբերութեամբ, որը ընդգծում են խորհրդային քարոզչական մարմինները.

Նիւ Եորքում մարդիկ շտապում են իրենց անձնական գործերը դասաւորելու, իրենց երջանկութիւնը կերտելու, իրենց հաճոյքը ստանալու և իրենց պահանջները բաւարարելու։ Իսկ Մոսկւայում մարդիկ շտապում են միջազգային բանւորութեան շահերը բաւարարելու, կոմունիզմ կառուցելու և հայրենիքի հզօրութիւնը աւելացնելու։ Նիւ Եորքում մարդիկ ապրում են, իսկ Մոսկւայում պայքարում։

Սակայն, իրականում, թէ՛ Նիւ Եորքում և թէ Մոսկւայում մարդիկ շտապում են ապրել, շտապում են պաշտօն, դրամ, փառք և երջանկութիւն ապահովել իրենց համար։ Դրա համար էլ Նիւ Եորքի և Մոսկւայի քաղաքացիները գրեթէ ոչնչով իրարից չեն տարբերւում։ Մոսկւացի երիտասարդը խուսափում է Աֆղանստան գնալուց այնքան, որքան որ նիւ եորքցին խուսափում էր Վիեթնամից։ Մի խօսքով՝ մոսկւացու յեղափոխականացւածութիւնը արհեստական է։ Յեղափոխական լինելու այդ ոգին նրան վերագրւած է։ Պարզապէս խորհրդային մարդկանց վրայ մնացել է և արհեստականօրէն ուռճացւում է 1917 թւականների կնիքը, երբ ժողովուրդը իսկապէս որ ապրում էր զանգւածային յեղափոխական վերելք։

Այսքանը նախաբանն է, ինձ անձամբ ոչ մի ցաւ չպատճառող նախաբան։ Սակայն այս նախաբանը ինձ մեծ ցաւ պատճառող երեւոյթի նախաբանն է։ Այս երեւոյթը կուսակցական և ոչ-կուսակցական զանգւածների համեմատական գնահատականն է։

Բոլոր հայկական գաղութներում, առաւել եւս՝ Միացեալ Նահանգներում, մենք կարող ենք տեսնել հետեւեալ պատկերը։

Իրեն չէզոք անւանող զանգւածը, բարեգործական ընկերութիւնները, ակումբները և ուրիշ ոչ-քաղաքական կազմակերպութիւններ զբաղւած են եկեղեցիներով, դպրոցներով, համերգներով, ճաշկերոյթներով ու պարահանդէսներով։ Սրանք բոլորը զբաղւած են սփիւռքահայութեան կենցաղով։

Իսկ ի՞նչ են անում քաղաքական կուսակցութիւնները, մասնաւորապէս Հ.Յ.Դաշնակցութիւնը՝ իր համակիրներով հանդերձ: Գրեթէ նո՛յնը: Նոյն եկեղեցական հարցերը, նոյն պարահանդէսները և նոյն ճաշկերոյթները: Միայն թէ այս զանգւածը կրում է 1918 թւականների յեղափոխական կնիքը:

Անշուշտ, այս զանգւածը ունի իր յեղափոխական խմբերը, որոնք սակայն այնքան են կտրւած ընդհանուր զանգւածից, որ թւում է, թէ Դաշնակցութիւնը ընդյատակումն է, իսկ դրսում գտնւողները դաշնակցականի ծաղրապատկերն են: Այսօր ցաւով կարելի է լսել այսպիսի սովորական մի արտայայտութիւն. «Այսինչը դաշնակցական չէ, բայց տասը դաշնակցական արժէ»:

Ինչո՞ւ, այդ ի՞նչպէս կարող է լինել: Եթէ ոչ-դաշնակցականը տասը դաշնակցական արժէ, ապա ինչո՞ւ մենք չենք կարողանում նրան շարքերի մէջ առնել: Կամ եթէ Դաշնակցութեան ներսում կան անձեր, որոնք որոշ մի ոչ-դաշնակցականի մէկ տասներորդը արժեն, ապա ինչո՞ւ են նրանք շարքերի մէջ:

Հրաչ Տասնապետեանը, իր **«Յեղափոխութիւն»** աշխատութեան մէջ յեղափոխութեան առընչակից երեւոյթները քննարկելիս, գրում է. «Յեղափոխութեան մը յաջողութեան պարագային, անոր ամրապնդման, անոր առաջադրւած ընկերային թէ քաղաքական հանգանակի իրականացման համար էական է, որ առաջնորդներն ու ռահվիրաները մնան իրենց գաղափարական-բարոյական բարձրութեան վրայ, ու չայլասերին»:

Իսկ որքան կարեւոր է այդ այն ժամանակ, երբ յեղափոխութիւնը դեռեւս յաջողութեան չի հասել, աւելի ճիշտ՝ դեռեւս չի էլ սկսւել: Զանգւածների արտաքին ոգեւորւածութիւնը յեղափոխութեան համար դեռեւս շատ քիչ է:

Եւ, իսկապէս վերջերս եղայ Նիւ Եորքի հայ գաղութի կողմից կազմակերպւած Մանուէլի համերգին, որտեղ երգիչը, բացի երգելուց, քաղաքական ճառեր էր ասում և որոշ ոգեւորութիւն առաջացնում «Հայ Դատի» ուղղութեամբ: Նա ասում էր, թէ ժամանակն է եկել, որ դաշնակցականները, ռամկավարները և՛ հնչակեանները միանան: Դահլիճը բուռն ծափահարութիւններով էր դիմաւորում երգչի այդ առաջարկը: Ծափահարում էին նաեւ նրանք, որ երբեք միասնութեան պատրաստ չեն: Յետոյ «Արարատ» երգը երգելիս նա դիտաւորեալ կանգ էր առնում **Արարատ** բառի վրայ և դահլիճը միաձայն շարունակում էր. «Մերն է»:

Եթէ մենք չիմանայինք, որ ոչ միասնութիւնը և ոչ էլ Արարատի ձեռքբերումը կարելի է իրականացնել երգիչների առաջարկով ու երգասէրների ծափահարութիւններով, ապա կարող էինք մտածել, թէ Հայ Յեղափոխութիւնը սկսւելու է հէնց այս համերգի սրահից:

Բայց համերգից յետոյ թէ՛ «յեղափոխականները» և թէ սովորական ժողովուրդը գնացին քննարկելու հերթական ազգային միջոցառումները, որոնք գործարկւում էին տարբեր թեմերի առաջնորդարաններում և տարբեր գոյն ունեցող ակումբներում: Բայց բոլորն էլ նոյն գործն էին անում: Ինչո՞ւ է այդպէս:

Ըստ երեւոյթին, նրա՛ համար, որ մի ամբողջ սերունդ, զբաղւելով զուտ կենցաղային հարցերով, կորցրել է իր յեղափոխական էութիւնը: Մի ամբողջ սերունդ ծնւել ու մեծացել է այդ գործերի մէջ,- դպրոց, ակումբ, եկեղեցի, պարահանդէս, Մայիս 28, Ապրիլ 24, դաշտագնացութիւն, մարմնամարզութիւն և այլն, և այլն: Սա է եղել յեղափոխականների և ոչ-յեղափոխականների հիմնական գործունէութիւնը:

Նման իրողութիւնը յանգեցրել է նրան, որ կուսակցութիւնը, իր հասարակական գործունէութիւնը շարունակելու համար, օրինակ՝ Նիւ Եորքում, կազմակերպում է խաղեր, պարզապէս՝ «դումար», Ուաշինկտոնում՝ տօնավաճառ, այլ վայրերում՝ թէյասեղաններ ու **առաքե**ներ: Եւ այս ամէնը արւում են այն պարզ պատճառով, որ կուսակցական ընկերների անդամավճարները ու համակիրների նւիրատւութիւնները չեն բաւարարում կուսակցութեան գործունէութեան համար:

Կարելի է բերել կուսակցութեան երեւացող խաւի քաղքենիացման շատ ուրիշ օրինակներ, բայց ես չէ, որ պէտք է մեր այդ թերութիւնները մամուլին յանձնեմ և հաճոյք պատճառեմ մեր հակառակորդներին: Ուզում եմ միայն նշել, որ քաղքենիացում կայ և որ մենք առայժմ ի վիճակի չենք անելու այն, ինչի մասին գրում է Տասնապետեանը: Իսկ նա իր արդէն նշւած գրքում գրում է.

«Անմիջական արդիւնք չունեցող և երկար ժամանակի վրայ տարածւող յեղափոխական պայքարի պարագային, հարկ է ժողովուրդը իրողապէս մասնակից դարձնել ընդհանուր շարժման, զայն կազմակերպելով իբրեւ ընդդիմադիր, իբրեւ դժգոհ և ըմբոստ տարրերու ըստ կարելւոյն ներդաշնակ ամբողջութիւն, ստեղծելով գործօն կորիզներ, մարտական խումբեր, զանոնք օժտելով անհրաժեշտ միջոցներով ու զէնքերով, պատրաստելով **փարտիզան**ական կռիւներու վարժ ու ատակ տարրեր, ահաբեկիչներ, խափանարարներ և այլն»:

Ի՞նչպէս կարող ենք մենք ժողովուրդը ըմբոստ դարձնել, եթէ մեր իսկ շարքերը նման ըմբոստութեան պատրաստ չեն: Եւ ի՞նչպէս կարող ենք դաստիարակել ըմբոստ ոգիներ, երբ կուսակցութեան ուսերին է ընկած Սփիւռքի մէկ հատւածի ազգային հասարակական կեանքը կազմակերպելու ծանր բեռը:

Սակայն, այսպէս թէ այնպէս, մեզ անհրաժեշտ է ազատել կուսակցութիւնը քաղքենիացման ընթացքից, ջանք չխնայելով դրա համար: Ի՞նչ ճանապարհներով կարելի է այդ անել:

Ես կարծում եմ, որ նախ և առաջ անհրաժեշտ է ազատւել քաղքենի նկարագիր ունեցող կուսակցականներից, որոնք մեր շարքերն են մտել կուսակցութիւնը մի տեսակ ակումբ նկատելով և որոնք անմիջապէս յետ են քաշւում, երբ պարզւում է, որ կուսակցութիւնը այն չէ, ինչ իրենք կարծում էին, այլ ըստ էութեան յեղափոխական կազմակերպութիւն է: Ազատւել է պէտք նաեւ նրանցից, ովքեր իրենց վաղեմի արժանիքների ու պաշտօնների ջահը ձեռքները առած՝ փորձում են սեփական կարծիքները հակադրել կուսակցական որոշումներին:

Բացի դրանից, իմ կարծիքով, անհրաժեշտ է կտրականապէս արգելել դրամ վաստակելու բոլոր քաղքենիական ձեւերը (առեւտուր, խաղեր, տօնավաճառներ և այլն): Ամէն մի կուսակցական երդւել է արեան գնով լուծել Հայ Դատը, ուստի կուսակցութիւնը նրանից արիւն, այլ ոչ թէ աճպարարութիւն ու առեւտրական ճարպկութիւն պիտի պահանջի: Կուսակցութիւնը իր գործունէութեան համար անհրաժեշտ միջոցները պիտի կարողանայ վաստակել այն ճանապարհով, որով վաստակել են անցեալում և վաստակում են այսօր բոլոր յեղափոխական կազմակերպութիւնները: Եւ պէտք է վաստակի այնքան, որքան որ անհրաժեշտ է Հայ Դատի աշխատանքները կատարելու համար:

Շատ ամօթ պիտի լինի մեզ համար, եթէ Հայ Դատի աշխատանքների մէկ մասը չկատարւի միայն ու միայն դրամի պակասի համար: Նման աշխատանքներ կան ու շատ են: Բաւական է նշել, որ Ցեղասպանութեանը և Հայ Դատին վերաբերող գրականութիւնը, ձրիաբար աշխարհի մտաւորականութեանը ցրելու փոխարէն, մենք փորձում ենք վաճառել այդ գրքերը՝ տպագրական ծախսերի գոնէ կէսը հանելու համար: Իսկ օտարները չեն ուզում գնել մեր ցաւերի պատմութիւնը: Նրանց վզովը մենք պէտք է պարտադրաբար փաթաթենք մեր Դատը, ինչպէս մեզ են պարտադրում իրենց խնդիրները բոլոր նրանք, որոնցից նամակներ ու գրքեր է բերում ամէն առաւօտ մեր փոստը:

Հռոմի Պապի Թուրքիա այցելելու մասին Հայկական Հարցերի Հաստատութիւնը մէկ էջնոց անթել հեռագիր ուղարկեց Վատիկան: Գուցէ ուրիշներն էլ ուղարկել են: Բայց եթէ դրամ լինէր, կարելի էր ուղարկել 100.000 հեռագիր և Վատիկանը ստիպւած կը լինէր անդրադառնալու հեռագրերի այդ հեղեղին: Եկէք հաշիւ տանք մեզ,- եթէ մեր գործունէութեան միջոցներն անգամ չենք կարողանում վաստակել, ապա ի՞նչպէս ենք ուզում լուծել շատ աւելի դժւար խնդիրներ:

Կարծում եմ, որ մէկ բան էլ մեզ չափազանց անհրաժեշտ է: Այդ կուսակցութեան ապակենտրոնացման բովանդակութեան ծաւալումն է: Ես կարծում եմ, որ ապակենտրոնացումը անհրաժեշտ է տարածել նաեւ մի շարք մարզերի վրայ, որոնք մինչեւ այսօր տեղական մարմինների իրաւասութիւնից դուրս են: Սա անհրաժեշտ է, որովհետեւ յեղափոխականացումը խօսքով չի լինում, յե-

ղափոխականացման համար անհրաժեշտ են յեղափոխական յանձնարարութիւններ։

Այսօր կուսակցութեան համար ամենադժւար գործերից մէկը դարձել է գործ տալը։ Ինչո՞վ պիտի զբաղեցնես ու բաւարարութիւն տաս յեղափոխական կրակի մէջ նետւելու պատրաստ և հէնց դրա համար կուսակցական դարձած երիտասարդին։ Եթէ մենք չկարողանանք նման յեղափոխական աշխատանքի լծել, ապա նա կա՛մ կը հիասթափւի և կամ էլ կը քաղքենիանայ։ Եթէ ուրիշ բան չունենք անելու, գոնէ, ի հարկին, լիբանանահայերին օգնութեան ուղարկենք մեր երիտասարդներին։

Ես հասկանում եմ, որ նման հարցերը քննարկւում են իր տեղին և նրանց նկատմամբ որոշումներ են ընդունւում այլ կարգով, բայց ես ոչ մի շօշափելի առաջարկ չեմ էլ անում։ Ես միայն ուզում եմ մեր կուսակցութիւնը տեսնել իսկական յեղափոխական կուսակցութիւն։

Սրա համար մենք էլ պիտի մեզ մարզենք, դաստիարակելով մեր մէջ որոշ կենցաղային զսպւածութիւն։ Օրինակ, իրար տուն գալիս՝ ուիսկիի փոխարէն մի գիրք նւիրենք, այն գրքերից, որ մենք չենք կարողանում վաճառել։

Մի խօսքով՝ անհրաժեշտ է մեր կազմակերպչական, մարմնական և հոգեկան յեղափոխականացումը։

1980

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՏԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՆՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Է. Յովհաննիսեան

Յունիսի 3ին, Երեւանի «**Կոմունիստ**» թերթը հրատարակեց Ռ. Խուրշուդեանի «**Սուտի Կազմախօսութիւնը**» վերնագիրը կրող յօդուածը, որի ենթավերնագիրն էր «**Դաշնակցութեան հակախորհրդային նպատակները և գործելակերպը**»։ Ամբողջ յօդուածը այնքան անբովանդակ է և շինծու, որ կարելի էր նրան չպատասխանել, եթէ Հ.Յ.Դաշնակցութիւն կուսակցութեան շուրջ ստեղծուած մթնոլորտը չստիպէր այդ բանը անել։

Երկու խօսք յօդուածի բովանդակութեան մասին, որը գրուած է ռուսերէնով։

Աշխարհի յետադիմական ուժերը միաւորւում են հակախորհրդային պայքար վարելու համար։ Խորհրդային Միութեան դասակարգային թշնամիների ստելութիւնը այսօր ընդունել է հոգիների և զգացմունքների վրայ յարձակում գործելու ձեւ։ Այդ թշնամիները փաստօրէն վարում են չյայտարարուած հոգեբանական պատերազմ, որի մէջ սուտը գլխաւոր դերն է կատարում։ Այս պայքարում ամերիկեան իմպերիալիստները օգտագործում են Դաշնակցութիւնը՝ Սփիւռքում և Հայրենիքում հակախորհրդային քարոզչութիւն վարելու համար։

Արտաքին չէզոքութեան դիմակի տակ, Դաշնակցութիւնը թագցնում է իր բուն հակախորհրդային ձգտումները։ Դաշնակցութիւնը ծառայում է ամերիկեան իմպերիալիզմին և , խաղալով հայերի ազգային զգացմունքների վրայ, հաւատարիմ ծառայում է իր տէրերին ,այսինքն ամերիկեան իմպերիալիզմին։ Ամերիկեան իմպերիալիզմի թելադրանքով Դաշնակցութիւնը ջանում է հակախորհրդային հողի վրայ միասնութիւն ստեղծել Սփիւռքում, մինչդեռ միասնութիւնը կարող է ստեղծուել միայն խորհրդայնասիրական հողի վրայ։ Հայաստանի կոմունիստները միշտ պայքարել են ու պիտի պայքարեն Դաշնակցութեան դէմ։ Այս մարզում զիջումներ չեն կարող լինել։

Ի՞նչն է մեզ ստիպում պատասխանել այս դատարկաբանութիւններին։ Այն, որ այս յօդուածը բաւականին յստակօրէն պատասխանում է մի շարք հարցերի, որոնց նկատմամբ Սփիւռքում դեռեւս կան տարակարծութիւններ ու որոնց պատասխանների հետ կապւում են որոշ յոյսեր։ Նախ տեսնենք թէ ի՞նչ մթնոլորտում է գրւում այս յօդուածը։

Հայ բուրժուա դասակարգի որոշ մէկ մասի հետ խորհրդային իշխանութիւնը վաղուց ի վեր լուծել է իր խնդիրները, ամուր դաշինք կապելով նրա հետ ու օգտւելով նրանից այն չափով, որը թոյլ է տալիս մեզ ասելու թէ այդպիսիները հայ կոմունիստների գրպանումն են։ Մարքսիզմի հիմնադիրները երբեք չէին

կարող ենթադրել ու նախատեսել, որ որեւէ ազգի բանւոր դասակարգը առանց զինեալ պայքարի կարող է սեփական բուրժուազիային վարժեցնել կոմունիզմին ծառայելու «վարքագիծ»ին:

Այսօր Սուրբ Էջմիածինը Սփիւռքի հայ բուրժուազիայից հաւաքած դրամները նուիրում է Չերնոբիլի զոհերին:

Ուրեմն Սփիւռքի և Հայրենիքի միջեւ դասակարգային պայքարի հարց չկայ: Այդ յարաբերութիւններում տիրում է դասակարգային համերաշխութիւն և Սփիւռքի բուրժուաները խորհրդային իշխանութիւնից լաւ ծառայութեան համար շքանշաններ են ստանում: Այս բնագաւառում ամէն ինչ կարգին է, տիրում է դասակարգային փոխադարձ յարգանք:

Բայց «Կոմունիստ» թերթի յօդւածի հեղինակ Ռ. Խուրշուդեան (դժբախտաբար Լ. Խուրշուդեանի զաւակն է) խօսում է մի ինչ որ ուրիշ հակառակորդի դասակարգային ատելութեան մասին, որն է Հ.Յ.Դաշնակցութիւն կուսակցութիւնը: Միւս կողմից խորհրդահայ մամուլը առիթը բաց չի թողնում՝ Դաշնակցութիւնը ամերիկասիրութեան մէջ մեղադրելու համար: Գուցէ՞ այդ քարոզիչները իսկապէս որ ծանօթ չեն կացութեան հետ, բայց այդ դէպքում ինչո՞ւ են նրանք շօշափում այն նիւթը, որի մասին գաղափար չունեն:

Միւնխենի Հայկական Հարցերի Հաստատութիւնը կատարեց դաշնակցական մամուլի յատուկ ուսումնասիրութիւն և պարզեց հետեւեալը: Այս տարւայ սկզբից «Ալիք»ում, «Ազդակ»ում, «Հայրենիք»ում, «Հորիզոն»ում, «Ազատ Օր»ում, «Արմենիա»յում և «Կամք»ում հրատարակւած 10,653 յօդւածների մէջ չկայ ՈՉ ՄԷԿ ամերիկասիրական յօդւած: Կան 1532 թունդ հակա-ամերիկեան բնոյթ կրող յօդւածներ և 943 թունդ խորհրդայնասիրական յօդւածներ: Մնացած յօդւածները չէզոք են և կամ էլ հակաթուրքական բնոյթ են կրում: Բացի դրանից, կան 16-21 յօդւածներ, որոնք կարող են որակւել որպէս Խորհրդային Միութիւնը քննադատող յօդւածներ, այն էլ այնքան մեղմ, որ նրանց մասին խօսելն անգամ ամօթ է: Ինչ վերաբերւում է հակախորհրդային գործողութիւններին, այսինքն բողոքի ցոյցերի, ժողովների կամ թռուցիկներ բաժանելուն, ապա այս մարզում ոչ մէկ բան արւած չէ գոնէ վերջին 15 տարիների ընթացքում: Ուրեմն ի՞նչն է մտահոգում Հայաստանի իշխանութիւններին: Միայն մէկ բան Հ.Յ.Դաշնակցութիւնը ԻՐԵՆՑ ԳՐՊԱՆՈՒՄ ՉԷ:

Հաւանաբար Դաշնակցութեան լռութիւնը՝ հակախորհրդային ճակատում, գնահատւում է որպէս կուսակցութեան թուլութիւն: Մի խումբ վարձկանների հակադաշնակցական արարքները, հաւանաբար, նոյնպէս նկատուեցին կուսակցութիւնը թուլացնող հանգամանք և խորհրդային ղեկավարները որոշեցին որ «վերջնական գրոհի ժամանակը եկել է»:

Այս բոլորին զուգահեռ, Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայում Սփիւռքը ուսումնասիրելու յատուկ բաժին է բացւում, որտեղ արդէն աշխատում են 30 գիտաշխատողներ, իսկ բաժնի ղեկավար է նշանակւում Կարլէն Դալլաքեանը: Այդ բաժինը 1.5 միլիոն գրեթէ ռուսացած խորհրդային սփիւռքի հայերին թողած, ուսումնասիրում է Սփիւռքի վիճակը, պարզելու համար թէ ինչո՞ւ են արտասահմանի հայերը օտարների հետ ամուսնանում: Աւելին, Սփիւռքում ստեղծւում է «Արարատ» անունով գիտութիւնների մի ակադեմիա, որի մասին յայտնում է «**Հրայրք**» թերթը: Աւստրիայում հրատարակւող այս թերթը, որը աւելի շուտ թռուցիկ է, յանկարծ մեծ գովեստների է արժանանում խորհրդահայ մամուլում, կարծես Սփիւռքում գովեստների արժանի ուրիշ թերթ չկար:

Եւ ահա այս պայմաններում գրւում է «**Կոմունիստ**» թերթի յօդւածը, որը պարզութիւն է մտցնում Կարլէն Դալլաքեանի առաքելութեան մէջ: Երեւի Սփիւռքի մէջ գրգռութիւն չառաջացնելու համար յօդւածը գրւում է ռուսերէնով: Յօդւածից պարզւում է, որ Դաշնակցութեան լռութիւնը բաւարար չէ, որ նա պէտք է կա՛մ մեռնի և կամ էլ ուրիշների նման մտնի Հայաստանի կոմունիստների գրպանը:

Ո՞ւմ համար է գրւել այս յօդւածը: Սփիւռքը ռուսերէնով չի կարդում, իսկ Հայաստանի ժողովուրդը կարդալով որ Դաշնակցութիւնը շարունակում է կառչած մնալ հայ ժողովուրդը ըստ ամենայնի ազատագրելու գաղափարին՝ միայն կ'ուրախանայ, որքան էլ որ միամիտ թւայ այդ մտադրութիւնը: Այս մասին ոչ մէկ կասկած չի կարող լինել:

Ուրեմն յօդւածը գրւել է ո՛չ Սփիւռքի և ոչ էլ հայաստանցիների համար: Յօդւածը գրւել է Մոսկւայի համար, իսկ դա նշանակում է, որ Դաշնակցութեան դէմ կազմակերպւած գրոհը ղեկավարւում է Մոսկւայից:

Այժմ մենք գտնւում ենք այն վիճակում, որում գտնւում էր Լեհաստանը 1939 թւականին, երբ մէկ կողմից Գերմանիան, իսկ միւս կողմից Խորհրդային Միութիւնը ուղարկում էին իրենց հրասայլերը ձիերի վրայ նստած ու նիզակներով կռւող լեհերի դէմ: Բայց լեհերը ոչ միայն չմեռան, այլեւ այսօր եղան առաջինները, որ համարձակւեցին գլուխ բարձրացնել խորհրդային բռնութեան դէմ:

Այժմ Խորհրդային Միութիւնը մէկ կողմից, Թուրքիան միւս կողմից մեր դէմ են հանել իրենց գիտական հաստատութիւնները, քարոզչական մարմինները, լրտեսները և բոլոր ուղղակի թէ անուղղակի միջոցները՝ մեզ ոչնչացնելու նպատակով: Այս բոլորը անցեալում էլ փորձւած են և, ի մեծ յուսախաբութիւն մեր հակառակորդների, չեն յաջողած: Նոյն ճակատագրին պիտի արժանանան Դաշնակցութիւնը տկարացնելու այս նոր շրջանի նախաձեռնութիւնները: Իսկ մեր հակառակորդների տեղը արդէն վաղուց որոշել է պատմութիւնը:

1986

ԱՌԱՆՑ ՅԱՐՄԱՐՒԵԼՈՒ ԵՒ ԲԱՌԵՐԸ ԾԱՄԾՄԵԼՈՒ

Է. Յովհաննիսեան

Ես կարծում եմ, որ յօդուածները գրւում են մտածելու աւելի նոր գաղափարների ու մօտեցումների վրայ, քան արդէն գոյութիւն ունեցող և իւրացւած գաղափարները հազարերորդ անգամ կրկնելու համար։

Դաշնակցական մամուլում նոր մտածումներ ու գաղափարներ քննարկելու միակ սահմանափակումը կարող է պայմանաւորւած լինել նրանով, թէ որքանով նոր մօտեցումները մեզ շեղում են Հ.Յ.Դ. նպատակներից, այսինքն՝ հայ ժողովրդի շահերի պաշտպանութիւնից։ Նոր միտք կամ գաղափար քննարկելու համար ուրիշ ոչ մէկ սահմանափակում չի կարող գոյութիւն ունենալ, եթէ մենք չենք ուզում յետ մնալ սրընթաց շարժւող այս աշխարհից։

Այս տեսանկիւնից էլ ես դիտում եմ **«Դրօշակ»**ի 12 Նոյեմբերի համարում հրատարակւած Նորա Ք.ի և Գրիգոր Ա. Գրիգորեանի յօդուածները։ Այդ գրութիւնները ես համարում եմ քննարկում, բայց ոչ դատապարտում, թէպետեւ Նորան կարող էր աւելի ընկերական ոճով զրուցել իր ընկերոջ հետ։

Նախքան իմ ընկերների քննադատութիւններին պատասխանելը, ես ուզում եմ նշել, որ յօդուածները և ելոյթները կարող են գրւել ու արտասանւել տարբեր մակարդակների վրայ։ Ընդհանուր Ժողովում արտասանւած ելոյթը երբեք չի կարող նմանւել երիտասարդական բանակումի ժամանակ կարդացւած դասախօսութեան։ Իսկ շարքային ընկերներին տրւած հաշուետուութիւնը Հայ Դատի աշխատանքների մասին երբեք չի կարող նմանւել Ապրիլ 24ի առիթով արտասանւած ճառին։

Ես իմ յօդւածս գրեցի որպէս հայ ժողովրդի ճակատագրով մտահոգւած մարդկանց հետ ունեցած զրոյցների արդիւնք ու եզրակացութիւն։ Բայց քննադատներս խօսեցին ուրիշ մակարդակի վրայ և պիտի խոստովանեմ որ այդ մակարդակի վրայ լաւ խօսեցին։ Բայց ես ուզում եմ վերադառնալ իմ կողմից առաջարկւած մակարդակի վրայ, որը մեր նպատակներին հասնելու նոր միջոցների ու ճանապարհների որոնման մակարդակն է։

Եթէ չենք ուզում սկզբունքայնութիւն ու գաղափարապաշտութիւն բառերը օգտագործել ճառային իմաստով, ապա եկէք սահմանենք այդ եզրակացութիւնները։ Մեր գաղափարախօսութիւնը ընկերվարութիւնն է, իսկ սկզբունքը՝ մեր վերջնանպատակին հասնելու պայքարը։ Մեր գլխաւոր նպատակը արձանագրւած է մեր Ծրագրի մէջ և այդ մասին շարքայինների միջեւ ոչ մէկ վէճ լինել չի կարող։ Մեր նպատակը **մեզ համար** բարոյական նպատակ է, իսկ

Թուրքիոյ համար՝ ոչ: Մենք կը դադարէինք յեղափոխական կուսակցութիւն լինելուց, եթէ այս հարցում նետուէինք մեզնից անկախ գործող ուժերի հաստատած բարոյականութեան ոլորտը՝ պարզելու համար թէ որիս նպատակն է աւելի արդարացի: Բայց կարծում եմ, որ բոլորիս համար պարզ է, որ մեր նպատակի բարոյականութիւնը որոշելու համար, մենք պէտք է ղեկավարուենք **մեր ժողովրդի**, այլ ոչ թէ թուրքի կամ Միացեալ Ազգերի Կազմակերպութեան տեսակէտներով:

Ի՞նչի մասին այստեղ կարելի է վիճել: Հաւանաբար միայն մէկ բանի մասին: Արդեօք հրապարակում կարելի՞ է այս պարզութեամբ խօսել այդ խնդիրների մասին:

«Առանց գաղափարականի և սկզբունքների՝ ի՞նչ կը մնայ մեզ իբրեւ կուսակցութիւն»- հարցնում է Նորան: Իսկ այդ որտեղի՞ց է երեւում, որ ես առաջարկում եմ խլել **մեզանից** գաղափարականը և սկզբունքայնութիւնը:

Սկզբունքները և գաղափարները մերն են ու կիրառելու են մեր մէջ ու մեր ժողովրդի համար: Թէ՞ սիրելի Նորան փափագում է ընկերվարական կարգեր հաստատուած տեսնել նաեւ Սալուադորում, այդ թելադրւում է պարզապէս դաշնակցականի իր գաղափարապաշտութիւնից և չի կարող կաշկանդել քաղաքական մեր ճկունութիւնն ու շարժման ազատութիւնը:

Ժողովրդավարութիւնը, փոխադարձ յարգանքը, արդարութիւնը, ազատութիւնը, փոխօգնութիւնը և բոլոր մնացած արժէքները հայրենիք ունեն և իւրայատուկ են ամէն մի ժողովրդի, ամէն մի պետութեան և ամէն մի աշխարհագրական վայրի համար: Այս արժէքները մենք պէտք է հայկականացնենք ու մանրակրկիտօրէն կիրառենք մեր շարքերում և մեր ժողովրդի ներսում: Ու մեզ կը մնան թէ՛ մեր սկզբունքները և թէ մեր գաղափարախօսութիւնը:

Բայց ո՞վ ասաց, որ մեր սկզբունքայնութիւնը պարտադրում է մեզ նոյնքան հոգատար լինել նաեւ մեր թշնամիների ու հակառակորդների նկատմամբ: Չէ՞ որ խօսքը արտաքին յարաբերութիւնների մասին է, որտեղ մենք գրեթէ բարեկամ չունենք, բոլորն էլ հակառակորդներ են ու թշնամիներ: Եթէ չենք ուզում գայլերի մէջ գառնուկներ լինել, ապա պիտի վարուենք մեր հակառակորդների հետ ճիշտ այնպէս, ինչպէս իրենք են վարւում մեզ և ուրիշների հետ:

Գրիգոր Ա. Գրիգորեանը դիմում է պարսկական առակի, որի համաձայն մկներից պանիրը փրկելու համար նպարավաճառը պանրի ամանի վրայ գրել է «երկաթ»: Անշուշտ, միամիտ ու յիմար է նպարավաճառը, բայց նրանից մենք շատ էլ չենք տարբերի, եթէ մտնենք գազաններով լի անտառ ու նրանցից փրկւելու համար կրծքներիս գրենք.- **«Մեզ մի կերէք, մենք ազնիւ ենք, բարի ու սկզբունքային»:** Իսկ այն անտառը, որի մէջ մենք ուզում ենք Հայկական Հարց լուծել, իսկապէս որ լեցուն է կատաղի գազաններով:

Նախագահ Ըէյգանը ահաբեկչութեան դէմ պայքարելու պատրւակով յարձակւում է Լիբիայի վրայ և արգելում է եւրոպացիներին բանակցութիւններ վարել ահաբեկիչների հետ, իսկ ինքը նրանց զէնք է տալիս՝ մի քանի ամերիկացի պատանդներ ազատելու համար: Իսրայէլը մարդու իրաւունքների պաշտպանութեան արշաւ է սկսում, իսկ ինքը օրը ցերեկով Լոնդոնից մարդ է առեւանգում: Խորհրդային միութիւնը ճառում է լենինեան աւանդական խաղաղասիրական քաղաքականութեան մասին, բայց Աֆղանստանում աւելի քան 100 հազարնոց զօրք է պահում:

Եւ այս անտառում, մենք՝ հայերս, առանց խորամանկութիւնների, առանց մեր բուն նպատակները թագցնելու, ուզում ենք Հայ Դա՞տ լուծել: Բայց արդեօ՞ք ուզում ենք: Այս մասին ես բազմաթիւ հարցումներ եմ ստանում ու ինքս էլ սկսում եմ կասկածել: Արդեօք ուզո՞ւմ ենք:

Եթէ Հայ Դատը միայն մեր գաղափարապաշտութեան ու սկզբունքների արտայայտութիւնն է, եթէ մենք ուզում ենք այս ճամբով վառ պահել մեր ժողովրդի ու մեր կուսակցութեան ազգայնականութիւնը, այսինքն՝ եթէ Հայ Դատի հետ կապւած շարժումները ոչ այլ ինչ են, եթէ ոչ ազգապահպանման և կուսակցապահպանման միջոցներ, ես ասելիք չունեմ և իմ քննադատները միանգամայն ճիշտ են: Բայց եթէ մենք ուզում ենք այս անտառում որեւէ բան ձեռք ձգել մեր ժողովրդի համար, մենք պէտք է մեր գաղափարականութիւնն ու սկզբունքայնութիւնը պահենք յատկապէս ներքին գործերում կիրառելու համար:

Յարմարւելով անտառում գտնւող գայլերին, որքանո՞վ մենք իսկական գազաններ չենք դառնայ, և որքանո՞վ չենք ձեռք բերի մարդկութեան ատելութիւնը: Բոլոր պետութիւնների, ժողովուրդների, կուսակցութիւնների ու շարժումների դիւանագէտները կամ արտաքին հարցերով զբաղւողները ժողովուրդների ու կուսակցութիւնների այնքան չնչին տոկոսն են կազմում, որ նրանց «անբարոյականութիւնը» ոչ մի կերպ չի կարող ազդել ժողովրդի վրայ:

Մեր պայմաններում խօսքը 100-150 հոգու մասին է, որոնք իրենց արտաքին յարաբերութիւններում պէտք է ղեկավարւեն քաղաքական, այլ ոչ թէ բարոյական սկզբունքներով: Եւ ես սրանց համար եմ գրել իմ յօդւածս: Սրանք են որ պիտի մտնեն բոլոր ծակերը ու օգտւեն բոլոր հնարաւորութիւններից՝ հայ ժողովրդի շահերը պաշտպանելու հարցում:

Այդպէս են վարւում բոլորը, այդպէս պիտի վարւենք մենք ու հէնց այդպէս էլ վարւում ենք:

Ուրեմն ինչո՞ւ այսօր գրել այն մասին, ինչը միշտ եղել է ու շարունակում է մնալ անփոփոխ: Այս հարցին պատասխանելուց առաջ, ուզում եմ իմ սիրելի

ընդդիմախօսների ուշադրութեան յանձնել Հայաստանի հայութեան փորձառութիւնը։

Քսան տարի առաջ, Սարդարապատի, Եղեռնի ու Վարդան Մամիկոնեանի յուշարձանները երբեք չէին կանգնի Հայաստանում, եթէ չլինէին – իրենց սկզբունքների հակառակ – ամէն օր կեցցէ՛ Լենինը ու Խորհրդային իշխանութիւնը բացագանչողները, յանձինս Հրաչեայ Քոչարի, որը նոյնիսկ գրեց **«Մեծ Տան զաւակները»** դատարկ գիրքը։ Հայ ժողովուրդը այսօր երախտապարտ է նրան, որովհետեւ իր ղերասանութեամբ նա կարողացաւ վերականգնել մեր ազգային արժէքները։

Իսկ կէս դար առաջ Հայաստանում «մաքրագործում» էին Չարենցին ու Բակունցին, որովհետեւ նրանք անկեղծօրէն ատում էին Ստալինին և անկեղծօրէն ու սկզբունքայնօրէն նրան ոչ մէկ ստեղծագործութիւն չէին նուիրում։ Իսկ մենք էլ այնքան ազնիւ էինք, որ հաւատում էինք, թէ նրանք ժողովրդի թշնամիներ են։

Իսկ եօթանասուն տարի առաջ, մեզ մորթում էին Թուրքիայում, որովհետեւ շատ անկեղծօրէն թուրքին թշնամի, իսկ ռուսին բարեկամ էինք նկատում։

Իսկ արդէն մեր օրերին, երբ հրեաները սկսեցին այսպէս կոչուած մարդու իրաւունքների պաշտպանութեան «արշաւ»ը, Հայաստանի սկզբունքային ու գաղափարապաշտ երիտասարդութիւնը ազնուօրէն նետուեց այդ ճակատը։ Բայց երբ ցրուեց առաջին ոգեւորութիւնների ծուխը, պարզուեց որ այդ շարժումը ոչ թէ մարդու իրաւունքների, այլ հրեաների պաշտպանութեան շարժումն էր։ Ուշ էր՝ հրապարակի վրայ մնացել էին Ստեփան Զատիկեանի խմբի անդամների դիակները և բանտերում տառապող հայ երիտասարդները։ Իսկ հրեայ այլախոհներին արտասահմանում դիմաւորում էին Ռեյգանները ու Միթերանները։

Մի քիչ ծանր չի՞ նստում մեր վրայ մեր ազնուութիւնը և սկզբունքայնութիւնը։ Այս մասին պէտք էլ չէր խօսել հրապարակաւ, բայց ստիպւած եմ խօսելու, որովհետեւ մենք յստակութիւնը սիրող ժողովուրդ ենք։

Սովորաբար, քաղաքական ասպարէզ դուրս եկած ժողովուրդները ու պետութիւնները ընտրում են իրենց արտաքին յարաբերութիւնների մարմինները ու այլեւս չեն խառնւում նրանց գործերի մէջ, բացի յատուկ դէպքերից։ Նրանք վստահում են իրենց ներկայացուցիչներին։ Այդ վստահութիւնը ես անւանում եմ քաղաքական հասունութիւն, որը անհրաժեշտ է դիւանագէտների աշխատանքը հեշտացնելու համար։

Հաւանաբար, նրանցից՝ որ մենք երկար ժամանակ քաղաքական գործունէութեան ասպարէզից դուրս էինք մնացել, մենք մի քիչ մոռացութեան էինք

մատնել քաղաքական սկզբունքները: Սա չի կարող նկատուել որպէս ազգային նկարագիր, ինչպէս ոմանք ջանում են ներկայացնել:

60 տարի առաջ մեր Խատիսեանները, Դրոները ու Տէրտէրեանները Չիչերինների ու Քարաբեկիր Փաշաների հետ շատ խորամանկ ու լուրջ բանակցութիւններ էին վարում ու նրանց մտքով չէր անցնում, որ այդ բանակցութիւնների ժամանակ նրանք պէտք է հաշւի առնեն, օրինակ, միջազգային բանւորութեան շահերը: Ուրեմն՝ ինչո՞ւ ենք մենք ուզում մեր այսօրւայ ղեկավարներին զրկել այդ ազատութիւններից, ճնշելով նրանց վրայ գաղափարախօսութեամբ ու սկզբունքայնութեամբ, որոնք մեր ներքին արժէքներն են:

Ահա թէ ինչու ես ուզեցի հրապարակով խօսել այս մասին: Ես ուզեցի բացատրել մեր երիտասարդութեանը, որ քաղաքական գործունէութիւնը իր սկզբունքները ունի, որոնց հետ եթէ մենք հաշւի չենստենք, մենք կը մնանք գուցէ շատ աւելի գեղեցիկ ու գրաւիչ մակարդակի վրայ, բայց ոչ այն բարձրունքի վրայ, որտեղ քաղաքական հարցեր են լուծւում:

1986

ԴԱՐՁԵԱԼ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՄԱՍԻՆ

Է. Յովհաննիսեան

Վերջերս գրեցի մի յօդուած, որտեղ փորձեցի ցոյց տալ, որ ազգային կեանքի համար ամենակարեւոր պայմանը հանդիսացող Անկախութիւնը ձեռք է բերւում, երբ կան համապատասխան քաղաքական պայմաններ, որոնց բացակայութեան դէպքում անկախութեան համար պայքարը կարող է նոյնիսկ վնասակար լինել: Այսինքն՝ ես ուզեցի ասել, որ անկախութեան բացարձակ արժէքը, քաղաքական արժէք դարձնելու համար, անհրաժեշտ են համապատասխան պայմաններ:

Սակայն, ինձ ոմանք սխալ հասկացան և մեղադրեցին, թէ ես անկախութեան հակառակորդ եմ: Աւելին, ինձ ասացին որ այն, ինչ դարեր շարունակ ջանում են անել **ուրիշները**, խլել հայերից անկախութեան ձգտումը, այժմ անում եմ ես: Մեղադրանքը բաւականին ծանր է, ուստի ստիպւած եմ կրկին անդրադառնալ նախորդ յօդուածում բարձրացւած հարցերին:

Անկախութիւնը այն միակ վիճակն է, որի ներսում կենդանին, մարդը, ազգը կամ պետութիւնը կարող է գոյատեւել՝ սեփական արժէքներով և ձգտումներով ղեկավարւելով, այսինքն կարող է ապրել իր բնական էութեան համաձայն: Այս մասին վէճ չի կարող լինել և այս մասին մարդիկ չեն վիճել հազարամեակների ընթացքում, նոյնիսկ այն ժամանակ, երբ ստրկատիրութիւնը օրինականացւած էր ամենաքաղաքակիրթ երկրներում:

Աւելորդ եմ համարում անկախութեան առաւելութիւնների թւարկումը և անկախութեան հասկացութեան արժեւորումը կատարել, քանզի անկախութիւնը պատկանում է այն բացարձակ ու բնական հասարակական արժէքներին, որոնց դէմ չէին համարձակւում արտայայտւել նոյնիսկ աշխարհի ամենադաժան բռնակալները: Սակայն բոլոր բացարձակ արժէքների նման անկախութիւնն էլ ըմբռնելու և հարազատ գաղափար դարձնելու համար համապատասխան կրթութիւն է պահանջւում:

Ազնւութիւնը, արդարութիւնը, սէրը, զոհաբերութիւնը և մնացած բոլոր արժէքները կրթութիւն են պահանջում: Եւ եթէ մեր ժողովուրդը անկախութեան արժէքը ըմբռնելու կրթութիւնը չունի, փառք նրանց, ովքեր այդ կրթութիւնը տալիս են մեր ժողովրդին: Եթէ այժմ, կրկին խորհրդային ոստիկանութեան ձեռքը ընկած Պարոյր Հայրիկեանը, իր «Ազգային Ինքնավարութիւն» շարժման ճամբով փորձում է քարոզել անկախութեան գաղափարը Հայաստանում ապրող մեր ժողովրդին, որը գուցէ տասնամեակների հակառակ քարոզների

ազդեցութեան տակ կորցրել է անկախութեանը ձգտելու բնական բնազդը, ապա՝ Պարոյր Հայրիկեանի առջեւ կարելի է միայն խոնարհուել։

Բայց անկախութիւնը ոչ միայն բացարձակ հասարակական արժէք է, այլ նաեւ քաղաքական նպատակ՝ ազգային-ազատագրական բոլոր շարժումների համար։ Իսկ քաղաքական նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է ունենալ քաղաքական միջոցներ, քաղաքական դաշնակիցներ, պայքարելու իրական ուժ և առնւազն յոյս, որ թափւած արիւնդ զուր չի անցնելու, որ այդ արիւնը թափւելու է մեր ժողովրդի քաղաքական ճակատագիրը շարժող անիւի վրայ։

Երբ բացակայում են այդ քաղաքական միջոցները, քաղաքական պայմանները և վերանշւած յոյսը, անկախութիւն գաղափարի քաղաքականացումը, այսինքն՝ այդ նպատակի համար որեւէ շարժում կազմակերպելը, կարող է վնասակար լինել, առնւազն այն պարզ պատճառով, որ թափւած արիւնը ապարդիւն է անցնելու։ Հայաստանի անկախութեան համար այսօր նպաստաւոր ոչ մէկ պայման գոյութիւն չունի, ուստի այս ուղղութեամբ կազմակերպւող բոլոր շարժումները օգտակար չեն կարող լինել։ Միայն այսքանը ես ուզեցի ասել, որը արտասահմանցու համար այնքան պարզ է, որ այս մասին խօսելը աւելորդ պիտի լինէր։

Հայաստանի ներսում կան բազմաթիւ երիտասարդներ, որոնք ազնիւ են, ազգանւէր ու պատրաստ՝ զոհաբերութիւնների, և որոնք ուզում են նւիրել սեփական կեանքը հայ ժողովուրդին։ Բայց **«ինչ անել»** հարցի պատասխանը չունեն։ Նրանք հաւատում են, որ «ազատասէր» Եւրոպայում և Ամերիկայում կան բազմաթիւ միջազգային հաստատութիւններ, որոնք երազում են ժողովուրդների, այդ թւում նաեւ հայ ժողովրդի անկախութեան մասին։ Որ սրանք մեր բնական դաշնակիցներն են։ Որ նրանց օգնութեամբ Հայաստանում կարելի է կազմակերպել հանրաքւէներ և ազգային իրաւունքների պաշտպանութիւն։ Նրանք չգիտեն, որ նման կազմակերպութիւններ չկան, որ ոչ մէկի հետ, դժբախտաբար, հայ ժողովուրդը յոյսեր չի կարող կապել։ Հայ ժողովուրդը, ինչպէս նաեւ աշխարհի բոլոր ժողովուրդները կարող են միայն սեփական ուժերի վրայ յենւել, իսկ այսօր անկախութիւն ձեռք բերելը մեր ուժերից վեր է։

Արդ, եթէ մենք վերոյիշեալ հարցերի մասին բարձրաձայն խօսենք, նշանակո՞ւմ է դա արդեօք, որ մենք հրաժարւում ենք անկախութեան գաղափարից։

Ոչ, չի նշանակում։

Դա միայն նշանակում է, որ անկախութեան համար պայքարը ունի տարբեր փուլեր և որ ամէն մի յաջորդ փուլը կարող է ձեւակերպել ու լուծել նախորդ հանգրւանը լուծելուց յետոյ։

Եւ եթէ Հայաստանի երիտասարդութիւնը և մտաւորականութիւնը ուզում են պատրաստուել անկախութեան, ապա Սփիւռքի համապատասխան ուժերի և համապատասխան ձգտումների հետ միասնաբար պէտք է կատարեն այդ նախապատրաստական աշխատանքները։

Անկախութիւնը բացարձակ արժէք է, բայց այդ արժէքին հասնելու համար պէտք է ազգովին նախապատրաստուել։

1988

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՐԿՐՈՒՄ

Է. Յովհաննիսեան

Հ.Յ.Դաշնակցութիւնը մուտք չգործեց Հայաստան։ Հայաստանի Հանրապետութիւնը ստեղծուեց Դաշնակցութեան ձեռքով, ուստի անկախ Հայաստանը ծնեց՝ Դաշնակցութիւնը իր մէջ պարունակելով։ Դաշնակցութիւնը դուրս եկաւ Հայաստանից 1933 թականին՝ 12րդ Ընդհանուր Ժողովի որոշմամբ, սակայն դուրս եկաւ որպէս կազմակերպութիւն, բայց երբեք որպէս գաղափար ու ազգային արժէք։ 1990 թականին, իր ծննդեան 100 ամեակին, Դաշնակցութիւնը կրկին վերադարձաւ երկիր՝ որպէս կազմակերպութիւն։ Ի՞նչ փուլերից անցաւ Հ.Յ. Դաշնակցութիւն կուսակցութեան նկատմամբ խորհրդային իշխանութեանց որդեգրած քաղաքականութիւնը այս երկար ու դժւարին ճանապարհի վրայ։ Այս մասին կարելի էր գրել հատորներ ու հաւանաբար, այդ հատորները գրւում են։ Այստեղ մենք ուզում ենք սահմանափակւել միայն պաշտօնական փաստաթղթերով, որոնք լոյս են սփռում Դաշնակցութեան նկատմամբ խորհրդային իշխանութիւնների պաշտօնական դիրքորոշման վրայ։

Խորհրդային Միութիւնում ռուսերէն լեզւով լոյս են տեսել երեք մեծ Հանրագիտարաններ, որոնց մէջ անձերի, կազմակերպութիւնների և երեւոյթների գնահատականները տրւած են պետական դիրքորոշման լոյսի տակ, այսինքն՝ ներկայացնում են Կոմունիստական կուսակցութեան **պաշտօնական** տեսակէտը։ Նախ թարգմանաբար ռուսերէնից ներկայացնենք այդ տեսակէտները։

1930 թականին հրատարակւած Հանրագիտարանում (նիւթերը պատրաստւում էին 1927 թ.) ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ բառի տակ տրւած է հետեւեալ բացատրութիւնը.

«Հայ ազգայնական կուսակցութիւն, որը կազմւեց Անդրկովկասում 90ական թականների սկզբին։ Պաշտօնական անւանումը՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն Կուսակցութիւն։ Դաշնակցութիւնը, որը ամբողջ հայ ազգը ներկայացնելու յաւակնութիւնը ունէր, առարկայօրէն արտացոլում էր հայ առեւտրական բուրժուազիայի ձգտումները, որոնք պայքարում էին ինքնուրոյն դիրքեր գրաւելու համար։ Այն փաստը, որ Դաշնակցութիւնը հանդէս էր գալիս Հայաստանի ազգային ազատագրական պայքար մղողի դերում, հնարաւորութիւն տւեց նրան դառնալ հայ մանր-բուրժուազիայի զգալի մասի գաղափարախօսը։ Մինչեւ 1903 թականը կուսակցութիւնը գործում էր բացառաբար Թուրքիայում։ Հիմնական խնդիրը՝ Թուրքիայի լծից հայ ժողովրդի ազատագրումն էր և Թուր-

քիայի Արեւելեան շրջաններից, որտեղ բնակչութեան կէսը հայեր էին, ինքնավար պետական միաւորի ստեղծումը: Ենթադրւում էր, որ հետագայում Թուրքահայաստանին կը միանայ Անդրկովկասի Հայաստանը, որից յետոյ կը վերականգնւի հայկական պետականութիւնը:

«Դաշնակցութեան առաջին ծրագիրը, որը ընդունւեց 1894 թականին, ներկայացնում էր գռեհիկ մարքսիզմի, լիբերալիզմի, ժողովրդականութեան և մանր-բուրժուական ազգայնականութեան խառնուրդ: Ծրագրի կենտրոնումն էր Թուրքահայաստանի ազատագրումը, որի համար Դաշնակցութիւնը փորձում էր յենւել այն ուժերի վրայ, որոնք իր կարծիքով կարող էին նպաստել Հայկական Հարցի լուծմանը: Իր պայքարում Դաշնակցութիւնը փորձում էր յենւել՝

«1.- Եւրոպայի, առաջին հերթին Անգլիայի և Ռուսաստանի դիւանագէտների վրայ:

«2.- Եւրոպայի յեղափոխական և սոցիալիստական շարժումների վրայ:

«3.- Ռուսաստանի յեղափոխական շարժման վրայ:

«4.- Թուրքիայի ընդդիմադիր և յեղափոխական շարժումների վրայ:

«Այստեղից էլ բխում էր Դաշնակցութեան հակասական քաղաքականութիւնը: Մէկ կողմից նա կապեր էր հաստատում ու համաձայնութիւններ կնքում Անգլիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Թուրքիայի և այլ կառավարութիւնների գործակալների հետ, միւս կողմից նա կապւում էր Եւրոպայի ու Ռուսաստանի սոցիալիստական կուսակցութիւնների հետ, մասնակցում էր Ռուսաստանի, Թուրքիայի, Պարսկաստանի յեղափոխական շարժումներին և 1907 թականին նա նոյնիսկ մտաւ 2րդ ինտերնացիոնալի կազմի մէջ: Դաշնակցութիւնը ելնում էր այն գաղափարից, թէ կապիտալիստական Եւրոպայի «Հասարակական Կարծիքը» կը լուծի Հայկական Հարցը այնքան արագ, որքան արագ հայերը իրենց ելոյթներով մէջտեղ կը հանեն այդ հարցը: Դաշնակցութիւնը, մէկ ուրիշ «Հնչակ» ազգայնական կուսակցութեան հետ, 1894-96 թականներին սկսում է վճռական պարտիզանական կռիւներ թուրքական կառավարութեան դէմ: 1896 թականին Դաշնակցութիւնը գրաւեց Իստամբուլի Բանք Օթոմանը: Թուրքիայի ոստիկանութիւնը ձերբակալեց ահաբեկիչներին, սակայն գործին միջամտեցին դիւանագիտական հաստատութիւնները՝ Ռուսաստանի դեսպանատան ղեկավարութեամբ, և դաշնակցականներին արտաքսեցին արտասահման: Դաշնակցութեան պարտիզանական կռիւները իսկապէս որ գրաւեցին Եւրոպայի հասարակական կարծիքը: Դիւանագէտները բազմիցս ճնշումներ գործադրեցին թուրքական կառավարութեան վրայ, սակայն վերջինս կրկնում էր բարեփոխութիւններ կատարելու իր խոստումները, ոչնչացնելով միաժամանակ Թուրքահայաստանում ապրող տասնեակ հազարաւոր խաղաղ հայ գիւղացիներ:

«Սուլթանի իշխանութեան համար Դաշնակցութեան արկածախնդրական քաղաքականութիւնը յարմար առիթ էր՝ հայերին ոչնչացնելու քաղաքականութիւն վարելու համար, սակայն ինքը, այդ քաղաքականութիւնը, անշուշտ, բխում էր թուրքական բռնութեան էութիւնից: Հայերը հալածելու էին նաեւ առանց Դաշնակցութեան պարտիզանական շարժումների: Անկասկած եւրոպական դիւանագիտութիւնը պատրաստ էր Հայկական Հարցը օգտագործելու՝ Թուրքիայի կառավարութեան վրայ ճնշում գործադրելու համար, բայց նա երբեք հետաքրքրուած չէր Հայկական Հարցի լուծմամբ և հայկական պետականութեան ստեղծմամբ: Առաւել հեռու էր այդ մտադրութիւնից Ռուսաստանը: Հայկական շարժումը պէտք էր ցարիզմին՝ Թուրքիան թուլացնելու և Իստամբուլը, Նեղուցները և հէնց Հայաստանը նուաճելու համար: Այս սահմաններում Դաշնակցութեան քաղաքականութիւնը ընդունելի էր ցարիզմի համար, բայց մեծ ու անկախ Հայաստան ստեղծելու ծրագրերը նա վճռականօրէն մերժում էր: Ռուսաստանը Դաշնակցութեան քաղաքականութիւնը դիտում էր որպէս հայկական անջատողականութեան արտայայտութիւն և վճռականօրէն պայքարում էր նրա դէմ:

«Դեռեւս 80 թւականի կէսերին Անդրկովկասեան Հայաստանում կառավարութիւնը արշաւ սկսեց հայկական դպրոցների և մշակութային բարեգործական հաստատութիւնների դէմ: 90ական թւականներին փակուեցին հարիւրաւոր հայկական դպրոցներ ու այլ հաստատութիւններ: Հարց ղրուեց հայ եկեղեցու կալւածները և ինչքերը բռնագրաւելու մասին: 1903 թւականի յունիս ամսին կառավարութիւնը նոյնիսկ համապատասխան օրէնք հրատարակեց: Այդ օրէնքը սպառնում էր խլել «հայ ազատագրական պայքարի» հիմնական նիւթական հիմքը: Դրա համար էլ Դաշնակցութիւնը ընդդիմադիր դիրք է բռնում կառավարութեան միջոցառումների նկատմամբ և ժամանակաւոր կարգով իր գործունէութեան կենտրոնը Թուրքիայից տեղափոխում է Անդրկովկաս: Այդ ժամանակ Ռուսաստանում սկսած հզօր ազատագրական պայքարը լայն հեռանկարներ էր բացում հայ ազգային քաղաքականութեան համար: Արդիւնքը եղաւ այն, որ Դաշնակցութիւնը թեքուեց դէպի «Ձախ» և փորձեց մտնել ժողովրդավարական յեղափոխութեան դրօշի տակ: 1904 թւականին ընդունուած ծրագրի նախագծում ասւած էր.- «*Հ.Յ.Դաշնակցութիւնը կանգնելու է աշխատաւոր մեծամասնութեան շահերի պաշտպանութեան դիրքերի վրայ և դաստիարակելու է աշխատաւորներին, սոցիալիստական գաղափարների ոգով, պատրաստելով նրանց մեծ քաղաքական և հասարակական պայքարի*»: Դաշնակցութիւնը իր յենակէտը համարում էր հողից զուրկ գիւղացուն և այն գիւղացիութիւնը, որը գործում էր համայնքային սեփականութեան հիման վրայ: Նա յենւում էր մանր արհեստաւորների, գործարանների ու այլ տնտեսութիւնների բանւորների

վրայ։ Դաշնակցութեան ծրագրի նախագիծը հիմնականում Էս-Էռների ծրագրի բեկորն էր։

«1902 թւականին Դաշնակցութիւնից դուրս եկաւ մի խումբ, որը ստեղծեց «Հայ Սոցիալ-Դեմոկրատական միութիւն»։ Այդ կազմակերպութիւնը հետագայում մտաւ Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանւորական կուսակցութեան կազմի մէջ։ 1905 թւականին Դաշնակցութիւնից անջատւեց մի մեծ խումբ, որը որդեգրեց կուսակցութեան հին անունը։ Այդ խումբը բացասական վերաբերմունք ունէր կուսակցութեան սոցիալիստական ծրագրի նկատմամբ և համարում էր, որ Դաշնակցութիւնը պէտք է սահմանափակուի Թուրքահայաստանի «ազատագրմամբ»։ 1905-7 թւականների յեղափոխութեան ժամանակ՝ Դաշնակցութիւնը պայքարում էր ցարիզմի և ոչ հայ ազգութիւնների, առաջին հերթին մահմեդականների դէմ։ Այս վերջինը ձեռք էր տալիս Ցարիզմին, որը շահագրգռած էր զանգւածների ուշադրութիւնը, ճորտատիրութիւնը և ցարիզմը տապալելու խնդիրներից շեղելու և ազգամիջեան բախումների վրայ կենտրոնացնելու մէջ։ Ցարիզմի դէմ պայքարի մէջ Դաշնակցութիւնը հանդէս էր գալիս ոչ որպէս զանգւածներ ղեկավարող կուսակցութիւն, այլ որպէս խառվարար ահաբեկչական խումբ։ Դաշնակցութիւնը ընդօրինակում էր ռուս Էս-Էռներին և բաւականին լայն թափով՝ ծաւալել էր ահաբեկչութիւնը՝ ցարական իշխանութեան մանր գործակալների դէմ։ Այս նպատակի համար։ Դաշնակցութիւնը ունէր յատուկ մարտական խմբեր (զինւորներ)։

«1907 թւականին, Շտուտգարդի սոցիալիստական համագումարին, Դաշնակցութիւնը ներկայացրեց իր կողմից կատարած ահաբեկչութիւնների մի ամբողջ ցուցակ։ Սակայն ահաբեկչութիւնը չէր խանգարում Դաշնակցութեանը մի շարք դէպքերում գաղտնի համաձայնութիւններ կնքել ցարական կառավարութեան հետ և համագործակցել նրա գործակալների հետ Թուրքիայի դէմ պայքար մղելու հարցում, ճիշտ այնպէս՝ ինչպէս թուրքերը յենւում էին ցարական իշխանութեան՝ հայերի դէմ պայքարելու համար։ Հայ բանւորների մէկ մասը Բաքւում և Թիֆլիսում, որ գտնւում էր մանր-բուրժուական ազգայնականութեան ազդեցութեան տակ, գնում էր Դաշնակցութեան յետեւից, ինչը ստեղծում էր հակադրութիւն հայ և ուրիշ ազգերի բանւոր դասակարգերի միջեւ։ Բացի դրանից՝ Դաշնակցութիւնը աշխատաւորների շահերը կապում էր հայ բուրժուազիայի շահերի հետ։ Քաղաքական և արհմիութենական պայքարի գծով, Դաշնակցութիւնը վարում էր ազգային բացառման քաղաքականութիւն։

«Դաշնակցութիւնը ստեղծում էր ազգային արհմիութիւններ ու կոպերատիւներ և տարբեր ճանապարհներով քայքայում էր միասնական բանւորական ճակատը։ Երբ բանւորները տնտեսական պայքար էին մղում ռուս և թուրք բուրժուազիայի դէմ, Դաշնակցութիւնը սիրով մասնակցում էր այդ պայքարին, բայց

երբ բանւորները պայքարում էին հայ դրամատէրերի դէմ, Դաշնակցութիւնը դաւաճանում էր բանւորներին: Եւ եթէ նման մի կուսակցութիւն ընդունւում է 2րդ Ինտերնացիոնալի կազմի մէջ, դա խօսում է ոչ Դաշնակցութեան սոցիալիստականութեան, այլ ինտերնացիոնալի սոցիալիստական չլինելու մասին: Դաշնակցութիւնը Ինտերնացիոնալի մէջ մտաւ 1905 թւականների յեղափոխական շարժումների ազդեցութեան տակ: 1907 թւականին Դաշնակցութիւնը նոյնիսկ պաշտօնապէս ընդունեց սոցիալիստական ծրագիր: Իր պահանջները Դաշնակցութիւնը ձեւակերպեց առանձին-առանձին Թուրքահայաստանի և Անդրկովկասի Հայաստանի համար: Թուրքահայաստանի համար ծրագիրը պահանջում էր՝ «քաղաքական և տնտեսական ազատութիւններ, տեղական ինքնուրոյնութեան և Թուրքիայի դաշնակցային կառոյցի հիման վրայ»: Անդրկովկասի համար հիմնական պահանջը հետեւեալն էր.- «Անդրկովկասը, որպէս ժողովրդավարական հանրապետութիւն, մտնում է Դաշնակցային Ռուսաստանի կազմի մէջ»: Դաշնակցութեան ծրագիրը տնտեսական բաժնում ներկայացնում էր հետեւեալ պահանջները. Հողը դուրս է բերւում ապրանքափոխանակումից և բաժանւում է հաւասար աշխատանքի սկզբունքով: Կազմակերպւում են արտադրող և սպառող կոպերատիւներ:

«Դաշնակցութիւնը մերժեց ճանաչել առաջին պետական Դուման: Երկրորդ - Դումայի մէջ նա մտաւ Էս-Էռների Ֆրակցիայի կազմի մէջ: Չնայած «Զախակողմեան» ծրագրի, երբ վրայ հասաւ կալւածատէրերի իշխանութիւնը, Դաշնակցութիւնը վերադարձաւ Հայկական Հարցը Թուրքիայում լուծելու նախկին ծրագրին, այսինքն՝ Եւրոպայի և Ռուսաստանի դիւանագիտութեան օգնութեամբ: 1912 թւականին նա դիմեց ցարական կառավարութեանը, Թուրքիայում ապրող հայ ժողովրդին իր հովանաւորութեան տակ առնելու խնդրանքով, քանզի Դաշնակցութեան որոշ աջակցութեամբ իշխանութեան գլուխ անցած երիտթուրքերը շարունակում էին ջարդարար Սուլթանի քաղաքականութիւնը: Դաշնակցութեան ներկայացուցիչները ուղղակի կապերի մէջ մտան Իստամբուլի ռուսական դեսպան Գիրսի հետ և լայն քաղաքական արշաւ սկսեցին Եւրոպայում: Բայց կայսերապաշտական պատերազմը խանգարեց այդ ծրագրերի իրականացումը: Վախենալով, որ գերմանա-թուրքական յաղթանակից յետոյ հայերը ոչ մէկ ինքնուրոյնութիւն չեն ստանայ, Դաշնակցութիւնը ամբողջովին անցաւ Անտանտայի կողմը: Իսկ երբ Թուրքիան մտաւ պատերազմի մէջ, Դաշնակցութեան կողմից ղեկավարւած Հայ Ազգային Բիւրոն դիմեց Նիկոլայ Բ.ին ստորագրարշ նամակով, որտեղ ասւած էր.- «Մեր սրտերը լի են ջերմ ցանկութեամբ, որ մեր սիրելի հայրենիքի ճակատագրին ընկած այս փորձութիւնը աւարտուի ռուս զէնքի՝ նոր փառքով և Ռուսաստանը կատարի իր պատմական առաքելութիւնը Արեւելքում: Թող ազատօրէն ծածանուի Բոսֆորի և Դարդանէլների վրայ Ռու-

սաստանի դրօշը: Թող ձեր կամքով, Ձերդ Գերազանցութիւն, ազատութիւն ստանան Թուրքիայի լծի տակ մնացած ժողովուրդները»:

«Դաշնակցութեան մարտական խմբերը թուրքական ճակատում քայլում էին ռուսական զօրքերի առջեւից: Փետրուարեան յեղափոխութիւնը ամրապնդեց Դաշնակցութեան այն յոյսը, որ Ռուսաստանի օգնութեամբ կարելի է հասնել իրենց նպատակներին: Դաշնակցութիւնը իր բոլոր հաշիւները կապում էր Ռուսաստանի պետականութեան հետ, ուստի նա կողմնակից էր Ռուսաստանի մեծապետականութեան և դէմ էր անիշխանութեան: Դաշնակցականները պայքարում էին ոչ միայն բոլշեւիկների, այլեւ գերեալ ազգերի ազատագրական պայքարների դէմ: Հոկտեմբերեան յեղափոխութիւնից յետոյ Դաշնակցութեան դիրքորոշումը խիստ փոխուեց: Նրանք միացեալ բուրժուական Ռուսաստանի կողմնակիցներ էին, բայց հակառակ էին սոցիալիստական Ռուսաստանի: Դրա համար էլ պետութեան ջատագովներից նրանք վերածուեցին կատաղի հակառակորդների: Դաշնակցականները, վրացի մենշեւիկների ու թուրք մուսաւաթականների հետ, ստեղծեցին Անդրկովկասի Սէյմը, որը վերջնականօրէն հակադրուեց բոլշեւիկեան Ռուսաստանին: Սակայն Անդրկովկասը դեռեւս չէր հռչակել ինքնուրոյն պետութիւն: Միայն այն բանից յետոյ, երբ պարզ դարձաւ, որ խորհրդային իշխանութիւնը ժամանակաւոր երեւոյթ չէ, Անդրկովկասը անջատուեց Ռուսաստանից: Ձրկւելով Ռուսաստանի ժողովրդավարական պաշտպանութիւնից՝ Անդրկովկասի ճակատագրի տնօրինողները սկսեցին որոնել նոր հովանաւորիչներ: Վրաստանի մենշեւիկները դիմեցին գերմանական զօրքերի օգնութեանը, մուսաւաթականները իրենց փրկութիւնը որոնում էին Թուրքիայում, Դաշնակցութիւնը մնաց հաւատարիմ Անտանտային, որի հետ կապեց Հայկական Հարցի լուծումը:

«1918 թւականի յուլիս ամսին Դաշնակցութիւնը Բաքւի Խորհրդում հարց դրեց Խորհրդային Իշխանութիւնը տապալելու և Պարսկաստանից անգլիական զօրքեր հրաւիրելու մասին: Դաշնակցութեան Էս-Էռների և մենշեւիկների բլոկը մեծամասնութիւն հաւաքեց Խորհրդարանում: Անդրկովկասում խորհրդային իշխանութիւնը տապալուեց: Բաքւի պրոլետարիատի առաջնորդներ՝ Շահումեանը, Ջապարիձէն և ուրիշներ դաւաճանօրէն սպանուեցին Կասպից ծովի ափերում: Գերմանա-թուրքական բլոկի պարտութիւնից յետոյ անգլիացիները գրաւեցին ամբողջ Անդրկովկասը և Վրաստանի, Հայաստանի ու Ադրբեջանի «*անկախ*» կառավարութիւնները ենթարկուեցին անգլիական կայսերապաշտական բռնութեանը: Դաշնակցութիւնը շարունակում էր մնալ կախուած «*Մեծ Հայաստան*» ստեղծելու գաղափարից և մտադիր էր այդ «*անկախ*» Հայաստանի մանդատը յանձնել Ամերիկային: Նախագահ Վիլսոնը՝ տուեց իր համաձայնութիւնը, սակայն ամերիկեան Սենատը, Դաշնակցութեան համար դժբախտա-

բար, մերժեց մանդատը: Դրա հետ միասին Դաշնակցութիւնը շարունակում էր երազել «Միացեալ Հայաստան»ի ստեղծման մասին:

«1919 թականին Դաշնակցութիւնը գաղտնի համաձայնութիւն կնքեց Դենիկինի հետ: Սակայն, Քեմալական շարժումը մեծ վտանգ էր ներկայացնում Դաշնակցութեան ծրագրերի համար: Փաստօրէն քեմալականները հայերի նկատմամբ շարունակում էին սուլթանների և երիտթուրքերի քաղաքականութիւնը: Իսկ Դաշնակցութիւնը վարում էր Անտանտայի քաղաքականութիւնը, որը ուղղուած էր քեմալականների դէմ: 1920 թականի աշնանը Դաշնակցութիւնը հայ-թուրքական պատերազմ գրգռեց, որը աւարտուեց Դաշնակցութեան ջախջախիչ պարտութեամբ: Այս պահից Դաշնակցութեան դարաշրջանը կարելի է աւարտուած համարել: Հայաստանի ժողովրդի լայն զանգուածները, որոնք երկար ժամանակ զնում էին Դաշնակցութեան յետեւից, որոնք դեռեւս 1919 թականին Դաշնակցութեանը տուեցին իրենց ձայների 90 տոկոսը, արդէն 20 թականին սկսում են դուրս գալ Դաշնակցութեան ազդեցութեան տակից:

«1920 թականի մայիս ամսին Ալեքսանդրապոլի բանւորները և զինւորները ապստամբութիւն բարձրացրին Դաշնակցական կառավարութեան դէմ, որը մեծ դժւարութեամբ յաջողուեց ճնշել: 1920 թականի դեկտեմբեր 1ին Հայաստանում հաստատուեց Խորհրդային Իշխանութիւն: 1921 թականի փետրուար ամսին Դաշնակցութիւնը փորձեց վերադարձնել իշխանութիւնը ապստամբութեան ճամբով, սակայն այդ փորձը տապալուեց: Այդ պահից Դաշնակցութիւնը իր գործունէութեան կենտրոնը փոխադրում է արտասահման, դառնալով կայսերապաշտութեան գործակալ: Նա փորձում էր տապալել բոլշեւիզմը և վերականգնել «*Անկախ Հայաստանը*»: Վերջին ժամանակներումս Դաշնակցութիւնը՝ հակառակ պանթուրքիզմի և բոլշեւիզմի առաջ է քաշում պանիրանական գաղափարը, որի համաձայն քրդերը, հայերը և նոյնիսկ վրացիները պէտք է միութիւն կազմեն Պարսկաստանի հովանաւորութեան տակ:

«Դաշնակցութեան ներսում միշտ տեղի էին ունենում պառակտումներ ու անջատումներ: Դեռեւս 1905 թականից յետոյ կուսակցութեան մէջ ծագեց ուժեղ ձախակողմեան թեւ, որը ընդդիմադիր ուժ դարձաւ մանր-բուրժուական սոցիալիզմի և մոլի ազգայնականութեան դէմ: Ձախակողմեան ընդդիմադրութիւն գոյութիւն ունէր նաեւ կայսերապաշտական պատերազմի ժամանակ: Այդ խմբերը փետրուարեան յեղափոխութիւնից յետոյ կազմեցին «*Ձախ դաշնակցականների կազմակերպութիւն*»: 1922-23 թականներին տարագրութեան մէջ ծագեց կուսակցութիւնը վերացնելու շարժում, որը ղեկավարւում էր Քաջազնունու և ուրիշների կողմից: Սա բոլշեւիզմի վերածնունդի հայկական տարատեսակն էր: Հայաստանում տեղի ունեցող սոցիալիստական կառոյցը, արմատախիլ է

անում դրամատիրութիւնը և մահացու հարուած է հասցնում Դաշնակցութեանը»:

Եթէ հաշւի չառնենք այն մի քանի կծու արտայայտութիւնները Դաշնակցութեան վերաբերեալ, որոնք բաւականին ձեւական բնոյթ են կրում, ապա կարելի է ասել, որ Դաշնակցութեան մասին շատ բան է ասւած և ընթերցողը կարող է ճիշտ պատկերացում կազմել այդ կուսակցութեան մասին: Աւելին, ակնարկի մէջ նշւում են մի քանի հետաքրքրական երեւոյթներ, որոնք բացակայում են խորհրդային ուրիշ աղբիւրներում: Օրինակ նշւում է, որ հայ ժողովրդի 90 տոկոսը իրենց ձայները տւեցին Դաշնակցութեանը, որ Դաշնակցութիւնը 2րդ ինտերնացիոնալի անդամ էր, Հայաստանի խորհրդայնացումը տեղի է ունեցել 1920 թւականի Դեկտեմբերի Մէկին, այլ ոչ թէ Նոյեմբերի 29ին: Այսպէս թէ այնպէս, խորհրդային առաջին Հանրագիտարանի մէջ գրւած էր այն, ինչը կարելի էր գիտական համարել բովանդակութեան իմաստով, բայց ենթակայական իր ձեւի մէջ: Չվիճենք այն մասին, թէ արդեօք ձեւը կարող է առարկայական լինել: Սակայն արդէն յաջորդ Հանրագիտարանում, որը լոյս տեսաւ 1952 թւականին, Դաշնակցութեանը վերաբերւող ակնարկը նախ 5 անգամ աւելի կարճ էր, իսկ բովանդակութիւնը արդէն ամբողջովին ենթակայական էր: Այնտեղ ասւած էր,-

«ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ – Հայկական հակայեղափոխական բուրժուա-ազգայնական կուսակցութիւն, որը ծնւեց 19րդ դարի 90ական թւականներին Անդրկովկասում և որը պայքարում էր բանւորների և գիւղացիների յեղափոխական շարժումների դէմ: Օգտւելով հայերի ազգային միասնութիւն ստեղծելու ձգտումներից, Դաշնակցութիւնը ամբոխավարօրէն հանդէս էր գալիս հայ ժողովրդին սուլթանական Թուրքիայի լծից ազատելու և «*Մեծ Հայաստան*» ստեղծելու լոզունգներով: Իրականում Դաշնակցութեան գործունէութիւնը կրում էր արկածախնդրական և հակաժողովրդական բնոյթ: Դաշնակցութիւնը լայնօրէն օգտագործում էր ահաբեկչութեան մարտավարութիւնը: Ռուսաստանի առաջին յեղափոխութեան տարիներին՝ 1905-1907, Դաշնակցութիւնը, պաշտպանելով հայ բուրժուազիայի շահերը, փորձում էր շեղել հայ ժողովրդին համառուսական յեղափոխութիւնից, վարում էր ազգային մեկուսացման քաղաքականութիւն և գրգռում էր ազգային թշնամութիւն աշխատաւորների միջեւ, ինչը ձեռնտու էր ցարիզմին և մեծ վնաս էր հասցնում բանւորական շարժմանը Հայաստանում, ինչպէս նաեւ ամբողջ Անդրկովկասում: Ցարական ոստիկանութեան թելադրանքով Բաքւում, Ելիզաւետպոլում և Անդրկովկասի այլ վայրերում նրանք կազմակերպեցին հայ-թաթարական բախումներ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Դաշնակցութիւնը հայ բուրժուազիայի մարտական առաջապահն էր, Անտանտայի կայսերապաշտական շահերի պաշտպանը:

«Փետրուարեան յեղափոխութիւնից յետոյ, Դաշնակցութիւնը ամբողջովին անցաւ բուրժուական ժամանակաւոր կառավարութեան կողմը, որը ուղղուած էր ճնշուած ժողովուրդների ազատագրական շարժումները ճնշելուն: Հոկտեմբերեան սոցիալիստական Մեծ Յեղափոխութեան դէմ պայքարում Դաշնակցութիւնը հանդէս եկաւ հակայեղափոխական բլոկում՝ մենշեւիկների ու մուսաւաթականների հետ: 1918 թւականի յուլիս ամսին Դաշնակցութիւնը Էս-Էռների և մենշեւիկների հետ միասին հանդէս գալով որպէս Անգլիայի, Ֆրանսիայի և ամերիկեան իմպերիալիստների գործակալ, Բաքւի Խորհուրդներում հարց բարձրացրեց Բաքւի Խորհրդային իշխանութիւնը տապալելու և անգլիական զաւթիչներին հրաւիրելու մասին: Վերջիններս Էս-Էռների և մենշեւիկների հետ միասին գազանաբար սպանեցին Բաքուի կոմիսարներին: Երբ քայքայուեց Անդրկովկասի Սեյմը, Դաշնակցութիւնը 1918-20 թւականներին թուրք-գերմանական զաւթիչների օգնութեամբ անցաւ Հայաստանի բուրժուա-ազգայնական հակայեղափոխական կառավարութեան գլուխ: Գերմանիայի և Թուրքիայի պարտութիւնից յետոյ, Դաշնակցութիւնը ուզեց Հայաստանը դարձնել Անգլիայի, Ֆրանսիայի, Ամերիկայի կայսերապաշտների և ռուս սպիտակ գուարդիականների յենակէտը՝ խորհրդային իշխանութեան դէմ պայքարելու հարցում: Դաշնակցականների, մենշեւիկների և մուսաւաթական բուրժուա-ազգայնական կառավարութիւնների ժամանակ Անդրկովկասը դարձել էր արիւնալից ազգամիջեան բախումների դաշտ: Դաշնակցութիւնը ուզում էր Հայաստանը դարձնել օտարերկրեայ կայսերապաշտների գաղութ: Նրանք երկիրը հասցրին մինչեւ ամբողջական սնանկութեան ու կանգնեցրին կործանման եզրին: Դաշնակցութեան իշխանութեան ժամանակ Հայաստանը դարձել էր արցունքների, որբերի, անտանելի աղքատութեան և վայրենի կամայականութեան երկիր (Ա.Ի. Միկոյեան): Դաշնակցական կառավարութիւնը, տապալուեց 1920 թւականի նոյեմբերի վերջին՝ հայ աշխատաւորների ապստամբութեան շնորհիւ, որը ղեկավարում էր բոլշեւիկների կողմից: 1921 թւականի Փետրուար ամսին Դաշնակցութիւնը կատարեց իշխանութիւնը յետ վերադարձնելու արկածախնդրական փորձ, որը անցաւ ապարդիւն: Հայաստանում Խորհրդային Իշխանութեան յաջողութիւնից յետոյ, Դաշնակցութիւնը ջախջախուեց ու վերացաւ: Նրա տականքները արտասահմանում շարունակում են պայքարել Խորհրդային Իշխանութեան դէմ, հանդիսանալով որպէս ամերիկեան իմպերիալիզմի գործակալ»:

Անսաչառութիւնից ու գիտական մօտեցումներից ամբողջովին զուրկ այս բացատրութեանը իր բթամտութեամբ չի զիջում նաեւ երրորդ Հանրագիտարանի ակնարկը, որը հրատարակուեց 1972 թ.: Այնտեղ ասւած էր.-

«Հայ ազգայնական-բուրժուա-հակայեղափոխական կուսակցութիւն: Ծնունդ առաւ Թիֆլիսում 1890 թւականին: Հրատարակում էր «Դրօշակ» թերթը: Այն ժա-

մանակւայ ղեկավարներն էին Ք. Միքայէլեանը, Ս. Ջաւարեանը, Ռոստոմը (Ս. Զօրեանը) և ուրիշներ: 1892 թւականին Դաշնակցութեան համագումարը հաստատեց կուսակցութեան ծրագիրը և կանոնագիրը, ինչպէս նաեւ մարտավարական գիծը: Կուսակցութեան ծրագիրը նախատեսում էր՝ Արեւմտեան Հայաստանում քաղաքական գործունէութեան ծաւալում եւ, զինեալ ապստամբութեան ու ահաբեկչութեան ճամբով, Ռուսաստանի և Արեւմուտքի օգնութեամբ, Արեւմտեան Հայաստանի ազատագրում և ինքնավարութեան ստեղծում: Գիւղատնտեսութեան հարցում Դաշնակցութիւնը առաջարկում էր՝ հողի յանձնումը գիւղական համայնքներին: Դաշնակցութեան հասարակական ենթահողը բուրժուազիան էր, որի շահերն էլ նա պաշտպանում էր ու նրանց շահերին էր ենթարկում ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը:

«1906 թւականին Շահումեանը գրում էր, որ «*Դաշնակցութիւնը իր յետադիմական դերը կատարեց ազատագրական պայքարը զսպելու մէջ: Դաշնակցութիւնը բանւորների յեղափոխական շարժման դէմ էր*»: 1905-1907 թւականների յեղափոխութեան օրերին, Դաշնակցութիւնը փորձում էր հայ բանւորներին կտրել համառուսաստանեան յեղափոխութիւնից, Անդրկովկասի ժողովուրդների մէջ թշնամութիւն էր սրսկում, խանգարում էր բանւորների գործադուլները: Իր հակաժողովրդական քաղաքականութիւնը Դաշնակցութիւնը քողարկում էր սոցիալիստական բառախաղերով: 1907 թւականին Դաշնակցութիւնը մտաւ 2րդ ինտերնացիոնալի կազմի մէջ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, Դաշնակցութիւնը փորձում էր օգտագործել Թուրքիայի դէմ Ռուսաստանի զաւթողական քաղաքականութիւնը՝ Թուրքիայի դէմ ուղղած հայերի ազատագրական պայքարի մէջ: Դաշնակցութիւնը հանդէս եկաւ որպէս Հոկտեմբերեան Մեծ Յեղափոխութեան հակառակորդ: Մենշեւիկների, Էս-Էռների և մուսաւաթականների հետ՝ Դաշնակցութիւնը ստեղծեց Անդրկովկասի Կոմիսարիատ, ապա՝ Սեյմ: Օգտւելով սկզբից գերմանա-թուրքական, ապա անգլիա-ֆրանսիական և ամերիկեան իմպերիալիստների պաշտպանութիւնից, Դաշնակցութիւնը ձգտում էր կտրել Հայաստանը Խորհրդային Միութիւնից:

«1918 թւականի Մայիս ամսից մինչեւ 1920 թւականի Նոյեմբեր ամիս Դաշնակցութիւնը բուրժուական Հայաստանի իշխող կուսակցութիւնն էր: Կառավարութեան գլուխ կանգնած էին Դաշնակցութեան ղեկավարներ Յ. Քաջազնունին, Ա. Խատիսեանը, Հ. Օհանջանեանը, Ս. Վրացեանը: Դաշնակցութիւնը տնտեսական անկման հասցրեց Հայաստանը, արեան մէջ ճնշեց 1920 թւականի Մայիսեան ապստամբութիւնը: Հայաստանի խորհրդայնացումից (1920 թւականի Նոյեմբերի 29ին) յետոյ, դեկտեմբեր 2ին, Դաշնակցութիւնը Ալեքսանդրապոլում պայմանագիր կնքեց Թուրքիայի հետ, որի համաձայն Հայաստանի հողերի զգալի մասը զիջում էր Թուրքիային: 1921 թւականի փետրուար ամսին Դաշնակ-

ցութիւնը ապստամբութիւն բարձրացրեց, բայց ջախջախուեց: Դաշնակցութիւնը Հայաստանի սահմաններում ոչնչացուեց: Սակայն նա ունի իր կազմակերպութիւնները Ամերիկայի Միացեալ Նահանգներում, Ֆրանսիայում, Յունաստանում, Իրանում և այլ երկրներում: Այդ կազմակերպութիւնները ակտիւ հակախորհրդային քարոզչութիւն են վարում»:

Այսպիսով խորհրդային առաջին Հանրագիտարանից յետոյ, յաջորդ երկու Հանրագիտարաններում Դաշնակցութիւնը ներկայացուած է այնպէս, որ ընթերցողը նոյնիսկ մօտաւոր պատկերացում չի կարող կազմել այդ կուսակցութեան մասին:

Այս կացութիւնը տեւեց մինչեւ Ստալինի մահը, երբ Խորհրդային Միութեան նոր ղեկավար Խրուշչեւը որոշ ազատութիւններ շնորհեց խորհրդային ժողովուրդներին: Օգտւելով այդ ազատութիւններից՝ հայ ժողովուրդը Հայաստանում կառուցեց Սարդարապատի ճակատամարտի ու Մեծ Եղեռնի յուշարձանները: Ուջանում կանգնեց Անդրանիկի կիսանդրին, հրատարակւեցին մի շարք գրքեր, որտեղ յիշատակւեցին Դաշնակցութեան գործիչները: Սակայն վերականգնւում էին դաշնակցական արժէքները, կամ աւելի ճիշտ Դաշնակցութեան կողմից պահպանւած արժէքները, բայց ոչ ինքը՝ Դաշնակցութիւնը: Ճիշտ է, 20 տարի անց Լ. Խուրշուդեանից մենք իմացանք, որ այն ժամանակ Ա. Յովհաննիսեանը մշակում էր Դաշնակցութիւնը առնուազն մասամբ վարկափրկելու ծրագիր, բայց այդ ծրագիրը չիրականացաւ ու Դաշնակցութիւն կուսակցութեան նկատմամբ շարունակեց տիրել լռութիւն: Եւ ահա այդ լռութիւնը խախտւեց 1976 թւականին: Այդ տարի «Սովետական Գրականութիւն» ամսագիրը իր 8րդ համարում հրատարակեց ամսագրի գլխաւոր խմբագիր Ստեփան Կուրտիկեանի «**Ազգային ազատագրական պայքարի տարեգրութիւնը**» վերնագիրը կրող յօդւածը: Այն ժամանակ անկարելի էր հասկանալ, թէ ի՞նչ կատարւեց Հայաստանում: Կարծիքները բաժանւեցին: Ոմանք կարծիք էին յայտնում, թէ Հայաստանի Կենտկոմի առաջին քարտուղար Կարէն Դեմիրճեանը, իշխանութեան գլուխ անցնելուց յետոյ, սկսել է մտահոգւել հայ ժողովրդի պատմութեամբ ու որոշել է վերականգնել այդ աղաւաղւած պատմութիւնը: Միւսները ենթադրում էին, որ գլխաւոր խմբագիր Ստեփան Կուրտիկեանը ինքնագլուխ և համարձակօրէն որոշել է արտայայտել իր սեփական տեսակէտը, որի համար, անխուսափելիօրէն, խիստ կը պատժուի: Պարզւեց, որ երկրորդ տեսակէտը ճշմարտութեան աւելի մօտ էր, որովհետեւ Հայաստանի Կոմկուսի կենտկոմի լիագումար նիստի ժամանակ, հոկտեմբերի 19ին, «**Սովետական Գրականութեան**» վրայ ամպրոպ պայթեց: Այն ժամանակ և այդ առիթով ես գրեցի մի յօդւած «**Ազդակ Շաբաթօրեակ-Դրօշակ**»ի թիւ 22 համարում, որը մէջբերում եմ այստեղ գրեթէ ամբողջութեամբ:

Կուրտիկեանի յօդուածը ակադեմիկոս Ծատուր Աղայեանի «**Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմութիւնից**» մենագրութեան գրախօսականն է: Առաջին իսկ տողերում հեղինակը արտայայտում է արդէն վաղուց մոռացութեան մատնուած հետեւեալ ուշագրաւ միտքը.

«Նախ և առաջ պէտք է նշել, որ մեր պատմաբաններից ոմանք, աւելի ճիշտ՝ քաղաքական որոշ գործիչներ, գիտականօրէն խորամուխ չլինելով ժամանակաշրջանի արեւմտահայ իրականութեան ու դրանից բխող ազգային-ազատագրական շարժման առանձնայատկութիւնների ողջ էութեան մէջ, պատմական *կոնկրէտ* երեւոյթները պատճառաբանուած մեկնաբանելու փոխարէն, *դոգմատիկ* մօտեցում էին ունենում: Նրանք հաշուի չէին առնում օսմանեան մոլեգնող բռնակալութեան իւրայատկութիւնները և ազատագրական շարժումները համարում էին ըստ էութեան, վնասակար շարժումներ ու դրանք հակադրելով սոցիալ-դասակարգային պայքարին, սխալ էին համարում ազգային-ազատագրական պայքարը, գիւղացիական-հայդուկային շարժումները: Նրանք գտնում էին, որ միայն դասակարգային պայքարի միջոցով հնարաւոր է հասնել ազգային ազատագրութեան, անկախ պետականութեան նուաճումին»:

Իր տեսակէտը մարքսիստօրէն հիմնաւորելու և քաղաքական գործիչների վրայ իր յարձակումը արդարացնելու համար, Կուրտիկեանը դիմում է Մարքսի այն դրոյթին, որի համաձայն՝ «**քանի որ դեռ կենսունակ ժողովուրդը կաշկանդած է օտարերկրեայ զսպիչների կողմից, նա ըստ անհրաժեշտութեան իր բոլոր ուժերը, իր բոլոր ձգտումները, իր ամբողջ եռանդը ուղղում է արտաքին թշնամու դէմ և, այսպիսով, քանի դեռ նրա ներքին կեանքը մնում է ջլատուած, նա ի վիճակի չէ պայքարելու սոցիալական ազատագրման համար»:**

Այստեղ, հիմնուելով Մարքսի խօսքերի վրայ, Կուրտիկեանը փաստօրէն պաշտպանում է ազգայնականների այն ճիշտ և միակ հնարաւոր կարծիքը, որի համաձայն ազգային ազատագրական պայքարի ժամանակ բանւոր դասակարգը **բուրժուազիայի** հետ կնքում է միասնական պայքարի դաշինք և միայն ազգային անկախութիւն ստանալուց յետոյ է լուծում իր ներքին դասակարգային խնդիրները: Կուրտիկեանը ասում է աւելին: Նա արդարացիօրէն նշում է, որ ազգային անկախութեան համար մղւող պայքարում բուրժուազիայի դերը առաջադիմական է.

«Հասկանալի է,- գրում է նա,- այդ ժամանակաշրջանում ազատագրական շարժումները, ըստ էութեան, բուրժուական էին և առաջադիմական, քանի որ դարաշրջանի ընդհանուր գիծը հէնց բուրժուազիայի առաջադիմութիւնն էր»:

Ու գտնելով, որ թուրքական լծի տակ գտնւող հայ ժողովուրդը ոչ միայն չէր ուզում, այլեւ չէր էլ կարող մտնել դասակարգային պայքարի ոլորտը, որ այդ պայմաններում հայ ժողովրդի համար անընդունելի էր պրոլետարական **ին-**

տերնացիոնալիզմի գաղափարը, Կուրտիկեանը արդարացիօրէն գտնում է, որ հայ ժողովուրդը արեց այն, ինչ որ պէտք էր և ինչ որ կարելի էր անել ստեղծուած պայմաններում .- նա կանգնեց ազգային ազատագրական պայքարի ճանապարհի վրայ:

Յօդուածի հեղինակին հասկանալիօրէն վրդովեցնում է այն փաստը, որ այսօր յետին թուով դատապարտւում են այդ պայքարի որոշ փուլերը և այդ պայքարը կազմակերպող որոշ գործիչների: Ինչո՞ւ ուրիշ ժողովուրդները, օրինակ, բուլղարները կամ ռուսները,, չեն դատապարտում իրենց պատմութեան համապատասխան փուլերը: Այս հարցը մտահոգում է հեղինակին և նա այդ կապակցութեամբ գրում է.

«Բուլղարական ազգային ազատագրական շարժման մէջ էլ թոյլ են տրուել սխալներ, եղել են տարբեր հոսանքներ: Յեղափոխական Կոմիտէի հիմնադիր, մեծ հայրենասէր Վասիլ Լեւսկու գործընկերներին հակադրուել է մի ուրիշ ականաւոր յեղափոխական՝ Քարաւելովը, որոշ տարակարծութիւններ է ունեցել 1876ի ապստամբութեան ղեկավարներից մէկը՝ Գէորգի Բենկովսկին: Բայց ազատագրական շարժման մէջ նրանց կատարած դերը բուլղար պատմաբանները բոլորովին չեն թերագնահատել, երբեք չեն անտեսել»:

Նոյն այս տեսակէտը հեղինակը ունի նաեւ նարոդնիկների նկատմամբ, որոնց գիտական սոցիալիզմից հեռու լինելը ու **տակտիկ**ական սխալները քննադատելով հանդերձ, Լենինը միաժամանակ նշում էր նրանց առաջադիմական դերը ցարիզմի դէմ պայքարում՝ մինչեւ ռուսական մարքսիստների կազմակերպւելը:

Կուրտիկեանը անկեղծօրէն ցանկանում է ցոյց տալ, որ Դաշնակցութեան դերը ազգային ազատագրական պայքարում առաջադիմական էր, գոնէ մինչեւ հայ մարքսիստների բեմ բարձրանալը: Նա փորձում է ցոյց տալ, որ եթէ Դաշնակցութիւնը ունեցել է որոշ թերութիւններ, ապա դա ոչ թէ նրա համար է, որ նրանք «ժողովրդի թշնամիներ» էին, այլ պարզապէս սխալների համար, քաղաքական հասունութեան պակասի համար, որը անխուսափելի էր դիւանագիտական գայլերով՝ շրջապատւած կացութեան մէջ: Հեղինակը մէջբերում է Դաշնակցութեանը ուղղւած Ստեփան Շահումեանի հետեւեալ խօսքերը.

«Դուք ունէք բարի ցանկութիւններ, բայց ձեր գործերը, ձեր ճանապարհը կորստաբեր են հայ ժողովրդի համար: Ի հարկէ, դաշնակցականները մեղաւոր չեն, որ հայ ժողովրդի պատմական վիճակը այդքան անագորոյն է, ոչ մի կուսակցութիւն չի կարող դժոխքը դրախտ դարձնել»:

Ապացուցելու համար Դաշնակցութեան այս բարի ցանկութիւնները, Կուրտիկեանը առաջարկում է պատմականօրէն մօտենալ 90ական թւականներին տեղի ունեցած իրադարձութիւններին, այսինքն՝ չանտեսել քաղաքական կու-

սակցութիւնների ղեկավար դերը: Նա նշում է, որ դժբախտաբար, 90ական թւականներից սկսեալ կուսակցութիւնների կոնկրէտ գործունէութեանը տրւելիք քաղաքական գնահատականը վերանում է:

«Բայց չէ՞ որ բոլորին յայտնի է,- գրում է նա,- այդ ազգային ազատագրական շարժումների ամէնից ականաւոր դէմքերի՝ մեծ հայդուկների ո՞ր կուսակցութեան պատկանելը և ո՞ւմ կողմից ղեկավարւելը: Հասկանալի է, որ Աղբիւր Սերոբի, Անդրանիկի, Գէորգ Չաուշի, Արաբոյի, Մուրատի, Արմենակ Եկարեանի և ուրիշ շատերի գործունէութիւնը ղեկավարել է քաղաքական կազմակերպութիւնների կողմից: Ուրիշ հարց է, թէ ի՞նչպէս է ղեկավարւել, ինչպիսի՞ սխալներ են թոյլ տրւել: Հարկաւոր է բացել բոլոր փակագծերը և պատմագիտական մեկնաբանում տալ ազգային ազատագրական շարժման չլուծւած բոլոր խնդիրներին»:

Սակայն ի՞նչպէս բացել այդ փակագծերը: Այս հարցի պատասխանն է՛լ է տալիս Ս. Կուրտիկեանը: Ահաւասիկ.-

«Մեր կարծիքով, գիտականութիւնից զուրկ է Դաշնակցութիւն կուսակցութեան գոյացման օրից՝ 90ական թւականներից մինչեւ մեր օրերը նրա գործունէութիւնը միագիծ ներկայացնելը, միագիծ գնահատելը, ազգային-ազատագրական շարժման նրա բոլոր ղեկավարներին մի ստանդարտ, անփոփոխ բնութագիր տալը՝ հրաժարւելով երեւոյթներին ու մարդկանց գործունէութեանը պատմական մօտեցում ցոյց տալու մարքս-լենինեան միակ ճիշտ մեթոդից»:

Ինչպէս տեսնում ենք, Կուրտիկեանը այստեղ պարզ առաջարկում է որ Դաշնակցութեան գործունէութեան գնահատականը բաժանել մասերի և որոշ փուլերում այդ գործունէութեանը տալ դրական գնահատական: Անկասկած, Կուրտիկեանի մօտեցումը շատ ճիշտ է: Օրինակ՝ Դաշնակցութեան գործունէութիւնը նախախորհրդային ժամանակաշրջանում, գոնէ մինչեւ Փետրւարեան ապստամբութիւնը, եթէ ստանար դրական գնահատական, մեր պատմաբանները հնարաւորութիւն կը ստանային լրացնելու խորհրդային պատմագրութեան բաց մնացած 40 տարւայ պատմութիւնը, որը, ինչպէս ասացինք, կազմում է մեր պատմութեան ամենահերոսական շրջաններից մէկը: Կուրտիկեանի այս յուսաբեր առաջարկը փաստօրէն ներկայացւեց Հայաստանի իշխանաւորներին: Եւ հայութիւնը, Սփիւռքից մինչեւ Հայրենիք, սպասում էր նրանց պատասխանին: Ահա՛ և նրանց պատասխանը:

Հայաստանի Կենտկոմի առաջին քարտուղար Կարէն Դեմիրճեանը իր ճառի մէջ ասաց հետեւեալը.-

«Զեկուցման մէջ արդէն խօսւեց «Սովետական Գրականութիւն» ամսագրում թոյլ տրւած կոպիտ սխալների մասին: Կարո՞ղ էր արդեօք դա տեղի ունենալ ստեղծագործական կոլեկտիւի բարձր գաղափարայնութեան, կուսակցական

սկզբունքայնութեան, խստապահանջութեան մթնոլորտում: Ի հարկէ՝ ոչ: Չէ՞ որ յիշեալ յօդուածը նոյնիսկ չի քննարկւել ամսագրի խմբագրական կոլեգիայում»:

Բայց այդ ո՞ր յօդուածի մասին է խօսքը, ԿենտԿոմի քարտուղարը այս հարցին չի պատասխանում: Դիմում ենք զեկուցող Կենտկոմի քարտուղար Դալլաքեանի ճառին: Բայց նրա ճառումն էլ ոչինչ չենք գտնում «**Սովետական Գրականութիւն**»ում հրատարակւած յօդուածի մասին: Ըստ երեւոյթին, ճառի այդ մասը թերթը չի հրատարակել: Բայց, այն, ինչը այնտեղ հրատարակւած է, բաւական է պարզելու համար, որ խօսքը՝ Կուրտիկեանի յօդուածի մասին է: Ահա թէ ինչ է ասել իր ճառում Կենտկոմի քարտուղար Դալլաքեանը:

«Երկու տարի առաջ լոյս տեսաւ Դարոյեանի «Այդ հին աշխարհը**» վէպը: Հեղինակը նկարագրում է աշխատաւոր ժողովրդի բարդ պայքարը, սակայն որոշ տեղերում թոյլ է տալիս ոչ յստակ դիրքորոշում Դաշնակցութեան Փետրուարեան ապստամբութեան հանդէպ: Որոշ աշխատութիւններում ջնջւում են կուսակցական-դասակարգային կողմնորոշիչները պատմական երեւոյթների և անցեալի գնահատութեան հարցում: Մեր ժողովուրդը երախտագիտութեամբ է վերաբերւում այն հերոսների յիշատակին, ովքեր զէնքը ձեռքին կռւել ու ընկել են օտար լծից ժողովրդի ազատագրութեան համար: Բայց չի կարելի բացարձակացնել և գունազարդել այդպիսի գործիչների դերը, նրանց ներկայացնել կեղծ լոյսի տակ այն ժամանակ, երբ նրանք չէին կարող և իրականում չկարողացան դուրս գալ իրենց սոցիալ-դասակարգային պատմական սահմանափակութեան շրջանակներից: Կորցնելով դասակարգային չափանիշները, սահելով փաստերի մակերեսով, որոշ հեղինակներ պարզում են գիտականօրէն սնանկ, մտացածին սխեմաներ, որոնք խեղաթիւրում են այս կամ այն ժամանակաշրջանում սոցիալական յարաբերութիւնների, հասարակութեան հոգեւոր կեանքի զարգացման իրական պատկերը: Միանգամայն տեղին և իրաւացիօրէն մերժւել էին առանձին ընկերների անհիմն փորձերը՝ վերանայելու գոյութիւն ունեցող մեր ճիշտ, սկզբունքային կուսակցական գնահատականները Դաշնակցութիւն կուսակցութեանը»:**

Սա էր Հայաստանի ղեկավարների պատասխանը հայ պատմաբանների ու ժողովրդի հարցին: Ունէ՞ր թէ չունէ՛ր հայ ժողովուրդը ազգային-ազատագրական պայքար, կա՞ր թէ չկա՛ր Հայաստանի անկախ հանրապետութիւնը և, ընդհանրապէս, ունէ՞ր թէ չունէ՛ր այս ժողովուրդը պատմութիւն 1890-1920 թւականների ժամանակամիջոցում: Հայաստանի Կոմունիստական կուսակցութեան Կենտկոմը գտնում է, որ այդպիսի պատմութիւն չի եղել: Եւ Կենտկոմը իր տեսակէտից ճիշտ է, որովհետեւ առանց Դաշնակցութեան այդպիսի պատմութիւն իսկապէս գոյութիւն չունի, իսկ Դաշնակցութեամբ դա դառնում է ոչ թէ դասակարգային, այլ ազգային-ազատագրական պայքար:

Բայց ահա վրայ հասաւ Գորբաչեւեան ժամանակաշրջանը և Դաշնակցութիւնը արագ թափով մուտք գործեց Հայաստան: Սկզբից Լ. Խուրշուդեանի, Ռ. Սահակեանի, Մ. Քոչարի, Հ. Սիմոնեանի և ուրիշների աշխատութիւնների ճամբով, ապա՝ կուսակցութեան որոշմամբ, որը յայտարարեց իր վերահաստատումը Հայաստանի ամբողջ տարածքի վրայ: Իր ժողովրդին ծառայելու համար Դաշնակցութիւնը կազմակերպչական կերպով կրկին մուտք գործեց Հայաստան, որտեղից գաղափարօրէն երբեք դուրս չէր եկել: Դժւարին ճամբայ ունի կտրելու Հ.Յ.Դաշնակցութիւնը այս նոր պայմանների մէջ, երբ գործելու է հայրենի հողի վրայ, հայրենի ժողովրդի շահերը պաշտպանելու բնագաւառում: 100 տարեկան կուսակցութիւնը այսօր կրկին երիտասարդացաւ ու իր Սփիւռքեան քաղաքական փորձը ի սպաս կը դնի Միացեալ ու Անկախ Հայաստան ստեղծելու գործին: Յաջողութիւն քեզ, Հայ Ժողովրդի Պաշտպան կուսակցութիւն:

1990

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Է. Յովհաննիսեան

Երբ 1933 թւականին Հ.Յ.Դաշնակցութեան 12-րդ Ընդհանուր Ժողովը լուծուած համարեց Երկրի մէջ գործող իր կազմակերպութիւնները, այդ երկրի մէջ ծնւում էր իմ սերունդը: Մեր ծնողները մեզ ոչինչ չէին պատմում Դաշնակցութեան մասին, ոմանք վախից, ոմանք էլ համոզուած լինելով, որ Դաշնակցութիւնը մեծ վնաս է հասցրել հայ ժողովրդին: Յետոյ դպրոցում մենք իմացանք, որ Դաշնակցութիւնը վրացի մենշեւիկների և Ադրբեջանի մուսաւաթականների հետ միասին սոցիալիզմի կատաղի թշնամիներն են, բայց էլ աւելի կատաղի թշնամիներն են սեփական ժողովուրդների: 1927 թւականին լոյս տեսած Մեծ Խորհրդային Հանրագիտարանում **«Հայկական Հարցը»** գլխի տակ գրուած էր հետեւեալը. **«Հայաստանի խորհրդայնացումից յետոյ հայ քաղքենիների ու մտաւորականութեան «Ռամկավար» կուսակցութիւնը բարեացակամ դիրք բռնեց Խորհրդային Հայաստանի նկատմամբ: Նոյն դիրքը բռնեց նաեւ ազգայնական «Հնչակ» կուսակցութիւնը: Միակ կուսակցութիւնը, որը ծայրայեղ ատելութիւն ունի Խորհրդային Հայաստանի նկատմամբ, շարունակում է մնալ Դաշնակցութիւնը: Նա քարոզում է ապստամբութիւն չնայած նրան, որ վերջին փորձը այս ուղղութեամբ Վրացեանի ղեկավարութեամբ Փետրուարի 21ին տապալուեց: Դաշնակցութիւն կուսակցութիւնը այժմ ամբողջովին բարոյալքուած վիճակում է և կորցրել է իր ազդեցութիւնը նոյնիսկ տարագիր շրջանակների վրայ: Այժմ նա ապրում է այն գումարների յափշտակման հաշւին, որոնք Եւրոպայում և Ամերիկայում հաւաքւում են հայ տարագիրներին Խորհրդային Հայաստան տեղափոխելու համար: Հայաստանի խորհրդայնացումից յետոյ, Դաշնակցութիւնը, անկասկած, վերջնական կործանման է ապրելու և հէնց այդ կործանումից նոր էջ է բացելու հայ ժողովրդի պատմութեան մէջ»:**

«Դաշնակցութիւնը կործանուած է», «Դաշնակցութիւն չկայ», «Դաշնակցութիւնը մեռած է»,- այս ամէնը կրկնւում էր այնքան յաճախ ու այնքան յամառօրէն, որ ստեղծւում էր ճիշտ հակառակ տպաւորութիւն՝ **«Դաշնակցութիւնը կայ», «Դաշնակցութիւնը գործում է և բոլշեւիկների համար դեռեւս վտանգ է ներկայացնում»:**

Արդէն արտասահմանում կարդացի Վահան Նաւասարդեանի հետեւեալ միտքը. **«Դաշնակցութիւն չկար տակաւին, երբ դաշնակցականներ կային արդէն: Ծրագիր ու կանոնագիր չունէինք տակաւին, մինչ կուսակցութիւն կար արդէն և իր կազմը գործում էր թէ հայրենի երկրում և թէ նրանից դուրս: Որոշակի**

անուն չունէինք, մինչ պաշտօնական օրգան էինք հրատարակում և ամէնը ճանաչում էին մեզ: Այդպէս էր Դաշնակցութեան բովանդակ կեանքը, իր ծնունդը, անունը, դաւանանքը, կազմակերպական ուրոյն ձեւը, դրօշը, կնիքը, զինանշանը, օրգանը, գերագոյն ժողովներն ու վարիչ մարմինները,- այս ամէնը լի են ուշագրաւ և անիմանալի պատմութիւններով: Ստոյգ է միայն մէկ բան: Դաշնակցութիւնը ԳՈՐԾԻՑ ծնաւ, ձեւաւորուեց ԳՈՐԾԻ մէջ և եղաւ ու մնաց գերազանցաբար ԳՈՐԾԻ կուսակցութիւն»:

Նաւասարդեանի այս միտքը լոյս է սփռում այն տարօրինակ թւացող երեւոյթի վրայ, թէ ինչպէս Դաշնակցութեան պարագային կարելի է ունենալ կուսակցականներ, երբ կազմակերպչականօրէն չկայ կուսակցութիւնը: 1933 թւականից սկսեալ, հետեւաբար, երկրում արդէն կազմակերպութիւնը չկար, մնացել էին կուսակցականները ու ծնւում էին նորեր, որոնք Դաշնակցութիւն կազմակերպութեան մասին գաղափար անգամ չունէին: Ուստի, ի՞նչ է նշանակում կուսակցական՝ առանց կուսակցութեան: Դա նշանակում է գաղափարի, երազի, տեսլականի, կամքի, նպատակի գոյութիւն, առանց այդ նպատակները ու երազները իրականացնելու ջանքերի:

Ժողովուրդը գիտէր, որ Դաշնակցութիւնը մեռած չէ և ժամանակին հասնելու է օգնութեան: **«Դէ հասիր Անդրանիկ…»** - այդ յոյսով ապրում էր հայ ժողովուրդը և հէնց այդ յոյսն էր, որ անտանելի պայմաններում իրեն դիմանալու ուժ էր տալիս: Ոտնահարւած էին բոլոր ազգային արժէքները՝ կրօնից մինչեւ արուեստ, գրականութիւնից մինչեւ լեզու: Ո՞վ կարող էր արժէքների այդ կործանման առաջն առնել: Ո՞վ կարող էր հայ մանուկներին հանել ռուսական դպրոցներից: Ո՞վ կարող էր խօսել ցեղասպանութիւնից, Հայաստանի բռնագրաւած հողերից, հայ ֆեդայիներից: Ո՞վ կարող էր վարկաբեկել Ռաֆֆուն, Շանթին, Ահարոնեանին, Կոմիտասին: Վերջապէս, ո՞վ կարող էր հային ասել, թէ որքան մեծ պարծանք է հայ լինելը: Այս ամէնը կարող էր անել միայն Հ.Յ.Դաշնակցութիւնը և ամէն մի հայ, որ տառապում էր այդ խնդիրներով, իրեն ինքնաբերաբար դաշնակցական էր համարում ու մտքում կրկնում էր անընդհատ՝ **«Դէ հասիր Անդրանիկ…»**:

Հասարակական անարդարութիւնը, որը դասակարգային պայքար մղելու պատրւակի տակ յանգել էր մարդասպանութեան, ծանր հոգեկան տառապանքի պատճառ էր դարձել: Գնդակահարւում ու բանտերն էին նետւում հայ ժողովրդի լաւագոյն ներկայացուցիչները՝ գիտնականները, բանաստեղծները, հոգեւորականները, քաղաքական գործիչները և նրանք, ովքեր արտասահմանում ազգականներ ունէին: Այս հարւածների տակ ընկճւում էր հայ ժողովուրդը, բայց չէր կորցնում իր յոյսը, որը նորից ու նորից կապում էր Հ.Յ.Դաշնակցութեան հետ: Մշեցին ու վանեցին երազում էին «Երկիր» վերադառնալու մա-

սին, իսկ նախիջեւանցին ու ղարաբաղցին ուզում էին փախչել աղրբեջանցու իշխանութեան տակից: Ո՞վ, բացի Դաշնակցութիւնից, կարող էր հասկանալ նրանց ցաւերը, եթէ խօսքը վէրքերի դարմանման մասին չէր, այլ ցաւը զգալու և վիշտը բաժանելու մասին:

Վրայ հասաւ Երկրորդ Համաշխարհային պատերազմը և հայ ժողովրդին վիճակուեցին նոր տառապանքներ: Ռազմագերի դարձած հայ զինուորները քաղցից մահանալու վտանգին առջեւ էին նացիական ճամբարներում, քանզի Ստալինի կամքով Միջազգային Կարմիր Խաչը նրանց օգնութեան չէր հասնում: Գերմանական զօրքերի կողմից գրաւուած տարածութիւններում հայութիւնը ահ ու սարսափ էր ապրում՝ հրեաների ճակատագրին արժանանալու մտահոգութիւնից: Ու կրկին ռազմագերի ընկած հայ զինուրների մայրերը ապրում էին այն յոյսով, որ Դաշնակցութիւնը անտէր չի թողնի իրենց զաւակներին: Իրենց ազգականների ճակատագրով մտահոգւած մարդիկ այն յոյսով էին ապրում, որ Դաշնակցութիւնը անպաշտպան չի թողնի Հիտլերի իշխանութեան տակ ընկած հայերին:

Այսպէս, Դաշնակցութիւնը ներկայ էր Հայաստանում որպէս յոյսի, փրկութեան, արդարութեան խորհրդանիշ, ներկայ էր մարդկանց հոգիների մէջ, որոնք միշտ պատրաստ էին՝ այդ արժէքը իրականութիւն դարձնելու: Դաշնակցութիւնը գաղափար էր, ազգը և ազգային արժէքները պաշտպանելու անհրաժեշտութիւն, հասարակական արդարութիւնը վերականգնելու միջոց: Պատահական չէ, որ հետագայում իրենց Դաշնակցական էին համարում բոլոր այլախոհները, պաշտօնական իշխանութիւններին բոլոր հակադրւողները, վարչակարգը փոփոխութեան ենթարկելու բոլոր կողմնակիցները: Այս իմաստով ինքը՝ Դաշնակցութիւնը ներկայ էր Հայաստանում, որպէս ազգային արժէքներից մէկը, որպէս տիրող չարիքի ընդդիմադրութիւն:

Գուցէ ժողովրդի տարբեր ձգտումները և ազատական տրամադրութիւնները այդպէս չկենտրոնանային Դաշնակցութեան վրայ, եթէ իրենք՝ իշխանութիւնները չնպաստէին այդ ընթացքին: Քննադատութիւնների, դատապարտումների, պարզ հայհոյանքների, պատմութեան նենգափոխումների ճամբով խորհրդային իշխանութիւնները ստեղծում էին Դաշնակցութեան կերպարը ճիշտ այնպիսին, ինչպիսին ժողովուրդը կ՚ուզէր տեսնել նրան: Դաշնակցութիւնը վարկաբեկելու համար իշխանութիւնները ստում էին, թէ կուսակցութիւնը կատաղի պայքար է մղում իշխանութեան դէմ, թէ նա ջանում է ապըստամբութիւն առաջացնել Հայաստանում և ահաբեկել Հայաստանի ղեկավարներին, իսկ այդ սուտը շատ հաճելի էր ժողովրդի համար, որը ուրախութեամբ նշում էր, թէ կայ գոնէ մէկ հայ կազմակերպութիւն, որ պայքարում է անիծեալ խորհրդային վարչակարգի դէմ:

Դաշնակցութիւնը Հայաստանի մթնոլորտումն էր, մնում էր, որ նա գործ դառնայ: Եւ այդ ժամը հնչեց, երբ 1953 թւականին մահացաւ Ստալինը: Այն, ինչ պատահեց Ստալինի մահից յետոյ, շատերին հրաշք էր թւում: Բոլոր այն արժէքները, որոնք խնամքով պահւած էին Դաշնակցութեան գանձարանում, այնպիսի արագութեամբ մտան Երկիր, որ կարծես թէ երբեք այնտեղից դուրս չէին եկել, կարծես թէ այդ արժէքների համար հազարաւոր մարդիկ կախաղան չէին բարձրացել և կարծես թէ այդ արժէքների շուրջ չկար այն լռութիւնը, որը կարելի էր խախտել միայն կեանքի գնով: Այս ամէնը հրաշք էր նրանց համար, ովքեր չգիտէին, որ Հ.Յ.Դաշնակցութիւնը Հայաստանից դուրս էր եկել միայն ֆիզիկապէս, բայց միշտ մնացել էր այնտեղ հոգեպէս: Ու չէր կարող չմնալ, քանզի այն մարմնաւորում էր հայ ժողովրդի նկարագիրը: Եւ ահա հրաշքի նման օղից իջած ազգային արժէքները իրականութիւն դարձան Հայաստանում: Թւարկենք այդ հրաշքներից միայն մի քանիսը, որոնք ստալինեան մռայլ գիշերից յետոյ եկան լուսաւորելու մեր ազգային կեանքը:

1.- Պատմաբան Նիկողոս Կարապետեանի յօդւածը՝ Լեհական **«Կիերուկի»** շաբաթաթերթում:

2.- Արցախի 2500 հայերի բողոքագրի դիմումը Խրուշչեւին:

3.- Սիլվա Կապուտիկեանի ելոյթը Երեւանում՝ կուսակցութեան շրջանային հաւաքոյթներից մէկում:

4.- Ե.Հ.Յովհաննիսեանի նամակը խորհրդային Կոմկուսի կենտրոնական կոմիտէին:

5.- Անանուն պատմաբանի վերլուծական խօսքը 1917-1921 թւականների պատմաշրջանի մասին:

6.- Արցախի հայութեան կոչը Հայաստանի ժողովրդին և ղեկավարութեանը:

7.- Արցախի հայութեան կացութիւնը պարզող մի նամակ-փաստաթուղթ:

8.- Պարոյր Հայրիկեանի «վերջին խօսքը» դատարանում:

9.- Սերօ Խանզադեանի նամակը Բրեժնեւին:

Յետոյ կանգնեցին Սարդարապատի և Եղեռնի յուշարձանները, տեղի ունեցաւ Եղեռնի 50ամեակի ցոյցը, հրատարակւեց Յեղասպանութեան Փաստաթղթերի ժողովածուն ու տեղի ունեցան շատ ուրիշ իրադարձութիւններ, որոնք ցոյց տւեցին, որ ազգային հոգին ու ազգային մտածելակերպը Հայաստանում մեռած չեն:

Սակայն մարմնանում էին դաշնակցական արժէքները, բայց ոչ ինքը՝ Դաշնակցութիւնը: Ճանաչւում էին Սարդարապատի հերոսները, Ուջանում կանգնում էր Անդրանիկի արձանը, գրւում էին յօդւածներ հայոց ազգային ազատագրական պայքարի մասին, բայց Դաշնակցութեան մասին խօսք չկար:

Դաշնակցութիւնը յաչս իշխանութեան՝ շարունակում էր մնալ **«Հայ ժողովրդի թշնամի»**: Ո՞ւմն էր պէտք այս կեղծիքը: Ալեքսանդր Սոլժենիցինը մէկ առիթով գրեց. **«Բռնութիւնը արագ ծերանում է, անցնում են տարիներ և նա այլեւս կորցնում է իր ինքնավստահութիւնը և ոտքի վրայ մնալու, բարեպաշտ տեսք ստանալու համար սուտը անպայման դարձնում է իր դաշնակիցը»**: Հէնց այս նոյն պատճառով խորհրդային իշխանութիւնները ստեղծեցին Դաշնակցութեան շուրջ ստի ու կեղծիքի մթնոլորտ: Երկրորդ պատճառը այն էր, որ Դաշնակցութիւնը, ի տարբերութիւն իր հետ ծնուած շատ ուրիշ կուսակցութիւնների, շարունակում էր ապրել ու լինել գործօն կուսակցութիւն: Արդէն վաղուց հրապարակի վրայ չկային մուսավաթականները, սոցիալ-դեմոկրատները, սոցիալիստ-յեղափոխականները, վրաց-մենշեւիկները, իսկ Դաշնակցութիւնը կար և նրա վարկափրկումը կը նշանակէր մասնակից դարձնել նրան Հայաստանի հասարակական կեանքին: Այնուամենայնիւ՝ Դաշնակցութեան **«վարկափրկման»** փորձեր կատարուեցին: Այդ փորձերից առաջինը կատարեց աքսորավայրից վերադարձած Աշոտ Յովհաննիսեանը՝ Լենդրուշ Խուրշուդեանի հետ միասին: Ապա՝ նոյն փորձը կատարեց **«Սովետական Գրականութիւն»** հանդէսի գլխաւոր խմբագիր Ստեփան Կուրտիկեանը: Երկու փորձերն էլ անցան ապարդիւն: Հայաստանի Կոմկուսի Կենտկոմը գտաւ անհիմն՝ Դաշնակցութիւն կուսակցութեան նկատմամբ սկզբունքային գնահատականները վերանայելու փորձերը:

Դաշնակցութեան պաշտօնական ճանաչումը կամ նրա **«վարկափրկումը»**, հաւանաբար այն ժամանակ նախ անկարելի էր, ապա ոչ այնքան կարեւոր, քանզի Կոմունիստական կուսակցութեան դերը նսեմացնելու և այլ կուսակցութիւններ ու կազմակերպութիւններ ստեղծելու մտադրութիւնը գոյութիւն չունէր: Սակայն Հայաստանում Դաշնակցութեան ներկայութեան անհրաժեշտութիւնը արդէն զգացւում էր: Այդ ժամանակ Հայաստանից դուրս եկածները այն հարցին, թէ ի՞նչ է սպասում Դաշնակցութիւնից հայրենի ժողովուրդը, պատասխանում էին՝ **«Տէր կանգնէք մեր անտէր ժողովրդին»**:

Ստալինի մահից մինչեւ Գորբաչեւի իշխանութիւն գլուխ գալու ժամանակաշրջանը կարելի է համարել դաշնակցական կամ ազգային արժէքների մարմնաւորման և ազգային ինքնագիտակցութեան վերելքի ժամանակաշրջան: Դաշնակցութիւնը Հայաստանում դեռ կազմակերպական իրականութիւն չէր դարձել, սակայն նա արդէն օդում չէր, այլ իր արժէքներով երկիր էր մտել:

Թւում էր, թէ գորբաչեւեան ժամանակաշրջանում Դաշնակցութիւնը ի վերջոյ կը վարկափրկուի, քանզի Խորհրդային Միութեան այլ հանրապետութիւններում այդ ընթացքը տեղի էր ունենում, իսկ Մոսկւայում բարձրացրել էին Սոլժենիցինին վարկափրկելու հարցը: Բայց Հայաստանը զարմանալիօրէն

չէր շտապում Դաշնակցութիւնը ճանաչելու կամ գոնէ նրա քարկոծելուն վերջ տալու գործում: Հէնց այն պահին, երբ Եռագոյնը գրեթէ մուտք էր գործել Հայաստան, երբ Դաշնակցութեան ֆեդայիների մասին յօդուածներ էին գրւում, «Կոմունիստ» թերթը հրատարակեց Ռ. Խուրշուդեանի **«Դաշնակցութեան հակախորհրդային նպատակները և գործելակերպը»** յօդուածը, որտեղ մասնաւորապէս նշւում էր հետեւեալը.

«Աշխարհի յետաղիմական ուժերը միաւորւում են հակախորհրդային պայքար վարելու համար: Խորհրդային Միութեան դասակարգային թշնամիների ատելութիւնը այսօր ընդունել է հոգիների և զգացմունքների վրայ յարձակում գործելու ձեւ: Այդ թշնամիները փաստօրէն վարում են չյայտարարուած հոգեբանական պատերազմ, որի մէջ սուտը գլխաւոր դերն է կատարում: Այս պայքարում ամերիկեան իմպերիալիստները օգտագործում են Դաշնակցութիւնը՝ Սփիւռքում և Հայրենիքում հակախորհրդային քարոզչութիւն վարելու համար: Արտաքին չէզոքութեան դիմակի տակ, Դաշնակցութիւնը թաքցնում է իր բուն հակախորհրդային ձգտումները: Դաշնակցութիւնը ծառայում է ամերիկեան իմպերիալիզմին և, խաղալով հայերի ազգային զգացմունքների վրայ, հաւատարիմ ծառայում է իր տէրերին, այսինքն՝ ամերիկեան իմպերիալիզմին: Ամերիկեան իմպերիալիզմի թելադրանքով Դաշնակցութիւնը ջանում է հակախորհրդային հողի վրայ միասնութիւն ստեղծել Սփիւռքում, մինչդեռ միասնութիւնը կարող է ստեղծուել միայն խորհրդայնասիրական հողի վրայ: Հայաստանի կոմունիստները միշտ պայքարել են ու պիտի պայքարեն Դաշնակցութեան դէմ: Այս մարզում զիջումներ չեն կարող լինել»:

Հայ բուրժուա դասակարգի հետ խորհրդային իշխանութիւնը վաղուց ի վեր լուծել է իր խնդիրները, ամուր դաշինք կապելով նրա հետ ու օգտւելով նրանից այն չափով, որը թոյլ է տալիս մեզ ասելու թէ հայ բուրժուան հայ կոմունիստների գրպանումն է: Մարքսիզմի հիմնադիրները երբեք չէին կարող ենթադրել ու նախատեսել, որ որեւէ ազգի բանւոր դասակարգը՝ առանց զինեալ պայքարի՝ կարող է սեփական բուրժուազիային վարժեցնել կոմունիզմին ծառայելու հետ: Բայց մենք հայերս ամէն ինչում առաջինն ենք, այս հարցումն էլ առաջինը եղանք: Այսօր սուրբ Էջմիածինը Սփիւռքի հայ բուրժուազիայից հաւաքած դրամները նւիրում է Չերնոբիլի զոհերին, առանց բուրժուազիայի թոյլատրութիւնը հարցնելու: Ուրեմն՝ Սփիւռքի և Հայրենիքի միջեւ դասակարգային պայքարի հարց չկայ: Այդ յարաբերութիւններում տիրում է դասակարգային համերաշխութիւն և Սփիւռքի բուրժուաները խորհրդային իշխանութիւնից լաւ ծառայութեան համար շքանշաններ են ստանում: Այս բնագաւառում ամէն ինչ կարգին է, տիրում է դասակարգային փոխադարձ յարգանք: Բայց **«Կոմու-**

նիստ» թերթի յօդւածի հեղինակ Ռ. Խուրշուդեանը խօսում է դասակարգային ատելութեան մասին, մի ինչ որ ուրիշ հակառակորդի նկատմամբ, որն է Հ.Յ.Դաշնակցութիւն կուսակցութիւնը: Անշուշտ, որոշ ճշմարտութիւն կայ այս որակաւորման մէջ, քանզի բանւորներին կապիտալիստներից շատ աւելի կատաղի շահագործող խորհրդային ղեկավարների ու Դաշնակցութեան միջեւ դասակարգային տարբերութիւնը ակնյայտ է, բայց Հայաստանի քարոզչական մարմինների սուտը ուրիշ նպատակ է հետապնդում: Խորհրդահայ մամուլը առիթը բաց չի թողնում՝ Դաշնակցութիւնը ամերիկասիրութեան մէջ մեղադրելու համար, Գուցէ՞ այդ քարոզիչները իսկապէս որ ծանօթ չեն կացութեան հետ, բայց այդ դէպքում ինչո՞ւ են նրանք շօշափում այն նիւթը, որի մասին գաղափար չունեն: Մէկ կողմ դնենք այն զուտ քաղաքական հարցը, թէ ինչո՞ւ խորհրդայնասիրութիւնը դրական, իսկ ամերիկասիրութիւնը բացասական երեւոյթ է: Տեսնենք թէ իրական կացութիւնը որն է:

Միւնխենի Հայկական Հարցերի Հաստատութիւնը կատարեց դաշնակցական մամուլի յատուկ ուսումնասիրութիւն և պարզեց հետեւեալը: Այս տարւայ սկզբից **«Ալիք»**ում, **«Ազդակ»**ում, «**Հայրենիք»**ում, **«Հորիզոն»**ում, **«Ազատ Օր»**ում, **«Արմենիա»**յում, **«Կամք»**ում հրատարակւած 10,653 յօդւածների մէջ չկայ ՈՉ ՄԷԿ ամերիկասիրական յօդւած: Կան 1532 թունդ հակա-ամերիկեան բնոյթ կրող յօդւածներ և 943 թունդ խորհրդայնասիրական յօդւածներ: Մնացած յօդւածները կա՛մ չէզոք են և կամ էլ հակաթուրքական բնոյթ են կրում: Բացի դրանից, կան 16-21 յօդւածներ, որոնք կարող են որակաւորւել որպէս Խորհրդային Միութիւնը քննադատող յօդւածներ, այն էլ այնքան մեղմ, որ նրանց մասին խօսելն անգամ անտեղի է: Ինչ վերաբերւում է հակախորհրդային գործողութիւններին, այսինքն բողոքի ցոյցերի, ժողովների կամ թռուցիկներ բաժանելուն, ապա այս մարզում ոչ մէկ բան արւած չէ գոնէ վերջին 15 տարիների ընթացքում: Ուրեմն՝ ի՞նչն է մտահոգում Հայաստանի իշխանութիւններին: Միայն մէկ բան. Հ.Յ.Դաշնակցութիւնը ԻՐԵՆՑ ԳՐՊԱՆՈՒՄ ՉԷ, ուստի նրան չի կարելի ֆիզիկապէս թողնել Երկիր, որտեղ նա արդէն կայ գաղափարապէս:

Գորբաչեւեան ժամանակաշրջանը սկսւեց բուռն իրադարձութիւններով, որոնց հայ ժողովուրդը պատրաստ չէր, ուստի մի քիչ շփոթւեց, կատարեց որոշ սխալներ, բայց յեղափոխականացաւ, արագ կարգով նոր քաղաքական որակ ձեռք բերեց, հասունացաւ, յարեց նոր հեղինակութիւնների, հիասթափւեց և բոլոր այս փուլերը անցնելուց յետոյ կրկին հասկացաւ, որ տէր չունի ու կրկին յոյսը կապեց Հ.Յ.Դաշնակցութեան հետ: Այս անգամ արդէն ոչ որպէս բարոյական արժէք ու գաղափար, այլ որպէս մի կուսակցութիւն, որը ապացուցել է իր նւիրւածութիւնը հայ ժողովրդին, որը կազմակերպւած է ու ի վիճա-

կի է դուրս բերելու ժողովուրդը այն քաոսից, որի մէջ նա ընկաւ իրերի բերումով։

Բայց տեսնենք թէ ի՞նչ է կատարւում Հայաստանում և ի՞նչ անելիք ունի այնտեղ գործից ծնւած, գործի մէջ ձեւաւորւած, գործի կուսակցութիւն Դաշնակցութիւնը։ Վերջերս հեռուստատեսութեամբ դիտեցի երկու գիտնականների զրոյց, որոնցից մէկը ճապոնացի էր, միւսը ռուս։ Նրանք խօսում էին արդիւնաբերական զարգացման մասին և ճապոնացին, արդարացիօրէն նեղը դնելով ռուսին, յայտարարեց որ Խորհրդային Միութիւնը երբեք չի կարող հասնել Ճապոնիայի արդիւնաբերական զարգացման մակարդակին, քանզի ինքը՝ Ճապոնիան անընդհատ զարգացման մէջ է։ Այստեղ խորհրդային գիտնականը ճարպկօրէն խօսքը փոխեց ու ասաց, որ անընդհատ արդիւնաբերական զարգացումը գուցէ մարդկութեանը պէտք չլինի, քանզի յայտնի է, որ ովկիանոսի մակարդակը բարձրանում է և եթէ մարդկութիւնը միասնական ճիգերով այդ բանի առաջն չառնի, ապա Ճապոնիան Խորհրդային Միութիւնից շատ աւելի շուտ կը սուզուի ովկիանոսի տակ։ Մէկ բանում ռուս գիտնականը ճիշտ էր, ո՞ւմն է պէտք Ճապոնիայի արդիւնաբերական զարգացումը, եթէ 50 տարի յետոյ նա վերանալու է երկրագնդի երեսից։ Կամ՝ ի՞նչ նշանակութիւն ունի Խորհրդային Միութեան արդիւնաբերական յետամնացութիւնը, եթէ նա Ճապոնիայից աւելի երկար կեանք ունի։

Եւ հէնց այս տրամաբանութիւնից էլ ծնւում է այն ճշմարտութիւնը, որ մարդու, ազգի, մարդկութեան գործունէութեան մէջ կան երկու յստակ ուղղութիւններ. մէկը՝ պայմանների փոփոխումն է, միւսը՝ պայմաններին յարմարւելը։ Այս երկու ուղղութիւնները գոյութիւն ունեն բոլոր բնագաւառներում և բոլոր մակարդակների վրայ՝ քաղաքականութիւնից մինչեւ տնտեսութիւն, ընտանիքից մինչեւ ազգ։

Անշուշտ, առանձին-առանձին նրանք գոյութիւն չունեն և այնտեղ, որտեղ հնարաւոր է մարդիկ գործում են երկու ուղղութեամբ, յարմարւելով պայմաններին և փոխելով այդ պայմանները։ Սովորաբար, ուժեղները իրենց գործունէութեան մէջ շեշտը դնում են պայմանները փոխելու վրայ և ապստամբութիւնների, պատերազմների ու գիտական նւաճումների հիման վրայ փոխում են գոյութիւն ունեցող պայմանները։ Իսկ փոքրերը փորձում են յարմարւել այն պայմաններին, որոնք փոխելու ուժը չունեն։ Պետութիւնների, ազգերի ու մարդկանց անելիքների նկատմամբ այս բնական մօտեցումը յաճախ խախտւում է առնուազն երկու պատճառով։

Նախ՝ հպարտ մարդկանց ու ազգերի կողմից յարմարւելու քաղաքականութիւնը ընկալւում է որպէս ստրկութեան տարբերակ։ Իսկ պայմանների փոփոխումը՝ ապստամբութեան կամ հերոսական զոհաբերութիւնների ճամբով, ըն-

կալւում է որպէս աւելի պատւաւոր ու գեղեցիկ ճանապարհ, քանզի պահանջում է մարդուց, ազգից, կուսակցութիւնից ուժերի, կամքի և հնարամտութեան ծայրայեղ կենտրոնացում՝ սեփական շահերը պաշտպանելու համար: Գուցէ այս ոգեւորութիւնը և մօտեցումը ճիշտ է, բայց այդպէս է միայն այն նպատակների համար, որոնք հասանելի են: Եթէ մեր ոգեւորութիւնը ու զոհաբերութիւնը պիտի ծախսւեն, օրինակ, Թուրքիան ոչնչացնելու և ոչ մեր հողերին վերատիրանալու պայքարի վրայ, ապա դա կը լինի ինքնասպանութիւն:

Երկրորդ պատճառը այն է, որ մեծ խնդիրներ լուծելու համար տարւող միասնական պայքարները գրաւիչ են այն պարզ տրամաբանութեամբ, թէ մեծ խնդիրները լուծելուց յետոյ, ինքնաբերաբար կը լուծւեն նաեւ փոքր ազգերի կամ առանձին մարդկանց խնդիրները: Ինչո՞ւ յարմարւել գոյութիւն ունեցող պայմաններին,- ասում են մոլորւածները,- եթէ կարելի է ուժեղներին միանալով, փոխել այդ պայմանները:

Երկու այս մոլորութիւնները մեծ վնաս են հասցնում քաղաքական և հասարակական շարժումներին, յատկապէս հայ ժողովրդին, որը գտնւում է երկու այս մոլորութիւնների ուժեղ ազդեցութեան տակ: Մինչդեռ յարմարւելու հետ կապւած գործունէութիւնը շատ աւելի դժւար է: Կառուցելը շատ աւելի դժւար է, քան քանդելը: Յարմարւելը շինարարութիւն է, իսկ պայմանների փոփոխութիւնը՝ քանդում: Յարմարւելը իսկական յեղափոխութիւն է, քանզի պահանջում է մեզանից մշտական զգօնութիւն, մշտական յայտնագործութիւններ ու մշտական զոհաբերութիւններ՝ մեզանից անկախ փոխւող պայմանների մէջ կողմնորոշւելու համար:

Յարմարւելու յատկութեան բացակայութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ յեղափոխական ոգու, կողմնորոշւելու բնազդի, կարեւորը անկարեւորից տարբերելու ներըմբռնման բացակայութիւն: Խրուշչեւի կամ Գորբաչեւի իշխանութեան գլուխ գալը, երկրաշարժը, Եւրոպայում տեղի ունեցող փոփոխութիւնները, Լիբանանի պատերազմը, Պարսկաստանի յեղափոխութիւնը, այս բոլորը տեղի են ունենում մեզանից անկախ և բոլոր այս պայմաններին յարմարւելը, կամ այս իրադարձութիւնների մէջ ճիշտ կողմնորոշւելը շատ աւելի դժւար է, քան միանալ այս կամ այն շարժմանը՝ տապալելու համար Գորբաչեւին, կռւելու համար Իսրայէլի կամ պաղեստինցիների դէմ, ամրապնդելու կամ թուլացնելու համար Խոմէյնիի վարչակարգը:

Կարծում եմ, որ այսքանը բոլորիս համար հասկանալի է: Շատ աւելի դժւար է պայքարել այն հոգեբանութեան դէմ, թէ յարմարւելը ստրկութեան, թուլութեան նշան է, որ այդ քաղաքականութիւնը վայել չէ արժանապատւութիւն ունեցող մի ժողովրդի համար, որ լաւ է մեռնել՝ նոր պայմաններ ստեղծելու համար, քան ապրել հին պայմաններում: Այս զգացմունքները ու տրամա-

բանութիւնը թուում են շատ ճիշտ և, ամենակարեւորը, հերոսական, բայց այս ամէնը ճառ կը մնայ մինչեւ այն պահը, երբ մենք չենք սահմանել պայմանները, որոնք մենք ուզում ենք յարմարւել, կամ որոնք ուզում ենք փոխել: Մեր կարողութիւններից ելնելով, մենք պէտք է դասակարգենք այդ պայմանները երկու խմբերի: Նրանք՝ որոնց փոփոխութիւնը մեզանից կախւած չէ, և նրանք՝ որոնք մենք ի վիճակի ենք փոխելու: Բացի դրանից, անհրաժեշտ է կատարել հնարաւորին չափի ճիշտ գնահատական մեզանից անկախ փոփոխութիւնների ուղղութեան մասին, այսինքն՝ պարզել թէ ո՞ւր է գնում աշխարհը իր արժէքներով ու հաստատութիւններով, որպէսզի քայլ պահենք հէնց այդ հոսանքի մէջ:

Դարասկզբին Հ.Յ. Դաշնակցութիւնը, և ոչ միայն նա, տեսնում էին աշխարհը՝ դէպի ընկերվարութիւն գնացող: Ու պէտք է ասել, որ չսխալւեցին: Այդպէս էլ եղաւ, միայն թէ որոշ երկրներում այդ վարչակարգը այլանդակ ձեւեր ընդունեց: Ընդհանուր ուղղութիւնների գնահատականի հարցը շատ աւելի կարեւոր է, քան մեզ երբեմն թւում է, քանզի աշխարհում լռելեայն գործում է մշակոյթի իրաւունքը, որը երբեմն լինում է շատ աւելի հզօր, քան ուժի կամ արդարութեան իրաւունքն է:

Բայց մենք ի՞նչ ենք անում ընդհանուրի հետ ոտք պահելու համար: Մենք յաճախ մեզ համեմատում ենք հրեաների հետ և ինքնաքննադատութեան կարգով պնդում, թէ նրանք այս կամ այն բանը կարողացան անել, իսկ մենք ոչ: Բայց նրանք այսօր կարողանում են հրաշքներ գործել, որովհետեւ շատ վաղուց պատրաստւում էին այդ հրաշքներին: Նրանք շատ վաղուց հասկացան, թէ ո՞ւր է գնում մարդկութիւնը և ի՞նչ դեր պիտի կատարեն ապագայում մամուլը, կրօնը, ժողովրդավարութիւնը, ընկերվարութիւնը և ամուր տեղեր գրաւեցին բոլոր այս բնագաւառներում:

Վերցնենք, օրինակ, ազգային պետութեան հարցը: Ի՞նչ ապագայ նա ունի: Մնալո՞ւ են նման պետութիւնները, որպէս ազգային կեանքի ապահովութեան միակ ձեւերը: Գուցէ Խորհրդային Միութիւն կոչւող կայսրութիւնը ոչ թէ տապալւելու է՝ առանձին ազգային պետութիւնների բաժան-բաժան լինելով, այլ ստեղծւելու է մի նոր տեսակի համադաշնակցութիւն: Չէ՞ որ այդ ընթացքը մեզանից կախւած չէ և շատ հաւանական է, որ Խորհրդային Միութեան ներսում ընդհանրապէս վերանան ազգային հանրապետութիւնների սահմանները և ազգային համայնքները իրենց ազգային կեանքը կազմակերպեն այլ հիմքերի վրայ: Եթէ նման ընթացքը հնարաւոր է, պատրաստո՞ւմ ենք մենք արդեօք դրան, գրաւո՞ւմ ենք արդեօք համապատասխան դիրքեր՝ նոր կառոյցի մէջ որոշակի դեր կատարելու և մեր շահերը պաշտպանելու համար:

Հաւանաբար սկզբից անհրաժեշտ է պարզել, թէ այդ ո՞ր պայմաններն են, որոնք ազդում են մեր ազգային կեանքի վրայ, բայց որոնց փոփոխումը մեզանից

կախւած չէ: Խորհրդային Միութեան վարչակարգի մէջ փոփոխութիւնները կատարւում ու պիտի կատարւեն մեզանից անկախ: Կը մնա՞յ Գորբաչեւը երկրի ղեկավար, թէ Ռուսաստանում նոր թագաւորութիւն կը հաստատւի: Մենք դրան ո՛չ խանգարել և ո՛չ էլ օգնել կարող ենք: Ուրեմն այս հարցում մենք յարմարողի դերում պիտի լինենք:

Նոյնը վերաբերւում է Միացեալ Նահանգներին կամ Եւրոպական պետութիւններին, որոնցից մենք պահանջատէր ենք շատ հարցերում, բայց որոնց դէմ պայքարը մեր գործը չէ: Այստեղ էլ մենք պէտք է յարմարւենք այնպէս, որ աւելի շատ շահենք, քան մեր ազգային շահերին հակադրւած ուժերը:

Բայց ո՞վ պիտի վարի յարմարւելու կամ մեր շահերը պաշտպանելու այդ քաղաքականութիւնը: Անշուշտ, Հայաստանի պաշտօնական իշխանութիւնները՝ Հայրենիքի ու արտերկրի տարբեր կազմակերպութիւնների օգնութեամբ: Այդ իշխանութեան ստեղծումը միայն ու միայն հայ ժողովրդի գործն է և այստեղ յարմարւելու հարց չկայ ու չի կարող լինել: Այստեղ տեղը չէ քննութեան ենթարկելու համար բոլոր այն իրադարձութիւնները, որոնք տեղի ունեցան Հայաստանում և Արցախում, սակայն մի քանի կէտեր անհրաժեշտ է նշել, որպէսզի պարզ դառնայ, թէ ինչո՞ւ այսօր Հայաստանում շատերը շարունակում են սպասել Դաշնակցութեանը:

1.- Արցախի հարցը առաջ քաշւեց արցախցիների կողմից և անհրաժեշտ էր նրանց օգնել ու պաշտպանել, և ոչ թէ կացութիւններ ստեղծել ու խնդիրը Արցախից Հայաստան տեղափոխել: Արցախի հարցը ամենասկզբից դրւած էր ճիշտ քաղաքական հողի վրայ, քանզի շեշտւում էր Ադրբեջանի իշխանութեան տակից դուրս գալու անհրաժեշտութիւնը: Իսկ դուրս գալուց յետոյ, կը լինէր նա անկախ, կը միանար Հայաստանի հետ, կը մտնէր նախագահական կառավարման տակ, թէ կը մտնէր Ռուսաստանի կազմի մէջ, նշանակութիւն չունէր: Նախ անհրաժեշտ էր դուրս գալ ադրբեջանցիների իշխանութեան տակից, որովհետեւ նրանք ոտնահարում էին հայ ազգային արժէքները ու հալածում էին հայերին: Խորհրդային Միութեան ներսում կարելի էր միայն այս պահանջով հրապարակ իջնել, բայց ոչ հողային պահանջներով, որոնք երբեք չէին կարող բաւարարւել: Եթէ այնուամենայնիւ, արցախցիները պահանջում էին Հայաստանի հետ միացում, ապա՝ միայն այն պատճառով, որ այդ միացումը ապահովելու էր իրենց ազգային կեանքը: Այս իմաստով յատուկ Կոմիտէի ստեղծումը՝ Վոլսկու ղեկավարութեամբ, արցախցիների փայլուն յաղթանակն էր: Դրանից այն կողմ գնալը՝ գոյութիւն ունեցող պայմաններում, անիմաստ էր: Ինչպէս վկայեց Ստեփանակերտի քաղաքապետ Մ. Միրզոյեանը, Վոլսկու Կոմիտէի հետ կարելի էր բոլոր խնդիրները լուծել և արդէն այդ խնդիրների մեծ մասը լուծւելու վրայ էին:

Սակայն, սկզբից «Ղարաբաղ» կոմիտէն, ապա ՀՀՇն, որի անդամները բանտից դուրս եկան որպէս հերոսներ, իրենց ձեռքը վերցրեցին Արցախի խնդրի լուծումը, ներկայացրեցին քաղաքական կացութեանը չհամապատասխանող պահանջներ և փաստօրէն, ի ուրախութիւն ադրբեջանցիների, տապալեցին թէ՛ Վոլսկուն և թէ նրա Կոմիտէն: Իսկ երբ ընդունեց Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհրդի վերջին որոշումը, ՀՀՇի ճնշման տակ Հայաստանի Գերագոյն Խորհուրդը անմիջապէս հրաժարուեց այդ որոշումը ճանաչելուց և, կարծես թէ ադրբեջանցիներին գրգռելու համար, Գետաշէն գիւղը և Շահումեանի շրջանի այլ հայկական գիւղեր Հայաստանի հովանաւորութեան տակ գտնուող յայտարարեցին: Այդ գիւղերը, անշուշտ, անմիջապէս դատարկուեցին, իսկ Հայաստանի իշխանութիւնները սկսեցին բողոքել ադրբեջանցիների դէմ, յենուելով հէնց այն որոշման վրայ, որը հրաժարուել էին ճանաչել:

Այս պայմաններում ՀՀՇն կամաց-կամաց կորցրեց իր հեղինակութիւնը, քանզի տարուել էր տեղի-անտեղի ցոյցերով, իսկ երբեմն էլ բռնութեան էր դիմում, ճիշտ այնպէս, ինչպէս ժամանակին վարւում էին բոլշեւիկները: Ի՞նչ անել, որտեղի՞ց օգնութիւն սպասել: **«Դէ հասիր Անդրանիկ…»**:

2.- Միանգամայն շփոթ է տիրում անկախութեան ռազմավարութեան մէջ: Հ.Յ.Դաշնակցութիւնը դեռեւս 13րդ Ընդհանուր Ժողովին, որը կայացաւ 1938 թւականին Կահիրէում, մշակեց Հայրենիքի ազատագրման պայքարը հանգրւանային լուծումներով իրականացնելու ռազմավարութեան սկզբունքը, ինչը նշանակում էր, որ անկախութեան պայքարը կարող է սկսւել միայն այն պահին, երբ լուծւած լինեն բոլոր նախորդ փուլերի խնդիրները, նոյնիսկ եթէ ստեղծւել են պայքար սկսելու արտաքին պայմանները: Սակայն Հայաստանի այլախոհութիւնը, յատկապէս Պարոյր Հայրիկեանի խումբը, որը ժամանակին քարոզում էր անկախութեան արժէքի բարոյական կողմը, Գորբաչեւի օրերին անկախութիւնը դարձրեց քաղաքական նպատակ ու սկսեց իր պայքարը անկախութեան համար, որը ստեղծւած պայմաններում դաւաճանութեան նման մի բան էր, քանզի լուծւած չէին նախորդ փուլերի խնդիրներից և ոչ մէկը (ազգահաւաքը, հողահաւաքը, տնտեսական անկախութիւնը, արտաքին աշխարհում ներկայացուցիչներ ու դաշնակիցներ ունենալը, քաղաքական նպատակների ձեւակերպումը և այլն):

Մինչդեռ անկախութիւն ձեռք բերելու ռազմավարութիւնը կարող էր լինել հետեւեալը, անկախ նրանից՝ սիրո՞ւմ ենք մենք Գորբաչեւին, Ռայիսային, ռուսներին կամ կոմունիստներին՝ մենք չենք ուզում դուրս գալ Խորհրդային Միութեան կազմից ու պիտի միշտ մնանք մեծ ռուս ժողովրդի հետ: Եթէ ադրբեջանցիները ուզում են դուրս գալ, թող դուրս գան, բայց իրենց հետ չեն կարող տանել Արցախը և Նախիջեւանը: Վրաստանը նոյնպէս կարող է դուրս գալ,

թողնելով երկրում Ջաւախքը: Լիտւայի հարցում Խորհրդային Իշխանութիւնները արդէն խաղացրին Բելոռուսիային, որը յայտարարեց, որ Լիտւան կարող է դուրս գալ Խորհրդային Միութիւնից, սակայն չի կարող իր հետ տանել Բելոռուսիայի այն հողերը, որոնք ժամանակին տրւեցին Լիտւային, քանզի համարում էին նրան եղբայրական հանրապետութիւն:

Այս հարցում կարելի է անել նաեւ աւելին: Եթէ բոլոր հանրապետութիւնները ուզում են դուրս գալ, իսկ Հայաստանը մնում է ռուսների հետ, ապա այս երկու ժողովուրդները պէտք է ընդհանուր սահման ունենան, չէ՞ որ մէկ պետութեան մէջ են մտնում: Ուրեմն այդ սահմանը պիտի ստեղծւի, գուցէ աբխազներին միացնելով Հայաստանին, կամ այլ ճանապարհ որոնելով: Այս ընդհանուր դատողութիւնները կարելի է վերաձել լուրջ ռազմավարութեան ու վարել այդ քաղաքականութիւնը Գերագոյն Խորհրդի հայ պատգամաւորների միջոցով և ռուս մտաւորականների հետ շփւելով: Այս բանը չարւեց ու չէր կարող արւել, քանզի նման ռազմավարութիւն առաջարկողներին կը մերժէր ՀՀՇն, Պարոյր Հայրիկեանի կուսակցութիւնը և հէնց ինքը՝ ժողովուրդը, որը յաճախ յայտարարում է, որ մենք երբեք դիւանագէտներ չենք ունեցել: Բայց դիւանագէտները ծնւում ու զործում են քաղաքականացւած ժողովուրդների մէջ և նրանց զործունէութիւնը պահանջում է որեւէ կուսակցութեան կամ կազմակերպութեան հեղինակութիւն: Իսկ երբ մի ժողովուրդ իր ղեկավարներին ծաղրի է ենթարկում, կանանց վարտիկներ կախելով Կոմկուսի Կենտկոմի շէնքի վրայ, հրապարակով նսեմացնում է իր վարչապետին ու ծեծի է ենթարկում Հայաստանի նախագահին՝ որտեղի՞ց պիտի նա ձեռք բերի այն առաջնորդին, ո՞ւմ յետեւից պատրաստ է զնալու՝ հաւատալով նրա փորձին, ուժին, անձնազոհութեանը ու նւիրւածութեանը: Իզոր Մուրադեանը վերջերս **«Դրօշակ»**ի էջերում զրեց.

«Այս ամէնը կարող է իրականացնել ազգային կուսակցութիւնը, որպիսին հայրենիքում չկայ»:

- «Դէ հասիր Անդրանիկ…»

3.- Կայսրութեան փլուզման նպատակով մղւող պայքարները ոչ այլ ինչ են, եթէ ոչ քաղաքական արկածախնդրութիւններ: Առաւել եւս անընդունելի է, կեղծ ժողովրդավարական սկզբունքներից ելնելով, դաշինք կնքել աղրբեջանցիների կամ վրացիների հետ՝ ռուսների դէմ: Ընդհանրապէս պէտք է խուսափել բոլոր այն շարժումներից, որոնք ըստ էութեան հայկական բնոյթ չեն կրում: Մինչդեռ մենք ուրախութեամբ նետւում ենք նման շարժումների մէջ, առանց հաշիւ տալու, թէ ի՞նչ կարող ենք մենք այնտեղից շահել: Նման քայլերի շարքին կարելի է դասել Գդլեանի ու Իվանովի շուրջ բարձրացւած աղմուկը:

Մայիս 1990ի սկզբին ՏԱՍՍ զործակալութիւնը հաղորդեց, որ Խորհրդային Միութեան դատախազութիւնը նախազգուշացնում է, որ Խորհրդային Միու-

թեան ժողովրդական պատգամաւորներ Թելման Գդլեանը և Նիկոլայ Իվանովը, ինչպէս նաեւ Ռուսաստանի ժողովրդական պատգամաւոր Տատիանա Կորկագինան պատասխանատու են նախագահ Գորբաչեւի դէմ անհիմն մեղադրանքներ ներկայացնելու մէջ: Վերջին ժամանակներս, չնայած դատախազութեան նախազգուշացումներին, նրանք ուժեղացրին իրենց զրպարտչական արշաւը: Յայտնի է, որ ժողովրդական պատգամաւորների յանձնաժողովը քննեց Գդլեանի և Իվանովի մեղադրանքները երկրի բարձրագոյն ղեկավարների նկատմամբ ու այդ մեղադրանքները գտաւ անհիմն: Այդ անձնաւորութիւնները ոչ միայն չեն կարող կրել ժողովրդական պատգամաւորի պատուաւոր անունը, այլեւ պէտք է կանչւեն քրէական պատասխանատուութեան:

Այսպիսով՝ Գդլեանը և Իվանովը դարձել են համամիութենական բանավէճի առարկայ: Նրանք փաստօրէն մեղադրում են Գորբաչեւին ու Լիգաչեւին՝ կաշառակերութեան մէջ: Նրանցով զբաղւում է Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհուրդը: Նրանցից ուզում են խլել պատգամաւորի կոչումը՝ քրէական պատասխանատուութեան կանչելու համար: Եւ, յանկարծ, Հայաստանը նրանց քաղաքական ապաստան է տալիս: Յայտարարում է, թէ նրանց ընտրում է Հայաստանի ժողովրդական պատգամաւորներ, որպէսզի պահպանի նրանց անձեռնմխելիութիւնը: Ո՞ւմն է պէտք այս թատրոնը: Մի՞թէ մենք համոզւել ենք, որ Գդլեանի մեղադրանքները Գորբաչեւի դէմ ճիշտ են: Կամ գուցէ և ճիշտ են, բայց մենք ենք, որ պէտք է հակա-գորբաչեւեան այդ արշաւի գլուխն անցնենք: Դեռեւս երէկ կարծես դատարանի առջեւ մեղադրում էինք վարչապետ Մարգարեանցին, թէ հայերէն չգիտէ, իսկ այսօր Գդլեանին ու ռուս Իվանովին, որոնք նոյնպէս հայերէն չգիտեն՝ Հայաստանի պատգամաւոր ենք ընտրում: Ինչո՞ւ: Միայն մէկ նպատակով՝ միանալ հակագորբաչեւեան արշաւին: Այստեղ կրկին ուզում եմ մէջբերել Իգոր Մուրադեանի այն միտքը, թէ **«Հայաստանում և Արցախում ծաւալուած ազգային շարժմանը մեծ վնաս են հասցնում նաեւ այն քաղաքական գործիչները, որոնք պատկերացում չունեն խնդրի լուծման ուղիների մասին և ոչ էլ յստակ դիրքորոշում ունեն Մոսկուայի հետ յարաբերութիւններում»**:

Յիրաւի, միայն յստակ դիրքորոշման բացակայութեամբ կարելի է բացատրել այն խայտառակ երեւոյթները, որոնք իշխանութեանց կեցւածքի մակարդակին տեղի են ունենում Հայաստանում:

Զինւած մարդիկ շրջապատում են քաղկոմի շէնքը և վերջնագիր ներկայացնում Հայաստանի ղեկավարներին: Կատարւում է յարձակում Անվտանգութեան Մարմինների շէնքի վրայ: Լենինի պողոտայից առանց պաշտօնական որոշման հանւում է Լենինի անունը, ապա պահանջւում է, որ Լենինի հրապարակից հանւի Լենինի արձանը: Դժւար է չհամաձայնւել այդ պահանջի ար-

դարութեան հետ, սակայն մե՞նք պիտի բարձրացնենք Լենինին հեղինակազրկելու հարցը: Այդպիսի հարցեր մենք արդէն ժամանակին բարձրացրինք: Հերկիզեցինք Լենինի նկարը հրապարակում և ռումբ պայթեցրինք Մոսկւայի Մետրոյում: Մի՞թէ մեր գործն է այս ամէնը: Մի՞թէ Ստալինին առանց մեր ճիգերի դուրս չդրեցին Լենինի Դամբարանից: Կամ՝ մե՞նք էինք որ վարկափրկեցինք Բուխարինին, կամ Տրոցկուն: Մի՞թէ մենք որեւէ բան կարող ենք անել այս ոչ-հայկական գործերում: Եւ, վերջապէս, եթէ Լենինի արձանը քանդելու պահանջը ներկայացնելու համարձակութիւնը ունենք, ինչո՞ւ, օրինակ, չենք ստեղծում արտերկրում Հայաստանի ներկայացուցչութիւն, որը արտասահմանեան պետութիւնների առջեւ կատարէր դիւանագիտական առաքելութեան դեր, պաշտպաներ Հայաստանի շահերը և այլն:

Լաւ չէր լինի՞, որ Լենինին հարւածելու ու ԿԳԲի վրայ յարձակում գործելու փոխարէն, հաշուէինք մեր ուժերը ու ըստ այնմ որոշէինք մեր անելիքները: Այսօր նեղն ընկած հայ ժողովուրդը իր բողոքագրերում նշում է, որ Անցեալ Տարւայ Նոյեմբերի 28ին Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհրդի որոշումը չի իրականացւում: Այդ որոշման մէջ ասւած էր, որ անհրաժեշտ է դիմել միջոցառումների, որոնք անկարելի են դարձնում Արցախում գոյութիւն ունեցող ազգային կառոյցի փոփոխութիւնը որեւէ ազգի օգտին: Բայց այդ որոշումը Հայաստանի Գերագոյն Խորհուրդը, հաւանաբար ՀՀՇի ճնշման տակ, չճանաչեց: Ուրեմն՝ Ռադաեւը, Սաֆոնովը, Պոլեանիչկոն, ում դէմ բողոքում են Արցախի ղեկավարները, ձեւականօրէն կարող են ասել, որ Դուք արցախցիներդ Հայաստանի Գերագոյն Խորհրդի հետ միասին չճանաչեցիք այդ որոշումը և ընդունեցիք ուրիշ որոշում, որի դէմ էլ մենք այսօր պայքարում ենք: Այնպիսի տպաւորութիւն է ստեղծւում, որ հայ ժողովուրդը չարաճճի երեխաների պէս որոշել է որքան կարելի է իր դէմ լարել ռուսներին, Գորբաչեւին, խորհրդային բանակին, ԿԳԲին և բոլորին-բոլորին: Ինչպէս հանգստացնել այս անպատասխանատու չարաճճիներին:

«Դէ հասիր Անդրանիկ…»

Այսպէս, Հ.Յ.Դաշնակցութիւնը երկնային յոյսից ու հաւատքից, ազգային արժէքների վերականգնման ճամբով, Հայաստանում դարձաւ իրականութիւն, կամ՝ աւելի ճիշտ, իրականութեան անհրաժեշտութիւն:

Սակայն, այսօր էլ, Դաշնակցութիւնը Հայաստանում վարկափրկւած չէ:

Մարտի 25ին Հայաստանի անվտանգութեան Կոմիտէի նախագահ Բադամեանցը **«Կոմունիստ»** թերթի հետ ունեցած հարցազրոյցում ասաց հետեւեալը. **«Հայաստանի խորհրդայնացումից յետոյ խորհրդային իշխանութիւնները աւանդական բարեկամական կապերի մէջ են «Հնչակ» և «Ռամկավար» կուսակցութիւնների հետ: Ինչ վերաբերւում է «Դաշնակցութեանը», ապա նրա**

քաղաքական յենահարթակը և նրա հակախորհրդային գործողութիւնները Երկրորդ Համաշխարհային Պատերազմի ժամանակ թոյլ չէին տալիս, որպէսզի նրա հետ որեւէ յարաբերութիւններ հաստատուէին: Սակայն այստեղ էլ կան առողջարար ընթացքներ: Դաշնակցականների բնական ձգտումը՝ դէպի իրենց պատմական հայրենիքը, շատ բան փոխեցին: Ինքներդ դատէք: Դաշնակցութեան 24րդ համագումարը, որը տեղի ունեցաւ 88 թւականի օգոստոս ամսին, առաջին անգամը լինելով որոշում ընդունեց և յայտարարեց Խորհրդային Միութիւնում տեղի ունեցող վերափոխութիւնների անվերապահ պաշտպանութեան մասին, ինչպէս նաեւ հրաժարուեց որեւէ գործողութիւններից, որոնք ուղղած լինէին Խորհրդային Միութեան, կամ նրա մաս կազմող Խորհրդային Հայաստանի դէմ: Դաշնակցութիւնը բացայայտօրէն յայտարարեց, որ կտրականապէս համաձայն չէ Խորհրդային Միութեան կազմից Հայաստանի դուրս գալու հետ, հասկանալով այդ քայլի կործանիչ հետեւանքները: Դաշնակցութիւն կուսակցութեան Բիւրոն քննադատեց մի շարք հասարակական կազմակերպութիւններ ու խմբաւորումներ, որոնք վնաս են հասցնում ռուս և հայ ժողովուրդների բարեկամութեանը: Խելամիտ և հաւասարակշռուած դիրք բռնեցին Դաշնակցականները նաեւ Անդրկովկասում ծագած ազգային բախման նկատմամբ: Սա իրականութիւն է, որի հետ անհրաժեշտ է հաշւի նստել: Երկխօսութիւնը հնարաւոր է դարձել: Մենք շնորհակալութեամբ ընդունեցինք Դաշնակցութեան օգնութիւնը երկրաշարժից տուժած շրջանները վերականգնելու համար»:

Սա նշանակում է, որ Դաշնակցութիւնը լաւացաւ և մենք կարող ենք նրա հետ համագործակցել: Բայց դա վարկափրկում չէ: Ոչ թէ Դաշնակցութիւնը լաւացաւ, այլ դուք փոխուեցիք, ուստի ստիպւած եղաք ճանաչելու, որ սխալ էիք Դաշնակցութեան գնահատականներում: Սա կը լինէր վարկափրկում: Բայց նման վարկափրկումից յամառօրէն խուսափում է Հայաստանի ղեկավարութիւնը: 1990 թւականին հրատարակւեց **«Հայ Ֆեդայիներ»** օրացոյցը, որտեղ ոչ մէկ բառ չկայ Դաշնակցութեան մասին, չնայած նրան, որ բոլոր ֆեդայիները դաշնակցական էին:

Եւ այստեղ էլ կարելի է նոյն հարցը տալ.-

Լենինի յուշարձանը քանդելու, ԿԳԲի վրայ յարձակւելու, երկրի բարձրագոյն օրէնսդիր մարմնին չենթարկւելու համարձակութիւնը ունենք, իսկ Դաշնակցութեան անունը տալուց վախենո՞ւմ ենք:

Բայց ժամանակը չի սպասում: Իրադարձութիւնները այնքան արագ են զարգանում, կամայ թէ ակամայ Դաշնակցութիւնը մուտք կը գործի Հայաստան: Այն էլ ոչ թէ դրսից, այլ կը ծնւի ներսում: Եւ սա կը լինի ամենաբնական ընթացքը: Հ.Յ.Դաշնակցութիւնը միշտ եղել է այնտեղ, որտեղ հայ ժողովուրդը նրա կարիքն է զգացել: Այսօր Արցախում, Հայաստանում և Խորհրդային Միու-

թեան այլ վայրերում հայ ժողովուրդը սպասում է Դաշնակցութեանը, ինչպէս սպասում էր նրա ծնունդին 100 տարի առաջ։

1991

ԴԱՒԱՆԱՆՔՆԵՐԻ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Է. Յովհաննիսեան

Գաղափարների, դաւանանքների, ազգերի, պետութիւնների, կազմակերպութիւնների ու առանձին մարդկանց բարեկամութիւնը կամ թշնամութիւնը պայմանաւորուած է իրենցից աւելի կարեւոր արժէքների գոյութեամբ, որոնց կարելի է հասնել միայն հակադրուած կողմերի ներդաշնակութեան ճամբով: Այս մասին ես բազմիցս խօսել եմ մի շարք յօդուածներում, մասնաւորապէս **«Գիտութի՞ւն է արդեօք մարքսիզմը»** յօդուածաշարքում, որը հրատարակւեց **«Ազդակ Շաբաթօրեակ-Դրօշակ»**ի 42-45 համարներում, 1974 թւականին: Սակայն համարեցի, որ անհրաժեշտ է կրկին անդրադառնալ այս հարցին, առնըւազն երկու հետեւեալ պատճառներով:

1.- Խորհրդային Միութիւնում և յատկապէս Հայաստանում ստեղծւած կացութիւնը անմիջականօրէն կապ ունի հակադրութիւնների պայքարի փիլիսոփայութեան հետ, որի Մարքսի կողմից սխալ լուծումը մարքսիստներին դարձրեց հասարակական ներդաշնակութիւնը քայքայող և ժողովրդավարութիւնը մերժող ուժ: Մարքսիստական այս ժառանգութիւնը ծանր բեռի նման այնպիսի ճնշում է գործադրում մեր բոլորի հոգեբանութեան վրայ, որ մենք երբեմն մոռանում ենք, թէ որքան ենք նմանւում կոմունիստներին:

2.- Լենինի կամ Մարքսի արձան քանդելը մարքսիզմի և կոմունիզմի դէմ պայքարելու լաւագոյն ձեւը չէ: Նախքան յուշարձան քանդելը անհրաժեշտ է մի երկու տող գրել, թէ որոնք են մարքսիզմի ու լենինիզմի սխալները և ինչ հարւածներ նրանք հասցրին հայ ժողովրդին: Յուշարձանը կարելի էր չքանդել, այլ վրան, օրինակ, գրել. **«Բռնութեան ու դաժանութեան տարիների խորհրդանիշ»**: Բայց այսքանն էլ գրելու համար, անհրաժեշտ էր ցոյց տալ, որ այդ տարիները Լենինի կամ Մարքսի մեղքով իսկապէս որ բռնութեան ու դաժանութեան տարիներ էին:

Այս տարւայ Մարտի 29ին **«Գոլոս Արմենիի»** թերթը հրատարակեց պատմական գիտութիւնների դոկտոր Ռուբէն Սահակեանի **«Չափանիշը անաչառութիւնն է»** յօդուածը, որտեղ հեղինակը գրում է. **«Եթէ մինչեւ վերջ անկեղծ լինենք, ապա Հայաստանի նորագոյն պատմութիւնը կարելի է գրել միայն այն բանից յետոյ, երբ ամբողջովին կը բացւեն Լենինի, Տրոցկու, Ստալինի, Չիչերինի, Կարախանի անձնական արխիւները, ինչպէս նաեւ Քաղբիւրոյի և Կոմինտերնի արձանագրութիւնները, և երբ խորհրդային պատմաբանները արտասահմա-**

նեան արխիւները մանրամասնօրէն ուսումնասիրելու հնարաւորութիւն կը ստանան»:

Եթէ այդ ուսումնասիրութիւնները դեռեւս չեն կատարուած և եթէ նորագոյն պատմութիւնը դեռեւս չի գրուած, ինչո՞ւ շտապել արձաններ հանելու կամ կանգնեցնելու գործում: Առաւել եւս պէտք չէր շտապել այն պայմաններում, երբ Հայաստանի պառլամենտը մերժում է չեղեալ համարել Լենինի և Աթաթիւրքի յայտնի պայմանագիրը: Եթէ այս յանցանքը ներւում է Լենինին, հապա էլ ի՞նչ է արել այդ «խեղճ» մարդը հայ ժողովրդին: Չէ՞ որ Արեւմտեան Հայաստանին վերաբերւող **«Դեկրետն»** էլ գրւել է Լենինի թելադրանքով:

* * *

Այսքանը նախաբան համարելով, անցնեմ Մարքսի այն գլխաւոր սխալին, որի հետեւանքով ցնցւեցին ու ստրկացան բոլոր այն հասարակարգերը, ուր մուտք գործեց մարքսիզմը: Այդ երկրները շարունակում են ցնցւել նոյնիսկ այն ժամանակ, երբ մարքսիզմը և կոմունիզմը տապալւեցին:

Անակսիմանդրից Հեռակլիտի միջոցով մինչեւ Սոկրատէս, Արիստոտել ու Պղատոն. նրանցից էլ Հեգելին ու Մարքսին հասաւ դիալեկտիկական այն հիմնական սկզբունքը, որի համաձայն հակադրութիւնների պայքարը զարգացման աղբիւրն է: Այս սկզբունքը ճանաչում են աշխարհի բոլոր դպրոցների փիլիսոփաները, այդ թւում նաեւ Մարքսը: Սակայն վերջինս կամ չկարողացաւ հասկանալ և կամ էլ քաղաքական նկատառումներով չուզեց ճանաչել այն տարրական ճշմարտութիւնը, որ հակադրութիւնների պայքարը զարգացման աղբիւր կարող է դառնալ միայն այն դէպքում, երբ այդ պայքարը աւարտւում է հաշտութեամբ, համերաշխութեամբ, ներդաշնակութեամբ:

Հակադրութիւնները ամբողջութեան ներքին մասնիկներն են, որոնց միասնութիւնից էլ կախւած է ամբողջութիւնը: Եթէ այդ մասնիկները իրենց պայքարի ընթացքում ոչնչացնեն մէկը միւսին, կ'ոչնչանայ ինքը՝ ամբողջութիւնը:

Մարքսին նման ելքը ոչ միայն չի սթափեցնում, ոչ միայն չի ստիպում հրաժարւել անհեթեթութիւններից, այլ նա դիտաւորեալ հակադրութիւնների ոչընչացման ճամբով ոչնչացնում է իր առջեւ կանգնած բոլոր ամբողջութիւնները:

Տեսնելով դասակարգային հակադրութիւնները, նա վերացնում է դասակարգերը: Տեսնելով տարակարծութիւններ ընտանիքի անդամների միջեւ, նա ոչնչացնում է ընտանիքը: Ազգային հակասութիւնները վերացնում են ազգերը, պետական հակասութիւնները՝ պետութիւնը: Կոմունիզմ կոչւող հասարակարգը դառնում է դասակարգերից, ազգութիւններից, ընտանիքից ու պետու-

թիւնից զուրկ մի անհամ ու անհոտ կեցութիւն, որը ոչ թէ կենդանի մարդկանց, այլ ռոբոտների համար է:

Անշուշտ, այս դատարկ և որեւէ բովանդակութիւնից զուրկ հասարակարգը կարող էր ստեղծուել միայն Մարքսի գլխում, բայց երբեք իրականութեան մէջ: Այս իմաստով կարելի էր ուշադրութիւն չդարձնել մարքսիստական այս ցնդաբանութիւնների վրայ, եթէ նրանք արմատապէս չփոխէին հասարակական արժէքների բուն իմաստը, եթէ նրանք չստեղծէին բոլորովին նոր, ծայր աստիճան վտանգաւոր մարդկային հոգեբանութիւն, որից մենք բոլորս տառապում ենք մինչեւ օրս:

Յիրաւի, եթէ գոյութիւն չունեն ներդաշնակութիւնը, համերաշխութիւնը, համագործակցութիւնը, աշխատանքի բաժանումը, ապա հակադրութիւնների բնական պայքարը աւարտուելու է կա՛մ երկու կողմերի և կամ էլ կողմերից մէկի ոչնչացումով: Այս գիտակցութեամբ մղուող պայքարը կարող է միայն կատաղի ու քայքայիչ լինել, քանզի նրա միակ նպատակը՝ հակառակորդին ոչընչացնելն է: Ոչ թէ «թեզից» ու «անտիթեզից» «սինթեզի» ստեղծումը, այլ թեզի կամ հակաթեզի ոչնչացումը, որից յետոյ զարգացում չի կարող տեղի ունենալ: Աւելին՝ թեզի ոչնչացումից յետոյ պիտի վերանայ նաեւ հակաթեզը, քանզի նրա գոյութիւնը պայմանաւորուած է առաջինով:

Մինչդեռ դիալեկտիկայի էութիւնը սինթեզի մէջ է, երբ հակադրուած կողմերից ստեղծւում է մի նոր կացութիւն, որին ներդաշնակօրէն մասնակցում են բոլոր կողմերը:

Մարքսիզմը պնդում է, որ պատմութիւնը դասակարգերի պայքարի պատմութիւնն է: Սակայն այս նոյն յաջողութեամբ կարելի է պնդել, որ պատմութիւնը դասակարգերի ներդաշնակութեան և համագործակցութեան պատմութիւնն է, մէկ բան՝ որ կտրականապէս մերժում է Մարքսը: Մարքսիզմը պնդում է, որ կեցութիւնն է որոշում գիտակցութիւնը: Սակայն նոյն յաջողութեամբ կարելի է ասել, որ կեցութիւնը որոշւում է գիտակցութեամբ, քանզի գիտութիւնը իրաւունքը, մշակոյթը, հոգեբանութիւնը, հաւատքը մեծ ազդեցութիւն ունեն կեցութեան վրայ և յաճախ հէնց գիտակցութիւնն է որոշում կեցութիւնը:

Մարքսը բացառում է կոմունիստական կուսակցութեան հաշտութիւնը որեւէ այլ կուսակցութեան հետ, մինչդեռ տարբեր կուսակցութիւնների համագործակցութեան ճամբով է ստեղծւում ժողովրդավարական կառավարութիւնը:

Մարքսը չի գտնում համագործակցութեան եզր բուրժուազիայի և պրոլետարիատի միջեւ, մինչդեռ դրամատիրական երկրներում հէնց այդ համագործակցութիւնն է ստեղծւում՝ ամէն մի գործադուլից կամ արհմիութիւնների պահանջից յետոյ: Զարգացած երկրներում բանւորները պահանջում են աշխա-

տավարձի բարձրացում և կամ էլ աշխատանքային պայմանների լաւացում, բայց երբեք գործատէրերի ոչնչացում, քանզի նրանք քաջ գիտակցում են գործատէրերի հետ համագործակցելու անհրաժեշտութիւնը: Առաւել եւս բանտրների ոչնչացման մասին չեն մտածում գործատէրերը, այլ փորձում են բաւարարել նրանց պահանջները, որտեղից էլ ծնւում է ներդաշնակութիւնը:

Համագործակցութեան այս ոգին էր, որ մարքսիզմը արմատախիլ արեց մարդկանց հոգեբանութիւնից և այսօր մարքսիզմի ազդեցութեան տակ ընկած մարդիկ՝ իրենց կրօնական, դասակարգային, կուսակցական և նոյնիսկ զուտ մարդկային պայքարներում հետապնդում են միայն մէկ նպատակ՝ հակառակորդի ոչնչացումը:

Այս սկզբունքի համաձայն էր, որ բոլոր այն երկրներում, ուր մուտք գործեց մարքսիզմը, ոչնչացան մտաւորականներ, եկեղեցիներ, հոգեւորականներ, մշակոյթներ, ազգեր, կուսակցութիւններ և նոյնիսկ պատմական աւանդոյթներ: Մինչդեռ այս ամէնի միջեւ համերաշխութիւնը կը ստեղծէր այն սինթեզը, ինչով նորմալ պայմաններում պիտի աւարտուէր հակադրութիւնների պայքարով պայմանաւորուած զարգացման ընթացքը: Այն, որ այդ բանը հնարաւոր է, ապացուցեցին ոչ-կոմունիստական երկրների զարգացման ընթացքները: Սակայն մենք՝ հայերս, նոյնպէս ունենք դրա փայլուն օրինակը:

* * *

Հայ Կաթոլիկները, յանձինս Միխիթարեան միաբանութեան, ցոյց տուեցին, որ կարելի էր առանց թշնամանալու Հայ Առաքելական դաւանանքի հետ, ստեղծել ներդաշնակութիւն երկու տարբեր դաւանանքների միջեւ: Նրանց հակադրութիւնը Առաքելական եկեղեցու հետ ոչ միայն չի քայքայում հայ քրիստոնէական հաւատքը, այլ էլ աւելի է հարստացնում այդ ամբողջութիւնը: Հայ Կաթոլիկների համերաշխութիւնը Առաքելական եկեղեցու հետ զարգացման նոր աղբիւր է դառնում հայ մարդու կրօնական մտածելակերպի համար:

Իմ պարտքս եմ համարում այս հարցին յատուկ կերպով նշումը, քանզի վերջերս Հայաստանի Գերագոյն Խորհրդի նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի պատւին տրուած ճաշկերոյթի ժամանակ Վենետիկում, ես փորձեցի այն միտքը յայտնել, որ հայ կաթոլիկները պէտք է մնան իրենց համերաշխութեան դիրքերի վրայ, քանզի այդ դիրքերում նրանք անգնահատելի աջակցութիւն են ցուցաբերում հայ ժողովրդի մշակոյթի և կրօնական մտքի զարգացմանը: Եւ շատ մեծ կորուստ կը լինէր մեզ համար, եթէ նրանք այդ դիրքերից անցնեն մարքսիստական հակադրութեան, այսինքն՝ աշխատեն հայ ժողովրդին կաթոլիկ դարձնելու ուղղութեամբ: Հաւանաբար ես չկարողացայ ճիշտ արտայայ-

տել իմ միտքը, որովհետեւ ինձ հասան որոշ դժգոհութիւններ։ Ահա թէ ինչու ուզում եմ աւելի յստակացնել միտքս։

Ես արդէն ասացի, որ համերաշխութիւնը պայմանաւորւած է աւելի կարեւոր արժէքների գոյութեամբ, որը Մխիթար Սեբաստացու համար հայ ժողովրդի հոգեւոր, մշակութային, կրօնական ու գիտական զարգացումն էր։ Այդ նպատակին հասնելու համար, ամէնաւին էլ անհրաժեշտ չէր հայ ժողովրդին դնել Հռոմի Պապի իշխանութեան տակ և Մխիթարեան միաբանութիւնը երբեք նման փորձ չկատարեց։ Նա ծառայեց հայ ժողովրդին իր սեփական դիրքերից և, այդ ծառայութեան ճանապարհին, տւեց Ալիշաններ ու Զարբհանալեաններ, հրատարակեց բազմաթիւ գիտական աշխատութիւններ, բառարաններ, հանրագիտարաններ, կառուցեց դպրոցներ ու վարժարաններ, ջանք չխնայեց հայ ժողովրդին եւրոպական մշակոյթի հետ ծանօթացնելու, ինչպէս նաեւ հայ մշակոյթը եւրոպացիներին ներկայացնելու դժւարին գործի մէջ։ Հայ ժողովուրդ կոչւող պատմական, կրօնական և մշակութային ամբողջութիւնը զգալիօրէն կը դատարկւէր, եթէ նրա բովանդակութիւնից դուրս գային կաթոլիկները, որոնք այսօր էլ շարունակում են իրենց շնորհակալ ծառայութիւնը հայ ժողովրդին՝ առանց նրա դաւանանքը փոխելու ոտնձգութիւնների և առանց շեշտելու երկու եկեղեցիների դաւանական հակադրւածութիւնները։ Կարելի է ասել, որ այս ոլորտում Մխիթարեան միաբանութիւնը կանգնած է շատ ճիշտ դիալեկտիկական դիրքերի վրայ, այսինքն համերաշխութիւնը ճանաչող և ներդաշնակութեան ձգտող դիրքերի վրայ։ Շատ աւելի անհամերաշխ դիրքերի վրայ է կանգնած Էջմիածնի Աթոռը, որը հայ ժողովրդի կրօնական «սինթեզի» մէջ բացառում է ուրիշ դաւանանքների գոյութիւնը։ Դժբախտաբար, այս հոգեբանութիւնը տիրում է Հայաստանում մարդկային գործունէութեան բոլոր բնագաւառներում։ Սա նշանակում է, որ մարքսիստական հոգեբանութիւնը այնքան է մեր մէջ ամրապնդւել, որ կոմունիստների պէս են վարւում նոյնիսկ նրանք, ովքեր իրենց կոմունիզմի կատաղի հակառակորդներ են հռչակում։ Բաւական է նշել, որ կոմունիստների հետ բոլոր տեսակի համագործակցութիւնները մերժողները ոչ միայն կոմունիստների են նմանւում, այլ կոմունիստներից շատ աւելի վատ են, քանզի «սինթեզից» իրենց հրաժարականը ձեւակերպում են որպէս հակակոմունիստական պայքար և դրանով կարողանում են խաբել միամիտներին։

* * *

Հաւանաբար այս մարդկանց կարելի է հասկանալ, քանզի հակառակորդին ոչնչացնելու անհրաժեշտութիւնը ծնում է բացասական արժէքների հոգեբանութիւն, ինչը բնորոշ է բոլոր նիւթապաշտ գաղափարախօսութիւնների և,

առաջին հերթին, մարքսիզմի համար։ Ի՞նչ է նշանակում **«Ով մեզ հետ չի, նա մեր դէմ է»** թեզը, եթէ ոչ հակառակորդին վերջնականապէս ոչնչացնելու ձգտում։

Եթէ առաջին նիւթապաշտ յեղափոխականները, նամանաւանդ Ռուսաստանում, դեռեւս պահպանել էին իրենց մէջ մարդասիրութիւնը և սէրը դէպի մարդկութիւնը, ապա Մարքսի գաղափարների ազդեցութեան տակ, մարդկութեան նկատմամբ սէրը վերածւեց ատելութեան՝ կենդանի մարդու նկատմամբ։ Յանուն մարդկութեան, յեղափոխականները սպանում էին մարդուն։

Մարքսը վերջնականապէս հրաժարւեց արդարութիւն, սէր, մարդասիրութիւն դրական արժէքներից և մնաց հաւատարիմ աթէիստական նիւթապաշտութեանը։ Թւում էր՝ թէ Մարքսը հաշւի է նստում բարոյականութեան հետ, քանզի առաջ էր քաշել բանւորների շահագործման վերջ տալու թեզը։ Սակայն իրականում, շահագործման թեզը նրան անհրաժեշտ էր միայն ատելութիւն սերմանելու համար, որովհետեւ նա երբեք չխօսեց այն մասին, որ շահագործումը վիրաւորում է անհատի արժանապատւութիւնը, որ ոտնահարւում են նրա իրաւունքները, որ շահագործւած լինելը բանւորին հոգեկան, այլ ոչ թէ միայն նիւթական տառապանք է պատճառում։ Փիլիսոփայութեան մէջ շահագործումը հէնց այս իմաստով է օգտագործւում, այսինքն այն իմաստով, որ մարդը դառնում է որեւէ բանի միջոց, բայց ոչ ինքնուրոյն արժէք։ Իսկ Մարքսը չի ուզում զբաղւել մարդով ու նրա հոգեկան տագնապներով, շահագործմանը նա տալիս է զուտ տնտեսական սահմանում, որպէս յաւելեալ արժէքի խլում, ինչը Մարքսի հերթական անհեթեթութիւնն է, որովհետեւ յաւելեալ արժէքի խլումը անհրաժեշտ է կապիտալի կուտակման համար, առանց որի գոյութիւն չունեն ո՛չ արտադրական միջոցները և ոչ էլ արտադրութիւնը։

Անհատին գնահատելու գաղափարը ունի զուտ քրիստոնէական ծագում և յենւում է մարդասիրութեան բարոյականութեան վրայ։ Իսկ Մարքսին պէտք էր ատելութեան բարոյականութիւնը։ Դրական արժէքները Մարքսի համար վտանգաւոր էին, որովհետեւ նրանք կարող էին ստեղծել սրբութիւններ, սէր ու հաւատք, որոնց դէմ անկարելի էր պայքարել նիւթապաշտական կոչերով։ Մարքսին անհրաժեշտ էր բացասական արժէք և նա գտաւ այդ արժէքը շահագործման մէջ։ Այս իմաստով Մարքսը չի զիջում Գէօթէի Մեփիստոփելին, որը բացասական արժէքներ գտնելու վարպետ էր և իր գլխաւոր նպատակը տեսնում էր Չարը գտնելու մէջ։

Ինչո՞ւ էր Մարքսը կառչել իր նիւթապաշտութիւնից։ Միթէ պարզ չէ՞ր, որ բացի նիւթական արժէքներից՝ աշխարհում գոյութիւն ունեն նաեւ հոգեկան արժէքներ։ Բանը նրանումն էր, որ աթէիստական նիւթապաշտութիւնը տալիս է իշխանութեան գլուխ անցնելու համար բոլոր տեսակի միջոցներ օգտա-

գործելու ազատութիւնը: Աթէիստական նիւթապաշտութիւնը թոյլ է տալիս գործել՝ առանց հաշւի նստելու չարի և բարու հետ: Իսկ դա արդէն մեծ առաւելութիւն է տալիս յեղափոխականին և քաղաքական գործիչին:

Մարդասիրութիւնը, համագործակցութիւնը, արդարութիւնը, համերաշխութիւնը, հաւատքը թուլացնում էին դասակարգային պայքարը ու նրանք տեղ չգտան մարքսիզմի մէջ: Բայց մենք տեսանք, թէ ինչպիսի վարչակարգեր ստեղծեցին մարդասիրութիւնից զուրկ այդ յեղափոխականները:

Եւ եթէ մենք այսօր ուզում ենք շտկել նրանց սխալները ու դատապարտել նրանց յանցանքները, նախ և առաջ անհրաժեշտ է հրաժարւել Մարքսիզմի ծանր ժառանգութիւնից, ընդունելով այն պարզ ճշմարտութիւնը, որ ամբողջութիւն կազմող բոլոր տարրերի հակադրութիւնը պէտք է տանի դէպի ներդաշնակութիւն ու համագործակցութիւն: Այդ դէպքում միայն մարդ և ազգ ամբողջութիւնները կը պահպանեն իրենց բուն էութիւնը: Հակառակորդին ոչընչացնելու, ինչպէս նաեւ յանուն հայութեան հային ոչնչացնելու, բոլոր փորձերը տանում են դէպի անբարոյական վարչակարգ, որից մենք բոլորս տառապում ենք ահա արդէն 7 տասնամեակ: Ահա թէ ինչու Հայաստանում գործող բոլոր կուսակցութիւնները ու կազմակերպութիւնները, այդ թւում նաեւ կոմունիստները, պէտք է իրենց կուսակցական ու գաղափարական պայքարները մղեն ներդաշնակութիւն ու համագործակցութիւն ստեղծելու նպատակով: Սա վերաբերւում է բոլորիս, բայց առաջին հերթին ՀՀՇին:

1991

ԲԱՑԱՅԱՅՏՈՒՄ ԵՆՔ ԴԱՒԱՃԱՆՆԵՐԻՆ ԲԱՑԱՅԱՅՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Է. Յովհաննիսեան

Ինձ համար արդէն վաղուց պարզ է, որ «տապկնոց» խաղալու ժամանակը անցաւ, որ մենք ազգովին կանգնած ենք կործանման եզրին և որ անհրաժեշտ է հրապարակ կանչել ազգի առողջ տարրերին և նրանց ձեռքը տալ Հայաստանի ու հայ ժողովրդի ճակատագրի ղեկը: Բայց այս մասին բացայայտօրէն գրելու իմ ձգտումը ամէն անգամ զսպում էի, քանի դեռ յոյս ունէի, որ ՀՀՇն և Գերագոյն Խորհրդի նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանը կ'ըմբռնեն իրենց ուսերի վրայ ընկած պատասխանատուութիւնը ու կը կատարեն իրենց պարտքը հայ ժողովրդի հանդէպ:

Այդ յոյսը արդէն կորցրել եմ և զսպւածութիւնս էլ վերջ գտաւ, երբ կարդացի Ս. Գէորգեանի յօդուածը, որը հրատարակուեց **«Հայք»** թերթում յունիս 12ին: Կարդացի ու սկզբից շատ վրդովուեցի, ապա՝ անկեղծօրէն ասեմ, լացս եկաւ: Մահացող մարդու մահճակալի մօտ անեկդոտներ պատմելու տե՞ղ է: Մեր այս ճգնաժամային պահին Ս. Գէորգեանը այնպէ՛ս առատօրէն մեզ մատուցում է լրագրողի իր ընդունակութիւնները, այնպէ՛ս համով է ծամծմում բառերը ու նախադասութիւնները, կարծես թէ պատերազմի մէջ չենք, կարծես թէ Ադրբեջանի 18 հայկական գիւղերը դատարկւած չեն, կարծես թէ Հայաստանը արգելափակւած չէ, կարծես թէ ապրում ենք ազատ ու անկախ Հայաստանում ու, սրամտելուց բացի, մենք ուրիշ անելիքներ չունենք: Գէորգեանի յօդուածը, Լեւոն Տէր Պետրոսեանի վերջին ելոյթները և Դաշնակցութեան համակիրների նկատմամբ ցուցաբերւած վերաբերմունքները ցոյց են տալիս, որ ՀՀՇն և Լեւոն Տէր Պետրոսեանի խմբաւորումը բոլոր հայկական խնդիրները մէկ կողմ են դրել և ամբողջութեամբ լծւել են հակադաշնակցական պայքարի, նմանւելով իրենց նախորդող կոմունիստներին: Եթէ դաշնակցականներին առայժմ չեն ձերբակալում, ապա միայն նրա համար, որ ժամանակները փոխւել են, բայց այդ ժամանակներն էլ կը գան, ինչպէս եկան Հարեւան Վրաստանում: Աւելին, հրապարակայնօրէն մեղադրելով Դաշնակցութիւնը կոմունիստների հետ համագործակցելու (նման մեղադրանքն իսկ բխում է քաղաքական տգիտութիւնից) մէջ, ՀՀՇն և Լեւոն Տէր Պետրոսեանը արդէն սկսել են կոմունիստների հետ համագործակցելու նշաններ ցոյց տալ, որը, անշուշտ, յանցագործութիւն չէ, եթէ յենւում է ոչ թէ ուրիշներին հակադրւելու, այլ դրական գործակցութեան վրայ: Բայց վերադառնանք Գէորգեանի յօդւածին, որտեղ արտայայտւած են հետեւեալ մտքերը:

- Դաշնակցութիւնը տարածում է գտնում Հայաստանում, ինչը անցանկալի երեւոյթ է, քանզի նրա անդամները եկւորներ են, իսկ մենք տեղացի ենք և հէնց մենք է, որ ի վիճակի ենք փրկելու Հայաստանը:

- Դաշնակցութիւնը մուտք գործեց Հայաստան իր պահանջատիրութեան ու յեղափոխութեան գաղափարներով, սակայն սրանք նրա անցեալի արժէքներն են, իսկ ներկայումս նա ունի խորհրդայնասիրական տրամադրութիւններ և եթէ նրա խօսքը անցնի, ապա Դաշնակցութիւնը կը հրաժարւի հանրաքւէից:

Ահաւասիկ այսքանը կը մնայ Գէորգեանի յօդւածից, եթէ այն մաքրւի սրամտութիւններից: Իսկ այսքան կարելի էր պատասխանել մի քանի նախադասութեամբ: Այո, Դաշնակցութիւնը տարածւում է Հայաստանում և դա անհրաժեշտ է, քանզի ՀՀՇն Հայաստանը տանում է դէպի կործանում:

Այո, նա ստիպւած է դիմելու «հանգրւանային բացայայտման» քաղաքականութեանը, քանզի ՀՀՇն և Լեւոն Տէր Պետրոսեանի խմբաւորումը ի սպառ հրաժարւեցին ժողովրդավարական սկզբունքներից և, բացի «անսպասելի բացայայտումներ»ի ճանապարհից, ուրիշ ոչ մէկ ճանապարհ թողեցին Դաշնակցութեանը՝ Հայաստանի քաղաքական ու հասարակական կեանքին մասնակցելու համար:

Այո, Դաշնակցութիւնը մուտք գործեց Հայաստան իր գաղափարներով, պատմական փորձով ու Հայ Դատի պահանջատիրութեամբ, բայց իր շարքերը կազմեց տեղացիներից, որոնք ՀՀՇի անդամներից ոչ պակաս իրաւունք ունեն մաս կազմելու սեփական ժողովրդի ճակատագրին: Իսկ ամենակարեւորը այն է, որ Դաշնակցութիւնը երբեք չվնասեց հայ ժողովրդի շահերին ու չդաւաճանեց այդ ժողովրդին, ինչպէս դա արեցին ՀՀՇի ղեկավարները:

Առաջին անգամ նրանք դաւաճանեցին հայ ժողովրդին, երբ թողեցին իրենց տեղերը աղմկող ֆուտբոլասէրների բարձրաբեմերում ու իջան դաշտ՝ ֆուտբոլ խաղալու մտադրութեամբ: Նրանք ֆուտբոլ խաղալ չգիտէին, ուստի հայութեան դարբասը այնքան զնդակ մտաւ, որքան որ հակառակորդը հարւածեց: Նրանք շատ լաւ էին հայ ժողովրդի և մարդկային իրաւունքները պաշտպանելու գործում, որտեղ կարելի էր ազատօրէն աղաղակել, իսկ հրեաները նրանց աղմուկը հասցնում էին միջազգային հասարակութեանը, ինչը բարոյական ճնշում էր գործադրում խորհրդային իշխանութիւնների վրայ: Ճիշտ է, դա հայկական գործ չէր, բայց հայութեանը վնաս էլ չէր հասցնում:

Երանի թէ նրանք մնային իրենց տեղերում և ֆուտբոլի դաշտ չիջնէին: Կամ երանի թէ, համոզւելով որ խաղալ չգիտէին, հրաժարւէին այդ վտանգաւոր խաղից, որ թելադրւած էր ոչ-հայկական ուժերի կողմից: Բայց նրանք մինչեւ այսօր չեն համոզւել, որ խաղալ չգիտեն ու շարունակում են իրենց կործանիչ քայլերը, որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ ազգային դաւաճանութիւն:

Այո, նրանք դաւաճանեցին հայ ժողովրդին՝

- Երբ երեւակայեցրին թէ կարող են կերտել Հայաստանի ճակատագիրը, առանց հաշւի նստելու Մոսկւայի հետ և նոյնիսկ հակառակ նրա շահերի։

- Երբ տապալեցին Ա. Վոլսկու կոմիտէն,

- Երբ հրաժարւեցին ժողովրդավարական սկզբունքներից ու մերժեցին ուրիշ քաղաքական կուսակցութիւնների հետ համագործակցութիւնը։ Նրանք Հայաստանում ստեղծեցին այնպիսի մթնոլորտ, որտեղ ԿԳԲի սարսափը յիշողութեան մէջ պահելով, այժմ էլ սարսափեցնում են ՀՀՇից։ Այժմ ՀՀՇի մենիշխանութիւնը հասնում է իր բնական գագաթնակէտին, ստեղծւում է 15 հոգուց բաղկացած մի ղեկավարութիւն, որին տրւում է մինչեւ անգամ պառլամենտի որոշումները չեղեալ համարելու իրաւունք։

- Երբ արտասահմանեան կապեր հաստատելիս նրանք յենւեցին միայն Դաշնակցութիւնից վտարւած «առաւ-փախաւ» անձնաւորութիւնների վրայ։

- Երբ իրենց երեխայական քայլերով ստիպեցին խորհրդային զօրքերին անցնել ադրբեջանցիների կողմը։ Ադրբեջանցիները սեփական ուժերով երբեք չէին կարող յաղթահարել արցախցիների դիմադրութիւնը։ Նրանց յաջողւեց կոտրել արցախցիներին ու դատարկել Ադրբեջանի հայկական գիւղերը միայն ռուսների օգնութեամբ, որոնք անցան Ադրբեջանի կողմը՝ մեծ դաւաճանութեան շնորհիւ։ Այդ դաւաճանութիւնը կատարեցին նրանք, ովքեր շարունակում են մնալ այսպէս կոչւած **«ժողովրդավարական»**ների ճանկերում, որոնց միակ նպատակը Ռուսաստանի քայքայումն է։

Սեպտեմբեր 21ին Հայաստանում տեղի է ունենալու հանրաքւէ։ Ի՞նչ կարող է պատահել այդ հանրաքւէից յետոյ։ Ենթադրենք թէ հայ ժողովուրդը միաձայնութեամբ քւէարկեց Խորհրդային Միութեան կազմից դուրս գալու օգտին։ Ի՞նչ պիտի դրանից փոխւի։ Նախ նշենք, որ միայն շատ միամիտները կարող են ենթադրել, որ ժողովրդի կամքը կարող է որեւէ նշանակութիւն ունենալ նրա քաղաքական ճակատագրի մէջ։ Եթէ ժողովրդի կամքով, կամ ինքնորոշման իրաւունքով քաղաքական հարցեր լուծւէին, ապա Արցախը վաղուց Հայաստանի կազմի մէջ կը լինէր, իսկ թուրքական զօրքերը վաղուց դուրս եկած կը լինէին Կիպրոսից։ Եւ հարցը այստեղ ոչ միայն քաղաքականութեան անբարոյականութեան մէջ է։ Ժողովուրդների ինքնորոշման իրաւունքը այնքան էլ բացայայտօրէն ընդունւած սկզբունք չէ։

Ազգերի Լիգան, օրինակ, ազգային ինքնորոշման իրաւունքը չճանաչեց, քանզի այդ իրաւունքը չէր համապատասխանում պետութեան գաղափարին։ Այն ժամանակ, ազգային ինքնորոշման իրաւունքը քննելու համար ստեղծւեցին երկու յանձնաժողովներ, որոնցից առաջինը յանգեց հետեւեալ եզրակացութեան **«Նորմալ ժամանակ, ազգային տարածութեան տնօրինելու իրաւունքը**

պատկանում է ինքնիշխան պետութեանը, ուստի, բնակչութեան մէկ մասի պետութիւնից անջատուելու իրաւունքը չի պատկանում ոչ այդ մասին և ոչ էլ որեւէ այլ պետութեան»:

Երկրորդ յանձնաժողովը յայտնեց նոյն տեսակէտը, յայտարարելով թէ **«Ժողովուրդների ինքնորոշման իրաւունքը ազատութեան և արդարութեան սկզբունքն է, որը արտայայտւած է շատ ընդհանուր և անորոշ ձեւով: Կարելի՞ է արդեօք բացարձակ իրաւունք հռչակել այն կարգը, որի համաձայն պետութեան ազգային փոքրամասնութիւնը իրաւունք ունենայ պետութիւնից դուրս գալու, անկախութիւն յայտարարելու կամ մէկ ուրիշ պետութեան միանալու նպատակով: Այս հարցի պատասխանը կարող է լինել միայն բացասական: Ազգային փոքրամասնութիւնների երկրից դուրս գալու իրաւունքի ճանաչումը միայն այն հիման վրայ, որ նրանք ունեն այդ ցանկութիւնը, հաւասար կը լինէր պետութեան ներքին կարգի խախտման և միջազգային կեանքում անիշխանութեան սկզբունքների ճանաչման: Դա կը նշանակէր այնպիսի մի գաղափարախօսութեան պաշտպանութիւն, որը անհամատեղելի է պետականութեան գաղափարի հետ: Բացի այս քաղաքական մօտեցումներից, ազգային ինքնորոշման իրաւունքի ճանաչումը շատ անարդար պիտի նկատուէր այն պետութիւնների նկատմամբ, որոնք պատրաստ են զիջումներ կատարել ազգային հարցում»:**

Նախագահ Վիլսոնը, որը, ինքնորոշման իրաւունքի ճանաչման սկզբունքի հեղինակն էր և որը այդ սկզբունքը պաշտօնապէս առաջ քաշեց 1916 թւականի մայիս 27ին, ստիպւած եղաւ շատ շուտ հրաժարւել իր իսկ սկզբունքից և 1917 թւականի յունուար 22ին արտասանած ճառում յայտարարեց, որ բոլոր ազգութիւնները ունեն մշակութային և հասարակական ինքնուրոյնութեան որոշ իրաւունքներ:

Միայն Երկրորդ Համաշխարհային պատերազմից յետոյ Միացեալ Ազգերի Կազմակերպութիւնը ճանաչեց ազգերի ինքնորոշման իրաւունք, սակայն մինչեւ այսօր ՄԱԿի անդամ երկրներից և ոչ մէկը ներառեալ ամենաժողովրդավարականները, այդ օրէնքը չկիրառեցին, քանզի ազգային իրաւունքի ճանաչումը, ինչպէս նաեւ ժողովրդավարութիւնը ընդհանրապէս, մեր օրերին դարձել են ոչ թէ քաղաքական ,այլ բարոյական սկզբունքներ:

Այս ըմբռնումներով էլ մենք պէտք է մօտենանք գալիք հանրաքւէին: Հանրաքւէի արդիւնքները ոչ մէկ նշանակութիւն կարող են ունենալ իրական անկախութիւն ձեռք բերելու հարցում: Այդ հանրաքւէն կարող է միայն մէկ բան տալ: Լեւոն Տէր Պետրոսեանը կարող է ստանալ իր հետագայ վտանգաւոր քայլերի համար ժողովրդի համաձայնութիւնը: Այսինքն, հայ ժողովուրդը, կամ աւելի ճիշտ հայաստանցիները (քանզի Սփիւռքը զրկւած է հանրաքւէին մասնակցելու իրաւունքից) սեպտեմբեր 21ին քւէարկելու են ոչ թէ անկախութիւն

ձեռք բերելու, այլ Լեւոն Տէր Պետրոսեանի այդ ուղղութեամբ կատարուող քայլերը արդարացնելու համար: Աւելին՝ ինքը Լեւոն Տէր Պետրոսեանը, հաւանաբար, այդ հանրաքւէն համարում է իրեն տրուած վստահութեան քւէ և որոշ չափով իրաւացի է: Նրա խմբաւորումը իշխանութեան գլուխ անցաւ քաղաքականօրէն խառն քւէներով և այժմ անհրաժեշտ է պարզել, թէ ինչ հեղինակութիւն է վայելում այդ խմբաւորումը ժողովրդի մէջ: Նամանաւանդ՝ այդ բանը անհրաժեշտ է պարզել, երբ Լեւոն Տէր Պետրոսեանը կատարում է լուրջ քաղաքական քայլեր, առանց ժողովրդի հետ հաշւի նստելու: Յունիս 5ին Հայաստանի Խորհրդարանում արտասանած ճառում, Տէր Պետրոսեանը բողոքեց, թէ **«Մեզ հիմա կողքից փորձում են ճնշել խորհրդարանից դուրս գտնուող ուժեր: Դրանք մտաւորականներ են, Արցախի ներկայացուցիչները, Սփիւռքում Դաշնակցութիւնը, որոնք փորձում են մեզ քաղաքականութիւն թելադրել»:** Հապա ի՞նչ անեն մտաւորականները ու Դաշնակցութիւնը, եթէ Խորհրդարանի ՀՀՇական ղեկավարները գաղափար չունեն քաղաքականութիւնից: Եթէ գաղափար ունենային, ապա Լեւոն Տէր Պետրոսեանը Միթերանին ու Ամերիկեան Ստէյթ Դեպարտամենտին քաղաքական դասեր չէր տայ, թէ նրանք սխալ են վարւում, պաշտպանելով Գորբաչովին, թէ պէտք է հանրապետութիւններին պաշտպանեն: Ինքը կարո՛ղ է աշխարհի ամենափորձաւած դիւանագէտներին քաղաքական խորհուրդներ տալ, իսկ հայ մտաւորականները ու Դաշնակցութիւնը իրեն խորհուրդ տալու այդ իրաւունքից զո՞ւրկ են:

Բայց վերադառնանք հանրաքւէին: Մէկ կողմ դնենք այն հարցը, թէ որքա՞ն Մոսկուան հաշւի է նստելու հայաստանցիների կամքի հետ, տեսնենք թէ ի՞նչ կարող է կատարել Լեւոն Տէր Պետրոսեանը, եթէ ժողովուրդը քւէարկի Միութիւնից դուրս գալու օգտին, այսինքն վստահութեան քւէ տայ Գերագոյն Խորհրդի նախագահին: Յենւելով Լեւոն Տէր Պետրոսեանի բազմաթիւ ելոյթների ու հարցազրոյցների վրայ կարելի է ենթադրել, որ նա իր համախոհների հետ հռչակելու է նոր Սահմանադրութիւն, որի համաձայն Հայաստանը ԹՂԹԻ ՎՐԱՅ լինելու է անկախ, իսկ իրականում արտասահմանցիները Հայաստան են մտնելու միայն Խորհրդային Միութեան հիւպատոսարաններից արտօնագրեր ստանալով, առեւտուրը կատարւելու է խորհրդային ռուբլիներով, Հայաստանի սահմանները պաշտպանւելու են խորհրդային զօրքերով ու խորհրդային զէնքերով, իսկ երբ արցախցիներին բռնութեան ենթարկեն ու երկրից վտարեն, Հայաստանի խորհրդարանը իր աղերսագրերը յղելու է Մոսկըւային:

Եթէ Հայաստանի իշխանութիւնները շարունակեն Միութիւնից դուրս գալու իրենց երեխայական ճիգերը, Մոսկուան կարող է զզւել ու պարզապէս վաճառել Հայաստանը, օրինակ, Թուրքիային, ինչպէս վաճառեց Արեւելեան

Եւրոպան Արեւմուտքին և ինչպէս ջանում է վաճառել Ճապոնիային Կուրբիլեան կղզիները: Առանց որեւէ աղմուկի նա դուրս կը բերի իր զօրքերը Հայաստանից և հասկացնել կը տայ Թուրքիային, որ չի առարկի, եթէ թուրքական զօրքերը Նախիջեւան մտնեն, պաշտպանելու համար այդտեղ ապրող թուրքերին: Դրանից յետոյ Նախիջեւանի միացումը Ադրբեջանին Զանգեզուրի վրայով կ'իրականանայ մի քանի ժամում, քանզի հազիւ թէ մենք որսորդական հրացաններով կարողանանք դիմադրել ՆԱՏՕի անդամ Թուրքիայի զօրքերի առաջխաղացմանը: Այդ զօրքերի առաջն չկարողացաւ առնել նոյնիսկ ՆԱՏՕի անդամ Յունաստանը, երբ նրանք ներխուժեցին Կիպրոս: Երբ Հայաստանը կը դառնայ մի փոքրիկ կղզի թշնամիների ովկիանոսում, ՀՀՇի ղեկավարների մեծ մասը արդէն ապաստան գտած կը լինեն՝ ոմանք Իսրայէլում, ոմանք էլ Արեւմուտքում, որոնց պատուէրներով, խաբուած կամ գիտակցաբար, այսօր խաղում են հայ ժողովրդի ճակատագրի հետ:

Բացայայտւում ենք, այդ խաղերին վերջ տալու համար:

1991

ԵՐԷԿ, ԱՅՍՕՐ, ՎԱՂԸ

Է. Յովհաննիսեան

Երէկ լաւ էր քանց վուր էսօր…
Սայաթ-Նովա

Մենք բոլորս ուզում ենք, որ վաղը աւելի լաւ լինի, քան այսօր, բայց ոչ բոլորս ենք հասկանում, որ այսօր աւելի վատ է, քան երէկ: Ո՞ր չափանիշով: Հէնց դա էլ եկէք պարզենք. այսինքն՝ պարզենք մեր ժողովրդի ազգային երջանկութեան չափանիշները, քանզի յաճախ մենք շփոթում ենք երջանկութիւնը միջոցների հետ:

Օրինակ՝ անկախութիւնը, ազատութիւնը, օրէնքը, կարգապահութիւնը, ազնւութիւնը, զոհաբերութիւնը, հերոսական պայքարը ինքնըստինքեան երջանկութիւններ չեն, այլ միայն երջանկութեան հասնելու միջոցներ: Իսկական երջանկութիւնը նախ պէտք է լինի համազգային, այսինքն՝ վերաբերի բոլորին, այլ ոչ միայն իշխանաւորներին, որոնք միշտ էլ երջանիկ են: Համազգային երջանկութիւնը պէտք է դնի ազգը այնպիսի պայմանների մէջ, որ նրա ամէն մի անդամը կարողանայ ինքնահաստատուել իր ազգի ներսում և նպաստել ամբողջ ազգի ինքնահաստատմանը մարդկութեան մէջ: Դա նշանակում է, որ ամէն մի անհատ պէտք է ազգից ստանայ սեփական կարողութիւնները զարգացնելու և այդ կարողութիւնները սեփական շահերին ծառայեցնելու իրաւունքը: Իսկ ամէն մի անհատ պէտք է ինքնաբերաբար, իսկ երբեմն էլ պարտադրաբար ազգին մատուցի իր ծառայութիւնը, որի շնորհիւ էլ ամբողջ ազգը համապատասխան տեղ կը գրաւի մարդկութեան մէջ: Եւ եթէ մեզ ազատութիւն ու անկախութիւն է պէտք՝ հէնց դրա համար է պէտք:

Այսինքն՝ ազգային երջանկութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մարդկային երջանկութեան պայմանների ստեղծում: Ուրեմն՝ տեսնենք՝, թէ ի՞նչ վիճակում էինք մենք երէկ: Խորհրդային Միութիւնում ապրող հայը աշխարհի հզօրագոյն պետութիւններից մէկի քաղաքացի էր և այդ պետութիւնը, առանց որեւէ վերապահութիւնների, պատկանում էր իրեն: Բաւական է նշել, որ այդ պետութեան զինւորական, քաղաքական, տնտեսական, մշակութային և գիտական ասպարէզներում հայերը գրաւում էին առաջնակարգ դիրքեր, և այդ դիրքերին հասել էին առանց որեւէ դժւարութիւնների: Աւելին, նրանք յարգանք ու համակրանք էին առաջացնում հայ ժողովրդի նկատմամբ:

Սակայն այդ բարձր դիրքերից հայ գիտնականները ու զինուորականները չէին կարողանում նպաստել հայկական խնդիրների լուծմանը, ՔԱՆԶԻ ԵՐԿԻՐԸ ԱԶԱՏ ՉԷՐ: Ազատ չէր բոլորի համար: Ահա թէ ինչու հայերը ու մնացած ժողովուրդները երազում էին ազատութեան մասին: Սեփական ժողովըրդին լիաթոք ծառայելու հնարաւորութեան բացակայութիւնը աններելի էր անշուշտ, բայց պէտք է խոստովանենք, որ Երեւանից մինչեւ Լենինգրադ, Մոսկուայից մինչեւ Սիբիր երկիրը՝ ռուսի և աղրբեջանցու հետ հաւասարաչափ, նաեւ հայինն էր, որտեղ նա վարչակարգի ազատութիւնների սահմաններում կարողանում էր ինքնահաստատուել: Անծայրածիր Ռուսաստանի ոչ մէկ վայրում հայը որպէս հայ չէր հալածւում: Եթէ հալածւում էր. ապա որպէս քաղաքացի, ճիշտ այնպէս, ինչպէս հալածւում էր ռուսը: Եւ եթէ հալածւում էր, ապա միայն Ադրբեջանում և մասամբ Վրաստանում, բայց ոչ այլ հանրապետութիւններում: Յիրաւի, պակասում էր միայն ազատութիւնը:

Հայաստանի կառավարութիւնը և կուսակցական ղեկավարութիւնը անկախ չէր, որովհետեւ անկախ չէր Հայաստանը: Մեր ղեկավարները կախեալ էին Մոսկուայից, բայց այդ կախուածութեան մէջ կար նաեւ դրական կողմ: Որեւէ կառավարութիւն պիտի մի ինչ որ բանից կախուած լինի, նրա իշխելու իրաւունքը պէտք է սահմանափակուած լինի: Լաւ կը լինի, որ սահմանափակումները գան սեփական ժողովրդից, կամ նրա կողմից ընտրուած Պառլամենտից, բայց եթէ ազատութիւնը և ժողովրդավարական հաստատութիւնները բացակայում են, լաւ է, որ մէկ ուրիշ դատաւոր սահմանափակի տեղական իշխանութիւնների ազատութիւնը, որպէսզի վերջինս բռնակալ չդառնայ:

Դատաւորի դերում Մոսկուան, անշուշտ, անարդար էր և բոլոր բողոքները վերադարձնում էր Հայաստան հէնց նրան, ում դէմ ուղղուած էր բողոքը: Սակայն այն փաստը, որ մարդիկ կարող էին բողոքել, որ Հայաստան վերադարձուող բողոքագրի վրայ գրւում էր **«խնդրում եմ պարզել»**, որոշ չափով զգաստացնում էր տեղական իշխանութիւններին, որոնք գիտէին, որ մէկ ժամւայ ընթացքում կարող էին պաշտօնազրկուել:

Այնուամենայնիւ, մարդիկ սպասում էին ազատութեանը, որպէսզի իրենց ձեռքը վերցնէին իշխանութիւններ ընտրելու գործը: Ազատութեան մասին երազում էր նաեւ Սփիւռքը, որը թէեւ գտնւում էր ազատ պայմաններում, սակայն հայրենիքի ջանքերով բաժանւած էր երկու մասի, որոնցից մէկը զբաղւած էր անազատ հայրենիքը գովաբանելու գործով, միւսը քննադատում էր ազատութեան բացակայութիւնը և իր գանձարաններում պահում էր ազատութեան գաղափարը:

Հասկանալի էր, որ Հայաստանի ժողովուրդը հոգով քննադատողների հետ էր ու ատում էր գովաբանողներին: Թւում էր, թէ ազատութեան առաջին զան-

գերի հետ ամէն ինչ իր տեղը կը գայ և ամէն մի հայ իր ժողովրդին ծառայելու ազատութիւնը կը ստանայ։

Ազատութիւնը պիտի հայ ժողովրդին տար հնարաւորութիւնը՝ սեփական շահերի օգտին ծառայեցնելու այն ահագին կարողութիւնները, որոնք նա կուտակել էր Միութեան և Արտասահմանի մէջ։ Բայց այդպէս միայն թւում էր։ Երբ «երէկ»ը անցաւ ու եկաւ «այսօր»ը՝ պարզուեց, որ Միութեան մէջ կուտակուած բոլոր կարողութիւնները արտասահման դարձան, իսկ մենք բոլորս դարձանք մի փոքրիկ երկրի քաղաքացիներ, որտեղից այլեւս հազիւ թէ ծնուեն համաշխարհային չափանիշներով գիտնականներ, զինուորականներ ու արուեստագէտներ, ինչպէս չեն ծնւում նրանք Իսրայէլում, որովհետեւ մեծ մարդիկ ծնւում են մեծ մշակոյթների հետ շփւելիս։ Բայց Իսրայէլը ունի Ամերիկան ու Եւրոպան, որտեղ ծնւում են հռչակաւոր հրեաներ և որտեղից ծառայում են Իսրայէլին։ Իսկ մեզ մնում է Թուրքիան, Պարսկաստանը ու Պակիստանը, որոնց միութեան մէջ մտնելու ցանկութիւնը արդէն յայտնել է Հայաստանը։

Այսօր պարզուեց, որ մեր քաղաքական հարցերը կա՛մ չեն լուծւում և կամ էլ լուծւում են դասական ձեւով, այսինքն՝ զէնքի ուժով։ Պարզուեց, որ ժողովրդավարութեան ճամբով ընտրուած իշխանութիւնները ոչ մէկ կողմից վերահսկման ենթակայ չեն և եթէ մեր երկրում տեղի չեն ունենում Վրաստանի արիւնալից դէպքերը, ապա միայն ընդդիմադրութեան իմաստութեան շնորհիւ։ Պարզուեց, որ երբ Հայաստանը երկրաշարժից յետոյ ընկաւ արգելափակման տակ, նրան ոչ մէկը օգնութեան չհասաւ, որովհետեւ մենք ոչ մէկին չկարողացանք անկեղծ դաշնակից դառնալու երաշխիք տալ։ Իսկ ամենակարեւորը այն է, որ մենք չհասկացանք, որ մենք անկախութեան պատրաստ չենք և ԱՅՍՕՐ Միութեան քայքայումը մեզ ձեռնտու չէ։ Ընդհակառակը, մենք լծւեցինք պետութիւնը քայքայողների սայլին միամիտ այն համոզւածութեամբ, թէ պետութեան քայքայումը ինքնաբերաբար մեզ անկախութիւն կը բերի։ Բայց մենք բոլորս ազատութեան մասին էինք երազում, այլ ոչ թէ պետութեան քայքայման։ Ինչ վերաբերում է անկախութեանը, ապա այն ինչ մենք ունենք այս ասպարէզում մեզ տրւել է ուրիշների կողմից, ուրիշների շահերից ելնելով։ Միայն Ղարաբաղն է, որ անկախութիւնը ոչ թէ որպէս նւէր է ստանում, այլ իր արեան գնով է ձեռք բերում։ Այդպիսի անկախութիւնը, կամ աւելի ճիշտ այդ ճամբով ձեռք բերւած անկախութիւնը յաւերժ է, իսկ նւէրները՝ ինչպէս տրւում են, այնպէս էլ յետ են առնւում։ Ի՞նչ կը մնար մեր անկախութիւնից, եթէ յեղաշրջումը յաջողւէր և կամ էլ Ռուսաստանում նոր յեղաշրջում տեղի ունենայ։ Պիտի կարողանա՞նք «**բացառել երրորդ ուժը**»։

Սփիւռքի կացութեան մէջ էլ ոչինչ չփոխւեց և Սփիւռքում կուտակւած կարողութիւններն էլ մնացին անօգտագործելի, եթէ չհաշւենք անազատ Հայաս-

տանը գովաբանողներին, որոնք սկսեցին նոր Հայաստանը գովաբանել, իսկ նոր Հայաստանը հնի նման շարունակեց Դաշնակցութիւն քննադատել: Էլ ի՞նչպէս չասենք, որ **«երէկ լաւ էր քանց վուր էսօր»**: Իսկ վա՞ղը:

Կարծում եմ, որ այս հարցի պատասխանը մեզ համար շատ աւելի կարեւոր է: Սկսենք նրանից, որ ինչպէս բազմիցս նշել եմ՝ Միութեան քայքայման փաստը դեռեւս մնում է առասպել, որը շատ աւելի ցանկութիւն է, քան իրականութիւն: Ռուսաստանի փոխնախագահ զօրավար Ալեքսանդր Ռուցկոյը վերջերս արեց հետեւեալ յայտարարութիւնը:

«Ես կրկնում եմ, որ անելու եմ ամէն ինչ՝ Ռուսաստանի քայքայման առաջն առնելու համար: Եւ բոլոր պետութիւնների ղեկավարները պէտք է փորագրեն իրենց ճակատների վրայ, որ ոչ մէկը նրանցից Ռուսաստանի սուրբ հողից ոչ մէկ թիզ չի ստանալու: Բոլոր խնդիրները կը լուծուեն սահմանաբաժանման ճամբով, որից յետոյ Ռուսաստանը կրկին կը դառնայ հզօր պետութիւն, այլ ոչ թէ խաղալիք Անկախ Պետութիւնների Ընկերակցութեան մէջ: Նոր պետութիւնների հայրերը խաբում են իրենց ժողովուրդներին, նետում են նրանց ազգամոլութեան անդունդը և իրենց ազգային բներն են քաշում նախկին պետութիւնը»:

Այս նոյն արտայայտութիւններով ու մտահոգութիւններով հանդէս են գալիս շատ ուրիշ ազդեցիկ քաղաքական գործիչներ և ժողովուրդը անցնում է նրանց կողմը: Դժբախտաբար, պետութեան պահպանման կողմնակիցները իրենց բողոքի ցոյցերը կազմակերպում են Ստալինի պատկերների ու կոմունիստական լոզունգների տակ, ինչը զգաստացնում է ժողովրդին, բայց քաոսից զզւած ու յոգնած այս ժողովուրդը նրանց կողմն է անցնում, քանզի երկրի քայքայումը ժողովրդի մեծ մասի համար անընդունելի է:

Բայց ենթադրենք, որ խորհրդային կայսրութիւնը, այնուամենայնիւ, քանդելու է և Հայաստանին տրւելու է սեփական ճակատագիրը կերտելու հնարաւորութիւնը: Ինչպէ՞ս պիտի այդ ճակատագիրը կերտւի: Ինչպէ՛ս պիտի մենք լուծենք մեր տնտեսական ու քաղաքական խնդիրները: Ինչպէ՞ս պիտի մենք հաշւի առնենք մեր շուրջ գոյութիւն ունեցող քաղաքական մթնոլորտը: Նախ տեսնենք, թէ ինչպիսին է այդ մթնոլորտը:

Եթէ Խորհրդային Միութիւնը քայքայւած համարենք, ապա պիտի ընդունենք նաեւ, որ Թուրքիան դառնում է աշխարհի ամենակարեւոր պետութիւններից մէկը: Օսմանեան կայսրութեան ժամանակներից ի վեր Թուրքիայի մասին այդքան չի խօսւել, որքան որ խօսւում է մեր օրերին: Եւ եթէ նախկինում նրա մասին խօսում էին, որպէս **«Հիւանդ մարդ»**ու, ապա այսօր քաղաքական գործիչները իրար հետ մրցելով կոչում են նրան **«ամերիկացիների լաւագոյն բարեկամ»**, **«ժողովրդավար մահմեդական երկիր»**, **«ազատութեան և շուկայական տնտեսութեան»** յենակէտ: Ընդունելով Դեմիրէլին Վաշինգտոնում, նախա-

գահ Բուշը Թուրքիային կոչեց փոթորկուած շրջանի **«հանգստեան կղզի»**: Եւրոպացիները իրենց ափսոսանքն են յայտնում այն առիթով, որ մինչեւ այսօր չեն ընդունել Թուրքիային Ընդհանուր Շուկայի մէջ և մէկը միւսին համոզում է՝ ուշադրութիւն դարձնել այդ **«մարդասիրական»** երկրի վրայ: Կարծես թէ արդէն լուծուել են Կիպրոսի ու քրդերի հարցերը ու կարծես թէ Թուրքիան արդէն ճանաչել է Հայերի Ցեղասպանութիւնը: Բոլորը այսօր յիշում են, թէ ինչ հերոսական մասնակցութիւն ունեցաւ Թուրքիան Իրաքի դէմ պայքարում և ինչ լաւ օրինակ կարող է նա ծառայել նախկին Խորհրդային Միութեան մահմեդական հանրապետութիւնների համար: Այսօր Թուրքիան իրեն համարում է եւրոպական, բալքանեան, արեւմտա-ասիական, սեւծովեան, մերձաւոր արեւելեան և միջերկրականեան երկիր և, որպէս այդպիսին, դառնում է կարեւորագոյն քաղաքական ուժ: Միացեալ Նահանգները և Արեւմտեան Եւրոպան ուժ են տալիս Թուրքիային, որպէսզի նա կարողանայ շահել Անդրկովկասում և Միջին Ասիայում ազդեցութեան գօտիներ ստեղծելու մրցակցութիւնը՝ Իրանի հետ: Կրկին վերածնուել է մեծ Թուրանի գաղափարը և Թուրքիան արագ քայլեր է կատարում Անդրկովկասում ամրապնդուելու ուղղութեամբ: Այս հարցում նա գտնում է ոչ միայն Արեւմուտքի այլեւ Ադրբեջանի, Վրաստանի, Հիւսիսային Կովկասի և Միջին Ասիայի պաշտպանութիւնը, ինչը նշանակում է, որ նրա մուտքը Անդրկովկաս գրեթէ ապահովուած է:

Պարսկաստանի, ինչպէս նաեւ Ռուսաստանի համար Թուրքիայի առաջխաղացումը, բնականաբար, ցանկալի չէ: Երկու այս պետութիւնները բազմաթիւ կռիւներ են մղել Թուրքիայի դէմ, նրա ազդեցութիւնը մահմեդական աշխարհի վրայ չեզոքացնելու նպատակով: Պարսկաստանը պիտի փորձի օգտագործել ադրբեջանցիների կրօնական առանձնայատկութիւնը, այսինքն նրանց շիի լինելը, իսկ Ռուսաստանը պէտք է փորձի գտնել Անդրկովկասում ոտքի տեղ, ճիշտ այնպէս, ինչպէս արաբական աշխարհում ամերիկացիները այդ տեղը գտան Իսրայէլի ճամբով:

Հազիւ թէ Իրանը կարողանայ իր ազդեցութիւնը տարածել Ադրբեջանի վրայ, որովհետեւ ադրբեջանցիները նախ թուրք են, իսկ էլ աւելի կարեւոր է, որ նրանք խորհրդային ժամանակաշրջանում բաւականին հեռացան կրօնից և նրանց կրօնական առանձնայատկութիւնները հազիւ թէ վերածուեն քաղաքական գործօնի: Այնուամենայնիւ, Պարսկաստանը պիտի փորձի և արդէն փորձում է սիրաշահել Ադրբեջանին: Նա առաջարկում է իր միջնորդութիւնը հայ-ադրբեջանական բախման մէջ, նա առաջարկում է կառուցել Պարսկաստանի վրայով՝ Ադրբեջանը Նախիջեւանի հետ միացնելու ճանապարհ: Զարգանում են պարսկա-ադրբեջանական տնտեսական կապերը և այս ամէնից Ադրբեջանը կարող է միայն շահել:

Շատ հասկանալի է, նաեւ, որ ո՛չ Թուրքիան, ո՛չ Վրաստանը և ոչ էլ Ադրբեջանը մեր ուժեղացման մէջ շահագրգռուած չեն, ուրեմն մեր այս նոր քաղաքական կողմնորոշման մէջ մենք պիտի ուրախ լինենք, եթէ մեզ չկոտորեն ու թոյլ տան հանգիստ ապրել: Բայց ինչպիսի՛ն պիտի լինի այդ հանգիստ ապրուստը: Հանգիստ ապրելու մեր երազը կարող է իրականանալ, եթէ մենք հրաժարւենք ուժեղանալուց, եւրոպական մշակոյթից, ներենք ցեղասպանութիւնը և վերադառնանք այն նոյն կացութեանը, որը ունէինք մինչեւ ազգային ազատագրական պայքարի ծնունդը: Այդ դէպքում մեր երկրորդ լեզուն շատ արագ կը դառնայ թուրքերէնը, իսկ բարքերում շատ էլ հեռու չենք նրանցից: Եթէ այս կացութեան մէջ դիմանանք, ապա կ'անցնեն տասնամեակներ ու կը գան նոր Կոմիտասներ ու յեղափոխականներ, նոր Րաֆֆիներ ու Ռոստոմներ ու ամէն ինչ կը սկսեն սկզբից: Բայց չենք դիմանայ, որովհետեւ կորցրել ենք մեր ամենակարեւոր յատկութիւնը՝ հաւատքը:

Այն ճառերը, որ այսօր արտասանւում են եւրոպական պետութիւն դառնալու և արեւմտեան արժէքներով ապրելու մասին, առնւազն ծիծաղելի են: Այստեղ է, որ պիտի այդ ճառողներին ասեմ, դուք ձեզ որեւէ ժամանակ հայելու մէջ տեսե՞լ էք, դուք ձեր ժողովուրդը ճանաչո՞ւմ էք: Այդ ժողովուրդը արեւմտեան մշակոյթի երեք սիւների՝ ժողովրդավարութեան, իրաւունքի և քրիստոնէական հաւատքի մասին գաղափար չունի: Ֆրանսիայի ու Ամերիկայի մէջ չենք կարողանում եւրոպացի դառնալ, Թուրքիայի հովանաւորութեան տա՞կ պիտի անցնենք այդ ճանապարհը: Եւրոպական մշակոյթը ընկալելու և այդ արժէքներով ապրելու համար մենք նախ մեզ պիտի փոխենք, որի համար գուցէ դարեր են հարկաւոր: Եւ դեռեւս հարց է, թէ արդեօք արեւմտեան արժէքները համապատասխանո՞ւմ են մեր բուն նկարագրին:

70 տարի Թուրքիան ապրեց ժողովրդավարական մթնոլորտում, բայց մնաց թուրք, որովհետեւ արեւմտեան մշակոյթը նրա համար չէր: Պարսկաստանի Շահը տասնամեակների ընթացքում իր երկիրը ու ժողովուրդը ականջներից քաշում էր դէպի եւրոպական քաղաքակրթութիւն, բայց եկաւ Խոմէյնին ու կարգադրեց փակել օպերան ու կանանց երեսները ծածկել քողով: Ու ժողովուրդը ենթարկւեց:

Սակայն մեզ համար ամենաուսանելին Ալժիրի օրինակն է: Արմատական մահմեդականները այդ երկրում ժողովրդավարական ճամբով շահեցին ընտրութիւնների առաջին փուլը և պիտի շահէին նաեւ երկրորդը, եթէ խախտելով բոլոր ժողովրդավարական սկզբունքները՝ երկրի իսկական տէրերը չարգելէին ընտրութիւնները: Եթէ չարգելէին ու արմատականները շահէին, ապա Ալժիրում շատերը պիտի փոշմանէին, որ անկախութիւն ձեռք բերեցին Ֆրանսիայից: Ահա այստեղ է պարզւում, որ անկախութիւնը ինքնանպատակ չէ: Այս օրինակի

վրայ մենք տեսնում ենք նաեւ, որ ժողովրդավարութիւնն էլ ինքնանպատակ չէ: Հակառակ դէպքում այդ ի՛նչ իրաւունքով Ալժիրում արգելւեցին ժողովրդավարական ընտրութիւնները: Քաղաքակրթութեա՛ն իրաւունքով. մի իրաւունք՝ որը ոչ մէկ տեղ արձանագրւած չէ, բայց որը լռելեայն արդարացնում է Ալեքսանդր Մակեդոնացու արշաւները, քանզի նա հելլենական մշակոյթ էր տարածում: Ամերիկա մեկնած եւրոպացիներին էլ ներում են նրանց բարբարոսութիւնները հնդիկների նկատմամբ, քանզի նրանք ի վերջոյ հաշւիչ մեքենայ ստեղծեցին ու լուսին թռան: Ու երբեք չեն կարող արդարացւել թուրքերի վայրագութիւնները հայերի ու յոյների նկատմամբ, քանզի նրանք քաղաքակրթութիւն ջարդեցին: Այս ամէնը խօսում է այն մասին, որ իրական հասարակական արժէքները թաքնւած են այնքան խոր, որ չեն երեւում մակերեսային լոզունգների ու ժողովների արձանագրութիւնների մէջ: Երբեմն պարզւում է, ճակատագրական պայքարները չեն կրում ոչ դասակարգային, ոչ ազգային, ոչ կրօնական, ոչ տնտեսական բնոյթ. բախումը քաղաքակրթութեան և տգիտութեան միջեւ է: Այդպիսին են եղել հայ ժողովրդի բոլոր պայքարները, որտեղ նա միշտ կռւել է քաղաքակրթութեան կողմից: Ինչպէ՞ս պիտի մենք շարունակենք մեր այս փայլուն աւանդութիւնը, կամ՝ ինչո՞ւ չէ, ազգային առաքելութիւնը: Այդ ինչպէս պիտի մենք մեր անկարգապահ ու անհաւատ ժողովուրդը, Թուրքիայի հովանաւորութեան տակ, տանենք դէպի արեւմտեան քաղաքակրթութիւն: Կիլիկիայի անկումից յետոյ մենք կամաց-կամաց հեռացանք մեր բուն արժէքներից և դարձանք արեւելեան ժողովուրդ թուրքական ու պարսկական բարքերով: Եթէ այսօր մենք որոշ չափով վերադարձել ենք այդ քաղաքակրթութեանը, ապա միայն ռուսական պատուհանի ճամբով: Եթէ այսօր Հայաստանում կամ նախկին Խորհրդային Միութիւնում մենք հայ գիտնական ունենք, ապա միայն ռուսերէնով գրւած դասագրքերի շնորհիւ: Երբ այդ դասագրքերը ու գիտական աշխատութիւնները թուրքերէնից պիտի թարգմանուեն, այլեւս գիտնական էլ չենք ունենայ: Իսկ այն երեխայական երազները, թէ անկախ պայմաններում մեր երկրորդ լեզուն անգլերէնը կամ գերմաներէնը կը դառնայ, դատարկաբանութիւններ են, քանզի խօսքը ոչ թէ տասնեակ մտաւորականների, այլ ժողովրդի մասին է, իսկ ժողովուրդը դատարկ տեղում ուրիշ լեզու չի սովորում: Երկրորդ լեզուները ստեղծւել են ինքնաբերաբար, գաղութ լինելու բերումով, այլ ոչ թէ գիտակցաբար: Բայց եզրափակեմ:

Ինչպիսին էլ որ լինի Ռուսաստանը՝ թագաւորական թէ՞ ժողովրդավարական, կայսրութիւն թէ՞ Անկախ Պետութիւնների Ընկերակցութեան անդամ, սլաւոնական՝ թէ՞ բազմազգ, կոմունիստական թէ՞ կրօնական, նրա պետական շահերը նրան կը պահեն Անդրկովկասում: Եթէ հայերը նրան չտան այդ հնարաւորութիւնը, նրանք կը գտնեն քրդերին կամ չեչեններին, իսկ մենք կ՚անց-

նենք նրա հակառակորդների կողմը: Ու վաղը կը դառնայ աւելի վատ քան այսօր ու մենք կրկին կը համոզւենք, որ **«Երէկ լաւ էր քանց վուր էսօր»**:

Ուզում էի աւարտել գրութիւնս, բայց յիշեցի, որ մածնի մէջ մազ որոնող մեր հակառակորդները կը մեղադրեն ինձ անկախութեան դէմ լինելու և Ռուսաստանի ստրուկը մնալու ցանկութեան մէջ: Ուստի՝ որոշեցի նախօրօք պատասխանել: Ես, հաւատարիմ մեր կուսակցութեան սկզբունքներին, Հայաստանի, ինչպէս նաեւ Արցախի անկախութեան կողմնակից եմ: Սակայն Հ.Յ.Դաշնակցութիւնը իր սեփական ու համաշխարհային փորձից քաջ գիտակցում է, որ անկախութիւն կարող են ձեռք բերել միայն նրանք, ովքեր պատրաստ են անկախութեան՝ տնտեսական, աշխարհագրական, ռազմական, հոգեբանական և շատ ուրիշ տեսանկիւններից: Բացի այդ, անհրաժեշտ է, որ մեր անկախութեան մէջ շահագրգռած լինի գոնէ մէկ լուրջ քաղաքական ուժ: Իսկ եթէ մենք այդ պատրաստութիւնը չունենք, ապա հանգրւան առ հանգրւան պէտք է պատրաստւենք անկախութեանը: Էաւ կը լինի առանց աղմուկի, որքան լուռ, այնքան աւելի լաւ: Իսկ եթէ մենք անկախութեան նախապատրաստւելու փուլը որեւէ մէկի ձեռքի տակ պիտի անցկացնենք, ապա ռուսը թուրքից աւելի գերադասելի է: Ով այս տարրական ճշմարտութիւնը չի հասկանում, իրաւունք չունի մեր ժողովրդի ճակատագրի հետ խաղալու: Դժբախտաբար, մեր շարքերումն էլ գտնւեցին մարդիկ, որոնք ժողովրդավարութեան ու անկախութեան գեղեցիկ երաժշտութեան տակ կորցրին իրենց առողջ ազգային ու կուսակցական բնազդը և փորձեցին վերաքննութեան ենթարկել Դաշնակցութեան անցած ամբողջ ճամբան: Մեր կուսակցութեան յեղափոխական էութիւնը թւաց չհամապատասխանող այսօրւայ մեղմ ու ներդաշնակ մթնոլորտին ու, հետեւելով Բեգլար Նաւասարդեանի օրինակին, շտապեցին յարմարւել նոր մթնոլորտին, ապացուցելով որ սխալ կուսակցութեան մէջ էին մտել և կամ էլ երբեք չէին հասկացել Հ.Յ.Դաշնակցութեան էութիւնը: Իսկ Դաշնակցութիւնը ո՛չ ակումբ է, ո՛չ ազատ բեմ և ոչ էլ կոմունիստական կուսակցութիւն, որ առաջնորդից-առաջնորդ փոխի իր քաղաքական գիծը: Դաշնակցութիւնը յեղափոխական կուսակցութիւն է իր ուրոյն նկարագրով, գործելակերպով և նպատակներով և Դաշնակցութիւնից պարպւած մարդկանց ներքին տագնապները թող կուսակցութեանը չվերագրւեն: Եթէ մենք մեզ այսօր պիտի վերագտնենք, ապա միայն մեր ակունքներին վերադառնալու ուղղութեամբ, որպէսզի ամէն մի դատարկաբան մեր դէմ բերան բացելուց առաջ մտածի, թէ ո՞ւմ դէմ է խօսում: Մենք այդպիսին էինք նախկինում ու այդպիսին պիտի մնանք, եթէ ուզում ենք տիրութիւն անել մեր խեղճ ժողովրդին:

1992

ԱՅԼԵՒՍ ՉԵՆՔ ԼՌԵԼՈՒ

Է. Յովհաննիսեան

Ամէն մի վարչակարգ ունի իր ներկայացուցիչներին, որոնք ստեղծում են վարչակարգը, ծաղկում են ապրում այդ վարչակարգում ու կործանւում են նրա հետ միասին։

Եւ երբ նախորդ վարչակարգը փոխարինում է նորը, նոր վարչակարգի ներկայացուցիչները, որպէս օրէնք, ոչնչացնում են իրենց նախորդներին՝ կա՛մ բառոյապէս և կամ էլ ֆիզիկապէս։ Լաւագոյն դէպքում նրանց դուրս են շպրտում քաղաքական և հասարակական ասպարէզներից և հասարակութեան վզովը փաթաթում են նոր արժէքներ։

Հէնց վարչակարգերի փոփոխութեան պահերին է, որ տեղի են ունենում ամենաարիւնալից բախումները, քանզի նոր ղեկավարները, որպէս օրէնք, անփորձ են և ղեկավարել չգիտեն, իսկ հինները փորձառու են, բայց նրանց փորձը հին արժէքների ոլորտում է։ Եւ հէնց այստեղ տեղի է ունենում այն մեծ փոխզիջումը, որը փրկում է հասարակութիւնը կամ պետութիւնը կործանումից։ Փոխ-զիջումը կայանում է նրանում, որ նախորդները, կարծես թէ զղջանք ապրելով, ընդունում են նոր արժէքները և սկսում են համեստօրէն ծառայել նրանց։ Մարքսիստները դառնում են ժողովրդավարներ, միջազգայնականները՝ ազգայնականներ, ընկերվարականները՝ միապետականներ։

Որքան էլ որ արհեստական լինի այդ վերափոխութիւնը, նա փրկում է նոր վարչակարգը և հնարաւոր է դարձնում դրական արժէքների փոխանցումը հին վարչակարգից, իսկ երբեմն էլ հին դարաշրջանից նորը։ Ինչպիսին էլ որ լինի վարչակարգը, նա պատրաստում է իւրայատուկ մասնագէտներ, որոնց ձեռքում է գտնւում երկրի գիտութիւնը, արուեստը, քաղաքականութիւնը, բանակը և այն ամէնը, ինչից կազմւում է հասարակութեան շարժիչ ուժը։ Վարչակարգերի փոփոխութեան պահին հին կադրերը պէտք է տեղ գտնեն նոր վարչակարգում և շատերը գտան իրենց տեղերը թէ՛ Ռուսաստանի Յեղափոխութիւնից յետոյ, թէ՛ նացիական Գերմանիայի անկումից յետոյ և թէ Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ։

Կազիմիրա Պրունսկենէն դարձաւ Լիտւայի վարչապետուհի, չնայած նրան, որ համագործակցում էր ԿԳԲի հետ և ստորագրել էր նման մի պարտաւորութիւն։ Գորբաչովը, Ելցինը, Շեւարդնաձէն, Ալիեւը, Կրաւչուկը և շատ ուրիշներ, որոնք նոր վարչակարգի, եթէ չասենք դարաշրջանի ղեկավարներն

են, նախկինում այսպէս թէ այնպէս համագործակցում կամ ղեկավարում էին ԿԳԲի հաստատութիւնները։

Այս իմաստով, մենք չէինք համարում, որ Հայաստանի նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի ԿԳԲի յատուկ զօրամասերում ծառայութիւնը մեծ յանցագործութիւն է ու լռում էինք, երբ տարբեր աղբիւրներ, յատկապէս Աւստրիայի տեղեկատւական գործակալութիւններից մեզ փոխանցում էին բազմաթիւ փաստաթղթեր այդ ծառայութեան մասին։ Մենք չէինք ուզում ժողովրդի կողմից ընտրւած նախագահի շուրջ աւելորդ աղմուկ բարձրացնել, բայց այլեւս անկարելի է լռել։ Այն բանից յետոյ, երբ Հայաստանի նախագահը զրպարտեց Հ.Յ.Դաշնակցութեանը, իսկ «Սմերշ»ի գործակալ Եուզբաշեանը, որը պատերազմի տարիներին կրակում էր նահանջող հայ և ռուս զինւորների վրայ, դարձաւ Լեւոն Տէր-Պետրոսեանի փաստաբանը, ժողովուրդը պէտք է իմանայ, թէ ո՛ւմն է ընտրել նախագահ։

ԿԳԲի գործակալ Լեւոն Յակոբի Տէր-Պետրոսեանը, որի անհատական համարն է ժ-385292,- այս հզօր հաստատութեան մէջ իր ճանապարհը սկսեց 1977 թւականի Մայիսի 29ին, երբ «Կազբեկ» ծածկանունով ԿԳԲի գործակալը, որը ճանաչում էր Հայաստանի ապագայ նախագահին համատեղ աշխատանքից, բնութագրեց նրան որպէս ուղիղ, ճշմարիտ և լուրջ գիտելիքների տէր մարդ, որին յարգում են նրա աշխատակիցները։ «Կազբեկ»ի զեկոյցի հիման վրայ 1977 թւականի Հոկտեմբեր ամսին Հայաստանի ԿԳԲի 1 բաժնի պատասխանատու, աւագ լէյտենանտ Մ. Յակոբեանը ԿԳԲի ղեկավարութեանը ներկայացնում է հետեւեալ առաջարկութիւնը.- «Տէր Պետրոսեանին վերաբերող փաստաթղթերը ներկայացնել ՍՍՀ Մինիստրների Խորհրդին կից ԿԳԲի Կրասնոդարի շրջանի վարչութեանը, քննելու և որոշում առնելու համար՝ Տէր-Պետրոսեանին ԿԳԲի յատուկ զօրամասերի մէջ առնելու մասին»։

Հայաստանի ԿԳԲի 1 բաժնի վարիչ փոխ-գնդապետ Ռւ. Յարութիւնեանը այդ առաջարկութեան վրայ դնում է «Համաձայն եմ» մակագրութիւնը։ Նոյն 1977 թւականին Լեւոն Տէր-Պետրոսեանը դառնում է ԿԳԲի յատուկ զօրամասերի սպայ։ 1979 թւականի Մայիս ամսին պէտք է տեղի ունենար յաջորդ բանակումը։ Սակայն Մատենադարանի դիրեկտոր ակադեմիկոս Խաչիկեանը Մայիսի 16ին Հայաստանի Զինկոմիսար զօրավար Ղազարեանին յղեց մի խնդրանք՝ Տէր-Պետրոսեանին բանակումից ազատելու համար։

Ըստ երեւոյթին ԿԳԲն մերժեց Մատենադարանի դիրեկտորի խնդրանքը, քանզի յաջորդ բանակումին, որը տեղի ունեցաւ 1982 թւականին, Տէր-Պետրոսեանը նշւում է որպէս աւագ լէյտենանտ, ինչը նշանակում է, որ տեղի էր ունեցել պաշտօնի բարձրացում։ Բոլոր այս փաստաթղթերը գտնւում են Միւնխենի Հայկական Հարցերի հաստատութեան արխիւում։ Այստեղ հրապարակում

ենք միայն մէկը, որը սակայն բաւականին պերճախօս է: Այժմ հրապարակ եմ հրաւիրում Հայաստանի նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի անկոչ փաստաբան Եուզբաշեանին պատասխան տալու համար մէկ հարցի՝ ճի՞շտ են թէ՞ սուտ մեր այս պնդումները: Որպէս ԿԳԲի ղեկավար, նա չի կարող այս ամէնը չիմանալ: Գուցէ Եուզբաշեանը իսկապէս զղջում է իր անցեալը և այժմ դարձել է Հայաստանի ազնիւ ու անաչառ մի քաղաքացի: Այս դէպքում թող այս հարցումն էլ լինի անաչառ:

1992

Խ8-2 Խիստ գաղտնի
Պատճ. N21

ՏԵՂԵԿԱՆՔ – ԲՆՈՒԹԱԳԻՐ
Խորհրդային Բանակի պահեստի լեյտենանտ
Տէր-Պետրոսեան Լ.Ա.

Տէր-Պետրոսեան Լեւոն Յակոբի, 1945 թւի ծնւած Հալեբում (Սիրիա), հայ, Խորհրդային Միութեան քաղաքացի, անկուսակցական, գիտութիւնների թեկնածու, ամուսնացած, ապրում է Երեւանում հետեւեալ հասցէով, Լենինի պողոտայ, 15, բնակարան 74, զինւորական հաշւառման մէջ է Երեւանի Սպանդարեան շրջանի Զինկոմիսարիատում, ՎՈՒՍ-2003:

Լ.Յ. Տէր-Պետրոսեանը ԽՍՀՄ ԿԳԲի յատուկ պահեստային ուժերի մէջ է ներառնւած 1977 թւականին: 1978 թւականից մինչեւ օրս Տէր-Պետրոսեանը գրաւում է գիտական քարտուղարի պաշտօնը Մաշտոցի անւան հին ձեռագրերի ինստիտուտում, որը պատկանում է Հայաստանի Մինիստրների Խորհրդին:

Աշխատանքային վայրից բնութագրւում է որպէս կարգապահ ու բարեխիղճ աշխատող: Ունի լուրջ և յոյսեր ներշնչող գիտնականի հեղինակութիւն: Հայաստանի միակ մասնագէտն է սիրիագիտութեան բնագաւառի: Ունի մի շարք հրատարակութիւններ թէ՛ մեր և թէ արտասահմանի հայագիտական հրատարակչութիւններում:

Կենցաղում համեստ է, ճշտապահ, ունի բազմաթիւ բարեկամներ, բնաւորութեամբ մեղմ է, հոգատար։

Տէր-Պետրոսեանը տիրապետում է հայերէնի, ռուսերէնի, արաբերէնի և ֆրանսերէնի։

Եզրակացութիւն.- Պահեստի լէյտենանտ Լեւոն Յակոբի Տէր-Պետրոսեանին թողնել ԽՍՀՄ ԿԳԲի յատուկ պահեստային ուժերի մէջ։

Հայաստանի ԿԳԲի 1 բաժնի 3 բաժանմունքի աւագ պատասխանատու

Մայոր Մ.Ա. Յակոբեան

«Համաձայն եմ»

Հայաստանի ԿԳԲի 1 բաժնի պետ

Մայոր Ու. Ս. Յարութիւնեան

Թւական

N. 1/2640

ՈՉ ՄԻԱՅՆ ՀՈԳՈՎ

Է. Յովհաննիսեան

«Դէպի Երկիր» կարգախօսը ունի նոյնքան բազմազան կողմեր, որքան որ բազմազան է ինքը՝ հասարակական կեանքը: Սա նշանակում է, որ մենք պէտք է մուտք գործենք երկիր ոչ միայն մեր պատմական ու հոգեկան արժէքներով, այլեւ բառիս լայն իմաստով՝ մարմնապէս:

Պէտք է ասել, որ մեր հոգեկան ու պատմական մուտքի համար մեզ ոչ միայն չդիմադրեցին ու մեր առջեւ պատնէշներ չդրեցին, այլ և իրենք հայաստանցիները, ինչպէս այլ առիթներով նշել ենք, մեր գանձարաններից հանեցին այդ արժէքները և առանց որեւէ առարկութիւնների սեփականացրին, ինչը բնական էր, քանզի այդ արժէքները հայ ժողովրդինն էին ու նրա համար էին պահւում:

Սակայն, ճիշտ այն պատճառով, որ Հ.Յ.Դաշնակցութիւնը Հայաստան մուտք գործեց հոգեպէս – իսկ եթէ անկեղծ լինենք, ապա հոգեպէս նա Հայաստանից երբեք դուրս էլ չէր եղել-, կը տեսնենք, որ այսօրւայ հայաստանցին այն կարեւոր և գուցէ ճակատագրական հարցին, թէ ինչո՞ւ ես պէտք է դաշնակցական լինեմ, յստակ պատասխան չունի: Նրա պատասխանները կա՛մ հոգեկան բնոյթ են կրում, իսկ եթէ նիւթական, ապա զուտ անհատական են, բայց ոչ հասարակական կամ դասակարգային:

Այսօրւայ հայաստանցին կարող է ասել, որ ինքը ցանկանում է Դաշնակցութեան շարքերը անցնել, որովհետեւ այդ կուսակցութիւնը Հայ Ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի կազմակերպիչն է, որովհետեւ ունեցել է բիւրեղ ապակու նման մաքուր յեղափոխականներ, որովհետեւ այդ կուսակցութիւնն է ստեղծել Հայաստանի առաջին հանրապետութիւնը, որովհետեւ նա միշտ եղել է հակախորհրդային դիրքերի վրայ, որովհետեւ մինչեւ այսօր պայքարում է Հայ Դատի համար:

Իսկ անձնական շահերից ելնելով, նա կարող է ասել, որ դաշնակցական է դառնում, որովհետեւ համոզւած է, որ կուսակցութիւնը ի վերջոյ անցնելու է իշխանութեան գլուխ և ինքն էլ նրա հետ որոշ դիրքերի կը հասնի, որովհետեւ դաշնակցականները լաւ են վճարւում, որովհետեւ Դաշնակցութեանը ժողովուրդը յարգում է, որովհետեւ նրանց խողովակներով կարելի է արտասահման մեկնել կամ արտասահմանից նւէրներ ստանալ և այլն:

Գուցէ բացի այս պատասխաններից, գտնւեն նաեւ այլ պատասխաններ, բայց ի վերջոյ նրանք կը լինեն կա՛մ հոգեկան և կամ էլ անհատական: Սա է

պատճառը, որ այսօրւայ դաշնակցականի վրայ Դաշնակցութիւնը ատող Հայաստանի կառավարութիւնը կարողանում է հոգեկան ճնշում գործադրել, յայտարարելով՝ որ այսօրւայ Դաշնակցութիւնը անցեալի այն հերոսական կազմակերպութիւնը չէ, որին պատկանելը մարդուն հոգեկան բաւարարութիւն էր պատճառում: Եւ կամ էլ յայտարարում է, որ Դաշնակցութիւնը բարձր աշխատավարձեր է վճարում իր անդամներին:

Եւ պէտք է ասել, որ այս ճնշումների տակից դժւար է դուրս գալ, որովհետեւ մենք դեռեւս չենք կարողացել ձեւակերպել մեր հասարակական պլատֆորմը, այս կամ այն խմբերի ու խաւերի նկատմամբ: Մենք պէտք է կարողանանք շատ յստակ ձեւակերպել մեր այդ պլատֆորմը, որից յետոյ հայ գիւղացին կարող է ասել ես դաշնակցական եմ դառնում, որովհետեւ այդ կուսակցութիւնը ինձ հող կամ որեւէ այլ բան է խոստանում: Ես՝ հայ գիտնականս…, ես՝ հայ արւեստագէտս…, ես՝ հայ գործատէրս…, ես՝ հայ քաղաքական գործիչս… և այլն:

Բայց դրա համար մենք նախ ինքներս պէտք է իմանանք, թէ ի՞նչ ենք տալու բանւորին, գիւղացուն, գիտնականին և այլն:

Այս ամէնը նշւած էր Հ.Յ.Դաշնակցութեան առաջին ծրագրերում ու յայտարարութիւններում և մեզ համար գաղափարախօսական իմաստով դա նորութիւն չէ: Սակայն այսօր մենք պէտք է կարողանանք գաղափարախօսութիւնը դարձնել գործելակերպ:

Որպէս օրինակ կարելի է դիմել Աւստրիայի փորձին, որտեղ քաղաքական կուսակցութիւնները ունեն դաշնակցային կառոյց: Ժողովրդական կուսակցութիւնը, օրինակ, ունի բանւորական, գիւղացիական, տնտեսական, ղեկավարման մասնաճիւղեր ու կուսակցութեան անդամ դարձողը իր դիմումի մէջ արդէն նշում է, որ ինքը ցանկանում է մտնել գիւղացիական բաժինը: Կուսակցութեան ղեկավարութիւնը համադրում է բոլոր ճիւղերի գործունէութիւնը: Օրինակ՝ հարթում է բանւորների և գործատէրերի հակասութիւնները, քանզի մէկը պահանջում է տուրքերի կրճատում, միւսը բարձրացում: Գուցէ մեր պայմաններում կուսակցութեան դասակարգային մասնատումը այնքան էլ ընդունելի չլինի, սակայն յանձնաժողովային կարգը, այսինքն ամէն մի բնագաւառով զբաղւող յանձնաժողովների ստեղծումը անկասկած պիտի շատ օգտակար լինի:

Մեր աւանդական սկզբունքների համաձայն մենք շարունակում ենք գործել, յենւելով դաշնակցականի բազմագէտ լինելու սկզբունքների վրայ: Այսօր դաշնակցականը ուսուցիչ է, վաղը՝ ֆեդայի, միւս օրը՝ նախարար, կամ երկրի վարչապետ:

Հայաստանի մէջ, գրեթէ նոյն մարդիկ զբաղուած են թէ՛ հիւանդանոցներով, թէ՛ պառլամենտով, թէ՛ Ղարաբաղով և թէ գիւղատնտեսութեամբ, ինչը նշանակում է ոչնչի չհասնել։ Ես ինքս Երեւանում վկայ էի, թէ ինչպէս Հայաստանի մեր Կ. Կոմիտէի ընկերներից մէկը մի գիշերւայ ընթացքում պէտք է լուծէր Ղարաբաղից բերուած վիրաւորներին արիւն հասցնելու, իր ձերբակալուած ընկերոջը ազատ արձակելու, Լենինականի հիւանդանոցի մի ինչ-որ մէկին դիմաւորելու և հեռուստատեսութեամբ ելոյթ ունենալու հարցերը։ Ամբողջ գիշեր հեռախօսը չէր լռում և զանգերից խենթացած մեր ընկերը գիշերւայ կէսին զանգահարում էր ուրիշ ընկերների, այս անգամ նրանց խենթացնելու համար։

Այս մթնոլորտը կարող էր տիրել յեղափոխական կուսակցութեան ներսում, յեղափոխութիւնների պահերին, բայց ոչ սեփական երկրի ներսում, պետական կառոյցների գոյութեան պայմաններում։

* * *

Եւ հէնց այստեղ էլ հրապարակ է իջնում այն կարեւորագոյն հարցը, որի պատասխանը կարող է տալ միայն Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովը։ Մի հարց՝ որը վերաբերում է հայրենիքում գործող մեր կուսակցութեան քաղաքական ու հասարակական դիրքորոշմանը։ Մի հարց, որը հաւանաբար ունի երկու պատասխան։ Առաջին պատասխանը հետեւեալն է։ Մենք պաշտօնապէս յայտարարում ենք, որ երբեք չենք գալու իշխանութեան գլուխ, չենք մասնակցելու որեւէ ընտրութիւնների և նախարարի ու վարչապետի պաշտօններ չենք գրաւելու։ Մենք մնալու ենք Հայաստանի մէջ որպէս հզօր բարոյական ուժ, որը բացայայտելու է կաշառակերութիւնը, քաղաքական դաւաճանութիւնը, օրէնքների խախտումը, ռազմական պարտութիւնների բուն պատճառները և բոլոր նրանց արարքները, որոնք ոտնահարում են հայ ազգային արժէքները։ Մենք պէտք է ցոյց տանք մեր ժողովրդին, որ նրա ղեկավարները (երբ անշուշտ այդպէս է) տանում են ազգը դէպի կործանում։ Այսինքն՝ մենք պէտք է վերածուենք հզօր իրաւապաշտպան կազմակերպութեան, որը կ՚ունենայ իր մասնագէտները բոլոր բնագաւառներում, բայց ոչ իշխանութեան կառոյցի մէջ, այլ ընդդիմադիր դիրքերի վրայ։ Ռուսաստանում այդ դիրքերի վրայ կանգնած էին Անդրէյ Սախարովը և Ալեքսանդր Սոլժենիցինը մի քանի այլ այլախոհների հետ և մի քանի տասնեակ հոգով նրանք արեցին աւելին, քան որոշ կուսակցութիւններ և շարժումներ։ Որդեգրելով այս դիրքորոշումը՝ մենք ինքներս մեր գործունէութեան մէջ պիտի լինենք չափից աւելի մաքուր ու ազնիւ, որպէսզի դաշնակցականի մասին Հայաստանում խօսեն որպէս ազգային բարոյականութեան անձնաւորութեան։

Սակայն կուսակցութիւնը պէտք է պատրաստ լինի որեւէ ժամանակ վերցնելու իշխանութիւնը յեղափոխական ճանապարհով, երբ ժողովուրդը մեզ կանչի և կամ էլ օրինական իշխանութիւնների դաւաճանութիւնը դառնայ անտանելի:

Այս տարբերակի ընտրութիւնը ունի այն առաւելութիւնը, որ մեր շարքերում կը մնան միայն իսկական դաշնակցականներ, որոնք չեն վազվզի արքունական կառքերի զանգուլակների յետեւից, ինչպէս ամօթալիօրէն վազեցին երէկ պատասխանատու պաշտօններ գրաւող, բայց Դաշնակցութիւնից ոչինչ չհասկացող մեր նախկին ընկերներից ոմանք ու այլեւս չեն մտնի մեր շարքերը նրանք, ովքեր ուզում էին մեր ճամբով նախարարական պաշտօնների հասնել: Մեր շարքերում կը մնան միայն նւիրեալ ու երդմանը հաւատարիմ դաշնակցականներ, որոնք կը շարունակեն մեր կուսակցութեան հիմնադիրների գործը ու որոնց ջանքերով մենք կարող ենք հրաշքներ գործել քաղքենիացած ու պճնանքներով ապրող մեր միջավայրում:

Այս դէպքում, անշուշտ, կառոյցի իմաստով մեր կուսակցութիւնը մեծ փոփոխութիւնների կարիք չի ունենայ: Մենք կը մնանք մի մեծ ընտանիք, իսկ ընտանիքի անառակ զաւակները ինքնաբերաբար կը հեռանան մեզանից և դա կը լինի ոչ թէ մեր կորուստը, այլ ձեռքբերումը:

Սակայն այս տարբերակի վատ կողմը այն է, որ կառավարական լծակներից զրկւած, զուտ բարոյական ազդեցութեամբ Հ.Յ.Դաշնակցութիւնը չի կարող ակտիւօրէն մասնակցել Հայաստանի քաղաքական ու տնտեսական կեանքին, այսինքն՝ լինելու է ոչ թէ գործադիր մարմին, այլ գործադիր մարմիններին այս կամ այն քայլը կատարելու ստիպող կազմակերպութիւն:

Երկրորդ տարբերակը շատ աւելի բնական է, բայց մեր էութիւնից շատ աւելի հեռու: Մենք պէտք է ձգտենք իշխանութեան և նախապատրաստւենք կառավարող կուսակցութիւն դառնալու: Այստեղ արդէն կան բազմաթիւ հարցեր, որոնք պէտք է լուծւեն նախքան իշխանութեան գլուխ անցնելը, այսինքն՝ նախքան ընտրութիւններին մասնակցելը: Մեր ժողովուրդը պէտք է շատ յստակ իմանայ, թէ ինչի՞ համար է մեզ տալու կամ չտալու իր ձայնը:

Նախևառաջ անհրաժեշտ է ստեղծել մեր ընդդիմադիր վարչութիւնը՝ իր գլխաւոր նախարարութիւններով, որոնց դերը կարող են կատարել համապատասխան յանձնաժողովները: Տնտեսական, կրթական, արհմիութենական, քաղաքական, գիտութեան, արւեստի, առողջապահութեան, պաշտպանութեան, արդարադատութեան և այլ յանձնաժողովները պէտք է ներկայացնեն իրենց պլատֆորմները, որոնցից էլ կը կազմւի կուսակցութեան ընդհանուր պլատֆորմը: Տնտեսական յանձնախումբը, օրինակ, պէտք է պատրաստի իր ծրագրերը արտասահմանեան ներդրումների համար և ամէն մի գործատէր

պէտք է իմանայ, որ Դաշնակցութեան իշխանութեան գլուխ անցնելուց յետոյ ինքը ստանալու է հնարաւորութիւններ, որոնք այսօր չունի։ Բոլոր յանձնախմբերը պէտք է մշակեն իրենց բնագաւառում կատարելիք աշխատանքների ծրագրերը, իսկ քարոզչական յանձնախումբը պէտք է մատչելի ձեւով ժողովրդին մատուցի այդ ծրագիրը։

* * *

Մի խօսքով՝ տկար իշխանութիւնների դէմ պայքարող ուժից, Հ.Յ.Դաշնակցութիւնը պէտք է վերածւի հայ ժողովրդին անհրաժեշտ արժէքների, վարչակարգի և քաղաքական կողմնորոշումների համար պայքարող կազմակերպութեան։

Մենք պէտք է կարողանանք պատասխանել այն հարցին, որը մեզ տրւում է ամէնուր. «**Եթէ դուք լինէք Լեւոնի տեղը, ի՞նչ պիտի անէք**»։ Եթէ մենք այս հարցի պատասխանը չգտնենք, և եթէ մենք իսկապէս նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի տեղը լինելով, ոչինչ պիտի կարողանանք փոխել երկրի կացութեան մէջ, ուրեմն ընդդիմադրութիւնը նրա դէմ ոչ մէկ իմաստ չունի։ Հօ մենք էլ նրա պէս երեխայ չենք, որ վրէժ լուծենք։ Բայց մենք համոզւած ենք, որ գիտենք նրա սխալները ու կարող ենք ուղղել այդ սխալները, արմատապէս փոխելով մեր երկրի ընդհանուր կացութիւնը։ Բայց դա մենք գիտենք, այլ ոչ թէ մեր ժողովուրդը, ուստի յաջորդ ընտրութիւններին նա կրկին մեզ իր ձայները տալու պատճառ չի ունենալու։ Եթէ մենք պէտք է ստանանք ՀՀՇին չսիրողների ձայները, ինչպէս ՀՀՇն ստացաւ կոմունիստներին չսիրողների ձայները, ապա նման ձայներ մեզ պէտք չեն։ Մենք ուզում ենք, որ ձայները մեզ տրւեն՝ մե՛ր արժանիքների համար, այլ ոչ թէ ուրիշի տկարութիւններից ստիպւած մեր կողմը թեքւածների ձայները։ Այդ ձայները գնացող-եկող են և Հայաստանում կայուն իշխանութիւն ստեղծողը չեն։ Մեր ժողովուրդը, դժբախտաբար չգիտի նոյնիսկ, թէ մենք ի՞նչ ենք արդէն արել Հայաստանի համար։ Մեր քարոզչութիւնը իր աւանդական համեստութեամբ, երբեք չի էլ ասում, օրինակ, որ տասնեակ միլիոններ արժող Լենինականի մանկական հիւանդանոցը կառուցւեց մեր նախաձեռնութեամբ և ներկայումս գործում է մեր պատասխանատուութեան տակ։ Յեղափոխական կուսակցութեան վայել է համեստութիւնը, բայց ժողովրդավար պետութեան մէջ քարոզչութիւնը 4րդ իշխանութիւնն է, իսկ Հայաստանի պայմաններում՝ հաւանաբար առաջինը։

1992

ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՒ Հ.Յ.ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՈՒՐՋ

Հայաստանի անկախութեան վերականգնումով և հայրենի հողի վրայ Դաշնակցութեան կազմակերպական վերընձիւղումով՝ գաղափարական մեր ընտանիքը կ'ապրի վերանորոգման պատմական պահ մը, որուն ներշնչումով Հ.Յ.Դ. 25րդ Ընդհանուր Ժողովը որոշած է մինչեւ 1994ի աւարտը գումարել արտակարգ Ընդհանուր Ժողով՝ հայ ժողովուրդի ազգային-քաղաքական նոր իրադրութեան լոյսին տակ վերամշակելու և անհրաժեշտ պատշաճեցման ենթարկելու համար Հ.Յ.Դ. Ծրագիրն ու կազմակերպական կառոյցը: Հայաստանէն մինչեւ արտերկրի կազմակերպական մեր բոլոր շրջանները, արդէն օրակարգի վրայ ունինք արտակարգ այդ Ընդհ. Ժողովին նախապատրաստելու հարցը և թէ՛ Ծրագրի, թէ՛ Կանոնագրի ուղղութեամբ անհրաժեշտ քննարկումներն ու տեսակէտներու բանաձեւումը ընթացքի մէջ են: Նկատի ունենալով որ սոսկ ներ-կուսակցական օրակարգ մը չէ և չի կրնար ըլլալ ազգային-քաղաքական,կազմակերպական վերանորոգման օրակարգը, որովհետեւ ըստ ամենայնի հայ ժողովրդին մարտունակ կամքը հարազատօրէն արտայայտելու կոչուած կազմակերպութիւնն է Դաշնակցութիւնը, նախապատրաստական այս հանգրուանին հաղորդ պահուելու բարոյական-իրաւունքը և արդար ակնկալութիւնը ունի մեր ժողովուրդը: Առ այդ՝ «Դրօշակ»ի ներկայ համարէն սկսեալ, «Քննարկման կարգով» կը բանանք համապատասխան սիւնակ մը և ընթերցողներուն կը ներկայացնենք դաշնակցական միտքը յուզող հիմնահարցերն ու անոնց լուծման ի խնդիր որոնումներն ու առաջադրութիւնները:

Է. Յովհաննիսեան

Մարդկութեան յառաջադիմութեան ճանապարհին, մարդը սկզբից պայքարեց բնութեան ուժերի հպատակութիւնից ազատուելու համար և այդ պայքարի ընթացքում ստեղծեց միասնաբար գործող խմբեր, միութիւններ, ցեղեր ու համայնքներ, ապա ստիպւած եղաւ պայքարելու իր իսկ կողմից ստեղծուած համայնքների դէմ, այս անգամ նրանց կաշկանդումներից ազատուելու համար:

Անհատի և համայնքի փոխ-յարաբերութիւնից ծնւեց հասարակական արդարութիւն հասկացութիւնը, որը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մարդու բնական զգացմունքներից մէկի արտայայտութիւն:

Հասարակական արդարութիւնը քաղաքակրթութեան զարգացման հազարամեակների ընթացքում եղաւ անհատի և հասարակարգի փոխ-յարաբերու-

թեան գնահատականը, որը տարբեր ժամանակներում և տարբեր ժողովուրդների մօտ ունեցաւ տարբեր արտայայտութիւններ և ընդունեց տարբեր ձեւեր՝ կրօնական, տնտեսական, քաղաքական և բարոյական ոլորտներում:

Սահմանել արժէք հասկացութիւնը նոյնքան դժւար է, որքան որ դժւար է սահմանել կեցութիւն հասկացութիւնը: Սակայն խուսափելու համար առարկայական և ենթակայական արժէքների բարդ փոխ-յարաբերութեան փիլիսոփայութիւնից, նշենք միայն, որ առանց առարկայական արժէքների, որոնք մենք ընկալում ենք ներըմբռնման միջոցով, անկարելի կը լինէր բացատրել անձից աւելի բարձր կանգնած արժէքների գոյութիւնը և հէնց խիղճ հասկացութիւնը, որը վերջին հաշւով արժէքների ստորադասականութեան միակ դատաւորն է:

Արժէքները տրւած են մեզ մեր զգացմունքների միջոցով, սակայն զգացմունքները այն ենթակայական հագուստներն են, որոնց մէջ ներկայանում են մեզ առարկայական արժէքները: Եթէ մենք ժխտենք, արժէքների առարկայականութիւնը, ապա բոլորովին անհասկանալի կը դառնայ մեր բարոյական, հասարակական և քաղաքական նպատակասլացութիւնը:Կարելի է վիճել, թէ ո՞րն է արդարը, գեղեցիկը ու բարին, բայց չի կարելի վիճել այդ արժէքների գոյութեան մասին: Կարելի է վիճել, թէ ո՞ր վարչակարգն է պատմութեան երկայնքով եղել ամենաարդարը, բայց չի կարելի վիճել այն մասին, որ վարչակարգերը կարող են լինել արդար կամ անարդար:

Այս իմաստով՝ նրանք, ովքեր մշակել են արդար հասարակարգեր ստեղծելու ծրագրեր ու պայքարել են այդ ծրագրերը իրականացնելու համար, կոչւել են «սոցիալիստներ», այսինքն՝ արդար հասարակարգի ձգտողներ: Նրանք տարբերւում էին իրարից միայն նրանով, որ առարկայական արդարութեան հասկացութեանը տալիս էին տարբեր բովանդակութիւն:

Սոցիալիզմը ո՛չ 19րդ դարի և ոչ էլ ժամանակակից քաղաքականութեան ծնունդ է: Սոցիալիզմը ծնւել է մարդու ինքնագիտակցութեան հետ, այսինքն եղել է մի՛շտ: Մեր թւականութիւնից 22 դար առաջ Միջագետքում եղել են պետութիւններ, որտեղ աշխատաւորներին տրւում էին գնահատականներ՝ լրիւ ուժի, 2/3 ուժի և 1/6 ուժի որակաւորում և որոնք վճարւում էին ըստ իրենց որակաւորման: Իսկ աշխատանքի համար անհրաժեշտ գործիքները նրանք ստանում էին պետութիւնից:

Սոցիալիստական գաղափարները յայտնի էին Անտիկ դարաշրջանում և միջին դարերում, իսկ 16րդ դարից սկսեալ սոցիալիստական գաղափարախօսութիւնը յենւում է նիւթապաշտութեան և ռացիոնալիզմի վրայ:

Սակայն բոլոր դարերում սոցիալիստական գաղափարախօսութեան գլխաւոր նպատակը եղել է արդար հասարակարգի սկզբունքների որոնում:

Պիւթագորասի համար՝ արդարութիւնը հաւասարութեան մէջ է և նրա արդարութեան նշանաբանը քառակուսին էր, որտեղ բոլոր կողմերը և անկիւնները հաւասար էին: Այդ հաւասարութիւնից բխում էր ներդաշնակութիւնը և համերաշխութիւնը: Հեռակլիտի համար՝ արդարութիւնը պայքարից յետոյ ստեղծւած համերաշխութիւնն էր: Պատերազմը,- ասում էր նա,- ոչ այլ ինչ է, եթէ ոչ զարգացման աղբիւր, դէպի արդարութիւն տանող ճանապարհ:

Սոփեստների համար՝ արդարութիւնը այն է, ինչը օգտակար է մարդկանց մեծամասնութեան համար:

Պղատոնի հասարակական իդէալները շատ յստակ են: Իշխանութիւնը պատկանում է փիլիսոփաներին, որոնք յենւում են զինւորների կամ պահակների վրայ: Իսկ այդ պահակների կեանքը ամբողջութեամբ ենթարկւում է պետութեան շահերին: Նրանք զուրկ են մասնաւոր սեփականութիւնից, նրանց կերակրում է պետութիւնը և, բացի այդ կերակուրից ու սեփական մարմնից, նրանք ոչ մէկ բան չունեն, ներառեալ ընտանիք:

Յունական գիտութեան հանրագիտակ Արիստոտէլը քննադատեց Պղատոնի կոլեկտիւիզմը և արդար հասարակարգերի համար հռչակեց աւելի ընդունելի թեզ, որի համաձայն որոշ ապրանքներ պէտք է լինեն ընդհանուր, իսկ որոշ իրեր պէտք է պատկանեն անհատների: Սակայն, ըստ Արիստոտէլի, նախքան լաւագոյն պետութիւն ստեղծելը, անհրաժեշտ է պարզել, թէ մարդկային կեանքի և մարդկային վարքագծի ո՞ր ձեւն է ամենացանկալին: Այսինքն՝ պետութիւնը ստեղծւում է որոշակի կենցաղ ապահովելու համար և լաւագոյն պետութիւնը համապատասխան է մարդկային կենցաղի լաւագոյն ձևին: Ընդորում լաւագոյն մարդկային կեանքը ամէնեւին էլ չի ընդգրկում հարստութիւնը: Արիստոտէլի համար լաւագոյն այդ կեանքում առաջնակարգ դեր են կատարում արիութիւնը, արդարութիւնը, իմաստութիւնը և չափաւորութիւնը: Միջնադարեան արդարութեան ջատագովները իրենց ուշադրութիւնը կենտրոնացրել էին մարդուն կրօնական կաշկանդումներից դուրս բերելու վրայ և հէնց այդ ազատութեան մէջ էին տեսնում հասարակական արդարութիւնը: Իսկ աշխատանքի բնագաւառում, այն ժամանակւայ սոցիալիստները ջանում էին վերացնել ստրկատիրութիւնը, որը խանգարում էր արդիւնաբերական զարգացմանը: Ոչ մէկ հիմք չկայ պնդելու համար, որ ստրկատիրութիւնը, աւատապետութիւնը և կամ էլ պետական ամբողջատիրութիւնը իրար յաջորդող և մէկը միւսին փոխարինող կացութաձեւեր էին: Բոլոր այս վարչաձեւերը անհատի և հասարակարգի փոխ-յարաբերութեան ձեւեր էին, որոնք կարող են ծագել որեւէ ժամանակ և որեւէ երկրում և ոչ անպայման տնտեսական հողի վրայ: Ստրկատիրութիւնը ծագեց Խորհրդային Միութիւնում և նացիական Գերմանիայում այն ժամանակ, երբ ժողովրդավարութիւնը

արդէն հաստատւել էր Արեւմուտքում: Իսկ միջնադարում հասարակական արդարութիւն որոնողները իրենց բողոքը ուղղել էին հոգեկան, այլ ոչ թէ նիւթական կաշկանդումներից ազատւելուն: Նրանք ուզում էին ազատել արուեստը, գրականութիւնը, գիտութիւնը և այլն:

* * *

1500 թւականը կարելի է համարել ժամանակակից քաղաքակրթութեան սկիզբ, այն իմաստով՝ որ այդ ժամանակներից սկսեալ մարդը, գնահատականներ է տալիս իր վիճակին և, օրինակ, նշում է, որ անցեալը աւելի դաժան էր քան ներկան, իսկ ապագան լինելու է ներկայից պակաս դաժան:

Վերածնունդը, բողոքականութիւնը, մարդասիրութիւնը, աշխարհագրական նւաճումները, տպագրութեան յայտնագործութիւնը և միջնադարեան կրօնական միասնութեան տապալումը կարելի է տեղաւորել 1453-1517 թւականների միջեւ: Այդ ժամանակաշրջանում Բողոքականութիւնը և Վերածնունդը ազատագրեցին կրօնը ու արուեստը և այս երկու շարժումները ստեղծեցին պայմաններ՝ արդարութեան նոր ձեւերի որոնումների համար:

Սակայն այս արդարութիւնը դեռեւս զանգւածային չէր և ժողովրդավարութեան սկզբունքներ իր մէջ չէր պարունակում: Արուեստը, փիլիսոփայութիւնը, գրականութիւնը, գիտութիւնը ազատւեցին միջնադարեան կաշկանդումներից, սակայն դա միայն նշանակում էր, որ քաղքենիները իրենց իշխանութիւնը զիջեցին նոր վերնախաւի, որը անշուշտ աւելի տաղանդաւոր էր ու գործունեայ, բայց ժողովուրդ չէր:

Այնուամենայնիւ՝ նոր տեսակի արդարութեան սերմերը ցանւած էին, քանզի ստեղծւել էր մթնոլորտ, որտեղ տաղանդը պաշտպանութեան տակ էր առնւում:

Բայց հէնց վերածնունդն էր, որ վերյիշեց Արիստոտէլի այն դրոյթը, թէ վարչաձեւի սխալ լինելը որոշւում է ժողովրդի կամքին հակառակ լինելով: Ուրեմն՝ թէ՛ մենիշխանութիւնը, թէ՛ ազնւապետութիւնը և թէ հանրապետութիւնը կարող էին արդար լինել, եթէ համապատասխանէին ժողովրդի կամքին:

Սակայն դրամատիրութեան շեմին կանգնած մարդկութիւնը դեռեւս ժողովրդի կամքը պարզելու միջոցներ չունէր և վերածնունդի նոր սոցիալիստները կրկին իրենց անձնական տեսակէտներն էին քարոզում: Եթէ Պիւթագորասականները և Պղատոնը համարում էին, որ լաւ պետութեան մէջ ամէն ինչ պիտի ընդհանուր լինի բարեկամների միջեւ, ապա նոր սոցիալիստները Պղատոնի այդ «բարեկամներ» հասկացողութիւնը մէկ կողմ են նետում և համարում են, որ լաւ պետութեան մէջ ամէն ինչ պիտի ընդհանուր լինի բոլորի համար: Եթէ

Պղատոնը խոստովանում է, որ իր կողմից առաջարկւած հասարակական կառոյցը հնարաւոր է միայն աստւածների ու նրանց որդիների համար, ապա Թոմաս Մորը իրականացնում է կոմունիզմը ոչ թէ աստւածների, այլ սովորական մարդկանց մէջ։

Հակառակ Թոմաս Մորի կոմունիզմի՝ Ժան Բոդէնը համարում է, որ միապետութիւնը պետութեան լաւագոյն ձեւն է, քանզի յիշեցնում է ընտանիք կոչւող բնական պետութիւնը, որտեղ իշխում է ընտանիքի հայրը։

Հոբսը մեղմացնում է մենիշխանութիւնը պայմանագրով, իսկ Լոկկը Հոբսի պայմանագիրը վեր է ածում հասարակական պայմանագրի, որտեղ աշխատանքը ճանաչւում է որպէս անձեռնմխելի սեփականութիւն։

Բնական իրաւունքների հարցը, որը առաջ քաշւեց Լոկկի և այլ ազատականների կողմից, քաղաքական փիլիսոփայութեան առջեւ դրեց մի խնդիր, որը դրանից առաջ երբեք չէր քննարկւել։ Եթէ բնական կացութիւնը աշխարհի կացութիւնն է և եթէ այդ կացութեան որոշ թերութիւնները ստիպում են մարդկանց ստեղծել արդար կամ անարդար պետական իշխանութիւններ, ապա չի կարելի արդեօք այդ մի քանի պակասութիւնները վերացնել այլ ճանապարհով՝ պետութիւն ստեղծելու փոխարէն։ Չէ՞ որ պետական բռնութիւնը ոչ միայն չի վերացնում «բնական կացութեան» թերութիւնները, այլեւ աւելի է խորացնում նրանք։

Այս հարցի պատասխանը որոնելու ճամբուն էլ ծնւեց անիշխանութիւնը։ Անիշխանականները համարում էին, որ արդարութիւնը աւելի լայն ու կարեւոր հասկացութիւն է, քան մարդկանց կողմից սահմանւած օրէնքը, ուստի օրէնքներ կա՛մ չպէտք է ստեղծւեն և կամ էլ յանուն արդարութեան նրանք կարելի է խախտել։

Անիշխանական Պրուդոնի համար՝ բարձրագոյն հասարակական արժէքը մարդու արժանապատւութիւնն է, որի պաշտպանութիւնը կազմում է արդարութեան առանցքը։

Գուդուինի համար՝ բարձրագոյն արժէքը հասարակական բարեկեցութիւնն է։ Բակունինի և Կրոպոտկինի համար,- ըստ անիշխանականների,- պետութիւն ստեղծելը ամէնեւին էլ անհրաժեշտ չէ։

Կարելի է ասել, որ հասարակական պայմանագրի, քաղաքացիական իրաւունքների և ժողովրդավարութեան գաղափարները ամփոփւեցին Ժան-Ժակ Ռուսոյի աշխատութիւնների մէջ, որը փաստօրէն դարձաւ 1789 թւականի ֆրանսիական Յայտարարագրի և 1791 թւականի Սահմանադրութեան տեսաբանը։ Ֆրանսիական Յեղափոխութեան պաստառների վրայ գրւած էին Ռուսոյի խօսքերը,- «Օրէնքը՝ ընդհանուր կամքի արտայայտութիւնն է»։ Սակայն Ռուսոն չէր ճանաչում պետութիւնից ազատ իրաւունքներ, այսինքն այն-

պիսի բնագաւառների գոյութիւն, որտեղ իշխանութիւնները միջամտելու իրաւունք չունեն: Անհատական կեանքի որոշ բնագաւառների անկախութիւնը պետութիւնից (կրօն, մասնաւոր սեփականութիւն, խօսքի ազատութիւն) հետագայ ժամանակաշրջանի նւաճումներ են: Այդ հետագայ ժամանակաշրջանը դասական դրամատիրութեան ժամանակաշրջան էր, երբ մնայուն և արագ թափով յայտնագործութիւնների մեծ մասը այդ ժամանակւայ ծնունդ են: Բացի դրանից, աներեւակայելի զարգացում է ապրում դրամատների ու վարկերի համակարգը: Կառուցւում են հսկայական գործարաններ, կազմւում են բաժնեթղթերի արդիւնաբերական ու առեւտրական ընկերութիւններ:

Հսկայական հարստութիւններ են ձեռք բերում առեւտրականները և գործատէրերը: Ռոտշիլդները Ֆրանսիայում, Բարնինզը Լոնդոնում, Գորէնը Ամստերդամում իրենց հարստութեան ճամբով այնպիսի իշխանութիւն են ձեռք բերում, որ կառավարում են պաշտօնական իշխանութիւնների հետ զուգահեռ, երբեմն ֆինանսաւորելով նրանց ու իրենց համար առաւելութիւններ պահանջելով նրանցից:

1918 թւականին Ախենում տեղի ունեցաւ դրամատէրերի համագումարը, որի քաղաքական նշանակութիւնը աւելի մեծ էր, քան տարբեր երկրների ղեկավարների հանդիպումները: Արդիւնաբերութեան զարգացման հետ միասին աւելանում է աշխատաւորների, յատկապէս բանւորների քանակը քաղաքներում, որոնք դառնում են յեղափոխական շարժումների, աղբիւրներ: Արդիւնաբերական ճգնաժամերը հազարաւոր բանւորների դուրս են նետում փողոց, դարձնելով նրանց գործազուրկ:

Արհմիութիւնների, աշխատաւորների իրաւունքների պաշտպան ընկերութիւնների և օրէնքների բացակայութիւնը թոյլ է տալիս ձեռնարկութեան տէրերին շահագործել աշխատաւորներին՝ աշխատանքի տեւողութիւնը աւելացնելու ու վճարումները պակասեցնելու ճանապարհով: Այս պայմաններում առաջին անգամը լինելով արդար հասարակարգ ստեղծելու կողմնակիցները դիմեցին իրաւազրկւած տարրերին ազատագրելու խնդրին ու իշխանութիւններից պահանջեցին նրանց իրաւունքների պաշտպանութիւն: Եւ եթէ ի յայտ եկաւ դասակարգային հակադրւածութեան խնդիրը, ապա ոչ այն պատճառով, որ մէկ դասակարգը շահագործում էր միւսին, այլ որովհետեւ բոլորի կողմից ստեղծւած բարիքները անարդարացիօրէն էին բաշխւում տարբեր դասակարգերի միջեւ: Այս պայմաններում ծնւած ընկերվարութիւնը արտադրւած ապրանքների արդար բաշխման տեսութիւն էր: Շատ յստակ էր, որ դրամատէրերը լաւ արտադրողներ են և նրանցից չի կարելի խլել արտադրելու ու սպասարկելու ղեկը, սակայն նրանց անհրաժեշտ է հեռացնել արտադրանքը բաշխելու ոլորտից, քանզի այնտեղ նրա անարդարութիւնը բնական է:

Իշխանութիւնները պէտք է ստանան արտադրողից արտադրանքի մէկ մասը խլելու իրաւունքը և այդ իրաւունքը այսօր իրականացւում է տուրքերի և այլ գանձումների ճամբով։ Ճիշտ այնպէս, ինչպէս ինքը արտադրողը խլում էր աշխատանքի մէկ մասը, այնպէս էլ աշխատաւորների կողմից ընտրուած կառավարութիւնը խլում է արտադրողից արտադրուած ապրանքների մէկ մասը, աշխատաւորներին այլ ճանապարհով վերադարձնելու համար։

Այս ճանապարհը ընտրեցին սոցիալ-դեմոկրատները և մնացած բոլոր բանւորական շարժումները, որոնք մինչեւ այսօր էլ գտնւում են այդ ճանապարհի վրայ։

Արհմիութենական շարժումները, հասարակական օրէնսդրութիւնը, քաղաքական կուսակցութիւնների ծնունդը՝ ընկերվարական նպատակները իրականացնելու միջոցներ էին։ Պէտք է ասել, որ այս հարցում գերմանական սոցիալ-դեմոկրատիան բոլորին գերազանցեց, ստեղծելով շատ լաւ կազմակերպւած կուսակցութիւն, որը մանրամասնօրէն մշակեց քաղաքական պայքարի պառլամենտական ձեւերը։ Նրանք հիանալի հասկանում էին, որ ընկերվարութիւնը ոչ թէ արտադրութեան, այլ ապրանքների արդար բաշխման ոլորտումն է գործում։ Եւ Եւրոպայի սոցիալ-դեմոկրատները ուզում էին իշխանութեան գլուխ անցնել, ապրանքների արդար այդ բաշխումը իրականացնելու նպատակով։ Ընկերվարութիւնը հասարակական յեղափոխութիւն է, որը փոխում է հասարակական կեանքի ձեւերը։

Բոլորովին այլ բնոյթ է կրում քաղաքական յեղափոխութիւնը, որի միակ նպատակը իշխանութիւն ձեռք բերելն է։ Ընկերվարականները միշտ էլ յայտարարել են, որ ընկերային փոփոխութիւնները, այսինքն՝ յեղափոխութիւնը անկարելի է առանց քաղաքական յեղափոխութեան։ Այսինքն ընկերային յեղափոխութեան համար անհրաժեշտ է, որ քաղաքական իշխանութիւնը անցնի աշխատաւորների ձեռքը, սակայն իշխանութիւն ձեռք բերելը ինքնանպատակ չէ, նա անհրաժեշտ է աշխատաւորներին՝ ընկերային փոփոխութիւններ կատարելու համար։ Ընկերային յեղափոխութիւնը սկսւում է իշխանութիւն ձեռք բերելուց յետոյ, մինչդեռ քաղաքական յեղափոխութիւնը աւարտւում է դրանով։ Աւելին, որոշակի պայմաններում, երբ ստեղծւում են պառլամենտական ճանապարհով ընկերային փոփոխութիւններ կատարելու հնարաւորութիւններ, ընկերվարականները կարող են հրաժարւել ապստամբութիւնից, ինչպէս հրաժարւեցին այդ ծայրայեղ միջոցից Եւրոպայի և Ամերիկայի գրեթէ բոլոր սոցիալ-դեմոկրատները։

Ազատ հասարակարգ ստեղծելու գաղափարները ինքնըստինքեան ընդգրկում էին նաեւ ազգային խնդիրները, քանզի ընկերվարականները պաշտպանում էին որոշակի երկրի աշխատաւորների իրաւունքները, որոնք

գտնւում էին ուրիշների իշխանութեան տակ, այսինքն՝ անհաւասար պայմաններում։

Արդար հասարակարգեր ստեղծելու կողմնակիցները իրենց պաշտպանութեան տակ առան նաեւ հալածւած ազգերին՝ օրակարգի հարց դարձնելով նրանց ազատագրումը։

Այսպիսով՝ ընկերվարութեան իդէալը հասարակական արդարութիւնն է, որտեղ մարդը ազատագրւում է թէ՛ բնութեան ուժերի տիրապետութիւնից և թէ ցեղային, կրօնական, ընկերային, ազգային, քաղաքական, տնտեսական և դասակարգային ամէն տեսակի բռնութիւններից։

Ընկերվարութիւնը կոչւած է դառնալու մարդու իրաւունքների ու ազատութիւնների սահմանների պաշտպանութեան իդէալը և հաստատելու է ազատ մարդու, ազատ քաղաքացու և ազատ աշխատանքի հասարակարգ։

* * *

Սակայն բոլորովին այլ ճանապարհ ընտրեց համայնավարութիւնը, որը անջատւեց ընկերվարութիւնից, որդեգրելով մարքսիստական գաղափարախօսութիւնը ու կառչեց բոլորովին նոր արժէքներից։ Ճիշտ այնպէս, ինչպէս կրօններից անջատւում են աղանդներ՝ նոր կրօններ կազմելու պատրւակների տակ, այնպէս էլ մարքսիզմը անջատւեց դասական ընկերվարութիւնից և, հասարակական արդարութիւնից հրաժարւելով, փարեց դասակարգային անհամերաշխութեան և բանւոր դասակարգի բռնութեամբ իշխելու իրաւունքին։

Դասական ընկերվարութեան, այսինքն՝ հասարակական արդարութեան տեսանկիւնից, մարքսիզմը կատարեց մի շարք աններելի սխալներ, որտեղից էլ բխեցին նրա կողմից կատարւած դաժանութիւնները ու բռնութիւնները։

Փիլիսոփայութեան բնագաւառում մարքսիզմը չընդունեց հակադրութիւնների համերաշխութեան թէզը, համերաշխութիւն՝ որը անխուսափելիօրէն պէտք է ստեղծւէր պայքարի աւարտին։ Զարգացման աղբիւր հանդիսացող հակադրութիւնների պայքարը որպէս օրէնք աւարտւում է կողմերի հաշտութեամբ և թեզից ու անթիթեզից ստեղծւում է Հեգելի հռչակաւոր սինթեզը։

Այսօրւայ ժողովրդավարական երկրներում մենք տեսնում ենք այդ համերաշխութիւնը նաեւ աշխատանքի բնագաւառում։ Բանւորների գործադուլները որպէս օրէնք աւարտւում են գործատէրերի և աշխատաւորների համերաշխութեամբ, երբ կողմերը փոխզիջումներ են կատարում իրենց պահանջներում։ Մարքսի համար այդ համերաշխութիւնը գոյութիւն չունի և դասակարգային պայքարը աւարտւում է դասակարգերի վերացմամբ։ Ընտանիքում, Պե-

տութիւնում, Ազգերի կեանքում գոյութիւն ունեցող հակասութիւնները ստիպում են Մարքսին վերացնել Ընտանիքը, Պետութիւնը և Ազգը։

Տասնամեակներ շարունակ այս անհեթեթութիւնը ծառայեց համայնավարութեանը, սակայն իր հետ միասին նա վարկաբեկեց նաեւ ընկերվարութիւնը, որը երբեք նման սկզբունք չէր ընդունել։

Փիլիսոփայութեան մէջ մարքսիզմը կատարեց նաեւ մէկ ուրիշ խոշոր սխալ, յայտարարելով՝ թէ կեցութիւնն է որոշում գիտակցութիւնը և չընդունելով շատ պարզ երեւացող հակառակ թեզը։ Սա արդէն նշանակում էր բացառել գիտակցութեան նպատակասլաց գործունէութիւնը՝ կեցութիւնը փոխելու ուղղութեամբ։ Տնտեսական բնագաւառում մարքսիզմը հրաժարուեց մասնաւոր սեփականութիւնից և մասնաւոր նախաձեռնութիւնից, այսինքն՝ արտադրութեան գլխաւոր շարժիչ ուժերից։ Կարելի էր մարքսիզմի քննադատութեանը յատկացնել աւելի մեծ տեղ (ինչը արել է «Գիտութի՞ւն է արդեօք մարքսիզմը» յօդւածաշարքի մէջ, «Ազդակ Շաբաթօրեակ-Դրօշակ», Ե. տարի, 1974, թիւ 42, 43, 44, 45), ցոյց տալու համար, որ մարքսիզմը Հ.Յ.Դաշնակցութեան ընկերվարութեան հետ ոչ մէկ կապ չունի, բայց Դաշնակցութեան մէկ դարուայ պատմութիւնը ինքնին այդ բանի պերճախօս ապացոյցն է։

Այսպիսով մենք տեսնում ենք, որ մարդկութեան պատմութեան ընթացքում քաղաքակրթութեան հետ միասին ծնունդ առաւ արդարութեան գաղափարը, որը կրօնի, արուեստի, տնտեսութեան, օրէնքի և պետական կառոյցի մէջ արտայայտեց մարդու արդարութեան բնական զգացմունքը։ Սակայն հոգեբանօրէն, տնտեսական բնագաւառում արդարութեան գաղափարը ամենաազդեցիկն է, որ հէնց այդ պատճառով էլ նա գլխաւոր տեղը գրաւեց հասարակական արդարութեան ընդհանուր գաղափարի մէջ։ Սակայն այդ գաղափարը պարունակում է իր մէջ շատ գործօններ, որոնցից և ոչ մէկը բացարձակ չէ և կապ ունի տւեալ պատմական ժամանակաշրջանի հետ։ Ո՛չ հաւասարութիւնը, ո՛չ ազատութիւնը, ո՛չ անկախութիւնը, ո՛չ բռնութեան բացակայութիւնը և ոչ էլ որեւէ այլ հասարակական երեւոյթ չեն կարող ճանաչւել որպէս արդարութեան չափանիշներ, քանզի նրանցից և ոչ մէկը կապ չունի մարդու ցանկութիւնների, զգացմունքների և ազգային նկարագրի հետ։ Մարդու այդ զգացմունքները ու ցանկութիւնները ձեւաւորւում են քաղաքակրթութեան զարգացման տարբեր փուլերում, ուստի չեն համընկնում տարբեր ժամանակաշրջաններում։ Բայց մէկ բանը ընդհանուր է բոլոր ժամանակների համար։ Մարդը ձգտում է իր կարողութիւնները ընդարձակելուն։ Այդ ձգտումը բնորոշ է եղել մարդուն նրա ինքնագիտակցութեան առաջին իսկ օրից։ Եւ հէնց այդ ձգտման մէջ էլ պէտք է որոնել արդարութեան սահմանումը։

Արդար պէտք է համարւի այն հասարակարգը, որտեղ ամէն մի անձ ունի իր կարողութիւնները աւելացնելու հնարաւորութիւնը: Բայց հէնց այն պատճառով, որ արդար հասարակարգում բոլոր մարդիկ ունեն այդ նոյն հնարաւորութիւնը, տարբեր մարդկանց կարողութիւնների ծաւալման ձգտումները անխուսափելիօրէն բախւելու են իրար հետ և մէկ մարդու այդ ձգտումը պէտք է վերջանայ այնտեղ, որտեղ սկսւում է ուրիշի ձգտումների դաշտը: Սա նշանակում է, որ արդարութեան սկզբունքները պէտք է կարգաւորւեն օրէնքի ճանապարհով, բայց առանց խախտելու անհատի ազատութիւնը: Ճիշտ այնպէս, ինչպէս ազատ շուկայում վաճառողի և գնորդի ձգտումներից ստեղծւում է ապրանքի գինը, այնպէս էլ արդար վարչակարգերը ստեղծւում են բոլոր մարդկանց ձգտումներից:

Ճիշտ այդ պատճառով էլ ստեղծւում են հարուստներ ու աղքատներ, որովհետեւ տարբեր են մարդկանց կարողութիւնները և ընդունակութիւնները: Բայց ճիշտ այդ պատճառով էլ, օրէնքը պէտք է նախատեսի հարուստի և աղքատի միջեւ հաւասարութիւն ստեղծելու հնարաւորութիւնը՝ տուրքերի կամ այլ գանձումների ճանապարհով: Տարբեր կառավարութիւնների տակ գտնւող քաղաքացիների փոխ-յարաբերութիւնների, նրանց միջեւ հաւասարակշռութիւն ստեղծելու օրէնքների վերլուծութիւնը կազմում է մեր ընկերվարութեան բովանդակութիւնը, որը արմատապէս տարբերւում է այլ ընկերվարութիւններից նրանով՝ որ իր արդարութեան գաղափարախօսութեան մէջ հիմնական տեղ ու նշանակութիւն է տալիս ազգային գործօնին:

Ֆրանգեանի սահմանմամբ, ազգութիւնը ներկայացնում է մարդկային հասարակութեան այն ձեւը, որը մշտական է, յարատեւել է մինչեւ այսօր և յարատեւելու է միշտ: Նա, ով դիտում է ազգը որպէս անձերի գումար, ով ծառերի յետեւում չի տեսնում անտառը, նա բնականաբար պէտք է մտածի, որ ազգային բարեփոխութիւնների համար բաւական են անհատների պահանջների բաւարարումը, որոնց մէջ կան նաեւ ազգային ձգտումներ:

Այդպէս էլ մտածում էին կոմունիստները և ազգային խնդիրների վրայ մեծ ուշադրութիւն չէին դարձնում: Մինչդեռ ազգը անհատների սովորական գումար չէ, նա ունի ուրոյն անհատականութիւն և, ինչպէս անհատը, կարող է անարդարութեան զոհ դառնալ նոյնիսկ այն դէպքում, երբ ուրիշ անհատների վրայ այդ անարդարութիւնը չի տարածւում: Ընկերվարութիւնը, որը պայքարում է մարդու ազատութեան համար, նոյն եռանդով ու սկզբունքներով պիտի պայքարի նաեւ ազգերի ազատագրման համար, այսինքն՝ միջազգային ընտանիքի մէջ ազատ ու անկախ ազգային միաւորներ ստեղծելու համար:

Ինչպէս ասւած է Հ.Յ.Դաշնակցութեան Ծրագրի մէջ, ազգը՝ իբրեւ պատմա-աշխարհագրական, լեզւական, մշակութային և քաղաքական ուրոյն ամբող-

ջութիւն, կազմում է համամարդկային հասարակական լիակատար զարգացման ու բազմակողմանի հարստացման ամենաէական ազդակներից մէկը։

Ազատ ինքնորոշման և կամ էլ ապստամբութեան ճամբով բոլոր ազգերը ունեն սեփական ազգային պետութիւններ կերտելու իրաւունքը, քանզի միայն սեփական կամքով ստեղծուած պետութեան մէջ ազգը կարող է լաւագոյն ձեւով ինքը իրեն արտայայտել և կատարել իր ուրոյն առաքելութիւնը միջազգային ընտանիքի նկատմամբ։

Հ.Յ.Դաշնակցութիւնը ծնուեց, ապրեց ու պիտի ապրի որպէս ազգային կուսակցութիւն, ինչը նշանակում է, որ նրա համար ազգ-ամբողջականութեան խնդիրները շատ աւելի կարեւոր են, քան այն ամբողջութեան ներսում գոյութիւն ունեցող դասակարգային, կուսակցական, տնտեսական ու հասարակական հակասութիւնները, որոնց յաղթահարման համար նա ընտրել է համերաշխութեան և ներդաշնակութեան սկզբունքը, ինչը, անշուշտ, չի բացառում պայքարը, սակայն պսակում է պայքարի աւարտը։

Ազգ-ամբողջութեան բոլոր ներքին պայքարները պէտք է աւարտուեն կողմերի ներդաշնակութեամբ ու խաղաղութեամբ, քանզի հակառակ դէպքում կարող է քայքայուել ինքը՝ ազգը։

Այս մօտեցումը Հ.Յ.Դաշնակցութիւնը ունեցել է իր ծննդեան առաջին իսկ օրից։ Դաշնակցութեան ծնունդն իսկ բխում էր այդ սկզբունքից, քանզի նպատակ ունէր միացնելու բոլոր հայ յեղափոխականներին, անկախ նրանց գաղափարախօսական, դասակարգային տարբերութիւններից։ Նրանց մէջ կային ազգայնականներ, հայրենասէրներ, մարքսիստներ, մարտական խմբեր, «Մշակ»ի շուրջ հաւաքուած մտաւորականներ։ Երբ կատարուեցին բոլոր այս խմբակների ու յեղափոխականների միացման փորձերը, Հնչակեանները ներկայացրին հետեւեալ պահանջը.- «Յեղափոխական կուսակցութիւնը պէտք է ունենայ իր ծրագիրը։ Եթէ ուզում էք, որ Հնչակեան կուսակցութիւնը միանայ ձեր կազմակերպութեան հետ, անհրաժեշտ է, որ ձեր ծրագիրը անպայման լինի սոցիալիստական»։

Քննարկելով Հնչակեանների այս առաջարկութիւնը, Դաշնակցութեան հիմնադիրները արտայայտեցին հետեւեալ միտքը.- «Անշուշտ, կուսակցութիւնը պէտք է ծրագիր ունենայ, բայց նա պիտի լինի այնպիսին, որ չհեռացնի մեզանից ուրիշներին, մասնաւորապէս նրանց՝ ովքեր մեզ օգնում են գործնականապէս։ Մենք պէտք է գտնենք ձեւակերպումներ, որոնք՝ ընդունելի լինեն թէ՛ Հնչակեանների և թէ բոլոր հայերի համար և ոչ թէ խօսքով, այլ գործով»։

Այս միտքը շատ յստակ արտայայտում է Հ.Յ.Դաշնակցութեան համահայկական և ոչ-դասակարգային բնոյթը։

Համահայկական իր էութիւնը, Դաշնակցութիւնը դրսեւորեց նաեւ 1904-1907 թւականների ճգնաժամին, երբ կուսակցութեան ներքին համերաշխութիւնը խախտուած էր արեւելահայկական և արեւմտահայկական տարակարծութիւններով։ Եւ այդ պահին էլ Հ.Յ.Դաշնակցութիւնը, հաւատարիմ իր համազգային սկզբունքների, կարողացաւ ստեղծել անհրաժեշտ համերաշխութիւնը։

Այսպիսով, անհատի և համայնքի փոխ-յարաբերութիւնից բխող հասարակական արդարութիւնը Հ.Յ.Դաշնակցութեան համար կրում է ազգային բնոյթ, ինչը նշանակում է, որ նա իր պայքարի և պահանջատիրութեան մէջ ձգտում է այնպիսի գոյավիճակի, որտեղ հայ ժողովուրդը կարողանայ ապրել ներքին ընկերային արդար պայմաններում, իսկ արտաքին աշխարհում կարողանայ գրաւել իր ազգային կարողութիւններին համապատասխանող տեղ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Հ.Յ.Դաշնակցութեան ծրագրի «Քաղաքական պահանջներ» գլխի «Հիմնաւորում» ենթագլխում նշուած իրողութիւնները ու ներկայ կացութիւնը պարզելուց յետոյ, մեր քաղաքական պահանջները, հաւանաբար, կարելի է ձեւակերպել այսպէս,-

Ամբողջական Հայկական Պետականութեան ստեղծում, որի սահմանները և վարչաձեւը համապատասխանեն հայ ժողովրդի կամքին և նրա կարողութիւններին։

Սա նշանակում է, որ Հ.Յ.Դաշնակցութիւնը ձգտում է այնպիսի ազգային պետականութեան, որը ստեղծուած լինի հայ ժողովրդի կամքով, ինքնապաշտպանութեան համար անհրաժեշտ սահմաններով, ժողովրդի գոյատեւումը ապահովող տնտեսավարութեամբ։ Այդ պետութիւնը իր գոյութեամբ պէտք է հաստատի հայ ժողովրդի նկատմամբ կատարուած անարդարութիւնը և պահանջի նրանց միջազգային դատապարտումը, նաեւ՝ պէտք է լինի աշխարհով մէկ ցրուած բոլոր հայերի հայրենիքը։

Ինքը՝ Հ.Յ.Դաշնակցութիւնը, որպէս յեղափոխական, ժողովրդավարական և ազգային կուսակցութիւն, հետապնդում է հետեւեալ քաղաքական պահանջները,-

Ա.) Հայապատկան հողերի վրայ կերտել Ազատ, Անկախ և Միացեալ Հայաստան։

Բ.) Հայաստանը պիտի լինի ժողովրդավարական Հանրապետութիւն, որտեղ պաշտպանուած լինեն աշխատաւորների և հասարակութեան բոլոր խաւերի շահերը և մարդկային իրաւունքները։

Գ.) Միացեալ Հայաստանի սահմանների հարցը կարող է լուծել միայն ժողովրդի կամքով և հարեւանների հետ իր փոխ-յարաբերութիւնները հանգրւանային ճամբով յստակեցնելու ճամբով: Միացեալ Հայաստան հասկացութիւնը նշանակում է, նաեւ, որ այդ Հայաստանը լինելու է աշխարհի տարբեր ծայրերում ապրող հայերի հայրենիքը:

Դ.) Անկախ Հայաստանի հողի վրայ պիտի համախմբւի հայութիւնը՝ իր տարազիր զանգւածներով, իսկ նրանց համար, ովքեր ի վիճակի չեն մարմնապէս տեղափոխւելու հայրենիք, պէտք է ստեղծուեն հայրենիքի կեանքին մասնակցելու այլ հնարաւորութիւններ:

Ե.) Հայաստանը պէտք է ստանձնէ հայ ազգի դէմ նորագոյն պատմութեան մէջ գործադրւած և դեռեւս անպատիժ մնացած բոլոր ոճիրների դատապարտման և վնասների հատուցման պարտականութիւնը, համապատասխան քայլեր կատարելով միջազգային ասպարէզում:

Զ.) Հայաստանի Հանրապետութեան հիմնական օրէնքները պէտք է որոշուեն Հայաստանի Սահմանադիր Ժողովի կողմից, որը պէտք է ընտրւի ընդհանուր, հաւասար, ուղղակի, գաղտնի և համեմատական ընտրութեան սկզբունքով:

Այդ հիմնական սահմանադրական օրէնքներով պէտք է որոշւի Հայաստանի պետական կառոյցը, որը պէտք է ապահովի.

1.- Կատարեալ ազատութիւն՝ մտածումի, խօսքի, ստեղծագործութեան, մամուլի, հրապարակայնութեան և արտայայտւելու այլ միջոցների, խղճի, ժողովների, քաղաքական և հասարակական կազմակերպութիւնների, արհմիութիւնների և տեղափոխութիւնների:

2.- Աշխատանք՝ բոլոր քաղաքացիների համար:

3.- Անձեռնմխելիութիւն՝ անձի, սեփականութեան, նամակագրութեան և հաղորդակցութեան այլ միջոցների:

4.- Կրօնի ազատութիւն և Եկեղեցու բաժանում պետութիւնից:

5.- Ազգային համերաշխութիւն՝ ջնջելով դասակարգային, կրօնական, ցեղային և այլ առանձնաշնորհումները, հաստատելով հաւասարութիւն բոլոր խաւերի ու փոքրամասնութիւնների միջեւ:

6.- Ամէն մի հայի մասնակցութիւնը հայ ժողովրդի պետական ու հասարակական կեանքին, սահմանելով նրանց պարտականութիւնները ու իրաւունքները:

7.- Ընդհանուր, պարտադիր և ձրի տարրական ու միջնակարգ ուսում: Դասաւանդութիւն մայրենի լեզւով, առանց բացառելու վճարովի և ոչ-մայրենի լեզւով ուսումը:

8.- Հաւասարութիւն օրէնքի առջեւ՝ բոլոր քաղաքացիների։ Հրապարակային դատավարութիւն՝ անկախ դատաւորների կողմից։ Դատավարութիւնը պէտք է լինի ձրի։

9.- Օրէնսդիր, գործադիր և դատական մարմինների բաժանում։

10.- Տեղական վարչական լայն ինքնավարութիւն։

11.- Օրէնսդիր ժողովներին օրէնքների նախագծեր առաջարկելու և հանրաքւէի դիմելու իրաւունք՝ բոլորին։

12.- Ծերութեան, գործազրկութեան, արկածների և հիւանդութիւնների դէմ ապահովագրութեան իրաւունք՝ բոլոր քաղաքացիների համար։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1.- Հիմնաւորում։

Լայն տարածում գտած այն տեսակէտը, թէ տնտեսութիւնը և քաղաքականութիւնը տարբեր բաներ են - որովհետեւ քաղաքականութիւնը ապահովում է անհատի ազատութիւնը, իսկ տնտեսութիւնը նրա բարեկեցութիւնը – յանգեցրեց այն եզրակացութեան, որ քաղաքական վարչակարգը կապ չունի տնտեսական վարչակարգի հետ։

Այդ տեսակէտը միանգամայն սխալ է, քանզի տնտեսական ազատութիւնները բխում են քաղաքական ազատութիւններից, իսկ տնտեսական արդարութիւնը բխում է վարչակարգի արդարութիւնից։

Տնտեսավարութեան հիմնական նպատակը կայանում է մարդկանց տնտեսական գործունէութիւնը համադրելու մէջ։ Այդ համադրման համար գոյութիւն ունեն միայն երկու սկզբունք, որոնցից մէկը կենտրոնացած ղեկավարումն է, որի համար անհրաժեշտ է բռնութիւն, իսկ երկրորդը՝ մարդկանց կամաւոր համագործակցութիւնն է, որի համար անհրաժեշտ է ազատ շուկայ։

Երկու այս սկզբունքներն էլ կատարեալ չեն և անընդունելի են հասարակական արդարութիւն ստեղծելու տեսանկիւնից։ Երկուքն էլ շահագործում են աշխատաւորին, առաջինը՝ պետութեան, իսկ երկրորդը՝ շուկայի ճամբով։

Ազատ շուկայի պայմաններում ստեղծուած առանձնաշնորհումները որոշում են շուկայի գները և գների ճամբով ազդում են արտադրութեան վրայ, ճիշտ այնպէս՝ ինչպէս դա անում են ամբողջատիրական պետութիւնների կառավարութիւնները։

Պատահական չէ, որ Խորհրդային Միութեան տնտեսութիւնը կոչում էին պետական դրամատիրութիւն։

Ազատ հասարակարգ ստեղծելու համար՝ անհրաժեշտ է պետութեան միջամտութիւնը ազատ շուկայական տնտեսութեան մէջ։

Այսօրւայ դրամատիրական երկրներում, ազատ շուկայի պայմաններում, կառավարութիւնները կատարում են այդ միջամտութիւնը և դրանով իսկ փրկում են հասարակարգը այն աղէտներից, որոնք բնորոշ են պետական ամէն միջամտութիւն սկզբունքօրէն մերժող երկրների համար։

Բոլոր դրամատիրական երկրները շատ շուտ հասկացան, որ ազատ շուկայի գոյութիւնը ոչ միայն չի բացառում կառավարութեան միջամտութիւնները, այլ անհրաժեշտ է դարձնում նրանց ներգործութիւնը՝ թէ՛ որպէս շուկայական տնտեսավարութեան օրէնքները որոշող և թէ այդ օրէնքների կատարմանը հսկող դատաւոր։

Կառավարութեան միջամտութիւնները անհրաժեշտ են, սակայն ընկերվարական և արդար կարող են համարւել միայն այն միջամտութիւնները, որոնք նպատակ ունեն պաշտպանելու աշխատաւորների ազատութիւնները և այն բարոյական սկզբունքը, թէ ինչպէ՞ս պէ՛տք է աշխատաւորները օգտւեն իրենց ազատութիւններից։

Ասել, որ կառավարութեան գործը չէ, թէ ես ի՞նչ եմ անելու իմ ազատութեան հետ, կը նշանակի չհասկանալ անհատի և իշխանութիւնների փոխ-յարաբերութեան փիլիսոփայութիւնը։

Հասարակութեան մէջ գործում են երկու տեսակ արժէքներ։ Առաջինը վերաբերում է մարդկանց փոխ-յարաբերութեանը, որտեղ որոշիչը ազատութիւնն է։ Երկրորդը այն արժէքներն են, որոնցից օգտւում է մարդը իր ազատութիւնների սահմաններում։ Այստեղ որոշիչ դերը պատկանում է հասարակական բարոյականութեանը, որի միակ հսկիչը՝ նոյն ինքը պետութիւնն է։ Ինչպէս ասում էին Ֆրանսիայի ազատականները՝ արդար հասարակարգում «վատ» մարդկանց թոյլ չեն տալիս չարիք գործելու, իսկ «լաւ» մարդկանց օգնում են բարի գործեր կատարելու մէջ։

Սակայն «լաւ»ի և «վատ»ի որոշումը մնում է կառավարութեան ձեռքում և - տեսնում ենք, որ տարբեր երկրներում արգելւում ու թոյլատրւում են տարբեր բաներ։

Այսպիսով, վարչակարգի էութիւնը որոշւում է կառավարութեան միջամտութիւնների սահմաններով ու բովանդակութեամբ, բոլոր՝ այդ թւում նաեւ տնտեսավարութեան բնագաւառներում։ Սա նշանակում է, որ Հայաստանի տնտեսական կառոյցի որոշումը ոչ այլ ինչ է, եթէ ոչ կառավարութեան միջամտութիւնների սահմանների և բովանդակութեան որոշում։

Տնտեսութիւնը ջանում է գտնել փոխզիջման եզր՝ մարդկանց անսահման պահանջների և սահմանափակ միջոցների միջեւ։ 17րդ դարից սկսեալ տնտեսագէտները մշակել են մեթոդներ՝ բացատրելու համար, թէ ինչպէ՞ս են առանձին մարդիկ, ձեռնարկութիւններ և ամբողջ ազգեր օգտագործում իրենց ունե-

ցած միջոցները և ինչպէ՞ս կարելի է աւելի արդիւնաւէտ օգտագործել աշխատանքը, մեքենաները, շէնքերը և այլ միջոցներ: Սակայն, մենք ոչինչ ասած չենք լինի, եթէ չպարզենք, թէ ո՞ւմ շահերից ելնելով ենք մենք մօտենում «արդիւնաւէտ օգտագործում» հասկացութեանը:

Հ.Յ.Դաշնակցութիւնը, որպէս ազգային կուսակցութիւն, առաջնակարգ է համարում հայ ժողովրդի ազգային շահերի պաշտպանութիւնը, ուստի արդիւնաբեր է համարում այն տնտեսավարութիւնը, որը լաւագոյնս օգտագործում է ազգային միջոցները՝ ազգի ընդհանուր բարգաւաճման համար:

Ոչ թէ անհատի կամ ընկերութիւնների, այլ ամբողջ ազգի բարգաւաճմանը պէտք է ծառայի տնտեսական վարչակարգը: Իսկ անհատները և ընկերութիւնները՝ որպէս ազգի բաղկացուցիչ մասնիկներ, այն չափով կ'օգտուեն ընդհանուր ազգային բարգաւաճումից, որ չափով որ մասնակցել են այդ բարգաւաճմանը: Մի խօսքով՝ անհատի և ընկերութիւնների շահերը պէտք է ենթարկուեն ազգային շահերին և այս իմաստով նրանց ազատութիւնները պէտք է սահմանափակուեն ազգային արժէքների թելադրանքով: Ինչպէս յայտնի է, ամէն մի տնտեսական համակարգ օգտագործում է չորս հիմնական արտադրական միջոցներ՝ բանուորական ուժ, կապիտալ, արտադրական միջոցներ և նախաձեռնութիւն: Այս գործօնները ընտրելու ճամբով նա պատասխանում է հետեւեալ կարեւոր հարցերին,- Ի՞նչ արտադրել, ինչպէ՞ս արտադրել և ինչպէ՞ս սպառել արտադրւած ապրանքը: Անշուշտ, այս հարցերի պատասխանը կարող է տալ ազատ շուկան, բայց նա ոչ մի կերպ հաշւի չի առնի ազգային շահերը, եթէ գոյութիւն չունենայ պետութեան միջամտութիւնը:

Բացարձակ ազատ տնտեսութիւններ ընդհանրապէս գոյութիւն չեն ունեցել և այսօր էլ գոյութիւն չունեն: Պետութիւնը այս կամ այն ձեւով միշտ էլ վերահսկողութիւն է հաստատել տնտեսութեան վրայ: Այդ վերահսկողութիւնը հաստատում է հողի, ընդերքի, արտադրական միջոցների, աշխատանքի և երկրի բարոյական սկզբունքների վրայ: Այս վերջինս նոյնպէս կապ ունի տնտեսութեան հետ, քանզի արտադրութեան և սպասարկման ազատութիւնները վերջանում են այնտեղ, որտեղ սկսում է բարոյականութեան կողմից արգելւած գօտին: Այսինքն՝ մի ընկերութիւն չի կարող արտադրել այնպիսի ապրանքներ, որոնք արգելւած են երկրի օրէնքներով:

Այս նկատառումներից ելնելով, Հ.Յ.Դաշնակցութիւնը հաստատում է հետեւեալ տնտեսավարական սկզբունքները.-

Հայաստանի Հանրապետութեան սահմաններում՝

1.- Հողը, ընդերքը, ջուրը, օդը, կենդանական ու բուսական աշխարհը, ինչպէս նաեւ այլ բնական հարստութիւններ պատկանում են Հայաստանի ժո-

ղովրդին, որը այդ հարստութիւնների տնօրինութիւնը յանձնում է իր կողմից ընտրւած օրէնսդիր իշխանութիւններին։

2.- Ամէն մի անհատ, ընտանիք, ընկերութիւն կամ նախաձեռնող խումբ կարող է վարձել հողը կամ ժողովրդին պատկանող որեւէ այլ հարստութիւն, ժամանակաւոր կամ ընդմիշտ շահագործելու համար։

3.- Օգտագործման ընթացքում հողը չպէտք է այնպէս շահագործւի, որ նւազի նրա բերքատւութիւնը, իսկ ջուրը կամ օդը չպէտք է այնպէս աղտոտւեն, որ անկարելի լինի նրանց մաքրութեան վերականգնումը։

4.- Շահագործման յանձնւած հողը չպէտք է այնպէս շահագործւի, որ նւազի նրա բերքատւութիւնը, իսկ ջուրը կամ օդը չպէտք է այնպէս աղտոտւեն, որ անկարելի լինի նրանց մաքրութեան վերականգնումը։

5.- Սեփականութեան իրաւունքի օգտագործումը չպէտք է հակասի հասարակական բարգաւաճմանը։

6.- Հայաստանի տնտեսութիւնը հիմնւում է բազմատեսակ սեփականութիւնների ճանաչման վրայ, որոնց հաւասարութիւնը պաշտպանւում է պետական օրէնքով։

7.- Արտադրական միջոցները և շէնքերը պատկանում են սեփականատէրերին, այդ թւում նաեւ պետութեանը։ Սեփականատէրը կարող է օգտագործել իր ունեցւածքը սեփական հայեցողութեամբ, հաշւի առնելով գոյութիւն ունեցող բարոյական, տնտեսական և քաղաքական սահմանափակումները։

8.- Յանուն մարդու և ազգի շահերի՝ պետութիւնը իր հսկողութիւնն է հաստատում տնտեսութեան վրայ։

9.- Մարդու և պետութեան, գործատիրոջ և աշխատաւորի, արտադրողի և սպառողի միջեւ փոխ-յարաբերութիւնները կառուցւում են համագործակցութեան և հասարակական համերաշխութեան հիման վրայ։

10.- Քաղաքացիների և գիւղացիների տնտեսական ազատութիւնները իրականացւում են սեփականութեան, ազատ նախաձեռնութեան և ազատ աշխատանքի իրաւունքի ճամբով։

11.- Աշխատանքի ընտրութեան ազատութիւնը թոյլ է տալիս ամէն մարդու իր նախասիրութեան հետեւելու՝ ինքնուրոյն արտադրելու կամ պայմանագրով աշխատելու ընտրանքների միջեւ։

12.- Պայմանագրով աշխատողը իրաւունք ունի պահանջելու՝ անվտանգ ու անվնաս աշխատանքային պայմաններ, ինչպէս նաեւ կառավարութեան կողմից հաստատւած նւազագոյն աշխատավարձ։

13.- Ամէն մի աշխատաւոր ունի հանգստի իրաւունք։

14.- Ձեռնարկութիւնների աշխատաւորները իրաւունք ունեն մասնակցելու ձեռնարկութեան ղեկավարման գործին։

15.- Արգելւում է ստիպողական աշխատանքը, ներառեալ կալանքի վայրերում:

16.- Ճանաչւում է գործադուլների իրաւունքը:

17.- Թոյլատրւում է արտասահմանեան ընկերութիւնների գործունէութիւնը:

18.- Կառավարութեան միջամտութիւնը հետեւեալ բնագաւառների համար պարտադիր է՝

ա.) Տնտեսական նպատակների և կամ էլ տնտեսական բարոյականութեան բնագաւառ

բ.) Տուրքերի քաղաքականութեան բնագաւառ

գ.) Աշխատանքի պաշտպանութիւն

դ.) Կարեւոր ապրանքների և սպասարկման գների սահմանում

ե.) Որոշ ապրանքների արտահանման և ներմուծման քաղաքականութիւն

զ.) Նւազագոյն աշխատավարձի որոշում

է.) Էլեկտրականութեան, ջրի և գազի մատակարարում

ը.) Թոշակների և այլ նպաստների քաղաքականութիւն

թ.) Գիտութիւն, արւեստ, կրթութիւն և գրականութիւն

ժ.) Երկրի պաշտպանութեան հետ կապւած արտադրութիւններ

ժա.) Քաղաքի պարտէզներ, կենդանաբանական և կենսաբանական այգիներ ու այլ հանգստեան վայրեր

ժբ.) Երկրի Էկոլոգիական վիճակ:

Այս բաժինը ամփոփելով, կարելի է ասել, որ պետութեան տնօրինութեան կամ վերահսկողութեան տակ են գտնւում բոլոր այն բնագաւառները, որոնք զբաղւած են ազգային արժէքների պահպանմամբ: Այս արժէքների շարանը որոշւում է երկրի օրէնսդիր մարմնի կողմից:

1993

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՅԱՐՄԱՐՈՒԵԼՈՒ ՃԱՀԻՃԸ

Է. Յովհաննիսեան

Բազմիցս ունեցել եմ առիթը խօսելու համար այն երեք սիւների մասին, որոնց վրայ յենւում է Դաշնակցութիւնը, որոնք սակայն մեր հակառակորդների աչքի փշերն են։ Ով ուզում է մեզ հարւածել, հարւածում է հէնց այդ սիւներին, բայց նրանք ժայռի պէս ամուր են ու յաւերժ, ուստի կործանւողները հարւածողներն են։ Այդպէս եղել է անցեալում ու այդպէս կը լինի ապագայում։ Անսասան են Դաշնակցութեան երեք սիւները՝ Ազգայնականութիւնը, Յեղափոխութիւնը և Ընկերվարութիւնը։ Այս երեք արժէքները համամարդկային են, իսկ Դաշնակցութիւնը այդ արժէքների հայացնողն է։

Այս արժէքների հայացման ճանապարհին էլ մեզ հանդիպում են մակաբոյծներ, որոնք ջանում են մեր ազգայնականութեանը հակադրել աշխարհաքաղաքացիութիւնը, հասարակական արդարութեանը՝ ուժեղների բռնութիւնը, իսկ յեղափոխութեանը՝ յարմարւողականութիւնը։ Տարբեր պատճառներով և տարբեր ուժերի ազդեցութեան տակ են գործում այս մակաբոյծները, սակայն բոլորն էլ ապրում են ճահիճում, որտեղ որեւէ շարժում կործանիչ է շարժւողի համար, քանզի դարերից եկող և Դաշնակցութեան էութիւնը կազմող՝ ազգայնականութեան, ընկերվարութեան և յեղափոխութեան դէմ խաղ չկայ։ Բայց խաղացողներ կան ու խաղում են նրանք ուրիշների այդ խաղը՝ ամենատարբական մակարդակի վրայ։

Անշուշտ, այդ խաղերը ուղղւած են Դաշնակցութեան դէմ և յաճախ որպէս թիրախ ընտրում են իմ գրութիւններն ու արտայայտութիւնները այն պարզ պատճառով, որ իմ մտքերը ես չեմ քողարկում շինծու գաղափարներով, որոնք իբր թէ հասարակական կեանքի համամարդկային չափանիշներ են, բայց փաստօրէն բոլորն էլ իրենց գործունէութեան մէջ շրջանցում են այդ չափանիշները։ Օրինակ, եթէ որեւէ զօրավար յայտարարի, որ շատ ճիշտ է ռմբակոծել հակառակորդի քաղաքները ու սպանել այդ քաղաքի խաղաղ բնակիչներին ու երեխաներին, ապա միջազգային հասարակական կարծիքը և իրաւապաշտպան կազմակերպութիւնները պարզապէս վայնասուն կը բարձրացնեն նման յայտարարութեան շուրջ, բայց իրականում բոլորն էլ ռմբակոծում են, բոլորն էլ երեխաներ ու խաղաղ բնակիչներ են սպանում, ամերիկացիները՝ Իրաքում, ռուսները՝ Չէչէնիայում, վրացիները՝ Աբխազիայում, թուրքերը՝ Քուրդիստանում, ադրբեջանցիները՝ Ղարաբաղում, անգլիացիները՝ Ֆոլկլանտում և այլն։

Սակայն բոլորն էլ սեփական ուժի գործադրումը արդարացնում են որեւէ միջազգային օրէնքով և սեփական բռնութիւնը մեղմացնում են պատմութեամբ, սահմանադրութեամբ կամ արդարութեամբ: Սակայն, նոյնիսկ այդ դէպքում բծախնդիր հակառակորդը կարողանում է մաքրել բռնութիւնը արդարացուցիչ շերտերից և ցոյց տալ այն իր մաքուր տեսքով, ցնցելով ընթերցողին կամ ունկնդրին:

Այս մօտեցումը ամբողջովին սխալ է և հակասում է տեղեկատւական բոլոր կանոններին: Այսպէս կարելի է վարուել ոչ թէ ճշմարտութիւնը, այլ սուտը քարոզելու համար: Յիրաւի, ամէն մի ճշմարտութիւն ունի իր պատմութիւնը, սահմանները, դրդապատճառները, միջավայրը, նպատակը և շատ ուրիշ գործօններ, առանց որի ճշմարտութիւնը կորցնում է իր հողը և դառնում է գնահատականից զուրկ երեւոյթ:

Մեզ կարող են ցոյց տալ մի ժապաւէն, որտեղ մի երիտասարդ տղայ սպանում է պարկեշտ դէմքով մի ծերունու, ապա փախչում: Եթէ մեզ չբացատրեն, թէ որո՛նք էին ժապաւէնի հերոսները, մենք միաբերան կը դատապարտենք երիտասարդին և կը խղճանք ծերունուն: Բայց եթէ մեզ ասեն, թէ երիտասարդը Թեհլիրեանն էր, իսկ ծերունին Թալէաթը, ապա ամէն ինչ կը փոխւի: Իսկ եթէ ցոյց տան նաեւ հայերի ջարդերը և Թալէաթի մասնակցութիւնը այդ ջարդերում, ապա նոյնիսկ «մի սպանիր» աւետարանական ճշմարտութեան կողմնակից քրիստոնեաները կը ծափահարեն Թեհլիրեանին: Ուրեմն չի կարելի երեւոյթը հանել իր պատմական միջավայրից, ապա տալ նրան գնահատական, ինչպէս չի կարելի դասախօսութիւնից հանել մի նախադասութիւն և դարձնել այդ նախադասութիւնը դասախօսութեան գնահատական:

Բայց ճիշտ այդպէս են վարւում մեր հակառակորդները, երբ ուզում են հարւածել այն սիւներին, որոնց վրայ յարում է Դաշնակցութիւնը:

Ես, օրինակ, նկարագրելով մեր կարեւոր սիւներից մէկը՝ ազգայնականութիւնը, նշում եմ հետեւեալը.-

«Մեզ համար ազգայնականութիւն նշանակում է պաշտպանութիւնը ազգային արժէքների, ազգային աւանդութիւնների, կրօնի, լեզւի, մշակոյթի և այն ամէնի, որը մեզ հայ է դարձնում և հայ պահում և որը Դաշնակցութեան համար բարձրագոյն արժէք է: Մենք պայքարում ու պաշտպանում ենք այդ արժէքները, որովհետեւ ազգ ամբողջութիւնը հասարակական կեանքի բնական միաւորն է, առանց որի իմաստազրկւում են հասարակական մնացեալ բոլոր արժէքները: Ազգային բազմազանութիւնը անհրաժեշտ է հասարակական ներդաշնակութեանը, ուստի այդ բազմազանութեան պահպանումը բնութեան բնական պահանջն է: Այս իմաստով, մեզ համար ազգի գոյատեւումը առաջնահերթ նշանակութիւն ունի՞ բաղդատած մարդու իրաւունքների պաշտ-

պանութեանը, ժողովրդավարութեանը, պետութեանը և միջազգային օրէնքներին, որովհետեւ այս ամէնը ստեղծել են ազգերը իրենց գոյատեւումը ապահովելու համար և այդ ամէնը կը կորցնեն իրենց իմաստը՝ եթէ ծառայեն ազգերի ոչնչացմանը։

«Դժբախտաբար, կան պետութիւններ, ժողովրդավարութիւններ և միջազգային օրէնքներ, որոնք նպաստում են ազգութիւնների վերացմանը, ծառայելով աշխարհաքաղաքացիական սկզբունքների, ընդհանուր շուկային և այլ ապազգային արժէքներին։ Այս մասին մենք պէտք է անընդհատ խօսենք, որովհետեւ մեր այսօրւայ բարեկամների մեծ մասը մեզանից պահանջում է ոչ թէ ազգային, այլ գաղափարախօսական դիրքորոշում, ոչ թէ ազգային, այլ քաղաքական շահերից բխող դաշինք։ Շատ քչերն են, որ պատրաստ են մեր դաշնակիցը դառնալ, ելնելով մեր հայ լինելու փաստից, որի հետ կապւած է մեր աշխարհագրական դիրքը, մեր կրօնական և մշակութային առանձնայատկութիւնը, Սփիւռքի գոյութիւնը և մեր մնացեալ առանձնայատկութիւնները։ Ով ուզում է մեզ հետ բարեկամութիւն անել այս հողի վրայ, դժբախտաբար դաստւում է աջակողմեանների շարքին և նրանց հետ բարեկամութիւնը համարւում է անընդունելի, քանզի նրանք ժողովրդավարական թեւին չեն պատկանում։ Իսկ ո՞վ ասաց, որ ժողովրդավարութիւնը իր արեւմտեան տեսքով բացարձակ արժէք է։ Եւ ո՞վ ասաց, որ նման ժողովրդավարութիւն հայերի կամ ռուսների համար ազգը փրկելու լաւագոյն վարչաձեւերից մէկն է։ Եւ վերջապէս ո՞վ ասաց, որ մենք ընդունակ ենք մի քանի տարւայ ընթացքում անցնել այն ճամբան, որը Արեւմուտքը անցաւ 200 տարւայ ընթացքում։ Մեզ չի էլ հետաքրքրում, թէ ո՞վ այս բոլոր յիմարութիւնները ասաց։

«Մենք շարունակում ենք պնդել, որ պէտք է նախ պաշտպանել ազգի գոյութիւնը, ապա մտածել այդ գոյութեան ձեւերի մասին։ Եւ նախքան այդ ձեւերի որոնումը՝ մենք պէտք է մեզ նայենք հայելուն ու համոզւենք, որ ո՛չ ֆրանսացի ենք, ո՛չ ամերիկացի և ոչ էլ եւրոպացի։ Մենք հայ ենք ու եթէ կարողանանք գոյատեւել որպէս այդպիսին, մենք կը տեսնենք, որ ուրիշ կը լինի մեր ժողովրդավարութիւնը, մեր սահմանադրութիւնը և մեր ճակատագիրը։ Բայց դրան հասնելու համար մենք պիտի պաշտպանենք մեր ժողովուրդը այն հողմերից, որոնք ժողովրդավարութեան դիմակով գալիս են ջնջելու և մասամբ արդէն ջնջել են մեր ազգը»։

Երբ ես տալիս եմ մեր ազգայնականութեան նման բացատրութիւն, մեր հակառակորդները, յատկապէս Հայաստանի պետական տեղեկատւական միջոցները հերթական շարժումն են կատարում իրենց ճահիճում և յայտարարում են հետեւեալը.-

«Է. Յովհաննիսեանը յայտարարեց, որ Դաշնակցութեան համար մարդու իրաւունքների պաշտպանութիւնը և ժողովրդավարութիւնը երկրորդական արժէքներ են»: Անշուշտ այս յայտարարութիւնը ցնցում է բարեպաշտ աշխարհը և Է. Յովհաննիսեանի պատճառով Դաշնակցութիւնը մեղադրւում է հակաժողովրդավարութեան մէջ: Մինչդեռ Դաշնակցութեան համար ժողովրդավարութիւնը, մարդու իրաւունքների պաշտպանութիւնը, պետական անկախութիւնը, որպէս արժէք, միշտ էլ եղել են հիմնական, բայց հերթականութեան իմաստով նրանք իսկապէս եղել են երկրորդական, այսինքն սկզբից ազգի գոյատեւումը, ապա այդ գոյատեւման ձեւերը:

Ճիշտ հակառակ տեսակէտը ունեն այսպէս կոչւած ժողովրդավարականները, որոնք յայտարարում են, որ անկախ ազգային պետութիւն չեն ուզում, եթէ այդ պետութիւնը պիտի լինի ամբողջատիրական: Իսկ մարդու իրաւունքների պաշտպանութեան հոչակաւոր ներկայացուցիչ, Ռուսաստանի Պետական Դումայի անդամ Սերգէյ Կովալեւը հեռուստատեսային իր ելոյթներից մէկում յայտարարեց, թէ հայրենասիրութիւնը անպէտքների վերջին ապաստանն է: Ու ոչ մէկը չասեց նրան՝ ապուշ, ո՛չ մէկը մեզանից չթքեց նրա երեսին, որովհետեւ մենք անպէտք ու խղճուկ հայրենասէրներ ենք, իսկ նրանք հայրենասիրութիւնը արմատախիլ անող հերոսներ: Նրանք կարող են խաղալ այդ հերոսների դերը, ինչպէս մէկ անգամ արդէն խաղացին 1917 թւականին, որովհետեւ ո՛չ ազգութիւն ունեն, ո՛չ ազգային զգացմունք, բայց ցաւալի է, որ մակաբոյծների այդ բանակում յայտնւում են նաեւ հայեր, որոնց միակ արժէքը իրենց ազգային պատկանելիութեան մէջ է, որոնց եթէ զրկես ազգային տարազից, աշխարհի լաբիրինտոսներում այլեւս ոչ մէկը չի նկատի: Նրանք քանդում են սեփական տունը, դարձնելով այն նոր համաշխարհային շէնքի փլատակ, որտեղ չի՛ ապրելու ոչ մէկ ազգ և, ի հարկէ, չի՛ ապրելու հայութիւնը: Գուցէ 100 տարի յետոյ մարդկութեան ազգային վերածնունդի հետ միասին մէկ հայ էլ հրապարակ իջնի և Արարատի փէշերին հաւաքի այսօրւայ իշխանութիւնների կողմից հայրենիքից դուրս նետուած մեր ժողովրդի բեկորները: Գուցէ և վերադառնան այդ բեկորները, բայց նրանց հայրենիքը արդէն գրաւած կը լինեն ապազգային տարրերը, որոնց դէմ կատաղի պայքար մղելուց յետոյ միայն, մեր ժողովուրդը մասամբ կը հասնի այն դիրքերին, որոնք գրաւում է այսօր:

Բայց շատ հեռու չգնանք: Քանի դեռ ապրում է Դաշնակցութիւնը իր ազգային գաղափարախօսութեամբ, ժամանակաւոր, թէ ընդմիշտ արգելւած վիճակում, հայ ժողովուրդը կարող է վստահ լինել, որ առանց լուրջ դիմադրութեան, այս կամ այն յիմարի կամ դաւաճանի քմահաճոյքով չի՛ կործանուի հայ ժողովուրդը:

* * *

Երբ ես խօսում եմ մեր հասարակական արդարութեան մասին, ջանալով ապացուցել, որ մեր ընկերվարութիւնը ո՛չ Մարքսիզմ է և ոչ էլ ստալինեան սոցիալիզմի տարբերակ, ինձ ոչ մէկը մեր հակառակորդներից հաւատալ չի ուզում: Այս առիթով ես հրատարակեցի մի ամբողջ յօդւածաշարք «Դրօշակ»ում, բայց հակառակորդների արձագանքը միանշանակ էր.- «Դաշնակցութիւնը իշխանութեան գլուխ գալուց յետոյ՝ կոլտնտեսութիւնները վերականգնելու է»: Երբ մեր ընկերները մանրամասնօրէն բացատրում էին, թէ ինչու ստեղծւած պայմաններում չի կարելի սեփականաշնորհման հարցում թոյլ տալ սանձարձակութիւն, հակառակորդները գրում էին, որ Դաշնակցութիւնը մասնաւոր սեփականութեան դէմ է: Մի խօսքով ընկերվարական մեր սիւնն էլ ընկաւ ճահճում գտնւող մակաբոյծների հարւածների տակ, բայց մնաց անսասան, երբ Հայաստանում հարուստների և աղքատների տարբերութիւնը հասաւ աներեւակայելի չափերի և ժողովուրդը սկսեց կարօտով յիշել «լըճացման» ժամանակաշրջանը, երբ հարուստները այնքան լկտի ու խաբեբայ չէին, ինչպէս Հայաստանի այսօրւայ տէրերը:

Սակայն ամենաուժեղ և արմատական հարւածները ուղղւած են մեր երրորդ սիւնի դէմ, որն է Յեղափոխութիւնը: Այդ պատճառով էլ ուզում եմ այս հարցի վրայ կանգ առնել հանգամանօրէն:

Կասկած չունեմ, որ իմ արմատական բացատրութիւններն ոչ մէկ բան չեն փոխելու, որ բոլոր բացատրութիւններից յետոյ գլուխները կորցրած հակառակորդները գրելու են, ինչպէս արդէն գրեցին, թէ Դաշնակցութիւնը չի բացառում ահաբեկչութիւնը:

Նախքան այս հարցին պատասխանելը ուզում եմ յիշեցնել մեր ընթերցողներին, որ աշխարհի առաջին յեղափոխական ահաբեկիչ Արաֆաթը և առաջին պետական ահաբեկիչ Շամիրը խաղաղութեան Նոբելեան մրցանակ ստացան: Եթէ նման բան տեղի է ունենում մեր աշխարհում, եթէ ահաբեկիչները խաղաղութեան մրցանակի դափնեկիրներ են դառնում, ուրեմն ինչո՞ւ չենթադրել, որ ահաբեկչութիւնն էլ պայքարի բոլոր ձեւերի պէս կարող է լինել արդար և անարդար, քանզի բոլոր տեսակի պայքարները արժեւորւում են նպատակով: Արդար նպատակի հասնելու համար մղւող պայքարը ինքնըստինքեան արդար է: Այստեղ կայ միայն մէկ հարցական, ո՞վ և ի՞նչպէս պէտք է որոշի նպատակի արդարութիւնը: Այս հարցը իսկապէս բարդ է բոլոր նրանց համար որոնք չունեն գլխաւոր նպատակ, որին ենթարկւում է ամէն ինչ: Բայց նպատակասլաց կազմակերպութիւնների համար, որոնց թւին է պատկանում

նաեւ Հ.Յ.Դաշնակցութիւնը, նման խնդիր գոյութիւն չունի, արդար են բոլոր այն նպատակները, որոնք ծառայում են հայ ժողովրդի ազգային շահերին։

Այս սահմանումը տալուց յետոյ մենք կարող ենք անդրադառնալ Հ.Յ.Դաշնակցութեան յեղափոխական էութեանը։

Մեր յեղափոխականութիւնը կայանում է նրանում, որ եթէ գոյութիւն ունեցող օրէնքները թոյլ չեն տալիս հասնելու մեր գերագոյն նպատակին, ապա մենք պէտք է վերցնենք իշխանութիւնը՝ օրէնքները փոխելու համար և կամ էլ պէտք է շրջանցենք օրէնքը։

Այստեղ ամէն ինչ ասւած է, բայց դրա հետ միասին ասելու բան շատ կայ։

Նախ ո՞վ է մեզ իրաւունք տալիս մեր կողմից ընկալւող ու ձեւակերպւած նպատակը համարել ամբողջ ազգի համար գերագոյն արժէք, ապա պարտադրել այդ նպատակը ազգին, այն էլ յեղափոխական ճամբով, այսինքն՝ օրէնքը փոխելու կամ շրջանցելու գնով։

Բացի դրանից, եթէ մենք օրէնքը փոխելու համար պիտի իշխանութիւնը վերցնենք ոչ թէ ժողովրդավարական, այլ յեղափոխական ճանապարհով, ուրեմն մեր ժողովուրդը չի մասնակցելու այդ ճակատագրական իրադարձութեանը և կամ էլ մասնակցելու է քաղաքացիական պատերազմի ճամբով։

Եւ, վերջապէս, եթէ մենք մեր երկրի ներսում կատարելու ենք քայլեր, որոնք չեն համապատասխանելու միջազգային օրէնքներին, որոնք մենք ի վիճակի չենք փոխելու, ապա մենք մնայուն կերպով գտնւում ենք միջազգային օրէնքը շրջանցելու և աշխարհի ուժեղների կամքին հակադրւելու դիրքերի վրայ, որի ուժը չունենք և երբեք էլ չենք ունենայ։

Ահա թէ ինչո՛ւ մեզ յաճախ տանում են դէպի յարմարւելու ճահիճը, ուր չկան քաղաքացիական պատերազմներ, ուր ուժեղները պարտադրում են իրենց կամքը, ժողովրդին խրտւիլակ դարձնելու և ժողովրդի ստեղծագործ ու կարող ուժերը ոչնչացնելու ճամբով։

Ահա՛ այս ոլորտում է, որ ասելիք շատ կայ։ Առաջին ասելիքը ժողովրդի դերի մասին է այն վարչաձեւում, որը կոչւում է ժողովրդավարութիւն և որը հանդիսանում է քաղաքակրթութեան հասարակական ոլորտի բարձրագոյն նւաճումը։ Այդ նւաճումը կայանում է նրանում, որ ժողովուրդը ընտրում է իր ղեկավարներին, որոնք որպէս այդ բնագաւառի մասնագէտներ, կատարում են ազգի ղեկավարումը։ Ժողովրդավարութեան նւաճումը կայանում է նաեւ նրանում, որ ժողովուրդը կարող է յետ կանչել ու փոխել իր ղեկավարներին, եթէ նրանք ղեկավարման բնագաւառում վատ մասնագէտներ գտնւեցին։ Ժողովրդի մասնակցութիւնը ղեկավարման ընթացքի մէջ այստեղ աւարտւում է և ժողովուրդը երբեք չի խառնւում, չի կարող խառնւել մասնագէտների գործերի մէջ։ Նա ընտրում է կառավարութիւն, բայց ոչ կառավարութեան գործու-

նէութեան ընթացքը, նա ընտրում է լաւագոյն դէպքում գլխաւոր ռազմավարութիւն, բայց երբեք մարտավարութիւնը, նա ընտրում է արժէքները, բայց երբեք արժէքների առաջնահերթութիւնները և նրանց հասնելու հանգրուանները։ Սա մասնագէտների գործն է, իսկ մասնագէտների գործը երբեք քէարկութեամբ չի կատարւում ու քէարկութեամբ չի գնահատւում։ Ո՞վ է տեսել, օրինակ, որ երաժիշտի գիտնականի, մարզիկի, պատմաբանի, բանաստեղծների, շինարարի կամ զօրավարի աշխատանքը քէարկութեան դրուի։ Կարելի՞ է, արդեօք, քէարկութեամբ որոշել Բետհովէնի կամ Կոմիտասի արժէքը։ Անշուշտ նման քէարկութիւններ տեղի են ունենում, բայց մասնագէտների շրջանակներում, գիտական խորհուրդներում, երաժիշտների միութիւններում, պառլամենտներում ու միջազգային ատեաններում, որտեղ ժողովուրդը բացակայում է։

Ժողովուրդը գնահատում է միայն գործունէութեան արդիւնքը։ Եթէ խանութներում հաց չկայ, եթէ պատերազմում երկիրը պարտւեց, եթէ համերգների դահլիճները դատարկ են, եթէ դպրոցի աշակերտները դասերի չեն այցելում, ուրեմն կառավարութիւնը պէտք է փոխել, բայց նոր կառավարութիւնը ինչպէ՞ս պիտի փրկի երկիրը, դա ժողովրդի գործը չէ։ Այստեղ ժողովուրդը պահանջողի, բայց ոչ թելադրողի դերում է։

Սա նշանակում է, որ մի խումբ մասնագէտներ, որոնք տեսնում են, նոյնիսկ ժողովրդի կողմից ընտրւած, կառավարութեան անկարողութիւնը կամ դաւաճանութիւնը, իրաւունք ունեն վերցնել իշխանութիւնը, եթէ նոյնիսկ այդ իրաւունքը նրան ժողովուրդը չի տալիս՝ գոյութիւն ունեցող օրէնքների համաձայն։ Նման յեղափոխութեան փիլիսոփայութիւնը յենւում է անիշխանութեան վրայ, որի օրինակները մենք տեսել ենք պատմութեան ամբողջ երկայնքով։

Քրիստոնէութիւնից մինչեւ ժամանակակից բոլոր յեղափոխութիւնները յենւել են այն անիշխանական թեզի վրայ, որ գոյութիւն ունեցող կացութեան մէջ այն արժէքը, որը տւեալ խումբը բարձրագոյն է համարում, տեղ չի կարող գտնել, ուստի այդ արժէքը, պէտք է դառնայ հասարակութեան սեփականութիւնը, անկախ գոյութիւն ունեցող օրէնքներից և մթնոլորտից։ Յիսուսը առաջինն էր, որ պաշտօնականացրեց անիշխանութիւնը, յայտարարելով՝ թէ անհրաժեշտ է տալ կեսարին կեսարինը, իսկ Աստծուն՝ Աստծունը, ինչը նշանակում էր, որ Յիսուսը անջատեց կրօնական օրէնքը կեսարի օրէնքից, առաջնակարգութիւն տալով Աւետարանին։ Քրիստոնեաների այդ անիշխանութիւնը պահպանւեց մինչեւ մեր օրերը և եկեղեցին բաժանւեց պետութիւնից։

Բոլոր մնացած յեղափոխականները, Շտիրները, Բակունինը, Ռուսոն, Վաշինգտոնը, Լենինը և ուրիշներ անիշխանութեան հարցում գնացին աւելի հեռուն։ Նրանք չանջատեցին նոր օրէնքը հինից, այլ ոչնչացրեցին հինը, հաստա-

տելով նորը: Այսպիսով, բոլոր յեղափոխականները ունեն բարձրագոյն արժէքի սեփական ըմբռնում, որի իրականացումը համարում են իրենց գլխաւոր նպատակը:

Հ.Յ.Դաշնակցութեան համար, ինչպէս արդէն նշեցինք, ազգի գոյատեւումը՝ արդար հասարակական պայմաններում՝ բարձրագոյն արժէք է, որի իրականացման համար կարելի է դիմել տարբեր միջոցների, այդ թւում և յեղափոխական, որը (կրկնողութեան կարգով ասեմ) կայանում է օրէնքը փոխելու կամ այն շրջանցելու մէջ: Մե՞ծ յանցագործութիւն է սա մարդկութեան առջեւ: Գուցէ եթէ մենք գտնւում ենք հասարակական ներդաշնակութեան սկզբունքները ճշտելու ոլորտում: Այո՛, յանցագործութիւն է՝ բայց միայն օրինապաշտ աշխարհում, որտեղ օրէնքը բացառութիւն չունի ո՛չ ոլորտի, ո՛չ մարդու և ոչ էլ ժամանակի իմաստով: Բայց եթէ օրէնքը ըստ ոլորտի, ըստ ժամանակի և ըստ մարդու փոխւում է, եթէ օրէնքը կարելի է օգտագործել տարբեր արդիւնքների հասնելու համար, եթէ օրէնքը պաշտպանում է իշխանաւորին և հալածում է սովորական մարդուն, եթէ օրէնքի հիման վրայ բարգաւաճում է կառավարութիւնը և բազմաթիւ աւազակախմբեր, մի խօսքով եթէ հասարակարգը և աշխարհը օրինապաշտ չեն, անհրաժեշտ է փոխել օրէնքը և հակադրել անօրինական աշխարհին:

Եթէ մենք չենք կարող այդ բանը անել, ուրեմն մեռնենք այն գիտակցութեամբ, որ պայքարում ենք ոչ թէ յաղթելու, այլ միայն պատւով մեռնելու համար: Ոչ մէկին չեմ կարող պարտադրել՝ այսպէս ապրել, բայց նրանց, ովքեր համապատասխան երդում տալուց յետոյ դաշնակցական են դարձել, կարող եմ յիշեցնել, որ յեղափոխական ոգին, արդար պայքարը, ազգին ծառայելը ու ազգի համար զոհւելը շատ աւելի մեծ բաւարարութիւն են տալիս իսկական մարդուն և իսկական հային, քան ճահճի յարմարւող մակաբոյծները: Ինչո՞ւ պիտի նրանց վայնասունները մարդու իրաւունքների խախտումների մասին մեզ հանեն մեր յեղափոխական կեցւածքից, եթէ իրենք, ճահճում ապրող այդ մարդիկ, հակառակ բոլոր ազգային սրբութիւնների, խախտում են ոչ թէ ժողովրդավարութեան, այլ քաղաքակրթութեան բոլոր օրէնքները:

Սկզբից հայրենիքից վտարեցին Հ. Մարուխեանին, յետոյ հաւաքեցին մեր կուսակցութիւնից վտարուած թափթփուկներին՝ «նոր Դաշնակցութիւն» ստեղծելու համար, յետոյ արգելեցին իմ մուտքը Հայաստան, յետոյ ձերբակալեցին մեր ընկերներին, յետոյ «ժամանակաւոր» արգելեցին մեր կուսակցութիւնը, թալանեցին մեր ունեցւածքը ու փակեցին մեր թերթերը: Ժամանակակից ժողովրդավարութեան համար այս ամէնը ընդունելի է, բայց եթէ այդ ոճրագործներից մէկը պատժի յեղափոխական օրէնքով, համաշխարհային հիստերիան անխուսափելի կը լինի: Եւ հէնց այստեղ մենք պէտք է վերջնականօրէն

որոշենք, թէ արդեօք յարմարուելու ենք ռճրագործների կողմից բարձրացրած վայնասունին, հրաժարուելո՞ւ ենք մեր յեղափոխական ճամբից, դառնալո՞ւ ենք ազատ շուկայի գերին, ներելո՞ւ ենք թուրքերին Ցեղասպանութիւնը և նրանց հետ բարեկամութի՞ւն ենք հաստատելու, թողնելու ենք Ղարաբաղը Ադրբեջանի կազմի մէջ և օգնելո՞ւ ենք Արեւմուտքին Ռուսաստանը քայքայելու մէջ, թէ՞ շարունակելո՛ւ ենք մեր յեղափոխական երթը, որը սկսեցինք աւելի քան 100 տարի առաջ:

«Ժամանակները փոխւել են, ուրեմն մենք էլ պիտի փոխուենք»,- ասում են ճահիճից գլուխները հանած մեր հակառակորդները: Իսկ ես ձեզ ասում եմ, որ ժամանակները փոխւել են դէպի վատը, ուստի մենք կա՛մ պիտի չփոխուենք, կա՛մ փոխուենք դէպի էլ աւելի յեղափոխականացում:

Աշխարհը անտեսում, արգելում, ոչնչացնում ու ռմբակոծում է յեղափոխականներին, հաստատելու համար իր հոգեկան ճահիճը, որտեղ մարդիկ խոզերի նման կոշտ կը լինեն ու պոռնիկների նման հարուստ: Իսկ մենք՝ յեղափոխականներ, ո՛չ խոզ և ոչ էլ պոռնիկ չենք կարող լինել, ուստի շարունակենք մեր կուսակցական աւանդութիւնները, է՛լ աւելի ամրապնդելով այն սիւները, որոնց վրայ կանգնած ենք՝ ազգայնականութիւնը, ընկերվարութիւնը և յեղափոխութիւնը: Իսկ ամենակարեւորը, մօտ չթողնենք և մեր շարքերից վտարենք պատահական մարդկանց, որոնք յեղափոխական լոզունգներով եկան մեր գիրկը, բայց նիւթական սնունդ չստանալով, կրկին նետւեցին իրենց հարազատ ճահիճը: Իսկ մենք շարունակում ենք համոզւած մնալ, որ «միայն զէնքով կայ հային փրկութիւն»: Համոզւած ենք նաեւ նրանում, որ ճահճում նստած մեր հակառակորդները իմ այս յօդւածից յետոյ գլուխները կը բարձրացնեն ու Երեւանի հեռուստատեսութեանը կ'ուղարկեն հետեւեալ հաղորդագրութիւնը.-

«Դաշնակցութիւնը ժողովրդավարութեան և օրէնքի հակառակորդ է, ընդունում է անիշխանութեան սկզբունքները և ուզում է զէնքի ուժով հաստատել իր անիշխանութիւնը, շրջանցելով ժողովրդի կամքը»:

Նման ապուշութեանը պատասխանելու երեւի այլեւս ժամանակ չունենամ, ուստի պատասխանեմ հէնց այստեղ.-

«Ճահճում ապրողների վերջը մենք չենք տալու, նրանց դէմ զէնք չենք օգտագործելու, նրանք կը մահանան բնական մահով, եթէ ճահճում խեղդւելը բնական մահ կարելի է համարել»:

1995

ԵԹԷ ԻՆՁ ՀՐԱՊԱՐԱԿ ԹՈՂՆԷԻՆ ...

Է. Յովհաննիսեան

Հայաստանի իշխանութիւնները ինձ Երկիր չթողեցին և հրապարակօրէն իմ ժողովրդի հետ խօսելու առիթը չտուեցին: Այժմ, երբ խօսելու այդ առիթը է՛լ աւելի հեռացաւ, ես ինքս ինձ հարց տուեցի.- Իսկ ի՞նչ ունեմ ասելու մեր ժողովրդին: Արդեօք կա՞յ մի բան, որ մինչեւ հիմա չի ասուել, իսկ ես կ՚ուզէի ասել: Արդեօք կա՞յ մի բան, որ ժողովուրդը չգիտի, իսկ մենք գիտենք ու նրան այդ ճշմարտութիւնը պէտք է հասցնենք՝ նրա քաղաքական գիտակցութիւնը բարձրացնելու համար: Եթէ այս ուղղութեամբ ասելիք չկայ, ապա մեր և հակառակորդի ելոյթները վեր են ածւում ճառային մրցակցութեան և ի վերջոյ յաղթում է նա, ով գեղեցիկ է խօսում և ում ձեռքումն են տեղեկատւական միջոցները: Այդ իմաստով Թատերական հրապարակը մտքեր արտայայտելու լաւ վայր է, քանզի շրջանցում է տեղեկատւական միջոցների միջամտութիւնը ու մտքեր արտայայտողը խօսում է անմիջականօրէն ժողովրդի հետ:

Բայց դրա հետ միասին, հրապարակը ի վերջոյ ճառելու վայր է, որտեղ ոչ այնքան կարեւոր է գիտական վերլուծութիւնը, որքան որ մտքերի գեղեցիկ մատուցումը: Ու ես մտածեցի, որ եթէ ինձ հրապարակ թողնէին, ես կը հրաժարւէի ճառախօսութիւնից ու կը ձանձրացնէի ներկաներին հետեւեալ մտքերը նրանց ուշադրութեանը ներկայացնելով:

Ղեկավարել՝ նշանակում է ունենալ

1.- Ղեկավարման նպատակ

2.- Նպատակի լոյսի տակ գոյութիւն ունեցող կացութիւն գնահատելու միջոցներ

3.- Կացութիւնը փոխելու լծակներ:

Ղեկավարողը, կացութիւնը գնահատող միջոցների ճամբով, համեմատում է գոյութիւն ունեցող կացութիւնը նպատակի հետ և ազդում է այն լծակների վրայ, որոնք մօտեցնում են գոյութիւն ունեցող կացութիւնը ձեւակերպւած նպատակին:

Եթէ բացակայում է յստակ ձեւակերպւած նպատակը, կամ այդ նպատակը որեւէ կապ չունի ղեկավարւող ժողովրդի կենսական շահերի հետ, եթէ գոյութիւն չունեն կացութիւնը գնահատող միջոցներ, կամ ղեկավարները հաշւի չեն նստում այդ միջոցների ճամբով ստացած տւեալների հետ, և վերջապէս եթէ բացակայում են կացութեան վրայ ազդելու գործօնները, ապա այն, ինչ կոչւում է ղեկավարում, պարզապէս սեփական շահերը ապահովող քայլեր են, որոնք

անխուսափելիօրէն կործանելու են ժողովուրդը։ Հայ ժողովուրդը այժմ կանգնած է հէնց այդ կործանման եզրին։

Ինչո՞ւ։

Որովհետեւ Հայաստանի ղեկավարները չունեն որեւէ յստակ ձեւակերպուած համազգային նպատակ։ Աւելին, համազգային նպատակը նրանք կտրականապէս մերժում են, համարելով՝ որ իրենք ծառայում են ոչ թէ հայ ժողովրդին, այլ միայն մեր ժողովրդի այն հատուածին, որը ապրում է նախկին Խորհրդային Հայաստանի տարածութեան վրայ, այսինքն հայութեան մէկ երրորդին։ Երանի թէ, գոնէ այդ նպատակը յստակ լինէր, և այդ նպատակի ծառայութիւնը անկեղծ լինէր, հաւանաբար այդ դէպքում չէր փախչի Հայաստանից նրա ընտրանին և չէր աւելանայ Սփիւռքը, որի բնակիչները Հայաստանի իշխանութիւնների կողմից նկատւում են դուրս մնացած իրենց շահագրգռութիւնների ոլորտից։

Հայաստանի իշխանաւորները բազմիցս, իսկ արտգործնախարարը օրերս Իտալիայում յայտարարեց, որ Սփիւռքը Հայաստանի ղեկավարութեանը չի հետաքրքրում, որ իր հետաքրքրութեան ոլորտումն են ՆԱՏՕն, Մ. Նահանգները, Եւրոպական Պառլամենտը և այլն։

Սա նշանակում է, որ Հայաստանի ղեկավարութեան նպատակի մէջ հայ ժողովուրդը և նրա շահերը ոչ մէկ տեղ չեն գրաւում, եթէ չհաշուենք նրա միջոց լինելու պարագան։ Հայկական նպատակ գոյութիւն չունի, ուստի գոյութիւն չունի հայ ժողովուրդը որեւէ նպատակի տանելու միտումը։

- Ոչ մէկ ազգային նպատակ չունի Հայաստանի ներկայ ղեկավարութիւնը, ուստի դո՛ւ, հայ բանւոր, դո՛ւ, հայ աշխատաւոր, դո՛ւ, հայ գիւղացի, դո՛ւ, հայ մտաւորական, դո՛ւք հայ պատանիներ, դո՛ւք հայ կանայք և դո՛ւ հայ ժողովուրդ, լաւագոյն դէպքում կարող էք դառնալ Հայաստանի իշխանաւորների աւազակային նպատակներին հասնելու միջոցներ, բայց ոչ նպատակի էութիւնը, և ոչ միջոցները արդարացնող նպատակ։ Դուք բոլորդ կործանւում էք, կամ կանգնած էք կործանման եզրին, որովհետեւ ձեր կեանքի ոչ մէկ կողմը չի մտնում Հայաստանի իշխանաւորների շինծու նպատակների ոլորտը և դուք ընդհանրապէս իշխող աւազակախմբի համար գոյութիւն չունէք։

Ուրեմն, եթէ համահայկական չափանիշներով գնահատենք գոյութիւն ունեցող կացութիւնը, ապա վստահ կարող ենք ասել, որ մեր ժողովուրդը կիսամեռ վիճակում է, որին կենդանացնելու համար նախ անհրաժեշտ է ձերբազատուել ապազգային իշխանութիւններից, ապա՝ գտնել այն լծակները, որոնց վրայ ազդելով կարելի է փրկել մեր ժողովուրդը։ Սակայն նախքան լծակների որոնումը, անհրաժեշտ է համոզուել, որ մենք ունենք իրական կացութիւնը ճա-

նաչելու միջոցները: Անմիջապէս ասեմ, որ այդ միջոցները մենք չունենք: Մենք ոչինչ չգիտենք մեր ժողովրդի մասին, նոյնիսկ նրա ճշգրիտ քանակը, էլ չխօսենք նրա նիւթական և մտաւորական կարողութիւնների մասին: Մենք նոյնիսկ չգիտենք, թէ ինչպէ՛ս կարելի է համադրել աշխարհով մէկ ցրուած մեր ժողովրդի տարբեր հատուածների գնահատականները՝ ժողովրդի մասին մէկ ընդհանուր գնահատական տալու համար: Այսինքն՝ մենք ոչ միայն չունենք մեր ժողովրդի ընդհանուր կացութեան գնահատականը, այլեւ համոզուած չենք, թէ արդեօք գոյութիւն ունի՞ հայ ազգ կոչուող հաւաքականութիւնը:

Եւ, ուրեմն, այս պայմաններում ի՞նչ ազգային ղեկավարման մասին կարող է խօսք լինել: Ինչպէ՞ս կարելի է ձեւակերպել ընդհանուր ազգային նպատակ, եթէ ազգ՝ որպէս հաւաքականութիւն՝ գոյութիւն չունի: Աւելին, այդ հաւաքականութիւնը, որը գոյութիւն ունէր սրանից մէկ դար առաջ՝ օրէցօր կորցնում է իր միասնականութիւնը, այսինքն՝ օրէցօր դադրում է ազգ լինելուց: Եւ Հայաստանի իշխանութիւնները ոչ միայն չեն առնում այդ ողբերգութեան առաջը, այլեւ արագացնում են ազգի վերանալու այդ ընթացքը: Մինչդեռ աշխարհի բոլոր ազգերը իրենց պատմութիւնը սկսել են ազգ դառնալուց, այսինքն՝ տարբեր ցեղային խմբերը միաւորելուց, հայ ժողովուրդը իր նորագոյն պատմութիւնը սկսում է գոյութիւն ունեցող ազգը քանդելուց՝ յանուն միջազգային տնտեսական ու աշխարհաքաղաքացիական շահերի:

Այսպիսով, այսօր ձեւակերպւած չեն հայ ժողովրդի ընդհանուր ազգային նպատակները, բացակայում է ազգային ղեկավարման դաշտը և չկան ազգային ղեկավարներ: Հայաստանի ղեկավարութիւնը հրաժարւում է այդ դերը իր վրայ վերցնելուց և սահմանափակւում է Հայաստանում ապրող հայերի և Հայաստանի Հանրապետութեան պետական խնդիրներով:

Այստեղ ես տեսնում եմ, որ Թատերական հրապարակում կանգնած ժողովուրդը կա՛մ ցրւել է, կա՛մ քնել է իմ ձանձրացուցիչ խօսքերից: Հետեւաբար՝ ձայնս բարձրացնելով, ես սկսում եմ ելոյթիս ճառային մասը.

- Ուրեմն դո՛ւ, այս հրապարակում կանգնած հայ մարդ, այլեւս չես պատկանում հայ ազգ կոչուող հաւաքականութեանը: Այսուհետեւ քեզ չեն պատկանում ո՛չ Նարեկացին, ո՛չ Մաշտոցը և ոչ էլ Կոմիտասը, Մեծ Եղեռնը քո ողբերգութիւնը չէ, Լիբանանում ու Թեհրանում ապրող հայը քո եղբայրը չէ, Աւարայրի դաշտում Վարդանը քեզ համար չէր որ զոհւեց, այս ամէնից կտրւած դու թիւրիմացաբար Հայաստան կոչւող մի երկրի քաղաքացի ես, որի գլխաւոր նպատակը ընդհանուր ազատ շուկան է և այդ շուկայի միջոցով սեփական ժողովրդի թալանը: Եթէ դու չես ուզում խեղդւել աշխարհաքաղաքացիութեան ճահճում, ոտքի ելիր ու յիշեցրու քո այսպէս կոչւած ղեկավարներին, որ մեր յետեւում կայ 3000 տարւայ պատմութիւն, որ մեզ են պատկանում այդ պատ-

մութեան բոլոր հերոսական և ողբերգական էջերը և մենք այդ պատմութեան շարունակողներն ենք: Ոտքի ելիր, հայ մարդ, ու պաշտպանի՛ր քո ազգային արժէքները, առանց որոնց դու չես կարող ունենալ ապագայ, քանզի ապագան անցեալի շարունակութիւնն է: Եթէ ներկան կտրի այդ կապը, ուրեմն ներկայում կ'աւարտւի հայ ժողովրդի պատմութիւնը, ինչպէս դա տեղի է ունենում այսօր:

Երբ հրապարակը կ'արթնանայ մասամբ, կրկին կը փորձեմ նրան քնացնել անհետաքրքիր վերլուծութիւններով: Այսպիսով,- կ'ասեմ ես,- մեր ազգը կործանւում է, որովհետեւ նրան արհեստականօրէն անջատում են Սփիւռքից՝ տարածական իմաստով, և անցեալից՝ ժամանակի ու պատմութեան իմաստով: Եւ այս ամէնը արւում է Հայաստանի ղեկավարների կողմից Հայաստանում ապրող ժողովրդի շահերը պաշտպանելու կարգախօսքով:

Տեսնենք, թէ ի՞նչ վիճակումն են ղեկավարման հիմնական գործօնները Հայաստանի ներսում: Սկսենք նպատակից: Ելնելով պաշտօնական յայտարարութիւններից, կնքւած պայմանագրերից և գործադիր մարմինների կողմից կատարւած քայլերից, կարելի է եզրակացնել, որ միակ նպատակը, որին ծառայում է Հայաստանի ամբողջ վարչակարգը, դա թալանն է, այսինքն հոգեկան և նիւթական արժէքների անօրինական ձեռքբերումը:

Այդ թալանը սկսւեց այն պահից, երբ գորբաչովեան ժամանակաշրջանը բոլոր նախկին խորհրդային հանրապետութիւններին տւեց թալանելու այդ իրաւունքը:

Ի տարբերութիւն ուրիշ հանրապետութիւնների՝ Հայաստանը իր թալանը սկսեց հոգեկան արժէքներից:

Այն ժամանակ մենք ասում էինք, որ Հայաստանի նոր ղեկավարութիւնը Հ.Յ.Դաշնակցութեան գանձարաններից հանեց անկախութեան գաղափարը, եռագոյն դրօշը, զինանշանը, մեր հերոսներին ու պատմութիւնը, տանելու համար Հայաստան՝ հայ ժողովրդի սեփականութիւնը դարձնելու նպատակով: Ու մենք ուրախացած ասում էինք. տարէ՛ք, չէ՞ որ ձեզ համար էինք պահել: Բայց եղածը թալան էր, որովհետեւ այդ արժէքները տարւեցին Հայաստան՝ այնտեղ նրանց արժէքազրկելու համար, իսկ մեզ՝ որ գուրգուրանքով, իսկ երբեմն էլ արեան գնով պահպանում էինք այդ արժէքները՝ չտարան և արժէքները եղան թալանւած մեզանից, իսկ մենք՝ արժէքներից:

Երբ գրւում էին այս տողերը՝ մեզանից թալանեցին Ռուսաստանի Դումայում տարւող աշխատանքի նւաճումը և Հայաստանի կառավարութիւնը յայտարարեց, որ իր շնորհիւ Դուման ճանաչեց Հայկական Ցեղասպանութիւնը:

Մինչդեռ այն պահին, երբ Ժիրայր Լիպարիտեանը բանակցութիւններ էր վարում Թուրքիայի ներկայացուցիչների հետ, իսկ տխրահռչակ Բլէյեանը ջանում էր հայ երեխաներին հեռու պահել Ցեղասպանութեան իրողութիւնից, մենք նախապատրաստում էինք Դումայի յայտարարութիւնը, իսկ Հայաստանի իշխանութիւնները պատրաստւում էին գողութեան: Ու գողացան մեր յաջողութիւնը, բայց այդ գողութիւնը այնքան լկտի էր, որ Անդրանիկ Միհրանեանը Բի.Բի.Սի. ռադիոկայանով յայտարարեց, որ Դումայի այդ որոշման մէջ Հայաստանի կառավարութիւնը մատը մատին չի խփել և այդ ուղղութեամբ ամբողջ աշխատանքը տարուել է Դաշնակցութեան Հայ Դատի գրասենեակի կողմից:

Ապա՝ թալանի քաղաքականութիւնը անցաւ արդիւնաբերութեան և գիւղատնտեսութեան բնագաւառը: Թալանուեցին գործարաններ, կոլտնտեսութիւններ և գիտական հաստատութիւններ: Հերթական այս թալանը կոչւում էր սեփականաշնորհում:

Եւ, վերջապէս, թալանուեց ժողովուրդը՝ կաշառքների, տուրքերի ու վաուչերների ճամբով: Ժողովուրդը փախուստի դիմեց, իսկ ով փախչել չէր կարող՝ համակերպուեց իր խղճուկ վիճակի հետ, լռեց, ինչպէս լռում են ստրուկները իրենց տէրերի մտրակի առջեւ: Փախչողները ձեռք բերեցին գաղթականի հոգեբանութիւն, որից նոր էր ազատուել մեր ժողովուրդը, իսկ մնացորդները հասկացան, որ ոչինչ չի փոխուել իրենց երկրում, որ շրջկոմի քարտուղարներին պարզապէս փոխարինել են Հ.Հ.Շ.ի գործակալները, որոնց ձեռքում են ղեկավարման բոլոր լծակները:

Սակայն որո՞նք են այդ լծակները և ինչպէ՞ս են նրանք օգտագործւում: Եթէ Հայաստանի իշխանութիւնների գլխաւոր և միակ նպատակը երկրի և ժողովրդի թալանն է, ապա այդ նպատակը իսկապէս կարող էր նպատակ նկատուել, եթէ ձեւակերպւած լիներ թալանի սահմանը: Այսինքն թալանել այնքան, որ երկիրը ու ժողովուրդը չմեռնի: Իմ կարծիքով այդ սահմանը արդէն վաղուց անցել է, բայց իրական կացութիւնը գնահատելու միջոցներ չկան: Իսկ առանց այդ միջոցների՝ թալանը կը շարունակւի մինչեւ վերջ, այսինքն մինչեւ ամբողջական կործանում: Որտե՞ղ են այն լծակները որոնց վրայ ազդելով կարելի է եթէ ոչ վերջ տալ թալանին, ապա գոնէ զսպել թալանչիներին:

Ժամանակին թւում էր, թէ այդ լծակներից մէկը կարող է լինել Սփիւռքը, սակայն երկրի իշխանաւորները կարողացան չէզոքացնել Սփիւռքի ազգային թեւը և իրենց գրպանը դնել ապազգային թեւը, որը այսօր գովաբանում է Հայաստանի նոր իշխանաւորներին, ճիշտ այնպէս, ինչպէս ժամանակին դա անում էր կոմունիստների նկատմամբ: Այսօր նրանց վիճակը շատ աւելի

ամուր է, քանզի նախկինում նրանք դժւարութիւններ ունէին Եւրոպայի կամ Ամերիկայի մէջ կոմունիզմ գովաբանելու հարցում, իսկ այսօր այդ երկրներում «ժողովրդավար» և արեւմտասէր Հայաստանի իշխանութիւններ գովաբանելը մեծ «պատիւ» է:

Այնուամենայնիւ, ամբողջովին անտեսել Սփիւռքը անկարելի է, որովհետեւ նա կարող է եռանդուն ազդել արեւմտեան հասարակական կարծիքի վրայ, որի հետ լուրջ հաշւի են նստում Հայաստանի իշխանութիւնները:

Այստեղ ի յայտ է գալիս մի հարց, որի պատասխանը մեր ժողովուրդը դեռեւս չի տւել: Մեր ժողովրդի մէջ արմատացել է այն խորը համոզմունքը, որ մեր նախագահը, մեր կաթողիկոսը, մեր վարչապետը, մեր նախարարները, մեր ժողովրդավարութիւնը և մեր գիտութիւնը մեր պարծանքի առարկաներն են և թող ուրիշները չիմանան, որ նրանք կատարեալ չեն: Ոչինչ, աւելի լաւ է տառապենք բանտում, քան ցոյց տանք ամբողջ աշխարհին, թէ որքա՛ն դաժան է մեր արդարադատութիւնը: Աւելի լաւ է թալանւենք, քան ցոյց տանք, որ մեր ղեկավարները թալանչիներ են: Աւելի լաւ է ես փախչեմ անտանելի երկրից, բայց դրսում չպատմեմ, թէ որքան անտանելի էր այդ երկիրը: Մի խօսքով՝ մենք ունենք այն խորը համոզմունքը, որ նախագահի կամ նախարարի աթոռ բարձրացած մարդը արդէն իսկ ազնւանում է աթոռի նշանակութեամբ: Չնայած նրան, որ Հայաստանի նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանը յայտարարեց, որ պետութիւնը և կառավարութիւնը նոյն բաներն են, դա ոչ միայն այդպէս չէ, այլ ճիշտ հակառակը: Աթոռը պետութիւնն է, և միշտ պիտի ամուր լինի: Մենք բոլորս պիտի ամրացնենք պետական աթոռները, բայց աթոռների վրայ նստողները կառավարողներն են, որոնք կարող են շատ անպէտք լինել ու մենք պարտաւոր չենք ամէն մի աւազակի գովաբանել, միայն այն պատճառով՝ որ նա կարողացել է նստել այդ աթոռի վրայ …

Եթէ մեր երկրում բացակայում է ժողովրդավարութիւնը, այդ մասին մենք պէտք է գոռանք ամէնուր: Թող իմանան ե՛ւ Եւրոպայում, ե՛ւ Ամերիկայում, թէ ի՞նչ է իրենից ներկայացնում Հայաստանի ժողովրդավարութիւնը: Օգնութիւնը կը կտրե՞ն, թո՛ղ կտրեն, միթէ աւելի լա՞ւ է օգնութիւն ստանալ ղեկավարների համար, իսկ ժողովրդին ոսկորներ նետել թագաւորական սեղանից: Բայց այդ մտահոգութիւնն էլ աւելորդ է, որովհետեւ մարդու իրաւունքների պաշտպանութիւնը և ժողովրդավարութիւնը Արեւմուտքը օգտագործում է միայն որպէս քաղաքական միջոցներ: Այնուամենայնիւ, երկրի կացութեան խորը ուսումնասիրութիւնը և Արեւմուտքին փաստերով ապացուցելը, որ Հայաստանը ժողովրդավարական երկիր չի կարող ճանաչւել, ոչ միայն ամօթ չէ, այլ չափազանց կարեւոր է մեր ժողովրդի ապագայի համար: Ժամանակին Պարոյր Հայրիկեանը այդ գործը կատարում էր փայլուն կերպով և ափսոս, որ

այժմ տարւել է իշխանութեան խնդիրներով՝ ամբողջովին ազատ թողնելով իրաւապաշտպանական դաշտը։

Սակայն վերադառնանք Երկիր և տեսնենք, թէ ինչպիսի լծակներ գոյութիւն ունեն, իշխանաւորների վարքագծի վրայ ազդելու համար։

Ես կարծում եմ, որ այդ լծակները չորսն են.-

1.- Ժողովուրդ

2.- Ռուսաստան

3.- Արեւմուտք

4.- Տնտեսական աղբիւրներ։

Ժողովուրդը, անշուշտ, կառավարութեան վրայ ազդելու ամենակարեւոր լծակն է, քանզի միակ ազգային գործօնն է։ Եթէ կառավարութեան վարքագիծը յենւում է միայն ու միայն ժողովրդի ցանկութեան վրայ, ապա այդ կառավարութիւնը կարող է ազգային կոչւել, իսկ վարչակարգը՝ ժողովրդավարական։ Դժբախտաբար, Հայաստանում ժողովուրդը, որպէս իշխանութիւնների վրայ ազդելու գործօն, շատ թոյլ է առնւազն երեք պատճառով.-

1.- Ժողովուրդը յոգնել է և այլեւս ոչ մէկի չի հաւատում։ Նա զերադասում է իր օրւայ հացը և վառելիքը հայթայթել սեփական ուժերով և սեփական ճարպկութեան գնով։ Եթէ նրան չեն խանգարում այդ հարցում, նա արդէն գոհ է և չի հաւատում, որ կացութիւնը կարելի է շտկել հաւաքական ուժով։ Ամենացաւալին այն է, որ հայ մարդու համար համոզմունք է դարձել այն թեզը, թէ ո՛վ էլ իշխանութիւնը վերցնի՝ նոյնը պիտի անի, այսինքն՝ պիտի թալանի, ճնշի և շրջանցի օրէնքը։

2.- Ժողովուրդը, վախեցած իր մօտակայ անցեալից, և կառավարութեան կողմից գործադրւող ճնշամիջոցներից, զերադասում է «շառից հեռու մնալ» և չբարկացնել իշխանաւորներին, որոնք կարող են թերթեր փակել, մարդկանց բանտեր նետել և կուսակցութիւն արգելել։

3.- Ժողովուրդը չունի «ի՞նչ անել» հարցի պատասխանը։ Նա շատ լաւ գիտի, որ գոյութիւն ունեցող իշխանութիւնները վատն են։ Գիտի՝ նրանց իշխանութեան արդիւնքներից, բայց ի՞նչ պիտի անեն լա՛ւ իշխանաւորները, նա չգիտի, որովհետեւ ժողովրդական հաւաքներում միայն քննադատում են իշխանութիւնները, բայց չի դրւում «ի՞նչ անել» հարցի պատասխանը։

Այսպիսով, մեր ժողովուրդը որպէս իշխանութիւնների վրայ ազդելու, առաւել եւս այդ իշխանութիւնները փոխելու միջոց՝ առայժմ մեծ նշանակութիւն չունի։ Եւ դա շատ լաւ են հասկանում իշխանութիւնները, որովհետեւ միտինգները շարունակւում են, իսկ իշխանութիւնները իրենց գործը առաջ են տանում։

Յաջորդ գործօնը Ռուսաստանն է, որը որոշ իմաստով կարելի էր դասել ազգային գործօնների շարքին, եթէ ինքը Ռուսաստանը անցնէր ազգային ուժերի ձեռքը: Այդ դէպքում Ռուսաստանի պետական շահերի պաշտպանութիւնը պիտի ենթադրէր նաեւ Հայաստանի անկախ պետականութեան ամրապնդումը: Մէկ առիթով, Ռուսաստանի յայտնի քաղաքական գործիչ Ն. Զատուլինը մեր պատւիրակութեանը ասաց, որ «մենք, անշուշտ, Հայաստանի անկախութեան կողմնակիցներ ենք, որովհետեւ վստահում ենք Հայաստանին»: Ռուսաստանի ազգային ուժերը այժմ լուրջ շարժման մէջ են, Նրանք այն տեսակէտն են յայտնում, որ Գորբաչովը Խորհրդային Միութիւնը փրկելու համար Արեւմուտքին նւիրեց Արեւելեան Եւրոպան: Յետոյ Ելցինը Ռուսաստանը փրկելու համար քանդեց Խորհրդային Միութիւնը: Երբ հերթը հասաւ Ռուսաստանի քայքայմանը, փրկելու համար ազատ շուկան, ազգայնականները ոտքի ելան և զօրք ուղարկեցին Չէչէնիա:

Աշխարհը խօսեց մարդասիրութիւնից, ազատասիրութիւնից, որոնց մասին մոռացել էր, երբ ամերիկացիները ռմբակոծում էին Իրաքը: Բայց ռուս ազգայնականները Դումայից դուրս բերեցին մարդու իրաւունքների պաշտպանութեան կոմիտէի նախագահ Կովալեւին, իսկ երախտապարտ Արեւմուտքը նրան ներկայացրեց խաղաղութեան նոբելեան մրցանակի: Դժւար է ասել, թէ որքա՛ն կ՛առաջնան Ռուսաստանի ազգայնականները, բայց մեզ համար գոնէ պէտք է պարզ լինի, որ մեր պետականութեան ամրապնդման մէջ շահագրգռւած է Ռուսաստանի քաղաքականութեան ազգային թեւը: Այժմ, եթէ մենք փորձենք որոշել, թէ որքանո՞վ Ռուսաստանում տեղի ունեցող փոփոխութիւնները կարող են ազդել Հայաստանի իշխանութիւնների վարքագծի վրայ, ապա կարելի է վստահ լինել, որ Ռուսաստանի ազգային թեւը երբեք թոյլ չի տայ, որ Ռուսաստանի արտաքին քաղաքականութիւնը հակասի Ռուսաստանի պետական շահերին: Այս հարցում Ռուսաստանը կարող է դիմել նաեւ ճնշամիջոցների: Եթէ այնպէս պատահի (ինչը շատ քիչ հաւանական է), որ Ռուսաստանի իշխանութիւնը անցնի այսպէս կոչւած ժողովրդավարականների ձեռքը, Հայաստանի իշխանութիւնները շատ աւելի ազատ կը լինեն Ռուսաստանի ազդեցութիւնից և կը շարունակեն երկրի թալանը, այս անգամ արդէն արեւմտեան տնտեսական գայլերի օգնութեամբ:

Միւս գործօնը, ինչպէս ասացի, Արեւմուտքն է: Այստեղ շատ բան ասելու չկայ: Շատ յստակ է, որ Արեւմուտքի, յատկապէս Միացեալ Նահանգների ներկայացուցիչը Անդրկովկասում Թուրքիան է, որը երբեք պիտի շահագրգռւած չլինի Հայաստանի պետականութեան ուժեղացման մէջ: Ուրեմն՝ սպասել այդ կողմից որեւէ օգնութիւն, առաւել եւս՝ յարմարւել նրանց կողմից առաջարկւած քաղաքականութեանը, փաստօրէն ազգային յանցագործութիւն է:

Մէկ օրինակով հնարաւոր է պարզաբանել այս հարցը: Վերջերս Մոսկւայի քաղաքական շրջանակներում տարածուեց մի լուր, որի վաւերականութիւնը դեռեւս ստուգել չյաջողուեց, սակայն Ռուսաստանի անվտանգութեան մարմինները վստահեցնում էին, որ լուրը ճիշտ է: Լուրը կայանում էր նրանում, որ Դադայեւի եղբայրը եկել է Երեւան և իր ընկերոջ՝ ոմն Նազարեանի օգնութեամբ զէնք է գնել Հայաստանից ու տարել Չէչէնիա: Ենթադրենք այս լուրը ճիշտ է: Սա ի՞նչ է, ռուսներին ծաղրել չէ՞: Թէ ինչպէ՞ս էին ռուսները կատաղել, կարծում եմ պարզ է: Բայց եթէ այդ քայլը կատարուեց, ապա ինչո՞ւ կատարուեց, թուրքերի՞ն հաճոյք պատճառելու համար էր, թէ՞ տնտեսական նկատառումներով էր: Եթէ տնտեսական նկատառումներով էր, ապա հերթական թալանի արտայայտութիւնն էր: Եթէ քաղաքական նկատառումներով էր, ապա Աստւած փրկի մեզ նման քաղաքականութիւնից:

Այնուամենայնիւ, Արեւմտեան գործօնը կարող է որոշ չափով ազդել Հայաստանի իշխանութիւնների վարքագծի վրայ: Քաղաքական գործիչները Արեւմուտքում շատ էլ հաշւի չեն նստում մարդու իրաւունքների խախտումների հետ, սակայն նրանք շատ լուրջ հաշւի են նստում սեփական ժողովրդի տրամադրութիւնների հետ: Եւ եթէ Հայաստանի կառավարութեան կողմից լքւած Սփիւռքը ստեղծի Արեւմուտքում այն տրամադրութիւնը, որ Հայաստանի վարչաձեւը ժողովրդավարութիւնից շատ հեռու է, որ այնտեղ խախտւում են մարդու տարրական իրաւունքները, որ Հայաստանի ղեկավարութիւնը թալանում է սեփական երկիրն ու ժողովուրդը, Արեւմուտքի կառավարութիւնները ստիպւած կը լինեն բարոյական ճնշում գործադրել Հայաստանի ղեկավարների վրայ և գուցէ նոյնիսկ դիմեն տնտեսական ճնշամիջոցների: Դաշնակցութեան արգելման փորձը ցոյց տւեց, որ աշխարհի տարբեր ծայրերից լսւեցին Հայաստանի իշխանութիւնները դատապարտող ձայներ, որոնց հետ չէր կարող հաշւի չնստել Հայաստանի ղեկավարութիւնը:

Եւ, վերջապէս, տնտեսական աղբիւրների գործօնը: Թալանելու համար ապրանք է պէտք: Գոյութիւն ունեցողը թալանելուց յետոյ, անհրաժեշտ է նոր թալանի համար նոր ապրանքներ ստեղծել: Նոր ապրանքներ Հայաստանում արտադրելը ստեղծւած պայմաններում անկարելի է, ուստի նիւթական արժէքների մուտքը Հայաստան հիմնականում գալիս է դրսից՝ նւէրների կամ առեւտրի ճանապարհով: Այդ ճանապարհները հսկող կազմակերպութիւնները կամ պետութիւնները կարող են լուրջ կերպով ազդել Հայաստանի ղեկավարների վարքագծի վրայ: Օրինակ՝ Ռուսաստանը կամ Իրանը կարող են է՛լ աւելի սաստկացնել Հայաստանի արգելափակումը և չեն կարող Հայաստանի իշխանութիւնները հաշւի չնստել այդ հանգամանքի հետ:

Սակայն, ինչպէս տեսնում ենք, ո՛չ ժողովուրդը, ո՛չ Ռուսաստանը, ո՛չ Արեւմուտքը և ոչ էլ տնտեսական աղբիւրները ի վիճակի չեն արմատապէս փոխելու Հայաստանի կառավարութեան վարքագիծը, առաւել եւս կառավարութիւնից յոգնած ու կիսաքնած հրապարակը նայում է ինձ ու սպասում է «ի՛նչ անել» պատասխանին ու ես պատասխանում եմ.-

- Անհրաժեշտ է փոխել իշխանութիւնը, որովհետեւ այն, ինչ պիտի արւի, այս իշխանութիւնը չի անի: Այս իշխանութիւնը երբեք թոյլ չի տայ, որ երկրում ազատօրէն գործեն ազգային ուժեր, նոյնիսկ ընդդիմադիր դիրքերից: Բայց ինչպէ՞ս փոխել իշխանութիւնը: Եթէ ոչ ժողովրդավարական ճամբով, ապա մենք կը կրկնենք այն, ինչում մեղադրում ենք իշխանութիւններին: Եթէ ժողովրդավարական ճամբով, ապա դրա համար անհրաժեշտ է, որ Հայաստանը ժողովրդավարական երկիր լինի, որ չէ՛ և հազիւ թէ լինի մօտակայ 10-15 տարիների ընթացքում: Կամաւոր կերպով իշխանութիւնները իրենց իշխանութիւնը ոչ մէկի չեն տայ: Այդ բանը ժողովրդավարական աւանդոյթներից զուրկ ոչ մէկ երկրում դեռեւս տեղի չի ունեցել, տեղի չի ունենայ նաեւ Հայաստանում: Ուրեմն մնում է փոխել իշխանութիւնները ոչ թէ ֆիզիկապէս, այսինքն նոր մարդիկ դնելով պետական աթոռներին, այլ՝ այդ աթոռների վրայ արդէն գտնուողներին փոխելով: Ինչո՞ւ պիտի նրանք փոխուեն: Հէնց այն գործօնների ճնշման տակ, որոնք մենք թւարկեցինք քիչ առաջ, նշելով՝ սակայն, որ նրանք շատ թոյլ ազդեցութիւն ունեն Հայաստանի ղեկավարութեան վրայ: Այդ ճանապարհով ի միջի այլոց փոխուեց Ռուսաստանի կառավարութիւնը: Փոխուեցին ոչ թէ մարդիկ, այլ փոխուեց նրանց քաղաքականութիւնը:

Ո՞ւր մնաց Գայդարը, որը ժամանակին երկրի տէրն ու տիրականն էր: Ո՞ւր մնացին ապազգային այն ուժերը, որոնք Ռուսաստանը վաճառքի էին հանել Արեւմտեան շուկայում: Ռուսաստանը նրանք բերեցին այն վիճակի, որ այդ երկրում որեւէ բան արտադրելը ձեռնտու չէր: Ու Ելցինը փոխուեց, նրան ստիպեցին փոխուել: Կարելի է ասել, որ փոխուեց նաեւ մեր նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանը իր հակառուսութեան մէջ, ստիպուեց փոխուել Ռուսաստանի ճնշման տակ: Սա նշանակում է, որ «ի՞նչ անել» հարցի պատասխանը մենք պէտք է որոնենք կառավարութեան վրայ ազդելու գործօնները ուժեղացնելու ոլորտում: Դրա համար անհրաժեշտ է նախ և առաջ հրաժարւել իշխանութիւնը ֆիզիկապէս փոխելու գաղափարից: Հրաժարւել ոչ թէ իշխանութիւններին յարմարւելու, այլ ընդհակառակը՝ նրանց հարւածելու նպատակով: Ինչպէս ես արդէն ասացի, նրանց ժողովրդավարական ճամբով ֆիզիկապէս փոխել անկարելի է: Ընտրութիւն, հանրաքւէ, պառլամենտ, հրապարակային բողոքներ, այս ամէնը դատարկ բաներ են իշխանութիւնների համար, որովհետեւ բարոյական ճնշումները կարող են ազդեցութիւն թողնել միայն ժողովրդավարա-

կան բարոյականութեամբ օժտուած միջավայրում: Այդ միջավայրը առայժմ Հայաստանում գոյութիւն չունի, ուրեմն մենք պէտք է հրաժարուենք ընտրութիւններին մասնակցելուց և իշխանութեան գլուխ որեւէ ձեւով անցնելուց, որովհետեւ իշխանութիւնները այդ բանը թոյլ չեն տայ, դիմելով ամենաանբարոյական և ամենադաժան միջոցների: Ուրեմն ինչո՞ւ խաղալ նրանց դաշտում և առիթ տալ, որ նրանք կրկին յայտարարեն, թէ ժողովրդի ընտրեալներն են: Աւելի լաւ չէ՞ թողնել նրանց իրենց աթոռների վրայ և ուժեղացնել նրանց վրայ ճնշումը, նախ՝ ժողովրդի կողմից:

Յատուկ ժողովրդական կոմիտէներ, յանձնախմբեր ու արհմիութիւններ պէտք է մերկացնեն իշխանութիւնների հակահայկական քայլերը՝ որպէսզի ժողովուրդը տեսնի իր ղեկավարների իրական դէմքը: Երկրի թալանը, կեղծիքները և հակահայկական քայլերը կատարւում են ձեր աչքի առջեւ, պետական գրասենեակներում ու մաքսատներում, և դուք գիտէք այդ ամէնի մասին, ինչո՞ւ էք լռել: Ստեղծեցէք հասարակական այն հաստատութիւնները, որոնք կը բացայայտեն մաքսանենգութիւնը, մարդու իրաւունքների խախտումները և օրէնքի շրջանցումը: Եթէ մենք այս ամէնը ցոյց տանք Արեւմուտքին, ճնշումը այնտեղից չի ուշանայ, մանաւանդ եթէ այդ գործին մասնակից դառնայ Սփիւռքի առողջ ազգային տարրը: Բացայայտե՛ք իշխանութիւնների հակառուսական և թուրքասիրական քաղաքականութիւնը և Ռուսաստանից չի ուշանայ հզօր ճնշումը: Կտրեցե՛ք իշխանութիւններին սնող տնտեսական աղբիւրները և նրանք ստիպւած կը լինեն կատարելու ժողովրդի պահանջը: Իսկ այդ պահանջը վաղ թէ ուշ յանգելու է Միացեալ, Անկախ ու Ազատ Հայաստանի պահանջին:

Այս բազմակողմանի արշաւի մէջ հատու դեր ունի կատարելու Հ.Յ.Դաշնակցութիւնը, որը այսպէս թէ այնպէս կա՛մ արգելելու է Հայաստանում, կամ էլ կտրւելու են նրա թեւերը: Սակայն նա կարող է դառնալ Հայաստանում մթնոլորտը մաքրող մի հաւաքականութիւն, եթէ հրաժարւի իշխանութիւնը ձեռք բերելուց, մտնի ժողովրդի մէջ և ժողովրդի ձեռքով կատարի իր ճնշումը երկրի ապազգային կառավարութեան վրայ:

Եւ եթէ սա էլ չօգնի, եթէ իշխանութիւնները այս համազգային ճնշման տակ էլ չփոխեն իրենց քաղաքականութիւնը, ապա դա նշանակում է, որ մենք արժանի ենք մեր ղեկավարներին: Գուցէ այդ դէպքում ոմանք յանգեն այն եզրակացութեան, որ կան նաեւ իշխանութիւնները փոխելու այլ ճանապարհներ: Բայց այսօր անհրաժեշտ է ազգովին բացատրել իշխանութիւնների դաւաճանութիւնը՝ նախ մենք մեզ համոզելու համար, որ իշխանութիւնները իսկապէս

անպէտք են, ապա դրսի աշխարհին ցոյց տալու համար Հայաստանի իշխանութիւնների էութիւնը։

Սա պիտի դո՛ւ անես, սիրելի հայ ժողովուրդ, եթէ չես ուզում կործանուել Վասակի հողմերով։ Բազմիցս մենք դուրս ենք եկել անելանելի վիճակներից։ Երբեմն կռւել ենք Աւարայրի, Սարդարաբատի կամ Ղարաբաղի դաշտերում, երբեմն զոհւել ենք, բայց չենք ենթարկւել օտարի պահանջին, իսկ երբեմն էլ Մաշտոցի ու Կոմիտասի պէս մաքրել ենք մեր արժէքները օտարի ազդեցութիւնից։ Այժմ եկել է մեր ազգային արժէքները օտարի սառցակոյտերի տակից հանելու ու մաքրելու պահը։ Այդ արժէքների մաքրւելու հետ միասին՝ մեր ժողովուրդը կը մաքրւի նաեւ իր ապազգային կառավարութիւնից։

Ուրեմն՝ «ի՞նչ անել»։

Մաքրւե՛լ՝ մաքրե՛լու համար։

1995

ՆՈՐ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ՇՇՈՒԿՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Է. Յովհաննիսեան

Երբ վերամիաւորւեց Գերմանիան և գերմանացի ազգայնականները երջանիկ պահեր ապրեցին, ոչ մէկի մտքով չէր անցնում, որ Արեւմտեան Գերմանիայի աշխատաւորը և պարզ ժողովուրդը շուտով սկսելու է լուրջ դժգոհել վերամիաւորման դէմ: Բայց այդ դժգոհութիւնը իրականութիւն դարձաւ, որովհետեւ Արեւմտեան Գերմանիայի ժողովուրդը պատրաստ չէր իր ուսերի վրայ կրել Արեւելեան Գերմանիայի բեռը: Պատրաստ չէր միլիարդներ վճարել ազգային միասնութիւնը վերականգնելու համար: Բայց գերմանացին գերմանացի է: Նա բողոքեց ու վճարեց, վճարեց ու կրկին բողոքեց, և այժմ բոլորը համոզւած են, որ այդ բողոքների ու վճարումների մթնոլորտում կ'անցնի եւս 10-15 տարի, որից յետոյ գերմանացիները կը ծնւեն նոր՝ միասնական ու հզօր ազգի ներսում և հպարտութեամբ կը յիշեն իրենց հայրերին, որոնք բողոքեցին, բայց վճարեցին ու կերտեցին Եւրոպայի, գուցէ և աշխարհի ամենաբարգաւաճ ազգը:

Գերմանացին գերմանացի է, իսկ մենք՝ հայերս, ի՞նչ ապագայ ունենք:

Ճիշտ է, մեզ ոչ մէկը չվերամիաւորեց, մեզ համար վերամիաւորւելու պայմաններ ստեղծեցին միայն, բայց մենք չկարողացանք այդ պայմանները օգտագործել, որովհետեւ Հայաստանում իշխանութիւնը անցաւ ապազգային տարրի ձեռքը, որի համար ո՛չ ազգային միասնութիւնը և ոչ էլ ազգային որեւէ այլ արժէք առաջնակարգ նշանակութիւն ունէր: Չնայած դրան, արեւմտահայութիւնը արեւելահայութեան բարգաւաճման բեռի մի մասը վերցրեց իր վրայ՝ և ոչ պարտադիր, այլ կամաւոր կարգով: Ու քանզի կամաւոր էր այդ օգնութիւնը, բողոքելու տեղ չկար: Բողոքները, շշուկները ու նոր տրամադրութիւնները ստեղծւեցին, երբ Սփիւռքից օգնութիւնը նախ տեղ չհասաւ, ապա թալանւեց, իսկ օգնողների կուսակցական ընկերները բանտ նետւեցին: Այս մթնոլորտում ստեղծւեցին տրամադրութիւններ, որոնցից շատերը պարտադրում են Հայաստանի իշխանութիւնները, իսկ որոշներն էլ հիասթափութեան արտայայտութիւն են: Յիշատակենք այս տրամադրութիւնները՝ դրանց աղբիւրներն ու հետեւանքները պարզելու համար:

Տրամադրութիւն առաջին

«Հայ ժողովուրդն ի վերջոյ անկախութիւն ձեռք բերեց, ունեցաւ իր պետականութիւնը, ինչը երազում էր գրեթէ մէկ դար, և այս երազը գլխաւորապէս Հ.Յ.Դաշնակցութեան երազն էր, ուստի այս կուսակցութիւնը պիտի առաջինը լինէր հայ պետականութիւնը կերտողների ու ամրապնդողների շարքում: Բայց, աւաղ, Դաշնակցութիւնը դաւաճանեց իր սկզբունքներին, որովհետեւ ընկաւ բախտախնդիրների ազդեցութեան տակ: Գոյութիւն ունեցող Դաշնակցութիւնն այլեւս հայ ժողովրդի ծառայ Դաշնակցութեան ժառանգորդը չէ, ուստի անհրաժեշտ է վերականգնել նախկին Դաշնակցութիւնը, որը Հայաստանի ներկայ իշխանութիւնների հետ ձեռք-ձեռքի կը կատարի ազգընտիր նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի հրահանգները»:

Այս տրամադրութիւնը Հայաստանի իշխանաւորների ազդեցութեան տակ քարոզւում է տարբեր ձեւերով, տարբեր տեսանկիւններից, տարբեր մարդկանց ու նորելուկ կեղծ կազմակերպութիւնների կողմից: Այս երգը երգում են թէ՛ Դաշնակցութիւնից վտարուած ուխտադրուժները, թէ՛ փառամոլ պատեհապաշտները, որոնք հաճոյք են ստանում «ազգընտիր նախագահի» ձեռքը սեղմելուց, և թէ յոգնած մարդիկ, որոնք օրւայ հացը չեն կարողանում հայթայթել և քաղաքականութեամբ «զբաղւելու ժամանակը չունեն»:

Այս տրամադրութիւնների աղբիւրը պարզ է: Մէկ կողմից, դա Հայաստանի ապազգայի իշխանութիւնների փայփայած՝ Դաշնակցութիւնը չէզոքացնելու և սեփական գրպանը դնելու ցանկութիւնն է, միւս կողմից՝ դաշնակցականի նկարագիրը վաղուց կորցրած մարդկանց ցանկութիւնն է՝ թռչել «նախագահի» տաք գրպանը: Եթէ այս տրամադրութիւնները տեղ գտնեն ու ամրապընդւեն մեր ազգային կեանքում՝ հետեւանքներն ակնյայտ են:

- Հայ ժողովուրդը կը մնայ առանց ազգային ծառայի, և ապազգայինները ազգը կը տանեն ամերիկանացման, որտեղ ազգային արժէքները կը փորձեն խեղդել տնտեսական բարգաւաճման ճահճում: Հայաստանը կը դառնայ վրացիների, ազերիների ու թուրքերի երկիր, որտեղ կ'ապրեն նաեւ հայեր: Իսկ Հայաստան անունը կը գործածւի ինչպէս Եգիպտոս անունն այսօր, որը ոչ մէկ կապ ունի փարաւոնների ու բուրգերի հետ:

Տրամադրութիւն երկրորդ

«Դաշնակցութիւնը ոչինչ չարեց, ոչինչ չի անում: Ժողովուրդը հիասթափւած է Դաշնակցութիւնից, որովհետեւ մեծ սպասելիքներ ունէր այդ 100ամեայ ազգային կուսակցութիւնից: Դաշնակցութիւնը չկարողացաւ անցնել իշխանութեան

գլուխ, չկարողացաւ հարուածել ապազգային ուժերին, որոնք թալանեցին ու քանդեցին Հայաստանը: Եւ եթէ Դաշնակցութիւնը ոչինչ չկարողացաւ անել, ուրիշ ո՞վ պիտի փրկի Հայաստանը: Լաւ է գլուխներս կախ հետեւենք մեր նախագահին, որն իր ապազգայնութեան մէջ շատ հզօր գտնուեց ու կարողացաւ ծնկի բերել ազգայնական Դաշնակցութեանը»:

Այս տրամադրութիւնը բաւական տարածուած է թէ՛ Հայաստանում և թէ Հայաստանից դուրս:

Տարածուած է այն տարրի մէջ, որ արագ փոփոխութիւնների էր սպասում՝ միամտութեամբ, թէ անկախութեան հռչակումը անկախութեան ձեռքբերում է: Մինչդեռ անկախութիւնը բովանդակութիւն է, անկախութեան հռչակումը՝ ձեւ: Ու բոլոր ձեւերը չէ, որ համապատասխանում են բովանդակութեանը: Եւ երբ ժողովուրդը տեսաւ, որ անկախութիւնը լոկ ձեւ է, իսկ բովանդակութեան փոփոխութիւնները միայն դէպի վատն են տանում, հասկացաւ, որ խաբուած է ու հոգով ապստամբեց Դաշնակցութեան դէմ՝ նրան մեղադրելով անգործութեան մէջ:

Բայց այս տրամադրութիւնը ստեղծուեց ոչ-լուրջ հողի վրայ:

Սկսենք այն բանից, որ շատ կոյր և Դաշնակցութիւնը ատելու պատճառներ ունեցող մարդիկ միայն կարող են եզրայանգել, թէ Դաշնակցութիւնը ոչինչ չարեց, դատարկ տեղը Հայաստանում ստեղծեց կազմակերպութիւն, որն իր հերթին ստեղծեց թերթեր, տեղեկատւական գործակալութիւններ, վերլուծական կենտրոններ, Ա.Պ.Հ.ի տարածքի վրայ Հայ Դատի գրասենեակներ, կռւեց Ղարաբաղում, օգնեց ժողովրդին՝ յատկապէս երկրաշարժի գօտում, կարողացաւ որոշ չափով չէզոքացնել իշխանութիւնների հակառուս և հակապարսիկ տրամադրութիւնները, դիմադրեց նախագահի թուրքամէտ քաղաքականութեանը և այս բոլոր հարցերում գործեց այնքան աշխոյժ, որ կառավարութիւնը որոշեց արգելել նրա գործունէութիւնը՝ խլելով ոչ միայն գործելու ազատութիւնը, այլև նիւթական արժէքները:

Բայց այսքանը չի բաւարարում Դաշնակցութեանը անգործութեան մէջ մեղադրողներին: Նրանք ուզում են, որ Դաշնակցութիւնը որեւէ ճանապարհով տապալի ներկայ իշխանութիւնները և հայ ժողովրդին ազատութիւն բերի: Կարծես Դաշնակցութիւնն Աստուած է և կարող է օգնել ժողովրդին՝ առանց ժողովրդի մասնակցութեան: Իսկ ժողովուրդն այդ գործին մասնակցել չի ցանկանում, նա ուզում է, որ այս անցանկալի իշխանութիւնը հեռացի՝ առանց իր գործուն մասնակցութեան: Ուստի ասում է՝ ի՞նչ է անում Դաշնակցութիւնը, և չի ասում՝ ի՞նչ ենք անում մենք:

Այսօր մեր ընկերներին դատում են իշխանութիւնը տապալելու մտադրութեան համար: Սա ի՞նչ դատարկ մեղադրանք է: Այստեղ մէկը միւսի հետ խառ-

նըւած ի յայտ են գալիս ցանկութիւնը, մտադրութիւնը և մտադրութեան իրականացումը, որոնք բոլորովին տարբեր բաներ են, սակայն մատուցւում են իբրեւ մեղադրանք: Մինչդեռ անհրաժեշտ է առանձնացնել այդ մեղադրանքները՝ պարզելու համար Հայաստանում տիրող քաղաքական կացութիւնը: Խօսքն ամենեւին էլ հարցի իրաւական կողմի մասին չէ, այլ՝ երկրում տիրող ընդհանուր մթնոլորտի:

Ենթադրենք փողոցում մի կին, որի երեխաները քաղցած են, և որը տուն տաքացնելու ոչ մէկ միջոց ունի, բարձրաձայն բացագանչում է՝ «Վայ Լեւոն, ես քո բոյը թաղեմ, էս ի՞նչ օրի հասցրիր մեր երկիրը»: Կարելի՞ է համարել, որ նա նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանին սպանելու մտադրութիւն ունի: Անշուշտ՝ ոչ: Նրան առաւելագոյնը կարելի է մեղադրել ոչ-քրիստոնէական տրամադրութիւնների մէջ, քանզի ենթադրելի է, որ նա կ'ուրախանայ, եթէ նախագահը, օրինակ, մահանայ սրտի կաթւածից:

Կամ ենթադրենք, թէ ընտրութիւնների արդիւնքներից հիասթափւած որոշ քաղաքական գործիչներ յայտարարում են, թէ բոլոր խաղաղ ճանապարհները սպառւեցին և անհրաժեշտ են աւելի վճռական գործողութիւններ: Կարելի՞ է արդեօք այդ գործիչներին մեղադրել, թէ նրանք զինեալ ապստամբութիւն են պատրաստում: Անշուշտ՝ ոչ: Նրանց առաւելագոյնը կարելի է մեղադրել վտանգաւորութեան մէջ, որովհետեւ կարող են ապստամբել: Բայց 5-10 հոգով ապստամբութիւն չեն անում, նրանց յետեւից պէտք է գնայ ժողովուրդը, և եթէ նա իսկապէս գնայ, ուրեմն կառավարութիւնն իրապէս անցանկալի է ժողովրդի համար: Էլ ո՞րն է յանցանքը նախագահին անիծողի, նախագահի դէմ ապստամբութիւնը անխուսափելի համարողի և այդ ապստամբութիւնը պատրաստողի, եթէ երկիրը ժողովրդավարական չէ և խորհրդարանական խաղաղ միջոցներով փոփոխութիւնները բացառւած են:

Այստեղ կարելի է վերադառնալ այն տրամադրութեանը, թէ «Դաշնակցութիւնը ոչինչ չի անում»: Եթէ չի անում, ուրեմն չի տեսնում իր յետեւից եկող ժողովուրդ: Բայց եթէ չի անում, ինչո՞ւ է բանտարկւած ու արգելւած:

Տրամադրութիւն երրորդ

«Հայ ժողովուրդն իր ազգային խնդիրներով միշտ էլ բաժանւած է եղել երկու մասի՝ Սփիւռք և Հայրենիք: Այս բաժանումը վերջին դարում իրականութիւն էր, սակայն դեռեւս գիտակցւած չէր: Սփիւռքը և Հայրենիքը հայ մարդու, մանաւանդ դաշնակցականի գիտակցութեան մէջ մէկ ամբողջութիւն էր և եթէ դեռեւս իրականութիւն չէր, ապա զուտ քաղաքական պատճառներով ու դառը ճակատագրի բերմամբ: Ամէն դաշնակցական սպասում էր երջանիկ պահին, երբ կը ստեղ-

ծւեն պայմաններ՝ մէկ ազգ ու մէկ հայրենիք կերտելու համար: Եւ ահա պահը եկաւ: Ստեղծւեց ինքնիշխան Հայաստան, որը կարող էր դառնալ հայ ժողովրդի ընդհանուր հայրենիքը և իր վրայ վերցնել հայապահպանման բոլոր այն խնդիրների լուծումը, որոնք Սփիւռքը ինքնուրոյնաբար լուծում էր՝ և մեծ ճիգերի գնով: Միացեալ հայրենիք ունենալու գաղափարը պարզապէս խրւել էր դաշնակցական մարդու գիտակցութեան մէջ, և անկարելի էր պատկերացնել, որ նոյնիսկ ժամանակաւոր կը հրաժարւի այդ գաղափարի իրականացումից:

«Բայց, հաւանաբար, գիտակցութիւնը իրականութիւն է դառնում միայն այն դէպքում, երբ հիմնւում է ոչ թէ գաղափարախօսութեան, այլ զգացմունքների ու կենդանի ձգտումների վրայ: Յանկարծ պարզւեց, որ մէկ հայրենիքի գաղափարը թէ՛ Սփիւռքում և թէ Հայաստանում կրում էր զուտ տեսական բնոյթ և շատ աւելի բարոյական, քան քաղաքական նպատակ էր:

«Երբ պարզ դարձաւ, որ Սփիւռքն ամուր կառչել է սփիւռքեան ազգային արժէքներին և ամենեւին էլ մտադիր չէ հայրենիք վերադառնալ, երբ պարզւեց նաեւ, որ Հայաստանն ամենեւին էլ չի ցանկանում գիրկն առնել բովանդակ Սփիւռքը, ընդհակառակը՝ դատարկում է Հայաստանը իր բուն բնակչութիւնից, երբ վերջապէս պարզւեց, որ Հայաստանի նոր ղեկավարութիւնը միտումնաւոր հրաժարւել է ազգահաւաքի քաղաքականութիւնից, յստակ դարձաւ, որ եթէ Սփիւռքը մասնակցի հայաստանցիների խնդիրների լուծմանը, չի կարող հասնել իր խնդիրներին: Առանց այն էլ Սփիւռքի միջոցները առատօրէն հոսեցին Հայաստան, բայց ազգային նպատակների չծառայեցին իսկ Սփիւռքը բաւական տկարացաւ դրանից:

«Ուրեմն՝ լաւ կը լինի, որ Սփիւռքը շարունակի զբաղւել իր խնդիրներով, Հայաստանը՝ իր: Կուսակցական իմաստով դա նշանակում է վերադառնալ երկու Բիւրօ ունենալու դրութեանը»:

Այս տրամադրութիւնը շատ յստակ է, մարդկայնօրէն հասկանալի, բայց շատ հեռու՝ դաշնակցական սկզբունքներից: Կարելի է շատ գեղեցիկ հիմնաւորումներ տալ երկու Բիւրոյի գաղափարին, կարելի է մարդկանց և շարքային ընկերներին նոյնիսկ կուսակցականօրէն բացատրել, որ Դաշնակցութիւնը միայն կը շահի կուսակցական կառոյցի նման փոփոխութիւնից, բայց այդ տրամադրութեան հիմքն առողջ չէ: Այդ տրամադրութիւնը հիմնւում է մեզ չվայելող անառողջ ցանկութեան վրայ՝ Սփիւռքի ուսերից հանել Հայաստանի ծանր բեռը: Մօտաւորապէս այսպէս կարելի է ձեւակերպել ոմանց տեսակէտը. «Տւեցինք, կռւեցինք, զոհաբերեցինք, բայց այս անկուշտ հայաստանցիները նորէն կ'ուզեն, ալ կը բաւէ»:

Բայց հարցն իրականում շատ աւելի բարդ է, ես կ'ասէի՝ գաղափարախօսական: Քանի դեռ «Միացեալ Հայաստանը» բանախօսութիւնների ու ճառերի

հարթութեան վրայ էր, այդ գաղափարի կողմնակից լինելը հեշտ էր, քանի դեռ անկախութիւնը երազ էր, այդ մասին կարելի էր խօսել ու գրել: Բայց երբ անկախ պետականութեան կերտումը, ազգային միասնութեան ստեղծումը դարձան օրախնդիր, երբ այդ հարցերը պէտք է լուծէին յեղափոխական նկարագիր ունեցող մարդկանց գերագոյն ճիգերով, երբ մեր առջեւ ծառացան քաղաքական ու ընկերային հազարաւոր խնդիրներ, երբ մենք ակումբներից պիտի դուրս գայինք աւազակներով լի քաղաքական ու տնտեսական աշխարհ, պարզուեց, որ պատրաստ չենք այդ յեղափոխութեանը, և մեզանից շատերը նահանջեցին:

Այդ նահանջողների տրամադրութիւնն է, որ ծնեց երկու Բիւրոյի գաղափարը: Այստեղ կարելի է միայն հետեւեալն ասել, եթէ տեղի պիտի ունենայ Բիւրոների բաժանում, այն ոչ թէ տարածական է, այլ՝ գաղափարական: Մէկ Բիւրոն իրականում զբաղուելու է Հայաստանի պետական հարցերով, միւսը՝ Սփիւռքի ազգապահպանման խնդրով և մեր հակառակորդների վրայ որոշ բարոյական ճնշումներով: Եթէ այդպէս է, ոչ մէկը իրաւունք ունի որեւէ շրջան ինքնաբերաբար կապել այս կամ այն Բիւրոյի՝ այն նկատառումով միայն, որ այդ շրջանը գտնւում է Սփիւռքի տարածքի վրայ: Եւ ի՞նչ է նշանակում տարածութիւն: Իրանը շատ աւելի մօտ է Հայաստանին, քան Միացեալ Նահանգներին, ուրեմն ո՞ր Բիւրոյին պէտք է ենթարկւի Թեհրանի կառոյցը:

Նոյնիսկ Լիբանանի պարագային շատ աւելի բնական կը լինէր, որ լիբանանեան կազմակերպութիւնը, Հայաստանի և Իրանի կառոյցների հետ միասին, մտնէր միեւնոյն Բիւրոյի մէջ: Իսկ եթէ Բիւրոների տարբերութիւնը պիտի լինի տարբեր խնդիրների լուծումը, մենք պատրաստ ենք իւրաքանչիւր կուսակցականի հարցնել՝ դաշնակցական ո՞ր խնդիրներն է առաւել կարեւորում:

Կարծում ենք՝ այս տրամադրութիւններին պէտք է վերջ տալ, քանզի մէ՛կ է հայ ժողովուրդը, ու մէ՛կ պիտի լինի նրա ազգային առաջնորդը՝ Դաշնակցութիւնը:

Տրամադրութիւն չորրորդ

«Հ.Յ.Դաշնակցութեան ծրագիրը, գործելակերպը, գաղափարախօսութիւնը հնացել են և ժամանակակից քաղաքակրթութեան չափանիշներին չեն համապատասխանում: Անհրաժեշտ է վերանայել Դաշնակցութեան յեղափոխականութիւնը, ընկերվարութիւնը և նոյնիսկ ազգայնականութիւնը: Այսօր քաղաքակիրթ աշխարհը նման բաներ չի ուզում լսել»:

Նման տրամադրութիւն ունեցողների մէջ կան շատ աւելի անկեղծները, ո-րոնք ասում են՝ «Եղբայր, անենք, բայց ինչո՞ւ գրենք»: Այսինքն՝ իրականում վատը լինենք, բայց թող ուրիշները կարծեն, թէ լաւն ենք:

Այս տրամադրութեան աղբիւրը շրջապատին յարմարւելու մէջ է: Մինչդեռ շրջապատն ինքը անտանելի վատն է, և նրան յարմարւելու համար մենք ոչ մէկ առիթ ունենք: Ընդհակառակը՝ մեր յեղափոխականութիւնը, ազգայնականութիւնը և ընկերվարութիւնը մեր լաւագոյն սկզբունքներն են, որոնցից անկարելի է հրաժարւել, եթէ ուզում ենք մնալ հայ ժողովրդի ծառան:

Մեր աչքերի առջեւ Արաֆաթները դառնում են խաղաղութեան մրցանակի դափնեկիրներ, ամերիկացիները ռմբակոծում են Իրաքը և Սերբիան, դրամատիրական երկրների նկուղներում մարդիկ առնէտներ են ուտում և հիւանդներին փողոց շպրտում, իսկ մենք, յարմարւելով նրանց, պէտք է հրաժարւենք մեր սկզբունքներից ու համակերպւենք մեզ շրջապատող այլանդակ աշխարհին:

Մենք չենք կարող այդ անել, որովհետեւ Դաշնակցութիւնը նկարագիր է, և եթէ փոխենք այդ նկարագիրը, մեր շարքերը կը լցւեն գուցէ կարդացած, բայց առանց ողնաշարի մարդիկ: Եւ հայ ժողովուրդը կը կործանւի, քանզի Դաշնակցութիւնն է նրա ողնաշարը:

Տրամադրութիւն հինգերորդ

«Այսօր Հ.Յ.Դաշնակցութիւնը քաղաքական սուր պայքարի փուլում է, երբ անկարելի է գործել առանց քաղաքական յստակ կողմնորոշումների: Մեզ համար յստակ պիտի լինի՝ ովքեր են մեր բարեկամները և ովքեր՝ թշնամիները, քանզի մենք կը յաղթենք, եթէ մեր բարեկամութիւնը լինի անկեղծ և պայքարը՝ անզիջում: Դիւանագիտութեան անւան տակ հայ ժողովրդի շահերին դաւաճանելը յանցագործութիւն է, և այդ յանցագործները պէտք է կրեն իրենց պատիժը: Մենք կարող էինք խաղալ տարբեր կողմերի վրայ, քանի դեռ խաղը թերթերի էջերին էր, իսկ պայքարը՝ բողոքի ցոյցերում:

«Այսօր արդէն խաղերը փայտէ ձիերի վրայ չեն, այլ հրանօթների ու հրասայլերի օգնութեամբ: Ահա թէ ինչու քաղաքական կողմնորոշումները պէտք է յստակ լինեն: Այնքան յստակ, որ բարեկամն էլ, թշնամին էլ զգան, որ գործ ունեն ոչ թէ խրտիլակի, այլ հայ զինւորի հետ, որը պատրաստ է մեռնել Հայրենիքի համար»:

Այս տրամադրութեան աղբիւրը շատ յստակ է: Քաղաքական բանակցութիւնների ժամանակ դիմացինդ լուրջ պահանջներ է ներկայացնում ու փոխարէնը՝ լուրջ պարտաւորութիւններ վերցնում: Իսկ մենք նրանց ոչինչ չենք կա-

րողանում պատասխանել, որովհետեւ զուրկ ենք յստակ կողմնորոշումից: Եթէ ինչ-որ բան ռուսնեն են առաջարկում, յստակ պատասխան չենք տալիս, յանկարծ չնեղանան ուրիշները:

Եթէ նպատակին հասնելու համար պէտք է որոշ հանգրուաններում զիջումների գնալ, մենք դա չենք անում՝ վախենալով ժողովրդից, յանկարծ չասի, թէ Դաշնակցութիւնը, օրինակ, զիջեց անկախութեան հարցում:

Իսկ Հայաստանի իշխանութիւնները, առանց հաշւի նստելու ժողովրդի հետ, կարող են զիջումներ կատարել Ցեղասպանութեան, Ղարաբաղի, ընտրութիւնների և շատ այլ հարցերում: Նրանց քաղաքականութիւնը յստակ է, ուստիև շահում են:

Ես միանգամայն համաձայն եմ այս տրամադրութեանը:

1995

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԵՐ ԱՇԽԱՐՀԸ

Է. Յովհաննիսեան

Դաշնակցութիւնը ծնուեց ոչ թէ աշխարհը փոխելու կամ նրան յարմարուելու, այլ աշխարհի նւաճումները հայ ժողովրդի շահերին ծառայեցնելու համար։

Նա ծնուեց որպէս հայ ժողովրդի ինքնուրոյն արժէք, որը խտացնում էր իր մէջ հայ ժողովրդի հոգեկան և նիւթական պահանջները, որը անձնազոհ կերպով պաշտպանեց մեր ժողովրդի ազգային շահերը և որը առանց որեւէ վարձատրութեան խաչւեց ու խաչւում է այդ ճանապարհին։ Խաչւում է առանց հաշւի առնելու ու յարմարուելու աշխարհում տեղի ունեցող իրադարձութիւններին։ Այդպէս են վարւում բոլոր կազմակերպութիւնները, շարժումները և պետութիւնները, որոնց նպատակը ոչ թէ սեփական կեանքի ապահովութիւնն է, այլ գաղափարի, սկզբունքի, սեփական ազգի կամ մարդկութեանը ծառայելն է։ Նման կազմակերպութիւններ ու շարժումներ արդիականացման կարիք չունեն, նրանք կա՛մ ապրում են ծնունդի մաքրութեամբ, կամ իրենք իրենց ցրում են, երբ հասնում են նպատակին։

Քրիստոնեաները 2000 տարի չարդիականացրեցին Աւետարանը, մահմեդականները չփոխեցին Ղորանը, հրեաները չհրաժարւեցին Մովսէսի պատւիրաններից, ամերիկացիները 200 տարի մնացին իրենց Սահմանադրութեան վրայ, իսկ անգլիացիները իրենց Սահմանադրութիւն չունենալու կարգի վրայ։ Եւ դա հասկանալի է, որովհետեւ արդիականացնել կարելի է ձեւը, բայց ոչ բովանդակութիւնը։ Այն էլ միայն այն դէպքում, երբ արտաքին աշխարհը մեզանից շատ յամառօրէն պահանջում է այդ դերասանութիւնը։

Բայց հասարակական, մանաւանդ ազգային արժէքների բովանդակութիւնը յաւերժ է, որքան որ յաւերժ է ինքը հասարակութիւնը կամ ազգը։ Վարդանանքից եկած «մահ իմացեալի» արժէքը չփոխւեց 1500 տարւայ ընթացքում, ինչպէս չփոխւեց զինւորի և յեղափոխականի կարգապահութեան և երդման հաւատարիմ մնալու սկզբունքը։ Մարդկութեան պատմութեան ամբողջ ընթացքում դաւաճանութիւնը համարւել է ստորութիւն և դաւաճանների երեսներին միշտ էլ թքել են։ Եթէ այս աշխարհում մնայուն ու անփոփոխ արժէքներ գոյութիւն չունենային, գոյութիւն չէր ունենայ նաեւ մեր աշխարհը, որը այդ մնայուն արժէքներից ստեղծւած ամբողջութիւն է։

Վերցնում եմ ձեռքս մեր Ծրագիրը ու փորձում եմ հասկանալ, թէ այս Ծրագրի ի՞նչը մենք պէտք է փոխենք արդիականանալու համար, թէ՝ մեր կազ-

մակերպչական կանոնների ի՞նչը պիտի յարմարեցնենք 21րդ դարի պահանջներին։

Նախ տեսնում եմ, որ Ծրագիրը ընդունած է 1982 թականին, իսկ կազմակերպական կանոնները 85ին։ Սա նշանակում է, որ եթէ ժամանակակից աշխարհը մեզ արդիականացման պահանջ է ներկայացրել, ապա դա տեղի է ունեցել վերջին տասնամեակի իրադարձութիւնների թելադրանքով։ Մինչ այդ ամէն ինչ կարգին էր և մեր Ընդհանուր Ժողովը արդիականացման պահանջը չէր զգում։ Այստեղ գալիս է մի շատ կարեւոր հարցի վերլուծութեան անհրաժեշտութիւն, որի մասին պիտի խօսեմ, հաշւի առնելով, որ ես էլ քչից-մչից մտաւորական եմ և ունեմ «մտաւորականի յատուկ առանձնաշնորհեալ ազատութիւնը»։ Փորձում եմ գտնել իմ կասկածների պատասխանը ու, անկեղծ ասած չեմ գտնում։

Մէկ տասնամեակ առաջ արդիականացման պահանջը արդէն կար, բայց կա՛մ Դաշնակցութեան «յետամնաց» ղեկավարները պարտադրեցին ժողովին իրենց կամքը և թոյլ չտուեցին, որ Ընդհանուր Ժողովը արդիականացնի մեր կուսակցութիւնը, կա՛մ Ընդհանուր Ժողովը ինքը պահպանողականութիւն ցուցաբերեց այս հարցում և կամ էլ արդիականացման պահանջը իսկապէս հրապարակ իջաւ վերջին տասնամեակում՝ Խ. Միութեան փլուզման և անկախ Հայաստան ստեղծելու կապակցութեամբ։

Եթէ այս վերջինն է, ապա խիղճս հանգիստ է, որովհետեւ այդ իրադարձութիւնների լրջութեան մասին խօսելը դեռեւս շատ շուտ է և յետոյ ազատւում եմ Համբիկ Սասունեանի և բանտերում նստած մեր ընկերների, Լիբզոնի հերոսների հետ բացատրելու ծանր պարտականութիւնից։ Հակառակ դէպքում ես պիտի նրանց ասէի, թէ կը ներէք, տղաներ, մենք սխալւեցինք, մենք չհասկացանք, որ աշխարհը արդէն արդիականացել է և թոյլ տւեցինք ձեզ արդիականացած աշխարհում գործել մեր «յետադիմական» աւանդոյթների համաձայն։ Հիմա ես կարող եմ նրանց ասել, որ դուք ճիշտ վարւեցիք, փառք ձեզ տղաներ, արդիականացման պահանջը եկաւ ձեզանից յետոյ, և արդիականացման պիտի ենթարկւեն ձեզանից յետոյ եկողները։ Ճիշտ է, անհասկանալի է, թէ ի՞նչ պիտի ասեմ Ղարաբաղի հերոսներին, բայց կարծում եմ, որ վերջնական հաշւետուութեան պահին մտաւորականներով արդիականացած մեր կուսակցութիւնը դրա պատասխանն էլ կը գտնի։

Եթէ զոհւածները պատասխանել կարողանային, նրանք կ՚ասէին մօտաւորապէս հետեւեալը.- «Մենք երդւեցինք միշտ հաւատարիմ մնալ Հ.Յ. Դաշնակցութեան Ծրագրին, Կանոնագրին ու որոշումներին և բոլոր ուժերով, իսկ հարկ լինի՝ նաեւ մեր կեանքի գնով, ծառայել Հայաստանի և հայութեան ազատագրութեան Դատին։ Մենք կատարեցինք մեր երդումը, իսկ մեզանից յետոյ

եկողները թող իրենք որոշեն Հայաստանին և հայութեանը տալի՞ս են իրենց կեանքը, թէ՞ Հայաստանի խորհրդարանին իրենց ձայները: Այդ մասին երդումը տալիս են զէ՞նքի վրայ, թէ՞ խաղաղութեան աղաւնու պատկերի առջեւ»:

Ի՞ՆՉՆ Է ՓՈԽԻԵԼ ՄԵՐ ԱՇԽԱՐՀՈՒՄ ՈՐ ՄԵՆՔ ԱՅԴՔԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՆԱՆՔ

Բայց եկէք տեսնենք, թէ ի՞նչն է փոխուել մեր աշխարհում, որ մենք այդքան արդիականանանք: Աշխարհի ազգային և պետական փոխ-յարաբերութիւններում, բարոյականութեան և քաղաքականութեան բնագաւառում, մարդու և աշխատաւորի իրաւունքների պաշտպանութեան ոլորտում այս վերջին տասնամեակի ընթացքում ոչինչ չփոխուեց: Ընդհակառակը, Խորհրդային Միութեան փլուզումը է՛լ աւելի սրեց այն թագնւած հակամարտութիւնները, որոնք ժամանակին զսպւում էին բռնի ուժով: Առանց արդիականանալու բաւականին հնամաշ ձեւերով կատաղի կռւում են չեչէնները, քրդերը, պաղեստինցիները, ղարաբաղցիները, սերբերը և շատ ուրիշներ: Ու նրանց ոչ պակաս կատաղի, արդիական զէնքերով հարւածում են վաղուց արդիականացւած ամերիկացիները, թուրքերը, ֆրանսիացիները, ռուսները և շատ ուրիշներ:

Մէկ տասնամեակ առաջ մենք գիտէինք, թէ ինչո՞ւ է այդպէս պատահում և ինչո՞ւ այս կացութիւնը պիտի շարունակւի: Մենք գիտէինք, որ «Միջ-ազգային մակարդակի վրայ, տնտեսական և զինւորական կարեւոր ուժի տիրացած ցեղապետերի և վեհապետերի աշխարհակալական տրամադրութիւնները, նիւթական հարստութեան ամբարման թէ անսահմանափակ մենատիրութեան ձգտումը, ցեղապաշտութիւնը, ինչպէս նաեւ մեծ պետութեանց տնտեսական և քաղաքական շահամոլութիւնը, գաղութատիրութեան, կայսերապաշտութեան, ռազմապաշտութեան, ընկերային տնտեսական դրութեանց բռնի պարտադրանք և այլն,- այս բոլորը զանազան ձեւերով պատճառ դարձան, որ նաեւ ամբողջ ժողովուրդներ ենթարկւին շահագործող մի սակաւապետութեան սանձարձակ քմայքին կամ յաճախ անմարդկային վերաբերմունքին»:

Սա մենք գիտէինք մէկ տասնամեակ առաջ, արդեօ՞ք հիմա չգիտենք: Թէ՞ աշխարհը այնպէս է փոխւել, որ մենք պէտք է այսօր ամաչենք 10 տարի առաջ ունեցած մեր միամտութիւնից:

Աշխարհը անշուշտ չի փոխւել անհասկանալի պատճառներով փոխւել են մեր տրամադրութիւնները, մեր բարոյական ու քաղաքական կողմնորոշումը: Մենք միշտ գիտէինք ու հիմա էլ գիտենք, որ «Անյիշատակ ժամանակներից ի վեր՝ գոյութիւն են ունեցել շահագործողներ և շահագործւողներ, իշխողներ ու հպատակներ, ճնշողներ և ճնշւողներ»: Ու նաեւ գիտէինք, որ Դաշնակցութիւ-

նը շահագործուղների, ճնշուղների ու հալածւածների կողքին է, նրանց պաշտպանն է ու դաշնակիցը։

Բայց այսօր կարծես թէ այդ հալածւողները նկատւում են յետադիմականներ, իսկ մենք ուզում ենք արդիականանալ ամերիկեան «ժողովրդավարութեանը» յարմարւելու գնով։ Իսկ դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ շահագործողների, իշխողների, ճնշողների ու հալածողների, կողմը անցնելը։ Որտեղի՞ց եկաւ այդ տրամադրութիւնը։ Մենք հօ գիտենք, որ աշխարհը չի փոխւել։ Իսկ նրանց համար, որոնք այն տեսակէտն են յայտնում, թէ դրամատիրութիւնը ներկայ փուլի մէջ առաջադիմական վարչակարգ է, մեր Ծրագիրը յիշեցնում է,- «Դրամատիրութիւնը իր ներկայ փուլի մէջ հարկադրւած է որոշ պատշաճեցումներ մտցնել պետութեան և աշխատաւորութեան յարաբերութեանց մէջ, ինչպէս, օրինակ, ընկերային ապահովութեան դրութեանց հաստատումը և աշխատաւորների մասնակի բաժնեկցութիւնը տնտեսական հիմնարկների»։ Եղածը ընդամէնը այս է, իսկ այդ միջոցները կարելի չէ հիմնական լուծում նկատել, որովհետեւ տնտեսական կառոյցի հիմքերը կը մնան անփոփոխ»։

Բայց այսքանն էլ Հայաստանում բացակայում է, ուրեմն ի՞նչն է ստիպում մեզ արդիականանալ, այսինքն՝ փոխել մեր բարոյական և քաղաքական կողմնորոշումը, եթէ չհաշւենք Հայաստանի նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի ցանկութիւնը։

Հայաստանի իշխանութիւնների համար մենք դեռեւս տեսականօրէն որոշ անհանգստութիւն ենք պատճառում և նրանք շատ պիտի հանգստանային, որ մենք էլ իրենց պէս նետւէինք ամերիկեան արդիականացման ճահիճը ու դառնայինք իրենց թիմի խաղացողներ։ Բայց մեր կուսակցութեան ամերիկանացումը չափազանց վտանգաւոր է, որովհետեւ ամերիկանացած Դաշնակցութիւն չի կարող գոյութիւն ունենալ։ Ամերիկանացնել Դաշնակցութիւնը կը նշանակի սպանել նրան։ Այս վտանգը զգալով, ես ստիպւած եղայ վերանայելու իմ տեսակէտը Դաշնակցութեան կենտրոնը Բէյրութ տեղափոխելու վերաբերեալ, որին միշտ դէմ էի, մանաւանդ որ Լիբանանը կրկին ընկաւ Իսրայէլի ռումբերի տակ։ Բայց հիմա ես ոչ միայն հաշտւեցի, այլ նոյնիսկ ուրախացայ, որ այդ տեղափոխումը պիտի կատարւուի։

ԱՅԴ ՈՐՔԱ՞Ն ՄԵՆՔ ՊԻՏԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՆԱՆՔ, ՈՐ ԿԱՐՈՂԱՆԱՆՔ ... ՄՐՑԵԼ

Արդիականացման պատճառ չտեսնելով աշխարհի ընդհանուր կացութեան մէջ, փորձեցի քայլել Վահէ Օշականի ճամբով, որը համարում է, որ 21րդ

դարը մտաւորականների դարը պիտի լինի, իսկ Դաշնակցութիւնը պէտք եղած մտաւորական ուժը չունի, ոչ էլ պիտի ունենայ մօտաւոր ապագային։

Այստեղ ես իմ սիրելի ընկերոջը պիտի յիշեցնեմ, որ ոչ միայն 21րդ դարը պիտի լինի մտաւորականների դար, այլ արդէն 20րդ դարի երկրորդ կէսը այդպիսին էր։ Մտաւորականների շնորհիւ մեր դարը դարձաւ հաշուիչ մեքենաների, արբանեակների, հրթիռների, արդիական զէնքերի, տեղեկատուական միջոցների դար։

Յետո՞յ։

Ի՞նչ պիտի անի Դաշնակցութիւնը այդ դարում։

Ստեղծի սեփական հրթիռնե՞ր, հաշուիչ մեքենաներ ու հիւլէական զէնքեր, թէ՞ դարի նուաճումները օգտագործի իր նպատակների, այսինքն հայ ժողովրդի Դատը պաշտպանելու համար։

Ես կարծում եմ, որ մենք ճիշտ ճանապարհի վրայ ենք և առանց այդ միջոցները ստեղծելու, մեր կարողութիւնների սահմանում, արդիականացրինք մեր հաստատութիւնները։ Մենք պարզապէս գնեցինք դարաշրջանի կողմից ստեղծուած այդ միջոցները։ Այս նոյն մօտեցումը մենք կարող ենք ունենալ նաեւ մտաւորականութեան նկատմամբ։ Մեր փորձը ցոյց է տալիս, որ աշխարհի լաւագոյն մտաւորականները և գիտական հաստատութիւնները, վերլուծական կենտրոնները, վիճակագրական ընկերութիւնները կարող են կատարել Դաշնակցութեան պատուէրները, եթէ նրանց մենք կարողանանք վճարել։ Իսկ եթէ չենք կարողանում վճարել, սա արդէն մեր շատ աւելի հիմնական տկարութիւնն է, քան մեզանից մտաւորականներին խրտչեցնելու իրողութիւնը։

Այդ որքա՞ն մենք պիտի արդիականանանք, որ կարողանանք սեփական ուժերով մրցել ու քայլել դարի հետ միասին։ Եւ ի՞նչ կը մնայ մեզանից որպէս կուսակցութիւն, եթէ մենք մեր ամբողջ ճիգերը կենտրոնացնենք դարի հետ քայլ պահելու վրայ, որպէսզի «ամա՛ն չասեն», թէ Դաշնակցութիւնը պահպանողական կուսակցութիւն է։

15 տարի առաջ Միւնխենում Հայկական Հարցերի Հաստատութիւնը ստեղծեց Հայ ժողովրդի իրաւունքների պաշտպանութեան կոմիտէ, որի կազմի մէջ մտան, առանց չափազանցելու, տարբեր երկրների լաւագոյն մտաւորականներ, իսկ կոմիտէի նախագահն էր աշխարհահռչակ իրաւաբան դոկտոր Ֆելիքս Էրմակորան, որը միաժամանակ Միացեալ Ազգերի Կազմակերպութեան մարդկային իրաւանց յանձնաժողովի նախագահն էր։

Մոսկւայում երկու տարի առաջ մենք կազմակերպեցինք «փանթուրքիզմի վտանգը» խորագրով միջազգային խորհրդաժողով, որի մասնակիցները իրենց ելոյթները բառ առ բառ համաձայնեցնում էին մեզ հետ, որովհետեւ խորհրդաժողովի բոլոր ծախսերը վճարում էր Դաշնակցութիւնը։ Այդ ինչքա՞ն

մենք ջանք պիտի թափենք, որ ստեղծենք սեփական Էրմակորաներ, Սիմաներ ու Ֆէոդորովներ: Եթէ Մերձաւոր Արեւելքից մինչեւ ամերիկաներ, և Աւստրալիայից մինչև Ռուսաստան լաւագոյն մտաւորականներին մենք վճարենք երկու անգամ աւելին, քան նրանց աշխատավարձն է, մտաւորականների այս ահագին բանակը կը ծառայի հայ ժողովրդին:

Ինչ վերաբերում է հայ մտաւորականներին, ապա եկէք արձանագրենք գոնէ մի քսան մտաւորականի, որոնք եթէ միանան մեր շարքերին, աւելի մեծ յաջողութեամբ կը լուծւի Հայ Դատը: Վստահեցնում եմ ձեզ, որ այդ 20 անունն էլ չենք գտնի: Բայց եթէ նոյնիսկ գտնենք, արժէ՞ արդեօք 20 մտաւորական սիրաշահելու համար մենք այնպէս փոխւենք, որ մեր կուսակցութեան հիմնադիրները ու հայրերը մեզ այլեւս չճանաչեն:

Շա՞տ պիտի մեր կուսակցութիւնը շահէր, եթէ, օրինակ, Վիլիամ Սարոյեանը, Վիկտոր Համբարձումեանը, կամ Վահագն Տատրեանը դաշնակցականներ լինէին: Իսկ եթէ խօսքը սրանց մասին չէ, ապա մնացածը մեզ հետ են: Ո՞վ ասաց, որ մտաւորականները մեզանից խրտչում են: Միթէ՞ Հայաստանի Հանրապետութեան պատմութիւնը գրող Ռիչարդ Յովհաննիսեանը, որը առիւծի նման պաշտպանում է Հայ Դատը, մեզ հետ չէ: Միթէ՞ հարիւրաւոր յօդւածների և փայլուն աշխատութիւնների հեղինակ Լեւոն Մկրտչեանը մեզ հետ չէ՞: Նրանք շարքային չեն, բայց մեզ հետ են, որովհետեւ անկարելի է, որ ազգային մտածելակերպ ունեցող գիտնականը մեզ հետ չլինի:

Եւ վերջապէս, ինչո՞ւ ենք մենք մոռանում և նոյնիսկ մի տեսակ վիրաւորւում մեր շարքային մտաւորականներին, որոնք լցնում են մեր մամուլի էջերը յօդւածներով, վերլուծութիւններով, հրատարակում են բազմաթիւ պատմական հատորներ, Հայ Դատին նւիրւած ժողովածուներ, գրական ստեղծագործութիւններ, զբաղւում են մեր արխիւներով ու գրում խմբագրականներ: Եթէ Վահէ Օշականը կուսակցութեան արդիականացման տակ հասկանում է այս անձնազոհ բանակի աւելացումը, ապա ինչո՞ւ չէ, դա կարող է աշխուժացնել մեր կուսակցութեան գործունէութիւնը: Բայց եթէ այդ աշխուժացումը պէտք է կատարւի աշխատաւորների բանակի նւազեցման հաշւին, մարտիկներին գիտնականներով փոխարինելու գնով, ապա նման արդիականացումը անընդունելի է:

Մենք պէտք է մեր շարքերը բերենք բանւորներին, գիւղացիներին ու այն պարզ աշխատաւորներին, որի շահերը պաշտպանելու համար ծնւել ենք և որը կազմում է մեր ժողովրդի գոյութեան յենակէտը: Սրանք չեն խրտչում «հին անցեալէն մնացած կէս-յեղափոխական կանոնագրային ինչ-ինչ օրէնքներէն, մուտքի երդումէն, հրահանգի հնազանդութենէն, պատժական միջոցներէն, կարգապահական կանոններէն ու գաղտնիացումէն»: Իսկ եթէ նրանց ելոյթնե-

րը երբեմն զուրկ են հռետորական արժանիքներից, ոչինչ, Հ.Յ.Դ. գործի, բայց ոչ խօսքի կուսակցութիւն է: Հ.Յ.Դ. խօսում է այնպէս, ինչպէս կարող է, բայց գործում է այնպէս, ինչպէս պէտք է:

Մկների ժողովի յայտնի պատմութեան մէջ, երբ կատուի վզին զանգ կախելու անհրաժեշտութեան մասին ճառող մկանը առաջարկում են, որ հէնց ինքն էլ կախի այդ զանգը, «մտաւորական» մուկը տալիս է իր հռչակաւոր պատասխանը. «ճա՞ռ ասեմ, թէ՞ զանգ կախեմ»: Դաշնակցական մտաւորականը վարում է ճիշտ հակառակ կերպով:

Ինչ վերաբերում է Վահէ Օշականի առաջարկութիւններին 27 և 28րդ Ընդհանուր Ժողովների օրակարգերի մասին, ապա իմ կարծիքով, այդ առաջարկութիւնները հետաքրքրական են, բայց Դաշնակցութեան հետ կապ չունեն: Այդ առաջարկութիւնները միայն շեշտում են Սփիւռքի ինքնուրոյն նշանակութիւնը և նրա կազմակերպչական վերափոխութեան անհրաժեշտութիւնը: Սփիւռքը ղեկավարելու համար առաջարկւում է բազմակուսակցական մի մարմնի ստեղծում, որը կը լինի Սփիւռքի խորհրդարանի պէս մի բան, որտեղ Դաշնակցութիւնը կարող է լուրջ դեր կատարել, քանզի Սփիւռքի ազդեցիկ կուսակցութիւններից մէկն է: Բայց համասփիւռքեան նոր կառոյց (Սփիւռքի խորհրդարան) ստեղծելու հարցը Դաշնակցութեան գործը չէ:

Իսկ եթէ այդ հարցում մենք հանդէս գանք նախաձեռնողի դերում, ապա այդ նախաձեռնութիւնը անմիջապէս կը մերժի միւս կուսակցութիւնների և առաջին հերթին Հ.Հ. իշխանութիւնների կողմից, եթէ նրանք տեսնեն, որ Դաշնակցութիւնը կարող է իսկապէս վճռական դեր կատարել այդ խորհրդարանում:

Իսկ եթէ նրանց կողմից չմերժելու համար մենք պէտք է արմատապէս փոխուենք (Ծրագրի «ապակենտրոնացում», Սփիւռքեան Հանրապետութիւն, Բիւրոյի փոխարէն՝ տարեկան հանդիպումներ, Աւագների Խորհուրդ, խորհրդակցական կապեր և այլն) ապա ինչո՞ւ շարունակել Հ.Յ.Դ. կոչւել: Մենք շատ աւելի հեշտ կ'ապրենք, եթէ կատարենք Հ.Հ. իշխանութիւնների ցանկութիւնը՝ յայտարարելով, որ Դաշնակցութիւնը աւարտեց մէկ դարու իր հերոսական երթը 21րդ դարի շեմին և նրան այժմ Երևանի պատմական թանգարանում յատկացւում է ամենապատուաւոր տեղը: Այդ դէպքում նոյնիսկ բանտարկւած մեր ընկերները կարող են ազատ արձակւել և նրանց մասին ժողովուրդը կ'ասի, որ սրանք Հ.Յ.Դ. առասպելի վերջին նմոյշներն են, որոնց ներւում է իրանց մոլորութիւնը:

Այո, շատ կը թեթեւանայ մեր կեանքը, բայց հայ ժողովուրդը կը վերադառնայ հարիւր տարի առաջ ունեցած իր ծանր կեանքին ու ամէն ինչ ստիպւած կը լինի սկսելու նորից, որովհետեւ «մարդ անհատը ու մարդկային հաւաքա-

կանութիւնը – տոհմեր, ժողովուրդներ, ազգեր – միշտ ունեցած են ազատութեան և հաւասարութեան ձգտումը և պայքարած անոնց իրականացման ի խնդիր»: Փակում եմ մեր Ծրագրի վերջին էջը այն յստակ համոզւածութեամբ, որ բացի պատշաճեցումներից, ուրիշ ոչ մէկ բան պէտք չէ փոխել ո՛չ մեր Ծրագրում և ոչ էլ կազմակերպական սկզբունքներում:

Անշուշտ, Խորհրդային Հայաստան դարձւածքը պէտք է փոխարինել Հայաստանի Հանրապետութեամբ: Այնտեղ, որտեղ նշւում է, որ «հայ ազգի շուրջ 45 տոկոսը միայն կ'ապրի Խորհրդային Հայաստանում», կարելի է նշել, որ այժմ «կ'ապրի միայն 30 տոկոսը», իսկ մէկ միլիոն մարդ լքել է Հայաստանը նրա անկախանալուց յետոյ: Բայց այս փոփոխութիւնները կարող է կատարել որեւէ խմբագրական մարմին:

Միակ փոփոխութիւնը, որը իսկապէս անհրաժեշտ է և որը իրականում ոչ թէ փոփոխութիւն է, այլ Ծրագրի լրացում, դա վերջին էջի վրայ տեղ գտած տնտեսական պահանջների բաժինն է, որտեղ ասւած է, որ «Տնտեսական պահանջներու մանրամասնութիւնները և գործադրութեան միջոցառումները պիտի որոշուին և սահմանում ստանան այն ատեն միայն, երբ իրականացուած կ'ըլլան Հայաստանի ազատութիւնն ու անկախութիւնը»:

Չնայած նրան, որ դեռեւս իրականացւած չեն ո՛չ անկախութիւնը և ոչ էլ ազատութիւնը, այնուամենայնիւ տնտեսական պահանջների մանրամասնութիւնները մշակելու ժամանակը եկել է: Ու լաւ կը լինէր, որ այդ հարցերը մշակւէին նախքան արդիականացում, եթէ նա տեղի պիտի ունենայ:

1996

ԸՆԿԵՐՎԱՐ ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆԻ ՃԱՄԲՈՎ

Էդուարդ Յովհաննիսեան

Այսօրուայ մեր հասարակական-քաղաքական և տնտեսական կեանքում իրաւունք հասկացութիւնը ձեռք է բերել այնպիսի հեղինակութիւն, որ երբեմն թւում է, թէ իրաւունքը հասարակական ղեկավարման միակ աղբիւրն է, իսկ իրաւունքների պաշտպանութիւնը իրաւական հասարակարգ ստեղծելու միակ չափանիշը։

Սակայն իրաւունքն ունի այնպիսի ներքին հակադրութիւններ, որոնք բացառում են իրաւունք հասկացութեան յստակ սահմանումը և լայն դաշտ են բացում տարբեր վէճերի ու մեկնաբանութիւնների համար։

Գոյութիւն ունի, օրինակ, սեփական ունեցւածքը սեփական կամքով տնօրինելու իրաւունքը և, օգտւելով այդ իրաւունքից մենք մեր ամբողջ ունեցւածքը ժառանգում ենք եկեղեցուն։ Սակայն այդ քայլով մենք զրկում ենք ազգականներին մեր ունեցւածքը ժառանգելու իրաւունքից։ Պետութիւնը օգտւում է մարդկանց պատերազմի դաշտ ուղարկելու կամ մահապատժի ենթարկելու իր իրաւունքից, սակայն զրկում է մարդկանց ապրելու իրաւունքից։ Իրաւունքով օժտւած են ոչ միայն մարդիկ, այլ նաեւ՝ պետութիւններ, ազգեր, կրօններ, միութիւններ, ընկերութիւններ և այլ հաւաքականութիւններ, որոնց իրաւունքները յաճախ հակասում են անհատի իրաւունքներին։

Այս հակասութիւնների էութիւնը պարզելու և իրաւունքի բնագաւառում ճիշտ կողմնորոշւելու համար անհրաժեշտ է նախ և առաջ պարզել, թէ որտեղի՛ց է գալիս իրաւունքը։

Իրաւունքի ծագման առաջին և գուցէ ամենահիմնական մօտեցումն այն է, որ բոլոր բնական էութիւնների հետ միասին ծնւում է նաեւ նրանց իրաւունքը։ Այն ամէնը, ինչ ստեղծւել է ոչ թէ մարդու կողմից, այլ՝ ծնւել է բնութեան կամքով, ծնւում է իրաւունքի հետ միասին, որը այդ էակի անբաժանելի մասն է, ինչպէս նրա մարմնական յատկութիւնները։

Այդ տեսութեան համաձայն, մարդիկ, ազգերը և նոյնիսկ կենդանիներն ու բուսականութիւնը ունեն գոյատեւելու իրաւունք։ Եւ այդ իրաւունքն ունի երեք հիմնական յատկութիւններ.

1.- Այդ իրաւունքը գոյութիւն ունի մեզանից անկախ և ամենեւին էլ չի շնորհւում մեզ իշխանութիւնների կողմից։ Ընդհակառակը, այդ իրաւունքը տալիս է մեզ պետութեան դէմ պայքարելու իրաւունք, եթէ վերջինս չի յարգում մեր բնական իրաւունքները։

2.- Բնական իրաւունքը տարածւում է բոլոր մարդկանց, ազգերի ու հաւաքականութիւնների վրայ հաւասարաչափ: Այսինքն՝ ոչ մի մարդ և ոչ մի ազգ իրաւունքների բնագաւառում չի կարող ունենալ առաւելութիւն:

3.- Բնական իրաւունքի դրսեւորումը կապ ունի ազատութեան հետ: Այդ իրաւունքը ոչ թէ պարտաւորութիւնների ցուցակ է, այլ ազատութիւնների սահմանների որոշում, որը տրւած է ոչ մեր, այլ բնութեան կողմից: Բայց բնական իրաւունքի այս պարզ մօտեցումը առաջացրեց մի շարք բարդութիւններ:

Առաջին բարդութեան մասին խօսեց անգլիացի փիլիսոփայ և քաղաքական գործիչ Ջոն Լոկը, որը նշեց, որ ազատութեան և իրաւունքի կապը ամենեւին էլ չի նշանակում, որ ազատութիւնը ինքնակամութիւն չէ և մարդու բնական ձգտումները ամենեւին էլ չեն հիմնաւորւում բնական իրաւունքով: Նա ասաց, որ բնական իրաւունքը ցոյց է տալիս արժանւոյն կերպով ազատութեամբ օգտւելու ճանապարհը:

Բնական իրաւունքների դէմ երկրորդ առարկութիւնը եկաւ նոյնպէս Անգլիայից, որտեղ Էդմոնդ Բեռկը պնդում էր, որ անգլիացիների բնական իրաւունքները բխում են ոչ թէ բնութիւնից, այլ Անգլիայի պատմութիւնից, և այդ իրաւունքներն անգլիացիների իրաւունքներն են, բայց ոչ ուրիշ ժողովուրդների, որոնց պատմութիւնը թելադրում է այլ իրաւունքներ:

Այս նոր մօտեցումը խախտում էր իրաւունքի հաւասարութեան թեզը և դուռ էր բացում իրաւունքը շահագործելու համար: Աւելի՛ն, առեւտրական և արդիւնաբերական կապերը զարգացնելու գործում եւրոպացիները և ամերիկացիները հիմնական գործակատարներ էին և առաջ քաշւեց այն թեզը, թէ արդեօք, համամարդկային արժէք հռչակւած իրաւունքը արեւմտեան քաղաքակրթութեան ծնունդը չէ՞: Եւ, արդեօք, արեւմտեան քաղաքակրթութեան իրաւունքը համամարդկային չափանիշներով աւելի բարձր մակարդակի վրայ չէ՞, քան այլ մշակոյթների կողմից ծնւած իրաւունքները:

Պարզւեց, որ իրաւունքների համեմատութեան համար բացակայում է արժէքաբանական հողը: Արեւմտեան իրաւունքը իր հիմնական շեշտը դնում է անհատի իրաւունքների վրայ, մինչդեռ այլ քաղաքակրթութիւններ անհատի իրաւունքները սահմանափակում են հաւաքականութիւնների իրաւունքներով:

Անհատական սեփականութեան մեծարումը, օրինակ, եւրոպական սկզբունք է, որը հակասում է հասարակական սեփականութեան սկզբունքին, բայց որը ճանաչւում է շատ ուրիշ մշակոյթների կողմից: Այս տարակարծութիւնները հարթելու համար Երեմիա Բենթամը առաջարկեց, որ իրական իրաւունքը միայն այն է, որը ձեւակերպւած է պետութեան կողմից: Իսկ թէ ո՛ր իրաւունքները պէտք է ձեւակերպի պետութիւնը, դրա համար Բենթամը առա-

ջարկեց հետեւեալ սկզբունքը. պետութիւնը պիտի ճանաչի միայն այն օրէնքները, որոնք օգտակար են հասարակութեան համար: Այս սկզբունքը ձեւականօրէն մերժուեց, սակայն իրականում ընդունուեց և մինչեւ այսօր այն գործում է, և առանձին անհատներ ու հաւաքականութիւններ զոհւում են յանուն ընդհանուր բարօրութեան:

Սա արդէն բնական իրաւունք չէր, քանզի այն բխում էր ոչ թէ բնութիւնից, այլ հասարակութեան շահերից: Սակայն սա էլ վերջին հարուածն էլ չէր, որ իջաւ բնական իրաւունքի գլխին: 19րդ դարում բնական իրաւունքը փոխարինուեց մարդու իրաւունքներով: Այս փոփոխութեան էութիւնը կարելի է ամփոփել այսպէս:

Բնական իրաւունք հասկացութիւնը ծնում է ինքնապաշտպանութեան գաղափարից, ուրիշներից պաշտպանուելու անհրաժեշտութիւնից, մինչդեռ մարդու իրաւունքները ծնւում են մարդու պահանջներից և շահերից, որոնք պէտք է բաւարարեն նրա լիարժէք կեանքը ապահովելու համար: Սակայն կեանքի նկատմամբ պահանջները փոփոխական են, ուստի փոփոխական են նաեւ իրաւունքները, և այսօր մարդիկ ունեն այնպիսի իրաւունքներ, որոնց մասին չէին կարող երազել նրանց հայրերը: Անգլիացի Ջոն Ռէյնը առաջ քաշեց այն սկզբունքը, որ պետութիւնը պարտաւոր է բաւարարել մարդկանց փոփոխական պահանջները, որովհետեւ եթէ այդ բանը տեղի չունենայ, ապա անփոփոխ օրէնքը կը սկսի ճնշել մարդու փոփոխուած պահանջների վրայ:

Իրաւապաշտպան շարժումը զարգացաւ համամարդկային իրաւունքների պաշտպանութեան ուղղութեամբ և հաւաքականութիւնները, առաջին հերթին՝ ազգութիւնները, մնացին անպաշտպան: Մինչեւ այսօր միջազգային փաստաթղթերում և Մ.Ա.Կ.ի որոշումներում բացակայում են ազգերը պաշտպանող արժէքները:

Հ.Յ.Դաշնակցութիւնը՝ որպէս ընկերվարական կուսակցութիւն, որի համար ազգը նոյնքան բնական ու հիմնական արժէք է, որքան անձը, ընկերվարական արդարութեան գաղափարը պէտք է կարողանայ տարածել նաեւ ազգերի փոխ-յարաբերութիւնների վրայ՝ նպատակ ունենալով մշակել և Ընկերվար Միջազգայնականի ճամբով ընդունել տալ Ազգերի Իրաւունքների Համընդհանուր մի Յայտարարագիր:

Նման փաստաթուղթ անհրաժեշտ է այսօրւայ միջազգային հասարակութեանը, քանզի հաւաքականութիւնները պաշտպանող գոյութիւն ունեցող բոլոր արժէքները փաստօրէն պաշտպանում են հաւաքականութեանը պատկանելու Մարդու, բայց ո՛չ հաւաքականութեան իրաւունքը: Այսինքն՝ օրէնքը

պաշտպանում է մեր հայ լինելու իրաւունքը, բայց ո՛չ հայ ժողովրդի ազգային իրաւունքները։

Մինչդեռ բազմազգ մեր աշխարհում առանց ազգային իրաւունքների պաշտպանութեան սկզբունքների անկարելի է կարգաւորել ազգային փոխյարաբերութիւնները, ինչպէս մենք դրանում համոզուեցինք Ղարաբաղի, Հարաւսալափայի, իռլանդացիների և շատ ուրիշ ազգային հարցերում։

Խօսելով այս հարցի և այս հարցում մեր անելիքների մասին, անհրաժեշտ է նշել, որ հաւաքականութիւնների պաշտպանութեան հարցում, այնուամենայնիւ, եղել են նախաձեռնութիւններ, առաջարկութիւններ ու բանավէճեր։

1791ի Օգոստոսի 27ին յեղափոխական Ֆրանսիայի Ազգային Ժողովը ընդունեց «Մարդու և քաղաքացու իրաւունքների յայտարարագիր»ը, որի երրորդ կէտում ասւած էր.- «Ինքնիշխանութեան աղբիւրը ազգի ներսում է, և ոչ մէկ մարդ կամ կուսակցութիւն չի կարող ձեռք բերել իշխանութիւն, եթէ այն չի բխում այդ աղբիւրից»։ Սա նշանակում էր, որ ազգային ինքնիշխանութիւնն աւելի կարեւոր է, քան անհատի ազատութիւնը։ Սակայն այս հռչակագիրը տապալուեց ֆրանսիական Յեղափոխութեան հետ միասին։

Պէտք է ասել, որ մարդու բնական իրաւունքների գոյութեան դէմ էին արտայայտւում անգլիական քաղաքական մտքի սիւներ Իւմը, Բերկը, Բենտամը, Օստինը և ուրիշներ, որոնք ճանաչում էին բնական իրաւունքների գոյութիւնը, սակայն վերագրում էին այդ իրաւունքները ոչ թէ անձին, այլ ազգին։ Այս տեսակէտը առանձնապէս մեծ պաշտպանութիւն գտաւ Գերմանիայում։

1848ին գերմանական ազատականները ազգայնականների հետ միասին հռչակեցին մի յայտարարագիր, որտեղ հեղինակները շեղւում էին մարդկանց անհատական իրաւունքները պաշտպանելու սկզբունքից և պաշտպանութեան տակ էին առել «գերման ժողովրդի իրաւունքները»։

Իսկ կէս դար անց փիլիսոփայ Բրեդլին գրեց.- «Անձի իրաւունքները մեր ժամանակներում (1894) լուրջ ուշադրութեան արժանի չեն։ Հասարակութեան բարեկեցութիւնն է, որ արժանի նպատակ է և վերջնական չափանիշ։ Անհրաժեշտ է բացարձակացնել հասարակութեան բարոյական իշխանութիւնը ամէն մի անձի վրայ։ Հասարակութեան ամէն մի անդամի լաւ օգտագործումը հասարակութեան շահերի համար՝ տւեալ հասարակութեան իրաւունքն է և պարտականութիւնը»։

Այս հարցում ազգայնականները և ընկերվարականները համամիտ են, այսինքն՝ այն տեսակէտը ունեն, որ ընկերային և ազգային շահերը որոշ չափով սահմանափակում են անձի ազատութիւնը և իրաւունք ունեն պարտադրել իրենց քաղաքացիներին ու անդամներին այդ սահմանափակումը։

Հ.Յ.Դաշնակցութիւնը՝ որպէս ազգային և ընկերվարական կուսակցութիւն, միշտ կարողացել է համադրել մարդու, աշխատաւորի և ազգի շահերը ու պաշտպանել նրանց իրաւունքները։

Ուշագրաւ է Հ.Յ.Դ Պոլսոյ Կենտրոնական Կոմիտէի յայտարարագիրը, որը 1897ի Օգոստոս ամսին յանձնուեց եւրոպական վեց պետութիւններին։ Այնտեղ մասնաւորապէս ասւած էր.- «Մենք կը պահանջենք, որ չանարգուի հայի պատիւը, չպղծուին անոր սրբութիւնները, չյափշտակուի անոր դառն քրտինքի արդար արդիւնքը ու տիրող բռնութեան ու անսանձ կամայականութեան փոխարէն օրէնքը միայն թագաւորէ։ Մենք կը պահանջենք ինչ որ անհրաժեշտ է, լոկ իբրեւ մարդու ապրելու համար և երբեք չպիտի դադարենք գործելէ, մինչեւ չիրականանան մեր այս արդար, իրաւացի և մեր նահատակ եղբայրներու արիւնով նուիրագործուած պահանջները»։

Այս յայտարարութիւնը պաշտպանում է թէ՛ «իբրեւ մարդ ապրելու» իրաւունքը, թէ՛ աշխատաւորի «դառը քրտինքով վաստակածը» տնօրինելու իրաւունքը և թէ ազգի իրաւունքը «սեփական սրբութիւնները» պահպանելու հարցում։ Աւելի՛ն Հ.Յ.Դ.-ն ոչ միայն ներկայացնում է իր պահանջները, այլ վստահեցնում է, որ պայքարելու է այդ պահանջներն իրականացնելու համար։

Հ.Յ.Դ.ի ամբողջ պատմութիւնը այդ արժէքների համար պայքարելու պատմութիւնն է։ Սակայն, ինչպէս տեսնում ենք, այդ պայքարը աւարտւած չէ։ Ինչպէս արդէն ասացինք, ազգային իրաւունքների պաշտպանութեան միջազգային օրէնքներ կամ գոյութիւն չունեն ընդհանրապէս, կամ ազգային ինքնորոշման իրաւունքի նման այնքան անորոշ են, որ նրանց կարելի է օգտագործել ինչպէս կը ցանկանայ օգտագործողը։

Ինչպէս ասում էր Պղատոնը՝ «բոլոր տեսակի իշխանութիւնները օրէնքները հաստատում են իրենց օգտին։ Ժողովրդավարականները՝ ժողովրդավարական օրէնքները, իսկ բռնապետները՝ բռնապետական օրէնքները»։

Որպէսզի իշխանութիւնները զրկւեն իրենց օգտին օրէնքներ հռչակելու իրաւունքից, անհրաժեշտ է հռչակել ազգային իրաւունքների պաշտպանութեան հիմնական սկզբունքները, ինչպէս հռչակւած և ընդունւած են մարդու իրաւունքների պաշտպանութեան հիմնական սկզբունքները։ Այս հարցում Հ.Յ.Դ.ն, իր էութեան և աւանդութիւնների համաձայն, շատ բան ունի անելու։

Նախ և առաջ նա պէտք է պատրաստի «Ազգային Իրաւունքների Համընդհանուր Յայտարարագիր» փաստաթղթի նախագիծը և հաստատի այն իր Ընդհանուր Ժողովում։ Ապա այդ նախագիծը Հ.Յ.Դ.ի պատգամաւորը պէտք է ներկայացնի Ընկերվար Միջազգայնականի համագումարին և տանի աշխատանք այդ փաստաթուղթն ընդունելու ուղղութեամբ։ Դրանից յետոյ Ընկերվար Միջազգայնականը պիտի իր որոշումը ներկայացնի Մ.Ա.Կ.ին։

Այս ճանապարհը կտրելու համար անհրաժեշտ է քրտնաջան աշխատանք տանել տարբեր միջազգային կազմակերպութիւնների պատգամաւորների հետ, մանաւանդ՝ պետութիւնների ներկայացուցիչների շրջանակներում:

Սակայն այդ աշխատանքը տանելու համար անհրաժեշտ է մշակել ապագայ հռչակագրի հիմնական սկզբունքները, որոնք կարող են քննարկուել, օրինակ, հետեւեալ դրոյթների հիման վրայ.

1.- Բոլոր ազգերը բնական և հիմնական արժէքներ են, որոնք ծնուել են ազատ և իրենց բնական իրաւունքների մէջ հաւասար:

2.- Ազգերը հաւաքական անհատականութիւններ են, և իրենց փոխ-յարաբերութիւնները պէտք է լինեն արդար ու եղբայրական:

3.- Ամէն ազգ ունի կեանքի, ազատութեան և ինքնորոշման իրաւունք:

4.- Ոչ մէկ ազգ չի կարող լինել ուրիշ ազգի ստրուկ և ոչ մէկ ազգի չի կարելի պարտադրել ապրելու կամ մշակոյթի որեւէ ձեւ:

5.- Բոլոր ազգերը իրաւունք ունեն վերականգնելու իրենց ոտնահարուած իրաւունքները միջազգային դատարանների և այլ ատեանների ճամբով:

6.- Ամէն մի ազգ ցանկացած պետութեան սահմաններում ունի իր ազգային արժէքները պահպանելու և դրանք զարգացնելու ազատութիւններ, եթէ նրանք չեն հակասում տւեալ պետութեան Սահմանադրութեանը:

7.- Ամէն ազգ իրաւունք ունի մասնակցելու իր երկրի կառավարմանը ազատօրէն ընտրուած պատգամաւորների միջոցով:

8.- Ազգի կամքը արտայայտում են ազգի կողմից ընտրուած ղեկավար մարմինները:

9.- Այն տարածութիւնը, որի սահմաններում ապրում է ազգը, պատկանում է ազգին, և նրան ոչ մէկը չի կարող բռնի ուժով արտաքսել այդ տարածութիւնից:

10.- Ազգի նկատմամբ գործադրուած ցեղասպանութիւնը թէ՛ խաղաղ և թէ պատերազմի պայմաններում յանցագործութիւն է, որը պիտի դատապարտւի միջազգային իրաւունքի կողմից:

11.- Ազգի նկատմամբ գործադրող հետեւեալ արարքները նկատւում են մարդկութեան դէմ կատարուած յանցագործութիւններ.

ա.- Ազգի անդամների ֆիզիկական ոչնչացումը.

բ.- Ազգի անդամների նկատմամբ մարմնական և հոգեբանական վնասւածքների հասցնումը.

գ.- Ազգի ապրելու պայմաններին միտումնաւոր վնաս հասցնելը.

դ.- Ծննդաբերութեանը վնաս հասցնել.

ե.- Տւեալ ազգի մանուկներին մէկ ուրիշ ազգի մէջ բռնի տեղափոխումը.

զ.- Ազգի դէմ քարոզչութիւնը.

է.- Ազգային տարածութեան ամբողջ կամ մէկ մասի կցումը մէկ ուրիշ պետութեան։

Այս սկզբունքների վրայ կարող են աւելանալ ուրիշները կամ ջնջւել նշւածները, բայց «Ազգային Իրաւունքների Պաշտպանութեան Յայտարարագիր»ը անհրաժեշտ է բոլոր ազգերին և թող այս անգամ նախաձեռնութիւնը գայ հայերից։

1998

Ի՞ՆՉ Կ'ԱՆԷՐ ԸՆԿԵՐ ՀՐԱՅՐԸ

Է. Յովհաննիսեան

Եթէ կեանքից հեռացած մի անձնաւորութեան բացակայութիւնը խիստ զգացւում է կեանքը շարունակողների մօտ, դա նշանակում է, որ կեանքի շարունակութեան մէջ մի ինչ որ բան ճիշտ չէ, որ կան չլուծուած հարցեր և այդ հարցերը չեն լուծւում, որ կուսակցական կամ հասարակական կեանքում կան թերութիւններ, որոնք չեն յաղթահարւում։ Ու հասարակութեան մօտ ստեղծւում է այն տպաւորութիւնը, որ եթէ Հրայրը լինէր, նա կը յաղթահարէր բոլոր այդ խոչընդոտները ու կը լուծէր բոլոր չլուծուած հարցերը։

Անշուշտ, նման մօտեցումը չափազանցութիւն է, նամանաւանդ մեր կուսակցութեան համար, որը երբեք չի ղեկավարւել մէկ անձի կամքով։ Բայց դրա հետ միասին ճշմարտութիւն է, որ մէկ անձը իր շրջապատով և համախոհներով կարողացել է ստեղծել մթնոլորտ, որի մէջ էլ ձեւակերպւել է կուսակցութեան քաղաքական ուղին։ Խօսքը, անշուշտ, Ընդհանուր Ժողովի որոշումների մասին չէ, որոնք պարտադիր են բոլոր կուսակցական մարմինների և կուսակցականների համար, խօսքը գործադիր մարմնի մէջ ստեղծուած մթնոլորտի մասին է, որտեղ ձեւաւորւում են նպատակին հասնելու միջոցները և մարտավարական փոփոխութիւնները, որոնք երբեմն անհրաժեշտ է կատարել արագ կարգով, առանց սպասելու օրէնսդրական մարմինների որոշումներին։

Ահա այս պատճառով է, որ մենք այսօր սուր կերպով զգում ենք ընկ. Հ. Մարուխեանի բացակայութիւնը։ Նա իսկապէս կարողացել էր Դաշնակցութեան ղեկավար շրջանակներում ստեղծել այնպիսի մթնոլորտ, որտեղ ինքնաբերաբար ստեղծւել էր կուսակցութեան ղեկավարութեան միակամութիւնը։ Ստեղծուած կացութիւնը լաւագոյնս հասկանալով ու իր հեղինակութեամբ՝ նա կարողանում էր արագ փոփոխութեան ենթարկել կուսակցութեան մարտավարութիւնը, ինչը համոզմունքով դառնում էր գործադիր մարմնի միասնական կամքը։

Եւ այսօր Հրայրի յիշատակին նւիրուած տողերը լաւագոյն յուշարձանը կը լինեն նրա համար, եթէ մենք կարողանանք մեր չլուծուած խնդիրները դիտարկել Հրայրի բացակայութեան տեսանկիւնից։ Այսինքն՝ փորձել պարզել, թէ ինչո՞ւ ենք մենք այդքան սուր զգում նրա բացակայութիւնը, թէ ի՞նչ կ'անէր նա, եթէ այսօր կենդանի լինէր։

Ի՞նչ կ'ասէր ընկեր Հրայրը այսօրւայ խնդիրների մասին։

Ես կարծում եմ, որ մեր ներքին, զուտ կուսակցական խնդիրների մէջ կայ մի խնդիր, որը լուծուած չէ, և դա աշխատանքի բաժանման խնդիրն է, կուսակցութեան տնտեսական, քաղաքական, կազմակերպչական, պետական, արտաքին կապերի և մնացած բոլոր հարցերով զբաղւում են նոյն անձնաւորութիւնները և ճիշտ դրա համար շնչելու ժամանակ չունեն: Ժամանակին սփիւռքահայ կուսակցական գործիչները այդ նոյն վիճակում էին և, Դաշնակցութեան աւանդոյթների համաձայն, մէկ օր դպրոցի ուսուցչի պարտականութիւն էին կատարում, միւս օրը՝ ակումբի վարիչի պաշտօն էին գրաւում, երրորդ օրը՝ զէնքը ձեռքին պահակութիւն էին անում, իսկ մէկ ուրիշ օր թերթի խմբագիր էին դառնում:

Հրայրը հասկացաւ, որ մեր ժամանակներում այդ կառոյցը չի կարող արդիւնաւէտ լինել և կատարեց աշխատանքի բաժանում տարբեր յանձնախմբեր ստեղծելու ճանապարհով: Եւ երբ մենք ունեցանք Հայ Դատի պաշտպանութիւնը ապահովող, կրթութեան, մշակոյթի, մարզական և այլ յանձնախմբեր, անմիջապէս զգացւեց աշխատանքի բաժանման առաւելութիւնը: Տարիներ շարունակ ես եղել եմ Հայ Դատի Կենտր. Յանձնախմբի անդամ և կարող եմ ասել, որ ընկ. Հրայրը միայն հիմնադրման օրը ներկայ գտնւեց յանձնախմբի նիստին, իսկ մնացած նիստերին ներկայ չէր և յանձնախմբի որոշումները յաճախ դառնում էին Բիւրոյի որոշում:

Այս կառոյցի պէտքը մենք ունենք այսօր, նամանաւանդ Հայաստանի պայմաններում, որտեղ կուսակցութեան գործունէութիւնը այնքան բազմակողմանի է, որ առանց յանձնախմբերի գործելակերպ որդեգրելու, անկարելի է լուծել մեր առջեւ կանգնած բազմաթիւ հարցերը: Բաւական է նշել, որ Հայաստանում բացակայում է Հայ Դատի գրասենեակ, ուստի չկայ կապը Հայ Դատի կենտրոնական գրասենեակի հետ: Եւ այստեղ ես զգում եմ ընկեր Հրայրի բացակայութիւնը:

Մեր առջեւ կանգնած այսօրւայ խնդիրների մէջ գուցէ ամենակարեւորը Հայրենիք-Սփիւռք փոխ-յարաբերութիւնն է, նախ մեր ներքին կուսակցական մօտեցումների բնագաւառում, ապա՝ պետական քաղաքականութեան ոլորտում:

Ընկեր Հրայրը շատ լաւ հասկանում էր, որ կուսակցական մակարդակի վրայ Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւնների ռազմավարութեան մէջ որեւէ փոփոխութիւն տեղի չի կարող ունենալ, որ Սփիւռքը մեզ համար ժամանակաւոր երեւոյթ է, եւ նրա հետ յարաբերութիւնների առանցքը անցնում է Հայաստանի միջով, որ Սփիւռքի գոյութիւնը պայմանաւորւած է Հայաստանով և նրա շահերին ծառայելով: Չի կարող Սփիւռքը ճանաչւել ինքնուրոյն միաւոր,

անջատւել նրանից և կամ էլ նկատւել կուսակցական շրջաններից մէկը, որը ոչնչով չի տարբերւում մեր Յունաստանի կամ Լիբանանի Կ.Կ.ից:

Ընկեր Հրայրը իր անձնական օրինակով, Հայաստան տեղափոխւելու ձգտումով՝ ցոյց տւեց, որ կուսակցութեան հայաստանակենտրոնութեան մէջ որեւէ կասկած չունի: Դժբախտաբար, այսօր Սփիւռքի ինքնուրոյնութեան ցեցը ընկել է մեր մէջ, և նոյնիսկ պետական մակարդակի վրայ մենք չենք կարողանում ողջ հայութեան հայաստանակենտրոնութիւնը դարձնել պետական քաղաքականութիւն: Եւ այդ կարեւորագոյն պետական քաղաքականութիւնը մինչեւ այսօր մշակւած չէ: Ու այստեղ էլ ես շատ եմ ափսոսում, որ ընկեր Հրայրը այլեւս մեզ հետ չէ, որովհետեւ նրա հետ ունեցած զրոյցներից ես հասկացայ այս հարցի շուրջ նրա մօտեցումը, որը ես կը փորձեմ շարադրել իմ ընկալմամբ և իմ յիշողութեամբ:

Հայաստանի և հայկական Սփիւռքի փոխ-յարաբերութիւնները պէտք է մշակւեն այնպէս, որ դրանք նպաստեն՝

1. Համահայկական պետականութեան ստեղծմանը և հայ ազգի վերածնունդին:
2. Հայաստանի Հանրապետութեան արտաքին քաղաքականութեան մշակմանը:
3. Համահայկական խնդիրների լուծմանը:
4. Հայաստանից դուրս գտնւող հայկական զանգւածների ազգապահպանմանը և Սփիւռքի գոյութեան իմաստաւորմանը:

Այսպիսով, Հայրենիք-Սփիւռք փոխ-յարաբերութիւնները հայ ազգային ճակատագրի կերտման գործօններից մէկն է, ուստի պիտի լինի այնքանով նպատակասլաց, որքանով նպատակասլաց է կերտւում մեր ժողովրդի ճակատագիրը:

Սփիւռք-Հայրենիք փոխ-յարաբերութիւնները հաւանաբար պիտի խարըսխւեն մի շարք սկզբունքների վրայ, որոնցից հետեւեալները համարում ենք ամենակարեւորները:

1.- Հայրենիքը և Սփիւռքը կազմում են մէկ ամբողջութիւն կամ հաւաքականութիւն և նրանց միջեւ փոխ-յարաբերութիւնները չեն կարող լինել տարբեր նպատակներ և տարբեր շահեր ունեցող միաւորների համագործակցութիւն: Նման համագործակցութիւնը, որքան էլ սերտ լինի, չի կարող նկատւել մէկ ամբողջութեան տարբեր հատւածների միջեւ մէկ նպատակի հասնելու համար պարտականութիւնների բաժանում, առանց որի մեր ազգային միասնութիւնը կորցնում է իր իմաստը:

2.- Սփիւռքը և Հայրենիքը համահայկական հարցերի լուծման համար պէտք է ունենան մէկ ղեկավարութիւն: Եթէ որեւէ հաւաքականութիւն ունի

միայն բարոյական, գաղափարական կամ մշակութային միասնականութիւն, բայց չունի միասնական ղեկավարութիւն, ապա դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ ակումբ, ուր կարելի է ազատօրէն մտնել և նոյնքան ազատօրէն դուրս գալ։

3.- Սփիւռք-Հայրենիք փոխ-յարաբերութիւնների ղեկավարութիւնը պէտք է իրականացւի Հայաստանից, սակայն բացառւած չէ, որ հակառակ պարագաներում այն կարող է տեղափոխւել Սփիւռք։

4.- Բոլոր սփիւռքահայ համայնքները պէտք է հաւատարիմ մնան իրենց ապրած երկրների օրէնքներին, եթէ նոյնիսկ դրանք հակասում են հայկական իշխանութիւնների թելադրանքներին։

Հիմնական նկատելով այս սկզբունքները՝ փորձենք անդրադառնալ նրանց աւելի մանրամասնօրէն։

Ազգը առանձին անձերի գումար չէ, ուստի ազգի կամքը և նրա նպատակները փոփոխութեան ենթարկելու համար բաւական չէ առանձին անձերի կամքի վրայ ազդող միջոցների կիրառում։ Եթէ Սփիւռքը և Հայրենիքը առանձին-առանձին ունեն իրենց «ես»ը, ապա այդ «ես»երի վրայ ազդելով չէ, որ պիտի հնարաւոր դարձւի «մենք»ի ստեղծումը, քանզի «մենք»ը «եսեր»ի գումար չէ։ Ուրեմն պէտք է գտնել այն ընդհանուրը, որը որոշւում է ոչ թէ «եսեր»ի կամքի գումարով, այլ ընդհակառակը՝ «մենք»ի կամքը «եսեր»ին պարտադրելով։

Այդ ընդհանուրը պարունակում է իր մէջ համազգային նպատակին հասնելու ձգտում, որը Դաշնակցութեան համար ձեւակերպւած է որպէս Միացեալ, Ազատ ու Անկախ Հայաստանի կերտում, իսկ ոչ-կուսակցական շրջանակների համար՝ համահայկական արդար պետականութեան կերտում, որը հնարաւոր կը դարձնի հայ ազգի վերածնունդը և բարգաւաճումը։ Այս երկու նպատակների մէջ մեծ տարբերութիւն չկայ։ Նպատակի առաջին ձեւակերպումը կրում է կուսակցական բնոյթ, որը, ինքնըստինքեան, ենթադրում է նպատակի քաղաքականացումը (պետութեան սահմաններ, պետութեան վարչակարգի յստակեցում, նպատակին հասնելու միջոցներ), մինչդեռ երկրորդ ձեւակերպումը ազատ է թողնում այդ հարցերի լուծման դաշտը։ Ահա թէ ինչու, երբ մենք խօսում ենք Սփիւռքի և Հայրենիքի փոխ-յարաբերութեան մասին, այդ խնդիրը չենք տարածում Սփիւռքի և Հայրենիքի կուսակցական շրջանակների վրայ, որոնց համար ամբողջութիւն կազմելու հարց չկայ, այդ ամբողջութիւնը արդէն գոյութիւն ունի նպատակի և կուսակցական որոշումների մէջ։ Խօսքը ոչ կուսակցական հատւածի մասին է, որը, ինչպէս ասացինք, ունի վարքագիծ ճշտելու հարց։ Եւ միասնութեան տանող այդ վարքագիծը կարող է ստեղծւել ընդհանուր տուրք վճարելու, ընդհանուր ազգային մշակոյթ կերտելու, ընդհանուր քաղաքական նպատակների ծառայելու ճամբով։

Յիրաւի, մէկ համակարգի պատկանելու առաջին վկայութիւնը համակարգին տուրք վճարելն է, որը պատկանում է բոլորին, չնայած, ոչ բոլորն են վճարում հաւասարաչափ: Համահայկական այդ տուրքը օգտագործելու է համահայկական ղեկավարութեան թելադրանքով: Սակայն հայ ժողովուրդը այսօր այդ համահայկական իշխանութիւնը չունի, ուստի Հայրենիքի և Սփիւռքի փոխ-յարաբերութիւնները մշակելու համար կան երեք ճանապարհներ.

Առաջին. ստեղծել Սփիւռքում համասփիւռքեան իշխանութիւն, որը բանակցութիւնների ճանապարհով կը ճշտի իր յարաբերութիւնները Հայաստանի իշխանութիւնների հետ: Այդ դէպքում սփիւռքահայի տուրքը վճարելու է այդ սփիւռքահայկական իշխանութիւններին և տնօրինելու է նրա կողմից: Այս ճանապարհը անընդունելի է, նախ, որովհետեւ իրականանալի չէ, իսկ բացի դրանից, ինչը շատ աւելի կարեւոր է, չի համապատասխանում Սփիւռքի և Հայրենիքի միասնութեան այն հիմնական սկզբունքին, որը հաստատում է Սփիւռքի և Հայրենիքի մի ամբողջութիւն կազմելու իրողութիւնը:

Երկրորդ. ճանապարհը համահայկական իշխանութեան ստեղծումն է, որը պէտք է զբաղւի համահայկական խնդիրներով, այդ թւում նաեւ՝ Հայաստանում: Այս ճանապարհն էլ բաւականին բարդ է, քանզի անխուսափելի կը դառնան բախումները և հակասութիւնները Հայաստանի իշխանութիւնների և այդ համահայկական իշխանութեան միջեւ:

Միակ հնարաւոր ելքը, հաւանաբար, կայանում է նրանում, որ համահայկական իշխանութեան պարտականութիւնը դրւի Հայաստանի կառավարութեան վրայ: Իսկ միայն այն դէպքում, երբ Հայաստանի իշխանութիւնները հրաժարւում են հայ ազգային շահերը պաշտպանելուց, այդ պարտականութիւնը նրանցից խլւում է:

Ինչպէ՞ս կարելի է իրականացնել այդ մօտեցումը:

Հայաստանի կառավարութեան մէջ ստեղծւում է Սփիւռքի նախարարութիւն, որը բոլոր մնացած նախարարութիւնների հետ մշակում է սփիւռքահայութեանը վերաբերող քաղաքականութիւնը: Այդ քաղաքականութիւնը մշակոյթի, Հայ Դատի, տնտեսութեան, գիտութեան, քաղաքական ռազմավարութեան և այլ բնագաւառներում պարտադիր է բոլոր այն հայերի համար, որոնք վճարում են իրենց համահայկական տուրքը, Սփիւռքի նախարարութեան ճամբով, Հայաստանի կառավարութեանը: Սփիւռքահայութեան այդ զանգլուածը ճանաչւում է որպէս Հայաստանի արտասահմանեան ներկայացուցիչների զանգւած և ճիշտ նրանք են, որոնց, համապատասխան օրէնք ընդունելուց յետոյ, պիտի շնորհւի Հայաստանի քաղաքացիութիւն: Այդ զանգւածի ազգային կեանքի կազմակերպական պատասխանատուութիւնը և պարտականութիւնը՝ Սփիւռքի նախարարութեան ճամբով ընկնելու է Հայաստանի կա-

ռավարութեան վրայ, որը այս աշխատանքի հետ կապւած ծախսերը կատարելու է համահայկական տուրքից ստեղծւած բուջէից: Այդ Սփիւռքը այլեւս կարող է կոչւել Հայաստանի Սփիւռք, քանզի նա իր էութեամբ կազմելու է Հայաստանի շարունակութիւնը, գործելու է Հայաստանի համար և օգտւելու է Հայաստանից, կամ՝ աւելի ճիշտ, վայելելու է նրա հովանաւորութիւնը:

Անշուշտ, գոյութիւն կ'ունենայ մի զանգւած, և գուցէ այդ զանգւածը շատ աւելի մեծ լինի, որը կը հրաժարւի Հայաստանի շարունակութիւն լինելու կարգավիճակից և կը ցանկանայ պահպանել իր անկախութիւնը Հայաստանից:

Բայց այդ զանգւածը այլեւս չի կարող համարել, որ մաս է կազմում հայ ժողովրդի ճակատագրին, առաւելապէս չի կարող ձեռք բերել Հայաստանի քաղաքացիութիւն և չի կարող վայելել Հայաստանի կառավարութեան հովանաւորութիւնը:

Հայրենիքը, անշուշտ, կը համագործակցի նաեւ այդ զանգւածի հետ, սակայն այն մակարդակի վրայ, ի՛նչ մակարդակի վրայ համագործակցում է օտարների հետ:

Եթէ Սփիւռքում բացակայի Հայաստանի շարունակութիւն կազմող զանգւածը, եթէ այնտեղ գոյութիւն չունենայ մի զանգւած, որի քաղաքական և հասարակական վարքագիծը ենթարկւում է Հայաստանի կառավարութեան թելադրանքներին, էլ ինչ իմաստ ունի խօսել երկու քաղաքացիութեան, հայ ժողովրդի ընդհանուր ճակատագիրը կերտելու և Հայ Դատը լուծելու մասին: Կարելի՞ է, արդեօք, երկրորդ քաղաքացիութիւն ձեռք բերել, բայց չենթարկւել իրեն քաղաքացիութիւն տւած երկրի կառավարութեանը:

Եթէ հայկական Սփիւռքը չենթարկւի Հայաստանի մշակութային քաղաքականութեանը, ապա վտանգւած կը լինի նրա գոյութիւնը: Պետութեան մշակութային քաղաքականութիւնը ազգային պետութեան քաղաքականութեան ամենակարեւոր բնագաւառն է, քանի որ՝

ա.- Մշակութային քաղաքականութեամբ է որոշւում տւեալ ազգի և պետութեան տեղը ընդհանուր քաղաքակրթութեան մէջ:

բ.- Ազգային ոգու, ազգային ինքնագիտակցութեան և ազգային նկարագրի միակ պաշտպանը ազգային մշակոյթն է:

գ.- Մշակութային քաղաքականութիւնը դաստիարակում է երիտասարդ սերունդը հայրենասիրական և հայրենիքը պաշտպանելու ոգով:

դ.- Մշակութային քաղաքականութիւնը ազգայնացնում է միջազգային արժէքները՝ յարմարեցնելով դրանք հայ ժողովրդի ազգային կեանքին:

Հազարամեակների պատմութիւն ունեցող հայկական մշակոյթը, ձեւաւորւելով ու զարգանալով ազգային և համամարդկային արժէքների հիման վրայ, մշտապէս ապահովել է մեր ժողովրդի արժանապատիւ տեղը քաղաքակիրթ

ազգերի մէջ, պահպանել մեր ազգային ինքնութիւնը և ապահովել մեր հետագայ զարգացումը։

Կորցնելով մշակութային արմատները՝ հասարակութիւնը կորցնում է հոգեկան այլասերութեան հանդէպ դիմադրողականութիւնը, օտարածին կասկածելի արժէքները փոխարինելու են գալիս սեփական արժէքներին, հետեւաբար՝ թուլացնելով ազգայինի նկատմամբ բնական մղումը։ Ազգային հոգեւոր ներուժի պահպանումը և բազմապատկումը հոգեւոր նահանջը յաղթահարելու միջոց է և նպատակ։

Առանց մշակոյթի չկայ ազգային ինքնագիտակցութիւն, առանց ազգային ինքնագիտակցութեան չկայ ազգ։

Այս կարեւորագոյն խնդիրները Հայրենիքը և Սփիւռքը կարող են լուծել համատեղ ջանքերով, Հայաստանի կառավարութեան կողմից մշակուած ծրագրերով։

Եւ այս ծրագրերը ու մօտեցումները իրականացնելու հարցում ես շատ եմ զգում ընկեր Հրայրի բացակայութիւնը։

Մեր առջեւ կանգնած չլուծուած խնդիրների շարքին է պատկանում նաեւ պետութիւն-կուսակցութիւն փոխ-յարաբերութիւնը։ Չեմ կարող ասել, որ մեզ յաջողուել է մշակել այդ փոխ-յարաբերութիւնների ռազմավարութիւնը։ Բանը նրանումն է, որ որպէս ընկերվարական, յեղափոխական և ազգային կուսակցութիւն մենք ունենք Հայաստանի պետականութեան կերտման մեր ծրագրերը և մեր սկզբունքները, որոնք յաճախ չեն համընկնում Հայաստանի իշխանութիւնների պաշտօնական քաղաքականութեան հետ։ Սակայն միւս կողմից, որպէս իշխանութիւնների կողքին կանգնած և իշխանութիւնների հետ համագործակցող կուսակցութիւն, մենք չենք կարող հակադրուել այդ իշխանութիւններին։ Այս թւացեալ հակասութեան տակից շատ փայլուն ու ճարպիկ կերպով դուրս էր գալիս ընկեր Հրայրը։ Գործելով արտասահմանում՝ նա ներկայանում էր տուեալ երկրի իշխանութիւններին որպէս այդ երկրում ապրող հայ քաղաքացիների ներկայացուցիչ, որոնք պարտաւոր էին հաւատարիմ լինելու այդ երկրի օրէնքներին, սակայն նա կարողանում էր գտնել այդ իշխանութիւնների դէմ պայքարելու ձեւերը, երբ նրանք ոտնահարում էին հայ ժողովրդի կենսական շահերը։ Ինչպէ՞ս էր դա յաջողւում ընկեր Հրայրին, քննարկման նիւթ չէ, բայց այստեղ կարող եմ ասել, որ հիմա Հայաստանում Դաշնակցութիւնը կարծես թէ կանգնել է այդ ճանապարհի վրայ՝ ճշտելով, որ Հ.Յ.Դ.ն կառավարական կուսակցութիւն չէ և կառավարութիւն քննադատելու մէջ որեւէ սահմանափակման պարտաւորութիւն չունի։

Այսօրւայ չլուծած խնդիրների թւին է պատկանում Հայաստանի տնտեսական անմխիթար վիճակը։ Ի՞նչ կարող էր անել այս պայմաններում ընկեր

Հրայրը, կամ՝ աւելի ճիշտ, նրանով ներկայացուող Հ.Յ.Դ. ղեկավարութիւնը: Կայ երեք բան, որ մենք չարեցինք , իսկ ինձ թւում է, որ ընկեր Հրայրը կ'անէր: Գուցէ դա միայն ինձ թւում է, որովհետեւ շատ եմ տառապել նրանից, որ չի արւել այն, ինչ պիտի արւէր:

1.- Այսօր, երբ արդէն պարզ է, թէ ինչպէ՛ս թալանւեց երկիրը, թէ ի՛նչ գնով Հայաստանը դուրս եկաւ ազատ շուկայ, թէ ինչպէ՛ս սեփականաշնորհւեց Հայաստանի արդիւնաբերութիւնը և գիւղատնտեսութիւնը, երբ պարզ դարձաւ, որ հայ ժողովրդի դաւաճանները, ոմանք ապուշութեան և ագահութեան, ոմանք էլ ուրիշի շահերին ծառայելով կատարեցին ողջ հայութեան դէմ ուղղած յանցագործութիւն, մենք հասկացանք, որ չկարողացանք կանգնեցնել այդ յանցագործութիւնը: Մենք ընդհանրապէս այդ բնագաւառում չկայինք:

2.- Այդ յանցագործները մինչեւ այսօր մնացել են անպատիժ, իսկ Հրայրը կը գտնէր նրանց պատժելու ճանապարհը:

3.- Հայաստանի արդիւնաբերութիւնը անկում է ապրում, քանզի այդ արդիւնաբերութիւնը ազատ շուկայի բան չէ, իսկ միւս կողմից ինքը ազատ շուկան ժողովրդավարութիւնից զուրկ երկրի բան չէ: Ես կարծում եմ, որ մեզ չյաջողւեց և մենք ոչ էլ փորձեցինք, մեր արդիւնաբերութիւնը զարգացնել այլ, աւելի ընկերվարական տնտեսութեան ճանապարհով և այդ երկրների մէջ որոնել դաշնակիցներ: Ես կարծում եմ, որ ընկեր Հրայրը դա կ'անէր:

Եւ այսօր իր յիշատակին նւիրւած **«Դրօշակ»**ի համարում մենք պիտի գիտակցենք, որ կարող ենք միասնաբար կատարել այն, ինչ ընկեր Հրայրը կարողանում էր անել այն մթնոլորտում, որը ինքը ստեղծել էր: Մենք միասնաբար պիտի կարողանանք վերականգնել այդ մթնոլորտը կամ ստեղծել էլ աւելի հզօրը, որտեղից կը ծնւեն նոր Հրայրներ, ազգին նւիրւած նոր ղեկավարներ:

1999

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Է. Յովհաննիսեան

Թէ ինչպէ՛ս Դաշնակցութիւնը և դաշնակցականը մտան Հայաստան, ինչպէ՛ս ծաւալեցին դաշնակցականներն իրենց գործունէութիւնը Հայաստանում, ինչպէ՛ս Դաշնակցութիւնը վտարուեց Հայրենիքից, բանտարկուեց ու ազատ արձակուեց՝ այս ամէնը յայտնի է: Գուցէ դեռեւս յայտնի չեն այս իրադարձութիւնների մութ ծալքերը, բայց նրանք այսօր շատ էլ չեն հետաքրքրում: Այնուամենայնիւ, կան հարցեր, որոնց պատասխանները գտնելուց յետոյ միայն կարելի է խօսել մեր անելիքների մասին և մշակել այդ անելիքների ռազմավարութիւնը: Խօսքը ոչ միայն Դաշնակցութեան, այլ առաջին հերթին դաշնակցականի մասին է:

Ինչո՞ւ և ինչպէ՞ս Դաշնակցութիւնը վերադարձաւ Հայրենիք, ինչպէ՞ս Հայրենիքում յայտնուեց դաշնակցականը, ո՞ւմ ձեռնտու չէր նրանց վերադարձը, ինչո՞ւ և ինչպէ՞ս հալածուեց Դաշնակցութիւնը, ո՞վ էր շահագրգռած Դաշնակցութեան վարկափրկման մէջ, ինչո՞ւ մենք պարտուեցինք Ազգային Ժողովի ընտրութիւններում: Նախքան մեր անելիքների ռազմավարութիւնը մշակելը, անհրաժեշտ է գտնել այս և մի շարք այլ նման հարցերի պատասխանները:

Դաշնակցութիւնը Հայաստան մտաւ իր բարձրագոյն ժողովի, այսինքն՝ Ընդհանուր Ժողովի որոշմամբ, որը բխում էր Դաշնակցութեան Ծրագրից, գաղափարախօսութիւնից և կուսակցութեան ամբողջ էութիւնից: Հ.Յ. Դաշնակցութիւնը վտարանդի դառնալուց յետոյ, առաջին իսկ օրից, քաջ գիտակցում էր, որ Հայրենիքից դուրս մնալը թէ՛ կուսակցութեան և թէ ժողովրդի համար ժամանակաւոր երեւոյթ էր և նրանք կը վերադառնան Հայրենիք՝ առաջին իսկ հնարաւորութեան դէպքում: Սակայն Դաշնակցութեան վերադարձը Հայրենիք ոչ բոլորի համար էր ցանկալի:

Բանը նրանումն էր, որ Դաշնակցութիւնը որպէս Խորհրդային իշխանութեան կողմից հալածուող և Խորհրդային իշխանութեանն ընդդիմադիր մի կուսակցութիւն, որպէս հերոսական պատմութիւն ունեցող, Սփիւռքը կազմակերպող և Հայ Դատի համար պայքարող կազմակերպութիւն մեծ հեղինակութիւն էր վայելում հայ ժողովրդի մէջ և կարող էր լուրջ վտանգ ներկայացնել Հայաստանի նոր իշխանութիւնների համար, եթէ այդ իշխանութիւնները իշխանութիւնը վերցնէին ժողովրդավարական ընտրութիւնների ճամբով: Բացի դրանից Հայաստանի նոր իշխանութիւնները վայելում էին Արեւմուտքի, մասնաւորապէս Ամերիկայի Միացեալ Նահանգների հովանաւորութիւնը, և այդ նոր

իշխանութիւնների, ինչպէս նաեւ նրանց հովանաւորներին հակառակ էին թէ՛ Հ.Յ.Դ. ազգայնականութիւնը, թէ՛ ընկերվարութիւնը և թէ յեղափոխականութիւնը: Դաշնակցութեան վարկահաստատման հետ համաձայն չէին նաեւ այն պատմաբանները, քաղաքական գործիչներն ու արուեստագէտները, որոնք գիտնականներ ու արուեստագէտներ էին դարձել հակադաշնակցական քարոզչութեան ալիքի վրայ: Դաշնակցութեան Հայաստան մուտք գործելու հետ համաձայն չէր նաեւ ժողովրդի որոշ մասը, որը նախ մտահոգ էր, որ Հ.Յ.Դ. երկրում կը ստեղծի յեղափոխական մթնոլորտ, իսկ յետոյ ենթագիտակցաբար չէր ուզում Հայաստանում տեսնել «դրսից եկած»ների մեծ դերակատարութիւնը:

Պատահականօրէն Հայաստանում լսեցի մի արտայայտութիւն, որը կարելի էր համարել այդ տրամադրութիւնների նշանաբանը. «Նրանք Սփիւռքում ապրեցին առանց հալածանքների, բարգաւաճ կեանքով, հիմա էլ ուզում են այստեղ շարունակել այդ կեանքը: Մենք էլ մեր դժբախտ կեանքն ենք շարունակելու, քանզի ո՛չ դրամ ունենք, ոչ էլ ազատ շուկայի փորձ»:

Եւ վերջապէս, Դաշնակցութեան ընկերվարութիւնն անհասկանալի էր հայ ժողովրդի համար, որը երազում էր դրամատիրական վարչակարգի մասին և համոզուած էր, որ դա Հայաստանը փրկելու միակ ճանապարհն էր:

Այսպէս թէ այնպէս Հայաստանում սկսուեցին Դաշնակցութեան դէմ ուղղուած հալածանքներ՝ Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Հրայր Մարուխեանի վտարում, կուսակցութեան արգելում, գոյքի բռնագրաւում, ընկերների ձերբակալում և այլն: Այդ միջոցին իշխանութեան գլուխ անցած թալանչիները, դրամատիրական վարչակարգ կառուցելու պատրուակի տակ կողոպտեցին երկիրը, իսկ ժողովուրդը համտեսեց դրամատիրական վարչակարգի առաւելութիւնները և կա՛մ փախաւ երկրից, կամ էլ ընկաւ աղքատութեան գիրկը:

Դժբախտաբար, Դաշնակցութիւնն այս կացութեան մէջ չդրդեգրեց կարծր ընդդիմադիր ուժի կեցւածք ու փորձեց լեզու գտնել յանցաւոր իշխանութիւններ հետ և դա ոչ միայն թուլացրեց նրա դիրքերը, այլեւ պակասացրեց նրա հեղինակութիւնը ժողովրդի մէջ, որը Դաշնակցութիւնից շատ աւելին էր սպասում, քան նա արեց:

Սակայն 1998 թ. սկզբին կացութիւնը փոխուեց: Փոփոխութիւնների գլխաւոր հեղինակը Ռուսաստանն էր: Ռուսաստանն արդէն վաղուց մտահոգուած էր Հայաստանի արեւմտեան կողմնորոշմամբ, որովհետեւ կորցնում էր Կովկասում իր միակ բնական դաշնակցին և դրա հետ միասին միակ յենակէտը: Թուրքիան, Վրաստանը, Ադրբեջանը, Չեչնիան և Կովկասի շատ ժողովուրդներ ունէին հակառուսական տրամադրութիւններ և միայն Հայաստանի ճամ-

բով էր, որ Ռուսաստանը կարող էր հաստատել իր ներկայութիւնն Անդրկովկասում:

Ռուսաստանը սկսեց Հայաստանում դաշնակիցներ որոնել իր ոտքը, այսպէս ասած, Հայաստանում հաստատելու համար: Որպէս դաշնակիցների թեկնածուներ Ռուսաստանը քննարկեց Հայաստանի կոմունիստների հետ համագործակցելու տարբերակը, Ե. Պրիմակովի լաւ բարեկամ Կ. Դեմիրճեանին, ինչպէս նաեւ Հ.Յ. Դաշնակցութեանը՝ որպէս Հայաստանի և հայ ժողովրդի ազգային շահերի պաշտպանի: Սակայն թէ՛ Հայաստանի կոմունիստները և թէ՛ Կ. Դեմիրճեանը պատկանում էին խորհրդային կոմունիստական ուղղութեանը և որեւէ բան չէին կարող անել, առանց խորհրդային իշխանութեան վերականգնման: Իսկ այդ բանը գոյութիւն ունեցող պայմաններում չէր կարող տեղի ունենալ: Ինչ վերաբերւում է Հ.Յ. Դաշնակցութեան, ապա նա հասկացնել տուեց Ռուսաստանին, որ կարող է համագործակցել Ռուսաստանի ազգային ուժերի հետ՝ որպէս հաւասարը հաւասարի, բայց ոչ ենթարկւելով Ռուսաստանի թելադրանքներին:

Ռուսաստանը գտաւ մէկ ուրիշ թեկնածու: Պաշտպանութեան նախարար Վազգէն Սարգսեանը դարձաւ այն մարդը, որի վրայ յենւելով Հայաստանում կազմակերպւեց իշխանափոխութիւն: Իշխանափոխութեան հետեւանքով արեւմտասիրական թեւը նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի հետ միասին պաշտօնազրկւեցին:

Նոր նախագահը յոյս էր ներշնչում, որ հաւատարիմ կը մնայ Ռուսաստանին, քանզի Ռուսաստանի և Հայաստանի պետական շահերը համընկնում են: Բանտից ազատւեցին դաշնակցական գործիչները, արտօնւեց կուսակցութեան գործունէութիւնը և Դաշնակցութիւնն սկսեց իր գործունէութեան նոր փուլը, որի առաջին քայլը նախագահական ընտրութիւններն էին: Հ.Յ.Դ.ն պաշտպանեց Ռ. Քոչարեանին և ընդհանուր գնահատականն այն էր, որ առանց Դաշնակցութեան աջակցութեան Քոչարեանը հազիւ թէ ընտրւէր: Սակայն, ընդհանուր գնահատականի համաձայն, Ռ. Քոչարեանը ոչ-բաւարար հատուցեց Դաշնակցութեան աջակցութիւնը և Դաշնակցութիւնը չդարձաւ նախագահի գաղափարախօսական և քաղաքական յենարանը: Այդ իսկ պատճառով Դաշնակցութիւնը չստացաւ Հայաստանի և հայ ժողովրդի ճակատագիրը լուծելու կարեւոր լծակներից գոնէ մի քանիսը: Բացի դրանից, գուցէև ճիշտ այդ պատճառով, երկրի թալանչիները չպատժւեցին, դեռեւս հասկանալի չէ, թէ արդեօք Քոչարեանը ի վիճակի չէ՞ր պատժելու նախորդ վարչակարգի յանցագործներին, չուզե՞ց այդ բանը անել, թէ՞ պարզապէս յանցագործների ցանկը այնքան էր ծաւալուն, որ բոլորին պատժելն անկարելի էր: Այսպէս թէ

այնպէս Հ.Հ.Շ.ական իշխանութեան յանցագործները մնացին անպատիժ և այդ վիճակում երկիրը գնաց դէպի Ազգային Ժողովի ընտրութիւն։

Այսպէս Հ.Յ. Դաշնակցութիւնը մտաւ Հայաստան։ Իսկ ինչպէ՞ս Հայաստան մտաւ դաշնակցականը։ Որտեղի՞ց Հայաստանում յայտնուեցին դաշնակցականներ։

Եթէ չհաշուենք այն մի քանի տասնեակ դաշնակցականների որոնք մտան Հայաստան արտասահմանից և ոմանք մնայուն կերպով հաստատուեցին Հայրենիք, մնացած դաշնակցականներն արդէն տեղում էին, նրանք Հայաստանի քաղաքացիներ էին ու ոչ մէկ ուրիշ երկրից չէին եկել։ Այստեղ առիթից օգտուելով պիտի նշեմ որ այն մի քանի տասնեակ «եկուոր դաշնակցականները հրաշք գործեցին Հայաստանում, իրենց հետ Հայրենիք բերելով դաշնակցական ոգին, ազնուութիւնը ու նրանք կարողացան Հայաստանում ստեղծել դաշնակցական մթնոլորտ, որտեղ էլ ծնուեցին դաշնակցական շարքերը։ Մեր կուսակցութիւնը երախտապարտ է այդ «եկուոր» մեր ընկերներին, որոնց անունները կուսակցական աւանդութեան համաձայն չեմ տալիս։

Այսպիսով, դաշնակցականն ստեղծուեց Հայաստանում դրսից եկող քարոզների ազդեցութեան տակ բայց Հայաստանի քաղաքացիներից, որոնք դաստիարակուել էին խորհրդային վարչակարգի տակ, ապրել էին խորհրդային արժէքներով ու ընտելացել էին խորհրդային իշխանութեանը։ Դա ունէր անշուշտ, իր բացասական կողմերը, սակայն ունէր մէկ դրական կողմ, որն էր խորհրդային մարդու, նամանաւանդ երիտասարդի նկարագիրը։ Բազմիցս մենք նշել ենք, որ Դաշնակցութիւնը նախ և առաջ նկարագիր է, ամէն մարդ չի կարող լինել դաշնակցական։ Եւ այդ խրոխտ վճռական նկարագիր ունեցող, անարդարութիւնից տառապող և ազատութիւն սիրող մարդկանց դաստիարակել էր խորհրդային իշխանութիւնը, նրանք անմիջապէս յայտնուեցին Դաշնակցութեան կողքին։ Բայց այն ժամանակ Դաշնակցութեան կողքին ու Դաշնակցութեան մէջ յայտնուեցին ոչ միայն հոգեկան, այլ նաեւ նիւթական բաւարարութիւն որոնողները, որոնք ճգնաժամային պահերին լքեցին մեզ։

Բայց հիմա խօսքը այդ մասին չէ։ Խօսքն այն մասին է, որ այն ժամանակ դաշնակցականը գտել էր իր տեղը։ Իսկ այսօր ամէն մի շարքային դաշնակցականի առջեւ (խօսքը Հայաստանի դաշնակցականի մասին է) կանգնած է «ի՞նչ անել» հարցը։ Այս հարցի պատասխանը, անշուշտ, պիտի բխի կուսակցութեան անելիքներից, ուստի վերադառնանք Հայաստանի խորհրդարանական ընտրութիւններին։

Դաշնակցութեան դիրքերը բաւական թուլացած էին, երբ նա մտաւ ընտրապայքարի մէջ, քանզի ժողովուրդը սպասում էր, որ Դաշնակցութիւնը կը պատժի յանցագործներին և Հայաստանը դուրս կը բերի տնտեսական ու քա-

ղաքական ճգնաժամից: Բայց Դաշնակցութիւնն այդ բանը ի վիճակի չէր անելու, որովհետեւ չունէր համապատասխան լծակներ, ապա որոշ չափով իշխանամէտ դիրքեր գրաւելով չէր կարող փոխել իշխանութեան և յատկապէս նախագահի տրամադրութիւնները: Պէտք է ասել, որ խորհրդարանական ընտրութիւններին Դաշնակցութիւնը լաւ պատրաստուեց, յամենայնդէպս, մեծ ջանքեր գործադրեց քարոզարշաւը կազմակերպելու համար և պէտք է ասել, որ այդ ջանքերն արդարացուեցին և ընտրութիւնների նախօրեակին Դաշնակցութեան հեղինակութիւնը շատ բարձր էր: Սակայն, ինչպէս պարզուեց ընտրութիւններից յետոյ, մեր ժողովրդի հասարակական վարքագծի վրայ ազդում են ոչ այնքան գաղափարախօսական ու բարոյական գործօնները, որքան նիւթական, բարեկամական, հարևանական, իշխանական գործօնները, որոնց վրայ էլ ազդեցին ընտրարշաւի մէջ ընդգրկուած գործիչները:

Այսօր, ընտրութիւնների աւարտից յետոյ, մենք կարող ենք ասել, որ մէկ պատգամաւորի փոխարէն Ազգային Ժողովում մենք ունեցանք 8 պատգամաւոր, որ ժողովուրդը մեզ ճանաչեց, որ մենք ստացանք մեր գաղափարները Ազգային Ժողովի ամբիոնից քարոզելու հնարաւորութիւնը, բայց իրականում մենք պարտուեցինք: Մեր հիմնական թեկնածուներից միայն երեքն անցան մեծամասնական ցուցակով, իսկ մնացածը՝ յայտնի դաշնակցական գործիչներ, այդ ցուցակով չանցան: Այսօր արդէն պարզ է, որ Հ.Յ. Դաշնակցութեան թեկնածուները չանցան լաւ կազմակերպուած մի ինչ որ մեքենայութեան հետեւանքով, որին այս կամ այն չափով մասնակցում էին Հայաստանի և նոյնիսկ Ղարաբաղի ղեկավար շրջանակները:

Բանը նրանումն է, որ երկրի նախագահը խոստացել էր կազմել այնպիսի կառավարութիւն, որն արտայայտի Ազգային Ժողովի քաղաքական ուժերի դասաւորութիւնը: Ճիշտ այս պատճառով, կարելի է ենթադրել, որ քաղաքական ուժերի դասաւորութիւնը Ազգային Ժողովում գուցէ համապատասխանում է ժողովրդի կամքին, բայց այդ կամքը ստեղծուեց արհեստականօրէն, տարբեր ազդեցութիւնների տակ, որոնք խաղում էին յոգնած ու քաղցած մեր ժողովրդի պահանջները բաւարարելու կեղծ խոստումների հետ:

Ժողովրդի կամքը ձեւակերպելու հարցում մեծ դեր խաղաց նախորդ վարչակարգի, այսինքն՝ խորհրդային իշխանութեան նկատմամբ ժողովրդի մէջ մնացած կարօտը: Տարօրինակ կերպով ժողովուրդն այլեւս չէր յիշում խորհրդային իշխանութեան բռնութիւնները, կաշառակերութիւնները, անարդարութիւնները, բայց չէր մոռացել անվճար ուսումը, կրթութիւնը և մի շարք այլ առաւելութիւններ, որոնք կապ ունէին ընկերվարական սկզբունքների հետ:

Ստեղծած մթնոլորտում կարելի էր սպասել, որ «Միասնութիւն» դաշինքը, այսինքն՝ Կ. Դեմիրճեանի և Վ. Սարգսեանի համագործակցութեան քաղաքա-

կան միաւորը Ազգային Ժողովում ձեռք կը բերի մեծամասնութիւն և այդ մեծամասնութիւնը կ'օգտագործի իրենց դաշինքի օգտին։ Այդպէս էլ եղաւ։ Ինչ վերաբերում է Դաշնակցութեանը, ապա նա երկու նախարարի փոխարէն ունեցաւ միայն մէկ նախարար։ Յաջողութիւն կարելի է համարել Վահան Յովհաննիսեանի դիրքը Ազգային Ժողովում, որն ինչպէս յայտնի է գրաւեց Պաշտպանութեան և Ներքին Գործերի յանձնաժողովի նախագահի պաշտօնը։ Սակայն կան ենթադրութիւններ ու նշաններ, որ Հայաստանում տեղի են ունենալու փոփոխութիւններ, որոնք արմատապէս կարող են ազդել քաղաքական ուժերի դասաւորութեան վրայ։

Բայց նախ տեսնենք, թէ ինչպիսի՛ կացութիւն ստեղծուեց Հայաստանում խորհրդարանական ընտրութիւններից յետոյ։ Նախ՝ պարզուեց, որ Հայաստանում ջախջախիչ պարտութիւն կրեց ազատական մտայնութիւնը և Հայաստանում կը ստեղծուի պետութեան կողմից վերահսկուող տնտեսվարութիւն։ Քաղաքական կողմնորոշումը զգալիօրէն փոխուելու է յօգուտ Ռուսաստանի։ Երկրում ստեղծուեց սխալ սեփականաշնորհման քաղաքականութիւնը շտկելու տրամադրութիւն, որի իրականացման դէպքում կարող է տեղի ունենալ աշխատատեղերի աւելացում։

Ի՞նչ փոփոխութիւններ կարող են տեղի ունենալ ստեղծուած կացութեան մէջ։

Նախ և առաջ նշենք, որ պաշտպանութեան նախարարի պաշտօնը իշխանութեան և երկրի իրադարձութիւնների վրայ ազդելու իմաստով շատ աւելի կարեւոր պաշտօն է, քան վարչապետի պաշտօնը։ Պաշտպանութեան նախարարը սովորական նախարար չէ, այլ այն նախարարն է, որին ենթարկուում է զօրքը, այսինքն՝ երկրի գլխաւոր ուժը։ Միայն շատ ժողովրդավարական աւանդութիւններ ունեցող երկրներում բանակը իշխանութիւնների համար մեծ վտանգ չի ներկայացնում։ Երկրի վարչապետը այդ իշխանութիւնը չունի և նրա պատասխանատուութիւնը շատ մեծ է ու ամենախոցելին՝ քննադատութեան իմաստով։ Եւ բաւականին տարօրինակ էր թւում, որ Վազգէն Սարգսեանը յանձնեց պաշտպանութեան նախարարի պաշտօնը մէկ ուրիշի, իսկ ինքը բաւարարուեց վարչապետի պաշտօնով։

Մեր երկրում պատահական բաներ տեղի չեն ունենում, ուստի կարելի է ենթադրել, որ այդ քայլը մտածուած էր և շատերի համար համաձայնեցուած։ Բայց տեսնենք, թէ որտե՛ղ կարող է թաղուած լինել շան գլուխը։ Բոլոր վերլուծութիւնները յանգեցնում են այն եզրակացութեան, որ «Միասնութիւն» դաշինքն օգտուելով Ազգային Ժողովի իր մեծամասնութիւնից՝ կարող է վերանայել երկրի Սահմանադրութիւնը և նախագահական հանրապետութիւնից վերածել այն վարչապետական հանրապետութեան, ինչպիսին է, օրինակ Գերմա-

նիան, որտեղ վարչապետը (կանցլերը) երկրի առաջին դէմքն է: Այդ ճանապարհով Վազգէն Սարգսեանը կը դառնայ Հայաստանի առաջին դէմքը:

Որքանո՞վ նախագահ Ռ. Քոչարեանին ձեռք կը տայ մանկապարտէզներ ու մարզադաշտեր բացող նախագահի դերը՝ ցոյց կը տայ ժամանակը: Գուցէ նոր Սահմանադրութեան մէջ իշխանութիւնը վարչապետի և նախագահի միջեւ այնպէս բաժանուի, որ երկուսն էլ գոհ լինեն, բայց այսօր արդէն պարզ է, որ դեռեւս երկար ժամանակ Հայաստանում իշխանութիւնը Դաշնակցութեան ձեռքը չի անցնի և այդ կուսակցութիւնը Հայաստանում դեռեւս երկար ժամանակ իշխանութեան ճամբով Հայաստանի՛ և հայ ժողովրդի ճակատագրում լուրջ դերակատար չի կարող լինել:

Ստեղծուած այս պայմաններից ելնելով էլ մենք պիտի կարողանանք որոշել Դաշնակցութեան և դաշնակցականի անելիքները Հայաստանում: Անշուշտ, վերջնական որոշումը տալու է Հ.Յ.Դ. Ընդհանուր Ժողովը, բայց այդ ժողովը շատ մօտ է, ուստի մենք, պատրաստւելով այդ ժողովին, պէտք է քննարկենք մի շարք հարցեր, առնուազն ձեւակերպենք այն հրատապ հարցերը, որոնց պատասխանները պէտք է տայ Ընդհանուր Ժողովը:

Այսօր Հայաստանում դաշնակցականի և Դաշնակցութեան փոխ-յարաբերութիւնների մէջ ստեղծւել է մի կացութիւն, որը երբեմն-երբեմն խախտում է նրանց միջեւ միշտ գոյութիւն ունեցող համերաշխութիւնը: Բանը նրանումն է, որ Դաշնակցութեան ղեկավարութիւնը Հայաստանում որոշ տեղ է գրաւում իշխանութեան մէջ և իր նախարարի, Ազգային Ժողովի պատգամաւորների, մարզպետի, մարզպետների տեղակալների ու տեղական իշխանութիւնների որոշ օղակների ճամբով մասնակցում է պետական գործունէութեանը:

Ի՞նչ անի շարքային դաշնակցականն իր ղեկավարներին օգնելու համար:

Նա ոչինչ չի կարող անել, բացի նրանցից, ովքեր կարողացել են տեղաւորւել այդ ղեկավարների կողքին, այսինքն՝ գրաւել մեծ ու փոքր պաշտօններ այդ նոյն ցանցում: Սրանց թիւն, անշուշտ, շատ քիչ է: Մի քանի տեղակալներ ու խորհրդականներ, մի քանի քարտուղարուհիներ և մի քանի վարորդներ: Մըննացած դաշնակցականներն անելիք չունեն, քանզի ստեղծւել է մի նոր կացութիւն, որին մենք սովոր չենք:

Նախկինում դաշնակցականն էր ընտրում իր ղեկավարին, ենթարկւում էր իր կողմից ընտրւած ղեկավարին, իսկ ղեկավարը հաշւետու էր իրեն ընտրող կուսակցականների առջեւ: Հայաստանում երկրի ղեկավարներին գոնէ ձեւականօրէն ընտրում է ժողովուրդը, որոնց մէջ են մտնում նաեւ Դաշնակցութեան ղեկավարները: Նրանք յարգում են իրենց կուսակցական ընկերներին, բայց գիտեն, որ ընտրւել են ոչ նրանց ձայներով ու նաեւ գիտեն, որ աշխատանք ու պաշտօն տալու հարցում չեն կարող օգնել իրենց ընկերներին:

Դաշնակցութեան ու դաշնակցականի միջեւ խախտուած այս ներդաշնակութիւնը բաւականին վտանգաւոր երեւոյթ է, քանզի եթէ այդպէս շարունակւի՝ Դաշնակցութիւնը կարող է մնալ առանց դաշնակցականի, եթէ մենք չկարողանանք գտնել դաշնակցականի համար ազգին ծառայելու ոլորտը: Դաշնակցութիւնն այսօր ծառայում է իր ժողովրդին կառավարութեան կողմից իրեն յատկացուած ոլորտի ճամբով, բայց այդ ոլորտում դաշնակցականն ունի շատ սահմանափակ դերակատարութիւն: Սա նշանակում է, որ Հ.Յ.Դ. Հայաստանի կազմակերպութեան Գերագոյն Մարմինը իր այն անդամներով, որոնք ընդգրկուած չեն պետական և կառավարական ոլորտում, պարտաւոր են մշակել գործունէութեան ծրագիր դաշնակցականի համար: Շարքային դաշնակցականն այսօր Դաշնակցութիւնից պահանջում է գործունէութեան դաշտ թէ՛ գաղափարական և թէ նիւթական պահանջների բաւարարութեան համար: Այդ դաշտը նրա համար Դաշնակցութիւնը չի կարող ստեղծել կառավարութեան ճամբով ու դրա համար մեղադրել Դաշնակցութեանը՝ տրամաբանութիւնից զուրկ է:

Նման դաշտ ստեղծելու գործը շատ դժւար է: Մէկ կողմից, այդ դաշտում կատարւող աշխատանքները պէտք է համապատասխանեն Հ.Յ.Դ. բարոյական սկզբունքներին, միւս կողմից նրանք պէտք է բաւարարեն դաշնակցականի տարրական նիւթական պահանջները: Սա էլ նոր երեւոյթ է: Բացի մի քանի տասնեակ գործիչներից ու խմբագիրներից, դաշնակցականներն իրենց սեփական քրտինքով էին վաստակում իրենց ապրուստի համար անհրաժեշտ եկամուտը և այդ եկամտից էլ վճարում էին իրենց կուսակցական և ազգային տուրքերը: Այժմ դաշնակցականը ի վիճակի չէ վճարելու ոչ միայն դաշնակցական տուրքերը, այլեւ չի կարող սեփական ապրուստն ապահովել: Նա երբեմն ստիպւած է լինում իր ապրուստի համար միջոցներ վաստակել ոչ-դաշնակցական ոլորտում, ինչն իրականում նշանակում է հրաժարւել դաշնակցական լինելուց, քանզի նա ստիպւած է լինում ենթարկւելու ոչ-դաշնակցական ղեկավարների թելադրանքներին:

Ուրեմն, ի՞նչ անի դաշնակցականը Հայաստանում:

Ես կարծում եմ, որ դաշնակցականը Դաշնակցութեան օգնութեամբ պիտի թափանցի Հայաստանի հասարակական կեանքի մէջ, վերահսկողութիւն հաստատի հասարակական կեանքի վրայ և կատարի աշխատանքներ, որոնք անձնազոհութիւն են պահանջում, գտնւում են հայ ազգային կեանքի կարեւոր հանգոյցներում:

Հասարակական կեանքի մէջ անհրաժեշտ է թափանցել արհմիութիւնների ճամբով, ստեղծել արհմիութենական գրասենեակներ և նրանց ճամբով վերահսկողութիւն հաստատել աշխատանքային տեղերի բաշխման բնագաւա-

ռում: Զարմանալ կարելի է, թէ ինչպէ՛ս երթեւեկութեան բնագաւառի վարորդները ահագին կաշառքներ են վճարում վարորդի պաշտօն ստանալու համար: Նոյնը տիրում է պաղպաղակի կրպակ բացելու բնագաւառում: Այսինքն՝ Հայաստանում աշխատանքը աշխատաւորների վերահսկողութեան տակ չէ, մի բան, ինչն արդէն վաղուց իրականացուած է բոլոր զարգացած դրամատիրական երկրներում: Ապահովագրութիւնը, գների կարգաւորման հարցը, աշխատավարձի սահմանումը, առեւտրական պայմանագրերը, բնութեան պաշտպանութիւնը՝ այս ամէնը գտնւում է հասարակական վերահսկողութեան տակ և այդ վերահսկողները վճարովի հասարակական, բայց ոչ-պետական կազմակերպութիւններ են:

Ուզում եմ բերել մէկ յատկանշական օրինակ: Երբ Հայաստանում տեղի ունեցաւ երկրաշարժ, Գերմանիայի Հասարակական Օգնութեան Գրասենեակը տուեց մեզ յատուկ տուփեր, որոնցով մեր երիտասարդները շրջեցին Միւնխենի փողոցներով և մի քանի օրւայ մէջ հաւաքեցին 40.000 գերմանական մարկ: Մարդիկ այնքան սիրով էին կատարում իրենց նուիրատուութիւնները, որ մեզ թւում էր, թէ մի 10 օրւայ ընթացքում մենք մի քանի միլիոն մարկ նուիրատուութիւն կը հաւաքենք: Բայց յաջորդ օրն այդ կախարդական տուփերից մեզ այլեւս չտուեցին: Նուիրատուութեան թոյլատրելի սահմանն արդէն լրացել էր, ինչը նշանակում էր, որ հասարակական կազմակերպութիւնը վերահսկողութիւն էր հաստատել իր քաղաքացիների նուէր տալու կամքի վրայ: Բայց միաժամանակ դա նշանակում էր, որ գերմանացին վստահում էր հասարակական կազմակերպութիւններին և միայն նրանց տուփերի մէջ էր դնում իր նուիրատուութիւնը:

Եթէ մեզ յաջողւի իրականացնել վերահսկողութիւնը հասարակական կեանքի վրայ, ապա ժողովուրդը մեզանից շատ գոհ կը մնայ: Մենք չպէտք է անենք այն, ինչ պարտաւոր է անել պետութիւնը, մենք պիտի անենք այն, ինչ պետութիւնը չի անելու:

Այս նոյն կացութիւնն է տիրում մեր օգնութեան կարիքն ունեցող բնագաւառներում: Բնակեցնել Ղարաբաղի դատարկւած շրջանները, օգնել գիւղացուն, ծառայել բարոյականութեան, օրինակ՝ հրաժարւել աղմկալից խնջոյքներից, պաշտպանել թոյլերին, պայքարել անարդարութեան դէմ և այլն:

Ո՞վ պիտի այս ամէնով զբաղւի, եթէ ոչ մենք:

Եթէ մենք բռնենք մեր գործունէութեան համար այս ճամբան, գուցէ ստեղծւի որոշ հակասական մթնոլորտ, քանզի մէկ կողմից Դաշնակցութիւնը իր ժողովրդի կողմից ընտրեալների ճամբով ջանում է դուրս բերել Հայաստանը ճգնաժամից, միւս կողմից՝ դաշնակցականը, հաւատարիմ իր երդումին ու խղճին, փորձում է թափանցել Հայաստանի հասարակական կեանքի մէջ

առանց պետական հրահանգների, նույնիսկ՝ քննադատելով կառավարութեանը։

Թող այս կացութիւնը տարօրինակ չթւայ, բայց հայ ժողովուրդը բոլոր հարցերի մէջ առաջինն է, թող այս հարցում էլ առաջինը լինի։ Թող առաջին անգամը լինելով մի կուսակցութեան ներսում լինեն իշխանամէտ և ընդդիմադիր թեւեր։ Դա ամենեւին էլ չի խախտի կուսակցութեան միասնութիւնը, դա միայն մէկ անգամ եւս կ'ապացուցի, որ Հ.Յ.Դ.ն ունի գաղափարախօսական միասնութիւն և կազմակերպական ապակենտրոնացում։

1999

Հ.Յ.ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Էդուարդ Յովհաննիսեան

Ժողովուրդների պատմութիւնը՝ մէկը միւսին փոխարինող գաղափարախօսութիւնների պատմութիւնն է: Գաղափարախօսութիւնը արտայայտում է անհատների և հաւաքականութիւնների վարքագծի աղբիւրը, այսինքն՝ հանդիսանում է այն չգրւած օրէնքը, որը մեր մէջ է և որը ձեւաւորւում է ոչ թէ տրամաբանութեան, ոչ թէ զգացմունքների, այլ՝ ներըմբռնման ազդեցութեան տակ:

Տարբեր ժողովուրդներ տարբեր ժամանակներում գտնւել են տարբեր գաղափարախօսների ուսմունքների ազդեցութեան տակ և, հէնց այդ ազդեցութեան շնորհիւ էլ, կերտել են իրենց պատմութիւնը: Մարդկութեան նորագոյն պատմութեան մէջ Գերմանիայում Գէօթէն, Կանտը, Հեգելը, Նիցշէն, Ֆրանսիայում՝ Ռուսօն, Կամպանելան և Ֆրանսիական Յեղափոխութեան այլ հեղինակներ, Ռուսաստանում՝ Դոստոեւսկին, Տոլստոյը, Վլադիմիր Սոլովեւը, Իտալիայում՝ Մազինին, Գարիբալդին կերտում էին ազգի և անհատի վարքագծի սկզբունքները, որոնք ամուր կերպով մտան այդ ժողովուրդների ազգային նկարագրի մէջ:

Հայ ժողովրդի նորագոյն պատմութեան մէջ բոլորի կողմից ճանաչւած և գուցէ միակ գաղափարախօսը Րաֆֆին էր, որը հիմնաւորեց և քարոզեց հասարակական արդարութեան, ազգայնականութեան և պայքարի անհրաժեշտութեան սկզբունքները:

Բոլոր ազգայնականները, յեղափոխականները և արդարութեան համար պայքարողները սնւում են Րաֆֆու ուսմունքից, իսկ Հ.Յ.Դաշնակցութիւնը՝ իր գաղափարախօսութիւնը որդեգրելիս, անմիջականօրէն յենւեց Րաֆֆու վրայ՝ արդարութիւնը դարձնելով ընկերվարութիւն, պայքարի անհրաժեշտութիւնը՝ յեղափոխութիւն և ազգային արժէքների պաշտպանութիւնը՝ ազգայնականութիւն:

Սակայն տեսնենք, թէ ի՞նչ է իրենից ներկայացնում գաղափարախօսութիւն հասկացողութիւնը:

Մարդը և մարդկութիւնը ծնւել են առանց իրենց կամքի և ստիպւած են ապրելու առանց իրենց կամքի ստեղծւած բնութեան մէջ, յարմարւելով այդ պայմաններին և սեփական կարողութիւններին:

Առաջին հարցը, որի պատասխանը որոնում է մարդը՝ դա աշխարհայեացքայի հարց է:

Ինչպէ՞ս ստեղծուեց այս աշխարհը, որտեղի՞ց մենք եկանք, ո՞ւր ենք գնում, ո՞վ և ի՞նչ նպատակով ստեղծեց բնութիւնը և այլն:

Աշխարհայեացքային այս հարցերի պատասխաններից էլ կազմւած է գաղափարախօսութեան աշխարհայեացքային մասը: Այս մասը շատ տկար էր և թերի այն ժամանակ, երբ արարչագործութիւնը կապւում էր միայն Աստծոյ հետ, բայց գիտակցւած չէր Աստծոյ կողմից մարդուն տրւած ազատութիւնը և ընտրութեան հնարաւորութիւնը, ինչը բաւականին սահմանափակում էր մարդու նախաձեռնութիւնը՝ դարձնելով նրան բնութեան անբաժանելի մասնիկը:

Գաղափարախօսութեան երկրորդ բաժինը կապ ունի միջավայրում կողմնորոշւելու հետ: Այսինքն՝ ի՞նչ անել այս դաժան բնութեանը դիմադրելու համար:

Գաղափարախօսութեան երրորդ բաժինը կապ ունի նպատակների և այն արժէքների հետ, որոնց պէտք է հասնել և որոնց պէտք է պահպանել որպէս մեզ պահպանելու եւ մեզ պաշտպանելու գործօններ:

Եւ վերջապէս՝ գաղափարախօսութեան չորրորդ բաժինը՝ դա բարձրագոյն արժէքների բաժինն է, որը սահմանում է ոչ թէ մեր շահերի պաշտպանութեան դաշտը, այլ մեզանից աւելի կարեւոր արժէքները, որոնց պահպանելու անհրաժեշտութեան գիտակցութիւնը մղում է մեզ զոհաբերութիւնների, ներառեալ կեանքի գնով:

Այսպիսով, գաղափարախօսութիւնը դա միջավայրի ճանաչումն է, այդ միջավայրում կողմնորոշումն է, կեանքին յարմարւելն է և կեանքի բարոյականութեան և էութեան մաս կազմելն է:

Այս տեսանկիւնից էլ դիտարկենք և վերլուծութեան ենթարկենք Հ.Յ.Դաշնակցութեան գաղափարախօսութիւնը:

Հ.Յ.Դաշնակցութեան գաղափարախօսութեան հիմնադիրը կամ, աւելի ճիշտ, այդ գաղափարախօսութեան հիմնաւորման առաջին փորձ կատարողը Երւանդ Ֆրանգեանն էր (1878-1928), որի **«Մեր փիլիսոփայական աշխարհայեացքը»** վերնագիրը կրող աշխատութիւնը հրատարակւեց 1929 թւականին, Փարիզում: Ֆրանգեանը, անդրադառնալով գաղափարապաշտական և նիւթապաշտական մոնիզմներին, յանգեց այն եզրակացութեան, որ գաղափարապաշտական և նիւթապաշտական անյայտ մոնիզմներին կարող է հաշտեցնել միայն համադրական մոնիզմը, որը կարողանում է գտնել միտք-զգայականութիւն, ձեւ-բովանդակութիւն, ենթակայ-առարկայ հակադրւած հասկացութիւնների ամբողջական բնոյթը:

Ըստ Ֆրանզեանի՝ ենթակայ-առարկայ հարցում ենթակայի և առարկայի գոյութիւնը հաւասարաչափ իրական է, ինչը մերժում է նիւթապաշտների և գաղափարապաշտների միակողմանիութիւնը: Համադրական մոնիզմը այն մօտեցումն է որդեգրում, որ ենթական և առարկան համարժէք են, իբրեւ փորձի հաւասար և համազօր անդամներ: Այն հարցը, թէ դրանցից ո՞րն է առաջնակարգ և որն է որից ծագում,- զուտ բնազանցական հարց է: Նրանք միաժամանակ տրուած են: Թէ՛ փորձի առարկայական բովանդակութիւնը և թէ ենթական ոչ միայն անմիջապէս, այլ նաեւ միաժամանակ տւեալ են: Սա նշանակում է, որ նիւթը և գաղափարը իրար լրացնում են և չի կարող գոյութիւն ունենալ մէկը առանց միւսի: Այդ իմաստով, ամբողջովին իմաստազրկւում է Մարքսի այն պնդումը, թէ «մարդկային ողջ կեանքը, մտաւոր թէ բարոյական, ոչ այլ ինչ է, եթէ ոչ տնտեսական պայմանների արտացոլումը մարդու ուղեղի մէջ»: Իրականում արտացոլման ընթացքը կապ ունի ոչ միայն արտացոլող առարկայի հետ, այլ նաեւ արտացոլող ենթակայի յատկանիշների հետ:

Թւում է, թէ ոգու և նիւթի համատեղութեան հարցը կարելի էր լուծել՝ ճանաչելով ոգին և նիւթը որպէս երկու հաւասար իրաւունքներով էութիւններ: Բայց այդ դէպքում մենք կը կանգնէինք նոր դժւարութիւնների առջեւ, քանզի անհասկանալի կը լինէր երկու այդ ինքնուրոյն էութիւնների փոխազդեցութեան հարցը: Եթէ նրանք ամբողջովին ինքնուրոյն են, հապա ինչպէ՞ս կարող են ազդել մէկը միւսի վրայ: Փոխազդեցութեան համար նրանք պէտք է ունենային մի ինչ-որ ընդհանուր բան, այսինքն՝ համագործակցէին մի ինչ-որ երրորդ, աւելի բարձր էութեան մէջ, որը մեզ ամբողջովին անյայտ է: Կարճ ասած՝ նիւթապաշտները պնդում են, որ կեցութիւնն է որոշում գիտակցութիւնը, իսկ գաղափարապաշտների կարծիքով՝ գիտակցութիւնն է որոշում կեցութիւնը: Ո՞ր դրոյթն է ճիշտ: Երկուսն էլ ճիշտ են:

Մի՞թէ պարզ չէ, որ մարդու գիտակից գործունէութիւնը վերափոխում է աշխարհը և նրա հետ էլ կեցութիւնը: Մի՞թէ պարզ չէ, որ գործարանները, օդանաւերը, ամբողջ քաղաքակրթութիւնը ստեղծւած է շնորհիւ գիտակցութեան: Բայց մի՞թէ պարզ չէ նաեւ այն, որ կեցութիւնից ծնւում է համապատասխան գիտակցութիւն, որ վայրենիները երբեք չեն կարող ունենալ այն գիտակցութիւնը, որը ձեռք բերեցին քաղաքակիրթ պայմաններում ապրող մարդիկ:

Այս պարզ ճշմարտութիւնը չէին կարող չհասկանալ նիւթապաշտները, և նրանցից ամենա-արմատականը՝ Մարքսը, արտայայտում է հետեւեալ միտքը.- «Բնական կեցութեան առաջնակարգ լինելու և գիտակցութեան ու հոգեկան կեանքի վերնաշէնք լինելու հարցը կրում է միայն ծագումնաբանական, այլ ոչ թէ գնահատականի իմաստ: Իսկ հակառակ տեսակէտը, այսինքն՝ գի-

տակցութեան առաջնակարգ լինելու հարցը, կրում է գնահատականի բնոյթ, այսինքն՝ շեշտում է գաղափարների կարեւորութիւնը»:

Այդ միտքը կարող էր յեղաշրջում կատարել մարքսիզմի մէջ, բայց, դժբախտաբար, այս մտքի վրայ ուշադրութիւն չդարձրին ո՛չ ինքը Մարքսը և ոչ էլ նրա աշակերտները:

Ինչ վերաբերում է Հ.Յ.Դաշնակցութեան գաղափարախօսութեան մեկնաբան, փիլիսոփայ, դոկտոր Երուանդ Ֆրանգեանին, ապա նա՝ բացի մոնիզմից, ոչ մի ուրիշ աշխարհայեացք չէր ընդունում, բայց դրա հետ միասին չէր ցանկանում ընդունել ո՛չ իդէալիստական և ոչ էլ մատերիալիստական մոնիզմները: «Մատերիալիզմը և իդէալիզմը,- ասում էր նա,- չեն բաւարարում որոնող և քննադատող մտքին: Իդէալիզմի և մատերիալիզմի ամենագլխաւոր թերութիւնները կայանում են նրանում, որ փիլիսոփայական-իմացաբանական հարցերի քննադատութիւնը և լուծումը մօտենում են ոչ թէ իմացա-քննադատական, այլ՝ աւանդամոլ և բնազանցական տեսակէտներով»: Խուսափելով մատերիալիստական և իդէալիստական մոնիզմներից, Ֆրանգեանը յանգում է համադրական մոնիզմի կամ քննադատական իրապաշտ փիլիսոփայութեանը, որը և կազմում է Հ.Յ.Դ. գաղափարախօսութեան աշխարհայեացքային սկզբունքը: Այդ աշխարհայեացքը ազգային հարցի վերաբերեալ ունի յատուկ մօտեցում, որը ժամանակին Ֆրանգեանը ձեւակերպել է այսպէս.- «Ազգութիւնը ներկայացնում է մարդկային հասարակութեան այն ձեւը, որ մշտական է, որ յարատեւել է մինչեւ այսօր և յարատեւելու է ընդմիշտ»: Այստեղ «ընդմիշտ յարատեւելու» հարցը կարող է վիճելի թւալ, քանզի մեր աչքի առջեւ կործանւում են ազգեր բնական և անբնական ճանապարհով, ուստի ազգային բազմազանութեան յաւերժութիւնը չի կարող իրականանալ ինքնըստինքեան, այլ կարող է ձեռք բերւել միայն պայքարի ճանապարհով:

Ֆրանգեանի նշումը ազգի յաւերժութեան մասին միայն նշանակում է, որ ազգը բնական հաւասարակշռութեան և ներդաշնակութեան մաս է կազմում, ուստի առանց այդ արժէքների մարդկութիւնը նոր որակ ձեռք կը բերի, այնքան նոր, որ այլեւս միջազգային հասարակութիւնը կը կորցնի բնական կոչւելու իրաւունքը: Ահա թէ ինչո՛ւ, բացի աշխարհայեացքի սահմանումից, գաղափարախօսութիւնը պէտք է մշակի նաեւ միջավայրը ճանաչելու եւ այդ միջավայրում կողմնորոշւելու բաժինը:

Ինչ վերաբերում է աշխարհայեացքային բաժնին, ապա այդ մասին Հ.Յ.Դաշնակցութեան ծրագրում ասւած է.- «Հ.Յ.Դաշնակցութեան համար ազգը՝ իբրեւ պատմական-մշակութային, լեզուական և ընկերային-քաղաքական ուրոյն ամբողջութիւն, հիմնական արժէք է և համամարդկային զարգացման ու հոգեմտաւոր բազմակողմանի հարստացման էական գործօն: Ազգը մարդկա-

յին ընկերութեան զարգացման ամենակենսունակ միջավայրն է, ուր անհատը ձեռք է բերում հոգեմտաւոր լայն հնարաւորութիւն, լիակատար հաղորդակցութեան և սեփական կարողութիւնների զարգացման առաւելագոյն կարելիութիւնը»:

Իսկ եթէ մենք փորձենք կողմնորոշուել մեզ շրջապատող միջավայրում, ապա կը տեսնենք, որ ազգը այնպիսի մի բարդ ամբողջութիւն է, որին անդրադառնալու համար, նախ պէտք է պարզենք, թէ ի՛նչ ազգը չէ, այսինքն՝ ազատուենք այն յատկութիւններից, որոնք արհեստականօրէն վերագրւում են ազգին:

Ազգերը պատմական ամբողջութիւններ են, բայց որպէս այդպիսին նրանք կային արդէն բնութեան մտադրութիւնների մէջ: Ազգը այս կամ այն պատմական դարաշրջանի երեւոյթ չէ, ազգը միասնական անհատականութիւն է, պատմական noumene (իրն ինքնին), այլ ոչ թէ phenomene (երեւոյթ): Ազգը այսօր ապրող սերունդը չէ, բոլոր սերունդների գումարը չէ: Ազգի մէջ բոլոր նախորդ սերունդները ապրում են ոչ-պակաս իրաւունքով, քան ներկայ սերնդի իրաւունքն է: Ազգը ոչ մի բանի մաս չէ, ազգը ինքը իր մէջ արժէք ունեցող, ի սկզբանէ եկող համակարգ է: Ազգային ոգին դիմադրում է ներկայի և ապագայի այն ուժերին, որոնք ժխտում են անցեալը: Ազգը միշտ էլ ձգտում է անմահութեան, նա երբեք չի կարող համակերպուել անցեալի վրայ ապագայի բացարձակ յաղթանակի հետ: Ի տարբերութիւն անձի, ազգը կարող է պայքարել իր մահութեան համար և յաղթական դուրս գալ այդ պայքարից: Ահա թէ ինչո՛ւ ազգային կեցութեան և ազգային գիտակցութեան մէջ նկատւում են պահպանողականութիւն և կրօնական խորութիւն:

Ազգային գիտակցութիւնը պահպանողական է ոչ թէ նրա համար, որ ստեղծագործութեան թշնամի է, այլ նրա համար, որ պաշտպանում է իսկական կեանքը ապագայի ոչնչացումից: Ազգային կեցութիւնը պահպանողական է, որովհետեւ ազգային կեանքը, անխզելի կապ ունի անցեալի հետ: Նա պարունակում է իր մէջ անցեալի բոլոր աւանդոյթները: Յեղափոխական միջազգայնականութիւնը ուղղուած է միայն ապագային և ոչ մի սահման չունի իր յաւակնութիւնների համար: Նա ոչնչացնում է անցեալը և չի ճանաչում ո՛չ գերեզմանատներ, ո՛չ յուշարձաններ, ո՛չ եկեղեցիներ և ոչ էլ աւանդոյթներ: Միջազգայնականութիւնը սպանում է բոլոր ժողովուրդներին և այդ սպառնալիքի դէմ, բացի ազգային գիտակցութիւնից, անհրաժեշտ է յատուկ ռազմավարութիւն, որը կապ ունի պետութեան, վարչակարգի, համամարդկային արժէքների և մի շարք այլ գործօնների հետ:

Տուրք տալով ժողովրդավարական վարչակարգերին՝ Հ.Յ.Դաշնակցութիւնը քաջ գիտակցում է, որ ոչ մի տեսակ իրապաշտ ժողովրդավարութիւն իր քա-

նակական չափանիշներով ոչ մի ժամանակ չի կարող արտայայտել ազգային ոգին: Եւ ազգային կամքն էլ չի որոշւում մեծամասնութեամբ, քանզի նա բոլորի կամքի գումարը չէ: Ազգի մաս են կազմում ոչ միայն մարդիկ, այլեւ՝ խաչքարերը, եկեղեցիները, մանրանկարները, ժողովրդական երգերը, հին ձեռագրերը, գրքերը և այլն: Եւ ազգային կամքը հասկանալու համար պէտք է կարդալ այդ գրքերը, լսել այդ երգերը, տեսնել այդ նկարները, աղօթել այդ եկեղեցիներում: Եւ եթէ այդ ձայները լսում է մի խումբ միայն, մի կուսակցութիւն միայն, նոյնիսկ մի մարդ միայն, ապա հէնց նա է ազգի կամքի արտայայտիչը:

Սակայն այդ կամքը անմիջականօրէն կապ ունի այն միջավայրի հետ, որտեղ ներկայումս յայտնւել է հայ ժողովուրդը: Այդ միջավայրի մասին Հ.Յ.Դ. Ծրագրում, պատմական հիմնաւորման մասում, նշւում է հետեւեալը. Հայաստանը՝ հայ ազգի Հայրենիքն է:

Հայաստանի աշխարհագրական դիրքի բերումով՝ հայ ժողովրդի ուրոյն մշակոյթը զարգացել է տարբեր քաղաքակրթութիւնների ազդեցութեան տակ: Հայ ժողովրդի պատմութիւնը յատկանշւում է իր ազգային պետականութեան պահպանման կամ նրա անկախութեան վերականգնման համար տեւական պայքարով:

Հայ ազգի միայն մի մասն է ապրում Հայաստանի Հանրապետութիւնում: Արցախի հայութիւնը պայքարում է Ադրբեջանի լծից ազատագրուելու և ազգային ինքնորոշման իրաւունքի միջազգային ճանաչումը ապահովելու համար: Հայ ժողովրդի դէմ Թուրքիայի կողմից գործադրւած Ցեղասպանութիւնը դեռեւս հատուցւած չէ: Ցեղասպանութիւնը նաեւ շարունակւում է, քանզի սփիւռքահայութիւնը գտնւում է ձուլման սպառնալիքի տակ:

Հայ Դատը ունի պատմական, բարոյական, իրաւական և քաղաքական էական կողմեր ու հիմնաւորումներ և խտանում է հետեւեալ կէտերում.

ա.- Ամբողջական Հայաստանի ստեղծում: Արցախի հարցի արդար լուծում:

բ.- Սփիւռքի տարագիր հայութեան համախմբում՝ իր հայրենի հողերի վրայ:

Գաղափարախօսութեան երրորդ բաժինը կապ ունի նպատակների և այն արժէքների հետ, որոնք պէտք է պահպանւեն կամ էլ ստեղծւեն:

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը իր գլխաւոր նպատակը համարում է Ազատ, Անկախ և Միացեալ Հայաստանի կերտումը: Ինչ վերաբերում է գաղափարախօսութեան չորրորդ բաժնին, ապա այն վերաբերում է ոչ թէ ազգային, այլ՝ համամարդկային արժէքներին և ժամանակակից քաղաքակրթութեան բարոյական նւաճումներին: Հ.Յ.Դ. Ծրագիրը այս մասին կատարում է հետեւեալ ընկերային-տնտեսական առաջադրանքները.

1.- Ընկերային արդարութեամբ և պետական կարգաւորումներով հաւասարակշռուած տնտեսական համակարգ:

2.- Ընկերային բեւեռացման կասեցում:

3.- Բնութեան հաւասարակշռութեան պահպանում:

4.- Մտքի, խօսքի, ստեղծագործութեան, մամուլի, հրատարակութեան և արտայայտութեան այլ միջոցների, խղճի, քաղաքական և այլ կազմակերպութիւնների գործունէութեան, հաւաքների և տեղափոխութեան ազատութիւն: Գործադուլների և ցոյցերի ազատութիւն: Անձի, բնակարանի, սեփականութեան և հաղորդակցութիւնների անձեռնմխելիութիւն:

Այս ամէնը կազմում են Հ.Յ.Դաշնակցութեան գաղափարախօսական դրոյթները, որոնք կիրառելու համար Դաշնակցութիւնը պէտք է ձեռք բերի համապատասխան պետական լծակներ: Այդ լծակները կարելի է ձեռք բերել կա՛մ ժողովրդական և կամ էլ յեղափոխական ճամբով: Հ.Յ.Դաշնակցութեան համար երկուսն էլ ընդունելի են, սակայն խաղաղ ճանապարհը, անշուշտ, գերադասելի է:

Սակայն ինչպիսի դիրքեր էլ որ գրաւի Հ.Յ.Դաշնակցութիւն կուսակցութիւնը Հայաստանի իշխանութեան տարբեր մարմիններում, ի՞նչ լծակներ էլ որ լինեն նրա ձեռքերում, ինչպիսի՛ պատասխանատուութիւն էլ որ նա ստանձնած լինի երկրի ղեկավարութեան կազմի մէջ, գաղափարախօսական գլխաւոր սկզբունքները չպէտք է խախտուեն: Եւ այդ գլխաւոր սկզբունքներն են.

1.- Ազգը հիմնական արժէք է և նրա շահերի պաշտպանութիւնը Դաշնակցութեան համար գլխաւոր խնդիրներից մէկն է:

2.- Հասարակական արդարութիւնը ազգի գոյատեւման գլխաւոր երաշխիքն է, ուստի այդ արդարութեան ստեղծումը Դաշնակցութեան համար առաջնակարգ խնդիր է:

3.- 1915 թւին տեղի ունեցած Ցեղասպանութեան միջազգային ճանաչումը, դատապարտումը և հասցւած վնասների հատուցումը հայ ժողովրդի համար ունեն արմատական նշանակութիւն, ուստի այդ խնդրի հետ կապւած բոլոր հարցերի լուծումը մտնում է Դաշնակցութեան առաքելութեան մէջ:

Որեւէ պետական կամ միջազգային ատեանի որոշում, որը հակասում է այս գաղափարախօսական սկզբունքներին, Դաշնակցութեան համար պէտք է անընդունելի լինի:

2000

ՍՈՒՎԵՐԵՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Դոկտ. Է. Յովհաննիսեան

Սուվերենութիւնը (գերիշխանութիւն) պետական կառուցւածքի հիմնաքարերից մէկն է: Դարերի ընթացքում տարբեր պետութիւններ կազմաւորել են երեք սկզբունքների հիման վրայ: Սրանք են՝ **ունիտարիզմ** կամ միապետութիւն, **ֆեդերացիա** կամ դաշնակցային պետութիւն և **կոնֆեդերացիա** կամ համադաշնակցային պետութիւն:

Միապետական սկզբունքով կառուցւած պետութեան կազմի մէջ չի մտնում ոչ մի ուրիշ պետութիւն, նա ունի մէկ պետական մարմին, որի իշխանութիւնը տարածւում է ամբողջ երկրի վրայ:

Դաշնակցային պետութիւնը բաղկացած է մի քանի պետութիւններից, որոնք միաւորւելով կազմում են մէկ նոր պետութիւն: Այդպիսին է, օրինակ, ըստ սահմանադրութեան, Խորհրդային Միութիւնը:

Համադաշնակցային սկզբունքը միաւորում է մի քանի պետութիւններ, առանց նոր պետութեան կազմաւորումի:

Ուրիշ խօսքով, եթէ դաշնակցային պետութիւնը միութենական պետութիւն է, ապա համադաշնակցութիւնը պետութիւնների միութիւն է: Համադաշնակցային էին անցեալում համարւում Շուեցարական Միութիւնը (մինչեւ 1848 թւականը), Ամերիկայի Միացեալ Նահանգները (1776-1787 թ.), Գերմանական Միութիւնը (1815-1866 թ.): Այժմ համադաշնակցութեան են ձգտում Եւրոպական Ընդհանուր Շուկայի պետութիւնները, իսկ Գերմանիայի Միացեալ Սոցիալիստական կուսակցութիւնը, իր 30րդ համագումարում 1957 թւականին, առաջ քաշեց երկու Գերմանիաների համադաշնակցութեան թեզը:

Նայած թէ ո՛ր սկզբունքի հիման վրայ է կառուցւած պետութիւնը, **սուվերենու**թիւնը ընդունում է այս կամ այն ձեւը: Խորհրդային իրաւաբանութիւնը երկար ժամանակ որպէս օրէնք ընդունում էր Վիշինսկու կողմից ձեւակերպւած **սուվերենու**թեան սահմանումը, որի համաձայն **սուվերենու**թիւնը պետական իշխանութեան անկախութիւնն է, տւեալ պետութեան սահմանների ներսում և դրսում:

Սակայն, 50ական թւականներին պետական **սուվերենու**թեան հարցը դարձաւ վէճերի առարկայ: Խորհրդային գիտնական պրոֆ. Կորովինը **սուվերենու**թեան հարցի վերաբերեալ մի բանավէճ սկսեց, որտեղ պնդում էր, թէ անկախութիւնը, որպէս **սուվերենու**թեան չափանիշ, պէտք է սխալ համարել, քանզի

իմպերիալիզմի դարաշրջանում բազմաթիւ պետութիւններ զրկւած են փաստացի անկախութիւնից և ուրեմն չեն կարող համարւել **սուվերեն**։

Բանավէճին մասնակցեցին բազմաթիւ գիտնականներ, քննադատւեցին տարբեր կարծիքներ և ի վերջոյ բոլորը եկան այն եզրակացութեան, որ այդ հարցը պահանջում է խորը գիտական վերլուծութիւններ։

Մինչեւ այսօր, այդ հարցի վերաբերեալ, լոյս են տեսնում բազմաթիւ յօդւածներ, որտեղ փորձ է արւում ապացուցել, թէ խորհրդային պետութիւնը նոր ձեւի դաշնակցային պետութիւն է, որը ազգային **սուվերենութեան** հարցը լուծել է լաւագոյն ձեւով։ Այդ յօդւածների շարքին է պատկանում և «Հակակոմունիզմի ջատագովները զրպարտում են» վերնագիրը կրող յօդւածը, որը Լ. Մ. Կարապետեանը և Ս. Գ. Սաղաթելեանը հրատարակել են **«Լենինեան Ուղիով»** ամսագրի 8րդ համարում։

Յօդւածի հեղինակները, կատարելով ընդունւած և պարտադիր գովասանքները, ուղղւած՝ Կոմունիստական կուսակցութեանը և սովետական կառավարութեանը, անցնում են բուրժուական գաղափարախօսների քննադատութեանը, որոնք «…անվերջ բարբաջում են **սուվերենութեան** հարցի շուրջը»։ Այդ գաղափարախօսները,- գրում են հեղինակները,- իրենց **պրոպագանդայի արխիւ-**ներից դնում հանում են հեքիաթներ այն մասին, թէ իբր սովետական հանրապետութիւնները զրկւած են ինքնուրոյնութիւնից, չունեն **սուվերենութիւն**։ Սակայն,- շարունակում են հեղինակները,- մինչեւ այդ հարցին անցնելը, նշենք որ **սուվերենութիւնը** չի կարելի յանգեցնել լոկ մի շարք իրաւունքների և իրաւասութիւնների առկայութեանը։

Այսպիսով ստեղծւած կացութեան տեսական հիմնաւորումը յօդւածի հեղինակները տեսնում են նրանում, որ **սուվերենութիւնը** և իրաւասութիւնը նոյն բանը չեն։ **«Սուվերենութիւնը** մշտական է,- ասում են նրանք,- իսկ իրաւասութիւնը փոփոխական է, կախւած պատմական իրադրութեան **կոնկրետ** խնդիրներից ու ազգային առանձնայատկութիւններից»։

Ի՞նչ կարելի է ասել այս տեսութեան մասին։ Նա հիանալի կերպով արդարացնում է բոլոր տեսակի բռնութիւնները **սուվերենութեան** նկատմամբ։ Ցիրաւի, եթէ **սուվերենութիւնը** ոչ մի կապ չունի իրաւասութեան հետ, ապա **սուվերեն** կարելի է համարել նոյնիսկ այն ազգերը, որոնք լրիւ իրաւազրկւած են, որոնցից խլւած են բոլոր իրաւունքները այս կամ այն պատմական իրադարձութիւնների հիման վրայ։ Եւ ամենակարեւորը, այդ իրաւունքները խլելու իրաւունքը տրւած է կենտրոնական կառավարութեանը, որը կարող է հիմնաւորել իր բռնութիւնը, ելնելով **կոնկրետ** խնդիրների անհրաժեշտութիւնից, կամ էլ (սա արդէն պարզապէս **ռասիզմ** է – ցեղապաշտութիւն) ազգային առանձնայատկութիւններից։

Ուրեմն պէտք չէ **սուվերենութեան** խախտում համարել, եթէ վաղը պատմական իրաւդրութեան խնդիրները պահանջեն վերացնել ազգային դպրոցները կամ ազգային առանձնայատկութիւնները ստիպեն, որ հայ ժողովուրդը հրեաների նման տեղափոխւի Բիրոբիջջան կամ թաթարների նման վտարւի Ղրիմից։

Եթէ իսկապէս **սուվերենութիւնը** կարելի է անջատել իրաւասութիւնից, ապա ի՞նչ իմաստ ունէր, **սուվերենութիւնը** ապացուցելու համար, յօդւածի երկրորդ մասում թւել, թէ ինչ իրաւունքներ ունի խորհրդային հանրապետութիւնը։

Հեղինակները բերում են հանրապետութեան իրաւունքների օրինակներ **կապիտալ** շինարարութեան, տեղական արդիւնաբերութեան, ժողովրդական կրթութեան և այլ ասպարէզներում։ Մինչեւ այդ հարցերին անդրադառնալը, ես ուզում եմ կանգ առնել այն հարցի վրայ, թէ ինչպէս մարքսիստները և բոլշեւիկները ընդունեցին դաշնակցային **սուվերենութեան** գաղափարը։

Որպէսզի ինձ չմեղադրեն նրանում, թէ օգտւում եմ բուրժւական **արխիւներից**, կը դիմեմ միայն խորհրդային աղբիւրներին։ Խորհրդային մեծ հանրագիտարանում ասւած է. «Սուվերենիաետ – **բարձրագոյն իշխանութիւն – նշանակում է տւեալ պետութեան պետական իշխանութեան բոլոր ներքին և արտաքին գործերում ինքնուրոյնութիւնը և անկախութիւնը մէկ ուրիշ պետութեան իշխանութիւնից։ Սուվերենութեան հիմքն է կազմում ազգերի ինքնորոշման իրաւունքը, այսինքն իր ճակատագրի որոշումը, առանց օտարների մասնակցութեան»։**

Առաջին անգամ **սուվերենիտետ** հասկացութիւնը օգտագործեց Բոգենը 16րդ դարում Ֆրանսիայում։ **Սուվերենութիւնը** այսօր բոլորի կողմից ճանաչւում է որպէս միջազգային իրաւունքի հիմք և այդ հիմքը իրաւացիօրէն ամրապնդւեց ՄԱԿի կանոնադրութեան մէջ, որտեղ (յօդւած 2րդ) ասւած է, որ ՄԱԿը հիմնւում է բոլոր անդամների **սուվերեն** հաւասարութեան վրայ։ Ուրեմն հանրապետութեան **սուվերենութեան** աստիճանը հանրապետութեան ինքնուրոյնութեան աստիճանն է։

Սակայն շատ երկար ժամանակ մարքսիզմը չէր ընդունում դաշնակցային պետութեան գաղափարը։ Մարքսը և Էնգելսը, մի շարք աշխատութիւնների մէջ, այսպէս, օրինակ, «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում», «Բոնութեան դերը պատերազմի մէջ», «Քաղաքացիական պատերազմը Շւեցարիայում», «Դեմոկրատական պանոլաւիզմ», դէմ են դուրս գալիս **ֆեդերացիայի**ին և համարում են, որ միայն կենտրոնացւած պետութիւնը կարող է իրականացնել **պրոլետարիատի դիկտատուրան**։

Մարքսը և Էնգելսը միշտ համարում էին, որ պետական ապակենտրոնացումը **պրոլետարիատ**ին ձեռնտու չէ։ Գիտական **կոմունիզմի** հիմնադիրները

կատաղի պայքար ծաւալեցին Բակունինի և Պրուդոնի դէմ, որոնք նոյնիսկ համայնքների համար **ֆեդերալիզմ** էին քարոզում: Լենինը և Կոմունիստական կուսակցութիւնը նոյնպէս միշտ դէմ էին Ռուսաստանում դաշնակցային պետութիւն ստեղծելուն:

Իր վերաբերմունքը դէպի **ֆեդերացիա**ն Լենինը առաջին անգամ արտայայտեց 1903 թականին: Այն ժամանակ Կովկասում ստեղծուել էր նոր սոցիալ-դեմոկրատական կազմակերպութիւն՝ «Հայ սոցիալ-դեմոկրատների միութիւն»: Միութիւնը իր **«պրոլետարիատ»** թերթի առաջին համարում, որը տպագրւում էր հայերէն լեզւով, հրատարակեց իր սահմանադրական յայտարարութիւնը, որտեղ անհրաժեշտ էր համարում ապագայ ազատ Ռուսաստանում ստեղծել **ֆեդերատիւ** հանրապետութիւն:

Լենինը ջերմօրէն ողջունեց հայ Սոցիալ-Դեմոկրատների Միութիւնը, սակայն նշեց, որ Միութիւնը պէտք է իր ծրագրից հանի **ֆեդերատիւ** հանրապետութեան պահանջը, փոխարինելով այն ընդհանուր **դեմոկրատ**ական հանրապետութեան պահանջով: Լենինը գրում էր.

«Պրոլետարիատի գործը չէ քարոզել **ֆեդերալիզմ** և ազգային ինքնուրոյնութիւն, **պրոլետարիատ**ի գործն է սերտօրէն միաւորել բոլոր ազգերի բանուորներին, միաւորել **դեմոկրատ**ական հանրապետութեան և **սոցիալիզմ**ի պայքարի համար»:

1903 թականին, «Ազգային հարցը մեր ծրագրում» աշխատութեան մէջ, Լենինը գրում էր, որ կուսակցութիւնը սկզբունքօրէն պէտք է պայքարի **ֆեդերացիայ**ի դէմ: Նոյն միտքը Լենինը արտայայտում էր 1912-1914 թականներին, իր մի շարք աշխատութիւնների մէջ. «Նամակ Շահումեանին», «Վելիկոռուսների ազգային հպարտութեան մասին», «Քննադատական նշումներ ազգային հարցի վերաբերեալ» և այլն:

1917 թականին, հակա**ֆեդերալիստ**ներին միացաւ Ստալինը և իր «**ֆեդերալիզմ**ի դէմ» յօդուածում խիստ քննադատեց Էսէրներին, որոնք **ֆեդերացիայ**ի կողմնակիցներ էին: Այսպիսով մինչեւ յեղափոխութիւնը մարքսիստներն ու Լենինեան կուսակցութիւնը Ռուսաստանի համար դաշնակցային պետականութիւնը անընդունելի էին համարում:

Յանկարծ, յեղափոխութիւնից անմիջապէս յետոյ, Լենինը և կուսակցութիւնը, հակառակ Մարքսի, Էնգելսի և իրենց սեփական գաղափարների, ոչ միայն ընդունում են **ֆեդերացիա**ն, այլեւ համարում են միակ ձեւը Ռուսաստանի պետական կառոյցի համար: Առաջին անգամ Լենինը ընդունելի համարեց Ռուսաստանի համար **ֆեդերացիա**ն 1917 թականի Օգոստոսին, իր հանրայայտ «Պետութիւնը և յեղափոխութիւնը» աշխատութեան մէջ:

1918 թւականի Դեկտեմբերին, կուսակցութիւնը ճանաչեց **ֆեդերացիա**ն և հռչակեց «Աշխատողների և շահագործւած ժողովուրդների յայտարարագիրը», որը ընդունւեց 3րդ Համառուսական Խորհուրդների Համագումարում: Ըստ յայտարարագրի, Ռուսաստանը յայտարարւում էր խորհրդային ազգերի դաշնակցային հանրապետութիւն, որը հիմնւում է ազատ ազգերի ազատ միութեան հիման վրայ: 8րդ բոլշեւիկեան համագումարը իր որոշումների մէջ նոյնպէս նշեց **ֆեդերացիայ**ի անհրաժեշտութիւնը:

Ինչո՞ւմն էր բանը, ի՞նչ էր փոխւել մի քանի ամսւայ ընթացքում, ի՞նչն էր ստիպում մի ամբողջ կուսակցութիւն այդքան կտրուկ վերանայել իր գաղափարախօսութիւնը և քաղաքականութիւնը:

Բանը նրանումն էր, որ **պրոլետարական ինտերնացիոնալիզմ**ի գաղափարը շատ աւելի թոյլ գտնւեց, քան ազգային ձգտումները: Ռուսաստանը, այսինքն ռուսական կայսրութիւնը փաստօրէն յեղափոխութեան շնորհիւ քանդւում էր: Կայսրութեան փլատակների վրայ սունկի նման բուսնում էին նոր ազգային պետութիւններ, որոնք կա՛մ արդէն անջատւել էին Ռուսաստանից, կա՛մ ձգտում էին դրան:

Օտար պետութիւնները սկսել էին իրենց դիւանագիտական խաղերը և նորաստեղծ պետութիւնները, շրջանցելով Ռուսաստանը, փորձում էին ինքնուրոյն կերտել սեփական ճակատագիրը: Այդ ամէնը, ի հարկէ, դուր չէկաւ բոլշեւիկներին և նրանք, ոտնակոխ անելով **պրոլետարիատ**ի շահերը, պահպանելու համար ռուսական կայսրութիւնը, ընդունեցին **ֆեդերալիզմ**ի գաղափարը, որի անունով էլ վերականգնեցին մեծ Ռուսաստանը:

Պատահական չէ, որ այսօր ռուս ազգայնականները միաբերան ասում են, որ Լենինը փրկեց Ռուսաստանը, որը գրեթէ քանդւում էր **«ինտերնացիոնալի»** շեփորների հարւածի տակ: Եւ պատահական չէ, որ այսօր էլ ռուս ազգայնականները սարսափում են **դեմոկրատ**ական շարժումներից, որոնք նոյնպէս վտանգի առաջ են կանգնեցնում անծայրածիր (ուրիշների հաշւին) Ռուսաստանը:

Պարզ չէ՞ արդեօք, որ այդպիսի պայմաններում ծնունդ առած **ֆեդերացիա**ն պէտք է լինէր այնքան ձեւական, որ **սուվերենութեան** մասին խօսելն անգամ լինէր աւելորդ: Այնուամենայնիւ, տեսնենք, թէ ինչ է իրենից ներկայացնում հանրապետութեան **սուվերենութեան** ձեւական կողմը:

Ըստ խորհրդային սահմանադրութեան, խորհրդային հանրապետութիւնը Խ. Միութեան մաս է կազմում և միաժամանակ իրենից ներկայացնում է **ՍՈՒՎԵՐԵՆ ՊԵՏՈՒԹԻՒՆ**:

Խորհրդային հանրապետութեան **սուվերենութիւնը** ապահովւում է հետեւեալ իրաւունքների և իրաւասութիւնների առկայութեամբ.

1.- Խորհրդային հանրապետութիւնը ընդունում է իր սահմանադրութիւնը ինքնուրոյն, առանց հետագայ հաստատումի Խորհրդային Միութեան բարձրագոյն մարմնի կողմից:

2.- Խորհրդային հանրապետութիւնը պահպանում է Խորհրդային Միութիւնից ազատ կերպով դուրս գալու իրաւունքը: Այդ իրաւունքը չի կարող վերանայւել, փոխւել կամ սահմանափակւել:

3.- Հանրապետութեան սահմանները չեն կարող փոփոխութեան ենթարկւել առանց իր համաձայնութեան:

4.- Խորհրդային հանրապետութիւնը իրաւունք ունի շնորհել անձերին քաղաքացիութիւն, որը միաժամանակ քաղաքացիութիւն է Խորհրդային Միութեան համար:

5.- Խորհրդային հանրապետութիւնը իրաւունք ունի անմիջական յարաբերութիւնների մէջ մտնելու օտարերկրեայ պետութիւնների հետ, նրանց հետ համաձայնագրեր կնքելու և դիւանագիտական ու հիւպատոսական ներկայացուցիչներ փոխանակելու:

6.- Խորհրդային հանրապետութիւնը իրաւունք ունի կազմել հանրապետական զինւած ուժեր իր ապահովութեան համար:

Այժմ տեսնենք, թէ **սուվերենութիւնը** արտայայտող այս կէտերից որո՞նք և ի՞նչ չափով իրականացւած են Խորհրդային Միութիւնում:

Սահմանադրութեան ընդունման և հաստատման ձեւական կարգը հազիւ թէ առաջացնի որեւէ առարկութիւն: Իրօք, նա չի հաստատւում Խորհրդային Միութեան բարձրագոյն մարմնի կողմից, իրօք նա ընդունւում է միայն հանրապետութեան Գերագոյն Խորհրդի կողմից, սակայն որքանո՞վ է հանրապետութիւնը սահմանադրութիւնը ստեղծում ինքնուրոյն, անկախ օտար ճնշումներից՝ յայտնի է բոլորին:

Ասում են, թէ փորձւած երաժշտագէտը երաժշտութեան **հարմոնիայի** կառուցւածքից միայն կարողանում է որոշել, թէ ո՞ր **կոմպոզիտորն** է երաժշտութեան հեղինակը: Ասում են, թէ երկու լեզու համարւում են նոյնը, եթէ բառերի 30 տոկոսը համընկնում է: Ասում են, թէ մարդիկ, ո՛րքան էլ որ կեղծեն իրենց ձեռագիրը, մասնագէտները, մի քանի նրբութիւններ համեմատելով, անսխալ կարողանում են որոշել, որ տարբեր ձեռագրերով գրւած բոլոր գրութիւնները գրւած են մէկ մարդու ձեռքով: Ասում են, թէ այսօր հաշւիչ մեքենաները կարողանում են տարբեր երեխաների պատկերներից ընտրել նոյն ծնողների երեխաներին: Եւ շատ ուրիշ բաներ էլ են ասում մէկ սկիզբ ունեցող երեւոյթների մասին:

Բայց կարիք չկայ հաշուիչ մեքենայի, ո՛չ փորձառու երաժշտագէտի և ոչ էլ լեզուաբանի, որպէսզի խորհրդային հանրապետութիւնների թութակի նման իրար կրկնող սահմանադրութիւնները նմանեցւեն մէկ ծնողի երկւորեակների (տասնհինգեակների), մէկ ստեղծագործողի երաժշտութեան, մէկ ձեռքով գրւած ձեռագրերի կամ մէկ լեզւով արտայայտւած մտքի։

Ի՞նչպէս կարող էին այդքան տարբեր պատմութիւն ու նկարագիր ունեցող ժողովուրդներ ինքնուրոյն ստեղծել այդքան նման սահմանադրութիւններ։ Հաւանականութիւնը, որ մօտաւորապէս 120 յօդւածից բաղկացած սահմանադրութիւնները, ինքնուրոյն մշակման դէպքում, այդքան զարմանալի ձեւով համընկնէին, հաւասար է զրոյի, այսինքն՝ պարզապէս անհնարին է։

Եւ ո՞վ կարող է կասկածել, որ ինքնուրոյնութեան դէպքում, օրինակ, Հայաստանի սահմանադրութեան 19րդ կէտը կը յիշատակէր Ղարաբաղի կամ Ախալքալակի մասին։

Թէ ո՛վ է այս սահմանադրութիւնների, հանրապետութիւնների և ընդհանրապէս ամէն ինչի ծնողը և հեղինակը, նոյնպէս յայտնի է։ Դա Կոմունիստական կուսակցութիւնն է, իսկ աւելի ճիշտ, կուսակցութեան բարձրագոյն ղեկավարութիւնը, որը իշխում է միայնակ, որը Խորհրդային Միութեան միակ տէրն ու տիրականն է։

Այդ իրողութիւնը նոյնիսկ միջազգային դիւանագիտական ոլորտներում պաշտօնապէս ճանաչւեց որպէս քաղաքական իրականութիւն և Միացեալ Նահանգների նախագահ Նիկսոնը բանակցեց ոչ թէ Գերագոյն Խորհրդի նախագահ Պոտգորնու, այլ կուսակցութեան գլխաւոր քարտուղար Բրեժնեւի հետ, որը ըստ սահմանադրութեան ոչ մի կապ չունի պետական իշխանութեան հետ։

Այժմ տեղի են ունենում ոչ-պաշտօնական խօսակցութիւններ, որ նոր սահմանադրութեան մէջ այդ իրաւունքը ամրապնդուի պաշտօնական ձեւով։

Ուրեմն ի՞նչ նշանակութիւն ունի այն **սուվերեն**ութիւնը արտայայտող փաստը, որ հանրապետութեան սահմանադրութիւնը չի հաստատում Խորհրդային Միութեան բարձրագոյն մարմնի կողմից։ Չէ՞ որ ստեղծւած պայմաններում ինքը՝ այդ բարձրագոյն մարմինը ոչ մի իշխանութիւն չունի։ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նախագահի պաշտօնը դարձել է պատժի դատապարտւածների պաշտօն։ Եւ դա պետական իշխանութեան բարձրագոյն մարմինն է։ Եւ քանի որ այդ մարմինը լրիւ իշխանազրկւած է, քանի որ իշխանութիւնը նա «կամաւոր» կերպով յանձնել է կուսակցութեանը, ուզում եմ մատնանշել այդ իսկական իշխանութեան մէկ նուրբ կողմը։

Յայտնի է, որ բոլոր հանրապետութիւնները ունեն իրենց ազգային կուսակցութիւնները և ազգային կուսակցութեան ղեկավար մարմինները, օրինակ՝

Հայաստանի Կոմկուսի Կենտրոնական Կոմիտէն: Եւ միայն մէ՛կ հանրապետութիւն՝ Ռուսաստանը չունի ո՛չ ռուսական կոմունիստական կուսակցութիւն և ոչ էլ կուսակցական մարմիններ: Եթէ հարցին մօտենանք մակերեսօրէն, կարելի է մտահոգւել, թէ «խեղճ» ռուս ժողովուրդը զրկւած է կուսակցութիւնից, թէ ոտնակոխ են արւում այդ մեծ ժողովրդի շահերը: Բայց եթէ մի քիչ աւելի խորը մտածենք և ի նկատի ունենանք, որ Խորհրդային Միութիւնը չի կարող ռուսական շահերի դէմ դուրս գալ, ապա կը տեսնենք, որ Խորհրդային Միութեան Կոմունիստական կուսակցութիւնը փոխարինում է ռուսական կուսակցութեանը:

Այսպիսով, Խորհրդային Միութեան պետական իշխանութիւնը գտնւում է կուսակցութեան ձեռքում, որը փաստօրէն միաժամանակ ռուսական կուսակցութիւն է և ուրեմն ռուսական իշխանութիւնը: Ուրեմն **սուվերենի**ութեան առաջին կէտը, ելնելով իրականութիւնից, պէտք է ձեւակերպւէր մօտաւորապէս այսպէս.- Խորհրդային հանրապետութիւնները, Ռուսաստանի իշխանութեան թելադրանքով, կազմում են իրենց սահմանադրութիւնները, որոնք Խորհրդային Միութեան բարձրագոյն մարմնի հաստատման կարիքը չեն զգում, քանզի հէնց այդ մարմնի կողմից բառ առ բառ թելադրւած են: Հանրապետութեան **սուվերենի**ութիւնը կայանում է նրանում, որ նա «ինքնուրոյն» և «կամաւոր» կերպով իրաւազրկել է իր ժողովուրդը, քաջ գիտակցելով, որ **սուվերենի**ութիւնը ոչ մի կապ չունի իրաւասութեան հետ:

Սուվերենիութեան միւս կէտը Խորհրդային Միութիւնից ազատ դուրս գալու իրաւունքն է: Ի՞նչ կարելի է ասել այս հեքիաթային իրաւունքի մասին: Երազ, գեղեցիկ երազ, այնպիսի մի երազ, որից յետոյ, երբ արթնանում ես, ուզում ես իսկոյն աչքերդ փակել, որպէսզի մի քիչ էլ երկարի տեսիլքը: Եթէ ազատ դուրս գալու իրաւունքը օրինականացւած է, ուրեմն օրինական պիտի լինի գոնէ դրա մասին խօսելը: Ի՞նչպէս կարելի է օգտւել այդ օրէնքից, եթէ արգելւած է խօսել այդ մասին, քննարկել այդ հարցը, քարոզել այդ գաղափարը:

Սակայն յայտնի է, թէ քանի՛-քանի մտաւորականներ, տարբեր հանրապետութիւններում, բանտ նետւեցին ու զնդակահարւեցին միայն այն հիման վրայ, որ **ՄՏԱԾՈՒՄ ԷԻՆ** անջատւելու մասին: Իսկ Ուկրանիայի մի խումբ երիտասարդների մեղադրանքը, Չիւբայի վկայութեամբ, պաշտօնապէս ձեւակերպւեցին որպէս «անջատողական տրամադրութիւններ»:

Եւ, վերջապէս, եթէ այդ իրաւունքը իրագործելի լինէր, միթէ՞ մենք այսօր կը տեսնէինք, Խորհրդային Միութեան կազմում մերձ-բալթեան հանրապետութիւնները, Ուկրաինան (չեմ խօսում մեր՝ հայերի մասին, մենք իրօք որ մտածելու շատ տեղ ունենք) Վրաստանը, Ադրբեջանը և մի քանի ուրիշներին:

Վերցնենք հանրապետութեան իրաւունքը՝ շնորհելու հանրապետական քաղաքացիութիւն, որը միաժամանակ միութենական քաղաքացիութիւն է համարւում: Այդ վերջին յաւելումը, այսինքն միութենական քաղաքացիութիւնը խօսում է այն մասին, որ այս անմեղ հարցում էլ հանրապետութիւնը ինքնուրոյն չէ:

Յիրաւի, ի՞նչպէս կարելի է ենթադրել, որ Խորհրդային Միութիւնը իր բերդի դռներից մէկը կարող է յանձնած լինել, օրինակ, Հայաստանին ու հայերին, որոնք Խորհրդային Միութեան մէկ տոկոսն են կազմում: Միթէ՞ կարելի է ենթադրել, որ Խորհրդային Հայաստանին իսկապէս տրւած է իրաւունք իր սեփական ընտրութեամբ շնորհել մարդկանց Խորհրդային Միութեան քաղաքացիութիւն, մէկ բան, որ շատ աւելի դեմոկրատական երկրներում կապւած է մեծ դժւարութիւնների հետ: Միթէ՞ կարելի է ենթադրել, որ Հայաստանի Անվըտանգութեան Կոմիտէն, արտաքին գործոց նախարարութիւնը, Գերագոյն Խորհուրդը և բոլոր այն մարմինները, որոնց միջոցով պէտք է մաղւեն մարդիկ, որպէսզի խորհրդային քաղաքացիութիւն ստանան, այդքան կարող են և այդքա՛ն վստահութիւն են վայելում Մոսկւայում:

Խօսքը Երեւանում կամ Հայաստանի ուրիշ վայրերում ծնւածների մասին չէ, ի հարկէ, այլ արտասահմանից ներգաղթողների մասին է: Որքա՛ն ծիծաղելի էր թւում Խորհրդային Միութեան յայտարարութիւնը, թէ իբր հրեաների վերադարձը Խորհրդային Վրաստան որոշում է Վրաստանի կառավարութիւնը և իբր այդ հարցով պէտք է դիմել նրանց:

1944 թւականի Փետրւարի 1ին, Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհուրդը, իր 10րդ նստաշրջանում, ընդունեց մի օրէնք, որի համաձայն հանրապետութիւնները ստանում են ինքնուրոյնութիւն արտաքին յարաբերութիւնների գործում: Այդ օրէնքը հարկաւոր էր Ստալինին, որպէսզի Ուկրաինան և Բելոռուսիան մասնակցեն, որպէս **սուվերեն** պետութիւններ, խաղաղութեան պայմանագրերը կնքելիս, իսկ հետագայում էլ ընտրւեն **ՄԱԿ**ի անդամ: Դրանով էլ աւարտւեց հանրապետութիւնների ինքնուրոյնութիւնը արտաքին գործերում: Այժմ նրանք ոչ միայն չունեն արտասահմանում դեսպաններ կամ հիւպատոսներ, այլեւ նոյնիսկ հանրապետական կենտրոնական թերթերի համար իրաւունք չունեն պահելու սեփական թղթակիցներ: Հանրապետութեան արտաքին գործոց նախարարը պարզապէս **մարիոնետ**ի դեր է կատարում, լաւագոյն դէպքում նրան յանձնարարում են ճաշկերոյթներ կազմակերպել արտասահմանեան հիւրերի համար:

Նոյն 1944 թւականի Փետրւարի 1ին, Գերագոյն Խորհուրդը ընդունեց օրէնք, որի համաձայն հանրապետութիւններում ստեղծւում են պաշտպանութեան նախարարութիւններ (ժողովրդական **կոմիսարիատներ**) և զինւած ուժեր: Ո՞ւր

են այդ նախարարութիւնները, ո՞ւր են այդ զինւած ուժերը: Նրանք չկան և երբեք էլ չեն եղել: Միայն պատերազմի տարիներին, առանց որեւէ օրէնքի, ստեղծուեցին ազգային զօրամասեր, որոնք պատերազմից յետոյ լուծարքի ենթարկուեցին: Այժմ հանրապետութիւնները չունեն իրենց զինւած ուժերը և այդ հանգամանքը յաճախ թոյլ է տալիս ռուսներին ասելու, թէ տեսնո՞ւմ էք, մենք ենք հսկում ձեր սահմանները:

Այդ կարծիքը սակայն տրամաբանութիւնից զուրկ է: Չէ՞ որ Հայաստանը իր բնակչութեան «**պլան**աւորւած տոկոսը» տալիս է բանակին: Միայն այն տարբերութեամբ, որ հայ երիտասարդները ծառայում են հայրենիքից հեռու, Չինաստանի կամ Գերմանիայի սահմաններում, ռուս հրամանատարութեան ղեկավարութեան տակ և այնպիսի մի միջավայրում, որ ռուսականացման ահաւոր աղբիւր է ծառայում: Այսպիսով մենք ոչ ոքի պարտք չենք մեզ պաշտպանելու համար: Թող վերադարձնեն մեզ մեր երիտասարդներին, գնդապետներին և զօրավարներին և մենք ինքներս կ'ապահովենք մեր սահմանների անվտանգութիւնը:

Եւ, վերջապէս, ներքին սահմանների անձեռնմխելիութիւնը հանրապետութիւններում նոյնպէս խախտւում է ամէնուր: Վերջերս տարւեցին պաշտօնական խօսակցութիւններ այն մասին, որ մեծ արշաւ է պատրաստւում այդ ուղղութեամբ, այսպէս կոչւած տնտեսական շրջանների ստեղծման միջոցով: Իբր թէ տնտեսական շաւերը պահանջում են վերանայել ազգային հանրապետութիւնների սահմանները: Եթէ այդ ծրագրերը իրականացւեն, դա կը նշանակի, որ Ռուսաստանի ղեկավարութիւնը, տնտեսական մկրատը ձեռքին, կը կտրտի Խորհրդային Միութեան քարտէզը այնպէս, որ ազգերի հետքն անգամ չի մնայ, չէ՞ որ դա է մարքսիստական գաղափարախօսութեան ազգային հարցի լուծումը: Ճիշտ է, բոլոր այդ ձեւափոխումները «օրինական» կարգով կը մտնեն սահմանադրութեան մէջ և, ի հարկէ, այս դէպքում էլ չի խախտւի հանրապետութիւնների **սուվերենու**թիւնը…:

Այս բոլորը անկասկած գիտեն և ինձանից էլ լաւ գիտեն վերնշւած յօդւածի հեղինակներ Կարապետեանը և Սաղաթելեանը: Հէնց դրա համար էլ նրանք չեն քննարկում այդ հարցերը, այլ փորձում են **սուվերենու**թիւնը ապացուցել այսպիսի մի ժպիտ առաջացնող հատւածով. **«Հանրապետութեան կառավարութիւնը կարող է թոյլատրել լրացուցիչ թւով ուսանողներ ընդունել բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում և սովորողներ՝ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատութիւններում: Նա կարող է նաեւ աւելացնել նախադպրոցական հիմնարկների երեխաների, հիւանդանոցային մահճակալների թիւը, սահմանել կուլտուրայի մի շարք հիմնարկութիւնների դոտացիան և այլն»:**

Եթէ **սուվերենութիւնը** ապացուցելու համար հեղինակները ստիպւած են երեխաների մահճակալների աւելացման իրաւունքին դիմելու, հէյ վա՜խ իմ **սուվերեն** ժողովուրդ, բանդ բուրդ է։ Չէ՞ որ այդ իրաւունքները, ուրիշ ոչ-**սուվերեն**, բուրժւական երկրներում ունի ամէն մի անձ։ Սակայն ողբերգութիւնը կ՚աւելանայ, երբ ասեմ, որ այդ հատւածում նշւած միամիտ իրաւունքներից էլ զուրկ է հանրապետութիւնը։

Ոչ մէկ ուսանող ո՛չ մէկ բարձրագոյն հաստատութիւնում չի կարող աւելացնել հանրապետութիւնը ինքնուրոյն։ Ինձ յայտնի է մի այսպիսի դէպք։ Երեւանի համալսարանի մանրէաբանական բաժանմունք ընդունւելու համար բազմաթիւ ցանկացողներից 32 հոգի յանձնել էին բոլոր քննութիւնները, գերազանց գնահատականներով։ Սակայն, ընդունւել կարող էին 25ը, քանզի այդպիսին էր «վերեւից իջեցւած **պլանը**»։ Ընտրութիւն կատարելը անհնարին էր ըստ գնահատականների, բացի դրանից, այդ 32ի թւում կար նաեւ շատ բարձր պաշտօն գրաւող մի մարդու զաւակ։ Որոշեցին ընդունել բոլորին, այսինքն եօթը հոգի **պլանից** աւելի։ Յատուկ ներկայացուցիչներ թռան Մոսկւա և … ոչինչ չկարողացան անել։

Այդպիսին է կացութիւնը և լաւ կը լինէր, որ յօդւածի հեղինակները ճշտէին իրենց պնդումները, այսինքն գրէին իրականութիւնը, որը այսպէս է հնչում.- Հանրապետական կառավարութիւնը, **պետպլանի** և բարձրագոյն կրթութեան նախարարութեան միջոցով իրաւունք ունի դիմել Մոսկւային, խնդրելով թոյլատրել լրացուցիչ թւով ուսանողներ ընդունել բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում։ Կը թոյլատրի՞ Մոսկւան թէ ոչ՝ կախւած է նրանից, թէ ո՞վ է տանում այդ խնդրանքը Մոսկւա, թէ ի՞նչ տրամադրութիւն ունի թոյլատրողը և որքա՞ն է սիրում հայկական կոնեակը։

Պակաս ժպիտ առաջացնող չէ հետեւեալ պնդումը. «Միութենական հանրապետութիւնները իրաւունք ունեն իրենց կարիքների համար օգտագործել թողարկւած **գերպլանայի**ն արտադրանքի 50 տոկոսը»։ Պարզւում է, որ հանրապետութիւնները իրենց կարիքների համար, իրենց արտադրածը օգտագործելու համար նախ և առաջ պէտք է կատարեն Մոսկւայում հաստատւած **պլանը**, յետոյ գերակատարեն, իսկ յետոյ, նոր միայն այդ գերակատարածից վերցնեն կէսը։ Բայց կատարել այդ **պլանները** ինքնըստինքեան արդէն մեծ դժւարութիւնների հետ կապւած գործ է, իսկ գերակատարելը՝ առաւե՛լ եւս։ Բացի դրանից՝ ձեռնարկութիւններին ձեռնատու չի շատ գերակատարել **պլանները**, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ յաջորդ տարում այդ կապակցութեամբ **պլանը** կ՚աւելացնեն։

Յօդւածում ասւած է նաեւ, որ միութենական հանրապետութիւնների **մինիստր**ների **սովետ**ները իրաւունք ունեն տեղական ենթարկւածութեան ար-

դիւնաբերութեան ասպարէզում կատարել այս կամ այն միջոցառումները: Բայց քանի՞ տոկոսն է կազմում այդ արդիւնաբերութիւնը: Հայաստանում՝ միայն քսան տոկոսը, մնացածը ունի միութենական ենթարկւածութիւն և տեղական կառավարութիւնը չունի նրանց վրայ ոչ մի իշխանութիւն: Այսպիսով Հայաստանի արդիւնաբերութեան միայն քսան տոկոսն է, որ որոշ չափով ենթարկւում է ազգային կառավարութեանը:

Խրուշչովի ժամանակաշրջանում, հանրապետութիւնները, իսկապէս ստացան տնտեսական ինքնուրոյնութիւն, բայց, աւա՛ղ, դա երկար չտեւեց: Մոսկւան իսկոյն կռահեց, որ, եթէ այդպէս շարունակւի, հանրապետութիւնները կարող են կամաց-կամաց դուրս գալ նաեւ քաղաքական իշխանութեան տակից: Եւ նորից, բոլոր գիտական վերլուծութիւնների հակառակ, ապակենտրոնացած տնտեսավարութիւնը փոխարինւեց խիստ կենտրոնացած ղեկավարումով:

Յիշեալ յօդւածի հեղինակները հեգնանքով մէջբերում են արտասահմանեան տեսաբանների և քաղաքագէտների արտայայտութիւնները, որտեղ նրանք փորձում են ցոյց տալ, թէ փոքր պետութիւնների **սուվերենութիւնը** յաճախ խանգարում է մեծ պետութիւններին իրագործել այս կամ այն քաղաքականութիւնը, քանզի նրանք ստիպւած են հաշւի նստել փոքրերի **սուվերենութեան** հետ: Եւ դա հասկանալի է: Ի հարկէ, երբ ստիպւած ես հաշւի նստելու փոքրերի **սուվերենութեան** հետ, քաղաքականութեան մէջ պահանջւում է մեծ ճկունութիւն, առաջանում են մեծ դժւարութիւններ, իսկ յաճախ ստիպւած ես լինում ի վնաս սեփական շահերի կատարել որոշ զիջումներ: Խորհրդային իշխանաւորները այդ դժւարութիւններից զուրկ են, նրանք շատ հանգիստ են, որովհետեւ նրանք, ով պէտք է անհանգստութիւն պատճառէր, այսինքն խորհրդային հանրապետութիւնները, զուրկ են **սուվերենութիւնից** և ոչ մի տեսակի անհանգստութիւն կառավարութեան չեն պատճառում:

Այդ իմաստով խորհրդային հանրապետութիւնների «**սուվերենութիւնը**», իրօք, որ լաւագոյնը պէտք է համարել: Իսկ ի՞նչ անել միջազգային բարոյականութեան չափանիշների հետ, այդ էլ թողնում եմ յօդւածագրերի խղճի վրայ, որը փորփրելիս նրանք գուցէ յանգեն հանրայայտ ճշմարտութեանը, թէ կան ժամանակներ, երբ լռութիւնը հերոսութիւն է:

1974

ԹԵՐԹԵԼՈՎ «ԳՈՒԼԱԿ ԱՐՇԻՊԵԼԱԳ»Ի ԷՋԵՐԸ

Դոկտ.. Է. Յովհաննիսեան

Խորհրդային Ռուսաստանի մեծանուն գրագանագէտներէն Սոլժենիցինի *«Գուլակ Արշիպելագոս»* գործը ռուսերէնով լոյս տեսաւ և դարձաւ առիթ մը, պատրուակ մը, գրագէտին Խորհրդային Միութենէն արտաքսման և քաղաքացիութեան իրաւունքէ զրկումին։

Գործը գրական գործ մը չէ, վէպ մը չէ, ինչպէս իր միւս գործերը, այլ փաստացի տուեալներու վրայ կառուցուած ընդարձակ ուսումնասիրութիւն մըն է Խորհրդային Միութեան մէջ գոյութիւն ունեցած և ունեցող հալածանքներուն՝ բազմահազար, բազմամիլիոն անմեղներու դէմ, Ստալինի օրով, Լենինի օրով, նաեւ Ստալինէ ետք։ Գիրքը թարգմանելու վրայ է և ֆրանսերէնով ու անգլերէնով լոյս պիտի տեսնէ 1974ի գարնան միայն։

Մեր աշխատակիցը ուղղակի ռուսերէն հրատարակութիւնը կը ներկայացնէ *«Դրօշակ»*ի ընթերցողներուն, որոշ պարբերութիւններ ամբողջական թարգմանութեամբ, այլ պարբերութիւններ անհրաժեշտ ամփոփումի ենթարկելով։ «Գուլակ» բառը կազմւած է սկզբնատառերէն այն կազմակերպութեան, որ դատապարտեալներու ճամբարներուն ղեկավարութեան պատասխանատուութիւնը ունէր։ Արշիպելագոսը Սիպերիոյ մէջ ցրւած զանազան ճամբարներու հաւաքականութիւնն է։ Որքան ալ նկարագրւած ըլլան նման կեդրոնացման ճամբարներու պայմաններն ու նման դատապարտութեանց առաջնորդող որոշումները, դատերը կամ առանց դատավարութեանց տրւած վճիռները, կարելի չէ առանց խոր ցնցումի կարդալ Սոլժենիցինի «տեղեկագիր»ը։

ԽՄԲ.

Արտասահմանում հրատարակւած Նոբելեան մրցանակի դափնեկիր Ա-լեքսանդր Սոլժենիցինի **«Գուլագ Արշիպելագ»** գիրքը քաղաքական ովկիանո-սում, լիճը նետւած քարի նման, առաջացրեց ալեկոծում, որի ալիքները շփուեցին գրեթէ բոլոր երկրներին։ Սոցիալիստական թէ դրամատիրական, զարգացած թէ յետամնաց, դեմոկրատական թէ բռնապետական, բոլոր այս երկրները, ամբողջ քաղաքակիրթ մարդկութիւնը այս կամ այն ձեւով արձա-գանգեց Սոլժենիցինի այդ փայլուն աշխատութեանը։

Ֆրանսական **«Ֆիգարօ»** թերթը գրում էր. «Այդ գրքի նշանակութիւնը մեծ է, քանզի նա կոչ է անում բոլորին՝ միշտ անհանգստանալ ընդհանուր ապագայի համար»: Մոսկւայից ֆրանսացի թղթակից Ռոբերտ Լակոնտրը յայտնում էր, թէ խորհրդային ղեկավարութիւնը մտահոգած է նրանով, որ արեւմտաեւրոպական կոմկուսների ղեկավարները, որոնք նախկինում պաշտպանում էին Սոլժենիցինին, ամենեւին էլ չեն շտապում վերանայել իրենց դիրքերը:

Յայտնի է, օրինակ, Ֆրանսական Կոմկուսի գլխաւոր քարտուղար Ժորժ Մարշէի մի քանի անգամ կրկնած կարծիքը, որ, եթէ Ֆրանսիայում կոմունիստները գան իշխանութեան գլուխ, ապա այն ժամանակ էլ Սոլժենիցինը կարող է ազատ հրատարակել իր ստեղծագործութիւնները: Ֆրանսական **«Կոմբա»** թերթի քաղաքական մեկնաբանը գրում էր. «Սոլժենիցինը միշտ գրել է միայն ճշմարտութիւնը: Ուստի մինչեւ որ խորհրդային ղեկավարութիւնը Միջազգային Կարմիր Խաչի ներկայացուցիչներին չթոյլատրի այցելել Մորդովիայի ճամբարները և այն հոգեբուժարանները, որտեղ տառապում են այլախոհները, ոչ մի հիմք չկայ հաւատալու, որ **«Գուլագ Արշիպելագ»**ը այսօր գոյութիւն չունի»:

Խորհրդային գրողների միութեան անդամ Սերգէյ Միխայլկովը, մոսկովեան իր ռադիո-ելոյթում, երեք անգամ կրկնեց հետեւեալը. «Թող չկարծի Սոլժենիցինը, որ նրան որեւէ մէկը կը բռնի ու չի թողնի, եթէ նա ցանկանայ իր համար տեղ գտնել այն հասարակարգում, որտեղ ե՛ւ ինքը, ե՛ւ հասարակարգը, ե՛ւ իր ստեղծագործութիւնները կը ծառայեն սոցիալիզմի և կոմունիզմի դէմ ուղղուած պայքարին»: **«Պրաւդա»**յի քաղաքական մեկնաբան Եուրիյ Ժուկովը խիստ մեղադրեց արտասահմանեան ռադիոկայանները, որոնք ռուսերէն լեզուով սկսել են **«Գուլագ Արշիպելագ»**ի մասին ռադիոհաղորդումներ անել: Ելոյթ ունենալով հեռուստատեսութեամբ, նա դիմեց լսողներին համոզելով, որ նրանք չլսեն այդ հաղորդումները (իբր թէ անամօթաբար խլացման պայմաններում դա հնարաւոր է անել): «Ռադիո-Մոսկւա»ն իր իտալերէն լեզուով հաղորդումներից մէկում Սոլժենիցինին անւանեց միջազգային լարւածութեան մեղմացման թշնամի: **ՏԱՍՍ**ը անւանեց նրան խրտիլակ, իսկ նրանց, ովքեր հրատարակում են **«Գուլագ»**ի մասին նիւթեր՝ Գարբիսոնի և Սոլոբերիի նման անուղղելի հակասովետականներ:

Հայնրիխ Բոյլը յայտարարեց, որ Սոլժենիցինը իր գրքով յուշարձան կանգնեցրեց **տեռոր**ի զոհերին, ընդ որում այդ գործում ցուցաբերեց անձնական արիութիւն և վարւեց այնպէս, ինչպէս կը վարւէր ամէն մի ազնիւ գրող: Անգլիական **«Թայմզ»** թերթը, որը ընդհանրապէս իր խմբագրականներում երբեք չի անդրադարձել որեւէ գրքի, Յունւարի 7ին, «Ռուսաստանի չթաղւած անցեալը» վերնագրով իր խմբագրականում, գրում էր. «Սոլժենիցինի դէմ ուղ-

ղւած իւրաքանչիւր լուրջ քայլ Արեւմուտքում կ'առաջացնի անցանկալի հետեւանքներ: Այդպիսի քայլերը կարող են դժւարացնել արեւմտեան պետութիւնների մերձեցումը Խորհրդային Միութեան հետ: Այդ մասին պէտք է իմանան Կրեմլում: Սոլժենիցինի դէմ բոլոր հետագայ քայլերը կը դառնան մի ինչ որ չափանիշ Խորհրդային Միութեան իսկական տրամադրութիւնների մասին»:

Ինչո՞ւմն է բանը: Ինչո՞ւ այդ «գեղարւեստական հետազօտութեան փորձը» (այդպէս է անւանում իր աշխատութիւնը հեղինակը) արժանացաւ այդքան մեծ ուշադրութեան: Նոյնիսկ Չերնիշեւսկու «Ի՞նչ անելը», որը համարւում է Ռուսական Յեղափոխութեան նախերգանքը, քաղաքական ոլորտներում այդքան մեծ աղմուկ չհանեց: Բանը նրանումն է, որ Սոլժենիցինի գեղարւեստական ոճով և իրեն յատուկ տաղանդով գրւած պատմական, փիլիսոփայական և քաղաքական վերլուծութիւնը վերաբերում է ոչ թէ 1937 թւականի մաքրագործումներին և բանտարկութիւններին (այդպէս են շատերը ուզում ներկայացնել այդ աշխատութիւնը և ասում են, թէ ինչ իմաստ ունի նորից բորբոքել հին վէրքերը, չէ՞ որ 20րդ համագումարը դատապարտեց այդ ամէնը), այլ դա խորհրդային վարչակարգի ամբողջ պատկերն է, նրա Էութիւնը, նրա սկզբունքային անբարոյականութիւնը:

Սոլժենիցինը ցոյց տւեց, որ Ստալինը միայն շարունակում էր Լենինի գործը, որ Լենինի համեստութիւնը, բարոյականութիւնը և դեմոկրատիզմը ոչ այլ ինչ են, եթէ ոչ առասպել: Սոլժենիցինին զարմանալիօրէն յաջողւել է վրձինի մի քանի հարւածներով, փակագծերում, միջանկեալ նախադասութիւններում կատարել խորհրդային վարչակարգի համեմատութիւնը Ցարական Ռուսաստանի և Հիտլերական Գերմանիայի հետ ու ցոյց տալ, որ խորհրդային վարչակարգը աւելի դաժան է, աւելի զուրկ օրէնքից և բարոյականութիւնից:

Սոլժենիցինի գիրքը այսօր արժանի է դառնալու մարդկութեան ուղեցոյց և, ո՛րքան շուտ նա թարգմանւի հայերէնով, այնքան շուտ մեզ կը յաջողւի փրկել մեր երիտասարդութիւնը մարքսիստական վարակից:

Սոլժենիցինի լեզուն բարդ է, նրա նախադասութիւնները և մտքերը ներծծւած են ռուսական այն նրբութիւններով, որոնք հազիւ թէ հնարաւոր լինի թարգմանել որեւէ լեզւով: Հրաժարւելով անհամեստ փորձից, գոնէ մօտաւորապէս արտայայտելու **«Գուլագ Արշիպելագ»**ի ոգին, ես հրաւիրում եմ ընթերցողներին ինձ հետ միասին թերթել այդ անգնահատելի, գերտաղանդաւոր գրքի էջերը:

«Այս գրքում չկան ոչ յօրինւած դէմքեր, ոչ յօրինւած դէպքեր. մարդիկ և դէպքերի վայրերը կոչւած են իրենց սեփական անուններով: Եթէ կոչւած են սկզբնատառերով, ապա դա արւել է անձնական նկատառումներով: Եթէ չեմ անւանել ընդհանրապէս, ապա միայն այն պատճառով, որ մարդկային յիշո-

ղութիւնը չի պահպանել անունները,- բայց ամէն ինչ եղել է ճիշտ այսպէս»: Այսպէս է սկսում իր աշխատութիւնը Սոլժենիցինը: «Նիւրոում եմ նրանց բոլորին, ում կեանքը չհերիքեց պատմել այս մասին: Եւ թող ներեն ինձ նրանք, որ չկարողացայ տեսնել և յիշել ամէն ինչ, չկարողացայ հասկանալ ամէն ինչ»,- գրում է նա և խոստովանւում է.

«Այսպիսի մի գիրք ստեղծելը մէկ մարդու ուժերից վեր է: Բացի նրանից, ինչ ես դուրս բերեցի Արշիպելագից իմ կաշւի վրայ, իմ յիշողութիւններով, ականջով, աչքերով, բացի դրանից, այս գրքի նիւթը ինձ տուեցին 227 հոգի, որոնց ես չեմ յայտնում շնորհակալութիւն, քանզի սա տանջւածների և սպանւածների մեր ընդհանուր յուշարձանն է: Դեռ չի եկել այն ժամանակը, որ ես կարողանամ տալ նրանց անունները… Եւ եթէ մեր երկրում դեռ երկար ժամանակ չպէտք է շողայ ազատութեան լոյսը և այս գրքի ձեռքից ձեռք անցնելը կապւած կը լինի մեծ վտանգների հետ, ես պէտք է խոնարհւեմ նաեւ ընթերցողների առջեւ, ՆՐԱՆՑ, սպանւածների անունից»:

Առաջին իսկ էջերից ընթերցողի առջեւ բացւում է բանտարկութեան սարսափելի պատկերը: Անսպասելի ձերբակալութիւն, երեխաների լաց, բանտարկողների վայրենի կոպտութիւն և, որպէս օրէնք, զարմացած և միամիտ հարց. «Ե՞Ս, ԻՆՉՈ՞Ւ»: Մանրամասնօրէն նկարագրելով բանտարկութեան արարողութիւնը, Սոլժենիցինը հիմնական շեշտը դնում է այն հանգամանքի վրայ, որ բանտարկւողները զարմանալիօրէն չէին դիմադրում, նմանւում էին ոչխարների, ճագարների, բայց չէին դիմադրում, նրանք անմեղ գառնուկների նման գնում էին սպանդանոց, առանց որեւէ ծպտուն հանելու: Այդ համընդհանուր դիմադրութեան պակասը Սոլժենիցինը բացատրում է համընդհանուր անմեղութիւնով: Սակայն այդ դիմադրութեան բացակայութիւնը խիստ դատապարտւում է հեղինակի կողմից:

«Յետոյ, արդէն ճամբարում,- գրում է նա,- մեզ խեղդում էր ամօթը մեր ճագարութեան համար և մենք մտածում էինք. «իսկ ի՞նչ կը լինէր, եթէ ամէն մի **Կա. Գէ. Բէ**իստ (K.G.B) գիշերը գնալով բանտարկելու, համոզւած չլինէր, թէ արդեօք կենդանի կը վերադառնա՞յ և ամէն անգամ մնաս բարով անէր ընտանիքի հետ: Եթէ, օրինակ, Լենինգրադի զանգւածային բանտարկութիւնների ժամանակ, երբ քաղաքի մէկ չորրորդ մասը բանտ նետւեց, մարդիկ ոչ թէ նստէին իրենց բներում և սարսափահար եղած հետեւէին ամէն մի քայլի, ամէն մի ձայնի, այլ գիտակցէին, որ այլեւս կորցնելու ոչինչ չունեն, որ բնակարանում կառւցէին **բարիկադ**ներ և երկաթներով, կացիններով, մուրճերով դիմաւորէին այդ գիշերային հիւրերին: Չէ՞ որ նախօրօք յայտնի էր, որ այդ **«կար-**

տուզ»ները* բարի նպատակով չեն գալիս և ուրեմն չես սխալւի, եթէ երկաթով կոտրես նրա մռութը։ Կամ այն «ագռաւիկ» կոչւող մեքենան, որ կանգնած է փողոցում և որում կայ միայն մէկ վարորդ, փախցնել, կողերը ծակել, կոտրել։ Այդ դէպքում «օրգանները» շատ շուտ կը տեսնեն, որ պակասում են իրենց շարքերը և, չնայած Ստալինի ծարաւին, կը կանգնէր անիծւած մեքենան։ Եթէ՞, եթէ՞… Մեզ պակասում էր ազատասիրութիւնը։ Իսկ դրանից էլ աւելին՝ իրական վիճակի գիտակցութիւնը։ Մենք մեզ ծախսեցինք 17 թւականի մէկ բռնկման մէջ, իսկ յետոյ ՇՏԱՊՈՒԻՄ ԷԻՆՔ ենթարկւել, ՀԱՃՈՅՔՈՎ ենթարկւում էինք… Պարզապէս մենք արժանի էինք հետագայ բոլոր բաներին»։

Սոլժենիցինը խոստովանւում է, որ ինքը բոլորի նման լռել էր, բայց համարում է որ լռողները ունէին տարբեր պատճառներ։ Ոմանք դեռ յոյս ունէին, որ վերջը լաւ կը լինի և վախենում էին որ իրենց ձայնը բարձրացնելով կը զրկւեն այդ վերջին յոյսից։ Միւսները դեռ չէին հասունացել այնքան, որ ճիչով դիմեն ամբոխին։ Նրանք պարզապէս չգիտէին ի՞նչ գոռալ։ Եւ, վերջապէս, կային մարդիկ, որոնց սիրտը այնքան էր լցւած, աչքերը այնքան բան էին տեսել, որ հնարաւոր չէր այդ գծով դարդերը վերածել մէկ անկապ ճիչի։

«Իսկ ես,- գրում է Սոլժենիցինը,- ես լռելու համար ունէի եւս մէկ պատճառ։ Այս մոսկուացիները, որոնք լցրել են մետրոյի աստիճանները, քիչ են։ Այստեղ իմ ճիչը կը լսեն 200 հոգի, երկու անգամ երկու հարիւր, իսկ ի՞նչ անել 200 միլիոնի հետ։ Մշուշի մէջ նախազգում եմ, որ կը գայ ժամանակը եւ կը գոռամ ես 200.000.000ի համար… իսկ առայժմ, բերանս չբացած, աստիճանները գլորում են ինձ դէպի դժոխք։ Ես կը լռեմ և Օխոտնի փողոցում, չեմ գոռայ և Մետրոպոլի մօտ, ձեռքերս չեմ թափահարի է՛ւ Լուբիանկա կոչւող Գողգոթայի հրապարակում»։ Այս ընդհանուր ճագարացման մեղադրանքի հետ դեռ մենք շատ կը հանդիպենք **«Գուլագ Արշիպելագ»**ի էջերում։

Այստեղից և այնտեղից ձերբակալւած, անկողիններից հանւած, գնացքներից իջեցւած, թատրոններից, հանգստեան տներից, բաղնիքներից, զուգարաններից† հանւած մարդկանց հաւաքում էին կենտրոնական բանտերում և եթէ չէին գնդակահարում, ապա նրանցից կազմւում էին հոսքեր, որոնք տանում էին **«Գուլագ Արշիպելագ»**ը։

Գուլագ նշանակում է ճամբարների Պետական Վարչութիւն։ Այդ հզօր Վարչութիւնը իր հովանաւորութեան տակ ունէր հազարաւոր բանտեր ու ճամբարներ, որոնք կղզիների նման կազմում էին մի ընդհանուր արշիպելագոս։

---

* ԿԳԲի աշխատողների զգեստագլխարկը։

† Զուգարան արեւելահայերէն զարդախուց է նշանակում։

«Այնտեղ ամէն ժամ թռչում են ինքնաթիռներ, գնում են նաւեր, սլանում են գնացքներ, նրանց վրայ նշուած չէ վերջին կայանը: Տոմս վաճառողները կը զարմանան, եթէ դուք նրանցից ցանկանաք տոմս գնել Արշիպելագոս գնալու համար: Ոչ ամբողջ Արշիպելագոսի և ոչ էլ նրա առանձին կղզիների մասին նրանք ոչինչ չեն լսել: Ով գնում է Արշիպելագոսը կառավարելու համար, գնում է հսկելու Արշիպելագոսի վրայ, գնում է զինուորական կոմիսարիատներից: Իսկ ով գնում է այնտեղ մեռնելու, ինչպէս մենք ձեզ հետ՝ ընթերցող, գնում է պարտադիր և միակ ճանապարհով՝ բանտարկութեան ճանապարհով»:

Երբ այսօր դատապարտում են անձի պաշտամունքը, գրեթէ բոլորը նորից և նորից խօսում են 37-38 թուականների մասին: Եւ դա սկսել է այնքան մտնել մեր ուղեղների մէջ, որ թւում է թէ իբր ոչ դրանից առաջ, ոչ դրանից յետոյ չեն եղել բանտարկութիւններ: Սոլժենիցինը բազմաթիւ փաստերով ցոյց է տալիս, որ 37 թուականը չի եղել ոչ միակը և ոչ էլ գլխաւորը: Դրանից առաջ, եղել է 20 թուականը, եղել են 29-30 թուականները, դրանից յետոյ եղել են 44-46 թուականները, 48 և 49 թուականները, իսկ դրանից էլ առաջ, դեռ 1918 թուականին, Լենինը ձեւակերպեց հետեւեալ նպատակը. «Մաքրել ռուսական հողը վնասակար միջատներից»: Իսկ միջատները ասելով նա հասկանում էր ոչ միայն դասակարգային թշնամիներին, այլեւ այն բանւորներին, որոնք ծուլանում էին աշխատել: Մեզ համար հիմա դժւար է հասկանալ,- գրում է Սոլժենիցինը,- թէ ինչու բանւորները հազիւ եկած իշխանութեան գլուխ ծուլանում էին աշխատել: Լենինեան այդ միջատների տեսութեան մասին գրում է հետեւեալը.

«Ումն էր ընդգրկում միջատների այդ լայն հասկացութիւնը, այժմ անհնարին է լիովին ուսումնասիրել, միատարր չէր Ռուսաստանի բնակչութիւնը: Միջատներ էին ազնւականները, միջատներ էին ինքնահամալիրները, բոլոր սեփականատէրերը, շատ միջատներ կային ուսումնարանների ուսուցիչների մէջ: Ամբողջովին միջատներ էին եկեղեցականները և եկեղեցիներում երգում էին միջատներից կազմւած երգչախմբերը: Եւ այն տոլստոյականները, որոնք ընդունւում էին խորհրդային ծառայութեան մէջ, բայց չէին տալիս ստորագրութիւններ, որ պատրաստ են պաշտպանել խորհրդային իշխանութիւնը զէնքով, նոյնպէս պահում էին իրենց միջատների նման: Իսկ ինչքա՜ն կային անիծւած մտաւորականներ, տարօրինակ մարդիկ, ճշմարտութիւն որոնողներ, խենթեր, որոնցից դեռ Պետրոս Ա.ը փորձում էր ազատւել և որոնք միշտ խանգարում են կարգաւորւած և խիստ վարչակարգերին: Եւ անհնարին էր այդ առողջապահական մաքրագործումները, այն էլ պատերազմական պայմաններում, իրագործել պահպանելով արդարադատական չափանիշները և հնացած ձեւերը: Ուստի առաջ եկաւ մի նոր ձեւ,- ոչ դատական դատաստան, և այդ անշնորհակալ գործը իր վրայ վերցրեց անձնազոհաբար ՎՉԿան – յեղափոխութեան պա-

հապանը, մարդկութեան պատմութեան մէջ միակ պատժիչ մարմինը, որը կենտրոնացրել էր իր ձեռքերի մէջ հետախուզութիւնը, բանտարկութիւնը, հարցաքննութիւնը, դատախազութիւնը, դատավարութիւնը և որոշման իրականացումը»:

Եւ երբ իսկապէս սկսւեց այդ «միջատ»ների ոչնչացումը, պրոլետարական գրող Մաքսիմ Գորկին համարձակւեց Լենինին արտայայտել իր դժգոհութիւնը, սակայն ռճրագործների իշխանը պատասխանեց. «Մեզ համար պարզ է, որ սխալներ եղել են, բայց յետոյ ի՞նչ, ա՛խ, ինչպիսի անարդարութիւն». նա խորհուրդ է տալիս Գորկուն չնւնւալ փտած մտաւորականութեան յետեւից: Եւ բանտարկեալների հոսքերը աւելանում, հաստանում, առատանում և տանում էին «միջատ»ներին դէպի **«Գուլագ Արշիպելագ»**: Արդէն 20ական թականներին,- գրում է Սոլժենիցինը,- յայտնւեցին մաքուր ազգ. հոսանքներ, Ադրբեջանից՝ մուսաւաթականները, Հայաստանից՝ դաշնակցականները, Վրաստանից՝ մենշեւիկները, Թուրքմենստանից՝ բասմաչները և բոլոր նրանք, ովքեր ժամանակին դիմադրել էին խորհրդային կարգերի հաստատմանը: 20ական թականներին շարունակւում էին նախկին սպայութեան մաքրագործումները: Սակայն սպայութիւնը Արշիպելագոս ուղարկելով խնդիրը չաւարտւեց, խնդիրը դեռ նոր սկսւում էր. չէ՞ որ մնացել էին այդ սպաների մայրերը, կանայք և երեխաները: Օգտւելով անսխալ հասարակագիտական ուսումնասիրութիւններից, պարզւել էր, որ նրանք իրենց ամուսինների բանտարկութիւնից յետոյ չեն կարող ունենալ լաւ տրամադրութիւններ: Դրանով իսկ նրանք ստիպում էին իրենց էլ բռնել: Եւ Արշիպելագոս լցւեց նաեւ այդ հոսքը»:

Զարմանալին այն էր, որ բոլոր այդ հոսքերի և ԿԲԳի երկար տարիների գործունէութեան հիմքում ընկած էր մէկ յօդւած, 1921 թականի քրէական օրէնսգրքի 148 յօդւածներից մէկ յօդւած: Այդ յօդւածը ընդգրկում էր տիեզերքը: Չկար ոչ մի գործ, գաղափար, միտում, խօսք, որ չմտնէր հզօր 58րդ յօդւածի տակ: Այդ յօդւածը 14 կէտերից էր: Ամէն մի կէտ արտայայտում էր յանցագործութեան որեւէ մի տեսակ, հակայեղափոխական գործունէութիւն (առաջին կէտ), զինւած ապստամբութիւն (երկրորդ կէտ), աջակցութիւն որեւէ արտասահմանեան պետութեանը, որը գտնւում է Խորհրդային Միութեան հետ պատերազմի մէջ (երրորդ կէտ), օգնութիւն միջազգային բուրժուազիային (չորրորդ կէտ) և այլն: Եւ եթէ մենք թւենք իսկ բոլոր կէտերը, ապա կը տեսնենք, որ հոչակաւոր 58րդ յօդւածը այդքան էլ լայն հնարաւորութիւններ չէր բացում ռճրագործների առջեւ: Այդ յօդւածի տակ ընկնող ամբաստանեալների թիւը բաւականին սահմանափակ պէտք է լինէր և շատ շուտ պէտք է սպառւէր: Բայց այդպէս չեղաւ իրականում: 58րդ յօդւածի լայն մեկնաբանութիւնները դարձրին նրան գերհզօր և ամէն ինչ ընդգրկող:

Սոլժենիցինը գրում է. «Առաջին կէտից մենք իմանում ենք, որ հակայեղափոխական է ճանաչւում ամէն մի գործողութիւն (կամ անգործութիւն), որը ուղղւած է իշխանութիւնը թուլացնելու նպատակին: Լայն մեկնաբանութիւնը բերում է նրան, որ սոված և տանջւած բանտարկեալի հրաժարականը աշխատանքից ճամբարում գնահատւում է որպէս իշխանութեան թուլացում և հետեւանքը՝ գնդակահարութիւն: Հետեւեալ պատմութիւնը կարող է ծառայել որպէս լայն մեկնաբանութեան փայլուն օրինակ: Ոմն լեհ ծնւել էր Լեմբերդ քաղաքում, այն ժամանակ, երբ այդ քաղաքը Աւստրո-Հունգարական կայսրութեան մաս էր կազմում: Մինչեւ Երկրորդ Համաշխարհային պատերազմը նա ապրում էր իր հարազատ քաղաքում, իսկ յետոյ տեղափոխւեց Աւստրիա, որտեղ ձերբակալւեց մերոնց կողմից: Նա ստացաւ 10 տարի, որպէս Ուկրաինայի դաւաճան, քանզի չէ՞ որ Լեմբերդը այդ ժամանակ արդէն դարձել էր ուկրաինական Լվով քաղաքը: Խեղճ մարդը քննութեան ժամանակ այդպէս էլ չկարողացաւ ապացուցել, որ ինքը Վիեննա է մեկնել ամենեւին էլ նպատակ չունենալով դաւաճանել Ուկրաինային»:

Սոլժենիցինը շարունակում է.«Դաւաճանութեան կէտի ամենակարեւոր լայնացումը այսպէս կոչւած մտաղրութիւնն է: Այսինքն այն դէպքը, երբ ոչ մի դաւաճանութիւն տեղի չէր ունեցել, բայց քննիչը նկատում է ձեզ մօտ դաւաճանութեան մտաղրութիւն և դա բաւական է, որպէսզի դուք դատւէք որպէս իսկական դաւաճան: Լայն մեկնաբանութիւնները զինւած ապստամբութեան են վերագրում հանրապետութիւնների բոլոր փորձերը՝ օգտւելու Խորհրդային Միութիւնից դուրս գալու իրաւունքից: Նոյնիսկ եթէ հանրապետութեան ամբողջ բնակչութիւնը ցանկանայ անջատւել, իսկ Մոսկւան չցանկանայ, միեւնոյն է, այդ ցանկութիւնը կը բերի 10-15 տարւայ բանտարկութեան:

«Երկրորդ կէտի լայն մեկնաբանութիւնը տալիս էր հնարաւորութիւն՝ բանտարկել ամէն մի քաղաքացու, որը եղել է գերմանական բռնագրաւման տակ, անկախ նրանից, թէ գերմանական զինւորի կօշիկի կրու՞նկն է ամրացրել, թէ՞ մի փունջ բողկ է վաճառել նրան, կամ թէ բարձրացե՞լ է զաթիչների մարտական ոգին նրանով, որ պարել կամ քնել է նրանցից մէկի հետ»:

58րդ յօդւածի 5րդ կէտը վերաբերում է նրանց, ովքեր դրդում են օտարներին պատերազմ յայտարարել Խորհրդային Միութեանը: Սոլժենիցինը գրում է, որ այդ կէտը առաջին հերթին պէտք էր օգտագործել Ստալինի նկատմամբ, քանզի նրա կուրութիւնը և անխելքութիւնը բերեց Ռուսաստանին խայտառակ պարտութիւններ: Այդ պարտութիւնները չէր կարելի համեմատել ոչ 1904 և ոչ էլ 1915 թւականի պարտութիւնների հետ: Սոլժենիցինը համարում է, որ այդպիսի պարտութիւններ Ռուսաստանը չէր տեսել 13րդ դարից յետոյ:

Յօդւածի 6րդ, այսպէս կոչւած լրտեսութեան կէտը մեկնաբանւել էր այնքան, որ, եթէ հաշւենք բոլոր այդ կէտով դատապարտւածներին,- գրում է Սոլժենիցինը,- ապա կը ստացւի, որ մեր ժողովուրդը չէր զբաղւում ոչ գիւղատնտեսութեամբ, ոչ արդիւնաբերութիւնով և ոչ էլ որեւէ մի ուրիշ բանով,- իր գոյութիւնը նա պաշտպանում էր լրտեսութիւնից ստացւած գումարներով: Այս կէտի լայն մեկնաբանութիւնը կայանում էր նրանում, որ դատապարտւում էին ոչ միայն լրստեսութեան, այլ նաեւ կասկածների համար: Բացի դրանից, այս կէտի տակ էին ընկնում «կապեր», որոնք կարող են տանել դէպի լրտեսութիւն:

«Օրինակ,- ասում է Սոլժենիցինը,- ձեր կնոջ ծանօթի ծանօթը իր զգեստը կարել է այն դերձակի մօտ (ի հարկէ, ԿԳԲի աշխատակից), որտեղ կարում է նաեւ իր շորերը մի արտասահմանեան դիւանագէտի կին: Եւ այսպէս 58րդ յօդւածի բոլոր կէտերը, որոնց լայն մեկնաբանութիւնները իրօք որ տւել էին այդ յօդւածի բոլոր երեւոյթները ընդգրկելու կարողութիւնը: Այդ լայն մեկնաբանութիւնն էր, որ հազարաւոր գիւղացիներին բանտ նետեց, միայն այն հիման վրայ, որ նրանք գիշերները հնձած արտերից ցորենի հասկեր էին հաւաքում:

Սոլժենիցինը գրում է, որ ճորտատիրական Ռուսաստանում գիւղացին երբեք չէր հասել այդպիսի աղքատութեան: Այդ նոր բերքահաւաքի ձեւը առաջացել էր այն պատճառով, որ գիւղացին ոչ մի յոյս ունէր որեւէ բան ստանալու կոլտնտեսութիւնից իր ցերեկային աշխատանքի համար: 58րդ յօդւածի 13րդ կէտը վերաբերում էր «ցարական օխրանկայում» ծառայողներին: Այդ մասին Սոլժենիցինը գրում է.

«Հիմքեր կան կասկածելու, որ Ստալինը նոյնպէս կարող էր մեղադրւել այդ յօդւածով: Այդ կարգի ոչ բոլոր փաստաթղթերն են պահպանւել 17 թւականից յետոյ: Աքսորում մեռած Ֆ. Ջունկովսկին, նախկինում Օխրանկայի ղեկավարներից մէկը, համոզւած էր, որ Օխրանկայի արխիւների անսպասելի արագ այրումը, Փետրւարեան յեղափոխութիւնից անմիջապէս յետոյ, որոշ շահագրգռւած յեղափոխականների գործն էր… Բայց լրտեսութիւնը միայն նեղսիրտ Ստալինի մոլագարութիւնը չէր: Լրտեսութիւնը անմիջապէս ճանաչւեց շատ յարմար միջոց բոլոր նրանց կողմից, ովքեր դասւում էին արտօնեալների շարքին: Նա բնական արդարացումն էր արդէն առաջացած համընդհանուր գաղտնապահութեան, տեղեկութիւն ստանալու արգելքների, փակ դռների, անձնաթղթերի, ցանկապատած ամառանոցների և գաղտնի մատակարարութիւնների: Լրտեսամոլութեան վահանը թոյլ չէր տալիս, որ ժողովուրդը տեսնէր, թէ ի՞նչպէս է բիւրոկրատիան պայմանաւորւում դասաւորութիւնների մասին, ի՞նչպէս է մատնւած անբանութեան, ի՞նչպէս է սխալւում, ի՞նչպէս է ուտում և ի՞նչպէս է զարճանում»:

58րդ յօդւածի լայն մեկնաբանութիւնը հասցրեց բոլշեւիկներին այն ցեղապաշտութեանը, որի ժամանակ տւեալ ազգի պատկանելիութիւնը արդէն իսկ յանցագործութիւն է ճանաչւում: Սկսած 1943 թւականից, երբ խորհրդային բանակը սկսեց ազատագրել իր հողերը, **«Գուլագ»** ուղղւեցին, այսպէս կոչւած, յանցաւոր ազգերը՝ կալմիկները, չեչէնները, ինգուշները, կաբարդացիները, իսկ 1944 թւականին Ղրիմի թաթարները: Սոլժենիցինը գրում է.

«Այսպէս արագ և աշխոյժ նրանց հնարաւոր չէր լինի ուղարկել իրենց յաւերժական աքսորավայրը, եթէ «օրգաններին» օգնութեան չհասնէին կանոնաւոր բանակը և ռազմական բեռնատար աւտոմեքենաները: Զօրամասերը մարտական դասաւորութեամբ շրջապատում էին այն գիւղերը, որոնք պատրաստւել էին ապրել այստեղ հարիւրամեակներ, և 24 ժամւայ ընթացքում ափահանման արագութեամբ տեղափոխւում էին կայարաններ, բեռցւում էին գնացքների վրայ և քշւում Սիբիր, Ղազախստան, Միջին Ասիա, ռուսական հիւսիսը: Ուղիղ մէկ օրից յետոյ, նրանց հողը, անշարժ գոյքը արդէն անցնում էր նոր տէրերին: Ինչպէս գերմանացիներին պատերազմի սկզբին, այնպէս էլ այստեղ բոլոր այս ազգերը դատապարտւում էին միայն արեան չափանիշներով, առանց որեւէ հարցաթերթ լրացնելու գլորւում էին աքսորավայր ե՛ւ կուսակցութեան անդամները, ե՛ւ աշխատանքի հերոսները, ե՛ւ դեռ չաւարտւած պատերազմի հերոսները…

«1948 թւականին առաջացաւ աքսորավայր տանող եւս մի հոսք: Դա Ազովի, Կուբանի և Սուխումի յոյներն էին: Ոչ մի յանցանք չունէին նրանք ՀՕՐ առջեւ, բայց նա հանում էր նրանցից վրէժը Յունաստանում իր ունեցած պարտութիւնների համար: Կարծում եմ, որ այդ հոսքը նրա անձնական ցնորքի արդիւնքն էր:

«Իսկ 1950 թւականին, այդ նոյն վրիժառութեան պատճառով, Արշիպելագոս հոսեցին իրենք՝ ապստամբեալները Մարկոսի բանակից: Նրանց մէջ էին բուլղարացիները:

«Ստալինը, իր կեանքի վերջին տարիներին, պատրաստւում էր հրէական հոսք (1950 թւականից նրանց արդէն քաշում էին որպէս **կոսմոպոլիտ**ների): Այդ պատճառով էլ ստեղծւեց բժիշկների գործը: Մեզ մօտ ոչ մի բան ճիշտ իմանալ հնարաւոր չէ, ոչ ներկայումս և ոչ էլ երկար ժամանակ ապագայում: Սակայն Մոսկովեան խօսակցութիւններից պարզւում է, որ Ստալինի ծրագիրը հետեւեալն էր. մՄարտի սկզբին «մարդասպան բժիշկներին» պէտք է կախէին կարմիր հրապարակի վրայ: Բնական է, որ վրդովւած հայրենասէրները (հրահանգիչների ղեկավարութեան տակ) պէտք է նետւէին կազմակերպելու հրէական ջարդեր: Եւ այդ ժամանակ կառավարութիւնը (ճանաչւում է Ստալինի ձեռքը) մեծահոգութեամբ փրկում է հրեաներին ժողովրդական զայրոյթից և

նոյն գիշերը տեղահանում է բոլորին և Մոսկւայից աքսորում է Սիբիր, որտեղ արդէն պատրաստուում էին **«բարակ»** կոչւող փայտեայ տնակները։ Սակայն դա եղաւ նրա առաջին ձախողած մտադրութիւնը։ Կամեցաւ Աստուած, որ նա շունչը փչի (ըստ երեւոյթին՝ մարդու ձեռքով)»։

Նկարագրելով, թէ ի՞նչպէս էին առաջանում բանտարկեալների հոսքերը, թէ ի՞նչպէս էին նրանք լցնում **«Գուլագ Արշիպելագ»**ը, Սոլժենիցինը ընդգծում է, որ դատարկ բանտեր Խորհրդային Միութիւնը չի ունեցել երբեք, նրանք միշտ եղել են կա՛մ լեցուն և կամ էլ լեփ-լեցուն։ Եւ նորից մարդկութեանը ուղղուած հեղինակի մեղադրանքը։ Նա դառը հեգնանքով գրում է, որ, երբ մենք բոլորս մեր բաւականութեան համար ուսումնասիրում էինք ատոմի անվնաս գաղտնիքները, ուսումնասիրում էինք Հայդեգերի ազդեցութիւնը Սարտրի վրայ և հաւաքում էինք Պիկասոյի նկարների պատճէնները, երբ յարմար գնացքների մէջ սլանում էինք հանգստեան տներ կամ աւարտում էինք մեր ամառանոցների կառոյցը, բանտի մեքենաները անընդհատ վզվզում էին փողոցներում, իսկ ԿԷ.ԳԷ.Բէիստները ծեծում և զանգում էին դռները։

«Ես կարծում եմ ապացուցեցի,- գրում է Սոլժենիցինը,- որ օրգանները երբեք ի զուր չեն կերել իրենց հացը։ Այս միլիոնաւոր անմեղ բանտարկեալներին սպասում էր հետաքննութիւնը, որի սարսափները կարելի է միայն համեմատել թուրքական կամ գերմանական ցեղասպանների ռճիրների հետ»։ Սոլժենիցինը մեծ վարպետութեամբ նկարագրում է հետաքննութեան սարսափելի պատկերը։ Գրքի երկրորդ գլուխը, որը վերնագրուած է «Հետաքննութիւն», սկսւում է հետեւեալ յուզիչ ներածականով։

«Եթէ չեխովեան մտաւորականին, որը շարունակ գուշակում էր, թէ ինչ կը լինի 20-30 տարի յետոյ, ասէին որ Ռուսաստանում 40 տարի յետոյ հետաքննութեան ժամանակ կ'օգտագործուեն տանջանքներ, երկաթեայ օղակներով կը սեղմեն մարդկանց գանկերը, կենդանի մարդուն կը գցեն թթուածինի մէջ, մերկ և կապկպւած մարդուն կը տանջեն փայտոջիլներով ու մրջիւններով, տաքացրած շամփուրները կը մտցնեն յետեւի անցքը, կօշիկներով կը տրորեն տղամարդու սեռական օրգանները, կը ծեծեն մինչեւ արնաշաղախւածութիւն, ապա Չեխովի ոչ մի բեմադրութիւն չէր հասնի իր աւարտին, հերոսների բոլոր դերակատարները կը գնային գժանոց։ Եւ ո՛չ միայն չեխովեան հերոսները։ Ո՞ր խելքը գլխին ռուս մարդը, այդ թւում և ՌՍԴՊի անդամը, դարի սկզբին կը հաւատար և կը դիմանար այդպիսի զրպարտութեանը լուսաւոր ապագայի հանդէպ։

«Այն, ինչ դեռ մի կերպ հասկանալի էր Ալեքսանդր Միխայլեւիչի ժամանակ, ինչը Պետրոսի օրօք արդէն համարւում էր բարբարոսութիւն, ինչը Բիրոնի ժամանակ կարող էր օգտագործւել 20-30 մարդու նկատմամբ, ինչը անհնա-

րին դարձաւ Եկատերինայի ժամանակ, 20րդ դարի ծաղկուն ժամանակաշրջանում, սոցիալիստական հասարակարգում, երբ արդէն թռչում էին ինքնաթիռները, ստեղծւել էր ձայնաւոր կինոն և ռադիոն, կատարւում էր ոչ թէ մէկ յանցագործի կողմից, ոչ թէ մէկ մութ անկիւնում, այլ տասնեակ հազարաւոր յատուկ պատրաստւած մարդ-գազանների կողմից, միլիոնաւոր անպաշտպան զոհերի նկատմամբ:

«Արդեօք սարսափելին միայն այդ այլասերումի բռնկո՞ւմն էր, որ այսօր խոյս տալով պատասխանատուութիւնից անւանում են անձի պաշտամունք: Թէ սարսափելին այն էր, որ այդ նոյն տարիներին մենք տօնում էինք Պուշկինի հարիւրամեակը: Անամօթաբար բեմադրւում էին նոյն այդ Չեխովի թատերգութիւնները, թէպէտ նրա բոլոր պատասխանները ստացւած էին: Կամ գուցէ աւելի սարսափելին այն է, որ երեսուն տարի յետոյ մեզ ասում են, թէ պէտք չէ այդ մասին խօսել, քանզի եթէ յիշենք միլիոնների տառապանքները, դա կարող է խեղաթիւրել պատմական հեռանկարները: Եթէ փորփրենք մեր բարոյական էութիւնը, դա կարող է խաւարեցնել նիւթական առաջընթացը: Աւելի լաւ է յիշատակէք մետաղաձուլման վառարանները, կառոյցները, գործարանները… Հասկանալի չէ, թէ ինչով մեզ այդքան դուր չի գալիս ճորտատիրութիւնը: Չէ՞ որ գիւղացուն արգելւած չէր աշխատել և նա կարող էր ծնունդին ծէս երգել, իսկ Երրորդութեանը կարող էր պսակներ հիւսել…

Պէտք է ասել, որ, նկարագրելով հետաքննութեան հետ կապւած տանջանքները, Սոլժենիցինը տալիս է փաստեր, ազգանուններ, բանտերի անուններ այն մանրամասնութիւնով, որ ոչ մի տեղ չի թողնում որեւէ կասկածի համար: Սակայն նա չի սահմանափակւում միայն կատարւած փաստերը նկարագրելով, այլ տալիս է խորը վերլուծութիւններ այն տեսութեան, որը հիմք էր ծառայում և արդարացնում էր բոլոր նկարագրւած բարբարոսութիւնները: Այդ հիմքը Վիշինսկու յայտնագործութիւնն էր այն մասին, որ բացարձակ ճշմարտութիւնը երբեք հնարաւոր չի ճանաչել, որ ճանաչել կարելի է միայն յարաբերական ճշմարտութիւնը: Եւ այստեղից նա կատարեց այն քայլը, որը երկու հազար տարի չէին համարձակւում անել աշխարհի իրաւաբանները: Նա, որպէս **դիալեկտիկ**, եզրակացրեց, թէ այն ճշմարտութիւնը, որը հաստատում է հետաքննութիւնը, նոյնպէս չի կարող լինել բացարձակ, նա կարող է լինել միայն յարաբերական:

Եւ ուրեմն,- գրում է Սոլժենիցինը,- երբ ստորագրւում է զնդակահարութեան դատավճիռ, մենք երբեք չենք կարող բացարձակ համոզւած լինել, որ մահապատժի ենթարկւողը մեղաւոր էր, այլ միայն՝ մօտաւորապէս, որոշ ենթադրութիւններով: Նա գրում է.

«Այստեղից ամենագործնական եզրակացութիւնը այն է, որ ժամանակի իզուր կորուստ պէտք է նկատւի բացարձակ յանցանշանների և վկաների որոնումը։ Իսկ մեղադրանքի ապացոյցը մօտաւորապէս քննիչը ինքը կարող է գտնել առանց յանցանշանների և վկաների, առանց դուրս գալու իր գրասենեակից, հիմնւելով սեփական կուսակցական բնազդի վրայ, սեփական բարոյական ուժերի վրայ (այսինքն կուշտ և չծեծւող մարդու առաւելութեամբ), սեփական բնաւորութեան վրայ (այսինքն կամք՝ դէպի դաժանութիւն)։ Եւ միայն մի բանում Վիշինսկին նահանջեց **դիալեկտիկ**ական տրամաբանութիւնից՝ ինչ ինչ պատճառներով ԳՆԴԱԿԸ նա թողեց ԲԱՑԱՌՁԱԿ»։

Եւ Սոլժենիցինը պատմում է 31 ձեւի տանջանքների մասին, որոնք նա հաւաքագրել է կենդանի մնացած բանտարկեալներից։ Մենք կանգ չենք առնի այդ սարսափ առաջացնող ձեւերի վրայ։ Մարդկային երեւակայութիւնը չի կարող պատկերացնել այն, ինչ կատարել են ԿԳԲ գազանները։ Մարդկութիւնը, ամբողջ իր պատմութեան ընթացքում, երբեք չի ստորացել այնքան, որքան խորհրդային իշխանութեան ժամանակ, երբ օգտագործւում էին հոգեբանական և մարմնական տանջանքների աներեւակայելի ձեւեր։ Սոլժենիցինը ամէն մի օրինակը համեմատում է տարբեր վարչակարգերի և ժամանակաշրջանների ոճիրների հետ (թուրքերի մասին չի յիշատակում) և համոզիչ կերպով ցոյց է տալիս, որ բոլշեւիկեան բարբարոսութիւնները նմանը չունեն բազմադարեան պատմութեան մէջ իրենց **սադիստ**ական անմտութիւնով։

Եւ որքան միամիտ ենք մենք բոլորս այդ գազանների առջեւ,- ասում է Սոլժենիցինը։ «Մեզ փոքրուց լուսաւորում և պատրաստում են մեր ապագայ մասնագիտութեան համար, մեզ պատրաստում են քաղաքացիական պարտականութիւնները կատարելուն, զինւորական ծառայութեանը, պարկեշտ վարքագծի, սեփական մարմնին հետեւելուն և նոյնիսկ գեղեցիկը ճանաչելուն (այս մէկը այնքան էլ չէ)։ Բայց ոչ կրթութիւնը, ոչ դաստիարակութիւնը և ոչ էլ փորձը ամենեւին էլ չեն մօտեցնում մեզ կեանքի ամենամեծ փորձութեանը՝ ոչինչի համար բանտարկութեանը և ոչինչի վերաբերեալ հետաքննութեանը։

«Վէպերը, բեմադրութիւնները, կինոնկարները (երանի թէ հեղինակները խմէին «ԳՈՒԼԱԳ»ի դառը բաժակը) նկարագրում են մեզ նրանց, որոնց մենք կարող ենք հանդիպել քննիչի գրասենեակում, որպէս ճշմարտութեան ասպետներ, հարազատ հայրեր։ Ինչպիսի բազմազան դասախօսութիւններ են կարդում մեզ և նոյնիսկ ստիպում են լսել, բայց ոչ ոք չի կարդում դասախօսութիւն քրէական օրէնքների լայն մեկնաբանութիւնների մասին։ Եւ իրենք, այդ օրէնքները չեն ծախւում խանութներում, չկան գրադարաններում և անհոգ երիտասարդութեան ձեռքը չեն ընկնում։ Գրեթէ հեքիաթ է թւում, որ այնտեղ, ովկիանոսների այն կողմը ամբաստանեալը կարող է օգտւել փաստաբանի

օգնութիւնից: Դա նշանակում է, որ պայքարի ամենաճանր ժամին կողքդ ունենաս մի խելօք օգնական, որը գիտէ բոլոր օրէնքները…

«Այն ժամանակւանից անցաւ 10 տարի, յետոյ 15, իմ երիտասարդութեան գերեզմանը ծածկւեց խիտ խոտով: Վերջացաւ աքսորիս ժամկէտը և առանց ժամկէտ աքսորս: Բայց ոչ մի տեղ, ոչ մի ժամանակ, ոչ ճամբարում, ոչ շրջանային գրադարանում և ոչ էլ միջին քաղաքներում ես չտեսայ աչքերովս, չբռնեցի ձեռքերումս, չկարողացայ գնել և նոյնիսկ ՀԱՐՑՆԵԼ խորհրդային իրաւունքի օրէնսգիրքը: Ով ծանօթ է մեր կասկածամիտ մթնոլորտի հետ, կը հասկանայ, թէ ինչու չէր կարելի հարցնել օրէնսգիրքը դատախազութիւնում կամ գործադիր կոմիտէում: Ձեր հետաքրքրութիւնը կը նկատւէր արտակարգ երեւոյթ՝ կա՛մ դուք պատրաստւում էք յանցագործութեան և կամ էլ ուզում էք մաքրել հետքերը»:

Սոլժենիցինը բազմաթիւ փաստերի վրայ ապացուցում է հետաքննութեան միակ նպատակը՝ է՛լ աւելի շատ մարդ քաշել քննութեան, է՛լ աւելի հզօր հոսքեր ուղարկել «ԳՈՒԼԱԳ»: Նրանք պահանջում էին ազգանուններ, որքան կարելի էր շատ, ընկերների, բարեկամների, պատահական ծանօթների: ԿԳԲի այդ պահանջին օգնում էին միամիտ բանտարկեալները, որոնք տրամաբանում էին այսպէս,- տանք որքան հնարաւոր է, շատ ազգանուններ, բոլոր ծանօթների, բոլոր հարեւանների, թող բոլորը բանտարկւեն, այդ դէպքում պարզ կը դառնայ, որ բոլորս անմեղ ենք, միթէ՞ ամբողջ երկիրը կարող է յանցաւոր նկատւել: Բայց ԿԳԲէն չէր տրամաբանում, նա կատարում էր Ստալինի **պլանը**՝ որքան շատ, այնքան լաւ:

«Ի հարկէ,- գրում է Սոլժենիցինը,- այդպիսի մաքրագործումների համար անհրաժեշտ էր Ստալինը, բայց անհրաժեշտ էր նաեւ այդպիսի կուսակցութիւն: Նրանց մեծ մասը գտնւելով իշխանութեան գլուխ, մինչեւ սեփական բանտարկութիւնը անխղճօրէն բանտարկում և ոչնչացնում էր երէկւայ ընկերներին: Եւ բոլոր խոշոր բոլշեւիկները, որոնք այսօր համարւում են տառապեալներ, հասցրել էին լինել նաեւ ուրիշ բոլշեւիկների դահիճներ (էլ չխօսենք այն մասին, որ դրանից էլ առաջ նրանք բոլորը ոչ-կուսակցականների դահիճներ էին):

«Գուցէ՞ 37 թւականը ԱՆՀՐԱԺԵՇՏ ԷՐ որպէս ապացոյց, թէ որքան արժէքազրկւած է ամբողջ իրենց այն ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ, որով նրանք այդքան աշխոյժ փոփոխւում էին, երբ տակնուվրայ էին անում Ռուսաստանը, քանդում էին նրա հիմքերը, ոտնակոխ էին անում նրա սրբութիւնները, այն Ռուսաստանը, որտեղ հէնց իրենց ԱՅԴՊԻՍԻ դաժանութիւն չէր սպառնում: Բոլշեւիկեան զոհերը 1918 թւականից մինչեւ 1936 թւականը երբեք չպահեցին իրենց այնքան ստոր, որքան պահեցին իրենց ղեկավար բոլշեւիկները, երբ

հերթը հասաւ իրենց և ամպրոպը պայթեց նրանց գլխին։ Եթէ մանրամասնօրէն ուսումնասիրենք 1936-38 թւականների բանտարկութիւնները, ապա ամենամեծ զզւանքը առաջանում է ոչ թէ Ստալինի նկատմամբ, այլ ստոր և գարշելի բանտարկեալների, որոնք իրենց նախկին հպարտութիւնը և անհաշտութիւնը փոխարինեցին հոգեկան ստորութիւնով»։

«Բայց ի՞նչպէս, ի՞նչպէս,- հարցնում է հեղինակը,- ի՞նչպէս անպատրաստ և թոյլ մարդը կարող է դիմադրել այդ պայմաններին։ Եւ ինքը տալիս է պատասխանը։ Պէտք է բանտ մտնել, համարում է նա, չդողալով նախկին ջերմ կեանքի վրայ։ Բանտի դրանը պէտք է ասել՝ կեանքը վերջացած է, մի քիչ շուտ է, բայց վերջացած է։ Ազատութեան երեսը ես այլեւս չեմ տեսնի երբեք։ Ինձ վիճակւած է կործանում, հիմա թէ մի քիչ ուշ՝ նշանակութիւն չունի, հիմա նոյնիսկ աւելի լաւ է։ Սեփականութիւն այլեւս չունեմ։ Մերձաւորներս մահացել են ինձ համար, իսկ ես՝ նրանց համար։ Այսօրւանից իմ մարմինը մի անօգուտ օտարի մարմին է։ Միայն խիղճս և ոգիս մնում են ինձ համար կարեւոր և թանկարժէք։ Եւ այդպիսի բանտարկեալի առջեւ կը թպռտայ հետաքննութիւնը։

«Բերդիաեւի խմբակի անդամներին դատարանում դարձրեցին խրտւիլակներ, իսկ իրեն չկարողացան դարձնել։ Նրան երկու անգամ բանտարկեցին, գիշերները նրան հարցաքննում էր Չերժինսկին։ Բայց Բերդիաեւը չէր ստորանում, չէր խնդրում և աղաչում, այլ յստակ բացատրում էր նրանց այն կրօնական և բարոյական սկզբունքները, որոնցից դրդւած չէր կարող ընդունել Ռուսաստանում հաստատւած կառավարութիւնը։ Նրան ոչ միայն չդատեցին, այլեւ ազատ արձակեցին։ Տեսակէտ ունէր մարդը»։

Բերելով մի քանի այդպիսի օրինակներ, Սոլժենիցինը ցոյց է տալիս, թէ որքան անհրաժեշտ էր այն ժամանակ լինել կայուն և, ամենակարեւորը, կտրել բոլոր կապերը անցեալի հետ։ Հեղինակը խոստովանում է, որ ինքը միշտ չէր, որ կարողանում էր լինել այդպիսին։ «Ես ոչ միայն պատրաստ չէի կտրել իմ ջերմ կապերը աշխարհի հետ,- գրում է նա,- այլ նոյնիսկ բանտարկութիւնից յետոյ, երկար ժամանակ տանջւում էի յիշելով, որ բանտարկութեան պահին ինձնից խլեցին իմ արտասահմանեան մատիտները»։ Եւ միայն շատ աւելի ուշ Սոլժենիցինը գիտակցել է, որ կարող էր լինել աւելի անհաշտ, աւելի կայտառ, աւելի խելացի։

Սակայն խոստովանւելով, որ դժգոհում է իր և իր ընկերների վարքագծից, նա փորձում է որոշ տեսակի արդարանալ, համեմատելով իրենց վարքագիծը ռուս յեղափոխականների վարքագծի հետ։ Եւ գալիս է այն եզրակացութեան, որ կատարել այդպիսի մի համեմատութիւն անհնարին է։ Ամբողջ պատմութեան ընթացքում ոչ մի ռուս յեղափոխական չի դրւել այնպիսի պայմանների

մէջ, ինչպիսի պայմաններում էին **«Գուլագ»**ի բնակիչները: Եւ ուրեմն, ի՞նչպէս համեմատւել նրանց հետ:

Այդ մասին նա գրում է «Շեշկովսկին չէր խոշտանգում Ռադիշչեւին: Եւ Ռադիշչեւը հիանալի գիտէր, որ, ըստ այն ժամանակւայ օրէնքների, իր տղաները չեն զրկւի սպայական ծառայութիւնից և որ նրանց կեանքը վտանգւած չէր: Եւ Ռադիշչեւի ժառանգական ունեցւածքը ոչ ոք չի բռնագրաւի: Բայց այնուամենայնիւ իր կարճատեւ, երկու շաբաթ տեւող, հետաքննութեան ընթացքում, այդ երեւելի մարդը հրաժարւեց իր համոզմունքներից, իր գրքից և գթութիւն աղերսեց:

«Նիկոլայ Առաջինը գլխի չընկաւ, որ կարելի է բանտարկել **«դեկաբրիստ**ների» կանանց և ստիպել նրանց ճչալ կողքի սենեակում, իսկ իրենց՝ **դեկաբրիստ**ներին ենթարկել տանջանքների, բայց նա դրա կարիքը չունէր: Նոյնիսկ Ռիլէեւը պատասխանում էր պարզ, ոչինչ չթագցնելով: Իսկ Պեստելը անմիջապէս յանձնւեց և յայտնեց բոլոր ընկերների անունները: Միայն Լունինն էր, որ փայլում էր իր արհամարհանքով դէպի հետաքննութիւնը: Իսկ մեծամասնութիւնը պահում էր իրեն ստոր, մատնում էր ընկերներին և թողութիւն էր խնդրում»:

Սոլժենիցինը բերում է եւս մէկ համեմատութիւն. **«Իզվեստիա»** թերթում 24.5.59 գրւած էր, թէ Հուլիա Ռումիանցեւան բանտարկւեց նացիների կողմից, նրան ստիպում էին ասել, թէ որտեղ է իր բանտից փախած ամուսինը: Նա գիտէր, բայց հրաժարւեց պատասխանել: Միամիտ ընթերցողի համար դա հերոսութեան լաւագոյն օրինակներից մէկն է: **«Գուլագ»**ի դառը փորձին ծանօթ ընթերցողի համար, դա հետաքննութեան միամտութիւնն է, քանզի Հուլիան չմեռաւ տանջանքներից և չգժւեց, նրան պարզապէս մէկ ամսից յետոյ ողջ և առողջ ազատեցին բանտից»:

Սոլժենիցինը շատ նուրբ ձեւով համեմատում է 1920 թւականի ՉԿի գործելակերպը 1950 թւականի ՄԳԲի հետ և գրում է, որ ոչինչ չի փոխւել: Ընդ որում այդ հարցում հեղինակը «ոչինչ չփոխւելը» ներկայացնում է այն իմաստով, որ այն լենինեան ժամանակներումն էլ կատարւում էր նոյնը: Այսինքն հեղինակը կրկին ընդգծում է, որ Ստալինը միայն ու միայն Լենինի հաւատարիմ աշակերտն էր: Նա գրում է.

«Ուղիղ գիծ քաշելու համար, անհրաժեշտ է ունենալ միայն երկու կէտ: 1920 թւականին, ինչպէս պատմում է Էրենբուրգը, ՉԿան իր առջեւ հարցը ձեւակերպեց այսպէս,- կարո՞ղ էք ԴՈՒՔ ապացուցել, որ դուք Վրանգելի լրտեսը չէք: Իսկ 1950 թւականին ՄԳԲի աչքի ընկնող գնդապետներից մէկը՝ Ֆոմա Ժելեզնովը բանտարկեալներին արեց հետեւեալ յայտարարութիւնը. «Մենք չենք էլ փորձի բանտարկեալներին ապացուցել իրենց մեղքերը: Թող նրանք իրենք

մեզ ապացուցեն, որ չեն ունեցել թշնամական մտադրութիւններ»: Եւ այդ պարզ, բայց մարդակերական ուղիղ գծի վրայ, 20ից մինչեւ 50 թիւը, տեղաւորւում են միլիոնների անթիւ յիշողութիւնները:

Ինչպիսի պարզեցւած հետաքննութիւն, այդպիսին յայտնի չէր նախկին մարդկութեանը: «Օրգան»ները ընդհանրապէս ազատել էին իրենց ապացոյցներ որոնելու պարտականութիւնից: Ձերբակալւած գունատ և թպռտացող ճագարը, որը զրկւած է որեւէ մէկին գրելու, որեւէ մէկի հետ խօսելու, որեւէ բան բերելու իրաւունքից, քաղցած, առանց թղթի, առանց մատիտի և նոյնիսկ առանց կոճակների, նստած գրասենեակի անկիւնում, չոր աթոռի վրայ, պէտք է ԻՆՔԸ գտնի և ներկայացնի անբան հետաքննիչին ապացոյցներ, որ ՉԻ ունեցել թշնամական մտադրութիւններ: Եւ եթէ նա չի կարողանում գտնել այդպիսի ապացոյցներ (և որտեղի՞ց նա կարող էր գտնել), ապա դրանով տալիս էր հետաքննութեանը իր մեղաւորութեան ՄՕՏԱՒՈՐ ապացոյցներ»:

Այդ վիճակում, յոյսը և դողը սրտում, երբ բանտարկեալը փորձում է ապացուցել իր անմեղութիւնը, անկեղծ պատմում է իր ընկերների և գործերի մասին, որպէսզի պարզ դարձնի հետաքննութեան համար, թէ իր բանտարկութիւնը պարզապէս թիւրիմացութիւն է, ինքն իրենից և բանտարկեալից զոհ քննիչը շտապ-շտապ արձանագրում է նոր զոհերի անունները և հասցէները: Սոլժենիցինը պատմում է, որ այդպիսի վիճակում նա ինքը քիչ մնաց որ իր դպրոցական ընկերոջ բանտարկութեան պատճառ դառնայ: «Եւ ինչպիսի ուրախութիւն ապրեցի,- գրում է նա,- երբ իմացայ, որ նա չէր բանտարկւել»:

Սակայն 22 տարի յետոյ Սոլժենիցինը ստանում է այդ ընկերոջից հետեւեալ նամակը. «Քո կողմից հրատարակւած աշխատանքներից ես եզրակացրեցի, որ դու կեանքը գնահատում ես միակողմանի… Պարզապէս դու դառնում ես Արեւմտեան Գերմանիայի և Միացեալ Նահանգների Ֆաշիստական յետադիմութեան դրօշը… Լենինը, որին, ես համոզւած եմ, դու շարունակում ես սիրել և պաշտել նոյնպէս ծերունիներ Մարքսը և Էնգելսը ամենախիստ ձեւով կը դատապարտէին քեզ: Մտածիր այդ մասին»: «Եւ ես մտածում եմ,- գրում է Սոլժենիցինը,- ախ, ափսոս, որ քեզ այն ժամանակ չբանտարկեցին, ինչքան բան կորցրեցիր դու»:

Այս փոքրիկ հատւածում Սոլժենիցինը կարողանում է արտայայտել այն կարծիքը, որ ե՛ւ Մարքսը, ե՛ւ Էնգելսը, ե՛ւ Լենինը պատկանում են նոյն այն ոճրագործների շարքին, որոնք այսօր փակում են Սոլժենիցինի բերանը և յետոյ, որ նա, ով բանտարկւել և դրա շնորհիւ հասկացել է բոլշեւիզմի էութիւնը շատ աւելի քիչ բան է կորցրել, քան ով մնացել է ազատ պայմաններում և միամտօրէն շարունակում է սիրել և պաշտել Լենինին:

Երեւի որոշ տեսանկիւնից կարելի է ներել մի ոճրագործի, եթէ ոճիրը գործելիս նա չի գիտակցում իր յանցանքը։ Բայց չի կարելի ներել նրանց, ովքեր, գիտակցելով իրենց յանցանքը, շարունակում են գործել։ Սոլժենիցինը ցոյց է տալիս, որ բոլոր բոլշեւիկեան յանցագործութիւնները գիտակցւած էին։ Նրանք հիանալի հասկանում էին, որ իրենք ոճրագործներ էին և, ի տարբերութիւն գերմանական նացիների, որոնք չէին թագցնում իրենց ոճիրները, նոյնիսկ յաճախ նկարահանում էին սպանութեան տեսարանները, բոլշեւիկները անում էին ամէն ինչ, որպէսզի իրենց արածները դուրս չգան բանտի դռներից։ Այդ մասին Սոլժենիցինը գրում է.

«Մենք բոլորս տալիս էինք ստորագրութիւն, որ երբեք ոչ մի տեղ չենք պատմի այն մասին, թէ ինչպիսի պայմաններում էր ընթանում հետաքննութիւնը, հակառակ դէպքում, կը կանչէինք քրէական պատասխանատուութեան։ Եւ ի՞նչ։ Սովորութիւն դարձած մեր հնազանդութիւնը, մեր կռացած կամ կոտրւած մէջքերը թոյլ չէին տալիս, որ մենք հրաժարւէինք կամ նոյնիսկ վրդովւէինք հետքերը թաղելու այդ միջոցից։ Մենք կորցրել էինք ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ։ Մենք չգիտէինք, թէ ինչպէս որոշել՝ որտեղ է նա սկսւում և որտեղ է վերջանում։ Մենք ասիական ժողովուրդ ենք, մեզանից վերցնում, վերցնում, վերցնում են այդ անվերջ ստորագրութիւնները։ Մենք արդէն համոզւած չէինք՝ իրաւունք ունե՞նք արդեօք պատմելու մեր սեփական կեանքի մասին»։

Այս գիտակցւած ոճրագործութիւնը Սոլժենիցինը շարունակում է պատմել, երբ նկարագրում է ԿԳԲի պաշտօնեաների կերպարը։ Նա գրում է.

«Մեզ յայտնի է, որ Ալեքսանդր 2րդը, այն նոյն Ալեքսանդրը, որի դէմ յեղափոխականները 7 անգամ մահափորձ էին կազմակերպել, մէկ անգամ այցելել է նախնական կալանքի տունը և կարգադրել է մէկ ժամից աւելի փակել իրեն 227 խուցում. նա ուզում էր մտնել այն բանտարկեալների կաշւի մէջ, որոնց ինքը պահում էր այդ խուցերում։ Չի կարելի ժխտել միապետի բարոյական ձգտումը և ցանկութիւնը, ընկալել բանտարկեալի վիճակը հոգեբանական տեսանկիւնից։ Բայց անհնարին է պատկերացնել, որ մեր քննիչներից որեւէ մէկը, ընդհուպ մինչեւ Աբակումովը և Բերիան, ցանկանար գոնէ մէկ ժամով մտնել բանտարկեալի մորթու մէջ, նստել խուցում և մենակութեան մէջ մի քիչ մտածել։

«Նրանց ծառայութիւնը չէր պահանջում նրանցից լայն հայեացքներ ու կրթութիւն և նրանք այդպիսին չէին։ Նրանցից չէր պահանջւում տրամաբանութիւն և նրանք այդ չունէին։ Նրանց ծառայութիւնը պահանջում էր նրանցից միայն հրամանների կատարում և քարսրտութիւն տառապանքների նկատմամբ և նրանք այդպիսին էին։ Մենք, որ անցել ենք նրանց ձեռքերից, զգում

ենք, թէ որքան զուրկ է նրանց բանակը համամարդկային պատկերացումներից: Ոչ ոք աւելի հաստատ, քան քննիչները, չգիտէր, թէ որքանով սուտ էին բոլոր գործերը: Եթէ չհաշուենք խորհրդակցութիւնները, նրանք չէին կարող միմեանց ասել, որ բացայայտում էին թշնամիների: Այնուամենայնիւ, մեզ բթացնելու արձանագրութիւնները թերթ առ թերթ շարունակում էին գրել: Նրանք գիտէին, որ բոլոր գործերը ուռճացրած են, բայց տարիներ շարունակ աշխատում էին: Ինչո՞ւ: Կա՛մ ստիպում էին իրենց ՉՄՏԱԾԵԼ (իսկ դա արդէն մարդու կործանում է), կա՛մ համարում էին, որ այդպէս պէտք է, որ նրանց համար հրամաններ գրողը չի կարող սխալւել: Բայց չէ՞ որ նացիներն էլ ճիշտ այդպէս էին մտածում:

«Այս համեմատութիւնից ոչ ոք չի կարող խուսափել, չափազանց համընկնում են ե՛ւ տարիները, ե՛ւ ձեւերը: Այդ համեմատութիւնը աւելի համոզիչ է հնչում նրանց շուրթերում, ովքեր անցել են ե՛ւ Գեստապոյի, ե՛ւ ԿԳԲի ձեռքերի միջոցով, ինչպէս, օրինակ, Ալեքսէյ Դիւիչը: Գեստապոն մեղադրում էր նրան կոմունիստական գործունէութեան մէջ, իսկ ԿԳԲէն՝ համաշխարհային բուրժուազիայի հետ իր ունեցած կապերում: Դիւիշի համեմատութեան արդիւնքները ԿԳԲի օգտին չէին: Տանջում էին ե՛ւ այնտեղ, ե՛ւ այստեղ,- ասում է նա,- սակայն Գեստապոն նպատակ ունէր բացայայտել ճշմարտութիւնը և, երբ մեղադրանքը չապացուցւեց, ինքը ազատ արձակւեց: ԿԳԲէն ճշմարտութիւն չէր որոնում և մտադրւած չէր որեւէ մէկին բաց թողնել իր ճանկերից»:

«Երկնագոյն հաստատութեան ծառայողները (հեղինակը ի նկատի ունի չեկիստների երկնագոյն ուսադիրները), դրդւած մարդկութեան բարձրագոյն արժէքներից օգտւելու հնարաւորութիւնից,- ասում է Սոլժենիցինը,- ագահութեամբ օգտւում էին աւելի ու աւելի ստոր բարիքներից, բաւարարելով իրենց հարստութեան և իշխանութեան բնազդային պահանջները: Նրանք ունէին անսահման իշխանութիւն և կարողանում էին այդ իշխանութիւնը ծառայեցնել իրենց անձնական պահանջների համար: Նրանք կը բանտարկէին ձեզ, եթէ նրանցից մէկին դուր գար ձեր բնակարանը կամ ձեր կինը կամ էլ աղջիկը:

«Ամէն ինչ իրենցն էր,- ասում է Սոլժենիցինը,- իրենցն է հողը, իրենցն էիք դուք, իրենցն էր երկինքը, չէ՞ որ երկնագոյն էին: Նրանք միամիտ հրամաններ կատարող չէին, ոչ, նրանք հաճոյք էին ստանում, երբ յաջողւում էր ուժեղ մարդկանց մէջքը կոտրել: Բայց վայ նրան, ով այնքան ուժեղ էր գտնւում, որ չէր կոտրւում: Այդ դէպքում կատաղած քննիչը թքում էր բանտարկեալի բերանի մէջ, ծունկի նստեցնում և միզում էր նրա երեսին, բռնելով հոգեւորականի մօրուքից, քաշ էր տալիս նրան սենեակի մէկ ծայրից միւսը»:

Սոլժենիցինը բերում է բազմաթիւ օրինակներ այնպիսի բանտարկութիւնների, որոնց միակ նպատակը եղել է՝ ձեռք բերել բանտարկեալի ունեցւածքը: Նա գրում է.

«Եթէ հնարաւոր լինէր բացայայտել առանձին բանտարկութիւնների դրդապատճառը, ապա մեծ զարմանքով մենք պէտք է տեսնէինք, որ բանտարկութիւնը ընդհանուր օրինաչափութիւն էր, բայց ո՞ւմ բանտարկել, հիմնականում կախւած էր տեղական ՆԿՎԴէից, որը ղեկավարւում էր նախանձով, անձնական վրիժառութիւնով և սեփական շահերով: Եւ, ի հարկէ, նրանցից չի կարելի բաժանել տեղական դատախազին: Այդ մասին կարելի է հրատարակել հազարաւոր «Սպիտակ գրքեր», սկսած 1918 թւականից: Դրա համար բաւական է հարցուփորձ անել նախկին բանտարկեալներին և նրանց ընտանիքների անդամներին: Գուցէ եղել են և կան այնպիսի «երկնագոյններ», որոնք երբեք չեն իւրացրել և կողոպտել, բայց ես այդպիսի երկնագոյն չեմ պատկերացնում: Ես չեմ հասկանում, թէ ինչը կարող է ստիպել այդպիսի գաղափարների և աշխարհահայեացքի մարդուն հրաժարւել մի իրից, որը իրեն դուր է գալիս: Դեռ 30ական թւականների սկզբին, երբ մենք՝ երիտասարդներս կառուցում էինք առաջին հնգամեակը, իսկ նրանք երեկոները անց էին կացնում շքեղ սրահներում, արդէն այն ժամանակ նրանց կանայք պճնազարդւում էին արտասահմանեան հագուստներով, որտեղի՞ց էր այդ ամէնը»:

Չեկիստների յանցանքները այնքան շատ էին, որ Ստալինը երկար չէր պահում մարդկանց այդ պաշտօնի վրայ: Իրենց զոհերի հետ բաժանում էին ճակատագիրը իրենք ոճրագործները: Եագոդան, Եժովը, Աբակումովը և վերջումն էլ Բերիան, ներքին **ինտրիգ**ների շնորհիւ, ստացան իրենց արժանի պատիժը: Այդ ներքին **ինտրիգ**ներից մէկի մասին Սոլժենիցինը պատմում է հետեւեալը.

«Մէկ անգամ, 1952 թւականի վերջերին, Աբակումովի տեղակալ Ռիւմինը եկաւ Աբակումովի մօտ շշմեցուցիչ տեղեկութիւններով: Նա յայտնեց, որ բժիշկ պրոֆ. Էտինգերը խոստովանւեց, որ ինքը, դիտաւորեալ, նպատակ ունենալով սպանել, սխալ է բուժել Ժդանովին և Շչերբակովին: Աբակումովը չհաւատաց: Նա հիանալի գիտէր այդ խոհանոցը և համարեց, որ Ռիւմինը մի քիչ չափը անցնում է: (Բայց Ռիւմինը աւելի լաւ էր հասկանում, թէ ինչ է ուզում Ստալինը): Ստուգման համար նոյն օրը երեկոյեան կազմակերպեցին Էտինգերի խաչաձեւ հարցաքննութիւնը:

«Եզրակացութիւնները տարբեր էին: Աբակումովը ոչ մի «բժիշկների գործ» չէր տեսնում: Ռիւմինը տեսնում էր: Առաւօտեան կարելի էր նորից ստուգել, բայց Գիշերային Հաստատութեան հրաշքային առանձնայատկութիւնների համաձայն, ԷՏԻՆԳԵՐԸ ՆՈՅՆ ԳԻՇԵՐ ՎԱԽՃԱՆԻԵՑ: Իսկ առաւօտեան Ռիւ-

մինը, շրջանցելով Աբակումովին, զանգահարեց Կենտրոնական Կոմիտէ և խնդրեց Ստալինից տեսակցութիւն։ (Ես կարծում եմ, որ սա չէր նրա ամենավճռական քայլը)։ Ճակատագրական քայլը, որից յետոյ նրա գլուխը արդէն խաղի մէջ էր, դա Աբակումովի հետ ունեցած իր տարակարծութիւնն էր կամ գուցէ Էտինգերի սպանութիւնը։ Բայց ո՞վ գիտէ այդ արքունիքի գաղտնիքները, կարող է նոյնիսկ լինել, որ Ստալինի հետ նա հանդիպել էր աւելի առաջ)։

«Ստալինը ընդունեց Ռիւմինին, ընթացք տուեց «բժիշկների գործին», իսկ ԱԲԱԿՈՒՄՈՎԻՆ ԲԱՆՏԱՐԿԵՑ։ Դրանից յետոյ «բժիշկների գործը» Ռիւմինը վարում էր ինքնուրոյնօրէն, նոյնիսկ անկախ Բերիայից։ (Կան նշաններ, որ Ստալինի մահից առաջ Բերիան կորցրել էր իր վստահութիւնը, գտնւում էր վտանգաւոր կացութեան մէջ և գուցէ հէնց նրա ձեռքով էլ Ստալինը հանւեց ասպարէզից)։ Նոր կառավարութեան առաջին քայլերից մէկը «բժիշկների գործից» հրաժարւելն էր։ Այդ ժամանակ ԲԱՆՏԱՐԿԻԵՑ ՌԻՒՄԻՆԸ, սակայն ԱԲԱԿՈՒՄՈՎԸ ՉԱՋԱՏԻԵՑ։ Լուբիանկայում (այդպէս է կոչւում Մոսկւայի կենտրոնական բանտը) մտցւում էին նոր կադրեր և ամբողջ պատմութեան ընթացքում առաջին անգամ բանտի դռնից ներս մտաւ դատախազը։ Այդ դատախազը Տերեխովն էր։ Ռիւմինը շատ անհանգիստ էր, նա քծնելով ասում էր. «Ես մեղաւոր չեմ, խնդրում եմ ինձ հարցաքննէք, ես անտեղի եմ բանտարկւած» և այլն։ 1953 թւականին Ռիւմինը դատւեց Մոսկւայում և գնդակահարւեց։ Իսկ Աբակումովը շարունակում էր մնալ բանտարկւած։

«Հարցաքննութեան ժամանակ դատախազ Տերեխովին նա ասում էր. «Դու շատ գեղեցիկ աչքեր ունես (նա իսկապէս գեղեցիկ աչքեր ունէր), ինձ ափսոս կը լինի քեզ գնդակահարել։ Հեռացիր իմ գործից, հեռացիր՝ քանի ուշ չէ»։ Մէկ անգամ Տերեխովը ցոյց տւեց նրան այն թերթը, որտեղ գրւած էր Բերիայի ձերբակալութեան մասին։ Այն ժամանակ դա տիեզերական ցնցումի հաւասար մի նորութիւն էր։ Սակայն Աբակումովը կարդաց հաղորդումը, չթարթելով աչքերը, շուռ տւեց թերթը և սկսեց կարդալ մարմնամարզութեան մասին։ Մի ուրիշ անգամ, երբ իրեն քննում էր ՄԳԲի ներկայացուցիչը, իր նախկին ենթական, Աբակումովը հարցրեց. «Ի՞նչպէս դուք կարող էիք թոյլ տալ, որ Բերիայի գործով զբաղւի ոչ թէ ՄԳԲէն, այլ դատախազութիւնը։ Եւ դու հաւատում ես, որ ինձ, պետանվտանգութեան նախարարիս, կը դատե՞ն»։ -Այո։ -«Այն ժամանակ գլխարկդ փոխիր՝ օրգաններ այլեւս գոյութիւն չունեն»։ (Նա, ի հարկէ, որպէս տգէտ կառավարական սուրհանդակ, սխալւում էր)։

«Լուբիանկայի բանտում նստած, Աբակումովը չէր վախենում դատից, նա վախենում էր, որ իրեն կը թունաւորեն (օրգանների արժանի զաւակ)։ Նա լրիւ հրաժարւել էր բանտի կերակուրից և սնւում էր միայն հաւկիթներով, որ գնում էր բանտի կրպակից (այստեղ նրան պակասում էին **տեխնիկ**ական գիտելիք-

ները, նրան թւում էր, թէ հաւկիթները անհնար է թունաւորել: Բանտի գրադարանից նա վերցնում էր միայն իրեն բանտարկող Ստալինի աշխատութիւնները: Սակայն դա ցուցամոլութիւն էր, նա համոզւած էր, որ Ստալինի կողմնակիցները ի վերջոյ կը յաղթեն: Աբակումովը երկու տարի մնաց բանտարկւած: Ինչո՞ւ նրան չէին ազատում: Այս հարցը այնքան էլ միամիտ չէ: Եթէ ի նկատի ունենանք մարդկութեան դէմ գործած յանցագործութիւնները, ապա նա իսկապէս մինչեւ կոկորդ թաղւած էր արեան մէջ, բայց հօ մենակ չէր: Իսկ այն մնացածները բոլորն էլ բարգաւաճում էին:

«Կայ եւս մէկ գաղտնիք: Լուրերի համաձայն, Աբակումովը ժամանակին անձամբ ծեծել էր Խրուշչովի հարս Լիւրա Սեգիխին: Դա Խրուշչովի աւագ տղայի կինն էր, որին Ստալինի ժամանակ դատապարտեցին պատժական գումարտակի և որը զոհւեց պատերազմի տարիներին: Դրա համար էր, որ բանտարկւելով Ստալինի ժամանակ, Աբակումովը դատւեց Խրուշչովի ժամանակ Լենինգրադում և 1954 թւականի Դեկտեմբերի 18ին գնդակահարւեց: Իսկ նրա մտահոգութիւնները զուր էին՝ օրգանները դրանից դեռ չէին կործանւել»:

Սակայն, որտեղի՞ց էր այդ գայլերի սերունդը,- հարցնում է Սոլժենիցինը: Արդեօք օտա՞ր էր այդ ամէնը մեր ժողովրդին: Ոչ, օտար չէր,- պատասխանում է հեղինակը,- դա մեր արիւնն էր, մեր ուղն ու ծուծը, մեր արմատը: Եւ չբարդելու համար ուրիշների վրայ մեղքը, Սոլժենիցինը առաջարկում է ամէն մէկին մտածել, թէ արդեօք ինքը չէ՞ր դառնար այն դահիճներից, եթէ համապատասխան պայմանների բերումով մտած լինէր ՄԳԲի ցանցը: Եւ եզրակացնում է, որ «այո, մեզանից մեծամասնութիւնը կ'անէր նոյնը»:

Հեղինակը պատմում է, թէ ինչպէս ինքը անձամբ վերափոխւեց, երբ ռւսաստողական նստարանից գնաց սպայական ուսումնարան: Թէ ինչպէս էր փոխւում նրա ձայնը հրամաններ տալու պահին, ինչպէս էր ստիպում իր ենթականերին որպէս պատիժ գիշերով քայլել: Նա պատմում է, թէ ինչպէս իր մէջ առաջանում էր ցանկութիւն ստիպել ուրիշներին ոչ միայն յարգել, այլեւ անվերապահօրէն ենթարկւել իր հասարակ սպայի ուսադիրներին: Նա պատմում է, թէ ինչպէս էին զինւորները իրեն համար փորում և կահաւորում յատուկ յարմար զետնափոր տնակ և ինչպէս էին սպայական ուսադիրները վերացնում այն հաւասարութեան երազներն ու գաղափարները, որոնցով իրենք տարւած էին պատանեկան հասակում:

Եւ նոյնիսկ բանտարկութեան պահին,- խոստովանում է Սոլժենիցինը,- երբ իր վրայից պոկեցին անիծեալ ուսադիրները, ինքը չէր կարողանում հասկանալ, թէ ինչպէս կարելի է զինւորների աչքի առաջ այդպէս վիրաւորել սպային: Նա նկարագրում է, թէ ինչպէս բանտարկութեան պահին եւս մէկ անգամ անամօթաբար արտայայտեց իր սպայական գոռոզութիւնը: Նա գրում է.

«Երբ ինձ հանեցին պատժախուցից և կարգադրեցին շարք կանգնել, դրսում, մէջքով դէպի ինձ, արդէն կանգնած էին եօթը բանտարկեալներ։ Նրանից 6ը հագած էին մաշւած և ամէն ինչ տեսած ռուսական զինուորական շինելներ, որոնց վրայ չջնջւող սպիտակ ներկով գրւած էր S.U.։ Դա նշանակում էր Soviet Union։ Ես արդէն ծանօթ էի այդ նշանի հետ, և յաճախ տեսել էի այդ նշանը մեր ռուս բազմագերիների մէջքերին, որոնք տխուր և մի տեսակ մեղաւոր քայլում էին դէպի իրենց ԱԶԱՏԱԳՐՈՂ բանակը։ Նրանց ազատագրում էին, բայց բացակայում էր փոխադարձ ուրախութիւնը։ Հայրենակիցները նրանց վրայ նայում էին աւելի մռայլ, քան գերմանացիներին, իսկ արդէն հայրենիքում նրանց գցում էին բանտերը։

«Եօթներորդ բանտարկեալը գերմանացի էր, ոչ զինուրական, նրա հագին կար սեւ պիջակ, սեւ շալւար, սեւ բաճկոն, սեւ վերարկու և սեւ գլխարկ։ Նա 50ը անց, բարձրահասակ, գունատ դէմքով, փափկասուն մի մարդ էր։ Ինձ կանգնեցրին շարք և թաթար **սերժանտը**, պահակախմբի պետը, կարգադրեց ինձ վերցնել իմ ճամպրուկը, որը գտնւում էր բանտի բակում։ Այդ ճամպրուկում իմ սպայական իրերն էին և որոշ գրութիւններ, որոնք անհրաժեշտ էին իմ դատավարութեան ժամանակ։ Ի՞նչպէս թէ վերցնել ճամպրուկը։ Այդ **սերժանտը** ուզում էր, որ ես, լինելով սպայ, ճամպրո՞ւկ կրեմ։ Այսինքն մի ահագին բեռ, որը արգելւած է նոր ներքին կանոնադրութեամբ։ Իսկ իմ կողքից, ձեռքերը թափ տալով, պէտք է քայլեն վեց շարքայիններ և յաղթւած ազգի ներկայացուցի՞չը։ Ոչ, դա անհնարին էր։ Ես, իհարկէ, **սերժանտ**ին չարտայայտեցի իմ այս մտորումները, բայց ասացի.

«-Ես սպայ եմ, ճամպրուկը թող տանի գերմանացին։ Բանտարկեալներից է՛ւ ոչ մէկը շուտ չեկաւ իմ խօսքերի վրայ, շուտ գալը արգելւած էր։ Միայն կողքիս բանտարկեալը նայեց իմ վրայ զարմանքով։ (Երբ նրանք դուրս էին եկել մեր բանակից, նա դեռ այդպիսին չէր)։ Իսկ հակահետախուզութեան **սերժանտը** չզարմացաւ։ Թէպէտ նրա աչքում ես, ի հարկէ, սպայ չէի, բայց իմ և նրա դաստիարակութիւնը համընկնում էր։ Նա կանչեց ոչ մի մեղք չունեցող գերմանացուն և կարգադրեց վերցնել ճամպրուկը։ Լաւ է, որ գերմանացին մեր խօսակցութիւնից ոչինչ հասկացաւ։ Գերմանացին շուտով յոգնեց։ Նա տեղափոխում էր ճամպրուկը մէկ ձեռքից միւսը, ձեռքը դնում էր սրտին և նշաններ էր անում պահակապետին, որ էլ չի կարողանում տանել։ Եւ իր հարեւան բանտարկեալը, որը գերմանական գերութեան մէջ ո՞վ գիտէ ինչեր էր տեսել (իսկ գուցէ է՛ւ գթութիւն), իր կամքով վերցրեց ճամպրուկը գերմանացու ձեռքից։ Յետոյ, առանց պահակապետի կարգադրութեան, ճամպրուկը վերցրեցին ուրիշ ռազմագերիներ։ Յետոյ՝ նորից գերմանացին։ Բայց ես՝ ոչ։ Եւ ոչ ոք ինձ ոչինչ չէր ասում…

«Ես ժպտում էի, հպարտանալով, որ բանտարկւած եմ ոչ թէ գողութեան կամ դաւաճանութեան համար, այլ նրա համար, որ կարողացայ հասկանալ Ստալինի չարամիտ գաղտնիքները։ Ես ժպտում էի, որովհետեւ ցանկանում էի և գուցէ դեռ պէտք է կարողանայի մի քիչ ուղղել մեր ռուսաստանեան կեանքը։ Իսկ ճամպրուկս այդ ժամանակամիջոցին կրում էին ուրիշները։ Իսկ ես այդ կապակցութեամբ ոչ մի խղճախայթ չէի զգում։ Եթէ իմ հարեւանը, որի աչքերը լի էին տառապանքով, մեղադրէր ինձ մաքուր ռուսերէնով, որ ես սրիկայ եմ և ինքնահաւան, որ ես զգում եմ բանտարկեալի պատիւը և դասում եմ ինձ ուրիշներից աւելի բարձր, ես նրան ՉԷԻ ՀԱՍԿԱՆԱՅ։ Ես պարզապէս չէի հասկանայ, թէ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ է նա խօսում։ Չէ՞ որ ես սպայ եմ։ Եթէ մեզանից 7ին վիճակւած էր մեռնել ճանապարհի վրայ, իսկ 8րդին կարող էին փրկել, ի՞նչը կը խանգարէր ինձ բացագանչել. «**Մերժա՛ւոտ**, փրկեցէ՛ք ինձ չէ՞ որ ես սպայ եմ»։ Այ թէ ինչ է նշանակում սպայ, եթէ իսկ ուսադիրները նրա երկնագոյն չեն։ Իսկ եթէ երկնագո՞յն են։ Ե՞թէ նրան ներշնչել են, որ սպաների մէջ էլ նա ամենաաերեւելին է։ Որ վստահւած է նրան ուրիշներից աւելին, որ նա աւելի շատ բան գիտէ, քան ուրիշները և որ դրա համար նա իրաւունք ունի բանտարկեալի գլուխը կռացնելով մտցնել խողովակի մէ՞ջ։ Ես վերագրում էի ինձ խիզախութիւն, իսկ ինքս պատրաստի դահիճ էի։ Եւ եթէ ես Եժովի ժամանակ աւարտէի ՆԿՎԴի դպրոցը, գուցէ Բերիայի մօտ լինէի իմ տեղում»։

Սոլժենիցինը գալիս է այն եզրակացութեան, որ բոլշեւիկների կողմից ստեղծւած վարչակարգը ոչ միայն մերկացրել էր մարդու ամենաանբարոյական և չար յատկութիւնները, այլեւ օգտագործում էր այդ յատկութիւնները որպէս վարչակարգի միակ օգտակար յատկութիւններ։ Եւ որքան ծիծաղելի են թւում փորձերը՝ այդ դահիճներին վերագրել որոշ մարդկային յատկութիւններ։ Այսօր շատերը գերագոյն դատարանի նախագահ Գոլեակովին գովաբանում են այն բանի համար, որ նա սիրում էր հողագործութիւնը և զբաղւում էր դրանով իր այգում և, բացի դրանից, նա սիրում էր գրականութիւնը և քաջ ծանօթ էր Չեխովի և Տոլստոյի ստեղծագործութիւնների հետ։

Իսկ մի գնդապետ շատ վախենում էր, որ իր կինը, որին նա յարգում էր, յանկարծ չիմանայ, թէ ինչպէս է նա տանջում բանտարկեալներին։ Կարելի՞ է արդեօք արդարացնել նրանց, եթէ այդ նոյն մարդիկ ծեր հրեաներին շաբաթներով պահում էին սառոյցների մէջ և հռհռում էին՝ յիշեցնելով նրանց աչքերի վախեցած արտայայտութիւնը։ Եւ եթէ այդ նոյն մարդիկ սիրում էին իրենց երեխաներին, եթէ նրանք նրբազգաց էին իրենց սիրելի կանանց հանդէպ, դա դեռ չի նշանակում, որ իրենք ունէին գոնէ որոշ սրբութիւն։ Նրանց սրբութեան մասին Սոլժենիցինը պատմում է.

«Եագոդայի ամառանոցում, Մոսկւայի տակ, լողարանի սրահներից մէկում շարւած էին սրբապատկերներ յատուկ այն բանի համար, որ Եագոդան իր ընկերներով, մերկանալուց յետոյ, ատրճանակներից կրակ բացեն այդ սրբապատկերների վրայ։ Այդ զարհուրելի արարողութիւններից յետոյ, նրանք մտնում էին լողարան։ Ի՞նչպէս անւանել սա, չարագործութի՞ւն։ Բայց մենք սովորել ենք, որ չարագործներ կան միայն հեքիաթներում, երեխաների համար։ Երբ համաշխարհային գրականութիւնը տալիս է մեզ չարագործների կերպարներ, մեզ թւում է թէ Շեքսպիրը, Շիլերը և Դիկենսը չափը անցնում են և որ մեր ընկալումների համար այդ ամէնը մի քիչ հնացած է։

«Բայց ի՞նչպէս են նկարագրւած այդ չարագործները։ Նրանք հիանալի գիտակցում են իրենց սեւ չարամտութիւնը։ Նրանք դիտաւորեալ ստեղծում են խառնակչութիւններ, քանզի չեն կարող ապրել առանց չարիքի։ Եագոն, օրինակ, բացայայտօրէն իր նպատակները վերագրում է ատելութեանը։ Բայց ոչ, այդպէս իրականութեան մէջ չի լինում։ Չարիք գործելու համար, մարդը առաջին հերթին պէտք է գիտակցի այդ գործողութիւնը, որպէս բարի, որպէս օրինական գործողութիւն։ Բարեբախտաբար, այդպիսին է մարդու էութիւնը, նա պէտք է գտնի իր գործողութիւնների համար ԱՐԴԱՐԱՑՈՒՄ։ Մակբեթի արդարացումները թոյլ էին և դրա համար նրան կործանեց իր սեփական խիղճը։ Եագոն էլ գառնուկ էր։ 10ը դիակներից աւելին չէր անցնում Շեքսպիրեան հերոսների երեւակայութիւնը և դրանով սպառում էին նրանց հոգեկան ուժերը։ Իսկ կատարւում էր դա պարզապէս այն պատճառով, որ չունէին նրանք ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ։

«Գաղափարախօսութիւնն է տալիս չարագործին իսկական արդարութիւն և վճռականութիւն։ Այդ հասարակական տեսութիւնը օգնում է ոճրագործին արդարանալ և շրջապատից մեղադրանքների փոխարէն լսել յարգանք և գովասանք։ Այդպէս, հաւատաքննութիւնը արդարանում էր քրիստոնէութիւնով, զաթիչները՝ հայրենիքի մեծարումով, գաղութատէրերը՝ քաղաքակրթութիւնով, ցեղապաշտները՝ ազգով, ծայրայեղականները (նոր և հին)՝ հաւասարութիւնով, եղբայրութիւնով և ապագայ սերունդների երջանկութիւնով։ Գաղափարախօսութեան շնորհիւ 20րդ դարում կատարւեցին միլիոնների հասնող չարագործութիւններ։ Դա անհնարին է ժխտել, չի կարելի շրջանցել, չի կարելի մոռանալ և լռել։

«Եւ ի՞նչպէս կարող ենք մենք դրանից յետոյ պնդել, որ չարագործներ գոյութիւն չունեն։ Իսկ ո՞վ ոչնչացրեց այդ միլիոններին։ Առանց չարագործների **«Արշիպելագ»**ը գոյութիւն չէր ունենայ։ 1918-20 թւականներին լուր տարածւեց, որ Օդեսայի ՉԿան ոչ բոլոր դատապարտւածներին է գնդակահարում, նրանցից մի քանիսով կերակրւում են քաղաքի գազանանոցի գազանները (ըն-

դորում ոչ դիակներով, այլ կենդանի)։ Ես չգիտեմ ճի՞շտ է այդ լուրը թէ ոչ։ Բայց ես չեմ էլ ուզում ապացոյցներ։ Թող երկնագոյնները, ըստ իրենց սովորութեան, իրենք ապացուցեն, որ այդ անհնարին էր։ Որտեղի՞ց պէտք է սովի տարիներին գտնէր կեր՝ գազանների համար։ Կտրել բանւոր դասակարգի բերանից՝ անկարելի էր։ Իսկ այդ ժողովրդի թշնամիները, միեւնոյն է, պէտք է սպանւեն, էլ ինչո՞ւ իրենց մահով չնպաստեն հանրապետութեան գազանատնտեսութեանը և դրանով չապահովեն մեր շարժումը դէպի ապագան։ Միթէ՞ դա նպատակայարմար չէր։

«Ահա այն սահմանը, որից չէր կարող անցնել Շեքսպիրեան չարագործը, բայց գաղափարախօսութիւնով օժտւած չարագործը անցնում է այդ սահմանը և նրա աչքերը մնում են պարզ։ Մարդը ամբողջ կեանքում տատանւում և պրպտում է չարի և բարու միջեւ, սահում, ընկնում, բարձրանում, կրկին ընկնում, փոշմանում, նորից գայթակղւում, բայց քանի անցած չէ չարագործութեան սահմանը, նա դեռ ունի հնարաւորութիւն վերադառնալու և նրանից դեռ պէտք չէ կտրել յոյսը։ Բայց երբ նա անցնում է այդ սահմանը, նա արդէն դուրս է գալիս մարդկութիւնից։ Եւ գուցէ անվերադարձ»։

Սոլժենիցինը շատ նուրբ ձեւով համեմատում է Խորհրդային Միութեան ներկայ կացութիւնը արեւմտեան ազատ երկրների հետ և դատապարտում է խորհրդային իշխանաւորների ցանկութիւնը մի կերպ ծածկել այն խայտառակութիւնները, որ տեղի են ունեցել բոլշեւիկեան ամբողջ պատմութեան ընթացքում։ Նա գրում է.

«Հնուց արդարութեան մասին մարդիկ եղել են այն կարծիքի, որ չարը միշտ կործանւում է, իսկ բարին յաղթում։ Մենք արժանացանք բախտի հասնելու այնպիսի ժամանակաշրջանի, որ թէպէտ բարին չի յաղթում, յամենայնդէպս, ոչ ամէնուր, յօշոտւում է շների կողմից։ Ծեծւած և տկար առաքինութեանը թոյլատրւած է, իր վէրքերով հանդերձ, համեստ նստելու մի անկիւնում և ծպտուն չհանելու։ Սակայն չարի մասին ոչինչ չի ասւում։ Արեւմտեան Գերմանիայում մինչեւ 1966 թիւը, դատապարտւած են 86000 նացիական յանցագործներ և մենք աշխատանքից յետոյ մնում ենք ժողովների, որպէսզի շնչակտուր եղած գոռանք,- ՔԻՉ է։ Մամուլը, ռադիոն գոռում են՝ 86000 քիչ է, և 20 տարին էլ քիչ է՝ շարունակել։ Իսկ մեզ մօտ (զինւորական գերագոյն ատեանի տւեալներով) դատապարտւեցին մօտաւորապէս 10 հոգի։

«Այն, ինչ կատարւում է Օդերից և Ռէյնից այն կողմը, դա մեր գործն է։ Իսկ այն, որ մեր ամուսինների և հայրերի դահիճները մեքենաներով սլանում են մեր փողոցներով և մենք ստիպւած ենք զիջելու նրանց ճանապարհը, դա մեր գործը չէ, ի՞նչ իմաստ ունի բորբոքել հին վէրքերը։ Մինչդեռ եթէ գերմանացիների 86000ը յարաբերական իմաստով տեղափոխւեն մեր պայմանները, մեր

երկրի համար դա կը դառնար ՔԱՌՈՐԴ ՄԻԼԻՈՆ: Բայց մենք չփնտռեցինք չգտանք նրանց, չկանչեցինք դատարան, մենք վախենում ենք բորբոքել նրանց վէրքերը:

«Եւ որպէս նրանց խորհրդանիշ Գրանովսկի փողոցի 3րդ համարում ապրում է ինքնահաւան, բթամիտ և մինչեւ այսօր ոչինչ չհասկացած Մոլոտովը, որը ամբողջովին ներծծւած է մեր արիւնով: Նա վեհանձնօրէն անցնում է մայթը և նստում է ընդարձակ մեքենայի մէջ:

«Կը գայ ժամանակը և մեր ժառանգորդները մեզ կ'անւանեն փսլնքոտներ, քանզի սկզբից խոնարհ, թոյլ տւեցինք որ մեզ՝ միլիոններիս կոտորեն, իսկ յետոյ սկսեցինք հոգատար խնամել մարդասպանների ծերութիւնը: Թող մենք լինենք մեծահոգի՝ չգնդակահարենք, չտանջենք, չծեծենք, չանենք այն բոլորը: Բայց մեր երկրի, մեր երեխաների առաջ պարտաւոր ենք ԲՈԼՈՐԻՆ ԳՏՆԵԼ և ԲՈԼՈՐԻՆ ԴԱՏԵԼ: Դատել ոչ թէ իրենց, այլ իրենց յանցանքները: Թող նրանք բոլորը բարձրաձայն ասեն. «Այո, ես եղել եմ դահիճ և մարդասպան»:

«Չպատժելով յանցագործներին, մենք ոչ թէ խնամում ենք նրանց խղճուկ ծերութիւնը, այլ նոր սերունդների ոտքի տակից հանում ենք արդարութեան հիմքերը: Երիտասարդները ըմբռնում են, որ սրիկայութիւնը աշխարհում երբեք չի պատժւում, այլ, ընդհակառակը, բերում է բարեկեցութիւն: Եւ որքան վտանգաւոր և անյարմար պիտի լինի ապրել այդպիսի երկրում»:

Իր գրքի ամբողջ ընթացքում Սոլժենիցինը ծանօթացնում է ընթերցողին այն մարդկանց հետ, ում նա հանդիպել էր **Գուլագում** և որոնք առաջացրել էին իր մէջ առաջին կասկածները Լենինեան կուսակցութեան վերաբերեալ:

Այդ հատւածներից մէկում նա գրում է.

«Մեր կորցրած բազմաթիւ չափանիշների թւին պատկանում է նաեւ բարձր դիմացկանունութիւնը այն մարդկանց, որոնք մեզանից առաջ խօսել և գրել են ռուսերէնով: Զարմանալ կարելի է, թէ ինչո՞ւ նրանք նկարագրւած չեն մեր մինչ-յեղափոխական գրականութեան մէջ: Նրանք շատ բան էին տեսել, որպէսզի ընտրէին մէկը: Նրանք չափից աւելին էին ձգտում կատարեալին, որպէսզի ամուր կանգնէին գետնի վրայ: Բոլոր հասարակութիւնների անկումից առաջ, յայտնւում է այդ իմաստունների խաւը, որոնք միայն մտածում են: Եւ ինչպէ՞ս էին հռհռում նրանց վրայ, որքան ծիծաղելի էին նրանք: Թւում էր, թէ նրանք նստած են գործունեայ մարդկանց կոկորդում և նրանց այլ կերպ չէին անւանում, քան նեխածներ: Որովհետեւ այդ մարդիկ ժամանակից շուտ էին ծնւել, շատ նուրբ էր նրանց բուրմունքը, դրա համար էլ հնձեցին նրանց: Անձնական կեանքում նրանք չափից աւելի անօգնական էին՝ ոչ կռանալ, ոչ ձեւանալ, ոչ յարմարւել նրանք չգիտէին, ամէն մի նրանց խօսքը՝ կարծիք էր, բողոք ու կիրք: Այդպիսիներին էր հնձում գերանդին, այդպիսիներին էր աղում ջրա-

ղացը։ (Ես վախենում եմ սխալւել, բայց կարծես թէ մեր դարի 70 թւականներից առաջ էլ կրկին սկսեցին ծնւել այդպիսիները։ Դա զարմանալի է։ Այդ յոյսը մենք գրեթէ կորցրել էինք)։ Այս նոյն խուցերի միջով անցել էին և նրանք։ Սակայն պատերը ոչինչ չէին պատմում անցեալի մասին, ընդհակառակն, նրանց մէջ թագցրած լսափողները ուշադիր լսում էին մեզ։ Այդ խուցերի նախկին բնակիչների, նրանց խօսակցութիւնների մասին, այն մտքերի, որոնց հետ միասին նրանք գնում էին գնդակահարւելու, ոչինչ չի գրւած, ոչինչ չի ասւած։ Եւ այդ հատորը, որը 40 վագոն մեր գրականութիւնից աւելին արժէ, երեւի երբեք արդէն լոյս չի տեսնի։ Նրանց հետ, ում ես հանդիպեցի այս խուցերում, անհնարին էր տխրել։ Այստեղ կային մարդիկ, որոնցից ես շատ բան ունէի սովորելու։

«Այն 63 տարեկան ծերուկի անունը Անատոլի Իլիչ Ֆաստենկօ էր։ Նա շատ գեղեցկացնում էր մեր բանտասենեակը ե՛ւ իբրեւ հին ռուսական բանտերի աւանդոյթների պահպանող, ե՛ւ իբրեւ ռուսական յեղափոխութիւնների կենդանի պատմութիւն։ Այն ինչ նա պահպանել էր իր յիշողութեան մէջ, չափանիշ էր հանդիսանում այն ամէնի, ինչ կատարւել և կատարւում էր։ Այդպիսի մարդիկ արժէքաւոր են ոչ միայն խուցերում, այլ նրանց պակասը զգացւում է ամբողջ հասարակարգի մէջ։ Ֆաստենկոյի ազգանունը մենք գտանք, հէնց այստեղ խուցում մի գրքի մէջ, որը 1905 թւականի յեղափոխութեան մասին էր։ Ֆաստենկոն այնքան հին սոցիալ-դեմոկրատ էր, որ թւում էր, թէ նա արդէն այդպիսինը չէ։ Իր առաջին բանտարկութիւնը նա ստացել էր դեռ երիտասարդ ժամանակ, 1904 թւականին, բայց 1905 թւականին, Հոկտեմբերի 17ի հրովարտակի համաձայն, լրիւ ազատ արձակւեց։ (Ո՞վ մեզանից դպրոցական նստարանի վրայ անգիր չի արել բոլշեւիկեան կուսակցութեան պատմութեան այն հատւածը, որտեղ ասւած է, որ այդ «Հրովարտակը» յերիւրանք էր ազատութեան նկատմամբ, որ իբր թէ հրովարտակը առաջացրել էր ասացւածք. «Մեռելներին՝ ազատութիւն, կենդանիներին՝ բանտարկութիւն»։ Սուտ է այդ ասացւածքը։ Հրովարտակը թոյլատրում էր ԲՈԼՌՐ քաղաքական կուսակցութիւնների գործունէութիւնը, իսկ ներման որոշումը ընդարձակ էր և արդար։ Նրա համաձայն ազատ էին արձակւում ոչ շատ, ոչ քիչ ԲՈԼՌՐ քաղաքական բանտարկեալները։ Միայն քրէական բանտարկեալները շարունակում էին մնալ բանտարկւած։ Իսկ ստալինեան ներումը 1945 թւին վարւեց հակառակ ձեւով։ Բոլոր քաղաքականները մնացին բանտարկւած)։

«Հետաքրքրական էր Ֆաստենկոյի պատմութիւնը այդ հրովարտակի օրերի մասին։ Այն տարիներին բանտի պատուհանների երկաթեայ վանդակների մասին դեռ գաղափար չունէին և այն խուցից, որտեղ նստած էր Ֆաստենկոն, բանտարկեալները ազատ կերպով դիտում էին բանտի բակը, ուր մտնում և դուրս էին գալիս տարբեր մարդիկ, որոնց հետ կարելի էր բանտի պատուհան-

ներից ազատ խօսել։ Եւ ահա, արդէն Հոկտեմբերի 17ին, կէսօրին, ներման լուրը հասաւ բանտարկեալներին։

«Քաղաքական բանտարկեալները ուրախութիւնից ըմբոստացան և սկսեցին կոտրել լուսամուտի ապակիները, դռները, պահանջելով բանտապետից անմիջապէս իրենց ազատ արձակել։ Եւ ի՞նչ։ Նրանցից ոեւէ մէկի մռութը կոտրեցի՞ն։ Որեւէ մէկին նստացրեցի՞ն պատժասենեակ։ Որեւէ խուց զրկեցի՞ն գրքերից, կամ սնունդից։ Ամենեւին էլ ոչ։ Շփոթւած բանտապետը վազում էր մէկ խուցից միւսը, և աղաչում. «Պարոնայք՝ ես խնդրում եմ ձեզ, եղէք խելամիտ։ Ի՞նչպէս կարող եմ ես ազատել ձեզ առանց յատուկ հրամանի։ Ես այդ իրաւունքը չունեմ։ Ես ձեզ շատ եմ խնդրում՝ դուք ստիպւած էք այստեղ անցկացնելու եւս մի գիշեր»։ Եւ իսկապէս, նրանց բարբարոսաբար պահեցին բանտում եւս մէկ օր։ (Ստալինեան ներումից յետոյ մարդկանց պահում և աշխատեցնում էին բանտում 2-3 ամսով և ոչ ոք դա չէր համարում անօրինական)։

«Ազատութիւն ստանալուց յետոյ Ֆաստենկոն նետւեց յեղափոխութեան գիրկը և մի քանի անգամ կրկին ձերբակալւեց։ Վերջապէս նա ազատւեց և մեկնեց Փարիզ։ Այստեղ նա ծանօթացաւ Լենինի և Լունաչարսկու հետ։ Լոնժիմօ կուսակցական դպրոցում նա կատարում էր տնտեսական պարտականութիւններ։ Պատերազմից առաջ նա տեղափոխւում է Քանատա, աշխատում է այնտեղ որպէս բանւոր։ Ֆաստենկոն այցելեց նաեւ Միացեալ Նահանգները։ Այդ երկրների հաստատուն և առատ կեանքը շշմեցրեց Ֆաստենկոյին՝ նա եզրակացրեց, որ ոչ մի պրոլետարական յեղափոխութիւն այնտեղ չի կատարւի և հազիւ թէ նրանք այդ յեղափոխութեան կարիքը զգում են։ Իսկ այստեղ՝ Ռուսաստանում, շատ աւելի շուտ քան սպասում էին, բռնկւեց յեղափոխութիւնը։ Ֆաստենկոն էլ առաջւանը չէր, նա բաւականին սառել էր այդ յեղափոխութիւնների նկատմամբ, բայց վերադարձաւ, ենթարկւելով այն օրէնքին, որը ստիպում է թռչուններին վերադառնալ իրենց բները։

«Ֆաստենկոյին ես դեռ լրիւ չէի կարողանում հասկանալ։ Նրա մէջ ինձ համար ամենազարմանալին և ամենակարեւորը այն փաստն էր, որ նա անձամբ ճանաչում էր Լենինին։ Իսկ իր սեփական յիշողութիւնների մէջ այդ փաստը գրեթէ տեղ չէր գրաւում։ Իմ տրամադրութիւնը այն ժամանակ այնպիսինն էր, որ երբ բանտարկեալներից մէկը նրան ասաց. «Իլիչ, այսօր քո հերթն է **պարաշան** թափելու» (այդպէս է կոչւում բանտի բնական կարիքների համար օգտագործւող դոյլը. Է.Յ.)։ Ես զայրացայ, ինձ դա թւաց սրբապղծութիւն և ոչ թէ բառերի համար, այլ ընդհանրապէս սրբապղծութիւն էր ոեւէ մէկին անւանել Իլիչ, բացի մէկից՝ միակ մարդուց ամբողջ երկրագնդի վրայ։ Եւ քանզի այդպիսինն էի ես, Ֆաստենկոն էլ շատ բան չէր կարողանում ինձ բացատրել։ Նա ինձ պարզ ասում էր. «Կուռք մի ստեղծիր քեզ համար»։ Իսկ ես չէի հասկանում։

Տեսնելով իմ հիացմունքը, զգուշօրէն, բայց անընդհատ կրկնում էր ինձ. «Դուք մաթեմատիկոս էք, դուք իրաւունք չունէք մոռանալու Դեկարտին, որը պնդում էր,- Ամէն ինչ ենթարկիր կասկածի»: ԱՄԷՆ Ի՞ՆՉ: Ինչպէ՞ս թէ ամէն ինչ: Դէ երեւի ոչ ամէն ինչ: Ինձ թւում էր, թէ ես առանց այն էլ արդէն շատ բան էի ենթարկել կասկածների, բաւական էր: Կամ նա ասում էր. «Հին քաղբանտարկեալներից գրեթէ ոչ ոք չի մնացել, ես ամենաերջանիկներից մէկն եմ: Բոլոր հին քաղբանտարկեալներին ոչնչացրեցին, իսկ մեր ընկերութիւնը դեռ 30ական թւականներին ցրեցին: Բայց ինչո՞ւ: Որպէսզի մենք չհաւաքւէինք և չքննարկէինք»: Եւ չնայած նրան, որ այս հանգիստ **տոն**ով արտասանած խօսքերը պէտք է նմանւէին երկնքին ուղղած մի ճիչի, պէտք է կոտրէին պատուհանները, ես ընկալում էի նրանք, որպէս Ստալինի եւս մէկ ոճիր: Էրիւ ճշմարիտ է այն կարծիքը, որ ոչ այն ամէնը, ինչ մտնում է մեր ականջները՝ հասնում է գիտակցութեանը: Մեր տրամադրութեանը չհամապատասխանող տեղեկութիւններ կորում են ականջների մէջ, թէ ականջներից յետոյ, բայց կորում են: Եւ հիմա, թէեւ լաւ յիշում եմ Ֆաստենկոյի պատմութիւնները, նրա տրամաբանութիւնը լաւ չի պահպանւել յիշողութեանս մէջ: Նա տալիս էր ինձ բազմաթիւ գրքերի անուններ, որոնք խորհուրդ էր տալիս, որեւէ ժամանակ, ազատ արձակւելուց յետոյ, կարդալ: Այդ անուններից յիշում եմ միայն երկուսը (այն էլ որովհետեւ հեղինակների անունները մօտ էին իմ այն ժամանակւայ ճաշակին) Գորկու «Ժամանակին չհամապատասխանող մթերքը» և Պլեխանովի «Մէկ տարի հայրենիքում»: Եւ հիմա ես գտնում եմ Պլեխանովի մօտ 1917 թւականի Հոկտեմբերի 28ին գրւած հետեւեալ խօսքերը.

«Վերջին օրերիս դէպքերը ինձ վիշտ են պատճառում, ոչ թէ նրա համար, որ ես չեմ ցանկանում Ռուսաստանի բանւոր դասակարգի յաղթանակը, այլ նրա համար, որ ամբողջ հոգով կոչ եմ անում նրան յիշել Էնգելսի կարծիքը այն մասին, որ բանւոր դասակարգի համար չի կարող լինել մեծ պատմական դժբախտութիւն, քան քաղաքական իշխանութեան ձեռք բերումը այն պահին, երբ նա դրան բոլորովին պատրաստ չէ: Իշխանութեան այդպիսի ձեռք բերումը կը ստիպի նրան նահանջել այն դիրքերից, որոնք նա նւաճել է այս տարւայ փետրւարին, շատ աւելի ետք»: Կարդում եմ այս հատւածը և յիշում եմ, որ ճիշտ այդպէս էր մտածում Ֆաստենկոն»:

Մի ուրիշ հանդիպում, որի շնորհիւ Սոլժենիցինը սկսել է հասկանալ և մտահոգւել փոքր ազգերի ճակատագրով, դա Էստոնացի Սուզին էր: Ինչպէս պատմում է Սոլժենիցինը, այդ էստոնացու հետ վէճերը սկսւում էին առաւօտւայ զբօսանքի ժամանակ և վերջանում էին խուցում: Այդ հետաքրքիր վէճերից յետոյ Սոլժենիցինի առաջ կանգնում էին բազմաթիւ հարցեր, որոնց մասին ինքը երբեք չէր մտածել: Այդ մասին նա գրում է.

«Ես ինչ որ մի տեղից գիտեմ, որ դպրոցական նստարանից ունեցել եմ մէկ նպատակ՝ ռուսական յեղափոխութեան պատմութիւնը, իսկ մնացածը ինձ չի վերաբերւել։ Իսկ այդ յեղափոխութիւնը հասկանալու համար՝ ինձ վաղուց ոչինչ պէտք չէ, բացի մարքսիզմ-լենինիզմից։ Ինչ բացի դրանից կպչում էր ինձ, ես կամ նետում էի դէն, կամ երես էի թեքում նրանից։ Բայց ահա ճակատագիրը ծանօթացրեց ինձ Սուզիի հետ, որը շնչում էր ուրիշ տեսակ, և որը պատմում էր իր սեփական վէրքերի ու երազների մասին։ Իսկ այդ սեփականը՝ Էստոնիան էր և դեմոկրատիան։ Թէպէտ նախկինում երբեք մտքովս չէր անցնի հետաքրքրւել Էստոնիայով, առաւել եւս բուրժուական դեմոկրատիայով, հիմա ես լսում և լսում էի նրա սիրահարւած պատմութիւնները 20 ազատ քաղաքների մասին, իր փոքրիկ և աշխատասէր ժողովրդի աւանդոյթների, եւրոպական առաջադէմ երկրներից ընդօրինակած իրենց սահմանադրութեան մասին, և չգիտես ինչո՞ւ, բայց այդ ամէնը սկսում էր ինձ դուր գալ և հարստանում էին իմ գիտելիքները։ Ես յօժարակամութեամբ խորանում եմ նրանց չարաբաստիկ պատմութեան մէջ։ Երկու՝ տեւտոնական և սլաւոնական մուրճերի արանքում ընկած, բոլորի կողմից լքւած, փոքրիկ էստոնական զնտանը ստանում էր յաջորդաբար հարւածներ ե՛ւ արեւելքից ե՛ւ արեւմուտքից։ Վերջ չկար այդ հարւածներին և շարունակւում են նրանք մինչեւ այսօր։ Ահա յայտնի պատմութիւնը (աւելի ճիշտ անյայտ) թէ ինչպէս մենք յարձակւեցինք, որպէսզի նուաճենք նրանց, չկարողացանք՝ դիմադրեցին։ Յետոյ ինչպէս Յուդենիչը ատում էր նրանց **չուխոն**ութեան համար, իսկ մենք անւանում էինք նրանց սպիտակ աւազակներ, բայց էստոնացի դպրոցականները արձանագրւում էին իբրեւ կամաւորներ։ Եւ կրկին յարձակւեցինք 40 թւականին, յարձակւեցինք 41ին, յարձակւեցինք ե՛ւ 44ին։ Նրա զաւակների մի մասին կլանում էր ռուսական բանակը, միւսը՝ գերմանական, իսկ մնացածները փախչում էին անտառները։ Տալինի տարեց մտաւորականները երազում էին դուրս պրծնել այդ անիծեալ օղակից, մի կերպ առանձնանալ և ապրել սեփական օրէնքներով։ Սակայն ոչ Չրչիլը, ոչ Ռուզվելթը մտահոգւած չէին նրանց ճակատագրով, բայց մտահոգւած էր Իոսիֆը։ Եւ երբ նրանց երկիրը մտան մեր զօրքերը, առաջին իսկ գիշերը այդ ցնորողներին Տալինի բնակարաններից հաւաքեցին։ Այժմ նրանցից 15 հոգի նստած էին Լուբիանկայի բանտի տարբեր խուցերում՝ նրանց մեղադրում էին ինքնորոշման յանցանքում»։

Բացի հետաքրքիր մարդկանց հետ իր ունեցած հանդիպումներից և զրոյցներից, ոչ պակաս տեղեկութիւններ էին ստանում բանտարկեալները,- պատմում է Սոլժենիցինը,- բանտի գրադարանից։ Համարելով բանտարկեալներին վերջնականապէս կտրւած աշխարհից և փաստօրէն վախճանւած, նրանց թոյլատրւում էր կարդալ այնպիսի գրքեր և օգտւել այնպիսի գրականութիւնից,

որը դրսում վաղուց ի վեր արգելւած էր: Այդ գրականութիւնը, հանդիպումները, փորձը, մտորումները ձեւակերպում էին Սոլժենիցինի նոր մտայնութիւնը, որի մէջ ամենագլխաւոր տեղը գրաւում էր կրօնական մտածելակերպը, հաւատքը, որի շնորհիւ, ինչպէս շատ անգամ նշել է հեղինակը, իրեն յաջողւեց վերածնւել: Նա պատմում է, թէ ինչպէս առաջին անգամ, բանտում, զբօսանքների ժամանակ, իր մէջ արթնացաւ կրօնական զգացմունքը:

«Յատակը քար էր, շրջապատող բարձր պատերը նոյնպէս քարից էին: Մեր կողքին էին առանց զէնքի պահակները: Աշտարակի վրայ կանգնած էին զինւած հսկիչները: Բայց օդը իսկական էր և բնական էր երկինքը:

«- Ձեռքերը եա,- հրամայում էր պահակապետը,- չխօսել, չկանգնել, բայց նա մոռանում էր արգելել ձգել հայեացքը դէպի երկինք: Եւ դու ի հարկէ բարձրացնում ես գլուխդ և նայում ես վեր: Այնտեղ դու տեսնում ես արեւը, իսկական և անվերջ կենդանի արեւը: Գարունը բոլորովին խոստանում է երջանկութիւն, իսկ բանտարկեալին տասնապատիկ անգամ աւելին:

«Օ՛, ապրիլեան երկինք: Ոչինչ, որ ես բանտումն եմ: Ինձ երեւի չգնդակահարեն: Բայց ես այստեղ կը դառնամ աւելի խելամիտ: Այստեղ ես դեռ շատ բան կը հասկանամ, երկինք: Ես դեռ կ՚ուղղեմ իմ սխալները, ոչ նրանց առաջ, ոչ, ոչ, քո առջեւ: Երկինք: Այստեղ ես հասկացայ իմ սխալները, և ես կ՚ուղղւեմ:

«Յերժինսկու հրապարակից, ինչպէս մի հեռաւոր փոսից մեզ են հասնում, երկրային խուլ երգի նման մեքենաների ձայները: Նրանց, ովքեր նստած են այդ մեքենաների մէջ, այդ ձայները թւում են հանդիսաւոր շեփորներ, իսկ այստեղից՝ որքա՛ն պարզ է նրանց ոչնչութիւնը»:

Սոլժենիցինը իր աշխատութեան մէջ մերկացնում է ստալինեան բարձրագոյն հրամանատարութիւնը, որի մեղքով երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին անընդհատ կործանւում էին առանձին զօրամասեր և բանակներ: Մասնաւորապէս երկրորդ հարւածային բանակը, որ 1942 թւի յունւարին նետւեց շրջապատւած Լենինգրադի ճակատը ճեղքելու համար: Նա գրում է.

«Յարձակողական գործողութիւնը նախատեսւում էր կատարել միասնական ուժերով մի քանի կողմերից, այդ թւում և Լենինգրադի կողմից: Գործողութեանը, համաձայնեցւած ժամկէտներում պէտք է մասնակցէին նաեւ 54րդ, 4րդ և 52րդ բանակները: Բայց այդ երեք բանակները կամ չշարժւեցին իրենց տեղերից պատրաստ չլինելու պատճառով, կամ անմիջապէս կանգնեցին (այն ժամանակ մենք դեռ չէինք կարողանում ծրագրել բարդ գործողութիւններ, իսկ ամենակարեւորը՝ կազմակերպել համապատասխան մատակարարումը): Սակայն երկրորդ հարւածայինը յաջողութեամբ կատարեց իր խնդիրը և 1942 թւականի փետրւարին 75 քլմ. խորացաւ գերմանական դիրքերի մէջ: Եւ հէնց

այդ վայրկեանին նա մնաց անօգնական։ Արկածախնդիր ստալինեան բարձրագոյն ղեկավարութիւնը չկարողացաւ օգնել այդ բանակին, ո՛չ զինանիւթերով և ոչ էլ զինուորներով (և այդպիսի կարողութիւններով նրանք սկսում էին յարձակո՛ւմը)։ Մարտ ամսին դեռ պահպանւում էին ձմեռային ճանապարհները, որոնցով բանակը շարժւել էր առաջ, իսկ ապրիլին սառոյցը հալւեց, դարձնելով ճանապարհները ճահիճ։ Բանակը լրիւ կորցրեց օգնութիւն ստանալու հնարաւորութիւնը։ Օգնութիւն չկար նաեւ օդից։ Բանակը մնաց առանց սննդամթերքների, իսկ Վլասովին (բանակի հրամանատարը, Է.Յ.) չթոյլատրեցին նահանջել։

«Երկու ամիս շարունակ սովամահ էր լինում բանակը (այդ բանակի զինուորները յետոյ բանտում ինձ պատմում էին, որ սնւում էին նեխած ձիերի դիակներով)։ Այդ վիճակում էր բանակը, երբ մայիսի 14ին գերմանացիները սկսեցին իրենց յարձակումը շրջապատւած բանակի դէմ (և ի հարկէ օդում կային միայն գերմանական ինքնաթիռներ)։ Եւ այդ ժամանակ, որպէս ծաղրանք, Վլասովին թոյլատրեցին նահանջել։ Ուժասպառ եղած բանակը կատարեց ե՛ւ այդ ապարդիւն փորձերը՝ ճեղքել թշնամու ճակատը»։

Սոլժենիցինը շարունակում է. «Սա ի հարկէ դաւաճանութիւն էր։ Ի հարկէ դաժան և եսամոլական դաւաճանութիւն։ Բայց Ստալինի կողմից։ Դաւաճանութիւնը պարտադիր չէ, որ լինի դրամով ծախւածութիւն։ Անգրագիտութիւնը և աչքաթողութիւնը, շփոթւածութիւնը և վախկոտութիւնը, բանակների և զօրամասերի անիմաստ զոհաբերութիւնները, միայն թէ փրկուի սեփական **մարշալ**ական զգեստը. կարո՞ղ է արդեօք լինել դրանից էլ աւելին դաւաճանութիւն բարձրագոյն հրամանատարութեան համար»։

Այստեղ ես ուզում եմ մի քիչ շեղւել մեր բուն նիւթից, այսինքն ԱՐՇԻՊԵԼԱԳ ԳՈՒԼԱԳից։ Վլասովի բանակի ողբերգութեան նկարագրութիւնը Սոլժենիցինի կողմից առաջացրեց մեծ աղմուկ ամբողջ աշխարհում, մանաւանդ Խորհրդային Միութիւնում։ Սոլժենիցինը մեղադրեցին նրանում, որ նա արդարացնում է Վլասովի դաւաճանութիւնը։ Այդ իսկ պատճառով ես ուզում եմ մի քիչ աւելի մանրամասնօրէն կանգ առնել այդ հարցի վրայ։ Արդէն տասը տարի է ինչ, խորհրդային պատմագրութիւնը անում է ամէն ինչ, որ գրականութեան մէջ չթափանցեն որեւէ նիւթեր ստալինեան հրամանատարութեան սխալների վերաբերեալ։ Այդպիսի նիւթերի գլխաւոր հսկիչը համարւում է պաշտպանութեան նախարարութեան ռազմական պատմութեան հաստատութեան **դիրեկտոր** զօրավար Ժիլինը։ Պատասխանելով Սոլժենիցինին, նա **«Իզւեստիա»** թերթում հրատարակեց մի յօդւած, որտեղ մասնաւորապէս գրում էր.- «Սուտ է, որ ստալինեան հրամանատարութիւնը լքել է երկրորդ հարւածային բանակը։ Բաւական է ծանօթանալ մարաջախտ Մերեցկովի «Լենինգրադի ճակա-

տամարտը» աշխատութեան հետ, որպէսզի պարզ դառնայ, թէ որքանով սուտ և անպատասխանատու են Սոլժենիցինի պնդումները: Այդ գրքում մանրամասնօրէն նկարագրուած են երկրորդ բանակի ծանր պարտութեան պատճառները: Երբ պարզ եղաւ, որ բանակը այլեւս ի վիճակի չէ շարունակել յարձակումը, Վլասովին կարգադրուեց դուրս գալ շրջապատումից գոյութիւն ունեցող ճանապարհով: Սակայն Վլասովը չէր շտապում, մատնուել էր անգործութեան և ոչինչ չարեց, որպէսզի ապահովի կողքերի անվտանգութիւնը: Դա թոյլ տուեց գերմանական ֆաշիստներին կտրել նահանջի ճանապարհը և աւարտել շրջապատումը»:

Երկրորդ բանակի շրջապատման միակ մեղքը Ժիլինը վերագրում է զօրավար Վլասովին: Այդ միտումը նոր չէ: **Խորհրդային Միութիւնը երկրորդ համաշխարհային պատերազմում** աշխատութեան երկրորդ հատորում, Վլասովին վերագրուած է դաւաճանութիւն, իսկ մի քանի ուրիշ գրքերում նշուած է, որ Վլասովը դեռ Կիեւի ճակատամարտի ժամանակ կապւել է գերմանացիների հետ և անցել է նրանց ծառայութեանը: Անհասկանալի է, ի հարկէ, թէ ինչո՞ւ այդ գերմանական լրտեսը չյանձնեց իր բանակը Կիեւում թշնամուն և ինչպէս նա այնուամենայնիւ նշանակւեց 20րդ բանակի հրամանատար, որ ջախջախեց գերմանացիներին Մոսկւայի տակ:

Դժբախտաբար անհնարին է ծանօթանալ այն փաստաթղթերի հետ, որոնք կարող էին տալ երկրորդ բանակի պարտութեան իսկական պատկերը: Սակայն ինձ վիճակուեց ծանօթանալ ռազմական մեկնաբան Կրուժինի մի աշխատութեան հետ, որտեղ հեղինակը բերում է հետաքրքրական տւեալներ և որտեղից ես օգտւում եմ իմ այս յօդւածում: Սկսեմ վերջից: Պարտութիւնը սկսւեց 1942 թւականի յունուարին, սակայն պարտութիւնը կանխորոշւած էր արդէն այն ժամանակ, երբ Ստալինը որոշեց սկսել այդ գործողութիւնը: Ստալինը յաճախ կատարում էր խոշոր **ստրատեգի**ական սխալներ, որովհետեւ չէր կարողանում և չէր ուզում պատկերացնել իրականութիւնը: Մարշալ Ժուկովը Լենինգրադի գործողութեան սկզբի մասին գրում է հետեւալը.

«Գերագոյն հրամանատարը, գտնւելով Մոսկւայի տակ գերմանական զօրքերի պարտութեան ազդեցութեան տակ, համարում էր, որ միւս ճակատներում գերմանացիները եւս չեն դիմանայ Կարմիր Բանակի հարւածներին: Այստեղից էլ ծագեց միտքը, որքան կարելի է շուտ սկսել ընդհանուր յարձակումը: Նա (այսինքն Ստալինը) կարծում էր, որ 1942 թւականի վերջին Խորհրդային Միութիւնը ամբողջովին կը մաքրւի գերմանացիներից: Ժուկովի խոստովանութիւնից պարզւում է, որ այն ժամանակւայ գլխաւոր սպայակոյտի հրամանատար Շապոշնիկովը համաձայն չէր Ստալինի հետ: Համաձայն չէր նաեւ Ժուկովը: Չհամաձայնվեց Ստալինի ծրագրի հետ նաեւ Վոզնեսենսկին, որ ղե-

կավարում էր ռազմական արդիւնաբերութիւնը: Սակայն Ստալինը հաշւի չառաւ ոչ մէկի կարծիքը: Պարզուեց, որ խորհրդակցութիւնը կրում էր միայն ձեւական բնոյթ: Ստալինը արդէն ընդունել էր իր որոշումը, խորհրդակցելով միայն մարաջախտ Տիմոշենկոյի հետ: 1942 թւականին, յունուարի 10ին, բոլոր ճակատների ռազմական խորհուրդները ստացան Ստալինի կարգադրութիւնը, որտեղ ասւած էր. «Մեր խնդիրը կայանում է նրանում, որ չթողնել գերմանացիներին շունչ քաշել, պէտք է քշել նրանց դէպի արեւմուտք, առանց կանգնելու, ստիպել նրանց մինչեւ գարուն սպառել նրանց պաշարները: Եւ երբ մենք կ՚ունենանք մեծ պաշարներ, իսկ նրանք ոչ, մենք կ՚ապահովենք նրանց վերջնական ջախջախումը»:

Մեկնաբանելով այդ նամակը, մարաջախտ Վասիլեւսկին իր յիշողութիւնների մէջ գրում է. «Գլխաւոր Սպայակոյտի անդամները այս ցուցմունքները համարում էին շատ կարեւոր և՛ զօրքի և՛ հրամանատարութեան համար, սակայն մենք բոլորս հասկանում էինք, որ առաջարկութիւններ անելը դեռ բաւական չէր: Անհրաժեշտ էին զինամթերքներ, որոնք բացակայում էին»:

1941 թւականի դեկտեմբերի 12ին, 4րդ բանակի հրամանատար մարաջախտ Մերեցկովը հրաւիրւեց բարձրագոյն հրամանատարութեան կայանը: Ներկայ էին՝ Ստալինը, մարաջախտ Շապոշնիկովը, Լենինգրադեան ճակատի հրամանատար զօրավար Խոզինը, այդ նոյն ճակատի ռազմական խորհրդի անդամ և միաժամանակ Լենինգրադի տէրն ու տիրական Ժդանովը, 26րդ բանակի հրամանատար Սոկոլովը և 59րդ բանակի հրամանատար Գալանինը: Ինչպէս պարզուեց Մերեցկովին հրաւիրել էին նոր, այսպէս կոչւած Վոլխովեան ճակատ կազմակերպելու կապակցութեամբ: Մերեցկովը նշանակւում էր այդ ճակատի հրամանատարը: Մարաջախտ Շապոշնիկովը զեկուցեց, որ այդ նոր ճակատը Լենինգրադը շրջապատումից հանելու գործում պէտք է կատարի գլխաւոր դերը: Խնդրի բարդութիւնը և պատասխանատուութիւնը պահանջում էր լուրջ և երկարատեւ նախապատրաստական աշխատանքներ: Սակայն Ստալինը մտածում էր այլ կերպ: Ընկնելով Ժդանովի ազդեցութեան տակ, որ շտապում էր ազատագրել սովահար եղած Լենինգրադը, նա կարգադրեց Մերեցկովին անմիջապէս սկսել յարձակումը: Դեկտեմբեր 22ին յարձակումը սկսւեց: Բայց դա յարձակում էր միայն թղթի վրայ: Մեծ դժւարութեամբ բանակը առաջ էր շարժւում, բայց Վոլխով գետից այն կողմը չկարողացաւ անցնել: Յարձակումը խեղդւեց: Դեկտեմբերի վերջին ճակատ մեկնեց գլխաւոր հրամանատարութեան ներկայացուցիչ Մեխլիսը և սկսեց շտապեցնել հրամանատարութիւնը: Սակայն բացի **ներւոս**ից նրան ոչինչ չյաջողւեց անել ճակատում: Երկրորդ հարւածային բանակը դեռ տեղ չէր հասել:

Մերեցկովը խնդրեց մի քանի օրով յետաձգել յարձակումը: Ստալինը ստիպւած էր համաձայնւելու:

Յունուար 7ին երկրորդ բանակի մէկ մասը հասաւ ճակատ: Այդ նոյն օրը սկսւեց յարձակումը և ինչպէս գուշակում էր Ժուկովը, յարձակումը յաջողութիւն չունեցաւ: Գերմանացիների ուժգին հարւածների տակ, խորհրդային զօրքերը ստիպւած եղան նահանջել: Գործողութիւնը նախապատրաստւած չէր՝ այդ պատճառով էլ տապալւեց,- գրում է Մերեցկովը: Նա խնդրեց բարձրագոյն հրամանատարութեանը յետաձգել յարձակումը եւս երեք օրով: Աւելի ճիշտ գոնէ երեք օրով, քանզի, ինչպէս խոստովանում է ինքը Մերեցկովը, նախապատրաստելու համար պահանջւում էր առնւազն 15-20 օր: Յունուար 10ին Մերեցկովը կապւեց հեռախօսով Ստալինի հետ: Ստալինը ասաց Մերեցկովին հետեւեալը.

«Ինձ հասած տեղեկութիւնների համաձայն, դուք պատրաստ չէք յարձակմանը ամսի 11ին: Եթէ դա ճիշտ է, պէտք է յետաձգել յարձակումը մէկ, երկու օրով, որպէսզի յարձակումից յետոյ յաջողէք ճեղքել թշնամու պաշտպանութիւնը: Ռուսները ասացւածք ունեն.- կը շտապես – մարդկանց կը ծիծաղեցնես: Ձեր մօտ այդպէս էլ եղաւ, շտապեցիք յարձակումով, չնախապատրաստւեցիք և մարդկանց ծիծաղեցրեցիք»:

Դա Ստալինի հերթական գլուխ-գործոցն էր: Նրան զարմանալիօրէն յաջողւում էր իր սեփական մեղքերը բարդել ուրիշների վրայ: Նա անսխալ էր, նրան չէր կարելի սխալւել: Սակայն Մերեցկովը այնքան վրդովւած էր Ստալինի անարդարութիւնով, որ իր յօդւածներից մէկում (ի հարկէ Ստալինի մահից յետոյ) նա համարձակւում է նշել. «Այդ լուրջ մեղադրանքին ես արժանի չէի: Ճակատի կազմակերպման առաջին իսկ օրերից մեզ շտապեցնում էին յարձակւել: Գլխաւոր հրամանատարութեան կայանից անվերջ գալիս էին հրամաններ, հեռախօսային զանգեր, հրահանգներ՝ արագացնել յարձակման պատրաստութիւնները: Իսկ երբ յարձակումը տապալւեց, մեզ մեղադրում էին, որ շտապում էինք»:

Յունւարի 13ին վոլխովեան ճակատի յարձակումը կրկնւեց: Սակայն այս անգամ էլ նա յաջողութիւն չունեցաւ: Միայն 2րդ հարւածային բանակը կարողացաւ անցնել Վոլխով գետի միւս կողմը: Ուժգին հարւածներով այդ բանակը ճեղքեց թշնամու պաշտպանութիւնը և բաւականին խորացաւ թշնամու թիկունքը:

Սակայն ճակատի մնացած բոլոր բանակները պարտւեցին և չկարողացան շարժւել ոչ մի քայլ առաջ: Գլխաւոր հրամանատարութիւնը կրկին ճակատ ուղարկեց իր ներկայացուցչին, այս անգամ դա Վորոշիլովն էր: Նա փորձում էր ոգեշնչել զինւորներին և ստիպել հրամանատարներին շարունակել յարձակ-

ման փորձերը: Բայց ոչինչ չօգնեց: Մարտի կէսերին ճակատի բոլոր ուղղութիւններով յարձակումը աւարտուեց: Երկրորդ բանակը մնաց սեպւած թշնամու դիրքերի մէջ: Անհրաժեշտ էր շտապ ընդունել որեւէ որոշում: Մերեցկովի վկայութեամբ այն ժամանակ կար երեք հնարաւորութիւն: Առաջինը խնդրել հրամանատարութիւնից ուժեղացնել ճակատը եւս մէկ բանակով և շարունակել յարձակումը: Երկրորդը՝ յետ քաշել երկրորդ հարւածային բանակը և փորձել յարձակւել ուրիշ ուղղութեամբ: Երրորդը՝ մնալ տեղերում և կազմակերպել պաշտպանութիւն, կուտակելով ուժերը հետագայ յարձակման համար: Պարզ էր և այն ժամանակ, պարզ է ե՛ւ այսօր, որ լաւագոյն հնարաւորութիւնը երկրորդն էր: Սակայն վախենալով, որ Ստալինը կը մեղադրի հրամանատարութիւնը վախկոտութեան մէջ, ճակատի ղեկավարութիւնը ընտրեց առաջին տարբերակը: Սակայն գերմանացիները ճակատ բերեցին թարմ ուժեր և կտրեցին երկրորդ բանակի կապը մնացած զօրամասերի հետ: Նոյնիսկ այդ հանգամանքը չսթափեցրեց գլխաւոր հրամանատարութիւնը, որ կարգադրեց Մերեցկովին «ջախջախել թշնամուն»: Մարտի 27ին ռուսական բանակը կրկին պարտուեց: Դրանից յետոյ կատարուեցին մի քանի նոր փորձեր՝ փրկելու դրութիւնը, սակայն բոլորը ապարդիւն: Նոր այստեղ, Ապրիլ 14ին, երկրորդ բանակի հրամանատար Կլիկովը ազատուեց իր պաշտօնից և նրա տեղը նշանակուեց զօրավար Վլասովը:

Վերջապէս Ստալինը համոզուեց, որ Լենինգրադի ազատագրման ծրագիրը տապալուեց: Ի՞նչ արեց նա, համոզուելով դրանում: Ապրիլի 21ին գերագոյն հրամանատարութեան կայան հրաւիրուեց լենինգրադեան ճակատի հրամանատար Խոզինը: Նրան յիշեցրին, որ ինքը յաճախ բողոքում էր, թէ լենինգրադեան և վոլխովեան ճակատների միջեւ բացակայում էր համագործակցութիւնը: Խոզինը կրկնեց իր այդ կարծիքը: Դրանից յետոյ Ստալինը «նպատակ ունենալով լաւացնել բանակների համագործակցութիւնը» առաջարկեց վերացնել վոլխովեան ճակատը, իսկ ճակատի զօրքերը յանձնել լենինգրադեան ճակատին: Հետագայում Խոզինը խոստովանւում էր.

«Այդ առաջարկը անսպասելի նորութիւն էր ոչ միայն ինձ համար, այլ ինչպէս ես հասկացայ՝ բոլորի համար: Առաջին վայրկեանին մեզանից ոչ ոք չհասկացաւ, թէ որքան անընդունելի է Ստալինի այդ առաջարկը: Հետագայում կեանքը ապացուցեց այդ որոշման անմտութիւնը: Բայց այն ժամանակ ոչ ես և ոչ էլ մեզանից ոեւէ մէկը չառարկեցին: Այն ժամանակ հազիւ թէ ոեւէ մէկը կարողանար առարկել Ստալինին»: Այս վկայութիւնից պարզւում է, որ այդ որոշումը Ստալինը ընդունել էր ինքնուրոյն, չխորհրդակցելով ոչ մէկի հետ: Որպէսզի պարզ լինի այդ որոշման հիմնական նպատակը, պէտք է յիշեցնել, որ ճակատների գործողութիւնների պատասխանատուութիւնը ընկած էր գե-

բազոյն հրամանատարութեան կայանի վրայ, իսկ բանակների և խմբաւորումների համար պատասխանատու էին համապատասխան ճակատների ղեկավարութիւնը։ Դարձնելով վոլխովեան ճակատը խմբաւորում և յանձնելով այն լենինգրադեան ճակատին, Ստալինը հանում էր իր վրայից պատասխանատուութիւնը և թողնում էր երկրորդ բանակը թշնամու ձեռքում։ Իր այդ դաժան որոշումից յետոյ, երկրորդ հարւածային բանակ անւանումը տւեցին մի նոր բանակի, որի հրամանատարը կրկին նշանակւեց Կլիկովը։ Հին երկրորդ հարւածային բանակը այլեւս Ստալինի համար գոյութիւն չունէր։

Այդպէս, Վլասովի բանակը ընկաւ գերմանացիների ձեռքը և այդպէս էին գերւում գրեթէ բոլոր խորհրդային զօրամասերը։ Գերութեան մէջ խորհրդային բանակի զինւորները և սպաները հայրենիքի կողմից որակւում էին, որպէս հայրենիքի դաւաճաններ, անկախ նրանից, թէ ինչպէս էին նրանք ընկել գերի՝ կամաւոր, թէ՞ կատաղի պայքարից յետոյ, ուշաթափւած, թէ՞ ամբողջ բանակի շրջապատման հետեւանքով։

Այժմ վերադառնանք Սոլժենիցինի աշխատութեանը, որտեղ հեղինակը, մէկ կեանքի օրինակի վրայ, նկարագրում է ռազմագերիների անելանելի վիճակը և նրանց ողբերգութիւնը։ Սոլժենիցինը գրում է.

«Մի առաւօտ, 53րդ խուցը, որտեղ մենք նստած էինք հինգ հոգով, բերեցին վեցերորդին։ Նա մտաւ ստւերի նման և վախենալով, որ վայր կ՚ընկնի, լուռ յենւեց դրանը։ Նրա զինւորական զգեստի կտորից մենք եզրակացրեցինք, որ նա չէր պատկանում, ո՛չ խորհրդային, ո՛չ գերմանական, ո՛չ լեհական և ո՛չ էլ անգլիական բանակներին։ Դէմքը ռուսի նման չէր։ Հասակը բարձր, իսկ մարմինը սարսափելի նիհար։ Մենք դիմեցինք նրան ռուսերէնով՝ նա չպատասխանեց։ Սուզին դիմեց գերմաներէնով՝ նա չպատասխանեց։ Ֆաստենկոն հարցրեց ֆրանսերէնով և անգլերէնով՝ նա շարունակում էր լռել։ Միայն կամաց-կամաց նրա տանջւած, կիսամեռ երեսին առաջացաւ ժպիտ, այդպիսի ժպիտ իմ ամբողջ կեանքում ես այլեւս չտեսայ։

«Մարդիկ»… հազիւ արտասանեց նա և պարզեց հիւծւած ձեռքը։

«Այդպէս, երեք շաբաթ մեկուսարանում անցկացնելուց յետոյ մեզ մօտ յայտնւեց Իւրի Նիկոլայեւիչը։

«1929 թւականից յետոյ, երբ երկաթագծի վրայ տեղի էր ունեցել բախում, ամբողջ երկրով մէկ տարածւել էր 2րդ դիւիզիայի մասին երգը։ Այդ հրաձգային դիւիզիայի հրամանատարը Իւրիի հայր Նիկոլայն էր։ (Սոլժենիցինը դիտաւորեալ չի յիշատակում նրա ազգանունը, բայց ասում է, որ այդ ազգանունը ինքը հանդիպել է ռազմական դասագրքերից մէկի հեղինակների շարքում. Է.Յ.)։

«Նիկոլայը, իր անբաժան կնոջ հետ միասին յայտնւում էր մէկ արեւմուտքում, մէկ արեւելքում, մէկ Ուրալում, մէկ Վոլգայի ափերին։ Նրանց հետ,

պտոյտներում, անցկացրեց իր առաջին տարիները ե՛ւ Իւրին, որ ծնւել էր 1917ին և յեղափոխութեան հասակակից էր: Յետոյ Իւրիի հայրը հաստատւեց Լենինգրադում, աշխատում էր Ռազմական ակադեմիայում և ապրում էր ունեւորի կեանքով, իսկ Իւրին աւարտեց հրամանատարների ուսումնարանը: Ֆիննական պատերազմի ժամանակ, երբ Իւրին ամբողջ սրտով ձգտում էր ճակատ, հօր ընկերները կազմակերպեցին որ նա մնայ շտաբում, որպէս թիկնապահ: Իւրիին չվիճակւեց սողալ ֆիննական փամփուշտների տակ, սառել ձեան մէջ, կամ գիշերով գնալ հետախուզութեան, սակայն կարմիր դրօշի շքանշանը կպցրեցին նրա կրծքին: Այդպէս նրա համար աւարտւեց ֆիննական պատերազմը, որը նա համարում էր արդար և յամենայն դէպս իր համար օգտակար: Սակայն յաջորդ պատերազմը նրա համար այդքան հարթ չանցաւ: Այն զօրամասը, որի հրամանատարը ինքն էր՝ շրջապատւեց և բոլորին քշեցին գերի: Իւրին ընկաւ սպաների կենտրոնացւած ճամբարը, Վիլնիւսի մօտակայքում:

Ամէն մի կեանքում կայ մի դէպք, որ որոշում է մարդու ճակատագիրը, դաւանանքը, համոզմունքները և կիրքերը: Այդ ճամբարում անցկացրած երկու տարին սթափեցրին Իւրիին: Թէ ինչ էր իրենց ներկայացնում այդ ճամբարը, անհնարին է նկարագրել խօսքերով՝ այնտեղ պէտք էր մեռնել, իսկ ով կը մնար կենդանի՝ պէտք է հանէր եզրակացութիւններ: Կենդանի կարելի էր մնալ, եթէ համաձայնւէր աշխատակցել գերմանացիների հետ: Պարզ էր, որ Իւրին չէր կարող տալ այդպիսի համաձայնութիւն: Կենդանի կարող էր մնալ թարգմանիչը՝ այդպիսիներին փնտռում էին: Բայց Իւրին, հիանալի տիրապետելով գերմաներէնին, թագցրեց այդ: Նա հասկանում էր, որ թարգմանիչը պէտք է դաւաճանէր իր ընկերներին: Բայց Իւրին պէտք է մնար կենդանի՝ նա դեռ պէտք է հանէր եզրակացութիւններ: Բոլորին արդէն յայտնի էր, որ իրենց (այսինքն ռազմագերիների) տառապանքների պատճառը գերմանացիները չեն, կամ աւելի ճիշտ, ոչ միայն գերմանացիները:

«Բոլոր ազգերի ռազմագերիներից, միայն խորհրդայիններն են այդպէս ապրում և այդպէս մեռնում,- ոչ ոք խորհրդայիններից վատ չէր: Նոյնիսկ լեհերը, նոյնիսկ հարաւսլաւացիները գտնւում էին շատ աւելի լաւ պայմաններում, էլ չխօսենք անգլիացիների և նորվեգիացիների մասին, որոնք ծանրոցներ էին ստանում Կարմիր Խաչից և տնից, նրանք պարզապէս հրաժարւում էին գերմանական ճաշերից: Եթէ մեր ճամբարները իրար մօտ էին, ապա դաշնակիցները, խղճալով մեզ, ցանկապատի վրայով նետում էին մեր կողմը ողորմութիւն և մենք յարձակւում էինք, ինչպէս շները ոսկորի վրայ:

«Ռուսները իրենց ուսերի վրայ քաշում են ամբողջ պատերազմը և ռուսներին վիճակւած է այդպիսի ճակատագիր: Ինչո՞ւմն է բանը: Այստեղից, այնտե-

ղից գալիս են բացատրութիւնները. Խորհրդային Միութիւնը չի ճանաչում ռուսական ստորագրութիւնը Գատգայի **կոնվենցիա**յի տակ, որ վերաբերում է ռազմագերիներին: Դրանով նա հրաժարւում է վերցնել իր վրայ մեր ռազմագերիների պաշտպանութիւնը: Խորհրդային Միութիւնը չի ճանաչում միջազգային Կարմիր Խաչը: Խորհրդային Միութիւնը չի ճանաչում իր երէկւայ զինուորներին, ոչ մի շահ չկայ մտածելու նրանց մասին: Սա ի՞նչ է՝ նորի՛ց Ստալինը: Մի քիչ շատ չէ՞ ամէն ինչ գցել Ստալինի, նրա կարճլիկ թաթիկների վրայ: Նա, ում եզրակացութիւնները կանգ են առնում կէս ճանապարհի վրայ, ամենեւին էլ չի հանել ոչ մի եզրակացութիւն: Իսկ մնացածնե՞րը այնտեղ՝ Ստալինի կողքերում, ներքեւում, ամբողջ հայրենիքով մէկ, մի խօսքով նրանք, ում հայրենիքը թոյլատրել էր խօսել իր անունից, նրանք որտե՞ղ էին: Եւ ինչպէս վարուել, եթէ մայրը ծախում է որդուն գնչուներին, ոչ, աւելի վատ՝ գցում է շների առաջը: Միթէ՞ նա շարունակում է մնալ մեզ համար մայր: Եթէ կինդ կանգնում է պոռնկութեան ճանապարհի վրայ, միթէ՞ մենք պարտաւոր ենք մնալու նրան հաւատարիմ: Հայրենիք, որ դաւաճանում է իր զինուորներին՝ միթէ՞ դա հայրենիք է: Ինչպէ՞ս ամէն ինչ փոխուեց Իւրիի համար: Նա խոնարհւում էր իր հօր առջեւ և ահա անիծեց նրան: Առաջին անգամ նա մտածեց, որ փաստօրէն իր հայրը խախտել է այն երդումը, որ տւել էր նախկին բանակին, այն բանակին, որտեղ առաջադիմել էր: Նա դաւաճանել էր հին բանակին, որպէսզի հաստատի այս հասարակարգը, որ դաւաճանում էր իր զինուորներին:

«Եւ ինչո՞ւ այս դաւաճան կադրերի հետ նա պէտք է կապած մնայ իր զինուրական երդումով:

«Երբ 1943 թւականի գարնանը ճամբար եկան մարդիկ, որպէսզի կամաւորներ հաւաքեն ազգային լեգէոնների համար, ոմանք գրւեցին սովից փրկւելու համար, իսկ Իւրին գնաց պարզ գիտակցելով, թէ ո՞ւր և ինչի՞ համար է գնում: Լեգէոնում նա երկար չմնաց՝ կաշին հանւած էր. մորթու մասին մտածելը աւելորդ էր: Իւրին արդէն չէր թագցնում, որ լաւ տիրապետում է գերմաներէնին և շուտով գերմանական լրտեսական դպրոցի պետը դարձրեց նրան իր աջ բազուկը: Այդպէս սկսւեց Իւրիի անկումը, որը ինքը չէր նախատեսել: Իւրին ուզում էր ազատագրել հայրենիքը, իսկ իրեն ստիպում էին պատրաստել լրտեսներ. գերմանացիները ունէին սեփական ծրագրեր: Իսկ որտե՞ղ է սահմանը: Այն սահմանը, որտեղից նա իրաւունք չունէր անցնելու: Իւրին դարձաւ գերմանական բանակի **լեյտենանտ**: Գերմանական զգեստներով նա շրջում էր Գերմանիայով, եղաւ Բերլինում, հանդիպեց ռուս տարագիրների հետ, կարդում էր, իր համար նախկինում արգելւած Բունինին, Նարոկովին, Ալդանովին, Անֆիտեատրովին և ուրիշներին: Իւրին սպասում էր, որ այդ գրողների ստեղծագործութիւնների ամէն մի էջից կը հոսի Ռուսաստանի թարմ վէրքերի

արիւնը: Բայց ի՞նչ է պատահել նրանց հետ: Ինչի՞ վրայ են ծախսել նրանք իրենց անգնահատելի ազատութիւնը: Նորից կնոջ մարմին, նորից կրքեր, ազնըւական աղջիկների գլուխների գեղեցկութիւն և փոշեպատած տարիների **ա-նեկդոտ**ներ: Նրանք գրում էին այնպէս, իբրեւ Ռուսաստանում ոչ մի յեղափոխութիւն չէր եղել: Նրանք թողնում էին, որ ռուս երիտասարդը ինքնուրոյն որոնի իր կեանքի ճամբան: Եւ Իւրին որոնում էր՝ նա շտապում էր տեսնել, շտապում էր իմանալ, իսկ այդ միջոցին հաւատարիմ մնալով ռուսական աւանդոյթներին, իր շփոթութիւնը աւելի խորն էր սուզում օղու մէջ:

«Ի՞նչ էր իրենից ներկայացնում լրտեսական դպրոցը: Դէ, ի հարկէ նա իսկական չէր: Վեց ամսւայ ընթացքում նրա սաները սովորում էին կատարել մի քանի գործողութիւններ և ուղարկւում էին Ռուսաստան: Նրանց ոչ ոք չէր վստահում և նրանց հետ ոչ մի յոյսեր չէին կապւում: Պարզապէս նրանց ուղարկում էին, որպէսզի երկրի ներսում առաջանար անվստահութիւն: Իսկ սովից մահացող, ռուս ռազմագերիների համար, այդ դպրոցները փրկութեան ելք էին: Տղաները այստեղ կազդուրւում և հագնւում էին: Բացի դրանից, նրանց գրպանները լցւում էին խորհրդային դրամներով: Դպրոցի սաները ձեւացնում էին, թէ իբր հայրենիքում իրենք իսկապէս պէտք է զբաղւեն լրտեսութեամբ և իբր, կատարելով առաջադրանքները կը վերադառնան: Սակայն, սահմանը անցնելուց յետոյ, նրանք դէն էին նետում իրենց լրտեսական գործիքները և, կամ յանձնւում էին անմիջապէս, կամ ունեցած դրամները ճաշարաններում ծախսելուց յետոյ: Բայց ոչ ոք այնտեղից չէր վերադառնում:

«Եւ յանկարծ, 1945 թւականին, նոր տարւայ նախօրեակին մի ճարպիկ երիտասարդ վերադարձաւ և զեկուցեց, որ առաջադրանքը կատարել է (դէ գնա ու ստուգի): Դա անսպասելի մի անակնկալ էր: Պետը չէր էլ կասկածում, որ նրան ուղարկել էր խորհրդային հետախուզութիւնը և ուզում էր անմիջապէս գնդակահարել նրան: Սակայն գործին խառնւեց Իւրին և համոզեց ոչ միայն չպատժել, այլ նոյնիսկ պարգեւատրել նրան շքանշանով, ոգեւորելու համար դպրոցի աշակերտներին: Իսկ այդ վերադարձած լրտեսը առաջարկեց Իւրիին խմել միասին մէկ շիշ օղի: Օղուց բորբոքւած լրտեսը դիմելով Իւրիին ասաց. «Իւրի Նիկոլայեւիչ, խորհրդային հրամանատարութիւնը խոստանում է ներել ձեզ, եթէ դուք անցնէք մեր կողմը»: Իւրին ցնցւեց: Նրա քարացած և ամէն ինչից հրաժարւած սիրտը լցւեց ջերմութիւնով: ՀԱՅՐԵՆԻ՞Ք… Անիծեալ, անարդար, բայց այնքան հարազատ ու թանկագին: ՆԵՐՈ՞ՒՄ… Եւ կարելի է կրկին վերադառնալ ընտանիքի գի՞րկը: Դէ ի հարկէ, վերջին հաշւով մենք բոլորս ռուսներ ենք: Ներէք մեզ, մենք կը վերադառնանք, և դեռ այնքան լաւը կը լինենք:

«Այս մէկ տարին ինչ նա դուրս էր եկել ճամբարից, երջանկութիւն չբերեց: Նա չէր փոշմանել, բայց չէր տեսնում ապագայ: Հանդիպելով օղու շուրջ ռուս

տարագիրների հետ, նա հասկանում էր, որ իր կեանքը իսկական չէ: Գերմանացիները օգտագործում էին, ինչպէս յարմար գտնում էին: Հիմա, երբ պատերազմը գերմանացիները տանուլ էին տւել, իր առաջ բացւում էր մի նոր ելք: Ճիշտ է, Պետը սիրում էր Իւրիին, խոստացել էր տանել իր հետ միասին Սպանիա: Բայց ահա դէմ դիմաց նստած է իր հայրենակիցը և վտանգի տակ դնելով սեփական կեանքը, գայթակղում է. «Իւրի Նիկոլայեւիչ, խորհրդային հրամանատարութիւնը գնահատում է ձեր փորձը և գիտելիքները, նրանց անհրաժեշտ է ծանօթանալ գերմանական հետախուզութեան կազմակերպչական հարցերի հետ»: Երկու շաբաթ Իւրին տառապում էր կասկածանքներով: Եւ ահա, խորհրդային զօրքերի յարձակման ժամանակ, նա կարգադրեց դպրոցի ամբողջ կազմը թեքւել մի խուլ դաշտ, շարք կանգնեցրեց նրանց և յայտարարեց. «Ես անցնում եմ խորհրդային կողմը, ամէն մէկը ձեզանից ազատ է իր ընտրութեան մէջ»: Եւ այդ դժբախտ, դեռ կաթը շուրթերին լրտեսները, որոնք մէկ ժամ առաջ երդւում էին մնալ հաւատարիմ Ռայխին, ոգեւորւած գոչեցին. «Ուռա, ուռա, մենք էլ ենք ձեզ հետ» (նրանք գոռում էին «ուռա», իրենց ապագայ ճամբարային տանջանքներին):

«Նրանց լրտեսական դպրոցը, ամբողջ կազմով անցաւ ճակատի միւս կողմը: Իւրին իր տղաներին այլեւս չտեսաւ: Նրան առանձնացրեցին, 10 օր ստիպեցին մանրամասնօրէն պատմել ամէն ինչ, և նա իսկապէս կարծում էր, որ խորհրդային հրամանատարութիւնը օգտւում է իր փորձից և գիտելիքներից: Նոյնիսկ քննարկւում էր ընտանիքի հետ հանդիպելու հարցը: Եւ միայն Լուբիանկայում նա հասկացաւ, որ գերմանական ճամբարում, որ Վիլնիւսի մօտակայքում էր, ինքը շատ աւելի մօտ էր իր հարազատ Նեւային… Նրան սպասում էր գնդակահարութիւնը, կամ լաւագոյն դէպքում՝ 20 տարի, ոչ պակաս:

«Այդպէս անուղղելիօրէն մարդը գայթակղւում է հայրենիքից եկած ծուխով: Ճիշտ այնպէս, ինչպէս չի դադարում ատամի ցաւը, մինչեւ չմեռցնես նեարդը, այնպէս էլ մենք, երբեք երեւի չենք դադարի հայրենիքի ծուխով գայթակղւելուց, մինչեւ կուլ չտանք թոյնը:

«Ընդամէնը երեք շաբաթ մնաց մեր խուցում Իւրին: Ամբողջ այդ երեք շաբաթւայ ընթացքում մենք վիճում էինք: Ես ասում էի, որ մեր յեղափոխութիւնը հիանալի էր և արդար, ու միայն 29 թւականին սկսւեցին շեղումները: Նա խղճմտանքով նայում էր իմ վրայ և սեղմելով ջղային շուրթերը ասում. մինչեւ յեղափոխութիւն անելը պէտք է երկրից վերացնել փայտոջիլները: Ես ասում էի, որ երկար ժամանակ մեր երկրում կառավարում էին վեհ գաղափարների տէր և զոհաբերութիւնների պատրաստ մարդիկ: Նա ասում էր, որ ամենասկզբից բոլորն էլ Ստալինի պէս աւազակներ էին (որ Ստալինը աւազակ էր՝ դրանում մենք տարակարծութիւններ չունէինք): Ես հիանում էի Գորկիով, հա-

մարելով նրան խելօք և մեծ արուեստագէտ: Նա պատասխանում էր, որ Գորկին ոչնչութիւն էր յօրինուած հերոսներով և գրքերով: Տոլստոյը՝ սա էր նրա կարծիքով մեր գրականութեան արքան: Այս վէճերի պատճառով մենք չկարողացանք աւելի մօտենալ իրար և փոխադարձաբար տեսնել իրարու մէջ աւելին, քան այն, ինչ մենք ժխտում էինք: Նրան տարան մեր խուցից և դրանից յետոյ նրա մասին ես այլեւս ոչինչ չլսեցի, թէպէտ հարցրել եմ շատերից»:

Իւրին ռազմագերիներից առաջինն էր,- պատմում է Սոլժենիցինը,- իսկ 1945 թւին, սկսած յունիսից, **Գուլագ**ը լցւեց ռազմագերիներով և գրեթէ բոլորը Հոկտեմբերի հասակակիցներ էին: Նրանք պատերազմի սկզբին կազմում էին բանակի հիմնական մասը:

«Յաղթանակի գարունը,- ասում է հեղինակը,- դարձաւ ամբողջ իմ սերնդի հաշւեյարդարի գարունը: Այդ մեր օրօրոցների վրայ էին երգում «ամբողջ իշխանութիւնը խորհուրդներին»: Այդ մենք էինք, որ մեր մանկական ձեռքերով ամուր բռնում էինք **պիոներ**ական շեփորը և «եղիր պատրաստ» բացագանչութեանը պատասխանում էինք «միշտ պատրաստ»: Այդ մենք էինք, որ Բուխենվալդում ընդունւում էինք կուսակցութեան շարքերը: Եւ այդ մենք ենք, որ այսօր սեւ ցուցակների մէջ ենք՝ միայն նրա համար, որ մնացել ենք կենդանի:

«… Խորհրդային Ռուսաստանը հրաժարւել էր իր մահամերձ ոգիներից: Ռուսաստանին պէտք էին այդ զաւակները այնքան ժամանակ, քանի նրանք պառկում էին հրանօթների տակ և քանի դեռ կարելի էր նրանց օգտագործել ռազմաճակատում: Իսկ կերակրել նրանց գերութեան մէջ՝ աւելորդութիւն էր, աւելորդ բերաններ և խայտառակ պարտութիւնների աւելորդ վկաներ: Երբեմն մենք ուզում ենք ստել, բայց լեզուն թոյլ չի տալիս: Այս մարդկանց յայտարարել են դաւաճաններ, բայց լեզուական իմաստով սխալւեցին բոլորը՝ ե՛ւ դատաւորները, ե՛ւ դատախազները, ե՛ւ քննիչները: Եւ իրենք՝ դատապարտւածները, ե՛ւ ամբողջ ժողովուրդը, ե՛ւ թերթերը հաստատեցին և ամրապնդեցին այդ սխալը, իրենցից անկախ արտայայտելով ճշմարտութիւնը: Նրանց ուզում էին յայտարարել դաւաճաններ հայրենիքԻՆ, բայց բոլորը, նոյնիսկ պաշտօնական փաստաթղթերում գրում էին դաւաճաններ հայրենիքԻ: Այսինքն, սրանք դաւաճաններ էին ոչ թէ ՆՐԱՆ, այլ ՆՐԱ: Ոչ թէ այդ դժբախտներն էին դաւաճանել հայրենիքին, այլ հաշւենկատ հայրենիքն էր դաւաճանել նրանց, ընդորում ԵՐԵՔ ԱՆԳԱՄ:

«Առաջին անգամ նա անփառունակ ձեւով դաւաճանեց նրանց ռազմադաշտում, երբ հայրենիքի սիրւած կառավարութիւնը արեց ամէն ինչ պատերազմը տանուլ տալու համար. ոչնչացրեց պաշտպանութեան բոլոր գծերը, կործանիչ հարւածների տակ դրեց օդային ուժերը, կազմալուծեց հրասայլերը և հրանօթները, զրկեց բանակը փորձառու զօրավարներից և արգելեց բանակներին դի-

մաղրել: Ռազմագերիները հէնց նրանք էին, ու մարմինները ընդունեցին առաջին հարուածները և ովքեր կանգնեցրին Վերմախտը: Երկրորդ անգամ հայրենիքը անխղճօրէն դաւաճանեց, լքելով և թողնելով նրանց սատկելու գերութեան մէջ: Եւ հիմա երրորդ անգամ անսրտօրէն նա դաւաճանում էր, մայրական ձայնով կանչելով նրանց հայրենիք (հայրենիքը կանչում է, հայրենիքը ներել է) և սահմանում գցելով նրանց վզովը շղթաներ: Թւում է, թէ որքան շատ են սրիկայութիւնները մեր պետականութեան 1100 տարւայ ընթացքում, բայց եղե՞լ է արդեօք այդ սրիկայութիւնների մէջ այսպիսի բազմամիլիոնանոցը, որ հայրենիքը դաւաճանի իր զինւորներին և յետոյ այդ նոյն զինւորներին լկտիաբար յայտարարի դաւաճաններ: Եւ ինչպիսի հեշտութեամբ մենք համաձայնուեցինք, որ նրանք դաւաճաններ են, հանեցինք նրանց մեր հաշւից և գամեցինք ամօթի սիւնին: Այո, բայց նրանց մեզանից առաջ արդէն հաշւից հանել էր մեր ՀԱՅՐԸ. մոսկովեան մտաւորականութեան լաւագոյն ներկայացուցիչները գցուեցին Վեազմայի մսաղացի մէջ 1866 թւականի հրացաններով, այն էլ մէկ հրացան հինգ հոգու համար: Իսկ իր կարճ և ճարպակալած մատով ՄԵԾ ՍՏՐԱՏԵԳԸ 41 թւի Դեկտեմբեր ամսին Կերչի անցքով անցկացրեց ՏԱՄՆԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ մեր տղաներից միայն մէկ, նոր տարւայ առթիւ, ազդեցիկ հաղորդման համար: Այդպիսի քանակ, որը առանց կռւի յանձնուեց գերմանացիներին, հազիւ թէ լինէր Բորոդինոյում Նապոլէոնի դիմաց: Եւ այդքանից յետոյ ինչ-ինչ պատճառներով դաւաճանը նա չէ, այլ նրանք: Քանի-քանի պատերազմներ է վարել Ռուսաստանը (լաւ կը լինէր մի քիչ պակաս) և շա՞տ էին արդեօք դաւաճանները այդ պատերազմներում: Նկատուա՞ծ էր արդեօք, որ դաւաճանութիւնը յատուկ է ռուս զինւորի համար: Բայց ահա աշխարհի ամէնից արդար հասարակարգը վարում է ամէնից արդար պատերազմը, և յանկարծ՝ միլիոնաւոր դաւաճաններ: Ինչպէ՞ս դա հասկանալ, ինչո՞վ բացատրել: Մեզ հետ կողք կողքի Հիտլերի դէմ պատերազմում էր դրամատիրական Անգլիան, որտեղ, ըստ Մարքսի պերճախօս նկարագրութեան, տիրում են աղքատութիւն և բանւոր դասակարգի տառապանքները: Եւ ինչո՞ւ նրանց մօտ այս կռւում գտնւեց միայն մէկ դաւաճան՝ լորդ Գաու-Գաուն, իսկ մեզ մօտ՝ միլիոններ: Գուցէ՞ մեղաւորը հասարակարգն է: Ալեքսանդր Միխայիլովիչի ժամանակ գերութեան մէջ դիմացկանութիւն ցուցաբերելու համար շնորհւում էր ազնըւականի կոչում: Ռազմագերիների փոխանակելը, նրանց մասին մտահոգւելը, նրանց պաշտպանելը, ԲՈԼՈՐ պատերազմների ժամանակ հասարակութեան սրբազան պարտքն էր: Գերութիւնից ամէն մի փախուստ փառաբանւում էր, իբրեւ մեծագոյն հերոսութիւն: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Ռուսաստանում հաւաքւում էին միջոցներ՝ ռազմագերիներին օգնելու համար, իսկ գթութեան քոյրերին թոյլատրեցին գնալ Գերմանիա և հո-

գալ ռազմագերիների կարիքները։ Բոլոր արեւմտեան ժողովուրդները անում էին նոյնը ե՛ւ այս պատերազմի ժամանակ։ Ամբողջ աշխարհում միայն մէկ՝ Կարմիր Բանակի զինուորը գերի չի ընկնում,- այդպէս էր գրւած կանոնագրութեան մէջ։ Ո՞վ կարող է հասկանալ դրա իմաստը։ Կայ պատերազմ, կայ մահ, իսկ գերութիւն չկայ։ Այ քեզ յայտնագործութիւն։ Դա նշանակում է գնա և մեռիր, իսկ մենք կը մնանք ապրելու։ Բայց եթէ դու ոտքերդ կորցրած վերադառնաս Գերմանիայից՝ մենք քեզ, միեւնոյն է, կը դատենք»։

Եւ յոգնած այդ պատմութիւններից, վրդովւած անարդարութիւններով, զուրկ հնարաւորութիւնից պայքարելու այն ամենի դէմ, ինչը պարզ էր դարձել միայն բանտում, բանտարկեալները գտնում էին իրենց մխիթարութիւնը երեկոյեան խաղաղ յիշողութիւնների մէջ։ Սոլժենիցինը գրում է.

«Այդ բանտի երեկոյեան յիշողութիւններից ամենասիրելին՝ խօսակցութիւններն էին բանտային աւանդոյթների մասին, այսինքն այն մասին, ինչպիսին էր բանտարկեալի վիճակը անցեալում։ Մեզ հետ էր Ֆաստենկոն և մենք ունէինք հնարաւորութիւն լսելու ականատեսի պատմութիւնները։ Ամենամեծ յուզմունքը մեզ պատճառում էր այն փաստը, որ նախկինում բանտարկեալ լինելը պարծանք էր։ Նրանցից չէին հրաժարւում ո՛չ միայն իրենց մերձաւորները, այլեւ բանտ էին գալիս անծանօթ աղջիկներ և իրենց հարսնացու ձեւացնելով պահանջում էին տեսակցութիւն։ Իսկ ինչ ասել այն համընդհանուր սովորութեան մասին՝ տօներին բերելու նւէրներ՝ բանտարկեալների համար։ Ռուսաստանում ոչ ոք չէր սկսում իր տօնական խնճոյքը, մինչեւ բանտ չտանէր, անծանօթ բանտարկեալներին, իրենց բաժինը։ Տօնական սեղաններից բերում էին երշիկներ, թխւածքներ, մրգեր և այլ ուտեստեղէն։ Անծանօթ մի աղքատ պառաւ բերում էր տաս հատ ներկած ձու և ստանում էր դրանից հոգեկան բաւարարութիւն։ Եւ ո՞ւր կորաւ այդ ռուսական բարութիւնը։ Նրան փոխարինեց ԳԻՏԱԿՑԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ։ Որքա՞ն կտրուկ և անվերադարձ վախեցրին մեր ժողովուրդը և ետ վարժեցրին մտահոգւել տառապեալներով։ Հիմա դա վայրագութիւն է համարւում։ Հիմա, եթէ որեւէ հիմնարկութիւնում դուք առաջարկէք նախատօնական զոհաբերութիւնների հաւաք յօգուտ տեղական բանտի բանտարկեալների, դա կը համարուի հակասովետական ապստամբութիւն։ Ահա թէ որքան ենք մենք վայրենացել։ Իսկ ի՞նչ էին այդ տօնական նւէրները բանտարկեալի համար։ Յամենայնդէպս, ոչ միայն համատեղ ուտեստեղէն։ Նրանք ստեղծում էին ջերմ զգացմունք, որ բանտի այն կողմը քո մասին մտահոգւողներ կան։

«Պատմում է մեզ Ֆաստենկոն, որ նոյնիսկ խորհրդային ժամանակաշրջանում գոյութիւն ունէր քաղաքական կարմիր խաչ, բայց դրան մենք արդէն ոչ թէ չենք հաւատում, այլ պարզապէս չենք կարող պատկերացնել, որ այդպիսի

բան հնարաւոր է: Բայց նա պատմում է, որ Պեշկովան (Գորկու կինը Է.Յ.), օգտւելով իր անձնական անձեռնմխելիութիւնից, մեկնում էր արտասահման, դրամ էր հաւաքում (մեզ մօտ շատ չէր հաւաքի), իսկ յետոյ այստեղ գնում էր բարեկամներ չունեցող քաղբանտարկեալների համար տարբեր ապրանքներ:- Բոլո՞ր բանտարկեալների համար,- զարմանում ենք մենք: Եւ այստեղ նոր պարզւում է, որ ոչ, բացառութեամբ հակայեղափոխականների, այսինքն մտաւորականների, կրօնական գործիչների նայլն: Դա վերաբերւում է միայն նախկին քաղաքական կուսակցութիւնների անդամներին: «Դէ հիմա պարզ է»,- վերջապէս հանգստանում ենք մենք: Սակայն, ի միջի այլոց, շրջանցելով Պեշկովային, Կարմիր Խաչի անդամներին հիմնականում նոյնպէս բանտարկեցին:

«Այդպիսի յիշողութիւնների մէջ մենք անց ենք կացնում մեր երեկոները, բայց ահա երեք անգամ թարթեց լոյսը, դա աւարտանշանն է: Հինգ րոպէից յետոյ մենք, ինչպէս ռազմաճակատում, կայծակնային արագութեամբ մեզ կը նետենք վերմակների տակ՝ ամէն ինչ պէտք է դուրս ցնդի գլխից՝ քնել»:

Ուշադրութեան են արժանի Սոլժենիցինի տեսակէտները ռուս տարագրութեան վերաբերեալ, որոնք նա արտայայտում է հետեւեալ հատւածում.

«Եւ յետոյ այն գարնանը բանտի խուցերում մեծ քանակով նստած էին ռուս տարագիրները: Մեզ համար դա երազ էր, մոռացւած պատմութեան վերադարձ: Վաղուց ի վեր գրւած էին քաղաքացիական պատերազմի պատմութեան էջերը, փակւած այդ պատմութեան հատորները, որոշւած նրա գործերը և նրա հետ կապւած դէպքերը վաղուց ի վեր անցել էին դասագրքերի մէջ: Սպիտակ շարժման գործիչները արդէն մեր երկրագնդի վրայ ապրող ժամանակակիցներ չէին, այլ անյայտացած անցեալի ուրւականներ: Ռուս տարագրութիւնը, հրէական տասը պորտից աւելի շատ ցրւած, մեր խորհրդային պատկերացումներով, եթէ իսկ գոյութիւն ունէր, ապա այդ տարագիրները կը պատկերանային որպէս մատուցողներ վատագոյն ճաշարաններում, դռնապաններ, լւացք անողներ, մուրացկաններ կամ հաշիշամոլ կիսադիակներ:

«Մինչեւ 1941 թի պատերազմը, ոչ մեր թերթերի նշաններից, ոչ գրականութիւնից և ոչ էլ որեւէ տեղից չէր կարելի պատկերացնել (իսկ մեր կուշտ վարպետները չօգնեցին մեզ այդ հարցում), որ ռուս տարագրութիւնը՝ դա մի մեծ հոգեկան աշխարհ է, որ այնտեղ զարգանում է ռուս փիլիսոփայութիւնը, այնտեղ են Բուլգանովը, Բերդաեւը, Լոսսկին, որ ռուսական արւեստը տարածւում է աշխարհով մէկ, այնտեղ են Ռախմանինովը, Շալեապինը, Բենուան, Պաւլովը, այնտեղ կատարւում են Դոստոեւսկու մասին խորը ուսումնասիրութիւններ (այն ժամանակ մեզ մօտ արգելւած), որ գոյութիւն ունի աներեւակայելի գրող Նաբոկով-Սիրինը, որ դեռ կենդանի է և դեռ ստեղծագործում Բունինը, հրատարակւում են պարբերականներ և թերթեր, կազմակերպւում բեմադ-

րութիւններ, հաւաքւում համագումարներ, որտեղ խօսւում է ռուսերէնով, որ տարագիր տղամարդիկ չեն կորցրել ընդունակութիւնը ամուսնանալ տարագիր կանանց հետ, իսկ վերջիններս ծնել նրանց համար երեխաներ, այսինքն մեզ հասակակիցներ: Տարագրութեան մասին պատկերացումները մեր երկրում այնքան սխալ էին, այնքան խեղաթիւրւած, որ եթէ կատարւէր համընդհանուր հարցում, թէ ո՞ւմ կողմն էին ռուս տարագիրները սպանական կամ Երկրորդ Համաշխարհային պատերազմների ժամանակ, բոլորը միաբերան կը պատասխանէին՝ Ֆրանկոյի, Հիտլերի: Մեր երկրում այսօր էլ չգիտեն, որ տարագիրների մեծ մասը կռւում էր հանրապետականների շարքերում: Որ Վլասովի և Կրասնովի բանակները ստեղծւել էին Խորհրդային քաղաքացիներից, այլ ոչ թէ տարագիրներից: Տարագիրները Հիտլերի հետ չէին միանում: Իսկ Դենիկինի փորձերը գնալ Խորհրդային Միութեան հետ միասին պայքարելու Հիտլերի դէմ, **անեկդոտի** են նմանւում: Բայց եղաւ ժամանակ, երբ Ստալինը գրեթէ պատրաստ էր վերադարձնել հայրենիք Դենիկինին, ոչ իբրեւ ուժ ի հարկէ, այլ իբրեւ ազգային միասնութեան խորհրդանիշ: Ֆրանսայի գրաւումից յետոյ տարագրութեան մեծ մասը միացաւ Դիմադրութեան շարժմանը, իսկ Փարիզի ազատագրումից յետոյ նրանք լցւեցին խորհրդային դեսպանատունը, հայրենիք մեկնելու համար պատրաստ դիմումներով: Ռուսաստանը Ռուսաստան է, ինչպիսին էլ նա լինի,- սա էր նրանց նշանաբանը: Եւ այդ նշանաբանով նրանք ապացուցեցին, որ առաջ էլ չէին ստում, թէ սիրում են հայրենիքը (բանտերում 45-46 թւականներին, նրանք իրենց երջանիկ էին զգում, որ այս երկաթեայ ցանցը և պահակները հարազատ են՝ ռուսական: Նրանք զարմանքով դիտում էին, թէ ինչպէս են խորհրդային երիտասարդ ռազմագերիները, փոշմանել էին. սատանան տանի՝ ինչո՞ւ վերադարձանք, ի՞նչ էր պակասում մեզ Եւրոպայում): Բայց Ստալինի այն տրամաբանութիւնը, որի համաձայն պէտք է բանտարկւեն բոլոր նրանք, ովքեր տեսել են արտասահմանը, ինչպէ՞ս կարող էր շրջանցել տարագիրներին: Բալկաններից, Կենտրոնական Եւրոպայից, Խարբինից նրանց բանտարկում էին մեր զօրքերի մտնելուց անմիջապէս յետոյ: Հանում էին բնակարաններից, բանտարկում էին փողոցներում, ճիշտ այնպէս, ինչպէս դա արւում էր մերոնց նկատմամբ: Բանտարկում էին առայժմ միայն տղամարդկանց, և այն էլ ոչ բոլորին՝ միայն նրանց, ովքեր որոշ իմաստով քաղաքական կարող էին համարւել: (Նրանց ընտանիքները աւելի ուշ ուղարկւեցին ռուսական աքսորավայրերը, իսկ ոմանց այդպէս էլ թողեցին Չեխոսլովակիայում կամ Բուլղարիայում)»:

«Ֆրանսիայում տարագիրներին պատւով և ծաղիկներով շնորհւում էր խորհրդային քաղաքացիութիւն և յարմարաւէտ գնացքներով նրանք ուղարկւում էին հայրենիք, իսկ այնտեղ փոցխւում էին անմիջապէս: Աւելի երկարեց

Շանկհայի տարագիրների հարցը՝ 45 թականին, այնտեղ ձեռքերը դեռ չէին հասնում: Բայց եկաւ խորհրդային կառավարութեան լիազօրը և յայտարարեց Գերագոյն Խորհրդի նախագահութեան հրամանագիրը. ներում՝ բոլոր տարագիրներին: Դէ ինչպէ՞ս չհաւատաս: Մի՞թէ կառավարութիւնը կարող է ստել (կար իրականում այդպիսի հրամանագիր թէ ոչ, օրգանների համար, յամենայն դէպս, դա ոչ մի նշանակութիւն չունէր): Շանկհայցիները ցնցւել էին ուրախութիւնից: Նրանց առաջարկեցին վերցնել իրենց հետ ինչ որ իրենք կը ցանկանան և հաստատւել Խորհրդային Միութիւնում այնտեղ, որտեղ իրենք կը կամենան: Շանկհայից նրանց բերում էին նաւերով: Նաւերից գրեթէ բոլորին բարձում էին գնացքները բանտարկեալների նման, միայն դեռ բացակայում էին շները և դեռ այնքան խիստ չէին պահակները: Սակայն տարբեր նաւերի ճակատագրերը տարբեր էին: Ոմանց հասցրեցին մինչեւ մարդաբնակ վայրեր և իսկապէս դաշնամուրների և ծաղկազամբիւղների հետ միասին իջեցրին անտառներում»:

Սոլժենիցինը պատմում է, թէ ինչպէս 1945 թւի գարնանը նա ունեցաւ մի քանի հանդիպումներ տարագրութեան ներկայացուցիչների հետ: Նա գրում է.

«Ռորտմիստր Բորշի և գնդապետ Մարիւշկինի հետ ինձ վիճակւեց հանդիպել բժշկական քննութեան ժամանակ: Նրանց խղճուկ դեղնած ու ճլորւած ոչ թէ մարմինները այլ մասունքները այդպէս էլ մնացին իմ աչքերի առջեւ: Նրանց բանտարկել էին դագաղ մտնելուց հինգ րոպէ առաջ, մի քանի հազար կիլոմետր անցնելով, բերել էին Մոսկւա և այստեղ, 1945 թւականին, անց էին կացնում լուրջ հետաքննութիւն՝ նրանց 1919 թւականի խորհրդային իշխանութեան դէմ պայքարելու վերաբերեալ: Մենք արդէն այնքան ենք սովորել արդարադատութեան անարդարութիւններին, որ ի վիճակի չենք տարբերելու նրա աստիճանները: Այդ գնդապետը և ռորտմիստրը ցարական Ռուսաստանի **կաղրա**յին սպաներ էին: Նրանք քառասունից անց էին և արդէն 20 տարի ծառայած, երբ եկաւ լուրը, որ Պետերբուրգում թագաւորը գահավիժւած է: 20 տարի նրանք ծառայել էին թագաւորին իրենց տւած երդումի համաձայն: Հիմա սրտները կախ, նրանք երդւեցին նաեւ ժամանակաւոր կառավարութեանը: Դրանից յետոյ նրանց էլ ոչ ոք չառաջարկեց կրկին երդւել, քանզի ամբողջ բանակը քայքայւեց: Նրանց դուր չեկան նոր կադրերը, որտեղ պոկում են ուսադիրները և սպանում նախկին սպաներին: Եւ բնական է, որ նրանք միացան ուրիշ սպաների հետ, որպէսզի պայքարեն այդ կարգերի դէմ: Բնական էր նաեւ Կարմիր բանակի պայքարը նրանց դէմ և բնական էր նրանց ծով նետելը: Բայց մի երկրում, որտեղ գոյութիւն ունեն արդարադատութեան մտքի գոնէ հետքերը, ինչ հիմքեր կան նրանց ԴԱՏԵԼՈՒ համար, այն էլ քառորդ դար յետոյ: Սակայն, 1945 թւականին, մեր արդարադատութեան կենտրոնում, նրանց մեղադ-

րեցին գործողութիւններում, որոնք ուղղուած էին բանւոր-գիւղացիական խորհուրդների իշխանութեան դէմ, զինուած ներխուժման մէջ Խորհրդային Միութեան սահմաններից ներս (այսինքն նրանում, որ նրանք անմիջապէս դուրս չեկան Ռուսաստանից, երբ նա Պետրոգրադից յայտարարեց խորհրդային), աջակցութեան մէջ միջազգային բուրժուազիային (որ նրանք երազներումն էլ չէին տեսել), հակայեղափոխական կառավարութիւններին ծառայելու մէջ (այսինքն իրենց զօրավարներին, որոնց ենթարկւում էին ամբողջ կեանքում)։ Եւ 58րդ յօդւածի բոլոր այդ կէտերը պատկանում էին քրէական օրէնսգրքին, որը ընդունւած էր 1926 թւականին, այսինքն քաղաքացիական պատերազմի աւարտից 6-7 տարի յետոյ (օրէնքի անպատկառ օգտագործման դասական օրինակ)։ Բացի դրանից, օրէնսգրքի 2րդ յօդւածը մատնանշում էր, որ օրէնքը տարածւում է միայն այն քաղաքացիների վրայ, որոնք ձերբակալւում են Ռուսաստանի տարածութեան վրայ։ Բայց ԿԳԲի ձեռքը քաշում էր և ՈՉ քաղաքացիներին եւրոպական և ասիական բոլոր երկրներից (այդպէս որ լինի, երեւի ոչ մի աֆրիկեան նախագահ զրկւած չէ վտանգից, որ 10 տարի յետոյ մենք կը հանենք օրէնք, որի համաձայն կը դատապարտենք իր այսօրւայ գործողութիւնները։ Եւ չինացիները կը հանեն՝ միայն ժամանակ տուէք նրանց)։

«Ես չգիտեմ, թէ ո՛ր տեսակի սպիտակ գւարդիականներին էին պատկանում Մանիւշկինը և Բորշը՝ նրա՞նց, ով կախաղան էր բարձրացնում բանւորներին և ծեծում էր գիւղացիներին թէ ոչ։ Այն փաստը, որ նրանց այսօր դատում էին, դեռ ոչինչ չի ապացուցում։ Բայց, եթէ այն ժամանակներից նրանք քառորդ դար ապրել են ոչ իբրեւ պատւաւոր թոշակառուներ, այլ իբրեւ անտուն վտարանդիներ, ապա նրանց դատելու համար մենք չունենք նաեւ բարոյական իրաւունքներ։ Դա Անատոլ Ֆրանսի **դիալեկտիկա**ն էր, իսկ մեզ դա ոչ մի կերպ չի կպչում։ Մեր յեղափոխութեան ժամանակների կենսագրութեան արմատացել է հետեւեալ միտումը. եթէ իմ վրայ նստել էին, երբ ես քուռակ էի, ապա ամբողջ կեանքումս ինձ ձի կ'անւանեն, թէպէտ վաղուց արդէն սայլորդ եմ։ Այդ անօգնական տարագրութեան դիակներից տարբերւում էր գնդապետ Կոստանդին Կոստանդինովիչ Յասեւիչը։ Այ նրա համար, քաղաքացիական պատերազմի աւարտից յետոյ, բոլշեւիզմի դէմ պայքարը չէր վերջացել։ Այն մասին, թէ որտեղ, ինչպէ՛ս և ինչո՛վ նա պայքարել է, Յասեւիչը ինձ չէր պատմում։ Բայց զգացւում էր, որ ինքը հիմա էլ գտնւում է պայքարողների շարքերում, նա ինքը այդ բանը զգում էր նոյնիսկ բանտի խուցում։ Ի տարբերութիւն մեզ, որ սուզւած էինք կարծիքների և տեսակէտների խառնաշփոթութեան մէջ, նա ունէր յստակ տեսակէտ կեանքի նկատմամբ, պարզ հայեացք, և զարմանալիօրէն պահպանել էր մարմնական ամրութիւնը։ Նա միակն էր խուցում, որ առաւօտները մարզանք էր անում և շփւում սառը ջրով։ Նրան գնդակահարեցին։

Բայց մինչեւ վերջին վայրկեանը նա մնաց կայտառ, քանզի գիտակցում էր, որ ճիշտ է ընտրել կեանքի ճանապարհը»:

Սոլժենիցինը պատմում է մի քանի ուրիշ հանդիպումներ տարագրութեան ներկայացուցիչների հետ, որոնցից նա պարզում է, որ քաղաքացիական պատերազմի ժամանակ տարագիրների հետ միասին Ռուսաստանից արտաքսուեց ազգային հոգեկան հարստութիւնների մեծ մասը: Եւ նա, ով մտահոգւած է Ռուսաստանի ճակատագրով,- եզրակացնում է հեղինակը,- պէտք է անի ամէն ինչ, տարագրութեան և հայրենիքի միասնութեան համար:

Յուզիչ է Սոլժենիցինի պատմութիւնը այն մասին, թէ ինչպէս էին բոլոր բանտարկեալները սպասում ներմանը, ինչպէս էին համոզւած, որ մեծ յաղթանակից յետոյ ներումը անխուսափելի է, բայց,- ասում է հեղինակը,- գթութեան համար՝ խելք է հարկաւոր: Նա գրում է.

«Մենք չէինք ուզում լսել մեզանից այն առողջամիտներին, որոնք ազռաւի նման կռկռում էին, թէ քառորդ դարւայ ընթացքում քաղաքականների համար ներում չի եղել և երբեք էլ չի լինի: Մենք ուշադրութիւն չէինք դարձնում այն առողջ դատողութիւնների վրայ, որոնք բացատրում էին, թէ մենք՝ միլիոններս այն պատճառով էլ նստած ենք, որ վերջացել է պատերազմը, որ ռազմաճակատում այլեւս մեր կարիքը չկայ, որ թիկունքում մենք վտանգաւոր ենք, իսկ երկրի հեռաւոր կառոյցներում, առանց մեզ քարը քարի վրայ չի դրւի (մեզ պակասում էր ինքնահրաժարութիւնը ըմբռնելու համար Ստալինի եթէ ոչ չարամտութիւնը, ապա գոնէ նրա պարզ տնտեսական հաշւարկը, ո՞վ մեզանից, պատերազմից վերադարձած, կամաւոր կը լքէր ընտանիքը և կը գնար Կալիմա, Վորկուտա, Սիբիր, որտեղ չկային ոչ տներ, ոչ ճանապարհներ: Դա գրեթէ պետպլանի խնդիրն էր՝ տալ ՆԿՎԴ-ին պահանջւող բանտարկեալների թիւը): Ներմանը, մեծահոգիօրէն շնորհւած ներմանը սպասում և սպասում էինք մենք: Ասում էին, թէ Անգլիայում, ամէն տարի թագադրման կապակցութեամբ ներում էր շնորհւում: Ռուսաստանում Ռոմանովների 300ամեակի կապակցութեամբ քաղաքականներին ներում շնորհւեց:

Միթէ՞ այսօր, շահելով դարի չափանիշներով մեծագոյն յաղթանակ, ստալինեան կառավարութիւնը կը գտնւի այնքան փոքրահոգի և վրիժառու, որ չի մատնի մոռացութեան իր փոքրիկ ենթակաների փոքրիկ սխալները: Փոքր ճշմարտութիւն է, բայց սա էլ հասկանում ես տառապանքների միջոցով, պատերազմներում օրհնեալ են ոչ թէ յաղթանակները, այլ պարտութիւնները: Յաղթանակները անհրաժեշտ են իշխանաւորներին, իսկ պարտութիւնները՝ ժողովրդին: Յաղթանակներից յետոյ ուզում ես նոր յաղթանակներ, իսկ պարտութիւնից յետոյ ուզում ես ազատութիւն և, իբրեւ օրէնք, ստանում ես այն: Պարտութիւնները անհրաժեշտ են ազգերին, ինչպէս դժբախտութիւնները և

տառապանքները առանձին անձերին, նրանք օգնում են հարստացնել ներքին կեանքը և բարձրացնել հոգեկան մակարդակը: Պոլտաւայի յաղթանակը Ռուսաստանի համար դժբախտութիւն էր, նա քաշեց իր ետեւից լարուածութիւն երկու դար շարունակ, բռնութիւն և նորանոր պատերազմներ: Պոլտաւայի պարտութիւնը շւեդացիների համար փրկութիւն էր. կորցնելով պատերազմ վարելու ցանկութիւնը, շւեդացիները դարձան Եւրոպայի ամենաբարգաւաճող և ազատ ազգը: Մեզ համար այնքան սովորական է դարձել պարծենալ Նապոլէոնի դէմ շահած պատերազմով, որ մոռացութեան ենք մատնում այն հանգամանքը, որ, շնորհիւ այդ յաղթանակի, կէս դար ուշացաւ գիւղացիների ազատութիւնը, որ ամրապնդւեց գահը և կործանւեց **դեկաբրիստ**ների ապստամբութիւնը (իսկ ֆրանսական նւաճումը Ռուսաստանի համար իրական վտանգ չէր): Իսկ Խրիմի պատերազմը, ճապոնականը, գերմանականը, բոլորը պարտութիւնների հետ միասին բերում էին մեզ ազատութիւններ և յեղափոխութիւններ:

«Այն գարնանը մենք հաւատում էինք ներմանը, բայց դրանում առաջինը չէինք: Հին բանտարկեալների հետ խօսակցութիւններից կամաց-կամաց պարզւում էր, որ այդ ներման ծարաւը և հաւատքը երբեք դուրս չի եկել բանտի մոխրագոյն պատերից: Տասնամեակներ տասնամեակների ետեւից, բանտարկեալների տարբեր հոսքեր միշտ սպասել ու հաւատացել են կա՛մ նոր օրէնսգրքի, կա՛մ ներմանը, կա՛մ գործերի վերանայմանը (և այդ լուրերը օրգանները զգուշօրէն հովանաւորում էին): Հոկտեմբերեան յեղափոխութեան, լենինեան ծնունդի, յաղթանակի, Կարմիր բանակի, հնգամեակի աւարտի, Փարիզեան կոմունայի և շատ ուրիշ տարեդարձների առթիւ, բանտարկեալների երեւակայութիւնը կառուցում և սպասում էր ազատութիւն բերող հրեշտակին: Լոյսի բոլոր աղբիւրները կարելի է այս կամ այն չափով համեմատել արեւի հետ: Բայց արեւը անհնարին է համեմատել որեւէ բանի հետ: Այդպէս էլ ներումը: Աշխարհի բոլոր սպասումները կարելի է համեմատել ներման սպասումի հետ, բայց նման սպասումը համեմատելի չէ ոչ մի բանի հետ: Ներմանը սպասում էինք ամէն վայրկեան, ԲԱՅՑ ԳԹՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԽԵԼՔ Է ՀԱՐԿԱՒՈՐ»:

Սոլժենիցինը կրկին վերադառնում է յեղափոխութեան սկզբնական շրջանին, ցոյց տալու համար, որ ամէն ինչ սկսւեց հէնց այն «հերոսական շրջանից»:

Պատահական չէ, որ այդ գլուխը հեղինակը վերնագրել է «ՕՐԷՆՔԸ ՄԱՆՈՒԿ Է», որը եթէ թարգմանենք ոչ-բառացիօրէն, ապա կը լինի. «Երբ օրէնքը դեռ մանուկ էր»: Կարծում եմ, որ այս թարգմանութիւնը կը համապատասխանի իմաստին, քանզի յաջորդ գլուխները հեղինակը վերնագրել է այսպէս՝ «ՕՐԷՆՔԸ ՀԱՍՈՒՆԱՆՈՒՄ Է» և «ՕՐԷՆՔԸ ՀԱՍՈՒՆԱՑԱՒ»: Այսպէս է

սկսում Սոլժենիցինը օրէնքի մանկական ժամանակաշրջանի նկարագրութիւնը.

«Մենք ամէն ինչ մոռանում ենք: Մենք յիշում ենք ոչ թէ իրականութիւնը, ոչ թէ պատմութիւնը, այլ միայն այն կէտագիծը, որը ցանկացել են մտցնել մեր գլուխները անընդհատ հարւածելով մեր յիշողութիւնը: Ես չգիտեմ, թէ պատկանո՞ւմ է արդեօք այդ յատկութիւնը ամբողջ մարդկութեանը, բայց մեր ժողովրդին՝ այո: Ցաւալի յատկութիւն է: Գուցէ նա գալիս է բարկութիւնից, բայց ցաւալի է: Նա գցում է մեզ ստախօսների ճանկը: Այդպէս, եթէ պէտք չէ, որ մենք յիշենք նոյնիսկ բաց դատավարութիւնները, մենք չենք յիշի: Բարձրաձայն խօսւում էր, թերթերում գրւում էր, բայց մեր գլուխը չեն մտցրել և մենք չենք յիշում: (Մեր գլուխները մտնում է միայն այն, ինչ ամէն օր հաղորդում է ռադիոն):

«Երիտասարդութեան մասին չէ խօսքս, նրանք ի հարկէ չգիտեն, խօսքս այն դատավարութիւնների ժամանակակիցների մասին է: Խնդրէք միջին մարդուն թւել, թէ ինչպիսի՞ հրապարակային դատավարութիւններ ինքը գիտէ: Նա կը յիշի Բուխարինի և Զինովիեւի դատավարութիւնը, իսկ յետոյ, մի քիչ էլ լարելով յիշողութիւնը, կարող է յիշել «Պրոմկուսի» (արդիւնաբերական կուսակցութիւն Է.Յ.) դատավարութիւնը: Վերջ: Ուրիշ հրապարակային դատավարութիւններ չեն եղել:

«Բայց նրանք սկսեցին անմիջապէս Հոկտեմբերից յետոյ: Արդէն 1918 թւականին, նրանք ընթանում էին, երբ դեռ չկային ոչ օրէնքներ, ոչ օրէնսգրքեր և ոչ էլ դատաւորները կարող էին ղեկավարւել միայն բանւորագիւղացիական իշխանութեան պահանջներով: Նրանց պատմութիւնը որեւէ ժամանակ, որեւէ մէկի կողմից մանրամասնօրէն կը գրւի, իսկ մենք չփորձենք իսկ տեղաւորել այդ պատմութիւնը մեր հետազօտութեան սահմաններում: Սակայն հազիւ թէ հնարաւոր լինի խուսափել մի փոքր ամփոփումից: Որոշ մոխրացած փլատակներ մենք պարտաւոր ենք պարզել և ԱՅՆ լուսաբացի նուրբ և վարդագոյն մշուշի մէջ:

«Այն բուռն տարիներին պատերազմի սուրը չէր ժանգոտում պատեանի մէջ, բայց չէր կպչում պատեանին նաեւ պատժիչ ատրճանակը: Յետոյ որոշեցին գիշերների մէջ թաքցնել գնդակահարութիւնները, գետնայարկերում կրակել ծոծրակներին: Իսկ 1918ին Ռեազանի յայտնի չեկիստ Ստելմախը գնդակահարում էր ցերեկը, բակում, և այնպէս, որ գնդակահարութեան դատապարտւածները բանտի լուսամուտներից կարող էին ազատօրէն դիտել այդ արարողութիւնը: Այն ժամանակ գոյութիւն ունէր պաշտօնական հասկացութիւն.- «ԱՌԱՆՑ ԴԱՏԻ՝ ԴԱՏԱՍՏԱՆ»:

«Եւ ոչ նրա համար, որ դեռ գոյութիւն չունէին դատարաններ, այլ որովհետեւ գոյութիւն ունէր ՉԵԿԱն, որովհետեւ այդպէս աւելի արդիւնաւէտ էր: (Այդ

ծիտիկին, որի կտուցը կարծրանում էր, տաքացնում էր Տրոցկին. «Քաղաքականութեան հզօր միջոցներից մէկը վախեցնելն է և պէտք է լինել տգէտ, որպէսզի այդ բանը չհասկանալ»։ Եւ Զինովեւը, դեռ չիմանալով իր վերջը, հրճւում էր)։ Դատարանները կային և դատում էին, բայց պէտք է յիշել, որ նրանց հետ զուգահեռ և նրանցից անկախ տարածւում էր առանց դատի դատաստանը։

«Ի՞նչպէս կարելի է պատկերացնել նրա ծաւալը։ Մ. Լացիսը իր մատչելի ակնարկում ՉԵԿԱյի գործունէութեան մասին տալիս է մեզ մէկուկէս տարւայ (1918 և 1919 կէսը) համար հետեւեալ թւերը. 20 մարզերում ՉԵԿԱն գնդակահարել է 8389 մարդ, բացայայտւած են 412 հակայեղափոխական կազմակերպութիւններ (ցնորքային մի թիւ՝ ի նկատի ունենալով մեր կազմակերպելու անընդունակութիւնը ամբողջ պատմութեան ընթացքում, և դրա հետ միասին ընդհանուր քայքայւածութիւնը և հոգեկան անկումը), բանտարկւած են 87 հազար մարդ (այս թիւը պակսեցրած է)։

«Ինչի՞ հետ կարելի է համեմատել այս թւերը գնահատական տալու համար։ 1907 թւականին ձախակողմեանները հրատարակեցին մի ժողովածու, որտեղ բերւում էր 1826 թւականից մինչեւ 1906 թւականը բոլոր մահապատժի ենթարկւածների ազգանունները։ Այնտեղ թւած են 1397 անուն, որտեղից պէտք է հանել 233 հոգի, որոնց մահապատիժը փոխարինւեց բանտարկութիւնով և 270 հոգի, որոնց յաջողւել էր փախչել (հիմնականում լեհական ապստամբեալներ)։ Մնում է 894 հոգի։ Այս թիւը 80 տարւայ ընթացքում ոչ մի համեմատութեան մէջ չի մտնում Լացիսի մէկուկէս տարւայ թւի հետ, այն էլ ոչ բոլոր մարզերում, այլ միայն 20։ Այն էլ հաշւի չառած դատական վճիռները»։

Սոլժենիցինը, օգտւելով 1918-20 թւականների հրապարակային դատավարութիւնների փաստաթղթերից, պատմում է մի քանի դատավարութիւնների մասին, որտեղից երեւում է դատավարութեան ընթացքի ամբողջ անմտութիւնը։ Այդ դատավարութիւնների շարքին է պատկանում, այսպէս կոչւած, «տակտիկական կենտրոնի գործը», որի մասին Սոլժենիցինը գրում է.

«Կրքոտ ճառի սկզբին, դեռ չխռպոտած ձայնով, ամբողջովին լուսաւորւած դասակարգային վերլուծութիւններով, յայտնում է մեզ գերագոյն դատախազը, որ, բացի դրամատէրներից և կալւածատէրերից, գոյութիւն ունէր և շարունակում է ունենալ եւս մէկ հասարակական շերտաւորում, որի հասարակական կեցութեան մասին ՎԱՂՈՒՑ Ի ՎԵՐ մտածում են յեղափոխական **սոցիալիզմի** ներկայացուցիչները (այսինքն՝ լինել նրանք թէ չլինել)։ Այդ շերտաւորումը այսպէս կոչւած մտաւորականութիւնն է։ Այս դատավարութեան ընթացքում մենք գործ կ’ունենանք պատմութեան և յեղափոխութեան դատաստանի հետ ռուս մտաւորականութեան վերաբերեալ։ Մեր հետազօտութեան հասարակա-

կան սահմանները թոյլ չեն տալիս ընդգրկել այն հարցը, թէ ինչպէս էին ՄՏԱԾՈՒՄ յեղափոխական **սոցիալիզմի** ներկայացուցիչները այսպէս կոչուած մտաւորականութեան ճակատագրի մասին և ինչ էր որոշել նրանց համար: Սակայն մեզ հանգստացնում է այն փաստը, որ նիւթերը այդ կապակցութեամբ հրատարակուած են և կարող են ուսումնասիրուել ցանկացած մանրամասնութիւններով:

«Այդ իսկ պատճառով, պարզելու համար հանրապետութեան ընդհանուր կացութիւնը, յիշեցնեմ այն ժամանակւայ (երբ բոլոր այդ դատավարութիւնները տեղի էին ունենում) ժողովրդական **կոմիսար**ների խորհրդի նախագահ Լենինի կարծիքը: Գորկուն, որը մտահոգուած էր մտաւորականութեան ճակատագրով, Վլադիմիր Իլիչը 1919 թւականի Սեպտեմբերի 15ին ուղղում է մի նամակ, որտեղ գրում է, որ «մտաւորականութիւնը ոչ թէ ազգի ուղեղն է, այլ… (այստեղ Լենինը օգտագործում է, իսկ Սոլժենիցինը մէջբերում է մի բառ, որը չեն օգտագործում քաղաքակիրթ մարդիկ և որը չկայ ոչ մի բառարանում: Ոչ գրական հայերէնում նրան համապատասխանում է Ք… բառը, այսինքն կղկղանքի փողոցային արտայայտութիւնը: Հետաքրքրական է, որ Լենինի աշխատութիւնների 51րդ հատորում, 48րդ էջում այդպէս էլ գրած է՝ «ԳՈՎՆՈ» (Չէ՞ որ Լենինի բերանից դուրս եկած բոլոր բառերը սուրբ են Է.Յ.):

«Մի ուրիշ անգամ Լենինը ասում է Գորկուն, որ «մտաւորականութիւնը ինքը կը լինի մեղաւոր, եթէ մենք նրան չափից աւելի կոտորենք: Եթէ նա արդարութիւն է որոնում, ինչո՞ւ չի գալիս մեզ մօտ: Այդ մտաւորականութիւնից էլ ես ստացայ գնդակը (այսինքն՝ Կապլանից)»: Լենինը չափազանց կասկածամիտ էր մտաւորականութեան նկատմամբ և յաճախ արտայայտւում էր թշնամաբար, փտած **լիբերալ**ներ, թերամիտներ, փնթիներ, բանւորական գործի դաւաճաններ (իսկ ե՞րբ էր նա երդուել բանւորական գործին կամ պրոլետարիատի դիկտատուրային): Այդ ծաղրանքը մտաւորականութեան նկատմամբ, այդ արհամարհանքը նրա հանդէպ հետագայում որդեգրեցին 20ական թւականների թերթերն ու հրապարակախօսները և նոյնիսկ իրենք՝ մտաւորականները անիծում էին իրենց թերամտութիւնը, անողնաշարութիւնը, երկմտութիւնը և յետամնացութիւնը:

«Եւ արդար էր այդ անէծքը: Ահա գերագոյն ատեանի առաստաղի տակ հնչում է մեղադրող իշխանութեան ձայնը և վերադարձնում է մեզ ամբաստանեալի աթոռի վրայ. «Այդ հասարակական շերտաւորումը այս տարիների ընթացքում ենթարկուեց վերագնահատութեան փորձութեանը: Ռուսական մտաւորականութիւնը, մտնելով յեղափոխութեան մէջ ժողովրդավարութեան կոչերով (ահա, ուրեմն, ինչ որ բան եղել է), դուրս եկաւ այնտեղից որպէս սև զօրավարների դաշնակից (նոյնիսկ ոչ սպիտակ, որոնք եւրոպական **իմպերիալիստ-**

ների խոնարհ ծառաներն են: Մտաւորականութիւնը լքեց և ցեխոտեց իր դրօշը»: Դէ, ի՞նչպէս մեղանչելով՝ չպատառոտենք մեզ: Դէ ինչպէս չպոկենք մեր գլխի մազերը: Եւ միայն նրա համար կարիքը չունենք վերջնականապէս ոչնչացնելու նրա առանձին ներկայացուցիչներին,- շարունակում է դատախազը,- որ այդ հասարակական շերտաւորումը վերապրել է իր դարը: 20րդ դարի սկզբին: Նախագուշակման ինչպիսի հզօրութիւն: Օ՛, գիտական յեղափոխականներ: (Սակայն ոչնչացնել պահանջւեց: Ամբողջ 20ական թւականների ընթացքում ոչնչացնում և ոչնչացնում էին)»:

Սոլժենիցինը պատմում է, թէ ինչպէս դատում էին 28 մտաւորականի, միայն այն բանի համար, որ նրանք իրենց աշխատութիւններում չունէին մէջբերումներ Լենինից, Տրոցկուց ու Բուխարինից: Իսկ դրանց հետ միասին դատեցին նաեւ մեծ ռուս գրող Տոլստոյի աղջկան, որը թէյ էր պատրաստում, երբ մտաւորականները հաւաքւում էին զրուցելու: Իսկ այն մասին, թէ ինչպէս կազմակերպւեց մասնագէտների դատավարութիւնը, Սոլժենիցինը գրում է հետեւեալը.

«Անցաւ քաղաքացիական պատերազմի ամենադաժան չորրորդ ձմեռը: Վառելանիւթը լրիւ սպառւած էր, գնացքները մինչեւ կայարան չէին հասնում, քաղաքներում տիրում էր սովը և ցուրտը, մայրաքաղաքներում սկսւեցին գործադուլները (այժմ նրանք ջնջւած են պատմութիւնից): Ո՞վ է մեղաւոր: Հռչակաւոր հարցը – Ո՞Վ Է ՄԵՂԱՒՈՐ: Դէ, ի հարկէ, ոչ ընդհանուր ղեկավարութիւնը: Եւ կարեւորը նա է, որ ոչ էլ տեղական ղեկավարութիւնը: Եթէ կուսակցական ընկերները գործից տեղեակ չեն, ապա դա նրանց մեղքը չէ, նրանց պէտք է ճիշտ ուղի ցոյց տային մասնագէտները: Ուրեմն, նշանակում է, որ ղեկավարութիւնը մեղք չունի, մեղաւորները նրանք են, ովքեր հաշւում, գծում և **պլան**աւորում էին: Մեղաւոր են ոչ նրանք, ովքեր ստիպում էին, այլ նրանք, ովքեր կազմում էին: Եւ կազմակերպւեց մասնագէտների գործը»:

Սակայն բոլոր այդ գործերը, Սոլժենիցինի կարծիքով, Եւրոպային չէին հետաքրքրում, նրանք ներքին էին: Չէր հետաքրքրւում Եւրոպան նաեւ եկեղեցականների դատավարութիւններով: Սակայն նա, այդ Եւրոպան ուշի-ուշով սպասում էր էսէռների դատավարութեանը, որը քաղաքական էր և ունէր միջազգային նշանակութիւն: Եւ այստեղ խորհրդային ղեկավարութիւնը հասկացաւ, որ առանց օրէնսգրքի այդ դատավարութիւնը չի կարող տեղի ունենալ: Չորս տարի դատում և բանտարկում էին առանց օրէնսգրքի, չորս տարի յեղափոխական խիղճն էր համարւում բարձրագոյն արդարութեան չափանիշը, բայց միջազգային կարծիքը ստիպեց հրաժարւել այդ անարդարութիւնից: Սոլժենիցինը գրում է.

«Էսէռների դատավարութեան կապակցութեամբ պահանջւում էր շտապ ստեղծել քրէական օրէնսգիրք՝ ժամանակն էր շարել օրէնքի քարէ պատերը: Ինչպէս պայմանաւորւել էին՝ Մայիսի 12ին բացւեց Համամիութենական Կենտրոնական Գործադիր Կոմիտէի նստաշրջանը, բայց օրէնսգրքի նախագիծը դեռ պատրաստ չէր: Նա դեռ գտնւում էր Վլադիմիր Իլիչի մօտ, որին յանձնել էին քննարկման համար:

«Օրէնսգրքի 6 յօդւածների համար նախատեսւած էր բարձրագոյն պատիժը, այսինքն գնդակահարութիւն: Դա բաւարար չէր: Մայիսի 15ին Իլիչը նախագծի տողանցքների վրայ աւելացրեց եւս 6 յօդւած, որոնք նախատեսում էին գնդակահարութիւն (այդ թւում նաեւ 69րդ յօդւածը, որը վերաբերւում էր հակապետական քարոզչութեանը: Ինչպէս, օրինակ, Վիրորդի կոչը, որի համար ցարական իշխանութիւնը դատապարտեց երեք ամսով): Եւ, բացի դրանից, գնդակահարութեան համար մի կէտ եւս. արտասահմանից առանց թոյլատւութեան վերադարձ հայրենիք (դէ, ինչպէս, օրինակ, բոլոր ընկերվարականները, որոնք նախկինում վազվզում էին ներս ու դուրս անելով): Եւ վերջապէս, գնդակահարութեան համազօր մէկ պատիժ եւս. արտաքսում հայրենիքից:

Նախատեսում էր Վլադիմիր Իլիչը, թէ մօտ է այն ժամանակը, որ Եւրոպայից մեզ մօտ ձգտողների թիւը հասնելու է ահաւոր չափերի (բայց ոչ մի կերպ չի լինի որեւէ մէկին կամաւոր դուրս գալ հայրենիքից): Իր գլխաւոր եզրակացութիւնը Իլիչը այսպէս բացատրեց արդարադատութեան նախարարին. «Ընկեր Կուրսկի, իմ կարծիքով, անհրաժեշտ է գնդակահարութիւնը օգտագործել աւելի լայն (մենշեւիկների, էսէռների բոլոր տեսակի գործողութիւնների հանդէպ. գտնել այնպիսի ձեւակերպումներ, որոնք այդ գործողութիւնը կը կապեն **միջազգային բուրժուազիայի հետ** (ընդգծումը Լենինին է):

«Լայնացնել գնդակահարութեան օգտագործումը – ի՞նչ անհասկանալի բան կայ: Ահաբեկութիւնը – համոզելու միջոց է (Լենին), միթէ՞ պարզ չէ: Բայց Կուրսկին, այնուամենայնիւ, չէր հասկանում: Նա երեւի չէր կարողանում հասկանալ, թէ ինչպէս պէտք է ստեղծւի այդ կապը բուրժուազիայի հետ: Եւ յաջորդ օրը նա գալիս է Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահի մօտ, որոշ հարցեր պարզելու համար: Մեզ յայտնի չէ նրանց խօսակցութեան բովանդակութիւնը, բայց Մարտի 17ին Լենինը Կուրսկուն ուղարկում է երկրորդ նամակը.

«Ընկեր Կուրսկի, որպէս մեր զրոյցի լրացում, ուղարկում եմ քրէական օրէնսգրքի համար լրացուցիչ հատւած… Յոյսով եմ, որ հիմնական միտքը պարզ է, չնայած որ սեւագրութիւնս ունի թերութիւններ. բացայայտօրէն ցոյց տալ այն քաղաքական ճշմարտութիւնը, որը արդարացնում է ահաբեկումը և

ցոյց է տալիս նրա անհրաժեշտութիւնն ու սահմանները։ Դատարանը չպէտք է վերացնի ահաբեկութիւնը, խոստանալ դա՝ կը նշանակէր խաբել կամ զբաղուել ինքնախաբէութեամբ, նա պէտք է հիմնաւորի և սկզբունքօրէն օրինականացնի ահաբեկչութիւնը, առանց որեւէ կեղծիքի և քողարկման։ Զեւակերպութիւնները պէտք է լինեն որքան կարելի է լայն, քանզի միայն յեղափոխական օրինապաշտութիւնը և խիղճը կը ստեղծեն պայմաններ լայն օգտագործումների համար։

«Կոմունիստական ողջոյններով՝ Լենին»։

«Մեկնաբանել այս կարեւորագոյն փաստաթուղթը մենք հրաժարւում ենք։ Այստեղ անհրաժեշտ են լռութիւն և մտորումներ։ Փաստաթուղթը առանձնապէս կարեւոր է նրանով, որ սա Լենինի վերջին կարգադրութիւններից մէկն է, նրա քաղաքական կտակի կարեւոր մասը։ Այս նամակը գրւեց այն ժամանակ, երբ հիւանդութիւնը դեռ չէր քայքայել Լենինի առողջութիւնը։ Այդ նամակը գրւելուց 9 օր յետոյ՝ նրան կը ցնցի առաջին նոպան, որից նա միայն ժամանակաւոր կ'առողջանայ 1922 թւականի աշնան ամիսներին։ Նամակին կցւած է յիշատակւած սեւագրութիւնը, որտեղ նշւած են այն հատւածները, որոնցից մի քանի տարի յետոյ ծնւում է մեր մայր 58րդ յօդւածը։ Կարդում և հիանում ես՝ այ թէ ինչ է նշանակում ձևակերպել, որքան կարելի է լայն, այ թէ ինչ է նշանակում լայն օգտագործում։ Տւէք ինձ սուրբ Օգոստոսին և ես անմիջապէս կը դատեմ նրան այս յօդւածով։ Ամէն ինչ կատարւեց ինչպէս որ պէտք էր, փոխեցին, վերանայեցին, տպագրեցին, գնդակահարութիւնը լայնացրին և Մարտի 20ի նստաշրջանը ընդունեց նոր օրէնսգիրքը, որը ուժի մէջ էր մտնում 1922 թւականի Յունիսի 1ից։

«Եւ հիմա օրէնքի հիման վրայ սկսւում էր երկու ամիս տեւող էսէռների դատավարութիւնը։ Գերագոյն **տրիբունալ**։ Մշտական նախագահ Կարկլինը (լաւ ազգանուն է դատաւորի համար – նշանակում է ագռաւի պէս կռկռացող), փոխարինւած է Պեատակովով, քանզի այս դատավարութեանը հետեւում է ամբողջ աշխարհի ընկերվարութիւնը։ Դատապաշտպաններ չկան՝ ամբաստանեալները խոշոր էսէռներ էին և իրենք էին իրենց պաշտպանում։ Գէորգի Պեատակովը կոպիտ էր և խանգարում էր դատապարտւածներին արտայայտւել։ Ի տարբերութիւն մենշեւիկների, էսէռները համարւում էին շատ վտանգաւոր, քանզի դեռ չէին ցրւած և ոչնչացւած։ Պրոլետարիատի դիկտատուրայի ամրութեան համար անհրաժեշտ էր նրանց ոչնչացնել։ Բայց ով ծանօթ չէր այդ հիմնական պատճառի հետ, կարող էր սխալմամբ մտածել, թէ իբր ամբողջ դատավարութիւնը պարզապէս կուսակցական վրէժ է։

«Լսելով այն մեղադրանքները, որոնք ներկայացնում էին էսէռների այդ դատավարութեան ժամանակ, քեզանից անկախ անդրադառնում ես երկարատեւ

և շարունակւող պետութիւնների պատմութեանը: Մի քանի բացառութեամբ, պետականութիւնների ամբողջ պատմութիւնը՝ դա յեղաշրջումների և իշխանութեան համար պայքարների պատմութիւնն է: Եւ նա, ով յաջողւում է առաջինը զաւթել իշխանութիւնը, այդ վայրկեանից հագնում է արդարադատութեան զգեստը և ամբողջ նրա անցեալը և ապագան դառնում է արդարութիւն և օրէնք: Իսկ նրա չյաջողած թշնամիների ամբողջ անցեալը և ապագան՝ յանցագործութիւն, որը ենթակայ է դատ ու դատաստանի:

«Ընդամէնը մէկ շաբաթ առաջ է ընդունւած օրէնսգիրքը, բայց արդէն ամբողջ 5 տարւայ պատմութիւնը բացատրում են այդ օրէնսգրքով: Եւ 20, և 10, և 5 տարի առաջ էսէռները յեղափոխական կուսակցութիւն էին և ցարիզմի տապալման հիմնական ծանրութիւնը նրանք վերցրել էին իրենց վրայ: Դրա համար էլ նրանք շատ աւելի մեծ հարւածներ ստացան ցարիզմից, քան բոլշեւիկները: իսկ հիմա նրանց դէմ յարուցում էին առաջին մեղադրանքը. Էսէռները քաղաքացիական պատերազմի նախաձեռնողներն են: Այո, այդ նրանք են սկսել այդ պատերազմը: Նրանց մեղադրում են, որ Հոկտեմբերեան յեղափոխութեան ժամանակ՝ նրանք դիմադրում էին: Երբ ժամանակաւոր կառավարութիւնը, որը հիմնականում էսէռներից էր կազմւած, օրինական ձեւով տապալւեց նաւաստիների գնդացիրների կրակի տակ, էսէռները բոլորովին անօրինական փորձեցին պաշտպանւել (ուրիշ բան, որ թոյլ էին պաշտպանւում) և նոյնիսկ կրակներին պատասխանեցին կրակներով, և նոյնիսկ կանչեցին օգնութեան զինւորականութեանը, որ ծառայում էր տապալւած կառավարութեանը: Պարտութիւն կրելով, նրանք քաղաքականօրէն չյանձնւեցին: Նրանք ծունկի չեկան նոր կառավարութեան առջեւ, համարելով, որ օրինական էր միայն նախկին կառավարութիւնը: Նրանք չընդունեցին, որ իրենց 20 տարւայ գործունէութիւնը սխալ էր, սակայն խնդրեցին ներել և համարել իրենց կուսակցութիւնը գոյութիւն չունեցող:

«Ահա է՛ւ երկրորդ մեղադրանքը. նրանք խորացրին քաղաքացիական պատերազմի հակասութիւնները նրանով, որ 1918 թւականի Յունւար ամսին ցոյց կազմակերպեցին ի պաշտպանութիւն Սահմանադիր ժողովի, այսինքն պաշտպանեցին իրենց անօրինական կառավարութիւնը ի դէմ օրինական բանւորագիւղացիական կառավարութեանը:

«Երրորդ մեղադրանքը. նրանք չճանաչեցին Բրեստի պայմանագիրը, որը չէր կտրում Ռուսաստանի գլուխը, այլ միայն մարմնի կէսը: Եզրակացութիւնը՝ պետական դաւաճանութիւն: Այստեղից բխում է չորրորդ մեղադրանքը. 1918 թւականի ամռանը և աշնանը, երբ կայսերական Գերմանիան հազիւ էր դիմադրում դաշնակից պետութիւններին, իսկ Խորհրդային Միութիւնը, հաւատարիմ Բրեստի դաշնագրին, օգնում էր Գերմանիային այդ ծանր պայքարում

տարբեր մթերքներով և ոսկով, էսէռները պատրաստում էին պայթեցնել երկաթագիծը, որպէսզի ոսկին մնայ հայրենիքում, այսինքն նրանք «պատրաստում էին դաւաճանօրէն քանդել մեր ժողովրդական սեփականութիւնը՝ երկաթագիծը» (այն ժամանակ դեռ չէին ամաչում ու չէին քաշւում նրանից, որ ռուսական ոսկին արտահանւում էր Հիտլերի ապագայ կայսրութիւնը։ Եւ չէր հասկանում դատաւոր Կրիլենկոն, որը երկու համալսարան էր աւարտել, և օգնականները չօգնեցին հասկանալ, որ եթէ երկաթից պատրաստած գծերը ժողովրդական սեփականութիւնն էին, ապա գուցէ՞ ոսկին էլ այդպիսին էր)։

«Չորրորդ մեղադրանքից բխում էր հինգերորդը. երկաթագիծը պայթեցնելու միջոցները պէտք է ձեռք բերէին դաշնակից պետութիւններից ստացած գումարներով (որպէսզի Վիլհելմին ոսկի չհասնի, նրանք ուզում էին գումարներ վերցնել Անտանտայից – դա արդէն ծայրայեղ դաւաճանութիւն էր)։ Այստեղից այնքան էլ հեռու չէր վեցերորդ մեղադրանքը. 1918 թւականին էսէռները Անտանտայի լրտեսներն էին։ Երէկ՝ յեղափոխականներ, այսօր՝ լրտեսներ։ Յետոյ 7րդ, 10րդ և այդպէս ստեղծւում էր մեղադրանքների շղթան։ Մեղադրանքների այդպիսի կառոյցը հետագայում՝ 37ին շատ պէտք եկաւ։ 14 հոգի էսէռներից գնդակահարեցին, մնացածներին նետեցին բանտերը և աքսորավայրերը»։ Այսպէս հասունանում էր Խորհրդային Օրէնքը։

Սոլժենիցինը համարում է, որ երբ օրէնքը հասունացաւ, դատավարութիւնները վերածւեցին թատերգութիւնների, որտեղ գլխաւոր պաշտօնը կատարում էր ինքը՝ Ստալինը։ Բոլոր դատավարութիւնները ընթանում էին ճիշտ այնպէս, ինչպէս նախօրօք բեմադրում էր գլխաւոր ռեժիսորը։

Սակայն ինչպէ՞ս էր նրան յաջողւում փորձւած յեղափոխականներին դարձնել խրտւիլակներ և իր կողմից թելադրւած դերակատարներ։ Այս հարցին Սոլժենիցինը տալիս է հետեւեալ պատասխանը.-

«Զարմանքով աշխարհը դիտում էր մէկը միւսին յաջորդող բեմադրութիւնները, որտեղ անվախ կոմունիստական կուսակցութեան խոշոր առաջնորդները, այն կուսակցութեան, որ տակն ու վրայ արեց ամբողջ աշխարհը, այժմ տրտմօրէն դուրս էին գալիս բեմ և հնազանդւած այծերի նման մկկում էին այն, ինչ իրենց կարգադրւած էր, փսխում էին իրենց վրայ, ստրկանում և խոստովանում մեղքեր, որոնք երբեք չէին արել։ Այդ բանը առաւել եւս զարմանք էր պատճառում այն բանից յետոյ, որ Գերմանիայում Դիմիտրովը իր դատավարութեան ժամանակ վագրի նման մռնչում էր նացիստական դատաւորների երեսին։ Իսկ այստեղ նրա ընկերները, այդ նոյն պողպատեայ բանակից, որի առջեւ թպրտում էր աշխարհը, նոյնիսկ նրանցից ամենամեծերը, որոնց անւանում էին լենինեան **գւարդիա**, կանգնում էին դատաւորների առջեւ վարտիկներում միզած։ Եւ թէպէտ այն ժամանակւանից կարծես թէ շատ բան

պարզւած է (մանաւանդ յաջող՝ Արտուր Կեստլերի կողմից), գաղտնիքը այնուամենայնիւ ունի նաեւ մէկ ուրիշ կողմ: Գրում էին **հիպնոզ**ի օգտագործման, չինական թոյնի մասին, որոնք իբր թէ զրկում են կամքից: Այդ ամէնը ի հարկէ պէտք չէ ժխտել՝ եթէ այդպիսի միջոցներ կային ՆԿՎԴի ձեռքում, ապա անհասկանալի է, թէ ՈՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ կը խանգարէին նրան օգտագործել այդ միջոցները: Ինչո՞ւ համար չմթնեցնել գիտակցութիւնը և չթուլացնել կամքը: Եւ յայտնի է, որ 20ական թւականներին ՆԿՎԴում գործում էր **հիպնոզ**ացնողների դպրոց: Կամենեւի կինը տեսակցութիւն ստացաւ ամուսնու հետ անմիջապէս դատավարութիւնից առաջ և գտաւ բոլորովին կերպարանափոխւած, տարօրինակ պաղած վիճակում (այդ մասին նա հասցրեց պատմել նախքան իր բանտարկութիւնը): Բայց ինչո՞ւ Պալչինսկիին և Խրենիկովին չյաջողւեց կոտրել ոչ չինական թոյնով և ոչ էլ **հիպնոզ**ով: Ոչ, այս բանը պահանջում է աւելի բարձր՝ հոգեբանական բացատրութիւն: Մեր զարմանքի հիմնական աղբիւրը այս է. չէ՞ որ սրանք բոլորը հին յեղափոխականներ են, որոնք չկոտրուեցին ցարական բանտերում, որոնք կոփւած և ամէն ինչ տեսած մարտիկներ էին: Սակայն դա հասարակ թիւրիմացութիւն է: Նրանք այն հին յեղափոխականները չէին, այդ համբաւը նրանք ձեռք էին բերել իբրեւ ժառանգութիւն հարեւան ԷսԷռներից, ժողովրդականներից և անիշխանականներից: Նրանք, այդ ռումբեր նետողները և դաւադրութիւններ կազմակերպողները, գիտէին ինչ բան է բանտարկութիւնը, բայց ինչ բան է իսկական հետաքննութիւնը, չգիտէին նոյնիսկ նրանք (քանզի Ռուսաստանում այդ բանը ընդհանրապէս չկար): Իսկ սրանք, չէին տեսել ոչ բանտ և ոչ էլ հետաքննութիւն: Ոչ մի բանտ, ոչ մի աքսոր, ոչ մի Սախալին և ոչ մի Եակուտեան ճամբար բոլշեւիկներին չվիճակւեց:

Յերժինսկու մասին յայտնի է որ նրան վիճակւեց ամենածանր ճակատագիրը, որ նա ամբողջ կեանքը անց է կացրել բանտերում: Իսկ մեր չափանիշներով նա բանտարկւած է եղել ԸՆԴԱՄԷՆԸ 10 տարի, ինչպէս մեր ժամանակներում սովորական մի գիւղացի: Կուսակցութեան առաջնորդները, ում մեզ ցոյց տւեցին 36-37 թւականներին, դատավարութիւնների ժամանակ, իրենց յեղափոխական անցեալում ունէին կարճատեւ և մեղմ բանտարկութիւններ, թեթեւ աքսորներ, իսկ տաժանավայրերից հոտ էլ չէին քաշել: Բուխարինը ունէր բազմաթիւ մանր, կատակերգային բանտարկութիւններ՝ նա մէկ տարի էլ չէր նստել շարունակ:

Կամենեւը իր երկարատեւ քարոզչական աշխատանքով հանդերձ և Ռուսաստանի բոլոր քաղաքների պտոյտներով ընդամէնը երկու տարի է եղել բանտարկւած և մէկ տարի էլ աքսորավայրում: Մեր ժամանակ նոյնիսկ 16 տարեկան լակոտներին միանգամից տալիս էին 5 ՏԱՐԻ: Զինովիեւը, ծիծաղ է

առաջացնում, ԵՐԵՔ ԱՄԻՍ էլ չի բանտարկվել, և չի ունեցել ՈՉ ՄԻ ԴԱՏԱՎՃԻՌ: Մեր Արշիպելագի շարքային բնակիչների համեմատ, նրանք երեխաներ էին, նրանք բանտ չէին տեսել:

Տրոցկին ստորանում էր: Նրա կարգադրութեամբ գնդակահարուեցին շատերը, բայց սեփական մաշի առջեւ նա թթւել և խեղճացել էր: Ռադեկը՝ **պրովակատոր** էր (բայց միակը չէր): իսկ Եագոդան՝ իսկական աւազակ էր (այս միլիոնատէր մարդասպանը չէր ուզում հաւատալ, որ բարձրագոյն մարդասպանի սրտում չարթնանայ վերջին րոպէին համերաշխութիւնը: Ճիշտ այնպէս, ինչպէս նա կը վարուէր, եթէ Ստալինը նստած լինէր դահլիճում, Եագոդան դիմեց նրան խնդրելով ներում. «Ես դիմում եմ Ձեզ, ես Ձեզ ՀԱՄԱՐ կառուցել եմ երկու մեծ ջրանցքներ»: Եւ պատմում է այնտեղ ներկայ լինողներից մէկը, որ այդ կրակից առաջացաւ ծխամորճի ստուերը):

«Ունենալով վառ կերպով արտայայտուած արեւելեան նկարագիր, ես հաւատում եմ, որ նա դիտում էր Հոկտեմբերեան դահլիճի կատակերգութիւնները: Ես չեմ կարող ենթադրել, որ նա կարող էր զրկել իրեն այդ տեսարանը դիտելու հաճոյքից: Իսկ մեր զարմանքը անմիջականօրէն կապւած է այն հանգամանքի հետ, որ այդ մարդիկ սովորական չէին: Մեզ չի զարմացնում այն փաստը, թէ ինչո՞ւ հասարակ քաղաքացիները այդքան յանցանքներ են վերցրել իրենց վրայ, թէ ինչո՞ւ են նրանք զրպարտել իրենց ընկերներին: Մենք ընդունում ենք դա որպէս հասկանալի երեւոյթ՝ մարդը թոյլ է, մարդը զիջող է: Իսկ Բուխարինը, Զինովիեւը, Կամենեւը, Պյատակովը, Սմիրնովը՝ մեզ նախօրօք յայտնի է, որ սրանք գերմարդիկ էին և այստեղից էլ գալիս էր մեր զարմանքը:

Ճիշտ է, այս թատերգութիւնների համար դերասաններ ընտրելը **ռեժիսորի** համար մի քիչ աւելի դժւար էր, քան նախկին մասնագէտների և մտաւորականների դատավարութիւններում: Այնտեղ ընտրում էին քառասուն տակառների միջից, իսկ այստեղ խումբը փոքր էր, գլխաւոր դերակատարներին բոլորը ճանաչում են և հանդիսատեսը ցանկանում է, որ հէնց նրանք կատարեն դերերը: Սակայն այնուամենայնիւ, ընտրութիւն կար: Դատապարտուածներից ամենահեռատեսները և վճռականները, նրանց ձեռքը չընկան, նրանք ինքնասպանութիւն գործեցին բանտարկուելուց առաջ (Սկիպնիկը, Տոմսկին, Գամարնիկը): Իսկ բանտարկել իրենց թոյլ տուեցին նրանք, ովքեր ՈՒԶՈՒՄ ԷԻՆ ԱՊՐԵԼ: Իսկ նրանցից ով ուզում է ապրել, կարելի է պարաններ հիւսել: Բայց սրանցից էլ, ոմանք դատավարութեան ժամանակ սթափւեցին, դիմադրեցին և ոչնչացան անյայտութեան մէջ, սակայն առանց խայտառակւելու: Ինչո՞ւ օրինակ, բաց դատավարութիւնների չհանեցին Ռուդզուտակին, Պոստիշեւին, Ենուկիձէին, Զուփարին, Կոսիորին և նոյն այն Կրիլենկոյին՝ այդ անունները շատ կը զարդարէին դատավարութիւնները: Բայց դատավարութիւնների

դուրս բերեցին ամենախոհեմներին: Ընտրութիւն այնուամենայնիւ կար: Ընտրութեան համար խումբը փոքր էր, բայց բեխաւոր **ռեժիսորը** լաւ էր ճանաչում նրանցից ամէն մէկին: Նա գիտէր, որ նրանք բոլորը ընդհանրապէս թուլիկներ են, և ամէն մէկի թուլութիւնները գիտէր առանձին-առանձին: Դրանումն էր կայանում նրա մռայլ երեւելիութիւնը, նրա կեանքի գլխաւոր հոգեբանական նւաճումը և ուղղութիւնը՝ ճանաչել մարդկանց թուլութիւնները կենցաղային ցածր մակարդակի վրայ: Եւ նրան, ով գնդակահարւածների խայտառակւածների մէջ թւում է ամենաբարձրը և պայծառը (և որին ըստ երեւոյթի նւիրել է իր տաղանդաւոր հետազօտութիւնը Կեստլերը):

Բուխարինին, այն մակարդակի վրայ, որտեղ մարդը միանում է գետնին, Ստալինը տեսնում էր միջաթափանցօրէն և կառչել էր նրա կոկորդից, ժամանակ առ ժամանակ թուլացնելով ճանկերը և մկան նման խաղալով նրա հետ: Բուխարինը բառ առ բառ գրել է գործող (չգործող) լսողութեան համար այդքան գեղեցիկ մեր սահմանադրութիւնը: Այնտեղ երկնքի տակ, ամպերի մէջ նա ազատ թռվռում էր և կարծում էր, որ խաբեց Կոբային՝ դէմ արեց նրան մի սահմանադրութիւն, որը պէտք է ստիպէր Ստալինին մի քիչ թուլացնել դիկտատուրան: Բայց ինքը արդէն երախի մէջ էր: Բուխարինը չէր սիրում Կամենեւին և Զինովիեւին և երբ նրանց առաջին անգամ, Կիրովի սպանութիւնից յետոյ դատեցին, նա իր մերձաւորների մօտ արտայայտւեց այսպէս. «Դէ ի՞նչ, այս մարդկանցից ամէն ինչ կարելի է սպասել, գուցէ ինչ որ մի բան իսկապէս եղել է» (սա այն ժամանակւայ քաղքենիների դասական ձեւակերպումն էր. ինչ որ մի բան երեւի կայ, մեզ մօտ անմեղին չեն բանտարկի: Եւ սա ասում է կուսակցութեան առաջին տեսաբանը, 1935 թւականին): Իսկ Կամենեւի և Զինովիեւի երկրորդ դատավարութեան ժամանակ, 1936 թւականի ամրանը, նա որս էր անում Տյանշանում և ոչնչից տեղեակ չէր: Երբ նա սարերից իջաւ Ֆրունզէ, թերթերում կարդաց, որ երկուսին էլ դատապարտել են գնդակահարութեան, և որ դատավարութեան ժամանակ նրանք բարդել են Բուխարինի վրայ ահաւոր յանցանքներ: Եւ ի՞նչ, նա նետեց իրեն Մոսկւա այդ երկուսին փրկելու, կամ դիմեց կուսակցութեանը, նշելով, որ կատարւում է աններելի ոճիր: Ոչ, նա միայն հեռագիր ուղարկեց Կոբային. գնդակահարութիւնը մի փոքր ուշացրէք, որպէսզի ես հասցնեմ խօսել նրանց հետ և արդարանալ: Ուշ էր: Կոբային պէտք էին միայն արձանագրութիւնները, կենդանի վկայութիւնները նրա համար աւելորդութիւններ էին:

Սակայն Բուխարինին դեռ երկար ժամանակ չէին բանտարկում: Նա կորցրեց բոլոր պաշտօնները, կուսակցութեան մէջ բոլոր դիրքերը: Իր տան մէջ նա ապրում էր որպէս բանտարկեալ: Նրա տունն էլ ոչ ոք չէր գալիս և ոչ ոք չէր հեռաձայնում: Եւ բոլոր այդ ամիսները նա անվերջ գրում էր նամակներ. «Սիրելի

Կոբա…, Սիբելի Կոբա…,»: Բոլոր այդ նամակները մնացին անպատասխան: Նա դեռ փորձում էր սրտակից կապեր հաստատել Ստալինի հետ: Իսկ սիբելի Կոբան, աչքերը կկոցած արդէն պատրաստում էր հերթական բեմադրութիւնը: Կոբան երկար տարիներ զբաղտում էր դերակատարների ընտրութիւնով և գիտէր, որ Բուխարինը իր դերը կը կատարի գերազանցօրէն: Դեռ շատ վաղուց, երբ Ստալինը սպառնաց վտարել Բուխարինին կուսակցութիւնից, Բուխարինը և մնացած բոլորը հրաժարուեցին իրենց տեսակէտներից՝ միայն թէ մնան կուսակցութեան մէջ: Եթէ նրանք այդպէս էին պահում իրենց ազատ պայմաններում, փառքի և իշխանութեան գագաթին, ապա երբ կ'ընկնեն Լուբիանկայի աշխատակիցներին ձեռքը, պարզ է որ նրանք կ'ենթարկուեն բեմադրութեան բնագրին: Այդ նախաձերբակալման ամիսներին Բուխարինը ամենաշատը վախենում էր զրկուել կուսակցութիւնից, մնալ ապրելու կուսակցութիւնից դուրս: Այ հէնց բնաւորութեան այդ գծի վրայ էր խաղում սիբելի Կոբան, այն օրից երբ ինքը դարձաւ կուսակցութիւն:

«Բուխարինը (և բոլորը) չունէին ՍԵՓԱԿԱՆ ՏԵՍԱԿԷՏ, նրանք չունէին իրական ընդդիմադիր գաղափարախօսութիւն, որի վրայ կարողանային ամրապնդուել: Ստալինը յայտարարեց նրանց ընդդիմադիրներ շատ աւելի շուտ, քան նրանք դարձան այդպիսիները, և դրանով նա զրկեց նրանց հնարաւոր հզօրութիւնից: Իսկ նրանց բոլոր ճիգերը ուղղած էին կուսակցութեան մէջ մնալուն: Բուխարինին յատկացրած էր գլխաւոր դերը և գլխաւոր ռեժիսորը ոչ մի բան աչքաթող չէր անում իր աշխատանքում: Նոյնիսկ, երբ ձմռանը նրան ուղարկեցին Եւրոպա Մարքսի ձեռագրերի ետեւից, դա արւեց երկու նպատակով. առաջինը՝ որպէսզի առիթ լինի մեղադրել նրան կապերի մէջ, իսկ երկրորդը, որպէսզի ազատ շրջագայութիւններից յետոյ, տնային բանտարկութիւնը աւելի շատ ազդի նրա վրայ, և աւելի լաւ քայքայւի նրա կամքը: Մէկ անգամ նրան կանչեց Կագանովիչը և խոշոր չեկիստների ներկայութեամբ առերեսում տւեց նրան Սոկոլնիկովի հետ: Սոկոլնիկովը ցուցմունքներ տւեց Բուխարինի ընդյատակեայ գործունէութեան մասին: Կագանովիչը աւարտեց հարցաքննութիւնը և երբ Սոկոլովսկիին դուրս տարան՝ ընկերաբար ասաց Բուխարինին «ստում էր…» (պռոնիկը): Սակայն թերթերը շարունակում էին հրատարակել ժողովրդի վրդովմունքը: Բուխարինը հեռաձայնում էր կենտրոնական կոմիտէ: Բուխարինը գրում էր, որ սիրելի Կոբան հրապարակօրէն հանի իր վրայից մեղադրանքը: Դրանից յետոյ դատախազութիւնը հրատարակեց մի ադօտ բացատրութիւն, թէ Բուխարինին մեղադրելու համար փաստեր գտնւած չեն: Աշնանը Ռադեկը հեռաձայնեց նրան ցանկանալով հանդիպել նրա հետ:

Բուխարինը խուսափեց հանդիպումից, բացատրելով, որ իրենք երկուսն էլ մեղադրւած են, և ինչ կարիք կայ նոր կասկածներ առաջացնել: Սակայն նրանց

ամառանոցները շատ մօտ էին իրարի և մի երեկոյ Ռադեկը եկաւ Բուխարինի մօտ։

«Ինչ էլ, որ ես հետագայում ասեմ՝ իմացիր, ես ոչ մի բանում մեղաւոր չեմ։ Բայց դու կը փրկւես՝ դու տրոցկիստների հետ կապւած չես եղել»,- այսքանը ասելու համար էր եկել Ռադեկը։ Եւ Բուխարինը հաւատում էր, որ կը փրկուի, որ կուսակցութիւնից նրան չեն վտարի։ Տրոցկիստներին նա իսկապէս միշտ էլ վատ էր վերաբերւել. ահա, նրանք իրենց կուսակցութիւնից դուրս դրեցին, և ի՞նչ եղաւ։ Ոչ, պէտք է միշտ լինել միասին, եթէ սխալներ ենք անում, ապա անենք միասին։ Նոյեմբերեան տօնակատարութիւններին (իր վերջին հրաժեշտն էր Կարմիր Հրապարակին) նա կնոջ հետ միասին խմբագրութեան տոմսով մտաւ հիւրերի ամբիոնը։ Յանկարծ նրանց մօտեցաւ զինւած մի բանակային։ Սրտի աշխատանքը դաւաղրեց՝ մի՞թէ հիմա, մի՞թէ այստեղ։ Բայց ոչ, բանակայինը պատիւ է առնում և ասում. «ընկեր Ստալինը զարմանում է, թէ ինչու էք դուք այստեղ, նա խնդրում է գրաւել ձեր տեղը Մաւզոլէյի վրայ»։ Այսպէս կէս տարի շարունակ նրան գցում էին սառոյցից կրակի մէջ։ Դեկտեմբերի 5ին ոգեւորութեամբ ընդունեցին Բուխարինի սահմանադրութիւնը և յաւերժ կնքեցին նրան որպէս ստալինեան։

Կ. Կոմիտէի դեկտեմբերեան լիաժողովում Պյատակովին բերեցին ատամները կոտրած և լրիւ այլափոխւած։ Նրա մէջքի ետեւում կանգնած էին համր չեկիստները (եագոդայականները, չէ որ Եագոդայի համար էլ համապատասխան դեր էր պատրաստւում)։ Պյատակովը տալիս էր ահաւոր ցուցմունքներ Բուխարինի և Ռիկովի դէմ, որոնք նստած էին հէնց այստեղ, առաջնորդների հետ։ Օրջոնոկիձէն վերկացաւ իր տեղից և ձեռքերը ականջին դնելով (նա վատ էր լսում) հարցրեց. «Իսկ դուք կամաւո՞ր էք տալիս այդ ցուցմունքները» (Օրջոնոկիձէն էլ գնդակահարւեց)։ Այո, լրիւ կամաւոր,- պատասխանեց ոտքերի վրայ հազիւ կանգնող Պյատակովը։ Եւ այստեղ առաջին անգամ Ռիկովը ասաց Բուխարինին. «Այո, Տոմսկին կամք ունէր, նա դեռ օգոստոսին ամէն ինչ հասկացաւ և վերջացրեց։ Իսկ մենք քեզ հետ ապուշների նման շարունակում ենք ապրել»։

Կրակից սառցարան, սառցարանից՝ կրակ – այդպէս թուլանում էր կամքը, այդպէս դերակատարները մտնում էին դերերի մէջ։ Եւ կամաց-կամաց սկսեցին տուն բերել, բոլոր արձանագրութիւնները, որտեղ Կարմիր Պրոժեսուրայի հաստատութեան նախկին երիտասարդները, Ռադեկը և շատ ուրիշներ ծանր մեղադրանքներ էին ներկայացրել Բուխարինին, նրա դաւաճանութեան սեւ գործում։ Եւ այդ արձանագրութիւնները տուն էին բերում ոչ իբրեւ մեղադրեալի, ոչ իբրեւ կենտրոնական կոմիտէի անդամի՝ պարզապէս ծանօթութեան համար։ Երբ Բուխարինը ստանում էր նոր արձանագրութիւններ, նա իր 22

տարեկան կնոջը, որը գարնանը ծնել էր տղայ, ասում էր «կարդա՛ ինքդ, ես այլեւս չեմ կարող», իսկ ինքը գլուխը թաքցնում էր բարձի տակ: Երկու ատրճանակ ունէր նա իր տանը (և ժամանակ էր տալիս Ստալինը), բայց նա ինքնասպանութիւն չգործեց: Անցան մի քանի դատավարութիւններ եւս, զնդակահարուեցին մի խումբ մարդիկ եւս, իսկ Բուխարինին չէին բանտարկում:

1937 թի Փետրուարի սկզբին նա որոշեց հացադուլ յայտարարել, որպէսզի կենտկոմը քննարկի իր հարցը և հանի իր վրայից մեղադրանքները: Այդ մասին նա յայտնեց սիրելի Կոբային և ազնուօրէն կատարում էր խոստումը: Դրանից յետոյ հաւաքուեց Կենտկոմի լիագումարը, որի օրակարգում կար երկու հարց. առաջինը՝ «ձախ կենտրոնի» յանցագործութիւնները. երկրորդը՝ ընկ. Բուխարինի հակակուսակցական վարքագիծը, որը իր արտայայտութիւնն էր գտել հացադուլ յայտարարելու մէջ: Եւ տատանուեց Բուխարինը. գուցէ՞ իսկապէս նա ինչ որ մի բանով վիրաւորել է կուսակցութեանը: Առանց սափրուելու, նիհարած, արտաքինով արդէն բանտարկեալ, նա մի կերպ եկաւ լիաժողովին: «Այդ ինչպէ՞ս քեզանից յօրինել», ջերմօրէն հարցրեց սիրելի Կոբան: «Բա ինչպէ՞ս վարուել, եթէ այդպիսի մեղադրանքներ կան վրաս: Ուզում էք կուսակցութիւնից վտարել…» Ստալինը ունքերը կիտեց զարմանքից. «Լսիր, ոչ ոք քեզ կուսակցութիւնից չի վտարի»: Եւ Բուխարինը հաւատաց, աշխուժացաւ, սիրով թողութիւն խնդրեց լիաժողովից և անմիջապէս հրաժարուեց հացադուլից (տանը նա ասաց կնոջը.- կտրիր ինձ համար մի կտոր երշիկ, Կոբան ասաց, որ կուսակցութիւնից ինձ չեն հանի): Սակայն լիաժողովի ընթացքում Կաղանովիչը և Մոլոտովը (այ քեզ համարձակութիւն, հաշւի չեն առնում Ստալինի խոստումը) անւանում էին Բուխարինին ֆաշիստական լրտես և պահանջում էին զնդակահարել նրան (ինչպիսի վկայութիւններից ենք զրկւում քանի որ խնայում ենք Մոլոտովի ծերութիւնը): Եւ կրկին Բուխարինը ապրեց յուսահատութիւն:

Իր վերջին օրերին նա սկսեց գրել «Նամակ ապագայ կենտրոնական կոմիտէին»: Անգիր արած, այդ նամակը պահպանուել էր և վերջին ժամանակներում յայտնի դարձաւ ամբողջ աշխարհին: Սակայն նրան չցնցեց, ինչպէս և չցնցեց ապագայ կենտրոնական կոմիտէին: Որովհետեւ այդ փայլուն գաղափարախօսը և սրամիտ տեսաբանը որոշել էր ապագայ սերունդներին հասցնել եւս մէկ ճիչ՝ վերականգնել իրեն կուսակցութեան մէջ (մեծ խայտառակութիւնով նա վճարեց իր այդ հաւատարմութեան համար): Եւ բացի դրանից, նա ասում էր, որ համաձայն է այն ամէնի հետ, ինչ կատարել էր մինչեւ 1937 թիւը: Այսինքն, նա համաձայն էր բոլոր այն կեղտոտ դատավարութիւնների հետ, որոնք ձեւակերպում էին Գուլագ տանող հոսքերը: Այդպէս, նա ստորագրեց այն փաստաթուղթը, որը ապացուցում էր, թէ ինքն էլ արժանի էր

իր ճակատագրին: Վերջապէս նա հասունացել էր կրտսեր **ռեժիսոր**ների և յուշարարների ձեռքը անցնելու համար: Այդ որսորդ, մարմնամարզիկ և առողջ տղամարդը յանձնուեց բեմադրողներին (կատակային մրցումների ժամանակ, Կենտկոմի անդամների աչքի առաջ, նա շատ անգամ Կոբային պառկեցնում էր մէջքի վրայ, և այդ էլ, ի հարկէ, Կոբան նրան չէր կարող ներել): Այդ աստիճանի քայքայուած մարդու համար այլեւս տանջամիջոցների կարիքը չկար: Մնում էր միայն հանդիպումը և խօսակցութիւնը Վիշինսկու հետ:

- Համաձա՞յն էք դուք, որ կուսակցութեան հանդէպ բոլոր տեսակի ընդդիմադրութիւնները, դա պայքար է կուսակցութեան դէմ:

- Ընդհանրապէս՝ այո, փաստօրէն՝ ոչ:

- Բայց պայքարը կուսակցութեան դէմ, չի՞ կարող չվերածուել պատերազմի:

- Տրամաբանօրէն՝ այո:

- Ուրեմն ընդդիմադիր գաղափարներ ունեցողները կարող էին վերջին հաշուով կուսակցութեան դէմ անել ամէն ինչ՝ սպանել, լրտեսել, ծախել հայրենիքը, և այլն:

- Բայց, ներեցէք, այդ ամէնը տեղի չի ունեցել:

- Բայց կարող էր ունենալ:

- Դէ, տեսականօրէն կարող էր… (չէ, որ տեսաբաններ էին):

- Բայց ձեզ համար բարձրագոյն չափանիշը մնո՞ւմ է կուսակցութեան շահը:

- Այո, այո, ի հարկէ:

- Ուրեմն մնում է միայն յանուն կուսակցութեան շահերի, որպէսզի այլեւս ընդդիմադրութիւն չառաջանայ, ընդունել, որ կատարուել է այն, ինչ կարող էր կատարուել: Չէ՞ որ կարող էր:

- Կարող էր:

- Մնում է միայն հնարաւորութիւնը ընդունել, իբրեւ իրականութիւն: Պարզապէս մի փոքր փիլիսոփայական անցում: Պայմանաւորուեցի՞նք: Եւ յետոյ հարկ չկայ ձեզ բացատրելու, որ եթէ դուք դատավարութեան ժամանակ նահանջէք և խօսէք այլ կերպ, դուք միայն կ՚օգնէք միջազգային բուրժուազիային և կը վնասէք կուսակցութեանը: Եւ դուք էլ, այդ դէպքում կը մեռնէք տանջալի մահով: Իսկ եթէ ամէն ինչ լաւ անցնի, մենք, ի հարկէ կը թողնենք ձեզ կենդանի՝ գաղտնի ձեւով կ՚ուղարկենք ձեզ Մոնտէ-Քրիստօ կղզին և այնտեղ դուք կը շարունակէք զբաղուել սոցիալիստական տնտեսութեան հարցերով:

- Բայց նախկին դատավարութիւններում, դուք, եթէ չեմ սխալւում գնդակահարում էիք:

- Դէ, ինչպէ՞ս դուք կարող էք համեմատել նրանց հետ: Եւ յետոյ մենք շատերին թողել ենք կենդանի, դա միայն թերթերն էին գրում:

Եւ այստեղ մենք լսում ենք նոյն երգը, որը ներկայ էր բոլոր դատավարութիւններում. չէ՞ որ մենք ձեզ հետ՝ կոմունիստներ ենք: Ինչպէ՞ս կարող էիք դուք դուրս գալ մեր դէմ: Չէ՞ որ մենք և դուք նոյն բանակից ենք:

Պատմական հասկացութիւնները շատ դանդաղ են աճում հասարակութեան մէջ:

Բայց երբ հասունանում են, այնքան պարզ և հասարակ են լինում: Ոչ 1922ին, և ոչ էլ 1937ին դատապարտուածները դեռ չէին հաստատւել այն տեսակէտի վրայ, որ այդ թուլացնող երգին, գլուխը բարձր պահած գոռային.- Ոչ, ՉԵՋ ՀԵՏ մենք յեղափոխականներ չենք, ոչ, ՉԵՋ ՀԵՏ մենք ռուսներ չենք, ոչ ՉԵՋ ՀԵՏ մենք կոմունիստներ չենք: Իսկ թւում է, թէ բաւական էր գոռալ և կը փլուէին թատրոնի բեմազարդարանքները, կը թափուէին դերակատարների երեսներից ներկերը և պահեստային մուտքով կը փախչէր ռեժիսորը, իսկ յուշարարները առնէտների նման կը նետուէին իրենց բները:

Պատմելով մի քանի դատավարութիւնների մասին, օրէնքի հասունացած ժամանակաշրջանում, Սոլժենիցինը յստակօրէն ցոյց է տալիս, որ այն ժամանակւայ իշխանութիւնը նմանւում էր մի աւազակախմբի, որի աւազակապետը Ստալինն էր:

Սակայն պատմելով ստալինեան զոհերի մասին, Սոլժենիցինը համարում է, որ զոհերի թիւը շատ աւելի շատ է, քան մենք կարող ենք հաշւել և պատկերացնել:

Անհնարին է առանց յուզմունքի կարդալ այն մի քանի տողերը, որը հեղինակը նւիրում է Վլասով ազգանունով մի շատ ազնիւ մարդու զաւակին: Այդ Վլասովին, բաց դատավարութեան ժամանակ որոշեցին գնդակահարութիւն: Վճիռը կարդացին ամբողջ ընտանիքի առաջ: Սոլժենիցինը գրում է.

«Թող այս փոքրիկ հատւածը նւիրւած լինի 8 տարեկան Զոյա Վլասովային: Նա շնչակտուր սիրում էր հօրը: Այլեւս նա չկարողացաւ սովորել դպրոցում (նրան վիրաւորում էին, ասելով, որ իր հայրը դաւաճան է: Իմ հայրը լաւն է,- ասում էր նա և կռւում վիրաւորողների հետ): Դատավարութիւնից յետոյ նա ապրեց միայն մէկ տարի (դրանից առաջ երբեք չէր հիւանդացել): Այդ տարւայ ընթացքում նա ՈՉ ՄԻ ԱՆԳԱՄ ՉՕԻՕԱՂԵՑ, քայլում էր միշտ գլուխը կախ և պառաւները գուշակում էին. «գետնին է նայում, շուտով կը մեռնի»: Նա մեռաւ ուղեղի բորբոքումից և մահանալուց առաջ անընդհատ գոռում էր. «Ո՞ւր է իմ հայրը, տուէք ինձ իմ հօրը»: Երբ մենք հաշւում ենք ճամբարներում ոչնչացւած միլիոններին, մենք մոռանում ենք բազմապատկել երկուսով, երեքով…»:

Նկարագրելով բանտարկեալների վիճակը, Սոլժենիցինը պատմում է այն մասին, թէ ինչպէս այդ խղճուկ դատապարտուածները զրկւած էին բոլոր տեսակի բողոքների իրաւունքից: Նրանց արգելւած էր գրել, նրանց գրւածները

տեղ չէին հասնում, տեղ հասածներին չէին պատասխանում: Բայց ամենասարսափելին այն էր, որ Գուլագի իշխանաւորները զրկել էին նրանց բողոքի վերջին հնարաւորութիւնից՝ հացադուլից: Սոլժենիցինը գրում է.

«Հացադուլի արդիւնաւէտութեան հանդէպ մեր միամիտ հաւատքը մենք ձեռք ենք բերել անցեալի փորձից և գրականութիւնից: Սակայն հացադուլը բարոյական զէնք է, նա ենթադրում է, որ բանտապահը դեռ լրիւ չի կորցրել խիղճը: Կամ էլ, որ բանտապահը վախենում է հասարակական կարծիքից: Միայն այդ դէպքում հացադուլը ոյժ ունի: Ցարական բանտապահները դեռ խակ էին. եթէ նրանց բանտարկեալը սովամահ էր լինում, նրանք անհանգըստանում ու մտահոգւում էին. փորձում էին օգնել և տեղափոխում էին հիւանդանոց: Օրինակները բազմաթիւ են, բայց նրանց չի նւիրւած այս գիրքը: Ծիծաղ է առաջացնում այն փաստը, որ Վալինտինովը, 12 օրւայ հացադուլից յետոյ ոչ միայն ստացաւ խիստ պայմանների որոշ մեղմացում այլ ԼՐԻԻ ԱԶԱՏԻԵՅ (և գնաց Շւեցարիա՝ Լենինի մօտ):

«Նոյնիսկ ամենախիստ Օրլովի բանտում հացադուլ յայտարարողները միշտ յաղթում էին: Նրանք 1912 թւականին պարտադրեցին մեղմացնել խստութիւնները, իսկ 1913 թւականին ձեռք բերեցին միասնական զբօսանքների իրաւունք, այն էլ խստութիւններից այնքան զուրկ, որ նրանց յաջողւեց բանտից դուրս ուղարկել **«Կոչ՝ ռուս ժողովրդին»** թռուցիկը (և դա կենտրոնական բանտից), որը ՀՐԱՏԱՐԱԿԻԵՅ (պարզապէս մարդու աչքերը ճակատին են թռչում, գժւե՞լ ենք, ի՞նչ է) 1914 թւականին **«Բանտերի և աքսորավայրերի լրաբերի»** առաջին համարում (իսկ այս լրաբերի գոյութիւնը միայն ինչ արժէ, գուցէ փորձենք մենք էլ հրատարակել): 1914 թւին ընդամէնը հնգօրեայ հացադուլի շնորհիւ, ճիշտ է առանց ջրի, Ցերժինսկիի և նրա չորս ընկերների բոլոր պահանջները բաւարարւեցին: Այն ժամանակ, բացի սովի տանջանքներից, հացադուլը ոչ մի վտանգ չի ներկայացնում բանտարկեալի համար: Նրան հացադուլի համար չէին ծեծում, չէին աւելացնում բանտարկութեան ժամկէտը և ի հարկէ չէին զնդակահարում: (Այդ ամէնը ընդունւեց աւելի ուշ): 1905 թւի յեղափոխութեան ժամանակ և յեղափոխութիւնից յետոյ, բանտարկեալները իրենց այնքան էին բանտի տէր ու տիրական զգում, որ արդէն հացադուլ էլ չէին յայտարարում, այլ, կամ ոչնչացնում էին պետական գոյքը, կամ էլ գլխի էին ընկել գործադուլ յայտարարելու, թէպէտ թւում է, որ բանտարկեալի համար դա իմաստ անգամ չունի: Բայց Նիկոլաեւ քաղաքում 1906 թւին տեղական բանտի 197 բանտարկեալներ յայտարարեցին գործադուլ, որը համաձայնեցրել էին դրսի հետ: Դրսում, նրանց գործադուլի կապակցութեամբ արձակւեցին թռուցիկներ և ամէն օր բանտի դռների առաջ կազմակերպւում էին ժողովներ: Դրանից յետոյ, բոլորը միասին, կէսը դրսից, կէսը ներսից երգում էին յեղափո-

խական երգեր: Այդպէս շարունակուեց 8 օր առանց արգելքների, չէ որ յետ յեղափոխական ճնշումների ժամանակաշրջանն էր: 9րդ օրը բանտարկեալների բոլոր պահանջները բաւարարուեցին: Նման դէպքեր եղան նաեւ Օդեսայում, Խերսոնում, Էլիզաւետգրադում և մի քանի ուրիշ տեղ: Այ թէ որքա՞ն հեշտ էր այն ժամանակ հասնել յաղթանակի»:

Հետաքրքիր կը լինէր համեմատել, թէ ինչպէս էին ընթանում հացադուլները ժամանակաւոր կառավարութեան ժամանակ: Բայց այն մի քանի բոլշեւիկները, որ մի քանի շաբաթ նստեցին (Կամենեւը, Տրոցկին մի քիչ աւել Ռասկոլնիկովը) երեւի պատճառ չունէին հացադուլի համար:

20ական թուականներին հացադուլների աշխոյժ պատկերը մոռայլանում է: Այդ հանրայայտ և իրեն արդարացրած պայքարի ձեւը ի հարկէ որդեգրում են ոչ միայն «քաղաքականները», այլ նոյնիսկ պատահական բանտարկեալները: Սակայն բթացել էին նախկինում այդքան սուր նետերը, կամ նրանք դեռ դուրս չթռած արդէն յափշտակւում են երկաթեայ ձեռքով:

Ճիշտ է դեռ ընդունւում են գրաւոր դիմումներ հացադուլի մասին, բայց մշակւել են նոր տհաճ օրէնքներ՝ հացադուլ յայտարարողը պէտք է մեկուսացւի յատուկ մենախուցում. հացադուլի մասին պէտք չէ իմանան ոչ միայն դրսում, ոչ միայն հարեւան խուցերում, այլ նոյնիսկ այն խուցում, որտեղ մինչեւ այսօր նստած էր բանտարկեալը՝ չէ որ դա էլ հասարակութիւն է և ուրեմն նրանցից էլ պէտք է կտրել:

Այդ նորամուծութիւնը հիմնաւորւում էր նրանով, որ վարչութիւնը պէտք է համոզւած լինի, թէ հացադուլը անց է կացւում ազնուօրէն, որ խուցերի մնացած բանտարկեալները նրան չեն կերակրում: Իսկ ինչպէս էին ստուգում առաջ՝ միայն ազնիւ խօսքերով:

Այնուամենայնիւ այդ տարիներին հացադուլով դեռ կարելի էր որոշ արդիւնքների հասնել:

Սկսած 30ական թուականներից հացադուլի վերաբերմամբ կատարւում է պետական մտքի նոր շրջադարձ: Նոյնիսկ այս թուլացւած հացադուլի ձեւերը պետութեան ինչի՞ն են պէտք: Աւելի լաւ չէ՞ր, որ բանտարկեալը զրկւած լինի ընդհանրապէս սեփական կամքից և սեփական որոշումներից – նրա փոխարէն մտածում և որոշում է վարչութիւնը:

Նոր հասարակարգում կարող են այդպիսի բանտարկեալներ գոյութիւն ունենալ: Եւ ահա 30ական թուականներին հացադուլ յայտարարելու դիմումները արգելւեցին: «Հացադուլը որպէս պայքարի ձեւ այլեւս գոյութիւն չունի»,- յայտարարեցին 1932 թւականին Եկատերինա Օլիցկայային: Իշխանութիւնը վերացրել է ձեր հացադուլը՝ և վերջ: Բայց Օլիցկայան չենթարկւեց և սկսեց հացադուլը:

Նրան մեկուսացրեցին և թողեցին, որ 15 օր նա շարունակի իր հացադուլը: Յետոյ նրան տեղափոխեցին հիւանդանոց և գայթակղելու համար նրա առջեւ դրեցին կաթ և հաց: Սակայն նա դիմացաւ և 19րդ օրը յաղթեց՝ ստացաւ զբօսանքի իրաւունք, թերթեր և օգնութիւն քաղաքական Կարմիր Խաչից (այ թէ որքան պէտք էր տառապել, ստանալու համար այդ օրինական բարիքները):

Սակայն հացադուլը չնչին էր և շատ թանկ գնով ձեռք բերուած: Օլիցկայան այդ անմիտ հացադուլներից յիշում էր նաեւ մի քանի ուրիշ դէպքեր: Օրինակ տնից ուղարկած ուտեստեղէնը ստանալու համար մարդիկ սոված էին մնում 20 օր շարունակ: Արժէ՞ր արդեօք: Չէ՞ որ նոր ձեւի բանտում կորցրած առողջութիւնը վերականգնելը անհնարին էր: Աղանդաւոր Կոլոսովը 25 օրւայ հացադուլից յետոյ վախճանուեց:

Նոր ձեւի բանտում հացադուլի դէմ օգտագործւում էին հետեւեալ հզօր միջոցները. առաջինը՝ վարչութեան դիմացկունութիւնը. երկրորդը՝ խաբեբայութիւնը: Դա նրանց յաջողւում էր, որովհետեւ բացակայում էին աշխարհով մէկ լուրեր տարածող թղթակիցները: 1933 թւականին Խաբարովսկի բանտում 17 օր սովեց Չեփոտարեովը, պահանջելով, որ յայտնեն կնոջը, թէ ինքը որտեղ է գտնւում: 17 օրից յետոյ նրա մօտ եկան բարձր պաշտօնեաներ և ցոյց տուեցին հեռագրի պատճէն, որը իբր թէ ուղարկել են կնոջը: Դրանով նրան համոզեցին, որ կերակուր ընդունի: Իսկ պատճէնը կեղծ էր: Երրորդը՝ ստիպողական արհեստական սնունդ: Այս միջոցը անկասկած ընդօրինակւած էր գազանանոցից: Այդ գործողութիւնը շատ է նմանւում բռնաբարութեանը, և դա այդպէս էլ կայ. չորս աժդահա տղամարդ յարձակւում են մի թոյլ մարդու վրայ, զոռով բացում են բերանը և խողովակի միջոցով կերակուրը մղում են ստամոքսի ներսը: Չորրորդ՝ նոր տեսակէտ հացադուլների վերաբերեալ. հացադուլը հակայեղափոխական գործունէութեան շարունակութիւնն է և պատժւում է բանտարկութեան ժամկէտի աւելացումով:

Մօտաւորապէս 1937 թւականի կէսերին ստացւեց նոր հրաման. բանտի ղեկավարութիւնը այլեւս պատասխանատու չէր հացադուլից մահացած անձերի համար: Վերացաւ բանտապահի վերջին անձնական պատասխանատուութիւնը (այլեւս Չեփոտարեովի մօտ պաշտօնեաներ չէին գայ): Աւելին, որպէսզի քննիչը չյուզւի, առաջարկւեց հացադուլի օրերը ջնջել յետաքննութեան ժամկէտից: Այսինքն ոչ միայն համարել, որ հացադուլը չի եղել, այլ նոյնիսկ համարել, որ այդ օրերին բանտարկեալը ազատ էր արձակւած: Դա նշանակում էր՝ ուզում ես սատկել՝ սատկի: Այդպէս, **նոր** ձեւի բանտը յաղթահարեց բուրժուական հացադուլին:

Նոյնիսկ ուժեղ կամք ունեցողների համար բանտի մեքենայի դէմ պայքարելու ոչ մի ճանապարհ չմնաց, բացի ինքնասպանութիւնից: Բայց պայքա՞ր է

արդեօք ինքնասպանութիւնը: Էսէռուհի Օլիցկայան համարում է, որ հացադուլը, իբրեւ պայքարի միջոց շատ արժէքազրկեցին տրոցկիստները և կոմունիստները, որոնք հեշտութեամբ յայտարարում էին այն և հեշտութեամբ էլ հրաժարւում նրանից: Նոյնիսկ Սմիրնովը,- ասում է նա,- նրանց առաջնորդը, մոսկովեան դատավարութիւնից առաջ չորս օր սովելուց յետոյ յանձնւեց: Ասում են, թէ մինչեւ 1936 թւականը տրոցկիստները սկզբունքօրէն հրաժարւել էին խորհրդային իշխանութեան դէմ հացադուլ յայտարարելուց և երբեք չէին միանում սովող **էսէռներին**: Թող պատմութիւնը դատի, թէ որքանով է ճիշտ այդ մեղադրանքը:

Անցնում էին տասնամեակներ և ժամանակը կատարում էր իր գործը: Հացադուլը՝ բանտարկեալի առաջին և ամենաբնական իրաւունքը, արդէն հէնց իրենց բանտարկեալներին թւում էր անիմաստ և անհասկանալի մի գործ: Այդ միջոցին դիմելու ցանկացողների թիւը աւելի ու աւելի էր պակասում: Իսկ բանտապահների համար դա արդէն յիմարութիւն էր և կարգերի աններելի խախտում:

Երբ 1960 թւականին Գենադիյ Սմելովը լենինգրադեան բանտում երկարատեւ հացադուլ յայտարարեց, բանտ եկաւ դատախազը և հարցրեց.- «Ինչո՞ւ համար էք դուք ձեզ տանջում»: Սմելովը պատասխանեց,- «Ինձ համար ճշմարտութիւնը կեանքից թանկ է»: Այդ նախադասութիւնը այնքան զարմացրեց դատախազին իր անմտութիւնով, որ յաջորդ օրը Սմելովին տեղափոխեցին յատուկ հիւանդանոց (գժանոց) և բժիշկը ասաց.- «Կասկած չկայ, որ դուք **շիզոֆրենիկ** էք»:

Սոլժենիցինը համարում է, որ քաղաքական բանտարկեալների միասնութեան բացակայութիւնը բոլորովին անհնարին է դարձնում պայքարը թէ՛ դրսում և թէ բանտում: Ստալինը սոցիալիզմ կառուցելիս ամենաշատը վախենում էր սոցիալիստներից: Իսկ նրանք, այդ սոցիալիստները, բաժանւած ձախերի և աջերի, **կադէտների** և **էսէռների**, **բոլշեւիկների** և **մենշեւիկների** պատրաստ էին կառչել մէկը միւսի կոկորդից, նոյնիսկ բանտի ներսում: Տրոցկիստները իրենց ուղղութիւնը համարում էին աւելի բարձր և ատում էին սոցիալիստներին, համարելով նրանց դաւաճաններ և ուրեմն արժանի պատիժ կրողներ: Էսէռները պայքարում էին մենակ, իսկ կոմունիստները ընդհանրապէս չէին պայքարում (ինչպէս կարելի էր պայքարել սեփական իշխանութեան դէմ):

Իսկ բեխաւոր **ռեժիսորը** շարունակում էր իր բեմադրութիւնները:

«Արշիպելագ Գուլագ» գրքի երկրորդ մասում հեղինակը պատմում է այն անտանելի տառապանքների մասին, որը բաժին է ընկնում բանտարկեալին բանտից դէպի ճամբար տանող ճանապարհի վրայ: Չկների նման իրար վրայ

թափւած տանում էին նաւերը բանտարկեալներին Գուլագ: Հնարաւոր չէր շարժւել, հնարաւոր չէր շնչել և միզում էին մէկը միւսի վրայ: Իսկ նաւերից դուրս թափւած, Դեկտեմբերի սիբիրեան ցրտերին, նրանց ստիպում էին շարունակել ճանապարհը ոտքով: Նրանց արգելւած էր կանգնել, անգամ անձնական կարիքների համար: «Թուլացած յետաքննութիւնից,- գրում է Սոլժենիցինը,- քաղցած և ցրտահարւած, դուք այլեւս ի վիճակի չէք զսպել ձեզ, մանաւանդ կանայք: Յետոյ ի՞նչ… Միայն ձիերն են, որ անձնական կարիքների համար կանգ առնելու և ոտքերը բաժանելու անհրաժեշտութիւնը ունեն. միայն շներն են, որ ծառի կամ պատի մօտ ոտքը բարձրացնելու կարիքը ունեն, իսկ դուք մարդիկ էք՝ կարող էք և քայլելու ժամանակ… ումի՞ց էք քաշւում ձեր հայրենիքում: Ճանապարհին կը չորանայ: … Վերա Կորնէեւան պպզեց և մի քայլ յետ մնաց՝ անմիջապէս պահապանը շանը բաց թողեց նրա վրայ, և շունը շորերի վրայից ատամները խոթեց նրա յետոյքը: Իսկ մի ուզբէկ վայր ընկաւ և նրան սկսեցին հարւածել հրացանի կոթով: Ոչինչ՝ այդ տեսարանը չի նկարահանւի **«Դէյլի Էկսպրէս»**ի համար: Իսկ պահակապետին ոչ ոք չի դատի մինչեւ նրա կեանքի վերջը»: Այդ վիճակում բանտարկեալը երազում էր այն «սեւ ագռաւ» կոչւող մեքենաների մասին, որոնցով նրանց տեղափոխում էին յետաքննութեան ժամանակ:

Այդ մեքենաների մասին Սոլժենիցինը գրում է.

«Ագռաւիկները մենք ժառանգեցինք անցեալից: Բալզակի կողմից նկարագրւած ծածկած կառքերը՝ ինչո՞վ ագռաւիկ չէին: Միայն աւելի դանդաղ էին և ոչ այդքան լեփ լեցուն: Ճիշտ է, 20ական թւականներին բանտարկեալներին դեռ քշում էին ոտքով Լենինգրադի փողոցներով, բայց տեխնիկական նորութիւնները շուտով հասան Գուլագին: Նա կոպիտ «սեւ ագռաւ» անունը փոխարինեց քնքուշ «ագռաւիկ»ով: Մեր դար ու փոս փողոցներում ագռաւիկները դուրս եկան առաջին բեռնատար մեքենաների հետ: Նրանք վատ էին պատրաստւած և ենթակայ էին ուժեղ ցնցումների, բայց և բանտարկեալներն էլ արդէն ապակուց չէին: Բայց յուսալիութիւնը արդէն 1927 թւականին սքանչելի էր՝ ոչ մի անցք, ոչ մի լուսաւորութիւն. արդէն դժւար էր շնչել ու շարժւել: Եւ արդէն այն ժամանակ ագռաւիկները լեփ լեցուն էին: Դա ի հարկէ տրւում էր ոչ թէ մարդկանց տանջելու համար՝ պարզապէս անիւների պակաս էր զգացւում: Երկար տարիներ այդ ագռաւիկները սեւ, կամ մոխրագոյն էին և բոլորը գիտէին, որ սրանք բանտի մեքենաներ էին: Բայց պատերազմից յետոյ, մայրաքաղաքներում ագռաւիկները սկսեցին ներկւել ուրախ գոյներով և դրսից վրան գրւում էր «հաց» (և իսկապէս բանտարկեալները շինարարութեան հացն էին), «միս» (աւելի ճիշտ կը լինէր գրել՝ ոսկորներ), կամ «խմէք խորհրդային շամպանսկին»: Ագռաւիկների մէջ հանդիպում ես գողերի հետ, որոնք մի քանի րոպէում

խլում են քաղաքական բանտարկեալի ամբողջ ունեցւածքը։ Դիմադրել իմաստ չունի, որովհետեւ նրանք անմիջապէս դանակը սիրտդ կը խրեն։ Եւ նրանց չեն դատի, որովհետեւ գողերը պետութեան մերձաւորներն են, իսկ քաղաքականները՝ նրա թշնամիները։ Ուրեմն պարզ է, որ պետութիւնը չի կարող կանգնել վերջինների կողքին։

Գնդապետ Լունինը 1946 թւականին բանտում պատմում էր, թէ ինչպէս Մարտի 8ի օրը, Մոսկւայում ագռաւիկի մէջ, գողերը կէս ժամւայ ընթացքում հերթով բռնաբարեցին մի երիտասարդ աղջկայ։ Եւ դա կատարւեց մնացածների աչքի առջեւ, որոնք մատը մատին չտւեցին օգնութեան համար։ Այդ աղջիկը նոյն այդ օրւայ առաւօտեան, դեռ իբրեւ ազատ քաղաքացի եկաւ դատարան, ու նրան կանչել էին աշխատանքը ինքնակամ թողնելու համար։ Այդ մեղադրանքն էլ շինծու էր։ Դա կազմակերպել էր հիմնարկի պետը այն բանի համար, որ աղջիկը հրաժարւել էր այդ պետի հետ անկողին մտնելուց։ Ագռաւիկ մտնելուց կէս ժամ առաջ նա ստացաւ 5 տարի բանտարկութիւն և հիմա, օրը ցերեկով Մոսկւայի կենտրոնում, Սագովի պողոտայի վրայ (խմէք խորհրդային շամպանսկին) այդ աղջկան դարձրեցին ճամբարի պոռնիկ։ Դա ո՞վ արեց՝ գողե՞րը, թէ բանտի ղեկավարութիւնը, կամ գուցէ նրա այն նախկին պե՞տը։ Բռնաբարւած աղջկան գողերը հէնց տեղում թալանեցին։ Նրա վրայից հանեցին գեղեցիկ կօշիկները, որոնցով նա ուզում էր ազդել դատաւորների վրայ։ Վաճառեցին կողոպուտը պահակներին, որոնք կանգնեցրին ագռաւիկը և գնեցին գողերի համար օղի։ Այդպիսով գողերը դեռ լակեցին էլ աղջկայ հաշւին։ Երբ հասան Տագանկայի բանտը, աղջիկը արտասւած և շնչակտուր բողոքեց բանտապետին։ Սպան լսեց, յօրանջեց և ասաց՝ «Պետութիւնը չի կարող ամէն մէկիդ համար առանձին աւտոմեքենայ յատկացնել։ Այդպիսի հնարաւորութիւններ մենք չունենք։ Իսկ ինչ մնում է ձեր սեփական իրերին, ապա բանտում սեփականութիւն չկայ, բանտում կոմունիզմ է»։ Այս տրամաբանութեամբ առաջ քաղաքականները նահանջում էին՝ «դեհ, եթէ կոմունիզմ է, առարկութիւն չունենք։ Չէ՞ որ նրանց ամբողջ կեանքը նւիրւած էր կոմունիզմին»։

Իր գրքի առաջին հատորի վերջում, Սոլժենիցինը պատմում է, թէ ինչպէս բանտում ինքը հանդիպեց նոր սերնդի հետ, որը բոլորովին իրենց նման չէր և որը մտածում էր նոր չափանիշներով։ Նա գրում է.

«Պատերազմը աւարտւած էր և արդէն կարելի էր թոյլ տալ շռայլութիւն և մաքրագործել երիտասարդութիւնը, նրանց կարիքը բանակը արդէն չունէր։ 1944-45 թւականներին բանտի միջոցով անցաւ, այսպէս կոչւած «դեմոկրատական կուսակցութիւնը»։ Նա կազմւած էր մօտաւորապէս 50 տղաներից, ունէր իր կանոնադրութիւնը և կուսակցական տոմսերը։ Տարիքով ամենամեծը, Մոսկւայի դպրոցի 10րդ դասարանի մի աշակերտ կուսակցութեան «գլխա-

տր քարտուղարն էր»: Կային նաեւ հատ ու կենտ ուսանողներ: Թւում էր, թէ ես ինքս ծեր չեմ, բայց սրանք շատ աւելի երիտասարդ էին: Եւ ինչպէս աննկատ նրանք աճեցին: Մինչեւ իմ սերունդը չորս տարի պատերազմում էր ճակատում, այստեղ աճել էր եւս մէկ սերունդ: Կարծես երէկ էր, որ մենք քայլում էինք համալսարանի միջանցքներով, համարելով մեզ ամէնից երիտասարդները և խելացիները երկրում և աշխարհում:

«Եւ յանկարծ բանտում մեզ մօտենում են գունատ և հպարտ երիտասարդներ և մենք ապշած իմանում ենք, որ ամէնից երիտասարդները և խելօքները ոչ թէ մենք ենք, այլ նրանք: Ես չէի նեղւում դրանից, ես արդէն այն ժամանակ ուրախ էի մի քիչ նրանց համար տեղ զիջելու: Ինձ ծանօթ էր նրանց կրքոտ ցանկութիւնը ամէն ինչ իմանալու, ամէն ինչի վերաբերեալ վիճելու: Ես հասկանում էի, թէ որքանով նրանք հպարտ են, որ ընտրել են այդ ճակատագիրը և որ չեն զղջում: Բանտում ես հանդիպեցի Բորիս Գամմերովին: Այդ գունատ և հրեայի նուրբ դէմքով երիտասարդը ուղղակի երազում էր ինձ հետ վէճի բռնւել: Մեր խօսակցութիւնը կենսագրութիւններից անցաւ քաղաքականութեանը: Չեմ յիշում ինչ կապակցութեամբ, ես յիշատակեցի արդէն հանգուցեալ Ռուզվելտի աղօթքներից մէկը, որը հրատարակել էին մեր թերթերը: Եւ ի հարկէ պարզ էր, որ ես այն գնահատեցի իբրեւ կեղծ բարեպաշտութիւն: Եւ յանկարծ երիտասարդի ունքերը վեր բարձրացան և նա հարցրեց. «Ինչո՞ւ, ինչո՞ւ դուք չէք կարողանում ենթադրել, որ պետական գործիչը կարող է անկեղծօրէն հաւատալ Աստծուն»: Նա այսքան միայն ասեց: Բայց ո՞ր կողմից էր հարւածը: Լսել այդպիսի խօսքեր 1923 թւի ծնւածից՝ շշմեցուցիչ էր: Ես կարող էի պատասխանել նրան համոզեցուցիչ արտայայտութիւններով, բայց բանտում համոզմունքներս խախտւել էին. և յետոյ կայ մեր մէջ համոզմունքներից անկախ մի ինչ որ մաքուր զգացմունք, որը միշտ զգուշացնում է, որ սա համոզմունք չէ, այլ ուրիշների կողմից մեր մէջ դրւած մի գաղափար: Եւ ես չկարողացայ նրան առարկել, ես միայն հարցրեցի. «Իսկ դուք հաւատո՞ւմ էք Աստծուն»: «Ի հարկէ», հանգիստ պատասխանեց նա: Ի հա՞րկէ: Այո, այո՝ կոմերիտական երիտասարդութիւնը արդէն ամէն տեղ աչքաբաց է դարձել:

«Եւ ԿԳԲն առաջինը նկատեց այդ: Չնայած որ Բորիս Գամմերովը շատ երիտասարդ էր, նա արդէն հասցրել էր ոչ միայն մասնակցել պատերազմին, այլ նոյնիսկ վիրաւորւել: Գամմերովը, իբրեւ հաշմանդամ զօրացրւել էր բանակից և ընդունւել Մոսկւայի համալսարանի կենսաբանական **ֆակուլտետը**: Մտածող ուսանողները հաւաքւում էին միասին և վիճում ապագայի մասին: Բայց նրանց այդ մասին ոչ ոք չէր խնդրել և ահա օրգանների փորձւած աչքը բոլորի մէջ նկատեց երեք հոգու և երեքին էլ ձերբակալեց: Գամմերովի հայրը 37 թւականին գնդակահարւած էր և տղան գնում էր նրա ճանապարհով: Հար-

ցաքննութեան ժամանակ նա մեծ ոգեւորութեամբ կարդաց իր բանաստեղծութիւնները, որոնք դժբախտաբար չեմ յիշում։ Ինձ վիճակւեց ծանօթանալ այդ երեքի հետ էլ։ Նրանցից մէկը՝ Վլաչիսլաւը, որին համարում էին ենթակայ կամք ունեցողի, հարցաքննութեան ժամանակ կուչ եկաւ և սպասում էր, որ իր պատուարժան հայրը մի կերպ իրեն բանտից ազատի։ Երրորդը Գէորգիյ Ինգալն էր, որը իր ուսուցչի թաղմանը ճառեց, ասելով թէ հանգուցեալին հալածասպան արեցին և դրա համար շալակեցին 8 տարի։ Ես բախւեցի նրանց տեսակէտների հետ և այդ բախումը ինձ համար բաւականին ծանր էր։ Այն ժամանակ ես վարակւած էի այն աշխարհահայեացքով, որի դէպքում ընդունել կամ գնահատել նոր երեւոյթը անհնարին է առանց արմատացած գաղափարներից օգտւելու։

«Չեմ յիշում, որ նրանք քննադատէին Մարքսին։ Բայց յիշում եմ, թէ ինչպէս էին նրանք յարձակւում Տոլստոյի վրայ և այն էլ ո՞ր կողմից։ Տոլստոյը ժխտում էր եկեղեցին, բայց նա հաշւի չէր առնում նրա կազմակերպչական դերը։ Նա ժխտում էր Աստւածաշնչի ուսմունքը, բայց ժամանակակից գիտութեան տեսանկիւնից այստեղ չկայ ոչ մի հակասութիւն։ Նա ժխտում էր պետութիւնը, բայց առանց պետութեան քաոս կ'առաջանայ։ Նա քարոզում էր մտաւոր և ֆիզիքական աշխատանքի միաձուլում մէկ մարդու մէջ, բայց դա ընդունակութիւնների անմիտ հարթեցնում է։ Եւ վերջապէս, ինչպէս մենք տեսնում ենք Ստալինի օրինակով, պատմական դէմքը կարող է լինել գերհզօր, իսկ Տոլստոյը դա ծաղրի էր ենթարկում (երկար տարիներ ես էլ համարում էի, որ Ստալինը խորհրդային պետութեան զարգացմանը տւեց ճակատագրական ուղղութիւն։ Բայց ահա Ստալինը մահացաւ և որքանո՞վ նաւը փոխեց իր ուղղութիւնը։ Ստալինի սեփական ներդրումը միայն ինքնագովաբանութիւններ, կոպտութիւն և բթամտութիւն էր, իսկ մնացածում նա առանց շեղւելու գնում էր իրենից առաջ ցոյց տւած ուղղութեամբ)։

«Տղաները կարդում էին ինձ իրենց բանաստեղծութիւնները և ես տեսնում էի, թէ ինչ մեծ հաւատք ունէին նրանք ապագայի հանդէպ։ Մենք պարծենում ենք բանտարկութիւնով,- ասում էին նրանք։ 1945 թւականին բանտարկեալները, այն հների նման, գլուխները բարձր գնում էին սպանդանոց։ Աստւած իմ, միթէ այս ամէնը մեր կողքից անցաւ աննկատելիօրէն։ Երբ մենք պետութեան հիմքերի ցեխն էինք շաղախում, ռազմաճակատում հրանօթների կրակի տակ յաղթանակ էինք կերտում, ծնւեց մի նոր երիտասարդութիւն և շարժւեց դէպի ԱՅՆՏԵՂ։ Այնտեղ, ուր մենք երբեք չէինք համարձակուի գնալ, քանզի այդպէս էինք դաստիարակւած։

«Մեր սերունդը կը վերադառնայ, կը յանձնի զէնքերը և շքանշանները պլպլացնելով կը պատմի պատմութիւններ՝ մարտական կեանքից, իսկ մեր կրտսեր եղբայրները արհամարհանքով կը ծաղրեն, այ դուք **տմպռներ**…»:

Ծալում եմ Արշիպելագ Գուլագի վերջին էջը տարօրինակ զգացումներով: Այս ամէնը ես գիտէի: Փոքրուց տեսել էի, է՛ւ բանտարկութիւններ, է՛ւ աքսորներ, ականատեսներից լսել էի բանտի պայմանների մասին, գիտէի ստալինեան արքունիքի անարդարութիւնների և դաժանութիւնների մասին, կարդացել էի Խրուշչովի փակ նամակը: Բայց ի՞նչը ինձ թւաց այդքան նոր: Ես կրկին թերթեցի Գուլագի էջերը և հասկացայ:

Սոլժենիցինը վերջնականապէս համոզեց ինձ, որ բոլոր այս վայրենութիւնները ՍԽԱԼՆԵՐ ՉԷԻՆ, այլ գաղափարախօսութիւնից բխող ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹԻՒՆՆԵՐ: Նրանք սկսեցին Լենինից (խնայենք Մարքսին) շարունակուեցին Ստալինով և շարունակւում են մինչեւ այսօր:

1974

ԻՆՔՆԱՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻ՞ՒՆ, ԹԷ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱԾԵԼԱԿԵՐՊ

(ՄԷԿ ԿԵՂՏՈՏ ՉԱՅՆ ԽՈՐՀՐԴ. ՎՐԱՍՏԱՆԻՑ)

Է. Յովհաննիսեան

«Սամիզդատ» ռուսական բառը, որը նշանակում է ինքնահրատարակչութիւն, այսօր յայտնի է ամբողջ աշխարհին: Բոլոր այն գրութիւնները, որոնք արգելած են խորհրդային իշխանաւորների կողմից, որոնց համար պետութիւնը հետապնդում, բանտարկում և պատժում է հեղինակներին, որոնք ձեռագրում, մեքենագրում և տարածում են առանց հրատարակելու հայրենիքում, բոլոր այդ գրութիւնները մտնում են «սամիզդատ» հասկացութեան մէջ: «Սամիզդատ»ի միջոցով աշխարհին յայտնի դարձան ե՛ւ Սոլժենիցինի փայլուն աշխատութիւնների մեծ մասը, ե՛ւ Սախարովի քաղաքական միտումները, ե՛ւ Ղարաբաղի հայերի բողոքը, ե՛ւ առանձին անձերի կոչերը Խորհրդային Միութիւնում կատարուող անարդարութիւնների վերաբերեալ: Պարզ է, որ պետութեան կողմից արգելած այդ «սամիզդատ»եան գործունէութիւնը պահանջում է ազնուութիւն, արիութիւն և անձնազոհութիւն:

Սակայն վերջերս արտասահմանում յայտնի դարձաւ մի գրութիւն, որը ծնունդ էր առել Խորհրդային Վրաստանում և որը թէպէտեւ որակուրեց որպէս «սամիզդատ», իմ կարծիքով ամենեւին էլ «սամիզդատ» չէ: Ես անձամբ հրաժարւում եմ անուանել այդ փաստաթուղթը «սամիզդատ», քանզի նա լրիւ համընկնում է Խորհրդային Վրաստանի պետական և հասարակական մտքի հետ և այդ իսկ պատճառով չի պահանջում ոչ արիութիւն, ոչ անձնազոհութիւն և ոչ էլ պատմազիտական ազնուութիւն: Ես նոյնիսկ կարծում եմ, որ այդ գրութիւնը, որը գրւած է ռուսերէնով (տարօրինակ փաստ՝ Վրաստանի համար), հէնց Վրաստանի Անվտանգութեան Կոմիտէի աշխատակիցների ձեռքով է դուրս եկել արտասահման: Գրութեան հեղինակը կամ հեղինակները մի քանի էջերի վրայ շարադրում են իրենց հակառուսական և հակասովետական տրամադրութիւնները (որպէսզի փաստաթուղթը «սամիզդատ» համարւի) և ապա անցնում են նիւթի բուն մասին: Իսկ այդ հիմնական մասը մենք ենք՝ հայերս: Եւ եթէ վրաց ժողովուրդը շատ է ուզում, որ իր «ժողովրդի» ծոցից ծնունդ առած գրութիւնը կոչւի «սամիզդատ», ապա այն պէտք է կոչուի Խորհրդային Վրաստանի կառա-

վարութեան «սամիզդատ», որովհետեւ գրութեան մէջ արտայայտուած մտքերը չեն հակասում պետական մտածելակերպին, բայց ահաւոր կերպով հակասում են այն պաշտօնական ճառերին, որոնք արտասանում են պետութեան ներկայացուցիչների կողմից այս կամ այն «եղբայրական» տօնակատարութիւնների ժամանակ: Բայց նախ և առաջ ներկայացնեմ ընթերցողին այդ գրութիւնը, որը իմ խնդրանքով թարգմանեց ռուսերէնից Ռ. Յակոբեանը:

ՄՈՍԿՒԱՅԻ ԵՒ ՎՐԱՍՏԱՆԻ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ (մինչեւ 1917 թ. և յետոյ) (Թբիլիսի), 1974 թ. (ոչ շուտ փետրուարի 6ից)

Վրաստանը վաղուց հանդիսանում էր ուղղափառ Ռուսաստանի համար բարեկամական երկիր: 10րդ դարից դա միակ քրիստոնէական պետութիւնն էր Կովկասում, իսկ 14րդ դարից, Բիւզանդիոնի անկումից յետոյ՝ միակ քրիստոնէական պետութիւնը հարաւ-արեւելքում, որը կատաղի մարտեր էր վարում իրանա-թուրքական զաւթիչների դէմ: Ամբողջ վրացական ժողովրդի համար քրիստոնէութիւնը հին ժամանակներից եղել է կենսական նշանակութիւն ունեցող գործ: «Քրիստոնէական հաւատք» և «Վրաստան» հասկացութիւնները նոյնացել էին (մուսուլմանացած Իբերը վրացի չէր համարւում): Իրանի և Թուրքիայի դէմ բոլոր պաշտպանողական պատերազմները վարւում էին քրիստոնէական հաւատքը պահպանելու համար:

Դրութիւնը վատացաւ Բիւզանդիոնի անկումից յետոյ և Հիւսիսային Կովկասի Թամերլանի կողմից մուսուլմանացումից յետոյ: Վրացական պետութիւնը և հայկական գաւառները ընկան մուսուլմանական պետութիւնների և մարզերի օղակի մէջ: Այդ պատճառով էլ, 17րդ դարից սկսած վրացական թագաւորները սկսեցին ուղղափառ Ռուսաստանից ռազմական օգնութիւն և պաշտպանութիւն խնդրել, որովհետեւ սեփական ուժերը սպառւեցին: Սկզբում ռուսական թագաւորները սահմանափակւում էին խոստումներով և բարի ցանկութիւններով, սակայն շուտով գործը հասաւ ե՛ւ ռազմական գործողութիւններին:

Համառուսաստանեան թագաւոր Պետրոս Առաջինը սկսեց բանակցութիւններ վարել վրացական թագաւոր Վախտանգ Զ.ի և հայկական կաթողիկոս Եսայիի հետ Պարսկաստանի դէմ համատեղ պայքարելու համար (ընդդրում, հետաքրքրում էին նրան Ռուսաստանի առեւտրական գործերը, այլ ոչ թէ Հայաստանի և Վրաստանի ճակատագիրը):

Իր դեսպան Բորիս Թուրքեստանովի միջոցով նա համոզեց Վախտանգին յարձակուելու Պարսկաստանի վրայ և խոստացաւ օգնութեան հասնել Շամխորը վերցնելուց յետոյ: Վախտանգը հաւատաց խօսքին, յարձակուեց Պարսկաստանի վրայ, գրաւեց Շամխորը և սկսեց սպասել Պետրոսին: Այդ ժամանակ Պետրոսը գտնուում էր Դարուբանդեան ճանապարհի վրայ. տեղեկանալով Վախտանգի գործերի մասին, շարժուեց… բայց ոչ թէ Շամխորի ուղղութեամբ, այլ դէպի յետ՝ Աստրախան, թողնելով վրացիներին և հայերին գրգռուած Պարսկաստանի հսկայական երախի առջեւ:

Այդպէս սկսուեց ռուսական կայսրութեան ուխտադրուժ և քայքայիչ քաղաքականութիւնը քրիստոնէական Վրաստանի դէմ: Հաւանական է, Ռուսաստանը այդպիսով ցանկանում էր այնքան թուլացնել Վրաստանը, որպէսզի նա ոչնչանար իբրեւ պետութիւն և որպէս գաւառ մտնէր Ռուսական կայսրութեան կազմի մէջ: 1724 թւականին, ճնշուած քրիստոնեաների «օգնական»՝ Պետրոս Առաջինը, Թուրքիայի հետ զինադադարի ժամանակ, թուրքերին յանձնեց ամբողջ արեւելեան Վրաստանը՝ ինչպէս իր սեփականութիւնը:

Ռուսական քաղաքականութիւնը նոյնպէս «փառաւորուեց» նաեւ Եկատերինա Բ.ի օրօք: Նա սկսեց Թուրքիայի դէմ պատերազմ և ներքաշեց դրա մէջ Վրաստանին, իբր թէ ցանկանալով այդպիսով օգնել հարաւ-արեւելեան քրիստոնեաներին: Բայց այդ ամէնը արւում էին նորից սեփական շահի օգտին, որովհետեւ Եկատերինայի զօրավար Տոտլեբէնը անսպասելի կերպով յետ քաշեց իր զօրքերը, թողնելով իր դաշնակիցներին՝ Իրակլի Բ.ի վրացական զօրքը Ախալցխայի մօտ թուրքական բազմաթիւ բանակի առջեւ և անամօթաբար նահանջեց: Թագաւորի և զօրքի կործանման դէպքում, նա կը կարողանար հեշտութեամբ գրաւել Իբերիան և վերացնել թագաւորութիւնը: Բարեբախտաբար, Իրակլին քչաքանակ զօրքով տարաւ փայլուն յաղթանակ:

Ահա թէ ինչպիսի օգնութիւններ են ցոյց տուել ռուսական թագաւորները Վրաստանի քրիստոնէութեանը: Չնայած դրան, Իրակլին չփոխեց հանդէպ Ռուսաստանի իր քաղաքականութիւնը և նրա բազմակի խնդրանքը՝ Իբերիան Ռուսաստանի հովանաւորութեան տակ մտցնելու վերաբերեալ՝ բաւարաւեց: 1783 թւականին ստորագրուեց համաձայնութիւն, ըստ որի Ռուսաստանը վերցնում էր Վրաստանին իր հովանաւորութեան ներքոյ, ընդորում Վրաստանը չէր կորցնում իր անկախութիւնը, նա միայն պարտաւոր էր որեւէ մէկի հետ պատերազմ սկսելը համաձայնեցնել Ռուսաստանի հետ: Սակայն Վրաստանի ներքին գործերի մէջ Ռուսաստանը չպէտք է միջամտէր: Վրաստանում կար թագաւոր և գահը փոխանցւում էր ժառանգութեամբ: Պատերազմի դէպքում Ռուսաստանը պէտք է օգնէր Վրաստանին:

Ի՞նչպէս էր կատարում Ռուսաստանը իր խոստումները:

1787 թականին, պարսիկ Աղա Մոհամէդ Խանը, զայրացած ռուսական-վրացական համաձայնութեամբ, հասկանալով ռուսների տարածական մօտեցումը, հաւաքեց իր բոլոր զօրքերը, Վրաստանին պատժելու համար: Սակայն, մինչ այդ, նա առաջարկեց Իրակլի թագաւորին չեղեալ համարել համաձայնութիւնը Ռուսաստանի հետ, խոստանալով փոխարէնը դարձնել նրան Աղրբեջանի թագաւոր: Իրակլին հրաժարւեց:

Իսկ ի՞նչպէս վարւեց այդ ժամանակ հովանաւորող Ռուսաստանը: Կառավարութիւնը յետ կանչեց Վրաստանից այնտեղ գտնւող գնդապետ Բուռնաչովի բանակը: Վիճակը լուրջ էր: Համարեա՛ թէ 80ամեայ թագաւոր Իրակլին սուրհանդակ էր ուղարկում, օգնութիւն խնդրելով սահմանի վրայ կանգնած ռուսական բանակից, բայց օգնութիւն չէր գալիս: Միայն 1795 թականի հոկտեմբերի 1ին, գնդապետ Գուդովիչը հրաման ստացաւ և երկու գունդերով շարժւեց դէպի Թբիլիսի, բայց, աւա՛ղ, արդէն ուշ էր: Մեպտեմբերի 12ին, Աղա Մոհամէդ Խանը գրաւեց և հրդեհեց Թբիլիսին: Այդպէս, «կատարելով իր պարտքը», Ռուսաստանը ցուցաբերում էր ռազմական օգնութիւն:

Իսկ ի՞նչպէս էին կատարւում համաձայնութեան միւս կէտերը: 1800 թականին, Պաւել Ա.ը ստորագրեց մէկ փաստաթուղթ, որը բաւարարում էր Գէորգի թագաւորի խնդրանքը՝ Վրաստանի լիակատար հովանաւորութեան վերաբերեալ, միայն վրացական գահը Գէորգիի ժառանգորդների համար պահպանելով:

Այդ փաստաթուղթը չստորագրւեց Գէորգիի կողմից, որովհետեւ նա վախճանւեց մինչեւ սուրհանդակների գալը: Միայն մէկ կողմից ստորագրւած փաստաթուղթը, ի հարկէ, կորցնում էր իրաւաբանական ուժը: Սակայն, Պաւել Բ.ը ստորագրեց դա Դեկտեմբերի 18ին, իսկ Նոյեմբերի 15ին, այսինքն հինգ շաբաթ առաջ, զօրավար Կնորինդին, Վրաստանում տեղաւորւած զօրքերի հրամանատարին, ուղարկել էր գաղտնի յատուկ հրահանգ, որի համաձայն, Գէորգիի մահի դէպքում, ամէն կերպ հարկաւոր էր արգելել, որ թագաժառանգ Դաւիթը գահ բարձրանար:

Գէորգիի մահից յետոյ, զօրավար Կնորինդը այդ հրամանը յայտարարեց բնակչութեանը և Ռուսաստանից նոր զօրքեր կանչեց: Վրացական գահի բոլոր յաւակնորդները ցմահ արտաքսւեցին Ռուսաստան: Թագաւորութիւնը դադարեց գոյութիւն ունենալ: Ռուսական կայսրութիւնը, խախտելով համաձայնութեան բոլոր կէտերը, ցուցաբերելով եզակի անամօթութիւն և ուխտադրժութիւն, իրագործեց իր վաղեմի երազը՝ Վրաստանը դարձաւ ռուսական սովորական գաւառ: Հարկաւոր է նշել, որ ոչ մի մուսուլմանական երկիր, Արաբիան, Պարսկաստանը կամ Թուրքիան, անգամ զաւթելով Վրաստանը, չէին վերացնում նրանում թագաւորութիւնը:

Բռնանւաճումից յետոյ մեծառուսական աշխարհակալները վերացրեցին բոլոր վրացական դպրոցները իսկ նորաբաց ուսումնական հաստատութիւններում արգելեցին վրացական լեզուն։ Վրացական եկեղեցիներում ներկով ծածկեցին անգին, հիանալի որմնանկարները։ Այդպիսին էր ֆիզիկապէս գոյութեան պահպանման դիմաց տուրքը։ Հետաքրքիր է, թէ ի՞նչպէս ընկալեց ռուսական կայսրութեան այդ քայլը առաջատար ռուսական մտաւորականութիւնը։ Ի՞նչպէս էր նա առհասարակ նայում այն ժամանակ և աւելի ուշ փոքր պետութիւնների զաւթման վրայ։

Ցաւօք սրտի, նրա մէկ մասը չէր թագցնում իր ուրախութիւնը, իսկ միւսները՝ լռում էին, «լւանալով ձեռքերը», ըստ երեւոյթին, կառավարութեան նողկալի բռնութիւնները ոչ մի կերպ նրանց չէին վերաբերւում։

«Խոնարհիւր, Կովկաս, գալիս է Երմոլովը»,- գրում էր հազուագիւտ շնորհի տէր Ա. Պուշկինը։ Նոյնը նա, «Ռուսաստանի զրպարտիչներին» ոտանաւորի մէջ հաւանութիւն է տալիս ռուսական զօրքերի գազանութիւններին ապստամբած Լեհաստանում։ Նա հաւանութիւն է տալիս բռնութեանը, որը ողբերգութիւն դարձաւ Ադամ Միցկեւիչի և Շոպենի համար։ Ցաւօք, յաճախ տաղանդը չի համատեղւում քաղաքացիական խղճի հետ։ Ահա թէ ինչ է գրում Մ. Լեռմոնտովը.

Խոնարհուիր, չերկչէգ, է՛ւ արեւմուտք, է՛ւ արեւելք,
Կարող է շուտով ճակատագիրը քո բաժանեն։
Ժամը կը հասնի, և նոր ահեղ Հռոմը
Կը զարդարի հիւսիսը Օգոստոսով ուրիշ։

Ահա թէ ինչպէս էին գովերգում այդ երկու բանաստեղծները բռնութիւնը և զաւթողականութիւնը, ուշադրութիւն չդարձնելով նւաճւած փոքր պետութիւնների հառաչանքների վրայ։ Եւ նրանք համարում էին իրենց Բայրոնի աշակերտներ, այդ իրապէս ասպետի և ճնշւածների պաշտպանի, որը իր արիւնը տւեց Յունաստանի ազատութեան համար թուրքական զաւթիչների դէմ պայքարում։ Այդպէս Պուշկինը և Լեռմոնտովը նւաճող-թագաւորի արիւնոտւած սւիննների վրայ ծածանեցրին բարձր մուսաների դափնին։ Իսկ բարու այնպիսի քարոզիչներ, ինչպէս Լեւ Տոլստոյը և Ֆ. Դոստոեւսկին՝ մարդասիրութեան և բարձր բարոյականութեան իսկական մարտնչողները՝ լռում էին, դիտելով կառավարութեան գաղութատիրական ձգտումները։ Գոնէ մէկ անգամ, գոնէ մէկ բառ ասէին նրանք ճնշւած ժողովուրդների օգտին։

Սակայն ոչ, ռուսական հոգին դեռ չէր յաղթել արեանը, որը ներարկւել էր ռուսական երակների մէջ Չինգիզխանի կողմից, ուրիշների վրայ զաւթողականութեան և տիրելու արիւնը։ Անգամ առաջաւոր անհատականութիւնները

զերծ չէին մեծառուսական **շովինիզմ**ից, ինչ որ անգամ Լենինը համարում էր ամենասարսափելին բոլոր **շովինիզմ**ներից։

Բ

Վրաստանը Ռուսաստանին միացնելուց 100 տարի յետոյ, Ռոմանովները վճարեցին բազմաթիւ խաբէութիւններ, օտար հողերի անօրինական իւրացման դիմաց. Փետրուարեան յեղափոխութիւնը հեռացրեց նրանց գահից։ Իսկ Հոկտեմբերեան յեղափոխութիւնից յետոյ Լենինը, եղբօր արեան դիմաց վրէժ առնելով, հրամայեց գնդակահարել բոլոր Ռոմանովներին մինչեւ վերջինը, անգամ փոքրիկ երեխաներին։ (Ինչ որ հին ժամանակներում Չինգիզխանը, գերելով յաղթած և փախած Ջելալ-ալ-դինի փոքր տղային, չնայած որ գովել է իր թշնամու արիութիւնը, հրամայել է կերակրել իր սիրելի բազէին փոքրիկի սրտով)։

Յեղափոխութիւնից յետոյ քանդուեց ռուսական կայսրութեան ամբողջականութիւնը և Կովկասը ինքնաբերաբար դուրս եկաւ նրա կազմից։ Վրաստանը նորից դարձաւ ինքնուրոյն պետութիւն, որը ղեկավարեցին մենշեւիկները։ Մեզ դեռ չի հետաքրքրում, թէ ինչպիսի կառավարութիւն էր դա, սակայն քննենք Վրաստանը, Ռուսաստանին նորից միացնելու փաստը՝ իրապէս զաւթման օրինակը։

Հետաքրքիր է, որ այդ զաւթման ամենամոլի նախաձեռնողները հանդիսացան ոչ թէ ռուսական, այլ վրացական կոմունիստները, որոնք ապրում էին այն ժամանակ Ռուսաստանում։ Դրանք էին՝ Ստալինը, Օրջոնիկիձէն, Մախարաձէն, Ցխակայան և ուրիշները։ Նրանք չէին խնայում իրենց երկիրը, որպէսզի ռուսական միջազգայնականների աչքը մտնեն։ Նրանց օրինակով Լենինը ասել է, որ վրացիները ոչ միայն սոցիալ-ազգայնականներ են, այլեւ կոպիտ մեծառուսական **«դերժիմորդաներ»** (ոստիկանական բիրտ հակում ունեցող մարդ)։ Պարզւում է, որ վրացիները աւելի շատ էին դրսեւորում այդ մեծառուսական **շովինիզմ**ը, քան ռուսները։ Այդպիսին էին Ստալինը և նրա նմանները։

Այո, Ստալինին, համաշխարհային դահճին, ծնել է Վրաստանը։ Օձը մէկ անգամ ծծել է նրա ստինքները։ Բազմադարեան թուրանական արշաւանքները ի յայտ բերեցին սարսափելի հետեւանքը։ Ուժգնօրէն դրսեւորուեց նրանում թուրանական արիւնը, մասնաւորապէս թուրանական արեան վրիժառութեան յետասերումը, երբ այդ դահիճը մահապատժի էր ենթարկում որեւէ մէկին, նրա ցասումը տարածւում էր զոհի բոլոր հարազատների վրայ։

Բռնակալը արտաշնչում էր վախ և ներշնչում՝ իրենով իսկ ստեղծած հասարակական թարախի գարշահոտութիւնը։

Նա չէր սիրում յատկապէս Վրաստանին, որովհետեւ նա ժամանակին արտաքսւել էր այնտեղից, չգտնելով իր քաղաքական գործողութիւնների համար համապատասխան յենարաններ: Իշխանութիւն ձեռք բերելուց յետոյ, նա դաժանաբար վրէժ էր լուծում հարազատ երկրից: 24 թւականից մինչեւ Ստալինի մահը Վրաստանը կրեց ֆիզիկական ամենասարսափելի կորուստները:

Սակայն վերադառնանք նրան, թէ ի՛նչպէս ռուսական զօրքերը ներխուժեցին Վրաստան 1921 թւականի փետրուարին: Յայտնի է բոլշեւիկների ուրիշ երկրների ներխուժելու մեթոդը: Այդ երկրները ուղարկւում էին մարդիկ, որոնք ստեղծում էին բոլշեւիկների փոքրիկ խմբակներ, այսպէս կոչւած յեղկոմներ, որոնք կոչ էին անում բնակչութեանը ապստամբել: Եթէ ձեռք էր բերւում գոնէ մի փոքր յուզում, ապա Ռուսաստանից օգնութեան էին կանչւում բոլշեւիկները, որոնք ե՛ւ զսպում էին երկիրը: Նոյնը տեղի ունեցաւ ե՛ւ Վրաստանում:

Յեղափոխական Կոմիտէն, ստեղծւած Օրջոնիկիձէի, Մախարաձէի և Ցխակայայի միջոցով, Լենինին հեռագրեց՝ խնդրելով ռազմական օգնութիւն: Իսկ Լենինը անմիջապէս հրամայեց նոյն այդ Օրջոնիկիձէին, Բագւում կանգնած 11րդ բանակի գերագոյն հրամանատարին, գրաւել Թբիլիսին:

Այդ 11րդ բանակը ստեղծւել էր խորհրդային Բագւում դեռ 1920 թւականին և հէնց սկզբից էլ նա ստեղծւած էր Վրաստան ներխուժելու համար: Վրաստանի մենշեւիկեան կառավարութիւնը գիտէր այդ մասին, սակայն փոխանակ համընդհանուր զօրակոչ յայտարարելու, ազատ արձակեց բոլոր փորձառու զինծառայողներին և 30 հազարանոց զօրքը պակսեց մինչեւ 15 հազար: Կառավարութիւնը չէր հոգում ռազմանիւթերի, հագուստի, վառելանիւթի և ճանապարհների վերանորոգելու համար:

Փետրուարի 12ին 11րդ բանակը ներխուժեց երկիր այնպէս, որ այդ մասին ոչ ոք չգիտէր: Վրացական զօրքերը նահանջեցին դէպի Թբիլիսի և փետրուարի 24ին հակահարւած տւեցին թշնամուն, իսկ 25ին զօրավարները պատրաստւում էին անցնել հակայարձակման…, սակայն կառավարութիւնից հրաման են ստանում յանձնել Թբիլիսին: Դրանից յետոյ վրացական բանակը բարոյալքւեց և 11րդ բանակի կողմից հետապնդւելով նահանջեց դէպի արեւմուտք: Յարձակւող բոլշեւիկները նոյնպէս խուսափում էին ռազմական գործողութիւններից, չնայած որ բազմակի հնարաւորութիւններ ունէին կտրել թշնամու ճանապարհը և գերել նրան: Այդ խաղը շարունակւեց մինչեւ այն ժամանակ, երբ Վրաստանի կառավարութիւնը նստեց շոգենաւ և մեկնեց արտասահման: Այդպէս վերջացաւ պատերազմի այդ դիմակահանդէսը: Բայց ի՞նչը ստիպեց ժամանակաւոր կառավարութեան բոլշեւիկների հետ գաղտնի յարաբերւել և հրաժարւել իշխանութիւնից:

Ինչպէս երեւում է, Վրաստանի անկախութիւնը զոհ դարձաւ ամբողջական գաղտնի առեւտրին: **Անտանտան**, որը պայքարում էր բոլշեւիկների դէմ, նրանց հետ գաղտնի պայմանաւորուածութիւն ունէր, որի համաձայն Վրաստանը անցնում էր Խորհրդային Ռուսաստանին: Ուրիշ կերպ դժւար է բացատրել այն հանգամանքը, թէ ինչու **Անտանտա**յի կառավարութիւնները Վրաստանի արտագաղթած ժամանակաւոր կառավարութեան օգնութեան վերաբերեալ խնդրանքին պատասխանեցին, որ նրանք Վրաստանի անկախութիւնը ճանաչում են միայն բոլշեւիկեան Ռուսաստանի հետ դաշնակցելու դէպքում: Չնայած, որ 1918 թւականի մայիս 26ին **Անտանտա**յի բոլոր կողմերը, ինչպէս ե՛ւ ուրիշ տէրութիւնները, ճանաչել էին Վրաստանի անկախութիւնը: Մեծ տէրութիւնների անձնական շահը ամէն ինչ փոխեց՝ Բագւի նաւթը պէտք էր Բաթումի միջով անարգել հոսէր դէպի ուրիշ երկիրներ, նոյն թւում նաեւ **Անտանտա**յի երկրները: Հասկանալի է, որ Բաթումը նոյնպէս պէտք է դառնար խորհրդային:

Իսկ ի՞նչ բերեց Վրաստանին խորհրդային իշխանութիւնը:

Բերենք այստեղ մէկ փաստ, դրանից ելնող բոլոր հետեւանքների հետ միասին: Օրջոնիկիձէն, բռնութեամբ ներխուժելուց յետոյ, միջազգայնական զգացմունքներով տարւած, Աղրբեջանին յանձնեց Վրաստանի հիւսիս-արեւելեան մասից, հարուստ և բերրի լայնարձակ հողերը՝ այսպէս կոչւող Կախ-Սահինգիլսն, և Վրաստանի արեւելեան շրջանների՝ Դաւիդ-Գարեջի մօտ գտնւող մի մասը: Կարող է մտածւել՝ իբրեւ նւէր 11րդ բանակը պահելու և օգնելու դիմաց: Եւ ահա, այդ շռայլութեան ցաւագին հետեւանքը. Դաւիդ-գարջինեան Բերտուրանի վանքում աղրբեջանական թաթար-հովիւները, համարեա թէ ամբողջապէս ոչնչացրեցին թանկագին, հիանալի միջնադարեան որմնանկարները: Իսկ Կախ-Սահինգիլովեան երկրամասում աղրբեջանական կառավարութիւնը սկսեց բացայայտ պայքարը տեղացի քրիստոնեայ-վրացիների դէմ:

1929-30ական թւականներին, Կախի շրջանում Կորգան գիւղում բռնութեամբ մուսուլմանացնում էին վրացական բնակչութեանը, միայն մի քանի հարիւր հոգի փրկւեցին, տեղափոխւելով Վրացական ԽՍՀ Յիտելցկարոյի շրջանը: Հանդէպ Կախի վրացիներին ձեռք էին առնւել նաեւ ուրիշ միջոցներ: Մարսանի գիւղում, 1954-55 թւականներին կառավարութիւնը փակեց վրացական դպրոցները: Ուրիշ շրջաններում (Զակաթալա, Բելոքանի) պաշտօններից հանւել էին վրացի **դիրեկտոր**ները և նշանակւել էին թաթարները, որոնք չէին հասկանում վրացերէն: Տեղական կառավարութիւնը կարգադրութիւն արեց պայթեցնել և քանդել վրացական մշակոյթի հիանալի հին յուշարձանները, բազմաթիւ եկեղեցիներ, ամրոցներ, միջնադարեան ճարտարապետութեան այնպիսի յուշարձաններ, ինչպիսին են՝ Ս. Գէորգիի եկեղեցին, Բարեշնորհ

Աստուածամօր եկեղեցին Ալիաբադի գիւղում և ուրիշներ։ Յատկապէս շատ յուշարձաններ կործանուեցին 1971 թ.։ Հասկանալի է, մուսուլմանական յուշարձանները, մէջեդները այնտեղ մնում են անվնաս։ Յատկապէս եռանդուն կերպով է հետեւում աղրբեջանական կառավարութիւնը, որպէսզի շատ քիչ մնացած եկեղեցիներում քրիստոնէական արարողութիւններ տեղի չունենան։

Խորհրդային օրէնքը ասում է, որ 25 հաւատացեալի առկայութեան դէպքում, նրանք կարող են կառավարութիւնից եկեղեցի կամ կրօնական արարողութիւն կատարելու համար տեղ խնդրել։ Կախի շրջանում 132 քրիստոնեայ-հաւատացեալներ դիմում ստորագրեցին, խնդրելով եկեղեցի բացել նրանց համար և այդ խնդրանքը ուղարկուեց նախարարների խորհուրդ։ Պատասխան չստացուեց։ Նմանօրինակ խնդրանքը ուղարկուեց Մոսկւա, Միութեան նախարարների խորհուրդին։ Նորից լռութիւն։ 1972 թւականին, Մոսկւայում ԽՍՀՄի ՆԽին կից Կրօնների գծով Խորհրդի նախագահ Կուրոյեդովի քարտուղարը թոյլ չտուեց Կախի քրիստոնեաների պատգամաւորին, որը համբերատար սպասում էր, ներս մտնել։ Նրան պատասխանեցին միայն, որ եկեղեցի գտնւում է Բագւում և ով ցանկանում է աղօթել, թող մեկնի Բագու։

Ահա իսկապէս մի ծաղրանք մարդկանց և կրօնի հանդէպ մի երկրում, որի սահմանադրութեան մէջ սեւը սպիտակի վրայ հռչակւած է՝ «խղճի ազատութիւն»։ Չէ՞ որ Կախ-Սաինզիլոյից մինչեւ Բագու 500 կիլոմետր է։ Եթէ այսպէս շարունակւի, ապա շուտով կը մուսուլմանացւի, կը թաթարացւի այդ տեղերում ամբողջ վրացական բնակչութիւնը և կը կործանւեն վրացական յուշարձանները։

Ահա թէ ինչի յանգեցրեց Օրջոնիկիձէի նենգ արարքը։ Ի՞նչ գործ ունէին վրացական բոլշեւիկները ինչ-որ Կախ- Սաինզիլոյի քրիստոնեաների և եկեղեցիների հետ, երբ նրանք ինքները առաջին հերթին սկսեցին թալանել և պայթեցնել վրացական եկեղեցիները։

Դեռ 1964 թւականին, Զեդաղենի վանքում կարելի էր տեսնել բազմաթիւ սրբապատկերներ, գնդակներով պատառոտւած և ծակւած, որոնք հոգատար կերպով հաւատացեալների կողմից հաւաքւեցին և կարւեցին։ Անկարելի էր այդ սրբապատկերներին առանց ծանր հոգեկան ապրումների նայել։ Վերջապէս, կառավարութիւնը կոահեց և թագցրեց բոլշեւիկեան գործերի այդ ամօթաբեր վկայութիւնը։

Վրաստանում գոյութիւն ունի առասպել, ինչ որ ժամանակներում Սիբիայից 13 սրբեր են եկել Յովհաննէս Զեդաղենի գլխաւորութեամբ։ Սուրբ Յովհաննէսը Զեդաղենի սարի վրայ տեսնում է սարսափելի դիւական էակների։ Նա իր աշակերտների հետ բնակութիւն է հաստատում այդ սարերում և աղօթքներով

արտաքսում է այդ դեւերին դէպի Հիւսիս, Կովկասեան լեռնաշղթայից այն կողմ:

Եւ այդ դեւերեւը Հիւսիսից վերադարձան Ջեդաղենի սար և վրէժ լուծեցին:

Իսկ այն մասին, թէ ինչպէս կոմունիստները ոչնչացրին և բարոյալքեցին Վրաստանում լաւագոյն հոգեւորականութեանը, ինչպէս չեկիստներին հազցրին փարաջա, ինչպէս եկեղեցին դարձրին դիմակահանդէս, միայն արտասահմանցիներին խաբելու համար պահպանւած և կազմակերպւած, կարելի է մի ամբողջ դիւցազներգութիւն գրել: Սկսած 1917 թւականից **աթէիզմը** մեր երկրում վերածւեց պետական կրօնի: Սկսւեց քրիստոնէութեան դէմ համընդհանուր պայքար՝ եկեղեցիների քանդում, համընդհանուր քարոզչութիւն, իսկ գաղտնի՝ Եկեղեցու բարոյալքում, իրապէս քրիստոնեաների ոչնչացում: Դժոխային մեքենայի, այսպէս կոչւած **ՉԵԿԱ**յի յիսուն տարւայ աշխատանքի հետեւանքով Վրացական Եկեղեցին լրիւ բարոյալքւեց: Այսօր, ինչպէս և՛ բոլոր այդ տարիներին, վրացական եկեղեցական գործերը ղեկավարում է Վրաստանում **ՉԵԿԱ**ն: **ՉԵԿԱ**ն ընտրում է կաթողիկոսին, հոգեւորականներին, նշանակում է հաւատարմատարին: Դա՝ սոցիալական քաղցկեղի տարածիչն է, մարդկային կեանքի բոլոր ոլորտներում և մարզերում իր **մեթազտազ**ները խրելով: Անցեալում՝ դա դահիճների և **սադիստ**ների խումբ էր, որը խլում էր մարդկանց Եսը, դարձնելով նրանց հօտ: Ժամանակը ստիպում է դրանց այսօր թագցնել սեփական գազանային երախը և **ՉԵԿԱ**ն որոշակի փոխում է **տակտիկա**ն:

Այլախոհների դէմ պայքարում է զանգւածային սպանութիւնների և բանտերի փոխարէն արմատաւորւում է պատահական մահը, օրինակ, «ավտոարկածը», իսկ աւելի յաճախ՝ հոգեբուժական հիւանդանոցը: Չէ՞ որ նրանց զինանոցում է ժամանակակից **տեխնիկա**ն, բժշկութիւնը, հոգեբանութիւնը: Առանց տանջանքների և խոշտանգումների էլ կարելի է մտնել ամէն մարդու հոգու մէջ: Չէ՞ որ գոյութիւն ունի այնպիսի **տեխնիկա**, որը և՛ գրում է, և՛ լսում և շատ ուրիշ բաներ է անում:

Ի՞նչպէս չհովանաւորես այդպիսի **տեխնիկա**ն: Իսկ նրանք, ովքեր բարոյապէս մի փոքր թոյլ են, դրանց համար **տեխնիկա**ն էլ հարկաւոր չէ: Քիչ մտաւորականներ չէին, որ գայթակղւեցին **ասպիրանտուրա**յի, պաշտօնի և արտասահմանեան գործուղումների խոստումներով: Հարազատ մարդկանց **ՉԵԿԱ**ն իրապէս տալիս է այդ պարգեւները: Սակայն, **ՉԵԿԱ**յի ամենանողկալի գործը՝ դա եկեղեցու դէմ նրա գաղտնի պայքարն է: Հոգեւորական աստիճանների համար ընտրւում են ոչ միայն **աթէիստ**ներ, այլեւ քրէական և այլանդակ մարդիկ՝ հաւատացեալներին եկեղեցուց յետ դարձնելու յուսալի ճանապարհ, նման «հոգեւորական»ները կրճատում են ծիսակարգը, դրամներ են կորզում, հար-

բեցողութեամբ են զբաղւում, խայտառակութիւններ են անում, այլասերւածութեամբ են զբաղւում։

Գ

1973 թւականի մարտի 19ին Վրաստանի ԿԿ, Թբիլիսիի Կիրովեան շրջանի դատախազութիւնից վրացական եկեղեցիների վերաբերեալ լուրեր ստացաւ։ Ահա այդ լուրերը։

Վերջերս մահացած, Վրաստանի կաթողիկոս Եփրեմ Բ.ը, եկեղեցական գործերով հաւատարմատարի հետ զրուցելիս, յաճախ է ասել, որ իր մահից յետոյ կաթողիկոս կը դառնայ մետրոպոլիտ Շիոլաշվիլին՝ աշխարհիկ և հոգեւորական բարձրագոյն կրթութեան տէր մարդ, արտասահմանեան լեզուներ իմացող, բոլորի կողմից յարգւած։ Այդ մասին գրւած է եղել նաեւ կտակում։ Սակայն, կտակը, Եփրեմ Բ.ի մահից յետոյ, անմիջապէս ոչնչացւել է ներկայ կաթողիկոս Խարիտոն Դեւադարիանի կողմից։ Կազմւել է ե՛ւ նորը, կեղծ կտակ, որը և կարդացին Սինոդի ժամանակ։

Եկեղեցու օրէնքի համաձայն, Սինոդը որոշում է կայացնում բոլոր եպիսկոպոսների և մետրոպոլիտների ներկայութեամբ և համաձայնութեամբ։

1972 թւականի ապրիլի 7ին, Եփրեմ Բ.ի մահից երկու ժամ յետոյ, շտապ հրաւիրւել է Սինոդ, բայց ոչ թէ նրա համար, որպէսզի ընտրւի Իլիա Շիոլաշվիլին, նրան անգամ չեն հրաւիրել նիստի, չնայած որ նա վրացական երկու մետրոպոլիտներից մէկն է։ Չի հրաւիրւել նաեւ երեք եպիսկոպոսներից մէկը։ «Ընտրութիւններին» մասնակցել է ինքը՝ Դեւադարիանին և երկու եպիսկոպոսներ, ինչպէս նաեւ եկեղեցիների գործով երկու հաւատարմատարներ։ Երկու «ընտրող» եպիսկոպոսներին կեղծ թեկնածու Դեւադարիանին շնորհել է մինչեւ իր կաթողիկոս ընտրւելը մետրոպոլիտների աստիճան։ Եւ դա նոյնպէս հանդիսացաւ եկեղեցական օրէնքների կոպիտ խախտում։

Երբ դատախազութիւնը նոր պատրիարքից պահանջեց Սինոդի արձանագրութիւնը, նա յայտարարեց, որ դա գողացել են գրասենեակից։

Նոր պատրիարքը առանց որեւէ կրթութեան մարդ է, այդ պատճառով էլ Վրաստանի եկեղեցական բոլոր գործերը անցան «եպիսկոպոս» Բ. Կերատիշվիլու ձեռքը։ Եկեղեցական գործերի եւս մէկ խախտում, չէ՞ որ կաթողիկոսութեան թեկնածուն պէտք է ունենայ բարձրագոյն կրթութիւն և համապատասխան աստւածաբանական պատրաստութիւն։ Սակայն, ինչո՞ւ այդ ամենով հետաքրքրւեց դատախազութիւնը։ Եփրեմ Բ. ի մահից անմիջապէս յետոյ, պատրիարքարանից գողացւեցին սրբապատկերներ, խաչեր, գաւաթներ, գրքեր, դրամներ։ Դրանցից մի որոշ մասը ներկայացնում էր պատմական արժէք։ Հետաքննութիւնը բացայայտեց, որ գողութեանը մասնակցել է և ղեկավարել է

հէնց գործակալ Բ. Կերատիշվիլին՝ մի մարդ, որը փաստօրէն գտնւում է Եկեղեցու ղեկավարի դերում: Իսկ ո՞վ է նա:

Ծնւել է 1945 թականին, գիւղում, աւարտել է գիւղական միջնակարգ դպրոցը, ընդունւել է Թբիլիսի համալսարան, չորս տարուց յետոյ մի կերպ տեղափոխւել է երկրորդ **կուրս**, մէկ տարուց յետոյ ակադեմիական պարտքի համար վռնդւել է: Ճիշտ է, շատերը ասում են, որ նրան հեռացրել են **պասիւ պեդեռաստիա**յի պատճառով: 1969 թականին, Կերատիշվիլին դատապարտւել է քրէական օրէնսգրքի 209 յօդւածի 2րդ մասով:

Նոյն այդ թականին ընդունւել է Մցխետի հոգեւորական ճեմարան, սակայն անմիջապէս հեռացւել է **նարկոտիկ**ներ տարածելու պատճառով: Նոյն այդ թականին սկսել է աշխատել պատրիարքարանում իբրեւ կրտսեր քարտուղար: Դեռ յայտնի չէ, թէ ինչպէս նա կարողացաւ պատրիարքին ամէն ինչի հետ համաձայնեցնել: Մենք գիտենք միայն, որ 1971 թականի նոյեմբերին Եփրեմ Բ.ը նրան կուսակրօն ձեռնադրեց, նոյն թականի դեկտեմբերին՝ շնորհեց սարկաւագի աստիճան, իսկ յետոյ էլ՝ կուսակրօն հոգեւորականի աստիճան: 1972 թ. մարտի 26ին, Եփրեմ Բ.ը, չնայած որ ծանր հիւանդ էր, անկողնից վեր կացաւ, կատարեց եկեղեցական արարողութիւն և շնորհեց նրան եպիսկոպոսի աստիճան: Դրանից յետոյ Կերատիշվիլին դարձաւ վրացական պատրիարքարանի կարգաթողը, որովհետեւ Եփրեմ Բ.ը այդ ժամանակ միշտ էլ հիւանդ էր:

Հէնց որ Եփրեմը մահացաւ, նոր պատրիարքը ստիպեց Մցխետի ճեմարանի **ռեկտոր**ը Ի. Շիոլաշվիլուն տեղափոխւել Աբխազիա, իսկ ինքը դարձաւ ճեմարանի **ռեկտոր**: Դեռ մինչեւ գողութիւնը, Ի. Շիոլաշվիլին և ամբողջ Սինոդը առաջարկեցին նախարարների խորհրդին կից Եկեղեցու հաւատարմատարին պատրիարքարանի գոյքը ցուցակագրել: Նա մատը մատին չխփեց: Շիոլաշվիլին մի քանի բնակարանների և անկիզելի պահարանների վրայ կնիք դրեց (Ս. Նինոյի պանակէի կորուստի կապակցութեամբ): Կերատիշվիլին ստիպեց Եփրեմին վերացնել կնիքները: Եւ որովհետեւ պատրիարքարանի գոյքը գրւած չէր և ամէն ինչը գտնւում էր Կերատիշվիլու ձեռքում, այժմ չի կարելի նշել, թէ ի՞նչքան է գողացւել: Հանգուցեալ Պատրիարքի հարազատները պնդում են, որ միայն նրա բարձի տակ պահւած էին 25 հազար ռուբլի: Իսկ աղքատ Կերատիշվիլին, որը առաջներում քնում էր Սիոնի մատուռում և սնւում էր պատրիարքարանի սեղանից, այժմ գնել է քաղաքացի Գ. Ջանաշիայից հիանալի բնակարան, 10 հազար ռուբլիով: Նա դուրս է նետել Եփրեմի բոլոր փաստաթղթերը և այրել:

Պատահաբար անվնաս է մնացել Եփրեմի կողմից լրացւած մի գիրք, որի մէջ նշւած են թանկարժէք իրերը (այդ էջերից 15 թերթերը չկան), այժմ այդ

գիրք-փաստաթուղթը գտնւում է հետաքննութեան նիւթերի մէջ: Այդ թւում կայ նաեւ հեռագրի պատճէն, որով Կերատիշվիլին իր եղբօրը շրջանից կանչել է գողացած ապրանքները տանելու համար: Մէկ հաւատացեալ կին գրել է մեքենայի համարը, որի մէջ Կերատիշվիլին երկու ճամբրուկ է դրել, դուրս բերելով դրանք Սիոնի մատուռից: Մեքենայում տեսել են Պետրոպաւլովեան եկեղեցու հոգեւորական Գ. Տերզիեւին:

Չնայած նրան, որ պատրիարքարանը ունի «Վոլգա» մեքենայ, Խարիտոն Դեւադարիանիի անունով, նոյնպէս «Վոլգա» կայ, մէկ ուրիշը ձեւակերպւած է նրա տղայի անունով, երրորդը՝ քաղաքացի Գ. Չկագւայի անունով, սակայն օգտւում է դրանից Դեւադարիանին: Բոլոր հարցաքննւողները պնդում են, որ տեղի ունեցող անօրինականութիւնները և յանցագործութիւնները կատարւում են նախարարների խորհրդին կից եկեղեցական գործերի հաւատարմատար՝ Շալուտաշվիլիի հովանաւորութեամբ և համաձայնութեամբ: ԿԳԲ թոյլ է տալիս նաեւ պաշտօնական գործողութիւններ. մինչեւ Եփրեմի վախճանը Սիոնի տաճար է ներկայացել անվտանգութեան մարմինների ներկայացուցիչը և յայտարարել է, որ անհրաժեշտ է ձեռք առնել բոլոր միջոցները, որպէսզի պատրիարք ընտրւի ոչ թէ Շիոլաշվիլին, այլ Դեւադարիանին: Ճեմարան են եկել ԿԳԲի երկու ներկայացուցիչ և սպառնացել են Շիոլաշվիլուն պահանջելով, որ պատրիարքի ընտրութիւններին չմասնակցի ճեմարանի ոչ մի սան:

Սիոնի ծառայողներից լսելով Դեւադարեանիի թեկնածութեան վերաբերեալ դժգոհութեան մասին, անվտանգութեան մարմինների աշխատող Բախտաձէն նրանց խստօրէն յանդիմանեց: Իսկ ամէն ինչը կատարւելուց յետոյ, երբ եկեղեցու ծառայող Ա. Սամիխարաձէն բողոք ներկայացրեց Վրաստանի նախարարների խորհրդին, Բախտաձէն կանչեց նրան ԿԳԲ, իսկ Դեւադարիանին վռնդեց նրան պատրիարքարանից:

Յայտնի է, որ անվտանգութեան աշխատողները ղեկավարւել էին ոչ միայն ծառայողական պարտականութիւնով և կուսակցական գաղափարայնութեամբ: ԿԳԲի բաժնի պետ Տեւալչրելիձէն գողացած թանկարժէք իրերից որոշակի մաս է ստացել: Այդ արգահատելի գործերին մասնակից է եղել նաեւ Վրաստանի Կոմկուսակցութեան Կենտկոմի նախկին քարտուղար Մժաւանաձէի կինը՝ Վ. Տիրիսկեւիչը: Սակայն ԿԳԲ (ՉԿ) հետաքրքրւում է ոչ միայն եկեղեցու ծառայողներով և նրանց ունեցւածքով: Բոլոր ծխականները և յատկապէս երիտասարդութիւնը նրանց մօտ հաշւի են վերցւած: Սակայն հարկաւոր է իմանալ բոլոր ազգանունները, ուսումնասիրել ամէն մէկի **պոտենցիալ** և հոգեկան հնարաւորութիւնները, ուսումնասիրել նրանց թոյլ կողմերը, իսկ դրա համար արդէն բաւական չեն հոգեւորական-չեկիստները, անհրաժեշտ են նաեւ ծխական-չեկիսները:

Եւ ձեր առջեւ խաղացւում է **կոմեդիա**: Չեկիստ-հոգեւորականը արարողութիւն է կատարում, խոստովանեցնում է, քարոզներ է կարդում չեկիստ-ծխականներին: Ընդսմին, քարոզի նիւթը յատուկ վերահսկողութեան է ենթարկւում չեկիստների կողմից և միայն դրանից յետոյ քարոզը կատարւում է: Իսկ ինչպիսի՛ տւեալներ պէտք է լրացնի քահանան քաղաքացիների վերաբերեալ, պսակւողների և կնքւող երեխաների վերաբերեալ: Հետաքրքիր է, ինչո՞ւ: Դժւար չէ կռահել, այն բանի համար, ով հագցնում է կիսախելագարներին, սեռային մոլագարներին, գողերին, մարդասպաններին հոգեւորականի հագուստները, որոնց առջեւ ընտրութիւն է դրւում՝ կամ բանտ, կամ…: Այդպիսով Բ. Կերատիշվիլին եպիսկոպոսի աստիճան ստացաւ: Նրան երեւի պատրաստում են պատրիարքի աստիճանը:

Իսկ ի՞նչ էր Ռոմանովեան և Խորհրդային Ռուսաստանի քաղաքականութիւնը նրա կազմի մէջ մտնող փոքր ժողովուրդների հանդէպ:

Այդ քաղաքականութեան հիմքը այդ ժողովուրդների միջեւ թշնամութիւն հրահրել էր: Այդպիսով կարելի է միաժամանակ ե՛ւ թուլացնել նրանց և, որը աւելի կարեւոր է, դիմազրկել, ինչպէս դա արւեց Հիւսիսային Կովկասում: Անդրկովկասում ամենաինքնօրինական ազգեր էին համարւում հայերը և վրացիները, Վրաստանը և Հայաստանը՝ քրիստոնէական բարձր մշակոյթի տէր երկրներ էին:

Հայերը, արդէն 10րդ դարում, զաւթիչների հետ երկարատեւ պայքարից յետոյ, կորցրել են իրենց պետականութիւնը և դարերի ընթացքում գտնւել են պարսիկների և թուրքերի լծի տակ: Վրացական պետութիւնը ազատագրել է նրանց զաւթիչների լծից (Դաւիթ Շինարարի, Թամարա Գրուզինսկայայի, Հեռակլի Բ.ի օրօք), իսկ տանջւած հայերին վերաբնակեցրել է Վրաստանում, այնպէս որ Թբիլիսիում և նրա շրջակայքում հաւաքւել են բաւականին շատ հայեր: Վրացական ժողովրդի միջազգայնական բնաւորութիւնը նպաստել է հայերի և ուրիշ ժողովուրդների բարգաւաճմանը Վրաստանում:

Դա տեսնում էր ռուսական կառավարութիւնը: Սակայն ամբողջովին ռուսականացմանը դիմադրում էր վրացիների ռազմական ոգին և ինքնօրինականութիւնը: Եւ Ռուսաստանը որոշեց օգտագործել հայերի ծայրայեղական մասը, Վրաստանը թուլացնելու և իր նպատակներին հասնելու համար: Հայերի այդպիսի խումբը (Աստւած մի արասցէ դրանում մեղադրել ամբողջ հայ ժողովրդին) սկսել էր գործել արդէն 19րդ դարից: Կան մի շարք պատմական իրադարձութիւնների աղաւաղում այն ժամանակւայ ռուս և հայ գրողների կողմից: Չէ՞ որ նրանք գործում էին ձեռք ձեռքի տւած:

1838 թւականին, ռուսական գրող Սենկովսկին (Բրամբէուս) գրել է, որ իբերները մինչեւ 17րդ դարը չեն ունեցել իրենց տարեգրութիւնը, որ մինչեւ

12րդ դարը նրանք առհասարակ գոյութիւն չեն ունեցել, իսկ իբերներ են կոչւել սարերում ապրող տարբեր ցեղեր, և որ Կուր գետից այն կողմը գտնւող երկիրը, որտեղ ներկայումս գտնւում է Թբիլիսին, ինչպէս նաեւ ամբողջ Վրաստանի մեծ մասը միշտ էլ պատկանել է հայերին, ազգաբնակչութիւնը կազմել են հայերը, մեդացիները, թուրքերը և ալբանացիների որոշակի ցեղակիցները։ Այդ զրպարտութիւնը տարածւել է ռուսների միջեւ արեւելեան լեզուների պրոֆեսոր Սենկովսկու միջոցով դեռ 19րդ դարի սկզբին։

Աւելի ուշ, նաեւ հայերը՝ գրողներ Էմինը, Խուդոբաժովը, Երիցովը պնդում էին, որ Կուր գետի ակունքները, Ճորոխ գետի ձորը՝ հին դարերից ի վեր հայկական են, չամաչելով այն բանից, որ մշակոյթի բոլոր յուշարձանները, այդ տեղերի աշխարհագրական անունները բացայայտօրէն վրացական էին։ Ստիպւած են եղել որեւէ կերպ շտկել այդ թիւրիմացութիւնը, հէնց այդ շրջանում վկաներ են եղել, որոնք տեսել են վրացական եկեղեցիների վրայ գոյութիւն ունեցող գրւածքների ջնջման փաստերը։ Բացի դրանից, հայ գիտնական Պատկանովը կրկնել է Սենկովսկու մտքերը այն մասին, որ մինչեւ 17րդ դարը վրացիները չեն ունեցել տարեգրութիւն, գոյութիւն է ունեցել նրա վրացերէնով թարգմանութիւնը, որի բնագիրը կորել է, և դրա համար էլ այդ թարգմանութիւնը հայերը նորից թարգմանել են հայերէնով։ Իսկ ի՞նչ ասել այդ դէպքում Դաւիթ Շինարարի և Թամար թագուհու ժամանակակից պատմաբանների փայլուն աշխատանքների մասին (12 դար), եթէ հաշւի չառնենք աւելի վաղ գրած տարեգրքերի ստեղծագործութիւնները։

1877 թւականին, Ֆրանսիական «Տետրա» թերթի խմբագիր ոմն Կատուլին այցելեց Անդրկովկաս։ Տեղեակ լինելով նրա ժամանումի մասին, Թբիլիսիում հրատարակւող հայկական մի թերթի խմբագիր՝ Արծրունի՝ մի խումբ մարդկանց հետ, շատ ջանքեր թափեցին, որպէսզի յիմարացնեն այդ ֆրանսիացուն, և դա յաջողւեց։

Շքեղ ընդունելութիւններով, խորամանկութեամբ, կեղծիքով նրանք արժանացան հիւրի հաւատքին, և ահա, թէ ինչպիսի թղթակցութիւններ նա ուղարկեց Ֆրանսիա. «Դրախտը միայն այստեղ է, Հայաստանում»,- գրում է Կատուլին Թբիլիսիից։ Նա գրում է նաեւ, որ չնայած հայերը Կովկասում աւելի քիչ են, քան վրացիները, սակայն նրանք կ'աւելանան քանակապէս և որ Կովկասում ապագայ ունեն միայն հայերը, իսկ վրացիներին և թաթարներին մնում է միայն հայանալ։

Գրիգոր Արծրունին հաւատացրեց Կատուլուն, որ ապագայում հայերը կը ստեղծեն պետութիւն, որը կ'ունենայ 30 միլիոն հպատակներ։ Հետաքրքիր է, թէ նա աչքի առաջ ո՞ւմ ունէր, բացի Վրաստանից և Ադրբեջանից, չէ՞ որ դա չէր կազմի այդ քանակի անգամ կէսը։ Հայերի մի փոքր խմբի կողմից յիմարացած

Կատուլին իր թերթին գրում է, որ վրացիները աչքի չեն ընկնում իրենց հերոսութեամբ, չնայած որ ունեն բազմաթիւ զօրավարներ, աւելի հերոս են հայերը (դա էլ թուրքական և դաղստանական արշաւներից յետոյ, երբ, ինչպէս յայտնի է, առանձնապէս աչքի ընկան վրացական զօրավարները և ռազմիկները)։

Բարեբախտաբար, գոնէ դրանում եւրոպացիները չխաբուեցին, ինչպէս, օրինակ, Կովկասով ճամբորդող Ա. Դիւման՝ իրապէս ազատ արուեստագէտը, որին, ի հարկէ, չէր կարելի յիմարացնել կամ կաշառել, իր «Կովկաս» գրքում գրել է վրացական ժողովրդի հերոսութեան և արիութեան մասին ոգեւորուած տողեր։

Եւս մէկ ապշեցուցիչ յայտնագործութիւն. պարզւում է, որ մինչեւ Ռուսաստանին միանալը Վրաստանը չի ունեցել թագաւորութիւն և թագաւոր, այդպէս է համարում հայկական գիտնական Եղովը։ Սակայն, ի՞նչպէս վարուել այդ ժամանակ ռուսական-վրացական յայտարարագրի վրայ գոյութիւն ունեցող վրացական թագաւորի անձնական ստորագրութեան հետ։

Այդպէս աղաւաղում էր Վրաստանի պատմութիւնը և պախարակում վրաց ժողովրդին հայկական ազգայնականների խումբը։

Եւ այդպիսի հիմքի վրայ գոյացած վրացական-հայկական հակառակութիւնը հայկական բուրժուազիայի պարագլուխները անւանում էին իբրեւ դասակարգային պայքար, կործանող ֆէոդալ-հողատէրերի և մանր սեփականատէրերի, այսինքն վրացիների ընդդէմ խոշոր բուրժուազիայի՝ հայերի դէմ պայքար։ Այդ տեսութիւնից, բնականաբար, հետեւում էր, որ իշխանութիւնը պէտք է անցնի առաջատար դասակարգի ձեռքը, այսինքն՝ հայերի։ Ապա թէ ինչու, վրաց ժողովրդի ամէն մի հայրենասիրական շարժումը յօգուտ ինքնավարութեան և անկախութեան՝ այդ պարոնները անւանում էին յետադիմական-ազգայնական շարժում։

Ահա թէ ինչ է գրում այդ խմբի գաղափարախօս Բ. Իշխանեանը իր «Հայ-վրացական հակասութեան տնտեսական և հասարակական հիմքերը» վերնագրուած գրքում. «Ինքնավարութիւնը, իբրեւ մի շրջանի քաղաքական բաժանում, դիմադրում է, խանգարում է նրա տնտեսական-մշակութային զարգացմանը, մանր ազգային բաժանումով դանդաղեցնում է հասարակական համընդհանուր առաջընթացը, մտցնելով համընդհանուր քաղաքացիական ուժերի մէջ տարաձայնութիւն»։ Տրամաբանելով իբրեւ մարքսիստ-ազգայնական, Իշխանեանը անկեղծօրէն մտահոգւում է, որ Վրաստանի ինքնավարութիւնը կը խանգարի այդ երկրում **կապիտալիզմի** զարգացմանը։ Եւ իրապէս, չէ՞ որ հայերը այդ դէպքում կը զրկւեն վրացիների վրայ իշխելու հնարաւորութիւնից, չեն կարողանայ ստրկացնել Վրաստանին, իսկ այդ էլ հէնց կը խանգարի «ժողովուրդների բարեկամութեանը»։ Այո՛, բնականաբար, եթէ «ժողո-

վուրդների բարեկամութեան» տակ թագնուում է մեր երկրի թուլացման ձգտումը, ոչնչացնել նրա անցեալը և զաւթել այն, ապա վրացիների բնական և իրաւազօր ձգտումը՝ դառնալ սեփական երկրի տէր՝ կարելի է գնահատել իբրեւ այդպիսի «բարեկամութեան» դէմ պայքար։

Սակայն, ոչ միայն գաղափարապէս, տնտեսականօրէն եւս ձգտում են մեր «բարեկամները» ոչնչացնել Վրաստանը։ Պատմական փաստերի աղաւաղումը հիմք հանդիսացաւ միայն գործնական քայլերի համար։ 1828 թականին ռուսական կառավարութիւնը Հայաստանից վերաբնակեցրեց թուրքերից յետ վերցրած Վրաստանի (հարաւային) հողերի վրայ 30 հազար հայ (արեւմտեան Վրաստանի այդ հողերի վրայ վրացիներին վերաբնակւել կոմս Պասկեւիչը արգելեց)։

Այդպէս, կոմս Պասկեւիչի կամ, ինչպէս նրան անւանում էին, Երեւանսկու գործողութիւնները բացայայտօրէն համընկնում էին հայ գրողներ Էմինի և ուրիշների գաղափարի հետ՝ Կուր գետի ակունքների և Ճորոխ գետի ձորի (իսկ դա հէնց հարաւային Վրաստանն է) «Մեծ Հայաստանի» պատկանելիութեան հանգմանքի վերաբերեալ։ Իսկ Վորոնցով-Դաշկովի ժամանակներում հայերն արդէն չէին թագցնում իրենց մտաղրութիւնները. կառավարութեանը խընդրանք ուղարկեցին՝ հարաւային Վրաստանի հողերը՝ Բոռչալուի և Ախալքալաքի հողերը յանձնել հայերին, որովհետեւ այդտեղ հիմնականում բնակչութիւնը կազմւած է հայերից։

Այժմ նրանք, հետապնդւողներից և ապաստան խնդրողներից վերափոխուեցին օտար հողերի անշնորհակալ իւրացնողների։ Ի հարկէ, այդ անհիմն յաւակնութիւնը մերժւեց։ Նոյն քաղաքականութիւնը շարունակում էր հայկական **շովինիստ**ների այդ խումբը ե՛ւ խորհրդային իշխանութեան օրօք։ 1922 թականին նրանք ներկայացրին նոր նախագիծ, առաջարկելով Ջաւախքի և Բոռչալուի վրացական հողերը միաւորելով ստեղծել մէկ հայկական վարչական միաւոր։ Ստանալով մերժում, առաջարկեցին նոր տարբերակ՝ Ջաւախքին տալ ինքնավարութիւն, իսկ Վրաստանի Քարայազ-Շիրակեան տափաստանները, ԽՍՀՄի բամբակագործութեան զարգացման համար, բնակեցնել հայերով։

Բարեբախտաբար, նախագծերը չընդունւեցին։ Հայկական գործիչները վերստին վիրաւորւեցին իրենց «միջազգայնական» լաւագոյն զգացմունքների մէջ։ Մեթոդաբար և յամառօրէն տարւում էր հնարաւոր միջոցներով վրացական հողերի կորզման, իւրացման և բնակեցման քաղաքականութիւնը։ Մըտածւած և կազմակերպւած էին գործում **շովինիստ**ները, չէ՞ որ նրանք ղեկավարում էին Ստամբուլում 1918 թականին տպւած «Մեծ Հայաստանի» պատմականօրէն **ֆանտաստիկ** քարտէզով։

Այդ քարտէզի համաձայն, Հայաստանին էին պատկանում Սեւ ծովափից մինչեւ Կասպիական ծովը ընդգրկող հողերը, Բաթումի, Ախալցխէ, Մցխետա և Թբիլիսի քաղաքներով։ Վրացիներին մնում էր մի փոքրիկ շերտ։ Նոյն այդ ժամանակ Ստամբուլում լոյս տեսաւ մէկ ուրիշ քարտէզ։ Ըստ դրա, Վրաստանի և Ադրբեջանի մասից բացի, Մեծ Հայաստանին էր անցնում Թուրքիայի մեծ մասը և ամբողջ հիւսիսային Իրանը։ Ահա թէ ո՛ւմ աչքի առաջ ունէր Գր. Արծրունին, երբ համոզում էր ֆրանսիական թղթակից Կատուլին, որ Հայաստանը ապագայում կ’ունենայ 30 միլիոն հպատակներ։

Դ

1918 թւականին, դաշնակցականների հայկական կառավարութիւնը, ոգեւորուած իրենց երազով, դիմեց գործնական քայլերի, կնքելով պայմանագիր անգլիական **օկուպացիոն** բանակի գերագոյն հրամանատար զօրավար Ռուֆֆեսի հետ, հրաման տւեց իր բանակին անցնել Վրաստանի սահմանը և առաջարկեց վրացիներին առանց այլեւայլութեան ազատել իրենց համար մինչեւ Գորի քաղաքը գտնուող հողերը, նոյն թւում և՛ Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսին։ Հասկանալի է, որ այդ նրանց չյաջողուեց և շուտով, մի քանի զինեալ բախումներից յետոյ, նրանց վռնդեցին Վրաստանից։ Սակայն մի խումբ դաշնակցականների նմանօրինակ գործողութիւնները թանկ նստեցին հայ ժողովրդի վրայ։

Առաջին Համաշխարհային պատերազմի ժամանակ, Թուրքիայի դէմ ռազմական գործողութիւնները հեշտացնելու համար, ռուսական կառավարութիւնը օգտագործեց հայերի **շովինիստ**ական մտադրութիւնները։ Նա գաղտնաբար առաջարկեց նրանց կազմակերպել Թուրքիայում ապստամբութիւն, խոստանալով այդտեղի հայերին ինքնավարութիւն և հովանաւորութիւն։ Հետեւանքը եղաւ այն, որ գազազած թուրքերը ոչնչացրին մեծ թւով հայերի, իսկ փրկւած փախստականներին ռուսական կառավարութիւնը թոյլ չտւեց մտնել Կովկաս։ Այդպիսի դժբախտութիւններ էին թափում սեփական բազմաչարչար ժողովրդի գլխին նրա առաջնորդները և քաղաքագէտները։

1926 թւականին պարզւեց, որ ստամբուլեան քարտէզը չտեղաւորեց իր մէջ հայկական քաղաքական գործիչների ծաւալուն մտադրութիւնները։

Լոյս է տեսնում Խորհրդային Մեծ Հանրագիտարանի առաջին հատորը։ Թերթում ենք էջերը և կարդում ենք «Ա» տառի վերաբերւող նիւթը։ Յանկարծ, աչքերիդ դժւարանում ես հաւատալ, պարզւում է, որ Աբխազիան առաջներում մտնում էր թագաւոր Միհրդատի հայկական տէրութեան մէջ։ Պատմութեանը յայտնի են այդ թագաւորների երկու ճիւղերը՝ Պարթեւեան Միհրդատ թագա-

տրները (Միհրդատ Ա. և Բ., որոնց թագաւորութեան մէջ մտնում էր ինքը՝ Հայաստանը) և Պոնտական, այսինքն Վրացական Միհրդատները։

Յայտնի է, որ հին յոյները Սեւ ծովը անւանում էին Պոնտ, և որովհետեւ Աբխազիան գտնւում է հիւսիս-արեւելեան ափում, ապա պարզ է, որ նա պատկանում էր հէնց Պոնտական Միհրդատներին։ Հետաքրքիր է, ի՞նչպէս Խորհրդային Մեծ Հանրագիտարանի մէջ այդպիսի կեղծիք է տեղ գտել։ Որոշ բաներ կը պարզւի, եթէ յետադարձ հայեացք նետենք և տեսնենք, որ Վրաստանին Ռուսաստանի միացնելուց յետոյ, ցարական յատուկ կարեւոր չինովնիկ (ծառայող) Ի. Խատիսովը և Կատկովը մեծ ջանքերով հայերով բնակեցնում էին Սեւ ծովափը։ Եւ արդէն ամէն ինչ պարզ կը լինի, եթէ անդրադառնանք մեր ժամանակներին։

Հայաստանի կաթողիկոս Վազգէն Ա., բացայայտ քաղաքական գործիչը և ոչ-հոգեւորական մարդը, որը գործում է խորամանկօրէն և գաղտնաբար, կաշառքներով և նւէրներով, վերջերս կարողացաւ Արեւմտեան Վրաստանում, յատկապէս Աբխազիայում բնակեցնել մեծ թւով հայեր։ Աբխազիայում հայեր բնակեցնելու համար մեծ ջանքեր էր թափում նաեւ Քաղբիւրոյի նախկին անդամ ինքը՝ Ա. Ի. Միկոյեանը։ Նրա օգնութեամբ, ինչպէս նաեւ Գաղրայի Շրջկոմի նախկին քարտուղարի օգնութեամբ Սեւ ծովի ափին մեծ թւով հայերին հողեր յատկացւել են ապօրինաբար։ Քարտուղարին, ի հարկէ, պաշտօնից հանեցին, սակայն գործը արւած էր։

Ինչպէս երեւում է, փաստերը համընկնում են։ Յայտնի չէ, հաւատո՞ւմ է արդեօք հայկական ազգայնականների խումբը Աստծուն և ո՞ր Աստծուն է նա հաւատում, սակայն Խորհրդային Մեծ Հանրագիտարանի տողերում տեսնում են նրանք հաւանաբար ապագայ «Մեծ Հայաստանի» նախանշանը և առաքելութիւնը։

Կաթողիկոս Վազգէնը էջմիածնում հաւաքում է արտասահմանից հայտարագիրների ուղարկած հսկայական հարստութիւնները։ Ինչպէս Բալզակի Գոբսէկը, նա փրկութիւնը տեսնում է ոսկու մէջ, իր խառնւածքի մէջ ունենալով Աննայի շահամոլութիւնը և Հաիֆայի իշխանամոլութիւնը, նա օգտւում է բոլոր միջոցներից. օրինակ, բարեկամական կապերը Անվտանգութեան Կոմիտէի հետ, որպէսզի իրաւունք ունենայ անձամբ հրաւէրներ ուղարկել արտասահման։ Յայտնի է նաեւ, որ նա **նարկոտիկ**ների առեւտրով է զբաղւել, ինչի համար նրան հետապնդել է **ինտերպոլը**։

Մի ժամանակ նա յատկապէս նպաստել է Վրաստանում **նարկոտիկ**ների տարածմանը։ Եւ դրա համար էլ չի պատժւել։ Այդ պատճառով բազմաթիւ երիտասարդ վրացիներ **նարկոմանիա**յի զոհ դարձան։

Դաշնակցականների հետեւորդները անխոնջ են, չի՛ դադարել ե՛ւ նրանց պայքարը վրացական մշակոյթի և պատմութեան դէմ: Անգամ խորհրդային իշխանութեան օրօք, մինչեւ օրս էլ տարւում է այդ պայքարը: Կաշառքը, աղաւաղումը, կեղծիքը առաջւայ պէս նրանց սիրւած մեթոդներն են: 1924 թւականին, նրանց կողմից կաշառւեց Վիեննայի պրոֆեսոր Իոսիֆ Ստրչիդովսկին, որը հայկական ճարտարապետութեան մասին իր աշխատանքում հերքում է վրացական ճարտարապետութեան արւեստի ինքնուրոյնութիւնը: Եւրոպայում տարածւել է կարծիք, որ իբր թէ վրացական Աթենի Սիոն, Մարթվիլի և ուրիշ եկեղեցիները կառուցւել են Հռիփսիմէի հայկական եկեղեցու (7 դար) օրինակով: Եւ միայն 1967 թւականին վրացական խոշոր գիտնական Գ. Չուբանիչվիլին իր «Որոնումներ հայկական ճարտարապետութեան վերաբերեալ» աշխատանքում, իսկ դրանից էլ անմիջապէս յետոյ, արեւմտագերմանական գիտնական Զեդլմայիրը ապացուցեցին, որ, ընդհակառակը, հայկական Այաննա, Արամուսա, Ս. Հռիփսիմէ, Սիսանա, ինչպէս նաեւ վերը նշւած վրացական եկեղեցիների իրապէս հիմք է ծառայել Մցխետի Ձւարին՝ Ջ. Դարի վրացական յուշարձանը:

Ճիշտ է, ինչ որ անյայտ մարդիկ հոգացել են այն մասին, որպէսզի գիրքը լոյս տեսնի քիչ տպաքանակով և յետոյ էլ համարեա թէ արգելւեց: Իսկ վերջերս, Մոսկւայում, «Վոենիզդատ»ը (Զինւորական հրատարակչութիւն) հսկայական տպաքանակով լոյս ընծայեց Վերմիչեւի «Ամիրսպասալար» գիրքը, որում անխղճօրէն աղաւաղում են պատմական փաստերը, վիրաւորւում է վրացիների սրբութիւն սրբոցը: Գիրքը ներկայացնում է Թամարա թագուհու դարաշրջանը (նկատենք, որ Ռուսաստանում ոչ մէկ անգամ չեն տպագրել վրացական յայտնի գրող Կոնստանտին Գամսախուրդիայի պատմական վէպերը, որոնցում փառաբանւած է վրաց ժողովրդի հերոսական անցեալը):

Վրաստանի մշակոյթի, հոգեկան զարգացման և քաղաքական հզօրութեան դարաշրջանը հանդիսանում է Թամարա թագուհու ժամանակը (12 դար): Այո, դա արժէքաւոր թիրախ է: Եթէ կարելի լինի սեւացնել Վրաստանի պատմութեան հէնց այդ ժամանակաշրջանը, հաւասար է ցանկալի արդիւնքների հասնել: Առասպելի ասպարէզից քաջարի հերոսների արեւային գեղեցկուհու աստւածացման առասպելը երազից և առասպելի սահմաններից դուրս է եկել և այստեղից իրական պատմական հիմք է ստացել: Թամարային գովաբանել են ոչ միայն վրացիները, այլեւ ամբողջ Ասիան, խաչակիրների ամբողջ Եւրոպան: Նրան մինչեւ այսօր էլ աստւածացնում են Վրաստանում: Ոչ, այստեղ խօսք չի կարող լինել «աւատատիրական գաղափարախօսութեան վերապրուկների» մասին, կամ էլ, «վրացական միապետութեան երազների» մասին:

Նա այնպիսի պարզութիւն և կատարելագործութիւն է, որ բոլոր սոցիալական վարչակարգերից էլ բարձր է կանգնած։ Նա՝ մինչեւ օրս էլ կնոջ իդէալն է։

Եւ հէնց այդ բարոյական վեհութիւնն էլ ցանկացել է սեւացնել Վերմիշեւը։ «Ամիրսպասալար»ում Վերմիշեւը Թամարա թագուհուն ներկայացնում է իբրեւ մէկ խղճուկ կնոջ, որը հաւատք չունի ոչ մէկի հանդէպ՝ ոչ իր ազնուականների և ոչ էլ իր ամուսնու հանդէպ, այլ միայն իր զօրավարներից մէկի՝ «հայ» Զաքարիա Մխարգրձելուն է նա հաւատում։ Մնացածները ոչինչ են նրա առջեւ։ Պարզւում է, որ նա ստեղծել է հայկական զօրք, որով էլ պայմանաւորւած է եղել Վրաստանի ամբողջ ուժը։

Ինչո՞ւ է Վերմիշեւը այդպէս փառաբանում Զաքարիային։ Որովհետեւ դարձնում է նրան հայ։ Իրականում, Զաքարիան քուրդ է (փոքր Ասիայում բնակւող ազգութիւն), լինելով քաջ զինւոր, սակայն թագուհու մօտ միակը չէր, որին Թամարան նշանակեց, իր պապի հօր՝ Դաւիթ Շինարարի կողմից պարսիկներից յետ խլած հայկական բնակավայրերի տիրակալ։ Հետաքրքիր է նաեւ իմանալ, որ ներկայումս Վրաստանի թերթերում և հանդէսներում արգելւած է հրատարակել յօդւածներ՝ Վրաստանի հերոսական անցեալի վերաբերեալ, դա, իբր թէ «անցեալի իդէալականացում է», որ առաջ է բերում «ազգայնականութիւն»։

Արգելւած է հրապարակել արտասահմանեան հեղինակների յօդւածները հին վրացական արուեստի, հին մշակոյթի մասին, առհասարակ։ Այսպէս, օրինակ, վերջերս, **«Սարչոտա Խելովներա»** (Խորհրդային արուեստ) հանդէսի խմբագրութիւնը ստացել է արեւմտագերմանական ժամանակակից գիտնական Հանս Զելդմայիրի յօդւածը վրացական ճարտարապետութեան մասին։ Հեղինակը բարձր գնահատական է տւել վրացական ճարտարապետութեանը և հաստատում է, որ վրացական ճարտարապետութիւնը հանդիսանում է եւրոպական ռոմանական ճարտարապետութեան նախապատկերը։ Վրաստանում 4-5 դար աւելի վաղ ստեղծւած տաճարների կարելի է հանդիպել, որոնք նման են 9րդ դարում ստեղծւած Կատալոնիայի ռոմանական տաճարներին։ Հեղինակը վրացական ճարտարապետութեան կապակցութեամբ մշակել է նոր անւանում՝ «արեւելեան ռոմանտիկա»։

Սակայն այդ յօդւածը խմբագրութեան կողմից չընդունւեց։ Աւելի ուշ, խմբագրութեան աշխատակիցներից մէկին յայտնի դարձաւ, որ խմբագրութիւնը գաղտնի կարգադրութիւն ունի Վրաստանի պատմական անցեալի վերաբերեալ ոչինչ չտպել։ Օրինակ է բերւել այն, որ վերջերս մէկ հեղինակի մերժել են, որը Թամարա թագուհու մասին է գրել մի թատերական երկ։ Որովհետեւ խօսքը Թամարա թագուհու մասին գնաց, արժէ եւս մի քանի որոշակի բաներ ասել։

Վերջերս, Վրաստանի Կոմկուսի Կենտկոմի քարտուղարը քաղաքային կուսակցական **կոնֆերանս**ում քննադատեց Կենտկոմի անդամ Ռ. Մետրվելուն գիտական աշխատանքներում թոյլ տուած սխալների համար (Ռ. Մետրվելին պատմաբան է)։ Սակայն չէր մատնանշուել, թէ ի՞նչ «սխալների» համար են նրան քննադատել։ Պարզապէս ակնարկել են նրա ազգայնականութեանը։ Գործը հետեւեալն էր։ 1966 թականին, Ռուսթաւելու յոբելեանի կապակցութեամբ, Ռ. Մետրվելին հրապարակեց «Թագուհի Թամարան վրացական ֆոլկլորում» յօդուածը, որտեղ նա մէջբերում է Թամարային նուիրուած ժողովրդական բանաստեղծութիւնները և նշում է վրացական ժողովրդի սէրը հանդէպ նրան՝ իր ժամանակի վերին աստիճանի կրթուած կնոջը, որին վրաց ժողովուրդը համարում է սուրբ (իսկ եկեղեցին դասել է սրբերի շարքին)։

Թամարա թագուհին իրագործել է հսկայական պատմական առաքելութիւն, նա երկար ժամանակով դադարեցրել է թուրքական զաւթողագործութիւնը Կովկասում։ Ռուսթաւելին նրան է նուիրել իր պոէմը, նրան գովերգել են աշխարհի խոշորագոյն բանաստեղծները, և ահա այսօր մեզ խորհուրդ են տալիս վատաբանել նրան, հայհոյել գիտական ուսումնասիրութիւններում։ Ոչ վրացական աղբիւրները, ոչ էլ ուրիշ ժողովուրդների աղբիւրները չեն պատմում մեզ նրա բացասական կողմերի մասին։ Ապա ի՞նչ անել գիտնականին, հնարե՞լ, ինչ է, նմանօրինակ «բացասական կողմերը»։

Ռ. Մետրվելուն քննադատել են ահա թէ ինչի համար։ Ի՞նչպէս ես համարձակւում ապացուցել, որ ժողովուրդը սիրել է թագուհուն։ Չէ՞ որ թագուհին անպայմանօրէն պէտք է լինի հրէշ, բռնատէր, ժողովրդին ճնշող։ Չէ՞ որ այդ է ուսուցանում մարքսիզմը։ Այո, մարքսիզմը սովորեցնում է նաեւ շատ ուրիշ բաներ։ Նոյն այդ **կոնֆերանս**ում, մանկական «Դիլա» հանդէսի խմբագիր, բանաստեղծ Մ. Մաչաւարիանին քննադատուեց այն բանի համար, որ նա լոյս է ընծայել մանկական օրացոյց Վրաստանի պատմութեան վերաբերեալ տեղեկութիւններով։ Ի՞նչ պէտք է անես, մարքսիզմը արգելում է գիտենալ հայրենի երկրի պատմութիւնը, սիրել այն և յարգել։ Կարծես թէ բաւական չէ այն, որ ներկայումս վրացական դպրոցներում արդէն առաջին դասարանից սկսում են սովորեցնել ռուսերէնը և այդ նպատակի համար պակասեցնում են **ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶԻԻ** և **ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ** համար յատկացուած ժամերը (կարծես թէ չէր կարելի պակասեցնել ուրիշ առարկաների ժամերը)։

Ահա թէ ինչպիսին է վրաց ժողովրդի ռուսականացման և ազգաձուլման գաղտնի քաղաքականութիւնը։ Նոյն այդ նպատակի համար արեւմտեան Վրաստանում կառուցւում է Ինդուրի գետի վրայ ամենաբարձր ջրամբարը և «Ինդուրգէսը», որի էլեկտրաէներգիայից Վրաստանը, ամենայն հաւանականութեամբ, ոչինչ չի ստանայ։ Սակայն դա հիանալի առիթ է, որպէսզի Ինդուր-

գէսի շինարարութեան համար ստեղծուեն ամբողջապէս ռուսական բնակավայրեր և բազմապատկի արեւմտեան Վրաստանում ռուսական բնակչութիւնը (կարծես թէ բաւական չէ Կոլխիդեան դաշտավայրը ռուսական բնակչութեամբ լցնելը)։

Նոյնպիսի ջրամբար է կառուցւում Թբիլիսիից ոչ հեռու՝ Ժինվալգէսը։ Սակայն, հարկաւոր է նշել, որ Ինդուրգէսը, մի քանի մասնագէտների կարծիքով, բաւականին վտանգաւոր կառոյց է։ Դա հսկայական ջրամբար է, սարերում ստեղծուած, ռմբակոծութեան կամ որեւէ ուրիշ անսպասելի պատճառով կարող է վնասւել և այդ դէպքում ամբողջ Կոլխիդեան դաշտավայրը ջրով կը ծածկւի, այսինքն ամբողջ արեւմտեան Վրաստանը և կը զոհւեն միլիոնի մօտ մարդիկ։ Հարկաւոր է նաեւ նշել, որ Թուրքիան մէկ անգամ չէ, որ բողոքել է այդ ջրամբարի կառուցման դէմ, երկիւղելով իր հողերի համար։ Նման վտանգ է սպառնում «Ժինվալգէսը» Թբիլիսիին։

Սակայն Վրաստանի եղեռնը ոչ մի բանով չի անհանգստացնում խորհրդային էլեկտրիֆիկատորներին, չէ՞ որ գլխաւորը՝ էլեկտրաէներգիան է, քանզի Լենինը սովորեցնում էր, որ «կոմունիզմը՝ դա խորհրդային իշխանութիւնն է, **պլիւս** ամբողջ երկրի էլեկտրիֆիկացումը»։ Նոյն նպատակով կառուցեցին Վրաստանում, Ստալինի օրօք, Ռուսթաւիի մետաղաձուլական և Գորիի բամբակագործական **կոմբինատ**ները (այնտեղ նոյնպէս՝ ստեղծւում էին ռուսական մեծ աւաններ)։

Յայտնի է, որ Վրաստանը շատ հարուստ է մշակոյթի յուշարձաններով, այդ երկրում կան 5.000ից աւել միջնադարեան ճարտարապետութեան և գեղարուեստի նշանակալից յուշարձաններ։ Վրաստանի ԽՍՀ մշակոյթի նախարարութեան կից գոյութիւն ունի այսպէս կոչւած «Յուշարձանների և պատկերաւոր արուեստի պահպանութեան վարչութիւն»։ Սակայն յուշարձանների մեծամասնութիւնը կործանւում է անուշադրութեան պատճառով, առանց վերանորոգման, առանց գրանցելու։ Բոլոր միութենական հանրապետութիւններում նման վարչութիւններին կից գոյութիւն ունի յուշարձանների պահպանման տեսչութիւն, իսկ վրացական վարչութեան կից նման տեսչութիւն գոյութիւն չունի։ Կայ միայն մէկ «տեսուչ», որը գրեթէ քաղաքի սահմաններից երբեք դուրս չի գալիս յուշարձանները տեսնելու, նրանց վիճակը վերահսկելու, չի ստուգում, թէ ինչպէս են օգտագործւում յուշարձանների համար յատկացւած պահապանների պաշտօնացանկը։

Անուշադրութեան պատճառով կործանւում է Դաւիդ-Գարեջա վանքը, որը կերտւած է ժայռերի մէջ (6 դար), այնտեղ ոչնչանում են 9-12 դարերի եզական որմնանկարները։ Ոչ վերանորոգում, ոչ վերահսկում, օրէց օր աւելանում են որմնանկարների վրայ գրոց-բրոցները, պատճառ դառնալով հէնց նրանց

ոչնչացմանը, իսկ Վրաստանի մշակոյթի նախարարութիւնը ահա 8 տարի է որ մշակում է այդ յուշարձանի պահպանման և վերականգնման ծրագիրը (հետաքրքիր է իմանալ, որ տաճարի վերականգնման համար յատկացուած 75 հազար ռուբլին վարչութեան պետ Տ. Կանզելակիի օրօք անյայտ կերպով «հալւել» են)։ Ընդ որում, Դաւիդ-Գարեջա վանքի բակում տեղաւորուած է հրետանային հրաձգարան, վերջերս վանքի քարայրի պատերի վրայ նկարուած որմնանկարները օգտագործեցին իբրեւ թիրախ, իսկ զինւորները առանց որեւէ վերահսկողութեան քանդում են քարայրի հողերը, «գանձեր» են փնտռում և այլն։

Կործանւում է Ուպլեցիխէի **անտիկ** քաղաքը, որը նոյնպէս ժայռերում է կերտուած, ոչ մի օգնութիւն չկայ, միայն վերջերս սկսւեցին յուշարձանը ամրացնելու համար աշխատանքները։ Ոչ հեռու, գտնւում է ստորգետնեայ օդանաւակայան, որի ինքնաթիռները թռչելու ժամանակ այնպէս են տատանում հողը, որ քարայրի կառոյցը քար ու քանդ է լինում։ Վերջերս հրաշքով փրկւեց Գելաթի վանքը՝ 12րդ դարի հրաշալի որմնանկարներով ու Կինցվիսի վանքը (12 դար)։

Գելաթի վանքին սպառնում էր ոչ հեռու գտնւող սպիտակ քարի հանքը, որտեղ կատարւում էին պայթիւններ, մանաւանդ որ Կինցվիսի վանքի տանիքը փտել է և ոչ ոք չի հոգում փոխել այն։ Վերանորոգող արհեստանոցի վարիչ Գ. Գոցիրիձէն, «խաբելով» նախարարութիւնը և վարչութիւնը, ասել էր, որ ինքը վերանորոգել է վանքի տանիքը։ Սակայն, 1973 թւականի աշնանը, վանքը ստուգելու ժամանակ պարզւեց, որ տանիքը առաջւայ պէս խարխուլ է, անձրեւը կաթում է և կարող է վնասել եզական որմնանկարներին, նոյն թւում և յայտնի «Կինցվիսի հրեշտակ»ին։

Ե

Յուշարձանների Պահպանութեան Վարչութեան պետերի, **ինժեներ**ների և այլ պաշտօնների են նշանակւում դիտաւորեալ կերպով կաշառակերներ, կեղտոտ մարդիկ, որոնք ոչնչացնում են յուշարձանների համար յատկացուած պետական միջոցները, իսկ յուշարձանները անուշադրութեան մատնւած կործանւում են։ Այդ ամենի հանդէպ կառավարութիւնը փակում է աչքերը և անգամ գաղտնաբար նպաստում է այդպիսի ընթացքին։ Եւ, ի հարկէ, շատ հետաքրքիր է, թէ հանդիսանո՞ւմ է դա արդեօք Վրաստանի դէմ պայքարելու անուղղակի ճանապարհ։

Հետաքրքիր է գիտենալ, որ Վրաստանի մշակոյթի նախարարութիւնում **կադր**երի բաժինը ղեկավարում է հայազգի Ռ. Վախտանգովը՝ թունդ չեկիստ և Վրաստանի մշակոյթի բացայայտ թշնամին։ Նա վերահսկում է ամբողջ նա-

խարարութիւնը, նա նախարարութեան «գրաքննողն» է՝ Մոսկուայից նշանակուած։ Նա՝ Վրաստանում հայկական **շովինիզմի** ծրագրերի իրագործման հիմքն է, ինչը յատկապէս արտայայտւում է նրանում, որ նա ամէն կերպ ձգտում է բազմապատկել վրացական երաժշտական դպրոցներում, ուսումնարաններում և ուրիշ ձեռնարկութիւններում հայկան **կադր**երը (յայտնի է, որ Վրաստանում, 19րդ դարում, գրաքննողները միշտ էլ եղել են հայերը, այդպէս շարունակւում է է՛ւ այսօր, «**գլաւլիտ**ները» մեծ մասամբ հայերն են)։ Ռուսական **շովինիզմ**ը միշտ էլ համարել է հայերին սեփական քաղաքականութեան համար աւելի վստահելի, քան վրացիներին։

Այդպիսով, Վրաստանի հին մշակոյթի շատ յուշարձաններին բացայայտօրէն սպառնում է ոչնչացում։ Դժւար է այստեղ մեղաւորին գտնել, քանզի ամէնը քողարկւած է, սակայն փաստ է, որ յուշարձանները կործանւում են, նրանք անուշադրութեան են մատնւած, չեն վերականգնւում։ Ժողովրդի մշակութային արժէքների ոչնչացումը նշանակում է հէնց ժողովրդի ոչնչացում։ Օրինակ, 1974 թւականի ծրագիրը կամ տիտղոսային ցուցակը ընդգրկում է մօտաւորապէս 20 յուշարձան, որոնք հարկաւոր է վերանորոգել կամ վերականգնել։ Միեւնոյն ժամանակ, երկրում յուշարձանների թիւը 5 հազարից աւել է։ Ընդ որում, աշխատանքները իրագործելու համար, նախատեսւած միջոցները ուռճացւած են լինում, որպէսզի կարելի լինի աւելի շատ կորզել սեփական գրպանի համար, փոխարէնը հարկաւոր պիտի լինէր նախահաշիւ կազմել համեմատաբար աւելի խղճով, բայց շատ յուշարձանների համար։

Վերջերս, մոսկովեան **«Կոմսոմոլսկայա Պրաւդա»** թերթում հրատարակւեց «Բահը և որմնանկարները» վերնագիր կրող յօդւածը, որտեղ խօսւում է, թէ ինչպէս աբխազեան «հնէաբան» Շերվաշիձէն ոչնչացնում է վրացական միջնադարեան որմնանկարներով տաճարները (թիւրիմացաբար թերթը այդ տաճարները անւանում է աբխազական)։

Դա աչք ծակող օրինակներից մէկն է, երբ կենտրոնից հեռու, դիտումնաւոր կերպով ոչնչացնում են վրացական մշակոյթի յուշարձանները։ Դա, իբր թէ, արդէն «աբխազական» հող է, ինչո՞ւ այնտեղ պէտք է լինեն վրացական յուշարձանները։ Ճիշտ նոյնպէս, Ստինգիլոն արդէն աղրբեջանական հող է, դրա համար էլ այնտեղ պայթեցրին 12 դարի վրացական տաճարը (Ալիաբադ գիւղում)։ Սակայն, հէնց հարաւային Վրաստանում, Դմանիսի շրջանում, երեք տարի առաջ պայթեցւեց հին եկեղեցին։ Ինչ կարող ես անել, այնտեղ բնակչութեան մեծամասնութիւնը աղրբեջանցի է և այդ պատճառով էլ վրացական ճարտարապետութեան յուշարձանները պէտք չէ այնտեղ լինեն։

Բերենք եւս մէկ օրինակ։ Վրաստանի ձեռագրերի **ինստիտուտ**ում պահւում են եզական միջնադարեան ձեռագրեր մեր հարուստ եկեղեցական գրականու-

թեան և պատմութեան վերաբերեալ նիւթերով: **Ինստիտուտի** համար կառուցեցին նոր շէնք, սակայն, ինչպէս միշտ, «տնտեսեցին» միջոցները և կառուցուած շէնքը ոչ մի դէպքում յարմար չէ ձեռագրերը պահելու համար: Այդ պատճառով էլ ձեռագրերը ծածկւել են բորբոսով և կործանւում են: **Ինստիտուտի** ղեկավարութիւնը ամէն կերպ թագցնում է վիճակը, պատասխանատուութիւնից խուսափելով և, ձեռագրերը փրկելու համար, ոչ մի վճռական քայլի չի դիմում: **Ինստիտուտում**, ժամանակ առ ժամանակ, գլխաւոր պահարանների բանալիներն են անհետ կորչում, որտեղ պահւում են ձեռագրերը, ինչ որ մէկի անտեսանելի ձեռքը ոչնչացւում է միշտ գիտնականների սեղանների վրայ գտնւող աշխատութիւնները, երբ նրանք բացակայում են, այնպէս որ գիտնականները ստիպւած են աշխատասենեակները բանալիով փակել, երբ անգամ հինգ րոպէով դուրս են գալիս:

Եւ ահա հարց է ծագում, ձեռագրերը չէ՞ն ոչնչացւում նոյնպէս կանխամտածւած ձեւով, ինչպէս կրօնը, ճարտարապետութեան և գեղարուեստի յուշարձանները: Չի՞ հանդիսանում արդեօք դա նոյնպէս հակավրացական դաւադրութիւն:

Մենք դիմում ենք Խորհրդային Միութեան և ամբողջ աշխարհի առաջատար մտաւորականութեանը՝ գիտնականներին, մշակոյթի գործիչներին, պետական գործիչներին, բոլոր նրանց, ովքեր չեն նայում կեանքին չոր հաշւարկով, ում մէջ բնական հարստութիւնների հանդէպ ագահութիւնը չի սպանել մարդասիրական զգացմունքները, փրկել Վրաստանը ժամանակակից մեծապետական **իմպերիալիզմ**ից և ռուսական ու հայկական **շովինիստ**ների դաւադրութիւնից, որոնք հաւաքւել են ԿԳԲի հովանու տակ, գործելով գաղտնաբար, բայց արդիւնաւէտօրէն:

Մենք արժէքաւորում ենք հոգեկան կեանքը ֆիզիկական գոյութիւնից ոչ պակաս: Եւ Վրաստանի պատմութեան ու մշակոյթի հանդէպ վերաբերմունքը մեզ համար կենսականօրէն կարեւոր նշանակութիւն ունի: Ոչ միայն Ռուսաստանում, այլեւ յատկապէս Արեւմուտքում հայ տարագիրների կողմից գրւում են գրքեր և հրատարակւում են յօդւածներ, որոնցում դիտմամբ աղաւաղւում են Վրաստանի վերաբերեալ տւեալները:

Դրա համար էլ լաւ կը լինի, եթէ արեւմտեան ընթերցողը մանրազնին ստուգի Վրաստանի վերաբերեալ բոլոր գիտական և գեղարուեստական նիւթերը և տեղեկութիւնները:

Եւ, վերջապէս, ամենավերջին նորութիւնները:

1973 թւականի Մայիսի 9ին, ցերեկւայ ժամը 2ի մօտ, անսպասելի վառւեց Թբիլիսիի օպերայի շէնքը: Շէնքը ամբողջովին վառւեց, որովհետեւ, կարծես թէ դիտումնաւոր կերպով, այդ օրը շէնքի ջուրը կտրւած է եղել և տեղական

հրշէջները ոչինչ չկարողացան անել, քանզի ջուրը չգտնուեց անգամ յատուկ աւազաններում: Հրդեհը սկսուեց անսպասելի **պարտեր**ի մի քանի տեղերում: Հրդեհից յետոյ կալանքի վերցուեցին երկու հայեր: Դրանցից մէկը առաջներում աշխատել է օպերայի թատրոնում: Այդ պատահեց հէնց Դաշնակցային Գերմանիայի մշակոյթի գործիչների հետ, Վագների «Լոէնգրին» ներկայացումի համատեղ աշխատանքներից յետոյ, երբ թատրոնի խումբը ձեռք բերեց յատկապէս մեծ ստեղծագործական յաջողութիւններ:

Հետաքրքիր է, որ վրացական ԿԳԲ ամէն կերպ թագցնում է, որ շէնքը հրդեհել են հէնց հայերը: ԿԳԲ լուրեր է տարածում, որ դա իբր թէ իրագործել են հէնց վրացիները, Կենտկոմի քարտուղար Շեւարդնաձէի հանդէպ ատելութեան զգացմունքներից ելնելով: Սակայն, «մախաթը պարկում չես թագցնի»: Վրացական յայտնի մէկ երգիչ, պատահաբար գտնուելով օպերայի շէնքի մօտ, հրդեհից 10 րոպէ առաջ, նկատել և ճանաչել է այնտեղից դուրս փախչող երկու հայերին, որոնք ե՛ւ հետագայում ձերբակալուեցին:

Ահա թէ ինչպէս են հասկանում որոշակի մարդիկ «լենինեան ազգային քաղաքականութիւնը»,- լարել իրար դէմ փոքր ժողովուրդներին, որպէսզի յետոյ իրագործեն «բաժանիր և տիրիր» սկզբունքը:

Մենք ցանկանում ենք բարի խորհուրդ տալ հայկական **շովինիստ**ների խմբին. մի ձգտէք բարձրացնել հայկական մշակոյթը, վրացական մշակոյթը ստորացնելով և ոչնչացնելով: Դա անբաւարար և անյուսալի ճանապարհ է: Թողէք ձեր երազները «Մեծ Հայաստանի» վերաբերեալ: Գիտցէք, որ առաջներում ձեզ փրկող վրաց ժողովուրդը, որպէս հաւատարիմ, մօտիկ բարեկամ, կ՚օգնի ձեզ ե՛ւ ապագայում:

Արդէն 50ից աւելի տարի Վրաստանը խորհրդայի է: 24 թւական: Կոմունիստները գիտեն, որ Վրաստանում պատրաստւում է ապստամբութիւն: Նրանք կարող են նախազգուշացնել և կանխել այն: Սակայն ոչ, Ստալինը հրաման է տալիս՝ «թոյլ տալ և սովորեցնել»: Ասւած է և արւած է: Ապստամբութիւնը խեղդւած է արեան մէջ, զանգւածային ձերբակալութիւններ, գնդակահարումներ: 24, 33, 37, 51 թւականներին երկիրը կրեց սարսափելի կորուստներ: Վրաստանում, ինչպէս ե՛ւ ամբողջ Միութիւնում, իրագործուեցին այնպիսի ճնշամիջոցներ և սպանդանոց, որ դժւար է դրանք համեմատել, բացի հիտլերեան գազանութիւններից, որեւէ ուրիշ բանի հետ: Յայտնի է, որ հաւատաքննութիւնը իր 300 տարւայ գոյութեան ընթացքում 400 հազար մարդ է մահապատժի ենթարկել, իսկ Խորհրդային Միութիւնում 40 տարւայ ընթացքում ոչնչացւել են միլիոնաւոր մարդիկ: Ընդ որում, ամէն տեսակի դժգոհութիւն արգելւած էր:

Ստալինի մահից յետոյ վիճակը համեմատաբար լաւացաւ։ Չէ՞ որ կառավարութիւնը նոյնպէս յոգնել էր մշտական վախից և արեան հոտից, նա նոյնպէս երազում էր հրաբխից հանգստանալ, որի վրայ երկար տարիներ նստած էր, երազում էր քաղցր քնել։ Զանգւածային գնդակահարութիւնները դադարեցուեցին։ Չդադարեցուեցին միայն հետապնդումները նրանց հանդէպ, ովքեր շարունակում էին մերկացնել ստալինեան ընթացքը։ Սակայն Վրաստանում, 1956 թւականի մարտի 9ին տեղի ունեցաւ վրդովեցուցիչ դէպք. երիտասարդական ցուցարարների դէմ դուրս բերուեցին հրասայլային ստորաբաժանումներ և Թբիլիսիի փողոցներում սպանուեցին մօտաւորապէս 500 երիտասարդներ։

Առաջներում երեխաներին դպրոցական նստարաններից ներշնչում էին, որ Ստալինը աստւած է, և յանկարծ նրանց յայտարարեցին, որ նա անպէտք է։ Երիտասարդութիւնը սկսեց բողոքել, յետոյ բողոքը հայրենասիրական բնոյթ ստացաւ, առաջ էին քաշւում հայրենասիրական կոչեր՝ Վրաստանի ինքնորոշման վերաբերեալ։ Ի պատասխան իշխանութիւնները իրագործեցին ցուցարարների գնդակահարութիւն և բազմաթիւ ճնշամիջոցներ։ Այդ իրադարձութիւններից յետոյ, ընդհուպ մինչեւ օրս երիտասարդական շարժումը Վրաստանում չի դադարում։ Վիշապը դեռ չի ուժասպառւել։ Նա ԿԳԲ ժանիքներով, խորհրդային մամուլի թունաւոր զրպարտչական երախով, համբաւի թունաւորւած լեզւով դեռ սպառնում է, ստում է, սարսափ է սերմանում։

Սակայն վիշապը կարող է օգտակար լինել նրան, ով չի վախենում նրանից, ով բարոյալքւած չէ, ում մօտ չի սպառւել մերձաւորի հանդէպ սէրը և չի մթագնել գիտակցութիւնը։ Նման մարդիկ ոտքերով կարող են հեռացնել վիշապին, այդպիսիների համար նա հանդիսանում է արիութեան և սխրագործութեան ծնունդ առնելու պատճառ։ Շատերին սպանեց վիշապանման էակը՝ Ստալինը, շատերը ընկան նրա առջեւ։ Մենք չէ որ պիտի նրանց դատապարտենք։ Բայց եղան ե՛ւ չպարտւածներ, վիշապի դէմ պայքարող՝ կոփւածներ, նրանք նրա գարշելի գործերի էութիւնը բացայայտեցին բոլորի համար։ Այդպիսիներից մէկը՝ Սոլժենիցինը, ոչ միայն մեծ ռուս գրողը, այլեւ արիութեան մեծ ուսուցիչը, կեղծիքի և սարսափի չարագործին խփողը։ Ո՞վ կարող է մօտենալ նրան։ Միայն նա, ով կը համարձակւի ապրել մահի և կեանքի եզրին։

Մարդկութիւնը, որոնելով իրեն համար շղթաներ և կաշկանդւածութիւն, ինքն է ստեղծում և իրեն համար Ստալին է գտնում։ Սակայն Մարդը անգամ ամենասարսափելի վարչակարգի օրօք կարող է ներքուստ ազատ մնալ։ Շատերին է յայտնի այդ ճշմարտութիւնը, բայց, ցաւօք, միայն շատ քչերն են կարողանում իրագործել դա իրական կեանքում։

Վերջին տարիների ընթացքում մեծառուսական շովինիզմի **սառոյցը** սկսեց հալչել և ռուսական մտաւորականութեան մէջ գտնւեցին մարդիկ, որոնք կա-

րեկցանքով են դիտում փոքր հանրապետութիւնների ճակատագիրը և անգամ պայքարում են նրանց իրաւունքների և անկախութեան համար: Այդպիսիք են Սոլժենիցինը, Սախարովը և ուրիշները: Նրանք պահանջում են Սահմանադրութեան կարեւոր կէտի կատարումը՝ ամէն մի հանրապետութեան ԽՍՀՄի կազմից դուրս գալու իրաւունքի վերաբերեալ:

Ահա թէ ինչ է գրել ռուս գրող Անդրէյ Բելին.

«… Ես մէկ անգամ չէ որ լսել եմ, որ վրացիները, քթները տնկած, նեղում են ռուսներին, չգիտեմ, չեմ տեսել, իմ **կողակ**ս, յստակօրէն արձանագրելով, չի բացայայտել վրացական «ազգայնականութեան» կողմերը. վրաց ժողովուրդը ինձ ներկայացաւ գեղեցիկ կողմով, կենսական, պայծառ ապագայով, միախառնելով շատ հինաւուրց մշակոյթը (օ, շատ աւելի հին, քան մերը), և ես վիրաւորւում եմ մինչեւ օրս էլ տարածւած տխմար **անեկդոտ**ներ լսելով, որոնցում ծաղրւած են «արեւելեան մարդիկ»: Վրացիներից մենք շատ բան կարող էինք սովորել՝ նրանց նրբազգացութիւնից, սրտբացութիւնից, ինքնազսպութիւնից, որը պայմանաւորւած է իրական, այլ ոչ թէ ծիծաղելի պարզասրտութեամբ: Երբ ինձ ասում են վրացական «ազգայնականութեան» մասին, ես չեմ լսում. «ռուսական ասեղը»՝ թագնւածը զգում եմ, դա թագնւած կոտոշ է՝ իսկական ռուսական ցուլի կոտոշ. վրացական «կոտոշներ» ես չեմ տեսել. ես տեսել եմ ուրիշ «կոտոշներ», որոնցից, հին սովորութիւնների համաձայն, բարեկամաբար խմում են, եղբայրանալով գինով և զրոյցով:

Զ

«Ռուսներին վրացիները վերաբերւում են շատ սիրաբար, մեր արուեստի միջոցով, Պուշկինի, Վրուբելի, Լերմոնտովի միջոցով՝ մենք արդէն եղբայրացած ենք: Ով նրանց սիրում է՝ սիրում է Վրաստանը. ով Վրաստանն է սիրում՝ նա վրացի է զգում: Եւ լսելով այն մասին, որ վրացիները նեղում են մեզ, ես մտածում եմ. «Եղբայր իմ, չարժէ ուրիշին մեղադրել, եթէ քո մռութն է ծուռ»… … Վրացիների արիւնը շատ հին գինի է, որը այդպիսին է դարձել բազմաթիւ տանջանքների շնորհիւ, մենք դեռ մորթիներով էինք ման գալիս, երբ Վրաստանը արդէն շատ տանջանքներ էր կրել, առաջինը ընդունելով մոնղոլների և պարսիկների հարւածները…

«… Եւ ամբողջ Վրաստանը երգ է. մեղեդին ազնւաբարոյ, բառերը շատ խիստ և տխուր: … Այո, Վրաստանը յագենում էր մշակոյթով, երբ մենք դեռ անտառներում մոլորւած գազանների պէս թափառում էինք. նրանք աւելի մեծ են, մենք պէտք է շատ բան սովորենք նրանցից» (Ա. Բելիյ, **«Վետեր Կաւկազա»**, 1928 թ.):

Բարեկամութիւնը պէտք է սրտից բխի: Գոյութիւն չունի բռնութեան, քարոզչական-վարչական միջոցառումների վրայ հիմնւած բարեկամութիւն:

Վրաստանը դէմ չէ Ռուսաստանի հետ բարեկամութեանը, ինչպէս նաեւ՝ միւս ժողովուրդների հետ: Մեզ ծանօթ է ռուս ժողովրդի պարզութիւնը և սրտակցութիւնը: Սակայն ծանօթ է նաեւ նրա չափից դուրս վստահութիւնը, կառավարութեան հպատակելը:

Ինչո՞ւ ռուս քաղաքացին պէտք է բնական համարի, որ ռուսական զօրքերը Չեխոսլովակիայում կամ ուրիշ երկրներում են կանգնած: Լա՞ւ է արդեօք, երբ քո ընտանիքի մէջ կամ տուն է ներխուժում հարեւանը, բարեկամութեան կամ սիրոյ պատրւակի տակ ցանկանում է տիրել ձեր կնոջը անդամալուծում է և ճնշում է ձեր կամքը: Եթէ Ռուսաստանը համարում է, որ նա ազատագրել է արեւելաեւրոպական երկրները ֆաշիստներից, ապա թող ազատագրի նրանց իր զօրքերից: Այդպէս են վարւել միշտ իրական ասպետները, օգնելով թոյլերին, նրանք երբեք չեն ստրկացրել նրանց: Քամի սերմանողը, փոթորիկ կը ստանայ: Եթէ Ռուսաստանը չարժանանայ փոքր ազգութիւնների համակրանքին, գալիք համաշխարհային աղէտների դէպքում նրան մենակ կը թողնեն, չէ՞ որ բռնութիւնը անյուսալի կապ է:

Տարբեր ազգերի միութեան մէջ հաւասարութիւն չի լինի, մինչեւ որ ամենաբազմաթիւը չհրաժարւի իր արտօնութիւններից, չհամարի իրեն միւսների հետ հաւասար:

Ինչո՞ւ Քաղբիւրոյի մեծամասնութիւնը ռուսներ են, ինչո՞ւ ԽՍՀՄի մայրաքաղաքը Ռուսաստանում է գտնւում, չնայած որ Ռուսաստանում կարելի էր նոր մայրաքաղաք կառուցել, որտեղ կապրէին բոլոր ազգութիւնների ներկայացուցիչները և ամէն երկու տարին մէկ կ՚ընտրւէին նոր քարտուղարներ, նախարարների խորհրդի նախագահներ բոլոր հանրապետութիւններից հերթականաբար: Սակայն, ծիծաղելի է նման զիջման մասին խօսելը: Չէ՞ որ ընտրութիւնների ժամանակ ժողովուրդը միշտ ընտրում է միայն մէկ քարտուղար, նախարարների խորհրդի մէկ նախագահ և երբեք որեւէ մէկ ուրիշի:

Այդ մշտական քարտուղարները կամ նախագահները կա՛մ պէտք է մեռնեն (անձնական մահով կամ ուրիշի օգնութեամբ), ինչպէս դա պատահեց Ստալինի հետ, կա՛մ էլ աղմկալից պէտք է պաշտօնազրկւեն Կենտկոմի արտակարգ նիստի ժամանակ, ինչպէս դա պատահեց Մալենկովի և Խրուշչովի հետ: Այո, ի հարկէ, ոչ ժողովուրդը, այլ ներկուսակցական մանր խմբաւորումներն են մասնակցում խորհրդային կառավարութեան ընտրութիւններին:

Եւ չէ՞ որ հէնց կառավարութեան անդամների համար էլ շատ աւելի յարմար կը լինէր բարձր պաշտօններ զբաղեցնել 2-3 տարուց ոչ աւելի երկար: Չէ՞ որ գոյութիւն ունի ոչ միայն նշանակման երջանիկ րոպէն, այլեւ պաշտօնազրկման տխուր րոպէն և դրանց յետոյ արդէն հետագայ կեանքի անուրախալի կացութիւնը: Բացի դրանից, վարչական երկարատեւ իշխանութիւնից

մարդ ներքուստ կարծրանում է, կոպտանում և բթանում է: Շատ աւելի բնական կը լինի, եթէ խորհրդային կառավարութիւնը թոյլ տայ մէկ ուրիշ կուսակցութեան էլ գործել:

Ռուս ժողովուրդը մեծ ապագայ ունի: Եւ այդ ապագան ռազմական հզօրութեան մէջ չէ, այլ համաշխարհային նոր մշակոյթի ծաղկման մէջ: Դա կը լինի համաժողովրդական սիրոյ և օգտակար աշխատանքի մշակոյթ: Արդէն այսօր երեւում են նոր Ռուսաստանի ծիլերը: Դրանք են՝ Սոլժենիցինը, Սախարովը և ուրիշ արի մարդիկ, որոնք ամաչում են սեփական պետութեան բռնութիւններից և սանձարձակութիւններից:

Արժանապատուութիւնը ձեռք է բերւում ոչ թէ ռազմական հզօրութեամբ և **բալիստիկ**ական հրթիռներով, դա՝ գիտակից, մտածող և զոհաբերւող անհատականութիւնների մէջ է: Արիութիւնը դաժան ձմռան և սառնամանիքի մէջ չէ, այլ նուրբ ձնծաղիկների և մանուշակների մէջ է, որոնք չվախենալով ցրտից, առաջիններն են խախտում սառած գետնի ամրութիւնը և, բերելով մեծ աշխարհին ջերմութիւն և գեղեցկութիւն, աւետում են գարնան գալիք յաղթանակի մասին:

Բռնկումը յեղափոխական երեւոյթ է, պայթիւն է, մարդու ներքին զարգացման մէջ՝ ցատկում: Դա նոյնպիսի հրաշալի օրինաչափութիւն է ներքին կեանքում, ինչպէս որ կոկոնների և բողբոջների անսպասելի բացումը: Դա յիշողութեան կայծակնային գրգռում է, երբ մեր առջեւ բռնկւում են մեր կատարած անարդարութիւնները կամ չարի վկայութեան մեր համաձայնութիւնները և լրջութիւնը: Նրանք մեզ սարսափի են բերում և այդ տանջանքների մէջ ծնւում է մեզնում նոր մարդը՝ մեր ներքին Եսը և միաժամանակ մեր անողոք դատաւորը: Ի զուր չէ Լ. Տոլստոյը Նեխլիւդովի հոգեկան բռնկումը համեմատում արթնացած բնութեան և գարնան բուռն վերածննդի բռնկման հետ: Խիղճը, որը անձնականի սահմաններից դուրս է գալիս, ինչը նախազգացել է Լ. Տոլստոյը, Սոլժենիցինի և Սախարովի գործունէութեան մէջ ընդունել է **սոցիալ**ական, համամարդկային բնոյթ:

Եթէ Ռուսաստանում մարդիկ մեծամասնութեամբ լինէին այնպէս, ինչպէս են Սոլժենիցինի և Սախարովի նմանները, ապա մենք՝ փոքրաթիւ ժողովրդի ներկայացուցիչներս կը հրաժարւէինք մեր ազգութիւնից և կ'ասէինք, որ մենք էլ ռուս ենք: Որովհետեւ Ա. Բելին, Ա. Սոլժենիցինը, Ա. Սախարովը և նրանց նմանները արդէն ներկայացնում են վերազգային, իրապէս համաշխարհային քաղաքացու կերպարներ: Ընդհակառակը, խորհրդային քաղաքացու անձնագիր բռնութեամբ մտցնելու ծրագիրը և ազգութիւնների **մեխանիկ** վերացումը առաջ կը բերի միայն գրգռում և ատելութիւն:

Մենք հեռու ենք այն մտքից, որ քարոզենք խորհրդային վարչակարգի տապալումը, սակայն անհրաժեշտ է, որ խորհրդային վարչակարգը ինքը վերափոխվի, Խորհրդային Միութիւնը պէտք է թոյլ տայ քաղաքացիական ազատութիւններ և վերացնի գաղութատիրական վարչակարգը. իր ժողովուրդներին ինքնորոշման իրաւունք պէտք է տայ: Դա իրապէս կը դարձնի նրան առաջաւոր երկիր:

Ափսոս, որ Սոլժենիցինին, Չարլիձէին, Մաքսիմովին և նրանց նման մարդկանց խորհրդային կառավարութիւնը վտարում է հայրենիքից կամ բանտ է նստեցնում: Մենք ուզում ենք յիշեցնել նրան, թէ ինչպէս էին հին յոյները և հռոմէացիները վտարում իրենց լաւագոյն քաղաքացիներին կամ էլ ստիպում էին թողնել հայրենիքը՝ Միլտիադին, Ֆեմիստոկլուսին, Ցիցերոնին, անգլիացիները՝ Բայրոնին և Շելլիին: Երկար թափառեց օտար ափերում աստւածային Դանթէն, 18 տարի վտարանդի էր Ֆրանսիայի խոշորագոյն գրողը՝ Վիկտոր Հիւգօն, Գերմանիայից վտարւել էր Թոմաս Մանը և այլն: Եւ ի՞նչ: Գեղարուեստական ձեւերով ճշմարտութիւնը երգող և արտացոլող, նրանք ամբողջ առաջաւոր մարդկութեան համար դարձան փարոսներ, իսկ նրանց ճնշողներին վատաբանում է ամբողջ աշխարհը:

Ցաւօք, դա աշխարհիս հզօրների համար դաս չհանդիսացաւ: Այդ մասին են խօսում բացայայտօրէն Խորհրդային Միութիւնում վերջերս տեղի ունեցած իրադարձութիւնները: Դա նշանակում է, որ վիշապը դեռ չի տեսնում իր ապագան, չի հասկանում, որ նա եւս պէտք է վար գցի իր մորթին (օձաթեփը), մարդկայնանայ, սրբանայ և աստւածանայ: Շատ թանկ վճարեց իր ժամանակ Իսրայէլը իր լաւագոյն որդիներին ծեծելու համար: Պէտք չէ մոռանալ, որ Աստւած Սողոմ Գոմորը այն ժամանակ վառեց, երբ այնտեղից դուրս հանեց արդարներին

1974 թ.

ՔԱՂԱՔԱՑԻ

(անունը անհասկանալի է տպւած)

Այժմ փորձենք վերլուծել այս ծաւալուն գրութիւնը: Պէտք է ասել, որ առաջին իսկ տողերից, յամենայն դէպս տողերի արանքից, պարզ երեւում է վրացական մեծամտութիւնը և արհամարհանքը դէպի հայերը: Ինչ արժէ, օրինակ, այս նախադասութիւնը. «10րդ դարից սկսած Վրաստանը Կովկասի միակ քրիստոնեայ պետութիւնն էր, իսկ 14րդ դարից, Բիւզանդիոնի անկումից յետոյ միակ քրիստոնեայ պետութիւնը հարաւ-արեւելքում»: Ոչ մի խօսք այն մասին, որ Հայաստանը աշխարհի առաջին քրիստոնեայ պետութիւնն էր և որ Միհրան իշխանին քրիստոնեայ կնքելուց յետոյ Վրաց եկեղեցին Հայոց Եկեղեցու

մի մասն էր կազմում: Վրաց կաթողիկոսը ընտրւում էր իր ազգից, բայց օծւում էր հայոց կաթողիկոսից: Այդպէս տեւեց մինչեւ Քաղկեդոնի ժողովը: Եթէ կը ցանկանան մեր վրաց «այլախոհները», ես կարող եմ մի փոքր յիշեցնել նրանց մեր ժողովուրդների եկեղեցական պատմութիւնը: Ահաւասիկ.

Մովսէս Եղիվարդեցու կաթողիկոսութեան օրով, վրացիների մէջ կաթողիկոսի ընտրութեան համար խռովութիւն է ծագում, ուստի առաջարկում են հայոց կաթողիկոսին, որ ինքը ընտրի կաթողիկոս վրացիների համար, ապա ձեռնադրի և ուղարկի Վրաստան: Մովսէս կաթողիկոսը, վրաց ազգի ցանկութեան համաձայն, ընտրում և օծում է Կիւրիոն անունով մէկին, որ Ջաւախք գաւառից էր, ազգով վրացի, հմուտ հայերէն, յունարէն, պարսից և վրաց լեզուներին: Կիւրիոնը կաթողիկոսական օծումն ստանալուց յետոյ, գալով Վրաստան, սկսում է քարոզել իր ժողովրդին՝ ընդունել Քաղկեդոնի ժողովը, բայց միեւնոյն ժամանակ նա կեղծում և ասում էր, որ ինքը դիտաւորութիւն չունի հեռանալու Հայոց Եկեղեցու միութիւնից:

Իսկ երբ Մովսէսը վախճանւում է, սրա յաջորդ Աբրահամ կաթողիկոսի ժամանակ վրացիների հետ մի քանի գրաւոր բանակցութիւններ վարւեցին: Աբրահամը առաջարկում էր Կիւրիոնին չխախտել հայոց և վրաց ժողովուրդների բարեկամութիւնը և խաղաղութիւնը, բայց նա բացայայտօրէն յայտնեց, որ ընդունում է Քաղկեդոնի ժողովը և հեռանում է Հայոց Եկեղեցու միութիւնից:

Ապա 597 թւականին կաթողիկոսը ժողով հրաւիրեց Դւինում և Կիւրիոնին յայտարարեց հեռացեալ, իսկ Վրաց Եկեղեցին բաժանւած Հայոց Եկեղեցուց: Դրանից յետոյ մեր ժողովուրդների մէջ առաջացաւ զօրեղ թշնամութիւն, որի միակ մեղաւորը վրացական կողմն էր:

Այդ մասին, ի հարկէ, չեն յիշատակում Վրաստանի այլախոհ պատմաբանները: Հայերի համար նրանք գտան միայն հետեւեալ արհամարհական նախադասութիւնը . «Վրացական պետութիւնը և հայաբնակ մարզերը Բիւզանդիոնի անկումից յետոյ շրջապատւեցին մահմեդական պետութիւններով»: Այսպիսով, Վրաստանի պետութեան համեմատութեամբ, մեր ունեցածը հայաբնակ մարզեր ու վայրեր էին, իսկ մենք էլ վրաց պետութեան կողքին՝ մի ինչ որ ցեղեր: Այս մտածելակերպը ունեն ե՛ւ հասարակ վրացին, ե՛ւ վրաց մտաւորականութիւնը, ե՛ւ պետական գործիչները:

Ուզում եմ այստեղ բերել մի փոքր օրինակ: Մոսկւայում սովորելիս ընկերացել էի մի վրացի երիտասարդի հետ: Թւում էր, թէ մեր ընկերութիւնը անկեղծ էր, յամենայն դէպս, իմ կողմից հէնց այդպէս էր: Իմ ընկերս մէկ անգամ հրաւիրեց ինձ Վրաստան և, ներկայացնելով իր վրացի ընկերներին, վրացերէնով ասաց. «Հայ է, ԲՍՅՅ շատ լաւ տղայ է»: Ես զգացի, որ նա արդարանում էր իր ընկերների առջեւ հայի հետ մօտիկութիւն հաստատելու համար: Ես պար-

զապէս ցնցուեցի, իմ շատ մօտիկ ընկերոջից այդ բանը բոլորովին չէի սպասում: Բայց այդ առաջին հարուածից յետոյ հարուածները այնքան շատացան, որ այլեւս չէի զարմանում:

Վրաստանի կենտրոնական **«Զարիա Վոստոկա»** թերթում կարդացինք, թէ ինչպէս Վրաստանի տասնեակ պատւարժան ակադեմիկոսներ ստորագրել էին մի յօդուած, որտեղ «ապացուցւում էր», որ «իրենց տառերը ստեղծել են իրենք վրացիները, այլ **ՈՉ ՄԻ ԻՆՉ ՈՐ ՕՏԱՐ ՔԱՀԱՆԱՅ**» (քահանան էլ Մաշտոցն է): Անամօթաբար այդ կեղծիքի տակ ստորագրում էին ակադեմիկոսները, որոնք հիանալի գիտէին, որ իրենց ամբողջ եկեղեցական մատենագրութիւնները գրւած են «խուցուրի» կոչւող այբուբենով, որը գրեթէ ոչնչով չի տարբերւում մեր այսօրւայ Մաշտոցի տառերից:

Ամէնուր վրացիներից լսում էինք ծիծաղ առաջացնող փաստ, թէ իբր Ղարսը և Արտահանը, որոնց նրանք անւանում էին «Ղարսի և Արտահանի», իրենցն է՝ վրացիներինը: Իսկ Վերմիշեւի «Ամիր Սպասալար» գրքի քննադատութեանը **«Լիտերատուրնայա Գրուզիա»** («Գրական Վրաստան») հանդէսը յատկացրեց իր մի քանի համարների էջերը: Քննադատութեան հիմնական և միակ նիւթը հակահայկական քարոզչութիւնն էր: Խոշոր գիտնական Վիկտոր Համբարձումեանի մտերիմ ընկեր, Վրաստանի Ակադեմիայի նախագահ Մուսխելիշվիլին հալածւում էր միայն այն բանի համար, որ նրա կինը հայ էր, իսկ երբ կասկած առաջացաւ, որ ինքն էլ հայ է, աւելի ճիշտ, երբ այդ մասին իմացան շատերը, անմիջապէս նրան փոխարինեցին Նովոսիբիրսկից հրաւիրւած Վեկւայով: Մարջանեաններին դարձրին Մարջանիշվիլի, Մուրադեաններին՝ Մուրադելիներ, Օրբելեաններին՝ Օրբելիներ և շատ ու շատ ուրիշ խոշոր հայերի քաղաքակիրթ բռնութեամբ վրացացրին:

Եւ դեռ շատ մեծ հարցականներ կան Ռուսթաւելիների, Փալիաշվիլիների և շատ ուրիշ ազգանունների վերջաւորութիւնների վրայ: Բայց այս բոլորը մենք ընդունում էինք որպէս ուրախ կատակերգութիւն: Մենք ծիծաղում էինք, իսկ նրանք գրում: Մեզ թւում էր, որ պատմական ճշմարտութիւնները չեն կարող անյայտանալ կեղծիքներով, իսկ նրանք նախանձելի ջանասիրութեամբ ջնջում էին մեր պատմութիւնը: Մենք վախենում էինք խախտել խորհրդային ազգերի արտաքին բարեկամութիւնը, իսկ նրանք թքում էին այդ բարեկամութեան վրայ և պաշտօնական մամուլով տարածում իրենց ցնորային նենգափոխութիւնները: Մենք բարեկամութիւն էինք որոնում, բայց մեր բաց կրծքերին նրանք դէմ տուեցին իրենց սրերը: Եւ ահա մենք այսօր դարձել ենք նրանց աչքում մի ինչ որ խառնակիչ ցեղ, որոնցից անհրաժեշտ է փրկել գառնուկների նման անկեղծ վրացիներին: Եւ ոչ միայն այսօր, նրանք համարում են, որ մենք

միշտ էլ եղել ենք խառնակիչներ, դաւաճաններ և այդ միտքը փորձում են «պատմականօրէն» ներշնչել Ռուսաստանին։

Քանի-քանի անգամ և քանի-քանի յօդուածներում վրաց «պատմաբան»ները փորձում են ապացուցել, որ Վարդանանց պատերազմից յետոյ (որին ի միջի այլոց վրացիները դաւաճանաբար չմասնակցեցին) 482 թւականին վրացիները օգնեցին հայերին Ներսեհապատի ճակատամարտում։

Բայց ես էլ մի քիչ ծանօթ եմ պատմութեանը և կարող եմ յիշեցնել Ներսեհապատի դէպքերը։ Ահաւասիկ. 482 թւականին պարսիկները, Հայաստանի ապստամբութիւնը ճնշելու համար, մեծ զօրք են ուղարկում Սալար զօրավարի հրամանատարութեամբ։ Վահան Մամիկոնեանը նախարարական զօրքերից բաղկացած իր բանակով շտապում է դիմադրելու թշնամուն։ Հակառակորդները հանդիպում են Աւարայրից ոչ հեռու Ներսեհապատ գիւղի մօտ։ Սահակ Բագրատունու և Կամսարական եղբայրների հետ միասին Վահան Մամիկոնեանը տանում է փայլուն յաղթանակ։

Ներսեհապատի յաղթանակից յետոյ՝ 482 թւականի ամռանը, վրաց Վախտանգ թագաւորի խնդրանքով, Վահան Մամիկոնեանը հայկական զօրքերի մի մասի գլուխ անցած օգնութեան է գնում Վրաստանին։ Պարսկական մի խոշոր բանակ, Միհրան զօրավարի հրամանատարութեամբ, այդ ժամանակ արշաւել էր Վրաստան և աւերում էր երկիրը։ Վրաստանը օգնութիւն էր սպասում նաեւ հոներից, բայց նրանք չկատարեցին իրենց խոստումը։ Այս ճակատամարտում հայերը և վրացիները պարտուեցին և պատերազմի դաշտում, օտար երկրի հողի վրայ, զոհուեցին Սահակ Բագրատունին և Վահան Մամիկոնեանի եղբայրը՝ Վասակ Մամիկոնեանը։ Եւ երբ Միհրան զօրավարը հետապնդում էր դէպի Տայք նահանջող հայկական զօրքերին, վրացիները մատը մատին չխփեցին հայերին օգնելու համար՝ նրանց պետական շահերը չէին համընկնում հայերին թիկունքից պաշտպանելու գործին։

Սա է պատմական ճշմարտութիւնը վրացական «օգնութեան» մասին։ Բայց արժէ՞ արդեօք վերյիշել այս հազարամեակներ առաջ տեղի ունեցած պատմութիւնները, եթէ մենք ունենք նորագոյն պատմութիւն, որտեղի հայ-վրացական յարաբերութիւնները մանրմասնօրէն նկարագրւած են Սիմոն Վրացեանի կողմից և որից պարզ երեւում է Վրաստանի պետական դէմքը։ Արժէ՞ արդեօք խօսել Վրաստանի պատմական **ինտերնացիոնալիզմ**ի մասին, եթէ այսօր էլ աբխազները ապստամբում են վրացիների դէմ, իսկ օսետինները երազում են անջատւել Վրաստանից և միանալ Ռուսաստանին։

Երբ սկսում էի գրել այս յօդուածը, ես այնքան վրդովւած էի, որ թւում էր, թէ կը գրեմ մի 100 էջ։ Բայց, այժմ տեսնում եմ, որ գրելու և վերլուծելու բան չկայ։

Մի քանի անիմաստ, տրամաբանութիւնից զուրկ արտայայտութիւններ, որոնց վերլուծութիւնը անլուրջ պէտք է համարւի և ժամանակի կորուստ։

Սա վրացիների երկրորդ «այլախոհութիւնը» պէտք է համարուի։ Առաջինը ի պաշտպանութիւն Ստալինի ի նպաստ ցոյցերն էին։ Ընդ որում, այդ առաջին այլախոհութեամբ, ինչպէս ե՛ւ երկրորդով տարւած էր գրեթէ ամբողջ վրաց ազգը։ Այո, ստալինասիրութիւնը և հայատեացութիւնը վրացիների համար համազգային մտածելակերպ է, համազգային այլախոհութիւն։ Եւ դրա համար էլ, ինչպէս ասում են, թափս կոտրւեց, գրելու ցանկութիւնս կորաւ։

Միայն մէկ բան ուզում եմ նշել։ Երբ երկու ժողովուրդ, պետութիւն կամ մարդ, ցանկանում են բարեկամանալ, նրանք միշտ յիշում են իրենց յարաբերութիւնների պատմութեան լաւ օրերը։ Օրինակ, վերջերս, երբ մենք պատրաստւում էինք կազմակերպել հայ-գերմանական ժողովուրդների բարեկամութեան երեկոյ, մենք հանրագիտարաններից ու այլ աղբիւրներից արտագրում էինք, թէ ինչ լաւ կողմեր են ունեցել հայ-գերմանական յարաբերութիւնները։ Թւում էր, թէ դժւար է մեր ժողովուրդների միջեւ եղած յարաբերութիւնները մի քանի լաւ օրեր գտնել, բայց պատկերացրէք՝ գտա՛նք և այն էլ՝ բաւականին շա՛տ։

Իսկ ինչ վերաբերւում է մեր և վրացիների յարաբերութիւններին, ապա անկասկած կարելի է գտնել բազմաթիւ լաւ օրեր և այդ մասին կարելի է գրել հատորներ։ Բայց եթէ վրացիները այսօր փորձում են մոռացութեան մատնել մեր բարեկամական կողմերը, շեշտը դնելով թշնամական օրերի վրայ, դա միայն նշանակում է մէկ բան՝ **ՆՐԱՆՔ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ ՉԵՆ ՑԱՆԿԱՆՈՒՄ**։ Եւ սա մենք պարտաւոր ենք իմանալ։

Կայ նաեւ մի ուրիշ կողմ այս վրացական «Սամիզդատ»ում։ Իմ կարծիքով խորհրդային ԿՎԳԲ-էն դիտաւորեալ դուրս է թողել այս գրութիւնը (իսկ գուցէ ե՛ւ կազմել է), որպէսզի վարկաբեկի «սամիզդատ»ը ընդհանրապէս։ Այսինքն հետապնդելով այն նպատակը, թէ իբր՝ «ահա նայեցէք, սա է ձեր **սամիզդատը**, այն **սամիզդատը**, որ դուք արտասահմանում մինչեւ երկինք էք բարձրացնում։ Դուք կարծում էք, որ Խորհրդային Միութիւնում կառավարութեանը լուրջ ընդդիմադիր ուժեր կան, իսկ նրանք, ահաւասիկ, այս վրացական գրոց-բրոց հեղինակներն են։

Այս իմաստով, ի հարկէ, մենք շատ զգոյշ պէտք է վերաբերւենք բոլոր այն փաստաթղթերին, որոնք դուրս են գալիս Խորհրդային Միութիւնից։ Բայց բոլոր դէպքերում, ես կարծում եմ, որ այս գրութիւնը, որի թարգմանութեան համար մենք պէտք է շնորհակալ լինենք Ռ. Յակոբեանին, հետաքրքրական պէտք է լինի ընթերցողի համար, ե՛ւ սփիւռքում, ե՛ւ հայրենիքում։

Եւ եթէ հայ **կազէբիստ**ները ունենային ազգային մտածելակերպ, կարծում եմ, որ նրանք չէին առաջարկի, եթէ «**Ազդակ**»ի այս համարը մուտք գործէր Հայաստան։ Թող գիտենայ մեր ժողովուրդը, թէ ինչ է մտածում իր մասին մերձաւոր հարեւանը։ Այդ ծանօթութիւնը արժէ, որ ԿԳԲէն աչքերը կողմի այս համարի վրայ։ Ես վերջացրի, արտայայտողները թող արտայայտւեն։

1975

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿՐԿԻՆ ՓԱԿՈ՞Ւմ Է ԻՐ ԴՌՆԵՐԸ

Է. Յովհաննիսեան

Շուեցարական **«Նոյէ Ցիւրիխեր Ցայտունգ»** թերթը հրատարակեց Ալեքսանդր Սոլժենիցինի յօդուածը, որը հեղինակը վերնագրել էր. **«Խորհրդային մէկ տասնամեակի աւարտը»**: Յօդուածում արտայայտուած է բաւականին հետաքրքրական միտք, ուստի ես ուզում եմ թարգմանաբար մէջբերել այդ բաժինը: Ահաւասիկ.

«Մինչդեռ արտասահմանեան մեկնաբանները փորձում են գուշակել, թէ ինչ հետեւանքներ կարող է ունենալ Բրեժնեւի հիւանդութիւնը, չի՞ փոխի արդեօք այդ հանգամանքը Խորհրդային Միութեան կացութիւնը. մակերեսային հայեացք ունեցողի համար աննկատելիօրէն, այդ կացութիւնը արդէն արմատօրէն փոխուել է, առանց որեւէ կապ ունենալու Բրեժնեւի հիւանդութեան հետ:

«Այդ փոփոխութիւնը տեղի ունեցաւ Վլադիւոստոկում կայացած բանակցութիւններից անմիջապէս յետոյ: Փոփոխութեան արտաքին նշանը կենտկոմի քարոզչական մասի քարտուղար Դեմիչեւի պաշտօնազրկութիւնն էր: Ինչպէս Խորհրդային Միութեան բոլոր կարեւոր պաշտօնափոխութիւնները, սա էլ կատարուեց առանց աղմուկի և մեկնաբանութիւնների: Այս իրադարձութիւնը քողարկուեց մշակոյթի նախարարի պաշտօնի տեղափոխութեամբ: Սակայն իրականում սա անկասկած կարեւորագոյն իրադարձութիւն էր: Սա նշանակում էր, որ տապալուեց այլախոհների դէմ պայքարի այն քաղաքականութիւնը, որ 10 տարուայ ընթացքում, Դեմիչեւի ձեռքերով որդեգրել էր խորհրդային իշխանութիւնը:

«Այժմ իբրեւ պարտութիւն է ճանաչւում այն փոքր ազատութիւնը, որի շնորհիւ արտասահմանեան թղթակիցներին որոշ չափով թոյլատրւում էր շփուել խորհրդային քաղաքացիների հետ (այն էլ միայն մայրաքաղաքներում), հեռախօսել արտասահման և յայտնել իրենց վրայ գործադրւող ճնշամիջոցների մասին: Այժմ պարզ դարձաւ, որ այդ բաց խաղը շատ թանկ է նստում: Շատ աւելի հեշտ և արդիւնաւէտ է խեղդել բողոքները արգանդում, սեղմել մարդկային կոկորդը նախքան այն պահը, երբ նա կը կարողանայ մէկ նախադասութիւն արտայայտել:

«Դեմիչեւին փոխարինող նոր անձը յայտարարւած չէ, բայց նոր քաղաքականութիւնը նկատւում է: Մենք արդէն լսեցինք, թէ ինչպէս կտրեցին Սախարովի ձայնը իր հեռախօսային խօսակցութեան ժամանակ: Ով կապւած է Խորհրդային Միութեան հետ, գիտէ, որ բոլորովին կտրւել է կապը այլախոհների հետ,

նրանցից ոչ ոքու թոյլ չեն տալիս կապվել արտասահմանի հետ: Խորհրդային Միութիւնից դուրս եկածները պատմում են, որ ծայրամասերում արտասահմանցիների հետ բարեացակամ խօսակցութիւնների համար քաղաքացիներին բացայայտօրէն ծեծում են: Նոր քաղաքականութիւնը կայանում է նրանում, որ փորձում են յետ վարժեցնել աշխարհը իմանալուց, թէ ինչ է կատարւում Խորհրդային Միութիւնում: Դիտողները և մեկնաբանները նոր փաստեր չգտնելով կը կենտրոնացնեն իրենց ուշադրութիւնը երկրագնդի այն մասերի վրայ, որտեղ աւելի հեշտ է ձեռք բերել տեղեկութիւններ: Ուզում են Խորհրդային Միութիւնը վերադարձնել իր բնական, ստալինական փակ վիճակին, որպէսզի հնարաւոր լինի անյայտութեան մէջ հաշւեյարդարի կանչել ում որ կը ցանկանան: Այդ միջոցով է ցանկանում Խորհրդային Միութիւնը հասնել իր գլխաւոր նպատակին՝ լարւածութեան թուլացում արտաքին աշխարհում և խուլ լռութիւն ներսում»:

Եթէ Սոլժենիցինի այս նախազգուշացմանը աւելացնենք մի քանի ուրիշ փաստեր, օրինակ, Խորհրդային Միութեան հրաժարումը Միացեալ Նահանգների հետ կնքւած առեւտրական պայմանագրից, ռազմանիւթերի կուտակումը, որոշ պաշտօնների նշանակւած անձերի նկարագիրը և մի շարք ուրիշ փաստեր, ապա պարզ կը դառնայ, որ Խորհրդային Միութիւնը պատրաստւում է վերջնականապէս իջեցնել այն երկաթէ վարագոյրը, որը մի փոքր բարձրացրել էր Խրուշչեւը, բայց որը կամաց-կամաց իջնում էր վերջին տարիների ընթացքում: Եւ եթէ ճիշտ են այս գուշակումները, ապա շուտով մենք ականատես կը լինենք, թէ ինչպէս հսկայ Խորհրդային Միութիւնը մեր փոքր Հայաստանի, բարեկամների ու յոյսերի հետ միասին կը սուզւի անյայտութեան ովկիանոսը, առաջացնելով բոլոր այն հետեւանքները, որոնք ծնում է **ՓԱԿ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԸ**: Տեսնելու համար, թէ որո՛նք են այդ հետեւանքները, դիմեմ մի օրինակի:

Անցեալ տարի, Սեպտեմբերի 28ին, խորհրդային թերթերը հրատարակեցին չքաւոր ընտանիքների երեխաների դրամական օգնութեան կառավարական որոշումը: «Խոշորագոյն հասարակական միջոցառում, որը նախատեսւած է կոմունիստական կուսակցութեան 24րդ համագումարի կողմից,- ասում է **«Պրաւդա»**ն: Եւ թերթի խմբագրականի հեղինակներին արդէն յայտնի է, որ «շնորհակալութեան խորը զգացմունքներով ընդունեցին խորհրդային մարդիկ կուսակցութեան և մինիստրների խորհրդի այդ նոր որոշումը»: «Այս որոշումը,- շարունակում է **«Պրաւդա»**ն,- սոցիալիզմի մեծագոյն առաւելութիւնների համոզեցուցիչ վկայութիւնն է»: Եւ արդէն յաջորդ օրը, Սեպտեմբերի 29ին **«Պրաւդա»**յի առաջին էջի վրայ **«Խորհրդային ընտանիքի բարօրութեան համար»** վերնագրի տակ հրատարակւած են աշխատաւորների շնորհակալական նամակները, որը գրում են բանւորները, կոլտնտեսականները, և այլն:

Ինչպիսի՛ արագութիւն: 28ին տպւած է արձանագրութիւնը, իսկ 29ին արդէն հրատարակւած են շնորհակալական նամակները: Այդ ե՞րբ հասցրեցին խմբագիրները ուղղել կիսագրագէտ բանւորների ու կոլտնտեսականների ոճը ու տառասխալները: Երևի այդ կոլտնտեսականները գրիչները ձեռքերում անհամբեր սպասում էին հերթական կառավարական որոշմանը, որպէսզի անմիջապէս թղթին յանձնեն իրենց յուզմունքը՝ առաջնորդների մեծահոգութեան կապակցութեամբ: Եւ ի՞նչ արագ է աշխատում խորհրդային փոստը: Մի խօսքով ամէն ինչ յիշեցնում է ստալինեան ժամանակաշրջանը, երբ մամուլը կիսագրագէտ վրացի քահանայացուի ձեռքում խաղալիք էր դարձած:

Բայց դիմենք այդ սոցիալիզմի առաւելութիւնները ապացուցող որոշմանը: Ամէն մի երեխային 12 ռուբլի ամսական, մինչեւ 8 տարեկանը և այն էլ միայն այն ընտանիքներում, որտեղ ամէն մի անձի վրայ ընկնող եկամուտը կազմում է ոչ աւել 50 ռուբլուց: Սոցիալիզմի առաւելութիւնները բացայայտելու համար համեմատենք այդ նոր պատմական որոշումը երկրորդ համաշխարհային պատերազմում Խորհրդային Միութիւնից պարտւած Արեւմտեան Գերմանիայի հետ: Այնտեղ 50 մարք վճարւում է առաջին երեխային, 80 մարք երկրորդին, 130 մարք երրորդին, և այլն: Դա նոյնիսկ խորհրդային անօրինական ցածր գներով կազմում է 17, 27, 48 ռուբլի, ընդ որում վճարւում են այդ գումարները ոչ թէ մինչեւ 8 տարեկանը, այլ մինչեւ 18 տարեկան հասակը, իսկ եթէ երեխան սովորում է՝ մինչեւ 27 տարեկանը: Եւ վճարւում են այդ գումարները անկախ ընտանիքի եկամուտից: Եթէ դրան աւելացնենք այն հանգամանքը, որ միջին աշխատավարձը Գերմանիայում կազմում է 1200 մարք, այսինքն պաշտօնական չափանիշներով երեք անգամ (իսկ իրականում 10 անգամ) աւելի բարձր է քան Խորհրդային Միութիւնում, պարզ կը լինի թէ ինչ արժէ **«Պրաւդա»** թերթի աղմուկը սոցիալիստական առաւելութիւնների մասին:

«Պրաւդա»ն երեւի մոռացել էր, որ խորհրդային մարդիկ հաշւել գիտեն, կամ գուցէ նա յոյսը դրել էր նրա վրայ, որ խորհրդային մարդը վաղուց ի վեր թերթում գրւած հեքիաթների վրայ ուշադրութիւն չի դարձնում: Բայց եկէք հաշւենք: Ինչպէս գրում է թերթը, կառավարական այս որոշումը իրականացնելու համար պահանջւում է 1,8 միլիառ ռուբլի վճարել երեխաներին: Եթէ բազմապատկենք 12 ռուբլին 12 ամսւայ վրայ և ստացւածի վրայ բաժանենք 1,8 միլիառ ռուբլին, ապա մենք կը ստանանք այն, որ 12,5 միլիոն երեխայ պէտք է ստանան այդ դրամական օգնութիւնը: 1970 թւականի մարդահամարի տւեալներից մենք գիտենք, որ մինչեւ 8 տարեկան երեխաների թիւը Խորհրդային Միութիւնում կազմում է 35 միլիոն: Ուրեմն երեխաների մէկ երրորդ մասը մեծանում է չքաւոր ընտանիքներում (50 ռուբլի մէկ անձի վրայ, դա պարզապէս աղքատութիւն է): Պարզ չէ՞ արդեօք, որ խորհրդային իշխանութիւնը պէտք է

ստիպւած լինի պինդ փակել իր դռները, որպէսզի **սոցիալիստ**ական երկրների «առաւելութիւնները» չհամեմատուեն «նեխած **կապիտալիզմ**ի» չափանիշների հետ։

Այսպիսով փակ հասարակարգի թերութիւններից մէկը կայանում է նրանում, որ նա ի վիճակի է մթութեան մէջ պահել իր ժողովուրդը, նրանց գլուխը լցնելով դատարկ գաղափարներով ու խոստումներով։

Կարելի է նկատել մի հետաքրքրական օրինաչափութիւն։ Հասարակարգը փակւում է ճիշտ իշխանաւորների մտադրութեանը համապատասխան ձեւով, երբ ուզում են այս կամ այն հարցում դիմել ճնշամիջոցների։ Եւ սա արւում է ոչ թէ, ինչպէս կարծում է Սոլժենիցինը, նրա համար, որ իշխանաւորները քաշւում են արտաքին աշխարհից։ Ոչ, նրանք հիանալի գիտեն, որ թղթակիցների աչքից չի վրիպի նրանց ոչ մէկ քայլը։ Եւ 37 թւականին էլ ամբողջ Եւրոպան գիտէր, թէ ինչ է անում իր երկրի ներսում Ստալինը, իսկ եթէ մանրակրկիտ հաւաքելու լինենք Դաշնակցական մամուլի փաստերը, ապա կարելի է «Գուլագ Արշիպելագ»ի նման մի գիրք հրատարակել բանտերի ու բանտարկութիւնների մասին։ Դրանից երբեք չի քաշւել և չի քաշւում բոլշեւիզմը։ Դռները փակւում են սեփական ժողովրդի աչքերում արդարանալու համար։ Դռները փակւում են, որպէսզի խորհրդային ժողովուրդը անտեղեակ լինի, թէ ինչ է կատարւում արտասահմանում։ Այդ դէպքում շատ հեշտ կը լինի մոլորեցնել սեփական ժողովուրդը։ Օրինակ, ապացուցելով, որ արտասահմանում ամերիկեան **իմպերիալիստ**ները պատրաստւում են յարձակւելու Խորհրդային Միութեան վրայ, կ'արդարացուեն բոլոր ռազմական ծախսերը. ապացուցելով, որ տրոցկիստները կրկին գլուխ են բարձրացրել, նրանք կ'արդարացնեն զանգւածային բանտարկութիւնները. ապացուցելով, որ «Դաշնակցութիւնը շարունակում է իր հակահայկական գործը» նրանք կ'արդարացնեն իրենց «հակադաշնակցութիւն»ը։ Բայց որտեղից իմանայ խորհրդային խեղճ ժողովուրդը, որ ամերիկացիները պատերազմի չեն պատրաստւում, որ Դաշնակցութիւնը, այո, «շարունակում է իր ազգային ազատագրական վեհ պայքարը» որ կոմունիզմը անտանելի է, որ Տրոցկին մի քանի գլուխ բարձր էր Ստալինից և նրա աւազակախմբից, այս բոլորը որտեղից իմանայ խորհրդային քաղաքացին, եթէ արտասահմանեան ռադիոները խլացնելու համար Խորհրդային Միութիւնը ծախսում է 2,5 անգամ աւելի շատ գումար, քան ռադիոկայանի սեփական ծախսերը։

Այս իմաստով հարց է ծագում,- եթէ խորհրդային Միութիւնը իսկապէս փակւում է, ապա որն է դրա հերթական նպատակը, այս անգամ ո՞ր ուղղութեամբ են մտադրում իշխանաւորները գործադրել իրենց ճնշամիջոցները։ Ես կարծում եմ, որ Խորհրդային Միութիւնում քաղաքական կացութիւնը այսօր

յիշեցնում է 20ական թւականների տնտեսական կացութիւնը, երբ Լենինի կողմից հռչակւած ՆԷՊը (մասնաւոր սեփականութեանը որոշ ազատութիւն տւող նոր տնտեսական քաղաքականութիւն) սպառնում էր քանդել սոցիալիզմի տնտեսական հիմքերը: Այդ տնտեսական ՆԷՊի քանդիչ դերը այսօր կատարում է գաղափարական ՆԷՊը, որը հռչակեց Խռուշչեւը և որի շնորհիւ ծնւեց խորհրդային այլախոհութիւնը: Բայց տեսնենք, թէ ինչպէս Ստալինը ազատւեց Լենինի վտանգաւոր ՆԷՊից: Մեզ համար պատմական այս իրադարձութիւնը առաւել եւս հետաքրքրական պէտք է լինի, որովհետեւ այդ հարցում մեծ դեր էր կատարում, այսօր գառնուկի կերպարանք ընդունած և մեղմ յիշողութիւններ կրող մեր հայրենակից Անաստաս Միկոյեանը:

Լենինի կողմից հռչակւած տնտեսական ազատութիւնը այնպիսի աշխուժութիւն ստեղծեց գիւղում, որ գիւղացին փաստօրէն խլեց **պրոլետարիատի** ձեռքից նրա առաջնակարգ դերը նոր հասարակարգ կառուցելու գործում: Հակաստալինական ուժերը նոյնիսկ մեղադրեցին Ստալինին նրանում, թէ նա ընդառաջում է կալւածատէրերին, չափից աւելի մեղմ է գիւղացիութեան հետ և թոյլ է տալիս, որ ՆԷՊը իր ալիքներում խեղդի երիտասարդ խորհրդային պետութիւնը: Տրոցկին, օրինակ, իր յայտարարութիւններից մէկում ասում էր,- «Այն երկու տարւայ ընթացքում, որ Ստալինի խումբը փաստօրէն որոշում էր կուսակցութեան բոլոր կենտրոնական հիմնարկների քաղաքականութիւնը, ապացուցւած է, որ այդ խումբը ի վիճակի չեղաւ կանխել այն ուժերի աճը, որոնք մեր երկրի զարգացումը ուղում են տանել **կապիտալիստ**ական ճանապարհով և երկրորդ՝ բանւոր դասակարգի վիճակի թուլացումը, կալւածատէրերի և ՆԷՊմենների համեմատութեամբ»:

1926 թւականին կենտկոմի լիաժողովին Տրոցկին յայտարարեց,- «Գոյութիւն ունի վտանգաւոր թեքում, դէպի կալւածատէրը»: Այդ նոյն լիաժողովի ժամանակ Կամենեւը ասաց, թէ «Խորհրդային իշխանութեան ներքեւի յարկը լցւել է գիւղացիներով»: Մէկ տարի յետոյ, 1927 թւականի Յունիսին, Զինովեւը աւելի խիստ էր՝ «Ե՛ւ յարաբերական ե՛ւ բացարձակ իմաստով գիւղում աճել է **կապիտալիզմը**: Քաղաքում **կապիտալիզմը** յարաբերական իմաստով չի աճել, բայց աճել է բացարձակապէս»: Եւ դրա համար Ստալինի ընդդիմադիր խումբը պահանջում էր յարձակւել **կապիտալիզմի** և կալւածատէրի վրայ, ամբողջ ճակատով: Երկու տարի յետոյ Ստալինը կ'ապացուցի, որ իր յարձակման ծրագրերը գերազանցում են բոլոր ձախերի ու աջերի երեւակայութիւնը: Ստալինը պատրաստւում էր կոլտնտեսացմանը: Նա ցանկանում էր գիւղացիական Ռուսաստանը վերածել արդիւնաբերական երկրի, անցնելով Արեւմուտքի 100-150 տարւայ ճանապարհը 10-15 տարում: Իսկ դրա համար կար միայն մէկ ճանապարհ՝ բռնամիջոցների ճանապարհը: Ստալինի նոր տնտե-

սական ծրագիրը նշանակում էր պայքար լենինեան ՆԷՊի դէմ: Եւ այդ ծրագրի իրականացումը պահանջում էր Ստալինից, ոչ միայն բոլոր ռոմանտիկ յեղափոխականների ոչնչացում, այլեւ պահանջում էր շրջապատուել այնպիսի մարդկանցով, որոնք առանց որեւէ տրամաբանութիւնների ու դատողութիւնների, միայն կատարողներ էին: Այդպիսին էր Անաստաս Միկոյեանը, որին Ստալինը Կամենեւի փոխարէն նշանակեց առեւտրի **Ժողկոմ**: Միկոյեանը հրաման ստացաւ հացի շուկայի միջոցով ուժեղացնել գիւղացու շահագործումը: Միկոյեանը լի էր վճռականութեամբ՝ ապացուցելու սիրելի ուսուցչին, որ կ'արդարացնի իր վրայ դրւած յոյսերը: Քաղբիւրոյի նիստում, 1927 թւականի յունուարի 3ին, նոր **Ժողկոմ**ը հռչակում է իր առաջին ծրագիրը,- **«Պէտք է յայտարարեմ, որ գիւղացին իր հացի շուկայի հետ միասին ամբողջովին մեր ձեռումն է գտնւում: Մենք կարող ենք բարձրացնել կամ իջեցնել հացի գինը՝ երբ ուզենք և ինչպէս ուզենք»:** Ինչպէ՞ս թէ, սա ի՞նչ նորութիւն է: Չէ՞ որ խորհրդային օրէնքները դեռ չեն վերացրել ՆԷՊը, ապա էլ ինչպէ՞ս կարող է Միկոյեանը ուզածի պէս թելադրել ազատ շուկայի գները: Իր այդ նոյն ճառում Միկոյեանը պատասխանում է այդ հարցին շատ պարզ, եթէ չասենք լկտիաբար. **Որովհետեւ**,- ասում է նա,- **մեր ձեռքում են գիւղացիների վրայ ազդելու բոլոր լծակները, որովհետեւ գիւղացու յետեւում ոչ ոք չի կանգնած և մեզ ոչ ոք չի խանգարում: Մեզ ոչ ոք չի խանգարում անել գիւղում այն, ինչ մենք կը ցանկանանք»:** Ահա թէ ինչպէս: Աւազակներին ոչ ոք չի խանգարում սպանել անպաշտպան զոհին և կացինն էլ աւազակների ձեռքումն է, ինչո՞ւ չսպանել: Չէ՞ որ բարոյականութիւն բոլշեւիկների համար երբեք գոյութիւն չի ունեցել:

Բայց Միկոյեանի այս դառը խօսքերը դեռ դառը իրականութիւն չէին: Բերեմ մի քանի համեմատական տուեալներ, որոնք ցոյց են տալիս թէ ինչպիսին էր հացի շուկան, երբ **ժողկոմ**ի գահը բարձրացաւ Միկոյեանը և ինչի՛ հասցրեց նա այդ շուկան, մէկ տարի յետոյ: 1928 թւականի յուլիսի 23ին Միկոյեանին նախորդող Կամենեւի զեկուցման մէջ ասւած է. **«Հացահատիկի բերքը կազմում է 4 միլիառ 700 միլիոն փութ և բաւարարւելուց յետոյ գիւղացիութեան սեփական պահանջը, շուկայ դուրս կը բերուի մօտ 1 միլիառ փութ հաց: Այդ հացը անհրաժեշտ է գնել շուկայից, որովհետեւ եկող տարի կարող է գիւղացին պակասեցնի իր ցանքը: Անհրաժեշտ է ռուսական հացը դուրս բերել արտաքին շուկայ, որպէսզի գիւղացին շահագրգռի և գիւղատնտեսական արտադրանք տայ»:** Բերքը իսկապէս արտասովոր առատ էր, գիւղացու պահեստները լեցուն էին, շուկան գերյագեցած, իսկ քաղաքը սովի սպառնալիքի տակ էր: Ինչո՞ւմն էր բանը: Բանը նրանումն էր, որ Միկոյեանը սկսել էր ճնշել մասնաւոր արդիւնաբերութիւնը, իսկ պետութիւնը ապրանք չունէր գիւղին առաջարկելու համար: Հացի գինը ընկնում էր, իսկ ապրանքներինը՝ բարձրանում: Գիւղացին հրաժարւում

էր ցածր գներով վաճառել հացը և կուտակում էր հացը գիւղի պահեստներում, իսկ քաղաքում սկսւում էր սովը: Ի՞նչ անել. ինչպէ՞ս այս աղէտի առաջն առնել: Միկոյեանը հաւատացնում է քաղբիւրոյին, որ գտել է ճգնաժամից դուրս գալու ելքը: 1927 թականի փետրուարին Միկոյեանը հանդէս եկաւ կենտկոմի լիաժողովում յատուկ զեկուցմամբ, որտեղ առաջարկեց իջեցնել ապրանքների գները, որպէսզի գիւղացին կարողանայ այն գնել: 15րդ համագումարը համարեց, որ նոր **Ժողկոմ**ը խնդիրը լուծեց: Որ ապրանքների փոխարէն գիւղ կարելի է ուղարկել Միկոյեանի հրամանները և այնտեղից հացը շատրւանների նման կը թափւի քաղաք: Շատ շուտով պարզւեց, որ **ԱՋԱՏ ՇՈՒԿԱՅԻ ՕՐԷՆՔՆԵՐԸ** աւելի հզօր են, քան Միկոյեանի հրամանները: Որոշ ժամանակից յետոյ, ինքը Ստալինը հաստատեց, որ Միկոյեանի ծրագիրը ձախողւեց: «Մեծ Առաջնորդը» գրում էր,- **«Գիւղացիութեան հարուստ տարրը կուտակել է ահագին հացի աւելցուկներ և իշխում է շուկայում: Այդ տարրը չի ցանկանում մեզ հաց տալ այն գներով, որ որոշել է Խորհրդային իշխանութիւնը»:** Իսկ ինչո՞ւ պէտք է տայ, չէ՞ որ որոշւած գները կողոպուտ էին: Բայց ի՞նչ անել: Բուխարինը, Ռիկովը և Տոմսկին առաջարկում են բարձրացնել հացի մթերման գները և կտրականապէս մերժում են ՆԷՊը վերացնելու բոլոր փորձերը: Ստալինը և Միկոյեանը սակայն ընտրեցին այլ ճանապարհ՝ «սեղմել բոլոր լծակների վրայ», այսինքն մտցնել ստիպողական հացի մթերում: Առեւտրի **Ժողկոմ**ին կցւեցին Չեկայի խմբերը, որոնք սկսեցին բառի բուն իմաստով խլել գիւղացիների հալալ քրտինքով աշխատած հացը: Հացի մթերման **պլան**ը կատարւեց: 1927 թականին հաւաքւեց 644 միլիոն փութ հացահատիկ, 617ի փոխարէն, որը հաւաքել էր Կամենեւը առանց ճնշամիջոցների 1926 թականին: 1928 թականին, զեկուցելով ապրիլեան լիաժողովին, Միկոյեանը խոստովանեց, որ «առանց ճնշամիջոցների իրեն երբեք չէր յաջողւի կատարել հացի **պլան**ը և հաւանական է, որ հետագայումն էլ այդ ճնշամիջոցները պէտք է օգտագործւեն»: Այդպէս Ստալինը իր հաւատարիմ աշակերտ Միկոյեանի միջոցով վերացրեց այն վտանգները, որոնք բերում էր իր հետ տնտեսական ազատութիւնը:

Ես յիշեցի այս պատմութիւնը, որովհետեւ այսօր Խրուշչեւեան որոշ քաղաքական ազատութիւնները նոյնպէս իրենց հետ բերեցին վտանգաւոր կացութիւններ: Գլխաւոր վտանգը նրանումն էր, որ մարդիկ սկսեցին մտածել ու խօսել: Մտածել երեւի միշտ էլ մտածել են, բայց խօսելը, Խորհրդային Միութեան համար շատ անսովոր մի բան էր: Մարդիկ դուրս եկան արտասահման, տեսան, համեմատեցին, շշմեցին ու սարսափեցին: Խօսում էին ու վիճում անվերջ և նոյնիսկ փորձում էին գրել: Եւ ճիշտ այնպէս, ինչպէս 50 տարի առաջ ՆԷՊը գիւղացիութիւնը դարձրեց հիմնական դասակարգը, այնպէս էլ քաղաքական «ՆԷՊ»ը առաջ քաշեց մտաւորականութիւնը, որ մեռած վիճակից դարձաւ

գլխաւոր հասարակական ուժը և նոյնիսկ դասակարգը։ Ծնուեցին Սախարովներ ու Սոլժենիցիններ, որոնց առջեւ շատ խղճուկ էին սահմանափակ իշխանաւորները։ Ծնուեց «Սամիզդատ»՝ ինքնահրատարակչութիւն, որի առաջ խաւարեց ամբողջ պաշտօնական մամուլը։ Այս ամէնը չէր կարող չառաջացնել հարց։ Ի՞նչ անել։ Եւ կարծես թէ ճեղքելով բոլոր **լիբերիալիստ**ական պատասխանները, հրապարակ դուրս եկաւ Ստալինա-Միկոյեանական պատասխանը՝ ճնշել մտաւորականութիւնը։ Փորձը ցոյց է տուել, որ մտաւորականներին շատ աւելի հեշտ է ճնշել, քան ամբարներում հացը պահող գիւղացուն։ Մտաւորականին ճնշելու համար բաւական է ամուր փակել երկրի բոլոր դռները։

Հնարաւո՞ր է արդեօք, այսօր կրկնել ստալինեան ռեժիմը։ Շատերը այս հարցին պատասխանում են, որ ոչ, այսօր իբր թէ դա անհնարին է։ Բայց ինչո՞ւ։ Ի՞նչն է փոխուել։ Բոլշեւիկները աւելի բարի՞ են դարձել, կամ գուցէ ժողովուրդն է դարձել աւելի համարձակ ու վճռական։ Ոչ մէկը և ոչ էլ միւսը։ Ընդհակառակն, զգալիօրէն պակասել է գաղափարական մարդկանց թիւը և ինչպէս ամբողջ աշխարհում, այնպէս էլ Խ. Միութիւնում բարոյականութեան պակաս է զգացւում թէ ղեկավարութեան և թէ ժողովրդի մէջ։ Երկուսն էլ դարձել են աւելի յարմարուող և աւելի անսկզբունք։ Իսկ դա նշանակում է, որ ղեկավարութիւնը աւելի մեծ դաժանութիւնների է ընդունակ, իսկ ժողովուրդը համակերպուելու։ Ես անձամբ համոզուած եմ, որ ստալինիզմը ոչ միայն հնարաւոր է Խորհրդային Միութիւնում, այլ հէնց դրան է գնում երկիրը։ Մէկ գիշերւայ ընթացքում մի քանի հազար «ժողովրդի թշնամի» հաւաքեն և բոլորը ճագարնեերի նման կը լռեն։ Ռուս ժողովուրդը դեռ քաղաքական ազատութեան կարիքը չունի։ Մի քանի տասնեակ այլախոհները որ կան, դեռ ռուս ժողովուրդ չեն։ Աւելին, ամբողջ այդ այլախոհական շարժումը ունի հրէական արմատներ։ Դա ի հարկէ չի նշանակում, որ ռուսները չեն մասնակցում այդ շարժմանը։ Բայց միակ ռուսը ե՛ւ ազգութեամբ, ե՛ւ մտածելակերպով դա Սոլժենիցինն է, նա էլ շարժում չէ, այլ միայն փայլուն աստղ։ Իսկ Սախարովը, թէպէտեւ ազգութեամբ ռուս է (յամենայն դէպս այդպէս են ասում, կինը հրեայ է և աղջկայ ամուսինն էլ եւս հրեայ) սակայն իր տիեզերական մտածելակերպով՝ հրեայ։ Նրա բոլոր առաջարկները վերաբերւում են մարդկութեան և ոչ թէ Խորհրդային Միութեան ժողովուրդներին։

Մի խօսքով, այսօր Խորհրդային Միութեան ոչ ներսում և ոչ էլ դրսում չկայ որեւէ ուժ, որը ի վիճակի լինէր դիմադրելու ստալինեան ռեժիմի վերականգնմանը։ Իսկ իմ տեսած չեկիսներից ու կուսակցական ղեկավարներից անխտիր կերպով բոլորը (ոչ թէ մեծ մասը, այլ **ԲՈԼՈՐԸ**) երազում են ստալինեան ռեժիմի մասին, որտեղ կարելի է իշխել և ղեկավարել առանց տրամաբանելու, խլել ու ճնշել, սպանել ու բանտարկել առանց աւելորդ բարոյական չափանիշների։

Մեզ մնում է միայն շատ ուշադիր լինել խորհրդային ղեկավարների հիւանդութիւններին ու տեղաշարժումներին, քանզի համապատասխան դիրքորոշումն էլ պէտք չէ ուշանայ։ Ուշացումը կարող է շատ թանկ նստել։

1975

ԱԲԽԱԶՆԵՐԸ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՎՐԱՍՏԱՆԸ

Է. Յովհաննիսեան

Վերջերս միջազգային մամուլը, նաեւ խորհրդային հարցերու մասնագիտական գրականութիւնը, որոշ տւեալներու վրայ, աւելի յաճախ կ'անդրադառնայ տարբեր հանրապետութեանց մէջ ազգային և մարդկային իրաւանց պաշտպանութեանց շուրջ զարգացող խմորումներու:

Յայտնապէս սակայն այդ խմորումները առհասարակ կը դիտուին Արեւելք-Արեւմուտք յարաբերութեանց լոյսին տակ, կը շահագործուին քարոզչական միտումներով և, ըստ էութեան, ուղղակի նպատակ չունին խնդրոյ առարկայ ազգերու և շարժումներու սեփական, անմիջական կամ հեռաւոր շահերու ապահովումը:

Ո՛րքան ալ դատապարտելի, սակայն երբեք զարմանալի չէ, որ նոյն այդ խմորումները, միեւնոյն մաքիաւելական մարտավարութեամբ, շահագործին ո՛չ միայն դուրսը, այլեւ ներսը, աշխարհակալական նկատումներով:

Յստակ է, որ բոլոր ժամանակներուն, դրութեանց ու պայմաններուն մէջ՝ աշխարհակալութիւնը կրնայ յաճախ ձեւ ու կերպարանք փոխել, սակայն միշտ անփոփոխ կը մնան անոր բնոյթն ու էութիւնը:

Աբխազիոյ օրինակը, ինչպէս ցոյց կու տայ իր այս յօդուածին մէջ Է. Յովհաննիսեան, խիստ ուսանելի է, ի շարս այլոց, որպէսզի լիովին հասկանալի դառնայ նաեւ Լեռնային Ղարաբաղի և, ինչո՛ւ չէ, նաեւ Նախիջեւանի կամ հայաբնակ ներքին միւս գաւառներուն պատմա-քաղաքական պարագաներուն զուգահեռը:

Միթէ պարզ պատահականութե՞ան հետեւանք են, ի դէպ, այն պարբերական… «սպրդասացութիւն»ները, ոչ-հայկական տարբեր շրջանակներէ, ազգագրօրէն աստիճանաբար «վտանգող» Զանգեզուրի մասին, ամէն անգամ որ խօսք կամ ակնարկութիւն կ'ըլլայ Նախիջեւանը, Ղարաբաղը կամ երկուքը միասին, իբրեւ զուտ հայկական գաւառներ, ներկայ Հայաստանին միացնելու յամենայնի արդար պահանջի մասին…

Ի հարկէ, բոլոր աշխարհակալները, բոլոր գեր կամ ոչ-գեր պետութիւնները տեւաբար կը տրվին իրարմէ և, տեղին ու պարագային համեմատ, նաեւ կ'օգնեն իրարու՝ այլազան ձեւերով: Միայն փոքրերն են, որ յաճախ ետ կը մնան այս մարզին մէջ և միայն շատ «ուշ են գլխի ընկնում», ինչպէս պիտի ըսէին արեւելահայերը, մինչ ճի՛շդ հակառակն է, որ պէտք է տեղի ունենար:

Նոյեմբերի սկզբին արտասահման հասաւ մի լուր, որին անդրադարձան բազմաթիւ թերթեր և որը թէպէտեւ անսպասելի չէր, բայց առաջացրեց որոշ կասկածներ։

Լուրը վերաբերում էր Խորհրդային Վրաստանի կազմում գտնուող Աբխազական Ինքնավար Հանրապետութիւնում տեղի ունեցած իրադարձութիւններին։ Այդ լուրի համաձայն, Աբախազական Հանրապետութեան մայրաքաղաք Սուխումիում տեղի են ունեցել զանգւածային բողոքի ցոյցեր և ժողովներ, որտեղ աբխազները պահանջել են անջատել իրենց հանրապետութիւնը Վրաստանից և այն կցել Ռուսաստանին, այսինքն Ռուսաստանի Դաշնակցային Հանրապետութեանը։

Նախ և առաջ, մի քանի խօսքով անդրադառնանք աբխազական ինքնավար կոչւող հանրապետութեանը։ Այդ հանրապետութիւնը գտնւում է Սեւ ծովի ափին, 8.6 հազար քառակուսի կիլոմետր տարածութեամբ, ունի 480 հազար բնակիչ։ Աբխազիայում ապրում են աւելի քան 10 ազգութիւններ, որոնցից 158 հազարը՝ վրացի, 80 հազարը՝ ռուս, 75 հազարը՝ հայ, 73 հազարը՝ աբխազ և այլ ազգութիւններ։

Աբխազները ունեն իրենց յատուկ լեզուն ու մշակոյթը։ 1928 թւին նրանք փոխ առին լատինական տառերը։ 1938 թւին՝ վրացական տառերը, իսկ 1954 թւին, ազգայնականների բողոքների հետեւանքով, ռուսերէն տառերը։ 1954 թւին սկսւած բողոքները տարուց-տարի սաստկանում են։ Այս տարի այդ բողոքները հասան իրենց գագաթնակէտին, վերածւելով համազգային ցոյցի։ Ինչպէս յայտնի է, խորհրդային մամուլը նման դէպքերի մասին երբեք չի գրում։

Սակայն այս անգամ մենք չենք կարող ասել, որ Աբխազիայում ազգային խնդրի գոյութեան մասին մենք ոչինչ չգիտէինք։ Որ այնտեղ այդ խնդիրը գոյութիւն ունէր, մենք գիտէինք հէնց խորհրդային մամուլից և ոչ թէ մի ինչ որ թղթակցի հաղորդագրութիւնից, այլ Խորհրդային Միութեան Կոմունիստական կուսակցութեան Կենտ. Կոմիտէի քարտուղար Կապիտոնովից։ Ուստի նախքան Աբխազիայում տեղի ունեցած դէպքերին անդրադառնալը, տեսնենք թէ ինչ է ասում Կապիտոնովը։

Այս տարւայ սկզբին Կապիտոնովը եղաւ Աբխազիայում և Աբխազիայի Կոմունիստական կուսակցութեան շարքայինների ժողովում հանդէս եկաւ մի ճառով, որ հրատարակւեց խորհրդային մամուլում։ Վերին աստիճանի հետաքրքրական է նրա ելոյթը, ուստի թարգմանաբար մէջբերեմ նրա ելոյթի հիմնական մասը։ Մանաւանդ, որ այդ ելոյթի մասին արտասահմանեան մամուլն էլ խօսեց ոչ բաւարար չափով։ Ահա թէ ինչ ասաց Կապիտոնովը իր ելոյթում.

«Ընկերներ, վերջին ժամանակներս, Խորհրդային Միութեան Կոմունիստական կուսակցութեան Կենտ. Կոմիտէ, Գերագոյն Խորհրդի նախագահութիւն և միութենական այլ մարմիններին Աբխազիայից եկան բազմաթիւ նամակներ, հեռագրեր ու դիմումներ, որտեղ քննադատւում են թէ՛ Աբխազիայի և թէ Վրաստանի կուսակցական ու խորհրդային մարմինները և առաջ են քաշւում մի շարք առաջարկներ։ Այդ դիմումներում գլխաւոր շեշտը դրւում է Աբխազիայում գոյութիւն ունեցող փոխյարաբերութիւնների վրայ։ Մասնաւորապէս նշւում է, որ որոշ հեղինակներ ճիշտ չեն մեկնաբանում աբխազ ժողովրդի պատմութիւնը, որ չեն վերականգնւում աբխազական աշխարհագրական անւանումները, որ քիչ ուշադրութիւն է դարձւում աբխազական ազգային մշակոյթի և լեզուի զարգացման վրայ և, բացի դրանից, ոչ-բաւարար չափով են պատրաստւում աբխազական ազգային մասնագէտներ։ Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէն ուշադրութեամբ վերաբերւեց այս ազդանշաններին և գտաւ, որ բոլոր այս և մի շարք այլ հարցեր բարձրացնելու համար որոշակի հող գոյութիւն ունի։ Այժմ հանրապետութեան կուսակցական և խորհրդային մարմինները մշակեցին մի շարք միջոցառումներ, որոնք ուղղւած են նամակներում նշւած թերութիւնների վերացմանը։ Այնտեղ, որտեղ կը պահանջւի միութենական մարմինների օգնութիւնը, օրինակ, համալսարանի կամ հեռուստատեսութեան խնդիրներում, այդ օգնութիւնը, կարելիութիւնների սահմաններում, կը տրւի։ Այս հարցերի հետ միասին բարձրացւում է նաեւ Աբխազիան Վրաստանի կազմից դուրս բերելու և Ռուսաստանին կցելու հարցը։ Առաջարկւում է այդպիսի փոխադրման իրաւունքը արձանագրել սահմանադրութեան մէջ։ Ի՞նչ կարելի է ասել այս հարցի վերաբերեալ։

«Մեր երկրում կան 20 ինքնավար հանրապետութիւններ։ Այժմ այդ հանրապետութիւններում քննարկւում է նոր սահմանադրութիւնը։ Պէտք է ասել, որ քննարկումը ընթանում է շատ լաւ՝ քաղաքական և աշխատանքային բարձր մակարդակի վրայ։ Այդ մասին, ինչպէս դուք գիտէք, համոզիչ և վառ կերպով ասաց ընկեր Լէոնիդ Իլիչ Բրեժնեւը Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նիստի ժամանակ։ Եւ պէտք է ձեզ ասեմ, ընկերներ, որ ոչ մի տեղ, ոչ մի հանրապետութիւնում նման պահանջներ չեն դրւում և ընդհանրապէս չեն բարձրացւում այնպիսի հարցեր, որոնք հակասեն Խորհրդային Միութեան կամ հանրապետութիւնների սահմանադրութիւններին։ Եւ դա մեծապէս գնահատւում է Կենտ. Կոմիտէում և Գերագոյն Խորհրդում։ Մենք հաւատում ենք, որ բոլոր այն ընկերները, որոնք առաջ են քաշում Աբխազիան Վրաստանից անջատելու և Ռուսաստանին կցելու պահանջը, կը հասկանան, որ իրենց դիրքը սխալ է և չեն պնդի իրենց պահանջի վրայ»։

Այս նիւթի մասին Կապիտանովը խօսեց աւելի երկար, բայց այսքանն էլ բաւական է որոշ եզրակացութիւններ և ենթադրութիւններ անելու համար: Առաջին անգամը չէր, որ Խորհրդային Վրաստանի ինքնավար կոչւող հանրապետութիւնները պահանջում են դուրս գալ մէկ հանրապետութիւնից և մտնել մէկ ուրիշ հանրապետութեան մէջ: Վրաստանից դուրս գալ և Ռուսաստանին կցւել պահանջեցին օսետները, Հայաստանի կազմի մէջ ցանկացան մտնել ղարաբաղցիները, Ղրիմ ցանկացան վերադառնալ թաթարները և այլն: Սակայն բոլոր այս շարժումների մասին խորհրդային մամուլը լուռ էր: Բազմիցս լուռ էր մամուլը նաեւ աբխազների խնդրում, որոնք իրենց պահանջները ձեւակերպել էին դեռեւս Ստալինի օրօք:

Ի՞նչպէս պատահեց, որ այս անգամ յանկարծ այս մասին խօսւեց և այն էլ խօսւեց Կենտ. Կոմիտէի քարտուղարի բերանով: Բանը նրանումն է, որ հէնց այդ պահին, այսինքն խորհրդային նոր սահմանադրութեան քննարկման ժամանակ Վրաստանում սկսւել էր պետական լեզուն վրացերէնը ճանաչելու շարժումը, որը ի վերջոյ վերածւեց ցոյցի: Կառավարութիւնը ստիպւած եղաւ բաւարարելու վրացիների պահանջը: Եւ ահա, մի փոքր ժամանակ անց, Կենտ. Կոմիտէի քարտուղարը նախազգուշանում է, որ եթէ վրացիները շարունակեն իրենց ազգայնամոլութիւնը, ապա կարող են զրկւել Աբխազիայից, որովհետեւ, ինչպէս նա ասաց, աբխազների բողոքների համար որոշ հող գոյութիւն ունի:

Հետաքրքրական է նաեւ այն, որ Կապիտոնովը չէր մերժում աբխազներին, նա պարզապէս յոյս էր յայտնում, որ աբխազները չեն պնդի իրենց պահանջի վրայ: Իսկ տողընդմէջ կարելի էր կարդալ. «Բայց եթէ դուք շարունակէք պնդել, էլ ինչ կարող է անել կառավարութիւնը, եթէ ոչ բաւարարել Աբխազիայի աշխատաւորների պահանջը»: Վրացիները նախազգուշացումը հասկացան և լռեցին:

Այսպիսով Աբխազիայի ազգայնականները խաղալիկ դարձան խորհրդային իշխանաւորների ձեռքում: Նրանք միայն վրացիների վրայ ճնշում գործադրելու միջոց էին:

Այստեղից մի կասկած է առաջանում: Արդեօք Սերօ Խանզադեանի Ղարաբաղի խնդրին վերաբերւող նամակը նոյն, բայց այս անգամ արդէն աղրբեջանցիների վրայ ճնշում գործադրելու միջոց չէ՞ր: Խորհրդային Գրողների Միութեան անդամ Խանզադեանը արտասահմանում հրատարակում է Բրեժնեւին ուղղւած մի նամակ և դրա համար ոչ միայն չի պատժւում, այլեւ նոյն օրերին խորհրդային մամուլում մի ամբողջ էջ է նւիրում գրողին: Ի՞նչ է, Խորհրդային Միութիւնը արդէն փոխւե՞լ է:

Եթէ այդպէս է, ապա, ուրեմն, ինչո՞ւ է դատարանի առջեւ կանգնել Ռոբերտ Նազարեանը շատ աւելի աննշան յանցանքի համար: Ըստ երեւոյթին, Խանզադեանի նամակն էլ Կապիտոնովի ճառի նման մի բան էր: Անշուշտ սա միայն ու միայն իմ ենթադրութիւնն է:

Բայց աւարտենք աբխազների հարցը,- կենտրոնական կառավարութիւնը, օգտագործելով աբխազներին իր նպատակների համար, որոշեց նրանց որոշ տուրք տալ և խոստացաւ, որ Աբխազիայում բացւելու է աբխազական համալսարան, իսկ նոյեմբերի սկզբին սկսեց աշխատել տեղական հեռուստատեսութիւնը:

Սակայն դա չբաւարարեց աբխազներին և ահա նրանք նոյեմբեր ամսին կրկին սկսեցին իրենց բողոքի ցոյցը, պահանջելով կցել իրենց հանրապետութիւնը Ռուսաստանին:

Ըստ երեւոյթի, ազգային հարցերի լուծումը Խորհրդային Միութիւնում դեռեւս ժամանակ է պահանջում:

1978

ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԽՍՀՄ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ

Վահրամ Վահրամեան

Մայիս 8ին **«Նովոստի»** գործակալութիւնը հրատարակեց իր քաղաքական մեկնաբան Կեննատի Պիսարեւսկիի մեկնաբանութիւնը, զոր հեղինակը **«Կարելի՞ է արդեօք սպառազինման մրցավազքով տնտեսապէս քայքայել Խ. Միութիւնը»** վերնագրած էր: Անշուշտ յօդուածի վերնագրին մէջ գրւած հարցին հեղինակը բացասական պատասխան կու տայ:

Անկարելի է,- կ'ըսէ ան,- այդ ճանապարհով քայքայել Խ. Միութիւնը: Սակայն, մեր կարծիքով, գրւած հարցին պատասխանը այդքան յստակ չի կրնար ըլլալ:

Նախ քանի մը խօսքով կրկնենք Պիսարեւսկիի հիմնական դրոյթները:

Թեզ առաջին. Ամերիկայի Մ. Նահանգները 1945 թւականէն սկսեալ փորձեցին սպառազինման մրցավազքի միջոցով զինւորական առաւելութիւն ստանալ Խ. Միութեան յարաբերաբար եւ միաժամանակ քայքայել անոր տնտեսութիւնը: Մ. Նահանգներ այդ նպատակներուն համար ծախսեցին երկու եռիլիոն երկու հարիւր միլիառ տոլար, սակայն իրենց նպատակին չհասան:

Թեզ երկրորդ. Այսօր նախագահ Քարթըր այս ուղղութեամբ նոր փորձեր կը կատարէ եւ մտադրած է գալիք 5 տարւան ընթացքին ռազմական կարիքներու համար ծախսել եւս մէկ եռիլիոն քառասուն միլիառ տոլար: Սակայն այս փորձն ալ, կ'եզրակացնէ Պիսարեւսկին,- ապարդիւն պիտի անցնի:

Սկիզբէն նշենք փաստերու խեղաթիւրումը: Նախ եւ առաջ Մ. Նահանգները 1945 թւականին սպառազինման մրցավազքի մասին բոլորովին չէին մտածեր: Երկրորդ Համաշխարհային պատերազմի աւարտէն յետոյ, առաջին 9 ամիսներու ընթացքին Մ. Նահանգներու զինւած ուժերը 12 միլիոն 500 հազարէն մինչեւ 900 հազարի կրճատուեցան: Թրումընի կառավարութիւնը Պեռնար Պարուխի բերանով առաջարկեց ամբողջ ամերիկեան հիւլէական արդիւնաբերութիւնը դնել միջազգային հսկողութեան տակ, պայմանով որ մնացած բոլոր երկիրները հրաժարին այդ զէնքի արտադրութենէն: Խորհրդային ղեկավարները ՄԱԿին առաջարկւած Պարուխի ծրագիրը մերժեցին եւ շարունակեցին ուսումնասիրել եւ հետագային ալ արտադրել սեփական հիւլէական զէնք: Բացի ատկէ, Խ. Միութիւնը շարունակեց զէնքի տակ պահել 6 միլիոն մարդ, ամերիկեան 900 հազարին դիմաց:

Անհրաժեշտ է նշել նաեւ այն, որ Մ. Նահանգները Բ. Համաշխարհային պատերազմէն դուրս եկան անհամեմատ աւելի ուժեղ, քան Խ. Միութիւնը, եւ

իրենց այդ առաւելութեամբ անոնք չօգտուեցան։ Ինչ կը վերաբերի Պիսարեւսկիի տնտեսական հաշւարկներուն, ան կը կրկնէ այն ընդունւած սխալը, զոր կը կատարեն հարցին ոչ տեղեակ բոլոր արտասահմանեան տնտեսագէտները։ Անշուշտ Պիսարեւսկին լաւ գիտէ, թէ ո՛ւր է սխալը, բայց դիտաւորեալ կը լռէ։ Ան կը նշէ այն պաշտօնական թիւը, զոր կարելի է գտնել խորհրդային թերթերուն մէջ։ Ըստ իրեն եւ խորհրդային պաշտօնական մամուլին, 1980 թւականին զինւորական ծախսերը Խ. Միութեան մէջ 17 միլիառ 100 հազար նոր ռուբլի պիտի ըլլան։ Վերածելով այս գումարը տոլարի, ըստ պաշտօնական սակագինի, Պիսարեւսկի 30 միլիառ տոլար կը ստանայ։ Ու արտասահմանցիները կը զարմանան։ Ի՞նչպէս պատահեցաւ, որ 80 թւականներուն 5 անգամ աւելի պակաս ծախսեր կատարելով, Խ. Միութիւնը բազմաթիւ զէնքերու բնագաւառին մէջ Մ. Նահանգները յաջողեցաւ գլել անցնիլ։

Եթէ հաւատանք Պիսարեւսկիին, ապա Խ. Միութեան մէջ պաշտպանութեան համար կը ծախսուի պետական պիւտճէի միայն 6 տոկոսը։ Եւ, եթէ հաւատանք Պիսարեւսկիին, ապա Աֆղանստանի դէպքերը, որոնց ծայրը դեռեւս չ'երեւիր եւ որ ահագին գումարներ կը պահանջեն, նոյնիսկ Աֆղանստանը զինւորական ծախսերու վրայ 1980 թւականին ոչինչ կ'աւելցնէ։

Բայց Պիսարեւսկի կը սխալի, եթէ միտքը ուրիշ չէ։ Խ. Միութիւնը պաշտպանութեան վրայ կը ծախսէ կամ աւելի ճիշտ 1980 թւականին պիտի ծախսէ ոչ թէ 30, այլ 150 միլիառ տոլար։ Այս եզրակացութեան յանգեցան ամերիկացի մասնագէտները եւ այս մասին գոյութիւն ունի մանրակրկիտ հաշուետւութիւն։

Որպէսզի պարզ ըլլայ, թէ ո՞ւր է սխալը, նշենք միայն մէկ կէտ։ Խ. Միութեան պաշտպանութեան ծախսերը կ'որոշուին ոչ միայն պաշտպանութեան նախարարութեան ծախսերով, այլ նաեւ այն ծախսերով, զորս կը կատարեն այլ նախարարութիւններ։ Օրինակ, այն գործարանը, որ զինւորական զգեստներու համար կոճակներ կը պատրաստէ։

Ամերիկեան մասնագէտներու հաշուետւութիւնը այնքան յստակ է, որ ոչ մէկ կասկած չի ձգեր, թէ Խ. Միութիւնը 1980 թւականին 150 միլիառ տոլար պիտի ծախսէ։ Ասիկա կը նշանակէ, որ Խ. Միութիւնը իր պետական պիւտճէին մէկ հինգերորդը զինւորական նպատակներու վրայ կը ծախսէ։

Հաւանաբար այս է գլխաւոր պատճառը, որ ՄԱԿի տւեալներու համաձայն անձ-գլուխ ազգային եկամուտը Խ. Միութեան մէջ շատ ցած է։ Այս չափանիշով, Խ. Միութիւնը աշխարհի 26րդ տեղը կը գրաւէ։ Եթէ զինւորական ծախսերը խորհրդային համախառն արտադրութեան հետ համեմատենք, այդ ծախսերը համախառն արտադրութեան 15-16 տոկոսը կը կազմեն։ Համեմատենք այս չափանիշը այլ երկիրներու հետ,- Մ. Նահանգներ՝ 5,3 տոկոս, Դաշնակցային Գերմանիա՝ 3,4, Իտալիա՝ 2,4, Քանատա՝ 1,8, Ճափոն՝ 0,9։ Բոլոր այս

տեւալները կարելի է գտնել Ռազմագիտական Ուսումնասիրութիւններու Միջազգային Հիմնարկի վերջին տեղեկատուին մէջ։

Այժմ պատկերացնենք, որ ՆԱԹՕյի երկիրները իսկապէս Խորհրդային Միութիւնը տկարացնելու համար կ՚ուզէին զօրացնել սպառազինման արշաւը։ Բաւական էր, որ Ճափոն եւ Դաշնակցային Գերմանիա իրենց զինւորական արդիւնաբերութիւնը աւելցնէին գոնէ Խորհրդային Միութեան կէսին չափ, այսինքն իրենց ռազմական ծախսերը հասցնէին համախառն արտադրութեան 8 տոկոսին, չըսենք հաւասարութեան, այսինքն 15 տոկոսի, եւ Խ. Միութիւնը, որ առանց ատոր ալ ռազմական ծախսերուն մէջ կը խեղդուի, շատ անել կացութեան մէջ պիտի գտնուէր։ Եւ եթէ արեւմտեան երկիրներու կառավարութիւնները զինարշաւի մարզին մէջ նոյնիսկ նման լարւածութիւն ստեղծել ցանկային, չէին յաջողեր, որովհետեւ խաղաղ պայմաններու մէջ ոչ մէկ ժողովուրդ ժողովրդավարական կարգերու պայմաններուն մէջ նման զոհաբերութիւններ կատարելու համաձայն կը գտնուի։ Այնպէս որ Արեւմուտքը կրնայ շատ ծանր կացութեան մէջ ձգել Խորհրդային Միութեան տնտեսութիւնը, բայց այդ արհեստագիտական եւ տնտնեսական հնարաւորութիւնը հազիւ թէ բարոյապէս եւ իրաւապէս իրականացնել կամ արդարացնել կարենայ։

Ա՛լ չենք խօսիր այն մասին, որ արեւմտեան երկիրները եւս, ներառեալ Մ. Նահանգները, արդէն հնարաւորութիւն ունին գաղտնի գումարներ յատկացնելու իրենց զինւորական նպատակներուն։

1980

ԲՆՈՒԹԵԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ Խ. ՄԻՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Վահրամ Վահրամեան

1977ին Խ. Միութենէն զարտուղի ճամբաներով արտասահման ելաւ աշխատասիրութիւն մը, որուն հեղինակը ինքզինք Բորիս Կոմարով կ'անուանէ և որ ըստ երեւոյթին բաւական մօտ է բնութեան պաշտպանութեամբ զբաղող վարչութեան։

Անոր **«բնութեան ոչնչացումը Խորհրդային Միութեան մէջ»** աշխատանքը նախ Արեւմտեան Գերմանիոյ մէջ ռուսերէնով հրատարակուեցաւ, յետոյ իբրեւ գիրք հրատարակուած այդ աշխատասիրութիւնը Խ. Միութիւն վերադարձաւ։

Այժմ, այդ աշխատասիրութիւնը Խ. Միութենէն արտասահման վերադարձաւ, ինքնահրատարակչութեան ձեւին տակ։ Այդ կը նշանակէ, որ Խ. Միութիւն մուտքը յաջողած քանի մը նմոյշները արտատպուած, բազմագրուած և տարածուած են։

Ներկայիս կը պատրաստուի գիրքին անգլերէն հրատարակութիւնը, որուն նախաբանը Հարվըրտ համալսարանի ռուսական բաժնի վարիչ Մարշալ Կոլտման գրած է։ Կոլտման կը նշէ, թէ այս աշխատասիրութիւնը առաջին լուրջ ուսումնասիրութիւնն է, որ Խ. Միութեան մէջ բնութեան պաշտպանութեան ուղղութեամբ կատարուած է։

Հայաստանի մասին քիչ բան կ'ըսէ հեղինակը, սակայն ընդհանուր կացութիւնը նկարագրուած է այնքան մանրամասնօրէն և բանիմաց ձեւով, որ մեր ընթերցողներուն համար ալ այդ աշխատասիրութիւնը հետաքրքրական կրնայ ըլլալ։

* * *

1963 թականին, Մոսկուայի «Հոկտեմբեր» հանդէսին մէջ հրատարակուեցաւ Պայքալ լիճի ճակատագրի մասին յօդուած մը, ուր ըսուած է, որ լիճի ափերուն վրայ հաստատուող փայտամշակման գործարանները կը սպառնան թունաւորել աշխարհի այս ամենամաքուր, ամենախորունկ և ամենագեղեցիկ լիճը։

«Հոկտեմբեր» հանդէսէն ետք Պայքալի մասին գրեցին նաեւ այլ հրատարակութիւններ, նոյնիսկ **«Պրաւդա»** պաշտօնաթերթը։ Գիտութիւններու ակադեմիան, Աշխարհագրութեան ընկերակցութիւնը, Կենսաբանական հիմնարկը և շարք մը այլ կազմակերպութիւններ չորս տարի շարունակ բողոքեցին և առա-

ջարկեցին, որ Պայքալի վրայ գործարան շինելու ծրագրէն հրաժարին։ Կացութիւնը այնքան մտահոգիչ էր, որ 1966ին Խ. Միութեան Համայնավար կուսակցութեան 23րդ համագումարի ատեն ծանօթ գրող Միխայիլ Շոլոխով համարձակեցաւ ըսել, թէ «թերեւս Պայքալի անտառները կտրելէ և հոն գործարաններ շինելէ հրաժարելու ուժը կը գտնենք։ Գալիք սերունդները մեզի չեն ներեր, եթէ չկարենանք իրենց համար պահպանել այս սուրբ ծովը»։ Բայց Պայքալի հարցը լուծւած չէր։

Գործարանները շինւեցան և այժմ մասնագէտները դիտել կուտան, որ լիճը այնպիսի թափով մը կ'ապականի, որ 20 տարի յետոյ աղտոտ ճահիճի պիտի վերածուի։ Եւ Պայքալը Խ. Միութեան այն միակ լիճն է, ուր Սեւան լիճի հոչակաւոր Իշխան ձուկը ընտելացնել յաջողեցան։

Պայքալ լիճի այս պատմութեամբ սկսելով իր աշխատասիրութիւնը, Կոմարովը կը շարունակէ պատմել Խ. Միութեան մէջ տեղի ունեցող բնութեան ապականման մասին։

Աղտոտութիւնը չափելու համար գոյութիւն ունի **«պեղեկա»** չափանիշը, որ վնասակար նիւթի պարունակութեան գիտականօրէն թոյլատրելի բաժինը ցոյց կու տայ։ Եթէ օդին կամ ջուրին մէջ 5 պեղեկա կայ, այդ վայրը խնամքի կարօտ կը նկատուի։ 10-15 պեղեկան անմիջական վտանգի գօտի է, ուր գտնւող մարդը մէկ շաբթւան ընթացքին ոչ միայն իր առողջութիւնը, այլեւ գալիք իր սերունդը վտանգի կ'ենթարկէ։

Այս բացատրութիւնը տալէ ետք, հեղինակը կը նշէ, որ Խ. Միութեան մէջ կան տասը քաղաքներ, որոնց մթնոլորտը 100 պեղեկա կը պարունակէ, 100 քաղաքի մթնոլորտը 10 պեղեկա և աւելի քան 1000 քաղաքի մթնոլորտը 5 պեղեկա կը պարունակէ։

Դժբախտաբար քաղաքներու այս սեւ ցանկին մէջ կը գտնուի նաեւ Երեւանը։

Սեւ ցանկին առաջին քաղաքը Լենինակորսկն է, որ Արեւելեան Ղազախստան կը գտնուի։ Քաղաքը 270 հազար բնակիչ ունի։ Օդին մէջ արճիճի քանակը թոյլատրելի պարունակութենէն 14 անգամ աւելի շատ է։ Օդի պեղեկան երբեմն 100ի կը հասնի։ Ղազախստանի գունաւոր մետաղներու արդիւնաբերութեան կեդրոն Տեմիրտաու քաղաքին մէջ օդին սնդիկի պարունակութիւնը թոյլատրւածէն 60 անգամ աւելի է։

Բաշկիրիայի Ստերլետամակ քաղաքի օդին ածուխը թոյլատրւածէն 21 անգամ, իսկ քլորը 17 անգամ աւելի են։ Կրիւօ Ռոկ քաղաքի թունաւոր նիւթերու պարունակութեան պեղեկան 100ի կը հասնի։

Երեւանի մասին Կոմարով հետեւեալը կը գրէ.

«Հովիտի մէջ գտնուող Երեւանի մէջ վերջին տարիներուն բուռն կերպով զարգացեցաւ մանաւանդ քիմիական և գունաւոր մետաղներու արդիւնաբերութիւնը, որուն հետեւանքով Հայաստանի մայրաքաղաքին օդը 21 անգամ աւելի թունաւոր նիւթեր կը պարունակէ, քան թոյլատրուած է: Երեւանի օդին մէջ վտանգաւոր քանակի կը հասնին ֆենոլը, ֆլորը և ջրածինը:

Վերջին տաս տարիներու ընթացքին Խ. Միութեան մէջ քաղցկեղով հիւանդներու թիւը 5-6 տոկոս աւելցած է, իսկ այլանդակ երեխաներու տոկոսը 6-7 տոկոսի հասած է: Գիտնականները հաշուած են, որ 1990 թւականին Խ. Միութեան երեխաներու 15 առ հարիւրը անբնական ծնունդ պիտի ունենայ:

Կոմարովը ուրիշ դէպք մը եւս կը պատմէ:

1966ին շէֆտացի կենսաբան մը Պալթիկ ծովու ձուկերուն, իսկ աւելի ետք արծիւի փետուրներուն մէջ յայտնաբերեց ՊԽԲ կոչուող բազմաքլորային ֆինիլ նիւթը, որ մարդու մարմնին համար մահացու է:

ՊԽԲ նիւթը 30ական թւականներուն ստեղծուած է և արդիւնաբերութեան մէջ կ'օգտագործուի: Սակայն անոր վնասակարութիւնը աւելի ուշ գիտցուեցաւ: 1969 թւականին սառուցարաններէն ՊԽԲ թափած էր բրինձի իւղի մէջ և հազարաւոր ճափոնացիներ ծանրօրէն հիւանդացած էին: Պարզուեցաւ, որ Միչընկըն լիճի ՊԽԲի պարունակութիւնը թոյլատրուած քանակէն հինգ անգամ աւելի է: 1970ին ամերիկացիները ՊԽԲի գործածութիւնը արգիլեցին: Մէկ լիդր ջուրին մէջ գտնուող մէկ միլիոներորդ կրամ ՊԽԲը կրնայ համաշխարհային ովկիանոսը անապատ դարձնել: ՊԽԲի արտադրութիւնը ամէնուրեք արգիլուեցաւ:

Այնուհետեւ, 1974 թւականին շէֆտական նաւերը Պալթիկ ծովուն ջուրին մաքրութիւնը ստուգել սկսան և պարզեցին, որ Խորհրդային Միութեան ջուրերուն, մանաւանդ Նեման գետի գետաբերանին մօտ ՊԽԲի պարունակութիւնը չափէն շատ, շա՛տ աւելի է:

Շէֆտ երկու տարի շարունակ Խ. Միութեան դէմ բողոքեց, պահանջելով ուսումնասիրել հարցը և պարզել, թէ ՊԽԲը ուրկէ՞ կու գայ: Խորհրդային կողմը միշտ էլ կը պատասխանէր, որ իրենք երբեք ՊԽԲ չեն արտադրած, ուրեմն խորհրդային ջուրերուն մէջ չի կրնար գտնուիլ:

Շէֆտացիները իրենց պահանջին վրայ պնդեցին և 1976ին Բնագիտութեան Կենդրոնական Հիմնարկի աշխատակիցները հարցի ուսումնասիրութեան սկսան: Անսպասելիօրէն պարզուեցաւ, որ Խ. Միութեան բացարձակապէս բոլոր գետերուն և ծովերուն մէջ ՊԽԲ գոյութիւն ունի: Գաղտնիքը հոն էր, որ Ջերժինսկ քաղաքի ռազմական գաղտնի գործարանին մէջ մեծ քանակով կ'արտադրուէր և մինչեւ այսօր ալ կ'արտադրուի ՊԽԲ նիւթը:

Կոմարով կը պատմէ նաեւ, թէ հողը ինչպէս կը փճացուի, թէ ինչպէս զինուրականները՝ իրենց բարձր հրամանատարներուն հետ միասին, զինուրական ինքնաշարժներով, գնդացիրներով, երբեմն ալ հրթիռներով որսի կ'երթան և ի՛նչպէս անոնց ետեւէն անտառը կը լռէ և կը պարպուի։

Կոմարովի գիրքը բաւական ծաւալուն է և ամէն ինչ չէր կրնար պատմել կարճ յօդուածով մը։ Այստեղ բերուած տւեալները սարսափելի են։ Ամերիկացի մասնագէտներու կարծիքով, Կոմարով կը չափազանցէ։ Սակայն, եթէ Կոմարովի պատմածին կէսն ալ ճիշտ ըլլայ, կացութիւնը պարզապէս ողբերգական է։

1980

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԸՍՏ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՑԻՆԵՐԻ

Վահրամ Վահրամեան

Վերջին ժամանակներս, Աֆղանստանի դէպքերի կապակցութեամբ լուրջ կերպով սրուեցին խորհրդա-ամերիկեան փոխյարաբերութիւնները։ Այս կապակցութեամբ ամերիկեան գիտնականները մանրակրկիտ ուսումնասիրեցին խորհրդային գիտութեան կարողական հնարաւորութիւնները այն իմաստով, թէ որքանո՛վ խորհրդային գիտութիւնը կարող է լուրջ ազդեցութիւն թողնել համաշխարհային ուժերի հաւասարակշռութեան վրայ։ Կարո՞ղ են, արդեօք, խորհրդային գիտնականները մշակել ռազմագիտական իմաստով մի կարեւոր զէնք, որը վճռական նշանակութիւն ունենայ հնարաւոր պատերազմի ժամանակ։ Կամ կարո՞ղ է արդեօք Խորհրդային Միութիւնը հացահատիկի արգելքի հետեւանքները չէզոքացնել սեփական հացահատիկի արտադրանքի միջոցով։ Եւ կամ էլ՝ կարո՞ղ է Խ. Միութիւնը գտնել ուժանիւթի ճգնաժամից դուրս գալու աւելի լաւ որոշում, քան Միացեալ Նահանգները։

Այս հարցերին պատասխանելու համար, ամերիկեան մի շարք լրագրողներ հարցազրոյցներ ունեցան խորհրդային գիտութեան լաւ ծանօթ անձերի հետ, որոնք աշխատում են համալսարաններում, պետական հաստատութիւններում և գիտական հիմնարկներում։ Այս մասնագէտների պատասխանները կարելի է ամփոփել այսպէս.

Խորհրդային Միութիւնում գիտութեամբ զբաղւում են աւելի շատ մարդիկ, քան որեւէ ուրիշ երկրում։ Խ. Միութիւնը գիտութեան վրայ ծախսում է իր համախառն արտադրանքի փոխարժէքի 4 տոկոսը, իսկ Մ. Նահանգները՝ միայն 3 տոկոսը։ Վերջին 30 տարիներին Խ. Միութեան գիտական աշխատողների քանակը աւելացաւ 4 անգամ և 1978 թւականին կազմեց 828 հազար մարդ։ Մ. Նահանգներում գիտաշխատողների թիւը կազմում է 595 հազար մարդ։ Խ. Միութեան գիտութիւնը տառապում է արհեստագիտական յետամնացութիւնից և արդիւնաւէտ քաղաքական դիւանակալական վարչաձեւից։ Այնուամենայնիւ, նա կարողանում է բաւարարել շատ խորհրդային պահանջներ, մանաւանդ զինւորական պահանջները։ Մ. Նահանգների կառավարական պաշտօնեաներից մէկը հետեւեալ կարծիքը յայտնեց.

«Նայեցէք մեր զինամթերքներին, նրանք հիմնականում հիմնուած են 40-50ական թւականների գիտական յայտնագործութիւնների վրայ։ Պատկերացրէք, որ Խ. Միութիւնը ընդհանրապէս չունի սեփական գիտական յայտնագործութիւններ և օգտւում է միայն Արեւմուտքի գիտական արդիւնքներից։ Նման

կացութիւնը առաջացնում է միայն երեք տարւայ յետամնացութիւն, որը զինւորական արհեստագիտութեան համար ոչ մի նշանակութիւն չունի»:

Հարցումներին պատասխանող գիտնականները գտնում են, որ խորհրդային գիտութիւնը զարգանում է շատ անհաւասարաչափ: Այսպէս, օրինակ, Խ. Միութեան կործանիչները համարւում են աշխարհի ամենալաւ օդանաւերը: Սակայն այդ օդանաւերի վրայ օգտագործւում են այնպիսի ելեկտրոնային սարքաւորումներ, որոնք Մ. Նահանգներում վաղուց արդէն դարձել են թանգարանի նմոյշներ: Այս կացութիւնը բաւականին դժւարացնում է խորհրդային գիտութեան ամբողջական գնահատականը:

Արեւմտեան տեսանկիւնից խորհրդային գիտնականները ստանում են շատ նեղ մասնագիտացում, որը խանգարում է նրանց սեփական յայտնագործութիւնների համար գտնել աւելի լայն ասպարէզ: Սրա վառ օրինակը այն է, որ վերջերս խորհրդային ուսողագէտներից մէկը կատարել է մի ուսողական խնդրի լուծում, որը իր համար սովորական խնդիր է: Բայց արտասահմանում այնքան մեծ աղմուկ բարձրացաւ այդ յայտնագործութեան վերաբերեալ, որ հեղինակը ինքը շշմել էր, թէ ինչո՞ւ է այս աղմուկը: Իսկ աղմուկը նրա համար էր, որ յայտնագործութիւնը շշմեցուցիչ արդիւնքներ կարող էր տալ այն բնագաւառում, որի մասին հեղինակը գաղափար անգամ չունէր: Խորհրդային գիտնականների նեղ մասնագիտացւածութիւնը երբեմն խանգարում է նրանց՝ արագ տեղաւորւել արտասահմանեան գիտական հաստատութիւններում:

Մէկ ուրիշ կարծիք խորհրդային աստղագիտութեան մասին, որը որոշ չափով վերաբերւում է նաեւ Հայաստանին, որովհետեւ Բիւրականի աստղադիտարանի մասին խորհրդային մամուլը շատ մեծ գովեստներ է արձակում: Իսկ Մ. Նահանգների գիտնականները համարում են, որ Խ. Միութեան դիտարկող աստղագիտութիւնը, այսինքն հէնց Բիւրականում կատարւող աշխատանքը, չափազանց յետ է մնում ամերիկեան դիտարկող աստղագիտութիւնից, հեռադիտակների և այլ սարքաւորումների վատ որակի բերումով: Խ. Միութեան հաշւիչ սարքաւորումները, որպէս օրէնք, գնւում են արտասահմանից, իսկ տեղական հաշւիչ մեքենաները լուրջ աշխատանքների համար անօգտագործելի են: Այստեղ կարելի է չհամաձայնւել ամերիկեան մասնագէտների այս կարծիքի հետ, որովհետեւ Երեւանի հաշւիչ մեքենաների գործարանը, օրինակ, ահագին հաշւիչ սարքեր է պատրաստում ամենալուրջ բնագաւառի՝ զինւորական բնագաւառի համար: Սակայն ճիշտ է այն կարծիքը, որ քաղաքացիական կարիքների համար օգտագործւող հաշւիչ մեքենաները ունեն այնքան ցածր որակ, որ խորհրդային գործարաններում դեռեւս օգտագործւում են տարրական հաշւիչ գործիքներ:

Հաշւիչ սարքաւորումների որակի պակասը խոչընդոտ է հանդիսանում կիրառական գիտութիւնների զարգացման համար։ Հետաքրքրական է նաեւ արեւմտեան գիտնականների կարծիքը խորհրդային առողջապահութեան և բնութեան պահպանման վերաբերեալ։ Նրանց մեծ մասը այն տեսակէտն է յայտնում, որ չնայած նրան, որ Խ. Միութիւնում բժշկութիւնը անվճար է, բժշկութեան բնագաւառում Խ. Միութիւնը շատ յետ է մնացել Մ. Նահանգներից։ Իշխանաւորները և բարձր պաշտօնաներ գրաւող մարդիկ օգտւում են արտասահմանեան դեղորայքից և այլ բժշկական միջոցներից, իսկ ժողովրդի մեծ մասը ստիպւած է բաւարաւել տարրական խորհրդային միջոցներից ու հնարաւորութիւններից։

Խորհրդային գիտնականները փաստօրէն զրկւած են իրենց ընկերներին քննադատելու իրաւունքից, դրա համար էլ Խ. Միութեան գիտական հանդէսներում հրատարակւած աշխատութիւնները երբեմն լինում են ամբողջովին սուտ և կեղծ։ Այս բոլորի հետ միասին, Մ. Նահանգների և արեւմտեան այլ երկրների գիտնականները կարծում են, որ խորհրդային գիտութիւնը ունի իր մեծ առաւելութիւնները։

Մատիտից ու թղթից բացի, ուրիշ ոչինչ չպահանջող տեսական գիտութիւնները Խ. Միութիւնում գտնւում են միջազգային մակարդակի վրայ։ Սրանց թւին կարելի է դասել ուսողութիւնը, տեսական բնագիտութիւնը, **հիդրոդինամիկան** և այլ տեսական գիտութիւններ։ Ամերիկեան գիտնականները շատ աւելի նախաձեռնող գտնւեցին այն բնագաւառներում, որտեղ իրենք յաճախ հրաժարւում են աշխատել, օրինակ՝ մագնիսական դաշտերի կենսաբանական ազդեցութեան, մարդկային վարքագծի վրայ ազդելու և մի շարք այլ բնագաւառներում։ Խ. Միութիւնում փորձնական հոգեբանութիւնը շատ աւելի զարգացած է, քան Մ. Նահանգներում, որովհետեւ Խ. Միութիւնում շատ աւելի անզգոյշ են մարդու վրայ փորձեր կատարելու մէջ, քան Մ. Նահանգներում։

Որոշ առաւելութիւններ ունի խորհրդային գիտութիւնը նաեւ տիեզերական ուսումնասիրութիւնների բնագաւառում և ոմանք կարծում են, որ շատ հաւանական է լուսնային մշտական յենակէտի ստեղծումը խորհրդային գիտնականների կողմից։ Բացի դրանից, արեւմտեան գիտնականները համարում են, որ Խորհրդային Միութիւնը ստեղծելու է ամենահզօր արագացուցիչը։

Եւ, վերջապէս, Խ. Միութիւնում շատ աւելի լաւ վիճակում է եղանակի արհեստական փոփոխութեան բնագաւառը, մասամբ այն բանի համար, որ Միացեալ Նահանգներում տարբեր հասարակական խմբեր բողոքում են նման ուսումնասիրութիւնների դէմ։ Միացեալ Նահանգներում և արեւմտեան այլ երկրներում գիտնականները յանգում են այն եզրակացութեան, որ գիտական շփումները Խորհրդային Միութեան հետ չպէտք է կտրւեն, չնայած նրան, որ

խորհրդային զօրքերի ներխուժումը Աֆղանստան, ակադեմիկոս Սախարովի աքսորը և այլախոհների հալածանքները Խ. Միութիւնում դատապարտելի են։

1980

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆՈՒՄ

Է. Յովհաննիսեան

Յուլիսի 25ին Մոսկւայի **«Պրաւդա»** թերթը «տեսական հարցեր» բաժնում հրատարակեց աղրբեջանցի գիտնական, փիլիսոփայական գիտութիւնների դոկտոր Դաշդամիրովի յօդուածը, որը վերնագրուած էր այսպէս. «Միջազգայնական միասնութեան բարոյա-գաղափարական կապերը»: Այս յօդուածի կողքից կարելի էր անցնել, եթէ նա սահմանափակուէր իր առաջին մասով, որտեղ հեղինակը ջանում է ապացուցել, թէ.

1.- Խորհրդային ժողովուրդը՝ պատմութեան մէջ առաջին հասարակական և միջազգայնական ընդհանրութիւնն է, որը ստեղծել է ընկերվարական հողի վրայ:

2.- Մարքսիզմ-լենինիզմի գաղափարները և կոմունիզմի սկզբունքները մտել են խորհրդային մարդու արեան ու մսի մէջ:

3.- Միջազգայնականութիւնը, ըստ էութեան, **կոմունիստ**ական բարոյականութիւնն է:

Այս բաները վաղուց ի վեր ծեծւում են խորհրդային գիտա-քաղաքական գրականութեան մէջ: Գուցէ տեսաբանների համար նրանք հետաքրքրութիւն են ներկայացնում:

Սակայն, իմ կարծիքով, աւելի հետաքրքրական է յօդուածի երկրորդ մասը, որտեղ հեղինակը խօսում է խորհրդային ժողովուրդների ազգայնականութեան մասին և դրանով իսկ ապացուցում է, որ ընկերվարական հողի վրայ ստեղծած խորհրդային ժողովուրդ հասկացութիւնը արհեստական միասնութիւն է, որ մարքսիզմ-լենինիզմի սկզբունքները չեն մտել խորհրդային մարդու արեան ու մսի մէջ և որ Խ. Միութիւնում միջազգայնականութիւնը դեռեւս հակադրւում է ազգայնականութեանը:

1921 թւականին, Հայաստանում, Փետրւարեան ապստամբութեան բերումով, երբ Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն անցաւ իշխանութեան գլուխ, նա ժողովրդին ուղղեց մի կոչ, որտեղ մասնաւորապէս ասւած էր. «Ազգային և հասարակական բոլոր այն չարիքները, որոնք գոյութիւն են ունեցել անցեալում, պէտք է վերացւեն և ամենից առաջ պէտք է վերացւեն ազգային անհաւասարութիւնը և ազգային թշնամութիւնները: Հայաստանը սեփականութիւնն է բոլոր ժողովուրդների, որոնք ապրում են նրա սահմաններում: Ոչ մի խտրութիւն չի կարող լինել՝ հայի, թուրքի, ռուսի, քրդի, ասորու, եզիդիի և ուրիշների միջեւ:

Ամենքը հայրենիքի հարազատ զաւակներն են՝ հաւասար իրաւունքներով և հաւասար պարտականութիւններով»։

Եւ ահա, 60 տարի անց, աղրբեջանցի պրոֆեսորը նշում է հետեւեալը.

«Զարգացած ընկերվարութեան պայմաններում ազգային տրամադրութիւններ ծագելու առարկայական պատճառները վերացւած են։ Այս բանը ապացոյցի կարիք չունի։ Սակայն փոփոխական իրականութեան հակասութիւնները, հասարակական կեցութիւնից գիտութեան յետ մնալը, ազգային գիտակցութեան որոշ կողմերի պահպանողականութիւնը կարող են նպաստել ազգայնականութեան շուրջ մնացուկների պահպանմանը։ Այս մնացուկները կարող են արտայայտւել ճաշակների ու վարքագծերի ոլորտում։ Առանձին մարդիկ ցանկանում են շփւել միայն սեփական ազգի ներկայացուցիչների հետ և զարգացնում են կեղծ տեղական հայրենասիրութիւն, որը ջնջում է Խ. Միութեան ժողովուրդների բարեկամութիւնը և փոխօգնութիւնը։ Դեռեւս հանդիպում են առանձին արւեստագէտներ, որոնք ունեն հիւանդագին ձգտում՝ գերագնահատելու նախասոցիալիստական ժամանակաշրջանի ազգային գործօնները։ Յատկանշական է, որ նման մօտեցումը անցեալին, որպէս օրէնք, հիւսւում է կոմունիստական բարոյականութեան այլ հակաղրութիւնների հետ։ Ազգային բացառիկութեան, ազգային սահմանափակւածութեան, տեղայնութեան գաղափարի տէր մարդիկ սովորաբար ունենում են թոյլ տեսական պատրաստակամութիւն, լինում են անկոփ գաղափարական և բարոյական հարցերում և տհաս հոգեկան զարգացման ասպարէզում։ Ազգայնականութիւնը առաջացնում է ազգային մեկուսացում, որի հետ ծնւում է ատելութիւն դէպի ուրիշ ազգերի մշակոյթը, աւանդութիւնները և արժանապատւութիւնը»։

Եթէ այս երեւոյթների մասին գրում է ինքը՝ **«Պրաւդա»**ն, ապա դա նշանակում է, որ այդ երեւոյթները ոչ միայն կան, այլեւ ահագին անհանգստութիւն են պատճառում խորհրդային իշխանաւորներին։

Իսկապէս որ նման երեւոյթների գոյութիւնը Խ. Միութիւնում հետեւողական մարքսիստի համար զարմանալի պիտի թւայ։ Հետեւողական մարքսիստի համար բոլոր հասարակական երեւոյթները, այդ թւում նաեւ ազգայնականութիւնը և ազգային շարժումները կապւած են արտադրական միջոցների տեղաբաշխման հետ։ Այս իմաստով ազգերի հաւասար իրաւունքները Խ. Միութիւնում ապահովւած են և ազգերի տնտեսական հաւասարութիւնը այնտեղ առասպել չէ։ Վրացին, հայը, ռուսը, թուրքը և բոլոր ազգութիւնները օգտւում են տնտեսական հաւասար իրաւունքներից։ Էլ որտեղի՞ց պիտի ծագի ազգայնականութիւնը և ազգերի փոխադարձ ատելութիւնը։

Կարելի էր սպասել, որ հասարակական կեցութիւնից բխող ժողովուրդների հասարակական գիտակցութիւնն էլ պիտի լինէր ոչ թէ ազգայնական, այլ մի-

ջազգայնական, ոչ թէ բուրժուական, այլ պրոլետարական։ Սակայն փաստը ցոյց է տալիս, որ դա այդպէս չէ և դրա բացատրութիւնը գտնել մարքսիստական գրականութեան մէջ հեշտ բան չէ։

Նախ ոչ Մարքսը և ոչ էլ Էնգելսը ազգային հարցով լրջօրէն չեն զբաղուել։ Այն մի քանի դիտողութիւնները և արտայայտութիւնները, որ նրանք արել են ազգային հարցի վերաբերեալ տարբեր աշխատութիւններում, ցոյց են տալիս, որ նրանց ազգային հարցը բոլորովին չէր հետաքրքրում։ Այն, ինչ նրանք ցանկացան ասել ազգային հարցի մասին, դուրս չի գալիս «Մանիֆեստ»ում ասուածի սահմաններից, որի համաձայն պրոլետարիատը հայրենիք չունի, ուստի նրանից չի կարելի խլել այն, ինչ ինքը չունի։ Ապա թէ ազգութիւնները արդիւնաբերութեան զարգացման հետ միասին վերանալու են, իսկ մարդը մարդուն շահագործելու երեւոյթի վերացման հետ միասին վերանալու է նաեւ ազգը ազգին շահագործելու երեւոյթը։

Մարքսիստական այս բոլոր դրոյթները սուտ դուրս եկան։ Պարզուեց, որ պրոլետարիատը հայրենիք ունի և ճգնաժամային պահերին նա դաշինք է կնքում իր ազգային բուրժուազիայի հետ՝ հայրենիքը պաշտպանելու համար։ Ընդ որում՝ հայրենիքը պաշտպանելիս, նա կատաղի կռիւներ է վարում ուրիշ, հակառակորդ ազգի պրոլետարիատի դէմ։ Արդիւնաբերութեան զարգացման հետ միասին ազգութիւնները ոչ միայն չվերացան, այլեւ հակառակը, ապրեցին ազգային վերելք և մղեցին ազգային ազատագրական պայքարներ։

Իսկ ինչ վերաբերում է ազգը ազգին շահագործելու երեւոյթին, ապա դա մենք տեսնում ենք ամէնուր, այդ թւում նաեւ այն երկրներում, որոնք իրենց ընկերվարական են կոչում։ Շահագործումը ազգային ասպարէզում չվերացաւ ոչ Չեխոսլովակիայում, ոչ Բուլղարիայում, ոչ Խ. Միութիւնում և ոչ էլ այսօրուայ ամենաօրինակելի համայնավար երկրում՝ Հարաւսլաւիայում։

Մի խօսքով, Մարքսը և Էնգելսը չեն զբաղուել ազգային հարցով, իսկ ինչ էլ որ ասել են այդ մասին, սխալ են ասել։ Ինչ վերաբերում է յետմարքսեան համայնավարներին, ապա նրանք բոլորը ազգային հարցը դարձրել են զուտ քաղաքական հարց և օգտագործել են այն իրենց քաղաքական նպատակների համար։ Լենինը, Հիտլերը, Ստալինը, Տիտոն, Մաօ-Ցէ-Թունը, սրանք բոլորը իրենց ազգային հարցի մասնագէտներ են համարում, սակայն նրանցից ոչ մէկը բուն ընկերվարական տեսանկիւնից վերլուծութեան չեն ենթարկել ազգային խնդիրը և այժմ զարմանալի չէ, որ ոչ մակեդոնացիների, ոչ հայերի, ոչ պաղեստինցիների և ոչ էլ այլ բազմաթիւ ազգային շարժումների էութիւնը մարքսիստական դիրքերից բացատրուած չեն։

Եւ, ի հարկէ, զարմանալի չէ, որ խորհրդային գիտնական դոկտոր Դաշդամիրովը, ազգային երեւոյթներին ընկերվարական բացատրութիւններ տալու

փոխարէն, փչում է մարդկանց գիտակցութեան մէջ դրամատիրական մնացուկների մասին։ Ինքը, օրինակ, որպէս աղրբեջանցի, երեւի լաւ գիտէ Ղարաբաղի խնդիրը, անշուշտ գիտէ նաեւ աբխազների, Ղրիմի թաթարների, ուկրաինացիների և շատ ուրիշ խորհրդային ժողովուրդների ազգային խնդիրները։ Բայց նա այս ամէնը մնացուկ է համարում, որովհետեւ մնացուկ չանւանես, հապա ի՞նչպէս բացատրես։ Եւ հէնց այստեղ է պարզւում, որ չնայած բազմաթիւ գիտաժողովների ու հազարաւոր աշխատութիւնների ազգային հարցի վերաբերեալ՝ Խ. Միութիւնում ազգային հարցի ընկերվարական տեսութիւնը բացակայում է։

1975 թւականին Խ. Միութիւնում տեղի ունեցաւ ազգային հարցին նւիրւած մի գիտաժողով, որին մասնակցեցին երկրի ամենախոշոր գիտնականները։ Նրանց զեկուցումները հրատարակւեցին «Ընկերվարութիւնը և ազգութիւնները» վերնագիրը կրող ժողովածուում։ Ես կարդացի այդ հաստափոր ժողովածուն սկզբից մինչեւ վերջ և ցաւով պիտի նշեմ, որ նրա մէջ ոչինչ, բառիս բուն իմաստով՝ ոչինչ չգտայ.- Սովորական ճառեր սոցիալիստական ազգերի կարծեցեալ բարեկամութեան մասին։

Ցաւում եմ նրա համար, որ Սփիւռքումն էլ ընկերվարութեան և ազգայնականութեան խնդիրը մեծ հետաքրքրութիւն է առաջացնում, մանաւանդ Հ. Յ. Դաշնակցութեան համար, և դժբախտաբար, նոյնիսկ այս հարցում Խ. Միութիւնը օգտակար չի կարող լինել Սփիւռքի համար։ Խ. Միութիւնում մարքսիստական ամբիոններից ու հիմնարկներից կարելի էր մի ամբողջ պետութիւն կազմել, բայց այդ պետութիւնը ոչինչ չի անում ազգայնականութիւնը ընկերվարական դիրքերից վերլուծութեան ենթարկելու համար։

Բայց նիւթը կարեւոր է և Սփիւռքի մտաւորականները պէտք է փորձեն լուծել այդ հարցը սեփական ուժերով։

1980

Խ. ՄԻՈՒԹԵԱՆ ԵՒ ՉԵԽՈՍԼՈՎԱՔԻՈՅ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վահրամ Վահրամեան

Չեխական **«Ռուդէ Պրաւօ»** թերթը խմբագրականով մը, զարմանալի անկեղծութեամբ, Խորհրդային Միութեան և Չեխոսլովաքիոյ առեւտուրին բնոյթին մէջ լուրջ փոփոխութիւններու կարելիութիւնը կը տեսնէ։

«Խորհրդային և չեխական տնտեսական յարաբերութիւնները Չեխոսլովաքիոյ կեանքին համար բացարձակ արժէք ունին։ Եթէ Չեխոսլովաքիա Վարշաւիոյ Ուխտի և Տնտեսական Փոխօգնութեան (Կոմեկոն) անդամ չըլլար և Խ. Միութեան հետ տնտեսական ամուր կապեր չունենար, անոր առջեւ բազմաթիւ անլուծելի հարցեր կը ցցւէին» կը գրէ թերթը։

Անշուշտ ճիշտ է այն իրողութիւնը, որ Չեխոսլովաքիոյ մէջ համայնավար իշխանութեան հաստատումէն ետք, Չեխոսլովաքիա իր տնտեսութիւնը ամուր կապերով Խ. Միութեան տնտեսութեան կապեց։ Չեխոսլովաքիոյ արտաքին առեւտուրին 35 տոկոսը Խ. Միութեան հետ կ'ըլլայ։

Եօթանասունական թւականներու սկիզբը, Արեւելեան Եւրոպայի երկիրներէն ոմանք, որոնց մէջ նաեւ Չեխոսլովաքիա կը գտնուէր, արեւմտեան երկիրներուն հետ առեւտուր մշակել փորձեցին։ Սակայն մեծ յաջողութիւն չունեցան։ Անոնց արդիւնաբերական արտադրութիւնները բարձր որակ ունեցող արեւմտեան ապրանքներուն հետ չկրցան մրցիլ։ Իսկ Խ. Միութիւն այդ ապրանքները մեծ հաճոյքով կը գնէր, որովհետեւ խորհրդային ապրանքներէն աւելի լաւ էին։

Սակայն Չեխոսլովաքիոյ, ինչպէս նաեւ Արեւելեան Եւրոպայի բոլոր միւս երկիրներուն, Խ. Միութեան հետ կապը Խ. Միութեան այդ երկիրներուն հայթայթած նախանիւթերով պայմանաւորուած է։ Այդ նախանիւթերուն մէջ քարիւղը և կազը մեծ տեղ կը գրաւեն։ Եւ ճիշտ այս նիւթը արծարծելու պահուն էր, որ **«Ռուդէ Պրաւօ»** թերթը զարմանալի և ոչ սովորական անկեղծութիւն մը կը ցուցաբերէ։

Ըստ թերթին, Խ. Միութիւն տարւէ տարի նախանիւթի նոր աղբիւրներ գտնելու մէջ նորանոր դժւարութիւններու կը բախի, հետեւաբար համայնավար երկիրներ արտածած նախանիւթի իր առատաձեռնութիւնը հազիւ թէ կարողանայ շարունակել։

Պէտք է ըսել, որ 1977ին կատարւած ամերիկեան փնտռտուքները նոյն այս եզրակացութեան յանգած էին, սակայն Խ. Միութիւն, բնականաբար, յամառօրէն հերքած էր զայն։

Թերթը կը շարունակէ, «Կոմեկոնի անդամ երկիրներուն Խ. Միութեան ծախած նախանիւթերուն քանակը 1980էն ետք շատ պիտի նուազի։ Որոշ պարագաներու ակնկալել, որ այդ վաճառքը նոյնիսկ 1980ի մակարդակին վրայ մնայ, դժւար է, մանաւանդ երբ հարցը քարիւղին, բնական կազին և գունաւոր մետաղներուն կը վերաբերի»։

Խորհրդային և չեխական փոխյարաբերութիւններուն էութեան ծանօթ որեւէ անձ կրնայ դիւրութեամբ ենթադրել, որ թերթին այսօրինակ անկեղծութիւնը Մոսկւայէն թելադրւած է։ Ըստ երեւոյթին, **«Ռուդէ Պրաւօ»** թերթին միջոցաւ, Խ. Միութիւն իր դաշնակիցներուն կոչ կ'ուղղէ, որ նախանիւթին և քարիւղին հետ խնայողութեամբ վարուին։ Անկախ այս իրողութենէն, Խ. Միութիւն անգամ մը եւս հաստատած կ'ըլլայ, թէ Արեւելեան Եւրոպայի երկիրները ո՞րքան կախւած են իրմէ։

1980

ԱՆՁԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Վահրամ Վահրամեան

1954ին հրատարակուած խորհրդային «Իմաստասիրական Բառարան»ին մէջ շշմեցուցիչ «վրիպակ» մը կար: Այդտեղ «անձ» բառը կը բացակայէր: Բայց նոյն բառարանին մէջ **«Անձը պատմութեան մէջ»** յօդուածը հետեւեալը կը գրէր.

«Մարքս-լենինականութիւնը անձի ամէն ձեւի պաշտամունքներուն իբրեւ թշնամի հանդէս կու գայ: Անձի պաշտամունքը կը բնորոշէ քաղքենիական հակաժողովրդական կուսակցութիւններ, որոնց շահերը բանւորութեան շահերուն արմատապէս կը հակասեն և որոնք հասարակութիւնը զարգացնելու համար իտէալիստական հակագիտական պատկերացումներու վրայ կը յենին»:

Ստալինի մահէն մէկ տարի ետք հրատարակուած այս բառարանին մէջ այսպէս գրուած էր: Երկու տարի ետք, Խորհրդային Միութեան Համայնավար կուսակցութեան 20րդ համագումարին ընթացքին, Խրուշչով Ստալինի անձի պաշտամունքը դատապարտեց և շատերուն թւեցաւ, որ Խրուշչով անձի պաշտամունքը ժողովրդավարութեամբ փոխարինող նոր դարաշրջանի մը հիմը կը դնէ:

Սակայն այս խոստումը չիրագործուեցաւ և շուտով պարզուեցաւ, որ առաջնորդի և այլոց անձի պաշտամունքը խորհրդային վարչակարգի էութիւնն է: Շքանշաններ, կոչումներ, ծննդեան տարեդարձներ և անձ փառաբանող այլ արարողութիւններ ցոյց կու տան, որ անձի պաշտամունքը խորհրդային մարդուն կեանքին մէջ ամրօրէն մուտք գործած է:

Երբ արտասահմանի ժողովրդավարական կարգեր ունեցող երկիրներուն մէջ «պետութիւն և քաղաքացի» փոխյարաբերութեան կը հանդիպիս, կը հասկընաս, թէ ժողովրդականացած խորհրդային ղեկավարները բոլորովին տարբեր են: Անոնք, իրենց օգնականներով և քարտուղարներով շրջապատուած, բոլոր մակարդակներու վրայ «առաջնորդ»ի դեր կը խաղան: Անկարելի է խորհրդային թերթերուն մէջ առանց ժպիտի կարդալ, թէ ինչպէս «բրիգադավար» մը վեց ամսուան մէջ կովերու կաթնատուութիւնը յիսուն տոկոսով աւելացուցած ըլլալուն պատճառով հերոսի կոչում պիտի ստանայ:

Սակայն խորհրդային թերթերու այս յիշատակութիւնները չեն, որ մեր ուշադրութիւնը կը գրաւեն: Ուշադրութեան արժանին այն է, որ անձ և անհատականութիւն եզրերը, Խ. Միութեան մէջ դասակարգային բնոյթ կը կրեն: Ինչպէս դրամատիրական երկիրներուն մէջ գործատէրեր և արտադրողական մի-

ջոցներէ զուրկ դասակարգեր գոյութիւն ունին, նոյնպէս Խ. Միութեան մէջ «անձնատէր» և «անձնազուրկ» դասակարգեր գոյութիւն ունին։

Պարզ է, որ խորհրդային իշխանաւորները, կոլտնտեսութեան նախագահէն մինչեւ կենտկոմի քարտուղար, Մարքսի անձի պատմական դերին վերաբերող դրոյթներուն չեն ենթարկուիր։ Համագումարներու ամպիոններէն մինչեւ սեղանաւորի մակարդակ, կարելի է ըսել, որ առանց այս անձերուն մեր դպրոցը, կոլտնտեսութիւնը, հիմնարկը, քաղաքը, կուսակցութիւնը և ազգը անպէտք համարուող անձերու շնորհիւ ապրեցան։

Խ. Միութեան մէջ սովորական մարդիկ անհատականութիւն և սեփական կարծիք ունենալու իրաւունք չունին։ Խորհրդային Մեծ Հանրագիտարանին մէջ հետեւեալը գրւած է. «Խորհրդային մարդու անձի ձեւաւորումը ամէնէն յառաջադէմ և միակ գիտական աշխարհահայեացք՝ մարքս-լենինականութեան ազդեցութեան տակ տեղի կ'ունենայ։ Եւ համայնավար կուսակցութիւնն է, որ անձի մարդկային իսկական գիծերը կը դաստիարակէ»։

Ստալին արդէն շատոնց մահացած էր, երբ երկրի զանազան շրջաններուն մէջ գտնուող բազմաթիւ երիտասարդներ իրենց անձերը մարքսական պարտադիր ազդեցութեան չուզեցին ենթարկել և սեփական կարծիք ունենալ ցանկացան։ Այս այլախոհները խորհրդային իշխանութեանց վտանգաւոր երեւցան և իշխանութիւնները անոնց դէմ պայքարելու միջոցներ փնտռեցին ու գտան։ Հոգեբուժարանները, ուր առողջ մարդիկ իրենց անհատականութիւնը ամբողջովին կորսնցուցին։ Գերմանական ճամբարներու կազի սենեակներուն նմանող այս սենեակները ստեղծուեցան ճիշտ այն պահուն, երբ Խ. Միութեան մէջ բարձրաձայն յայտարարուեցաւ, որ ընկերվարական վարչակարգի ստեղծումը յաջողութեամբ պսակւած է։

Եւ ահա, վերջնականօրէն ընկերվարական վարչակարգ ընդգրկած երկրի մը մէջ, 1975ին օրինագիրք մը վաւերացուեցաւ, որուն հիման վրայ ծնողները իրենց զաւակները մարքս-լենինեան ոգիով **ՊԱՐՏԱԻՈՐ** են դաստիարակել, իսկ ուսուցիչները դպրոցներու մէջ **ՊԱՐՏԱԻՈՐ** են հակակրօնական դաստիարակութիւն մշակել։

Նմանօրինակ պարտադիր դաստիարակութիւն մը անձը կ'ոչնչացնէ, որովհետեւ անհատականութիւնը ազատ ընտրութեան միջոցաւ կը ձեւակերպուի։ Իսկ եթէ մանուկը մանկապարտէզէն մինչեւ համալսարան զուտ մարքսական կրթութիւն պիտի ստանայ, շրջապատւած անոնցմով և ճնշամիջոցներու ենթակայ այլ մտածողութեան և աշխարհահայեացքի տէր մարդիկ իրենց անհատականութիւնը պիտի կորսնցնեն, որովհետեւ ճնշամիջոցներով անձը միայն կարելի է սպանել և ոչ փոխել։

Իմաստասիրական բառարանները ինչ որ ալ ըսեն, անձերը պատմութեան մէջ միշտ վճռական դեր կատարած են։ Եւ հակառակը ի՞նչպէս կրնայ պատահիլ երբ գիտական, կրօնական, քաղաքական և մշակութային բոլոր յեղաշրջումները մանրագրէ, իմաստուն, գիտնական, զօրավար և յեղափոխական կոչուող անձեր կատարած են։

1980

ԲՈԼՇԵՒԻԿՆԵՐԻ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԱՆՑԵԱԼԻՑ

Է. Յովհաննիսեան

Վերջերս առիթ ունեցայ հանդիպելու Երեւանից եկած իմ վաղեմի բարեկամներից մէկին, որի հետ երկար զրուցեցինք Սփիւռքի, Հայրենիքի և մեր ազգային խնդիրների մասին։

Շատ հարցերում համամիտ էինք, որոշ հարցերում տարակարծիք, բայց մէկ հարցում՝ պարզապէս թշնամի։ Այդ հարցը յեղափոխական միջոցների հարցն էր։ Իմ բարեկամս հանեց **«Պայքար»** թերթի Օգոստոս 26ի համարը և աչքս կոխելով «Զգաստութեան կոչ» խորագրով յօդուածը, զայրացած ասաց.

Սա էլ ձե՞ր գործն է և դու սա է՞լ ես յեղափոխութիւն համարում։

Ճիշտն ասած, չգիտեմ թէ դա ում գործն է, բայց որ յեղափոխական գործ է՝ կասկած չունեմ,- պատասխանեցի ես ու փորձեցի տալ հետեւեալ բացատրութիւնը։

«Ոչ մի իշխանութիւն չի կարող սահմանափակել կամաւոր տուրքերով, որովհետեւ կամաւորները, այսինքն որեւէ գաղափարի նւիրւածները, որպէս օրէնք, դրամ չեն ունենում։ Դրա համար էլ բոլոր պետական իշխանութիւնները բռնի ուժով իրենց քաղաքացիներից գանձում են պետութեանը անհրաժեշտ տուրքերը, սակայն նման գանձումները բռնութիւն չեն կոչւում միայն նրա համար, որ այդ բռնութիւնը ՕՐԻՆԱԿԱՆԱՑԻԱԾ է պետութեան կողմից։ Պատերազմի ժամանակ Խ. Միութիւնում, երկրի պաշտպանութեան ֆոնդի անւան տակ, քաղցած ու հիւծւած խորհրդային քաղաքացիներից խլւում էր նրանց վերջին կոպեկը։ Եւ դրա դէմ ոչ ոք չէր բողոքում։

«Չբողոքեց ժողովուրդը նաեւ այն ժամանակ, երբ Խրուշչովը խլեց նրանց փոխառութիւնները։ Եւ ոչ միայն Խ. Միութիւնում, այլեւ աշխարհի բոլոր երկրների իշխանութիւնները, հարկ եղած դէպքում, այս կամ այն ճանապարհով, հաւաքում են ժողովրդից անհրաժեշտ գումարները, պետական կարիքների համար։

«Սփիւռքում հայ ժողովուրդը պետութիւն չունի, բայց պետական գործունէութիւն ունի։ Հայ Դատի հետապնդումը, զինեալ ինքնապաշտպանութեան կազմակերպումը, կրթական և կրօնական գործը, քաղաքական գործունէութիւնը, մամուլը, արւեստը և շատ ուրիշ բաներ պետական գործունէութիւն պէտք է համարել, քանզի այս ամէնը արւում է Հայ Սփիւռքի ներկայի և ապագայի համար։ Այս պետական գործունէութիւնը չի կարող ծաւալւել կամաւոր տուրքերի հիման վրայ։

«Ուստի անհրաժեշտ է «բռնութիւն», բայց պետական բռնութիւն, որովհետեւ ազգային պահանջների համար ուրիշներից դրամ խլելու ոչ բարոյական և ոչ էլ իրաւաբանական իրաւունքը ունի որեւէ ժողովուրդ: Իսկ սեփական հարուստներից դրամ պահանջելու համար, պետականութեան բացակայութեան բերումով, մենք չունենք իրաւաբանական իրաւունք, բայց ունենք բարոյական իրաւունքը»:

Տեսնելով, որ այս բացատրութիւնը չի բաւարարում իմ բարեկամիս, ես աւելացրի.

«Դու, որպէս բոլշեւիկ, պիտի չզարմանաս նման բաների վրայ, որովհետեւ քո կուսակցութիւնը առաջինն էր, որ յեղափոխական միջոցների մէջ մտցրեց ու օրինականացրեց քրէական ուղղութիւնը»:

Բարեկամս բուռն կերպով առարկեց, իսկ ես խոստացայ նրան գրել այդ մասին: Այժմ կատարում եմ խոստումս, թէպէտեւ համոզւած չեմ, որ նրան կը յաջողուի կարդալ գրածս: Սակայն Սփիւռքի համար էլ կարող է հետաքրքրական լինել բոլշեւիզմի յեղափոխական անցեալից վերցւած այս էջը:

ՄԿԻՋԲԸ

1905 թւականի յեղափոխութեան օրերին Ռուսաստանում կազմւեցին «բանւորական ինքնապաշտպանութեան մարտական ջոկատներ», որոնք յատուկ դեր պիտի կատարէին յեղափոխութեան ժամանակ: Սակայն յեղափոխութիւնը պարտւեց: Եւ չնայած դրան՝ Լենինը որոշեց պահպանել այդ ջոկատները երկու նպատակների համար:

1.- Բռնագրաւելով բռնագրաւածը՝ դրամ վաստակել կուսակցութեան համար:

2.- Ահաբեկութեան ենթարկել ոստիկանութեան, բանակի և կառավարութեան պաշտօնեաներին:

Մարքսի այն թեզը, թէ բանւորական յեղափոխութեան ժամանակ տեղի է ունենում միայն «սեփականազրկիչների սեփականազրկում», Լենինը թարգմանեց աւելի պարզ լեզւի ու հռչակեց իր յայտնի «թալանիր թալանւածը» թեզը: Լենինի Երկերի 12րդ հատորում, 251րդ էջում կայ Լենինի պատասխանը մի կոզակի, որ հարցնում է,- «Ճի՞շտ է արդեօք, որ բոլշեւիկները թալանիչներ են»: - «Այո, մենք թալանում ենք թալանւածը»,- պատասխանում է Լենինը:

Լենինի կողմից առաջ քաշւած հարցը, որը ի վերջոյ այն հարցն էր, թէ արդեո՞ք նպատակը արդարացնում է բոլոր միջոցները, Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական կուսակցութեան երկու թեւերը տւեցին տարբեր պատասխաններ: Մարտովը և մենշեւիկները մերժում էին քրէական միջոցները, գտնե-

լով որ նման բռնամիջոցները անբարոյական են։ Բայց մենշեւիկներն էլ սկզբունքօրէն ընդունում էին բռնագրաւումը, եթէ նրանք կատարւում էին յեղափոխութեան ժամանակ և կատարւում էին կուսակցութեան ու բանւոր դասակարգի թելադրանքով։

Իսկ Լենինը և նրա մերձաւորները բարոյական և անբարոյական, թոյլատրելի և անթոյլատրելի պայքարի հարցի քննարկումն անգամ համարում էին «ոչ միայն պատեհապաշտութիւն, այլեւ յանցագործութիւն»։ Լենինը իր տեսակէտը այս հարցի մասին ամփոփեց այսպէս.

«Յեղափոխական դասակարգը, իր խնդիրը կատարելու համար, պէտք է կարողանայ իր ձեռքում պահել հասարակական գործունէութեան բոլոր ձեւերը և կողմերը՝ առանց որեւէ բացառութեան։ Բոլորս հասկանում ենք, որ յանցաւոր ու տրամաբանութիւնից զուրկ կը լինէր այն բանակի վարքագիծը, որը չի զինւում բոլոր տեսակի զէնքերով, չի օգտագործում պայքարի բոլոր միջոցները և ձեւերը։ Զինւորական գործից էլ աւելի շատ սա վերաբերում է քաղաքականութեանը» (Լենին, Երկեր, հատոր 25, էջ 232)։

Մարտական ջոկատների հարցը, որը «էկսպրոպրիացիա» (սեփականազրկում) բառից կոչւեց «էկսերի» հարց, քննարկւեց բոլշեւիկների և մենշեւիկների երկու համատեղ համագումարներում։ Եւ հէնց այս հարցի շուրջ էլ առաջացաւ Սոցիալ-Դեմոկրատական կուսակցութեան երկու թեւերի պառակտումը՝ բարոյական խնդրում։

Կուսակցութեան 4րդ միացեալ համագումարում Լենինը առաջարկեց մի բանաձեւ, որտեղ ասւած էր, որ Ռուսաստանի յեղափոխութիւնը շարունակւում է, ուստի պէտք է շարունակուեն ֆիդայական յարձակումները թշնամու վրայ։ Դրա համար Լենինը առաջարկում է, ճանաչել մարտական գործունէութիւնը և թոյլատրելի համարել դրամ վաստակելու բռնամիջոցները։ Իսկ մենշեւիկների առաջարկւած նախագծում ասւած էր.

«Հաշւի առնելով այն հանգամանքը, որ դասակարգերից դուրս գտնւող գողերը ու աւազակները միշտ էլ օգտւել են յեղափոխական շարժումներից իրենց հակահասարակական գործերի համար, որ յեղափոխութեան գլխաւոր ուժը ժողովրդի վրայ բարոյական ազդեցութիւն թողնելն է, համագումարը որոշեց.

«1.- Պայքարել դրամական բռնագրաւումների դէմ.

«2.- Պետական գոյքը, շէնքերը և երկաթագծերը պայթեցնել միայն որոշակի մարտական նպատակով.

«3.- Պետական դրամատների և այլ հաստատութիւնների վրայ չյարձակւել։ Բայց հնարաւոր դէպքում բռնագրաւել կառավարութեանը պատկանող զէնքերը»։

Երբ երկու այս արձանագրութիւնները քւէարկութեան դրւեցին, Լենինի առաջարկը չանցաւ: Ընդ որում 46 բոլշեւիկ պատգամաւորներից 20ը ձեռնպահ մնացին:

Անշուշտ, Լենինը ամենեւին էլ մտադիր չէր ենթարկւելու համազումարի որոշմանը և 5 ամիս անց **«Պրոլետար»** թերթում նա գրում էր.

«Երբ ես տեսնում եմ, թէ ինչպէս սոցիալ-դեմոկրատներից ոմանք ինքնահաւանօրէն և հպարտութեամբ յայտարարում են, թէ մենք անիշխանականներ չենք, գողեր ու **թալանիչ**ներ չենք, թէ մենք այս ամենից բարձր ենք և մերժում ենք **պարտիզան**ական պատերազմը, ես հարց եմ տալիս ինձ. հասկանո՞ւմ են այս մարդիկ, թէ ի՞նչ են ասում (Լենին, Երկեր, հատոր 10, էջ 86):

Ինքը Լենինը շատ լաւ էր հասկանում, թէ ի՞նչ է ուզում կուսակցութիւնից:

1906 թւականի Օգոստոսի 15ին լեհական ընկերվարական կուսակցութեան որոշմամբ Լեհաստանի մի շարք քաղաքներում կազմակերպւեցին ահաբեկչութիւններ, որոնց հետեւանքով սպանւեցին տասնեակ ոստիկաններ և ռուս զինւորներ: Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան կոմիտէն բողոքեց լեհ ընկերվարականների կողմից կազմակերպւած ահաբեկչութիւնների դէմ: Եւ այս բողոքը հասկանալի էր, որովհետեւ մի քանի ամիս առաջ սոցիալ-դեմոկրատների միացեալ համագումարը որպէս պայքարի միջոց դատապարտել ու չէր ընդունել ահաբեկչութիւնը:

Այս բողոքի առիթով Լենինը հրատարակեց «Օրւայ իրադարձութիւնների առիթով» վերնագիրը կրող յօդւածը, որտեղ գրում էր. «Անշուշտ, սխալւում է և շատ սխալւում մեր կուսակցութեան Կենտրոնական կոմիտէն, երբ յայտարարում է, թէ այսպէս կոչւած **պարտիզան**ական և մարտական գործողութիւնները առաջւայ նման անընդունելի են կուսակցութեան համար: Սա սխալ է: Մենք առաջարկում ենք մեր կուսակցութեան բոլոր մարտական խմբերին վերջ տալ անգործութեանը և կազմակերպել պարտիզանական յարձակումներ» (Լենին, 10րդ հատոր, էջ 45):

Լենինի այս յայտարարութիւնը վճռականօրէն հերքում է խորհրդային դասագրքերում արձանագրւած այն տեսակէտը, թէ իբր Լենինը և բոլշեւիկները, ի տարբերութիւն «Էսերների» և «Նարոդնիկների», ահաբեկչութեան դէմ էին:

Ռուսաստանի կառավարական Դումայի (խորհրդարան) բոլշեւիկ պատգամաւոր և Լենինի լաւ բարեկամ Գրիգորի Ալեքսինսկին սեփականազրկումների մասին պատմում է հետեւեալը. «1906-1910 թւականներին բոլշեւիկեան **ֆրակցիա**ն ղեկավարւում էր փոքր կոմիտէով, որի գոյութեան մասին չգիտէր ոչ միայն ոստիկանութիւնը, այլեւ կուսակցութեան անդամները: Այդ կոմիտէն, որի կազմի մէջ էին մտնում Լենինը, Կրասինը և Բազդանովը, յատկապէս զբաղւած էր կուսակցութեան դրամական խնդրով: Այս եռեակի ղեկավարու-

թեան տակ կողոպտւում էին փոստերը, կայարանների դրամատները, գնացքները և այլն»։

1907 թականի Ապրիլ ամսին կուսակցութեան 5րդ համագումարում, որտեղ բոլշեւիկները մեծամասնութիւն էին կազմում, կրկին քննարկւեց «էկսկերի» խնդիրը։ Կենտրոնական կոմիտէի անունից Մարտովը զեկուցեց համագումարին. «Այսպէս կոչւած **պարտիզան**ական ահաբեկչութիւնը և սեփականազրկիչների սեփականազրկման ընթացքը տարածւում է լայն գետի պէս։ Այդ ընթացքը ուժեղանում է կառավարական ճնշամիջոցները, մղում է **բուրժուազիա**ն յետադիմականների կողմը և քայքայում է յեղափոխական **պրոլետարիատ**ի շարքերը, ապաբարոյականացնելով նրան»։

Ու չնայած նրան, որ համագումարի մեծամասնութիւնը կազմում էին բոլշեւիկները, չնայած նրան, որ Լենինի բոլոր առաջարկութիւնները ընդունւեցին համագումարի կողմից, այնուամենայնիւ նրա մէկ առաջարկը՝ **պարտիզան**ական ելոյթների անհրաժեշտութեան մասին, չանցաւ։ Այս հարցի վերաբերեալ համագումարը ընդունեց հետեւեալ որոշումը.

«Ներկայումս, երբ համեմատաբար խաղաղութիւն է տիրում, **պարտիզան**ական գործունէութիւնը անխուսափելիօրէն վեր է ածւում պայքարի անիշխանական ձևերի։ Կուսակցական կոմիտէներին կից գոյութիւն ունեցող մարտական ջոկատները դառնում են փակ դաւադրական խմբեր և կուսակցութեան շարքերը անկարգապահութիւն են մտցնում։ Հաշւի առնելով բոլոր այս հանգամանքները, համագումարը անցանկալի է համարում **պարտիզան**ական ելոյթները և գաղափարական պայքար է յայտարարում նրանց»։

Անշուշտ, Լենինը հաշւի չառաւ նաեւ այս որոշումը, որը տւել էր սեփական բոլշեւիկեան 5րդ համագումարը։ Համագումարից անմիջապէս յետոյ Լենինը սկսեց պատրաստւել մի նոր «**Էկսպրոպրիացիա**յի», որը ամենահոչակաւորն էր բոլշեւիկեան նախախորհրդային պատմութեան մէջ։ Այս գործը Լենինը յանձնարարեց Կամոյին և Ստալինին։

5րդ համագումարից յետոյ, Բերլինում Լենինը հանդիպում է Ստալինի և Կամոյի հետ։ Այս հանդիպման մասին յիշատակում է Ստալինի կենսագրութեան հեղինակներից մէկը՝ Անրի Բարբիւսը իր «**Ստալին**» վերնագիրը կրող գրքում։ Նա գրում է, որ Լենինի հետ հանդիպում ունենալուց յետոյ Ստալինը մեկնեց Թիֆլիս և յետոյ կրկին վերադարձաւ Բերլին և կրկին հանդիպեց Լենինին։ Բայց զարմանալի բան՝ Ստալինի պաշտօնական կենսագրութեան մէջ ոչ մի բան ասւած չէ այդ հանդիպումների մասին, որոնք պէտք է որ չափազանց կարևոր և պատւաբեր համարւէին։ Եւ նրանց խօսակցութեան նիւթն էլ մնացել է մինչեւ այսօր գաղտնիք։ Միայն ենթադրել կարելի է, որ նրանց խօսակցու-

թեան նիւթը «Էկսպրոպրիացիա»ն էր, որը մի քանի օր առաջ արգելւեր էր 5րդ համագումարի կողմից։

Բոլշեւիկեան անցուդարձերից լաւատեղեակ Տրոցկին այս առիթով գրում է. «Եթէ Լենինը յատուկ ուղեւորութիւն կատարեց Գերմանիայի մայրաքաղաք, Ստալինին հանդիպելու համար, ապա դա արւեց յամենայն դէպս ոչ տեսական զրոյցների համար։ Կասկածից վեր է, որ այդ հանդիպումը կապ ունէր դրամ ձեռք բերելու հետ»։ Տրոցկին նշում է, որ «Լենինը չէր ուզում ոստիկանների աչքի առջեւ, որոնք ներկայ էին համագումարում, հանդիպել Ստալինի հետ և բացի դրանից հանդիպմանը ներկայ էր Կամօ Տէր-Պետրոսեանը, որը ոչ մի կապ չունէր համագումարի հետ»։

Մէկ ամիս յետոյ, 1907 թւականի Յունիսի 26ին Կամոն յայտնի կը դառնայ ամբողջ աշխարհին, որպէս ամենահամարձակ և ամենախոշոր կողոպուտի հեղինակ։

Եւս մի հետաքրքրական նորութիւն։ Խորհրդային մեծ Հանրագիտարանում, որը պատրաստւել էր դեռեւս Ստալինի օրօք, բայց լոյս տեսաւ 1953 թւականին, Կամոյի կենսագրութեան մէջ ոչ մի բառ չկայ «Էկսպրոպրիացիաների», այդ թւում նաեւ Թիֆլիսի հռչակաւոր յարձակման մասին, չնայած նրան, որ Կամոյի «կենսագրութեանը երկու անգամ աւելի մեծ տեղ է տրւած, քան Հանրագիտարանի առաջին հրատարակութեան մէջ։ Կամոյի նոր կենսագրութեան մէջ ասւած է, որ նրա ուսուցիչը Ստալինն էր, որ Կամոն անձամբ ծանօթ էր Լենինի հետ, որ ընդյատակեայ աշխատանքներ էր տանում, որ զէնք էր պատրաստում և որ 1907 թւականին բանտարկւեց Բերլինում և 1909 թւականի վերջում յանձնւեց Ռուսաստանի իշխանութիւններին։ Բայց ինչու համար նա բանտարկւեց և ինչու Ռուսաստանին յանձնւեց, այս մասին ոչինչ չի ասւում։ Թէ ո՞րն է այս լռութեան պատճառը, այսօր քաջ յայտնի է, բայց յիշենք միայն այն, որ Կամոն Ստալինի աշակերտն էր և ոչ նրա գլխաւոր մասնագիտութիւնը սեփականազրկիչների սեփականազրկումն էր։

Լենինի կողմից ստեղծւած Ստալին-Կամօ խմբի հռչակաւոր գործերից մէկն էլ Չիտաուրիի դրամատան կողոպուտն էր, որը կատարւեց 1906 թի Նոյեմբեր ամսին։ Սակայն բռնագրաււած 21 հազար ռուբլուց միայն 15ը ուղարկւեց բոլշեւիկեան կենտրոնին։ Մշակելով բռնագրաւումների ծրագիրը, Լենինը պատահաբար չէր, որ դիմեց Կովկասին։ Այս բանի համար կային որոշ պատմական պատճառներ, որոնց մասին Տրոցկին գրում է հետեւեալը. «Կովկասը իր արիւնալից անցեալի բերումով դեռեւս ծնում է ըմբոստ երիտասարդների, որոնք պատրաստ են նետւել **պարտիզան**ական կռիւների մէջ։ Դրա համար էլ, աւելի քան 1000 ահաբեկչական գործեր կատարւեցին անվախ անդրկովկասցիների կողմից»։

Այսպէս թէ այնպէս, Լենինի հետ հանդիպելուց յետոյ Կոբան ու Կամոն վերադարձան Թիֆլիս և կազմակերպեցին պետական դրամատան կողոպուտը: Գործի ղեկավարը Կամոն էր: Երբ Թիֆլիսի Երեւանեան հրապարակում յաջողութեամբ աւարտուեց «էկսպրոպրիացիան», Կամոն ֆայտոնից ղեկավարում էր ամբողջ գործը և անձամբ ռումբեր էր նետում ոստիկանների վրայ: Այնտե՞ղ էր արդեօք Ստալինը: Տրոցկին գրում է, որ կուսակցական շրջանակներում Կոբայի մասնակցութիւնը Թիֆլիսի կողոպուտին կասկածի տակ չէր առնւում: Սակայն նա աւելացնում է, որ 1932 թւականին, նոր ուսումնասիրութիւններ կատարելուց, ինքը համոզւեց, որ Ստալինը անձամբ չի մասնակցել յարձակմանը, այլ միայն կատարել է ընդհանուր ղեկավարութիւնը:

Բայց մեզ համար սա մեծ նշանակութիւն չունի: Յայտնի է, որ կողոպտւած դրամները պահւել էին Թիֆլիսի աստղադիտարանի տնօրէնի բազկաթոռի մէջ: Իսկ այդ աստղադիտարանում հաշւետարի պաշտօնում աշխատում էր Ստալինը: Որոշ ժամանակից յետոյ այդ դրամները, 340,000 ռուբլի, յանձնւեցին Լենինին: Սակայն ռուսական կառավարութիւնը անմիջապէս համապատասխան լուր տւեց արտասահմանեան կառավարութիւններին Թիֆլիսի կողոպուտի մասին և շուտով սկսւեցին արտասահմանում ապրող այն բոլշեւիկների բանտարկութիւնները, որոնք փորձում էին մանրել արտասահմանում ռուսական դրամները: Նման բանտարկութիւններ տեղի ունեցան Փարիզում, Միւնխենում, Ստոկհոլմում և Ժընեւում: Բանտարկւածների մէջ էին ապագայ ժողովրդական կոմիսարներ Լիտւինովը և Սեմաշկոն:

Միայն այս բանտարկութիւններից յետոյ կուսակցութիւնը, այդ թւում նաեւ բոլշեւիկեան թեւը իմացաւ, որ Թիֆլիսի զինեալ կողոպուտը Լենինի կողմից էր հովանաւորւել: Հաշւի առնելով, որ դրամ փոխելու բոլոր փորձերը աւարտւում էին բանտարկութիւններով, կուսակցութեան կենտրոնական կոմիտէն որոշեց այրել մնացած դրամները: Մենշեւիկների պահանջով կուսակցութեան կենտրոնական կոմիտէն ստիպւած եղաւ քննարկել Թիֆլիսի գործը: Դրա համար ստեղծւեց յատուկ յանձնաժողով, որի նախագահն էր ապագայ արտաքին գործերի նախարար, այն ժամանակ մենշեւիկ Չիչերինը:

Չիչերինի յանձնաժողովը շատ շուտ պարզեց, որ Լենինի աշակերտները ոչ միայն կազմակերպել են Թիֆլիսի արիւնալից կողոպուտը, այլեւ որ Կամոն պատրաստում է Բերլինի Մենդելսոն դրամատան պայթիւնը՝ այս անգամ Լենինի համար արտասահմանեան դրամ ճարելու համար: Չիչերինի յանձնաժողովը պարզեց նաեւ այն, որ բոլշեւիկները արել էին յատուկ թուղթ գնելու կարգադրութիւնը՝ կեղծ դրամներ տպելու համար: Ընդորում Ֆինլանդիայում ապրող Զինովեւը արդէն ստացել էր այդ թղթի մի մասը: Երբ Չիչերինի խումբը սկսեց բացայայտել այս գործերը, Լենինը, օգտւելով կենտրոնական կոմիտէի

բոլշեւիկեան մեծամասնութիւնից, վերջ դրեց այս բացայայտումներին: Տրոցկին առաջարկեց, որ հարցը քննւի Երկրորդ Ինտերնացիոնալում, բայց այս առաջարկն էլ չանցաւ: Ի վերջոյ, հարցը քննեց Կովկասի կոմիտէն: Հաստատելով, որ Կամոն և Կոբան Թիֆլիսի «Էկսպրոպրիացիան» կատարել են ի խախտում 4րդ և 5րդ համագումարի որոշումների, երկուսն էլ, այսինքն թէ՛ Կամոն և թէ՛ Ստալինը կուսակցութիւնից վտարուեցին: Նրանց անունները չհրապարակուեցին, որովհետեւ հակառակ դէպքում նրանք կը ձերբակալուէին ոստիկանութեան կողմից:

Երբ 1918 թւականին, արդէն Խորհրդային Ռուսաստանում, Մարտովը «**Ռաբոչայա Գազետա**» թերթում յիշեցրեց Լենինին այն մասին, որ կառավարութեան կազմի մէջ է մտնում «ոմն Ստալին, որը յայտնի է իր կասկածելի անցեալով», Լենինը ոչ միայն ոչինչ չպատասխանեց, այլեւ վերջնականօրէն փակեց «էկոկերի» գործի քննարկումը, օրինականացնելով «Մեփականազրկիչների սեփանազրկման» իրաւունքը:

Անշուշտ «սեփականազրկիչների սեփականազրկման» հոգեւոր հայրը Լենինն էր, որը «**Պարտիզանական պատերազմ**» յօդուածում գրում էր, որ բոլշեւիկները ընդունում են պայքարի բոլոր ձեւերը, այդ թւում նաեւ նրանք, որոնք ոմանց անբարոյական են թւում»: Այս առիթով շատ հետաքրքրական է պրոֆ. Աբդուրահման Աւտորխանովի այն պնդումը, թէ Խորհրդային Միութեան «**Կարմիր Արխիւում**» արձանագրւած է հետեւեալ պատմութիւնը.

«Մի բոլշեւիկ ապրում էր մի շատ հարուստ մոսկովեան վաճառականուհու հետ, որը մեծ նւիրատուութիւններ էր կատարում կուսակցութեան հասցէին: Յետոյ «բոլշեւիկ-փեսացուն» խռովեց իր հարսնացուի հետ և հրաժարւեց ամուսնութիւնից: Նւիրատուութիւնները վերջացան: Լենինը իր մօտ է կանչում անյաջող փեսացուին և կարգադրում է վերադառնալ հարսնացուի մօտ:

- Չեմ կարող,- առարկում է բոլշեւիկը,- բարոյական սկզբունքներից ելնելով, չեմ կարող: Իսկ դուք մի՞թէ կը կարողանայիք:

- Ես ոչ,- պատասխանում է Լենինը,- բայց չէ՞ որ դուք կարող էք, ուրեմն, վերադարձէք»:

Առանց քաշւելու Լենինը դրամներ էր վերցնում Ռուսաստանի հարուստներից՝ Մորոզովից, Շմիդտից և ուրիշներից: Լենինը դրամներ վերցրեց նաեւ գերմանացիներից, երբ Ռուսաստանը պատերազմ էր մղում գերմանացիների դէմ: Դժւար է ենթադրել, որ Մորոզովը, Շմիդտը, Փիումիրնովը և այլ ռուս դրամատէրներ կամաւոր կերպով Լենինին դրամ էին տալիս, որպէսզի նա տապալի Ռուսաստանի դրամատէրներին:

Այսպէս թէ այնպէս, բոլշեւիկները օրինականացրին «նպատակը արդարացնում է միջոցը» թեզը և գործեցին ու մինչեւ այսօր էլ գործում են այդ թեզի համաձայն։

Ինչո՞ւ, ես վերցրի բոլշեւիկների յեղափոխական անցեալից վերցւած այս պատմութիւնը։ Ինձ կարող են ասել, որ մենք երբեք չենք ուզել նմանուել բոլշեւիկներին և չենք ուզել օգտագործել նրանց մեթոդները, մեզ համար միշտ էլ աւելի համակրելի են եղել բարոյապէս աւելի բարձր կանգնած մենշեւիկները։ Այս ամէնը ճիշտ է։ Ես էլ այդպէս եմ մտածում։ Բայց ճիշտ է նաեւ այն, որ աւելի բարոյական կեցւածք ունեցող մենշեւիկները դուրս մղուեցին դաժան պատմութեան ոլորտից, իսկ բոլշեւիկները մնացին ու դարձան մեր երկրի և ամբողջ Ռուսաստանի տէրերը։

1980

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Է. Յովհաննիսեան

Խորհրդային Միութեան տնտեսութեան զարգացման ընթացքը ուսումնասիրելիս, աչքի է զարնում այն փաստը, որ երկրի գլխաւոր տնտեսական չափանիշի՝ **ազգային եկամուտի** աճի թափը կամ արագութեան աստիճանը ընկնում է։

Այս մասին բուն խորհրդային թերթերից վերցուած տուեալները հետեւեալ պատկերը կը պարզեն.

1951-1955 թթ.	11,4	տոկոս աճ
1956-1960 թթ.	9,2	»» »»
1961-1965 թթ.	6,5	»» »»
1966-1970 թթ.	7,8	»» »»
1971-1975 թթ.	5,7	»» »»
1976-1980 թթ.	4,1	»» »»

Իր տնտեսութիւնը ծաւալող և զարգացող երկրի համար ազգային եկամուտի աճի թափի անկումը բնական երեւոյթ է, նամանաւանդ որ բնակչութեան աճը Խ. Միութիւնում ցածր է և կազմում է ընդամէնը տարեկան 2 տոկոս։

Սա նշանակում է, որ աճի նոյնիսկ ոչ-շատ բարձր արագութեան աստիճանն էլ կարող է ապահովել մարդկանց պահանջների բաւարարումը։ Բայց կարեւորը ուրիշ բան է։ Արդեօ՞ք եկամուտի աճի թափի նւազումը ի վերջոյ կը հասնի ու կը կանգնի մի այնպիսի մակարդակի վրայ, որը ինչ որ չափով ընդունելի կը լինի մարդկանց պահանջները բաւարարելու իմաստով։

Դրամատիրական զարգացած երկրների ազգային եկամուտի աճի միջին թափը, օրինակ, կազմում է 4,5 տոկոս։ Իսկ եթէ մենք փորձենք Խ. Միութեան ազգային եկամուտի աճի թափի անկումը շարունակել, ապա կը ստացւի, որ 1985-1990 թւականներին ազգային եկամուտի աճի թափը լինելու է աւելի պակաս, քան բնակչութեան աճն է, իսկ այդ նշանակում է, որ երկիրը սկսելու է մտնել աղքատանալու ընթացքի մէջ ոչ միայն ուրիշ երկրների համեմատութեամբ, այլեւ բացարձակ առումով։

Երկու դէպքում միայն՝ այս աղէտը կարող է տեղի չունենալ։

Առաջին, այս տարւանից սկսեալ ազգային եկամուտի աճի թափը այլեւս չի իջնելու, իսկ բարենպաստ պայմաններում էլ նոյնիսկ աճելու է, գոնէ մինչեւ դրամատիրական երկրներին բնորոշ 4,5 տոկոսը։

Երկրորդ, բնակչութեան աճի ընթացքը կ'ունենայ բացասական նշան, այսինքն տեղի կ'ունենայ բնակչութեան բացարձակ նւազում: Այս երկրորդ ճանապարհը նախ անընդունելի է և յետոյ բոլորովին կախում չունի խորհրդային ղեկավարների միջոցառումներից, ուստի վերլուծութեան արժանի է միայն առաջին հնարաւորութիւնը:

Ազգային եկամուտի աճման թափի վրայ կարելի է ազդել երեք գործօնների միջոցով.

1.- Գիտա-արհեստագիտական առաջադիմութեան օգնութեամբ աշխատանքի արտադրողականութեան բարձրացումով:

2.- Աշխատանքային ուժի աւելացումով:

3.- Բնական հարստութիւնների լայն վաճառքով (ինչպէս, օրինակ, Քուէյթը):

Աշխատանքի արտադրողականութեան բարձրացման հարցում կայ մէկ անյաղթահարելի խոչընդոտ, որ խորհրդային տնտեսութեան ծրագրային կարգն է: Արդէն վաղուց ծանօթ է, որ ծրագրային տնտեսութիւնը յամառօրէն դիմադրում է բոլոր գիտա-արհեստագիտական նորութիւններին, որովհետեւ ծրագրաւորւած տնտեսութիւնը զուրկ է նոր արհեստագիտութեան արդիւնաւէտութիւնը որոշելու գլխաւոր պայմանից՝ ազատ շուկայից:

«Կարգաւորիչ» այդ շուկայի բացակայութիւնը ստեղծել է այնպիսի կացութիւն, որ Խ. Միութիւնը արհեստագիտօրէն շատ ետ է մնում Արեւմուտքից և դրա համար էլ, պաշտօնական վիճակագրութեան համաձայն, աշխատանքի արտադրողականութիւնը Խորհ. Միութիւնում երկու անգամ աւելի ցածր է, քան, օրինակ, Միացեալ Նահանգներում: Ժամանակին Լենինը, նշելով աշխատանքի արտադրողականութեան տարբերութիւնը համայնավարական և դրամատիրական երկրների միջեւ, ասում էր, որ այդ չափանիշը վարչակարգի «առաջադիմութեան գլխաւոր չափանիշն է»:

Երկար ժամանակ մարդիկ հաշտւում էին այն փաստի հետ, որ այդ առաջադիմութեան չափանիշի համաձայն՝ խորհրդային վարչակարգը **դեռեւս** ետ է մնում դրամատիրական վարչակարգերից, որովհետեւ այդ չափանիշի աճման թափը բարձր է և երեւոյթը նկատւում էր որպէս նորածին համայնավար վարչակարգի ժամանակաւոր դժւարութիւն: Սակայն այսօր արդէն պարզւել է, որ աշխատանքի արտադրողականութեան աճի նոյնիսկ հաւասար թափը Արեւմուտքի հետ անիրականանալի երազ է:

Այժմ Խ. Միութեան աշխատանքի արտադրողականութեան թափը աւելի ցածր է, քան բոլոր արդիւնաբերապէս զարգացած դրամատիրական երկրներում: Սա նշանակում է, որ Խրուշչովի առաջ քաշած թեզը, Միացեալ Նահանգներին հասնելու և անցնելու վերաբերեալ, ոչ մի տնտեսական հիմք չունէր և

այժմ երկիրը ոչ թէ հասնում է, այլ տարէցտարի ետ է մնում Միացեալ Նահանգներից։ Եւ, ուրեմն, աշխատանքի արտադրողականութիւնը չի փրկի երկիրը տնտեսական ճգնաժամից։

Իսկ ի՞նչ կարող է անել աշխատուժի աւելացումը։ Եւ հնարաւո՞ր է այդ։

Ոչ, այս ճանապարհին էլ չի փրկում, որովհետեւ Խ. Միութիւնում արդէն սկսւել է աշխատուժի ճգնաժամը։ Այնտեղ աշխատուժի բոլոր պաշարները սպառուած են։ Պաշտօնապէս գրեթէ բոլորը աշխատում են։ Իսկ բնակչութեան աճը, ըստ պետական վիճակագրութեանց, ցոյց է տալիս, որ եկող 10ամեակում բանւորական ուժի աճ չի լինելու։ Դրա փոխարէն աւելանալու է երեխաների և թոշակառուների քանակը։ Անշուշտ, սա պատահական զուգադիպութիւն է, բայց չափազանց վտանգաւոր զուգադիպութիւն։

Սովորաբար պաշտպանւում է այն տեսակէտը, թէ կրթութեան մակարդակի բարձրացումը աւելացնում է նաեւ աշխատուժի արտադրողականութիւնը։ Սակայն ծրագրաւորումը թափանցում է նաեւ այս բնագաւառը։ Պարտադիր միջնակարգ կրթութիւնը բաւականին իջեցնում է աշակերտներին ներկայացուած պահանջը։ Կացութիւնը անհամեմատօրէն լաւ է բարձրագոյն դպրոցներում, որտեղ գոյութիւն ունի մրցակցութիւն և ընտրութիւն, սակայն աւարտելուց յետոյ մասնագէտները բաշխւում են ծրագրային կարգով։

Շատ վատ է կացութիւնը գիւղում։ Վերջին տարիներին պետութիւնը մեծ ծախսեր կատարեց գիւղատնտեսական ճգնաժամից դուրս գալու համար, բայց ոչինչ չօգնեց։ Աշխատուժի հոսքը գիւղից դէպի քաղաք այնքան մեծ է, որ նոյնիսկ տնամերձ տնտեսութիւնները սկսել են տուժել, որոնք ցարդ կազմում էին գիւղատնտեսական արդիւնաբերութեան 30 տոկոսը, մինչդեռ հինգ տարի առաջ կազմում էին 35 տոկոսը։ Չնայած նրան, որ գիւղատնտեսութեան մէջ աշխատող բանւորի աշխատավարձը կազմում է 200-300 ռուբլի, այնուամենայնիւ բանւորը գերադասում է թողնել իր մեքենարօրը և գնալ քաղաք՝ գործարանում աշխատելու, որովհետեւ շատ մեծ է տարբերութիւնը գիւղի և քաղաքի ապրուստի մակարդակի միջեւ։

Գիւղատնտեսութեան մէջ աշխատուժի ճգնաժամը վաղուց սկսւած է։ Կոլտնտեսութիւնները և խորհտնտեսութիւնները մասնաւոր կարգով վարձում են «թափառական» բանւորների, որոնց ստիպւած են լինում վճարել մեծ, անօրինական, գումարներ։ Մի խօսքով՝ աշխատուժի աւելացման վրայ էլ ոչ մի յոյս չկայ։

Մնում է, ուրեմն, բնական հարստութիւնների լայն վաճառքը։ Սակայն այս աղբիւրն էլ սպառնում է ցամաքել։ Բանը նրանումն է, որ մարդկութեան մէկ 15րդ մասը, բռնագրաւելով աշխարհի ցամաքի 6րդ մասը, չի կարողացել կազմակերպել բնական հարստութիւնների ընդհանուր արտադրութիւնը, իսկ այն

«մօտիկ» հանաձոները, որոնք դեռեւս կարելի է ստանալ առանց լուրջ արհեստագիտական սարքաւորումների, աժան գնով, մօտենում են սպառման։

Կար ժամանակ, որ Ռուսաստանը ամբողջ աշխարհին վաճառում էր գիւղատնտեսական ապրանքներ, որոնք նոյնպէս մի տեսակ հանաձոներ էին, բնական հարստութիւններ։ Սակայն այսօր Ռուսաստանը կորցրել է հողից գիւղատնտեսական ապրանքներ ստանալու յատկութիւնը, որովհետեւ այսօր արդէն, ջրից, արեւից ու քրտինքից բացի, հողին անհրաժեշտ է գիտութիւն և արհեստագիտութիւն տալ։

Այս նոյն կացութիւնը շուտով ստեղծուելու է նաեւ բնական հարստութիւնների բնագաւառում։ Այսօր խորհրդային ապրանքների արտահանման 80 տոկոսը կազմում է նաւթը, բնական գազը, հանքաքարը, փայտը, մորթեղէնը, ձուկը, այսինքն միայն քրտինք և ոչ բարդ արհեստագիտութիւն պահանջող ապրանքները։ Սակայն այս հարստութիւնների ստացումը օրէցօր դժւարանում է։ Նաւթի շատրւանները չքանում են և նաւթ ստանալու համար մեծ ճնշմամբ ջուր են մղում հանքերը, թթւով ներծծում են հողը, փորում են շատ խոր հանքեր, գոլորշիով տաքացնում են հողը և այլն։

Այս ամէնը մեծ ներդրումներ է պահանջում։ Նոյն բանը տեղի է ունենում բնական գազ ստանալու բնագաւառում։ Ուրիշ խօսքով, նոյն մակարդակի վրայ պահելու համար բնական հարստութիւնների արտադրանքը, անհրաժեշտ է տարէցտարի աւելացնել մեծագումար ներդրումները և աշխատանքը։

Վերջին տարիներին Խ. Միութիւնը, նաւթի գների բարձրացման պատճառով, խիստ աւելացրեց նաւթի արտադրանքը։ Պետական ծրագրումի անձնակազմը գտաւ, որ նաւթի արտադրանքը օտար դրամանիշի ձեռքբերման լաւ միջոց է և ծրագրեց 1990 թւականին արտահանել առնուազն 750 միլիոն տոննա նաւթ։ Սակայն արդէն այսօր պարզւեց, որ նաւթի «մօտիկ» պաշարները սպառուած են, ուստի պէտք է դիմել ընդերկրեայ հեռաւոր շերտերում գտնուող նաւթին։ Բայց լրացուցիչ ծախսեր կատարելու հնարաւորութիւնը չկար և ստիպւած եղաւ 1990 թւականի համար ծրագրել միայն 582 միլիոն տոննա նաւթի արտահանումը։

Եթէ այս կացութիւնը շարունակուի, Խ. Միութիւնը սկզբից կը հրաժարուի նաւթ արտահանելուց, իսկ յետոյ էլ ստիպւած կը լինի նաւթ ներածել։ Այսինքն կը կրկնւի Ռուսաստանի հացահատիկի պատմութիւնը։ Սակայն, եթէ հացահատիկի համար Խ. Միութիւնը կարողանում է վճարել Սիբերիայ ոսկով, ապա նաւթի համար ամբողջ Սիբերիայ ոսկու պաշարները չեն հերիքի։ Եւ երկիրը կը կանգնի ուժանիւթի ճգնաժամի առջեւ։

1979 թւականի նոյեմբերին տեղի ունեցաւ Խ. Միութեան Կոմունիստական կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի լիագումար ժողովը, որտեղ Բրեժ-

նեւը մանրամասնօրէն կանգ առաւ խորհրդային տնտեսութեան կացութեան վրայ և խիստ քննադատեց երկրի նախարարութիւնները, վարչութիւնները և Պետպլանը: Նա ասաց, որ շատ ծանր է կացութիւնը փոխադրութեան, ուժանիւթի, նաւթարդիւնաբերութեան, մետաղագործութեան բնագաւառներում և նշեց, որ ձախողւել են բոլոր ծրագիրները: Այն փաստը, որ նման ելոյթը հրատարակւում է մամուլում, խօսում է այն մասին, որ մեր եզրակացութիւնները ճիշտ են:

Երկրի տնտեսական ծանր վիճակի մասին մէկ ուրիշ վկայութիւն կարելի է բերել արտասահմանեան մամուլից: Յայտնի է, որ Անդրկովկասում, տնտեսական ամենածանր ճգնաժամերի ժամանակ, երբ Ռուսաստանում պարզապէս սով էր, կացութիւնը շատ աւելի տանելի էր: Այժմ, յենւելով լաւատեղեակ աղբիւրների վրայ, **«Հանդիպումներ»** ամսագիրը, որը լոյս է տեսնում Դաշնակցային Գերմանիայի Ֆրանկֆուրտ քաղաքում, գրում է, որ Երեւանում կարագը վաճառում են օրական մէկ անգամ՝ ժամը 18ին, այն էլ ոչ բոլոր խանութներում: Միս, ինչպէս նաեւ կաթնեղէն, գրեթէ չի ճարւում:

Նոյն կացութիւնը տիրում է Թիֆլիսում: Միայն թէ այնտեղ կարագ վաճառելու ժամը ստոյգ չէ և մարդիկ մէկ խանութից միւսն են նետւում: 2 ռուբլի 10 կոպէկ արժող սպիտակ պանիրը շուկայում վաճառւում է 8 ռուբլով, այսինքն բանւորի երկու օրւայ աշխատավարձով: Վրացի գիւղացիներին թոյլ չեն տալիս, որ Վրաստանից դուրս տանեն նարինջը, խաղողը, թոյլ չեն տալիս նաեւ, որ այդ մրգերը վաճառւեն ներքին շուկայում: Նրանցից պահանջում են միրգը յանձնել պետութեանը՝ պետական գներով: Գիւղացիները ստիպւած կտրում են խաղողի այգիները և ազատւած տարածութիւնների վրայ ցանում են այն, ինչը կարող է անասնակեր ծառայել և ինչը դեռեւս կարելի է վաճառել շուկայում:

Երկիրը կանգնած է ծանր տնտեսական ճգնաժամի առջեւ: Ո՞ւր է ելքը:

Ես կարծում եմ, որ այս հարցի պատասխանը գտնւում է ոչ թէ տնտեսական, այլ քաղաքական ոլորտում և այս յօդւածի սահմաններից դուրս է:

1981

ԱՅՆՏԵՂ ԷԼ ԿԱՐԵԼԻ Է ԿԱՐԾԻՔ ՅԱՅՏՆԵԼ

Է. Յովհաննիսեան

Խորհրդային Ուզբեկստանի մայրաքաղաք Տաշկենտ այցելող զբօսաշրջիկներին պատմում են, թէ շուտով Սիբիրի երկու գետերի ընթացքը շեղելու և ջրերը ուղղելու են Ուզբեկստան և Սիբիրի գետերի շնորհիւ հանրապետութեան անապատները վեր են ածելու ծաղկուն այգիների, որովհետեւ ընդմիշտ լուծելու է Միջին Ասիայի ոռոգման խնդիրը։

Բայց, պէտք է ասել, որ այդպէս մտածողները չափից աւելի լաւատես են, որովհետեւ այդ հարցը դեռեւս լուծած չէ։ Բանը նրանումն է, որ տնտեսագէտները հաշուել են, որ Սիբիրի գետերի ընթացքների թեքելը պահանջում է մօտաւորապէս 50 միլիարդ ռուբլի, ինչ որ Խ. Միութեան համար, ներկայ պայմաններում, շատ մեծ գումար է։

Բացի դրանից, գիտնականները գտնում են, որ Սիբիրի գետերի ուղղութիւնը փոխելու հետ միասին բեւեռային սառոյցները կարող են շարժել դէպի հարաւ և մեծ վնասներ հասցնել գիւղատնտեսութեանը։

Բայց այս ծրագրի տնտեսական ու գիտական կողմերը չեն, որ առաջացրին իմ հետաքրքրութիւնը։ Իմ ուշադրութիւնը գրաւեց բոլորովին ուրիշ բան։

Կասկած չկայ նրանում, որ Ուզբեկստանը ջրի պահանջ ունի։ Եւ ահա այս գիտակցութեամբ Միջին Ասիայի հանրապետութիւնների կոմունիստական կուսակցութիւնների կենտրոնական կոմիտէների քարտուղարները, այն էլ առաջին քարտուղարները կազմեցին մի տեսակ ընդդիմադիր խումբ և համարձակուեցին Խ. Միութեան կոմունիստական կուսակցութեան 26րդ համագումարին առաջ քաշել ու պաշտպանել սեփական տեսակէտները Սիբիրի գետերի ծրագրի վերաբերեալ։

Անշուշտ, սա քաղաքական ընդդիմադրութիւն չէ և նրանց ասածը չի հակասում կուսակցութեան գլխաւոր գծին, սակայն երեք առաջին քարտուղարներ Գաֆուրովը՝ Թուրքմենիայից, Կունաեւը Ղազախստանից և Ռաշիդովը Ուզբեկստանից միասնաբար խնդրեցին խորհրդային ղեկավարներից իրականացնել այն, ինչ նախօրօք նախատեսուած չէր։ Ինչո՞ւ նման խնդրանքը պէտք է անսովոր և ընդդիմադիր բնոյթ կրող նկատուի։

Բանը նրանումն է, որ անցեալ տարւայ դեկտեմբերի ամսին հրատարակուած 11րդ հնգամեայ ծրագրի մէջ ոչ մէկ բառ չկար «Սիբիրի ծրագրի» մասին, աւելի ճիշտ՝ շինարարութիւնը սկսելու մասին։ Նշուած էր միայն, որ անհրաժեշտ է շարունակել խնդրի ուսումնասիրութիւնը։

Այս բանը որոշ դժգոհութիւն առաջացրեց Ուզբեկստանում և, հանրապետութեան Կենտրոնական Կոմիտէի նախաձեռնութեամբ, գումարուեց մի համաժողով, որտեղ մասնակիցները միաձայնութեամբ պաշտպանեցին 11րդ հնգամեակում շինարարութիւնը սկսելու թեզը: Համաժողովից յետոյ Ուզբեկըստանի մամուլում երեւացին բազմաթիւ յօդուածներ, որոնք պահանջում էին փոփոխութեան ենթարկել հնգամեայ ծրագրի նախագիծը (աներեւակայելի համարձակութիւն):

Այն ժամանակ Միջին Ասիայի մնացած հանրապետութիւնների մամուլը ուզբեկներին չպաշտպանեց: Բայց բոլորի համար հասկանալի էր, որ նրանց համակրանքը ուզբեկների կողմն էր: Չէ՞ որ Միջին Ասիայի բոլոր հանրապետութիւնները պիտի օգտուեն Սիբիրի գետերի ջրերից: Սակայն համագումարի ժամանակ, ինչպէս արդէն ասացի, Ռաշիդովին պաշտպանեցին թուրքմենները և ղազախները: Լուռ մնացին տաջիկները:

Ճիշտ է, 26րդ համագումարը ոչ մի փոփոխութիւն չմտցրեց հնգամեայ ծրագրի մէջ, այսինքն հաշւի չառաւ Միջին Ասիայի քարտուղարների տեսակէտները, բայց այդ քարտուղարները ապացուցեցին, որ այնտեղ էլ կարելի է կարծիք յայտնել: Ու հազիւ թէ կարելի է արդարացնել նրանց, ովքեր տարբեր բնագաւառներում՝ գիտութեան, քաղաքականութեան, արհեստակցական միութեան կամ կրօնական բնագաւառներում իրենց կրաւորականութիւնը արդարացնում են մօտաւորապէս այսպէս. «Եղբայր, ո՞վ կարող է մեզ մօտ խօսել, ո՞վ կարող է սեփական կարծիք ունենալ»:

Պարզւում է, որ կարո՛ղ է, այն էլ Կենտկոմի առաջին քարտուղարը:

Բայց այստեղից չքննադատեմ, որպէսզի չասեն, թէ ձայնը տաք տեղից է գալիս:

Դէ, արի ու ապացուցի, որ այս ձայնը սառը տեղերից էլ էր դուրս գալիս:

1981

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՆԽԱԽՏ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Է. Յովհաննիսեան

Ա.- ՆԵՐՔԻՆ ՀԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Ազատութիւնը բացարձակ արժէք է, ուստի բոլոր ընկերութիւնները, միութիւնները, դաշնակցութիւնները և համադաշնակցութիւնները, որքան էլ որ կամաւոր թւան, միեւնոյն է, սկզբունքօրէն պարունակում են իրենց մէջ անազատութիւն, որովհետեւ ստեղծւում են կա՛մ ստիպողական կարգով և կամ էլ ստիպւածութեան հողի վրայ։

Ոմանք միութիւնների մէջ են մտնում ուրիշներից իրենց պաշտպանելու համար, միւսները տնտեսական կարիքներից դրդւած, իսկ երրորդներն էլ բռնի ուժով են քաշւում միութեան մէջ։ Եւ սրանք բոլորը, նոյնիսկ ամենակամաւորները, շատ պիտի ուզէին ազատւել միութենական պարտաւորութիւններից, եթէ կարողանային բաւարարւել սեփական միջոցներով։

Սա նշանակում է, որ այս կամ այն ազգի ղեկավարներ, այս կամ այն միութեան մէջ մտնելիս, պէտք է կարողանան այդ քայլը կատարել ազգի կամքից ելնելով։ Այսինքն ազգին հարցնելով, թէ արդեօք նա պատրա՞ստ է կրելու միութենական անազատութիւնը, այս կամ այն առաւելութիւնն ստանալու համար։

Ոչ մէկ միութիւն չի կարող արդար համարւել, եթէ նա կազմւել է ժողովրդի կողմից չընտրւած, առաւել եւս՝ ժողովրդի համար ատելի կառավարութեան կողմից։ Այս իմաստով Խ. Միութիւնը, ինչպէս գիտենք, ոչ կամաւոր է, ոչ արդար և ոչ էլ անխախտ։ Նա ստեղծւեց բոլշեւիզմի կարիքների հիման վրայ և կը գոյատեւի այնքան ժամանակ, մինչեւ որ թուլանայ նրան պահող ձեռքը։

1920 թւականին, հիմնաւորելով խորհրդային հանրապետութիւնների միջեւ դաշնակցութիւն ստեղծելու անհրաժեշտութիւնը։ Լենինը նշում էր.

«… Նախ շատ աւելի հզօր աշխարհակալ պետութիւններով շրջապատւած խորհրդային հանրապետութիւնները առանց դաշնակցութեան ի վիճակի չեն լինի պաշտպանելու իրենց գոյութիւնը, երկրորդ պատճառը սերտ տնտեսական համագործակցութիւնն է, առանց որի անկարելի է վերականգնել տապալւած աշխարհակալական արդիւնաբերութիւնը և ապահովել աշխատաւորների բարեկեցութիւնը. երրորդը ընդհանուր ծրագրով և բոլոր ազգերի բանւորների կողմից ղեկավարւող համաշխարհային ամբողջական տնտեսութիւն ստեղծելու ձգտումն է, որը յայտարարւեց դեռեւս դրամատիրութեան ժամանակ և որը, անշուշտ, շարունակւելու է զարգանալ ու պիտի ամբողջովին

իրականանայ **սոցիալիզմի** ժամանակ»։ Թէ որքանով էին այս նպատակները համընկնում ազգերի ցանկութիւնների հետ, ցոյց տուեցին հետագայ պատմական իրադարձութիւնները։ Ուկրաինայում, օրինակ, բոլշեւիկները ստիպւած եղան պայքարելու ոչ միայն ժամանակաւոր կառավարութեան, այլ նաեւ Կենտրոնական Ռադիայի դէմ, որը Ուկրաինայում ժողովրդական հանրապետութիւն էր ստեղծել։ Եւ այդ հանրապետութիւնը, հակառակ ժողովրդի կամքի, ճնշւեց՝ յանուն ժողովուրդների աւելի սերտ կապերի։

Չճանաչեց խորհրդային իշխանութեանը նաեւ Բելոռուսիայի Ռադան, որը համաբելոռուսական համագումարում որոշում ընդունեց խորհրդային իշխանութեան դէմ պայքարելու մասին։ Համաձայն չէր Լենինի դաշնակցութեան հետ նաեւ «Բոլշեւիզմի դէմ պայքարելու Թուրքեստանի միութիւնը», որի ղեկավարութեամբ բասմաչները ջարդում էին բոլշեւիկներին Ֆերգանայի հովտում։ Տաջիկստանում խորհրդային իշխանութեան դէմ դուրս եկաւ Սէիդ Ուլիմ խանը 100 հազարանոց բանակով։ Ծանր էր բոլշեւիկների կացութիւնը նաեւ Բեսարաբիայում։ Իսկ մերձբալթեան հանրապետութիւնների ողբերգութիւնը յայտնի է։ Դիմադրեց Կովկասը։

Երեւի միակ ազգը մենք էինք, որ, երկու չարիքներից փոքրագոյնը ընտրելով, կամաւոր կերպով յանձնեցինք իշխանութիւնը բոլշեւիկներին։ Բայց բոլշեւիկները արեցին ամէն ինչ, որ մեզանից էլ խլւի մեր խորհրդայնացումը կամաւոր կոչելու իրաւունքը։ Փետրւարեան ապստամբութիւնը այդ իրաւունքին վերջ տւեց։

Սակայն այս ամէնը արդէն պատմութիւն է։ Այսօր, երբ Խ. Միութիւնում տօնում են իրենց «կամաւոր» միութեան 60ամեակը, շատ աւելի կարեւոր է պարզել, թէ արդեօք ծով արեան վրայ կառուցւած այս միութիւնը չի դարձել աւելի բնական, աւելի ներդաշնակ և աւելի կայուն։ Չէ՞ որ արիւն արդէն շատ քիչ է թափւում, իսկ այն փաստից, որ ազատութիւնը բացարձակ արժէք է, դեռեւս չի բխում, որ բացարձակ ազատութիւնը արժէք է։ Գուցէ՞ Խ. Միութիւնում գտել են ազատութեան սահմանափակման այն լաւագոյն սահմանները, որոնք անհրաժեշտ են հնարաւոր անիշխանութեան առաջն առնելու համար։

Այս հարցին դժւար է պատասխանել, որովհետեւ միութեան կենսունակութիւնը որոշւում է նրա մէջ գործող ուժերի ներդաշնակութեամբ, որոնք ոչ թէ քայքայում, այլ պահպանում են միութեան ամբողջութիւնը։ Որոշելու համար թէ որքանով ամուր է Խ. Միութիւնը, այսինքն որքանով կենտրոնախոյս ուժերը ի վիճակի են քայքայելու միութեան ամբողջութիւնը, անհրաժեշտ պիտի լինէր դիտարկել այն հասարակական և քաղաքական գործօնները, որոնցով որոշւում է խորհրդային ազգութիւնների համատեղութիւնը կամ նրանց փոխադարձ անհանդուրժելիութիւնը։

Ազգային քաղաքականութիւնը, ինչպէս նաեւ բոլոր քաղաքականութիւններ կարօտ են փիլիսոփայական մօտեցման, որովհետեւ մարդիկ միշտ էլ ցանկացել են բարոյականացնել քաղաքականութիւնը: Սակայն այդ բանը երբեք չի յաջողուել և քաղաքականութիւնը միշտ էլ մնացել է փիլիսոփայութիւնից անջատուած վիճակում կամ, աւելի ճիշտ, աշխարհայեացքից:

Կարելի է համաձայնուել ֆրանսիական փիլիսոփայ Ժան Լեակրուայի հետ, որը գրում է. «Ես անձամբ չեմ հաւատում, որ մարդկանց միջից վերջնականապէս վերանալու է բռնութիւնը: Ես չեմ հաւատում նաեւ պետութեան վերացմանը և որ իրաւունքը որեւէ ժամանակ կարող է աւելորդ լինել: Քաղաքական չափանիշը բնորոշ է մարդու համար: Առանց այդ չափանիշի նա կը սնանկանայ: Ես կարծում եմ, որ բռնութիւնը չի վերանալու դասակարգային պայքարների աւարտից յետոյ, որովհետեւ բռնութիւնը պայմանաւորուած է ո՛չ միայն արտաքին պատճառներով: Նա կապ ունի այնպիսի մշտական գործօնների հետ, ինչպիսիք են կրքերը, եսասիրութիւնը, իշխանամոլութիւնը, փառասիրութիւնը և այլն: Քրիստոնեայ ժողովուրդների միջեւ պայքարը շարունակւեց: Այդ պայքարը արդէն սկսւել է կոմունիստական երկրների միջեւ: Եթէ նոյնիսկ վերանան դասակարգերը, անհասկանալի է, թէ ինչպէս է վերանալու տարբերութիւնը նրանց միջեւ, ովքեր մեքենայի ղեկի վրայ են և նրանց, ովքեր մեքենան սպասարկում են»:

Այսօր մենք արդէն գիտենք, որ քաղաքականութիւնը չպէտք է խանգարի փիլիսոփայութեանը, իսկ փիլիսոփայութիւնը չպէտք է պարտադրի իր կամքը քաղաքականութեանը: Քաղաքականութիւնը նպատակին հասնելու միջոց է և նա անտարբեր է նպատակի բովանդակութեան նկատմամբ: Սակայն կեանքը շատ աւելի բարդ է և ամէն մի քայլափոխում, հակառակ տրամաբանութեան, յամառօրէն պնդում է, որ անկարելի է քաղաքականութիւնը ամբողջովին անջատել փիլիսոփայութիւնից: Բոլոր տեսակի քաղաքականութիւնները պէտք է հիմնուեն բարոյական արժէքների վրայ, որոնք գտնւում են հասարակական կեցութեան հոգեկան ոլորտում:

Եթէ քաղաքական գործիչները գնահատում են ազատութիւնը, այդ դեռ չի նշանակում, որ նրանք ազատ են բարոյական արժէքներից: Բոլոր քաղաքական գործիչները, ինչպէս նաեւ սովորական մարդիկ, իրենց կեանքում ղեկավարւում են ինչ որ արժէքներով և հէնց այդ արժէքներով էլ որոշւում է հասարակութեան բարոյական մակարդակը:

Ուրեմն ի՞նչ մօտեցում կարելի է ցուցաբերել այս կամ այն հասարակակարգը ուսումնասիրելիս, եթէ ի վերջոյ նրա վիճակը որոշւում է այն արժէքներով, որոնցով ղեկավարւում են հասարակութեան անդամները: Հիւլէական ուժի Եւրոպական Կենտրոնի առաջին նախագահ Լուի Արմանը իր մօտեցումը հա-

սարակական երեւոյթների նկատմամբ ձեւակերպել էր այսպէս. «Ժամանակակից տնտեսական և հասարակական երեւոյթները ուսումնասիրելիս, մենք պէտք է ելնենք իրականութիւնից և հետեւենք ճշգրիտ գիտութիւնների մեթոդներին, այլ ոչ թէ գաղափարախօսութիւններին և հեղինակաւոր, բայց հնացած հեղինակներին։ Ճիշտ այնպէս, ինչպէս վերածնունդի դարաշրջանը վերջ տուեց «Արիստոտելը ասել է» կոչուած ապացոյցին, այնպէս էլ մենք պէտք է վերջ տանք «Ատամ Սմիտը կամ Մարքսը ասել է» ապացոյցներին»։

Այդ բանին վերջ տալը իսկապէս որ անհրաժեշտ է, բայց դժւար է համաձայնւել հեղինակի հետ այն բանում, որ հասարակական վարչակարգերի ուսումնասիրութիւնը կարելի է կատարել ճշգրիտ գիտութիւնների մեթոդաբանութեամբ։ Հասարակական համակարգերը չեն պատկանում այսպէս կոչուած որոշուած համակարգերի դասին, ուստի նրանք չեն ենթարկւում մաթեմատիկական նկարագրութիւնների։ Դրա հետ միասին, հասարակական համակարգերում գոյութիւն ունեն բաւականին իրական կապակցութիւններ, որպէսզի նրանց կարելի լինի մօտենալ ոչ որպէս վերացական փիլիսոփայական կառուցւածքների։

Դրա համար էլ ես չեմ ցանկանում այստեղ զբաղւել ոչ մաթեմատիկայով և ոչ էլ փիլիսոփայութեամբ։ Ես ուզում եմ դիտարկել Խորհրդային Հանրապետութիւնների Միութիւնը որպէս մի իրական ամբողջութիւն, որի ներքին կապակցութիւններով ու փոխյարաբերութիւններով որոշւում է ամբողջութեան ամրութիւնը։ Դրա հետ միասին, ես ուզում եմ գնահատել այդ ներքին կապակցութիւնների միայն որակական կողմը։ Այսպէսով, մենք կը կարողանանք բաւականաչափ հեռանալ փիլիսոփայութիւնից և շատ չմօտենալ ճշգրիտ գիտութիւններին։

Գիտութիւնից մենք կը վերցնենք միայն այն սկզբունքը որի համաձայն ստորադասական բարդ կառոյց ունեցող համակարգերը այնքանով են կայուն ու երկարատեւ, որքանով որ նրա գլխաւոր նպատակը ոչ միայն համընկնում է նախորդ ստորադասական աստիճանի վրայ գտնւող նպատակների հետ, այլեւ հէնց ձեւակերպւում է նրանց միջոցով։ Եթէ այս սկզբունքը կիրառենք Խ. Միութեան նկատմամբ, ապա այդ կը նշանակի, որ Խ. Միութիւնը, որպէս ստորադասական կառոյց ունեցող համակարգ, այնքանով է կայուն ու երկարատեւ, որքանով որ ամբողջ միութեան նպատակը համընկնում է հանրապետութիւնների նպատակների հետ, իսկ ռուս ժողովրդի շահերը՝ խորհրդային ազգութիւնների շահերի հետ։

Համընդհանուր և տեղական նպատակների անհրաժեշտ ներդաշնակութիւնը կարող է խախտւել թէ՛ վերեւից և թէ ներքեւից։ եթէ այդ խախտումը կատարւում է վերեւից, ուրեմն համակարգին պարտադրւած է այնպիսի մի նպա-

տակ, որը ինքը իրեն քայքայում է: Եթէ խախտումը կատարւում է ներքեւից, ապա այդ նշանակում է, որ հանրապետութիւնները կամ ազգութիւնները, ղեկավարւելով ինքնապահպանման նպատակով, դուրս են գալիս ընդհանուր նպատակի իշխանութեան տակից:

Այս միտքը պարզելու համար, դիմենք կենդանի մարմնում գործող նպատակների փոխյարաբերութեան օրինակին: Եթէ մարդը պատահականօրէն կպչի տաք կամ սուր առարկայի, նա անմիջապէս ձեռքը յետ կը քաշի այդ առարկայից, ղեկավարւելով ինքնապահպանման նպատակով: Սակայն կարող է այնպէս պատահել, որ աւելի բարձր կարգի նպատակներ, կրօնական կամ հերոսական, ստիպեն մարդուն պահել իր ձեռքը կրակի մէջ: Այդ դէպքում մենք կը խախտենք նպատակների ներդաշնակութիւնը վերեւից և, այրելով մեր ձեռքը, կը քայքայենք համակարգը: Իսկ եթէ մենք չենթարկւենք վերին նպատակին և դուրս քաշենք մեր ձեռքը կրակից, ապա նպատակների ներդաշնակութիւնը կը խախտւի ներքեւից, այսինքն, մեր դէպքի համար, այդ կը նշանակէր, որ հանրապետութիւնները դուրս են գալիս միութենական ենթարկւածութիւնից:

Այսպիսով, Խ. Միութեան կացութեան մասին խօսելիս անհրաժեշտ է նախ ձեւակերպել նրա գլխաւոր միութենական նպատակը, ապա տեսնել, թէ որքանով է այդ նպատակը համընկնում հանրապետութիւնների նպատակների հետ: Եթէ մի պահ ենթադրենք, որ կոմունիզմի գաղափարը այնքան էլ անհեթեթ չէ, որքան որ նա է, իրականում, և հէնց կոմունիզմ կառուցելն է Խ. Միութեան վերջնական ու գլխաւոր նպատակը, ապա մտքի մեծ լարւածութիւն պէտք չէ, հասկանալու համար, որ այդ նպատակը, գոնէ Մարքսի ձեւակերպութեամբ, բոլորովին չի համապատասխանում հանրապետութիւնների նպատակներին և պէտք է ամբողջովին քայքայի համակարգը, որովհետեւ մարքսիզմը ընդհանրապէս ներդաշնակութիւն չի ճանաչում:

Մարքսիզմը հրաժարւեց ներդաշնակութեան **դիալեկտիկա**յից, ուստի հրաժարւեց հակասութիւնների համագործակցութիւնից: Այնտեղ, որտեղ մարքսիզմը հակասութիւնների է հանդիպում, նա այդ հակասութիւնները լուծում է հակադրւած կողմերը վերացնելով, այսինքն դիմում է ամենատարրական ճանապարհին: Այդ ճանապարհի վրայ նա ոչնչացնում է դասակարգերը, ընտանիքը, ազգութիւնները և պետութիւնները:

Ուրեմն, ընդունելով կոմունիզմ կառուցելը որպէս Խ. Միութեան միութենական նպատակ, մենք պէտք է համոզւած լինենք, որ բոլոր հանրապետութիւնները իրենց ազգային նպատակների հետ միասին այրւելու են այդ գլխաւոր նպատակի մէջ, ինչպէս կրակի մէջ պարզած ձեռքը: Չնայած նրան, որ կոմունիզմին ոչ ոք լրջօրէն չի հաւատում և ոչ ոք լրջօրէն կոմունիզմ չի կառուցում,

այնուամենայնիւ, հանրապետութիւնները միութենական նպատակի կրակի մէջ այրելու հարցում բոլոր խորհրդային ղեկավարները համամիտ են եղել:

Նրանցից հեռու չի գնացել նաեւ Խ. Միութեան նոր ղեկավար Անդրոպովը, որը Խ. Միութեան կազմաւորման 60ամեակի առիթով արտասանած ճառում արեց հետեւեալ երեք վտանգաւոր յայտարարութիւնները.

1.- «Մեր վերջնական նպատակը հանրայայտ է: Այն, Լենինի խօսքերով ասած, ոչ միայն ազգութիւնների մերձեցումն է, այլ նաեւ նրանց միաձուլումը: Կուսակցութիւնը լաւ է հասկանում, որ այդ նպատակին տանող ճանապարհը երկար է և այդ հարցում չի կարելի առաջ ընկնել, ինչպէս նաեւ չի կարելի զսպել արդէն հասունացած ընթացքները»:

2.- «Անհրաժեշտ է յիշել, որ հոգեկան ժառանգութեան մէջ, աւանդոյթներում և ամէն մի ազգի կենցաղում կան ոչ միայն լաւ, այլ նաեւ վատ, իր կեանքն ապրած կողմեր: Եւ այստեղից բխում է եւս մի խնդիր՝ ոչ թէ պահել, այլ ազատուել այն ամենից, ինչը հնացած է, ինչը հակասում է խորհրդային հասարակական կեանքին, սոցիալիստական բարոյականութեանը և մեր կոմունիստական իդէալներին»:

3.- «Բնակչութեան բնական տեղաշարժների բերումով է՛լ աւելի բազմազգ են դառնում խորհրդային հանրապետութիւնները, իսկ նրանց մէջ էլ՝ ամէ՛ն մի մարզ և ամէ՛ն մի քաղաք: Շատ կարեւոր է աշխատաւորների ներկայացուցչութեան հարցը հանրապետութիւնների, ինչպէս նաեւ ամբողջ միութեան կուսակցական և պետական մարմիններում: Խօսքը, ի հարկէ, ձեւական մօտեցման մասին չէ, թւաբանական մօտեցումը այս հարցում տեղին չէ, սակայն պէտք է հետեւողականօրէն հասնել այն բանին, որ բոլոր ազգութիւնները, որոնք կան այս կամ այն հանրապետութիւններում, համապատասխանօրէն ներկայացւած լինեն խորհրդային և կուսակցական մարմիններում»:

Անդրոպովի այս յայտարարութիւնները ես վտանգաւոր եմ համարում, որովհետեւ նրանք ուղղւած են ազգութիւնների ինքնուրոյնութեան դէմ:

Վերցնենք առաջին արտայայտութիւնը – Ազգերի միաձուլման նպատակը խորհրդային ղեկավարների համար հանրայայտ է: Ճիշտ է, նրանք չեն ուզում առաջ ընկնել այդ հարցում, բայց չեն էլ ուզում խանգարել այդ ընթացքին: Սա նշանակում է, որ ազգերի միաձուլման, այսինքն ազգութիւնների մահւան փաստը որպէս դրական արժէք է ճանաչւում: Հակառակ դէպքում՝ ի՞նչպէս կարելի էր յայտարարել, թէ մենք չենք խանգարի այդ մահւանը: Մենք բոլորս մահկանացու ենք, բայց ո՞վ մեզանից կ՚ասի, թէ մենք չպէտք է խանգարենք մարդուն մահանալ, չպէտք է նրան բռժենք ու խնամենք: Նման մօտեցումը յանցանք պէտք է համարւի, որովհետեւ մահւան անխուսափելիութիւնը դեռեւս բաւական չէ այդ երեւոյթը դրական համարելու համար:

Իսկ եթէ Անդրոպովը առաջարկում է չխանգարել ազգութիւններին իրենց բնական մահը ընդունելու գործում, այդ նշանակում է, որ նա ցանկանում է այդ մահը: Բայց, բարեբախտաբար, նրա և նրա նախորդների ցանկութիւնը այս հարցում, Մարքսից մինչեւ Լենին, Ստալինից մինչեւ Անդրոպով, ոչ մէկ նշանակութիւն չունի ազգութիւնների կեանքի համար, որոնք ապրել են ու պիտի ապրեն որպէս բնական էութիւններ, որպէս բնութեան կառոյցի անհրաժեշտ մասնիկներ: Իսկ եթէ ոմանք էլ մեռնեն, ապա ոչ թէ հասարակական օրինաչափութիւնների բերումով, այլ սեփական թուլութեան ու դիմադրողականութեան պակասի շնորհիւ:

Անդրոպովի երկրորդ յայտարարութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ փիլիսոփայական ու պատմական միամտութիւն, եթէ չասենք տգիտութիւն: Ըստ նրան, ազգային աւանդոյթների մէջ կան լաւերը և վատերը և մենք պարտաւոր ենք բաժանել լաւերը վատերից: Բայց ո՞վ է դատաւորը: Անդրոպո՞վը, կոմունիստական կուսակցութի՞ւնը, թէ՞ Խ. Միութեան գիտութիւնների ակադեմիան:

Երեք հազար տարւայ ընթացքում հայ ժողովուրդը, օրինակ, ստեղծել է ամենալայն իմաստով իր ուրոյն մշակոյթը՝ փիլիսոփայութիւնը, կրօնը, սովորութիւնները, գրականութիւնը, կերակուրները, ընտանիք կազմելու, սիրելու և խրախճանքի սեղանների նստելու ձեւերը: Եւ յանկարծ գալիս է Անդրոպովը և, օրինակ, ասում է մեզ, թէ մենք սխալ ենք թաղում մեր մեռելներին, սխալ արժէքների ենք երկրպագում և հարսանիքների ժամանակ սխալ ենք պարում: Լաւ կը լինէր, որ դուք,- կ՚ասի նա, օրինակ, մեզ,- գերեզմանների վրայ խաչերի փոխարէն կարմիր աստղ դնէք, իսկ հարսանիքների ժամանակ էլ «Քոչարի»ի փոխարէն ռուսական «Գոպակ» պարէք:

Մի խօսքով՝ Անդրոպովը և Կոմունիստական կուսակցութիւնը իրենց իրաւունք են վերապահում որոշելու թէ մեր աւանդոյթներից որո՞նք են հնացած և որոնցի՞ց մեր ժողովուրդը պիտի ազատւի: Նորութիւն չէ այս մօտեցումը: Ստալինը ժամանակին որոշում էր, թէ ո՞ր գիտութիւնը թոյլատրելի է և ո՛րը պէտք է արգելւի: Ժդանովը որոշեց, թէ արուեստի ո՞ր տեսակը կարելի է թոյլատրել: Խրուշչովը որոշեց թոյլատրելի գիւղատնտեսութիւնը: Անդրոպովն էլ թող որոշի թոյլատրելի աւանդոյթները:

Բայց ոչ Ստալինը, ոյ Ժդանովը և ոչ էլ Խրուշչովը իրենց նպատակին չհասան: Չի հասնի իր նպատակին նաեւ Անդրոպովը:

Դրա վառ ապացոյցը հրեաների օրինակն է: Ես ճանաչում եմ շատ հրեաների, որոնք 1937 թւականի ծնունդ են և հէնց այդ տարի էլ թլփատւել են: Պատկերացնո՞ւմ էք, 1937 թւականին, երբ մարդկանց գնդակահարում էին Չեկայի ներքնայարկերում, երբ տասնեակ միլիոնաւոր մարդիկ քշւել էին Սիբիրի ճամբարները, երբ ամբողջ երկիրը ոգեւորւած «Ինտերնացիոնալ» էր երգում,

հրեաները թլփատում էին իրենց երեխաներին։ Դէ, եկէք, պարոն Անդրոպով, ու ասէք, թէ այդ աւանդոյթը հնացած է և նրանից պէտք է ազատուել։ Սակայն Անդրոպովի այս յայտարարութիւնների վրայ կարելի էր ուշադրութիւն չդարձնել, եթէ չլինէր նրա երրորդ, ամենավտանգաւոր յայտարարութիւնը։

Աշխատուժի բնական տեղաշարժների մասին ես դեռեւս խօսելու եմ, իսկ այժմ ուզում եմ վերլուծութեան ենթարկել Անդրոպովի այն թեզը, որը վերաբերւում է ազգերի ներկայացուցչիներին՝ հանրապետական կուսակցական և կառավարական մարմիններում։

Մինչեւ այսօր ամէն մի հանրապետութիւն, անկախ իր բնակչութեան կազմից, ազգային բնոյթ էր կրում և օտար ազգի ներկայացուցիչները տեւել հանրապետութիւնում իրենց եկւորներ էին զգում։ Վրաստանը Վրաստան էր, իսկ Ղազախստանը Ղազախստան, չնայած այն բանին, որ Վրաստանի բնակչութեան միայն 40 տոկոսն են վրացի, իսկ Ղազախստանում աւելի քիչ է ղազախների թիւը։

Այժմ Անդրոպովը առաջարկում է, որ ամէն մի հանրապետութիւնում ապրող ազգութիւնները համապատասխանօրէն ներկայացւած լինեն կուսակցական և պետական ղեկավար մարմիններում։ Եթէ այդ բանը տեղի ունենայ, ապա Վրաստանի կառավարութիւնը այլեւս վրացական չի լինի, ուստի Վրաստանն էլ Վրաստան չի լինի։

Այս կամ հանրապետութիւնում ռուսներ բնակեցնելով՝ Մոսկւան ձեռք է բերում տեւել հանրապետութեան կառավարութիւնը ռուսացնելու իրաւունքը։ Իսկ ռուսներ բնակեցնելու հարցը շատ հեշտ կարելի է լուծել։ Նախ բոլոր հանրապետութիւններում բնակչութեան կենսամակարդակը Ռուսաստանից աւելի բարձր է, ուստի ռուսները հաճոյքով կը տեղափոխւեն որեւէ հանրապետութիւն, յետոյ գործարաններ կառուցելու միջոցով շատ հեշտութեամբ կարելի է լուծել ռուս աշխատուժի տեղափոխման խնդիրը։

Այսպիսով, մենք ասում ենք, որ կոմունիզմ կառուցելուց հրաժարւած խորհրդային ղեկավարները, այնուամենայնիւ, փորձում են տարբեր ճանապարհներով ազգութիւններից խլել նրանց ազգային առանձնայատկութիւնները։ Եւ այդ փորձն իսկ խախտում է վերը նշւած նպատակների ներդաշնակութիւնը, ու տանում է համակարգը դէպի քայքայում։ Տեսնե՛նք թէ ինչպէս։

Բ.- ՀԱԿԱՍՈՒԹԵԱՆՑ ՀԵՏԵՒԱՆՔԸ

Միութեան և հանրապետութիւնների նպատակները համեմատելու ամենատարրական ձեւը քանակական համեմատութիւնն է։ Ի՞նչ է տալիս հանրապետութիւնը Միութեանը և ի՞նչ է ինքը այնտեղից ստանում։ Սակայն այս հա-

մեմատութիւնը անկարելի է կատարել, որովհետեւ Խ. Միութիւնում գին, առեւտուր, տուրք, իրաւունք, անգործութիւն, բանակ, արդիւնաբերութիւն, արդարադատութիւն, իշխանութիւն, մամուլ և այլ հասկացութիւններ այնքան են զրկւած ընդունւած բովանդակութիւնից, որ նրանց միջոցով քանակական համեմատութիւնները անկարելի են։

Վերցնենք միայն մէկ օրինակ, որը կապ ունի Հայրենիք-Սփիւռք փոխյարաբերութիւնների բնագաւառին։ Վերջերս Ալեք Մանուկեանի նախաձեռնութեամբ և դրամով Էջմիածնում կառուցւեց մի թանգարան։ Եւրոպայում և ամբողջ աշխարհում ընդունւած չափանիշների համաձայն՝ ամէն ինչ կարգին է։ Հայաստանի զարգացմամբ մտահոգւած մի հայ ունեւոր դրամ է տալիս Հայաստանի կառավարութեանը, իսկ այդ կառավարութիւնը թանգարան է կառուցում։ Հայ ժողովուրդը, ինչպէս նաեւ նւիրատուն երջանիկ են։ Բայց իրականում պատկերը բոլորովին այլ է։

Հայաստանը, ինչպէս նաեւ բոլոր խորհրդային հանրապետութիւնները, ունեն իրենց սեփական պետական բիւջէները, որոնց շինարարական մասի իւրացումը ամենադժւարին գործն է և, որպէս օրէնք, ոչ մէկ հանրապետութիւն չի կարողանում կատարել իր շինարարական **պլան**ը։ Այդ կապ ունի աշխատուժի, շինանիւթերի պակասի հետ, նախագծերը ժամանակին կազմելու և մի շարք այլ դժւարութիւնների հետ։

Ամէն տարի Հայաստանի շինարարական կազմակերպութիւնները չեն կարողանում կատարել Մոսկւայից յղւած **պլան**ները, առաւել եւս նրանք չեն կարող կատարել լրացուցիչ առաջադրանքներ, որոնք գալիս են, օրինակ, Ալեք Մանուկեանի թանգարան կառուցելու նախաձեռնութիւնից։ Բացի դրանից, Մոսկւան էլ չի կարող Բարեգործական Միութեան հաշւին աւելացնել Հայաստանի բիւջէն, որովհետեւ հարեւան Վրաստանը կամ Ադրբեջանը թերեւս բողոքեն ասելով, օրինակ, որ նրանք իրենց բուրժւաներին ոչնչացրեցին 20ական թւականներին, իսկ այժմ տուժում են դրանից, քանզի հայերը օգտւում են իրենց արտասահմանեան բուրժւաներից։ Մի խօսքով՝ ոչ Հայաստանի բիւջէն և ոչ էլ շինարարական կազմակերպութիւնների արտադրողականութիւնը Ալեք Մանուկեանի նւէրներով չի աւելանալու։ Բայց թանգարանը կառուցւում է։

Ի՞նչպէս։ Երբ Ալեք Մանուկեանը Խ. Միութեանն է փոխանցում իր կէս միլիոն դոլարը, նա անմիջապէս անցնում է Մոսկւայի դրամանշային ֆոնդը, որտեղ օտար դրամանիշի մեծ պակաս է զգացւում և դրա փոխարէն Հայաստանը ստանում է իր շինարարական **պլան**ի սահմաններում կառուցել թանգարանը՝ Ալեք Մանուկեանին ցոյց տալու համար։ Իսկ այդ նշանակում է, որ թանգարանը կառուցւում է մի դպրոցի, բնակելի շէնքի կամ այլ շինութեան

հաշւին՝ մէկ բան, որ ինքը Հայաստանի կառավարութիւնն էլ կարող էր անել։ Այսինքն՝ Ալեք Մանուկեանի դրամը Հայաստան չի մտնում, նրա դոլարների դիմաց խորհրդային ռուբլին էլ Հայաստան չի մտնում, Հայաստանում միայն տեղի է ունենում շինարարական կառոյցների վերադասաւորում։ Եւ դրա համար Հայկական Սփիւռքի բերանից կտրւում է կէս միլիոն դոլար և տրւում է Կուբային, Վիեթնամին և Աֆղանստանին, որտեղ Խ. Միութիւնը ծախսում է իր օտար դրամանիշը։

Անշուշտ, ամէն մի հայ պիտի ուրախանայ Հայաստանում նոր թանգարան կառուցելու առիթով, բայց երբ տեսնում ես թէ ինչի՛ հաշւին է կառուցւում այդ թանգարանը, ուրախութեան տեղ շատ չի մնում։ Սա միայն մէկ օրինակն էր այն բանի, որ Խ. Միութեան տնտեսավարութեան բնագաւառում քանակական չափանիշները ոչ մէկ բան չեն նշանակում։ Այս ուղղութեամբ կատարւող համեմատութիւնները կարող են կրել միայն որակական բնոյթ։

Սկզբից եկէք որոշենք, թէ ո՞ւմն են տալիս իրենց ունեցւածքը խորհրդային հանրապետութիւնները և ումի՞ց են նրանք ստանում իրենց վարձքը։ Այն ընդունւած կառոյցը, որի համաձայն Խ. Միութիւնը ռուսական կայսրութիւն է, ուստի հանրապետութիւնները տալիս են ռուսներին և նրանցից էլ ստանում են իրենց ստանալիքը, իրականութեանը չի համապատասխանում, քանզի իրենք՝ ռուսները միութեանը տալիս են բոլորից շատ և իրենց զուտ ռուսական կարիքների համար վերցնում են բոլորից քիչ։ Իրե՛նց՝ ռուսների շահերը և նպատակները ուրիշներից ոչ պակաս են հակասում միութենական նպատակներին։ Ուստի ես չեմ առանձնացնի ռուսներին, համարելով նրանց վիճակը նման ուրիշ ազգերի վիճակին։

Գիտենք նախ միութենական և հանրապետական փոխյարաբերութիւնների ամենապարզ՝ տնտեսական բնագաւառը։ Ամէն մի հանրապետութիւն ձգտում է ունենալ սեփական ազգային տնտեսութիւն և առաջին հայեացքից նա այդ տնտեսութիւնը ունի։ Այն մեծ տնտեսական կատակերգութեան մէջ, որը ժողովրդական **պլան**աւորում է կոչւում, մասնակցում են բոլոր հանրապետութիւնները։ Նրանք **պլան**աւորում են, արտադրում, մտնում **«սոցիալիս**ական մրցութիւն»ների մէջ, կատարում և գերակատարում **պլան**ները և նոյնիսկ վաճառում են իրենց ապրանքները հարեւան հանրապետութիւններին։

Սակայն ամբողջ այս կատակերգութիւնը ոչ մէկ կապ ունի տնտեսավարութեան հետ։ Արտադրական միջոցների համայնացումը, կենտրոնացւած պետական **պլան**աւորումը փաստօրէն զրկեցին Խ. Միութեան ազգութիւններին սեփական ազգային տնտեսութիւնից։ Ցիրաւի, ազգային կարելի է համարել միայն այն տնտեսական միջոցառումները, որոնց իրականացման շնորհիւ բարձրանում է տւեալ ազգի կենսամակարդակը։ Երբ արտադրած ապրանք-

ների քանակը և որակը անմիջականօրէն ազդում է ժողովրդի ապրուստի վրայ։ Եւ հէնց այդ հանգամանքն էլ շահագրգռում է ազգային կառավարութեանը ազգային տնտեսութիւնը զարգացնելու մէջ։

Բայց ստեղծած կացութեան մէջ այդ շահագրգռուածութիւնը բացակայում է, որովհետեւ ո՛րքան էլ որ լաւ աշխատեն հանրապետութեան աշխատաւորները, ո՛րքան էլ մեծ ու որակեալ արտադրանք տան հանրապետութեան ձեռնարկութիւնները, միեւնոյն է, նրանք ընդունակ չեն ոչ աւելացնելու հանրապետութեան աշխատավարձերը, ոչ իջեցնելու գները և ոչ էլ պակսեցնելու տուրքերը։

Սա նշանակում է, որ հանրապետութիւնները աշխատում են հետեւեալ սկզբունքի համաձայն, ամենքից ըստ կարողութիւնների, ամենքին՝ հաւասարաչափ նրանից, ինչ կը մնայ միութենական կարիքները բաւարարելուց յետոյ։ Իսկ այդ կարիքների մէջ է մտնում թէ՛ Կուբան, թէ՛ Լեհաստանը, թէ՛ սեփական կուսակցութիւնը կերակրելը, թէ՛ արտաքին ռազմական ոտնձգութիւնները և թէ արտասահմանի կոմունիստական և այլ կազմակերպութիւններին պահելը։

Այդպիսի տնտեսութիւնը ազգային չի կարող կոչւել։ Միացեալ Նահանգների ամէն մի նահանգ շատ աւելի մեծ տնտեսական իրաւունքներ ունի, քան խորհրդային ինքնուրոյն կոչւող հանրապետութիւնները։ Եւ դա կապ ունի այն բանի հետ, որ Խ. Միութեան տնտեսութեան մէջ դրամը ոչ մէկ նշանակութիւն ունի։ Եթէ Հայաստանի բիւդջէն տասն անգամ աւելանայ, այդ ոչ մի օգուտ չի կարող բերել, եթէ դրա հետ միասին չաւելանան շինանիւթերը, աշխատավարձի ֆոնդը, մեքենաները, սարքաւորումները և այլն։ Իսկ այդ ամէնը չեն կարող աւելանալ, որովհետեւ Խ. Միութիւնում նրանք պակասում են։

Եւ միայն մէկ ճանապարհով, այնուամենայնիւ, այդ տնտեսութիւնը ի վիճակի է որոշ փոփոխութիւն մտցնել ժողովրդի կենսամակարդակի մէջ։ Այդ ճանապարհը անգործութիւնը պակասեցնելու ճանապարհն է։ Որքան մեծ լինի բնակչութեան աշխատանքային զբաղւածութիւնը, այնքան աւելի շատ աշխատավարձ դուրս կը գայ ընդհանուր կաթսայից հանրապետութեան համար։

Բայց այս ճանապարհը շատ ծանր ճանապարհ է, որովհետեւ Մոսկւան, իր միութենական շահերից ելնելով, գործարանները կառուցում է այնտեղ, որտեղ այդ իրեն ձեռնտու է։ Հօ Զանգեզուրի անտառներում չի կառուցելու գործարանը, եթէ Կրասնոդարում, օրինակ, այդ նոյն գործարանը երեք անգամ աւելի ածան է նստում նրա վրայ։ Եթէ այսօր Խ. Միութեան արդիւնաբերական ձեռնարկութիւնների 60 տոկոսը կենտրոնացած է ռուս բնակչութիւն ունեցող վայրերում, ապա այդ հետեւանք է ոչ թէ ռուսական **շովինիզմի**, այլ սովորական տնտեսական հաշւարկի։ Բայց ի՞նչ անեն այդ դէպքում Վրաստանի կամ

Հայաստանի սարերում ապրողները: Միութեան պատասխանը շատ յստակ է, նրանք պէտք է տեղափոխուեն այլ շրջաններ:

1981 թւականի Սեպտեմբեր ամսին Խ. Միութեան հանրապետութիւնները մեծ անհանգստութիւն ապրեցին, երբ **«Պրաւդա»**ն Սեպտեմբերի 11ին հրատարակեց տնտեսագիտութեան դոկտոր-պրոֆեսոր Ռիբակովսկու յօդուածը, որի խորագիրն էր. **«Տեղաշարժների ճօճանակը»**: Այդ յօդուածում հեղինակը հարց էր տալիս, աշխատուժի տեղաշարժը վնա՞ս է, թէ՞ օգուտ: Այս հարցին հեղինակը տալիս էր այնքան վտանգաւոր պատասխան, որ անտարբերութեամբ նրա կողքով անցնելը անկարելի է: Յարգելի պրոֆեսորը գրում էր. «Դժբախտաբար, կազմակերպւած տեղաշարժները դեռեւս շատ քիչ են: Զանգւածները հիմնականում իրենց սեփական կամքով են ընտրում բնակութեան վայրը և դրա արդիւնքը լինում է այն, որ տեղաշարժման ուղղութիւնները չեն համընկնում միութեան շահերի հետ: Ահա թէ ինչու օրակարգի հարց է դարձել տեղաշարժների կարգաւորումը, այսինքն նրանց կազմակերպւած հունի մէջ դնելու անհրաժեշտութիւնը»:

Սա նորութիւն չէ Խ. Միութեան միութենական նպատակների համար: 1930ական թւականներին Ստալինը շատ կազմակերպւած հունի մէջ էր դրել բանւորական ուժը Սիբիր տանելու գործը: Ուրեմն, ի՞նչպէս չմտահոգւել, եթէ **«Պրաւդա»**ն պրոֆեսորի բերանով այդ նոյն բանն է առաջարկում:

Բայց միայն դրանում չէ տեղաշարժների վտանգը: Հայաստանից դուրս, բայց Խ. Միութեան սահմաններում ապրում են 1,5 միլիոն հայեր, որոնց արտադրած ապրանքի յաւելեալ մասը ոչ մէկ ազգային արժէք չի ստեղծում: Ազգային արժէքներ ստեղծելու ծանր բեռը ընկած է Հայաստանի ուսերի վրայ: Աշխատաւորները Հայաստանից դուրս գալով՝ զրկում են հայրենիքը աշխատավարձի այն մասից, որից ստեղծւում են ազգային արժէքները: Եւ, ուրեմն, է՛լ աւելի է ծանրանում Հայաստանի ուսերի վրայ ընկած բեռը:

Ներկայումս ստեղծւած պայմաններում Հայաստանի համար բաւականի՛ն հեշտ է կազմակերպել ազգահաւաքի գործը, քանզի Ադրբեջանի կէս միլիոն և Վրաստանի կէս միլիոն հայերը երազում են Հայաստան ներգաղթել: Մնում է միայն նրանց համար պայմաններ ստեղծել և առաջին հերթին՝ բնակարաններ: Եւ ահա մէկ անգամ եւս համոզւում ենք, թէ որքան սխալ գործ կատարած կը լինի Ալեք Մանուկեանը, եթէ պարզւի, որ նրա թանգարանը կառուցել է ազգային շատ աւելի մեծ արժէք ունեցող մի բնակելի շէնքի փոխարէն: Եւ որքա՛ն երախտապարտ պիտի լինէին Ալեք Մանուկեաններին Վրաստանի և Ադրբեջանի հայերը, եթէ նրա ղեկավարութեան տակ գտնւող Բարեգործական Ընդհանուր Միութիւնը մի բնակավայր կառուցէր Հայաստանում Ներքին Սփիւռքից ներգաղթողների համար:

Այսպիսով, եթէ մենք փորձենք համեմատել, թէ ի՞նչ են տալիս խորհրդային հանրապետութիւնները ընդհանուր կաթսայի մէջ և ի՞նչ են այնտեղից վերցնում, ապա կը ստացւի, որ նրանք տալիս են այն ամէնը, ինչ ունեն, իսկ վերցնում են այնտեղից մի բան, որը բացարձակապէս չի համապատասխանում տւածին։ Եւ բնաւ կարեւոր չէ, թէ այդ անհամապատասխանութիւնը ո՛ւմ օգտին է, կարեւորը այն է, որ վերցւածը տւածին չի համապատասխանում, որ հանրապետութիւնը սեփական տնտեսական դէմք չունի և լաւ աշխատելու մէջ շահագրգռւած չէ։

Եթէ Հայաստանը այսօր կարողանում է արտադրել և իր արտադրանքը վաճառել, ապա այդ տեղի է ունենում միայն այն բանի համար, որ իր արտադրանքը նա ուղարկում է ամէն ինչ կլանող ռուսական շուկան։ Իսկ եթէ որեւէ ժամանակ գան տնտեսութեան ինքնուրոյնութեան լաւ ժամանակները, ապա Հայաստանը ամէն ինչ սկսելու է ծայրից, որովհետեւ ազատ շուկայում նա չի կարող վաճառել ոչ իր դաշնամուրները, ոչ կաուչուկը, ոչ հաշւիչ մեքենաները և ոչ էլ հռչակաւոր «Մասիս» միաւորման կօշիկները։ Եւ այս կացութիւնը կը մնայ անփոփոխ, քանի դեռ բացակայում է ներդաշնակութիւնը միութենական և հանրապետական նպատակների միջեւ։

Այժմ տեսնենք, թէ ի՞նչ է կատարւում քաղաքական ասպարէզում։

Ինչպէս յայտնի է, քաղաքականութիւն վարելու համար անհրաժեշտ է ունենալ բանակ՝ սեփական քաղաքական շահերը պաշտպանելու համար, արտաքին գործերի նախարարութիւն, դիւանագէտներ, ազատ մամուլ և այլն։ Այս ամէնը հանրապետութիւնները չունեն և քաղաքական բնագաւառում նրանք պարզ խաղատիկիններ են և իրենց քաղաքական նպատակները ամբողջովին յարմարեցնում են միութենական նպատակների հետ։

Հայաստանը, օրինակ, լռութեամբ ընդունում է, իսկ պէտք եղած պահին էլ ծափահարում է, երբ Խ. Միութեան կառավարութիւնը յայտարարում է, թէ Թուրքիայից հողային պահանջներ չունի կամ պահանջում է, որ անխախտ մնան պետական ներկայ սահմանները։

Ոչ ոք չի կարող մեղադրել Խ. Միութեանը նրանում, որ նա պաշտպանում է միութենական շահերը և ղեկավարւում է միութենական նպատակներով, բայց հանրապետութիւններն էլ մեղաւոր չեն, որ ունեն իրենց սեփական շահերը և նպատակները, որոնք չեն համընկնում միութենական շահերի և նպատակների հետ։

Բանակի իմաստով, ամէն մի հանրապետութիւն ընդհանուր կաթսայի մէջ է դնում իր երիտասարդների համապատասխան տոկոսը և դրա փոխարէն ստանում է իր սահմանների պաշտպանութիւնը։ Ոմանց, օրինակ հայերի համար, այդ լաւ է, որովհետեւ այլ պայմաններում Թուրքիան կարող էր օգտւել

որեւէ առիթից Հայաստան ներխուժելու համար, ինչպէս արեց, օրինակ, Կիպրոսում: Ուրիշների համար (օրինակ՝ Ադրբեջանի), այդ շատ էլ ցանկալի չէ, որովհետեւ նրանք ուրախութեամբ կը միանային հարեւան պետութեան կազմի մէջ:

Նոյն վիճակն է տիրում յարձակողական քաղաքականութեան բնագաւառում: Երբ Խ. Միութիւնը Աֆղանստան է ներխուժում, մենք՝ հայերս շատ ուրախանալու բան չունենք և երբեք չէինք ուզի, որ հայ երիտասարդները զոհուէին Աֆղանստանում կամ Վիեթնամում հայկական շահերի հետ կապ չունեցող նպատակների համար: Միեւնոյն ժամանակ մենք շատ պիտի ուրախանայինք հաւանաբար, եթէ խորհրդային զօրքերը մտնէին Թուրքիա, այն բարի ակնկալութեամբ, որ մեր զինուորները տեղին են զոհւում և որ նրանց արիւնը թափւում է մեր պատմութիւնը շարժող անիւի վրայ:

Ուրեմն բանակի հարցումն էլ հանրապետութիւնները տալիս են միութեանը այն, ինչ որ ունեն, իսկ փոխարէնը ստանում են այն, ինչ որ միայն պատահականօրէն կարող է համընկնել սեփական շահերի հետ:

Ազատ մամուլի մասին խօսք անգամ լինել չի կարող, որովհետեւ հանրապետական թերթերը ոչ միայն անազատ են սովորական իմաստով, այլեւ նոյնիսկ լրագրողներ չունեն արտասահմանում: Պարզապէս ծիծաղելի է այն կացութիւնը, որ Հայկական Սփիւռքը վերջին եօթը տարիների ընթացքում բուռն կերպով քննարկում է հայկական ահաբեկչութեան երեւոյթը, Սփիւռքը ստացել է բոլորովին այլ քաղաքական տեսք, իսկ Հայաստանի թերթերը կարծես թէ «էշի ականջում քնած լինեն»: Խորհրդահայ մամուլի համար այդ երեւոյթը գոյութիւն չունի:

Կարո՞ղ է արդեօք այդ պայմաններում գտնուղ մի ազգ քաղաքականութեամբ զբաղուել: Քաղաքական շահերի ու նպատակների ի՞նչ ներդաշնակութեան մասին կարելի է խօսել, եթէ բոլոր հանրապետութիւնները, այդ թւում նաեւ ՄԱԿում ձեւական ներկայութիւն ունեցող Բելոռուսիան և Ուկրաինան, ամբողջովին զրկւած են սեփական քաղաքական դէմքից:

Եթէ ձեւական մօտեցում ցուցաբերենք մշակութային բնագաւառի նկատմամբ, ապա կարելի է ասել, որ ազգային մշակոյթների զարգացման բնագաւառը ամենայաջող բնագաւառն է: Եթէ ազգային մշակոյթ համարենք հանրապետութեան մէջ ազգային թատրոնի, համալսարանի, թանգարանի կամ երաժշտանոցի գոյութիւնը, ապա իսկապէս խորհրդային հանրապետութիւններում ազգային մշակոյթը զարգանում է: Բայց եթէ անդրադառնանք հայ մշակոյթի հոգեկան բովանդակութեանը, ապա կը տեսնենք, որ միութենական և հանրապետական նպատակները այստեղ էլ չեն համընկնում:

Արուեստի և գրականութեան բնագաւառում միութենական նպատակը կայանում է նրանում, որ այդ գրականութիւնը և արուեստը դառնան ձեւով ազգային, իսկ բովանդակութեամբ՝ սոցիալիստական։ Հակառակ դրան, հանրապետութիւնը ձգտում է ունենալ բովանդակութեամբ ազգային մշակոյթ, որը միայն ձեւի մէջ լինի սոցիալիստական, որովհետեւ ձեւից ազատուելը հեշտ է, իսկ բովանդակութիւնից ազատուելու համար տասնամեակներ, եթէ չասենք՝ դարեր են հարկաւոր։

Միութենական և հանրապետական նպատակների մէջ գոյութիւն ունեցող այս հակասութիւնները անխուսափելիօրէն քայքայելու են այդ միութիւնը, որը, ինչպէս ասացի, ոչ կամաւոր է և ոչ էլ ներդաշնակ։

Մնում է միայն երկու խօսք ասել մեր վերաբերմունքի մասին, այդ անխուսափելի քայքայման նկատմամբ։ Որքանո՞վ այդ քայքայումը ցանկալի կարող է լինել մեզ համար։

Ես անձամբ կարծում եմ, որ այդ քայքայումը մեզ համար այժմ բոլորովին ձեռնտու չէ, որովհետեւ մեր ժողովուրդը բացարձակապէս պատրաստ չէ այդ ծանր պահին և մեծ կորուստներով կարող է դուրս գալ այնտեղից։

Տնտեսական, հողային, մշակութային և քաղաքական բնագաւառներում մենք ոչ միայն չենք պատրաստուել նման ապագայի, այլեւ ոչ մէկ բան չենք անում, օգտուելու համար ստեղծուած պայմաններից։

Թէ ինչու եմ ես այդպէս մտածում, սա արդէն ուրիշ հարց է և այս մասին գուցէ կը գրեմ մէկ ուրիշ առիթով։

1983

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԵԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՐԷՆՔԸ

Է. Յովհաննիսեան

1936 թականին Ստալինը յայտարարեց, որ ընկերվարական հասարակակարգը դասակարգային հասարակակարգ է, և նրա այդ բացայայտ շեղումը ընկերվարական սկզբունքներից ընդունւեց որպէս օրէնք: Սակայն, պատերազմից յետոյ Ստալինը որոշեց, որ իր յայտարարութիւնը ընկերվարական հասարակակարգի դասակարգային բնոյթի վերաբերեալ անհրաժեշտ է գիտականօրէն հիմնաւորել: Եւ ահա իր մահից մէկ տարի առաջ, 1952 թականի փետրուար ամսին Ստալինը ձեւակերպում է ընկերվարական հիմնական տնտեսական օրէնքը, որը հետեւեալն էր. **«Ամբողջ հասարակութեան նիւթական և մշակութային աճի պահանջների առաւելագոյն բարգաւաճում՝ ընկերվարական արդիւնաբերութեան կատարելագործման միջոցով, տեխնիկական բարձրագոյն նւաճումների հիման վրայ»:**

Այս սահմանումը հրատարակւեց **«Բոլշեւիկ»** հանդէսում 1952 թականի Սեպտեմբեր ամսին: Իսկ կուսակցութեան 19րդ համագումարում այս օրէնքը մտաւ ընկերվարական գաղափարախօսութեան դասական գրականութեան մէջ: Այդ օրէնքը սկսւեց ուսումնասիրւել համալսարաններում, քաղպարապմունքների խմբակներում, գիտական հաստատութիւններում և նոյնիսկ դպրոցներում: Սակայն այդ օրէնքի շուրջ բարձրացած աղմուկը ոչ մէկ բովանդակութիւն չունէր, որովհետեւ Ստալինի այս ձեւակերպումը ոչ մի կապ չունէր ընկերվարութեան հետ: Նա վերաբերւում էր բոլոր հասարակակարգերին: Աւելին, այս ձեւակերպման մէջ բացակայում էր հէնց այն, ինչով ընկերվարական հասարակակարգը տարբերւում է բոլոր ուրիշ հասարակակարգերից:

Առանց ընկերվարութեան այս ընկերվարական օրէնքը պահպանւում է Խորհրդային Միութիւնում մինչեւ այսօր: Խորհրդային Միութեան մեծ հանրագիտարանում «Ընկերավարութեան հիմնական տնտեսական օրէնքը» հասկացութեան բացատրութիւնը տրւում է հէնց Ստալինի ձեւակերպման համաձայն: Այդ «օրէնքի» մեկնաբանութիւնների մէջ կարելի է գտնել աշխատանքի արտադրողականութեան բարձրացում, արտադրութեան կենտրոնացում, երկրի հարստութիւնների կուտակում, գիտատեխնիկական զարգացում, կենսամակարդակի բարձրացում և այլ ընդհանուր յայտարարութիւններ, բայց ոչ մէկ բան չի ասւում իսկական և գուցէ միակ կարեւոր ընկերվարական սկզբունքի մասին, որն է ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱԻԱՍԱՐՈՒԹԻՒՆԸ:

Միայն այն տնտեսական օրէնքը կարող է ընկերվարական համարուել, որը տանում է դէպի տնտեսական հաւասարութիւն, այսինքն՝ հասարակական արտադրութեանը մասնակցող բոլոր անդամների միջեւ արտադրական շահոյթի հաւասարաչափ բաշխում:

Ճիշտ է, այս հաւասարութիւնը դեռեւս վերջնական չէ, թերեւս ընկերվարական, այլ ոչ թէ համայնավարական, բայց այս հաւասարութիւնը ընկերվարութեան անբաժանելի սկզբունքն է, առանց որի հասարակակարգը չի կարող ընկերվարական կոչուել: Նոյնիսկ ամենաաննշան շեղումը այս սկզբունքից, վաղ թէ ուշ, վերականգնելու է դրամատիրական վարչակարգի բոլոր կողմերը, ինչպէս պատահեց Խորհրդային Միութիւնում, որտեղ հասարակակարգի դասակարգային բնոյթը և աշխատաւորի շահագործումը շատ աւելի այլանդակ ձեւեր է ընդունել, քան դա մենք տեսնում ենք դրամատիրական երկրներում: «Նոմենկլատուրա» կոչուող այն արտօնեալ խաւը, որը ծնուեց Խորհրդային Միութիւնում, սեպի նման խրւել է աշխատաւորի և արտադրական միջոցների միջեւ և խանգարում է իրականացնել այն, ինչը ընկերվարական յեղափոխութեան միակ նպատակն էր, այսինքն՝ արտադրական միջոցների յանձնումը աշխատաւորին:

Ընկերվարական սկզբունքի բացակայութիւնը խորհրդային տնտեսվարութեան մէջ կապ ունի Մարքսի «**Գաթայի ծրագրի քննադատութիւնը**» աշխատութեան հետ, որը առաջին անգամ լինելով հրատարակւեց Էնգելսի կողմից 1891 թւականին: Այն ժամանակ Շմիթին ուղղուած նամակում Էնգելսը գրում էր, որ ընկերվարական հասարակակարգի հետազօտողների առջեւ կանգնած են երկու խնդիրներ, առաջինը՝ փորձել գտնել նիւթական բարիքների բաշխման այն ձեւը, որից անհրաժեշտ է սկսել և երկրորդը՝ փորձել հասկանալ հետագայ զարգացման ուղիները:

Այն ժամանակւանից անցել է գրեթէ հարիւր տարի և ընկերվարական գիտութիւնը առաջին հարցին տւել է հետեւեալ պատասխանը.- Դրամատիրական վարչակարգից ժառանգած «ըստ աշխատանքի քանակի և որակի վճարման» սկզբունքը փոխարինել «հաւասար աշխատանքի համար հաւասար վճարումով, անկախ աշխատանքի որակից»: Իսկ երկրորդ հարցի պատասխանը հետեւեալն է. «Սպառման ապրանքների բաշխման կարգի այնպիսի զարգացում, որտեղ ըստ աշխատանքի բաշխումը կամաց-կամաց իր տեղը զիջում է ըստ կարիքների բաշխման կարգին»:

Ուրեմն այս երկու պատասխաններից բխող ընկերվարական տնտեսական հիմնական օրէնքը պէտք է ձեւակերպւէր ոչ թէ Ստալինի և այսօրւայ խորհրդային տնտեսագէտների դատարկաբանութիւններով, այլ այնպիսի մի ձեւով, որտեղ նշւէր, որ արտադրութեան կատարելագործութիւնը, արտադրական

ուժերի զարգացումը և սպառման ֆոնդի աւելացումը տանում են դէպի հասարակութեան բոլոր անդամների տնտեսական հաւասարութիւն: Միայն այն հասարակակարգը կարող է ընկերվարական համարուել, որտեղ գործում է այս տնտեսական օրէնքը: Այդ հասարակակարգում տնտեսվարութիւնը ինքնըստինքեան տնտեսական հաւասարութիւն չի առաջացնում:

Անշուշտ, հնարաւոր են շեղումներ ու նահանջներ, բայց այն գիտակցութեամբ, որ դրանով հանդերձ, ընկերվարական հասարակակարգը քայլ առ քայլ գնում է դէպի տնտեսական հաւասարութիւն, որը վերջին հաշուով որոշում է ընկերվարութեան տեղը մարդկութեան պատմութեան մէջ: 1917 թւականի Հոկտեմբերեան յեղափոխութիւնը Ռուսաստանում կատարուեց տնտեսական հաւասարութեան հասարակակարգ ստեղծելու համար և բանւորները գնացին յեղափոխութեան յետեւից հէնց այդ հասարակակարգը ստեղծելու նպատակով, ուստի՝ խորհրդային պատմաբանները պէտք է որ ուսումնասիրեն թէ ինչո՞ւ և ի՞նչպէս Խորհրդային Միութեան ղեկավարները հրաժարուեցին տնտեսական հաւասարութեան սկզբունքից: Ես այստեղ կարող եմ միայն նշել ընկերվարական սկզբունքներից հրաժարուելու երկու փուլերը:

1925 թւականի երկրորդ կէսին, երբ նախապատրաստւում էր կուսակցութեան 14րդ համագումարը և հէնց համագումարի ժամանակ տեղի ունեցաւ տաք բանավէճ տնտեսական հաւասարութեան խնդրի շուրջ: Այն տարիներին, երբ Ստալինը պատրաստւում էր զաւթել կուսակցութեան և երկրի ամբողջ իշխանութիւնը, նրա հակառակորդները արդարացիօրէն առաջ էին քաշում տնտեսական հաւասարութիւն ստեղծելու անհրաժեշտութիւնը և պահանջում էին, որ այդ ուղղութեամբ տարւող աշխատանքները լինեն կուսակցութեան հիմնական խնդիրը: Ստալինը համարում էր, որ տնտեսական հաւասարութիւնը մանր բուրժուազիայի թեզն է և որ այդ թեզը պէտք է դուրս նետւի մարքսիստական գաղափարախօսութիւնից: Ստալինը այս վէճից դուրս եկաւ յաղթական և աշխարհի առաջին ընկերվարական պետութիւնը, հրաժարուելով տնտեսական հաւասարութեան սկզբունքից, գնաց անհաւասարութիւն առաջացնող տնտեսվարութեան ճանապարհով:

Սակայն Ստալինի հակառակորդները, որ նախազգուշացնում էին նման տնտեսվարութեան հետեւանքների մասին, ճիշտ դուրս եկան, որովհետեւ խորհրդային հասարակակարգում արագօրէն սկսեց ստեղծուել նոր դասակարգային պառակտուածութիւն: Հասունանում էր այն ժամանակը, երբ միջազգային ընկերվարութիւնը և հէնց երկրի ներսի ընկերվարականները պէտք է հարց տային Ստալինին, թէ ինչպէ՞ս կարելի է ընկերվարական կոչել այն հասարակակարգը, որտեղ տնտեսական անհաւասարութիւնը, ոչ միայն չի պա-

կասում, այլ արագ քայլերով զարգանում է: Ստալինը իր իւրայատուկ ձեւով կարողացաւ խուսափել այդ հարցի պատասխանից: Նա ոչնչացրեց բոլոր նրանց, ովքեր կարող էին նման հարցեր տալ: Խ. Միութեան ընկերվարականներին նա սովորեցրեց լռել ու նրանք լռեցին միշտ ու ամէնուր:

Սակայն պատասխանից խուսափելու այս ձեւը բնորոշ էր Ստալինի և նրա ժամանակաշրջանի համար: Այսօր այդ ձեւը, թէեւ մնացել է երկրի ներսում, արտասահմանում, որտեղ կան ընդդիմադիր դիրք բռնած ընկերվարականներ ու համայնավարներ, այլեւս չի գործում: Եւ հաշւի առնելով այսօրւայ կացութիւնը, խորհրդային գաղափարախօսները դիմում են աւելի ճարպիկ ու խորամանկ քայլի: Նրանք պարզապէս շրջանցում են «Տնտեսական Հաւասարութիւն» հասկացութիւնը, փոխարինելով այն «Հասարակական հաւասարութիւն» հասկացութեամբ, որը իբր թէ բնորոշ է զարգացած ընկերվարական վարչակարգի համար:

«Հասարակական հաւասարութիւն» հասկացութիւնը առաջին անգամ լինելով մտաւ պաշտօնական փաստաթղթի մէջ 1961 թւականին, երբ ընդունւեց Խորհրդային Միութեան կոմկուսի նոր ծրագիրը: Իսկ այսօր այդ հասկացութիւնը արդէն օրինականացւած է և ամուր կերպով մտել է խորհրդային մարքսիստական գրականութեան մէջ: Այդ, այսպէս կոչւած հաւասարութեան մասին խօսւում է ամէն մի առիթով ու պարզ է դառնում, որ «հասարակական հաւասարութեան» տակ խորհրդային իշխանաւորները ու գաղափարախօսները ի վերջոյ հասկանում են 1936 թւականի Սահմանադրութեամբ ընդունւած քաղաքացիների հաւասարութիւնը: Բայց այդ հաւասարութիւնը ընկերվարական հաւասարութիւն չէ: Քաղաքացիների սահմանադրական հաւասարութիւնը՝ այսօրւայ դրամատիրական երկրները հարիւր անգամ աւելի են իրականացնում: Ընկերվարական հաւասարութիւնը տնտեսական հաւասարութիւն է, իսկ այդ մասին խորհրդային տնտեսագէտները և փիլիսոփաները ոչինչ չեն ասում: Փիլիսոփայական գիտութիւնների դոկտոր Կուրիլեւը, օրինակ, գրում է, որ հասարակական հաւասարութիւնը ստեղծւում է արտադրական միջոցների համայնացման հիման վրայ: Նրա մտքով անգամ չի անցնում, որ արտադրական միջոցների համայնացումը ինքնանպատակ չէ, այլ տնտեսական հաւասարութիւն ստեղծելու միջոց:

Մնում է միայն հարցնել, թէ ինչո՞ւ Ստալինը և նրա այսօրւայ հետեւորդները հրաժարւեցին ընկերվարութեան հիմնական սկզբունքից: Հաւանաբար նրա համար, որ տնտեսական հաւասարութիւնը թուլացնում է իշխանութիւնը և գրեթէ անկարելի դարձնում բռնութիւնը: Իսկ Ստալինը և նրա ժառանգորդները իրենց ծերութիւնից դողացող ձեռքերով այնպէս են կառչել իշխանութեան, այնպէս են սարսափում ժողովրդավարութիւնից, որ ստեղծել են աշ-

խարհի ամենաամբողջատիրական կայսրութիւնը, որը անամօթաբար կոչում են ընկերվարական հասարակակարգ։

1983

ԳԷՈՐԳ ՂԱՐԻԲՋԱՆԵԱՆԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Է. Յովհաննիսեան

Այս տարւայ **«Կոմունիստ»** հանդէսը հրատարակեց մի յօդուած, որտեղ սուր քննադատութեան է ենթարկում ակադեմիկոս Գէորգ Ղարիբջանեանին: «Գիտական անպատասխանատուութեան օրինակ» յօդուածը ստորագրել է մի եռեակ, որին դիմում են խորհրդային իշխանութիւնները, երբ ցանկանում են տապալել հեղինակութիւն վայելող մի անձնաւորութեան: Եռեակի կազմի մէջ են մտնում հայ Մուրադեանը, ռուս Պանովը և վրացի Ձիւաձէն:

Ակադեմիկոս Ղարիբջանեանը իսկապէս մեծ հեղինակութիւն է վայելում Հայաստանում և ունի արժանիքների մի ամբողջ ցուցակ. նա մասնակից է երկրորդ համաշխարհային պատերազմի, 56 թւականից պատմութեան պրոֆեսոր է, 71 թւականից ակադեմիկոս, 68-77 թւականներին նա գրաւում էր Հայաստանի կոմկուսի կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի **ինստիտուտի դիրեկտոր**ի պաշտօնը, գիտութիւնների վաստակաւոր գործիչ է, եղել է կոմերիտ միութեան կենտկոմի քարտուղար, Լենինականի քաղկոմի առաջին քարտուղար, Հայաստանի կոմկուսի կենտկոմի բաժնի վարիչ, մի քանի շքանշանների շքանշանակիր և այլն: Բացի այս ամէնից, նա յայտնի յեղափոխական Բագրատ Ղարիբջանեանի որդին է:

Չնայած նրան, որ Գէորգ Ղարիբջանեանը ունի բոլոր այս արժանիքները, նա այնուամենայնիւ, միշտ էլ գտնւում էր մի տեսակ այլախոհական պատմաբանների շարքում և ամենաբարձր պաշտօնների կուսակցութեան մէջ չէր արժանանում:

Դեռեւս 58 թւականին **«Խորհրդային Միութեան Կոմունիստական Կուսակցութեան Պատմութեան Հարցեր»** հանդէսի 4րդ համարում հրատարակւեց «Գիտութեան մէջ լենինեան կուսակցական սկզբունքների խախտումների դէմ» յօդուածը, որտեղ նշւում էր, որ Հայաստանի կոմկուսի կենտկոմի պատմութեան **ինստիտուտը** մի շարք հարցերում շեղւել է լենինեան մարտնչող կուսակցականութեան սկզբունքից, որը բոլոր տեսակի գիտական ուսումնասիրութիւնների հիմնական սկզբունքն է: Այդ սկզբունքից շեղւելու մէջ դատապարտւեց նաեւ Գ. Ղարիբջանեանի **«Հայաստանի կոմունիստական կազմակերպութիւնները Խորհրդային իշխանութեան յաղթանակի համար»** գիրքը: Ղարիբջանեանի այդ գիրքը քննադատւում է այն բանի համար, որ նա չափազանցրել է իր հօր՝ Բագրատ Ղարիբջանեանի դերը Անդրկովկասի յեղափոխութեան մէջ:

Իր հօր մասին Ղարիբջանեանը գրում է, որ նա պայքարում էր Ռուսաստանի ժամանակաւոր կառավարութեան դէմ, որ իր յօդուածներում նա քարոզում էր մարքս-լենինեան տեսութիւնը յեղափոխութեան, խաղաղութեան, պատերազմի, տնտեսական և ազգային հարցերի վերաբերեալ: Իսկ Ղարիբջանեանի քննադատները նշում են, որ իրականում Բագրատ Ղարիբջանեանի յօդուածներում չկայ ոչ մի բան ինչ նրանց վերագրւում է: Բոլոր այդ յօդուածները,- ասւած է քննադատող յօդուածում,- գրւած են ոչ բոլշեւիկեան դիրքերից և նրանց մէջ կան մենշեւիկեան պնդումներ: Ընդհանուր եզրակացութիւնը այն է, որ Գ. Ղարիբջանեանը չափազանցրել է Բագրատ Ղարիբջանեանի դերը Անդրկովկասի յեղափոխութեան մէջ:

Այս բանը տեղի ունեցաւ 1958 թւականին:

Եւ ահա մեր օրերին **«Կոմունիստ»** հանդէսը կրկին յարձակւում է Ղարիբջանեանի վրայ, բայց այս անգամ ոչ թէ Բագրատ Ղարիբջանեանի դերը չափազանցելու համար, այլ ընդհանրապէս հայ հասարակական գործիչների ու յեղափոխականների դերը չափազանցելու համար: Քննադատելով Ղարիբջանեանի **«Հաւատարմութիւն»** վաւերական վիպակը, քննադատները զարմանք են յայտնում այն պնդման առիթով, թէ Սոցիալ-Դեմոկրատների երկրորդ համագումարի նախօրեակին Լենինի կողքին կանգնած էին Բոգդան Կնունեանցը և Արշակ Զուրաբեանը և որ այս երկու հայերի չորս ձեռքերի վրայ էր կառուցւելու համագումարի լենինեան շէնքը:

Որքան աժանագին յօրինւած է այս պնդումը,- գրում են քննադատները ու հարց են տալիս թէ ինչու պէտք է միայն այս երկու հայ պատգամաւորների վրայ յենւէր լենինեան շէնքը:

Ղարիբջանեանի քննադատները դժգոհ են նաեւ նրանից, որ Ղարիբջանեանը փորձում է բարձրացնել մի շարք հայ հասարակական գործիչների հեղինակութիւնը **«Լենինը և հայ գործիչները»** գրքում:

Այս առիթով քննադատները գրում են. **«Տարակուսանք է առաջացնում գրքի վերնագիրը: Ընթերցողի մօտ հարց է ծագում՝ այս ո՞ր հայ գործիչների մասին է խօսքը: Հայ ժողովուրդը տւել է ականաւոր յեղափոխականների համաստեղութիւն, որոնցից շատերը դարձան Լենինի զինակիցները և աշակերտները: Շահումեանի, Կնունեանցի, Լալայեանցի, Սպանդարեանի, Միասնիկեանի, Կամոյի, Միկոյեանի և ուրիշների անունները յայտնի են մեր կուսակցութեանը: Սակայն Ղարիբջանեանը իր գրքի հերոսների համար ընտրում է Հերոսների, առանց ղեկավարւելու լենինեան դասակարգային և կուսակցականութեան սկզբունքներով: Գրքի մէջ մեծ տեղ է տրւած Զուրաբեանին, Մարօ Նազարբեկին, Ոսկի Տէր-Յովհաննիսեանին և ուրիշների, որոնք պատկանում էին տար-**

բեր կազմակերպութիւնների և ուղղութիւնների, բայց գրքի մէջ ներկայացուած են որպէս Լենինի զինակիցներ, համախոհներ»:

Այսպիսով Գ. Ղարիբջանեանի փորձը՝ վեր բարձրացնելու իր մի շարք հայրենակիցների հեղինակութիւնը, անցաւ ապարդիւն: Սակայն այդ փորձը միանգամայն հասկանալի է: Մեր ժամանակներում միայն այն հասարակական գործիչներն են տեղ գտնում Խորհրդային պատմութեան մէջ, որոնք ժամանակին պտտւել են Լենինի կողքին: Ղարիբջանեանն էլ որոշեց այդ ճանապարհով հասնել իր նպատակին:

Ղարիբջանեանի քննադատութեան այս պատմութիւնը կարելի էր այստեղ էլ վերջացնել, եթէ նա չունենար բաւականին տարօրինակ շարունակութիւն:

Հայաստանի կոմկուսի կենտկոմի **«Կոմունիստ»** թերթը Յունիսի 9ին հրատարակեց մի յօդուած «Գէորգի Դիմիտրովի շքանշանը հայ գիտնականին» վերնագրով: Այնտեղ ասւած էր, որ Բուլղարիայի կառավարութեան որոշմամբ ակադեմիկոս Ղարիբջանեանը պարգեւատրւում է «Գէորգի Դիմիտրովի» շքանշանով: Այս պատւին Ղարիբջանեանը արժանացաւ Դիմիտրովի կեանքը ուսումնասիրելու և նրա կապերը հայ հասարակական գործիչների հետ բացայայտելու համար:

Մնում է միայն եզրակացնել, որ այն ինչ Ղարիբջանեանին չյաջողուեց անել Լենինի ճանապարհով, նա կարողացաւ անել Դիմիտրովի ճանապարհով:

1983

ՍԱՌԸ ՔԱՄԻ՝ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆԻՑ

Է. Յովհաննիսեան

Խորհրդային Միութիւնում տեղի ունեցող իրադարձութիւնների մասին տեղեկութիւններ կարելի է քաղել միայն ռուսական կենտրոնական մամուլից, այն էլ տողերի արանքից: Այդ թերթերը, առաւել եւս՝ նրանց տողերի արանքում գրւածը, դժբախտաբար, քիչ են յայտնի Հայկական Սփիւռքին, ուստի կարեւոր համարեցի մեր ընթերցողների ուշադրութիւնը կենտրոնացնել մէկ երեւոյթի վրայ:

Մոսկւայում հրատարակւում է «Օգոնեկ» հասարակական և քաղաքական հանդէսը, որը Խորհրդային Միութեան ամենատարածւած հանդէսն է և որի միջոցով խորհրդային իշխանութիւնը տարածում է իր անպաշտօն տեսակէտները և ցանկութիւնները: Այս հանդէսը իր վերջին մի շարք համարներում փաստօրէն պատասխանում է այն հարցին, որին սպասում էին քաղաքական մեկնաբանները Անդրոպովի իշխանութեան գլուխ գալուց յետոյ:

Այդ հարցը կայանում է նրանում, թէ ի՞նչպիսի վերաբերմունք ունի Անդրոպովի վարչակարգը Ստալինի ժառանգութեան նկատմամբ: Սա սովորական հետաքրքրասիրութիւն չէ, այլ Խ. Միութեան ապագայ քայլերը նախատեսելու գծով կարեւոր աշխատանք: Հարկ է յիշել, որ խորհրդային ժողովրդին ոչնչացնելու ու ստրկացնելու Ստալինի ժառանգութիւնը անցաւ հետեւեալ փուլերից.

1.- Խրուշչովը խիստ դատապարտեց Ստալինի անձի պաշտամունքը և վարկափրկեց կենդանի մնացած ու արդէն գնդակահարւած նրա զոհերին:

2.- Սեփական իշխանութիւնը ամրապնդելուց յետոյ, Խրուշչովը կասեցրեց Ստալինի յանցանքների բացայայտման ընթացքը:

3.- 60ական թւականների վերջում Բրեժնեւը սկսեց Ստալինի հեղինակութիւնը վերականգնելու ընթացքը, սակայն առայժմ միայն որպէս տաղանդաւոր զօրավարի:

4.- Անդրոպովը սկսեց Ստալինի հեղինակութեան ամբողջական վերականգնումը:

Այս բանը Անդրոպովի վարչակարգը կատարում է հետեւեալ ճանապարհով:

ա) 1983 թւականի գրականութեան պետական մրցանակը շնորհւեց Իւան Ստադնիւկին, «Պատերազմ» բազմահատոր վէպի համար, որը մասնագէտների կարծիքով ոչ մէկ գրական արժէք ունի, բայց որտեղ Ստալինը ներկայացւած է որպէս տաղանդաւոր, հեռատես ու իմաստուն մի առաջնորդ:

բ) Բոլոր այլախոհական շարժումները արմատախիլ արուեցին և ամբողջովին փակուեցին արտագաղթի դռները։

գ) Փորձ կատարուեց երկրի քայքայուած տնտեսութիւնը վերականգնել կարգապահութեան ճանապարհով։

դ) Ազգային քաղաքականութեան մէջ երեւացին ստալինեան գծեր։

Այժմ «Օգոնեկ» հանդէսը սկսել է հրատարակել նոյն Ստաղնիւկի «Մոսկըւա-41» խորագրով վէպը, որտեղ Ստալինը ամբողջովին վարկափրկւած է և ներկայացւած է այն սուրբ դերում, ինչպէս ներկայացւում է այդ դահիճը իր կեանքի ժամանակ։ Եւ այժմ արդէն ոչ միայն Ստալինը, այլ նաեւ Մոլոտովը, Շչերբակովը, Ստալինին շրջապատող բոլոր նախարարները և նրանց տեղակալները ներկայացւած են որպէս իմաստուն ղեկավարներ։

Այլեւս ոչ ոչ չի յիշում Խրուշչովի վկայութիւնները Ստալինի և ամբողջ կառավարութեան շփոթւածութեան մասին, որը նրանք ապրեցին պատերազմի առաջին օրերին, և Ստալինի այն ճակատագրական սխալները, որոնց մեղքով Հիտլերը հասաւ Մոսկուա, իսկ Խ. Միութիւնը երեք անգամ աւելի շատ զոհ տուեց, քան պարտւած Գերմանիան։

Հաւանաբար պատահական չէ, որ «Օգոնեկ» հանդէսը նոյն համարում հրատարակել է խորհրդային հռչակաւոր բանաստեղծ Միխալկովի հետ հարցազրոյցը, որը պատմում է թէ ինչպէս ինքը 1943 թւականին անձամբ Ստալինի ղեկավարութեամբ յօրինում էր Խ. Միութեան պետական **հիմն**ի խօսքերը։ Նա գրում է.

«Ես յիշում եմ, որ երբ մենք գալիս էինք Կրեմլ, ընդունարանում սպասում էին **մարշալ**ները և զօրավարները, որոնք վստահօրէն եկել էին ինչ որ կարեւոր բաներ զեկուցելու համար, բայց մեզ՝ **հիմն**ի ստեղծողներին թողնում էին առանց հերթի»։

Բանաստեղծ Միխալկովը արդէն այնքան է մտել իր սիրած ստալինեան մթնոլորտի մէջ, որ չի էլ մտածում, թէ որքան յիմար վիճակի մէջ է դնում իր սիրած առաջնորդին։ 1943 թւականին, երբ տեղի էին ունենում արիւնալի կռիւները, երբ ճակատներում մահանում էին հազարաւոր մարդիկ, Ստալինը ուշադրութիւն չէր դարձնում ճակատից եկած **մարշալ**ների վրայ, նա թելադրում էր պետական **հիմն**ի խօսքերը, որտեղ կային նաեւ այսպիսիները. «Մեզ մեծացրեց Ստալինը ժողովրդի համար և ոգեշնչեց մեզ սխրագործութիւնների ու աշխատանքի»։

Ինչ վերաբերում է Անդրոպովի ազգային քաղաքականութեանը, ապա նա 1982 թւականի դեկտեմբերի 21ին, Խ. Միութեան Գերագոյն Խորհրդի նիստին յայտարարեց, որ Խ. Միութեան Կոմունիստական կուսակցութիւնը չի հրաժա-

րուել Խ. Միութեան բոլոր ազգութիւններին միաձուլելու և մէկ կոմունիստական ազգ ստեղծելու ծրագրից:

Անշուշտ բոլոր այս յայտարարութիւնները դատարկ խօսքեր են, բայց սառը քամին փչում է:

Մնում է հետեւել «Օգոնեկ» հանդէսի նոր համարներին, տեսնելու համար ինչ հովեր են փչելու Անդրոպովի յաջորդ Չեռնենկոյի նոր իշխանութեան օրօք:

1984

ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ԳՈՐԲԱՉԵՒԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹԻՒՆԸ

Է. Յովհաննիսեան

Այն դրական փոփոխութիւնները, որոնք տեղի են ունենում Խորհրդային Միութիւնում, չի կարելի չնկատել, չի կարելի անտեսել և վերլուծութեան չենթարկել: Անշուշտ, քաղաքական մեկնաբանները այդ վերլուծութիւնները կատարում են, սակայն իրենց հիմնական ուշադրութիւնը նրանք կենտրոնացնում են քաղաքական յարաբերութիւնների վրայ, ջանալով պարզել թէ ի՞նչ ազդեցութիւն կարող են ունենալ գորբաչեւեան վերափոխութիւնները Արեւմուտք-Արեւելք փոխյարաբերութիւնների վրայ: Մեզ համար շատ աւելի կարեւոր են ներքին իրադարձութիւնները և ներքին կեանքին վերաբերւող սպասումները, քանզի այդ վերափոխութիւնների ոլորտումն է գտնւում Հայաստանը և 4.5 միլիոն հայութիւնը:

Գորբաչեւեան բարեփոխումները այսօր ստացել են **«Հրապարակայնութիւն»** անունը և, մեր կարծիքով, շատ ճիշտ արտայայտում են իրականութիւնը: Հրապարակայնութիւնը իսկապէս որ առայժմ այն միակ նկատելի փոփոխութիւնն է, որ տեղի է ունենում Խորհրդային Միութիւնում: Բայց, ինքնըստինքեան, հրապարակայնութիւնը ոչ մէկ արժէք կարող է ունենալ, եթէ նա դուրս չբերի կաշկանդւածութիւնից այն իրական տնտեսական ու քաղաքական գործօնները, որոնք ազդում են տւեալ երկրի պետական ու հասարակական կեանքի վրայ:

Ահա թէ ինչու մեզ անհրաժեշտ է պարզել, թէ ի՞նչ կարող է և ի՞նչ չի կարող անել հրապարակայնութիւնը:

ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Ընկերվարական յեղափոխութեան գլխաւոր խնդիրը Մարքսը տեսնում էր հասարակական արտադրանքի բաշխման կարգի փոփոխման մէջ: Այդ բաշխումը պէտք է լինէր աւելի արդար, քան էր դրամատիրական հասարակարգում: Ինչ վերաբերւում էր արտադրանքին, ապա ենթադրւում էր որ վատագոյն դէպքում այդ արտադրանքը կը մնայ նոյն մակարդակի վրայ, իսկ լաւագոյն դէպքում արտադրանքը կ'աւելանայ, որովհետեւ ապրանքների արդար բաշխումը կը ստիպի մարդկանց արտադրել որքան կարելի է շատ:

Սակայն Ռուսաստանի յեղափոխութեան առաջին իսկ տարիներին Լենինը հասկացաւ, թէ որքան սխալ էր Մարքսի այդ թեզը: Նա հասկացաւ, որ

խնդիրը ոչ թէ ապրանքների բաշխման, այլ ապրանքներ արտադրելու մէջ է։ Վերջին հաշուով, արդար ձեւով կարելի է բաշխել միայն այն, ինչը արդէն արտադրուել է։ Եւ եթէ արտադրուածը քիչ է, կամ՝ վատ որակի, արդար բաշխումով կարելի կը լինի լուծել զուտ հոգեբանական հարցեր, բայց ոչ թէ աշխատաւորների բաւարարման խնդիրը։

Լենինի վերջին աշխատութիւնների մէջ կարելի է գտնել անհանգիստ որոնումներ մի կախարդական միջոցի, որը պէտք է նպաստէր ընկերվարական արտադրանքի զարգացմանը։ Այդ նոր միջոցը պէտք է լուծէր մարդկանց աշխատանքի մէջ շահագրգռելու հին խնդիրը։ Դարերի ընթացքում այդ խնդիրը լուծւել էր մրցակցութեան ճամբով, որը գործում էր դրամատիրական տնտեսութեան մէջ և որը ազատ շուկայի պայմաններում ապրեցնում էր ուժեղին ու կործանում թոյլին։ Դրամատիրական այս մրցակցութիւնը անհրաժեշտ էր փոխարինել մի ինչ որ նոր սկզբունքով։ Սոցիալիստական մրցակցութիւն, բանւորական վերահսկողութիւն, կուսակցականների աշխատավարձի սահմանափակում, գիտատեխնիկական զարգացում, աշխատանքի ու աշխատողների որակաւորում և ուրիշ միջոցառումներ գալիս էին լուծելու ամենակարեւոր հարցը՝ ինչպէ՞ս առաջացնել մարդու մէջ լաւ աշխատելու ցանկութիւն։

Այդ խնդիրը Լենինը չկարողացաւ լուծել և կրկին նահանջեց դէպի դրամատիրական ազատ շուկան, օգտագործելով «ՆԷՊ» կոչւած նոր տնտեսական քաղաքականութիւնը։ Սակայն դա խնդրի ընկերվարական լուծումը չէր։ Չնայած նրան, որ մի քանի տարւայ ընթացքում երկիրը լցւեց ապրանքներով, ընկերվարական սկզբունքները խախտւած էին և Ռուսաստանը արագ թափով վերադառնում էր դրամատիրութեան։ Ստալինը բռնի ուժով կանգնեցրեց այդ ընթացքը՝ կենտրոնացւած ճամբարները դարձնելով մարդկանց աշխատեցնելու միակ միջոցը։ Ստալինից յետոյ բոլոր խորհրդային ղեկավարները, տարբեր ճանապարհներով, բայց փորձում էին գտնել մարդկանց աշխատանքի մէջ շահագրգռելու բանալին, այդպէս էլ չգտան։

Խորհրդային մարդիկ կամաց-կամաց յետ վարժւեցին աշխատելուց և նայում էին աշխատանքին որպէս մի անդուր պարտականութեան։ Արդիւնքը ողբերգական էր։ Միացեալ Ազգերի Կազմակերպութեան տւեալների համաձայն՝ համաշխարհային արտադրանքի մէջ Խորհրդային Միութեան արտադրանքը 1960 թւականին կազմում էր 13.1 տոկոս, 1980 թւականին՝ 9.8 տոկոս, իսկ 1990 թւականին կազմել է 8 տոկոս։ Այդ ժամանակաշրջանում Արեւմտեան Եւրոպայի արտադրանքը 24.9 տոկոսից աճեց մինչեւ 28.2 տոկոսի, իսկ Ճապոնիան իր արտադրանքը 4.3 տոկոսից հասցրեց 10.6 տոկոսի։ Չորս տարի յետոյ Ճապոնիայի արտադրանքը կազմելու է համաշխարհային արտադրանքի 13 տոկոսը։

Հասկանալի է, որ նման կացութիւնը պատիւ չի բերում Խորհրդային Միութեանը և հասկանալի է, որ Գորբաչեւը այժմ սկսել է մարդկանց աշխատեցնելու միջոցների հերթական որոնումները և կրկին հայեացքը սեւեռել է դէպի մասնաւոր սեփականութիւն ու մասնաւոր նախաձեռնութիւն: Եթէ հրապարակայնութիւնը հրապարակ է իջել որպէս այդ որոնումների արդիւնք, ապա կարելի է ենթադրել, որ Գորբաչեւը ճիշտ ճանապարհի վրայ է, որովհետեւ միայն հրապարակայնութեան ճամբով կարելի է պարզել, թէ ինչպէ՞ս ընկերվարական սկզբունքներից չհրաժարւելով կարելի է շահագրգռել մարդկանց աշխատանքի մէջ:

Պէտք է ասել որ հրապարակայնութիւնը արդէն տալիս է իր առաջին արդիւնքները: Արդէն հրատարակւում են յօդւածներ, որտեղից պարզւում է որ Խորհրդային Միութիւնը մեծ կորուստներ է ունեցել բնական հարստութիւնների բնագաւառում: Տարիներ շարունակ խորհրդային տնտեսութիւնը զարգացել է քանակական գործօնների հաշւին, այսինքն ծաւալւել են գիւղատնտեսական ու արտադրական դաշտերը, առանց որակական փոփոխութիւնների: Բայց այդ պահեստները գրեթէ սպառւած են և Խորհրդային Միութիւնը այլեւս ի վիճակի չէ ծաւալւելու այս ուղղութեամբ: Խորհրդային տնտեսագէտները այժմ նշում են, որ աւելացնել քարածուխի կամ նաւթի հանքերը այլեւս անկարելի է:

Աւելին, խորհրդային տնտեսութիւնը ի վիճակի չէ նաեւ ներգրաւելու արտադրութեան մէջ նոր մարդկային ուժեր: Պարզ դարձաւ նաեւ այն, որ խորհրդային հնացած արդիւնաբերական սարքերը ի վիճակի չեն ապահովելու ժամանակակից արտադրական ընթացքները: Եւ, վերջապէս, պարզ դարձաւ որ Ռուսաստանի ժողովուրդները չունեն աշխատանքային կազմակերպւածութեան աւանդոյթը, ինչը օրինակ, ունեն գերմանացիները կամ անգլիացիները:

Այս ամէնը պարզ դարձաւ, բայց յետոյ ի՞նչ:

Անկեղծ լինելու համար նշենք, որ ոչ թէ պարզ դարձաւ, այլ այդ մասին հնարաւոր եղաւ գրել ու խօսել: Նախկինումն էլ խորհրդային ղեկավարները այսքան միամիտ չէին ու գիտէին, որ իրենց ենթակայ մասնագէտները շինծու հաշւետւութիւններ են ներկայացնում երկրի իրական կացութեան մասին: Խանութների դատարկութիւնը և ապրանքների որակը շատ աւելի պերճախօս էին, քան հաստափոր հաշւետւութիւնները առատութեան ու պլանների կատարման մասին: Այժմ այդ մասին իմացաւ ոչ միայն ղեկավարութիւնը, այլեւ ժողովուրդը:

Յետո՞յ:

Յետոյ պիտի սկսւի ամենագլխաւորը՝ ընկերվարական սկզբունքների տեղի ու սահմանների որոշումը հասարակական կեանքում։

Այսինքն հասարակութիւնը պէտք է որոշի, թէ ի՞նչ տեղ պիտի գրաւեն ընկերվարական սկզբունքները արտադրութեան մէջ, արտադրական փոխյարաբերութիւններում, գիտական զարգացման մէջ և այլ բնագաւառներում։

Այստեղ հարկ է նշել, որ սկզբունքը ինքնըստինքեան սահմանափակող, արգելող միջոց է։ Որպէս օրէնք, նա չի թելադրում մարդուն որեւէ բան անել, այլ թելադրում է չանել։ Նոյնիսկ այն դէպքում, երբ սկզբունքը թելադրող է թւում- զոհաբերել, օգնել, պայքարել – միեւնոյն է, նա ի վերջոյ արգելող է, որովհետեւ արգելում է անտարբեր մնալ, արգելում է կենդանական հաճոյքը։ Սկզբունքը սահմանափակում է մարդու հաճոյքը ու ցանկութիւնները, որոնք մարդու անսահման երեւակայութեան բերումով կարող են տանել մարդկութիւնը դէպի կործանում։ Այդպէս եղել է ու պիտի լինի, քանի դեռ մարդը մարդ է, իր ներքին ապրումներով ու ցանկութիւններով։ Մարդուն փոխելու բոլոր փորձերը, բոլոր ժամանակներում անցել են ապարդիւն և այսօր էլ մնում են առասպելների ոլորտում։

Սա նշանակում է, որ ինչպէս բոլոր սկզբունքները, այնպէս էլ ընկերվարական սկզբունքները պէտք է դառնան մարդու վարքագիծը սահմանափակող ու նրան ուղղութիւն տւող սկզբունքներ։ Ճիշտ այնպէս, ինչպէս ազատութիւնը սահմանափակւում է օրէնքով, բարոյականութեամբ, ազգային աւանդոյթներով, ազգակցական կապերով և ուրիշ գործօններով, այնպէս էլ արտադրական փոխյարաբերութիւնները արտադրելու կազմակերպչական ձեւերը պէտք է սահմանափակւեն ընկերվարական սկզբունքներով։

Իսկ սա նշանակում է միայն մէկ բան։ Ամէն մի մարդ իրաւունք ունի երջանկութեան, այսինքն սեփական պահանջների բաւարարման, եթէ իր նպատակներին հասնելու համար չի շահագործում ուրիշ մէկին և չի օգտւում ուրիշի աշխատանքից։ Ամէն մի մարդ պարտաւոր է վճարել իր եկամուտի որոշակի մասը հասարակական կարիքների համար։ Այս երկու սահմանների արանքում մարդը ազատ է, ինչը նշանակում է ազատ շուկայ և առեւտուր, ազատ նախաձեռնութիւն և ազատ արտադրութիւն, ազատ մրցակցութիւն և այլն։

Կարո՞ղ է արդեօք գորբաչեւեան հրապարակայնութիւնը այսքան առաջ տանել Խորհրդային տնտեսվարութիւնը։ Կարծում ենք, որ ո՛չ։

Տեսնենք թէ ինչո՞ւ։

Նախ գորբաչեւեան հրապարակայնութիւնը իրական հրապարակայնութիւն չէ։ Ճիշտ է, այսօր խօսւում է այն մասին, ինչի մասին երէկ չէր խօսւում,

բայց Գորբաչեւի վարչութիւնը ուզում է, որ այդ մասին խօսւի։ Իսկ այն մասին, ինչի մասին Գորբաչեւը չի ուզում որ խօսւի, այսօր էլ չի խօսւում։ Օրինակ, մէկը միւսի հետեւից պաշտօնազրկւում են նախարարներ ու կուսակցական գործիչներ, ընդունւում են նոր օրէնքներ ու որոշումներ։ Բայց թերթերում բացակայում են այդ որոշումները քննադատող յօդւածներ։ Պաշտօնազրկւածներից ոչ մէկը չի ստանում արդարանալու կամ տեսակէտները պաշտպանելու իրաւունքը։ Բոլորը «ազատօրէն» գովաբանում են Գորբաչեւի նախաձեռնութիւնները և «ազատօրէն» քննադատում են նրա հակառակորդներին։

Սա նշանակումում է, որ մենք գործ ունենք միակողմանի հրապարակայնութեան հետ, ճիշտ այնպէս՝ ինչպէս ասւած է յայտնի զաւեշտում։ Ամերիկացին խորհրդային մարդու հետ զրուցելիս ասում է, **«Մեր երկիրը շատ ազատ է՝ ես կարող եմ կանգնել Սպիտակ Տան առջեւ ու բացագանչել, թէ նախագահ Ռեյգանը ապուշ է։ Եւ ինձ ոչ մէկը չի ձերբակալի»**։ Ռուսը պատասխանում է.- **«Մեր երկիրը աւելի ազատ է։ Ես կարող եմ կանգնել Կրեմլի առջեւ ու բացագանչել թէ նախագահ Ռեյգանը ապուշ է և ինձ ոչ միայն չեն ձերբակալի, այլ նւէր էլ կը տան»։**

Գորբաչեւեան ազատութիւնների օրերին էլ խօսւում է միայն այն մասին, ինչի համար նւէրներ են տալիս։ Նման հրապարակայնութիւնը խորհրդային տնտեսութեան էշը ցեխից չի հանի։

Էշը ցեխից հանելու առջեւ կանգնած երկրորդ դժւարութիւնը՝ իշխանութեան կառոյցի մէջ է։ Խորհրդային Միութեան կենտրոնական իշխանութեան ամբողջ ուժը՝ հասարակական կեանքի բոլոր բնագաւառների վրայ վերահսկողութիւն հաստատելու մէջ է։ Արդիւնաբերութիւն, գիւղատնտեսութիւն, մշակոյթ, գիտութիւն, կրթութիւն և այլն՝ այս ամէնը կուսակցութեան իշխանութեան տակ են։

Եթէ արդիւնաբերութիւնը, մշակոյթը, առեւտուրը և մի շարք այլ բնագաւառներ դուրս գան կուսակցութեան իշխանութեան տակից, այդ իշխանութիւնը նախ շատ կը թուլանայ, ապա՝ կը պահանջի ազատ ընտրութիւններ։ Կ'ուներ՞ն երկրի ղեկավարները նման կացութիւն ստեղծելու արիութիւնը։

Առայժմ դրա նշանները չկան։ Խորհրդային Միութեան կոմունիստական կուսակցութեան կենտրոնական կոմիտէի արտասահմանեան կոմունիստական կապերի բաժնի վարիչի տեղակալ Գրիգոր Շահնազարեանը վերջերս առաջարկեց, որ Խորհրդային Միութիւնում ընտրութիւնների ժամանակ մէկ թեկնածուի փոխարէն լինեն մի քանիսը։

Սակայն աւելացրեց, որ բոլոր այդ թեկնածուները պէտք է լինեն կուսակցութեան հսկողութեան տակ գտնւող կազմակերպութիւնների անդամներ։ Այնպէս որ կոմունիստական կուսակցութիւնը հրապարակայնութեան օրերին

էլ մնում է երկրի միակ ղեկավարը՝ օրէնսդիր, գործադիր ու դատական մարմինը։

Մէկ խոչընդոտ եւս կայ Խորհրդային Միութեան մէջ ժողովրդավարութիւն մտցնելու ճանապարհին, դա Խորհրդային Միութեան ներքին և արտաքին ծաւալապաշտական քաղաքականութիւնն է։ Անկարելի է երկրի ժողովրդավարացումը, առանց լուծելու արեւելաեւրոպական երկրների և խորհրդային հանրապետութիւնների ինքնավարութեան հարցերը։ Սա արդէն խորհրդային ազգային քաղաքականութեան փոփոխութեան հարցն է։ Տեսնենք թէ ի՞նչ փոխւեց կամ կարող է փոխւել այդ քաղաքականութեան մէջ։

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Պարզելու համար թէ ի՞նչ է փոխւել, կամ ի՞նչ կարող է փոխւել Խորհրդային Միութիւնում՝ ազգային քաղաքականութեան բնագաւառում, անհրաժեշտ է պարզել թէ ի՞նչպիսին էր այդ քաղաքականութիւնը նախկինում։

Այն սկզբունքը, որով բոլշեւիկները անցան Ռուսաստանում իշխանութեան գլուխ, Լենինը ձեւակերպեց իր **«Ազգային հարցին վերաբերւող քննադատական նոթագրութիւններ»** աշխատութեան մէջ, որտեղ ասւած էր.- **«Զարգացող դրամատիրական վարչակարգը ազգային հարցում ունի երկու ուղղութիւն։ Առաջինը՝ ազգային շարժումների և ազգային կեանքի արթնացում, պայքար բոլոր տեսակի ազգային ճնշումների դէմ և ազգային պետութիւնների ստեղծում։ Երկրորդը՝ ազգային շփումների զարգացում, ազգային սահմանների կործանում, կապիտալի, տնտեսական կեանքի, քաղաքականութեան, գիտութեան միջազգայնականացում։ Երկու այս ուղղութիւնները դրամատիրութեան միջազգային օրէնքն են։ Առաջինը բնորոշ է զարգացման սկզբնական շրջանի, իսկ երկրորդը հասուն շրջանի համար, երբ դրամատիրական հասարակակարգը շարժւում է դէպի սոցիալիզմ։ Երկու այս ուղղութիւնները հաշւի է առնում մարքսիստների ազգային ծրագիրը՝ նախ ազգերի ու լեզուների հաւասարութիւն, ապա միջազգայնականութեան սկզբունքը և պայքար՝ բանւոր դասակարգը քաղքենի ազգայնականութեամբ վարակելու դէմ»։**

Լենինի այս գաղափարի դէմ դժւար է վիճել, ամէն ինչ ճիշտ է, տրամաբանական ու ընկերվարական սկզբունքներին համապատասխանող։ Սակայն իրական կացութիւնը Ռուսաստանում բոլորովին ուրիշ էր և կոմունիստները իրենց ցրդ համազումարում ստիպւած եղան հրաժարւելու լենինեան թեզերից և ընդունելու նոր սկզբունք, որը հռչակում էր.-

«Մենք կանգնած ենք խիստ դասակարգային սկզբունքների տեսակէտի վրայ։ Այժմ, այն, ինչ մենք գրում ենք ծրագրում, ճանաչումն է այն կացութեան,

որը ստեղծուեց ազգերի ինքնորոշման մասին մեր գրութիւններից յետոյ: Այն ժամանակ բանտրական հանրապետութիւնները բացակայում էին: Երբ նրանք ստեղծուեցին և հէնց այն չափով, որով նրանք ստեղծուեցին, մենք գրեցինք դաշնակցային սկզբունքներով պետութիւն ստեղծելու մասին: Այսքանը մենք կարող ենք անել և ոչ մէկ քայլ աւելին: Գնալ աւելի առաջ՝ սխալ կը լինի, ուստի ծրագրի համար անընդունելի է»:

Բայց այս ծրագիրն էլ ազգերի համար երջանկութիւն պիտի նկատուէր, եթէ իրականանար: Եկաւ Ստալինը ու հռչակեց երրորդ թեզը, ազգի միակ ներկայացուցիչը բանտր դասակարգն է, իսկ բանտր դասակարգի միակ ներկայացուցիչը՝ կոմունիստական կուսակցութիւնը: Այսպիսով, ազգերի ինքնորոշման իրաւունքը փոխարինուեց ազգային կոմունիստական կուսակցութիւնների ինքնորոշմամբ:

Բայց այս ինքնորոշումն էլ կրում էր ձեւական բնոյթ, քանզի ազգային կոմունիստական կուսակցութիւնները մտնում էին ու մտնում են համամիութենական կոմունիստական կուսակցութեան կազմի մէջ, ուստի ոչ մէկ ինքնուրոյնութիւն չունեն: Այդպէս էր միշտ և այս հարցում ոչ մէկ փոփոխութիւն չի մտցնում Գորբաչեւը:

Այնուամենայնիւ, ազգային քաղաքականութեան մէջ որոշ փոփոխութիւն տեղի ունեցաւ և այդ փոփոխութիւնը կարելի է անուանել՝ «հրապարակայնութեան մասնակի ապակենտրոնացում»:

Այն, ինչ այսօր կոչւում է հրապարակայնութիւն, իրականում խօսքի ազատութիւն է: Իսկ այդ ազատութիւնը ոչնչով չի կարելի սահմանափակել: Ամէն մի ազգ ազատօրէն պէտք է խօսի սեփական խնդիրների մասին: Բայց խօսքի ու գործի այդ ազատութիւնը Գորբաչեւի վարչութիւնը կոպիտ կերպով խախտում է: Օրինակ, հարբեցողութեան դէմ պայքարը հաւասարաչափ տարածուեց բոլոր հանրապետութիւնների վրայ: Մինչդեռ նման խնդիր շատերը չունէին:

Այդ բանը ընդունեց ինքը Գորբաչեւը: Ահաւասիկ նրա խօսքերը գրողների հետ հանդիպման ժամանակ .- **«Ազգային ողբերգութիւն է հարբեցողութիւնը: Պէտք է փրկել ժողովուրդը, մանաւանդ սլաւոններին, որովհետեւ չնայած նրան, որ այդ չարիքը տարածուել է նաեւ մահմեդականների ու կովկասցիների վրայ, այնուամենայնիւ, այնպէս, ինչպէս տառապում են սլաւոնները՝ ռուսները, բելոռուսները և ուկրաինացիները, ոչ մէկը չի տառապում: Թւերը վախեցնող են, պէտք է պայքարել դրա դէմ»:**

Եթէ հարբեցողութիւնը սլաւոնների հիւանդութիւնն է, ապա ինչո՞ւ պիտի տուժեն հակա-ալկոլային արշաւից հայերը կամ վրացիները, որոնց համար ուրախ սեղանները, թամադայի ղեկավարութեամբ ազգային աւանդոյթներ են և հասարակական շփումների միջոցներ: Այնուամենայնիւ, հրապարակայնու-

թիւնը ապակենտրոնացուած է և Հայաստանի մտաւորականութիւնը կարողանում է այսօր խօսել Սեւանի, հայոց լեզւի, հայ մշակոյթի, Հայաստանի բնութեան պաշտպանութեան և այլ խնդիրների մասին։

Այժմ Հայաստանի ղեկավարութիւնից ու մտաւորականութիւնից է կախեալ, թէ որքանով նրանք կը կարողանան օգտւել գորբաչեւեան հրապարակայնութիւնից, որը կարող է երկար չտեւել, ինչպէս չտեւեց Խրուշչովեան հրապարակայնութիւնը։ Այս հարցում Հայաստանի մտաւորականութեանը կարող է մեծ օգնութիւն ցուցաբերել Սփիւռքը։ Ինչ վերաբերւում է խորհրդային հանրապետութիւնների ինքնավարութեանը կամ էլ ինքնիշխանութեանը, ապա այդ մասին շատ շուտ է խօսել։

Իսկական ընկերվարական ազատութիւնները, ինքնըստինքեան, կը ծնեն նաեւ ազգային ազատութիւններ։

1987

ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆՈՒՄ

Է. Յովհաննիսեան

Միխայիլ Գորբաչեւի հրապարակայնութեան քաղաքականութիւնը կամաց-կամաց սկսում է ընդգրկել այնպիսի բնագաւառներ, որոնք նախկինում անձեռնմխելի էին թւում:

Վերջերս, օրինակ, Խորհրդային Միութեան պատմական արխիւների դիրեկտոր Աֆանասեւը, որը համարւում է Գորբաչեւի կարեւոր խորհրդատուներից մէկը և պատմական իրադարձութիւնների վերագնահատման նախաձեռնողը, Դանիայի **«Ինֆորմաշոն»** թերթի հետ ունեցած հարցազրոյցում ասաց, թէ մօտ ժամանակներումս վարկաբեկման են ենթարկւելու Տրոցկին, Բուխարինը, Զինովիեւը և ուրիշներ, որոնք մինչեւ այսօր ժողովրդի թշնամիներ էին համարւում: Նա բարձր գնահատական տւեց Բուխարինին ու նշեց, որ Բուխարինը լրացնում էր Լենինին:

Աֆանասեւը արեց մի անսովոր, եթէ չասենք շշմեցուցիչ յայտարարութիւն: Նա ասաց, որ Լենինը դաստիարակւել էր Հեգելի փիլիսոփայութեան վրայ և բաւականին թոյլ էր հասարակագիտական հարցերում: Այդ հարցում Լենինին լրացնում էր Բուխարինը, որը շատ աւելի հմուտ հասարակագէտ էր: Առաջին անգամն է, որ մեզ ասում են, թէ Լենինն էլ պակասութիւններ ունէր:

Հրապարակայնութիւնը այժմ թափանցել է տնտեսութեան, մշակոյթի, պատմութեան և հասարակական կեանքի տարբեր բնագաւառները, սակայն կար մէկ բնագաւառ, որի նկատմամբ հրապարակայնութիւնը բաւականին զգոյշ էր: Այդ բնագաւառը ազգային քաղաքականութեան բնագաւառն էր: Բայց ապա հրապարակայնութիւնը սկսեց մտնել նաեւ այդ բնագաւառը:

Ղրիմի թաթարների խնդրի քննարկումից, Ղասախստանի դէպքերից, Բելոռուսիայի մտաւորականութեան բողոքներից յետոյ խորհրդային տեղեկատւական միջոցները իրենց ուշադրութիւնը կենտրոնացրեցին ազգային խնդիրների վրայ: Օգոստոսի 12ին Խորհրդային Միութեան կենտրոնական հեռուստատեսութիւնը հաղորդեց Ազգային Հարցին նւիրւած մի ծրագիր, որին մասնակցեցին խորհրդային գրողներ, գիտնականներ, լրագրողներ և հասարակական գործիչներ: Նրանց թւում կային ռուսներ, աղրբէջանցիներ, ուկրայինացիներ, վրացիներ, ղազախներ և ուրիշ ազգերի ներկայացուցիչներ, բայց հայեր չկային:

Իսկ Օգոստոսի 14ին **«Պրաւդտա»** հրատարակեց փիլիսոփայական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Բաղրամովի **«Ազգային հարցը և հասարակագիտութիւնը»** վերնագիրը կրող յօդուածը, որտեղ հեղինակը արտայայտում է մի քիչ անսովոր մտքեր: Այս երկու, ինչպէս նաեւ այլ նիւթերի վերլուծութիւնը ցոյց է տալիս երկու բան: Նախ՝ խորհրդային իշխանութիւնը ընդունում է, որ Ազգային Հարցի լուծումը Խորհրդային Միութիւնում անբաւարար է. ապա՝ պարզւում է, որ այդ կարեւորագոյն հարցի քննարկմանը պատրաստ չեն ոչ փիլիսոփաները, ոչ քաղաքական գործիչները և ոչ էլ ժողովուրդը:

Բաղրամովը նախ նշում է, որ Ազգային Խնդրին վերաբերւող տեսութիւնը ամբողջովին կտրուած է իրական կեանքից և վարդագոյն ակնոցով է նայում ազգային փոխյարաբերութիւններին: Միջազգայնականութիւնը,- ասում է նա,- յաճախ ներկայացւում է որպէս ամէն ինչի միացում, որի հետեւանքով ազգութիւնների հաւասարութիւնը դառնում է անշարժ մի բան, որը հաշւի չի առնում ազգերի ու հանրապետութիւնների անխուսափելի տարբերութիւնը: Այնպիսի տպաւորութիւն է ստեղծւում, որ կարծես թէ ազգերը ինքնըստինքեան շարժըւում են դէպի մեծ եղբայրութիւն, ընդհուպ մինչեւ ազգերի վերացում: Բաղրամովը նշում է նաեւ այն, որ ազգային լեզուների նկատմամբ գոյութիւն ունի անթոյլատրելի անուշադրութիւն: Եւ, վերջապէս, հեղինակը պնդում է որ սոցիալիզմը վերացնում է ազգութիւնների փոխադարձ ատելութիւնը, բայց ազգային խնդիրները շարունակում են մնալ, առաւել եւս բազմազգ պետութիւնում:

Բաղրամովի յօդուածից դժւար է կռահել, թէ ի՞նչ ուղղութեամբ կը զարգանայ նոր ազգային քաղաքականութիւնը Խորհրդային Միութիւնում, բայց մէկ բանը պարզ է՝ այս բնագաւառում էլ պատրաստւում են վերափոփոխութիւններ:

Ինչ վերաբերւում է Ազգային Հարցի համաժողովրդական քննարկմանը, որը տեղի ունեցաւ կենտրոնական հեռուստատեսութեամբ, ապա այստեղ ոչ մէկ նոր բան չասւեց, բայց ոչ որովհետեւ ասելիք չկար, այլ որովհետեւ ելոյթ ունեցողները գտնւում էին նախկին գաղափարների ու հասկացութիւնների ազդեցութեան տակ: Ադրբէջանի ներկայացուցիչը, օրինակ, խօսելով միջազգայնականութեան մասին նշում է, թէ **«մենք արդէն պատմանեկութիւնից չգիտէինք, թէ ինչ է ռուսը, ղազախը կամ ուկրայինացին, մենք բոլորս մէկ էինք»**: Բայց այս մօտեցումը միջազգայնականութիւն չի կարելի համարել: Միջազգայնականութիւնը ոչ միայն չի բացառում ազգերի գոյութիւնը, այլեւ պայմանաւորւած է նրանց գոյութեամբ: Մենք գիտենք, թէ ո՞վ է ռուսը, հայը կամ վրացին, բայց դրանով հանդերձ, համագործակցում ենք մի ինչ որ ընդհանուր նպատակի համար: Սա է իսկական միջազգայնականութիւնը: Մէկ ուրիշ մտաւորական միջազգայնականութիւնը տեսնում է նրանում, որ Խորհրդային Միութեան ժողովուրդները ձեռք-ձեռքի տւած կատարեցին իրենց միջազգա-

յին պարտքը, երբ ազատագրեցին նացիականներից Արեւելեան Եւրոպան։ Բայց սա յաղթողի միջազգայնականութիւն է։ Եթէ Երկրորդ Աշխարհամարտը շահէր Հիտլերը, այսօր գերմանացիները կ՚ասէին, որ բաւարիացիները, պրուսիացիները և աւստրիացիները ձեռք-ձեռքի տւած կատարեցին իրենց միջազգայնական պարտքը, երբ ազատեցին Խորհրդային Միութեան ժողովուրդները կոմունիզմից։ Իրականում ո՛չ մէկը և ոչ էլ միւսը միջազգայնականութիւններ չեն։ Այլ եթէ ռուսները, գերմանացիները, բաւարիացիները ու հայերը դուրս գային իրենց խրամատներից ու զրկախառնւելով բացագանչէին՝ կորչեն Ստալինը ու Հիտլերը, դա կը լինէր իսկական միջազգայնականութիւն։ Բայց այդպէս չեղաւ ու չի եղել երբեք, որովհետեւ ազգային զգացմունքները աւելի ուժեղ են, քան միջազգայնականութեան տրամաբանութիւնը։

Այնուամենայնիւ, Ազգային Հարցի քննարկման ժամանակ արտայայտւեցին ուշադրութեան արժանի մտքեր։ Սերգէյ Օբրազցովը, օրինակ, ասաց որ **«ազգային փոխյարաբերութիւնները երկրում սրւեցին մեր մեղքով։ Գաղափարները մենք դարձրեցինք լոզունգներ, իսկ լոզունգները՝ կնիք։ Նրանք, այսինքն գաղափարները, ոչ մէկ նշանակութիւն չունեն։ Եթէ ամէն մի շէնքի վրայ գրւած է, թէ ժողովուրդը ու կրւսակցութիւնը միասնական են, ապա այդ լոզունգը այլեւս ոչ մէկ նշանակութիւն չունի»**։

Գէորգի Բակլանովը ասաց, որ խորհրդային մամուլը չի հրատարակում վիճակագրական տեղեկութիւններ ժողովուրդների ու հանրապետութիւնների մասին և մենք չգիտենք, թէ ո՛ր ժողովուրդն է ապրում ուրիշի հաշւին, իսկ որը՝ ուրիշին կերակրում։ Սոցիալիստական սկզբունքի համաձայն ամէն մի հանրապետութիւն պէտք է ստանայ իր տւածի համեմատութեամբ։

Վերադառնալով Բաղրամովի յօդւածին, նշենք որ նա անջատում է ժողովուրդ և ազգ հասկացողութիւնները, որպէս մէկը միւսին յաջորդող գոյավիճակներ։ Այսինքն՝ ժողովուրդը կարծես թէ գտնւում է զարգացման աւելի ցածր մակարդակի վրայ։ Դասակարգային սկզբունքից բխող այս մօտեցումը, անշուշտ, ճիշտ է, սակայն ունի այն թերութիւնը, որ հաշւի չի առնում արտաքին գործօնները։ Ցեղից դէպի ազգ տանող ճանապարհի վրայ՝ արտադրական փոխյարաբերութիւնները և մշակութային զարգացումը, անշո՛ւշտ, որոշակի կամ գուցէ վճռական դեր են կատարում ժողովուրդը ազգ դարձնելու հարցում, սակայն նրանք բաւարար չեն։ Ինքնավարութիւնը, ուրիշների կողմից ճանաչւած լինելը, մեծ շարժումներին մասնակցելը երբեմն այս հարցում շատ աւելի կարեւոր են, քան ազգի ներքին զարգացումը և սեփական ինքնագիտակցութիւնը։ Թուրքիայում, օրինակ, ոչ կիրգիզները, ոչ ուզբեկները, ոչ լազերը, ոչ քրդերը և ոչ էլ վրացիները որպէս ազգ ճանաչւած չեն։ Սակայն այդ ժողովուրդներից մեծ մասը Թուրքիայից դուրս ճանաչւած է որպէս ազգ և ունի ազգ

լինելու բոլոր չափանիշները։ Այդ ժողովուրդները Ռուսաստանի յեղափոխությունից առաջ և յեղափոխությունից յետոյ գտնւում էին այն նոյն վիճակում, ինչպէս այսօր Թուրքիայում։ Սակայն Լենինը, վախենալով թուրքեստանցիներ կոչւող ժողովրդից, արհեստականօրէն բաժանեց նրանց մասերի և ամէն մի մասը ազգ ճանաչեց։ Այսպիսով, ներքնապէս ոչ մէկ փոփոխութիւն չկրած այս ժողովուրդները, կամ նոյնիսկ ցեղերը Լենինի կամքով ազգ դարձան։ Կան նաեւ հակառակ օրինակներ, երբ ներքնապէս վաղուց ազգ դարձած ժողովուրդներ, որեւէ մէկի կամքով կամ պատմական ճակատագրի բերումով, վերանում են աշխարհի երեսից։ Այդպէս Ստալինի կամքով վերացան կարաչայները։

Ուրեմն՝ ազգ դառնալը և ազգային կեանքով ապրելը կախւած է ոչ միայն ազգի հասունութիւնից ու ապրելու կամքից, այլեւ այդ կեանքով ապրելու պայմաններից։ Ճշմարտութիւն կայ, անշուշտ, այն պնդումի մէջ, թէ ազգը ինքը իր ուժերի վրայ պէտք է յոյս դնի և իր ուժերով ձեռք բերի անկախութիւն կամ ինքնավարութիւն։ Սակայն միշտ չէ, որ լոզունգային պնդումը համընկնում է քաղաքական իրականութեան հետ։ Եթէ Խորհրդային Միութեան նոր ղեկավարութիւնը իսկապէս որ ուզում է վերափոխութիւններ կատարել իր լճացած ազգային քաղաքականութեան բնագաւառում, նա պէտք է ճամբաներ որոնի՝ ազգային կեանքով ապրելու հնարաւորութիւնները աւելացնելու համար՝ տնտեսական, մշակութային և քաղաքական ոլորտներում։ Իսկ ազգի ղեկավարները, մտաւորականութիւնը և ժողովուրդը իրենց հասունութիւնը պէտք է դրսեւորին, այդ հնարաւորութիւնները լաւագոյն ձեւով օգտագործելու մէջ։

1987

Ի՞ՆՉ Է ԿԱՏԱՐՒՈՒՄ Խ. ՄԻՈՒԹԻՒՆՈՒՄ

Է. Յովհաննիսեան

Այս հարցը տալիս են ամենաբարձր մակարդակի վրայ կանգնած դիւանագէտները, լրագրողները, հասարակական գործիչները և պարզ ժողովուրդը: Այս հարցը տալիս ենք նաեւ մենք, որովհետեւ Խորհրդային Միութիւնում իսկապէս որ արտակարգ իրադարձութիւններ են տեղի ունենում:

Այստեղի վատատեսները այդ երեւոյթները չեն ուզում տեսնել, համարելով որ խորհրդային իշխանութիւնը ըստ էութեան չարիք է և ոչ մէկ լաւ բան այդ իշխանութիւնից սպասել չի կարելի: Այնտեղի վատատեսները Գորբաչեւեան վերափոխութիւնները ժամանակաւոր երեւոյթ են համարում ու գերադասում են լռել ու դիմանալ մինչեւ Գորբաչեւի անկումը, որը անխուսափելի են համարում: Այստեղի լաւատեսները Գորբաչեւի հետ մեծ յոյսեր են կապում և կատարում են դեռեւս չարդարացած զիջումներ խորհրդային վարչակարգին: Իսկ այնտեղի լաւատեսները այնքան են ոգեւորւել, որ անցնում են որոշ սահմաններ, խանգարելով Գորբաչեւի թեւին իրենց նպատակների իրականացման մէջ: Խորհրդային Միութիւնում տեղի ունեցող իրադարձութիւնների նկատմամբ յստակ կողմնորոշում ունենալու համար անհրաժեշտ է պարզել, թէ ի՞նչ է վերջին հաշւով ուզում Գորբաչեւը, որքանով նրա և նրա կողմնակիցների ուզածը իրականանալի է և որքանով նրանց ուզածը կարող է առաջադիմութիւն նկատւել գոյութիւն ունեցող լճացած կացութեան նկատմամբ:

Եթէ փորձենք համառօտ պատասխան տալ այն հարցին, թէ ի՞նչ է ուզում Գորբաչեւը, ապա այդ պատասխանը կը լինի հետեւեալը. նա ուզում է համերաշխութիւն ստեղծել ընկերվարութեան և ժողովրդավարութեան միջեւ, այսինքն՝ ժողովրդավարական ընկերվարութիւն կամ ընկերվարական ժողովրդավարութիւն, մէկ բան՝ որը ոչ մէկ տեղ (եթէ չհաշուենք Հայաստանի Հանրապետութեան կարճատեւ փորձի օրինակով բացառութիւնները) դեռեւս չի իրականացել:

Ինչո՞ւ է պէտք Գորբաչեւին ընկերվարական ժողովրդավարութիւնը: Որովհետեւ մարդկութեան պատմական փորձը ցոյց տւեց, որ ընկերվարութիւնը լուծում է ապրանքների արդար բաշխելու, բայց ոչ լաւագոյն ձեւով արտադրելու հարցը: Իսկ ժողովրդավարութիւնը լուծում է արտադրելու, բայց ոչ արդար բաշխելու հարցը: Արեւմտեան Եւրոպայի երկրները գտել են ժողովրդավարական և ընկերվարական սկզբունքների միջին եզրը ու այդ հիման վրայ ստեղծել են տանելի վարչակարգեր: Միացեալ Նահանգներում այդ հաւասարակշռու-

թիւնը խախտւած է ի վնաս ընկերվարական սկզբունքների, ուստի լաւագոյն արտադրանքի հետ միասին կան լուրջ տկարութիւններ բաշխման ասպարէզում։

Խորհրդային Միութիւնում, որտեղ ժողովրդավարական սկզբունքները ի սպառ վերացւած են, խախտւեց նաեւ ապրանքների արդար բաշխման ընկերվարական սկզբունքը, որովհետեւ արդար բաշխելու համար ապրանք է պէտք։ Խորհրդային Միութիւնում ստեղծւեց նոր տեսակի շահագործում և շահագործող դասակարգ, որը շահագործում էր ոչ թէ յաւելեալ արժէքները կորզելու հիման վրայ, այլ աշխատաւորի ամբողջ աշխատանքը, եթէ չասենք կեանքը իր հսկողութեան տակ առնելով ու նրան կեղեքելով։ Նոր սերունդի համար հասկանալի դարձաւ, որ վարչակարգի նման լճացումը կարող է ամբողջովին կործանել երկիրը, քանզի խորհրդային տնտեսութեան ճգնաժամը, ի տարբերութիւն դրամատիրական վարչակարգի, գալիս էր ոչ թէ գերարտադրանքից, այլ թերարտադրանքից։

Այս մտահոգութիւններով էլ Գորբաչեւը և իր կողմնակիցները որոշեցին փրկել երկիրը, ժողովրդավարութիւնը ընկերվարութեան հետ համադրելու ճամբով։ Սակայն Խորհրդային Միութեան նոր ղեկավարները շատ լաւ հասկանում են, որ արեւմտեան ժողովրդավարութիւնը իր բազմակուսակցական և բազմակարծիք սկզբունքներով, գործատէրերի շահերը պաշտպանելով ու բարոյականութեանը հակասող տարբեր ազատութիւններով չի կարող ներդաշնակւել ընկերվարական սկզբունքների հետ և չի կարող կիրառւել Խորհրդային Միութիւնում։ Սա նշանակում է, որ արեւմտեան ժողովրդավարութիւնը չէ, որ պէտք է մուտք գործի Խորհրդային Միութիւն, այլ նոր՝ ընկերվարական տեսակի ժողովրդավարութիւն, որի փորձը բացակայում է համաշխարհային բանւորական և կոմունիստական շարժումներում և որի մասին շատ բան չեն ասել նաեւ ընկերվարութեան առաջնորդները։

Եթէ այնուամենայնիւ փորձենք որեւէ բան գտնել ընկերվարական ժողովրդավարութեան մասին, ապա մենք կը յանգենք խորհուրդների վերաբերեալ ձեւակերպւած լենինեան դրոյթներին, որոնց մէջ ամենակարեւորը այն է, որ խորհուրդները կուսակցութիւնից բարձր են։ Պատահական չէ, որ Լենինը ինքը կուսակցութեան ղեկավարը չէր։ Այդ երկրորդական պաշտօնը նա թողել էր Ստալինին։ Այժմ, վերադառնալով լենինեան ժողովրդավարութեան սկզբունքներին, Գորբաչեւը փորձում է սահմանափակել կուսակցութեան ղեկավար դերը երկրի տնտեսվարութեան և հասարակական կեանքի մէջ։

Բայց կուսակցութեան ղեկավարութիւնը բոլոր մակարդակների վրայ պարզապէս վայնասուն է բարձրացնում և հակադրւում Գորբաչեւին։ Առանձնապէս մեծ ոգեւորութիւն չի ցուցաբերում գորբաչեւեան վերափոխութիւննե-

րի նկատմամբ նաեւ տնտեսութեան ղեկավարութիւնը, որոնց տրւում է որոշ ազատութիւններ, բայց որոնցից արտադրանք է պահանջւում: Խորհրդային տնտեսութեան ղեկավարները վաղուց ի վեր ընտելացել են ղեկավարման յատուկ ձեւերի հետ, որոնք տնտեսական օրինաչափութիւնների հետ ոչ մէկ կապ չունեն: Գործարանի տնօրէնից մինչեւ նախարար՝ ղեկավար այս տարրը ունէր ամէն ինչ և օգտւում էր բոլոր տեսակի օրինական ու անօրինական արտօնութիւններից, անկախ իր արտադրանքի քանակից ու որակից: Բայց ահա եկել է Գորբաչեւը և յայտարարում է, որ արտադրութեան ղեկավարների, ինչպէս նաեւ բանւորների եկամուտը կախւած կը լինի արտադրութեան եկամուտից: Այս կարգը մտցնելուց յետոյ գործարանների բանւորների մեծ մասի աշխատավարձը ընկաւ, իսկ ղեկավարները կանգնեցին անլուծելի խնդրի առջեւ: Բայց հէնց այդ խնդիրների լուծումից է կախւած ղեկավարի անձնական ճակատագիրը: Իսկ խնդիրները չեն լուծւում: Ինչո՞ւ:

ՏՆՏԵՍԱՎԱՐՈՒԹԻՒՆ

1985 թւականի ապրիլ ամսին Խորհրդային Միութեան Կոմկուսի Կենտկոմի լիագումար նիստում Գորբաչեւը յայտարարեց, որ խորհրդային տնտեսութիւնը ունի ցածր արտադրողականութիւն և գտնւում է լճացած վիճակում: Սակայն նա չասաց, որ խորհրդային տնտեսութիւնը ճգնաժամի մէջ է: Առաջին անգամը լինելով խորհրդային տնտեսութեան ճգնաժամի մասին Գորբաչեւը խօսեց 87 թւականի մայիս ամսին, երբ պատասխանում էր «Լ'Ունիտա» թերթի հարցերին: Իսկ յունիս ամսին նա խօսեց հասարակակարգի ներքին հակասութիւնների մասին, որոնք կուտակւել և ստեղծել են նախաճգնաժամային կացութիւն: Առաջին անգամն էր, որ մենք լսում էինք մի խոստովանութիւն, թէ խորհրդային վարչակարգն էլ ունի հակասութիւններ և որ խորհրդային տնտեսութիւնն էլ կարող է կանգնել ճգնաժամի առջեւ: Մենք գիտէինք, որ դրամատիրական երկրների ճգնաժամերը ստեղծւում են այն պահերին, երբ արտադրւած ապրանքը չի վաճառւում: Խորհրդային Միութեանը նման վտանգ երբեք չի սպառնացել: Ուրեմն ո՞րն է խորհրդային տնտեսութեան ճգնաժամի աղբիւրը:

Այստեղ մենք բախւում ենք այնպիսի երեւոյթների հետ, որոնց մասին մարդկութիւնը ոչինչ չգիտէր: Նախ և առաջ Խորհրդային Միութեան բնական հարստութիւնների սնանկացումը հասել է այնպիսի մակարդակի, որոնց մասին, հաւանաբար, կը պատմեն հեռաւոր ապագային վերաբերւող առասպելները: Երկրորդը, որը երեւի ամենակարեւորն է, աշխատուժի սնանկացումն է: Եւ խօսքը ոչ թէ մարդկանց քանակի պակասեցման մասին է, աշխատուժի

որակի մասին, կամ աւելի ճիշտ աշխատունակութեան պակասի մասին: Այս երկու սնանկացումների մասին վկայում են խորհրդային թերթերը: **«Իզվեստիա»** թերթը գրեց Վրաստանի թէյի ոչնչացման մասին, որը տեղի ունեցաւ 15 տարի տեւող թէյի բոյսերի բարբարոսաբար շահագործման բերումով: Կարմիկիայում ամբողջովին ցամաքել են հազարաւոր անասուններ կերակրող դաշտերը: Գիտնականները հաշուել են, որ եթէ տնտեսվարութեան ներկայ ձեւերը շարունակւեն, ապա 2030 թւականին Կալմիկիան, այսինքն 3 միլիոն հեկտար տարածութիւն ամբողջովին անապատի կը վերածւի: Մագադանում մնացել է միայն մէկ գետ, որի ջուրը դեռեւս հնարաւոր է խմել: Մեր Սեւանի և Երեւանի մթնոլորտի պատմութիւնները յայտնի են: Բարբարոսաբար շահագործւում են ոսկու, նաւթի և քարածուխի հանքերը: Օրէցօր պակասում է Հայաստանի մոլիբդենը: Ակադեմիկոս Աղանբեկեանի վկայութեամբ խորհրդային հանքերը հասել են այնպիսի խորութեան, որ այլեւս այնտեղից հանածոներ ստանալը տնտեսապէս ձեռնտու չէ:

Աշխատուժի բնագաւառում կացութիւնը էլ աւելի ճգնաժամային է: Աշխատաւորները աշխատել չեն ցանկանում այն չնչին վճարումների դիմաց, որոնք հաստատւել են որպէս աշխատավարձ: Բայց տեսնենք, թէ ի՞նչ է առաջարկում Գորբաչեւը այս բնագաւառում: Տեսնենք թէ ինչո՞ւ երէկ վատ աշխատող բանւորը պէտք է այսօր լաւ աշխատի: Դրա համար Խորհրդային Միութեան նոր ղեկավարութիւնը առաջարկում է հետեւեալ միջոցները:

1.- Արտադրական ձեռնարկութիւնների ինքնուրոյնութեան աւելացում, ընդհուպ մինչեւ ինքնաֆինանսաւորում և ինքնաբաւութիւն:

2.- Անհատական տնտեսութիւնների և նախաձեռնութիւնների խրախուսում:

3.- Գների քաղաքականութեան վերանայում:

4.- Արտասահմանեան ընկերութիւնների հետ համագործակցութիւն:

Անմիջապէս նշենք, որ արտադրական ձեռնարկութիւններին տրուած ինքնուրոյնութիւնը անհամեմատ շատ աւելի պակաս է, քան Հարաւսլաւիայի ձեռնարկութիւնների ազատութիւններն են: Այնուամենայնիւ, այդ ազատութիւնները Հարաւսլաւիայի տնտեսութեանը շօշափելի արդիւնքներ չտւեցին: Հարաւսլաւիայի արտաքին պարտքը հասել է այնպիսի չափերի, որ երկիրը դժւարանում է վճարել այդ պարտքերի տոկոսները: Իսկ զանգւածային անգործութիւնը միլիոնաւոր հարաւսլաւական աշխատաւորների մղում է դէպի Եւրոպա: Հարաւսլաւիայում դրամի արժէքազրկումը ամենաբարձրն է Եւրոպայի մէջ: Այս ամէնը տեղի ունեցաւ այն պարզ պատճառով, որ կենտրոնացւած պլանաւորումը և այդ պլանաւորման վրայ հաստատւած վերահսկողութիւնը պահպանւեց: Պլանաւորումը իբր թէ պէտք է դիմադրէր ազատ շուկայի

ոտնձգութիւններին, որովհետեւ միայն պետութիւնը գիտի, թէ ի՞նչ կարիքներ ունի հասարակութիւնը և ի՞նչ քանակութեամբ պէտք է արտադրուեն այս կամ այն ապրանքները։

Երբ տնտեսութիւնը պատկանում է պետութեանը, ձեռնարկութիւնը չի պատկանում ո՛չ բանւորին և ոչ էլ գործարանի ղեկավարութեանը։ Ձեռնարկութիւնը փաստօրէն պատկանում է մի վերացական հասկացութեան, որը կոչւում է «ամբողջ ժողովուրդ» և չունի որեւէ իրաւաբանական դէմք։ Այս կարգը չի փոխում Գորբաչեւը, ուստի ձեռնարկութիւններին ազատութիւն տալուց շատ քիչ բան կարող է փոխուել։ Ցիրաւի, արտադրական ձեռնարկութիւնների ղեկավարման մէջ առաջարկւում են միայն ձեւերի, բայց ոչ էութեան փոփոխութիւններ։ Ձեռնարկութեան ազատութիւնը կարող է աւելանալ, կարող է նոյնիսկ անսահման լինել, բայց եթէ «ի՛նչ արտադրելու» և «ի՛նչ գնով վաճառելու» ազատութիւնը ձեռնարկութիւնը չունենայ, ապա արդիւնքը չի կարող էական լինել։ Իսկ եթէ ձեռնարկութիւնը այս երկու ազատութիւնները ունենայ, նրան պէտք է տրուեն նաեւ արտադրական միջոցները, ինչը նախ հակասում է ընկերվարական սկզբունքներին, յետոյ այդ միջոցները վերցնելու ցանկութիւն ունեցողների թիւն էլ շատ չի լինի, որովհետեւ նման տնտեսավարութեան փորձ խորհրդային ձեռնարկութիւններից և ոչ մէկը ունի։ Դրամատիրական ձեռնարկութեան ազատութիւնը և ինքնուրոյնութիւնը կայանում է նրանում, որ ինքն է որոշում թէ ի՛նչ արտադրել, ուստի ինքն էլ գնում է համապատասխան արտադրական միջոցներ։ Ինքն էլ պայմանաւորւում է ապրանքը սպառողի հետ՝ գների մասին։

Այժմ տեսնենք, թէ ինչո՞ւ ընկերվարական երկրում յեղափոխութիւնից 70 տարի անց երկրի ղեկավարութիւնը վերադառնում է մասնաւոր սեփականութեան կամ, ինչպէս ընդունւած է այսօր ասել, անհատական աշխատանքային գործունէութեան։ Նախ նշենք, որ եթէ ընկերվարական երկրում անհատական աշխատանքային գործունէութիւնը նախագործաչեւեան շրջանում լաւ արդիւնքներ էր տալիս, ապա դա նրանից չէր, որ նման գործունէութիւնը ինքնըստինքեան արդիւնաբեր է, այլ նրանից էր, որ անօրինական էր։ Հողի հաստոցի, սարքաւորման, ջրի, հումքի, տեղափոխման միջոցների համար մասնաւոր արտադրողը դրամ չէր վճարում։ Այդ միջոցները նա պարզապէս գողանում էր պետութիւնից, ուստի նա կարողանում էր մրցել պետական գործարարների հետ և գրեթէ ամէնուր շահում էր այդ մրցակցութիւնը։ Շահում էր այնքան ժամանակ, քանի դեռ չէր ընկել ոստիկանութեան ձեռքը ու չէր յայտնւել բանտում։ Բայց Գորբաչեւը օրինականացնում է մասնաւոր աշխատանքը։ Սա նշանակում է, որ մասնաւոր գործ բացողը պէտք է վճարումներ կատարի՝ արտադրական միջոցները պետութիւնից վարձելու համար, պէտք է համապատաս-

խան տուրքեր վճարի և հումքի համար էլ պէտք է վճարի իրական, այլ ոչ թէ արհեստականօրէն իջեցուած պետական գներով։ Բոլոր այս վճարումներից յետոյ դժւար է պատկերացնել, որ մի կօշկակար, օրինակ, կարողանայ մրցել կօշիկի գործարանի հետ։ Եթէ նա իրական գներով վճարի կաշւի, ջրի, էլեկտրականութեան և սարքաւորումների համար, ապա նրա կողմից կարւած կօշիկը 4-5 անգամ աւելի թանկ կը լինի, քան պետական գործարանի կօշիկը։ Արտասահմանի դրամատիրական երկրներում այդպիսի թանկարժէք ապրանքներ գնողներ կան, որովհետեւ այնտեղ կան այն միլիոնատէրերը, որոնք պատրաստ են ձեռքով պատրաստւած ապրանքին մեծ գներ վճարելու։ Բաւական է յիշել, որ ձեռքերով պատրաստւած անգլիական Ռոլս-Ռոյս աւտոմեքենան սովորական աւտոմեքենայից 100 անգամ աւելի թանկ է։ Եթէ Խորհրդային Միութիւնում կան միլիոնատէրեր, ապա նրանք գողեր ու կաշառակերներ են, որոնց դէմ պայքարում է Գորբաչեւը, ուստի նրանց հետ յոյսեր չի կարող կապել անհատ արտադրողը։ Մասնաւոր նախաձեռնութիւնը, անշուշտ որոշ օգուտ կարող է բերել սպասարկման բնագաւառում, այն էլ եթէ այդ սպասարկողներին յաջողւի կազմակերպել սննդամթերքների մատակարարումը։ Եթէ մասնաւոր մի ճաշարան բացւելու է շուկայից գնւած ապրանքների հիման վրայ, ապա այդ ճաշարանն էլ միլիոնատէրերի համար պիտի ծառայի, իսկ միլիոնատէրերի վերացման հետ միասին ճաշարանն էլ կը վերանայ։

Այս ամէնը էլ աւելի հասկանալի կը դառնայ, երբ վերլուծութեան ենթարկենք Գորբաչեւի վարչութեան գների քաղաքականութեան վերաբերեալ արւած յայտարարութիւնները։ Հաւանաբար, սա ամենակարեւոր վերափոխութիւնն է, որի մասին, սակայն, այսօր որեւէ յստակ տեղեկութիւններ չկան, եթէ չհաշւենք ընդհանուր յայտարարութիւնները՝ գների քաղաքականութեան վերանայման անհրաժեշտութեան մասին։

Տեսնենք թէ ի՞նչից է բխում այդ անհրաժեշտութիւնը։ Յեղափոխութիւնից անմիջապէս յետոյ գների քաղաքականութիւնը դարձաւ պետութեան մենաշնորհ և նրա հիմքը դրւեց այն պայմաններում, երբ երկիրը ունէր գրեթէ անսահման բնական հարստութիւններ ու բանւորական ուժ։ 1928 թւականից մինչեւ 40 թւականը գիւղատնտեսական ապրանքների գները աւելացան մօտաւորապէս 6 անգամ, իսկ արդիւնաբերական ապրանքներինը՝ մօտաւորապէս 3 անգամ։ Սակայն աւելացաւ նաեւ աշխատաւորի աշխատավարձը և հաւասարակշռութիւնը մօտաւորապէս պահպանւեց։ Բայց 1947 թւականին տեղի ունեցաւ գների քաղաքականութեան վերանայում։ Ապրանքների գները աւելացան 3 անգամ, իսկ աշխատավարձը աւելացաւ ընդամէնը 45 տոկոսով։ 33 ռուբլուց նա հասաւ մինչեւ 48 ռուբլու։ Կոլտնտեսականների համար աշխա-

տավարձի աւելացումը էլ աւելի ցածր էր: Սրան աւելացան պարտադիր փոխառութիւնները, ինչը նշանակում էր իրական աշխատավարձի իջեցում:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ խորհրդային իշխանութիւնը, հրաժարւելով ազատ շուկայից ու պետականացնելով արտադրական միջոցները, վերացրեց աշխատաւորին դասական ճամբով շահագործելու հնարաւորութիւնը, բայց դրա հետ միասին ձեռք բերեց շահագործելու շատ աւելի հեշտ և ուղղակի միջոց, որն էր գների և աշխատավարձի տարբերութեան փոփոխութիւնը: Թէ՛ գների և թէ աշխատաւորի աշխատավարձի սահմանումը գտնւում էր ու գտնւում է իշխանութեան ձեռքում, ուստի նա կարող է ցանկացած փոխյարաբերութիւնը ստեղծել նրանց միջեւ: Աշխատավարձի ճամբով նա դրամ է իջեցնում ժողովրդին, իսկ գների ճամբով այդ դրամները յետ է խլում նրանից: Յաւելեալ արժէքների բարդ ու կասկածելի ճամբով շահագործումը փոխարինւեց ուղղակիօրէն շահագործելու հնարաւորութեամբ: Այս պայմաններում, կոպիտ ասած, կարելի է բանւորներին վճարել 100 ռուբլի ամսական, բայց հացի գինը 100 ռուբլի սահմանելով, կարելի է նոյն օրը այդ դրամը յետ վերցնել բանւորից և մատնել նրան սովամահ լինելուն: Սակայն խորհրդային գների քաղաքականութիւնը ճամբայ բացեց նաեւ գիւղացուն շահագործելու համար: Պետութիւնը գիւղացուց հացահատիկը գնում էր մէկ կոպէկով, իսկ վաճառում էր 31 կոպէկով: Գարին գնում էր 0,6 կոպէկով, իսկ վաճառում էր 25 կոպէկով: Միսը գնում էր 23 կոպէկով, իսկ վաճառում էր 1,5 ռուբլով: Կաթը գնում էր 2,8 կոպէկով, իսկ վաճառում էր 22 կոպէկով:

Այս քաղաքականութիւնը յանգեցրեց նրան, որ խիստ տարբերւեցին գիւղացու և բանւորի կենսամակարդակները: 50ական թւականների սկզբին գիւղացու միջին եկամուտը կազմում էր 16,4 ռուբլի, իսկ բանւորինը և ծառայողինը՝ 64 ռուբլի: Այն ժամանակ գիւղում ապրում էր երկրի բնակչութեան ուղիղ կէսը: Բայց գիւղացու այս անմարդկային շահագործումը պարզապէս դատարկեց գիւղը և երկիրը կանգնեց գիւղատնտեսական ապրանքների ճգնաժամի առջեւ: Շուտով պատկերը փոխւեց: 1962 թւականին պարզ դարձաւ, որ անհրաժեշտ է թուլացնել գիւղացու շահագործումը:

65 թւականին, առաջին անգամը լինելով, պետութիւնը գիւղատնտեսութեան համար լրացուցիչ գումարներ նախատեսաւ ու սկսեց գնել գիւղատնտեսական ապրանքները աւելի բարձր գներով, քան վաճառում էր: Դրա համար պահանջւեցին ահագին գումարներ, որոնք աւելանում էին տարէցտարի: Այսօր պետութիւնը 57 միլիարդ ռուբլի ստիպւած է վճարելու որպէս լրացուցիչ գումար՝ գիւղատնտեսական ապրանքների համար: Մի խօսքով, խորհրդային գիւղատնտեսութիւնը աշխատում է վնասով:

Ահաւասիկ այս պայմաններում պատրաստւում է գների նոր քաղաքականութեան որոշումը: Ինչպիսի՞ն կարող է լինել այդ նոր որոշումը: Եթէ գիւղացիներից ապրանքները գնւեն տեղի ցածր գներով, ապա կը խնայւի 57 միլիարդ ռուբլին, սակայն կ'ուժեղանայ գիւղացու շահագործումը: Եթէ բարձրանան գիւղատնտեսական ապրանքների վաճառման գները, բայց անփոփոխ մնայ աշխատաւորի աշխատավարձը, ապա կ'աւելանայ բանւորի շահագործումը: Եթէ որոշ ազատութիւն տրւի շուկային, ապա պետութիւնը ստիպւած կը լինի իր ձեռքից թողնել գների ձեւակերպման իրաւունքը, որի հետ միասին նա կը կորցնի շահագործման վրայ վերահսկողութիւն հաստատելու իրաւունքը: Եթէ նոր օրէնքը մի քիչ այստեղից, մի քիչ այնտեղից կիսատ-պռատ բաներ անի, արդիւնքն էլ հէնց կիսատ-պռատ կը լինի: Մնում է սպասել:

Եւ վերջապէս Գորբաչեւը ուզում է որոշ չափով թոյլ տալ արտասահմանեան դրամների մուտքը Խորհրդային Միութիւն: Առաջին անգամը չէ, որ Խորհրդային Միութեան իշխանութիւնը դիմում է այս քայլին: 1921 թւականին Արմանդ Համերը Լենինի ձեռքից ստացաւ Խորհրդային Միութիւնում ընկերութիւն բացելու իրաւունքը: Այդ ընկերութիւնը գոյատեւեց մինչեւ 1930 թւականը,որից յետոյ Համերին ստիպեցին վաճառել իր բաժինը և ձեռք քաշել այդ ընկերութիւնից: Համերի փորձը ստիպում է այսօրւայ գործատէրերին զգուշութիւն ցուցաբերել համատեղ ընկերութիւններ ստեղծելու առաջարկին: Խորհրդային Միութիւնը արդէն արել է աւելի քան 200 նման առաջարկութիւններ, որոնցից առնուազն 120ը գնահատւել են որպէս հետաքրքրական: 40 առաջարկութիւնների համար կնքւել է համապատասխան ուսումնասիրութիւն կատարելու պայմանագիր:

Համատեղ ընկերութիւններ ստեղծելու համար Խորհրդային Միութիւնը պայման է դնում, որպէսզի բաժնետէրերի 51 տոկոսը պատկանի իրեն և որ աշխատակիցների ու ղեկավարների մեծ մասը լինեն Խորհրդային Միութեան քաղաքացիներ: Բայց արտադրւած ապրանքների որակի պատասխանատուութիւնը դրւում է արտասահմանեան կողմի վրայ: Բոլորովին պարզ չէ, թէ ինչպէս նման պայմաններում կարելի է հսկողութիւն հաստատել ապրանքների որակի վրայ: Կարելի՞ է, օրինակ, աշխատանքից ազատել խորհրդային դիրեկտորին կամ բանւորին, եթէ նրանք վատ աշխատեն: Կամ կարելի է բարձր աշխատավարձ հաստատել նրանց համար, ովքեր լաւ են աշխատում: Ի՞նչ գներով այդ ձեռնարկութիւնները պէտք է գնեն հումքը և վաճառեն իրենց ապրանքները: Ինչպիսի՞ տուրքեր պիտի նրանք վճարեն: Այս և նման հարցերի պատասխանները դեռեւս չկան, սակայն կարելի է ենթադրել, որ համատեղ ձեռնարկութիւնները թոյլ կը տան:

1.- Աւելացնել աշխատանքի արտադրողականութիւնը:

2.- Տնտեսական ղեկավարումը դուրս կը գայ իր լճացած վիճակից։

3.- Կը բարձրանայ ձեռնարկութիւնների տեխնիկական մակարդակը։

4.- Կ՚աւելանայ լայն սպառման ապրանքների քանակը։

5.- Կ՚աւելանայ շփումները արտասահմանի հետ։

Սակայն բոլոր այս հարցերը կը լուծուին միայն այն դէպքում, երբ պարզուի որ ժողովրդավարութիւնը և ընկերվարութիւնը համատեղելի են։ Այն՝ որ արեւմտեան տեսակի ժողովրդավարութիւնը անհամատեղելի է ընկերվարութեան հետ, վիճելու հարց չէ։ Արեւմտեան ժողովրդավարութիւնը անհատի ազատութեան ճամբարների որոնումն է, որտեղ ազատ նախաձեռնութիւնը անհատի անբաժանելի իրաւունքն է և ազատ շուկան այդ ազատութեան վայրը։ Յայտնի քաղաքագէտ Լինդբլոմը յայտարարեց, որ առեւտուրը ազատութեան ծնունդն է։ Ազատութեան գաղափարը ծնուել է որպէս կառավարութեան միջամտութիւններից ազատուելու գաղափար։ Մասնաւոր սեփականութիւնը, ազատ շուկան, եկամուտ ստանալու ձգտումը, այս ամէնը բնական են արեւմտեան ազատութիւնների սահմաններում։ Առանց մասնաւոր սեփականութեան իրաւունքի, ազատ շուկան ոչ մէկ իմաստ չունի։ 300 տարի առաջ Ջոն Լոկը ժողովրդավարական պետութեան տակ հասկանում էր այն պետութիւնը, որը պաշտպանում է իր քաղաքացիների սեփականութիւնը, այդ թւում նաեւ ինքը իրեն սեփականութիւն համարելու իրաւունքը։ Այսինքն՝ ազատութիւնը նոյնպէս պատկանում է սեփականութեան ոլորտին։ Այս տեսակէտի հետ համաձայնւում էր Մարքսը, նշելով որ առանց նւազագոյն ազատութիւնների բանւորները չեն կարող բանւորներ լինել, քանզի ի վիճակի չեն լինի վաճառելու իրենց աշխատանքային ուժը։ Այդ ազատութիւնները ընկերվարական հասարակարգի համար անընդունելի են ոչ միայն գաղափարախօսական իմաստով, այլեւ նման ազատութիւնները իրականացնելու իմաստով։ Եթէ խորհրդային ղեկավարները ուզում են իրենց երկրում իրականացնել արեւմտեան ազատութիւնները, նրանք պէտք է հրաժարւեն ընկերվարական գաղափարախօսութիւնից, մէկ բան՝ որը չի ուզում ո՛չ Գորբաչեւը և ոչ էլ ռուս ժողովուրդը։ Սա նշանակում է որ Գորբաչեւը կանգնած է դժւարին խնդրի լուծման առջեւ։ Նա պէտք է ապացուցի, որ գոյութիւն ունի ընկերվարական ժողովրդավարութիւն և պէտք է մշակի այդ ժողովրդավարութեան սկզբունքները։ Սա արդէն ոչ միայն Խորհրդային Միութեան, այլ միջազգային բանւորական շարժման կարեւորագոյն խնդիրներից մէկն է։

ԸՆՏՀԱՆՈՒՐ ԱՋԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Ըստ Գորբաչեւի և նրա կողմնակիցների յայտարարութիւնների, իրենց գլխաւոր նպատակը խորհրդային ղեկավարները տեսնում են երկրի ընդհա-

նուր ժողովրդավարացման մէջ: Ըստ Գորբաչեւի, Խրուշչեւը այս հարցում հետեւողական չէր և դա եղաւ նրա անկման պատճառը: Խրուշչեւը չհամարձակուեց ժողովրդավարացնել հասարակական կեանքի բոլոր բնագաւառները, առանց որի զուտ տնտեսական ասպարէզի ժողովրդավարացումը ոչ մէկ նշանակութիւն ունի: Գորբաչեւը, իսկապէս որ, անհաւատալի ազատութիւններ տուեց մամուլին, ժողովրդին և կառավարական մարմիններին: Այդ ազատութիւնների շնորհիւ սկսւեց բոլոր արժէքների վերագնահատման բուռն ընթացքը: Կուսակցութիւններ, դէմքեր, քաղաքական ուղղութիւններ, ազգեր և գաղափարախօսական սկզբունքներ ընկան այդ վերագնահատումների լոյսի տակ և այսօր Մոսկւայի կենտրոնական մամուլը ասում է աւելի շատ, քան Արեւմուտքի որեւէ ընդդիմադիր կազմակերպութիւն: Սակայն հրապարակայնութիւնը և ընդհանուր ազատութիւնները, բնականաբար չէին կարող մնալ ղեկավարների ուզած կամ այսպէս ասած ղեկավարւելի դաշտում և նրանք դուրս եկան նախատեսւած սահմաններից: Այդ սահմանները սկզբից լայնացրին հրապարակայնութեան հակառակորդները, յայտարարելով որ եթէ հրապարակայնութիւնը իրական է, ապա բարի եղէք լսելու նաեւ մեր կարծիքը: Եւ, օգտւելով հրապարակայնութիւնից, նրանք հանդէս եկան հրապարակայնութեան դէմ: Հրապարակայնութեան սահմանների ծաւալման երկրորդ ալիքը եկաւ ներքեւից, յատկապէս ազգայնականներից: Ընդորում այդ ալիքը այնքան ուժեղ էր, որ կառավարութիւնը ստիպւած եղաւ կենտրոնացնելու իր ուշադրութիւնը ազգային հարցերի վրայ:

Խորհրդային մամուլում այս հարցի վերաբերեալ հրատարակւած յօդւածների վերլուծութիւնը ցոյց տուեց, որ ազգային հարցի վերաբերեալ խորհրդային իշխանութիւնների ուշադրութիւնը ամբողջովին թելադրւեց ներքեւից: Ղրիմի թաթարների բողոքները, Ղազախստանի ցոյցերը, Հայաստանի մտաւորականութեան բողոքները և ցոյցերը, ուկրաինացիների ու բելոռուսների պայքարը ազգային լեզւի վերականգման համար մերձբալթեան հանրապետութիւններում տեղի ունեցած բողոքի ցոյցերը խօսում են այն մասին, որ ազգային փոքրամասնութիւնները չեն մոռացել իրենց ազգային խնդիրները և պատրաստ են օգտւելու հրապարակայնութեան պայմաններից՝ իրենց խնդիրները լուծելու համար: Միւս կողմից գլուխ բարձրացրեց ռուսական ազգայնականութիւնը, որը ստեղծեց «Պամեատ» (Յիշողութիւն) կազմակերպութիւնը, որը ոչ միայն զբաղւեց ռուսական խնդիրներով, այլեւ ազդեցութիւն ունեցաւ այդ խնդիրների լուծման վրայ: Նրանց ազդեցութեան տակ էր, որ կանգնեցւեց Ռուսաստանի մեծ գետերի հուների փոփոխման ծրագիրը և ռուսական պատմական արժէքների վերականգնումը: Հաւանաբար նրանց ազդեցութեան տակ վարկափրկւեց ազգութեամբ ռուս Բուխարինը, իսկ հրեայ Տրոցկին էլ աւելի

դատապարտուեց: Նրանք են, որ խորհրդային մամուլում հրատարակում են բացայայտ հակահրէական յօդուածներ, մեղադրելով հրեաներին Ռուսաստանը և ռուսական մշակոյթը միտումնաւոր կերպով քայքայելու մէջ: Ներքեւից եկող այս ճնշումներին միացաւ նաեւ Գորբաչեւի ցանկութիւնը՝ իր կողմը քաշելով տարբեր հանրապետութիւնների մտաւորականութիւնը: Հանրապետութիւններում, յատկապէս Հայաստանում, Գորբաչեւի քաղաքականութիւնը բախուեց յամառ դիմադրութեան: Կացութիւնը փրկելու համար նա յենուեց մտաւորականութեան վրայ, որը սակայն, որպէս օրէնք, դուրս չեկաւ իր կրաւորական դիրքից:

Վերջերս Մոսկուայի **«Ժուրնալիստ»** հանդէսում հրատարակուեց Լեւոն Մանասեանի **«Քանի դեռ լուռ է հայկական ռադիոն»** վերնագիրը կրող յօդուածը, որտեղ սուր քննադատութեան ենթարկուեց Հայաստանի մամուլը և ղեկավարութիւնը՝ գորբաչեւեան վերափոխութիւնների հանդէպ կրաւորական դիրք բռնելու համար: Այդ յօդուածում կայ մի հետաքրքրական դիտողութիւն: Հայաստանի Կոմկուսի կենտկոմի լիագումար նիստի վերաբերեալ Հայաստանի թերթերը հրատարակել էին ծաւալուն յօդուածներ, որտեղ ժողովրդավարացում և հրապարակայնութիւն բառերը օգտագործուել էին ընդամէնը 12 անգամ, ընդորում 6 անգամ բացասական իմաստով, մօտաւորապէս այսպէս.- **«Չի կարելի չարաշահել հրապարակայնութեամբ», «չի կարելի օգտուել հրապարակայնութիւնից ղեկավարներին վարկաբեկելու համար», «ժողովրդավարութիւնը ամէն ինչի ազատութիւն չէ», «ժողովրդավարութեամբ քողարկուելով մարդիկ անթոյլատրելի մտքեր են արտայայտում»** և այլն: Յօդուածի հեղինակը նշում է նաեւ այն, որ Հայաստանի հայկական թերթեր կարդացողները շատ յետ են մնում նրանցից, ովքեր օգտուում են Մոսկուայի ռուսական թերթերից: Հայաստանի թերթերը մեղադրուեցին նաեւ նրանում, որ չեն արտատպում կենտրոնական թերթերից Հայաստանին վերաբերուող յօդուածները: Սակայն քննադատութիւնը չօգնեց, Լեւոն Մանասեանի յօդուածն էլ Հայաստանի թերթերը չարտատպեցին: Ուրիշ հանրապետութիւններում էլ կացութիւնը շատ չի տարբերուում Հայաստանից, բայց դա մեզ համար մխիթարանք չի կարող ծառայել:

Ազգային հարցի վրայ խորհրդային իշխանութիւնների ուշադրութիւնը կենտրոնացնելու համար կայ նաեւ մէկ ուրիշ պատճառ, որը կրում է տնտեսական բնոյթ: Խորհրդային իշխանութիւնը հասկացել է, որ միայն տնտեսավարութեան ապակենտրոն պայմաններում երկրի տնտեսութիւնը կարող է դուրս գալ այն լճացած վիճակից, որում գտնուում է: Իսկ ապակենտրոնացումը տարբեր հանրապետութիւններին կը տայ ազգային տնտեսութեան նման մի բան ստեղծելու հնարաւորութիւն: Հանրապետութիւնների մէջ կը ստեղծուի կենսամակարդակների անհաւասարութիւն, որը բնական է և որը կապ ունի

տւեալ ժողովրդի աշխատասիրութեան, բնական հարստութիւնների, աշխատուժի առկայութեան, արտադրական միջոցների զարգացման և այլ գործօնների հետ: Այս պայմաններում հանրապետութիւնների տնտեսութեան համար պատասխան պիտի տայ ամբողջ ազգը: Մասամբ կ'իրականանայ «ամէն ազգից՝ ըստ կարողութիւնների, ամէն ազգին՝ ըստ պահանջի» ընկերվարական սկզբունքը: Տնտեսական ապակենտրոնացումը անխուսափելիօրէն վեր է ածւելու ազգային հարցի, որովհետեւ ազգութիւնների մէջ ստեղծւելու է բնական տնտեսական անհաւասարակշռութիւն:

Այս ամէնը, հաւանաբար, խորհրդային ղեկավարների ուշադրութիւնից չի վրիպում և նրանք ստիպւած պիտի լինեն նոր չափանիշներով մօտենալ ազգային հարցին, հրաժարւելով եղբայրութեան մասին դատարկ ճառերից: Սակայն սպասել, որ Մոսկւան առանց ազգերի նախաձեռնութեան կը լուծի բոլոր ազգային հարցերը միամտութիւն կը լինէր: Նախաձեռնութիւնը պէտք է բխի հանրապետութիւններից, իսկ այդ նախաձեռնութիւնները այսօր շատ թոյլ են:

Վերջապէս հրապարակայնութեան սահմանները սեփական նախաձեռնութեամբ լայնացնում են այլախոհները: Նրանք առանց յատուկ թոյլատրութիւնների հրապարակում են թերթեր, հանդէսներ, կազմակերպում են սեմինարներ և քննարկում են հարցեր, որոնք պաշտօնական մամուլում չեն քննարկւում: Հայաստանում օրինակ, հայերէնի է թարգմանւում **«Գլասնոստ»** հանդէսը, որը հրատարակւում է Մոսկւայում Գրիգորեանցի կողմից: Բացի դրանից Հայաստանում հրատարակւում է **«Անկախութիւն»** հանդէսը, որը ինքնորոշում շարժման պաշտօնաթերթն է: Այս ամէնը ցոյց է տալիս, որ Հայաստանի երիտասարդութիւնը և ազգային մտածելակերպ ունեցողները որոնումների մէջ են և «ի՞նչ անել» հարցի պատասխանը չունեն: Մեղադրել նրանց դրանում՝ չի կարելի, քանզի նրանք երբեք չեն ունեցել քաղաքական գործունէութեան փորձ: Նրանք ունեն ազնիւ սրտեր ու նետւում են կրակը, առանց լուրջ քաղաքական վերլուծութիւնների: Իրար հասկանալու համար, ընդհանուր ռազմավարութիւն մշակելու համար, մեզ անհրաժեշտ է երկխօսութիւնը Հայաստանում ապրող մեր հայրենակիցների հետ: Վատ չէր լինի, որ ընդհանուր հարցերը քննարկւէին մեր մամուլում, որը այսօր հայրենիք մտնելու աւելի մեծ հնարաւորութիւններ ունի: Ես նոյնիսկ չեմ զարմանայ, եթէ մէկ օր Երեւանի կրպակներում **«Դրօշակ»** վաճառւի:

Ի՞ՆՉ ԿԱՐՈՂ Է ԲԵՐԵԼ ԱՊԱԳԱՆ

Ինչպէս վկայում են Խորհրդային Միութիւնում տեղի ունեցող դէպքերը, խորհրդային բարձրագոյն ղեկավարութեան մէջ քաղաքական պայքարը սրւել

է և կան նշաններ, որ պահպանողական, այսինքն հակագործբաչեւեան թեւը անցել է յարձակման։

Կարեւորագոյն իրադարձութիւններից մէկը Հոկտեմբերի 21ին տեղի ունեցած Կոմկուսի կենտկոմի լիագումար նիստն էր, որին Միխայիլ Գորբաչեւը ներկայացրեց Հոկտեմբերեան Յեղափոխութեանը նւիրւած իր զեկոյցը։ Արեւմտեան դիւանագէտներին հաղորդւած լուրերի համաձայն՝ Գորբաչեւը լիագումար նիստին ներկայացրեց զեկոյցի երկու տարբերակ, առաջինը՝ յեղափոխական ոճով, երկրորդը՝ շատ աւելի մեղմ։ Ձայների մեծամասնութեամբ ընդունւեց մեղմ տարբերակը։ Եւ հէնց այս առիթով էլ իր քննադատական ելոյթով հանդէս եկաւ Մոսկւայի քաղկոմի քարտուղար Ելցինը։ Արեւմտեան դիւանագէտները պնդում են, որ այդ նիստի մասին մանրամասնութիւնները սրահից դուրս բերւեցին Լիգաչեւի կողմից, որպէսզի ընդհարումը դառնայ հասարակութեան սեփականութիւնը և Ելցինը ստիպւած լինի հրաժարական տալու։ Ելցինը Գորբաչեւի ամենամեծ համակիրն էր, սակայն Գորբաչեւը ստիպւած եղաւ նրան հրապարակայնօրէն քննադատելու։

Այսօր, դեռեւս, Գորբաչեւին բացայայտօրէն ոչ մէկը չի քննադատում, սակայն Լիգաչեւը բացայայտօրէն հակադրւել է Գորբաչեւի միւս կողմնակից Եակովլեւին, որին շատերը համարում են հրապարակայնութեան և վերափոխութիւնների հեղինակ։ Չի կարելի հաշւից դուրս գցել նաեւ Լիգաչեւի ելոյթը Փարիզում, որտեղ նա ասաց, որ կենտկոմի քարտուղարութեան նիստերին ոչ թէ Գորբաչեւը, այլ ինքն է նախագահում։ Նա հասկացնել տւեց, որ գլխաւոր քարտուղարը Գորբաչեւը կուսակցութեան մէջ լիովին իշխանութիւն չունի։ Վերջին ժամանակներս տեղի ունեցան մի շարք իրադարձութիւններ, որոնք խօսում են վերափոխութիւնների կողմնակիցների դիրքերի թուլացման մասին։ Նախ և առաջ վերջին ժամանակներս տեղի ունեցան մի քանի դաւաճանութիւններ, այսինքն՝ Գորբաչեւի կողմնակիցները անցան հակառակորդի կողմը։ Այդ դաւաճանութիւններից ամենալուրջը «Պրաւդա» թերթի գլխաւոր խմբագիր Վիկտոր Աֆանասեւի դաւաճանութիւնն էր։ Նա հրատարակեց մի յօդւած, որտեղ պաշտպանեց Լիգաչեւի այն թեզը, թէ չի կարելի սեւացնել խորհրդային պատմութիւնը։ Երկրորդ դաւաճանութիւնը տնտեսագէտ պրոֆեսոր Պոպովի դաւաճանութիւնն էր։ Սկզբնական շրջանում նա հրատարակեց մի շարք յօդւածներ յօգուտ Գորբաչեւի ծրագրերի և առաջարկեց շատ հեռուն տանող վերափոխութիւններ։ Իսկ այժմ **«Մոսկովսկիէ Նովոստի»** թերթում պրոֆեսոր Պոպովը հրատարակում է մի յօդւած, որտեղ վերանորոգումների կողմնակիցները կոչւում են տրոցկիստներ։ Հաւասարակշռութիւնը պահելու համար, գիտնականը վերափոխութեան կողմնակիցներին միաժամանակ անւանում է ստալինիստներ, ինչը ինքնըստինքեան վտանգաւոր բան է։

Կայ նաեւ մէկ ուրիշ վտանգաւոր ազդանշան։ Մոսկւայի պատմական արխիւների ինստիտուտի ռեկտոր Աֆանասեւը, որը հակաստալինեան արշաւի ղեկավարներից մէկն էր, չընտրուեց կուսակցական կոմիտէի անդամ և չմտաւ կուսակցութեան պատմութեան նոր դասագիրք պատրաստողների խմբի մէջ։ Մէկ վտանգաւոր նշան եւս։ Պետական Անվտանգութեան մարմինների 70ամեակին նւիրւած հանդէսին զեկոյցով հանդէս եկաւ Չեբրիկովը, չնայած նրան՝ որ հանդէսին ներկայ էր նաեւ Գորբաչեւը։ Աւելին, Չեբրիկովի ելոյթը խորհրդային թերթերում չհրատարակւեց, ինչը խօսում է այն մասին, որ այդ ելոյթը հակասում էր Գորբաչեւի քաղաքականութեանը։ Մի խօսքով, Գորբաչեւի հակառակորդները անցել են գրոհի և այդ պայքարի աւարտից յետոյ միայն պարզ կը դառնայ, թէ ի՞նչ կարող է բերել ապագան։

1988

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՌՈՒՑԻԱԾՔԻ ՄԱՍԻՆ

Դոկտ. Էդուարդ Յովհաննիսեան

Այս յօդուածը գրելու ցանկութիւնը իմ մօտ առաջացաւ այն ժամանակ, երբ ուշադիր կարդացի **«Ազդակ Շաբաթօրեակ»**ում հրատարակուած **«Քաղաքականութեան մասին»** խորագիրը կրող յօդուածաշարքը և փետրուարի 25ի խմբագրականը՝ **«Սփիւռքի պարտականութիւնները Հայ Դատի հանդէպ»**: Չեմ ուզում քննադատել ոչ Ֆ. Ժ. սկզբնատառերը կրող հեղինակին և ոչ էլ խմբագրականը գրողին, քանի որ համարում եմ երկու այդ յօդուածներն էլ չափազանց հետաքրքիր և օգտակար մեր ժողովրդի համար:

Ուզում եմ փորձ կատարել միայն ցոյց տալու, որ քաղաքականութիւնը, որպէս բանականութեան վրայ հիմնուող մի գործողութիւն, աւելի մօտ է կանգնած ճշգրիտ գիտութիւններին, քան շատերը կարծում են: Առանց ժխտելու քաղաքական գործիչի տաղանդի անհրաժեշտութիւնը, ուզում եմ ցոյց տալ, որ չի կարելի նաեւ աչքաթող անել այդ բնագաւառի ընդհանուր օրինաչափութիւնները, որոնք դուրս են գտնւում անձնականութիւնից և վերացական մտորումներից:

Ղեկավարել նշանակում է կազմակերպել որեւէ համակարգի համար նպատակասլաց շարժում: Այս սահմանումը վերաբերւում է բոլոր տեսակի համակարգերին, անկախ նրանց տնտեսական, հասարակական, տեխնիկական թէ կենսաբանական բնոյթից: Ի տարբերութիւն այս սահմանումից, քաղաքականութիւնը վերաբերւում է միայն մարդկանցից բաղկացած համակարգերին:

Վարել քաղաքականութիւն՝ նշանակում է տեւել համակարգի նպատակասլաց շարժման համար ընտրել որոշակի վարքագիծ: Այսպիսով քաղաքականութիւնը ղեկավարման տարատեսակ է, ուստի պէտք է ենթարկուի նրա գլխաւոր օրինաչափութիւններին:

Որո՞նք են այդ օրինաչափութիւնները:

Մենք առանց դժւարութիւնների ընկալւում ենք համակարգի շարժում հասկացութիւնը, երբ այդ համակարգը մեքենայ է կամ ինքնաթիռ, նաւ կամ գնացք, մի խօսքով՝ բոլոր այն դէպքերում, երբ շարժումը ներկայացնում է իրենցից համակարգի դիրքի փոփոխութիւնը տարածութեան մէջ: Այդպիսի շարժումը մենք համարում ենք նպատակասլաց, եթէ ժամանակի ընթացքում յաջորդաբար դիրքերի փոփոխութիւնը, ի վերջոյ, բերում է համակարգը տարածութեան այն կէտը, որը ընտրել էր որպէս նպատակ:

Մի քիչ աւելի դժւար է ընկալել մարդու շարժումը դէպի ծերութիւն (մարդը դիտւում է որպէս համակարգ)։ Եւ թէպէտ գոյութիւն ունեն ծերութեան աստիճանը որոշող բազմաթիւ չափանիշեր, դժւարութեան պատճառով մարդիկ գրեթէ հրաժարւել են նրանցից և շարժման վերջին նպատակի, այսինքն մահւան մօտիկութիւնը որոշում են տարիքի միջոցով։ Եթէ վերյիշենք Գէօթէի խօսքերը այն մասին, թէ հասակը որոշւում է ոչ թէ ապրած տարիների քանակով, այլ զգացմունքների լիարժէքութեամբ, ապա պարզ կը լինի, որ այդ չափանիշը, ժամանակը, միայն մօտաւորապէ՛ս կարող է բնորոշել մարդու շարժումը դէպի ծերութիւն։

Շարժումը բնորոշելու դժւարութիւնները ահաւոր չափով աւելանում են, երբ խօսքը վերաբերում է հասարակական համակարգերի շարժումներին։ Հասարակական շարժումը իրենից ներկայացնում է համակարգի վիճակների յաջորդական փոփոխութիւն։

Այդ շարժումը կը համարւի նպատակասլաց, եթէ իրար յաջորդող վիճակներից ամէն մէկը աւելի մօտ կանգնած կը լինի գլխաւոր նպատակին, քան նախորդը։ Գլխաւոր նպատակին մօտիկ լինելու գնահատականը հիմնւում է համակարգի վիճակը որոշող ցանկերի վրայ։ Այդ ցանկերը որոշում են համակարգի տնտեսական, բարոյական, կրթական և շատ ուրիշ բաների մակարդակը։ Այդ ցանկերի ուսումնասիրութիւնն է, որ թոյլ է տալիս ընտրել դէպի գլխաւոր նպատակը տանող ճանապարհը։

Պէտք է նշել, որ գլխաւոր նպատակի ձեւակերպումը փաստօրէն կապ չունի բուն քաղաքականութեան հետ։ Քանի որ ցանկացած նպատակասլաց շարժում կատարւում է մի ինչ որ միջավայրի մէջ, որին անհրաժեշտ է յարմարւել, ապա գլխաւոր նպատակը հիմնւում է միայն բարոյականութեան վրայ կամ, աւելի ճիշտ, արդարութեան վրայ հանդէպ միջավայրի։

Այդ իսկ պատճառով բոլոր քաղաքական շարժումների գլխաւոր նպատակները ձեւակերպւում են, այսպէս կոչւած, գաղափարախօսների կողմից, որոնք ջանում են ապացուցել, որ ձեւակերպւած նպատակը բխում է ոչ միայն տւեալ ժողովրդի պահանջներից, այլեւ արդար է համամարդկային տեսակէտից, որ չի հակասում մարդկութեան ընդհանուր շահերին։

Այդպէս էին վարւում ֆրանսիական լուսաւորականները, ազգային ինքնավարութեան քարոզողները, ժողովրդավարաութեան գաղափարախօսները, մարքսիստները և նոյնիսկ գերմանական ֆաշիստները, որոնք փորձում էին իրենց աշխարհակալական ձգտումների արդարութիւնը բացատրել գերմանական ցեղի առանձնայատուկ ընդունակութիւններով և իրաւունքներով։

Սակայն գլխաւոր նպատակը կարող է **կոնկրէտ** քաղաքականութեան աղբիւր ծառայել միայն շարժման վերջին փուլում, երբ համակարգի նախորդ վի-

ճակը պատրաստ կը լինի այդ նպատակը դարձնելու օրակարգի հարց: Մինչ այդ՝ գլխաւոր նպատակները գտնւում են այնպիսի հեռաւորութեան վրայ, որ կարող են դիտուել միայն որպէս հասարակական և ազգային ձգտումների իդէալ:

Նրանք, ովքեր փորձում են առանց համակարգի վիճակի ուսումնասիրութիւնների գլխաւոր նպատակը դարձնել քաղաքականութեան գործնական աղբիւր, պէտք է դասւեն **ուտոպիստ**ների շարքին, իսկ որոշ դէպքերում էլ համարւեն պարզապէս քաղաքական արկածախնդիրներ:

Քաղաքականութեան բուն էութիւնը կը բացայայտւի այն ժամանակ, երբ մենք գլխաւոր նպատակներից կ'անցնենք, այսպէս կոչւած, ենթանպատակներին, որոնք հիմնւում են ոչ թէ արդարութեան և բարոյականութեան վրայ, այլ անմիջականօրէն կապւած են ղեկավարւող համակարգի վիճակի հետ: Քաղաքականութիւնը սկսւում է այդ ենթանպատակի ձեւակերպումից, որը փաստօրէն համակարգի յաջորդ վիճակի ձեւակերպումն է: Սակայն հնարաւոր չէ նախօրօք նախատեսել գլխաւոր նպատակին տանող ճանապարհի վրայ գտնւող բոլոր վիճակները, քանի որ ամէն մի նոր աստիճանի վրայ բացայայտւում են նոր հնարաւորութիւններ, որոնք պարզապէս բացակայում էին նախորդ վիճակում:

Յաճախ ենթանպատակները թւում են հակասող գլխաւոր նպատակին: Բայց սոսկ դրա ըմբռնումն է, որ կազմում է քաղաքական ճկունութիւնը: Օրինակ, ինչպէս յայտնի է, կոմունիստական հասարակարգը (գլխաւոր նպատակ) պէտք է զուրկ լինի պետականութիւնից, սակայն կոմունիստները որպէս ենթանպատակ ձեւակերպեցին պետականութեան ահաւոր կենտրոնացում և ամրապնդում: Քրիստոնէութիւնը որպէս գլխաւոր նպատակ առաջ քաշեց «մի սպանիր» թեզը, բայց որպէս ենթանպատակ կազմակերպեց դաժան հաւատաքննութիւն և խաչակրած արշաւանքներ: Միացեալ Նահանգների կառավարութիւնը որպէս գլխաւոր նպատակ ձեւակերպեց ազգերի ազատութիւնը, իսկ ենթանպատակի շնորհիւ պատերազմ սկսեց Վիետնամում:

Օրինակները կարելի է շարունակել: Նրանք գալիս են վկայելու, որ եթէ գլխաւոր նպատակները կառուցւում են համամարդկային բարոյականութեան վրայ, ապա ենթանպատակները, ուրիշ խօսքով՝ բուն քաղաքական նպատակները հիմնւում են տւեալ հատւածի վիճակի վրայ և դրա համար կարող են թւալ ոչ տրամաբանական, չհամապատասխանող գլխաւոր նպատակին: Այստեղից պարզ երեւում է, որ քաղաքականութիւնը առաջին հերթին պահանջում է ազգի վիճակի խորը ուսումնասիրութիւն և այդ վիճակի գնահատականի հիման վրայ քաղաքական ենթանպատակի ձեւակերպում:

Սրանով աւարտւում է քաղաքականութեան առաջին տեսական փուլը: Երկրորդ փուլը, սոսկ գործունէութիւնը սկսւում է այն հասարակական ուժերի կամ լծակների ընտրութիւնից, որի միջոցով հնարաւոր է ստեղծել համակարգի շարժումը, դէպի արդէն ձեւակերպւած նպատակը:

Այդ ուժերը յաճախ լինում են թաքնւած և քաղաքական գործիչը հարկադրւած է լինում գտնել այդ լծակները և ամուր կառչել նրանցից, քանզի նրանք են իր միակ ղեկը: Այդ լծակների ընտրութիւնը բաւականին նուրբ գործ է: Եթէ քաղաքականութիւնը վերաբերւում է ազգին, ապա քաղաքականութիւն վարողը պէտք է յստակ իմանայ ազգի նկարագիրը, նրա ձգտումները, նրա պահանջները, զգացմունքները, տարբեր արժանիքների նկատմամբ նրա գնահատականները, մի խօսքով՝ այն ամէնը, որի միջոցով հնարաւոր է առաջացնել համապատասխան ազգային վարքագիծ:

Պատմական փորձը և մարդու հոգեբանութեան ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ ազգային վարքագիծ առաջացնելու լծակները բազմազան են, սակայն, այս կամ այն մօտաւորութեամբ, բոլորը վերջին հաշւով կարելի է դասաւորել չորս հիմնական խմբերի.

1.- Ստիպողական կամ բռնական լծակներ.

2.- Շահախնդրական կամ շուկայական լծակներ.

3.- Հասարակական կարծիք կամ բնական հարկադրանքի լծակներ.

4.- Բարձր ինքնագիտակցութեան կամ կամաւոր զոհաբերութեան լծակներ:

Բոլոր այս լծակները վաղուց ի վեր յայտնի են մարդկութեանը: Բանակը, ներքին գործերի հետախուզութիւնները, արդարադատութիւնը և այլ պատժիչ մարմինները կազմում են այն առաջին տիպի լծակները, որի վրայ հիմնւում են քաղաքական գործիչները պետական քաղաքականութիւնը վարելիս: Ոչ պակաս յայտնի են նաեւ 2րդ տիպի լծակները՝ կաշառք, կենցաղի բարելաւման խոստումներ, վարձովի բանակ և այլ ձեւի վարձատրութիւններ կարող են շահագրգռել մարդկանց՝ ընդունել համապատասխան վարքագիծ:

Շատ աւելի թաքնւած լծակ է 3րդը, այսպէս կոչ-օրէնքները:

Շատ աւելի թաքնւած լծակ է 3րդը, այսպէս կոչւած բնական հարկադրութիւնը կամ հասարակական կարծիքը, որ ինչպէս յայտնի է ծնունդ է առնում հասարակութիւնից, կազմում է նրա հաւաքական մտածելակերպը: Սակայն, ծնւելով հասարակութիւնից, այդ հաւաքական կարծիքը ձեռք է բերում ինքնուրոյն նշանակութիւն և կարողանում է ազդել իրեն ծնող հասարակութեան վրայ: Հէնց այդ կարծիքի հակադարձ ազդեցութիւն է, որ հանդիսանում է քաղաքական լծակ:

Պարզ ասած, եթէ առաջին լծակի դէպքում վախն է ստիպում մարդուն ընդունել համապատասխան վարքագիծ, 2րդի դէպքում շահը, ապա 3րդի դէպքում՝ ամօթը (նամուսը)։

Այդ դէպքում թէպէտ անձի համար տհաճ է այս կամ այն գործողութիւնը, նա այնուամենայնիւ գործում է, քաշուելով իր ընկերներից, բարեկամներից, հասարակութիւնից։ 4րդ լծակը ամենակարեւորն է, բայց միեւնոյն ժամանակ ամենահազւադէպը։ Դա նոյնիսկ բառի բուն իմաստով չի կարելի համարել լծակը, քանզի անհրաժեշտ վարքագծի աղբիւրը այդ դէպքում գտնւում է խղճի ներսում։

Անձը, իր բարձր ինքնագիտակցութեան շնորհիւ, անում է այն, ինչ պահանջւում է, առանց որեւէ սպառնալիքի կամ խրախուսանքի։ Երեւի նրա հանդէպ սխալ է նաեւ օգտագործել զոհաբերութիւն բառը, քանի որ այն, ինչ ուրիշներին թւում է զոհաբերութիւն, նրա համար մեծագոյն երջանկութիւն է և Աստծու պարգեւ։

Այս բոլոր լծակները պատմութեան տարբեր դարաշրջաններում, տարբեր ազգերի նկատմամբ օգտագործել են քաղաքականութիւնը վարելիս։ Այդ լծակների ճշգրիտ ընտրութիւնը չափազանց կարեւոր է։ Նոյնիսկ Հիտլերեան Գերմանիայի պայմաններում, երբ ստեղծած էր ստիպողական լծակների ահաւոր մեքենայ, ինքը Հիտլերը աչքաթող չէր անում ուրիշ լծակներ։ Իր ճառերից մէկում նա ասում էր. «Ես չեմ ուզում ազդել մարդկանց խղճուկ բանականութեան վրայ, ես ազդում եմ նրանց սրտերի վրայ»։ Եւ նրան յաջողւում էր ազդել այդ սրտերի վրայ, որովհետեւ նա հիանալի գիտէր գերմանական ժողովրդի հոգեբանութիւնը։

Երբ Ռուսաստանում նոր էին ստեղծւում մարքսիստական խմբակներն ու կուսակցութիւնները և երբ ստիպողական լծակների մասին խօսք անգամ լինել չէր կարող, ամենատարածւած լծակը երկրորդն էր՝ շուկայականը։ Գիւղացիներին խոստացւում էր հող, բանակին խաղաղութիւն, իսկ բանւորներին իշխանութիւն։ Երբ կուսակցութիւնները ստեղծւեցին և ենթանպատակը դարձաւ իշխանութեան գլուխ անցնելը, շուկայական լծակներին աւելացան ինքնագիտակցական լծակները, որոնք ի յայտ եկան որպէս յեղափոխական պաթոս։

Երբ բոլշեւիկները անցան իշխանութեան գլուխ, բռնապետական լծակները քաղաքականութեան մէջ գրաւեցին հիմնական տեղը։ Իսկ երբ ենթանպատակ դրւեց ստեղծել Ստալինի անձի պաշտամունքը, բարձրացնել այդ հրէշին սրբի մակարդակի, գործի դրւեցին հասարակական կարծիքը կերտող լծակները։

Այդ նպատակով ստեղծւեց **պրոպագանդա**յի մի ահաւոր գործարան։ Մամուլը, արւեստը, գրականութիւնը, դպրոցը՝ այս ամէնը ծառայում էր այդ նպատակին։

Այսպիսով վերը նշուած լծակների միջոցով է, որ քաղաքական գործիչը պէտք է շարժի ազգային նաւը, պարզի նրա առագաստները այնպէս, որ իրենցից անկախ, բազմաթիւ քաղաքական քամիները չքշեն նաւը դէպի կործանիչ ժայռերը։ Այդ քամիների ուսումնասիրութիւնը կազմում է քաղաքականութեան երրորդ փուլը։

Այստեղ է, որ քաղաքական գործիչը պէտք է որոնի դաշնակիցներ, նախատեսի որոշ երեւոյթներ, ճանաչի թշնամուն, մի խօսքով ուսումնասիրի միջավայրը։

Ուրեմն վարել քաղաքականութիւն՝ նշանակում է յաջորդաբար իրագործել հետեւեալ աշխատանքները.

1.- Ստեղծել համամարդկային բարոյականութիւն ունեցող ազգային գաղափարախօսութիւն և այդ գաղափարախօսութեան սահմաններում ձեւակերպել ազգային գլխաւոր նպատակը։

2.- Ուսումնասիրել ազգի վիճակը, բացայայտելով նրա մակարդակը որոշող բոլոր ցանկերը։

3.- Հիմնուելով ազգային ցանկերի վրայ, ձեւակերպել քաղաքական ենթանպատակը։

4.- Կատարել ազգի վրայ ազդելու ամէնէն ազդեցիկ լծակների ընտրութիւնը։

5.- Կատարել միջավայրի ուսումնասիրութիւն։

6.- Գործել լծակների վրայ և առաջացնել քաղաքական շարժումը։

Երբ քաղաքական ծրագրի իրագործումը կը ստեղծի նախատեսուած նպատակասլաց շարժումը, որը կը բերի ազգը նախատեսուած վիճակին, ապա պէտք է կատարուեն նոր ուսումնասիրութիւններ, ձեւակերպուեն նոր ենթանըպատակներ, փնտռուեն նոր դաշնակիցներ և նոր լծակներ։

Ի հարկէ, քաղաքական այս ուրուագծից կարելի է շեղուել և շատերը շեղուում են, քանի որ քաղաքական գործիչները յաճախ անձնական կամ կուսակցական շահերը դասում են ազգային շահերից աւելի բարձր։ Այդ դէպքում խախտւում է քաղաքականութեան հիմնական օրինաչափութիւնը՝ գլխաւոր նպատակի և ենթանպատակի փոխադարձ կապն ու պայմանաւորուածութիւնը։

Պատահում են է՛ւ այլ կարգի շեղումներ։ Օրինակ՝ ենթանպատակը ձեւակերպում է հիմնուելով ոչ թէ ազգի իրական վիճակի վրայ, այլ ենթակայական (սուբյեկտիւ) ցանկութիւնների վրայ։ Կամ երբեմն անտեսւում է միջավայրը և փաստօրէն կատարւում է սխալ քաղաքական հաշուարկ։ Իսկ երբեմն էլ հաշւի չի առնւում ազգային նկարագիրը և այդ պատճառով կատարւում է ղեկավար-

ման լծակների սխալ ընտրութիւն։ Բոլոր այդ շեղումները ունեն մէկ անուն, այն է՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԿԱԾԱԽՆԴՐՈՒԹԻՒՆ։

Այդպիսի քաղաքականութիւնը միայն ու միայն կարող է վնաս հասցնել ազգին, ինչպէս հասցրեց Հիտլերի քաղաքականութիւնը գերմանական ժողովրդին, Կրոմուէլի քաղաքականութիւնը՝ անգլիական ժողովրդին, Ստալինի քաղաքականութիւնը՝ խորհրդային ժողովուրդներին և յուսով եմ, որ Երիտթուրքերի քաղաքականութիւնը՝ թուրք ժողովրդին։

1973

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՀԱԲԵԿՉՈՒԹԻՒՆ

Է. Յովհաննիսեան

Ահաբեկչութիւնը պայքարի այն հնագոյն միջոցներից մէկն է, որ, կարելի է ասել, գոյութիւն է ունեցել միշտ: Նա ծնունդ է առել մարդկութեան պատմութեան հետ և այդ պատմութեան հետ միասին հասել է մեր օրերին:

Ցեղապետների, թագաւորների, նախարարների ու հոգեւորականների սպանութիւնը եղել է միշտ և ամէնուր: Այդ սպանութիւնների դրդապատճառները տարբեր են եղել անցեալում, սակայն, այսպէս թէ այնպէս, նրանք կապւած են եղել կա՛մ վրէժի և կամ իշխանութիւնը սպանուողի ձեռքից խլելու հետ:

Փոխւում են ժամանակները, փոխւում են վարչաձեւերը, փոխւում է իշխանութեան կառոյցը և այս հասարակական փոփոխութիւնների հետ միասին փոխւում են նաեւ ահաբեկչութեան դրդապատճառները:

Մեր ժամանակաշրջանի համար բնորոշ են ահաբեկչութեան հետեւեալ 4 տարբերակները.

1. Ահաբեկչութիւն յանուն արդարութեան.
2. Ահաբեկչութիւն յանուն քաղաքական փոփոխութիւնների
3. Ահաբեկչութիւն յանուն խառնակութեան.
4. Ահաբեկչութիւն յանուն քարոզչութեան:

Բոլոր այս տարբերակներին անդրադառնալը մեզ համար կարեւոր է, քանզի նրանք, այսպէս թէ այնպէս, մտել են հայ ժողովրդի հասարակական կեանքի մէջ և ոչ միայն սպառնում են խախտել նրա հանգիստը, այլեւ արժէքների վերագնահատում են կատարում:

Ծնւել է նոր սերունդ, որը եկեղեցական ու ակումբային վէճերը թողած՝ կանգնել է յեղափոխական ճանապարհի վրայ և հէնց այդ ճանապարհի վրայ դիմում է ահաբեկչութեան այս կամ այն տարբերակին:

Սկսենք առաջին տարբերակից՝ ահաբեկչութիւն յանուն արդարութեան: Ահաբեկչութեան այս տարատեսակը անմիջականօրէն կապւած է անիշխանականութեան փիլիսոփայութեան հետ, որի համաձայն արդարութիւնը ներքին բնական զգացմունք է, այլ ոչ թէ իրաւաբանական օրէնք: Այնտեղ, որտեղ իրաւաբանական օրէնքները կամ կարգը չի համապատասխանում մեր զգացմունքներին, ստեղծւում է բախում, որը պիտի աւարտւի կա՛մ օրէնքի փոփոխութեամբ (յեղափոխութիւն) և կամ օրէնքին ենթարկւածութեամբ (ստրկութիւն):

Սակայն այս երկու ծայրայեղ կացութիւնների մէջ կայ նաեւ երրորդ կացութիւնը, երբ մարդը չի ցանկանում ստրկանալ և դրա հետ միասին անցանկալի օրէնքը փոխելու ուժը չունի: Այս կացութեան մէջ՝ միակ ելքը օրէնքի դէմ ըմբոստանալն է և սեփական պատասխանատուութեամբ օրէնքը խախտելն ու շրջանցելն է:

Տարբեր կացութիւնների մէջ այս քայլին դիմում են տարբեր կազմակերպութիւններ, շարժումներ և անհատներ: Օրէնքի դէմ ըմբոստութիւնը կարող է ընդունել տարբեր ձեւեր, որոնցից մէկն էլ ահաբեկչութիւնն է: Եթէ մի վարորդ, երթեւեկութեան բոլոր օրէնքները խախտելով, մահամերձ մի երեխայի հասցնում է հիւանդանոց ու փրկում է նրա կեանքը, ոչ ոք չի կարող մեղադրել նրան կարմիր լոյսերը անտեսելու մէջ, որովհետեւ երեխայի փրկւած կեանքը արդարացնում է նրա ըմբոստութիւնը երթեւեկութեան կանոնների դէմ:

Երբ միջազգային օրէնքը չպատժեց հայերի ցեղասպանութիւնը կազմակերպող ոճրագործներին, Հ.Յ.Դաշնակցութիւնը ինք իր ձեռքով կատարեց այդ արդարադատութիւնը և ոչ ոք չի կարող մեղադրել նրան դրանում, որովհետեւ արդար է և այդ ահաբեկչութիւնը:

Անշուշտ այդ քայլը, միջազգային օրէնքների համաձայն, դատապարտելի էր, բայց ո՞վ կարող էր մեղադրել դրանում հայերին, որոնց բռնաբարել, ջարդել ու դուրս էին վռնտել սեփական հայրենիքից: Այդ վիճակում գտնւող ազգեր ու մարդիկ, եթէ օրէնքը խախտելու համարձակութիւնը չունեն, ազգ եւ մարդ կոչւելու իրաւունքն էլ չունեն: Օրէնքի դէմ ըմբոստանալը և օրէնքը խախտելը ոչ միայն երբեմն դատապարտելի չէ, այլեւ երբեմն միանգամայն անհրաժեշտ է:

Ստեֆան Ցւայգը իր **«Մարդկութեան աստղային ժամերը»** գրքի մէջ պատմում է մի շարք ճակատագրական պահերի մասին, երբ այս կամ այն անձնաւորութիւնը ընդունակ չի եղել սեփական նախաձեռնութեամբ խախտել օրէնքը և նոր պատմութիւն կերտել: Ցւայգը պատմում է, օրինակ, Նապոլէոնի պարտութեան մասին Վատերլոում, որը տեղի ունեցաւ միայն ու միայն այն պատճառով, որ զօրավարներից մէկը՝ մարաջախտ Նէյը, ճակատամարտի ամենաճակատագրական պահին, չի համարձակւում խախտել Նապոլէոնի սխալ հրամանը, չնայած նրան, որ իր համար միանգամայն պարզ էր, որ Նապոլէոնը սխալւել էր:

Անշուշտ, չի կարելի անհիշխանութիւնը դարձնել մարդու կամ, առաւե՛լ եւս, մարդկութեան վարքագիծ, սակայն կան պահեր, երբ անհիշխանութիւնը խօսում է բարձրագոյն արդարութեան անունից և այդ իմաստով օրէնքից աւելի կարեւոր է: Հէնց դրանով էլ բացատրւում է այն, որ Խորհրդային Հայաստանում, ինչպէս նաեւ բոլոր մնացած խորհրդային հանրապետութիւններում,

անիշխանութիւնը դարձել է համազգային վարքագիծ: Խորհրդային պայմաններում միայն անիշխանութեամբ կարելի է պահպանել այն, ինչը արգելւած է իշխանութեան կողմից:

Կասկածից վեր է, որ այստեղ ծագում են բազմաթիւ հարցեր, որոնցից ամենակարեւորը այն է, թէ ո՞վ պէտք է տայ այս կամ այն անիշխանութեան արդար լինելու գնահատականը և կա՞յ արդեօք օրէնքի խախտման համար որեւէ արդարացում:

Ես անձամբ համոզւած եմ, որ արդարութիւնը աւելի լայն հասկացողութիւն է, քան մարդու կողմից ստեղծւած օրէնքը, ուստի օրէնքի խախտման համար կարող են լինել արդարացուցիչ հանգամանքներ: Բայց այն հարցին, թէ ո՞վ պիտի լինի այդ գնահատականները տւողը, պատասխանել դժւարանում եմ, հաւանաբար՝ ազգային ներըմբռնումը, այսինքն ա՛յն, որը կենդանիների մօտ բնազդ է կոչւում:

Բայց ես չեմ ուզում ծանրանալ այս խնդրի վրայ, որովհետեւ նպատակ չունեմ վերլուծութեան ենթարկելու այն հարցը, թէ ո՞ր ահաբեկչութիւնը կարող է արդար նկատւել: Ես միայն ուզում եմ ասել, որ ահաբեկչութիւնը կարող է արդար լինել, ինչպէս կարող են արդար լինել պատերազմները և յեղափոխութիւնները:

Պէտք է ասել, որ դասական անիշխանականները չեն սահմանափակւել այս ընդհանուր պնդումներով, այլ նոյնիսկ ձեւակերպել են իրենց արդարութեան չափանիշները: Պրուդոնը, օրինակ, բարձրագոյն արժէքը համարում էր մարդու արժանապատւութիւնը և առարկում էր պաշտպանել այն բոլոր միջոցներով: Գուտւինի համար բարձրագոյն արժէքը հասարակական բարեկեցութիւնն էր: Բակունինի և Կրոպոտկինի համար բարձրագոյն արժէքը մարդու երջանկութիւնն է: Բոլոր այս արժէքների համար անիշխանականները ռաջարկում էին պայքարել, ինչ էլ որ արժէր այդ պայքարը:

Հետաքրքրականը այն է, որ անիշխանականներից ոչ մէկը մարդու կեանքը չի համարել բարձրագոյն արժէք, որովհետեւ նրանք բոլորը արժէքաւորում էին կեանքի տարատեսակները, այլ ոչ թէ ինքը կեանքը, որը ոչ մէկ արժէք կարող է ունենալ, եթէ անասունի կեանքի է նմանւում: Նրանք բոլորը (այդ թւում նաեւ առաջին ու ամենամեծ անիշխանականը՝ Յիսուսը) կոչեր էին անում բարձրագոյն արժէքների համար կեանքը զոհելու ուղղութեամբ:

Եթէ մենք էլ փորձենք ձեւակերպել մեր բարձրագոյն արժէքը, որը կարող է արդարացնել մեր անիշխանութիւնը, հաւանաբար այդ կը լինի մեր ազգային գոյութեան և ազգային արժանապատւութեան պահանջը: Այն ամէնը, որ նպաստում է մեր արժանապատիւ ազգային կեանքին, մեզ համար արդար պիտի համարւի:

Անաբեկչութեան միւս տարատեսակը՝ քաղաքականութիւնը փոխելու, անաբեկչութիւնն է, որը օգտագործում է այնտեղ, որտեղ ղեկավարի անձից է կախուած երկրի կամ որեւէ կազմակերպութեան քաղաքականութիւնը: Որքան մեծ է անհատի ազդեցութիւնը և իշխանութիւնը, այնքան աւելի իմաստաւորուած է անաբեկչութեան այդ տարատեսակը: Խ. Միութեան փորձը ցոյց տուեց, թէ որքան լուրջ փոփոխութիւններ կատարուեցին երկրի քաղաքականութեան մէջ, երբ իշխանութիւնը Լենինից անցաւ Ստալինին, Ստալինից Խռուշչովին և Խրուշչովից Բրեժնեւին: Հաւանաբար այս կարգի անաբեկչութեան շարքին պէտք է դասել Սատաթի սպանութիւնը կամ Հռոմի Պապի վրայ կատարուած մահափորձը:

Բայց այս տեսակի անաբեկչութիւնը մեզ համար որեւէ հետաքրքրութիւն չի կարող ներկայացնել, որովհետեւ Սփիւռքի մէջ գրեթէ բոլոր հայ կազմակերպութիւնները որդեգրել են ժողովրդավարական սկզբունքներ և այնտեղ անհատից շատ քիչ բան է կախուած: Իսկ Խ. Հայաստանի ղեկավարներից հանրապետութեան քաղաքականութիւնը ընդհանրապէս կախուած չէ, ուստի, նրանց փոփոխութիւններից ոչինչ չի փոխւում քաղաքականութեան մէջ:

Իմ այս տեսակէտի հետ շատերը համաձայն չեն և յաճախ բերում են Զարոբեանի օրինակը, բայց սա մեր հերթական միամտութեան հետեւանքն է, որովհետեւ Զարոբեանից ոչինչ կախուած էր, ամէն ինչ գալիս էր Մոսկուայից, ինչպէս գալիս է այսօր: Սակայն նիւթից չշեղուենք:

Անաբեկչութեան յաջորդ տարատեսակը խառնակութիւն ստեղծելու անաբեկչութիւնն է: Դեռեւս 1886 թուականին Պետերբուրգում ստեղծուեց «Նարոդնայա Վոլիա» կուսակցութեան «Անաբեկչութեան ֆրակցիա» խումբը, որի հիմնադիրներից մէկն էլ Լենինի եղբայր Ուլիանովն էր: Այդ խումբը իր գլխաւոր խնդիրը ձեւակերպել էր որպէս հասարակական շփոթութեան ու խառնակութեան ստեղծում: Այդ խառնութիւնը անաբեկիչներին անհրաժեշտ էր այն բանի համար, որ որոշ ուժեր, խառնութիւնից օգտուելով, կարողանան գրաւել իշխանութիւնը:

Այս ձեւի անաբեկչութիւնը տարածուած էր անցեալում, բայց շատ աւելի տարածուած է այսօր: Իտալիայի «Կարմիր ջոկատները», Դաշնակցային Գերմանիայի «Բադեր Մայնհով» խումբը և մի շարք այլ խմբեր ու խմբաւորումներ խառնակութիւններ են ստեղծում տարբեր երկրներում, փաստօրէն այդ երկրների իշխանութիւնները տապալելու կամ նրանց դիրքերը թուլացնելու համար:

Հասարակական խառնակութիւնը և քաոսը շատերին ձեռնտու է: Յատկապէս նա ձեռնտու է կոմունիստներին, որովհետեւ կոմունիստական գաղափարախօսութիւնը և կոմունիստները անմիջապէս յայտնւում են այնտեղ, որտեղ

գոյութիւն ունեն քաղաքական քաոս, տնտեսական քայքայում և մշակութային յետամնացութիւն։ Ճիշտ է, կոմունիզմը չի կարողանում լուծել այդ խնդիրներից ոչ մէկը, բայց նա անխուսափելիօրէն հրապարակ է գալիս նման պայմաններում։

Խառնակութիւններից, որպէս օրէնք, օգտւում են տւեալ երկրի ուժեղագոյն ընդյատակեայ ուժերը, որոնք իշխանութեան գլուխ գալուց յետոյ, անշուշտ, մատը մատին չեն խփի Հայ Դատը լուծելու համար։ Հակառակը, որքան հանգիստ լինի աշխարհը, այնքան աւելի լսելի կը լինի հայի ձայնը, որովհետեւ մեր ձայնը այնքան հզօր չէ, որ կարողանայ ճեղքել ընդհանուր աղմուկը։

Երբ հայ ահաբեկիչները Կոպենհագենում ահաբեկեցին թուրք դիւանագէտին, այդ նոյն օրը խառնակիչ ահաբեկիչները Միւնիխի «Օկտոբեր Ֆեստ» տօնակատարութեան կենտրոնում ռումբ պայթեցրին, որի հետեւանքով հարիւրաւոր մարդիկ սպանւեցին։ Եւ, ի հարկէ, Դաշնակցային Գերմանիայի մամուլը զբաղւած էր այդ դէպքով և ոչ մէկ տող չգրեց հայերի մասին։

Այս իմաստով, նոյնիսկ Թուրքիայի ներսի խառնակութիւնները մեզ համար կարող են վնասակար լինել, որովհետեւ կարող են ճանապարհ բացել թուրքական կոմունիզմի համար, իսկ դա արդէն, իմ համոզումով, Հայ Դատի վերջնական գերեզմանը կարող է դառնալ, ինչպէս հայ, վրացի ու ադրբեջանցի կոմունիստների ջանքերով գերեզման մտան Ղարաբաղի, Նախիջեւանի ու Ախալքալաքի խնդիրները։

Եւ, վերջապէս, մեզ համար ամենակարեւոր տարատեսակ՝ քարոզչական ահաբեկչութիւնը։ Մենք ապրում ենք տեղեկատւական գերյագեցւածութեան այնպիսի մի ժամանակաշրջանում, որ այլեւս կորցրել ենք տեղեկութիւններ ընտրելու յատկութիւնը և «կուլ» ենք տալիս այն, ինչ մեզ պարտադրում են։ Եւ դա հասկանալի է։ Մարդու տեսողութիւնը շատ աւելի սահմանափակ է, քան այն, ինչը նրան շրջապատում է։ Ուստի որքան էլ մենք ջանանք տեսնել ու վերլուծութեան ենթարկել ամէն ինչ, միեւնոյն է, մենք կը տեսնենք միայն այն, ինչ մեր տեսադաշտի մէջ կը գցեն տեղեկատւական բնագաւառի ճարպիկ վաճառականները։

Մեզ վաճառում են երաժշտութիւն, քաղաքականութիւն, ապրանքներ, տեղեկութիւններ և նոյնիսկ ճաշակ։ Եւ մենք խոնարհութեամբ ուտում, լսում ու երգում ենք այն, որ մեզ առաջարկում են պատկերասփիւռով, թերթերով ու ձայնասփիւռով։ Այս պայմաններում որեւէ գործ սկսելու համար, որեւէ «ապրանք» վաճառելու համար, նախ անհրաժեշտ է այդ ապրանքը գցել մարդկանց տեսադաշտը։

Եթէ մենք ուզում ենք քաղաքական աշխարհին Հայ Դատ «վաճառել», նախ պէտք է Հայ Դատը մտցնել քաղաքական գործիչների տեսադաշտը, որովհե-

տեւ այդ քաղաքական գործիչները սեփական նախաձեռնութեամբ Հայ Դատը չեն տեսնի և ուրիշ հազարաւոր դատերից չեն տարբերի: Ահա թէ ինչու, տեսադաշտ մտնելու համար, անհրաժեշտ են յատուկ, երբեմն ծայրայեղական միջոցներ: Մեր երիտասարդների իսկ փորձը ցոյց տուեց, որ տեսադաշտ մտնելու համար ամենաարդիւնաւէտ միջոցը ահաբեկչութիւնն է, այսինքն քարոզչական ահաբեկչութիւնը:

Կարծում եմ, որ այս միտքը առանց այն էլ բոլորի համար շատ պարզ դարձաւ վերջին տարիների ընթացքում, այնուամենայնիւ, պիտի բերեմ մի օրինակ, որը կապ ունի **«Հայ ժողովրդի իրաւունքների պաշտպանութեան կոմիտէ»**ի երկրորդ լիագումար նիստի հետ:

Անցեալ տարւայ նոյեմբերի 21ին Միւնխենում տեղի ունեցաւ հայութեան Իրաւապաշտպան Կոմիտէի լիագումար նիստը: Լրագրողների համար այդ նիստը ունէր առնուազն հետեւեալ հրապուրիչ կողմերը:

ա.- Նիստը կազմակերպւել էր Միւնխենի լաւագոյն «Բայրիշեռ Հոֆ» հիւրանոցի լաւագոյն «Գարտեն սալոն» սրահում, որտեղ բոլոր ելոյթները զուգընթացաբար թարգմանւում էին երեք լեզուների:

բ.- Նիստին մասնակցում էին միջազգային անուն ունեցող ու տարբեր երկրներից ժամանած գիտնականներ ու քաղաքական գործիչներ:

գ.- Քսան լրագրողների նիստին մասնակցելու հրաւէր էր ուղարկւած, ընդ որում նշւած էր, որ բոլոր ճանապարհածախսերը վճարւելու են:

դ.- Նիստին ներկայ էր Սպանիայի թերթերից մէկի խմբագրի տեղակալ Գուրերիանը, որը հայ ահաբեկիչների զոհ էր դարձել և այլեւս չէր կարողանում քայլել: Սակայն, ուսումնասիրելով հայ ժողովրդի պատմութիւնը, նա նեբեց ահաբեկիչներին և ցանկութիւն յայտնեց դառնալ Իրաւապաշտպան Կոմիտէի անդամ: Բուռն ծափահարութիւնների տակ Գուրերիանը ընտրւեց Կոմիտէի անդամ:

ե.- Իրաւապաշտպան Կոմիտէն հրապարակօրէն յայտարարեց, որ ահաբեկչութեան առաջքը առնելու միակ ճանապարհը հայութեան իրաւապաշտպանական գործունէութիւնն է, քանզի հայ ահաբեկչութիւնը քարոզչական ահաբեկչութիւն է:

զ.- Կոմիտէն հեռագիր յղեց Մեծն Բրիտանիայի այն ժամանակւայ արտաքին գործոց նախարարին՝ Թուրքիային տնտեսական օգնութիւնից հրաժարւելու խնդրանքով:

Եւ այս ամէնից յետոյ Իրաւապաշտպան Կոմիտէի լիագումար նիստի մասին ոչ մէկ թերթ ոչ մէկ տող գրեց: Լիագումար նիստը չհրապուրեց լրագրողներին, հաւանաբար նրա համար, որ խաղաղ էր և մէջտեղում արիւն չկար:

Ի՞նչպէս, ուրեմն, չդիմել ահաբեկչութեան, եթէ այդ քաղաքական աշխարհի տեսադաշտը մտնելու միակ միջոցն է:

Այսպիսով, քաղաքական ահաբեկչութիւնը պայքարի բազմաբովանդակ միջոց է, որի կիրառումը այս կամ այն դէպքում ունի իր յատուկ նպատակը: Հայ Դատի համար մղուող պայքարում, գոնէ նրա առաջին փուլում, այդ նպատակը կրում է զուտ քարոզչական բնոյթ: Այդ հիմնական նպատակից բոլոր տեսակի շեղումները վնասակար պէտք է համարուեն:

Երբ այս խնդիրը կատարուած կը լինի, կարելի կը լինի, երեւի, անցնել պայքարի յաջորդ փուլերին, որտեղ ահաբեկչութիւնը բոլորովին այլ բնոյթ ու տեսք կարող է ստանալ:

1982

ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆ՝ ՋՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆԻ ԵՒ ԷԴԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ՄԻՋԵԻ

Յունիսի առաջին օրերուն Աթէնք կը գտնուէին ԽՍՀՄ Գերագոյն Խորհուրդի ԼՂԻՄի դեպուտատ եւ մտաւորական Ջօրի Բալայեանը եւ Միւնխենի Հայկական Հարցերու Հաստատութեան տնօրէն ընկ. Էդիկ Յովհաննիսեանը։ Օգտուելով այս առիթէն, «Դրօշակ» նախաձեռնեց հանդիպումի մը, որուն մասնակցեցան Զ. Բալայեանը եւ է. Յովհաննիսեանը։ Ստորեւ ընթերցողի ուշադրութեան կը յանձնենք այդ հանդիպումի ընթացքին ծաւալած խօսակցութեան արձանագրութիւնը՝ կարելի հարազատութեամբ։

Ընթացիկ հասկացողութեամբ հարցազրոյց մը չէ ասիկա, հակառակ «Դրօշակ»ի հարցադրումներուն, որոնք պարզապէս խօսակցութեան ընթացք կու տան։ Աւելի ճիշտ կ՛ըլլայ զայն բնութագրել իբրեւ երկխօսութիւն՝ երկու անձերու միջեւ, որոնց յարաբերութիւնը, անցեալին թէ ներկային, յատկանշած է խորհրդային կեանքի ելեւէջներով։ Սակայն էականն ու ընդգծելին կը մնայ այն, որ տարբեր աշխարհայեացքներու տէր անհատներ, հակառակ անցեալին թէ ներկային զիրենք բաժնող տարբերութիւններուն, այսօր միասնաբար կ՛առաջադրեն լուծումներ՝ հայութիւնը տագնապեցնող հարցերուն։ Արտայայտուած մտքերուն կամ կատարուած ախտանշումներուն կրնանք համաձայն ըլլալ կամ ոչ։ Սակայն չենք կրնար չանդրադառնալ խորհրդահայ կեանքի մէջ տեղի ունեցած այն կարեւոր փոփոխութիւններուն, որ հնարաւորութիւն կու տայ Զ. Բալայեանին ու Է. Յովհաննիսեանին՝ դէմ դիմաց նստելու- առանց տարբերութիւնները հաւասարեցնելու, այլ զանոնք ներդաշնակելով- եւ հայութեան ճակատագրով զբաղվելու։ Կը կարծենք, որ ասիկա՝ արծարծուած մտքերէն աւելի հիմնական նշանակութիւն ունի՝ եօթանասուն տարուան արհեստական բաժանումներուն վերջ տալու իմաստով։

ՀԱՐՑՈՒՄ – Սկսինք քիչ մը ընդհանուր հարցումով մը։ Կորպաչեւեան իշխանութեան հինգ տարիներէն ետք, ինչպէ՞ս կը գնահատէք խորհրդային ամբողջատիրութեան վերջ տալու եւ արմատական բարեկարգման ձեռնարկելու շարժումը։ Վերակառուցման քաղաքականութիւնը կը շարունակէ՞ ապագայի հեռանկարներ պարզել, յատկապէս մեծապետական-կայսերական իր ղրուածքէն դուրս գալու իմաստով։

ՋՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆ .- Ես կուզենայի սկսել նրանով, որ մենք նստած ենք մի սեղանի շուրջ Էդիկ Յովհաննիսեանի հետ, եւ հայ ժողովուրդը, յատկապէս Խ. Հայաստանի եւ Ղարաբաղի բնակչութիւնը, գիտէր որոշ չափով եւ գիտի նախկինում մեր յարաբերութիւնների մասին, կ՛ուզենայի այստեղ ասել, որ կեանքը

ամենաճշգրիտ եւ ամենաարդար դատաւորն է, եւ այս յարաբերութիւնների մասին ես առանձին մեր ընթերցողների հետ պէտք է խօսեմ, գրեմ, տպագրեմ նրբութիւնները։ Եւ թող ոչ մէկին տարօրինակ չթւայ, որ մենք այստեղ մի սեղանի շուրջ նստած երկուսս էլ մտածում ենք՝ մտահոգւած մեր հայրենիքի ապագայի մասին։

Ինչ վերաբերում է հարցի մասին, ես կարծում եմ, որ պէտք է, ամենագլխաւորը, իմանանք, որ այս պերեստրոյկան մանանայի պէս չի թափւել երկնքից, չի եկել աննպաստելիօրէն մարդկանց գլխին, եւ որպէս հրաշք չեն ընդունել։ Այլ այն անհրաժեշտութիւն է, որի համար պայքարել ենք, երբ Խ. Միութիւնում գտնւող գրողների, հրապարակախօսների, գիտնականների համար ամենադժւարն էր։ Ճշմարտութիւնն ասեմ՝ երկինքը անպայման կը փլւի, եթէ չլինի ազատ միտք, ազատ խօսք. եթէ չխօսենք մեր սխալների մասին, որպէսզի չկրկնւեն, եթէ չզգուշանանք սխալներից, վերջ ի վերջոյ դուրս չենք գայ այս վիճակից։ Յաղթող երկիրը ստացւեց ամենաաղքատը, որը վերջին տեղն է գրաւում նոյնիսկ մարդու երկպառակւածութեամբ, մարդու առողջութեամբ, երեխաների մահացածութեամբ եւայլն։ Դժւար է նոյնիսկ ամենայետամնաց երկրների հետ համեմատել. ես սա ասում եմ որպէս մասնագէտ բժիշկ, որովհետեւ այս թեմայի շուրջ ես երկար եմ խօսել մեր թերթերում, յատկապէս «Լիտերատուրնայա Գազետայում», նախկին առողջապահութեան մինիստր Չեռնովի հետ։

Ուրեմն ես կ՛ուզենայի սկսենք նրանով, որ պերեստրոյկան Գորբաչեւի հետ կապելը ճիշտ է, բայց պէտք է իմանանք, որ այսպէս չի լինի՝ կը գայ, ասի, որ այսօրւանից յայտարարում եմ պերեստրոյկա։ Պերեստրոյկան պատրաստւել է եւ պայքարել ենք դրա համար, եւ կարող էր պատահել, որ 1985ի Ապրիլի 28ը չլինէր այսպէս ասած սկիզբը, բայց կը լինէր ուրիշ ժամանակ. ճիշտ է, տարբեր գնով կարող էր լինել, ուրեմն մենք պէտք է ասենք, որ Գորբաչեւը այս հարցում մնում է Գորբաչեւ։

Ինչ վերաբերում է բուն պերեստրոյկայի ճակատագրին, ես պէտք է ասեմ, որ ինքը պերեստրոյկան այսօր օրհաս է ապրում, ոնց որ բոլոր ժողովուրդները՝ ե՛ւ ԱՄՆ-ի ժողովուրդը, ե՛ւ խորհրդային ժողովուրդը (եթէ կարելի է այդպէս անւանել) եւ դրանց մէջ յատկապէս Հայաստանը եւ իր մասը՝ Ղարաբաղը։ Ուրեմն ճիշտ է հարցը դրւած, որ պերեստրոյկայի ճակատագրից սկսենք։

Ես համոզւած եմ, որ մենք պէտք է ամէն ինչ անենք, որ փրկենք պերեստրոյկան։ Դա բառերով, կոչերով չի ստացւի. հաւանաբար մենք պէտք է զբաղւենք պերեստրոյկայի պերեստրոյկայով, որովհետեւ լօզունգներ ենք կպցրել ու ըստ մեր հին իներցիայի մեր գործերը շարունակում ենք։ Օբյեկտիւ պատճառներ կան, որ նրանք ովքեր գոռում են «պերեստրոյկա, պերեստրոյկա», եկել են

Բրեժնեւից- եթէ կարելի է այդպէս անուանել այդ 15 տարուան, ոնց որ ասում են, լճացման տարիներին-, նոյնիսկ ստալինեան մարդիկ կային նրանց մէջ: Պատահական չէ, որ 88 թւականին մարտի 14-ին «**Սովետ Պրատացիա**» թերթում տպագրուեց Նինա Անդրէեւնայի այն յօդուածը, որը ցնցեց ամբողջ երկիրը, յետոյ աշխարհը, որից իմացանք, թէ ինչպիսի ուժեր կան, որոնք պերեստրոյկային դէմ են: Այդ ուժերը գնալով անշուշտ աւելանում են, առիթը տալիս են է՛ւ պերեստրոյկայի սխալ ճանապարհները, է՛ւ բուն Գորբաչեւը՝ ինքը, որ այլեւս տարբեր են, մեր հայեացքն է տարբեր, ուրիշ տեսակ ենք մօտենում, կամ կեանքն է ցոյց տուել, որ ինքը տարբեր է լուծում այս կամ այն հարցը՝ ոչ ճիշտ: Եւ այստեղ, անշուշտ ամենագլխաւորը, որ մենք դէմ դիմաց ասել ենք իրեն, իր վերաբերմունքն է, իր մօտեցումը, իր լուծումը Ղարաբաղի հարցին, Սումգայթին քաղաքական գնահատական չտալը եւ այն ինչ որ շղթայական ռէակցիայի նման գնում էր եւ հասցրեց այսօրուայ օրը:

Ուրեմն պերեստրոյկան այսօր պէտք է փրկենք եւ հաւանաբար սկսենք ամէն ինչ նորից:

ԷԴԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ – Ինչ վերաբերում է վերակառուցմանը, պերեստրոյկային, ապա ես նախ ուզում եմ համաձայնուել իմ գործակից, կոլեգա Զօրի Բալայեանի հետ, որ այդ վերակառուցումը ստեղծուեց անհրաժեշտութեան բերումով: Խորհրդային իշխանութիւնը, խորհրդային կայսրութիւնը գտնւում էր այնպիսի մի վիճակում, որ նրան փրկել կարող է միայն այսպիսի մի շարժում: Սակայն վերակառուցման և Գորբաչեւի քաղաքականութեան առանձնայատկութիւնը կայանում էր նրանում, որ վերակառուցումը, վերափոխութիւնը եկաւ վերեւից: Եւ հէնց այդ պատճառով, նա ունի հետեւեալ առանձնայատկութիւնը: Պատրաստ է՞ր արդեօք ժողովուրդը վերեւից եկած ազատութիւնները ընդունելու: Պարզուեց, որ պատրաստ չէր, չնայած նրան, որ այդ ազատութիւնները, որ տրուեցին Գորբաչեւի կողմից, պարզապէս շշմեցուցիչ էին: Զօրին ասում է, որ հրաշք չէր, զարմանալի բան չկար դրանում, որովհետեւ հասարակարգը արդէն պատրաստ էր, արդէն յղի էր նման անհրաժեշտութեան, բայց այն, ինչ որ կատարուեց իսկապէս հրաշք էր, եւ այն ինչ որ այսօր կատարւում է -մանաւանդ արտասահմանում, Եւրոպայում-, սա իսկապէս հրաշք է: Ոչ ոք, ամենախոր քաղաքական գործիչը, ամենախելօք քաղաքական մտաւորականը սրանից տասը տարի առաջ չէր կարող ենթադրել, որ Գերմանիանները կարող են վերամիաւորուել եւ մնալ ՆԱՏՕ-ի կազմի մէջ, Լեհաստանը, Հունգարիան, Չեխոսլովակիան կարող են դուրս պրծնել խորհրդային ճանկերից եւայլն: Այս ամէնը իսկապէս հրաշք էր, եւ երկրում կատարւածը իսկապէս հրաշք էր: Այն ազատութիւնները, որ ժողովուրդները ստացան, շատ անսպասելի էին:

Այս իմաստով, Գորբաչեւի վերափոխութիւնը երկար կը տեւի թէ ոչ, կախուած է նրանից, թէ որքանով ժողովուրդները պատրաստ են լցնել այն ազատութիւնները, այն սահմանները, որ տուեցին: Պարզուեց, որ պատրաստ չեն, պարզուեց, որ ռուս ժողովուրդը, ինչպէս նաեւ միւս բոլոր ժողովուրդները, շատ երկար ճամբայ ունեն կտրելու՝ ժողովրդավարութիւնը ըմբռնելու համար: Եւ սա մեծագոյն վտանգն է, ինչը ցոյց է տալիս, որ եթէ ժողովուրդը դեռեւս չկարողանայ իսկապէս ըմբռնել ազատութեան փրկարար դերը հասարակարգի մէջ, ապա նա դուրս պիտի գայ Գորբաչեւի դէմ եւ Ռուսիայի դէմ: Հիմա Գորբաչեւը իր դէմ ունի ոչ միայն պահպանողականների բանակը, այլ նաեւ ունի պարզ ժողովրդի բանակը, որը պահանջում է ուտեստեղէն, պահանջում է ինչ որ բաներ, որոնք դեռեւս այս ազատութիւնը չի կարողանում տալ:

Գորբաչեւի համար երրորդ դժւարութիւնը այն է, որ նա չի ուզում կատարել **արմատական** վերափոխութիւններ վարչակարգի մէջ: Չի կատարում այդ արմատական վերափոխութիւնները, ես կարծում եմ, այն պատճառով, որ վախենում է հէնց էն Նինա Անդրէեւնաներից, որի մասին Ջօրին յիշատակեց, որովհետեւ արմատական փոփոխութիւնները -այսինքն վարչակարգի լրիւ վերանայումը- առաջ է բերում այդ Նինա Անդրէեւնաներին, ինչը ցոյց է տալիս, որ ժողովուրդը չի հասկացել Գորբաչեւեան քաղաքականութեան կամ ազատութեան իսկական գինը, իսկական արժէքը: Այս իմաստով շատ դժւար է այսօր ասել, թէ ի՞նչ ճանապարհով կը գնայ Գորբաչեւեան քաղաքականութիւնը: Եթէ գնահատական պէտք է տանք, իմ գնահատականն այն է, որ շատ կ'ուզէինք մենք որ այդ ընթացքը շարունակւի: Որովհետեւ ինչպէս պատմական փորձը ցոյց է տալիս, միշտ նման ազատական շարժումներից յետոյ իշխանութեան գլուխ են գալիս բռնապետերը և նրանք կարող են լինել շատ աւելի վտանգաւոր, քան մենք ունէինք նախկինում:

Ուրեմն յստակ ասել, թէ ի՞նչ ճակատագիր ունի վերակառուցման քաղաքականութիւնը, ես դժւարանում եմ ասել:

ՋՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆ - Գիտես, ես պէտք է աւելացնեմ այն միտքը, որ ծագեց Էդիկի ասածից, թէ արմատական փոփոխութիւններ չկան: Դա ճիշտ է այն առումով, որ ամբողջ այս եօթանասուն տարւայ ընթացքում ինչ որ տեղի ունեցաւ, հիմքն այն էր, որ պատը ծուռ էր: Հիմա մենք ուզում ենք այդ ծուռ պատի վրայ չգիտեմ ինչ որ ձևով ծանրութիւններ դնենք, փոխենք իր գոյնը, եւայլն, եւայլն: Դա չի ստացւի, ոչ նոյնիսկ ֆունդամենտի հարցում, այլ ե՛ւ ֆունդամենտն է ոչ ամուր, ե՛ւ պատն է ծուռ: Ուզած չուզած, մենք պէտք է քանդենք պատը: Չի ստացւի, եթէ մենք չանենք այդ: Բայց վախենում եմ, որ մինչեւ վերջը - ասում են, երբ «ա» ես ասել, պիտի ասես նաեւ «բ» - չխուսափեն սխալներից: Ուզում են թէ էն թողնել, թէ էս անել: Բնութեան օրէնքները նոյնիսկ այդպիսի

բաներ չեն ընդունում: Չի ստացւի: Եւ այստեղ, անշուշտ, պէտք է կապիտալ փոփոխութիւններ անել: Պէտք է մտածես ոչ թէ ամբիցիայի մասին, կուսակցական, փիլիսոփայական, չգիտեմ քո ներքին էսպես բանաձեւերի մասին: Կեանքի տրամաբանութիւնը ուրիշ է: Երեխայի, ժողովրդի ապագայի մասին մտածողը չպէտք է վախենայ այն բանից, որ եթէ պէտք է՝ ծռւած պատը պիտի քանդի, որ նորը կառուցի: Դա չեն անում և հաւանաբար էլ չանեն:

Եւ այս առումով մենք պէտք է յիշենք՝ պատմութիւնը այսպիսի բաներից անցել է: Ե՛ւ չստացւեց մեծն- ինձ համար մեծն- Խրուշչեւի պերեստրոյկան: Եւ եթէ ուզում էք իմանալ, Նիկոլայ Ա ցարը տեսաւ, որ բռնապետ էր դարձել, իր որդուն՝ Ալեքսանդր երկրորդին ասեց, թէ մի քիչ պէտք է մեղմացնես եւ ռեֆորմներ անցկացնես, եւ այդպէս արաւ: Չի ստացւել. ճորտերին տրւած ազատութիւնները եւ ամբողջը, ինչ որ արեց Ալեքսանդր Ա. եւ տւեց ազատութիւն մտքի եւ ամէն ինչի, բերաւ նրան, որ մարդիկ տեսան, թէ կիսատ-պռատ է անում եւ առաջին հերթին ռումբը զցեցին նրա վրայ, չստացւեց, սպանեցին: Դու պատկերացրու, որ դաժան բռնապետ Ալեքսանդր Ա.ին, Նիկոլայ Ա.ին աստըւածացնում էին, ոնց որ մերոնք աստւածացնում էին Բրեժնեւին, էլ չեմ ասում Ստալինին: Իսկ այն մարդուն, որ կարծես ասել է, որ ես եկել եմ ձեզ ազատութիւն եմ բերելու, նրան պատրաստ են սպանել այսօր: Այս եղել է եւ սա կը լինի, եւ միշտ պէտք է մտածենք, որ ամէն ինչ էլ կարող է պատահել: Ուրեմն ես ուզում եմ ասել, որ բարդութիւնը այն է, որ նրանք ովքեր սկսել են պերեստրոյկան, այսօր փաստօրէն ամբարտակի դարպասը բացել են, որ ջուրը անցնի, բայց նրանք չեն կարողացել կանգնել կողքին եւ ջուրը նրանց տանում է: Հիմա նրանք պէտք է փրկւեն իրենք: Այդ ժամանակ նրանք ամէն ինչից բռնում են, որպէսզի իրենք չխորտակւեն: Եւ սա է վտանգաւորը: Ուրեմն այս ատելութիւնը, պայքարը Գորբաչեւի դէմ պէտք է ընդունւի որպէս ռէալիզմ, բայց միւս կողմից դեռ յայտնի չէ, եթէ հասցրել ես այն մակարդակին, որ արդէն պէտք է ունենաս իրօք դեմոկրատացիա: Դեմոկրատացիա շատ դժւար է տալ նրանց, ովքեր եօթանասուն տարի սոված են եղել (սա արդէն որպէս բժիշկ եմ ասում), դա նմանում է նրան, որ մարդ երկար ժամանակ չի կերել, յանկարծ 10 կիլօ միս ուտի, նա կը մեռնի: Հիմա պատրաստ չեն: Դեմոկրատիան դա խաղ չէ, դա «ով ինչ ուզում է անի» չէ. դրա համար ուրիշ տերմին կայ՝ քաոսը, որը գիտենք, թէ ինչ անարխիա է, եւայլն, եւ այլն: Եւ յանկարծ, մենք ուզում ենք մի օրւայ ընթացքում տասը օրէնք հանենք, իմանալով, որ այդ օրէնքները չեն աշխատելու: Էս բոլոր սխալները մենք պէտք է անպայման ուղղենք:

Է. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ – Խօսքդ կտրեմ եւ մի խօսքով ասեմ, որ վտանգը կայանում է նրանում, որ վերեւից եկած վերափոխութիւնը, կամ այսպէս ասած ազատութիւնը յանկարծ վեր չածւի ներքեւից եկողի: Այսինքն՝ ներքեւի մաս-

սան, ժողովուրդը չբաւարարուած այդ տրուած ազատութիւններից, ինքը կսկսի ծաւալել այդ ազատութիւնների սահմանները, այսինքն՝ վերեւից անցնի ժողովուրդին, այստեղ կը սկսւի խայտառակ մի քաոս, որն արդէն սկսւել է, որովհետեւ ժողովուրդը իր ձեռքն է վերցրել այս ազատութիւնների սահմանը եւ հիմա նա փորձում է այս սահմանները ընդլայնել, դեռեւս եղած սահմանները չյցնելով արժէքներով: Եւ սա շատ մեծ վտանգ է արդէն, մանաւանդ որ մենք գիտենք ինչ է ռուս ժողովուրդը, ինչ է ռուս գիւղացին, ինչ է ռուս նաւաստին, եթէ նա կատաղած մէջտեղ ընկնի: Ինչպէս Բիսմարկն էր ասում, «**Ռուսները շատ դանդաղ են ձիերին սանձում, սայլերին լծում, բայց շատ արագ են գնում**»: Եւ իսկապէս, եթէ կամաց-կամաց ռուսները յանկարծ բարձրանան՝ էն ինչ որ կը կատարւի, կարող է 18 թւից ավելի վատ լինի: Եւ այդ վտանգը կայ:

Ինչ մնում է մեզ՝ հայերիս, թէ ի՞նչ պէտք է կատարենք այս հարցի մէջ, իմ կարծիքը այն է, որ ոչ մի բանի պիտի չմասնակցենք, որովհետեւ մեծ պետութիւններն են, որ կացութիւնները փոխում են, իսկ մենք պէտք է ստեղծւած կացութիւններին յարմարւենք, լաւագոյն ձեւով յարմարւենք, բայց ոչ թէ միանանք ինչ որ շարժումների, որոնց արդիւնքը մեզ ոչ մի բան չի տալու: Եւ սա շատ կարեւոր է մեզ համար, որպէսզի չոգեւորւենք եւ եթէ վաղը ռուսները ապստամբութիւն բարձրացնեն, մենք էլ չլինենք առաջինն այդ ապստամբների, կամ եթէ որոշեն Գորբաչեւին մէջտեղից վերացնել, մենք չլինենք առաջինը դրա մէջ: Թէեւ արդէն դա անում ենք: Օրինակ, Լենինին շատ դանդաղ են մօտենում ռուսները, շատ դանդաղ են մօտենում, որպէսզի քննադատեն: Բայց չէ, մենք՝ հայերս, արդէն Լենինի պողոտան դարձրել ենք Մաշտոց, արդէն պահանջում ենք, որ Լենինի արձանը դուրս գցեն: Կամ Գըդըլեանին եւ Իվանովին բերել ենք Հայաստան, նրանց դարձնում ենք դեպուտատ, դարձնում ենք նրանց պատգամաւոր, որ ի՞նչ: Երէկ մեր վարչապետին կանգնեցրել էինք դատարանի առջեւ եւ ասում էինք՝ «**դու հայերէն խօսել չգիտես, քո հէրն անիծեմ, այսպէս, այնպէս...**»: Հիմա Գըդըլեանը հայերէն գիտի՞, Իվանովը հայերէն գիտի՞, որ բերել ես: Ինչո՞ւ ես էդպէս անում: Միայն Գորբաչեւին հակադրւելու, միայն ցոյց տալու համար, որ «**տեսէ՛ք, Հայաստանը էնքան համարձակ է, որ Գորբաչեւի հէրն էլ է անիծում**»: Սա քաղաքական մօտեցում չի, սա երեխայութիւն է: Ուրեմն մեր մասնակցութիւնը էդ մեծ գործերին՝ Գորբաչեւին քննադատել, Գըդըլեանները էս կ՚անեն թէ էն, թէ ռուսները Ելցինի հետ միասին Ռուսաստանը կ՚անջատեն, սա հայկական գործ չի եւ մենք այստեղ մասնակցելու ոչինչ չունենք:

ՀԱՐՑՈՒՄ – Միջանկեալ հարցում մը: Փերեսթրոյքան իր ներքին փոթենցիալով, նաեւ Ազգային հարցի ստացած տարողութեամբ -կարելի է անվարան

հաստատել, որ անիկա Խ. Միութեան ամէնէն սուր հարցն է -Ռուսական Կայսրութեան համար ապագայի ի՞նչ սենարիոներ կան: Փերեսթրոյքան իր օրակարգին վրայ ունի միութեան դրուածքը, յատկապէս կեդրոն- հանրապետութիւններ յարաբերութիւնները- նոր ֆորմիւլի մը տակ դնելու հարցը:

ՋՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆ - Հարցի մէջ կայ հակասութիւն, այն առումով, որ եթէ բառակապակցութիւնը՝ Ռուսական Կայսրութիւնը պէտք է մնայ, անհնարին է արդէն խօսել սոցիալ ուրիշ խնդիրների մասին, ինչ վերաբերում է դեմոկրատացման, ինքնորոշման հարցերին, որովհետեւ կայսրութիւնը այդպիսի բաներ չի ընդունում. կայսրութիւն բառը արդէն հասկանալի է: Բայց այնտեղ, ուր ուզում ենք տանենք- մենք ասելով ես նկատի ունեմ այն, որ ճակատագրի բերումով ես պարլամենտի մէջ եմ,- այս երկիրը՝ դէպի իրաւական պետութիւն, անշուշտ կայսրութիւնը այդտեղ գոյութիւն չի ունենալու եւ պէտք է լինեն ինքնորոշման հարցերը: Դա է, ինչ որ մենք ուզում ենք: Իրականում այդպէս չէ եւ այդպէս չի լինելու: Ես համոզուած եմ, որ դեռ ժամանակը չէ, դեռ պատրաստ չեն նոյնիսկ նրանք, ովքեր պէտք է միութիւնից դուրս գան, որովհետեւ ամբողջ այս կառուցուածքը, այդ թելերը, տնտեսական եւ սոցիալական կապերը էնպէս են արւած- էնպէս են յատուկ արւած՝ սկսած 17 թւականից եւ 40 թւականից, երբ բալտեան երեք հանրապետութիւնները եկան, -որ դուրս գալը դժւարութիւններ է բերում: Եւ պատահական չէ, որ օրէնքը հինգ տարուց յետոյ օրէնքը, այն էլ ոչ թէ օրէնք դուրս գալու համար, այլ՝ օրէնք դուրս չգալու համար:

Հիմա ես պէտք է ասեմ, որ այստեղ չի լինելու այնպէս, ոնց որ մենք ենք երազում: Ես որպէս մարգարէ չեմ ասում, այլ կեանքից ելնելով: Այսպիսի բան՝ ամբողջ մի պետութիւնից, որը եղել է ցարական, ռուսական պետութիւնը, չի կարելի սպասել, որ յանկարծ էսպէս քայքայւի, չի կարելի սպասել ռուսներից, որ թողնեն այդ՝ շատ լաւ իմանալով իրենց դիրքը, նոյնիսկ աշխարհագրական, նոյնիսկ գիւղատնտեսական, որտեղ չորս-հինգ տարուց ընդամէնը հազիւ երկու տարին է բերքը նորմալ տալիս (այսպիսի հարցեր կան Սիբիրում եւ ոչ-սեւահողային գօտիում եւ եղանակի հետ կապւած այլ հարցեր. մենք բոլորս գիտենք այդտեղ ինչ է ստացւում): Եւ յատկապէս ռուսը շատ լաւ գիտի, որ իր գենօֆոնդը ոչնչացւած է, հիմա նոյնիսկ գիւղացի չունի, այն կուլակը չունի, այն հողագործը չունի, չունի այն տեխնիկան, որը իրեն պէտք է հաց տայ եւ բաւարարի: Եւ նա շատ լաւ գիտի, որ առանց այդ պերիֆերիայի չի կարողանայ ապրել: Դա պատահական չէ: Խաղ են խաղում մի կողմից, բարեկամութիւն է, չգիտեմ ինչ, միւս կողմից էլ ռուսական այդ կայսրութիւնը, այդ մտածելակերպով պէտք է կարողանայ ամուր պահի իրեն, որպէսզի ժողովուրդը չկործանւի: Մենակ հարբեցնելով, խմեցնելով, տարբեր բարդութիւններ զցելով այդ ժողովրդի մէջ, որ հիմա սովի, բառի բուն իմաստով՝ սովի պատճառով հազար ու մի յան-

ցագործութիւնների է զնում մասսայական ձեւով, դա այսպէս երկար չի կարող տեւի: Ուրեմն այստեղ կ'ուզենայի ինձ ճիշտ հասկանաք, որ հեշտութեամբ չի լինելու այն, ինչ որ եղաւ Արեւելեան Եւրոպայում: Այստեղ կարող է տեսնէք Չաուշեսկոյի օրինակները ե՛ւ Կրեմլում, եւ տարբեր տեղերում: Այստեղ շատ բաներ արդէն ուշացած են, այնպէս որ վերեւի ինիցիատիւան- ոնց որ Էդիկն ասաց- եւ ներքեւի մասսայի ճնշումը միասին կը ստեղծեն մի պայթուցիկ կացութիւն: Եւ ասել, թէ հեշտութեամբ կը թողնեն, որ դուրս գայ մի ամբողջ Միջին Ասիա, որը պատրաստ է, ունի իր հողերն էլ, ջուրն էլ, ամէն ինչ էլ ունի, եւ 25-30 միլիոնանոց Ուզբեկիստանն արդէն ֆաբրիկաներով եւայլն առաջւայ Ուզբեկիստանը չի, նոյնն է պարագան ուրիշ երկրների, նրանք ովքեր ծով ունեն, արտասահմանի հետ կապւելու հնարաւորութիւն ունեն: Դրանց հեշտութեամբ չեն թողնի, որ դուրս գան միութեանական կազմից:

Հարցը չեմ ուզում երկարացնել, բայց պէտք է անդրադառնալ մեր վիճակին: Մենք չենք ուզում լինել ստրուկ, յատկապէս հայ ժողովուրդը երբե՛ք չի եղել ստրուկ: Բայց հիմա կարծէք թէ այդ ստրկութիւնից ուզում ենք դուրս գալ, ոնց որ բոլորն են ուզում դուրս գալ, չգիտեմ ի՛նչ ստրկութեան մէջ մտնել, մոռանալով, որ անկախութիւն փափաքել, դա ոչ թէ երազանք է, դա անհրաժեշտութիւն է իւրաքանչիւր ժողովուրդի համար, եւ առանց այդ անկախութեան դժւար է պատկերացնել առհասարակ թէ՛ զարգացում, թէ՛ պրոգրես եւ թէ քո ապահովութիւնը: Բայց անկախութիւնը, ես համոզւած եմ, դա յղիութեան հարց է, որ ունի իր ժամկէտը: Այդ յղիութիւնը պէտք է լրիւ անցնի, պէտք է ամէն ինչ արւի, որ առողջ անցնի: Պէտք է չլինի այնպէս, որ վիժում տեղի ունենայ՝ ե՛ւ մօրը, ե՛ւ ապագայ ծնունդին սպանես: Եւ այստեղ մենք պէտք է մտածենք ամէն ինչ անենք, ոնց որ հայ տղամարդը փայփայում է, երբ կինը՝ ապագայ հայ մայրը յղի է լինում: Այստեղ բռնութեամբ ոչ մի բան չի ստացւի: Չլինել իմաստուն, մտածել, որ մրցումի բան է եւ ասել՝ «տեսէ՛ք Լիտուան այսպէս բան արեց, ուրեմն մենք էլ պէտք է անենք»: Ընդ որում, պէտք է ասեմ, որ երբ մենք սկսեցինք Ղարաբաղեան շարժումը, Լիտուան դեռ այդպիսի բան չէր էլ մտածում: Եւ նրանք շատ յաճախ էին օգտագործում մեր բարձրախօսներն ե՛ւ Երեւանում, ե՛ւ Ստեփանակերտում, ընդ որում օգտագործում էին Գորբաչեւի դէմ. մեր բարձրախօսներով խօսում էին Գորբաչեւի դէմ, Ռուսական Կայսրութեան դէմ, Ռուսաստանի դէմ, բանակի դէմ եւայլն, եւայլն: Հիմա որ այդ երեք հանրապետութիւնները արդէն հասան տնտեսական անկախութեան -եթէ կարելի է այդպէս ասել- եւ մեզ մօտ այս դժոխքը սկսւեց, կախւած Սաֆոնովներից եւ հազար ու մէկ ուրիշ հարցերից, Բագւի դէպքերը տեղի ունեցան, ծպուտ չեն հանել, հազար ու մէկ բարձրախօս են ունեցել եւ ո՛չ մի բառ չեն ասել, ո՛չ ոք, ո՛չ Մերձբալտիկայից, ոչ էլ մի ուրիշ տեղից: Սկզբից մենք մենակ էինք, մենք պիո-

ներներն էինք, իսկ հիմա բոլորը մոռացել են: Եւ ես խնդրում էի նոյնիսկ Լիտուայի հիմակւայ վարչապետին՝ Քազիմիրային, որի հետ կողք-կողքի էինք նստել այն ժամանակ, երբ հարցեր էին բարձրացւել, խնդրում էի, որ մի բառ ասի: Ամաչելով, կարմրելով ասաց, որ հիմա դա անհնարին է: Եւ ազնւօրէն ասաց: Նոյն բանը ընդ որում Ելցինն ասաց, 89ի թւի Հոկտեմբերի 19-ի Գերագոյն Խորհրդի նախագահութեան այն նիստին, որը վարում էր Գորբաչեւը, մենք՝ Ղարաբաղի պատգամաւորներս, հինգս էլ ելոյթ ունեցանք, Վոլսկին ելոյթ ունեցաւ, Ոսկանեանը ելոյթ ունեցաւ: Ուզում եմ ասել, որ տարբեր հանրապետութիւններ, տարբեր ժողովուրդներ տարբեր շահեր ունեն, եւ բոլորն էլ ուզում են անկախ դառնալ: Մենք պէտք է մտածենք, որ ոչ միայն պէտք է յայտարարենք, որ անկախ ենք, այլ պէտք է մնա՛նք, ապրե՛նք, եւ մի՛շտ ապրենք:

ԷԴԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ - Անշուշտ, վերափոխութիւնները, որպէս երկրի ժողովրդավարացման քաղաքականութին, չեն կարող իրենց մէջ չառնել նաեւ Ազգային հարցը, ամենաչլուծւած հարցը Խ. Միութիւնում, դրանում կասկած չկայ: Բայց ինչպէս, ի՛նչ ուղղութեամբ կարող է լուծւել Ազգային հարցը այդ կայսրութեան ներսում: Մենք՝ հայ ժողովրդի ներկայացուցիչներս, եւ ընդհանրապէս բոլոր ազգային փոխրամասնութիւնները, մեր տեսանկիւնից ենք դիտում այդ հարցը եւ մեր տեսանկիւնից ասում, թէ վերափոխութիւնները մեզ ոչինչ չտւեցին, եւայլն, եւայլն: Բայց եկէք մէկ րոպէ մեզ դնենք ռուսների տեղը եւ խօսենք անաչառութեամբ՝ երկու կողմերի տեսանկիւնը քննարկելով: Պատկերացրէք, որ մենք ռուս ենք և լսում ենք, որ մոլդաւացիները ուզում են դուրս գալ Խ. Միութեան կազմից: Մենք հիանալի գիտենք, որ դեռ երէկ, երբ Չաուշեկուն էր Ռումինիայի իշխանութեան գլխում, Մոլդաւիան դուրս գալուն պէս պէտք է միանար Ռումինիային: Պատկերացնենք, որ Ադրբեջանը Խ. Միութեան կազմից դուրս եկաւ, եւ մենք հիանալի գիտենք, որ նա անմիջապէս պէտք է միանայ Թուրքիային: Մենք գիտենք եթէ Հայաստանը դուրս գայ Խ. Միութեան կազմից՝ անմիջապէս կը գրաււի Թուրքիայի զօրքերով, ինչպէս գրաււեց Կիպրոսի մէկ մասը: Ուրեմն ռուսական տեսանկիւնից սա ոչ թէ ազատութիւն տալ է մոլդաւացիներին, ադրբեջանցիներին, հայերին, այլ սա ուղղակի նւէր է իրենց հակառակորդներին: Մենք պէտք է նւիրենք Հայաստանը եւ Ադրբեջանը Թուրքիային, պէտք է նւիրենք Մոլդաւիան Ռումինիային: Էդ նւէրները ինչո՛ւ ռուս ժողովուրդը պիտի կատարի: Ուրեմն, եթէ մենք էս տեսանկիւնի վրայ կանգնենք, ապա ինչպե՛ս կարող է տեղի ունենալ Խ. Միութեան ժողովրդավարացումը Ազգային հարցում: Միայն մէկ դէպքում. ինչպէս քանդւեցին աշխարհի բոլոր կայսրութիւնները, երբ որ կայսերատէրերը հասկացան, որ սրանք մեծ բեռ են իրենց համար: Եթէ Ֆրանսիական կայսրութիւնը, Բրիտանական կայսրութիւնը տապալւեցին, ոչ թէ նրա համար, որ բրիտանա-

ցիները ժողովրդավարութիւնը ընդունեցին եւ շատ բարի դարձան, այլ որովհետեւ Բրիտանիայի վրայ ծանր էր նստում կայսրութիւնը։ Երբ ռուս ժողովուրդը կը հասկանայ, որ մենք՝ հայերս, ծանր ենք նստում իր վրայ եւ մենք ինքնուրոյն ապրելու կարողութիւն ունենք, այսինքն եթէ մենք ազատութիւն ստանանք, մենք ինքներս կարող ենք մեր սահմանը Թուրքիայից պաշտպանել եւ Ռուսաստանի հետ վատ յարաբերութիւնների մէջ չենք մտնելու, բուֆերային պետութիւն ենք լինելու Թուրքիայի եւ Ռուսաստանի միջեւ, էդ ժամանակ ռուսները կը թողնեն։

Ուրեմն հարց է ծագում։ Բոլոր հանրապետութիւնները, որ դուրս պիտի գան Խ. Միութեան կազմից, պիտի դուրս գան ռուսների ցանկութեա՞մբ, թէ ռուսների դէմ պայքարելով։ Եթէ ռուսների դէմ պայքարելով՝ դա ցնորք է, մոռացէք այդ ցնորքի մասին, դրա մասին կարող է խօսել Պ. Հայրիկեանը, թող խօսի։ Եթէ մենք պիտի դուրս գանք Խ. Միութեան կազմից՝ զէնքը ձեռքներիս ռուսների դէմ պայքարելով, սա երեխայութիւն է։ Իսկ եթէ մենք դուրս պիտի գանք ռուս ժողովրդի ցանկութեամբ, ապա այսօր մենք պէտք է ունենանք այն վիճակը, փուլ առ փուլ, ինչպէս Հ.Յ. Դաշնակցութեան Ընդհանուր ժողովն է որոշել, որ անկախութիւնը, դա հանգրւանային ճանապարհով լուծւելիք հարց է, եւ առաջին հանգրւանը պիտի լինի, օրինակ տնտեսական անկախութիւնը, երկրորդ հանգրւանը պիտի լինի օրինակ ազգահաւաքը. մենք մեկուկէս միլիոն հայութիւն ունենք թափթփած Մոսկւայում, Կրասնոդարում, Լենինգրադում, նրանց պէտք է բերենք Հայաստան, եւայլն, եւայլն։ Այսինքն, փուլ առ փուլ պէտք է հասնենք այն կացութեանը, երբ որ ռուս ժողովուրդը եւ Ռուսական Կայսրութիւնը մեզ կ'ասեն՝ «Հա, Հայաստան ջան, դու պատրաստ ես, հիմա դու կարող ես դուրս գալ, որովհետեւ թէ՛ տնտեսապէս, թէ՛ քաղաքականօրէն եւ թէ քո զինւած ուժերով դու կարող ես մնաս ինքնորոյն, այլ ոչ թէ կուլ գնաս օրինակ Թուրքիային»։

Սա հարցի քաղաքական երեսն է։ Իսկ թէ ինչպիսի փոփոխութիւն կարող է տեղի ունենալ այսօր Խորհրդային Կայսրութեան ներսում։ Միա՛յն դաշնակցութիւնը կը վերածւի համադաշնակցութեան՝ կոնֆեդերացիայի՝ այսինքն ամէն մի հանրապետութիւն կ'ունենայ աւելի ազատութիւններ եւ կը լինի մօտաւորապէս այնպէս, ինչպէս մենք հիմա լացակումած ասում ենք մեր պատմութեան մէջ, թէ մեզ մոնղոլները գրաւեցին, մեզ արաբները գրաւեցին, մեզ պարսիկները գրաւեցին։ Բայց եթէ նայենք, գրաւեցին ի՞նչ արեցին, մեր թագաւորն էլ մնաց, մեր արքունիքն էլ մնաց, մեր իշխաններն էլ մնացին, մեր զօրքն էլ մնաց, մենակ տուրք էինք տալիս էդ գրաւողին։ Եւ էդ տեսանկիւնից, եթէ Խ. Միութիւնն էլ այդպիսին դառնայ, մենք լինենք ազատ՝ էն իմաստով, որ միայն տուրք վճարենք, կամ վճարենք այն ընդհանուր խնդիրների համար,

որոնք պաշտպանութեան կամ արտաքին յարաբերութիւնների հետ են կապւած, իսկ մնացածում լինենք լրիւ անկախ, դա կը լինի հէնց էն կոնֆեդերացիան, որը մեզ կամ բոլոր ժողովուրդներին անհրաժեշտ է։

Եւ վերջապէս, վերջին կէտը, որ մի քիչ ընդհանուր փիլիսոփայական հարց է, թէ ե՛րբ ծագեց ազգային պետականութեան անհրաժեշտութիւնը։ Վերջին հաշւով ազգային պետութիւն ստեղծելը ինքնանպատակ չէ։ Ազգային պետութիւնը այն միակ ձեւն է- գոնէ մինչեւ հիմա այդպէս է- որի ներսում ժողովուրդը կարողանում է ապրել իր ազգային անկախ կեանքով։ Եթէ մեզ համար ստեղծուեն պայմաններ, որ մենք առանց ազգային պետականութեան կարողանանք այդ ձեւով ապրել (մարդկութիւնը կարծէս թէ դրան է գնում. շուտով Եւրոպան է ընդհանրապէս մօտենալու), ուրեմն մենք շեշտը չդնենք անպայման դրօշը բարձրացնելու վրայ, մենք շեշտը դնենք նրա վրայ, որ ստեղծուեն պայմաններ, որտեղ հայ ժողովուրդը կարողանայ ապրել ազատ, անկախ իր կեանքով։ Իսկ ինչ ձեւի պետականութիւն կը լինի, կոնֆեդերացիա կը լինի, առանձին կը լինի, դա արդէն ապագան կ՚որոշի։

Ուրեմն ձեր հարցին, թէ ինչպէ՞ս կարող է լուծւել Ազգային հարցը Խ. Միութեան մէջ, իմ պատասխանը այն է, որ աւելի մեծ ազատութիւններ ստանալով, տարբեր հանրապետութիւնները աւելի մեծ ազատութիւններ ստանալու ճանապարհով։ Դուրս գալու հարցը դեռեւս կանգնած չէ։ Եւ հետաքրքիր է, որ Զօրիի ասածի մէջ- ես հակասակ կողմից մօտենամ - երբ Զօրին ասում է, եւ ճիշտ է ասում, որ երբ Հայկական հարցը, այսինքն Ղարաբաղի Հարցը, մէջտեղ եկաւ, մենք չտեսնւա՛ծ միջազգային օրէնքներով օգնեցինք, մեր բարձրախօսները տւեցինք լատւիացիներին, վրացիներին, այսինքն մենք դարձել էինք էդ ազգային ազատագրական շարժումների առաջապահը։ Բայց երբ որ մենք ընկանք ծանր կացութեան մէջ, ոչ ոք մեզ չպաշտպանեց, եւ մենք դրա վրայ չպիտի զարմանանք, որովհետեւ իրենք՝ լիտւացիները, երբ որ ընկան այն կացութեան մէջ, որ արդէն անկախութիւն յայտարարեցին, էս հռչակաւո՛ր, Միացեալ Նահանգները, որ քառասուն տարի գոռում, կանչում էին, թէ «մենք չենք ճանաչում ձեր միացումը», ձէն չհանեցին, ո՛չ Եւրոպան, ո՛չ Բուշը, ո՛չ Քոլը, ո՛չ Մարգարէտ Թաչըրը։ Ընդհակառակը, նրանք բոլորը կանչեցին մերձբալտեան ղեկավարներին եւ ասացին՝ «սուս մնացէք, գնացէք համաձայնւէք Գորբաչեւի հետ», եւ նրանք, փաստօրէն, կերան էն, ինչ արեցին մեր գլխին։ Բայց դա է քաղաքականութիւնը, եւ եթէ մենք քաղաքականացած ժողովուրդ ենք էդ բանը պիտի հասկանանք։

ՀԱՐՑՈՒՄ – Իբրեւ Արցախեան պահանջատիրութեան գործօն մասնակից, ըստ ձեզի աւելի քան երկու տարւան պայքարէ ետք, ո՞ւր կը գտնուի այսօր ղա-

րաբաղեան շարժումը: Ասելի քոնքրէթ, ի՞նչ շահեցանք անցնող երկու տարիներու ընթացքին եւ ապագայի ի՞նչ հեռանկարներ կան:

ՋՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆ – Շատ լաւ էք հարցը դնում, մեզ երկուսիս անուանելով մասնակից: Ես Երեւան եկայ 1973ի վերջին, արդէն չկար մեզ մօտ Էդիկ Յովհաննիսեանը, բայց գրեթէ ամբողջ կեանքումս զբաղւում էի Ղարաբաղի հարցով, ճանապարհը շարունակում էի: Եւ այն ժամանակ, կամ մի քիչ յետոյ, կարդալով բոլոր փաստաթղթերը, կարդացի եւ Էդիկի նամակը ուղղուած, կարծեմ Հայաստանի Կենտրոնական Կոմիտէին, տարբեր հարցերի շուրջ եւ նաեւ Ղարաբաղի: Ուզում եմ ասել, որ Ղարաբաղի հարցը, որի մասին հիմա ասում ենք՝ երկու տարի, գոյութիւն է ունեցել եօթանասուն տարի, միշտ շարունակւել է, տարբեր ֆազեր է ունեցել՝ 56 թւականին Խրուշչեւի ժամանակ, 65 թւականին, երբ Բագրատ Ուլուբաբեանը սկսեց այդ ռեֆերանդումը Ղարաբաղում, մեր նամակները 70ական թւականներին, եւ 80ական թւականներին, յատկապէս երբ Իգոր Մուրադեանը- այդ հոյակապ տղան, որը մինչեւ վերջը նւիրուած է այդ գործին- արդէն սկսեց իր պրակտիկ գործը: Եւ էդ էր, որ պերեստրոյկան ոնց որ պէտք է սկսւէր: Միգուցէ, մենք պայքարում էինք պերեստրոյկայի համար, իմանալով, որ պերեստրոյկաների միջոցով կարելի է Ղարաբաղի հարցը ոչ թէ բարձրացնել, այլ այնպէս անել, որ մեզ լսեն: Եւ այդպէս էլ ստացւեց: Եւ ասեմ, որ երկու տարւայ ընթացքում անշուշտ նւաճումներ արել ենք, եթէ մենք չգոռայինք, եթէ մենք ոտքի չկանգնէինք, եթէ մենք այնպէս չանէինք, որ հայութիւնը չպտտւէր Ղարաբաղի հարցի շուրջ- ոնց որ երկրագունդն է պտտւում իր առանցքի շուրջ- մենք կ'ունենայինք այն, ինչ որ Նախիջեւանում ունեցանք տասնեակ տարիների ընթացքում սուսուփուս կուլ գնալ: Եթէ մեր դիրքերից ելնելով վերցնենք, Նախիջեւանը ռազմավարական առումով շատ աւելի արժէքաւոր է Հայաստանի համար, քան նոյնիսկ Ղարաբաղը: Եւ այսօր այդտեղ չկայ ո՛չ մի հայ. վերջին գիւղը՝ Զնաբերդ գիւղը, չորս հազար տարւայ այդ հռչակաւոր գիւղը դատարկւեց 88 թւականի նոյեմբեր ամսին: Այստեղ միջանկեալ ուզում եմ ասել, որ այս օրերին նայեցի գենոցիդի մասին Էդիկի գլխաւորած ինստիտուտի՝ Հայկական Հարցերի Հաստատութեան հրատարակած հատորներին: Ես կարծում եմ, որ յաջորդ հատորը պէտք է լինի արդէն ոչ թէ բառիս բուն իմաստով ցեղասպանութեան մասին- որ վերաբերում է այն բանին, որ երբ ժողովրդի կամ նրա մի մասին բնաջնջում են- բայց ՄԱԿում 48 թւին լոյս տեսած այդ դեկլարացիայում (որը վաւերացւեց մեր Գերագոյն Խորհրդի կողմից 1954ին, Խրուշչեւի ժամանակ) կայ նաեւ հատւած, որ վերաբերում է ստեղծւած յատուկ իրավիճակին, որի հետեւանքով բնիկները ստիպւած թողնում են իրենց հայրենիքը եւ թափառում զանազան տեղեր: Ուրեմն ես կարծում եմ, Էդիկ, որ յաջորդ հատորը պէտք է լինի նւիրուած Նախիջեւանի,

Հարաւային Ղարաբաղի, Դաշքեսանի, Խանլարի շրջանների գենոցիդին, որովհետեւ դրանք ոչ թէ հայաբնակ վայրեր էին, այլ Հայաստան են եւ այնտեղ կատարւածը գենոցիդ էր: Եւ այդ ճակատագիրը սպասում էր նաեւ Ղարաբաղին, թէեւ չեմ պատկերացնում, որ կը կարողանային հեշտութեամբ Ղարաբաղի հետ անել այն, ինչ արեցին Նախիջեւանի եւ միւս շրջանների հետ, յատկապէս Ալիեւի օրով, երբ թափը աւելի արագացաւ:

Անշուշտ, այսօր ամենամեծ իրագործումը այն է, որ Հայաստանը մաքրուեց աղրբեջանցիներից: Սա յատկապէս ռազմավարական նշանակութիւն ունի, որովհետեւ աղրբեջանական գիւղերը բոլորը գտնւում էին սահմանի վրայ: Օրինակի համար Ամասիայի շրջանը, Անիի, Հոկտեմբերեանի, Արարատի շրջանները, Ղափանը լինի, Վարդենիսը լինի, Թումանեանի շրջանը, բոլորն էլ սահմանամերձ գօտիներում են գտնւում: Եւ դուք չէք պատկերացնում, որ անընդհատ նայում էինք քարտէզին (ես որ «Օջախ» գիրքը գրել եմ, ճանապարհորդութիւն եմ կատարել, առանց բացառութեան եղել եմ բոլոր բնակավայրերում), ուղղակի շշմել եմ, որ էս ի՞նչ է կատարւում: Ախուրեանի աջ ափը՝ թուրք, ձախ ափը՝ թուրք, մէջտեղը՝ սահմանապահը: Եւ պատկերացրէք մեր վիճակը: Այդ օրերին ես մտածել եմ, որ հէնց մի բան պատահեց՝ երկու կողմից կը խփեն սահմանապահին, ոնց որ եղաւ հիմա, մեր օրերին՝ Նախիջեւանի, Պուշկինի, Ջալալաբադի եւ այլ շրջանների մէջ, երբ լրիվ դեմոնտաժ արեցին խորհրդային սահմանը: Հայաստանը մաքրուեց թուրքերից, թէեւ այստեղ չեմ ուզում ասել «տեսէք, մենք ինչ խիզախութիւն արեցինք, որ հիմա ոչ մի աղրբեջանցի չկայ մեր երկրում»: Ստրատեգիական առումով փրկուեց ապագայ Հայաստանը: Եւ սա յետոյ մենք կը հասկանանք, ի՛նչ տեղի ունեցաւ, շնորհիւ Ղարաբաղեան շարժման:

Եւ ամենամեծ նւաճումը, եթէ մեր մէջքը չկոտրւէր Սպիտակի, Նալբանդի երկրաշարժից, այն է, որ ժողովուրդն այսօր ուրիշ է: Այն ինչ, որ սոցիալական հոգեբանութիւնը դեֆորմացիայի է ենթարկւած, դա ժամանակաւոր է, դա կ'անցնի: Բայց արդէն ուրիշ ժողովուրդ է: Երբե՛ք հայ ժողովուրդը ծնկի չի գայ, երբե՛ք: Եւ նորից գալիս է նոյն բանաձեւով՝ «**Հայրենիք կամ մահ**»: Ուրիշ ելք չկայ:

Ինչ վերաբերում է ապագային, ապա ինչ որ ասացի, դա ոչ թէ սոսկ բառեր են՝ «**պայքար, պայքար մինչեւ վերջ**», այլ անհրաժեշտութիւն է, որովհետեւ ելք չկայ, եւ այս դժւարութիւնները մենք պէտք է անցկացնենք: Եւ անշուշտ ամենացաւալին այն է, որ ժամանակ առ ժամանակ արիւն է թափւում: Կեանքը ցոյց է տւել, որ առանց դրան չի ստացւում, եւ պէտք է անենք ամէն ինչ, որպէսզի չթափւի, կամ քիչ թափւի: Բայց միայն ազատութիւն: Ղարաբաղի միակ

փրկութիւնը այն է, որ դուրս գայ այդ լծի տակից: Խեղդւել էր նա, եթէ այդ պայքարը չտանէր:

ԷԴԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ – Նախ Ղարաբաղի շարժումը սկսւեց ղարաբաղցիների առողջ բնազդով, սկսւեց այն ժամանակ, երբ Երեւանը չէր էլ մտածում այդ մասին: Երեւանում էկոլոգիական ցոյցեր էին կատարում, երբ Ղարաբաղը արդէն 11 օր էր, որ սկսել էր շարժումը, կրկնում եմ իր առողջ բնազդով, եւ սկսել էր ոչ թէ գորբաչեւեան ազատութիւնների բերումով, այլ սկսել էր նոյնիսկ Ստալինի ժամանակւանից, էլ չասած Խրուշչեւի, Բրեժնեւի ժամանակւանից: Այդ պատմութեան երկայնքով, ղարաբաղցիները միշտ էլ պայքարել են իրենց ազատութեան, անկախութեան համար:

Ո՞րն էր ղարաբաղցիների առողջ բնազդը, քաղաքական բնազդը, որը մինչեւ հիմա էլ շատերը չեն կարողանում հասկանալ: Ղարաբաղցիները հարց չդրեցին Հայաստանի հետ միանալու, այլ Ադրբեջանի իշխանութեան տակից դուրս գալու հարց դրեցին: Ադրբեջանցիները մեզ ճնշում են, ապացոյցներ կան, մենք ուզում ենք դուրս գալ Ադրբեջանի իշխանութեան տակից: Ի՛նչ ձեւ կ՛ընդունի այդ դուրս գալը, ղարաբաղցիների համար նոյնն էր: Կը լինի նախագահական ղեկավարութիւն, կը լինի Խ. Ռուսաստանի կազմի մէջ, թէ Հայաստանի հետ կցում – սա միայն մէկ տարբերակն էր: Էդ ժամանակ, էդ առողջ բնազդի լուծումը փաստօրէն տրւեց խորհրդային իշխանութեան կողմից, Գորբաչեւի կողմից: Եթէ մենք նայենք քաղաքական այն կշեռքին, որի ժամանակ, որի բերումով Գորբաչեւը տւեց իր որոշումը, ապա կը տեսնենք, որ ադրբեջանցիների նժարը աւելի ծանր է: Թուրքիան մէկ կողմից էր սեղմում, Լիգաչեւը իր հակագորբաչեւեան թեւով միւս կողմից էր սեղմում, իր արտաքին գործերի նախարարը՝ Շեւարդնաձէն նոյնպէս սեղմում էր, որովհետեւ գիտէր, որ նախընթաց է, յետոյ Վրաստանում պիտի նոյնը կատարւէր: Մի խօսքով, ադրբեջանական նժարի վրայ կային քաղաքական շատ արժէքներ, մինչդեռ հայկական նժարի վրայ կային միայն բարոյական արժէքներ՝ ինքնորոշման իրաւունք, պատմական իրաւունք, ժողովրդի կամք- որոնք ինչպէս յայտնի է՝ քաղաքականութեան մէջ ոչ մի նշանակութիւն չունեն: Եւ ահաւասիկ այս պայմաններում տրւեց Վոլսկու կոմիտէի ստեղծման որոշումը, ինչը նշանակում էր, որ Ղարաբաղը դէ ֆակտօ դուրս է գալիս Ադրբեջանի իշխանութեան տակից, թէեւ տարածական իմաստով, դէ ժուրէ մնում էր նրա կազմի մէջ: Սա էն առաջին փուլն էր, որ մենք- ինչպէս ասացի- պիտի ամրացնէինք մեր նւաճած դիրքերը, յետոյ մտածէինք հետագայի մասին: Եւ սկսւեց մեծագոյն սխալը: Երբ որ Հայաստանը շատ ակտիւացաւ էս հարցում եւ, փաստօրէն, Ղարաբաղի հարցը դարձրեց ոչ թէ Ղարաբաղը Ադրբեջանի իշխանութեան տակից դուրս բերելու, այլ անպայման Հայաստանին կցելու հարց: Մի հարց, որը Խ. Միու-

թեան մէջ դառնում էր տարածութիւն խլելու, նւաճելու հարց, այլ ոչ թէ ղարաբաղցիներին Ադրբեջանի իշխանութիւնից հանելու հարց: Եւ միացումը, կցումը դարձաւ հիմնական հարց, որը չպիտի լուծւէր, եւ եթէ մենք ունենայինք քաղաքական բնազդ ղարաբաղցիների նման, չպէտք է այդ հարցը բարձրացնէինք: Հիմա կացութիւնը արդէն շատ վատ է, քանի որ մենք այդ բոլոր որոշումները չընդունեցինք, յամառօրէն չընդունեցինք, ադրբեջանցիները կարողացան ստեղծել այնպիսի կացութիւն, որ հիմա մենք բախւած ենք կենտրոնական իշխանութիւնների, զօրքերի հետ, իսկ իրենք շատ հանգիստ վիճակում նստած ուրախանում են, որ կարողացան այդ բախումը ստեղծել, մինչդեռ մենք պիտի ստեղծէինք այդ բախումը: Վոլսկու կոմիտէի ժամանակ ադրբեջանցիները ոտքի էին ելել, թէ «մենք համաձայն չենք, սա ի՞նչ է...», էդ ժամանակ մենք պիտի ասէինք, թէ «հա, համաձայն չէք, բայց սա Գերագոյն Խորհուրդն է որոշել, եւայլն», եւ նրանք պիտի հակադրւէին կենտրոնական իշխանութեանը, բայց հիմա մենք ենք հակադրւել:

Իսկ թէ ի՞նչ ապագայ ունի Ղարաբաղի հարցը, ինչպէ՛ս եմ տեսնում այն: Տեսնում եմ շատ վատ: Մէկ կողմից տեսնում եմ ղարաբաղցիների, ինչպէս նաեւ հայ ժողովրդի յամառութիւնը՝ Ղարաբաղը պահել հայկական իշխանութեան տակ, այն յեղափոխական յամառութիւնը, որ իսկապէս էդ ժողովուրդը ունեցել է միշտ, եւ միւս կողմից քաղաքականօրէն անլուծելի կացութիւն: Սա նշանակում է, թէ Աւարայրի պէս մի բան է ստացւում: Այսինքն, ամենավատ վիճակն է, որ մենք պիտի պայքարենք, կռւենք, որովհետեւ արդէն Ղարաբաղի դէպի Ադրբեջան ճանապարհները բացւած են, իսկ դէպի Հայաստան՝ փակւած: Մի խօսքով, ինչ որ Աւարայրայի դրութիւն է, «Մահ կամ ազատութիւն»: Լաւ, հասկացանք, բայց «Մահ կամ ազատութիւն»ը մենք կարող ենք օգտագործել միայն այն ժամանակ, երբ մէջտեղի «կամ»ը կայ, եթէ չկայ՝ էդ ճանապարհի վրայ, չգիտեմ որքանով իրաւունք ունենք փորձութեան ենթարկելու մեր ժողովրդին: Այսինքն՝ ես կարծում եմ, որ մենք պէտք է շարունակենք ինչ որ քաղաքական ճանապարհներ գտնել, զիջումներ կատարել, ինչ որ մի բան անել, բայց չհասցնել Աւարայրի, այնպէս չլինի, որ ղարաբաղցիները բոլորը զոհուեն ու մենք մնանք մէջտեղ: Մի խօսքով, ես ապագան վատ եմ տեսնում, թէպետ որեւէ կոնկրէտ առաջարկ չեմ կարող անել:

ՋՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆ - Շատ պեսիմիստական մօտեցում է եւ տեսնում եմ, որ արդէն վէճ է սկսւում այն գլխից, որ դու այդպէս հեշտութեամբ, մի քիչ էլ թեթեւ ասեցիր՝ «այն ժամանակ, երբ ղարաբաղցիները իրենց բնազդով սկսել են այդ արդար եւ խելացի պայքարը, Երեւանում էկոլոգիական ցոյցեր էին անում»: Դա գալիս է նրանից, որ դու այդ ժամանակ չես եղել Երեւանում, և չգիտէիր, եւ դա պէտք է դու իմանաս, որ էկոլոգիական ցոյցեր, բառիս բուն իմաստով, մենք

չենք արել եւ երբ 87 թւականին սկսեցինք այդ ռեֆերանդումը, միայն 82 հազար ստորագրութիւն հաւաքեցինք Նախիջեւանում, Ղարաբաղում եւ Շահումեանում- ճիշտ չէր լինէր, որ Հայաստանում հաւաքէինք այդ ստորագրութիւնները- մենք սկսեցինք մտածել, թէ ո՛նց անենք, որ ժողովուրդ հաւաքենք: Դրա համար գաղափար էր պէտք եւ էկոլոգիան- յատկապէս «Նաիրիտ»ի, Սեւանի, ատոմային կայանի հարցերը- մեր յօդւածները, միտինգները, այդ բոլորը սկզբից խօսում էին օդի պահպանման եւ նման հարցերի մասին, բայց կամաց-կամաց անցնում էին Ղարաբաղի հարցերին: Ուրեմն դա մտածւած է եղել եւ չպէտք է այս պահին հակադրել, կամ իրար դէմ դնել ղարաբաղցիների պայքարի ձեւը եւ Հայաստանի ժողովրդի պայքարի ձեւը: Ուրիշ բան էր, որ երբ ուժերը ուրիշ էին- եթէ հիմիկւայ ուժերի հետ համեմատենք- այն ժամանակ ճիշտ է, այսպէս էինք մտածել, որ եօթանասուն տարի մեզ չեն լսել, ուրեմն մենք պէտք է հարցը դնենք այնպէս, որ մենք դուրս ենք գալիս ենթակայութիւնից, մենք սահմանադրական ոչ մի փոփոխութիւններ չենք ուզում, այս պահին չենք ուզում մի ժողովուրդը միւս ժողովրդի վրայ ճնշի, մենք ուզում ենք, որ այնտեղի եւ այստեղի հայերը- ինչ որ ասել են Գորբաչեւին- ընդամէնը կարողանան հայ զգան, առանց որեւէ ընդհարումների կարողանան միասին լինեն:

ԷԴԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ - Էդ ճիշտ է, բայց արդէօ՞ք Վոլսկու կոմիտէն չէր բաւարարում էդ պահանջները, ոչ թէ Հայաստանին կցելու, այլ միայն էդ պահանջները:

ՋՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆ - Դու արդէն անցար շարժումից ուղիղ մի տարի յետոյ: Կոմիտէն, որ ստեղծւեց 1989ի յունւարի 12ին, այն ժամանակ մեզ համար հրաշք էր: Ես այն ժամանակ Ղարաբաղում էի եւ պոլիտեխնիկական ինստիտուտում ուսանողների եւ պրոֆեսորների հետ հանդիպում ունեցայ, որտեղ ասացի, որ սա մեզ համար հրաշք է:

ԷԴԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ - Յաղթանակ էր, փայլուն յաղթանակ:

ՋՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆ – Փաստօրէն արդէն ամէն ինչ դուրս էր եկել Ադրբեջանի իշխանութեան տակից: Արդէն դուրս էր եկել ժուռնալիստների միութիւնը, գրողների միութիւնը եւ ենթարկւում էին Մոսկւային, ըստ պլանի ամէն ինչ սկսել էր ենթարկւել Մոսկւային: Մենք չպէտք է սկսէինք հարւածը ուղղել Վոլսկուն, այդ որոշումին, այլ այդ նւաճումը պէտք է մենք օգտագործէինք եւ ոտքի կանգնէինք: Սրա մասին երեւի աւելի ուշ կը խօսենք: Մի խօսքով, ուզում եմ ասել, որ էկոլոգիան պարզապէս առիթ էր տալիս, որ մարդ հաւաքւի:

ՀԱՐՑՈՒՄ -Այսօր ամէն մարդ կը խօսի Քրեմլի հակահայ քաղաքականութեան մասին: Մինչդեռ շարժման առաջին օրերուն կար այն լաւատեսութիւնը, թէ կորպաչեւեան թեւը տրամադիր է լուծելու Ղարաբաղի հարցը ի նպաստ հա-

յութեան: Ինչի՞ հետեւանք են այս լաւատեսութիւնն ու անոր յաջորդած յուսախաբութիւնը. հայութեան կողմէ ուժերու յարաբերութիւնը լաւ չգնահատելո՞ւն, թէ Մոսկուայի կողմէ իսկապէս քաղաքականութեան փոփոխութեան մը:

ՋՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆ - Չգիտեմ պապի՞ս միտքն է ինչն է, որ «ամէն ինչ էնպէս պէտք է անես, որ ինքդ քեզ մեղադրես»: Միգուցէ Աւետարանից է գալիս այս միտքը: Բայց եկէք այս հարցում սկսենք մենք մեզ մեղադրելը նկատի ունենալով, որ երբ սկսւեց այս պերեստրոյկան, արթնացան ոչ միայն ղարաբաղցիները: Կարող է ղարաբաղցիները, հային բնորոշ յատկութեամբ, առաջինը թափով արթնացան, այնպէս որ աշխարհը լսեց: Բայց բոլորն էլ տեսան արդէն, թէ ինչ պիտի անեն: Այսօր արդէն ադրբեջանցիները ցոյցեր են անում Մոսկուայում, պահանջելով՝ «Ճամբայ տուէք մեզ գնանք Մեկկա, մենք մուսուլմաններ ենք»: Այսպիսի բան չեմ կարող պատկերացնել, թէ ոնց կարող էին առաջ անէին: Հիմա արդէն հասել ենք այս մակարդակին, իւրաքանչիւրը իր շահերն է տեսնում: Եւ յիշում եմ, որ Մերձբալտիկայի երեք հանրապետութիւնները ընդամէնը ուզում էին տնտեսական անկախութիւն, ուրիշ ոչ մի բան: Եւ իւրաքանչիւրը անշուշտ մտածում էր իր մասին: Մենք չմտածեցինք նրա մասին, որ իւրաքանչիւրը մտածելու է իր մասին: Սա շատ յայտնի բանաձեւ է, Բալմերստոնն է ասել, կամ ուրիշն ասել, կամ մինչեւ էդ է եղել, կամ գտնւում ենք հիմա Աթէնքում, ամենախորը մտքերը այստեղ են ծնւել: Մենք կարծեցինք, թէ մենակ մենք ենք եւ ուրիշը չկայ, ո՛չ Կրեմլ կայ, ո՛չ Գորբաչեւ կայ՝ իր ցաւերով, ո՛չ ռուսի այն խորամանկութիւնը կայ, մենք պէտք է ասենք, որ սա պարզ ժողովուրդ չի, էդպէս թափանցիկ (հազար ու մէկ հեքիաթներ կան՝ «Ցնորւած Իվան»ի մասին, որի վերջում ամէնախելօքը Իվանն է դուրս գալիս), եւ պատմութեան մէջ տեսնում ենք այդ, այս 22 միլիոն քառակումի մետրը, ինքը իրեն չի եկել ռուս ժողովուրդին: Մենք ամէն ինչ մտածւած պիտի անէինք, որ էս յարաբերութիւնները ինչի՛ց են գալիս:

Իսկ ի՛նչ վերաբերում է սկզբից Կրեմլի վերաբերմունքի մասին, ես ու Սիլվա Կապուտիկեանը առաջինն ենք եղել, որ գնացինք բաժնի վարիչի մօտ, գնացինք Եակովլեւի մօտ եւ գնացինք Գորբաչեւի մօտ: Սխալ է հասկացւած, որ նա չգիտեմ ինչ խոստումներ է տւել մեզ: Սխալ է հասկացւած, որ նա չգիտեմ ինչ խոստումներ է տւել մեզ: Հիմա արդէն կարելի է ասել, չասեմ միայն մի անձի անուն, մնացածը կարելի է առաջին անգամ լինելով հրապարակել, Գորբաչեւը հարցրեց, թէ ի՛նչ ենք ուզում: Սիլվան ասաց մեր այն ժամանակւայ պահանջը՝ կոմիսիա. մի եօթը հարիւր հազար մարդ գոռում էր «կոմիսիա, կոմիսիա»: Միացումի պահանջը էդպէս մի անգամից չի եկել. դրա համար կոմիսիա էր պէտք: Մեր նոյն հիւանդութիւնն էր, հաւատում էինք, որ կը գայ կոմիսիա, կը գան արդար մարդիկ եւ հարցը կը քննեն, կը վճռեն: Բայց Գորբաչեւն ասաց,

«այ մարդ, ի՞նչ կոմիսիա. կոմիսիան նրա համար է, որպէսզի գործը տապալւի, որպէսզի խճճւի, խանգարւի եւ անկիւն մտցնենք, ժամանակ անցնի եւ հարցը չլուծւի»: Ասեց, որ «մենք պոլիտբիւրոյում երէկ որոշել ենք, որ արդէն հարցը տալիս ենք մեր ամբողջ քարտուղարութեանը, որը ամէն օր յատուկ կը զբաղւի Ղարաբաղի հարցով, մինչեւ հայութիւնը ոտքի կանգնի»: Եւ նոյնիսկ ասեց, որ «դրա իսկական անունը Ղարաբաղ չէ, այլ Արցախ եւ դա անշուշտ յանցագործութիւն է, որ ոչ հեռատեսիլ ունէք, ոչ դպրոցում դասագրքեր ունէք, ձեր պատմութիւնը չէք անցնում. այդ բոլորը կ'արւի»: Եւ սկսւեց, Վոլսկու ժամանակ շատ բան սկսւեց:

Սա չեմ ասում, որ հայանպաստ էր, սա ըստ տրամաբանութեան էր, որովհետեւ իրօք շատ անարդար էին այս բոլոր բաները: Եւ մենք եկանք ժողովրդին էլ ասացինք, որ սկսւում է մեր պայքարը, որ երկարատեւ պէտք է լինի, չգիտեմ քանի տարի, բայց մենք կամաց-կամաց ամէն ինչ պիտի անենք, որպէսզի այնտեղ հայացումը իրօք ամրանայ, Հայաստանի հետ կապերը զօրանան, եւ յետոյ հերթականօրէն դնենք նոյնիսկ միացումի հարցը, ոչ շատ ուշ: Որովհետեւ ամենամեծ անարդարութիւնը սա է, ով ի՛նչ ուզում է ասի, ե՛ւ մէկ է՝ վերջը պէտք է միացում լինի: Հայ մայրը եւ երեխան առանձին են ապրում եւ մենք մտածում ենք խորթ մայր գտնել, որ լաւը լինի: Եւ եթէ մայրը խորթ է, էլի պէտք է մտածես ո՞ւմ տալ երեխային՝ թուրքի, թէ ռուսի, թէ պարսիկի, թէ չգիտեմ ում. տարբերութիւնը շատ է, եթէ չես կարողանում դու ինքդ վերցնել, եթէ չի ստացւում, եկէք ռէալիստ լինենք: Հիմա մենք գոռում ենք, բայց ճանապարհները փակ են, չի կարողանում ո՛չ հիւանդը գնալ, ո՛չ մեռելը գալ, ոչ մի բան: Որքան էլ մենք խօսենք, դրանք չեն բացւելու, մինչեւ ուժ չդնեն էդտեղ, կամ մինչեւ գործնական որոշում չանցկացնեն:

Ուրեմն մօտեցումը այս հարցում շատ ճիշտ էր եւ այսպէս էլ պէտք էր գնար, հիմա էլ կարծում եմ ուշ չէ, որ խելօք քայլեր անենք: Կրեմլի քաղաքականութեան փոփոխութեան պատասխանատուութիւնը պէտք է մեզ վրայ դնենք: Ես համարում եմ, որ այսօր ամենաճիշտը նա է, որ ամէն ինչում, եթէ նոյնիսկ մենք չենք մեղաւորը- ես ժողովուրդը չեմ ասում, ժողովուրդը երբեք մեղաւոր չի եղել, նա միշտ իմաստուն է եղել եւ ճիշտ ճանապարհն է փնտռել, այս տարեգրութիւնը ժողովուրդն է գրում, եւ ժողովուրդը ճիշտ շեշտն է դնում, ո՛վ է ով, ի՛նչն է ինչ, եւ ճիշտ ճանապարհն է գտնում- մենք պիտի մեզ մեղադրենք, բոլոր նրանց, ովքեր այս հարցով զբաղւած են, քաղաքագէտներ են, կամ պրակտիկ գործ են տանում: Ինչ որ կատարւեց, կամ ինչ որ տեղ հայու արիւն թափւեց, էլի պիտի մեզ մեղադրենք: Եթէ նոյնիսկ հարիւր տոկոսով մեղաւոր է Գորբաչեւը, կամ իր շրջապատը, կամ Կրեմլը, էլի պիտի մեզ մեղադրենք: Եթէ մի սխալ մենք արել ենք, ըստ դիւանագիտութեան, ըստ տակտիկայի կամ ըստ

ստրատեգիայի, էլի մենք ենք մեղաւորը եղել, որովհետեւ երբ մենք սկսել ենք, ամէն ինչ մտածւած ենք արել եւ եթէ մտածւած չենք արել, ուրեմն տակտիկան պիտի փոխուի: Ստրատեգիան մնում է միացում, բայց դա չի նշանակում, որ այսօր տակտիկան էլ է միացում, կամ միայն միացում գոռալ: Միացումը գոռալով չի լինի, չէ՞: Վերջ ի վերջոյ արդէն կամաց-կամաց այդ իմացումը տեղի է ունեցել: Բոլորս պէտք է մտածենք մեր մեղքերի մասին, մեր սխալների մասին, եւ ես միշտ ասել եմ, որ սխալը քաղցրանում է միայն այն ժամանակ, երբ չի կրկնւում, դաս է դառնում:

ԷԴԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ - Հայաստանը եւ հայ ժողովուրդը՝ -Սփիւռքը ներառյալ- այն քաղաքական ուժը չեն, որ մտնեն Խ. Միութեան ղեկավարութեան կամ Գորբաչեւի քաղաքական հաշւարկների մէջ:Այսինքն, հայութիւնը- Հայաստանով հանդերձ- այն քաղաքական ուժը չի, որ Գորբաչեւը դիրք ճշտի հայ ժողովրդի նկատմամբ՝ դրական թէ բացասական: Հայ ժողովրդի ճակատագիրը, հայ ժողովրդի նկատմամբ կենտրոնական իշխանութեան դիրքորոշումը այնքանով են, որքանով որ այդ կենտրոնական իշխանութիւնը ընդհանրապէս վերաբերւում է ազգային փոքրամասնութիւններին: Եւ այդ իմաստով, քանի որ տնտեսական նկատառումներով Գորբաչեւի իշխանութիւնը ուզում է ապակենտրոնացում՝ տնտեսական վերելքի համար, ապա այդ ապակենտրոնացման քաղաքականութեան մէջ մտնում էր նաեւ ազգութիւնների, հանրապետութիւնների իշխանութեան աւելացում, այսինքն տնտեսական անկախութեան աւելացում: Այդքանով ազգութիւնները- մանաւանդ հայ ժողովուրդի նման փոքր ազգը- հետաքրքիր էին Գորբաչեւի համար: Ուրիշ տեսանկիւնից, երբ որ նրա գլխին թափւած էին Գերմանիայի, Կուբայի, Հունգարիայի, Լեհաստանի, Աֆղանստանի հարցերը, այդ ժամանակ, երբ որ մեր սիրելի Զօրի Բալայեանը Սիլվա Կապուտիկեանի հետ գլուխը բարձրացնում էր եւ ասում, «բա Ղարաբաղի հա՞րցը», նա մտածում էր, թէ «հլա դու սպասի, ես էնքա՛ն հարցեր ունեմ, որ էս քու Հայաստանի հարցը թող»: Հայաստանի հարցը հետաքրքրում էր նրան այդ տեսանկիւնից: Դրա համար առաջին շրջանում մեզ թւաց- եւ ճիշտ էր- որ Գորբաչեւը դրական վերաբերում ունի Հայկական Հարցին, այն իմաստով, որ աշխարհին ինքը ուզում էր ցույց տալ, որ երկիրը ժողովրդավարականացւում է, ուրեմն ղարաբաղցիների պահանջն էլ, ինքնորոշման իրաւունքը, եւայլն յարգելով, իր ապակենտրոնացման քաղաքականութեան հետ միասին, տալիս էր այն դրական պոտենցիալը, որ ինչպէս ասեցինք՝ Վոլսկու կոմիտէով իրականացաւ: Իսկապէս մարդը դրական վերաբերմունք ցոյց տւեց և այդ դրական վերաբերմունքը մարմնացաւ Վոլսկու կոմիտէի մէջ:

Մնացած հարցը, որ հակահայկական վերաբերմունքին է առընչւում, կրկնում եմ, նոյնն է՝ հակահայկական վերաբերմունք չէր կարող գոյութիւն

ունենալ, եթէ մենք մի քիչ սահմանը չանցնէինք, այսինքն՝ Գորբաչեւի վարչակարգի կողմից տրւած ազատութիւնների սահմանը չփորձէինք լայնացնել եւ էդ լայնացնելը առաջացրեց նրա հակազդեցութիւնը եւ, ամենակարեւորը, չտեսնըւած ակտիւացրեց Թուրքիային, որ սկզբում շատ մեղմ էր նայում ադրբեջանական հարցին, նոյնիսկ որոշ յայտարարութիւններ եղան, թէ դա մեր գործը չէ, եւայլն, հիմա այնքան ակտիւացաւ, որ գորբաչեւեան վերափոխութիւնների ժողովուրդ դառնալու յաւակնութիւնը հայ ժողովուրդը կորցրեց, որովհետեւ Խ. Միութեան մէջ, հայ ժողովուրդը այն միակ ժողովուրդն էր, որ կարող էր պերեստրոյկայի ժողովուրդը դառնալ՝ իր Սփիւռքով, իր տաղանդով, իր աշխատասիրութեամբ, իր ճարպկութեամբ, եւայլն։ Բայց հիմա, յանկարծ պարզւեց, որ Թուրքիան Ադրբեջանին է դարձնում այդ ժողովուրդը՝ իր պոտենցիալով։ Որքանո՞վ կը յաջողի, չեմ կարծում յաջողի, որովհետեւ Ադրբեջանի ժողովուրդի նկարագիրը բոլորովին ուրիշ է, ինքը՝ Թուրքիան Եւրոպայի մէջ մուրացկան է, ինչպէ՞ս պիտի Ադրբեջանին դարձնի պերեստրոյկայի երկիր։ Բայց եթէ համեմատենք, տեսէք, երկրաշարժի օրերին ամբողջ Սփիւռքը՝ իր միլիոնատէրերով, իր Ալեք Մանուկեաններով, իր կազմակերպութիւններով, իր կուսակցութիւններով, մի խօսքով ամբողջը ինչ որ կարողացանք անել, դա յիսուն միլիոն դոլար էր։ Թուրքիան 350 միլոն դոլար արդէն տւեց Գորբաչեւին։ Այն ինչ որ պիտի անէինք, համատեղ ընկերութիւններ, համատեղ միութիւններ՝ Սփիւռք-Հայաստան, այսօր յիսուն գիտնական գտնւում են Ադրբեջնում, յիսուն ադրբեջանցի գտնւում են Իստանբուլում, արդէն թերթերը հրատարակում են, թէ ի՛նչ միասնական ընկերութիւններ են ստեղծւում, եւայլն։ Այսինքն, այս հարցում էլ նրանք արդէն ոչ միայն մրցում են մեզ հետ, այլ կարող են նոյնիսկ յաղթել։ Եւ սա՛, ճիշտ է ասում Զօրին, մեր մեղքն է։ Եթէ մենք կանգնէինք եւ շատ առաջ չգնայինք, այդ կենտրոնական իշխանութեան հակահայկական դիրքորոշումը չէր լինի։ Դրա վրայ աւելացնենք, որ հիմա ադրբեջանցիները կաշառում են, միլիոններով դրամ են տալիս էդ բոլոր զինւորականներին, ամբողջ Գերագոյն Խորհրդի պատգամաւորները ադրբեջանցիների հսկողութեան տակ են, մէկը ջահել աղջիկ է բերում պատգամաւորին, միւսը տրցակով դրամ է բերում։ Այսինքն այսպէս են լծւել այդ աշխատանքին, որ ես չեմ իմանում, թէ ինչպէս տակից դուրս պիտի գանք։

Եւ դա, հէնց ձեր հարցի երկրորդ մասն է, թէ ինչո՞ւ սկզբից լաւ էր եւ յետոյ վատ, ես կրկնում եմ, սկզբից լաւ էր, որովհետեւ ճիշտ էր մեր ուղղութիւնը, է՛ւ ռազմավարութիւնը, է՛ւ մարտավարութիւնը, յետոյ -մեղադրեմ հաւանաբար Ղարաբաղ կոմիտէին, որը վերածւեց ՀՀՇ-ի- երբ որ բանտից դուրս եկան այդ տղաները որպէս հերոսներ, դարձան փաստօրէն կացութեան տէրը, եւ իրենք էին թելադրում ուղղութիւնը, դրա պատճառով է, որ Գորբաչեւը տեսաւ, օ՛,

սրանք արդէն սկսել են չափը անցնել, ինչպէս Լիտւան, երբ չափը անցաւ, Գորբաչեւը հակամերձբալթեան դիրք բռնեց: Ուրեմն, մենք ենք մեղաւոր, որ անցնում ենք այն չափը, որը մեզ տրւած է վերեւից: Եւ սա շատ կարեւոր է, որովհետեւ եթէ ներքեւից լինէր յեղափոխութիւնը, եթէ մենք արած լինէինք յեղափոխութիւնը, մենք մեր սահմանները ինքներս կը դնէինք, որովհետեւ մենք ենք յեղափոխութիւնը արել, մենք ենք բարձրացել, մե՛նք ենք տապալել իշխանութիւնը եւայլն, այն ժամանակ մենք կը դնէինք ազատութեան սահմանները:

Բայց երբ որ մեզ տւել են վերեւից, առանց մեր մասնակցութեան, մենք էդ քանի՞ գլխանի ենք, հայվանի պէս նստել ենք եօթանասուն տարի, մէկ-երկու թպրտացել ենք, մի քանի այլախոհական յօդւած ենք գրել, հիմա մեզ ազատութիւն են տւել եւ մենք ասում ենք՝ «չէ, դա քիչ է»: Էդ նոյնն է, ոնց որ երբ Սփիւռքը պայքարում էր եւ պայքարում է Թուրքիայի դէմ՝ Ցեղասպանութիւնը ճանաչել տալու իմաստով, պատկերացրէք մենք ունենանք այն յաջողութիւնը, որ ի վերջոյ Ամերիկան ճանաչի Ցեղասպանութիւնը, նոյնիսկ Թուրքիան ճանաչի եւ ներողութիւն խնդրի, իսկ մենք ասենք՝ «չէ, դա քիչ է, հիմա Կարսն ու Արդահանն էլ վերադարձրէք»: Սրանից պէտք է եզրակացնել, ուրեմն, որ հանգրւան առ հանգրւան պիտի գնալ, որը չարեցինք եւ սա է պատճառը Մոսկւայի հակահայկական տրամադրութիւնների:

ՀԱՐՑՈՒՄ - Անցնելով փանթուրքիզմի հարցին, ինչպէ՞ս կը դրսեւորուի անիկա Խ. Միութեան մէջ: Կեդրոնական իշխանութեան մակարդակին վրայ փանթուրքիզմի վտանգի եւ զայն դիմազրաւելու անհրաժեշտութեան գիտակցումը կա՞յ առնուազն որոշ շրջանակներու մէջ: Հայութիւնը ի՞նչ հնարաւորութիւններ ունի դիմազրաւելու համար փանթուրքիզմի վտանգը: Այս գծով Խ. Միութեան մէջ փոթենցիալ դաշնակիցներ կրնա՞յ ունենալ:

ԷԴԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ - Պանթիւրքիզմի վտանգը քանի գնում, թուլանում է: Գուցէ մենք սա հրապարակօրէն չպէտք է ասենք, գուցէ մենք պէտք է աշխարհին եւ յատկապէս ռուս ժողովրդի առաջ դնենք այն հարցը, թէ պանթիւրքիզմի վտանգը քանի գնում, ուժեղանում է, սակայն ռուսները էդքան էլ միամիտ չեն, որ մեր ասելով է, որ իրենք պանթիւրքիզմի նկատմամբ պիտի դիրքորոշում ունենան: Իրենք հիանալի գիտեն, որ պանթիւրքիզմը- որի ղեկավարն է Թուրքիան- վտանգաւոր էր իրենց համար, քանի դեռ գոյութիւն ունէր ՆԱՏՕի, Մ. Նահանգների, Եւրոպայի վտանգը: Երբ որ Եւրոպայի վտանգը գոյութիւն ունէր, երբ որ ՆԱՏՕն հակադրւած էր Վարշաւեան Պայմանագրին եւ փաստօրէն Սառը Պատերազմ էր գնում, այո, Թուրքիան էդ վտանգը ներկայացնում էր Ռուսաստանի համար: Հիմա, երբ որ Գորբաչեւը համբուրւում է Բուշի հետ եւ փաստօրէն արդէն Ամերիկայից չի վախենում, արդէն էնքան չի վախենում, որ

ՆԱՏՕի կազմի մէջ է մտցնում միացեալ Գերմանիան, երբ որ փաստօրէն իր ձեռքից տալիս է ամերիկացիների ձեռքը ամբողջ Արեւելեան Եւրոպան, այսինքն էդ Արեւմուտքի վտանգը ինքնստինքեան վերանում է, Թուրքիայի վտանգն էլ էդ ծիրի մէջ թուլանում է: Ինքնուրոյն, Թուրքիան կարող է այն վտանգը ներկայացնել, որ Միջին Ասիայի ժողովուրդներին եւ ընդհանրապէս Խ. Միութեան մահմեդական ժողովուրդներին կարողանայ միացնել եւ ինչ որ մահմեդական շարժում ստեղծել: Դրա վտանգը կար յեղափոխութեան առաջին տարիներին եւ, եթէ մենք վերյիշենք, փաստօրէն Միջին Ասիայի էս բոլոր հանրապետութիւնները ստեղծուեցին արհեստականօրէն՝ Լենինի կողմից: Ժամանակին էդ բոլոր ազգերը մտնում էին մէկ հանրապետութեան մէջ, որը կոչւում էր Թուրքեստան: Բայց տեսնելով, որ Թուրքեստանը շատ մեծ հանրապետութիւն է, շատ մեծ մահմեդական ուժ է, նոյնիսկ այնքան մեծ, որը կարող էր մրցել Ռուսաստանի հետ, Լենինը վախենալով՝ բռնեց դրանց բաժանեց առանձին-առանձին ազգերի: Օրինակ, գիրգիզն ու ղազախը այսօր ոչ մի տարբերութիւն չունեն իրարից, բայց առանձին ազգ են: Մի խօսքով, սրանք տարբեր ցեղեր էին, թուրք ցեղեր, որոնք բաժանուեցին արհեստականօրէն, որովհետեւ այդ վտանգը գոյութիւն ունէր:

Բայց, հիմա եթէ նայում ենք, թէ ինչ ճանապարհով- մշակութային իմաստով- զարգանում է մարդկութիւնը, ապա մենք տեսնում ենք, թէ մահմեդական մշակոյթը շատ յետ է մնում եւրոպական, քրիստոնէական մշակոյթից: Փաստօրէն, այսօր աշխարհում չկայ ոչ մէկ մահմեդական երկիր, որ նոյնիսկ ինքնաշարժ արտադրի: Թուրքիան, 50 միլիոնանոց Թուրքիան, հաշւիչ մեքենայ չի արտադրում, բայց փոքր Երեւանը արտադրում է, «Երազ» ինքնաշարժ է արտադրում: Մահմեդական մշակոյթը անկում է ապրում, նոյնն է պարագան Խ. Միութեան մէջ: Եթե մենք ազատութիւն ստանանք, այսինքն եթէ Խ. Միութիւնը դառնայ ազատ ազգութիւնների համադաշնակցութիւն, ապա այդտեղ հայերը եւ առհասարակ քրիստոնէական մշակոյթ ունեցող ազգերը անմիջապէս ջրի երես կ'ելնեն, կը բարձրանան, եւ այդ արւեստական մահմեդական վտանգը կը բախւի քրիստոնէական մշակոյթին, մի բան, որ փաստօրէն տեղի ունեցաւ Իսրայէլի եւ հարիւր միլիոնանոց Արաբական Աշխարհի միջեւ: Հիմա բոլորը ասում են, որ Իսրայէլը՝ դա ամերիկեան օգնութիւնն է, միջազգային սիոնիզմն է: Այդ ամէն ինչը՝ այո՛, բայց Իսրայէլում զէնքը ձեռքին կռւում են երեք միլիոն իսրայէլցիներ, ընդ որում ջահել աղջիկները բանակի մէջ են, եւ այդ աղջիկները հարիւր միլիոնանոց Արաբական Աշխարհին ծունկի են բերել: Ինչո՛ւ, որովհետեւ նրանք բոլորովին ուրիշ նկարագիր, բոլորովին ուրիշ մշակոյթ ունեն, եւ ես կարծում եմ ընդհանրապէս կա՛մ մահմեդական մշակոյթը վեր կ'ածւի քրիստոնէականի, այսինքն կը դառնայ ժողովրդավար, եւայլն, եւ մենք նոր

հնարաւորութիւններ կը ստանանք, կամ նրանք կը մնան այդ մակարդակի վրայ է՛ւ նրանց վտանգը այդքան մեծ չէ: Իսկ եթէ վտանգը նոյնիսկ մեծ լինի, ես չեմ կարծում, որ հայ ժողովուրդը այն ժողովուրդն է, որ այդ մեծ վտանգի առաջն առնի եւ ռուսներին բացատրի, թէ «տեսէք, դուք մեզ պաշտպանէք, որովհետեւ մենք միակն ենք, որ կարող ենք էս մահմեդականութեան առաջն առնել»: Ես կարծում եմ, որ այդ կացութիւնը այսօր գոյութիւն չունի, չնայած նրան, որ մեր մամուլում եւ յատկապէս մեր սիրելի Զօրին այդ միտքը միշտ առաջ է տանում, լա՛ւ է անում բարոյական իմաստով, բայց չեմ կարծում, որ քաղաքական իմաստով մենք կարող ենք ռուսներին շահագրգռել:

ԶՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆ - Ես պէտք է ասեմ, որ այդքան էլ համամիտ չեմ Էդիկ Յովհաննիսեանին, որովհետեւ ինքը իրեն հակասում է մի հարցում. մի կողմից ասում է, այսօր պանթուրքիզմը այն հրէշը չի, ինչի մասին մենք միշտ պատկերացում ենք ունեցել, յատկապէս դարասկզբին, կամ յատկապէս այն 14-15 թւականներին, երբ սկսւեց տեղահանութիւնը, միւս կողմից էլ ինքը լայնացրեց աշխարհագրութիւնը, Թուրքիայից եկաւ հասաւ Ուզբեկիստան, ուրեմն բառիս բուն իմաստով բացատրեց, որ պանթուրքիզմը՝ դա ունի է՛ւ աշխարհագրական իմաստ, ոչ թէ կրօնական, կամ իսլամի հետ առընչութիւն:

Պանթուրքիզմը դա տերմին է, որի հետ այսօր կարելի է վիճել, այն առումով, որ դէպի ո՛ւր է տանում իր աշխարհագրութիւնը: Չեմ կարծում, որ այսօրւայ իրավիճակում Թուրքիան պէտք է իր սահմանները աւելացնի, նա կանի այնպէս, ոնց որ մտածում էր այն ժամանակ, պանթուրքիզմի ծրագրով: Ընդ որում, ոչ թէ ասենք, որ այսօրւայ պանթիւրքիզմը ուրիշ է՝ Գորբաչեւի եւ Բուշի յարաբերութիւնը նկատի ունենալով, իսկ երէկւանը՝ Ստալինի կամ Բրեժնեւի ժամանակ ուրիշ էր, իսկ վաղը տարբեր կը լինի: Նա ունի այսպէս հազարամեայ ծրագիր, որը միշտ գիտի, որ տարբեր երկրներում ապրող թուրք ցեղերը, թուրքախօսները դրանք միասին պիտի պայքարեն, տւեալ դէպքում անշուշտ, նրանք միասին պիտի պայքարեն Ռուսաստանի դէմ, եւ նկատի ունենալով, որ այստեղ գտնւում ենք եւ մենք, ուրեմն առաջին հերթին ոտնակոխելով, ոտնահարելով մեզ: Ես հեշտութեամբ չեմ մօտենում, եւ դա ինձ համար ոչ միայն բարոյական հարց է, անշուշտ ռազմավարական հարց է: Գիտակցում եմ, որ թուրքը մնում է թուրք, կարդացել եմ բոլոր փաստաթղթերը կապւած թուրքի պլանների հետ (դա անւանենք պանթիւրքիզմ թէ ոչ, տերմինը կարեւոր չէ), չմոռանալով, որ այն պանթուրքիստները, որոնց պարագլուխը եղել է Նազիմը, իր ելոյթը ունեցաւ այստեղ, Սալոնիկում 1910 թւականի Հոկտեմբեր ամսին, որի ընթացքին ասաց, թէ «պանիսլամիզմը արդէն գրաւիչ չէ մեզ համար, այլ պանթուրքիզմը, որ սկսւեց նրանով, որպէսզի մեր հայեացքը սեւեռենք դէպի Արեւելք, որտեղ գտնւում են մեր նախնիները», եւ այստեղ խանգարում էր ի-

րեն միայն Հայաստանը, հայկական պետութիւնը կը լինէր մահ պանթիւրքիզմի համար։ Այս բոլորը նրանք մինչեւ այսօր էլ հաստատում են, ցիտատներ են բերում եւ գիտեմ, որ մինչեւ այսօր էլ այդպէս է։ Ուրեմն նրանք մտածել են, որ մի կողմից պէտք է ոչնչացնեն Հայաստանը, եւ դա իրենց ծրագրի մէջ է, ե՛ւ պատմութիւնից գիտենք, ե՛ւ Ջեմալի մտքերից։ Եւ գիտենք նրանից, որ սրանք հետապնդում են պանթուրքիզմը ոչ թէ նրա համար, որ աւելացնեն այսօրւայ Թուրքիայի պետական սահմանը, այլ ստեղծեն Թուրքիաներ։ Ադրբեջանը այսօր Թուրքիա է, գտնւելով որպէս ուռուցք Խորհրդային Միութեան մէջ, շրջապատած Ղարաբաղը հարիւր տոկոսով, ինքը կիլոմետրով էնտեղից Նախիջեւանն է եւ միայն Մեղրին է խանգարում։ Եւ պատահական չէ, որ Դեմիրէլն ու Էջեւիդը պարբերաբար ասում էին, «որ Մեղրին՝ դա անիծեալ սեպ է, որ մտած է եւ չի թողնում, որ միանանք», բայց փաստօրէն շրջապատած են Հայաստանը։ Օրինակ՝ վերցնենք Կիպրոսը, 74 թւականին ընդամէնը ընդհարումներ էին ընտրութիւնների ժամանակ, մտան, 40 տոկոսը գրաւեցին եւ մի քանի տարուց յետոյ յայտարարեցին, թէ սա պետութիւն է։ Այ սա է, նէօ-պանթիւրքիզմ ասեմ, չգիտեմ ինչ «իզմ» ասեմ։ Այստեղ չպիտի վիճենք, որ ինչ է իրենից ներկայացնում այն ժամանակւայ պանթիւրքիզմը կամ այս ժամանակւայ։ Պէտք է ելնենք նրանից, որ թուրքը մնում է միշտ թուրք։

Այսպիսի բաներ նրանք կարող են ստեղծեն մեր դէմ, Ռուսաստանի դէմ (սրանք արդէն Վոլգայի ափին գտնւող ամբողջ ժողովուրդներին էլ են իրենցը համարում), եւ մենք միշտ ասում ենք, որ կապ չունի պանիսլամիզմը, իսլամը։ Մենք երախտապարտ ենք ենք արաբ իսլամ ժողովրդին, որտեղ ապաստան ենք գտել, Պարսկաստանում էլ մենք կարողացել ենք հայութիւնը պահել եւ հիմա էլ կայ, Միջին Ասիայի յատկապէս ուզբեկ ժողովրդին էլ երախտապարտ ենք, որտեղ երկու հարիւր հազար հայութիւն է փրկւել եւ եկեղեցիներն ու մզկիթները կողք-կողքի են կանգնած։

Ուրեմն, տերմինների այդ շփոթութիւնը մենք պէտք է բոլորս հասկանանք։ Մենք խօսում ենք պանթիւրքիզմի մասին, նկատի ունենալով Անկարայի քաղաքականութիւնը։ Այսօր պատահական չէ, որ Անկարան զինում է Ադրբեջանին, մնալով ինքը այսպէս ասած «մաքուր», նա թաքուն է ամէն ինչ անում, եւ անում է Պարսկաստանի հողով եւ ո՛չ Իրանի պետութեան պաշտօնական թելադրանքով։ Ընդամէնը օգտագործում է այսպէս կոչւած Հիւսիսային Պարսկաստանի միջոցները, հնարաւորութիւնները եւ այն իրողութիւնը, որ սահմանը բաց է։ Եւ զինւում է թուրքը, որովհետեւ ադրբեջանցիները այսօր իրենց անշուշտ թուրքեր են համարում եւ Ադրբեջան բառից նրանք կը հրաժարւեն, էս է կ՚անցնեն լատինական տառերի եւ դա նրանց լրիւ կը մօտեցնի, որովհետեւ արդէն կոմպիւտերն էլ կը լինի նոյն տարրերով, նոյն լեզւով, եւ սա շատ մեծ

բան կը տայ նրանց: Եւ այն ժամանակ մենք կը հասկանանք, որ սա է պանթիւրքիզմը, այս Ադրբեջանը դարձնելով մի հզօր Թուրքիա: Սա տերմինի հարց չի, այլ քաղաքականութեան:

ԷԴԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ – Ուզում եմ մի հարց տալ: Իսկապէս էդ ինչ որ դու ասում ես, ճի՛շտ է: Բայց իմ հարցը բոլորովին ուրիշ է: Էդ մասին գիտե՞ն ռուսները, թէ չէ: Այսինքն, մենք այն վիճակում ենք, որ ռուսները չգիտեն ի՛նչ է տեղի ունենում, մենք՝ հայերս, պիտի դրանք հասկացնենք նրանց եւ ռուսներին դարձնենք մեր դաշնակիցները, որովհետեւ նրանց աչքերը բացեցինք: Գիտե՞ն իրենք, որ Թուրքիան զինւում է, գիտե՞ն իրենք, որ էդ սահմանը բացւեց: Այդ ամէնը նրանք չգիտե՞ն եւ մենք պիտի նրանց աչքերը բացե՞նք, թէ այդ իրենք գիտեն եւ իրենց հաշիւներով տեսնում են, որ այնուամենայնիւ իրենց համար պրօթուրքական այսպէս ասած քաղաքականութիւնը աւելի ձեռնտու է քաղաքականօրէն, քան թէ պրօհայկականը: Այ, էս հարցն է: Եթէ իսկապէս ռուսները էնքան միամիտ են, որ էդ ամէն ինչը գիտեն, մեր պարտքն է նրանց աչքերը բացել, եւ բացելուց յետոյ նրանք կ՚ասեն՝ «օ՛, էս ի՞նչ կեղտի մէջ ենք ընկել, որ հիմա հայերը իսկապէս մեր դաշնակիցն են»: Էս հարցը եթէ պարզւի, էն ժամանակ մեր անելիքները հասկանալի կը լինեն: Եւ էս հարցի մէջ էլ է մտնում նշանակութիւնը այն բանի, որ ես ինչի եմ ասում, թէ թուլանում է պանթիւրքիզմը, որովհետեւ եթէ այսօր Նիւ Եորք ամէն վայրկեան մի օդանաւ է իջնում, էս պայմաններում ի՛նչ նշանակութիւն ունի Թուրքիայի աշխարհագրական դիրքը՝ Բոսֆորը, Դարդանելը, որը ժամանակին մեծ նշանակութիւն ունէին: Էս իմաստով եմ ասում, որ Թուրքիան այլեւս ստրատեգիական արժէք չի ներկայացնում, որովհետեւ ընդհանրապէս ՆԱՏՕն կարող է վերանալ: Բայց ինձ համար կարեւոր է միւս հարցը, ռուսները գիտեն թէ չգիտեն:

ՋՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆ - Ես գիտեմ, որ դու շատ քաջատեղեակ ես, բոլոր թերթերը ստանում ես եւ կարդացել ես այս հարցի շուրջ բոլոր նիւթերը եւ վէճերը, եթէ յիշում ես թերթերում եւ յատկապէս «Աւանգարդ»ում տպագրւած էր մի յօդւած, պանթիւրքիզմի քարտէզով, որը վերաբերում էր իմ եւ Վաչագան Գրիգորեանի այցելութեանը գլխաւոր շտաբի պետի մօտ, որտեղ հաւաքւել էին մեր այս ռեգիոնի բոլոր մասնագէտները- իրանագէտ, թուրքագէտ, գեներալներ: Պատահական չէ, որ մենք մտածել ենք, որ անպայման պէտք է գնանք խօսենք դրանց հետ, ոչ թէ խրատ տանք, կամ մի բան սովորեցնենք, այլ տեսնենք, թէ ի՛նչ են մտածում այս մարդիկ: Եւ ասեմ, որ Յունիս 19ին, նոյնիսկ մեզ որ ընդունեց Գորբաչեւը, Ռիժկովի, Չեբրիկովի (Կա.Գէ.Բէ.ի պետը) հետ միասին, եւ մենք ղարաբաղցիներս եղել ենք տասը հոգի, Վոլսկին էլ էր մեզ հետ, սկսեցինք այս հարցով, որովհետեւ յաջորդ օրը Ռաֆսանջանին պէտք է գար Մոսկւա: Ես կարդացի մի նիւթ՝ այսպէս ասած «ո՛վ է ով», նկատի ունենալով ե՛ւ Իրանը, ե՛ւ

Թուրքիան, եւ յետոյ անցնելով Ղարաբաղի հարցին, ասացի, որ «դուք հրաման տուէք, որ մեզ ընդունի գլխաւոր շտաբի պետը, ամենաբարձր մակարդակով: Վերջ ի վերջոյ մեր աշխարհաքաղաքականութիւնը, գէօպոլիտիկան, միւս բոլոր 14 հանրապետութիւններից ուրիշ է եւ մենք պէտք է սրա մասին մտածենք, չասենք, թէ վտանգը կայ, թէ չկայ»: Եթէ «կայ, չկան» վիճելի է, ուրեմն վտանգը կայ եւ մենք պէտք է ելնենք դրանից, որովհետեւ թուրքը միշտ մնում է թուրք: Եւ գնացինք, ամենաբարձր մակարդակով ընդունեցին, գեներալ Մայիսէնան ընդունեց: Մի ամբողջ օր այնտեղ էինք, երկու զեկուցում կարդացինք: Նրանց ասացինք, որ մենք գտնւում ենք այստեղ, իսկ այնտեղ Թուրքիան է՝ իր ամերիկեան բազաներով, որոնք օդից կախուած չեն, վերջ ի վերջոյ հողի վրայ են եւ այսօր դրանք Թուրքիայինը չեն, վաղը միւս օրը նրանն են լինելու, նրանց թնդանօթները ուղղուած են դէպի Երեւան, Մոսկւա, եւայլն, եւայլն: Սա մեզ մտահոգում է, ոնց մտահոգում էր Քենեդիին, երբ մեր ռակէտային բազաները տարանք դրեցինք Կուբայում, նա ասաց՝ «Սա ի՞նչ է պատահել, որ իմ քթի տակ էսպէս բաներ էք անում» եւ սկսւեց այսպէս կոչուած Կարայիբեան այդ ճգնաժամը: Հիմա նոյն բանն էլ էստեղ է եւ ասացինք, թէ մեզ դա մտահոգում է եւ եկէք մտածենք, թէ ինչ է իրենից ներկայացնում այսօրւայ պանթիւրքիզմը: Ես ասեմ, որ անշուշտ մենք չենք բացում դրանց աչքերը, շատ լաւ էլ բաց են, եւ դա ցաւալի է ինձ համար, որ շատ լաւ էլ գիտեն: Շատ լաւ գիտեն ինչ է իրենից ներկայացնում Պարսկաստանը, ինչ է իրենից ներկայացնում Թուրքիան: Եւ ասեմ, որ շատ լաւ գիտեն իրենց պատմութիւնը. ռուսը ունեցել է մի դարաւոր թշնամի, ինչ պատերազմ ունեցել է Եւրոպայի հետ, դա եղել է կարճ ժամանակւայ համար, իսկ Թուրքիայի հետ թշնամութիւնը եղել է աւանդական: Եւ շատ լաւ գիտեն այս վտանգը, այս ռումբի պայթեցումը, որ ապագային կարող է պատահել, մահմեդականութեան աճը, եւայլն: Շատ լաւ գիտեն, որ թուրքն ու թաթարը նոյնը չեն, որ թուրքն ու ուզբեկը նոյնը չեն, որ Ուզբեկիստանը պանթիւրքիզմը չի ընդունում, որ Իրանը անշուշտ թշնամի է պանթիւրքիզմին: Ուրեմն այս բոլորը պէտք չէ կրօնների հետ խառնել, չպէտք է ասել, որ մեզ թշնամացնում են իսլամական աշխարհի հետ: Ընդհակառակը, շատ լաւ են մեզ հասկացել է՛ւ Ուզբեկիստանում, է՛ւ թաթարները, է՛ւ Պարսկաստանում:

Ուրեմն մենք մեզ պէտք չէ խաբենք, տեսական հարցերի շուրջ վէճի մտնելով: Իմանանք, որ Թուրքիան ունի իր նպատակը, որ երբեք չի դիմանալու նա, որքան ուժեղանայ հայը, այնքան էլ մտահոգւած ինքը պիտի լինի նա, եւ դրա համար էլ ամէն բան անում է Ադրբեջանի ձեռքով: Եւ ամենագլխաւորը զէնքն է: Զինւում է, զինւում է, զինւում է Ադրբեջանը: Դրա մասին մենք չպէտք է մոռանանք:

ՀԱՐՑՈՒՄ - Հայաստանի մէջ գործող աւելի քան եօթանասուն կազմակերպութիւնները միասնական չեն: Ունինք այն մտավախութիւնը, որ միասնականութեան հասնիլը բաւական երկար ժամանակ կրնայ խլել: Այս հարցի մասին կ'ուզէինք լսել ձեր կարծիքը: Իսկական միասնականութիւն ստեղծելու համար ենթահող կա՞յ: Ոչ-ֆորմալ կազմակերպութիւնները տրամադի՞ր են եւ կրնա՞ն ստեղծել միասնական ճակատ մը: Այս հարցի գծով կ'ուզենք ձեր ուշադրութեան յանձնել նորագոյն փաստ մը: Մայիս 20ի ընտրութիւններէն ետք, համայնավար կուսակցութիւնն ու ՀՀՇ կազմակերպութիւնը քոալիսիոն կառավարութիւն կազմելու մասին կը խօսին: Մինչդեռ ՀՀՇ կրնար խորհրդարանական մեծամասնութեան տիրանալ՝ գործակցելով մնացեալ ոչ-ֆորմալ կազմակերպութիւններու կողմէ ընտրուածներու հետ:

ՋՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆ - Առաջ էսպիսի հարցեր տալիս էինք մենք Սփիւռքում, որովհետեւ գիտէք եօթանասուն տարի մեզ պարտադրել էին միայն մի կուսակցութիւն, մի իշխանութիւն, պրոբլեմ էլ չկար, էսպէս ասած տէր կար, «միասնութիւն» կար, բոլորս «մի բռունցք» էինք, եւայլն, եւայլն: Պէտք է ասեմ, որ այս հարցը հիմա դառել է այնպէս, ոնց որ սկզբում եւ հիմա էլ Սփիւռքում կար: Միթէ զարմանալի բան կա՞յ, որ Սփիւռքը այսօր՝ հայրենիքից զրկւած, սփռւած աշխարհով մէկ, չունի այդ միասնականութիւնը: Եւ նոյն եօթանասունն է, ես կարող եմ հաշւել: Երեք կուսակցութիւններից բացի հազարումէկ հաստատութիւններ կան: Դրանցից ոմանք իրար հետ լաւ չեն, նոյնիսկ իրար հակասում են, եւայլն: Ուրեմն, սա ոչ թէ բնորոշ է հայութեանը, հայկական հիւանդութիւն է, այլ միշտ էլ եղել է եւ միշտ կը լինի այնտեղ, որտեղ քաղաքական կեանք է գնում եւ իւրաքանչիւրը տեսնելով, որ ժամանակն է անցնում եւ նպատակին չեն հասնում, ցանկանում է ինքը իր ճանապարհով գնալ:

Միասնականութեան հարցը ես տեսնում եմ միայն ստրատեգիական հարցերում, դա պաշտպանութիւնն է, դա կեանքի ապահովութիւնն է, դա տնտեսական բարելաւումն է, ոտքի կանգնելն է, ստրատեգիական հարցերի լուծումն է, եւայլն, եւայլն:

Ո՞րն է այն ուժը, որ պէտք է զբաղւի այդ հարցով եւ այնպէս անի, որ միանան բոլորը: Ես կարծում եմ առաջին հերթին պատասխան պէտք է տամ, ընդ որում՝ ժամանակը: Գիտէք, մանկական հիւանդութիւններ կան, որոնք իրենց ժամկէտը պէտք է անցնեն, որքան էլ որ դեղեր տաս: Նոյն բանի մասին ժամանակին Լենինն է գրել: Դա պէտք է մենք անցնենք: Յատկապէս հիմա, նորից եմ կրկնում, որ ամբողջ ժողովրդի հոգեբանութիւնը լրիւ քայքայւած է, դա այն է, ինչ որ գալիս է Սումգայիթից, Բագւից, Սպիտակից, եւայլն, որոնք միեւնոյն ժամանակ են եկել եւ դա շատ է, այսօր ժողովուրդը գտնւում է ահաւոր վիճակում: Եթէ դուք էնտեղ լինէք, կը տեսնէք, որ ամէն օր ինչ է տպագրւում թերթե-

րում, ի՛նչ է ցոյց տրւում կենտրոնական հեռուստատեսութիւնից, կարծես թէ իրօք ամէն բան արւում է հայի դէմ:

Ժամանակն է, որ իր դերը պիտի կատարի, եւ այդ կացութիւնը երկար չի տեւի, նկատի ունենալով առհասարակ մեր իրավիճակը:

Ինչ վերաբերում է այս ընտրութիւններին, ես տեսնում եմ, թէ ինչպիսի հետաքրքրութիւն կայ արտասահմանում: Սա գալիս է նրանից, որ բոլորդ ապրում էք ոչ թէ քաղաքակրթւած երկրներում, այլ դեմոկրատացւած երկրներում, որտեղ մեծ դեր ունեն պառլամենտները: Օրինակ, եթէ Ամերիկայի սենատը մի որոշում անցկացրեց, դա դառնում է օրէնք եւ դժւար թէ չաշխատի այն (ոնց որ ասում են մեզ մօտ): Եւ չեմ կարծում, որ Ամերիկայի մի նահանգի պառլամենտի որոշումները մի ինչ որ կարեւոր դեր են խաղում երկրում, կամ նոյնիսկ տւեալ նահանգում (բացի որոշ փոքր օրէնքներից): Բոլորը գործում են մի սահմանադրութեամբ: Սա ասելով, ես ուզում եմ նմանեցնել խորհրդային հանրապետութիւնները ամերիկեան նահանգներին: Հիմա մենք մի կողմից ապրում ենք մի՛ երկրում, ուզած չուզած ենթարկւելով մի՛ սահմանադրութեան, որովհետեւ այդ մէկ սահմանադրութեան տէրը ոչ միայն Կրեմլն է, այլ մէ՛կ մինիստրութիւն է: Ներքին ապահովութեան ուժերը ենթարկւում են միայն Մոսկւային եւ ուրիշ ոչ մ հանրապետութեան, սահմանապահ զինւորականները Կա.Գէ.Բէ.ին եւ ենթարկւում եւ ոչ մի ուրիշ հանրապետութեան: Ես սրանով ուզում եմ ցոյց տալ հնարաւորութիւնները հանրապետութիւններում: Հանրապետութիւններում, սկսած Ռուսաստանի հանրապետութիւնով եւ վերջացրած Ուկրաինայով, կայացւած որոշումները չպէտք է ընդունել, ոնց որ էստեղ էք ընդունում: Քանի՞ տոկոսն է ՀՀՇ, քանի՞ տոկոսն է համայնավար, քանի՞ տոկոսն է ապարատից, երբ այսպիսի բաներ եմ լսում, ծիծաղում եմ այդ տոկոսների վրայ, որովհետեւ նախկինում մեր Գերագոյն Խորհրդի մէջ ընդամենը 1,5 տոկոսը, 3 դեպուտատ են եղել ՀՀՇ-ից եւ շատ յաճախ կարողացել են 100 տոկոսով, միաձայն անցկացնել հազարումէկ որոշումներ: Այստեղ տոկոսի հարցը նոյնիսկ ծիծաղելի է: Բայց ես ասեմ, եթէ ձեզ շատ է մտահոգում այս տոկոսական յարաբերութիւնները, այս անգամ արդէն այն չի, ինչ որ եղել է առաջ, Դեմիրճեանի ժամանակ ընտրւած պարլամենտը: Այս անգամ այստեղ արդէն (չգիտեմ ՀԱԲ-ի ներկայացուցիչները ինչ տեսակ են իրենց պահելու) այդ 70 կազմակերպութիւնների ներկայացուցիչները որոշ չափով կան- մէկը լինի, երկուսը լինի, մի տեղ էլ երեսուն լինի, դա նշանակութիւն չունի. այստեղ նշանակութիւն չունի նոյնիսկ ինչ որոշում ենք կայացնելու: Մենք ի վերջոյ 1989ի Դեկտեմբերի 2-ին փայլուն որոշում կայացրինք- միացնել- միացած են արդէն, ես այդպէս եմ համարում- Հայաստանն ու Ղարաբաղը: Բայց ոչ մէկը չգիտի, որ Դեկտեմբերի 4ին Ադրբեջանը անցաւ սահմանը եւ մինչեւ հիմա զնում-

գալիս են ե՛ւ Թուրքիա, ե՛ւ Պարսկաստան (մենք դա Յունւարին իմացանք)։ Այ, դա է իրականութիւնը, կամ այն ինչ որ արեցին Բագւում, եւ պրովոկացիա անելով, որ «նայեցէք, թէ ո՛վ է եղել մեղաւորը, դուք էք եղել», Կրեմլում այդպէս ասացին ամբիոնից, եւ դա ամենամեծ սրիկայութիւնն է։ Եւ հայերը նայում էին եւ անշուշտ թքոտում էին, դժւար է, որ այդ ժողովուրդը դառնայ գործ բռնի, որովհետեւ ամէն ինչ աչքով տեսնում էին։ Բայց երբ որ ամբիոնից պաշտօնատարը այդպիսի բան է ասում, դա չի նշանակում, որ ռուս ժողովուրդն է այդպէս մտածում։ Ռուս ժողովուրդը այսօր համարեա ոչ մի բանի մասին չի մտածում, բացի նրանից, որ պէտք է իր երեխային վերջ ի վերջոյ հաց տայ։ Չպէտք է կարծել, թէ ռուս ժողովուրդը մի էսպիսի արդէն կերած –խմած հանգիստ ժողովուրդ է, որ դիւանաբաշի է եւ գնում են նրա մօտ, որ հարց լուծի։ Այդպէս չէ, ինքը իր պրոբլեմները ունի եւ գիտենք, որ ժամանակ առ ժամանակ թքել է բոլորի վրայ, յատկապէս եթէ տեսնում է վտանգ չկայ իրեն։ Նա գիտէ, որ դա վտանգաւոր չի եւ այս միտքը չեն թաքցնում Կրեմլում, որ ոչ Ղարաբաղն է վտանգաւոր իրենց համար, ոչ Աղրբեջանն է վտանգաւոր, ոչ Կիրգիզիան, ոչ Մերձբալտիկան։ Իրենց համար վտանգաւորն այն է (էդ իրենք են ասում, կարող եմ բոլորի անունները տալ, ով ասում է ղեկավարներից, ե՛ւ պրեզիդենտի խորհրդի անդամներ, ե՛ւ պոլիտբիւրոյի, եւայլն, եւայլ), որ Ռուսաստանն է վտանգաւոր, որ կարող է ոտքի ելնել։

Ուրեմն այստեղ մենք չպէտք է, ոնց որ Սփիւռքում մոռանում են այս տոկոսները, կարծենք, թէ մեր ճակատագիրը լուծւելու է մեր պարլամենտում։ Մեր ճակատագիրը կարող է լուծւի մեր պարլամենտում, ոնց որ հիմա երազում ենք, միայն այն ժամանակ, երբ հինգ տարուց եթէ ամէն բան լաւ լինի, ոնց որ Էդիկը ասաց՝ տնտեսապէս ու հազար մի բանով ոտքի կանգնած, հասունացած դու կը լինես իրական անկախ եւ դեմոկրատացւած երկրում, պերեստրոյկայի ժողովուրդը, որը իր տաղանդը, իր ունակութիւնը կը կարողանայ օգտագործի եւ այն, ինչ որ անում են Ճապոնիայում, Բելգիայում, որտեղ որ չունեն հարստութիւն, բայց ունեն խելք, ունեն փորձ, ունեն ճշգրիտ հաստոցների վրայ աշխատող մարդիկ։ Եւ այդտեղ արդէն անշուշտ այս պարլամենտը, որի օրէնքները պէտք է իրականանան, մեծ նշանակութիւն ունի։ Բայց այսօր կարեւորը այդ չէ։ Այսօր չգիտենք վաղը ինչ կը լինի Մոսկւայում (ոչ մի հանրապետութիւն չունի ինքնաթիռներ. այդ բոլորը տրւած են Մոսկւայի կողմից ժամանակաւոր կերպով եւ ենթարկւում են Մոսկւային, բոլոր չւացուցակները Մոսկըւայում են հաստատւում – քանի թռիչք պէտք է լինի Երեւան-Ստեփանակերտ, Երեւան-Մարտակերտ, եւայլն, այդ բոլորը Մոսկւան է անում)։ Այսօր չմտածել, որ Ղարաբաղը գտնւում է պլոկադայի մէջ, պաշարման մէջ, ահաւոր վիճակի մէջ յանցանք է։ Այս պահին թուրքերը տներ են կառուցում ծիծաղելով մեզ

վրայ, իսկ մենք ամբողջ ամառը մտածել ենք - ե՛ւ Սփիւռքում, ե՛ւ Հայաստանում – թէ քանի տոկոսն է ՀՀՇից, քանի տոկոսն է ուրիշ տեղից, եւայլն, եւայլն: Հերիք է խա՛ղ խաղանք, հերիք է մենք կարծենք, թէ այնքան ենք հասունացել, այնքան ենք պետութիւն դարձել, որ կարող ենք այսպիսի ճանապարհով մենք մեզ փրկել, չունենալով ո՛չ մի փամփուշտ- փամփուշտ ունենալը չի նշանակում, որ դա ունես, մի անգամ կրակում ես եւ արդէն երկրորդ անգամ չես կարող, պիտի արտադրես-, մենք դա չունենք եւ լրջօրէն պէտք է մօտենանք այս հարցին: Մենք ունենք խիզախ տղերք, ունենք նոր սերունդ ֆիդայի (չեմ ասում նրանք, ովքեր այդ ֆիդայիզմի դրօշի տակ հազարումէկ յանցագործութիւն են անում, դա արդէն միշտ էլ է եղել, մաֆիան միշտ է եղել, յանցագործները միշտ են եղել եւ դուք այստեղ չպէտք է կարծէք, թէ այնտեղ ի՛նչ է կատարւում. կատարւում է այն, ինչ կեանքում միշտ է կատարւել: Գոլդա Մեյիրին ասեցին «էս ինչ արեցիր, քսան դարուց յետոյ պետութիւն ստեղծեցինք, երկու հազար տարի դրա մասին ենք մտածել, հիմա այնտեղ բռնութիւն կայ, բռնակալութիւն կայ, մարդասպանութիւն կայ, եւայլն», իսկ նա ասաց՝ «ուրեմն, կամաց-կամաց մենք դառնում ենք պետութիւն, եթէ բոլոր բաները կան, մենք պէտք է պայքարենք դրանց դէմ»): Մենք պէտք է դառնանք պետութիւն, յետոյ արդէն մտածենք նրա մասին, թէ ո՛նց ենք ապրելու մե՛ր օրէնքներով:

Այսօր մեր առջեւ դրւածը «լինել թէ չլինելու» հարցն է, եւ պէտք է մտածել, թէ ումից է կախւած այդ լինելը (չլինելը գիտենք ումից է կախւած) եւ ո՛նց պիտի անենք: Որովհետեւ միայն ասել, թէ հայ ժողովուրդը միայն իր ուժերի վրայ պէտք է յենւի, էդ ճիշտ է, ոնց որ Իսրայէլը: Բայց Իսրյաէլը հօ դատարկ ուժերի վրայ չէ կանգնած, տեսնում եմ նկարները, էդ աղջկերքը հպարտութեամբ են կանգնած՝ զէնքը ձեռին, եւ այնտեղ նոյնիսկ մրցում է, եթէ մէկին ազատում են եւ չեն թողնում գնայ բանակ՝ հիւանդութեան պատճառով, նա լաց է լինում: Բայց այնտեղ ամուր է ամէն ինչ այդ հարցում, ե՛ւ զէնք ունեն, ե՛ւ ամէն ինչ ունեն: Ուրեմն չեն տեսնում, որ այստեղ հարցադրումը, որ դնում էք այդքան շատ լրջութեամբ, պէտք է քննւի, որովհետեւ մենք ուրիշ լուրջ պրոբլեմներ ունենք եւ ամենալուրջը սա չի, որի մասին ամէն տեղ խօսում են:

Իսկ ինչ վերաբերում է այս կոալիցիոն կառավարութեանը, ես չեմ հաւատում, որ դա ճիշտ է, որ Լեւոն Տէր Պետրոսեանը այդպիսի բան է յայտարարել, թէկուզ եւ Ժընեւում էի, երբ «Լիբերասիոն»ում հրատարակւեց դրա մասին: Ըստ իմ տեւելների եւ միասին մեր զրոյցների – չեմ ասում, որ ես միամիտ եմ- անընդհատ լսել եմ, որ իշխանութեան գլուխ գալու ո՛չ մի նպատակ չունեն: Եւ ես գիտեմ, եթէ այդպիսի բան անեն, նրանց վերջին օրը կը լինի, որովհետեւ նրանք, ովքեր թողած այս պայքարը անպայման ուզում են հասնել այդ աթոռին եւ իմանալով որ այդ աթոռով հարցերը չեն լուծելու, նրանք կը տապալւեն

եւ կը տուժի ժողովուրդը: Այսօր ոչ մի յեղափոխական – թէկուզ միշտ ասում են, որ իւրաքանչիւր յեղափոխութիւն վերջ ի վերջոյ իշխանութեան պայքար է հարցը այսպէս դնելու չէ, այլ պէտք է մտածի վաղւայ մասին, իր անելիքների մասին եւ ոչ թէ ո՛վ է իշխելու: Այսօր նոյնիսկ մեր ոստիկանութիւնն էլ զինւած չէ, պետութիւնը զէնք չի տալիս նրանց, չի տալիս այն զէնքը, որ նրանից խլեցին: Էդ ի՛նչ պէտք է անենք, ինչպէ՛ս պիտի անենք:

Ես չգիտեմ, պէտք է գնամ իմանամ դա ի՛նչ կոալիցիոն կառավարութիւն է: Ի՛նչ ասել է կոալիցիոն: Մենշեւիկ-բոլշեւիկները ուրիշ էին, էստեղ ուրիշ է: Դա ի՞նչ է, կուսակցութի՞ւն է, ուզում է համայնավար կուսակցութեան հետ կոալիցիոն կառավարութիւն կազմել, օպոզիցիա է, ի՞նչ է: Ես չեմ հասկանում. էդ բառի իմաստը հասկանում եմ, սակայն չեմ հասկանում դա ո՛նց իրականութիւն կը լինի Հայաստանում: Մի ամիս է էստեղ եմ, պիտի գնամ տեսնեմ, թէ ի՞նչ կոիլիցիայի հարց է դա: Չեմ կարող այս հարցին պատասխան տալ:

ԷԴԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ – Հայաստանում տարբեր կազմակերպութիւնների ծնւելը բնական էր, բնական էր մեր ժողովրդի համար, որովհետեւ դարեր շարունակ պետութիւնից զուրկ՝ չկարողացանք ունենալ պետական նկարագիր, պետական մտածելակերպ, եւ առաջին իսկ ազատութիւնները պէտք է առաջացնէին այդ բանը: Ասեմ, որ մենակ մենք չենք: Մեր հարեւան վրացիները ունեն 126 կազմակերպութիւն, այսինքն մեզ էդ տեսանկիւնից անցել են նրանք: Եւ բնական էր, որ ամէն մի մտածելակերպ, ամէն մի գաղափար մի կուսակցութիւն է ստեղծում:

Հարցը, կարեւորը եւ դժւարինը այդ խմբաւորութիւնների միասնութիւնն է: Ի՞նչ ճանապարհով կարելի է ստեղծել նման միասնութիւն: Ես կարծում եմ, որ կայ երկու ճանապարհ: Առաջինը համարում եմ երիցս սխալ, երբ միասնութիւնը ինքնանպատակ է: Այսինքն միանանք բոլորս այնքան, որ անունը լինի, որ հայ ժողովուրդը միասնական ինչ որ մարմին է…

ՋՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆ - Արդէն եղել է եօթանասուն տարի այդպէս:

ԷԴԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ - Այս միասնականութիւնը յանուն միասնականութեան բերում է նրան, որ ամէն մի խումբ զիջումներ է կատարում հակառակորդին եւ էդ զիջումներից ստացւում է մի տափակ բան, ոչ միս ոչ ձուկ, ինչ որ խառնուրդ. չեմ ընդունում էդ միասնութիւնը ոչ Հայաստանում եւ ոչ էլ Սփիւռքում: Եթէ Սփիւռքում էլ պիտի էդպիսի միասնութիւն լինի, Հնչակեան, Ռամկավար, Դաշնակցութիւն պիտի նստեն էնքան որ միասին լինեն, բայց ռամկավարն մեզ ասի՝ «գիտէք, դուք հրաժարւէք յեղափոխական այս ինչ գաղափարից, հրաժարւէք Միացեալից, եւայլն», ես էլ ասեմ «յանուն միասնութեան հրաժարւում եմ», եւ նա էլ հրաժարւի յանուն միասնութեան իր արժէքներից,

էդ ստեղծւած մարմինը կը լինի ոչինչ, քաղաքական հէնց զրօ: Ուրեմն էդ ճանապարհը բացառւած է:

Միասնութիւն պէտք է տեղի ունենայ որեւէ քաղաքական գծի, որեւէ ազգային դոկտրինի, որեւէ գաղափարի շուրջ, էս միասնութիւնը մեզ համար կարեւոր է: Հնարաւո՞ր է նման միասնութիւն այդ 70 կամ 80 կազմակերպութիւնների միջեւ Հայաստանում: Ի՞նչ դոկտրին կայ, ի՞նչ գաղափար կայ, որի շուրջ այս կազմակերպութիւնները կարող էին միանալ: Առայժմ մենք տեսնում ենք մէկ գաղափար՝ իշխանութեան գլուխ անցնել: Սա համարւում է չափազանց սխալ գաղափար, հետեւալ պատճառներով - Արդեօ՞ք մենք պարզել ենք, որ իշխանութեան գլուխ գալուց յետոյ, եթէ Մարգարեանցի տեղ նստի Զօրի Բալայեանը, Տէր Պետրոսեանը կամ ես, արդեօ՞ք աւելին կարող ենք անել, քան անում է Մարգարեանցը: Արդեօ՞ք իշխանութեան գլուխ գալուց յետոյ, ՀՀՇ կը լինի, Դաշնակցութիւն կը լինի, կամ որեւէ կազմակերպութիւն, Հայաստանի էս պայմաններում կարո՞ղ է արդեօք մեծ խնդիրներում աւելի շատ բան անել, քան անում են եղածները: Կարծում եմ, որ ոչ: Մանր հարցերում կարելի է, մէկ դպրոց աւել բացել, հայկական ժամերը աւելացնել, կաշառք չվերցնել, մի խօսքով այն թերութիւնները, որոնք մարդկային են նրանից է, որ տգէտ են, փորձը չունեն, կարող է փոխուեն: Բայց մեծ հարցերում՝ Ղարաբաղի հարցում, տնտեսական անկախութեան հարցում, եւայլն, չեմ կարծում, որ նոր իշխանութիւնը կարող է անել աւելի շատ՝ կառավարական դիրքերից, քան ընդդիմադիր: Ընդհակառակը, ես կարծում եմ, որ որեւէ առողջ տարր, կամ առողջ միասնութիւն, եթէ մնայ ընդդիմադիր դիրքերի վրայ, կարող է աւելին անել, ստիպելով կառավարութեանը այս կամ այն հարցը լուծելու, քան եթէ ինքը դառնայ իշխանութիւն: Օրինակ ենթադրենք, որ Տէր Պետրոսեանը դարձել է վարչապետ: Ինքը չի կարող վարչապետի դիրքերից ժողովուրդին ցոյցի կանչել: Բայց եթէ ինքը մնայ ընդդիմադիր դիրքերի վրայ, ինքը կարող է ժողովուրդին ցոյցի հրաւիրել այս կամ այն խնդրի վերաբերեալ: Ուրեմն էդ ճանապարհը ես համարում եմ սխալ, մանաւանդ կոալիցիոնը՝ կոմունիստների հետ: Եթէ անհրաժեշտ էր փոփոխութիւններ կատարել, ապա հէնց այս բնագաւառում կատարել, որ էն հին կոմունիստներին, որոնք նստած են իրենց աթոռների վրայ, ազատել եւ բերել թէկուզ եւ նոր կոմունիստների, բայց նոր մտածելակերպ ունեցող, այդ պարագային այս ճանապարհը կը լինէր ճիշտ:

Իսկ եթէ սա սխալ էր – իմ կարծիքով անշո՛ւշտ-, կարո՞ղ է արդեօք այսօր գոյութիւն ունենալ այնպիսի մի ուղղութիւն, այնպիսի մի ռազմավարութիւն, այնպիսի մի մարտավարութիւն, որի շուրջ հաւաքւեն բոլոր կազմակերպութիւնները: Ես կարծում եմ, որ կարող է, բայց դա պէտք է լուրջ մշակւի, շատ լուրջ վերլուծութիւնների ենթարկւի եւ Սփիւռքի մասնակցութեամբ, յատկա-

պէս Սփիւռքի ամենակազմակերպւած եւ ամենաուժեղ կազմակերպութեան, այսինքն՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան օգնութեամբ, նրա փորձից ելնելով, նրա հարիւրամեայ քաղաքական փորձից ելնելով պէտք է կազմւի այն ուղղութիւնը, որի շուրջ պէտք է հաւաքւեն բոլոր կազմակերպութիւնները: Այսինքն մենք պէտք է վերադառնանք 90 թւականներին, երբ կացութիւնը նոյնն էր, երբ կային սոցիալ-յեղափոխականներ, կային կադետներ, կային հայ ֆիդայիներ, կային հնչակեաններ, այսինքն յեղափոխականներով լեցուն էր Հայոց Աշխարհը, եւ Հ.Յ. Դաշնակցութիւնը եկաւ ստեղծելու «Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւն»: Եւ ստեղծեց նախ իր ծրագրով, Արեւմտեան Հայաստանի հարցերը լուծելու առաջադրանքներով, այսինքն կար մի գիծ, որի շուրջ դրանք հաւաքւեցին: Այսօր այդ գիծը բացակայում է, եւ այսօր ես չեմ տեսնում որեւէ միասնութեան նախ անհրաժեշտութիւն - եթէ պիտի լինի միասնութիւն յանուն միասնութեան - եւ երկրորդը չեմ տեսնում այն գիծը, որի շուրջը այդ բոլոր տարբեր կազմակերպութիւնները – որոնցից մէկը անկախութիւն է ուզում, մէկը զինեալ պայքար է ուզում, մէկը Ղարաբաղի միացումն է ուզում - դրանց միացնելու համար ես չեմ տեսնում այն գիծը, այն ուղղութիւնը, որ կարող էր դա անել:

ՋՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆ-Բայց եթէ կացութիւնը նոյնն է ինչ-որ եղել է 90ական թւականներին եւ դու օրինակ ես բերում Դաշնակցութեան կուսակցութիւնը, որի հարիւրամեակն է այս տարի եւ որ անշուշտ դա արդէն մեծ բան է, եւ ուզում ես որ բոլոր ուժերը համախմբւեն այդ կուսակցութեան շուրջը՝ ստրատեգիական առումով, նկատի ունենալով իր փորձը 90ական թւականներին, ֆիդայական շարժումը, ինչո՞ւ ես մոռանում, որ այդ բոլորը բերեցին վերջ ի վերջոյ ոչ յաղթանակի: Չեմ ուզում խորանանք պատճառների մէջ, որովհետեւ հիմա էլ կարող են նոյն այդպիսի պատճառները լինեն, Աբդիւլ Համիդը, Նէօ-Աբդիւլ Համիդը, կամ երիտ-թուրքերը, նոյն շարժումները Ռուսաստանում, Հոկտեմբերեան Յեղափոխութիւնը, բոլշեւիկները, եւայլն, ամէն ինչ կարող է կրկնւել, եթէ մենք ուզենք կրկնենք, ոնց որ դու ես ասում: Մի գուցէ մենք պէտք է ելնենք միայն մե՛ր կացութիւնից, , այսօրւա՛յ վիճակից, ի՛նչ է տեղի ունենում այսօր, ոչ թէ ասենք, որ նմանւում է 1915 կամ 1890 թւականին, եւ ելնենք մեր ուժերից եւ թշնամու դիրքերից եւ նկատի ունենալով այսօրւայ կեանքը, առաւտութիւնները, տեխնիկական, եւայլն, եւայլն: Մի գուցէ այսօր փրկութեան հարցն է դրւած եւ ոչ թէ պէտք է համախմբւենք որեւէ մի կուսակցութեան շուրջ, որը անշուշտ ամենակազմակերպւածն է, ամենաղիսցիպլինա ունեցողն է, այլ մտածենք ինչ անենք, որ ռէալ կերպով այդ փրկութիւնը տեղի ունենայ Հայաստանում եւ յանկարծ չպատահի այն, ինչ որ եղել է 90ական թւականներին եւ 18 թւականին:

ԷԴԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ- Ես նախ ասում եմ հետեւեալը- ոչ թէ Դաշնակցութիւն, որպէս կուսակցութիւն, նրա շուրջը ստեղծի այդ միասնութիւնը, այլ ես ասում եմ, որ անհրաժեշտ է ազգային դոկտրին, ազգային կոնցեպցիա, փուլ առ փուլ առաջ գնալու մեր խնդիրները լուծելու համար: Եւ Հ.Յ.Դաշնակցութիւնը այսօր հայկական քաղաքական հրապարակում միակ կուսակցութիւնն է, որը կարող է այդ դոկտրինը մշակել: Միակ կուսակցութիւնն է՝ իր գործից ելնելով, ժողովուրդի մօտ իր պատմական յարգանքից ելնելով: Ջօրի, դու երեւանցի ես, ինձանից աւելի գիտես գուցէ, որովհետեւ արդէն 18 տարի ես էստեղ չեմ, ի՞նչ ես կարծում, եթէ հիմա իսկապէս ազատութիւն լինի եւ Դաշնակցութիւնը մտնի Հայաստան եւ մասնակցի էդ ընտրութիւններին, չե՞ս կարծում, որ մենք մեծամասնութիւն կը շահենք, գուցէ սխալմամբ, ոչ թէ մեր այսօրւայ գործունէութեան համար, այլ գոնէ մեր պատմական արժէքների համար, գոնէ մեր փորձի համար, գոնէ էս վերջին տարիներին հակաթուրքական պայքարը մղելու արժանիքներից ելնելով, չե՞ս կարծում, որ մենք մեծամասնութիւն կը շահենք: Միտքս ես շարունակեմ, յետոյ դու կը պատասխանես:

Ուրեմն ես ասում եմ այդ դոկտրինի շուրջ հաւաքւելու մասին, միասնութիւն ստեղծել մէկ դոկտրինի շուրջ, որը գոյութիւն չունի եւ որը կարող է ստեղծւել եթէ ոչ Դաշնակցութեան լրիւ, ապա Դաշնակցութեան ամենաակտիւ մասնակցութեամբ: Մինչդեռ մենք տեսնում ենք, որ բոլո՛ր շրջանակները՝ ե՛ւ կոմունիստները, ե՛ւ ՀՀՇն, ե՛ւ բոլոր մնացածները չեն ուզում, կարծես թէ վախենում են Դաշնակցութեան մուտքից, եւ ինչքան կարողանում են, հեռու են պահում Դաշնակցութիւնը, որը ես համարում եմ սխալ: Սա առաջին:

Իսկ քո ասածի երկրորդ մասը, թէ ինչի՛ բերեց 90ական թւականներին, յաղթեցի՞նք: Այո՛, Ջօրի ջան, յաղթեցինք: Էլ յաղթելը ո՞նց է լինում: Մի ժողովուրդ, եկեղեցիներից դուրս եկած, եկեղեցական վեցը դար, եկեղեցական կեանքով ապրող, գիւղացի, գիւղերում «Հորովել» երգելով, յանկարծ զէնք վերցրեց, յանկարծ Սարդարապատ կերտեց, եւ եթէ այսօր Խ. Հայաստանը գոյութիւն ունի, հէնց այդ պայքարի բերումով գոյութիւն ունի: Եթէ դա չլինէր, եթէ Սարդարապատը չլինէր, ապա դու այսօր Հայաստանը կը տեսնէիր բաժանւած Աղրբեջանի եւ Վրաստանի միջեւ: Էնպէս որ ես կարծում եմ, որ այդ 90ական թւականների յեղափոխական շարժումները, Հ.Յ. Դաշնակցութեան ծրագրերը պարտւեցին՝ այն դժւարին պայմաններով հանդերձ, որ մէկ կողմից Թուրքիան, միւս կողմից Ռուսաստանը ճնշում էին: Եւ վերջապէս, եթէ Ռուսական Յեղափոխութիւնը չլինէր, մենք Սեւրի դաշնագիր ունէինք արդէն: Պարզ էր Սեւրի դաշնագիրը եւ մենք կ'ունենանայինք անկախ Հայաստան: Էդ Ռուսական Յեղափոխութիւնն էր, որ չկարողացանք կռահել-էն ժամանակ ո՛վ կարող էր կռահել-եւ պարտութիւն կրեցինք, եթէ սա պարտութիւն կարելի է համա-

րել: Ուրեմն, ես չեմ կարծում, որ 90ական թւականին ստեղծւած շարժումը պարտութիւն կրեց: Փայլուն յաղթանակ տարաւ, բայց պատմութիւնը պատմութիւն է, քաղաքական կացութիւնը կացութիւն է:

Բայց այս երկրորդը պատասխանելու հարց չի: Ես առաջինն եմ ուզում իմանալ. արդեօ՞ք եթէ այսօր մենք մուտք գործենք համապատասխան ծրագրերով, չե՞նք շահի մեծամասնութիւն Հայաստանում:

ՋՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆ- Կամ դու ինձ չես հասկացել եւ կամ ես՝ հարցադրումը: Յաղթանակ-պարտութեան մասին խօսելով, ես ուզում էի ասել, որ այդ ամբողջ շարժումները, կուսակցութիւնները ստեղծւել են Արեւմտեան Հայաստանում, ե՛ւ երգերը, ե՛ւ յատկապէս ֆիդային: Բայց այնտեղ մենք ամէն ինչ կորցրեցինք 15 թւականին եւ փրկութիւնը եկաւ Ռուսական Կայսրութեան մէջ գտնւող հողերի վրայ: Ինչ եւ է, սա արդէն խորանում է, եւ մենք գիտենք, ինչ վնաս է տւել մեզ Հոկտեմբերեան Յեղափոխութիւնը: Ես վերջերս գրեցի դրա մասին մի յօդւած, «**Իմ սերունդը**», որտեղ նոյնիսկ Լենինի մասին նաեւ շատ բաներ կան՝ իր բառերով ասած եւ ոչ թէ իմ մեկնաբանութեամբ: Ես ուզում եմ ասել, որ անշուշտ սխալները մենք պէտք է շտկենք եւ պէտք է փրկւենք ու առաջ գնանք:

Ինչ վերաբերում է քո հարցին, ես քեզանից շատ եմ մտահոգւած դրանով- չգիտեմ թէ ինչո՞ւ- եւ Փարիզում էդ հարցը դրեցի, նաեւ Հրայր Մարուխեանի հետ հանդիպման ժամանակ խօսեցի, որ մեծ մտահոգութիւն ունենք, որ եօթանասուն տարի արգելւած է եղել Դաշնակցութիւնը- եթէ կարելի է այդպէս ասել: Դեմիրճեանը ամէն ելոյթի ժամանակ ասում էր, որ Դաշնակցութիւնը հայ ժողովրդի թիւ մէկ թշնամին է: Յետոյ հրաժարւեց այդ բանաձեւից: Իսկ ժողովրդի մէջ հակառակն էր, ոնց որ միշտ է լինում: Մի քանի հատոր տպագրւեց, մենագրութիւններ տպագրւեցին, հիմա բոլորը անշուշտ չեն խօսում, թէ ինչ են գրել Դաշնակցութեան մասին: Էդ էլ վերցնենք, դէն դնենք: Դաշնակցութեան հեղինակութիւնը շատ մեծ է, եւ ինձ նոյնիսկ մտահոգում է այն ժամանակ, երբ արդէն իրականանայ այն բանաձեւը, որ պէտք ունենանք բազմակուսակցականութիւն, անշուշտ տեղն ու տեղը շատերը կ՚ուզեն ընդունւել Դաշնակցութեան շարքերը: Եւ յանկարծ, մի օրւայ ընթացքում մի քանի հազար ընդունեցին, ովքե՞ր են դրանք, ի՞նչ պիտի անել: Դաշնակցութեան ղեկավարութեան, իր ծրագրով, իր կանոնադրութեամբ, իր սկզբունքներով, իր հազարումէկ նոյնիսկ գաղտնի էապէս փաստաթղթերով գտնւում է էստեղ, իսկ այնտեղ ստեղծւում է ասենք Դաշնակցութեան մասնաճիւղ: Հազարումէկ մարդ կ՚ուզենար մտնել, եթէ դա գրելով լինէր: Նոյնիսկ հիմա, երբ չկայ բազմակուսակցականութեան այդ օրէնքը, արդեն էնտեղ կազմակերպութիւն են ստեղծել, արդէն շէնք կայ՝ վրէն էլ գրած, որ սա Դաշնակցական կուսակցու-

թիւնն է: Դա միայն կարող է վարկաբեկել կուսակցութեան: Անշուշտ կարող են շատ ու շատ մարդիկ մտնեն շարքերը, ընդունեն Դաշնակցութիւնը, քւէ տան Դաշնակցութեան, որովհետեւ փորձը ցոյց է տւել, որ այդ հեղինակութիւնը կայ: Մարդիկ կան, որ կը մտնեն Ռամկավար կուսակցութիւնը, կան որ կը մտնեն Հնչակեան կուսակցութիւնը, կոմունիստական, եւ այլն: Բայց ես մտահոգ եմ, որ դա ո՛նց պէտք է լինի, որովհետեւ դա շատ շուտով կը լինի: Դուք պատրաս՞տ էք այդ բանը անելու, երբ այնտեղ յանկարծ իրենց համարեցին, որ մենք դաշնակցականներ ենք: Ի՞նչ պիտի լինի:

ԷԴԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ – Ոչ, այդպէս չի կարող լինել, ամէն մարդ չի կարող իրեն Դաշնակցութեան անդամ համարել, այլ Դաշնակցութիւնը իր ճանապարհով, իր օրէնքներով, իր կանոնադրութեան համաձայն մարդկանց կը վերցնի իր կուսակցութեան մէջ: Դա ուրիշ հարց է: Դա էն արարողութիւնն է, թէ ինչպէ՞ս մարդ կարող է դառնալ դաշնակցական: Այո, ամէն մարդ չի կարող դառնալ Դաշնակցութեան անդամ, ինչպէս որեւէ կուսակցութեան անդամ: Բայց խօսքը այն մասին է, որ նոյնիսկ մի փոքր խմբակ, արդէն մեզ հետ համաձայնեցւած, եւ ոչ թէ էնպես իրեն յայտարարի Դաշնակցութիւն, եւ ոչ թէ հազար, այլ տասը հոգիանոց մի խմբակ, մեր հովանաւորութեան տակ, եթէ մասնակցի ընտրութիւններին, իր ծրագրով, կարո՞ղ է պատահել, որ մրցի եղածների հետ: Սա կարծիք է, կարող ես ասել, կամ չասել: Եւ ինչքանո՞վ ես դու անհրաժեշտ գտնում, որ Դաշնակցութիւնը մուտք գործի Հայաստան, կա՞յ այդ անհրաժեշտութիւնը:

ՋՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆ - Անպայմա՛ն: Այդ անհրաժեշտութիւնը կայ: Դաշնակցութիւնը, Ռամկավար, Հնչակեան կուսակցութիւնները պէտք է մուտք գործեն Հայաստան այն պահից, երբ գոյութիւն կ'ունենայ այդ օրէնքը՝ համամիութենական եւ մեր հանրապետութեան – իմ կարծիքով, հերիք է միայն հանրապետական - եւ այն պահից ոչ ուշ, արդէն դա կախւած է դէպքերից, պէտք է մուտք գործէք եւ տէր ու տիրական դառնանք այնտեղ, որպէսզի այն մասին, ինչին հարցին հարցով պատասխանեցիր, մտածւի եւ չստեղծւի մի կազմակերպութիւն էնտեղ եւ մի կազմակերպութիւն էստեղ…

ԷԴԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ - Այսինքն այսօրւանից մենք պիտի մտածենք այդ մասին…

ՋՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆ - Այո, մենք գնում ենք դէպի այդ օրէնքը: Եւ մի կուսակցութիւն որ ունի 100 տարւայ պատմութիւն, եւ կամ մի ուրիշը՝ աւելի քիչ, պէտք է մուտք գործեն բոլորը: Դուք էլ պէտք է մուտք գործէք: Մի գուցէ ամենաղժւարը ձեր մուտք գործելն է լինելու: Իրօք շատեր կան, որ ցանկանում են մուտք գործել Դաշնակցութեան մէջ: Բոլորը կարծում էին (մինչեւ հիմա էլ էդ կայ), որ Եռագոյնը Դաշնակցութեան դրօշն է, եւ դրա համար վախենում էին

այդ դրօշը կողք-կողքի դնել Խ. Հայաստանի դրօշի հետ: Ժողովուրդը էդպէս չպէտք է մտածի, որ վախենայ հայկական դրօշը դնել մի ուրիշ հայկական դրօշի հետ, կարծես թէ թուրքի դրօշի կողքին է դնում: Եւ այդ բոլորը կապւած էր Դաշնակցութեան հետ, եւ էդ դեռ կայ ժողովուրդի մէջ: Ուրեմն ես կարծում եմ, որ դուք մտահոգւելու էք մուտք գործելու հարցով եւ ոչ թէ մենք, որովհետեւ այնտեղ մենք պիտի ենթարկւենք բնական օրէնքներին: Էս հարցում մի բան էլ կայ, չպէտք է մոռանանք, այն է որ արգելւած պտուղը փառաւոր է լինում: Յետոյ թերեւս մարդիկ հասկանան, որ էս էն պտուղը չի, դառն է, որովհետեւ ինձ թւում է, թէ դժւար է Դաշնակցութեան օրէնքներին ենթարկւելը:

1990

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐ

Հակառակ Երկրի թէ Արտերկրի մէջ ստեղծուած արուեստական աղմուկին, Ռաֆայէլ Իշխանեանի «Երրորդ ուժի բացառման օրէնքը» յօդուածը, որու նորագոյն տարբերակը (յոյսով ենք, որ ասիկա կ'ըլլայ վերջինը՝ ընթերցողներու համբերութիւնը չարաչար գործածած չըլլալու համար) լոյս տեսաւ «*Գարուն*»ի 1990ի թիւ 1ի մէջ, ըստ ամենայնի նորութիւն չէ: Պարզապէս նորագոյն արձագանգն է հին ու նոր գրչակներու ծանօթ խուժանավարութեան՝ գրչի մէկ հարուածով Հայ Դատը լուծելու և հայ քաղաքական մտքի այլազան երանգապնակը մէկ ջուրով լուանալու: Ասոր կողքին, առաջ քաշուող թեզի սիրողական մակարդակը և անգիտութեան վրայ հիմնուած փաստարկումները աշխատութիւնը հեռու կը պահեն հայ քաղաքական մտքի զարգացման ընթացքի վրայ ներդրում կատարելու կարողութենէն: Ջոյգ այս պատճառներով, «Դրօշակ» ատենին յարմար չնկատեց անդրադառնալ բացառման այս «օրէնքին»: Սակայն հաւատարիմ ազատ բեմի մեր աւանդութեան, ինչպէս նաեւ նկատի ունենալով այն իրողութիւնը, որ յատկապէս հայրենի մեր ընթերցողը կրնայ շփոթութեան մատնուիլ՝ պատմական փաստերու անտեղեակութեան պատճառով, ստորեւ հրատարակութեան կը յանձնենք մեր աշխատակիցին՝ Է. Յովհաննիսեանի յօդուածը, որ դիպուկ մատնանշումներ կը կատարէ նշեալ աշխատութեան անհիմն բնոյթը պարզելու իմաստով:

Է. Յովհաննիսեան

Ռաֆայէլ Իշխանեանի յօդուածին չէ, որ անդրադառնում եմ: Նրան չէի ուզում պատասխանել, որովհետեւ մեզ համար ամենակարեւոր քաղաքական տրամաբանութեան հարցը նա դարձրեց երրորդ ուժի նկատմամբ մեր վերաբերմունքի հարց, որը անհամեստօրէն և առանց որեւէ հիմքի օրէնք կոչեց ու պահանջեց, որ մենք բոլորս ենթարկուենք այդ «օրէնքին»: Մի «օրէնքի», որին պատմութեան երկայնքով չի ենթարկուել ոչ մէկ ժողովուրդ ու ոչ մէկ յեղափոխական շարժում: Իսկ եթէ երբեմն էլ ենթարկուել է, ապա ստիպուած ու այդ դէպքում, որպէս օրէնք, պարտուել է: Դիմենք պատմութեանը: 1713 թուականին Կառլոս 6րդը հրաման արձակեց, որի համաձայն Աւստրիան, Հունգարիան, Հոլանդիան ու Իտալիայի մէկ մասը պէտք է մնան Հարսբուրգների Կայսրութեան մէջ ու անցնեն Մարիա Թերեզային: Սակայն Կառլոսի մահից յետոյ, այսինքն 1740 թուականին, Պրուսիան, Բաւարիան, Սակսոնիան և Իսպանիան

դիմեցին երրորդ ուժի՝ Ֆրանսիայի օգնութեան և սկսեցին իրենց ազատագրական պայքարները։ Իսկ Աւստրիան դիմեց մէկ ուրիշ երրորդ ուժի՝ Անգլիային և Միացեալ Նահանգներին։

Ալբանիան իր առաջին անկախութիւնը Թուրքիայից ձեռք բերեց 1912 թւականին, յենւելով Աւստրօ-Հունգարիայի և Իտալիայի վրայ, իսկ երկրորդ անգամ, 1920 թւականին՝ Ռուսաստանի վրայ։

Ալժիրին քաղաքականօրէն պաշտպանեց Խորհրդային Միութիւնը։ Աֆղանիստանը 1919 թւականին յենւեց Խորհրդային Ռուսաստանի վրայ, իսկ յետոյ Ամերիկայի Միացեալ Նահանգների։

Առաջին բալկանեան պատերազմում Բուլղարիան, Յունաստանը, Սերբիան և Չերնոգորիան միասնաբար պայքարում էին Թուրքիայի դէմ ու դժւար է ասել, թէ ո՞վ էր առաջին և ով երրորդ ուժը։ Իսկ երկրորդ բալկանեան պատերազմում Բուլղարիան առանց երրորդ ուժի միայնակ կռւում էր Սերբիայի, Չերնոգորիայի, Յունաստանի, Ռուսաստանի և Թուրքիայի դէմ։ Բայց արդէն 1828 և 1853 թւականներին բուլղարացի կամաւորները կռւում էին Ռուսաստանի և Թուրքիայի դէմ։ 1877-78 թւականներին բուլղարացիները կռւում էին Ռուսաստանի բանակում Թուրքիայի դէմ։ 1877-78 թւականներին բուլղարացիները Ռուսաստանը դարձրին երրորդ ուժ և հէնց նրա օգնութեամբ էլ անկախութիւն ձեռք բերեցին։ Ռումինիան նոյնպէս անկախութիւն ձեռք բերեց Ռուսաստանի օգնութեամբ։ Սակայն ամենահետաքրքրական օրինակը Իսրայէլի ստեղծման օրինակն է, որը ստեղծւեց Ստալինի ջանքերով, այսինքն հրեաների երրորդ ուժը աշխարհի ամենահրէշաւոր քաղաքական գործիչ Ստալինն էր։ Ուզում եմ այս հարցի վրայ կանգ առնել աւելի մանրամասնօրէն, քանզի մենք մեզ յաճախ հարցնում ենք, թէ ինչո՞ւ հրեաները կարողանում են այս կամ այն բանին հասնել, իսկ մենք ոչ։ Սիոնիստների համար Իսրայէլի ստեղծումը այն գլխաւոր քաղաքական նպատակն էր, որի համար նրանք պատրաստ էին մեռնելու, զրկանքներ կրելու ու երրորդ ուժերի հետ համագործակցելու, նոյնիսկ եթէ այդ ուժը սատանան էր։ Ու Սատանան սպասել չտւեց։

Միամիտ կը լինէր ենթադրել, որ հարիւրաւոր ժողովուրդներին ստրկացնող Ստալինը մտահոգւած էր հրեաների ճակատագրով, այն նոյն Ստալինը, որը աշխարհի բոլոր հրեաների համար պատրաստել էր Սիբիրի Բիրոբիջանը՝ 36.000 քառակուսի կիլոմետր տարածութեամբ։ Անշուշտ, Ստալինին հետաքրքրում էր միայն Մերձաւոր Արեւելքը, որտեղ Խորհրդային Միութիւնը ոչ մէկ ազդեցութիւն չունէր Արաբական Աշխարհի վրայ, մինչդեռ արեւմտեան երկրները և, յատկապէս Մեծն Բրիտանիան, դերակատար էին Մերձաւոր Արեւելքի քաղաքական կեանքում։

Արաբական երկրների վարչակարգերը այն ժամանակ Խորհրդային Միութեան կողմից նկատւում էին որպէս յետադիմական: Ստալինը որոնում էր մի ճեղք, որտեղից կարելի լինէր խոթել իր թաթը Արաբական Աշխարհ և այնտեղ ստեղծել պատերազմական դրութիւն: Ստալինի համար պատերազմը քաղաքական հրապարակ իջնելու լաւագոյն ձեւն էր, քանզի բոլոր պատերազմների ժամանակ Արեւմուտքը դառնում է մէկ կողմի «երրորդ ուժը», իսկ միւս կողմի «երրորդ ուժը» դառնում էր Խորհրդային Միութիւնը: Թէ ո՞ր կողմը, Ստալինի համար ոչ մէկ նշանակութիւն չունէր:

Բոլորի համար պարզ էր, որ եթէ Պաղեստինից դուրս գան անգլիացիները, այնտեղ ստեղծւելու է հրէական պետութիւն և պատերազմ է սկսւելու հրեաների և արաբների միջեւ: Ճիշտ այնպէս, ինչպէս այսօր շատ յստակ է, որ Անդրկովկասից ռուսների դուրս գալուց յետոյ պատերազմ է սկսւելու երեք ազգութիւնների միջեւ: Հայ-Ադրբեջանական պատերազմը սկսւել է նոյնիսկ ռուսների ներկայութեամբ: Մերձաւոր Արեւելքում կացութիւնը էլ աւելի յստակ էր, քանզի արաբ ղեկավարները մշտապէս յայտարարում էին, որ պայքարելու են Իսրայէլի ստեղծման դէմ: Ստալինին հէնց դա էլ պէտք էր և նա դարձաւ հրեաների երրորդ ուժը:

Տարօրինակ բաներ սկսեցին տեղի ունենալ այն տարիներին: Խորհրդային Միութեան երկաթէ վարագոյրը, որը մժեղ բաց չէր թողնում, յանկարծ բարձրացաւ հրեաների համար և Խորհրդային Միութիւնից սկսեցին դուրս գալ սիոնիստներ, այն էլ ամենահակախորհրդային կազմակերպութիւններից: Սովորական ժամանակ սրանք գնդակահարւում կամ ցմահ բանտարկւում էին, իսկ հիմա նրանց հարիւրներով ուղարկում էին Պաղեստին, ընդ որում փաստաթղթերը պատրաստւում էին խորհրդային անվտանգութեան մարմինների կողմից:

Հետաքրքրական է Իւ. Մարզոլիսի վկայութիւնը, որը իր **«Հրէական պատմվւածք»**ում գրում է, թէ ինչպէս 1941 թւականի ապրիլ ամսին լեհական աջակողմեան սիոնիստական զինեալ «Բետար» կազմակերպութեան ղեկավար Ի. Էպշտէյնը իր երկու թիկնապահների հետ միասին արդէն խորհրդային Լիտուայից մեկնեց Պաղեստին: Էպշտէյնը մեկնում է Օդեսա, որտեղից 150 ուրիշ հրեաների հետ խորհրդային «Սւանէթիա» նաւով մեկնում է Թուրքիա: Ծովում նաւը հանդիպում է մէկ ուրիշ խորհրդային նաւի, որի ուղեւորները ռուսերէնով երգում են սիոնիստների **«Դեռեւս կենդանի է մեր յոյսը»** քայլերգը: «Սւանէթիայից» պատասխանում են **«Կենդանի է դարերից եկող յոյսը»**: Երկու ամիս յետոյ այս երկու խմբերը հանդիպում են Իսրայէլի Ատլիտ քաղաքի ճամբարում:

Այս պատմութիւնից մենք իմանում ենք, որ դեռեւս Երկրորդ Աշխարհամարտի նախօրեակին Ստալինը կազմակերպւած ձեւով խորհրդային հրեաներին ուղարկում էր Պաղեստին: Ստալինը համոզւած էր, որ վաղ թէ ուշ այդ հրեաները ապստամբելու են անգլիացիների դէմ և նպաստելու են նրա քաղաքական ծրագրերի իրականացմանը: 1944 թւականին, երբ գերմանացիների պարտութիւնը արդէն ակնյայտ էր և մօտենում էր անգլօ-սիոնիստական բախումը, Խորհրդային Բանակը, որը գրաւել էր Արեւելեան Եւրոպան, այնտեղի հրեաներին նոյնպէս ուղարկում էր Պաղեստին: Այս արշաւը ղեկավարելու համար, սիոնիստները ստեղծեցին «Բերիխա» կազմակերպութիւնը, որի մասին այսօր բոլորը լռում են: Խորհրդային Միութիւնը չի ուզում յիշել այն մասին, թէ ժամանակին սիոնիստների երրորդ ուժն է եղել, իսկ սիոնիստները ուզում են պահպանել իրենց կողմից իսկ ստեղծւած առասպելը, թէ իրենք փայլուն կերպով կարողացան խորհրդային անվտանգութեան մարմինների քթի տակ կազմակերպել արտագաղթի «ընդյատակեայ» գործը:

Հրէական հանրագիտարանում ասւած է, թէ «Բերիխա»ն ընդյատակեայ կազմակերպութիւն էր, որը 44-48 թւականներին գաղտնաբար Լեհաստանից, Հունգարիայից, Չեխոսլովակիայից, Ռումինիայից, Հարաւսլաւիայից, Մերձբալթեան Հանրապետութիւններից ու Խորհրդային Միութիւնից հրեաներին տեղափոխում էր Եւրոպա, իսկ այնտեղից Պաղեստին: Այ քեզ բան: Ընդյատակեայ գործունէութիւն էր ծաւալւում Խորհրդային Միութիւնում, խորհրդայնացւած Մերձբալթեան հանրապետութիւններում, խորհրդային զօրքերի տակ գտնւող Եւրոպայում, իսկ ԿԳԲն էշի ականջում քնած էր:

Ընդորում այդ «ընդյատակեայ» գործունէութիւնը ոչ թէ մէկ օրւայ թռուցիկ բաժանելու, այլ 4 տարւայ գործ էր: Շշմել կարելի է հրեաների այդ փայլուն աշխատանքի վրայ, որի հետեւանքով քառորդ միլիոն հրեաներ խորհրդային իշխանութիւնների քթի տակ անցան երկաթէ վարագոյրի այն կողմը: Միայն յիմարը կարող է հաւատալ, որ այդ ամէնը կատարւեց առանց խորհրդային իշխանութիւնների հովանաւորութեամբ: Խորհրդային իշխանութիւնները ոչ միայն գիտէին այդ մասին, այլ հէնց իրենք էին կազմակերպել այդ արշաւը, իսկ սիոնիստները ոչ միայն գիտէին այդ հովանաւորութեան մասին, այլ իրենք էին ընտրել Ստալինին որպէս երրորդ ուժ: Ու Ստալինը ստեղծեց Իսրայէլը, ոչ թէ հրեաների, այլ իր համար:

Երբ հրեաները փոխեցին իրենց երրորդ ուժը, Խորհրդային Միութեան համար ոչինչ չփոխւեց, այս անգամ նա դարձաւ արաբների երրորդ ուժը: Իսկ երբ Իսրայէլի ստեղծումից տարիներ անց Գոլդա Մէյերին լրագրողները հարցրին, թէ ի՞նչ կ'անի Իսրայէլը, եթէ օրերից մի օր Ամերիկան հրաժարւի հրեաներից և անցնի արաբների կողմը, նա պատասխանեց, «մենք նորից կը ջարդենք

արաբներին, այս անգամ խորհրդային զէնքով», այսինքն կրկին կը փոխենք մեր երրորդ ուժը։

Եւ երբ մենք տեսնում ենք, թէ ինչպէս են բոլոր յեղափոխական ու ազատագրական շարժումները դիմել ու դիմում երրորդ ուժի օգնութեանը, ինքնըստինքեան հարց է ծագում. երրորդ ուժի բացառման օրէնքը, միայն հայերի՞ն է վերաբերւում։ Ինչո՞ւ չէ, դա էլ հնարաւոր է։ Հայ ժողովուրդը ունի իր առանձնայատկութիւնները, որոնք կարող են թելադրել յատուկ քաղաքական դիրքորոշումներ։ Բայց որոնք են այդ առանձնայատկութիւնները։ Նախ դիմենք պատմութեանը։

Աւարայրի ճակատամարտից առաջ Վարդանը դիմեց Բիւզանդիոնի օգնութեանը, սակայն վերջինս չցանկացաւ երրորդ ուժ դառնալ։ Իսկ Վասակի համար երրորդ ուժ դարձաւ Պարսկաստանը։ Երբ 1860ական թւականին Լիբանանը ապստամբեց ու դիմեց Նապոլէոն 3րդին, վերջինս զօրք ուղարկեց Թուրքիա և ստիպեց Սուլթանին ինքնավարութիւն տալ Լիբանանին։ Ոգեւորւած այս իրադարձութիւնից, զէյթունցիները 1862 թւականին ապստամբեցին և նոյնպէս պատւիրակութիւն ուղարկեցին Նապոլէոնին՝ նրանից օգնութիւն խնդրելու համար։ Սակայն Նապոլէոնը այդ խնդրանքը յանձնեց Թուրքիային, որը զօրք ուղարկեց զէյթունցիներին ճնշելու համար։ Զէյթունցիները ապստամբեցին երկրորդ անգամ և կրկին դիմեցին Նապոլէոնին։ Այս անգամ Նապոլէոնը ստիպեց Թուրքիային՝ վերջ տալ Զէյթունի պաշարմանը և հաշտութիւն կնքել նրանց հետ։ Երրորդ ուժի գոյութիւնը անհրաժեշտ է ոչ միայն անմիջական օգնութեան համար, այլ նրա վախից հակառակորդին թուլացնելու համար։ Եթէ Սարդարաբադի ու Զանգեզուրի կռիւների ժամանակ հայ ժողովուրդը մնացել էր մենակ, առանց երրորդ ուժի, ապա ոչ թէ նրա համար որ չէր ցանկանում երրորդ ուժ ունենալ, այլ նրա համար որ այդ ուժը չկար։ Այս նոյն պայմաններում վրացիները գտել էին գերմանացիներին, իսկ աղրբեջանցիները թուրքերին։ Յայտնի է, որ դրանից մի քանի տարի առաջ Բաքւում հայերը դիմեցին անգլիացիներին և նրանց օգնութեամբ կարողացան ջարդել թուրքերին։

Մի խօսքով երրորդ ուժի դիմելը լաւ բան է և հայ ժողովուրդը պատճառ չունի այդ քայլից յետ մնալու համար, միայն թէ երրորդ ուժի ընտրութիւնը պէտք է ճիշտ կատարւի։ Եւ հէնց այս «ճիշտ» ընտրութեան հարցն է, որ քաղաքական վարպետութիւն է պահանջում։ Այդ վարպետութեան գլխաւոր սկզբունքը այն է, որ ՈՉ ԹԷ ՄԵՆՔ ԵՆՔ ԸՆՏՐՈՒՄ ԵՐՐՈՐԴ ՈՒԺԻՆ, ԱՅԼ ԵՐՐՈՐԴ ՈՒԺՆ Է ԸՆՏՐՈՒՄ ՄԵԶ։ Իսկ ընտրում է մեր կարողութիւնների համաձայն, այսինքն ելնելով նրանից, թէ ի՞նչ դեր կարող ենք մենք կատարել նրա քաղաքական ծրագրերում։ Եւ, եթէ երրորդ ուժի քաղաքական հաշւարկների մէջ մենք կա-

րող ենք որոշակի դեր կատարել, ապա այդ դերը նա կը յանձնարարի մեզ, համապատասխան քաղաքական վճարում կատարելով: Սա նշանակում է, որ երրորդ ուժին ապրանք վաճառելու համար, նախ այդ ապրանքը պէտք է ունենաս:

Եթէ Ռաֆայէլ Իշխանեանը ուզում էր ասել, որ առայժմ մենք մեզանից ոչ մէկ ուժ չենք ներկայացնում, ուստի երրորդ ուժին վաճառելու բան չունենք, ճիշտ է ասում: Բայց այդ դէպքում մենք սեփական ուժերի վրայ յենուած քայլեր էլ չպէտք է կատարենք, քանզի այդ ուժը չունենք: Այդ ինչպէ՞ս պէտք է մենք սեփական ուժերով դուրս գանք: Անդրկովկասեան ճգնաժամից: Կողմերից մէկը Ադրբեջանն է, միւսը Թուրքիան, երրորդն էլ Գորբաչեւը, չորրորդն էլ ռուս ժողովուրդը: Եթէ վաղն էլ Վրաստանը, դիմելով Արեւմտեան Եւրոպային խաղից դուրս գայ, այդ ինչպէ՞ս պիտի մենք սեփական ուժերով պաշտպանուենք:

Եկէք փորձենք պարզել, թէ ինչո՞ւ Առաջին Աշխարհամարտի նախօրեակին երրորդ ուժեր Թուրքիան և Ռուսաստանը մրցավազքի մէջ էին մտել՝ հայերին իրենց կողմը քաշելու համար: Ինչո՞ւ Լիբանանում քրիստոնեաները և պաղեստինցիները նոյնպէս մրցում էին հայերի համար: Ինչո՞ւ Պարսկաստանը և Թուրքիան 16րդ դարում ջանում էին հայերին իրենց կողմը քաշել: Այն պարզ պատճառով, որ այդ պահերին հայերը ունէին այն ուժը, որի ձեռքբերումը կարող էր փոփոխութիւն մտցնել ուժերի դասաւորութեան մէջ: Իսկ ներկայումս հայերը հաշւի առնելիք ուժ չեն, առնւազն այն քաղաքական ձգտումներով ու լոզունգներով, որոնցով մենք հրապարակ ենք իջնում: Եթէ այսօր Գորբաչեւի վարչակարգը ընտրել է ոչ թէ մեզ, այլ ադրբեջանցիներին, մեղքը միայն ու միայն մերն է: Ուրեմն ադրբեջանցիները քաղաքականօրէն աւելի խելացի գտնուեցին:

Մենք կարող ենք վիճել, պատմական փաստերի դիմել, հանրաքուէներ անցկացնել՝ երրորդ ուժ ընտրելու կամ չընտրելու վերաբերեալ, բայց այս ամէնը կը մնան մտավարժութիւններ այնքան ժամանակ, քանի դեռ բացակայում է ազգային շարժման գլխաւոր նպատակը, ռազմավարութիւնը և սեփական ուժերի գնահատականը: Միայն ու միայն սեփական ուժերի գնահատականի հիման վրայ կարող է տրուել որեւէ քայլ կատարելու որոշումը: Այստեղ Իշխանեանը միանգամայն իրաւացի է: Սակայն բացի սեփական ուժերից, մենք պէտք է կարողանանք գնահատել նաեւ ընդհանուր քաղաքական մթնոլորտը, որը կատարում է այն դաշտի դերը, որտեղ բախւում են տարբեր ուժեր, այդ թւում նաեւ նրանք, որոնք կարող են մեզ համար դառնալ երրորդ ուժ:

Հ.Յ.Դաշնակցութիւնը համագործակցեց երիտթուրքերի հետ, որովհետեւ նպատակը Սուլթանի վարչակարգի տապալումն էր: Իսկ ընդհանուր քաղա-

քական մթնոլորտը հակասուլթանական բնոյթ էր կրում: Դաշնակցութիւնը կամաւորներ ուղարկեց Ռուսաստանի բանակը, որովհետեւ նպատակը Թուրքիայի պարտութիւնն էր: Եթէ Ռուսաստանի յեղափոխութիւնը աւարտուէր Փետրուարեան ապստամբութեամբ, ապա մենք կ'ունենայինք անկախ Հայաստան, առնւազն այն սահմաններում, որի մէջ կը մտնէին Ղարսը, Ղարաբաղը և Նախիջեւանը:

Այսօր Ռաֆայէլ Իշխանեանը Սեւրի Դաշնագիրը դատարկ թուղթ է համարում, բայց դա այդպէս չէ: Նա դատարկ թուղթ դարձաւ միայն բոլշեւիկեան յեղաշրջումից յետոյ, և այն էլ միայն հայերի ու քրդերի համար: Իսկ դաշնագրի մնացած բոլոր կէտերը իրականացան: Պաղեստինը, Իրաքը, Եգիպտոսը և Կիպրոսը անցան Մեծն Բրիտանեայի հովանաւորութեան տակ, իսկ Սուրիան և Լիբանանը՝ Ֆրանսիայի: Եւ հէնց այդ ճանապարհով էլ նշուած երկրները անկախութիւն ձեռք բերեցին:

Ռաֆայէլ Իշխանեանը գրում է թէ՝ **«մեր ժողովրդի ու նրա ղեկավարների մի զգալի մասի քաղաքական մտածելակերպը, խոստովանենք, իրօք, պարզունակ է եղել: Օրինակ, մեզանում հայրենասիրութիւն է համարւում մահմեդականներին, մասնաւորապէս թուրքերին հայհոյելը, Եղեռնի մասին շատ խօսելը, թուրքերի վայրագ լինելը անընդհատ յիշատակելը: Անցեալի գործիչներից ամենահայրենասէրներն են համարւում թուրքերին շատ հայհոյածները, թուրք սպանողները: Նորագոյն շրջանի հայրենասէրներն են համարւում Եւրոպայում թուրքական դեսպանների ահաբեկիչները»:** Այստեղ ստիպւած ենք որոշ բացատրութիւններ տալու, ապա շարունակել: Հայրենասիրութիւնը «սիրութիւն» է և շատ էլ չի տարբերւում ընտանիքասիրութիւնից, ֆուտբոլասիրութիւնից և այլ «սիրութիւններից»: Հայրենասիրութիւնը միայն զգացմունք է և իր մէջ ոչ մէկ քաղաքական տրամաբանութիւն չի պարունակում: Ճիշտ այնպէս, ինչպէս ֆուտբոլասէրները մարզադաշտում կոկորդները պատռելով խրախուսում են իրենց սիրած խմբերին, ու ատում են հակառակորդին, ինչպէս ընտանիքի անդամը ատում ու հայհոյում է իր մօրը կամ կնոջը վիրաւորողին, այնպէս էլ հայրենասէրը կոկորդը պատռելով անկախութիւն է պահանջում, ատում թուրքին, կամ ռուսին, սիրում թուրք սպանողին, կամ աղրբեջանցու վրայ ճնշում գործադրողին: Ի՞նչ զարմանալի բան կայ դրանում: Հայրենասէրը սիրում է իր հայրենիքը ու ատում հայրենիքի բոլոր թշնամիներին: Սրանց զգացմունքները բնական են և նրանք ոչ մէկին չեն խանգարում, սրանք ֆուտբոլասէրներ են, այլ ոչ թէ ֆուտբոլ խաղացողներ: Բայց յաղթանակի ու պարտութեան պատասխանատուութիւնը ընկնում է ֆուտբոլ խաղացողների վրայ, տւեալ դէպքում քաղաքական գործիչների վրայ, որոնց առանձնայատկութիւնը այն է, որ նրանք զգացմունքներ չունեն և նրանց մեղադրել թէ ռուսասէր կամ թրքա-

տեաց են, անամօթ զրպարտութիւն է: Խատիսեանը, Դրօն, Օհանջանեանը, Վրացեանը, սրա՞նք էին մեր պարզունակ քաղաքական գործիչները և սրա՞նք էին, որ քաղաքական իրադարձութիւնների մէջ ծնուած, չէին հասկանում այն, ինչը այսօր հասկացել է Իշխանեանը: Մեր պատմութեան մէջ չկայ, ոչ մէկ օրինակ, երբ մեր դիւանագէտները զգացմունքներից ելնելով որեւէ քաղաքական քայլ կատարած լինեն:

Նախ սկսենք Իսրայէլ Օրուց, որի մասին Ռաֆայէլ Իշխանեանը համարձակւում է գրել հետեւեալը.- **«Եւ այսօր կան պատմաբաններ, որ այդ ցնդաբան Իսրայէլ Օրուն մեծ քաղաքական գործիչ են հռչակում»:** Իսրայէլ Օրին ոչ միայն մեծ հայ էր, ոչ միայն փայլուն քաղաքական գործիչ, այլեւ մեծագոյն դիւանագէտ, ինչպիսին նրան ճանաչում էին նրա ժամանակակիցները: Հաւանաբար, Ռաֆայէլ Իշխանեանը այնքան է տարւել վերափոխութիւններով ու պատմութեան բիծերը վերացնելով, որ որոշել է քարուքանդ անել բոլոր ազգային արժէքները ու նոր գնահատականների նոր աշխարհ կառուցել: Բոլշեւիկների այդ փորձը անցաւ ապարդիւն, նորի՞ց ենք ուզում կանգնել այդ անփառունակ ճանապարհին: Սպիտակ բիծերը վերացնելու քաղաքականութիւնից օգտըւելով, ուրիշները իրենց չեղած մարդկանց են հերոսացնում, իսկ մենք մեր եղած հերոսներին ենք քարկոծում՝ Իսրայէլ Օրուց մինչեւ **«թուրք դիւանագէտներ ահաբեկողներին»**: Բայց վերադառնանք Իսրայէլ Օրուն:

Պարսկաստանի իշխանութիւնները կորզում էին հայ վաճառականների շահոյթի մեծ մասը, տնտեսապէս ճնշում էին մելիքներին և զրկում նրանց որեւէ քաղաքական դեր կատարելուց: Առաւել եւս իրաւազրկւած էր ժողովուրդը, որը դարձել էր պարարտ հող ազատագրական գաղափարների համար: Սակայն հայերը չէին, որ երրորդ ուժ էին որոնում Եւրոպայում: Եւրոպան ինքը հետաքրքրւեց ու գտաւ հայերին: 17րդ դարի կաթոլիկական առաքեալները, գործելով Հռոմի Պապի անունից, Պարսկաստանի հայերի մէջ տարածում էին կաթոլիկական սկզբունքները, ոչ թէ կրօնական, այլ քաղաքական նկատառումներով: Լիւդովիկոս 14րդը բազմիցս ջանացել է Պարսկաստան ուղարկել կապուցինների և ջիզուիտների ներկայացուցիչներ և Շահին ուղղւած նամակներում առաջարկել է ջիզուիտների դպրոցներ բացել Շեմախում և Երեւանում, ինչպէս նաեւ դոմինիկացիների հաստատութիւններ՝ Նախիջեւանում: Նա խնդրում էր Շահից, որ հովանաւորի ու պաշտպանի հայ կաթոլիներին:

Լեհաստանի թագաւորը նոյնպէս ջանում էր հայերին ենթարկել Հռոմի աթոռին: Եւ, իսկապէս, յայտնի է, որ Շահ Աբասը հրաման արձակեց՝ Նախիջեւանի հայ կաթոլիկներին պաշտպանելու մասին:

Հայերին կաթոլիկ դարձնելու ջանքերը կապ ունէին մետաքսի առեւտրի հետ, որը ամբողջովին հայերի ձեռքումն էր: Իսկ մետաքսը այն ժամանակւայ

ոսկին էր և մեծ նշանակութիւն ունէր Արեւմուտքի արդիւնաբերութեան համար: Լիւդովիկոս 14ի նամակագրութիւնը Շահ Աբասի հետ 1674-85 թուականներին՝ հայերի մէջ կաթոլիկութիւն տարածելու մասին, պարունակում է զուտ տնտեսական ու քաղաքական նկատառումներ:

Ինչ վերաբերւում է Շահին, ապա նա չէր ցանկանում սրել իր յարաբերութիւնները Արեւմուտքի հետ, ինչը կարող էր վնասել Պարսկաստանի առեւտրին: Լիւդովիկոս 14ը ուզում էր հայերի միջոցով իր ազդեցութիւնը հաստատել Արեւելքի վրայ: Ահա այս պայմաններում էր, որ 1678 թւականին երեք հոզեւորականներից ու երեք աշխարհականներից բաղկացած պատւիրակութիւնը մեկնեց Եւրոպա: Ինչպէս յայտնի է, պատւիրակութեան նախագահը վախճանւեց Կոստանդնուպոլսում և պատւիրակութիւնը յետ վերադարձաւ, բացի Իսրայէլ Օրուց, որը հայ վաճառականների հետ մեկնեց Վենետիկ:

Երկարատեւ քաղաքական գործունէութեան արդիւնքը եղաւ այն, որ 1698 թւականին Իսրայէլ Օրին Կուրֆիւստրի հետ բանակցելիս, խոստացաւ, որ հայերը կաթոլիկ կը դառնան ու կը ճանաչեն Հռոմի Պապին, եթէ Եւրոպան օգնի հայերին՝ Պարսկաստանից անկախութիւն ձեռք բերելու հարցում: Պալատինի հետ համաձայնութիւն կնքւեց ոչ միայն հայերի ազատագրական պայքարին աջակցութիւն ցուցաբերելու, այլեւ այդ նախաձեռնութիւնը Կուրֆիւստրի կողմից նախաձեռնելու մասին: Կուրֆիւստրը բացայայտօրէն յայտնում էր Հայաստանի թագին տիրանալու իր ցանկութեան մասին: Բայց ինչո՞ւ այդ ծրագիրը չիրականացաւ: Վիլհելմը և նրա դիւանագէտները շատ լաւ գիտէին, որ հայերի ազատագրումը չէր կարող տեղի ունենալ առանց Ռուսաստանի թագաւորի ցանկութեան: Իսկ Օրին շատ լաւ գիտէր, որ Ռուսաստանի թագաւորը հայկական պետութիւն ստեղծելու մէջ շահագրգռած չէր, ուստի դիմադրելու էր այդ ծրագրի իրականացմանը: Աւելին, Օրին համոզած էր, որ Ռուսաստանը պատրաստ է նւաճելու Հայաստանը, որպէսզի խոչընդոտ չստեղծի Ռուսաստանից Արեւելք տանող միջազգային անցուդարձերի համար: Նա գիտէր Ռուսաստանի ու Լեհաստանի քաղաքական ծրագրերի մասին և 1699 թւականի Սեպտեմբերի 22ին Պֆալցի Կուրֆիւստրին նա յղեց մի նամակ, որտեղ խնդրում էր, որպէսզի Լեհաստանի թագաւորը, ինչպէս նաեւ Մոսկըւայի իշխանութիւնը ոչինչ չխմանան հայերի ազատագրական նախաձեռնութիւնների ու նախապատրաստական աշխատանքների մասին:

Սակայն Օրին շուտով տեղեկացաւ, որ այդ մասին արդէն տեղեակ է Լեհաստանը: Ահա թէ ինչո՞ւ Օրին անմիջապէս դիմեց Պետրոս առաջինին, առաջարկելով նրան, որ Վիլհելմի հետ մասնակցի Հայաստանի ազատագրմանը: Օրիի այս նուրբ գործունէութեան վերաբերեալ Ռաֆայէլ Իշխանեանը թոյլ է տալիս հետեւեալ խայտառակ արտայայտութիւնը. **«Այդ Օրին, երբ տեսաւ,**

որ Պֆալցի իշխանից բան չի դուրս գալիս, սկսեց քծնել Ռուսաստանի կայսր Պետրոս Առաջինին: Այս անգամ էլ Օրին ռուսներին էր կանչում, որ գան Պարսկաստանին ու Թուրքիային ջախջախեն, հայոց թագաւորութիւնը վերականգնեն»:

Անշուշտ, ոչ Ռուսաստանը և ոչ էլ Արեւմուտքը արիւն չէր թափելու հայերի համար, բայց Պարսկաստանը և Թուրքիան քայքայելու ծրագրերը երկուսն էլ ունէին, ուստի հայերը կարող էին նպաստել այդ ծրագրերին, և ինչու չէ՞, նոյնիսկ արագացնել այդ ծրագրերի իրականացումը: Բայց այդ մասին խօսելը ես անիմաստ եմ համարում: Կան այնպիսի երեւոյթներ, որոնք 300 տարի անց վերլուծութեան ենթակայ չեն, քանզի մեզ չեն հասել այն նրբութիւնները, որոնք գոյութիւն ունէին այն ժամանակւայ մթնոլորտում ու վճռական ազդեցութիւն էին թողնում այն ժամանակւայ քաղաքական գործունէութեան վրայ: Մենք կարող ենք այսօր քաղաքական հաշւարկներ կատարել, օրինակ, այն մասին, թէ ինչո՞ւ 1760ական թւականին Ֆրանսիայի թագաւոր Լիւդովիկոս 15րդը սկսեց այս կամ այն պատերազմը, բայց մենք ոչ մէկ եզրակացութիւնների չենք յանգի՝ եթէ հաշւի չառնենք, որ Լիւդովիկոսը իր բոլոր քաղաքական քայլերը կատարում էր իր սիրուհու՝ Պոմպադուրի քմահաճոյքներից ելնելով և նրա քաղաքական քայլերը քաղաքական տրամաբանութեան չէին ենթարկւում: Իսկ այս հարցի պատասխանը, թէ ինչո՞ւ Պֆալցի Կուրֆիւստրը ի վիճակի չեղաւ հայերին օգնութեան հասնելու, այն է, որ շուտով ինքը ընկաւ հայերի վիճակի մէջ: 1688 թւականին Ֆրանսիան յարձակւեց Եւրոպական Լիգայի վրայ: Լիւդովիկոս 14ը գրաւեց Պֆլացը իր եղբօր կնոջ իրաւունքները պաշտպանելու պատրւակով: Այս պատերազմում երկու բան մեզ համար շատ յատկանշական էին: Առաջինը այն էր, որ Լիւդովիկոսը պատերազմ սկսեց, երբ նախապատրաստել էր իռլանդացիների ապստամբութիւնը՝ Անգլիայի դէմ ու իռլանդացիներին օգնութեան զօրք ուղարկեց: Իսկ երկրորդը այն էր, որ ծովի վրայ պատերազմը հասաւ Ամերիկայի ափերին: Եթէ նման բան հնարաւոր էր, ինչո՞ւ մեծ պետութիւնները չէին կարող իրենց քաղաքական հաշւարկներում հաշւի առնել նաեւ հայերի հնարաւոր ապստամբութիւնը ու հասնել Հայաստան, ինչպէս Ֆրանսիան հասաւ Ամերիկայի ափերին: Բայց կրկնում եմ, այն ժամանակւայ պետական փոխյարաբերութիւնների վրայ բացի զուտ առարկայական գործօններից, այնքան մեծ ազդեցութիւն ունէին նաեւ ենթակայական գործօնները, որ այսօր առանց այդ գործօնների հաշւառման յանգել որեւէ քաղաքական եզրակացութիւնների գրեթէ անկարելի է: Ուստի խօսենք մեր այսօրւայ խնդիրների մասին:

Նախ նշենք, որ քաղաքական շարժման վերջնանպատակի ձեւակերպումը ոչ մէկ կապ չունի քաղաքականութեան հետ: Այդ նպատակը սովորաբար ձե-

ւակերպում են գաղափարախօսները, ելնելով բարոյականութիւնից, արդարութիւնից և ժողովրդի պահանջներից: Անկախութիւն, ազատութիւն, ազգի վերամիաւորում, սոցիալիզմի կառոյց կամ տապալում, բոլոր այս նպատակները ձեւակերպւում են անկախ քաղաքական հնարաւորութիւնից, ուստի նրանք մնում են բարոյական մակարդակի վրայ այնքան ժամանակ, քանի դեռ չեն ստեղծւել այդ նպատակներին հասնելու պայմանները ու միջոցները: Նրանք, ովքեր առանց համապատասխան պայմանների ու միջոցների գլխաւոր նպատակը բարոյական մակարդակից իջեցնում են քաղաքական մակարդակի վրայ ու մղում են ազգը այդ նպատակի համար պայքարի, քաղաքական արկածախնդիրներ են, եթէ չասենք ազգի դաւաճաններ:

Եթէ գլխաւոր նպատակի ձեւակերպումը քաղաքականութեան հետ կապ չունի, ապա ենթանպատակների ընտրութիւնը և նրանց հասնելու ճանապարհների որոնումը, քաղաքական գործունէութեան բուն էութիւնն են: Ենթանպատակները, այսինքն այն փուլերը, որոնցից անհրաժեշտ է անցնել՝ գլխաւոր նպատակին հասնելու համար, ձեւակերպւում են սեփական ուժերից ու գոյութիւն ունեցող կացութիւնից ելնելով:

Եւ եթէ այդ կացութեան մէջ անհրաժեշտ է երրորդ ուժի դիմել, պիտի դիմենք, եթէ անհրաժեշտ է կացութեանը յարմարւել, պիտի յարմարւենք, եթէ կարող ենք կացութիւնը փոխել, պիտի փոխենք: Այս վերջինը, կացութիւնը փոխելը, որպէս օրէնք, մեծ ժողովուրդների և ուժերի գործն է: Նրանք են, որ պատերազմների ու յեղափոխութիւնների ճամբով կարողանում են փոխել միջազգային կացութիւնները: Գորբաչեւը, օրինակ, փոխեց ամբողջ աշխարհի քաղաքական մթնոլորտը: 5 տարի առաջ, ամենափորձւած դիւանագէտները չէին կարողանում կռահել, որ Գերմանիան կը վերամիաւորւի, Արեւելեան Եւրոպան կ'ազատւի կոմունիզմից, խորհրդային զօրքերը դուրս կը գան Աֆղանստանից և այլն: Փոքրերին մնում է յարմարւել, առանց հակադրւելու մեծերին: Տխուր է այս կացութիւնը, բայց բնական է, ուստի ոչ վիրաւորական:

1973 թւականին **«Ազդակ»** շաբաթօրեակում ես գրեցի մի յօդւած, որը վերնագրել էի այսպէս. **«Խորհրդային Հայաստանը անելիք ունի՞ արդեօք»**: Այն ժամանակ ես նոր էի դուրս եկել Խորհրդային Հայաստանից և յօդւածիս առաջին մասում խիստ քննադատում էի Խորհրդային վարչակարգը, իսկ երկրորդ մասում գրեցի հետեւեալը.- **«Գտնւելով այդ վիճակում, ինչպիսի՞ ներդրում կարող է կատարել Հայաստանը Միացեալ ու Անկախ պետականութիւնը վերականգնելու համար: Այստեղ աւելի հեշտ է սկսել նրանից, թէ ի՞նչ չպէտք է անի Խորհրդային Հայաստանը: Նա չպէտք է անի ոչ մէկ բան, ինչը հակասում է ռուսական պետական շահերին: Ես դիտաւորեալ այդ շահը անւանում եմ ռուսական և ոչ խորհրդային, որովհետեւ վաղը այդ իշխանութեան գլուխ կարող է**

անցնել աւելի դաժան կառավարութիւն և աւելի ամուր կառչի կայսրութիւնից: Այդ դէպքում էլ Հայաստանը պարտաւոր է չհակադրուել պետութեանը»:

Ի՞նչ էր սա, ռուսական կողմնորոշո՞ւմ: Ո՛չ, Ռուսաստանի շահերի հետ հաշւի նստելու անհրաժեշտութիւն: Գուցէ՞ սա երրորդ ուժ որոնելու փորձ էր: Նոյնպէս ոչ, որովհետեւ երրորդ ուժ որոնում են նրանք, ովքեր սեփական ուժ ունեն և ուզում են միայն այն աւելացնել՝ նպատակին հասնելու համար: Իսկ հայերը ոչ այն ժամանակ և ոչ էլ այսօր, ոչ նպատակ ունեն և ոչ էլ ուժ:

Այս պայմաններում, Ռաֆայէլ Իշխանեանի առաջարկութիւնը միայն սեփական ուժի վրայ յենւելու մասին, հաւանաբար, ճիշտ է, որովհետեւ նշանակում է ոչինչ չանել: Իսկապէս աւելի լաւ է ոչինչ չանել, քան թէ սխալ ու անմիտ քայլեր կատարել: Այժմ պատկերացնենք մի պահ, որ Ռուսաստանի պետական շահերին չհակասելու թեզը մենք ընդունել ենք և հէնց այդ սկզբունքից ելնելով էլ պատրաստւում ենք այն պահին, երբ հնարաւոր կը լինի իջնել քաղաքական հրապարակ: Եւ ահա այդ պահը եկաւ: Ռուսաստանում իշխանութեան գլուխ եկաւ Գորբաչեւը և տակն ու վրայ արեց ոչ միայն սեփական երկիրը, այլեւ ամբողջ աշխարհը: Բայց մեզ՝ հայերիս նրա համաշխարհային ծրագրերը չեն հետաքրքրում: Մենք միայն ուզում ենք օգտւել ստեղծւած կացութիւնից, չհակասելով Ռուսաստանի պետական շահերին: Իսկ Ռուսաստանը Գորբաչեւի ձեռքերով ուզում է դուրս բերել երկիրը տնտեսական, քաղաքական և հասարակական ճահճից: Այսքանը միայն, և ուրիշ ոչինչ: Այս դէպքում, ուրեմն Հայաստանի ղեկավար Կ. Դեմիրճեանը պէտք է ողջունէր Գորբաչեւի վերափոխութիւնները և դառնար նրա նախաձեռնութիւնների ջատագովը: Գուցէ այդ դէպքում Դեմիրճեանը Ալիեւի և Շեւարնաձէի հետ միասին Քաղբիւրոյի անդամ դառնար:

Գորբաչեւին անհրաժեշտ է խորհրդային տնտեսութիւնը դնել շուկայական հիմունքի վրայ և նախաձեռնութիւնների տաղանդով օժտւած հայ ժողովուրդը կարող էր, յենւելով Սփիւռքի վրայ, իր վրայ վերցնել այդ առաքելութիւնը, աչքը մտնելով թէ Գորբաչեւի և թէ ռուս ժողովրդի: Երբ սկսւեց Արցախի շարժումը, հայ ժողովրդի ղեկավարները պէտք է բաւարարւէին Վոլսկու կոմիտէով ու պէտք է ցոյց տային Մոսկւային, որ հասկանում են նրա դժւարութիւնները ու չեն ցանկանում այդ դժւարութիւնների վրայ աւելացնել եւս մէկը: Բոլոր հանրապետութիւնները անկախութեան իրարանցումի մէջ են, իսկ հայութիւնը կարող էր իր յստակ յայտարարութիւններով ցոյց տալ, որ երբեք չի խզի իր յարաբերութիւնները ռուս ժողովրդի հետ: Այս առիթով կարելի էր յարաբերութիւնների մէջ մտնել ռուս հասարակական ու քաղաքական գործիչների հետ: Եթէ նշաններ լինէին, որ հակառակ դիրք բռնելու դէպքում կարելի էր աւելի մեծ արդիւնքների հասնել, կարելի էր հակառակ դիրք բռնել: Բայց մի՞թէ պարզ

չէր, որ որքան Կ. Դեմիրճեանը ինքնահաստատուէր իր հակազորբաչեւեան դիրքորոշումով, միեւնոյնն է, նրան պիտի պաշտօնազրկէին, ինչպէս պաշտօնազրկեցին Գորբաչեւի շատ աւելի հզօր հակառակորդներին: Մի՞թէ պարզ չէր, որ խորհրդային իշխանութիւնը ղեկավարման յատուկ կոմիտէից այն կողմը չէր գնալու, չէր կարող գնալ, որովհետեւ պիտի հաշւի նստէր նաեւ Ադրբեջանի ու Թուրքիայի հետ:

Բայց Հայաստանի տարբեր շարժումներ արեցին ամէն ինչ, այդ հայանպաստ կացութիւնը վերացնելու համար: Նրանք չհասկացան ու չընդունեցին նպատակին հասնելու հանգրւանային մօտեցման անհրաժեշտութիւնը և դրանով իսկ փաստօրէն դաւաճանեցին ղարաբաղցիներին, որոնք շատ ճիշտ դիրք էին բռնել իրենց պահանջներում: Այսօր միայն այդ կոպիտ սխալի մասին սկսել են խօսել, այն էլ շատ խուլ կերպով: Բերդաձորի ինքնապաշտպանութեան ղեկավարներ Անդրանիկ Յարութիւնեանը և Արնօ Մկրտչեանը, օրինակ, **«Կոմունիստ»** թերթի հետ ունեցած հարցազրոյցում ասացին մօտաւորապէս հետեւեալը.- **«Բերդաձորը գտնւում է Գորիսից ընդամէնը 6 կիլոմետր հեռաւորութեան վրայ և հանդիսանում է այն կամուրջը, որը միացնում է Արցախը Հայաստանի հետ: Առանց Բերդաձորի Արցախը կ'ընկնի ծանր վիճակի մէջ: Այս մասին շատ լաւ գիտեն Բաքւում, ինչպէս նաեւ կենտրոնում: Միայն Հայաստանումն է, որ այդ մասին մտածող չկայ: Ոչ կառավարութիւնը և ոչ էլ տասնեակ անպաշտօն կազմակերպութիւններ: Այնպիսի տպաւորութիւն է ստեղծւում (և այդ տպաւորութիւնը ամրապնդւում է օրէցօր), որ մեր մասին մոռացել են, մեզանից երես են դարձրել: Այն օրից, երբ սկսւեց նախընտրական պայքարը, իսկ սա արդէն մի քանի ամսւայ պատմութիւն է, Հայաստանից օգնութիւնը դադարեց: Յատուկ ղեկավարման կոմիտէի ժամանակաշրջանում ժողովրդական պատգամաւոր Արկադի Վոլսկու ղեկավարութեամբ շատ բան արւեց: Բերդաձորի բոլոր գիւղերը գազով մատակարարւեցին, վերականգնւեցին ու կառուցեցին տասնեակ տներ, բացւեցին Հայաստանի ձեռնարկութիւնների մասնաճիւղեր: Հայաստանի և Ստեփանակերտի օգնութեամբ բացւեցին դպրոցներ, սակայն, դժբախտաբար, այդ ամէնը անցեալումն էր: Մենք արդէն կորցրել ենք Բերդաձորին պատկանող ահագին արօտավայրեր, որտեղ ներկայումս կառուցւում են աղրբեջանական գիւղեր»:**

Մի՞թէ պարզ չէր, որ Ազատ, Կամօ և Գետաշէն գիւղերը մենք ի վիճակի չէինք պաշտպանելու, ուրեմն ո՞ւմն էինք զարմացնում, յայտարարելով, որ այդ բնակավայրերի վրայ Հայաստանը իր հովանաւորութիւնն է տարածում, այսինքն ինքնակոչ ձեւով «Մանդատ» է վերցնում:

Կամ գուցէ պարզ չէր, որ որսորդական հրացաններով զինուած մեր երիտասարդները չեն կարող դիմադրել խորհրդային բանակին, ուրեմն ո՞ւմն էինք զարմացնում նրանց հետ բախուելով, կամ բախման համար առիթ տալով:

Այս ամէնը սեփական ուժերի վրայ յենուելու, երրորդ ուժը բացառելու և չորրորդ ու հինգերորդ ուժերի շահերը անտեսելու հետեւանքն է: Կամ գուցէ երրորդ ուժի բացառման օրէնքը չէր, որ թելադրեց մեզ հարուածել Գորբաչեւի բարեկամ վարչապետ Մարգարեանցին և պաշտպանել Գորբաչեւի հակառակորդ Գդլեանին ու Իւանովին:

Ռաֆայէլ Իշխանեանի յօդուածը ինքնըստինքեան խախտում է քաղաքականութիւն վարելու բոլոր օրէնքները, որոնցից կարեւորագոյնը այն է, որ քաղաքականութեան մասին չեն խօսում, քաղաքականութիւնը վարում են, այն էլ լուռ ու որքան հնարաւոր է թաքցնելով իրական նպատակները: Դիւանագէտին լեզու է տրուած սեփական մտքերը թաքցնելու համար: Եւ հէնց դա է պատճառը, որ իմ այս յօդուածում չեմ կարողանում խօսել, օրինակ, վրացիների կամ հէնց աղրբեջանցիների նկատմամբ մեր հնարաւոր անելիքների մասին: Եթէ այդ մասին պիտի խօսենք, ուրեմն դեռեւս գտնւում ենք ոչ թէ քաղաքական, այլ պատմական ուսումնասիրութիւնների մակարդակի վրայ: Թող պատմաբանները ուսումնասիրեն մեր պատմութիւնը, բայց հեռու մնան այսօրւայ պատմութիւնը կերտելու յաւակնութիւններից:

Մէկ դիտողութիւն եւս: Տասնամեակներ շարունակ Թուրքիան նիւթապէս և քաղաքականօրէն սնւում էր խորհրդա-ամերիկեան հակադրուածութիւնից: Այն ժամանակ մենք չկարողացանք օգտուել այդ հակադրուածութիւնից: Իսկ այսօր, երբ խորհրդա-ամերիկեան բարեկամութեան պայմաններում Թուրքիան կորցրել է իր վաղեմի նշանակութիւնը, մենք սկսում ենք մտածել Թուրքիան սիրաշահելու մասին: Եթէ քաղաքական իրադարձութիւնները շարունակուեն զարգանալ նոյն ընթացքով, ապա թէ ՆԱՏՕն և թէ Թուրքիա կը դառնան աննշան քաղաքական միաւորներ:

Բայց եկէք չխօսենք, եկէք գործենք: Իսկ եթէ խօսում ենք, այնպէս խօսենք, որ այդ խօսքերի յետեւում թաքնւեն գործերը: Հրապարակայնութիւնը քաղաքականութեան համար չէ:

1990

ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՀԱՄԱՐ...

Է. Յովհաննիսեան

Ղեկավարել, նշանակում է նախատեսել, այսինքն տեսնել թէ ինչպիսի իրադարձութիւններ կարող են տեղի ունենալ ապագայում և ըստ այդ նախատեսումի կատարել այսօրւայ քայլերը: Եթէ խօսքը մօտ ապագայի մասին է, ապա նրան հաշւի առնելը մարտավարութիւն կարելի է անւանել, եթէ խօսքը հեռաւոր ապագայի մասին է, մեր վերջնական նպատակներին հասնելու մասին, ապա ապագայի հետ մեր հաշւի նստելը ռազմավարութիւն կարելի է համարել: Բայց ինչպէ՞ս տեսնել այն, ինչը այսօր գոյութիւն չունի: Հաւանաբար, ապագան կարելի է տեսնել այսօրւայ իրադարձութիւնների վերլուծութեան ճամբով, կամ այդ իրադարձութիւնների արմատները որոնելով:

Այսօրւայ իրադարձութիւնները այնքան արագ ընթացք ունեն, որ առանց նախատեսնելու գործելը բաւականին վտանգաւոր է: Եթէ նախատեսնելու կարողութիւն չունենք, լաւ է ոչ մէկ քայլ չկատարել, քան քայլել սխալ ճանապարհով: Այս իմաստով նախ եկէք դիմենք Հայաստանում տեղի ունեցող իրադարձութիւններին: Այստեղ կարեւոր իրադարձութիւններից մէկը այն է, որ Հայաստանի կոմկուսը իր համագումարի ժամանակ դարձի եկաւ, զղջաց իր բոլոր մեղքերը, իրեն անկախ հռչակեց, իրեն ազգային կուսակցութիւն համարեց և այժմ նոր անուն է որոնում: Այս վերանորոգւած ձեւի տակ նա քաղաքական ասպարէզ է իջնում, որտեղ կարող է դառնալ լուրջ քաղաքական ուժ և կարեւորագոյն մրցակիցը ուրիշ քաղաքական ուժերի: Հոկտեմբերի 18ին «**Կոմսոմոլսկայա Պրաւդա**» թերթում յայտնի գիտնական և հասարակական գործիչ, ռուս ազգայնական Իգոր Շաֆարեւիչը «**Կարելի՞ է արդեօք փրկել Ռուսաստանը**» վերնագիրը կրող յօդւածում գրում է.- «**Կոմունիստական կուսակցութիւնը պէտք է գտնի իր տրամաբանական տեղը նոր կեանքում: Անշուշտ, դա կուսակցութեան գործն է: Բայց ինձ թւում է, որ անհրաժեշտ են երկու պայմաններ, որպէսզի ՌՈՒՍԱԿԱՆ ուժերը կարողանան համագործակցել կուսակցութեան հետ: Առաջին պայմանը այն է, որ կուսակցութիւնը բացայայտօրէն ճանաչի իր պատմական մեղքը: Երկրորդը՝ նա պէտք է հռչակի արժէքների նոր ցանկ: Կուսակցութիւնը պէտք է յայտարարի, որ նա ունի մէկ նպատակ՝ ժողովրդի ու երկրի փրկութիւնը: Մնացած ամէն ինչը պէտք է ենթարկւի այդ նպատակին**»:

Ինչպէս տեսնում ենք Հայաստանի Կոմկուսը բոլոր այս պայմանները կատարեց և դրանով իսկ ստեղծեց Կոմկուսի հետ, ՀԱՅԿԱԿԱՆ ուժերի համագործակցութեան պայմանը: Այս նոր պայմաններում, երբ Կոմկուսը վերադա-

սաւորեց իր շարքերը և կտրեց իր կապերը մռայլ անցեալի հետ, նա կարող է մեծ տեղ գրաւել Հայաստանի հասարակական և քաղաքական կեանքում: Մեզ բոլորիս յայտնի է, որ Հայկական Համազգային Շարժումը վերջին հաշւով յաղթանակ տարաւ ոչ միայն սեփական արժանիքների համար, այլեւ կոմունիստների նկատմամբ գոյութիւն ունեցող ատելութեան բերումով: Արդեօ՞ք կը վերանայ այդ ատելութիւնը նոր Կոմկուսի նկատմամբ: Այստեղ կարեւոր հարցը այն է, թէ որքանով անկեղծ է կոմունիստների վերափոխութիւնը: Պէտք է ասել, որ իսկական հայ կոմունիստների թիւը շատ քիչ է եղել: Հայ մարդու ազգային նկարագիրը հակասում է կոմունիստական գաղափարախօսութեանը: Մատների վրայ կարելի է հաշւել հայ կոմունիստներին, որոնք հաւատում էին Մարքսի ցնդաբանութիւններին՝ դասակարգերի, պետութեան, ազգերի, ընտանիքի վերացման մասին: Չէին հաւատում նրանք նաեւ մասնաւոր սեփականութեան վերացման անհրաժեշտութեանը: Հայ կոմունիստները կոմունիստ էին դարձել, ինքնահաստատւելու և իշխելու համար: Ուրեմն ենթադրել, որ կան հայ հաւատացեալ կոմունիստներ, որոնք չեն հրաժարուի իրենց ուսմունքից ու կը դիմադրեն կուսակցութեան բարեփոխութեան ընթացքին, սխալ կը լինի: Սակայն այստեղ կայ մէկ ուրիշ հանգամանք, որը մենք պարտաւոր ենք տեսնելու և նրա հետ հաշւի նստելու: Բանը նրանումն է, որ Ստալինի կողմից ստեղծուած մթնոլորտը կոմունիստ դարձրեց և իշխանութեան գլուխ բերեց յատուկ նկարագիր ունեցող անձնաւորութիւնների: Նրանք չունէին սրբութիւններ, խիղճ, արդարութեան զգացմունք, նրանք կոպիտ էին ու դաժանօրէն ճնշում էին ենթականերին, միաժամանակ ստրկանում վերադասի առջեւ: Նրանց դատաւորները ու դատախազները կաշառք էին վերցնում և հեռախօսի զանգով ազատ արձակում յանցագործին: Նրանք բանտարկում ու զնդակահարում էին անմեղ մարդկանց, ոչ թէ սխալմամբ, այլ համոզուած լինելով, որ անմեղ է զոհը: Տասնամեակների ընթացքում դաստիարակւեց կոմունիստի այդպիսի կերպարը և հէնց նրանք էլ այսօր գրաւում են գրեթէ բոլոր կուսակցական պաշտօնները: Եթէ սրանք մնան իրենց պաշտօնների վրայ, կուսակցութեան վերափոխութիւնը կը մնայ թղթի վրայ, քանզի նկարագիր փոխելը, ծանր գործ է: Հաւանաբար մարդկանց փոխելը, բոլորովին ուրիշ նկարագրի տէր մարդկանց իշխանութեան գլուխ բերելը, շատ աւելի հեշտ է: Բացառութիւնները, անշուշտ, ոչ միայն յարգելի են, այլ ցանկալի, քանզի կոմունիստի նկարագրից անկեղծօրէն հրաժարւած հայը, ամենավստահելի անձնաւորութիւնը կը դառնայ: Երկրորդ կարեւոր իրադարձութիւնը Հ.Յ.Դաշնակցութեան Հայաստան մուտք գործելու փաստն է: Հակառակ տարբեր կողմից լսւող քննադատութիւնների և հիստերիկ ծղրտոցների, մեր կուսակցութիւնը, իրականացնելով 24րդ Ընդհանուր Ժողովի որոշումները վստահօրէն մտաւ Հայրե-

նիք, որտեղ գործելու է իր քաղաքական փորձի և աւանդոյթների համաձայն։ Այս նոր պայմաններում կուսակցութիւնը պէտք է կարողանայ համադրել Սփիւռքում և Հայրենիքում գտնւող իր կոմիտէների գործունէութիւնը, պէտք է ընտելանայ հայրենիքում տիրող կացութեան հետ, որպէսզի կարողանայ փոխել այդ կացութիւնը հայրենի ժողովրդի հետ միասին։ Այստեղ նախատեսնելու բան շատ կայ, բայց դա կուսակցութեան գործն է, ուստի այդ մասին կարելի է խօսել աւելի նեղ շրջանակում։

Իսկ երրորդ կարեւորագոյն իրադարձութիւնը այն է, որ Հայաստանի նոր Պառլամենտը Հայաստանի անկախութեան ուղղութեամբ լուրջ քայլերի է դիմել, որոնք կապ ունեն արմատական հարցեր լուծելու հետ, ինչպիսիք են, օրինակ, ազգային բանակի, տնտեսվարութեան, Արցախի, արտաքին կապերի և ուրիշ նման հարցեր։

Սակայն բոլոր այս հարցերի լուծումը միայն մեզանից կախւած չեն։ Նրանց լուծումը կապ ունի այն ընդհանուր մթնոլորտից, որ կը ստեղծւի նախկին Խորհրդային Միութիւնում։ Հէնց այստեղ էլ անհրաժեշտ են նախատեսութիւնները։

Նախ և առաջ մենք պէտք է կարողանանք տեսնել, որ Հայաստանը չի՛ կարող լուծել իր խնդիրներից և ոչ մէկը, եթէ հաշւի չնստի ռուսական պետական շահերի հետ։ Անկախ նրանից, թէ ո՞վ է վերցնելու իր ձեռքը Ռուսաստանի պետական ղեկը, մենք հայերս պէտք չէ հակասենք նրանց շահերին։ Հոկտեմբերեան Յեղափոխութեան առաջին տարիներին էլ Անդրկովկասի ժողովուրդներին թւաց, թէ Ռուսաստանը քայքայւեց, ուստի Անդրկովկասը կարող է ինքնուրոյնաբար լուծել իր ճակատագիրը։ Բայց քայքայւող Ռուսաստանը ոտքի կանգնեց և կրկին նւաճեց Անդրկովկասը, այս անգամ աւելի դաժան և անընդունելի ձեւով։ Այսօր էլ ռուս ժողովուրդը ի վերջոյ կը կատարի իր վերջնական ընտրութիւնը, ոտքի կը կանգնի և կուլ կը տայ բոլոր նրանց, ում կարող է մարսել։ Եթէ այսօր երեւացել են կայսրութեան անկման նշաններ, դա դեռեւս չի նշանակում, որ կայսրութիւնը տապալւած է։ Դեռեւս յայտնի չէ, թէ որքանով ռուս ժողովուրդը կայսրութեան քայքայման կողմնակից է։ Եթէ նա որոշի, որ այդ քայքայումը ռուսական պետական շահերին չի համապատասխանում, նա անմիջապէս այդ քայքայման առաջն կ'առնի, նոյնիսկ Գորբաչեւին տապալելու գնով։ Այդ դէպքում մեր բողոքի ցոյցերը, վրացիների ու ուկրաինացիների յայտարարագրերը ոչ մէկ նշանակութիւն չեն ունենայ։ Բայց այս ուղղութեամբ առայժմ շատ քիչ բան է երեւում, քանզի վերափոխութիւնների հակառակորդները երկրում արհեստականօրէն ստեղծել են քաոս, որից էլ ուզում են օգտւել։ Սակայն, այս քաոսից էլ երկիրը դուրս պիտի գայ ոչ թէ մեր, այլ ռուս ժողովրդի կամքով։

Ռուսաստանը կար և մնում է անկանխագուշակելի մի երկիր, որտեղ քաղաքական իրականութիւնները կարող են փոխուել մէկ օրուայ ընթացքում: Խորհրդային Միութեան պահպանողականները դեռեւս շատ ուժեղ են և ժողովուրդը հասկացել է, որ հէնց նրանց մեղքով է երկիրը սուզւել տնտեսական ճահճի մէջ: «**Նովոյէ Վրեմեայ**» հանդէսը այս տարուայ 40 համարում հրատարակեց Տ. Իւանովայի յօդուածը, որտեղ ասւած էր հետեւեալը. «**Ժողովրդավարութեանը հակադրւել է ուժեղ ընդդիմադրութիւն: Եւ բոլոր օրէնքների հակառակ, ընդդիմադրութիւնը ունի դրամ, ահագին կալւածքներ, կնիք, բանակ, նաւատորմ, ԿԳԲ, որովհետեւ ընդդիմադրութիւնը՝ կուսակցական ապարատն է: Ընդդիմադրութիւնը բացայայտ պայքար է մղում ժողովրդավարական խորհուրդների հետ: «Զարգացած Սոցիալիզմը» ցոյց է տալիս մեզ իր ուժը և ատամները: Հրամայական համակարգի վիշապը բոլոր կողմերին հարւածներ է հասցնում իր ծանր պոչով: Իսկ ժողովրդավարականները աւտոբուսների կայաններում փակցած թռուցիկներով ցուրտ ու անձրեւոտ օրերին մեզ ցոյցերի են կանչում: Իսկ մենք հասկանում ենք, որ այդ պահպանողականների մեղքով է, որ խանութները դատարկ են, իսկ ժողովրդավարականները ոչինչ չեն կարողանում անել**»:

Տ. Իւանովայի այս բողոքը բաւականին հիմնաւորւած է: Այս տարուայ հոկտեմբեր ամսին Խորհրդային Միութեան կենտրոնական հեռուստատեսութիւնը հաղորդեց մի սարսափելի լուր: Երկրաբանները Ինտա քաղաքի մօտակայքում գտնւող հին հանքերում պատահականօրէն յայտնաբերել են 4 տոննա ընտիր երշիկ: Այդ երշիկը հանքերն էին նետել յայտնաբերելուց երկու շաբաթ առաջ: Նոյն հաղորդումից պարզւեց, որ գիւղացիներին, որոնք Մոսկւա միս են տանում, ճանապարհին կանգնեցնում են յատուկ վերահսկիչ ջոկատներ, գնում են միսը, ապա նետում աղբանոց: Եւ այս ամէնը կատարւում է այն պահին, երբ երկիրը կիսաքաղցած վիճակում է և միս վաճառւում է յատուկ տոմսակներով: Նոյեմբերի 23ին, Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհրդի գիւղատնտեսական կոմիտէի նախագահի տեղակալ Եմելիանովը յայտարարեց, որ տնտեսական վերափոխութիւնների հակառակորդները դիմում են նենգադուլի՝ հասարակական լարւածութիւնը աւելացնելու համար: Նա ասաց, որ վերափոխութիւնների հակառակորդները բաւականին ուժեղ են, ունեն իշխանութիւն և կարողանում են արգելել ապրանքների մուտքը խանութներ: Նրանք անում են ամէն ինչ, որպէսզի մարդկանց մօտ ստեղծւի բարեփոխութիւններին հակառակ տրամադրութիւններ: Իսկ մեր հայրենակից գնդապետ Վիլէն Մարտիրոսեանը Ուկրաինայի «**Կոմսոմոլսկայա Պրաւդա**» թերթի էջերում այն կարծիքը յայտնեց, որ Մոսկւայում զինւորականները յեղաշրջում էին պատրաստում: Լուրեր են տարածւում նաեւ այն մասին, որ յեղաշրջման մասին

զնւորականներին խնդրել է ինքը Գորբաչեւը, որը չի կարողանում պայքարել բարեփոխութիւնների հակառակորդների հետ։

Մոլդաւիայում այրեցին ժողովրդավարականների թերթի խմբագրութեան շէնքը։ Մոսկւայում կացնահարեցին յայտնի հոգեւորական և այլախոհ Ալէքսանդր Մէնին։ Ինչպէս տեսնում ենք Վիշապի պոչը իսկապէս որ մահացու պտոյտներ է կատարում ու այնպէս չպատահի, որ մենք՝ հայերս ընկնենք նրա հարւածների տակ։ Ինչպէ՞ս կարող է Ռուսաստանը դուրս գալ այս քաոսից։ «**Կոմսոմոլսկայա Պրաւդա**» թերթի էջերում այս հարցին պատասխանում է Իգոր Շաֆարեւիչը։ Նա գրում է.- «**Երկրի քայքայման գլխաւոր պատճառը ազգային գիտակցութեան վերելքը չէ։Կարեւորը կենտրոնի նկատմամբ ստեղծած ատելութիւնն է։ Կենտրոնը համարւում է բոլոր չարիքների աղբիւրը։ Ոմանք սարսափում են սպասւող անկումից և գերադասում են այդ անկումը ապրել ուրիշներից առանձին։ Ի՞նչ կարող է պատահել, եթէ Ռուսաստանի կործանումը անխուսափելի դառնայ։ Իրար նկատմամբ ատելութեամբ լցւած բազմաթիւ մանր միաւորներ ամբողջովին անպաշտպան կը լինեն արտաքին տնտեսական և զինւորական ճնշումների առջեւ։ Նրանք բոլորը գայթակղիչ կը դառնան արտաահմանեան ընկերութիւնների համար, որոնք այդ նոր երկրներում կը գտնեն աժան աշխատանքային ուժ, կ՚արտահանեն այնտեղից բնական հարստութիւնները, կը կառուցեն նրանց տարածութիւնների վրայ վնասակար արտադրութիւններ ու կը թաղեն նրանց հողերում իրենց միջուկային մնացուկները։ Միացեալ Նահանգները, Ճապոնիան, Գերմանիան և Չինաստանը կը սկսեն պայքարել Ռուսաստանում ազդեցութեան գօտիներ ստեղծելու համար։ Կը խախտուի համաշխարհային ուժերի հաւասարակշռութիւնը և մեծ վտանգ կը ստեղծուի աշխարհի խաղաղութեան համար**»։ Ապա Շաֆարեւիչը աւելացնում է.- **Ռուս ժողովուրդը կարողացաւ ազատւել մոնոդոլներից, յաղթեց Նապոլէոնին և Հիտլերին, դուրս կը գայ նաեւ այսօրւայ դժւարութիւնների տակից**»։ Եւ մենք համոզւած պիտի լինենք, որ դուրս կը գայ։ Ռուսաստանի նորաստեղծ «**Ժողովրդավարական Ռուսաստան**» շարժումը կոչ է անում Ռուսաստանի ղեկավարներին՝ դուրս գալ Խորհրդային Միութեան կազմի միջից։ Եթէ Ռուսաստանի ղեկավարները հետեւեն այդ կոչին, ապա ում նախագահը պիտի լինի Գորբաչեւը։ Կարո՞ղ է Միութիւնը միութիւն մնալ առանց Ռուսաստանի։ Շատ պարզ է, որ Գորբաչեւը և կենտրոնական իշխանութիւնները հակառակ պիտի լինեն այդ առաջարկութեանը։ Միւս կողմից ինքը Ռուսաստանը դաշնակցային պետութիւն է, որի կազմի մէջ մտնող բաշկիրները, թաթարները, կարելացիները, ուդմուրտները, կոմիները և ուրիշներ արդէն իրենց անկախ են յայտարարել։ Նոյնիսկ որոշ շրջաններ ուզում են իրենց յատուկ դրամը շրջանառութեան մէջ դնել։ Կենտրոնական իշխանութիւնները, ձգտելով ապահովել կայսրութեան

ամբողջութիւնը որպէս վերանորոգուած դաշնակցային պետութիւն, փաստօրէն հակադրւում են Ռուսաստանի շահերին, որը ուզում է անկախ լինել կենտրոնից, թէ՛ տնտեսապէս և թէ քաղաքականօրէն: Բայց հանրապետութիւնների ինքնիշխանութեան ամրապնդումը էլ աւելի է ստրկացնում այդ հանրապետութիւններում գտնուող ազգային փոքրամասնութիւնները: Որքան ինքնիշխան լինեն Ադրբեջանը, Վրաստանը, Ռուսաստանը, այնքան անազատ ու ճնշուած կը մնան արցախցիները, աբխազները և թաթարները: Սա էր պատճառը, որ ազգային պետութիւնների, ինքնավար միաւորների ու պետականութիւնից զուրկ ժողովուրդների առաջին համամիութենական համագումարում, որը տեղի ունեցաւ Մոսկւայում այս տարւայ սեպտեմբերի 22ին, կենտրոնական իշխանութիւնները անսպասելիօրէն ձեռք բերեցին հզօր դաշնակիցներ: Սրանք էին ազգային փոքրամասնութիւնները: Համագումարի աշխատանքներին մասնակցում էին 34 ինքնավար միաւորներ և 106 հասարակական շարժումներ: Այս բոլորը միաձայնութեամբ ընդունեցին մի յայտարարագիր, որտեղ ասւած էր, որ անհրաժեշտ է պահպանել ինքնիշխան հանրապետութիւնների միութիւնը, որպէս վերանորոգուած դաշնակցային պետութիւն: Հաւանաբար, դրանով էլ կարելի էր բացատրել այն հանգամանքը, որ համագումարին ներկայ էր Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհրդի ազգութիւնների խորհրդի նախագահ Ռաֆիկ Նիշանովը, որը ի միջի այլոց յայտարարեց, որ միութենական պայմանագրի մշակմանը բացի 15 հանրապետութիւններից, մասնակցելու են նաեւ 38 ինքնավար միաւորների ներկայացուցիչները: Եւ ահա այստեղ հարց է ծագում, ի՞նչ դիրք պիտի բռնեն հայերը: Եթէ մենք պաշտպանենք հանրապետութիւնների անկախութեան գաղափարը, ապա դաւաճանած կը լինենք արցախցիներին, որոնք անկախ Ադրբեջանում ամբողջովին անպաշտպան կը մնան: Իսկ եթէ մենք պաշտպանենք հանրապետութիւնների միութեան գաղափարը, ապա դաւաճանած կը լինենք հայաստանցիներին, որոնք բնականօրէն ձգտում են անկախութեան: Այս կարծեցեալ դժւարին կացութիւնից դուրս գալու քաղաքական ճանապարհը շատ յստակ է: Հայերի վարքագծից չի կախւած միութեան ապագան, այլ այն ուժերից, որոնց վրայ մենք հայերս ոչինչ ունենք աւելացնելու և ոչինչ կարող են խլել: Ուստի բարոյական և տրամաբանութեան տեսանկիւնից Հայաստանը, որպէս հայ ժողովրդի ներկայացուցիչ, պէտք է Ռուսաստանի հետ միասին հանրապետութիւնների անկախութիւնը պահանջի, իսկ Արցախը, որպէս ինքնավար միաւորներից մէկը պէտք է միութեան դաշնակցային կառոյցը պահանջի, այսինքն պէտք է հանդէս գայ անջատողական տրամադրութիւնների դէմ: Այն փաստը, որ Արցախի և Հայաստանի հայերը կանգնած կը լինեն տար-

բեր ու հակառակ դիրքերի վրայ ոչ միայն հակաբնական չի նկատուի, այլ հայերի քաղաքական հասունութեան մասին կը վկայի։

Իսկ եթէ մենք այդ քաղաքական հասունութիւնը չունենանք, ապա Ռուսաստանը շատ գեղեցիկ ու նուրբ ձեւով կարող է «**ազատել**» հայկական հարցից, ինչպէս շատերը մինչ այդ ազատել են այդ հարցից։ Գորբաչեւը կարող է, օրինակ, Արեւմուտքի բուռն ծափահարութիւնների տակ յայտարարել, որ Հայաստանը այլեւս ազատ է և կարող է դուրս գալ Խորհրդային Միութեան կազմից։ Եւ մենք, ազատութեան գաղափարով գինովցած, կարող ենք դուրս գալ միութեան կազմից։ Իսկ յաջորդ օրը, Նախիջեւանի թուրքերին պաշտպանելու պատրւակով, Թուրքիան կը ներխուժի «**Ազատ ու Անկախ**» Հայաստան։ Եւ աշխարհը լուռ կը մնայ, ինչպէս լուռ է մնում բոլոր նման դէպքերում։ Մեզ ոչ միայն ոչ մէկը չի պաշտպանի, այլ մեր նկատմամբ կը չարախօսեն, ասելով, թէ դուք ինքներդ ուզեցիք այդ անկախութիւնը։ Իսկ Գորբաչեւը Թուրքիայից որեւէ ձեւով հատուցում կը ստանայ, ինչպէս ստացաւ Գերմանիայից, Միացեալ նահանգներից և շուտով ստանալու է Ճապոնիայից Կուրիլեան կղզիների համար։ Այս ամէնը հնարաւոր է մեր անբարոյական աշխարհում։ Բայց մեր աշխարհը միշտ էլ այդպիսին է եղել, ուստի մենք երկրի ներսում որոշակի քայլեր կատարելիս երբեմն-երբեմն պէտք է պատուհանի այն կողմը նայենք, տեսնելու համար, թէ արդեօք փոթորիկ կամ երկրաշարժ չի սպասւում։

1990

ԻՆՉ ԿԱՐԵԼԻ ՉԷ ԵՒ ՊԷՏՔ ՉԷ ԱՍԵԼ

Է. Յովհաննիսեան

Ժամանակը մեզ իրական հնարաւորութիւններ է ընձեռնել դնելու մեր ազգային իղձերի իրականացման հիմքերը, և աններելի անմտութիւն կը լինի չօգտագործել այդ հնարաւորութիւնը:

Լեւոն Տէր Պետրոսեան

Հայաստանի Հանրապետութեան Գերագոյն Խորհրդի նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի ելոյթը՝ Հայաստանի Հանրապետութեան Գերագոյն Խորհրդի նստաշրջանում **«Հայաստանի ներկայ քաղաքական իրավիճակը»** վերնագրի տակ՝ Հայաստանի մամուլը հրատարակեց հայերէնով ու ռուսերէնով: Երանի թէ չհրատարակէր, կամ երանի թէ Հայաստանի նախագահը չասէր այն, ինչ ասաց:

Մենք արժանացանք այն երջանիկ պահին, երբ կարելի է նախագահ քննադատել (չգիտեմ թէ որքանով դա հնարաւոր է երկրի ներսում) և համազօած լինել, որ այդ քննադատութիւնը կը հասնի Հայաստան: Այդ քննադատութեամբ էլ պիտի զբաղուեմ: Բայց նախ տեսնենք, թէ ի՞նչ ասաց Լեւոն Տէր Պետրոսեանը, որ չպիտի ասէր: Նրա ելոյթը ես պիտի ամփոփեմ մի քանի թեզերի մէջ, ընդորում կ'ամփոփեմ ոչ այն գեղեցիկ բառերով ու նախադասութիւններով, որոնցով այդ թեզերը արտայայտուեցին, այլ ճիշտ այն ձեւի, ինչպէս կ'ընկալեն Հայաստանի նախագահի խօսքերը բոլոր մեր հակառակորդները, իսկ բարեկամներ առայժմ չունենք:

1.- Խորհրդային կայսրութիւնը փլուզւում է և դա ուրախալի երեւոյթ է, սակայն իշխանութիւնները վերջին ճիգերն են գործադրում ամբողջատիրական կայսրութիւնը փրկելու համար: Այս ուղղութեամբ նրանք ազդում են քաղաքական, տնտեսական, ազգային փոխյարաբերութիւնների լծակների վրայ, իսկ հարկ եղած դէպքում կը սեղմեն նաեւ ուժ գործադրելու լծակի վրայ:

2.- Ադրբեջանում ուժի գործադրումը արդարացուած էր, քանզի այնտեղ կատարւում էր օրինական իշխանութիւնը բռնի ուժով տապալելու փորձ: Բայց բռնութիւն գործադրելով Խորհրդային Միութիւնը ստիպւած կը լինի հրաժարուելու իր զարգացման քաղաքականութիւնից, ինչը լաւատեսութիւն է ներշնչում:

3.- Ինչպէս 1920 թւականին, այնպէս էլ այսօր, Ադրբեջանը դարձել է Կենտրոնի յենարանը՝ ժողովրդավարական Հայաստանի, իսկ հարկ եղած դէպքում նաեւ Վրաստանի դէմ պայքարելու համար: Արցախի հարցում, օրինակ, պարզ երեւում է Ադրբեջանի և կենտրոնի համագործակցութիւնը: Ստեղծած կացութիւնը կարող է բերել և ժամանակաւոր շահեր Ադրբեջանին: Սակայն, եթէ 20 թւականին Ադրբեջանը հզօրացող Ռուսաստանի դաշնակիցն էր, ապա այսօր նա քայքայւող միութեան հետ է: Իսկ այդ քայքայւող կայսրութեան կենտրոնը հակադրւած է ոչ միայն Հայաստանին, այլեւ ժողովրդավարական Ռուսաստանին: Մենք հայերս պէտք է օգտւենք այս կացութիւնից և Ելցինի ճամբով հարւածենք Գորբաչեւին ու նրա դաշնակից ադրբեջանցիներին:

4.- Մենք շատ աւելի ընդունակ, աշխատասէր ու խելացի ժողովուրդ ենք, քան մեր հարեւաններ՝ ադրբեջանցիները ու վրացիները: Պատահական չէ, որ հայերը գերիշխող դիրքեր էին զբաղեցրել Թիֆլիսի և Բաքւի տնտեսական կեանքում: Ուրեմն՝ ազատ տնտեսվարութիւնը մեզ (տաղանդաւոր հայերիս) առաւելութիւն կը տայ: Սփիւռքն էլ միւս կողմից կ'օգնի և մենք կը շահենք մրցակցութիւնը վրացիների ու ադրբեջանցիների հետ:

5.- Հայաստանը փոքրիկ ու աղքատ երկիր է, ուստի նրան դժւար կը լինի ստեղծել մասնագիտական բանակ, որը օժտւած լինի արդիական զէնքերով: Դրա համար, աւելի լաւ է, որ հայ զինծառայողները իրենց զինւորական ծառայութիւնը անցկացնեն Հայաստանում: Ջինւեն, վարժւեն կենտրոնական իշխանութիւնների հաշւին, իսկ ճակատագրական պահերին, հրաժարւեն իրենց հրամանատարների հրամաններից և կենտրոնից ստացւած զէնքերը շուռ տան հէնց կենտրոնի դէմ: Այ, եթէ մենք հիմա այդպիսի զօրքեր ունենայինք կարող էինք նրանց օգտագործել Արցախում՝ Շատալինի և Սաֆոնովի դէմ: Ահա թէ ինչու մենք ստիպւած կը լինենք **«դեռ որոշ ժամանակ հաշտւել Հայաստանում ռուսական յենակէտերի գոյութեան հետ»:**

6.- Չնայած նրան, որ Սփիւռքում և անգիտակից հայութեան մէջ լսւում են հակաճառութիւններ, անհրաժեշտ է կարգաւորել մեր յարաբերութիւնները մեր անմիջական հարեւաններ՝ Իրանի և Թուրքիայի հետ, որի հիմքում պէտք է լինի հայ ժողովրդի շահերից բխող իրապաշտութիւնը:

7.- Անհրաժեշտ է վարել ճկուն քաղաքականութիւն, ինչը նշանակում է հրաժարւել ցուցական քաղաքականութիւնից. օրինակ՝ հրաժարւել հողային պահանջներից և ցեղասպանութեան դատապարտումից, և անուշտ, Ազատ, Անկախ ու Միացեալ Հայաստանի գաղափարից: Անհրաժեշտ է օգտւել հակառակորդների նոյնիսկ չնչին հակասութիւններից, օրինակ, աբխազների և վրացիների, ռուսների և հրեաների:

Այժմ տեսնենք, թէ ինչո՞ւ այս ամէնը պիտի չաւէր:

Սկսենք նրանից, որ այն համոզւածութիւնը, թէ խորհրդային կայսրութիւնը փլուզւում է, ոչ մէկ հիմք չունի։ Նրան փլուզող ուժերը շատ աւելի աղմուկ բարձրացնող են, քան պայքարողներ։ Այո՛, բոլոր կայսրութիւնները վաղ թէ ուշ տապալւում են և Ռուսական կայսրութիւնն էլ մէկ օր պիտի տապալւի։ Բայց կայսրութիւնները տապալւում են երեք ճանապարհներով։ Կա՛մ նրանց տապալւում են դրսից ուրիշ կայսրութիւններ, կա՛մ տկարանում է իշխող ազգը և կա՛մ էլ այս վերջինս սկսում է հասկանալ, որ կայսրութիւնը ծանր է նստում նրա վրայ։ Ռուսական կայսրութեան համար այս պայմաններից և ոչ մէկը գոյութիւն չունի։

Դրսում կայսրութիւնը տապալող ուժեր չկան։ Արեւմուտքը շահագրգռած է կայսրութիւնը պահպանելու մէջ, քաջ գիտակցելով, որ նրա փլուզումից յետոյ անծայրածիր Ռուսաստանում կը ստեղծւեն հազարաւոր «Լիբանաններ», որոնց մասնակիցներից ոմանք օժտւած կը լինեն միջուկային և այլ արդիական զէնքերով։

Իշխող ժողովրդի տկարացման նշաններ նոյնպէս չկան։ Ռուս ժողովուրդը շարունակում է մնալ կայսրութեան ամենակազմակերպւած և քանակով ամենամեծ ժողովուրդը։ Կայսրութեան տապալման գործին լծւած հրեաները, ազգային հանրապետութիւնները և նոյնիսկ 40 միլիոնանոց Ուկրաինան ոչինչ կարող են անել հակառակ ռուս ժողովրդի կամքի։ Եթէ ռուսները ուզեն,- իսկ նշաններ կան, որ նրանք ուզում են,- անմիջապէս վերջ կը տան կայսրութեան քայքայմանը և բոլոր այն աղմուկներին, որոնք բարձրացել են երկրում ժողովրդավարութեան կամ յեղափոխութեան պատրւակի տակ։

Վերջին յոյսը այն է, որ առողջ մտածելակերպ ունեցող ռուսները հասկանան, որ կայսրութիւնը մեծ բեռ է Ռուսաստանի համար, որը այլեւս նա չի կարող կրել։ Հաւանաբար, Ելցինին կարելի է դասել հէնց այս թեւին։ Բայց նրա յաջողութիւնը բաւականին կասկածելի է։ Այնուամենայնիւ, եթէ իսկ նրան յաջողւի դուրս բերել Ռուսաստանը Խորհրդային Միութեան կազմի միջից, այդ ազատ Ռուսաստանը այլեւս չի զբաղւի ոչ Հայաստանով, ոչ Վրաստանով և ոչ էլ Կուբայով։ Դրա համար էլ ազատւում է այդ բեռներից։ Բայց, ինչպէս ասացի, հազիւ թէ Ելցինը յաջողութիւն ունենայ, քանզի ռուս ազգայնականները չեն ուզում նւիրել Մոլդովան Ռումանիային, իսկ Աղրբեջանը՝ Թուրքիային ու չե՛ն նւիրի։ Բացի դրանից, կենտրոնական իշխանութիւններին պաշտպանում են բոլոր ազգային փոքրամասնութիւնները։ Նրանք քաջ գիտակցում են, որ առայժմ կարող են գոյատեւել միայն կայսրութեան ներսում։ Եթէ հանրապետութիւնները ինքնիշխան դառնան, ապա բռնի ուժով մի քանի ամիսների ընթացքում կը լուծւեն արցախցիների, օսեթների, աբխազների, բաշկիրների, գագաուզների, ինչպէս նաեւ բոլոր հանրապետութիւններում ապրող ռուսների

հարցերը: Եւ հէնց սրանց վրայ էլ կը յենւի Գորբաչեւը, կամ նրան փոխարինող զօրավարը՝ կայսրութեան փլուզումը կանգնեցնելու համար: Ռուսաստանը այսօր գտնւում է այնպիսի վիճակում, ինչ վիճակում էր գտնւում Գերմանիան 30ական թւականներին, երբ իշխանութեան գլուխ անցաւ Հիտլերը:

Ուրեմն, ինչո՞ւ այս պայմաններում բացայայտօրէն յայտարարել, թէ մենք հայերս փլուզւող Ռուսաստանի գլուխ անցած Գորբաչեւի հետ չենք, այլ՝ նրա հակառակորդ, կայսրութիւնը փլուզող Ելցինի հետ: Սա նշանակում է, որ մենք ռուս ազգայնականների հետ չենք, այլ հակառուս թեւի հետ: Այդպէս կարելի է մտածել, այդպէս կարելի է գործել, բայց ոչ այդ մասին յայտարարել:

Կամ ինչպէ՞ս կարելի է ասել, որ խորհրդային զօրքերի մուտքը Բաքու արդարացւած էր: Էլ ո՞ւր մնաց ժողովրդավարութիւնը և մարդու իրաւունքների պաշտպանութիւնը: Գոնէ ասէր, որ զօրքերի մուտքը արդարացւած էր, քանզի նրանք փորձում էին փրկել հայերին ջարդերից: Ոչ, ասւում է, որ զօրքերի մուտքը արդարացւած էր, որովհետեւ ադրբեջանցիները բռնի ուժով ուզում էին տապալել օրինական իշխանութիւնը: Այդ ո՞ր իշխանութիւնն էր օրինական: Այն իշխանութիւնը՝ որ կազմակերպել էր հայերի ջարդերը: Կարելի է չսիրել Ադրբեջանի ժողովրդական ճակատը, կարելի է չսիրել ադրբեջանցիներին, բայց ինչո՞ւ այդ մասին յայտարարել և այն էլ այն պահին, երբ ամբողջ աշխարհը մարդասիրական և ժողովրդավարական սկզբունքներից ելնելով դատապարտում է խորհրդային զօրքերի մուտքը Թբիլիսի և Բաքու:

Այժմ անցնենք այն հարցին, թէ ինչո՞ւ այսօր, 20 թւականի նման Ադրբեջանը դարձել է կենտրոնի յենակէտը՝ ժողովրդավարական Հայաստանի դէմ պայքարելու հարցում: Ինչո՞ւ մենք չենք այդ յենակէտը՝ ամբողջատիրական Ադրբեջանի դէմ պայքարելու հարցում: Պարզապէս ադրբեջանցիները կենտրոնին ու Գորբաչեւին հաւատարմութեան շատ աւելի նշաններ ցոյց տւեցին: Օրինակ՝ նրանք տօնեցին Նոյեմբեր 7ը և Մութալիբովը ճառ արտասանեց ռուս զինւորների առջեւ: Ամբողջ Բաքուն այդ օրերին կարմիր դրօշների մէջ էր: Գորբաչեւը երբեք չի մոռանայ ադրբեջանցիների այդ ծառայութիւնը, այն դժւարին պայմաններում երբ Մոսկւան, Լենինգրադը, Երեւանը և շատ ուրիշ քաղաքներ հրաժարւել էին այդ տօնակատարութիւնից:

Ինչ վերաբերւում է ադրբեջանցիների և վրացիների նկատմամբ որոշ ցեղապաշտական յայտարարութիւններին, ապա՝ նրանք ընդհանրապէս անթոյլատրելի են: Այո, մենք նրանցից ընդունակ ենք, խելօք ենք ու աշխատասէր, այո՛, մենք միայն այդ յատկութիւններով կարող ենք գերազանցել նրանց՝ ազատ մրցակցութեան մէջ, բայց այդ բանը հրապարակովին չի ասւի: Ես կարող եմ գրել այս տողերը, բայց երկրի նախագահը, ոչ: Անշուշտ, հիմա ադրբեջանցիները ու վրացիները իրար գիրկ կը թռնեն, խանգարելու համար ստեծու-

մը այն կացութեան, որտեղ հայերը գերիշխող են դառնում Թիֆլիսի և Բաքւի տնտեսական կեանքում:

Լեւոն Տէր Պետրոսեանի տեսակէտը ազգային զինեալ ուժեր ստեղծելու ճանապարհի մասին միանգամայն ճիշտ է: բայց դա ասելո՞ւ բան է: Յիմար են, ի՞նչ է ռուսները, թէ կարծում ենք, որ մեր նախազահի ճառերը չեն լսում համապատասխան մարմինները: Եթէ նոյնիսկ նման ելոյթները ռուսները չլսեն, միեւնոյն է, ադրբեջանցիները նրանց լսել կը տան:

Մեր միւս հարեւաններ՝ Թուրքիայի և Իրանի նկատմամբ դիրք ճշտելու հարցը որոշ չափով կարող է նկատւել հրապարակային ելոյթների նիւթ: Բայց ոչ այն ձեւի տակ, ինչպէս դա արւեց: Նախ բոլորովին պէտք չէր Իրանը խառնել Թուրքիայի հետ, քանզի Իրանում ապրում են մօտաւորապէս 200,000 հայեր, և ապա, մեր վերաբերմունքը այդ երկրի նկատմամբ չի կարող համեմատւել Թուրքիայի հետ: Սա էլ նշենք, որ Իրանի իշխանութիւնները երբեք չեն պաշտպանի ադրբեջանցիների դատը, քանի որ նրանց որպէս ինքնուրոյն ազգ չեն ճանաչում և, ամէն պարագայում, հաշտ աչքով չեն նայում ազերիների անջատողական շարժումներին: Այս հարցում՝ իրանցիք մեր բնական դաշնակիցներն են: Իսկ եթէ քաղաքական հաշւարկ կատարենք, Իրանին մենք տալիք ունենք, ուստի պէտք է որոնենք նրա բարեկամութիւնը: Մինչդեռ Թուրքիան մեզ մեծ տալիք ունի, ուստի նա է, որ պէտք է որոնի մեր բարեկամութիւնը՝ իր պարտքերը առնւազն պակասեցնելու համար: Սակայն նա այս ուղղութեամբ ոչ մէկ քայլ չի կատարում, այդ քայլերը մենք ենք անում, բայց ի՞նչ շահելու համար:

Զուտ տնտեսական իմաստով, ոչ մէկ շահի մասին խօսք լինել չի կարող: Թուրքիան ինքը այնպիսի տնտեսական ճգնաժամ է ապրում, որ եթէ չլինէին Միացեալ Նահանգների առատ նւէրները, նրա վիճակը Ռուսաստանից էլ վատ կը լինէր: Եթէ մենք իսկապէս ուզում ենք գերազանցել Ադրբեջանին՝ տնտեսական բնագաւառում, ապա վստահ պիտի լինենք, որ Թուրքիան դրա մեծագոյն խանգարիչն է հանդիսանալու:

Ուրեմն՝ Թուրքիայի հետ յարաբերութիւններ լաւացնելու մեր ձգտումը ուրիշ նկատառումներ պիտի ունենայ: Չնայած նրան, որ (փառք Աստծոյ) այդ մասին հրապարակաւ բաւականին զուսպ է խօսւում, կարելի է ենթադրել, որ Թուրքիայի հետ բարեկամութիւնը անհրաժեշտ է Հայաստանին, որպէսզի նա չյարձակւի Հայաստանի վրայ, երբ Հայաստանը անկախ դառնայ: Այս տեսակէտը, Վրաստանում առաջնորդ դարձած Զւիադ Գամսախուրդիան արտայայտեց շատ աւելի պարզ (նա այդ բանը կարող է իրեն թոյլ տալ): Գամսախուրդիան ասաց, որ Թուրքիայով ռուսները վախեցնում են վրացիներին:

Եթէ սա է Թուրքիայի հետ մեր բարեկամութեան շարժառիթը, ապա՝ այստեղ պէտք է խօսել աւելի հանգամանօրէն: Համաձայնենք այն մտքի հետ, որ շատ նուրբ քաղաքականութիւն վարելիս կարելի է հրաժարուել հողային պահանջներից, բայց հրաժարուել ցեղասպանութեան դատապարտումից՝ անկարելի է: Հողային պահանջները քաղաքական բնոյթ ունեն և քաղաքական բանակցութիւններ վարելիս այդ պահանջներից կարելի է հրաժարուել, կամ՝ պահանջները ծաւալել: Իսկ ցեղասպանութիւնը ունի բարոյական արժէք, որից անկարելի է հրաժարուել: 70 տարի մի ամբողջ հայկական Սփիւռք զբաղուել է այդ հարցով և սերունդներ դաստիարակել այդ խնդրի վրայ: Նա կուտակել է փաստաթղթեր, դիմել է միջազգային ատեաններին, զինեալ պայքար է մղել ու արիւն թափել և յանկարծ Հայաստանի նախագահը առեւտրական կապեր է հաստատում Թուրքիայի հետ, առանց պահանջելու ցեղասպանութեան ճանաչումը:

Սա՞ է **«հայ ժողովրդի շահերից բխող պրագմատիզմը»**: Ինչու չէ, քաղաքականութիւնը այնքան կեղտոտ բան է, որ այդ **«պրագմատիզմն»** էլ կարող է մէջտեղ գալ: Բայց այդ ո՞ր բանակցութիւնների ժամանակ պարզուեց, որ թուրքերը պատրաստ են հրաժարուելու Հայաստանը և հայերին կուլ տալու ծրագրերից: Այդ որտեղի՞ց **«առողջ ուժերը ճիշտ հասկացան նման հրամայականը»**:

Այն ժամանակ, երբ գոյութիւն ունէր սառը պատերազմը և ամերիկեան կամ ՆԱՏՕի բլոքի երկրների գործողութիւններին անմիջապէս հակազդում էր Խորհրդային Միութիւնը, նոյնիսկ այն ժամանակ Թուրքիան ներխուժեց Կիպրոս, որը ՄԱԿի անդամ է և որի մէջքին կանգնած էր ՆԱՏՕի անդամ Յունաստանը: Իսկ այսօր, երբ Խորհրդային Միութիւնը ամերիկացիների հետ դաշինք կնքած հարւածում է իր վաղեմի բարեկամ Իրաքին, երբ Թուրքիան դարձել է Իրաքի հակառակորդը և այլեւս ոչ մէկ կողմից նրան վտանգ չի սպառնում, այդ ինչո՞ւ պէտք է նա այդքան բարեացակամ դառնայ Հայաստանի նկատմամբ: Այնպիսի տպաւորութիւն է ստեղծւում, որ Թուրքիան մեզ հանգիստ կը թողնի, եթէ մենք մոռացութեան մատնենք հողային պահանջները և ցեղասպանութիւնը: Բայց այդպիսի բան չի կարող պատահել: Նա չի թողնի մեզ հանգիստ, որովհետեւ Տէր Պետրոսեանից աւելի լաւ գիտի, որ ազատ և խաղաղ պայմաններում մենք նրա գլխին Իսրայէլ կը դառնանք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ «ՀԻՒՐԻԷԹ» ԵՒ «ՄԻԼԼԻԷԹ»Ի ՅՕԴՒԱԾՆԵՐԸ

Հայաստանի անկախութեան մասին յայտարարութեան նախօրեակին հրատարակուեցին զանազան յօդուածներ, այդ թւում նաեւ **«Հիւրիէթ»** թերթում,

որտեղ արտացոլւում էին Թուրքիայի ունեցած մտահոգութիւնները այդ հարցում։

Ահաւասիկ Պոլսում հրատարակւող **«Մարմարա»** հայկական օրաթերթի անդրադարձը, որը լոյս տեսաւ **«Հայաստանի անկախութիւնը Թուրքիայի համար նոր գլխացաւ է»** վերնագրով՝ թերթի Սեպտեմբերի 3ի համարում։ **«Հիւրիէթ»**ը իր առաջին էջի վրայ նիւթ է դարձրել Հայաստանի անկախութիւն հռչակելու հարցը մեծ վերնագրով՝ **«Նորից Հայաստանը փորձանք է եղել մեր գլխին»**։ Թերթի Վաշինգտոնի թղթակից Սէդադ Էրքինը ներսի էջերի վրայ **«Թուրքիայի համար մի նոր գլխացաւ»** վերնագրի տակ գրում է, թէ այս օրերին՝ երբ թուրքական հանրային կարծիքը զբաղւած է Ծոցի տագնապով, Թուրքիայի սահմանների անմիջապէս կողքին գտնւող Հայաստանը հռչակում է իր անկախութիւնը։ Յօդւածագիրը այնուհետեւ շարունակում է՝ **«Թէեւ այս հարցը Թուրքիայի համար անմիջապէս գլխացաւ չպիտի հանդիսանայ, որովհետեւ դեռեւս մի որոշ ժամանակ Հայաստանը իր գոյութիւնը պիտի շարունակի Խ. Միութեան երկնքի տակ։ Բայց մեզ համար բուն հարցը հետեւեալն է – այս երկիրը վաղը կարող է կատարեալ անկախ դառնալ և տեղ գրաւել Միացեալ Ազգերի Կազմակերպութեան մէջ։ Դա նշանակում է, որ պիտի բազմանան Թուրքիային այն սահմանակից երկրները, որոնց հետ Թուրքիան դժւարութիւններ ունի։ Պիտի ստեղծւի նոր կացութիւն Թուրքիայի արտաքին քաղաքականութեան մէջ»։**

… «Հիմա դժւար է կռահել, թէ Հայաստանի ղեկավարները ինչ դիրք են գրաւելու Թուրքիայի նկատմամբ, եթէ կատարեալ անկախ դառնան։ Բայց կարելի է հասկանալ, թէ նրանք ինչպիսի «զգացումներ» ունեն Թուրքիայի նկատմամբ»։

«… Անցեալ տարի Հայաստանի պառլամենտը արդէն յայտարարեց, թէ վիճելի է 1921ի համաձայնութեամբ ճշտւած սահմանային իրավիճակը։ Արդէն հայերը երկար ժամանակից ի վեր ջանում էին օրակարգի վրայ բերել այս հարցը, որը թուրքիայի համար փակւած էր 1921ի համաձայնութեամբ»։

«Հիւրիէթ»ի յօդւածագիրը այնուհետեւ գրում է.- **«Բայց ամէնից կարեւորը՝ «Հայկական ցեղասպանութեան մասին» հայերի պնդումներն են, ինչպէս նաեւ այն պնդումները, թէ Հայաստանի բնական սահմանները պարփակում են արեւելեան Անատոլուի նահանգները։ Ուրմեն, եթէ հիմնւի Հայաստանի անկախ հանրապետութիւն, նրա առաջին թիրախներից մէկն է լինելու Թուրքիայի հողային ամբողջականութիւնը»։**

…«Կարելի է մտածել նաեւ, որ Հայաստանի վարիչները՝ նկատի առնելով այն հանգմանքը, որ իրենք շրջապատւած են մահմեդական երկրներով և դէպի ծով, անցք չունեն՝ ուրեմն պիտի նախընտրէին լաւ յարաբերութիւններ մշակել Թուրքիայի հետ։ Բայց արեւմտեան աշխարհի, մանաւանդ Ֆրանսիայի և Ամե-

րիկայի ուժեղ լոբիները միշտ նեցուկ են կանգնելու Հայաստանին և դա մեր դիմաց կը ստեղծի յոյների ստեղծած կացութեան նման մի դժուարութիւն»:

Ահա թէ ինչո՞ւ, նախքան Թուրքիայի հետ առեւտրական կապեր կնքելը, անհրաժեշտ է ուժ դառնալ, որի հետ Անգարան ստիպւած կը լինի հաշւի նստելու: Իսկ քանի այդ ուժը չունենք, որեւէ քաղաքական քայլերի մասին խօսելը աւելորդ է: Լաւ է, որ մենք մնանք մեր բարոյական արժէքների ու նպատակների վրայ: Այս հարցը անմիջականօրէն առընչւում է վերջին թեզի հետ, որտեղ Հայաստանի նախագահը խօսում է այսպէս կոչւած ցուցադրական քաղաքականութեան մասին: Նախ եկէք պարզենք, թէ ի՞նչ է նշանակում ցուցադրական քաղաքականութիւն:

Հաւանաբար Լեւոն Տէր Պետրոսեանը ի նկատի ունի այն բարոյական արժէքները, որոնցով պէտք է որ ղեկավարւէին քաղաքական գործիչները, բայց չեն ղեկավարւում, ուստի՝ բարոյական և քաղաքական նպատակները դառնում են իրարից անկախ արժէքներ: Քաղաքական նպատակը այն է, որը բերւում է բանակցութիւնների սեղանի վրայ և որով ղեկավարւում են ազգային գործիչները: Իսկ բարոյական արժէքները փարոսներ են, որոնք գրեթէ անփոփոխ են և որոնց հասնելու համար անհրաժեշտ են տասնեակ քաղաքական հանգրւաններ: Ազատութիւն, անկախութիւն, միասնութիւն, արդարութիւն, իրաւունքների պաշտպանութիւն և շատ ուրիշ հասարակական նպատակներ կարող են ի վերջոյ իջնել քաղաքական սեղանի վրայ, եթէ ստեղծուեն համապատասխան պայմաններ, բայց քանի դեռ այդ պայմանները գոյութիւն չունեն, չի կարելի հրաժարւել բարոյական աժէքներից: Իսկ պայմաններ ստեղծելու տակ մենք պիտի հասկանանք այնպիսի քաղաքական մթնոլորտի ստեղծում, որտեղ կարող ենք այս կամ այն չափով պարտադրել մեր կամքը, ճնշում գործադրել, նահանջել ու յարձակւել: Եթէ այդ պայմանները գոյութիւն չունեն **«ցուցադրական քաղաքականութիւնից»** հրաժարւելը բարոյական յանցագործութիւն է: Ուզում եմ այս միտքը զարգացնել մի օրինակի վրայ:

Թուրքիայի Եւրոպական Շուկայ մուտքը մեզ՝ հայերիս համար ձեռնտու է, որովհետեւ քաղաքակիրթ երկրների և ժողովուրդների մէջ նա ստիպւած կը լինի աւելի զուսպ լինել իր անքաղաքակիրթ ծրագրերում: Նրան աւելի հեշտ կը լինի քննադատել Եւրոպայի միջազգային ատեաններում, նրա էութիւնը աւելի մօտիկից կը տեսնեն եւրոպացիները, նա ստիպւած կը լինի գոնէ արտաքնապէս յարմարւել եւրոպական օրէնքներին, ինչպէս վարւում են շատ ուրիշ յետամնաց երկրները, որոնք գտնւում են Արեւմտեան ոլորտում: Բայց եկէք տեսնենք, արդեօք մենք ունե՞նք այն քաղաքական ուժը, որ կարողանանք բացել կամ փակել Թուրքիայի առջեւ Եւրոպական Շուկայի դռները: Իսկ եթէ մենք այդ ուժը չունենք - և մենք չունենք – ապա ինչո՞ւ հրաժարւել մեր բարոյա-

կան նպատակներից: Ու մենք չենք հրաժարւում: Մենք ամէն քայլափոխում գոռում ենք ու պիտի գոռանք, որ Թուրքիան ցեղասպան է ու շարունակում է մնալ այդպիսին, որ նա տեղ չունի Եւրոպական Շուկայում, որովհետեւ չի ճանաչում հայերի ցեղասպանութիւնը ու ճնշում է քրդերին: Ո՞ւմն է պէտք այս **«ցուցադրական քաղաքականութիւնը»**,- կ'ասեն մեզ: Բայց մենք ունենք այդ հարցի յստակ պատասխանը: Մեր այդ քաղաքականութեամբ մենք ճնշում ենք գործադրում Թուրքիայի վրայ, որի տակ նա իրեն բաւականին անկայուն է զգում:

Այս նոյն մօտեցումը մենք պէտք է ցուցաբերենք հայ-թուրքական պետական յարաբերութիւններում: Եթէ համոզւած ենք, որ ինչ-ինչ ճանապարհներով կարող ենք չէզոքացնել Թուրքիային մեր նկատմամբ, առնւազն մի 10 տարով, հրաժարւենք **«ցուցադրական»** քաղաքականութիւնից, չխօսենք ո՛չ ցեղասպանութիւնից և ոչ էլ հողային պահանջներից: Բայց Թուրքիան աւանակ չէ, որ մեզ հանգիստ թողնի 10 տարով ու հնարաւորութիւն տայ, որ մենք կրկին նրա համար գլխացաւանք դառնանք: Եթէ այդպէս է, ինչո՞ւ հրաժարւել մեր բարոյական քարոզներից: Կա՞յ այն քաղաքական հաշւարկը, որը ցոյց տայ, թէ ի՞նչ ենք մենք ձեռք բերում, հրաժարւելով մեր աւանդական քաղաքականութիւնից: Եթէ կայ լաւ է, իսկ եթէ չկայ, լաւ կը լինէր, որ Հայաստանի նախագահը այդ մասին խօսէր ու չասէր մնացածը: Երանի թէ ես էլ չխօսէի, բայց ես նախագահ չեմ, ինձ կարելի է:

1990

ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԼՌԵԼ ՄԱՄՆԱԳԷՏՆԵՐԸ

Է. Յովհաննիսեան

Մեր ժողովրդի համար այս ճակատագրական օրերին տարօրինակ կարգով Հայաստանի մամուլում չեն երեւում վերլուծութիւններ ստեղծուած կացութեան վերաբերեալ և ժողովուրդը ստիպուած է լինում ղեկավարուել իր բնազդով, զգացմունքներով և կամ էլ ուրիշների թելադրանքով, որոնցից և ոչ մէկը ճակատագրական այս պահին վստահելի օգնականներ չեն կարող նկատուել: Վերլուծութիւնները առաւել անհրաժեշտ են մինչեւ սեպտեմբերի 21, երբ հայ ժողովուրդը կայացնելու է միութեան մէջ մնալու կամ չմնալու ճակատագրական որոշումը:

Անշուշտ, որոշում կայացնելը ինքնըստինքեան Հայաստանի անկախութեան հարցը դեռեւս չի լուծելու, բայց այն դժւարին աշխատանքները, որոնք պէտք է սկսւեն հանրաքւէից անմիջապէս յետոյ, պահանջում են վերլուծութիւններ տնտեսական, քաղաքական, հասարակական և շատ ուրիշ բնագաւառներում, որոնք պէտք է ցոյց տան մեր ժողովրդին, թէ որքանով Հայաստանը պատրաստ է անկախութեան և որոնք են մեր հետագայ քայլերը: Ընդ որում՝ անկախութիւնը չպէտք է դարձնել ինքնանպատակ, այլ դիտել որպէս միջոց մեր ժողովրդի ազգային կեցութիւնը բարելաւելու համար: Ահա թէ ինչու բոլոր տեսակի վերլուծութիւնները պէտք է վերաբերւեն միայն ու միայն Հայաստանին, այլ ոչ թէ ազատութեան ու անկախութեան փիլիսոփայութեանը: Հայաստանի Գերագոյն խորհրդի նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանը փետրուարի 28ին, այսինքն՝ համամիութենական հանրաքւէի նախօրեակին, հանդէս եկաւ մի ելոյթով, որի մասին այսօր էլ խօսելը ուշ չէ:

Նախ նշենք, որ այդ ելոյթը հիմնականում Հայաստանին չէր վերաբերւում: Եթէ մի քանի տեղ օգտագործւած Հայաստան բառի փոխարէն օգտագործւէր, օրինակ, Ուզբէկիստան կամ Էստոնիա, ելոյթի տրամաբանութեան մէջ ոչինչ չէր փոխւի: Լեւոն Տէր Պետրոսեանի առաջարկութիւնները և հաստատումները այնքան ընդհանուր էին, որ անկարելի էր այնտեղից կռահել, թէ ի՞նչ յատուկ քայլեր պէտք է կատարի Հայաստանը այս օրերին:

Նրա ելոյթում կար որոշակի լաւատեսութիւն արդէն ձեռք բերւած նւաճումների նկատմամբ, որոնցից իբր թէ անկարելի է այլեւս նահանջել: Դժւար է համաձայնւել նրա այդ մտքի հետ, քանզի Մոսկւան հեշտութեամբ կարող է խլել Հայաստանից այն, ինչը ինքն էլ տւել է: Մենք կարող ենք այսօր ուրիշներին ասել, որ այն ամէնը, ինչ մենք այսօր ունենք, մենք ձեռք ենք բերել սեփական ու-

ժերով ու կամքով, բայց մենք հո լաւ գիտենք, որ դա այդպէս չէ: Նոյնիսկ կարող են ասել, որ մենք ձեռք բերեցինք շատ աւելի քիչ, քան մեզ թոյլատրուած էր:

Դժւար է համաձայնւել Լեւոն Տէր Պետրոսեանի նաեւ այն մտքի հետ, թէ Խորհրդային Միութիւնը վաղ թէ ուշ քայքայւելու է և մենք հայերս կարող ենք միայն արագացնել կամ դանդաղեցնել քայքայման այդ ընթացքը: Միութեան քայքայման նշաններ առայժմ չեն երեւում, իսկ մենք հայերս նախ ի վիճակի չենք արագացնելու կամ դանդաղեցնելու այդ ընթացքը և, յետոյ, դա բոլորովին մեր գործը չէ: Այդ գործը ոչ մէկ հայկական բովանդակութիւն չունի: Ինչ վերաբերւում է երկրի տնտեսական քայքայմանը, դա էլ հայկական գործ չէ: Այս ամէնը վերաբերւում է բոլորին և հայերի համար այդ խնդիրները կը լուծւեն ինքնաբերաբար, կենտրոնի թելադրանքներով: Այնուամենայնիւ, Լեւոն Տէր Պետրոսեանը իր ելոյթի վերջում ցուցաբերում է քաղաքական մօտեցում և իմաստութիւն ու նշում է, որ գուցէ Հայաստանը ստիպւած լինի ստորագրելու միութենական պայմանագիրը, խուսափելու համար աւելի վատ կացութիւններից: Սա արդէն զուտ հայկական խնդիր է, որը հայ մասնագէտների կողմից պէտք է լուրջ վերլուծութեան ենթարկւի: Այժմ պիտի փորձենք ձեւակերպել այն խնդիրները, որոնք վերլուծութեան կարօտ են:

Սկսենք այն պնդումից, թէ **«գուցէ»** մենք պիտի ստիպւած լինենք ստորագրելու միութենական պայմանագիրը: Ինչո՞ւ **«գուցէ»**: Մի՞թէ պարզ չէ, որ Հայաստանը պարտաւոր է այդ պայմանագիրը ստորագրելու: Ոչ թէ ստիպւած՝ խուսափելու համար աւելի վատ կացութիւններից, այլ սեփական կամքով, քաջ գիտակցելով՝ որ ստեղծւած պայմաններում դա լաւագոյն ընտրութիւնն է: Ահաւասի՛կ մի խնդիր, որը կարօտ է ուսումնասիրութեան:

Եթէ մենք պիտի ստորագրենք պայմանագիրը, որովհետեւ հակառակ դէպքում զօրքերը զէնքի ուժով կը պարտադրեն դա անել, սա մէկ խնդիր է: Բոլորովին ուրիշ խնդիր է, եթէ մենք ստորագրում ենք պայմանագիրը, որպէս գիտակցւած անհրաժեշտութիւն, որպէս անկախութեանը տանող փուլերից մէկը: Սա էլ, անշուշտ, ստիպողական քայլ է, բայց ճիշտ այնքանով ստիպողական, որքանով մենք ստիպւած ենք քայլելու, քանզի թռչել չգիտենք:

Առաջակում ենք քննարկման դնել հետեւեալ թեզերը, որոնք կա՛մ պէտք է ընդունել և կամ էլ հիմնաւորւած հերքել:

1) Արցախի հերոսամարտը իր տեւողութեամբ արդէն գերազանցեց Սասունի ապստամբութիւնը, Մուսա լերան և Վանի պաշտպանութիւնը, Փետրուարեան Ապստամբութիւնը, Սարդարապատի ճակատամարտը և նոյնիսկ Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնը: Արցախցիների ինքնապաշտպանութիւնը հասել է մի այնպիսի տեղ, որ նրանք կա՛մ պիտի յաղթեն և կամ էլ ջնջւեն, իրենց հետ ջնջելով նաեւ Արցախի Հարցը: Արցախի ինքնապաշտ-

պանութիւնը կարող է շարունակուել միայն այնպիսի պայմաններում, երբ Հայաստանը ի վիճակի լինի նիւթական և բարոյական օգնութիւն հասցնելու Արցախի իր եղբայրներին: Արցախի խնդիրը մեր բոլորի խնդիրն է, նա ունի համազգային տարողութիւն, ուստի չի կարող հայ ժողովուրդը ոերուէ քաղաքական քայլ կատարել, առանց հաշուի առնելու Արցախի խնդիրը: Իսկ սա նշանակում է, որ չի կարող Արցախը մնալ Ադրբեջանի կազմի մէջ, երբ Հայաստանը դուրս է գալիս միութիւնից: Սա կը լինի դաւաճանութիւն արցախցիների նկատմամբ, որոնց կարող են ազերի փանթիւրքիստները մէկ գիշերւայ մէջ ենթարկել ցեղասպանութեան, որից յետոյ կը պահանջեն Զանգեզուրը՝ Նախիջեւանի հետ միանալու համար: Եւ, անշուշտ, նրանց պահանջը Թուրքիայի թելադրանքով կը բաւարարեն ռուսները: Չէ՞ որ միութիւնում մնացած Ադրբեջանը շատ աւելի հարազատ կը նկատուի, քան միութիւնից դուրս եկած կամ դրան ձգտող Հայաստանը: 2) Հայաստանը պատրաստ չէ անկախութեան և կը պահանջի առնուազն 10 տարի հետեւեալ ուղղութիւններով նախապատրաստական աշխատանքներ տանելու համար:

ա) Անհրաժեշտ է պատրաստել սերունդ, որի համար անկախութիւնը լինի ոչ միայն բարոյական, այլեւ քաղաքական արժէք և որը, բացի գեղեցիկ լոզունգներից ու ճառերից, կարողանայ իրականացնել անկախութիւնը: Դրա համար անհրաժեշտ են հայ դիւանագէտներ, զինուորականներ, տնտեսագէտներ և իմաստուն ու փորձուած ղեկավարներ: Այս ամէնը մենք այսօր չունենք, իսկ եղածներն էլ գործում են ոչ հայկական բնագաւառներում: Այս ողբերգութիւնը տեղի է ունենում ոչ միայն այն պատճառով, որ հայ ժողովրդի տաղանդաւոր զաւակները չեն իջնում ուրիշներին ծառայելու «բարձրունքներից» իրենց ժողովրդի «մանր» խնդիրների մակարդակի վրայ, այլեւ այն պատճառով, որ Հայաստանի ներկայ ղեկավարները մօտ չեն թողնում «ուրիշների» կասկածելի մարդկանց իրենց խորհրդատուներ դարձնելով:

բ) Անհրաժեշտ է ճշտել Հայաստանի արդիւնաբերական զարգացման ուղիները, հաշուի առնելով ձեռք բերելիք շուկաները, հումքային և էներգետիկական կարողութիւնները, ապրանքների արտահանման ու ներմուծման ճանապարհները, կապիտալ ներդրման աղբիւրները եւ այն ամէնը, ինչը անհրաժեշտ է Հայաստանի տնտեսական անկախութիւնը ապահովելու համար:

Այժմ Հայաստանը պատրաստ չէ տնտեսական անկախութեան: Միակ շուկան, որտեղ նա կարողանում էր սպառել իր ապրանքները, դա Ռուսաստանի շուկան էր, որը ազատ դառնալուց յետոյ այդքան էլ մատչելի չի լինի Հայաստանի համար: Այդ ազատ շուկայում, ուր կը թափանցեն աշխարհի տարբեր երկրներ, մեր կոնեակը ստիպուած կը լինի մրցելու ֆրանսիական կոնեակի հետ, Մասիս ընկերութեան կօշիկները իտալական կօշիկների հետ, իսկ

հաշւիչ մեքենաները գերմանական մեքենաների հետ: Այս բնական մրցակցութիւնը մեզ համար էլ աւելի կարող է բարդանալ, եթէ մենք դուրս գանք միութիւնից և ենթարկւենք քաղաքական ճնշումների: Ի՞նչ կ'անենք մենք եթէ, օրինակ, Ռուսաստանը արգելք դնի Հայաստանի հետ առեւտուր վարելու վրայ, ինչպէս, օրինակ, Եւրոպան և Ամերիկան արգելեցին Իրաքի հետ առեւտուր վարելը: Կամ՝ ի՞նչ ճանապարհով մենք պէտք է արտահանենք ու ներմուծենք ապրանքներ, եթէ ծով չունենք: Օդանաւային ճանապարհը նախ անտանելի թանկ է ու սահմանափակ: Նա կարող է միայն օժանդակ դեր կատարել: Իսկ երկաթգծային բոլոր ճանապարհները անցնում են այնպիսի երկրներով, որոնք ցանկացած ժամանակ կը փակեն այդ ճանապարհները, իսկ այդ ցանկութիւնները Աստւած չի խնայել ու առատօրէն տւել է մեր հարեւաններին: Հաւանաբար միակ այս կամ այն չափով յուսալի ճանապարհը Պարսկաստանից եկող ճանապարհն է, որը այսօր դեռեւս գոյութիւն չունի: Ուրեմն՝ նախ քան անկախանալը, անհրաժեշտ է այդ ճանապարհը կառուցել: Չխօսենք այստեղ տնտեսական անկախութիւն ձեռք բերելու այլ հարցերի մասին, թող խօսեն մասնագէտները: Առարկայական հաշւարկներով թող նրանք ապացուցեն, որ Հայաստանը ի վիճակի է բաւարարելու իր տնտեսական պահանջները:

գ) Անհրաժեշտ է ապահովել Հայաստանի պաշտպանութիւնը բազմաթիւ արտաքին թշնամիներից, ղեկավարւելով այն սկզբունքով, որ բարոյական սկզբունքներից ելնելով մեզ ոչ մէկը չի պաշտպանի: Սրա վառ ապացոյցը քրդերի խնդիրն է, որոնք ապստամբեցին Իրաքում, հասան որոշակի յաջողութիւնների և կարող էին վերջնականօրէն լուծել իրենց ինքնավարութեան հարցը, եթէ ամերիկացիները մի փոքր պաշտպանէին նրանց: Բայց քրդերի **«մեծ բարեկամ»** Թուրքիան մերժեց քրդերի ինքնավարութիւնը և Միացեալ Նահանգները յետ քաշւեցին, իսկ նրանց աչքի առջեւ Սադամ Հուսէյնը ջարդեց քրդերին: Այս էլ ո՞րերորդ անգամ քրդերին դաւաճանում են նրանց **«հովանաւորողները»**:

Ուրեմն՝ մենք հայերս նոյնպէս ոչ մէկի վրայ չենք կարող յոյս դնել, իսկ սեփական բանակ ստեղծելու սեփական օդանաւեր ու հրասայլեր ունենալու համար՝ 30 տարին էլ բաւական չէ: Բայց եթէ մեզ նոյնիսկ յաջողւի մի 10 տարւայ ընթացքում ստեղծել այդ բանակը, միեւնոյն է՝ մեր աշխարհագրական դիրքը թոյլ չի տայ մեզ մտնել որեւէ ռազմական ուխտի մէջ, որովհետեւ դրան կը հակառակի թէ՛ Թուրքիան և թէ Ռուսաստանը, որի կազմից մենք դուրս ենք եկել:

Միակ ելքը, հաւանաբար, Իսրայէլի ճանապարհն է, որը ՆԱՏՕի անդամ չդառնալով, արաբական երկրներով շրջապատւած, Միացեալ Նահանգների

անմիջական օգնութեամբ կազմակերպեց իր պաշտպանութեան ուժերը և այդ ճանապարհին ձեռք բերեց նոյնիսկ միջուկային զէնքեր: Այս նոյն դերը մեզ համար կարող էր կատարել Ռուսաստանը, բայց մէկ պայմանով. մենք՝ հայերս, Ռուսաստանում պէտք է կարողանայինք նւաճել այն դիրքերը, որոնք Միացեալ Նահանգներում նւաճեցին հրեաները: Իսկ Հայաստանը Կովկասում Ռուսաստանի համար պէտք է դառնար այն, ինչ դարձաւ Իսրայէլը Մերձաւոր Արեւելքում՝ Միացեալ Նահանգների համար: Թէ ո՞ր ճանապարհը կ'ընտրի Հայաստանը, թող ասեն մասնագէտները, բայց նրանք պարտաւոր են թուղթը ու մատիտը ձեռքերին մինչեւ սեպտեմբերի 21 ցոյց տան ժողովրդին, թէ ինչպէ՞ս պիտի նա պաշտպանուի բազմաթիւ հակառակորդներից, որոնցով մենք պարզապէս շրջապատւած ենք:

դ) Անկախ Հայաստանը միայն Հայաստանում ապրող հայերի համար չէ: Նա պէտք է դառնայ համայն հայութեան հայրենիքը, այսինքն՝ ազգահաւաքի կենտրոնը: Ինչպէ՞ս պէտք է կատարւի այդ ազգահաւաքը: Եթէ յոյսներս պիտի դնենք միայն հայրենասիրութեան վրայ, արդիւնքի չենք հասնի, որովհետեւ համազգային հերոսութիւն ոչ մէկ ժողովրդից չի կարելի պահանջել: Նոյնիսկ հրեաներին այդ բանը չի յաջողւում և Իսրայէլից հրեաները բաւականին ակտիւօրէն փախչում են Եւրոպա և Ամերիկա: Ուրեմն՝ ինչպէս պէտք է մենք Կալիֆորնիայում, Մոսկւայում, Փարիզում ու Արգենտինայում տեղաւորւած, աշխատանքով ու բնակարանով ապահովւած, տեղական պայմանների հետ ընտելացած հայ ընտանիքը տեղափոխենք Հայաստան: Այդ բանը մեզ կը յաջողւի միայն մէկ դէպքում, երբ Հայաստանում ստեղծւեն համապատասխան պայմաններ: Իսկ մենք այսօր չգիտենք, նոյնիսկ, թէ ինչպիսի հայեր են ապրում Հայաստանից դուրս, ի՞նչ պահանջներ նրանք ունեն և ինչպիսի՞ պայմաններ պէտք է ստեղծել նրանց համար: Եթէ մենք այս հարցը ուսումնասիրած լինէինք, ապա կը տեսնէինք, որ ներկայ Հայաստանը չի կարող տեղաւորել արտերկրի հայութիւնը, ուստի նախքան անկախանալը, անհրաժեշտ է մտածել նաեւ այն մասին, թէ ինչպէ՞ս պիտի արտերկրի հայութիւնը մասնակցի Հայաստանի հասարակական և քաղաքական կեանքին:

ե) Միայն շատ միամիտները կարող են ենթադրել, որ Ադրբեջանը մնալու է Միութեան կազմի մէջ: Վաղ թէ ուշ, երբ նա միութեան ներսում կ'աւարտի իր նախապատրաստական աշխատանքները, նա դուրս է գալու Միութեան կազմից: Այս առիթով անհրաժեշտ է քննարկել մի քանի տարբերակներ, պարզելու համար՝ թէ ո՛ր դէպքում մենք մեզ աւելի ապահով կը զգանք: Ադրբեջանը ներսումն է, իսկ մենք՝ դրսում: Երկուսս էլ ներսումն ենք: Ադրբեջանը դրսումն է, իսկ մենք՝ ներսում: Երկուսս էլ դրսումն ենք: Մեր կարծիքով ամենաապահով

վիճակը երրորդն է, այսինքն՝ Ադրբեջանը դրսումն է, իսկ մենք՝ ներսում։ Բայց թող խօսեն մասնագէտները։

Եթէ հայ մանսագէտները շարունակեն լռել, պէտք է դիմել օտար մասնագէտների օգնութեան։ Եթէ այս ուսումնասիրութիւնները չկատարուեն, պիտի նորից յոյսներս կապենք մեր ժողովրդի առողջ բնազդի վրայ, որը յաճախ օգնել է մեզ, բայց ներկայ պայմաններում միայն բնազդով ղեկավարուելը մեզ համար մի քիչ ամօթ է։

1991

ՈՐՏԵ՞Ղ ԵՆՔ ՄԵՆՔ

Է. Յովհաննիսեան

Պատնէշի ո՞ր կողմն ենք մենք հարցին կարելի է պատասխանել՝ յստակեցնելուց յետոյ միայն, թէ ո՛վքեր ենք մենք և ո՞րն է տարբեր կողմեր ունեցող պատնէշը։

Մենք Հ.Յ.Դաշնակցութիւն կուսակցութիւնն ենք, որ ուխտել ենք ծառայել մեր ժողովրդին ու տանել նրան դէպի իսկական անկախ, իսկական միացեալ ու համահայկական, իսկական ազատ Հայաստան։ Իսկ պատնէշը այն է, որի միւս կողմում կանգնած ուժերը խանգարում են մեզ կատարել մեր ուխտը ու առաքելութիւնը։

Սակայն, անմիջապէս նշենք, որ զուտ հայկական պատնէշ այսօր գոյութիւն չունի, քանզի այն կռիւները, որոնք տեղի են ունենում քաղաքական ասպարէզում և ռազմաճակատում՝ այսպէս թէ այնպէս մաս են կազմում շատ աւելի մեծ ու հզօր քաղաքական ուժերի խաղերի։ Ղարաբաղի, Աբխազիայի, Գագաուզիայի ու թաջիկների հարցերը ծագել են Ռուսաստանում տեղի ունեցող իրադարձութիւնների բերումով և կարող են որեւէ լուծում գտնել՝ մեր կողմնորոշումների և մեծերի կռիւների արդիւնքների հիման վրայ։ Ահա թէ ինչո՞ւ սեփական կողմնորոշումը յստակեցնելու համար անհրաժեշտ է պարզել, թէ ո՛վքեր են կանգնած մեծ պատնէշի տարբեր կողմերում։ Կասկածից վեր է, որ մեծ պատնէշը սկսւում ու վերջանում է Ռուսաստանում, չնայած՝ որ այդ պատնէշի մէկ կողմում կանգնած ուժերը ղեկավարւում են դրսից։ Ռուսաստանով էլ որոշելու է բոլոր նախկին խորհրդային հանրապետութիւնների ու ժողովուրդների քաղաքական ճակատագիրը։

Իսկ Ռուսաստանում պատնէշի մէկ կողմում կանգնած են դրսից ղեկավարւող այսպէս կոչւած ժողովրդավարականները, որոնք յանուն ազատութիւնների պատրաստ են բաժան-բաժան անել Ռուսաստանը։ Ժողովրդավարականների լոզունգների քարոզչական մասը շատ յստակ է, մարդու իրաւունքները, ազատութիւնները, անկախութիւնը, փոքրամասնութիւնների ինքնորոշման իրաւունքները շատ աւելի կարեւոր են, քան պետական շահերը ու պետութիւնը։ Նամանաւանդ՝ եթէ խօսքը Ռուսական պետականութեան մասին է, որը ոչ այլ ինչ է եթէ ոչ կայսրութիւն ու ժողովուրդների բանտ։ Սակայն նոյնքան պարզ է, որ այս գեղեցիկ խօսքերի ու քարոզչական աղմուկի տակ գործում են ամերիկեան և այլ ուժեր, որոնք ուժեղ Ռուսաստան տեսնելու մէջ շահագրգռուած չեն և անում են ամէն ինչ ոչ միայն այդ Ռուսաստանը այսօր

քայքայելու համար, այլ և ամէն ինչ , որպէսզի այդ Ռուսաստանը երբեք այլեւս ոտքի չկանգնի: Ռուսաստանը քայքայելու սա առաջին փորձը չէ:

Առաջին փորձը տեղի ունեցաւ առաջին Աշխարհամարտի աւարտին, երբ միջազգային ուժերը նպատակ ունէին քայքայելու Աւստրօ-Հունգարական, Օսմանեան և Ռուսական կայսրութիւնները: Ռուսաստանում այդ գործը կազմակերպեցին այն ժամանակւայ յեղափոխականները, որոնց թւով 177 հոգի Գերմանիայի ճամբով ուղարկեցին Ռուսաստան՝ այդ երկիրը քայքայելու համար: Ռուսաստանում հրատարակւող «**Չեռնայա Սոտնիա**» հանդէսի 3րդ համարում հրատարակւած են նրանց անունները: Ի միջի այլոց խմբագրութիւնը նշում է, որ 177 ղեկավարներից 152ը հրեաներ էին, իսկ մնացած 25ի ազգութիւնը պարզել չյաջողուեց: Այդ ցուցակում Լենինը նշւում է որպէս հրեայ Բլանկ անունով: Սակայն կարեւորը դա չէ: Կարեւորը այն է, որ բոլշեւիկները իսկապէս որ ունէին Ռուսաստանը՝ որպէս ազգային պետութիւն՝ քանդելու նպատակը: Նրանք չէին էլ թաքցնում, որ քանդում են Ռուսաստանը, ռուս ազգային ինքնագիտակցութիւնը և ռուսական մշակոյթը: Բանը նրան էր հասել, որ խորհրդային իշխանութեան տարիներին արգելւած էին Տոլստոյը և Դոստոեւսկին, իսկ թէ ինչ բարբարոսութեամբ քանդուեցին եկեղեցիները՝ բոլորիս յայտնի է: Ոչ մէկը չէր թաքցնում, որ յեղափոխութիւնը գտնւում էր միջազգային ուժերի ազդեցութեան տակ, որոնց ցանկութիւնը՝ ծունկի բերել Ռուսաստանը, ակնյայտ էր ու հասկանալի: Բաւական է նշել, որ ժամանակաւոր կառավարութեան բոլոր անդամները, մասոնական լոժերի անդամներ էին, իսկ կառավարութեան նախագահ Կերենսկին (Աւռոն Կիրբիսը) մասոնական լոժի ղեկավարն էր (այս տեղեկութիւնները բերւած են նոյն «Չեռնայա Սոտնիա» հանդէսում): Այն ժամանակ միջազգային հրէութիւնը յայտարարեց դրամական միջոցների հաւաք՝ Ճապոնիայի օգտին, որը պատերազմի մէջ էր Ռուսաստանի դէմ: Յայտնի է ամերիկեան դրամատէր Լեբի հետեւեալ կոչը.- **«Կազմեցէք ֆոնդ՝ Ռուսաստան զէնք և ղեկավարներ ուղարկելու համար, որպէսզի մեր երիտասարդները սովորեն շահագործողներին շների նման սպանել: Ստոր Ռուսաստանը, որը ծունկի եկաւ Ճապոնիայի առջեւ, պիտի ծունկի գայ նաեւ Աստծոյ կողմից ընտրեալ ազգի առջեւ»:**

Կարելի է նշել դրսից եկող այդ հակառուս արշաւի նաեւ արտաքին նշանները: Կոմունիստական կուսակցութեան ներքին կառոյցը համապատասխանում է մասոնական կառոյցին: Խորհրդային իշխանութեան խորհրդանիշ դարձած և Քրեմլի վրայ փայլող հինգ ծայրանի աստղերը Սողոմոնի նշաններն են, որը միաժամանակ հակաքրիստոսի կնիքն է: **«ՇԵԿԱ»** եփրայերէն նշանակում է սպանդանոց և այդ հզօր կազմակերպութեան բոլոր ղեկավարները հրեաներ էին: Մասոնական **«գերագոյն խորհուրդ»** բառը օգտագործւեց նաեւ

պետութեան մէջ: Պիոներների **«Միշտ Պատրաստ»** կոչը նոյնպէս մասոնական է: Պիոներ և ընկեր բառերը նոյնպէս եկել են մասոնական կառոյցներից: Նրանց, ովքեր ուզում էին քանդել Ռուսաստանը, մեղադրել չի կարելի, քանզի ազգային պետութեան մէջ ապազգայնացուած տարրերի համար տեղ չկայ:

Սակայն Ռուսաստանը քայքայելու ծրագիրը իրականացնել չյաջողուեց: Ռուս ժողովուրդը կարողացաւ իր պետութեան շահերին ծառայեցնել բոլշեւիզմը և շուտով Ռուսաստանը դասուեց աշխարհի հզօրագոյն պետութիւնների շարքին: Ռուսաստանը քանդել չյաջողուեց, բայց այդ հզօր պետութիւնը հրեաների շահերին ծառայեցնելու, մասնաւորապէս Իսրայէլի պետութիւնը ստեղծելուն, փայլուն կերպով յաջողուեց: Միայն իր կեանքի վերջում Ստալինը հասկացաւ, թէ ինչպէս նա խաբուեց հրեաների կողմից ու արշաւ ծաւալեց նրանց դէմ: Բայց արդէն ուշ էր և հէնց ինքը դարձաւ նրանց զոհը: Այս ամէնի մասին գրելը մեր օրերին ընդունուած չէ և վտանգաւոր է համարւում, բայց ճշմարտութիւնը մեզ համար այսօր շատ կարեւոր է, քանզի մեր օրերին տեղի է ունենում նոյնը: Նոյն ուժերի կողմից, գրեթէ նոյն ռազմավարութեամբ կատարւում է Ռուսաստանը քայքայելու հերթական փորձը: 80 տարի առաջ այդ արշաւը սկսուեց մարքսիստական, իսկ այժմ ժողովրդավարական լոզունգներով: Սակայն լոզունգների բովանդակութիւնը մնացել է անփոփոխ: Մարդու իրաւունքների պաշտպանութիւնը, ազատութիւնը, ազգերի ինքնորոշումը վեր են պետութիւնից, ուստի յանուն այդ արժէքների կարելի է քանդել պետութիւնը: Ասելու մի ձեւ է՝ **«Որքան թոյլ է պետութիւնը, այնքան ազատ են նրա քաղաքացիները»**: Եւ այս սկզբունքի համաձայն թուլացւում են պետութեան պաշտպան բանակը, անվտանգութեան մարմինները, կուսակցութիւնները, ազգային ինքնագիտակցութիւնը և այլն: Միայն տնտեսվարութեան բնագաւառում լոզունգները տարբերւում են: Առաջին փորձի ժամանակ Ռուսաստանի տնտեսութիւնը քայքայելու համար անհրաժեշտ էր կտրել այդ տնտեսութիւնը միջազգային շուկայից: Այս ծրագիրը իրականացուեց կոլտնտեսութիւններ ստեղծելու ճամբով: Իսկ հիմա տնտեսութիւնը քայքայելու համար անհրաժեշտ է Ռուսաստանի տնտեսութիւնը դուրս մղել միջազգային շուկայ, որտեղ բացի հումքից Ռուսաստանը ոչինչ կարող է վաճառել: Սեփական տնտեսութիւնից հրաժարւելով, այդ շուկայում նա կը դառնայ և Արեւմուտքի ստրուկը:

Այժմ Ռուսաստանի քայքայումը կատարւում է տարբեր ուղղութիւններով: Ամերիկեան մշակոյթի և բարքերի թափանցման, Ռուսաստանի շուկայ ամերիկեան դոլլարի մուտք գործելու, զինաթափման և Ռուսաստանի բանակի թուլացման, Ռուսաստանի հարստութիւնները թալանելու, ազգային շարժումները խրախուսելու և այլ ճանապարհներով՝ տեղի է ունենում Ռուսաստանի պետականութեան, ուղղափառ հաւատքի և ռուսական գրականութեան ու

արուեստի կործանումը։ Դժբախտաբար, պատնէշի հէնց այս կողմումն է գտնւում Հայաստանի ղեկավարութիւնը, որը լծւելով ծանօթ սայլակին, ակամայ՝ Ռուսաստանի քայքայման մէջ իր ներդրումն է կատարում։ Անշուշտ, այդ ներդրումը չնչին է, որքան որ չնչին է նրա քաղաքական ուժը ամերիկեան քաղաքականութեան մէջ, բայց ամերիկացիները իրենց դաշնակիցներին որոշ վճարումներ են կատարում, եթէ նրանք հետեւում են ամերիկեան քաղաքականութեանը։ Հայաստանից պահանջւում է ընդունել Գոբլի ծրագիրը, կամ թողնել Ղարաբաղը Ադրբեջանի կազմի մէջ, և կամ էլ չզայրացնել թուրքերին Հայկական Ցեղասպանութեանը վերաբերող անիմաստ ու աւելորդ յայտարարութիւններով։ Իսկ եթէ Հայաստանը չմտնի Անկախ Պետութիւնների Համագործակցութեան մէջ և իր ճակատագիրը կապի Թուրքիայի հետ, հակադրելով Պարսկաստանին, ապա ամերիկացիները մի երկու դոլլար էլ աւել կը վճարեն։ Եւ ճիշտ կ'անեն, որովհետեւ ամէն մի գեր-պետութիւն վճարում է իր դաշնակիցներին՝ դաշնակցութեան աստիճանի համաձայն։ Բայց աւելի լաւ հասկանալու համար, թէ ինչ են իրենցից ներկայացնում պատնէշի այն կողմում կանգնածները, դիմենք պատնէշի միւս կողմում կանգնածների տեսակէտներին ու վկայութիւններին։

* * *

Պատնէշի միւս կողմում կանգնած են Ռուսաստանի պետական շահերը պաշտպանողները։ Հոգ չէ, որ նրանց մէջ կան մարդիկ ու կազմակերպութիւններ, որոնք Ռուսաստանի պետական շահերը պաշտպանում են սեփական շահերից ելնելով։ Նրանց մէջ կան կոմունիստներ, ծայրայեղականներ, ցեղապաշտներ, հոգեւորականներ, սոցիալ-դեմոկրատներ, ազատականներ, գիտնականներ և այլն։ Նրանց բոլորին միացնում է ոչ թէ գաղափարախօսութիւնը, այլ Ռուսաստանի 1000ամեայ պետականութեան պահպանումը, ինչպէս նաեւ ռուս ժողովրդի շահերի պաշտպանութիւնը։

Ռուսաստանի ընդդիմադիր ուժերի մէջ կենտրոնական տեղ է գրաւում Ռուսաստանի Ժողովրդավարական կուսակցութիւնը, որը երեք տարի առաջ առաջինն էր, որ Ռուսաստանում ստացաւ պաշտօնական գրանցում։ 1990 թւականի մայիս ամսին ստեղծւած այդ կուսակցութիւնը յայտնի է նրա հիմնադիր Նիկոլայ Տրաւկինի անունով։ Ժողովրդավարական կուսակցութեան վարչութեան նախագահ Վալերի Խոմեակովը մամուլի ասուլիսի ժամանակ մայիսի 28ին յայտարարեց, որ իրենց կուսակցութիւնը կենտրոնական դիրք գրաւող ազատական-պահպանողական կուսակցութիւն է, որը շատ հարցերում ընդդիմադիր է ներկայ ղեկավարութեան քաղաքական գծին։ Ինչ վերա-

բերում է կառավարութեանը,- ասաց Խոմեակովը,- ապա որոշակի կարծիք կառավարութեան մասին կուսակցութիւնը չունի: Երբ հիմնադրուեց Ժողովրդավարական կուսակցութիւնը, նա իրեն անուանում էր Հակակոմունիստական Միացեալ Կուսակցութիւն, այսինքն իր էութիւնը տեսնում էր բացասական արժէքների դէմ պայքարելու մէջ: Բայց արդէն 1991 թւականին այդ կուսակցութիւնը դարձաւ այն առաջին կազմակերպութիւնը, որը Ելցինի թեկնածութիւնը առաջարկեց Ռուսաստանի նախագահի համար: Երբ Ռուսաստանում տեղի ունեցաւ յեղաշրջման փորձ, Ժողովրդավարական կուսակցութիւնը փոփոխութեան ենթարկեց իր ծրագիրը և դուրս եկաւ **«Ժողովրդավարական Ռուսաստան»** շարժումից: Տարակարծութիւնները Ռուսաստանի պետական կառոյցի մէջ էին: Ժողովրդավարական կուսակցութիւնը հակառակ էր Բելովեժսկի համաձայնութիւններին, որոնք փաստօրէն վերացրին Խորհրդային Միութիւնը:

Ընդդիմադիր ուժերի մէջ գործում է նաեւ փոխ-նախագահ Ռուցկոյի կողմից ղեկավարուող կուսակցութիւնը, որը կոչւում է Ազատ Ռուսաստան Ժողովրդական կուսակցութիւն: Այս կուսակցութեան հետ համաձայնութիւն կնքեց Ժողովրդավարական կուսակցութիւնը և այդ համաձայնութեան շուրջ ստեղծուեց Քաղաքացիական Միութիւնը: Միութիւնը կազմուեց Ռուսաստանի պետական կառոյցի վերաբերեալ ընդհանուր տեսակէտների հիման վրայ: Քաղաքացիական Միութիւն կազմի մէջ մտան մի շարք արհմիութիւններ, կուսակցութիւններ և պառլամենտական ֆրակցիաներ: Վերջերս լուրեր տարածուեցին, որ Ժողովրդավարական կուսակցութիւնը ուզում է դուրս գալ Քաղաքացիական Միութեան կազմից, սակայն կուսակցութեան ներկայացուցիչը հերքեց այդ լուրը: Խոմեակովը ասաց, որ Քաղաքացիական Միութիւնը նպատակ ունէր ճնշում գործադրել նախագահի և կառավարութեան վրայ, երկրի տնտեսական քաղաքականութիւնը փոխելու համար: Սակայն այդ բանը դեռեւս չի յաջողուի,- ասաց Խոմեակովը: Ներկայումս ընդդիմադիր ուժերը ջանում են էլ աւելի ծաւալել իրենց շարժումը, շարժման մէջ ներգրաւելով մշակութային և ոչ-քաղաքական տարբեր կազմակերպութիւններ: Այդ շարժումը պատրաստւում է նախագահական ընտրութիւններին և որպէս նախագահի թեկնածու առաջարկում է Ալեքսանդր Ռուցկոյին: Սակայն Ժողովրդավարական կուսակցութիւնը այդ շարժմանը մաս կազմելու մտադրութիւն չունի և համարում է, որ Ռուցկոյը շատ շուտ առաջ քաշեց իր թեկնածութիւնը:

Ընդդիմադիր ուժերը նոր Սահմանադրութիւնը համարում են իշխանութիւնների խաղալիքը, որի շուրջ բանավէճերը հեռացնում են ժողովրդին՝ երկրի բուն խնդիրները լուծելուց: Իսկ այդ բուն խնդիրները ամէնեւին էլ Սահմանադրութեան հետ կապւած չեն: Ռուսաստանի Ժողովրդավարական կուսակ-

ցութիւնը ներկայումս ունի 60 հազար անդամներ և ներկայացուցչութիւններ երկրի 700 քաղաքներում: Նրանք ուզում են իրենց կուսակցական կառոյցի մէջ ընդօրինակել ամերիկեան կուսակցութիւնների կարգը, ուր խիստ կարգապահութիւն գոյութիւն ունի կուսակցական գործիչների համար և մաքսիմալ ազատութիւն՝ կուսակցութեան սովորական անդամների համար:

Սակայն ընդդիմադրութեան աջ թեւը ունի շատ աւելի վճռական տրամադրութիւններ: Նա համարում է, որ Ելցինը պատրաստւում է ցրել Ժողովրդական Պատգամաւորների Համագումարը, ինչպէս նաեւ Գերագոյն Խորհուրդը, որից յետոյ նախագահը կը դառնայ մենիշխան ու կը նպաստի Ռուսաստանի բաժանմանը: Եթէ Ելցինը այդպէս վարւի, ի՞նչ դիրք կը բռնի ընդդիմադրութիւնը:

* * *

Այս հարցով **«Դեն»** հանդէսը դիմեց ընդդիմադրութեան ղեկավարներին ու յայտնի գործիչներին: Ստացւեցին հետեւեալ պատասխանները:

ԳՆԴԱՊԵՏ ՎԻԿՏՈՐ ԱԼԿՍՆԻՍ.- Ելցինի քայլերը ինձ չեն վախեցնում: Այդ դէպքում ընդդիմադրութեան ձեռքերը կ'ազատւեն և մենք կը պաշտպանենք Սահմանադրութիւնը բոլոր միջոցներով, այդ թւում նաեւ՝ զէնքով: Բռնակալը չի կարող բողոքել իրեն տապալողների դէմ,- ասում է Ժան-Ժակ Ռուսոն,- քանզի նա նստած է բռնութեան վրայ և բռնութիւնից էլ տապալւելու է: Միջազգային իրաւունքը և ազատութեան աւանդութիւնը ճանաչում են ժողովրդի ապստամբելու իրաւունքը:

ՄԵՐԳԷՅ ԲԱԲՈՒՐԻՆ.- Մենք բոլորս յիշում ենք, թէ ինչպէս ցրւեցին Միութենական Համագումարը և Գերագոյն Խորհուրդը, որից յետոյ երեք խոռվարարներ հեշտութեամբ քանդեցին միութիւնը: Բայց այսօր արդէն հասարակութիւնը արթնացել է և ունի մեծ ներքին կարողութիւններ: Նա կարող է կանգնեցնել բոլոր սահմանադրական խախտումները: Եւ ես այդ դէպքում ժողովրդի հետ կը լինեմ: Որպէս ժողովրդական պատգամաւոր, ես կը մասնակցեմ ժողովրդական բոլոր կռիւներին բռնութեան և յանցագործ բուրժուազիայի դէմ:

ՄԻՔԱՅԷԼ ԱՍՏԱՖԵԻ.- Պառլամենտի դէմ ուղղւած Ելցինի առաջին իսկ քայլերից յետոյ ես կը գնամ Գերագոյն Խորհրդի շէնքի մօտ: Կարծում եմ, որ այդպէս կը վարւեն նաեւ Մոսկուայի մնացած բնակիչները: Եւ մենք բոլորս կը գործենք այնպէս, ինչպէս գործում են մարդիկ պետական յեղաշրջման փորձը ճնշելու համար:

ԳԵՆԱԴԻ ԶԻԳԱՆՈՎ.- Ժողովրդական Պատգամաւորների Համագումարը ցրելու բոլոր փորձերը Ելցինին կը դնեն օրէնքից դուրս: Նրա բոլոր կարգադրութիւնները և հրամանները այլեւս կը կորցնեն իրենց ուժը: Բոլոր տեսա-

կի դիմադրութիւնները նախագահին՝ կը դառնան օրինական։ Մեր կուսակցութիւնը անմիջապէս կ՚անցնի պայքարի։

ՎԼԱԴԻՄԻՐ ԻՍԱԿՈՎ.- Ես կը դիմադրեմ Ելցինին ու կը պաշտպանեմ Սահմանադրութիւնը։ Եթէ Ելցինը դառնայ նոր բռնակալ, ապա նրա վարչակարգը ուղղուած կը լինի ռուսական պետական շահերի դէմ։ Ու կը յենւի այդ քաղաքականութիւնը ազատութիւն և ինքնուրոյնութիւն ստացած շրջանների, հանրապետութիւնների ու աւազակախմբերի վրայ։ Եթէ Ելցինը փորձի ֆիզիկապէս ոչնչացնել ընդդիմադրութիւնը, մենք կը պատասխանենք նոյն ձեւով։

ԻԼԻԱ ԿՈՆՍՏԱՆՏԻՆՈՎ.- Եթէ Ելցինը ցրի պառլամենտը, մենք կը դիմենք ժողովրդին՝ պատնէշներ կառուցելու կոչով։ Մենք կը դիմենք նաեւ ամբողջ աշխարհին՝ բացատրելու համար, թէ որքան վտանգաւոր է աշխարհի համար Ռուսաստանի քայքայումը և Ռուսաստանի հնարաւոր քաղաքացիական պատերազմը։

ՋՕՐԱՎԱՐ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԱՇՈՎ.- Չգիտեմ, որքանով հնարաւոր է Պառլամենտի ցրումը, բայց եթէ Ելցինը դիմի նման քայլի, մենք ստիպւած կը լինենք պայքարելու այլ միջոցներով։ Մենք՝ կը պատասխանենք **«ակն ընդ ական, ատամ ընդ ատամ»** սկզբունքի համաձայն։

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՆԵՒԶՈՐՈՎ.- Համագումարի ցրումը յանցագործութիւն է, սա պետական յեղաշրջում է։ Եւ ես կ՚անեմ այն, ինչ պիտի անի ամէն մի քաղաքացի յեղաշրջման ժամանակ։ Գետնի տակից մի բան կը հանեմ և կը կանգնեմ Սահմանադրութեան պաշտպանների շարքերը։ Եւ ես շատ ուրախ կը լինեմ, որովհետեւ գործելու առիթ կը ստանամ։ Ես կ՚արթնացնեմ բոլոր քնածներին։

ՄԱՐԱՏՈՎԻ ԺՈՂՈՎՐԴԱ-ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ Վ. ՈՒԽԱՆՈՎ.- Նախագահ Ելցինի Սահմանադրութիւնը Ռուսաստանը տանում է դէպի ամենակեղտոտ բռնութիւն։

ՆԻԿՈԼԱՅ ՊԱՒԼՈՎ.- Ես չեմ սիրում Ելցինին ո՛չ որպէս մարդ և ոչ էլ որպէս քաղաքական գործիչ, բայց ես չեմ հաւատում, որ նա կարող է ցրել համագումարը։ Դա կը լինէր պետական յեղաշրջում, իսկ ես չեմ հաւատում, որ Ելցինը կը համաձայնւի աւարտել իր գործունէութիւնը պետական յեղաշրջմամբ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՏԵՐԼԻՆԳՈՎ.- Սահմանադրութիւնը ոտնահարելու Ելցինի բոլոր փորձերին, Ռուսաստանի Ազգային Տաճարը կը պատասխանի պայքարով, օգտագործելով բոլոր միջոցները։

ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՅԱՆՁՆԱԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԼԱԴԻՄԻՐ ԱՋԱԼՈՎ.- Ռուսաստանի հայրենասիրական շարժումը սկիզբ առաւ ընդամէնը 2 տարի առաջ։ Սկսեցին այդ շարժումը մի խումբ գրողներ ու մտաւորականներ, երբ հասկացան, թէ ինչպիսի ողբերգա-

կան բովանդակութիւն ունի այն, ինչ կոչւում էր **«Պերեստրոյկա»**: Այժմ մենք ճիշտ ճանապարհի վրայ ենք, մենք ուզում ենք դուրս գալ հոգեկան, քաղաքական և տնտեսական ճգնաժամերից, վերադառնալով պետական հայրենասիրութեան պետական գաղափարին: Սակայն մեզ շատ դժւար պիտի լինի քայլել այդ ճանապարհով, քանզի մենք չունենք պետութեան համար անհրաժեշտ ամենակարեւոր հաստատութիւնը՝ բանակը: Զինւորական նոր զգեստների վրայ ամերիկեան օրինակով **«Ռուսաստան»** բառ գրելը զօրք չի ստեղծում: Այս բանը հասկանում են բոլոր լուրջ քաղաքական գործիչները: Իսկ Գրաչովի շինծու զեկոյցները հասարակութեանը շփոթութեան մէջ գցելու փորձեր են միայն: Ռուսաստանը ոչ միայն բանակ, այլ զինւորական ռազմավարութիւն էլ չունի: Բայց Ռուսաստանը ոտքի է կանգնում: Մարդիկ յոգնել են ոչինչ չլինելուց, նրանք ուզում են դառնալ իրենց անցեալին արժանի ազգ և ժողովուրդ:

ՌՈՒՍ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՄՆՈՒԹԵԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱՐԿԱՇՈՎ.- Ռուսաստանի և ռուս ժողովրդի բացայայտ թշնամիների մասին չեմ ուզում խօսել, որովհետեւ նրանք թշնամի են ու գիտակցաբար քայքայում են Ռուսաստանը: Խօսքը այն ղեկավարների մասին է, որոնք չունեն ոչ մէկ քաղաքական նպատակ և ազատութիւնը, տնտեսվարութիւնը, իշխանութիւնը, ընդհանրապէս գործունէութիւնը ինքնանպատակ են դարձրել: Իսկական նպատակ ունեն միայն ազգայնականները և մինչեւ նրանք չգան իշխանութեան գլուխ, ոչինչ չի փոխւի մեր երկրում:

ԱՄԱՆ ԹՈՒԼԻԵՒ.- Նախագահի հետ փոխ-զիջումներ կատարելու ժամանակը սպառւեց: Ստեղծւած կացութեան մէջ նախագահի թիմին իշխանութեան վրայ մնալու համար անհրաժեշտ է շտապ կարգով լուծել երկու հարց: Առաջինը՝ վերջ տալ ընդդիմադրութեանը և իշխանութեան տակից դուրս եկած Պառլամենտին: Նոր Սահմանադրութիւն և նոր օրէնքներ գրել Ելցինի համար: Երկրորդը՝ սանձել ժողովուրդը, որի վրդովմունքը աճում է: Դրա համար անհրաժեշտ է ուժ գործադրող մարմինները մաքրել ու կազմել Ելցինին հաւատարիմ մարդկանցից:

ԱՐԿԱԴԻ ՎՈԼՍԿԻ.- Միացեալ Նահանգների նախկին նախարար Քիսինջերը յայտարարեց, որ Ռուսաստանի քայքայումը արդէն կատարւած փաստ է: Այդ քայքայման հիմքում ընկած է մէկ կողմից տեղական ոտնձգութիւնները, այսինքն տեղական իշխանութիւնների ձգտումը՝ իրենց իշխանութիւնը տարածելու իրենց շրջանում գտնւող ամէն ինչի վրայ, միւս կողմից կենտրոնական իշխանութիւնների ձգտումը ամէն ինչ կենտրոնացնել իրենց ձեռքում: Այս երկու ձգտումների մէջ հաւասարակշռութիւն ստեղծելու համար կայ երկու ճանապարհ: Մէկը բռնութիւնն է, միւսը տեղական իշխանութիւններին մեծ ի-

րաւունքներ տալը: Նրանք, ովքեր բռնութեան կողմնակից են, պէտք է վախեանան պետութիւնից:

ՌՈՒՍԼԱՆ ԽԱՍԲՈՒԼԱՏՈՎ.- Ռուսաստանը գտնւում է ճակատագրական ընտրութեան առջեւ: Սակայն մեր առջեւ կանգնած խնդիրները շատ աւելի խորն են, քան սոցիալիզմի և կապիտալիզմի միջեւ ընտրութիւնն է: Մենք պէտք է ընտրութիւն կատարենք՝ բնաշրջութեան և յեղաշրջման միջեւ: Ոմանք ուզում են մոռացութեան մատնել մեր ամբողջ անցեալի փորձը և հաստատել արեւմտեան, այսպէս կոչւած առաջադիմական իշխելու կարգը: Դրա համար յեղաշրջում է պէտք: Իսկ մենք ուզում ենք շարժւել բնաշրջման ճանապարհով, հաշւի առնելով մեր պապերի լաւագոյն փորձը: Դժբախտաբար նախագահի կողմից առաջարկւած Սահմանադրութիւնը բոլոր տարբերակների մէջ կարելի է վատագոյնը համարել: Նախագահի Սահմանադրութիւնը նախատեսում է նախագահի անսահման իշխանութիւնը, որը անընդունելի է, քանզի խախտում է ժողովրդավարութեան գլխաւոր սկզբունքը՝ իշխանութիւնների բաժանումը:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՌՈՒՑԿՈՅ.- Մեր երկրի նախագահը, ինչպէս նաեւ կառավարութիւնը անվերջ ստում են: Ստում նաեւ մամուլը, որը ժողովրդին ջանում է ապացուցել թէ կայ միայն երկու ընտրութիւն՝ ժողովրդավարականներ կամ կոմունիստներ: Բայց իսկական Ռուսաստանը մերժում է երկուսին էլ: Այժմ մենք ստեղծում ենք լայն դաշնակցութիւն տարբեր ուժերի միջեւ և այդ նոր միութեան դռները բաց են բոլորի համար, բացի կոմունիստներից ու ժողովրդավարականներից:

* * *

Այսպիսով մենք տեսնում ենք, որ Ռուսաստանի միջոցով անցնող գլխաւոր պատնէշի տարբեր կողմերում կանգնած են միջազգայնականները ու ազգայնականները, որոնց պայքարի արդիւնքից է ի վերջոյ կախւած լինելու նաեւ բոլոր նախկին խորհրդային հանրապետութիւնների ու ժողովուրդների ճակատագիրը: Ոմանք հաւանաբար համարում են, որ ամէն մի ժողովուրդ սեփական ճակատագրի տէրն է, ուստի այդ ճակատագիրը կերտւելու է անկախ մեծերի կռիւների արդիւնքից: Անշուշտ նման պնդումի մէջ կայ որոշ ճշմարտութիւն, եթէ ազգութիւնները կամ հանրապետութիւնները կացութիւններ ստեղծելու կարողութիւնը ունեն: Եթէ նման կարողութիւններ գոյութիւն չունեն, ապա ժողովրդին մնում է ճիշտ հասկանալ ստեղծւած կացութիւնը և ճիշտ յարմարւել այդ կացութեանը: Հէնց դրա համար էլ մենք մանրամասնօրէն խօսեցինք պատնէշի տարբեր կողմերում կանգնած ուժերի մասին, որպէսզի կարողանանք որոշել թէ ո՞ր կողմումն ենք մենք: Ո՞ւմ հետ պիտի հա-

մագործակցի Հ.Յ.Դաշնակցութիւնը հայ ժողովրդին լաւագոյնս ծառայելու համար: Այս հարցին կարելի էր չպատասխանել, եթէ մենք քաղաքականօրէն հասուն և առողջ ազգ լինէինք:

Բոլոր ժողովուրդների պէս մենք էլ կարող էինք բաժանել պարտականութիւնները և համագործակցել տարբեր ուժերի հետ և տէր կանգնել հայ ժողովրդին, երբ կողմերը մէկը յաղթական դուրս գար: Սակայն այդ համագործակցութիւնը մենք չկարողացանք ստեղծել և Հայաստանի իշխանութիւնները մեզ նկատում են ոչ թէ ընդդիմադիր, այլ թշնամի կազմակերպութիւն: Այս պայմաններում մենք ինքներս պէտք է մեր վրայ վերցնենք բոլոր կողմնորոշումների հարցերը: Բայց նախ տեսնենք, թէ գլխաւոր պատնէշի ո՞ր կողմերումն են կանգնած հայերը և ադրբեջանցիները:

Հայաստանի և Ադրբեջանի հակադրուածութիւնը Ղարաբաղի խնդրում ի վերջոյ չի կարող լուծուել առանց Ռուսաստանի միջամտութեան և այդ իրողութիւնը քաջ գիտակցում են երկու կողմերը: Ստեղծուած կացութեան մէջ թէ՛ Ադրբեջանում և թէ Հայաստանում լսւում են ձայներ Ռուսաստանի նկատմամբ իրական քաղաքականութիւն վարելու մասին, այսինքն՝ վարել իրականութիւնից բխող քաղաքականութիւն: Ու չնայած նրան, որ իրականութիւնը նոյնն է, տարբեր կողմեր մշակում են սեփական քաղաքականութիւն այդ իրականութեան հանդէպ: Խօսքը, անշուշտ, պաշտօնական քաղաքականութեան մասին չէ, որը որպէս օրէնք վարւում է գաղտնաբար. խօսքը այն տրամադրութիւնների և մտածումների մասին է, որոնք ի վերջոյ ազդում են քաղաքական գործիչների որոշումների վրայ: Վերջերս Հայաստանում հայ մտաւորականներ Մանանդեանը, Բունիաթեանը և Յովհաննիսեանը հրատարակեցին **«Հայաստանը և Ռուսաստանը»** վերնագիրը կրող յօդուածը, որտեղ անդրադառնալով հայ-ռուս յարաբերութիւնների պատմութեանը, ինչպէս նաեւ հնդ-արիական ու ռոմանօ-գերմանական ազդեցութեանը՝ մարդկութեան զարգացման ընթացքի վրայ, ի վերջոյ յանգում են հետեւեալ եզրակացութեան (մէջբերում եմ).- **«…Ժողովրդի շահերին հակառակ քաղաքագէտները, որքան էլ որ կողքից օգնողներ լինեն, երկար չեն կարող մնալ իրենց ներկայ դիրքերում: Հնդ-արիական ժողովուրդների ապագայ համագործակցութիւնը և արիական քաղաքակրթութեան յաղթանակն անխուսափելի է, որովհետեւ դա է մարդկութեան գոյութեան և հետագայ բարգաւաճման միակ ուղին: Եւ այդ համագործակցութեանը, ինչ էլ որ լինի, ռուսները և հայերը կը գնան ձեռք ձեռքի»:** Չնայած նրան, որ այս երզրակացութիւնը ոչ այնքան քաղաքական է, որքան որ պատմա-փիլիսոփայական, նա այնուամենայնիւ որոշ վերաբերմունք է թելադրում ռուսների նկատմամբ ունեցած յարաբերութիւններին:

Ռուսների և Ռուսաստանի նկատմամբ բոլորովին այլ և զուտ քաղաքական մօտեցում ունեն ադրբեջանցիները: **«Ասիա և Աֆրիկա»** հանդէսում, պատմական գիտութիւնների դոկտոր Ռասիզադէն հրատարակեց **«Նոր քաղաքական կողմնորոշումներ»** յօդուածը, որտեղ նշում է, որ Էլչիբէյը բազմիցս կրկնել է, որ ինքը կողմնակից է Ռուսաստանի հետ 180ամեայ կապերի խզմանը: Նա ցանկանում է տեսնել ոչ թէ Անկախ Պետութիւնների Համագործակցութիւնը, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ Ռուսաստան, այլ՝ կապեր հաստատել առանձին-առանձին բոլոր նախկին խորհրդային հանրապետութիւնների հետ: Յօդուածի հեղինակը նշում է, որ նման վերաբերմունքը Ռուսաստանի նկատմամբ պայմանաւորուած է նրանով, որ Մոսկուան կարող է միջամտել Ղարաբաղի պատերազմին ու ճնշումներ գործադրել Ադրբեջանի վրայ: Այդ ճնշումը հնարաւոր է, քանզի Ադրբեջանի առեւտրի 90 տոկոսը կապ ունի Ռուսաստանի հետ: Ադրբեջանը իր համար վտանգաւոր է համարում նաեւ 1992 թուականի Տաշկենտի պայմանագիրը **«Կոլեկտիւ պաշտպանութեան»** մասին: Յայտնի է, որ այդ պայմանագիրը ստորագրել է նաեւ Հայաստանը: Բացի դրանից, Բաքւում համարում են,- գրում է Ռասիզադէն- որ Ռուսաստանում բարձրանում է ազգային ինքնագիտակցութիւնը, որը կարող է մեծ վնաս հասցնել Ադրբեջանին: Ահա թէ ինչու Բաքուն իր հաւատարիմ դաշնակիցներն է համարում Անդրկովկասում Վրաստանին և Չեչնիային, որոնց հետ միասին էլ ջանում է կազմել հակառուսական ճակատ:

Եւ հէնց այս հարցումն էլ երեւում է այն տարբերութիւնը, որ գոյութիւն ունի Ադրբեջանի և Հայաստանի քաղաքականութիւնների, կամ աւելի ճիշտ քաղաքական փիլիսոփայութիւնների միջեւ: Եթէ ադրբեջանական կողմը համարում է, որ ռուս ազգային ինքնագիտակցութեան վերելքը վտանգաւոր է Ադրբեջանի համար, ապա հայկական կողմը ունի ճիշտ հակառակ տեսակէտը: Կայ նաեւ մէկ ուրիշ տարբերութիւն Ադրբեջանի և Հայաստանի քաղաքականութիւնների միջեւ: Ադրբեջանի կառավարութիւնը բացայայտօրէն է վարում հակառուսական քաղաքականութիւն, մինչդեռ Հայաստանի ղեկավարութիւնը շատ զգոյշ է ռուսասիրական քաղաքականութեան մէջ: Այսպէս թէ այնպէս, առայժմ Ռուսաստանի նկատմամբ իրենց ռազմավարութիւններում Ադրբեջանը և Հայաստանը կանգնած են տարբեր դիրքերի վրայ:

* * *

Այժմ, եկէք որոշենք մեր տեղը այդ պատնէշի շուրջ, հաշւի առնելով մի շարք առանձնայատկութիւններ: Առաջին առանձնայատկութիւնը այն է, որ մենք մաս չենք կազմում Հայաստանի և հայ ժողովրդի ազգային ռազմավարութիւնը մշակելու և իրականացնելու ոլորտին, ինչը նշանակում է, որ ազգա-

յին իշխանութիւնների կողմից մեզ ոչ մէկը որեւէ պարտականութիւն չի յանձնարարելու և ինչ էլ որ մենք անենք՝ դա լինելու է մեր նախաձեռնութեամբ, մեր որոշումներով և մեր ուժերի սահմաններում: Եթէ Հայաստանի իշխանութիւնները կարող են Թուրքիայի կամ Ռուսաստանի հետ Հայաստանի կամ հայ ժողովրդի անունից բանակցութիւններ վարել, ապա մենք այդ բանը անել չենք կարող, որովհետեւ լաւագոյն դէպքում մեզ կարող են ճանաչել որպէս Հայաստանի ապագայ կառավարութեան մէջ որոշ դեր կատարողներ, ուստի այդ չափով էլ մեզ հետ կը բանակցեն ու բանակցում են: Երկրորդ առանձնայատկութիւնը կապ ունի մի հարցի յստակ պատասխանի հետ, որը առայժմ չի տրւել հայկական կեանքում գործող որեւէ կազմակերպութեան կողմից: Այդ հարցը վերաբերում է Ռուսաստանին, բայց ոչ մեր կողմնորոշման, այլ շատ աւելի կարեւոր իմաստով: Ձեռնատո՞ւ է մեզ, թէ՞ ոչ՝ Ռուսաստանի ուժեղացումը: Ձեռնատո՞ւ է մեզ, թէ՞ ոչ՝ Ռուսաստանի ամերիկանացումը: Ձեռնատո՞ւ է մեզ, թէ՞ ոչ՝ Ռուսաստանի ազգային ուժերի յաղթանակը: Եթէ մենք կարողանանք գտնել այս հարցերի ճիշտ պատասխանը, ապա այդ պատասխանը մեզ արդէն իսկ կը թելադրի, թէ պատնէշի որ կողմումն ենք մենք:

Երրորդ առանձնայատկութիւնը բխում է մեր նկարագրից ու գաղափարախօսութիւնից: Հ.Յ.Դաշնակցութիւնը ծնւել ու մնում է յեղափոխական, ընկերվարական կուսակցութիւն, որը ունի իր ուրոյն քաղաքական նպատակները, պայքարի ձեւերը և հասարակական արդարութեան ըմբռնումները: Որքան էլ որ ուզեն ոմանք դարձնել մեզ սովորական պառլամենտական կուսակցութիւն, այդ բանը կա՛մ չի յաջողւի և կամ էլ մահացու հարւած կը հասցնի մեզ: Էլ չխօսենք այն մասին, որ մեր կուսակցութեան **«պառլամենտականացումը»** մեծ կորուստ կարող է լինել հայ ժողովրդի համար: Ամէն մի ժողովուրդ պէտք է ունեննայ մի կազմակերպութիւն, հայրենասէրների մի խաւ - ազգային ազնըւականութիւն, եթէ կ'ուզէք,- որի հետ պիտի կապի իր ճակատագիրը և դժւարին պահերին ասի, դէ՛ հասի՛ր… Այդպիսինն ենք մենք միշտ եղել մեր ժողովրդի համար ու այդպիսին էլ պիտի մնանք: Այն, ինչով մենք տարբերւում ենք ուրիշներից՝ կազմում է մեր ուժը: Հազիւ թէ մենք կարողանանք մեր ժողովրդին տալ աւելի լաւ գիտնականներ, ուսուցիչներ, արուեստագէտներ և նոյնիսկ քաղաքական գործիչներ, որոնք կան Հայաստանում և Սփիւռքում ոչ մեր շրջանակներում: Բայց մենք կարող ենք մեր ժողովրդին առաջարկել ազնիւ ու զոհաբերող մասնագէտներ, հայրենիքին հաւատարիմ զինւորներ ու դիւանագէտներ, որոնք չեն շեղւի ազգին ծառայելու ճանապարհից, նոյնիսկ ամենահզօր քաղաքական հոսանքների ազդեցութեան տակ: Մեր ուժը կայանում է նրանում, որ մեր գործիչների յետեւում կանգնած է մի կուսակցութիւն, որը սեփական օրէնքների համաձայն պաշտպանում ու պատժում է նրանց,

եթէ նրանք շեղւում են ազգային ուխտի ճանապարհից: Հայաստանի ղեկավարների թուլութիւնը կայանում է նրանում, որ նրանք չեն ներկայացնում ոչ մէկ գաղափարախօսութիւն ու կազմակերպութիւն և նրանց յետեւում կանգնած չէ ոչ մէկ ուժ: Հաւանաբար բացառութիւն կարելի էր համարել կոմունիստներին, որոնք հէնց այն պատճառով էլ թուլացան, որ թուլացաւ նրանց մէջքին կանգնած կոմունիստական կուսակցութիւնը: Այժմ մեզ ուզում են զցել նրանց օրը այն ղեկավարները, որոնք գործում են ուրիշների, բայց Հայաստանից դուրս գտնւող ուժերի թելադրանքով: Դրա համար էլ երկրի նախագահը երբեմն-երբեմն մեր շարքերից դուրս է քաշում անկայուն, փառամոլ, իսկ յաճախ ուղղակի դաւաճանների, շրջապատւում նրանցով, ապա յայտարարում, թէ իմ շրջապատումն էլ կան դաշնակցականներ, բայց նրանք, ի տարբերութիւն Հ.Յ.Դ. ղեկավարութեան՝ լաւ դաշնակցականներ են: Ո՛չ, նրանք դաշնակցականներ չեն, որովհետեւ նրանց մէջքին այլեւս Դաշնակցութիւն կանգնած չկայ և նրանց ընտրութիւնը կատարել է ոչ թէ Դաշնակցութեան, այլ հակադաշնակցական կողմից: Մեզ ասում են, թէ բաւական է խօսել Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցչի վտարման մասին, մի բան էր պատահեց: Լաւ հասկանում ենք, որ տարբեր ազդեցութիւնների տակ նախագահը կարող էր ճակատագրական սխալ գործել, բայց նախագահը իրաւունք չունի իր սխալը շտկելու արիութիւնը չունենայ: Իսկ նա, դժբախտաբար, կա՛մ չունի այդ արիութիւնը և կամ էլ մինչեւ այսօր համարում է, որ ճիշտ է վարւել: Իսկ եթէ մենք կուլ ենք տալիս մեզ հասցրած ապտակը, ուրեմն իսկապէս որ պառլամենտական կուսակցութիւն դառնալու ճանապարհի վրայ ենք: Ափսո՛ս:

Եւ, վերջապէս 4րդ առանձնայատկութիւնը բխում է աշխարհում տիրող ընդհանուր կացութիւնից: Ո՞ւր է գնում աշխարհը: Ինչպիսի՞ արժէքներով նա պիտի ապրի յաջորդ դարաշրջանում, ո՞վքեր են դառնալու աշխարհի նոր տէրերը: Անհրաժեշտ է պարզել այս հարցերը, որպէսզի կարողանանք լողալ աշխարհի գետի հոսանքին հակառակ: Եւ մենք ունենք այդ տոկունութիւնը: Երբ ամբողջ աշխարհը հակախորհրդային քաղաքական դիրքորոշումից ելնելով ոտնահարում ու դատապարտում էր ընկերվարութիւնը, մենք չվախեցանք այդ արշաւից ու քաղաքականօրէն հակադրւելով Խորհրդային Վարչակարգին, մէկ թիզ չզիջեցինք մեր գաղափարախօսութիւնից, երբեմն էլ չափը անցնելով այս հարցում: Բայց այսօր մենք համոզւեցինք որ ճիշտ էինք, որ հասարակական արդարութեան անհրաժեշտութիւնը ի վերջոյ տանելու է մարդկութիւնը դէպի ընկերվարական սկզբունքներով կառուցւած վարչակարգեր: Մենք տեսնում ենք, որ Եւրոպայի ամենազարգացած պետութիւններում տուրքերի, օրէնքների և արհմիութիւնների ճամբով իրականացւում են ընկերվարական սկզբունքները: Աւելին, բոլոր այն դրամատիրական երկրները, այդ

թւում նաեւ միացեալ Նահանգները, որտեղ ընկերվարութեան սկզբունքները միայն մասամբ են կիրառուած, կանգնած են մեծ ճգնաժամերի առջեւ, քանի որ այդ երկրներում գոյութիւն ունեցող տարբերութիւնը՝ հարուստի և աղքատի միջեւ, պարզապէս կործանիչ է երկրի համար։

* * *

Ուրեմն փորձենք, ելնելով այս առանձնայատկութիւններից, որոշել մեր տեղը Ռուսաստանով անցնող գլխաւոր պատնէշի կողմերում։

Քանի որ մեր գլխաւոր ազգային նպատակներին հասնելու պայքարում մենք, ինչպէս միշտ, մենակ ենք, մենք չենք կարող մեզ թոյլ տալ բոլոր կողմերի հետ խաղերի բռնուելու շռայլութիւնը։ Մենք պէտք է ունենանք յստակ դիրքորոշում, դաշնակիցներ շահելու համար։ Ասել, որ մենք լաւ յարաբերութիւնների մէջ ենք և համագործակցում ենք թէ՛ ամերիկացիների,և թէ պարսիկների հետ, թէ՛ Ելցինի և թէ Ռուցկոյի հետ, նշանակում է ոչինչ չասել, առնւազն ամերիկացիներին, պարսիկներին, Ռուցկոյին ու Ելցինին, որովհետեւ նրանք էլ, իրենց քաղաքական հաշւարկներից ելնելով, որոնում են փոքր ու մեծ դաշնակիցներ։

Ռուսական ազգային շահերի ոլորտում է, որ Հայաստանը որոշ հետաքրքրութիւն է ներկայացնում Ռուսաստանի համար։ Ամերիկանացած և ոչ-ազգային Ռուսաստանի համար Հայաստանը ոչ միայն հետաքրքրութիւն չի ներկայացնում, այլեւ պարզապէս խանգարում է Արեւմուտքի հետ նրա կապերի լաւացմանը։ Ոչ-ազգային Ռուսաստանի համար Թուրքիան շատ աւելի կարեւոր դաշնակից է, քան քարքարոտ ու ըմբոստ Հայաստանը, որը ապազգային Ռուսաստանի ձեռքերով կարող է նւիրւել Թուրքիային, ինչպէս ժամանակին Ռուսաստանի ապազգային ուժերը նւիրեցին Թուրքիային ամբողջ Արեւմտեան Հայաստանը, Նախիջեւանը և Ղարաբաղը։ Մեզ չխաբենք ճառերով, թէ մենք հիմա անկախ ենք և կարող ենք սեփական ուժերով պաշտպանել մեր հայրենիքը։ Ապագայում գուցէ, բայց ոչ այսօր։

Այժմ մի երկու խօսք հասարակական արդարութեան վերաբերեալ։ Այս հասկացութիւնը վերաբերում է ազգային պետութիւններին և համակարգերին, քանի որ արդարութիւնը պարունակում է իր մէջ մեծ ընտանիքի պատկանելու, մերձաւորի ցաւից տառապելու, մերձաւորին օգնութեան հասնելու զգացմունքը։ Ուզենք թէ չուզենք, բայց Ղարաբաղում 10-20 հազար հայ զինուորները, էլ չխօսենք երկրաշարժի տասնեակ հազարաւոր զոհերը մեր մէջ առաջացնում են շատ աւելի մեծ ցնցում ու հոգեկան տագնապ, քան նախկին Հարաւսլաւիայում օրական հարիւրաւոր սպանւածների և կամ էլ Չինաստանի երկրաշարժի կէս միլիոն զոհերի լուրը։ Ապազգային երկրում արդարութիւնը լաւագոյն դէպքում տրամաբանական կառոյց է, դրա համար էլ տապալւեց աշ-

խատաւորների շինծու միասնութիւնը՝ երբ բախւեց բնական միասնութեան զգացմունքների հետ: Արդարութիւնը զգացմունք է, աւանդութիւն, պատմական փորձ, հաւատք, որը արւեստի նման չի կարող լինել ապազգային: Հասարակական արդարութիւն կարելի է ստեղծել միայն ազգային արժէքներով ապրող հասարակարգում:

Եւ, վերջապէս չնայած ապազգային ուժերի կատաղի դիմադրութեանը, աշխարհը շարունակում է շարժւել դէպի ազգային կառոյց: Գաղափարախօսական բեւեռացումը կամաց-կամաց փոխարինւում է ազգային բեւեռացումով, որտեղ ապագայում, հաւանաբար Չինաստանը, Ճապոնիան, Գերմանիան և Ռուսաստանը դառնան ազգային բեւեռի պաշտպանները և ջախջախիչ հարւած հասցնեն ամերիկա-հրէական ապազգային բեւեռին: Ազգային բեւեռի այս յաղթանակը անխուսափելի է, քանզի ապազգայնայացած աշխարհը սուզւել է անբարոյականութեան ծովը, որից յետոյ կա՛մ կը խորտակւի վերջնականապէս և կամ էլ վերածնւում կ'ապրի ազգային հողի վրայ:

Այսպիսով, մեր ներկայ կացութիւնը, մեր յեղափոխական էութիւնը, հասարակական արդարութեան սկզբունքները, քաղաքական հաշւարկները և ապագայի նկատմամբ մեր գուշակումները ստիպում են մեզ կանգնել պատնէշի ազգային կողմում կանգնած բանակի շարքերը, անկախ նրանից որ պարտւելո՞ւ է, թէ՞ յաղթելու է այդ բանակը:

Մենք միշտ պայքարել ենք սկզբունքի համար, այսօր էլ պիտի շարունակենք մեր այդ աւանդական գիծը: Եթէ պիտի պարտւենք, ոչինչ, քանզի մեր ամբողջ պատմութեան ընթացքում մենք պայքարել ենք անպատիւ մահւան դէմ կուրծք ցցելու համար: Պատւով մեռնելն էլ այն ուղին է, որը ծնունդ կը տայ մեր պայքարը շարունակողներին: Եւ **«Ազատութիւն կամ Մահ»** վճռողը չի պարտւի, որովհետեւ ճշմարտութիւնը և արդարութիւնը ի վերջոյ այն քարերն են, որոնց վրայ կառուցւում է մարդկութեան բնական շէնքը, յետ մղելով բոլոր պատահական մարդկանց ու շարժումներին:

1993

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՊԱՐՏԱԴՐԱԾ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ, ՎԱՒԽԸ ԵՒ ՁՂՋԱՆՔԸ

Է. Յովհաննիսեան

Հայաստանի Գերագոյն Խորհրդի ապրիլ 25ի նիստում նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի ունեցած ելոյթի մասին արդէն շատ խօսուեց: Բայց անհրաժեշտ ենք համարում մէկ այլ՝ ազատութեան փիլիսոփայութեան դիտանկիւնից կրկին անդրադառնալ ազգային գաղափարախօսութիւնը մերժող նախագահական արտայայտութիւններին, քանզի հայ ժողովրդի ճակատագրի հետ կապւած այդ դատողութիւնները ոչ թէ սովորական մտավարժանքներ են, այլ աշխարհայեացքային և գաղափարախօսական սկզբունքներ, որոնցով իրենց գործունէութեան մէջ առաջնորդւում են այս կամ այն ղեկավար անձինք:

Գորբաչովեան ազատութիւններով սկսւած այս նոր ժամանակաշրջանը այնքան անսպասելի էր, որ նոյնիսկ նախկին խորհրդային փիլիսոփաները պատրաստ չէին ըմբռնելու Ազատութեան փիլիսոփայութիւնը, էլ ուր մնաց նրանք, որոնց աշխարհայեացքը ստեղծւել էր միայն սեփական բնազդի հիման վրայ և չունէր ո՛չ կրօնական, ո՛չ փիլիսոփայական, ո՛չ քաղաքական և ոչ էլ ազգային հիմքեր: Նրանց անվճռակամութիւնը հասկանալ կարելի է, ներել՝ ոչ:

Ահա թէ ինչու այս անգամ ուզում են, առանց բանավիճելու, ուղղակի անդրադառնալ ազատութեան փիլիսոփայութեան խնդրին, որպէսզի ազատութիւն ձեռք բերած հայ ժողովրդին և առաջին հերթին նրա ղեկավարներին պարզ լինի, որ ազատութիւնը ոչ միայն մեծագոյն բարիք է, այլ նաեւ ծանր բեռ, և կարող է չարիք դառնալ նրանց համար, ովքեր ի վիճակի չեն կրելու այդ բեռը:

Ուրեմն, ըստ պարոն նախագահի՝ «**Հայ քաղաքական մտքի և հրապարակախօսութեան արդի հանգրւանը բնութագրւում է, հիմնականում երկու գաղափարի՝ ազգային համաձայնութեան և ազգային գաղափարախօսութեան յարաճուն արծարծմամբ, որոնք սովորաբար ներկայացւում են որպէս ամենաբուժիչ դեղատոմս հայ ժողովրդի բոլոր խղճերի իրականացման համար**»:

Նախ՝ Ազգային համաձայնութեան և ազգային գաղափարախօսութեան անհրաժեշտութիւնը արծարծում է ոչ միայն հայ, այլ բոլոր ազգերի քաղաքական միտքը, և ոչ միայն արդի հանգրւանում, այլ՝ բոլոր ժամանակներում: Այդ դրոյթները չեն կարող ներկայացնել իբրեւ բոլոր խղճերի իրականացման դեղատոմս, քանզի գաղափարախօսութիւնը դեռ պիտի սահմանի այդ խղճերը, իսկ միասնութիւնը՝ գոյացնի դեղատոմս գտնելու պայմաններ:

Բայց այս յայտարարութեան մէջ զգացւում է նախագահի՝ ընտրութիւն կատարելու դժւարութիւնից բխող տառապանքը: Եւ հէնց այդ տառապանքն էլ ազատութեան փիլիսոփայութեան էութիւնն է:

Չկայ աւելի տառապալից կացութիւն, քան այն, երբ կանգնած ես ընտրութեան առջեւ, բայց ոչինչ չգիտես այս կամ այն ընտրութեան արդիւնքների մասին: Ամէն մի ընտրութիւն իր մէջ ռիսկի կամ անյայտութեան մէջ թռիչք կատարելու պահ ունի: Կան այնպիսի անձեր, որոնք անվերջ յետաձգում են ընտրութիւնը. նրանք պարզապէս վախենում են ընտրութիւնից՝ չկարողանալով հասկանալ, որ ընտրութիւնից հրաժարւելը արդէն բացասական ընտրութիւն է: Բայց այդ մարդիկ գերադասում են հրաժարւել ընտրութիւնից, քանի որ չեն կողմնորոշւում, թէ որ ընտրութիւնն է ձեռնտու:

Ծագում է անհրաժեշտութիւնը հեղինակութեան և առաջնորդի, որը մարդկանց փոխարէն կատարում է ընտրութիւնը: Հասարակական կեանքում հեղինակութիւնները անխուսափելի են, քանզի նրանք միջնորդներ են մեր տատանւող ու ինքզինքը չվստահող կամքի և արժէքների աշխարհի միջեւ: Բարոյապէս ոչ հասուն մարդու համար հեղինակութիւնը անհրաժեշտութիւն է, մինչդեռ բարոյապէս հասուն մարդկանց և կազմակերպութիւնների համար հեղինակութիւնը երկրորդական դեր է կատարում: Կարեւորը և որոշիչը խիղճն է: Խիղճը բարձրագոյն արժէքների ընկալման միջոցն է, ինչը կրօնական բառապաշարով կոչւում է Աստծոյ ձայն: Փիլիսոփաներն ու հոգեւորականները գտնում են, որ ճշմարտութեան կամ Աստծոյ ստրուկ դառնալը ոչ թէ ստրկութիւն, այլ երջանկութիւն է, ուստի նման ընտրութեան ազատութիւնը վախ չի առաջացնում:

Մի խօսքով՝ բարոյականութիւնից զուրկ մարդը ընտրութեան ազատութեան տառապանքից խուսափելու համար առաջնորդ է որոնում, որն իր վրայ է վերցնում ընտրութեան տառապանքը և այդ ընտրութեամբ իսկ ստրկացնում է ենթակային: Սակայն բարոյական կողմնորոշումից զուրկ մարդու համար այդ ստրկութիւնը երջանկութիւն է, կամ՝ գիտակցւած անհրաժեշտութիւն: Սակայն ինչպէ՞ս պէտք է վարւի բարոյապէս ոչ-հասուն առաջնորդը: Ինչպէ՞ս պէտք է նա յաղթահարի ընտրութիւն կատարելու տառապանքը և ինչպէ՞ս պէտք է զսպի իր վախը ազատութիւնից: Դրա համար նա ունի երկու ճանապարհ: Առաջինը՝ իրենից աւելի բարձր հեղինակութեան ստեղծումն է: Եթէ առաջնորդը բարոյապէս հասուն է, ունի յստակ բարոյական սկզբունքներ, ապա հէնց այդ սկզբունքները դառնում են բարձրագոյն հեղինակութիւն, ինչը չի ճնշում, այլ իրական ազատութիւն է տալիս (ճանաչէք ճշմարտութիւնը, և նա ձեզ ազատ կը դարձնի): Սակայն բարոյականութիւնից զուրկ առաջնորդը դառնում է մէկ ուրիշ առաջնորդի ստրուկը՝ կրկնապատկելով իր ենթականե-

րի ստրկութիւնը։ Այդպէս էր կոմունիստական վարչակարգի օրօք, ժողովուրդը Կենտկոմի ստրուկն էր, իսկ Կենտկոմը՝ Մոսկւայի։

Ընտրութեան տառապանքից խուսափելու երկրորդ ճանապարհը ընտրութեան հնարաւորութեան վերացումն է, այսինքն՝ սեփական բարոյականութեան ստեղծումը, ինչը բացառում է ընտրութեան ազատութիւնը և նրա հետ էլ՝ ընտրութեան վախը։ Զարմանալ կարելի է, թէ ինչպիսի՛ հեշտութեամբ աշխարհի խոշորագոյն քաղաքական գործիչները ընտրում էին սեփական բարոյականութիւն ստեղծելու կեղծ ճանապարհը։ Խուսափելով բարոյական ընտրութեան ազատութիւնից՝ Լենինը առանց խղճի խայթի յայտարարեց, թէ բարոյական է այն ամէնը, ինչը նպաստում է բանւոր դասակարգի գործին։ Էլ աւելի հրէշաւոր էր Մարքսի փախուստը ազատութիւնից։ Խուսափելու համար հակադրութիւնների պայքարի արդիւնքների ընտրութիւնից, նա Հեգելի հռչակաւոր «Սինթեզ» հասկացութիւնը փոխարինեց հակադրութիւնների վերացումով։ Վերանում են դասակարգերը, ազգերը, ընտանիքը, պետութիւնը, ուրեմն ինչո՞ւ այսօր մտահոգել դասակարգերի, ազգերի և պետութիւնների ազատութեամբ։

Էլ ինչո՞ւ զարմանալ, որ Հայաստանի նախագահը, խուսափելու համար ընտրութեան տառապանքներից, մէկ կողմից իրականացնում է Մոսկւայից թելադրւած ժողովրդավարութիւնը, սեփականաշնորհումը և արեւմտասիրութիւնը, միւս կողմից հրաժարւում է ազգային միասնութիւնից, ազգային գաղափարախօսութիւնից, հալածում է Դաշնակցութիւնը և սարսափում դաշնավարական կառավարութիւնից։ Անշուշտ շատ հեշտ է ապրել առանց ընտրութեան տառապանքի, բայց ո՞ւմ համար է հեշտ։ Այս մասին պիտի խօսենք աւելի հանգամանօրէն։ Առողջ տրամաբանութեան տեսանկիւնից ազատութեան ձգտումը նոյնքան բնական է, որքան բնական է արեւածաղիկի ձգտումը արեւին։ Ազատութիւնը այն հոգեկան օդն է, որով կարող է շնչել ազատ կամքով օժտւած էակը։ Ազատութեան կեղծ օգտագործումը չի ապացուցում, թէ ազատութիւնը վնասակար է, ինչպէս կրակի հետ խաղալիս պատճառւած վնասը չի ապացուցում կրակի վնասակարութիւնը։ Սակայն ազատութիւնը միշտ կապւած է պատասխանատուութեան հետ և պահանջում է հոգեկան արիութիւն, այսինքն՝ սեփական կամքի իրականացում։ Դրա համար էլ հոգեկան ազատութեան հասունութիւնը չունեցող մարդիկ հոգեկան ստրկութիւնը համարում են ազատութիւնից աւելի գերադասելի։ Անշուշտ, շատերը չեն հասկանում, որ իրենք գերադասում են ստրկութիւնը, որովհետեւ վախենում են ազատութեան պատասխանատուութիւնից, դրա համար էլ ազատութեան բացայայտ ձգտման հետ միասին մարդկանց մէջ ապրում է նաեւ ստրկութեան գաղտնի ձգտումը։ Բոլոր կեղծ ուսմունքները, որոնք յարաբերական արժէքնե-

րը դարձնում են բացարձակ, հոգեպէս ճնշում են մարդուն, որքան էլ դրանք խոստումնալից լինեն։ Բայց մարդիկ յաճախ ուզում են խաբել, ուստի և նրանց խաբում են։ Այս իմաստով խաբուողը չի կարող իր վրայից վերցնել խաբելու պատասխանատուութիւնը, որովհետեւ ինքն ուզում էր խաբել, խաբած նա իրեն աւելի հանգիստ է զգում։

Արեւմտեան քաղաքակրթութեան զարգացման մէջ կարելի է գտնել ազատութեան ողբերգութեան այն արմատները, որոնք այսօր ցնցում են նախկին Խորհրդային Միութեան ժողովուրդներին և գուցէ առաջին հերթին հայ ժողովրդին։ Այն խօսակցութիւնները, թէ մենք խուսափեցինք վրացական կամ ադրբեջանական տարբերակներից, դեռեւս դատարկ խօսքեր են, որովհետեւ խուսափեցինք ընդդիմադրութեան իմաստութեամբ, որը ինքզինքը չէր ուզում խաբել և հաւատարիմ էր ազգային շահերի պաշտպանութեանը։ Բացի այդ, Գորբաչովի սկսած անյաջող փորձը դեռեւս աւարտուած չէ, և Աստուած չանի, որ հայ ժողովրդի համար այն աւարտուի՝ ինչպէս աւարտել են բոլոր նախկին մեծ իրադարձութիւնները։ Որտեղի՞ց ծնւեց ազատութեան ողբերգութիւնը։ Դարերից եկող տնտեսահասարակական և ազգային անհաւասարութիւնը 19-րդ դարում հասաւ իր գագաթնակէտին, երբ արթնացան զանգւածները և նրանց պահանջները։ Ազատական-ժողովրդավարութիւնը և նրանից ծնւած դրամատիրութիւնը նպաստեց տնտեսական զարգացմանը, սակայն խոչընդոտներ դրեց ազատութեան առջեւ։ Քանի դեռ ազատ մրցակցութեան համար գոյութիւն ունէր համապատասխան տարածութիւն, բնական անհաւասարութեան խնդիրները լուծելի էին, քանզի ամէն մարդ գիտակցում էր, որ մրցակցութեան ազատ դաշտում տեղ կայ նաեւ իր համար, և եթէ ինքը յաջողութիւնների չի հասել, ապա միայն իրեն կարող է մեղադրել։ Սակայն շուտով ազատ մրցակցութեան այդ դաշտը նեղացաւ, ստեղծւեցին խոշոր ձեռնարկութիւններ, տնտեսական օրէնքներ, դժւարացաւ գոյատեւման պայքարը, աճեց անհաւասարութիւնը։ Եւ ամենակարեւորը՝ գոյատեւման պայքարի ճակատը կորցրեց իր յստակութիւնը, իսկ եթէ աւելի անկեղծ լինենք՝ պայքարը մղւեց առանց ճակատի։ Մարդուն սկսեցին սպառնալ ուժեր, որոնք թաքնւած էին, որոնց մասին նա գաղափար չունէր և որոնց առջեւ անզօր էր։

Այս պայմաններում, այսինքն՝ անորոշութեան մթնոլորտում, պատահական հարւածներից ապահովագրւելը դարձաւ անհրաժեշտութիւն։ Ուժեղ ձեռքով կատարւելիք ծրագրաւորումը նոյնպէս անհրաժեշտ էր։ Եւ հէնց այդ անհրաժեշտութիւնը ծնեց կամ աւելի ճիշտ պատրաստեց ամբողջատիրական վարչակարգերի հողը։ Ազատութեան վախը անցաւ բոլոր սահմանները, ազատութեան համար մարդը այնքան շատ էր վճարում, որ որոշեց հրաժարւել այդ ազատութիւնից՝ կառչելով հասարակական պաշտպանութեան սկզբունքից,

որը բացառում էր թէ՛ հաւասարութիւնը և թէ ազատութիւնը: Մարդկանց այս պահանջներին որոշ չափով բաւարարութիւն տուեցին բոլշեւիզմը և ֆաշիզմը:

Սակայն արեւմտեան ժողովրդավարական երկրներում էլ ազատութիւնը ազատ չմնաց: Տուրքերի, արհմիութենական շարժումների, աշխատավարձի և գների կարգաւորման քաղաքականութեան ճամբով ազատ շուկան դարձաւ անազատ, իսկ տնտեսավարութեան մէջ սկսեց միջամտել պետութիւնը: Այն, ինչը կոչւում է զանգւածային հոգեբանութիւն, ընտելացաւ անազատութեան հետ և սկսեց ենթարկւել արհեստական արժէքների: Սակայն զանգւածային հոգեբանութիւնը հասարակական հոգեբանութիւն չէ: Այս վերջինս չի ճնշում մարդու անհատականութիւնը, ընդհակառակը՝ ստեղծում է նրա զարգացման պայմաններ: Իսկ զանգւածային հոգեբանութիւնը արտայայտում է հասարակարգի այլանդակ վիճակը. այն հաւաքական հիւանդութիւն է: Զանգւածային հոգեբանութիւնը խեղդում է տրամաբանութիւնը և դառնում ազատութեան գլխաւոր թշնամին: Ազատութիւնը անմիջականօրէն կապւած է հեռանկարների անվախճանութեան հետ, բայց մեր օրերում հնարաւորութիւնների անվախճանութիւնը կորսւել է, և ազատութիւնը այլեւս դարձել է ոչ թէ ընտրութեան հնարաւորութիւն, այլ՝ անդունդ, որի մէջ կարելի է միայն կործանւել: Ազատութեան անդունդի առջեւ վախը բնորոշ չէր վերածնունդի ժամանակաշրջանին, սա արդէն մեր օրերի ծնունդ է: Անվախճանութեան գաղափարը բացառում է բռնութիւնը, քանզի անվախճանութիւնը անհամատեղելի է մարդու կամքի հետ: Ենթարկել կարելի է միայն վախճանական աշխարհը: Բայց զանգւածները յեղափոխական և արմատական փոփոխութիւնների պահին հրաժարւում են ազատութիւնից և որոնում են առաջնորդներ: Այս առիթով կարելի է յիշել Դոստոյեւսկու խօսքը՝ «Նրանք խռովարարներ են, բայց՝ ստրուկներ»: Զանգւածային հոգեբանութիւնը որպէս օրէնք տանում է դէպի առաջնորդի պաշտամունք:

Այժմ մի պահ կանգ առնենք և տեսնենք, թէ ի՛նչ կապ ունի այս ամէնը Հայաստանում տիրող կացութեան և Հայաստանի նախագահ՝ Լեւոն Տէր-Պետրոսեանի արտայայտութիւնների հետ:

Հայ ժողովուրդը, ինչպէս նաեւ նախկին Խորհրդային Միութեան բոլոր ժողովուրդները, 70 տարի ապրեց ամբողջատիրական վարչակարգի մթնոլորտում, որտեղ ազատութեան համար անհրաժեշտ էր շատ թանկ գին վճարել: Միայն հատ ու կենտ մարդիկ էին, որ պատրաստ էին այդքան թանկ վճարել, բայց որոնց ազատութիւնից հրաժարւած «նորմալ» մարդիկ աննորմալ էին համարում: Հասարակական հոգեբանութիւնը ընտելացել էր ամբողջատիրութեանը, իսկ զանգւածային հոգեբանութիւն գոյութիւն չունէր, չնայած հասարակարգը այլանդակւած էր՝ և շատ: Սկզբից Խրուշչովեան, ապա Գորբաչո-

վեան ազատութիւնները փոքր-ինչ մեղմացրին ազատութեան առջեւ վախը։ Սկզբում ծնեցին, այսպէս կոչւած, այլախոհներ, ապա ձեւաւորուեց զանգւածային հոգեբանութիւնը, որը ձգտում էր ազատութեան՝ գաղափար չունենալով այդ արժէքի մասին։ Ինչպէս բոլոր զանգւածային հոգեբանութիւնները, հայկականն էլ հասարակարգի այլանդակութեան արտայայտութիւնն էր։ Վերացել էր ազատութեան առջեւ վախը, և բոլորը պարում էին արտասահման մեկնելու, հրապարակում ելոյթ ունենալու կոլտնտեսութիւնները վերացնելու, կոմունիստներից վրէժ առնելու Ղարաբաղը ազատագրելու, Ատոմակայանը և «Նայիրիտ»ը փակելու, Ռուսաստանից վերջապէս ազատւելու, բազմակուսակցական վարչակարգ ստեղծելու և Հայ Դատի հարցերը լուծելու ազատութեան պարը։ Սակայն, ինչպէս արդէն ասացինք, ազատութեան վախը ոչ թէ ազատ արտայայտւելու համար պատժւելու վախն է, այլ՝ ընտրութեան անորոշութեան վախը, երբ չես կարողանում ընտրել այս կամ այն ճանապարհը, որովհետեւ չգիտես, թէ այն ո՛ւր է տանում։ Զանգւածային հոգեբանութիւնը այդ մասին ոչինչ չգիտէր, բայց իր տգիտութիւնից չէր վախենում ու օգտւելով ազատութիւնից՝ համարձակօրէն փակում էր գործարաններ, վերացնում էր կոլտնտեսութիւններ, հռչակում էր անկախութիւններ, փակում էր ռուսական դպրոցներ, լուծում էր Ղարաբաղի հարցը, կատարում էր սեփականաշնորհում, այսինքն՝ թալանում էր ազգը։ Չէ՞ որ ազատութիւն էր ստացել։

Սակայն ազատօրէն նետւելով բացւած դռների մէջ՝ նետւողները շատ շուտ տեսան ոչ թէ ճանապարհի վերջի դատարկութիւնը, այլ հէնց իրենց ոտքերի տակ գտնւող խոչընդոտները։ Պարզւեց, որ ազատօրէն այս կամ այն կողմ վազելը շատ աւելի հեշտ է քան յստակ նպատակի ետեւից վազելը։ Պարզւեց, որ մենք սանձերը թողած վազում ենք ազատութեան ճանապարհներով, իսկ մեր ժողովուրդը փախչում է երկրից, ու նաեւ՝ դէպի Ռուսաստան, որից ազատութեան ճանապարհներից մէկի վրայ ազատւել էր։ Պարզւեց, որ մեր տնտեսութիւնը քայքայւել է, գիտութիւնը և արւեստը՝ կործանւել, կաշառակերութիւնը ու գողութիւնը հասարակական կեանքի չափանիշներ են դարձել։

Ինչո՞ւ և ինչպէ՞ս պատահեց։ Պիտի կրկին վերադառնանք ազատութեան փիլիսոփայութեանը։ Ազատութեան փիլիսոփայութեան առաջին՝ արտաքին մակարդակի վրայ է գործողութեան ազատութիւնը։ Այդ ազատութեան մէջ խօսքը ոչ թէ ցանկութիւնների, այլ՝ գործելու հնարաւորութեան սահմանների մասին է։ Այդ սահմանները ճշգրտելիս մեծ դժւարութիւնների չենք հանդիպում, որովհետեւ շատ արագ պարզւում է, որ մենք թռչել կամ ովկիանոսի տակ սուզւել չենք կարող, որ մենք առանց ատոմակայանի, օդային կապի շրջափակման պայմաններում ապրել չենք կարող, որ առանց Ղարաբաղի անկախութեան ճանաչման, Ղարաբաղը անկախ չի կարող դառնալ, որ

առանց իրական համազգային շարժման, համազգային կրկէս յիշեցնող Հ.Հ.Շ.ն չի կարող ազգը դուրս բերել ճգնաժամից, որ նախքան անձնագրեր ու դրամ տպելը, անհրաժեշտ է քաղաքացիութեան օրէնք ընդունել և տնտեսական հիմքեր ստեղծել, որ Ռուսաստանից անջատուելուց առաջ, անհրաժեշտ է որոշել, թէ ո՛ւմ դաշտն ես մտնում, որ կոլտնտեսութիւնը քանդելուց առաջ, անհրաժեշտ է որոշել տնտեսվարութեան սկզբունքները, որ ռուսական դպրոցներից հրաժարուելուց առաջ, անհրաժեշտ է որոշել՝ միայն հայերէնով կարելի՞ է մտնել քաղաքակիրթ աշխարհ, որ գայլերով լի դիւանագիտական անտառում գառնուկները անելիք չունեն և այլն։ Բայց այստեղ էլ ամէն ինչ յստակ չէ, քանզի եթէ մենք չենք կարող թռչել, բայց կարող ենք օգտագործել օդանաւ, չենք կարող սուզուել, բայց կարող ենք օգտագործել սուզանաւ։ Ուրեմն գործելու մեր ազատութիւնը սահմանափակւում է որոշ օրինաչափութիւններով, որոնք մենք երբեմն չենք ուզում նկատել՝ համարելով թէ գործում ենք ըստ մեր ազատ կամքի։ Սպինոզան մի դիպուկ արտայայտութիւն ունի՝ եթէ քարը գիտակցութիւն ունենար, կը մտածէր, որ իր սեփական կամքով է ժայռից պոկւում ու վայր ընկնում։ Այսպիսով, գործողութեան ազատութիւնը զուտ թեքնիկ հարց է և վերլուծութեան կարիք չունի։

Այնուամենայնիւ, Հայաստանի նոր ղեկավարութիւնը չկարողացաւ հաշուել իր կարողութիւնները և նետուեց ազատութեան դաշտ՝ առանց սեփական ուժերի մասին որեւէ գաղափար ունենալու։ Այստեղից էլ այն յայտարարութիւնները, թէ մենք առանց ատոմակայանի, առանց քիմիական արդիւնաբերութեան, առանց ռուսների, առանց Ա.Պ.Հ.ի կազմի մէջ մտնելու, առանց կոմունիստների, առանց Դաշնակցութեան, առանց սեփական զօրքի, առանց Սփիւռքի կարող ենք ոչ միայն Հայաստանի անկախութիւնը կերտելու, այլեւ Ղարաբաղը միացնել։ Երբ այդ պահին Դաշնակցութիւնը, այլ կուսակցութիւնների հետ միասին, խորհուրդ էր տալիս այդքան չտարուել գործադուլներով՝ ազատութեամբ հարբած Հայաստանի ապագայ ղեկավարները Դաշնակցութեանը մեղադրեցին դաւաճանութեան մէջ։

Սակայն գործելու ազատութիւնը շատ մակերեսային ազատութիւն է, և նրա էութիւնը չըմբռնողի համար առաւել դժւար պիտի լինի ըմբռնել ընտրութեան ազատութեան էութիւնը։ Այստեղ արդէն խօսքը ոչ թէ կամքը գործադրելու կարողութեան մասին է, այլ՝ ցանկութեան ներքին սահմանների։ Որտեղի՞ց է ծագում այդ ցանկութիւնը և որքանո՞վ այն կարող է դիտուել որպէս առարկայական երեւոյթ։ Ոմանք գտնում են, որ այդ ցանկութիւնը յենւում է ինքնապահպանման բնազդի վրայ, սակայն այդ դէպքում դժւար է բացատրել ինքնասպանութիւնը կամ զոհաբերութիւնը։ Ֆրոյդը ցանկութեան ներքին սահմանները կապում էր սեռական բարդոյթների հետ, սակայն նրա տեսութիւնն էլ այնքան

է սահմանափակում մարդու ցանկութիւնների դաշտը, որ գրեթէ ընտրութեան ազատութիւն չի թողնում: Մինչդեռ իրականութիւնը շատ աւելի պարզ է՝ ցանկութեան սահմանները որոշում են ոչ թէ առարկայական այլ ենթակայական գործօնները: Նրանք կապ ունեն մեր դաստիրականութեան, աշխարհահայեացքի, կրթութեան, աւանդոյթների, ազգային պատկանելիութեան և մեր վարքագծի վրայ ազդող շատ ուրիշ գործօնների ու արժէքների հետ: Սխալ դաստիարակութիւն ստացած և կեղծ արժէքներով ապրող մարդը ունի իր ցանկութիւնների ազատութեան ուրոյն սահմանները և երբեմն ցանկանում է այն, ինչի մասին ուրիշը նոյնիսկ ամաչում է մտածել: Ցանկութիւնների ազատութեան այդ սահմանները բնորոշում են մարդու կերպարը, ուստի մենք կարող ենք միայն նշել, որ ազգի ղեկավարը պէտք է ունենայ յատուկ կերպար, որի ցանկութիւնները համընկնեն ազգի շահերի հետ:

Ճիշտ այդ պատճառով է, որ ժողովրդավարական երկրներում խաղատուն այցելող, սիրուհի պահող կամ հարբեցող մարդը անմիջապէս զրկւում է նախագահի պաշտօնից, երբ բացայայտւում են այդ արարքները: Արգելւած չէ ո՛չ խաղատուն այցելելը, ո՛չ սիրուհի ունենալը և ոչ էլ միասեռական լինելը, բայց արգելւած չէ օրէնքով և սովորական մարդկանց համար, իսկ նախագահը կամ այլ բնագաւառի ղեկավարը իրաւունքը չունի ցանկութիւնների, որոնք չեն համընկնում հաւաքականութեան ցանկութիւնների հետ և կարող են ղեկավարին շեղել հաւաքականութեանը ծառայելու ուղուց: Սա նշանակում է, որ ի տարբերութիւն սովորական մարդու, ղեկավարը իր ընտրութեան ազատութեան մէջ անազատ է այնքանով, որքանով ծառայում է հաւաքականութեանը: Եւ այդ ծառայութիւնը ոչ թէ նիւթական է, այլ՝ հոգեկան: Իսկ հոգեկան կեանքի համար անցեալը իրականութիւն է: Նա անտեսանելի կերպով կա՛յ ներկայում: Բացի այդ, հոգեկան կեանքը ի սկզբանէ ազատ է և օժտւած ստեղծագործութեամբ: Այստեղ ամէն մի ակնթարթ անկրկնելի է, ներկայի խորքերում ծնունդ է առնում ապագան, զգացմունքները և մտքերը փոխանցւում են՝ գոյացնելով անցեալի, ներկայի և արդէն ծնւող ապագայի անբաժանելի ամբողջութիւնը: Մի խօսքով, հոգեկան կեանքը ընթանում է ոչ թէ տարածութեան, այլ՝ ժամանակի մէջ: Բայց հոգեկան ժամանակի մէջ բացակայում են անցեալի, ներկայի և ապագայի այն խիստ սահմանները, որ գոյութիւն ունեն սովորական ժամանակում: Դրա համար էլ հոգեկան ժամանակի համար Բերգսոնը օգտագործում է «տեւողութիւն» հասկացութիւնը: Ով դուրս է գալիս այդ տեւողութեան սահմաններից, ով անցեալի մէջ չի որոնում ներկան ու ներկայի մէջ չի տեսնում ապագան, հաւաքականութեան կեանքում ոչ միայն ժամանակաւոր, այլեւ վտանգաւոր տարր է: Դժբախտաբար, Հայաստանի նոր իշխանաւորները չտեսան անցեալի, ներկայի եւ ապագայի կապը և այնքան տարւեցին ներկայով,

որ այդ ներկան դարձաւ աշխարհից կտրուած անոտք ու անգլուխ կիսատ մի մարմին: Մենք յանկարծ որոշեցինք հաշտուել թուրքերի հետ, պոկուել ռուսներից, հալածել Դաշնակցութիւնը, ոտնահարել ընկերվարութիւնը և շատ ուրիշ որոշումներ էլ կայացրինք, որոնք ո՛չ կապ ունէին մեր անցեալի հետ և ոչ էլ բարիքներ էին խոստանում ապագայում: Ինչո՞ւ այդպէս պատահեց, ինչո՞ւ Հայաստանի ղեկավարները կտրուեցին անցեալից ու ապագայից: Հաւանաբար այն պարզ պատճառով, որ սխալ ըմբռնեցին «ես»ի և «մենք»ի փոխ-յարաբերութեան էութիւնը:

Արեւմտեան նոր փիլիսոփայութիւնը «ես»ը ձեւակերպում է որպէս ամէն ինչ ընդգրկող, անհատական գիտակցութիւն կրող, ոչինչի հետ չհամեմատուող բացարձակ սկզբունք: Այս «ես»ը համընկնում է ենթակայ հասկացութեանը: Այն ամէնը, ինչ գտնւում է «ես»ից դուրս, «ես»ի համար առարկայական է: Սակայն այդ ոչ- «ես»երի շարքին է պատկանում նաեւ «մենք» հասկացութիւնը: «Մենք»ին պատկանելը մենք զգում ենք ամէնուր: Աւելին, մեր «ես»ը մեզ համար դառնում է մի ինչ-որ ընդհանրութիւնից անջատուած ուրոյնութիւն, որի ինքնուրոյն լինելը պայմանաւորուած է ուրիշ «ես»երի և «մենք»երի գոյութեամբ: Ճիշտ այնպէս, ինչպէս հակադրութիւն թւացող կեցութիւնը և գիտակցութիւնը, մարմինը և ոգին, ձեւը և բովանդակութիւնը, գիտութիւնը և կրօնը, ձախը և աջը՝ հակադրուած կազմում են ամբողջութիւններ, այդպէս էլ «ես»ը և «դու»ն և «նա»ն կազմում են «մենք» ամբողջութիւնը: Սա նշանակում է, որ մարդը չի կարող խուսափել «մենք»ից, քանզի «մենք»ի մասն է: Բայց մարդը կարող է ընտրել իր «մենք»ը: Այդ «մենք»ը կարող է լինել ազգը, կուսակցութիւնը, պետութիւնը, թայֆան, աւազակախումբը:

Կասկածից վեր է, որ այդ ընտրութիւնից է կախուած ղեկավարի վարքագիծը: Հայաստանի ընդդիմադիր ուժերը մեղադրում են իշխանութիւններին թայֆայականութեան մէջ: Այդ մեղադրանքի մասին ինքը նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը ասում է հետեւեալը.- **«Ընդդիմութեան տեսակէտից, Հայաստանի ներկայ իշխանութիւնները վերածւել են յանցագործ խմբակցութեան, թայֆայի, քայքայել են հանրապետութեան տնտեսութիւնը, սերտաճել մաֆիայի հետ, դաւաճանել ազգային դատին, ծախել Ղարաբաղը, կորցրել մեր աւանդական դաշնակիցներին և այլն»:** Ինչո՞վ է պարոն նախագահը հերքում այս մեղադրանքները: Նա ասում է եկէք հարցնենք խորհրդարանին կամ ժողովրդին՝ արդեօ՞ք այդ մեղադրանքները ճիշտ են: Սա պատասխան չէ, որովհետեւ ինչպէս ասացինք, զանգւածային հոգեբանութիւնը արտայայտում է միայն ստեղծուած կացութեան այլանդակութիւնը: Հասարակական հոգեբանութիւնը բացակայում է: Սակայն պաշտպանութեան նախարար Գրաչովի այցելութեան առիթով ստեղծուած ոգեւորութիւնը ցոյց տուեց, որ զանգւածային հոգեբանութիւնը

կամաց-կամաց փոխարինւում է առողջ բնազդի վրայ յենւող հասարակական ու ազգային հոգեբանութեամբ: Եւ երբ դրա հետ միասին խորհրդարանն էլ կը դառնայ Հայաստանի իրական քաղաքական ուժերի նստավայրը, կարելի կը լինի հարցնել ժողովրդին ու խորհրդարանին, թէ որքանո՞վ ճիշտ են ընդդիմադրութեան մեղադրանքները: Այն ժամանակ «ես»ը, այդ թւում նաեւ իշխանաւորների, կը դառնայ ազգային «մենք»ի մասնիկը, և կը բացառւի որեւէ թայֆայականութիւն: Սակայն Հայաստանի ներքին և արտաքին հարցերը շատ աւելի արագ կը լուծւէին, եթէ Հայաստանի ղեկավարները ունենային զղջանքի զգացում, ոչ թէ արդարանային, այլ ձեռք պարզէին նրանց, ում առջեւ մեղաւոր են:

Այս հարցում էլ մեզ օգնութեան պիտի հասնի ազատութեան փիլիսոփայութիւնը: Վախը կարող է լինել ֆիզիկական, որի բարձրագոյն ձեւը մահից վախենալն է: Բայց վախը լինում է նաեւ բարոյական, որի բարձրագոյն կէտը Աստծոյ պատիժն է: Ֆիզիկական վախը մղում է մեզ պաշտպանութեան, և դա բնական է ու հասկանալի, մինչդեռ բարոյական վախից ազատւելը զղջանք է պահանջում: Եթէ զղջանք գոյութիւն չունի, և մարդիկ բարոյական վախից պաշտպանւում են՝ իրենց մեղքերը թաքցնելով, ապա կրկնապատկում են մեղքը և ինքնաբերաբար աւելացնում վախը: Իսկ վախի մթնոլորտում միշտ պատժի սպասող մարդը կարող է ղեկավարել միայն բռնի ուժով:

Զղջալու և մեղքերից մաքրւելու համար խիղճ և արիութիւն է հարկաւոր: Անկեղծ զղջանքը մեզ հզօրութիւն է տալիս, և մենք կարողանում ենք ասել, որ այլեւս ոչնչից չենք վախենում, քանզի մաքուր է մեր խիղճը: Խղճի գլխաւոր յատկանիշը անշահախնդրութիւնն է: Խիղճը ոչ մէկ գործնական շահ չի հետապնդում: Նա մեր վարքագծի լուռ դատաւորն է: Խղճից անկարելի է թաքցրնել որեւէ արարք: Խղճի ձայնը ոչ միշտ է լսում անձը, բայց խիղճը անդադրում արձանագրում է մեր բոլոր արարքները: Նրա շնորհիւ մենք ամէն ինչ գիտենք մեր բարոյական անկատարութեան մասին: Այդ անկատարութիւնը մենք թաքցնում ենք ուրիշներից, բայց մեզանից թաքցնել չենք կարող: Խիղճը խօսում է ոչ թէ «ես»ի անունից, այլ՝ դիմելով «ես»ին: Այստեղ «ես»ը լսողի դերում է: Խիղճը դատապարտում է մեզ ոչ թէ արարքների, այլ արարքի դրդապատճառի համար: Դատապարտում է ոչ թէ սպանութիւնը, այլ՝ սպանութեան պատճառը: Եւ սա խղճի գուցէ ամենակարեւոր յատկութիւնն է, որից և բխում է զղջանքը: Խիղճ չունեցող կամ աւելի ճիշտ՝ նրա ձայնը չլսող մարդը զղջանքի էլ ընդունակ չէ:

Այսպիսով, ընտրութեան ազատութիւնը ընդգրկում է հաւաքականութեան շահերի, գործողութիւնների, ձգտումների սահմանների և զղջանքի ազատութիւն, առանց որոնց ազատութիւնը կարող է կործանել հաւաքականութիւնը:

Այսօր Հայաստանը պէտք ունի քառսը համակարգող և ազատութիւնները ղեկավարող ուժերի։ Հայաստանը մի պահ պիտի կանգ առնի, անցնի զղջանքի բովից և փրկի դեռեւս չթալանուած, դեռեւս չկործանուած, դեռեւս Հայաստանից չփախած, դեռեւս ու այսուհանդերձ հայկական արժէքներով ապրող հայութիւնը։

1994

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Է. Յովհաննիսեան*

Պատմական կանխատեսումների տեսութիւնը ոչ նախկինում և ոչ էլ այսօր մշակւած չէ, և հազիւ թէ հնարաւոր լինի մշակել այն համակարգերի նկատմամբ, որտեղ գործում են անկանխատեսելի ուժեր: Օրինակ, ո՞վ կարող էր կանխատեսել Մարտի 27ի դէպքերը, Խորհրդային Միութեան փլուզումը, երկրաշարժը և այլ իրադարձութիւններ, որոնք անկանխատեսելի էին, բայց էական նշանակութիւն ունեցան տարբեր ժողովուրդների ճակատագրերի վրայ:

Սակայն կանխատեսելն անհրաժեշտ է, որովհետեւ այսօրւայ բուռն ընթացք ունեցող աշխարհում ղեկավարել, ծրագրել կամ քաղաքական ռազմավարութիւն մշակել՝ անկարելի է առանց կանխատեսումների:

Դրա համար էլ վերյիշենք այն հիմնական սկզբունքները, որոնց վրա հիմնւում է որեւէ կանխատեսում:

Առաջինը, որը ստեղծւեց Նոստրադամուսից յետոյ, կապ ունէր նմանութիւնների հետ: Այսինքն՝ պատմութեան մէջ գտնւում էր ներկայ կացութեանը նմանւող մի կացութիւն, որից յետոյ տեղի ունեցած իրադարձութիւնները համարւում էին ներկայ կացութեանը յաջորդող հնարաւոր իրադարձութիւններ: Այս մօտեցումն ունէր որոշ տրամաբանութիւն, բայց գիտական կարող էր համարւել շատ մեծ վերապահումներով, քանզի նմանութիւնը գիտական ապացոյց չէ:

Օրինակ, եղանակը գուշակելու մէջ տարիներ շարունակ օգտագործւում էր հետեւեալ սկզբունքը: Նոյն պատճառները յանգեցնում են նոյն հետեւանքների: Ճշգրիտ գիտութիւնների իմաստով էլ այդ սկզբունքն ընդունելի է միայն նոյն օրինաչափութիւնների դաշտում, այն էլ այնքան յստակ, որ թոյլ տւեց Նեւտոնին (գուցէ առասպել է) երկրագնդի ձգողութեան ուժի օրէնքը յայտնաբերել ծառից պոկւած խնձորի վայր ընկնելու երեւոյթը դիտարկելիս: Բայց այդ դիտարկումն էլ չէր կարող որեւէ նշանակութիւն ունենալ, եթէ գիտնականը չհամոզւէր, որ աշխարհի բոլոր ծայրերում, բոլոր ժամանակներում, բոլոր ծառերից, բոլոր խնձորները քամուց պոկւելուց յետոյ վայր են ընկնում:

---

* Հեղինակը ծանօթ մտաւորական ու քաղաքական գործիչ է, «Դրօշակ»ի երկարամեայ աշխատակից: Նախագահն է Հայկական Հարցերի Հաստատութեան, հրատարակած է ազգային-քաղաքական և իմաստասիրական երկեր: Տեխնիկական Գիտութիւնների դոկտոր է՝ մասնագիտացած կիպեռնետիկայի մէջ:

Բայց այդ համոզւածութիւնը եղանակ գուշակելու ժամանակ բացակայում էր, ուստի այսպէս կոչւած գիտնականներն ուսումնասիրում էին նախորդ տարիների եղանակի քարտէզները (մօտաւորապէս 50.000 քանակով) և ասում էին, որ վաղը անձրեւ կը գայ, որովհետեւ 34 տարի առաջ այս պայմաններում անձրեւ եկաւ: Ասել, որ մօտեցումը շատ գիտական չէր, չի կարելի, քանզի պայմանները նոյնացնելու հարցում գիտնականները օգտագործում էին ճնշումը, օդի խոնաւութիւնը, ջերմութիւնը և այլ «գիտական» գործօններ: Այնուամենայնիւ, այդ գործօնները որոշակի նշանակութիւն չունէին, քանզի բացայայտւած չէր այդ գործօնների կապը եղանակի հետ: Ու պատահական չէ, որ այդ սկզբունքներով կատարւած կանխատեսումների մէջ կային, օրինակ, այսպիսիք:

1783 թւականին Իոսիֆ Երկրորդն Անգլիայի մասին գրում էր հետեւեալը, «Այդ մեծ տէրութիւնը, որը Ֆրանսիային պահում էր հաւասարակշռութեան մէջ, ապրեց յաւերժական անկում և կորցրեց իր ուժն ու ազդեցութիւնը, կամաւոր կերպով դասեց իրեն Շվեդիայի կամ Դանիայի մակարդակի վրայ և, հաւանաբար, շուտով կ'ենթարկւի Ռուսաստանին»: Թէ որքանո՛վ սխալ էր այդ կանխագուշակումը՝ ցոյց տւեց պատմութիւնը:

Յիշենք նաեւ Եոզեֆ ԴԷ-Մեստերի կանխագուշակումը, որը չէր հաւատում Հիւսիսային Ամերիկայի Հանրապետութեանը, մանաւանդ՝ Վաշինգտոն քաղաքին, որը կառուցւում էր որպէս նոր հանրապետութեան մայրաքաղաք, իսկ «եթէ դառնայ՝ չի կարող կոչւել Վաշինգտոն»: Այստեղ էլ մենք տեսնում ենք, որ ԴԷ-Մեստերի գուշակումը ամբողջովին չարդարացաւ:

Շատ աւելի իրական էր գուշակման երկրորդ սկզբունքը, որը յենւում էր իրական փաստերի վրայ և մարդկանց իրական ձգտումների վրայ:

Գերմանացի բանաստեղծ Շիլլերը, յենւելով մարդկանց իրական նկարագրի վրայ, ֆրանսիական յեղափոխութեան ճակատագիրը գուշակեց շատ աւելի ճիշտ, քան ֆրանսիական յեղափոխութեան հռչակաւոր գաղափարախօսներն ու քաղաքական գործիչները: Յենւելով այն փաստի վրայ, որ Ֆրանսիայի բարոյական մակարդակը շատ ցածր է, «Աւազակների» մէջ նա ցոյց տւեց, որ ֆրանսիական յեղափոխութեան անկումը անխուսափելի է, որ անխուսափելի է բռնակալի գալուստը և որ այդ բռնակալը իշխելու է Եւրոպայի մեծ մասի վրայ:

Ռուսաստանի բոլշեւիկեան յեղափոխութիւնից յետոյ, «Ժամանակակից Նոթագրութիւններ» հանդէսը հրատարակեց մի յօդւած, որտեղ ասւած էր.-

«Նոր իշխանութիւնն ամուր է: Եւ նա կարող է ամուր կանգնած մնալ, այնքան ժամանակ, որքան որ կարող է կանգուն մնալ երեք ոտ ունեցող աթոռը, ե-

թէ նրա վրայ ոչ ոք չնստի։ Գուցէ իշխանութիւնն այնքան լաւը չէ ժողովրդի համար, որքան որ լաւն է դարձել ժողովուրդն իշխանութեան համար»։

Այստեղից էլ սկսենք մեր կանխագուշակումները։

Հայաստանում մնացել են մարդիկ, ովքեր փախչելու ո՛չ տեղ ունեն, ոչ էլ հնարաւորութիւն։ Այս պայմաններում հասարակական ընթացքները կանխատեսելու համար անհրաժեշտ է պարզել, թէ ինչպիսի՛ փոխ-յարաբերութեան մէջ են գտնուում հասարակական շահերը և գաղափարները։

Բոլոր մարդիկ և հասարակական խմբերն իրենց գործունէութեան և վարքագծի մէջ ղեկավարուում են շահերով։ Բայց ճիշտ այնպէս, ինչպէս մենք մեր մերկութիւնը թաքցնում ենք հագուստով, ճիշտ այդպէս էլ մարդկանց մեծամասնութիւնը, ամաչելով սեփական շահերից, թաքցնում են այդ շահերը գեղեցիկ գաղափարների և հաւաքական նպատակների տակ։ Սակայն շահը այն միակ ուժն է և այն զսպանակը, որը մեր շահերով շարժելուց յետոյ աշխատեցնում է մեր կամքը և որոշում է մեր վարքագիծն ու մարդկային նկարագիրը։

Ինչ վերաբերում է գաղափարներին, տեսակէտներին, համոզմունքներին, ապագայի մասին երազներին, ապա այդ ամէնը ծնւում է ոչ մեր շահերի ու կարիքների ոլորտում, այլ տրամաբանութեան մակերեսի վրայ։ Գաղափարներն ուղղուած են անձից դէպի դուրս, դէպի ուրիշ անձ, ժողովուրդ, ազգ, հայրենիք, մարդկութիւն։

Շահը մեծամասնութեամբ կրում է նիւթական բնոյթ, սակայն հնարաւոր են նաեւ հոգեկան շահեր, երբ գաղափարը դադարում է տեսական կարծիք լինելուց և դառնում է մարդու վարքագծի աղբիւր և նրա նկարագրի մաս է կազմում։ Ճիշտ այս ոլորտում, որտեղ համընկնում են շահի և գաղափարի թելադրանքները, տեղի է ունենում անձի կատարելագործութիւնը։ Շահը չի ճնշում նրա գաղափարական սկզբունքների վրայ, իսկ գաղափարական սկզբունքները չեն խլում նրանից անհատական շահերի պաշտպանութեան իրաւունքը։

Բացառութիւն են կազմում հերոսները, որոնք անհատական շահեր չունեն, կամ՝ աւելի ճիշտ՝ այդ շահերը ամբողջովին ենթարկւում են գաղափարներին ու հաւաքական նպատակներին։ Բացառութիւն են կազմում նաեւ իրենց անհատական շահերով տարւած անձնաւորութիւնները, որոնք այդ շահերը պաշտպանելու հարցում որեւէ գաղափարական զսպանակ չունեն և կարող են, օրինակ, հարստութիւն ձեռք բերելու համար գողանալ, կաշառք վերցնել ու տալ, դաւաճանել հայրենիքին, խախտել երկրի օրէնքները և Սահմանադրութիւնը, խաբել և այլն։

Հասարակութիւնը չի կարող ապրել ոչ գաղափարապաշտ հերոսներով և ոչ էլ բոլոր գաղափարական սկզբունքներից հրաժարւած տականքներով։ Հա-

սարակական մարդը, քաղաքացին իր մէջ կրում է շահերի և գաղափարների միջեւ հաւասարակշռութիւն։

Հայաստանում այդ հաւասարակշռութիւնը խախտուած է յօգուտ անհատական շահերի և դրա համար շատ դժւար է մեր երկրում կատարել քաղաքական կանխատեսում։

Այստեղ մենք ստիպւած ենք վերյիշել, որ հասարակութիւնը բաժանւած է երկու հիմնական դասակարգերի՝ աշխատողների և իշխանաւորների։ Աշխատողները, որոնք ուրիշի վրայ իշխելու ձգտում չունեն, այլ պաշտպանում են սեփական շահերը, երբեք չեն թաքցնում այդ շահերը և ազնւօրէն ու բացայայտօրէն պաշտպանում են դրանք։ Ի տարբերութիւն աշխատաւորների, իշխանաւորները միշտ թաքցնում են իրենց սեփական շահերը՝ առաջ քաշելով մի բարձր գաղափար։ Իշխանաւորը կարող է մէկ կուսակցութիւնից անցնել միւսը, ձախից թեքւել աջ, առաջադիմականներից անցնել յետադիմականների շարքերը և այլն։ Դիտարկելով այդ բանակը, համոզւում ես, որ քաղաքական համոզմունքները և կարծիքները դիմակներ են, որոնք կարելի է փոխել ամէն ամիս և նոյնիսկ ամէն օր։ Մինչդեռ աշխատաւորն ունի իր սեփական դէմքը, որն անկարելի է փոխել։ Հատ ու կենտ օրինակներ կարելի է բերել, երբ ճարտարապետը որոշում է յաջորդ ամսում դառնալ բժիշկ, իսկ մէկ ամիս անց դառնում է երաժիշտ։ Աշխատաւորի կայուն դէմքով և նրա կայուն շահերով է ստեղծւում երկրի կայունութիւնը, իսկ քաղաքական գործիչների փոփոխական դիմակը ստիպւած է յարմարւել աշխատաւորի շահերին։ Հայաստանում ամէն ինչ փոփոխւել է։ Աշխատաւորը կորցրել է իր դէմքը և շահերը, կորցրել է պաշտպաններին, ինչը նշանակում է, որ քաղաքական դիմակահանդէսում իշխանաւորները փոխում են իրենց դիմակները ոչ թէ յարմարւելով աշխատաւորի շահերին, այլ ելնելով սեփական շահերից։

Ահա թէ ինչո՛ւ Հայաստանում որեւէ քաղաքական կանխագուշակում անելն անկարելի է։ Այնքան ժամանակ, քանի դեռ պաշտպանւած չէ աշխատաւորը, քանի դեռ գործատէրը իրեն իրաւունք է վերապահում յայտարարելու, թէ՝ ով չի ուզում համաձայնւել իմ պայմանների հետ, թող ազատւի աշխատանքից, այդքան ժամանակ որեւէ բան նախատեսելու բոլոր փորձերը անցնելու են ապարդիւն։

Փորձենք վերլուծութեան ենթարկել միայն մէկ երեւոյթ, որը համարւում է Հայաստանում անմխիթար վիճակ ստեղծելու գլխաւոր պատճառն ու գլխաւոր չարիքը, որի դէմ անհրաժեշտ է պայքարել։ Այդ չարիքը կաշառակերութիւնն է։ Կաշառք տալը, կաշառք վերցնելը, կաշառք տալու և վերցնելու միջնորդութիւնը համարւում են յանցագործութիւն։ Եւ եթէ այդ յանցագործութիւնը

Հայաստանում համատարած բնոյթ է կրում, դա միայն նշանակում է, որ երկրում բացակայում են յանցագործութիւնների դէմ պայքարելու մարմինները։ Եւ որ կաշառակերութեան մէջ շահագրգռուած են բոլոր իշխանաւորները։ Այս պնդումը կարող է վիրաւորական թւալ նրանց համար, ովքեր ունեն իշխանաւորի հանգամանք, բայց կաշառք չեն վերցնում։

Իսկ կա՞ն այդպիսիները, հնարաւո՞ր է մեր երկրում նման իշխանաւորների գոյութիւնը։

Կարծում եմ ո՛չ, առնւազն հետեւեալ պատճառներով։

1.- Կաշառակերութիւնը կրում է անհատական, բայց ոչ հասարակական բնոյթ։ Այսինքն՝ կաշառքը տրւում և վերցնում է ոչ թէ հաւաքական, ազգային շահերից ելնելով, այլ սեփական գրպանը լցնելու համար։ Նման կաշառքի դէմն առնելը պահանջում է ողջ հասարակութեան ճիգերը, գոնէ այն հատւածի, որը կաշառք չի տալիս ու չի վերցնում։ Եթէ կաշառքը գործում է հաւաքական շահերի ոլորտում, այն կրում է բոլորովին այլ բնոյթ և յաճախ նրա հետ կապւած յանցագործութիւնը քննարկւում է քաղաքական նպատակների ոլորտում։ Եթէ, օրինակ, Ալիեւին կաշառք վճարելու գնով յաջողւի Արցախը կցել Հայաստանին, ապա չեմ կարծում, որ հայ ժողովուրդը մեծ դժգոհութիւն յայտնի։

2.- Կաշառքի ճանապարհով կատարւում են բոլոր վճարումները, որոնք օրինականացւած են քաղաքակիրթ երկրներում։ Մաքսային տուրքը, տուգանքները, տեղեկանքը, թոյլտւութիւն ստանալը, գրանցումը և բոլոր հասարակական ծառայութիւնները արտասահմանում կատարւում են համապատասխան վճարումներով։ Մեր երկրում նոյնպէս կատարւում են վճարումները միայն այն տարբերութեամբ, որ այնտեղ այդ վճարումները մտնում են պետութեան, իսկ այստեղ՝ պաշտօնեաների գրպանները։ Ուրեմն, այդ ո՞ր պաշտօնեան է, որ կամաւոր կը հրաժարւի իր եկամուտի մեծ մասից։

3.- Պաշտօնեայի կողմից վերցւող կաշառքը ստորադասական աստիճաններով բարձրանում է ներքեւից մինչեւ վերեւ, և եթէ այդ ճանապարհին որեւէ աստիճան չվերցնի ներքեւից եկող կարգը ու չփոխանցի վերեւ՝ կաշառքի երթեւեկութիւնը կը խափանւի և մեղաւորը, իշխանաւորների միասնական ճիգերով, անմիջապէս կը պատժւի։

4.- Արտասահմանեան ընկերութիւնները և պետութիւնները վճարում են մեր երկրի իշխանաւորներին այս կամ այն տնտեսական, հետախուզական և քաղաքական ծրագրերն իրականացնելու համար։

Այդ կաշառքների բերումով էր, որ Գորբաչովը փլուզեց Խորհրդային Միութիւնը, Ելցինը արգելեց Կոմկուսը, Լեւոն Տէր-Պետրոսեանը սկսեց հալածել Հ.Յ.Դաշնակցութեանը, ոտնահարել ազգային արժէքները։

Գոնէ սկզբունքով համաձայնենք այն իրողութեան հետ, որ իշխանութիւնների ճամբով անկարելի է պայքարել իշխանութեան դէմ, քանզի կաշառք վերցնող իշխանաւորները շահագրգռուած չեն կաշառակերութեանը վերջ տալու մէջ: Սա նշանակում է, որ կաշառակերութեան դէմ պայքարը պէտք է իրենց ձեռքը վերցնեն կաշառակերութեան ոլորտից դուրս մնացած ժողովրդի լայն զանգուածները, որոնք կաշառք տալու և վերցնելու հնարաւորութիւն չունեն: Սրանք են մեր աշխատաւորները, ծառայողները, գիւղացիները, մտաւորականները, այսինքն՝ նրանք, ովքեր միայն տուժում են կաշառակերութեան մթնոլորտից:

Ինչպէ՞ս կազմակերպել այդ տուժածներին և նրանց պայքարի մղել այն գլխաւոր չարիքի դէմ, որն այլանդակում է մեր ժողովրդի նկարագիրը, անիշխանութիւն է ստեղծում երկրում և ոտնակոխ է անում հասարակական արդարութեան բոլոր սկզբունքները:

Հասարակական արդարութեան համար մղտող պայքարը չի կարող սահմանափակուել ազնիւների վարքագծով, այսինքն՝ բաւական չէ, որ ազնիւ մարդը կաշառք չտայ ու չվերցնի, անհրաժեշտ է, որ նա պայքարի կաշառք վերցնողների դէմ:

Ժամանակին Ա. Սոլժենիցինը գրեց իր հռչակաւոր «Ապրել առանց ստի» յօդուածը, որտեղ արտայայտում էր այն միտքը, թէ խորհրդային իշխանութեան դէմ կարելի է պայքարել՝ հրաժարուելով կեղծ վարքագծից: **«Մի՛ ծափահարէք, երբ առաջնորդները բեմ են բարձրանում,-** գրում էր նա,- **մի՛ տուէք կեղծ ցուցմունքներ, մի՛ կառուցէք Ստալինի յուշարձանները և մի՛ կոչէք առաջնորդների անուններով քաղաքի փողոցները»**:

Սոլժենիցինը համարում էր, որ այդ դէպքում կը տապալուի խորհրդային իշխանութիւնը:

Բայց ինչպէ՞ս չծափահարել ու չստել, երբ այդ ստի համար վճարում են, իսկ ճշմարտութեան համար հալածում ու բանտարկում:

Ո՛չ, սեփական արդար վարքագծով անկարելի է պայքարել անարդարութեան դէմ: Անհրաժեշտ է կազմակերպել այդ պայքարը անկախ արհմիութիւնների, իրաւապաշտպան և այլ հասարակական կազմակերպութիւնների ճամբով: Անհրաժեշտ է ոտքի հանել անարդարութիւնից տառապող մեր ժողովրդին, բայց ոչ թէ ապստամբութեան, այլ հասարակական կազմակերպութիւնների ստեղծման և նրանց աշխուժացնելու ճամբով:

Այս աշխատանքը պահանջում է նիւթական միջոցներ, վճարովի մասնագէտներ և գործիչներ, միջազգային կապեր և այլն:

Եթէ այս գործունէութիւնը իր վրայ չվերցնի Հ.Յ.Դաշնակցութիւն կուսակցութիւնը, ապա որեւէ այլ կազմակերպութիւն ու կուսակցութիւն այդ բանը չի անի, իսկ Հայաստանի իշխանութիւններն առայժմ կլանուած են իրենց դիրքերը թէ՛ երկրի ներսում և թէ դրսում ամրապնդելու ճիգերով՝ մոռացած ազգի հաւաքական շահերը պաշտպանելու իրենց գլխաւոր առաքելութիւնը, հայ ժողովուրդը իսկապէս անտէր կը մնայ և նրան տիրութիւն կ'անեն, ինչպէս արդէն անում են օտարները՝ ելնելով իրենց սեփական շահերից։

2000

ԳԻՏԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Դոկտ. Է. Յովհաննիսեան

Վերջին ժամանակներս գիտնականները մեծ ուշադրութիւն են դարձնում մի նոր գիտութեան զարգացմանը, այսպէս կոչուած գիտաբանութեանը, որը համարում են գիտութիւնների գիտութիւն։ Այդ գիտութիւնը, որը զբաղւում է գիտութեան մեթոդաբանական հարցերով, որոշակի տեղ է գրաւում նաեւ Խորհրդային Միութիւնում։

Միաժամանակ յայտնի է, որ Խ. Միութիւնում միակ գիտական մեթոդը ճանաչւում է մարքս-լենինեան գաղափարախօսութիւնը։

Այդ ըմբռնումներով լի է խորհրդային փիլիսոփայական գրականութիւնը, իսկ Լեհաստանի գիտնականների երկրորդ **կոնգրես**ի ժամանակ, որը տեղի ունեցաւ Վարշաւայում Յուլիս ամսին, Էդուարդ Գերեկը ուղղակի յայտարարեց.

«Մարքսիզմ-լենինիզմը, դա մի գիտութիւն է, որը հանդիսանում է **ունիվերսալ** և պարտադիր մեթոդաբանութիւն բոլոր գիտութիւնների համար»։

Երեւանի **«Լենինեան ուղիով»** ամսագրի 6րդ յունիսեան համարում հրատարակւած է Խ. Միութեան ակադեմիկոս Ալեքսանդրովի «Գիտնականի կոչումը» անունը կրող յօդուածը։ Այդ յօդուածում ականաւոր մաթեմատիկոսը փորձում է բացայայտել **գիտնական** հասկացութեան բովանդակութիւնը։

Նա, արդարեւ, համարում է, որ գիտնականի հիմնական պարտականութիւնը ճշմարտութիւնը ճանաչելու մէջ է կայանում։

Ճանաչել ճշմարտութիւնը եւ մատուցել այն մատաղ սերնդին, ըստ Ալեքսանդրովի, գիտնականի հիմնական անելիքն է։

Ալեքսանդրովը շատ ճիշտ նկատում է, որ իւրաքանչիւր մարդու համար անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, ուր նա հնարաւորութիւն կ'ունենայ օգտւելու հոգեւոր բարձրագոյն արժէքներից, որոնցից մէկը իմացութիւնն է։

Եւ այդ պայմանները ստեղծելու համար,- ասում է Ալեքսանդրովը,- անհրաժեշտ են **սոցիալ**ական վերափոխումներ։

Սակայն Ալեքսանդրովը այդ անհրաժեշտ վերափոխումները տեսնում է «կոմունիստական հասարակարգի իդէալների կենսագործման պայմաններում»։ Իսկ ինչպիսի՞ք են այդ պայմանները։ Հէնց խորհրդային գիտնականն է, որ գտնւում է այն ոչ-բնական պայմաններում, որտեղ գիտական մեթոդաբանութիւնը գտնւում է գաղափարական սահմանափակումների մէջ, որտեղ գա-

դափարախօսութիւնը թելադրում է ճշգրիտ գիտութիւնների հետազօտական ուղիները։

Գիտաբանութեան հիմնադիր Ջոն Բեռնալը առաջինը օգտագործեց «գիտական **ստրատեգիա» տերմին**ը, հասկանալով դրա տակ գիտնականի բոլոր այն գործողութիւնները, որոնք անհրաժեշտ են տարբեր օրինաչափութիւնները բացայայտելու ժամանակ։ Բեռնալը համարում էր, որ բնութիւնը գիտնականի համար հանդիսանում է մի թշնամի, որը թաքցնում է իր գաղտնիքները։ Եւ բնութեան հետ այդ պայքարում բոլոր ուղիները արդարացուած են, նրանց համար չի կարող լինել ոչ մի սահմանափակում։

Այդ պարզ միտքը ապացուցելու համար, կարելի է դիմել մարդկութեան դարաւոր պատմական փորձին։ Այդ փորձը գալիս է ապացուցելու, որ մարդկութեան փիլիսոփայական միտքը աւելի կայուն և պահպանողական է, քան բնական-**տեխնիկ**ական գիտութիւնների ասպարէզում, որտեղ այդ նոյն միտքը ապրում է արագ զարգացում։

Արիստոտելին և Պղատոնին մեր այսօրւայ աշխարհը, հրթիռներով, հաշւիչ մեքենաներով, միջուկային զէնքերով, հրաշք պէտք է թւար, բայց նրանց քաղաքական և փիլիսոփայական մտքին մարդկութեանը գրեթէ ոչինչ չյաջողուեց աւելացնել։ Նրանց յայտնի էին և՛ միապետութիւնը, և՛ **դեմոկրատիան**, և՛ **անարխիզմ**ը և նոյնիսկ դասակարգային պայքարը։

Իսկ արդէն մեր ժամանակներում մենք իտալական ֆաշիստներից լսեցինք, որ նրանք կառուցում են «պղատոնեան պետութիւն»։ Եւ դա հասկանալի է, քանզի փիլիսոփայութեան ուսումնասիրութեան առարկան՝ մարդը և աշխարհակառոյցը գրեթէ չեն ենթարկւել փոփոխութեան, ուստի չէին կարող կրել լուրջ փոփոխութիւններ, և՛ փիլիսոփայական ըմբռնումները։ Եւ եթէ այդ ըմբռնումները որեւէ ժամանակ զսպեցին գիտութեան զարգացումը, պարտադրեցին նրան զարգանալ նախօրօք որոշուած ուղղութիւններով, արդեօք կարո՞ղ էինք մենք այսօր պարծենալ հին յոյների առաջ մեր գիտա-**տեխնիկ**ական նւաճումներով։ Արդեօ՞ք այդ բնագաւառում մենք չէինք լինի նրանց համեմատ նոյնպէս խղճուկ, ինչպիսինն ենք գաղափարական ասպարէզում։

Գիտութիւնը ընդհանրապէս «պատճառ-հետեւանք» կապերի նկարագրութիւն է։ Այդ կապերի նկարագրման լաւագոյն լեզուն հանդիսանում է **մաթեմատիկան**, որին Կանտը անւանում էր գիտութիւնների թագուհի։ Այդ բանը ընդունում էր նոյնիսկ Մարքսը, որը, Լաֆարդի վկայութեամբ, ասել է, թէ «գիտութիւնը միայն այն դէպքում կը հասնի կատարելութեան, երբ նրան կը յաջողւի օգտւել **մաթեմատիկայից**»։

Այդ **մաթեմատիկան** էր, որ ներխուժեց փիլիսոփայութեան մէջ և անջատեց նրանից շատ ու շատ ճշգրիտ գիտութիւններ։ Փիլիսոփայութեանը յաջողւում է

պահել իր ոլորտում իմացութեան միայն այն բնագաւառները, որտեղ «պատճառ-հետեւանք» կապերը դեռ նկարագրւում են հասարակ մարդկային լեզւով և որտեղ դեռ ճանապարհ չի գտել **մաթեմատիկան**: Սակայն արդեօք իմացութեան բոլոր բնագաւառները հնարաւո՞ր է նկարագրել մաթեմատիկական լեզւով: Ծայրայեղ նիւթապաշտները այս հարցին տալիս են դրական պատասխան: Ես անձամբ համոզւած եմ, ճիշտ հակառակն է,- որ գոյութիւն ունի իմացութեան մի անսպառ բնագաւառ, որը անհնարին է նկարագրել քանակական միջոցներով: Այդ բնագաւառը կազմում է բուն փիլիսոփայութեան առարկան և դրանով նա մօտենում է կրօնական աշխարհահայեացքին:

Այդտեղ այսպէս կոչւած «դաժան» **մաթեմատիկան** մուտք չունի, այդտեղ նա ստիպւած է նահանջելու: Բայց այնտեղ, որտեղ **մաթեմատիկան** իշխում է, նա իշխում է առանց մրցակիցների: Ոչ մի տեսակի գաղափարախօսութիւն չի կարող խախտել **մաթեմատիկա**կան ճշմարտութիւնը:

Այսպիսով, ոչ թէ փիլիսոփայութիւնն է հանդիսանում բնական և ճշգրիտ գիտութիւնների ուղեցոյց, այլ, ընդհակառակը, ճշգրիտ գիտութիւնները, տարբեր բնական օրինաչափութիւններ բացայայտելով, ստիպում են փիլիսոփայութեանը ճշտել, վերանայել և հրաժարւել սխալ և հնացած ըմբռնումներից: Եթէ փիլիսոփան չունի այդ հրաժարւելու կամ վերանայելու արիութիւնը և եթէ նա գտնւում է իշխանութեան գլուխ, ապա նա, այսինքն փիլիսոփան սկսում է ճնշել իր համար ոչ-ցանկալի գիտնականին և ոչ-ցանկալի գիտութիւնը:

Այսպէս առաջանում է գիտութեան և գաղափարախօսութեան բախումը: Այդ բախման հետեւանքով էր, որ Խ. Միութիւնում երկար ժամանակ հալածւում էին այնպիսի գիտութիւններ, ինչպիսիք էին **«կւանտա**յին **մեխանիկա**ն», **«գենետիկան»**, **«բիոնիկան»**, **«կիբերնետիկա**ն», և այլն: Սակայն, ինչո՞ւմն է այդ հակասութիւնների էութիւնը: Ի՞նչպէս կարող են այդքան անկուսակցական գիտութիւններ հակադրւել մարքսիզմ-լենինիզմին:

Գիտութեան կողմից տարբեր բնագաւառների ուսումնասիրութիւնների համար չի կարող հիմք ծառայել փիլիսոփայութիւնը ընդհանրապէս, գաղափարախօսութիւնը մասնաւորապէս, իսկ քաղաքական գաղափարախօսութիւնը յատկապէս:

Երբ փիլիսոփայութիւնը փորձեր է անում կաշկանդել գիտութեան որոշ՝ բնագաւառները, տուժում է ոչ միայն բռնագրաւած գիտութիւնը, այլեւ ինքը՝ փիլիսոփայութիւնը, քանզի նա զրկւում է հնարաւորութիւնից՝ հարստանալ նորանոր գիտական յայտնագործութիւններով:

Սակայն որտե՞ղ են բախւում գիտութեան և գաղափարախօսութեան շահերը: Վերցնենք, օրինակ, **կւանտա**յին **մեխանիկա**ն, որը նիւթի կառուցւածքը ուսումնասիրելու հարցում հասել է ամենաչնչին, անտեսանելի մասնիկներին:

Այդ բնագաւառում Հէյզենբերգը հռչակեց մի սկզբունք, այսպէս կոչուած «դիտարկման սկզբունքը», որի համաձայն անհնարին է տեսնել և հետեւել որոշ մասնիկների վարքագծին, քանի որ այն գործիքները, որոնց միջոցով կատարւում է դիտարկումը, առաջացնում են փոփոխութիւններ հէնց դիտարկուող մարմնի մէջ: Եւ մենք դիտում ենք ոչ թէ իրականութիւնը, այլ գործիքի կողմից շեղուած իրականութեան պատկերը:

Հէյզենբերգը ապացուցեց, որ այդ երեւոյթը ոչ թէ գործիքի թերութիւնն է, ոչ թէ նրա անկատարութիւնը, այլ մասնիկի, այսինքն նիւթի յատկութիւնը: Այդ սկզբունքը տանում է ուղիղ դէպի **ագնոստիցիզմ**, որը չի վստահում մարդու զգայարաններին, համարելով, թէ իրականութիւնը ամենեւին էլ այնպէս չէ, ինչպէս որ ընկալում և պատկերացնում է մարդը:

Այս գաղափարը դուրս է գալիս ոչ միայն մարքսիզմի սահմաններից, այլեւ ըստ էութեան **մատերիալիստ**ական չէ: Պարզ է, որ մարքսիստական գաղափարախօսները պէտք է որ արշաւ յայտարարէին այդ սկզբունքի դէմ, իսկ դրա հետ միասին էլ՝ ամբողջ **կւանտա**յին **մեխանիկա**յի դէմ:

Կամ վերցնենք **«բիոնիկա»** կոչւող գիտութիւնը: Այդ գիտութիւնը ուսումնասիրում է կենդանիների բնական վարքագծի օրինաչափութիւնները և այդ օրինաչափութիւնները օգտագործում է արհեստական սարքաւորումներ պատրաստելու համար: Այդ գիտութիւնը լռութեամբ ընդունում է այն թեզը, թէ բնութիւնը գերկատարեալ է և **սինթեզ**ում է լաւագոյն ձեւով:

Եթէ այդ թեզը չի տանում դէպի Աստուծոյ գաղափարը, յամենայնդէպս, նա ոչնչով չի տարբերւում Սպինոզայի **«պանթէիզմ**ից»՝ բազմաստւածութիւնից և, ուրեմն, հակասում է մարքսիզմին, որի համար մարդը բնութիւնից սովորելու բան չունի, նա միայն պէտք է վերափոխի այն համաձայն իր կարիքների:

«Գենետիկան» ընկաւ մարքսիստների հարւածի տակ՝ իր ժառանգական ուսումնասիրութիւնների և ժառանգական քարոզների համար: **Գենետիկա**ն ապացուցեց, որ այսպէս կոչուած **քրոմոզոմ**ների կայուն դասաւորութիւնը և կառուցւածքը ապահովում է փոխանցումը ժառանգականութեան միջոցով՝ նոյնիսկ այնպիսի համամարդկային յատկութիւնների, ինչպիսք են, օրինակ, իշխելու, սեփականութեան, հարստութեան, սեռական բաւարարութեան կամ ազգային պատկանելիութեան ձգտումները:

Գենետիկան ապացուցեց, որ այդ մարդկային յատկութիւնները վերացնելու կամ վերափոխելու համար արտաքին պայմանների միջոցով, կը պահանջւի հազարամեակներ: Դրանով է բացատրւում այն փաստը, որ շատ հազարամեակներ գլորուեցին, իսկ մարդը, գրեթէ, չփոխեց իր մարդկային էութիւնը: Շեքսպիրի հերոսները ոչնչով չէին տարբերւում այսօրւայ մարդուց և այսօր էլ կարելի է գտնել Համլետներ, Մակբեթներ և Լիր Արքաներ:

Ընդունել ժառանգականութեան այդ մեծ նշանակութիւնը՝ մարքսիզմը, ի հարկէ, չէր կարող, քանզի նա ջանում էր արդէն մէկ սերունդ յետոյ ստեղծել նոր տեսակի մարդ,- ապազգային, բարի, գիտակից, ոչ ընտանեկան, ոչ կրօնական և այլն։

Ամենամեծ տուժը կրեց սակայն **կիբերնետիկա**ն, որը յայտարարուեց կեղծ գիտութիւն և ջնջուեց Խ. Միութեան գիտութիւնների ցուցակից։ Նրա հակասութիւնները քաղաքական գաղափարախօսութեան հետ ամենասուրն են, թէպէտեւ այդ սրութիւնը միայն հիմա է գտնում իր արտայայտութիւնը։ Իսկ հակասութիւնները սկսուեցին շատ անիմաստ ձեւով։

Ինչպէս ինձ պատմում էին այդ բնագաւառին տեղեակ մի քանի գիտնականներ, Ստալինին դուր չի եկել և պարզապէս զայրացրել է այն փաստը, որ Միացեալ Նահանգներում հաշուիչ մեքենաների միջոցով յաջողուել է կատարել թարգմանութիւններ մէկ լեզուից միւսը։ Ինչպէս ինձ պատմում էին, այդ ժամանակ Ստալինը գրում է իր հռչակաւոր աշխատութիւնը՝ «Մարքսիզմը և լեզուաբանական հարցերը», որտեղ ուզում էր ապացուցել, թէ լեզու կարող են ունենալ միայն մտածող էակները։

«Մեքենայի լեզու», կենդանու լեզու հասկացութիւնները, որոնք այսօր օգտագործում են դպրոցականները, այն ժամանակ հնչում էին տարօրինակ և անհասկանալի։ Եւ իբր թէ Ստալինը ասել է, «Չի կարող պատահել, որ մեքենան թարգմանի»։ Ի հարկէ, այն ժամանակ դա բաւական էր, որպէսզի նոյնիսկ ամենալուրջ գիտնականները **կիբերնետիկա**ն յայտարարէին կեղծ գիտութիւն։

Բայց աւելի լուրջ **հակասութիւններ** մարքսիզմի հետ առաջ քաշեց ինքը Վիները՝ **կիբերնետիկա**յի հիմնադիրը։ Նա ասաց, որ հաշուիչ մեքենաների հետ պէտք է վարուել զգոյշ, քանի որ նրանք պարունակում են իրենց մէջ աւելի շատ հնարաւորութիւններ, քան մենք նրանց տալիս ենք։

Նրա կարծիքով մէկ օր մեքենաները կարող են դուրս գալ ենթարկուածութիւնից և շահագործել մարդուն։ Շատերը այն ժամանակ ասում էին, որ ինչպէս կոմունիստական հասարակարգը կրկնում է բարձր մակարդակով նախնադարեան **ֆորմացիա**ն՝ կացութաձեւը, այնպէս էլ մի ինչ որ **ՄԵԽԱՆԻԶՄ** հասարակարգ կը կրկնի բարձր մակարդակով ստրկատիրական հասարակարգը։ Բայց այն ժամանակ ստրուկները կը լինեն մարդիկ, իսկ ստրկատէրերը՝ մեքենաները։

Պարզ է, որ թոյլատրել **պրոլետարիատ**ին դառնալ ստրուկ՝ մարքսիզմը չէր կարող և նա յայտարարեց, որ **կիբերնետիկա**ն **պրոլետարիատ**ը շահագործելու միջոց է։ Սակայն **կիբերնետիկա**յի իսկական հակասութիւնները քաղաքական գաղափարախօսութեան նկատմամբ ի յայտ եկան վերջին ժամանակներս։

Կիբերնետիկան, քաղաքական գաղափարախօսութեան հետ իր ունեցած հակասութիւններում, մտել է երկրորդ փուլը: Ինչպէս արդէն ես ասացի, **կիբերնետիկա**ն գիտութիւն է ղեկավարման մասին: Ղեկավարել՝ նշանակում է կազմակերպել որեւէ համակարգի համար նպատակասլաց շարժում: Այս սահմանումը վերաբերւում է բոլոր տեսակի համակարգերին, անկախ նրանց տնտեսական, հասարակական, **տեխնիկա**կան թէ կենսաբանական բնոյթից:

Վարել քաղաքականութիւն՝ նշանակում է տւեալ համակարգի նպատակասլաց շարժման համար ընտրել որոշակի վարքագիծ: Այսպիսով քաղաքականութիւնը ղեկավարման մի տարատեսակ է, ուստի պէտք է ենթարկւի նրա գլխաւոր օրինաչափութիւններին: Այստեղ է, որ **կիբերնետիկա**յի բնագաւառի գիտնականները բախւում են Խ. Միութեան քաղաքականութիւնը վարողների հետ: Այդ բախումը տեղի է ունենում ամէնուրեք, որտեղ իշխանաւորները խախտում են գիտական վերլուծութիւններից բխող օրինաչափութիւնները:

Կիբերնետիկան յստակ ապացուցել է, որ մեծ համակարգերը ղեկավարելու լաւագոյն ձեւը ապակենտրոնացած ղեկավարումն է, որտեղ գլխաւոր ղեկավարման նպատակը տրւում է մի քանի ենթանպատակների, ձեւակերպւում է ստորադասական կառուցւածք և ամէն մի ստորադասական մակարդակ ստանում է ազատութիւն՝ իր սեփական նպատակին հասնելու ճանապարհները ընտրելու համար:

Այդ դրոյթին հակառակ, խորհրդային իշխանաւորները իրականացնում են ահաւոր կերպով կենտրոնացւած ղեկավարում:

Հակասութիւնները առաջանում են ե՛ւ այն հարցում, թէ ո՛ր լծակների միջոցով կարելի է ստեղծել համակարգի նպատակասլաց շարժումը: Մէկ անգամ ես ունեցել եմ առիթ ասելու, որ պատմական փորձը և մարդու հոգեբանութեան ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ հասարակական վարքագիծ առաջացնելու լծակները բազմազան են, սակայն այս կամ այն մօտաւորութեամբ, բոլորը, վերջին հաշւով, կարելի է դասել չորս հիմնական խմբի մէջ.

Առաջինը՝ ստիպողական կամ բռնական լծակներ:

Երկրորդը՝ շահախնդրական կամ շուկայական լծակներ:

Երրորդը՝ հասարակական կարծիք կամ բնական հարկադրանքի լծակներ:

Չորրորդը՝ բարձր ինքնագիտակցութեան կամ կամաւոր զոհաբերութեան լծակներ:

Բոլոր այս լծակները վաղուց ի վեր յայտնի են մարդկութեանը: Բանակը, արդարադատութիւնը և այլ պատժիչ մարմինները կազմում են բռնական լծակները:

Կաշառք, կենցաղը բարելաւելու խոստումներ, վարձովի բանակ և այլ ձեւի վարձատրութիւններ՝ կազմում են շուկայական լծակներ:

Հասարակական կարծիքը, այսինքն երրորդը, նոյնպէս կարող է որոշակի վարքագծի աղբիւր ծառայել:

Իսկ բարձր ինքնագիտակցութիւնը, այսինքն չորրորդ լծակը, անկասկած ամենահզօր լծակներից մէկն է:

Հասարակագէտները, օգտագործելով **կիբերնետիկական** մեթոդները, ապացուցեցին, որ բոնական լծակների օգտագործումը ապահովում է համակարգի կարգապահութիւնը, բայց ահաւոր պատնէշ է հանդիսանում նրա ընդհանուր զարգացման համար: Այնուամենայնիւ, գրեթէ միայն այդ լծակներն են օգտագործում խորհրդային իշխանաւորները:

Կիբերնետիկայի մասնաճիւղերից մէկը համարւում է տեղեկատուութեան՝ **ինֆորմացիա**յի տեսութիւնը: Այդ տեսութիւնը առաջ քաշեց **«ինֆորմացիա**յի քանակ» հասկացութիւնը և որոշեց, թէ ինչ քանակի **ինֆորմացիա**ն է ընդունակ մշակելու ամէն մի սարքաւորում, ամէն մի հաշուիչ մեքենայ և նոյնիսկ ամէն մի մարդ:

Պարզուեց, որ այն ահագին **ինֆորմացիա**ն, որը անհրաժեշտ է մշակել, նախքան ղեկավար որոշումները ընդունելը անհնարին է կատարել մէկ մարդու կողմից:

Այդ հանգամանքը առաջացրեց խմբակային որոշումների անհրաժեշտութիւնը, **կոլեկտիւ** ղեկավարման անհրաժեշտութիւնը: Սակայն այստեղ էլ խորհրդային իշխանաւորները չեն ցանկանում հրաժարուել մենիշխանութիւնից:

Խ. Միութեան կեանքի բոլոր ասպարէզներում **դիրեկտոր**ները, վարիչները, նախագահները, քարտուղարները տւեալ բնագաւառի միակ տէրն ու տիրականն են, և նրանց որոշումները, անկախ տրամաբանութիւնից, պէտք է կատարւեն անվերապահօրէն:

Այդ իմաստով պէտք է հասկանալի լինի, թէ ինչու գիտական առաջարկները ղեկավարման բնագաւառում մի կողմ են նետւում իշխանաւորների կողմից, եթէ դրանք հակասում են ընդունւած սովորական ձեւերին: Եթէ հակասութիւնները անցնեն որոշ չափի սահմաններից, ապա մի կողմ կը նետւեն ոչ միայն առաջարկները, այլեւ գիտութիւնը ինքը:

Այդ է հիմնական պատճառը, որ ստալինեան դարաշրջանում բազմաթիւ գիտական ուղղութիւններ, եթէ կարելի է այսպէս արտայայտւել, գտնւում էին կալանքի տակ: Ստալինի մահից յետոյ շատերը նրանցից ստացան զարգացման համար ազատութիւն, բայց մինչեւ այսօր դեռ բոլոր գիտութիւնները չեն, որ արժանացել են այդ բախտին:

Մինչեւ այսօր հոգեբանութիւնը և ընդհանրապէս Ֆրոյդի ուսմունքը մեծ դժւարութիւններով է բացում իր ճամբան դէպի պաշտօնական ճանաչումը:

Տնտեսա-մաթեմատիկական **մեթոդ**ների որոշ ուղղություններ մինչեւ այսօր կրում են «բուրժուական **էկոնոմետրիկա**» կնիքը և չեն գտնում ճանաչում Խ. Միութիւնում: Հասարակագիտութիւնը, պատմութիւնը, աշխատանքի գիտական կազմակերպումը և մի քանի ուրիշ ուղղութիւններ կրում են այնքան ձեւական բնոյթ, որ չեն կարող դասւել իսկական գիտութիւնների շարքին:

Այսպիսով, գիտութիւնը և գաղափարախօսութիւնը պէտք է, որ համագործակցէին, լրացնելով միմեանց, սակայն, դժբախտաբար, այդ անհնարին է դառնում մի երկրում, որտեղ միակ գիտական մեթոդը ճանաչւում է մարքսիզմ- լենինիզմը, որը ոչ մի կապ չունի իսկական գիտական մեթոդաբանութեան հետ:

1973

ՀԱՅՐԵՐԻ ԵՒ ՈՐԴԻՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԱՅՍՏԵՂ ԵՒ ԱՅՆՏԵՂ

Է. Յովհաննիսեան

Երիտասարդութիւնը ազգի ապագան է: Սա վերաբերւում է բոլոր ազգերին և բոլոր ժամանակներին: Ոչ թէ նրա համար, որ երիտասարդութիւնը մէկ սերունդ յետոյ պէտք է վերցնի իր ձեռքը ազգի տնտեսական, բարոյական և քաղաքական ղեկը, այլ պարզապէս նրա համար, որ ամէն մի սերունդ ունի իր իդէալները, հաւատքը և յոյսը: Եւ, կախւած այն բանից, թէ որքանո՞վ են այդ երազները համապատասխանում պատմական զարգացմանը, որքանո՞վ տւեալ սերնդի երիտասարդութիւնը ընդունակ է արձագանգելու դարաշրջանի պահանջներին, կ'որոշւի թէ կարո՞ղ են արդեօք այսօրւայ որդիները, վաղը հայրեր դառնալով, յաջորդ սերնդին փոխանցել իրենց հոգեկան աշխարհը, աւելի ճիշտ՝ հոգեկան արժէքները:

Սերունդների հոգեկան ժառանգորդութիւնը՝ այ թէ ինչով է որոշւում ազգի ապագան, այ թէ ինչով է ստուգւում երազների և իդէալների կայունութիւնը: Եթէ երիտասարդութեան գաղափարական կեանքը եռանդուն է, եթէ երիտասարդութիւնը լի է խանդավառութեամբ, եթէ նա իր գաղափարների համար պատրաստ է կրակի մէջ նետւելու, ապա այդ ազգը ունի ապագայ և նա դառնում է իր ապագան կերտելու ճանապարհի վրայ:

Իսկ երբ երիտասարդութիւնը դառնում է «խելամիտ», այլ ոչ «խենթ», «տրամաբանող», այլ ոչ բռնկւող, եթէ նրա իդէալները չափաւոր են և տափակ, իսկ խռովութիւնը արտայայտւում է միայն **խուլիգան**ութեան և հակահասարակական երեւոյթների մէջ, դա նշանակում է, որ ազգի ստեղծագործական կարողութիւնները սպառւած են, շէնքի կառոյցը աւարտւած է, ապագայ չկայ, ազգը ունի միայն անցեալ՝ պատմութիւն: Այդպիսի ազգը կորցրել է ինքն իրեն նով զբաղւելու ընդունակութիւնը: Լաւագոյն դէպքում՝ նրանով զբաղւում են հնէաբանները:

Եթէ հայրերին յաջողւում է փոխանցել որդիներին իրենց գաղափարները և այդ գաղափարները չեն հակասում ստեղծւած կացութեանը, համընկնում են երիտասարդութեան ձգտումների և այն ամենի հետ, ինչը կոչւում է ազգային ինքնագիտակցութիւն, ապա ազգի ապագայի համար մտահոգւելու պատճառ չկայ: Ի հարկէ, որոշ հակասութիւններ հայրերի և որդիների միջեւ միշտ էլ գոյութիւն կ'ունենան, սաների աստիճանի միայն այն ժամանակ, երբ գաղափարական ասպարէզում ի յայտ են գալիս «հին» և «նոր», «առաջադէմ» և «յետամնաց» հակասութիւնները:

Ամէն մի ժողովուրդ իր պատմութեան ընթացքում ունեցել է այնպիսի մի վտանգաւոր ժամանակաշրջան, երբ առաջին անգամ հայրերի և որդիների միջեւ բացւել է անյաղթահարելի անդունդ: Օրինակ, Ռուսաստանի պատմութեան մէջ առաջին անգամ հայրերի և որդիների խնդիրը ծագեց Պետրոս Մեծի օրօք, երբ թագաւորը բռնի ոյժով սկսեց Ռուսաստանի եւրոպականացումը: Յիշեցնեմ, որ այդ ժամանակ ծերունիներին ստիպում էին սափրել իրենց մօրուքները, հրաժարւել ռուսական տարազներից, իսկ ֆրանսերէնով խօսելը դարձել էր առաջադիմութեան նշան և բարձր խաւերի պաշտօնական լեզուն: Հայրերը «հնի» կողմնակիցներ էին, իսկ որդիները «նորի»:

Բայց մօրուքների և ռուսական տարազների հետ միասին վերացաւ նաեւ յարգանքը դէպի հայրերը՝ հայրերը հնացել էին: Դրա հետ միասին հնացել էր ամբողջ ռուսական պատմութիւնը, որը «առաջադէմ» երիտասարդութեան աչքին թւում էր ծիծաղելի, գռեհիկ և նոյնիսկ ամօթալի: Հակառակը՝ եւրոպականը հիացնում էր: Եւ հէնց այդ հիացմունքը նետեց ռուս երիտասարդութիւնը Եւրոպայի գիրկը, որտեղից էլ նա դուրս բերեց «մարքսիստական ինտերնացիոնալիզմը»:

Եւ եթէ պատմական իրադարձութիւնների նկատմամբ ընդունելի է այս կամ այն չարիքի մեղքը բարդել պատմական անձերի վրայ, ապա Ռուսաստանի ներկայ վիճակի համար Պետրոս Մեծի պատասխանատուութիւնը շատ աւելի մեծ է, քան Լենինինը:

Ես կարծում եմ, որ մեր ժողովրդի մէջ հայրերի և որդիների խնդիրը սրւեց ռուսական յեղափոխութեան փոթորիկներում: Մինչեւ 1917 թւականը հայ հայրերը և որդիները ապրում էին միասնական համերաշխ կեանքով: Եթէ պայքարում էին՝ պայքարում էին միասին: Եթէ պարտւում էին՝ պարտւում էին միասին: Բոլոր հոգեկան արժէքները ընդհանուր էին և դարեր շարունակ որդիները առանց ցնցումների դառնում էին հայրեր, այն բնական ճանապարհով, որը կոչւում է ժառանգորդութիւն և որի շնորհիւ ապահովւում էր դարերի կապը:

1917 թւին աշխարհը ցնցւեց: Ճիշտ է, յեղափոխական խլրտումները սկսւել էին դրանից էլ առաջ, սակայն մեր ժողովուրդը զբաղւած էր իր ազգը փրկելով և **ինտերնացիոնալիստ**ական շեփորները դեռ չէին հասնում նրան: Թէպէտ կային արդէն Նալբանդեաններ, բայց դեռ չկային Շահումեաններ: Յեղափոխական իրադարձութիւններից հայ ժողովուրդը դուրս բերեց «նորի» և «հնի» գաղափարները, բայց դեռ չէին բաժանւել որդիները հայրերից: Երկուսն էլ, այս կամ այն ձեւով, ընդունում էին նորը:

Սակայն այդ նորը եղաւ այնքան խաբուսիկ, որ բաժանւեցին իրե՛նք հայրերը: Բաժանւեցին գաղափարապէս, իսկ երբ խեղդւեց փոքրիկ Հայաստանը,

բաժանուեցին նաեւ ֆիզիկապէս: Խորհրդային Միութեան սահմանը բաժանեց մեր հայրերին երկու մասի: Անցաւ կէս դար:

Ի՞նչ ժառանգ թողեցին իրենց որդիներին երկու կողմերի հայրերը: Որո՞նց գաղափարները եղան որդիների համար ընդունելի: Որտե՞ղ սրեցին հակասութիւնները սերունդների միջեւ: Եւ, վերջապէս, գոյութիւն ունի՞ արդեօք այսօր մեր ժողովրդի համար հայրերի և որդիների խնդիր: Քաջ գիտակցելով, որ այս հարցերի վերլուծութիւնը պահանջում է ուսումնասիրութիւններ, գիտելիքներ և տեղ աւելի, քան ես ունեմ իմ տրամադրութեան տակ, ես անդրադառնում եմ այդ հարցերին պարզօրէն ու միայն ուշադրութիւն գրաւելու համար, թողնելով վերջնական պատասխաններ տալը աւելի մասնագէտ գրողներին:

Սկսեմ նրանից, թէ ինչպիսի գաղափարներ որդեգրեցին (այլ ոչ ժառանգեցին իրենց հայրերից) սահմանի այն կողմում (այսինքն Խորհրդային Հայաստանում) մեր հայրերը և ի՞նչ էին նրանք պատրաստւում փոխանցել երիտասարդութեանը: Այդ գաղափարների մասին գրւած են ծանրակշիռ հատորներ, ես ուզում եմ նշել միայն նրանք, որոնք հայութեան համար առաջադիմական երանգաւորումներ ստացած նորութիւններ էին:

Առաջինը և, իմ կարծիքով, ամենառողբերգական «առաջադիմութիւն»ը՝ կրօնից հրաժարւելն էր: Առանց Աստծու՝ գոյութիւն չունի բարոյականութիւն: Ոչ մի ուրիշ գաղափարով չի կարելի հիմնաւորել բարոյականութիւնը: Հասարակութիւն, ընդհանուր բարեկեցութիւն, պետութիւն, այս ամէնը չափից աւելի մարդկային են, որպէսզի հնարաւոր լինի նրանց միջոցով և նրանց անունից պահանջել զոհաբերութիւններ: **Մատերիալիստ**ական և **աթէիստ**ական գաղափարախօսութիւնները ի վիճակի չեն պատասխանելու նոյնիսկ հետեւեալ պարզ **պրիմիտիւ** հարցին.- «Ինչո՞ւ ԵՍ, ունենալով միայն մէկ և կարճատեւ կեանք երկրի վրայ, պէտք է զոհաբերեմ ինձ ուրիշների և դեռ չծնւած սերունդների համար»: «Իմ կեանքը ինձ համար ամենաբարձր արժէքն է և ուրեմն դրախտ կարող է լինել միայն այս աշխարհում: Այդ դրախտը **սոցիալիզմ**ն է, որտեղ երջանկութիւնը որոշւում է պարզ թւաբանական հաշւարկով: Մեծամասնութեան երջանկութիւնը պահանջում է ոչնչացնել պատնէշ հանդիսացող փոքրամասնութեանը: Մարդը ոչնչութիւն է, բազմութիւնը՝ ամէն ինչ»: Մօտաւորապէս այսպիսի գաղափարներ պէտք է փոխանցէին երիտասարդութեանը մեր հայրերը:

Երկրորդ ողբերգութիւնը կայանում էր նրանում, որ երջանկութեան չափանիշները ահաւոր կերպով տնտեսականացւեցին: Արտադրութիւնը կլանեց մարդուն, քայքայելով նրա ոգին: Բայց սա էլ պէտք է փոխանցւէր որդիներին:

Եւ, վերջապէս, երրորդ դժբախտութիւնը կայանում էր նրանում, որ բնական ազգային ձգտումները դատապարտւեցին որպէս յետադիմական և ազ-

գայնականութեանը հակադրուեց «առաջադէմ» միջազգայնականութիւնը։ «Յետամնաց» գերիշխան հայրենիքի գաղափարը փոխարինուեց «առաջադէմ եղբայրական ընտանիքով»։ Այս բոլորը պէտք է հայրերից անցնէր որդիներին։

Եւ թէպէտ դեռ պայքարում էին իսկական հայրերը այս գաղափարների դէմ, որդիները, ժամանակից շուտ հայրեր դարձած, արդէն վերցրել էին իրենց ձեռքը քարոզչական մեքենայի ղեկը և քանդում էին հին աշխարհը, որպէսզի նրա փլատակների վրայ կառուցէին իրենց **ՆՈՐԸ**։ Թէ ինչպէս այդ գաղափարները սերնդից սերունդ փոխանցուեցին այսօրուայ երիտասարդութեանը, կարելի է տեսնել միայն պատմական իրադարձութիւնների լոյսի տակ։ Դիմենք այդ իրադարձութիւններին։

Չնայած նրան, որ Հոկտեմբերեան յեղափոխութիւնը կատարուեց միջազգայնական լոզունգների տակ և ղեկավարների զգալի մասը ռուսներ չէին, չնայած նրան, որ յեղափոխութիւնը մուտք գործեց Ռուսաստան Պետրոս Մեծի կողմից բացուած պատուհանից, չնայած դրան, յեղափոխութիւնը շատ շուտ ներկուեց ազգային գոյնով։ Ստալինը անմիջապէս փակեց Պետրոսի պատուհանը, նկատելով Արեւմուտքը ռուսական կայսրութեան ամենագլխաւոր թշնամին։ Յեղափոխութիւնը ստեղծեց նոր մտաւորականութիւն, նոր պաշտօնեաներ, նոր իշխանաւորներ։ Նրանք ասպարէզ էին դուրս եկել բանւորական, գիւղացիական կամ քաղքենիական շրջանակներից։ Այդ մարդկանց շարքերում գրեթէ չկային անձեր, որոնց հայրերը յեղափոխութիւնից առաջ պատկանէին մտաւորականութեան միջին խաւերին։ Այդ պատճառով նրանք գրեթէ ոչինչ չէին ժառանգել հայրերից գաղափարական իմաստով։

Դրանում էր նորերի ե՛ւ ոյժը, ե՛ւ թուլութիւնը։ Ոյժը կայանում էր նրանում, որ նրանք կտրուած էին սեփական ժողովրդից և ուրեմն չէին գերագնահատում նրա կարողութիւնները։ Իսկ թուլութիւնը առաջանում էր նրանից, որ նրանք կտրուած էին ազգային ժառանգական մշակոյթից։ Նրանցից շատերը, մանաւանդ 20ական թւականներին, անկեղծօրէն հաւատում էին նոր կոմունիստական նոր աւետարանին։ Թւում էր, թէ այդ կտակարանի պատգամները իրականանալու մօտ են, քանզի տնտեսական յարաբերութիւնների ասպարէզում կատարուած էր յեղաշրջում, իսկ դա արդէն, ըստ մարքսիզմի, պէտք է վերանորոգէր ամբողջ հոգեկան վերնակառոյցը։

Սակայն բանւորագիւղացիական իշխանութիւնը հաստատուեց միայն թղթի վրայ։ Իրականում իշխանութեան գլուխ անցած բոլշեւիկեան կուսակցութիւնը ստեղծեց արտօնութիւններով օժտուած նոր վերնախաւ։ Այդ կացութիւնը երիտասարդութեան մէջ առաջացրեց բողոք։

Հոկտեմբերեան յեղափոխութիւնը, խոստացած հաւասարութիւնների, արդարութիւնների և դրախտի փոխարէն, ի յայտ բերեց անձնագրերից զրկուած

գիւղացիութեան կոլտնտեսային ստրկութիւն և բանւորական 12 ժամեայ աշխատանք՝ «յանուն միջազգային յեղափոխութեան»: Ստեղծուեց այլախոհների մի տեսակ շարժում: Եսենինը, Կլիւեւը՝ Ռուսաստանում, Չարենցը, Բակունցը՝ Հայաստանում, թէպէտ չէին բացայայտ արտայայտում իրենց հիասթափութիւնը, բայց նրանց տրամադրութիւնները վտանգաւոր նկատուեցին իշխանաւորների կողմից: Քաղաքական ասպարէզում հիասթափութիւնը իր արտայայտութիւնը գտաւ տրոցկիստական ընդդիմութեան մէջ: Իսկ Հայաստանում Աղասի Խանջեանը իր կողմնակիցների հետ միասին փորձում է կոմունիզմը ծառայեցնել ազգային շահերին:

Հիասթափութեան ամենավառ արտայայտութիւնը կարելի է համարել Փետրուարեան ապստամբութիւնը Հայաստանում և Կրոնշտատի խռովութիւնը Ռուսաստանում: Փետրուարեան ապստամբութեան մասին խօսւել է շատ, բայց Կրոնշտադի խռովութեան մասին մինչեւ այսօր շատերին ոչինչ յայտնի չէ: Մինչդեռ այդ խռովութիւնը առաջացաւ հէնց այն յեղափոխական շրջանակներում, որոնք ոչ միայն համակրում էին յեղափոխութեանը, այլեւ իրենց արիւնով կերտել էին այն:

Ի զուր են խորհրդային պատմաբանները փորձում Կրոնշտադի ապստամբութիւնը վերագրել «բուրժուական տարրերին», «սպիտակգւարդեականներին», «էսէսներին» և այլն: Փաստերը համոզեցուցիչ կերպով բացայայտում են այդ սուտը: Բաւական է նշել, որ Կրոնշտադի ապստամբութեանը **ակտիւ** կերպով մասնակցում էր բոլշեւիկեան կուսակցութեան անդամների 30 տոկոսը, իրեն չէզոք յայտարարեց 40ը և միայն մնացած 30 տոկոսը ապստամբութեան դէմ դուրս եկաւ: Ապստամբութեան ղեկավարները յեղկոմի հին անդամներն էին: Պահպանւել են հազարաւոր գնդակահարւած կուսակցականների անուններ: Այն ժամանակւայ (Կրոնշտադի) թերթերը լեցուն են կուսակցութիւնից հրաժարւելու բաց դիմումներով:

Պէտք է ասել, որ Կրոնշտադի ապստամբութիւնը միակը չէր: Այդ նոյն ժամանակ ամբողջ երկիրը բռնկւել էր գիւղացիական խռովութիւններով: Պետրոգրադի, Մոսկւայի, Խարկովի և շատ ուրիշ քաղաքների բանւորները գործադուլ էին յայտարարել: Իսկ Կարմիր բանակի որոշ զօրամասեր լրիւ անցել էին ապստամբների կողմը: Օրինակ, յայտնի է, որ 14րդ **դիվիզիայի** հրամանատար Մասլակովը 1000 հոգու հետ միասին անցաւ Մախնոյի կողմը: Վակուլինը իր զօրքով միացաւ ապստամբած Անտոնովին: Եւ շատ ուրիշ նման դէպքեր: Հազարաւոր մարդիկ փախչում էին անտառները, կազմակերպելով ժողովրդական դիմադրութիւն: Լենինի հեղինակութիւնը ընկնում էր օրէցօր: Այս ներքին ճգնաժամի օրերին բոլշեւիկեան ղեկավարութիւնը ուժեղացրեց տեռորը և կազմակերպեց **մասսա**յական գնդակահարութիւններ առանց դատի:

Թէ ինչ չափերի էր հասել այդ տեռորը, կարելի է եզրակացնել հետեւեալ փաստից,- կուսակցութեան 730.000 անդամներից 1921 թականին 200.000 ենթարկւել էին «մաքրման»: Այնուամենայնիւ, չնայած նրան, որ ժողովրդի մեծ մասը բոլշեւիկների դէմ էր տրամադրւած, նրանց յաջողւեց պահել իշխանութիւնը և ստեղծել խորհրդային կայսրութիւնը:

Այս բուռն ժամանակաշրջանում ժառանգականութիւնը կորցրել էր հայրերից դէպի որդիները տանող իր բնական ուղղութիւնը: Հայրերը սովորում էին որդիներից, որդիները ապստամբում էին հայրերի դէմ: Իսկ քարոզչական գրականութիւնը ծնեց «Պաւլիկ Մորոզովի» արգահատելի կերպարը, մի 10-11 տարեկան երեխայի, որը սպանել է տալիս իր կոլտնտեսութիւնից հրաժարւող հօրը: Այդ երեխայի անբարոյական կերպարը այսօր էլ մատուցւում է խորհրդային մանուկներին որպէս իդէալ:

30ական թւականներին խորհրդային հասարակարգի ձեւաւորումը հիմնականում աւարտւած էր: Այդ հասարակարգի յատկանիշներն էին,- անձի անսահման պաշտամունքը, կուսակցութեան անսխալականութիւնը, խորհրդային հասարակարգի առաւելութիւնը բոլոր հասարակարգերի նկատմամբ և ծաղրանք կրօնի հանդէպ: Այս գաղափարները պէտք է ժառանգէր 30ական թւականներին ծնւած սերունդը: Դա արդէն իմ սերունդն էր: Թւում էր, թէ ամէն ինչ կարգին է: Մեր հայրերը, որոնց յաջողւել էր խուսափել «մաքրագործումներից», կարգապահօրէն սրսկում էին մեր մէջ առաջնորդի պաշտամունքը, կրօնի անմտութիւնը, կոմունիզմի գաղափարը և այն, որ մենք աշխարհի ամենաերջանիկ երեխաներն ենք: «Պաւլիկ Մորոզովի» անւան պիոներական ճամբարներում, պիոներական վզկապները վզներիս, մենք խարոյկների շուրջ երգում էինք ռուսական յեղափոխական երգեր:

1951 թականին, երբ Վարդանանց պատերազմի 1500ամեակն էր, մենք, բանից անտեղեակ, բերանացի էինք անում «Իշխան Իգորի» առասպելը: Հրճւանքով դիտում էինք, թէ ինչպէս ռուս զինւորները հրասայլերի օգնութեամբ քանդում էին մեր դարաւոր և ժայռի նման ամուր եկեղեցիները: Առանց զարմանքի և խղճախայթի, գրեթէ ամէն օր մեր պատմութեան դասագրքերից ջնջում էինք ժողովրդի թշնամի դարձած այս կամ այն առաջնորդի նկարը: Պէտքարան գնալուց առաջ, մանրամասնօրէն քննարկում էինք օգտագործելիք թերթը, որպէսզի, Աստւած չանի, վրան յանկարծ չլինի բեղաւոր աւազակապետի նկարը: Համակերպւել և հաւատում էինք, որ հարեւանների, ազգականների, բարեկամների, քաղաքի, երկրի գրեթէ կէսը ժողովրդի թշնամիներ էին և որ մեր ընկերներից շատերի հայրերը բանտերում կրում էին արժանի պատիժ:

Բարձրագոյն հաստատութիւններում սովորելիս, գիտէինք որ ամենագըլխաւոր ամբիոնը մարքսիզմ-լենինիզմի ամբիոնն է, իսկ ամենակարեւորագոյն

առարկան, թէ՛ ճարտարապետի, թէ՛ բժշկի և թէ երաժշտի համար, **դիալեկտիկ**ական և պատմական **մատերիալիզմ**ն է, առանց որի անհնարին է կառուցել, բժշկել և նուագել։

Այո, արտաքուստ ամէն ինչ կարծես թէ կարգին էր, թւում էր, թէ հայրերին յաջողւել էր յեղաշրջել մեր հոգեկան աշխարհը, մաքրելով այն բոլոր մնացուկներից։ Հասարակութեան մէջ գործում է ոչ մի տեղ չգրւած մի զարմանալի օրէնք։ Ստացած տեղեկութիւններին մարդիկ տալիս են տարբեր գնահատականներ՝ հաւատալու իմաստով։ Մենք հակում ունենք հաւատալու այն տեղեկութիւններին, որոնք ցանկալի են մեզ համար։ Պաշտօնական կնիքներով կնքւած պետական փաստաթղթին, որտեղ ասւած է, որ որդին զոհւել է պատերազմի դաշտում, մայրը աւելի քիչ է հաւատում, քան հարեւանի խօսքերին, որը ասում է, թէ Բեռլինի գերութեան ճամբարներից մէկում հանդիպել է մի ինչ որ երիտասարդի, որ կրում էր նոյն անունը։

Եւ յետոյ քարոզչական մեքենայից դուրս նետւած ճշմարտութիւնները չեն ընդունւում մեր կողմից այնքան ժամանակ, մինչեւ որ մեր ներքին, մեզ համար անյայտ զգայարանները չենթարկեն այդ ճշմարտութիւնը վերստուգման։ Խաբել և մոլորութեան մէջ ձգել մարդուն հնարաւոր է, բայց ոչ բոլորին և ոչ երկար ժամանակով։ Չխաբւեց ե՛ւ իմ սերունդը։ Ամէն ինչ կարգին էր արտաքուստ, բայց ոչ ներքուստ։ Մեր դժբախտ սերունդը մեծացաւ հասարակարգի ամենաանբարոյական ժամանակաշրջանում։ Մենք ամաչում էինք մեր պիոներական վզկապներից և, որ դպրոցից դուրս գալիս, անմիջապէս հանում և գրպաններս էինք դնում։ Եւ, ի հարկէ, ոչ նրա համար, որ հասկացել էինք վարչակարգի անբարոյականութիւնը, այլ պարզապէս նրա համար, որ վզկապը «մամայի բալա»յի, «հարիֆի», «միամտութեան» նշան էր։ Տղաներով իրար մէջ երդւելիս ասում էինք. «Գողերի արեւ»։

Այդպիսի այլասերւած երդում չի ծնել ոչ մի հասարակարգ մարդկութեան բազմադարեան պատմութեան ընթացքում։ Մենք երդւում էինք գողերի անունով, որովհետեւ դա միակ դասակարգն էր, որը կարողանում էր որոշ չափով զբաղւել հակապետական գործունէութեամբ և դրա համար շրջապատւած էր **ռոմանտիկայ**ով։ Մենք, պատանիներս, նախանձում էինք նրանց համարձակութեանը և մի տեսակ անկախութեանը։ Նեղ շրջանակներում զարմացած հարցնում էինք, թէ ի՞նչպէս է յաջողւում ամերիկացիներին առանց մարքսիզմի ստեղծել այն հիանալի ինքնաշարժները, որոնք Պարսկաստանից Երեւանով ճակատ էին տանում ամերիկեան հագուստեղէնը և ուտեստեղէնը։

Կոմերիտմիութեան մէջ մեզ արդէն քաշում էին գրեթէ ստիպողական կարգով։ Նոյնիսկ կրօնական զգացմունքները չէր յաջողւել բթացնել վերջնականապէս։ Քննութիւններից առաջ մենք թաքուն գնում էինք «Կոնդ» և համբուրում

«Սուրբ Յովհաննէս» եկեղեցու պատերը, իսկ պատերազմի սովի տարիներին Գառնիի սուրբ աւազաններից մէկը լեցուն էր մանր դրամներով, բայց մեզանից ոչ մէկը չէր համարձակւում վերցնել այնտեղից գոնէ մէկ դրամ: Մեր հայրերի ջանքերը զուր էին, նրանք չկարողացան փոխանցել մեզ այն, ինչին իրենք էլ չէին հաւատում: Բայց այն, ինչին նրանք հաւատում էին, փոխանցեցին: Դա այն գաղափարն էր, որ մեր հասարակութեան մէջ դիրք գրաւելու, աշխարհի բարիքներից օգտուելու և սեփական հաճոյքները բաւարարելու համար անհրաժեշտ է լինել կուսակցութեան անդամ, գովաբանել Ստալինին և կարգերը, ընդունել գոնէ ձեւականօրէն մարքսիստական գաղափարախօսութիւնը:

Ու լցւեց երկիրը դերասաններով (չէ՞ որ շատերն էին ուզում օգտուել բարիքներից): Դերասանութիւն էինք անում ժողովներին, դերասանութիւն էինք անում **քեֆ**երին (առաջին բաժակը **թամադան**, որպէս օրէնք, բարձրացնում էր Ստալինի կենացը), դերասանութիւն էինք անում պատի թերթերի մէջ և ամէնուր, որտեղ կար երեք հոգուց աւելի մարդ: Այնպէս էինք մտել մեր դերերի մէջ, որ յաճախ մոռանում էինք, թէ բեմի վրայ ենք և մեզանից մի քանիսը նոյնիսկ Ստալինի դիակի վրայ անկեղծօրէն արտասւում էին:

Բայց որ այդ ամէնը դերասանութիւն էր, վկայում է այն փաստը, որ քիչ թէ շատ զարգացած երիտասարդներ հրաժարւում էին իրենց ապագան կապել կուսակցական գործունէութեան հետ: Նրանք ժառանգել էին ծնողներից այդ ասպարէզում գործողներին վերաբերող նշանաբանը. «Այսօր՝ կաս, վաղը՝ չկաս»: Նրանք դառնում էին բժիշկներ, ճարտարապետներ, գիտնականներ, թողնելով ամենակարեւոր քաղաքական բնագաւառը ամենաանընդունակներին և աթոռամոլներին: Մենք դեռ չէինք մոռացել այն սարսափելի գիշերները, երբ ծնողների հետ միասին վեր էինք թռչում անկողիններից, երբ դռան մօտ կանգնում էր ինքնաշարժը և հանգստանում էինք միայն այն ժամանակ, երբ պարզւում էր, որ այս անգամ «ժողովրդի թշնամին» հարեւանն էր, այլ ոչ թէ մենք:

Բայց այս համազգային դերասանութեան հետ միասին, ինչ որ անհասկանալի ճեղքերից, խօսակցութիւններից, տեսածից, ենթադրութիւններից թափանցում էր ճշմարտութիւնը և ինքն ըստինքեան վերականգում էր կապը կորցրած անցեալի հետ: Հիմա դա ինձ պարզապէս հրաշք է թւում, բայց այդ հրաշքի շնորհիւ մեր ներսում առաջանում էր ցանկութիւն՝ վերականգնելու դարերից եկող մեր նկարագիրը:

Յիշում եմ որ արդէն Ստալինի մահից յետոյ իմ ընկերներից մէկին ես հարցրի. «Ինչո՞ւ բացատրել, որ դեռ 49 թւականին, անձի պաշտամունքի դաժան տարիներին, դու առաջարկում էիր մեզ սովորել հայերէն և ռուսերէնի

փոխարէն խօսել հայերէնով»: Նա պատասխանեց, ընդ որում հպարտութեամբ. «Դէ, չէ՞ որ իմ պապս հնչակեան էր»: Մի քիչ մտածելուց յետոյ նա ասաց. «Ես էլ ուզում եմ քեզ մի հարց տալ: Յիշում ես, երբ մեռաւ Ստալինը և երբ մեր տղաներից մէկը արտասւած ասում էր. «Տղերք, հայր ենք կորցրել», դու պատասխանեցիր,- «Գուցէ քեզ համար հայր էր, բայց ինձ համար որքան շուտ սատկէր, ա՛յնքան լաւ կը լինէր: Որտեղի՞ց էր քո մօտ այդ ատելութիւնը»: Ես պատասխանեցի, որ մեր ընտանիքը համարւելով դաշնակցականի ընտանիք (իմ պապը Համադանում ապրող Գառնիկ Բիձէն էր), շատ տառապանքներ է քաշել Ստալինի ձեռքից: Իմ ընկերս չէր տեսել իր հնչակեան պապին և ոչ էլ ես էի տեսել իմ դաշնակցական պապին, բայց նրանց ոգին ինչ որ մի ձեւով փոխանցւել էր մեզ: Այդպէս, անտեսանելի ճանապարհներով պատմական ճշմարտութիւնը վերադառնում էր իմ սերունդին:

Բայց դա միայն դեռ ենթագիտակցութիւն էր, այլ ոչ յստակ գիտելիք: Դա դեռ պայքարելու ցանկութիւն էր, այլ ոչ պայքար: Ստալինի մահը և խրուշչովեան **լիբերալիզացիա**ն մեր սերնդի համար դարձան օրհասական: Բայց մենք արդէն ինքներս դառնում էինք հայրեր: Ի՞նչ պէտք է կարողանայինք փոխանցել մենք եկող սերնդին: Բայց տեսնենք, թէ ինչ նոր գաղափարներ և բարոյականութիւն էր բերել իր հետ խրուշչովեան դարաշրջանը:

Խրուշչովը իր կողմնակիցների հետ միասին ՍՏԻՊԻԱԾ էր պայքար յայտարարելու անձի պաշտամունքին: Դրա համար գոյութիւն ունէին մի քանի՝ անձնական, քաղաքական և տնտեսական հանգամանքներ: Հակաստալինեան քաղաքականութեան անձնական պատճառը խրուշչովեան խմբի պայքարն էր իշխանութեան գլուխ անցնելու համար: Այդ իշխանութեանը հասնելու համար, Խրուշչովը իր խմբի հետ առաջին հերթին պէտք է ոչնչացնէր Ստալինի գահի այն ժառանգորդներին, որոնք Ստալինի օրօք գրաւում էին բարձր դիրքեր: Թէպէտ ինքը Խրուշչովը իր կողմնակիցների հետ Ստալինի ժամանակ նոյնպէս գտնւում էր առաջնակարգ դիրքերի վրայ, բայց Բերիայի, Մոլոտովի, Մալենկովի, Վորոշիլովի հետ համեմատած խրուշչովեան խմբի անդամները կանգնած էին երկրորդ գծի վրայ: Առաջին գծի ստալինականները շատ ամուր էին նստած իրենց տեղերում: Նոյնիսկ ժողովուրդը այդ անունները այնքան էր լսել Ստալինի անունի կողքին, այնքան էր տեսել նրանց նկարները, որ համակերպւել էր նրանց համբաւի հետ: Այդ իսկ պատճառով նրանց կարելի էր վարկաբեկել միայն Ստալինի հետ միասին: Այնքան ժամանակ, քանի դեռ վարկաբեկւած չէր Ստալինի անունը, երկրորդ գծի մարդիկ չէին կարող տիրանալ նրա գահին: Առաջին գծին կանգնածները անմիջապէս կ'ոչնչացնէին նրանց, նոյն այն ստալինական մեթոդներով, որոնցով օգտւում էին ամբողջ իրենց կեանքում:

Եւ ուրեմն խրուշչովեան խմբի առաջնակարգ խնդիրը ստալինեան մեթոտների դատապարտումն էր և «առաջնորդի» աստուածային անսխալականութեան առասպելի ցրումը: Բայց դրա հետ միասին խրուշչովեան խումբը հիանալի հասկանում էր, որ ժողովուրդը բռունցքում պահելու համար ստալինեան մեթոդները շատ յարմար էին: Ուստի առաջ քաշուեց ներքին ծրագիր, «ապաստալինականացում՝ ղեկավար դասակարգի և ստալինեան վարչաձեւ՝ ժողովրդի համար»: Սակայն այդ ծրագիրը իրականացնել չյաջողուեց: Առաջացան բազմաթիւ հացեր, որոնց լուծումը կախուած էր աւելի լայն ազատութիւնների հետ: Նշեմ այդ խնդիրներից մի քանիսը:

Առաջին խնդիրը կապ ունէր Ստալինի օրօք դատապարտուած և դեռ որոշ չափով ճամբարներում գտնուող կոմունիստների ճակատագրի հետ: Արդարացնե՞լ նրանց: Բայց դա նշանակում էր որոշ չափով արդարացնել այն ընդդիմադիր ուղղութիւնները, որոնց անունով նրանք դատապարտուած էին (տրոցկիզմ, Դաշնակցութիւն, մենշեւիկներ և այլն):

Երկրորդ խնդիրը կապուած էր արտաքին քաղաքականութեան մէջ փոփոխութիւններ կատարելու հետ: Ոյժի դիրքերից վարւող ստալինեան քաղաքականութիւնը երկիրը կանգնեցրել էր պատերազմի, այսինքն կործանման շեմին: Ռազմականացուած էր ամբողջ կեանքը: Այն ռազմական մրցակցութիւնը, որ Ստալինը սկսել էր Արեւմուտքի հետ, այլեւս անհնարին էր շարունակել: Դա կը նշանակէր ամբողջ տնտեսութեան քայքայում և ժողովրդի կենցաղային մակարդակի է՛լ աւելի իջեցում: Իսկ պատերազմը արդէն սկսուած էր: Նա վարւում էր Կորէայի ռազմադաշտերում, բայց ամէն րոպէ կարող էր տեղափոխւել Եւրոպա: Դա արդէն կը լինէր երրորդ համաշխարհային պատերազմ, որտեղից Խորհրդային Միութիւնը անկասկած դուրս կը գար կործանիչ պարտութեամբ: Այսօրւայ ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ պարենային ապրանքները այն ժամանակ մէկ տարուց աւելին չէին բաւարարի, իսկ փրկարար Ամերիկան ու Անգլիան արդէն կանգնած էին ճակատի հակառակ կողմը: Առանց պատերազմի էլ երկիրը կիսասոված վիճակում էր: Քիչ թէ շատ միայն Մոսկւայի և Լենինգրադի մատակարարումը կարելի էր համարել **նորմալ**, այն էլ ցուցամոլութիւն էր՝ արտասահմանցիների աչքերի համար: Խորհրդային Միութեան **ատոմ**ային հզօրութիւնը այն ժամանակ շատ էր զիջում Միացեալ Նահանգներին, իսկ խորհրդային արբանեակ երկիրները առիթի էին սպասում ապստամբութեան համար և փաստօրէն ՆԱՏՕի պահեստային զօրքերն էին:

Երրորդ խնդիրը միջազգային կոմունիստական շարժման պառակտուածութիւնն էր, որը առաջացել էր Ստալինի ժամանակ և հէնց նրա շնորհիւ: Անհը-

բաժեշտ էր վերացնել այդ պառակտուածութիւնը և կրկին շահել Հարաւսլաւիայի համակրանքը, որը դարձել էր շատ վտանգաւոր թշնամի։

Հարաւսլաւիան այն ժամանակ շատ մեծ վտանգ էր խորհրդային կայսրութեան համար, քանզի առաջին անգամ ընդդիմադիր կոմունիստական մի պետութիւն ապացուցում էր, որ հնարաւոր է առանց արբանեակ դառնալու էլ ապրել։ Այն փաստը, որ Խորհրդային Միութեան զուգահեռ գոյութիւն ունէր մի ուրիշ կոմունիստական երկիր, կարող էր դառնալ գայթակղիչ հանգամանք նաեւ մնացած արբանեակների համար։

Բայցի այս խնդիրներից, գոյութիւն ունէին ոչ պակաս նշանակութիւն ունեցող այլ խնդիրներ։ Այդ խնդիրներից մէկը, օրինակ, գիւղատնտեսութեան խնդիրն էր։ Երկիրը ի վիճակի չէր ինքը իրեն կերակրելու։ **Կոլեկտիւիզացումը** այնպիսի հարուած էր հասցրել գիւղատնտեսութեանը, որից նա մինչեւ այսօր ուշքի չի գալիս։ Անկասկած, միակ ճիշտ ճանապարհը կը լինէր հրաժարուել կոլտնտեսութիւնից, արհեստականօրէն իջեցւած գներով պետական մատակարարումներով հանդերձ։

Բայց այդպիսի վճռական քայլերի դիմելու անկարող էր իշխանութիւնը։ Դա արդէն կը լինէր ոչ միայն Ստալինի քննադատութիւն, այլեւ հրաժարում գաղափարական սկզբունքներից։ Այդտեղ էլ ղեկավարութիւնը չհամարձակուեց կանգնել ձեռնարկութիւնների ինքնավարութեան ճանապարհի վրայ։ Նա որոշեց պահպանել հին կառուցւածքը, բայց **ժողտնտխորհների** միջոցով մի փոքր ապակենտրոնացնել ղեկավարութիւնը։

Այսպիսով թէ՛ ներքին և թէ արտաքին քաղաքականութեան մէջ բոլոր հրատապ հարցերը լուծւում էին սահմանափակ ապաստալինացման դիրքերից։ Պատմութիւնը հնարաւորութիւն էր տալիս Խրուշչովին փրկել Ռուսաստանը և կանգնել ամենամեծ քաղաքական դէմքերի շարքում, բայց նա վախեցաւ, կանգնեց կէս ճանապարհի վրայ և, ինչպէս միշտ, պատմական հողմերը վճռականութիւնից զուրկ քաղաքական գործչին դեռ իր կեանքի ժամանակ դարձրին դիակ։ Սակայն այն փոքր ազատութիւններն էլ որ շնորհել էր մեզ խրուշչովեան ժամանակաշրջանը, մռայլ ստալինեան գիշերից յետոյ, մենք չկարողացանք հասկանալ և օգտագործել։ Մեր հայրերից մենք չէինք ժառանգել ոչ քաղաքական փորձ, ոչ քաղաքական գիտելիքներ, ոչ անձնազոհ վճռականութիւն և ոչ էլ գտնւում էինք պաշտօնների վրայ, որտեղից դեռ կարելի էր գործել յօգուտ ազգային շահերին։

Այդ ժամանակաշրջանում սերունդները լրիւ կտրւեցին իրարից։ Մենք կտրւել էինք մեր հայրերից, որոնք քաղաքի հրապարակներում երեկոները նարդիի շուրջ զբաղած էին իրենց յիշողութիւններով։ Նրանք մեզ ասելիք չունէին, նրանք աւարտել էին իրենց սեւ գործը։ Նրանք մեզ համարում էին յետա-

դիմականներ և ոչ միայն չէինք կարողանում գտնել նրանց հետ ընդհանուր լեզու, այլեւ պարզապէս արհամարհում էինք նրանց վախկոտութիւնը, փառասիրութիւնը և նրանց ամբողջ կեանքի յարմարւողականութիւնը։

Բայց արդէն մենք էինք դառնում հայրեր և մենք էլ երիտասարդութեանը ասելիք չունէինք։ Ընդհակառակը, սովորում էինք նրանցից։ Մենք՝ 35 տարեկաններս 17 տարեկան երեխաների յետեւից դուրս էինք գալիս հրապարակ և ոգեւորւած գոռում. «Մեր հողերը»։ Նրանից սովորում էինք համարձակութիւն, արուեստի նոր ձեւերը և ամենակարեւորը՝ հայութիւն։ Ի՞նչ կարող էի ես ասել հայկական դպրոցում սովորող իմ աղջկան, որը իմ հեռուստատեսութիւնով ունեցած ելոյթներից մէկից յետոյ ասաց. «Հայրիկ, դու ինձ խայտառակ արիր, իմ ուսուցիչն էլ երեւի լսեց, թէ ինչպէս դու ժամանել բառի փոխարէն ասացիր «էկաւ»։ Իմ միամիտ աղջիկս դեռ չէր նկատել, որ մշակոյթի փոխարէն էլ ես օգտագործել էի **«կուլտուրա»** և չէր էլ պատկերացնում, որ իրեն հայկական դպրոց ուղարկելը հերոսութիւն կամ աւելի ճիշտ՝ խենթութիւն էին համարում ուրիշները։ Եւ, ի հարկէ, նա չգիտէր, որ մի քանի տարի է միայն, ինչ ես սկսել էի գրել և կարդալ հայերէնով։

Այնուամենայնիւ կար մի խաւ, որը հասցրեց օգտւել խրուշչովեան «ազատութիւններից»։ Դրանք գրողներն ու բանաստեղծներն էին, որոնք բոլոր ժամանակներում էլ տարբերւել են իրենց սքանչելի «հոտառութեամբ» հասարակական երեւոյթների նկատմամբ։ Եւ, փառք Աստծու, որ նրանք կային։ Էրենբուրգը, Դուդինցեւը, Տուտրդովսկին, Սոլժենիցինը և ուրիշներ համախմբւել էին «Նովի Միր» ամսագրի շուրջ և կազմել էին **ռադիկալ** թեւ։ **Լիբերեալ**ները չէին հրաժարւել կոմունիստական գաղափարախօսութիւնից։ Նրանք պահանջում էին դեմոկրատացում, որը անւանում էին վերադարձ «լենինեան **նորմա**ներին»։ Սակայն շատ շուտ պարզւեց, որ հէնց իրենց «լենինեան **նորմա**ները» ընդունելի չեն և **լիբերալ**ներից անջատւեցին Սախարովը և Սոլժենիցինը, որոնք արդէն առանց որեւէ զիջումների պահանջում էին հրաժարւել մարքսիստական գաղափարախօսութիւնից։ Երիտասարդութիւնը նոյնպէս յանգել էր նոյն կարծիքին, որովհետեւ արդէն մերկացել էր խրուշչովեան կիսամիջոցների քաղաքականութիւնը։ 1956 թւականի հունգարական յեղափոխութեան ճնշումը բոլորի համար պարզ դարձրեց, որ կոմունիզմի էութիւնը Ստալինից յետոյ չի փոխւել։ Չնայած նրան, որ հունգարական ապստամբութիւնը ըստ էութեան բանւորական էր, չնայած նրան, որ վերջին պահին նրա ղեկավարութիւնը կոմունիստական էր, այդ ապստամբութիւնը դաժանօրէն ճնշւեց։

Հիասթափութեան երկրորդ պատճառը շփումն էր արտասահմանցիների հետ, որտեղից (այլ ոչ հայրերից) երիտասարդութիւնը ծանօթանում էր նոր գաղափարների։ Եւ, բացի դրանից, ներքին, կուսակցական պայքարը գցել էր

իշխանութեան հեղինակութիւնը։ Հայաստանում նոյնպէս ազատութեան հոտը առաջինը առան գրողները և բանաստեղծները։ Այն, ինչ նրանք տասնամեակներ պարփակել էին իրենց ներսում, դուրս պրծաւ վանդակից, սպառնալով խենթացնել երիտասարդութեանը։ Սեւակը, Շիրազը, Կապուտիկեանը և, ի հարկէ, առաջիններից առաջինը՝ Հրաչեայ Քոչարը անմիջապէս դիմեցին ազգային աւանդոյթները վերականգնելու շնորհակալ գործին։

Ես յատուկ նշում եմ Քոչարին, որովհետեւ նա միայն «Սպիտակ Գրքի» հեղինակը չէր։ Կանգնած Զարուբեանի կողքին, այդ նա՛ էր Սարդարաբադնեբի, ցեղասպանութեան յուշարձանների և շատ ու շատ հայկականացումների հեղինակը։ Այսքանով էլ սահմանափակւեց խրուշչովեան ազատութիւնների օգտագործումը։ Քաղաքական և պետական փորձի պակասը թոյլ չտւեց անել աւելին։ Հէնց այդ փորձի պակասի հետեւանքով էր, որ Ղարաբաղի հարցը դրւեց այնքան մանկական հողի վրայ, որ խեղդւեց դեռ չհասած համապատասխան ատեաններին։

Խրուշչովեան վարչակարգի անկումը աւելի՛ վարկաբեկեց կոմունիստական գաղափարախօսութիւնը։ Նոր իշխանաւորները թէպէտ բացայայտ չէին իրենց յայտարարել ստալինականներ, բայց արդէն արգելել էին Ստալինին քննադատող գրականութեան հրատարակութիւնը։ Բանտերը և գժանոցները կամաց-կամաց լցւում էին **դեմոկրատ**ական տրամադրութիւններ ունեցող երիտասարդներով։ Սակայն երիտասարդութիւնը կարծես թէ արդէն ձեռք էր բերել որոշ քաղաքական փորձ։ Իսկ այն փաստը, որ պատմական և **հումանիտար** բաժանմունքները շատ աւելի շատ են քաշում ուսանողութեանը, քան **տեխնիկական** բաժանմունքները, խօսում է այն մասին, որ երիտասարդութիւնը կարօտ է հասարակական գործունէութեան։

Այսպիսով, սահմանի այն կողմում, ոչ մի սերնդի հայրեր չկարողացան փոխանցել որդիներին իրենց գաղափարները, որոնք փոխւում էին շատ աւելի շուտ, քան հասունանում էին որդիները։ Որդիները ստիպւած էին սեփական ընկալումներով և սեփական ոյժերով որոնել ճշմարտութիւնը։ Եւ քանի որ ճշմարտութիւնը հնարաւոր է միայն ժամանակաւորապէս պահել այն որոնողների աչքերից, կարծում եմ, որ կրկին վերականգնելու վրայ է հայրերի և որդիների բնական կապը։ Այն կապը որ գալիս է դարերի խորքերից և թոյլ է տալիս մեզ ճանաչել մեր իսկական էութիւնը։

Տեսնենք, թէ ինչ էր կատարւում սահմանի այս կողմը։ Այս կողմի հայրերը երկար ժամանակ չէին կարողանում ուշքի գալ այն ցնցումից, որի հետեւանքով նրանք դարձել էին Սփիւռք։ Քաղաքական իմաստով նրանք ձեւակերպեցին ազատ հայրենիքի գաղափարը եւ, փառք Աստծու, կարողացան այդ գաղափարը փոխանցել սերնդից սերունդ։ Ճիշտ է, նրանք վար դրեցին զէնքե-

րը և վերցրեցին գրիչները, բայց աւելին չէին էլ կարող անել: Սակայն այս կողմում եւս կրօնական մտածելակերպը զիջեց «**պրագմատիզմին**»: Եթէ կառուցւում էին եկեղեցիներ ու կնքւում էին երեխաները, ապա միայն որպէս ազգային աւանդոյթ: Այն հոգեկան կրթաւածութիւնը, որը եկեղեցին պէտք է վերցնէր իր ձեռքը և որը անհրաժեշտ էր սփիւռքում գոյատեւելու համար, դժբախտաբար տեղի չունեցաւ:

Եւ չէր էլ կարող ունենալ, քանզի Միջին դարերից յետոյ հայոց աշխարհում փաստօրէն բացակայում է աստուածաբանութիւնը, որպէս գաղափար, որպէս փիլիսոփայական միտում: Մեր աստուածաբանները լաւագոյն դէպքում շարադրում են կրօնական պատմութիւնը, Լուսաւորչի Խորվիրապի պատմութիւնով միատեղ: Մինչդեռ **տեխնիկա**յի և գիտութեան դարում ապրող երիտասարդին դա չի կարող բաւարարել: Այն բարձր փիլիսոփայական մակարդակը, որին այսօր, օրինակ, հասել են ռուսները Բերգիաեւի, Ֆրանկի և շատ ուրիշ մտաւորականների միջոցով, մենք չկարողացանք ստեղծել: Եւ այդ ուղղութեամբ աշխատանք էլ չի տարւում: Նոյնիսկ մխիթարեանականները հիմնականում զբաղւած են աշխարհիկ գործերով: Բայց, ինչպէս ասում է Սոլժենիցինը, կոմունիզմի վարակի դէմ պայքարի միակ միջոցը կրօնական փիլիսոփայութիւնն է: Մի խօսքով՝ այս կողմի որդիները, այն կողմինների նման, հրաժարւեցին կրօնական ժառանգութիւնից:

Միւս յատկանշական կողմը այն էր, որ անծանօթ պայմաններում անհրաժեշտ էր ՈՂՆՉԻՑ ստեղծել միջոցներ ապրելու և ազգապահպանման համար: Եւ պէտք է ասել, որ այս կողմի հայրերը, առանց պետական **բիւջէ**ների, առանց որեւէ մէկի օգնութեան փայլուն կերպով լուծեցին այս երկու խնդիրը: Այսօր Սփիւռքի թէ՛ տնտեսական պայմանները, թէ՛ դպրոցները, թէ՛ գրականութիւնը դարձել է շատ աւելի մեծ ազգերի (օրինակ՝ ռուսների) նախանձի առարկայ: Հայրերը ոչ միայն կերտեցին Սփիւռքի այդ կացութիւնը, այլեւ փոխանցեցին որդիներին իրենց պատգամը շարունակելու սկսածը: Եւ որդիները շարունակեցին: Սա վերաբերում է բոլոր կուսակցութիւններին և ուղղութիւններին: Որդիները փոխարինեցին հայրերին և Սփիւռքը չցնցւեց այդ տեղաշարժումից: Նոյնիսկ, ընդհակառակն, Սփիւռքի ճակատագրի ղեկը վերցրեցին իրենց ձեռքը աւելի պատրաստւած մասնագէտներ: Սակայն հայրերի ասպարէզից հեռանալու հետ միասին թուլանում էր հայրենիք կերտելու յոյսը: Ոմանց մօտ այդ յուսահատութիւնը առաջացրեց նահանջ Թուրքահայաստանը ձեռք բերելու նպատակից, ոմանք որոշեցին սահմանափակւել Խորհրդային Հայաստանի շուրջ համախմբւելով, իսկ ոմանց համար էլ հայրենիքի գաղափարը ընդունել էր մի տեսակ կարօտի և երազի տեսք:

Ես դեռ շատ վատ գիտեմ Սփիւռքը և չեմ համարձակւում արտայայտել որոշակի կարծիքներ, բայց ինձ թւում է, որ այսօր Սփիւռքում հայրենիք կերտելու որոշակի, մանրամասնօրէն մշակւած ծրագիր գոյութիւն չունի: Իսկ եթէ այդպիսի, երկար տարիների վրայ հաշւած ծրագիր չկայ, ապա մենք էլ մեր որդիներին փոխանցելու ոչինչ չունենք: Դրանով մենք կը ստիպենք նրանց ամէն ինչ սկսել զերոյից:

Մեր այսօրւայ պարտականութիւնն է, մինչեւ ասպարէզից դուրս գալը, ժառանգել երիտասարդութեանը այն ազգային **դոկտրինը**, որի շնորհիւ, ելնելով **կոնկրետ** քաղաքական պայմաններից, նրանք կը տանեն ազգային նաւը դէպի հայրենիք: Եւ միայն մէկ բանից պէտք է խուսափել: Պէտք է անել ամէն ինչ, որպէսզի հայրերի քաղաքական պառակտւածութիւնը չփոխանցւի որդիներին: Եւ հէնց դա էլ թող լինի մեր ժառանգութեան նշանաբանը:

1974

ԳԻՏՈՒԹԻ՞Ն Է ԱՐԴԵՕՔ ՄԱՐՔՍԻԶՄԸ

Է. Յովհաննիսեան

Ա.

Ծանրակշիռ հատորներում Մարքսը և Էնգելսը շարադրեցին իրենց նոր ուսմունքը, որը վերաբերւում էր փիլիսոփայութեանը, հասարակագիտութեանը և քաղաքատնտեսութեանը: Այդ նոր ուսմունքը, որը պարունակում էր իր մէջ այսպէս կոչւած **դիալեկտիկ**ական և պատմական **մատերիալիզմ** և որը այսօր կոչւում է մարքսիզմ-լենինիզմ, դարձաւ կոմունիստական աւետարանը: Այն ժամանակից, երբ ծնունդ առաւ այդ ուսմունքը, անցել է աւելի քան 100 տարի: Ի՞նչ տւեց մարդկութեանը այդ ուսմունքը: Որքանո՞վ ճիշտ էին նրա գուշակութիւնները և սպասումները: Ինչպիսի՞ զարգացում ապրեց ինքը այդ ուսմունքը: Ո՞ւր կորաւ այն ուրւականը, որ թափառում էր Եւրոպայով և ընդհանրապէս՝ գիտութի՞ւն է արդեօք մարքսիզմը:

Այս հարցերը առաջին հայեացքից կապ չունեն ազգային հարցերի հետ: Ըստ էութեան սակայն նրանք անմիջականօրէն կապւած են բոլոր ազգային խնդիրների հետ, գոնէ նրանով, որ ՀԵՏԵՒՈՂԱԿԱՆ ՄԱՐՔՍԻՍՏԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ: Փրկել մեր երիտասարդութիւնը մարքսիստական վարակից համարում եմ չափազանց կարեւոր, ուստի անդրադառնում եմ այդ հարցին, ճիշտն ասաց՝ առանց մեծ յոյսերի, որ կը կարողանամ համոզել մարքսիստամոլներին: Բայց եթէ ինձ յաջողւի գոնէ շեղել վտանգաւոր ճանապարհից, ես կը համարեմ իմ պարտքս կատարած և յօդւածս արդարացւած:

Դիալեկտիկայի հիմնական սկզբունքը հակադրութիւնների միասնութիւնն է: Ամբողջ **անտիկ** փիլիսոփայութիւնը՝ Անաքսիմանդրից մինչեւ Սոկրատէս, Պղատոն և Արիստոտել, հիմնւում էր այդ գաղափարի վրայ և հէնց նրանք էլ ստեղծեցին փիլիսոփայութիւն և **դիալեկտիկա** բառերը: Հակադրութիւնների միասնութիւնը ոչ Մարքսի և ոչ էլ Հեգելի յայտնագործութիւնն է: Սակայն Հեգելը հակադրութիւնների միասնութեանը տւեց մի նոր իմաստ, նա համարեց, որ հակադրութիւնների պայքարը զարգացման աղբիւր է ծառայում:

Այս գաղափարը ընդօրինակեց Մարքսը և փորձեց դասակարգային պայքարը դարձնել զարգացման աղբիւր: Սակայն հակադրութիւնների պայքարի հարցում Հեգելը բազմաթիւ խնդիրներ թողեց չլուծւած: Հեգելը չկարողացաւ ցոյց տալ, թէ ի՞նչպէս ներքին հակասութիւնները կարող են տանել դէպի աւելի կատարեալ համակարգ: Ինչո՞ւ այդ հակասութիւնները, որոնք փաստօրէն

ցանկալի չեն, ոչ թէ քայքայում են համակարգը, այլ, ընդհակառակը, կատարելագործում այն: Հեգելը չպատասխանեց նաեւ այն հարցին, թէ ինչո՞վ է աւարտւում հակադրութիւնների պայքարը, ի՞նչ տեսք է ընդունում խաղաղութիւնը, ո՞վ է այդ պայքարից յաղթող դուրս գալիս:

Բոլոր այս հարցերին Հեգելը պատասխանում է այսպէս. «Հակասութիւնները վերանում են, հակադրութիւնների վրայ չի կարելի կանգ առնել, հակադրութիւնները ինքնըստինքեան անտանելի են»: Բայց թէ ինչպէս են վերանում հակադրութիւնները՝ Հեգելի մօտ ոչինչ չի ասւած: Մինչդեռ Հերակլիտը, բացի հակադրութիւնների պայքարից, արդէն ճանաչում էր ներդաշնակութեան և համաձայնութեան գաղափարը: Իր քնարի և աղեղի տեսութեան մէջ Հերակլիտը ցոյց է տալիս, թէ ինչպէս հակադրութիւնները կարող են գտնուել ներդաշնակութեան մէջ և ինչպէս կարող են մէկը միւսին պայմանաւորել:

Հրաժարւելով այդ գաղափարից և Հեգելի ոգու զարգացման տեսութիւնը փոխարինելով **մատերիա**յի զարգացման տեսութեամբ, մարքսիստները յայտարարեցին, որ հակադրութիւնների պայքարը աւարտւում է պայքարող կողմերի ոչնչացումով: Այստեղ մարքսիզմը կտրւեց գիտութիւնից, որովհետեւ հակադրութիւնները կազմում են համակարգի էութիւնը և նրանց ոչնչանալուց յետոյ կարող է մնալ միայն դատարկութիւն, այլ ոչ աւելի կատարեալ համակարգ:

Պատահական չէ, որ դասակարգային պայքարը մարքսիստների համար աւարտւում է ոչ թէ դասակարգային համերաշխութեամբ, այլ դասակարգերի վերացումով:

Նոյնը վերաբերւում է ազգային ոլորտին: Ազգերի միջեւ գոյութիւն ունեցող հակասութիւնները ոչ թէ աւարտւում են ներդաշնակ ազգային ընտանիքում, այլ ազգերի վերացումով: Ամբողջ պատմութիւնը դասակարգային պայքարի պատմութիւն է,- ասում է Մարքսը: Այդ միտքը, ի հարկէ, ունի որոշ իմաստ, սակայն նա լրիւ կորցնում է իր հիմքերը, եթէ չի ճանաչւում հակառակ տեսակէտը, այսինքն՝ ամբողջ պատմութիւնը դասակարգերի համագործակցութեան պատմութիւն է:

Մարքսիզմը չի ճանաչում հակադրութիւնների ներդաշնակութիւնը և ուրեմն նա չի կարող պատասխանել, թէ ի՞նչպէս է աւարտւում հակադրութիւնների պայքարը: Մարքսիստների մօտ հակադրութիւնները վերանում են ինքնաբերաբար, թռիչքի ձեւով: Ընդ որում այդ թռիչքը տանում է դէպի աւելի բարձր մակարդակ: Եւ հէնց այդ թռիչքի գաղափարը, փաստօրէն, մարքսիստների խոստովանութիւնն է, որ իրենք ոչինչ չգիտեն հակադրութիւնների **դիալեկտիկա**յի մասին: Չէ՞ որ հակադրութիւնները կարող են աւարտւել ոչ միայն թռիչքով դէպի վեր, այլ նաեւ թռիչքով դէպի ցած: Օրինակ, կենդանի օրգանիզ-

մի մահով, նիւթի քայքայումով, երկրի կործանումով և այլն։ Հակադրութիւնները ինքնըստինքեան ամենեւին էլ չեն ապահովում զարգացումը։

Եւ երբ մարքսիստները հանդիպում են իսկական հակադրութիւնների, որոնք նրանց համար անլուծելի են, օրինակ նիւթի և ոգու, ազատութեան և անհրաժեշտութեան, ապա նրանք կա՛մ փորձում են ծածկել հակասութիւնները, կա՛մ դիմել փրկութեան վերջին միջոցին՝ հակադրութիւնների նոյնացմանը։ Սակայն հակադրութիւնների նոյնութիւնը ոչինչ չի կարող բացատրել։ Տեսնենք թէ ինչու։

Գոյութիւն ունի հակադրութիւնների նոյնացման երեք ձեւ.

Առաջինը՝ հակադրութիւնների անհաշտ հակասութիւններ և պայքար։

Երկրորդը՝ հակադրութիւնների հաշտութիւն և ներդաշնակութիւն։

Երրորդը՝ հակադրութիւնների այնպիսի կապ, որը չի պարունակում ոչ հակասութիւններ, ոչ պայքար, ոչ էլ ներդաշնակութիւն։ Այդպիսին են, օրինակ, պատճառ և հետեւանք, մաս և ամբողջ, հիւսիս և հարաւ, ձախ և աջ կողմերը և նման հակադրութիւնները։

Նոյնութիւն գոյութիւն ունի բոլոր այս երեք տեսակի հակադրութիւնների մէջ և ուրեմն նոյնացումը ի վիճակի չէ բացատրելու նրանց տարբերութիւնները և, ամենակարեւորը, չի բացատրում, թէ ի՞նչպէս են մէկը միւսին փոխում նշած այս տեսակները։ Մի խօսքով՝ նշել, որ կինը և տղամարդը երկուսն էլ մարդ են, դեռ ոչինչ չի ասում նրանց հակասութիւնների և ներդաշնակութեան մասին։ Հակասութիւնների Էութիւնը բացայայտելու համար անհրաժեշտ է տարբերել տրամաբանական հակասութիւնները իրական հակասութիւններից։ Տրամաբանական հակասութիւնները լուծւում են նրանով, որ հակադրութիւնները բացառում են մէկը միւսին, բացառում են անմիջապէս, առանց որեւէ պայքարի։ Այստեղ պայքար գոյութիւն չունի, քանզի պայքարող կողմերը չեն կարող միաժամանակ գոյութիւն ունենալ։ Եթէ երկրագունդը պտտւում է արեւի շուրջը, ապա արեւը չի կարող պտտել երկրագնդի շուրջը, եթէ մարդը մահացած է (խօսքը մարմնական մահի մասին է), ապա նա չի կարող միաժամանակ ապրել։

Այսպիսի հակադրութիւնների վրայ է կառուցւած, ամբողջովին տրամաբանական, այսպէս կոչւած Բուլի հանրահաշիւը։ Սակայն ոչ տրամաբանական, այլ իրական հակասութիւնների դէպքում երկու կողմն էլ գոյութիւն ունեն և գտնւում են պայքարի մէջ։ Եւ այստեղ հնարաւոր է թէ՛ կործանում և թէ՛ **սինթեզ**. այսինքն նոր կացութիւն, որտեղ կողմերը հաշտւում են։ Բայց ո՞րն է այդ դէպքում իսկական փիլիսոփայական հակադրութիւնը։ Փիլիսոփայական հակադրութիւնները այն տրամաբնական հակադրութիւններն են, որոնց յետեւում կանգնած են իրական հակադրութիւնները։ Այսինքն այն տրամաբանա-

կան հակասութիւնները, որոնք ոչ թէ **աբստրակտ**, վերացական **մաթեմատիկ**ական բանաձեւեր են, այլ իրականութիւնը արտայայտող բանաձեւեր։

Օրինակ, Կանտը փիլիսոփայական հակասութիւնները լուծում էր նրանով, որ չնայած **թեզիսի** և **անտիթեզիսի**՝ դրոյթի և հակադրոյթի անհամատեղելիութեանը, երկուսն էլ մնում են ճշմարիտ, բայց տարբեր իմաստով։ Օրինակ, մարդը մահկանացու է և մարդը անմահ է պնդումները՝ երկուսն էլ ճիշտ են, բայց տարբեր իմաստով։ Այս մասին մարքսիզմը ոչինչ չի ասում և զարմանալի չէ, որ նրան չի յաջողւում բացատրել ներդաշնակութիւնը։

Մարքսիստները, հրաժարւելով ներդաշնակութեան գաղափարից, ստիպւած են հակադրութիւնների պայքարի աւարտը տեսնել հակադրութիւնների ոչնչացման մէջ։ Այսօր բոլոր փիլիսոփայական ուղղութիւնների համար այդ միտումը ոչ միայն անընդունելի է, այլեւ համարւում է լիովին զուրկ տրամաբանութիւնից։

Հետաքրքրական է նշել, որ դեռ 1922 թւականին, երբ մարքսիզմը սկսել էր իր յաղթական արշաւը (գոնէ այդպէս էր թւում), արդէն այն տարիներին, մեր մտաւորականութեան լաւագոյն ներկայացուցիչներից մէկը՝ Լեւոն Շանթը հասկացել էր մարքսիստների այդ անմտութիւնը։ Իր **«Ազգութիւնը հիմք մարդկային ընկերութեան»** աշխատութեան մէջ նա գրում էր.

«Եւ առաջին հայեացքից իսկապէս որ շատ կարճ ու կտրուկ և տրամաբանական է թւում հետեւեալ դատողութիւնը, սեփականութեան հետ միշտ կապւած են եղել այնքան թշւառութիւններ, շահագործումներ, որ ուրեմն՝ կորչի՛ սեփականութիւնը։ Ազգութեան հետ միշտ կապւած են եղել այնքան ճնշումներ, պատերազմներ, կեղեքումներ, կողոպուտ ու հարստահարում, որ ուրեմն՝ կորչի՛ ազգութիւնը։ Բայց այս ոճով կարելի է շարունակել կնոջ ու սիրոյ հետ միշտ կապւած են եղել այնքան տառապանք, նախանձ, ատելութիւն, գազանութիւն ու սպանութիւն, որ ուրեմն՝ կորչի՛ կինն էլ, սէրն էլ։ Իսկ ուտե՞լը, ուտելու համար չէ՞ն բոլոր տնտեսական կռիւներն ու կեղեքումները, իբրեւ յօշոտելն ու իբրեւ ձեռքից յափշտակելը, և ուրեմն՝ կորչի՛ ուտելը։ Ոչ, սա արմատական մտածում չէ, այլ պարզապէս անարմատ մտածում է, այն էլ չափազանց միամիտ տեսակի։ Այս դատողութեամբ, եթէ կ'ուզէք, ձեզ ասեմ, ամենակարճ ու կտրուկ և ամենաարմատական միջոցը, ազատւելու համար ներկայ ու ապագայ բոլոր հոգսերից ու չարչարանքներից, ազատւելու միանգամայն և ընդմիշտ, դա «կորչի՛ կեանքն» է։

Մեկնաբանութիւնները աւելորդ են։ Շանթն իսկապէս իր գեղարւեստական ձեւով ըմբռնել և արտայայտւել է մարքսիստական փիլիսոփայութեան ամենամեծ հակասութիւնը, մէկ բան, որին մարքսիզմի քննադատները շատ աւելի ուշ անդրադարձան։

Հակադրութիւնների հակասութիւնները լուծելու համար մարքսիզմը ունի եւս մէկ միջոց: Դա նոյնութեան և հակասութիւնների օրէնքի ժխտումն է: Իրր թէ Հեգելը յաղթահարել է այդ օրէնքը և **դիալեկտիկա**ն չի ընդունում այն: Այդ պնդումը անհեթեթութիւն է, աւելին, անհեթեթութիւն բառի իմաստը բացատրւում է որպէս նոյնութեան և հակասութիւնների օրէնքի խախտում: Այս գաղափարին, այսինքն օրէնքի ժխտմանը մարդկութիւնը պարբերաբար դիմում է, երբ խճճւում է հակասութիւնների մէջ: Դրան դիմեցին սոփեստները, որոնք գիտակցաբար ուզում էին խճճել հակասութիւններում, դրան դիմում են նոյնիսկ որոշ ժամանակակից **ֆիզիկոս**ներ, որոնք անզօր են բացատրելու տարբեր յայտնագործութիւնները: Բայց հակասութիւնների օրէնքը հակասութիւնները արգելող մի օրէնք է: Նա երբեք չի հակասում զարգացման օրէնքին: Սակայն այդպէս չէր մտածում Էնգելսը, որ «Բնութեան **դիալեկտիկա**ն» աշխատութեան մէջ անդրադարձաւ այդ հարցին:

Մարքսիստական **դիալեկտիկա**յի սկզբունքը հիմնւում է հետեւեալ հիմնական թեզերի վրայ. բոլոր հակադրութիւնները ի վերջոյ յանգում են հակասութիւնների, հակասութիւնները լուծւում են հակադրւող կողմերի ոչնչացումով, հակասութիւնները ապահովում են զարգացումը: Բոլոր այս թեզերը կեղծ են: Ես արդէն ցոյց տւեցի, որ գոյութիւն ունեն հակադրութիւններ, որոնք երբեք չեն մտնում ոչ հակասութիւնների և ոչ էլ պայքարի մէջ, որ պայքարը միշտ չէ, որ տանում է դէպի զարգացում, այլ նոյն չափով հաւանական է պայքարից յետոյ անկումը:

Այստեղ ես ուզում եմ միայն նշել, որ **դիալեկտիկան** պարտաւոր չէ նկարագրել միայն զարգացումը: Ընդհակառակը, նա ուսումնասիրում է զարգացումը և անկումը միաժամանակ , նա չի կարող չտեսնել, որ գոյութիւն ունի արեւների և աստղերի մահ, ջերմութեան ցրում, **էնտրոպիա**յի, այսինքն քաոսի աւելացում և այլն: Էնգելսի լաւատեսական **դիալեկտիկան** այդ ամենի մասին ոչինչ չի ասում և այդ ամէնը ոչ մի կերպ չի բացատրում: Պատմութիւնը շատ մեծ կասկածների տակ դրեց նաեւ Հեգելի թեզը այն մասին, թէ զարգացումը ազատութիւնը գիտակցելու առաջադիմութիւնն է: Ի հարկէ, առաջադիմութիւն գոյութիւն ունի գիտութեան և **տեխնիկա**յի բնագաւառում, սակայն բարոյականութեան, իրաւունքի և նոյնիսկ արւեստի բնագաւառում առաջադիմութեան ներկայութիւնը մի քիչ կասկածելի է: Մեծ մշակոյթները զարգանում, ապրում են ծաղկուն շրջան և ոչնչանում են. նրանք ապրում են է՛ւ **պրոգրես**, է՛ւ **ռեգրես**, առաջադիմութիւն և յետադիմութիւն:

Մարքսիզմը փաստօրէն դաւանում է լուսաւորականների այն հաւատքը, թէ իրր մարդկութիւնը և տիեզերքը գնում են անկատար վիճակից դէպի կատարեալը: Բայց եթէ ֆրանսիական լուսաւորականները արտայայտում էին

միայն իրենց ցանկութիւնը, ապա մարքսիստները պնդում են այդ՝ առանց մտահոգւելու ապացուցել իրենց թեզը: Նրանք ապացոյցների կարիքը չունեն, քանզի այն, ինչ իրենք անում են՝ համարւում է առաջադիմութիւն: Ստեղծւել է այնպիսի մի կացութիւն, ուր առաջադիմութիւնը որոշւում է ոչ թէ նրանով, թէ որքանով յաջորդ աստիճանը արժէքաւոր է նախորդից, այլ նրանով, թէ ինչպիսի գնահատական են տալիս այդ աստիճանին իրենք՝ կոմունիստները:

Լենինը, օրինակ, ասում էր,- «Ինչո՞վ է տարբերւում **դիալեկտիկա**կան զարգացումը ոչ **դիալեկտիկա**կանից՝ թռիչքով, անընդհատութեան ընդհատումով: Եւ, ուրեմն, որտեղ գոյութիւն ունի թռիչք, այնտեղ կայ զարգացում»: Բայց թռիչք է նաեւ մահը, երկրաշարժից կամ ռմբակոծումներից քաղաքի անկումը: Այստեղ մարքսիստները առաջ են քաշում մի նոր թեզ, որը իբր թէ պէտք է բացատրի անընդհատութեան խախտումը: Դա որակի և քանակի օրէնքն է: Քանակը կարելի է անվերջ ենթարկել փոփոխութեան,- ասում են նրանք,- աւելացնել կամ պակասացնել և այդ փոփոխութեան ընթացքում՝ մէկ կէտում թռիչքաձեւ առաջանում է նոր որակ:

Քանակից որակին անցնելու օրէնքը Էնգելսը ձեւակերպում է այսպէս,- «Բնութեան մէջ կարող են տեղի ունենալ որակական փոփոխութիւններ ամէն մի դէպքի համար միայն որոշակի քանակական փոփոխութիւնների հետեւանքով»: Բայց այդ դէպքում անհրաժեշտ է ցոյց տալ, թէ ո՞ր քանակների և որակների մասին է խօսքը: Օրինակ, **մոլեկուլ**ների և **ատոմ**ների ո՞ր քանակն է, որ առաջացնում է կենդանի բջիջ: Եւ հէնց այստեղ պարզւում է, որ **ատոմ**ների քանակի ոչ մի տեսակ աւելացում ի վիճակի չէ ինքնըստինքեան ստեղծել կենդանի բջիջ: Մենք նոյնիսկ կարող ենք մօտաւորապէս հաշւել, թէ քանի **մոլեկուլներ**ներից է բաղկացած այդ կենդանի բջիջը, բայց դրանից հնարաւոր չէ որեւէ եզրակացութիւն կազմել կեանքի էութեան մասին, առաւել եւս անհնարին է մշակել արհեստական բջիջ ստեղծելու մի որեւէ քանակական եղանակ:

Ըստ երեւոյթին, էութիւնը ոչ թէ քանակի, այլ յատուկ ձեւի կապերի և դասաւորւածութեան մէջ է: Այն ձեւերի և **մոլեկուլեար** ոյժերի փոխազդեցութեան, որը անհնարին է արտայայտել **ֆիզիկո-քիմի**ական լեզւով: Նոյն վիճակում է գտնւում թռիչքը մարմնական կեանքից դէպի հոգեկան կեցութիւնը: Ուղեղի բջիջների ոչ մի հաշւարկ չի կարող բացատրել հոգեբանութիւնը, քանզի այնքան ժամանակ, քանի դեռ մենք կատարում ենք քանակական հաշւարկներ, մենք գտնւում ենք **ֆիզիոլոգիա**յի մակարդակի վրայ, որը ոչ մի կերպ չի բացատրում ոչ հայրենասիրութիւնը, ոչ ինքնասպանութիւնը, ոչ իշխանութիւնը և ոչ էլ որեւէ զուտ մարդկային, բայց ոչ մարմնական երեւոյթ: Այստեղ թռիչքը յատկապէս զարմանալի է, որովհետեւ հոգեբանական երեւոյթները տարածութեան մէջ շարժումներ չեն և «հաշւել» նրանց անհնարին է:

Եթէ շարունակենք մեր օրինակները, ապա կարելի է ասել, որ աղիւսների ոչ մի տեսակ աւելացումներով կամ պակասեցումով չի կարելի բացատրել և ստեղծել ճարտարարուեստ: Ճարտարարուեստը նոր **կատեգորիա** է, այն էլ ոչ թէ **ֆիզիկ**ական, այլ **էսթետիկ**ական: Ի հարկէ, կարելի է ասել, և դա ճիշտ կը լինի, որ ճարտարուեստը իր սեփական նպատակների համար օգտագործում է այսքան քանակի աղիւս, որ նկարիչը օգտագործում է այսքան քանակի ներկեր, որ կենդանի բջիջը կառուցած է այսքան կենդանի **մոլեկուլ**ներից և, վերջապէս, որ հոգեբանութիւնը օգտւում է նեարդներից և ուղեղի բջիջներից, բայց բոլոր այս քանակները երբեք չեն կազմում որակի էութիւնը:

Այս աստիճանական բարձրացումը կարելի է շարունակել: Հասարակական կեցութիւնը, տնտեսութիւնը, իրաւունքը, պետութիւնը, մշակոյթը, մի խօսքով այն, ինչ որ Հեգելը անւանում էր **«օբեկտիւ ոգի»**, նոյնպէս օգտւում է աւելի ցածր կանգնած **կատեգորիա**ներից: Բարձր կանգնածը միշտ ցածր կանգնածի ձեւն է, իսկ ձեւը երբեք չի կարելի ստանալ քանակից: Կեցութեան ցածր աստիճաններից դէպի բարձրին անցումը **իրրացիոնալիզմ** է՝ չլուծած խնդիր: Բայց մարքսիզմը սարսափելի վախենում է բոլոր տեսակի չլուծած գաղտնիքներից և փորձում ապացուցել, որ **դիալեկտիկա**յի համար ամէն ինչ պարզ է, **ռացիոնալ**:

Կասկած չկայ նրանում, որ այդ հարցում մեծ մեղք ունի Հեգելը: Նա փորձեց անցողիկ բոլոր աստիճաններին տալ **ռացիոնալ** տեսք: Նա ուզում էր ստեղծել բոլոր երեւոյթները բացատրող **իդէալիստ**ական մի **ռացիոնալ** սիստեմ: Սակայն փիլիսոփայութիւնը այսօր յանգում է այն կարծիքին, թէ Կանտի «իրը ինքնին» աւելի ճիշտ էր բացատրում չլուծած խնդիրները: Մարքսիստները, ընդօրինակելով իրենց ուսուցչի թերութիւնները, ստեղծեցին մի ուրիշ **մոնիս-տ**ական տեսութիւն: Եթէ Հեգելի **մոնիզմ**ը հիմնուած էր բացարձակ ոգու վրայ, ապա մարքսիստական **մոնիզմ**ը հիմնւում է բացարձակ նիւթի՝ **մատերիա**յի վրայ:

Այսպիսով ստեղծուեցին երկու հակադիր տեսութիւններ, որից մէկը ամբողջ կեցութիւնը բացատրում է բարձրագոյն ձեւի միջոցով, այսինքն տիեզերական բանականութեամբ, միւսը ցածրաստիճան ձեւի միջոցով, այսինքն նիւթով: Բացատրութիւնը ներքեւից, որին դիմեց Մարքսը, իսկ հետագայում էլ Ֆրոյդը, գայթակղիչ է այն իմաստով, որ ներքեւի **սուբստրատը**, ըստ երեւոյթին, կարելի է յայտնաբերել բոլոր բարձրագոյններում: Իսկ բացատրութիւնը վերեւից ունի այն առաւելութիւնը, որ ցածր աստիճանների վրայ բացակայում է բարձրագոյնը և ուրեմն այդ բարձրը չի կարող բացատրւել ցածրի միջոցով: Անիւը չի պարունակում իր մէջ **աւտոմեքենա** հասկացութիւնը, բայց **աւտոմեքենան** պարու-

նակում է իր մէջ անիւ հասկացութիւնը։ Այդ իմաստով, **իդէալիստ**ական **մոնիզմ**ը աւելի խորն է։ Սակայն նա էլ չի կարող համարւել բաւարար։

Բանը նրանումն է, որ բոլոր բարձրագոյն ձեւերը կառուցւում են ցածրերի միջոցով, ինչպէս, օրինակ՝ շէնքը կառուցւում է աղիւսներից։ Ոչինչից, այսինքն ինքն իրենից չի կարող կառուցւել ձեւ։ Բարոյականութիւնը, արւեստը, իրաւունքը պահանջում են ներքնաշէնք, բայց ներքնաշէնքի օրինաչափութիւններից անհնարին է գաղափար կազմել վերնաշէնքի օրէնքների մասին։ Ձայնի ալիքի ամենամանրամասն ուսումնասիրութիւններից չի կարելի դուրս բերել երաժշտական **հարմոնիա**յի օրինաչափութիւնները։ Սակայն ճիշտ այդպէս էլ՝ երաժշտական կանոններից անհնարին է որեւէ եզրակացութիւն հանել ձայնի **ֆիզիկա**յի մասին։

Այդ է պատճառը, որ, չնայած **իդէալիստ**ական **մոնիզմ**ի առաւելութիւններին, մարդիկ ստիպւած եղան հրաժարւելու նաեւ նրանից։ Անհնարին է խուսափել հակասութիւններից, եթէ ընդունւի որեւէ միտում՝ **իդէա**յի կամ **մատերիա**յի բացարձակութիւնը։ Բոլոր այդ **«իզմ»**երի փոխարէն անհրաժեշտ է ընդունել բացարձակ կեցութիւնը, որը պարունակում է իր մէջ և՛ նիւթը, և՛ **իդէա**ն, այսինքն կեցութեան բոլոր ձեւերը։ «Եթէ դուք ընդունում էք,- ասում է Լենինը,- որ այն, ինչ որ դուք ընկալում էք, մեզնից անկախ է, ապա դուք **մատերիալիստ** էք»։ Ամենեւին էլ ո՛չ։ Այն, ինչ որ մենք ընկալում ենք, չի սահմանափակւում նիւթով։ Մենք ընկալում ենք նաեւ թիւը, ձեւը, իրաւունքը, բարոյականութիւնը և նոյնիսկ ուրիշի մտքերը, որոնք շատ հեռու են նիւթ լինելուց։ Մի խօսքով, հրաժարւել **օբեկտիւ իդէալիստ** Հեգելից, **սուբեկտիւ իդեալիստ**ներ Բերկլիից, Հումից և Մախից, դա դեռ չի նշանակում ընկնել մարքսիստների գիրկը։ Բայց, դժբախտաբար, այդպէս են վարւում շատերը և գուցէ դրանում է մարքսիզմի որոշ չափով լայն տարածման գաղտնիքը։

Սակայն հարցը միայն **տերմինի** մէջ չէ։ Բացարձակ կեցութիւնը անւանել **մատերիա** չի կարելի այն պարզ պատճառով, որ **մատերիա** ընդունւած է կոչել այն ամէնը, ինչ որ նիւթական է և տարածական։ Իսկ բացարձակ կեցութիւնը պարունակում է իր մէջ նաեւ ոչ-տարածական հասկացութիւններ։ Բայց հէնց այդ տարածական իմաստով են մարքսիստները օգտագործում **մատերիա** բառը, սեփական տեսութիւնը դարձնելով գռեհկաբանութիւն։ Ե՛ւ Մարքսը, և՛ Էնգելսը, և՛ Լենինը **մատերիա**յի տակ հասկանում են զգայարաններով շօշափելի մի մարմին։

Օրինակ, Էնգելսը 1894 թւականին «Լուդւիդ Ֆոյերբախ» աշխատութեան մէջ գրում էր. «Նիւթական զգայարաններով ընկալւող աշխարհը, որին մենք ինքներս պատկանում ենք, միակ իրականութիւնն է, և որքան էլ որ մեր գիտակցութիւնը և բանականութիւնը թւան գերզգացողական, նրանք, այնուամե-

նայնիւ, ուղեղ մարմնական օրգանի արտադրանքներն են»: Իսկ Մարքսի գոեհկաբանութիւնը գնում է աւելի հեռուն: Նա համարում է, որ մարդու աշխատանքի ամբողջ ընթացքը մկանների և ուղեղի ոյժերի վատնում է: Ուսուցիչներին նա անւանում է աշխատակիցներ, «որոնք երեխաների գլուխները լցնում են գիտելիքներով, ճիշտ այնպէս, ինչպէս որ մսագործները երշիկները լցնում են մսով»:

Չնայած նրան, որ մարքսիստները ձեւականօրէն հրաժարւեցին հին, այսպէս կոչւած **վուլգար մատերիալիզմ**ից, նրանք փաստօրէն ոչնչով չեն տարբերւում իրենց նախահայրերից: Այդ իմաստով բաւականին արժէքաւոր պէտք է համարել Լենինի հետեւեալ խոստովանութիւնը, որը նա արել է «Մարքսիզմ և Էմպիրիոկրիտիզմ» աշխատութեան մէջ. **«Մատերիալիզմ**ի հիմնական հարցերում ոչ մի տարբերութիւն չկայ մէկ կողմից Մարքսի ու Էնգելսի և միւս կողմից էլ մնացած բոլոր **մատերիալիստ**ների միջեւ: Այդ տարբերութիւնը չկայ և չի էլ կարող լինել»: Դրանից յետոյ զուր են մարքսիստները ասում, որ **դիալեկտիկան** թոյլ չի տալիս կեցութեան բարձրագոյն աստիճանները հաւասարեցնել ցածրերին: Պնդել, որ **մատերիա**ն առաջնակարգ է, իսկ գիտակցութիւնը՝ երկրորդական, նշանակում է հաւասարեցնել կեցութեան տարբեր աստիճանները: Բայց ինչ վերաբերւում է **մատերիա**յին՝ բառի նեղ իմաստով, այն **մատերիա**յին, որը ուսումնասիրւում է գիտութեան կողմից, ապա, ի հարկէ, ոչ Մարքսը և ոչ էլ Էնգելսը չէին կարող իմանալ, թէ ինչպիսի ճգնաժամ է նա ապրում այսօր: Այդ ճգնաժամը սկսւեց այն ժամանակ, երբ **ֆիզիկոս**ները **մատերիա**ն դարձրին **էներգիա** և յայտարարեցին, որ **մատերիա**ն անյայտանում է: Այն ժամանակ Լենինը շատ էր անհանգստացած նիւթի ճակատագրով և շտապեց բոլոր այդ **ֆիզիկոս**ներին մեղադրել **իդէալիզմ**ի մէջ: Սակայն ճգնաժամը դրանից չվերացաւ:

Մինչեւ այսօր **ֆիզիկոս**ները ամէն քայլափոխում բախւում են այնպիսի երեւոյթների հետ, որոնք ոչ մի կերպ չեն բացատրւում **մատերիալիստ**ական դիրքերից: Եւ՝ զարմանալի բան: Թւում էր, թէ հէնց **մատերիալիստ**ները պէտք է ամենից լաւ ճանաչեն **մատերիա**ն, բայց փորձը ցոյց է տալիս հակառակը:

Այժմէական նիւթի կառուցւածքի մասին պատկերացումները շատ հեռու են այն միամիտ **մատերիալիզմ**ից, որը այսօր կոչւում է արտացոլման տեսութիւն: «Պէտք է հարցնել,- ասում է Լենինը,- գոյութիւն ունե՞ն արդեօք **էլեկտրոն**ը, եթերը և այլն մարդու գիտակցութիւնից անկախ, որպէս առարկայական իրականութիւն»: Այս հարցին բնագէտները առանց տատանւելու տալիս են դրական պատասխան: Իսկ դրանում ոչ ոք էլ չի կասկածում: Այո, այդ **ռեալիստ**ական տեսակէտի վրայ **ֆիզիկա**ն, որպէս գիտութիւն, կանգնած է հազարամեակներից ի վեր և միշտ էլ կը մնայ կանգնած այդ դիրքերի վրայ: Նա երբեք չի

կասկածում, որ ուսումնասիրում է առարկայական իրականութիւնը: Բայց նա կասկածում է, թէ ինչպիսի՞ն է այդ իրականութիւնը: **ֆիզիկա**ն վաղուց և անվերադարձ հերքել է այն գաղափարը, թէ իբր մեր զգայարանները լուսանկարում և արտացոլում են իրականութիւնը ճիշտ այնպէս, ինչպէս որ նա կայ:

Կարելի է ասել, որ գիտութեան յաջողութիւնները և ամբողջ ճանապարհը լեցուն են արտացոլման տեսութեան պատկերացումների հերքումներով: Առարկայօրէն գոյութիւն ունի ամենեւին էլ ոչ այն, ինչ մենք տեսնում, պատկերացնում և զգում ենք:

Այդ ամէնը նշաններ, խօսքեր, հաւասարումներ և հասկացութիւններ են, որոնք միայն ապացուցում են իրերի առարկայական գոյութիւնը, բայց ոչ նրանց էութիւնը: Իսկ եթէ մենք դէն նետենք արտացոլման տեսութիւնը, թողնելով միայն առարկայականութիւնը, ապա անմիջապէս ստիպւած կը լինենք համաձայնւելու Կանտի հետ, որը հակադրում էր էութիւնը երեւոյթին:

Լենինը ինքը ստիպւած է որոշ իմաստով հաշտւել էութեան անճանաչելիութեան հետ: Նա գրում է,- «Մարդու միտքը անվերջ խորանում է երեւոյթից դէպի էութիւնը և այլն, անվերջ»: Այստեղ ամէն ինչ ասւած է: Աւելի լաւ վերականգնել Կանտի տեսութիւնը հազիւ թէ հնարաւոր լինէր: Սակայն Էնգելսը այդ հարցում աւելի յամառ է. նա ասում է,- «Եթէ մենք կարողանում ենք ապացուցել տւեալ երեւոյթի իրականութիւնը նրանով, որ ինքներս ենք ստեղծում այն, առաջանալու համար ստեղծում ենք համապատասխան պայմաններ, ստիպո՛ւմ ենք երեւոյթին ծառայել մեզ, ապա Կանտի անտեսանելի «ինքնին իրի» վերջն է գալիս»:

Այս մեկնաբանութիւնը առանձնապէս դուր է գալիս **դիալեկտիկ**ներին և նրանք Էնգելսի այս միտքը տարբեր ձեւով օգտագործում են իրենց գրականութեան մէջ: Բայց էնգելսեան այդ թեզը բոլորովին սխալ է: Վայրենին կրակ է վառում՝ ոչ մի պատկերացում չունենալով ոչ կրակի էութեան և ոչ էլ ջերմափոխանակութեան օրէնքների մասին: Ամէն քայլափոխում մարդիկ օգտագործում են լծակները՝ ոչ մի գաղափար չունենալով լծակի օրէնքի մասին: Եւ այդպէս է ոչ միայն վայրենու վիճակը: Ժամանակակից քաղաքակիրթ մարդը ամէն օր օգտագործում է լոյս, հեռուստացոյց և ինքնաթիռ, բայց նրանից շատ քչերն են պատկերացնում օգտագործւելիք երեւոյթների էութիւնը: Եւ անճանաչելի երեւոյթների թիւը անվերջ է: Միայն կիսագրագէտ և ինքնահաւան մարդիկ կարող են հաւատալ, ինչպէս գրւած է 1939 թւականի «Փիլիսոփայական բառարանում», որ գիտութեան զարգացման հետ միասին անճանաչելի երեւոյթների քանակը աւելի ու աւելի է պակասում:

Լենինը, անհանգստանալով **մատերիա**յի ճակատագրի մասին, **ատոմ**ները ուսումնասիրող **ֆիզիկոս**ներին յայտարարեց **իդէալիստ**ներ: Դա, ի հարկէ,

վիրաւորանք չէր, սակայն այն մթնոլորտը, որը ստեղծելու էին մարքսիստները, այդ **ֆիզիկոս**ներին դարձնում էր գրեթէ յանցագործներ: Սակայն, բացի այդ, անհիմն մեղադրանքի հետ Լենինը ժամանակակից գիտութեանը կարող էր առաջարկել միայն մէկ բան, որ աշխարհը իրօք գոյութիւն ունի անկախ մեր պատկերացումներից: Բայց **ֆիզիկոս**ների մեծամասնութիւնը դա առանց Լենինի էլ ընդունում է, քանզի գիտութիւնը ընդհանրապէս կանգնած է **ռեալիստ**ական դիրքերի վրայ: Եթէ **մատերիա**յի միակ յատկութիւնը, որի ճանաչումը մեզ դարձնում է **մատերիալիստ**ներ, նրա առարկայականութիւնն է, ապա փիլիսոփայական **մատերիալիզմ**ը ոչինչ չի կարող առաջարկել գիտութեանը, քանզի նա միայն կրկնում է այն, ինչ բխում է հասարակ տրամաբանութիւնից, առանց որեւէ գիտութեան ու փիլիսոփայութեան:

Ֆիզիկական հետաքրքրուած է նրանով, թէ ինչպիսի՞ն է այդ առարկայական իրականութիւնը, նա արդեօք բաղկացա՞ծ է անթափանցելի մասնիկներից, թէ նրա էութիւնը կազմուած է եթերի ալիքներից: **Ֆիզիկայ**ի համար **մատերիա**ն չի սահմանափակւում առարկայական իրականութեամբ, քանզի դատարկ տարածութիւնը նոյնպէս առարկայական է և **մատերիայ**ից էլ շատ աւելի տարածուած: Այդ իմաստով, Լենինի **մատերիալիստ**ական միտումը, թէ աշխարհում, բացի **մատերիայ**ից, ոչինչ գոյութիւն չունի, կեղծ է: Ի՞նչ է **մատերիալիստ**ների համար տարածութիւնը: Այդ հասկացութեան համար նրանք յօրինել են շատ միամիտ սահմանում: Տարածութիւնը **մատերիա**յի յատկութիւն է,- ասում են նրանք: Բայց չէ՞ որ դատարկ տարածութիւնը հէնց այնքանով է դատարկ, որ չի պարունակում իր մէջ **մատերիա**:

Տարածութիւնը **մատերիա**յի յատկութիւն չէ, որովհետեւ երկրաչափութիւնը բացայայտում է նրա օրինաչափութիւնները, առանց օգտւելու **մատերիա**յից: Ընդհակառակը, **դիալեկտիկա**ն պահանջում է, ամէն մի էութիւն ճանաչելու համար, հակադրել այն մի ուրիշ էութեան: **Մատերիա**ն հակադրութիւն է այն ամենի, ինչ **մատերիա** չէ: Եւ ուրեմն գոյութիւն պէտք է ունենայ նաեւ ոչ-**մատերիա**: Գոյութիւն ունի նաեւ մի ուրիշ հակադրութիւն: Դա **մատերիա**յի և ձեւի հակադրութիւնն է, որը հռչակեց Արիստոտելը և որը ընդօրինակեց նրանից Հեգելը: Առանց այդ հակադրութեան անհնարին է զարգացումը, որովհետեւ **մատերիա**յի զարգացումը նրա մէկ ձեւից միւսին անցումն է:

Ֆիզիկան ուսումնասիրում է **մատերիա**յի տարբեր մակարդակի վրայ գտնուող ձեւերը: Իսկ ամենացածրագոյն ձեւը Արիստոտելը համարում էր անճանաչելի և անւանում էր այն «տպէյրոն»: Այդ իմաստով Արիստոտելը աւելի մօտ էր կանգնած ժամանակակից գիտութեանը, քան **մատերիալիստ**ներ Մարքսն ու Էնգելսը:

Բ.

Մարմնի և հոգու յարաբերութեանց հարցը փիլիսոփայութեան հնագոյն հարցերից մէկն է: Միամիտ, այսպէս կոչուած **«Նաիւ» մատերիալիզմի** համար հոգի գոյութիւն չունի, կայ միայն մարմին: **«Դիալեկտիկական մատերիալիզմը»** պնդում է, որ գոյութիւն ունի միայն **մատերիա**յի շարժում, իսկ գիտակցութիւնը այդ շարժման ձեւերից մէկն է: Այդ պնդումը ըստ էութեան **դիալեկտիկ**ական չէ, քանզի նա փորձում է հակադրութիւններից մէկը բացատրել միւսով: Բայց հակադրութիւնները հէնց նրանով են հակադրութիւն, որ մէկը չի կարող գոյութիւն ունենալ առանց միւսի: Ոչնչացնելով հոգին, մենք իմաստազրկում ենք նիւթը: Նիւթի և հոգու խնդիրը սպառիչ կերպով ձեւակերպել էին Դեկարտը, Սպինոզան, Լայբնիցը: Վերջինս, օրինակ, ունի ուղեղի և ժամացոյցի հիանալի համեմատութիւն: Նա ասում է, որ ուղեղի ուսումնասիրութիւնը ոչինչ չի կարող տալ գիտակցութիւնը բացատրելու համար: Մենք կարող ենք,- ասում է նա,- մտնել ժամացոյցի մէջ և ուսումնասիրել անիւների շարժումը, բայց ոչ մի գիտակցութիւն այնտեղ մենք չենք գտնի: Ժամանակակից գիտութեան յայտնագործութիւնները, յատկապէս **ֆիզիկա**յի և հոգեբանութեան բնագաւառներում, բացում են նոր ճանապարհներ նիւթի և հոգու խնդիրը լուծելու համար: **Էլեկտրոն**ները և **պրոտոն**ները անգիտակցաբար գործող ոյժերի կենտրոններ են:

Սակայն անգիտակից, բայց նպատակասլաց պէտք է համարել նաեւ օրգանական աշխարհի ցածրագոյն ձեւերը: Այդ կենտրոնները, չբաժանելով օրգանականի և անօրգանականի, Լայբնիցը անւանում էր «**մոնադ**»ներ: Վերագրել այդ **մոնադ**ներին հոգեբանութիւն՝ դժւար էր այնքան ժամանակ, քանի դեռ հոգեբանութեան տակ մենք հասկանում էինք գիտակցութիւն: Բայց ահա հոգեբանները բացայայտեցին անգիտակցականի գոյութիւնը և Լայբնիցի **«մոնադ»**-ները ստացան միս ու արիւն:

Այդ սկզբնական կէտերը չի կարելի անւանել ոչ **մատերիա** և ոչ էլ գիտակցութիւն: **Մատերիա** լինելու համար նրանք շատ ինքնուրոյն են, իսկ գիտակցութեան համար՝ տարածական: Եթէ ընդունենք **մոնադ**ների գոյութիւնը, ապա հաւասարաչափ բացառւում է ե՛ւ **մատերիալիզմ**ը, ե՛ւ **սպիրիտուալիզմ**ը: **Դիալեկտիկա**ն բացառում է բոլոր «իզմերը»: Լենինը տրամաբանում է մօտաւորապէս՝ կա՛մ **մատերիալիզմ**, կա՛մ **իդէալիզմ**: Միանգամայն ճիշտ է՝ բոլոր «իզմերը» բացառում են մէկը միւսին: Բայց **իդէա**ն և **մատերիա**ն ոչ թէ բացառում են մէկը միւսին, այլ երկուսն էլ անջատւում են մի ընդհանուր առարկայական կեցութիւնից: Ռուս փիլիսոփա Լոսսկին այս տեսաննկիւնը անւանում է - «իդէալ-ռէալիզմ», իսկ պրոֆեսոր Վիշեսլաւցեւը՝ **«դիալեկտիկական օնտոլոգիա»**:

Պէտք է ասել, որ մարմնի և հոգու խնդրի այս ձեւի լուծումը կարելի է համարել միայն փիլիսոփայական **հիպոտեզ**, որը դեռ կը ճշտի բնագիտութիւնը։ Սակայն մօտեցումը հետաքրքրական է այն իմաստով, որ պարզ ցոյց է տալիս մարքսիզմի տկարութիւնը՝ որեւէ ելք գտնել այն փակուղուց, ուր նրան բերել է մարմնի և հոգու խնդիրը։ Բայց մարքսիզմի ներքին հակասութիւնները աւելի խորն են ազատութեան և անհրաժեշտութեան հարցում։

Մարքսիստական այսպէս կոչուած **դիալեկտիկա**յի համար ամենածանր փորձութիւնը, իրապէս, Կանտի կողմից առաջ քաշուած անհրաժեշտութեան և ազատութեան խնդիրն է։ Աչքի է ընկնում այն փաստը, որ մարքսիզմը ուշադրութիւն է դարձնում միայն հարցի մէկ կողմին։ Նա ընդունում է երեւոյթների պատճառային անհրաժեշտութեան **թեզը**, բայց խուսափում է ազատ նպատակասլացութեան **անտիթեզից**։ Միայն պատճառ-հետեւանք կապերից կազմուած նախորոշեալ աշխարհն է թւում նրա համար իրական և այդ կապերը ուսումնասիրող **մատերիալիզմը**՝ միակ իսկական գիտութիւն։ Խօսել ազատ ընտրութեան, նպատակներ ձեւակերպելու, բարոյական իդէալների մասին՝ նրան թւում է ոչ գիտական։

«Գիտական» **սոցիալիզմ**ը պնդում է, որ **կապիտալիստ**ական արտադրութեան բնական օրինաչափութիւնները իրականանում են երկաթեայ անհրաժեշտութեամբ։ Այսինքն, հասարակարգերի զարգացումը ընթանում է այնպիսի օրինաչափութիւնների համաձայն, որոնք անհնարին է փոխել և որոնց սահմաններից անհնարին է դուրս գալ։

Մարդու ազատութիւնը և կամքը այստեղ անզօր են որեւէ բան անել։ Ոչ թէ մարդկանց գիտակցութիւնն է որոշում նրանց կեցութիւնը, այլ կեցութիւնն է որոշում գիտակցութիւնը։

Բայց այս թեզերի վրայ չի կարող դիմանալ **դիալեկտիկա**ն։ Յիրաւի, եթէ **կապիտալիզմ**ը անխուսափելիօրէն ծնում է **պրոլետարիատ**, իսկ **պրոլետարիատը**՝ **սոցիալիստ**ական հասարակարգ, ապա բոլորովին աւելորդ է կուսակցութիւն ստեղծելը և **սոցիալիզմ**ի համար պայքարելը։ Չէ՞ որ մենք չենք ստեղծում ձմեռը ամառով փոխարինելու համար կուսակցութիւններ։

Մարքսիստները այս դժւարութիւնից դուրս գալու համար անում էին տարբեր փորձեր։ Եւ իրենց թւաց, որ ելքը գտնւած է, այսպէս կոչւած «աջակցութեան» տեսութեան մէջ։ Նրանք ասում են, որ, օրինակ, ծնունդը անհրաժեշտ է, բայց այդ անհրաժեշտութեանը կարելի է աջակցել բժիշկների և քոյրերի միջոցով։ Իբր թէ այդպէս էլ **սոցիալիզմ**ը անհրաժեշտ է, բայց կուսակցութիւնը բժշկի նման պարտաւոր է աջակցել։ Բայց այս համեմատութիւնը ոչինչ չի բացատրում։

Էութիւնը կայանում է նրանում, թէ արդեօք բնութեան բոլո՞ր երեւոյթներն են խիստ նախորոշուած։ Եթէ այո, ապա աջակցութիւնը անմտութիւն է, եթէ ոչ, ուրեմն՝ գոյութիւն ունի ազատութեան ոլորտ և միայն այդ դէպքում աջակցութիւնը հնարաւոր է։ Եւ քանզի գոյութիւն ունի աջակցութեան ազատութիւնը, անմիջապէս ի յայտ է գալիս չարի և բարու բարոյական խնդիրը։ Օրինակ, մարդու մահը՝ անհրաժեշտութիւն է, բայց դրանով երբեք չի կարելի արդարացնել աջակցութիւնը, այսինքն՝ մարդասպանութիւնը։ Եւ նոյնիսկ ծնունդի ժամանակ գոյութիւն ունի աջակցութեան ազատութիւն՝ օգտագործելիք միջոցների իմաստով, իսկ յաճախ անհրաժեշտ է լինում ընտրութիւն կատարել մո՞ր թէ երեխայի կեանքի փրկութեան հարցում։

Աջակցութեան տեսութիւնը անմտութիւն է, որովհետեւ բնութեան անհրաժեշտութիւնը և բարոյական ազատութիւնը քայլում են կողք-կողքի և դրա հետ միասին բացառում են մէկը միւսին։

Ազատութեան անհրաժեշտութեան հակասութիւններից դուրս գալու համար, մարքսիստները առաջ են քաշում հետեւեալ թեզը։ Ազատ ընտրութիւնը, վերջին հաշուով,- ասում են նրանք,- կարելի է բացատրել պատճառների միջոցով։ Մենք այնքանով ենք ազատ,- համարում են նրանք,- որքանով որ անյայտ են մեզ համար պատճառները։ Ուրիշ խօսքով, մեր ազատութիւնը մեր տգիտութիւնն է։

Պէտք է ասել, որ այստեղ էլ մարքսիստները ինքնատիպ չեն։ Սա Սպինոզայի գաղափարն է։ Այդ նա՛ էր ասում, որ «պատճառների աւելի խորն ուսումնասիրութիւնը և նրանց ճանաչումը ոչնչացնում է ազատութեան պատրանքը»։ Երեխան այնքան ժամանակ է գործում ազատ, քանի դեռ չգիտի, թէ ինչպիսի վտանգներ գոյութիւն ունեն այս կամ այն ուղղութեամբ։ Եթէ այս միտումը համապատասխանէր իրականութեանը, ապա մենք ձեռք բերած գիտելիքների հետ միասին պէտք է կորցնէինք մեր ազատութիւնը։ Այդ դէպքում մենք պէտք է համարէինք, որ նախնադարեան վայրենիները աւելի ազատ էին, քան ժամանակակից քաղաքակիրթ մարդը։

Մարքսիստները այդպէս էլ ասում են, վայրենիների կեցութիւնը համարելով նախնադարեան կոմունիզմ։ Բայց իրականում տեղի է ունենում ճիշտ հակառակը։ Որքան աւելի ենք խորանում պատճառների մէջ, որքան աւելի լաւ ենք ճանաչում նրանց էութիւնը, այնքան աւելի մեծ հնարաւորութիւններ ենք ստանում նրանց վրայ իշխելու համար, այնքան աւելի շատ է լայնանում մեր իշխելու ազատութիւնը, որովհետեւ ամէն մարդ կարող է ճիշտ այնքան, որքան որ գիտէ։ Մենք ճանաչեցինք **ակրոդինամիկան** և ստեղծեցինք տիեզերագնացութիւն, ճանաչեցինք **հիդրոդինամիկան** և կառուցեցինք սուզանաւեր։

Այս ամէնը, ի հարկէ, չեն կարող չհասկանալ մարքսիստները, բայց նրանց հիմնական սխալը և հակասութիւնների աղբիւրը կայանում է նրանում, որ նրանք ոչ մի տարբերութիւն չեն տեսնում բնական և բարոյական անհրաժեշտութիւնների միջեւ: Այսինքն, նրանք չեն տարբերում երեւոյթի պատճառային պայմանաւորուածութիւնը պահանջւելիք անհրաժեշտութիւնից: Պատճառային անհրաժեշտութիւնը դեռ ոչինչ չի ասում երեւոյթի գնահատականի մասին: Եւ այդ տարբերութիւնները չտեսնելը կազմում է մարքսիզմի փիլիսոփայական հիմնական թերութիւնը:

Մարքսիզմը, օրինակ, պնդում է, թէ **կապիտալիզմը անհրաժեշտաբար** ստեղծում է պրոլետարիատ, որը **անհրաժեշտաբար** ոչնչացնում է **կապիտալիզմը**: Այստեղ այս երկու «անհրաժեշտաբար» բառերը ունեն բոլորովին տարբեր իմաստներ: Առաջինը պատճառային է, իսկ երկրորդը՝ բարոյական:

Իսկապէս, **կապիտալիզմը** անհրաժեշտաբար ստեղծում է գործարաններում աշխատող բանւոր դասակարգ: Բայց **պրոլետարիատը** որոշում է կատարել յեղափոխութիւն, ելնելով բարոյական և տրամաբանական անհրաժեշտութիւնից, ղեկավարւելով կոմունիզմ կառուցանելու նպատակով: Պատճառային անհրաժեշտութիւնը կարող է միայն բացատրել, բայց ոչ արդարացնել հետեւանքը:

Անձրեւի միջոցով կարելի է բացատրել ջրհեղեղը, բայց երբեք չի կարելի արդարացնել նրանից առաջացած աղէտները: Եթէ Մարքսը ինքը արդարացնում է յեղափոխութիւնը, ապա միայն նրա համար, որ **սոցիալիզմը** նա ընկալում է որպէս բարոյական անհրաժեշտութիւն, իսկ **կապիտալիզմը** որպէս անբարոյական հասարակարգ: Եթէ Սպինոզան պահանջում էր ուսումնասիրել երեւոյթների պատճառները, առանց «ծաղրելու և սգալու» նրանց վրայ, ապա Մարքսը, հակառակը, անընդհատ ծաղրում և սգում է երեւոյթների վրայ: Ամբողջ «Կոմունիստական մանիֆեստը» լի է տարբեր երեւոյթների բարոյական գնահատականներով: Եւ, չնայած դրան, տեսականօրէն մարքսիստները իրենց համարում են միայն պատճառային անհրաժեշտութեան կողմնակիցներ:

Արդէն վաղուց նկատւել էր, որ գոյութիւն ունի երկու մարքսիզմ: Մէկը պնդում է, որ կեցութիւնն է որոշում գիտակցութիւնը և, ուրեմն, **սոցիալիզմի** գալուստը բնական անհրաժեշտութիւն է: Սա **«Կապիտալի»** մարքսիզմն է: Միւսը համարում է, որ գիտակցութիւնն է որոշում կեցութիւնը և, ուրեմն, մարդը ի վիճակի է ազատւելու տնտեսական ստրկութիւնից և իր ձեռքը վերցնելու արտադրական ոյժերը և արտադրական յարաբերութիւնները: Սա **«Կոմունիստական մանիֆեստի»** մարքսիզմն է: Երկու մարքսիզմներն էլ ստեղծել է ինքը՝ Մարքսը: Առաջինը նա առաջ քաշեց յեղափոխութեան պարտութեան տարիներին որպէս մխիթարանք, թէ միեւնոյնն է, բնական անհրաժեշտութիւնը ան-

խուսափելիօրէն կը բերի **սոցիալիզմ**։ Իսկ երկրորդը առաջ քաշուեց որպէս նոր յեղափոխութեան կոչ, որպէս յեղափոխական քարոզ։

Սակայն, որպէս աշխարհակառոյցի տեսակէտ, որպէս տեսութիւն փիլիսոփայական իմաստով՝ առաւելութիւնը միշտ էլ առաջին մարքսիզմի կողմն էր։ Եւ դրա համար էլ նա կոչուեց **մատերիալիզմ**։ Բայց այդ **մատերիալիզմ**ը ոչ մի կերպ չէր կարող հիմք ծառայել երկրորդ՝ յեղափոխական մարքսիզմի համար, որը լրիւ **իդէալիստ**ական էր և հիմնւում էր աւելի շատ Կանտի և Ֆիխտէի, քան մարքսիստական **մատերիալիզմ**ի վրայ։

Ազատութեան և անհրաժեշտութեան խնդիրները Էնգելսը քննարկում է իր «**Անտի-Դիւրինգ**» աշխատութեան մէջ։ Նա ընդունում է, որ «ազատութեան թագաւորութեան» հետ միասին գոյութիւն ունի «բնական անհրաժեշտութեան թագաւորութիւն»։ Եթէ առաջինը,- ըստ Էնգելսի,- մարդկութեան մշակոյթի և քաղաքակրթութեան թագաւորութիւնն է, ապա երկրորդը կենդանականն է։

Մարքս նոյնպէս նշում է այդ երկու **կատեգորիա**ների տարբերութիւնը։ Նրա մօտ անհրաժեշտութեան թագաւորութիւնը ընդգրկում է նոյնիսկ նիւթական արտադրանքը իսկ ազատութեան թագաւորութիւնը մարդու զարգացման ճանապարհն է, որպէս ինքնանպատակ։ Պարզ է, որ բոլոր այս դատողութիւնները նրանք ամբողջովին վերցրել են գերմանական **իդէալիզմ**ից, իսկ աւելի ճիշտ՝ Կանտից, Ֆիխտէից, Շելինգից և Հեգելից։

Ազատութեան և անհրաժեշտութեան հակասութիւնների գոյութիւնը հիմնաւորեց Կանտը և դրանից յետոյ այդ թեման դարձաւ հիմնականը՝ գերմանական փիլիսոփայութեան մէջ ընդհանրապէս։ Ի՞նչպէս է լուծւում այդ հռչակաւոր խնդիրը Մարքսի և Էնգելսի կողմից։ Շատ հեշտ և, ես կ'ասէի, թեթեւամտօրէն։ Մեծ փիլիսոփաների այս խնդրին նւիրւած ամբողջ **դիալեկտիկա**ն նրանք չցանկացան նկատել։ Նրանց լուծումը իբր թէ վերցւած է Հեգելից և իբր թէ ունի պարզ տեսք. ազատութիւնը անհրաժեշտութեան ճանաչումն է (ճանաչւած անհրաժեշտութիւն)։ Իսկ չճանաչւած՝ «կոյր անհրաժեշտութիւնը» ազատութեան բացակայութիւն է։ Այստեղ վկայակոչել Հեգելին, որպէս աղբիւր, անթոյլատրելի է։ Անհրաժեշտութիւնը Հեգելի մօտ ունի բոլորովին այլ իմաստ, քան նրան փորձում են վերագրել մարքսիստները։

Ես արդէն նշեցի, որ անհրաժեշտութիւնը կարելի է օգտագործել թէ՛ բարոյական և թէ ֆիզիկական իմաստով։ Ազատութիւնը Հեգելի մօտ նշանակում է առարկայական պատմական ոգու ինքնավարութիւն, բանականութիւն, որը կամայականութիւն չէ, այլ «սեփական օրինաչափութիւն», անհրաժեշտութիւն։ Այդպիսի հոգեկան, այլ ոչ նիւթական անհրաժեշտութեան ճանաչումը իրօք որ ազատութիւն է։ Իսկ նիւթական կամ, աւելի ճիշտ, բնական անհրաժեշտութիւնը, Հեգելի համար, կանգնած է աւելի ցածր աստիճանի վրայ։ Եւ այդ

ցածր մակարդակը պայմանաւորւում է բարձր հոգեկանով ու անջատւում է նրանից: Հեգելի այդ լուծումը ամբողջովին համապատասխանում է գերմանական **իդէալիզմ**ին: Այդ լուծումը մարքսիստների համար լրիւ անընդունելի է, քանզի պարտադրում է ընդունել Հեգելի ոգու փիլիսոփայութիւնը:

Այն անհրաժեշտութիւնը, որի մասին խօսում է մարքսիզմը, ոգու ինքնավարութիւն չէ, այլ բնական, Հեգելի կողմից որակաւորւած՝ ցածրաստիճան անհրաժեշտութիւն է: Եւ, ուրեմն, «ճանաչւած անհրաժեշտութիւն» հասկացութիւնը ազատելու գործում կորցնում է իր իմաստը: Ինչո՞ւ: Որովհետեւ ճանաչումը ամենեւին էլ գործողութիւն չէ: Քանի դեռ մենք գտնւում ենք **ֆիզիկ**ական կամ **մաթեմատիկ**ական օրինաչափութիւնների ճանաչման ոլորտում՝ մենք չենք գործում: Իսկ կամքի ազատութիւնը խօսում է գործողութեան մասին, այսինքն նա պարզում է, թէ արդեօք գոյութիւն ունի՞ ազատ գործելու հնարաւորութիւն:

Սակայն աւելի կարեւոր է այն հանգամանքը, որ բնութեան օրինաչափութիւնների ճանաչումը դեռ չի տալիս մեզ ոչ մի տեսակ իշխելու ազատութիւն: Մի քանի տասնեակ անգամ Մարքսը կրկնել է, որ ճանաչելով մեզանից անկախ բնական օրինաչափութիւնները՝ մենք դառնում ենք բնութեան իշխանները: Ամենեւին էլ ոչ, սա պարզապէս անթոյլատրելի սնապարծութիւն է: Մենք գիտենք բազմաթիւ օրինաչափութիւններ, որոնք չեն տալիս մեզ ոչ մի ազատութիւն և իշխանութիւն: Այդպիսին են, օրինակ, աստղաբաշխական, ծերանալու, մահւան օրինաչափութիւնները:

Կրկնելով իր ուսուցիչներին, Լենինը ասում է, «Բնութեան վրայ մեր իշխանութիւնը հաստատւում է այն բանի շնորհիւ, որ մարդու ուղեղի մէջ արտացոլւում են բնական երեւոյթների և ընթացքների առարկայական օրինաչափութիւնները»: Բայց մի՞թէ հայելին իշխում է այն առարկաների վրայ, որոնք արտացոլում է: Արտացոլումը այն կրաւորական ընկալումն է, որը արգելում է որեւէ փոփոխութիւն մտցնել ընկալւող առարկաների մէջ: Որպէսզի հայելին ոչ միայն արտացոլի առարկաները, այլեւ իշխի նրանց վրայ՝ նա պէտք է օժտւած լինի գործելու ազատութեամբ:

Եւ, ուրեմն, «ճանաչւած անհրաժեշտութիւնից» ոչ մի ազատութիւն դուրս չի գայ: Եթէ մարքսիստները երազում էին ազատութիւնը բացատրել անհրաժեշտութեան միջոցով, ապա նրանք պէտք է տային գոնէ այսպիսի ձեւակերպում. ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀՆԱՐԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ՄԵԿՆ Է: Բայց եթէ մարքսիստները ընդունեն այս պարզ միտումը, ապա անմիջապէս կը քանդւի Մարքսի և Էնգելսի կառուցած շէնքը:

Յիրաւի, մենք պարզեցինք, որ անհրաժեշտութեան ճանաչումը ինքնըստինքեան դեռ ազատութիւն չէ: Որ սրան պէտք է աւելացնել ազատ գործելու հնարաւորութիւնը, որի համար ճանաչումը միայն նպատակին հասնելու մի-

ջոց է: Եւ, ուրեմն, բեմ են բարձրանում նպատակ, միջոցների ընտրութիւն, անձ, բարոյականութիւն հասկացութիւնները, որոնք ենթակայական են և ոչ առարկայական:

Գ.

«Կեցութիւնն է որոշում գիտակցութիւնը»,- մարքսիստական նշանաբանը ունի երեք տարբեր իմաստ և այդ բոլոր իմաստներն էլ, առանց մէկը միւսից բաժանելու, խառնաշփոթ վիճակում ներկայ են **դիալեկտիկ**ական **մատերիալիզմ**ում: Առաջին իմաստը բնազանցական է: Այստեղ «կեցութիւն» հասկացութիւնը օգտագործւում է նիւթական աշխարհի կամ բռնութեան իմաստով: Այս իմաստով, ոգին նիւթի, տւեալ դէպքում, ուղեղի արտադրանք է: Երկրորդ իմաստը իմացաբանական է: Այստեղ կեցութիւն նշանակում է գիտակցութիւնից անկախ գոյութիւն ունեցող առարկայական իրականութիւն, իսկ գիտակցութիւնը այդ առարկայական իրականութեան արտացոլումն է: Եւ երրորդ իմաստը հասարակագիտական է:

Այս վերջինը մեզ համար ներկայացնում է յատուկ հետաքրքրութիւն, որովհետեւ առաջին երկուսի մասին ես արդէն խօսեցի: Այստեղ կեցութիւն հասկացութիւնը ստանում է նոր իմաստ, նոր երանգաւորում, որի համար Մարքսը օգտագործում է մէկ ածական, որը դժբախտաբար յաճախ մոռացութեան է մատնւում: Մարքսի մօտ ասւած է. «ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՑԻԱԾՔն է որոշում գիտակցութիւնը»: Բայց մարդկանց հասարակական կեցւածքը արդէն իսկ գիտակից կեցւածք է, քանզի նա գիտակից էակների կեցւածք է: Այդ էակները խօսում և գիտակցաբար յարաբերակցում են միմիեանց հետ, նրանք ձեւակերպում են ընդհանուր նպատակներ և գործում են միասին այդ նպատակներին հասնելու համար: Է՛լ ինչպէս կարող է այդպիսի գիտակից համագործակցութիւնը հակադրւել գիտակցութեանը: Այստեղ բացակայում է նիւթի և գիտակից մարդու հակադրութիւնը, այստեղ չկայ գիտակցող անձի և գիտակցւող ապրանքի հակադրութիւն: Այստեղ խօսքը կարող է վերաբերւել միայն այնպիսի հակադրութեան, որի մէկ կողմում կանգնած է մարդկանց նպատակասլաց համագործակցութիւնը նիւթական պահանջները բաւարարելու համար, իսկ միւս կողմում՝ այդ նոյն համագործակցութիւնը, որը ուղղւած է ոչ նիւթական պահանջների,- արուեստ, քաղաքականութիւն, կրօն և այլն: Առաջինը կոչւում է հասարակութեան նիւթական կեանք, երկրորդը՝ հոգեկան: Բայց երկուսն էլ հասարակական կեանք են: Ե՛ւ այնտեղ, ե՛ւ այստեղ գիտակցութիւնն է որոշում կեցութիւնը:

Սակայն վերադառնանք ազատութեան և անհրաժեշտութեան հակադրութեանը: Կանտը առաջինը ձեւակերպեց այս երկու հասկացութիւնների հակադրութեան խնդիրը: Կարելի է ասել, որ, առանց Կանտի, Ֆիխտէն, Շելինգը և

Հեգելը չէին կարող զարգացնել իրենց տեսութիւնները։ Ի հարկէ, նրանք խոր-
րացրին և փոփոխութիւնների ենթարկեցին Կանտի տեսութիւնը, սակայն ամ-
բողջ 19րդ և 20րդ դարի փիլիսոփայութիւնը անվերջ վերադառնում էր այդ
խնդրին։ Ազատութեան և անհրաժեշտութեան խնդիրը ինքն ըստինքեան կապ
չունի փիլիսոփայական որոշակի ուղղութեան հետ։ Նա պարունակւում է հա-
ւասարաչափ բոլոր ուղղութիւններում։ Կանտի մեծութիւնը կայանում է նրա-
նում, որ բոլորից աւելի այդ հարցը նա սրեց, հակասութիւնների **դիալեկտիկա**ն
հասցնելով մինչեւ վերջ։ Ընդհանրապէս Կանտի կողմից դրւած խնդիրները,
բայց ոչ լուծումները, անմահ են։

Ընդհանուր պատճառային անհրաժեշտութիւնը ընդգրկում է ամբողջ բնու-
թիւնը, առանց որեւէ բացառութեան։ Եւ ուրեմն մարդն էլ չի կարող լինել բա-
ցառութիւն, նա ծնւել է բնութիւնից և պատկանում է նրան։ Այդ իմաստով նա
ազատ չէ։ Ազատւել պատճառային կապերից անհնարին է։ Պատճառային
որոշւածութիւնը չի կարող ընդհատւել, այդպիսի ընդհատումը պէտք է դիտւէր
որպէս բացարձակ պատահականութիւն։ Բայց ազատութիւնը պատահակա-
նութիւն չէ։ Ընդհակառակը, նա պայքար է պատահականութեան դէմ։ Ազա-
տութիւնը գիտակցւած նպատակասլաց գործողութիւն է։ Իսկ այդպիսի գործո-
ղութիւնը չի կարող լինել պատահական, նա որոշակի է, բայց որոշւած այլ
կերպ, քան բնական որոշւածութիւնն է։ Մարդը չի կարող փախչել բնական
որոշւածութիւնից, բայց նա կարող է գտնւել նաեւ ուրիշ օրինաչափութիւնների
իշխանութեան տակ, կեցութեան ուրիշ մակարդակի վրայ։ Մարդը պարունա-
կում է իր մէջ կեցութեան բազմաթիւ մակարդակներ, ինչպիսիք են, օրինակ,
ֆիզիք և **քիմիա**կան կամ կենսաբանական մակարդակները։

Բայց գուցէ՞ մարդը ոչ միայն բնութիւն է, այլեւ ունի աւելի բարձր էութիւն,
օրինակ՝ մշակոյթ կամ քաղաքակրթութիւն։ Այստեղ է, որ բացւում է կեցու-
թեան մի նոր աստիճան՝ նպատակասլաց գործողութիւն, որը կոչւում է ազա-
տութիւն։ Այդ նոր մակարդակը պէտք է ունենայ սեփական օրինաչափութիւն-
ները, չխախտելով սակայն աւելի ցածր, բնական օրինաչափութիւնները։ Այս-
պէս կարող էր լուծւել ազատութեան և անհրաժեշտութեան հակասութիւննե-
րի խնդիրը։ Բայց ցաւը նրանումն է, որ ազատութիւնը իր նպատակներով
թւում է անհամատեղելի պատճառային **դետերմինիզմ**ի՝ որոշւածութեան հետ։
Ազատութիւնը չի ընդունւում **պասիւ** ենթարկւածութիւն պատճառային կապե-
րին և կարծես թէ ցանկանում է իշխել այդ կապերի վրայ։ Մի խօսքով՝ ազա-
տութիւնը բացառում է բնութեան գերիշխանութիւնը։ Այստեղ է հակասութիւ-
նների գլխաւոր հանգոյցը, բայց այստեղ է նաեւ լուծման բանալին։

Գիտակցւած նպատակասլացութիւնը ամենեւին էլ չի բացառում պատճա-
ռայինը, այլ հակառակը պարունակում է իր մէջ։ Ի՞նչ է նշանակում ազատ գոր-

ծողութիւն։ Ինչո՞ւմն է կայանում այդ գործողութեան բուն էութիւնը։ Նախ և առաջ նշեմ, որ այդ գործողութիւնը բաղկացած է հետեւեալ մասերից.

Առաջինը՝ նպատակի գիտակցական ձեւակերպումը։ Երկրորդը՝ նպատակին տանող միջոցների որոնումը։ Երրորդը՝ միջոցների գործադրումը։ Եւ անմիջապէս պարզ է դառնում, որ միջոցների ընտրութիւնը փաստօրէն պատճառների ընտրութիւն է, այն պատճառների, որոնց պատճառ-հետեւանքային շղթան ի վերջոյ բերում է ձեւակերպւած նպատակին։ Եւ ուրեմն պատճառային կապերը ոչ միայն չեն հակասում ազատ նպատակասլացութեանը, այլեւ պարունակւում են վերջինում։ Բայց հակառակ միտումը սխալ է։ Ազատ նպատակասլացութիւնը չի կարող պարունակւել անհրաժեշտութեան մէջ, քանզի բնութիւնը անտարբեր է մարդու ցանկութիւնների նկատմամբ։ Նա կարող է նոյն յաջողութեամբ ծառայել ե՛ւ հակառակ նպատակներին, սպանել այնտեղ, որտեղ մարդը ուզում է փրկել, կործանել, որտեղ մարդը ուզում է կառուցել։

Իսկ ազատութիւնը անտարբեր չէ անհրաժեշտութեան նկատմամբ։ Պատճառային շղթաների միջոցով, որպէս նիւթից, ազատութիւնը կառուցւում է նոր տեսակի կեցութիւն։ Շէնքը պարունակում է իր մէջ աղիւսներ, բայց աղիւսները՝ երբեք շէնք։ Շէնքը ձեւ է։ Առաջին հայեացքից թւում է, թէ մարքսիզմը կարող էր ընդունել այս լուծումը։ Դրանով մարքսիզմը կ'ապացուցէր իր **դիալեկտիկա**կան լինելը, բայց դրա հետ միասին մարքսիզմը **մատերիալիզմ** է, այդ իսկ պատճառով նա չի կարող ընդունել վերը նշւած լուծումը։ Այդ հարցը պարզելու համար, պէտք է պարզաբանենք ազատ նպատակասլացութեան գլխաւոր իմաստը։

Ինչպէս ես արդէն նշեցի, նպատակասլացութիւնը նախ և առաջ պահանջում է նպատակի ձեւակերպում։ Նպատակը ա՛յն է, ինչ ներկայումս գոյութիւն չունի, բայց նախատեսւում է ապագայի համար։ Այսինքն նպատակը այն է, ինչ գոյութիւն չունի, բայց պէտք է գոյութիւն ունենայ իրականութեան մէջ։ Բայց ո՞րտեղ գոյութիւն ունի այդ նպատակը։ Նա գոյութիւն ունի միայն գիտակցութեան մէջ, նա բացակայում է առարկայական իրականութիւնում։ Եւ ուրեմն նպատակասլաց գործողութեան համար անհրաժեշտ է գործող անձ, որի գիտակցական կեցութիւնը առաջացնում է նիւթական կեցութիւն։ Սակայն ո՞րն է նպատակի անհրաժեշտութիւնը։ Նրա անհրաժեշտութիւնը որոշւում է արժէքներով. այն նպատակն է անհրաժեշտ, որը արժէքաւոր է։ Իսկ արժէքը, ինչպէս յայտնի է, բացարձակ է։ Ոչ մի փիլիսոփայական ուղղութիւն չի կարող դա ժխտել։ Բոլոր ուղղութիւնները վիճում են միայն այն մասին, թէ ո՛րն է արժէքաւոր, այլ ոչ արժէքի գոյութեան մասին։ Գիտութիւնը, արւեստը, ազգը, կեանքը, անձը, այս բոլորը բացարձակ արժէքներ են։ Ազատ անձը ճանաչողի, գնահատողի և գործողի բարձրագոյն միասնութիւնն է։

Ամէն մի ազգ, ամէն մի մշակոյթ ունի իր սեփական արժէքների համակարգը, որոնք վերջին հաշուով բխում են բացարձակ արժէքներից: Այդ սեփական արժէքները ժողովրդի այն սրբութիւններն են, որոնք արժանանում են կրօնական երկրպագութեան: Այդ իմաստով **դիալեկտիկա**ն և **մատերիալիզմ**ը անհամատեղելի են: Սակայն **դիալեկտիկա**կան **մատերիալիզմ**ի վրայ է հիմնըւած տնտեսական **մատերիալիզմ**ը, իսկ տնտեսական **մատերիալիզմ**ը, իր հերթին, հիմնաւորում է պատմական **մատերիալիզմ**ը:

Այժմ ես փորձեմ ցոյց տալ, որ պատմութիւնը և **մատերիալիզմ**ը, տնտեսութիւնը և **մատերիալիզմ**ը նո՛յնպէս անհամատեղելի են: **Մատերիալիզմ**ը չի կարող հասկանալ և հիմնաւորել ոչ պատմութիւնը և ոչ էլ տնտեսութիւնը, այն պարզ պատճառով, որ թէ՛ պատմութիւնը և թէ տնտեսութիւնը պահանջում են ստեղծագործ ոգի: Պատմական **մատերիալիզմ**ը հիմնաւորելու համար չի կարող օգնել մարքսիստական այն թեզը, որի համաձայն նիւթական աշխարհը առաջնակարգ է, իսկ գիտակցութիւնը՝ երկրորդական:

Յիրաւի, ենթադրենք, որ բնութիւնը գոյութիւն ուներ գիտակցութիւնից առաջ, որ հոգեկան կեցութիւնը ինչ որ մի ձեւի զարգանում է ծնւում է բնութիւնից: Բայց պատմական **մատերիալիզմ**ը չի զբաղւում այն հարցով, թէ ինչպիսին էր բնութիւնը գիտակցութիւնից առաջ և ինչպէս բնութիւնը ծնեց այդ գիտակցութիւնը: Նա գործ ունի միայն մարդկութեան պատմութեան հետ, այսինքն այն ժամանակաշրջանի հետ, երբ արդէն գոյութիւն ուներ մարդը իր գիտակցութեան հետ միասին: Այն կեցութիւնը, որը ուսումնասիրւում է պատմութեան կողմից, բնութեան պարզ կեցութիւն չէ, այլ հասարակական կեցութիւն, այսինքն ստեղծագործող և կազմակերպւած անձերի կեցութիւն: Միայն այդ կեցութեամբ է հետաքրքրւում Մարքսի պատմական **մատերիալիզմ**ը: Այդ իմաստով է Մարքսը իր աշխարհայեացքը կոչում «իրական **հումանիզմ**»:

Ի՞նչ է նշանակում այդ արտայայտութիւնը: Դա նշանակում է, որ Մարքսի համար իսկական իրականութիւնը և իսկական արժէքը մարդկային հանրութիւնն է, **կոմունան**, որը ենթարկում է իր պահանջներին բնութիւնը: «Իրական **հումանիզմ**ը» փոխարինում է Հեգելի բացարձակ ոգին իրական մարդով: Մէկ բան, որ Ֆոյերբախը համարում էր իր հիմնական գործը: «Մարդիկ իրենք են կերտում իրենց պատմութիւնը,- ասում է Մարքսը,, սակայն նրանք կերտում են այդ պատմութիւնը ոչ թէ պատահական ընտրւող, այլ անմիջականօրէն գտնւած և անցեալում պարունակւող երեւոյթներից»: Սա նշանակում է, որ մարդու ոգին ստեղծագործութիւն է, բայց նա ստեղծագործում է ոչ թէ ոչնչից, այլ ոչ իր կողմից ստեղծւած, բայց իրեն տրւած նիւթից: Ասել, որ մարդը իր պատմական բեմադրութեան հեղինակն է և դերակատարը, ինչպէս ասում էր

Մարքսը, նշանակում է ընդունել, որ պատմութիւնը նիւթական չէ և որ պատմութիւնը անհամատեղելի է **մատերիալիզմի** հետ։

Այժմ տեսնենք, թէ ինչ հիմքեր ունի, այսպէս կոչւող, տնտեսական **մատերիալիզմը**, որը որոշակի գնահատական է տալիս ստեղծագործութեանը և հասարակական աշխատանքին։ Հասարակական կեանքը որոշւում է արտադրական ոյժերով և արտադրական յարաբերութիւններով,- ասում են մարքսիստները։ Այս տեսակէտը կարելի էր անւանել **էկոնոմիզմ**, այն իմաստով, որ նա ամբողջ հասարակական կեանքը ներկայացնում է որպէս նիւթական բարիքներ ստեղծելու գործողութիւն, որից կախւած են հասարակութեան մնացած բոլոր գործողութիւնները։ Կարելի՞ է արդեօք այս **էկոնոմիզմը**, եթէ նա ճիշտ իսկ է, անւանել **մատերիալիզմ**։ Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է դիմել տնտեսական ընթացքի բովանդակութիւնը կազմող արտադրական ոյժերին և յարաբերութիւններին։

Արտադրական ոյժերը առաջին հերթին արտադրական գործիքներ են, որոնց պէտք է կարողանալ արտադրել և որոնցից պէտք է կարողանալ օգտւել։ Արտադրութեան գործիքները ստեղծագործութիւն են, նրանք ստեղծւած չեն բնութեան կողմից։ Արտադրական յարաբերութիւնները նոյնպէս նիւթական չեն, այն պարզ պատճառով, որ դրանք մարդկանց յարաբերութիւններ են, որոնք պահանջում են կազմակերպւածութիւն, ստեղծագործութիւն, առաջնորդներ և այն ամէնը, ինչ լրիւ հոգեկան է։ Պէտք է ասել, որ ոգի բառը ես օգտագործում եմ ոչ թէ մի ինչ որ ուրւականի իմաստով, այլ կեցութեան այն բարձրագոյն աստիճանի իմաստով, որը որոշիչ է մարդու ամբողջ կեանքի համար։ Սկսած Հեգելից՝ այդ աստիճանը կոչւում է ոգի։ Մարքսը և Էնգելսը հիանալի հասկանում էին ,որ մշակոյթը և քաղաքակրթութիւնը կազմում են կեցութեան յատուկ մակարդակ և նոյնիսկ այդ մակարդակը անւանեցին ազատութեան իշխանութիւն։

Դ

Բայց ազատութեան իշխանութիւնը հէնց ոգու իշխանութիւնն է։ Ոգու մասին կարելի է խօսել այնտեղ, որտեղ խօսւում է ազատութեան մասին։ Ոգի հասկացութիւնը անհրաժեշտ է կեցութեան այն յատուկ ձեւը նկարագրելու համար, որը Դեկարտը անւանում է «գիտակցութիւն», իսկ Կանտը՝ «ներքին փորձ» և որը հակադրւում է կեցութեան, **մատերիա** կոչւող միւս կողմին։ Այս հակադրութեան խստութիւնը պայմանաւորւած է նրանով, որ ներքին և արտաքին աշխարհները երկու տարբեր, մէկը միւսին չվերածւող կացութիւններ են։

Արտաքին տարածական աշխարհը ընդգրկում է ֆիզիկական և օրգանական կացութիւնը՝ նրանց բոլոր յատկութիւնների հետ միասին։ Ներքին աշ-

խարիհը, որը տարածական չէ, ընդգրկում է հոգեբանական և հոգեկան կացութիւնը։ Հոգեկան կացութիւնը ինքնուրոյն է, քանզի ունի իր սեփական **կատեգորիա**ները, որոնք չեն հանդիպում տարածական կացութեան մէջ։ Այն գիտութիւնները, որոնք ուսումնասիրում են ոչ տարածական կացութիւնը կոչւում են գիտութիւններ ոգու մասին։ Այդպիսին են հասարակագիտութիւնը, արդարադատութիւնը, լեզւաբանութիւնը, փիլիսոփայութիւնը և վերջապէս պատմութիւնը։ Բոլոր այս գիտութիւնները պարզապէս գոյութիւն չէին ունենայ, եթէ կացութիւնը սահմանափակուէր տարածական աշխարհով։ Այն ժամանակ գոյութիւն կ՚ունենար միայն բնագիտութիւնը և բոլոր մնացած գիտութիւնները կը վերածուէին պատճառ-հետեւանք կապերի նկարագրութեանը, այսինքն կը հիմնուէին միայն անհրաժեշտութեան, այլ ոչ ազատութեան վրայ։

Հասարակութեան հոգեկան կեանքը այնքան իրական է, որքան նիւթականը, և մարքսիստներն էլ այդ կեանքի համար օգտագործում են ոգի բառը, միայն համարելով այդ հոգեկան կեանքը նիւթականի համեմատութեամբ երկրորդական։ Սակայն, եթէ մշակոյթի դէմքը որոշուէր տնտեսութեամբ կամ արտայայտուէր տնտեսութեան միջոցով, ապա ամբողջ պատմութիւնը պէտք է սահմանափակուէր տնտեսութեան պատմութեամբ և բոլորովին աւելորդ պիտի լինէին կրօնի, իրաւունքի, գիտութեան, արուեստի, փիլիսոփայութեան պատմութիւնները։ Այն պատմութիւնը, որը պէտք է պատմէր մեզ, թէ ինչպէս ստրկատիրական կացութաձեւը փոխարինուեց **ֆէոդալ**ականով, իսկ յետոյ էլ դրամատիրականով, թէ ինչպէս մարդիկ սկզբնական շրջանում օգտագործում էին քարէ գործիքներ, իսկ յետոյ անցան գոլորշուն և էլեկտրականութեանը, այդ ժողովուրդների հոգեբանութեան մասին ոչինչ չասող պատմութիւնը կը լինէր անդէմ, մեռած և ձանձրալի։ Այդպիսի պատմութեան մէջ տեղ չէին գտնի սէրը, ընտանիքը, իշխանութիւնը, փառասիրութիւնը, պատահականութիւնը, ճակատագիրը, ողբերգութիւնը, առաջնորդները և այն ամէնը, որը շարժում էր պատմութիւնը և որը ոչ մի կապ չունէր տնտեսութեան հետ։

Բայց մարքսիստները կարող են առարկել, որ իրենք չեն ժխտում հոգեկան կացութեան գոյութիւնը, որ նրանք միայն այդ կացութիւնը համարում են երկրորդական։ Բայց ի՞նչ է ընդհանրապէս նշանակում այդ առաջնակարգը և երկրորդականը։ Կարելի՞ է, օրինակ, ասել, որ աղիւսները առաջնակարգ են, իսկ շինարարը՝ երկրորդական, որ գործիքը առաջնակարգ է և երաժիշտը՝ երկրորդական, որ ընդհանրապէս արտադրութեան գործիքները առաջնակարգ են, իսկ հոգեկան կեանքը՝ երկրորդական։ Այստեղ անմիջապէս պարզւում է, որ մարքսիստները փորձում են առաջնակարգը խառնել պայմանաւորուածութեան հետ։ Աղիւսները չեն ստեղծում շէնք, գործիքը չի ստեղծում երաժշտութիւն։ Այստեղ բացակայում է պատճառի և հետեւանքի կապը։

Այստեղ պարզօրէն կապը միջոց և նպատակը կապ է։ Գործիքը միջոց է, իսկ երաժշտութիւնը՝ նպատակ։ **Տեխնիկա**ն և տնտեսութիւնը միջոցներ են, իսկ մշակութային ամբողջ համակարգը՝ նպատակ։ Պղատոնը, օրինակ, ասում էր, որ պետութիւն ստեղծելու համար, առաջին հերթին, անհրաժեշտ է ունենալ հողագործներ և շինարարներ, այսինքն հասարակութիւնը «կերակրող» արտադրութիւն։ Չնայած նրան, որ Պղատոնը իդէալիստ էր, նա ընդունում էր, որ հասարակութեան հիմքը տնտեսութիւնն է, բայց դրանից էլ առաջ նրա համար գոյութիւն ունէր կառուցելու ցանկութիւնը, կառուցողը, շէնքի գաղափարը և այլն։

Արտադրութիւնից առաջնակարգ է ինքը արտադրողը, որը մշտական հարց է տալիս ինքն իրեն, թէ յանուն ինչի՞ է ինքը աշխատում։ Այդ հարցը, որը մեզանից ամէն մէկը տուել և տալիս է իրեն, արդէն իսկ վկայում է, որ արտադրութիւնը չի կարող կազմել կեանքի գլխաւոր արժէքը և էութիւնը։ Բայց ինքը Մարքսը չի համարձակւում պնդել այդ, նա ստիպւած է ընդունել, որ ազատութեան իշխանութիւնը գտնւում է արտադրութեան այն կողմը։ Նա գրում է.

«Որքան էլ որ կատարելագործւած և կազմակերպւած լինի արտադրութիւնը, միեւնոյն է, նա դեռ անհրաժեշտութեան իշխանութիւն է, այդ իշխանութեան այն կողմը սկսւում է մարդու ոյժերի այն զարգացումը, որը ունի ինքնանպատակի նշանակութիւն, այսինքն իսկական ազատութեան իշխանութիւնը, որը սակայն կարող է ծաղկել միայն անհրաժեշտութեան իշխանութեան հիման վրայ»։

Մարքսի այս միտքը մեզ համար շատ կարեւոր է, որովհետեւ նա պարունակում է իր մէջ մշակոյթի և պատմութեան **իդէալիստ**ական սկզբունքի ճանաչում։ Այստեղ Մարքսը ստիպւած է տրամաբանել և արտայայտւել գերմանական **իդէալիզմ**ի, Ֆիխտէի, Շելինգի և Հեգելի չափանիշներով։ Բայց, այնուամենայնիւ, հիմքի և վերնաշէնքի գաղափարը միշտ էլ վերադառնում է մարքսիզմ, թէպէտեւ այդ գաղափարների միջոցով ընդհանրապէս անհնարին է բացատրել մշակոյթը։

Յիրաւի, ի՞նչ է իրենից ներկայացնում տնտեսական հիմքը։ Դա հասարակական արտադրութիւնն է, որը պարունակում է իր մէջ կեանքի ընկերային, քաղաքական և հոգեկան ընթացքները, և ուրեմն առաջին գիտութիւնը, փիլիսոփայութիւնը և կրօնը։ Բայց հասարակական արտադրութիւնը կառուցւում է գիտութեան շնորհիւ, իրաւունքի և պետութեան շնորհիւ։ Եւ ուրեմն վերնաշէ՛նքն է կառուցում հիմքը։

Բացի դրանից, ակնյայտ է, որ արտադրութեան ուղղութիւնը որոշւում է մարդու պահանջներով, որոնք սահմանափակւած են կրօնական բարոյականութեամբ։ Այդ բարոյականութիւնն է որոշում, թէ որքանով թոյլատրւած է պճնանք, շռայլութիւն, շքեղութիւն և բոլոր զգացական պահանջների բաւա-

րարում: Մաքս Վեբերը իր աշխատութիւններում հիանալի ցոյց է տալիս, թէ ինչպիսի ազդեցութիւն է թողել բողոքականութիւնը **կապիտալիզմ**ի զարգացման վրայ: Միայն կրօնական տեսանկիւնից կարելի է բացատրել Չինաստանի և Հնդկաստանի արդիւնաբերութեան յետամնացութիւնը: Երբ բուդդայականութիւնը տարածւեց Հնդկաստանում, որոշ մարզերում ընդհանրապէս վերացաւ հողագործութիւնը, որովհետեւ հողը մշակելու ժամանակ ոչնչանում էին բազմաթիւ որդեր և միջատներ, իսկ դա արգելւում էր կրօնի կողմից: Միջնադարեան մշակոյթը աղօթում և ոգու փրկութիւն էր որոնում ոչ թէ նրա համար, որ արդիւնաբերութիւն չունէր, այլ արդիւնաբերութիւն չունէր, որովհետեւ զբաղւում էր ոգու փրկութեամբ:

Եթէ մենք ուսումնասիրենք ամբողջ այն պատմութիւնը, որը ընդհանրապէս գրւել է, ապա կը տեսնենք, որ այդ պատմութիւնը իշխանութեան համար պայքարի և նուաճումների պատմութիւն է: Այդ մօտեցումը ունի նաեւ ինքը Մարքսը: Երբ Մարքսը հանդէս է գալիս որպէս պատմաբան, նա նկարագրում է Բոնապարտի բարդ քաղաքական պայքարը, այլ ոչ Ֆրանսիայի տնտեսութիւնը:

Ո՞րն է այն մեթոդաբանական սխալը, որի հետեւանքով մարքսիստները յաճախ ստիպւած են լինում հրաժարւել սեփական միտումներից: Իմ կարծիքով այդ սխալը այն հոգեբանական սխալն է, որից զուրկ չեն գրեթէ բոլոր մտաւորականները: Յայտնաբերելով մի նոր օրինաչափութիւն, նրանք սովորաբար փորձում են այդ նոր օրինաչափութիւնը տարածել կեցութեան բոլոր բնագաւառների վրայ: Պիւթագորասը յայտարարեց թէ **մաթեմատիկա**կան իմաստը և որոշեց որ ամէն ինչ թիւ է: Դեմոկրիտը յայտնաբերում է **ատոմ**ները և պնդում է, որ ամբողջ աշխարհը բաղկացած է միայն **ատոմ**ներից: Մի խումբ գիտնականներ անկախ իրարից ուսումնասիրում են մարմինների շարժումը և որոշում են, որ ամէն ինչ նիւթ է և շարժում: Ֆիխտէն խորանում է անձի էութեան մէջ և գալիս է այն եզրակացութեան, որ բոլոր առարկաները ստեղծւում են Եսի երեւակայութեան մէջ: Վիները յայտնաբերեց յետադարձ կապի օրինաչափութիւնը և համարեց, որ բնութեան բոլոր նպատակասլաց շարժումները, ընդհուպ մինչեւ հասարակական երեւոյթները, կարելի է բացատրել Կիբերնետիկա կոչւող գիտութեան միջոցով: 19 և 20րդ դարերում յայտնաբերւում են օրգանական աշխարհի որոշ օրինաչափութիւններ և մտաւորականները փորձեցին հասարակութիւնը ներկայացնել որպէս օրգանիզմ: Օրինակները կարելի էր շարունակել: Ե՛ւ Ֆրոյդը, ե՛ւ Հարտմանը, ե՛ւ շատ ուրիշներ փորձել են ընդհանրացնել իրենց յայտնագործութիւնները: Այդ նոյն հոգեբանական սխալը կատարեցին Մարքսը և Էնգելսը:

Նկատելով հոգեկան ասպարէզի որոշ կապը տնտեսութեան հետ, նրանք շտապեցին հռչակել տնտեսութիւնը մշակոյթի և պատմութեան միակ հիմքը: Մարքսիզմի հէնց այդ միակողմանիութիւնը՝ **մոնիզմը** զրկում է նրան գիտութիւն անուանուելուց: Այն, ինչ գրւեց ծանրակշիռ հատորներում և ինչը կոչւեց մարքսիզմ-լենինիզմ, գիտութիւն չէ, քանզի նա լի է ներքին հակասութիւններով և մէկ դար յետոյ էլ չեն իրականացել նրա ոչ մի «գիտական» գուշակումները: Եթէ 19րդ դարի երկրորդ կէսերին դեռ թւում էր, թէ այս նոր ուսմունքը պէտք է վերակառուցի աշխարհը, ապա հետագայ 50 տարիները ցոյց տւեցին, որ այն, ինչ հիմք է ծառայում մարքսիզմի համար, բոլորովին սխալ է: 20րդ դարի երկրորդ կէսերին պարզւեց, որ զարգացած **կապիտալիստ**ական երկրներում ամենեւին էլ գոյութիւն չունի **պրոլետարիատ**ի բացարձակ աղքատութեան ընթացքը, որ զարգացած **կապիտալիստ**ական երկրներում բանւորի աշխատավարձը աւելանում է ամէն տարի: Առայժմ ոչ մի **սոցիալիստ**ական երկիր չի կարողացել հասնել ապրանքների և ժողովրդի ապրուստի այն բարձր մակարդակին, որը գոյութիւն ունի **կապիտալիստ**ական երկրներում: Արեւմտեան **դեմոկրատիա**ն եղաւ աւելի կայուն, քան պատկերացնում էին որոշ մարքսիստներ: Նա զարգացաւ և կատարելագործւեց:

Ես ասում եմ՝ որոշ մարքսիստներ, որովհետեւ ինքը Էնգելսը համարում էր, որ արեւելեան **դեմոկրատիա**ն, այլ ոչ խորհուրդները կը դառնան հիմք **դեմոկրատ**ական հանրապետութեան իշխանութեան համար: Չապացուցւեց մարքսիստական այն թեզը, որի համաձայն **իմպերիալիզմ**ը չի վերապրի իր գաղութատիրական անկումը: Բոլորովին սխալ էր **պրոլետար**ական յեղափոխութեան համաշխարհային տարածման թեզը: Կոչ անելով բոլշեւիկներին՝ դիմել յեղափոխութեանը, Լենինը համոզւած էր, որ Ռուսաստանի օրինակին շատ շուտ կը հետեւեն մնացած եւրոպական պետութիւնները: Հոկտեմբերեան յեղափոխութեան առաջին տօնակատարութիւնների ժամանակ պաշտօնական ճառերը աւարտւում էին ցանկութեամբ, որ երկրորդ տարեդարձի տօնակատարութիւնները ընթանան համաշխարհային **սոցիալիզմ**ի պայմաններում: Բայց այդ ամէնը լոկ պոռոտախօսութիւնների վերածւեցին: Չապացուցւեց նաեւ այն միտումը, թէ իբր դասակարգային շահերը կը կլանեն ազգայինը և այլն: Մի խօսքով, այն, ինչ գուշակում էր «գիտութիւնը», չիրականացաւ ոչ մէկ կէտում:

Գիտութի՞ւն է արդեօք մարքսիզմը, այս ամենից յետոյ:

1974

ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊՆ Է ՈՐՈՇՈՒՄ ՆՊԱՏԱԿԸ

Դոկտ. Է. Յովհաննիսեան

Մեր նախորդ թիւով մենք տուինք մեր աշխատակից դոկտ. Է. Յովհաննիսեանի «Կարո՞ղ է արդեօք հերոսութիւնը համազգային լինել» խորագրով յօդուածը: Այս առթիւ նշած էինք, թէ իր յօդուածէն կ'անջատենք մաս մը. իբրեւ առանձին նիւթ ներկայացնելու համար մեր ընթերցողներուն: Ահա այդ յօդուածը, որուն վերնագիրը մենք դրած ենք:

ԽՄԲ.

Անորակ էութիւններից որակեալ միասնականութեան ապահովումը (տես նել «Ա.Շ.», թիւ 22, էջ 339), սկզբունքօրէն տարբերւում է անիշխանականների ուղուց: Անիշխանականները միասնականութեան բարձր որակը փորձում են ստեղծել անձերի բարձր որակի հաշւին. օգտակար կը լինի մի երկու խօսքով յիշատակել, թէ ի՞նչ միջոցներով էին մտադրում իրականացնել իրենց նպատակը: Այս հարցը հետաքրքրում է մեզ ոչ միայն հակառակ ուղղութիւն բռնելու համար, այլ նաեւ նրա համար, որ վերջին ժամանակներս Սոլժենիցինը անիշխանականութեան վերաբերեալ իր առաջարկների համար լուրջ յարձակումների ենթարկւեց խորհրդային այլ այլախոհների կողմից: Քննադատողների թիւը շատ էր, քննադատողների թւում էր նոյնիսկ ակադեմիկոս Սախարովը: Սակայն, եթէ քննադատողների մեծ մասը, յարգելով Սոլժենիցինի անունը և խոնարհւելով նրա տաղանդի ու **արիութեան** առջեւ, քննադատում էր մեղմ, շրջանցելով սուր անկիւնները, ապա խորհրդային եկեղեցական գրող Լեւիտին-Կրասնովը (այժմ որպէս հրեայ դուրս է եկել Խորհրդային Միութիւնից) իր քննադատական սուրը ուղղեց Սոլժենիցինի դէմ, առանց որեւէ աւելորդ նրբազգացութեան: Ինչ խօսք, որ գրողի այս առարկայական մօտեցումը գովելի է, բայց սրանով էլ վերջանում է քննադատութեան գովերգելի մասը՝ բովանդակութիւնը բոլորովին անընդունելի: Ռուս ընթերցողին լաւ ծանօթ է Լեւիտին-Կրասնովի ծաւալուն աշխատութիւնը, որը կոչւում է «Աշխարհը ծառս եղած» և իմ պատասխանը, որը ես վերնագրել էի. «Բաւակա՛ն է, Լեւիտին-Կրասնով, մարքսիստական մտածելակերպը անհամատեղելի է Աստծու հետ»: Կարծում եմ, որ հայ ընթերցողի համար էլ հետաքրքիր կը լինի կարծիքների այս փոխանակումը, մանաւանդ, որ այն անմիջականօրէն կապւած է մեր նիւթի հետ:

Լեւիտինի քննադատութեան հիմնական կէտերը հետեւեալն են.

Առաջին՝ Սոլժենիցինը հանճար է և ես վիրաւորած կը լինեմ հանճարին, եթէ ուղղակի երեսին չասեմ, թէ որքան նա ծիծաղելի՛ է քաղաքական և հասարակական ասպարէզների վերաբերեալ իր առաջարկներով։

Երկրորդ՝ Սոլժենիցինը չի կարողանում ըմբռնել մարքսիզմի այն մեծ ճշմարտութիւնը, որը կայանում է նրանում, որ բոլոր արժէքները ստեղծւում են պրոլետարիատի, այսինքն վարձովի ստրուկների կողմից և այդ արժէքներից ամենաքիչ օգտւում են հէնց այդ ստրուկները։

Երրորդ՝ եթէ մենք Մոսկւայի փողոցներում անցկացնենք հարցազրոյց, պարզելու համար, թէ ո՞վ է համաձայն մեկնելու Սիբիր, Հիւսիսը իւրացնելու նպատակով, ապա կը պարզւի, որ ո՛չ մէկը։ Ուրեմն, անմտութիւն է Սոլժենիցինի գաղափարը՝ թողնել միջազգային խնդիրները և պարփակւել միայն ռուսական խնդիրների մէջ, ազատ արձակել հանրապետութիւնները և զբաղւել Սիբիրով։

Չորրորդ՝ տեխնիկական առաջընթացը կանգնեցնել անհնարին է։ Չի կարելի Ռուսաստանը կրկին դարձնել յետամնաց երկիր և ընդհանրապէս Սոլժենիցինի բոլոր առաջարկները ծիծաղելի անմտութիւններ են, քանզի նրանք իրագործելի չեն, պարզապէս՝ ցնորքներ են։

Հինգերորդ՝ խորհրդային մարդը դրամատիրութիւն չի ուզում, և դրամատիրութիւնը շատ վատ բան է։ Ես զրուցել եմ **տաքսի**ի վարորդների հետ և պարզել, թէ որքան նրանք չեն ուզում դրամատիրութիւն։ Այդ նոյն կարծիքի են բոլոր հանրապետութիւնների վարորդները և բանւորները։

Վեցերորդ՝ մարդկութիւնը փրկելու համար անհրաժեշտ է վերակառուցել բոլոր հասարակական հաստատութիւնները՝ դպրոցներից և եկեղեցիներից սկսած, ՄԱԿով ու Վատիկանով վերջացրած։

Թէպէտ յօդւածս շատ կ’երկարի, բայց օգտակար եմ համարում ռուսերէնից թարգմանաբար մէջբերել այստեղ Լեւիտին-Կրասնովին հասցէագրած իմ բաց նամակը։ Ահաւասիկ.

«Այն, որ մարքսիզմը գիտութիւն չէ, ինձ համար վաղուց և վերջնականապէս ապացուցւած է։ Մտադրութիւն չունեմ կրկին ապացուցելու այդ, քանզի իմ փոխարէն այդ արել են բազմաթիւ ականաւոր փիլիսոփաներ։ Մարքսիզմից, իբրեւ գիտութիւնից, հրաժարւել է Արեւմուտքի մտաւորականութեան զգալի մասը, իսկ ամբողջ խորհրդային մտաւորականութիւնը, բոլոր բանւորները և ծառայողները վաղուց արդէն գիտակցում են մարքսիստական **դոգմա**ների դատարկութիւնը։ Բայց մարքսիստական մտածելակերպից յաճախ չեն հրաժարւում նոյնիսկ նրանք, ովքեր պէտք է որ հրաժարւէին։ Մարքսիստական մտածելակերպը իր տնտեսական-**մատերիալիստ**ական գաղափարնե-

րով այնքան խոր արմատներ է գցել խորհրդային մարդու ուղեղում, որ նույնիսկ նրանք, ում ընդունւած է անւանել այլախոհներ, մտածում են մարքսիստական սկզբունքներով: Առաջին անգամ ես բախւեցի այդ երեւոյթների հետ, երբ հրապարակօրէն քննարկւում էր Սոլժենիցինի «Նամակ առաջնորդներին» խորագրով գրութիւնը:

«Պէտք է նկատել, որ այդ «Նամակը» ոչ մէկ մարքսիստական մտածելակերպ ունեցող մարդու դուր չի գալիս: Ելոյթ ունեցողներից մէկը, որը Խորհրդային Միութիւնից նոր է դուրս եկել, ասում է հետեւեալը. «Բայց Սոլժենիցինը ոչ միայն հրաժարւել է մարքսիզմից, այլեւ՝ **մատերիալիզմ**ից»: Ընդ որում, դա ասւում էր այնպիսի զարմանքով, որ կարծես, թէ **մատերիալիզմ**ից հրաժարւելը արդէն աններելի յանցանք է: Այն ժամանակ ես բացագանչեցի տեղիցս,- «Բայց նա **մատերիալիզմ**ի տակ երբեք էլ չի ստորագրել», և ստացայ «խորամիտ» պատասխան. «Դէ, մի՞թէ կարելի է ընկնել ծայրայեղութիւնների մէջ»: Այդ ծայրայեղութիւնը՝ իդէալիզմն էր ու Աստւածը:

«Յետոյ, աւելի ու աւելի յաճախ, Խորհրդային Միութիւնից դուրս եկողների մէջ ես հանդիպում էի մարդկանց, որոնք, գուցէ առանց անդրադառնալու բոլոր հարցերի լուծմանը մօտենում էին մարքսիստական չափանիշներով, թէպէտեւ իրենց հակամարքսիստներ էին յայտարարում: Բայց, որ այդպիսին կը լինի եկեղեցական գրող, հաւատացեալ Լեւիտին-Կրասնովը, չէի սպասում: Իսկ նա հէնց այդպիսին եղաւ: Սկզբից Լեւիտինի հետ ես ծանօթացայ իր «Երկիրը ծառս եղած» յօդւածի միջոցով, յետոյ լսեցի նրա զեկուցումը, որի ժամանակ, ձեռքը դնելով 80 ֆրանկ արժող (ըստ երեւոյթին, Քրիստիան Դիոր) փողկապի վրայ, նա ապացուցում էր, թէ որքան թանկ է արտասահմանում կեանքը և որքան անընդունելի է դրամատիրութիւնը Ռուսաստանի համար»:

«Բայց աւելի լաւ է դիմենք նրա աշխատութեանը: Առաջին իսկ տողերից՝ Սոլժենիցինի քննադատութիւնը (ինչպէս ես արդէն ասացի, դա բոլոր մարքսիստական մտածելակերպ ունեցող այլախոհների հիւանդութիւնն է): Ես չէ որ պէտք է պաշտպանեմ Սոլժենիցինին, որը ինձ համար մարգարէի պէս մի բան է: Ուզում եմ միայն յիշեցնել Լեւիտինին, որ եթէ նա ճանաչում է Սոլժենիցինի հանճարեղութիւնը, պէտք է նաեւ ընդունի, որ հանճարը հանճարաբար էլ ՏԵՄՆՈՒՄ Է: Եւ մենք, ձեզ հետ միասին, պէտք է ակնոցներ ընտրենք, յարմարւելով նրա տեսողութեանը, այլ ոչ թէ մեղադրենք նրան կարճատեսութեան մէջ:

«Բայց ինչո՞ւմ է մեղադրւում հանճարը: Պարզւում է, նրանում, որ նա չի կարողացել ըմբռնել մարքսիզմի մեծ ճշմարտութիւնը՝ պրոլետարիատի արժէքներ ստեղծելու վերաբերեալ: Իսկ ձեզ ո՞վ ասաց, յարգելի պարոն Լեւիտին, որ բոլոր արժէքները ստեղծում է պրոլետարիատը: Կարելի էր այս կապակցու-

թեամբ մի ամբողջ դասախօսութիւն կարդալ, թէ ո՞վ և ի՞նչպէս է ստեղծում արժէքները, թէ ի՞նչ է նշանակում հասարակական աշխատանքը և հասարակական ստեղծագործութիւնը, բայց ես դա չեմ անի։

«Ես ուղղակի խորհուրդ կը տամ ձեզ, պարոն Լեւիտին, որ, երբ կը հրապարակւի ձեր գիրքը (անկասկած՝ արժէք է), հեղինակակից դարձրէք և **հոնորար**ը կիսէք այն բանւորների և գրաշարների հետ, որոնք տպարանում ստեղծում էին արժէք ներկայացնող ձեր գիրքը։ Եթէ դուք այդ չանէք, ապա մարքսիստները կարող են ձեզ մեղադրել յաւելեալ արժէքի իւրացման մէջ։ Իսկ եթէ դուք իմ առաջարկը չհամարէք անմտութիւն, եթէ դուք էլ համամիտ էք ինձ հետ, որ պրոլետարիատը միայն եզրափակում է բոլոր նախորդ փուլերի հասարակական աշխատանքը, եթէ ընդունէք, որ երաժշտութեան մէջ, օրինակ, գլխաւոր դերը պատկանում է երաժշտին, այլ ոչ թէ երաժշտական գործիք պատրաստող բանւորին, եթէ, վերջապէս, ընդունէք որ **աւտոմեքենայ**ի ու հեռուստատեսութեան, ինքնաթիռի ու արհեստական արբանեակի ստեղծման գործում շատ աւելի քան համեստ տեղ է գրաւում պրոլետարիատը, ապա խնդրում եմ վերանայէք ձեր կարծիքը այն հարցի վերաբերեալ, թէ ո՞վ է ստեղծում արժէքները։ Եթէ մենք ամբողջ հասարակական աշխատանքը վերագրենք պրոլետարիատին, ապա կը նմանւենք այն էլեկտրագործին, որը իր առաջնութիւնը թատրոնում ապացուցելու համար ներկայացման ժամանակ անջատեց լոյսը։

«Դատապարտելով Սոլժենիցինի մարքսիստական տգիտութիւնը, Լեւիտինը անցնում է, այսպէս կոչւած մտային փորձի, որի միջոցով ուզում է ապացուցել, որ Սիբիրի իւրացման գաղափարը անմտութիւն է։ Յայտնի է, որ մտային փորձերը միշտ էլ մեծ դեր են կատարել գիտութեան մէջ։ Ճիշտ է, նրանք երբեք մեզ դուրս չեն բերում գոյութիւն ունեցող տեսութեան սահմաններից, բայց ապացուցում են տեսութեան թերութիւնը և պատճառ են դառնում գիտական նոր յայտնագործութիւնների։ Այդպէս եղաւ Զենոնի **պարադոքս**ների հետ, այդպէս լուծւեց Մակւէլի ուրւականի խնդիրը, բայց այդպէս չպատահեց Լեւիտինի մտային փորձի հետ, որը կայանում էր Մոսկւայի փողոցներում հասարակագիտական հարցումներ կատարելու մէջ։

«Այդ մտային հարցումները աւարտւում են ռուս ժողովրդի համար բաւականին վիրաւորական եզրակացութեամբ։ Ահաւասիկ. «Եթէ փողոցում գտնւի գոնէ մէկը, որը կը համարձակւի թողնել Մոսկւան և մեկնել Սիբիր, ապա կտրէք իմ գլուխը»։ Թողնենք գիտնական-հասարակագէտի գլուխը իրեն, միայն հարցնենք. եթէ մի երկու դար սրանից առաջ այդ նոյն հարցումով դիմէինք Լոնդոնի քաղաքացիներին, բայց Սիբիրի փոխարէն առաջարկէինք Կանադան, Ամերիկան ու Ալասկան, ի՞նչ է, լոնդոնցիները կը նետւէին իւրացնելու օտար մայրցամաքնե՞րը։ Բայց, չէ՞ որ գտնւեցին այնպիսիները, որ

նետւեցին և իւրացրին, և այն էլ ինչպէ՛ս իւրացրին: Իսկ ինչո՞ւ: Որովհետեւ կոմերիտական ուղեգրերով չէին գնում: Տէք դուք ռուս մարդուն նախաձեռնութեան ազատութիւն և նրանք կը գնան Սիբիրը իւրացնելու: Կը գնան, ով ոսկի, ով դրամ, ով բախտ որոնելու, կը գնան **ռոմանտիկա**յի և բնութեան բուրմունքի յետեւից: Կը կառուցեն Սիբիրը, և ինչպէ՛ս կը կառուցեն: Իսկ եթէ ոմանք էլ չցանկանան թողնել իրենց նեխած մոսկովեան բնակարանները՝ ոչինչ, Սիբիրը դրանից չի տուժի:

«Յետոյ, Լեւիտինի մարքսիստական մտածելակերպը յանգեցնում է նրան այն բանին, որ նա անկեղծօրէն զարմանում է. «Միթէ՞ հնարաւոր է վերցնել և կանգնեցնել **տեխնիկ**ական առաջընթացը, վերցնել և փակել գործարանները, ո՞վ և ո՞ր կառավարութիւնը կարող է իրականացնել այդպիսի մի ծրագիր: Շնորհակալ ենք այդ խորհուրդի համար, մենք չենք ցանկանում 100 տարով յետ մնալ»: Բայց ինչի՞ց յետ մնալ և ի՞նչ է ընդհանրապէս նշանակում առաջընթաց, պարոն Լեւիտին: Չէք կարող դուք չհամաձայնւել ինձ հետ, որ առաջընթաց կարելի է անւանել միայն այն շարժումը, որի ամէն մի յաջորդ կացութիւնը, որոշ իմաստով, նախորդից աւելի արժէքաւոր է: Իսկ ո՞ր իմաստով **տեխնիկ**ական առաջընթացը բարելաւեց մարդու կացութիւնը:

«Սովորական քաղքենուն այս հարցը ես չէի տայ, որովհետեւ նա ունի պատրաստ պատասխան, նա հպարտութեամբ կը սկսէր թւարկել՝ ինքնաթիռներ, մեքենաներ, հեռուստատեսութիւն, հեռախօս, **կինո** և այլն: Բայց, չէ՞ որ ձեզ համար, պարոն Լեւիտին, աստւածապաշտ մի մարդու իսկական արժէքները գտնւում են ուրիշ տեղ, երեւի այդ արժէքները դուք ստանում էք հոգեկան ասպարէզում և անտարբեր չէք հանդէպ արդարութիւնը և մարդու բարոյականութիւնը: Համոզւած եմ, որ դուք քաջ գիտակցում էք, թէ ինչպէս **տեխնիկ**ական առաջընթացի հետ աւելի ու աւելի է սնանկանում մարդու հոգեկան աշխարհը: Էլ ինչո՞ւ էք այդքան գովերգում այդ անիծեալ գործարանները: Իսկ գուցէ՞ մարդկութիւնը իր զարգացման ընթացքում ինչ որ մի տեղ շեղւել է իսկական ճանապարհից և այսօր շարունակում է հպարտօրէն քայլել այդ կեղծ ճանապարհով: Գուցէ, քանի դեռ ուշ չէ, անհրաժեշտ է վերադարձնել նրան իսկական ճանապարհի վրայ:

«Ես չէի առարկի ձեզ, եթէ դուք ուղղակի ասէիք. «Այո, լաւ կը լինէր վերադառնալ, բայց արդէն ուշ է»: Բայց դուք հիանում էք այդ ճանապարհով, հանդիսաւորութեամբ բացագանչելով. «Փա՛ռք, փառք 1789 թւականի յուլիսի 14ին, այդ օրւայ մէջ աւելի շատ քրիստոնէութիւն կայ, քան ամբողջ միջնադարում»: Իմ գործը չէ, դա դուք աւելի լաւ պէտք է իմանաք: Եթէ ֆրանսիական յեղափոխութեան մէջ դուք այդքան քրիստոնէութիւն տեսաք, դուք էլ պատասխան կը տաք Աստծուն: Ես ուզում եմ միայն ասել, որ դուրս գալ սխալ ճանապարհից

կարելի է և որ այն, ինչ դուք կոչում էք առաջընթաց, կանգնեցնել նոյնպէս կարելի է, միայն դրա համար ՀԱԻԱՏՔ Է ՊԷՏՔ: Ուզում եմ բերել մէկ սքանչելի օրինակ:

«Վերջերս, Թեհրանում ես հանդիպեցի այսպէս կոչուած հումակերների միութեան կամ, աւելի ճիշտ կը լինի ասել, միաբանների հետ: Նրանց ղեկավարը և գաղափարախօսը իմ հայրենակից Արշաւիր Տէր Յովհաննիսեանն էր: Նրանց գիտա-փիլիսոփայական միտումը կայանում էր հետեւեալում,- Մարդը իր կենսաբանական կառուցւածքով բուսակեր է, այն էլ հում բուսակեր: Կրակը յայտնաբերելուց յետոյ մարդը շեղուեց այդ բնական ճանապարհից և սկսեց ոչ միայն օգտագործել եփած կերակուր, այլ դարձաւ նաեւ մսակեր: Այդ օրւանից մարդու օրգանիզմը զրկուեց կենդանի բջիջներից, որոնք նախատեսւած էին մարդու համար ի սկզբանէ:

«Միայն դրանով են նրանք բացատրում այն հանգամանքը, որ մարդու կեանքի տեւողութիւնը այդքան կարճ է: Եւ այդ մարդիկ որոշեցին վերադառնալ իսկական ճանապարհի վրայ: Նրանք համոզւած են, որ այդ միջոցով կարելի է երկարացնել մարդու կեանքը մինչեւ 300-400 տարի: Պէտք է ասել, որ բոլորը չափազանց առողջ էին և ես հանդիպեցի մարդկանց, որոնք այդ ձեւով բուժւել էին անբուժելի շաքարախտ հիւանդութիւնից: Նրանք արիաբար դիմանում էին բոլոր այն ծաղրանքներին, որ արժանացնում էր նրանց «այլասերւած» հասարակութիւնը: Ամբողջ մեր քաղաքակրթութիւնը անցնում է նրանց կողքով և, ի հարկէ, հոգու խորքում, նրանք էին ծաղրում շրջապատը, որը «դիակներ» է ուտում և իրեն կործանում: Նրանք համոզւած են, որ իրենց օրինակով կը փրկեն մարդկութիւնը: Նրանց միութիւնը ծաւալւում է և, ո՞վ գիտէ, գուցէ և ճիշտ են նրանք:

«Այնպէս որ, կարելի է, սիրելի Լեւիտին, վերցնել և հրաժարւել անոյշ կարկանդակներից, փոխարինելով այն թրջած ցորենով, հրաժարւել խորովածներից և դոլմաներից՝ յօգուտ մեղրի և ընկոյզի, օղիներից ու գինիներից՝ յօգուտ խաղողի հիւթի: Եւ դա ի՞նչ անկարելիութեան պաշտամունք էք դուք քարոզում: Հետեւելով այդ տրամաբանութեանը, մենք շուտով ականատես կը լինենք նրան, որ հեռուստացոյցների **էկրան**ներից մեզ կը քարոզեն. օգտագործեցէք «Ապուշ» ընկերութեան հաշիշը կամ բոնաբարէք գիտնականների կողմից մշակւած ձեւերով»: Այս ամենից հրաժարւել կարելի է, միայն հաւա՛տք է պէտք:

«Վերջապէս, Լեւիտինը փորձում է ապացուցել, թէ որքան տհաճ է դրամատիրութիւնը խորհրդային մարդու համար: Ընդ որում, փորձում է դա անել **տաքսի**ի վարորդի շատ անյաջող օրինակի վրայ: **Տաքսի**ի վարորդը ոչ միայն երազում է դրամատիրութեան մասին, այլեւ նա ապրում է դրամատիրական

օրէնքներով։ Միայն թէ դրամատիրութիւնից նրան մնացել է միայն մանր դրամական նւէրները և այն աւելցուկը, որը մնում է «**պլան**»ը վճարելուց յետոյ։ Իսկ ինչ մնում է միւս հանրապետութիւններում գործող վարորդներին, օրինակ, Վրաստանում կամ Հայաստանում, ապա նրանք իսկական սեփականատէրեր են։ Ապացոյցը այն է, որ **տաքսի**ի վարորդի պաշտօն գրաւելու համար Վրաստանում վճարում են 1500, իսկ Հայաստանում՝ 1000 ռուբլի (յամենայն դէպս, այդպէս էր մինչեւ 1972 թւականը)։

«Եւ ոչ միայն վարորդները, ամբողջ մատակարարման բնագաւառը կառուցւում է դրամատիրական սկզբունքների հիման վրայ։ Նոյնիսկ գործարանները այնքանով են կարողանում առաջադիմել, որքանով նրանց յաջողւում է օգտագործել դրամատիրական սկզբունքները, այսինքն որքանով որ յաջողւում է նրանց խախտել այսպէս կոչւած **սոցիալիստ**ական օրինականութիւնը։ Ինչ մնում է մարդկութեան գործունէութեան բոլոր բնագաւառների վերաբերեալ Լեւիտինի վճռական և համարձակ առաջարկներին, ապա դա էլ մարքսիստական մտածելակերպից է կամ, աւելի ճիշտ, «**ինտերնացիոնալ**ներից», որոնք մտադրւած էին քանդել ամբողջ աշխարհը և կառուցել իրենց նորը։

«Բաւական չէ՞ն տիեզերական և համաշխարհային վերակառոյցները։ Աւելի լաւ չի՞ լինի արդեօք, որ ամէն մի ազգ զբաղւի իր ազգային հարցերով և միայն դրա միջոցով ծառայի մարդկութեանը, այն մարդկութեան, որը, հրաժարւելով միջազգայնական խայտաբղէտութիւնից, կը կերտի ազգային ներդաշնակութիւն և անհասկանալի ուղղութեամբ շտապող արդիւնաբերական ամբոխից կը դառնայ հանգիստ հոգեկանութիւն։

«Եթէ միջին դարերում մարդիկ զբաղւում էին հոգու փրկութեամբ, ապա դա արւում էր ո՛չ թէ նրա համար, որ բացակայում էր արդիւնաբերութիւնը, այլ արդիւնաբերութիւն չկար, որովհետեւ մարդիկ զբաղւած էին հոգու փրկութեամբ։ Հաւատացէք ինձ որ համաձայն «Մեծ համակարգերի տեսութեան», այն համակարգը, որի ղեկավարման ենթակայ գործօնների թիւը անցնում է որոշակի սահմանից, ապա այդպիսի համակարգերը ԱՆՂԵԿԱՎԱՐԵԼԻ ԵՆ։ Բայց ինչո՞ւ դիմել ժամանակակից գիտութեան օգնութեանը, եթէ մեր նախնիները մեզանից իմաստուն էին։ Դիմենք, օրինակ, Արիստոտելին, որի մի արտայայտութեամբ ես ուզում եմ աւարտել իմ այս գրութիւնը.

-«Պարզ է, որ պետութիւնը մէկ տեղում ապրող մարդկանց ընդհանրութիւն չէ։ Պելոպոնէսը չի դառնայ մէկ պետութիւն, եթէ նրան շրջապատեն մէկ ընդհանուր պատով։ Պետութեան բնակչութեան թիւը պէտք է լինի ոչ-շատ մեծ, եւ տարածութիւնն էլ պէտք է լինի սահմանափակ։ Ամէն մի իր ունի իր չափսը։ Շատ մեծ թւով բնակչութիւն ունեցող պետութիւնը դադարում է պետութիւն լինելուց։ Չի կարող պետութիւնը ունենալ նաեւ շատ մեծ տարածութիւն, ինչ-

պէս, օրինակ, Բաբելոնը։ Քաղաքացիք, իրենց հասարակական պարտականութիւնները կատարելու համար, պէտք է ճանաչեն միմեանց, պետութիւնը պէտք է լինի տեսանելի։ Շատ մեծ պետութիւններում, բնակչութիւնը չգիտէ, թէ ո՞վ է իրեն իշխում և անհնարին է բոլորին կանչել ընդհանուր ժողովի»։

Ես մէջ բերեցի իմ այս գրութիւնը, նպատակ ունենալով ցոյց տալ, թէ ինչպիսի դեր է խաղում մտածելակերպը այս կամ այն ուղղութիւնը, այս կամ այն միջոցը, այս կամ այն նպատակը ընտրելու գործում։ Յիրաւի, Սոլժենիցինի մտածելակերպը, ինչպէս բազմիցս նշել եմ, կրօնական անիշխանականի մտածելակերպ է։ Ուստի նրա կողմից ձեւակերպւած նպատակները և առաջարկները գտնւում են բարոյական ասպարէզում և ուղղւած են մարդու անձին։ Լեւիտինը, Սախարովը և շատ ուրիշներ ունեն, ես կ'ասէի, պետական մտածելակերպ և, ելնելով մարդու անկատարեալ լինելուց, փորձում են գնահատել, թէ ի՞նչ կարող է և ի՞նչ չի կարող անել մարդը. այսինքն որոնում են ոչ թէ անհրաժեշտը, այլ հնարաւորը։ Պարզ է, որ լաւագոյն հնարաւոր կարգը միշտ էլ կը զիջի լաւագոյն անհրաժեշտին։ Բայց առաջինը ունի այն առաւելութիւնը, որ իրականանալի է, իսկ երկրորդը թւում է վերացական։

Տեսնենք, թէ արդեօք անիշխանականների բարոյական կատարելագործութեան առաջարկները այդքան վերացակա՞ն են։ Ինչպիսի՞ միջոցներով են ուզում անիշխանականները իրագործել իրենց նպատակները։ Միակ միջոցը նրանք տեսնում են համայնքների մէջ, այսինքն բարոյական գաղափարակիցների միասնական կեանքի մէջ։ Այսպէս էին վարւում առաջին քրիստոնեաները, այդ էր առաջարկում Բակունինը և այդպէս են վարւում մեր իսկ օրերին բոլոր նրանք, ովքեր որդեգրել են ամբողջ մարդկութիւնից տարբերւող ու մարդկութեան համար անսովոր գաղափարներ։

Նրանց թւին են պատկանում ե՛ւ վերը նշւած հումակերները, ե՛ւ **«նուդիստ»**ները, որոնց պատկանող մարդկանց երկու սեռերը, առանց իրարից քաշւելու, որպէս պարզութեան և ոչ թէ այլասերւածութեան նշան, ման են գալիս բոլորովին մերկ։ Մի խօսքով, իրականացնելու համար մարդկութեան կողմից չընդունւած գաղափարները, անհրաժեշտ է կտրւել մարդկութիւնից այնքան ժամանակով, մինչեւ որ մարդկութիւնը ինքը կամաւոր կերպով կը միանայ տւեալ համայնքին։ Իսկ եթէ իրենց գաղափարները, կոմունիստների նման, նրանք բռնի ուժով փորձեն պարտադրել մարդկութեանը, ապա նախօրօք կարելի է ասել, որ այդ գաղափարներին վիճակւած է կործանում։ Այս համայնքային իմաստով արդէն հասկանալի և իրագործելի են ե՛ւ Տոլստոյի քարոզները, ե՛ւ Սոլժենիցինի առաջարկները, ե՛ւ հումակերութիւնը։

1975

ՍԿԶԲՈՒՆՔԸ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԻ

Է. Յովհաննիսեան

Յօդուածիս վերնագրի միտքը պատկանում է Խաժակ Տէր-Գրիգորեանին: Մի առիթով, երբ մենք քննարկում էինք ընկերվարութեան որոշ կողմերը և երբ ես փորձում էի ապացուցել, թէ ոչ-միշտ պէտք է տրամաբանութիւն որոնել ընկերվարութեան մէջ, թէ երբեմն տրամաբանութիւնը հրաժարւում է դատաւորի դեր կատարելուց և թէ երբեմն ընկերվարութիւնը հաւատք է պահանջում, Խաժակը գտաւ «սկզբունքը տրամաբանութիւն չունի» բանաձեւումը, որը ինձ այնքան դիւր եկաւ, որ ես որոշեցի անդրադառնալ այս հարցին:

Որդեգրելով Խաժակի բանաձեւը, ես, անշուշտ, ազատում եմ նրան իմ յօդուածի մտքերի պատասխանատուութիւնից, որովհետեւ այստեղ ես արտայայտում եմ միայն ու միայն իմ սեփական կարծիքը:

Մարդկային իմացութեան բոլոր բնագաւառներում, լինի նա արուեստ, փիլիսոփայութիւն, բնագիտութիւն, կրօն թէ գաղափարախօսութիւն, կարելի է գտնել մի սկզբունք, անբացատրելի մի **աքսիոմ**, որի վրայ տրամաբանութիւնը կառուցում է տեսաբանական շէնքը: Վերցնենք երկրաչափութեան ամենապարզ դասագիրքը և կը տեսնենք, որ երկու սկզբունքի հիման վրայ,- որոնք են. «Երկու կէտերի միջեւ ամենակարճ հեռաւորութիւնը ուղիղ գիծն է» և «եթէ երկու պատկեր, մէկը միւսի վրայ դնելուց յետոյ, համընկնում են բոլոր կէտերով, ապա այդ պատկերները հաւասար են»,- կարելի է ապացուցել, այսինքն յանգել տրամաբանական այն եզրակացութեան, թէ ե՛րբ են հաւասար եռանկիւնիները, ինչպիսի՛ փոխյարաբերութիւնների մէջ են գտնւում նրանց անկիւններն ու կողմերը:

Այս երկու սկզբունքների վրայ կարելի է կառուցել մի ամբողջ երկրաչափութիւն, որը այնքան տրամաբանական ու անսխալ կը թւայ մեզ, որ մենք միամտօրէն կը փորձենք այդ երկրաչափութեան միջոցով ապացուցել ու հիմնաւորել ինքը՝ սկզբունքը: Ապարդիւն պիտի անցնեն բոլոր մեր փորձերը, որովհետեւ սկզբունքի վրայ կառուցւած տեսութեամբ սկզբունք բացատրելը բացառւած է: Սկզբունքը տրամաբանութիւն չունի:

Սկզբունքի հիմնաւորումը գտնւում է այլ տեղ, գտնւում է հաւատքի ոլորտում: Ինքը տրամաբանութիւնը ունի սեփական սկզբունքներ, որոնք նոյնպէս անբացատրելի են տրամաբանութեամբ: Դրանցից մէկը, օրինակ, պնդում է, որ եթէ «Ա» տրամաբանական բազմութիւնը պատկանում է «Բ» տրամաբանական բազմութեանը, իսկ «Բ» տրամաբանական բազմութիւնը պատկանում է

«Գ» տրամաբանական բազմութեանը, ապա «Ա» տրամաբանական բազմութիւնը պատկանում է «Գ» բազմութեանը։ Այս օրէնքը մեզ թւում է շատ տրամաբանական, մեզ թւում է, թէ այս օրէնքը բացատրւում է տրամաբանութեամբ, բայց դա միայն թւում է, որովհետեւ սա տրամաբանութեան անբացատրելի սկզբունքն է։

Այսպիսով, եթէ մեզ յաջողւում է որեւէ բան բացատրել տրամաբանութեան միջոցով, ապա դա միայն նշանակում է, որ բացատրւող առարկան գտնւում է տրամաբանութեան սկզբունքների ոլորտում և հէնց դրա համար էլ ինքը սկզբունք չի կարող լինել։ Սկզբունքը հէնց նրանով է սկզբունք, որ տրամաբանութիւն չունի, այսինքն անբացատրելի է եղած տեսութիւնների միջոցով։ Նա նոր տեսութեան ելակէտ է։ Եւ այստեղ ոչ մի նշանակութիւն չունի, թէ խօսքը բնագիտութեան, արւեստի թէ գաղափարախօսութեան մասին է։

Այս նախաբանից յետոյ, ես կարող եմ անդրադառնալ Խաժակի հետ ունեցած վէճին, որի ժամանակ իմ հակառակորդը փորձում էր ապացուցել, թէ որքանով տրամաբանական է ընկերավարական արդարութիւնը։ Ես համաձայն չէի նրա հետ, որովհետեւ ընկերվարութեան մէջ ուզում էի տեսնել ոչ թէ տրամաբանութիւն, այլ սկզբունք։

Եթէ մենք ընկերվարական սկզբունքները վերցնենք տրամաբանութիւնից, այսինքն վերածենք այդ սկզբունքները տրամաբանական սկզբունքների, ապա ընկերվարութիւնը կը կորցնի իր ինքնուրոյնութիւնը, իսկ ընկերվարական սկզբունքները կը դառնան ոչ այլ ինչ, եթէ ոչ հետեւեալ բացատրութիւնների նման մի բան։

Եթէ մէկ էակ համեմատենք միւս էակի հետ և պարզենք, որ նրանց բոլոր օրգանները համընկնում են, ապա նման էակները պատկանում են մէկ բազմութեան և իրար հաւասար են։ Եթէ տարբերութիւնը միայն սեռական օրգանների մէջ է, ապա այդ էակներն էլ կարելի է հաւասար համարել, քանզի տարբերութիւնը մեծ չէ։ Մորթի, մազերի գոյնի և դիմագծերի տարբերութիւնը նոյնպէս էական չէ, քանզի այդ տարբերութիւնները չեն ազդում նրանց սեփական պահանջները բաւարարելու ցանկութեան վրայ։

Արդ՝ կանայք և տղամարդիկ, հայեր և եթովպիացիներ, մարդիկ ընդհանրապէս, հաւասար են։ Հաւասար մարդիկ ունեն հաւասար պահանջներ, ուստի այդ պահանջները պէտք է հաւասարաչափ բաւարարւեն։ Եւ այստեղից արդէն տրամաբանութիւնը կը սկսի կառուցել իր հաւասարաչափ բաւարարելու տեսութիւնը, որը ի վերջոյ շատ տրամաբանօրէն կը խլի շահագործող հարուստից նրա հարստութիւնը և կը տայ այն շահագործւող աղքատին։ Ընդ որում, այս գործը կատարելիս, նա կը որդեգրի եւս մի տրամաբանական սկզբունք, թէ արդարութեան կշիռքը ա՛յն կողմը պէտք է քաշի, որը ծանր է,

այսինքն մեծամասնութեան կարծիքը փոքրամասնութեան կարծիքից աւելի արդար է:

Սակայն սկզբունքը տրամաբանութիւն չունի և դրա համար ընկերվարական սկզբունքների բացատրութիւնը անհրաժեշտ է որոնել հաւատքի բնագաւառում (խնդրում եմ, չյարձակուէք իմ վրայ, այս հաւատքը Աստծու հանդէպ հաւատքի հետ ոչ մի կապ չունի): Մի ինչ որ տեղից ինձ հասնում է հետեւեալ ճշմարտութիւնը, «Աւելի լաւ է տալ, քան առնել»: Ոչ,- բացագանչում է տրամաբանութիւնը,- սա ի՞նչ ապուշութիւն է: Բայց ես գիտեմ, որ տալու հաճոյքը առնելու հաճոյքից բարձր է: Որտեղի՞ց գիտեմ, չգիտեմ: Երեւի այնտեղից, որտեղից գիտեմ, որ սպանելը սիրելուց վատ է: Եւ սա սկզբունք է, այլ ոչ թէ տրամաբանութիւն:

Ինչ որ մի տեղից ինձ հասնում է այն ճշմարտութիւնը, թէ ես պիտի մեռնեմ, որպէսզի 100ը ապրեն: Ոչ,- զայրանում է տրամաբանութիւնը,- սա խենթութիւն է: Բայց ես գիտեմ, որ եթէ ընկերվարութիւնը որեւէ ժամանակ պիտի իրականանայ, ապա այս խենթերով պիտի իրականանայ, որովհետեւ ընկերվարական սկզբունքները հաւատք են պահանջում: Եւ հաւատքի բնագաւառում կարելի է գտնել ընկերվարական սկզբունքների, օրինակ, հետեւեալ հիմնաւորումը.

Մարդիկ հաւասար են, բայց ոչ նրա համար, որ հաւասար պահանջներ ունեն, այլ նրա համար, որ բնութեան կողմից օժտուած են ապրելու հաւասար իրաւունքներով: Սա նշանակում է, որ բոլոր մարդիկ հաւասարաչափ իրաւունք ունեն բաւարարելու իրենց կենսական պահանջները: Ապրելու իրաւունքի հետ միասին՝ մարդիկ օժտուած են ստեղծագործական կարողութիւններով և երեւակայութեամբ, որոնց շնորհիւ նրանք կարողանում են ծաւալել ապրելու պահանջը, երբեմն հասցնելով այն պճնանքի: Շքեղ ու անբարոյական կեանք վարելու պահանջը մարդու ստեղծագործական միտքը սեւեռում է դէպի հարստութիւն կուտակելը, որը հնարաւոր է դառնում ուրիշներին շահագործելու շնորհիւ:

Արդ, քանի դեռ գոյութիւն ունի պճնանքի ու հարստութեան ձգտող մարդը, գոյութիւն կունենայ շահագործելու ցանկութիւնը: Ուստի արդարութեան համար անհրաժեշտ է վերացնել կա՛մ շահագործելու հնարաւորութիւնը և կամ էլ ստեղծել այնպիսի մարդ, որի աչքերը ոսկի տեսնելուց չփայլեն և որը իր կեանքի պահանջների բաւարարութիւնը որոնի, օրինակ, երաժշտութեան, գթասըրտութեան և գիտութեան, այլ ոչ թէ վզին 5000 դոլար արժէքով ադամանդ կախելու մէջ:

Բայց այս երկրորդ ճանապարհից, մարդ դաստիարակելու ճանապարհից կրօնի հոտ է գալիս և ընկերվարութեան համար անընդունելի բան է: Մնում է

առաջին ճանապարհը, այսինքն շահագործելու հնարաւորութիւնը վերացնելու ճանապարհը։ Եւ այստեղից արդէն կարելի է կառուցել ընկերվարական տեսութեան բուրգը, ինչ որ արւել է ընկերվարութեան տեսաբանների կողմից։

Սակայն մինչեւ այստեղ ոչ մի տրամաբանութիւն չկար։ Ոչ մի տրամաբանական սկզբունքով չի կարելի բացատրել, թէ ինչու երաժշտութիւն լսելու պահանջը արդարացի է, իսկ արծաթէ շատրւաններով ոսկէ լողարաններում լողանալու պահանջը՝ ոչ։ Ո՞վ և ի՞նչ իրաւունքով թոյլ տւեց մեզ դասակարգել մարդկանց պահանջները։ Գուցէ վզին աղամանդ կախելու հաճոյքի համար մարդը պատրաստ է հրաժարւել մի կտոր հացից։ Չէ՞ որ հրաժարւում են հացից յեղափոխականները՝ սկզբունքներից ելնելով և հացադուլ յայտարարելով։ Մէկ դար առաջ Եւրոպայում քաղցած ազնւականները մեռնում էին սովից, բայց չէին վաճառում իրենց ազնւականի զգեստները։ Ռուս բանաստեղծ Պուշկինը ձեռքը ատրճանակ չէր վերցրել և կրակել չգիտէր, երբ պատիւը պաշտպանելու համար Դանտեսի հետ մենամարտի դուրս եկաւ։ Ո՞վ կարող է մեզ ասել, որ պատիւ պահելու պահանջը զիջում է նիւթական պահանջներին։

Մի խօսքով ընկերվարական արդարութիւնը յենւում է այն անբացատրելի սկզբունքների վրայ, որոնցից որպէս առաջին թեզ բխում է ինքնասահմանափակման թեզը։ Ինչո՞ւ ես պէտք է ինձ սահմանափակեմ, ինչո՞ւ պէտք է համեստ ապրեմ, եթէ կարող եմ ոսկէ լողարաններում լողանալ և աղամանդներ դնել մատիս։ Չգիտեմ։ Երեւի նրա համար, որ սկզբունքը տրամաբանութիւն չունի։ Ոչ թէ զսպեմ իմ ցանկութիւնը (սա տրամաբանութեան ճնշում պիտի նկատւէր), այլ պարզապէս չուզեմ՝ ոչ հարստութիւն և ոչ էլ շքեղութիւն։ Եւ եթէ ես իմ զգացմունքներով, այլ ոչ տրամաբանութեամբ, չուզեմ շքեղութիւն, իմ չուզելը սկզբունք է։

Իսկ տրամաբանական ընկերվարութիւնը թատրոն է, որի բեմադրիչները և դերակատարները իրենց բեմադրութիւնը խաղում են միամիտ հանդիսատեսի համար։ Եւ եթէ ընդունելի համարենք այն սկզբունքը, որի համաձայն տալու հաճոյքը ստանալու հաճոյքից բարձր է, ապա կարելի էր խաղալ մի ուրիշ թատրոն, որտեղ գլխաւոր դերակատարը դառնար տալու հաճոյքից զուրկ քաղքենին։ Այդ դէպքում երջանիկ բանւորութիւնը, որ խլել էր քաղքենուց տալու հաճոյք ստանալու իրաւունքը, պէտք է խղճմտանքով վերաբերւէր դրամատէրերին և փորձէր փրկել նրանց, ինչպէս փրկում են լոյսը տեսնելուց զուրկ կոյրերին՝ նրանց աչքերը բուժելով։

Գուցէ ծիծաղելի են իմ այս մտավարժութիւնները, համաձայն եմ, բայց ոչ աւելի, քան սկզբունքը տրամաբանութեամբ բացատրելու մնացած բոլոր փորձերը։

Ուստի թողնենք տրամաբանական վարժութիւնները ընկերավարական սկզբունքների մասին, որդեգրենք ինքը սկզբունքը, ինքնասահմանափակման սկզբունքը։

Իսկ եթէ աւելին ունենք, այն էլ տանք մեր ժողովրդին։ Չհարցնէք, թէ ինչո՞ւ. սկզբունքը տրամաբանութիւն չունի։

1979

ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ԱԶԴԱԿՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՒՄԸ՝ ՋՆՋՈՒՄ Է ՄԱՐՔՍԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Է. Յովհաննիսեան

Եթէ Ա. Խանջեանի յօդուածը («Դրօշակ», թիւ 19) գրուած լինէր մարքսականութիւնը ենթակայական ազդակներով արդարացնելու համար, ես չէի պատասխանի նրան, որովհետեւ Մարքսի այս կամ այն գաղափարը վերագրելով, նրան փրկելու փորձերը վաղուց ի վեր անցել են ապարդիւն։ Բոլոր լուրջ գիտնականները արդէն վաղուց հասկացել են, որ դիալեկտիկան և նիւթապաշտութիւնը անհամատեղելի են, հակառակ Մարքսի կողմից հռչակուած դիալեկտիկական նիւթապաշտութեան պնդումներին։ Բայց կան նաեւ այնպիսիները, որ չեն ուզում հրաժարւել իրենց կուռքից ու շարունակում են կցկտուր ջանքեր գործադրել Մարքսին արդարացնելու և մարքսականութիւնը փրկելու համար։ Բայց սրանք չեն ուզում հասկանալ, որ Մարքսին ենթակայական ազդակների ճանաչում վերագրելով, նրանք ոչ միայն չեն փրկում, այլ պարզապէս ջնջում են մարքսականութիւնը։ Գուցէ այս աղբիւրներից էլ մեկնում է Ա. Խանջեանը։

Հ.Յ.Դ. գաղափարախօսութիւնը մարքսականութիւն չէ ու չի կարող լինել հէնց այն պարզ պատճառով, որ նա ճանաչում է թէ՛ առարկայական և թէ ենթակայական ազդակների ազդեցութիւնը հասարակական կեանքի վրայ։ Եւ եթէ մենք համաձայնւենք այն մտքի հետ, թէ Մարքսը և մարքսականութիւնը նոյնպէս ճանաչում են այդ երկու ազդակները, մեզ այլեւս ոչինչ չի մնայ, բացի Դաշնակցութիւնը մարքսական կուսակցութիւն հռչակելուց։

Հետեւաբար կարելի չէ ընդունել, որ մեզ ստիպեն «Դրօշակ»ի էջերում կարդալ մէջբերումներ Ստալինի և իր նման ուրիշների գործերից։

Ամենասարսափելին – եթէ չասենք ծիծաղելին – այն է, որ Ստալինին վերագրւում է գաղափարաբանական հեղինակութիւն և առարկայական ազդակների ճանաչում՝ պատմական նիւթապաշտութեան սեփական ուղղութիւն տալու իմաստով։

Ո՛չ։ Ստալինը ոչ միայն բոլորովին հաշւի չէր նստում գաղափարախօսական արժէքների հետ, ոչ միայն հաշւի չէր առնում առարկայական ազդակները, ոչ միայն չէր ճանաչում որեւէ հասարակական օրէնք, ոչ միայն գտնւում էր զուտ ենթակայական ազդակների ազդեցութեան տակ, այլ նա ճանաչում էր միայն ու միայն ՍԵՓԱԿԱՆ ենթակայական ազդակները։ Այդ սեփական ենթակայական ազդակների թելադրանքով նա ոչնչացրեց 50 միլիոն մարդ։ Նոյն ճամբան բռնեցին Ստալինի կրտունկի տակ գտնւող բոլոր համայնավար կու-

սակցութիւնների ղեկավարները։ Կարելի՞ է հաւատալ, որ «կոմունիստական ինտերնացիոնալի» ցրումը, նրա անդամների գնդակահարումը և 15 միլիոն գիւղացիների աքսորը, մտաւորականութեան ոչնչացումը (այդ թւում նաեւ մեր հայրենակիցների՝ Չարենցի, Բակունցի, Դրաստամատ Սիմոնեանի, Խանջեանի, Չոբանեանի, Ղամբարեանի և հազարաւոր ուրիշների), Հիտլերի հետ դաշինք կնքելը և մնացած բոլոր ռճիրները բխում էին առարկայական ազդակներից։ Ո՛չ։ Մեր ընթերցողների ուշադրութեան ներկայացնեմ մի հետաքրքրական վիճակագրութիւն։ 1898 թւականից մինչեւ 1934 թւականը՝ կոմունիստական կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամ են ընտրուել 264 հոգիներ, որոնցից 45ը մահացել են նախքան ստալինեան մաքրագործումները, 8 հոգի Ստալինի պատճառով ինքնասպան են եղել, 188 հոգի գնդակահարւել են կամ մահացել են բանտերում, 22 հոգի կուսակցութիւնից վտարւել են, 21 հոգի մնացել են Ստալինի հետ, որպէս նրա հլու հպատակ ծառաներ։ Հետեւաբար՝ ծիծաղելի է մտածել, թէ այս ամէնը Ստալինը կատարեց գաղափարաբանական սկզբունքներից ելնելով, առարկայական ազդակների բերումով։

Ո՛չ, առարկայական ազդակները այստեղ ոչ մէկ դեր չեն կատարել, այս ամէնը կատարւել ու կատարւում է ենթակայական ազդակների տակ, որոնց մասին, այո՛, խօսել են Մարքսը և մարքսականները, բայց որոնք ոչ մէկ կապ չունեն փիլիսոփայութեան մէջ ընդունւած առարկայական և ենթակայական ազդակների հետ։ Եւ հէնց սա է մեզ համար ամենակարեւորը։

Նախ ցոյց տանք, որ նիւթապաշտութիւնը և դիալեկտիկան անհամատեղելի են։ Այն ամէնը, ինչ գոյութիւն ունի, ճանաչւում է հակադրութեան ճամբով։ Նիւթը գոյութիւն ունի և ճանաչւում է մի քանի միջոցով, ինչը նիւթ չէ։ Նիւթը հակադրւում է ձեւին, հոգուն, տրամաբանութեանը, մի խօսքով՝ ոչ նիւթին։ Դիալեկտիկան չի կարող նիւթը կամ ոչ-նիւթը բացարձակացնել։ Փիլիսոփայական դիալեկտիկան չի կարող լինել ո՛չ դիալեկտիկական նիւթապաշտութիւն եւ ոչ էլ դիալեկտիկական գաղափարապաշտութիւն։ Նա կարող է միայն լինել դիալեկտիկական գոյաբանութիւն (**օնտոլոգիա**), որը ընդգրկում է ամբողջ գոյութիւնը։

Դիալեկտիկական գոյաբանութիւնը ճանաչում է նիւթը, բայց ժխտում է նիւթապաշտութիւնը, ճանաչում է գաղափարը, հոգին, բայց ոչ գաղափարապաշտութիւնը։ Նա ընդգրկում է ամբողջ կեցութիւնը, որակապէս տարբեր երեւոյթները ու չի ճանաչում բնութեան ոչ մէկ մակարդակի ինքնիշխանութիւնը։ Նրա համար բոլոր «իզմերը» անառարկելի պնդումներ են (**դոգմա**)։ Եւ հէնց այն պատճառով, որ դիալեկտիկան ընդգրկում է ամէն ինչ, նրա առջեւ ցցւում է հակադրութիւնների համեմատութեան դժւարին խնդիրը։

Դարեր շարունակ պատճառային կապերը և նպատակաբանութիւնը (**թելէոլոգիա**), նիւթը և հոգին համարւում էին անհամատեղելի: Փիլիսոփայութիւնը փորձեց նրանց հաշտեցնել ու տարբեր ճանապարհներով մօտեցաւ խնդրին: Այդ ճանապարհներից և ոչ մէկը չընտրեց Մարքսը ու նիւթը հոգու հետ համատեղելու դժւարին հարցը Մարքսը լուծեց մէկ նախադասութեամբ. ամէն ինչ շարժւող ու զարգացող նիւթ է: Այն՝ ինչ գոյութիւն ունի, նիւթ է: Բացի նիւթից աշխարհում ուրիշ ոչինչ չկայ:

Բայց ինչո՞ւ այդ դէպքում չասել որ նիւթի տակ մարքսականները հասկանում են ամբողջ առարկայական իրականութիւնը, որը անկախ է ենթակայական գիտակցութիւնից: Հետաքրքրական է Լենինի հարցադրումը. եթէ դուք առարկայական իրականութիւնը ճանաչում էք որպէս ընկալման աղբիւր, ապա դուք նիւթապաշտ էք («**Մատերիալիզմ և իմպերիոկրիտիցիզմ**»):

Ո՛չ ամենեւին էլ ոչ: Լենինի եզրակացութիւնը սխալ է և անընդունելի: Մենք ընկալում ենք ոչ միայն նիւթը, որովհետեւ առարկայական իրականութիւնը չի սահմանափակւում նիւթով: Առարկայական իրականութիւնը առնում է իր մէջ թւերը, ձեւը, ուրիշի տրամաբանութիւնը, իրաւունքը, բարոյականութիւնը, արւեստը: Այս ամէնը առարկայական գոյութիւններ են, բայց նիւթ չեն: Այս ամէնին մենք բոլորս ընկալում ենք, բայց նիւթապաշտ չենք: Մի խօսքով, երբ մենք ուզում ենք հրաժարւել Բերքլիի, Իւմի կամ Մախի ենթակայական գաղափարապաշտութիւնից, դա կարող ենք մենք անել միայն համադրական փիլիսոփայութեան ճամբով, բայց ոչ նիւթապաշտութեամբ: Ինչո՞ւ բացարձակ գոյութիւնը չի կարելի անւանել նիւթ: Այն պարզ պատճառով, որ բացարձակ գոյութիւնը պարունակում է իր մէջ էութիւններ, որոնք ՆԻՒԹԻՑ ԱՆԿԱԽ ԵՆ: Այս բանը չընդունեցին ո՛չ Ֆեյերբախը, ո՛չ Էնգելսը, ո՛չ Մարքսը, ո՛չ Լենինը և ոչ էլ որեւէ մարքսական:

«**Զգայարաններով ընկալւող աշխարհը,**- գրում է Էնգելսը,**- որին պատկանում ենք մենք ինքներս, միակ իրականութիւնն է: Մեր գիտակցութիւնն ու տրամաբանութիւնը որքան էլ որ թւան մեր զգացմունքներից դուրս գտնւող, նրանք մարմնական ու նիւթական ուղեղի արտայայտութիւններն են** («Լիւդւիկ Ֆեյերբախ» 1894):

«**Ինձ համար,**- գրում է Մարքսը,- **գաղափարը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ուղեղ տեղափոխւած նիւթ** («Կապիտալ», առաջին հատոր, մաս 17րդ):

«**Ուղեղը արտացոլում է հասարակական յարաբերութիւնները**»,- շարունակում է նոյն տեղում Մարքսը (էջ 40): «**Մարդու աշխատանքը**,- ասում է նա,- **ուղեղի և մկանների ուժի վատնում է**» («Կապիտալ», էջ 472): Ուսուցչին նա անւանում է «**երեխաների գլուխը մշակող բանւոր: Նա լցնում է այդ գլուխները**

ուսումով, ճիշտ այնպէս, ինչպէս երշիկագործը աղիքները լցնում է մսով» (նոյն տեղը, էջ 473)։

Ուշագրաւ է լենինի դիտողութիւնը այն մասին, որ Մարքսի, Էնգելսի և հին նիւթապաշտների միջեւ ոչ մէկ տարբերութիւն չկայ ու չի կարող լինել («մատերիալիզմ և իմպերիոկրիտիցիզմ», էջ 197)։

Մարքսական փիլիսոփայութիւնը ոչ միայն չի ճանաչում ենթակայական ազդակների ազդեցութիւնը, այլեւ նրանց գոյութիւնը։ Ենթակայական ազդակները մարքսականների համար ոչ այլ ինչ են, եթէ ոչ նիւթի գոյութեան տարբերակներ։

Իսկ այն, ինչը մարքսականները ստիպւած եղան ճանաչելու ու դրանով ստեղծեցին այն տպաւորութիւնը, թէ իրենք էլ չեն առարկում ենթակայական ազդակների դէմ, դա բոլորովին ուրիշ բան էր։

Մարքսականները միշտ կարողացել են ճարպիկօրէն խաղալ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆ հասկացութեան հետ, որը փիլիսոփայական տեսանկիւնից ունի երկու տարբեր նշանակութիւններ։ Խօսքը նիւթական և բարոյական, պատճառային և նպատակային անհրաժեշտութիւնների մասին է։

Երբ մենք ասում ենք, որ այս բանը պիտի տեղի ունենայ, ապա դա կարող է նշանակել, որ բնական օրինաչափութիւնների ազդեցութեան տակ այս բանը անխուսափելիօրէն տեղի է ունենալու։ Բայց նախադասութեան բովանդակութիւնը կարող է լինել նաեւ ուրիշ։ Լաւ կը լինէր, որ այս բանը կատարուէր, ուստի՝ ջանանք, որ կատարւի պայքարենք այդ բանի համար։

Երբ մարքսականները պնդում են, որ դրամատիրութիւնը ՊԻՏԻ ծնի գիտակից բանւոր դասակարգ, որը ՊԻՏԻ կործանի դրամատիրութիւնը, նրանք օգտագործում են տարբեր «պիտի»ներ։ Առաջին **պիտի**ն օրինաչափութիւններից բխող **պիտի** է, ինչը նշանակում է, որ դրամատիրութիւնը անխուսափելիօրէն ծնելու է գիտակից բանւոր դասակարգ։ Երկրորդ **պիտի**ն նշանակում է, որ բանւոր դասակարգը, տեսնելով որ շահագործւում է, որոշում կը տայ դրամատիրութիւնը կործանելու մասին։ Այդ որոշումը տրւում է առարկայական ազդակների ազդեցութեան տակ և այստեղ հասարակական գիտակցութիւնը որոշւում է առարկայական կեցութեամբ։

Սա Կապիտալի մարքսականութիւնն է, որին մարքսականները դիմել են յեղափոխական անյաջողութիւնների պահերին։ Նրանք հանգստացնում էին բանւոր դասակարգին, թէ մի մտահոգւէք, միեւնոյնն է, վաղ թէ ուշ մենք յաղթելու ենք, քանզի օրինաչափութիւնները մեր դաշնակիցներն են։ Բայց օրինաչափութիւններով դեռեւս ոչ մէկը չի յաղթել։ Եթէ նման բանը հնարաւոր լինէր, էլ ինչո՞ւ էին կազմւելու կուսակցութիւններ, բանակներ և ո՞ւմ էր պէտք այդ դէպ-

քում կոմունիստական կուսակցութիւնը, եթէ կոմունիզմը գալու էր օրինաչափութիւնների բերումով։

Մարքսը հասկանում էր, որ երկրորդ **պիտի**ն ինքնըստինքեան չի իրականանալու և կոմունիզմը պէտք է դառնայ նպատակ ու մարդկանց գործունէութեան արդիւնք։ Ահա այստեղ է, որ Մարքսը ճանաչում է նպատակների, ծրագրերի, ղեկավարների տաղանդի, ելոյթների ու քարոզների իշխանութիւնը։ Բայց նշանակում է սա արդե՞օք, որ դրանով Մարքսը ճանաչեց ենթակայական ազդակների կարեւորութիւնը։ Ամենեւին էլ ոչ։

Եթէ ենթակայական ազդակների ճանաչումը դրանում լինէր, ապա դրա համար ո՛չ Մարքսի և ոչ էլ փիլիսոփայութեան պէտք կար։ Այդպէս են վարուել աշխարհի բոլոր իշխանները՝ եգիպտական փարաւոններից ու կեսարներից մինչեւ մեր օրերը։ Մի՞թէ Մարքսը պիտի գար մեզ բացատրելու համար, որ սեղան նիւթը պատրաստելու համար ատաղձագործը պէտք է սկզբից ծրագրի իր անելիքները։ Եթէ ատաղձագործի նման յեղափոխականն էլ յեղափոխութիւնը սկսելուց առաջ պիտի կատարի որոշ ծրագրումներ ու մտային աշխատանք, նշանակո՞ւմ է սա, որ այդ պահին գիտակցութիւնն է որոշում կեցութիւնը։ Եթէ այդպէս լինէր, ապա «կեցութիւնն է որոշում գիտակցութիւնը» թեզը ընդհանրապէս ոչ մի իմաստ պիտի չունենար, որովհետեւ հասարակական կեանքը, պատմութիւնը, յեղափոխական շարժումները միշտ էլ կազմակերպւում են մարդկանց կողմից։

Խնդրի լուծումը պէտք է որոնել բոլորովին ուրիշ տեղ։ Որտեղի՞ց են գալիս նպատակները, ցանկութիւնները։ Որո՞նք են հասարակական կեանքի շարժիչները։ Կարո՞ղ են օրինակ, մարդկանց հասարակական վարքագծում դեր կատարել այնպիսի ենթակայական ազդակներ, ինչպիսիք են՝ փառասիրութիւնը, նախանձը, սէրը, ատելութիւնը, իշխանամոլութիւնը, հաւատքը, ագահութիւնը, խաղամոլութիւնը, երաժշտասիրութիւնը, հետաքրքրասիրութիւնը, հոգեբանութիւնը և այլն։ Ըստ Մարքսի, ո՛չ։ Եւ հէնց այստեղ է նրա միակողմանի առարկայականամոլութիւնը։ Նրա և մարքսականների համար պատմութեան շարժիչ ուժը տնտեսական փոխյարաբերութիւններն են։ Ոչ մէկ տեղ, ոչ մէկ անգամ, ոչ մէկ մարքսական այս իմաստով չի ճանաչել ենթակայական ազդակների կարեւորութիւնը։

Մինչդեռ մեզ համար, որպէս ազգային կուսակցութիւն, ենթակայական ազդակները կարեւորագոյն տեղ են գրաւում, քանզի ազգային զգացմունքները ենթակայական ազդակներ են։ Չեմ կարծում, որ ոեւէ հայի համար Հայ Դատը ունենայ տնտեսական նշանակութիւն։

Ոչ մէկ տեղ Մարքսը հաշուի չի առել ժողովրդի ազգային նկարագիրը։ Նրա համար ռուսները տարբերւում էին ճապոնացիներից միայն ու միայն արտադ-

րական ուժերի զարգացմամբ: Եկ ըստ նրան՝ դրամատիրութեան շղթան պատռելու էր այնտեղ, որտեղ թելադրում էր զարգացած տնտեսութիւնը: Բայց այդ շղթան կտրուեց Ռուսաստանում և ոչ թէ տնտեսութեան թելադրանքով, այլ ռուս ժողովրդի նկարագրի բերումով: Մարքսը այդ բանը չէր կարող նախատեսել, որովհետեւ նրա համար գոյութիւն չունէր ազգային նկարագրի ենթակայական ազդակը:

Մարքսի համար տնտեսութիւնը մշակոյթի պատճառն է: Որտեղի՞ց է գալիս այս համոզմունքը: Նա բխում է հետեւեալ ճիշտ պնդումից. առանց տնտեսութեան մշակոյթը անկարելի է: Տնտեսութիւնը մշակոյթ ստեղծելու պայմաններից մէկն է: Բայց միայն մէկը: Առանց ուրիշ պայմանների՝ գիտութեան, արուեստի, իրաւունքի, պետութեան, կրօնի, բարոյականութեան, մի խօսքով՝ ենթակայական պայմանների, մշակոյթը նոյնպէս անկարելի է, քանզի մշակոյթը այս ամէնի ամբողջութիւնն է: Իսկ Մարքսը բոլոր պայմաններից ճանաչեց միայն մէկը:

Առաջին անգամը չէ, որ մտաւորականը որեւէ օրինաչափութիւն յայտնաբերելով, ջանում է ամբողջ կեցութիւնը բացատրել այդ օրինաչափութեամբ: Պիթագորոսը յայտնաբերեց թիւը և հռչակեց, որ ամէն ինչ թիւ է: Դեմոկրիտը յայտնաբերեց ատոմը և յայտարարեց, որ ամբողջ աշխարհը բաղկացած է ատոմներից: Ֆիխտէն բացայայտեց մարդու «Ես»ը և ասաց որ բոլոր առարկաները ստեղծւում են «Ես»ի կողմից: Այս նոյն սխալը կատարեց նաեւ Մարքսը:

Նկատելով, որ հոգեկան գործօնների վրայ ազդեցութիւն ունի տնտեսութիւնը, Մարքսը հռչակեց որ տնտեսութիւնը պատմութեան և մշակոյթի ՄԻԱԿ հիմքն է: Եթէ Մարքսը չընդգծէր տնտեսութեան բացարձականութիւնը, մարքսականութիւնից ոչինչ չէր մնայ:

Եթէ տնտեսութիւնը պատմութեան, յեղափոխութիւնների, կեցութիւնների ու հասարակական վարքագծի միակ աղբիւրն ու հիմքը չէ, էլ ինչո՞վ է մարքսականութիւնը տարբերւում մնացած բոլոր տեսութիւններից ու ո՞րն է Մարքսի նոր խօսքը նախորդ փիլիսոփաների նկատմամբ:

Մարքսը այնքան էր համոզւած տնտեսութեան բացարձակ նշանակութեան մէջ, որ անկեղծօրէն զարմանում էր, երբ բախւում էր հակառակ պատմական օրինակների հետ: Մարքսը խոստովանում է հետեւեալ դժւարութիւնը, որ ցցւել էր իր տեսութեան առջեւ: Յունաստանի տարրական տնտեսութիւնը բոլորովին չէր համապատասխանում նրա չգերազանցւած մշակոյթին ու մեծագոյն փիլիսոփայութեանը: Հակառակը՝ Միացեալ Նահանգների գեր-զարգացած տնտեսութեանը չէր համապատասխանում նրա ցածր մշակոյթը: Մարքսը զարմանք է յայտնում այս առիթով, որ վերնաշէնքը մնում է, երբ հիմքը ամբողջովին քայքայւել ու փլել է:

Ինչի՞ վրայ է, ուրեմն, յենւում այդ գեղեցիկ վերնաշէնքը։ Ենթակայական գործօնների վրայ, յարգելի մարքսականներ։

Հայկական Սփիւռքը ահա արդէն մէկ դար է, ինչ որ մէկ տեսակի տնտեսական հիմք չունի, բայց վերնաշէնքը՝ ազգային գիտակցութիւնը ու ազգային մշակոյթը պահպանւել են։ Եւ եթէ տեղ-տեղ այդ վերնաշէնքը սկսել է քանդւել, դա ոչ միայն տնտեսական գործօնների պակասից է, այլ ենթակայական ազդակների թուլացումից, որոնց վրայ մինչեւ այսօր ամուր կանգնած էր հայ ազգային ինքնագիտակցութիւնը։

Այս ամէնի եզրակացութիւնը հետեւեալն է.

Մարքսը և մարքսականները երբեք չեն ճանաչել ենթակայական ազդակների նշանակութիւնը փիլիսոփայական իմաստով։ Եթէ այդ բանը նրանք ճանաչէին, ապա ստիպւած պիտի լինէին հրաժարւել իրենց տեսութիւնից։ Մարքսականները իրենց բռնութիւնները միշտ էլ կատարել են առաջնորդների ենթակայական օրինաչափութիւններով։

Հ.Յ.Դաշնակցութիւն կուսակցութեան համար պատմական նիւթապաշտութիւնը անընդունելի է, նախ որովհետեւ գիտական չէ և, ապա, նրա ներշնչումով փորձում են խեղդել Հայ Դատը։

1987

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՀԱՏԸ

Է. Յովհաննիսեան

Այս նիւթի շուրջ խօսւել է շատ և խօսել են աշխարհի խոշորագոյն փիլիսոփաները: Սակայն բոլոր ուսումնասիրութիւնները, վերլուծութիւնները և մշակւած տեսութիւնները կրում են համամարդկային բնոյթ և խօսում են մարդու և հասարակութեան փոխ-յարաբերութիւնների մասին այնպէս, կարծես թէ այդ յարաբերութիւնների վրայ չի ազդում անհատի և հասարակութեան ազգային էութիւնը: Կարծես թէ Եթովպիայում, Ռուսաստանում, Եւրոպայում կամ Միացեալ Նահանգներում անհատի և Համայնքի փոխ-յարաբերութիւնները ենթարկւում են նոյն օրինաչափութիւններին: Անշուշտ կան համամարդկային չափանիշներ ու գնահատականներ, որոնք բնորոշ են բոլոր մարդկանց և բոլոր իշխանութիւններին և մենք հաշւի պիտի նստենք այդ չափանիշների հետ, սակայն դրա հետ միասին անհրաժեշտ է հասկանալ, թէ ինչպէ՞ս են այդ ընդհանուր օրինաչափութիւնները կիրառւում տւեալ ազգային միջավայրում: Մեզ, անշուշտ, հետաքրքրում է հայկական միջավայրը, սակայն սկսենք ընդհանուր օրինաչափութիւններից:

Մարդ արարածի բոլոր ձգտումները ի վերջոյ ուղղւած են սեփական կարողութիւնների ծաւալմանը, ինչը ոչ այլ ինչ է, եթէ ոչ սեփական ցանկութիւնների իրականացման փորձ: Ես կարող եմ հարստանալ, ես կարող եմ պայքարել, ես կարող եմ ամուսնանալ, ես կարող եմ իշխել, ես կարող եմ ուրիշներին լաւութիւն անել, ես կարող եմ զոհւել, որքան շատ բան կարող ենք մենք անել, այնքան աւելի ծաւալւուն է մեր կարողութիւնների դաշտը: Մարդը ուզում է ստեղծագործել, կառուցել, քանդել, փրկել ու փրկւել, բայց այս կարողութիւնների սահմանները մեր մէջ են, այլ ոչ թէ դրսում: Եւ հետաքրքրականը այն է, որ այդ սահմանի այն մասը որ անյաղթահարելի է, մեզ շատ էլ չի հետաքրքրում: Չենք կարող խմել ծովը, հաշւել աստղերը, կանգնեցնել երկրագունդը, և այս ուղղութեամբ ջանքեր չենք էլ գործադրում: Միայն այնտեղ, որտեղ մեր կարողութիւնների սահմանը թւում է մեզ խախուտ և թոյլ, միայն այնտեղ մենք ապրում ենք սահմանը խախտելու ոգեւորութիւն: Եթէ մեզ յաջողւում է ծաւալել մեր կարողութիւնների սահմանները, ապա մենք երջանկութիւն ենք ապրում, հակառակ դէպքում մենք տառապում ենք, քանզի այնտեղ, որտեղ մենք կարող ենք, այնտեղ մենք ազատ ենք: Սակայն սահմանի ո՞ր մասն է թւում տւեալ անձին յաղթահարելի, դա կախւած է նրա երեւակայութիւնից և ինքնահաւանութիւնից, այսինքն սեփական ուժերի վրայ վստահ լինելուց: Աւելորդ է ասել,

որ մարդու այդ յատկութիւնները որպէս օրէնք կապ ունեն նրա ազգային նկարագրի հետ և յաճախ նրա ինքնավստահութիւնը խաբուսիկ է լինում: Մենք հայերս, օրինակ, մեր մասին այն տպաւորութիւնը ունենք, որ աշխարհի ամենախելացի ազգն ենք և ամէն ինչ կարող ենք անել, առնւազն ուրիշներից աւելի լաւ: Սակայն երբ սկսում ենք ոչ թէ երեւակայութեան, այլ իրականութեան մէջ ծաւալել մեր կարողութիւնների սահմանները պարզւում է, որ ուրիշները դա մեզանից լաւ են անում, բայց միեւնոյնն է, մեզ մենք նրանցից բարձր ենք համարում: Այս պայմաններում մեր կարողութիւնների սահմանները նեղացնող միակ ատեանը համայնքն է, որը փաստօրէն խլում է մեզանից մեր կարողութիւնները ծաւալելու իրաւունքը: Ազգը, պետութիւնը, կրօնական իշխանութիւնները, ընտանիքը, կուսակցութիւնը խլում են մեզանից մեր ազատութիւնները և մենք կամաւոր կարգով համաձայնւում ենք դրա հետ: Ինչո՞ւ: Որովհետեւ համայնքի օրէնքով մեզանից խլուած մեր կարողութիւնների փոխարէն մենք ձեռք ենք բերում նոր կարողութիւններ, որոնք կապ ունեն համայնքի մէջ մեր գտնւելու հետ: Այսինքն կարողութիւններ, որոնք տալիս է մեզ համայնքը: Համայնքը, որին ես մաս եմ կազմում, չի թողնի, որ ես մեռնեմ քաղցից, ինձ կը պաշտպանի թշնամուց ու կանի այն, ինչ ես մենակս անել չեմ կարող: Ուստի ես զիջում եմ նրան իմ անհատական կարողութիւնները, ձեռք բերելու համար համայնքային կարողութիւններ:

Եւ հէնց այս շուկայում, որտեղ անհատը ցանկանում է որքան կարելի է քիչ զիջել իր անհատական կարողութիւնները, իսկ համայնքը ուզում է որքան կարելի է շատ խլել մեր ազատութիւնները, ստեղծւում է այն հաւասարակշռութիւնը, որը կարող է կոչւել բռնութիւն, ժողովրդավարութիւն, կրօնապետութիւն, և այլն: Այդ վարչաձեւի բովանդակութիւնը ազատ շուկայի գների նման ստեղծւում է ինքնըստինքեան, կախւած անհատի ու համայնքի պահանջներից և այս երկու կողմերի քաղաքական ու մշակութային զարգացման աստիճանից: Մենք տեսնում ենք, որ այստեղ էլ հրապարակ է իջնում ազգային գործօնը, որը որոշիչ դեր է կատարում անհատի և համայնքի միջեւ հաւասարակշռութիւն ստեղծելու գործում:

Անհատի և Համայնքի փոխ-յարաբերութիւնը շատ պարզ բացայայտւում է աշխատանքային փոխ-յարաբերութիւնների մէջ:

Ոչ մէկ պետութեան մէջ չի յաջողւում գտնել մարդու, որը աշխատում է միայն իր համար: Այսպէս թէ այնպէս, տուրքերի կամ այլ ճանապարհով համայնքը գանձում է աշխատաւորի աշխատանքի մէկ մասը, սեփական կարիքների համար (բանակ, դպրոց, ղեկավար մարմիններ): Շատ բնական է, որ աշխատաւորը ջանում է խուսափել այդ լրացուցիչ աշխատանքից, իսկ համայնքը պարտադրում է նրան կատարել այդ աշխատանքը: Ամենադաժան

համայնքը այսինքն զարգացման ցածր մակարդակի վրայ գտնւող համայնքը այն աստիճանի է սեղմում աշխատաւորի ազատ գործելու կարողութիւնները, որ նրան ստրուկ է դարձնում: Ընդորում ստրուկ բառը պէտք չէ անպայման կապել հին Հռոմի կամ այլ ստրուկների հետ: Ինչքից ու իրաւունքներից զուրկ ստրուկներ եղել են բոլոր դարաշրջաններում և մինչեւ վերջին ժամանակներում էլ կային Խորհրդային Միութեան «Գուլագում» և Հիտլերեան կենտրոնացւած ճամբարներում: Այսօր էլ նրանք կան նախկին Հարաւսլաւիայում:

Սակայն այն պահից, երբ պարզ դարձաւ, որ ստրուկի աշխատանքը արդիւնաբեր չէ, քանզի ստրուկը շահագրգռւած չէ իր աշխատանքի արդիւնքների մէջ, համայնքները սկսեցին ազատել ստրուկներին, այսինքն զիջել նրանց սեփական ազատութիւնները այն յոյսով, որ նոր ձեռքբերումներ է ունենալու ամբողջ համայնքը: Եւ այդ յոյսերը արդարացան: Ազատ աշխատաւորի աշխատանքի արդիւնքները շատ աւելի բարձր եղան: Ինչպէս մենք տեսնում ենք աշխատանքային փոխ-յարաբերութիւնների օրինակի վրայ, համայնքի և անհատի միջեւ հաւասարակշռութեան ձեւը կապ ունի գիտակցութեան և ցանկութիւնների հետ, ինչպէս նաեւ համայնքի պահանջների և իմաստութեան հետ: Շատ պարզ է, որ որքան լայն լինեն անհատի կարողութիւնները, այնքան աւելի մեծ ջանք կը թափի նա իր աշխատանքի մէջ, բայց նոյնքան դժւար կը լինի համայնքի ղեկավարներին օգտւել նրա աշխատանքի արդիւնքներից: Եւ հակառակը, որքան սահմանափակ լինեն անհատի ազատութիւնները, այնքան աւելի քիչ ապրանք նա կարտադրի, բայց նոյնքան հեշտ կը լինի խլել նրանից նրա աշխատանքի արդիւնքները: Իսկ որտեղ կան պահանջներ, գիտակցութիւն և իմաստութիւն, այնտեղ սկսում է գործել ազգային նկարագրի գործօնը, որը երբեմն շատ աւելի կարեւոր է, քան առարկայական օրինաչափութիւնները, որոնց իր ուզած ձեւով ձեւափոխում է մեր ազգային նկարագիրը:

Միայն ժողովրդի քաղաքական և քաղաքացիական մշակոյթը կարող է թոյլ տալ, որ համայնքը օգտւի տնտեսական ազատութիւնների պտուղներից և հակառակը, քաղաքականօրէն յետամնաց ժողովուրդը իր ամբողջութիւնը պահպանելու համար պէտք է ստիպւած լինի համակերպւելու աղքատութեան և բռնութեան հետ:

Այս օրինաչափութիւնները պահպանւում են նաեւ զարգացած արդիւնաբերական դարաշրջաններում: Այստեղ էլ մարդը ձգտելու է ծաւալել իր կարողութիւնները, իսկ կառավարութիւնները ձգտելու են աշխատաւորից վերցնել այն, ինչը անհրաժեշտ է պետութեան կարիքների համար: Եւ պէտք չէ մտածել, թէ արդիւնաբերական զարգացումը և գիտական նւաճումները ինքնըստինքեան կարող են ստեղծել ազատ և հարուստ կեանք: Ազատութիւնը արդիւնաբերա-

կան աշխարհում նոյնքան թանկ է և հասանելի է միայն այն ժողովուրդներին, որոնք գիտեն ազատութեան իսկական գինը և պատրաստ են այդ գինը վճարելու։

Իսկ նա, ով վախենում է ազատութիւնից, նրա գլխին միշտ կախուած կը լինի ստրկութեան վտանգը։

Ի՞նչ վիճակում են գտնւում այս իմաստով Հայաստանը և հայերը։ Նախ և առաջ պէտք է նշել, որ սեփական կարողութիւնները ծաւալելու բնական ձգտման մէջ, հայ անհատը գրեթէ սահման չունի և իր գործունէութեան դաշտը լայնացնելու հարցում նա ցատկում է նոյնիսկ սովորական տրամաբանութեան վրայից և կարող է, օրինակ, խոհանոցի ծորակները պատուիրել ոսկուց։ Կարող է լողարանում ջրի փոխարէն կաթ օգտագործել, եթէ ունենաք այդ կարողութիւնը։ Գուցէ սա արեւելեան պճնանք է, բայց մեզ առայժմ չեն հետաքրքրում այդ այլանդակ երեւոյթի աղբիւրները, մենք միայն մեր տեսածի հիման վրայ պնդում ենք, որ հայ անհատը չունի իր պահանջներում ինքնասահմանափակման զգացմունք, ուստի համայնքին դնում է անելանելի վիճակի մէջ, քանզի վերջինս կամ պէտք է բռնութիւն գործադրի՝ անհատի ցանկութիւնները զսպելու համար և կամ էլ պիտի նահանջի անհատի առջեւ, վտանգելով համայնքի գոյութիւնը։ Առաջին տարբերակը ընտրել էր կոմունիստական վարչակարգը, իսկ երկրորդ տարբերակը ընտրեց Հայաստանի այսօրւայ ղեկավարութիւնը։ Սակայն Հայաստանի ղեկավարներն էլ հայ մարդիկ են և ունեն իրենց կարողութիւնները ծաւալելու ձգտում։ Նորմալ պայմաններում նրանք իրենց կարողութիւնները ծաւալելու էին համայնքի բարգաւաճման ճանապարհով, բայց այդ ճանապարհը փակ է։ Ուրեմն որտեղի՞ց նրանք պիտի ծաւալեն իրենց ազատութիւնների դաշտը, եթէ ոչ անհատից կորզած կաշառքներից։ Անհատը տուրքերի փոխարէն կաշառք է վճարում, բայց այդ կաշառքը գնում է ոչ թէ Համայնքին, այլ համայնքի ղեկավարների գրպանը։

Համայնքի և անհատի այս փոխ-յարաբերութեան մէջ հաւասարակշռութեան եզր գտնելը անկարելի է։ Հայաստանը դառնում է ուժեղների, ճարպիկների և պարզ յանցագործների երկիր, ընդորում այդ ուժն ու ճարպկութիւնը ոչ թէ ազնիւ պայքարի մէջ արտայայտւած յատկութիւններ են, այլ գողի ուժ, խորամանկութիւն ու դաժանութիւն։ Հազարաւոր ազնիւ մարդիկ այդ խաղի մէջ չեն մտնում և գերադասում են հրաժարւել իրենց կարողութիւնների ծաւալելուց, սակայն գողութեան չդիմել։ Այդ անհատները կորցրել են համայնքի պաշտպանութիւնը ու համապատասխանօրէն տրամադրւել նրա դէմ։

Այս պայմաններում ժողովրդավարութիւնը դառնում է յանցագործութեան ազատութիւն, իսկ անկախութիւնը՝ իշխանաւորների սանձարձակութիւն։ Դա նշանակում է, որ Հայաստանից կամաց-կամաց կը վերանան համայնքի հա-

մար զոհաբերութեան պատրաստ անհատներ, և ուրեմն կը թուլանայ համայնքը, քանզի նրա ուժը յենւում է անհատի հետ ունեցած յարաբերութիւնների վրայ։

Յիրաւի, փորձենք պատասխանել այն հարցին, թէ ինչո՞ւ մարտունակ պարսիկները մի քանի տարւայ ընթացքում գրաւեցին ահագին տարածութիւններ, այդ թւում նաեւ հռչակաւոր Բաբելոնը, բայց խայտառակ պարտութիւն կրեցին փոքրիկ Յունաստանից։ Ինչո՞ւ Իսպանիան, որ գրաւել էր աշխարհի կէսը, ոչինչ չկարողացաւ անել իր Նիդեռլանդական գաղութի հետ։ Ինչպէ՞ս Վենետիկի փոքրիկ հանրապետութիւնը (200.000 բնակիչներով) համարձակւում է յարձակւել 20 միլիոնանոց Թուրքիայի վրայ։ Ինչպէ՞ս են Ղարաբաղցիները ահա արդէն 4 տարի դիմադրել 7 միլիոնանոց ադրբեջանցիներին, որոնց օգնում են մէկ ռուսները, մէկ թուրքերը։ Ինչո՞ւ Նովգորդը պարտութեան է մատնում շւեդներին, գերմանացիներին, մոնղոլներին, բայց պարտութիւն է կրում 10 անգամ աւելի պակաս մոսկովեան զօրքից։ Ինչո՞ւ բազմազգ Հռոմէական, Բիւզանդական, Չինական և Ռուսական կայսրութիւնները երկար կեանք ունեցան, իսկ արաբական, մոնղոլական, իսպանական և անգլիական կայսրութիւնները համեմատաբար արագ քայքայւեցին։ Եւ ինչո՞ւ թուրքերին որեւէ յաղթանակ տանելու համար պահանջւում էր հակառակորդից մի քանի անգամ աւելի զօրք։ Իսկ 1243 թւականին նրանք պարտւեցին մոնղոլներից, երկու անգամ աւելի շատ զօրք ունենալով։ 1453 թւականին Կոնստանդնուպոլսի գրոհի ժամանակ թուրքերը ունէին 100 հազարանոց բանակ, իսկ քաղաքի պաշտպանները 5000 իտալացիներ և 500 յոյներ էին, որոնք պարտւեցին, պարզապէս յոգնելով հազարաւոր բաշիբոզուկներին ջարդելուց։ Իսկ 1683 թւականին 175 հազարանոց թրքական բանակը կործանիչ պարտութիւն կրեց Վիեննայի 13 հազար պաշտպաններից։ Այս ինչո՞ւների շարանը կարելի էր շարունակել, բայց բոլորի պատասխանը կարելի է գտնել անհատի և համայնքի փոխ-յարաբերութեան մէջ։ Համայնքը պէտք է զգայ, որ ապրում է անհատով ու անհատի հաշւին, իսկ անհատը պէտք է համոզւած լինի, որ սնւում է համայնքից և օգտւում է նրա պաշտպանութիւնից։ Նման փոխ-յարաբերութեան դէպքում, անհատները, իսկ նրանց հետ էլ ամբողջ համայնքը դառնում էին անպարտելի։ Այստեղ քննադատաբար տրամադրւած ընթերցողը կարող է արդարացիօրէն առաջարկել, թէ ի վերջոյ բոլորն էլ պարտւեցին։ Այո, պարտւեցին, բայց ինչո՞ւ։ Այստեղ ի յայտ է գալիս անհատի և համայնքի փոխ-յարաբերութեան մէկ ուրիշ երես։ Այդ փոխ-յարաբերութիւններում ազատութիւնը մեծ նշանակութիւն ունէր, բայց հէնց ազատութիւնն էլ ծնում է հասարակական անհաւասարութիւնը, որը մահացու հարւած է հասցնում համայնքին։

Բոլոր ուժեղ համայնքները, որոնք հրաշքներ էին գործում իրենց հակառակորդների դէմ պայքարելիս, սկսել են հաւասարութիւնից ու արդարութիւնից: Նրանք բաժանում էին հողը, ազատում էին աշխատանքը, մտցնում էին մարդու իրաւունքները պաշտպանող արդար օրէնքներ: Սակայն տնտեսական և առեւտրական ազատութիւնների պայմաններում, փորձառու, խելացի և ճարպիկ անհատներ կամաց-կամաց կարողանում են իրենց ձեռքը վերցնել, կամ առնւազն իրենց վերահսկողութեան տակ պահել համայնքային հարստութիւնների մեծ մասը, մինչդեռ թոյլերը իրենց ձեռքից տալիս են այն, ինչը սկզբնական շրջանում ստացել էին բոլորի հետ հաւասար: Ու այնպիսի տպաւորութիւն է ստեղծւում, որ հարուստները հարստանում են ոչ թէ սեփական նախաձեռնութիւնների, այլ աղքատներից նրանց ունեցածը խլելու հաշւին: Աղքատները համայնքից պաշտպանութիւն են պահանջում և իրենց այդ պահանջներից էլ ծնւում է ընկերվարական գաղափարախօսութիւնը: Եւ կասկածից վեր է, որ հէնց ընկերվարական սկզբունքները կիրառելով կարելի է փրկել թուլացող և դէպի կործանում գնացող համայնքը: Այսպիսով, թէ՛ համայնքի ուժեղացումը և թէ նրա թուլացումը, վերջին հաշւով, կապ ունեն անհատի և հասարակութեան փոխ-յարաբերութեան հետ: Որքան առողջ ու բնական լինեն այդ յարաբերութիւնները, այնքան ուժեղ կը լինի համայնքը:

Աթէնքը, չնայած իր քաղաքական իմաստութեան, չկարողացաւ խուսափել հասարակական անհաւասարութիւնից և հարուստների ագահութիւնը բաց արեց ստրկատիրութեան դռները: Նոյնը տեղի ունեցաւ Նովգորդում, որտեղ այդ ազատ քաղաքի իշխանութիւնը անցաւ մի քանի հարուստ դրամատէրերի ձեռքը: Իտալիայում և Գերմանիայում ներքին դասակարգային պառակտումը այնքան մեծ էր, որ երկրում միշտ կային թշնամու առջեւ քաղաքի դռները բաց անողներ:

Այս բանը այսօր տեղի է ունենում Հայաստանում: Այն ազատութիւնները, որոնք ստացաւ հայ ժողովուրդը Գորբաչովի ձեռքից, նա չկարողացաւ օգտագործել միասնական ու համերաշխ հասարակարգ ստեղծելու համար: Հայաստանը, ինչպէս արդէն ասացինք, դարձաւ օրէնք խախտելու ազատութեան երկիր: Բոլոր օրէնք խախտողները կոչւեցին «Մաֆիա» չնայած նրան, որ մաֆիայի հետ ոչ մէկ կապ չունէին, բայց իրական իշխանութիւնը անցաւ այդ «մաֆիա» կոչւող տարրի ձեռքը: Այս «մաֆիան» դարձաւ հայ ժողովրդի նոր ընտրանին: Օրէնք խախտողները (իսկ դա շատ հեշտ է անել օրէնքի բացակայութեան պայմաններում) այնքան արագ հարստացան, որ այլեւս իրենց դրամները արկղներով են հաշւում, իսկ համեստները ու բարոյականութեան սկզբունքներին հաւատացողները այնքան արագ աղքատացան, որ մեր հոչակաւոր գիտնականներն ու արուեստագէտները սկսեցին հագուստ ու կօշիկ

կարել, իրենց ապրուստը ապահովելու համար: Երկրում ստեղծուեց աներեւակայելի հասարակական անհաւասարութիւն, որը ինչպէս ասացինք, կործանիչ է որեւէ հասարակութեան համար:

Կործանման առաջին նշանները արդէն երեւացին: Հայ ժողովուրդը դիմեց զանգւածային փախուստի արտասահման: Այսինքն անհատը փախչում է համայնքից, որը չի կարողանում բաւարարել նրա պահանջներին: Աւելորդ է ասել, որ հարկ եղած դէպքում նա էլ չի պաշտպանի համայնքը:

Ղարաբաղի հերոսամարտերը բոլորովին ուրիշ բնոյթ էին կրում, սակայն այնտեղ էլ Ղարաբաղը այնքան ժամանակ անսասան ամրոց էր քանի դեռ անհատի և համայնքի փոխ-յարաբերութիւնները կրում էին առողջ բնոյթ: Երբ ղարաբաղցին հասկացաւ, որ համայնքի ղեկավարները որոշ քաղաքական խաղերի մէջ են մտել, նա կորցրեց վաղեմի վստահութիւնը համայնքի ղեկավարների նկատմամբ ու ամուր Ղարաբաղի ճակատը թուլացաւ:

Այդ միջոցին նորածին դրամատէրերը կամաց-կամաց իրենց ձեռքն են վերցնում իշխանութեան բոլոր լծակները և Հայաստանի ղեկավարները ստիպւած են նրանց ենթարկւելու իսկ այդ նոր Զինզիմովները, որպէս օրէնք ազգային զգացմունքներից ու կրթութիւնից զուրկ մարդիկ են:

Հէնց սրանց ենք մենք տեսնում արտասահմանում, իսկ գիտնականներն ու արւեստագէտները արտասահման մեկնելու միջոցներ չունեն:

Այսպէս մտաւորականների Հայաստանը դարձաւ «լաւ տղերքի» Հայաստան, որոնք հարստանում են՝ օրէնքները խախտելու հաշւին: Բայց տեսնենք, թէ ինչո՞ւմն է Հայաստանի բուն ողբերգութիւնը: Որեւէ երկրի կառավարութեան առջեւ կանգնած են երկու խնդիրներ. ներքին խաղաղութեան և արտաքին անվտանգութեան ապահովութիւնը: Այս երկու խնդիրների լուծումը պահանջում է երկու տարբեր և իրար հակասող գործունէութիւններ: Ներքին կարգապահութեանը կարելի է հասնել մարդկանց ազատութիւնները օրէնքով սահմանափակելու ճամբով, իսկ արտաքին ապահովութիւնը կարող են իրականացնել միայն ազատ մարդիկ, որոնք գիտակցաբար զոհւում են իրենց ազատ հայրենիքի համար: Պետական իմաստութիւնը կայանում է այս երկու պահանջների միջեւ լաւագոյն եզրը գտնելու մէջ, որը, անշուշտ, կապ ունի տւեալ ժողովրդի ազգային նկարագրի, աշխարհագրական դիրքի, տնտեսական կարողութիւնների, պատմական աւանդոյթների և շատ ուրիշ գործօնների հետ, որոնք ղեկավարը պարտաւոր է ուսումնասիրել:

Պետական իմաստութեան այս բացակայութիւնը առաջացրել է հայ ժողովրդի մէջ երկու մեծ պառակտումներ, որոնք ինչ որ մի տեղ նոյնանում են:

Առաջին պառակտման մասին մենք արդէն խօսեցինք, դա հարուստների ու աղքատների հասարակական պառակտումն էր: Սակայն հայկական

կեանքում Հայաստանի իշխանութիւնների ձեռքերով ստեղծուեց նաեւ մէկ ուրիշ, գուցէ աւելի վտանգաւոր պառակտում: Հայ ժողովուրդը բաժանուած է հայաստանցի և ոչ-հայաստանցի հատուածների: Երկու այս հատուածները հաւասար են քանակապէս, բայց անհաւասար՝ հայ ժողովրդի ճակատագրին մասնակցելու իմաստով: Հայաստանից դուրս ապրող հատուածը Մոսկուայից մինչեւ Սիդնէյ՝ Հայաստանի կեանքին իր մասնակցութիւնը չի բերում: Լաւագոյն դէպքում նրան թոյլատրւում է կատարել նուիրատուութիւններ, բայց այդ էլ կարող են կատարել միայն հարուստները: Այսինքն այս հատուածային պառակտումն էլ վեր է ածւում դասակարգային պառակտման: Սփիւռքի հարուստները առաջւայ նման իրենց դրամներով գնում են Հայրենիքի յարգանքը, իսկ հայրենիքին կեանք տւողների վրայ ուշադրութիւն դարձնող չկայ: Հայաստանի ղեկավարներին թւում է, թէ Հայաստանը բացի դրամից Սփիւռքից ուրիշ ստանալու բան չունի: Մինչդեռ Սփիւռքը թէ՛ Ռուսաստանում և թէ արտասահմանում բաղկացած է զուտ ծառայողներից ու մտաւորականներից: Բացի Լիբանանից ու Պարսկաստանից, Սփիւռքում պարզ աշխատողներ չկան: Իսկ Մոսկուայի հայ պրոֆեսորների, արուեստագէտների ու զինուորականների մակարդակը ունեցող մասնագէտներ Հայաստանում չկայ: Նոյնը վերաբերում է արտասահմանին, որի հայ մասնագէտները բացի յատուկ գիտելիքներից ունեն նաեւ արտասահմանեան փորձ և սրանից զրկւելը Հայաստանին կանգնեցնում է մէկ ուրիշ վտանգի առջեւ: Այդ վտանգը կապ ունի հեռատեսութեան հետ:

Մարդիկ սովորաբար իրենց դժբախտութիւնները վերագրում են իրենցից անկախ գործող ուժերին, թշնամիներին, չարամիտներին, բնական աղէտներին, բայց ոչ սեփական սխալներին: Այդպէս հեշտ է ապրել: Չիմանալ, չտեսնել, չլսել, չմտածել, ապրել միայն այսօրւայ ուրախութիւններով՝ սա է ընտրում սովորական մարդը և չի ցանկանում լսել ու հետեւել այն հեռատեսներին, որոնք նախազգուշացնում են հնարաւոր վտանգների մասին: Երբ, սակայն, վտանգը իրականութիւն է դառնում, մենք սկսում ենք մտածել, թէ ինչո՞ւ ժամանակին չլսեցինք հեռատեսներին, չէ՞ որ նրանք նախազգուշացնում էին: Բայց այստեղ հարց է ծագում, ի՞նչ է, այդ հեռատեսները մեզանից աւելի խելացի՞ էին, մեզանից աւելի՞ հեռուն էին տեսնում, մեզանից աւելի իմաստո՞ւն էին: Պատկերացրէք, որ ոչ: Ապագայի մասին նրանց տեղեկութիւնները ոչնչով չէին տարբերւում մեր տեղեկութիւններից: Չէ՞ որ նոյն աղբիւրներից էինք օգտւում ու կեանքի ուրախութիւնների նկատմամբ մեր նման անտարբեր չէին:

Բայց մեր տարբերութիւնը կայանում էր նրանում, որ մենք տարբեր վերաբերմունք ունէինք մեր գիտցածի նկատմամբ: Նրանց համար, վերացական վտանգները, որոնք այսօր բացակայում են, բայց հնարաւոր են ապագայում,

նոյնքան իրական են, որքան որ այսօրւայ իրական հաճոյքները։ Ուստի նրանք կարողանում էին պայքարել դեռեւս գոյութիւն չունեցող, բայց հնարաւոր վտանգների դէմ, հրաժարւելով առնւազն մասամբ այսօրւայ հաճոյքներից։ Իսկ շատերի համար վերացական վտանգները ոչ մէկ նշանակութիւն չունեն և մենք պատրաստ չենք զոհաբերելու այսօրւայ հաճոյքը վաղւայ վտանգին։ Եւ եթէ մենք մեզ անւանենք կարճատես, իսկ նրանց հեռատես, ապա դա չի նշանակում, որ նրանք տեսնում էին, իսկ մենք ոչ։ Դա միայն նշանակում է, որ կարճատեսը իր տեսածի վրայ ուշադրութիւն չէր դարձնում, իսկ հեռատեսը արդէն այսօր տառապում էր վաղւայ վտանգից ու արդէն այսօր պատրաստւում էր նրան դիմաւորելու։

Եւ պէտք է ասել, որ Սփիւռքում ապրող հայը (Մոսկւայում թէ Նիւ-Եորքում), որը ստիպւած է եղել դժւարին պայմաններում յարմարւել օտար շրջապատին, որը կերել է հարւածներ տարբեր կողմերից ու շատ լաւ գիտի մամուլի և նախագահների ելոյթների իրական արժէքը, այն սփիւռքահայը, որը օտար վարչակարգերի հարւածների տակ է ընկել ու կրկին ոտքի կանգնել, այդ հայը շատ աւելի հեռատես է, քան հայաստանցին, որը երբեք ընտրելու հնարաւորութիւն չի ունեցել և հնարաւոր վտանգների հետ հաշւի չի նստել։ Այս իմաստով, հեռատես սփիւռքահայի բացակայութիւնը Հայաստանից, մեծ կորուստ է մեր ժողովուրդի համար։ Բայց ամենավտանգաւորը այն է, որ նրա բացակայութիւնը Հայաստանում թերի է դարձնում անհատի և համայնքի փոխ-յարաբերութիւնը։ Անհատները ընտրւում են համայնքի կողմից, դարձնելով համայնքը միայն ընտրանիների հասարակարգ։ Նման վարչակարգը անմիջապէս զրկւում է ճշմարտութեան հաստատութիւններից։ Գիտութիւնը այլեւս չի դառնում մտքի ճշմարտութիւն, արւեստը զգացմունքների ճշմարտութիւն, բարոյականութիւնը արդարութեան ճշմարտութիւն և հաւատքը ներըմբռնման ճշմարտութիւն։

Առանց այս ճշմարտութիւնների՝ հասարակարգը ստում է ամենուր ու սուզւում է խաբեբայութեան ու կեղծիքի ճահճի մէջ, ինչպէս ստում էր Խորհրդային Միութիւնը, այդ թւում նաեւ Հայաստանը 70 տարիների ընթացքում։

Այժմ, երբ տապալւած է Խորհրդային Միութիւնը և կոմունիստական գաղափարախօսութիւնը, մենք ոչ միայն չկարողացանք դուրս գալ այս կեղծիքի ճահճից, այլ աւելի խորը սուզեցինք նրա մէջ։ Բայց եթէ մօտակայ տարիների ընթացքում չկարողանանք միասնական ճիգերով դուրս գալ այդ ճահճից, սուտը, կեղծիքը և դաժանութիւնը կը դառնան մեր նկարագրի անբաժանելի յատկութիւնները, որից յետոյ Համայնքի և անհատի փոխյարաբերութիւնը կը վերածւի փոխադարձ խաբեբայութեան։ Այդ դէպքում մեր հարեւանները շատ արագ կը նւաճեն համազգային խաբեբայութիւնից վերջնականապէս թուլա-

ցած հայ ժողովրդին: Միայն բարձր ազգային պատասխանատուութեան զգացմունքը, հեռատեսութիւնը, ընկերվարական սկզբունքների կիրառումը կ'առողջացնի անհատի և համայնքի փոխյարաբերութիւնը, որը և կը փրկի մեր հայրենիքը կործանումից:

1992

ԻՆՉՈ՞Վ ԻՆՁ ՉԻ ՀԱՄՈԶՈՒՄ ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Դոկտ. Է. Յովհաննիսեան

Մեր աշխատակիցը, ընդառաջելով մեր իսկ փափագին, որ ուրիշներ եւս արտայայտուին ընկերվարութեան մասին, գրի է առած այս յօդուածը և ղրկած մեզի:

Ինչպէս միշտ տոքթ. Է. Յովհաննիսեանի յօդուածը կը ցոլացնէ ներքին խոր ապրումներ, տագնապ մը մինչեւ անգամ: Այս անգամ կրկնակի է իր տագնապը, քանի որ մէկ կողմէ ան հաւատք ունի Հ.Յ.Դաշնակցութեան հանդէպ, միւս կողմէ ան վերապահութիւններ ունի ընկերվարութեան վերաբերմամբ, ուստի կը դժուարանայ իր մտածումները թուղթին յանձնելու:

Ընթերցողը պիտի տեսնէ արդէն, թէ տոքթ. Է. Յովհաննիսեան ինչքան խոր ապրումով կը մօտենայ հարցին, զայն քննելով մէկէ աւելի անկիւններէ և միշտ մտասեւեռում ըրած հայ ժողովուրդի շահերը, հայ ազգի կացութիւնն ու իրաւունքները:

Կարելի չէ անշուշտ յօդուածը ներկայացնելու կոչուած տողերուն մէջ սպառել ընկերվարութեան հարցը, Հ.Յ.Դաշնակցութեան ընկերվարութեան յառած ըլլալու իրողութիւնը իր պատմական ու նաեւ գաղափարաբանական, ներկայի ու ապագայի հետ կապ ունեցող բոլոր տեսլները վեր հանելով: Այդ մասին կը յուսանք որ կ'արտայայտուին ուրիշներ կամ մենք իսկ՝ հետագային:

Առայժմ կ'ընդգծենք միայն, թէ Հ.Յ.Դաշնակցութեան համար ընկերվարութիւնը ընկերային արդարութեան առաջնորդող ճամբան է եղած և է նաեւ այսօր: Տեսութիւն մըն է ընկերվարութիւնը և անոր գործադրութեան զանազան եղանակները միշտ չէ որ կրցած են իրապէս ընկերային արդարութիւնը լրիւ ապահովել բոլորին համար: Տեսութիւն մըն էր նաեւ Քրիստոսի քարոզած ոգեղէնի, սիրոյ ու նուիրումի վարդապետութիւնը և միշտ չէ որ այդ վարդապետութիւնը գործնականին մէջ յաջողած է ազնուացնել հոգիները:

Իր յօդուածի վերջաւորութեան տոքթ. Է. Յովհաննիսեան կ'ըսէ, թէ կրնայ պատահիլ, որ ոմանք ըսեն, թէ «Հ.Յ.Դաշնակցութեան ընկերվարութիւնը կը շարունակէ պահպանուիլ որպէս աւանդոյթ, որպէս յարգանք կուսակցութեան հիմնադիրներուն վերաբերմամբ: Այդ պարագային, կ'ըսէ, բնականաբար, ես ըսելիք չունիմ և եօթը ժամ աւելորդ տեղը կորսնցուցած կ'ըլլամ սոյն յօդուածը գրելու համար»:

Թէեւ որպէս աւանդոյթ չէ, որ Հ.Յ.Դաշնակցութիւնը կը պահէ իր ընկերվարական համոզումները, ոչ ալ պարզապէս յարգած ըլլալու համար իր հիմնադիր-

ներու յիշատակը, այլ որովհետեւ համոզուած է թէ ԻՐԱԿԱՆ ընկերվարութիւնը ընկերային արդարութեան առաջնորդող ճամբայ է, իր տեսութեան մէջ առնուազն, բայց և այնպէս, եօթը ժամուան աշխատանքը, որ տուած է յօդուածագիրը, ի զուր կորսուած ժամանակ չէ, ընդհակառակն, հարցը ներկայացնելով այնպէս, ինչպէս ինք կը ներկայացնէ, կը կատարէ այնպիսի վերլուծումներ ու մատնանշումներ, որոնք չեն կրնար նիւթ չդառնալ նորանոր քննութեանց ու վերլուծումներու: Կու տանք իր յօդուածը ամբողջութեամբ և կը սպասենք որ ուրիշներ եւս անդրադառնան այս հարցերուն:

ԽՄԲ.

«ԱԶԴԱԿ շաբաթօրեակ»ի «**Կարելի ընկերվարութիւն մը**» խորագրով յօդուածը, որ արտայայտում էր Ֆրանսւա Միթերանի մտքերը ընկերվարութեան վերաբերեալ, եզրափակւում էր խմբագրութեան հետեւեալ ցանկութեամբ.

«Կը մնայ որ այդ մասին մտածւի և արտայայտւին անոնք, որ ընդհանրապէս ընկերվարական մտածողութեան քննութիւնը հիմնական կը համարեն, և նաեւ անոնք, որոնք հայ ժողովուրդի ներկայ ու ապագայ գոյավիճակին հետ կապակցաբար կ'ուզեն քննել հարցը»:

Ես համարեցի, որ այս առաջարկը վերաբերում է նաեւ ինձ: Մտածելը՝ մտածել եմ, բայց արտայայտւելու հնարաւորութիւնը չեմ ունեցել: Ճիշտն ասած՝ հիմա էլ չէի ուզում արտայայտւել, որովհետեւ, ինչպէս շատ անգամ նշել եմ, Հ.Յ.Դաշնակցութիւնը համարում եմ միակ կուսակցութիւնը, որի հետ կապւած է մեր ժողովուրդի քաղաքական ճակատագիրը: Բայց այդ կուսակցութիւնը ընկերվարական է և, ուրեմն, արտայայտւել ընկերվարութեան դէմ՝ կը նշանակէր արտայայտւել Դաշնակցութեան դէմ, որը չէի ցանկանում: Իսկ խղճիս դէմ, արհեստականօրէն գովաբանել ընկերվարութիւնը՝ չեմ կարող: Այստե՞ղ էլ թատրոն խաղամ: Էլ դուրս գալուս նպատակը ո՞րն էր: Դերասանութիւն այնտեղ էլ էինք անում, այն էլ գլխաւոր դերերում: Բայց համոզւած լինելով, որ ընկերվարութիւնը չէ Դաշնակցութեան էութիւնը, այնուամենայնիւ, որոշեցի յայտնել իմ կարիծքը այդ գաղափարի վերաբերեալ:

Սահմանել, թէ ինչ է ընկերվարութիւնը, այսօր շատ աւելի դժւար է, քան այն ժամանակ, երբ նա ծնունդ առաւ որպէս գաղափար: Այսօր նոյնիսկ այն հարցը, թէ երբ է ընկերվարութիւնը վերջնականապէս ձեւակերպւել որպէս գաղափար՝ առաջացնում է տարակարծութիւններ: Եթէ դիմենք Էնգելսին, ապա նա 1870 թւականին «Գիւղացիական պատերազմը Գերմանիայում» աշխատութեան նախաբանում գրում էր.

«Գերմանական տեսական **սոցիալիզմ**ը Սեն-Սիմոնի, Ֆուրիէի և Օւէնի ուսերի վրայ է կանգնած: Նա երբեք չի մոռանայ այդ երեք մտաւորականներին,

որոնք չնայած իրենց ուսմունքների **ուտոպիզմ**ին և երեւակայականութեանը, պատկանում են բոլոր ժամանակների ամենահանճարեղ մարդկանց շարքին»:

Իսկ «**Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դէպի գիտութիւն**» խորագրով աշխատութեան մէջ, նոյն այդ Էնգելսը գրում է, որ **սոցիալիզմ**ը դարձաւ գիտութիւն սկսած Մարքսից: Ինքը, այդ գիտական ընկերվարութեան հիմնադիր Մարքսը, «**Քաղաքական անտարբերութիւն**» խորագրով աշխատութեան մէջ, գրում էր.

«Առաջին **սոցիալիստները**՝ Ֆուրիէն, Օւէնը և Սեն-Սիմոնը անխուսափելիօրէն պէտք է սահմանափակուէին օրինակելի հասարակարգի երազներով, քանզի հասարակական յարաբերութիւնների զարգացումը դեռ թոյլ չէր տալիս բանւոր դասակարգին կազմակերպւել պայքարի համար: Բայց եթէ մենք չենք կարող հրաժարւել **սոցիալիզմ**ի այդ նախահայրերից, ինչպէս ժամանակակից **քիմիկոս**ները չեն կարողանում հրաժարւել իրենց նախահայր **ալքիմիկոս**ներից, ապա մենք պարտաւոր ենք, յամենայնդէպս, չկրկնել նրանց սխալները»:

Այսպիսով **ուտոպիստ**ներին կարծես թէ իսկապէս կարելի է համարել ընկերվարութեան նախահայրերը: Կարծում եմ, որ այդ **ուտոպիստ**ների ուսմունքները այնքան յայտնի են, որ հազիւ թէ իմաստ ունի կանգ առնել նրանց վրայ մանրամասնօրէն: Բայց մէկ ընդհանուր գիծ ուզում եմ նշել: Սկսած 1516 թւականից, երբ Թոմաս Մուրը հրատարակեց իր «**լաւագոյն պետական կառուցւածքի և նոր Ուտոպի կղզու մասին**» խորագրով փոքրիկ գրքոյկը, մտաւորականութիւնը ընկերվարութեան մէջ տեսնում է հասարակական արդարութեանը հասնելու մի միջոց, այլ ոչ ինքնանպատակ: Չի կարելի ասել, որ **ուտոպիստ**ները առաջիններն էին, որ ձգտում էին հասարակական արդարութեանը: Դեռ Պիւթագորասը իր բազմաթիւ աշակերտների հետ որոնում էր հասարակական արդարութեան համար ճանապարհներ և յանգել էր այն եզրակացութեանը, որ հաւասարութիւնը արդարութեան չափանիշ է և որ այդ հաւասարութեանը կարելի է հասնել սեփականութեան հասարակայնացման միջոցով: Եւ քանզի բոլոր «վարութիւն»ները, այդ թւում և ընկերվարութիւնը միայն միջոցներ են որոշ նպատակի հասնելու համար, հազիւ թէ հնարաւոր լինի գնահատել նրա այս կամ այն ձեւը առանց յստակ սահմանելու, թէ ո՞րն է այդ նպատակը:

Արդարութիւն, եղբայրութիւն, հաւասարութիւն բառերի տակ մենք միայն քողարկում ենք մեր տգիտութիւնը հասարակութեան լաւագոյն կեցութեան մասին: Այդ մասին մենք ոչինչ չգիտենք, դրա համար էլ փորձում ենք առաջ քաշել մասնաւոր չափանիշներ, որոնց մէջ գլխաւոր տեղը գրաւում է տնտեսական բարեկեցութիւնը: Պատահական չէ, որ Միթերանը ընդգծում է. «Եթէ

չազատագրենք մարդը տնտեսական շահագործումներէն, չենք կրնար զայն ազատագրել մնացեալէն»։ Բայց ո՞վ ասաց, որ մարդու և մարդկութեան երջանկութիւնը իսկապէս կախուած է նրա տնտեսական վիճակից։ Մի՞թէ դրա համար է աշխարհ եկել մարդը։ Իսկ գուցէ տնտեսական բարելաւումները, ընդհակառակն, ջնջում են մարդու իսկական էութիւնը, այլասերում են նրան։ Որտե՞ղ է սահմանը բնական պահանջների և պճնանքի միջեւ։

Մենք ականատես եղանք, թէ ինչպէս կիսասոված հնդիկներից ծնունդ առան **եոգա**ները, որոնց հոգեկան զարգացման մակարդակը հասել է այն բարձունքներին, որտեղից նրանց յաջողւում է դուրս գալ «աստրալ», այսինքն անջատել մարմինը ոգուց և կատարել մարմնի վրայ այնպիսի փորձեր, որ հասարակ մարդու համար հրաշք են թւում։ Դէ, եկէք ու ապացուցէք նրանց, որ մենք աւելի երջանիկ ենք, որովհետեւ ունենք «Մերսեդէս» **աւտոմեքենա**ներ, կարողանում ենք խմել մէկ շիշ օղի, ծխում ենք նարգիլէ կամ հաշիշ և մեր ճարպակալած որովայնները լցնում ենք խորովածներով։

Կամ եթէ դիմենք ազգային-ազատագրական շարժումներին, մենք կը տեսնենք, որ բոլոր ֆրանսական կամ անգլիական գաղութները ազատութիւն ստանալուց յետոյ վատացրին իրենց տնտեսական վիճակը, սակայն զէնքը ձեռքներին պայքարում էին այդ ազատութեան համար։ Դէ, եկէք համոզէք նրանց վերադառնալ նախկին գաղութային վիճակին, բաւարարելու համար տնտեսական պահանջները։ Ոչ, նրանց համար ազգային անկախութիւնը տնտեսական չափանիշներից աւելի բարձր է կանգնած։ Կամ՝ ի՞նչպէս մենք վաղը պէտք է տնտեսական շահերով կարողանանք մեր ժողովուրդը տանել ազատագրւած Արեւմտահայաստանը։

Բոլոր այն դէպքերում, երբ երջանկութեան և արդարութեան չափանիշները ստեղծում է ինքը մարդը, նկատի չունենալով մեզանից անկախ բնական նպատակները և աչքաթող անելով մարդու էութիւնը, արդարութիւնը չի կարող լինել կատարեալ։ Եթէ մենք հրաժարւենք բնական չափանիշներից, մենք ի վիճակի չենք լինի կողմնորոշւելու նոյնիսկ չարը բարուց տարբերելու հարցում։ Բերեմ մի փոքրիկ համեմատութիւն։

Յայտնի է, որ Տրդատ Գ.ի մահւանից յետոյ երկու խոշոր նախարարական տոհմեր՝ Մանաւազեանները և Օրդունիները, պատերազմ են սկսում իրար դէմ տալով շատ զոհեր և վտանգելով հայոց պետականութիւնը։ Նոր թագաւոր Խոսրով Գ.ը, վէճին վերջ տալու համար, ուղարկում է սպարապետ Վաչէ Մամիկոնեանին, որը կոտորում է երկու տոհմերի բոլոր արական ներկայացուցիչներին։ Այնուհետեւ ապստամբում է զօրավար Դատաբէն Բզնունին, որի տոհմը լրիւ բնաջնջւում է։ Ինչո՞ւ, ո՞ր չափանիշով Խոսրով Կոտակին մենք այսօր դասում ենք մեր լաւագոյն պետական գործիչների շարքին, իսկ -

Թալէաթներին և Էնվերներին համարում ենք յանցագործներ, մարդասպաններ և վայրենիներ։

Դրա համար գոյութիւն ունի մէկ չափանիշ։ Այն, որ ազգապահպանումը, ազգային պետականութիւնը ԲՆԱԿԱՆ ձգտումներ են, այդ ձգտումներով օժտուած է մարդը ի սկզբանէ, այդ ձգտումները կազմում են նրա էութիւնը։ Իսկ ազգային բարգաւաճումը ուրիշի հաշւին հակաբնական է, չարիք է և յանցագործութիւն։ Եւ պատահական չէ, որ այսօր թուրքը փորձում է ապացուցել, թէ հայերի ջարդը ինքնապաշտպանութիւն էր, այսինքն բնական ձգտում։

Եւ որովհետեւ ես հաւատում եմ բնական արդարութեան և բնական նպատակների գոյութեանը, այն նպատակների, որոնք ամէն մի ժողովրդի համար նախատեսում են յատուկ տեղ մարդկային ընտանիքում, որովհետեւ հաւատում եմ, որ միայն այդ տեղը գրաւելով հնարաւոր կը լինի ապահովել հասարակութեան ընդհանուր ներդաշնակութիւնը, հէնց այդ պատճառով ստիպւած եմ համաձայնւելու Հեգելի այն կարծիքի հետ, որ պէտք չէ որոնել լաւագոյն պետական ձեւը, քանզի ամէն մի ժողովրդի համար լաւագոյնը այն է, որը համապատասխանում է իր նկարագրին։ Օրինակ՝ գերմանացիների համար նա լաւագոյնը համարում էր սահմանադրական միապետութիւնը։ Եւ այստեղ ես կարող եմ ձեւակերպել իմ առաջին առարկութիւնը ընկերվարութեան դէմ։

Ընկերվարական տեսութիւնը, որպէս պետական կառոյցի ձեւ, համամարդկային չէ։ Նա չի կարող վերաբերւել բոլոր ժողովուրդներին, և ամէն մի ժողովրդի ղեկավարներ, նախքան ընկերվարութիւն որդեգրելը, պէտք է մեծ պատասխանատուութեամբ որոշեն, թէ որքանով վարման այդ ձեւը համապատասխանում է իրենց ժողովրդի նկարագրին։ Փաստօրէն Միթերանը արտայայտում է այս նոյն միտքը ասելով, որ ռուսական ընկերվարութիւնը անյաջող էր, բայց ֆրանսիականը կը լինի յաջող։ Բայց այդ տարբերութիւնը Միթերանը բացատրում է ոչ թէ ազգային տարբերութիւններով, այլ նոյն այդ չարաբաստիկ տնտեսական անբաւարար պայմաններով, համարելով, որ «… որովհետեւ տնտեսապէս անբաւարար զարգացումով երկրի մը մէջ կը յաղթանակէր համայնավարութիւնը, ան ստացաւ բոլոր յետամնաց երկիրներու քաղաքական սիստեմներուն յատուկ գիծերը, այսինքն դարձաւ միակ կուսակցութեամբ ղեկավարւող սիստեմ, **պիւրոքրաթիք** սիստեմ, ապա նաեւ անհատական **տիքթաթուրա**»։

Ազգային տարբերութիւնների գոյութիւնը ընկերվարութեան տեսաբանները փորձում են շրջանցել առաջ քաշելով ընկերվարութեան տարբեր ձեւերի թեզը։ Իբր թէ ընկերվարութիւնը կարող է ընդունել տարբեր ձեւեր, բայց ունենալ նոյն բովանդակութիւնը։ Ընկերվարութիւնը պատմական կառոյց է, այլ ոչ թէ արուեստ, որ կարելի լինի խօսել տարբեր ձեւերի մասին։ Եթէ այսօր, գոյու-

թիւն ունեն տարբեր ընկերվարութիւններ, ապա դրանք ոչ թէ տարբեր ձեւեր են, այլ տարբեր բովանդակութիւններ։ Եթէ Հարաւսլաւիայում այսօր մասամբ թոյլատրուած է մասնաւոր սեփականութիւնը, ապա դա ոչ թէ ուրիշ ձեւ է, այլ մասամբ ընկերվարութիւն է։ Եթէ վաղը Խորհրդային Միութիւնում թոյլատրւի մի ուրիշ կուսակցութեան գործունէութիւն, ապա դա կը լինի ոչ թէ ուրիշ ձեւ, այլ պարզապէս նահանջ ընկերվարական դիրքերից, որովհետեւ ի՞նչպէս կարելի է յեղափոխութեան շնորհիւ ձեռք բերւած բանւոր դասակարգի **դիկտատուրա**ն ազատ ընտրութիւնների միջոցով յանձնել մի ուրիշ կուսակցութեան։

Չեմ կարողանում հասկանալ, թէ ինչ ի նկատի ունի Միթերանը, երբ ասում է, որ ընկերվարականների իշխանութեան գլուխ անցնելը կապւած է յեղափոխութեան հետ և միաժամանակ համարում է, որ ուրիշ կուսակցութիւններ էլ կարող են ազատ գործել։ Պատկերացնենք, որ ընկերվարականները եկան իշխանութեան գլուխ և, համաձայն իրենց գաղափարների, պետականացրեցին բոլոր արտադրական միջոցները, վերացնելու համար այսպէս կոչւած շահագործելու հնարաւորութիւնը (եթէ նրանք այդ չանեն, ուրեմն ընկերվարականներ չեն)։ Իսկ յետոյ, 4 տարի անց, մի ուրիշ կուսակցութիւն ազատ ընտրութիւնների շնորհիւ գալիս է իշխանութեան գլուխ։ Եւ ի՞նչ։ Նորի՞ց բաժանի արտադրական միջոցները հին տէրերին։ Ոչ, ոչ սոցիալիստական կուսակցութիւնների ազատութիւնը ընկերվարական պետութեան մէջ ցնորք է։

Մի խօսքով՝ ես չեմ կարող համոզւել, որ բովանդակութիւնը պետական կառոյցներում կարող է ընդունել տարբեր ձեւեր։ Եթէ նոյնիսկ դա հնարաւոր է, յամենայն դէպս, ձեւերի տարբերութիւնը ոչինչ չի փոխի, եթէ բովանդակութիւնը մնայ անսասան։ Իսկ եթէ փոխւի բովանդակութիւնը, ապա ամէն մի «վարութեան» համար հարկ կը լինի ընտրել նոր անւանում. ինչպէս, օրինակ, Հիտլերը իր ընկերվարութիւնը կոչեց ազգային ընկերվարութիւն, իսկ այժմեան Հնդկաստանում գործում են կրօնական ընկերվարականները։ Եթէ անպայման ուզում ենք լինել ընկերվարական, ով գիտէ, գուցէ հնարաւոր է ստեղծել մի յատուկ հայկական ընկերվարութիւն, որից անմիջականօրէն բխի մեր Դատը։

Իմ երկրորդ առարկութիւնը կապ ունի այն հարցի հետ, թէ ինչն է գոյութիւն ունեցող անարդարութիւնների հիմնական պատճառը։ Արդեօք պատճառը մարդկութեան ոչ կատարեալ կազմակերպւածութի՞ւնն է, միջավայրի հետ ունեցած իր բախո՞ւմը, թէ չարիքը պարունակւում է հէնց մարդու մէջ, պայմանաւորւած է նրա արատներով։ Եթէ պատճառը պայմանաւորւած է կազմակերպչական թերութիւններով, ապա պարզ է, որ շեշտը պէտք է դնել «վարութիւններ» որոնելու վրայ, բայց եթէ չարիքը կապւած է մարդու էութեան հետ, նրա փառամոլութեան, հարստանալու, պճնազարդւելու ձգտումների հետ,

ապա լուծումը պէտք է փնտռել ուրիշ տեղ՝ հոգեկան ասպարէզում։ Ես անձամբ հաւատում եմ այս երկրորդին և դրա համար էլ չեմ կարող համաձայնուել ընկերվարական և համայնավարական տեսակէտների հետ պատմական զարգացման վերաբերեալ։ Այն հասարակական կացութաձեւերի յաջորդականութիւնը, որը կոչւում է առաջընթաց և որը իբր թէ ցածր հոգեկան մակարդակ ունեցող նախնադարեան մարդուն հասցրել է քաղաքակրթութեան բարձունքներին, ինձ չի համոզում։ Այն կարծիքը, թէ նախնադարեան մարդը ունէր ցածր հոգեկան զարգացում և մօտենում էր կենդանուն, ոչ մի լուրջ հիմք չունի։ Նախապատմական մարդու հոգեկան զարգացման մակարդակի կարեւորագոյն և միակ վկայութիւնը նրանց արուեստն է։ Իսկ այդ արուեստը, յայտնի արուեստագէտ Կիւնի կարծիքով, այնքան բարձր է, որ պարզապէս հրաշք պէտք է համարել, եթէ նկատի ունենանք կերտողների նիւթական մակարդակի յետամնացութիւնը։

Պէտք է ասել, որ առաջադիմութիւնը և զարգացումը ընդհանրապէս բնորոշ է նիւթական քաղաքակրթութեան համար, իսկ հոգեկան կրթութիւնը, բարոյականութիւնը կրում է շատ չնչին փոփոխութիւններ։ Եթէ սայլի և այժմեան **աւտոմեքենայի** տարբերութիւնը աննկարագրելի է, ապա Հերակլիտի և Բերդսոնի միջեւ գրեթէ տարբերութիւն գոյութիւն չունի։ Կամ հիմք կա՞յ արդեօք համարելու, որ այժմեան ամերիկացին հոգեկան իմաստով աւելի բարձր է կանգնած, քան 2500 տարի առաջ ապրող Աթենքի քաղաքացին։ Մարդու կերպարը շատ քիչ է փոխւում հագուստից կամ նրանից, թէ **տրանսպորտի** ո՞ր ձեւերն է օգտագործում։

Արդէն միջնադարում առաջանում է բողոք, ինքնազրկութեան և զսպւածութեան դէմ։ Սակայն, այդ բողոքը վերածնութեան դարաշրջանում դարձաւ բացայայտ պահանջ՝ վերացնելու պահանջները բաւարարելու անմիտ սահմանափակումները և չհամարել պահանջների բաւարարումը սրբապղծութիւն։ Այդ ուղղութեան ամենակարկառուն դէմքը Ռաբլէն էր և նրան ձայնակցում էր նաեւ Շեքսպիրը։ Այս երկուսը հիացմունքով դիտում էին մարդու անգամ պակասութիւնները, համարելով, որ գեղեցիկ է այն, ինչ մարդկային է։

17րդ դարում՝ մարդուն կենտրոնացնող այսպէս կոչւած **անտրոպոցենտիզմը** հիմք դարձաւ **ռացիոնալիստական** փիլիսոփայութեան։ Փիլիսոփայութեան այդ ուղղութեան ներկայացուցիչները համարում էին, որ ճանաչողութեան բարձրագոյն չափանիշը մարդու բանականութիւնն է։ Այդ միտումը զարգացաւ և հասաւ իր գագաթնակէտին 18րդ դարում լուսաւորականների գաղափարախօսութեան մէջ։ Նրանք վերջնականապէս դէն նետեցին մարդու այլասերւածութեան թեզը և հռչակեցին նրա կատարելութիւնը, որը խախտւում է միայն շրջապատի ծանր պայմանների ազդեցութեան տակ։ Ռուսոն, օրինակ,

համարում էր, որ քաղաքակրթութիւնից անջատւած բնական մարդը գեղեցիկ է, կատարեալ և բարի: Սակայն այդ կարծիքը մարդու մասին երկար չտեւեց: Իր վերջին արտայայտութիւնը նա գտաւ 19րդ դարի տնտեսա-**սոցիալ**ական տեսութիւնների մէջ, որտեղ քարոզւում էր, որ տնտեսական պայմանների բարելաւումը կը դարձնի մարդուն այնպէս կատարեալ, ինչպէս է նա ի սկզբանէ: Այդ միտումների վրայ էլ ստեղծւեց ընկերվարութիւնը:

Բայց **տեխնիկա**կան առաջընթացը կասկածի տակ դրեց այդ տեսակէտը: Տնտեսական պայմանների բարելաւումը չդարձրեց մարդուն աւելի բարի և ազնիւ: Ընդհակառակն, նիւթամոլութիւնը դարձնելով պաշտամունք, մարդը կանգնեց հոգեկան դատարկութեան վտանգի առջեւ: Բարձրագոյն հոգեկան արժէքների կարօտը արտայայտւում էր այն ժամանակւայ արուեստի մէջ: Այդ կարօտի ձայները լսւում են և՛ Չայկովսկու **սիմֆոնիա**ներում, և՛ Իբսենի երկերում, և՛ Շոպենհաւէրի փիլիսոփայութեան մէջ, և՛ Նիցչէի **աֆորիզմ**ներում, և՛ Մոպասանի **նովել**ներում, և՛ Դոստոեւսկու վէպերում: Պարզւեց, որ մարդու բնութիւնը շատ հեռու է այն առասպելական ներդաշնակութիւնից և կատարելիութիւնից, որը ենթադրում էին 17րդ դարի մտաւորականները: Նոյնիսկ Զոլան ընդունեց, որ «մտածել, թէ բոլորը երջանիկ կը լինեն, երբ հաց կ'ունենան, յիմար յոյս է»: Կամաց-կամաց մարդու անկատարութեան գաղափարը սկսեց մտնել գրականութեան մէջ: Տոլստոյի մի շարք պատմւածքներում, մարդը ներկայացւած է որպէս մի անօգնական էակ՝ իր սեփական չար ուժերի առջեւ: Իսկ Դոստոեւսկին ցոյց տւեց թէ ինչպիսի այլանդակութիւնների է ընդունակ մարդը Եսը հաստատելու համար: Բոդլերը, Լաֆարդը, Արթուր Ռեմբոն և շատ ուրիշներ որդեգրեցին մարդու աղէտները ցոյց տալու թեման: Կատարւեց մարդու նոր յայտնագործութիւնը:

Պարզւեց, որ մարդկութեան չարիքը ոչ թէ **սոցիալ**ական պայմանների մէջ է, այլ մարդու ներսում, որից բխում են **սոցիալ**ական անարդարութիւնները: Տասնամեակից տասնամեակ այդ միտքը աւելի ու աւելի հասունանում էր, քանզի մարդիկ երբեք չէին ունեցել այդպիսի լաւ նիւթական պայմաններ և երբեք էլ չէին եղել այդքան ցածր հոգեկան մակարդակի վրայ: Յիրաւի, եթէ մարդու բնութիւնը այլասերւած չէ ինքն ըստնիքեան, ապա նիւթական պայմանները լաւացնելու հետ միասին պէտք է ի յայտ գան դրական կողմերը և վերանայ այն, ինչը կոչւում է «մարդու ներսի գազանը»: Սակայն այդպիսի օրինաչափութիւն բացայայտել չի յաջողւում: Եւ ամբողջատիրական կարգերում գործող ստալինական կամ հիտլերական դահճի մէջ գազանը աւելի արթնացած է, քան աֆրիկեան **ջունգլ**ներում ապրող մի ցեղի ներկայացուցչի մօտ:

20րդ դարում մարդը դուրս եկաւ տիեզերք, բժշկութիւնը յաղթահարեց մի շարք հիւանդութիւններ, **տեխնիկա**յի զարգացումը ուղղակի յեղաշրջում կա-

տարեց մարդու կենցաղում: Բայց ինչպիսի՞ն է հոգեկան ասպարէզի տեսարանը: Համաշխարհային պատերազմներ, որոնք խլում են տասնեակ միլիոնաւորների կեանքը, ազգային արիւնահեղ հակասութիւններ, զինւորներ, որոնք երես առ երես սպանում են կանանց և երեխաներին, բանտեր, ճամբարներ, հոգեբուժարաններ, բժիշկներ, որոնք մարդկանց վրայ կատարում են տարբեր փորձեր, յանցագործութիւններ, որոնք հիմնուած են ոչ թէ նիւթական կարիքների, այլ յանցանքից բաւականութիւն ստանալու վրայ: Ու ստացւեց այնպէս, որ կրօնից հրաժարուած մարդը գազանից շատ աւելի վտանգաւոր դարձաւ:

Աւստրիացի յայտնի հոգեբան Ֆրոյդը ցոյց տւեց, որ մարդու բանականութիւնը մեծ դժւարութիւններով է յաղթահարում ենթագիտակցութեան մէջ ապրող մութ ուժերը, որոնք թունաւորում են մարդու հոգեբանութիւնը: ԵՒ ԱՅԴ ՈՒԺԵՐԸ ԶՈՒՏ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՆ: Գազանները այլասերւածութիւններ չունեն: Նրանք սպանում են միայն սովից փրկւելու համար, նրանք մտնում են սեռական յարաբերութիւնների մէջ միայն բազմանալու համար: Նրանք հոգեկան հիւանդութիւններ չունեն: Եւ, ուրեմն, մենք վիրաւորում ենք նրանց մեր թերութիւնները վերագրելով գազանային սկզբունքին: Ֆրոյդը, որը **աթէիստ** էր, ստիպւած էր ընդունելու, որ քրիստոնէական տեսակէտները, մարդու էութեան վերաբերեալ, ճիշտ են: Իսկ եթէ դա այդպէս է, ուժերի աւելորդ վատնում պէտք է համարել բոլոր փորձերը անկատար մարդկանցից ստեղծել կատարեալ հասարակարգ, լինի դա ընկերվարութիւն, թէ մի ուրիշ «վար»ութիւն: Բոլոր այդ ճիգերը կարող են նմանւել Կռիլովի յայտնի առակին, որտեղ էշից, այծից և արջից նւագախումբ ստեղծելու բոլոր փորձերը անցան ապարդիւն:

Եւ քանի սահմանափակ են մարդկութեան ուժերը և կարողութիւնները, առաւել եւս սահմանափակ են մե՛ր ուժերը, լաւ կը լինէր վատնել այդ ուժերը հոգու կատարելութեան ուղղութեամբ, մի կողմ դնելով նիւթականը: Այսինքն նիւթական հաւասարութիւնը փոխարինել անձի ազատութեան հաւասարութիւնով, տնտեսական շահերը՝ ազգային շահերով, աշխատանքի իրաւունքների հաւասարութիւնը՝ բարոյական իրաւունքների հաւասարութիւններով: Թող լինեն աղքատներ և հարուստներ, նրանց գոյութիւնը անխուսափելի է, ճիշտ այնպէս, ինչպէս անխուսափելի է գեղեցիկ և ոչ գեղեցիկ կանանց գոյութիւնը, ուժեղ և թոյլ տղամարդկանց գոյութիւնը, խելօք և անխելք մարդկանց գոյութիւնը, երաժշտական տաղանդով օժտւած և լսողութիւնից զուրկ մարդկանց գոյութիւնը: Հաւասարացնել սրանց անհնարին է: Ընդհանրապէս անհաւասար մարդկանց արհեստական հաւասարեցումը բռնութիւն պէտք է նկատւի: Սակայն բոլոր այդ նիւթական տարբերութիւնները չեն կարող հիմք ծառայել հոգեկան անհաւասարութեան համար, որովհետեւ հարստութեան մէջ չէ իսկական երջանկութիւնը:

Այստեղ ես մօտեցայ իմ երրորդ առարկութեանը, որը բխում է ընկերվարութեան և համայնավարութեան սերտ կապերից։ Դիմենք նոյն ինքն Միթերանի վկայութեանը. «Նախապէս համայնավարութիւն և ընկերվարութիւն միեւնոյն բաներն էին, այդ բառերը ընկերվարականներու մտքին մէջ միեւնոյն իրականութեանց կը վերաբերէին։ Նափոլէոն Գ.ի օրով գրւածները կարդալու ատեն կարելի է տեսնել, թէ «համայնավար» և «ընկերվարական» բառերը առանց զանազանումի գործածւած են, միեւնոյն թշնամիին դէմ պայքարելու համար»։ Այլ կերպ չէր էլ կարող լինել։ Եթէ վերցնենք ընկերվարութեան նիւթական արդարութեան թեզը. «Ամէն մէկից՝ ըստ ընդունակութեան, ամէն մէկին՝ ըստ աշխատանքի», ապա դա նիւթական իմաստով ամենեւին էլ հաւասարութիւն չի նշանակում։ Եթէ մէկը ծանրաբեռնւած է մեծ ընտանիքով, իսկ միւսը ամուրի է, բայց երկուսն էլ հաւասար աշխատանքի համար ստանում են հաւասար վարձատրութիւն, ապա երկրորդի վիճակը անհամեմատ աւելի լաւ է։ Եւ ուրեմն իսկական հաւասարութեան համար անհրաժեշտ է անցնել համայնավարական թեզին. «Ամէն մէկից՝ ըստ ընդունակութեան, ամէն մէկին՝ ըստ պահանջի»։ Այսպէս տրամաբանօրէն ընկերվարութիւնը դառնո՛ւմ է համայնավարութեան առաջին փուլը։ Իսկ համայնավարութեան հետ ես չեմ կարող համաձայնւել, ահա թէ ինչո՛ւ։

Կրակոտ խօսքերով «Կոմունիստական մանիֆեստը» կոչ էր անում բոլոր աշխատաւորներին դուրս գալ պայքարի նոր կեանքի և հասարակական արդարութեան համար։ Բայց Մանիֆեստի խօսքերը թոյն դարձան և նրանից ծնունդ առաւ աներեւակայելի շահագործում և բոլոր տեսակի ազատութիւնների վերացում։ Դեռ այսօր էլ շատերը ասում են, թէ որքան լաւն էր մարքսիզմը թղթի վրայ և որքան այլանդակւեց իրականութեան մէջ։ Տարածւած այս կարծիքը պատճառ է դառնում վերագրելու համար իրականացւած ընկերվարութիւնների թերութիւնները սխալների և շեղումների։ Ոչ, դա այդպէս չէ, մարքսիզմը, այսինքն համայնավարութիւնը, թղթի վրայ էլ լաւը չէր, թղթի վրայ էլ մարքսիզմը գիտութիւն չէր, այլ այստեղից այնտեղից հաւաքած արհեստական մի տեսութիւն, որը ծնւեց արդէն մեռած։

Մարքսիստները հռչակեցին իրենց **դիալեկտիկ**ներ և այսպէս կոչւած **դիալեկտիկական մատերիալիզմ**ի հիմնադիրներ։ Բայց ամբողջ հին փիլիսոփայութիւնը, Անակսիմանդրից և Հերակլիտից մինչեւ Սոկրատես, Պլատոն ու Արիստոտել, հիմնւած է **դիալեկտիկա**յի վրայ։ Այդ նրա՛նք էին ստեղծել փիլիսոփայութիւն և **դիալեկտիկա** խօսքերը, այդ նրա՛նք էին առաջ քաշել հակասութիւնների միասնութեան գաղափարը։ Մարքսիստները, միացնելով Հեգելի զարգացման տեսութիւնը, **անտիկ** փիլիսոփայութիւնից վերցրած հակասութիւնների միտումը ստեղծեցին մի նոր խղճուկ գաղափար, թէ իբր հակասու-

թիւնների պայքարը զարգացման աղբիւր է: Բայց ինչո՞վ պէտք է վերջանայ այդ պայքարը, ինչպիսի՞ն պէտք է լինի խաղաղութիւնը: Տրամաբանութիւնը թելադրում է, որ պայքարից յետոյ հակասութիւնները պէտք է, խաղաղւեն և պէտք է ստեղծւի նրանց միջեւ ներդաշնակութիւն և համագործակցութիւն:

Բայց մարքսիստները չեն կարող ընդունել ներդաշնակութիւնը և աւելի են խորանում իրենց անմտութեան մէջ: Նրանք ասում են, որ հակասութիւնների պայքարը աւարտւում է պայքարողների փոխադարձ ոչնչացումով: Այսպէս, օրինակ, դասակարգային պայքարը աւարտւում է դասակարգերի վերացումով: Բայց հակասութիւններ կան նաեւ ազգային ասպարէզում,- կը վերանան նաեւ ազգերը, ասում են մարքսիստները: Եւ այդ անազգ, անպետութիւն, անդասակարգ, անընտանիք, անմիտ ու անբարոյական հասարակարգին իբր գնում է մարդկութիւնը որպէս «Աստծոյ արքայութեան» մի նոր տարատեսակի, որտեղ չկան հակասութիւններ և ուրեմն զարգացում: Չեմ կարող համաձայնւել դրա հետ:

Քաղաքակրթութեան և մշակոյթի զարգացման պատմութիւնը միասնական համակարգ կազմող հոգու տարբեր ուղղութիւնների զարգացումն է: Այդ համակարգը ընդգրկում է **տեխնիկան**, տնտեսութիւնը, իրաւունքը, քաղաքականութիւնը, արուեստը, գիտութիւնը և կրօնը: Բոլոր այդ ուղղութիւնները գտնւում են սերտ կապերի մէջ և պայմանաւորւած են մէկը միւսով: Ի հարկէ, այս ուղղութիւններից ամէն մէկը ունի իր սեփական և ուրոյն զարգացումը, գոյութիւն ունի գիտութեան առաջընթաց, արուեստի զարգացում, քաղաքականութեան և տնտեսութեան փոփոխութիւններ: Սակայն ժողովրդի պատմութիւնը ընդգրկում է բոլոր այս ուղղութիւնների փոխազդեցութիւնը: Տնտեսական փոփոխութիւնները երբեք չեն կարող դիտւել որպէս պատմութիւն: Դա կը նշանակէր, որ տնտեսավարական փոփոխութիւնները առաջացնում են փոփոխութիւններ մնացած բոլոր բնագաւառներում. իսկ ինքը, այդ տնտեսավարութիւնը բոլորից անկախ է: Այսինքն տնտեսութիւնը միակողմանի պատճառ է՝ այսպէս կոչւած **բազիս**, իսկ մնացածը վերնակառոյցներ են:

Բայց դեռ Կանտը յստակ ապացուցել էր, որ մշակութային համակարգում չի կարող գոյութիւն ունենալ միակողմանի գործօն. համակարգի էութիւնը կարելի է բացայայտել միայն փոխազդեցութիւնների միջոցով: Ի հարկէ կասկածից վեր է, որ օրինակ, գիտութիւնը և **տեխնիկան** կախւած են տնտեսութիւնից: Բայց պարզ է և այն, որ տնտեսութիւնը և **տեխնիկան** կախւած են գիտութիւնից: Ակնյայտ է նաեւ իրաւունքի կապը տնտեսութեան հետ: Բայց հանրայայտ է նաեւ տնտեսութեան պայմանաւորւածութիւնը իրաւունքով: Մարքսը փորձում է աւելի նեղացնել տնտեսական գործօնը յայտարարելով, որ արտադրական միջոցների զարգացումով է պայմանաւորւած պատմական զարգացումը,

որ արտադրական միջոցների փոփոխութիւնը առաջացնում է արտադրական յարաբերութիւնների փոփոխութիւն, այսինքն փոխւում է հասարակութեան ամբողջ իրաւական պատկերը: Այսպիսով, ըստ Մարքսի, արտադրական միջոցները այն յեղափոխական գործօնն են, որոնք փոփոխութեան են ենթարկում հասարակութեան կառուցւածքը: Սկզբից փոխւում է **տեխնիկա**ն, իսկ նրա յետեւից էլ մշակոյթը: Լայն իմաստով, տնտեսութիւնը որպէս գործօն Մարքսի համար անյարմար էր, քանզի նա պարունակում է իր մէջ հասարակութեան ամբողջ իրաւական կառոյցը:

Ուստի Մարքսի **էկոնոմիզմ**ը յանգում է **տեխնիցիզմ**ին: Այդ հիման վրայ Մարքսը հռչակում է պատմական օրինաչափութիւն. արտադրական ուժերի և արտադրական յարաբերութիւնների բախումը անխուսափելի է, այսինքն անխուսափելի է **տեխնիկ**ական յայտնագործութիւնների բախումը պետական իրաւունքների հետ: Բայց չէ՞ որ **տեխնիկա**ն կարող է ծառայել տարբեր պահանջների: Նա միշտ գտնւում է ծառայողի դերում և նրա ուղղութիւնը որոշւում է հոգեկան արժէքներով և պահանջներով: Մարդիկ սկսեցին մշակել հողը ոչ թէ նրա համար, որ գութան էին յայտնագործել: Ժողովուրդները պատերազմում էին մէկը միւսի դէմ ոչ թէ նրա համար, որ նետեր և սրեր էին ստեղծել, այլ ստեղծել էին այդ գործիքները, որովհետեւ ուզում էին պատերազմել: Կարելի՞ է արդեօք մէկը միւսին յաջորդող պատմական դարաշրջանների ծնունդը բացատրել **տեխնիկա**կան յեղափոխութիւններով:

Անտիկ դարաշրջանի անկումը և անցումը քրիստոնէական դարաշրջանին ոչ մի նոր արտադրական ուժերի հետ կապ չունէր: Նոյնը վերաբերում է վերածնունդի դարաշրջանին, ֆրանսական յեղափոխութեան և գրեթէ բոլոր խոշոր փոփոխութիւններին: Իսկական **տեխնիկ**ական յեղաշրջում պատմութեան ընթացքում փաստօրէն եղել է միայն մէկ անգամ 19 և 20րդ դարերի արանքում, երբ ստեղծուեց էլեկտրականութիւն, ներքին այրման շարժիչ, հեռախօս, **կինո**, ինքնաթիռ և այլն: Եւ, եթէ հրաշքով Սոկրատեսը տեղափոխւէր այդ դարաշրջանը, երեւի նրա առաջին հարցը կը լինէր, թէ ինչի՞ համար էք ստեղծել այս ամէնը: Եւ միայն մեր պատասխանից յետոյ նա կարող էր եզրակացութիւններ հանել մեր բարոյական մակարդակի, հոգեկան զարգացման և վերնակառոյցի մասին:

Տեխնիկական ինքն ըստինքեան այդ զարգացումը դեռ ոչինչ չէր ապացուցի, քանզի նոյն արտադրական միջոցները կարող են ծառայել տարբեր հասարակական նպատակների: **Ատոմ**ային **էներգիա**ն, ինքնաթիռը, ռադիոն, բժշկութիւնը կարող են և՛ երջանկութիւն պատճառել մարդուն, և՛ լինել մեծագոյն աղէտների աղբիւր: **Տեխնիկա**ն չի կարող որոշել մշակոյթի դէմքը, այն-

քան ժամանակ, մինչեւ որ չպարզւի թէ ստեղծո՞ւմ է թէ քանդում նա բնական արժէքները։

Հարցը լուծւում է ոչ թէ նրանով, թէ ինչպէս է **տեխնիկա**ն ազդում հոգեկան ասպարէզի վրայ, այլ հակառակը՝ նրանով, թէ ինչպէս ոգու բարոյական էութիւնը ղեկավարում է **տեխնիկա**յով։ Մի խօսքով ընկերվարութիւնը և համայնավարութիւնը փիլիսոփայական իմաստով հիմնւում են և չեն կարող չհիմնւել **մատերիալիզմ**ի վրայ, բայց, փառք Աստծու, դեռ գոյութիւն ունի **իդէալիս-տ**ական գաղափարախօսութիւն, որը ինձ համար աւելի համոզեցուցիչ է, ուստի ես չեմ կարող ընդունել համայնավարութեան **մատերիալիզմ**ը։

Եւ վերջապէս իմ չորրորդ և ամենակարեւոր առարկութիւնը թելադրւում է ինձ իմ հայ լինելը։ Բոլոր այս փիլիսոփայական երաժշտութիւնը ես չեմ լսում, սա ինձ համար ընդհանրապէս երաժշտութիւն չէ, այլ օտար ձայներից կազմւած մի աղմուկ։ Գրում եմ այս տողերը և յիշում եմ մի խօսակցութիւն, որ ունեցայ հայրենիքում և սփիւռքում յայտնի **կոմպոզիտոր** Լիւդվիկ Բազիլի հետ։ Նա ասում էր, որ եկեղեցական երաժշտութեան մէջ ինքը չի ընդունում, պարզապէս չի հասկանում Բախին։ Նրա համար եկեղեցական երաժշտութիւնը մարմնացած է Կոմիտասի մէջ, իսկ Բախի **մեսաները**ը իր համար օտար աղմուկ են։ Ոմանք կարող են մեղադրել նրան չափազանցութիւնների մէջ։ Բայց ոչ, դա չափազանցութիւն չէ, դա իսկական հայրենասիրութիւն է, արւեստի իսկական բարձունք, հոգեկան զարգացման գագաթնակէտ, մեր դատին նպաստող երաժշտութեան ընկալում։

Իսկ ի՞նչ է տալիս ընկերվարութիւնը Հայ Դատին։ Չէ՞ որ միայն այս դիրքերից մենք պարտաւոր ենք գնահատելու է՛ւ ընկերվարութիւնը, է՛ւ թէ մնացած բոլոր գաղափարները։ Եթէ հնարաւոր է ապացուցել, որ նա իսկապէս ինչ որ մի բան տալիս է մեր Դատին, ես յետ եմ վերցնում բոլոր իմ խօսքերը և պատրաստ եմ դառնալու մոլի ընկերվարական, որովհետեւ մեր Դատին նպաստող բոլոր գործօնները տրամաբանութիւնից և զգացմունքներից վեր են։ Բայց դժբախտաբար ես չեմ կարողանում տեսնել, թէ ինչպէս և ինչով ընկերվարութիւնը կարող է նպաստել Հայ Դատի լուծմանը։ Երախտապարտ կը լինեմ, եթէ աւելի մեծ փորձ ունեցող մարդիկ օգնեն ինձ տեսնելու այդ։ Իսկ առայժմ իմ մտորումները յանգում են հետեւեալին։

Եթէ վերցնենք ընկերվարութիւնը կամ մի որեւէ ուրիշ «վար»ութիւն, որպէս կուսակցութեան գլխաւոր նպատակ, ապա, ինչպէս ընդունւած է ամբողջ աշխարհում, տւեալ կուսակցութեան միակ ձգտումն է անցնել իշխանութեան գլուխ և երջանկացնել իր ժողովուրդը իր վարման ձեւով, մեր դէպքում ընկերվարութիւնով։ Բայց մենք գաի բարձրանալու գահը չունենք։ Եւ ուրեմն սկզբից

պէտք է ստեղծել գահաթոռը, իսկ յետոյ մտածել ում նստեցնել այդ աթոռի վրայ։

Իսկ եթէ ապագայ անկախ Հայաստանը լինի ոչ ընկերվարական, միապետական, աստուածապետական կամ նոյնիսկ ֆաշիստական, ի՞նչ է, մենք համաձայն չենք այդպիսի Հայաստան ունենալու հետ։ Կամ եթէ հնարաւորութիւն լինի Արեւմտեան Հայաստանի հողերը կցել Խորհրդային Հայաստանին և ունենալ ոչ անկախ և ոչ էլ ազատ, բայց միացեալ Հայաստան, ի՞նչ է, մենք չենք օգտագործելու այդ հնարաւորութիւնը։ Չեմ կարծում, որ որեւէ հայրենասէր մարդ համաձայն չլինի այս Հայաստաններից որեւէ մէկի հետ։ Ուրեմն այն կազմակերպութեան համար, որը ուզում է կերտել որեւէ ձեւի Հայաստան, ընկերվարութիւնը, ինչպէս նաեւ բոլոր մնացած «վար»ութիւնները աւելորդ բեռներ են կամ, յամենայն դէպս, գլխաւոր չեն և չեն կարող կազմել կուսակցութեան էութիւնը։ Այդ բեռը արդէն կրում է Խորհրդային Հայաստանը։ Բաւական չէ՞։

Գիտեմ, կ՚ասեն՝ այնտեղ իսկական ընկերվարութիւն չէ։ Բայց ի՞նչ նշանակութիւն ունի լաւ թէ վատ (դեռ շատ մեծ հարց է, թէ հնարաւո՞ր է ընդհանրապէս ընկերվարութիւն մարդկային դէմքով)։ Որպէս ընկերվարութեան փորձ, Խորհրդային Միութեան այլանդակութիւնը մեր ժողովրդի համար բաւ է։ Կարճ ասած, այս ճանապարհի վրայ, այսինքն հայրենիք ստեղծելու ճանապարհի վրայ ընկերվարութիւնը, գաղափարական իմաստով, ես համարում եմ աւելորդութիւն։ Սակայն հնարաւոր է, որ այդ ճանապարհի վրայ ընկերվարութիւնը կարող է կատարել դիւանագիտական ծառայութիւն։ Այսինքն գուցէ քաղաքական հաշւարկները ցոյց են տուել, որ լինելով ընկերվարական՝ մենք պակասեցնում ենք մեր թշնամիների թիւը և շահում դաշնակիցներ։ Եթէ այդպիսի հաշւարկներ կան, կարծում եմ, որ կարելի է, իմ նմանների բերանները փակելու համար, մի քիչ խօսել մամուլում այդ մասին։ Բայց ես չեմ կարծում, որ ընկերվարութիւնը կարողանայ դիւանագիտական ծառայութիւն կատարել մեզ համար։

Ընկերվարական աշխարհի պառակտուածութիւնը այնքան ակնյայտ է, որ իրենց ներքին հակասութիւնները այսօր շատ աւելի հզօր են, քան արտաքին դրամատիրական պետութիւնների հետ ունեցած իրենց թշնամութիւնները։ Աշխարհի ամենահզօր բախումը այսօր սպասւում է երկու ընկերվարական պետութիւնների՝ Չինաստանի և Խորհրդային Միութեան միջեւ։ Իսկ դա նշանակում է, որ ընկերվարութիւնը չի կարող դառնալ դաշնակից շահելու աղբիւր։ Հայ ժողովրդին կարող են օգնել և հովանաւորել մեծ պետութիւնները, ոչ թէ ելնելով նրա կրօնական կամ գաղափարական էութիւնից, այլ նրանից, թէ որքանով այս ժողովրդի շահերը համընկնում են իրենց սեփական շահերի

հետ: Ինչու հեռու գնանք օրինակների համար: Ընկերվարական Ռուսաստանը բուրժուական Ռամկավար կուսակցութեան հետ այնքան հիանալի յարաբերութիւնների մէջ է, որ «**Պայքար**» թերթը ազատ մուտք է գործում Խորհրդային Միութիւն (այդ մասին երազել անգամ չեն կարող շատ ուրիշ երկրների համայնավարական թերթերը), իսկ ընկերվարական Դաշնակցութիւնը նրանց կողմից դասւում է **իմպերիալիստ**ների շարքին: Իսկ ֆրանսական վերջին ընտրութիւնների ժամանակ Խորհրդային Միութիւնը լարեց իր ամբողջ ուժերը, որպէսզի ընտրւէր Ժիսկարը, այլ ոչ ընկերվարական Միթերանը: Ուրիշ խօսքով՝ ընկերվարութեան դիւանագիտական ծառայութեանն էլ չեմ հաւատում:

Եւ վերջապէս ընկերվարութիւնը կարող է համարւել օգտակար և լաւագոյն ձեւը վարելու համար Սփիւռքի կեանքը: Այսինքն ընկերվարութիւնը դիտարկւի ոչ որպէս ապագայ Հայաստանի կամ առաւել եւս մարդկութեան լաւագոյն վարչաձեւ, այլ Սփիւռքի պայմաններին յարմարեցրած ղեկավարութեան մի միջոց, որը այս կամ այն պատճառով աւելի գերադասելի է, քան որեւէ մի ուրիշ ձեւ: Այստեղ վիճել չեմ կարող, որովհետեւ դեռ լաւ չգիտեմ Սփիւռքի պայմանները և յետոյ ընկերվարութիւնը, որպէս մաքուր վարման ձեւ, առանց դասակարգային և սեփականութեան հասարակայնացման հարցերի այնքան բազմապիսի է, որ դժւար է այդ ձեւերին տալ որեւէ գնահատական: Ընկերվարութիւնը որպէս ղեկավարման կառուցւածք ընդգրկում է ծայրայեղ աջից ծայրայեղ ձախի միջեւ ընկած ամբողջ տիրոյթը և չի կարող դիտարկւել որպէս վերջնական ձեւակերպում ստացած մի վարչաձեւ:

Յամենայնդէպս, Հ.Յ.Դաշնակցութեան մասին, որքանով որ ես եմ ըմբռնել, կարելի է ասել, որ նա որդեգրել է եւրոպական **դեմոկրատիայի** ձեւը և այդ իմաստով համամարդկային տեսանկիւնից կանգնած է բաւականին բարձր մակարդակի վրայ: Սակայն իմ կարծիքով այդ մակարդակը այսինքն ժողովրդավարութիւնը հայկական տեսանկիւնից բոլորովին ընդունելի չէ: Երբ հզօր պետութիւններ, որոնք իրենց միասնութիւնը և կայունութիւնը ապահովել են սահմանադրութեամբ, իշխանութեամբ և բանակով դիմում են ժողովրդավարութեանը, դա ի հարկ է գովասանքի արժանի մի քայլ է:

Սակայն երբ այդ նոյն պետութիւնը կանգնում է վտանգի առջեւ, ժողովրդավարութեան օգտակարութիւնը դրւում է կասկածի տակ և որպէս օրէնք նա փոխարինւում է աւելի խիստ վարչակարգով: Իսկ երբ այդ նոյն պետութիւնը բռնագրաււում է թշնամու կողմից և պայքարը վեր է ածւում ֆեդայական դիմադրութեան, ապա ղեկավարութեան խստութիւնը հասնում է այն աստիճանի, որ կարգապահութեան բոլոր խախտողները համարւում են դաւաճաններ և գնդակահարւում են տեղերում առանց դատ ու դատաստանի:

Իսկ մենք կորցրել ենք ամէն ինչ: Կորցրել ենք ոչ միայն հայրենիքը, այլեւ արդէն կանգնած ենք յոյսը կորցնելու շեմքի առջեւ: Էլ ի՞նչ ժողովրդավարութիւն խաղալու ժամանակ է: Ժողովրդավարութիւնը պէտք է նրանց, ովքեր փորձում են չդիպչել անձի ազատութեանը, յարամարեցնել անձնական տեսակէտները ընդհանուր նպատակին: Բայց մեր պայքարում մենք ընդհանրապէս պարտաւոր ենք մոռանալու մեր Եսը, հրաժարուելու նրանից: Յամենայնդէպս, միայն Եսը մոռացած հայերից կարող է կազմւել պայքարողների բանակը: Աստւած վկայ, Նիկոլ Դումանին շատ կը վրդովեցնէր մեզ թուլացնող մեր այս ժողովրդավարութիւնը:

Եւ վերջինը: Ընկերվարականները կարող են ասել՝ ճիշտ է, ընկերվարութիւնը ոչնչով չի օգնում մեր դատին, բայց չի էլ խանգարում: Որ մեր ընկերվարական լինելը մեզանից ոչ մի լրացուցիչ ուժ չի պահանջում և պահպանւում է միայն որպէս աւանդոյթ, որպէս յարգանք կուսակցութեան հիմնադիրների նկատմամբ: Այդ դէպքում ես ասելիք չունեմ, համարելով ինձ միակ զոհը, որ 7 ժամ աւելորդ տեղը կորցրեցի այս յօդւածը գրելու համար:

1974

ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԱՆԱՋԱՌ ԱՉՔԵՐՈՎ

Է. Յովհաննիսեան

1815 թւականի մարտ ամսին Ստենդալի հերոս Ֆաբրիցիօ դել Դոնգոն, լսելով Նապոլէոնի Էլբայից վերադարձի մասին, թողնում է իր ապահով կեանքը, որպէսզի մեկնի Փարիզ եւ գրւելով կայսրի փառապանծ բանակում՝ պայքարի թշնամիների դէմ, յանուն Եւրոպայի եւ Իտալիոյ ազատութեան։ Մի խօսքով, Ֆաբրիցիոն երազում էր մասնակցել Նապոլէոնի գեղեցիկ բեմադրութեանը։ Սակայն երբ Ֆաբրիցիոյին վիճակւեց մասնակցել Վաթերլոյի ճակատամարտին, երբ նա տեսաւ սպանւած ու վիրաւորւած զինւորների, երբ տեսաւ աղիքները թափած ու կատաղած ձիերի, երբ ուժասպառ եղած ու քաղցած նա փախչում էր **պրուսիական** ձիաւորներից, նա ամէն ինչում հիասթափւեց։

Ո՞վ մեզանից չի ապրել այն հիասթափութիւնը, որ առաջանում է տեսութեան եւ փորձի, գաղափարի ու իրականութեան համեմատութիւնից։ Ո՞վ մեզանից համարձակօրէն առաջին ծխախոտը բերանը առնելիս չի խեղդւել անտանելի ծխից։ Ո՞վ մեզանից չի ապրել հիասթափութիւն առաջին օղուց, կնոջից եւ այլն։ Եւ այդ հիասթափութիւնները եղել են ճիշտ այնքան տանջալի, որքան աւելի սքանչելի ենք մենք պատկերացրել իրականացւած գաղափարը։ Բայց վա՛յ նրանց, ովքեր բախւելով իրականութեան հետ, ոտնակոխ են անում գեղեցիկ տեսութիւնը, որը միշտ էլ շատ աւելի հրապուրիչ է, քան ոչ աստւածային, այլ զուտ մարդկային արատներով ու առանձնայատկութիւններով լի իրականութիւնը։ Բայց վա՛յ է՛ւ նրան, ով տեսութեան եւ իրականութեան տարբերութեան յետեւում չի տեսնում տեսութեան սկզբունքային թերութիւնները, վերագրելով նրանց իրականութեան ոչ-պատրաստ լինելուն, տեսութիւնից շեղումներին։

Ես տեսայ ընկերվարութեան մէկ տարբերակը իրականացւած։ Այն տարբերակը, որ կացնահարում էր բանտում ընկերվարական դաշնակցականներին, որ խրտիլակ դարձրեց Հայոց Եկեղեցին։ Այն տարբերակը, որտեղ շահագործւող բանւոր դասակարգը այդպէս էլ մնաց շահագործւած, իսկ գիւղացին աւելի շահագործւեց. որտեղ աւազակ պահեստապետերը, խանութի գործակատարները եւ Կենտկոմի քարտուղարների վարորդները սլանում են իրենց սեւ «Վոլգա»ներով, ցեխը շպրտելով **տրամվա**յի կայանում կանգնած բանւորների, գիտնականների, բժիշկների ու ուսուցիչների վրայ։ Ես տեսայ այն իրականացւած ընկերվարութիւնը, իսկ աւելի ճիշտ՝ ընկերվարական կուսակցապետութիւնը, որը խեղդեց բանտերում Չարենցին ու Բակունցին, որը դուրս շպրտեց

երկրից աշխարհի մեծագոյն գրող Ալեքսանդր Սոլժենիցինին, որը այլախոհութեան համար բանտերն ու գժանոցներն է նետում իր քաղաքացիներին: Մօտիկից տեսայ այն ընկերվարութիւնը, որի անդամների 30 տոկոսը զբաղած է գիւղատնտեսութեան մէջ, բայց որը հացահատիկ է գնում այն «իմպերիալիստ»ներից, որոնց գիւղատնտեսութեան մէջ զբաղած է բնակչութեան միայն 4 տոկոսը:

Ու տեսնելուց յետոյ այս ամէնը, հիասթափուեցի: Բայց արդեօ՞ք ես եւ իմ նմանները չենք նմանւում Ֆաբրիցիոյին, որին ձիերի դուրս թափած աղիքները եւ վիրաւորուածների հառաչանքները այդպէս էլ թոյլ չտուին հասկանալ ոչ Նապոլէոնի եւ ոչ էլ Վաթերլոյի նշանակութիւնը: Վայ մեզ, եթէ ընկերվարութեան մասին մենք պէտք է դատենք Խորհրդային Միութիւնով: Բայց վա՛յ նաեւ ընկերվարութեանը, եթէ նա այն՝ իմ տեսած հասարակարգն է:

Ու ոչ մի կողմին չտալով առաւելութիւն, ես փորձեցի անաչառ աչքերով նայել ընկերվարութեանը: Նայեցի ու տեսայ հետեւեալը:

ՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆ

Դարեր շարունակ մարդիկ երազել են ԵՂԲԱՅՐՈՒԹԵԱՆ, ԱՋԱՏՈՒԹԵԱՆ, ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ, մի խօսքով՝ հաւասարութեան ու երջանկութեան մասին: Եւ բոլոր ժամանակներում մարդիկ հաւատացել են, որ բռնութիւնը, աղքատութիւնը, պատերազմը, անհաւասարութիւնը ժամանակաւոր է եւ կը գայ ժամանակ, երբ կը ստեղծւի երջանկութիւն բերող մի հասարակարգ, որտեղ կ'իրականանան մարդու դարաւոր երազները: Հաւատքը, որ այդ հասարակարգը ի վերջոյ պէտք է ստեղծւի, ծնում էր տարբեր հասարակագիտական գաղափարներ: Արդէն հին, յունական առասպելներում մենք հանդիպում ենք ընդհանուր բարիքների գաղափարին, որը հակադրւում է անձի երջանկութեանը: Հայ կեանքում նոյնպէս եղել են արդարութեան ձգտող հզօր շարժումներ: Բաւական է նշել Պաւլիկեան շարժումը 7րդ ու 9րդ դարերում, որի մասնակիցները գտնում էին, որ բոլոր մարդիկ պէտք է լինեն հաւասար՝ բարիքներից օգտւելու հարցում: Գիւղացիների հաւասարութիւն էին քարոզում նաեւ Թոնդրակեցիները, որ 9-11րդ դարերում մեծ ազդեցութիւն ունէին հայ ժողովրդի վրայ:

Սակայն մասնաւոր սեփականութեան լուրջ քննադատութիւնը սկսւում է հասարակութեան տնտեսական զարգացման հետ միասին, այսինքն 14-16րդ դարերում: Առաջին անգամ այս կամ այն չափով հիմնաւորւած հասարակական սեփականութեան մասին խօսում է Թոմաս Մորը իր «Ուտոպիա» հռչակաւոր աշխատութեան մէջ: Պատահական չէ, որ ընկերվարական գաղափար-

ները ծնւում են անգլիական **հումանիստ**ների մէջ: Այն, ինչ այսօր կոչւում է Վերածնունդ, սկսւեց **հումանիստ**ներից, որոնց առանձնայատկութիւնը կայանում էր նրանում, որ նրանք զարգացած մարդիկ էին եւ ամենագլխաւորը՝ տիրապետում էին յունարէնի: Կոստանդնուպոլսի անկումից յետոյ, երբ բիւզանդական գիտնականները, փախչելով թուրքերից, տեղափոխւեցին Եւրոպա, նրանք իրենց հետ բերին ոչ միայն յունարէն լեզուն, այլեւ Յունաստանի իմաստութիւնը: **Հումանիստ**ները ընդհանուր առմամբ խոռվարարներ էին, բոլոր ասպարէզներում: Լինէր դա գիտութիւն, փիլիսոփայութիւն, արւեստ, գրականութիւն, կրօն թէ կենցաղ, նրանք դէմ էին դուրս գալիս Միջնադարեան աւանդութիւններին:

Եւ դա հասկանալի էր: Միջնադարում իդէալը եւ իրականութիւնը այնքան էին իրարից հեռացել, որ անհնարին էր դարձել քողարկել այդ անդունդը որեւէ խելամիտ կամ խորամանկ բացատրութեամբ: Իդէալը մնում էր քրիստոնէութիւնը, իսկ իրականութիւնը անվերջ պատերազմներ եւ հեղինակութիւնների անկում, նոյնիսկ եկեղեցու ներսում: **Հումանիստ**ները ատում էին իրենց նախորդներին ոչ այնքան տրամաբանութեան բացակայութեան, այլ կենսաբանական կեանքը արհամարհելու համար: **Հումանիստ**ները բացայայտօրէն կոչ էին անում օգտւել կեանքի բարիքներից, փոխարինելով «այն աշխարհի» երջանկութիւնը այս աշխարհի երջանկութեամբ: Նրանք ընդհանրապէս վերացրին «մեղք»ի գաղափարը եւ այդ երկրային բարիքներին ձգտումներից ծնւեց առաջին ընկերվարական Թոմաս Մորը:

«Որտեղ կայ մասնաւոր սեփականութիւն, -հռչակեց նա, -որտեղ ամէն ինչ չափւում է դրամով, այնտեղ հազիւ թէ որեւէ ժամանակ հնարաւոր կը լինի պետական գործերի յաջող ընթացքը: Հասարակութեան բարեկեցութեան միակ ճանապարհը ունեցւածքի հաւասարութիւնն է, որը երբեք չի կարող իրականանալ այնտեղ, որտեղ ամէն մէկը ունի իր սեփականութիւնը»: Եւ Մորը հիմնաւորեց իր թեզը հետեւեալ կերպով.

«Եթէ ամէն մէկը օրինական կարգով ջանում է սեփականացնել այն ամէնը, ինչ հնարաւոր է, ապա ինչպիսին էլ որ լինի երկրի առատութիւնը, միեւնոյն է, բոլոր բարիքները կ'ընկնեն մի քանի ընդունակների ձեռքը եւ նրանք բաժանելով հարստութիւնը իրար մէջ՝ մնացածներին կը թողնեն միայն աղքատութիւն: Բարիքների հաւասարաչափ եւ արդար բաշխումը հնարաւոր է միայն մասնաւոր սեփականութիւնը լրիւ ոչնչացնելուց յետոյ»:

Պէտք է ասել, որ ընդհանուր սեփականութեան գաղափարը յատկանշական է բոլոր Միջնադարեան ընկերվարականներին, որոնք որպէս օրէնք առաջարկում էին կազմակերպել փոքր համայնքային տնտեսութիւններ, ընդհանուր սեփականութեամբ հանդերձ: Հետաքրքրական է, որ փոքր ու անկախ

տնտեսական համայնքների գաղափարը մնաց հրապուրիչ նաեւ 19րդ դարի երկու մեծ ընկերվարականների՝ Ֆուրիէի եւ Օւէնի համար: Թոմաս Մորի հասարակարգում հողը պատկանում է պետութեանը, պետութեանն է պատկանում նաեւ երկրի ամբողջ արտադրանքը: Բաշխումը կատարւում է կենտրոնացած պետութեան կողմից: Մորի այս կենտրոնացած պետութեան ճանապարհով գնաց **ուտոպիստ** ընկերվարականների մեծ մասը՝ Կամպանելլան, Մորելին, «բաբուվիստ»ները եւ ուրիշները:

19րդ դարի **ուտոպիստ**ական սիստեմներից կենտրոնացած ազգային տնտեսութեան կողմնակիցներ են Սեն-Սիմոնիստները: Սեն-Սիմոնը ապագայ հասարակարգը պատկերացնում էր որպէս **պլան**աւորւող մի տնտեսութիւն, որտեղ մարդիկ չեն շռայլում իրենց ուժերը մէկը միւսի վրայ իշխելու համար, այլ միասնական ուժերով ազդում են բնութեան վրայ: Հակառակ Ֆուրիէի եւ Օւէնի, որոնք ապագայ հասարակարգը պատկերացնում էին որպէս փոքր տնտեսական համայնքների ցանց, Սեն-Սիմոնը պատկերացնում էր որպէս մի շարժում, ընտանիքից դէպի քաղաք, քաղաքից՝ ազգ, ազգից՝ մարդկութիւն ճանապարհի վրայ: **Ուտոպիստ** ընկերվարականների մեծագոյն առաջադիմութիւնն ու նշանակութիւնը կայանում է նրանում, որ նրանք առաջինն էին, որոնք հասարակութիւնը ինչպիսին չպէտք է լինի փոխարինեցին նա ինչպիսին պէտք է լինի թեզով: Բացի դրանից, Մորը կարողացաւ դուրս գալ այսպէս կոչւած **կոմունիստ**ական բաշխման սահմաններից դէպի **կոմունիստ**ական կոչւող արդիւնաբերութիւնը:

Յիրաւի, մինչեւ Մորը բոլորը ապագայ արդար հասարակարգում պահպանում էին անհատական արդարութիւնը եւ հասարակայնացնում էին միայն արտադրանքը ու պետականացնում բաշխումը: Իսկ Մորը առաջ քաշեց արտադրական միջոցների պետականացման հարցը եւ դրան հակառակ, նա պահպանում էր քաղաքացիների հասարակութիւնից ստացած ապրանքների օգտագործման ազատութիւնը: Թոմաս Մորից երկու դար յետոյ սեփականութեան հարցում ոչ ոք չկարողացաւ ասել նրանից աւելին: Առաջինը, ով այդ հարցին մօտեցաւ ստեղծագործաբար, ֆրանսիական **ուտոպիստ** Մոլելին էր, որ 18րդ դարի կէսերին գրում էր. «Հասարակութեան հարստութիւնից ոչինչ չպէտք է պատկանի ոեւէ մէկին, բացի այն առարկաներից, որոնք մարդը օգտագործում է իր անձնական կարիքների համար»:

Սովորաբար **ուտոպիստ**ներին, սկսած Թոմաս Մորից եւ վերջացրած Սեն-Սիմոնով, անւանում են ընկերվարականներ, բայց, իմ կարծիքով, դա սխալ է: Եթէ նրանց մենք անպայման ցանկանում ենք գնահատել ժամանակակից չափանիշներով, ապա աւելի ճիշտ կը լինէր նրանց անւանել համայնավարներ, քանզի նրանք բոլորը, Սեն-Սիմոնից առաջ, բարիքների բաշխումը կատարում

էին ըստ պահանջների: Մորը, օրինակ, ասում էր, որ «ընտանիքի հայրը պահանջում եւ առանց որեւէ դրամի ստանում է այն, ինչ իրեն հարկաւոր է»: Մորի ստեղծած հասարակարգում ըստ պահանջների բաշխումը հիմնւում է բացարձակ առատութեան եւ մարդկանց գիտակցական ինքնասահմանափակման վրայ: Եւ հէնց այս հանգամանքը դարձնում է մտաւորականներին «**ուտոպիստ**», որոնք հազիւ թէ կարողանան որեւէ կերպ բացատրել ընկերվարական մտքի հետագայ զարգացումը:

Այն հասարակարգը, որտեղ բաշխումը կապւած չէ արտադրութեան հետ, այլ նախօրօք ենթադրւում է, որ արտադրութիւնը ապահովում է բացարձակ առատութիւն, այդ հասարակարգը միայն առասպելների մէջ կարող է գոյութիւն ունենալ: Եւ ինքնասահմանափակման թեզն էլ չափազանց կասկածելի է, փորձը ցոյց է տալիս, որ մարդու պահանջները անսահման են եւ բաւարարել այդ անսահմանութիւնը սահմանափակ բարիքներով՝ անհնարին է: Այդ իմաստով **ուտոպիստ** համայնավարները, չնայած նրան, որ նրանց մասին հատորներ են գրւած, մանաւանդ Խորհրդային Միութիւնում, անձամբ ինձ համար աւելի հետաքրքրութեան արժանի չեն, քան մեր տատիկների պատմած հեքիաթները՝ ոսկէ քաղաքների ու ձկնիկների մասին:

Շատ աւելի մօտենում է իրականութեանը Դենի Վերսայի* համակարգը, որտեղ բաշխումը ըստ պահանջների է, բայց այդ պահանջները բռնի ուժով սահմանափակւած են: Այդպէս, օրինակ, «սեւարաբբների երկրում» արգելւած են դատարկ եւ ոչ պիտանի արւեստները, մարմնական եւ հոգեկան զսպւածութեան բացակայութիւնը պատժւում է: Ֆուրիէից ու Սեն-Սիմոնից սկիզբ է առնում **ուտոպիստ**ական ընկերվարութիւնը: Սրանք մերժում են համայնավարների «ըստ պահանջների» բաշխման թեզը, փոխարինելով այն «ըստ աշխատանքի բաշխումով»: Սակայն Սեն-Սիմոնականները աշխատանքի գնահատականում եւս ղեկավարւում էին ոչ միայն արտադրանքով, այլեւ օգտագործում էին որոշ հոգեբանական չափանիշներ: Որքան անդուր է աշխատանքը, այնքան բարձր է նա վճարւում: Սեն-Սիմոնականները ապագայ հասարակարգը պատկերացնում են որպէս ընդունակութիւնների ստորադասութիւն, որտեղ ամէն մարդ համաձայն իր ընդունակութիւնների գրաւում է համապատասխան տեղ այդ հասարակական բուրգում եւ վճարւում է համաձայն իր գրաւած մակարդակի: Սեն-Սիմոնիստները կտրականապէս դէմ են համայնավարութեանը, համարելով մեծագոյն անարդարութիւն՝ ընդունակների եւ անընդունակների, աշխատասէրների եւ ծոյլերի հաւասա-

* Մտաւորականների ազգանունները ես օգտագործում եմ այնպէս, ինչպէս նրանք հնչում են ռուսերէնում եւ գուցէ շատերին հասկանալի չլինի թէ ում ի նկատի ունեմ ես:

րութիւնը: Համայնավարութեանը հաւատարիմ մնացին 19րդ դարում՝ Օւէնը եւ ֆրանսիական **ուտոպիստ**ական կոմունիստները: Պէտք է ասել, որ **ուտոպիստ**ական համայնավարութիւնն էլ հանդիպում էր լուրջ առարկութիւնների. մի այդպիսի առարկութիւն, որը պատկանում է անյայտ հեղինակի, ինձ թւում է շատ հետաքրքրական:

Այդ առարկութիւնը վերագրում են ֆրանսիացի լուսաւորական Շարլ Դելարոշին: Մի քանի խօսք Դելարոշի մասին: Նա ծնւել է 1729 թ. եւ վախճանւել1774 թւականին, 45 տարեկան հասակում: Իր կարճատեւ կեանքի ընթացքում Դելարոշը ստեղծեց բազմաթիւ ընկերվարական համակարգեր, որոնք տարբերւում են մնացած բոլոր **ուտոպիստ**ական կառոյցներից նրանով, որ անտեսւած չեն հնարաւոր հակասութիւնները: Դելարոշի գրչին է պատկանում «մարդու սերմերը» աշխատութիւնը, որտեղ հեղինակը փորձում է երկրագնդի վրայ ապրող մարդկանցից ստեղծել լուսնի վրայ մի կատարեալ հասարակարգ: Այդ բանի համար նա ընտրում է համապատասխան նկարագիր ու յատկութիւն ունեցող մարդիկ: Եւ այդ յատկութիւնների մէջ Դելարոշը տեսնում է ապագայ հասարակարգի հակասութիւններն ու դժւարութիւնները: Եւ այս **ուտոպիստ**ին վերագրում են հետեւեալ առարկութիւնը.

-Մի որոշակի հողամաս բաժանում են համայնքի բոլոր անդամների միջեւ հաւասարաչափ ու արագօրէն: Նրանք, ովքեր աշխատասէր էին ու ընդունակ, լաւ բերք են ստանում իրենց հողամասից, իսկ ծոյլերն ու անընդունակները՝ վատ: Այսպիսով առաջին իսկ տարուց յետոյ համայնքում առաջանում են հարուստներ եւ աղքատներ: Այդ տարբերութիւնը աւելի է սաստկանում երկրորդ տարում, իսկ երրորդ, չորրորդ տարուց յետոյ ծոյլերը ստիպւած են լինում վաճառել իրենց հողամասը հարուստներին եւ դրանով աւելի հարստացնել նրանց: Այնպէս որ երկրորդ սերունդը արդէն ծնւում է մեծ տարբերութիւն ունեցող ընտանիքներում:

Բայց պատահում է այնպէս, որ հարուստների երեխաները լինում են ծոյլ ու անընդունակ, իսկ աղքատներինը՝ ընդունակ ու աշխատասէր: Ի՞նչ անել: Ի՞նչպէս վերականգնել արդարութիւնը: Առաջին եւ ամենատրամաբանական ելքը այն է, որ նորից վերաբաժանեն հողը, այսինքն խառնեն եւ կրկին հաւասար բաժանեն, այս անգամ որդիների միջեւ: Եւ այս տրամաբանութիւնից ելնելով, որոշ **ուտոպիստ**ներ առաջարկում էին բոլորովին վերացնել ժառանգականութիւնը: Բայց, ասում է այն տրամաբանութեան հեղինակը, դա նախ արդարացի չէ դեռ կենդանի եւ աշխատասէր հայրերի նկատմամբ, իսկ երկրորդ՝ այդպէս որ լինի ոչ ոք չի աշխատի, որովհետեւ բոլորը համոզւած կը լինեն, որ «աշխատես, չաշխատես», միեւնոյն է, մի 10-20 տարուց յետոյ քեզանից խլելու են քո աշխատանքի արդիւնքները, էլ ինչո՞ւ աշխատել:

Բայց **ուտոպիստ** ընկերվարականների մէջ կար մէկը, որը ապագայ հասարակարգը ներկայացնում էր ոչ որպէս մի առասպելական երկիր, որը նոյնքան գեղեցիկ, որքան անիրականանալի, այլ որպէս մի հասարակարգ, որը անմիջապէս պէտք է հաստատւի իրեն ժամանակակից Անգլիայում: Այդ ընկերվարականը Ուինստենլին էր:

Իր «Ազատութեան օրէնքը» աշխատութեան մէջ Ուինստենլին մշակում է այդ հասարակարգի սահմանադրութիւնը: Ուինստենլիի առանձնայատկութիւնը կայանում է նրանում, որ նա իր եզրակացութիւնները փորձում է կապել Անգլիայում տիրող **կոնկրետ** պայմանների հետ:

«Իսկական ազատութիւնը, -ասում էր Ուինստենլին, -կայանում է նրանում, թէ ինչպէս է մարդը հայթայթում իր գոյութեան համար միջոցները»: Եւ քանզի իր ժամանակ բոլոր բարիքների հիմքը հողն էր, նա գալիս է միակ հնարաւոր եզրակացութեանը՝ իսկական ազատութիւնը հողի ազատութեան, այսինքն հողի ազատ օգտագործման մէջ է: Հողի ազատ մշակումը մարդու ջանքերի վերջին նպատակն է, -եզրակացնում է նա: «Սկսած վերջին աւազակից, -շարունակում է նա, -եւ վերջացրած թագաւորով՝ բոլորը ձգտում են հող խլել ուրիշից, որովհետեւ բոլորը տեսնում են, որ ազատութիւնը հարստութեան մէջ է, իսկ ստրկութիւնը՝ աղքատութեան: Աւելի լաւ է մարդուն զրկել մարմնից, քան զրկել նրան իր մարմինը սնելու միջոցներից»:

Այստեղից պարզ է, որ Ուինստենլին մէկ դար աւելի առաջ էր ֆրանսիական **մատերիալիստ**ներից: «Ես համոզւած եմ, -ասում է նա, -որ ներքին ստրկութիւնը, այսինքն ագահութիւնը, նախանձը, վախը, խելագարութիւնը, յուսահատութիւնը՝ այս ամէնը պայմանաւորւած են արտաքին ստրկութեամբ: Համեմատելով Ուինստենլիի ծրագիրը Մորի «**Ուտոպիա**»յի հետ, աչքի է ընկնում այն հանգամանքը, որ ի տարբերութիւն Մորի, որը ստիպում էր քաղաքացիներին 10 տարին մէկ փոխել իր բնակարանը եւ չկողպել բնակարանի դռները, Ուինստենլին բնակարանը, հագուստները, ուտեստեղէնը, բնակարանի կահոյքը թողնում է անձին, համարելով այդ ամէնը անձեռնմխելի սեփականութիւն: Դրանով Ուինստենլին **ռեալիստ** է, այլ ոչ **ուտոպիստ**: Բայց նրա **ուտոպիզմ**ը ուրիշ տեղ է:

Իր ծրագիրը նա ներկայացնում է Կրոմուելին հետեւեալ ուղերձով. «Այժմ, երբ երկրի ամբողջ իշխանութիւնը գտնւում է ձեր ձեռքում, դուք կարող էք իրականացնել իմ ծրագիրը: Դուք կարող էք ընտրել երկուսից մէկը. կա՛մ հողը կը յայտարարէք ազատ՝ ճնշւած համայնքների համար եւ կամ էլ միայն կը փո-

խէք ղեկավար անձերին, թողնելով անձեռնմխելի թագաւորական օրէնքները: Վերջին դէպքում դուք կը կործանուէք, իսկ ձեզանից յետոյ ստրկութիւնը աւելի կը սաստկանայ»: Ինչպէս յայտնի է, Կրոմուելը ընտրեց երկրորդ ճանապարհը: Այլ կերպ չէր էլ կարող լինել: Եւ դրանումն էր Ուինստենլիի **ուտոպիզմ**ը, որը փորձում էր ընկերվարութիւն կերտել դաժան միապետ Կրոմուելի միջոցով:

Գրեթէ նոյն ճանապարհի վրայ էր կանգնած համայնավար Օւէնը: Նա պատկանում էր այն մարդկանց շարքին, որոնք շատ շուտ հասկացան մեքենայացւած արտադրութեան էութիւնը: Ոչ միայն տեսականօրէն, այլեւ իր ղեկավարութեան տակ գտնուող գործարանում, Օւէնը ցոյց տւեց թէ ինչպէս որոշ պայմաններում կարելի է հասնել արտադրողականութեան բարձր չափանիշների: Որպէսզի դա հնարաւոր դառնայ, -ասում է Օւէնը, -անհրաժեշտ է հրաժարւել մասնաւոր սեփականութիւնից եւ **կապիտալիստ**ական վարչակարգից, փոխարինելով այն համայնավարութեամբ: Բայց ի՞նչպէս կատարել այդ հասարակական յեղաշրջումը: Դրա համար Օւէնը տեսնում էր միայն մէկ ուժ՝ **բուրժուազիան**, որը կազմակերպւած էր եւ գտնւում էր իշխանութեան գլուխ: Իր ամբողջ յոյսերը Օւէնը կապում էր հէնց այդ իշխող դասակարգի հետ: Ամբողջ իր կեանքի ընթացքում Օւէնը կատարում էր անյաջող փորձեր՝ համոզելու տարբեր երկրների իշխանաւորներին իրականացնելու իր հասարակական ծրագրերը:

1817 թւին նա իր ծրագիրը առաջարկեց անգլիական **Պարլամենտ**ին, յաջորդ տարում Եւրոպայի եւ Ամերիկայի երկրների կառավարութիւններին, յետոյ Անգլիայի թագուհուն: Ոչ մի տեղ յաջողութիւն չունենալով, նա մեկնում է Ամերիկա եւ 1824 թւին կազմակերպում կոմունիստական համայնք, որը կոչւում է «Նոր ներդաշնակութիւն»: Բայց, ինչպէս կարելի է կռահել, այդ փոքրիկ ու միայնակ համայնքը քայքայւում է, որից յետոյ Օւէնը 1829 թւին վերադառնում է Անգլիա:

Այստեղ արդէն սկսւել էին բանւորական շարժումների ու միութիւնների խմորումները, որոնք բոլորովին օտար էին նրա համար եւ **հումանիստ** Օւէնը փաստօրէն ոչ միայն հեռանում է բանւորներից, այլեւ պայքար է ծաւալում անգլիական **չարտիստ**ների դէմ: 1832 թւին Բանւոր Դասակարգի Միութեան ընդհանուր ժողովը դատապարտեց օւէնականներին եւ խզեց նրանց հետ բոլոր կապերը: Այսպէս, վերջին համայնավար **ուտոպիստ**ը լքւեց բանւոր դասակարգի կողմից: Սակայն, իմ կարծիքով, Օւէնը այնքան սերտօրէն էր կապւած իրական հասարակական կեանքի հետ, որ անւանել նրան **ուտոպիստ** այնքան էլ ճիշտ չէ: Նա այնքանով էր **ուտոպիստ**, որքանով որ Մարքսը, եթէ **ուտոպիստ** բառը մենք օգտագործում ենք անիրականանալի տեսութեան հեղինակի իմաստով:

Բայց ես մի քիչ առաջ անցայ: **Հումանիստ**ներին փոխարինեցին լուսաւորականները: Այստեղ մտքերի ու դասական գրականութեան այնպիսի առատութիւն է, որ դժւար է խօսել լուսաւորականների մասին որպէս մէկ յստակ ուղղութեան մասին: 1751-1761 թւականներին լոյս տեսան Դիգրոյի եւ Դ'Ալամբերի «Հանրագիտարանը», Ռուսոյի «Անհաւասարութեան ծագումը» եւ «Հասարակական պայմանագիրը», Հելվեցիուսի «Ուղեղի մասին», Վոլտերի «Կանդիդը», Բուլանժէի «Արեւելեան բռնութեան ծագումը», Լոկի, Կանտի և այլ փիլիսոփաների հաստափոր աշխատութիւնները: Այնուամենայնիւ այդ ծով գրականութեան միջից կարելի է աշխարհահայեացքի ասպարէզի վերաբերեալ կորզել մի ընդհանուր փոփոխութիւն: Այդ փոփոխութիւնը առաջադիմութեան հաւատքն էր, որը մարդիկ հասցրին մինչեւ մեր օրերը:

Չնայած երկու համաշխարհային պատերազմներին, որ տեսան այս դարի մարդիկ, չնայած նրան, որ օդում կախւել է երրորդ պատերազմի վտանգը, չնայած նրան, որ ահաբեկիչների կրակոցները աւելանում են ժամ առ ժամ, չնայած տնտեսական ճգնաժամերին, մարդիկ մինչեւ այսօր պահպանել են լուսաւորականների առաջադիմութեան հաւատքը: Թւում է թէ մարդիկ միշտ էլ այդպիսին են եղել: Բայց դա այդպէս չէ: Յիշենք Աթէնքը 5րդ դարում, Յիսուսի ծնունդից առաջ: Այնտեղ ապրում էին իրենց նւաճումներից հարբած մարդիկ, որոնք քաջ գիտակցում էին, որ իրենք ամէն ինչ անում են շատ աւելի լաւ, քան իրենց նախնիները: Բայց նոյնիսկ նրանք առաջադիմութեան հաւատք չունէին: Հակառակը, նրանց զարգացման տեսութիւնը կայանում էր ոսկէ, արծաթէ եւ երկաթէ դարաշրջանների կրկնողութեան մէջ:

Ըստ իրենց պատկերացումների երկաթէ դարաշրջանից յետոյ տեղի է ունենում աշխարհի կործանում եւ յետոյ նոր ոսկէ դարաշրջանի ծնունդ: Ընդ որում յոյները իրենք կարծում էին, որ ապրում են երկաթէ դարաշրջանում, այսինքն գնում են դէպի կործանում: Վոլտերը միայն կիսով չափ էր ընդունում առաջադիմութեան գաղափարը: Ընդհանուր առմամբ հաւատալով առաջադիմական առաջընթացին, նա միաժամանակ կարծում էր, որ Լիւդովիկոս 14ի ժամանակաշրջանը աւելի համակրելի էր, քան 1750 թւականը:

Սակայն Կոնդարսիէն իր «Մարդկային ոգու առաջադիմութիւնը» աշխատութեան մէջ արդէն բացայայտօրէն նշում է այն 10 փուլերը, որոնց միջով վայրենի մարդը հասել է ժամանակակից քաղաքակրթութեանը: Պարտադիր առաջադիմութեան գաղափարը առաջացրեց այն մտայնութիւնը, թէ մէկ-երկու սերունդ յետոյ մարդկութիւնը կը հասնի կեանքի այնպիսի մի կացութեան,

որտեղ բոլորը երջանիկ կը լինեն։ Եւ այդ երջանիկ կեանքը պէտք է ստեղծի տրամաբանութեան ու մարդու հզօր մտքի միջոցով, որը Միջնադարում կաշկանդւած էր կրօնի կողմից, իսկ այժմ լուսաւորականները ազատեցին այդ մարդու պայծառ միտքը կրօնական շղթաներից։ Լուսաւորականները սպասում էին հասարակագիտական ասպարէզի Նիւտոնին։

Այն ժամանակւայ թէ՛ տնտեսագէտները եւ թէ հասարակագէտները յանգել էին մարդու բնական կատարելիութեան գաղափարին։ Տնտեսագէտները, օրինակ, ասում էին, որ ոչ մի արհեստական կառոյց պէտք չէ, անհրաժեշտ է, որ մարդը հետեւի իր բնական շահերին, որքան կարող է աճան գնի և որքան կարող է թանկ վաճառի։ Իսկ Ռուսոն գտնում էր, որ չարիքը առաջացաւ այն ժամանակ, երբ առաջին մարդը հակաբնականօրէն հասարակական սեփականութիւնից անջատեց մի կտոր հող և ցանկապատելով այն յայտարարեց, թէ «սա իմն է»։ Սակայն ոչ Ռուսոն և ոչ էլ ուրիշները (իմ կարծիքով՝ մինչեւ այսօր էլ) չբացատրեցին, թէ ինչո՞ւ մարդը վարւեց այդպէս անբնականօրէն, թէ ինչո՞ւ նա ուզում է գնել աճան և վաճառել թանկ, թէ ինչո՞ւ է ագահութիւնը համարւում բնական։

Վոլտերը, Դիդրոն, և նոյնիսկ Ռուսոն չարիքը կապում էին շրջապատի, իսկ բարին մարդու էութեան հետ։ Մարդը ծնւում է բարի ու կատարեալ՝ չար ու անկատար նրան դարձնում է հասարակարգը։ Այստեղից բխում էր պարզ եզրակացութիւն,- անհրաժեշտ է փոխել հասարակարգը, չար միջավայրը դարձնել համապատասխան մարդու բարի էութեանը։ Բայց ի՞նչպէս, ո՞ր տրամաբանութեամբ փոխել այդ միջավայրը։ Լուսաւորականները այդ հարցում բաժանւում են երկու մասի։ Մէկ մասը գտնում էր, որ իմաստուն ու տաղանդաւոր մարդկանց մի խումբ, օժտւած իշխանութեամբ, ի վիճակի է փոխելու միջավայրը այնպէս, որ բոլորը լինեն գոհ ու երջանիկ։ Սրանք իրենց յոյսերը կապում էին խելամիտ իշխանաւորների հետ։ Միւս խումբը կարծում էր, որ բաւական է կոտրել հին աշխարհը և նորը կը ստեղծի ինքնըստինքեան, քանզի ամբոխը իմաստուն է, նա կազմում է մարդկութեան մեծամասնութիւնը և, հետեւելով իր բնական բարի ձգտումներին, կը կառուցի նոր աշխարհ։ Սրանք կողմնակից էին **դեմոկրատ**ական սկզբունքների, մեծամասնութեան կարծիքի և համընդհանուր ընտրութիւնների։

Այս ուղղութեամբ ամենածայրայեղականները անիշխանականներն էին, որոնք գտնում էին, որ իշխանութիւնը ընդհանրապէս պէտք է վերանայ։ Այս երկու ուղղութիւնների վառ արտայայտիչ կարելի է համարել լուսաւորականների ամենաազդեցիկ փիլիսոփայ Ջերեմի Բենտամին, որ սկզբի շրջանում պատկանում էր առաջին խմբին, իսկ յետոյ՝ երկրորդ։ Դեռ երիտասարդ տարիներին նա մշակել էր արդարութեան հետեւեալ թեզը. «Անհրաժեշտ է անել

ամէն ինչ, որպէսզի ապահովւի մեծագոյն քանակի մարդկանց մեծագոյն երջանկութիւնը»: Այս իր թեզին Բենտամը աւելացրեց երջանկութիւնը չափելու իր մեթոդը և համարեց, որ **մաթեմատիկ**ական ճշգրտութեամբ կարող է գտնել երջանիկ հասարակարգի բանալին: Բենտամը սկզբից կարծում էր, որ այդ բանալին նա կարող է տալ Անգլիայի իշխանաւորների ձեռքը և դրանով իսկ դաստւում էր լուսաւորականների առաջին թեւին: Սակայն շատ շուտ Բենտամը հասկացաւ, որ իշխանաւորներին անհնարին է համոզել՝ հետեւել իր ծրագրին:

Եւ ահա 19րդ դարի առաջին տարիներին Բենտամը իր յոյսերը սկսում է կապել հասարակ ժողովրդի հետ և դառնում է համոզւած ժողովրդավարական: Նա պահանջում է ժողովրդական ընտրութիւններ, կառավարութեան մշտական փոփոխութիւն, հաւասարութիւն և այլն: Այնուամենայնիւ տեսնենք, թէ ինչպէս էր Բենտամը մտածում վերակառուցել հասարակարգը: Նա հիմնւում էր այն տեսակէտի վրայ, որ մարդիկ որոնում են բաւականութիւններ և խուսափում տառապանքներից: Սա,- ասում է Բենտամը,- փաստ է, որը նմանւում է **ֆիզիկայ**ի օրէնքներին և որը մենք պէտք է ընդունենք որպէս բարոյապէս դրական փաստ: Հասարակական ղեկավարման գաղտնիքը կայանում է նրանում, որ պէտք է ստեղծւի խրախուսանքների և պատիժների այնպիսի համակարգ, որը կ'ապահովի ցանկալի վարքագծի ստացումը՝ աւելի շատ բաւականութիւն, քան տառապանք: Եւ հակառակը՝ հասարակութեանը անցանկալի գործողութիւնները պէտք է ապահովւեն աւելի մեծ տառապանքով, քան բաւականութեամբ: Բենտամը մանրամասնօրէն մշակել էր տարբեր բաւականութիւնների և տառապանքների գործակիցները, չափելով, համեմատելով և գումարելով նրանց, կարծես թէ հարցը վերաբերւում էր **ֆիզիկ**ական մեծութիւնների:

Բայց, ինչ խօսք, որ Բենտամը բաւականութեան և տառապանքների գործակիցներին մօտենում էր իր՝ անգլիական ազնւականի չափանիշներով: Մէջբերեմ նրա մէկ տրամաբանութիւնը. «Գողութիւնը պէտք է պատժւի, որովհետեւ նա առաջացնում է զոհի համար աւելի մեծ տառապանք, քան գողին երջանկութիւն, քանզի գողը, բացի ստացած եկամտից, տանջւում է իր սեփական մեղքից: Սակայն գողը պէտք է պատժւի այն չափով, որ պատժից առաջացած տառապանքը գերազանցի իր ստացած բաւականութիւնը, հակառակ դէպքում նա կ'ուզենայ կրկնել իր յանցանքը: Բայց եթէ պատիժը առաջացնի շատ մեծ տառապանք, ապա գողը իրեն մարտիրոս կամ տառապեալ կը զգայ և երբեք չի ուղղւի»: Այսօր Բենտամի նման տրամաբանութիւնը թւում է միամիտ, բայց նրա **ռեֆորմիստ**ական ոճը մեզ բաւական մօտ է: Այս գաղափարնե-

րի մէջ ընկերվարութիւնը իր բուն իմաստով բացակայում է, բայց ամէն տեղ նա ներկայ է, որպէս արդար հասարակարգ ստեղծելու միտում։

ՌՈՒՍՈՅ ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Շատ աւելի բացայայտօրէն ներկայ է ընկերվարութիւնը Ռուսոյի աշխատութիւնների մէջ, յատկապէս իր հռչակաւոր «Հասարակական պայմանագիր» գրքում, որը հրատարակւեց 1762 թիւին։ Այդ համեմատաբար փոքրիկ աշխատութիւնը վէճի առարկայ դարձաւ մի քանի սերունդների համար։ Ոմանք գտնում էին, որ այդ աշխատութիւնը ազատութեան կոչ է, ոմանք էլ վերագրում էին նրան բռնապետութեան քարոզ, համարելով այն մեր այսօրւայ բռնապետութեան փիլիսոփայական սկիզբը։ Ինչո՞ւ այսքան ծայրայեղական մեկնաբանութիւններ։ Ըստ էութեան Ռուսոն քննարկում է քաղաքական ենթարկւածութեան հարցը։ Նրա առաջին աշխատութիւնները հիմնւում էին այն տեսանկիւնի վրայ, որը կոչւում է անիշխանականութիւն։ Մարդը ծնւում է ազատ,- գրում էր նա,- բայց ամէնուր նա շղթաների մէջ է։ Ինչո՞ւ։ Որովհետեւ,- պատասխանում է Ռուսոն,- նա ստիպւած եղաւ իր բնական կեցութիւնը փոխարինել քաղաքակրթութեամբ։ (Բայց ինչո՞ւ նա այդ ստիպւած եղաւ անել՝ Ռուսոն պատասխան չի տալիս)։ Իր բնական վիճակում մարդը ոչ ոքի չէր ենթարկւում կամ, աւելի ճիշտ, ենթարկւում էր միայն սեփական քմահաճոյքներին։ Իսկ քաղաքակրթութեան սահմաններում նա ստիպւած է ենթարկւել կարգադրութիւնների, որոնք իրենից չեն բխում։ Ստրուկը, օրինակ, ենթարկւում է իրեն պէս մի մարդու, իսկ դա հակաբնական է և ստորացուցիչ։

Ուսումնասիրելով ենթարկւածութեան հոգեբանութիւնը, Ռուսոն գալիս է այն եզրակացութեան, որ ենթարկւածութիւնը զրկւում է իր տհաճութիւնից, եթէ դու ենթարկւում ես ոչ թէ մէկ ուրիշի կամքին, այլ մի ինչ որ համընդհանուր կոչւող կամքի, որի մասնիկ է կազմում նաեւ քո սեփական կամքը։ Այդ վերացական կամքը Ռուսոն անւանում է ընդհանուր կամք։ Այդ ընդհանուր կամքը առաջանում է հասարակական պայմանագրի հիման վրայ, որտեղ հասարակութեան ամէն մի անդամ պայմանագիր է կնքում հասարակութեան մնացած անդամների հետ։ Պայմանագրով միացած այդ հասարակութիւնը չի փոխանցում իշխանութիւնը մէկի ձեռքը, ինչպէս առաջարկում էր, օրինակ, Թոմաս Հոբսը, այլ իշխանաւորներ է ընտրում որպէս իր ներկայացուցիչները, որոնց կարելի է յետ կանչել, եթէ այդպէս կը ցանկանայ «ընդհանուր կամքը»։

Բայց ի՞նչպէս է արտայայտւում այդ ընդհանուր կամքը։ Մէկ մարդու կամքը կարելի է ճանաչել, ուսումնասիրելով նրա վարքագիծը։ Բայց ի՞նչպէս կա-

րելի է տեսնել կամ ուսումնասիրել, օրինակ, Խորհրդային Միութեան ժողովրդի կամքը։ Նրա համար, ով չի ուզում զբաղուել ինքնախաբէութեամբ,- ի՞նչ է նշանակում «Խորհրդային Միութեան» կամ «Միացեալ Նահանգների» ժողովուրդների կամքը։ Եթէ, օրինակ, ընտրութիւնների ժամանակ մէկ թեկնածուն ստանում է ձայների 55 տոկոսը, իսկ միւսը՝ 45, կարելի՞ է արդեօք պնդել, որ ընտրուած թեկնածուն արտայայտում է ամերիկեան ժողովրդի կամքը։ Կամ եթէ **Կոնկրես**ը ընտրում է ազատ և **դեմոկրատ**ական ընտրութիւնների պայմաններում, կարելի՞ է արդեօք համարել, որ նրա որոշումները արտայայտում են ժողովրդի կամքը։ Այս վերջին հարցին Ռուսոն կը պատասխանէր կտրականապէս՝ ոչ։

Նա իսկական ժողովրդավարութիւնը տեսնում էր միայն հին յունական քաղաք-պետութիւններում, որտեղ համայնքի տեսանելիութիւնը, այսինքն փոքրութիւնը թոյլ էր տալիս ղեկավարել ընդհանուր կամքով և ընդհանրապէս ընդհանրական գաղափարներով։ Նա համարում էր, որ մեծ պետութիւնը, ինչպէս, օրինակ, Ֆրանսիան չի կարող դառնալ իսկական հանրապետութիւն և ունենալ ընդհանուր կամք։ Իսկ առաջին հարցին, այսինքն թէ որքանով ձայների մեծամասնութիւն ստացած թեկնածուն արտայայտում է ընդհանուր կամքը, Ռուսոն երեւի չկարողանար պատասխանել յստակօրէն, քանզի նա անհատի և ընդհանուր կամք հասկացողութիւններից բացի ունէր նաեւ «բոլորի կամք» հասկացողութիւնը։ «Եթէ մի ոեւէ խումբ ընդունում է որեւէ որոշում և այդ որոշումը ՃԻՇՏ է,- ասում էր Ռուսոն,- ապա մենք գործ ունենք ընդհանուր կամքի հետ։ Բայց եթէ կայացած որոշումը սխալ է, ապա դա պէտք է որակուի որպէս «բոլորի կամք», այսինքն առանձին կամքերի **մեխանիկ**ական գումար։ Բայց ո՞վ պէտք է որոշի՝ ճի՞շտ է թէ սխալ ընդունուած որոշումը։ Այստեղ մենք կանգնում ենք այն կէտին, որտեղ անհնարին է գտնել բանալի «ընդհանուր կամքը» «բոլորի կամքից» տարբերելու համար։

Բայց եթէ նոյնիսկ մենք չկարողանանք պատասխանել այս հակասութեանը, մեզ համար պարզ է, որ Ռուսոն մօտենում է հոգեբանական մի խոր ճշմարտութեան։ Նա նշում է, որ նրանք, ովքեր սկզբից չէին ուզում համաձայնուել այս կամ այն օրէնքին, համաձայնւում են, երբ տեսնում են, որ դա ընդհանուրի կամքն է։ Ուրիշ խօսքով՝ 45 տոկոսը կամաւոր կերպով ընդունում է 55 տոկոսի կամքը։ Եւ ամենակարեւորը ոչ թէ մեծամասնութիւնով է որոշւում կամքի ընդհանրութիւնը, այլ ճշմարտութեամբ։ Բայց Ռուսոյի տեսութեան երկիմացութիւնը սկսւում է յետոյ։ Ստորագրելով հասարակական պայմանագիրը, մարդը հրաժարւում է իր բնական ազատութիւնից, փոխարէնը ստանալով աւելի արժէքաւոր բան՝ ընդհանուր կամքին ենթարկւելու ազատութիւն։ Եթէ մարդը այդ չանէր ապա նա ապստամբած կը լինէր Բարիի դէմ և իր սե-

փական եասսիրական կամքի ստրուկ դարձած: Այսպիսով, ըստ Ռուսոյի, այն ուժը, որ ինձ ստիպում է ենթարկւել, իրականում ինձ ազատում է: Այդ մասին Ռուսոն ասում է բացայայտօրէն. «Որպէսզի հասարակական պայմանագիրը վեր չածւի դատարկ բանաձեւի, նա պէտք է պարունակի, գոնէ տողերի արանքում պարտաւորութիւն, որը պահանջում է բռնութեամբ ստիպել նրանց, ով հրաժարւում է ենթարկւել ընդհանուր պայմաններին, կատարել ընդհանուրի կամքը: Իսկ դա նշանակում է, որ կարող է ծագել անհրաժեշտութիւն ստիպողական կարգով մարդուն դարձնել ազատ»:

Սա Ռուսոն է, բայց թւում է թէ Հիտլերը կամ Լենինը լինի: Սակայն մինչեւ Լենիններն ու Ստալինները այդ գաղափարը որդեգրեցին Կանտը և Հերդերը, որոնց միջոցով նա դարձաւ գերմանական աշխարհահայեացքի բաղկացուցիչ մասը: Արեւելեան եւրոպացիներին և ամերիկացիներին նա միշտ վախ էր ներշնչում, որ անձի ազատութիւնը պետութեան զոհ է դառնում: Սակայն հէնց այն փաստը, որ Ռուսոն է դիմում ընդհանուր կամքի բռնութեանը, հետաքրքրական օրինակ է, թէ որքան հեռուն կարող է սլանալ մարդու վերացական միտքը: Ռուսոն, որպէս մարդ, անհաւասարակշիռ, անհատամոլ, զգացմունքներով բոլոր տեսակի արտաքին կազմակերպութիւններն ու ճնշումները հերքող մի անձնաւորութիւն էր: Եւ ահա մտքի ուժով նա դառնում է այսօրւայ խմբակային հասարակարգի նախահայրը: Եւ զարմանալին այն է, որ երբ 1760ական թւականներին երիտասարդութիւնը տարւել էր Ռուսոյով, նրանք յանկարծ զգացին զգացմունքների և ոգու պակաս՝ այնքան մաքուր էր Ռուսոյի տրամաբանութիւնը: Բայց հէնց իր մաքրութեամբ, նա դառնում էր անընդունելի: Մարդիկ սկսեցին կորցնել վստահութիւնը դէպի մաքուր տրամաբանութիւնը, յանգելով այն եզրակացութեանը, թէ զգացմունքները չեն խաբում, թէ բնութիւնը այդքան էլ «Նիւտոնեան մեքենայ» չէ:

Ընթերցողները երեւի կը մեղադրեն ինձ, որ ես շեղւեցի ընկերվարութիւնից, բայց ես չեմ շեղւել, այս ամէնը ընկերվարութեան հողն է: Իսկ անվստահութիւնը դէպի Ռուսոյի մաքուր տրամաբանութիւնը այսօր էլ մեր երիտասարդութեան համար կարող է մեծագոյն դաս ծառայել: Այսօր էլ անհրաժեշտ է բոլոր հասարակական հարցերում զգացմունքներով և ոգով վերստուգել այն գաղափարները, որոնք բխում են մաքուր տրամաբանութիւնից, որոնք առաջ են գալիս **մաթեմատիկ**ական մօտեցումից այն երեւոյթներին, որոնք գտնւում են տրամաբանութեան սահմաններից դուրս:

Այսպէս թէ այնպէս, լուսաւորականները իրենց առաջադիմութեան, ազատութեան, հաւասարութեան, արդարութեան գաղափարներով յանգեցին յեղափոխութեանը: Այնքան ուժեղ էր ֆրանսիական յեղափոխութեան առաջին օրերի ոգեւորութիւնն ու լաւատեսութիւնը, որ մտաւորականներից շատերը

եզրակացրին, թէ վերջ՝ պատմութիւնը աւարտուեց: Նրանց համար պատմութիւնը գոյութիւն ունէր որպէս պայքարի մատենագրութիւն, որպէս տառապանքների միջով անցնող մի շարժում: Իսկ այժմ տառապանքները աւարտուել էին, նպատակը իրականացած և պատմութիւնը վերջացած: Մարդկութիւնը կարծես թէ նոր էր սկսում իր կեանքը: Պատահական չէ, որ Կոնդորսենը գրում էր. «Ամէն ինչ խօսում է այն մասին, որ մենք մօտեցել ենք մարդկութեան կեանքի մեծագոյն շրջադարձային կէտերից մէկին: Լուսաւորութեան մակարդակը այնքան բարձր է, որ նա կ՚ապահովի շրջադարձային կէտի բարեբերութիւնը»: Այս տողերի հեղինակը մի քանի ամիս յետոյ բանտում ինքնասպանութիւն գործեց:

Այստեղ տեղը չէ քննարկելու ֆրանսիական յեղափոխութիւնը, նրա նշանակութիւնը եւ արդիւնքները դուրս են գալիս Ֆրանսիայի սահմաններից: Այդ յեղափոխութիւնը համաշխարհային քաղաքական բեմ բարձրացրեց Նապոլէոնին: Թէ՛ յեղափոխութեան թշնամիները եւ թէ նրա առաջնորդները նայում էին յեղափոխութեանը որպէս լուսաւորականների գաղափարների փորձադաշտ: Փաստօրէն այնտեղ՝ Ֆրանսիայում կատարւում էր առաջին փորձը՝ քանդելու հին աշխարհը, այսինքն անբարենպաստ միջավայրը եւ կառուցելու նորը՝ բարենպաստը: Բայց աշխարհը չքանդուեց, լուսաւորականների այդ փորձը աւարտուեց **տեռորով**, Նապոլէոնի բռնութեամբ եւ համաշխարհային պատերազմով: Ըստ երեւոյթին, մտածում էին լուսաւորականները, իրենց **մաթեմատիկ**ական հաշւարկների մէջ, ինչ որ մի տեղ սխալ է թոյլ տուած:

Բայց այն ժամանակւայ մտաւորականները այդպէս էլ չեկան այն եզրակացութեան, որ փորձը հիմնած էր սխալ գաղափարների վրայ: Այսպէս թէ այնպէս յեղափոխութեան անյաջողութիւնը յետ չշպրտեց առաջադիմութեան գաղափարը, այդ գաղափարը նոյնիսկ աւելի ամրապնդուեց: Առաջին հերթին մեծ թափով սկսեց զարգանալ գիտութիւնը եւ **տեխնիկա**ն: Առաջադիմութիւն էր դա թէ ոչ, կարեւոր չէր, փաստը այն էր, որ արտադրութիւնը զարգանում էր այնպիսի արագ թափերով, որ չնկատել այն անհնարին էր:

19րդ դարի կէսերից սկսեցին արդարացիօրէն խօսել քաղաքական եւ բարոյական առաջադիմութեան մասին: 1815 թւից մինչեւ 1853 թւականը Եւրոպայում ոչ մէկ խոշոր պատերազմ չծագեց: Անգլիական գաղութներում վերացւեց ստրկութիւնը: Միացեալ Նահանգներում պատրաստւում էին նոյնպէս վերացնել ստրկութիւնը, իսկ Ռուսաստանը 1861 թւին վերացրեց ճորտատիրութիւնը: Սունկերի նման աճում էին բարեգործական կազմակերպութիւնները, որոնք պայքարում էին հարբեցողութեան դէմ, կանանց իրաւունքների համար եւ այլն: Այն ժամանակ Հերբերտ Սպենսերը ենթադրում էր, որ շուտով կանայք կը հրաժարւեն գեղարարութիւնից, որովհետեւ բարոյապէս կը դառ-

նան դրանից բարձր: Բացի դրանից՝ երկրաբանական յայտնագործութիւնները ապացուցում էին, որ մարդկութիւնը զարգացել է առաջադիմութեան ճանապարհով, այսինքն ամէն մի յաջորդ աստիճան որոշ իմաստով եղել է աւելի արժէքաւոր, քան նախորդը:

Եւ վերջապէս 1859 թւին լոյս տեսաւ Դարւինի հռչակաւոր «Տեսակների ծագումը» աշխատութիւնը, որտեղ նկարագրւած էր զարգացման ընթացքը եւ գոյութեան համար պայքարը: Սակայն թէպէտեւ ամրապնդւում էր առաջադիմութեան գաղափարը, բայց բաւականին անյոյս էին դառնում ժամկէտները: Դարւինի առաջընթացի արագութիւնը այնքան ցածր էր մարդու կեանքի տեւողութեան համեմատ, այնքան դանդաղ էր առաջադիմում մարդկութիւնը, որ շատերի համար պարզ դարձաւ, որ ոչ իրենք եւ ոչ էլ մի քանի սերունդ իրենցից յետոյ, չեն հասնի իրենց երազած հասարակարգին, եթէ կրաւորական կերպով հետեւեն ընդհանուր առաջընթացին:

Լուսաւորականների միջավայրը փոխելու գաղափարը նոր թափ ստացաւ, բայց այս անգամ զուտ տնտեսագիտական հողի վրայ: Արտադրութեան զարգացումը ստիպում էր մարդկանց մտածել արտադրութիւնը կազմակերպելու մասին: Հիմնական դրոյթը պարզ էր. առանձին մարդիկ կամ խմբեր, կազմելով **ակցիոներ**ական (բաժնետիրական) ընկերութիւններ, պէտք է ունենան հնարաւորութիւն արտադրելու, գնելու եւ վաճառելու ինչ կը ցանկանան եւ ինչպէս կը ցանկանան: Ապրանքների գների եւ որակի ձեւակերպում կատարւում էր ազատ շուկայի օրէնքների համաձայն: Համաձայն բնութեան օրէնքների, այս մրցակցութիւնը պէտք է ստեղծի ապրանքների առատութիւն, որոնք կը բաշխւեն հասարակական արդարութեամբ: Ամէն մէկը կը ստանայ համաձայն իր աշխատանքի: Տնտեսական գործունէութիւնը պէտք է ընթանայ առանց կառավարութեան մասնակցութեան: Սակայն, չնայած նրան, որ գործատէրերի **էգոիստ**ական վարքագիծը օգտակար է հասարակութեանը, նրանցից ոմանք անցնում են թոյլատրելի սահմանները: Անհրաժեշտ է պայքար՝ խաբեբայութեան եւ աւազակութեան դէմ: Բայց դա դեռ չէր նշանակում, որ կառավարութիւնը իրաւունք ունի խառնւելու աշխատավարձերի կամ գների հարցերի կարգաւորման գործին:

Այն ժամանակւայ տնտեսագէտների համար դա անթոյլատրելի էր, քանզի խախտում էր բնական ներդաշնակութիւնը: Ադամ Սմիտը, օրինակ, գտնում էր, որ շուկայի վերահսկողութիւնը մեծագոյն չարիք է: Սակայն արտադրական միջոցների զարգացման հետ միասին պարզ էր դառնում, որ տնտեսական մրցակցութեան վազքին մասնակցող մարդկանց սկզբնական հաւասարութիւնը դեռ բաւարար չէ բոլորին հաւասար պայմաններ վերագրելու համար: Անհրաժեշտ է, որ վազքի ժամանակ չստեղծւեն արհեստական պատնէշ-

ներ, որ լինեն դատաւորներ մրցակիցների ազնւութեանը հսկելու համար, մի խօսքով՝ կառավարութեան հսկողութիւնը անհրաժեշտ պարտադիր է: Իսկ որպէսզի կառավարութիւնն էլ չընկնի տնտեսական իշխանների ազդեցութեան տակ, բանւորները սկսեցին միանալ ու ստեղծել արհմիութիւններ:

Ընդհանուր առմամբ 19րդ դարը կարելի է անւանել հիասթափւած լուսաւորականների դար: Ո՛չ այն իմաստով, որ վարկաբեկւած էին լուսաւորականների գաղափարները, այլ այն իմաստով, որ ոչ ոք չէր ցանկանում հետեւել նրանց ցոյց տւած ուղուն: Շատերը կարծում էին, որ անհրաժեշտ է վերադառնալ մարդու իրաւունքները պաշտպանելուն, որ անհրաժեշտ է ստեղծել աւելի արդար սահմանադրութիւններ, արդար ընտրութիւններ, բարոյական քարոզներ՝ մինչեւ վերադարձը կրօնական կրթութեանը: Այս տեսակէտի մարդկանց անւանում էին «**ռադիկալ**»ներ եւ նրանց թիւն էին պատկանում առաջին հերթին անգլիական «չարտիստ» ները: Նրանք գտնում էին, որ բաւական է ապահովել ժողովրդավարական ազատութիւնները ու մարդու իրաւունքները եւ մարդկանց ազատ համագործակցութիւնը կը ստեղծի արդար հասարակարգ թէ՝ տնտեսական եւ թէ հասարակական իմաստով: Այդ հասարակարգում չեն լինի ոչ չափազանց հարուստ եւ ոչ էլ չափազանց աղքատ մարդիկ եւ միաժամանակ բոլորը կը վարձատրւեն իրենց աշխատանքի համաձայն:

Սակայն շուտով **ռադիկալ**ները զգացին, որ իրենց արդար հասարակարգը պետութեան օգնութեան կարիքը ունի, այնպիսի օգնութիւն որը հետագայում կոչւեց «Ռուզվելթի քաղաքականութիւն»: **Ռադիկալ**ները դառնում էին «**կոլեկտիվիստ**»ներ, իսկ իրենց թշնամիների աչքում նրանք «սոցիալիստ»ներ էին: Այս **ռադիկալ-սոցիալիստ**ները Անգլիայի **լէյբորիստ**ների, Ֆրանսիայի «երրորդ ուժի» ու Ամերիկայի **«New Deal»** շարժման նախահայրերն էին: Եւ, վերջապէս, 19րդ դարում կար եւս մէկ խումբ, որ իրեն լուսաւորականների ժառանգորդ էր համարում: Դա այսպէս կոչւած **«պոզիտիվիստ»**ներն էին, որոնց տեսաբանը համարւում էր Օդիւստ Կոնտը: Կոնտը իր կեանքի վերջին տարիներին, մանաւանդ 1848 թի անյաջող յեղափոխութիւնից յետոյ, փորձեց հիմնադրել եկեղեցու նման մի հաստատութիւն, որը առաջադիմութիւնը պէտք է դարձնէր հաւատքի առարկայ, իսկ միջոցները պէտք է լինէին գիտութիւնը, մարդու պայծառ միտքը և այլն:

Այսպէս, ընկերվարական միտքը, որպէս արդարութեան ու առաջադիմութեան, ազատութեան ու հաւասարութեան միտք հասաւ այն պահին, երբ հնչեց «Պրոլետարներ բոլոր երկրների՝ միացէք» կոչը և քաղաքական բեմ բարձրացաւ Մարքսը: Մինչեւ Մարքսը, այսինքն մինչեւ 1847 թւականը, երբ Մարքսը և Էնգելսը հրատարակեցին «Կոմունիստների Միութեան» ծրագիր «Մանիֆեստը», ընկերվարական միտքը իր արդար հասարակարգի որոնում-

ներում շեշտը դնում էր հասարակարգի վերջնական տեսքի վրայ: Այսինքն աշխարհի բոլոր ծայրերում ընկերվարութեան գաղափարախօսները նկարագրում էին, թէ ինչպիսին պէտք է լինի և ինչպիսին չպէտք է լինի արդար հասարակարգը: Իսկ մարքսիստները հակառակը՝ շեշտը դնում էին այդ հասարակարգին հասնելու միջոցների վրայ (դասակարգային պայքար, **պրոլետարիատի դիկտատուրա**, արտադրական միջոցների համայնացում և այլն), իսկ ինքը՝ **կոմունիզմ** կոչւող ապագայ հասարակարգը իրենք **կոմունիստ**ները պատկերացնում էին բաւականի աղօտ: Որոշ հարցերում, օրինակ՝ ընտանիքի, ազգերի, պետութեան, «Մանիֆեստը» այնքան առասպելական էր, որ այսօր որոշ երկրներում իշխանութեան գլուխ կանգնած **կոմունիստ**ները փորձում են շրջանցել «Մանիֆեստ»ում արտայայտւած միամտութիւնները: Այնուամենայնիւ, եթէ մինչմարքսեան ընկերվարութիւնը որոշ իմաստով իսկապէս կարելի էր անւանել **ուտոպիստ**ական, ապա մարքսիստները իրենց գործնական քայլերով **ուտոպիստ**ներ չէին: Արդէն 1864 թւին նրանք կազմեցին առաջին միջազգային բանւորական յեղափոխական կազմակերպութիւնը, որը կոչւեց «Միջազգային Բանւորական Ընկերութիւն» կամ «Առաջին Ինտերնացիոնալ»:

Այս կազմակերպութիւնը փորձում էր մէկ հունի մէջ դնել ե՛ւ անիշխանականներ Պրուդոնին ու Բակունինին, ե՛ւ Լասալեան շարժումը, ե՛ւ անգլիական **տրէյդ-իւնիոնական**ներին, ե՛ւ բոլոր ոչ-**պրոլետար**ական ընկերվարականներին: Այդ միացման տեսական հիմք պէտք է ծառայէր այն, ինչը հետագայում կոչւեց մարքսիզմ: Այս **կոմունիստ**ական աւետարան կոչւող «Մանիֆեստի» հիմնական դրոյթները հետեւեալներն էին.

1.- Միակ ընդունելի աշխարհայեացքը «**Դիալեկտիկ**ական **մատերիալիզմ**»ն է, որի համաձայն բնութիւնը բացարձակ է, գոյութիւն ունի անկախ մարդու ընկալումներից և զարգանում է հակասութիւնների պայքարի շնորհիւ:

2.- Պատմական զարգացումը ենթարկւում է նոյն այդ **դիալեկտիկ**ական օրինաչափութիւններին, իսկ պատմական հակասութիւնները կրում են դասակարգային բնոյթ:

3.- Մարդկութեան ամբողջ պատմութիւնը դասակարգերի պայքարի պատմութիւն է:

4.- Պատմական զարգացումը հինգ հիմնական կացութաձեւերի միջով գնում է դէպի կոմունիզմ կոչւող հասարակարգը, որտեղ բաշխումը կատարւում է ըստ պահանջների, որտեղ բացակայում են ազգերը, պետութիւնը, ընտանիքը: Այս ամէնը վերանում են որպէս սկզբունքով անարդար հաստատութիւններ: Պետութիւնը բռնութեան աղբիւր է, ընտանիքում ծնողները շահա-

գործում են երեխաներին, իսկ ազգերի գոյութիւնը անհաւասարութեան աղբիւր է։

5.- **Կապիտալիստ**ական արտադրութիւնը սկզբունքով անարդար է, քանզի **կապիտալիստ**ները, իւրացնելով յաւելեալ արժէքը, շահագործում են բանւոր դասակարգին։

6.- **Կապիտալիստ**ական հասարակարգի տապալումը անխուսափելի է, քանզի **կապիտալիստ**ական հասարակարգում (ինչպէս և՛ ւ բոլոր հասարակարգերում, բացի ընկերվարականից) արտադրական միջոցների զարգացումը հակասում է տիրող արտադրական յարաբերութիւններին։

7.- Այն հասարակական յեղաշրջումը, որի շնորհիւ կը տապալւի **կապիտալիզմ**ը և կը հաստատւի համայնավարութեան առաջին փուլը՝ ընկերվարութիւնը, կը կատարւի բանւոր դասակարգի ձեռքերով, որը բացի իր շղթաներից կորցնելու ոչինչ չունի։

8.- Բանւոր դասակարգի առաջադէմ և ղեկավար տարրը կոմունիստական կուսակցութիւնն է, որը պէտք է ամբողջ աշխարհում կազմակերպի համայնավարական յեղաշրջում, այսինքն քանդի հին աշխարհը և կառուցի նորը։ Եւ այդ սուրբ նպատակին ծառայելու համար «Մանիֆեստը» կոչ էր անում բոլոր երկրների **պրոլետար**ներին՝ միանալ։

Այս դրոյթներից պարզ երեւում է, որ Մարքսը և Էնգելսը ընդունել էին լուսաւորականների առաջադիմութեան թեզը, համարելով որ մարդկութեան զարգացումը ընթանում է վատից դէպի լաւը։ Նրանք համարում էին, որ ամէն մի կացութաձեւ նախորդից աւելի արդար էր և որ այդ կացութաձեւերի շարանը աւարտւելու է բացարձակ արդարութեամբ օժտւած համայնավարական հասարակարգով։ Մարքսիստների համար արդարութեան չափանիշը տնտեսական հաւասարութեան մէջ է, որի շնորհիւ կը վերանան դասակարգերը և դասակարգային պայքարը։ Եթէ մէկ կողմ դնենք մարքսիստների գործնական քայլերը, ապա գաղափարական իմաստով, նրանք ոչ մէկ նոր բանով չհարստացրին ընկերվարական միտքը։ Ընդհակառակն, ամբողջ շեշտը դնելով տնտեսական հաւասարութեան վրայ, նրանք աչքաթող արեցին մարդու հոգեբանական ոլորտներում տիրող անհաւասարութիւնը և անարդարութիւնը։

Մարքսի տնտեսական արդարութեան դէմ բարձրացան հատ ու կենդ մնացած ազնուականները։ Նրանցից մէկի՝ իշխան Բոդովի առարկութիւնը ինձ թւում է հետաքրքրական։ Ահա թէ ինչ էր նա գրում. «Եթէ Մարքսը այդքան ցնորւած չլինէր տնտեսական հաւասարութեամբ, ապա նա կը տեսնէր, որ **բուրժուայի** և ազնուականի տարբերութիւնը շատ աւելի մեծ է, քան **բուրժուայի** և **պրոլետարիատի**։ Հէնց բուրժուան ու ազնուականն են պատկանում տարբեր դասերի, իսկ բուրժուան և բանւորը պատկանում են նոյն ցեղին և նրանց հակա-

սութիւնները ընտանեկան հակասութիւններ են։ Ազնւականի էութիւնը երբեք չի որոշւել տնտեսական չափանիշներով ու հարստութեամբ։ Ազնւականը կարող է լինել աղքատ և մահանալ սովից, բայց աղքատութիւնը երբեք չի կարող նրանից խլել իր ազնւականութիւնը, որը նա ժառանգել է պապերից»։

Ինչ խօսք, որ ազնւականի այս տրամաբանութիւնը պէտք է խորթ թւայ մեր ժամանակներում։ Սակայն, մէկ սկզբունքը այս տրամաբանութեան մէջ անժխտելի է։ Դա այն է, որ դարերից ի վեր ձեւակերպւած ու ժառանգած հոգեբանական յատկութիւններ, չեն կարող ենթարկւել տնտեսական օրինաչափութիւններին, այսինքն «կեցութիւնն է որոշում գիտակցութիւնը» թեզին։ Հազիւ թէ տնտեսական կեցութիւնը ի վիճակի լինի ոչնչացնել այն հոգեբանական միասնութիւնները, ինչպիսիք են ազգը, ընտանիքը, հայրենիքը և այլն։ Բայց այս հարցերը շատ նուրբ էին, որպէսզի արդարութեան մասին երազող **պրոլետար**ական կազմակերպութիւնները այն ժամանակ ուշադրութիւն դարձնէին նրանց վրայ։

Սակայն, այնուամենայնիւ, մարքսիստական լոկ տնտեսական արդարութիւնը դժւարութեամբ էր ճանապարհ բացում աւանդական բնական արդարութեան գաղափարների միջից։ Մարքսիզմի ճանապարհի վրայ կանգնած էր անիշխանական ընկերվարական Պրուդոնը և նրա հաւատարիմ աշակերտ Բակունինը, որոնք մեծ հեղինակութիւն էին վայելում բանւորական շարժման մէջ։ Մարքսի պայքարը Պրուդոնի և Բակունինի դէմ մարքսիզմի ինքնահաստատման առաջին և գլխաւոր փուլն էր, ուստի այդ հարցի վրայ կարելի է կանգ առնել մի քիչ աւելի մանրամասնօրէն։

1866 թւին Ժընեւում տեղի ունեցաւ Առաջին ինտերնացիոնալի առաջին **կոնգրես**ը, որին մասնակցում էին Անգլիայի, Ֆրանսիայի, Շւեցարիայի և Գերմանիայի 60 ներկայացուցիչներ։ Մարքսը այդ ժողովին բացակայում էր, բայց ուղարկել էր իր զեկոյցը, որի գլխաւոր հարցը ուղղւած էր պրուդոնականների դէմ։ Պրուդոնականների ծրագիրը մանր տնտեսութիւնների ծրագիրն էր, նրանք կողմնակից էին խաղաղ **ռեֆորմ**ների ճանապարհին և դէմ էին զինւած ապստամբութեանը։ Ժխտելով պետական իշխանութիւնը, նրանք կողմնակից էին բնական սկզբունքներով ստեղծւած փոքր խմբերի ինքնավարութեանը։ Պէտք է ասել, որ Պրուդոնը և նրա կողմնակիցները մեծ հեղինակութիւն էին վայելում Ֆրանսիայում, Իսպանիայում, Պորտուգալիայում և ամբողջ Եւրոպայում։ Մարքսի կողմնակիցներին չյաջողւեց կործանել պրուդոնականներին։ Մեծ էր նրանց ազդեցութիւնը և դեռ նոր էին մարքսիստների գաղափարները։

Սակայն մարքսիստները առաջարկեցին մի բանաձեւ, որը աւելացրեց իրենց հեղինակութիւնը։ Այդ բանաձեւը նախատեսում էր բանւորների 8 ժա-

մեայ աշխատանքը, սահմանափակում էր կանանց և երեխաների աշխատանքը և մեծ տեղ էր տալիս արհմիութիւնների պայքարին։

Առաջին ինտերնացիոնալի երկրորդ **կոնգրես**ը կայացաւ Լօզանում 1867 թւի Սեպտեմբեր ամսին։ Այստեղ եւս իշխում էին պրուդոնականները։ Ձայների մեծամասնութեամբ անցաւ նրանց փոքր տնտեսութիւնների ծրագիրը։ Սակայն երրորդ **կոնգրես**ի ժամանակ, որը կայացաւ 1868 թւին Բրիւսելում, պրուդոնականների դիրքերը զգալիօրէն թուլացան։ Բանը նրանումն էր, որ գերմանական բանւորական շարժումը, հրաժարւելով Լասալից, գնում էր Մարքսի յետեւից և ժողովի ժամանակ 14 հազար գերմանական բանւորների ներկայացուցիչները յայտարարեցին, որ իրենք միանում են Մարքսի ծրագրին։ Սակայն դա միայն թուլացրեց պրուդոնականների դիրքերը, այլ ոչ պարտութեան մատնեց նրանց։

Պէտք է ասել, որ, չնայած ներքին սուր վէճերի, առաջին **Ինտերնացիոնալ**ի գործունէութիւնը արագ ծաւալւում էր։ **Պրոլետար**ական համագործակցութիւնը հասել էր այն աստիճանի, որ **կապիտալիստ**ական աշխարհը սկսեց շօշափել **պրոլետար**ական յեղափոխութեան վտանգը։ Բանւորական համագործակցութիւնը ապշեցուցիչ էր։ Ֆրանսիայի քաղաքական գործիչներից մէկը այն ժամանակ գրում էր. «Ֆրանսիացիների և անգլիացիների փոխադարձ ատելութիւնը կոփւում ու ամրապնդւում էր դարերի ընթացքում։ Նա ներծծւում էր մօր կաթի հետ միասին և թւում էր անսասան։ Բայց ահա անգլիական **տրէդ-իւնիոն**ները պաշտպանեցին ֆրանսիական բանւորներին, երբ նրանք գործադուլ էին յայտարարել»։ Իսկ «**Թայմս**»ը **պրոլետար**ական **ինտերնացիոնալիստ**ների շարժումը համեմատում էր առաջին քրիստոնեաների հետ ասելով, որ **ինտերնացիոնալիզմ**ը դարձել է հաւատք բանւորների համար։ Եւ այդ հաւատքից սարսափած եւրոպական պետութիւնները փորձում էին ճնշել բանւորական շարժումը։ 1869 թիւը ծանր տարի էր եւրոպական **պրոլետարիատ**ի համար։ Նապոլէոն Գ.ը Ռիկամարիում գնդակահարեց գործադուլ յայտարարած բանւորներին, Բելգիկայի կառավարութիւնը ձերբակալեց Շարլ-Ռուայի հանքափորների ղեկավարներին, անգլիական կառավարութիւնը աքսորեց Իէլսի բանւորներին, Ֆրանսիայում սկսւեց **Ինտերնացիոնալ**ի մասնաճիւղի դատավարութիւնը։ Բոլոր այս միջոցները ուղղւած էին **Ինտերնացիոնալ**ի դէմ։

Այս պայմաններում Բազելում հաւաքւեց **Ինտերնացիոնալ**ի չորրորդ **կոնգրես**ը։ Այդ կոնգրեսին ներկայ էին 78 պատգամաւորներ, այդ թւում 26 հոգի Ֆրանսիայից, 12 հոգի Գերմանիայից, 5 հոգի Բելգիայից, 22 հոգի Շւեցարիայից, 2 հոգի Աւստրիայից, 1 հոգի Միացեալ Նահանգներից, 5 հոգի Անգլիայից։ Պրուդոնականներին ներկայացնում էին իրենց լաւագոյն գործիչներ Լոնգէն,

Թոլէնը, Միւրը և Լանգլեան։ Նախորդ **կոնգրես**ում՝ Լօզանում պրուդոնականներին յաջողուեց անցկացնել իրենց բնական արդարութեան, այսինքն մանր տնտեսութիւնների ծրագիրը։ Այստեղ՝ Բազելում մարքսիստները ուզում էին հողային հարցում ջախջախել պրուդոնականներին։ Պաշտպանելով այս հարցում իրենց հայեացքները, մարքսիստները բերում էին հետեւեալ ապացոյցները։ Մէկ դարւայ ընթացքում,- ասում էին նրանք,- կալւածատէրերի թիւը Անգլիայում կրճատւել է 8 անգամ։ 18րդ դարի կէսերին Անգլիայում կային 250,000 կալւածատէրեր, իսկ 19րդ դարի 60ական թուերին կալւածատէրերի թիւը կազմում է 30,000։ Այս փաստը խօսում է այն մասին, որ խոշոր տնտեսութիւնները աւելի ձեռնտու են, բայց որ այդ տնտեսութիւնները կենտրոնանում են մի քանի հարուստների ձեռքում։ Բացի դրանից, մարքսիստները ցոյց տւեցին, որ Անգլիան 19 միլիոն **էյկր** տարածութիւնից հաւաքում է նոյնքան հացահատիկ, որքան որ Ֆրանսիան 40 միլիոն **էյկր** տարածութիւնից։ Եւ դա կատարւում էր,- ըստ մարքսիստների,- այն պատճառով, որ ֆրանսիական տնտեսութիւնը բաժանւած էր մանր տնտեսութիւնների, իսկ անգլիականը խոշոր էր։ Այստեղից մարքսիստները եզրակացնում էին, որ հողը պէտք է պետականացւի և ստեղծւի մէկ խոշոր հասարակական տնտեսութիւն։ Այդ խոշոր պետական տնտեսութիւնը պէտք է ղեկավարւէր համապատասխան նախարարութեան կողմից, որի նախարարը պէտք է պատասխան տար **պարլամենտ**ի առջեւ սննդամթերքների պակասի համար։

Մարքսիստների ապացոյցները տրամաբանական էին, բայց պրուդոնականները չէին յանձնւում։ Նրանք պնդում էին, որ հասարակութիւն, ինչպէս և՛ւ հասարակական տնտեսութիւն հասկացութիւնները վերացական անշօշափելի հասկացութիւններ են, իսկ անձը և անձնական տնտեսութիւնը իրական փաստ է։ Պրուդոնականներ Լանգլեան և Շեմալէն ապացուցում էին, որ հողի **կոլեկտիւ** մշակումը կը վերացնի անձնական շահագրգռւածութիւնը, որը բնական է և դրա հետ միասին կը վերանայ գիւղացու ջանասիրութիւնը։

Այն օրերին ընկերվարութեան գաղափարներով տարւած մարդկանց համար պրուդոնականների ապացոյցները թւում էին տկար և ոչ-համոզեցուցիչ։ Միայն 100 տարի յետոյ, երբ **կոլեկտիւ** տնտեսութիւն ունեցող Ռուսաստանը սկսեց հացահատիկ գնել Միացեալ Նահանգներից, որտեղ գիւղատնտեսութիւնը բաշխւած է ընտանիքների միջեւ, տնտեսագէտները վերյիշեցին պրուդոնականների նախազգուշացումները։ Իսկ այստեղ՝ Բազելում Լեսները նոյնիսկ պահանջեց որ պրուդոնականները բացատրեն, թէ ինչ են իրենք հասկանում ընկերվարութեան և համայնավարութեան տակ, եթէ նրանք դէմ են հողի պետականացմանը։ Պրուդոնականները պատասխանում էին, որ ընկերվարութիւնը նպատակ է, այլ ոչ թէ միջոց, որ մարդկութեանը ծանօթ չէ **կոլեկտիւ**

աշխատանք և որ վերջապէս չի կարելի գիւղացիութեան հարցը լուծել առանց գիւղացիների։

Այս նոյն **կոնգրես**ում առաջին անգամ ընկերվարական հողի վրայ հանդէս էր գալիս Բակունինը։ Նա պրուդոնականների նման դէմ էր հողի պետականացմանը, բայց առաջարկում էր յանձնել այն համայնքներին։ Մասնաւոր սեփականութեան վերացման համար նա պահանջում էր չեղեալ համարել ժառանգականութեան օրէնքը։ Այս գաղափարը նոր չէր։ Նա առաջ էր քաշւել բելգիական մտաւորական Կոլենի կողմից։ Իսկ նրանից էլ առաջ այդ հարցը բարձրացրել էր Սեն-Սիմոնը։ Կոլենը հաշւել էր, որ ժառանգականութեան օրէնքը չեղեալ համարելուց յետոյ մարդկութիւնը առանց յեղափոխութեան, 100 տարւայ ընթացքում ձեռք կը բերի բոլոր արտադրական միջոցները։ Բակունինը համարում էր, որ ճիշտ ինչպէս **դեմոկրատ**ական երկրներում վերացել է իշխանութեան ժառանգականութիւնը, ճիշտ այնպէս էլ պէտք է վերանայ տնտեսական ժառանգութեան իրաւունքը։ Բակունինը դէմ էր նոյնիսկ մի քանի ֆրանկ ժառանգելու իրաւունքին, էլ չխօսենք հողի կամ արտադրական միջոցների մասին։

Պէտք է ասել, որ բոլոր այս վէճերից մարքսիստները դուրս եկան յաղթական, բայց ոչ տեսական վէճերի շնորհիւ, այլ պարզապէս վէճերից խուսափելու և վէճերը արհամարհելու շնորհիւ։ Մարքսիստները պատրաստւում էին յեղափոխութեան և աւելի մտահոգւած էին կազմակերպչական հարցերով, քան դատարկ տեսական բանավէճերով։ Բայց յեղափոխութիւնը պայթեց նոյնիսկ մարքսիստների համար անսպասելիօրէն։ 1870 թւին սկսւեց ֆրանկպրուսական պատերազմը, որը մերկացրեց ֆրանսիական պետականութեան արատները։ Սեպտեմբերի 2ին Սեդանում անձնատուր եղաւ ֆրանսիական բանակներից մէկը և ինքը՝ Նապոլէոն Գ.ը գերի տարւեց։ Այդ լուրը ստանալուց յետոյ Փարիզի բնակչութիւնը բանւորների հետ միասին դուրս եկաւ փողոց, Սեպտեմբերի 4ին ձերբակալեց կայսրութեան ղեկավարներին և հռչակեց հանրապետութիւն։ Ճիշտ է, իշխանութեան գլուխ անցան ոչ-բանւորների ներկայացուցիչները։ Սակայն գերմանական զօրքերը յաղթական քայլերով մօտենում էին Փարիզին։ 1871 թի Փետրուար ամսին գերմանացիները արդէն նւաճել էին Ֆրանսիայի մէկ երրորդը։ Այդ հանգամանքը արթնացրեց ֆրանսիական ժողովրդի ազգային և հայրենասիրական զգացմունքները և բանւորների ղեկավարութեամբ Մարտի 18ին տապալւեց նախկին կառավարութիւնը և իշխանութիւնը անցաւ բանւորների ձեռքը։ Հաստատւեց աշխարհի առաջին բանւորական կառավարութիւնը, առաջին **կոմմունա**ն, որը ապրեց 72 օր։

Փարիզեան **կոմմունա**յին նւիրւած են հատորներ և այստեղ տեղը չէ վերլուծելու համար նրա ընթացքը։ Բայց մէկ բան պարզ դարձաւ բոլոր ընկերվարա-

կանների և առաջին հերթին մարքսիստների համար, դա այն էր, որ արդարութեան ու յեղափոխութեան մասին տեսական խօսակցութիւնները ոչինչ են, եթէ բացակայում է իշխելու պատրաստ և պետական մեքենային ծանօթ մի կազմակերպութիւն։ Ընկերվարականները հասկացան, որ վերցնել իշխանութիւնը շատ աւելի հեշտ է, քան իշխանութիւնը պահելը։ Եւ մարքսիստները սկսեցին մշակել ընկերվարական հասարակարգի պետական կառոյցի հարցերը։ Այսօր արդէն կարելի է ասել, որ այդ հարցում նրանք ոչ մէկ յաջողութիւն չունեցան։ Մարքսը և Էնգելսը այդպէս էլ չկարողացան դուրս գալ վերացական միտումների սահմաններից։ Այդ բանը, այսինքն իշխանութեան **տեխնոլոգիան** նրանց փոխարէն փայլուն կերպով մշակեցին իշխանութեան վարպետներ Լենինը և Ստալինը։

1939 թւականի նոյեմբերի 1ին Մոսկովեան **«Պրաւդա»** թերթը հրատարակել էր Խորհրդային Միութեան նախարարների խորհրդի այն ժամանակւայ նախագահ Մոլոտովի ճառը, որտեղ մասնաւորապէս ասւած էր հետեւեալը, «Հիտլերիզմի գաղափարախօսութիւնը, ամէն մի գաղափարախօսութեան նման, կարելի է ընդունել կամ չընդունել։ Սակայն բոլորիս համար պարզ է, որ գաղափարախօսութիւնը անհնարին է ոչնչացնել ուժի միջոցով, անհնարին է խեղդել պատերազմով, ուստի ոչ միայն անմտութիւն է, այլեւ յանցանք՝ պատերազմ վարել հիտլերիզմը ոչնչացնելու համար»։ Իսկ Գերմանիայի արտաքին գործերի նախարար Ռիբենտրոպի այցի կապակցութեամբ տրւած ճաշկերոյթի ժամանակ, նոյն 1939 թւականին, Ստալինը՝ իր բաժակաճառի մէջ ասաց. «Ես գիտեմ, թէ որքան ջերմ է գերմանական ժողովրդի սէրը դէպի իր առաջնորդը, ուստի ես ուզում եմ խմել Հիտլերի կենացը»։ Սրանք լոկ դիւանագիտական քայլեր չէին, սա պաշտօնական ճանաչումն էր այն նոր տիպի վարչակարգի, որը կոչւում է կուսակցապետութիւն և որը որպէս ընկերվարական տարբերակ հիմնադրել էր Լենինը։

Թէ ինչպիսի ճանապարհ անցաւ ընկերվարութեան այդ տարբերակը Ռուսաստանում և ինչպէս նա հաստատւեց այլ երկրներում, առանձին հարց է, որը գրեթէ ոչ մի կապ չունի ընկերվարական մտքի զարգացման հետ։ Այդ հարցին ես մտադրել եմ անդրադառնալ մի այլ առիթով։ Այստեղ միայն ուզում եմ նշել, թէ որքանով Խորհրդային Միութեան կուսակցապետութիւնը համապատասխանում էր ընկերվարական իդէալներին։ Այդ հարցի պատասխանը կարելի է գտնել խորհրդային ակադեմիկոս Սախարովի հետեւեալ գնահատականում. թւարկելով խորհրդային հասարակարգի թերութիւնները նա նշում է հետեւեալը.

1.- Աշխատաւորները ունեն չափազանց կարճատեւ արձակուրդ, երկու շաբաթ, որի ժամկէտը որոշւում է ղեկավարութեան կողմից։

2.- 41 ժամեայ աշխատանքային շաբաթ, այսինքն աւելի երկար, քան Եւրոպայի ու Ամերիկայի **կապիտալիստ**ական երկրներում:

3.- Բանւորների գործադուլ յայտարարելու իրաւունքի բացակայութիւն, մէկ բան, որ գոյութիւն ունի **կապիտալիստ**ական երկրներում:

4.- Չափից աւելին ցածր ծերութեան թոշակներ, որի ամենաբարձրը՝ 120 ռուբլին մի քանի անգամ ցածր է **կապիտալիստ**ական երկրների ամենացածր թոշակներից:

5.- Ամէն տարի մի քանի Կիրակի օր յայտարարւում է աշխատանքային:

6.- Բնակարանային պայմանները անտանելի են: Սուտ է, որ մեր երկրում ամենաաժան բնակարաններն են: Մէկ քառակուսի մետր բնակտարածութիւնը միջին աշխատավարձի հաշւով հաւասար է Եւրոպայի մասնաւոր տների վարձին: Բնակարան ձեռք բերելը՝ երջանկութիւն է համարւում: Հացի հերթերը մեր շատ քաղաքներում սկսւում են վաղ առաւօտից, իսկ հացի որակը նոյնիսկ շներին չի բաւարարում:

7. Կրթութեան անտանելի ցածր մակարդակ:

8.- Բուժօգնութեան ցածր մակարդակ:

9.- Տեղաշարժումների սահմանափակում:

10.- Մեծամասնութեան համար արտասահման դուրս գալու հնարաւորութեան բացակայութիւն:

11.- Հարբեցողութիւն, հաւատացեալների ճնշում և այլն:

Սախորովը ոչ միայն թւարկում է այս թերութիւնները, այլեւ բազմաթիւ օրինակներով ապացուցում իր տեսակէտը: Ուրեմն Խորհրդային Միութիւնը չի կարող օրինակ ծառայել ընկերվարութեան համար, քանզի, ինչպէս մենք տեսանք, ընկերվարութիւնը ծնւել է որպէս արդարութեան և երջանկութեան գաղափար: Ստալինեան դարաշրջանում խորհրդային փիլիսոփաները ընդհանրապէս մօտ չէին գալիս ընկերվարական հարցերի զարգացմանը: Իսկ ինքը՝ աշխարհի առաջին մարքսիստ Ստալինը մի երկու հարցում այնպիսի շփոթութիւն մտցրեց, որ մինչեւ այսօր աշխարհի մարքսիստները չեն կարողանում ուշքի գալ: Ոչնչով չհարստացաւ ընկերվարական միտքը նաեւ Ստալինից յետոյ:

Ինչպէս յայտնի է, կուսակցութեան 20րդ համագումարում Խրուշչովը խստօրէն դատապարտեց անձի պաշտամունքը և մերկացրեց ստալինեան ոճիրները: Աներեւակայելի էին այդ ոճիրները: Այնտեղ էին հին ու նոր ընկերվարականների ոչնչացումները, տնտեսական ու ռազմական խոշոր սխալները, ամբողջ ազգերի աքսորը, ուրիշ հեղինակների աշխատութիւններին տիրանալը և այլն, և այլն: Թւում էր, թէ ստալինեան ոճիրների նմանը չկար ամ-

բողջ պատմութեան մէջ և որ «ստալինիզմ» կոչուող վարչակարգը մէկ և ընդմիշտ վերացուած կարելի է համարել։

Բայց շուտով պարզ դարձաւ, որ անձի պաշտամունքի հետ միասին քննադատութեան են ենթարկւում մարքս-լենինեան սկզբունքները, որոնք թոյլ են տալիս ստալինիզմի ծնունդը։ Օրինակ, **«Կոմունիստ»** հանդէսում 1962 թուականին լոյս տեսաւ մի յօդուած, որտեղ նշւում էր, որ Հունգարիայում ազգայնական քարոզչութիւնը սկզբից ուղղուած էր ստալինիզմի դէմ, լենինեան **նորմա**ների վերականգնման ուղղութեամբ, իսկ յետոյ էլ ընդհանրապէս մարքսիզմ-լենինիզմի դէմ։ Այդ նոյն ընթացքը՝ Ստալինից դէպի մարքսիզմ-լենինիզմ ապրեց և՛ Լեհաստանը։ Այդ նոյն միտումները թափանցեցին նաեւ Խորհրդային Միութեան ներսը։ Միջազգային հասարակութիւնը սկսեց խօսել մարդկային դէմքով ընկերվարութեան մասին, մարդասիրական համայնավարութեան մասին։ Իսկ ո՞վ էր դարձրել ընկերվարութիւնը անմարդկային, ո՞վ էր այլանդակել նրա դէմքը։ Չէ՞ որ ընկերվարութիւնը հէնց արդարութիւն ու մարդասիրութիւն էր։ Մարդիկ գտան, որ Ստալինը աղաւաղել էր ընկերվարութիւնը։ Մի քիչ խորանալուց յետոյ, պարզւեց, որ աղաւաղումները սկսւել էին Լենինից, իսկ ոմանք էլ գտան, որ սխալները սկսւում էին Մարքսից։ Անմիջապէս ստեղծուեցին տարբեր ուղղութիւններ։ Ոմանք առաջարկում էին դասակարգային պայքարը փոխարինել աւելի **հումանիստ**ական սկզբունքով, ոմանք առաջարկում էին **սոցիալիզմ**ի նոր տարատեսակներ, իսկ ոմանք էլ ընդհանրապէս հրաժարւում էին ընկերվարութիւնից։

Եւ խորհրդային իշխանաւորները ստիպւած եղան կրկին վերսկսելու մարքսիստական գաղափարախօսութեան պաշտպանութիւնը, մէկ բան, որը վաղուց ի վեր մոռացութեան էր մատնւած։ Փիլիսոփայութեան Ինստիտուտի **դիրեկտոր** Ֆեդոսեւը ստիպւած եղաւ խոստովանել, որ իրենք, այսինքն խորհրդային փիլիսոփաները պատրաստ չեն պայքարի բռնւելու նորագոյն ուղղութիւնների դէմ, ինչպիսիք են, օրինակ, **պոզիտիվիզմ**ը, տրամաբանական **սիմվոլիզմ**ը, **սեմանտիզմ**ը և այլ հակամարքսիստական ուղղութիւններ։ Արդէն 1957 թւին, **«Փիլիսոփայական Հարցեր»** հանդէսը հրատարակեց փիլիսոփաների համագումարի նիւթերը, որտեղ նշւում էր, որ «Ստալինի մեղքով վերջ տրւեց **դիալեկտիկական մատերիալիզմ**ի օրինաչափութիւնների ուսումնասիրութեանը։ Բոլորովին անբաւարար վիճակում են գտնւում բնական գիտութիւնների փիլիսոփայական հարցերը, որոնք Արեւմուտքում մեկնաբանւում են բաւականին ստեղծագործաբար»։

Գրեթէ նոյն տեսակէտն էր արտայայտում **«Մարքսիզմ-լենինիզմը բարձրագոյն դպրոցում»** հանդէսը։ Այնտեղ ասւած էր. «Ստալինի մեղքով կուսակցութեան պատմութիւնը դասաւանդւում է որպէս դէպքերի նկարագրութիւն և բո-

լորովին բացակայում է ստեղծագործական մօտեցումը»: Պարզ էր, որ այս պայմաններում Խրուշչովը չէր կարող մարքսիզմ-լենինիզմի սկզբունքների պաշտպանութեան հարցը վստահել իր անպատրաստ փիլիսոփաներին: Նա ստիպւած եղաւ դիմել վարչական, այսինքն ստալինեան մեթոդներին: Եւ, ի հարկէ, պարզ է, որ այդ պայմաններում սպասել խորհրդային փիլիսոփաներից ընկերվարական մտքի զարգացում միամտութիւն է:

Բայց արդեօ՞ք դա նշանակում է, որ Մարքսից յետոյ ընկերվարական միտքը ոչ մի զարգացում չի ապրել: Ոչ, ընկերվարական միտքը միշտ էլ զարգացել է, աւելին. վերջին 20 տարւայ ընթացքում նա ապրել է բուռն զարգացում: Սակայն այսօրւայ ընկերվարութիւնը այն չէ, ինչ որ էր նա մէկ դար առաջ: Մեր ժամանակներում **կապիտալիզմ**ն էլ այն չէ: Այսօր Գերմանիան, Անգլիան, Ճապոնիան, Միացեալ Նահանգները և այլ զարգացած **կապիտալիստ**ական երկրներ արդէն բառի բուն իմաստով չի էլ կարելի համարել լրիւ **կապիտալիստ**ական: **Կապիտալիզմ**ը կրել է էական փոփոխութիւններ: Եւ բանւորն էլ այն չէ, ինչ որ էր սրանից 100 տարի առաջ: Ի հարկէ, եթէ ի նկատի չունենանք այն հանգամանքը, որ գիտութեան ու **տեխնիկա**յի զարգացումը ազդում է նաեւ բանւոր դասակարգի վրայ, որ նրանց զարգացման հետ միասին փոփոխութեան են ենթարկւում դասակարգային յարաբերութիւնները, ապա այսօր էլ կարելի է ասել, որ **պրոլետարիատ**ը շղթաներից բացի կորցնելու ոչինչ չունի:

Բայց բանը նրանում է, որ այսօր բանւոր դասակարգը կորցնելու շատ բան ունի և նոյնիսկ գործարանի բաժնետոմսերը գնելով, նա որոշ իմաստով շահագործւածից դառնում է գործատէր: **Կապիտալիզմ**ը, որպէս հասարակա-տնտեսական համակարգ, զարգացաւ բոլորովին այլ կերպ, քան դա նախատեսել էին մարքսիզմի տեսաբանները: **Կապիտալիզմ**ին յաջողւեց ազատել բանւորին աղքատութիւնից, այսինքն այն շղթաներից, որից բացի նա կորցնելու ոչինչ չունէր: Այդ շղթաները կորցնելուց յետոյ պակասեց և գրեթէ բոլորովին վերացաւ բանւորների միջազգային համագործակցութիւնը: Աւելի ուժեղացան ազգային ձգտումները: Այսօր ամերիկեան բանւորները գործադուլ են յայտարարում, երբ իրենց կառավարութիւնը հացահատիկ է վաճառում Խորհրդային Միութեանը: Նրանք մտահոգւած են իրենց երկրում գների բարձրացումով և բոլորովին չեն ուզում մտածել իրենց դասակարգից ռուս բանւորների մասին, որոնք իշխանութեան գլուխն են, բայց որոնք ուտելու հաց չունեն: Նոյն բանը տեղի է ունենում Իտալիայում, Ֆրանսիայում և այլուր: Բոլոր երկրների բանւորները մտահոգւած են իրենց սեփական շահերով: Այս պայմաններում ընկերվարական մտքի զարգացումը գնաց նոր ճանապարհներով: Ես կանգ կ'առնեմ այն հիմնական ուղղութիւնների վրայ, որոնք յատկանշական են մեր ժամանակւայ ընկերվարութեան համար:

Ժամանակակից ընկերվարական տեսութիւնների ամենայատկանշական փոփոխութիւնները կապւած են ընկերվարութեան նոր սահմանումների հետ: Ֆիշերը և Սամուէլսոնը Միացեալ Նահանգներում, Շտումպֆրերը Գերմանիայում, Ժամսը Ֆրանսիայում և շատ ուրիշ ականաւոր հասարակագէտներ ու տնտեսագէտներ սահմանում են ընկերվարութիւնը որպէս տնտեսութեան Սամուէլսոնը Միացեալ Նահանգներում, Շտումպֆրերը, «տնտեսավարութեան տնտեսական վերահսկում պետութեան կողմից»: «Ղեկավարւող տնտեսութիւն», «կենտրոնացւած տնտեսութիւն», «բացարձակ ղեկավարւող տնտեսութիւն»,- բոլոր այս և նման սահմանումները ցոյց են տալիս, որ առաջին՝ ժամանակակից տեսանկիւնից ընկերվարութիւնը զուտ տնտեսավարութիւն է, երկրորդ, որ նա կարող է ընդունել տարբեր ձեւեր և որ այդ ձեւերը աւելի շուտ տւեալ ազգի նկարագրից ու ճաշակից բխող հարց է, քան պատմական անխուսափելի անհրաժեշտութիւն, այսինքն պատմական զարգացման ճանապարհին կանգնած մի անհրաժեշտ կացութաձեւ: Սակայն մինչեւ զուտ տնտեսական ընկերվարութեան անցնելը, անհրաժեշտ է տեսնել, թէ ի՞նչ տարատեսակների վերածւեց խորհրդային տիպի ընկերվարութիւնը:

Եթէ հաշւի չառնենք միայն տեսական հետաքրքրութիւն ներկայացնող տրոցկիստական ուղղութիւնը, ապա այսօր խորհրդային տեսակի ընկերվարութիւնը կարելի է բաժանել երեք խմբի,- չինական, հարաւսլաւական և ռուսական: Այս երեք տեսակից ամենաընդունելին և համակրելին անկասկած հարաւսլաւականն է: Եթէ ընկերվարական կոչւող երկրների վարչաձեւի գնահատականը կարելի լինէր տալ աշխատաւորների ապրուստի մակարդակով, ապա Խորհրդային Միութիւնը ունի ամենատկար վարչաձեւը: Հունգարիայի, Բուլղարիայի, Արեւելեան Գերմանիայի, Լեհաստանի, Ռումինիայի և Չեխոսլովակիայի աշխատաւորների կեանքի մակարդակը աւելի բարձր է, քան խորհրդային աշխատաւորութեանը: Իսկ Հարաւսլաւիայինը նրանցից էլ բարձր է: Ո՞րն է պատճառը:

Բանը նրանումն է, որ արդէն երրորդ տասնամեակն է, ինչ Հարաւսլաւիան կանգնել է յատուկ տնտեսական ճանապարհի վրայ: Այդ ճանապարհի առանձնայատկութիւնը ամէն մի ձեռնարկութեան տնտեսական ինքնուրոյնութիւնն է, այսինքն կենտրոնացւած և վերեւից պարտադրւած **պլան**աւորման բացակայութիւնը: Իսկ դա նշանակում է, որ հարաւսլաւական ձեռնարկութիւնները ծառայում են իրենց ժողովրդին, քանզի արտադրում են այն և այնքան, ինչը և որքան ցանկանում են գնել Հարաւսլաւիայի աշխատաւորները: Բացի դրանից, հարաւսլաւական ձեռնարկութիւններում իրականացւած է աշխատաւորների ընկերվարութիւնը, որը ժամանակին Ռուսաստանի համար առաջարկում էր Տրոցկին և որը ոչ միայն ստեղծում է առողջ արտադրա-

կան մթնոլորտ, այլեւ ապահովում է ամէն մի աշխատաւորի անձնական շահագրգռուածութիւնը՝ ձեռնարկութեան լաւ աշխատանքի հանդէպ։ Եթէ ձեռնարկութիւնը աշխատում է մեծ շահով, ապա աշխատաւորները համապատասխանօրէն ստանում են մեծ աշխատավարձ, այսինքն այն, ինչ որ կոչւում է յաւելեալ արժէք, գնում է ոչ թէ գործատիրոջ գրպանը, այլ որոշ չափով բաշխւում է աշխատաւորների միջեւ։

Ի հարկէ, եթէ այս հարաւսլաւական ընկերվարութեանը մօտենանք դասական ընկերվարութեան դիրքերից, ապա այստեղ կան զգալի շեղումներ։ Ի՞նչ մեղք ունեն մի ուրիշ ձեռնարկութեան բանւորներ, որոնց արտադրանքը վատ է սպառւում և այդ պատճառով իրենք ստիպւած են փակել իրենց գործարանը։ Ճիշտ է, սա հազւադէպ է պատահում Հարաւսլաւիայում, որովհետեւ կառավարութիւնը յետ մնացող ձեռնարկութիւններին յատկացնում է լրացուցիչ գումարներ, բայց այնուամենայնիւ հարաւսլաւական տնտեսութիւնը չի կարող համարւել լրիւ ընկերվարական։

Հարաւսլաւական ընկերվարութեան, հակադրւելու առանձնայատկութիւնը գտնւում է ոչ թէ տնտեսական, այլ ընկերային ոլորտում։ Հարաւսլաւիան ընկերվարական կոչւող հասարակարգերից միա՛կ բաց երկիրն է։ Նրա քաղաքացիներից իւրաքանչիւրը կարող է որեւէ ժամանակ դուրս գալ և ազատ կերպով վերադառնալ իր երկիրը։ Հարաւսլաւական դրամը գտնւում է ազատ շրջանառութեան մէջ միջազգային շուկայում։ Հարաւսլաւիայում կարելի է գնել որեւէ երկրի թերթ կամ լսել որեւէ ռադիոհաղորդում։ Մի խօսքով, բացի միակուսակցութիւնից, Հարաւսլաւիայում կան բոլոր ժողովրդավարական ազատութիւնները։

Հարաւսլաւական ընկերվարութիւնը, հակադրւելով Խորհրդային Միութեան ընկերվարութեանը, բաւականին թուլացնում է վերջինի դիրքերը միջազգային բանւորական շարժման ասպարէզում։ Յիրաւի, կոմունիստական շարժման «գործարանները բանւորների» հիմնական լոզունգը Հոկտեմբերեան յեղափոխութիւնը չիրականացրեց։

Խորհրդային Միութիւնում գործարանները պատկանում են պետութեանը և ուրեմն ոչ բանւորներին, քանզի պետութիւնը կուսակցութիւնն է, այլ ոչ բանւորական պետութիւն։ Եւ պետութիւնը չի էլ կարող լինել բանւորական, որովհետեւ պետական գործունէութիւնը շատ հեռու է բանւորի գիտելիքներից, կարողութիւններից և ընդունակութիւններից։ Իշխանաւորները միայն կարող են ընտրւել բանւորների կողմից, բայց դա էլ իրաւունք չի տալիս պետութեանը կոչւելու բանւորական և իր ձեռքը վերցնելու ձեռնարկութիւնների ղեկավարութիւնը։

Էլ չխօսենք այն մասին, որ խորհրդային իշխանաւորներին բանւորները չեն ընտրում։ «Ձեռնարկութիւններն ու գործարանները բանւորներին» լոզունգը միայն ու միայն կարող է նշանակել, որ այդ ձեռնարկութիւնների ղեկավարութիւնը կատարւում է իրենց՝ բանւորների կողմից ընտրւած բանւորական խորհուրդներով, որոնք կարող են ցանկացած ժամանակ վերընտրել հէնց այդ ձեռնարկութեան բանւորների կողմից, առանց որեւէ կուսակցական կամ պետական հրահանգների։ Ճիշտ այդպէս է Հարաւսլաւիայում։ Բայց որովհետեւ պարզ է, որ անհնարին է բոլոր ձեռնարկութիւնները և արտադրական միջոցները դարձնել միաժամանակ բոլոր բանւորների սեփականութիւնը, որովհետեւ մարքսիստական «հանրային սեփականութիւն» հասկացութիւնը միայն վերացական միտում է, Հարաւսլաւիայի համայնավարները եկան միակ հնարաւոր եզրակացութեանը՝ յանձնել ձեռնարկութիւնները տարբեր բանւորական խմբերի, այսինքն մէկ ձեռնարկութիւնը յանձնւում է մէկ խմբի, միւսը միւսին։

Այստեղից ծագում է ընկերվարական արդարութեանը չհամապատասխանող երկու երեւոյթ։ Առաջինը բանւորական խմբերի մրցակցութիւնն է, որի հետեւանքով աւելի կարող, գործունեայ ու ճարպիկ խմբերը բարգաւաճում են, իսկ անընդունակները սնանկանում։ Երկրորդ, ելնելով կամաւորական սկզբունքներից, գտնւում են բանւորներ և բանւորական խմբեր, որոնք հրաժարւում են իրենց առաջարկւած հասարակական սեփականութիւնից և գերադասում են ձեռնարկութիւններ հիմնադրել մասնաւոր սեփականութեան հիման վրայ։ Իսկ ոմանք էլ գերադասում են դուրս գալ Հարաւսլաւիայից և աշխատել աւելի լաւ վճարւող արտասահմանեան գործարաններում։

Բոլոր այս բանւորական խմբերի ձգտումներին Հարաւսլաւիայի համայնավարները տւել են որոշ բաւարարութիւն։ Սնանկացող ձեռնարկութիւնների բանւորական խորհուրդները ստանում են լրացուցիչ պետական նպաստ։ Եթէ այդ էլ չի օգնում, ապա ձեռնարկութիւնը ինքնաբերաբար փակւում է։ Եւ դա չի կարելի համարել ընկերվարական սկզբունքների խախտում, որովհետեւ իրականացւում է «ըստ աշխատանքի» սկզբունքը։ Նրանց, ովքեր ցանկանում են երկրից դուրս գալ, թոյլատրւում է այդ անել և այսօր աշխարհի բոլոր ծայրերում կարելի է գտնել հարաւսլաւական բանւորներ, որոնք, մնալով Հարաւսլաւիայի քաղաքացի, ահագին արտասահմանեան դրամ են ներմուծում իրենց երկիրը։ Բացի այդ, այս միջոցով լուծւում է գործազրկութեան հարցը։ Իսկ նրանք, ովքեր ցանկանում են մասնաւոր ձեռնարկութիւններ հիմնադրել, հիմնադրում են, կառավարութիւնը ոչ միայն չի արգելում, այլեւ պետական դրամատներից նրանց փոխարինաբար դրամ է տալիս։

Ինչ մնում է գիւղատնտեսութեանը, ապա այդ բնագաւառը գրեթէ ամբողջովին հիմնւում է մասնաւոր սեփականութեան վրայ: Սակայն ոչ միայն գիւղատնտեսութիւնումն է կիրարկւում մասնաւոր սեփականութեան սկզբունքը: Հարաւսլաւական վիճակագրութեան տւեալների համաձայն, Հարաւսլաւիայում գործում են 150,000 մասնաւոր խանութներ, 20 հազար մասնաւոր ճաշարաններ, 10 հազար մասնաւոր հիւրանոցներ, 100 հազար բանւոր աշխատում են մասնաւոր ձեռնարկութիւններում, 150 հազար աշխատաւորներ ունեն մենատնտեսութիւններ (վարսաւիր, կօշկակար, վերանորոգման արհեստանոցներ և այլն): Այս մասնաւոր սեփականութեան հատւածը մրցում է պետական ձեռնարկութիւնների հետ և դրանով իսկ ստիպում է այդ ձեռնարկութիւնները աւելի լաւ աշխատել: Հարաւսլաւիայի համայնավարները մասնաւոր սեփականութեան հատւածը համարում են ժամանակաւոր անհրաժեշտութիւն, սակայն այդ հատւածի հանդէպ ոչ մի բռնութիւն գործադրելու մտադրութիւն չունեն: «Նա պէտք է գոյութիւն ունենայ այնքան ժամանակ,- ասում են նրանք,- որքան ինքը կարողանում է իրեն պահել: Այդքան ժամանակ նա անհրաժեշտութիւն է մեր տնտեսութեան համար»: Իսկ այդ հատւածը ոչ միայն չի խանգարում Հարաւսլաւիայի ընկերվարական տնտեսութեանը, այլեւ իսկապէս որ անհրաժեշտութիւն է: Օրինակ՝ փոխադրական միջոցների 90 տոկոսը գտնւում է մասնաւոր ընկերութիւնների ձեռքում: Ընդհանրապէս սպասարկման ոլորտի աշխատանքները հիմնականում կատարւում են մասնաւոր սեփականութեան հատւածի կողմից:

Հետաքրքրական է Հարաւսլաւիայի գիւղատնտեսական զարգացումը: 1949 թւականին Հարաւսլաւիան գիւղատնտեսութեան հարցում կանգնեց Խորհրդային Միութեան ճանապարհի վրայ, այսինքն՝ կոլտնտեսութիւնների: Բռնի ուժով սկսւեց կոլտնտեսացումը: Մէկ տարւայ ընթացքում կոլտնտեսութիւնների թիւը աւելացաւ 6 անգամ: Այն գիւղացիներին, ովքեր չէին ցանկանում մտնել կոլտնտեսութեան մէջ, խորհրդային օրինակով գնդակահարւում էին: Այդ միջոցառումը անմիջապէս տւեց իր արդիւնքները՝ 1950 թւին բառի բուն իմաստով սկսւեց սով: Այստեղ էր, որ Տիտոն, ժողովուրդը սովից փրկելու համար, տնտեսական շրջադարձ կատարեց: Նա ցրեց կոլտնտեսութիւնները, հռչակելով մասնաւոր սեփականութեան սկզբունքը գիւղում և թողնելով կոլտնտեսութիւններ ստեղծելու ազատութիւնը՝ իրե՛նց, գիւղացիներին, որոնք կամաւոր սկզբունքներով կարող էին միշտ կազմել այդպիսի տնտեսութիւններ: Արդիւնքը այն էր, որ մէկ տարի յետոյ Հարաւսլաւիայի շուկան ի վիճակի չէր սպառելու արտադրւած առատ բերքը և պետութիւնը սկսեց իր գիւղատնտեսական ապրանքների արտահանումը:

Նոյնը կատարուեց Կուբայում: Այդ առատութեան երկրում, կոլտնտեսութիւնները ստեղծելուց յետոյ սկսուեց կատարեալ սով և **քարտային սիստեմ**, որից երկիրը փրկելու համար Խորհրդային Միութիւնը ստիպուած է օրական մէկ միլիոն ռուբլի տալ Կաստրոյի կառավարութեանը:

Բայց չշեղուենք մեր հիմնական նիւթից: Այս հարաւսլաւական օրինակից կարելի է եզրակացնել, որ եթէ Հարաւսլաւիայի աշխատաւորների վիճակը շատ աւելի լաւ է, քան մնացած ընկերվարական կոչուող երկրներինը, ապա դա նրա համար է, որ Հարաւսլաւիան, դաւաճանելով ընկերվարական սկզբունքներին, թոյլատրել է մասնաւոր սեփականութիւն: Բայց այդպէս մտածելը սխալ կը լինէր. աւելի ճիշտ՝ դա կը նշանակէր սահմանափակել ընկերվարական միտքը լենինիզմով և զրկել ընկերվարական գաղափարախօսութիւնը ստեղծագործական զարգացում ապրելու ընդունակութիւնից: Իսկ ընկերվարութիւնը, ինչպէս է՛ւ բոլոր գաղափարախօսութիւնները, ելնելով փորձից ու **կոնկրետ** պայմաններից, զարգացնում ու ճշտում է իր որոշ դրոյթները: Կարելի է, առանց հիմնական սկզբունքներից հրաժարուելու, հրաժարուել որոշ գաղափարներից, որոնք չեն արդարացնում սկզբնական սպասումները: Եւ հէնց դա էլ կոչւում է ստեղծագործական զարգացում: Այդ իմաստով հարաւսլաւական ընկերվարութիւնը այսօր նկատւում է ոչ թէ շեղում ընկերվարութիւնից, այլ ընկերվարութեան մի նոր ձեւ, որը կնքել է «երրորդ ճանապարհ» անունով:

Այսօր Շուեցարիայի համալսարաններում տնտեսագիտութիւն է դասաւանդում Չեխոսլովակիայի Ակադեմիայի նախկին անդամ, Գոտվալդի մրցանակի դափնեկիր Օտա Շիկը: 1968 թւին, չեխոսլովակեան քաղաքական գարուն կոչուող օրերին, Շիկը Չեխոսլովակիայի նախարարների խորհրդի նախագահի տեղակալն էր և Չեխոսլովակիայի Կոմունիստական կուսակցութեան Կենտկոմի անդամ: 1973 թի Օգոստոսի 27ին Շուեցարիայի հեռուստատեսութեամբ նա յայտարարեց, որ ընկերվարական երկրները անխուսափելիօրէն կը յանգեն անհրաժեշտութեանը՝ կատարելու այնպիսի տնտեսական փոփոխութիւններ, որոնք սկսւել էին Չեխոսլովակիայում 1968 թւին մինչեւ Վարշաւեան ուխտի անդամ երկրների զօրքերի ներխուժումը: Ակադեմիկոս Շիկը իր Արեւմտեան Գերմանիայում կարդացած զեկուցումներից մէկում ասեց հետեւեալը.

«Մենք պէտք է լաւ պատկերացնենք, թէ ինչ է իրենից ներկայացնում մեր ժամանակներում արդիւնաւէտ զարգացած հասարակութիւնը: Օրինակ՝ Չեխոսլովակիան արտադրում էր մէկ և կէս միլիոն տարբեր տեսակի արդիւնաբերական ապրանքներ: Բարձր զարգացած արեւմտեան երկրները արտադրում են շատ աւելի մեծ քանակներ: Ապրանքների այդպիսի բազմութեան դէպքում անհնարին է **պլան**աւորել արտադրանքը և սպառումը մէկ կենտրո-

նից, ինչպէս միամտօրէն թւում էր առաջներում: Այս պայմաններում կենտրոնացած **պլան**աւորումը չի կարող յաջողութիւն ունենալ արդէն իսկ նրա համար, որ այսօրւայ ամենակատարեալ հաշուիչ մեքենայի միջոցով կատարւած **պլան**աւորումը պահանջում է աւելի շատ ժամանակ, քան **պլան**ի իրագործումը»:

Եւ իսկապէս, հասարակութիւնը պահանջում է, որ միլիոնաւոր ապրանքներից ամէն մէկը արտադրւի հասարակութեան կարիքների համապատասխան ձեւով, թէ՛ քանակական և թէ որակական իմաստով: Դրա հետ միասին անհրաժեշտ է, որ այդ ապրանքները արտադրւեն ցածր ինքնարժէքով ու ապահովեն ձեռնարկութեան արդիւնաւէտութիւնը: Կենտրոնացած **պլան**աւորումը անկարող է բաւարարել հասարակութեան այս պահանջները, բայց այս խնդիրները լուծւում են **ԻՆՔՆԱԿԱՐԳԱՒՈՐՒՈՂ ՇՈՒԿԱՅԻ**, այդ թւում ե՛ւ **սոցիալիստ**ական շուկայի միջոցով:

Բայց տնտեսական ապակենտրոնացման գաղափարը ընդունում են ո՛չ բոլոր ընկերվարականները: Ֆրանսական ընկերվարականները և անգլիական **լէյբորիստ**ները, օրինակ, գտնում են, որ կենտրոնացած **պլան**աւորման անյաջողութիւնները կապ ունեն միայն տեղական պայմանների և ղեկավարների հետ, որ իրենք այդ խնդիրը կը լուծէին աւելի լաւ: Ուրիշ խօսքով՝ կարելի է ասել, որ ընկերվարականները կենտրոնացման հարցում այսօր բաժանւած են երկու խմբի,- **«ցենտրիստ»**ներ (կենտրոնացած տնտեսութեան կողմնակիցներ) և **«դեցենտրիստ»**ներ (ապակենտրոնացած տնտեսութեան կողմնակիցներ): Օտա Շիկը վճռապէս ապակենտրոնացման կողմնակից է, նա պնդում է, որ միայն ազատ շուկան կարող է թելադրել՝ արտադրել այն և այնքան, ինչը և որքան պահանջում է հասարակարգը: Ամենախելացի և գերմարդկային կենտրոնը ի վիճակի չէ թելադրելու այդ հարցերը: Բայց, ինչպէս խոստովանում է ինքը՝ Շիկը, ապակենտրոնացած տնտեսութիւնը պահանջում է իսկական ժողովրդավարութիւն. Նա գրում է. «**Ազատ զարգացող տնտեսութիւնը, որը հիմնւած է արտադրական միջոցների հասարակական սեփականութեան և մանր տնտեսութիւնների մասնաւոր նախաձեռնութեան վրայ, անկարելի է իրականացնել միակուսակցական հասարակարգում**»:

Այդ իսկ պատճառով Չեխոսլովակիայում մտաւորականութիւնը որոնում էր ժողովրդավարութեան նոր ձեւեր: Այդ հարցում նրանք բաժանւեցին երկու ուղղութեան: Մէկը ուղղակի առաջարկում էր արեւմտեան տիպի բազմակուսակցական ժողովրդավարութիւն, իսկ միւսը, որին պատկանում էր Շիկը, կանգնել էին նոր ճանապարհի վրայ: Այս երկրորդ խումբը կարծում էր, որ քաղաքական կուսակցութիւնների ձեւը հնացել է և նա չի արդարացնում իրեն նաեւ Արեւմուտքում: Նրանք համարում էին, որ բոլոր կուսակցութիւններում

բոլոր հարցերը վերջին հաշուով որոշուում են մէկ խումբ ղեկավարների կողմից, իսկ հիմնական զանգւածը, կուսակցութեան շարքային անդամները փաստօրէն ոչ մի կերպ չեն մասնակցում կուսակցութեան կողմից վարւող քաղաքականութեանը: Այս խումբը առաջարկեց ոչ-կուսակցական, երկու դահլիճներից բաղկացած ժողովրդական կառավարութիւն, որտեղ մէկ դահլիճում կը գտնւէին արտադրող բանւորական ընկերութիւնների ներկայացուցիչները, իսկ միւսում՝ սպառողների և մտաւորականութեան ներկայացուցիչները:

Մի խօսքով՝ «երրորդ ճանապարհ» կոչւող ընկերվարական գաղափարախօսութիւնը չի ժխտում մասնաւոր սեփականութիւնը, արտադրական միջոցները յանձնում է բանւորական խմբերի, իսկ իշխանութեան կամ **դիկտատուրայի** ասպարէզում հիմնւում է բազմակուսակցութեան կամ ա՛յլ ձեւի ժողովրդավարական սկզբունքների վրայ: Այս տիպի ընկերվարութիւնը զգալիօրէն շեղւում է խորհրդային օրինակից, բայց ո՛չ բուն ընկերվարութիւնից, որովհետեւ գործարանների բանւորական խորհուրդների ընտրովի լինելը և եկամուտների արդար բաշխումը վերացնում է շահագործող և շահագործւողների ծնունդը:

Բացակայում են շահագործւողները նաեւ մասնաւոր սեփականութեան ոլորտում, քանզի այնտեղ սեփականատէրերը հիմնականում շահագործում են ոչ թէ մարդկանց, այլ մեքենաներին, բայց այդ մասին մի քիչ աւելի ուշ:

«Երրորդ ճանապարհ» կոչւող գաղափարախօսութեամբ հետաքրքրւեցին ոչ միայն ընկերվարականները: Օրինակ՝ լատին-ամերիկեան Պերու հանրապետութիւնում, որը ամենեւին էլ ընկերվարական չէր, կառավարութիւնը 1973 թւին առաջարկեց դրամական օգնութիւն այն բանւորական խմբերին, որոնք ընկերային սկզբունքների, այսինքն ընկերային սեփականութեան հիման վրայ կը ստեղծեն նոր ձեռնարկութիւններ: Աւելին, արդէն գործող որոշ ձեռնարկութիւններ, **ակցիոներ**ական ընկերութիւնների համաձայնութեամբ, որպէս սեփականութիւն յանձնւեցին այդ ձեռնարկութիւնում աշխատող աշխատաւորներին: Այսպիսի բանւորական խմբային սեփականութեան կողմնակիցներ են նաեւ այնպիսի ոչ ընկերվարական կուսակցութիւններ, ինչպիսիք են Արեւմտեան Գերմանիայի Ազատ Դեմոկրատների կուսակցութիւնը և նոյն երկրի Քրիստոնեայ-Դեմոկրատական Միութիւնը:

Ֆրանսիայում «երրորդ ճանապարհի» կողմնակից է Ռադիկալ-Սոցիալիստական կուսակցութիւնը, որը երկու տարի առաջ հրատարակեց իր ծրագիրը: Այդ ծրագրի հեղինակներից մէկը՝ Ժան-Ժակ Սերվան Շրէյբերը գրում է, որ **«կապիտալիզմ**ը այն կացութաձեւը չէ, որը կարող է ապահովել արդարութիւնը, ազատութիւնը և եղբայրութիւնը: Այդ նպատակների համար աւելի անընդունելի են **սոցիալիստ**ական երկրները, որտեղ զարգանում է պետական **կա-**

պիտալիզմի կացութաձեւ։ Անհրաժեշտ է,- ասում է Սերվան-Շրէյբերը,- երրորդ ճանապարհ, որը կը մարմնաւորի իր մէջ երկու դրութիւնների լաւ կողմերը։ Ընդ որում **կապիտալիզմի** լաւ կողմը նրանք տեսնում են արտադրողականութեան բարձր զարգացման մէջ, իսկ **սոցիալիստ**ական երկրներինը՝ բարոյական չափանիշների մէջ։ Ես կարծում եմ, որ ֆրանսիական **ռադիկալ**-ների այս տեսակէտը բաւականին վիճելի է, բայց չվիճենք, նշենք միայն, որ այսօր արդարութիւն որոնողները մի քիչ ուրիշ աչքով են նայում **կապիտալիստ**ական տնտեսութեանը և **դեմոկրատիա**յին, քան այն ժամանակներում, երբ բացակայում էին իրականացւած ընկերվարական վարչակարգերը։ Այժմ ընկերվարական արդարութիւնը տնտեսագէտները տեսնում են ոչ թէ բանւոր դասակարգի **դիկտատուրա**յի, այլ բանւորական ինքնավարութեան մէջ։ Իսկ դա առաջացնում է մեծ փոփոխութիւններ ընկերվարական գաղափարախօսութեան մէջ, որոնցից հիմնականներն են՝ ոչ պետական, այլ խմբակային սեփականութիւն. ոչ թէ կենտրոնացւած, այլ ապակենտրոնացւած տնտեսութիւն ու **պլան**աւորում. ոչ թէ բռնութիւն, այլ ժողովրդավարութիւն. ոչ թէ կոլտնտեսութիւն, այլ մասնաւոր սեփականութեան վրայ հիմնւած գիւղատնտեսութիւն։

Հասարակական արդարութիւն որոնող ընկերվարականները ստիպւած էին նկատի առնել եւս մէկ նրբութիւն, որը նախատեսւած չէր դասական ընկերվարութեան մէջ։ Այդ նրբութիւնը բանւոր դասակարգի և գիւղացիութեան դերի փոխւիլն է։ Հասարակութեան կողմից արտադրւած բոլոր ապրանքները ստեղծւում են բանւորների և գիւղացիների կողմից,- պնդում են մարքսիստները և այլ ընկերվարականներ ու համայնավարներ,- և ուրեմն համաձայն արդարութեան ու բարոյական իրաւունքի այդ արտադրանքը պատկանում է ստեղծողներին։ Հակառակը, ընկերվարական տեսաբանների կողմից, համարւում է անարդար։ Պատահական չէ, որ **«Ինտերնացիոնալ»**ի մէջ կան հետեւեալ խօսքերը.

Լոկ մենք, ճորտեր ու բանւորներս,
Ունենք անխախտ մի իրաւունք.
Ասել, որ հողը մերն է, մերն է –
Կորչի հարուստը թող տզրուկ։

Գրեթէ նոյն միտքը արտայայտւած է «Մշակ բանւորում». «Ախ, ես տանջւեմ, քրտինք թափեմ…»։ Այս բանւորների առաջնակարգութեան գաղափարը երեւի ճիշտ էր 1840ական թւականներին, երբ բանւորներն ու գիւղացիները կազմում էին հասարակութեան մեծամասնութիւնը և արտադրող ուժը։ Այն ժամանակ արդարացիօրէն հարց է դրւում շահագործող փոքրամասնութեան

իշխանութիւնը փոխարինել մեծամասնութիւն կազմող բանւորագիւղացիական դասակարգի իշխանութեամբ: Բայց ահա անցան տասնամեակներ և հասարակութեան տնտեսական պատկերը արմատապէս փոխուեց:

Այդ փոփոխութիւնը կատարուեց երկու ուղղութեամբ: Եթէ նախկինում հասարակութեան մեծամասնութիւնը արտադրում էր, իսկ փոքրամասնութիւնը սպառում, ապա այսօր լրիւ հակառակն է: Գիտութեան և **տեխնիկայ**ի աներեւակայելի զարգացումը առաջացրեց մի այնպիսի կացութիւն, որ զարգացած երկրներում, օրինակ, գիւղատնտեսութեան ոլորտում աշխատում են աշխատաւորների միայն 7-8 տոկոսը, այսինքն ժողովրդի միայն մէկ տոկոսը: Արդիւնաբերութիւնը կլանում է մի քիչ աւելին: Բայց ո՞վ է կասկածում, որ մեքենայացումը օրէցօր պակասեցնում է արտադրողների և աւելացնում է սպառողների ու սպասարկողների թիւը: Այդ ընթացքը ցոյց տւեց նաեւ երկրորդ փոփոխութիւնը, որը կայանում էր նրանում, որ բանւորը բոլորովին աննշան դեր է կատարում արտադրութեան մէջ: Այսօրւայ արտադրութիւնը, որը ամբողջովին հիմնւած է գիտութեան վրայ, որը պահանջում է գիտնականի, **ինժեներ**ի քրտնաջան աշխատանքը ու մեծ ծախսեր պահանջող գիտելիքները, չի կարող միայն կոճակներ սեղմող բանւորին համարել արտադրանքի տէր ու տիրական և շահագործւող: Այսօր սխալ կը լինէր միայն գիւղացուն ու բանւորին վերագրել հասարակական արտադրանքի առաջնութիւնը՝ արտադրում է ամբողջ հասարակութիւնը՝ մտաւորականներով, արւեստագէտներով ու բժիշկներով հանդերձ: Այդ ընթացքը ցոյց տւեց նաեւ այն, որ չի կարելի քաղաքական իշխանութիւնը յանձնել բանւորներին, որոնք այսօր փոքրամասնութիւն են կազմում և ուրեմն նրանց իշխանութիւնը անարդարութիւն պէտք է նկատւի: Այսօրւայ ընկերվարութիւնը բանւոր-գիւղացիների իշխանութեան փոխարէն խօսում է աշխատաւորների իշխանութեան մասին: Եւ դա ի հարկ է ճիշտ է, քանզի այսօր անհրաժեշտ են համաժողովրդական իշխանութիւններ, որտեղ մասնակցում են հասարակութեան բոլոր խաւերը, անկախ իրենց զբաղմունքներից:

Թւում է, թէ այստեղ մեծ տարբերութիւն չկայ: Ի՞նչ նշանակութիւն ունի բանւոր թէ աշխատաւոր անւանենք նրան, ում յանձնւելու է իշխանութիւնը: Բայց տարբերութիւնը մեծ է. երբ ընկերվարականները խօսում էին շահագործւածների և շահագործողների մասին, ապա նրանք ելնում էին մի հիմնական հարցի պատասխանից, թէ ո՞ւմ ձեռքում են գտնւում արտադրական միջոցները: Եթէ այդ միջոցները գտնւում են **կապիտալիստ**ի ձեռքին, ապա շահագործողը **կապիտալիստ**ն է, եթէ՝ բանւորի, ապա՝ բանւորը: Ընկերվարութեան կողմնակիցները համաձայնում և երազում էին յանձնել արտադրական միջոցները բանւոր դասակարգին, որովհետեւ բանւորների շահագործումը,

որպէս մեծամասնութեան և գլխաւոր տարրի շահագործում, համարում էին անարդար։ Այդ շահագործումը կոչւեց **պրոլետարիատի դիկտատուրա** և կարող էր իսկապէս արդար համարւել, եթէ **պրոլետարիատ**ը լինէր հասարակութեան գլխաւոր և մեծամասնութիւն կազմող մասը։ Բայց այժմ, երբ մենք տեսնում ենք, որ բանւորները ոչ արտադրութեան գլխաւոր օղակն են կազմում և ոչ էլ հասարակութեան մեծամասնութիւնը, կասկած է առաջանում, թէ որքանո՞վ արդար է բանւորներին յանձնել արտադրական միջոցները։

Իսկ եթէ ոեւէ մէկին պէտք է յանձնուեն այդ միջոցները, ապա ու միայն բանւորներին է, որովհետեւ այն մնացած աշխատաւորներին այդ միջոցները ուղղակի պէտք չեն։ Ցիրաւի, ի՞նչ անի վաճառականը, երաժիշտը կամ գիտնականը արտադրական միջոցների հետ։ Կը հրաժարւեն արտադրական միջոցներից նաեւ ուսուցիչները, բժիշկները, լրագրողները, ճաշարանների վարիչները և ընդհանրապէս հասարակութեան մեծ մասը։ Այսպիսով, յանձնել արտադրական միջոցները, այսինքն շահագործելու իշխանութիւնը փոքրամասնութիւն կազմող բանւորներին ու գիւղացիներին անարդար է, իսկ յանձնել մեծամասնութիւն կազմող աշխատաւորներին անմտութիւն է։ Ուրեմն ի՞նչ անել։

Այսօրւայ ընկերվարութեան պատասխանը շատ պարզ է։ Արտադրական միջոցները ամենեւին էլ շահագործելու միջոց չեն և ուրեմն առանց վախենալու, որ կը խեղդուի արդարութիւնը, կարելի է այդ միջոցները յանձնել բանւորներին, որոնք ի վիճակի չեն լինի շահագործելու մնացած աշխատաւորներին, որովհետեւ առանց մնացածների գոյութեան՝ իրենց արտադրութիւնը իմաստազրկւած է։ Արտադրողները չեն կարող արտադրել աւելին, քան սպառողները ի վիճակի են սպառելու։ Արտադրութիւնը պայմանաւորւած է սպառողականութեամբ։ Տեղի է ունենալու ոչ թէ շահագործում, այլ աշխատանքի բաժանում։ Բայց որպէսզի արտադրական միջոցները իսկապէս, այլ ոչ թէ ձեւականօրէն, պատկանեն բանւորներին, անհրաժեշտ է յանձնել այդ միջոցները անմիջականօրէն բանւորական խորհուրդներին և ոչ թէ պետութեանը, որը ձեռնարկութիւնները ղեկավարում է ոչ թէ ընտրովի, այլ նշանակովի պաշտօնեաների ձեռքերով։ Այստեղից էլ ծնունդ առաւ հարաւսլաւական ընկերվարութեան տարատեսակը։

Շատ աւելի հասարակ և դասական ընկերվարութեանը մօտ է կանգնած չինական կամ մաոյիստական ընկերվարութիւնը։ Սկզբնական շրջանում Չինաստանում ընկերվարական հասարակարգը կառուցւում էր խորհրդային ձեւով, այսինքն հիմքում ունենալով մասնաւոր սեփականութեան վերացումը և միակուսակցական իշխանութիւնը։ Սակայն Չինաստանը սկսել էր իր **տնցիոնալիստ**ական կառոյցը գրեթէ **ֆէոդալ**ական կարգերից, թռիչք կատարելով մի ամբողջ **կապիտալիստ**ական կացութաձեւի վրայից։ Նա չունէր ոչ կազմա-

կերպւած բանւոր դասակարգ և ոչ էլ արտադրական ձեռնարկութիւններ։ Այդ պատճառով չինացիները ստիպւած եղան «մեծ թռիչք» նշանաբանով ամէն մի տան բակում կառուցել փոքր վառարաններ և պողպատ ձուլել։ Ի հարկէ, այդ ծրագիրը իրեն չարդարացրեց. և եթէ այնուամենայնիւ Չինաստանը այսօր ապրել է ահագին առաջադիմութիւն, դա կատարւել է միայն ժողովրդի անձնազոհ ու աներեւակայելի աշխատասիրութեան, քրտնաջան աշխատանքի շնորհիւ, որը չին ժողովրդի ազգային յատկանիշներից մէկն է։

Բայց ահա անցան **սոցիալիստ**ական կոչւող երկրների առաջին համաժողովրդական ոգեւորութեան տարիները և **սոցիալիստ**ական աշխարհը մտաւ մի տնտեսական և ընկերային ճգնաժամի մէջ։ Բոլորի համար պարզ դարձաւ, որ մասնաւոր սեփականութեան, այսինքն արտադրական յարաբերութիւնների փոփոխութիւնը ինքնաբերաբար դեռ արդար հասարակարգ չի ստեղծում։ Անհրաժեշտ է երկարատեւ ու մանրակրկիտ աշխատանք։ Առանց բացառութեան, բոլոր ընկերվարութեան տեսաբանները ճգնաժամի պատճառները տեսնում էին նրանում, որ ստալինեան, խրուշչովեան, բրեժնեւեան թէ մաոյական հնացած քաղաքական վերնակառոյցը չի համապատասխանում ընկերվարական արտադրական յարաբերութիւններին։ Եւ ամէն մի իշխանաւոր իր ձեւով փորձեց քաղաքական վերնակառոյցը փոխել։ Այլ բան չէր էլ կարելի սպասել։ Չէ՞ որ արտադրական յարաբերութիւնները, այսինքն մասնաւոր սեփականութեան վերացնելը ընկերվարութեան անձեռնմխելի հիմքն է կազմում։ Եւ, ուրեմն, քաղաքական վերնակառոյցն է, որ պէտք է յարմարւի արտադրական յարաբերութիւններին։

Եւ միայն Մաոն էր, որ յայտարարեց, թէ ճգնաժամի պատճառը ոչ թէ քաղաքական վերնակառոյցն է, այլ իրենք՝ արտադրական յարաբերութիւնները։ Դա նշանակո՞ւմ էր արդեօք, որ Մաոն հրաժարւում է հասարակական սեփականութիւնից և վերադառնում է մասնաւոր սեփականութեանը։ Ի հարկէ՝ ոչ։ Բայց Չինաստանի համայնավարները եկան այն համոզմունքի, որ այնքան ժամանակ, որքան որ արտադրութեան ընթացքը և բանւորի վերաբերմունքը դէպի աշխատանքը կը մնայ այնպէս, ինչպէս որ էր **կապիտալիզմ**ի ժամանակ, տեղի կ'ունենայ աշխատանքի բաժանում և շահագործում։ **Կապիտալիզմ**ից բանւորը ժառանգել է, որ աշխատանքը ապրուստ վաստակելու միջոց է, իսկ ըստ Մաոյի, դա հասարակական մտածելակերպ ունեցող մարդու կենսաբանական ու բնական պահանջ է։

Ուստի մաոյականները համարեցին, որ անհրաժեշտ է փոխել արտադրական յարաբերութիւնները, բայց ոչ սեփականութեան, այլ հոգեբանական իմաստով։ Եւ այդ փոփոխութիւնը կոչւած էր կատարելու այսպէս կոչւած «Մշակութային յեղափոխութիւնը», որը ծաւալւեց Չինաստանում մի քանի

տարի առաջ և որի հետեւանքով գրեթէ նորոգւեց ամբողջ կուսակցութիւնը։ Այստեղ ես հարկ եմ համարում նշել, որ Չինաստանի համայնավարները շատ աւելի մեծ նշանակութիւն են տալիս մարդու մէջ ընկերվարական հոգեբանութիւն դաստիարակելու հարցին, քան տնտեսական առատութեամբ ընկերվարական վարչաձեւի առաւելութիւնները ապացուցելու հարցին։

Չինաստանում, օրինակ, աշխատավարձերի տարբերութիւնը բանւորների ու **ինժեներ**ների, ղեկավարների և շարքային կուսակցականների, զօրավարների և զինւորների միջեւ շատ աւելի քիչ է, քան որեւէ ուրիշ ընկերվարական կամ ոչ-ընկերվարական երկրում։ Ընդհանրապէս եթէ ապրելակերպի հաւասարութիւնը ընդունենք ընկերվարութեան գնահատականի չափանիշ, ապա այդ չափանիշով Չինաստանը պէտք է համարւի առաջնակարգ ընկերվարական պետութիւն։ Չինական տեսակէտը ընկերվարական հոգեբանութիւն դաստիարակելու հարցում նմանւում է **ուտոպիստ** ընկերվարականներին և նոյնիսկ առաջին քրիստոնեաներին, որոնք արդար հասարակարգի միակ ճանապարհը տեսնում էին արդար անձնաւորութիւններ ստեղծելու մէջ և անհնարին էին համարում անարդար մարդկանցից արդար հասարակարգի կառոյցը։ Այսպիսով չինական ընկերվարութեան առանձնայատկութիւնը կայանում է նրանում, որ նա, պահպանելով ստալինեան խիստ քաղաքական վերնակառոյցը, փորձում է յարմարեցնել արտադրական յարաբերութիւնները այդ վերնակառոյցին, այսինքն ոչ թէ փորձ է կատարւում բաւարարել մարդու աճող պահանջները, այլ մարդուն դարձնել այնպիսին, որ այդ պահանջները դառնան հակաբնական։ Կը յաջողի՞ դա արդեօք չինացիներին՝ չգիտեմ, բայց եթէ յաջողի, ապա ինձ համար ընկերվարութիւնը կը դառնայ մարդկութեան կողմից որեւէ ժամանակ ստեղծւած գաղափարախօսութիւններից ու դաւանանքներից ամենափայլունը։ Այդ մասին ես դեռ կը խօսեմ իմ յօդւածի վերջում։

Ինչ մնում է խորհրդային ընկերվարութեան նմուշ – օրինակին, ապա կարծում եմ, որ հայ ընթերցողը բաւականին ծանօթ է այդ ընկերվարութեան սկզբունքների հետ և մանրամասնութիւնների կարիքը չի զգում։ Ուզում եմ միայն մէջբերել լեհ փիլիսոփայ Լեշակ Կոլակովսկիի հետեւեալ միտքը։ 20 տարի առաջ նա գրում էր. **«Ես ուզում եմ ձեզ բացատրել, թէ ինչ բան է ընկերվարութիւնը։ Բայց նախ և առաջ ես ձեզ պէտք է ասեմ, որ ընկերվարութիւնը անկարելի է. ուստի ես ուզում ես ասել, թէ ինչը ընկերվարութիւն չէ։**

- Հասարակարգը, որտեղ ամէն մի քաղաքացի առանց որեւէ յանցանքի մշտապէս ապրում է բանտարկութեան վախի մէջ։

- Հասարակարգը, որտեղ քաղաքական բանտարկեալի եղբայր, քոյր, կին կամ որդի լինելը յանցանք է համարւում։

- Հասարակարգը, որտեղ նա, ով ասում է այն, ինչ մտածում է՝ դժբախտ է, իսկ նա, ով չի ասում այն, ինչ մտածում է, երջանիկ է:

- Հասարակարգը, որտեղ ամենաերջանիկը նա է, ով ընդհանրապէս չի մտածում:

- Հասարակարգը, որտեղ հրեային վատ է, միայն նրա համար, որ նա հրեայ է, իսկ միւսին լաւ է միայն նրա համար, որ նա հրեայ չէ:

- Պետութիւնը, որի զօրքերը առաջինն են մտնում մէկ ուրիշ պետութեան տարածութեան մէջ, պետութիւնը, որտեղ առանց դատի մարդուն կարող են բանտարկել:

Եւ եթէ այս ամէնը ընկերվարութիւն չէ, ապա ընկերվարութիւնը լաւ բան է»:

Աւելացնելու ոչինչ չունեմ, բացի նրանից, որ այս բառերը արտասանելուց 20 տարի յետոյ չեն փոխուել, բացի նրանից, որ այժմ սեփական կարծիքները արտայայտելու համար, որոշ ընկերվարական կոչտող երկրներում մարդկանց հոգեբուժարաններ են գցում, իսկ ամբողջ մարդկութեան պարծանք Սոլժենիցինին բռնի ուժով արտաքսում են սեփական երկրից, ոչ, այդպիսի երկիրը ընկերվարական կոչելու իրաւունք չունի, քանզի ընկերվարութիւնը, ինչպէս մենք տեսանք, առաջին հերթին արդարութիւն ու ազատութիւն է:

Սակայն, հնարաւո՞ր են ընկերվարական այլ ձեւեր: Ֆրանսիայի Կոմունիստական կուսակցութեան Քաղբիւրոյի նախկին անդամ, փիլիսոփայութեան դոկտոր Ռոժէ Գարօդին համարում է, որ Խորհրդ. Միութիւնից տարբերւող այլ ընկերվարական ձեւեր ոչ միայն հնարաւոր են, այլեւ նոյնիսկ անհրաժեշտ են: Իր «ընկերվարութեան կտրուկ շրջադարձը» գրքում նա փորձում է ապացուցել, որ ընկերվարական համակարգերի հիմնական խնդիրը արտադրութեան գիտական կազմակերպման և աշխատաւորի անձնական ինքնավարութեան միջեւ գոյութիւն ունեցող հակասութիւնների յաղթահարումն է: Նա համարում է, որ այդ հակասութիւնները անհնարին է յաղթահարել **կապիտալիստ**ական հասարակարգում, որովհետեւ այնքան ժամանակ, որքան որ արտադրական միջոցները գտնւում են մասնաւոր սեփականատէրերի ձեռքում, գոյութիւն կ'ունենայ արտադրութիւնը արտադրութեան համար ծաւալելու հարցը: Բայց, ինչպէս ասում է Գարօդին, Խորհրդային Միութեան օրինակը ցոյց տւեց, որ մասնաւոր սեփականութեան վերացումը անհրաժեշտ, բայց ոչ բաւարար պայման է վերը նշւած հակասութիւնները վերացնելու համար: Մասնաւոր սեփականութիւնը կարելի է վերացնել, բայց կարեւորը նա է, թէ ինչով փոխարինել այն:

Խորհրդային Միութիւնում արտադրական միջոցների հասարակական սեփականութիւնը նոյնացւում է պետական սեփականութեան հետ և Գարօդին համարում է դա անթոյլատրելի, քանզի պետութիւնը հասարակութիւն չէ: Պե-

տութիւնը մի քանի տասնեակ անձերից բաղկացած խումբ է, որը, դառնալով արտադրական միջոցների տէրն ու տիրականը, ձեռք է բերում իշխանութիւն պետական սեփականութեան, քաղաքական որոշումների և նոր ստեղծուղ յատելեալ արժէքների վրայ: Այս ղեկավար խումբը երկու պատճառով չի կարելի անուանել դասակարգ: Առաջին՝ արտադրական միջոցները նրա օրինականացած սեփականութիւնը չեն, նա միայն իշխում է այդ միջոցների վրայ: Երկրորդ՝ նրա իշխելու իրաւունքը ժառանգական չէ: Այնուամենայնիւ այն հասարակարգը, որտեղ հասարակական սեփականութիւնը նոյնացուած է պետական սեփականութեան հետ, աւելի ճիշտ կը լինի անուանել պետական **կապիտալիզմ**, քան ընկերվարութիւն:

Եւ Գարօդին համարում է, որ բոլոր նոր տեսակի ընկերվարութիւնները կարող են ստեղծել հասարակական սեփականութեան նոր ձեւերի հիման վրայ: Ինչ մնում է պետութեանը, ապա նրա պարտականութիւնն է՝ վերացնել մասնաւոր սեփականութիւնը և ստեղծել այնպիսի օրէնքներ, որոնք բացառեն մասնաւոր սեփականութեան վերականգնումը: Ըստ Գարօդիի, այդպիսի հասարակարգում արտադրութիւնը կը հիմնւի ոչ թէ շահի, այլ հասարակութեան պահանջների վրայ: Բայց, ի տարբերութիւն խորհրդային օրինակի, այդ պահանջները կ'որոշուեն ոչ թէ վերեւից, պետական հրահանգներով, այլ ազատ շուկայի միջոցով: Այստեղ Գարօդին մօտենում է հարաւսլաւական օրինակին, որի մասին մենք արդէն խօսել ենք: Այստեղ հարկ է նշել, որ իր այդ տեսակէտների համար 1970 թւականի փետրուար ամսին Ռոժէ Գարօդին վտարուեց Քաղբիւրոյից, իսկ մայիս ամսին Ֆրանսիական Կոմունիստական կուսակցութեան շարքերից:

Այժմ տեսնենք, թէ ինչ է իրենից ներկայացնում, այսպէս կոչւած, զուտ տնտեսական ընկերվարութիւնը, այսինքն այն ընկերվարութիւնը, որը չի ծաւալւում հասարակութեան ամբողջ գործունէութեան վրայ, այլ սահմանափակւում է միայն տնտեսական բնագաւառով, կիրառելով այդ բնագաւառում ընկերվարական սկզբունքներ: Վերլուծելով ժամանակակից ընկերվարական համակարգերի տեսութիւնները, ամերիկացի տնտեսագէտ պրոֆեսոր Պիտեր Իայլսը իր «Կոմունիզմի քաղաքական տնտեսութիւնը» աշխատութեան մէջ առաջարկել է ընկերվարութեան 7 նմուշ օրինակներ կամ տիպարներ: Պէտք է ասել, որ Իայլսը շատ պարզ և ընդունւած ձեւով է սահմանում ընկերվարութիւնը ու դրամատիրութիւնը՝ հասարակական և մասնաւոր սեփականութիւն,- ասում է նա: Նրա կարծիքով այս սահմանումները ոչ մէկ բացատրութեան կամ արդարացման կարիք չեն զգում, սրանք միակ տրամաբանական սահմանումներն են: Բայց Իայլսը խոստովանում է, որ իր ընկերվարական նմուշ օրինակները կառուցւած չեն սեփականութիւնների տարբերութեան հի-

ման վրայ, այլ կառուցած են հազուագիւտ՝ **դեֆիցիտ** նիւթերի ու միջոցների բաշխման հիման վրայ: Նրա կողմից առաջարկուած ընկերվարական տիպարները հետեւեալներն են.

ԱՌԱՋԻՆ ՏԻՊԱՐ.- Առանց դրամի կատարեալ կենտրոնացուած ապրանքների բաշխում: Բանւորական ուժը անմիջականօրէն մտնում է տնտեսութեան խողովակները, իսկ վարձատրութիւնը, որը ոչ մի կապ չունի բանւորի «ջանքերի» հետ, նախօրօք պատրաստած փաթեթներով, տրւում է ժողովրդին: Ըստ Իայլսի, ընկերվարութեան այս տարբերակը ռազմական կոմունիզմն է, որին ձգտում էր Խորհրդային Միութեան Կոմունիստական կուսակցութիւնը և որի հեղինակն էր Լարինը:

ԵՐԿՐՈՐԴ ՏԻՊԱՐ.- Նոյնը, ինչ որ առաջին տիպարն էր, բայց դրամի առկայութեամբ: Ընկերվարութեան այս տարբերակում դրամը լոկ բաշխելու միջոց է, նշաններ, որոնք ոչ մի կապ չունեն բաշխման ընթացքի հետ: ՈՒայլսը ասում է, որ այս երկրորդ տարբերակը մտցւում է ցոյց տալու համար միայն, որ դրամը կարող է լինել **պասիւ** նշան, իսկ գները այնքան վերացական, որքան որ կարող է յօրինել մարդկային երեւակայութիւնը: Այս ոչ մի նշանակութիւն չունեցող գները և դրամները հեղինակը համեմատում է խորհրդային գների և դրամների հետ, որոնք իսկապէս որոշ իմաստով բաւականի երեւակայական են և ոչ մէկ արժէք չունեն միջազգային շուկայում:

ԵՐՐՈՐԴ ՏԻՊԱՐ.- Այս նմուշ օրինակը հեղինակը անւանել է «կենտրոնացուած շուկայի տնտեսութիւն»: Այստեղ **պլան**աւորող կազմակերպութիւնները բաշխում են միայն միջանկեալ միջոցները, իսկ հողը և **կապիտալ** ներդրումները բաշխում են բանւորների և հասարակական կազմակերպութիւնների միջոցով ազատ շուկայի օրէնքներով: Այս հարցում կենտրոնական իշխանութիւնը միայն օրինականացնում է այն, ինչը որոշւած է սպառողների կողմից: Ուրիշ խօսքով, ընկերվարութեան այս տարբերակը իրենից ներկայացնում է մի մեծ տնտեսական ընկերութիւն, որը իր միջոցները սպառում է ազատ շուկայի օրէնքներով, բայց շուկայի գործօններին պատասխանում է կենտրոնացած ղեկավարութեամբ: Այս տեսակ ընկերվարութիւնը հեղինակը ընդօրինակել է Բեկվիտից և Լանդից, բայց, ինչպէս պնդում է հեղինակը, ոչ առաջինը և ոչ էլ երկրորդը չեն առաջարկել այս տարբերակը մաքուր ձեւով:

ՉՈՐՐՈՐԴ ՏԻՊԱՐ.- Ռազմական համայնավարութիւն, որտեղ խիստ կենտրոնացուած իշխանութիւնը կատարում է ամէն ինչ՝ արտադրում, բաշխում և որոշում պահանջները:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԻՊԱՐ.- **Կապիտալիստ**ական ռազմական տնտեսութիւն: Այստեղ Իայլսը դիմում է **կապիտալիստ**ական տնտեսութեան այն հատւածին, որը ունի ընկերվարական կողմեր այն իմաստով, որ ռազմական արտադրու-

թիւնը ոչ մի կերպ չի կապւում արտադրողի շահերի հետ, այլ լրիւ կապւած է քաղաքական պահանջների հետ և, ուրեմն, այդ արտադրութիւնը գտնւում է ոչ թէ շուկայի, այլ պետութեան կենտրոնացած հսկողութեան տակ։

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԻՊԱՐ.- Լրիւ ապակենտրոնացում և ազատ շուկայ։ Այստեղ մրցակցութիւնը ի յայտ է գալիս բացայայտ ձեւով։ Հողը, արտադրական և այլ միջոցները գտնւում են տարբեր հասարակական կազմակերպութիւնների ձեռքում։ Գների առաջացումը նոյնպէս ապակենտրոնացւած է։ Շուկան ինքնակարգաւորւող է։

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԻՊԱՐ.- Կարգաւորւող կամ ղեկավարւող շուկայ։ Այսինքն ի տարբերութիւն վեցերորդ օրինակի, շուկան ինքնակարգաւորւող չէ։ Հասարակութիւնը հսկում և սահմանափակում է շուկայի ազատութիւնը։

Այս եօթը նմուշները Իայլսը համարում է տնտեսական ընկերվարութեան «մաքուր» օրինակներ։ Բայց, ըստ նրան, հնարաւոր են բազմաթիւ խառը օրինակներ։ Օրինակ՝ Խորհրդային Միութիւնը, ըստ հեղինակի, 4րդ և 3րդ օրինակների խառնուրդն է։ Այս զուտ տնտեսական ընկերվարութիւնների հիմքում դրւած է արտադրող անձի վերաբերմունքը դէպի ամբողջ արտադրութիւնը։

Ամերիկացի տնտեսագէտ պրոֆ. Գրոսմանը կարծում է, որ ընկերվարական տնտեսութիւնը առաջին հերթին պահանջում է այսպէս կոչւած **«միկրոպլան**աւորում», այսինքն արտադրող միաւորների այն նւազագոյն ներդաշնակութիւնը և համաձայնւածութիւնը, որը ապահովում է արտադրանքի և պահանջի հաւասարութիւնը։ Այս հաւասարակշռութեանը, ըստ Գրոսմանի, կարելի է հասնել երեք միջոցով՝ շուկայի, վերեւից եկող կարգադրութիւնների և աւանդոյթների միջոցով։ Նրանով, թէ որն է այս միջոցներից օգտագործւում տւեալ հասարակարգում, որոշւում է հասարակարգի տեսակը՝ շուկայական տնտեսութիւն, ղեկավարւող տնտեսութիւն և աւանդական տնտեսութիւն։ Այս վերջին տեսակը, այսինքն աւանդական տնտեսութիւնը օգտագործւում էր միջնադարեան ժամանակաշրջանում և այսօր՝ ոչ-զարգացած երկրներում։ Իսկ զարգացած արդիւնաբերական երկրներում բարձր մեքենայացւած արտադրութիւնը դեռ շատ երիտասարդ է, աւանդականութիւն ստեղծելու համար, ուստի այդ երկրների նկատմամբ Գրոսմանը ընդունում է միայն երկու, մէկը միւսին հակասող տնտեսվարութիւններ՝ շուկայական և ղեկավարւող։

Սակայն Գրոսմանը գտնում է, որ այս երկու տեսակի տնտեսութիւնները կարող են գործել է՛ւ մասնաւոր, է՛ւ հասարակական սեփականութեան դէպքում։ Իսկ մարքսիզմի տեսաբանները համարում են, որ ղեկավարւող տնտեսութիւնը հնարաւոր է միայն ընկերվարական, այսինքն մասնաւոր սեփականութիւնից զուրկ հասարակարգում։ Այսպիսով եթէ դասական ընկերվարու-

թիւնը սեփականութեան ձեւերի հետ կապում էր նաեւ ղեկավարման ձեւերը, ապա ժամանակակից ընկերվար տնտեսագէտները ղեկավարութիւնը համարում են անկախ՝ սեփականութեան ձեւերից: Որոշ իմաստով փորձ է կատարում մի քիչ մեղմացնել **կապիտալիզմ** և **սոցիալիզմ** կոչւող հասարակարգերի տարբերութիւնը: Այս նոյն տեսակէտը արտայայտում է պրոֆ. Ռոստոուն իր «Տնտեսական զարգացման փուլերը» աշխատութեան մէջ, որտեղ հեղինակը փորձում է ցոյց տալ, թէ ինչպէս **կապիտալիզմը** կամաց-կամաց դառնում է «ժողովրդական **կապիտալիզմ**», «համընդհանուր բարօրութեան պետութիւն», որը փաստօրէն ոչնչով չի տարբերւում ընկերվարութիւնից:

Բոլոր այս միտումների հիմքում ընկած է փիլիսոփայութեան այն ուղղութիւնը, որը կոչւում է **պոզիտիվիզմ** և որի հիմնադիրն է ֆրանսացի խոշորագոյն փիլիսոփայ Օգիւստ Կոնտը: Ինչպէս յայտնի է, **պոզիտիվիստ**ները մեծ նշանակութիւն են տալիս մարդու ընկալումներին, համարելով ճշմարտութիւնը ոչ թէ բացարձակ, այլ մեր զգացմունքների ու տրամաբանութեան շնորհիւ ստեղծած մի երեւոյթ: Ֆրանսիական տնտեսաբան Ֆրանսուա Սիմիադը առաջինն էր, որ 1912 թւին փորձեց **պոզիտիվիզմը** օգտագործել տնտեսագիտութեան մէջ: Սիմիադի կարծիքով տնտեսագիտութեան հիմքում պէտք է լինի միայն փաստ կամ փաստեր, որոնք չպէտք է մշակւեն, այլ միայն պէտք է հաւաքուեն և դիտուեն: Նոյն կարծիքին է Շումպետերը, որը գտնում է, որ բոլոր հասարակական երեւոյթները մարդու վարքագծի արդիւնքն են և ուրեմն առաջին հերթին անհրաժեշտ է ուսումնասիրել մարդու հոգեբանութիւնը: Ամերիկացի տնտեսագէտ պրոֆ. Ջոն Մորիս Կլարկը գրում է, որ «տնտեսագէտի համար ժողովրդի ցանկութիւնները միայն փաստեր են, շուկայում արտայայտւած փաստերը՝ տնտեսական փաստեր և իր խնդիրը, որպէս գիտնականի, այդ փաստերի ուսումնասիրութիւնն է, այլ ոչ նրանց դատապարտումը կամ հաւանութիւն տալը»: Այս դատողութիւններում մենք տեսնում ենք չինական ընկերվարութեան որոշ կողմեր, այսինքն ուշադրութեան կենտրոնացում՝ մարդու էութեան վրայ:

Ելնելով մարդու էութիւնից, ժամանակակից տնտեսագէտները բոլոր հասարակութիւնների տնտեսութիւնների համար ձեւակերպում են երեք հիմնական խնդիր,- ի՞նչ արտադրել, ի՞նչպէս արտադրել և ո՞ւմ համար արտադրել: Սամուէլսոնը, որ արեւմտեան տնտեսագէտների մէջ վայելում է մեծ հեղինակութիւն, հետեւելով Շումպետերին, տնտեսական զարգացման կենտրոնում դնում է մի վերացական «տնտեսական անձի», որը է՛ւ որոշում է ի՞նչ, ի՞նչպէս և ո՞ւմ համար արտադրել: Այս անձի ցանկութիւնների ու բնական պահանջների վրայ կառուցւում է այսպէս կոչւած «ծայրայեղ օգտակարութիւն» տեսու-

թիւնը, որտեղ ապրանքի գինը որոշւում է օգտակարութեամբ և ոչ աշխատանքով:

Ժամանակակից ընկերվարութիւնը որոշ տեսանկիւնից վերանայեց **կապիտալիզմ**ին ներկայացւող գլխաւոր մեղադրանքը, որը մէկ դար առաջ ձեւակերպւել էր այսպէս. **կապիտալիզմ**ը մեքենաների ու անասունների նման շահագործում է մարդկանց, արտադրութեան մէջ: Ճի՞շտ է արդեօք այս մեղադրանքը: Այո, ճիշտ է: Միայն թէ **«Էկսպլոատացիա»** բառը ճիշտ թարգմանելու դէպքում կը լինի այն, որ **կապիտալիզմ**ը արտադրութեան մէջ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ է և՛ մեքենաները, և՛ մարդկանց: Եւ չի էլ կարող չօգտագործել, որովհետեւ առանց աշխատանքի բանւորը բանւոր չէ, իսկ մեքենան՝ երկաթի կտոր: Եւ ուրեմն շահագործումը (օգտագործումը) որպէս բացասական երեւոյթ այլ իմաստ ունի: Ինչպէս բացատրում է, օրինակ, Խորհրդային Հանրագիտարանը, շահագործումը անմիջական արտադրողների յաւելեալ աշխատանքի իւրացումն է արտադրական միջոցների սեփականատէր դասակարգի կողմից, այսինքն դրամատէրի կողմից: Ընդունենք այս ձեւակերպումը որպէս շահագործման սահմանում և հարց տանք՝ ճի՞շտ է արդեօք **կապիտալիզմ**ին ներկայացւած մեր մեղադրանքը:

Ժամանակակից ընկերվարութիւնը պատասխանում է, որ ոչ, շահագործումը պէտք է որոնել ոչ թէ յաւելեալ աշխատանքի բնագաւառում, այլ ուրիշ տեղ: Բոլոր երկրների արտադրութեան համար բնորոշ է հիմնական և յաւելեալ արտադրանքի մօտաւորապէս հետեւեալ յարաբերակցութիւնը: Մէկ երրորդը՝ աշխատաւորների աշխատավարձն է. մէկ երրորդը՝ հումքի և մեքենաների վերանորոգման ծախսերը. մէկ երրորդը՝ շահոյթը: Այս երեք բաղկացուցիչ մասերի գումարը կազմում է ընդհանուր արտադրանքը: Այսպիսով մենք կը համաբէինք, որ շահագործումը բացակայում է, եթէ այդ յաւելեալ ապրանքները հաւասարաչափ բաշխւէին բանւորների միջեւ, որպէս հիմնական արտադրողների: Ամէն ինչ թւում էր տրամաբանական կէս դար առաջ՝ ոչնչացնել **կապիտալիստ**ին և խլել նրանից յաւելեալ ապրանքները, քանզի մի խումբ անամօթ **կապիտալիստ**ներ իրացնում են ճիշտ այնքան, որքան որ ստանում է ամբողջ բանւոր դասակարգը՝ արտադրանքի մէկ երրորդը: Բայց այսօր հասարակական արտադրութիւն որոնողները մի քիչ աւելի մանրակրկիտօրէն են ուսումնասիրում, թէ ո՞ւր է իրականում գնում այդ յաւելեալ կոչւող ապրանքը:

Աշխարհի բոլոր երկրներում, և՛ **սոցիալիստ**ական, և՛ **կապիտալիստ**ական, շահոյթի կէսը տուրքի ձեւով վճարւում է պետութեանը, մնացորդի մեծ մասը ծախսւում է արտադրութիւնը ծաւալելու համար և միայն շահոյթի 10-15 տոկոսը մնում է դրամատիրոջը և դա ի հարկէ քիչ չէ: Գուցէ այդ 10-15 տոկոսը պէտք է համարել յաւելեալ ապրանք և դրա ոչնչացումը համարել շահագործ-

ման ոչնչացում: Ոչ ոք չի խանգարում դրամատիրոջը այդ 10-15 տոկոսը ծախսել սեփական քմահաճոյքները բաւարարելու համար՝ օրինակ, լողանալ կաթի մէջ: Բայց բոլորին յայտնի է, որ սովորական **կապիտալիստ**ին բնորոշ է կծծիութիւնը: Նրանց կեանքի հիմնական նպատակը այդ 10-15 տոկոսի կուտակման և նոր գործ բացելու մէջն է: Այսինքն նոր ձեռնարկութիւն, հասարակական նոր պահանջներին բաւարարող ձեռնարկութիւն: Ի հարկէ դրամատէրը դա անում է ոչ թէ բարեգործական նկատառումներով. բայց անուղղակիօրէն նրա ագահութիւնից օգտւում է հասարակութիւնը: Ուրեմն ո՞րտեղ է շահագործումը:

Այնուամենայնիւ, կ'ասեն շահագործման կողմնակիցները,- միլիոնատէրերի կեանքը չի կարելի համեմատել բանւորի կեանքի հետ: Նրանց հագուստները, ամառանոցները, **աւտոմեքենա**ները ու տները անհամեմատ աւելի շքեղ են, քան բանւորինը և գուցէ այդ ապրելակերպի տարբերութիւնը կարելի է համարել շահագործում: Գուցէ և կարելի է, բայց առաջինը արդէն կազմում է յաւելեալ արժէքի կէս տոկոսը, իսկ երկրորդը, վերացնելով այդ տարբերութիւնը, ի՞նչ կարելի է առաջարկել փոխարէնը: Փարիզեան **կոմմունա**յի սկզբունքնե՞րը կամ Լենինի առաջարկը՝ բոլոր ղեկավարներին վճարել բանւորների չա՞փ: Բայց դա կը լինի հաւասարաչափ վճարում, այլ ոչ թէ ընկերվարութիւն, որը հռչակել է «ըստ աշխատանքի» սկզբունքը: Եւ ի՞նչպէս որոշել տւեալ աշխատաւորի աշխատանքի քանակը: Օրինակ՝ բեռնակիր բանւորը 100 անգամ աւելի պակաս բեռ է բառնում, քան բեռնակիր մեքենան, բայց բեռնակիր մեքենայի վարորդի աշխատավարձը գրեթէ հաւասար է բեռնակիր բանւորի աշխատավարձի հետ: Ինչո՞ւ: Եթէ համեմատենք ֆիզիկական աշխատանքի դժւարութիւնը, ապա բանւորի աշխատանքը շատ աւելի ծանր է, քան վարորդինը: Իսկ եթէ ելնենք աշխատանքի արդիւնքից, ապա մեքենավարինը շատ աւելի շատ է: Իսկ այն, ինչ նրանց վճարում են, ոչ մի տեսակ արդարութեան չափանիշների չի համապատասխանում: Այս հարցերը կանգնած են այսօրւայ ընկերվարների առջեւ: Ի՞նչպէս և ո՞ւմ են վերջին հաշւով շահագործում միլիոնատէր ու միլիարդատէր **կապիտալիստ**ները:

Մարդկութեան պատմութեան մէկ միլիոն տարւայ միայն 6 հազար տարին է ընկնում քաղաքակրթութեան վրայ: Եւ այդ 6 հազար տարւայ ընթացքում մարդը «շահագործում» էր գործիքները ու մեքենաները: Մարդը անջատւեց բնութիւնից, շնորհիւ իր գիտելիքների և գործիքների: Օգտագործելով քարը, փայտը, կրակը, կենդանիների ուժը ու հողի բերքատւութիւնը, նա կարողացաւ ապահովել իր գոյութիւնը հազարամեակների ընթացքում: Բայց միայն այն ժամանակ, երբ իր գիտելիքների շնորհիւ մարդը կարողացաւ արտադրել իր պահանջներից աւելին, միայն այն ժամանակ ստեղծւեց ժամանակակից հա-

սարակարգը, յանձինս ստրկատիրական հասարակարգին։ Անցան հարիւրամեակներ և մարդու արտադրողականութիւնը բարձրացաւ 50 անգամ։ Ինչի՞ հաշւին։ Մարդը իր կենսաբանական էութեամբ գրեթէ չի փոխուել և ուրեմն նրա արտադրողականութիւնը բարձրացել է անցեալ փորձի և մեքենաների շահագործման շնորհիւ։ Մեր այսօրւայ աշխատանքի 49/50րդը մեր արժանիքը չէ, դա մեր նախնիների, բնութեան և մեքենաների արժանիքն է։ Միայն 1/50րդն է մարդու շահագործման արդիւնքը։ Եւ ուրեմն, որպէսզի ամէն ինչ բաշխւի արդարացիօրէն, մարդը միայն իր աշխատանքի 1/50րդը պէտք է ստանայ, իսկ նա ստանում է 1/3րդը։ Ուրեմն որտե՞ղ է շահագործումը։

Շահագործում, այնուամենայնիւ կայ։ Այդ շահագործումը մեքենաների շահագործման ոլորտում է։ Այսօրւայ գիտնականները, **ինժեներ**ները և գործարանների կառուցողները համարւում են ոչ հիմնական, այլ սպասարկող անձնակազմ, իսկ կոճակներ սեղմող և մեքենաների աշխատանքները դիտող բանւորը համարւում է հիմնական և անմիջական արտադրող, այսինքն նա, ով բոլորին կերակրում է։ Բայց այս անմտութեանը կարելի է հակադրել մի պարզ միտք՝ բոլորիս՝ ե՛ւ բանւորին, ե՛ւ **ինժիներ**ին կերակրում է ինքը մեքենան։ Եւ այս գաղափարը նոր չէ։ Դեռ Մարքսից էլ առաջ այս մասին վիճում էին տնտեսագէտները։ Ոմանք համարում էին, որ շահոյթը անմիջականօրէն կախւած է արտադրութեան վրայ ծախսւած դրամից, որը ծախսւում է երկու ուղղութեամբ՝ մեքենաների և բանւորների։ Իսկ սրանց հակառակորդները, այդ թւում ե՛ւ Մարքսը, համարում էին, որ շահոյթը առաջանում է միայն բանւորների վրայ ծախսւած գումարից։

Պարզ է, թէ ինչումն էր վէճի էութիւնը։ Առաջին դէպքում դրամատէրը իրաւունք ունէր իրեն վերցնել դրամից առաջացած շահոյթը, իսկ երկրորդ դէպքում շահոյթը պատկանում էր բանւորին, քանզի նա էր ստեղծել այդ յաւելեալ ապրանքը։ Բայց քանի զարգանում էր արտադրութիւնը, այնքան պակասում էր մարդու դերը արտադրութեան մէջ և աւելանում մեքենաների դերը։ Նոյնիսկ եղան գուշակումներ, որ 2000 թւականին մարդը ընդհանրապէս չի մասնակցի անմիջական արտադրութեան, որ այդ ժամանակ բոլոր գործարանները կը լինեն **աւտոմատացւած**։ Եթէ այդպէս լինի, իսկ շատ հաւանական է, որ այդպէս էլ լինի, որտեղի՞ց կ՚առաջանայ յաւելեալ արժէքը։ Այդ յաւելեալ արժէքը կը ստեղծեն մեքենաները, այսինքն կը շահագործւեն ոչ թէ բանւորները, այլ մեքենաները։ Այստեղից պարզ է դառնում, որ յաւելեալ արտադրանքը, այսինքն տնտեսական իշխանութիւնը պատկանում է նրան, ում պատկանում են մեքենաները։

Ո՞ւմ տալ այդ հրաշք մեքենաները։ Յանձնել նրանք պետութեանը՝ չի կարելի, որովհետեւ պետութիւնը կարող է մեքենաներից ստացած յաւելեալ ար-

տաղրանքը օգտագործել իր պետական շահերի համար, օրինակ, պատերազմ վարելու կամ շքեղ մայրաքաղաքներ կառուցելու համար։ Եթէ դրամատիրոջը մենք մեղադրում էինք կաթով լւացւելու մէջ, ապա պետական գործիչները, իրենց փառքի համար, կարող են հնդկական բուրգեր կառուցել և պէտք է ասել, որ կառուցում են։ Ընդհանրապէս մեքենաների յաւելեալ արտադրանքը պէտք է համարւի ամբողջ արտադրանքը, բացի այն չնչին մասից, որ ծախսւում է մեքենաների վերանորոգման վրայ։ Եւ այդ ամբողջ արտադրանքը պետականացւած մեքենաների հասարակարգում անցնում է պետութեան ձեռքը, որի արդարութիւնից է կախւած այդ ապրանքների արդար բաշխումը։ Կասկածից վեր է, որ այս կացութիւնը անհանդուրժելի է, դա շատ աւելի անարդար է, քան **կապիտալիստ**ական համակարգը, որտեղ ազատ շուկան կատարում է կարգաւորիչի դեր։

Բայց մենք գիտենք **կապիտալիզմ**ի թերութիւնները և ուզում ենք հրաժարւել նրանից՝ հաստատելով ընկերվարական հասարակարգ, ի՞նչ անել։ Ելքը միակն է, այն պետութիւնը, որին յանձնւում են արտադրող մեքենաները, դարձնել բառիս բուն իմաստով ժողովրդավարական։ Այսինքն տալ ժողովրդին իրաւունք որեւէ ժամանակ փոխել պետական իշխանաւորներին, եթէ նրանք, ինչպէս արդէն ասացի, վարեն անիմաստ պատերազմներ, կառուցեն բուրգեր և անարդարացիօրէն բաժանեն մեքենաներից ստացւած ապրանքները։ Այդպիսի կառավարութեանը կարելի է յանձնել մեքենաները։ Բայց զարմանալի բան՝ աշխարհում կան բազմաթիւ վարչակարգեր ու վարչաձեւեր, տնտեսական համակարգեր ու համայնքներ, միայն մէկ բան չկայ՝ ժողովրդավարական դէմքով ընկերվարութիւն։ Եւ հակառակը՝ ամենայետամնաց **կապիտալիստ**ական երկրում կարելի է գտնել ժողովրդավարական սկզբունքներ, գոնէ ընտրութիւնների կամ արհմիութիւնների ազատութեան հարցում։ Ուրեմն, քանի դեռ միակուսակցական են ընկերվարական պետութիւնները, այդ երկրների արտադրական միջոցների պետականացումը անարդար ու ընկերվարական սկզբունքներին հակասող պէտք է նկատւեն։ Այստեղ մենք կրկին յանգում ենք այն եզրակացութեան, որ հարաւսլաւական օրինակը՝ միակուսակցականութեան դէպքում, լաւագոյն ելքն է։

Վերջացնելով ընկերվարութեան տնտեսութեան հարցերի քննարկումը, ես ուզում եմ ընդգծել, որ այսօրւայ ընկերվարութեան տեսաբանները իրենց աշխատութիւններում շեշտը դնում են ոչ թէ շահագործւող բանւորին վճարւող աշխատավարձի վրայ, այդ հարցը հիանալի լուծում են եւրոպական երկրների արհմիութիւնները, այլ ժողովրդավարական սկզբունքների վրայ։ Այս հարցի պատասխանին սպասում է մարդկութիւնը և դրանից է կախւած ընկերվարական գաղափարախօսութեան ապագան։ Պէտք է ասել, որ այս հարցում ընկեր-

վարականները, իմ կարծիքով անարդարացիօրէն, կրում են իրենց վրայ համայնավարների բոլոր խայտառակութիւնները։ Շատերի համար ընկերվարութիւնը, ինչպէս ասում էր Մարքսը, իսկ մեր օրերին կրկնեց Միտերանը, համայնավարութեան առաջին փուլն է։ Եթէ ընդունենք այդ թեզը, ապա արդարացի է, որ համայնավարների կուժն ու կուլան կոտրւում է ընկերվարականների գլխին։ Բայց դա այդպէս չէ։

Ընկերվարականները, ի տարբերութիւն համայնավարների, «ըստ աշխատանքի վճարումը», պետութեան և ազգերի գոյութիւնը չեն համարում ժամանակաւոր երեւոյթ։ Ընկերվարութիւնը, որպէս արդար հասարակարգի գաղափարախօսութիւն, կանգնած է իրական հողի վրայ, որոշ չափով հաշւի է առնում մարդու յատկութիւնները ու բնական պահանջները, իսկ համայնավարութիւնը անհիմն, օդային մի դրախտ է, որ արժանագոյն տեղ կարող էր գրաւել հեքիաթներում և **ֆանտաստիկ**ական գրականութեան մէջ, բայց ոչ հասարակագիտութեան մէջ։

Ընկերվարութիւնը սակայն, ունի ոչ միայն տնտեսական պարունակութիւն։ Նրա հիմնական կողմերից մէկն էլ նախագուշակման յաւակնութիւնն է։ Ընկերվարութեան տեսաբանները, հիմնւելով առաջադիմութեան գաղափարի վրայ, գուշակում էին մարդկութեան ապագան, յանգելով այն եզրակացութեան, որ ընկերվարութիւնը, բացի արդար լինելուց, անխուսափելի մի կացութաձեւ է մարդկութեան ճանապարհի վրայ։ Այդ իմաստով ժամանակակից ընկերվարութիւնը բախւեց **«Ֆուտուրոլոգիա»** կոչւող գիտութեան հետ, որը զբաղւում է հասարակագիտական նախատեսութեամբ։ Բանը նրանումն է, որ ներկայումս արդէն պարունակւում է ապագան, սա լոկ փիլիսոփայական միտում չէ, սա այսօր դարձել է շօշափելի։ Հազարամեակների ընթացքում առաջադիմութիւնը ընթանում էր այնքան դանդաղ, որ մարդիկ չէին նկատում այն, ճիշտ այնպէս, ինչպէս մենք չենք նկատում երկրագնդի պտոյտը։ Մարդիկ հասցնում էին ընտելանալ և յարմարւել նոր երեւոյթների հետ։ Այն, ինչ գիտէր և կարողանում էր անել հայրը, հարազատ էր նաեւ որդու համար։ Բայց առաջադիմութեան անիւը կամաց-կամաց սկսեց արագացնել իր վազքը և այժմ հաշւել են, որ եթէ ամբողջ մարդկութեան պատմութիւնը, սկսած առաջին գործիքների օգտագործումից մինչեւ մեր օրերը, տեղաւորենք մէկ օրւայ մէջ, ապա երկաթէ կացնի յայտնագործութիւնը կատարւեց այդ օրւայ վերջին տասը րոպէի ընթացքում, շոգեմեքենայի յայտնագործութիւնը օրւայ վերջին կէս րոպէում, իսկ մնացած զարգացումը Գէյմս Ուատից մինչեւ մեր օրերը տեղաւորւում է վերջին 30 վայրկեանի մէջ։ Զարգացման ընթացքը նմանւել է պայթման։

Ոչ շատ վաղուց մարդիկ հարբել էին առաջընթացի արագութիւնից, թւում էր թէ գիտութիւնը և **տեխնիկա**ն վերջնականապէս կը լուծեն բոլոր խնդիրները և կը հաստատեն մարդու իշխանութիւնը բնութեան վրայ. թւում էր թէ երկրային դրախտը հնարաւոր է: Երկու համաշխարհային պատերազմները, բռնապետական վարչակարգերի ծագումը, համաշխարհային պատերազմները, հալածողների դաժանութիւնը և հալածւողների հնազանդութիւնը թուլացրին մարդու հաւատքը դէպի մարդկութիւնը, իսկ Ճապոնիայում պայթած միջուկային ռումբը նախազգուշացրեց մարդկութեանը, որ ինքնաոչնչացումը հնարաւոր է: Բայց սա էլ դեռ ոչինչ: Մարդը պարզապէս չի հասցնում յարմարւել սրընթաց զարգացման ընթացքին: Նրա գիտակցութիւնը, հոգեբանութիւնը, ընկերային կացութիւնը և կազմակերպւածութիւնը մշտապէս յետ են մնում դարաշրջանի պահանջներից: Երկրագնդի հարաւային մասում ապրող «աղքատ» ժողովուրդները արագ բազմանում են և դրանով հէնց էլ աւելի են յետ մնում հիւսիսի «հարուստ» ժողովուրդներից: Իսկ այս հարուստները իրենց հերթին չեն կարողանում իշխել իրենց իսկ ձեռքերով ստեղծւած **աւտոմատնե-րի** և մեքենաների աշխարհում: Աղտոտւած միջավայրը սկսում է մարդկանցից հանել իր վրէժը, նրանց ագահութեան համար:

Այս պայմաններում ամերիկեան պրոֆեսոր Էրիկ Ֆոռմը արդարացիօրէն համարում է, որ «այժմ մարդը կանգնած է վճռական ընտրութեան առջեւ,- ոչ թէ **կապիտալիզմի** և **կոմունիզմի** միջեւ,- այլ ստրկութեան (թէ՛ **կապիտալիստ**ական և թէ **կոմունիստ**ական) և մարդկութեան ժողովրդավար ընկերվարութեան միջեւ»: Այս պայմաններում արդար հասարակարգ ստեղծելու հարցերը և չափանիշները այնքան են խճճւել և բարդացել, որ սովորական ընկերվարական պահանջները՝ հաւասարութիւն, ազատութիւն, շահագործման վերացում և այլն բաւարար չեն, աւելի ճիշտ՝ նրանք այնքան ընդհանուր են, որ չեն կարող ծառայել գործնական ուղղութիւններ ընտրելու համար: Այսօրւայ ընկերվարութիւնը, որպէս արդար հասարակարգ ստեղծելու տեսութիւն, իսկ աւելի ճիշտ՝ մարդկութիւնը փրկելու տեսութիւն պարտաւոր է լուծել յամենայն դէպս հետեւեալ 5 հարցերը:

Առաջին՝ արմատախիլ անել պատերազմները, բոլոր ազգերի պահանջներին ըստ արժանւոյն բաւարարութիւն տալով:

Երկրորդ՝ արմատախիլ անել սովը, բռնութիւնը և ստրկութեան բոլոր ձեւերը, հաստատելով ժողովրդավարական կարգեր:

Երրորդ՝ արմատախիլ անել բնութեան բարբարոսական շահագործումը, այսինքն պաշտպանել բնութիւնը մարդու յարձակումներից:

Չորրորդ՝ պաշտպանել մարդկութիւնը մարդկութիւնից: Այսինքն բացառել մարդկութեան ինքնաոչնչացումը:

Հինգերորդ՝ փրկել մարդուն հոգեկան դատարկութիւնից, այսինքն ստեղծել նոր ու բովանդակալից մարդ։

Եւ քանզի այստեղ խճճւած են բազմաթիւ հարցեր, չի կարելի առաջւայ պէս ասել, որ բաւական է բանւոր դասակարգը գայ իշխանութեան գլուխ և բոլոր այս հարցերը կը լուծւեն։ Այդ հարցերը միայնակ չի կարող լուծել ոչ մի դասակարգ, էլ չխօսենք այն մասին, որ գուցէ այդ հարցերը ընդհանրապէս անլուծելի են, գուցէ գիտա-**տեխնիկ**ական առաջընթացը անխուսափելիօրէն տանում է մարդկութիւնը դէպի կործանում։

Քննարկւող հարցերի բարդութիւնը պահանջ դրեց ստեղծել մի նոր, եթէ ոչ գաղափարախօսութիւն, ապա գոնէ հասարակագիտութիւն։ Այդպիսի մի գիտութիւն ստեղծւեց՝ դա **ՖՈՒՏՈՒՐԱԼՈԳԻԱՆ** էր։Համեմատել այդ գիտութիւնը ընկերվարութեան տեսութիւնների և յատկապէս մարքսիզմի հետ, մեզ հեշտ կը լինի կատարել գերմանացի պրոֆեսոր Ֆլեխտհէյմի «Ֆուտուրալոգիան և ապագայի համար պայքարը» աշխատութեան հիման վրայ։

Ֆլեխտհէյմը երկար ժամանակ մարքսիստ էր և, ինչպէս ինքը խոստովանում է, շատ բանով նա պարտական է Մարքսին և Էնգելսին։ Իր սեփական ուսմունքը նա զարգացրել է Մարքսի և Էնգելսի աշխատութիւնների քննադատական վերլուծութիւնների հիման վրայ, սակայն այդ վերլուծութիւնների ընթացքում նրան «բացւել են» մարքսիստական ուսմունքի «վճռական թուլութիւնները»։ Իր աշխատութեան մէջ Ֆլեխտհէյմը փորձում է ցոյց տալ այդ թուլութիւնները։ Նախ և առաջ պէտք է ասել, որ հեղինակը **ֆուտուրոլոգիան** (ապագայագիտութիւնը) պատկերացնում է երեք հիմնական մասերից, որոնք են՝ գուշակում, **պլան**աւորում և ապագայի փիլիսոփայութիւն։ Ճշտենք, թէ ինչ է Ֆլեխտհէյմը հասկանում այս երեք բաների տակ։

Նախագուշակումը կամ նախխմացութիւնը, հեղինակի կարծիքով, մօտենում է դասական գիտութեանը, որը օգտւում է վերլուծական մեթոդից և որոշում ապագայ երեւոյթների ընթացքը, առանց որեւէ գործողութիւնների և այդ ընթացքը փոխելու փորձերի։ Նախխմացութիւնը ենթադրում է, որ ոչ մի արտաքին ուժ չի խանգարում բնական ընթացքին։

Պլանաւորումը աւելի **ակտիւ** է, լայն և կիրառական։ Ֆլեխտհէյմը համեմատում է **պլան**աւորումը այսպէս կոչւած «հասարակական ճարտարապետութեան» հետ։

Երրորդ մասը, այսինքն ապագայի փիլիսոփայութիւնը, ըստ Ֆլեխտհէյմի, ապագայի փիլիսոփայական ընդհանրացումն է, որը դուրս է գալիս սահմանափակ **պլան**աւորման և նախագուշակման ոլորտից դէպի տիեզերական օրինաչափութիւններ։

Պէտք է ասել, որ Ֆլեխտհէյմի այս երեք ուղղութիւնները այնքան էլ նոր չեն։ Օրինակ, Վիեննայի «Ապագայի ուսումնասիրութեան ինստիտուտ»ի հիմնադիր Ռոբերտ Իւնգը նոյնպէս համարում է, որ ապագայի ուսումնասիրութիւնը կապ ունի նախատեսման, կանխազուշակման և նախագծման հետ։ Իսկ փիլիսոփայ Գէորգ Պիխտը համարում է, որ մարդու ուղեղի առանձնայատկութիւնն է՝ ապագան պատկերացնել նախատեսման, **ուտոպիայի** և նախագծման միջոցով։ Արեւելեան Գերմանիայում Հերբերդ Էդելինգը այդ երեք ուղղութիւնները կապում է ընկերվարական տեսութեան հետ, համարելով, որ նրանք կազմում են մարքսիստական գիտութեան էութիւնը։

Տեսնենք թէ ինչ են իրենից ներկայացնում Ֆլեխտհէյմի երեք ուղղութիւնները։ Սկսենք ամենաարդիականից՝ **պլան**աւորումից։ Այսօր արդէն ոչ ոք չի կասկածում, որ մեր մեքենայացած աշխարհը չի կարող զարգանալ առանց **պլան**աւորման։ Կասկած չկայ նաեւ նրանում, որ ապագայում **պլան**աւորման նշանակութիւնը էլ աւելի կը բարձրանայ։ Այս մասին տնտեսագէտները այլեւս չեն վիճում։ Այսօր վէճի առարկայ են դարձել՝ թէ ի՞նչը **պլան**աւորել, ի՞նչպէս **պլան**աւորել, ո՞վ **պլան**աւորի, ի՞նչ նպատակի համար **պլան**աւորի հարցերը։ Եւ քանզի այս հարցերը անմիջականօրէն կապ ունեն ժամանակակից ընկերվարութեան հետ, չանցնենք նրանց կողքից։

Ինչպէս այսօր յայտնի է գիտութեանը, բարդ համակարգերի շարժումները կարող են ընթանալ **դետերմին**ացած՝ որոշուած կամ **ստոխաստիկ**՝ պատահական սկզբունքով։ **Պլան**աւորել բառի բուն իմաստով կարելի է միայն որոշուած ընթացքները, այսինքն այն ընթացքները, որոնց ամբողջ ճանապարհը կա՛մ նախօրօք յայտնի է և կամ էլ լրիւ մեզանից է կախուած։ Բայց նախօրօք **պլան**աւորել **աւտո**մեքենայի վարորդի բոլոր շարժումները անհնարին է, որովհետեւ նրա ճանապարհին կարող են ծագել բազմաթիւ պատահական խոչընդոտներ, որոնք յաղթահարելու համար նա ստիպուած է անել յատուկ չնախատեսուած շարժումներ։ Բայց եթէ այնուամենայնիւ վարորդի շարժումները **պլան**աւորել ուզենանք, ապա նա իր **աւտո**մեքենայի հետ միասին անմիջապէս կը կործանուի առաջին իսկ չնախատեսուած խոչընդոտի հանդիպելիս։ Այս փոքրիկ օրինակը գալիս է ապացուցելու, որ անգուշակելի ընթացքների համար **պլան**աւորումը բռնութիւն է։ Իսկ արդեօ՞ք մեր տնտեսական և հասարակական զարգացման ընթացքը **դետերմին**ացած է, արդեօ՞ք ամէն քայլափոխի, ամէն դարաշրջանում մեր կեանքում չենք հանդիպում չնախատեսուած երեւոյթների՝ պատերազմներ, երաշտներ, ահաբեկութիւններ և այլն։

Ամերիկացի հասարակագէտ Էլվին Թոֆլերը իր «Ապագայի ցնցումը» գրքում, օրինակ, գրում է, որ շուտով արտադրական **պլան**աւորմանը վերջ կը տրուի, որովհետեւ այդ **պլան**աւորումը ըստ էութեան **դեմոկրատ**ական չէ։ Այդ

պլանաւորումը բաժանել է աշխարհը պետերի և աշխատողների, **պլան**աւորողների և **պլան**աւորուողների: Առաջինները ընդունում են որոշումներ երկրորդների համար: Որքան ծանօթ բառեր են: Դեռ չենք մոռացել շահագործող ու շահագործուող բառերը, և ահա մեզ առաջարկում են նոր գունաւորում՝ **պլան**աւորողներ և **պլան**աւորուողներ: Սակայն Թեֆլերը իրաւացի է, երբ ասում է. «Անկայուն միջավայրը աւելի ու աւելի է պահանջում ինքնուրոյն որոշումներ ընդունել տեղերում»: Նա ասում է, որ պահանջւում է յետադարձ կապի անմիջական իրագործում և համակարգի ստորադասական համակարգի քայքայում: **Պլան**աւորուողները սկսում են հասկանալ, որ վերեւից եկող հրամանները արդիւնաւէտ չեն և պահանջում են՝ մասնակցել **պլան**աւորման և ղեկավարման գործին: Ուրիշ խօսքով աւելի ու աւելի մեծ քանակի մարդիկ ժողովրդավարութեան պահանջ են զգում:

Այսպիսով **պլան**աւորումը զուտ տնտեսական ասպարէզից անցնում է հասարակական ասպարէզը: Այս անցումի մէջ էլ լուծւում են՝ ի՞նչը **պլան**աւորել և ո՞վ **պլան**աւորի հարցերը: **Պլան**աւորել միայն մօտակայ նպատակները, այլ ոչ խոչընդոտներով լի ճանապարհը: Այսինքն կարելի է **պլան**աւորել վարորդի գլխաւոր ուղղութիւնը, բայց ոչ նրա ամբողջ ճանապարհը: Իսկ գլխաւոր ուղղութիւնը որոշելու հարցում պէտք է մասնակցեն բոլոր ուղեւորները, այսինքն այդ ընտրութիւնը պէտք է լինի ժողովրդավարական սկզբունքով:

Ինչ վերաբերւում է **պլան**աւորմանը, ապա կարելի է ասել, որ ժամանակակից ընկերվարութիւնը ոչ մէկ նոր գաղափար չի ծնել, բայց ապագան գուշակելու և որոշումներ ընդունելու հարցում հասարակական արդարութիւն որոնող ընկերվարական միտքը բաւականին ընդարձակել է իր որոնումների ասպարէզը: Եթէ սկզբնական շրջանում հիմնական շեշտը դրւում էր արտադրելու և բաշխելու հարցերի լուծման վրայ, ապա այսօր քիչ անհանգստութիւն չի պատճառում սպառումը, այսինքն մարդու անսահման պահանջների բաւարարումը: Եւ ոչ այն տեսանկիւնից, որ այդ պահանջների բաւարարումը անհնարին է, այլ որովհետեւ դա վտանգաւոր է: Բերեմ մէկ օրինակ:

1971 թւին Միացեալ Նահանգների Կոնգրէսը ձայների մեծամասնութեամբ մերժեց **ֆինանս**աւորել գերձայնային արագութիւն ունեցող մարդատար ինքնաթիռի կառոյցը: Ինչո՞ւմն էր բանը: Առաջին հայեացքից այդ որոշումը առնւազն տարօրինակ պէտք է թւար: Գերձայնային ինքնաթիռը ի վիճակի էր երեք ժամւայ ընթացքում ուղեւորներին տեղափոխել Հիւսիս-Ատլանտեան ովկիանոսի վրայով: Այդ ինքնաթիռը աշխատանք կը տար հազարաւոր բանւորների: Նա կ'ապահովէր Միացեալ Նահանգների հեղինակութիւնը և առաջնութիւնը օդում: Մասնագէտները հաշւել էին, որ այդ ինքնաթիռի հետ չէին կա-

րող մրցել Խորհրդային **«Տու-144»**ը և անգլո-ֆրանսիական **«Կոնկորդ»**ը: Բայց այնուամենայնիւ Կոնգրէսը մերժեց:

Պարզւում է, որ այնքան աղմուկ կը հանէր այդ ինքնաթիռը, որ պարզապէս կը քայքայէր քաղաքացիների նեարդները, նրա թռիչքի և վայրէջքի մօտակայքում չէր մնայ ոչ մէկ ծառ և ոչ մէկ բոյս: Հաշիւները ցոյց էին տալիս, որ 10 այդպիսի ինքնաթիռ կարող էին բոլորովին փոխել երկրագնդի կլիման և նոյնիսկ հնարաւոր էր, որ սկսէին հալչել բեւեռներում կուտակուած սառոյցները: Ի հարկէ այս ամէնը միայն մօտաւոր հաշուարկներ էին, բայց վտանգը այնքան մեծ էր, որ չէր կարելի նրա հետ հաշւի չնստել:

Ի՞նչպէս այստեղ չյիշել Սոլժենիցինին, որը ասում է. «Եթէ սկսեն հալչել բեւեռների սառոյցները և Բրիտանիան սուզւի ովկիանոսի տակ, ո՞ւմ կարող էք դուք զարմացնել ձեր դասակարգային պայքարով»: Օր չի անցնում, որ թերթերը չգրեն օդի, գետերի և միջավայրի աղտոտման մասին: Ո՞վ կարող է կանգնեցնել այդ սրընթաց շարժումը դէպի մարդկութեան անկումը, եթէ ոչ մարդկութեան բարձր գիտակցութիւնը, ինքնասահմանափակումը և ընկերվարութիւնը ԼԱՅՆ ԻՄԱՍՏՈՎ:

Այստեղ առաջին անգամ ես օգտագործում եմ «ընկերվարութիւնը լայն իմաստով» արտայայտութիւնը և համարում եմ, որ դա ժամանակակից ընկերվարութեան ամենայատկանշական և ամենակարեւոր լրացումն է: Մարդկային հասարակարգի բազմակողմանի կեանքը պահանջում է ընկերվարութիւնից թափանցել կեանքի բոլո՛ր ասպարէզներում: Եւ ներթափանցել ոչ թէ ընդհանուր արտայայտութիւններով, այլ մանրամասնօրէն մշակելով բոլոր նրբութիւնները, գտնէ այն մանրամասնութեամբ, որը արւել է տնտեսական բնագաւառի համար: Եթէ ընկերվարութիւնը հասարակական արդարութեան գաղափար է, ուրեմն մենք պէտք է ունենանք արդար ընտանիքի, ազգի, տնտեսավարութեան, պետութեան և այլ բնագաւառների ընկերվարական տեսութիւններ: Բայց եթէ տնտեսական բնագաւառի վերաբերմամբ իւրաքանչիւր ընկերվարական կարող է դասախօսութիւններ կարդալ յաւելեալ արժէքների և շահագործւողների մասին, ապա մնացած բնագաւառներում նա յաճախ այնպիսի մտքեր է արտայայտում, որ ամենահամոզւած ընկերվարականին կարող է դարձնել հակաընկերվարական:

Մէկ անգամ ես առիթ ունեցայ զրուցելու մեր հայ համոզւած ընկերվարականներից մէկի հետ: Կէս կատակով ես հարցրի նրան. «Իսկ գեղեցիկ կանայք կը լինե՞ն ընկերվարական հասարակարգում: Եթէ կը լինեն, ապա նրանց հետ կ'ուզեն ամուսնանալ բոլոր տղամարդիկ: Իսկ այդ գեղեցկուհիները կ'ընտրեն խելօք և գեղեցիկ տղամարդկանց (հարուստներ այն ժամանակ չեն լինի): Չէ՞ք վախենում, ասացի ես, որ ստեղծւի գեղեցիկների դասակարգ, որը որոշ իմաս-

տով կը շահագործի ոչ գեղեցիկներին»։ Իմ կատակին նա շատ լուրջ պատասխանեց. «Ընկերվարական հասարակարգում գեղեցիկ կանայք չեն ամուսնանալու, նրանք կը պատկանեն բոլորին»։ Գուցէ իմ զրուցակիցն էլ էր կատակում, բայց գիտեմ, որ շատերը և, առաջին հերթին, Մարքսը ինքը, հէնց այդպէս էլ մտածում էր։ Այդ մասին պարզ գրւած է «Մանիֆեստ»ում։

Բոլորովին մշակւած չէ ազգային ընկերվարութիւնը։ Աւելին, Հիտլերից յետոյ, որը ազգային ընկերվարութիւնը՝ նացիոնալ սոցիալիզմը դարձրեց իր հրէշաւոր գործերի գաղափարական հիմք, մարդիկ ընդհանրապէս վախենում են մօտենալ այդ հարցին։ Բայց ի՞նչ արժէք ունի դասակարգային ընկերվարութիւնը, եթէ բացակայում է ազգայինը։ Եթէ մենք ընդունում ենք շահագործւող բանւորների և գիւղացիների գոյութիւնը, ինչպէ՞ս կարող ենք շրջանցել շահագործւող ազգերի հարցը։ Մենք դատապարտում ենք հարստութիւն ժառանգած **կապիտալիստ**ին, որը շահագործում է իր աշխատաւորներին, բայց չենք դատապարտում այն ազգերը, որոնք ժառանգել են բնական հարստութիւններ՝ ծով, հող, նաւթ, ոսկի և փաստօրէն շահագործում են նրանց, ովքեր ապրում են քարերի վրայ, անապատներում կամ ընդհանրապէս հայրենիք չունեն։ Մենք խլում ենք **կապիտալիստ**ից նրա ունեցւածքը և բաշխում աշխատաւորներին, բայց ոչ ոքի մտքով անգամ չի անցնում, օրինակ, գրեթէ մէկ միլիարդ բնակչութիւն ունեցող Չինաստանին յանուն արդարութեան մի կտոր աւելի հող տալ։ Կամ ի՞նչ մեղք ունի ճապոնացին, որը իր պապերից ժառանգել է հանածոներից բոլորովին զուրկ հող։ Եւ եթէ **կապիտալիստ**ը ժառանգել է իր նախնիների քրտինքով վաստակած հարստութիւնը և ժառանգելուց յետոյ էլ ստիպւած է ահագին աշխատանք թափել հարստութիւնը պահպանելու համար, ապա ազգերը զէնքի ուժով են զաւթել իրենց հայրենիքները և առանց որեւէ ջանքերի վայելում են ժառանգած հարստութիւնը։

Ես, ի հարկէ, չեմ ուզում ասել, որ կողմնակից եմ հայրենիքների վերաբաժանմանը, բայց լայն իմաստով ընկերվարութիւնը պէտք է պատասխան տայ բոլոր այս հարցերին։ Եւ ինչո՞ւ չէ, գուցէ իսկապէս անհրաժեշտ է երկրագունդը արդարացիօրէն, ընկերվարական սկզբունքներով, ըստ քանակի և պահանջների, ըստ կարողութիւնների, բաժանել ազգերի միջեւ։ Շատ հեշտութեամբ կարելի է ապացուցել, որ հարստութիւնների անհաւասարութեան կարեւորագոյն աղբիւրներից մէկն էլ աշխարհագրական անհաւասարութիւնն է։ Որքան էլ որ վճարումը և արտադրանքի բաշխումը կատարւի ընկերվարական սկզբունքով, եթէ Ալավերդում ապրող հայ գիւղացին դոյլերով հող է կրելու քարերի վրայ խաղող աճեցնելու համար, իսկ Վրաստանինը ձեռքերը ծալած միայն պիտի սպասի բերքահաւաքին, եթէ մէկ երկիր նաւթի և ոսկու մէջ է լողանում, իսկ միւսի հորերում ջուր անգամ չկայ, էլ ի՞նչ ընկերվարութիւն, ի՞նչ

արդարութիւն։ Եթէ այսպիսի անարդարութեան դէմ ծաւալւի մի շարժում, մեզ՝ հայերիս համար շատ օգտակար կը լինէր և այդպիսի լայն իմաստով ընկերվարութիւնը մեզ՝ հայերիս համար շատ բնական կը լինէր։

Վերջացնելով իմ յօդուածը, ես ուզում եմ յիշատակել մէկ դէպք, որ Երեւանում պատմում էին Հայաստանի Գերագոյն Խորհրդի նախագահ Մացակ Պապեանի մասին։ Չգիտեմ, որքանով ճիշտ էր այդ պատմութիւնը, բայց պատմում էին հետեւեալը։ Մէկ անգամ, իր պաշտօնական ճառից յետոյ, որը Մացակ Պապեանը, ըստ ընդունւած կարգի, կարդաց թղթից, դիմելով լսողներին, ասաց. «Թոյլ տւէք մի քանի խօսք էլ ինձանից ասեմ»։ Նա միամտօրէն ընդգծել է, որ ամբողջ նախորդ ճառը իրենից չէր։ Այժմ ես էլ խնդրում եմ ընթերցողներից թոյլատւութիւն մի քանի խօսք ասել ինձանից, քանզի տասնեակ էջերի վրայ ես հիմնականում պատմում էի այն մասին, թէ ինչ են ուրիշները ասում ընկերվարութեան մասին։

Ընկերվարութիւնը, որպէս արդարութեան, գալիք ապագայի ամենայարմար ձեւ, իր մէջ պարունակում է երկու կողմ, որոնք վերջին հաշւով պէտք է որոշեն ընկերվարութեան ճակատագիրը։ Այդ երկու կողմերն են՝ արտադրանք և սպառում։ Իմ կարծիքով ընկերվարական հասարակարգ, բառի բուն իմաստով, կարող է ստեղծւել միայն այն դէպքում, երբ մարդկութիւնը կը ծնի ընկերվարական էութիւն ունեցող մարդիկ, այսինքն ընկերվարական սպառող և ընկերվարական արտադրող։

Սկզբից տեսնենք, թէ ինչպիսի յատկութիւններով պէտք է օժտւած լինի ընկերվարական սպառողը։ Նրանից գլխաւորապէս պահանջւում է պահանջների սահմանափակութիւն։ Մեր արտադրական հնարաւորութիւններով սահմանափակ երկրագնդի վրայ, միա՛յն սահմանափակ պահանջների բաւարարումն է հնարաւոր։ Եթէ ընդունենք մարդու պահանջների անսահման աճը, եթէ նկատի ունենանք, որ մարդու երեւակայութիւնը շատ աւելի արագ է աճում, քան այն բաւարարելու հնարաւորութիւնը, եթէ ընդունենք 4 սենեականոց բնակարան ունեցող մարդու ցանկութիւնը՝ ունենալու 5 սենեակ, 1 **աւտոմեքենայ** ունեցողի ցանկութիւնը՝ ունենալու երկուսը, բոլոր մատները զարդարել ոսկէ մատանիներով, պատից կախել Այվազովսկու նկարը, ամէն տարի պտոյտներ կատարել երկրագնդով, ունենալ սեփական ինքնաթիռ և այլն, և այլն, եթէ բոլոր այս պահանջները համարենք օրինական, ապա նրանց բաւարարումը պէտք է համարենք արդարութիւն։ Եւ քանզի անհնարին է բոլորի այս բոլոր պահանջները բաւարարել, ուրեմն անհնարին է նաեւ այդ տեսակի արդարութիւնը։ Իսկ եթէ մենք պահանջներից ոմանք համարում ենք անարդար, համարում ենք պճնանք, որը բխում է մարդու անկատար լինելուց, ապա դրանով իսկ մենք արդէն սահմանափակում ենք մարդու պահանջելու իրաւունքը։

Բայց իրաւունքով ընկերվարական սպառող չի ստեղծւի։ Ո՞վ և ի՞նչ չափանիշներով պէտք է սահմանափակի մարդու պահանջները։ Ո՞վ պէտք է ասի, թէ ի՛նչ կարելի է և ինչ չի կարելի պահանջել։ Ի՞նչպէս պէտք է կազմւի այն օրէնսգիրքը, որտեղ պէտք է գրւած լինի, որ ամէն օր խաւիար ուտելը արգելւած է, իսկ վագրի մորթուց վերարկու հագնելը թոյլատրւում է։

Բացի դրանից, եթէ պահանջները կան և միայն օրէնքն է արգելում նրանց բաւարարումը, ապա պէտք է վստահ լինենք, որ մարդը, յամենայն դէպս ոմանք, կը կարողանան գտնել ճանապարհներ օրէնքից դուրս բաւարարելու իրենց պահանջները։ Իսկ եթէ օրէնքը լինի այնքան խիստ, որ մարդիկ չկարողանան անել դա, ապա մենք կ՚ունենանք բռնապետական, ստիպողական ընկերվարութիւն, որոնք այսօր էլ գոյութիւն ունեն, բայց որոնք քննադատւում են մարդկութեան առաջադէմ տարրերի կողմից։ Եւ ուրեմն ընկերվարական սպառողը պէտք է լինի այդպիսին, ոչ թէ ստիպողական, այլ բնական կարգով։ Պահանջների սահմանափակւածութիւնը պէտք է կազմի մարդու էութիւնը։

Հնարաւո՞ր են արդեօք այդպիսի մարդիկ։ Այո, հնարաւոր են։ Աւելին, այդպիսի մարդիկ արդէն կան և միշտ էլ եղել են։ Նրանց մենք բոլորս էլ հանդիպել ենք։ Այն երկարամազ երիտասարդները, որոնց մենք հանդիպում ենք մեծ քաղաքների ճանապարհների վրայ, որոնց արհամարհանքով ու խղճալով ենք նայում, հէնց նրանք են, ում ես անւանում եմ ընկերվարական սպառողներ։ Այդ թռչունի կեանք վարող երիտասարդները գրեթէ պահանջ չունեն։ Ես շատ եմ զրուցել նրանց հետ և համոզւել, որ չեմ սխալւում։ Եթէ նրանք սնւում են միայն հացով կամ նրանով, ինչ ձեռքներն է ընկնում, եթէ նրանք հագնում են կարկատած կամ պատռւած հագուստներ, ոչ թէ նրա համար է, որ չունեն, այլ նրա համար, որ չեն ուզում։ Շատերը նրանցից հարուստ ծնողների որդիներ են և, եթէ ուզէին, կարող էին ամէն ինչ ունենալ։

Մի քանի անգամ ես փորձի համար նրանց դրամ եմ առաջարկել, բայց նրանք հրաժարւել են։ Եւ դա աղքատի հպարտութիւն չէր, դա հարստի կշտութիւն էր։ Սրանց սպառածը այնքան քիչ է, որ մենք իրաւունք էլ չունենք պահանջել նրանցից՝ արտադրել։ Լաւագոյն դէպքում, ընկերվարական արդարութեան տեսանկիւնից, նրանցից կարելի է պահանջել՝ տարին մէկ ամիս աշխատել։ Այդ մէկ ամսւայ աշխատանքը լրիւ բաւական է նրանց մէկ տարւայ պահանջները բաւարարելու համար։

Բայց դրա անհրաժեշտութիւնն էլ չի լինի, եթէ ընկերվարական սպառողի հետ մէկ տեղ լինեն նաեւ ընկերվարական արտադրողներ։ Եթէ ընկերվարական սպառողներին ես համեմատեցի թռչունների հետ, ապա արտադրողները պէտք է նմանւեն մեղրաճանճերի։ Այսինքն արտադրեն շատ աւելի շատ, քան իրենց անձնական պահանջներն են։ Նրանք պէտք է արտադրեն միայն նրա

համար, որ չեն կարող չարտադրել: Նրանց ամբողջ էութիւնը պէտք է թելադրի իրենց՝ արտադրել, ուրիշներին կերակրելու համար, արտադրել ոչ թէ հարըստանալու, ոչ թէ սեփական կարիքների, այլ ներքին պահանջը բաւարարելու համար: Եւ եթէ այդպիսի արտադրողին մենք անուանենք ընկերվարական արտադրող, ապա նա ընկերվարական սպառողի հետ միասին կարող է ստեղծել ընկերվարական հասարակարգ: Կարո՞ղ են ստեղծել այդպիսի մարդիկ: Չգիտեմ, բայց այդ ուղղութեամբ և գուցէ միայն այդ ուղղութեամբ անհրաժեշտ է աշխատել:

Կարող եմ միայն ասել, որ գիտութեան և արուեստի բնագաւառներում բաւական չափով կան մարդիկ, որ զբաղւում են իրենց մասնագիտութեամբ, ոչ թէ հարստանալու, այլ ներքին պահանջը բաւարարելու համար: Նրանք կը զբաղւէին իրենց գործով նոյնիսկ այն դէպքում, երբ բոլորովին չվարձատրւէին: Եւ, ուրեմն, կարելի է յուսալ, որ արտադրութեան ասպարէզումն էլ կը ծնւեն արտադրողներ, որոնք կ'արտադրեն մարդկութեան համար:

Վերջացնելով յօդւածս, ուզում եմ խորհուրդ տալ բոլոր նրանց, ովքեր ոգեւորւած ընկերվարութիւն են քարոզում, պարզեն իրենք իրենց համար, թէ արդեո՞ք ընդունակ են ինքնասահմանափակելու իրենց պահանջները կամ կամաւոր կարգով իրենց արտադրածը նւիրելու մարդկութեան, առանց վարձատրութեան:

1976

ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Է. Յովհաննիսեան

Մեր աշխատակից ընկերոջ՝ Է. Յովհաննիսեանի այս յօդուածը եւս, որ, ըստ էութեան, հիմ ունի իր «*Ազգային քաղաքականութեան փիլիսոփայութիւնը*» ի շարս այլոց, ունի յոյժ այժմէական բնոյթ և շահեկան է մէկէ աւելի երեսներով։

Կարելի է, անշուշտ, համաձայն չըլլալ իրեն հետ՝ կարգ մը կէտերու մէջ կամ նոյնիսկ ըստ էութեան, սակայն կարել չէ չընդգծել այն «խոռովասէր ոգի»ն, որ մղում կու տայ իր որոնումներուն ու մտածումներուն իբրեւ հայ մտաւորական մարդ և որ ամէնէն բեղուն էատարրը կը կազմէ իմացական ամէն շարժումի, բայց մանաւանդ ամէ՛ն տեսաբանական մտքի ու մտածելակերպի առողջ զարգացման։

Այս ընդգծումը անոր համար յատկապէս, որ հայ իրականութեան մէջ հնուց մեծ բաց մը, ծանրակշիռ ամլացման աղբիւր լայն պարապ մը կը պարզէ հայ տեսաբանական մտքի ու մտածելակերպի տարօրէ՛ն տկարութիւնը, չըսելու համար՝ բացակայութիւնը քիչ մը ամէն մարզի մէջ։

Չարաշուք այս պարապը եթէ հայ մտաւորականութիւնը, մանաւանդ երիտասարդ մտաւորականութիւնը չը լեցնէ քիչ մը ամէ՛ն ճակատի վրայ, պիտի լեցնեն, կը լեցնե՛ն արդէն ուրիշները հայ հոգիին խորթ, հայ միտքին օտար և հայութեան գոյատեւման ու ամբողջական ազատագրութեան գերագոյն հրամայականներուն բոլորովին անյարիր հայեցողութիւններով ու մտահոսանքներով, որոնք միայն չարիք կրնան բերել մեզի իբրեւ մեր հոգեմտաւոր աշխարհի անխուսափելի այլասերման ու սնանկացման աղբիւր, անհատական թէ ազգային, մասնաւորաբար ազգային մակարդակի վրայ։

Առ այդ՝ լիայոյս ենք, որ մեր երիտասարդ մտաւորականութիւնը, նոյն «խոռովասէր ոգի»ով տոգորուած, իր կարգին, լայնօրէն պիտի անդրադառնայ այս և նման էական նշանակութիւն ունեցող հարցերու, միշտ ի սպաս հայ քաղաքական ու գաղափարաբանական մտքի ծաղկման ու հարստացման։

Ընկերային և ազգային գիտակցութեան փոխյարաբերութիւնը երբեմն թւում է հակասական, երբեմն մէկը միւսից բխող, իսկ երբեմն էլ իրար հետ որեւէ կապ չունեցող։ Երբ ընկերային գիտակցութիւնը որդեգրում է ընկերվարական սկզբունքը, ապա ընկերային և ազգային գիտակցութիւնների փոխյարաբերութեան մէջ զարմանալիօրէն սկսում է գերակշռել հակասականութեան թեզը, այսինքն այն, որ իբր թէ ազգայնականութիւնը հակասում է ընկերվա-

րութեան: Դրա համար կան բազմաթիւ պատճառներ, սակայն նրանցից երեքը մեզ թւում են կարեւոր և հիմնական:

Առաջին պատճառը որոշ ականաւոր ընկերվարականների անպատասխանատու յայտարարութիւններն են, որոնք արւել են ճառային, այլ ոչ գիտական ձեւով, և արւել են ընկերվարական սկզբունքները աւելի վառ դարձնելու համար: Բերեմ մի քանի օրինակներ.

Մարքս և Էնգելս.- «Բանւորները հայրենիք չունեն»:

Վիլհելմ Լիբկնեխտ.- «Մեզ՝ ընկերվարականներիս համար գոյութիւն չունի ազգութիւնների խնդիր: Մենք ճանաչում ենք միայն երկու ազգութիւն. մի կողմից՝ դրամատէրների, քաղքենիութեան, իշխող դասակարգի ազգութիւնը իսկ միւս կողմից՝ բանւորների, բախտից հալածւածների, բանւոր դասակարգի ազգութիւնը: Բոլոր երկրների բանւորները կազմում են մի ազգութիւն՝ հակառակ միւս ազգութեան, որը նոյնպէս մի է բոլոր երկրներում»:

Լենին.- «Ազգային բաժանման յաւերժացումը և նուրբ ազգայնականութիւնը մենք չենք ընդունում և դրան մենք հակադրում ենք ազգերի միացումը, մերձեցումը և միջազգային մշակոյթի ստեղծումը»:

Շահումեան.- «Միջազգային բանւորական շարժման շահերի տեսանկիւնից՝ աւելի ցանկալի է սերտ մերձեցումը և միութիւնը: Այդ պատճառով անջատման պահանջը մենք կարող ենք պաշտպանել միայն բացառիկ դէպքերում: Աւելի յաճախ մենք կողմնակից ենք ազգերի մերձեցման և միութեան: Եւ այդ երբեմն նոյնիսկ այն դէպքերում, երբ մերձեցումը գուցէ սպառնում է մի որեւէ ազգութեան՝ ձուլւելու միւս ազգութիւնների հետ»:

Մետոն.- «Սովորական իմաստով ազգայնականութիւնը շատ քիչ բանով է տարբերւում եսապաշտութիւնից: Այսպէս կոչւած ընկերվարական ազգերը ոչ-պակաս ազգային գիտակցութիւն ունեն, քան քաղքենի ազգերը»:

Նման արտայայտութիւնները կարելի էր շարունակել, բայց այս կարգի ճառային յայտարարութիւնները ամենեւին էլ չեն բխում ընկերվարական սկզբունքներից: Նրանք, ինչպէս բոլոր զեղեցիկ համեմատութիւնները, գալիս են ընդգծելու, ամրապնդելու ընկերվարութեան որոշ կողմերը, բայց, ինչպէս բոլոր պատկերաւոր համեմատութիւնները, որոնք էլ հաշւի չեն առնում ընկերվարութեան միւս կողմերը և դրանով իսկ հակասում են հէնց ընկերվարական սկզբունքներին:

Այս նոյն հեղինակները, իրենց աւելի լուրջ աշխատութիւնների մէջ, արտայայտել են ճիշտ հակառակ տեսակէտներ: Մի խօսքով, ընկերվարական սկզբունքները պահանջում են շատ աւելի լուրջ մօտեցում, քան այն մօտեցումն է, որի պարագային ասւում է, թէ այս բանը ճիշտ է, որովհետեւ այսպէս էր ասում Պղատոնը, Մարքսը կամ Լենինը:

Երկրորդ պատճառը՝ ընկերվարութեան ներքոյ և նրա անբաժանելի էութիւնը կազմող միջազգայնականութիւնն է, որը իբր թէ հակասում է ազգայնականութեան։ Ազգայնականութեան և միջազգայնականութեան երեւութական հակադրութիւնների մէջ ընտրութիւն կատարելիս, ընկերվարականը, անկասկած, ընտրում է երկրորդը, դէն նետելով առաջինը, որպէս երկրորդին հակառող։

Եւ, վերջապէս, երրորդ պատճառը այն է, որ ոչ մի այսպէս կոչուած իրականացուած ընկերվարութիւն չկարողացաւ բաւարար լուծում տալ ազգային խնդիրներին։ Խորհրդային Միութիւնում, Բուլգարիայում, Չեխոսլովակիայում և ուրիշ ընկերվարական կոչտող երկրներում ազգային հարցերը լուծուած չեն և այդ երկրներում նրանք երբեմն-երբեմն իրենց զգացնել են տալիս, ստեղծելով ճգնաժամային պահեր։ Իշխանութեան գլուխ եկած ընկերվարութիւնները արհամարհում են ազգային հարցերը և ստեղծւում է այն տպաւորութիւնը, թէ այդ արհամարհանքը սկզբունքային է։

Բոլոր այս և նման պատճառների բերումով, ստեղծւել է այնպիսի տեսակէտ, թէ ազգայնականութիւնը հակասում է ընկերվարութեան։ Եւ այժմ համոզւած և հետեւողական ընկերվարականը, հանդիպելով համոզւած ազգայնականին, ասում է մօտաւորապէս հետեւեալը. «Ընկերվարութիւնը համամարդկային արդարութեան գաղափարախօսութիւնն է. ազգայնականութիւնը հակասում է ընկերվարութեան. բայց դու ազգայնական ես, մի՞թէ դու դէմ ես արդարութեան»։

Հարցի նման դրւածքը չափազանց դժւարացնում է ազգայնականի դիրքորոշումը։ Նա կա՛մ սկսում է ապացուցել, որ ընկերվարութիւնը արդարութիւն չէ և խրւում է հաւասարութեան փիլիսոփայութեան մէջ, որտեղ ընկերվարականը, շահագործողի և շահագործւողի տեսութիւններով զինւած, լողում է, ինչպէս՝ ձուկը ջրում, և կամ սկսում է ապացուցել, թէ ինքն էլ ընկերվարական է, բայց յատուկ, ազգային տեսակի ընկերվարական։ Բայց այստեղ նրան կործանում է Հիտլերի փորձը, որ, ինչպէս յայտնի է, նոյնպէս յատուկ ազգային տեսակի ընկերվարական էր։ Հարցումներին պատասխանելը և պաշտպանւելը ընդհանրապէս շատ աւելի դժւար է, քան յարձակւելը և հարցումներ ներկայացնելը։ Ուստի, ես էլ ընտրում եմ այդ հեշտ ճանապարհը։

Ես պնդում եմ, որ ազգայնականութիւնը ընկերվարութեան անբաժանելի մասն է։ Ազգայնականութիւնը բխում է ընկերվարութիւնից և հիմնւում է նրա վրայ։ Առանց ազգայնականութեան՝ ընկերվարութիւնը վեր է ածւում դատարկ տնտեսական եսապաշտութեան։ Պայքարել ազգայնականութեան դէմ՝ նշանակում է պայքարել ընկերվարական սկզբունքների դէմ։

Այժմ ես եմ հարց տալիս.- Ի՞նչպէս կարող էք դուք դէմ լինել ազգայնականութեան, մի՞թէ դուք դէմ էք ընկերվարութեան, մի՞թէ դուք չէք ուզում համամարդկային արդարութիւն։

Այստեղ ես կարող էի վերջացնել իմ յօդուածը և սպասել, թէ ի՛նչպէս պիտի պաշտպանուեն իմ հակառակորդները, այսինքն՝ ի՛նչպէս նրանք պիտի ապացուցեն, որ ազգայնականութիւնը հակասում է ընկերվարութեան։ Բայց է՛լ աւելի դժւարացնելու համար հակառակորդների պաշտպանութիւնը, շարունակեմ յարձակւել և ասել, թէ ինչո՞ւ եմ ազգայնականութիւնը համարում ընկերվարութեան անբաժանելի մասը։

Ընկերվարութիւնը, որպէս ընկերային կեցութեան գաղափարախօսութիւն, ըստ էութեան՝ համամարդկային է։ Ոմանց թւում է, թէ ընկերվարութեան դասակարգային բնոյթը զրկում է ընկերվարութիւնը համամարդկային լինելուց, սահմանափակելով այն բանւոր դասակարգի շահերի ոլորտով։ Սխալ է այդ տեսակէտը։ Ընկերվարութիւնը իր ոլորտի մէջ է առնում մարդկային գործունէութեան և փոխյարաբերութիւնների բոլոր բնագաւառները։ Այնտեղ, որտեղ կայ շահագործող և շահագործւող, որտեղ գոյութիւն ունի նիւթական և հոգեկան բարիքների անարդար բաշխում, որտեղ կեղեքւում են մարդկանց ու խմբերի բնական իրաւունքները, այնտեղ ընկերվարութիւնը գործ ունի անելու։

Ճնշւած արւեստը, ճնշւած դասակարգը, ճնշւած ազգը, ընտանիքը, մարդը, այս բոլոր ճնշւածներին ազատագրելու համար է ծնունդ առել ընկերվարական գաղափարախօսութիւնը։ Վերյիշենք Մարքսի և Էնգելսի «Մանիֆեստ»ում արտայայտւած հետեւեալ խօսքերը. «Դուք կշտամբում էք մեզ նրա համար, որ մենք ուզում ենք վերացնե՞լ երեխաների շահագործումը նրանց ծնողների ձեռքով։ Մենք խոստովանում ենք մեր այս ոճրագործութիւնը»։

Ինչպէս տեսնում ենք, այստեղ ոչ մի դասակարգային խնդիր չկայ։ Երեխան և ծնողը տարբեր դասակարգերի չեն պատկանում, բայց նկատելով նրանց փոխյարաբերութիւնների մէջ շահագործական կողմեր, նոյնիսկ «Մանիֆեստ»ի հեղինակները, որ աւելի շատ համայնավար էին, քան ընկերվարական, չկարողացան անցնել այդ փոխյարաբերութիւնների կողքից։ Կամ ի՞նչ դասակարգային խնդիր կարող է լինել կնոջ և տղամարդու հաւասարութեան խնդրի մէջ։ Բայց կարո՞ղ է արդեօք ընկերվարութիւնը շրջանցել այդ խնդիրը։ Չի կարող։

Ընկերվարութիւնը չի կարող շրջանցել նաեւ շահագործւող ազգերի խնդիրը, որովհետեւ, առանց այս խնդիրների, ընկերվարութիւնը կորցնում է իր արդարադատի դերը։ Այսօր արդէն շատ ընկերվարական և համայնավար կուսակցութիւններ փորձում են իրենց գաղափարախօսութիւնները դուրս բերել

նեղ դասակարգային սահմաններից, տարածելով այն մարդկային կեցութեան բոլոր բնագաւառների վրայ։

Եւ այս փորձերը շատ ճիշտ են, որովհետեւ ընկերվարութիւնը շատ աւելի ընդհանուր գաղափարախօսութիւն է, քան առանձին բնագաւառների արդարութեան գաղափարախօսութիւնները, այդ թւում՝ նաեւ ազգայնականութիւնը։ Մի խօսքով, ընկերվարութեան և ազգայնականութեան փոխյարաբերութիւնների մէջ ընկերվարութիւնը շատ աւելի ընդհանուր է, ուստի աւելի առաջնակարգ։

Այստեղ անհրաժեշտ է ընդգծել, որ ամբողջ մարդկութեան համար մի ընդհանուր ազգային գաղափարախօսութիւն գոյութիւն չունի և չի կարող ունենալ։ Ամէն մի ազգի ազգային հարցի արդար լուծումը կապւած է նրա պատմական անցեալի, ներկայ կարողութիւնների, ժամանակաշրջանի, աշխարհագրական դիրքի և հարիւրաւոր ուրիշ պայմանների հետ։ Չի կարելի ստեղծել մէկ ազգային գաղափարախօսութիւն, որի սկզբունքները օգտագործելի լինեն բոլոր ժամանակներում և բոլոր ազգութիւնների համար։

Հետաքրքրական է, որ այս գաղափարը ընդունում էր նաեւ Ստեփան Շահումեանը։ Մի առիթով նա գրում էր. «Նախ և առաջ՝ մարքսիզմը չունի և չի կարող ունենալ ոչ մի համադրական ազգային հարցի համար։ Մարքսիզմի համար գոյութիւն չունի, եթէ կ'ուզէք, մի ազգային հարց. նա ճանաչում է ազգային հարցեր։ Այսինքն՝ ազգային հարցը մարքսիզմը լուծում է ամէն մի առանձին դէպքում իր ուրոյն և կոնկրետ պատմական արտայայտութիւնների մէջ և ոչ «ընդհանրապէս», անկախ ժամանակի և տեղի պայմաններից»։

Շահումեանի այս միտքը միանգամայն ճիշտ է։ Եթէ ընկերվարութիւնը ընդհանուր արդարութեան սկզբունք է, ապա որեւէ ազգի ազգայնականութիւնը այդ ընդհանուր սկզբունքի մասնաւոր դէպքն է, իսկ ընդհանուր ազգայնականութիւն գոյութիւն չունի։

Այնուամենայնիւ, եթէ ինձանից պահանջւէր ընդհանուր ազգայնականութեան մի բանաձեւ, ապա ամենաընդհանուրը ինձ համար կը լինէր հետեւեալ ձեւակերպումը։

«Ամէն մի ազգութիւն ունի առանց շահագործման ապրելու իրաւունք, մարդկութիւնից իր տւածի համեմատ ստանալու իրաւունք և իր ուրոյնութիւնը պահպանելու համար պայքարելու իրաւունք»։ Բայց սա զուտ ընկերվարական սկզբունք է։ Չշահագործւելու, իրեն պաշտպանելու և իր նկատմամբ արդարութիւն պահանջելու իրաւունքը ընկերվարութիւնը շնորհում է մարդկանց, դասակարգերին, միութիւններին, ընտանիքներին, այդ թւում՝ նաեւ ազգերին։ Եւ, ուրեմն, ազգային արդարութիւնը ընդհանուր ընկերային արդարութեան անբաժանելի մասն է։

Սակայն ի՞նչ ձեւով տւեալ պատմական ժամանակաշրջանում կը լուծուի ազգային հարցը, ի՞նչը կը համարւի ազգային արդարութեան չափանիշ, այսինքն՝ ինչպիսի՞ ճանապարհ կ՚ընտրեն տւեալ ազգի ազգայնականները կապւած կը լինի նրանից, թէ ի՛նչ է թելադրում ընդհանուր ընկերվարական սկզբունքը:

Այստեղ մէկ անգամ եւս կարելի է մէջբերել Շահումեանին, որ գրում էր. «Մի ընդհանուր և անկախ սկզբունք ազգային հարցը լուծելու համար, ինչպէս, օրինակ՝ այն, թէ ամէն ազգութիւն պէտք է պետութիւն լինի, կամ թէ՝ ամէն ազգութիւն «ազգովին» պէտք է վճռի իր ազգային գործերը,- այդ տեսակ սկզբունք մեզ, **սոցիալիստ**ներիս համար գոյութիւն չունի: Մենք ունենք միայն մի հատ ընդհանուր և պարտադիր սկզբունք, մի հիմնական կշռաչափ, դա մարդկութեան տնտեսական զարգացման և առաջադիմութեան շահերն են, որոնց հետ ներկայումս ներքին, անբաժանելի կերպով կապւած են բանւոր դասակարգի միջազգային ազատագրական շարժման շահերը»:

Շահումեանի այս տեսակէտը ես մէջբերեցի միայն նրա համար, որ սա ոչ միայն խօսք էր, այլեւ իրական կեանքում էլ ընկերվարականները գործում էին այս սկզբունքի համաձայն: Օրինակ, 1860ական թւականներին ընդհանուր ընկերվարական սկզբունքների տեսանկիւնից ցանկալի էր Լեհաստանի անջատումը Ռուսաստանից և Մարքսը «Բանւորների միջազգային ընկերութեան» գլուխն անցած ողջունում էր անկախ Լեհաստանի մարտիկներին: 1905 թւականին, շնորհիւ փոխւած տնտեսական և քաղաքական յարաբերութիւնների, բանւորների ազատագրութեան դատի համար աւելի ձեռնտու էր Լեհաստանի սերտ կապը Ռուսաստանի հետ, ուստի մարքսեանները և ամենից առաջ իրենք՝ լեհ ընկերվարականները դէմ էին Լեհաստանի անջատման:

Երկու դէպքում էլ լուծւում էր լեհերի ազգային խնդիրը, բայց լուծւում էր ընկերվարական սկզբունքներով, այսինքն՝ ազգայնականութիւնը բխում էր ընկերվարութիւնից: Եւ միշտ էլ ազգայնականութիւնը բխել է ընդհանուր արդարութեան, համամարդկային բարոյականութեան սկզբունքներից:

Ազգայնականութիւնը առհասարակ անցել է երեք փուլից: Առաջին փուլում՝ ազգային հարցերը պետութիւնների զուտ ներքին խնդիրներ էին, պետութեան ներսում այս կամ այն ազգը այս կամ այն պատճառով գտնւում էր իրաւական կամ տնտեսական աւելի վատ պայմաններում, քան մէկ ուրիշ ազգ: Երկրորդ փուլում՝ ազգութեան հարցը, գաղութատիրական բնոյթ կրելով, դառնում է միջազգային հարց: Եւ երրորդ փուլում՝ ազգային հարցը կապւում է դասակարգային պայքարների հետ:

Սակայն բոլոր այս փուլերում ազգային հարցը ծնունդ է առնում որպէս որեւէ ազգի նկատմամբ գործադրւած անարդարութեան հարց: Առանց այդ

հարցի, աւելի ճիշտ՝ հարցերի լուծման ընկերվարութիւնը չի կարող լուծել դասակարգային հարցերը, որովհետեւ իրաւազրկւած ազգերի ներսում դասակարգային հակասութիւնների սրութիւնը կորչում է և հող է ստեղծւում դրամատիրոջ և բանւորի դաշինք կնքելուն, որը կնքւում է ազգը շահագործումից փրկելու համար։

Եւ սա միայն ազգային հարցին չի վերաբերում։ Նոյնը կարելի է ասել կանանց ազատութիւնների համար։ Եթէ ընկերվարութիւնը շրջանցի այս հարցը, ապա բանւորի և դրամատիրոջ կանայք, կազմելով կանանց միութիւն, միասնաբար կը սկսեն պայքարել իրենց ամուսինների դէմ։ Պատահական չէ, որ Պարսկաստանի նոր վարչակարգի դէմ առաջին կազմակերպւած բողոքի ցոյցը կատարեցին կանայք։

Մի խօսքով՝ հանդէս գալով որպէս ընկերային արդարութեան գաղափարախօսութիւն, ընկերվարութիւնը չի կարող աչքաթող անել ընկերային անարդարութեան որեւէ ոլորտ և, անշուշտ, առաջին հերթին, ազգային ոլորտը, որը ընկերվարութեան գործունէութեան ուղղութիւններից մէկն է։ Ընկերվարութիւնը դասակարգային հարցերը լուծելուց յետոյ էլ պէտք է զբաղւի ազգային հարցերով, որովհետեւ այդ հարցերը ցցւելու են ընկերվարութեան առջեւ բոլորովին նոր երեսներով։

Յիրաւի, եկէք դիմենք Մարքսի մէկ շատ հետաքրքրական արտայայտութեան։ **«Թեզիսներ Ֆոյերբախի մասին»** աշխատութեան մէջ նա գրում է.

«Տարբեր ազգերի փոխյարաբերութիւնները կախում ունեն այն բանից, թէ նրանցից իւրաքանչիւրը որքան է զարգացրել իր արտադրական ուժերը, աշխատանքի բաժանումը և ներքին շփումը։ Այս դրոյթը հանրայայտ է։ Սակայն ոչ միայն մէկ ազգի յարաբերութիւնը միւսին, այլեւ բուն ազգի ներքին ամբողջ կառուցւածքը կախում ունի նրա արտադրութեան զարգացման աստիճանից և նրա ներքին ու արտաքին շփումից։ Ազգի արտադրական ուժերի զարգացման մակարդակը ամենից աւելի ակնառու կերպով երեւան է գալիս այն բանում, թէ ինչ չափով է նրա մէջ զարգացած աշխատանքի բաժանումը։ Աշխատանքի բաժանումը այս կամ այն ազգի սահմաններում յանգեցնում է ամենից առաջ արդիւնաբերական և առեւտրական աշխատանքի բաժանմանը հողագործական աշխատանքից և, դրանով իսկ, քաղաքի բաժանմանը գիւղից և նրանց շահերի հակադրութեանը»։

Այստեղ հետեւողական ընկերվարականը ամբողջովին պէտք է որ համաձայնւի Մարքսի հետ։ Իսկապէս ազգի ընդհանուր զարգացումը անմիջականօրէն կապւած է արտադրական ուժերի զարգացման հետ։ Սակայն Մարքսը ոչ մի տեղ չի նշում, թէ ինչու այս կամ այն ազգը այս կամ այն ձեւով զարգացրեց

իր արտադրական ուժերը և այս կամ այն չափով կարողացաւ բոլորին հաւասարաչափ պատկանող բնութիւնից խլել համապատասխան բաժիններ։

Մարքսը խոստովանում է. «Մենք այստեղ, հասկանալի է, չենք կարող խորանալ մարդկանց ֆիզիքական յատկութիւնների ուսումնասիրութեան մէջ, ոչ էլ բնական՝ երկրաբանական, լեռնա-ջրագրական, կլիմայական պայմանների և այլ յարաբերութիւնների ուսումնասիրութեան մէջ, յարաբերութիւնների, ուր նրանք իրենց բնական հիմքերը գտնում են։ Ամէն մի պատմագիտութիւն պէտք է ելնի այդ բնական հիմքերից»։

Ուստի մենք էլ պարտաւոր ենք հաշւի նստելու այդ «բնական հիմքեր»ի հետ։ Բայց մինչ այդ նշենք մի նրբութիւն,- Մարքսի ձեռագրի մէջ այս տեղում ջնջւած է եղել հետեւեալ արտայայտութիւնը. «Բայց այդ յարաբերութիւնները պայմանաւորում են մարդկանց ոչ միայն սկզբնական, բնականօրէն առաջացած մարմնական կառուցւածքը, յատկապէս նրանց միջեւ եղած ցեղային տարբերութիւնները, այլեւ կառուցւածքի հետագայ ամբողջ զարգացումը -կամ թէ զարգացման բացակայութիւնը – մինչեւ օրս»։

Ըստ իս, զուր է ջնջել այս մասը Մարքսը, որովհետեւ այստեղ որոշ տուրք է տւած նաեւ ցեղային տարբերութիւններին, որոնք անկարելի է անտեսել։ Այսպիսով, արտադրական ուժերի զարգացումը պայմանաւորւած է ոչ միայն արտադրական յարաբերութիւններով, այսինքն՝ տիրող վարչակարգով, այլեւ երկրաբանական, աշխարհագրական, կլիմայական, ցեղային և այլ առանձնայատկութիւններով։ Այս գործօնները մենք չենք կարող անտեսել, ինչպէս չենք կարող անտեսել բնական պայմանների գործօնը դասակարգային խնդիրներում։

Եթէ տւեալ ազգի արտադրական ուժերի զարգացումը մենք դիտենք միայն արտադրական յարաբերութիւնների տեսանկիւնից, ապա ստիպւած կը լինենք գովաբանելու զարգացած արտադրական ուժեր ունեցող ժողովուրդների վարչակարգերը և այդ ժողովուրդներին դասել աւելի բարձր աստիճանի։ Այդ դէպքում քաղքենին էլ իր դասակարգային վէճում բանւորի հետ կ'ասի բանւորին. «Սիրելիս, ես հարուստ եմ, որովհետեւ քեզանից խելացի եմ, քեզանից կրթւած եմ, քեզանից ճարպիկ եմ ու աշխատասէր»։ Ի՞նչ կարող է պատասխանել նրան բանւորը,- «Ոչ, սիրելիս, մենք չենք ունեցել զարգանալու համար հաւասար պայմաններ։ Դու ծնողիցդ մեծ ժառանգութիւն ես ստացել, որի շնորհիւ՝ զարգանալու, կրթւելու, աշխատելու և դրամդ կրկնապատկելու աւելի մեծ հնարաւորութիւն ես ունեցել»։

Մի՞թէ այս նոյն բանը չի տարածւում ազգութիւնների զարգացման վրայ։ Մի՞թէ արտադրական ուժերը զարգացնելու համար նոյն պայմաններն են ունեցել բոլոր ազգութիւնները։ Իսկ եթէ այդ պայմանները տարբեր են եղել և

տարբեր էլ մնալու են, արդեօք հնարաւո՞ր է իսկական ընկերվարական արդարութիւնը, եթէ նոյնիսկ լուծի դասակարգային խնդիրը։

Ենթադրենք թէ միջազգային բանւորական շարժումը, ընկերվարական գաղափարախօսութեամբ զինւած, լուծեց դասակարգային հարցերը աշխարհի բոլոր երկրներում։ Բանւոր դասակարգը, ամբողջ աշխատաւորութեան հետ միասին, բոլոր երկրներում եկել է իշխանութեան գլուխ և ի սպառ վերացրել է շահագործումը։ Այս բանից յետոյ սկսւելու է մի նոր, գուցէ աւելի մեծ անարդարութիւն, որը, անշուշտ, այսօր էլ կայ, բայց, դասակարգային հակադրութեամբ տարւած, մենք այն չենք ուզում նկատել։

Անարդարութիւնը կը կայանայ նրանում, որ Ճապոնիայի բանւորներն ու աշխատաւորները ստիպւած կը լինեն իրենց դատարկ կղզիների վրայ ոչնչից արտադրութիւն ստեղծել, իսկ որոշ արաբական երկրներում նաւթը, գրեթէ առանց աշխատանքի, շատրւանի պէս բարիքներ կը թափի իրենց երկրների աշխատաւորների գլխին։ Հայ աշխատաւորները ստիպւած կը լինեն Ալահվերդու քարերի վրայ խաղող աճեցնել, իսկ Վրաստանի կլիմայական բարեբեր պայմաններում խաղողն ու լոլիկը առանց ջրելու և մշակելու էլ կ՚աճեն։

Իմ բարեկամ բանւորներից մէկը, տարիներ առաջ, տեսնելով թէ ինչպէս են Հայաստանի կուսակցական ղեկավար աշխատողների կանայք Կենտ. Կոմիտէի սեւ «Վոլգա»ներով շուկայ գնում, մէկ անգամ ասաց. «Սա ընկերվարութի՞ւն է թէ շանտղութիւն»։ Կարծում եմ, որ Ճապոնիայի աշխատաւորներն էլ, տեսնելով բարեբեր Վրաստանը կամ մէկ ուրիշ երկիր, իրաւունք կ՚ունենան բացագանչելու. «Սա ի՞նչ է, ընկերվարութի՞ւն թէ շանտղութիւն»։

Հէնց դրա համար էլ ես կարծում եմ, որ դասակարգային հարցը լուծելուց յետոյ էլ ընկերվարութիւնը չի ազատւի ազգային հարցից։ Աւելին, դասակարգային հարցը լուծելուց յետոյ, ազգային հարցը կը դառնայ ընկերվարութեան գլխաւոր բովանդակութիւնը։ Այստեղ է, որ պիտի իմաստաւորւի Մարքսի այն միտքը, թէ «փիլիսոփաները միայն տարբեր կերպով բացատրել են աշխարհը, բայց խնդիրն այն փոխելն է»։

Իսկ փոխել աշխարհը ընկերվարական սկզբունքների համաձայն՝ նշանակում է հաւասարաչափ և արդարացիօրէն բաշխել ոչ միայն մարդկանց կողմից ստեղծւած բարիքները, այլ նաեւ բոլորին հաւասարաչափ պատկանող բնութիւնը։ Ճապոնացուն պէտք է նաւթ հասնի, հային՝ ծով, անապատում ապրողին լեռ և անտառ և այլն։ Ի՞նչպէս կարելի է անել այդ։ Ճիշտն ասած՝ չգիտեմ։ Բայց գիտեմ, որ եթէ այս բանը որեւէ ժամանակ պիտի արւի, ապա պիտի արւի ընկերվարութեան կողմից։

Եթէ այս հարցերով ընկերվարութիւնը երբեւէ չզբաղուի, ապա մօտ ապագայում նա կը կորցնի իր վաղեմի հեղինակութիւնը, որովհետեւ ազգային իրա-

տունքների պաշտպանութիւնը այժմ կարեւորագոյն տեղ է գրաւում աշխարհում: Ի՞նչպէս պատահեց, որ միջազգային բանւորական շարժումները, դասակարգային պայքարները իրենց ծնունդից մէկ դար յետոյ և շատ լուրջ յաղթանակներից կէս դար յետոյ կրկին ստացան ազգային գունաւորում:

Այս փաստը մի անգամ եւս ապացուցում է ընկերվարութեան և ազգայնականութեան ներդաշնակութիւնը: Այս ներդաշնակութեան գաղափարը, բոլոր գաղափարների պէս, անցել է հեգելեան երեք փուլերից,- Դրութիւն – հակադրութիւն – համադրութիւն (**թեզ – անտիթեզ – սինթեզ**):

Առաջին փուլում ընկերվարութիւնը և ազգայնականութիւնը ապրում էին համերաշխ և ներդաշնակ կեանքով: Ընկերվարութիւնը դեռեւս գիտութիւն չէր, այլ պարզ արդարութեան զգացմունք: Ընկերային արդարութեան գաղափարը չէր ենթարկւում գիտական վերլուծութեան և մարդիկ վերագրում էին արդարութիւնը Աստծուն, բնութեանը, իշխանաւորներին, ճակատագրին և այլն: Բայց ոչ ոք չէր կասկածում, որ արդարութիւն կայ և որ արդարութիւնը անհրաժեշտ է ընկերային կեանքում:

Գիտութիւն չէր նաեւ ազգայնականութիւնը: Չկային հողային, պետական, մշակութային խնդիրներ, կար պարզ ազգային զգացմունք: Եւ այս երկու՝ արդարութեան և ազգային զգացմունքների փոխյարաբերութիւնը այնքան պարզ էր, այնքան հասկանալի, որ այս երկու զգացմունքներից կազմւում էր մի ամբողջութիւն կամ, աւելի ճիշտ, մի ամբողջական գաղափար. «Ազգը արդար վերաբերմունքի է կարօտ»: Սակայն այս ներդաշնակ ամբողջութեան մէջ արդարութիւնը աւելի կարեւոր տեղ է գրաւում, որովհետեւ աւելի ընդհանուր է և աւելի հիմնական:

Այս առաջին, նախնական փուլումն էլ ընկերվարութիւնը առաջնակարգ էր, որովհետեւ ազգային արդարութիւնը ընդհանուր ընկերային արդարութեան միայն մէկ մասն էր կազմում: Ուզում եմ բերել այս առաջին փուլի վերաբերեալ մի յատկանշական օրինակ:

Տարիներ առաջ, երբ ես Երեւանի «կաուչուկ»ի գործարանի բանւորների համար քաղաքական պարապմունքներ էի անցկացնում, իմ լսողներից մէկը հարցրեց. «Ներեցէք, իսկ ընկերվարութիւնը ոչինչ չի՞ նախատեսում կենդանիներին պաշտպանելու համար»: Ես շփոթեցի և ասացի, որ ոչ, ընկերվարութիւնը մարդկային հասարակակարգի արդարութեան տեսութիւն է: Ինձ հարց տւող բանւորը չափազանց հիասթափւեց ընկերվարութիւնից: Նա ընկալել էր ընկերվարութիւնը առաջին՝ ընդհանուր արդարութեան փուլի մակարդակով և շատ զայրացած էր նրանով, որ այդ արդարութիւնը կենդանիների վրայ չի տարածւում: Յետոյ միայն պարզւեց, որ նա յատուկ վերաբերմունք ունէր կեն-

դանիների նկատմամբ և բուսակեր էր դարձել, որպէսզի չմասնակցի կենդանիներին «խժռելու վայրենութեան»։

Այնպէս որ այս առաջին փուլում, որտեղ խօսում են արդարութեան և ազգային զգացմունքները, ազգայնականութեան և արդարութեան միջեւ հակասութիւն չկայ։ Բայց ժամանակի ընթացքում ընկերվարութիւնը և ազգայնականութիւնը զգացմունքների ոլորտից անցան գիտական վերլուծութիւնների ոլորտը և նրանց ճանապարհները շեղուեցին։ Ընկերվարութիւնը շեշտը դրեց տնտեսական արդարութեան վրայ, փոքր ինչ աչքաթող անելով ընկերային արդարութեան այլ բնագաւառները։

Ստեղծուեց դասակարգերի պայքարի գաղափարախօսութիւնը, որը աւարտուեց համայնավարական «**Մանիֆեստ**»ով, ուր ասւած էր, թէ «մինչեւ այժմ գոյութիւն ունեցող բոլոր հասարակակարգերի պատմութիւնը եղել է դասակարգերի պայքարի պատմութիւն։ Ազատն ու ստրուկը, ազնուականն ու հասարակը **(պատրիկն** ու **պլեբէյը)**, կալւածատէրն ու ճորտը, վարպետն ու ենթավարպետը, կարճ՝ ճնշողն ու ճնշւողը յաւիտենական հակամարտութեան մէջ են եղել իրար հետ…»։ Եւ չնայած նրան, որ այս վերջին «կարճ՝ ճնշողն ու ճնշւողը» արտայայտութիւնը ամբողջովին կարելի էր վերագրել նաեւ ճնշող ու ճնշւող ազգերին, այդպէս չեղաւ։

Ոչ ընկերվարականները և ոչ էլ համայնավարները իրենց գաղափարախօսութիւնների մէջ ազգային խնդիրներին լուրջ տեղ չտուեցին։ Կարծես թէ նեղացած իր վաղեմի բարեկամ և հովանաւորիչ ընկերվարութիւնից՝ ազգայնականութիւնը փորձեց ինքնուրոյնութիւն ձեռք բերել և սկսեց մշակել սեփական գիտական դրոյթները։ Առաջ քաշուեցին տարբեր տեսութիւններ ազգային պետականութեան, լեզւի ընդհանրութեան, ազգային նկարագրի առաջնակարգութեան և ազգային այլ առանձնայատկութիւնների աստւածացման մասին։

Ազգայնականութեան ինքնուրոյնութեան բոլոր այս փորձերը, որոնք հանդէս էին գալիս որպէս սկզբնական ներդաշնակութեան հակա**թեզի** արտայայտութիւն, է՛լ աւելի սրեցին ընկերվարութեան և ազգայնականութեան հակադրութիւնը։ Բայց այս հակադրութիւնը հասկանալի էր և անխուսափելի։ Այս ճանապարհին են անցել բոլոր գաղափարները։

Որպէս օրինակ վերցնենք գիտութիւնը,- Կար ժամանակ, երբ բոլոր գիտութիւնները, աւելի ճիշտ՝ գիտելիքները կենտրոնացւած էին մէկ փիլիսոփայութիւն կոչւող գիտութեան մէջ։ Այնտեղ մարդկային իմացութեան բոլոր բնագաւառները ներդաշնակ միասնութիւն էին կազմում։ Յետոյ փիլիսոփայութիւնից սկսեցին անջատւել առանձին գիտութիւններ։ Նրանք ինքնուրոյնութիւն ձեռք բերեցին և հակադրուեցին մէկը միւսին։

Սակայն շատ շուտ պարզուեց, որ նրանց սկզբնական ներդաշնակութիւնը պատահական չէր և սկսուեց գիտութիւնների վերամիաւորման ընթացքը: Ստեղծուեցին **կենսա-քիմիա**, **էլեկտրա-քիմիա**, **էլեկտրա-մեխանիկա**, **ֆիզիկա-քիմիա**, ուսողական (**մաթեմատիկական**) տնտեսագիտութիւն, ուսողական լեզուաբանութիւն և այլն: Իսկ **կիբերնետիկա** կոչուող գիտութիւնը եկաւ բոլոր գիտութիւնները միացնելու յաւակնութեամբ: Սա արդէն երրորդ փուլն է, երբ հակա**թեզ**ին յաջորդում է **սինթեզ**ը:

Ըստ երեւոյթին, այս նոյն բանը կատարւում է նաեւ ընկերվարութեան և ազգայնականութեան ներդաշնակութեան բնագաւառում: Հետաքրքրական է, որ Ստեփան Շահումեանը շատ լաւ կռահել էր ազգայնականութեան ընկերվարութիւնից անջատուելու ընթացքը և արդարացիօրէն հակառակում էր դրան: Իր աշխատութիւններից մէկում, քննադատելով Անանունի **«Ազգային Հարցը և դեմոկրատիան»** յօդուածը, նա գրում է.

«Մենք, **սոցիալիստ**ներս, համաձայն ենք այն մտքի հետ, որ ազգային հարցը անկարելի է անգիտանալ, ինչպէս անկարելի է անգիտանալ, կ՚աւելացնենք մենք, կանանց հարցը, կրօնների կամ, ուրիշ խօսքով, խղճի ազատութեան հարցը և այլն: Սակայն ով քիչ թէ շատ ծանօթ է **նացիոնալիզմ**ի էութեան և պատմութեան հետ, նա գիտէ, որ **նացիոնալիզմ**ի բնորոշ առանձնայատկութիւնը կայանում է հէնց նրանում, որ նա ցանկացել է միշտ ազգային հարցը լուծել ընդհանրապէս, անկախ իր առանձին **կոնկրետ** արտայայտութիւններից: **Նացիոնալիզմ**ի հիմնական սկզբունքը այն է, թէ ազգութիւնը մի անհատականութիւն է, որը հարկաւոր է միշտ և ամէն կերպ, ինչ գնով էլ որ լինի, պահպանել և զարգացնել, որ ազգութիւնը հասարակական-քաղաքական կեանկցութեան բնական ու յաւիտենական ձեւն է. որ ազգութիւնը միշտ իբրեւ ամբողջութիւն պէտք է տնօրինի իր հասարակական կեանքը: Մեկնելով այդ հայեացքից, հետեւողական **նացիոնալիզմ**ը յայտարարում է, թէ ամէն ազգութիւն պէտք է պետութիւն լինի: Այդ նշանաբանը հնչում էր Եւրոպայի բոլոր **բուրժուա**կան յեղափոխութիւնների ժամանակ և այդ ունէր, ի հարկէ, իր պատճառները: Բայց եթէ ժամանակին այդ **ֆորմուլը** ունէր իր որոշ դրական պատմական նշանակութիւնը, հետագայում նա ցոյց տուեց իր հակասական ու երբեմն **ռեակցիոն** բնաւորութիւնը»:

Շահումեանի այս արտայայտութիւնը ես մէջբերեցի ո՛չ թէ վերլուծելու, համաձայնելու կամ հերքելու համար, այլ պարզապէս ցոյց տալու համար, որ Շահումեանի պէս համայնավարական համոզումներ ունեցող մարդն անգամ ընդունում էր ազգային հարցի լուծման անհրաժեշտութիւնը, միայն թէ չէր ուզում ընդունել ազգայնականութեան ինքնուրոյնութիւնը, նրա անկախութիւնը ընկերվարութիւնից: Նրա մտահոգութիւնները ճիշտ էին և հիմնաւորւած,

որովհետեւ երբ որեւէ ներդաշնակ ամբողջութիւնից անջատւում է նրա մասերից մէկը և սկսում է ինքնուրոյնութիւն որոնել, ապա նա կամ կործանւում է և կամ էլ կցւում մէկ ուրիշ ամբողջութեան ու ձեռք է բերում նոր էութիւն, այսինքն՝ հին իմաստով նոյնպէս կործանւում է:

Ինչպէս հողից կտրուած գիւղացին, հաւատքից կտրուած եկեղեցին, արուեստից կտրուած երաժշտութիւնը, բարոյականութիւնից կտրուած օրէնքը, գաղափարից կտրուած հերոսութիւնը, սիրուց կտրուած համբոյրը գիւղացի, եկեղեցի երաժշտութիւն, օրէնք, հերոսութիւն և համբոյր չեն, այնպէս էլ ընկերային արդարութիւնից, տւեալ դէպքում՝ ընկերվարութիւնից կտրուած ազգայնականութիւնը ազգայնականութիւն չէ: Բայց, ինչպէս առանց գիւղացու՝ հողը, առանց եկեղեցու՝ հաւատքը, առանց երաժշտութեան՝ արուեստը, առանց օրէնքի՝ բարոյականութիւնը, առանց հերոսութեան՝ գաղափարը և առանց համբոյրի՝ սէրը դատարկ էութիւններ են, այնպէս էլ առանց ազգայնականութեան ընկերվարութիւնը բաւականին դատարկ է:

Սակայն, ինչպէս տեսնում ենք, ընկերվարութիւնը, առանց ազգայնականութեան էլ, թէեւ բաւականին աղքատացած, կարող է գոյութիւն ունենալ, իսկ ազգայնականութիւնը, առանց ընկերվարութեան կամ, աւելի ճիշտ, առանց որեւէ ընկերային արդարութեան տեսութեան չի կարող ապրել: Դրա համար էլ, անջատւելով ընկերվարութիւնից, նա սկսում է որոնել արդարութեան ուրիշ գաղափարախօսութիւն և մերթ յարում է իսլամութեան, մերթ յուդայականութեան, մերթ քաղքենի տարբեր տեսութիւնների, մերթ ազգայնամոլութեան (**շովինիզմ**) և կամ հողից կտրուած ծաղիկի պէս թառամում ու հանգչում է:

Բայց նրա իսկական տեղը, իսկական հողը ընկերվարութիւնն է: Եւ դա բացայայտօրէն երեւում է երրորդ փուլում, որտեղ տեղի է ունենում համադրութիւն (**սինթեզ**) և աւելի բարձր մակարդակով վերականգնւում է ընկերվարութեան և ազգայնականութեան նախնական ներդաշնակութիւնը: Այս համադրութեան (**սինթեզ**) ժամանակաշրջանը ապրում ենք մենք այսօր: Եւ մեր ուսերի վրայ է դրւած այս ընթացքին նպաստելու և զգուշօրէն մօտենալու մեծ պարտականութիւնը: Մենք պէտք է կարողանանք, առանց վիրաւորելու ընկերվարութիւնը և առանց խրտչեցնելու ազգայնականութիւնը, վերադարձնել ազգայնականութեան իմաստուն գիրքը ընկերվարութեան գրադարանի համապատասխան դարակը:

Առաւել եւս այդ պէտք է անի Հ.Յ.Դաշնակցութիւն կուսակցութիւնը, որը հաւասարաչափ արժէքաւորում է թէ՛ ընկերվարութիւնը և թէ նրանից բխող ազգայնականութիւնը: Առաւել եւս այդ պէտք է անի մեր ժողովուրդը, որը ա՛յնքան տառապել է աշխարհի անարդարութիւններից: Մեր ժամանակներում, երբ լուրջ վերաքննութեան են ենթարկւում ընկերվարութեան որոշ դրոյթներ,

անհրաժեշտ է աչքաթող չանել նաեւ ազգայնականութիւնը, որը այսօր արդէն պատրաստ է կրկին նետուելու իր մայր ընկերվարութեան գիրկը:

Տեսնենք, թէ ինչպիսի փոխյարաբերութիւնների մէջ են այսօր (**սինթեզի** պահին) ընկերվարութիւնը և ազգայնականութիւնը: Նախ դիտարկենք այս երկու գաղափարների այժմեան կացութիւնները առանձին-առանձին:

Սպանիայի Ընկերվարական Բանւորական կուսակցութեան գլխաւոր քարտուղար Կոնզալեսը, կուսակցութեան 28րդ Համագումարին, կոչ արեց համագումարի պատգամաւորներին՝ վերանայել կուսակցութեան ծրագիրը և հրաժարուել մարքսեան կուսակցութիւն կոչուելուց:

«Ժամանակակից իրականութիւնը,- ասաց Կոնզալեսը,- շատ աւելի բարդ ու բազմակողմանի է, քան մէկ դար առաջ էր: Մարքսականութիւնը այսօր այլեւս պէտք չէ համարւի անառարկելի պնդում (**դոգմա**): Նրա դրոյթներից շատերը դեռեւս ընդունելի են, բայց շատ բան պէտք է դէն նետւի որպէս հնացած»: Գլխաւոր քարտուղար Կոնզալեսի առաջարկը չանցաւ: Կուսակցութեան պատգամաւորները ձայների 61 տոկոս մեծամասնութեամբ որոշեցին որ կուսակցութիւնը շարունակելու է մարքսեան կոչւել: Կոնզալեսը հրաժարական տւեց:

Է՛լ աւելի հիմնական գրոհ կատարեցին մարքսականութեան դէմ եւրոպական որոշ երկրների համայնավար կուսակցութիւնները, հրաժարւելով «բանտրական մենատիրութիւն» (**«պրոլետարիատի դիկտատուրա»**) սկզբունքից: Անշուշտ բոլոր այս «վերանայումները» կրում են ոչ թէ գաղափարական, այլ քաղաքական - մարտավարական բնոյթ: Պարզապէս այս կուսակցութիւնները իշխանութեան գլուխ գալու համար յարմարւում են ընտրողներին: Բայց հէնց դրանումն է հարցը,- ինչո՞ւ այդ ընտրողները այլեւս չեն ուզում մնալ մարքսեան դրոյթների սահմաններում: Ինչո՞ւ Գերմանիայի Ընկերվար-Ժողովրդավարական (Սոցիալ-Դեմոկրատ) կուսակցութիւնը կարողացաւ իշխանութեան գլուխ անցնել միայն այն բանից յետոյ, երբ ընդունեց այսպէս կոչւած «Գոդեսբերգի ծրագիրը», որտեղ հրաժարւում էր մարքսականութիւնից:

Բոլոր այս վերանայումները կապ ունեն այն բանի հետ, որ ընկերային արդարութեան ոլորտը չափազանց ծաւալւել է և դրա հետ միասին ընկերվարութիւնը պարտաւոր է դուրս գալու նեղ դասակարգային սահմաններից, աւելի ճիշտ, պէտք է կարողանայ իր դասակարգային մօտեցումը տարածել բոլոր այն բնագաւառների վրայ, որտեղ անարդարութիւն է տիրում: Կարո՞ղ է արդեօք այսօր ընկերվարութիւնը անցնել մարդու իրաւունքների պաշտպանութեան կողքից ասելով, թէ սա դասակարգային խնդիր չէ:

Այսօր առաջադէմ մարդկութիւնը ունի բազմաթիւ չլուծւած խնդիրներ, բնութեան պաշտպանութիւնից սկսած՝ վիժումների արգելքի խնդրով վերջաց-

րած։ Այսօր արդէն իմ բանւորի այն հարցն էլ, թէ արդեօք ընկերվարութիւնը զբաղւո՞ւմ է կենդանիների պաշտպանութեան հարցով, այնքան էլ ծիծաղելի չէ, որովհետեւ գիտնականները յանգել են այն եզրակացութեան, թէ անտառների, կենդանիների ոչնչացումը, բնութեան աղտոտումը, մի խօսքով՝ բնութեան կարելիից աւելի շահագործումը գուցէ աւելի վնասակար է, քան մարդու շահագործումը։

Այսօր տեղի է ունեցել մարդկութեան մերձեցում և այլեւս չի կարող Ֆրանսիացին կամ անգլիացին Մանշի ծով թափել իր գործարանի թունաւոր մնացուկները և յայտարարել,- «Սա իմ ներքին գործն է»։ Կարծես թէ մօտենում է ժամանակը, երբ որեւէ երկրի կառավարութիւն չի կարողանալու իր երկրի քաղաքացիների ազատութեան հարցը համարել իր երկրի ներքին գործը։

Մարդկութիւնը, որոշ իմաստով, միաւորւում է և աւելի ճանաչելի է դառնում։ Հասարակաց Շուկան, Եւրոպական Խորհրդարանը, Տնտեսական Փոխօգնութեան Կոմիտէն, Ատլանտեանի Ուխտը, Վարշաւայի Պայմանագիրը և ուրիշ մեծ միաւորումներ գալիս են վկայելու, որ մարդկութիւնը մերձեցման կարիք ունի։ Եւ այս մերձեցման պահին, ընկերվարութեան ուսերի վրայ է ընկնում միաւորման արդար հիմերի մշակումը։ «Բանւորութիւնը հայրենիք չունի» բանաձեւում այլեւս չես խուսափի մնացած խնդիրներից։ Այժմ միաւորւում են ոչ միայն բոլոր երկրների բանւորները այլ նաեւ աշխատաւորները, ծառայողները, մարմնամարզիկները, գիտնականները, արւեստագէտները և այլն։

Ընկերվարութիւնը պարտաւոր է ծաւալելու իր տեսադաշտը։ Եւ կարծես թէ նա կարողանում է կատարել իր այդ պարտականութիւնը։ Ուրիշ խօսքով՝ այսօր ընկերվարութեան զարգացման գլխաւոր ուղղութիւնը նրա իշխանութեան ծաւալման ուղղութիւնն է այսինքն, որոշ իմաստով, վերադարձը այն նախնական վիճակին, երբ նա ընդգրկում էր մարդկային կեցութեան բոլոր բնագաւառները, որպէս համընդհանուր արդարութեան մի գաղափար։

Ազգայնականութիւնն էլ զարգացում ապրեց։ Նախ և առաջ՝ նա ապացուցեց, որ գիտարհեստական զարգացումը և անաստուածեան մթնոլորտը ոչ միայն չեն մեռցնում ազգային զգացմունքները, այլեւ, ընդհակառակն, հող են ստեղծում նոր տեսակի ազգայնականութեան համար։ Աշխարհի տարբեր ծայրերում անսպասելիօրէն ծնունդ են առնում այնպիսի ազգայնականութիւններ, որոնց մասին ոչ ոք մտածել անգամ չէր կարող։ Իրլանդացիների, բասկերի, պաղեստինցիների, քրդերի, հայերի և շատ ուրիշ ազգերի վճռական ելոյթները ցոյց են տալիս, որ մարդկութիւնը այդքան հեշտութեամբ չի ազատւելու ազգային խնդիրներից։

Ամենազարմանալին ռուսական ազգային գիտակցութեան նոր վերելքն է։ Թւում էր, թէ ազգային գիտակցութիւնը վերելք է ապրում այն պահերին, երբ

ազգի ազգային գոյութիւնը վտանգի տակ է: Բայց ահա ռուսները, որոնք Խորհրդային Միութեան իշխող ազգն են, որոնք իրենց լեզուն և մշակոյթը պարտադրում են ուրիշ ազգերին, որոնք իշխում են բանակում անվտանգութեան մարմիններում, կուսակցութեան և կառավարութեան մէջ, գիտութեան ու արուեստի մէջ այս հզօր ռուսները յանկարծ սկսեցին բողոքել, թէ ազգային տեսանկիւնից իրենք Խ. Միութեան ճնշուած ազգերից մէկն են:

Այս մասին գրում և խօսում են այնպիսի ռուս մտաւորականներ, ինչպիսիք են Սոլժենիցինը, Գլազունովը, Օսիպովը, Վագինը և շատ ուրիշներ: Եւ ես կարծում եմ, որ նրանք իսկական ազգայնականութեան իմաստով ճիշտ են: Նախ և առաջ, այն տարածուած կարծիքը, թէ ռուսները Խ. Միութիւնում ճնշում են մնացած ազգերին՝ ամբողջովին սխալ է: Ոչ մի ազգութիւն, լինի հայ թէ վրացի, ուզբեկ թէ ուկրաինացի տնտեսապէս և իրաւապէս չի տուժում նրանից, որ հայ է կամ վրացի:

Ես այստեղ չեմ ուզում քննարկել հրեաների կամ Խրիմի թաթարների հարցը, որոնք իսկապէս որ ճնշւում են, բայց նրանց պարագան տարբեր է: Ռուսները իրենց իշխող ազգ լինելուց գրեթէ ոչ մի օգուտ չեն քաղում: Նրանք այնքան են նոյնացած Խ. Միութեան հետ, որ, ի տարբերութիւն միւս ազգութիւնների, կոմունիստական կուսակցութիւն անգամ չունեն: Ոչ ոք չի կարող ասել, որ ռուսները, ռուս գիւղացին, ռուս գիտնականը, ռուս բանուորը կամ ռուս պաշտօնեան աւելի լաւ պայմաններում է գտնւում, քան նոյն կարգի հայը, վրացին կամ ուզբեկը:

Ընդհակառակն, խուսափելով աշխարհակալական քաղաքականութիւնից, կառավարութիւնը փորձում է հաւասարութիւն հաստատել հանրապետութիւնների միջեւ և ստեղծում է ակադեմիաներ, օպերաներ և համալսարաններ այնտեղ, որտեղ դեռեւս կէս դար առաջ գիր-գրականութիւն անգամ չկար:

Կառավարութիւնը ստիպւած է լինում հաշւիչ մեքենաների գործարաններ ստեղծել այնտեղ, որտեղ բնակչութիւնը, խաշնարածութիւնից բացի, ոչինչ չգիտէ: Այս կացութիւնը որոշ իմաստով ստիպում է ռուսներին զիջողութիւններ կատարել, սեփական գիտութեան, արուեստի ու արդիւնաբերութեան մակարդակի իջեցման գնով: Սա հիանալի հասկանում են ազգասէր ռուսները և բացայայտօրէն յայտարարում են, թէ խորհրդային ոչ-ռուս հանրապետութիւնները ոչ միայն չեն օգնում ռուսներին, այլեւ խանգարում են նրանց: Զօրավար Գրիգորենկոն, օրինակ, յայտարարեց, թէ եկել է ժամանակը, երբ ռուսները, այսինքն՝ Ռուսաստանի Խորհրդային Ընկերվարական դաշնակցային հանրապետութիւնը, օգտւելով իր սահմանադրական իրաւունքից, դուրս գայ Խ. Միութեան կազմից:

Բոլոր նման յայտարարութիւնները և ռուսական ազգային նոր շարժումները կապ ունեն ազգայնականութեան էութեան փոփոխութեան հետ: Քաղքենի ազգայնականութեան համար յատկանշական իշխելու ձգտումից նա անցել է ինքնապաշտպանութեան: Այժմ ազգայնականութեան միակ մտահոգութիւնը սեփական դէմքը և ուրոյնութիւնը պաշտպանելու մէջ է: Դրա համար նա պատրաստ է զիջելու նոյնիսկ իշխանութիւնը, ինչպէս նա զիջեց բարենպաստ տնտեսական իր պայմանները: Մենք ականատես եղանք, թէ ինչպէս շատ ազգութիւններ զէնքը ձեռքներին պայքարեցին և դուրս եկան օտար լծի տակից, զգալիօրէն վատացնելով իրենց տնտեսական պայմանները (Ալճերիա, Կուբա, Վիեթնամ և այլն):

Մի խօսքով ազգայնականութիւնը այսօր դարձել է ինքնապաշտպանութեան բնական ձգտում: Եւ այստեղ է, որ ընկերվարութիւնը չի կարող ձեռք չպարզել այդ ինքը իրեն պաշտպանող ազգայնականութեան: Այս տեսակ ազգայնականութիւնը, որը ազգային իրաւունքների պաշտպանութեան շարժում է, նոյնքան համակրելի պիտի լինի ընկերվարութեան համար, որքան որ համակրելի են նրա համար մարդու, դասակարգերի, կանանց բնական իրաւունքների պաշտպանութիւնը:

Աւելի՛ն, բոլոր այս իրաւունքների պաշտպանութիւնը ընկերվարութեան էութիւնն են կազմում: Այսպիսով, ընկերվարութեան տեսադաշտի ծաւալումը և ազգայնականութեան ինքնապաշտպանութեան անցնելը պայմաններ են ստեղծում ընկերվարութեան և ազգայնականութեան ներդաշնակութեան վերականգնման համար: Այդ ներդաշնակութիւնն ստեղծելու ընթացքը ժամանակակից հասարակական տեսութիւններից գլխաւորն է: Եւ չնկատել այն՝ նշանակում է յետ մնալ կեանքից:

Ընկերվարութիւնը այսօր բազմաճիւղային տեսութիւն է, յամենայն դէպս, նա պէտք է այդպէս լինի: Աշխարհում շատ անարդարութիւն կայ, շատ աւելի շատ, քան արդարութիւն: Ընկերվարութիւնը աշխատում է վերացնել կամ գոնէ պակասեցնել այդ անարդարութիւնները: Իր այդ գործունէութեան մէջ, ընկերվարութիւնը յենւում է մարդկանց ու կազմակերպութիւնների վրայ: Բայց կարեւորը այն է, որ ամէն մի անձ, խումբ, կուսակցութիւն, իր անձնական փորձից ելնելով, ընդունի միայն այն գաղափարները, որոնք զգում է, այսինքն ընկալում է ոչ միայն տրամաբանութեամբ, այլեւ զգացմունքներով ու ամբողջ էութեամբ:

Ընկերվարական մտածելակերպ ունեցող ամէն մի անձ իր պայքարի համար ընտրում է այն բնագաւառը, որ իրեն համար մօտ է ու հասկանալի: Եթէ այսօր որեւէ մէկը մասնակցում է ընկերվարական շարժմանը բանւոր դասակարգի շահերը պաշտպանելու համար, ապա նա չպէտք է զարմանայ իր կող-

քին տեսնելով մէկ ուրիշին, որը ընկերվարական է դարձել կանանց իրաւունքները պաշտպանելու համար, և առաւե՛լ եւս չպէտք է զարմանայ, երբ իր շուրջը տեսնի ազգային խնդիրներով տառապող ընկերվարականների: Եւ հաշիւ տանք մեզ նրանում, որ ընկերվարական նպատակները կարող են իրականանալ միայն բոլոր ներդաշնակ ուղղութիւնների համերաշխ պայքարի միջոցով:

Այնտեղ, որտեղ խախտւում է այդ համերաշխութիւնը, որտեղ ընկերվարութիւնը հրաժարւում է ընկերային արդարութեան որեւէ բնագաւառից, այնտեղ ընկերվարութիւնը վեր է ածւում կուսակցամոլութեան, որը երկար կեանք չի կարող ունենալ:

Հ.Յ.Դաշնակցութիւնը այն կուսակցութիւններից մէկն է, որը ընկերվարութեան և ազգայնականութեան ներդաշնակութեան սկզբունքները արձանագրել է իր ծրագրի մէջ: Մնում է, որ նա աչքի լոյսի պէս պահի և զարգացնի այդ ներդաշնակութեան սկզբունքը:

1979

ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Է. Յովհաննիսեան

Վերջին տարիներին խորհրդային մամուլը յաճախ է գրում այն մասին, որ տնտեսավարութեան որոշ բնագաւառներում՝ սպասարկում, արհեստագործութիւն և նոյնիսկ առեւտուր, անհրաժեշտ է թոյլ տալ անհատական նախաձեռնութեան ազատութիւն: Այդ կոչերը հասկանալի են, որովհետեւ խորհրդային տնտեսութեան աւելի քան 60 տարւայ փորձը ապացուցեց շշմեցուցիչ մի իրողութիւն. երկրի գիւղատնտեսական հողատարածութեան 10 տոկոս կազմող անհատական տնտեսութիւնները մրցում են 90 տոկոս կազմող պետական տնտեսութեան հետ:

Նախաձեռնութիւններին ազատութիւն տալու կոչերի շարքին է դասւում նաեւ Խորհրդային Միութեան Գիտութիւնների կաճառի Սիբիրի բաժանմունքի տնտեսագիտութեան հիմնարկի տնօրէն ակադեմիկոս Աղամբեկեանի յօդուածը, որը նա հրատարակեց անցեալ տարւայ Դեկտեմբերի 12ին **«Տրուդ»** թերթում: Այնտեղ նա գրում է. «Պէտք է հնարաւորութիւն տրւի մարդկանց նախաձեռնութեան համար կենցաղի բնագաւառներում: Վերցնենք, օրինակ, **տաքսի**-ների սպասարկումը: Յաճախ սպասում ես **աւտոմեքենա**յի, իսկ նա ժամերով չի գալիս: Վարորդների և մեքենաների պակաս է զգացւում: Միեւնոյն ժամանակ անհատական **աւտոմեքենա**ների վարորդները սիրով առաջարկում են իրենց ծառայութիւնները: Բայց նրանց ծառայութիւններից օգտւելը անօրինական է: Իսկ եթէ նրանց հետ օրինական կարգով պայմանագիր կնքւի, համապատասխան տուրքեր գանձելով անշուշտ ո՞վ կը տուժի: Կարծում եմ, որ ոչ ոք: Այս նոյն մօտեցումը կարելի է ցուցաբերել նաեւ փոքր խանութների նկատմամբ: Չէ՞ որ ներկայ պայմաններում այդ խանութների վրայ են նստած վարիչը, հաշւապահը, գործակատարը, հաւաքարարը և այլն, և այլն: Ինչո՞ւ չփորձել խանութը վարձով տալ մի անձնաւորութեան, որի աշխատանքը, անշուշտ, կը գտնւի պետական հսկողութեան տակ»:

Պատասխանելով իր հնարաւոր հակառակորդներին, Աղամբեկեանը նախ նշում է, որ ուրիշ համայնավար երկրներում նման փորձը իրեն արդարացրել է, և յետոյ նա ընդգծում է, որ այդ անհատական տնտեսութիւնները գտնւելու են պետական հսկողութեան տակ և գործելու են առանց վարձու աշխատանքի օգտագործման:

Այդ նոյն կարծիքն է յայտնում տնտեսական գիտութիւնների թեկնածու Գենադի Լիսիչկինը իր յօդւածների մէջ: Աղամբեկեանից ու Լիսիչկինից շատ

հեռու չի գնացել Միջազգային Ընկերվարական Տնտեսութեան բաժանմունքի վարիչ Համբարձումեանը, որը իր «Անհատական տնտեսութեան մասին» խորագրով յօդուածում գրում է. «Օգտակար կը լինէր, որ անհատական աշխատանքային գործունէութիւնը տարւի ոչ միայն արհեստագործական, այլ նաեւ սպասարկման այլ բնագաւառներում, ինչ որ բխում է Սահմանադրութեան 17րդ յօդուածից: Խօսքը ոչ թէ դրամատիրական տնտեսութեան, ոչ թէ մարդու շահագործման, այլ ընտանեկան տնտեսութիւնների մասին է, որտեղ բացառուած է շահագործումը»:

Եւ, վերջապէս, Խորհրդային Միութեան Համայնավար կուսակցութեան գլխաւոր քարտուղար Անդրոպովը Կենտկոմի լիագումար նիստում ասաց. «Ուժ են առնում արդիւնաբերական ձեռնարկութիւններին կից տնտեսութիւնները: Արդարանում է անհատական տնտեսութիւնների նկատմամբ ցուցաբերած մեր ուշադրութիւնը և աջակցութիւնը»:

Այժմ տեսնենք, թէ որքանով անհատական տնտեսութիւնների մասին այս խօսակցութիւնները համապատասխանում են ընկերվարական տնտեսավարութեան սկզբունքներին: Այստեղ մենք գործ ունենք աշխատանքի վարձատրման ընկերվարական կարեւորագոյն սկզբունքի հետ, որը առաջին իսկ օրից խախտւել է Խորհրդային Միութիւնում և որի հետեւանքով էլ Խորհրդային Միութիւնում չլուծւեց ոչ դասակարգային և ոչ էլ աշխատանքի հաւասարութեան խնդիրը:

Այս խնդրի մանրակրկիտ վերլուծութիւնը կարեւոր եմ համարում, որովհետեւ սա հէնց այն հարցն է, որը իրաւունք է տալիս մեզ ասելու, թէ ընկերվարութեան Ստալինի տարբերակը ոչ մէկ կապ ունի դասական ընկերվարութեան հետ: «Գոթեան ծրագրի քննադատութեան» մէջ Մարքսը գրում է. «Սպառման ապրանքների բոլոր տեսակի բաշխումները միշտ էլ եղել են միայն արտադրական պայմանների բաշխման արդիւնք, իսկ վերջինս արտայայտում է արտադրութեան բնոյթը»: Ստալինը երբեք «սպառման ապրանքների բաշխում» հասկացութիւնը չօգտագործեց և այդ թոյլ տւեց նրան, ընկերվարութեան մասին խօսելիս, շրջանցել աշխատանքի և աշխատանքային յարաբերութիւնների ընկերվարական սկզբունքները:

Ինչո՞ւմն է կայանում աշխատանքի վարձատրման Ստալինեան սկզբունքների հակաընկերվարականութիւնը: Մենք գիտենք և մեզ համար սովորական է դարձել, որ դրամատիրութեան ժամանակ բարձր մասնագիտական որակաւորում ունեցող աշխատաւորը, որը աւելի բարդ աշխատանք է կատարում, վարձատրւում է աւելի բարձր, քան աւելի պարզ աշխատանք կատարող աշխատաւորը: Ի՞նչ տնտեսական սկզբունքի վրայ է հիմնւում վարձատրման այդ ձեւը: Դրամատիրական արտադրութեան մէջ աշխատող բանւորական ուժը

ապրանք է: Վաճառելով այդ ապրանքը դրամատիրոջը, ապրանքի սեփականատէրը ստանում է իր ապրանքի գինը: Ինչպէս բոլոր ապրանքների համար, այնպէս էլ բանւորական ուժի համար արժէքը կազմւում է ապրանքը ստեղծելու և պահպանելու ծախսերից (արտադրելու և վերարտադրելու) և այդ արժէքը այնքանով բարձր է, որքանով որ բարձր է աշխատաւորի մասնագիտական որակը:

Սակայն դրամատիրութեան մէջ բանւորական ուժ ստեղծելու և աշխատանքային վիճակում նրան պահելու ամբողջ պարտականութիւնը ընկնում է հէնց բանւորի ուսերի վրայ, որպէս այդ ապրանքի սեփականատէրի և վաճառականի: Ուստի աշխատավարձը դրամատիրական պայմաններում, որպէս աշխատանքի արժէք, պէտք է լինի այնքան բարձր, որքան բարձր է բանւորի մասնագիտական մակարդակը:

Սակայն այս ամէնը չի կարող գոյութիւն ունենալ ընկերվարութեան պայմաններում, որտեղ բանւորական ուժը ապրանք չէ: Իսկ եթէ այդ այդպէս է, ապա աշխատավարձը ոչ մէկ կապ չունի այն ծախսերի հետ, որոնք կատարւել են աշխատանքային ուժը և նրա որակը ստեղծելու համար, որովհետեւ այդ ծախսերը կատարւում են ոչ թէ աշխատաւորի, այլ հասարակութեան կողմից: Ընկերվարական հասարակարգում աշխատանքի վարձատրումը և աշխատավարձի որակը գտնւում են տնտեսական տարբեր ոլորտներում և մէկը միւսի հետ կապւած չեն: Եթէ ընկերվարութիւնը դիտենք Մարքսի տեսանկիւնից, այսինքն որպէս համայնավարական հասարակարգի առաջին փուլ, ապա այդ առաջին փուլում, ըստ Էնգելսի, աշխատաւորը դեռեւս **վարձատրւում է աշխատանքի համար, բայց այլեւս չի վարձատրւում իր աշխատանքի որակի համար** (Մարքս-Էնգելս, 2րդ հատոր, էջ 20, ռուսերէն հրատարակութիւն):

Այստեղից բխող աշխատանքի վարձատրութեան ընկերվարական սկզբունքը Մարքսը ձեւակերպում է որպէս հաւասար քանակի աշխատանքի վարձատրութիւն, ընդ որում այդ քանակը որոշւում է երկու բնական չափանիշներով՝ ժամանակով և լարւածութեամբ: Ինչ վերաբերում է աշխատանքի որակին, ապա ընկերվարական տարազը այդ գործօնը հաշւի չի առնում: Եւ եթէ ինքը իրեն ընկերվարական կոչող հասարակարգում աշխատանքի որակը հաշւի է առնւում վարձատրման ժամանակ, դա նշանակում է, որ նա դեռեւս շատ հեռու է ընկերվարութիւնից:

Աշխատանքի վարձատրման կարգը թէ՛ Մարքսը և թէ Լենինը համարում էին ընկերվարական սկզբունքների մէջ ամենակարեւոր սկզբունքը, քանզի հէնց այդ սկզբունքով է, վերջին հաշւով, որոշւում տնտեսական անհաւասարութիւնը և հասարակական անարդարութիւնը: Պէտք է ասել, որ Լենինը ոչ

միայն յեղափոխութիւնից առաջ, այլ նաեւ յետոյ այդ սկզբունքից չհրաժարուեց: Միայն մի քանի օրինակներ.

«Մարքսիզմը պետութեան մասին» աշխատութեան մէջ (1917) նա գրում է. «Համայնավարութեան առաջին փուլում սպառման ապրանքների բաշխումը համապատասխանում է ամէն մի աշխատաւորի կողմից հասարակութեանը տրւած աշխատանքին»: **«Պետութիւն և Յեղափոխութիւն»** աշխատութեան մէջ (1917) նա գրում է. «Հաւասար քանակի աշխատանքի համար՝ հաւասար վարձատրութիւն, այս սկզբունքը արդէն իրականացւած է և ամբողջ հասարակարգը վեր է ածւելու մէկ գործարանի հաւասար աշխատանքով և հաւասար վարձատրութեամբ»:

Այս մտքերը Լենինը արտայայտել է յեղափոխութեան շեմին, իսկ ահա թէ նա ինչ է ասում յեղափոխութիւնից չորս տարի անց: 1921 թւականի հոկտեմբերի 29ին Մոսկւայի կուսակցական խորհրդաժողովում նա յայտարարեց. «Արդէն 1918 թւականի մարտ ամսին մենք ստիպւած եղանք նահանջելու և մասնագէտների վարձատրման հարցում սահմանեցինք աստիճանաւորում: Այս սկզբունքը ոչ թէ ընկերվարական է, այլ բուրժուական: Նման վարձատրութիւնը կապ ունի կատարւող աշխատանքի բարդութեան կամ դժւարութեան հետ, իսկ այդ բուրժուական սովորութիւն է և բուրժուական հասարակարգի համար է: Սակայն սա բացառութիւն է, սա չէր մտնում մեր ծրագրերի մէջ»:

Այստեղից պարզ երեւում է, որ Լենինը չէր հրաժարւում ընկերվարական սկզբունքից և միայն որպէս բացառութիւն, քայքայւած տնտեսութիւնը վերականգնելու համար, ժամանակաւոր նահանջ էր կատարում ընկերվարութիւնից: Սակայն Լենինից յետոյ հաւասար քանակի աշխատանքի վարձատրութեան սկզբունքը կամաց-կամաց օրինականացւեց և հռչակւեց որպէս հէնց ընկերվարական սկզբունք:

1928 թւականին, առաջին հնգամեակի նախօրեակին, Կենտկոմի **«Բոլշեւիկ»** հանդէսը հրատարակեց մի յօդւած, որտեղ բազմիցս կրկնւում է իսկական ընկերվարական սկզբունքը, այսինքն հաւասար քանակի աշխատանքի համար հաւասար քանակի ապրանքներ: Աշխատանքի որակաւորման մասին դեռեւս ոչ մէկ խօսք չկայ: Սա նշանակում էր, որ 8 ժամ աշխատանքի համար հաւաքարարը, երաժիշտը և գիտնականը վարձատրւելու են հաւասարաչափ: Նոյնիսկ 1930 թւականին նոյն **«Բոլշեւիկ»** հանդէսը ընկերվարական աշխատանքի ձեւերի մէջ նշում էր այն ձեռնարկութիւնները, որտեղ աշխատավարձը հաւասարաչափ բաշխւում էր բոլոր աշխատաւորների միջեւ, եթէ նրանք բոլորը նոյն տեւողութեամբ էին աշխատել: Բայց 1931 թւականի ամռանը տեղի ունեցաւ շրջադարձ:

Յունիսի 23ին Ստալինը տնտեսավարների խորհրդակցութեանը արտասանեց մի ճառ, որը հետագայում մտաւ նրա աշխատութիւնների մէջ **«Նոր կացութիւնը և տնտեսութեան կառոյցի նոր խնդիրները»** վերնագրի տակ։ Իր այդ ելոյթում Ստալինը ասաց. «Մարքսը և Էնգելսը ասում են, որ որակեալ և անորակ աշխատանքների միջեւ տարբերութիւնը գոյութիւն է ունենալու նոյնիսկ ընկերվարական հասարակարգում, նոյնիսկ դասակարգերը վերանալուց յետոյ, որ միայն համայնավարական փուլում այդ տարբերութիւնը վերանալու է, ուստի աշխատավարձը ընկերվարական հասարակարգում վճարուելու է ոչ թէ ըստ պահանջների, այլ ըստ աշխատանքի։ Դրա համար անհրաժեշտ է մշակել այնպիսի կարգ, որի ժամանակ հաշւի առնւի որակեալ և անորակ, ծանր և թեթեւ աշխատանքների տարբերութիւնը»։

Ընկերվարութեան սկզբունքների տեսանկիւնից այստեղ Ստալինը անում է առնւազը չորս սխալ և իր այդ սխալները փորձում է քողարկել Մարքսով ու Էնգելսով, որոնք երբեք նման մտքեր չեն արտայայտել։ Առաջին սխալը կայանում է նրանում, որ ընկերվարական հասարակարգում դրամատիրական հասարակարգի նման աշխատանքի որակաւորում գոյութիւն ունի, սակայն (ի տարբերութիւն դրամատիրութեան) ըստ աշխատանքի որակի վարձատրութիւնը բացակայում է։ Երկրորդ սխալը այն է, որ ընկերվարական հասարակարգում վճարումը կատարւում է ըստ աշխատանքի, այլ ոչ թէ ըստ պահանջների, ոչ թէ որովհետեւ գոյութիւն ունեն տարբեր որակի աշխատանքներ, այլ որովհետեւ ընկերվարութիւնը համայնավարութեան այն փուլն է, որտեղ հասարակութեան արտադրական ուժերը ըստ պահանջների բարելաւելու համար զարգացած չեն։ Երրորդ սխալը այն է, որ տարբեր որակ ունեցող աշխատանքները տարբեր ծանրութիւն ունեցող աշխատանքների հետ շփոթել չի կարելի, որովհետեւ ընկերվարական հասարակարգում որակի տարբերութիւնը վարձատրութեան ժամանակ հաշւի չի առնւում, իսկ ծանրութիւնը հաշւի է առնւում որպէս լարւածութեան տարբերութիւն։ Չորրորդ սխալը այն է, որ եթէ 1931 թւականին խորհրդային իշխանութիւնը ստիպւած եղաւ վարձատրութեան ժամանակ հաշւի առնել աշխատանքի որակը, ապա այդ ոչ թէ բխում էր ընկերվարական սկզբունքներից, այլ այն պարզ պատճառով, որ հասարակութիւնը ամբողջովին իր վրայ չէր վերցրել որակեալ մասնագէտներ պատրաստելու գործը և պարտաւոր էր գոնէ մասամբ հատուցել աշխատաւորի սեփական ծախսերը։

Այս չորս սխալները, որոնք 1931 թւականի կէսերին Ստալինը ներկայացրեց որպէս մարքս-լենինեան դրոյթներ, դարձրեցին Խորհրդային Միութեան վարչակարգը կեղծ ընկերվարական հասարակարգ։

Այս դրոյթները հռչակելուց կէս տարի անց Վոզնեսենսկին **«Ընկերվարական տնտեսավարութեան հարցի շուրջ»** խորագրով յօդուածում գրեց. «Ընկերվարական աշխատանքի կազմակերպման առանձնայատկութիւնը այն է, որ ապրանքի բաշխումը կատարւում է ըստ աշխատաւորի ծախսած աշխատանքի և որակի»: Իսկ յօդուածի եզրակացութիւնների բաժնի մէջ հեղինակը որակ բառը դնում է քանակից էլ առաջ: Արդեօք այս բանաձեւը ուղղակիօրէն թելադրւած էր Ստալինի՞ կողմից, թէ ընդունակ աշակերտը անմիջապէս կռահել էր, թէ ինչ է ուզում առաջնորդը, յայտնի չէ:

Այնուամենայնիւ, 1933 թւականին խորհրդային Տնտեսագիտական հիմնարկը հրատարակեց մի դասագիրք, որտեղ գրւած էր. «Հոկտեմբերեան յեղափոխութիւնը հռչակեց ընկերվարական վարձատրման սկզբունքը ըստ աշխատանքի քանակի և որակի»: Իրականութեանը չհամապատասխանող այս պնդումից յետոյ գալիս է մի անամօթ ստախօսութիւն. «Մարքսը և Լենինը բազմիցս ընդգծել են, որ համայնավարութեան առաջին փուլում վարձատրութիւնը կատարւելու է ըստ աշխատանքի քանակի և որակի»: Ոչ մէկ տեղ, ոչ մէկ անգամ ո՛չ Մարքսը և ոչ էլ Լենինը նման բան չեն ասել:

Եւ ահա 1936 թւականին, յեղափոխութեան 20ամեակի նախօրեակին, հակառակ Մարքսի և Լենինի, աշխատանքի վարձատրման հակաընկերվարական թեզը մտաւ Խորհրդային Միութեան Սահմանադրութեան մէջ և այդպիսով դարձաւ ոչ միայն գաղափարական, այլ նաեւ պետական օրէնք: Եւ այդ հակաընկերվարական օրէնքը չի փոխւել մինչեւ մեր օրերը:

Այժմ տեսնենք թէ ինչո՞ւ էր պէտք Ստալինին այդ օրէնքը և ինչո՞ւ են այդ օրէնքից կառչել նաեւ այսօրւայ ղեկավարները: Բանը նրանումն է, որ աշխատանքի «որակ» հասկացութիւնը անսահման հնարաւորութիւններ է բացում աշխատավարձի ստորադասական աստիճանաւորման համար: «Աշխատանքի որակ» հասկացութեան տակ կարելի է հասկանալ ոչ միայն ճանրութիւն, բարդութիւն, այլ նաեւ օգտակարութիւն, տնտեսական ու հասարակական անհրաժեշտութիւն:

Իսկ այդ թոյլ է տալիս աշխատանքի վարձատրման տարազը վերածել ոչ թէ աշխատանքի, այլ նրա արդիւնքի վարձատրութեան տարազի, այսինքն, հակառակ Մարքսի և Լենինի, աշխատանքի արդիւնքի վարձատրման դրամատիրական ձեւը ոչ միայն յարմարեցրել ընկերվարական պայմաններին, այլեւ հռչակել այդ սկզբունքը ընկերվարական սկզբունք: Աշխատանքի օգտակարութեամբ որոշւած աշխատավարձը թոյլ է տալիս հիմնաւորելու կուսակցական, զինւորական գործիչների բարձր աշխատավարձերը: Այս բնագաւառներում գործող և **«նոմենկլատուրա»** կոչւող խաւի անձերը, բացի բարձր աշխատավարձից, օգտւում են նաեւ փակ խանութներից, յատուկ հանգստեան

տներից, էժանագին և արտասահմանեան ապրանքներից և այլ առաւելութիւններից միայն այն հիման վրայ, որ նրանց աշխատանքի արդիւնքները վերին աստիճանի օգտակար են հասարակութեան համար։

Աշխատանքի որակի մէջ խորհրդային իշխանաւորները մտցնում են շտապ, կարեւոր, վնասակար, վտանգաւոր գործերը։ Հաշւի են առնում մարդու փորձը, կոչումը, աստիճանը և այլն։ Եւ բնական էր, որ այս հիման վրայ պէտք է ստեղծուէին նոր դասակարգեր, որոնք գուցէ յաւելեալ արժէքի իմաստով չեն շահագործում մէկը միւսին, սակայն նրանց վարձատրման ահագին տարբերութիւնը ստեղծում է այնպիսի անհաւասարութիւն աշխատաւորների միջեւ, որը նոյնիսկ գոյութիւն չունի այսօրւայ դրամատիրական աշխարհում։

Սակայն միայն անհաւասարութեան մէջ չէ վարձատրման այդ ձեւի բացասական արդիւնքը։ Նման վարձատրութիւնը հեղինակազրկում է այսպէս կոչուած հասարակ աշխատանքը։ Բանւորը, կրտսեր գիտաշխատողը, վարորդը, բժիշկը, ուսուցիչը ձգտում են որքան կարելի է շուտ թողնել իրենց ցածր վճարովի աշխատանքը և անցնել յաջորդ որակի աշխատանքի։ Ուստի այդ սովորական աշխատանքների վրայ փորձւած մասնագէտներ ունենալու հնարաւորութիւնը պարզապէս չքանում է։ Բայց հէնց այդ սովորական աշխատաւորների աշխատանքով է վերջին հաշւով որոշւում աշխատանքի արտադրողականութիւնը, որը աներեւակայելի ցածր է Խորհրդային Միութիւնում։

Այս վիճակից դուրս գալու համար է, որ Խորհրդային Միութիւնում փորձում են վերականգնել դրամատիրական տնտեսավարութեան որոշ ձեւերը, արտադրական, այսինքն ընտանիքի անդամներից յանձանձւող ձեռնարկութիւնների մասին։ Այս նահանջը խորհրդային տնտեսագէտները Մարքսով չեն բացատրում, նրանք դիմում են Սահմանադրութեանը և ուրիշ համայնավար երկրների փորձին։

Նրանց զգուշութիւնը հասկանալի է, որովհետեւ **«Կոմունիստական մանիֆեստ»**ի մէջ Մարքսը և Էնգելսը շատ յստակօրէն նշում են, որ ծնողները շահագործում են իրենց սեփական երեխաներին, որը նոյնպէս անընդունելի է։ Կասկածից վեր է, որ եթէ այսպէս կոչւած ընտանեկան տնտեսութիւնների արտօնութիւն տրւի, ապա անմիջապէս կը սկսւի վարձու աշխատաւորի շահագործումը, որը արդէն լայն թափով տարածւել է Անդրկովկասի մասնաւոր տեղամասերում։ Տարբերութիւնը դրամատիրութիւնից կը լինի միայն նրանում, որ ստուգումների ժամանակ շահագործւող աշխատաւորը կը ներկայացնի կաշառքի միջոցով ձեռք բերւած տեղեկանքը, թէ ինքը գործատէրի քրոջ տղան է կամ էլ փեսան։

Եթէ իմ այս յօդւածը ընկնի մեր հայրենակիցների ձեռքը, նրանք պիտի շատ վրդովւեն ասելով թէ կառավարութիւնը մեզ շնչելու իրաւունք է տալիս, իսկ ես

նրանց քննադատում եմ: Շատ ուրախ պիտի լինեմ, եթէ մեր հայրենակիցները տնտեսական որոշ ազատութիւններ ստանան, բայց չեմ կարող ընդունել, որ այդ ազատութիւնները որեւէ կապ ունեն ընկերվարութեան հետ, որը մեռաւ Խորհրդային Միութիւնում 1930ական թւականների սկզբին: Միայն վարձատրութեան կարգը փոխելով կարելի է վերադառնալ իսկական ընկերվարութեանը, իսկ մնացած բոլոր միջոցառումները պարզապէս նահանջներ են դէպի դրամատիրութիւն:

1983

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԻ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ

Է. Յովհաննիսեան

Սեփականութեան իրաւունքի հարցը ընկերվարական աշխարհայեացքի հիմնաքարերից մէկն է, սակայն դասական ընկերվարութիւնը, մասնաւորապէս մարքսիզմը, այնքան սահմանափակ կերպով է վերլուծում այդ խնդիրը, որ մեզ համար երբեք չի կարող բաւարար համարուել: Բաւական է յիշեցնել, որ մարքսիզմը և ընդհանրապէս ընկերվարական գաղափարախօսութիւնը ոչ մէկ բան չի ասում ազգային սեփականութեան իրաւունքի մասին, որը մեզ համար շատ կարեւոր է՝ ընկերվարօրէն մեր քաղաքական պահանջները հիմնաւորելու համար:

Ասել, որ մեր պահանջները արդար են, դա դեռեւս ոչինչ չի նշանակում, եթէ մենք ի վիճակի չենք այդ պահանջների արդարութիւնը ապացուցանելու՝ որեւէ օրէնքի կամ գաղափարախօսութեան տեսանկիւնից: Միւս կողմից, անհատական սեփականութեան իրաւունքի հարցն էլ մեզ համար կարեւոր է, քանզի այդ հարցի պատասխանից է կախուած ապագայ անկախ Հայաստանի վարչակարգին էութիւնը:

Գոյութիւն ունի՞ արդեօք սեփականութեան իրաւունք:

Այս հարցի մէջ կայ տրամաբանական մի հակասութիւն: Սեփականութիւնը ինքնըստինքեան իրաւունք է, որովհետեւ նշանակում է որեւէ բան ունենալու իրաւունք:

Յայտնի է Պրուդոնի արտայայտութիւնը, թէ **«սեփականութիւնը դա գողութիւն է»**: Այս արտայայտութիւնը կարող է թւալ հակասական, որովհետեւ սեփականութիւնը իրաւունքով ունենալն է, իսկ գողութիւնը՝ անօրինական ձեռքբերումն է: Ուրեմն ինչպէ՞ս կարող է անօրինական ձեռք բերումը օրինական պատկանելիութիւն համարուել:

Իրականում Պրուդոնի միտքը աւելի խորն է: Նա համարում էր, որ իր ժամանակւայ Ֆրանսիայում բուրժուայի սեփականութիւնը ձեռք է բերւած անօրինական կարգով, ուրիշներին շահագործելու ճամբով: Ըստ Պրուդոնի, աշխատաւորը իրաւունք ունի ստանալու իր կողմից արտադրւած ապրանքի մէկ մասը, իսկ նրանից խլում են այդ իրաւունքը: Բայց ո՞ր իրաւունքի մասին է խօսքը: Եթէ խօսքը պետական օրէնքի մասին է, ապա բուրժուան չի խախտում այդ օրէնքը և իրաւունքով է խլում բանւորի աշխատանքի մեծ մասը: Իսկ եթէ խօսքը պետական իրաւունքի մասին չէ, հապա էլ ի՞նչ իրաւունք կայ մեր աշխարհում:

Լոքը եղաւ այն առաջին փիլիսոփան, որը կարողացաւ հիմնաւորել այսպէս կոչւած բնական իրաւունքը: Լոքը խօսում է աշխատանքով ձեռքբերւած սեփականութեան մասին: Մարդու համար բնական է,- ասում է նա,- աշխատել սեփական կեանքը ապահովելու համար: Ուրեմն մարդը բնական իրաւունք ունի բնութեան մէկ մասի վրայ, որովհետեւ նրա մէջ կայ իր աշխատանքի մասնիկը: Ծառերից հաւաքած պտուղները, սպանւած կենդանին և իր ձեռքերով կառուցւած տունը պատկանում են իրեն, որովհետեւ նրանք ձեռք են բերւել սեփական աշխատանքով:

Սակայն կացութիւնը բարդանում է, երբ խաղի մէջ է մտնում դրամը: Այստեղ արդէն Լոքը պնդում է, որ սեփականութեան իրաւունքը տարածւում է նաեւ այն ունեցւածքի վրայ ,որը ձեռք է բերւել ոչ ուղղակի աշխատանքով: Ժառանգաբար ստացւած ունեցւածքը կամ տոկոսների ձեւով գանձւող տուրքը և կամ էլ վարձու տւած հողից ստացւած եկամուտը ամենեւին էլ աշխատանքով ձեռք բերւած սեփականութիւններ չեն, սակայն, ըստ Լոքի, օրինական են:

Բայց այս իրաւունքի մէջ կարեւորը ոչ թէ սեփականութեան օրինականացման սահմանումն է, այլ այդ օրինականացման անհրաժեշտութեան սկզբունքը: Որտեղի՞ց եկաւ սեփականութեան իրաւունքի ճանաչման անհրաժեշտութիւնը:

Ինչո՞ւ մենք չենք խօսում շնչելու կամ ջուր խմելու իրաւունքի մասին, որոնք շատ աւելի կարեւոր են մարդուն, քան որեւէ այլ իրաւունք: Բնութեան առջեւ մարդը բաւականին անպաշտպան է: Պաշտպանւելու համար մարդը պէտք է մտածի ոչ միայն այսօրւայ, այլեւ վաղւայ մասին: Այդ վաղը կարող է լինել ծանր՝ եղանակի, ծերութեան, բազմազաւակութեան, երաշտի, պատերազմի և ուրիշ պատճառներով: Ուստի մարդը իրաւունք ունի կուտակելու որոշ միջոցներ «սեւ օրւայ» համար և այդ իրաւունքը բխում է նրա ապրելու իրաւունքից: Հաւանաբար նոյնքան տրամաբանական կը լինէին շնչելու և ծարաւ յագեցնելու իրաւունքները, եթէ օրինակ, պակասէր օդը կամ ջուրը:

Ուրեմն՝ սեփականութեան իրաւունքը անմիջականօրէն բխում է ապրելու իրաւունքից, որի մասին վէճ չկայ և որը ընդունւում է ամբողջ մարդկութեան կողմից: Նշանակո՞ւմ է արդեօք սա, որ սեփականութեան իրաւունքը նոյնքան բացարձակ է, որքան որ ապրելու իրաւունքը: Եթէ այդպէս է, ապա սեփականութեան իրաւունքը չի կարող ունենալ յատուկ ընկերվարական բովանդակութիւն:

Բայց այդպէս չէ:

Բանը նրանումն է, որ ապրելու իրաւունքից բխող սեփականութիւն ունենալու իրաւունքը այնքան էլ յստակ սահմանումներ չունի և երբեմն առիթ է դառնում ծայրայեղ միտումների համար:

Թոմաս Ակուինացին, օրինակ, համարում էր, որ քաղցած մարդը ապրելու համար կարող է գողանալ։ Նա համարում էր, որ եթէ քաղցած մարդը ուրիշին պատկանող հացն է վերցնում, ապա դա գողութիւն չի կարելի համարել։ Իսկ Լոքը համարում էր, որ կուշտը քաղցածին պէտք է հաց տայ, բայց քաղցածը իրաւունք չունի վերցնելու այդ հացը սեփական կամքով։

Անշուշտ, միանգամայն ճիշտ է այն սահմանումը, որի համաձայն ամէն մի մարդ իրաւունք ունի ունենալ օրինական կարգով ձեռք բերուած սեփականութիւն։

Բայց այս արդարացի պնդումը, դեռեւս ոչինչ չի լուծում, քանի դեռ մենք չենք տեղափոխուել օրէնքի բնագաւառը։ Այսինքն անհրաժեշտ է դառնում պատասխանել այն հարցին, թէ ո՞րքանով արդար են այն օրէնքները, որոնց համաձայն ձեռք է բերուել կամ, աւելի ճիշտ, օրինականացուել է սեփականութիւնը։ Այն, ինչ Մեծն Բրիտանիայում, օրինակ, համարւում է օրինական, Խորհրդային Միութիւնում արգելւած է։

Սա նշանակում է, որ սեփականութեան նկատմամբ մեր ընկերվարական մօտեցումը հէնց օրէնքին պէտք է վերաբերւի։

Այս հարցում դասական ընկերվարութեան մօտեցման մէջ կարելի է նկատել մի գլխաւոր սկզբունք, որի համաձայն արտադրական միջոցները շահագործման աղբիւր են դառնում, ուստի չեն կարող լինել անհատի սեփականութիւն։ Այս նոյնը վերաբերւում է հողին, գիւղատնտեսական մեքենաներին, որոնք կարող են լինել միայն ընկերային սեփականութիւն։

Սակայն այս մօտեցումը չափազանց սահմանափակ է և կարող է ընդունելի լինել միայն այնտեղ, որտեղ արտադրական միջոցները պարտադիր կերպով շահագործման աղբիւր են դառնում։ Այսօր դա այդպէս չէ։ Ամէն մի գիւղացի կարող է գնել սեփական գիւղատնտեսական մեքենաներ և մշակել սեփական հողը առանց որեւէ մէկին շահագործելու։ Արտադրական միջոցները ինքնըստինքեան ոչ մէկի չեն կարող շահագործել, եթէ շահագործողը չկայ։ Եւ, ուրեմն, ընկերվարութիւնը պէտք է շահագործողին վերացնի, այլ ոչ թէ մարդկանցից արտադրական միջոցները խլի։ Բայց ինչպէ՞ս կարելի է վերացնել շահագործողներին։ Հարցի պատասխանը պարզ է, արտադրական փոխյարաբերութիւնները, այսինքն օրէնքը փոխելու ճանապարհով։

Տեսնենք թէ ի՞նչ է այս մասին ասում մարքսիզմը։

Մարքսիստական տնտեսագիտութիւնը խօսում է մարդկային հասարակարգի յատուկ ուղղութեան մասին, որի էութիւնը փիլիսոփայօրէն կարելի է արտայայտել հետեւեալ սկզբունքով, նիւթական կեանքը առաջնակարգ է, իսկ հոգեկանը բխում է նիւթականից։ Սակայն ո՛չ Մարքսը և ոչ էլ Էնգելսը նիւթական կացութեան տակ երբեք չեն հասկացել մեքենաներ ու արտադրական մի-

ջոցներ: Մարքսի համար առաջնակարգը ոչ թէ մեքենաներն էին, այլ մեքենաներ արտադրելու և օգտագործելու կարողութիւնը:

«Տնտեսութիւնը արտադրական փոխյարաբերութիւններն են,- ասում է Մարքսը,- **իսկ գոյութիւն ունեցող արտադրական փոխյարաբերութիւնները իրաւաբանական լեզուով կոչւում են սեփականութեան փոխյարաբերութիւններ: Ժամանակակից արտադրութեան հիմքում դրւած է հռոմէական իրաւունքը»:**

Այստեղ Մարքսը փաստօրէն համաձայնւում է Շտամլերի հետ, որ իրաւունքը տնտեսութեան կազմակերպիչն է, քանզի առանց իշխանութեան և իրաւունքի չի կարող լինել ոչ մէկ կազմակերպութիւն, ուստի և ոչ մէկ հասարակական տնտեսութիւն: Իրաւունքը և պետութիւնը ոչ թէ տնտեսական կեանքի վրայ են, այլ այդ կեանքի մէջ: Շտամլերի համար տնտեսութեան և իրաւունքի փոխյարաբերութիւնը ոչ թէ հիմքի և վերնաշէնքի, այլ նիւթի և ձեւի փոխյարաբերութիւն է: **«Գերմանական գաղափարախօսութեան»** մէջ Մարքսը ստիպւած է ընդունել Շտամլերի այդ թեզը և հռչակել, որ **«իրաւունքը փոխազդեցութեան ձեւ է և պատմութեան մէջ մենք տեսնում ենք նման ձեւերի զարգացում»**: Բայց ի՞նչ է իրաւունք կոչւող ձեւի նիւթը, ի՞նչն է կազմակերպում այդ ձեւը: Անշուշտ, մարդկային գործունէութիւնը, այլ ոչ թէ իրերը: Իրաւունքը արտադրական միջոցներ չի ստեղծում: Իրաւունքը աշխատանքը դարձնում է համագործակցութիւն, արտադրական յարաբերութիւններ: Սա էլ հէնց ձեւաւորման ենթակայ նիւթն է:

Այսպիսով, եթէ մենք ուզում ենք իրականացնել ընկերվարական գլխաւոր սկզբունքը՝ շահագործման վերացումը, ապա դա պէտք է արւի ոչ թէ սեփականութեան բովանդակութեան, այլ սեփականութեան իրաւունքի միջոցով: Այդ իրաւունքը կարելի է սահմանել մօտաւորապէս այսպէս, ամէն մի մարդ իրաւունք ունի ունենալ սեփականութիւն, եթէ այդ սեփականութիւնը ձեռք է բերւել օրինական կարգով և չի օգտագործւում ուրիշին շահագործելու նպատակով: Այսինքն՝ ոչ թէ շահագործելու հնարաւորութիւն ունեցող մեքենայի ձեռքբերումն է արգելւում, այլ շահագործումը: Չի կարելի, օրինակ, արգելել մատիտի կամ խոհանոցի դանակի վաճառքը միայն այն հիման վրայ, որ մատիտով կարելի է աչք հանել, իսկ դանակով սպանել: Իրաւունքը պէտք է արգելի աչք հանելը և սպանութիւնը:

Իսկ թէ ի՞նչ տեսք պէտք է ունենայ ընկերվարական սեփականութեան իրաւունքը, դա արդէն կախւած է տւեալ ժողովրդի նկարագրից, պատմական աւանդոյթներից, տնտեսական զարգացումից, աշխարհագրական դիրքից, քաղաքական պայմաններից և այլն: Այսօր այդ մասին խօսելը աւելորդութիւն է: Եւ այս բանը անհրաժեշտ է նշել, որովհետեւ Խորհրդային Հայաստանից դուրս եկած մարդիկ, յաճախ պարզելու համար թէ ի՞նչով է մեր ընկերվարու-

թիւնը տարբերւում մարքսիզմից, հարցնում են,- **«իսկ մասնաւոր սեփականութիւնը դուք վերացնելու է՞ք, իսկ կոլտնտեսութիւնները պահելո՞ւ էք, իսկ մասնաւոր առեւտուր թոյլատրելո՞ւ էք, մասնաւոր դպրոցներ ու ճաշարաններ բացելո՞ւ էք»:** Բոլոր այս հարցերի պատասխանները այսօր չեն կարող տրւել, քանի որ սրանք պետական հարցեր են, որոնք կարող են լուծւել միայն անկախ Հայաստան ունենալու դէպքում: Բայց ընդհանուր պատասխանը այսօր էլ շատ յստակ է, ճաշարանն էլ, առեւտուրն էլ, գործարանն էլ կարող են մասնաւոր լինել, եթէ նրանք գործում են ընկերվարական արդարութեան սկզբունքների համաձայն:

Շատ աւելի բարդ է ազգային սեփականութեան իրաւունքի հարցը: Եթէ անհատի սեփականութեան հարցում կարելի է ղեկավարւել գոյութիւն ունեցող օրէնքով, ապա ազգային սեփականութեան բնագաւառում նման օրէնքներ չկան:

Մինչեւ այսօր գոյութիւն չունեն միջազգային օրէնքներ, որոնց միջոցով կարելի լինի կարգաւորել միջպետական հողային փոխյարաբերութիւնները:

Սովորաբար ազգային սահմանները և ազգային սեփականութիւնները օրինականացւում են պայմանագրերով և այս կամ այն իշխանութիւնը ճանաչելու յայտարարութիւններով, որոնց նախորդում են արիւնալից պատերազմներ: Այնուամենայնիւ, ազգային սեփականութեան իրաւունքի համար գոյութիւն ունեն մի քանի անպաշտօն սկզբունքներ, որոնցից կարեւորները, հաւանաբար, հետեւեալներն են:

1.- Ուժի իրաւունք

2.- Քաղաքակրթութեան իրաւունք

3.- Պատմական իրաւունք

4.- Ստեղծւած կացութեան իրաւունք

Ըստ ուժի իրաւունքին՝ ազգային սեփականութիւն է համարւում այն ամէնը, ինչը ազգը ձեռք է բերել իր սեփական ուժով: Որքան էլ որ անընդունելի լինի ընկերվարական տեսանկիւնից այս կարգի իրաւունքը, ստիպւած ենք հաստատելու, որ ժամանակակից աշխարհում բոլոր ազգային սեփականութիւնները ձեռք են բերւել ուժով և պահպանւում են ուժով: Ամէն մի ազգ այսօր ունի ճիշտ այնքան, որքանը որ ի վիճակի է պաշտպանելու ուժով: Երբ թուլանում է ազգը, նա անխուսափելիօրէն կորցնում է իր ազգային սեփականութեան մէկ մասը, իսկ շատ թուլանալու դէպքում՝ նրանից խլում են ամէն ինչ:

Ըստ քաղաքակրթութեան իրաւունքի՝ բարձր մշակոյթ ու զարգացում ունեցող ազգը կարող է խլել ցածր զարգացում ունեցող ժողովրդի ունեցւածքը ու շահագործել նրան՝ քաղաքակրթութիւն տարածելու պատրւակով: Այդպէս վարւեցին եւրոպացիները, յատկապէս անգլիացիները Ամերիկայի, Կանադա-

յի և Աւստրալիայի բնիկներին ոչնչացնելու և աֆրիկեան հարստութիւնները ձեռք բերելու ժամանակ։

Նոյն բանը արեցին ռուսները Սիբիրում, Միջին Ասիայում և Կովկասում։ Քաղաքակրթութեան իրաւունքն էլ ուժի իրաւունք է, բայց մշակութային ուժի իրաւունք։

Պատմական իրաւունքը, հաւանաբար, ամենադժուար լուծելի հարցն է, քանզի նա էլ լի է ներքին հակասութիւններով։ Եթէ մենք առանց որեւէ լրացուցիչ բացատրութիւնների ընդունենք պատմական իրաւունքը, ապա անհասկանալի կը դառնայ, թէ ինչո՞ւ մեզ համար անընդունելի են ուժի և քաղաքակրթութեան իրաւունքները։ Չէ՞ որ մեր բոլորի «պատմական սեփականութիւնները» ձեռք են բերուել հէնց այս ճանապարհով։ Եթէ մենք հաշուի չառնենք ուրիշ գործօններ, ապա ինչպէ՞ս որոշել թէ որտեղ է վերջանում այդ պատմական իրաւունքի սահմանը։ Օրինակ, կարո՞ղ ենք մենք հայերս պնդել, թէ Մեծն Տիգրանի Հայաստանի սահմանները մտնում են մեր պատմական իրաւունքների մէջ։ Կամ կարո՞ղ են արդեօք թաթարները պնդել, թէ ամբողջ Ռուսաստանը իրենց պատմական իրաւունքների սահմաններումն է, որովհետեւ նրանք իշխել են այդ երկրի վրայ 300 տարի։ Պատմական իրաւունքը պաշտպանում է պատմականօրէն ձեռք բերուած սեփականութիւնը, բայց ընկերվարական մօտեցումը պէտք է ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ մտցնի այս հարցի մէջ։

Ինչ վերաբերւում է ստեղծած կացութեան իրաւունքին, ապա նա յենւում է այն թեզի վրայ, թէ պատմութիւնը պատմական երեւոյթների միակ դատաւորն է, որ բոլոր գոյութիւն ունեցող կացութիւնները ստեղծել են բնականօրէն, չէին կարող չստեղծել, որ պատմութիւնը ունի իր սեփական տրամաբանութիւնը և ուղղութիւնը, որը ոչ մէկի կողմից չի կարող փոխուել։ Սա նշանակում է, որ ամէն մի ազգ արժանի է այն ամէնին, ինչ այսօր ունի և միայն այսօրւայ սեփականութիւնը կարող է պաշտպանուել միջազգային իրաւունքի կողմից։

Այս մօտեցումն էլ մեզ համար անընդունելի է, որովհետեւ յատկապէս մենք՝ հայերս լաւ գիտենք, թէ որքան դաժան ու անարդար կարող է լինել պատմութիւնը և որքանով նա կախուած է մարդկանց ու ազգերի գործունէութիւնից, մեծ պետութիւնների ղեկավարների ցանկութիւններից և նոյնիսկ պատահականութիւններից։ Այս իրաւունքն էլ մեզ համար անընդունելի է։

Այսպիսով, ազգային սեփականութեան վերաբերեալ գոյութիւն ունեցող բոլոր մօտեցումները, ընկերվարական սկզբունքների համար անընդունելի են։ Իսկ դասական ընկերվարութիւնը ոչ մէկ խօսք այդ մասին չի ասում, բացի այն, որ ազգերը ի վերջոյ վերանալու են, ուստի բոլոր ազգային խնդիրները կրում են նախ ժամանակաւոր բնոյթ, յետոյ խանգարում են դասակարգային պայքարին, որովհետեւ ազգային հողի վրայ համերաշխութիւն են ստեղծում

շահագործողի և շահագործուղի միջեւ: Ուրեմն մեզ պէտք է այնպիսի ընկերվարական սկզբունք ազգային սեփականութեան վերաբերեալ, որը ընդունելի լինի թէ՛ ազգային և թէ համամարդկային արժէքների տեսանկիւնից:

Ազգային սեփականութեան իրաւունքը պայմանաւորւած է ազգ հաւաքականութեան նկատմամբ ունեցած մեր վերաբերմունքով: Եթէ նրա գոյութիւնը անհրաժեշտ է ու անխուսափելի, եթէ մարդկութիւնը մէկ կողմից, իսկ ամէն մի ազգ իր կողմից, պայքարում են ազգապահպանման համար, եթէ ազգի քաղաքական ազատութիւնը համապատասխանում է մարդկութեան ազատութեան ընդհանուր ձգտմանը, մի խօսքով, եթէ ազգերի գոյութիւնը մեզ համար ցանկալի է, ապա ազգային սեփականութեան իրաւունքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ազգերի ապրելու իրաւունքը: Սա նշանակում է որ այն ամէնը, ինչը անհրաժեշտ է ազգի գոյութեան համար, ազգը իրաւունք ունի ձեռք բերելու օրէնքի, իսկ նրա բացակայութեան դէպքում պայքարի միջոցով:

Ազգի գոյութեան համար առաջին և գուցէ միակ պայմանը ինքնիշխան ազգային պետականութեան գոյութիւնն է, ուստի ամէն մի ազգ ունի անկախ պետութիւն ունենալու իրաւունքը:

Ի՞նչ դեր կարող է այս հարցում խաղալ պատմական իրաւունքը: Նա կարող է որոշակի դեր կատարել երեք հետեւեալ հարցերի լուծման համար:

1.- Պատմական իրաւունքի միջոցով կարելի է մօտաւորապէս որոշել ազգի գոյատեւման համար անհրաժեշտ պետութեան աշխարհագրական տեղը և պետութեան սահմանները: Բայց քանի որ մենք ասացինք, որ այդ պետութիւնը անհրաժեշտ է միայն տւեալ ազգի կենսական պահանջները ապահովելու համար, մենք չենք կարող խօսել Մեծն Տիգրանի սահմանների մասին: Մեր պետութեան սահմանները պէտք է որոշւեն մեր այսօրւայ կարողութիւններով ու անհրաժեշտութիւններով:

2.- Պատմական իրաւունքը պէտք է որոշի, թէ արդեօ՞ք մեզ բռնի ուժով են զրկել մեր պետութիւնից ու մեր հողից: Օրինակ, հրեաները այսօր խօսում են իրենց պատմական իրաւունքի մասին Պաղեստինի և Երուսաղէմի վրայ, բայց արի ու տես, որ նրանք այդ իրաւունքը չունեն, որովհետեւ նրանց ոչ մէկը չի աքսորել Պաղեստինից, նրանք սեփական կամքով են դուրս եկել այդ երկրից, իսկ վերադարձել են բռնի ուժով:

3.- Պատմական իրաւունքը պատասխանում է նաեւ այն հարցին, թէ ովքեր են մտնում տւեալ ազգի կազմի մէջ, այսինքն թէ ո՞ւմն է պատկանում անկախ պետութիւն ունենալու իրաւունքը: Աւստրիացիները իրենց գերմանացի չեն համարում, թուրքերը քրդերին թուրք են համարում, բաւարացիները իրենց պրուսացի չեն համարում և այլն և այլն: Եւ եթէ օրերից մի օր արեւմտահայերը ասեն, թէ իրենք ուրիշ ազգ են, ապա անհրաժեշտ անկախ պետութեան սահ-

մանները բոլորովին այլ կերպ կ’որոշուեն։ Ուրեմն ազգային պատկանելիութեան հարցն էլ պիտի որոշուի պատմական իրաւունքի սկզբունքներից։

Այսպիսով մենք տեսնում ենք, որ անկախ պետականութիւնը կազմում է ազգի սեփականութիւնը, որի իրաւունքը միանգամայն համապատասխանում է ընկերվարական սկզբունքներին։ Հայ ժողովրդի համար անկախ պետականութեան ստեղծումը կապ ունի հողահաւաքի, ազգահաւաքի և մարդկանց ազատութիւնը ապահովող վարչակարգի ստեղծման հետ։

Ահա թէ ինչու Միացեալ, Անկախ և Ազատ հայրենիք ստեղծելու թեզը զուտ ընկերվարական թեզ է և միշտ կը մնայ այդպիսին, քանզի միայն նման հայրենիքում մեր ժողովուրդը կարող է գոյատեւել։

1986

ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ՀԱՒԱՏՔԸ ԵՒ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ

Է. Յովհաննիսեան

Ծրագիրն էլ կայ, ծրագրային գրականութիւնն էլ: Ինչո՞ւ անվերջ խօսել ՄԵՐ ընկերվարութեան մասին:

Նման հարց տւողները դաշնակցական են դարձել այն բնական ճանապարհով, որը բնորոշ է վերջին տասնամեակների համար: Այդ ճանապարհով դաշնակցութեան շարքեր անցնողները ծնւում են դաշնակցական ընտանիքում, մեծանում են դաշնակցական մթնոլորտում և իրականում ոչ թէ ԸՆՏՐՈՒՄ են Դաշնակցութիւնը՝, այլ՝ ինքնաբերաբար պատկանում նրան: Ծրագիրը սրանց պէտք է միայն ինքնագիտակցութեան համար, այսինքն՝ պարզելու համար թէ ի՞նչ է իրենից ներկայացնում այն մեծ ընկերութիւնը, որում իրեն բախտ է վիճակել ծնւել: Նա ուսումնասիրում է – եթէ ուսումնասիրում է – իր կուսակցութեան ծրագիրը, ինչպէս մի հայ ուսումնասիրում է հայ ժողովրդի պատմութիւնը:

Անշուշտ, այսպիսի դաշնակցականների համար, ամենեւին էլ կարեւոր չէ անընդհատ խօսել ծրագրի և ընդհանրապէս ընկերվարութեան մասին: Սրանք կարող են սահմանափակւել ընկերվարական գաղափարախօսութեան արդարութեամբ և տնտեսական պահանջներում ղեկավարւել մեր ծրագրի ցուցմունքով, թէ «**Տնտեսական պահանջների մանրամասնութիւններն ու գործադրութեան միջոցները պիտի որոշւեն և սահմանւում ստանան այն ժամանակ միայն, երբ իրականացած կը լինի Հայաստանի ազատութիւնն ու անկախութիւնը…**»:

Բայց կացութիւնը այսօր փոխւել է և մենք չենք կարող սահմանափակւել բնական ճանապարհով մեր շարքերը անցնողներով: 10 տարի առաջ 10 տարեկան հասակում Հայաստանից կամ այլ երկրից ծնողների հետ դուրս եկած երեխան այսօր 20 տարեկան երիտասարդ է և ուզում է իր տեղը գտնի ազգային կեանքում: Գուցէ ժամանակին մենք էլ Հայաստան մտնենք ու մեր առջեւ տեսնենք հարիւր հազարաւոր երիտասարդների, որոնք իրենց տեղն են որոնում ազգային ծառայութեան մէջ: Սրանք, որ բնական ճանապարհով դաշնակցական լինելու բախտը չեն ունեցել, մեր շարքերը պիտի անցնեն, ընդունելով մեր գաղափարախօսութիւնը, նպատակները և գործելակերպը: Իմ կարծիքով, սրանց համար, մեր Ծրագիրը, առանց համապատասխան մեկնաբանութիւնների ու բացատրութիւնների, բաւարար չի: Մեր Ծրագիրը, ինչպէս բոլոր կուսակցութիւնների ծրագրերը, նմանւում է մասնագէտների համար

գրւած աշխատութիւնների, որոնք ոչ թէ մասնագէտ պատրաստելու, այլ մասնագէտին ուղղութիւն տալու համար են։ Բնական ճամբից դուրս մնացած երիտասարդը ունի բազմաթիւ հարցեր, որոնց պատասխանները չի գտնում Ծրագրի մէջ։

Մարդկութեան պատմութեան ընթացքում, հաւանաբար, մարդկանց ոչ մէկ բան այնքան չի մտահոգել ու զբաղեցրել, որքան որ զբաղեցրել է սեփական կեանքի իմաստը ըմբռնելու և կեանքում սեփական տեղը գտնելու հարցը։

Մարդ արարածը այն էակն է, որ միշտ էլ կարիքը ունեցել է գերադաս մի հեղինակութեան, իր անունով գործող և իր ձգտումները ընդգրկող մի համակարգի։ Մարդաբանները, հոգեբանները, հասարակագէտները իրենց գիտական մեթոդներով ջանում են ստեղծել այն կրօնական ու գաղափարախօսական համակարգերը, որոնց մասնակցելով, մարդը իրեն աւելի վստահ կը զգայ իր գործունէութեան մէջ և աւելի քիչ կը վախենայ սեփական քայլերի աննախատեսելի հետեւանքներից։

Այս գաղափարախօսական և կազմակերպչական համակարգերը որոնում են երիտասարդները և նրանք կը գտնեն մեզ, եթէ մեր պատասխանները նրանց հարցերին լինեն բաւարար։

Նրանց հարցերը պարզ են, բայց պատասխանները դժւար։

Ինչո՞ւ Հ.Յ.Դաշնակցութիւնը ընտրեց ընկերվարութիւնը. ի՞նչ տեղ է գրաւում այդ գաղափարախօսութիւնը նրա գործունէութեան մէջ որքանո՞վ ընկերվարական գաղափարախօսութիւնը համապատասխանում է հայ ժողովրդի նկարագրին։

Այս հարցերի պատասխանները կարելի է գտնել մեր գրականութեան մէջ։ Բայց շատ քչերին կարող ես ուղարկել գրադարան՝ այս կամ այն աշխատութիւնը կարդալու առաջարկութեամբ։ Սովորական երիտասարդը ուզում է իր հարցերի պատասխանը գտնել այսօրւայ այն միակ թերթում, որը մի կերպ կարդում է ազատ ժամանակ։ Բացի դրանից, ժամանակին որոշ հարցերի տրւած պատասխանները այսօր պէտք է դիտւեն ուրիշ ակնոցով և գուցէ վերանայւեն։ Ահա թէ ինչու, մենք միշտ պէտք է խօսենք ընկերվարութիւնից։

Վերցնենք, օրինակ, Արշակ Ջամալեանի պատասխանը այն հարցին, թէ ինչո՞ւ Հ.Յ.Դաշնակցութիւնը որդեգրեց ընկերվարական գաղափարախօսութիւնը։

Ահաւասիկ.- «**Իւրաքանչիւր դարաշրջան իր գաղափարախօսութիւնն ունի, որ անխուսափելիօրէն իր կնիքն է դնում նոյն դարաշրջանում առաջացած հասրային շարժումների վրայ… Հայ յեղափոխական կուսակցութիւնների ծագման օրերին, իշխող մտայնութիւնը առաջաւոր մարդկութեան մէջ այսպէս կոչւած գիտական ընկերվարութիւնն էր**»։ Ապա, նշելով ընկերվարական ուղղութիւն-

ների միջեւ տարբերութիւնների գոյութիւնը, Ջամալեանը գրում է.- «**Սակայն, երեք հիմնական կէտերում, նրանք համաձայն էին իրար հետ: Առաջին՝ որ պէտք է վերջ տալ մարդկութեան աշխատանքի շահագործմանը, երկրորդ՝ որ սրա համար անհրաժեշտ է արդիւնաբերական միջոցների համայնացում և երրորդ՝ որ այս համայնացումը կարող է իրականանալ միմիայն դասակարգային պայքարի միջոցով**»: «Հասկանալի է, անշուշտ,- շարունակում է Ջամալեանը,- **որ ընկերվարական խօսքի ու գործի թռի ու բռնում հասսկ նետած մարտունակ հայ երիտասարդութիւնը զերծ չպիտի մնար ընկերվարական սկզբունքներից: Եւ որովհետեւ այս երիտասարդութեանն էր վիճակուած կեանքի կոչել հայ յեղափոխական կուսակցութիւնները՝ ապա ուրեմն հասկանալի է նաեւ, որ նա պէտք է ընկերվարական շունչ և ոգի դնէր այդ կուսակցութիւնների ծրագրերում**»:

Իսկապէս հասկանալի է, թէ որտեղից է մեր Ծրագրի մէջ եկել ընկերվարական ոգին և շունչը:

Բայց երբ Հ.Յ.Դաշնակցութիւն կուսակցութեան ծագման օրերին առաջադէմ մարդկութեան մէջ իշխող մտայնութիւնը գիտական ընկերվարութիւնն էր, արդեօ՞ք այսօր էլ առաջադէմ մարդկութեան մտայնութիւնը մնացել է նոյնը: Մենք կա՛մ պէտք է այս բանը ցոյց տանք և կամ էլ փոփոխութեան ենթարկենք մեր տեսակէտները, եթէ այդ բանը արդէն արել է առաջադէմ մարդկութիւնը:

Կամ՝ արդեօ՞ք մենք չենք տեսնում, որ այսօր աշխարհի ընկերվարական շարժումների յետեւում կանգնած են բոլորովին ուրիշ ուժեր, որոնք ղեկավարւում են ոչ թէ արդարութեամբ, այլ բոլորովին ուրիշ նպատակներով: Եւ գուցէ աւելի ուշադիր ուսումնասիրութիւնները ցոյց տան, որ հէնց ծագման օրից ընկերվարական շարժումները ընկան յայտնի աշխարհաքաղաքացիների ձեռքը, որոնց միակ նպատակը հեղինակութիւնների տապալումն էր: Նրանք ոչնչացնում էին կրօնները ու թագաւորութիւնները, աւելի դաժան բռնութիւններ հաստատելու համար, որտեղ իրենք կատարում էին ղեկավարների դեր և այդ ճանապարհով այսօր արդէն հասել են աշխարհի ղեկավարութեանը: Կարո՞ղ ենք մենք դուրս պրծնել նրանց ձեռքից և սեփական արդարութեան ծրագիրը մշակել: Կարծում եմ որ ոչ:

Բաւական է նշել, որ այսօր աշխարհի տարբեր ընկերվարական ուղղութիւնները համաձայն չեն իրար հետ ոչ «**շահագործում**» հասկացողութիւնը սահմանելու, ոչ «**արտադրական միջոցներ համայնացնելու**» և ոչ էլ «**դասակարգային պայքարի**» հարցերում: Եթէ մենք այս հարցերի մէջ չպիտի մտնենք, ապա լաւ է, որ մնանք արդարութեան գաղափարախօսութեան սահմանների մէջ, ինչպէս մնացել ենք միշտ: Հակառակ դէպքում չէր կարող Ջամալեանը ասել, որ Դաշնակցութիւնը ոչ միայն 1907 թւականին որդեգրեց ընկերվարական

ծրագիրը, այլեւ՝ ընկերվարական ծրագիր ունէր դրանից էլ առաջ։ Շատ ճիշտ է այս միտքը և 1892 թւականի մեր Ծրագիրը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ընկերվարական արդարութեան պնդումը և այդ արդարութեան ձգտումը։

ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԵԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՈՒԺԸ

Խորհրդային Հայաստանում այսօր տարածւած է այն տեսակէտը, որ ընկերվարական գաղափարախօսութիւնը ձգողական ուժ ունի, որովհետեւ մարդիկ եսամոլ են։

Մեփական անընդունակութիւնից բխող անյաջողութիւնը մարդիկ սիրով վերագրում են վարչակարգին։ Ընկերվարութիւնը ամենահաշտ ու ամենացանկալի ձեւով է բացատրում ոչ մէկ բանի չհասած մարդուն, թէ ո՞վ է դրանում մեղաւոր։ Կեանքում ոչ մէկ յաջողութիւն չունեցող մարդուն մօտենում է ընկերվարութիւնը և շշնջում նրա ականջին, որ դու քաղցած ես, աղքատ ու թշւառ ոչ թէ որովհետեւ տգէտ ես, ծոյլ ու հարբեցող, այլ որովհետեւ վարչակարգն է անկատար։ Հարուստները ու յաջողութիւն ունեցողները, գիտնականներն ու երաժիշտները, գործարանատէրերը ու կառավարական պաշտօնեաները քեզանից էլ տգէտ են ու ծոյլ, բայց իշխող դասակարգին են պատկանում, դրա համար էլ քեզանից աւելի լաւ վիճակում են։ Արի միասին քանդենք հին աշխարհը և նոր աշխարհում դու կը գրաւես նրանց տեղը։ Նման բացատրութիւնը ես լսել եմ Հայաստանի ամենաբարձրաստիճան գիտնականներից ու մտաւորականներից։ Արդեօ՞ք այս բացատրութեան մէջ չկայ որոշ ճշմարտութիւն։ Արդեօ՞ք մեր երիտասարդներից շատերը հէնց այդպէս էլ չեն մտածում։

Եւ ի՞նչ կարող է պատասխանել նրանց մեր ընկերվարութիւնը, երբ այսօր այնպէս են խճճւել շահագործողների ու շահագործւողների շահերը, այնքան է ծաւալւել հասարակութեան սպառողականութիւնը, այնքան անհաւասարաչափ է աշխարհի տնտեսական զարգացումը, որ պարզ ընկերվարական դրոյթներով այս ամէնը անկարելի է բացատրել։

Պիտի՞ մենք խորանանք այս հարցերի մէջ, պիտի՞ ջանանք պատասխանել մեր երիտասարդների համընդհանուր հարցերին, թէ՞ ոչ։ Կարծում եմ որ ոչ։

Նախ՝ որովհետեւ չենք կարող, իսկ յետոյ՝ «**Մենք ասպարէզ չենք իջել իբրեւ այս կամ այն իւտոպիական վարդապետութեան պատկանողներ, չենք ձգտում մտցնել մեր կեանքի մէջ այս կամ այն դաւանութիւնը հանդերձ իր հանգամանքներով, մեր ժողովրդին չենք նկարագրել այժմ այս կամ այն իդէալական հանրային կազմակերպութիւնը իր բոլոր մանրամասնութիւններով։ Մեր ձգտումն է, որ մեր ծրագիրը կենսական լինի, մեր ուշադրութիւնը, գլխաւորապէս կենտրոնացած է մեր երկրի ներկայ դրութեան վրայ**», ինչպէս որ նշում էին

Դաշնակցութեան հիմնադիրները, Անդրանիկ Ծրագրի իբրեւ նախաբան գրած իրենց «Այբուբեն» յօդուածաշարքում:

Սա նշանակում է, որ մենք ոչ միայն չենք պատասխանելու հասարակական խնդիրներով տառապող երիտասարդի հարցումներին, այլեւ մեր մէջ չի կարող տեղ գտնել այն երիտասարդը, որ մեզ մօտ է եկել միայն իր ընկերվարական զգացմունքներին բաւարարութիւն տալու, բայց ոչ հայ ժողովրդի ճակատագրի մաս կազմելու համար: Եւ ահա այստեղ առաջ է գալիս այն գլխաւոր հարցը, թէ ի՞նչ տեղ է գրաւում ընկերվարութիւնը մեր գործունէութեան մէջ:

Բոլոր ամբողջատիրական վարչակարգերը մեղադրում են նրանում, որ նրանք կիրառում են «**նպատակը արդարացնում է միջոցները**» սկզբունքը: Մէկ կողմից այդ սկզբունքը իսկապէս որ դատապարտելի է, միւս կողմից եթէ նպատակը չի արդարացնում միջոցները, հապա ի՞նչը:

Եթէ մենք ասենք, որ նպատակով չի պայմանաւորուած միջոցների ընտրութիւնը, դա միայն կը նշանակի, որ մեր նպատակը վերջնական նպատակ չէ, որ կայ մէկ ուրիշ աւելի կարեւոր նպատակ, որը խլում է մեզանից միջոցներ ընտրելու ազատութիւնը: Այդպէս իսկական քրիստոնէութիւնը պիտի արգելէր սպանութիւնը, իսկական ընկերվարութիւնը՝ շահագործումը, իսկական ժողովրդավարութիւնը՝ բռնութիւնը և այլն:

Եւ եթէ մեր քաղաքական նպատակներին հասնելու միջոցները պէտք է ընտրէին կրօնից կամ ընկերվարութիւնից ղեկավարելով, ուրեմն մեր նպատակը ոչ թէ անկախ Հայաստանն է, այլ ընկերվարութիւնը, Աստծոյ հաւատքը և կամ էլ որեւէ այլ բարոյականութիւն: Բայց Հ.Յ.Դաշնակցութեան ներսում նման հարցեր երբեք չեն ծագել նախկինում, ու ցաւալի է՝ եթէ այսօր նրանք ծագում են:

Հ.Յ.Դ. Ծրագրի վերամշակման առիթով, 7-8 տարի առաջ, Հ.Յ.Դ. Բիւրոն շարքերին յայտնում էր, «**շրջաններից և ընկերներից ոմանք ուզում էին պահպանել 1907ի Ծրագրի ընդհանուր տեսութիւնը՝ մարդկային հասարակութեան հոլովոյթի իր բոլոր մանրամասնութիւններով, բաւարարելով միայն մասնակի լրացումներով՝ ի շահ ընկերվարական գաղափարախօսութեան արդիականացման: Ուրիշներ, մեր ազգային ներկայ իրականութեան հրամայականից մեկնելով, տրամադրութիւն ունէին մինչեւ իսկ առժամաբար լուռ անցնելու գաղափարաբանական հարցերի վրայով, և շեշտը դնելու յատկապէս մեր ազգային նպատակների և ազգային ազատագրական շարժման սկզբունքների ու հիմնաւորման վրայ**»: Կարո՞ղ էր արդեօք նման հարց կամ վէճ ծագել, եթէ մենք մնայինք հաւատարիմ մեր աւանդական սկզբունքներին, որոնց մասին դեռեւս 1931 թւականին Ջամալեանը գրում էր.-

«Տեսնում ենք, ուրեմն, որ Դաշնակցութիւնը մօտ 18 տարի գործեց Թրքահայաստանում՝ առանց իր ընկերվարական ծրագրին ձեռնամուխ լինելու: Այս ժամանակաշրջանում ընկերվարականներ շատ կային դաշնակցական ղեկավարութեան մէջ, բայց գտնւե՞ց նրանց մէջ մէկը, որ երես դարձնէր Դաշնակցութիւնից՝ այլ ասպարէզում իր ընկերվարական պայքարի սկզբունքները կիրառելու համար: Միւս կողմից, նոյն այս ժամանակաշրջանում Թրքահայաստանի լեռներում ու դաշտերում արնաքամ էին լինում հայ յեղափոխականները, որոնց մէջ Արամեանի ու Հրայրի, Պետոյի ու Վազգէնի, Բաբկէնի ու Թորգոմի նման ազգանուէր տիպեր շատ կային: Բայց սրանց ո՞րը ձայն հանեց, թէ ինչո՞ւ պէտք է - Դաշնակցութիւնը ընկերվարական ծրագիր ունենայ, երբ անհնարին է նրա գործադրումը, կամ ո՞րը հրաժարուեց իր սրբութեան սրբոցը համարել այդ անիրագործելի ընկերվարական ծրագիրը… ոչ մէկը»:

Ահաւասիկ այն փայլուն կացութիւնը, որը անհրաժեշտ է մեզ այսօր: Ընկերվարական տեսութիւնը չի կարող ամբողջովին թելադրել Հ.Յ.Դաշնակցութեան վարքագիծը, ինչպէս չենք կարող մենք ղեկավարուել զուտ ազգայնականութեամբ, առանց հաշւի առնելու ընկերվարական հաւատքը:

Այստեղ էլ պարզւում է, թէ ի՞նչ հարց ենք մենք լուծում, երբ զանազանում ենք ընկերվարական հաւատքը ընկերվարական տեսութիւնից: Այս մասին մի քիչ աւելի մանրամասնօրէն:

Դեկարտից յետոյ Սպինոզան և Պասկալը եղան իմացականութեան այն երկու սիւները, որոնցից առաջինի վրայ կառուցւեց նիւթապաշտական, իսկ երկրորդի վրայ գաղափարապաշտական իմացաբանութիւնները: «**Եթէ ուզում էք գտնել ճշմարտութիւնը**,- ասում էր Սպինոզան,- **մոռացէք ամէն ինչ և առաջին հերթին Աստծուն: Յիշեցէք միայն մաթեմատիկան: Գեղեցկութիւնը, այլանդակութիւնը, չարը, բարին, լաւը, վատը, ուրախութիւնը, տառապանքը, յոյսը, վախը – այս ամէնը անցողակի են և ոչ մէկ կապ ունեն ճշմարտութեան հետ**»: Սպինոզան յայտարարում է, որ առանց մաթեմատիկայի մարդիկ երբեք չէին ճանաչի ճշմարտութիւնը, որովհետեւ տրամաբանութիւնը անաչառ է ու խօսում է մարդկանց կարիքների ու զգացմունքների մասին: Սպինոզայի համար գիտութիւնը ճշմարտութեան միակ աղբիւրն է:

Ճշմարտութիւն ձեռք բերելու մասին բոլորովին այլ կարծիք ունէր Պասկալը: «**Լաւ է ղեկավարուել հաւատքով, քան տրամաբանութեամբ**,- ասում էր նա,- **քանզի մարդկային տրամաբանութիւնը ոչ մի վստահութիւն չի ներշնչում**»: Պասկալի համար ճշմարտութեան միակ աղբիւրը հաւատքն է: Իր յայտնի «**Վէճ**» աշխատութեան մէջ նա խոստանում էր մաթեմատիկօրէն ապացուցել, որ տրամաբանութիւնը մարդկանցից հաւատք է պահանջում: «**Եթէ ճշմարտութիւնը բոլորին ցոյց տրւի**,- ասում էր նա,- **ապա այդ ճշմարտութիւնը կը**

տեսնեն բոլոր բնական մարդիկ»: Մի խօսքով՝ Սպինոզայի և Պասկալի իմացաբանութիւնների մէջ մարմնացած են երկու հակադիր սկզբունքներ: Մէկը ճանաչողութեան աղբիւր ընտրում է գիտութիւնը, միւսը՝ հաւատքը, մէկը՝ փորձը, միւսը՝ սեփական ապրումները: Այս երկու տեսակէտների հաշտեցման փորձեր եղել են միշտ՝ Կանտից Բերգսոն տանող ճանապարհի վրայ: Այդ փորձը կատարել է նաեւ դոկտոր Ֆրանգեանը, որը գրում էր թէ, «**չկայ գոյն՝ առանց աչքի, ձայն՝ առանց ականջի, հոտ՝ առանց քթի: Եթէ մարդ չունենար այլ զգացմունքներ, քան տեսողութիւնը, այն ժամանակ փորձի ողջ աշխարհը կազմուած կը լինէր միայն գոյներից**»: Ֆրանգեանի միտքը կարելի է շարունակել, եթէ մենք օժտուած լինէինք մագնիսական դաշտը, ռադիոակտիւ ճառագայթումը կամ ուրիշի ապրումները ընկալելու յատկութիւններով, ապա բոլորովին այլ տեսք կ՚ունենար մեր աշխարհը և բոլորովին այլ կը լինէին մեր ձգտումները: Այն աշխարհայեացքը, որը հաշտեցրեց Սպինոզային Պասկալի հետ, կոչւեց համադրական մոնիզմ, որը իր որոշ թոյլ կողմերով հանդերձ մեզ համար ընդունելի է:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆ

Այժմ մենք կարող ենք խօսել ընկերվարական հաւատքի և ընկերվարական տեսութեան մասին: Ընկերվարական հաւատքը արդարութեան ՄԵՐ ձգտումն է, որը յենւում է ՄԵՐ զգացմունքների, տառապանքների, երջանկութեան հասնելու, անցեալում կատարւած անարդարութիւնների հատուցումը ստանալու, մեր հակառակորդին պարտութեան մատնելու ցանկութիւնների վրայ:

Սա Պասկալի ճանապարհով ձեռք բերւած արդար հասարակարգ ստեղծելու անհրաժեշտութիւնն է: Այս անհրաժեշտութիւնը զուտ հայկական է, որովհետեւ ծնւել է հայկական տառապանքից, հայկական անցեալից ու ներկայից, հայ ժողովրդին երջանկութիւն տալու ձգտումից:

Գիտական ընկերվարութիւնը, ինչպէս բոլոր գիտութիւնները, զգացումներ չունի. նա խօսում է մարդու մասին այնպէս, կարծես թէ մարդը մի աղիւս է, որից պատրաստելու է գեղեցիկ ընկերվարական շէնքը: Բայց ո՞ւմ համար, եթէ մենք բոլորս միայն աղիւսներ ենք: Ճապոնացիներ են այդ մարդիկ, թէ ռուսներ, չինացիներ թէ վրացիներ, գիտական ընկերվարութեան համար ոչ մէկ նշանակութիւն ունի: Արտադրական ուժերի, շահագործողների ու շահագործւողների, դասակարգային պայքարների մասին խօսելիս, գիտական ընկերվարութիւնը ոչ մէկ տեղ Հայ բառը չի օգտագործում: Սա Սպինոզայի ճշմարտութիւնն է, որը ձեռք բերելիս մենք հաւատում ենք, որ գեղեցկութիւնը, այլանդակութիւնը, չարը, բարին, լաւը, վատը, յոյսը, տառապանքը և ուրեմն ազգը անցողիկ ու անկարեւոր են:

Մեզ մնում է միայն համադրել այս երկու ճշմարտութիւնները և ստեղծել մեր յատուկ ընկերվարութիւնը, որը բխի մեր հայկական զգացմունքներից ու յենւած լինի համընդհանուր արդարութեան վրայ։ Մի քանի պատճառներով այդ համադրումը այսօր մենք ի վիճակի չենք անելու։ Թւարկենք պատճառներից մի քանիսը։

1.- Հայաստանի և Սփիւռքի միջեւ, ինչպէս նաեւ Սփիւռքի տարբեր հատւածների միջեւ բացակայում է հոգեկան կապը, այսինքն բացակայում է ապրումների ու արդարութեան ըմբռնումների միասնութիւնը։ Այսօր գոյութիւն չունի հայ ժողովրդի ընդհանուր ձգտումի ապրումը, ուստի նա չի կարող հաշւի առնւել մի ինչ որ ընդհանուր գաղափարախօսութեան մէջ։ Ինչ էլ որ մենք անենք այս ուղղութեամբ, կը վերաբերւի մեր հատւածի ապրումներին։

2.- Գիտական ընկերվարութիւնը ոչ մէկ տեղ իրեն չարդարացրեց, ուստի նրա դրոյթները զգուշութեամբ պէտք է կիրառուեն մեր գաղափարախօսութեան մէջ։ Գիտական ընկերվարութեան հիմնական սկզբունքների վերաքննութեամբ զբաղւած են աշխարհի խոշորագոյն ընկերվարական կուսակցութիւնները և մենք կարող ենք դրա վրայ աւելորդ ժամանակ չվատնել։ Մենք պարզապէս կարող ենք սպասել նրանց փորձերի արդիւնքներին։

3.- Մեր ազգային ապրումների և գիտական ընկերվարութեան սկզբունքների որեւէ համադրումը ի վերջոյ ծնելու է «հայկեան ընկերվարութեան» մի տարբերակ, որը՝ իբրեւ ազգային գոյնով գաղափարախօսութեան փորձ, կը յիշեցնի ծանօթ պատճառներով այնքան վարկաբեկւած «ազգային ընկերվարութիւնը», որ մենք հայերս դժւարութիւն պիտի ունենանք ապացուցելու, թէ մեր տարբերակը բոլորովին ուրիշ բան է։

Կան նաեւ ուրիշ պատճառներ, բայց նրանց վերլուծութիւնը մեր խնդրից դուրս է։

Ուրեմն՝ ընկերվարական հաւատքը և ընկերվարական տեսութիւնը մեզ համար դեռեւս մնում են առանձին-առանձին չհամադրւած վիճակում։ Այս անջատւածութիւնից երկու կողմերն էլ տուժում են, բայց աւելի շատ տուժողը հաւատքի կողմն է, որովհետեւ նա է զուտ հայկական կողմը։ Ընկերվարական տեսութիւնը վաղուց արդէն համադրւած է ուրիշ ազգերի հաւատքների հետ և այսօր ո՛չ ֆրանսացու, ո՛չ իտալացու և ոչ էլ գերմանացու համար գաղտնիք չէ, թէ ինչ պէտք է տայ իրեն ընկերվարութեան յաղթանակը։ Իսկ մենք այդ բանը չգիտենք, որովհետեւ ո՛չ անկախ երկիր ունենք, ո՛չ հողահաւաքով, ամբողջացած հայրենիք, և ոչ էլ միատարր ժողովուրդ, ուստի լաւ է, որ առայժմ սահմանափակուենք ընկերվարական հաւատքով։ Ես չեմ հակադրում տեսութիւնը և հաւատքը, ես միայն պնդում եմ, որ եթէ այսօր անկարելի է նրանց համադրու-

մը, լաւ է մնանք ընկերվարական հաւատքի սահմաններուն, քան թէ մեր վարքագիծը որոշենք գիտական ընկերվարութեամբ։

Երբ մենք առանց ընկերվարական հաւատքի կամ՝ աւելի ճիշտ, առանց արդարութեան ձգտման, տարւում ենք զուտ գիտական ընկերվարութեամբ, ապա մենք սկսում ենք մեր բարեկամներին ու թշնամիներին ընտրել հէնց այդ չափանիշով։ Մենք այնպէս ենք խօսում Միացեալ Նահանգների անօթիների մասին, կարծես թէ նրանց թիւը աւելի շատ է, քան, օրինակ, ընկերվարական Եթովպիայում և հէնց Խորհրդային Միութեան մէջ։ Մենք այնպէս ենք ուրախանում Նիկարագուայի սանդինիստական վարչակարգով, կարծես թէ այդ վարչակարգը իսկապէս որ աւելի արդար է, քան օրինակ կապիտալիստական Անգլիայի և կամ էլ Դաշնակցային Գերմանիայի վարչակարգերը։ Գիտական ընկերվարութիւնը ստիպում է մեզ կողմ բռնել և հակառակորդ համարել նոյնիսկ նրանց, ովքեր զգալիօրէն աջակցութիւն են ցուցաբերում Հայ Դատի աշխատանքներին։ Գիտական ընկերվարութիւնը ստիպում է մեզ զբաղւել ՈՉ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ, որոնք կան միայն արդարութեան հաւատքի մէջ և որոնք հէնց այդպէս էլ արձանագրւած են մեր Ծրագրի մէջ։ Ի՞նչ է սա, եթէ ոչ ընկերվարական հաւատք։ «**Հայ Դատի լուծումը, բոլոր անազատ ազգերի դատերի հետ, ունի համամարդկային նշանակութիւն։ Առանց ազգային արդար դատերի, ի շարս այլոց նաեւ Հայ Դատի լուծման, չեն կարող լիովին իրականանալ միջազգային կամ համամարդկային համակեցութիւնն ու խաղաղութիւնը։ Չի կարող ամբողջական լինել մանաւանդ՝ ապագայ ընկերվար կարգերի և ընկերվար ազգերի համաշխարհային եղբայրութիւնը**»։

Ապա՝ փորձենք մեր Ծրագրի այս պնդումը «գիտականացնել» և ցոյց տալ, թէ այդ ինչպէ՞ս պիտի ճապոնացին, անգլիացին, ֆրանսացին, վրացին և թուրքը ձեռք-ձեռքի տւած լուծեն աշխարհի արդար դատերը, ի շարս այլոց նաեւ Հայ Դատը։ Եկէք գոնէ մենք մեզ չխաբենք։ Սա այն փարոսն է, որին մենք ձգտում ենք, սա այն արդարութիւնն է, որին մենք հաւատում ենք, բայց սա այն ճանապարհն է, որը մարդկութեան կողմից դեռեւս մշակւած չէ։

1986

ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ԱԼԻՔԻ ԿԱՏԱՐԻՆ

Էդիկ Յովհաննիսեան

Մէկ անգամ յայտնի գիտնական Ռադերֆորդին հարցրին, թէ ինչպէ՛ս նրան յաջողուեց ամբողջ կեանքում մնալ ալիքների կատարին:

Շատ պարզ,- պատասխանեց Ֆիզիկոսը,- այդ ալիքները ես էի ստեղծում:

Աշխատաւորների պաշտպան, բոլոր տեսակի աշխարհակալութիւնները մերժող, իշխող ու հպատակ դասակարգերի գոյութիւնը մերժող, Հ.Յ.Դաշնակցութիւն ընկերվարական կուսակցութիւնը իր հայրենիքի մէջ կանգնել է այն իրողութեան առջեւ, որ Հայաստանի իշխանութիւնները կառուցում են դրամատիրական վարչակարգ:

Այդ մասին բացայայտօրէն յայտարարում են նախագահը, վարչապետը, նախարարները և ժողովրդի մէջ էլ կայ այն տրամադրութիւնը, որ դրամատիրութիւնը շատ աւելի լաւ պետական վարչակարգ է, քան ընկերվարութիւնը, և եթէ այսօր Հայաստանում դրամատիրութիւնը տնտեսական աւերներ է գործում, ապա դա նրանից է, որ Հայաստանի ղեկավարները չգիտեն, թէ ինչպէ՛ս պիտի կառուցւի դրամատիրական վարչակարգը:

Ի՞նչ պիտի անի Դաշնակցութիւնը այն երկրում, որը որդեգրել է դրամատիրական արժէքներ և ըստ պաշտօնական յայտարարութիւնների այդ ճանապարհից չի շեղուելու: Աւելին, ըստ Հ.Հ. նախագահի յայտարարութեան, նա՝ ով այսօր խօսում է ընկերվարութիւնից, բոլշեւիկ է:

Առաջին քայլը, որ Դաշնակցութիւնը պիտի անէր, նա արդէն արեց: Նա յայտարարեց, որ մեր ընկերվարական կուսակցութիւնը ոչ մէկ սկզբունքային զիջումներ չի կատարի դրամատիրական վարչակարգ կառուցող կառավարութեանը, այսինքն երբեք չի հաշտւի դրամատիրութեան հետ և այս հարցում միշտ կը մնայ ընդդիմադիր դիրքերի վրայ: Սակայն այս յայտարարութիւնը, եթէ մենք միայն դրանով պիտի սահմանափակենք մեր գաղափարախօսական ընդդիմութիւնը, ոչ միայն շատ քիչ է, այլ պարզապէս ոչինչ չի ասում մեր ժողովրդին ընկերվարական վարչակարգ կառուցելու մեր նպատակների և ռազմավարութեան մասին:

Դժբախտաբար մեր ընկերներից շատերը և Հայաստանի ժողովրդի մէկ մասը այն տպաւորութեան տակ են, որ ընկերվարութեան մասին մեր խօսակ-

ցութիւնները լուրջ չեն և որ մենք ինքներս դրամատիրական վարչակարգի կողմնակիցներ ենք, բայց չենք ուզում խախտել մէկ դար առաջ կերտած աւանդոյթը։ Դժբախտաբար այս ուղղութեամբ ոչ մէկ բացատրութիւն չի տալիս նաեւ մեր ռազմավարութիւնը, որ ընդգրկում է գործունէութեան երեք հիմնական ոլորտներ։

- հայ անկախ պետականութեան ամրապնդումը։
- մեր ազգային-պահանջատիրական գործի հետապնդումը,
- եւ ժողովրդավարական կարգերի ամրապնդումը մեր երկրի մէջ։

Մենք պէտք է ցրենք մեր ժողովրդի մէջ ստեղծուած այդ սխալ պատկերացումը՝ ցոյց տալով, որ մեր ընկերվարութիւնը ոչ թէ աւանդոյթ է, այլ հիմնական արժէք և մեր քաղաքական նպատակներից մէկը։

Մեր ժողովուրդը պէտք է համոզուած լինի, որ մենք պատրաստ ենք պայքարելու աշխատաւորների իրաւունքները պաշտպանելու համար։ Եթէ մենք ի վիճակի ենք այդ բանը ներշնչելու մեր աշխատաւորներին, ապա նրանց վրայ կարող ենք յենուել մեր ազգային և հասարակական նպատակներին հասնելու հարցում։ Իսկ եթէ ոչ, ուրեմն ընկերվարութիւնը մեզ համար դեռեւս ձեւ է, բայց ոչ բովանդակութիւն։ Մինչդեռ մեզանից շատերը համոզուած են, որ ընկերվարական վարչակարգը հայ ժողովրդի հասարակական կեանքի կազմակերպման լաւագոյն ձեւն է։

Այդ բանը մենք պարտաւոր ենք անել նաեւ աշխատաւորութեան առջեւ մեր միջազգային պարտաւորութիւնները կատարելու իմաստով։ Ո՛չ, չենք կարող այս հարցում անտեսել այն փաստը, որ մենք կարողացանք դառնալ Ընկերվար Միջազգայնականի անդամ, շնորհիւ նրան, որ մուտք գործեցինք Հայաստան ու դարձանք պետութիւն ներկայացնող կուսակցութիւն։ Մնալով սփիւռքեան կուսակցութիւն, մենք երբեք չէինք կարող մտնել այդ միջազգային կազմակերպութեան կազմի մէջ։ Մենք այսօր կարող ենք օգտուել այդ կազմակերպութիւնից, բայց պարտաւոր ենք գործնականում նրան ապացուցել, որ մենք պայքարում ենք Հայաստանում ընկերվարական վարչակարգ ստեղծելու համար։

Ինչպէ՞ս պիտի պայքարենք, ո՞վքեր են մեր հակառակորդները, ինչպիսի՞ ընկերվարութիւն մենք պիտի հաստատենք Հայաստանում։

Այս և բազմաթիւ նման հարցերի պատասխանը մենք այսօր չունենք և կարծես թէ չենք էլ ուզում տալ համարելով, որ Հայաստանում տիրող քաղաքական կացութիւնը առայժմ թոյլ չի տալիս նման հարցերի վրայ կենտրոնացնել մեր ուշադրութիւնը։ Բայց երբ դրա ժամանակը գայ, կը պարզուի որ մենք պատրաստ չենք ընկերվարական արժէքներին տէր կանգնելու ու, ինչպէս միշտ,

տէր կը կանգնեն ուրիշները, այս հարցում էլ մեզ թանգարան ուղարկելու միտումով։

Ահա թէ ինչո՛ւ մենք պարտաւոր ենք նշելու ու վերյիշելու մի քանի իրողութիւններ, որոնք կարող են հիմք ծառայել մեր ընկերվարական ռազմավարութիւնը մշակելու համար։

1

Հայաստանում այսօր իշխում է վաճառական դասակարգը, որը իր ձեռքերի մէջ կենտրոնացրել է երկրի ամբողջ իշխանութիւնը։ Սակայն այդ իշխող դասակարգը դասական իմաստով ոչ մէկ ուրիշ դասակարգ չի հալածում և նրա հաշւին չի ապրում, ուստի դասակարգային պայքարի համար Հայաստանում հող գոյութիւն չունի։ Եթէ աշխատաւորութիւնը հալածւում ու շահագործւում է, ապա ոչ թէ իշխող վաճառականների, այլ դարաշրջանի և դրսի դրամատիրութեան կողմից։

Դասակարգերի բախումը տեղի է ունենում այնտեղ, որտեղ արտադրութեան տէրերը աշխատաւորների հետ միասին ստեղծում են բարիքներ, սակայն այդ բարիքները բաշխւում են անարդարացիօրէն և հէնց այդ անարդարութիւնն էլ կոչւում է շահագործում։ Այս կացութիւնը անխուսափելիօրէն ծնում է դասակարգային պայքար, որի ընթացքում իշխող դասակարգը ստիպւած է լինում զիջել աշխատաւորին, քանզի առանց աշխատաւորի նա ի վիճակի չէ կազմակերպել արտադրութիւնը և աւելացնել իր հարստութիւնը։

Հայաստանում այդ դասական կացութիւնը գոյութիւն ունի, որովհետեւ իշխող վաճառականը վաճառում է ոչ թէ երկրում արտադրւող, այլ դրսից ներածւող ապրանքը, և կամ էլ նախորդ վարչակարգի կողմից ստեղծւած հարստութիւնները, որոնք իշխանութիւնների օգնութեամբ անխնայ կերպով կողոպտւում են։

Սա նշանակում է, որ եթէ Հայաստանի ամբողջ աշխատաւորութիւնը գործադրուլ յայտարարի, վաճառականութեան հարստութիւնից մէկ դրամ չի պակսի և տուժողը նոյնինքն աշխատաւորը կը լինի։ Դա է պատճառը, որ ապստամբելու կամ պայքարելու փոխարէն աշխատաւորը լքում է երկիրը։

Այս իրողութիւնը ստիպում է մեզ մշակել այնպիսի հասարակական ծրագիր, որը Հայաստանի աշխատաւորին դարձնի երկրի եկամուտների գլխաւոր աղբիւրը, որը այդ իսկ պատճառով կարող է թելադրել իր կամքը իշխանաւորներին։

2

Ինչպիսին էլ որ լինի ժողովրդական տնտեսութեան ճիւղաւորումը, ընկերվարական վարչակարգի համար կարեւորագոյն և սկզբունքային նշանակութիւն ունեցողը արտադրական միջոցների և սպառման ապրանքների արտադրութիւնների փոխ-յարաբերութիւնն է, որի մասին առաջին տեղեկութիւնները մենք ստանում էինք դեռեւս խորհրդային միջնակարգ դպրոցում: Այս երկու արտադրութիւնների մէջ հաւասարակշռութեան խախտումը սպառնում է կործանիչ հետեւանքներով: Արտադրական միջոցների արտադրութիւնը երկրի տնտեսական բազուկների վերականգնումն է և հանդիսանում է ապագայ տնտեսութեան զարգացման երաշխիքը: Եթէ արտադրական միջոցների արտադրութիւնը յետ մնայ անմիջական սպառման ապրանքների արտադրութիւնից, ապա անխուսափելի է տնտեսական լճացումը:

Իսկ եթէ արտադրական միջոցների արտադրութիւնը առաջ ընկնի սպառման ապրանքների արտադրութիւնից, ապա դա նշանակում է, որ երկրի միջոցների մեծ մասը խլում է բնակչութեան կարիքների բաւարարման բնագաւառից և տրւում է արդիւնաբերական կարիքների բաւարարմանը: Արտադրական այս դասական բնագաւառների փոխ-յարաբերութիւնն էլ Հայաստանում գոյութիւն չունի, քանզի սպառման ապրանքները չեն արտադրւում երկրի ներսում և արտադրական միջոցների արտադրութիւնը Հայաստանի համար աւելորդ է: Մանաւանդ որ երկրից դուրս նրանց վաճառելը գրեթէ բացառւած է:

Այս պայմաններում միանգամայն հասկանալի է ապրանքների ինքնարժէքի և շուկայական գնի միջեւ տարբերութիւնը նւազեցնելու բնական ցանկութիւնը: Վաճառականն էլ դրա դէմ չի առարկում, քանզի արտադրական կուտակումների մէջ շահագրգռւած չէ և ապրանքի ինքնարժէքը նրան ամենեւին էլ չի հետաքրքրում: Սեփական եկամուտը նա ձեռք է բերում ոչ թէ յաւելեալ արժէքի ճամբով, այլ տարբեր շուկաներում գոյութիւն ունեցող գների տարբերութեան ճամբով:

3

Դրամատիրական վարչակարգը նախ և առաջ արդիւնաբերական վարչակարգ է, որտեղ քաղաքը իշխում է գիւղի վրայ, իսկ մշակող արդիւնաբերութիւնը արդիւնահանող արդիւնաբերութեան վրայ: Գիւղը մնում է դրամատիրական վերնակառոյցի գրեթէ անշարժ հիմքը: Գիւղատնտեսութեան բնագաւառում դրամատիրութիւն այդպէս էլ չստեղծւեց: Գիւղացու անհատական տնտեսութիւնը շատ ամուր ու կենսունակ գտնւեց եւ դրամատիրութիւնը հրաժարւեց գիւղատնտեսութիւնը մեծ ընկերութիւնների մէջ առնելու ապարդիւն փորձից: Գիւղատնտեսութիւնը մնաց գիւղացու ձեռքում և նոյնիսկ ամե-

նազարգացած դրամատիրական երկրներում դուրս չեկաւ մէկ ընտանիքի սահմաններից։

Ընկերվարութիւնն էլ չկարողացաւ լուծել գիւղատնտեսութիւնը պետականացնելու հարցը, եթէ լուծում չհամարենք կոլտնտեսութիւններ ստեղծելու խորհրդային փորձը, որը ճորտատիրութեան տարբերակներից մէկն էր։ Միայն սոցիալիստ-յեղափոխականները առաջ քաշեցին այն թեզը, թէ գիւղատնտեսութեան մէջ պիտի ստեղծւի ոչ թէ արտադրող ընկերութիւն, այլ արտադրողների ընկերութիւններ, որոնց համագործակցութեան ոլորտը որոշւում է ոչ թէ կենտրոնում, այսինքն հողը մշակելու բնագաւառում, այլ արտաքին աշխարհի հետ շփւելու սահմանի վրայ։ Այնտեղ է որոշւում, թէ ի՞նչ է պէտք գիւղացուն արտադրութիւն կազմակերպելու համար։ Սակայն սոցիալիստ-յեղափոխականները միաժամանակ պնդում էին, որ ազգային աշխատաւորը ազգային դրամատիրութեան ժառանգորդն է, ուստի գիւղատնտեսութեան բնագաւառում ընկերվարութիւնը պիտի տարբեր ձեւեր որոնի ու անկարելի է բոլորին առաջարկել տնտեսավարման նոյն ձեւերը։

Այստեղից էլ բխում է այն կարեւորագոյն խնդիրը, որ ընկերվարական գիւղատնտեսութեամբ զբաղւողները, յանձին Հ.Յ.Դաշնակցութեանը, պէտք է մեկնեն գիւղ, հաստատւեն այնտեղ, աշխատեն գիւղացու հետ ձեռք-ձեռքի տւած, որից յետոյ միայն կարելի է մշակել ընկերվարական գիւղատնտեսութեան քաղաքականութիւնը։

Պէտք է ասել, որ այս հարցի վերաբերեալ եղել են բազմաթիւ առաջարկութիւններ։

Ոմանք առաջարկում էին բաժանել գիւղացիներին կալւածատէրերից խլւած հողը, ոմանք համարում էին, որ գիւղացուն պէտք է տալ դրամատան միջոցով այդ հողերը գնելու իրաւունքը, ոմանք էլ առաջարկում էին վերաբնակեցնել գիւղացիներին ազատ հողերի վրայ։ Կային առաջարկութիւններ հողի պետականացման մասին, իսկ ոմանք էլ համարում էին, որ հողը պատկանում է նրանց, ովքեր այն մշակում են։ Սակայն բոլոր այս առաջարկութիւնների մէջ մէկը մեզ թւում է ամենաուշագրաւը։ Այդ առաջարկութիւնը արեց ամերիկացի Հենրի Ջորջը։ Առաջարկի էութիւնը կայանում էր հետեւալում։

Բոլոր մարդիկ ունեն հողից օգտւելու հաւասար իրաւունք, ինչպէս նաեւ սեփական աշխատանքի արդիւնքները տնօրինելու իրաւունք։ Այս երկու իրաւունքները խախտւեցին, երբ ճանաչւեց հողի սեփականացման իրաւունքը և արտադրած ապրանքից տուրքեր հաւաքելու կարգը։ Վերականգնելու համար մարդկանց խախտւած իրաւունքները կայ միայն մէկ ճանապարհ։ Անհրաժեշտ է հաստատել այնպիսի հողի տուրք, որը հաւասար լինի բոլոր այն առաւելութիւններին, որոնք ստանում է հողատէրը։ Նշանակութիւն չունի, թէ հողը

օգտագործւում է գիւղատնտեսութեան բնագաւառում, թէ նրա վրայ կառուցւում են գործարաններ։ Բացի հողային տուրքից՝ մնացած բոլոր տուրքերը պէտք է վերանան։ Ոչ մէկը չպէտք է ունենայ հողից օգտւելու առաւելութիւն և հողից ստացւած ապրանքի համար ոչ մէկը տուրքեր չի վճարելու։

Անհրաժեշտ է, որ հողից օգտւող մարդիկ հասարակութեանը վճարեն տուրքեր համաձայն այն առաւելութիւնների, որ գալիս է հողից։ Այսինքն բոլոր տուրքերը պէտք է գանձւեն ոչ թէ աշխատանքից, այլ հողից։ Այդ դէպքում խոշոր հողատէրերը, որոնք այն չեն մշակում, տուրքերից ազատւելու համար ստիպւած կը լինեն հրաժարւելու իրենց հողից։

Հենրի Ջորջի այս տեսութիւնը բաւականին մանրամասնօրէն մշակւած է և կարող է օգտակար լինել Հայաստանի գիւղատնտեսութեան համար։ Օգտակար կարող է լինել նաեւ սոցիալիստ-յեղափոխականների, մանաւանդ նրանց ղեկավար Վիկտոր Չերնովի աշխատութիւնները գիւղատնտեսութեան համայնացման վերաբերեալ։

4

Հողի և արտադրական միջոցների համայնացումը պետականացում չէ։ Սեփականութեան պետականացումը ստեղծում է պետական դրամատիրութիւն, որը կապ չունի ընկերվարութեան հետ և որի ահաւոր տարբերակը Խորհրդային Միութիւնն էր։

Պետութիւնը տնտեսական կազմակերպութիւն չէ, այլ իշխելու միջոց, որը կազմակերպւած է իշխող դասակարգի նպատակներին ծառայելու համար։ Պետական պաշտօնեայի խնդիրը ոչ թէ նոր ու աւելի նպատակայարմար կարգեր ստեղծելու մէջ է, այլ իշխանութիւնը պահպանելու և բարձրագոյն մարմիններին ծառայելու համար է։

Պետական գործունէութեան մէջ ամէն մի նախաձեռնութիւն գալիս է վերեւից, ինչը նշանակում է, որ պետութեան առանձնայատկութիւնը պահպանողականութիւնն է։ Մինչդեռ արտադրութեան նոր ձեւերը ունեն յեղափոխական էութիւն և հակասում են պետութեան պահպանողականութեանը։ Ահա թէ ինչու նոյնիսկ շատ հզօր ընկերվարական կոչւող պետութիւններում պետական ձեռնարկութիւնները, մասնաւոր արտադրութեան հետ մրցելիս, յաճախ պարտւում էին, ստեղծելով այն տպաւորութիւնը, թէ մասնաւոր սեփականութիւնը աւելի արդիւնաւէտ տնտեսավարութիւն է։

Բայց, ինչպէս ասացինք, միջոցների պետականացումը ընկերվարութեան հետ ոչ մէկ կապ չունի։ Ձեռնարկութեան պետականացումը ձեռնարկութեան աշխատաւորներին դարձնում է պետական պաշտօնեաներ, որը իր մէջ կրում է արտադրւող ապրանքների նւազման վտանգը։

Բացի դրանից, աշխատաւորը պայքարում է ոչ միայն նիւթական բարիքներ ձեռք բերելու, այլեւ իր արժանապատւութեան համար: Նա չի ցանկանում, որ իրեն միայն արտադրական միջոց համարեն ու վարւեն նրա հետ այնպէս, ինչպէս վարւում են անասունների հետ: Իսկ այդ իմաստով ոչ մէկ բարելաւում տեղի չի ունենայ, եթէ առանձին դրամատէրերի փոխարէն երկրի տնտեսական իշխանութիւնը անցնի պետութեան ձեռքը, որը միշտ էլ շատ աւելի դաժան է շահագործման հարցում, քան առանձին դրամատէրը, որը վերջին հաշտով օժտւած է որոշ մարդկային յատկութիւններով:

Դա էր պատճառը, որ Անգլիայի բանւորները յամառօրէն դիմադրում էին ընկերվարութեանը, որը նրանց մատուցւում էր որպէս պետական դրամատիրութիւն: Եւ այս նոյն պատճառով էլ Ֆրանսիայի աշխատաւորների մէջ մեծ տարածում էին գտել անիշխանական տրամադրութիւններ և Ֆրանսիայի բանւորները յամառօրէն չէին ուզում արտադրութիւնը յանձնել պետութեանը:

Պէտք է ասել, որ համայնացման և պետականացման շփոթը ստեղծեց ինքը՝ Մարքսը, որը յայտարարեց, թէ բանւոր դասակարգը ձեռք կը բերի պետական մեքենան, որի օգնութեամբ որքան կարելի է շուտ կը խլի քաղքենիների ձեռքից արտադրական միջոցները: Այդ նպատակին էլ ծառայում է պետականացումը: Բայց ըստ Մարքսի և Էնգելսի՝ պետութիւնը վերանում է և շահագործման միջոց լինելու փոխարէն, նա դառնում է տնտեսական խնդիրների կարգաւորիչ:

Ու չնայած մարքսիստական այս տեսակէտի, յայտնի ընկերվարական Շտրեբելը յայտարարեց, որ «Արեւմտեան Եւրոպայում գոյութիւն չունի ո՛չ մէկ ընկերվարական ուղղութիւն, որը համայնացման տակ հասկանայ պետականացում»: Շտրեբելը իրաւացի էր, քանի դեռ խօսում էր արեւմտեան ընկերվարութեան մասին:

Բայց եւրոպական ընկերվարութիւնից բացի գոյութիւն ունէր ռուսական, այսինքն ասիական ընկերվարութիւնը, որի մասին Լենինը հռչակեց՝ «Սոցիալիզմը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մէկ քայլ առաջ պետական դրամատիրութիւնից: Պետական դրամատիրութիւնը սոցիալիզմի նիւթական նախապատրաստումն է, պատմական զարգացման այն աստիճանը, որը միակն է սոցիալիզմի և կապիտալիզմի միջեւ»:

Այսինքն՝ Լենինի կարծիքով ընկերվարութեան էութիւնը ոչնչով չի տարբերւում պետական դրամատիրութիւնից: Անհրաժեշտ է միայն մէկը՝ պետական իշխանութիւնը փոխարինելու միւսով: Համայնացումը պետականացմամբ փոխարինելուց խուսափելու համար տարբեր ընկերվարական շարժումները ընտրեցին տարբեր ճանապարհներ, որոնցից և ոչ մէկը չի կարող

կիրառուել Հայաստանում, քանզի Հայաստանի պայմանները յատուկ են ու, նախքան որեւէ բան առաջարկելը, պէտք է ուսումնասիրել այդ պայմանները։

Սակայն ուսումնասիրութեանը որոշ ուղղութիւն տալու համար կարելի է, օրինակ, դիմել Աւստրիայի Սոցիալ-Դեմոկրատ Կուսակցութեան օրինակին, որի հիմնաւորումը տուել է Օթթօ Բաւէրը՝ «Սոցիալիզմի ճանապարհը» աշխատութեան մէջ։ Աւստրիայի Սոցիալ-Դեմոկրատների ծրագրում ասւած է.-

«Արտադրութեան համայնացւած բոլոր ճիւղերը ղեկավարւում են խորհուրդով կամ վարչութեամբ, որոնք ամբողջութեամբ անկախ են կառավարութիւնից։ Այդ վարչութիւնը կազմւում է հետեւեալ կարգով. նրա անդամների մէկ երրորդը կազմում են պետութեան ներկայացուցիչները, որոնք ընտրւում են Ազգային Ժողովի կողմից, բայց ոչ Ազգային Ժողովի կազմից։ Միւս մէկ երրորդը կազմւում է ձեռնարկութեան բանւորներից, որոնք ընտրւում են արհմիութիւնների կողմից։ Մնացածը կազմւում է սպառողների ներկայացուցիչներից։ Կառավարութիւնը իրաւունք չունի անմիջական միջամտութիւնների։

«Վարչութիւնը ձեռնարկութեան եկամուտները տնօրինող միակ իրաւասու մարմինն է, որը այդ բաշխումը կատարում է հետեւեալ կերպով. մէկ երրորդը մտնում է գանձարան, մէկ երրորդը բաշխւում է աշխատաւորներին և մէկ երրորդը ծախսւում է կատարելագործման վրայ։ Եթէ կատարելագործման անհրաժեշտութիւնը բացակայում է, ապա այդ գումարը ծախսւում է ապրանքների գները իջեցնելու վրայ»։

Հետաքրքիր օրինակ կարող է ծառայել նաեւ Իսրայէլի «Կիբուց»ների փորձը, որը ցոյց է տալիս, որ արդիւնաբերութիւնը և գիւղատնտեսութիւնը կարող են ունենալ տարբեր բնոյթ։ Իսրայէլում ստեղծւած «Կիբուց»ները կարելի է համեմատել խորհրդային կոլտնտեսութիւնների հետ, որոնք յաջողւեցին այն պարզ պատճառով, որ պետութեան հետ կապ չունեն։

5

Ընկերվարական գաղափարախօսութեան մէջ դրամատների և վարկերի պետականացման հարցում միշտ էլ եղել են տարակարծութիւններ, սակայն մէկ բանում բոլորը համակարծիք էին, դրամատիրական վարչակարգում դրամը իշխում է աշխատանքի վրայ, ուստի դրամատներից պէտք է խլւի այդ իշխանութիւնը և յանձնւի համայնքին։ **«Կապիտալ»**ի երրորդ հատորում, օրինակ, Մարքսը կատարում է հետեւեալ համեմատութիւնը.-

«Ճիշտ այնպէս, ինչպէս վարկերի համակարգը թափթփւած մասնաւոր ձեռնարկութիւնները դարձրեց բաժնետիրական խոշոր ընկերութիւններ, այնպէս էլ հասարակութեան ձեռքում գտնւող այդ համակարգը կը նպաստի կոլեկտիւ ձեռնարկութիւնների միաւորմանը»։

Իսկ Լենինը ուղղակիօրէն յայտարարեց, որ «առանց խոշոր դրամատների ընկերվարութիւնը անկարելի է, որովհետեւ խոշոր դրամատները այն պետական հաստատութիւններն են, որոնք մեզ պէտք են սոցիալիզմ կառուցելու համար և որոնք մենք վերցնում ենք պատրաստ վիճակում՝ դրամատիրութիւնից»:

Սակայն, ինչպէս ժամանակին դրամատների պետականացման դէմ առարկեցին արեւմտեան ընկերվարականները, ընկերվարական վարչակարգը չի կարելի սկսել կառուցել դրամատների պետականացումից, ինչպէս չի կարելի սկսել շէնքի կառոյցը տանիքից: «Դրամատների համայնացումը,- ըստ Օթթօ Բաւէրի,- պէտք է լինի ոչ թէ ընկերվարութեան յեղափոխութեան սկիզբը, այլ՝ նրա աւարտը և գլխաւոր արդիւնքը»:

Հայաստանի պայմաններում ամէն ինչ շարժում է հակառակ ուղղութեամբ: Պետականացած դրամատունը սեփականաշնորհւել է և տնտեսութեան ղեկավարից դարձել է մասնաւոր տնտեսութիւններ ֆինանսաւորող կազմակերպութիւն: Բայց իրականում նա ֆինանսաւորում է ստւերային տնտեսութիւնը, որը կազմում է Հայաստանի տնտեսութեան 70 տոկոսը:

Զարմանալի բան է տեղի ունենում այս բնագաւառում: Ազգային Ժողովի պատգամաւորները, պետական բիւջէն քննարկելիս, խօսում էին ստւերային տնտեսութեան մասին, բայց ոչ մէկը չէր խօսում այն մասին, որ այդ ստւերային տնտեսութիւնը գոյութիւն ունի միայն պատգամաւորների ու իշխանաւորների աջակցութեամբ: Այսինքն՝ ներդրումները կապ չունեն երկրի արդիւնաբերութեան հետ:

Ի՞նչ կարելի է անել տւեալ պայմաններում:

Միայն երկու բան:

Առաջինը՝ մեր ջանքերով կազմակերպել դրամական հոսք դէպի Հայաստան, որը չպէտք է մտնի դրամատուն, եթէ այն հրաժարւում է մեզ վարկեր տալուց:

Իսկ երկրորդը՝ սեփական դրամատուն կազմակերպելու հնարաւորութեան որոնումն է: Հասկանալի է, որ այս հարցերը լուծելու համար անհրաժեշտ է կատարել խոր ուսումնասիրութիւններ երկրի ներսում: Անպայման չէ, որ այդ ուսումնասիրութիւնները կատարւեն մեր ընկերների ջանքերով, որոնք առանց այն էլ խեղդւած են իրենց առօրեայ հոգսերով: Աշխարհի բազմաթիւ մասնագիտացած հաստատութիւններ սպասում են նման պատւէրների:

6

Ընկերվարական վարչակարգը պարտաւոր է պահպանել նախորդ սերունդների կողմից մեզ յանձնւած ազգային հարստութիւնները, որոնցից

առաջնակարգը ժողովուրդն է և նրա կողմից ստեղծած ազգային մշակոյթը։ Արդէն ստեղծածը պահպանելու այս պարտականութիւնը քիչ թէ շատ կատարում են բոլոր կառավարութիւնները և այս իմաստով ընկերվարական կառավարութիւնը յաւելեալ պարտականութիւններ չունի։

Բայց հարց է ծագում, թէ արդեօք ընկերվարական վարչակարգը պէ՞տք է յաւելեալ ճիգեր գործադրի արուեստի զարգացման ուղղութեամբ։ Արդեօք կառավարութիւնը պէ՞տք է արուեստագէտին համարի արտօնեալ աշխատաւոր և ստեղծի նրա համար բարենպաստ աշխատանքային պայմաններ։ Հայաստանի իշխանութիւնները այս հարցին տուել են բացասական պատասխան և համարում են, որ արուեստագէտը ոչնչով չի տարբերւում կօշկակարից, ուստի պէտք է ապրի ու իր ապրուստի միջոցները վաստակի իր արուեստը վաճառելու ճամբով։

Ընկերվարական կառավարութիւնը յատուկ հովանաւորութեան տակ պիտի առնի արուեստի գործիչներին, որովհետեւ նրանց արտադրանքը կօշիկի նման չի մաշւում և հացի նման չի ուտւում, այլ մնում է յաւերժ՝ տեւել ազգի կամ մարդկութեան գանձարանում։ Բացի դրանից, երբ այսօր արուեստագէտի ստեղծագործութիւնը ազգային հարստութիւն է համարւում և երբեմն հեղինակին արգելւում է այն վաճառել երկրից դուրս, ուրեմն պետութիւնը պարտաւոր է վճարել նրան՝ ոչ թէ սովորական տնտեսագիտական հաշւարկներից ելնելով, այլ այն նկատումով, որ գեղարուեստական «ապրանքի» գինը որոշւում է ոչ թէ այսօրւայ, այլ ապագայ շուկայի գներով։ Քիչ չեն օրինակները, երբ արուեստագէտը կիսաքաղցած վիճակում է ստեղծագործել, իսկ նրա ստեղծագործութիւնները նրա մահից յետոյ վաճառուել են աներեւակայելի բարձր գներով։

Մենք տէր ենք կանգնում նրանց ստեղծագործական ազատութիւններին ու չենք ստիպում նրանց իջնել այսօրւայ շուկայի մակարդակին։ Մենք պահանջում ենք նրանցից ունկնդիրներին բարձրացնել իրենց մակարդակին։

7

Աշխատաւորների իրաւունքների պաշտպանութիւնը ունի երկու տարբեր կողմեր, որոնցից առաջինը կապ ունի այսպէս կոչւած մարդու բնական իրաւունքների հետ և արտացոլւած է միջազգային իրաւապաշտպան փաստաթղթերի մէջ, իսկ երկրորդը կապ ունի տւեալ երկրի վարչաձեւի հետ և արտացոլւած է երկրի Սահմանադրութեան մէջ։

Չի կարելի ասել, որ մարդու բնական իրաւունքների հարցը այսօր վերջնականապէս լուծւած է և այդ իրաւունքները սահմանւած են։ Այնուամենայնիւ, երկար ճամբայ կտրելուց յետոյ, այդ խնդրի լուծում որոնողները առայժմ յանգել են այն եզրակացութեան, որ մարդու բնական իրաւունքները ծնւում են

մարդու հետ միասին և մարդիկ չեն ստանում այդ իրաւունքները իշխանութիւններից: Բնական իրաւունքները գոյութիւն ունեն անկախ կառավարութիւններից, ինչը մարդկանց իրաւունք է տալիս պայքարելու սեփական իշխանութիւնների դէմ, եթէ նրանք խախտում են իրենց կողմից ստորագրուած միջազգային օրէնքները:

Բնական իրաւունքներով հաւասար չափով օժտուած են բոլոր մարդիկ: Բնական իրաւունքները կապ ունեն ոչ թէ պարտաւորութիւնների, այլ ազատութեան հետ: Այդ ազատութիւնը սահմանափակւում է միայն մէկ պարտականութեամբ՝ չխախտել ուրիշի ազատութիւնները և իրաւունքները:

Թէ որքանով թերի է այս հարցի մշակումը, կարելի է տեսնել երկու օրինակի վրայ: Մենք պաշտպանում ենք խօսքի ազատութիւնը և այդ նպատակին հասնելու համար կտրում ենք հայհոյանքը արգելող մարդու ձայնը: Մենք կատարում ենք նւիրատուութիւն Եկեղեցուն՝ օգտւելով մեր այդ բնական իրաւունքից, բայց զրկում ենք մեր մերձաւորներին ժառանգութիւն ստանալու իրաւունքից: Այս հակասութիւններից դուրս գալու համար մենք դիմում ենք հասարակութեանը օգտակար արարքների սկզբունքին, որը բնական իրաւունքները դարձնում է հասարակական իրաւունքներ, որոնք կապ ունեն Սահմանադրութեան հետ:

Ահա թէ ինչո՛ւ երկրի ներսի օրէնքների պաշտպանութիւնն գործնականում համարւում է աւելի կարեւոր: «Մարդու իրաւունքների Ռուսաստանի տեղեկատու» հանդէսի անցեալ տարւայ 8րդ համարում կարելի է կարդալ խմբագրութեան հետեւեալ ուշագրաւ դիտողութիւնը.-

«Մարդու իրաւունքներին վերաբերող միջազգային օրէնքների նշանակութիւնը շատ մեծ է, նրանց նշանակութիւնը էլ աւելի է մեծանալու: Սակայն այդ նշանակութիւնը գերագնահատել պէտք չէ: Նրանք կոչւած չեն, ի վիճակի չեն ու չպէտք է փոխարինեն մարդու իրաւունքների և ազատութիւնների պաշտպանութեան ազգային միջոցները: Բոլոր դէպքերում նման պաշտպանութիւն կազմակերպելու գլխաւոր միջոցը ազգային իրաւաբանական ցանցն է: Իսկ միջազգային ատեանները ոչ այնքան առանձին հարցերի պաշտպանութեան միջոցներ են, որքան ընդհանուր սկզբունքների հռչակման աղբիւրներ»:

Հաշւի առնելով այս դիտողութիւնը, այնուամենայնիւ, մենք կարող ենք օգտագործել միջազգային հասարակական կարծիքը, մանաւանդ Ընկերվար Միջազգայնականը, Հայաստանի հրատապ խնդիրները լուծելու համար:

Սակայն նախ և առաջ տեսնենք, թէ ի՞նչ երաշխիքներ է տալիս մեզ – աշխատաւորների իրաւունքները պաշտպանելու համար – Հայաստանի Սահմանադրութիւնը:

Յօդւած 25ում ասւած է.-

«Իւրաքանչիւր ոք ունի այլ անձանց հետ միաւորումներ կազմելու, այդ թւում արհեստակցական միութիւններ ստեղծելու և դրանց անդամագրուելու իրաւունք»:

Յօդւած 29ում ասւած է.-

«Իւրաքանչիւր քաղաքացի ունի աշխատանքի ազատ ընտրութեան իրաւունք: Իւրաքանչիւր ոք ունի արդարացի և պետութեան կողմից սահմանւած նւազագոյնից ոչ ցածր աշխատավարձի, անվտանգութեան ու հիգիենայի (առողջապահութիւն) պահանջները բաւարարող աշխատանքային պայմաններ իրաւունք: Քաղաքացիներն իրենց տնտեսական, սոցիալական և աշխատանքային շահերի պաշտպանութեան նպատակով գործադուլի իրաւունք ունեն: Այս իրաւունքի իրականացման կարգը և սահմանափակումները սահմանւում են օրէնքով»:

Մենք տեսնում ենք, որ Հայաստանի Սահմանադրութիւնը չի առարկում արհմիութիւնների դէմ, որոնք աշխատաւորների միակ իրական պաշտպաններն են, ուստի հէնց նրանց ստեղծմամբ էլ պէտք է սկսւի ընկերվարական ռազմավարութեան առաջին քայլը:

Ընկերվարութեան յայտնի մասնագէտ Ռոբերտ Վիլդբրանտը, իր **«Սոցիալիզմ»** աշխատութեան մէջ՝ բացատրելով, որ համայնացումը պետականացում չէ, նշում է, որ «համայնացումը նոր առանձնայատուկ կառոյց է պետութեան կողքին: Նա ինքնավարութիւն է տնտեսութեան մէջ և այդ ինքնավարութիւնը իրականացւելու է արհմիութիւնների կողմից»:

Իսկ Ռուսաստանում այսպէս կոչւած «բանւորական ընդդիմութիւնը», որի ղեկավարներն էին Շլեապնիկովը և Կոլոնտայը, յանգել էր հետեւեալ եզրակացութեան.-

«Համայնացւած արդիւնաբերութիւնը պէտք է յենւի արհմիութիւնների վրայ, որոնք կամաց-կամաց ազատւելու են պետական խնդիրներով զբաղւելու նեղմտութիւնից և դառնալու են խոշոր արտադրական միութիւններ, որոնք ընդգրկելու են տւեալ մասնաճիւղի բոլոր բանւորներին: Արհմիութիւնները ի վերջոյ իրենց ձեռքերումն են կենտրոնացնելու ժողովրդական տնտեսութեան ամբողջ ղեկավարութիւնը»:

Այս երկու ընկերվարական սկզբունքները՝ արհմիութիւնների կարեւորութիւնը և կառավարութիւնից նրանց անկախութիւնը մեզ համար բացում են գործունէութեան լայն դաշտ:

Յիրաւի, եթէ կառավարութիւնը Հայաստանում բացայայտօրէն դրամատիրական վարչակարգ է կառուցում, ապա ի՞նչ պիտի անի մի ընկերվարական

կուսակցութիւնը, եթէ նոյնիսկ նրան չհալածեն և հնարաւոր դարձնեն նրա գործունէութիւնը իշխանութեան որոշ մակարդակների վրայ։

Ի՞նչ արեց Ֆրանսիայի ընկերվարական նախագահ Միտերանը Ֆրանսիայում՝ ընկերվարական վարչակարգ ստեղծելու ուղղութեամբ, կամ՝ ի՞նչ կարող էր անել կոմունիստ Մարշէն, եթէ նա նախագահ ընտրուէր։

Շատ աւելի արդիւնաւէտ պիտի նկատուի՝ կառավարութիւնից անկախ, կառավարութեան կողքին արհմիութիւններով գործելու ռազմավարութիւնը։

Այն ծախսերով, որ մենք կատարում ենք տարբեր ֆոնդերի և նւիրատուութիւնների ճամբով, փաստօրէն մենք օգնում ենք դրամատիրական վարչակարգ կառուցող կառավարութեանը, ինչ որ չի կարող նկատուել պետութեան ամրապնդում։

Գուցէ աւելի նպատակայարմար կը լինի կառուցել անվճար հիւանդանոց կամ ծերանոց և կամ բաւարարել այս կամ այն պահանջները։ Այսինքն՝ արհմիութիւնները կարող են մրցել կառավարութեան հետ աշխատաւորների պահանջները բաւարարելու հարցում։ Հոգ չէ, որ կառավարութեան ձեռքում են գտնւում ահագին միջոցներ, որի դիմաց մեր ունեցածը չնչին գումար է։ Բայց թող մէկ-երկու հիւանդանոցների առջեւ աշխատաւորները հերթի կանգնեն և մեր հողամասերի վրայ աճեցրած բերքը լինի աւելի շատ ու որակեալ, ինչպէս ժամանակին Հայաստանում մեր թերթերն էին։ Թող մեր ձեռնարկութիւններում ո՛չ գողութիւն լինի և ոչ էլ կաշառք ու մեր վարորդները երբեք կարմիր լոյսը չանցնեն…

Կա՛մ մենք կը կարողանանք այս ամէնը նախաձեռնել ու պատւով կատարել այդ առաքելութիւնը, կամ էլ կը հրաժարւենք որեւէ բան անելուց, որովհետեւ ո՛չ իշխանութիւնների հետ համագործակցելը և ոչ էլ նրանց դէմ պայքարելը մեր գործը չէ՝ եթէ այդ պայքարը ոչ թէ մեր սկզբունքները, այլ մեր իշխանութիւնը հաստատելու համար է։

1997

ԸՆԿԵՐՎԱՐ ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆԻ ՃԱՄԲՈՎ

Էդուարդ Յովհաննիսեան

Այսօրւայ մեր հասարակական-քաղաքական և տնտեսական կեանքում իրաւունք հասկացութիւնը ձեռք է բերել այնպիսի հեղինակութիւն, որ երբեմն թւում է, թէ իրաւունքը հասարակական ղեկավարման միակ աղբիւրն է, իսկ իրաւունքների պաշտպանութիւնը իրաւական հասարակարգ ստեղծելու միակ չափանիշը:

Սակայն իրաւունքն ունի այնպիսի ներքին հակադրութիւններ, որոնք բացառում են իրաւունք հասկացութեան յստակ սահմանումը և լայն դաշտ են բացում տարբեր վէճերի ու մեկնաբանութիւնների համար:

Գոյութիւն ունի, օրինակ, սեփական ունեցւածքը սեփական կամքով տնօրինելու իրաւունքը և, օգտւելով այդ իրաւունքից մենք մեր ամբողջ ունեցւածքը ժառանգում ենք եկեղեցուն: Սակայն այդ քայլով մենք զրկում ենք մեր ազգականներին մեր ունեցւածքը ժառանգելու իրաւունքից: Պետութիւնը օգտւում է մարդկանց պատերազմի դաշտ ուղարկելու կամ մահապատժի ենթարկելու իր իրաւունքից, սակայն զրկում է մարդկանց ապրելու իրաւունքից: Իրաւունքով օժտւած են ոչ միայն մարդիկ, այլ նաեւ՝ պետութիւններ, ազգեր, կրօններ, միութիւններ, ընկերութիւններ և այլ հաւաքականութիւններ, որոնց իրաւունքները յաճախ հակասում են անհատի իրաւունքներին:

Այս հակասութիւնների էութիւնը պարզելու և իրաւունքի բնագաւառում ճիշտ կողմնորոշւելու համար անհրաժեշտ է նախ և առաջ պարզել, թէ որտեղի՛ց է գալիս իրաւունքը:

Իրաւունքի ծագման առաջին և գուցէ ամենահիմնական մօտեցումն այն է, որ բոլոր բնական էութիւնների հետ միասին ծնւում է նաեւ նրանց իրաւունքը: Այն ամէնը, ինչ ստեղծւել է ոչ թէ մարդու կողմից, այլ՝ ծնւել է բնութեան կամքով, ծնւում է իրաւունքի հետ միասին, որը այդ էակի անբաժանելի մասն է, ինչպէս նրա մարմնական յատկութիւնները:

Այդ տեսութեան համաձայն, մարդիկ, ազգերը և նոյնիսկ կենդանիներն ու բուսականութիւնը ունեն գոյատեւելու իրաւունք: Եւ այդ իրաւունքն ունի երեք հիմնական յատկութիւններ.

1.- Այդ իրաւունքը գոյութիւն ունի մեզանից անկախ և ամենեւին էլ չի շնորհւում մեզ իշխանութիւնների կողմից: Ընդհակառակը, այդ իրաւունքը տալիս է մեզ պետութեան դէմ պայքարելու իրաւունք, եթէ վերջինս չի յարգում մեր բնական իրաւունքները:

2.- Բնական իրաւունքը տարածւում է բոլոր մարդկանց, ազգերի ու հաւաքականութիւնների վրայ հաւասարաչափ: Այսինքն՝ ոչ մի մարդ և ոչ մի ազգ իրաւունքների բնագաւառում չի կարող ունենալ առաւելութիւն:

3.- Բնական իրաւունքի դրսեւորումը կապ ունի ազատութեան հետ: Այդ իրաւունքը ոչ թէ պարտաւորութիւնների ցուցակ է, այլ ազատութիւնների սահմանների որոշում, որը տրւած է ոչ մեր, այլ բնութեան կողմից: Բայց բնական իրաւունքի այս պարզ մօտեցումը առաջացրեց մի շարք բարդութիւններ:

Առաջին բարդութեան մասին խօսեց անգլիացի փիլիսոփայ և քաղաքական գործիչ Ջոն Լոկը, որը նշեց, որ ազատութեան և իրաւունքի կապը ամենեւին էլ չի նշանակում, որ ազատութիւնը ինքնակամութիւն չէ և մարդու բնական ձգտումները ամենեւին էլ չեն հիմնաւորւում բնական իրաւունքով: Նա ասաց, որ բնական իրաւունքը ցոյց է տալիս արժանւոյն կերպով ազատութեամբ օգտւելու ճանապարհը:

Բնական իրաւունքների դէմ երկրորդ առարկութիւնը եկաւ նոյնպէս Անգլիայից, որտեղ Էդմոնդ Բեռկը պնդում էր, որ անգլիացիների բնական իրաւունքները բխում են ոչ թէ բնութիւնից, այլ Անգլիայի պատմութիւնից, և այդ իրաւունքներն անգլիացիների իրաւունքներն են, բայց ոչ ուրիշ ժողովուրդների, որոնց պատմութիւնը թելադրում է այլ իրաւունքներ:

Այս նոր մօտեցումը խախտում էր իրաւունքի հաւասարութեան թեզը և դուռ էր բացում իրաւունքը շահագործելու համար: Աւելի՛ն, առեւտրական և արդիւնաբերական կապերը զարգացնելու գործում եւրոպացիները և ամերիկացիները հիմնական գործակատարներ էին և առաջ քաշւեց այն թեզը, թէ, արդեօք, համամարդկային արժէք հռչակւած իրաւունքը արեւմտեան քաղաքակրթութեան ծնունդը չէ՞: Եւ, արդեօք, արեւմտեան քաղաքակրթութեան իրաւունքը համամարդկային չափանիշներով աւելի բարձր մակարդակի վրայ չէ՞, քան այլ մշակոյթների կողմից ծնւած իրաւունքները:

Պարզւեց, որ իրաւունքների համեմատութեան համար բացակայում է արժէքաբանական հողը: Արեւմտեան իրաւունքը իր հիմնական շեշտը դնում է անհատի իրաւունքների վրայ, մինչդեռ այլ քաղաքակրթութիւններ անհատի իրաւունքները սահմանափակում են հաւաքականութիւնների իրաւունքներով:

Անհատական սեփականութեան մեծարումը, օրինակ, եւրոպական սկզբունք է, որը հակասում է հասարակական սեփականութեան սկզբունքին, բայց որը ճանաչւում է շատ ուրիշ մշակոյթների կողմից: Այս տարակարծութիւնները հարթելու համար Երեմիա Բենթամը առաջարկեց, որ իրական իրաւունքը միայն այն է, որը ձեւակերպւած է պետութեան կողմից: Իսկ թէ ո՞ր իրաւունքները պէտք է ձեւակերպի պետութիւնը, դրա համար Բենթամը առա-

ջարկեց հետեւեալ սկզբունքը, պետութիւնը պիտի ճանաչի միայն այն օրէնքները, որոնք օգտակար են հասարակութեան համար։ Այս սկզբունքը ձեւակաւորէն մերժուեց, սակայն իրականում ընդունուեց և մինչեւ այսօր այն գործում է, և առանձին անհատներ ու հաւաքականութիւններ զոհւում են յանուն ընդհանուր բարօրութեան։

Սա արդէն բնական իրաւունք չէր, քանզի այն բխում էր ոչ թէ բնութիւնից, այլ հասարակութեան շահերից։ Սակայն սա էլ վերջին հարուած էլ չէր, որ իջաւ բնական իրաւունքի գլխին։ 19րդ դարում բնական իրաւունքը փոխարինուեց մարդու իրաւունքներով։ Այս փոփոխութեան էութիւնը կարելի է ամփոփել այսպէս։

Բնական իրաւունք հասկացութիւնը ծնւում է ինքնապաշտպանութեան գաղափարից, ուրիշներից պաշտպանուելու անհրաժեշտութիւնից, մինչդեռ մարդու իրաւունքները ծնւում են մարդու պահանջներից և շահերից, որոնք պէտք է բաւարարուեն նրա լիարժէք կեանքը ապահովելու համար։ Սակայն կեանքի նկատմամբ պահանջները փոփոխական են, ուստի փոփոխական են նաեւ իրաւունքները, և այսօր մարդիկ ունեն այնպիսի իրաւունքներ, որոնց մասին չէին կարող երազել նրանց հայրերը։ Անգլիացի Ջոն Ռէյնը առաջ քաշեց այն սկզբունքը, որ պետութիւնը պարտաւոր է բաւարարել մարդկանց փոփոխական պահանջները, որովհետեւ եթէ այդ բանը տեղի չունենայ, ապա անփոփոխ օրէնքը կը սկսի ճնշել մարդու փոփոխուած պահանջների վրայ։

Իրաւապաշտպան շարժումը զարգացաւ համամարդկային իրաւունքների պաշտպանութեան ուղղութեամբ և հաւաքականութիւնները, առաջին հերթին՝ ազգութիւնները, մնացին անպաշտպան։ Մինչեւ այսօր միջազգային փաստաթղթերում և Մ.Ա.Կ.ի որոշումներում բացակայում են ազգերը պաշտպանող արժէքները։

Հ.Յ.Դաշնակցութիւնը՝ որպէս ընկերվարական կուսակցութիւն, որի համար ազգը նոյնքան բնական ու հիմնական արժէք է, որքան անձը, ընկերվարական արդարութեան գաղափարը պէտք է կարողանայ տարածել նաեւ ազգերի փոխ-յարաբերութիւնների վրայ՝ նպատակ ունենալով մշակել և Ընկերվար Միջազգայնականի ճամբով ընդունել տալ Ազգերի Իրաւունքների Համընդհանուր մի Յայտարարագիր։

Նման փաստաթուղթ անհրաժեշտ է այսօրուայ միջազգային հասարակութեանը, քանզի հաւաքականութիւնները պաշտպանող գոյութիւն ունեցող բոլոր արժէքները փաստօրէն պաշտպանում են հաւաքականութեանը պատկանելու Մարդու, բայց ո՛չ հաւաքականութեան իրաւունքը։ Այսինքն՝ օրէնքը պաշտպանում է մեր հայ լինելու իրաւունքը, բայց ո՛չ հայ ժողովրդի ազգային իրաւունքները։

Մինչդեռ բազմազգ մեր աշխարհում առանց ազգային իրաւունքների պաշտպանութեան սկզբունքների անկարելի է կարգաւորել ազգային փոխյարաբերութիւնները, ինչպէս մենք դրանում համոզւեցինք Ղարաբաղի, Հարաւալաւիայի, իռլանդացիների և շատ ուրիշ ազգային հարցերում:

Խօսելով այս հարցի և այս հարցում մեր անելիքների մասին, անհրաժեշտ է նշել, որ հաւաքականութիւնների պաշտպանութեան հարցում, այնուամենայնիւ, եղել են նախաձեռնութիւններ, առաջարկութիւններ ու բանավէճեր:

1791ի օգոստոսի 27ին յեղափոխական Ֆրանսիայի Ազգային Ժողովը ընդունեց «Մարդու և քաղաքացու իրաւունքների յայտարարագիր»ը, որի երրորդ կէտում ասւած էր.- «Ինքնիշխանութեան աղբիւրը ազգի ներսում է, և ոչ մէկ մարդ կամ կուսակցութիւն չի կարող ձեռք բերել իշխանութիւն, եթէ այն չի բխում այդ աղբիւրից»: Սա նշանակում էր, որ ազգային ինքնիշխանութիւնն աւելի կարեւոր է, քան անհատի ազատութիւնը: Սակայն այս հռչակագիրը տապալւեց Ֆրանսիական Յեղափոխութեան հետ միասին:

Պէտք է ասել, որ մարդու բնական իրաւունքների գոյութեան դէմ էին արտայայտւում անգլիական քաղաքական մտքի սիւներ Իւմը, Բերկը, Բենտամը, Օստինը և ուրիշներ, որոնք ճանաչում էին բնական իրաւունքների գոյութիւնը, սակայն վերագրում էին այդ իրաւունքները ոչ թէ անձին, այլ ազգին: Այս տեսակէտը առանձնապէս մեծ պաշտպանութիւն գտաւ Գերմանիայում:

1848ին գերմանական ազատականները ազգայնականների հետ միասին հռչակեցին մի յայտարարագիր, որտեղ հեղինակները շեղւում էին մարդկանց անհատական իրաւունքները պաշտպանելու սկզբունքից և պաշտպանութեան տակ էին առել «գերման ժողովրդի իրաւունքները»:

Իսկ կէս դար անց փիլիսոփայ Բրեդլին գրեց.- «Անձի իրաւունքները մեր ժամանակներում (1894) լուրջ ուշադրութեան արժանի չեն: Հասարակութեան բարեկեցութիւնն է, որ արժանի նպատակ է և վերջնական չափանիշ: Անհրաժեշտ է բացարձակացնել հասարակութեան բարոյական իշխանութիւնը ամէն մի անձի վրայ: Հասարակութեան ամէն մի անդամի լաւ օգտագործումը հասարակութեան շահերի համար՝ տւեալ հասարակութեան իրաւունքն է և պարտականութիւնը»:

Այս հարցում ազգայնականները և ընկերվարականները համամիտ են, այսինքն՝ այն տեսակէտը ունեն, որ ընկերային և ազգային շահերը որոշ չափով սահմանափակում են անձի ազատութիւնը և իրաւունք ունեն պարտադրել իրենց քաղաքացիներին ու անդամներին այդ սահմանափակումը:

Հ.Յ.Դաշնակցութիւնը՝ որպէս ազգային և ընկերվարական կուսակցութիւն, միշտ կարողացել է համադրել մարդու, աշխատաւորի և ազգի շահերը ու պաշտպանել նրանց իրաւունքները:

Ուշագրաւ է Հ.Յ.Դ. Պոլսոյ Կենտրոնական Կոմիտէի յայտարարագիրը, որը 1897ի օգոստոս ամսին յանձնուեց եւրոպական վեց պետութիւններին: Այնտեղ մասնաւորապէս ասւած էր.- «Մենք կը պահանջենք, որ չանարգուի հայի պատիւը, չպղծւին անոր սրբութիւնները, չյափշտակուի անոր դառն քրտինքի արդար արդիւնքը ու տիրող բռնութեան ու անսանձ կամայականութեան փոխարէն օրէնքը միայն թագաւորէ: Մենք կը պահանջենք ինչ որ անհրաժեշտ է, լոկ իբրեւ մարդու ապրելու համար և երբեք չպիտի դադարենք գործելէ, մինչեւ չիրականանան մեր այս արդար, իրաւացի և մեր նահատակ եղբայրներու արիւնով նւիրագործւած պահանջները»:

Այս յայտարարութիւնը պաշտպանում է թէ՛ «իբրեւ մարդ ապրելու» իրաւունքը, թէ՛ աշխատաւորի «դառը քրտինքով վաստակածը» տնօրինելու իրաւունքը և թէ ազգի իրաւունքը «սեփական սրբութիւնները» պահպանելու հարցում: Աւելի՛ն, Հ.Յ.Դ.ն ոչ միայն ներկայացնում է իր պահանջները, այլ վստահեցնում է, որ պայքարելու է այդ պահանջներն իրականացնելու համար:

Հ.Յ.Դ.ի ամբողջ պատմութիւնը այդ արժէքների համար պայքարելու պատմութիւնն է: Սակայն, ինչպէս տեսնում ենք, այդ պայքարը աւարտւած չէ: Ինչպէս արդէն ասացինք, ազգային իրաւունքների պաշտպանութեան միջազգային օրէնքներ կամ գոյութիւն չունեն ընդհանրապէս, կամ ազգային ինքնորոշման իրաւունքի նման այնքան անորոշ են, որ նրանց կարելի է օգտագործել ինչպէս կը ցանկանայ օգտագործողը:

Ինչպէս ասում էր Պղատոնը՝ «բոլոր տեսակի իշխանութիւնները օրէնքները հաստատում են իրենց օգտին: Ժողովրդավարականները՝ ժողովրդավարական օրէնքները, իսկ բռնապետները՝ բռնապետական օրէնքները»:

Որպէսզի իշխանութիւնները զրկւեն իրենց օգտին օրէնքներ հռչակելու իրաւունքից, անհրաժեշտ է հռչակել ազգային իրաւունքների պաշտպանութեան հիմնական սկզբունքները, ինչպէս հռչակւած և ընդունւած են մարդու իրաւունքների պաշտպանութեան հիմնական սկզբունքները: Այս հարցում Հ.Յ.Դ.ն, իր էութեան և աւանդութիւնների համաձայն, շատ բան ունի անելու:

Նախ և առաջ նա պէտք է պատրաստի «Ազգային Իրաւունքների Համընդհանուր Յայտարարագիր» փաստաթղթի նախագիծը և հաստատի այն իր Ընդհանուր Ժողովում: Ապա այդ նախագիծը Հ.Յ.Դ.ի պատգամաւորը պէտք է ներկայացնի Ընկերվար Միջազգայնականի համագումարին և տանի աշխատանք այդ փաստաթուղթն ընդունելու ուղղութեամբ: Դրանից յետոյ Ընկերվար Միջազգայնականը պիտի իր որոշումը ներկայացնի Մ.Ա.Կ.ին:

Այս ճանապարհը կտրելու համար անհրաժեշտ է քրտնաջան աշխատանք տանել տարբեր միջազգային կազմակերպութիւնների պատգամաւորների հետ, մանաւանդ՝ պետութիւնների ներկայացուցիչների շրջանակներում:

Սակայն այդ աշխատանքը տանելու համար անհրաժեշտ է մշակել ապագայ հռչակագրի հիմնական սկզբունքները, որոնք կարող են քննարկուել, օրինակ, հետեւեալ դրոյթների հիման վրայ.

1.- Բոլոր ազգերը բնական և հիմնական արժէքներ են, որոնք ծնուել են ազատ և իրենց բնական իրաւունքների մէջ հաւասար։

2.- Ազգերը հաւաքական անհատականութիւններ են, և իրենց փոխ-յարաբերութիւնները պէտք է լինեն արդար ու եղբայրական։

3.- Ամէն ազգ ունի կեանքի, ազատութեան և ինքնորոշման իրաւունք։

4.- Ոչ մի ազգ չի կարող լինել ուրիշ ազգի ստրուկ և ոչ մէկ ազգի չի կարելի պարտադրել ապրելու կամ մշակոյթի որեւէ ձեւ։

5.- Բոլոր ազգերը իրաւունք ունեն վերականգնելու իրենց ոտնահարուած իրաւունքները միջազգային դատարանների և այլ ատեանների ճամբով։

6.- Ամէն մի ազգ ցանկացած պետութեան սահմաններում ունի իր ազգային արժէքները պահպանելու և դրանք զարգացնելու ազատութիւններ, եթէ նրանք չեն հակասում տուեալ պետութեան Սահմանադրութեանը։

7.- Ամէն ազգ իրաւունք ունի մասնակցելու իր երկրի կառավարմանը ազատօրէն ընտրուած պատգամաւորների միջոցով։

8.- Ազգի կամքը արտայայտում են ազգի կողմից ընտրուած ղեկավար մարմինները։

9.- Այն տարածութիւնը, որի սահմաններում ապրում է ազգը, պատկանում է ազգին, և նրան ոչ մէկը չի կարող բռնի ուժով արտաքսել այդ տարածութիւնից։

10.- Ազգի նկատմամբ գործադրուած ցեղասպանութիւնը թէ՛ խաղաղ և թէ պատերազմի պայմաններում յանցագործութիւն է, որը պիտի դատապարտուի միջազգային իրաւունքի կողմից։

11.- Ազգի նկատմամբ գործադրող հետեւեալ արարքները նկատւում են մարդկութեան դէմ կատարուած յանցագործութիւններ.

ա.- Ազգի անդամների ֆիզիկական ոչնչացումը.

բ.- Ազգի անդամների նկատմամբ մարմնական և հոգեբանական վնասուածքների հասցնումը.

գ.- Ազգի ապրելու պայմաններին միտումնաւոր վնաս հասցնելը.

դ.- Ծննդաբերութեանը վնաս հասցնելը.

ե.- Տւեալ ազգի մանուկներին մէկ ուրիշ ազգի մէջ բռնի տեղափոխումը.

զ.- Ազգի դէմ քարոզչութիւնը.

է.- Ազգային տարածութեան ամբողջ կամ մէկ մասի կցումը մէկ ուրիշ պետութեան։

Այս սկզբունքների վրայ կարող են աւելանալ ուրիշները կամ ջնջւել նշւածները, բայց «Ազգային Իրաւունքների Պաշտպանութեան Յայտարարագիր»ը անհրաժեշտ է բոլոր ազգերին և թող այս անգամ նախաձեռնութիւնը գայ հայերից։

1998

Ի՞ՆՉ Է ԿԱՏԱՐՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Է. Յովհաննիսեան

Նախկինում ամէն ինչ պարզ էր և յստակ. Հայաստանը Ռուսաստանի շառունակութիւնն էր բոլոր բնագաւառներում, նրա անբաժանելի մասնիկը, ուստի Հայաստանում ձերբակալութիւնները, ազատութիւնները, տնտեսական բարեվոխութիւնները, պատերազմները և ամբողջ քաղաքական ու հասարակական կեանքը կրկնում էին Ռուսաստանում տեղի ունեցող իրադարձութիւնները: Թւում էր, թէ այսօր այս կարգը խախտւել է և Հայաստանը անկախ Մոսկւայից կատարում է իր տնտեսական ու քաղաքական քայլերը: Բայց արի ու տես, որ այսօր Հայաստանում տիրող կացութիւնը շատ էլ չի տարբերւում Ռուսաստանից: Բայց նախ տեսնենք, թէ ինչպիսին է Ռուսաստանի կացութիւնը:

«Գլասնոստ» հանդէսը հարցազրոյց ունեցաւ Ռուսաստանի Քրիստոնեայ-Ժողովրդավարական շարժման նախագահ Վիկտոր Ակսիւշիշի հետ, որի պատասխանները որոշ լոյս են սփռում Հայաստանում տիրող կացութեան վրայ: Ահաւասիկ այդ հարցազրոյցը՝ ռուսերէնից թարգմանաբար:

Հարց.- Ինչպէ՞ս կարող էք դուք բնութագրել Ռուսաստանի ներկայ կացութիւնը:

Պատ.- Երկիրը սլանում է դէպի կործանում: Եւ կատարւում է դա Ռուսաստանի ներկայ իշխանութիւնների ղեկավարութեամբ, որոնք օգտւելով ժողովրդավարական կարգախօսներից, դարձան պետութեան ղեկավարներ: Այդ իշխանութիւնների գործողութիւնների Էութիւնը հակաժողովրդական է, հակաժողովրդավարական և հակապետական: Ու պատահական չէ, որ նրանց քայլերը բոլոր ուղղութիւններով կործանարար են Ռուսաստանի համար: Այն, ինչ այսօր կատարում են նախագահը և Ռուսաստանի կառավարութիւնը, պատմական կամայականութիւն է: Դա վերաբերում է Խորհրդային Միութեան, Ռուսաստանի, տնտեսութեան և ուրիշ բաների քայքայմանը: Այս ամէնը պայմանաւորւած չէին ոչ մէկ պատմական օրինաչափութեամբ: Մեր երկրի ծայրամասերում, Մոլդաւիայում, Անդրկովկասում և Միջին Ասիայում արիւն է թափւում: Իսկ մենք չենք կարող անտարբերութեամբ դիտել, որովհետեւ սա դեռեւս մեր երկիրն է, ինչ էլ որ ասեն նորաստեղծ նախագահները: Նա բոլոր չափանիշներով դեռեւս միացեալ երկիր է: Բայց քայքայիչ մեքենան թողարկւած է և ուժեղ թափով աշխատում է: Գուցէ սա Ռուսաստանի ներկայ կառավարութեան և անձամբ Բ. Ելցինի գլխաւոր սխալն է:

Հարց.- Դուք Ռուսաստանի Քրիստոնեայ-Ժողովրդավարական շարժման նախագահն էք և Ռուսաստանի ժողովրդական պատգամաւորը: Միաժամանակ, դուք մտնում էք Ելցինի կառավարութեանը ընդդիմադիր «Միացեալ խմբի» մէջ: Ի՞նչ տեղ էք դուք գրաւում բազմակուսակցական այդ բլոկի մէջ:

Պատ.- Մենք համարում ենք մեզ աջ-կենտրոնականներ, այսինքն՝ դասական կրօնա-պահպանողական կուսակցութիւն: Ուստի բնական է, որ մենք հակադրուեցինք Ելցինի հակաժողովրդավարական քաղաքականութեանը: Պառլամենտում հակադրուեցին նաեւ այլ հայրենասիրական ուժեր, ինչպէս նաեւ ձախակողմեան կազմակերպութիւններ ու շարժումներ, այդ թւում կոմունիստներ, սոցիալիստներ և ուրիշներ:

Անշուշտ, գաղափարախօսական իմաստով մենք ունենք նրանց հետ տարբերութիւններ, բայց այսօրւայ ամբողջատիրական վարչակարգին հակազդեցութիւն ցուցաբերելու գլխաւոր խնդիրներում մեր նպատակները ընդհանուր են:

Նախ և առաջ մեզ միացնում է օրինական ճանապարհով Ռուսաստանի կառավարութիւնը և մեր երկրի քաղաքական ուղղութիւնը փոխելու ձգտումը: Մեր բլոկը շատ լաւ իրեն դրսեւորեց Ռուսաստանի ժողովրդական պատգամաւորների 6րդ համագումարում: Եւ եթէ մենք կենդանի մնանք մինչեւ 7րդ համագումար, ապա, կարծում եմ, որ կը կարողանանք լուծել մեր խնդիրները:

Հարց.- Յայտնի է, որ նախկինում դուք մտնում էիք «Ժողովրդավարական Ռուսաստան» շարժման մէջ և շատ բան արեցիք նրա յաղթանակի համար՝ տարբեր ընտրութիւնների ժամանակ: Այժմ դուք ոչ միայն դուրս էք եկել այդ շարժումից, այլեւ՝ ակտիւօրէն պայքարում էք նրա քաղաքական ուղղութեան դէմ: Ինչո՞ւ դա պատահեց:

Պատ.- «Ժողովրդավարական Ռուսաստան»ի և նրա ղեկավարների հետ սկզբնական շրջանում մեզ միացնում էր այն, որ մենք միասնաբար հռչակեցինք քրիստոնէական արժէքների առաջնահերթութիւնը հասարակութեան մէջ: Միասնաբար պայքարում էինք խղճի և կրօնական ազատութիւնների համար, պայքարում էինք մէկ կուսակցութեան և մէկ գաղափարախօսութեան իշխանութեան, այսինքն կոմունիստական կուսակցութեան դէմ: Մենք համոզուած ենք, որ բոլոր տեսակի մենիշխանութիւնները կործանարար են հասարակութեան, մարդկանց, յատկապէս քրիստոնեաների ազատ զարգացման համար:

Սակայն մենք Քրիստոնեայ-Ժողովրդավարական շարժման ստեղծման առաջին իսկ օրից կանգնած էինք լուսաւոր հայրենասիրութեան դիրքերի վրայ: Մենք հայրենասէրներ ենք, մենք դէմ ենք Խորհրդային Միութեան և Ռուսաստանի ամբողջութեան քայքայմանը և հէնց դա էլ դարձաւ «Ժողովրդավա-

րական Ռուսաստան»ի հետ մեր յարաբերութիւնների խզման պատճառը: «Ժողովրդավար Ռուսաստան»ը շատ բան արեց Հայրենիքը քայքայելու գործում, բայց որեւէ մտաղրութիւն չունի վերացնելու իշխանութեան ամբողջատիրական կառոյցը: Աւելին, նա անում է ամէն ինչ, վերականգնելու համար ամբողջատիրութիւնը՝ վատագոյն ձեւի տակ:

Հարց.- Շատերը ասում են, որ «Ժողովրդավարական Ռուսաստան»ի ղեկավարութիւնը անում է ամէն ինչ Մոսկւայում և ուրիշ խոշոր քաղաքներում արտակարգ դրութիւններ ստեղծելու համար, որպէսզի ամէն գնով կարողանայ պահել իշխանութիւնը: Նոյնիսկ խօսւում է այդ արտակարգ դրութիւնները ստեղծելու ժամկէտների մասին: Ի՞նչ կարող էիք դուք ասել այս առիթով:

Պատ.- Ես համոզւած եմ, որ բոլոր առարկայական և ենթակայական փաստերը հաստատում են այդ տեսակէտը: Մենք նոյնիսկ հիմքեր ունենք հաստատելու համար, որ Ելցինը Միացեալ Նահանգներ իր վերջին այցելութեան ժամանակ, միակողմանի զինաթափման գնով Բուշից ստացաւ ընդդիմադրութիւնը ճնշելու ազատութիւն: Միւս կողմից՝ տեսէք թէ ինչպէ՛ս են պետական տեղեկատւական միջոցները պատրաստում հասարակական կարծիքը արտակարգ դրութիւն յայտարարելուն, թէ ինչպէ՛ս են նրանք աղաղակում գոյութիւն չունեցող ինչ-որ կարմիրների ու ֆաշիստների սպառնալիքների մասին: Իսկ արտաքին գործերի նախարար Կոզիրեւը, որը իր անմիջական պարտականութիւնները չի կատարում և ամէնուր դաւաճանում է Ռուսաստանի շահերին, այդ նոյն Կոզիրեւը անթոյլատրելի յարձակումներ է գործում ընդդիմադրութեան դէմ: Այնպէս որ դիմակները պատռած են, Ելցինի կառավարութեան նպատակները պարզ են:

Հարց.- Ձեր կողմից նկարագրւած կացութիւնը Ռուսաստանի և նրա շուրջ բաւականին մտահոգիչ է, ինչը նշանակում է, որ հայրենասիրական և պետական տրամադրութիւններ ունեցող ընդդիմադրութիւնը պէտք է գործի արագ կարգով: Ի՞նչ է մտադիր անելու ընդդիմադրութիւնը առաջին հերթին:

Պատ.- Ես կարծում եմ, որ երկրում հասունացել է Ռուսաստանի Ժողովրդական պատգամաւորների արտակարգ նիստ գումարելու ժամանակը: Եւ Ռուսաստանի Պառլամենտի առջեւ ընդդիմադրութիւնը բարձրացնելու է այդ հարցը: Անհրաժեշտ է շտապ կարգով գումարել համագումար, որի ընթացքում պիտի փորձենք փոխել կառավարութիւնը, իսկ գուցէ նաեւ պահանջել նախագահի հրաժարականը, եթէ դրա համար բաւարար ուժ ունենանք: Արդէն այսօր Ռուսաստանի Քրիստոնեայ-Ժողովրդավարական շարժումը Մոսկւայում կազմակերպել է երկարատեւ բողոքի ցոյց, որի ընթացքում մենք բացատրելու ենք մոսկւացիներին Ելցինի վարչախմբի քաղաքականութեան վնասակարութիւնը երկրի համար:

Հարց.- Աւելի ու աւելի բարձր են հնչում այն ձայները, որոնք պնդում են, թէ հասարակութիւնը կորցրել է խաղաղ ճանապարհով իշխանութիւնը փոխելու հաւատքը: Իբր թէ ժողովուրդը յանգել է այն եզրակացութեան, որ իրական ազատութիւն կարելի է ձեռք բերել միայն զանգւածային դիմադրութեան ճանապարհով: Ձե՞ր կարծիքը:

Պատ.- Ներկայ վարչակարգը ինքը իրեն դատապարտեց: Նա անկասկած կը կորցնի իշխանութիւնը մօտ ժամանակներումս: Հարցը միայն նրանում չէ, թէ ի՞նչ ձեւի տակ տեղի պիտի ունենայ իշխանութեան փոփոխութիւնը: Մենք, անշուշտ, ամէն ինչ կ'անենք, որ այդ փոփոխութիւնը տեղի ունենայ խաղաղ ճանապարհով, բայց բացառւած չէ նաեւ հասարակական խռովութիւնը: Չէ՞ որ զանգւածային ցոյցերը, գործադուլները նոյնպէս ժողովրդի խաղաղ և օրինական պայքարի ձեւերն են: Եթէ ժողովրդին ուրիշ բան չի մնում, նա կարող է դիմել այդ ձեւերին: Կարեւոր է միայն, որ մենք չենթարկւենք բռնի ուժով պայքարելու գրգռումներին: Կարող է պատահել, որ իշխանութիւնները միայն սպասում են դրան, ճնշելու համար ընդդիմադրութեան բոլոր տեսակի բողոքները:

Հարց.- Դուք բաւականին սպառիչ կերպով բնութագրեցիք այն քաոսը, որի մէջ սուզւեց երկիրը, «Ժողովրդավարական Ռուսաստան»ի և նրա առաջնորդների ղեկավարութեամբ, Պառլամենտի լռութեամբ: Իսկ դուք, անձամբ, չէ՞ք համարում, որ այս ամէնի մէջ ձեր մեղքն էլ կայ: Չէ՞ որ ժամանակին դուք էլ «Ժողովրդական Ռուսաստանի»ի շարքերումն էիք:

Պատ.- Անշուշտ, ես զգում եմ նաեւ իմ մեղքը, որպէս քաղաքական գործիչ, որպէս Ռուսաստանի ժողովրդական պատգամաւոր: Սակայն ստեղծւած ճգնաժամում մեղաւոր են շատերը, այդ թւում նաեւ նախորդ վարչակարգի ղեկավարները: Բայց գլխաւոր մեղքը, այնուամենայնիւ ընկնում է նրանց ուսերին, ովքեր այսօր կանգնած են պետութեան ղեկի առջեւ, առաջին հերթին նախագահը և նրան շրջապատողները: Նրանց քայքայիչ գործունէութեանը դժւար է գտնել համեմատութիւն՝ Ռուսաստանի հազարամեայ պետութեան մէջ: Իմ անձնական մեղքը կայանում է նրանում, որ ես պարտաւոր էի աւելի շուտ տեսնել, քան տեսայ, «Ժողովրդավարական Ռուսաստան»ի ղեկավարների, յատկապէս Ելցինի քայքայիչ ու դաժան մտադրութիւնները: Ինձ համար յաւերժական արժէքներ են՝ մեր անկրկնելի մշակոյթը, ուղղափառ հոգեկանութիւնը և հազարամեայ Ռուսաստանի մեծ պատմութիւնը: Նրանց եմ ծառայում, թէեւ սխալւում եմ երբեմն, դա գալիս է անկեղծութիւնից, այլ ոչ թէ չարամտութիւնից:

(Վիկտոր Աքսիւշիչին տրւեցին երկու այլ հարցեր եւս, սակայն նրանք վերաբերում են Քրիստոնեայ-Ժողովրդավարական շարժման կրօնական

բովանդակութեանը և մեր նիւթին չեն ծառայում, ուստի այդ հարցերը և նրանց տրուած պատասխանները մեր այս գրութեան մէջ տեղ չգտան)։

* * *

Եթէ փորձենք ամփոփել Աքսիւշիչի տեսակէտը Ռուսաստանում տիրող կացութեան մասին, ապա՝ կը պարզւի հետեւեալ պատկերը, Ռուսաստանի ներկայ ղեկավարութիւնը ժողովրդավարութեան լոզունգներով անցաւ իշխանութեան գլուխ, սակայն նրա բուն նպատակը ոչ թէ ազատութիւնն ու ժողովրդավարութիւնն էր, այլ Խորհրդային Միութեան և Ռուսաստանի քայքայումը։ Յանձնելով Ռուսաստանը միջազգային որոշ ուժերի քմահաճոյքներին, Ելցինի կառավարութիւնը փաստօրէն ոտնահարեց Ռուսաստանի և ռուս ժողովրդի շահերը։ Ելնելով այդ իրողութիւնից, Ռուսաստանի հայրենասէր ուժերը կազմեցին ընդդիմադրութիւն՝ Ելցինի կառավարութիւնը օրինական ճանապարհով փոխելու մտադրութեամբ։ Իսկ Ելցինը՝ կռահելով այդ մտադրութիւնը, պատրաստւեց ճնշել ընդդիմադրութեանը՝ նախագահ Բուշից գնելով ճնշելու ազատութիւնը։

Այս նոյնը կատարւում է Հայաստանում։ Հայաստանի ղեկավարութիւնը ժողովրդավարական լոզունգներով անցաւ իշխանութեան գլուխ, բայց մոռանալով ազատութեան իր խոստումը՝ լծւեց Խորհրդային Միութիւնը և Ռուսաստանը քայքայողների կառքին, չնայած նրան՝ որ դրանք հայկական խնդիրներ չեն։ Ի պատասխան դրան, Հայաստանի հայրենասիրական ուժերը ստեղծեցին «Ազգային Դաշինք» և պահանջեցին կառավարութեան հրաժարականը։ Հաւանաբար Ելցինի պէս Լեւոն Տէր-Պետրոսեանն էլ ստացել է ընդդիմադրութիւնը ճնշելու «ազատութիւն» և այդ «ազատութիւն»ը նա կոտրեց Հ.Յ.Դաշնակցութեան գլխին։ Մոսկւայում և Երեւանում տիրող կացութիւնների նմանութիւնը ակնյայտ է, բայց մէկ բանը պարզ չէ, արդեօք այս նմանութիւնը կը կրկնուի՞ նաեւ այն պահին, երբ Ռուսաստանի ընդդիմադրութիւնը օրինական ճանապարհով կը փոխարինի Ելցինին՝ Ռուսաստանի շահերի հետ հաշւի նստող մէկ ուրիշ անձնաւորութեամբ։

1992

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Է. Յովհաննիսեան

Եթէ մենք դաշնակցականներ չլինէինք, այլ պոռոտախօսութեամբ ինքնահաստատուող մի կազմակերպութիւն, ապա այս գրութիւնը կը սկսէինք աղմուկով, թէ մեր նախատեսումները ճիշտ էին, թէ մենք բոլորից աւելին կարողացանք ցուցաբերել քաղաքական իմաստութիւն և այլն։ Բայց մենք այդպէս չենք վարուի, որովհետեւ այսօր էլ քաղաքական ընտրութիւնների և գուշակումների աշխատանքը աւարտուած չէ և դեռեւս մեծ ջանքեր են անհրաժեշտ՝ ճիշտ քաղաքական կողմնորոշումներ կատարելու համար։

Վերջին տարիների ընթացքում մեր մամուլը յամառօրէն պնդում էր, որ Ռուսաստանում ի վերջոյ գլուխ են բարձրացնելու և իշխանութիւնը իրենց ձեռքն են վերցնելու Ռուսաստանի պետական շահերը պաշտպանող ուժերը, քանզի ռուս ժողովուրդը չի համակերպւի այն կացութեան հետ, երբ իրենց հայրենիքը ազատ շուկայի, ժողովրդավարութեան, զինաթափման, մարդու իրաւունքները պաշտպանելու և նախկին խորհրդային հանրապետութիւններին անկախութիւն տալու ճամբով պարզապէս քայքայւում է։

Ի՜նչ-ի՜նչ մեղադրանքներ չբարդեցին մեր վրայ, երբ մենք այդ ուժերի հետ հանդիպումների համեստ քայլեր էինք կատարում, իսկ այսօր Միացեալ Նահանգների նախկին նախագահ և փորձառու քաղաքագէտ Ռիչըրտ Նիկսոնը հանդիպում է բանտից ազատ արձակւած Ռուցկոյի և կոմունիստների ղեկավար Ջեւգանովի հետ։ Բայց, ինչպէս ասացինք, ինքնահաստատւելու ժամանակը չէ, ուստի տեսնենք՝ թէ ինչպիսի՞ն էր Ռուսաստանը մօտ անցեալում և ինչպիսի՞ն դարձաւ այսօր։

Աւելորդ է նշել, որ Ռուսաստանը այն երկիրն է, որի քաղաքականութիւնը անմիջականօրէն ազդեցութիւն ունի թէ՛ Հայաստանի և թէ Արցախի քաղաքական ճակատագրի վրայ, ուստի՝ Ռուսաստանի ներսում գոյութիւն ունեցող քաղաքական հոսանքների ուսումնասիրութիւնը մեզ համար կարեւորագոյն նշանակութիւն ունի։ Այդ հոսանքների մէջ առաւել կարեւորութիւն ունեն նրանց ծրագրերը ազգային խնդիրների վերաբերեալ։

«**Ռուսաստանի Ընտրութիւն**» բլոկը, որ յաւակնութիւն ունէր դառնալու Ռուսաստանի կառավարող կուսակցութիւնը, յայտարարում էր, թէ Ռուսաստանի բնական գործակիցներն են տնտեսապէս զարգացած ժողովրդավարական երկրները, ինչպէս նաեւ այն երկրները, որոնք տրամադրւած են ժողովրդավարութեան ճամբով զարգացնելու շուկայական տնտեսավարութիւ-

նը: Այսինքն՝ Հայաստանը կը դառնայ Ռուսաստանի քաղաքական բարեկամը, եթէ անցնի ազատ շուկայի և Արեւմտեան ժողովրդավարութեան սկզբունքներին: Ինչպէս տեսնում ենք, այս մօտեցումը կրում է ոչ թէ քաղաքական, այլ գաղափարախօսական բնոյթ և շատ քիչ է տարբերւում կոմունիստների մօտեցումից, որոնք բարեկամ էին համարում կոմունիստական վարչակարգ կառուցող երկրներին:

Գրեթէ նոյն մօտեցումը ունի «**Ազատ Աշխատանքի**» կուսակցութիւնը, որը յայտարարում է, թէ ազգային զգացմունքները անտրամաբանական են, ուստի՝ տրամաբանութեան օգտագործելը ազգային վէճերում, մասնաւորապէս տնտեսական հիմնաւորումները, անիմաստ են: Քաղաքականութեան մէջ ազգային զգացմունքներին պէտք է յարմարւել այն յոյսով, որ տնտեսական նպատակայարմարութիւնը ի վերջոյ դառնալու է իշխող: Իսկ տնտեսական նպատակայարմարութիւնը անմիջականօրէն կապ ունի ազատ շուկայի հետ: Այսինքն սրանք էլ «**անտրամաբանական**» ազգային զգացմունքները ցանկանում են խեղդել ազատ շուկայի ճամբով:

Հետաքրքրական է Ռուսաստանի Քրիստոնեայ-Դեմոկրատական կուսակցութեան դիրքորոշումը:

«**Ազգային քաղաքականութեան սկզբունքները**,- ասւած է նրանց ծրագրում,- **որոնք որդեգրեց բոլշեւիկեան իշխանութիւնը, տարաւ դէպի բոլոր ժողովուրդների ռուսականացում, բայց առաջին հերթին կործանման եզրին կանգնեցրեց ռուս ժողովրդին**»: Կուսակցութիւնը համարում է, որ ազգային հարցերով պէտք է զբաղւել միայն ու միայն Ռուսաստանի անկախ հանրապետութեան ներսում և այն հանրապետութիւններում, որոնք կը ցանկանան մտնել Ռուսաստանի կազմի մէջ: Այսինքն՝ մեզ, հայերիս առաջարկւում է մտնել Ռուսաստանի կազմի մէջ և այդ ժամանակ միայն կը լուծւի Ղարաբաղի հարցը օրինակ: Բայց ինչպէ՞ս կը լուծւի: Պատասխանը հետեւեալն է.- «**Իրական մշակութա-ազգային ինքնավարութեան ստեղծում**»:

Ռուսաստանի Ժողովրդավարական Կուսակցութեան համաձայն՝ «**մեր ռազմավարական նպատակը վերջին հաշւով հրաժարումն է ազգային տարածական պետականութեան սկզբունքից: Մեզ համար առաջնակարգը մարդու իրաւունքներն են**»: Այստեղ էլ մեզ առաջարկում են, նախ և առաջ, պաշտպանել մարդու իրաւունքները, իսկ ազգային պետականութիւն ստեղծելուց անհրաժեշտ է հրաժարւել:

Քրիստոնեայ-Դեմոկրատ Միութիւնը համարում է, որ միայն մարդու իրաւունքների հետեւողական պաշտպանութիւնը պէտք է դառնայ ազգային հարցի լուծման երաշխիքը: «**Անհրաժեշտ է ապահովել միջազգային ուժերի մուտքը բախման շրջանները, իսկ պետական կառոյցի իմաստով**,- ասւած է նրանց

ծրագրի մէջ,- **մենք անկախ պետութիւնների համադաշնակցութեան կողմնակիցներ ենք**»:

Մնացած, այսպէս կոչուած հայրենասիրական կազմակերպութիւնները Ազգային հարցում իրենց շեշտը դնում են ռուս ժողովրդի Ազգային իրաւունքների պաշտպանութեան վրայ, յայտարարելով՝ որ մնացած ազգերի իրաւունքները Ռուսաստանի ներսում նոյնպէս կը պաշտպանուեն:

Ինչ վերաբերում է Ժիրինովսկու, այսինքն Լիբերալ-Դեմոկրատական կուսակցութեանը, նա դէմ է անկախ պետութիւնների համագործակցութեանը և ձգտում է ստեղծել Ռուսաստանի ժողովրդավարական դաշնակցային հանրապետութիւն:

Բոլոր այս ծրագրերի մէջ աչքի է ընկնում գաղափարախօսական մօտեցումը: Ռուսաստանը իր քաղաքական փոխյարաբերութիւնները մնացած ազգերի հետ կառուցում է ոչ թէ ազգային առանձնայատկութիւններից ելնելով, այլ հաշի առնելով այն հանգամանքը, թէ արդեօք տուեալ ազգը անցե՞լ է ազատ շուկայի տնտեսավարութեան և կամ էլ արդեօք նա պաշտպանո՞ւմ է մարդու իրաւունքները:

Եթէ վերցնենք Հայաստանը, ապա ո՛չ նրա աշխարհագրական դիրքը, ո՛չ նրա կրօնական առանձնայատկութիւնները, ոչ էլ պատմական և մշակութային կապերը, գիտութեան բնագաւառում ընդունակութիւնները, սփիւռքի գոյութիւնը և այլն, Ռուսաստանի հետ բարեկամանալու հարցում ոչ մէկ դեր չեն կատարում: Հայաստանին փաստօրէն առաջարկւում է որեւէ ձեւով վերադառնալ Ռուսաստանի կազմի մէջ, կամ ամբողջովին կտրուել Ռուսաստանից և սեփական ուժերով կերտել սեփական ճակատագիրը: Այս մօտեցումը դժւար էր անւանել քաղաքական եւ միաժամանակ դժւար էր պատկերացնել, որ Ռուսաստանում բացակայում են քաղաքական ուժեր, որոնք Հայաստանի հետ իրենց յարաբերութիւնները ձգտում են կառուցել Հայաստանի և հայ ժողովրդի առանձնայատկութիւնները հաշի առնելով:

Այսպիսին էր Ռուսաստանի ներքին կացութիւնը մինչեւ վերջին ժամանակներս, որի հետեւանքով բոլոր պետական հաստատութիւններն ու նախարարութիւնները այլեւս կոչւում էին դաշնակցային, և այն տպաւորութիւնն էր ստեղծւում, որ Ռուսաստանի իշխանութիւնները խուսափում էին պետութիւն բառից և պետական շահեր հասկացութիւնից: Սակայն արտաքին քաղաքականութեան մէջ, Ռուսաստանի պետական շահերի ոլորտում, կացութիւնն էլ աւելի անմխիթար էր: Քանի որ մեզ համար Ռուսաստանի և Թուրքիայի քաղաքական փոխյարաբերութիւնները առաւել մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում, այդ օրինակի վրայ էլ վերլուծութեան ենթարկենք ստեղծւած կացութիւնը:

Ռուսաստանի պետական քարտուղար Բուրբուլիսի Թուրքիա այցելութիւնից սկսւեց ռուս-թուրք քաղաքական փոխյարաբերութիւնների նոր փուլը, որի մասին տեղեկատւական գործակալութիւնները շատ քիչ բան հաղորդեցին: Միայն «**Իզվեստիա**» թերթը Բուրբուլիսի հետ հարցազրոյցից յետոյ յանգեց մի կարեւոր եզրակացութեան, թէ՝ «**մենք բոլորս պէտք է ունենանք լուրջ շահագրգռածութիւն Թուրքիայի հետ փոխյարաբերութիւններ ստեղծելու մէջ, որը արդէն վաղուց և յաջողութեամբ իրականացնում է ժողովրդավարական բարեփոխութիւններ և շահագրգռած է, որ այդ բարեվոխութիւնները տեղի ունենան նաեւ Ռուսաստանում և ԱՊՀի, յատկապէս թուրքախօս, հանրապետութիւններում**»:

Այսպիսով, Ռուսաստանի ընդհանուր արեւմտասիրական քաղաքականութեան մաս կազմեցին նաեւ նրա թուրքասիրական տրամադրութիւնները: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ Արեւմուտքի հետ ընդհանուր Եւրոպական Տուն կառուցելու թեզը, որը դեռեւս Գորբաչովի ժամանակներից որդեգրել էր Ռուսաստանի արտաքին քաղաքականութիւնը, Ռուսաստանի թուրքասիրական տրամադրութիւններին չէր համապատասխանում, քանզի Թուրքիայի տարածութեան միայն երեք տոկոսն է գտնւում Եւրոպայում: Սա միայն կարող էր նշանակել, որ Արեւմուտքի համար Ռուսաստանը ասիական երկիր էր: Սակայն այստեղ էլ, այսինքն՝ Ասիայում, Արեւմուտքը մեծ տեղ չէր տալիս Ռուսաստանին, քանզի Միջին Ասիան, Ղազախստանը, Ռուսաստանի թուրքախօս բնակչութիւնը, Կովկասը ընկնելու էին Թուրքիայի ազդեցութեան տակ:

Այս ծրագիրը յստակ դարձաւ, երբ Ստամբուլում տեղի ունեցաւ խորհրդաժողով, որի նպատակն էր ստեղծել Սեւ Ծովի Երկրների Տնտեսական Համագործակցութիւն և նպաստել «**տաք կէտերում**» խաղաղութիւն ստեղծելու գործին:

Տաք կէտերից մէկն էլ (Թուրքիայի համար ամենակարեւորը) Ղարաբաղի խնդիրն էր, սակայն այդ խնդիրը, ինչպէս յայտնի է, ոչ մէկ լուծում չգտաւ: Անհասկանալին այն է, թէ ինչու հայ-ադրբեջանական խնդիրը պէտք է դառնար քննարկման առարկայ Սեւ Ծովի երկրների խորհրդաժողովում, երբ ո՛չ Ադրբեջանը և ոչ էլ Հայաստանը դէպի Սեւ ծով ելք չունեն: Այս հարցի պատասխանը կարելի էր գտնել Շեւարդնաձէի՝ առաջարկութեան մէջ, որը յայտարարեց, որ անհրաժեշտ է ստեղծել նոր տնտեսական և քաղաքական միաւոր, Ստամբուլը դարձնելով այդ նոր կազմակերպութեան կենտրոն: Ըստ Շեւարդնաձէի նոր կազմակերպութեան ներսում գործելու են մնայուն աշխատանքային մարմիններ տարբեր ուղղութիւններով, այդ թւում նաեւ բախումներին վերջ տալու ուղղութեամբ: Այդ կազմակերպութեան ներսում հանդիպելու են արտաքին գործոց նախարարներ և պետութիւնների ղեկավարներ:

Շեւարդնաձէի այս յայտարարութիւնը ցոյց տուեց, որ ամենասկզբից Սեւ Ծովի երկրների միութիւնը նախատեսւում էր որպէս նոր քաղաքական դաշինք, այլ ոչ միայն տնտեսական համագործակցութիւն։ Թուրքիան փաստօրէն դառնում էր 11 երկրների հովանաւորիչը, որոնք պէտք է այլեւս կոչւէին ոչ թէ Սեւափնեայ երկրներ, այլ Սեւ Ծովի գօտում գտնւող երկրներ։ Աւելին՝ Շեւարդնաձէն առաջարկեց, որ Եւրոպայի անվտանգութեան և համագործակցութեան հարցը մտնի ՆԱՏՕի մէջ և այդ ճանապարհով, շրջանցելով Ռուսաստանը, միջամտի բոլոր այն բախումներին, որոնք տեղի են ունենում նախկին Խորհրդային Միութեան տարածութեան վրայ։

Ռուսաստանի կառավարութիւնը և այսպէս կոչւած ժողովրդավարական մամուլը լուռ ընդունում էր նախկին Խորհրդային Միութեան տարածքից Ռուսաստանին դուրս մղելու քաղաքականութիւնը։ Եւ այդ քաղաքականութիւնը վարւում էր բոլոր ուղղութիւններով։

Ահա այս կացութեան մէջ էր, որ ռուս պետականութեան ամրապնդման կողմնակիցները գլուխ բարձրացրին և կամայ-ակամայ իրենց ազդեցութիւնը տարածեցին Ռուսաստանի ներքին և արտաքին քաղաքականութեան վրայ։ Այդ ազդեցութեան առաջին արտայայտութիւնը եղաւ այն, որ նախագահ Ելցինը ելոյթ ունեցաւ Դումայում և այդ ելոյթի ընթացքում խօսեց միայն ու միայն Ռուսաստանի պետական շահերի մասին, թէ՛ ներքին և թէ արտաքին քաղաքականութեան մէջ։ Ելցինին կարծես թէ փոխել էին, նա փաստօրէն ասում էր այն, ինչ ժամանակին ասում էին Ռուցկոյը և Խասբուլատովը։ Ելցինի դիրքերի թուլացման մասին խօսում էր նաեւ այն փաստը, որ հակառակ նրա կամքի՝ ազատ արձակւեց բանտում նստած Ռուցկոյի և Խասբուլատովի թիմը։

Ռուսաստանում զգալի ազդեցութիւն ունեն նաեւ կոմունիստները, որոնք նոյնպէս հանդէս են գալիս պետական շահերի դիրքերից։ Այս կացութեան մէջ բաւականին բարդանում է Հայաստանի կացութիւնը։

Բանը նրանումն է, որ Ռուսաստանի պետական շահերի դաշտում ռուսա-սիրական ճառեր արտասանելը բաւարար չէ։ Հայաստանը պէտք է կարողանայ ապացուցել, որ իր պետական ինքնիշխանութիւնը համընկնում է Ռուսաստանի պետական շահերի հետ։ Եթէ այդ բանը մեզ չյաջողւի անել, ապա գոյութիւն ունի այն վտանգը, որ ռուս քաղաքական մտայնութեան մէջ տեղ գտնի այն պարզ թեզը, թէ ո՞ւմն է պէտք անապատ դարձած Հայաստանը՝ Ղարաբաղի իր պատերազմով և քայքայւած տնտեսութեամբ։ Ռուսաստանը 30.000 քառակուսի կիլոմետր տարածութեան պէտք չունի։ Նրան պէտք է հայերով բնակւած, գիտութեամբ ու տնտեսութեամբ օժտւած մի պետութիւն, որը ի վիճակի է իրականացնել Ռուսաստանի քաղաքականութեան որոշ հանգրւանները։

Այս առիթով հետաքրքրական է Վրաստանի դիրքորոշումը: Սկզբից Շեւարդնաձէն կանգնեց ճիշտ այն դիրքերի վրայ, որոնց մասին մենք խօսեցինք, այսինքն՝ Ռուսաստանի պետական շահերը պաշտպանելու դիրքերի վրայ, որոնց հետեւանքով ուզեց Վրաստանի օգտին լուծել Աբխազիայի խնդիրը: - Սակայն առանց Ռուսաստանի միջամտութեանը սպասելու, նա անսպասելիօրէն մեկնեց Վաշինգտոն և խոստումներ ստացաւ Բիլ Քլինտոնից: Կարելի է այստեղ երկու ենթադրութիւն անել, կա՛մ Շեւարդնաձէն հասկացաւ, որ Ելցինի օրերը հաշւած են եւ որոշեց նախօրօք ստանալ Արեւմուտքի հովանաւորութիւնը և կամ էլ նա պարզապէս խաբում էր Ելցինին, և երբեք չէր հրաժարուել իր արեւմտասիրական գծից: Գրեթէ այս նոյն քայլը կատարեց Ալիեւը: Նա մտաւ ԱՊՀի կազմի մէջ, ապա մեկնեց Չինաստան, նոր դաշնակիցներ որոնելու նպատակով:

Ռուսաստանի ընդհանուր մթնոլորտը լարւած է: Բոլորը սպասում են լուրջ փոփոխութիւնների և ամէն մէկը իր կարողութիւնների սահմաններում պատրաստւում է այդ հնարաւոր փոփոխութիւններին: Կարծես, թէ միայն մենք՝ հայերս փոթորիկների չենք պատրաստւում:

Եթէ անպաշտօն տեղեկութիւնները հաշւի առնենք, ապա Ռուսաստանի ապագայ նախագահի համար պայքարում են Ռուցկոյը և Գորբաչովը: Այս շարքում Ռուցկոյը առաջին տեղն է գրաւում:

1994

ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԻ ՉԷ՞ ԱՐԴԵՕՔ ՉԻՆԱՍՏԱՆԸ

Է. Յովհաննիսեան

Վերջին տասնամեակների ընթացքում աշխարհի քաղաքական կացութիւնը կարծես թէ լուրջ փոփոխութիւններ է կրել։ Խօսքս ուժերի վերադասաւորութեան մասին չէ, այլ այն դաշտերի, որ գրաւում են մեծերը և փոքրերը։ Եթէ նախկինում մեծերի հակադրումներում, նրանց մէկը միւսի դէմ պայքարի պղտոր ջրերում փոքրերը ձուկ էին որսում, ապա այսօր մեծերը, մէկը միւսից վախենալով, վաղուց ի վեր հաշտութեան ճանապարհներ են որոնում։ Բայց հիմա էլ խանգարում են փոքրերը։ Իրենց չլուծուած խնդիրներով, նրանք մերթ ընդ մերթ աշխարհի այս կամ այն ծայրում գլուխ են բարձրացնում, խանգարելով մեծերի հանգիստը և կասկածի տակ դնելով նրանց համաձայնութիւնները։ Եթէ նախկինում փոքրերի դիւանագէտները թափառում էին Եւրոպայի մայրաքաղաքներում՝ պետական գործիչների ընդունարաններում իրենց ժողովուրդների համար բախտ մուրալով, ապա այսօր Կիսինջերները և Գրոմիկոներն են վազում դէս ու դէն, փոքրերին մի կերպ հանգստացնելու համար։

Այս պայմաններում մենք՝ հայերս էլ պէտք է ուշադիր լինենք մեծերի շարժումներին, որպէսզի աչքաթող չանենք այն ջրերը, որտեղ ո՞վ գիտէ, գուցէ մեր ցանցի մէջ էլ ձուկ ընկնի։ Այս իմաստով ես օգտակար համարեցի կանգ առնել մեծերի յարաբերութիւնների որոշ կողմերի վրայ։ Ես, ի հարկէ, ոչինչ չեմ առաջարկում, ես միայն ուշադրութեան եմ հրաւիրում։

1970 թւականի վերջերին Չինաստանի և Խորհրդային Միութեան յարաբերութիւններում նկատուեց լարւածութեան որոշ թուլացում։ Օգոստոսի կէսերին Պեկին ժամանեց խորհրդային արտաքին գործոց նախարարի տեղակալ Իլիչեւը, որը փոխարինեց Կուզնեցովին Չինաստանի հետ բանակցութիւններ վարող պատւիրակութեան ղեկավարի պաշտօնում։ Մէկ ամիս յետոյ խորհրդային մամուլը հրատարակեց մի հաղորդագրութիւն, որտեղ ասւած էր, որ Տոլստիկովը նշանակւած է երկար ժամանակ ազատ մնացած Խորհրդային Միութեան դեսպանի պաշտօնին, Չինաստանում։ Միաժամանակ ՏԱՍՍը յայտնեց, որ Խաբարովսկում աւարտւել են ապրանքափոխանակութեան վերաբերւող բանակցութիւնները և որ ստորագրւած է համապատասխան պայմանագիր։ Այս բոլոր քայլերը վկայում են, որ խորհրդեւչինական սառը պատերազմը Ամուրի ափերից տեղափոխւում է այլ տեղ՝ Ասիա և Աֆրիկա, ուր այս երկու մեծերը վաղուց փորձում են հաստատել իրենց քաղաքական և տնտեսական ազդեցութիւնը։

Նոյնիսկ արտաքին առեւտրի հարցում Չինաստանի և Խորհրդային Միութեան միջեւ գոյութիւն ունի մրցակցութիւն, որը առաջին հայեացքից նկատելի չէ: Բանը նրանումն է, որ խորհրդային արտաքին առեւտրի երկու երրորդը կապւած է համայնավար երկրների հետ, իսկ Չինաստանը, 1960 թւականից սկսեց առեւտուր վարել ոչ-**սոցիալիստ**ական երկրների հետ: Այսպէս, եթէ 1960 թւականին Խորհրդային Միութիւնը դէպի ոչ-կոմունիստական երկրներ արտահանում էր 1.4 միլիարդ դոլարի ապրանք, իսկ Չինաստանը 0.6 միլիարդ դոլարի ապրանք, ապա 1967 թւականին Խորհրդային Միութիւնը արտահանում է 3/3 միլիարդ դոլար, իսկ Չինաստանը 2 միլիարդ դոլարի ապրանք: Ուրիշ խօսքով, եթէ 1960 թւականին Չինաստանի արտահանումը խորհրդայինի կէսն էլ չէր կազմում, ապա 1967 թւականին նա գրեթէ հաւասար էր խորհրդային արտահանման երկու երրորդին:

Չինաստանի առեւտրական կապերը Ճապոնիայի հետ շատ աւելի ամուր և յուսալի են, քան խորհրդեւճապոնական յարաբերութիւնները: Սակայն առեւտրի բնագաւառում, Չինաստանի համեմատութեամբ, Խորհրդային Միութիւնը մեծ առաւելութիւններ ունի, այսպէս կոչւած զարգացող երկրներում: 1969 թւականին Խորհրդային Միութեան առեւտուրը այդ երկրների հետ հասնում էր 2.8 միլիարդ դոլարի, իսկ Չինաստանինը՝ ընդամէնը 1.2 միլիարդ դոլարի:

Չինաստանը զգալիօրէն յետ է մնում Խորհրդային Միութիւնից նաեւ տնտեսական և գիտական օգնութեան հարցում: 1954-1968 թւականներին կոմունիստական երկրների զարգացող երկրներին ընդհանուր օգնութիւնը կազմում է 9.238 միլոն դոլար: Այդ թւում Խորհրդային Միութեան բաժինը կազմում է 59.8 տոկոս, Չեխոսլովակիայինը՝ 12.2 տոկոս, իսկ Չինաստանինը՝ միայն 9.6 տոկոս: Դա նշանակում է, որ նշւած ժամանակաշրջանում Չինաստանի օգնութիւնը 6 անգամ պակաս է եղել Խորհրդային Միութեան օգնութիւնից և մօտենում է միայն Չեխոսլովակիայի օգնութեանը: Սակայն պէտք է հաշւի առնել, որ Չինաստանի օգնութիւնը իր բացարձակ արժէքով, այնուամենայնիւ, կազմում է 900 միլիոն դոլար, այսինքն մօտաւորապէս մէկ միլիարդ դոլար, և որ այդ օգնութիւնը բաշխւում է խիստ համապատասխան Չինաստանի արտաքին քաղաքականութեանը:

Ասիայում Չինաստանի օգնութիւնը, առաջին հերթին, տրւում է Պակիստանին, Նեպալին, Աֆղանստանին, Կամբոջիային, Ցեյլոնին և Եմենին, իսկ Աֆրիկայում՝ Տանզանիային, Զամբիային, Սոմալիին, Կոնգոյին և Գուինէային: Հետաքրքրական է նշել, որ ամենախոշոր նախագիծը, որ Չինաստանը իրականացնում է օգնութեան կարգով, դա 1600 կիլոմետր երկարութիւն ունեցող երկաթգիծն է, որը կառուցւում է Տանզանիայի և Զամբիայի միջեւ: Կառոյցին

մասնակցում են 5000 չին բանւորներ ու մասնագէտներ և այդ կառոյցը Չինաստանի վրայ կը նստի 250-300 միլիոն դոլար: Ըստ երեւոյթին, Չինաստանը յոյս ունի այդ երկաթգծով բարձրացնել մօտաւորապէս այնպիսի քարոզչական աղմուկ, ինչպիսին բարձրացրեց Խորհրդային Միութիւնը Եգիպտոսում, Ասւանի ամբարտակը կառուցելուց յետոյ: Սիհանուկի գահավիժումից յետոյ Չինաստանը դադարեցրեց իր օգնութիւնը Կամբոջիային, բայց 1970 թւականին Չինաստանի կառավարութիւնը ճանաչեց արտասահմանեան սիհանուկեան կառավարութիւնը և նրա հետ կնքեց պայմանագիր անվճար ռազմական օգնութեան մասին:

Բացի դրանից, ինչպէս յայտնի է, Չինաստանը ռազմական օգնութիւն է ցուցաբերում Հիւսիսային Վիետնամին և այստեղ նոյնպէս բախւում է Խորհրդային Միութեան հետ, որը աւելի ու աւելի է ծաւալում իր օգնութիւնը: 1964 թւականից մինչեւ 1970 թւականը Խորհրդային Միութեան ռազմական օգնութիւնը Հիւսիսային Վիետնամին աւելացել էր 4 անգամ: Օրէցօր աւելանում է Խորհրդային Միութեան քաղաքական և տնտեսական ազդեցութիւնը Հընդկաստանի վրայ, ուր Չինաստանը ընդհանրապէս մուտք չունի: Վերջին ժամանակներս Իրանը նոյնպէս դարձաւ Խորհրդային Միութեան և Չինաստանի մրցակցութեան առարկայ: Նոյնը վերաբերում է Ինդոնեզիային:

Բայց մրցակցութիւնը տնտեսական օգնութեան ասպարէզում բաւականին սահմանափակ է, քանզի բոլոր զարգացող երկրները գտնւում են արեւմտեան արդիւնաբերութեան ազդեցութեան տակ: Այդ պատճառով Չինաստանի և Խորհրդային Միութեան մրցակցութիւնը հիմնականում շարունակւում է ընթանալ գաղափարական ասպարէզում: Ամէն մի կողմը ձգտում է ապացուցել իր ղեկավար դերը միջազգային կոմունիստական շարժման մէջ: Գաղափարական այս մրցակցութեան կենտրոնում առաջին հերթին կանգնած է համաշխարհային յեղափոխութեանը տանող ճանապարհների հարցը և Ասիայի դերը այդ հարցում:

Ելնելով Մաոյի թեզից,- «ստեղծել յեղափոխական կենտրոններ գիւղում և շրջապատել քաղաքը գիւղով»,- Չինաստանի կոմունիստները քարոզում են, որ Ասիայի գլխաւորութիւնը և յատկապէս Չինաստանի ղեկավար դերը անժխտելի են: Պէտք է ճշտել, որ չին կոմունիստների համար քաղաքը Եւրոպան է և Հիւսիսային Ամերիկան, իսկ գիւղը՝ Ասիայի, Աֆրիկայի և Լատին Ամերիկայի թոյլ զարգացած երկրներն են: Պեկինի թերթերից մէկում ասւած է. «Իմպերիալիզմը դեռ պարտւած չէ, ասիական ժողովուրդների հակաիմպերիալիստական պայքարը դեռ աւարտւած չէ: Ասիան եղել և մնում է հակաիմպերիալիստական գրոհների կենտրոն: Ասիայի պայքարը իմպերիալիստների

դէմ ոչ միայն կը լուծի ասիական ժողովուրդների ճակատագիրը, այլեւ վճռական դեր կը խաղայ ամբողջ աշխարհի ճակատագրում»:

Այսպիսով, եթէ Ասիան հակաիմպերիալիստական գրոհների կենտրոնն է, ապա պարզ է, որ համաշխարհային յեղափոխութեան մէջ գլխաւոր դերը պատկանում է Չինաստանին: Ընդ որում չինական կոմունիստները կանգնած են այն տեսակէտի վրայ, որ համաշխարհային պատերազմը, այդ թւում և կոլոնիզային պատերազմը, անխուսափելի է: Եւ սա էլ խորհրդեչինական հակասութիւնների մէկ կէտն է:

Հակառակ դրան, խորհրդային ղեկավարութիւնը կանգնած է այն տեսակէտի վրայ, որ **սոցիալիզմ**ի ուժերը արդէն այնքան են հզօրացել, որ առանց պատերազմի, խաղաղ գոյակցութեան պայմաններում, դասակարգային պայքարի միջոցով հնարաւոր է հաստատել համաշխարհային **սոցիալիստ**ական հասարակարգ: Ելնելով այս տեսակէտից, խորհրդային քարոզչութիւնը խստօրէն քննադատում է պատերազմի անխուսափելիութեան թեզը: **«Պրաւդա»**ն, օրինակ, վերջերս գրում էր. «Չինաստանի կոմունիստական կուսակցութեան 9րդ համագումարում օրինականացուեց Մաօ-Ցէ-Թունի թեզը այն մասին, թէ պատերազմը ոչ միայն անխուսափելի է, այլեւ ցանկալի: Մաոն յայտարարեց, որ գոյութիւն ունի միայն երկու ելք, կա՛մ պատերազմը կ'առաջացնի յեղափոխութիւն, կա՛մ յեղափոխութիւնը անհնարին կը դարձնի պատերազմը: Բացատրելով Մաոյի այս թեզը, Լին-Բիաոն հաստատեց, որ յեղափոխութիւնը անխզելիօրէն կապւած է պատերազմի հետ»:

Միւս կողմից, խորհրդային ղեկավարութիւնը ընդունում է «տեղական ազատագրական պատերազմներ», որոնք ուղղուած են իմպերիալիզմի դէմ և նոյնիսկ օգնում են Հիւսիսային Վիետնամին՝ վարելու պատերազմը: Դրա հետ խորհրդային ղեկավարութիւնը կատաղի յարձակումներ է գործում Մաոյի իմաստով ժողովրդական պատերազմների դէմ: Չինական ղեկավարութիւնը մեղադրւում է նաեւ այն բանում, որ նա իր արկածախնդրութիւնը պարտադրում է զարգացող երկրների կոմունիստական շարժումներին, մատնելով շարժումը կործանման: Այստեղ պէտք է յիշեցնել, որ որոշ երկրներում մաոյիստական ֆեդայիները պատերազմ են վարում կառավարական զօրքերի դէմ՝ խորհրդային զէնքերով:

Վերջին ժամանակներս Խորհրդային Միութիւնը Չինաստանի հետ ունեցած իր մրցակցութեան մէջ ստացաւ երկու շօշափելի հարւած, մէկը՝ Հնդկաչինում, միւսը՝ Մերձաւոր Արեւելքում: Այն ժամանակւանից, երբ ամերիկևվիետնամեան բանակցութիւնները սկսւեցին Փարիզում, Խորհրդային Միութեան ազդեցութիւնը Հիւսիսային Վիետնամում և Հարաւ-Արեւելեան Ասիայում սկսեց գրեթէ ինքնաբերաբար աւելանալ, իսկ Չինաստանինը ընկնել: Փարի-

զում տեղի ունեցած խաղաղ բանակցութիւնները կարծես թէ հաստատեցին խորհրդային «տեղական պատերազմների» տեսութիւնը և կասկածի տակ դրեցին Մաոյի «ընդլայնող ժողովրդական պատերազմների» գաղափարը: Սակայն Կամբոջիայի կառավարութեան ղեկավար Նորոդոմ Սիհանուկի գահավիժումից յետոյ, նախաձեռնութիւնը կամաց-կամաց սկսեց կրկին անցնել Չինաստանի ձեռքը: Շուտով Պեկինում ստեղծուեց Խորհրդային Միութեան կողմից չճանաչուած սիհանուկական կառավարութիւն, իսկ 1970 թւականի ապրիլ ամսին էլ, Չինաստանի հովանաւորութեան տակ, Հնդկաչինի ժողովուրդների համաժողովի ժամանակ, ստեղծուեց «Հնդկաչինի ժողովուրդների միասնական ճակատը»:

Այդ ճակատի յայտարարութեան մէջ ասւած էր, որ կազմակերպութեան գլխաւոր նպատակը երեք ժողովուրդների ազատութեան համար պայքար մղելն է: Եւ կրկին հրապարակ եկաւ մաոյական «ժողովրդական ճակատների թեզը»: Միաժամանակ կարծես թէ սկսել էր թուլանալ խորհրդային ազդեցութիւնը պաղեստինեան ոլորտում: Արդէն վաղուց Մաոյի գաղափարները արձագանգ էին գտնում Ջորջ Հաբաշի, այսինքն «Պաղեստինի Ազատագրման Ժողովրդական Ճակատ» կազմակերպութեան ղեկավարութեան մօտ: Բայց 1970 թւականին Պեկինի կողմ հայեացք նետեց նաեւ Արաֆաթը, որը մարտ ամսին մեկնեց Պեկին և բանակցութիւններից յետոյ յայտարարեց. «Մենք, արաբական ժողովրդական զանգւածները, յեղափոխականներս և պայքարողներս երբեք չենք մոռանայ մեծ չին ժողովրդի մեծ ձգտումը՝ օգնել մեր ժողովրդին մեր պայքարում»:

Բայց պէտք է նշել, որ այս հարւածի տակից Խորհրդային Միութիւնը կարողացաւ դուրս գալ, հրաւիրելով Արաֆաթին Մոսկւա և ներկայացուցչութիւն հաստատելով նրա համար:

1971 թւականի կէսերին Չինաստանի արտաքին քաղաքականութեան մէջ տեղի ունեցան այնպիսի փոփոխութիւններ, որոնք լուրջ մտահոգութիւն պատճառեցին Խորհրդային Միութեանը: Ինչպէս յայտնի է, արդէն 1964 թւականին թէ՛ խորհրդային և թէ չինական կողմերը իրենց գաղափարական վէճը ամրապնդում էին գործնական քայլերով: Խորհրդային ղեկավարութիւնը ձեռնարկեց մի քանի անյաջող փորձերի՝ վտարելու Չինաստանը **«սոցիալիստ**ական համագործակցութիւնից», իսկ Չինաստանը կենտրոնացրեց իր ճիգերը Խորհրդային Միութիւնը վարկաբեկելու և հեղինակութիւնը գցելու գործում: Այս գործում Չինաստանը ունեցաւ աւելի մեծ յաջողութիւններ: Ճիշտ է, նրան չյաջողուեց ստեղծել հակասովետական **բլոկ**, բայց փոխարէնը աշխարհի կոմունիստական կուսակցութիւնների մեծ մասը խորհրդեւչինական վէճում գրաւեց չէզոք դիրք և դրանով իսկ ապացուցեց, որ այլեւս գոյութիւն չունի

կոմունիստական կուսակցութիւնների միասնութիւն և Խորհրդային Միութեան ղեկավար դիրք։

Շատ աւելի քիչ յաջողութիւն ունեցան չինական փորձերը թուլացնելու խորհրդային ազդեցութիւնը այն երկրներում, որոնք կոչւում են «Երրորդ Աշխարհ»։ Այստեղ չինները տարիներ շարունակ հիմնւում էին յեղափոխական տեսութիւնների վրայ, կոչ անելով հրաժարւել ե՛ւ Խորհրդային Միութեան, ե՛ւ Միացեալ Նահանգների օգնութիւնից։ Չինների այս ձախ թեքումը իր գագաթնակէտին հասաւ «մշակութային յեղափոխութեան» օրերին, երբ Մաոյի գաղափարները յայտարարւեցին մարքսիզմ-լենինիզմի վերջին խօսքը։ Ինչ խօսք, որ այս քաղաքականութիւնը տհաճ է Խորհրդային Միութեանը, բայց լուրջ վտանգ չէր ներկայացնում։ Դժւար կացութեան մէջ էին ընկել միայն խորհրդային գաղափարախօսները, որոնք ստիպւած էին պատասխանելու, թէ արդեօ՞ք Չինաստանը կոմունիստական պետութիւն է։ Իսկ եթէ ոչ, ապա ե՞րբ նա դարձաւ այդպիսին և ի՞նչպէս կարող է ընդհանրապէս կոմունիստական պետութիւնը, առանց իշխանութիւնը փոխելու, առանց յեղափոխութեան, դադարել կոմունիստական լինելուց։

Չինաստանի դէմ մղած պայքարում խորհրդային իսկական դժւարութիւնները սկսեցին «մշակութային յեղափոխութիւնից» յետոյ, երբ Պեկինը անակնկալօրէն որդեգրեց Խրուշչովեան խաղաղ գոյակցութեան թեզը։ Դրա արդիւնքը եղաւ Նիքսոնի հրաւէրը Պեկին, որը խորհրդային մամուլը մեկնաբանեց որպէս հակասովետական դաւադրութիւն։ Բայց դա չէ միայն անհանգստացնում Մոսկւային։ Նրան անհանգստութիւն է պատճառում ե՛ւ այն հանգամանքը, որ Չինաստանը փորձում է այժմ վերցնել իր ձեռքը Երրորդ Աշխարհի ղեկավարութիւնը։ Իր «անխուսափելի յեղափոխութիւնների» տեսութեանը փոխարէն Չինաստանը մշակել է Խորհրդային Միութեանը կատաղեցնող մի նոր **դոկտրին**, որը կոչւում է երկու գերպետութիւնների իշխանութիւն։

Համաձայն այդ **դոկտրին**ի, Միացեալ Նահանգները և Խորհրդային Միութիւնը իբր թէ պայմանաւորւել են աշխարհը բաժանելու հարցում։ Չինաստանի քաղաքականութեան այս արմատական փոփոխութիւնը նշում էր **«Իզվեստիա»** թերթը, որը Սեպտեմբերի 9ին գրում էր. «Երկու գերպետութիւնների **դոկտրին**ը լուրջ փոփոխութիւններ մտցրեց Չինաստանի քաղաքականութեան մէջ։ Այժմ նրանք **տակտիկ**ական նկատառումներով երկրորդական են համարում Մաո Ցէ-Թունի կողմից առաջ քաշւած պատերազմի անհրաժեշտութեան թեզը և փորձում են իրենց ներկայացնել որպէս խաղաղ գոյակցութեան կողմնակիցներ։ Աւելին, եթէ նախկինում Խորհրդային Միութիւնը ենթարկւում էր յարձակումների այն բանի համար, թէ իբր վախենում է պատե-

րազմից, ապա այսօր մեզ մեղադրում են սպառազինութեան մրցավազքում և ուժերի դիրքերից քաղաքականութիւն վարելու մէջ»:

Չինաստանի այս նոր քաղաքականութիւնը փաստօրէն յանգում է նրան, որ ի տարբերութիւն անցեալի, կոմունիստական Չինաստանը պատրաստ է համագործակցել և դիւանագիտական կապեր հաստատել այն երկրների հետ, որոնց շարունակում է անուանել **«կապիտալիստ**ական» և **«իմպերիալիստ**ական»:

Կարճ ասած, Խորհրդ. Միութեան նման Չինաստանն էլ իր քաղաքականութեան մէջ ազգային և պետական շահերը աւելի բարձր սկսեց գնահատել, քան գաղափարականը: Իսկ դա աւելացնում է Չինաստանի ազդեցութիւնը այն երկրներում, որոնք այս կամ այն պատճառներով ընդհարուել են Խորհրդային Միութեան հետ: Այսպէս, օրինակ, անյաջող կոմունիստական յեղաշրջումից յետոյ, Մոսկուան ընդհարուեց Սուդանի հետ: Իսկ Չինաստանը շարունակում է շատ բարեկամական վերաբերմունք ցուցաբերել Սուդանին և դա բաւականին ամրացնում է Չինաստանի դիրքերը Աֆրիկայում:

Պեկինը, իր հակախորհրդային պայքարում, չի սահմանափակւում Աֆրիկայով և Ասիայով: Իր այդ պայքարը նա տեղափոխել է խորհրդային կայսրութեան սիրտը՝ Բալկանները: Եթէ նախկինում այս աշխարհամասում Պեկինը ունէր միայն մէկ հաւատարիմ դաշնակից՝ Ալբանիան, ապա չեխոսլովակեան դէպքերից յետոյ, երբ հռչակւեց Բրեժնեւեան «սահմանափակ գերիշխանութեան» միտումը, Չինաստանը ձեռք բերեց երկու նոր դաշնակից՝ Ռումինիան և Հարաւսլաւիան: Եւ հէնց այդ հանգամանքն է, որ առաջացնում է Մոսկուայի անհանգստութիւնը: Այդ կապակցութեամբ **«Պրաւդա»**ն գրում է. «Եթէ նախկինում Պեկինը լայն քարոզչական յարձակում էր գործում բոլոր **սոցիալիստ**ական երկրների նկատմամբ, ապա այսօր նա ձգտում է նեղացնել պայքարի ոլորտը, փորձելով ոմանց դարձնել իր արբանեակները: Նա անում է մեծ խոստումներ, գրեթէ ոչինչ չպահանջելով ապագայ արբանեակներից: Չինաստանի ղեկավարութեանը ձեռք է տալիս ցանկացած քայլը, որը, իրենց կարծիքով, կարող է պառակտում առաջացնել **սոցիալիստ**ական երկրների յարաբերութիւններում»:

Այդպիսի պառակտում, ինչպէս յայտնի է, ստեղծւեց: Ռումինիան կտրականապէս մերժեց իր տարածութեան վրայ կատարել Վարշաւեան պայմանագրի ռազմական ուժերի փորձարկումները: Չաուշեսկուն այցելեց Պեկին և ստորագրեց երկու գերպետութիւնների թեզի տակ: Պեկին այցելեց նաեւ Հարաւսլաւիայի արտաքին գործոց նախարար Տեպաւաչը: Չինաստանը Ռումինիային տւեց 250 միլիոն դոլար փոխօգնութիւն և արդէն Ղրիմում կայացած կոմունիստական երկրների ղեկավարների խորհրդակցութեանը Ռումինիան

ներկայացուցիչ չուղարկեց: Շուտով Ռումինիա այցելեց Չինաստանի ռազմական ուժերի պատուիրակութիւնը և արտայայտուեցին կարծիքներ, որ գոյութիւն ունի Չինաստանի և Ռումինիայի միջեւ գաղտնի պայմանագիր: Միաժամանակ Չինաստանի մամուլը հաճոյքով արտատպում էր հարաւսլաւական մամուլի բոլոր յայտարարութիւնները այն մասին, որ Հարաւսլաւիան լի է վճռականութեամբ՝ պահպանելու իր անկախութիւնը: Այս ամէնը պատճառ դարձաւ, որ Խորհրդային Միութիւնը ստեղծի Պեկին-Տիրանա-Բելգրադ-Բուխարեստ միութեան առասպելը: Չինաստանի ներթափանցումը Բալկաններ ցոյց տուեց Չինաստանի վճռականութիւնը գլխաւորելու այսպէս կոչուած Երրորդ Աշխարհը:

Այստեղ է, որ հարց է ծագում. ԻՍԿ ՄԵՆՔ՝ ՀԱՅԵՐՍ ԵՐՐՈՐԴ ԱՇԽԱՐՀ ՉԵ՞ՆՔ: Մի՞թէ «երրորդ» չենք, եթէ տասնամեակներ շարունակ Խորհրդային Միութիւնը լքել է մեզ և մեր Դատը, իսկ Միացեալ Նահանգները պաշտօնապէս յայտարարում են, որ մեր հողերի արդար պահանջը հակասում է ներկայ ամերիկեան քաղաքականութեանը: Էլ ո՞վ ենք մենք, եթէ ոչ Երրորդ Աշխարհ: Այսօր ոչ Միացեալ Նահանգների և ոչ էլ Խորհրդային Միութեան համար մենք գոյութիւն չունենք և մեր Դատն էլ գոյութիւն չունի: Եթէ մենք ընդհանրապէս գոյութիւն ունենք, ապա գոյութիւն ունենք որպէս «Երրորդ Աշխարհ», բառի բուն իմաստով «երրորդ», այսինքն լքւած երկու գլխաւոր մեծերի կողմից:

Բայց միայն դա չէ, որ ուշադրութիւն է պահանջում Չինաստանի նկատմամբ: Կայ նաեւ մի ուրիշ հարց, որը անմիջականօրէն կապ ունի մեր թշնամու հետ: Այդ հարցը, այսպէս կոչուած «Արեւելեան Թուրքեստանի» հարցն է: Արեւելեան Թուրքեստանը կամ, ինչպէս նրան անւանում են չինները, Սինցեանը Չինաստանի ժողովրդական հանրապետութեան ինքնավար մարզերից մէկն է: Նրա տարածութիւնը կազմում է 1.75 միլիոն քառակուսի կիլոմետր: Այս մարզը Չինաստանի միակ մարզն է, որտեղ չինները կազմում են փոքրամասնութիւն: 7 միլիոն բնակիչների միայն 5 տոկոսն են չինները: Մնացածը թուրքական ցեղեր են: Այս մարզը գտնւում է Խորհրդային Միութեան սահմանի մօտ, իսկ սահմանը բաժանում է Արեւմտեան (խորհրդային) Թուրքեստանը արեւելեան (չինական) Թուրքեստանից:

1962 թւականին արեւելեան թուրքեստանցիները ապստամբութիւն բարձրացրին Չինաստանի դէմ, կատարելով իրենց վերջին փորձը՝ ազատւելու չինական լծից: Փորձը անշուշտ չյաջողուեց: Արեւմտեան Թուրքեստանը չինները նւաճեցին մանչուրական Ցին ցեղի հարստութեան օրօք, 1755 թւականին: Թուրքական ցեղերը դրանից յետոյ մի քանի անգամ ապստամբել են և 1862 թւականին Եաղուբ-բէկին յաջողւում է անկախութիւն ձեռք բերել: Այդ անկախութիւնը տեւեց 16 տարի, որից յետոյ 1878 թւականին չինները կրկին նւաճում

են Արեւելեան Թուրքեստանը: 1931 թւականին թուրքերը կրկին ապստամբում են և Նիազ Խոջին Արեւելեան Թուրքեստանում կազմում է թուրքական կառավարութիւն: Բայց 1934 թւականին չինները կրկին վերականգնում են իրենց իշխանութիւնը: Դրանից յետոյ գալիս է մի ժամանակ, որ Չինաստանի և Խորհրդային Միութեան բախումը Արեւելեան Թուրքեստանի համար կարծես թէ լուծւում է յօգուտ Խորհրդային Միութեանը: Մոսկւայի կողմից ուղարկւած զօրավար Շեն Շիցայը Արեւելեան Թուրքեստանում կատարեց յեղաշրջում և յայտարարեց իրեն Թուրքեստանի նահանգապետ: Այդ ժամանակաշրջանում Արեւելեան Թուրքեստանը դառնում է կոմունիստական քարոզչութեան կենտրոն: Հազարաւոր երիտասարդներ ուղարկւում էին Խորհրդային Միութեան համապատասխան ուսումնարանները, գիտելիքներ ձեռք բերելու համար:

1942 թւականին զօրավար Շեն Շիցայը որոշում է, որ Խորհրդային Միութիւնը տանուլ է տւել Հիտլերի հետ վարած պատերազմը և ապստամբում է Մոսկւայի դէմ: Նա ոչնչացնում է հազարաւոր կոմունիստներ և սովետական գործիչներ (թուրքը մնում է թուրք, միայն Մոսկւան յամառօրէն այդ բանը չի ուզում հասկանալ): Իսկ 1944 թւականին Արեւելեան Թուրքեստանը յայտարարւում է Խորհրդային Հանրապետութիւն: 1949 թւականին, երբ չինական կոմունիստական զօրքերը մտան Արեւելեան Թուրքեստան, այս հանրապետութիւնը վերացաւ: Այսպիսով, վերջին 200 տարւայ ընթացքում, Արեւելեան Թուրքեստանը 187 տարի եղել է չինական տիրապետութեան տակ: Բայց պէտք է ասել, որ թուրք բնակչութիւնը միշտ էլ հակաչինական տրամադրութիւններ է ունեցել: Մինչեւ այսօր, գրեթէ ամէն տարի տեղի են ունենում թուրքեւչինական բախումներ:

Պարզ է, որ թուրքական կառավարութիւնը ջանք չի խնայում իր ցեղակիցներին պաշտպանելու գործում և դրանով իսկ սկզբունքօրէն դառնում է հակաչին: Այսպէս, օրինակ, Ստամբուլում Արեւելեան Թուրքեստանից դուրս եկած քաղաքական փախստականներից կազմւել է «Արեւելեան Թուրքեստանի Ազատագրման Ազգային Կենտրոն» կազմակերպութիւնը: 1967 թւականին Ստամբուլում հրատարակւող **«Ենի Գազետէ»** թերթը գրում էր. «Արեւելեան Թուրքեստանի Ազատագրման Կենտրոն»ի նախագահ Եուսուֆ Ալպեկին մի խումբ ամերիկեան թղթակիցների հետ իր ունեցած հարցազրոյցի ժամանակ յայտարարեց, որ «Ազգային Կենտրոնը» մտադրւել է բողոք ներկայացնել ՄԱԿին Արեւելեան Թուրքեստանի անօրինական գրաւման մասին, Չինաստանի կողմից: Եուսուֆ Ալպեկին մեղադրեց Պեկինի կառավարութիւնը ամենաածանր յանցանքում՝ ցեղասպանութեան մէջ»:

Իսկ Թուրքիայի յայտնի քաղաքական մեկնաբան Ռիֆի Աթայը իր «Խորհրդային Միութիւնը և Թուրքիան» յօդւածում, ի միջի այլոց, գրում է.

«Թուրքիան պէտք է զարգացնի իր յարաբերութիւնները Խորհրդային Միութեան հետ, բայց ոչ ի հաշիւ Միացեալ Նահանգների հետ իր ունեցած կապերի։ Գուցէ կը գայ այն ժամանակը, երբ Միացեալ Նահանգների և Խորհրդային Միութեան հետ ուս-ուսի տւած Թուրքիան կը պայքարի Չինաստանի դէմ»։ Չինաթուրքական հակասութիւններին արձագանգեցին նաեւ Ցեյլոնի մահմեդականները։ Ցեյլոնի պարլամենտի պատգամաւոր Ա. Համիդը Կոլումբիայում Չինաստանի դեսպանին յանձնեց բողոքագիր, որտեղ ասւած էր. «Մենք մեղադրում ենք Չինաստանի կառավարութիւնը ցեղասպանութեան մէջ։ Մենք համարում ենք, որ **սոցիալիզմը**, պէտք է կառուցւի ոչ թէ մահմեդականներին հետապնդելով, այլ սովը, աղքատութիւնը և տառապանքները վերացնելով։ Մենք ցաւով տեսնում ենք, թէ ինչպէս մեր եղբայրները Արեւելեան Թուրքիայում ենթարկւում են ճնշումների և ինչպէս է վարկաբեկւում **սոցիալիզմի** գեղեցիկ փիլիսոփայութիւնը»։ Ճնշումներ, ի հարկէ, չկան, ինչպէս միշտ՝ հարցը ուռճացնում են, պարզապէս **սոցիալիզմի** գաղափարը միայն թղթի վրայ է գեղեցիկ։ Բայց այսպէս թէ այնպէս, Չինաստանի քաղաքականութեան մէջ կայ նաեւ հակաթուրքական բաժին։

Մի՞թէ ուշադրութեան արժանի չէ Չինաստանը։ Ես, ի հարկէ, հասկանում եմ, որ մի քիչ հակաբնական է և դժւար օգնութիւն որոնել այնտեղ, ուր ամէն ինչ օտար է՝ ցեղային, կրօնական, աշխարհագրական և պատմական իմաստով։ Բայց ո՞վ է ստիպում մեզ այն կողմը նայել։ Եթէ ցեղային, կրօնական, աշխարհագրական և պատմական մերձաւորը, մեր ժողովրդի մեծ մասի տէրն ու տիրականը մատը մատին չի խփում մեր Դատը լուծելու համար, եթէ նա իր օգնութիւնը շռայլում է կասկածելի կազմակերպութիւններ զինելու համար, էլ ի՞նչ անի հայը։ Աչքներս ջուր կտրեց այդ մի կողմի վրայ նայելով։ Ժամանակը չի՞ արդեօք, քանի դեռ վերջնականապէս չենք կուրացել, ուրիշ կողմեր էլ նայենք։

1975

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻԶՄԻ ԿԱՐԾԵՑԵԱԼ ՈՒԺԸ

Է. Յովհաննիսեան

Պրոլետարիատի իշխանութիւնը էլ աւելի կ'արագացնի ազգերի անյայտացման ընթացքը:

ՄԱՐՔՍ և ԷՆԳԵԼՍ

Ազգային ինքնուրոյնութեան քարոզը պրոլետարիատի գործը չէ:

ԼԵՆԻՆ

Հայաստանի Կոմունիստական կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի տեսական-քաղաքական «Լենինեան ուղիով» ամսագրում, ապրիլի 4ի համարում հրատարակւած է Կ.Ս. Վարդանեանի «Պրոլետարական ինտերնացիոնալիզմի կենսատու ուժը» վերնագրով յօդուածը, որտեղ հեղինակը փորձում է ապացուցել «պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքների վրայ խարսխւած սոցիալիստական երկրների քաղաքականութեան կենսականութիւնը»: Յօդուածը ծաւալուն է, բայց բարեբախտաբար՝ մեզ համար և դժբախտաբար՝ հեղինակի համար, այդ յօդուածում նոր մտքերը այնքան քիչ են, որ պատասխանը մեծ ճիգեր չի պահանջի: Թող ների ինձ Սփիւռքի ընթերցողը և այն հատ ու կենտ մարդիկ, որոնք հայրենիքում օժտւած են «Ազդակ» շաբաթօրեակը ընթերցելու իրաւունքից, եթէ կոպիտ լինեմ: Եւ ինչպէս կարող ես կոպիտ չլինել, եթէ հեղինակը, օգտւելով այն հանգամանքից, որ իր դատարկաբանութիւնները կարող են կարդալ բոլորը, իսկ **«Ազդակ»** շաբաթօրեակը միայն մի քանի ընտրանիներ, պարզապէս նենգափոխում է **«Ազդակ»**ից վերցրած մէջբերումները: Բայց այդ մասին յետոյ: Այժմ նշեմ, որ չեմ ցանկանում պատասխանել ձանձրացուցիչ գովասանքներին, որ ուղղւած են Կոմունիստական կուսակցութեանը, խորհրդային իշխանութեանը և «փրկարար Հոկտեմբերին»:

25րդ Համագումարից յետոյ, երբ սկսեցին Բրեժնեւի արձանները կանգնեցնել, իսկ մեր ջանասէր հայրենակից Նալբանդեանը, որ ամբողջ կեանքում Ստալին էր նկարում, իր ստեղծագործ վրձինը ուղղեց Բրեժնեւի յաւերժացման գործին, «համաժողովրդական» գովեստները շատ նմանւեցին ստալինեան ժամանակաշրջանի փառաբանումներին, երբ մաթեմատիկոսները իրենց գիտական աշխատութիւնների նախաբաններում գրում էին, թէ միայն Ստալինի

և կոմունիզմի լոյսի տակ հնարաւոր եղաւ բացայայտել Լապլասի բանաձեւերի կիրառական նշանակութիւնը։ Թւում էր, թէ այդ ժամանակները անցել են, բայց արի ու տես, որ ամէն ինչ սկսում է վերականգնւել։ Ուստի խօսենք միայն յօդւածում արծարծւած հարցերի մասին, այլ ոչ այն արտաքին ձեւի, որից ինքը հեղինակը գուցէ հաճոյքով հրաժարւէր, եթէ ապրէր աւելի ազատ պայմաններում։

Հեղինակի ելակէտը լենինեան հետեւեալ դրոյթն է. «Բուրժուական նացիոնալիզմ և պրոլետարական ինտերնացիոնալիզմ՝ ահա երկու թշնամական-անհաշտ լոզունգներ, որ համապատասխանում են ամբողջ կապիտալիստական աշխարհի երկու մեծ դասակարգային **լագերներին** և արտայայտում են երկու քաղաքականութիւն (աւելին՝ երկու աշխարհայեցողութիւն) ազգային հարցում»։ Հասկանալի է, որ հեղինակի համար Լենինը սրբութիւն է, որ եթէ Լենինը այդպէս է ասել, ուրեմն այդպէս է, որ Մարքսի, Լենինի, Էնգելսի, ժամանակին Ստալինի, հիմա էլ Բրեժնեւի խօսքերը երկնքից իջած մարգարէութիւններ են։ Իսկ մեզ համար այդպէս չէ և ես թոյլ կը տամ ինձ ասելու, որ Լենինից մէջբերւած դրոյթում ամէն ինչ սխալ է և միամիտ։ Առաջին՝ ո՞վ ասաց, որ գոյութիւն ունի միայն բուրժուական նացիոնալիզմ և պրոլետարական ինտերնացիոնալիզմ։ Ես պնդում եմ, որ գոյութիւն ունի նաեւ բուրժուական ինտերնացիոնալիզմ և պրոլետարական նացիոնալիզմ։ Երկրորդ՝ ո՞վ ասաց, որ բուրժուական նացիոնալիզմը և պրոլետարական ինտերնացիոնալիզմը անհաշտ են։ Ես պնդում եմ, որ շատ երկրներում նրանք շատ հաշտ են։ Երրորդ՝ ո՞վ ասաց, որ ամբողջ կապիտալիստական աշխարհը բաժանւած է երկու մեծ դասակարգային լագերների։ Ես պնդում եմ, որ այդ լագերների թիւը աւելին է։ Եւ վերջապէս, ո՞վ ասաց, որ ազգային հարցում գոյութիւն ունի միայն երկու աշխարհայեցողութիւն։ Ես պնդում եմ, որ նրանց թիւը շատ աւելի շատ է։ Փորձեմ ապացուցել այն, ինչ որ ես պնդում եմ։

Պրոլետարական ինտերնացիոնալիզմը, ինչպէս ձեւակերպում են մարքսիզմի գաղափարախօսները, ամբողջ աշխարհի բանւոր դասակարգի համախմբումն է սոցիալիզմի և կոմունիզմի համար մղւող պայքարում։ Իսկ եթէ տւեալ երկրի կամ ազգի պրոլետարիատը միայնակ է մղում այդ պայքարը իր ազգի սոցիալական բարիքների համար, իր յատուկ ազգային սոցիալիզմի համար, ապա այդ երկրի պրոլետարիատի միասնութիւնը արդեօք չի՞ կարող կոչւել պրոլետարական նացիոնալիզմ։ Չինաստանը, Բելգիան, Ֆրանսիան, Հարաւսլաւիան և բոլոր այն երկրները, որոնք կողմնակից են ազգային կոմունիզմի, պրոլետարական նացիոնալիզմի վառ ապացոյցներ են։ Իսկ եթէ ամբողջ աշխարհի բուրժուազիան համախմբւում է կոմունիստական գաղափարախօսութեան դէմ պայքարելու համար, այսինքն մարդկութիւնը փրկելու համար

կոմունիզմից, փրկելու համար անձի ազատութիւնը, միթէ՞ սա բուրժուական ինտերնացիոնալիզմ չէ՞: Իսկ երբ նացիոնալ-սոցիալիստական Գերմանիան զաւթել էր աշխարհի կէսը, միթէ՞ գերմանական նացիոնալ-բուրժուազիան դաշինք չէ՞ր կնքել Գերմանիայի պրոլետարիատի հետ: Միթէ՞ առանց պրոլետարիատի էր կռւում գերմանական բուրժուազիան: Կամ այսօր, բոլոր այն ազգերը, որոնք պայքարում են իրենց ազգային ինքնուրոյնութեան համար, չե՞ն խարսխում իրենց ազգային ազատագրական պայքարը բուրժու-պրոլետարական միասնութեան վրայ: Իսկ ինչ մնում է նրան, որ ամբողջ կապիտալիստական աշխարհը բաժանւած է երկու մեծ դասակարգային **լագերների**, ապա դա այնքան մեծ միամտութիւն է, որ պատասխանի կարիք անգամ չունի: Այդ ո՞ր դասակարգային **լագերներին** են պատկանում, օրինակ, Սպանիայի բասկերը, Իրաքի քրդերը, Լիբանանում կատաղի մարտնչող կրօնական խմբաւորումները, Խորհրդային Միութիւնից Իսրայէլ փախչող հրեաները, Ամերիկայի սեւամորթները, անգոլացիները, կորէացիները և շատ ու շատ ուրիշներ, որոնք զէնքերը ձեռքներին պայքարում են իրենց հաւաքականութիւնների ազատութեան համար: Դէ՛, խնդրե՛մ, բաժանեցէք սրանց երկու մեծ դասակարգային լագերների՝ մէկին աջ, միւսին ձախ, մէկին պրոլետարիատի, միւսին բուրժուազիայի լագերը: Ֆրանսիական Կոմունիստական կուսակցութեան գլխաւոր քարտուղար Ժորժ Մարշէն անգամ հասկացաւ, որ այդպիսի բաժանումը անմտութիւն է և հրապարակօրէն հրաժարւեց «պրոլետարիատի դիկտատուրայից», իսկ հայ հրապարակագիրները, լինելով այն ազգի ներկայացուցիչը, որին դարեր շարունակ կոտորել են առանց դասակարգային խտրութեան, շարունակում են երգել 100 տարի առաջ գրւած երգը: Խօսւում է միայն երկու ազգային աշխարհայեացողութեան մասին, իսկ ուրիշները չկա՞ն…

Գոյութիւն ունի ռասիզմ, որը տարբեր ազգերին վերագրում է տարբեր ընդունակութիւններ և դրա հետ միասին տարբեր իրաւունքներ: Գոյութիւն ունի **կոսմոպոլիտիզմ**, որը ընդհանրապէս մերժում է ազգային բազմազանութեան բնականութիւնը և որի մաս է «պրոլետարական ինտերնացիոնալիզմը»: Գոյութիւն ունի սոլիդարիզմ, որը ճանաչում է ազգերի գոյութիւնը և ձգտում է նրանց համագործակցութեանը: Գոյութիւն ունի ազգային **միսիոնիզմ**, որը մէ՛կ ազգի վերագրում է մարդկութեան փրկութիւնը: Գոյութիւն ունի կրօնական ազգայնականութիւն, որը նոյնացնում է ազգը կրօնի հետ: Արդեօ՞ք յօդւածագիր Գ.Ս. Վարդանեանի համար թուրք բանւորը աւելի մօտ է կանգնած և աւելի մեծ արժէք է ներկայացնում, քան, օրինակ, ոչ **մարքսիստական** տեսակէտներ ունեցող մի հայ բուրժուա, որի դրամներով կառուցւում են հայ եկեղեցիներ, դպրոցներ և ակումբներ, եթէ այո՝ ապա դա դեռ չի նշանակում, որ ազգային հարցը ունի միայն մէկ, լենինեան լուծումը:

Յօդուածագիրն ասում է, որ «նացիոնալիզմը, որը սերել է հին աշխարհի և միջնադարեան **ռեակցիոներ**ների մարդատեաց հայեացքներից, դարձաւ բուրժուազիայի գաղափարախօսութիւնը»: Սա, ի հարկէ, Լենինի միտքն է, որը գրում էր. «Ազգը անխուսափելի արդիւնք է և բուրժուական դարաշրջանի հասարակական զարգացման անխուսափելի ձեւ»: Սակայն, ազգը, որպէս մարդկանց կայուն ընդհանրութիւն, գոյութիւն է ունեցել այնտեղ, որտեղ դեռ բացակայում էր կապիտալիստական արտադրանքը և այնտեղ, որտեղ դեռ ոչ մի բուրժուազիա չէր ծնւել: Այս տեսակէտը դժբախտաբար միայն մարքսիստական չէ: Նոյնիսկ Արեւմուտքում հանրագիտարանների մէջ կարելի է գտնել մօտաւորապէս այսպիսի բացատրութիւններ: Ազգայնականութեան երեւոյթը և ազգային պետականութիւնների ստեղծումը ի յայտ եկաւ Ֆրանսիական Յեղափոխութեան ժամանակ, որպէս եւրոպական մշակոյթի **ֆենոմեն**: Ազգային ինքնուրոյնութեան պահանջը յեղափոխական ժամանակաշրջանի ամենագլխաւոր պահանջն էր: Միապետի ինքնիշխանութեան փոխարէն առաջ էր քաշւում ազգի, այսինքն ժողովրդի ինքնիշխանութեան գաղափարը:

Պետական կեանքի այս ձեւը այսպէս է իշխում ժամանակակից քաղաքական կեանքում, որ նոյնիսկ սոցիալիստական կոչւող երկրները ընդունում են այն որպէս հիմք միջազգային յարաբերութիւններում: Սակայն հէնց այդ ձեւը և անցեալ դարում ձեւակերպւած ազգային գաղափարախօսութիւնը այժմ ապրում է ճգնաժամ: Ազգային պետութիւնների մրցակցութիւնը, որոնք հանգեցրին երկու համաշխարհային պատերազմների, ստիպեցին եւրոպացիներին ընդունել, որ եթէ ազգային զգացմունքները կարող են հիմք ծառայել ժողովրդավարութեան համար, ապա այդ նոյն զգացմունքները կարող են առաջացնել առաջնորդի դիկտատուրա, որը մարմնաւորում է իր մէջ ազգի կամքը: Սակայն մինչեւ եւրոպացիները դա հասկացան, ազգայնականութիւնը դուրս եկաւ Եւրոպայի սահմաններից: Այն միտքը, թէ իմպերիալիստական և ֆաշիստական ծայրայեղութիւնները կարող են ազգայնականութիւնը դարձնել անհամակրելի մի բան՝ չարդարացաւ: Աւելին, այսպէս կոչւած «երրորդ աշխարհում» ազգայնականութիւնը այնքան ամրապնդւեց, որ այնտեղ ազգային հակասութիւնները և ազգային պատկերացումները բռնկւել են ոչ պակաս ուժով, քան ժամանակին Եւրոպայում: Իսկ մենք հայերս ականատես էինք, թէ ինչպէս 1965 թւին, ստալինեան մռայլ խաւարից յետոյ, խռուշչովեան մոմի լոյսն անգամ բաւական եղաւ, որ ժողովուրդը դուրս թափւի փողոց և բացագանչի. «Մեր հողերը»: 1945 թւից այս կողմ ազգային պետութիւնների թիւը աւելացաւ աւելի քան երկու անգամ, իսկ ազգային պետականութեան ձգտող ազգերի ցուցակը այնքան ծաւալւեց, որ այլեւս մարդկութիւնը նրանց չի արձանագրում, եթէ նրանք չեն յիշեցնում այդ մասին ԻՐԵՆՅ ԲԱՐՁՐ ՉԱՅՆՈՎ: Եւ Եւրո-

պայումն էլ դեռ վերջ չի տրւած ազգային հակասութիւններին, որոնք և հիմնական խոչընդոտն են հանդիսանում՝ Միացեալ Եւրոպա քաղաքական միաւորում ստեղծելու ճանապարհի վրայ։ Այս ամէնը ստիպել է տալիս վերանայել նախկին տեսակէտները և հարց բարձրացնել, թէ արդեօք ճիշտ է ազգայնականութեան պատմութիւնը կապել բուրժուազիայի հետ և սկսել այն Ֆրանսիական Յեղափոխութիւնից։

Այսօր, 20րդ դարի վերջերում արդէն ոչ ոք չի համարձակւում պնդել «հասարակական ատոմիզմի» դրոյթների վրայ, որոնց համաձայն հասարակութիւնը առանձին մարդկանցից բաղկացած մի գումար է, որոնց վարքագծից կազմւում է հասարակութեան վարքագիծը։ Եթէ Լոկի, Մոնտեսկիէոյի, Ռուսոյի, Ուաշինգտոնի և Ռոբեսպիերի համար հասարակարգը՝ նրա ազատ անդամների գումարն է և նրանց ազատ կամքերի հաւասարապէս ներգործող ուժը, ապա այսօր արդէն պարզ է, որ հասարակարգը միութիւնների միութիւն է։ Բայց ինչպիսի՞ միութիւնների։ Կամաւո՞ր միութիւնների։ Արհմիութիւնների՞, բարեգործական միութիւնների՞, կարմիր խաչի՞, կուսակցութիւնների՞։ Ոչ, այս ամէնը մարդը ստեղծել է, յարմարւելով հասարակական օրինաչափութիւններին։ Սրանք անյայտանում ու ծնւում են մարդկութեան զարգացման հետ միասին։ Բայց կան բնական միութիւններ, որոնք ստեղծւել են ինքնաբերաբար, առանց պայմանաւորւածութեան, օրինակ, ընտանիքը, ազգը, տոհմը, ցեղը և այլն։ Այս միութիւնների միութիւնն է հասարակութիւնը։ Բնական միութեան առանձնայատկութիւնը այն է, որ նրա կայունութիւնը պայմանաւորւած է բնական, այլ ոչ հասարակական օրինաչափութիւններով։ Ոչ ոք մեզանից չի կարող ընտրել ոչ իր ազգային պատկանելիութիւնը և ոչ էլ մորթու գոյնը։ Մի քիչ այլ է ընտանիքի միութիւնը։ Թէպէտեւ նա կազմւում է կամաւոր սկզբունքների վրայ, բայց այնուամենայնիւ նրա կայունութիւնը ամրապնդւում է կա՛մ եկեղեցիով և կամ էլ բարոյական սկզբունքներով, այսինքն մարդուն բնորոշ յատկութիւններով, բնական օրէնքներով։ Ոչ պրոլետարիատը և ոչ էլ բուրժուազիան այդպիսի բնական միութիւններ չեն։ Դեռ որոշ վերապահումներով բուրժուազիան կարելի էր համարել բնական միութիւն, քանզի իշխանութիւնը և հարստութիւնը մարդու (աւա՛ղ, Աստծուց մեղանչելու հետեւանքով) բնական ձգտումներ են։ Ես դեռ չեմ հանդիպել ո՛չ Խորհրդային Միութիւնում և ո՛չ էլ արտասահմանում մի մարդ, որ հրաժարւի հարստութիւնից (բացառութիւնը հիպիներն են, որոնց մասին արդէն գրել եմ)։ Բայց պրոլետարիատը պրոլետարիատ է դարձել ոչ թէ իր ցանկութեամբ, այլ իրերի բերումով, որպէս անյաջողութիւն, որպէս պարտութիւն կեանքում տեղ գրաւելու, ինքնահաստատման պայքարում։ Ո՞վ է մեզանից դպրոցական նստարանի վրայ երազել բանւոր դառնալու մասին. կամ աշխարհի ո՞ր երկրում մարդիկ չեն ուզում

դառնալ գիտնականներ, երաժիշտներ, քաղաքական գործիչներ և կապիտալիստներ: Միայն չհասնելով այդ ամենին, մարդիկ ստիպւած դառնում են բանւորներ: Նշանակո՞ւմ է դա արդեօք, որ պրոլետարիատը պէտք է զրկւի օգնութիւն ստանալու իրաւունքից, ի հարկէ՝ ո՛չ: Նա ունի օգնութեան կարիք և նա ստանում է այդ օգնութիւնը դեմոկրատական երկրներում, ստանում է լիովին արհմիութիւններից: Կապիտալիստական երկրի անգործութեան նպաստը երեք անգամ աւելին է, քան խորհրդային բանւորի աշխատավարձը: Այսպիսով պրոլետարիատ կոչւող ընդհանրութիւնը ոչ կամաւոր է և ոչ էլ բնական, այդ ընդհանրութիւնը չի մտնում այն բնական միութիւնների մէջ, որոնցից կազմւած է հասարակութիւնը:

Սակայն կոմունիստները, համաձայն իրենց «քանդել և նորը շինել» հիմնական նպատակի, փորձեցին թափանցել բոլոր բնական միութիւնների ներսը և քանդել այդ միութիւնները ներսից, ներքին հակասութիւնների հիման վրայ: Կասկածից վեր է, որ որեւէ ամբողջութիւն, նոյնիսկ ամենակայուն ամբողջութիւնը ունի իր ներքին հակասութիւնները: Սակայն այդ հակասութիւնները այնքան բնական են, որ չեն քանդում միութիւնը: Ամբողջականութեան ներքին հակասութիւնների պայքարը վերջին հաշւով տանում է դէպի համերաշխութիւն և ներդաշնակութիւն: Բայց ահա եկան կոմունիստները և հռչակեցին հակասող կողմերի ոչնչացման թեզը: Նրանք ներթափանցեցին ազգի ներսը և տեսան այնտեղ շահագործող բուրժուաների և շահագործւող պրոլետարիատ: Դասակարգային պայքարը կ՚աւարտւի դասակարգերի վերանալու հետ միասին,- ասացին նրանք: Ընտանիքի ներսում նրանք տեսան շահագործող ծնողներ և շահագործւող երեխաներ: Ընտանիքը պէտք է վերանայ,- ասացին նրանք: Պետութեան ներսում նրանք տեսան իշխանաւորների բռնութիւն և ենթակաների ստիպողական ենթարկւածութիւն: Պետութիւնը կը վերանայ,- ասացին նրանք: Հայրենիքի ներսում նրանք տեսան ազգային հայրենասիրութիւն, որը խանգարում էր համաշխարհային պրոլետարիատի արհեստական միասնութեանը: Պրոլետարիատը հայրենիք չունի,- ասացին նրանք: Այստեղից պարզ երեւում է, թէ ինչումն է կայանում պրոլետարական **ինտերնացիոնալիզմի** կենսական ուժը: Այդ ուժը կայանում է նրանում, որ նա քանդում է դարերի ընթացքում բնութեան և մարդկութեան կողմից ստեղծւած բնական ամբողջութիւնները՝ ընտանիքը, պետութիւնը, ազգը, հայրենիքը և այդ ճանապարհի վրայ աւելացնում իր բանակը՝ դժգոհներով, որոնց չգիտես ինչու անւանում է պրոլետարներ:

Յօդւածագիր Կ.Ս. Վարդանեան համարում է որ «կոմունիստներին անամօթաբար զրպարտում են, ասելով թէ նրանք ժխտում են ազգն ու հայրենիքը»: Իսկ միթէ՞ այդպէս չէ: միթէ՞ «պրոլետարիատը հայրենիք չունի»ն կոմունիստ-

ների թեզը չէ, կամ իմ յօդւածի սկզբում գրւած խօսքերը մի՞թէ Մարքսինը, Էնգելսինը ու Լենինինը չեն: Ասե՞լ են թէ ոչ այս խօսքերը մարքսիզմ-լենինիզմի գաղափարախօսները: Ասւա՞ծ է թէ ոչ «մանիֆեստում», որ ծնողները շահագործում են իրենց երեխաներին և դրա համար նրանցից պէտք է խլել երեխաներին:

Ի հարկ է ժողովուրդը, չնայած Ստալինի բոլոր ջանքերին, պահպանեց ընտանիքը, այն միակ հաստատութիւնը, որտեղ կուսակցութիւնը չի կարողանում խոթել իր քիթը և որը ղեկավարւում է կուսակցութիւնից անկախ: Ազգային միութեան մէջ կուսակցութեանը յաջողւեց մտնել մի քիչ աւելի շատ, բայց միեւնոյն է, այդ միութիւնն էլ չի յաջողի քայքայել **պրոլետարական ինտերնացիոնալիզմի** խաբուսիկ լոզունգներով: Ի հարկէ, այս ամէնը ինձանից էլ լաւ գիտի Վարդանեանը, բայց նա Դաշնակցութեանը հայհոյելու պատւէրն է ստացել և ջանասիրութեամբ կատարում է այդ պատւէրը: Վարդանեանի յօդւածի հակադաշնակցական, այսինքն հիմնական մասը սկսւում է հետեւեալ միտումնաւոր պնդումով: «Կոյր ձեւանալով ազգային հարցի լուծման ասպարէզում Սովետական Միութեան վիթխարի նւաճումների հանդէպ, իսկ յաճախ միտումնաւոր աղաւաղելով մեր իրականութիւնը, բուրժւական նացիոնալիզմի ջատագովները յարձակւում են ազգային հարցի լենինեան տեսութեան վրայ»: Եկէք տեսնենք, թէ ո՞վ է մեզանից կոյրը:

Ես նացիոնալիստ եմ՝ բուրժւական, պրոլետարական թէ տիեզերական, անւանէք ինչպէս կ՚ուզէք:

Ես նացիոնալիստ եմ և ինձ համար դա նշանակում է, որ ազգը միակ մարդկային միութիւնն է, որին իմ պատկանելիութիւնը ես զգո՛ւմ եմ և ոչ թէ գիտակցում միայն: Դասակարգը, մարդկութիւնը, պետութիւնը, կուսակցութիւնը՝ այս ամէնը և իմ պատկանելիութիւնը նրանց ես ընկալում եմ ուղեղով: Եւ եթէ ես տառապում եմ մարդկութեան համար, ապա տառապում եմ մտքով: Իսկ ազգային ողբերգութիւնը, իմ ժողովրդիս ցաւը ես ընկալում եմ անմիջականօրէն, իմ ամբո՛ղջ էութեամբ, ինչպէս մայրն է զգում որդու ցաւը:

Ես նացիոնալիստ եմ, իսկ դա նշանակում է, որ ես ոչ միայն նշում եմ ազգային բազմազանութեան գոյութիւնը, այլեւ ուրախանում եմ այդ բազմազանութեամբ, համարելով այն Աստծու շնորհ:

Ես նացիոնալիստ եմ և հէնց դրա համար յստակ գիտեմ, որ **ինտերնացիոնալիզմ** կարող է գոյութիւն ունենալ միայն նացիոնալիզմի առկայութեան դէպքում, որ նացիոնալիզմի բացակայութեան դէպքում **ինտերնացիոնալիզմը** կա՛մ վեր է ածւում անմտութեան և կամ էլ անդէմ **կոսմոպոլիտիզմի**:

Ես նացիոնալիստ եմ և դրա համար գիտեմ, որ ոչ մի ազգ իրաւունք չունի փաթաթել մէկ ուրիշ ազգի վզովը իր լեզուն, իր մտայնութիւնը և իր վարչակարգը։

Ես նացիոնալիստ եմ և դրա համար չեմ կարող մերժել որեւէ ազգի իրաւունքը՝ լինելու նացիոնալիստ. առաւել եւս չեմ կարող մերժել դա մեծ ռուս ժողովրդին, որը բացի իր ինքնութիւնը կորցնելուց ոչինչ ձեռք չի բերել «եղբայրական ընտանիքում»։

Ես նացիոնալիստ եմ և դրա համար գիտեմ, որ իմ ժողովրդի փրկութիւնը ռուսական առողջ, Սոլժենիցինական նացիոնալիզմի մէջ է։

Ես նացիոնալիստ եմ և դրա համար չեմ ամաչում համեմատել ազգութիւնները շների տեսակների հետ, որոնք աւելի երջանիկ գտնուեցին։ Մարդկութիւնը ծախսում է ահագին գումարներ այս կամ այն շների տեսակները պահպանելու համար, դուրս է գրում շների համար 17 պորտը արձանագրող անձնագրեր և պետական յանցանք է համարում նրանց «մաքրութիւնը» խախտելը։ Իսկ մեր 3000 տարւայ պատմութիւն ունեցող ժողովուրդը պէտք է քայքայւի «պրոլետարական ինտերնացիոնալիզմի» շեփորների տակ։ Մարդկութեանը մարդկային այս տեսակը չգիտես ինչու չի հետաքրքրում։

Եւ որովհետեւ ես նացիոնալիստ եմ, նացիոնալիստի աչքերով էլ նայում եմ «Սովետական Միութեան վիթխարի նւաճումներին»։ Այդ ո՞ր նւաճումների մասին է խօսքը։ Երեւանի «Հրազդան» մարզադաշտի՞, Երեւանի հաշւիչ մեքենաների՞, «Անի» հիւրանոցի՞ և այն ամենի, ինչի մասին ամէն օր գրում են թերթերը։ Իսկ ո՞վ, ներեցէք, այս դարում չունի այդ ամէնը։ Ինչո՞ւ է դարաշրջանի պարգեւը վերագրւում սովետական կարգերին։ Այսօր կիսավայրենի աֆրիկացին այնպիսի «Մերսեդէս»ներ է նստում և այնպիսի «Հիլտոն»ներում է բնակւում, որ պարտիայի Կենտկոմի քարտուղարները երազներումն էլ չեն տեսել։ Իսկ մեր ժողովրդի այն միւս մասը, որ թուրքական կոտորածներից փախած, անլեզու ու ցնցոտիները վրան լցւեց Եւրոպայի մայրաքաղաքները և սկսեց մաքրել օտարի կօշիկները ու փողոցները, սրա վիթխարի նւաճումները չե՞ն տեսնում արդեօք։ Ոչնչից, առանց պետական բիւդճէների, առանց «եղբայրական օգնութեան», առանց խորհրդային իշխանութեան ու «պրոլետարական ինտերնացիոնալիզմի», սրանք ոտքի չելա՞ն, չկառուցեցի՞ն եկեղեցիներ, ակումբներ ու մարզադաշտեր, և չապրեցի՞ն ազգային կեանքով։ Բայց որպէս նացիոնալիստ ես չեմ էլ ուզում տեսնել ոչ Սփիւռքի «Մերսեդէս»ները և ոչ էլ Խ. Միութիւնում խանութների հերթերը։ Չեմ ուզում տեսնել, որ վիթխարի նւաճումների հետ միասին Խ. Միութիւնը հաց է աղաչում Միացեալ Նահանգներից։ Եւ չեմ ուզում նաեւ տեսնել, թէ ինչպէս Սփիւռքի միլիոնատէրերը իրենց միլիոններով, ազգային գործունէութեան պատրւակի տակ, իրենց սեփական

արձաններն են կառուցում: Այս ամէնը չեմ ուզում տեսնել: Ես ուրիշ բան կ'ուզէի տեսնել: Ես կ'ուզէի տեսնել, որ «աշխարհի բոլոր ազգերի ազատութեան մասին մտահոգւած» խորհրդային իշխանութիւնը բաւարարէր Ղարաբաղի պրոլետարիատի ցանկութիւնը, վերադարձնէր Ղարաբաղը իր օրինական տիրոջը: Ես կ'ուզէի Մոսկւայի թուրքական դեսպանատան առաջ տեսնել հայ ցուցարարների, որոնց բոլորովին էլ չի քշում միլիցիան: Ես կ'ուզէի, որ Հայրիկեանին ազատէին բանտից և, օրինակ, հրատարակէին Աւետիս Ահարոնեանի աշխատութիւնները: Ես կ'ուզէի, որ Քաջարանի մոլիբդենը դուրս չբերէին Հայաստանից որպէս հումք: Ես կ'ուզէի, որ Հայաստանի կառավարութիւնը ունենար զօրք և ազգային արտաքին գործոց **ինստիտուտ**ներ, որոնք այսօր նմանւում են խրտիլակային հաստատութիւնների: Ես կ'ուզէի, որ հայ ընթերցողը հնարաւորութիւն ունենար կարդալու, օրինակ, իմ այս յօդւածը: Եւ եթէ ես տեսնէի այս ամէնը, ապա պատրաստ կը լինէի մեռնելու խորհրդային իշխանութեան և պրոլետարական ինտերնացիոնալիզմի համար: Եւ եթէ ես չեմ տեսնում այս ամէնը, ապա դա ոչ թէ նրա համար է որ ես եմ կոյր, այլ տեսնողներն են անազնիւ:

* * *

Մեղադրելով բուրժւական նացիոնալիստներին կուրութեան մէջ, հեղինակը անցնում է իր բուն նիւթին: Ահաւասիկ: «Ազգային հարցի մարքս-լենինեան տեսութեան բուրժւական «քննադատների» բազմաձայն ժխորում արդէն տասնամեակներ շարունակ լսւում է նաեւ դաշնակցական նացիոնալիստների ձայնը»: Եւ այդ ձայնը ներկայացնելու համար հեղինակը դիմում է **«Ազդակ»** շաբաթօրեակից քաղւած մէջբերումների: Ես մտադրութիւն չունիմ պատասխանելու այն հացին, թէ որքանով համաձայն եմ այդ մէջբերումների հետ: Իմ կարծիքով բոլոր մէջբերւած մտքերն էլ ուշադրութեան արժանի են: Ես ուզում եմ կանգ առնել մի այլ հարցի վրայ: Ինչո՞ւ Դաշնակցութեանը վերագրել այն ամէնը, ինչ հրատարակւում է դաշնակցական մամուլում: Մի՞թէ պարոն Վարդանեանը մինչեւ հիմա չգիտէ, որ բացի լենինեան դեմոկրատիայից, այսինքն դաժան բռնութիւնից, գոյութիւն ունի նաեւ իսկական դեմոկրատիա, իսկական ազատ մամուլ և իսկական խօսքի ազատութիւն: Օրինակ իմ յօդւածների մեծ մասի առջեւ խմբագրութեան կողմից գրւում է, որ շատ հարցերում խմբագրութիւնը համաձայն չէ իմ տեսակէտների հետ, բայց յարգում է ԻՄ ԱԶԱՏ ԱՐՏԱՅԱՅՏԻԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔԸ: Այս ազատ արտայայտւելու իրաւունք հասկացութիւնն է, որ չի հասկանում **«Լենինեան ուղիով»** ամսագրի խմբագրի տեղակալ Կ.Ս. Վարդանեանը, վերագրելով **«Ազդակ»**ում տպւած բոլոր մտքերը Դաշնակցութեան տեսաբաններին: Մէջբերումներից մէկը վերցրած է իմ մի

յօդւածից, որտեղ ես պաշտպանում եմ Սոլժենիցինի ազգային հարցի վերաբերեալ արտայայտած տեսակէտը. և այդ իմաստով Սոլժենիցինն էլ պէտք է դասւի Դաշնակցութեան տեսաբանների շարքին, մանաւանդ որ **«Ազդակ»** շաբաթօրեակում հրատարակւում են հատուածներ «Գուլագ Արշիպելագ»ից: Բայց կարեւորը դա չէ, կարեւորը այն է, թէ ինչպէս է մէջբերում հեղինակը իմ յօդւածից վերցրած հատուածը: Քննադատելով ինտերնացիոնալիստների, որոնք մտադրել էին քանդել հին աշխարհը և կառուցել իրենց նորը, ես գրում եմ. «Բաւական չեն տիեզերական և համաշխարհային վերակառոյցները: Աւելի լաւ չի՞ լինի արդեօք, որ ամէն մի ազգ զբաղւի իր ազգային հարցերով և միայն դրա միջոցով ծառայի մարդկութեանը, այն մարդկութեանը, որը, հրաժարւելով միջազգայնական խայտաբղէտութիւնից, կը կերտի ազգային ներդաշնակութիւն և անհասկանալի ուղղութեամբ շտապող արդիւնաբերական ամբոխից կը դառնայ հանգիստ հոգեկանութիւն»: Իսկ ահա թէ ինչպէս է այս նոյն հատուածը մէջբերել Վարդանեանը: **«Բաւական չե՞ն տիեզերական և համաշխարհային վերակառոյցները: Աւելի լաւ չի՞ լինի, արդեօք, որ ամէն մի ազգ զբաղւի իր ազգային հարցերով և … հրաժարւելով»** (մնացածը ճիշտ է): Ինչո՞ւ է Վարդանեանը դուրս գցել իմ տողերից **«և միայն դրա միջոցով ծառայի մարդկութեանը»** բառերը, ինչո՞ւ է նա «և»ից յետոյ դրել բազմակէտը և դրանով հրաժարւել բառը վերագրել ազգին, այլ ոչ մարդկութեանը, ինչպէս ես եմ գրել: Դա տրւում է նրա համար, ինչում Վարդանեանը մեղադրում է Դաշնակցութեանը, այսինքն «ունկնդիրներին խաբելու, մոլորութեան մէջ գցելու համար»: Բայց որքա՞ն ծիծաղելի է հնչում այս մեղադրանքը Դաշնակցութեան վերաբերեալ: Երեւի պարոն Վարդանեանը մոռացել է, որ Դաշնակցութեան ունկնդիրները հիմնականում ապրում են ազատ պայմաններում, որտեղ խաբելը և մոլորեցնելը անհնարին է: Ամէն մի սիփւռքահայ հնարաւորութիւն ունի կարդալու և հեռուստացոյցով լսելու բոլոր կողմերի տեսութիւնները: Նա կարող է կարդալ **«Մոնդ»**ը, **«Թայմզ»**ը, **«Պրաւդա»**ն և **«Լենինեան ուղիով»** ամսագիրը: Ինչպէ՞ս կարող է **«Ազդակ»** շաբաթօրեակը շփոթութեան մէջ գցել և մոլորեցնել իր ունկնդիրներին: Մոլորեցնել կարող է միայն խորհրդային մամուլը, որովհետեւ նա միակ է և որովհետեւ այնտեղ տպագրւում է միայն այն, ինչը պահանջում է Կենտկոմը: Ես լիազօրւած չեմ խօսելու Դաշնակցութեան անունից, ես դաշնակցական էլ չեմ, բայց գիտեմ, որ Դաշնակցութիւնը իր քաղաքական ազնւութեամբ մի քանի գլուխ բարձր է Խորհրդային Միութեան կոմունիստներից: Չնայած նրան, որ պարտիայի քարտուղարները իրենց ճառերում և մամուլը իր հրատարակութիւններում «շան լափն» է թափում նրանց գլխին, չնայած նրան, որ անարդարացիօրէն ջնջում են նրանց հետ կապւած մեր ժողովրդի պատմութեան լաւագոյն էջերը, չնայած նրան, որ բոլորովին միայնակ են թո-

ղել նրանց թուրքի դէմ մղտող պայքարում, չնայած շատ ուրիշ վիրաւորանքնե-րի, որ հասցնում են նրանց, նրանք **ԱՅՍՕՐ ԷԼ ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ԽԼԵԼ ՅԵՂԱՍՊԱՆ ԹՈՒՐՔԻՑ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԵՐԸ ԵՒ ՏԱԼ ԻՐԵՆՑ ԵՐԵՄԻՆ ԹՔՈՂ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆԸ: ՆՐԱՆՔ ԱՅՍՕՐ ԷԼ ՅԱՆՈՒՆ ԻՐԵՆՑ ԱԶԳԱՅԻՆ ԻԴԷԱԼՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՄԵՌՆԵԼՈՒ ԵՒ ՄԵՌՆՈՒՄ ԵՆ ՀԱՅ ԴԱՏԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱՅ:** Եւ հէնց այստեղից էլ պարզւում է, թէ որն է ազգայնականութեան կենսահաս-տատ ուժը և որը պրոլետարական ինտերնացիոնալիզմի տկարութիւնը:

1976

ԻՏԱԼԻՈՅ ՀԱՄԱՅՆԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԻԴՋԷՆ

Վ. Վ.

Իտալիոյ մէջ վերջերս քննարկուող ամենասուր խնդիրը տուրքեր վճարելն է: Եկամուտներու թագուցումը և տուրքերը վճարելէ խուսափիլը Իտալիոյ մէջ ընկերային հիւանդութիւն դարձած է: Տարին անգամ մը բոլոր իտալացիները տուրքերու վարչութեան կը յանձնեն իրենց եկամուտներուն և եկամուտներու համաձայն վճարուած տուրքերուն հաշուետուութիւնը: Տուրքերը կարելի է վճարել որեւէ դրամատան և հաշիւը ուղարկել տուրքերու վարչութեան:

Պետական պաշտօնեաներու հարցը շատ դիւրին կը լուծուի: Անոնց աշխատավարձէն, ինչպէս աշխարհի բոլոր երկիրներուն մէջ, կը գանձուի անհրաժեշտ տուրքը և անոնք տուրքերու վարչութեան կը յանձնեն իրենց աշխատավարձի հաշուետուութիւնը: Իսկ ինչ կը վերաբերի պետութենէն անկախ գործող գործատէրերուն,- և անոնք մեծամասնութիւն կը կազմեն,- պետութիւնը ամբողջովին կը յենուի անոնց խղճին: Սակայն այս վստահութիւնը յաճախ չարաշահութեան կ'ենթարկուի:

Քանի մը շաբաթ առաջ իտալական թերթերը հրատարակեցին տուրքերէն խուսափող և տուրքերու հարցին մէջ խաբեբայութիւն ընող մարդոց երկար ցուցակները: Ունեւոր և հռչակաւոր բազմաթիւ գործատէրեր խայտառակուեցան հասարակութեան առջեւ: Անոնց մէջ էր, օրինակ, Միլանի «Լա Սկալա» բեմապարի թատրոնի հռչակաւոր երգահան-խմբավար Կլաուտիօ Ապատտոն, որ վերջին երեք տարիներուն, ըստ տուրքերու վարչութեան տուեալներուն, ունեցեր է աւելի քան 900 միլիոն լիր եկամուտ, այսինքն մօտաւորապէս մէկ միլիոն տոլար: Սակայն Կլաուտիօ Ապատտոն յայտարարեր է միայն մէկ միլիոն լիր և վճարել է միայն այդ գումարին համապատասխան տուրքը:

Բայց զգայացունց լուրը այն էր, որ Իտալիոյ Համայնավար կուսակցութիւնը տուրքերու օրէնքը խախտողներուն մէջ ամէնէն մեծ տեղը կը գրաւէ: Ան մշտապէս կը թագցնէր իր եկամուտները և մշտապէս պակաս տուրք կը վճարէր: Այս հարցը քննարկուեցաւ իտալական Ծերակոյտին կողմէ, այս մասին խօսուեցաւ նաեւ Քրիստոնեայ-Դեմոկրատ կուսակցութեան համագումարին մէջ:

Պարզուեցաւ, որ Իտալիոյ Համայնավար կուսակցութիւնը յայտարարեր է 50 միլիառ լիր եկամուտի մասին, մինչ իրականութեան մէջ անոր տարեկան եկամուտը կը կազմէ 150 միլիառ լիր: Համայնավարները ուրկէ՞ կը ստանան այս գումարները: Հաստատուեցաւ, որ նախ երբ Իտալիա որեւէ առեւտրական

գործարք կը կնքէ Խ. Միութեան կամ որեւէ այլ համայնավար երկրի հետ, Իտալիոյ Համայնավար կուսակցութիւնը որոշ տոկոս կը ստանայ իբրեւ «շահաբաժին»։ Արեւմուտքի և Արեւելքի տնտեսական համագործակցութեան մէջ կը մտնեն Խ. Միութեան ղեկավարները՝ իտալացի համայնավարներու ցուցմունքներով։ Այսինքն Խ. Միութիւն առեւտուր կ'ընէ միայն ա՛յն ընկերութիւններուն հետ, որոնց մասին կը բարեխօսէ Համայնավար կուսակցութիւնը։ Կը նշանակէ, որ Իտալիոյ Համայնավար կուսակցութիւնը միջնորդի դեր կը կատարէ և բոլոր այն ահագին գումարներէն, որոնք կը գործածուին առեւտրական փոխանակութեանց համար, ինք որոշ տոկոս կը ստանայ։

Ասկէ զատ, կան շարք մը միջազգային ընկերութիւններ, որոնք կը գործածեն իտալական և որեւէ համայնավար երկրի դրամանիշներով (խառն) դրամագլուխներ։ Այս ընկերութիւններուն եկամուտին մէկ մասն ալ կ'անցնի Իտալիոյ Համայնավար կուսակցութեան։ Եւ, վերջապէս, Իտալիոյ մէջ կան բազմաթիւ արդիւնաբերական և գիւղատնտեսական ձեռնարկութիւններ, որոնք ուղղակիօրէն կը պատկանին նոյն Համայնավար կուսակցութեան, ինչպէս որ է պարագան նաեւ Ֆրանսայի մէջ։ Անշուշտ, ոչ մէկ տեղ նշուած է, որ այդ ձեռնարկութիւններուն տէրը Համայնավար կուսակցութեան մարդիկն են, սակայն ամէն մարդ գիտէ, որ այդ այդպէս է, որովհետեւ թէեւ գործատէրերը կը փոխուին, բայց ձեռնարկութիւնները համայնավարական սեփականութիւն կը մնան։

Քրիստոնեայ-Դեմոկրատ կուսակցութեան փոխ քարտուղար Տոնաթ Կաթէն մեղադրեց իտալացի համայնավարները նաեւ ուրիշ յանցանքով մը։ Ան նշեց, որ Իտալիոյ այն շրջաններուն մէջ, ուր տեղական իշխանութիւնը կը գտնուի համայնավարներուն ձեռքը, տեղական հանրային գումարները կը ծախսուին Համայնավար կուսակցական կարիքները բաւարարելու համար։ Ահագին գումարներ կը ծախսուին համայնավար քարոզչութեան համար։

Իտալիոյ կենտրոնական մասը, Ֆլորանսը, Պոլոնիան, Մոտենան Ռաւեննան և շարք մը այլ շրջաններ կը գտնուին համայնավարներու իշխանութեան տակ։ Եւ այս շրջաններուն մէջ կը կազմակերպուին համայնավարական բնոյթ կրող ցուցահանդէսներ, կը հրատարակուին համայնավարական գիրքեր, գործօն կերպով կ'աշխատին «Իտալիա-Խորհրդային Միութիւն» ընկերութիւնները, կը կազմակերպուին խորհրդային խումբերու համերգներ, կը կարդացուին դասախօսութիւններ, կը կատարուին համագումարներ և գիտաժողովներ, և այս բոլորը հանրային և ո՛չ թէ կուսակցութեան դրամներով։ Այս նոյն շրջաններուն մէջ կը ծաղկի այսպէս կոչուած «պաշտօնաբաժանման երեւոյթը», այսինքն համայնավարները իրենց մարդոց կը յանձնեն լաւ պաշտօնները, շահաբեր գործեր և ամէն ձեւով կ'օգտուին իրենց ղեկավար դիրքէն։ Մեծ աղմուկ հանեց Փարմա քաղաքին մէջ տեղի ունեցած դէպք մը, որուն դատա-

վարութիւնը դեռ աւարտած չէ: Դատարան քաշուած են համայնավարներ և ընկերվարականներ, որոնք, օգտագործելով իրենց ղեկավար դիրքը, շինարարական ապօրէն պատուէրներ կուտային իրենց մօտիկ շինարարական ընկերութիւններուն:

Այս բոլորը կրնան զարմանք պատճառել, որովհետեւ ընդհանրապէս կը տիրէ այն կարծիքը, մանաւանդ Խ. Միութեան մէջ, թէ արեւմտեան Համայնավար կուսակցութիւնները ընչազուրկ դասակարգէն բաղկացած կուսակցութիւններ են և կը պայքարին դրամատիրական շահագործական հասարակարգի դէմ: Սակայն ան, որ Իտալիա եղած է, տեսած է անպայման շքեղ մենատուններ ունեցող համայնավարներ, որոնք իրենց ամառնային արձակուրդը կ'անցընեն սեփական նաւերուն վրայ: Իսկ ասոնք ոչ թէ այն հարուստներն են, որ որոշած են համայնավար դառնալ, այլ այն «աղքատ»ներն են, որոնք Համայնավար կուսակցութեան մէջ և անոր օգնութեամբ հարստացած են՝ բանուորութեան շահերու պաշտպանութեան ի խնդիր պայքարի ընթացքին:

Քրիստոնեայ-Դեմոկրատ կուսակցութեան համագումարին, որ տեղի ունեցաւ Բրեշ քաղաքին մէջ, փոխ-քարտուղար Կաթէնը առաջարկ մը ըրաւ, որ ներկաներուն հաւանութեան արժանացաւ: Ըստ այդ առաջարկին, քրիստոնեայ-դեմոկրատները մտադրած են պահանջելու Իտալիոյ Խորհրդարանէն, որ հակակշռի տակ առնուին Իտալիոյ բոլոր քաղաքական կուսակցութեանց դրամական աղբիւրները և նիւթական գործունէութիւնը, ո՛չ միայն վերջին տարիներու աղբիւրները, այլեւ 1948 թւականէն սկսեալ, երբ իտալական Համայնավար կուսակցութեան գործունէութեան համար տրամադրուած գումարները դիւանագիտական պայուսակներով Խ. Միութենէն կը հասնէին Հռոմի խորհրդային դեսպանատունը:

Սակայն նման հետազօտութիւն մը որեւէ օգուտ չունի, որովհետեւ կուսակցութիւնը իրաւաբանօրէն ի վիճակի է արդարացնելու իր գործունէութիւնը համապատասխան անձերու միջոցով: Նման հետազօտութիւն մը մեծ նշանակութիւն կրնայ ունենալ միայն հանրային կարծիք ստեղծելու տեսակէտէն, Համայնավար կուսակցութեան դէմ:

Այս ձեւով քրիստոնեայ-դեմոկրատները փոխվրէժի կը դիմեն համայնավարներուն դէմ, որոնք երկար ատեն շահագործեցին քրիստոնեայ-դեմոկրատ վարիչներուն դէմ իտալական մամուլի այն ամբաստանութիւնները, ըստ որոնց ամերիկեան ճարտարարուեստական ընկերութիւններէ մեծագումար կաշառքներ կը ստանային, չարաշահելով նախարարական կամ կուսակցական իրենց բարձր պաշտօնները:

1980

ԻՍՊԱՆԻՈՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ՝ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ

Վահրամ Վահրամեան

Մինչեւ այսօր Իսպանիոյ մէջ Արեւմտեան Եւրոպայի համար անսովոր երեւոյթ մը նկատելի էր։ Խորհրդարանական ընտրութիւններուն ատեն բանտրները իրեց ձայները ընկերվարականներուն, իսկ արտադրական խորհուրդներու ընտրութեանց՝ համայնավարներու կուտային։ Իսպանիան աշխարհի միակ պետութիւնն էր, ուր Ընկերվարական կուսակցութիւնը ուժեղ էր, իսկ ընկերվարական արհեստակցականները՝ թոյլ։ Համայնավարներուն համար կացութիւնը հակառակն էր.- Համայնավարները ուժեղ են արհեստակցական միութիւններու մէջ և տկար են իբրեւ կուսակցութիւն։ Խորհրդարանական ընդդիմադրութեան մէջ առաջնակարգ դերը կը պատկանի ընկերվարականներու ղեկավար Ֆելիպէ Կոնզալէսին, իսկ համայնավարներու ղեկավար Սանտիակօ Գարիլիոն ստիպւած է յօժարելու երկրորդական դերի մը։ Հակառակ պատկերը կը տիրէ արհեստակցականներուն մէջ։

Եւ ահա վերջերս տեղի ունեցաւ շշմեցուցիչ բան մը։ Իսպանիայի երկու մեծագոյն ձեռնարկութիւններուն՝ Քաթալոնիայի և Քաստիկլիայի ինքնաշարժի գործարանի ներկայացուցիչները՝ համապատասխան արտադրական խորհուրդներու ընտրութիւններուն ատեն յաղթեցին համայնավարներուն։ Ընկերվարականները շահեցան 85 աթոռ, իսկ համայնավարները ընդամէնը՝ 45։ «Ռենօ»յի գործարաններուն մէջ ընկերվարականները շահեցան 47 աթոռ, իսկ համայնավարները՝ 30։

Ինչո՞վ կարելի է բացատրել այս երեւոյթը։

Արհեստակցական միութիւններուն մէջ համայնավարներու ուժեղ դիրքը կը բացատրուի անով, որ Ֆրանկոյի ատեն Իսպանիոյ մէջ թոյլատրւած էին միայն իշխանութեան հաւատարիմ ընկերութիւնները, Խորհրդային Միութեան արհեստակցականներու նման բան մը։ Ընկերվարականները բացայայտօրէն նման արհեստակցականներու մասնակից չէին կրնար ըլլալ, որովհետեւ հրաժարելով ընդյատակեայ աշխատանքէն, արտասահման տեղափոխած էին իրենց հիմնական գործունէութիւնը։ Իսկ համայնավարները երկրին մէջ ընդյատակեայ աշխատանքի անցած էին և անոր ներկայացուցիչները համապատասխան դիմակի տակ Իսպանիոյ արհեստակցականներուն մէջ կը թափանցէին։

Եւ երբ Ֆրանկոյի մահէն յետոյ համայնավարները ընդյատակէն անմիջապէս դուրս եկան և արհեստակցականները իրենց ձեռքը առին, այս անգամ արդէն պաշտօնական , այսինքն օրինական կարգով: Իսկ ընկերվարականները արհեստակցականներու հարցին մէջ կը սկսէին զերոյէն և իբրեւ օրէնք կը պարտէին համայնավարներէն:

Սակայն փոխյարաբերութիւնը կամաց-կամաց կը փոխուէր: Արդէն անցեալ տարւան աւարտին Իսպանիոյ ընկերվարականները ազատեցան գաղափարական բեռէն և սկսան վարել պետական քաղաքականութիւն: Անոնք հրաժարեցան որոշ գործադուլներէ և առեւտրական պայմանագիր կնքեցին Խորհրդային Միութեան հետ, որ շատ շահեկան էր Իսպանիոյ բանւորներուն համար:

Եւ այստեղ համայնավարները մեծ սխալ մը գործեցին: Փոխանակ պաշտպան կանգնելու ընկերվարականներու այս նախաձեռնութեան, անոնք յայտարարեցին, որ ընկերվարականներու նախաձեռնութիւնը «բանւոր դասակարգին դաւաճանութիւն է»:

Հակառակ ընկերվարականներու դիմադրութեան, համայնավարներու թելադրանքով՝ արհեստակցականները շարունակեցին իրենց պայքարը գործատէրերուն դէմ, շարունակեցին գործադուլները, որոնք չէին համապատասխաներ երկրին մէջ ստեղծուած տնտեսական կացութեան: Աշխատաւորները հասկացան համայնավարներու սխալը և անոնց ետեւէն չգացին: Գործադուլները եղան շատ աննշան և համայնավարները փաստօրէն իրենք իսկ պարտութեան մատնեցին գործատէրերու դէմ իրենց պայքարը:

Ուստի համայնավարները կորսնցուցին իրենց ազդեցութիւնը երկու մեծ գործարաններու արհեստակցականներուն մէջ և այս ընթացքը կրնայ շարունակուիլ, եթէ, ինչպէս կ'ըսեն, խելքի չգան: Բայց անոնք կարծէք խելքի կու գան և աշխատանքային յանձնաժողովի ղեկավար Մարսելինօ Կամաչոն նախազգուշացուց, թէ համայնավարները պէտք չէ զանգւածներէն խզուին: Ասկէ զատ, յայտարարեցին, որ կը հրաժարին գործադուլներէն այն գործարաններուն մէջ, ուր տնտեսական դժւարութիւններ գոյութիւն ունին: Ոմանք կը նշեն, որ այժմ Իսպանիոյ մէջ կը ստեղծուին պայմաններ՝ ընկերվարականներու և համայնավարներու համագործակցութեան համար:

1980

ՄԱՐՔՍԻԶՄԸ ԱՓՐԻԿԵԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Վահան Վահանեան

Ափրիկեան երկիրները, յաջորդաբար թօթափելով գաղութատիրական իշխանութիւնները, իրենց յոյսը կապած էին զարգացման ընկերվարական եղանակին: Նոր այս երկիրներու նոր առաջնորդները իրենց ընկերվարական գաղափարները ստացած էին եւրոպական և ամերիկեան համալսարաններու մէջ, իրենց ուսանողութեան շրջանին: Ներկայիս, նման փորձերու արդիւնքէն դատելով, ընկերվարութիւնը շատ ալ հպարտանալու ենթահող չունի, մանաւանդ այն ափրիկեան երկիրներուն մէջ, որոնք սահմանակից են ազատ շուկայ ունեցող երկիրներու:

Նման կացութիւններ կը վարկաբեկեն ընկերվարութիւնը և մենք պէտք է կարենանք ապացուցանել, որ այդ երկիրներու վարչակարգերը ընկերվարական վարչակարգեր չէին: Հակառակ պարագային, պէտք է համաձայնիլ այն տեսակէտին հետ, որ ընկերվարութիւնը հաւասարապէս բոլոր երկիրներուն համար նոյնքան յարմար հասարակարգ մը չէ:

Մոզամպիքի նախագահ Մաշէլ վերջերս ուշադրութիւն գրաւեց անով, որ փաստօրէն հրաժարեցաւ ընկերվարութենէն և շեղեցաւ իր նախագծած քաղաքական և տնտեսական ուղիէն: Լոնտոնեան «**Իքոնոմիստ**» շաբաթաթերթը, անդրադառնալով Զամպիոյ, իբրեւ խորագիր ընտրած էր հետեւեալը,- «Հրացաններով ոչ ոք կարելի է կերակրել»: «Զամպիոյ բնակիչները,- կ'ըսէ Իքոնոմիստ,- մուրացիկի նման ձեռքերը պարզած սնունդի պատառներ կը խնդրեն»: Ներկայիս, երբ Զամպիոյ դրացի Զիմպապուէն ստացած է իր անկախութիւնը և երկու երկիրներուն միջեւ պատերազմական դրութիւնը վերջ գտած է, Զամպիոյ ժողովուրդը հարց կու տայ թէ ինչո՞ւ Զամպիան ինքզինք չի կրնար կերակրել: Ինչո՞ւ կաշառակերութիւնը վերջ չի գտներ երկրին մէջ:

Նախապէս, Զամպիոյ ղեկավար Քուանտա, կախարդական արարողութիւններով և մոգութեամբ կը պատասխանէր նման հարցումներու: Ներկայիս, ան համաձայնած է խօսիլ աւելի լուրջ մակարդակի վրայ: Ան խոստովանեցաւ, որ նոր բայց ժամանակաւոր տնտեսական քաղաքականութիւն մը մշակելը անհրաժեշտ է: Ամբողջ գործօն կեանքը դրամատիրութիւնը քարկոծելով անցնելէ ետք, Քուանտա տակաւին չի կրնար հասկնալ, որ պետական դրամատիրութիւնը (այսինքն ան, որ իրենք ընկերվարութիւն կը կոչեն) աւելի մեծ չարիք է, քան մասնաւոր սեփականութիւնը:

Զամպիոյ արտադրական բաժնի 70 տոկոսը կը գտնուի պետութեան հսկողութեան տակ, սակայն, անոնք այնքան ապարդիւն են, որ երկրին մէջ ամէնէն անհրաժեշտ ապրանքներն անգամ բացակայ են։ Իսկ երբ մերթ ընդ մերթ խանութներու մէջ կ'երեւին այդ ապրանքները, Զիմպապուէէն 3 անգամ աւելի սուղ կը ծախուին։

Քուանտա կը պնդէ, որ Զիմպապուէի աւելի մատչելի գիները սեւամորթ բնակչութեան աշխատավարձի շահագործման արդիւնքն են։ Սակայն, հասարակագիտական ուսումնասիրութիւններ ցոյց կու տան, որ երկու դրացի երկիրներու աշխատավարձի մակարդակները գրեթէ նոյնն են, ինչ որ իր կարգին կը նշանակէ, որ Զիմպապուէի գնողական կարողութիւնը Զամպիայէն երեք անգամ աւելի բարձր է։

Ֆրանսացի տնտեսագէտ Ռընէ Տիւմոն Քուանտայի խորհուրդ տուաւ, որ ջնջէ այն գիւղատնտեսական կեդրոնները, որոնք իբրեւ թէ պէտք է ամբողջ երկիրը կերակրէին և որոնք սակայն չեն կրնար իրենց սեփական կարիքներն իսկ հոգալ։

Քուանտա չի համարձակիր սակայն առնելու այս քայլը, որ սրբապղծութեան համազօր է «ընկերվարութեան» համար, ճիշդ ինչպէս խորհրդային իշխանութիւնները չեն համարձակիր ձեռք երկարել կոլտնտեսութիւններուն։

Բայց Ափրիկէի քաղաքական կեանքին մէջ յեղաշրջումները բաւական տարածուած են։ Յեղաշրջում կատարողները իրենք, ոչ ընկերվարութեան, ոչ ալ համայնավարութեան մասին կը մտածեն։ Այս վտանգը նկատելով, Քուանտա կոչով մը դիմեց բանակին, զայն զգուշացնելով այլախոհներու ազդեցութենէն։ Միւս կողմէ, Քուանտա Խ. Միութենէն գնեց շատ սուղ պատերազմական գործիքներ, որոնց կարգին նաեւ 16 «Միկ-21»եր, և այդ զէնքերով է որ կ'ուզէ իր յատուկ ընկերվարութիւնը հաստատել։

Սակայն Զամպիոյ ժողովուրդը կերակուրի և ոչ թէ զէնքի համար երկարած է իր ձեռքերը։ Եւ ի՞նչ կ'արժէ զէնքով հաստատուած ընկերվարութիւն մը։

Այժմ խօսինք Անկոլայի մասին։

1975ի վերջաւորութեան Փորթուկալի նախկին գաղութ Անկոլան անկախութիւն ստացաւ։ Երկրին մէջ հաստատուեցաւ մարքսիստական խիստ վարչակարգ մը։ Տէյվիտ Լեմպ, «Հերըլտ Թրիպիւն»ի մէջ հրատարակուած մէկ յօդուածով, Անկոլայի ներկայ վիճակին մասին կ'ըսէ,- «Դժուար է հաւատալ, որ Անկոլայի մայրաքաղաք Լուանտան ժամանակին, այսինքն ընդամէնը քանի մը տարի առաջ, կը կոչուէր Ափրիկէի Ռիօ-Տը-Ժանէյրոն։ Փորթուկալի իշխանութեան շրջանին, Լուանտայի կեանքը աւելի հետաքրքրական էր և առատ քան Լիզպոնի։ Խանութները պարզապէս կը պայթէին ապրանքներու առատութենէն և ովկիանոսի ափին շքեղ պանդոկներ կառուցուած էին» և այլն…։ «Մինչեւ

1972 թւականը, իր սեփական ուժերուն վրայ յենելով, իր մթերքներու պահանջին 90 տոկոսը կ'ապահովէր և աշխարհի մէջ չորրորդ տեղը կը գրաւէր սուրճի արտադրութեամբ: Քարիւղի, մարգարիտներու և մետաղի արդիւնաբերութիւնը երկրին տարեկան 40 միլիոն տոլար շահ կ'ապահովէր: Անկոլայի մէջ կը գործէին 17 ձայնասփիւռի կայաններ, կը հրատարակուէին 15 օրաթերթեր և 16 շաբաթաթերթեր»:

Բայց Փորթուկալի իշխանութեան տապալումով Անկոլան դարձաւ «ընկերվարական» երկիր: 75 հազար իբրեւ թէ շահագործող փորթուկալցիներ լքեցին երկիրը: Այսօր Լուանտայի փողոցները կեղտոտ են և դատարկ: Տուները ապօրինի եղանակներով գրաւուած են պատահական մարդոց կողմէ: Գեղեցիկ շինութիւններու մէջ առնէտներ կը վխտան: Շէնքերու ապակիները կոտրած են: Ինքնաշարժները չեն բանիր: Մէկ խօսքով Անկոլան աւերակի կը նմանի: Քարիւղի արտադրութեան եկամուտը միայն 5 միլիոն տոլար է: Այս գումարին մէկ մեծ մասը սակայն կը յատկացուի զինուորական ծախսերու: Ներկայիս, համայնավարական երկիրներէ եկած 40 հազար զինուորական ծառայողներ կը գտնուին Անկոլայի մէջ:

Կարելի է շարունակել օրինակները. սակայն այսքանն ալ բաւարար է եզրակացնելու համար, որ Ափրիկէի մէջ «ընկերվարութիւն»ը ինքզինք չարդարացուց: Եւ կը կրկնեմ վերլուծումի կարօտ հարցը: Ափրիկէի չի՞ յարմարիր արդեօք ընկերվարութիւնը, թէ եղածը ընկերվարութիւն չէ:

1980

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՐԱՒԱՆՑ ՅԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Է. Յովհաննիսեան

Հայկական Հարցերու Հաստատութիւնը (Միւնիխ) վերջերս հրատարակեց Մարդկային Իրաւանց Տիեզերական Յայտարարագիրը, իր կողմէ՝ առանձին նախաբանով մը, «*Երկու խօսք*» խորագրով։

Ստորեւ կու տանք այդ նախաբանը, որ, կը կարծենք, շահեկան է ինքնին։

20րդ դարի վերջում, երբ մենք խօսում ենք մարդու իրաւունքների մասին, մենք դեռեւս գտնւում ենք «բնական իրաւունքների» սահմաններում, որոնք ձեւաւորւեցին 17րդ դարում և մեծ ազդեցութիւն թողեցին ամբողջ քաղաքակիրթ մարդկութեան վրայ։ Սակայն, դրանից առաջ, դեռեւս հին Յունաստանում, գոյութիւն ունէին խօսքի ազատութեան և օրէնքի առջեւ բոլորի հաւասար լինելու իրաւունքները։

Այսօր էլ բոլոր երկրների սահմանադրութիւններում, գոնէ ձեւականօրէն, օրինականացւած են մարդու «բնական իրաւունքները»։ Մարդու իրաւունքների պաշտպանութիւնը առաջին անգամ օրինականացւեց 1689 թւականին, անգլիական խորհրդարանի կողմից։ 1776 թւականին բնական իրաւունքները հռչակւեցին հիւսիս-ամերիկեան 13 նահանգների անկախութեան յայտարարագրում, իսկ 1789 թւականին այդ իրաւունքները պաշտպանութեան տակ առաւ Միացեալ Նահանգների սահմանադրութիւնը։ Ինչ մնում է ֆրանսիական մարդու և քաղաքացու իրաւունքների յայտարարագրին, ապա նա շատ նման է անգլիական և ամերիկեան համապատասխան յայտարարագրերին։

Սրանք բոլորը հաստատում են, որ մարդիկ ծնւում և միշտ մնում են ազատ ու հաւասար իրաւունքներով օժտւած։ Բոլոր քաղաքական վարչակարգերի նպատակը մարդու բնական իրաւունքների պաշտպանութիւնն է։

1809 թւականին Շւեդիան և 1815 թւականին Հոլանդիան, հետեւելով Անգլիայի օրինակին, բնական իրաւունքների պաշտպանութեան թեզը մտցրեցին միապետական վարչակարգի սահմանադրութեան մէջ։ Ուրիշ երկրներ, Ամերիկայի օրինակով, հաստատեցին հանրապետական կարգեր և բացայայտօրէն իրենց վրայ վերցրեցին մարդու բնական իրաւունքների պաշտպանութիւնը։

Երկրորդ Համաշխարհային պատերազմից յետոյ, երբ ստեղծւեց Միացեալ Ազգերի Կազմակերպութիւնը, նրա առաջնակարգ խնդիրներից մէկը դարձաւ, ինչպէս ասում էր Չըրչիլը, «պատւանդանի վրայ բարձրացնել մարդու իրա-

ւնքները»: Սակայն բնական իրաւունքների տեսութիւնը ունէր և ունի բազմաթիւ թշնամիներ: Այդ թշնամիների շարքին էին պատկանում անգլիական քաղաքական մտքի սիւները՝ Հումը, Բերկը, Բենտամը, Օստինը: Հեգելի հետ միասին մարդու բնական իրաւունքների հասկացութեան դէմ էին իդեալիստ փիլիսոփաները, որոնք, ճանաչելով բնական իրաւունքների գոյութիւնը, վերագրում էին այդ իրաւունքները ոչ թէ անձին, այլ հասարակութեանը: Այս տեսակէտը առանձնապէս մեծ պաշտպանութիւն գտաւ Գերմանիայում:

1848 թւականին գերման ազատականները ազգայնականների հետ միասին հռչակեցին մի յայտարարագիր, որտեղ նրանք արդէն շեղւում էին անհատական սկզբունքից: Եթէ անգլիական և ֆրանսիական յայտարարագրերը խօսում են մարդու իրաւունքների մասին, ապա գերմանական «մանիֆեստ»ը խօսում է «գերման ժողովրդի» իրաւունքների մասին: Անգլիական փիլիսոփայ Բրեդլին 1894 թւականին գրում էր.

«Անձի իրաւունքները մեր ժամանակներում լուրջ ուշադրութեան արժանի չեն: Հասարակութեան բարեկեցութիւնն է, որ արժանի նպատակ է, որ արժանի նպատակ է և վերջնական չափանիշ: Անհրաժեշտ է բացարձակացնել հասարակութեան բարոյական իշխանութիւնը ամէն մի անձի վրայ: Հասարակութեան ամէն մի անդամի լաւ օգտագործումը հասարակութեան շահերի համար՝ տւեալ հասարակութեան իրաւունքն է և պարտականութիւնը»:

Վերջին հաշւով, թէ՛ ազգայնականութիւնը և թէ ընկերվարութիւնը յանգում են այս նոյն տեսակէտին: Մարքսի համար, օրինակ, մարդու իրաւունքների սկզբունքը բուրժուական նախապաշարմունք էր:

Բայց, Մարքսի տեսութեան հակառակ, Խորհրդային Միութիւնը, իր սահմանադրութեան մէջ, նախ 1936 թւականին, յետոյ 1947 թւականին, ապա վերջին սահմանադրութեան մէջ, իր քաղաքացիների համար նախատեսում է որոշ իրաւունքներ ամերիկեան և ֆրանսիական սահմանադրութիւնների օրինակով, այդ թւում՝ նաեւ խօսքի, մամուլի, ժողովների, զանգւածային ցոյցերի ազատութեան իրաւունքը:

Մէկ կողմ թողնելով այն հարցը, թէ ի՞նչ արժեն այդ ազատութիւնները, նշենք, որ նոյնիսկ ստալինեան մռայլ տարիներին խորհրդային վարիչները իրենց ելոյթներում ու յօդւածներում պաշտպանութեան տակ էին առնում մարդու իրաւունքները: Սա նշանակում է, որ, չնայած բազմաթիւ թշնամիների, մարդու բնական իրաւունքների սկզբունքը համընդհանուր ճանաչում է գտել:

Բայց ի՞նչ արժէք ունի մարդու բնական իրաւունքների ճանաչումը, եթէ նրանք իրականում պաշտպանութեան տակ չեն առնւում, նոյնիսկ այն երկրներում, որտեղ այդ իրաւունքների պաշտպանութիւնը օրինականացւած է սահմանադրութեամբ:

Այստեղ անհրաժեշտ է նշել հասարակագէտների այն կարծիքը, որ մարդու իրաւունքները կարող են լինել իրաւաբանական և բարոյական։

Իրաւաբանական իրաւունքներով օժտուած է ամէն մի մարդ, որը ապրում է որոշակի սահմանադրական կամ այլ տեսակի օրէնսդրական հասարակարգում, որտեղ օրէնքի պահպանումը ապահովուած է։ Թէ որքանով են տւեալ հասարակարգի օրէնքները արդար և որքանով են նրանք համապատասխանում մարդու բնական իրաւունքներին, այստեղ կարեւոր չէ։

Իրաւաբանական իրաւունքի ասպարէզում գլխաւոր հարցը օրինապահութեան աստիճանն է, այսինքն այն, թէ որքանով է ապահովուած օրէնքի կատարումը։

Բարոյական իրաւունքների ոլորտը շատ աւելի բարդ է։ Նա բխում է մարդու էութիւնից և երբեմն դժւար է լինում որոշել, թէ ո՞րն է մարդու դերը բնութեան մէջ, ուստի դժւար է որոշել, թէ մարդու ո՛ր ձգտումը և ո՛ր պահանջը պիտի բնական համարուի և որը այլասերւածութեան արդիւնք։

Յամենայնդէպս, մէկ բան պարզ է.- Եթէ իրաւաբանական իրաւունքի կարեւորագոյն կողմը նրա իրագործման ապահովութիւնն է, ապա բարոյական իրաւունքի էութիւնը արդարութիւնն է։ Այսինքն մարդիկ կանգնած են դժւարին ընտրութեան առջեւ, ո՞ր և որքանո՞վ մարդու բնական պահանջները արդար են։

Այստեղ կայ նաեւ որոշ տրամաբանական դժւարութիւն։ Եթէ մենք մեր բնական ձգտումները պիտի վեր ածենք բնական իրաւունքի՝ արդարութեան միջոցով, հապա ի՞նչպէս սահմանենք արդարութիւնը։ Արդարադատութեան ո՞ր ատեանում պիտի մենք կշռադատենք մեր վարքագիծը։

Երբ այս հարցի մասին խօսում են արժէքաբանները, նրանք փորձում են արդարութիւնը սահմանել բնական ձգտումների և բնական իրաւունքների միջոցով, համարելով որ այն, ինչ «չայլասերւած մարդու» համար բնական է՝ արդար է։ Իսկ մենք ուզում ենք մարդու բնական իրաւունքները որոշել արդարութեան միջոցով։

Սա այն մոգական շրջանակն է, որտեղ ամէն պտոյտի ժամանակ պատճառը հետեւանք է դառնում, իսկ հետեւանքը՝ պատճառ։ Եւ տրամաբանական այս լաբիւրինթոսից դուրս գալը հեշտ բան չէ, բայց մեզ հանգստացնում է այն, որ մեր դժւարութիւնը ոչ առաջինն է և ոչ էլ վերջինը։ Նման դժւարութիւններ ցցւում են մեր առջեւ բոլոր այն սահմանային գծերի վրայ, որտեղ բախւում են տարբեր էութիւններ՝ անձը և ազգը, նիւթը և ոգին, իրաւունքը և պարտականութիւնը, զգացմունքը և տրամաբանութիւնը և այլն։

Այս դժւարութիւնից մարդիկ սովորել են դուրս գալ «տրամաբանական ներըմբռնումով», ուստի մարդու բնական ազատութիւնները տրամաբանօրէն

սահմանափակւում են այնտեղ, որտեղ նրանք կարող են խանգարել մէկ ուրիշի ազատութեանը: Այս տրամաբանական ներըմբռնումը մեզ թոյլ է տալիս սահմանել մի շարք բնական իրաւունքներ, որոնցից կարեւորագոյնը ապրելու իրաւունքն է:

Մենք ուզում ենք ապրել և մեր այս բնական ձգտումը ներըմբռնողական է, որովհետեւ ոչ ոք չգիտէ, թէ ինչու են մարդիկ այդքան ապրել ուզում: Բնազդաբար այս ձգտումը ունի ամբողջ կենդանական աշխարհը: Սակայն տրամաբանութիւնը մեզ թելադրում է, որ հէնց նրա համար, որ ապրելու իրաւունքով օժտրւած են բոլորը, ամէն մարդ պէտք է ապրի այնպէս, որ չվտանգի ուրիշի կեանքը:

Մենք ձգտում ենք ազատ լինել, սա մեր ներըմբռնումն է: Բայց ոչ այնքան ազատ, որ տուժի ուրիշի ազատութիւնը: Մենք ուզում ենք, որ մեր սեփականութիւնը անձեռնմխելի լինի, բայց հասկանում ենք, որ չի կարելի խլել ուրիշի սեփականութիւնը: Մենք չենք ուզում շահագործել, բայց չպիտի նաեւ շահագործենք: 1948 թւականի դեկտեմբերի 10ին, այս ամէնը, որպէս բարոյական օրէնք, ձեւակերպւեց ՄԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԻ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՄԷՋ:

Մէկ անգամ եւս պէտք է շեշտենք, որ այս փաստաթուղթը ունի զուտ բարոյական նշանակութիւն, այսինքն սա մարդկութեան կողմից ստեղծւած այն բարոյական օրէնքն է, որին պէտք է ձգտեն բոլոր երկրների սահմանադրութիւնները: Եւ չնայած նրան, որ այս փաստաթուղթը ոչ մի իրաւական ուժ չունի, նա ունի պատմական մեծ նշանակութիւն, որովհետեւ նոր դարաշրջան բացեց մարդկային փոխյարաբերութիւնների մէջ:

Աւելին, մեր աշխարհը քաղաքական խնդիրները կամաց-կամաց սկսում է խլել դիւանագէտների ձեռքից և յանձնել հասարակական կազմակերպութիւններին: Այսօր տարբեր անձերի և ազգերի իրաւունքների պաշտպանութեան խնդիրները իրենց վրայ են վերցրել հասարակական կոմիտէները, որոնց գործունէութիւնը ցնցում է նոյնիսկ այնպիսի երկրներ, որոնք մօտ անցեալում բոլորովին հաշւի չէին նստում ոչ սեփական երկրի և ոչ էլ միջազգային հասարակական կարծիքի հետ: Եւ եթէ նահանջում են բռնութիւնները հասարակական կարծիքի դիմաց, ապա այդ նահանջը բարոյականութեան ուժով է պայմանաւորւած:

Այս իմաստով բոլոր բարոյականութիւն արձանագրող փաստաթղթերը, անկախ նրանից կ'ընդունե՞նք մենք դրանք թէ ոչ, ունեն ոչ միայն պատմական նշանակութիւն, այլ նաեւ անհրաժեշտ են տարբեր հասարակական շարժումների համար:

Հայ ժողովրդի համար բարոյական իրաւունքների պաշտպանութեան սկզբունքները ոչ միայն խորթ չեն, այլեւ նա սկսել է պայքարել այդ իրաւունքների համար շատ աւելի առաջ, քան եւրոպացիները: Եւ դա հասկանալի է: Դարեր շարունակ նա ապրում էր Օսմանեան կայսրութեան մէջ, որտեղ օրէնքը սուլթանի կամքն էր, ու դարեր շարունակ նա պայքարել է իր բնական իրաւունքների համար:

Իսկ 19րդ դարի վերջում, երբ հայ ժողովուրդը դուրս եկաւ ազգային ազատագրական պայքարի, Հ.Յ.Դաշնակցութիւնը որդեգրեց ազատութիւն, եղբայրութիւն և հաւասարութիւն սկզբունքները, որոնք Թուրքիայի պայմաններում միայն բարոյական նշանակութիւն կարող էին ունենալ: Ուշագրաւ է Հ.Յ.Դաշնակցութեան Պոլսոյ Կեդրոնական Կոմիտէի յայտարարագիրը, որ 1897 թի Օգոստոս ամսին յանձնուեց եւրոպական 6 պետութիւնների դեսպաններին: Այդ յայտարարագիրը աւարտւում էր այսպէս:

«Աւելորդ կը համարենք մէկիկ մէկիկ հոս յիշել նորէն մեր պահանջները, քանի որ անոնք ձեր ուշադրութեան քանիցս ներկայացուած են:

«Մենք կը պահանջենք, որ չանարգուի հայու պատիւը, չպղծուին անոր սրբութիւնները, չյափշտակուի անոր դառն քրտինքի արդար արդիւնքը և տիրող բռնութեան ու անսանձ կամայականութեան փոխարէն օրէնքը միայն թագաւորէ:

«Մենք կը պահանջենք ինչ որ անհրաժեշտ է լոկ իբրեւ մարդ ապրելու համար և երբեք չպիտի դադարինք գործելէ, մինչեւ չիրականանան մեր այս արդար, իրաւացի և մեր նահատակ եղբայրներու արիւնով նուիրագործած պահանջները»:

Այս յայտարարագիրը Հ.Յ.Դաշնակցութեան հարիւրաւոր փաստաթղթերից մէկն է, որտեղ պահանջւում է արդարութիւն, բայց ոչ թէ օրինական (օրէնք չկար), այլ բարոյական (լոկ իբրեւ մարդ ապրելու համար):

Այսօր էլ Թուրքիայում ապրող հայերը իրաւազրկւած են և նրանց իրաւունքների պաշտպանութիւնը կարող է միայն բարոյական բնոյթ կրել, մանաւանդ հաշւի առնելով այն հանգամանքը, որ Թուրքիան վաւերացրել է Մարդու Իրաւունքների Տիեզերական Յայտարարագիրը:

Մարդու Իրաւունքների Տիեզերական Յայտարարագրի ընդունմանը անմիջապէս յաջորդեց Միացեալ Ազգերի Ընդհանուր Ժողովի կոչը, որը ուղղւած էր ՄԱԿի բոլոր անդամ պետութիւններին և որում առաջարկւում էր բոլոր հնարաւոր միջոցները գործադրել սոյն փաստաթղթի ամբողջ բովանդակութիւնը անգլերէնից թարգմանելու ոչ միայն պաշտօնական լեզուների, այլեւ աշխարհի բոլոր մնացած լեզուներով, այն հրապարակելու, տարածելու ու պարզաբանելու նպատակով:

Այս փաստաթուղթը աւելի լայն ժողովրդականութիւն ստացաւ 1975 թւականից յետոյ, երբ Հելսինկիում վաւերացուեց աւելի քան 35 պետութիւնների կողմից, այդ թւում՝ նաեւ Խ. Միութեան, Թուրքիայի, Վատիկանի պապական աթոռի, Հունգարիայի, Մ. Նահանգների և մի շարք այլ երկրների կողմից:

Մարդու Իրաւունքների Տիեզերական Յայտարարագիրը սկսւեց թարգմանուել նորանոր լեզուներով:

Մոնթրէալի համալսարանի պրոֆեսոր, դոկտոր Դորա Սաքայեանը փորձեց գտնել Յայտարարագրի հայերէն թարգմանութիւնը, սակայն նրա ջանքերը այդ ուղղութեամբ անցան ապարդիւն: Այս հարցով նա դիմեց նաեւ Հայկական Հարցերի Հաստատութեանը, սակայն Հաստատութիւնն էլ չկարողացաւ օգնել նրան այդ հարցում: Պէտք է ենթադրել, որ փաստաթղթի պաշտօնական թարգմանութիւնը հայերէնով կատարւած չէ, թէեւ հնարաւոր է, որ Յայտարարագրի որոշ մասերի կամ նոյնիսկ ամբողջական թարգմանութիւնը կատարւած լինի որեւէ անհատի կողմից և լոյս տեսած լինի որեւէ հայկական թերթում:

Բայց հրապարակում տւեալ փաստաթղթի բացակայութիւնը նրա թարգմանութեանը ձեռնամուխ լինելու հրամայական պահանջը դրեց:

Հայկական Հարցերի Հաստատութիւնը որոշեց հրապարակել այդ փաստաթուղթը հայերէնով, ընդ որում լեզւական ընտրութիւնը ընկաւ արեւելահայերէնի վրայ, նախ որովհետեւ սա Հայաստանի պետական լեզուն է և յետոյ, ի տարբերութիւն սփիւռքահայերի, որոնք կարող են ծանօթանալ այս Յայտարարագրի հետ որեւէ լեզւով, Խորհրդային Հայաստանի ժողովուրդը այդ հնարաւորութիւնից զուրկ է:

Այսօր Խ. Միութիւնում ՄԱԿԻ Յայտարարագիրը, որը վաւերացւած է խորհրդային իշխանութեան կողմից, դասւում է արգելւած գրականութեան շարքին: Եւրոպայի անվտանգութեան ու գործակցութեան վերաբերեալ 1975 թւականի Հելսինկեան նշանաւոր խորհրդաժողովից յետոյ, Խ. Միութեան տարբեր վայրերում ստեղծւեցին Եզրափակիչ փաստաթղթի դրոյթների կատարմանը աջակցող խմբեր: 1977 թւականի ապրիլ ամսին նման խումբ ստեղծւեց նաեւ Հայաստանում: Այս խումբը իր անդրանիկ Յայտարարագրի մէջ նշում էր.

«Չնայած այն բանի, որ ԽՍՀՄը մասնակցել է ՄԱԿի կանոնադրութեանը, Մարդու Իրաւունքների Տիեզերական Յայտարարագիրը և մարդու իրաւունքների միջազգային պայմանագրերն ստեղծելուն և ընդունել դրանք, չեն դադարում այլախոհների ու հաւատացեալների հալածանքներն ու հետապնդումները»:

Մարդու Իրաւունքների Տիեզերական Յայտարարագրի թարգմանութիւնը կատարել է պրոֆ. դոկտոր Դորա Սաքայեանը, որը, թարգմանութեան որպէս

հիմք, օգտւել է անգլերէն բնագրից։ Թարգմանութեան որակին մեծապէս նպաստել է նաեւ փաստաթղթի ֆրանսերէն, գերմաներէն և՛ ռուսերէն պաշտօնական թարգմանութիւնների հետ համեմատութիւնը։

Պրոֆ. Սաքայեանի թարգմանութեան մէջ Հայկական Հարցերի Հաստատութիւնը մտցրել է երկու փոփոխութիւն։ Նախ Հաստատութիւնը հրաժարուեց հայաստանեան ուղղագրութիւնից, որով կատարւել էր թարգմանութիւնը և յետոյ Հաստատութիւնը յարմար գտաւ «դեկլարացիա» բառը թարգմանել որպէս յայտարարագիր, այլ ոչ որպէս յայտարարութիւն, շեշտելով որ սա ոչ թէ սովորական բանաւոր յայտարարութիւն է, այլ հանդիսաւոր, պաշտօնական յայտարարութիւն։

Կարծում ենք, որ այս փոփոխութիւնների համար ներողամիտ կը գտնուի հեղինակը, որին մենք յայտնում ենք խորին շնորհակալութիւն Հաստատութեան հետ համագործակցելու համար։

1980

ԵՒՐՈՊԱՑի՞ ԵՆ ԱՐԴԵՕՔ ԹՈՒՐՔԵՐԸ

Է. Յովհաննիսեան

Այս վերնագրով Հայկական Հարցերի Հաստատութիւնը պատրաստել է մի աշխատութիւն, որի հեղինակն է գերմանացի իրաւաբան դոկտ. Բ. Միւնիշը և որը մօտ ժամանակներս լոյս է տեսնելու գերմաներէն, ֆրանսերէն և անգլերէն: Հետագայում այդ աշխատութիւնը լոյս է տեսնելու հայերէնով, ռուսերէնով և թուրքերէնով: Մինչ այդ «Դրօշակ»ի ընթերցողների ուշադրութեան ենք ներկայացնում աշխատութեան հայերէն թարգմանութիւնը: Ահաւասիկ նախաբանը.

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«Եւրոպացի՞ են արդեօք թուրքերը», - այս հարցումով Դաւիթ Հոտհամը սկսում է **«Թուրքերը»** վերնագիրը կրող իր գիրքը: Այս գիրքը հրատարակուել է համեմատաբար վաղուց, 1972 թուականին և, անշուշտ, կարելի էր անցնել նրա կողքից, որովհետեւ նա գիտական վերլուծութիւն չէ, ուստի գիտական քննադատութեան սահմաններից դուրս է: Այս գիրքը լրագրողի ակնարկ է, որտեղ հեղինակը շատ է ուզում, որ թուրքերը եւրոպացի լինեն և գրաւեն իրենց արժանաւոր տեղը Եւրոպայում:

Մեր կարծիքով, հեղինակը այս խնդիրը չի կարողացել լուծել: Նրան միայն յաջողուել է ասել հետեւեալը. «Թուրքերը եւրոպացի չեն: Նրանք այնքան արեւելքցի են, որքան որ էին իրենց ամենից արիւնալից պատմութեան ընթացքում, սակայն նրանք մեզ՝ եւրոպացիներիս պէտք են»:

Բայց գիտական արժէքից զուրկ Դ. Հոտհամի այս գիրքը բաւականին հետաքրքրական է և, մենք կ'ասէինք, այժմէական՝ խնդրի դրւածքի տեսանկիւնից: Իսկապէս՝ եւրոպացի՞ են թուրքերը: Այս հարցը հետաքրքրական է, սակայն ոչ այն տեսանկիւնից, որ ուզում է հարցը լուծել Հոտհամը:

Նախ և առաջ պէտք է նշել, որ նրա հարցի դրւածքի մէջ արդէն իսկ պարունակւում է պատասխանը: Բանը նրանումն է, որ հեղինակը, գուցէ ոչ այնքան բացայայտօրէն, որ նրան կարելի լինէր մեղադրել դրանում, բայց, այնուամենայնիւ, այնքան պարզ, որ մարդ չսխալուի, եւրոպական մշակոյթը աւելի գնահատելի է գտնում, քան Արեւելքի մշակոյթը: Եւ եթէ նա ջանում է ապացուցել, թէ թուրքերը եւրոպացի են, ապա դա անում է միայն ու միայն նրա համար, որ

ուզում է բարձր գնահատական տալ թուրք ժողովուրդին, նա ուզում է «յետամնաց» թուրքին բարձրացնել «քաղաքակիրթ» եւրոպացու մակարդակին։

Նման մօտեցումը ինքն ըստինքեան գիտական չէ, որովհետեւ Արեւմուտքի և Արեւելքի մշակոյթների փոխյարաբերութեան հարցը ամենաբարդ հարցերից մէկն է դեռեւս լուծուած չէ։ Այսքան շուտափոյթ կարգով թուրքերին եւրոպացի դարձնելու գործում հեղինակը ցուցաբերում է առնւազն ոչ լուրջ մօտեցում, որովհետեւ այսօր վիճում են այն մասին, թէ եւրոպացի՞ են արդեօք ռուսները, այն նոյն ռուսները որոնք Պուշկին, Դոստոեւսկի, Տոլստոյ ու Սոլժենիցին են տուել։

Եթէ **«Թուրքերը»** գրքի հեղինակը շատ էր ուզում համոզել իր ընթերցողին, որ թուրքերը արժանի են Եւրոպական խորհրդարանին, Եւրոպական հասարակաց շուկային և եւրոպական մշակոյթին, ապա նա համաշխարհային պատմութեան ընթացքի հիման վրայ պէտք է գոնէ առանձնացնէր և բնութագրէր եւրոպական մշակոյթի էութիւնը և դրանից յետոյ միայն այս կամ այն ազգին վերագրէր այս կամ այն պատկանելութիւնը։

«Եւրոպացի՞ են արդեօք թուրքերը», հարցի դրւածքի մէջ կայ նաեւ մէկ ուրիշ հետաքրքրական կողմ. – Եթէ թուրքերը եւրոպացի են, ապա նրանք եւրոպացի պէտք է դարձած լինեն աւելի ուշ։ Հնարաւո՞ր է այդ։ Այս հարցի պատասխանն էլ կարելի է տալ միայն այն բանից յետոյ, երբ պարզւի, թէ ի՞նչ է նշանակում եւրոպացի։ Սա մեզ անհրաժեշտ է իմանալ, ոչ թէ արժէքաբանութեան տեսանկիւնից, այլ եւրոպական մշակոյթի էութեան տեսանկիւնից։ Եւ եթէ այս կամ այն ժողովուրդը մենք դասում ենք այս կամ այն մշակոյթ ունեցող ժողովուրդների շարքին, ապա ոչ թէ նսեմացնելու կամ բարձրացնելու համար նրա արժանիքները, այլ զուտ գիտական ճշմարտութեան համար։

Կարո՞ղ են արդեօք գաղափարները փոխել ժողովրդի մշակոյթը և նկարագիրը։

Եւրոպական մշակոյթը, ինչպէս բոլոր մնացած մշակոյթները, այն արժէքների և գաղափարների միասնութիւնն է, որով ղեկավարւում է ժողովուրդը իր ամէնօրեայ նիւթական և հոգեկան կեանքում։ Կարելի՞ է արդեօք մէկ ժողովրդի մէջ ծնւած գաղափարներն ու արժէքները տեղափոխել մէկ ուրիշ տեղ և ստիպել մէկ ուրիշ ժողովուրդ վարւել նոր ձեւի, ըստ նոր գաղափարների։

Այս հարցին մենք բոլորս տալիս ենք դրական պատասխան, երբ խօսքը վերաբերում է այսպէս կոչւած յետամնաց ազգերին ու մշակոյթներին։ Մենք մի տեսակ չենք համարձակւում պնդել, որ յետամնաց ազգերը երբեք չեն դառնալու առաջադէմ։ Նման բան պնդելը ընդունւած չէ և մենք բոլորս միաբերան համարում ենք, որ լաւ գաղափարները (ժողովրդավարութիւն, հաւասարութիւն, ազատութիւն, մարդասիրութիւն և այլն) «վատ» ժողովուրդը կարող են «լաւ»

դարձնել: Ուրիշ խօսքով, մենք կամ, աւելի ճիշտ, մեզանից շատերը համարում ենք, որ բաւական է փոխարինել, օրինակ, բռնապետութիւնը ժողովրդավարութեամբ, և երկրում անմիջապէս կը վերանան կաշառակերութիւնը, բռնութիւնը և մարդու իրաւունքների խախտումները:

Մենք էլ ընդունւած կարծիքի համաձայն չենք ժխտի, որ «լաւ» գաղափարները կարող են «լաւացնել» ժողովուրդը: Բայց ի՞նչպէս մօտենալ հակառակ խնդրին: Կարո՞ղ են «վատ» գաղափարները «փչացնել» ժողովուրդը: Եւ որքանով մի ամբողջ ժողովրդի կողմից կատարւած յանցանքները կարելի է բացատրել յանցաւոր գաղափարներով ու առաջնորդներով: Այս խնդրում մենք կարող ենք աւելի անկեղծ լինել, որովհետեւ կը գտնւեն շատ մարդիկ, որոնք կը պաշտպանեն այն գաղափարը, թէ ժողովուրդները ընդունակ են չընկնել վատ գաղափարների ազդեցութեան տակ:

Մեր խնդրի համար լաւ օրինակ կարող էր ծառայել Ռուսաստանը, որը Հոկտեմբերեան յեղափոխութեան հետեւանքով ցատկեց մէկ գաղափարից միւսը, մէկ իրաւական վարչակարգից միւսը: Հարւարդ համալսարանի հետազօտական կենտրոնի նախկին վարիչ, ռուսական պատմութեան պրոֆեսոր Ռիչարդ Փայպսը մի շարք աշխատութիւններում փայլուն կերպով վերլուծութեան է ենթարկում ռուսական ազգային նկարագրի ազդեցութեան հարցը բոլոր այն իրադարձութիւնների վրայ, որոնք տեղի ունեցան Ռուսաստանում Հոկտեմբերեան յեղափոխութիւնից յետոյ:

Մենք օգտակար համարեցինք մեր այս նախաբանում ամփոփ կերպով տալ նրա տեսակէտը այս հարցի վերաբերեալ, որովհետեւ նրա վերլուծութիւնը զգալի լոյս է սփռում Դաւիթ Հոտհամի առաջ քաշած խնդրի վրայ, մանաւանդ, որ 10րդ գլխում Հոտհամը շօշափում է Թուրքիայում կոմունիզմ կառուցելու հարցը, իսկ 12րդ գլխում Ռուսաստանի, Թուրքիայի և Արեւմուտքի փոխյարաբերութեան հարցը:

Ի տարբերութիւն նրանց, ովքեր խորհրդային վարքագծի մէջ տեսնում են միայն ու միայն մարքսական գաղափարների ազդեցութիւնը, պրոֆեսոր Փայպսը փորձում է դիմել Ռուսաստանի պատմական փորձին: Հակախորհրդային տրամադրութիւններ ունեցող ռուսական տարագրութիւնը հիմնականում ժխտում է անցեալ և ներկայ Ռուսաստանների միջեւ կապը: Եւ, այս տեսակէտից, հակախորհրդային տարագրութիւնը զարմանալիօրէն համամիտ է Խ. Միութեան պաշտօնական տեսակէտի հետ:

Սա շատ տարօրինակ է, որովհետեւ կարելի է վիճել, թէ որ մասով է նոր Ռուսաստանը ժառանգել իր երկրի քաղաքական անցեալը, բայց ժխտել, որ ինչ որ մի բան ժառանգել է, պարզապէս անմտութիւն է: Դժւար է պատկերացնել, որ մի ժողովուրդ, գրաւելով նոյն տարածութիւնը, մշակելով նոյն հողը,

խօսելով նոյն լեզուով ոչ մի բան ժառանգած չլինի անցեալից։ Կամ ի՞նչպէս կարող է նոյն ժողովուրդը ստեղծել երկու վարչակարգեր, որոնք ոչ մի ընդհանուր բան չունենան։

Բնութեան մէջ նոյնիսկ ամենից արհեստական կենսաբանական խաչաձեւումները չեն կարողանում ստեղծել բոլորովին նոր տեսակի կեանք և, անշուշտ, պատմութեան մէջ էլ չի կարող նման բան պատահել։ Պրոֆեսոր Փայպսը առասպելական է համարում այն գաղափարը, որ հարիւր միլիոնանոց մի հասարակարգ, որի յետեւում կայ 1000 տարւայ պատմութիւն, կարող է ամբողջովին փոխուել միայն նրա համար, որ ինչ-որ «չար գաղափարներ» ազդել են նրա վրայ։

Ճիշտ է, որ մարքսականութիւնը պարունակում է իր մէջ ամբողջատիրութեան մասնիկներ, սակայն ինչո՞ւ Արեւմտեան Եւրոպայում ծնունդ առած այս գաղափարը չստեղծեց ամբողջատիրական հասարակարգեր Արեւմուտքում։ Ինչո՞ւ **«Կոմունիստական մանիֆեստը»** չառաջացրեց կոմունիստական բռնութիւն Գերմանիայում, որի լեզուով գրւել էր **«Մանիֆեստը»**։ Ինչո՞ւ հէնց Ռուսաստանը, այլ ոչ թէ որեւէ ուրիշ երկիր ընկաւ Մարքսի տեսութեան ազդեցութեան տակ։ Չէ՞ որ Մարքսի տեսանկիւնից Ռուսաստանը ամենից անպատրաստ երկիրն էր համայնավարական յեղափոխութեան համար։

Այս հարցերին պրոֆեսոր Փայպսը պատասխանում է այսպէս.- Գաղափարները չեն ծնում խոշոր հասարակական և քաղաքական փոփոխութիւններ։ Լաւագոյն դէպքում գաղափարները ընկնում են այն հողի վրայ, որտեղ գաղափարը զարգացնելու համար գոյութիւն ունեն համապատասխան պայմաններ։ Այս տեսակէտը կարելի է հիմնաւորել մարքսականութեան ճակատագրով՝ Արեւմտեան Եւրոպայում։

Այստեղ, Արեւմտեան Եւրոպայում գոյութիւն ունի մարքսականութեան ամբողջատիրական կողմերից ազատւելու միտումը։ Արեւմուտքում մարքսականները փորձում են պահպանել մարքսականութեան վերափոխական և ազատական կողմերը։ Գերմանիայում, օրինակ, Սոցիալ-Դեմոկրատ կուսակցութիւնը, որը հնագոյն մարքսական կազմակերպութիւնն է, յեղափոխական **պաթոս**ից հրաժարւեց շատ աւելի առաջ, քան տեղի ունեցաւ Ռուսաստանի յեղափոխութիւնը։ Ռուսաստանի յեղափոխութեան ժամանակ նա արդէն դարձել էր Գերմանիայի եւս մէկ ժողովրդավարական կուսակցութիւն։

Նոյնիսկ Արեւելեան Եւրոպայում, որտեղ համայնավարութիւնը իրենց հետ բերեցին խորհրդային հրասայլերը, համայնավարութիւնը աւելի մեղմ տեսք է ընդունել, քան Ռուսաստանում։ Իսկ Հարաւ-սլաւիայում վարչակարգը արդէն ընդհանրապէս նման չէ համայնավարական ամբողջատիրութեան։ Ըստ երեւոյթին, նոյնիսկ ամենից ամբողջատիրական գաղափարները կարող են ծնել

տարբեր վարչակարգեր, որոնք զգալիօրէն կախուած կը լինեն տեղական քաղաքական աւանդոյթներից։ Այդ աւանդոյթները Եւրոպայի համար եղել են աւելի մեղմ, իսկ Ռուսաստանի և Արեւելքի համար աւելի ամբողջատիրական։

Սեփական անյաջողութիւնների գաղափարական բացատրութիւնները շատ տարածուած են ռուս պահպանողականների և թուրք գիտնականների միջեւ։ Նրանք յիշեցնում են որոշ իրականութիւններ ուրիշ ժողովուրդների պատմութիւններից։ Երբ մարդիկ նկատում են, որ իրենց աշխարհը կործանւում է, շտապում են նրան վերագրել արտաքին աշխարհի պատճառները, որոնց մէջ «չար գաղափարները» գրաւում են առաջնակարգ դիրք։ Մարդիկ չեն ուզում տեսնել, որ կործանման պատճառը հէնց իրենց ներքին անկատար լինելն է։

Երբ Հռոմը քրիստոնէութիւն ընդունելուց 100 տարի յետոյ ընկաւ բարբարոսների հարուածների տակ, լատին հեղինակներից շատերը մեղքը բարդեցին հին աստուածներից հրաժարուելու վրայ։ Ֆրանսիական յեղափոխութիւնից յետոյ, պահպանողականները, ինչպէս, օրինակ, Ժոզէֆ դէ Մեստերը, պատճառը տեսնում էին Ռուսոյի **«Հասարակական պայմանագիր»** աշխատութեան և այն ժամանակւայ իմաստասէրների գաղափարների մէջ։ Սակայն այս ամէնը արդարանալու և արդարացնելու ճանապարհների որոնումներ են։ Ժողովրդի շատ աւելի մեծ բարեկամներ պիտի համարուեն նրանք, ովքեր վերլուծութեան են ենթարկում ժողովրդի ազգային նկարագիրը և քննադատաբար են մօտենում անցած պատմական ճանապարհին։

Թուրք ժողովրդի շատ աւելի մեծ բարեկամը կը լինէր Ռոտհամը, եթէ նա կարողանար ցոյց տալ, որ թուրքերի ոչ-եւրոպական ներկան բխում է նրա ոչ-եւրոպական անցեալից և որ այդ անցեալում կայ այնպիսի ոճրագործութիւն, որից, որքան կարելի է շուտ, պէտք է ազատուել։

Երբ մենք խնդրեցինք դոկտոր Միւնիշին գրել մի քննադատական յօդուած Դ. Հոտհանի **«Թուրքերը»** գրքի վերաբերեալ, նա ասաց, որ կ'անի այդ սիրով, սակայն ոչ թէ քննադատելու է, այլ շարադրելու է իր սեփական տեսակէտը։ Հայկական Հարցերի Հաստատութիւնը խորին շնորհակալութիւն է յայտնում դոկտ. Միւնիշից, Հաստատութեան հետ համագործակցելու համար։

ԵՒՐՈՊԱՑԻՆԵՐԸ

Բ. Միւնիշ

Շատերին թւում է, որ գոյութիւն ունի մշակութագիտութիւն, որի միջոցով կարելի է երկրաչափական ճշտութեամբ դասակարգել մշակոյթները և գծել մշակոյթների ջրբաժան գծերը։ Այդ տեսակէտը հիմնուած է մեծ և ոչ միշտ արդարացուած հաւատքի վրայ՝ գիտութեան նկատմամբ։ Իրականում, մշակութա-

բանութիւնը, որպէս գիտական առարկայ, դեռեւս գտնւում է կազմաւորման ընթացքի մէջ և մենք դեռեւս շատ քիչ բան կարող ենք ասել մշակութային ընթացքների ներքին շարժիչների մասին։

Այնուամենայնիւ, մենք այդ մասին գիտենք այնքան, որ մշակոյթները բաժանող գծերը կարող ենք գծել ոչ-պատահականօրէն։ Այսօր առնւազն յայտնի են այն սկզբունքները, որոնց հիման վրայ կարող էր կառուցւել մշակութաբանութեան գիտական մեթոդը։ Դրա համար, նախ և առաջ, պէտք է լուծւի մշակոյթի ենթակայութեան հարցը։ Բոլոր մշակոյթները կրում են այնքան վառ արտայայտւած ենթակայական բնոյթ, որ համաշխարհային պատմութիւնը պէտք է դիտւի որպէս իրար հետ բարդ յարաբերութիւնների մէջ գտնւող հասարակական անձերի կեանք։

Խօսելով արւեստի և մշակոյթի մասին՝ պէտք չէ որոնել անձնականութիւնից զուրկ մի ինչ որ գաղափարների համակարգ, այլ այդ գաղափարները կրող կենդանի և շրջապատը ստեղծագործաբար ընկալող անձը, որը հէնց իր ընկալածի հիման վրայ ստեղծում է այս կամ այն մշակոյթը։

Հաւաքականութիւնը կամ ազգը որպէս անհատականութիւն ճանաչելով միայն կարելի է յաղթահարել պատմաբաններից շատերին ճնշող այն միտումը, թէ պատմական հոլովոյթը մի ինչ որ հոսք է, որը պարտադրաբար շարժւում է մէկ փուլից միւսը։ Ճանաչելով միայն որ մշակոյթի ենթական ոչ թէ հոսք է, այլ կենդանի հասարակական անհատականութիւն, մենք կ՚ունենանք ոչ թէ պատմութեան անիւ, որը շարժւում է գրեթէ տիեզերական օրինաչափութիւնների համաձայն, այլ հաւաքական և անհատական անձերի ազատ ստեղծագործութիւն։ Միայն նման մօտեցումը պատմութեան նկատմամբ՝ վերջ կը դնի մշակոյթների կամայական դասակարգմանը և կը ստեղծի այդ դասակարգման իսկական հիմքը։

Մշակոյթի հոգեկան նկարագիրը բացայայտելիս, անհրաժեշտ է նախ գտնել երկու հարցերի պատասխանը.- «Ինչի՞ ես հաւատում» և «ինչի՞ ես ծառայում»։ Առաջին հարցի պատասխանը կրում է աշխարհահայեացքային բնոյթ։ Վերջ ունի՞ աշխարհը, Աստուա՞ծ է ղեկավարում տիեզերքը, կա՞ն աշխարհում մեքենական օրինաչափութիւններ։ Այս հարցերի պատասխաններով է որոշւում մշակոյթ կերտողի մտածելակերպը։

Երկրորդ հարցի պատասխանը վերաբերում է արժէքների աշխարհին և որոշում է մշակոյթի բարոյական էութիւնը, նրա բարոյական վերաբերմունքը աշխարհի նկատմամբ։ Այստեղ կարելի էր վերջակէտ դնել և աւելացնել միայն, որ եւրոպական մշակոյթը հիմնւած է քրիստոնէութեան վրայ։ Քրիստոնէական հաւատքի և քրիստոնէական արժէքների։ Մահմեդական աշխարհի ոչ մէկ ներկայացուցիչ, այդ թւում՝ նաեւ թուրքերը, սկզբունքօրէն չի կարող նե-

րառնուել եւրոպական մշակոյթի մէջ այնքան ժամանակ, քանի դեռ չեն հրաժարուել մահմեդականութիւնից և Իսլամի արժէքներից, որը, բնականաբար, թուրքերը չեն արել։

Սակայն նման մօտեցումը, հազիւ թէ բաւարար նկատուէր։ Անհրաժեշտ է բացայայտել եւրոպական մշակոյթի բնորոշ գծերը, իսկ դրա համար պէտք է կանգ առնել այդ մշակոյթի կազմաւորման ընթացքի վրայ։

Հասարակագիտական և տրամաբանական մօտեցումը պատմութեան նկատմամբ նախ պահանջում է պարզել, թէ ինչ նկարագիր ունի մշակոյթ ստեղծող ու մշակոյթը կրող անձնաւորութիւնը։ Գերմանական յայտնի իմաստասէր և պատմաբան Վալտեր Շուբերտը **«Եւրոպան և Արեւելքի ոգին»** գրքի մէջ տարբերում է մշակոյթ կրող չորս տիպեր. ներդաշնակ, հերոսական, ճգնաւորական և փրկչական։ Այս հասարակական տիպերը տարբերւում են մէկը միւսից իրենց վարքագծով և իրենց հակադրութեամբ տիեզերքի նկատմամբ։

Ներդաշնակ տիպարը ապրում է տիեզերքը որպէս ներքին ներդաշնակութեամբ շնչաւորւած մի ամբողջութիւն։ Այդ տիեզերքը չի ենթարկւում մարդկային ղեկավարութեան։ Նա միայն դիտարկման և հիացման առարկայ է։ Այստեղ բացակայում է զարգացման գաղափարը, ամէն ինչ հաւասարակշռութեան մէջ է և աշխարհում տիրում է խաղաղութիւն։ Աշխարհը հասած է իր նպատակին։ Այդպէս էին ընկալում աշխարհը Հոմերոսի շրջանի յոյները, Քոնդ-Տցէի չինները, գոթական ժամանակաշրջանի քրիստոնեաները։

Հերոսական տիպը ընկալում է աշխարհը որպէս քաոս, որը ինքը պէտք է ձեւաւորի իր կազմակերպչական ուժով։ Այստեղ ամէն ինչ շարժման մէջ է։ Աշխարհի առջեւ դրւում են նպատակներ մարդու կողմից։ Այդպէս էին ընկալում աշխարհը հին Հռոմը, ռոմանական և գերմանական ժողովուրդները մեր դարի սկզբին։

Ճգնաւորական տիպը կեցութիւնը ընկալում է որպէս շփոթաւծութիւն, սխալմունք, որից նա փախչում է դէպի իրերի միստիկական էութիւնը։ Այդպէս էին վարւում հնդիկները և նէոպլատոնիկ ժամանակաշրջանի յոյները։

Վերջապէս, փրկչական տիպը գտնում է, որ ինքը պէտք է ստեղծի աշխարհում Աստծոյ կարգն ու կանոնը, որի կերպարը նա կրում է իր մէջ։ Նա ուզում է ստեղծել աշխարհում այն ներդաշնակութիւնը, որը գոյութիւն ունի իր ներսում։ Այդպէս էին զգում առաջին քրիստոնեաները և սլաւոնների մեծ մասը։

Այս չորս տիպերը կարելի է բնութագրել որպէս ներդաշնակութիւն աշխարհի հետ, իշխանութիւն աշխարհի վրայ, փախուստ աշխարհից և աշխարհի լուսաւորութիւն։ Անշուշտ, Շուբերտի այս դասակարգումը չի կարող խիստ գիտական համարւել, քանզի նա հիմնւում է Կլապի բուդայական և աշխարհի

չորս հասակների մասին պարսիկների ու հնդիկների ուսմունքի վրայ: Սակայն, այնուամենայնիւ, նրա դասակարգումը ունի իրական հող և բաւականին օգտակար է պատմական շատ հարցեր լուծելու ժամանակ, այդ թւում նաեւ մշակոյթի ենթակայի խնդիրը քննարկելու ժամանակ:

Եւրոպական մշակոյթը իր սկիզբը առնում է գոթական դարաշրջանում և նրան կրող անձը ներդաշնակ տիպն էր: Գոթական դարաշրջանը ծնունդ առաւ 11րդ դարի ցնցումներից և շարունակւեց մինչեւ 16րդ դարը: Ներծծւած տիեզերքի յաւերժութեամբ, գոթական մարդը երկնքին վստահող իր հայեացքը սեւեռում էր դէպի վեր: Աղօթքի էին նմանւում երկինք ուղղւած նրա տաճարները: Գոթական մարդը զբաղւած էր հոգու փրկութեամբ միայն: Երկրային գործերը նրան շատ չէին հետաքրքրում: **ԳՈԹԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ, ՆԵՐԴԱՇՆԱԿ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏԻՊՈՎ ՀԱՆԴԵՐՁ, ՍՏԵՂԾԵՑ ԵՒՐՈՊԱՑԻ ՀՈԳԵԿԱՆ ՄԻԱՄՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԸ:**

Այդ մշակոյթը քրիստոնէական էր հաւատքով և արժէքներով:

Սակայն 1450-1550 թւականներին եւրոպական մշակոյթի բնոյթի մէջ տեղի ունեցաւ լուրջ փոփոխութիւն: Ներդաշնակ մշակոյթից նա վերածւեց հերոսական մշակոյթի, որի կրողը նոր տիպի մարդն էր: Այս նոր մարդը, իր հայեացքը կտրելով երկնքից, ուղղեց դէպի երկիր: Դրա շնորհիւ և միայն դրա շնորհիւ հնարաւոր դարձան խոշոր աշխարհագրական յայտնագործութիւնները: Նոր մարդը այլեւս չի զբաղւում հոգու փրկութեամբ, նա հաստատում է իր իշխանութիւնը աշխարհի վրայ: Ու քանզի նա ցանկանում է իշխանաւոր դառնալ, նրան այլեւս Աստւած պէտք չէ: Մարդը ցանկանում է վերակառուցել աշխարհը՝ իր սեփական ծրագրի համաձայն: Բայց ո՞րն է այդ ծրագիրը:

Այստեղ է, որ բացայայտւում է եւրոպացու Էութիւնը: Նրա յետեւումն են ներդաշնակ մշակոյթը և քրիստոնէական արժէքները, որտեղ մարդը իր հոգեկան պահանջներով գտնւում է մշակոյթի կենտրոնում:

Եւ եթէ ցանկանում է նոր մարդը վերակառուցել աշխարհը, ապա միայն արդարութեան ուղղութեամբ: Խօսքը այն մասին չէ, թէ որքանով կարողացաւ եւրոպացին արդար աշխարհ կառուցել, խօսքը նրա **ՄՏԱԴՐՈՒԹԵԱՆ** մասին է: Իսկ նրա մտադրութիւնը իսկապէս որ արժանի է ուշադրութեան:

Բոլոր հասարակական տեսութիւնները, ընդհուպ մինչեւ ժամանակակից ընկերվարութիւնը և մարքսիզմը, ներծծւած էին հասարակական արդարութեան գաղափարով:

Սակայն առանց Աստծու, հասարակական ներդաշնակութիւնը պիտի վերածւէր իրաւական հասարակարգի: Եւ եւրոպացին ստեղծեց այդ հասարակարգը: Սա նրա գլխաւոր արժանիքն է: Ամբողջ աշխարհում ուրիշ ոչ մէկը

չկարողացաւ ստեղծել իրաւապաշտ հասարակարգ, որտեղ օրէնքը հիմնովին փոխարինի Աստծուն և կրօնական բարոյականութեանը։

Այսպիսով, վերջին հազարամեակի ընթացքում եւրոպացին անցաւ ներդաշնակ և հերոսական դարաշրջանների միջով և այդ դարաշրջանները ձեւաւորեցին նրա նկարագիրը։ Տարբեր էին այդ դարաշրջանները և տարբեր ազդեցութիւն թողեցին նրանք եւրոպացու և եւրոպական մշակոյթի վրայ։ Ընդգծելու համար երկու այս դարաշրջանների տարբեր ազդեցութիւնը, վերյիշենք, որ Հռոմը և Հելլադան կազմում են միեւնոյն յունա-հռոմէական մշակոյթի տարբեր մասերը։ Այս հանգամանքը յատուկ կերպով ընդգծեց և մեծ աղմուկ հանեց **«Եւրոպայի Արեւմուտը»** գրքի հեղինակ Շպենգլերը։

Սակայն, եթէ փորձենք թափանցել յունա-հռոմէական մշակոյթի էութեան, ապա կը տեսնենք, որ Հելլադան մարմնաւորում է ներդաշնակ, իսկ Հռոմը հերոսական մշակոյթը։ Յոյնը ունի բնական ձգտումներ, իսկ հռոմէացին ձգտում է մեքենայացման։ Հռոմէացու իրաւաբանական մտածելակերպը և օրէնքի նկատմամբ բռնած հնազանդ դիրքը ամենեւին էլ չեն համապատասխանում յունական ոգուն։

Յունական քաղաքները և Հռոմէական կայսրութիւնը ընդհանուր յայտարարի չեն բերւում։ Երկու ժողովուրդների ճարտարապետները առաջացնում են տարբեր, իրար հակասող զգացմունքներ։ Յունական ճարտարապետութիւնը իր հորիզոնական դիրքով կարծես թէ կպած է հողին և շնչում է նրանով։ Իսկ հռոմէական կամարը կարծես թէ իր իշխանութիւնն է հաստատում հողի վրայ։ Հռոմէացիները, ի տարբերութիւն յոյների, չունեն փիլիսոփայութիւն, նրանք իրաւաբաններ են նոյնիսկ այն ժամանակ, երբ զբաղւած են փիլիսոփայութեամբ։

Եւ սրա հետ միասին ոչ մի եւրոպական ժողովուրդ չկարողացաւ խուսափել հռոմէացիների ազդեցութիւնից։ Եւ հակառակը, այն ժողովուրդը, որ չի ունեցել հռոմէական ազդեցութիւն, չի կարող եւրոպացի համարւել։ Բոլոր եւրոպական ժողովուրդները կրում են հռոմէացիների ազդեցութիւնը, բայց ոչ բոլորը նոյն չափով։

Իտալացիները ժառանգեցին նրանց շատախօսութիւնը, ֆրանսիացիները՝ մտքի սրութիւնը, գերմանացիները՝ կարգապահութիւնը, անգլիացիները՝ հարստանալու ձգտումը։ Անգլիացիներին անւանում են ժամանակակից հռոմէացիները։ Հիտլերը ժամանակակից հռոմէացիներ էր համարում պրուսացիներին։ Հռոմէացիների իսկական ժառանգորդներ Նապոլէոնը համարում էր ֆրանսացիներին, իսկ Մուսոլինին՝ իտալացիներին։

Բոլոր այս տեսութիւնները կարելի էր պաշտպանել, որովհետեւ իւրաքանչիւրը նրանցից մասամբ ճիշտ է։ Հռոմէական ոգին մեծ ազդեցութիւն թողեց

եւրոպացու վրայ հռոմէական իրաւունքի միջոցով։ Կրօնական վերափոխման և վերածնունդի հետ միասին հռոմէական իրաւունքը երրորդ խոշոր մշակութային իրադարձութիւնն էր, որը արմատապէս ազդեց եւրոպացու աշխարհահայեացքի վրայ։ Այսպիսով, եւրոպական մշակոյթի պատմութիւնը յունական ներդաշնակ մշակոյթի պատմութիւնն է, որը փոխարինուեց հռոմէական գիտաիրաւաբանական մշակոյթով։

Ի՞նչ կարելի է ասել եւրոպական մշակոյթի բնորոշ առանձնայատկութիւնների մասին։ Այստեղ մենք ուզում ենք խօսքը տալ Հարուարդի համալսարանի ընդհանուր պատմութեան ամբիոնի վարիչ պրոֆեսոր Քրէյն Բրինտոնին, որը իր **«Արեւմուտքի պատմութիւն»** վերնագիրը կրող աշխատութեան մէջ գրում է հետեւեալը.

«Որոշ լայն ընդհանրացումներ Արեւմուտքի մշակոյթի և մտայնութեան մասին կարելի է անել։ Նախ անհրաժեշտ է նշել, որ ոչ մի ուրիշ մշակոյթ չի ստեղծել բնական գիտութիւնների այնպիսի առաջընթաց, որը ստեղծեց եւրոպական մշակոյթը։ Ճիշտ է, ուրիշ մշակոյթների ներկայացուցիչները սկսել են զգալի յաջողութիւններ ունենալ բնական գիտութիւնների զարգացման բնագաւառում, սակայն գիտութիւնը իր այսօրւայ պատկերով կրում է Արեւմուտքի կնիքը, որտեղ նա ծնունդ է առել։

«Եւ նա միայն Արեւմուտքի պայմաններում էլ կարող էր ծնուել, որովհետեւ Արեւմուտքի մթնոլորտում միայն գոյութիւն ունէր իրական և երեւակայական, այս և այն աշխարհների հակադրութիւնը։ Եթէ ոգին ամբողջովին կլանէր նիւթը՝ անկարելի պիտի լինէր գիտութիւնը։ Նոյնքան անկարելի կը լինէր գիտութիւնը, եթէ ամբողջովին կլանէր ոգուն և տեղ չթողնէր ստեղծագործութեան համար։

«Գիտութեան զարգացումը կապւած էր ոչ միայն առարկաների նկատմամբ ցուցաբերած հետաքրքրութեամբ։ Նա պահանջում էր մտային այնպիսի մի միջոց, որը կարողանար կուտակել առարկաների և երեւոյթների այն բարդ դասակարգումը, որը այսօր գիտութիւն է կոչւում։ Գիտութիւնը առաջին հերթին պահանջում էր ուղեղի մարզում։ Եւ ուղեղի այդ մարզանքը կատարեց յունական և միջնադարեան փիլիսոփայութիւնը։

«Գիտական ճշմարտութիւններ բացայայտելու ձգտումը Արեւմտեան արժէքների համակարգի մասն է կազմում։

«Առաջին ընդհանրացումը, որը մենք կարող ենք անել արեւմտեան մտածելակերպի վերաբերեալ՝ հետեւեալն է. յոյներից ու միջնադարեան քրիստոնեաներից սկսած և հին ու նոր լուսաւորականներով վերջացրած, արեւմտեան մտածելակերպը ցուցաբերում է համոզւածութիւն, որ գոյութիւն ունեն առարկայական արժէքներ, որոնք աշխարհի կազմակերպւածութեան արտայայ-

տիչներն են։ Աշխարհի կազմակերպւածութեան փաստը հասկանալի չէ մտածող մարդկանց համար, նա ապացուցելի է գիտական մեթոդներով և երբեք իր ամբողջութեամբ չի ընկալւել ոչ լաւագոյն գիտնականների և ոչ էլ իմաստունների կողմից։

«Եւ, այնուամենայնիւ, աշխարհը կազմակերպւած ամբողջութիւն է, այլ ոչ թէ քաոս։ Դարերի ընթացքում նման գիտակցութիւնը հիմնւած էր «բնական իրաւունք» հասկացութեան վրայ, որը տարբեր ժամանակաշրջաններում ունէր տարբեր մեկնաբանութիւն, սակայն միշտ էլ, բոլորի համար, նա կարգ ու կանոնի նկատմամբ հաւատքի արտայայտութիւն էր։ «Բնական իրաւունք» հասկացութիւնը եւրոպացու համար նշանակում էր, որ իրականի և երեւակայականի, ունեցածի և ձգտումների միջեւ ոչ թէ անդունդ կայ, այլ կապակցութիւն։

«Եւրոպական մշակոյթի երկրորդ առանձնայատկութիւնը այն է, որ Արեւմուտքի հասարակական պատմութեան մէջ յստակօրէն նշւած է «մարդու արժանապատւութիւն» արժէքը։ Այդ մշակոյթի մէջ դաստիարակւած մարդու համար ինքն ըստինքեան պարզ է, որ մարդու հետ չի կարելի վարւել այնպէս, ինչպէս վարւում են անասունների հետ։ Ճիշտ է, փոխւում էին արժէքը արժէքաւորող վայրերը, խմբերը ու դարաշրջանները։

«Հին Յունաստանում այս հասկացութիւնը սահմանափակւում էր հելլէններ խմբով։ Յոյները և քրիստոնէական մարգարէները տարածեցին այս գաղափարը ամբողջ մարդկութեան վրայ։ Քրիստոնեայի համար բոլոր մարդիկ հաւասար են, քանզի բոլորը ունեն անմահ ոգիներ։ Ժողովրդավարական թեզը Ազատութեան, Հաւասարութեան և Եղբայրութեան մասին կազմում է 18րդ դարի «երկնային քաղաք»ի հիմնաքարերը։ Եւ մեր ժամանակակից գաղափարախօսութիւնների մէջ էլ այդ թեզը քրիստոնէական թեզի անմիջական ժառանգորդն է։ Եւրոպական մտածելակերպը յստակօրէն անջատում է մարդուն մնացեալ աշխարհից, որին նա զրկում է բարոյական պայքար մղելու արտօնութիւնից։

«Եւրոպացիների տեսակէտով՝ կենդանիները ոգի չունեն։ Համաստւածականութիւնը և առաւել եւս՝ հոգիների տեղափոխումը եւրոպական ուսմունքներ չեն։ Հնդիկը, օրինակ, եւրոպացիներին բարբարոս է համարում, որովհետեւ նրանք անսրտօրէն են վերաբերւում իրենց եղբայր-անասունների նկատմամբ։

«Եւրոպական մշակոյթի երրորդ առանձնայատկութիւնը վերաբերում է այս աշխարհի երջանիկ կեանք վարելու չափանիշին։ Այս չափանիշը եւրոպացին ժառանգել է յունական ազնւական մշակոյթից, որտեղ մարդը հրաժարւում է չափազանցութիւններից և ինքը իրեն չափաբերում այն շքեղութիւնից, որը հետագայում ծնունդ առաւ Արեւելքում»։

Բրիտոնը կարծում է, որ այս ընդհանրացումների սահմաններից դուրս գալը վտանգաւոր է, որովհետեւ պատմութիւնը ընդհանրացումներ շատ չի սիրում: Նա խոստովանում է, որ չի կարող պատասխանել այն հարցին, թէ ինչո՞ւ արեւմտեան հասարակարգը եղաւ ամենայաջողը պատմութեան մէջ: Բայց այդ հարցը մեզ չի էլ հետաքրքրում: Մեզ համար բաւական է նշել եւրոպացիների յաջողութիւնը և առանձնացնել եւրոպացիների մշակոյթի որոշ առանձնայատկութիւնները:

Այսպիսով, բնական գիտութիւնների վերելքը, մարդու արժանապատւութեան կարեւորութեան ճանաչումը և ինքնասահմանափակումը կենցաղային հարցերում կազմում են եւրոպական մշակոյթի բնորոշ գծերը:

Այս գծերը արդէն վերջնապէս ձեւաւորուած էին, երբ Եւրոպայում երեւացին թուրքերը: Նրանք չհասցրեցին տեսնել ներդաշնակ դարաշրջանը, նրանք տեսան միայն հերոսական դարաշրջանի սկիզբը, երբ եւրոպացիները կանգնել էին իրաւական հասարակարգեր ստեղծելու ճանապարհի վրայ:

ԹՈՒՐՔԵՐԸ, ՌՈՒՄՆԵՐԸ, ԵՒՐՈՊԱՑԻՆԵՐԸ

Բ. Միւնիշ

Մշակոյթ կրողը ժողովուրդն է: Սակայն մշակոյթի գլխաւոր երեսներից մէկն էլ այն է, թէ ժողովրդի ո՞ր խաւն է կրում մշակոյթը: Եւրոպական մշակոյթը միջինի մշակոյթ է, նրան կրողը միջին խաւն է: Այդ մշակոյթի բարիքներն են՝ ինքնատիրապետումը, դաստիարակւածութիւնը, սուր բախումներից խուսափելը, առարկայականութիւնը: Եւրոպացին այն չափով, որ չափով որ նա որոշ նշանակութիւն է տալիս կրօնին, ձգտում է վերածել այն կարգապահութիւն ստեղծելու միջոցի: Պետութիւնը Աստւած է դառնում, իսկ պետութեան ծառայելը՝ հասարակական պարտքի կուտակում:

Թուրքական մշակոյթը պարզ ժողովրդի կամ, աւելի ճիշտ, ռամկավարի մշակոյթ է: Այս մշակոյթը կրթութիւնից զուրկ կրօնական մոլեռանդի մշակոյթ է: Նման մշակոյթը սերտ կապերի մէջ է ժողովրդի նկարագրի հետ: Մշակոյթը զսպում է ժողովրդի զարգացումը, իսկ ժողովրդի յետամնացութիւնը կայունութիւն է տալիս մշակոյթին: Ի տարբերութիւն եւրոպական միջին մշակոյթի, ասիական մշակոյթը ծայրայեղութեան մշակոյթ է: Նրա սկզբունքներն են՝ կամայականութիւնը, զսպւածութեան և դաստիարակութեան պակասը: Զգացմունքների սանձարձակութեան և կարգապահութեան բացակայութեան հետ միասին նա պարունակում է իր մէջ մի ինչ որ ոչ մեքենական բան, հոգեկան սկզբունք, թէպէտեւ մոլեռանդութեան մակարդակի վրայ:

Ռուսական մշակոյթը ընտրանիի մշակոյթ է: Նրան կրողները միշտ էլ եղել են ռուս մտաւորականների ընտիր շրջանակները, իսկ ժողովուրդը ընդհանուր առմամբ դուրս չի եկել Ուղղափառ Եկեղեցու շրջանակից: Եւրոպացիների մէջ դժւար է գտնել մի աղքատ մարդ, որը նախանձով չնայի հարուստին: Իսկ ռուս հարուստներից շատերը ամօթով են նայում աղքատին: Եթէ եւրոպացին ուզում է աւելի մեծ թուալ, քան է, ռուսը ոչ միայն ազնուօրէն խոստովանում է իր թուլութիւնները և պակասութիւնները, այլ նաեւ չափազանցնում է իր պակասութիւնները: Մեղաւորի զգացմունքը այնքան է ճնշում ռուսին, որ զոհաբերութեան գաղափարը դառնում է նրա բարոյականութեան կենտրոնական առանցքը: Առանց մահի՝ յարութիւն չկայ, առանց զոհի՝ վերածնունդ չկայ: Նման մշակոյթ կրողը միայն ընտրանին կարող է լինել:

Բոլոր երկրներում այսպէս կոչւած լուսաւորականները իրենց լուսաւորութեան գործը սկսում էին նրանից, որ խլում էին մշակոյթը ժողովրդից և փոխանցում էին այն վերնախաւին: Պետրոս Մեծը Ռուսաստանում, Շահը՝ Պարսկաստանում, Մուստաֆա Քեմալը՝ Թուրքիայում փորձում էին այդ բանը անել: Ռուսաստանում այդ փորձը կարծես թէ յաջողուեց: Մահմեդական աշխարհում դեռեւս այդ բանը չի յաջողուել: Եւ, այնուամենայնիւ, այս ճանապարհը, ըստ երեւոյթին, միակն է: Եւ, եթէ մենք ճանաչենք այս ճանապարհի ճշմարտութիւնը, ապա ինքն ըստինքեան պէտք է ընդունենք նաեւ սա ճշմարտութիւնը.- ԵԹԷ ՈՐԵՒԷ ԺԱՄԱՆԱԿ ԹՈՒՐՔԻԱՆ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՐԿԻՐ Է ԴԱՌՆԱԼՈՒ, ԱՊԱ, ԸՍՏ ԵՐԵՒՈՅԹԻՆ, ԱՅԴ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԱՆՑՆԵԼՈՒ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՄԻՋՈՎ:

Ռուսաստանը գտնւում է Եւրոպայի և Ասիայի միջեւ, և հաւանաբար, հէնց նա էլ լուծելու է Արեւմուտքի և Արեւելքի հաշտութեան խնդիրը:

1885 թականին, երբ Աֆղանստանի պատճառով ստեղծւեց Անգլիայի և Ռուսաստանի բախման վտանգը, Ռուսաստանում լոյս տեսաւ Սերգէյ Իւշակովի «Անգլո-ռուսական բախումը» վերնագիրը կրող գիրքը, որտեղ հեղինակը գուշակում էր, թէ գիւղացիական և քաղքենիական մշակոյթների բախումը անխուսափելի է: Ռուս գիւղացին Ասիայի միակ յոյսն է և նա կ'արթնացնի Ասիան,- եզրակացնում էր հեղինակը: Հեղինակը ճիշտ դուրս եկաւ, ռուս գիւղացին իսկապէս որ արթնացրեց Ասիային:

1912 թականի ապագայապաշտների շարժումը Ռուսաստանում հզօր մի ապստամբութիւն էր եւրոպական մշակոյթի դէմ: Դրա հետ միասին Ռուսաստանը ազատաբար կլանեց ժամանակակից եւրոպայի գաղափարները և հասցրեց նրանց ասիական ծայրայեղութիւնների: Որոշ իմաստով Ռուսաստանը դարձաւ միջանկեալ օղակ ժամանակակից Եւրոպայի և Ասիայի միջեւ,

այսինքն դարձաւ այն աշխարհը, որի միջով անցնելու են եւրոպային ձգտող բոլոր ասիական երկրների ճանապարհները։

Ահա թէ ինչու թուրքական համայնավարութիւնը հնարաւոր է։ Նա հնարաւոր է նաեւ այն բանի համար, որ համայնավարութիւնը յայտնւում է ամենուր, որտեղ գոյութիւն ունի քաղաքական քաոս, տնտեսական քայքայում և մշակութային յետամնացութիւն։ Ճիշտ է, համայնավարութիւնը չի կարողանում լուծել այդ խնդիրներից ոչ մէկը, բայց նա անխուսափելիօրէն յայտնւում է նման կացութեան մէջ։ Եւ հէնց այդ կացութեան մէջ գտնւում է ժամանակակից Թուրքիան։

Պէտք է այստեղ խոստովանել, որ եւրոպական մշակոյթը անհոգի է։ Նա այդպիսին է դարձել ճշգրիտ գիտութիւնների ազդեցութեան տակ, որոնք գրեթէ ամբողջովին խլեցին եւրոպացուց կրօնը։ Սակայն երկնային համընդհանուր բարօրութիւն ստեղծելու հարցը ճշգրիտ գիտութիւնները լուծել չկարողացան։ Երբեք դեռ չէր ծնւել այնպիսի մշակոյթ, որը եւրոպական մշակոյթի նման միակողմանիօրէն և ուժգին ձգտէր նիւթական երջանկութեան, արհամարհելով հոգեկան արժէքները։ Եւ երբեք դեռ մշակոյթը այդքան դժբախտ ու աղքատ չէր դարձրել մարդուն, որքան որ դարձրեց նրան ժամանակակից եւրոպական մշակոյթը։ Իր նպատակին հասնելու համար եւրոպացին ստեղծեց մի արհեստական աշխարհ, որը մենք անւանում ենք քաղաքակրթութիւն։ Երբ եւրոպացին սկսում էր այդ գործը, նա ուժեղ էր ու լի վճռակամութեամբ։

Սակայն որքան աւելացաւ կեանքի մեքենայացումը, այնքան աւելացան բողոքները մշակոյթի դէմ։ Եւրոպացին սկսեց աւելի ու աւելի հասկանալ, որ ինքը կեղծ ճանապարհի վրայ է։ Արհեստական աշխարհը աւելի ու աւելի է կտրւում իր արարչից՝ մարդուց և սկսում է գործել սեփական օրէնքների համաձայն, չենթարկւելով այլեւս մարդուն։ Այսօրւայ եւրոպացին ճնշւած է ազատութեան բացակայութեան զգացմունքով և շահագործւում է իր իսկ ստեղծած մեքենայով։ Նման կացութեան մէջ եւրոպական մշակոյթը սկսում է դառնալ քիչ համակրելի և շատ ժողովուրդներ հրաժարւում են նրանից։ Եւրոպական մշակոյթը հոգեկան բեղմնաւորման կարիք ունի, որը կարող է տեղի ունենալ ռուսական կամ որեւէ այլ կրօնական մշակոյթի ազդեցութեան տակ։

Այս իմաստով, Թուրքիան կարող էր իր ներդրումը կատարել եւրոպական մշակոյթին շունչ տալու մէջ։ Բայց դրա համար նա նախ և առաջ պէտք է անցնի ինքնամաքրման դժւարին ճանապարհը։ Բոլոր քաղաքակիրթ ժողովուրդները այդ ճանապարհը անցել են, դատապարտելով իրենց պատմական անցեալում եղած բոլոր անվայել արարքները։ Չէր կարող փլւել գաղութատիրական կարգը, եթէ ստրկատիրութիւնը սկզբունքօրէն չդատապարտւէր։ Անգլիացիները, գերմանները, ամերիկացիները, բելգիացիները, ռուսները և

շատ ուրիշ ժողովուրդներ ժամանակակից բարոյական սկզբունքները մշակում են անցեալի սխալների քննադատութեան վրայ։

Եւ միայն Թուրքիայի ղեկավարներն են, որ չեն համարձակւում վերանայել իրենց վերաբերմունքը Օսմանեան կայսրութեան նկատմամբ։ Ինքնամաքրման այս միակ ճշմարիտ ճանապարհը ընտրելու փոխարէն, թուրքական հասարակական և պետական միտքը փորձում է արդարացնել սեփական անցեալը պատմական փաստերի միամիտ ու երբեմն ծիծաղելի նենգափոխութիւններով։

1979 թւականի օգոստոս ամսին Անկարայում տեղի ունեցաւ Հարաւ-Արեւելեան Եւրոպայի երկրներին նւիրւած 4րդ համագումարը։ Համագումարի աշխատանքներին մասնակցեցին մօտաւորապէս 700 գիտնականներ՝ Խ. Միութիւնից, Ֆրանսիայից, Հունգարիայից, Արեւել. Գերմանիայից, Չեխոսլովակիայից, Մ. Նահանգներից, Անգլիայից, Կանադայից և շատ ուրիշ երկրներից։ Եւ ահա այս բազմամարդ և ներկայացուցչական համագումարում թուրքական պատմաբանները ապացուցում էին, որ Օսմանեան կայսրութեան մէջ գիւղացիները ազատ էին թէ՛ ընկերային և թէ իրաւական իմաստով։ Բացի դրանից, նրանք դատապարտեցին բոլոր այն ազատագրական շարժումները, որոնք ուղղւած էին սուլթանների վարչակարգի դէմ և որոնք ստեղծում էին կայսրութեան համար ճգնաժամային պահեր։ Հրաժարւեցին նրանք նաեւ հայերի ցեղասպանութիւնը ճանաչելուց։

Այս ամէնը խօսում է այն մասին, որ Թուրքիայի հասարակական միտքը դեռեւս գտնւում է պատմական անցեալը մոլեռանդութեամբ գովաբանելու սահմանների մէջ։ Իսկ իրականում, այդ անցեալը իրաւական և մշակութային տեսանկիւնից շատ գովաբանելու բան չունի։ Անցեալի նկատմամբ նման վերաբերմունքով եւրոպացի դառնալը դժւար է։ Քրիստոնեայ կամ մահմեդական դառնալու համար անհրաժեշտ է հրաժարւել կռապաշտութիւնից։ Եւրոպացի դառնալու համար, անհրաժեշտ է հրաժարւել ոչ-եւրոպական անցեալից և սկզբունքներից։

Մեր աչքերի առջեւ կատարւում է մի տարօրինակ բան։ Ցեղային իմաստով թուրքերը արդէն վաղուց թուրքեր չեն։ Բազմակնութեան կարգը, որի հարեմներում հիմնականում գտնւում էին հայուհիներ, յոյնուհիներ և հրեաներ, արդէն երկրորդ սերնդում թուրքական ազնւականութիւնը դարձնում էր կէս խառնուրդ։ Իսկ 10րդ սերնդում կենսաբանական իմաստով թուրքից ոչինչ չէր մնում և նրանք արդէն վաղուց այլեւս նման չեն իրենց կոկոծած աչքերով, դեղին մորթով ու ցցուն այտոսկրով եղբայրներին Միջին Ասիայից։

Սակայն հոգեկան և մշակութային իմաստով թուրքերը մնացել են անփոփոխ, որովհետեւ չեն կատարել արժէքների վերագնահատումը։ Պէ՞տք է ար-

դեօք այդ կատարել։ Դատել չենք կարող։ Բայց մէկ բան պարզ է՝ թուրքը եւրոպացի չէ։

ԹՈՒՐՔԵՐԸ

Բ. Միւնիշ

Ժամանակակից թուրքերի նախնիները թուրքեստանցի օղուզ ցեղերն են, որոնք առաջին անգամ Միջին Ասիայից Անատոլիա ներխուժեցին 13րդ դարում՝ մոնղոլական արշաւանքների ժամանակ։

12րդ դարում սելջուկների կողմից նւաճած փոքրասիական հողերի վրայ ստեղծւած էր Իկոնիոյ Սուլթանութիւնը։ 13րդ դարում, մոնղոլների ճնշման հետեւանքով, թուրքական ցեղերի տեղաշարժը դէպի Անատոլիա ուժեղացաւ։ Սակայն մոնղոլական արշաւանքների հետեւանքով Իկոնիայի սուլթանութիւնը բաժանւեց մի քանի իշխանապետութիւնների, որոնցից մէկը ղեկավարւում էր Օսման բէյի կողմից։

1281-1324 թւականներին Օսման բէյը իր իշխանապետութիւնը դարձրեց անկախ միաւոր, որը Օսմանի անունով կոչւեց Օսմանեան և որը աւելի ուշ դարձաւ Օսմանեան կայսրութիւն։ Օսմանեան կայսրութեան մէջ ապրող ցեղերը կոչւեցին օսմանեան թուրքեր։

Ինքը Օսմանը օղուզական ցեղի առաջնորդ Էրթողրուլի որդին էր։ Այսպիսով, թուրք-օսմանների առաջին պետութիւնը օղուզների պետութիւնն էր։ Ովքե՞ր են ողուզները։

Օղուզների ցեղական միութիւնը ծնունդ առաւ 7րդ դարի սկզբին Միջին Ասիայում։ Միութեան մէջ գերիշխող տեղը գրաւում էին ույգուրները։ 9րդ դարում օղուզները կիրգիզների ճնշման տակ տեղափոխւեցին Սին-Ցզեան։ 10րդ դարում Սիր-Դարիայի ափերին ստեղծւեց օղուզների պետութիւնը, որի մայրաքաղաքն էր Տաշկենտը։ 11րդ դարում այդ պետութիւնը կործանւեց եկւոր ղպչաղների կողմից։ Օղուզները մոնղոլների ճնշման տակ 13րդ դարում շարժւեցին դէպի արեւմուտք և, որպէս **վասալ**ներ, հաստատւեցին Փոքր Ասիոյ հիւսիս-արեւմուտքում՝ Սելջուկների կայսրութեան մէջ։ Դժբախտաբար, օղուզների պետական կառոյցի մասին ոչինչ յայտնի չէ և այսօր դժւար է որեւէ կապ գտնել օսմանցիների և օղուզների պետութիւնների միջեւ, սակայն կարելի է ենթադրել, որ օսմանեան պետութեան պետական կարգը կառուցւած էր օղուզների պետական փորձի հիման վրայ։

Օսմանի որդի և նրա իշխանութեան ժառանգորդ Օրհան բէյը Բիւզանդիոնից նուաճեց Բրուսան և դարձրեց այն իր մայրաքաղաքը։ Յետոյ նուաճեց Մարմարա ծովի արեւելեան ափը և ամրապնդւեց Կալիպոլի թերակղզու վրայ։

Մուրադ Ա-ը (1339-89), որը արդէն սուլթանի կոչում էր կրում, նուաճեց ամբողջ Արեւելեան Թրակիան, այդ թւում նաեւ Ադրիանապոլիսը, ուր տեղափոխեց Թուրքիայի մայրաքաղաքը (1365)։ Այդ ժամանակ էլ նա ոչնչացրեց Անատոլիայի որոշ իշխանութիւնների ինքնուրոյնութիւնը։

Բայազիդ Ա-ի ժամանակ (1389-1402) թուրքերը նուաճեցին Բուլղարիան, Մակեդոնիան, Թեսալիան և մօտեցան Կոստանդնուպոլսին։ Լենկթիմուրի արշաւանքը և Բայազիդի զօրքերի ջախջախիչ պարտութիւնը Անգորայի մօտ 1402 թականին ժամանակաւորապէս կանգնեցրին թուրքերի յառաջխաղացումը Եւրոպա։

Մուրադ Բ-ի ժամանակ (1421-1451) թուրքերը վերսկսեցին եւրոպական արշաւանքը։ Մուհամէդ Բ-ը (1451-81) մէկուկէս ամսւայ պաշարումից յետոյ նուաճեց Կոստանդնուպոլիսը։ Բիւզանդական կայսրութիւնը կործանուեց։ Կոստանդնուպոլիսը (Իստամբուլ) դարձաւ Օսմանեան կայսրութեան մայրաքաղաքը։ Մուհամէդ Բ-ը ոչնչացրեց անկախ Սերբիայի մնացորդները, նուաճեց Բոսնիան, Յունաստանի հիմնական մասը, Մոլդաւիան, Ղրիմի խանութիւնը և աւարտեց ամբողջ Անատոլիայի նուաճումը։

Սուլթան Սելիմ Ա-ը (1512-20) նուաճեց Մուսուլը, Սիրիան, Պաղեստինը և Եգիպտոսը։ Յետոյ էլ Հունգարիան և Ալժիրը։ Թուրքիան դարձաւ այն ժամանակւայ խոշորագոյն ռազմական պետութիւնը։

Օսմանեան կայսրութեան ներքին ազգագրական միասնութիւնը բացակայում էր, ու չնայած դրան 15րդ դարում աւարտւում էր թուրք ազգի ձեւաւորման ընթացքը։ Ի՞նչ ունէր իր յետեւում այս երիտասարդ ազգը։ Օղուզների պետական փորձը և Իսլամը։ Իսլամի հետ միասին թուրքերը ընդունեցին մահմեդական իրաւունքը, որ այնքան էապէս էր տարբերւում հռոմէական իրաւունքից, որքան էապէս տարբերւում էր թուրքը եւրոպացուց։

Թուրքերի Եւրոպայում երեւալուց շատ առաջ Արաբական խալիֆայութեան մէջ միակ իրաւաբանական օրէնսգիրքը Ղուրանն էր։ Սակայն իրենց ենթարկելով իրաւական իմաստով աւելի զարգացած ժողովուրդները, Խալիֆայութիւնը բախւեց մեծ դժւարութիւնների և ստիպւած եղաւ մի տեսակ յարմարուել ենթարկւած ժողովուրդներին։

7րդ դարում ի յայտ է գալիս Մուհամէդի պատւիրանների ցուցակը, որը ժամանակի ընթացքում լրացւում է և շուտով հասնում է մի քանի տասնեակ հատորների։ Այդ օրէնքների ժողովածուն Ղուրանի հետ միասին կազմեցին Սունան կամ «Իրական ճանապարհը»։ Եւ հէնց այդ օրէնքները կազմեցին անձայրածիր խալիֆայութեան իրաւական էութիւնը։

Սակայն նուաճողները կամաց-կամաց ծանօթացան հպատակւած ժողովուրդների օրէնքների հետ, հիմնականում հռոմէական իրաւունքի հետ և

սկսեցին այդ նոյն օրէնքները, այս անգամ արդէն Մուհամէդի անունով մատուցել հպատակներին։

8րդ դարում Աբու Հանիֆան (697-767) հիմնեց առաջին իրաւաբանական դպրոցը։ Ազգութեամբ նա պարսիկ էր և կարողացաւ ստեղծել մի այնպիսի ճկուն իրաւաբանական ուղղութիւն, որը խիստ մահմեդական սկզբունքները համադրում էր կեանքի պահանջների հետ։ Նրա օրէնքների համաձայն, քրիստոնեաները և հրեաները կարող էին իրենց ներքին գործերում օգտագործել իրենց աւանդական օրէնքները։

Թւում էր, թէ Արաբական խալիֆայութիւնը կանգնեց իրաւական հասարակարգ կառուցելու ճանապարհի վրայ։ Սակայն այս բանը տեղի չունեցաւ։ Ոչ Արաբական խալիֆայութիւնը և ոչ էլ բոլոր հետագայ միջնադարեան մահմեդական պետութիւնները այդպէս էլ չկարողացան ստեղծել պետութեան կողմից հաստատուած օրէնսգիրք։

Մահմեդական իրաւունքի գլխաւոր էութիւնը կայանում է ահաւոր անդունդի մէջ, որը գոյութիւն ունի իրաւաբանական և իրական իրաւունքների միջեւ։ Մուհամէդի իշխանութիւնը կրում էր աստուածապետական բնոյթ և պարունակում էր իր մէջ թէ՛ կրօնական և թէ քաղաքական սկզբունքներ։ Սակայն Մուհամէդի կտակի համաձայն, նոր խալիֆան պէտք էր ընտրուէր կամ ընդհանուր ժողովում կամ էլ պէտք է նշանակուէր նախորդ խալիֆայի կողմից։

Բայց իրականում խալիֆայի իշխանութիւնը միշտ էլ փոխանցել է ժառանգաբար։ Իրաւաբանական օրէնքների համաձայն, մահմեդական համայնքը, մանաւանդ մայրաքաղաքի համայնքը, իրաւունք ունէր պաշտօնազրկել խալիֆային՝ անվայել վարքագծի կամ էլ մտային ու ֆիզիքական տկարութեան համար։ Սակայն իրականում խալիֆայի իշխանութիւնը բացարձակ էր և ամբողջ երկիրը համարւում էր նրա սեփականութիւնը։

Խախտւում էին օրէնքները և հակառակ կողմի վրայ։ Իրաւաբանական օրէնքների համաձայն՝ ոչ մահմեդականը իրաւունք չունէր մասնակցելու երկրի ղեկավարութեանը։ Նա ոչ միայն չէր կարող մտնել արքունիք, այլ նրան արգիլւած էր նաեւ քաղաքապետի կամ նահանգապետի պաշտօն գրաւելը։ Բայց իրականում խալիֆան իր հայեցողութեամբ ոչ մահմեդականներին նշանակում էր ամենաբարձր պետական պաշտօնների։

Այսպիսով, եթէ եւրոպացիները ներդաշնակ դարաշրջանից հերոսական դարաշրջանը անցնելուց յետոյ Աստծուն փոխարինեցին հռոմէական իրաւունքով, ապա, Միջին Ասիայում անցկացնելով իրենց ներդաշնակ դարաշրջանը, ապագայ մահմեդականները, հերոսական դարաշրջանում իրաւունքը կրօնի հետ միասին խաղալիք դարձրին խալիֆայի ձեռքում, որը թէ՛ օրէնսդիր, թէ՛ գործադիր և թէ դատական մարմին էր։

Նման կացութիւն էր տիրում Խորհրդային Միութիւնում Ստալինի օրօք և այժմ էլ գրեթէ նոյն կացութիւնն է, գուցէ մի քիչ աւելի մեղմ, սակայն սկզբունքով նոյնը։ Իշխելու այս ձեւը բնորոշ է բոլոր արեւելեան բռնապետութիւնների համար և նա արմատապէս տարբերւում է եւրոպական վարչաձեւերից։ Այս վարչաձեւը ծնում է ղեկավարների անսահման սանձարձակութիւն, շքեղութիւն, կաշառակերութիւն, պճնանք, հարեմներ, ստրկութիւն ու բռնութիւն։

Վարչակարգը առաջ է բերում ահաւոր յետամնացութիւն գիտական բնագաւառում և ժողովրդի ողբերգական տնտեսական յետամնացութիւն։

Այսօր բազմաթիւ հասարակագէտներ ու տնտեսագէտներ, առաջին հերթին Թուրքիայում փորձում են պարզել Օսմանեան կայսրութեան տնտեսական յետամնացութեան բուն պատճառները, քանզի այդ յետամնացութիւնը այսօր էլ շարունակւում է, չնայած մի շարք այսպէս կոչւած ներքին յեղաշրջումների։

Թուրքական անցեալի քննադատութեամբ հանդէս են գալիս շատ թուրքական հեղինակներ, սակայն նրանցից ոչ մէկը չի համարձակւում քննադատել Թուրքիայի յետամնացութեան արմատները և Օսմանեան կայսրութեան արմատները։ Գուցէ բացառութիւն կարելի էր համարել թուրք համայնավար Հալիս Օհանի «Դրամատիրութեան զարգացումը Թուրքիայում» աշխատութիւնը, որը լոյս տեսաւ բուլղարերէնով և որտեղ հեղինակը մարքսիստական դիրքերից ցոյց է տալիս թուրքական աւատապետական հասարակարգի քայքայման ընթացքը։

Սակայն այս աշխատութեան մէջ էլ հեղինակը քննադատում է ոչ այնքան թուրքական աւատապետութեան էութիւնը, որքան ջանում է ապացուցել, թէ Թուրքիայի հասարակական զարգացումն էլ ընթացել է մարքսիզմի օրինաչափութիւնների, մասնաւորապէս պատմական նիւթապաշտութեան օրինաչափութիւնների հիման վրայ։ Թուրքական հեղինակները նախ փորձում են ապացուցել, որ թուրքական պատմութիւնը ունի իր յատուկ առանձնայատկութիւնները, որոնք բացակայում են բոլոր միւս ժողովուրդների պատմութիւններում։ Այս տեսակէտը մասնաւորապէս արտայայտում է պատմաբան Մենջերը։ Նա գրում է.

«Օսմանեան կայսրութեան հասարակական կարգը ուսումնասիրող պատմաբանները ոչ միայն չէին փորձում ընդհանրացումներ կատարել ընդհանուր պատմական օրինաչափութիւնների համաձայն, այլ հակառակը, ստիպւած էին ցոյց տալ, որ Թուրքիան և թուրքական պատմութիւնը տարբերւում է ուրիշ երկրների և բոլոր ուրիշ պատմութիւններից»։

Մէկ ուրիշ հեղինակի՝ Ջեմի կարծիքով, Օսմանեան հասարակական կարգը շատ լաւն էր ու յարմար թուրքերի համար և կայսրութիւնը զարգանում էր

իր յատուկ ճանապարհով այնքան ժամանակ, քանի դեռ չէր ընկել եւրոպական ազդեցութեան տակ: Նա կարծում էր, որ եւրոպական ազդեցութեան տակ տեղի ունեցաւ տնտեսութեան ազատականացումը, օրինականացուեց հողի սեփականութեան իրաւունքը, սկսուեց ազատ առեւտուրը ազատ շուկայի օրէնքներով և մի շարք այլ միջոցառումներ: Այս ամէնը, ըստ հեղինակի, քայքայեց կայսրութիւնը:

Ուրիշ խօսքով, այս հեղինակը գտնում է, որ Թուրքիան քայքայուեց հէնց այն պատճառով, որ երկիր թափանցեց եւրոպական մշակոյթը: Այս տեսակէտը պաշտպանում են շատ հեղինակներ, մասնաւորապէս պատմաբան Բարքանը, հասարակագէտ Ֆիշեկը, մասամբ Մենջերը և ուրիշներ:

Սակայն գոյութիւն ունի նաեւ ճիշտ հակառակ տեսակէտը, որը պաշտպանում են մի շարք պետական գործիչներ, բնական գիտութիւնների ներկայացուցչիներ և արուեստագէտներ: Նրանց տեսակէտը արտայայտում է դոկտոր Մումթախ Թուրղանը, որը կարծում է, որ Օսմանեան կայսրութեան և ներկայ Թուրքիայի յետամնացութեան բուն պատճառը Թուրքիայի ոչ-բաւարար եւրոպականացումն է:

Անշուշտ, այս տեսակէտը ուշադրութեան արժանի է: Բայց այս տեսակէտը իր մէջ չի պարունակում այն հարցի պատասխանը, թէ արդեօք կարո՞ղ էր և կարո՞ղ է եւրոպական մշակոյթը աւելի լայն տարածում գտնել Թուրքիայում:

Ինչպէս մենք տեսանք նախորդ գլխում, եւրոպական մշակոյթի բնորոշ գծերն էին՝ իրաւունքը, ինքնասահմանափակումը, գիտութիւնների արագ զարգացումը և մարդու արժանապատուութեան գնահատումը: Ի տարբերութիւն դրան, մահմեդական իրաւունքի մէջ մենք տեսնում ենք անհատի անսահման իշխանութիւն, որը հաշւի չի նստում մարդու արժանապատուութեան հետ և ծնում է կենցաղային շքեղութիւն: Իրեն զգացմունքների յանձնած հասարակարգը գրեթէ ամբողջովին թերագնահատում է գիտութիւնը, ուստի վարում է պարզ տնտեսութիւն: Արդեօք երկու մշակոյթների այս էական տարբերութիւնը չէ՞ որ անկարելի է դարձնում նրանց միութիւնը, առաւել եւս՝ համադրութիւնը: Կրէյ Բրիտոնը նախորդ յօդւածում նշած աշխատութեան մէջ գրում է.

«Նոյնիսկ ամենահիդէալիստական տրամադրութիւն ունեցող աշխարհաքաղաքացին պարտաւոր է հաշւի նստել այն իրողութեան հետ, որ մօտակայ սերունդների կեանքի ընթացքում մնացած աշխարհը կ'ընդօրինակի Արեւմուտքից նրա նիւթական պահանջները և Ֆորդը, արհեստական եղանակի սարքաւորումները և թերթերում տպւող բազմաթիւ ծաղրանկարները դուրս կը մղեն Կոնֆուցիուսին, Լաօ-Ցզիին և Բուդդային»:

Սակայն այդ բանը տեղի չունեցաւ: Հակառակը, մենք տեսանք, թէ ինչպէս Իրանում փլուեց եւրոպական օրինակով կառուցած շէնքը: Փլուեց Ֆորդի և արհեստական եղանակի սարքաւորումների հետ միասին և դուրս մղուած Եւրոպայի փոխարէն բեմ բարձրացաւ 80ամեայ Այաթոլլա Խոմէյնին ու կարգադրեց կանանց երեսները քողով ծածկել: Եւ կանայք ծածկեցին:

Այսօր դժւար է դատել, թէ ո՞րն է լաւ. կանանց ծածկւած երեսնե՞րը թէ «մինի փէշերը» և «սեռային շարժանկարները»: Դժւար է գնահատել, թէ որն է լաւ. խմիչքների արգե՞լքը թէ հարբեցողութեան ազատութիւնը: Սակայն մէկ բան պարզ է՝ նման արգելքները ոչ մի ընդհանուր բան չունեն եւրոպական մշակոյթի և իրաւակարգի հետ: Պարզուեց, որ Իրանի արեւմտասէրների բոլոր ջանքերը Իրանի մշակոյթը եւրոպականացնելու ուղղութեամբ՝ անցան ապարդիւն: Նման փորձեր բազմիցս կատարուեցին նաեւ Թուրքիայում:

16րդ դարի երկրորդ կէսերին երեւացին Թուրքիայի ներքին ճգնաժամի նշանները, իսկ 17րդ դարի կէսերին արդէն պարզ դարձաւ, որ տնտեսական, դրամական, պետական և զինուորական բնագաւառներում Թուրքիան անկում է ապրում: Կայսրութեան ամբողջական կործանման վտանգը ղեկավար շրջանակներում առաջացրեց վերանորոգումներ կատարելու ցանկութիւն:

Նման վերանորոգութեան առաջին լուրջ փորձը տեղի ունեցաւ Սուլթան Սելիմ Բ.ի (1789-1807) իշխանութեան օրօք: Հռչակւած վերափոխութիւնները ստացան «Նոր համակարգ» անունը: Ու չնայած նրան, որ շատ սահմանափակ էին այդ վերափոխութիւնները, նրանց դէմ լուրջ առարկեցին մահմեդական հոգեւորականները: «Նոր համակարգը» տապալուեց: Վերափոխութիւնների ձախողութիւնը ցոյց տուեց, որ Թուրքիան եւրոպական վարքագիծ ընդօրինակելու պատրաստ չէ:

1826 թւականին Սուլթան Մահմուդ Բ.ը նոյնպէս որոշ վերափոխումներ կատարեց: Մասնաւորապէս զինուորական վարիչներին նա փոխարինեց քաղաքային վարիչներով, ստեղծեց նախարարութիւններ, հիմնադրեց թուրքական առաջին թերթը: Այս միջոցառումները հող պատրաստեցին այսպէս կոչւած «Թանզիմաթ»ի համար, որը եղաւ Թուրքիայի կենսունակութեան բարձրացման ամենալուրջ փորձը: Սակայն այս փորձն էլ ապարդիւն անցաւ, որովհետեւ շատ ամուր էր կառչել Թուրքիան իր կրօնական աւանդութիւններին և շատ հեռու էր Եւրոպայից:

1876 թւականին Թուրքիայում տեղի ունեցաւ յեղաշրջում, որի հետեւանքով Սուլթան Աբդուլ Ազիզը գահընկէց եղաւ և իշխանութիւնը անցաւ Միդհատի և «Նոր օսմանների» ձեռքը: Աբդուլ Համիդ Բ.ը Միդհատին խոստացաւ եւրոպական երկրների օրինակով սահմանադրութիւն: Բայց իրականում Աբդուլ Համիդը նայում էր սահմանադրութեանը որպէս մի դիւանագիտական քայլի: Նա

հռչակեց Սահմանադրութիւնը 1876 թւականին Բալկանների հարցը քննարկող խորհրդաժողովը, նա Միդհատին զրկեց մեծ վեզիրի պաշտօնից թւականի յունուար ամսին, երբ փակուեց խորհրդաժողովը, նա Միդհատին զրկեց մեծ վիզիրի պաշտօնից և ցրեց սահմանադրութեամբ ստեղծուած խորհրդարանը: Թուրքիան եւրոպականացնելու այս փորձն էլ անցաւ ապարդիւն:

19րդ դարի վերջերին ծնունդ առաւ Երիտթուրքերի շարժումը: Նրա մասնակիցներն էին մտաւորականութիւնը, սպաները և բժիշկները: Երիտասարդ թուրքերի գլխաւոր քաղաքական կազմակերպութիւնը դարձաւ «Միասնութիւն և առաջադիմութիւն» կոմիտէն: 1908 թւականին Երիտասարդ թուրքերը անցան իշխանութեան գլուխ: Նրանք վերականգնեցին սահմանադրութիւնը և խորհրդարանը, սակայն իրենք սկսեցին դաժանօրէն ճնշել բոլոր ազատութիւնները, մանաւանդ Թուրքիայում ապրող ազգային փոքրամասնութիւնների ու ոչ մահմեդական ժողովուրդների ազատութիւնները:

Թէ որքան հեռու էին Երիտասարդ թուրքերը Եւրոպայից, վկայում է Թալէաթ Փաշայի ճառը, որը նա արտասանեց Սալոնիկում տեղական կոմիտէի անդամների առջեւ: Անգլիական փոխ-հիւպատոս Արթուր Բ. Հենրիի վկայութեամբ, իր ելոյթում Թալէաթ Փաշան ասել է հետեւեալը.

«Դուք գիտէք, որ Սահմանադրութեան համաձայն՝ հաստատուած է մահմեդականների և **գեաուր**ների հաւասարութիւնը, բայց դուք բոլորդ միասին և ամէն մէկդ առանձին-առանձին գիտէք և զգում էք, որ դա անիրականանալի ցնորք է: Շարիաթը, մեր նախորդ պատմութիւնը, հարիւր հազարաւոր մահմեդականների և նոյնիսկ իրենց՝ **գեաուր**ների զգացմունքները, որոնք յամառօրէն դիմադրում են իրենց օսմանացման ընթացքին, մեծ խոչընդոտներ են իրական հաւասարութիւն հաստատելու համար: **Գեաուր**ներին հաւատարիմ օսմանացիներ դարձնելու մեր բոլոր փորձերը անցան ապարդիւն: Եւ նման բոլոր փորձերը ապարդիւն կ'անցնեն այնքան ժամանակ, քանի դեռ Բալկանեան թերակղզու փոքրիկ ու անկախ պետութիւնները հնարաւորութիւն ունեն Մակեդոնիայի թերակղզում անջատական գաղափարներ տարածել: Ուստի խօսք չի կարող լինել հաւասարութեան մասին, քանի դեռ մենք յաջողութիւն չենք ունեցել մեր օսմանացման խնդրում»:

Ուրիշ խօսքով, Թալէաթը մէկ անգամ եւս հաստատում էր, որ «նրանք բոլորը միասին և ամէն մէկը առանձին-առանձին» եւրոպացիներ չէին, որովհետեւ Շարիաթը և իրենց նախորդ ամբողջ պատմութիւնը հարիւր հազարաւոր մահմեդականների զգացմունքների հետ միասին ոչ մի ընդհանուր բան չունէին Եւրոպայի հետ:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեակին Օսմանեան կայսրութեան իշխանաւորները կազմակերպեցին 20րդ դարի առաջին ցեղասպա-

նութիւնը, որի զոհերը դարձան մօտաւորապէս 1,5 միլիոն հայեր։ Բազմաթիւ փաստաթղթեր վկայում են այն մասին, որ այսպէս կոչուած առաջադէմ թուրքերի դաժանութիւնը շատ ու շատ գերազանցեց սուլթանների դաժանութիւնը և սահմանադրական կոչւող Թուրքիան էլ աւելի հեռացաւ Եւրոպայից։

1979 թւականի ՄԱԿի Մարդկային Իրաւանց Յանձնաժողովը ճանաչեց թուրքերի կողմից գործադրուած ցեղասպանութիւնը որպէս 20րդ դարի առաջին ցեղասպանութիւն։

Առաջին Համաշխարհային պատերազմից յետոյ Օսմանեան կայսրութիւնը տապալուեց և նրա փլատակների վրայ զօրավար Մուստաֆա Քեմալը փորձեց ստեղծել օրինապաշտ հասարակարգ։ Հէնց նա էր, որ դրեց այսօրւայ Թուրքիայի հիմքը։

Որքանո՞վ ժամանակակից Թուրքիան կարող է եւրոպական պետութիւն համարուել։ Պէտք է ասել, որ այս ուղղութեամբ Մուստաֆա Քեմալը շատ բան արեց։ Առաջին Համաշխարհային պատերազմի կրակներում և Ռուսական յեղափոխութեան փոթորիկներում ծնւած խորհրդարանական Թուրքիան արտաքնապէս ունի իրաւական երկրի բոլոր նշանները։ 1924 թւականին հաստատւած Թուրքիայի սահմանադրութիւնը որոշ փոփոխութիւններով գործում է մինչեւ այսօր։ Թուրքիայի բարձրագոյն իշխանութիւնը պատկանում է խորհրդարանին՝ Մեջլիսին, որը ընտրւում է ուղղակի քւէարկութեամբ երկսեռ քաղաքացիների կողմից։ Աւելին, իրաւական իմաստով Թուրքիան շատ աւելի առաջ անցաւ իր մեծ հարեւան Խորհրդային Միութիւնից, որի հետ միասին և որի օգնութեամբ ծնւեց։

Այսօրւայ Թուրքիայի քաղաքացիները կարողանում են ազատ դուրս գալ երկրից արտասահման, կարողանում են ստեղծել տարբեր կուսակցութիւններ և հրատարակել տարբեր թերթեր, կազմակերպում են գործադուլներ և այլն։ Սակայն, այնուամենայնիւ, բովանդակութեամբ Թուրքիան շատ հեռու է եւրոպական երկիր լինելուց։

Նախ և առաջ պէտք է նշել, որ Քեմալական շարժումը ոչ թէ երկիրը եւրոպականացնելու շարժում էր, այլ երկիրը քաղաքականապէս փրկելու շարժում։ Ու պէտք է խոստովանել, որ Քեմալը իսկապէս կարողացաւ փրկել Թուրքիան այն քայքայումից, որը նախատեսւած էր Սեւրի դաշնագրով։ Եւրոպացիների առջեւ նա կարողացաւ խաղալ երկրի եւրոպականացման և ժողովրդավարականացման խաղաքարտը, իսկ Լենինի հետ խաղաց համայնավարութիւն, բայց իրականում խաբեց երկուսին էլ։

Անցնելով իշխանութեան գլուխ, նա սկզբից գնդակահարեց համայնավարներին ,իսկ յետոյ սկսեց լուսաւորութեան աշխատանք, որը կայանում էր մահմեդական օրէնքներից հրաժարւելու մէջ։ Նրա բոլոր վերափոխումները և

առաջին հերթին լատինական տառերի ընդունումը՝ փախուստ էր Ղուրանից: Սակայն ժողովրդավարութիւն, որպէս այդպիսին, չկար: Միակուսակցութիւնը պահպանուեց և իշխանութիւնը փաստօրէն գտնուում էր բանակի ձեռքում:

1945 թականին միայն Իսմետ Ինէօնիւն հռչակեց բազմակուսակցականութիւնը: Եւ հէնց այն ժամանակ պարզուեց, որ Քեմալին չյաջողուեց հեռանալ մահմեդական իրաւունքից: Մենդերեսի Դեմոկրատ կուսակցութիւնը, յենելով ժողովրդի կրօնական զգացմունքների վրայ, եկաւ իշխանութեան գլուխ: Այստեղ էր, որ տեղի ունեցաւ այն, ինչը այսօր կարելի է անուանել «Իրանի երեւոյթ»:

Ճիշտ այնպէս, ինչպէս Այաթոլլա Խոմէյնիի կրօնամոլ կողմնակիցները, առանց մէկ փամփուշտ արձակելու, տապալեցին Շահի անսասան թւացող մեքենան, այնպէս էլ Թուրքիայում, Քեմալից յետոյ ձայների մեծամասնութեամբ իշխանութեան գլուխ եկան նրանք, ովքեր վերականգնեցին կանանց երեսների քողերը, արաբերէնով աղօթքները և այն ամէնը, ինչ կրկին հեռացնում էր Թուրքիան Եւրոպայից:

1960 թականի զինուորական յեղաշրջումը, որի հետեւանքով Մենդերեսը կախաղան բարձրացուեց, կարելի է համեմատել մահմեդական օրէնքներից հրաժարուելու հերթական փորձ: Ու չնայած նրան, որ բանակը հանդէս էր գալիս որպէս Քեմալի հետեւորդը, այս անգամ նրանք աւելի լաւ էին հասկանում, որ Թուրքիան ժողովրդավարութեան պատրաստ չէ: Հետագայ դէպքերը ցոյց տուեցին, որ նրանք ճիշտ էին:

Արդէն մեր օրերին մենք տեսնում ենք, որ վերջին երկու տարիներին Թուրքիայում տեղի ունեցան աւելի քան 3000 քաղաքական ահաբեկչութիւններ: Տնտեսական իմաստով երկիրը բացարձակապէս քայքայւում է: Նրա գոյութեան միակ աղբիւրը նրա աշխարհագրական դիրքն է, որի ռազմագիտական նշանակութեան համար նրան կերակրում են կա՛մ մէկը կամ էլ միւսը: Հէնց այդ պատճառով է, որ Եւրոպայի համար Թուրքիան շատ անվստահելի դաշնակից է: Որեւէ ժամանակ, ինչպէս եղել է բազմիցս, նա կարող է նետուել այն կողմը, որը իրեն շատ կը վճարի, իսկ Խորհրդային Միութիւնը, ինչպէս յայտնի է, վճարել գիտէ:

Ոչինչ չի փոխուել նաեւ ժողովրդի կենցաղում: Այս այսպէս կոչուած եւրոպական երկրի 70 տոկոսը զբաղուած է գիւղատնտեսութեամբ: Սկզբունքօրէն պահպանել է բազմակնութիւնը, արեան վրէժը և մոլլաների ոչ-պաշտօնական իշխանութիւնը: Բազմակուսակցականութիւնը կրում է ձեւական բնոյթ, որովհետեւ իրական իշխանութիւնը գտնուում է բանակի ձեռքում, որը անտեսանելիօրէն ղեկավարում է երկիրը:

Այս ամէնը խօսում է այն մասին, որ եւրոպական ընտանիքի մէջ Թուրքիան մտցնելու Քեմալի փորձը, բոլոր նախորդ փորձերի նման, անցաւ ապարդիւն:

Առաւել եւս անկարելի է նման բան կատարել ներկայումս, երբ մահմեդական իրաւունքը սկսում է վերելք ապրել։

Գուցէ մօտենում են այն ժամանակները, երբ եւրոպացի լինելը շատ պատուաւոր բան չի լինելու։ Եւ հէնց այս առիթով էլ շատ հետաքրքրական է քննարկել՝ Թուրքիա-Ռուսաստան-Արեւմուտք փոխյարաբերութեան խնդիրը։

ՀԱՅԵՐԸ

Բ. Միւնիշ

Հայկական խնդիրը Դաւիթ Հոտհամը շօշափում է **«Բիւզանդիոն, քրդեր, հայեր»** վերնագիրը կրող գլխի մէջ։ Անշուշտ այդ խնդիրը շատ աւելի լուրջ է, քան հեղինակի կողմից ներկայացուած է և հայերը շատ աւելի մեծ ուշադրութեան են արժանի, քան այն ուշադրութիւնն է, որ նրանց նկատմամբ ցուցաբերում է Եւրոպան և քաղաքակիրթ աշխարհը։

Հայերը Անատոլիայի ամենահին բնակիչներն են։ Վստահօրէն կարելի է ասել, որ նրանք ապրում էին այնտեղ, իրենց հայրենիքում, միշտ։ Այս տաղանդաւոր ժողովուրդը ունի 2000 տարւայ ազգային ինքնագիտակցութիւն և աշխարհի առաջին քրիստոնեայ ժողովուրդն է։ Հայ ժողովրդի ծագման և նրա հայրենիքի հարցը միշտ էլ հետաքրքրութեան առարկայ է եղել գիտական աշխարհի համար։

Սակայն այդ հարցերի ուսումնասիրութիւնը բարդանում էր նրանով, որ մարդաբանական, ազգագրական և մշակութային պատմութեան տւեալները չէին համընկնում լեզւական տւեալների հետ։ Հնէաբանները նշում էին, որ Հայկական բարձրաւանդակում տեղի ունեցած պեղումների ժամանակ գտնւել են գանգեր, որոնք վերագրւում են մեր թւարկութիւնից 4000 տարի առաջ ապրող **արմենոյդ**ներին (հայատիպ)։ Մշակոյթի պատմութեան մասնագէտները եւս նշում են, որ Հայկական բարձրաւանդակում 4-5 հազար տարի առաջ գոյութիւն է ունեցել և անընդհատ զարգացել է միայն մէկ մշակոյթ։ Հայկական առասպելները և վիպագրութիւնը վկայում են, որ հայերը Ասորեստանի և Բաբելոնի հարեւաններն էին։

Այս ամէնը խօսում է այն մասին ,որ մեր թւարկութիւնից 4000 տարի առաջ Հայկական բարձաւանդակում ապրել են հայեր։ Սակայն նման հարցերում վճռական դերը պատկանում է լեզւաբանական տւեալներին։ Եւ ահա, վերջերս, խորհրդահայ գիտնական պրոֆեսոր Իշխանեանը հրատարակեց մի յօդւած, որը լոյս է սփռում այս հարցի վրայ։ Այստեղ մենք մէջբերում ենք պրոֆեսոր Իշխանեանի հիմնական եզրակացութիւնները։

Խօսելով հայերի մասին ,մենք նախ և առաջ նկատի ունենք հայերէնով խօսող մարդկանց: Հայերէն լեզուն, բացելով իր հազարամեայ գաղտնիքները, պէտք է ասէր մեզ, խօսե՞լ են արդեօք այդ լեզուով Հայկական բարձրաւանդակում 6000 տարի առաջ ապրող մարդիկ:

Ինչպէս յայտնի է, հայ լեզուն պատկանում է հնդեւրոպական խմբին: Լեզուագէտներից շատերը ենթադրում էին որ հնդեւրոպացիների հայրենիքը գտնւում էր Եւրոպայի հիւսիսային մասում: Յետոյ գիտնականները անցան Դանուբի հովիտը՝ մինչեւ Բալկաններ: Յետոյ սկսւեցին ենթադրութիւններ արւել Հայկական բարձրաւանդակի վերաբերեալ և վերջապէս հետազօտողները ապացուցեցին, որ հնդեւրոպացիները ապրել են հէնց Հայկական բարձրաւանդակում և որ նրանց հնագոյն հայրենիքը և մշակոյթը պատկանում է Կուր-Արաքսի մշակոյթին:

Նորագոյն լեզւաբանական ուսումնասիրութիւնները հաստատեցին հնէաբանների և մարդաբանների այն տեսակէտը, որ հայերը Հայկական բարձրաւանդակի բնիկներն են:

Հայաստանը աշխարհի հնագոյն երկրներից մէկն է, որը ունի մշակութային սքանչելի կոթողներ: Հայկական մշակոյթի խոշորագոյն մասնագէտները գտնում են, որ Հայաստանի պատմութիւնը ոչ-պակաս ուշադրութեան է արժանի, քան բոլոր այն նշանաւոր ժողովուրդների պատմութիւնը, որոնք մարդկութեան մշակոյթի մէջ ինքնուրոյն ներդրում են կատարել, չբացառելով ոչ եգիպտացիներին, ոչ հելլեններին, ոչ հռոմէացիներին և ոչ էլ ժամանակակից Եւրոպայի ժողովուրդներին:

Հայաստանի յուշարձանները ընդգրկում են հին քարէ դարից մինչեւ մեր օրերը ընկնող ժամանակաշրջանը: Շենգաւիթի, Էլարի, Մեծամորի և այլ հայկական վայրերի պեղումները վկայում են, որ Հայկական բարձրաւանդակում, մեր թւարկութիւնից առաջ երկրորդ հազարամեակում զարգացել են գիւղատնտեսութիւնը, հողագործութիւնը, անասնապահութիւնը և այլն: Երկրորդ հազարամեակում մեծ զարգացում է գտնում բրոնզի մշակոյթը, իսկ յետոյ էլ երկաթի արտադրութիւնը, որի հետեւանքով էլ ուժեղանում են տնտեսական կապերը առանձին ցեղերի միջեւ և առաջանում են Ուրարտու, Նայիրի և այլ միութիւններ:

Մեր թւարկութիւնից առաջ 9րդ դարում արդէն ստեղծւում է աշխարհի հնագոյն պետութիւններից մէկը՝ Ուրարտուն, որի մայրաքաղաքն էր Տուշպան (Վանը): Տարբեր ժամանակներում Ուրարտուի տնտեսական և քաղաքական խոշոր կենտրոններն են եղել Էրեբունին (Երևան), Արգիշտիխինիլին և Թեյշեբաինին:

Հայկական բարձրաւանդակի արեւմտեան մասում ապրող հայերը և արմէնները ցեղակիցներ էին, ունէին կենցաղային, լեզւական և աւանդական շատ նմանութիւններ: Կամաց-կամաց այս երկու ցեղերը կազմեցին մի միութիւն, որը դարձաւ հայ ժողովրդի ձեւաւորման հիմքը: Արդէն 6րդ դարի սկզբներին, Ուրարտուի անկումից յետոյ, ծնունդ առաւ հայկական Արմինա պետութիւնը, որը մեծ նշանակութիւն ունեցաւ հայ ժողովրդի պատմութեան մէջ:

Քսենոփոնի վկայութեամբ (5րդ դար՝ մեր թւարկութիւնից առաջ) Հայաստանում շատ զարգացած էր հողագործութիւնը,- հայերը աճեցնում էին հացահատիկ, խաղող և այլ պտուղներ: Գիւղերում պատրաստում էին գինի և գարեջուր: Քաղաքներում զարգանում էր արհեստը և շինարարութիւնը:

Մեր թւարկութիւնից առաջ 189 թւականին հայոց թագաւոր Արտաշէս Առաջինը դարձաւ Արտաշէսեան արքայատոհմի հիմնադիրը և Արտաշատը դարձաւ Մեծ Հայաստանի մայրաքաղաքը: Շուտով Արտաշատը դարձաւ երկրի տնտեսական ու մշակութային կենտրոնը և մշակութային առեւտրի կարեւոր հանգոյցներից մէկը:

Տիգրան Բ.ի ժամանակ Հայաստանը տնտեսական և մշակութային մեծ զարգացում ապրեց: Նա զգալի դեր կատարեց հելլենական մշակոյթի ընդհանուր զարգացման գործում: 80ական թւականներին (մեր թւարկութիւնից առաջ) Տիգրան Բ.ը հիմնեց Հայաստանի նոր մայրաքաղաք Տիգրանակերտը: Այս քաղաքի շինութեանը մասնակցեցին ուրիշ երկրներից բերւած լաւագոյն վարպետներ:

Հռոմէական պատմաբան Աբիանի վկայութեամբ հելլենական շատ քաղաքներից Տիգրանակերտ բերւեցին 300.000 բնակիչներ: Շքեղ ամրոցներով շրջապատւած Տիգրանակերտը աշխարհի ամենագեղեցիկ քաղաքներից մէկն էր: Առաջին դարի կէսերին Տիգրանի տիրապետութիւնը մեծ ազդեցութիւն ձեռք բերեց և Փոքր Ասիայում դարձաւ Հռոմի մրցակիցը:

Հռոմին և պարթեւներին դիմադրելու համար Տիգրանը դաշինք կնքեց Պոնտոսի թագաւոր Միհրդատի հետ: Շուտով նրանց միացան վրացիները և աղուանները: Տիգրանի որդի Արտաւազդ Բ.ի ժամանակ, Հայաստանում յատուկ զարգացում ապրեց հելլենական թատերգական մշակոյթը: Արտաշատի թատրոնում բեմադրւում էին հայկական և յունական թատերգութիւններ: Պէտք է ասել, որ ստրկատիրական վարչակարգը Հայաստանում չստացաւ այն դասական ձեւը, որը կար Յունաստանում և Հռոմում: Արդէն 3-4 դարերում, Արշակունիների թագաւորութեան ժամանակ Հայաստանում ստեղծւեց աւատապետական հասարակարգ: Դրան նպաստեց և այդ ընթացքը արագացրեց նաեւ քրիստոնէութեան ընդունումը, որը 4րդ դարի սկզբին դարձաւ

պետական կրօն: Աւատապետականութեան հետ միասին ստեղծուեց աւատական պառակտուածութիւն, որը քաղաքականապէս և տնտեսապէս թուլացրեց երկիրը: Օգտուելով այդ հանգամանքից, Պարսկաստանը և Բիւզանդիոնը 387 թականին բաժանեցին Հայաստանը իրար մէջ: 451 թականին հայ ժողովուրդը զօրավար Վարդան Մամիկոնեանի ղեկավարութեամբ կրօնական պատերազմի դուրս եկաւ Պարսկաստանի դէմ և պահպանեց քրիստոնէութիւնը: Իսկ 481-485 թականներին ժողովուրդը Վահան Մամիկոնեանի և Սահակ Բագրատունու ղեկավարութեամբ սկսեց ազատագրական պայքարը, որից յետոյ պարսից թագաւորը ստիպուած եղաւ հաշտութիւն կնքել հայերի հետ:

Հայ մշակոյթի զարգացման մէջ յատուկ դեր կատարեց Մեսրոպ Մաշտոցը, որը 405 թականին ստեղծեց հայկական այբուբենը: Պատմաբան Մովսէս Խորենացին վկայում է, որ հայ ժողովուրդը մինչեւ այդ օգտագործում էր ուրիշ ժողովուրդների տառերը, սակայն ունէր սեփական գրականութիւն, որը կորսւեց ու ոչնչացւեց քրիստոնէութիւն ընդունելուց յետոյ:

Հայաստանում բացւեցին դպրոցներ, որտեղ դասաւանդում էին մայրենի լեզւով: Մեծ զարգացում ապրեց թարգմանչական գրականութիւնը, բնական գիտութիւնները, փիլիսոփայութիւնը և պատմութիւնը: Հայերէնի էին թարգմանւում Յունաստանի դասական հեղինակները՝ Արիստոտելը, Պղատոնը, Զենոնը և ուրիշներ:

5-7րդ դարերում պատմական բեմ բարձրացան գիտութեան և մշակոյթի մի շարք փայլուն հայ մտաւորականներ: Նրանց մէջ առանձնայատուկ տեղ են գրաւում պատմաբան Կորիւնը, Փաւստոս Բուզանդը, Ագաթանգեղոսը, Եղիշէն, Մովսէս Խորենացին, Ղազար Փարպեցին, Դաւիթ Անյաղթը, Եզնիկ Կողբացին, Անանիա Շիրակացին և ուրիշներ:

Մինչ այդ, Հայաստանին սկսեցին սպառնալ նոր բռնագրաւիչներ: 640 թականին Հայաստան ներխուժեցին արաբները և հրով ու սրով սկսեցին քանդել նրա քաղաքներն ու գիւղերը: Միայն Դւին քաղաքում սպանւեցին 13 հազար մարդ և 35 հազար գերի վերցւեցին: Գրեթէ 100 տարի փոփոխական յաջողութեամբ հայերը պայքարում էին օտարների դէմ, սակայն 8րդ դարի սկզբին արաբներին յաջողւեց վերջնականապէս գրաւել Հայաստանը և հաստատել այնտեղ Խալիֆայի իշխանութիւնը:

Սակայն ո՛չ սեփական կրօնը և ոչ էլ մշակոյթը արաբները չկարողացան պարտադրել հայերին: Եւ քաղաքական իմաստով էլ արաբների իշխանութիւնը բացարձակ չէր: Հայերը այնքան յաճախ էին ապստամբութիւններ բարձրացնում, որ ի վերջոյ, 922 թականին խալիֆայութիւնը ստիպւած եղաւ զիջումներ կատարել: Նա հայոց թագաւոր Աշոտ Բ.ին թագ ուղարկեց և ճանաչեց նրա «իշխանաց իշխան» կոչումը:

10րդ դարի վերջերին և 11րդ դարի սկզբին Հայաստանը զգալի վերելք ապրեց մշակութային և տնտեսական բնագաւառներում։ Հայաստանի մայրաքաղաքը դարձաւ Անի քաղաքը, որի փլատակները այսօր էլ լի են ճարտարապետական սքանչելի կոթողներով։

Հայաստանի տնտեսական և մշակութային զարգացումը կանգ առաւ սելջուկների արշաւանքների ժամանակ (1064)։ Սելջուկները քանդեցին Հայաստանի ծաղկուն մայրաքաղաք Անին։ Բնակչութեան մեծ մասը ոչնչացուեց, իսկ ում յաջողուեց փախչել, տեղափոխուեց Բիւզանդիոնի արեւմտեան մասերը և Կիլիկիա։ Կիլիկիայում ստեղծուեց հայկական նոր թագաւորութիւն, որը գոյատեւեց մինչեւ 1375 թւականը և որը կործանուեց Եգիպտոսի սուլթանի հարուածների տակ։

Այն բանից յետոյ, երբ Անատոլիայում երեւացին թուրքերը, Հայաստանը դարձաւ Թուրքիայի և Պարսկաստանի անվերջ կռիւների թատերաբեմ։ Նման արշաւանքների մէկի մասին մի թուրք պատմաբան 1533 թւականին գրում էր (այսօր արդէն չեն գրում) հետեւեալը. «Սուլթանի զօրքերը մրջիւնների նման յարձակուեցին այս երկրի վրայ։ Շորազիալի շրջանում նրանք այնպիսի աւերներ գործեցին, որ տները հաւասարեցրին հողին։ Որտեղից որ անցնում էին սուլթանի զօրքերը, այնտեղ չէր մնում ոչ մի շինութիւն։ Նրանք միայն չարիք են գործում, մարդկանց գերի են վերցնում, իսկ ով քայլել չի կարողանում՝ սպանում են»։

1539 թւականին Տիգրանակերտի պայմանագրով Հայաստանը բաժանուեց երկու մասի։ Արեւմտեան Հայաստանը անցաւ Թուրքիային, իսկ Արեւելեանը՝ Պարսկաստանին։ Այն օրից ստեղծուեց արեւմտահայ և արեւելահայ բաժանումը։ Եւ այն օրից մինչեւ 1918 թւականը հայութիւնը զրկուեց պետականութիւնից։ Սակայն անհրաժեշտ է նշել, որ զրկուելով պետականութիւնից, նրանք պետական գործունէութեան իրաւունքը յանձնեցին եկեղեցուն և կարողացան պահպանել ազգային ինքնագիտակցութիւնը, ազգային միասնութիւնը և ազգային անկախութիւնը կրօնական ու մշակութային իմաստով։

Սակայն թէ՛ արեւելեան և թէ արեւմտեան հայութիւնը ենթարկւում էր հալածանքների։ Առանձնապէս դաժան էր հալածանքը Թուրքիայում։ Հասարակական և ազգային հալածանքները ընթանում էին ամենազարհուրելի և ստոր ձեւերով։ Սուլթանների սանձարձակ կամայականութիւնը սահման չունէր։ Հայերը մշտապէս կանգնած էին ջարդի և թալանի վտանգի առջեւ։

Ռուս զօրավար Լիխուտինը, որը 1853-1854 թւականներին եղաւ Արեւմտեան Հայաստանում, գրում էր. «Հայերի, ինչպէս նաեւ Թուրքիայի մնացած քրիստոնեաների ճակատագիրը ողբերգական է։ Ես տեսայ քթերը և ականջ-

ները կտրւած հայեր, որոնց պատժել էին ոչ թէ դատարանով, այլ մի հարուստ թուրքի կարգադրութեամբ: Հայերը մշտապէս անհանգիստ վիճակում են»:

Այս պայմաններում, Օսմանեան կայսրութեան հայերի մէջ բնականաբար ծնունդ առաւ ազատութեան և ազգային իրաւունքների պաշտպանութեան ձգտումը: Հալածանքներից փրկւելու ճանապարհներ որոնելով, հայերը դիմեցին ինքնապաշտպանութեան:

Ռուսների օգնութեամբ սերբերը, յոյները և բուլղարները կարողացան դուրս գալ թուրքական լծի տակից և դա ոգեւորեց նաեւ հայերին: Թէ՛ արեւմտեան և թէ արեւելեան հայութիւնը բնականօրէն բռնեց ռուսական կողմնորոշում, որը շատ թանկ նստեց հայերի վրայ: Սուլթանի կառավարութիւնը գործում էր հրով ու սրով: Հայկական ազգային հարցը արդէն օրակարգի հարց էր դարձել, սակայն այդ հարցը լուծելու համար, թուրքական կառավարութիւնը գիտէր միայն մէկ ճանապարհ՝ զանգւածային ջարդ և ժողովրդի բնաջնջում:

Բեռլինի վեհաժողովից յետոյ սուլթան Աբդուլ Համիդը բազմիցս յայտարարել էր, որ Հայկական հարցը լուծելու համար անհրաժեշտ է ոչնչացնել հայ ժողովրդին:

1882 թւականին Վիեննայի ռուսական հիւպատոսի պաշտօնակատարը հաղորդում էր Կոստանդնուպոլսի դեսպանին հետեւեալը.

«Բարձրաստիճան պաշտօնեաները բացայայտօրէն արտայայտւում են այն մասին, որ հայերը պատրաստում են երկրորդ Բուլղարիա և որ թուրքերը, դառը փորձից ելնելով, կը կարողանան խեղդել պետութեան համար վտանգաւոր այդ տարրը և միանգամ ընդմիշտ վերջ տալ Հայկական հարցին»:

Հաշւի առնելով այն հանգամանքը, որ հայերի բնաջնջման քաղաքականութիւնը Օսմանեան կայսրութեան ղեկավարները սկսեցին անցեալ դարի 90ական թւականներին, այն տեսակէտը, թէ հայերի ջարդը կապւած էր Առաջին Համաշխարհային պատերազմի նախօրեակին նրանց «դաւաճանութեան» հետ, ոչ մի հիմք չունի:

1894 թւականին Սասունում ոչնչացուեցին 10.000 հայեր: 1895 թւականին Կոստանդնուպոլսում, Տրապիզոնում, Էրզրումում, Մարաշում, Մեբաստիայում, Վանում, Դիարբեքիրում և այլ քաղաքներում ոչնչացուեցին մօտաւորապէս 100.000 հայեր: Սակայն այս ամէնը ողբերգութեան միայն սկիզբն էր: Բուն ողբերգութիւնը սկսւեց Երիտասարդ Թուրքերի իշխանութեան գլուխ անցնելուց յետոյ:

Այս ողբերգութիւնը սարսափելի էր, նմանը հազւադէպ կարելի է գտնել պատմութեան խորքերում: Մինչեւ Հիտլերը, շատ քիչ ժողովուրդներ այնքան մեծ զոհեր տւեցին, որքան որ հայերը և շատ քիչ երկրներում այնքան արիւն թափւեց, որքան որ Հայաստանում:

Արդէն 1909 թւի Ապրիլ ամսին Երիտասարդ Թուրքերը Ադանայում ոչընչացրին 30.000 մարդ: Գերմանական դեսպան Վանգէյնհամը, որը սերտ կապերի մէջ էր Երիտասարդ Թուրքերի հետ, 1914 թւի յունիս ամսին զեկուցում էր իր կառավարութեանը, որ թուրքական կառավարութիւնը իսկապէս նպատակ ունի հայերին ոչնչացնելու:

Հայերի զանգւածային ջարդերը Երիտթուրքերը իրականացրին աներեւակայելի դաժանութեամբ: Ֆրանսիայի յայտնի հրապարակագիր Անրի Բարբին, որը 1916 թւականին եղաւ Արեւմտեան Հայաստանում, իր ճամբորդութեան նոտագրութիւններում նշում է հետեւեալը.

«Նա, ով այսօր ճամբորդում է դատարկւած Հայաստանով, չի կարող չցնցւել. այնքան պերճախօս են այստեղի փլատակները և մահը: Չկայ ոչ մէկ ծառ, ոչ մէկ ժայռ, ոչ մէկ խոտ, որը պղծւած չլինի թափւած արիւնով: Չկայ ոչ մէկ գետ կամ առւակ, որը դէպի յաւերժութիւն տարած չլինի հարիւրաւոր դիակներ: Չկայ ոչ մէկ կիրճ, ոչ մէկ անդունդ, որը բաց գերեզման չլինի և որի յատակին չերեւան սպանւածների գանգերն ու ոսկորները, որովհետեւ սպանողները ժամանակ չունէին իրենց զոհերին թաղելու համար: Այս ծաղկուն շրջանում, որտեղ ժամանակին ապրում էին հայերը, այսօր անմարդաբնակ անապատի է վերածւած»:

Հայերի ցեղասպանութիւնը պատկանում է պատմական այն ոճրերգութիւններին, որոնց պատճառների հասարակական և պատմական վերլուծութիւնը աւելորդ է: Կան այնպիսի յանցանքներ, որոնք ըստ էութեան բացարձակ են, ուստի վերլուծութիւնների կարիք չունեն, առաւել եւս յանցանքը մեղմացնելու ուղղութեամբ: Նման ոճրագործութիւնները պէտք է դատապարտւեն անվերապահօրէն և ամբողջովին:

Սակայն այդ բանը չարւեց ոչ թուրքերի և ոչ էլ մարդկութեան կողմից: «Հայկական Նիւրենբերգը տեղի չունեցաւ», գրում է գերմանացի պատմաբան Պետեր Լանէն իր «20րդ դարի առաջին ցեղասպանութիւնը» գրքում: Եւ, անշուշտ, նա իրաւացի է:

Մինչեւ այսօր, 1,5 միլիոն զոհեր խլած 20րդ դարի առաջին ցեղասպանութիւնը մնում է առանց դատապարտւելու: Իսկ եթէ ժամանակին հայերի ցեղասպանութիւնը դատապարտւէր այն վճռականութեամբ, ինչպէս դա արւեց երկրորդ՝ հրէական ցեղասպանութեան վերաբերեալ, գուցէ այս երկրորդը տեղի չունենար: Հայերը ստիպւած եղան սեփական ուժերով կազմակերպել այդ Նիւրենբերգը, մահապատժի ենթարկելով ցեղասպանութեան գրեթէ բոլոր կազմակերպիչներին: Եւ ապա հետաքրքրական մի նրբութիւն:

Բեռլինում, Շարլոտենբուրգ հրապարակի վրայ հայ ահաբեկիչը գնդակահարում է ցեղասպանութեան գլխաւոր հեղինակ Թալէաթ փաշային: Գերմա-

նական դատարանը ազատ է արձակում ահաբեկչին, իսկ արդէն Քեմալից յետոյ, մարդասպան-նախարարի դիակը տեղափոխւում է Թուրքիա և պատւով հողին յանձնւում:

Մի՞թէ միայն այս փաստը չի խօսում այն մասին, որ այսօրւայ Թուրքիան ոչ միայն չի դատապարտում, այլ մի տեսակ արդարացնում է հայերին բնաջնջելու փորձը:

Սակայն հայերին ոչնչացնել չյաջողւեց: Բարձրացնելով ազգային ազատագրական պայքարի դրօշը, արեւմտեան և արեւելեան հայութիւնը միասնական ճիգերով 1918 թւականին փայլուն յաղթանակ տարաւ թուրքական կանոնաւոր բանակի դէմ Սարդարապատում և 1918 թի Մայիսի 28ին հռչակեց Հայաստանի անկախ հանրապետութիւնը, որը մի քանի տարի յետոյ խորհրդայնացաւ և գոյութիւն ունի մինչեւ այսօր՝ Խ. Միութեան կազմի մէջ:

Խորհրդային Հայաստանը գրաւում է մօտաւորապէս 30.000 քառակուսի կիլոմետր տարածութիւն և այդ տարածութեան վրայ ապրում է 3 միլիոն բնակիչ, որի 90 տոկոսը հայեր են: Խ. Միութիւնում Հայաստանից դուրս ապրում են 1.5 միլիոն հայեր, հիմնականում Վրաստանում, Ադրբեջանում և Ռուսաստանում: Արտասահմանում ապրում են մօտաւորապէս 2 միլիոն հայեր: Նրանք կենտրոնացած են Լիբանանում, Իրանում, Միացեալ Նահանգներում, Կանադայում և Հարաւային Ամերիկայում:

Գոյութիւն ունի՞ արդեօք այսօր Հայկական հարց: Այո, անշուշտ: Այս հարցը գոյութիւն ունի թէ՛ բարոյական և թէ քաղաքական իմաստով: Ինչ վերաբերում է Հայկական հարցի բարոյական կողմին, ապա նա անմիջականօրէն կապւած է ցեղասպանութեան հետ և պահանջում է ցեղասպանութեան դատապարտումը Թուրքիայի, ՄԱԿի և այլ երկրների կողմից: Հարցի քաղաքական կողմը կապւած է հայ ժողովրդի կորուստների հատուցման և պատմական հայրենիք վերադառնալու հնարաւորութիւններ ստեղծելու հետ:

Վերջին հաշւով հայերը ոչ մի տեղ չկարողացան իսկական հայրենիք ձեռք բերել և նրանք շարունակում են մնալ հալածւող մի ժողովուրդ, որին քաղաքական իրադարձութիւնների բերումով վռնդում են մէկ այս, մէկ այն երկրից: Բացառութիւն կարելի է համարել Խորհրդային Հայաստանը, որը սակայն տարածութեան փոքրութեան և վարչակարգի բերումով չի կարող ընդունել աշխարհի 6,5 միլիոն հայութիւնը:

Անշուշտ, Հայկական հարցը այսօր գոյութիւն ունի միայն հայերի համար, բայց հէնց այդ էլ ամենակարեւորն է ու վտանգաւորը: Եթէ հարցը ապրում է ժողովրդի մէջ և եթէ դեռեւս կենդանի է ժողովուրդը, վաղ թէ ուշ նա իրեն կ'արտայայտի, կը գտնի դաշնակիցներ և պայքարի դուրս կը գայ: Մեր աչքերի առջեւ հայ քաղաքական միտքը վերելք է ապրում: Զգալիօրէն աւելացել է հայկա-

կան քաղաքական գրականութիւնը, տեղի են ունենում բողոքի ցոյցեր և նոյնիսկ քաղաքական ահաբեկչութիւններ, որոնց նպատակն է՝ ուշադրութիւն գրաւել հայկական խնդրի վրայ։

Վաղ թէ ուշ Թուրքիայի ղեկավարները ստիպւած կը լինեն վերանայելու իրենց վերաբերմունքը հայերի նկատմամբ։ Եւ որքան շուտ նրանք դիմեն այդ քայլին, այնքան աւելի շահեկան պայմաններով նրանք կը կարողանան հաշտութիւն կնքել տաղանդաւոր ու աշխատասէր հայ ժողովուրդի հետ, որը գուցէ կարողանայ նաեւ դուրս բերել Թուրքիան իր մշտական տնտեսական ճգնաժամից։

Եւրոպացի՞ են արդեօք թուրքերը։ Ոչ, եւրոպացի չեն։ Պէ՞տք է, որ նրանք փորձեն եւրոպացի դառնալ։ Ոչ, պէտք չէ։ Բայց եւրոպական ընտանիքում արժանաւոր մի տեղ գրաւող ժողովուրդ դառնալը թուրքերի համար անհրաժեշտ է։ Իսկ դրա համար նրանք պէտք է վերանայեն իրենց վերաբերմունքը քրդերի, հայերի և իրենց արիւնալից անցեալի նկատմամբ։ Հեշտ չէ դա անելը, բայց այդ ճանապարհը միակն է։

Ոչ մի ժողովուրդ չի կարող բարգաւաճել չարագործութեան գնով։ Միայն անկեղծ զղջումը կարող է Թուրքիայի համար ճանապարհ բացել դէպի մշակութային, տնտեսական և քաղաքական բարգաւաճում։

Թարգ.՝ Է. Յ.

1980

ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ՆԵՐԿԱՆ

Վահրամ Վահրամեան

Ծանօթ է, որ ընկերվարութեան գաղափարախօսութիւնը ծագում առաւ իբրեւ բանւորները շահագործումէ փրկելու միջոց, իսկ արհեստակցական միութիւնները բանւորներու իրաւունքները կառավարութեան ոտնձգութիւններէն պաշտպանելու համար կազմուեցան։

Բայց այնպէս պատահեցաւ, որ իրենք զիրենք «ընկերվարական» կոչող երկիրներուն մէջ արհեստակցական միութիւնները ոչ միայն չկրցան ստանձնել բանւորական շահերու պաշտպանութիւնը, այլեւ կառավարութեան և կուսակցութեան մէկ թեւին վերածուելով՝ իրե՛նք իսկ սկսան խախտել բանւորներու իրաւունքները և նոյնիսկ աշխատաւորները շահագործել։ Ընկերվարութեան ջատագովները այս տարօրինակ երեւոյթը անով բացատրեցին, որ ընկերվարական երկիրներուն մէջ շահագործում չկայ, որ կառավարութիւնը բանւորներուն կը պատկանի, հետեւաբար աշխատաւորները որմէ՞ պիտի պաշտպանուին որո՛ւն դէմ։

Սակայն ան, որ քիչ թէ շատ ծանօթ է ընկերվարական (համայնավար) կոչւող երկիրներու աշխատաւորներու վիճակին, գիտէ, որ նոյնինքն անոնք ամէնէն անպաշտպանն են, որովհետեւ դրամատիրական երկիրներու կառավարութիւններէն անկախ արհեստակցական միութիւնները այնքան մեծ ուժ կը ներկայացնեն, որ գործատէրերը և կառավարութիւնները անոնց հետ հաշւի կը նստին։

Այնպէս կը թւէր, որ դրամատիրական և համայնավարական երկիրներու արհեստակցական միութիւններուն միջեւ այս տարբերութիւնը այնքան օրինականացած և աւանդութիւն դարձած է, որ այլեւս համայնավար երկիրներու բանւորներէն սեփական իրաւունքները պաշտպանելու ուղղութեամբ որեւէ կազմակերպւած շարժում սպասել անկարելի է։

Բայց տեսնուեցաւ, որ Լեհաստանի բանւորները այդ կարծիքը ջրեցին և, այսպէս ասած, համայնավար երկիրներու բանւորի պատիւը վերականգնեցին։ Շարք մը քաղաքներու զանգւածային գործադուլները համայնավար երկիրներէն մէկուն վարչական հիմերը ցնցեցին և համայնավար երկիրներու պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով հրաշք տեղի ունեցաւ, որովհետեւ կառավարութիւնը բանւորական պահանջներու համար բանակցեցաւ բանւորական անպաշտօն կոմիտէի մը հետ և կառավարական ու կուսակցական

ղեկավարութեան մէջ փոփոխութիւններ կատարեց: Լեհաստանի փորձը ցոյց տուաւ, որ աշխատաւորներու ազատութեան ձգտումը անջնջելի է:

Աշխատաւորներու արհեստակցական միութիւններուն անկախութիւնը անոնց գոյութեան անհրաժեշտ պայմանն է:

Հայաստանի, ինչպէս ամբողջ Խ. Միութեան մէջ, արհեստակցականները բանւորներու ճակատագրին մէջ ոչ մէկ դեր կը կատարեն: Բանւորական բոլոր հարցերը, վերջին հաշուով, կուսակցութեան թելադրանքով կը քննեն նախարարութիւններու և գործարաններու ղեկավարները, որոնց կողքին արհեստակցականներու վարիչները լաւագոյն պարագային օգնականի, իսկ յոռեգոյն պարագային քարտուղարի դեր կը կատարեն:

Հայ աշխատաւորներու արհեստակցական միութիւններու ազատութիւններու հարցը 1918ին հռչակած Հայաստանի հանրապետութեան կառավարութեան համար առաջնահերթ հարցերէն մէկն էր: Այն ժամանակ, երբ նորաստեղծ Հայաստանը աւելի գաղթականի կը նմանէր, քան պետութեան, երբ միայն Երեւանի մէջ 40 հազար, իսկ ամբողջ Հայաստանի մէջ մօտ 450 հազար գաղթականներ սովահար էին, երբ հայերու և մահմետականներու միջեւ արիւնալի բախումներ տեղի կ'ունենային, երբ գիւղացիական Հայաստանը արդիւնաբերական ճամբան նոր կը սկսէր, Հայաստանի ժողովրդական տնտեսութեան աշխատանքի բաժանմունքը արհեստակցական միութիւններուն անկախութիւն տուած էր և զանոնք լրջօրէն հաշւի կ'առնէր:

Պէտք է ըսել, որ այն ժամանակ Հայաստան մեծ արդիւնաբերութիւն չունէր և հայ աշխատաւորութիւնը հիմնականին մէջ Թիֆլիս և Պաքու կեդրոնացած էր, այսուհանդերձ ամբողջ երկրին մէջ կը կազմակերպուէին արհեստակցական միութիւններ, որոնց ցանցը օր ըստ օրէ կը ծաւալէր: 1919ի վերջերը Երեւանի մէջ կտաւի վերանորոգումներու, կարուձեւի, փականագործութեան, ատաղձագործական արհեստանոցները կը գործէին: Սարիղամիշի մէջ տախտակի սղոցարանը, ջուլհականոցը, ատաղձագործարանը, փայտի չոր թորման, ածուխի, սոսինձի գործարանները կը գործէին: Ալեքսանդրապոլի մէջ քանի մը ջուլհականոցներ, խաղաղորդարանը և կարգ մը այլ արհեստանոցներ կը գործէին: Էջմիածինի մէջ՝ կօշկակարանոց, Դիլիջանի մէջ՝ բրդեղէնի և շինանիւթերու արհեստանոց:

Բոլոր այս ձեռնարկները թէեւ գործարան կը կոչուէին, բայց իրականին մէջ արհեստանոցներ էին, որոնց արհեստաւորները պարզ գիւղացիներ էին, առանց դասակարգային մտածելակերպի և առանց կազմակերպչական գործի: Հակառակ ասոր, արհեստակցական միութիւններու շարժումը Հայաստանի մէջ լայն ծաւալ կը ստանար: Հետաքրքրականը այն է, որ արհեստակցական

միութիւններու ազատութիւնը այնքան մեծ էր, որ նոյնիսկ բանակի ծառայողները իրենց սեփական արհեստակցական միութիւնը ունէին։

26 յունուար 1920ին Երեւանի մէջ գումարուեցաւ Արհեստակցական Միութեանց Խորհուրդի անդրանիկ նիստը, 13 միութիւններու 38 ներկայացուցիչներու մասնակցութեամբ։ Համագործակցականներու, ինքնաշարժի բաժնի, ուսուցչական միութեան, թղթատարական պաշտօնեաներու, քաղաքային ինքնավարութեան և դրամատուններու պաշտօնեաներու, խաղաղորդարանի աշխատաւորներու, երկաթուղային բանւորներու, հացթուխներու և որբանոցներու պաշտօնեաներու միութիւններու ներկայացուցիչները։ Ժողովը քննեց և վաւերացուց միութեան կանոնագրութիւնը և ընտրեց գործադիր մարմին, որուն անդամակցեցան Աղաճանեան, Մուշեղեան, Պոպով, Աբգարեան և ուրիշներ։ Այդ միութեան ազատութեան մասին պերճախօս է այն փաստը, որ ժողովի քննարկման նիւթ դարձաւ Հայաստանի կառավարութեան ճանաչումը։ Այսինքն արհեստակցական միութիւնները այնքան ազատ էին, որ երկրին կառավարութիւնը ճանաչելու կամ չճանաչելու իրաւունք տրուած էր իրենց, իրաւունք մը, զոր զարգացած Արեւմտեան Եւրոպայի երկիրներու արհեստակցական միութիւնները այսօր չունին։ Արհեստակցական Միութեան ժողովը որդեգրեց բանաձեւ մը, որուն մէջ կառավարութեան հանդէպ աշխատաւորութեան դիրքը կ'արտայայտէր.

«Միութիւնների Միութեան անդրանիկ Խորհուրդը ողջունում է հայ աշխատաւորութիւնը և նրա կառավարութիւնը։ Միութեան Խորհուրդը հաւատում է, որ Հայաստանի կառավարութիւնը թոյլ չի տայ, որ ստացած ազատութիւնը ծառայէ որեւէ իմպերիալիստական պետութեան շահերին և Հայաստանի պետական նաւը կը տանէ դէպի Հայաստանի աշխատաւորութեան բարօրութիւն ու սոցիալական նոր յաղթանակներ և կը ջանայ Հայաստանի ներկայ սահմանների մէջ առնել նաեւ Տաճկահայաստանի այն մասերը, որոնք հանդիսանում են հայ աշխատաւորութեան հայրենիքը»։

«Բանւորը հայրենիք չունի». յայտարարած էր Մարքս, իսկ հայ բանւորութիւնը իր անկախ արհեստակցական միութիւններու միջոցով կառավարութեան կ'առաջարկէր ներառնել Թուրքիոյ ձեռքը գտնւող հայ աշխատաւորներու հայրենիքը։ Բայց Հայաստանի պետական նաւը աշխատաւորներու բարօրութեան չհասաւ, անոր արգելք հանդիսացան Թուրքիան և բոլշեւիկեան Ռուսիան։ Հայաստանի աշխատաւորութեան արհեստակցական ազատութիւնը երկար չտեւեց։ Երկու հզօր թշնամիներու միջեւ ինկած փոքրիկ Հայաստանը նախընտրեց Ռուսիան և երկրի իշխանութիւնը բոլշեւիկներուն յանձնեց։ Երբ բոլշեւիկ Յեղկոմը իշխանութեան գլուխ անցաւ, Հայաստանի աշխատաւորու-

թիւնը իր բոլոր ազատութիւններուն հետ կորսնցուց նաեւ արհեստակցական միութիւններու ազատութիւնը։

Այն մասին, թէ Հայաստանի մէջ բոլշեւիկներու իշխանութեան գլուխ գալէն ետք ի՛նչ պատահեցաւ, բոլշեւիկ պատմաբան Բորեանը կը գրէ.

«Յեղկոմը ձեռնարկեց անխնայ և վճռական բռնագրաւումների, առանց խտրութեան և առանց դասակարգային սկզբունքի, առանց հաշւի առնելու գիւղացիութեան ընդհանուր տնտեսական կացութիւնը և նրա հոգեբանական վիճակը։ Բռնագրաւումը տեղի էր ունենում անկազմակերպ ձեւով, ծրագրւած ու յեղափոխական-դասակարգային բնոյթ չունէր և կատարւում էր անհարկի բռնութիւններով։ Անկարգ կերպով գրաււում ու պետականացւում էր ամէն ինչ՝ զինւորական հագուստներ, արհեստաւորների գործիքներ, մասնաւոր և ամէն տեսակ բրինձի աղօրիներ, անխտիր բոլոր ջրաղացները, սափրիչի գործիքներ, մեղուի փեթակներ, քաղաքացիների տան կահ-կարասիները, առանց ի նկատի ունենալու նրանց դասակարգային վիճակը»։

Բնական է, որ բռնի միջոցներու պայմաններուն մէջ արհեստակցական միութիւնները ամբողջովին կորսնցուցին իրենց նշանակութիւնը։ Աշխատաւորները կորսնցուցին արհեստակցական միութիւն ունենալու իրենց իրաւունքը, բայց անոր ձգտումը չկորսնցուցին։

Այդ ձգտումը ոչ մէկ երկրի աշխատաւորութիւն տակաւին չէր կորսնցուցած։ Եուկոսլաւիա ընկերվարական երկիրներէն առաջինն էր, որ արհեստակցական միութիւններուն որոշ ազատութիւն տուաւ։ Յետոյ աւելի նուազ չափով, այսուհանդերձ որոշ ազատութիւններ ստացան Հունգարիոյ արհեստակցական միութիւնները։ Խ. Միութեան մէջ անկախ արհեստակցական միութիւն ստեղծելու բոլոր ջանքերը ապարդիւն անցան։ Եւ ահա Լեհաստանի բանւորները, քանի մը փորձերէ ետք, որոնք դաժանօրէն ճնշւեցան, յաջողեցան կազմակերպ ձեւով և միասնաբար արտայայտել իրենց ցանկութիւնները։ Եւ կառավարութիւնը նահանջեց։ Լեհաստանի Բանւորական Միացեալ կուսակցութիւնը (համայնավար) արտօնեց անկախ արհեստակցական միութիւնները։

Անշուշտ, Լեհաստանի բանւորներուն վիճակը այսօր կարելի չէ համեմատել Հայաստանի աշխատաւորներու վիճակին հետ, որոնք աւելի քան կէս դար առաջ առանձինն կը փորձէին ապացուցանել, որ արհեստակցական միութիւններու շարժումը ըստ էութեան միջազգային շարժում է։

Այսօր արդէն արեւմտեան արհեստակցական միութիւնները կը հաստատեն, որ իրենք ոչ միայն իրենց անդամներու տնտեսական շահերը, այլեւ ուրիշ երկիրներու աշխատաւորներու իրաւունքները կը պաշտպանեն։

Բացի ասկէ, այսօր գոյութիւն ունին միջազգային արհեստակցական միութիւններ, որոնց միակ նպատակը ազգային արհեստակցական միութիւններուն աջակցութիւն ընծայել է: «Ազատ արհեստակցական միութիւններու միջազգային համադաշնակցութիւն» կազմակերպութիւնը, օրինակ, աշխարհի զանազան երկիրներէն 70 միլիոն բանւոր անդամ կը հաշւէ և բազմաթիւ կառավարութիւններ զայն հաշւի կ'առնեն:

Այս կազմակերպութիւնը անցեալ տարւան աշնան Մատրիտի իր համագումարին մէջ որոշեց, որ պիտի շարունակէ պայքարիլ բոլոր երկիրներուն մէջ ազատ արհեստակցական միութիւններ ստեղծելու համար: Ցստակ է, որ ուշ կամ կանուխ, աշխարհի բոլոր արհեստակցական միութիւնները իրենց անկախութիւնը ձեռք կը բերեն:

1980

ՉԵՋ ԱՅՆՔԱՆ ՄԻ՛ ՄԱՇԷՔ ՈՐ ԱՂԲԱՆՈՑ ՆԵՏԻԷՔ

Յեղափոխականի վարքագծի գլխաւոր սկզբունքները

Է. Յովհաննիսեան

Էդուարդ Յովհաննիսեանի կեանքին վերջին ամիսները տառապանքի շրջան մը եղան իրեն համար: Խախտուած առողջութեան առթած մահուան հեռանկարը հոգեկան տուայտանք մը եղաւ իրեն համար եւ զինքը մղեց դառն ու յոռետես խոկումներու, որոնց արդիւնքն է այս յօդուածը՝ գրուած իր մահէն երեք ամիս առաջ:

Խմբագրողի կողմից

Ամէն մի սկիզբ ունի իր վերջը, դա գիտենք մենք բոլորս. բայց ոչ բոլորս գիտենք որ սկիզբը վախճանւում է, որովհետեւ այդ սկզբի մէջ արդէն պարունակւում է նրա մահը, որպէս այդ սկզբի մէջ արդէն անբաժանելի բաղկացուցիչ մասը: Այսինքն ինչ ծնւում է այս աշխարհում վաղ թէ ուշ մահանում է ու նետւում է աղբանոց, որպէս աւելորդութիւն այն աշխարհի ու միջավայրի համար, որը ծնել էր այդ սկիզբը, որպէս մի անհրաժեշտութիւն: Սակայն ո՞վ է սպանում այդ անհրաժեշտութիւնը: Ո՞րն է այն շարժիչ ուժը որը ժամանակին անհրաժեշտ թւացող մի սկիզբ, անխղճօրէն սպանում ու նետում է աղբանոց: Այդ շարժիչ ուժը մաշելու ուժն է որը ամէն ինչ մաշում է, այդ թւում բոլոր անհրաժեշտ թւացող սկիզբները, դարձնելով նրանց աղբանոցի ապրանք: Մաշւում են մարդիկ, կազմակերպութիւններ, պետութիւններ, գաղափարներ, կրօններ, նպատակներ, պայքարներ, զէնքեր, աւտոմեքենաներ, տարբեր սարքաւորումներ եւ ինքը աշխարհը, որը աղբանոց է նետում այն ամէնը որ շատ է մաշւած եւ այլեւս իրեն պէտք չէ:

Գեղեցիկ շեփորների ու տօնական մթնոլորտում կեանք մտած նորածին երեխան այնքան է մաշում, որ շուտով յայտնւում է գերեզմանատուն կոչւող աղբանոցում եւ իր այդ վերջին բնակարանը յաւերժ մնում է առանց այցելուների, որովհետեւ այդ հնարաւոր այցելուների, նրա հին ընկերների մէջ, որպէս օրէնք չի գտնւում գոնէ մէկը, որ արիութիւն ունենայ խոստովանելու, որ այդ իրենք նետեցին այս մաշւած մարդուն աղբանոց, առանց հասկանալու, որ նա դեռեւս աղբանոցի մաշւածութեան մակարդակի չէր հասել եւ անելիք ու ասելիք դեռ եւս շատ ունէր: Սակայն իրենց այդ սխալի եւ տգիտութեան համար նրանք շուտով կը պատժւեն, երբ իրենց էլ որպէս մաշած եւ ոչ մէկ արժէք չունեցող ապրանք նոյնպէս կը նետեն աղբանոց:

Այս մտքերը ու տխուր տրամադրութիւնները պարզապէս խեղդում էին ինձ, երբ ուղեղի կաթւածով բերուեցի հիւանդանոց ու ամէն օր լսում էի հիւանդների տնքոցները եւ տեսնում էի մարդկանց մահեր, որոնք դեռ եւս երեկ հիւանդանոցի սենեակներում վիճում էին ինձ հետ Եւրոմիութեան մասին ու բոլորովին մաշւած չէին։ Այդ մթնոլորտում էլ ծնւեցին այն մտքերը որոնք որոշեցի գրի առնել։ Գրի առնել այն ժամանակի համար, երբ արդէն մնացած չեն լինի ոչ յեղափոխական կուսակցութիւններ եւ ոչ էլ յեղափոխականներ։ Նրանք իրենց այնքան մաշւած կը լինեն, որ աղբանոց նետւած կը լինեն։ Ու ոչ միայն մաշւածութեան, այլ առաջին հերթին նախնադարեան լինելու նկատառումներով։ Դէ ո՞ր ցնդածը Ազատութեան հրապարակում պիտի պահէր Աւարայրի հերոս Վարդանին, եթէ նրա տեղը արդէն վաղուց թանգարանումն է եւ ո՞ւմ են պէտք Ազատութեան հրապարակի դատարկաբան ցուցարարներ, որոնց տեղը արդէն վաղուց աղբանոցումն է թէ մաշւածութեան եւ թէ նախնադարեան լինելու բերումով։

Մայիսի 4-ին Երկիրը հրատարակեց մի յօդւած «Կամ փողոց, կամ Խորհրդարան»։ Ես կարծում եմ որ այդ յօդւածին շատ աւելի յարմար կը լինէր հետեւեալ վերնագիրը «Կամ փողոց, կամ աղբանոց»։

Բայց ինչպէս նշում են փիլիսոփաներից շատերը, փիլիսոփայական ճշմարտութիւնները ծնւում են տառապանքից, որովհետեւ տառապանքը մարդուն չի մաշում, այլ նորոգում է։ Եւ հիւանդանոցի իմ տառապանքները ինձ նորոգեցին, կամ աւելի ճիշտ՝ նորոգւած մտքերի աղբիւր դարձան։

Առաջին եւ ամէնաանսպասելի յայտնութիւնը այն էր որ բնութիւնը ղեկավարւում է բնական ներդաշնակութեամբ, որը նոյնքան բնական է, որքան որ արհեստական։ Հիւանդանոցի միջանցքներում վազվզում էին բուժքոյրեր, դեղեր բերում հիւանդներին, սրսկում նրանց, ճնշում ու ջերմութիւն չափում, կերակրում նրանց եւ նոյնիսկ զբաղեցնում էին հիւանդներին, եթէ նրանք ծանր վիճակում էին եւ այդ ծանրութեան տակ կորցնում էին իրենց հաւասարակշռութիւնը։ Իսկ իրենք, այդ բուժքոյրերը, ապրում էին սեփական կեանքով, սեփական ուրախութիւններով. լիաթոք ծիծաղում էին սրամիտ պատմութիւնների վրայ, իրար հիւրասիրում, մեզանից նւէրներ ստանում, սիրահարւում եւ ամուսնանում. մի խօսքով՝ կերտում սեփական ճակատագիրը որը սակայն մաս էր կազմում մեր ճակատագրի։ Այսինքն հիւանդանոցի աշխատակիցները կերտում էին սեփական մարդկային ճակատագիրը՝ իրենց բնական մարդկային պահանջների հիման վրայ եւ դրա համար աշխատավարձ էին ստանում. բայց հիւանդանոցի օրէնքով նախատեսւած ու հաստատւած նրանց վարքագիծը նպաստում էր հիւանդների հաւաքական շահերին եւ մեզանից շատեր ապաքինւած դուրս էին գալիս հիւանդանոցից եւ

իրենց մէջ կրում էին երախտապարտութեան զգացումներ հիւանդանոցի բժիշկների եւ հոգատար բուժքոյրերի նկատմամբ։

Մի՞թէ ճիշտ այս կարգի մասին չենք մենք բոլորս երազում, երբ փորձում ենք ընտրել լաւագոյն վարչակարգը, պետական կառոյցը, կուսակցութեան կազմակերպական կանոնները։

Բոլոր այս բնագաւառներում պէտք է գործի մէկ հիմնական սկզբունք, որն է՝ երկրի բոլոր քաղաքացիների բնական անհատական շահերի բաւարարելու ձգտումը ինքնաբերաբար պէտք է նպաստի ազգի հաւաքական շահերի բաւարարմանը։ Երբ այստեղ մենք օգտագործում ենք ինքնաբերաբար հասկացութիւնը, ապա օգտագործում ենք այն իմաստով որ այդ ինքնաբերաբարութիւնը մեր կողմից ստեղծուած արհեստական կարգի արդիւնքն է։

Երկրորդ յայտնութիւնը կեանքի եւ մահւան փոխյարաբերութեան փիլիսոփայութիւնն էր, որը ինձ այցելեց շատ աւելի վաղուց, դեռեւս դպրոցական շրջանում ու այնքան ամուր առաւ իր ճանկերի մէջ, որ այլեւս չկարողացայ ազատուել այդ յայտնութիւնից մինչեւ այսօր։

1977-ին Իտալիայում ես հրատարակեցի «Դոստոյեւսկին, Տոլստոյը եւ Պարոյր Սեւակը» վերնագիրը կրող մի ուսումնասիրութիւն որտեղ կեանքի եւ մահւան փոխյարաբերութեան հարցը կենտրոնական տեղ էր գրաւում։ Սակայն երբ գիրքը արդէն հրատարակուած էր, պարզուեց որ նա ոչ մէկի կողմից չէր կարդացուել։ Դա շատ ցաւալի էր, որովհետեւ ինձ թւում էր թէ կեանքի եւ մահւան փոխյարաբերութեան հետ կապուած աշխարհայեացքը բաւականին արմատականօրէն վերլուծութեան էր ենթարկւել։ Կարելի էր, անշուշտ, ընթերցողին ուղարկել այդ ուսումնասիրութեան համապատասխան էջերը, բայց ես որոշեցի մէջբերման կարգով նորից վերարտադրել իմ աշխատութեան «Լեւ Տոլստոյը» գլուխը (էջ 43-57) որը գրեցի սիրով ու անկեղծ, որովհետեւ Տոլստոյի հերոսների ապրումները ինձ այնքան հարազատ էին որ երբեմն ինձ թւում էր թէ Տոլստոյը իմ մասին է գրել։ Բայց այս անհամեստութիւնը թող ինձ ներւի, քանզի բոլոր հայերի համար իրանից աւելի կարեւոր արժէք ընդհանրապէս գոյութիւն չունի։

Իսկ իմ երրորդ յայտնութիւնը կապ ունէր այս գրութեան վերնագրի հետ, բայց ոչ նրա բովանդակութեան, այլ նրա գնահատականի հետ։ Եթէ ես այսքան եմ մաշւել որ եկել է ինձ աղբանոց նետելու ժամանակը, ապա ո՞վ է իմ մաշածութիւնը դատելու դատաւորը։ Եթէ ես մաշւել եմ, ուրեմն ես էլ պիտի որոշեմ թէ որքան եմ մաշւել եւ ինչ այլեւս չեմ կարող անել։ Ինձանից դուրս գոյութիւն չունի որեւէ այլ դատաւոր, ոչ օրէնքի եւ ոչ էլ Աստուծոյ կերպարանքով։ Միայն մենք ինքներս գիտենք թէ ինչի ենք ընդունակ եւ ինչ կարող ենք տալ ուրիշներին։ Միայն մենք գիտենք որ այսօր, ինչպէս 40 տարի առաջ,

չենք կարող արագ վազել եւ ծանրութիւններ բարձրացնել։ Բայց մի՞թէ մեզանից դա է սպասում շրջապատը։ Եթէ միայն դա է սպասում, ապա ինքը շրջապատը այնքան է մաշուել, որ իսկապէս պէտք է աղբանոց նետուի։

Մեզանից ոչ մէկը մեղաւոր չէ որ մահանում է ոչ թէ զնդակից պատերազմի դաշտում, այլ հիւանդանոցում ուղեղի կաթուածից, հարբուխից կամ թոքերի բորբոքումից։ Մեղաւոր նա է, որ մեզ պատերազմի դաշտ չուղարկեց պատուով մեռնելու համար։ Ուրեմն եկէք մեզ այնքան չմաշենք որ միասնաբար աղբանոց չնետուենք։

Միւնխեն
Ապրիլ, 2004 թ.